ՃՇՄԱՐԻՏ ԿՅԱՆՔ ԱՍՏԾՈ ՄԵՋ

(Ընդգրկված են բոլոր պատգամները)

Nihil Obstat:
Felix Toppo, S.J., D.D.
Bishop of Jamshedpur
Censor Librorum
Date: 28.11.05

Imprimatur:
Ramon C.Arguelles, D.D., STL
Archbishop of Lipa
Date: 28.11.05

Ճշմարիտ կյանք Աստծո մեջ պատգամները՝
տրված Վասուլա Ռիդենին 1986-2003 թթ. ընթացքում,
ներկայացվում է PDF համակարգչային նշոցով

Հեղինակային իրավունք © Վասուլա Ռիդեն

Հրատարակված է *Ճշմարիտ կյանք Աստծո մեջ* www.tlig.org կայքում, *Ճշմարիտ կյանք Աստծո մեջ* Հաստատության թույլտվությամբ, Ժնև, Շվեցարիա:
foundation@tlig.org

Բոլոր իրավունքները վերապահված են ՃԿԱՄ-ի հաստատությանը

Այս պայմանները ձեզ են ուղղված վերոհիշյալ հատորի համակարգչային նշոցի վերաբերյալ: Դուք պատասխանատու եք նշված պայմանները ուշադրության հանձնել այն անձանց, ովքեր կարդում են այս հատորը, որը ձեզ է տրամադրված: Դուք կարող եք կարդալ, տպել, կամ ձեր համակարգչի մեջ ներմուծել այն միայն անձնական և ոչ առևտրական նպատակների համար: Եթե ուզում եք կարդալ, տպել, կամ ձեր համակարգչի մեջ ներմուծել այն, նախ պետք է գրավոր լիազորություն ձեռք բերեք *Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ Հաստատությունից*: Ոչ մի դեպքում ձեզ չի թույլատրվում տեքստից հանել կամ ուղղել որևէ մակնիշ, հեղինակային իրավունք, կամ հեղինակի սեփականությունը նկատվող որևէ նյութ կամ հայտարարություն: Ձեզ չի թույլատրվում որևէ հանգամանքների ներքո համակարգչային միջոցներով, կամ այլ ձևերով հրատարակել այս հատորից որևէ մի հատված:

Ճշմարիտ կյանք Աստծո մեջ գրքի համար կարող եք դիմել հետևյալ հասցեին.
armenia@tlig.org

1986

Սեպտեմբերի 20, 1986[1]

Խաղաղություն քեզ:

Ես կարո՞ղ եմ մնալ Քեզ հետ:

Այո՛, դու Ինձ հետ ես, Ես Լույսն եմ:

Կարո՞ղ եմ մոտ լինել Քեզ:

Դու Ինձ մոտ ես, Դու իմ մեջ ես, Ես Լույսն եմ:

Դու կարո՞ղ ես ինձ պաշտպանել:

Դու պաշտպանված ես Իմ կողմից:

Կարո՞ղ եմ ապավինել Քեզ:

Կարող ես ապավինել Ինձ:

Ես Քո Ուժի կարիքն ունեմ, որ հավատս պահեմ:

Քեզ Ուժ տրված է:

Ես Քո Սիրո կարիքն ունեմ:

Դու սիրված ես Իմ կողմից:

Ես Լույսն եմ և փայլում եմ, որպեսզի ամեն ոք տեսնի: Մի՛ վախեցիր, Իմ Ճանապարհը ուղիղ է: Իմ Ճանապարհը քեզ կառաջնորդի դեպի Ինձ: Ես կհանդիպեմ քեզ, և դու Ինձ կճանաչես, քանի որ Ես Սեր և Խաղաղություն եմ ճառագում:

Ե՛կ դեպի Ինձ: Դու Ինձ տեսնո՞ւմ ես: Ինձ լսո՞ւմ ես: Մի՛ վախեցիր, այդտեղ խավարում կանգնած մի մնա: Տե՛ս, քո ոտքերը բժշկված են[2], դու նորից կարող ես քայլել: Տե՛ս, տեսողությունդ վերականգնված է, Ես քեզ բժշկեցի: Ես բժշկել եմ քո ամոթը և մեղքերդ լվացել: Ոտքերդ գործածիր դեպի Ինձ գալու, աչքերդ՝ Ինձ տեսնելու, հավատդ՝ Ինձ հանդիպելու համար: Ես քո Փրկիչն եմ, Ես քո Խաղաղությունն եմ, Ես՝ Հիսուս, ձեզ ամենքիդ սիրում եմ:

---

[1] Սա գրվել է մաքրագործումից հետո:
[2] Այս բոլորը փոխաբերական իմաստով է:

Սեպտեմբերի 27, 1986

Խաղաղություն քեզ: Վասուլա, ե՛կ դեպի Ինձ: Ես քո Փրկիչն եմ, քո խաղաղությունը: Ես երկրի վրա մարմնով ապրեցի ձեր մեջ: Ես Աստծո Միածին Որդին եմ: Արի՛ Ինձ մոտ, գլուխդ հենիր Ինձ վրա, Ես քո Մխիթարիչն եմ: Երբ քեզ դժբախտ կզգաս, հիշի՛ր, որ Ես քո կողքին եմ:
Ինձ հետ կրկնիր այս աղոթքը.

Օգնի՛ր ինձ Հայր և առաջնորդիր
արոտները Քո հանգստավետ,
ուր հոսում է զուլալ
ջուրը հավերժական:
Եղի՛ր իմ Լույսը,
ցույց տուր ինձ Ճամփան:
Քեզ հետ, Քո կողքին Ես կքայլեմ,
Քեզ հետ՝ Քո լուսավորությամբ,
ես կխոսեմ:
Հա՛յր, Սիրելի՛ս, մնա իմ մեջ,
որ ունենամ խաղաղություն,
Սերդ զգամ:
Ոտնահետքերիդ Ես կհետևեմ,
կմնամ Քեզ հետ:
Լուսավորի՛ր ինձ, սիրի՛ր ինձ,
Ինձ հետ եղիր այստեղ
և Հավիտյանս հավիտենից: Ամեն:

(Հիսուս եկել էր ինձ այս աղոթքը սովորեցնելու):

Սեպտեմբերի 28, 1986

(Հիսուսն այսօր ինձ մի հստակ տեսիլք տվեց (մտավոր տեսիլք): Տեսիլքում, ես մի անհայտ տեղում էի, կարծես ճահճուտում լինեի, շուրջս ոչ ոք չկար: Հոգեպես կորած վիճակում էի: Ջորացած ծառերի մեջ ես տեսա Հիսուսին, որն ինձ էր փնտրում):

Ես այստեղ եմ: Այդ Ես եմ՝ Հիսուս, Ես գտել եմ քեզ. ե՛կ, թույլ տուր քեզ ցույց տամ ետդարձի ճամփան: Լսի՛ր Ինձ, Ես՝ Հիսուս, Ճանապարհն եմ: Ամեն անգամ, երբ զգաս, որ մոլորվել ես, կանչի՛ր Ինձ: Ես կգամ և քեզ ճանապարհը ցույց կտամ: Ես եմ Ճանապարհը:

Սեպտեմբերի 30, 1986

Խաղաղություն քեզ, աղջիկս:

Հիսո՛ւս, խնդրում եմ ինձ լույս տուր, որ կարողանամ զգալ Քեզ և գրել[1]:

Վասո՛ւլա, լոկ շուրթերով արված աղոթքը անիմաստ կանչ է:

(Ես հասկացա իմ սխալը: Հիսուսից ես այս բանը խնդրում էի առանց սիրո, առանց մտածելու, առանց իրապես այն զգալու: Ես կրկնեցի խնդրանքս, այս անգամ իսկապես ամեն մի բառի իմաստը նկատի ունենալով և <u>հոգիս բարձրացնելով դեպի Իրեն</u>):

Ինձ ուղղիր քո կանչը՝ զգալով Ինձ[2] այնպես, ինչպես այս անգամ: Ես՝ Աստված, զգում եմ, Ես ամեն բան զգում եմ: Քո կանչից Ես պետք է ստանամ հոգուդ խորքից բխող սեր՝ Իմ կարիքը զգալով, սիրելով Ինձ, գիտակցելով ամեն մի բառ, որ դու ասում ես: Ես՝ Աստված, գոյություն ունեմ և զգում եմ: Որևէ մի կանչ, որ լոկ շուրթերով է ասված, ավելի ճիշտ կլիներ՝ թաղված մնար: Շուրթերով արված կանչը գերեզմաններից եկող մնչյուն է. հիշի՛ր, որ Ես կամ և զգում եմ: Որքան կուզեի, որ Իմ բոլոր զավակները աշխատեն Ինձ ուրախություն պատճառել:

Հոկտեմբերի 5, 1986

(Ես մի գիրք եմ կարդում, ուր շատ մարդիկ նկարագրել են իրենց ունեցած «փորձառությունները Աստծո հետ»: Սակայն, գրեթե բոլոր այդ մարդկանց մասին «գիտակները» ասել են, որ նրանք պետք է մոռանան այդ փորձառությունները, քանզի դրանք Աստծուց չեն, ավելացնելով նաև, որ նման բաներ Աստծո հանդեպ մեծ նվիրում ունեցող շատ վեհանձն հոգիներն են միայն ունենում, երբ գտնվում են սրբության բարձրագույն մակարդակի վրա: Ես գիտեմ, որ այդպիսի մեկը չեմ և շատ հեռու եմ լավը համարվելուց, ուստի որոշեցի դադարեցնել Աստծո հետ իմ այս հանդիպումների գրառումները: Այս բոլորը ինձ հասկացնել էին տալիս, որ Աստծուն հասնելու համար պետք է սուրբ լինել, հավատացնելով ինձ, թե Աստված մեզնից շատ հեռու է: Ուստի, ես պետք է թողնեմ այս ամենը՝ մի վերջին անգամ թույլ տալով, որ ձեռքս գրի ինչ որ ուզում է՝ առաջնորդվելով այն ուժով, որով գրում էր այս ամբողջ ամիսներին):

Վասո՛ւլա, Ինձ մի՛ լքիր, սիրելիս, շարունակիր Ինձ դիմել և Ինձ հետ սովորել: Հիշի՛ր, որ ամբողջ ժամանակ Ես քո կողքին եմ. Ես՝ Աստված, քո մեջ եմ ապրում: Հավատա՛ Ինձ, Ես Ամենակարողն եմ, Հավիտենական Աստվածը:

Ո՛չ, չի կարող պատահել: Դա չի կարող Աստված լինել: Այդ «գիտակները» կարող են ինձ ապացուցել, որ խոսողը Աստված չէ, որովհետև միմիայն շատ մաքրամաքուր հոգիներն են արժանի, որ Աստված նրանց մոտենա և նման շնորհների արժանացնի:

[1] Ես կարիք ունեմ Աստծո Ներկայությունը զգալու:
[2] Իրազեկ լինելով Աստծո Ներկայությանը:

Ես անհասանելի չեմ, Վասուլա: Ես ոչ մեկին չեմ մերժում: Ես մեղադրում եմ բոլոր նրանց, ովքեր վհատեցնում են Իմ զավակներին դեպի Ինձ գալու, ովքեր սովորեցնում են, թե Իմ ներկայությունը վայելելու, կամ՝ Իմ կողմից ընդունված լինելու համար, պետք է մաքուր կամ արժանի լինել. այդ մարդիկ վնասում են Իմ եկեղեցուն: Այն անձը, որ գտել է Ինձ, սակայն մյուսների կողմից վհատեցվել, Ես, որ Անսահման Զորություն եմ, կքաջալերեմ նրան՝ տալով Իմ Ուժը: Ինչո՞ւ, ինչո՞ւ մարդիկ կան, ովքեր իրենց գիտակ են կոչում, դատելով՝ թե այդ Ես եմ, թե ոչ, արգելելով ամեն մի հնարավորություն, զավակներիս թողնելով անմխիթար, անօգնական և հիասթափված վիճակում՝ անտեսելով Իմ բոլոր շնորհները, Ինձնից հեռու քաշելով նրանց: Ինչո՞ւ են Իմ տված բոլոր օրհնությունները մերժվում, օրհնություններ, որոնք Ե՛ս տվեցի: Ես Անսպառ Հարստություն եմ:

Աղջի՛կս, երբ դու ի վերջո Ինձ գտար, Ես շատ ուրախացա: Ես շատ զգույշ էի, որ հանկարծ քեզ չվախեցնեմ ու հեռու չվանեմ: Հետդ վարվում էի ամենայն քնքշությամբ, ինչպես մայրը կվերաբերվեր իր զավակին: Ես քեզ Ինձ մոտեցրի: Ես այնքան երջանիկ էի, որ քեզ կանչում էի, հանդիպում էի քեզ, որ դու Իմ կողքին էիր, կիսում էի քեզ հետ այն ամենն, ինչ ունեի, սիրելիս: Իսկ այժմ, դու գալիս ես Ինձ ասելու, թե որոշել ես Ինձնից հեռանալ, որովհետև Ես՝ Աստված, անհնար է որ հասանելի լինեմ, և որ քեզ հայտնել են, թե միայն արժանավոր հոգիները կարող են Ինձ հասնել, և դու ցածր ես պահանջվող չափանիշից: Ես բնավ ոչ մեկին չեմ մերժում, Ես Իմ շնորհներն եմ տալիս անգամ ամենից թշվառին:

Ուրախացրո՛ւ Ինձ և հանդիպիր Ինձ այս ձևով: Ես օրհնում եմ քեզ աղջիկս, Ես առաջնորդում եմ քեզ, դու Ինձնից ես սնվում: Վասո՛ւլա, այսօր ուշադիր կարդա Պետրոսի առաջին թուղթը, հետո Ես կանդրադառնամ դրան: Կարդա՛ առաջին գլուխը: Հավատով ապրիր: Պետրոսը քեզ կսովորեցնի հավատ ունենալ:

(Հավատ բառով Հիսուսն ինձ շատ բաներ հասկացնել տվեց: Այն, որ կարելի է հավատով լեռներ շարժել և որ պետք է հավատալ կուրորեն):

Հոկտեմբերի 10, 1986

Ես եմ Լույսը: Ես՝ Հիսուս, ուզում եմ քեզ զգուշացնել, որ երբեք չընկնես չարի լարած ծուղակները, երբեք չհավատաս ամեն մի պատգամի, որը քեզ անհանգստություն կպատճառի. հասկացիր, թե ինչու է չարն այդքան փորձում քեզ կասեցնել: Աղջիկս, որևէ պատգամ, որ դատապարտում է նախորդ Իմ պատգամները, չարից է: Չարը մեկ անգամ ևս փորձում է քեզ կասեցնել և վհատեցնել: Ես, որ քո Փրկիչն եմ, հաստատում եմ, որ բոլոր այն պատգամները, որ կրում են սիրո և խաղաղության կոչեր, որոնք առաջնորդում են մոլորվածներին դեպի Ինձ գալու, բոլորն էլ գալիս են Հորից և Ինձնից. ուստի մի՛ վհատվիր, հավատ ունեցիր Իմ հանդեպ: Հիշի՛ր, մի հավատա ամեն մի պատգամի, որը սրտումդ խռովք կթողնի: Ես խաղաղություն եմ, և դու քեզ պիտի խաղաղ զգաս:

Հոկտեմբերի 16, 1986

Խաղաղություն քեզ: Հանգստացիր սիրելիս, ինքդ քեզ ավելի մի՛ ծանրաբեռնիր: Ես զգում եմ, թե որքան լարված ես:

Ես զգացի Քո Ներկայությունը: Դու չեչտո՞ւմ էիր Քո ներկայությունը, Հիսո՛ւս:

Այո՛: Ես հատուկ չեչտեցի Իմ Ներկայությունը, որպեսզի դու հասկանաս: Վասո՛ւլա, Ես շատ լավ ծանոթ եմ քո կարողությանը:

(Այդ օրը, հատկապես, ես շատ հոգնած էի, բայց չէի կարող չկարդալ ու չաշխատել: Հիսուսի ներկայությունը զգում էի ամենուր, և Նա փորձում էր ինձ ինչ-որ բան ասել):

Հոկտեմբերի 22, 1986

Ես՝ Աստված, հրճվում եմ, որ դու Իմ կողքին ես: Ես քեզ սիրում եմ, աղջի՛կս, հավատ ունեցիր Իմ հանդեպ: Երկու ամիս չանցած դու Ինձ արդեն շատ պարզորոշ[1] կլսես: Ես կաջակցեմ քեզ: Իմ նպատակն է քեզ առաջնորդել: Երկու ամիս չանցած, դու հսկայական առաջադիմություն կունենաս, քանզի այդ է Իմ կամքը: Ես քո Ուսուցիչն եմ, Իմ բոլոր ուսուցումները պիտի լուսավորեն հոգիդ. մնա՛ Իմ կողքին: Վասո՛ւլա, ամեն անգամ, երբ քեզ դժբախտ կզգաս, ե՛կ Ինձ մոտ, և Ես քեզ կսփոփեմ, որովհետև դու Իմ սիրելին ես: Ես երբեք չեմ ուզում Իմ զավակներից և ոչ մեկին թշվառ վիճակում տեսնել: Նրանք պետք է Ինձ մոտ դան, և Ես նրանց կմխիթարեմ:

Հոկտեմբերի 23, 1986

Վասո՛ւլա, ո՞ր տունն ավելի շատ քո կարիքն ունի: Ես ուզում եմ, որ ընտրես:

Հիսո՛ւս, եթե ինձ հարցնում ես, թե որն է ավելի կարևոր՝ Քո Տունը, թե իմը, ես իհարկե կասեի՝ Քո Տունը: Իսկ ընտրության դեպքում՝ ես Քո Տունն եմ նախընտրում:

Ես օրհնում եմ քեզ:

(Հիսուս շատ գոհ էր երևում):

Ես քեզ պիտի առաջնորդեմ, փոքրիկս:

[1] Կանխասացությունը ճիշտ էր: Վեց շաբաթ անց ես կարողանում էի Նրա ձայնն ավելի պարզորոշ լսել:

Ե՛կ, վերցրու Իմ խաչը և հետևիր Ինձ: Հիշի՛ր, Ես քեզ պիտի օգնեմ: Դու լինելու Ես Իմ աշակերտը: Ես կօգնեմ քեզ, որ դու Ինձ ճանաչել տաս մարդկանց: Ես Սուրբ եմ, Սուրբ եմ Ես, ուստի դու էլ սուրբ եղիր, սրբությամբ ապրիր: Ես քեզ զորավիգ կլինեմ: Վասո՛ւլա, ուզո՞ւմ ես Ինձ համար գործել:

Նորից սա անունդ:

Հիսուս Քրիստոս:

Այո՛, ես կգործեմ Քեզ համար:

Ես սիրում եմ քեզ, կանչիր Ինձ, երբ որ կամենաս:

(Ես համաձայնվեցի, առանց իսկապես գիտակցելու, թե ինչ է նշանակում գործել Աստծո համար: Քանի որ ես Աստծուն սիրում եմ, ցանկացա Նրան գոհացնել: Ես բնավ չէի գիտակցում իմ անկարողությունը):

Լսի՛ր Ինձ, ականջ դիր Իմ կանչերին, լսի՛ր Իմ աղաղակները, տեսնո՞ւմ ես Իմ խաչը[1]: Ես՝ Հիսուսն եմ, որ ցույց եմ տալիս այս տեսիլքը: Ես կանչում եմ, Ես տառապում եմ, որովհետև Ես ձեզ համրում եմ, սիրելիս, և տեսնում, թե դուք ցրվում եք և տեղյակ չեք, թե ինչ վտանգներ է պատրաստել ձեզ համար սատանան: Սիրտս պատառպատառ է լինում, երբ տեսնում եմ, թե որքան եք հեռացել Ինձնից:

(Մի ամբողջ ամիս Հիսուսն ինձ Իր խաչի պատկերն էր ցույց տալիս: Ուր որ շրջեի գլուխս, ինչ ուղղությամբ էլ որ նայեի՝ վիթխարի, մուգ շագանակագույն մի խաչ էր կանգնած: Ուտելու ժամանակ աչքերս ափսեից վեր բարձրացնեի՝ այդ հսկայական խաչն էր, դռան ցանցից նայելիս՝ դարձյալ խաչն էր: Եթե մեկ այլ սենյակ գնայի՝ հետևում էր և խաչը: Եվ այսպես, մեկ ամիս շարունակ. կարծես այն ինձ հետապնդում էր:

Հետո ինձ մի ուրիշ բան սկսեց մտատանջել, թե միգուցե այս ամենը Աստծուց չէ: Բայց, եթե սատանայից է, մի՞թե նա այդքան լուռ կարող է լինել: Ես սկսեցի վախենալ, թե մարդիկ ինչ կասեն այս մասին: Ի՞նչ կպատահի ինձ. ինձ կծաղրեն):

Աղջի՛կս, աղջիկս ապրիր խաղաղության մեջ:

(Ես կասկածեցի):

Ո՞վ է, հարցրեցի:

Այդ ես եմ՝ Հիսուս, մնա Ինձ մոտ: Ես տարիներ շարունակ քեզ եմ կանչել, ուզում էի, որ Ինձ սիրես, Վասո՛ւլա...

Հիսո՛ւս, առաջին անգամ Դու ե՞րբ ես ինձ կանչել:

[1] Ես տեսա մի մեծ մուգ գույնի խաչ:

Դա այն ժամանակ էր, երբ դու Լիբանան էիր գնում: Ես քեզ ձայն տվեցի քնածդ պահին: Դու տեսար Ինձ: Հիշո՞ւմ ես, ինչպես էի քեզ կանչում և ձգում դեպի Ինձ:

Այո՛, հիշում եմ: Ես շատ վախեցած էի: Ես մոտ տաս տարեկան էի: Քո ուժը, որն ինձ ձգում էր, վախեցրեց ինձ: Կարծես ուժեղ մի հոսանք էր, կարծես մի հզոր մագնիս, որ ձգում էր մի փոքրիկ մագնիսի: Ես փորձում էի դիմադրել և հեռու քաշվել, բայց չէի կարողանում և, ի վերջո, ես ինձ գտա Քեզ սեղմված ու այդ պահին արթնացա:

(Տարօրինակ էր, որ Հիսուսն ինձ այդ երազը հիշեցրեց, և ինչպե՞ս է որ ես դեռ հիշում էի այն):

Նոյեմբերի 9, 1986

Խաղաղություն քեզ: Ես այստեղ եմ, Հիսուս Քրիստոսն եմ և կանգնած եմ քո առաջ: Ես քո Ուսուցիչն եմ և քեզ սիրում եմ: Իմ զոհաբերումով չարը պարտվեց: Մի՛ քնիր, Ես շուտով քեզ հետ կլինեմ: Ես Հայտնությունն եմ. Ես լուրեր ունեմ քեզ հաղորդելու, որոնք բան ունեն ասելու: Վասուլա, խոսի՛ր Ինձ հետ Իմ խաչելության մասին:

Ի՞նչ ասեմ: Նախքան խաչելությո՞ւնը, թե խաչելության ժամանակ:

Նախքան խաչելությունը:

(Հիսուսն ինձ մի խարազանման տեսարան պարզեց):

Խարազանելուց հետո նրանք թքեցին վրաս և գլխիս մի քանի ծանր հարված հասցրին, որից գլխապտույտ ունեցա: Ապա ոտքով խփեցին որովայնիս. Ես շնչահեղձ ընկա գետին՝ ցավից տնքալով: Նրանք մրցում էին իրար հետ, հերթով Ինձ աքացի տալով: Ես անճանաչելի էի դարձել: Մարմինս ջախջախված էր, ինչպես և սիրտս. Պոկոտված մսերը կախ էին ընկել մարմնովս մեկ:

Նրանցից մեկն Ինձ բարձրացրեց գետնից և քարշ տվեց, որովհետև ոտքերս այլևս չէին պահում Ինձ: Հետո նրանք Ինձ վրա գցեցին իրենց թիկնոցներից մեկը և առաջ հրեցին՝ շարունակ հարվածելով դեմքիս. կոտրեցին քիթս և Ինձ տանջահար արեցին: Ես լսում էի նրանց վիրավորանքները: Աղջի՛կս, նրանց ձայներն այնպիսի՛ ատելությամբ ու ծաղրանքով էին հնչում՝ լցնելով բաժակս: Ես լսում էի նրանց, որ ասում էին. «Բա էդ քո մտերիմներն ո՞ւր են հավաքվել, երբ իրենց թագավորը մեզ հետ է: Բոլոր հրեանե՞րն են դրանց պես դավաճան. նայե՛ք դրանց թագավորին»: Ապա նրանք Ինձ թագադրեցին փշերից հյուսված պսակով: «Ո՞ւր են քո հրեաները, որ քեզ ողջույն տան, դու թագավոր ԵՍ, թե՞ չէ, կարո՞ղ ես թագավոր ձևացնել: Ծիծաղի՛ր, լաց չլինե՛ս, դու թագավոր ես, չէ՞, ուրեմն քեզ թագավորի պես պահիր: Նրանք ոտքերս պարանով կապեցին և ասացին, որ քայլեմ դեպի Իմ խաչը:

Աղջի՛կս, ես չէի կարող գնալ, որովհետև ոտքերս կապված էին. դրա համար նրանք Ինձ գետին տապալեցին և մազերիցս բռնած քարշ տվին դեպի Իմ Խաչը: Ցավս անտանելի էր: Խարազանումից բզկտված Մարմնիս ծվեները պոկվեցին:
Նրանք թուլացրին ոտքերիս կապերը և, աքացի տալով, ստիպեցին որ ոտքի կանգնեմ և բեռս ուսերիս վերցնեմ: Ես չէի կարողանում տեսնել, թե որտեղ է Իմ Խաչը, որովհետև աչքերս լցվել էին արյունով, որը գլխիս մեջ խրված փշերից հոսում էր դեմքիս: Ուստի նրանք իրենք բարձրացրին Իմ Խաչը և դրին ուսերիս՝ հրելով Ինձ դարպասների կողմը: Աղջի՛կս, որքա՜ն ծանր էր Խաչս, որ պետք է կրեի: Հետևից մտրակվելով՝ խարխափելով քշվեցի դեպի դարպասները: Փորձում էի աչքերս այրող արյան միջից տեսնել ճանապարհը:
Այդ ժամանակ զգացի, որ մեկը երեսս է սրբում. կանայք տագնապահար առաջ էին եկել՝ ուռած դեմքս սրբելու. լսում էի նրանց լացն ու ողբը: Ես զգացի նրանց ցավը. «Օրհնյա՛լ լինեք, ասացի, Իմ Արյունը լվալու է մարդկության բոլոր մեղքերը. տեսե՛ք դուստրեր, ձեր փրկության ժամը հասել է»:
Ես մի կերպ քարշ էի գալիս բարձունքն ի վեր: Ամբոխը մոլեգնել էր: Շուրջս բարեկամ չէի տեսնում. չկար մեկը, որ Ինձ մխիթարեր: Ցավերս սաստկացան և, ես գետին ընկա: Վախենալով, որ կմեռնեմ նախքան խաչվելս, զինվորները Սիմոն անունով մի մարդու հրամայեցին, որ Խաչս տանի: Աղջի՛կս, բարության կամ կարեկցանքի դրսևորում չէր դա. այլ Ինձ պահում էին Խաչի համար:
Երբ բլրի գագաթին հասանք, նրանք Ինձ գետին տապալեցին, պատռելով հագուստներս՝ բոլորի աչքի առաջ Ինձ մերկացրին: Վերքերս նորից բացվեցին, և արյունս դուրս հորդեց՝ թափվելով գետին: Զինվորներն Ինձ լեղախառն գինի առաջարկեցին, ես մերժեցի, քանի որ հոգուս խորքում արդեն ճաշակել էի թշնամիներիս պատճառած դառնությունը: Նրանք նախ արագորեն գամեցին դաստակներս և, երբ գամերն ամրացրին Խաչափայտին, ջախջախված մարմինս պրկեցին Խաչին և դաժանաբար գամեցին ոտքերս: Աղջի՛կս, ա՜խ, աղջի՛կս, այդ ի՜նչ ցավ էր, ի՜նչ տանջանք. հոգու ի՜նչ տառապանք՝ լքված սիրելիներիս կողմից, ուրացված՝ Պետրոսից, որի վրա պիտի հիմնեի իմ Եկեղեցին, մերժված՝ Իմ մյուս բոլոր մտերիմներից. մենմենակ, թշնամիներիս ձեռքը մատնված: Ես արտասվեցի, որովհետև հոգիս վշտով լի էր:
Զինվորները Խաչը կանգնեցրին փոսի մեջ:
Ես աչքերս սևեռեցի ամբոխի վրա, բայց ուռած աչքերով հազիվ էի տեսնում: Ես նայում էի աշխարհին. Ինձ ծաղրողների մեջ չնկատեցի ոչ մի բարեկամի: Չկար մեկը, որ Ինձ մխիթարեր: «Աստվա՜ծ Իմ, Աստվա՜ծ Իմ, ինչո՞ւ Ինձ լքեցիր»: Բոլոր Ինձ սիրողները լքել էին Ինձ:
Հայացքս ընկավ Մորս վրա: Ես նայեցի Նրան, և Մեր սրտերը խոսեցին. «Քեզ եմ հանձնում Իմ սիրելի զավակներին, որ նաև Քո զավակները լինեն: Դու նրանց համար Մայր ես լինելու»:
Ամեն բան ավարտին էր մոտենում. փրկությունը մոտ էր: Ես տեսա երկինքը բացված և բոլոր հրեշտակներին զգաստ կանգնած՝ քար լռության մեջ: «Հա՜յր Իմ, Քո ձեռքն եմ ավանդում Իմ Հոգին, ես այժմ Քեզ հետ եմ»:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, քեզ թելադրեցի Իմ չարչարանքը:

Կրի՛ր [1] Իմ Խաչը Վասո՛ւլա, կրի՛ր Այն հանուն Ինձ: Իմ Խաչը խաղաղություն և Սեր է աղաղակում: Ես քեզ ցույց կտամ Ճանապարհը, որովհետև Ես սիրում եմ քեզ, աղջի՛կս:

Դեկտեմբերի 4, 1986

(Ես ապշած եմ տակավին և չափազանց մեծ կասկածներ ունեմ, թե այս ամենը ինչպե՞ս է կատարվում. ինչպե՞ս կարող է նման բան պատահել: Ուզում եմ ասել, թե այդ ինչպե՞ս է, որ ես չեմ կարողանում ձեռքս դեկավարել. կարծես ինձ մեկ այլ ուժ է օգտագործում: Մինչդեռ ես ինքս շատ իրատես եմ, դրա համար էլ կասկածում եմ: Սակայն, միևնույնն է, այդ բանը կատարվում է: Ես չփոթված եմ...)

Ես այստեղ եմ: Այդ ես եմ՝ Հիսուս: Աղջիկս, հիշի՛ր, որ դու Հոգի ես, Ես ևս Հոգի եմ[2] և Սուրբ եմ: Ես բնակվում եմ քո մեջ, իսկ դու՝ Իմ մեջ: Մնա՛ Իմ մեջ. Ես՝ Հիսուս, միշտ քեզ հետ եմ: Սա հասկացիր: Իմ Լույսի մեջ գտնվիր, քանզի Ես եմ Լույսը, և Իմ միջոցով դու գիտություն ես ստանում: Դու առաջադիմում ես:

Շատ լավ, ինձ համոզեցիր, որ այդ Դու ես: Դու հասար Քո երկու նպատակին. մեկը, որ ես սիրում եմ Քեզ, և երկրորդը՝ ինձ համոզեցիր, որ Դու ինձ հետ այս կերպ ես ուզում հանդիպել: Դու ինձ հրապուրեցիր: Ես գիտեմ, որ ես աշխարհի մյուս մարդկանցից ավելի խենթ չեմ, կամ՝ առավել խանգարված: Գիտեմ նաև, որ սա դևերից չէ, քանզի նրանց հարձակմանը ծանոթ եմ, որը տառապանք է, հարատև տանջանք[3]: Ես չեմ, որ նախընտրել եմ Քո կանչերը ստանալ, քանզի ես միանգամայն հեռու էի Քեզնից: Դու կամեցար այդ, Աստված իմ: Ես չեմ ափսոսում, և ինչպես կարող եմ ափսոսալ, երբ այժմ Քեզնով հրապուրված եմ:

Զավա՛կս, ես քեզ բարձրացրի, որ դու կարողանաս Ինձ հետ լինել, Ես քեզ սովորեցրի սիրել Ինձ: Ուրա՞խ ես այս կերպ Ինձ հետ լինելու համար:

Օ՛, այո՛:

Ես օրհնում եմ քեզ Իմ Սրտի խորքից:

Դեկտեմբերի 8, 1986

Ես կարո՞ղ եմ Քո Լույսի մեջ լինել:

---

[1] Առաջին անգամ որ Հիսուս խոսում է Իր Խաչը կրելու մասին հոկտ. 23, 1986 թվին էր:
[2] Սա չի ժխտում Իր Փառավորյալ Մարմինը և ոչ էլ իմ մահկանացու մարմինը:
[3] Որովհետև սրանից առաջ նրանք ինձ վրա հարձակվեցին, որպեսզի թողնեմ գրելը:

Դու Իմ Լույսի մեջ ես: Ես Հիսուսն եմ, քո Փրկիչը: Կրել Իմ Խաչը՝[1] նշանակում է կրել քեզ հետ Իմ տառապանքները, աղջիկս:

Դեկտեմբերի 10, 1986

Աղջի՛կս, դու կհետևե՞ս Ինձ: Մի՛ մոլորվիր, սուրբ կյանքով ապրիր:

Հիսուս, չե՞մ կարող լինել այնպիսին, ինչպիսին որ կամ[2]:

Լսի՛ր Ինձ: Թվիր դեթ մի սուրբ հավատավոր անձ, որը չնախընտրեց Եկեղեցին: Թվիր Ինձ դեթ մեկին, որ թերի հավատ ունեցած լիներ...

Ոչ մեկին չեմ կարող հիշել:

Ո՛չ, չկան, այդպիսի անձեր չեն եղել:

(Թվաց, թե Հիսուս սպասում է, որ ես մի բան ասեմ): Ուզում ես, որ ես «կատարյա՞լ» լինեմ:

Այո՛, ուզում եմ: Մի՛ վախեցիր: Ի՞նչն է քեզ գրավում, աղջիկս, դու ի՞նչ ես սիրում:

(Երևի ես հոգոց հանեցի):

Ի՞նչ կպատահի, եթե ես նույնը մնամ:

Միշտ նույնը մնա, և դու կտեսնես, որ Ես չեմ դադարի քեզ կանչելուց:

Կարո՞ղ եմ մի հարց տալ:

Կարող ես:

Դու իրոք կուզեի՞ր, որ ես փոխվեմ:

Այո՛:

Իսկ որևէ տարբերություն կանի՞, եթե ես փոխվեմ, սուրբ լինեմ, ինչպես Դու ես ասում:

Այո՛, տարբերություն կանի, շրջվիր դեպի Ինձ և մնա Ինձ հետ:

Դու կարո՞ղ ես հենց հիմա ապագան տեսնել:

Այո՛, կարող եմ, սիրելի՛ս:

---

[1] Հիսուս նկատի ուներ այն խաչը, որ մարդիկ կրում են իրենց պարանոցին:
[2] Աշխույժ, աղմկոտ կյանք վարել, բայց լինել նաև Իր աշակերտը...

Կարո՞ղ եմ մի հարց տալ:

Կարող ես:

Քանի որ Դու տեսնում ես ապագան, ես մի բան կուզեի իմանալ: Եթե չես ուզում պատասխանել, պարզապես սիրտ նկարիր ինձ համար: Ես Քեզ վերջում հուսախա՞ք եմ անելու:

Ո՛չ, Ինձ հուսախաբ չես անելու:

(Ես թեթևացա...):

Դու ինչպե՞ս կզգայիր:

Ես՝ Աստված, փառավորված կզգամ:

Իսկապե՞ս:

Այո՛: Մի՛ վախեցիր, ինչո՞ւ ես վախենում սուրբ լինելուց: Հիշի՛ր, որ դու տակավին Իմ կանչի առաջին քայլերն ես անում:

Այդ ի՞նչ է նշանակում:

Նշանակում է, որ դու դեռ սովորում ես Ինձնից: Ես քեզ սովորեցնելու եմ և ցույց եմ տալու Իմ գործերը: Սա դեռ Իմ կանչի սկիզբն է. որոշ ժամանակ անց դու կհայտնաբերես Իմ գործելակերպը: Ավելի ուշ, երբ ժամանակը գա, Ես քեզ կկանչեմ, որպեսզի Խաղաղություն գտնես: Դու գիտակցո՞ւմ ես, թե ինչ է նշանակում Խաղաղություն:

Վստահ չեմ: Խաղաղություն՝ կարող է նշանակել մահ, կարող է նշանակել Եկեղեցի, ճշգրիտ չգիտեմ:

Ես Խաղաղություն եմ: Ես այստեղ եմ՝ քեզ մոտ: Իմ Աջ Ձեռքը բռնել է քո ձեռքը, որով դու գրում ես. Ձախ Ձեռքս քո ձախ ուսին է. Ես այստեղ ներկա եմ, և դու Ինձ զգում ես: Ես քո Ուսուցիչն եմ, աղջիկս: Քայլի՛ր Ինձ հետ, գործի՛ր Ինձ հետ, որովհետև Ես նշանակել եմ քեզ, որ լինես Իմ պատգամատարը: Թույլ մի՛ տուր, որ մարդիկ վհատեցնեն քեզ: Նրանցից շատերը չեն հասկանում, քանզի խավարը պատել է նրանց սրտերը՝ մթագնելով նրանց հասկանալու կարողությունը: Խաղաղվի՛ր, Ես՝ Աստված, խենթի պես սիրում եմ քեզ, արիացի՛ր աղջիկս:

Դեկտեմբերի 11, 1986

Աղջի՛կս, կուզենայի՞ր սուրբ լինել: Մի՛ վախեցիր:

(Հիսուս նորից անդրադարձավ նախորդ պատգամի նույն թեմային):

Ստույգ ի՞նչ է նշանակում սուրբ լինել:

Սուրբ լինել նշանակում է լինել մաքուր և ամբողջովին Ինձ նվիրվել: Սուրբ՝ նշանակում է սիրով գործել Ինձ համար, սուրբ՝ նշանակում է սիրել Ինձ և մնալ Իմ կողքին, սուրբ՝ նշանակում է հնազանդվել Օրենքին, սուրբ՝ նշանակում է լինել Ինձ նման:

Կարո՞ղ է մարդ միայն սրտով սուրբ լինել:

Այո՛:

Սիրտն ավելի՞ կարևոր է, քան սրբազան զգեստները:

Այո՛, սիրտն է, որ կարևոր է: Մոտ եղիր Ինձ, մնա Ինձ մոտ[1], դու Ինձ այնքան մոտ չես, որքան Ես եմ ուզում: Զգում եմ, որ Ինձնից խույս ես տալիս:

(Հիսուսն ուրախ չէր...):

Ես Սուրբ եմ, ուստի ուզում եմ, որ դու էլ սուրբ լինես:

Ես իսկապես ուզում եմ ավելի մոտ լինել Քեզ:

Ճիշտ ես ասո՞ւմ: Դու Ինձ իսկապես փնտրո՞ւմ ես:

Ինձ մի՛ լքիր:

Չեմ լքի:

Երբե՞ք:

Երբե՛ք: Աղջիկս, մի՛ վախեցիր: Դու վախենում ես, որ միանձնուհու զգեստները քեզ կտրտմեցնի՞: Ասա՛:

(Ես հավաքեցի ողջ քաջությունս):

Ես իսկապես չեմ ուզում միանձնուհու հանդերձներ կրել: Ես Քեզ սիրում եմ նաև այնպես, ինչպես որ կամ...

Դու վերջապես քաջություն ունեցար այդ ասելու, աղջիկս: Ես գոհ եմ քեզնից ճշմարտախոս լինելու համար: Ես՝ Աստված, սիրում եմ քեզ. դու հասկացար, որ ստած կլինեիր Իմ Երեսին, եթե ասեիր հակառակը:

(Ես զգացի, թե Աստված որքան գոհ էր: Բայց գուցե Նա արդյունքի համար կարող է տխրել):

[1] Նկատի ուներ, որ ես չէի կենտրոնանում Իր վրա:

Ես տխուր չեմ: Ինձ լսիր, Ես ուզում եմ, որ դու սրտով սուրբ լինես և ոչ թե հանդերձով:

Արդյոք այդ զգեստները չհագնելը կիսակատար սրբությո՞ւն է նշանակում:

Սուրբ լինելու համար սրբազան հանդերձներ պետք չեն: Ի՞նչ արժեք ունի այդ զգեստը, եթե մարդու սիրտը սուրբ չէ: Դա նման է աղի, որ կորցրել է իր համը: Ես քեզ պիտի սովորեցնեմ, որ ավելի մոտ լինես Ինձ: Ես քեզ է՛լ ավելի պիտի մոտեցնեմ Ինձ: Զգա՛, որ դու սիրված ես Իմ կողմից, մի՛ վախեցիր Ինձնից: Ես Խաղաղություն եմ: Ես՝ Հիսուս, ղեկավարում եմ քեզ, Ես առաջնորդում եմ քեզ: Ավելի շատ աղոթիր և Ինձ հետ այս ձևով գործիր: Ավելացրու հավատդ Իմ հանդեպ, զգա՛ Իմ կարիքը, զգոն եղիր, քանզի ժամանակը մոտ է:

Դեկտեմբերի 13, 1986

Աղջի՛կս, քեզ թվում է, թե Ես քեզ ծուղա՞կն եմ դցել: Ես քեզ սիրում եմ, սիրելիս, մի՛ վախեցիր Ինձնից: Կարծես վախենում ես, թե քեզ ծուղակն եմ ուզում դցել:

(Իրոք, ես իմ ընկերներին ասել էի այս բանը և գործածել «ծուղակ» բառը):

Գիտեմ, Ես ուզում էի, որ դու Ինձ սիրես:

Դու բարկացա՞ծ ես:

Ո՛չ, բարկացած չեմ:

Անկեղծ լինե՞մ:

Եղի՛ր:

Դու ցանկանում էիր, որ ես Քեզ սիրե՞մ:

Այո՛:

Եվ Դու հասա՞ր Քո նպատակին:

Այո՛, հասա:

Դու ինձ հրապուրեցիր, և դա ինձ դուր է գալիս:

Ուրա՞խ ես դրա համար:

Շատ: Երանի այդքան ուղղակի և վիրավորական ձևով չխոսեի:

Դու սովորում ես. սնվի՛ր Ինձնից, օրհնյա՛լ եղիր:

Կարելի՞ է, որ ես էլ Քեզ օրհնեմ:

Կարելի է:

Այդ դեպքում իմ օրհնությունները Քեզ՝ Հիսուս Քրիստոս:

Ես քեզ սիրում եմ: Ես քեզ մեծացրել եմ, որ լինես Իմ պատգամատարը: Ես ցանկանում էի, որ դու սիրեիր Ինձ: Քանի որ դու դառնալու ես Իմ պատգամատարը, Ես ուզում եմ, որ դու սուրբ լինես, որովհետև Ես Սուրբ եմ, և դու էլ կամենում ես Ինձ հետևել ու գործել Ինձ համար: Մի՛ վախեցիր սուրբ լինելուց: Ինչո՞ւ ես այդքան վախենում դրանից:

Դու բարկացա՞ծ ես:

Ո՛չ, բարկացած չեմ: Սուրբ՝ նշանակում է լինել մաքուր և ապրել Իմ մեջ, սուրբ՝ նշանակում է հետևել Ինձ՝ Ինձ սիրելով, սուրբ՝ նշանակում է լինել Ինձ պես: Ես քեզ կսովորեցնեմ սուրբ լինել, եթե կամենում ես:

Այո՛, ուզում եմ անել, ինչպես Դու ես կամենում, որովհետև ես սիրում եմ Քեզ:

Որ այդպես է, Ես կսովորեցնեմ քեզ, աղջի՛կս, Ինձ մոտիկ մնա, և դու կսովորես: Վստահի՛ր Ինձ և հավատ ունեցիր Իմ հանդեպ. հավատա՛ Ինձ, երբ քեզ ասում եմ, թե ուրախ եմ, որ Իմ կողքին ես: Դու կսովորես. գնա՛ խաղաղությամբ և հիշի՛ր. զգա, որ սիրված ես Իմ կողմից:

Դեկտեմբերի 14, 1986

Ես քո Մխիթարիչն եմ:

Ասա՛ Ինձ, Հիսուս, ինչի՞ է ծառայելու այս առաջնորդությունը և ինչի՞ համար է այս ամենը:

Այն շատերին պիտի առաջնորդի դեպի Ինձ, պիտի արթնացնի Իմ զավակներին ետ դառնալու դեպի Ինձ և ընթերցելու Իմ խոսքը:

Ես ձեր Բարի Հովիվն եմ, որ կանչում եմ ձեզ Ինձ մոտ: Հավատա՛ Ինձ, աղջիկս, նայի՛ր Ինձ, Ի՛նձ նայիր, Ես Իմ դեմքը քեզ ցույց եմ տվել, մի՛ վարանիր, հավատա՛ Ինձ: Մոռացե՞լ ես, թե ինչպես եմ ես գործում, չե՞ս լսել Իմ Գործերի մասին: Մի՛ թույլ տուր, որ քո դարաշրջանը քեզ կործանի: Մնա՛ այնպիսին, աղջիկս, ինչպիսին կաս[1]: Թույլ մի՛ տուր, որ քեզ համոզեն հիմա, երբ դու արթուն ես և բնակվում ես Իմ Լույսի մեջ: Մոտ մնա Ինձ:

[1] Հեշտ է ինձ համոզել, որ հավատամ որևէ բանի: Մեր շրջապատում նման մարդկանց միամիտ են կոչում:

Հիսո՛ւս, խնդրում եմ, Դու կարգելե՞ս նրանց, եթե նրանք փորձեն այդ անել:

Անպայմա՛ն: Ես թույլ չեմ տա, որ որևէ մեկը քեզ կործանի: Լսե՛ք, դուք բոլորդ, ովքեր ականջ ունեք, արթո՛ւն եղեք, քանզի ժամանակը մոտ է:

Դեկտեմբերի 15, 1986

Աղջի՛կս, ողջ Իմաստությունը գալիս է Ինձնից: Դու ուզո՞ւմ ես իմաստություն ունենալ:

Այո՛, Տեր:

Ես քեզ Իմաստություն եմ տալու: Լսի՛ր Ինձ, դու Իմաստություն ձեռք կբերես: Ես Ամենակարող Տերն եմ և քեզ սովորեցնելու եմ: Կառչի՛ր Ինձնից և դու կսովորես: Հավա՛տ ունեցիր Իմ հանդեպ: Աբթնացրո՛ւ Իմ զավակներին, աղջիկս: Ապրի՛ր խաղաղության մեջ, որովհետև քո յուրաքանչյուր քայլը, Ես՝ Աստված, օրհնում եմ: Սուրբ Հոգով լցված՝ դուք բազմաթիվ[1] պիտի լինեք: Գնա՛ խաղաղությամբ:

Դեկտեմբերի 16, 1986

Մի ամբողջ օր պահանջվեց ինձնից հասկանալու, թե Դու ինձ ինչ առաջարկեցիր: Ես զարմացել էի ինձ վրա, որ առանց մտածելու ընդունել էի Քո առաջարկը: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել Քեզ, Տեր:

Խաղաղություն քեզ, դու գիտակցո՞ւմ ես դրա կարևորությունը:

Այո՛, կամաց-կամաց, բայց ես արժանի չեմ նման շնորհի:

Դու պետք է Իմաստություն ձեռք բերես: Բայց մի՛ վհատվիր, Ես կսովորեցնեմ քեզ, թե ինչպես պետք է վաստակես այն: Դու Իմ Լույսի մեջ ես, և Իմ Լույսի մեջ լինելով՝ դու կսովորես:

Լսի՛ր Իմ Ձայնը, փորձիր ճանաչել Ինձ: Ես Հիսուս Քրիստոսն եմ և Ես քո Ուսուցիչն եմ: Ես քեզ սովորեցրել եմ գործել Սուրբ Հոգու միջոցով: Ես սովորեցրել եմ քեզ Ինձ սիրել: Ես Իմ գործերը տեղացել եմ քեզ վրա՝ քեզ կարող դարձնելով, որ հասկանաս Ինձ: Ես քո Ուժն եմ: Քեզ Ուժ կտրվի հաղթահարելու համար քեզ նեղողներին, որոնք շատ են լինելու, զավակս:

(Կարծես Աստված մի քիչ տխրեց և դա ինձ վախեցրեց, որովհետև Աստծո ձայնը հանկարծ դարձավ լուրջ եւ տխուր):

Ինչո՞ւ, ինչո՞ւ:

[1] Սա նշանակում է, որ Սուրբ Հոգով լցված՝ իմ վկայությունը շատերին պիտի բերեր դեպի Աստված, և այդպիսով մենք բազմաթիվ պիտի լինենք:

Ինչո՞ւ, որովհետև շատերը չեն հավատում, որ ես գործում եմ նաև այս ձևով: Ոմանք, ընդհանրապես, ինձ չեն հավատում, աղջիկս: Ես պետք է քեզ զգուշացնեմ[1]: Ես այս բանը ասում եմ քեզ, որ դու պատրաստվես և տեղյակ լինես այս մարդկանց մասին, որովհետև նրանք խուլ են և կույր ու փակել են իրենց սրտերը: Նրանք կուզեն արդարացնել իրենց դիրքորոշումը, ասելով, որ այս ամենն Իմ կողմից չէ, այլ քո մտքի արդյունքն է: Նրանք քեզ կանեն թունավոր տեսություններով և միջոցներ կգտնեն ցույց տալու, որ դու սխալ ես: Նրանք քեզ կառաջարկեն, որ կարդաս իրենց տեսությունները[2], որպեսզի ապացուցեն, որ դու սխալ ես: Ուստի Ես քեզ զգուշացնում եմ, աղջիկս, մի թույլ տուր, որ մարդիկ քեզ հուսահատեցնեն: Մի՛ թույլ տուր, որ քո ժամանակաշրջանը քեզ կործանի:

Տե՛ր, ես ի՞նչ կարող եմ անել, եթե Դու ինձ չպաշտպանես Քո Ձեռքով:

Ես միշտ քո կողքին կլինեմ: Քեզ լքված մի զգա: Ես քեզ պիտի սովորեցնեմ ուժեղ լինել, և դու պիտի անտեսես բոլոր քեզ ճնշողներին: Ես պատրաստում եմ քեզ: Ես քեզ կուշտ պիտի կերակրեմ: Իմ խաղաղությունն ունեցիր և մնա Իմ մեջ՝:

ΙΧΘΥΣ Հիսուս Քրիստոս

[1] Աստված շատ հայրաբար էր խոսում և մտերմիկ:
[2] Կանխասացություն, որ կատարվեց մոտ մեկ շաբաթ անց:

1987

Հունվարի 8, 1987

Խաղաղություն քեզ, Վասուլա, այդ ես եմ՝ Հիսուս: Վասո՛ւլա, Ինձ մոտ արի: Ե՛կ և ապրիր Իմ սրտի կենտրոնում:

Դու Ի՞նձ ես ուզում, Հիսուս:

Այո՛: Ես շատ եմ ուզում քեզ հրապուրել:

Բայց ես բոլորովին անարժան մեկն եմ:

Ես սիրում եմ քեզ, ինչպես որ կաս... եղիր Իմ հարսը, Վասուլա:

Ես ինչպե՞ս կարող եմ լինել Քո հարսը:

Ես սիրում եմ քեզ:

Հիսո՛ւս, բայց ես չգիտեմ, ինչպես Քո հարսը լինեմ:

Ես քեզ կսովորեցնեմ ինչպես լինել Իմ հարսը, սիրելիս:

Տե՛ր, ես դրա համար նշա՞ն պիտի կրեմ:

Ես թույլ պիտի տամ, որ կրես Իմ խաչը: Իմ խաչը խաղաղություն և Սեր է աղաղակում:

Հիսո՛ւս, ես ուզում եմ Քեզ ուրախացնել:

Ինձ կուրախացնես, եթե երբևիցե չլքես Ինձ: Ուրախացրո՛ւ Ինձ՝ սիրելով, ուրախացրո՛ւ Ինձ՝ Իմ զավակներին արթնացնելով:

Այդ ամենի համար ես Քո ուժի կարիքն ունեմ, հատկապես վերջինի համար:

Նայի՛ր Ինձ:

(Ես նայեցի Նրան: Նա ուժ էր ճառագում, ինչպես մի լուսապսակ):

Ես Զորություն եմ: Ես քեզ կօգնեմ, օրհնյալ լինես:

Դու ուրա՞խ ես ինձ հետ: Ես դա երբեք քեզ չեմ հարցրել:

Այո՛, ուրախ եմ և ամբողջ ժամանակ զգում եմ, որ սիրված եմ Քո կողմից:

Երանի մարմնապես կարողանայի Քեզ տեսնել:

Խնդրի՛ր, և կտրվի քեզ. հավատդ ավելացրու հանդեպ Ինձ:

(Ես որոշեցի մի կաթոլիկ քահանայի ցույց տալ գրվածքները: Նա դատապարտեց դրանք, ասելով, որ դա սատանայից է, և որ ես պետք է դադարեմ գրելուց: Հիսուս Նրան հարց էր ուղղել, թե քահանան ուզո՞ւմ է «Սիրո և Խաղաղության Խաչը Ինձ հետ միասին կրել»: Ես հաղորդեցի քահանային այդ մասին: Նա ասաց, որ դա չարից է: Եվ նա Ինձ տվեց կարդալու սուրբ Միքայելի, սուրբ Բեռնարդի աղոթքները և Հիսուսի Սուրբ Սրտի վստահության իննօրյան: Ասաց, որ հաջորդ օրերին կարդամ այդ աղոթքները, հետո տեսնենք, թե ինչ կլինի[1]: Ես այդպես էլ արեցի: Ես թույլ տվի, որ ձեռքս գրի և դուրս եկավ հետևյալը. «Ես, Յահվեն, առաջնորդում եմ քեզ»: Եվ այսպես չորս օր իրար ետևից):

Տե՛ր Հիսուս, ես քահանայի կամքը կատարեցի: Ես դադարեցրի գրելը, բացի այս մի քանի բառից, որոնք գրվեցին աղոթելուց հետո: Ես Քեզ ետ պահեցի գրելուց՝ հնազանդվելով քահանային: Ես ուզում եմ քեզ հարցնել, Տե՛ր, ինչո՞ւ Դու նրան հարց ուղղեցիր, քանի որ գիտեիր, թե ինչ պիտի պատահի, և թե որքան տառապանք նա Ինձ պիտի պատճառի:

Ես քեզ հետ եմ, աղջիկս: Ես հարցրեցի նրան, որովհետև ուզում եմ, որ նա սովորի: Ուզում եմ, որ նա սկսի հասկանալ Իմ Հարստությունը: Ես անսահման Հարստություն եմ:

«Իմացի՛ր *(խոսքն ուղղված է քահանային)*, որ Ես Հիսուս Քրիստոսն եմ, որ առաջնորդում եմ Իմ զավակներին: Այդ Ես եմ, որ առաջնորդում եմ Վասուլային, մի՛ մերժիր Իմ օրհնությունները: Իմ պատգամները Խաղաղություն և Սեր են աղաղակում: Ուզում եմ, որ Իմ զավակները լցնեն Իմ սրբավայրերը, դառնան դեպի Ինձ և սրբությամբ ապրեն: Ես գալիս եմ փայլելու այս խավար աշխարհի վրա: Ես ուզում եմ արթնացնել նրանց և ասել, որ Իմ Խոսքը Կենդանի է: Ես ուզում եմ, որ նրանք հիշեն Իմ Խոսքը, որը մի կողմ է դրվել: Ես ուզում եմ հիշեցնել, թե որքան եմ սիրում նրանց, ուզում եմ բոցավառել նրանց սրտերը, ուզում եմ ասել, որ սիրեն միմյանց, ինչպես Ես եմ սիրում նրանց: Որդի՛ս, Ես սիրում եմ քեզ, սակայն հասկացիր, որ դու ակամա վնասում ես Իմ Եկեղեցուն՝ փորձելով Վասուլային կասեցնել գրելուց: Ես, Տեր Հիսուս Քրիստոսն եմ, որին դու սիրում ես: Ես գիտեմ, որ դու այս անում ես բարեմտությամբ, ինչպես անում էր Սավուղը, մինչ Ես եկա նրան ասելու, թե այն, ինչ որ ինքը հավատում էր որ ճիշտ է, սխալ է, և նա հալածում էր Ինձ: Դու կարծում ես, որ այն չնորհը, որ Ես՝ Հիսուս, տվել եմ Իմ աղջկան՝ (Վասուլային) չարից է: Հավատա՛ Ինձ որդիս, մի՛ վախեցիր. դարձյալ ասում եմ քեզ, որ Վասուլան սովորում է Իմ Կամքի համաձայն: Նա ծաղկում է հիմա, իսկ

[1] Քահանան Ինձնից խնդրել էր, որ գրելուց դադարեի: Ես նրան հնազանդվեցի, բայց երբ մատիտը վերցրեցի, Աստված նորից օգտագործեց իմ ձեռքը:

ավելի ուշ նրա պտուղները պիտի կերակրեն շատ կորած հոգիների: Մի օր դու կհասկանաս, որդիս[1]: Ես՝ Հիսուս Քրիստոսը, սիրում եմ քեզ»:

(Այս բոլորը կարդալուց հետո քահանան դարձյալ ինձ մեղադրեց, ասելով, որ դա չարից է և գուշակություն է):

Գիտե՛մ. գրիր, ինչ որ ուզում եմ, որ ասես նրան. «Գուշակությունները հիմարների համար են, ներշնչումները՝ օրհնյալ զավակների: Գուշակությունները անպտուղ են, ներշնչումները պտղաբեր են՝ սնելով շատերին»:

Վերականգնի՛ր արիությունդ աղջիկս, Իմաստությունը կարթնացնի Իմ զավակներին: Ես՝ Աստված, սիրում եմ քեզ:

Հունվարի 21, 1987

(Քահանան ինձ շատ նեղություն պատճառեց, ինչպես Աստված նախապես ասել էր դեկտեմբեր 16-ի պատգամում: Նա ինձ տարբեր տեսություններ պարունակող գրքույկներ ուղարկեց, ապացուցելու համար, որ դա չարից է: Ինչպես Աստված նախատեսել էր, նա ուղարկեց նաև ենթագիտակցության, ինչպես նաև ոգեհարցման և սատանայապաշտության մասին մի տեսություն: Սրան ավելացրած նաև մի նամակ, որն առաջարկում էր հանուն իմ և մյուսների բարօրության համար, ոչնչացնել գրությունները և զգուշացնել ժողովրդին, որ այդ բոլորը չարից է: Իրեն ասացի, որ երեք աղոթքները կարդալու իր հանձնարարությունը կատարեցի ու նաև այն, որ նոր բան չգրեցի, տեսնելու համար, թե ինչ պիտի պատահի: Բայց չեմ կարծում, որ նա ինձ հավատաց, որովհետև, մյուս քահանային ասել էր (որը հավատում էր, որ դրանք Աստծուց են և պաշտպանում էր ինձ), որ այդ գրությունները սատանայական են, և թե նույնիսկ ես չեմ կարդացել այն երեք աղոթքները, որոնք նա ինձ հանձնարարել էր: Նա այնպես էր անհանգստացրել ինձ պաշտպանող քահանային, որ վերջինս խնդրեց ինձնից իր մոտ թողնել վերջին երկու նոթատետրերը, որ կարդար: Եվ հաջորդ օրը, ինչ-որ մի կարծիքի հանգելով, ասաց ինձ, որ շարունակեմ գրել: Ես վստահ եմ, որ այն քահանան, որը հավատացած էր, որ չարից է, դա անում էր հանուն եկեղեցու սիրո՝ եկեղեցին պաշտպանելու նպատակով: Ցանկանում եմ միայն, որ նա ավելի պարզորոշ կարողանա տեսնել: Նա ուզում է նաև ինձ փրկել՝ մտածելով, որ դա չարից է: Հուսով եմ, որ մի օր ինքը կհասկանա: Աղոթում եմ սուրբ Կույս Մարիամին: Արդյո՞ք ես մի բան սխալ եմ անում):

Աղջի՛կս, որքան ցավում եմ քեզ համար:

Մի՞թե ես սխալ եմ անում, երբ այս պատգամներն ուրիշին եմ ցույց տալիս, ցանկանալով, որ նրանք էլ սիրեն Աստծուն:

Ո՛չ, դու ոչ մի սխալ բան չես անում: Ես Մարիամն եմ՝ Վշտերի Մայրը: Վասո՛ւլա, Ես միշտ կողքիդ եմ: Մեզ հետ եղիր: Ե՛կ Մեզ մոտ

[1] Կանխասացություն, որն իրագործվեց:

մխիթարվելու համար: Նրանք չեն հասկանում Մեր Հարստությունը: Նրանց սրտերը հավիտյան կողպված են: Դու ինքդ Մեր կողմից նրանց տրված բազմաթիվ նշաններից մեկն ես, բայց թվում է, որ նրանք չեն հասկանում: Աստված խրախուսեց քեզ լսելու Իր կանչը:

Վասո՛ւլա, ամեն անգամ, երբ մեկին Աստծո մոտ ես բերում, Աստծուն հաճույք ես պատճառում: Իմ Որդին և Ես միշտ քո կողքին ենք: Զգույշ եղիր, որովհետև չարը կատաղած է քո դեմ: Չարը փորձում է քեզ հուսալքել: Նրանց պայքարելու ձևը քո դեմ՝ սխալ բառեր ասելն է, որպեսզի քեզ մոլորեցնեն: Միշտ հիշիր սա ու երբեք մի՛ մոռանա: Դա նրանց զենքն է՝ ընդդեմ քեզ: Ես քո կողքին եմ և պաշտպանում եմ քեզ:

Ես կկարողանա՞մ չարը ճանաչել:

Ես միշտ քեզ կասեմ, ինձ վստահիր: Հիսուս քեզ սովորեցրել է նրան ճանաչել:

Բայց, ինչո՞ւ են ինձ վրա հարձակվում:

Ես կբացատրեմ քեզ այդ, զավակս: Իմացած եղիր որ դու կապված ես Հաղեսի[1] հոգիներին, սիրելիս, որովհետև քո սերն Աստծո հանդեպ՝ բազմաթիվ կորած հոգիներ է բժշկում[2], որի համար էլ հարձակման ես ենթարկվում: Ես քեզ մոտ եմ և պաշտպանում եմ քեզ: Ես այս բոլորը քեզ ասացի, որ դու կարողանաս հասկանալ, թե ինչու ես սխալ բառեր ստանում: Դու հոգիներին բժշկում ես՝ Հիսուսի և Սուրբ Հորդ հանդեպ ունեցած քո սիրով:

Ուրեմն ես այդ ուղղությամբ էլ ե՞մ գործում:

Այո՛, դու բժշկում ես նրանց քո սիրով: Թույլ մի՛ տուր, որ մարդիկ ազդեն քեզ վրա իրենց տեսությունններով: Ամեն անգամ, երբ քեզ կառաջարկվի դադարեցնել գրելը, հիշի՛ր, թե անցյալում, դու ինչպես անգիտակ էիր՝ ապրելով խավարում: Մեր զավակներից շատերն այլևս չեն ճանաչում Մեր նշանները: Աստված քեզ է ընտրել, որ դառնաս Իր պատգամատարը: Գոհացրո՛ւ Նրան ու լսիր Նրան:

Շնորհակալ եմ Սուրբ Մարիամ: Աստված օրհնի Քեզ:

Խաղաղություն քեզ:

Հիսո՞ւս:

Ես եմ: Վասուլա՛, Ես քեզ այն աստիճան եմ սիրում, որ դու անընդունակ ես ըմբռնելու: Վասուլա, Ես այնպես եմ տառապում, երբ տեսնում եմ Իմ

[1] Քավարան

[2] Աստված օգտագործում է մեր աղոթքները, և Իր հանդեպ մեր սերը քավարանից հոգիներ ազատելու համար, ու միաժամանակ Նա շնորհներ է տալիս մոլորված հոգիներին երկրի վրա, նրանց փրկելու համար:

զավակներին այդքան չորացած: Ինչպես կարող են մոռանալ Իմ սերն իրենց հանդեպ: Ես Իմ Կյանքը զոհեցի նրանց համար, սիրելիս, մոտ մնա Ինձ և զգա Ինձ: Նշանակված ժամին ես պիտի գամ փրկելու քեզ, բայց դրանից առաջ դու առաջադրանք ունես կատարելու:

Ես՝ Աստված, արդեն ցույց եմ տվել Իմաստությունը՝ օրհնելով ամբողջ մարդկությանը: Աղջիկս, մի օր դու ամբողջովին կհասկանաս Իմ գործելակերպը: Մի՛ վախեցիր, քանզի Ես՝ Աստված, սիրում եմ քեզ:

(Ավելի ուշ)

Աղջի՛կս, այդ Ես եմ՝ Հիսուս, և ուզում եմ, որ ամեն անգամ կարդաս այդ երեք աղոթքները, մինչ Ինձ հետ միասին գրելը, որովհետև դրանք չարը հեռու են վանում: Հավատա՛, դրանք ազդեցիկ աղոթքներ են: Դու դեռ ցանկանո՞ւմ ես Ինձ համար գործել:

Հիսո՛ւս, եթե ոչ ասեմ, ի՞նչ պիտի անես:

Դու ազատ ես ընտրելու, մի՛ վախեցիր: Ես քեզնից ետ չեմ վերցնի շնորհը, որ տվել եմ: Ես միշտ կայցելեմ քեզ ասելու, թե որքան եմ սիրում քեզ:

Ո՛չ, Հիսուս, ես արդեն ասել եմ, որ կամենում եմ գործել Քեզ համար, հիշո՞ւմ ես: Ինչո՞ւ պիտի խոսքս փոխեմ:

Ես գոհ եմ քո պատասխանի համար, աղջիկս: Մոտ մնա Ինձ և Ես կառաջնորդեմ քեզ:

Հիսո՛ւս, ես երբևէ վշտացրե՞լ եմ Քեզ:

Այո՛: Ես վիրավորվեցի, երբ դու մոռացար, թե ինչպես Ես եկա քեզ խավարից փրկելու: Բայց Ես քեզ ներել եմ: Գիտեմ, թե դու որքան ես Ինձ սիրում: Ես քո Փեսան եմ, մի՛ մոռացիր: Մի՛ մոռացիր նաև, որ Իմ հարսը լինելով, մենք ամեն բան կիսում ենք: Վասո՛ւլա, Ես Իմ հոգնած ուսերին կրում եմ Խաղաղության ու Սիրո Իմ Խաչը: Մի որոշ ժամանակով վերցրու այն, սիրելիս: Ես դա կդնեմ քո ուսերի վրա՝ ազատելով Ինձ Իմ բեռից: Ուզում եմ, որ մոտ լինես, որ կարողանամ Իմ Խաչի բեռը դնել քեզ վրա: Ուզում եմ, որ մոտ լինես Ինձ, որովհետև գիտեմ, որ դու հասկանում ես, թե Ես ինչպես եմ տառապում: Երբ դու կզգաս Իմ Խաչի ծանրությունը, դու ինքդ էլ կտառապես: Ես քո Փեսան եմ և դրա համար էլ ուզում եմ քեզ հետ կիսել Իմ տառապանքը: Ես կհանգստանամ, երբ դու ազատես Ինձ Իմ բեռից: Նախքան Ինձ ընդունելը, Ես ամբողջ ժամանակ քեզ մոտ էի՝ հետևելով քո բոլոր շարժումներին, սիրելիս: Ես քեզ շատ եմ կանչել, բայց դու անտեղյակ էիր Իմ Ներկայությանը: Հիմա, երբ վերջապես լսեցիր և մոտեցար Ինձ, էլ ինչո՞ւ ես կասկածում:

(Կասկածներ, որոնք դրսևորվեցին քահանայի հետ ունեցած իմ հանդիպումից հետո):

Ամեն անգամ, երբ տկար ես ու կասկածամիտ, հիշի՛ր, թե հենց հիմա ես քեզ ինչ ասացի: Կրի՛ր Խաղաղության և Սիրո Իմ Խաչը և ինձ մի՛ լքիր: Ե՛կ և աղոթիր Ինձ հետ:

(Հիսուս աղոթեց ինձ հետ: Աղոթքի ժամանակ Նա դեպի վեր էր նայում):

Հիսո՛ւս, Դու գիտես, թե Քեզ ինչքան եմ սիրում: Ես Քեզ կօգնեմ կրելու Քո Խաչը և կթեթևացնեմ բեռդ: Մենք կարող ենք կիսել Այն:

Աղջի՛կս, որքան եմ ցանկացել լսել դա քեզանից: Ե՛կ սիրելիս, արի շարունակենք մեր ճանապարհը:

(Հիսուս <u>շատ</u> գոհ էր և ուրախ):

(Հաջորդ օրը)

(Ես լսեցի իմ անունը. Հիսուսն անդադար կանչում էր ինձ: Ես նկարում էի: Դեն նետելով վրձինները՝ վազեցի դեպի դրասեղանս:)

Վասո՛ւլա, Վասո՛ւլա, Վասո՛ւլա: Ես՝ Հիսուս, կանչեցի քեզ: Օ՜, Վասուլա, Ես քեզ որքան եմ սիրում: Փառաբանի՛ր Ինձ, միշտ Ինձ հետ եղիր: Ամեն անգամ, երբ այդպես կաթոգին սիրում ես Ինձ, Ես Ինձ փառավորված եմ զգում: Ինձ միշտ ուրախացրու՝ լսելով այնպես, ինչպես այժմ լսեցիր: Հիշի՛ր, շուտով Ես քեզ հետ եմ լինելու և շուտով քեզ Ինձ մոտ եմ տանելու, սիրելիս, որովհետև Ես քեզ այնքան եմ սիրում, որ դու պատկերացնել իսկ չես կարող: Բայց, նախ և առաջ, դու Իմ պատգամը պիտի փոխանցես բոլոր ազգերին, ինչպես որ հիմա անում ես: Դրանից հետո, Ես կբերեմ քեզ այստեղ, որտեղ Ես եմ, և այն ժամանակ դու ընդմիշտ Ինձ մոտ կլինես: Ես՝ Հիսուս Քրիստոսը, սիրում եմ քեզ: Ես քեզ տվել եմ այս շնորհը, Վասուլա, Ես օրհնել եմ քեզ: Ես երբեք ետ չեմ վերցնի այն, ինչ որ տվել եմ:

– Աղջի՛կս, դու կվերակենդանացնե՞ս Իմ Եկեղեցին:

Օ՜հ, Հիսուս, Դու ինձնից մի այնպիսի բան խնդրեցիր, որ ես անկարող եմ անել Քեզ համար:

Վստահի՛ր Ինձ:

Ուրեմն Քեզնից պիտի կառչեմ և ամբողջովին Քեզ պիտի ապավինեմ: Դու իմ Ուսուցիչն ես:

Փառավորի՛ր Ինձ, Ես քեզ կառաջնորդեմ:

Հունվարի 23, 1987

Օ՜, Վասո՛ւլա, Ես քեզ այնքան եմ սիրում, ե՛կ Ինձ մոտ, Ես քո Հավիտենական Հայրն եմ: Ձգա Իմ Սերը, որ Ես ունեմ զավակներիս

հանդեպ: Ես քեզ առաջնորդեցի, որ Ինձ սիրես: Ես էի, որ քեզ Ճանապարհը ցույց տվի: Ես Սիրո Աստվածն եմ, Խաղաղության Աստվածն եմ, Ողորմության Աստվածն եմ: Ես Խոնարհ եմ, Ես Բարի Հովիվն եմ, Ես ներողամիտ Հայր եմ: Ես ինչպե՞ս կարող եմ քեզ կորած տեսնել և օգնության չփութալ: Ես հաշվում եմ ամեն մեկիդ. Բարի Հովիվն իր կյանքը կզոհի իր ոչխարների համար: Ես Ներողամտության մի Վիհ եմ և երբեք ձեզ չեմ լքի:

(Ավելի ուշ)

Հիսո՛ւս, ի՞նչ կպատահի, եթե ես դադարեմ գրելուց:

Վասո՛ւլա, եթե անգամ դու դադարես գրելուց, Ես միշտ քեզ հետ եմ և առաջնորդելու եմ քեզ: Ես քեզ տվեցի այս շնորհը, որ այս ձևով Ինձ հանդիպես և սովորես Ինձնից: Ես հարցրեցի քեզ, կուզեի՞ր Ինձ համար գործել և քո պատասխանը գոհացրեց Ինձ: Վասո՛ւլա, Ես սիրում եմ, երբ դու վարանում ես: Դու սովորում ես մտածել, նախքան որոշում կայացնելդ:

Ես քո Ուսուցիչն եմ, ընդունի՛ր Իմ առաջնորդությունը: Ես առաջնորդում եմ քեզ ճանաչելու չարը, որը հետամուտ է հոգիների կործանմանը՝ սնելով նրանց իր սնափառությամբ: Ես քեզ սովորեցնում եմ, որ հասկանաս, թե չարը որքան նենգ ու դավաճան կարող է լինել: Ես քեզ կսովորեցնեմ ընդունել, կսովորեցնեմ խոնարհ լինել, անկեղծ լինել ինքդ քեզ հետ և հավատարիմ լինել Ինձ: Ես քեզ խոնարհությամբ կսնեմ: Նորից հիշեցնում եմ քեզ, որ Ես քեզ չեմ նախընտրում մյուսներից: Իմ առաջնորդության նպատակն է սովորեցնել քեզ, կատարելագործել ու մաքրել հոգիդ: Մի վայրկյան անգամ չմտածես, որ Ես քեզ այս շնորհը տվել եմ, որովհետև Ես քեզ ավելի եմ սիրում, քան Իմ մյուս զավակներին: Այս շնորհը Ես տվել եմ, որ սնեմ քեզ և մյուսներին, ովքեր <u>խիստ կարիքի մեջ են</u>: Ես Տերն եմ՝ Հիսուս Քրիստոսը, Բարի Հովիվը, որը հսկում է Իր հոտի վրա: Ես եկել եմ ցույց տալու ձեզ վերադարձի ճանապարհը: Ես եկել եմ փայլելու ձեզ վրայ և հույս ներշնչելու ձեզ:

Վասուլա, ճիշտ է, Ես գնահատել էի քեզ նախ քան քո ծնունդը: Ես քեզ ընտրել եմ լինելու Իմ պատգամատարը հայտնելով Իմ Պատգամն ամբողջ մարդկությանը: Դու տատանվում ես, որովհետև նախապես քեզ հարցրեցի, որ լինես Իմ Հա՞րսը:

Այո՛, Տեր...

Դու ընդունեցիր այդ, հիշում ես, չէ՞:

Այո՛, գիտեմ, Հիսուս: Բայց երբ նորից մտածեցի, զգացի որ չեմ կարող: Ոչ թե, որ չեմ ուզում, այլ ես ինձ արժանի չեմ համարում Քո հարսը լինելու: Ինչպե՞ս կարող էի ընդունել հենց այնպես, առանց գիտակցելու դրա արժեքը:

Վասո՛ւլա, Ես քեզ կսովորեցնեմ, որ արժանի դառնաս Ինձ:

Եթե անգամ արժանի լինեմ, դա բավարար չէ:

Ինչո՞ւ:

Որովհետև հարցը միայն արժանի լինելու մեջ չէ, դրանից շատ ավելին է:

Ես գիտեմ, որ արժանի լինելը բավարար չէ, բայց Ես քեզ կսովորեցնեմ լինել սուրբ և արժանի: Դու պիտի աշխատես և վաստակես այն: Ե՛կ, Ես քեզ կօգնեմ: Դու մնալու ես Իմ հարսը՝ հարս, որը ձևավորվելու կարիք ունի: Ես ընդունեցի քեզ ինչպես որ կաս, որովհետև սիրում եմ քեզ: Բայց դու պիտի թույլ տաս Ինձ, որ ձևավորեմ քեզ այնպես, ինչպես Ես եմ ուզում, որ դու լինես: Ես քեզ կսնեմ, որ աճես: Ես հայտնեցի քեզ, թե չարը ինչպես է գործում՝ առաքելով բազմաքանակ տեղեկություններ: Արթուն եղիր և ուշադիր կարդա դրանք:

Սովորի՛ր ընդունել: Ամեն անգամ, երբ դու թույլ ես և ենթակա թակարդի մեջ ընկնելու վտանգին, Ես պիտի շտապեմ քեզ փրկելու: Իմ առաջնորդությունը իբրև ապաշխարանք մի՛ ընդունիր: Ես առաջնորդում եմ քեզ, որպեսզի վայր չընկնես: Ես չեմ ուզում քեզ կորցնել: Կանչի՛ր Ինձ աղոթքներիդ մեջ, ավելի շատ աղոթիր:

Հունվարի 24, 1987

Վասո՛ւլա, Վասո՛ւլա, փոքրիկս, Իմ Սուրբ Սրտի սիրելին, մի՛ վախեցիր, Ես քեզ սիրում եմ:
Աղջի՛կս, առանց Իմ միջամտության, դու ինքդ կարո՞ղ էիր Ինձ սիրել:

Ո՛չ, Հիսուս:

Դու սովորեցիր Ինձ սիրել, որովհետև Ես մոտեցա և լուսավորեցի քեզ: Քեզ դարձի բերեցի՝ արթնացնելով քեզ: Վասո՛ւլա, դու գիտե՞ս, թե ինչո՞ւ եմ սիրում քեզ:

Ո՛չ Հիսուս, չգիտեմ:

Ուրեմն, ասեմ: Ես սիրում եմ քեզ, որովհետև դու անօգնական ես, թշվառ և մեղավոր: Երեխաներն Իմ թուլությունն են: Ես սիրում եմ նրանց, որովհետև նրանք թույլ են տալիս, որ իրենց ձևավորեմ: Վասուլա, ե՛կ և բնակվիր Իմ Սուրբ Սրտում, որի խորքերում դու խաղաղություն կգտնես ու կզգաս Իմ բուռն Սերը, որ ունեմ բոլորիդ հանդեպ: Դու նրանց կպատմես այն սիրո մասին, որ ես ունեմ նրանց հանդեպ: Տե՛ս, յուրաքանչյուր օր, որ անցնում է, դու ավելի ու ավելի ես Ինձ մոտենում:

Հունվարի 30, 1987

Խաղաղություն քեզ: Ամեն անգամ, երբ քեզ տկար կզգաս, ե՛կ Ինձ մոտ, և Ես քեզ ուժ կտամ:

Գիտե՞ս, թե ինչու հենց քեզ ընտրեցի, Վասուլա:

Չգիտեմ, Հիսուս:

Հիմա կասեմ. Ես քեզ ընտրեցի, որովհետև անօգնական ես և մարդկանց մեջ ամենաթշվառներից մեկը: Թշվառությունն Ինձ գրավում է, որովհետև Ես կարող եմ սփոփել քեզ: Դու անօգնական ես, անկարող, և անընդունակ ես տիրապետելու որևէ լեզվի:

Տե՛ր, եթե այդքան վատն եմ, ինչո՞ւ Ինձ ընտրեցիր այս առաջնորդության համար:

Չէ՞ որ ասել եմ արդեն: Երեխաները Իմ թուլությունն են, որովհետև Ինձ թույլ են տալիս, որ իրենց ձևավորեմ: Ես քեզ ընտրել եմ, որ քո միջոցով հայտնի դարձնեմ Իմ սերը: Մի վտիտ ծաղիկ, որն ինքնուրույն չի կարող աճել, ծաղիկ, որին Ես դտա ամայության մեջ և տեղափոխեցի ու տնկեցի բերկրանքների Իմ պարտեզում՝ թույլ տալով, որ այն աճի Իմ Լույսի ներքո: Միակ բանը, որ քեզնից խնդրում եմ, սեր է. սիրի՛ր Ինձ և հավատարիմ եղիր Ինձ: Քեզնից հավատարմություն եմ ուզում: Ուզում եմ, որ սրտումդ եղած սիրո ամեն մի կաթիլը լցվի Իմ Սիրտը: Ես ծարավի եմ սիրո, որովհետև Սիրո Վարպետ եմ Ես, ուստի քեզնից միայն սեր եմ խնդրում: Երբ սիրում ես մեկին, մի՞թե չես այրվում կյանքիդ ամեն մի վայրկյանը նրա կողքին լինելու ցանկությամբ:

Այո՛, դա ճիշտ է:

Ուրեմն, ի՞նչ կարող է լինել ավելի բնական, քան քեզ ամբողջովին Ինձ նվիրելը: Ե՛կ, եկ Ինձ մոտ, Ես քո Հայրն եմ[1]: Ես գիտեմ, որ առանց Ինձ դու անօգնական ես, թշվառ ու տկար՝ երբ մենակ ես: Թույլ տուր քեզ ձևավորեմ, որ քո միջոցով Ես կարողանամ Իմ Պատգամը հաղորդել: Օ՜ աղջի՛կս, որքան բան ունես սովորելու:

Գիտե՛մ. գիտեմ, որ ես ոչինչ չգիտեմ:

Վասո՛ւլա, Ես քեզ սիրում եմ, բնավ չկասկածես: Ես կպատասխանեմ հարցիդ: Ես ոչ թե միայն ընտրում եմ նրանց, ովքեր նախընտրում են Իմ հարսը[2] լինել, այլ նաև ընտրում եմ նրանց, ովքեր Ինձ չեն ճանաչում: Ես բախում եմ ամեն մի դուռ: Բախում և սպասում եմ՝ հուսալով, որ Ինձ կլսեն: Վասո՛ւլա, Ես փափագում եմ, որ յուրաքանչյուր ոք Ինձ ընդունի և ողջունի: Ես բոլորիդ եմ սիրում:

[1] Ես. 9:5
[2] միանձնուհիները

Ես կարծում էի, որ Դու գերադասում ես կրոնավորների մեջ լինել, որոնք Քեզ միշտ ուրախացնում են:

Վասո՛ւլա, Ես սիրում եմ Իմ հոգևորականներին և քահանաներին, և՛ թե միանձնուհիներին նույնքան, որքան իմ մյուս զավակներին: Ես սիրում եմ բոլորին՝ ներառյալ մեղավորներին ու նույնիսկ Ինձ հալածողներին: Ես մոտենում եմ յուրաքանչյուրին, Վասուլա, անկախ այն բանից, թե նրանք ով են և ինչքան գիտություն են ձեռք բերել իրենց կյանքի ընթացքում: Ես կարող եմ հարություն տալ մեռածին Իմ Զորությամբ: Ես քեզ Իմ Ուժն եմ տալիս, որպեսզի կարողանաս հանդիպել Ինձ այս ձևով, որովհետև՝ Ես եմ Տերը, և որքան դու փոքր լինես, այնքան ավելի հեշտությամբ կարող եմ գործածել քեզ: Դու լավ գիտես, որ Ես Ինձնով բավարարված եմ: Քո անկարողությունը պիտի փառավորի Իմ Կարողությունը: Ես հաշվի չեմ առնում քո թշվառությունը: Ինքդ քեզ Ի՛նձ հանձնիր և թույլ տուր, որ Իմ Ձեռքերը քեզ ձևավորեն:

Ես չեմ ընտրել հեղինակություն ունեցող մեկին, որովհետև Իմ Հեղինակությունը ինքնին բավարար է: Խաղաղության և Սիրո Իմ կոչը գալու է քո միջոցով՝ ողջ մարդկությանը ցույց տալու Իմ Ողորմությունը: Ես քո միջոցով պիտի բացահայտեմ Ինձ: Ես չեմ խնդրում Իմ զավակներից որևէ բան, որ նրանք չունեն: Եթե մեղքեր ու սխալներ ունեն, թող դրանք Ինձ տան, և Ես նրանց կմաքրագործեմ, կբեռնաթափեմ, կներեմ նրանց: Չեմ մեղադրի, այլ միայն կսիրեմ: Ես սիրում եմ բոլոր նրանց, ովքեր ընկնելուց Ինձ մոտ են գալիս՝ ներում հայցելու: Ես նրանց է՛լ ավելի եմ սիրում: Նրանց երբեք չեմ մերժի, եթե մինչև իսկ բազում անգամ ընկնելու լինեն: Ես պատրաստ կլինեմ նրանց ներելու և Իմ Արյամբ լվալու իրենց անօրենությունները: Երբեք չեմ հոգնի նրանց ներելուց, որովհետև Ես Սիրո և Ողորմության Աստված եմ: Իմ գութն անսահման է տկարի հանդեպ:

Իմ Սիրտը Սուրբ է և Ներողամտության մի վիհ է: Առայժմ այսքանը, աղջի՛կս: Ես սիրում եմ քեզ: Վստահի՛ր Ինձ, Վասո՛ւլա, և ինչ ասելիք որ ունեմ, <u>անպայման</u> գրվելու է:

(Ավելի ուշ)

Գիտե՞ս, Ես ուրախ եմ, որ դու Իմ կողքին ես: Ես՝ Հիսուս, Սրտիս խորքից սիրում եմ քեզ, և քո հանդեպ Իմ ունեցած սիրո համար, չարը քեզ ատում է և քո դեմ ծուղակներ է լարելու: Ես քո կողքին կլինեմ՝ քեզ զգուշացնելու համար:

Ես չեմ ուզում ընկնել:

Դու չես ընկնի: Ես քո կողքին կլինեմ, որ պահեմ քեզ ընկնելուց:

Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ պատգամներն ինձ տրվեցին իմ «ձևավորվելուց» առաջ:

Վասո՛ւլա, Ես՝ Աստված, Իմ Պատգամները քեզ տվեցի, որպեսզի դրանից շատերն օգտվեն: Եթե միայն իմանայիր, թե որքան թանկ են Ինձ համար հոգիները[1]: Գիտեմ, ինչ ես մտածում: Ես կպատասխանեմ քո հարցին:

Ի՛նձ լսիր: Ես եկել եմ քեզ մոտ՝ տալու Խաղաղության և Սիրո Իմ պատգամը: Ես ընտրեցի քեզ՝ մի կատարյալ երեխայի, անհամապատասխան Իմ հանձնարարության համար, անօգնական և աննշան մեկը, առանց հեղինակության, <u>մի ոչնչության</u>, որպեսզի քո միջոցով հայտնի դարձնեմ Իմ բուռն Սերը և սովորեցնեմ նրանց, ովքեր տակավին չեն հասկանում Իմ Սրտի Հարստությունը:

Ես տառապում եմ, երբ տեսնում եմ, որ Իմ կրոնավորներն այդքան հեռու են երկնային գործերից և այդքան անտարբեր Իմ Օրհնությունների հանդեպ, քանզի շնորհը օրհնություն է: Նրանց սրտերը որքան են կոշտացել՝ տանելով նրանց դեպի հոգևոր խլության և չորության: Ես մեկ անգամ էլ եմ գալիս Խաղաղության և Սիրո խնդրանքով, բայց դեռ շատ-շատերը մերժելու են Ինձ: Ձեզնից շատերը չեն արձագանքելու: Ձեզնից քանի՞սը, հատկապես Իմ կրոնավորներից, երես պիտի շրջեն Ինձնից ու Ինձ փնտրեն այլ ուղղությամբ: Ո՛վ թերահավատ մարդիկ, որքան քիչ եք Ինձ ճանաչում: Մոռացե՞լ եք, որ Ես Անսահման Հարստություն եմ: Ինչո՞ւ եք զարմանում, թե ինչ տեսակ գործիքներ եմ Ես գործածում: Իմ Զորությունը մեծ է և սահման չունի, և Ես Իմ խոսքերը կհայտնեմ թշվառ հոգիների միջոցով...

Վասո՛ւլա, շատերը Ինձնից նշան պիտի խնդրեն, թե այս առաջնորդությունն իրոք Ինձնից է, թե՝ ոչ: Բայց նշանը, որ Ես պիտի տամ՝ դո՛ւ ես: Ես քեզ ազատեցի չարից՝ արթնացնելով քեզ: Ես վեր բարձրացրի քեզ՝ հասցնելով Իմ Սրտին, Իմ գործերից շատերը տեղալով քեզ վրա: Ընդունի՛ր ինչ որ տալիս եմ քեզ, քանզի Իմաստությունն է քեզ առաջնորդում:

Վասո՛ւլա, Ես սիրում եմ քեզ, փոքրիկս, դու Իմն ես: Աղջի՛կս, տուր Ինձ սեր և հանգստություն, թող որ հանգստանամ քո սրտում: Ընդունիր Ինձ, Վասուլա, մի՛ մերժիր Ինձ: Գիտե՞ս, Վասուլա, թե քանի տարի եմ սպասել, որ Ինձ ընդունես: Օ՜հ, որքան խորթացած էիր դու Իմ Սրտին: Քեզ ասե՞լ եմ երբևիցե, թե Ես ինչ էի զգում այդ ժամանակ:

Ես իսկապես չեմ հիշում, Հիսուս:

Ասեմ քեզ: Ես վախենում էի քեզ համար. դու Ինձնից հեռացել էիր, և Իմ Սիրտը վշտից ճմլվում էր:

Վասո՛ւլա, ինչպես կարող էիր հակառակվել Իմ կանչին, սիրելիս: Ես <u>այսքան</u> տարի սպասել եմ քեզ: Վասուլա, ընդունիր Իմ սերը: Իմ սերը բժշկում է քեզ:

Ոչ թե մերժում եմ Քեզ, Հիսո՛ւս, այլ պարզապես ավելի լավ եմ զգում, երբ <u>տալիս</u> եմ ու սիրում, քան երբ ստանում եմ: Կարծում եմ, Ինձ ճանաչում ես:

[1] Թվում էր, Աստված բոպե իսկ չէր ուզում կորցնել:

(Ես տխրեցի, որովհետև ակամա վշտացրի Հիսուսին: Հիսուսն իսկույն դա զգաց):

Ե՛կ Ինձ հետ: Ես քեզ մի գաղտնիք եմ ուզում հայտնել: Գիտե՞ս, թե ինչու եմ քեզ սիրում, Վասո՛ւլա:

Այո՛, դու արդեն ինձ ասել ես:

Մի ուրիշ պատճառ էլ կա: Ես սիրում եմ քեզ, որովհետև դու սիրում ես Իմ զավակներին:

Ինձ ավելի մոտեցի՛ր: Դու Ինձ թույլ կտա՞ս, որ մուտք գործեմ քո սիրտը:

Այո՛, Հիսուս:

Որքան ուրախացրիր Ինձ, որովհետև գիտեմ, որ կարող եմ հանգչել քո մեջ: Ինձ նորից չմերժես, որովհետև ես տենչում եմ սրտերի մեջ մտնել:

Դու հավանաբար արատներ կտեսնես...

Բոլոր անմաքրությունները, որ կգտնեմ՝ <u>կվամ</u>: Սիրելի՛ս, Իմ Արյունը կմաքրի քեզ:

Փետրվարի 1, 1987

Վասո՛ւլա, այդ ես եմ՝ Հիսուս Քրիստոսը: Ես սիրում եմ քեզ:

Որևէ մի պատգամ, որ մեղադրանքներ և կոպիտ բառեր է պարունակում, դա Ինձնից չի գալիս: Ես Սեր եմ, Սե՛ր, Սե՛ր:

Իմ սիրտը սիրո մի վիհ է: Առաջնորդությունը, որ ես տալիս եմ քեզ՝ քո կարողության համաձայն է: Ինքդ քեզ մի մանուկ համարիր, որը նոր է սկսում անել իր առաջին քայլերը: Ոչ ոք չի ակնկալում, որ նորաքայլ մանուկը ինքնավստահությամբ քայլի: Իմ առաջնորդությունը սկսնակի համար է: Ես սովորեցնում եմ քեզ քայլ առ քայլ շարժվել, և Ես օրհնում եմ ամեն մի քայլդ, որ դու անում ես Ինձ հետ: Ես քո Հայրն եմ[1] օգնելով և ուսուցանելով քեզ, որ դու Ինձ հետ քայլես, զավակս:

Ահա սա է քո մտահոգությանը տրված Իմ պատասխանը: Ես ձեզ բոլորիդ նույն ձևով եմ սիրում:

Դու խոսում ես հատուկ ընտրված հոգիների մասին:

Մի՞թե դու ընտրված չես: Ես սիրում եմ բոլորիդ:

Աղջի՛կս, Ես կամեցել եմ, որ դու Ինձ մոտ լինես: Որքան եմ տենչացել, որ դու սիրես Ինձ, որքան եմ փափագում, որ մնացած Իմ սիրելի զավակները սիրեն Ինձ: Ես կանչում եմ նրանց: Ամբողջ օր ու գիշեր Ես

[1] Ես. 9:5

անցկացնում եմ նրանց դռների ետևում՝ սպասելով, հուսալով, որ մի պատասխան կստանամ: Ես անդադար հետևում եմ նրանց: Իմ Աչքերը երբեք չեն հեռանում նրանցից, և Ես վշտահար դիտում եմ նրանց: Եթե միայն դիտենային, թե խեղճության ինչ աստիճանի վրա են գտնվում իրենց հոգիները, եթե միայն դիտենային, թե նրանք ինչպես են վնասում ու վիրավորում իրենց հոգուն:

Ես ձեզ մոտ եմ. Ես կանչում եմ ձեզ, որ Ինձ մոտ գաք. մի՛ վախեցեք: Ես չեմ հանդիմանի ձեզ. Ես չեմ կանչում ձեզ, որ հանդիմանեմ ձեր մեղքերի համար: Ես կանչում եմ ձեզ, որ Ինձ հանդիպեք՝ թեկուզ մի քանի րոպեով: Եկե՛ք Ինձ մոտ, թշվառ հոգիներ, եկե՛ք ու հանդիպե՛ք Ինձ և ճանաչեք ձեր սիրող Հորը[1]: Նա Ինքը Իր Մարմնով պիտի կերակրի ձեզ, Իր Արյունով պիտի մեղմացնի ձեր ծարավը[2]: Նա պիտի բժշկի ձեզ, եթե դուք հիվանդ եք: Պիտի հանգստացնի ձեզ, եթե տագնապած եք: Նա Իր սիրով կպարուրի և կջերմացնի ձեզ, եթե սառած եք: Մի՛ մերժեք Ինձ: Ես Սեր եմ և սիրում եմ ձեզ՝ անկախ ձեր չարությունից: Ես ասում եմ, որ սիրում եմ ձեզ, եթե նույնիսկ դուք արհամարհեք Ինձ: Ես դթառատ Աստված եմ, միշտ պատրաստ ձեզ ընդունելու և թույլ տալու, որ ապրեք Իմ Սրտում:

Աղջի՛կս, այնքան եմ ցավում, երբ տեսնում եմ, որ նրանք քնած են և դանդաղորեն ավելի ու ավելի խորն են ընկղմվում մեղքի զազրելի խորքերում: Եթե միայն իմանային, թե իրենց անօրենություններն ինչպես են հատուցում իրենց հոգիներին: Ես ասում եմ ձեզ, որ ձեր կյանքը երկրի վրա ոչ այլ ինչ է, եթե ոչ մի անցնող ստվեր, մինչդեռ ձեր կյանքը Երկնքում՝ հավիտենական է: Այնտեղ դուք պիտի ապրեք հավերժորեն ձեր Արարչի մոտ, Նրա Փառքի մեջ: Դրա համար թույլ տվեք, որ հիշեցնեմ ձեզ, որ դուք նրա սեփական զավակներն եք:

Վասո՛ւլա, այս պատգամով Ես պիտի կանչեմ բոլոր նրանց, ովքեր հալածում են Ինձ և պղծում Իմ Անունը:

Այո՛, Տեր:

Փետրվարի 2, 1987

Օ՜, աղջիկս, այն, ինչ Ես բոլորիցդ խնդրում եմ՝ սեր է: Հայրս ձեզ ստեղծեց սիրուց մղված, Իր Միածին Որդուն տվեց սիրուց դրդված: Ես չարչարվեցի ձեզ համար և հանուն սիրո մեռա Խաչի վրա: Ես ձեզ մահից փրկեցի սիրուց մղված: Ուրեմն, ինչո՞ւ, ինչո՞ւ ձեզնից ոմանք ատում և հալածում են Ինձ: Իմ տված Օրենքների համա՞ր է, որ դուք ատում եք Ինձ: Գուցե կաշկանդո՞ւմ եմ ձեզ ազատ ապրելուց և ըմբոստանալուց: Միգուցե դրա համար, որ դուք չեք լսել Իմ մասին, որովհետև չկար մեկը, որ ուսուցաներ ձեզ, և այդպիսով դուք ստեղծել եք ձեր ուրույն

[1] Ես. 9:5-6. «Քանզի մեզ համար մանուկ ծնվեց, մի որդի տրվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի. նա պիտի կոչվի Մեծ խորհրդի հրեշտակ, Սքանչելի, Խորհրդակից, Աստված հզոր, Իշխան խաղաղության, Հայր Հավիտենականության»:

[2] Հովհ. 6:48-51

օրենքները՝ թուլանալով երկրային հարստության և հաճույքների հանդեպ, հետևելով ձեր անձնական հակումներին:

Զավակնե՛րս, Իմ սիրելիներ, սա Իմ հանդեպ ձեր ատելության սկիզբն է, որովհետև դուք չեք ճանաչում Ինձ: Ուրեմն եկեք և հանդիպեք Ինձ հետ: Ես Սեր եմ, հավատացե՛ք Ինձ: Եթե դուք ասեք, որ Ինձ չեք ճանաչում, Ես ձեզ կասեմ՝ որ ձեզ գիտեի մինչ ձեր ծնունդը և նվիրաագործել եմ ձեզ: Եթե դուք Ինձ ասեք, որ ատում էք Ինձ, Ես կասեմ՝ սիրում եմ ձեզ: Եթե մեղանչել էք՝ ներել եմ ձեզ, եթե պղծել էք անունս՝ Ես Իմ Ողորմությունը ցույց եմ տվել ձեզ: Եթե վիրավորել էք Ինձ, այնուամենայնիվ, Ես սիրում եմ ձեզ և առաջարկում եմ Իմ Թագավորությունը կիսել ձեզ հետ երկնքում: Հակառակ ձեր անօրենություններին, Ես ամբողջովին ներում եմ ձեզ:

Վասո՛ւլա, Ես սիրում եմ քեզ, հանգստացիր. ավելի ուշ կշարունակեմ թելադրել:

(Որոշ ժամանակ անց)

Ես այստեղ եմ, Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը: Թույլ տուր Իմ խոսքերը թելադրել քեզ, աղջիկս: Լսի՛ր և զատորոշիր Ինձ հիմա:

Գուցե դուք վախենո՞ւմ եք Ինձնից, դուք Ինձ մերժում եք, որովհետև Իմ Աչքերը կարող են թափանցել ձեր միջով ու կարդալ այն ամենը, ինչ որ ձեր հոգին արել է: Մի՛ վախեցեք Ինձնից, քանի որ Ես արդեն ներել եմ ձեզ: Իմ Արյունը թափվեց ձեր փրկության համար:

Ես մարմնով երկրի վրա էի և ապրում էի մեղավորների մեջ՝ հիվանդներին բժշկելով և մեռելներին հարություն տալով: Ես չեմ լքել ձեզ, քանզի տակավին ձեր մեջ եմ՝ բժշկելով ձեզ: Եկե՛ք Ինձ մոտ, որ բժշկվեք: Ես ձեր հոգիները կբարձրացնեմ դեպի Ինձ: Կսովորեցնեմ սիրել Ինձ և սիրել միմյանց: Եթե թույլ եք, Իմ Ուժը կգոտեպնդի ձեզ, եթե մոլորված եք, Ես այդտեղ կլինեմ՝ ցույց տալու ձեզ Ճանապարհը: Իմ Օրենքը՝ Սիրո Օրենքն է: Հետևե՛ք դրան և Ես բաց կանեմ ձեր սրտերը, որ կարողանաք Ինձ ներս ընդունել:

Ես ձեզ կներշնչեմ, կսովորեցնեմ ձեզ, թե ինչպես սիրել, ինչպես ներել, ինչպես լինել սուրբ և ապրել սուրբ: Դե՛ ուրեմն, եկե՛ք սիրելիներս, եկե՛ք և սովորեք Ինձնից: Ես Սեր եմ, Ես Խաղաղություն եմ, Ես Ողորմություն եմ, Ես Հեզ եմ ու Խոնարհ, Ես Ներողամտություն եմ, Ես ձեզ բոլորիդ սիրում եմ:

Փետրվարի 3, 1987

Տե՛ր, Ես Ինձ դատարկված եմ զգում, անսովոր դատարկ, քարի նման սառը:

Վասո՛ւլա, այդ Ես եմ, որ կտրատում եմ քո ճյուղերը՝ ուժ տալով քեզ: Ես քո Նվիրյալ Պահապանն եմ: Կտրատելով, Ես զորացնում եմ քեզ, որպեսզի առատ լինեն պտուղներդ:

Փետրվարի 4, 1987

Փոքրիկս, գիտե՞ս թե ինչու եմ սիրում քեզ: Մեկ պատճառ ևս: Որովհետև դու Իմ ծաղիկն ես, որ թույլ ես տալիս, որ կտրատեմ քեզ, թույլ ես տալիս, որ կերակրեմ քեզ և թույլ ես տալիս, որ Իմ Լույսը փայլի քեզ վրա:

Ես օգնում եմ, որ դու աճես՝ Խաղաղության և Սիրո պտուղներ տալու համար:

Ես քո Տերն եմ, քո Ուսուցիչը:

Փետրվարի 5, 1987

Սիրելիս, Ես Յահվեն եմ և Իմ եկեղեցական պատգամներն Ինձնից են: Ես կերակրեցի քեզ, իսկ հիմա ձևավորում եմ քեզ, աղջիկս:

Ես Ամենակարողն եմ, մի՛ վախեցիր:

Լսի՛ր, աղջիկս, կատարիր Իմ Խոսքը:

Ես եկա և չարից քեզ ազատեցի, որպեսզի Իմ Լույսի մեջ լինես, որովհետև դու լինելու ես Իմ պատգամատարը: Ես քեզ ուժ կտամ. Ես միշտ քո կողքին եմ, երբեք կասկած չունենաս:

Ես ՇԱՏ անկարող եմ և հանգամանքները ինձ վախեցնում են:

Վախենալու հարկ չկա, քանզի Իմ զորությունը կպատսպարի քեզ՝ տալով քեզ Իմ ուժը՝ ոտնահարելու համար Իմ թշնամիներին:

Արթո՛ւն եղիր, որովհետև շատերը պիտի փորձեն վհատեցնել քեզ, ասելով, որ այդ առաջնորդությունը Ինձնից չէ: Գիտեմ, թե որքան փոքր ու անօգնական ես դու: Դրա համար մոտ մնա Ինձ և թույլ տուր, որ Իմաստությունն առաջնորդի քեզ: Ամբողջ հեղինակությունը գալու է Ինձնից:

Հասկացի՛ր, որ Իմաստությունը գալիս է Ինձնից:

Բոլոր նրանք, ովքեր աչք ունեն, թող տեսնեն: Բոլոր նրանք, ովքեր սիրտ ունեն, թող հասկանան, որ այդ Ես եմ՝ Երկնային Զորքերի Աստվածը, որը խոսում է: Ես ձեզ երբեք չեմ լքել: Ես Իմաստություն եմ տալիս, որպեսզի Իմ կողմից տրված Խոսքը վերահաստատեմ: Ես գալիս եմ հիշեցնելու Իմ ողջ Սերը ձեր հանդեպ և օրհնելու բոլորիդ: Ես չեմ ուզում ձեզ կորած տեսնել: Վա՜յ անմիտներին: Մաքրագործե՛ք ձեզ, քանզի ժամանակը մոտ է: Լսե՛ք Իմ Խոսքերը, որովհետև, եթե դուք անեք այն, ինչ որ Ես ձեզանից խնդրում եմ, Ես կներեմ ձեզ: Ես առաջնորդում եմ ձեզ ապրելու Խաղաղության և Սիրո մեջ, որովհետև Ես Խաղաղության և Սիրո Աստվածն եմ:

Սրբությամբ ապրեք, աղոթե՛ք, որ ներվեն ձեր մեղքերը, և Ես կօրհնեմ ձեզ:

Դուք բոլորդ Իմ զավակներն եք, որոնց Ես սիրով արարեցի:

Եկե՛ք, ամրացրեք Իմ խոսքերը ձեր սրտերում, որովհետև այդ Ես եմ՝ Յահվեն, որ առաջնորդում է ձեզ:

Տե՛ր, ես անօգնական եմ, ոչինչ չգիտեմ: Ես միայն մի մեծ լեռ եմ տեսնում իմ դիմաց:

Մի՛ վախեցիր, Վասուլա, քանզի դու առաջին անօգնական պատգամատարը չես, որին Ես վեր եմ հանել՝ ուսուցանելով Իմ խոսքը: Հավատ ունեցիր Իմ հանդեպ, վստահի՛ր Ինձ. Ես առաջնորդում եմ քեզ:

Փետրվարի 9, 1987

Խաղաղություն քեզ: Ես սիրում եմ քեզ, զավակս: Ես Յահվեն եմ: Ես հատկապես քեզ ընտրեցի, որովհետև դա Իմ ցանկությունն էր, և բացի այդ, որովհետև դու այդքան անօգնական ես:

Ես Քեզ շատ եմ սիրում, Հա՛յր:

Գիտեմ, և Ես էլ քեզ եմ սիրում, աղջիկս: Լսի՛ր Ինձ, նախքան Ինձ սիրելդ, դու երբևէ այսքան ուրախություն զգացե՞լ էիր, ինչքան որ զգում ես հիմա:

Ո՛չ, երբե՛ք:

Սիրի՛ր Ինձ, Վասուլա: Այդ Ես էի, որ քեզ սովորեցրի սիրել Ինձ: Դու կամենո՞ւմ ես ավելի առաջ գնալ:

Այո՛, Հայր, որպեսզի կարողանամ Քեզ փառաբանել: Ես ուզում եմ անել այն ամենը, ինչ որ Դու խնդրում ես, քանզի ուզում եմ, որ Դու փառավորվես:

Վասո՛ւլա, Ես քեզ առաջ կտանեմ: Ես ուզում եմ քեզ զգուշացնել չարի մասին: Նրանք[1] ատում են քեզ և միշտ թակարդ են լարում քեզ համար: Ես քեզ մոտ եմ և պաշտպանում եմ քեզ, այնպես որ, չվախենաս:

Վասուլա, Ես սիրում եմ քեզ, Ես սիրում եմ Իմ բոլոր զավակներին: Իմ Սերը նման է մշտավառ կլանող մի կրակի: Իմ Սերը խանդոտ սեր է: Ես ծարավի եմ սիրո: Մի՛ վախեցիր, որովհետև Ես սիրո մասին է, որ խոսում եմ, փոքրիկս: Ես պահում եմ քեզ և քո փոքրությունը հաճելի է Ինձ: Փոքրի՛կս, քո դյուրաբեկությանդ միջոցով Ես պիտի բացահայտեմ Խաղաղության և Սիրո Իմ կոչը: Ես քեզ պիտի լցնեմ Իմ Խոսքերով: Ես պիտի շնչեմ Իմ հայտնությունները քո մեջ: Փոքրիկս, փարվի՛ր Ինձ, վստահի՛ր Ինձ և սիրի՛ր Ինձ ջերմեռանդությամբ:

Պատմի՛ր նրանց և թող նրանք իմանան, թե Ես որքան սեր ունեմ նրանց հանդեպ:

[1] դևերը

Փետրվարի 10, 1987

Վասո՛ւլա, Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը: Ես քեզ հետ եմ, սիրելիս: Դու գիտե՞ս, որ Ես առաջնորդում եմ քեզ Հաղեսի[1] միջով: Մի՛ վախեցիր. Իմ Լույսը քեզ վրա է՝ պաշտպանելով քեզ չարից: Քեզ Հաղեսին առնչելով, բազմաթիվ հոգիներ են բժշկվում:

Ես սովորեցրել եմ քեզ սիրել Ինձ: Սիրի՛ր Ինձ: Քո սերն Իմ հանդեպ բժշկում է նրանց[2]: Ես օգտագործում եմ քո սերը, որպես մի բալասան՝ բժշկելու նրանց: Բժշկի՛ր նրանց Վասուլա, բժշկի՛ր նրանց: Դու կրում ես Իմ Խաչը Ինձ հետ միասին, Վասուլա: Այս գործերը Երկնային Գործեր են, որ Իմ Հայրը քեզ ցույց է տալիս: Երկնային շատ Գործեր դեռ ծածուկ են և խորհրդավոր են քեզ համար:

Շատերն այս բաները չեն ընդունելու, Հիսուս: Նրանք դա պիտի վերագրեն իմ երևակայությանը:

Վասո՛ւլա, նրանցից քանի՞սն են, որ ամբողջապես հասկացել են Իմ Հոր կատարած Գործերը երկրի վրա:

Շատ գործեր չեն հասկացված և մնում են որպես առեղծված:

Ուրեմն, նրանք ինչպե՞ս պիտի հասկանան, թե ի՞նչ է Երկնայինը:

Վասո՛ւլա, ամբողջ Իմաստությունը տրված է սոսկ երեխաներին: Իմ Հայրը հրճվում է երեխաներով: Ուրախ եղիր, աղջիկս, և գովաբանիր Իմ Հորը՝ քո հանդեպ ունեցած Իր բարության համար: Աղջիկս, եղիր Նրա պատգամատարը և փառավորիր Նրան: Մի՛ մտահոգվիր, Ես առաջնորդում եմ քեզ: Գործի՛ր այս ձևով: Ես քո Ուսուցիչն եմ:

Ես պիտի շարունակեմ ձև տալ քեզ, սիրելիս: Ես ձևավորում եմ ինչպես քեզ, այնպես էլ Իմ մյուս զավակներին: Գնա՛ խաղաղությամբ և հիշի՛ր, որ դու առաջնորդվում ես Իմ կողմից: Լսի՛ր Ինձ, Ես սիրում եմ քեզ և ուզում եմ, որ Ինձ հետ լինես:

Վասո՛ւլա, ուրախ եմ, որ հավատդ աճել է: Սրբագործի՛ր քեզ՝ ճաշակելով և ըմպելով Ինձ:

Խոստանում եմ, Հիսուս, որ կգնամ Սուրբ Հաղորդություն ստանալու:

Ե՛կ Ինձ մոտ, և Իմ Սերն ամբողջությամբ կպարուրի քեզ: Ես սիրում եմ քեզ, զավակս:

Ես սիրում եմ Քեզ Հիսուս, և ես կպայքարեմ Քեզ համար:

Ես պայքար չե՛մ ուզում, որովհետև Ես Խաղաղություն եմ, և դու պիտի գործես խաղաղությամբ՝ Խաղաղության համար:

---

[1] Քավարան (Իմ հոգին առնչվում է քավարանի հետ: Աստծուն սիրելով՝ հոգիները կարող են փրկվել քավարանից: Աղոթքները նույնպես քավարանից հոգիներ են փրկում):
[2] Հանգցնում է նրանց կրակը:

Ինձ ուրախությամբ լցրու՝ մոտ մնալով Ինձ, որքան որ հնարավոր է: Դու կհամբուրե՞ս Իմ ոտքերը:

(Ես վերցրի Հիսուսի նկարը և համբուրեցի Նրա ոտքերը):

Ես սիրում եմ քեզ, գնա խաղաղությամբ:

Փետրվարի 11, 1987

Վասո՛ւլա, այդ ես եմ՝ Հիսուս Քրիստոսը: Աղջիկս, քո տառապանքը Իմն է լինելու, իսկ Իմ տառապանքը՝ քոնը: Դու պիտի կիսես այն ամենը, ինչ Ես ունեմ, այո՛, մինչև իսկ՝ Իմ տառապանքները: Ես քեզ մոտ կլինեմ, կմխիթարեմ քեզ, երբ դու Իմ կարիքը ունենաս, բայց, երբ Ես տառապեմ, կուզենամ, որ փոխարենը դու էլ Ինձ մխիթարես:

Հիսո՛ւս, Դու ոչ մեկի <u>կարիքը</u> չունես և հատկապես՝ Իմ:

Ճի՛շտ է, Ես ոչ մեկի կարիքը չունեմ: Ես Ինձնով բավարարված եմ: Բայց մի՞թե Ես քեզ հետ չեմ կիսում ինչ որ ունեմ: Ես քո Փրկիչն եմ, Բժիշկն եմ, քո Հայրն եմ[1], քո Փեսան: Ես քո Աստվածն եմ, որը երբե՛ք, երբե՛ք չի լքելու քեզ:

(Երեկոյան, երբ ներքևի հարկի աստիճաններից վեր էի բարձրանում, ծանրաբեռնված բաժակներով, ես շատ պարզորոշ մի հսկա մուգ գույնի խաչ տեսա աստիճանների վերին մասում: Դա հսկայական մի խաչ էր՝ Հիսուս կախված դրա վրա, տանջանքներից տնքալով, վերքերով ու արյունով ծածկված: Ես դրա կողքով պիտի անցնեի: Զգիտեի, թե ինչ անեի: Երբ անցնում էի Նրա մոտից, լսեցի Հիսուսի կանչը, որ ասում էր. «Օգնի՛ր Ինձ, Վասուլա, մոտեցի՛ր Ինձ»*: Ես արագ վեր վազեցի, թողեցի բաժակները սեղանի վրա, արագ վերցրի նոթատետրս և Հիսուս գրեց.* «Իմ չարչարանքը մեծ է, տառապանքներս բազմաթիվ. մի՞թե դու Ինձ չես օգնի, Ինձ, որը մեռավ քեզ համար: Ես գամված եմ Իմ խաչին և չեմ կարող գալ քեզ մոտ: Ուրեմն, դո՛ւ Ինձ մոտ արի, ուզում եմ ավելի մոտենաս Ինձ: Վասո՛ւլա, Ես ձեզ բոլորիդ այնքան եմ սիրում: Բժշկի՛ր Իմ զավակներին, կանչի՛ր նրանց և ասա՛, որ սիրեն Ինձ: Օրհնյալ լինես. մոտ մնա Ինձ, Ես սիրում եմ քեզ»: *Այս գրելու միջոցին Նա Ինձ վախ ներշնչեց, և ես չնկատեցի, որ այդ մի քանի վայրկյանի ընթացքում քրտինքով էի ծածկվել):*

Վասո՛ւլա, Ես՝ Հիսուս, տանջվում եմ, և դու ամբողջովին նկատեցիր Իմ խաչը ու Ինձ՝ Նրա վրա:

Ես ուզում եմ, որ դու Իմ տառապանքը զգաս, տառապես Ինձ հետ աղջիկս: Ապրիր Իմ մեջ, և Ես թույլ կտամ քեզ զգալու Իմ խոցված Սիրտը՝ վիրավորված նիզակով, վիրավորված շատ սիրելի անձանց կողմից: Ես սիրում եմ քեզ, դու ինձ կմերժե՞ս: Ես, որ տառապեցի և մեռա քեզ համար, քո սիրտը արիություն ունի՞ Ինձ դիմադրելու: Ես սիրո համար

[1] Ես. 9:5-6

տառապեցի: Սիրուց մղված, ես կանչեցի քեզ, ես օրհնեցի քեզ: Ես կերակրեցի քեզ: Ուրեմն հիմա, քանի որ ես ընտրել եմ քեզ, սպասում եմ, որ դու մխիթարես Ինձ և ջերմորեն սիրես Ինձ: Ես կսպասեմ, որ դու պատասխան տաս արձագանքես Ինձ:

Վասուլա, մի՛ վախեցիր, ինքդ քեզ միանգամայն Ինձ հանձնիր: Այո, հանձնվի՛ր ամբողջությամբ, ինքդ քեզ ամբողջովին հանձնիր Ինձ և ազատություն տուր Ինձ՝ քեզ հետ վարվելու այնպես, ինչպես ուզում եմ:

Տ՛եր, ես արդեն համաձայնվել եմ գործել Քեզ համար, այնպես որ Դու կարող ես վարվել ինձ հետ, ինչպես ցանկանում ես, Տեր:

Այո՛, հանձնվիր: Ես սիրում եմ քեզ: Հաճելի է Ինձ լսել, որ դու հանձնվում ես: Երբեք չմերժես Ինձ, քանզի Իմ սերը քո հանդեպ անսահման է:

Ես կչարունակեմ սովորեցնել քեզ՝ տալով մի գաղտնիք: Վասուլա, վերցրո՛ւ տետրակդ: Մի՛ վախեցիր, որովհետև Իմ ուսուցումները բխում են Իմաստությունից. բոլոր խորհուրդները դեռ չեն բացահայտվել: Բոլոր գործերը տրված են նրանց, ովքեր գիտեն, թե ինչպես սիրեն Ինձ:

(Ես հիմա կվերցնեմ տետրակս... Հիսուսն Ինձ հայտնեց գաղտնիքը: Հետո Նա ասաց. «Ես շատ ուրիշ թաքնված գործեր ևս պիտի հայտնեմ քեզ»*: Դա երրորդ գաղտնիքն էր):*

Յուրաքանչյուր օր, որ անցնում է, դու Ինձ ավելի ես մոտենում:

Դա ի՞նչ է նշանակում:

Դա նշանակում է, որ Ես շուտով քեզ հետ եմ լինելու:

(Մահը ինձ երբեք չի վախեցնում):

Փետրվարի 12, 1987

Ամենակարող Աստված, ես չեմ ուզում ընկնել ունայնության կամ եսապաշտության մեջ: Ես խնդրում եմ ինձ օգնես: Ես ուզում եմ մնալ մի ոչնչություն: Ես ուզում եմ մնալ պարզ մեկը և ամբողջ փառքը <u>Քեզ</u> տալ:

Վասո՛ւլա, ես եմ՝ Յահվեն, ես սիրում եմ քեզ:

Ամբողջ հեղինակությունը գալու է Ինձնից, փոքրիկս: Ես միշտ կհիշեցնեմ քեզ քո փոքրությունը: Ես թույլ կտամ քեզ հասկանալ, թե ես ինչպես եմ գործում: Խաղաղություն գտիր, Վասուլա, ես շուտով քեզ հետ կլինեմ:

(Ես թեթևություն զգացի, իմանալով, որ Աստված ինձ միշտ պիտի հիշեցնի իմ ոչնչությունը): Ես սարսափելի մի օր անցկացրի, պաշարված կասկածներով, որ այս բոլորը անհնարին է, և որ այս ամբողջը իրական չէ: Ես զգացի, որ ինչ որ պատահում է, կարծես չի պատահում. թեև լսեցի, որ

Աստված կանչում է ինձ: Դա բացարձակ իրականության նման էր, բայց միևնույն ժամանակ ոչ մի բան իրական չէր: Ես հանկարծակի զգացի, որ ես ամենաթշվառն եմ մարդկանց մեջ: Իսկապես, ի՞նչ է կատարվում):

Վասո՛ւլա, դու մոռացե՞լ ես, թե ինչ վիճակում էիր մի տարի առաջ: Սիրելիս, թույլ տուր հիշեցնեմ քեզ, որ ես՝ Յահվեն, երբ անցնում էի մեռելների[1] միջով, ես քեզ տեսա չարագործների մեջ: Նրանք բռնել ու չարչարում էին քեզ: Ես քեզ տեսա ընկած, միայնակ պայքարելիս: Քո հոգին մոտ էր մահվան: Ես քեզ շատ խղճացի: Դու հիշեցիր վաղ ժամանակների Իմ գործերը և այդ պահին հասկացար, որ ես կարող եմ լինել քո փրկությունը: Ես լսեցի քո աղերսանքը երկրից:

Աղջի՛կս, ես միշտ սիրել եմ քեզ, բայց դու մոռացել էիր Ինձ: Ես տենչում էի, որ դու Ինձ սիրեիր, որ լսեի քեզ Ինձ «Հայր» կանչելիս: երկար տարիներ շարունակ ես սպասել եմ դռանդ առջև՝ սպասելով, ու սպասելով, որ գուցե մի օր դու կլսես Ինձ... Ես այնքան մոտ էի քեզ: Հետո, Սիրտս չդիմացավ քո աղերսանքին, և ես եկա <u>ուրախությամբ լցված</u>: Դու վերջապես կանչեցիր Ինձ: Ես բարձրացրի քեզ Իմ կրծքին, աղջիկս, և բժշկեցի քո վերքերը: Ես սովորեցրի քեզ, ինչպես Ինձ սիրել: Ես սովորեցրի, թե ինչպես Ինձ ընդունել բարձրացնելով քեզ, և թույլ տվի, որ Իմ Լույսը փայլի քեզ վրա... Ծաղիկս, մի՛ վհատվիր: Ես քայլ առ քայլ սովորեցնում եմ քեզ <u>մի այնպիսի բառապաշարով, որը հասկանալի է քեզ</u>[2]:

Դու Ինձ հարցնում ես, թե ինչո՞ւ առաջնորդությանս մի մասը գրի էր առնվել մինչ քո ձևավորումը[3]: Ես կպատասխանեմ քեզ, երբ դու Իմ հարցին պատասխանես: Դու գիտե՞ս, թե անգամ մեկ հոգին, որքան արժեքավոր է Ինձ համար:

Գիտեմ, որ արժեքավոր է, բայց թե որքան, ես այդ չգիտեմ, Աստված իմ:

Ուրեմն, պատասխանելով հարցիդ ասեմ, թե որքան արժեքավոր են հոգիները Ինձ համար: Մի հոգին Ինձ համար այնքան արժեքավոր է, որ Իմ առաջնորդության մեկ մասը գրի եմ առել հատկապես այդ մեկ հոգու համար, որը ոչ մի այլ հնարավորություն չուներ նախքան այս աշխարհից մեկնելը: Դու հասկանո՞ւմ ես հիմա:

Այո՛, հասկանում եմ և գիտեմ, թե ում նկատի ունես:

Սիրում եմ քեզ, աղջիկս: Կասկած չունենաս, որ այս առաջնորդությունը Ինձնից է: Ես միշտ պիտի հիշեցնեմ, թե քեզ ով արթնացրեց քնից:

Ես սիրում եմ քեզ. միշտ վստահ եղիր Իմ սիրուն: Գործի՛ր խաղաղությամբ և Ինձ մի՛ մոռացիր:

---

[1] Հոգեպես մեռածների

[2] Աստված չեչտեց սա:

[3] Խմբագրի կողմից՝ Վասուլան հարցրեց սա հունվար 31, 1987 թվին:

Փետրվարի 13, 1987

Խաղաղություն քեզ: Ես այստեղ եմ: Ես եմ՝ Հիսուս, որ առաջնորդում եմ քեզ, մի՛ վախեցիր: Միացիր Ինձ, Վասուլա. այն ամենը, ինչ Ես ուզում եմ քեզնից՝ սեր է:

Ես մտահոգ եմ այս պատգամների համար: Ես ինձ պատասխանատու եմ զգում: Զգիտեմ, ինչպես գործեմ:

Ես Ինքնաբավ եմ և առանց քո օգնության կարող եմ օգնել Իմ բոլոր զավակներին: Բայց, որպես քո Ամուսինը, Ես ուզում եմ ամեն ինչ կիսել քեզ հետ: Մի՛ անհանգստացիր, քանզի Ես Զորություն եմ, սիրելիս, հենվիր Ինձ վրա և թույլ տուր, որ Ես առաջնորդեմ: Հիշի՛ր, որ այդ Ես եմ, որ տալիս եմ քեզ Ինձ հետ հանդիպելու այս ուժը:

Ես խնդրում եմ քեզնից, որ Ինձ հավատարմորեն սիրես: Սիրի՛ր Ինձ ջերմորեն, սփոփի՛ր Ինձ, երբ քեզնից սփոփանք կխնդրեմ, քանզի ձեզանից շատերը վիրավորում են Ինձ: Նրանք ամեն օր բազմաթիվ մեղքեր են գործում՝ վշտացնելով Հոգիս, դառնացնելով Ինձ, Բաժակս վշտով լցնելով: Նրանք ինչպե՞ս են մոռացել Ինձ: Վասո՛ւլա, երբ Ամուսինը վշտանում է, Նա ո՞ւր է շրջվում մխիթարության համար, եթե ոչ դեպի իր հարսը, որը սիրում է նրան:

Ես կմխիթարեմ Քեզ, եթե կարողանամ, բայց, ի՞նչ կարող եմ անել: Ես, որ գիտեմ անարժեք մեկն եմ, և հավանաբար ակամա վիրավորում եմ Քեզ, անկարող եմ ու երկչոտ խոսելու Քեզ հետ՝ լցված անարժանության զգացումով:

Գիտեմ, ինչ որ ասացիր ճիշտ է, բայց մի՞թե Ես քեզ չեմ ընտրել, գիտենալով քո բոլոր թուլությունները: Ես սիրում եմ քեզ, Վասուլա, և միակ բանը, որ ուզում եմ քեզնից այն է, որ դու արձագանքես Իմ սիրուն:

Ես Քեզ շատ եմ սիրում: Դու միշտ իմ մտքում ես: Ես ապրում եմ Քեզ համար: Ես սիրում եմ Քեզ: Ես անկարող եմ չափել, թե ինչքան եմ սիրում Քեզ, բայց դու կարող ես: Ես միայն կարող եմ խնդրել, որ Ինձ սովորեցնես Քեզ ավելի սիրել, որպեսզի այն դառնա անսահման:

Սիրելիս, գլուխդ դիր Ինձ վրա և թող որ Ես քեզ մաքրությամբ ու սրբությամբ օծեմ, որ դառնաս Իմ հագեցած ծաղիկներից մեկը՝ ներծծված Ինձնով: Ե՛կ, Ես պիտի կերակրեմ քեզ, դու Իմ ձեռքից պիտի ճաշակես:

Ես քեզ կսովորեցնեմ Ինձ ավելի շատ սիրել:

Փետրվարի 14, 1987

(Սբ. Բերնարդի Սուրբ Մարիամ Աստվածածնին ուղղված աղոթքը կարդալուց հետո):

Ամբողջ առաջնորդությունը Աստծուց է:

Վասո՛ւլա, լսո՞ւմ ես Ինձ: Դարձյալ լսիր, Վասուլա: Ես եմ՝ Սուրբ Մարիամը, մի՛ վախեցիր Ինձնից: Վասո՛ւլա, գիտեմ, որ քեզ համար դժվար է հասկանալ, որ այս բոլորը իսկապես տեղի է ունենում: Բայց Ես քեզնից խնդրում եմ, որ վստահես Աստծուն և ավելացնես հավատդ:

Աստված գործում է քո մեջ, զավակս: Քեզ ետ մի պահիր ենթարկվելուց: Ինքդ քեզ հանձնիր Նրա Ձեռքերին և կատարիր ինչ որ Նա խնդրում է քեզնից: Ես քեզ մոտ եմ և օգնում եմ քեզ: Խաղաղություն մեջ եղիր, քանզի Նա առաջնորդում է քեզ:

Վասո՛ւլա, Հիսուս ձևավորում է քեզ, որպեսզի զորանաս և կարողանաս դիմադրել փորձությանը: Նա կերակրում է քեզ, տալով այն ամենը, ինչի պակասություն որ ունես:

Հիշի՛ր, աղջիկս, Իմաստությունը քեզ սնեց ու մեծացրեց, գիտակցի՛ր, թե ինչու:

Այս բոլորը միայն ինձ համար չէ, այլ նաև ուրիշների համար է, չէ՞:

Այո՛, դու ձևավորվում ես, որ լինես Աստծո պատգամատարը:

Ես չգիտեմ ինչպես դառնալ Աստծո պատգամատարը:

Աստված խրատել և սովորեցրել է քեզ սիրել Իրեն: Վստահի՛ր Նրան, որովհետև Նրա հարստությունը անհամար է և Նրա Ողորմությունը՝ անսահման: Նա քեզ սիրում է մի անասելի քնքշությամբ և սիրազեղ հայացքով հսկում քեզ վրա: Ամեն մի Երկնային խոսք ապրում է հավիտյան:

Ես պետք է սովորեմ Քեզ ավելի շատ սիրել:

Ես կսովորեցնեմ քեզ: Խաղաղություն քեզ:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, Ես եմ՝ Հիսուս: Ես քեզ ուժ եմ տալիս, որ հանդիպես Ինձ հետ:

Առաջ գնա Ինձ հետ, որովհետև Ես հաստատելու եմ Իմ կողմից տրված խոսքերը, որպեսզի շատերը կարդան և օգտվեն դրանցից: Աղջի՛կս, երբ Իմ կողմից տրված առաջնորդությունը կհաստատվի, Ես քեզ կպատրաստեմ Ինձ հանդիպելու: Ես տենչում եմ, որ դու Ինձ մոտ լինես:

Վասուլա, Ինձ նայիր[1]: Դու ուրա՞խ ես Ինձ այս ձևով հանդիպելու համար:

Այո՛, շատ: Ես ամենևին արժանի չեմ այս շնորհին:

[1] Ես նայեցի Հիսուսի դեմքին: Նա ուղիղ Ինձ նայեց:

Ընդունի՛ր այն, ընդունի՛ր ինչ որ տալիս եմ: Ես այն տալիս եմ նույնիսկ ամենաթշվառ հոգիներին: Վասուլա, լսե՞լ ես, որ Իմաստություն եմ տալիս միայն երեխաներին և ոչ թե գիտուն ու խելացի մարդկանց:

Այո՛, գիտեմ, ինչո՞ւ է այդպես:

Որովհետև երեխաները Իմ թուլությունն են: Նրանք թողնում են, որ իրենց ձևավորեմ:

Ես անարժան հոգիներ եմ ընտրում ձևավորելու համար, նրանց, ովքեր քիչ գիտեն, կամ՝ գրեթե ոչինչ չգիտեն: Ես պիտի հոգամ քեզ, Վասուլա, որովհետև Ես հարուստ եմ: Ինձ հետ դու ոչ մի բանի պակասություն չես ունենա:

Ես սիրում եմ քեզ: Գիտե՞ս, թե ամեն անգամ, երբ հանդիպում ենք, դու որքան ես ուրախացնում Ինձ: Ուրախ եմ, որ վերջապես դու Ինձ մոտ ես: Որևէ հայր չի՞ ուրախանա իր կորած զավակին գտնելով: Դու կորած էիր, և Իմ Սիրտը չափից դուրս պատառոտվում էր վշտից: Դու մոլորվել էիր, թողնելով Ինձ հուսահատության մեջ: Ես փնտրեցի ու գտա քեզ: Ուրեմն, Ես ինչպե՞ս չուրախանամ, երբ դու Ինձ մոտ ես: Վասո՛ւլա, դու կսովորես Ինձ մոտ: Ես կսովորեցնեմ քեզ բոլոր առաքինությունները, որպեսզի քեզ կարող դարձնեմ Ինձ փառաբանելու: Զավակս, սովորի՛ր ներծծել Արդարության Ցողը, սովորի՛ր Ինձ փառաբանել, սովորի՛ր Իմաստությունից: Ես սիրում եմ քեզ, գնա՛ խաղաղությամբ և կանչիր Ինձ, երբ ուզում ես: Ե՛կ աղոթենք միասին:

(Մենք աղոթեցինք):

Հիմա եղիր Իմ ընկերակիցը և պահիր Ինձ քո սրտում:

Փետրվարի 15, 1987

Ես սիրում եմ Քեզ, բայց մի՛գուցե սխալ ձևով եմ սիրում: Ո՞րն է ճիշտը կամ սխալը, ես չգիտեմ: Ես պաշտում եմ Քեզ:

Վասո՛ւլա, սերը՝ սեր է: Ես ուզում եմ, որ Ինձ անկաշկանդ սիրես: Ես քո Սուրբ Հայրն եմ, որը քեզ սիրում է մտերմաբար: Մոտեցի՛ր Ինձ և սիրիր Ինձ մտերմորեն: Ես ուզում եմ մտերիմ լինել քեզ հետ:

Մի՛ վախեցիր: Ես ուզում եմ քո ողջ սերը: Վասուլա, Ես ուզում եմ, որ դու այսօր ապաշխարես:

Հիմա՞ պիտի ապաշխարեմ:

Այո՛, ապաշխարիր. Ես լսում եմ[1]: Այո՛ աղջիկս, Ես ներում եմ քո բոլոր մեղքերը, քանզի դրանք շատ են:

[1] Ես ապաշխարեցի:

Վասուլա, դու գիտե՞ս որ այդ ես եմ, որ ապաշխարել սովորեցրի Իմ ուսուցիչներին: Դրանք Իմ հրահանգներն են: Ես Իմ ուսուցիչներին իշխանություն եմ տվել, որ զավակներս խոստովանեն նրանց:
Զավա՛կս, ես գրեցի դա՝: Վասու՛լա, Ինձ ոչինչ չմերժես: Ես քեզնից շատ բաներ պիտի պահանջեմ: Դու պատրա՞ստ ես քո Աստծուն և Փրկչին հետևելու:

Այո՛, այնքան ժամանակ, որ <u>կհասկանամ</u>, որ դա Քեզնից է գալիս: Ես կհետևեմ Քեզ, որովհետև սիրում եմ Քեզ:

Վասո՛ւլա, երբեք չվախենաս Ինձնից: Վստահի՛ր Ինձ: Ես քեզ պատրաստում եմ դիմագրավելու ավելի մեծ փորձությունների: Դու պատրա՞ստ ես Ինձ հետևելու:

Քո օգնությամբ պատրաստ կլինեմ:

Մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ մոտ եմ և կօգնեմ քեզ:
Աղջի՛կս, քեզ ամբողջովին հանձնիր Իմ ձեռքերին: Թող որ քեզ գործածեմ, սիրելիս, հոգիներ բժշկելու համար: Թող որ քեզ Ինձ կապեմ սիրո շղթաներով և թող որ զգամ, որ դու ամբողջապես Իմն ես: Թույլ տուր Ինձ՝ Քո Արարչին, որ տիրանամ քեզ:
Ես կարոտ էի քո սիրուն: Թող որ Իմ սերը հիմա բոցավառի սիրտդ: Ամբողջովին Իմս եղիր: Ես տենչում էի քեզ, Ես տենչում եմ քեզ: Դու Ինձ երբեք չե՞ս փափագում, Վասուլա:

Այո՛, փափագում եմ:

(Թե՞ արդյոք կարծում եմ, թե փափագում եմ):

Վասո՛ւլա, սիրելիս, ինքդ քեզ Ինձ հանձնելով՝ դու կփառավորես Ինձ և կմաքրագործես քեզ:
Ես քեզ հիմա Ինձ եմ կապում: Ես՝ Ամենաբարձրյալ Աստվածը, մինչև վերջ քեզ հետ պիտի լինեմ:
– Ճշմարիտ եմ ասում, որ Ես քեզ ընտրել եմ, գիտենալով, որ դու ոչնչություն ես՝ թշվառ և մեղավոր մեկը: Բայց, հակառակ քո բոլոր թերությունների, Ես սիրում եմ քեզ: Այո՛, Ես սիրում եմ բոլորիդ՝ հակառակ ձեր անօրենությունների:

Տե՛ր, Դու հիմա Ինձ կապեցի՞ր:

Այո, կապեցի: Ես սիրում եմ քեզ: Ես դա արեցի սիրուց մղված: Ուզում եմ, որ դու միշտ Ինձ մոտ լինես: Սիրելիս, լսի՛ր Ինձ. Իմ կապերը սիրո կապեր են, սրբության կապեր: Ես սիրում եմ քեզ: Թող Իմ զավակները հասկանան, թե Ես նրանց որքան կարող եմ սիրել:

[1] Ես փորձեցի ջնջել «խոստովանություն» բառը: Ես դեմ էի խոստովանության, բայց իմ ձեռքն արգելակվեց Աստծո կողմից:

Իմ Գթասրտությունը սահմաններ չունի: Իմ սերը մի կլանող բոց է, որը բոցավառում է Ինձ ընդունող ամեն մի սիրտ:

Աղջիկս, գնա՛ հիմա, բայց հիշի՛ր, որ Ես եմ առաջնորդում քեզ, հիշի՛ր, թե ով մաքրագործեց քեզ[1]:

Մոռացե՞լ ես: Մի՞թե Ես քեզ անձամբ չեմ օծել:

Այո՛, Տեր, ամսի 13-ին:

Վասո՛ւլա, Ես Ինքս տվի քեզ Իմ Հացն ու Գինին: Հիշի՛ր, որ Ե՛ս ընտրեցի քեզ մաքրագործելու պահը, զավակս[2]:

Սիրի՛ր Ինձ և եկ գործենք իրար հետ:

(Սա Ինձ հիշեցրեց, երբ առաջին անգամ Սուրբը Հաղորդություն ստացա եկեղեցում: Դա նորից արվեց խորհրդավոր ձևով: Ես քահանա Կարլի հետ էի: Աստված ուղարկեց Ինձ նրա մոտ Սուրբը Հաղորդություն ստանալու: Կարլը շատ վստահ չէր, Հաղորդություն տա՞ր Ինձ, թե ոչ, որովհետև դա խնդրվել էր նման խորհրդավոր ձևով: Հետո Կարլը ասաց, որ նա կխոսի Աստծո հետ, կաղոթի, բայց ոչ բարձրաձայն, այնպես որ Ես չլսեի, և պետք է թողնեի, որ ձեռքս գրեր Աստծուց ստացած պատասխանը: Եվ Աստված գրեց.

«ԹՈՒՅԼ ԿՏԱՄ»:

Ես հարցրի Կարլին, թե նա ինչ հարցրեց: Նա ասաց, որ հարցրել է, թե Աստված թույլ կտա՞ր, որ Ես խոստովանեի Կարլին: Աստված պատասխանել էր, որ թույլ է տալիս[3]: Կարլը, առանց վարանելու Ինձ ասաց, որ չորս օր անց գամ Սուրբը Հաղորդություն ստանալու: Միևնույն ժամանակ, Աստված խնդրեց Ինձ ապաշխարել: Ես չգիտեի, թե դա ինչպես անեի: Դրա համար Նա Ինձ բացատրեց ինչ ասել: Ես այդ ասացի Նրա հետ միասին: Հետո, հաջորդ օրը, Ես Սուրբը Հաղորդություն ստացա):

Փետրվարի 16, 1987

(Ես սկսեցի հասկանալ, որ իսկապես չեմ կարող ապրել առանց Աստծո: Կարծում եմ, Նա Ինձ ուղղակի կապել էր Իրեն):

Ես Յահվեն եմ, զավակս: Այդ Ես եմ, շրջվի՛ր Իմ կողմը: Ես սիրում եմ քեզ, և քանի որ այս մեծ սերն ունեմ քո հանդեպ, Ես պահում եմ քեզ: Մի՛ վախեցիր զավակս: Լսի՛ր Ինձ. այս խանդավառ սիրո պատճառով՝ Ես քեզ Ինձ եմ կապում: Հենվի՛ր Ինձ վրա. Ես ուզում եմ, որ դու Իմ կարիքը զգաս, Վասուլա:

Դու մեզ այդքան շա՞տ ես սիրում:

[1] Ես չէի հասկանում, դրա համար էլ տատանվում էի:
[2] Ճիշտ է, քանզի եկեղեցում ես ամբողջովին զանազանեցի Հիսուսին՝ մյուսների հետ Տապանակում երգելիս: Նա Ինքն անձամբ Ինձ տվեց Հացն ու Գինին:
[3] բացառապես այս անգամ

Օ՜ աղջիկս, դու չե՞ս զգացել Իմ Սերը[1]: Իմ Սերը կլանող սեր է քո հանդեպ:

Ես փառավորված եմ զգում, տեսնելով թե դու որքան կապված ես Ինձ: Իմ սերն անսպառ է քո հանդեպ, և Ես երբևիցե չեմ բաժանվի քեզնից, բայց նաև ուզեցի համոզված լինել, որ դու էլ չես բաժանվի Ինձնից: Ես ապահովել եմ մեր միությունը: Տեսնո՞ւմ ես... Ես հրճվում եմ, որ հաղթել եմ:

Ցանկանում եմ, որ մենք հավիտյան միացած լինենք, դու՝ Իմ կարիքը զգալով, Ինձ սիրելով և հավիտյան կապված Ինձ հետ, իսկ Ես՝ կապված քեզ հետ՝ թույլ տալով Ինձ, որ ազատ ու անկաշկանդ սիրեմ ու տիրեմ քեզ վրա:

Ե՛ս, որ արարեցի քեզ, Ե՛ս, որ խնամեցի քեզ, Ե՛ս, որ սրբագործեցի քեզ, Ե՛ս, որ առաջինն էի, որ նկատեցի քեզ: Ե՛ս, որ լցրեցի քեզ Իմ Հոգով, այդպես կամեցա, քանզի Ե՛ս, Վասուլա, քո Աստվածն եմ՝ Յահվեն, որը սնեց և մեծացրեց քեզ:

Ես ուզեցի համոզված լինել, որ քեզ Ինձ հետ կապող թելերը հավիտենական են: Դու անկարող կլինես քեզ անջատել Ինձնից, որովհետև Ես Ամենաբարձրյալն եմ:

Չնայած ես Քեզ սիրում եմ, Տեր, բայց և <u>վախենում եմ</u>, Տեր: Քո Զորությունն ու Իմաստությունը մեծ է:

Ինչո՞ւ Վասուլա, ինչի՞ց ես վախենում: Մի՞թե Ես Սիրո Տերը չեմ:

Ես պիտի հոգամ քեզ, պիտի հանգստացնեմ, երբ դու ցավի մեջ լինես: Ես կպատեմ քեզ Իմ օրհնություններով, կհայթայթեմ ինչի պակաս որ ունես: Ես Անսահման Հարստություն եմ: Դու կարիք չունես վախենալու Ինձնից: Ես Նա եմ, ով պահում է երկրի հիմքերը: Ինձ ազատ թող քեզ հետ վարվելու, ինչպես որ ցանկանում եմ: Ես այնքան ուրախ եմ, որ դու Ինձ մոտ ես, դու՝ որ այնքան փխրուն ես և տկար, քանի որ Ես գիտեմ, որ քո սիրտը թույլ կտա Ինձ վարվելու քեզ հետ այնպես, ինչպես որ հաճելի է Ինձ: Մի՛ վախեցիր, որովհետև Ես քո Երկնային Հայրն եմ և սիրում եմ քեզ մարդկային հասկացողությունից էլ այն կողմ:

Ես Յահվեն եմ, և եթե դու նախապես չես լսել, հիմա քեզ ասում եմ, որ Ես ճանաչված եմ Իմ Հավատարմությամբ և Իմ Խոսքը հաստատ է:

Զավա՛կս, Ես քեզ մահից վերակենդանացրի, որպեսզի գրվի Իմ Խոսքը: Ես քեզ մեծացրի՝ լինելու Իմ պատգամատարը:

Եվ քանի որ դու լինելու ես Իմ պատգամատարը, դու պիտի դաստիարակվես ու ձևավորվես: Դու պիտի սովորես, թե Ես ինչպես եմ զգում, ինչպես եմ գործում և ինչպես է Իմ Սերը բոցավառում սրտերը: Էլ ուրիշ ի՞նչ ձևով դու կկարողանաս ասել Իմ սիրելի զավակներին:

Ե՛կ, զգա Իմ ներկայությունը այն ձևով, ինչպես Ես քեզ սովորեցրի: Ես սիրում եմ քեզ փոքրիկս, զանազանիր ու նկատիր Ինձ: Ես ուզում եմ, որ դու մտերիմ լինես Ինձ հետ:

[1] Այո՛, իհարկե զգացել եմ: Դա անհավատալի է:

Վասո՛ւլա, վաղը ես կթելադրեմ քեզ մի պատգամ, որը սովորեցնելու է Իմ զավակներին, թե ինչպես լինել Ինձ հետ: Գնա՛ հիմա և կատարիր քո մյուս պարտականությունները: Գնա՛ խաղաղությամբ:

(Ավելի ուշ Հիսուս եկավ ինձ մոտ)

Վասո՛ւլա, գրի՛ր: Դու հիմա Ինձ հետ ես միացած: Դու պիտի գործես Ինձ հետ, դու պիտի տանջվես Ինձ հետ. դու պիտի օգնես Ինձ: Այո՛, ես պիտի կիսեմ քեզ հետ այն ամենը, ինչ որ ունեմ, և դու էլ պիտի անես նույնը:

Միացած լինել, նշանակում է հավիտյան միասին լինել, որովհետև Իմ կապերը մնայուն կապեր են: Իմ խանդավառ սերը քեզ հավիտյան կապում է Ինձ: Իմ սերը բոցավառում է անգամ քարե սրտերը և լույսով ողողելով՝ կլանում է դրանք:

Աղջիկս, ես հաղթել եմ: Դու կարիք չունես վախենալու, ես գրավել եմ քո սիրտը, սիրելիս, և վստահ եմ եղել, որ դու հավիտյան Իմն ես լինելու: Օ՜, Վասուլա, որքան էի ցանկանում քեզ մխրճել Սրտիս խորքերը և թույլ տալ, որ սիրուս բոցերը քեզ ամբողջովին կլանեն, թողնելով քեզ կատարյալ հիացմունքի մեջ, Իմ՝ քո Աստծո հանդեպ:

Ուրեմն, Դու ինձ այդքան սիրո՞ւմ ես, որ անում ես այս բոլորը:

Մի՞թե ես չեմ զոհել Իմ Կյանքը քեզ համար: Ես զոհել եմ Իմ Կյանքը սիրուց մղված: Ես զոհաբերեցի Ինձ ձեր փրկության համար, սիրուց ելնելով: Ես հեղեցի Իմ Արյունը ձեզ համար՝ սիրուց մղված:

Հիմա ես վստահ եմ, որ դու կապված ես Ինձ:

Ինչո՞ւ:

Ինչո՞ւ: Դու մոռացե՞լ ես, որ ես Համակ Հավատարմություն եմ: Քեզ Ինձ կապելով ես վստահ կլինեմ, որ դու էլ Ինձ հավատարիմ կմնաս:

Այժմ, երբ մենք միացած ենք, կշարունակենք աշխատել իրար հետ: Ես կօգտագործեմ Իմ հանդեպ ունեցած քո սերը՝ բազմաթիվ հոգիներ բժշկելու համար, ովքեր կուլ են գնալու սատանայի բոցերին: Դու և ես պիտի օգնենք այս հոգիներին: Դու պետք է միայն ջերմորեն սիրես Ինձ: Կգա ժամանակ, երբ ես կգամ քեզ մոտ՝ վստահելով քեզ Իմ Խաչը:

Բայց ես ոչնչություն եմ:

Վասո՛ւլա, մնա որպես ոչնչություն և թույլ տուր, որ ես լինեմ այն ամենը, ինչ քեզ պակասում է: Ուր որ ես գնամ՝ դու կհետևես Ինձ: Դու երբեք մենակ չես լինի: Դու հիմա միացած ես Ինձ[1]: Աճի՛ր հոգեպես, Վասուլա, աճի՛ր, քանզի քո առաջադրանքն է փոխանցել բոլոր

[1] Մինչ ես գրում էի, մտածում էի, թե ինչու Նա ասաց, որ հիմա մնամ ոչնչություն, իսկ նախկինում ասաց, որ պետք է շտապ փոխվեմ ավելի ուժեղանալու համար, և այլն: Նա հավանաբար կարդաց իմ մտքերը, քանի որ Նա անմիջապես պատասխանեց հաջորդ տողում:

Պատգամները՝ տրված Իմ և Իմ Հոր կողմից: Իմաստությունը կուսուցանի քեզ:

Այո՛, Հայր:

Ինչքան գեղեցիկ է լսել, որ դու Ինձ «Հայր» ես կանչում: Ես տենչում էի լսել քո շուրթերից այդ բառը «Հայր»[1]:

Փետրվարի 17, 1987

Վասո՛ւլա, ինչո՞ւ, ինչո՞ւ էիր դու խուսափում Ինձ Հայր կանչելուց: Վասո՛ւլա, Ես սիրում եմ, երբ Ինձ Հայր են կանչում[2]: Ես ամբողջ մարդկության Հայրն եմ:

Ես սիրում եմ Քեզ, Հա՛յր:

Ես էլ քեզ եմ սիրում:

Փետրվարի 18, 1987

Խաղաղություն քեզ:

Վասո՛ւլա, դու կարիք չունես շտապելու, իմացած եղիր, որ Ես հանդարտ ու մեղմ եմ գործում: Ինձ մոտ մնա: Հիիր, որ մենք Հաղեսում ենք գտնվում[3]:

(Ավելի ուշ)

Իմ Լույսը ծածկում է քեզ: Որևէ մեկը, որ մոտենում է քեզ[4], չի կարող դիպչել կամ վնասել քեզ: Իմ Լույսը քեզ վրա է, որպես Փրկության մի Լուսապսակ:

Քո սերն Իմ հանդեպ բժշկում և փրկում է շատ կորած հոգիների, որոնք գտնվում են կործանման ճանապարհին: Վասուլա, նրանք[5] նման են իրենց ճակատագրին թողնված փոքրիկ երեխաների, որոնք չգիտեն, թե ինչ ուղղությամբ գնան: Երբ Ես նրանց հետ եմ, Ես նրանց կերակրում եմ՝ տալով սեր, և նրանցից ոմանք հետևում են Ինձ: Դու օգնում ես նրանց, որ սիրեն և հետևեն Ինձ[6]: Ես քեզ այս ձևով եմ գործածում, Վասուլա:

---

[1] Այդ գիշեր, աղոթելու ժամանակ, ես որոշել էի *Հայր* բառը չօգտագործել և Նրան դիմեցի որպես «Աստված», ուշադիր լինելով, որ խուսափեմ *Հայր* բառը օգտագործելուց: Իսկապես չգիտեմ թե ինչու, բայց թերևս մտածում էի, որ պետք է ավելի պաշտոնական մոտեցում ունենամ իմ աղոթքներում:

[2] Ես. 9:5

[3] Հիսուս նորից հոգով Ինձ տարավ Հաղես՝ հոգիներին տեսնելու համար:

[4] Նկատի ունի հալածողներին:

[5] Մենք նման ենք կորած ոչխարների:

[6] Մեր սիրով, մենք կարող ենք մարդկանց բերել դեպի Հիսուս:

Ուրեմն, ես պետք է նրանց հանդեպ ավելի համբերո՞ղ լինեմ և ամեն օր աղոթե՞մ:

Այո՛, համբերատար եղիր նրանց հետ, որովհետև նրանք սիրելի են Ինձ: Բժշկի՛ր նրանց, սիրի՛ր նրանց, Վասուլա:

Ես քեզ Իմաստություն եմ սովորեցնում: Երկնային Գործերը Իմաստությունից են բխում: Հասկացիր, երբ Ես ուսուցանում եմ քեզ:

Ե՛կ, հենվիր Ինձ վրա: Հիմա ուզո՞ւմ ես գնալ:

Ո՛չ, Հիսուս, շարունակենք:

Օ՜ աղջիկս, Ես սիրում եմ քեզ, սիրելիս: Գործի՛ր Ինձ հետ և փառավորի՛ր Ինձ: Ես սիրում եմ քո փոքրությունը: Դու Իմ հագեցած ծաղիկն ես՝ ամբողջովին Ինձնով ներծծված: Զավակս, միշտ իմ կարիքը զգա, որովհետև առանց Ինձ դու կկործանվես: Մինչև վերջ Ես քեզ կտամ այն ամենը, ինչի պակասություն որ դու ունես: Թույլ տուր, որ Ես ամբողջովին ազատ լինեմ քեզ հետ, քանզի Ես գիտեմ, թե որոնք են քո կարիքները:

(Ես զգում էի, որ չպիտի կարողանայի գրի առնել Աստծո առաջնորդությունը: Դա դժվար էր լինում, որովհետև ամբողջ ժամանակ չարը միջամտում և նախատում էր ինձ: Երբեմն այնպես էի զգում, կարծես թե Աստված ամբողջովին լքել է ինձ և թողել սատանայի քմահաճույքին: Ինչքան առաջ էր գնում գործը, այնքան վիրավորանքները սրվում էին: Անգամ մտածեցի, որ Աստված ինձնից հեռացել է: Նախատինքները, որ ասվում էին, արտահայտվում էին վատթարագույն բառերով):

Վասուլա, մի՞թե Ես քեզ երբևիցե կլքեմ: Ես Համակ Հավատարմություն եմ, մոռացե՞լ ես Իմ խոսքերը:

Դա իմ մեղքն է, ես տկար եմ:

Ինձ տուր հիմա քո թուլությունը և Իմ Ուժը կտարրալուծի այն:

Ե՛կ, Ես Ինքս քեզ պիտի սրբագործեմ: Ես քեզ հետ հասել եմ Իմ Երկնային Արքայությանը, քանզի քո մեջ եմ գտնում Իմ հանգիստը: Հիշի՛ր, մենք միացած ենք, և մեր կապերը Խաղաղության և Սիրո կապեր են: Այս թելերը, որ միացնում են քո դաստակներն ու ոտքերը Իմ Դաստակներին ու Ոտքերին, հավիտենական են, քանզի դու Իմն ես, սիրելիս: Ես, Ինքս, քեզ մաքրագործեցի՝ Ինձ միացնելով: Ես հաղթեցի քեզ:

Ես ցանկանում էի, որ դու Ինձ սիրեիր: Մի՛ վախեցիր, քանզի Ես՝ Հիսուս, ամուր բռնել եմ քեզ: Դու Ինձ հետ կլինես և կզգաս Իմ Ներկայությունը: Ես միայն սեր եմ խնդրում քեզնից: Դու սիրո՞ւմ ես Ինձ:

Դու գիտես, որ սիրում եմ, Հիսուս:

Ինձ անչափ սիրիր: Նայի՛ր Ինձ, Իմ խաղաղությունը թող քեզ հետ լինի:

Որևէ բան ունե՞ս Ինձ ասելու:

Այո՛, Հիսուս:

(Ես ինձ մեղավոր զգացի, որ Նրան ասելու էի հետևյալը):

Հիսո՛ւս, թեև ես սիրում եմ գրի առնել այս առաջնորդությունը և Քեզ հետ լինել, բայց ես նաև ուրիշ անելիքներ ունեմ:

Վասո՛ւլա, Երանելի են նրանք, ովքեր կհեռանան իրենց գործերից և կհետևեն Ինձ: Դու արդարև շատ ժամանակ ես նվիրում՝ այս պատգամները գրելով Ինձ հետ, բայց թույլ տուր մի բան ևս ասել քեզ: Ես էլ եմ սիրում քեզ տեսնել աշխատելիս և միաժամանակ փոքր պարտականություններ կատարելիս, պարտականություններ, որոնք չնչին կարևորություն ունեն, այնքան ժամանակ, որքան որ դու դրանք սիրով ես անում: Ամեն մի փոքր աշխատանք, որ դու կատարում ես, անկախ նրանից, թե որքան փոքր է կամ աննշան, Իմ աչքին մեծ է թվում և ուրախացնում է Ինձ, երբ այդ փոքրիկ անելիքները սիրով են արվում: Օրհնյալ լինես:

(Երեկոյան մենք հյուրեր ունեինք, և ես հաշվում էի ափսեները, անձեռոցիկները, և այլն: Կարծեցի, որ ամեն ինչ ունեմ իմ սկուտեղի վրա: Ես երկմտում էի և գիտենալով, որ Հիսուս Ինձ հետ է, հարցրեցի. «Էլ ինչի՞ կարիք ունենք»: Նա առանց վարանման պատասխանեց. «Մենք սիրո կարիք ունենք, Վասուլա»*):*

Փետրվարի 19, 1987

Վասո՛ւլա, թույլ տուր քեզ տառապել: Բոլոր Իմ ընտրյալ հոգիները տառապել են: Տառապանքով հոգիդ մաքրվում է, ինչպես ոսկին է մաքրվում կրակի մեջ, այդպես էլ հոգին է: Քո տառապանքը քո առաջնորդության մեջ է:

Ինչպե՞ս թե իմ առաջնորդության մեջ է, Հիսո՛ւս:

Թեև Ես թույլ եմ տալիս քեզ, որ ցանկացած պահի Ինձ կանչես այս ձևով, որպեսզի միասին լինենք, այսուհանդերձ, Ես թույլ եմ տալիս, որ չարի դարպասները նույնպես բաց թողնվեն: Քո առաջնորդությունը դյուրին առաջադրանք չի լինելու, քանզի չարը կռվելու է քո դեմ՝ սխալ բառերով վհատեցնելով քեզ:

Բայց, Տե՛ր, Քո առաջնորդությունը կարող է մոլորեցնել ինձ:

Ո՛չ, այն քեզ երբեք չի մոլորեցնի և ոչ էլ մեկ ուրիշին: Ես քեզ ուսուցանել եմ ճանաչել Ինձ, Վասուլա:

Ես ընտրել եմ մեկին, որն անկարող է տիրապետել որևէ լեզվի, մեկը, որը կախյալ պիտի լինի Իմ տված խոսքերից: Ես սովորեցրի քեզ լսել

Ինձ: Ես մարզում եմ քո ականջը: Ե՛կ, համբերող եղիր, սովորի՛ր համաձայնվել, սովորիր Ինձնից:

(Ես սկսեցի անհանգստանալ):

Վասո՛ւլա, ամեն ինչ կատարյալ պիտի լինի: Վասուլա, խմբագրիր[1]: Այդ Ես եմ՝ Հիսուս:

(Նորից կասկածներ):

Ե՛կ, Ես շատ եմ ցանկանում քեզ մի բան ասել: Իմ Արքայությունը քո մեջ է, որովհետև Ես փառավորված եմ զգում և հանգստացած:

Հիսո՛ւս, Ես Քեզ սիրում եմ, այո՛, շատ եմ սիրում: Օրվա քսանչորս ժամերին Ես սիրում եմ Քեզ: Անգամ, երբ արթնանում եմ գիշերը, առաջին միտքը Դու Ես: Երբ ուտում եմ՝ Դու Ես մտքումս, երբ աշխատում եմ տանը՝ կրկին Դու Ես: Վարում եմ՝ Դու Ես, թենիս եմ խաղում՝ Դու Ես իմ մտքում: Իսկ սերը Քո հանդեպ իմ արյան մեջ է, քանի որ մարմինս ցավում է սիրուց: Բայց Ես չեմ կարող ընդունել, որ Ես Քեզ հանգստություն կարող եմ տալ, կամ Դու իմ մեջ Արքայություն Ես գտնում: Ես ի՞նչ եմ որ, փոշու մի մասնիկ, անտանելի մեկը, և երբ Դու այս խոսքերը ասում Ես ինձ, Ես է՛լ ավելի վատ եմ զգում Քո ներկայությունից ու ամաչում եմ:

Քո մասին ինչ որ ասացիր՝ ճիշտ է, բայց Ես սիրում եմ քեզ և Ես հանգստանում եմ քո մեջ: Ես ուզում եմ քո սիրտն Իմ Արյամբ ու տեղադրել Իմ Սրտում: Ես մաքրագործել եմ այն՝ տալով Իմ խաղաղությունը և Սերը, սիրելիս:

Վասո՛ւլա, Ես, որ եկա քեզ մոտ, միշտ ուզում էի, որ դու սիրես Ինձ: Ես հիմա հաղթել եմ, Ես ուրախանում եմ քեզնով: Սիրի՛ր Ինձ անկաշկանդ, այն մարդկանց փոխարեն, ովքեր մոռացել են Ինձ և բազմապատկում են Իմ ցավերը: Սիրի՛ր Ինձ, Վասուլա բժշկելով Իմ սիրելի զավակներին: Եղի՛ր Իմ Արքայությունը:

(Ավելի ուշ)

Աստված իմ, հասկանում եմ, որ այդ Դու Ես, թեև չեմ կարծում, որ ամբողջովին ըմբռնում եմ:

Վասո՛ւլա, մի օր դու կհասկանաս,

Եթե գիտակցեմ, կարծում եմ ուշքս կգնա:

Երբ Իմ խոսքը կհաստատվի: Վասո՛ւլա, Ես միշտ պահել եմ Իմ խոսքը:

Ես՝ Յահվեն[1], գալիս եմ վերևից: Արքայությունը Իմ շնորհով է ստեղծված: Ես պիտի կատարեմ Իմ խոսքը, վստահի՛ր Ինձ, Վասուլա: Շատ

[1] Հիսուսն օգտագործեց մի բառ, որը Ես կարող էի օգտագործել, և Ես հասկացա, թե ինչպես Աստված հարմարեցնում է Իրեն հոգու կարողությանը:

մի՛ անհանգստացիր, սիրելիս, մոտ եղիր Ինձ, զգա՛ Ինձ, սիրիր և փառաբանիր Ինձ, իսկ մնացածը թող Ինձ: Ապրի՛ր խաղաղությամբ:

Ես Իմաստությամբ եմ ձևավորում քեզ. Իմ շնորհը քեզ: Մի՛ հոգնիր հոգիներ բուժելուց: Հիմա ուրա՞խ ես, որ միացած ես Ինձ:

Այո՛, Տեր: Ես շատ ուրախ եմ, զգալով, որ միացած եմ Քեզ, թեև չէի համարձակվի այդ մասին մտածել:

Ինչո՞ւ, Վասուլա:

Ինչո՞ւ: Որովհետև ես հարմար մեկը չեմ Քեզ համար:

Վասո՛ւլա, Ես միշտ ցանկացել եմ, որ քեզ հետ միանամ և մտերիմ ու մոտիկ լինեմ քեզ: Այնուամենայնիվ, երբեք չմոռանաս, որ Ես քո Աստվածն եմ և Սուրբը եմ:

Վասո՛ւլա, ուզո՞ւմ ես դեռ գործել Ինձ համար:

Ես իմ համաձայնությունն արդեն տվել եմ: Ես կամենում եմ աշխատանքս շարունակել Յահվեի համար:

Ես Յահվեն եմ, օրհնյալ լինես:

(Ավելի ուշ)

(Ես կարդացի Սբ. Բեռնարդի աղոթքը՝ ուղղված Սուրբ Մարիամին):

Աղջի՛կս, Հիսուսն է առաջնորդում քեզ: Մի՛ վախեցիր, Վասուլա, աղջի՛կս: Ինձ լսիր, քո Սուրբ Մորը: Ես այստեղ եմ, ներկա եմ, քեզ մոտ եմ: Ես օգնում և սիրում եմ քեզ: Ես կօգնեմ քեզ հասկանալու Հիսուսի գործելակերպը, մի՛ անհանգստացիր:

Հիսուս քեզ հիմա Իր հետ է միացրել, ուրախացի՛ր Վասուլա: Դու պետք է հավատաս, երբ Ես ասում եմ, որ քո հոգին քավարանում[2] հոգիներ է բժշկում: Վասո՛ւլա, արա այնպես, ինչպես Հիսուսն է խնդրում քեզ: Նա գիտի քո կարիքները: Նա միայն սեր է ուզում քեզնից: Սիրի՛ր Նրան անկաշկանդ, փառաբանի՛ր Նրան: Հատուցի՛ր նրանց համար, ովքեր դառնացնում են Նրան: Միշտ կանչիր և ասա, որ սիրում ես Նրան: Մի՛ լքիր Նրան և քո մյուս բոլոր պարտականությունները ևս սիրով կատարիր՝ հանուն սիրո, քանի որ սիրո գործերն են, որ ամենից շատ նշանակություն ունեն Նրա համար՝ անկախ այն բանից, թե որքան փոքր և աննշան են թվում քեզ, դրանք մեծ արժեք ունեն Նրա աչքում: Հետևի՛ր Նրան և հատուցի՛ր ուրիշների համար, ովքեր անտեսում են Նրան:

Աղջի՛կս, այժմ որ Նրան ես միացած, դու Նրա Խաչը կզգաս, Նրա Սիրտը կզգաս: Նա կխնդրի քեզ կիսել Իր զգացումները, Նա կխնդրի քեզ օգնել Իրեն, Նա կխնդրի, որ դու հանգստացնես Նրան, Նա կխնդրի կիսել

[1] Հիմա Հայրն է խոսում:
[2] Այդ ժամանակ քավարանը ինձ հայտնի էր որպես Հաղես:

Իր Խաչը: Տառապի՛ր, երբ Նա տառապում է, ուրախացի՛ր, երբ Նա ուրախանում է: Քո տառապանքը կլինի Իրենը: Ենթարկվի՛ր Իր ցանկություններին, որովհետև Նա Աստված է: Սովորի՛ր ճանաչել Նրան: Հիշի՛ր այն ամենը, ինչ Նա ուսուցանել է քեզ, քանզի Նա Սիրո Աստված է և Ամենողորմ: Նա ձեզ բոլորիդ սիրում է անասելի քնքշությամբ: Նա երբեք ձեզանից չի պահանջի մի որևէ բան, որ ձեզ վնաս պատճառի: Նա հեզ է ու բարի: Սովորի՛ր ճանաչել Նրան, Վասուլա:

Նա Սիրով լեցուն Աստված է և ամենևին՝ ոչ խստասիրտ: Նա կհսկի քեզ վրա՝ պաշտպանելով ամեն տեսակ չարիքներից: Նա երբեք քեզ չի լքի:

Վասուլա, արիացի՛ր աղջիկս, կանչի՛ր Ինձ, երբ ուզում ես: Ես սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում, Մա՛յր: Սովորեցրու ինձ Քեզ ավելի սիրել:

Հիսո՛ւս, սիրում եմ Քեզ:

Ես այստեղ եմ սիրելիս: Ես եմ՝ Հիսուս:

(Ես նորից ամբողջապես հանձնվում եմ):

Ես սիրում եմ քեզ: Տո՛ւր Ինձ քո փոքրիկ սիրտը, որի մեջ Ես պիտի ցանեմ Խաղաղության և Սիրո սերմերը: Ես պիտի ձևավորեմ քեզ այնպես, ինչպես ցանկանում եմ, որ դու լինես: Ոչ մի բան իզուր չի կորչի: Ամեն ինչ կարվի Իմ զավակների փրկության համար: Մի՛ վախեցիր, թույլ տուր քեզ առաջնորդել, աղջիկս:

(Այս առավոտ ես մեծ սիրով էի համակվել Հիսուսի հանդեպ: Սակայն վախենում էի, թե Նա ինձ կլքի, որովհետև ես «ոչնչություն» եմ: Իսկ մի «ոչնչություն», որ սիրում է Աստծուն հավանաբար նախատինք է Նրա Սուրբ Անվանը):

Աղջի՛կս, Ես սիրում եմ քեզ, մնա Ինձ հետ: Ես քեզ երբե՛ք չեմ թողնի, փոքրիկս: Քչերն են, որ Ինձ փառաբանում են այնպես, ինչպես դու:

Վասո՛ւլա, Իմ Վասուլա, Ես հոգում եմ քեզ համար: Երբ Իմ առաջնորդությունն ավարտեմ, Ես ավելի երկար չպիտի սպասեմ: Սիրտս կարոտ է քո փոքրիկ հոգուն: Օ՜, որքան եմ Ես տանջվում, որ դու ցածրում ես՝ երկրի վրա[1]: Ես քեզ ետ եմ բերելու Ինձ մոտ՝ ազատելով քեզ և ուրախացնելով Իմ Սիրտը, քանզի շատ եմ ցանկանում, որ վերստին Ինձ հետ լինես: Իմ Խաղաղությունը քեզ: Ես շուտով քեզ հետ կլինեմ:

Վասո՛ւլա, Իմ հաջորդ պատգամն ուզո՞ւմ ես գրի առնել:

Այո՛, Տեր:

Պատրա՞ստ ես:

[1] այսօրվա մեր խավար աշխարհում

(Ես մի քանի օր խուսափել էի այս պատգամից, բայց այժմ զգացի, որ պատրաստ եմ: Այդ մասին Հիսուսն ինձ հետ խոսել էր դրանից առաջ):

Այո՛, Տեր:

Դու սիրո՞ւմ ես Ինձ:

Դու գիտես, որ շատ եմ սիրում:

Ցանկանո՞ւմ ես, որ մյուսներն էլ Ինձ սիրեն:

Այո՛, դա հիմա իմ ցանկությունն է:

Ուրեմն, գործի՛ր Ինձ հետ և գրի առ այն ամենը, ինչ որ կասեմ քեզ: Այո՞, Վասուլա:

Տե՛ր, ես պարզապես ուզում էի ասել, որ այս ձևով առաջնորդվելը հրաշքի պես մի բան է:

(Խաղաղության պատգամ)

Ես այդպես կամեցա, Վասուլա: Ես քեզ ընտրեցի, որ աշխարհին ցույց տամ, թե Ինձ ո՛չ իշխանություն է պետք, ո՛չ էլ՝ սրբություն:

Ես ընտրել եմ կատարյալ մի երեխայի՝ անօգնական ու մեղավոր, որը չունի ոչ մի հեղինակություն և չի ճանաչում իշխանություն ունեցող որևէ մեկին, որպեսզի Իմ շնորհով այս թույլ գործիքի միջոցով հայտնի դարձնեմ Իմ Խաղաղությունը և Սերը, որ ունեմ բոլորիդ հանդեպ:

Ես ուզում եմ այս խավար աշխարհին Իմ Պատգամը փոխանցել, ցույց տալով Իմ զգացումները աշխարհին, քանզի անասելի է Իմ Ողորմությունը, և Իմ սերը՝ վեր է մարդկային որևէ հասկացողությունից:

Վերին Արքայությունը՝ իր ողջ Փառքով, հավիտյան թագավորում է սիրո և խաղաղության մեջ, և Ես պիտի տեսնեմ, որ երկրի վրա նույնպես համակ խաղաղությունն ու սերը հաղթեն չարին[1]: Իբրև մշուշ, Իմ խաղաղությունը պիտի պատի երկիրը՝ բարձունքներից տարածվելով մինչև խորքերը, երկրագնդի մի ծայրից մյուսը:

Ես գալիս եմ Իմ Պատգամն ազդարարելու ամենքիդ և ձեզ ետ դարձնելու ձեր չար արարքներից: Իմ խոսքը նման է լինելու մի մայրի ծառի, որը, բազկատարած իր ճյուղերով, բժշկելու է ձեզ չարությունից, սնելու է ձեր թշվառությունն ու ազատելու է ձեզ չարից: Մեկ անգամ ևս Ես գալիս եմ լուսավորելու այս խավար աշխարհը, կենդանացնելու այս առկայծող բոցը, որը հանգչելու վրա է, ու ձեզ պարուրելու Իմ Խաղաղությամբ[2]:

---

[1] Թող Քո Կամքը լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է:

[2] Մտքովս անցավ, թե այդպիսի մարդկանց համար չարժե անհանգստանալ, որովհետև նրանք բնավ չեն լսի:

Ես նրանց սիրում եմ, Վասո՛ւլա: Ա՜խ, այս սերը, որ ունեմ նրանց հանդեպ: Մի՞թե ես չեմ զոհել Ինձ, որպես մի Գառ՝ նրանց ազատագրելու համար: Ես տառապեցի հանուն նրանց:

Իմ սիրելիներ, իզո՞ւր հեղվեց Իմ Արյունը: Ես Իմ Արյունն եմ թափել, որ ձեր մեղքերը թաթախվեն դրա մեջ, և դուք կարողանաք մաքրվել: Ես ձեզ լվացել եմ Իմ Արյան հեղմամբ՝ չարին նվաճելու և ձեզ ազատագրելու համար:

Ես ձեր բոլորիդ մեջ եմ: Բայց, այսուհանդերձ, սատանան է ձեզ ուղեկցում, որովհետև ձեզ գայթակղեցնելու և ձեզ իր ամբարիշտ ցանցը գցելու միջոցներ է գտել:

Ես՝ Աստված, չեմ կարող տեսնել, թե դուք ինչպես եք գնում դեպի կործանում: Ես այստեղ եմ, որ ձեր կապերն արձակեմ չարի մոլորություններից:

Այս պատճառով է, ահա, որ կանգնում եմ ձեր առջև, որ դուք իմանաք, թե ով է ձեր Փրկիչը: Մեկ անգամ ևս, Սիրտս Ափիս մեջ առած, գալիս եմ Այն ձեզ առաջարկելու: Մի՞թե դուք կմերժեք Այն, մի՞թե դուք կմերժեք Իմ Խաղաղությունը: Ես գալիս եմ կանչելու նրանց, ովքեր Իմ զավակներին ենթարկում են արյունահեղության: Ուզում եմ, որ նրանք լսեն Իմ կանչը, քանզի Իմ խոսքը գալու է մուրճի պես՝ փշրելով ապառաժը[1], թափանցելով յուրաքանչյուրի սիրտը:

Ես հարց եմ տալիս <u>ձեզ</u>. դուք մոռացե՞լ եք ձեր Աստծուն, թե՞ Նա նվազ կարևորություն ունի ձեր աչքին: Մի՞թե դուք չեք վախենում Ինձնից: Ես հոգնել եմ ձեր բարձրամիտ նպատակներից: Ես սովորեցրել եմ ձեզ, որ Ինձ սիրեք, բայց նաև երկյուղեք[2] Ինձնից, քանզի Ես Ամենակարողն եմ:

Իսկ ի՞նչ եք արել դուք: Դուք փորում էք ձեր սեփական գերեզմանները՝ չարության սերմեր սերմանելով ու դրանք տարածելով ողջ աշխարհով մեկ, իսկ հիմա հնձում եք դրանք և կերակրվում չարի այդ պտուղներից: Իմացե՛ք, որ Իմ ողջ Թագավորությունը իշխում է Խաղաղությամբ: Իմ ողջ արարչությունը ստեղծվեց Խաղաղության և Սիրո մեջ: Իմ աչքերը հոգնել են տեսնելուց, թե ինչպես եք կոտորում մեկդ մյուսին:

<u>Ես</u> հոգ եմ տանում ձեզ, որովհետև Ես ձեր Հայրն եմ, որը սիրում է ձեզ: Տեսե՛ք, Ես գալիս եմ Իմ ողջ գերիշխանությամբ, Ե՛ս, որ ձեր Աստվածն եմ: Ես գալիս եմ <u>ձեզ</u> մոտ առաջարկելով ձեզ Իմ Սիրտը: Ահա, վերցրե՛ք Այն, ամբողջությամբ ձերն է Այն: Իմ Սիրտը ծվատվում է, պատառ-պատառ է լինում, շոշափե՛ք Այն: Այն ամբողջապես մի մեծ վերք է... Դուք պատռել եք ձեր Աստծո Սիրտը: Կրկին ու կրկին խոցոտել եք Այն:

Պատերազմի առաջնորդներ, արդյոք Ես պետք է, որ գամ և ձեզ տրորե՞մ՝ ցույց տալու համար Իմ Իշխանությունը: Պետք է, որ Ես Ինձ ցասումո՞վ դրսևորեմ: Ողորմության բաժակս թափվել է վրայից, իսկ Արդարության բաժակս լեցուն է: Ես, որ Կյանքի չունչ փչեցի ձեզ վրա և ձեզ նվիրագործեցի, Ես՝ ողջ արարչագործության Աստվածը, որ ողողեցի

[1] Մի օր Աստված հանկարծ լուսավորեց միտքս, և ես հասկացա, որ ապառաժը մեր սիրտն է, մեր սիրտը՝ քար դարձած:
[2] այսինքն՝ ընդունել, <u>մեծարել</u>

ձեզ Իմ Սրբությամբ, գալիս եմ ձեզ մոտ Իմ Խաղաղությամբ՝ հորդորելով, որ դարձի գաք և ապրեք Իմ Խաղաղության մեջ:

Ողջ տիեզերքը Ես պիտի պատեմ Իմ Խաղաղությամբ՝ թույլ տալով, որ այն թագավորի ձեզ վրա, քանզի Ես Խաղաղություն եմ, Սեր և Համակ Իմաստություն: Իմ կոչն ուղղված է բոլոր ազգերին: Նրանք պետք է իմանան, որ Խաղաղությունն է իշխում Իմ թագավորության մեջ: Հակառակ նրանց չարության, Ես գալիս եմ նրանց օրհնելու և փայլելու նրանց վրա, որովհետև նրանք Իմ սիրելի որդիներն ու դուստրերն են:

Լսե՛ք այս Սրտին, որ ձեր Աստվածն է առաջարկում, Սիրտ, որին դուք մոռացել եք և էլ չեք ճանաչում, Սիրտ, որը սիրում է ձեզ և ձեզ է որոնում՝ կյանք տալու համար:

Դադարե՛ք չարիք գործելուց: Դադարե՛ք Իմ դեմ ապստամբելուց: Վախենո՞ւմ էք Իմ Օրենքից: Իմ Օրենքը ըմբոստության օրենք չէ: Իմ Օրենքը Խաղաղության և Սիրո օրենք է: Հետևե՛ք Իմ այս օրենքին. արձանգանքե՛ք դրան և փրկությունը ձերը կլինի: Ձեր տկարությունն այն է, որ անտեսում եք Իմ Օրենքը, և մոլեգնած ձեր սեփական օրենքներով, մարդկությանը տանում եք կործանման՝ հակադրվելով ձեր մերձավորներին: Ձեր օրենքները բռնության վրա են հիմնված:

Օ՜, զավակներս, մի՞թե Ես ատելություն եմ սերմանել ձեր հոգում: Իմ Հոգին Սիրո ու Կյանքի աղբյուր է Ինքնին և այդ Աղբյուրից արարվեց ամեն բան:

Վասո՛ւլա, այլևս մի՛ գրիր: Ես սիրում եմ քեզ: Վստահի՛ր Ինձ. թող որ քո սերը պատի Իմ Սիրտը: Միացի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ և գործիր Ինձ հետ:

Կաշխատեմ, Հայր: Օգնի՛ր ինձ արժանի լինել, որպեսզի Ես կարողանամ փառավորել Քեզ:

Փետրվարի 26, 1987

(Բեատրիսը և Ես օդանավով մեկնեցինք Զիտագոնգ և այնտեղից էլ անցանք գետը՝ գտնելու Դիանդ գյուղը, ուր պիտի հանդիպեինք Ռեյմոնդ Դուժարիերին: Նա ֆրանսիացի մի կաթոլիկ քահանա էր՝ մասամբ ճգնավոր և միստիկ, բայց միևնույն ժամանակ՝ հնդիկ-բրահման, մուսուլման և բուդիստ՝ բոլորը միասին: Ուզում էինք նրա հետ մի քանի հարցերի շուրջ մտքեր փոխանակել ու ցույց տալ գրությունները: Նա այդ պատգամները անվանեց, որպես Հիսուսի Սրտի Աստվածային Հայտնություններ: Ինչ որ նա ասաց շատ համապատասխանում էր հայտնությունների գաղափարին և դրանց նպատակին. այսինքն, որ դրանք միայն ինձ համար չէին, այլ նաև ուրիշներին օգտակար դառնալու համար էին: Մեր ամբողջ ճանապարհորդությունը շատ հարթ ընթացավ, կարծես մեկը ծրագրել էր դա: Մոռացա նշել, որ Դիանդ մեկնելուց մի օր առաջ, ես մեծ անհանգստություն զգացի և հարց էի տալիս ինձ, թե ինչո՞ւ եմ գնում Դիանդ: Ի՞նչ ցույց տալու, դատարկ մի բա՞ն: Ամբողջ օրն անցավ տագնապի մեջ: Հետո, մեր մեկնումի օրը, առավոտյան, հետևյալ բառերը հայտնվեցին. «Քեզ առաջնորդողը մի ստախոս է, հավաքիր ամեն ինչ և այրիր»: Հասկացա, որ չարը երեկվանից փորձում էր արգելել իմ ճանապարհորդությունը: Ապա, այս պատգամից մի քանի րոպե անց, ես զգացի Աստծո ներկայությունը և Նա գրեց. «Ես քեզ

հետ պիտի լինեմ մինչև վերջ, մենք հավիտյան միացած ենք: Թույլ տուր, որ Իմ Լույսը փայլի քեզ վրա, զավակս: Ես Յահվեն եմ՝ քեզ առաջնորդողը: Ինձ փառավորիր՝ սիրելով Ինձ»*):*

Մարտի 1, 1987

(Այսօր մի քանի անգամ Հիսուսն ինձ ասաց, երբ ես Նրան նկատեցի ու կարողացա զանազանել իմ շուրջը. «Երբեք չհոգնես գրելուց»*):*

Վասո՛ւլա, ես ցանկանում եմ, որ Իմ խոսքերը հայտնի դառնան շատերին, խոսքեր, որոնք գալիս են ուղղակի Իմ շուրթերից, քանի որ բոլոր հայտնությունները, որ քեզ ներշնչեցի՝ Ինձնից են: Ես գործում եմ նաև այս ձևով: Երբեմն երբեմն ես գալիս եմ թարմացնելու այն ամենն, ինչ արդեն ուսուցանվել է Իմ կողմից: Ես քո Փրկիչն եմ, միշտ քեզ մոտ, միշտ պատրաստ քեզ չարից ետ քաշելու: Ես գալիս եմ հուսալով, որ Իմ խոսքերը կթափանցեն սրտերի մեջ և այնտեղ կհանգչեն:
Վասուլա, կուզե՞ր հատուցել ուրիշների համար:

«Հատուցել» բառն այստեղ ի՞նչ է նշանակում, Տե՛ր:

Նշանակում է փոխհատուցել ուրիշների համար, ովքեր չեն պատասխանում Իմ սիրուն: Փոխհատուցել ուրիշների համար, և դա անում ես սիրելով Ինձ քո ողջ մտքով և սրտով:

Ես սիրում եմ Քեզ, բայց ուզում եմ սովորել Քեզ անսահման սիրել, որպեսզի կարողանամ ավելին հատուցել:

Ե՛կ, ես կսովորեցնեմ քեզ: Ես երբևիցե դրժած կա՞մ Իմ խոսքը: Աղջի՛կս, ես քո Ուսուցիչն եմ, և դու ամեն ինչ կսովորես Ինձնից: Ես քեզ առաջ կտանեմ:

Ես արժանի չեմ այն ամենին, որ Դու տալիս ես Ինձ: Ես տեսնում եմ դա, երբ ինձ համեմատում եմ խոնարհ ու նվիրված մարդկանց հետ: <u>Ես ինձնով հպարտ չեմ</u>, որ ընտրվել եմ իբրև ամենաթշվառ անձը: Եվ գիտեմ, որ այս առաջնորդությունը ես չեմ ստացել իմ առավելությունների պատճառով, այլ ճիշտ հակառակը: Ես ընտրվել եմ իմ թշվառության համար, և Դու այդ բանը հաստատեցիր, Տե՛ր:

Իմ խաղաղությունը քեզ, Վասուլա. ճիշտ է, որ դու թշվառ ես, բայց, բոլոր դեպքերում, ես սիրում եմ քեզ: Տո՛ւր Ինձ քո ողջ թշվառությունը և Իմ Ողորմությունը կարբի այն: Սիրված զգա Իմ կողմից: Ե՛կ, հենվիր Ինձ վրա, լսի՛ր Ինձ: Ընկերակցիր Ինձ, բայց մի՛ մոռացիր, որ Ես քո Սուրբ Ընկերակիցն եմ:

Մարտի 2, 1987

Փառք Հոր Աստծուն, որ ազատեց քեզ չարից:

Այդ ո՞վ է:

Ես եմ՝ Հիսուս, ինչո՞ւ:

(Այստեղ ես շփոթվեցի: Ես դեռ չեմ հասկանում, թե ով է Հայրը և ի՞նչ տարբերություն կա Հոր Աստծո և Հիսուսի միջև: Եթե Նա ակնարկում է Հայր Աստծուն, ապա Հիսուսն ինչպե՞ս էր ասում, որ ինքը նաև Հայրն է):

Լսի՛ր, Վասուլա, ուշադրությունդ Ինձ դարձրու: Իմացի՛ր, որ Աստված և Ես Մեկ ենք[1]: Ե՛ս եմ Հայրը և Որդին[2]: Հիմա դու հասկանո՞ւմ ես: Ես Մեկ եմ, Ես Ամենը Մեկի մեջ եմ, Ես Ամենը Մեկի մեջ եմ:

Դու Ամենը Մեկի մե՞ջ ես:

Այո՛, Ես Ամենը Մեկի մեջ եմ:

Նաև Լո՞ւյսը:

Ես նաև Լույսն եմ: Լսի՛ր Ինձ:

(Ես կարծեցի դժվար պիտի լիներ հասկանալ և <u>գրի առնել դա</u>, որովհետև Սուրբ Հոգու հարցը ևս մտքումս կար):

Ե՛կ, փորձենք: Սուրբ Հոգին բխում է Ինձնից, դու հասկացա՞ր հիմա: Բոլորը Մեկի մեջ: Սուրբ Երրորդությունը Մեկ է[3]: Դու կարող ես նաև Ինձ Հայր կանչել[4]: Իմաստությունը գալիս է Ինձնից: Ես նաև Իմաստություն եմ:

Այդ Ես եմ՝ Հիսուս: Ամեն անգամ, որ կասկածես, եկ Ինձ մոտ:

Բայց ես ամաչում եմ, որ դեռ ժամանակ առ ժամանակ կասկածներ եմ ունենում՝ հայտնության տանմեկ տեսքեր ամբողջացնելուց հետո: Որևէ մեկը ինձ նման չէր կարող լինել: Ուրիշ մեկը մինչև հիմա սուրբ կարող էր դառնալ:

Ամեն անգամ, երբ դու ամաչում ես, Ես քեզ ավելի եմ սիրում: Վասուլա, ե՛կ, դու Իմ սիրելին ես, և Ես սիրում եմ հանգստանալ քո մեջ:

Դու Ինձ սիրո՞ւմ ես:

---

[1] Եռյակ Աստված, բայց մեկ իրենց էության միասնությամբ:
[2] «Ով որ ինձ տեսել է, Հորն է տեսել... Ես Հոր մեջ եմ և Հայրը իմ մեջ» (Հովհ. 14:9-10):
[3] էությամբ
[4] Ես. 9:5, «Հավիտենական Հայր...»

Դու գիտես, որ սիրում եմ, Տե՛ր: Բայց երբեմն ես ինձ քարի նման սառն եմ զգում: Որքա՜ն անշնորհակալ եմ ես:

Ամեն անգամ, երբ նման զգացում կունենաս, հասկացի՛ր, այդ ես եմ, որ օգտագործում եմ քո սերը՝ ջերմացնելու համար այլ հոգիների, որոնք ջերմության կարիք ունեն: Հոգիներ, որոնք սառն են Իմ հանդեպ: Դու հիմա հասկանո՞ւմ ես:

Աղջիկս, այժմ գրի առ հետևյալ խոսքերը. «Ես՝ Յահվեն, պիտի պատեմ ձեզ Իմ Սիրով՝ տալով Իմ ողջ խաղաղությունը, հայտարարելով Իմ Խոսքը բոլոր ազգերին, քանի որ ահա Իմ մեջ են ապրում՝ Սերը, խաղաղությունը, Ողորմությունը և Իմաստությունը: Ես Իմ Թագավորությունը պիտի հաստատեմ երկրի վրա, այնպես, ինչպես որ երկնքում է»:

Վասո՛ւլա, սա Իմ պատգամի մի մասն է միայն, մնացյալը հետո կգրես: Ինձ մոտ մնա:

Մարտի 3, 1987

Այդ ես եմ՝ Հիսուս:

Ներիր իմ բոլոր մեղքերը...

Ես ներում եմ քեզ: Ե՛կ, ես հրճվում եմ քեզանով: Դու հիշո՞ւմ ես այն օրը, երբ ես քեզ ցույց տվի Իմ Փառքը:

Այո՛:

Ցանկություն ունե՞ս դա շարունակելու: Այո՞:

(Ես շատ վստահ չէի):

Հայր իմ, կարո՞ղ եմ մի փոքր սպասել:

Թող այդպես լինի: Ավելի ուշ, ես քեզ նորից կհարցնեմ: Ես ուզում եմ Իմ Փառքը առավել ցույց տալ քեզ, որպեսզի դու կարողանաս նկարագրել Իմ զավակներին, թե ինչպիսին է Իմ Թագավորությունը:

Ինչ վերաբերում է Իմ նախկին պատգամին, Ես քեզ տեղյակ կպահեմ, երբ զգամ, որ դու պատրաստ ես այն գրի առնելու: Վասո՛ւլա, թույլ կտա՞ս քեզ այսօր գործածել:

Ի՞նչ ձևով, Տե՛ր:

Օգտագործելով քո սիրո էությունը, որ դու ունես Իմ հանդեպ: Այնպես որ, Ինձ ջերմորեն սիրիր, Վասո՛ւլա: Ես ցանկանում եմ կործանումից փրկել մի շատ ընտիր հոգի: Նա Իմ ընտրյալներից մեկն է: Մենք դեռ կարող ենք նրան փրկել, Վասուլա:

Ես Իմ Արյան երկու անբիծ կաթիլներ կթողնեմ քո սրտի վրա: Այս երկու կաթիլները բավարար են քո ողջ սիրտը ծածկելու և քեզ զգացնել տալու Իմ վիշտը:

Ես ի՞նչ պիտի անեմ:

Կարո՞ղ ես սիրո համար սիրով գործել:

Կ՚անամ, Տե՛ր:

Միացի՛ր Ինձ: Մենք այսօր կվերականգնենք նրա հոգին, մենք կզորացնենք նրան:

Ես կսովորեցնեմ քեզ, թե ինչպես եմ գործում, քանզի սրանք Երկնային գործեր են: Բոլոր Սուրբ գործերը գալիս են Ինձնից: Իմաստությունը ուսուցանում է քեզ: Երբեք սա չմոռանաս: Դու Իմ ծաղիկն ես, որին Ես թույլ եմ տալիս աճել Իմ Լույսի մեջ: Ես կմաքրագործեմ քո Հողը և քեզ կտամ ինչ որ քեզ պակասում է: Ես ետ կգամ և քեզ տեղյակ կպահեմ Իմ այս ընտրյալ հոգու սրտի մասին: Ես սիրում եմ քեզ: Սիրի՛ր Ինձ, Վասուլա, քանի որ շատերը կախում ունեն այդ սիրուց:

(Կեսօրից հետո ես չարի կողմից հարձակման ենթարկվեցի. նա մեղադրում էր ինձ: Ես գիտեի, որ դա Աստված չէր, քանի որ Նա երբեք ինձ չէր մեղադրի):

Ես օրհնում եմ քեզ աղջիկս: Ես երբեք քեզ չեմ մեղադրի այն բաների համար, որ Ես՝ Յահվեն, տվել եմ քեզ:

Ես ուրախանում եմ քեզնով: Ես ընտրել եմ քեզ՝ ցույց տալու Իմ Դեմքը: Խոկա՛, Իմ Վասուլա, զգա՛: Զգա՛ այս Սերը, որ Ես ունեմ քո հանդեպ: Շուտով դու Ինձ տեսնելու ես: Այո՛, Ես պիտի գամ:

Տե՛ր, երբ ինձ տանես, ես ոչինչ չեմ ակնկալում, քանի որ ես ոչինչ չեմ արել և անկարող եմ անելու որևէ բան: Կրկին խոսքս ավարտում եմ ինձ «անարժան» կոչելով: Բայց և այնպես, այնքան եմ ուզում Քեզ մոտ լինել:

Վասո՛ւլա, զգա Իմ ձեռքը: Իմ ձեռքը մեծ ճիգով փորձում է բռնել քեզ և պահել Ինձ մոտ: Ես ցանկանում եմ պատսպարել քեզ: Ես կուզեի քեզ տանել ու սուզել Իմ Սրտի խորքերում ու թաքցնել քեզ այնտեղ, միայն Ինձ համար: Կարծեմ դու մոռանում ես Իմ խոսքերը: Մի՞թե Ես հավիտյան քեզ չեմ կապել Ինձ: Մի՞թե մենք միացած չէինք, երբ Իմ կողմից սիրո մի պսակ դրվեց մեր միությանվրա: Սիրելիս, մենք գործում ենք իրար հետ: Ես քո Աստվածն եմ և Առաջնորդը:

Տե՛ր իմ, ես թույլ մեկն եմ և Քո կարիքը ունեմ: Ինձ հարկավոր է ուժ ձեռք բերել ամեն ինչում, որպեսզի կարող լինեմ փառավորել Քեզ:

Վասո՛ւլա, նայիր Իմ ձեռքերին: Քո ձեռքերը դիր այնպիսի ձևով, որ քո մատի ծայրերը դիպչեն Իմ մատի ծայրերին:

(Ես տեսա, թե ինչպես էլեկտրականության նման[1] կայծեր էին դուրս գալիս Նրա մատների ծայրերից: Ես ձեռքերս դրեցի և դիպա Նրա մատների ծայրերին: Ես դա արեցի խորաթափանցությամբ և խոկումով):

Զգա՛ Իմ Սրբությունը: Իմ Ուժը թափանցում է քո մատների միջով: Նման գործերը երկնային գործեր են: Ես օրհնում եմ քեզ: Հենվի՛ր Ինձ վրա: Դու հիմա Ինձ կլանել ես: Պահի՛ր ձեռքերդ Իմ ձեռքերում՝ զգալով Իմ ջերմությունը:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, լսիր Ինձ: Այժմ մենք փրկեցինք նրան անկումից, ուրախացի՛ր: Ես գործածեցի քո սիրո էությունը: Մենք գործում ենք միասին՝ օգնելով և բժշկելով հոգիներին: Երբեք չհոգնես նրանց բժշկելուց, աղջիկս:

(Ես կրկին ենթարկվեցի չարի հարձակմանը: Նրանք ասում էին. «այստեղից դու պիտի հեռանա՞ս...»):

Վասուլա, մոտեցի՛ր Ինձ, վերցրո՛ւ Իմ սերը: Դու հասկանո՞ւմ ես, թե նրանք ինչու են քեզ ատում: Դու չարից կորզում ես Իմ սիրելի հոգիներին՝ նրանց ետ բերելով դեպի Ինձ:

Տե՛ր, իսկ ի՞նչ կասեիր այն համակ սիրո մասին, որ ուրիշները ունեն Քո հանդեպ, դա է՞լ է օգնում:

<u>Այո՛</u>: Ամբողջ սերը գործածվում է հոգիների վերականգման և բժշկման համար:

(Խաղաղության պատգամի շարունակությունը)

Իմ Թագավորությունը պիտի տարածվի և պիտի շարունակի աճել՝ Ինձ տրված այդ սիրով:

Ես ձեզ ճշմարիտ եմ ասում, Իմ ամբողջ տառապանքը իզուր չի անցնելու: Վիթխարի Փառքով՝ Ես պիտի հաղթեմ ամեն չարիքի: Ես պիտի բոցավառեմ ամեն մի սիրտ՝ սփռելով Սիրո և Խաղաղության Իմ սերմերը, միավորելով Իմ զավակներին: Ողջ տիեզերքով մեկ Իմ Լույսը պիտի սփռվի, որովհետև այդ է Իմ Կամքը:

Մեծարի՛ր Ինձ, Վասուլա, սիրելով Ինձ: Համբուրի՛ր ձեռքերս:

(Ես դա արեցի խորաթափանցությամբ, ինչպես և նկարի վրա):

Ինձ միշտ փառաբանիր, Ես սիրում եմ բոլորիդ: Սիրելիս, մոտեցիր Ինձ, քանի որ Իմ Սերը քո հանդեպ ավելին է, քան դու կարող ես երբևիցե պատկերացնել:

[1] Նրա պայծառությունը լույսի պես էր, Նրա Ձեռքերից ճառագայթներ էին արձակվում և դրանում էր Նրա Զորությունը: (Ամբակ. 3:4)

(Ես այնպիսի մեծ ուրախություն զգացի Աստծուց: Նա շատ ուրախ էր):

Մարտի 4, 1987

Գիտենալով, որ կարող եմ անհավատարիմ լինել, ես վախենում եմ, որ մի օր, թուլությունից դրդված կլքեմ Քեզ: Այդ մասին մտածելն անդամ սարսափելի է: Ես չեմ պատկերացնում, թե դա ինչպես կարող է լինել, բայց և չեմ ուզում, որ դա պատահի և չեմ էլ ուզում, որ Դու ինձ թողնես:

Վասո՛ւլա, Ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ. մի՞թե երբևիցե Ես կլքեմ քեզ: Մենք կապեր ունենք իրար հետ և քանի որ կապված ենք միմյանց, դու անկարող կլինես լքել Ինձ: Հասկանո՞ւմ ես: Ես հոգացել եմ մեր միության համար: Մենք մինչև վերջ միացած պիտի մնանք՝ դու Իմ կարիքը զգալով և ջերմորեն Ինձ սիրելով, իսկ Ես՝ ազատ տիրելով քեզ և անկաշկանդ սիրելով քեզ: Բայց քո նվիրաբերումը Ինձ՝ երբեք չի լինելու առանց քո ցանկության:

Դու իրոք այդպե՞ս ասացիր, Աստված իմ:

Այո՛, Ես դա ասացի:
Դու հարցնելո՞ւ ես Ինձ քո հարցումը:

Չեմ համարձակվում:

Ինչո՞ւ: Մի՛ վախեցիր Ինձնից:

(Ես հասկացա, որ Նա գիտեր, բայց չէի ուզում, որ այն գրվեր թղթի վրա):

Խնդրո՛ւմ եմ Աստված:

Արի, սովորենք: Ես Ամենակարողն եմ և Ես գիտեմ, թե որն է լավագույնը քո հոգու համար: Եթե ձեզնից մեկը Ինձ հարց տա կամ օգնություն խնդրի, Ես <u>կպատասխանեմ</u>: Իմ պատասխանը կլինի լավագույնը, որով հոգին կարող է սնվել: Դա նման է այն բանին, որ Ես բոլոր պտուղներից կընտրեմ կատարյալ պտուղը, որը կարող է ամենալավ արդյունքը տալ հոգու համար:
Դու լսե՞լ ես, թե Ես քանի անդամ կարող եմ ներել:

Այո՛, Տեր, բայց որոշ գրքեր ասում են, որ թեև Դու չես ուզում նրանց պատասխանել (գերբնական ձևով), բայց ի վերջո Դու պատասխանում ես, բայց դա Քեզ դուր չի գալիս և Դու <u>բարկանում</u> ես:

Ես՝ Յահվեն, հետևյալը կասեմ քեզ. Իմ մտածելու ձևը՝ քո մտածելու ձևը չէ, և Իմ կերպերը, քո կերպերը չեն[1]: Վասո՛ւլա, Ես Ամենողորմ Աստված եմ, քեզ համար սիրառատ մի Սուրբ Հայր, որը տեղյակ է քո կարիքներին

[1] Նշանակում է, որ այս տեսությունը սխալ է:

և թուլություններին: Իմ սերը ձեր բոլորի հանդեպ՝ խանդոտ սեր է: Ե՛կ, ե՛կ, ավելի մոտեցիր Ինձ: Ես՝ Յահվեն, քեզ հասնելու համար օգտագործում եմ բոլոր հնարավորությունները:

Հա՛յր իմ, երբ ես Քեզ հետ եմ, այնքան սիրված եմ զգում ինձ Քո կողմից և իմ սերը աճում է Քո հանդեպ, բայց ես վախենում եմ, որ սպասելիքներդ չարդարացնեմ, քանի որ մեղքով լեցուն եմ:

Վասո՛ւլա, մի՞թե ես այդ բոլորը չգիտեմ: Դու մի պտղունց փոշի ես, որի վրա եթե ես փչեմ, դու կանհետանաս: Ես գիտեմ, որքան դյուրաբեկ ես դու, որովհետև, ի վերջո դու լոկ մի անցնող ստվեր ես երկրի վրա: Բայց և այնպես, քո ոչնչությամբ և քո թշվառությամբ, Իմ աչքերը երբեք չեն կտրվում քեզնից: Ես քո թուլություններին նայում եմ Կարեկցությամբ և Սիրով: Մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ զորացնելու եմ: Քո մեղքերը Ես կվերցնեմ և քեզ թողություն կտամ: Վասո՛ւլա, այսօր ավելին պետք չէ անել: Ես վաղը կկանչեմ քեզ: Իմ Խաղաղությունը քեզ:

Մարտի 5, 1987

Խաղաղություն քեզ:
Վասուլա, դու Ինձ սիրո՞ւմ ես:

Ես սիրում եմ Քեզ, Յահվե, Աստված իմ, ամբողջ հոգովս, և ուզում եմ մնալ Քեզ մոտ:

Ես էլ քեզ եմ սիրում: Ես երբեք չեմ լքի քեզ:
Վասուլա, Ես Խաղաղության ու Սիրո Թագավորն եմ ու Գերիշխանը: Քո առջևն եմ Ես՝ ցույց տալով Իմ Սուրբ Դեմքը ձեզ բոլորիդ: Սա սկիզբն է Խաղաղության և Սիրո Իմ կանչի: Աղջիկս, Ես քեզ ավելին կուսուցանեմ Իմաստությամբ: Ես շատ գոհ եմ քեզնից: Ուրախացրո՛ւ Ինձ՝ կանչերս լսելով և դրանք գրի առնելով: Մի՛ հոգնիր գրելուց: Ե՛կ, այս ամենը իզուր չի լինելու:

Այո, Տեր իմ:

Ես տալիս եմ քեզ Իմ օրհնությունները: Ե՛կ, հենվիր Ինձ վրա: Փառաբանի՛ր Ինձ՝ սիրելով Ինձ, աղջիկս: Միշտ Ինձ փնտրիր, երբեք չմերժես Ինձ: Հատուցի՛ր ուրիշների համար, իրագործի՛ր Իմ Խոսքերը: Իմ հավիտենական Խաղաղությունը քեզ:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, Ինձ մոտ մնա: Ես պիտի քեզ հիշեցնեմ, որպես մի Ամուսին, որ Ես քեզ համար առատորեն կհայթայթեմ այն ամենը, ինչի պակասություն որ դու ունես: Ես սիրում եմ քեզ: Ամեն մի խոսք, որ ասում եմ, պետք է գրվի: Մենք միասին կգործենք: Մի՛ հոգնիր գրելուց:

(Ես կարդացի Սուրբ Միքայել Հրեշտակապետի աղոթքը: Եվ Նա պատասխանեց ինձ):

Աստծո զորությամբ, Ես՝ Սուրբ Միքայելը, դժոխք պիտի նետեմ սատանային և մյուս բոլոր չար ոգիներին, որոնք հոգիներ են կործանում:

Հետո ես կարդացի Սուրբ Բեռնարդի աղոթքը՝ ուղղված Մարիամ Աստվածածնին:

Սիրելի աղջիկս, Ես կօգնեմ քեզ: Հավիտենական Իմ Խաղաղությունը քեզ: Ես քեզ մոտ եմ մինչև վերջ: Իրագործի՛ր Պատգամը, Վասուլա, կատարի՛ր Աստծո խոսքը: Հենվի՛ր քո Սուրբ Հոր վրա, քանզի Նա Ամենազորեղն է: Սիրի՛ր Նրան և փառաբանի՛ր Նրան: Դու կանե՞ս այս ամենը: Մոտ մնա մեզ: Ես սիրում եմ քեզ:

Մարտի 6, 1987

Վասո՛ւլա, այդ Ես եմ՝ Հիսուս, քո Փրկիչը. դու քաղցա՞ծ ես:

Ճիշտն ասած, Հիսո՛ւս, այս պահին քաղցած եմ:

Միշտ քաղցած եղիր Իմ Հացի համար: Ե՛կ, Իմ Հացը ձրի է, և երբ դու Ինձնից ես ուտում, կկշտանաս:

Հիսո՛ւս, ես խոսում էի երկրային հացի մասին...

Գիտեմ, Վասուլա, բայց դու ո՞րը կնախընտրեիր ունենալ:

Երկուսն էլ:

Քո հացը քեզ կբավարարի միայն մի որոշ ժամանակ, բայց երբ դու ուտես Իմ Հացից, կկշտանաս: Ով որ ուտի Իմ Հացից՝ հավիտյան կապրի[1]:
Ես կկերակրեմ քեզ, Վասուլա:

Սիրում եմ Քեզ, Հիսուս:

Օ՜ աղջիկս, ինչպես կցանկանայի լսել այս խոսքերը ամեն մի շրթունքից՝ «Ես սիրում եմ քեզ, Հիսուս»: Դու ուզո՞ւմ ես շոշափել Իմ Սիրտը: Նայի՛ր Ինձ, Ես քո առջևում եմ կանգնած:

[1] Հովհ. 6:48-51

(Ես նայեցի Նրա Սրտին: Իր ողջ կուրծքը լուսավորված էր):

Իմ Սիրտը բոցավառված է ջերմեռանդ սիրով: Իմ Սիրտն ուզում է քեզ կլանել Իր սիրով: Իմ Սիրտը ցանկանում է հրապուրել քեզ, որ Հավիտյան Իմը լինես: Ե՛կ, աղջիկս, սե՛ր աղաղակիր, խաղաղությո՛ւն աղաղակիր: Մինչև վերջ միացած եղիր Ինձ հետ: Ե՛կ միասին ուշքի բերենք մյուսներին: Սիրի՛ր Ինձ քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով, որ կարող լինես Ինձ փառաբանել, սիրելիս:

Հիսո՛ւս, Քեզ սիրելը ցավոտ է, որովհետև մեկը, որ ուզում է Քեզ հետ լինել, պետք է իր մարմնից հրաժարվի: Ահա թե ինչու Քեզ սիրելը ցավոտ է:

Ես նույնպես տառապում եմ ձեր բոլորի հանդեպ Իմ ունեցած մեծ Սիրո պատճառով: Ես դաժանորեն տառապեցի սիրո պատճառով և դեռ տառապում եմ, երբ ոչ մի պատասխան չեմ ստանում ձեր հանդեպ տածած Իմ Սիրո համար: Դու պատկերացնո՞ւմ ես, թե Ես ինչպես եմ զգում: Սիրելիս, Ես կարիք ունեմ հոգիների, որոնք իսկապես սիրում են Ինձ, հոգիներ, որոնք կարող են հատուցել նրանց փոխարեն, ովքեր անտեսում են Ինձ: Ասա՛ նրանց, թող որ իմանան, թե ինչպես կզգային իրենք, եթե սիրեին մեկին, ինչպես Ե՛ս նրանց սիրեցի և որոնց համար Իմ Կյանքը զոհեցի սիրուց մղված, բայց ո՛չ պատասխան ստացա, և ո՛չ էլ սեր:

Մի՛ հոգնիր Խաղաղության ու Սիրո Իմ Խաչը կրելուց, որովհետև, հանուն Ինձ այն կրելը հանգստացնում է Իմ խոնջացած Հոգին: Ես կարիք ունեմ հանգստի, սիրելիս:

Հիսո՛ւս, ես կանեմ այն, ինչ որ Դու ուզում ես և կփորձեմ հասկանալ, թե ինչ ես ասում ինձ:

(Երեկոյան հոգիս ծանր էր և տխուր):

Մարտի 7, 1987

Վասո՛ւլա, Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ: Սիրելիս, Ես հանգստացել եմ: Ե՛կ, Ես գոհ եմ: Հավատա՛, Ես Ինձ հանգստացած եմ զգում: Ե՛կ, գործենք սիրով և հատուցենք: Ե՛կ, Ես քեզ կսովորեցնեմ, թե ինչպես հատուցել: Ես եմ Կենաց Ջուրը, Ես եմ Հարությունը:

Հիսո՛ւս, այնքան եմ ուզում, որ ամեն ոք սիրի Քեզ: Սարսափելի է անպատասխան մնալ մի այնպիսի Մեծ Սիրո համար, ինչպիսին Քոնն է:

Վասո՛ւլա, Իմ ցանկությունն արդեն արմատավորված է քո հոգում: Աղջիկս, Ինձ ուրախացրու և սովորիր ասել. «Արի գնանք և գործենք, արի մենք սա անենք, կամ՝ դա»: Օգտագործիր մենք բառը: Մենք հավիտյան միացած ենք: Ուրախացրու Ինձ ասելով՝ «Հա՛յր, թող Քո կամքը լինի»: Ինձ ոչինչ մի՛ մերժիր:

Աղջիկս, այսօր դու պիտի հետևես Ինձ Իմ թշնամու մութ տիրապետության մեջ, որպեսզի տեսնես, թե ինչպես են տառապում այն հոգիները, որոնք մերժել են Ինձ:

Հիսո՛ւս, մի՞թե նրանք կորած են:

Նրանք, ովքեր դժոխքում են, կորած են, բայց նրանք, ովքեր քավարանում են՝ փրկված են[1] Իմ սիրելիների կողմից, նրանց սիրո շնորհիվ, ովքեր աղոթում են ու հատուցում նրանց համար: Մի՛ վախեցիր, որովհետև Իմ Լույսը պաշտպանում է քեզ, և Ես քեզ հետ եմ:

(Ես ինձ տեսա գետնի տակ: Դա նման էր գետնափոր մի մութ քարայրի և լուսավորված էր միայն կրակով: Խոնավ էր, իսկ գետինը՝ կպչուն: Ես տեսա մի քանի հոգի, որոնք շարքով կանգնած էին: Նրանք կապված էին և միայն նրանց գլուխներն էին երևում. չարչարված դեմքերով: Շատ աղմկոտ էր. թվում էր երկաթյա մեքենաներ են աշխատում: Գոռգոռոց, թխթխկոց, սուր ճիչեր, մեծ իրարանցում էր: Այդ գլուխների առջևում ինչ-որ մեկը կանգնած էր ձեռքը պարզած, իսկ ափի մեջ լավա կար: Նրա թևը շարժվում էր աջից ձախ՝ թափելով (շաղ տալով) տաք լավան այդ դեմքերի վրա, որոնք ուռել էին այրուցքներից: Հանկարծակի, այդ մարդը, որը ես հակացա սատանան էր, նկատեց մեր ներկայությունը և դարձավ դեպի մեզ:

(Սատանան է խոսում). «Մի սրան տեսեք»: Եվ նա զզվանքով ու կատաղած թքեց գետնին՝ տեսնելով Հիսուսին և ինձ: «Ողորմելի ճիճու, մի սրան տեսեք (Վաուլային), մենք նույնիսկ ճիճուներ ունենք այս օրերիս, որ գալիս են մեր արյունը ծծեն: Գնա և ...»: Նա ասաց ինձ. «Տե՛ս», և նորից տաք լավա նետեց այդ դեմքերի վրա: Ես լսեցի, որ նրանք ճչացին. «Օ՜հ, թող որ մեռնենք...»: Հետո, սատանան, որը նման էր մի իսկական խելագարի, բորբոքված կատաղությամբ գոռաց. «Երկրի արարածներ, լսե՛ք ինձ, դուք իրի՞նձ մոտ էք գալու»: Ես մտածեցի, որ նա թեև սպառնում էր, բայց հիմար էր, որովհետև հավատում էր, որ վերջում պիտի հաղթեր: Նա հավանաբար կարդաց իմ արհամարհական մտքերը և շատ սպառնագին ասաց. «Ես հիմար չեմ»: Հետո նա մի չար ծիծաղով և ծաղրանքով ասաց այդ խեղճ հոգիներին. «Լսեցի՞ք, նա ինձ հիմար անվանեց»: Ապա հեգնանքով ավելացրեց. «Սիրելի հոգիներ, դուք պիտի վճարեք նրա ասածի համար»:

Նա պատրաստվում էր նորից լավա նետել նրանց վրա: Ես հուսահատված շրջվեցի դեպի Հիսուս՝ խնդրելով, որ Նա մի բան անի սատանային դադարեցնելու համար: Հիսուս պատասխանեց).

«Ես կկանգնեցնեմ նրան»:

(Եվ այն պահին, երբ սատանան թևը բարձրացրեց լավան շպրտելու, դա նրան մեծ ցավ պատճառեց և նա գոռաց ցավից՝ հայհոյելով Հիսուսին: Նա ասաց ինձ. «Կախարդ, գնա՜ա, այո՛, գնա՛, հեռացիր մեզնից»: Դժոխքի դարպասների մոտ հոգիների ձայներն էին լսվում, որոնք ասում էին.

[1] Բարձրացել են Դրախտ:

«Փրկի՛ր մեզ, փրկի՛ր մեզ»[1]: Հետո ինչ-որ մեկը առաջ եկավ: Ես հակացա, որ դա սատանայի հետևորդներից մեկն էր և սատանան հարցրեց նրան. «Դու քո գործի վրա՞ ես: Արեցի՞ր, ինչ որ քեզ ասացի, որ անեիր: Վնասի՛ր նրան, ոչնչացրո՛ւ նրան, հուսալքի՛ր նրան»: Գիտեի, որ սատանան ինձ նկատի ուներ: Նա ուզում էր, որ այս դևը հուսալքեր ինձ Հիսուսին հանդիպելուց՝ սխալ բառեր տալով կամ ոչնչացնելով ինձ տրված պատգամը: Ես խնդրեցի Հիսուսին, որ հեռանանք այստեղից: Նա ասաց).

Ե՛կ, գնանք: Ես ուզում եմ, որ այս բոլորը դու գրի առնես: Ես կխմբագրեմ քեզ համար: Մոտ մնա Ինձ, սիրելիս: Ես ուզում եմ, որ Իմ զավակները հասկանան, որ նրանց հոգիները ապրում են և որ չարը գոյություն ունի: Այն ամենը, որ գրված է Իմ Օրհնյալ Խոսքում առասպել չէ: Սատանան գոյություն ունի և աշխատում է կործանել ձեր հոգիները: Ես տառապում եմ, երբ ձեզ տեսնում եմ, որ քնած եք ու անգիտակ նրա գոյությանը: Ես գալիս եմ ձեզ զգուշացնելու, տալով ձեզ նշաններ, բայց, ցավոք, ձեզանից շատերն Իմ զգուշացումները որպես հեքիաթներ են ընդունելու:

Սիրելիս, Ես ձեր Փրկիչն եմ, մի՛ մերժեք Իմ խոսքը. դեպի Ի՛նձ շրջվեք և զգացեք սիրո տառապանքները, որ Ես ունեմ ձեր հանդեպ: Ինչո՞ւ, ինչո՞ւ եք այդքան ուզում ձեզ նետել սատանայի ոտքերի տակ:

Օ՜, եկեք, դուք բոլորդ, ովքեր այլևս չեք հավատում Ինձ, մոտ եկե՛ք Ինձ բոլորդ, ովքեր լքել եք Ինձ: Եկեք և տեսեք, քանզի հենց հիմա է լսելու ժամանակը: Դուք բոլորդ, ովքեր վիրավորել եք Իմ Հոգին, վե՛ր կացեք, ուշքի՛ եկեք և տեսեք Իմ Լույսը: Մի՛ վախեցեք Ինձնից: Ես ձեզ ներել եմ: Ես կվերցնեմ ձեր մեղքերը և Իմ Արյունը կլվա դրանք: Ես թողություն կտամ ձեր թուլություններին և կներեմ ձեզ: Եկե՛ք և կլանե՛ք արդարության ցողը՝ վերականգնելու ձեր հոգիները, որոնք գնում են դեպի կործանում: Ես գալիս եմ ձեզ փնտրելու, Ես գալիս եմ Իմ մոլորված ոչխարներին որոնելու: Մի՞թե Ես, որպես Բարի Հովիվ, երբ տեսնեմ ձեզ մոլորված, անտարբեր կմնամ:

Վասո՛ւլա, դու կամենո՞ւմ ես աղոթել բոլոր նրանց համար, ովքեր կործանման եզրին են գտնվում:

Հիմա՞, Հիսուս:

Այո՛, հիմա:

Ես չգիտեմ, ինչ ասեմ, Տե՛ր:

Ես կսովորեցնեմ քեզ: Լսի՛ր Ինձ և կրկնիր Ինձ հետ.

Ո՛վ Սուրբ Աստված,
Քո Զորությամբ և Ողորմությամբ,
աղաչում եմ, հավաքիր

[1] Հոգիները, որոնք դժոխքի դարպասների մոտ են գտնվում, քավարանի շատ ցածր աստիճանում, կարող են «վեր բարձրանալ» մեր աղոթքներով՝ օգնելով նրանց, որ ավելի քիչ տանջվեն:

Քո բոլոր ոչխարներին:
Ներիր նրանց և
թույլ տուր որ նրանք
վերադառնան Քո Տունը Սիրելի:
Իբրև զավակներ նրանց ընդունիր
և Քո Ձեռքով նրանց օրհնիր:
Ամեն:

Ե՛կ Իմ Սրտի մեջ, Վասուլա, քանզի այնտեղ խորունկ Խաղաղություն է տիրում:

Մարտի 8, 1987

Վասո՛ւլա, սիրելիս, ուզում եմ կրկին հիշեցնել, որ Ես քեզ չեմ նախընտրում Իմ մյուս զավակներից, քանզի դու ոչ մի արժանիք չունես, իսկ քո արժանավորությունը է՛լ ավելի պակաս է Իմ աչքում: Բայց Ես, սիրում եմ քեզ, նույնիսկ եթե դու այդպիսին ես: Ես քեզ տվեցի այս Շնորհը, որովհետև դա Իմ Կամքն էր: Եղիր Իմ պատգամատարը և քո միջոցով Ես կբացահայտեմ Ինձ:

Զմտածես, որ Ես հակադրվում եմ Ինքս Ինձ: Իմ սերը քո հանդեպ անսահման է և դու Իմ սիրելին ես, քանի որ Ես քեզ ընտրեցի: Մի վայրկյան անգամ չմտածես, որ եթե Ես մատնանշում եմ քո թուլությունը, ուրեմն Ես քեզ պակաս եմ սիրում: Ես քո Սուրբ Հայրն եմ, որը ճանաչում է քեզ, և եթե Ես ցույց չտամ քո սխալները, ապա ո՞վ պիտի ցույց տա: Դու Իմ դյուրաբեկ ծաղիկն ես, որին Ես ձևավորում եմ՝ թույլ տալով ըմպելու Իմ Զորությունը, որպեսզի դու աճես, Վասուլա:

Ուզում եմ հիշեցնել, որ Հայտնությունները, որոնք Ես փչում եմ քո մեջ, քո օգտի համար չէ միայն: Դրանք նաև ուրիշների համար են, ովքեր չափազանց կարիք ունեն Իմ Հացին: Ես գալիս եմ կերակրելու բոլոր նրանց, ովքեր որ սոված են: Սիրո և Խաղաղության Իմ Պատգամը հիշեցնելու ձեզ ձեր ծագման մասին և այն մասին, թե ով ստեղծեց ձեզ:

Ես գալիս եմ ասելու, որ Իմ Մարմինը Իմ Եկեղեցին է: Այո՛, Իմ Եկեղեցին, որը լցնում է ամբողջ արարչությունը: Ես գալիս եմ ցույց տալու այս աշխարհին Իմ Ողորմությունը:

Դո՛ւ, Վասուլա, այդ բազմության մեջ նրանցից մեկն էիր, որ վիրավորեցիր Ինձ, որ երբեք չպատասխանեցիր Իմ Սիրուն՝ դառնացնելով Ինձ: Արդյոք ավելի դառը բան կա՞, քան պատասխան չստանալ մի Սիրո համար, որն այնքան պապակած է և այնքան մեծ՝ ինչպիսին Իմն է:

Դրա փոխարեն, քո ամայության մեջ դու ձգտում էիր առօրյա նյութական հաճույքներ՝ մարմնավորելով դրանք որպես աստվածներ, կուռք դարձնելով դրանք, քեզ Ինձնից ավելի ևս օտարելով, զայրացնելով Ինձ և վիրավորելով Իմ Սիրտը՝ կենդանի Աստծո Սիրտը, որն այնքան չփնտրված և այնքան չսիրված էր քո կողմից. ամբողջովին մոռացված մի Աստված: Աղջիկս, մի՞թե Ես այդքան հեռու էի քեզնից:

Ե՛կ, ե՛կ և զգա Իմ Սիրտը. Իմ Սիրտը կանչում է բոլորիդ: Ի՛մ որդիներ, Ի՛մ դուստրեր, եկե՛ք... մոտ եկեք Ինձ, շրջվե՛ք դեպի Ինձ. թույլ տվեք, որ

ձեզ գրկեմ, թույլ տվեք, որ ձեզ մխրճեմ Իմ Սրտի խորքերում և թող Այն կլանի ձեզ՝ խոր Խաղաղություն տալով:

Եկե՛ք և մտե՛ք Խաղաղության և Սիրո Իմ Հոգևոր Աշխարհը:

Եկե՛ք Ինձ մոտ և ճաշակե՛ք Իմ Մարմինը, քանզի Իմ Հացը սուրբ է և այն կմաքրի ու կսրբի ձեզ: Իմ Մարմինը կանչում է ձեզ: Եկե՛ք և տեսե՛ք Ինձ. Ես, որ օր ու գիշեր անցկացնում եմ Տապանակում, սպասում եմ, որ կերակրեմ ձեզ: Մի՛ սարսափեք ու վախեցեք Ինձնից, մի՛ հրաժարվեք Ինձնից: Ինչո՞ւ էք մերժում ձեր սրտերում Ինձ տեղ տալուց:

Եկե՛ք ու ճանաչե՛ք Ինձ, որովհետև, ինչպե՞ս կարող էք սիրել մեկին, որին դուք չեք ճանաչում, կամ ամբողջովին չգիտեք: Փորձե՛ք Ինձ լավ ճանաչել և դուք Ինձ ջերմորեն կսիրեք:

Վասո՛ւլա, դու մոլորվեցիր և հեռացար Ինձնից: Դու երես դարձրիր Ճշմարտությունից՝ բարին չարի վերափոխելով: Դու կապված էիր ավելի չարին, քան թե բարուն:

Եկե՛ք, ուրեմն, բոլոր նրանք, ովքեր դեռ խույս են տալիս Ինձնից, առաջ բերեք ձեր մեղքերը, որ Ես ներեմ դրանք: Եկե՛ք և ճաշակեք Ինձնից. եկե՛ք և դատարկեք ձեր սրտերը և թողեք, որ Ես դրանք Սիրով լցնեմ:

Գիտեմ, որ դուք տկար եք, բայց թույլ տվեք Ինձ գործել ձեր բոլորի մեջ: Տվե՛ք Ինձ ձեր համաձայնությունը, սիրելիներս: Թողե՛ք, որ Ես արմատահան անեմ ձեր բոլոր անօրենությունները, դրանք հեռու նետելով, և Խաղաղության ու Սիրո Իմ սերմերը ցանեմ ձեր մեջ: Թողե՛ք, որ Ես մաքրագործեմ ձեզ: Վասո՛ւլա, բավական է: Ես կշարունակեմ ավելի ուշ:

Մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը և միշտ հիշիր ասելու՝ մեզ, մենք:

Ես կհիշեմ, կփորձեմ, Տե՛ր:

Արի գնանք:

Գնանք:

(Շարունակությունը)

Ե՛կ և ճանաչիր Ինձ: Ես անհասանելի չեմ: Մենք քայլում ենք կողք-կողքի. դու ապրում ես Իմ մեջ և Ես՝ քո մեջ: Մենք երբեք բաժանված չենք, երբե՛ք:

Ե՛կ և բաժին ստացիր Իմ Անսահման Բարությունից և թող քո խստությունը հալվի Իմ Մաքրության մեջ:

Օ՜, աղջիկս, անկախ նրանից, որ Իմ սիրելի զավակներից շատերը Մկրտությամբ սրբացել են, սակայն նրանցից քչերն են, որ Ինձ գիտեն այնպես, ինչպես որ կամ: Նրանք մոռանում են Ինձ ընդունել, որպես սիրող մի Հայր: Նրանցից շատերը հեռանում են Ինձնից, մտածելով որ Ես անհասանելի եմ: Նրանցից շատերը մտածում են Իմ մասին իրենց հատուկ ձևերով՝ դրսևորելով իրենց անարդ հակումները: Մի քանիսը

մտածում են Իմ մասին միայն վախից դրդված, իսկ ոմանք կասկածում են Իմ Անսահման Սիրուն[1]:

(Այստեղ ես ընդհատվեցի: Սուրբ Պատանքի լուսանկարը, որ ես պատվիրել էի, տեղ հասավ: Ես խոկումով զննեցի այն և ետ եկա գրելու, նայելով նկարին):

Հիշի՛ր, Ես դեռ տառապում եմ: Վասուլա, որքան դառնացած եմ Ես: Ինչո՞ւ, ինչո՞ւ Իմ ոչխարներից շատերը ցրվել են: Նայի՛ր նրանց: Մի՞թե Իմ զոհաբերությունը իզուր էր, աղջիկս: Որքան բարկացած եմ Ես, չափազանց փչրված է Իմ Հոգին. Ես տառապում եմ:

Կերակրի՛ր Իմ ոչխարներին, մի՛ հոգնիր գրելուց:

Ո՛չ, Տեր, ես չեմ հոգնի:

Ես քեզ հարկ եղած Ուժը կտամ: Արի՛ գործենք, շարունակենք: Ես քո Ուսուցիչն եմ: Ուրախությամբ լցրու Ինձ և մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը:

Վասո՛ւլա, դու զգացիր Իմ Ներկայությունը: Իրոք, Ես նստած էի մահճակալիդ ծայրին: Թույլ տուր խմբագրեմ[2], ինչ որ գրել եմ: «Այդ Ես եմ՝ Հիսուս: Ես նստել եմ հիմա, բայց հենց այս րոպեին Ես պիտի վեր կենամ, քանի որ դու էլ ես վեր կենալու»:

(Նա հազիվ էր ավարտել գրելը, երբ դուռը ուժեղ բախեցին: Ես վեր թռա և շփոթված կանգնել էի տեղումս: Այդ երեկո Հիսուս շատ էր շեշտում ինձ Իր Ներկայությունը: Դա այնքան զգալի էր (ինչպես դա շատ անգամ էր պատահել), որ ես առաջվա նման մի թղթի կտոր վերցրեցի ստուգելու համար, և Նա գրեց վերևի պարբերությունը...)

Ես սիրում եմ քեզ, մի՛ հոգնիր գրելուց: Ազատությունը[3], որ տալիս ես Ինձ՝ հենց այն է, ինչ Ես ցանկանում եմ:

Հիսո՛ւս, Դու Սքանչելի ես:

Միշտ ուրախ եղիր, երբ Ես ուրախ եմ, հետևիր Ինձ:

Դու Ինձ կվշտացնես, եթե մոռանաս Իմ Ներկայությունը: Երբեք մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը, երբե՛ք:

Բայց, Տե՛ր, դա դժվար է: Երբեմն ես պետք է իմ ավտոմեքենան վարեմ և պետք է կենտրոնանամ ճանապարհի վրա, կամ խոսեմ ընկերներիս հետ առօրյա հարցերի շուրջ, օգնեմ տղայիս իր տնային հանձնարարությունները կատարելիս: Այնպես որ, ես ինչպե՞ս կարող եմ Քո Ներկայությունը մշտապես պահել իմ մտքում, դա գրեթե անհնարին է:

[1] Այս պատգամը շարունակվում է 1987 թվի մարտի 18-ին:
[2] Հիսուսն իմ լեզուն է օգտագործում: Սբ. Թերեզա Ավիլայից մեզ հայտնի է, որ «Աստված Իրեն հարմարեցնում է » իր ընտրած անձի լեզվին:
[3] ինձ օգտագործելու ազատությունը

Վասո՛ւլա, ծաղիկս, եթե դու այդ վիճակում ես, դու պետք է միայն հիշես առաքինությունները՝ լինելով խոնարհ, բարեպաշտ, հեզ, շնորհալի, ճշմարտախոս և սիրող: Այո՛, առաքինի լինել՝ նշանակում է Ինձ հիշել: Արի գնանք:

Ես ցանկանում եմ, որ քեզ հայտնի դառնա, որ Ես դերբնական ձևով եմ մոտենում Իմ Պատգամները տալուց: Մի՛ մոռացիր, որ Ես Ողորմության Աստված եմ և հակառակ քո թշվառության և անտարբերության, որ դու ունես Իմ հանդեպ, Ես սիրում եմ քեզ: Ես տվեցի քեզ այս շնորհը, որ դու ուղղակի սովորես Իմ շուրթերից: Վասո՛ւլա, քո սրտում հանգստանալը հաճելի է Ինձ:

(Ավելի ուշ)

(Կասկածի հորձանքը կրկին համակեց Ինձ):

Ե՛կ, տառապանքը մաքրում է քեզ: Հենվի՛ր Ինձ վրա: Ընդունի՛ր տառապանքը: Հատուցի՛ր, հատուցի՛ր, հատուցի՛ր մյուսների համար: Ե՛կ, վերակենդանացնենք Իմ բոլոր զավակներին:

(Այստեղ ես միանգամայն անհանգստացա):

Բայց, Աստված Իմ, ես անօգնական եմ, ինչպե՞ս կարող եմ մի որևէ բան անել:

(Նա շատ մեղմորեն ասաց).

Մի՞թե Ես երբևիցե կլքեմ քեզ: Օգտագործի՛ր Իմ սերմերը և ցանի՛ր դրանք դաշտերում, որ Խաղաղության և Սիրո պտուղներ տան: Թող որ Իմ Խոսքը հայտնի դառնա բոլորին: Ես ամբողջ ժամանակ քեզ հետ կլինեմ:

Իսկ եթե պիտի նրանք մերժեն Այն ու կասկածանքով մի կողմ դնեն, համարեն ոչ պետքական և չհավատան, որ այդ Դու ես:

Լսի՛ր Ինձ, Իմ Վասուլա, դու ինչո՞ւ ես վախենում: Իմ ողջ արարչությունը ստեղծված է Իմ Ձեռքով: Դու մոռացե՞լ ես, որ Ես Ամենակարող եմ: Իմ ողջ արարչությունը հնազանդվում է Իմ Կամքին: Փոքրիկս, Ես Ամենաբարձրյալն եմ: Փառաբանի՛ր Ինձ, եղիր ծաղկի նման, որն ապրելու համար կարիք ունի Իմ Լույսին:

Մարտի 17, 1987

Վասո՛ւլա, դու կկրե՞ս Իմ խաչը հիմա:

Կկրեմ, համաձայն Քո Կամքի, Հիսուս:

Շոշափի՛ր, զգա թե որքան ծանր է Այն: Ես կարիք ունեմ հանգստի: Ի՛նձ հետևիր, ավելի մոտեցիր Ինձ: Իմ թանկագին խաչը ես քեզ վրա պիտի դնեմ:

(Այդ օրը, ավելի ուշ, ես անասելի անհանգիստ ու տխուր էի և կարիք ունեի սփոփանքի, բայց չէի գտնում):

Իմ հսկայական բեռը դու զգացել ես քեզ վրա: Երբե՛ք չմերժես Իմ խաչը. Իմ բեռը ծանր է:

Վասուլա, մի՛ փորձիր հասկանալ, թե ես ինչու եմ բարձրացնում քեզ Ինձ մոտ[1]: Ինձ ազատ թող քեզ հետ վարվել, ինչպես որ ուզում եմ, մինչև որ գամ և ազատեմ քեզ: Սիրելիս, Իմ առաջնորդությունը քեզ՝ իր մեջ մարտիրոսություն է կրում, փորձելով ճշմարտություն գտնել դրա մեջ, ու չգտնելով այն, դա տանջում է քեզ: Տառապի՛ր Ինձ համար, տառապանքը մաքրում է հոգիդ: Քեզ Ինձ զոհաբերիր և մի՛ փորձիր պարզաբանել[2], միայն հավատա:

Ինձ ազատ թող, որ գործեմ քո մեջ և քո միջոցով բացահայտեմ Իմ խոսքը և դրանով բժշկեմ Իմ զավակներին: Հավատա՛ Իմ Փրկարար Սիրուն:

Իմ խաչը ծանր է: Այո՛, ես բազում անգամներ պիտի գամ՝ Այն քեզ վստահելու: Դու Իմ հարսն ես, Իմ սիրելին և Իմ ծաղիկը: Կրելով Այն Ինձ համար՝ դու թեթևացնում ես Իմ բեռը:

Իմ հայտնություններում, որոնք ես Իմ շնչով արտաբերում եմ քո մեջ, կան վշտի դառն զգացումներ, ցավեր և տառապանքներ, որոնք դուրս են հոսում Իմ Հոգու խորքերից: Ե՛կ և մեկ անգամ ևս լսիր Իմ Սրտին և զգա՛, թե Այն ինչպես է բզկտվում, զգա՛, թե Այն ինչպես է փնտրում բոլորիդ:

(Հետո, կարծես Նա այլևս չկարողացավ դիմանալ և մի ճիչ դուրս եկավ Նրա տառապած հոգուց, Նրա հոգու <u>խորքերից</u>, կարծես կրած տանջանքից մոտեցել էր մահվան):

Արարա՛ծ, որին Իմ Հայրը ստեղծեց Իր սեփական Ձեռքերով, ինչո՞ւ, ինչո՞ւ ես դու Ինձ այսքան տառապանք պատճառում:

(Հետո Նա դեպի ինձ շրջվեց... Նրա դեմքը և ձայնը շատ լուրջ էր).

Երբևիցե դու մտածե՞լ էիր Իմ մասին, նախքան Իմ քեզ մոտ գալը:

(Ես ինձ մեղավոր զգացի):

Ո՛չ, չեմ մտածել:

(Կրկին ինձ ծանր ու մռայլ զգացի):

Կգայի՞ր Ինձ մոտ, եթե ես չտեսնեի և չգտնեի քեզ:

---

[1] Աստված ինձ հիշեցնում է ընդունել այն, ինչպես որ կա:
[2] Ես փորձում էի պարզել, թե արդյոք սա իրակա՞ն առաջնորդություն է:

Ո՛չ, չեմ կարծում: (Ես ինձ ավելի մեղավոր զգացի):

Հիմա դու Ինձ սիրո՞ւմ ես:

Այո՛, Տեր իմ, սիրում եմ:

Իմ առաջնորդությունը քեզ փոխեց, այնպես չէ՞:

Այո՛, փոխեց[1]*:*

Դու կհավաքե՞ս Իմ զավակներին և կկերակրե՞ս նրանց:

(Ես անօգնական զգացի):

Աստված իմ, ինչպես կարող եմ, ի՞նչ միջոցներով:

(Ես ուզում էի հաճոյանալ Նրան, ցույց տալով, որ շնորհակալ եմ, բայց չէի կարողանում):

Վստահի՛ր Ինձ, թող որ քեզ առաջնորդեմ, Վասուլա, թող որ հավաքեմ զավակներիս: Գիտեմ, որ անօգնական ես, գիտեմ, որ թույլ ես: Տեսնո՞ւմ ես, դու ոչինչ չես կարող անել առանց Ինձ: Հիմա Ինձ թույլ կտա՞ս որպես գործիք գործածել քեզ, մինչև որ Ես ավարտեմ Իմ Պատգամը:

Այո՛, այնքան ժամանակ, որքան ժամանակ, որ պատգամը Քո կողմից կլինի, Հիսուս:

Ես Հիսուսն եմ, երբեք չկասկածես: Մի՛ հոգնիր գրելուց: Ամեն մի բառ, որ Իմ շուրթերից է դուրս գալիս, քեզ զգացնել կտա Իմ վերքերը: Ես քեզ Ինձ հետ քաշում եմ ցած, Իմ թշնամու մութ տիրապետության մեջ՝ ցույց տալու համար, թե հոգիներն ինչպես են տառապում[2]: Ես քեզ վրա եմ հեղում Իմ ողջ տառապանքները, որոնք Ինձ խորապես խոցում են: Քահանաս, քանզի Իմ քահանան ես դու: Դու պիտի քայլես Ինձ հետ: Ես քեզ երբեք չեմ լքի: Մենք միասին կկիսենք Իմ խաչը, միասին կտառապենք, միասին ջանքեր կգործադրենք, և դու կհանդչես Իմ մեջ, իսկ Ես՝ քո:

Մարտի 18, 1987

Ես սովորեցրել եմ քեզ Ինձ սիրել ու ճանաչել: Ես ցույց եմ տվել քեզ Իմ Երկնային Գործերը՝ դուրս հեղելով Իմ Սրտի ողջ խորհուրդները, ցույց տալով Իմ անասելի Ողորմությունը, մաքրագործելով քեզ՝ լինելու համար Իմ հայտնությունների աղբյուրը, ցույց տալու աշխարհին Իմ Շնորհը:

[1] Այդտեղ ես իսկապես զգացի, որ ոչինչ եմ, և իմ արժանիքների համար չէր, որ Նա ինձ մոտեցավ, որովհետև սկզբում ես գրեթե մերժեցի Նրան:
[2] Երբ Նա ցույց տվեց ինձ դժոխքը:

Արդարև, ես քեզ եմ պարգևել Իմ անհագ սերը՝ ցույց տալու զավակներիս, թե նրանց որքան կարող եմ սիրել[1]: Այնուամենայնիվ, ես հիշեցնում եմ քեզ, որ դու ամենևին տարբեր չես, քան մնացյալը, և որ դու ծածուկ չես պահելու այս առաջնորդությունը:

Ես ուզում եմ, որ Իմ զեղումները ծածկեն այս աշխարհը, որովհետև դա Իմ Կամքն է: Վասո՛ւլա, թույլ տուր որ Ես գործեմ քո մեջ, ինչպես ուզում եմ:

Հիմա եկ ու մխիթարիր Ինձ, այո՛, սիրելով Ինձ: Ես Յահվեն եմ և Ինձ վրա է, որ դու հենվում ես և դեպի Ինձ ես գալիս ու խոկում: Քո աղոթքներում դու Ինձ ես կանչում, այնպես որ, մի՛ անհանգստացիր, քանի որ դու պաշտում ես Ինձ և ուրիշ ոչ մեկի[2]:

Իմ ցանկությունն է, որ բոլոր զավակներս դեպի Ինձ դառնան:

Աղջիկս, Ես սնեցի ու մեծացրեցի քեզ այս Պատգամի համար: Դու կկատարե՞ս Իմ խոսքը, Վասո՛ւլա: Դու կամենո՞ւմ ես աշխատանքդ շարունակել Ինձ համար:

Այո՛, Տեր իմ, այնքան ժամանակ, որ կճանաչեմ, որ դա Յահվեն է:

Փոքրի՛կս, Ես Յահվեն եմ: Իմ խաղաղությունը քեզ, փոքրիկս, աճի՛ր: Երբեք մի՛ հոգնիր գրելուց: Թույլ տուր, որ քեզ գործածեմ մինչև Իմ Պատգամի վերջը:

Փոքրիկս, ո՞վ է քո հայրը:

(Ես զարմացա այդ հարցից):

Դու ես:

(Պատգամ աշխարհի համար):

Ես եմ: Դու Իմ սերմն ես, դու Իմն ես:

Իմ զավակները հեռացել են Ինձնից, և նրանց սրտերը սառել են եսասիրությունից: Նրանք մոռացել են Ինձ: Ես ուզում եմ հարցնել նրանց. ինչո՞ւ էք Ինձ մերժում, Ես ի՞նչ եմ արել, որ ձեզ դուր չի եկել: Մի՞թե Ես երբևիցե ակնարկել եմ ձեզ, որ իբր Ես բարկացած եմ ձեզ վրա: Ինչո՞ւ եք դուք սարսափում Ինձ հանդիպելուց: Սիրելիս, Ես չեմ մեղադրի ձեզ ձեր մեղքերի համար: Ես ձեզ ներում եմ հիմա. Ես չեմ փակի դուռը ձեր դեմքին: Ճշմարիտ եմ ասում, որ միլիոն անգամ կարող եմ ներել ձեզ և թևերս բաց Ես կանգնած եմ ձեր դիմաց՝ խնդրելով ձեզ որ դաք Ինձ մոտ և զդաք այս սերը, որ Ես ուզում եմ ձեզ տալ: Թույլ տվեք, որ ձեր սրտերը բոցավառեմ: Եկե՛ք ու ճանաչեք Ինձ: Եկե՛ք դուք բոլորդ, ովքեր խուսափում և վախենում էք Ինձնից, դուք բոլորդ, ովքեր Ինձ չեք ճանաչում, մոտ եկեք Ինձ, և դուք պիտի հասկանաք, որ Ես Աստված եմ՝ Սիրով լեցուն, խղճով լեցուն և Ողորմությամբ լեցուն:

---

[1] Ես Նրա սիրո նմուշն եմ:

[2] Այդպիսի ժամանակներում ես անհանգստանում էի, որ միգուցե այս գրությունները Աստծուց չեն:

Մի՛ մերժեք Ինձ առանց ճանաչելու: Իմ հորդառատ սերը առաջարկում է ձեզ մի զորեղ շնորհ՝ չարն ու բարին հասկանալու և ընտրություն կատարելու: Ես ձեզ ընտրության ազատություն եմ տվել, բայց և տվել եմ բարեմասնություններ՝ ձեզնից դերազանց արարածներ ստեղծելու համար: Ես ձեզ ձիրքեր եմ տվել. օգտագործե՛ք ձեր ձիրքերը և ձեր բանականությամբ ու սրտով, որ շնորհել եմ ձեզ, հասկացե՛ք և մոտ եկեք Ինձ ընդունելու և Ինձ ավելի լավ ճանաչելու համար:

Ես լուսավորել եմ ձեր սրտերը, որպեսզի դուք կարողանաք Ինձ սիրել: Այդ Ե՛ս եմ, որ տվել եմ ձեզ այդ Շնորհը: Դուք կընդունե՞ք այդ Շնորհը:

(Ես ինձ հիշեցի, թե առաջ ինչպիսին էի):

Բայց, Տե՛ր, որոշ մարդիկ առիթ չունեն Քեզ ճանաչելու, ոչ ոք չի սովորեցրել նրանց: Դա իրականում իրենց մեղքը չէ, այնպես չէ՞: Ուրեմն, ինչպե՞ս կարող էին նրանք Քո մասին մտածել:

Վասո՛ւլա, որքա՜ն ճիշտ է դա:

Աղջի՛կս, Իմ Եկեղեցին վերանորոգման կարիք ունի: Ես եկել եմ ամրացնելու Իմ Եկեղեցին, հակառակ դեպքում՝ մարդկային հոծ խմբեր սահմանված են ոչնչանալու: Վասուլա, Ես պիտի ետ դամ Իմ բարեպաշտներին պատգամ տալու: Թող որ Ես իրագործեմ իղձերս, իմ այն զավակների համար, ովքեր հեռացել են Ինձնից: Ես Սիրո Աղբյուրն եմ և այս Աղբյուրից է հոսում այս Անսահման Սերը, որը ծածկում է ողջ արարչությունը: Ես ձեզնից միայն փոխադարձ Սեր եմ խնդրում:

Ձեզնից շատերը հավատում են, որ Ես բարկացկոտ մի Աստված եմ և դրա համար վախենում են Ինձնից: Դուք վախենում էք Ինձ մոտենալ, իսկ ոմանք էլ հավատում են, թե Ես անհասանելի եմ և միայն վայելում եմ Իմ Փառքը՝ երբեք չմտահոգվելով ձեզնով, կամ էլ՝ Իմ աչքերը պտտվում են միայն Իմ նվիրյալների վրա, ստեղծելով նախասիրություններով լեցուն Աստծո մի կերպար: Դուք չգիտե՞ք, թե որքան ավելի թույլ և որքան ավելի թշվառ եք դուք, այնքան ավելի եմ Ես ձեզ փնտրում ու սիրում:

Ես Սուրբ եմ, բայց և ուզում եմ, որ հասկանաս, որ Ես ցանկանում եմ մտերիմ լինել քեզ հետ և դառնալ քո Սուրբ Ընկերակիցը:

Դու գիտե՞ս անառակ որդու առակը, Վասուլա:

Այո՛, որոշ չափով:

Նա մեղք գործեց, բայց իր հայրը ինչպե՞ս ընդունեց նրան:

Մեծ ուրախությա՞մբ:

Ավելին, նա ընդունեց նրան մեծ սիրով և տոնեց այն:

Մի՛ վշտացրեք Ինձ, սիրելիներս, և եկեք Ինձ մոտ. Ես ձեզ չեմ մերժի. Ես կընդունեմ ձեզ Իմ գրկում: Վերադարձե՛ք Ինձ մոտ, առանց վախենալու:

Մարտի 19, 1987

Ես այստեղ եմ, Ես եմ՝ Հիսուս:

Վասո՛ւլա, բարձրացիր դեպի Ինձ: Ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես: Ուրախացրո՛ւ Ինձ և դարձիր կատարյալ: Դու կամենո՞ւմ ես անթերի լինել:

(Ես պապանձվել էի):

Ես ուզում եմ, որ անթերի լինես: Ես քեզ խնդրում եմ, Վասուլա:

Բայց, Տե՛ր, անհնարին է կատարյալ լինել: Ինչպես որ կամ, և կարծում եմ վատը չեմ, դա արդեն մեծ բան է ինձ համար:

Վասո՛ւլա, Ես կսովորեցնեմ քեզ կատարյալ լինել: Ճշմարիտ եմ ասում, որ դա անհնարին չէ, բայց դու թույլ պիտի տաս, որ Ես քեզ ձև տամ: Քեզ ամբողջովին Ինձ հանձնիր և Ես քեզ կձևավորեմ այնպես, ինչպիսին ցանկանում եմ, որ դու լինես:

Հիսո՛ւս, ես չեմ կարծում, որ կարող եմ երբևիցե այդպիսին լինել: Դժվար է ինձ ձևավորելը: Դա նման կլինի, եթե փորձես ձև տալ մի ժայռի:

Վասո՛ւլա, ա՜հ Վասուլա, դու Ինձ չե՞ս վստահում: Ես Աստված եմ, և Ես կարող եմ անգամ ժայռերը ձևավորել՝ ինչ ձևի որ կամենամ: Դու գիտե՞ս, թե ինչու քեզ ընտրեցի:

Այո՛, Տեր:

Ահա ևս մի պատճառ: Ես ընտրեցի քեզ, որովհետև դու տկար ես և քո տկարությունը հմայում է Ինձ: Զավակս, ե՛կ և զգա Իմ Սիրտը: Սիրտս ցանկանում է սիրվել. ե՛կ և մտովի շոշափիր Իմ Սիրտը: Վասուլա, դու պատրա՞ստ ես:

(Ես քարացել էի):

Զգա՛ Ինձ, մի՛ վշտացրու Ինձ, դու Ինձ չես զգում[1]:

Ո՛չ, ես Քեզ չզգացի: Ես քաջություն չունեմ այդ անելու:

Կասե՞ս Ինձ, թե ինչումն է քո խնդիրը:

Այն գնալով ավելի է բարդանում:

Ինչո՞ւ:

(Ես ամաչեցի, որովհետև ինձ այնքան անարժան զգացի):

[1] Իր սերը զգալու իմաստով

Ես Ամաչում եմ: Ես ամաչում եմ Քեզ նայելու:

Ինչո՞ւ, Վասուլա: Մի՛ վշտացրու Ինձ և ասա Ինձ քո դժվարությունը:

Ես անհարմար զգացի դիպչել Քո Սրտին: Ես ինձ տեսնում էի որպես մի բորոտի, որը գալիս էր դիպչելու անարատ մեկին: Ես ո՞վ եմ, որ Քեզ մոտենամ:

Ամեն անգամ, երբ դու ամաչում ես, Ես քեզ ավելի եմ սիրում[1]: Աղջի՛կս, քանի որ մենք Հավիտյան միացած ենք և դու Իմն ես, Ես թույլ եմ տալիս Ինձ թափանցել քո սրտի խորքը: Պսակվելն Ինձ հետ՝ փառավորում է Ինձ և մաքրագործում է քեզ: Մենք միացած ենք:

Այո՛, Տեր, բայց նայիր, թե ինչին ես Դու միացած:

Ես սիրում եմ քեզ, իսկ հիմա հենվիր Ինձ վրա: Վասուլա, շոշափի՛ր Իմ Սիրտը:

(Ավելի ուշ)

(Ես շոշափեցի Նրա Սիրտը, որը շատ տաք էր և տրոփում էր սիրվելու ցանկությամբ):

Հարկավոր չէ, որ դու ամաչես Իմ Սիրտը շոշափելուց: Ես քո Աստվածն եմ, որը քեզնից խնդրում է սա: Թող որ գործածեմ քեզ, ինչպես որ ուզում եմ: Թույլ տուր քեզ համբուրեմ:

(Ես կասկածամիտ դարձա, մտածելով որ դա չարն է, որը փորձում է ինձ գցել մեղքի մեջ):

Ե՛ս եմ, Տեր Հիսուս Քրիստոսը. մի՛ վախեցիր:

(Ես դեռ զգույշ էի, չնայած չարի ներկայությունը չէի զգացել շուրջս, բայց դեռ կասկածում էի):

Մի՛ վախեցիր:

(Ես կրկին չէի կարողանում «ազատվել բորոտի» այս զգացումից և չէի շարժվում):

Դու գիտե՞ս, թե որքան եմ քեզ սիրում:

Այո՛, գիտեմ, Հիսուս:

[1] Ավելի ուշ ես հասկացա, որ Նա գոհ էր, որ ես ինձ անարժան էի զգում:

Այդ դեպքում, ինչո՞ւ ես մերժում Իմ համբույրը:[1]

Որովհետև ես արժանի չեմ, որ Դու ինձ համբուրես:

Վասո՛ւլա, ես քեզ սրանից առաջ չեմ ասե՞լ, որ Ինձ ոչինչ չմերժես: Եվ դու ի՞նչ պատասխանեցիր Ինձ:

Որ ես երբեք Քեզ որևէ բան չեմ մերժի:

Այո՛, ուրեմն ինչո՞ւ ես մերժում Իմ համբույրը: Վասո՛ւլա, երբեք չմերժես Ինձ: Եթե ես խնդրում եմ մի բան, ապա դա սիրուց է բխում: Թույլ տուր համբուրեմ քեզ: Թույլ կտա՞ս Ինձ հիմա: Մոտեցիր Ինձ և զգա Իմ համբույրը՝ մի երկնային համբույր քո ճակատին. դու պատրա՞ստ ես[2]:
Ես սիրում եմ քեզ:

Մարտի 20, 1987

Վասո՛ւլա, թող որ քեզ մի բան ասեմ: Մինչև վերջ սիրիր Ինձ, քանզի վերջը քաղցր է լինելու, և Ես քեզ հետ եմ լինելու:

Դու որքան ես տառապել:

Իմ տառապանքները իզուր չեն: Ես ազատեցի քեզ չարից:

Երանի թե երբեմն Դու ուրախ լինեիր:

Ես ուրախ եմ, երբ ես Իմ սիրելիների հետ եմ:

Նրանք Քեզ ուրախացնո՞ւմ են:

Այո՛, նրանք թեթևացնում են Իմ տառապանքները:

Ափսոս, որ մենք երկու հազար տարի ետ չենք կարող գնալ, որ Քեզ հետ լինենք:

Ես առաջվա նման ձեր մեջ եմ, աղջիկս:

Հիսո՛ւս, այն պահից սկսած, երբ դու համբուրեցիր ինձ (երեկ երեկոյան) և այսօր, ամբողջ օրը, ես ինձ տարրալուծված եմ զգում Քո մեջ, կարծես

---

[1] Շատ ավելի ուշ, մի քանի տարի անց, երբ ես Հիսուսին ավելի լավ ճանաչեցի, ես հասկացա որ Հիսուս սովորեցնում է ինձ ավելի մտերիմ լինել Իր հետ, ինչպես Սուրբ Գերարուդը և մյուսները:

[2] Հիսուս համբուրեց իմ ճակատը: Նա ինձ թողեց հոգեկան մի զմայլված դրության մեջ: Ինչպե՞ս կարող եմ ես դա բացատրել: Հաջորդ երկու օրերին ես ինձ դատարկված էի զգում, թափանցիկ, ինչպես մաքուր մի ապակի: Նա ինձ տվեց հոգու խաղաղության այնպիսի մի վիթխարի զգացում: Թվում է շնչառությունս անցնում էր իմ թոքերով ու լցվում ողջ մարմնիս մեջ՝ ստեղծելով եթերային մի զգացում:

թափանցիկ լինեմ՝ լցված աներևակայելի խաղաղությամբ: Կարծես դատարկված լինեմ...

Վասո՛ւլա, ես խաղաղություն եմ. ես քեզ միշտ կտամ Իմ խաղաղությունը: Քո ողջ էությամբ միացիր Ինձ և ես քեզ կտարրալուծեմ Իմ մեջ: Ա՜Հ Վասուլա, միշտ եկ ու թափանցիր Իմ մեջ և զգա Իմ խաղաղությունը:
Դու դեռ կամենո՞ւմ ես, որ Ես ձևավորեմ քեզ:

Այո՛, Հիսուս, միշտ:

Այո՛, Ինձ ազատ թող վարվել քեզ հետ այնպես, ինչպես ուզում եմ: Ես քեզնից նվիրված ու մաքուր մի էակ կկերտեմ՝ բացարձակապես Իմ շահերի համար: Իմ Ուժով դու պիտի դիմանաս փորձություններին, սոսկ Իմ շահախնդրությունների համար: Իմ խոսքը նմանվելու է մի գետակի, որը հոսում է, ապա հորդում, մինչև որ դուրս է թափվում ու վերածվում մի օվկիանոսի՝ խաղաղության և Սիրո մի օվկիանի:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, ինչո՞ւ դու երբեք Ինձ չես դովաբանում: Ես Տերն եմ, որ փրկեց քեզ խավարից: Իմացի՛ր, թե ով ես դու. ամենաթշվառների մեջ, դու ամենաթշվառն էիր:

(Ես հառաչեցի):

Բոլոր դեպքերում, Ես սիրում եմ քեզ: Գովերգի՛ր Ինձ Վասուլա, քեզ ազատելու համար:

(Ես մտածում էի ինչ ասել, տատանվում էի):

Ասա՝

Աստված Իմ, ես սիրում եմ Քեզ
և Քո լիառատ Սիրո
և Ողորմության միջոցով է,
որ Դու ցույց տվիր Ինձ
Քո Լույսը:
Օրհնյալ լինի Քո Անունը: Ամեն:

(Ես կրկնեցի Նրա խոսքերը):

Մարտի 21, 1987

Ես եմ՝ Հիսուս: Վասո՛ւլա, սիրելիս, դու կփորձե՞ս սովորել մտքովդ զատորոշել Ինձ[1]: Վասո՛ւլա, Ինձ նայիր:

(Ես նայեցի Նրան):

Այո՛, ճիշտ է:

Քո ձեռքերը դրել ես դրասեղանի վրա՞:

Այո՛:

Հիմա Դու խաչաձևե՞լ ես Քո թևերը:

Այո՛:

Հիմա Դու բարձրացրիր մի թևդ, և Քո ձեռքը դիպավ դեմքիդ, իսկ Քո ցուցամատը այտիդ վրա է: Մյուս թևը նույն տեղում է. կարծես մտածո՞ւմ ես:

Ճի՛շտ է: Ես չեշտում եմ Իմ Ներկայությունը: Վասո՛ւլա, Ինձ նայիր:

(Դու մի գիրք ունե՞ս, որը հանեցիր աջ ձեռքով թիկնոցիդ ձախ կողմից):

Այո՛, Ես մի գիրք ունեմ:

(Եվ դա մեծ չէ):

Միանգամայն ճիշտ է: Դու լավ ես զատորոշում, Վասուլա: Գրքի մեջ նայիր և կարդա, թե ինչ է ասում:

(Փորձում եմ, բայց չեմ կարողանում):

Ասում է...

Իմ խորանը դու ես:

Ես չեմ կարող, Հիսուս, մնացյալը չեմ հասկանում:

Նորից փորձիր. «Իմ խորանը, որի վրա ես պիտի...»

(*Չեմ տեսնում. կարծեմ սխալ եմ կարդում:)*

[1] Հիսուս ցանկանում էր որ ես օգտագործեի հոգու զատորոշման պարգևը, որ Նա տվել էր ինձ:

Փոքրիկս, դու ի՞նչ կանես առանց Ինձ: Դու պետք է հոգիդ ավելի բարձրացնես դեպի Ինձ: Վասո՛ւլա, ես կօգնեմ քեզ: Դու քեզ ամբողջովին Ինձ հանձնիր, երբեք մի՛ հուսալքվիր: Ես ավելի ուշ ետ կգամ Իմ գրքով:

(Ես վհատվեցի, կարծելով, որ Նրան հիասթափեցրի՝ հոգիս բավարար չափով վեր չբարձրացնելու համար: Ես նույնիսկ մտածեցի, թե Նա ինձ կփոխարինի մեկ ուրիշով, որ Նրա համբերությունը սահմաններ ունի):

Վասո՛ւլա, դու երբեք չմտածես, որ Ես քեզ կփոխարինեմ մեկ ուրիշով: Դու Ինձ հավատո՞ւմ ես: Ե՛կ, մենք մյուս անգամ կփորձենք: Փորձի՛ր մտքովդ ավելի զատորոշել Ինձ, ինչպես հիմա արեցիր: Վասուլա, թող որ քո ողջ էությունը ամբողջապես թափանցի Իմ մեջ և լուծվի Իմ մեջ: Սիրի՛ր ինձ և հատուցի՛ր այլոց համար: Բարձրացի՛ր, Ես պիտի սովորեցնեմ քեզ վեր բարձրացնել քո հոգին: Արի գնանք:

Մարտի 22, 1987

Ես սիրում եմ անդորրությունը: Դու պիտի աշխատես անդորրության մեջ՝ առանց շտապելու: Ես ետ կգամ Իմ գրքով:

Ուրիշ ի՞նչ կա այդ գրքում:

Դրա մեջ Ես գրել եմ Իմ հոգիներից մի քանիսի անունները, հոգիներ՝ ովքեր վերակենդանացնելու են Իմ Բոցը, Սիրո Բոցը: Դու կկարդա՞ս, ուր որ քեզ ցույց տամ:

Այո՛, Տեր, ես մտահոգված էի այդ փոքրիկ գրքի մասին, որը ես չկարողացա կարդալ:

Գիտեմ:

(Ես տեսնում եմ. կազմը փափուկ է և ոսկեգո՞ւյն):

Այո՛, դրա կազմը ոսկեգույն է, նայիր մեջը և կարդա. «Ես քեզ Իմ խորանը պիտի դարձնեմ, որի վրա պիտի տեղադրեմ Իմ Սրտի բուռն ցանկությունները: Իմ Բոցը պիտի ապրի քո մեջ, վերցնելով Իմ Սրտից ու լցնելով քո սիրտը: Ես՝ Տերը, Իմ Բոցը հավիտյանս հավիտենից պիտի պահեմ բոցավառված»: Հիմա դու կհամբուրե՞ս Իմ գիրքը, աղջիկս:

(Ես համբուրեցի):

Ասեմ քեզ:

(Ես մի հարց ունեի):

Սա հոգևոր առաջնորդություն է Իմ ընտրյալ հոգիների համար: Հիմա դու գիտես:

(Ավելի ուշ, տարակուսանքի ու կասկածի ալիքը պատեց Ինձ):

Վասո՛ւլա, մի՛ վախեցիր, Ես եմ՝ Հիսուս, լսիր սիրելիս: Բոլոր առաջնորդություններն էլ ունեն իրենց տառապանքները: Քոնը անստուգությունն է, որը տանջում է քեզ: Չեմ ասե՞լ, որ տառապանքը մաքրում է հոգին: Ընդունի՛ր այդ և Ինձ ազատ թող անելու այն, ինչ որ լավագույնն է քեզ համար: Թող, որ գործեմ քո մեջ: Դու թույլ կտա՞ս:

Այո՛, եթե այդ Դու ես, Հիսուս:

Ես Հիսուսն եմ, քո Փրկիչը: Մենք միասին կտառապենք, միասին ջանք կթափենք: Ահա այսպես, հենվի՛ր Ինձ վրա: Ե՛կ, գնանք ու միասին կարդանք:

(Ավելի ուշ)

Ես այստեղ եմ, ապրի՛ր Ինձ համար, փառաբանի՛ր Ինձ՝ սիրելով Ինձ: Ե՛կ, այս ամենը Սիրո և Խաղաղության Իմ նպատակների համար է: Ինձ երբեք չմերժես: Ջարը միշտ պիտի փորձի միջամտել, խափանելու Իմ ծրագրերը, բայց Ես պիտի հաղթեմ, այնպես որ, վստահիր Ինձ:

Բայց, Տե՛ր, կարո՞ղ եմ բողոքել որոշ բաների համար:

Քեզ ազատ զգա Ինձ հետ, Վասուլա:

Ես ուզում եմ Քեզ ասել, թե ինչն է ինձ անհանգստացնում: Հավանաբար, այն ամենը, ինչ ես ասում եմ կամ մտածում՝ սխալ է, այնպես որ, ինչ որ անելու եմ, սխալ է լինելու: Ճիշտ է, որ ես իսկական աջակցություն չունեմ. դրանով ուզում եմ ասել, որ ես այստեղ եմ և պատգամներ եմ գրում, որոնք ես ստանում եմ Քեզնից: Ուրիշները հավանաբար նույն փորձառությունն են ունեցել, ինչ որ՝ ես: Մյուս առաջնորդությունները կամ պատգամները, որոնք եկել են Քեզնից՝ ուղղված են այլ մարդկանց: Բայց այդ մարդիկ գլխավորապես մենաստաններում էին և կամ կուսանոցներում. նրանք շրջապատված էին կրոնականներով, քահանաներով, եպիսկոպոսներով և այլն: Երբ այս գերբնական մոտեցումը պատահում էր նրանց հետ, նրանց ուշադիր հետևում էին, որից հետո հեշտ էր գրությունները փոխանցել վանահայրերին, այնտեղից էլ եպիսկոպոսին և հետո՝ Պապին: Նրանք բոլորը ընդունում էին, որ դա գալիս էր Քեզնից:

Միգուցե սխալվում եմ, բայց թվում է, թե նրանց համար ավելի հեշտ էր այդ պատգամները ընդունել իրենց շրջանակում գտնվող մեկից, որին նրանք լավ գիտեին, և դրա համար էլ դա խմբագրվում էր, թեկուզ և մասամբ: Դրանք վավերացվում էին[1]: Ահա և ես, մոտեցել եմ քահանաների, որոնք

[1] Ու այդպիսով թեթևացած էին զգում, քանի որ պատգամը կարող էր նաև ծանր հետևանք ունենալ:

կաթոլիկներ են: Մկրտությամբ որպես մի հույն ուղղափառ, ինձ համար նշանակություն չունի, թե նրանք ով են: Անգամ, եթե ես կաթոլիկ լինեի և քահանան լիներ բողոքական, ես չեմ ընտրում. մենք բոլորս քրիստոնյաներ ենք: Մի շարք քահանաներ այդ մասին գիտեն հիմա: Ամեն մեկի հակազդեցությունը տարբեր է մյուսից, ինչպես՝ գիշեր ու ցերեկ: Նրանցից մեկը մինչև այսօր ասում է, որ դա Չարն է. ուրիշ խոսքով, ես դիվահար եմ, քանի որ բռնված եմ չար ոգուց: Սակայն ես գիտեմ, որ այդ Դու ես՝ Ամենակարող Աստվածը: Փոքր ինչ կարդալով, նա հանգում է մի ինչ-որ կարծիքի, որը երբեք չի ուզում փոխել: Երբ որ նա կհասկանա, որ չարից բռնված չեմ, ասելու է, որ դա իմ ենթագիտակցության արդյունքն է: ուզում է ասել, որ դա քեզ համար չէ: Իսկ մեկ ուրիշի կարծիքն այն է, որ, այո՛, շարունակեմ գրել, որովհետև աստվածային է և Աստծուց է, ուրեմն հավատում է, որ դրանք Աստծո խոսքերն են, բայց շատ զբաղված է հարցնելու, կամ անգամ հայտնաբերելու դրանք ամբողջությամբ: Սա է, որ զարմացնում է ինձ: Եթե նա հավատում է, որ Աստված փորձում է մի պատգամ արտահայտել, ապա ինչո՞ւ նեղություն չի քաշում, որպեսզի պարզի, թե ինչ է դա:

Մի երրորդ քահանա, որն իրազեկ էր, պարտաճանաչ լսեց շարունակ նայելով իր ժամացույցին, հետո ասաց՝ լավ, շարունակիր, սքանչելի է, շարունակիր գրել: Ես խնդրեցի նրան, երբ որ ցանկանա, կրկին կարող է գալ և խոսել այդ մասին: Ես նրան այլևս երբեք չտեսա: Այնուհետև, մեկ ուրիշ քահանա տեղեկացավ և մեկ երկու էջ կարդալուց հետո ասաց. «Ես չեմ ուզում որևէ կարծիք հայտնել և ավելացրեց, որ մեզ՝ կաթոլիկներիս զգուշացրել են, որ չարը նույնպես գործում է նիևնույն ձևով. չեմ ասում, որ դա չարից է, այլ մեզ ասված է զգույշ լինել»[1]: Իրավունք ունեք, ասացի, բայց այդ դեպքում, քանի որ բոլորը մի կետում համաձայն են, որ «դա գերբնական երևույթ է», ապա ինչո՞ւ ավելի լրջորեն չեն մոտենում հասկանալու ու պարզաբանելու այն:

Ի վերջո մարդիկ են, որոնք Աստծուն են փնտրում: Առաջինը, որն ասաց, թե դա Չարն է, հետո ինձ պատմեց, որ Աստված պատգամներ է տալիս և նման պատգամների բազմաթիվ գրքեր կան ամբողջ աշխարհով մեկ, և դա շատ ընդհանուր է: Այնքան շատ առաջնորդություններ կան գերբնական ձևով, որ դա շատ սովորական է, բայց գլխավորապես պատահում է <u>բենց միջավայրում</u>:

Մեկ ուրիշ քահանա ասաց, որ դրանք կոչվում են Աստվածային Սրտի Հայտնություններ, և որ դրանք Աստծուց են և տվեց մի խորհրդապաշտ պրոֆեսորի հասցե, որ գտնեմ և խոսեմ հետը: Գիտեմ, որ եթե ես լինեի նրանցից մեկը, դա ավելի հեշտ կլիներ: Հենց բանն էլ այն է, որ ես դուրս եմ նրանց շրջանակից, իսկ իմ արտաքինը խանգարում է դրան:

Ես Հիսուսն եմ: Վասուլա, ապավինի՛ր Ինձ և հանգստացիր: Դարաշրջան, օ՜ դարաշրջան, դու Ինձ գնահատել ես առանց անգամ ակնարկ նետելու Իմ Խոսքերի վրա: Մի՞թե դու առերևույթ փառաբանում ես Ինձ և, սակայն պաշտպանելով Ինձ, ակամա ծաղրում ես:

Վասո՛ւլա, Ես սիրում եմ քեզ, ապավինիր Ինձ, սիրելիս:

[1] Միգուցե, բայց ինչքա՞ն ժամանակ: Մինչեւ մարդկային զանգվածները վերադառնան Աստծո՞ւն, որովհետև նրանք արդեն վերադառնում են և սա սկիզբն է...

Տե՛ր, դեռ ուրիշ բաներ էլ կան: Երբ Քեզ ասում կամ հայտնում եմ իմ կասկածները, ես համոզված եմ, որ վիրավորում եմ Քեզ, քանի որ կասկածում եմ: Իսկ եթե չեմ կասկածում, և այդ Դու չես, որ առաջնորդում ես, ես կրկին վիրավորում եմ Քեզ, որովհետև, այնուամենայնիվ ես այդպես եմ կարծում: Ուրեմն, ինչ որ անում եմ, ես ցավեցնում եմ Քեզ: Հավատամ, թե չհավատամ, որ այդ Դու ես, ինչ էլ որ մտածեմ, ես վիրավորում եմ Քեզ: Եվ սա ինձ տխրեցնում է, քանի որ ես ամենավերջինը կուզեի լինել, որ ցավեցնեի Քեզ: Ես սրա համար էլ եմ տանջվում:

Օ՜ աղջիկս, մի՛ վշտացիր: Երբեք չհավատաս, որ Ես վիրավորված եմ սիրուց: Դու միայն ճաշակում ես Ինձնից: Ես Հիսուսն եմ, Հիսուս Քրիստոսը, և դա Իմ Հացն է, որ դու ճաշակում ես: Հոգի, օ՜ սիրելի հոգի, մի՛ տանջիր քեզ այլևս, հավատա՛ Ինձ, սիրելիս, և քեզ սիրված զգա Իմ կողմից:

Ներիր ինձ այսքան թույլ լինելու համար...

Ես ամբողջովին ներում եմ քեզ: Դու կզգաս, թե Ես որքան եմ քեզ սիրում: Քո թուլությունն է, որ Ինձ ամենից շատ է գրավում, քո անասելի թուլությունը: Քո թշվառությունը աննկարագրելի է: Օ՜, ե՛կ Ինձ մոտ, այստեղ, Իմ Սրտի մեջ: Թող քո հոգին ամբողջովին ոչնչանա Իմ մեջ: Եղի՛ր Իմ Արքայությունը. Ես սիրում եմ քեզ: Իմ Խաղաղությունը քեզ:

Մարտի 23, 1987

Հիշի՛ր, որ Ես Մեկ եմ, Սուրբ Երրորդությունը Մեկ է[1]: Ես ուզում եմ, որ մեր միությունը կատարյալ լինի. ճանաչի՛ր Ինձ լրջորեն: Այո՛, դու ճիշտ նկատեցիր, Ես երկու մատանի ունեմ Ինձ մոտ:

Դրանք արծաթագույն սպիտակ են և շատ փայլո՞ւն:

Դրանք մաքուր ճերմակ ոսկուց են:

(Այդ պահին մտածեցի, թե չարը մոլորեցնում է ինձ: Ինչպե՞ս կարող է դա պատահել):

Լսի՛ր, Վասուլա, այդ Ես եմ՝ Հիսուս, մի՛ վախեցիր: Սիրելիս, ե՛կ, Ես այս մատանին բերել եմ քեզ համար: Ես ուզում եմ, որ դու հագնես հիմա: Փորձի՛ր տեսնել Ինձ:

Բայց դա հնարավո՞ր է:

Այո՛, Ես օրհնում եմ մեր միությունը:

[1] Էութեան միասնության մեջ

Սիրելիս, այս գործողությունը հոգևոր երկնային գործողություն է, քո հոգին միացած է Իմ հոգուն: Ճշմարիտ եմ ասում, Հավատա՛ Ինձ, Ես պիտի սրբագործեմ մեր ամուսնությունը:

Թույլ տուր այս մատանին դնել քո մատին: Ես սիրում եմ քեզ, զգա Ինձ: Ես սիրում եմ քեզ և օրհնում եմ քեզ:

Հիսուս մյուս մատանին դրեց Իր մատին:

Տե՞ս: Էլ ուրիշ ի՞նչ կարող ես նշմարել:

(Ես տեսնում եմ մի ժապավեն, որը իրար է միացնում երկու օղակներ):

Սա Ես պիտի դնեմ մեր գլուխների վրա: Այժմ մենք միացած ենք: Ես թագադրում եմ մեր միությունը:

Հիսո՛ւս, շատերը պիտի կշտամբեն, և սա դիտեն որպես երևակայության արդյունք:

Ինչո՞ւ, շատերն են գալիս Ինձ մոտ և ամուսնանում Ինձ հետ՝ փառաբանելով Ինձ, և Ես այնքան ուրախանում եմ նրանց հետ միացած լինելու համար: Վասո՛ւլա, Ես քեզ մեռածների միջից վեր հանեցի, Ես Իմ Լույսը սփռեցի քեզ վրա, Ես հոգ տարա քեզ և հանգստացրի քեզ: Ինձ ազատ թող քեզ հետ շարունակելու Իմ գործը, աղջիկս: Եղի՛ր փափուկ կավի նման, պատրաստ ձև ստանալու, այնպես, ինչպես Ես եմ ուզում: Քեզ ազատ թող Իմ ձեռքերում և մի՛ հակադրվիր Ինձ:

Տե՛ր, Ես այնքան ուրախ եմ, չափազանց ուրախ, որ վախենում եմ, կարող եմ սխալ լինել:

Ո՛չ, դու լավ ես նկատել: Ես քեզ այնքան եմ սիրում, որ լիովին պատրաստ եմ հենց հիմա քեզ բերելու: Ես ցանկանում եմ ազատել քեզ, որ Ինձ մոտ լինես, բայց Ես ստեղծել եմ քեզ այս Պատգամի համար:

Տե՛ր, Ես վախենում եմ, որ միգուցե սխալ եմ հասկացել ու պղծել եմ Քեզ՝ մտածելով, որ դու ինձ մատանի տվիր ու միացրիր մեզ, թեև բավական վստահ էի դրանում:

Իմ հարսը, Իմ թշվառ հարսը, ինչո՞ւ Ես վախենում Ինձնից: Մի՛ վշտացրու Ինձ և մոտեցիր: Ես սիրում եմ քեզ, ապավինի՛ր Ինձ և հիշի՛ր. Ես եմ, որ սրբացնում եմ մեր ամուսնությունը. մի՛ մտահոգվիր: Այդ Ե՛ս եմ, Հիսուս: Թո՛ղ քո վախերը և մոտեցիր Ինձ: Գիտես, Ես զգացի քո ձեռքը[1]...

(Ես նայում էի Սուրբ վարշամակի Նրա մեծ նկարին, միաժամանակ գրելով, բայց մտքումս, անգիտակցորեն, ես քնքշությամբ ետ տարա այտի վրայից Նրա ձախ կողմի մազերը՝ հավաքելով ետևում: Ես զարմացա Նրա անմիջական հակազդեցությունից):

[1] Հիսուս դա շատ արագ ասաց:

Դու իսկապե՞ս զգացիր իմ ձեռքը:

Այո՛, Վասուլա, դու գիտակցո՞ւմ ես, որ Ես Աստված եմ:

Կներես, որ ես դա արեցի:

Հարկավոր չէ, մտերիմ եղիր Ինձ հետ, այնպես, ինչպես կաս: Ե՛կ, տուր Ինձ քո ձեռքը. Ես կպահեմ այն Իմ ափում:

Մարտի 26, 1987

(Այստեղ Աստված ինձ մի տեսիլք ցույց տվեց):

Ուրախացրո՛ւ Ինձ, Վասուլա, և հասկացիր, որ Ես՝ Աստված, Մեկ եմ. Ես սիրով կցանկանայի Իմ փառքից քեզ ավելին ցույց տալ: Գիտե՞ս, զավակս, թե ինչպես ստեղծվեց Երկնային Արքայությունը:

Քո կողմից, Քո միջոցով:

Այո՛, Ես չափել եմ ամեն մի լայնություն, բարձրություն և խորություն և բոլոր չափերը կատարյալ են: Ամեն մի փոքրիկ կենդանի արարած Ինձնից է գալիս և իրոք Իմն է: Կյանքն ամբողջությամբ գալիս է Ինձնից: Իմ Շունչը Կյանք է: Ցանկանո՞ւմ ես ավելին իմանալ Իմ Երկնային Գործերի մասին:

Այո՛, Տեր:

Դե՛հ, ուրեմն, շրջենք Իմ Փառքի մեջ:

(Ես հայտնվեցի գեղեցիկ մի պարտեզում, ուր շրջում էի Աստծո Ներկայությամբ, որը լցված էր շատ գունեղ, պայծառ լույսով, բայց ոչ այնպիսին, ինչպիսին սովորական արևինն է: Քայլելիս նկատեցի, որ <u>լույսի հսկայական մի գունդ</u> գրեթե հպվում էր հորիզոնին: Այն նման էր մի մեծ արևի, թեպետ կարելի էր դրան նայել առանց աչքերն այրելու):

Ինչպե՞ս ես զգում, աղջիկս:

Շատ գեղեցիկ է, արտասովոր է այս ամենը:

Ի՞նչ ես տեսնում:

Այդ «Արև»-ը:

Այո՛, դա Իմ Սուրբ Բնակավայրն է, իսկ ի՞նչ ես տեսնում այդ լույսի շուրջը:

Նախ ինձ թվաց, թե լույսի շուրջը պտտվողները կետեր էին, բայց հետո պարզվեց, որ դրանք փոքրիկ հրեշտակներ էին, որոնք շրջապատել էին այն... միլիոնավոր հրեշտակներ:

Դրանք քերովբեներ են, որ պարուրում են Իմ Փառքը: Ուրիշ էլ ի՞նչ ես տեսնում:

Մի քանի աստիճաններ տանում են դեպի «Արևի» ներսը:

Արի մտնենք այդ Լույսի մեջ, պատրա՞ստ ես: Կոշիկներդ հանիր, որովհետև մենք սուրբ տեղ ենք մտնում. հիմա մենք Լույսի ներսում ենք:

(Ինձ թվում էր, որ ներսում շատ պայծառ լույս էր լինելու, մինչդեռ ամեն բան կապտագույն էր: Սակայն ինձ ամենից շատ ցնցեց տիրող լռությունը և խաղաղության ու Սրբության զգացումը: Այս բոլորը շատ զարմանալի էր: Ներսում մի բոլորակ շրջանակ էր):

Այո՛, շրջանակ է:

(Դրա շուրջը գտնվող «պատը», բոլորովին էլ պատ չէր, այլ կենդանի էակներ էին՝ հրեշտակներ, հրեշտակների մի պատ: Գմբեթի նմանվող փակիչը՝ «առաստաղն» էր, կազմված հրեշտակներից... Բոլորը կապույտ էին, միլիոնավոր էին, միլիարդավոր՝ մեկը մյուսին կպած: Բարձրահասակ հրեշտակներ էին՝ մեկը մյուսի վրա, բոլորն իրար կպած՝ կազմելով ամուր մի պատ):

Իմ սերովբեները հսկում են այս Սուրբ Վայրը և առանց դադարի երկրպագում են Ինձ. լսո՞ւմ ես նրանց. «Սրբություն Սրբոց, Սուրբ է մեր Աստվածն Ամենաբարձրյալ»:

Քանի՞սն են նրանք, Տե՛ր:

Բյուրավոր, զավակս: Այն ո՞վ է, որ ոսկե սուր ունի և այսքան գեղեցիկ է:

Զգիտեմ:

(Ես տեսա մեկին, որը հրեշտակի էր նման, բայց նա մյուսներից տարբեր էր, որովհետև «բնական» գույն ուներ: Հագել էր երկար սպիտակ զգեստ, մինչև ուսերը հասնող ոսկեգույն մազերով և ձեռքին գեղեցիկ ոսկե մի սուր ուներ, իսկ շողշողուն զգեստը կատարյալ սպիտակ էր):

Վասո՛ւլա, սուրը Իմ Խոսքն է. Իմ Խոսքը հստակ է, այն թափանցում է և լուսավորում:

(Հանկարծ «գմբեթը» ծաղկի նման բացվեց):

Տե՛ս, փոքրիկս, փորձիր զանազանել: Ես քո կողքին եմ և կօգնեմ: Քո վերևում դու այժմ կտեսնես Սրբազան Պատերազմը, որ պիտի տեղի ունենա: Օ՜, աղջիկս, աչալուրջ եղիր քո շրջապատի նկատմամբ և իմացիր, որ չարը գոյություն ունի: Որևէ բան տեսնո՞ւմ ես:

(Երբ այս պատը ծաղկի նման բացվեց, տեսա սև թավշյա աչքերով կատաղի ձիեր: Պատկերն ավելի հեռու գնաց, և ես մի ճակատամարտ տեսա):

Իմ բանակը կռվելու է սատանայի և նրա հետևորդների դեմ, այդ թվում և բոլոր նրանց դեմ, ովքեր փորձում են քանդել Իմ Օրենքը: Հիշի՛ր, որ Ես Ալֆան եմ և Օմեգան, Առաջինն ու Վերջինը. Իմ Խոսքը հավիտենական է: Հիմա՞ ինչ ես տեսնում:

Մի մեծ օձի նման սողո՞ւն է, որին ցած գցեցին ձիուց:

Այս վիշապը Իմ Սրբի[1] տեղով պիտի պարտվի: Երբ այս բանը կատարվի, կընկնեն նաև նրա բոլոր հետևորդները: Վասո՛ւլա, իսկ հիմա պիտի դաս տեսնես Իմ Դատաստանի Սրահը:

(Ես տեսա մի մեծ սրահ, բայց այնտեղ դեռ ոչ ոք չկար: Հանկարծ, մի անկյունում, ես տեսա մի խումբ հոգիների: Շղթաների շըխշըխկոցն էր, որն ինձ ստիպեց նայել: Նրանք այնպիսի տանջահար տեսք ունեին, որ անհնար էր նկարագրել՝ ածուխով, կամ ինչ-որ սև բծերով պատված: Կարծես վախվորած և անվստահ էին: Նրանք մեզ չէին տեսնում: Թվում էր, թե զարմացած էին իրենց շրջապատից):

Լսիր չեփորները: Իմ հրեշտակներն են. ազդարարում են Իմ մասին: Տո՛ւր ձեռքդ, որովհետև դու Իմ փոքրիկ այցելուն ես: Այո՛, յուրաքանչյուր հրեշտակ գետնամած ընկնում է Իմ առջև: Տեսնո՞ւմ ես հոգիների այս բազմությունը. նրանք հենց նոր են եկել ստորգետնից[2]: Սրանք չարչարված հոգիներ են, որոնց բաց են թողել: Նրանք սատանայի դարպասների մոտ էին:

Նրանց ո՞վ արձակեց:

Ես, Իմ երկնային գործերով, և բոլոր նրանք, ովքեր հատուցում և սիրում են Ինձ: Հասկանո՞ւմ ես, թե ինչու եմ ուզում, որ Ինձ սիրես: Որքան Ինձ խորը սիրես, այնքան ավելի վեր բարձրացվելու և Ինձ մոտ գալու ավելի հնարավորություն կունենան նրանք: Կուզե՞ս իմանալ, թե ինչ կլինի նրանց հետ:

Այո՛ Տեր, հիմա ի՞նչ է կատարվում:

---

[1] Սբ. Միքայել

[2] Քավարանից, սատանայի դարպասներից (քավարանի շատ ցածր աստիճաններից):

Թույլ տուր ասեմ: Ես նրանց մկրտելու եմ Իմ Սուրբ Հոգով և ամբողջովին ազատելու եմ, որովհետև, մինչև որ Սուրբ Հոգով չմկրտվեն, չեն կարող Իմ Թագավորության մեջ մտնել:

Ուզում ես ասել, որ սրանք մկրտված չէի՞ն:

Ո՛չ, մկրտված չէին:

Իսկ կուզենա՞ն մկրտվել:

Այո՛, ուզում են: Ե՛կ, Ես կբացատրեմ: Արի նստենք: Այն, ինչ տեսար, միայն նրանց պատկերն էր, իրականում նրանք Իմ Սրահում չէին: Հոգիները չեն դատվում մինչև վերջին օրը:

Եթե Քո Սրահում չէին այս հոգիները, ապա ո՞ւր էին:

Այս հոգիները Հադեսում[1] էին: Նրանք հադեսում անօգնական են: Եթե դուք Ինձ ընտրեք կամենալով Ինձ հետևել, փրկված եք, բայց եթե չճանաչեք Ինձ, այդ խստասրտության պատճառով դուք կտապալվեք: Այնտեղ, ուր կգնաք, անվերջանալի տառապանք կլինի:[2]

Ես պետք է ձեզ բոլորիդ զգուշացնեմ, և դա նախկինում ասվել է, որ եթե մեկը հայհոյում է Սուրբ Հոգուն, նրան բնավ չի ներվելու, քանզի այս է Իմ Օրենքը:

Խոնարհեցրու աչքերդ Իմ առջև, զավակս:

(Ես խոնարհրեցի):

Թույլ տուր քեզ օրհնեմ: Ես ներում եմ քո մեղքերը: Ասա այս խոսքերը.

«Թող Օրհնյալ լինի Տերը
և Ամենակարող Աստվածը:
Թող Նրա Թագավորությունը իշխի
հավիտենական Փառքի մեջ,
Թող Փառաբանվի
Նրա Սուրբ Անունը,
Թող Նրա Խոսքը թափանցի
և մնա յուրաքանչյուրի սրտում:
Ամեն»:

Վասո՛ւլա, այսօր այլևս ոչինչ մի արա, հանգստացիր: Վաղվա Իմ պատգամում...

(Զգացի, որ Աստված հանկարծ դառնացավ):

[1] քավարանում (հունարեն)
[2] դժոխքում

...Ես կթելադրեմ նրանց մասին, ովքեր Ինձ են ներկայացնում, բայց բավարար սեր չեն նվիրում Ինձ և ոչ էլ վերցնում Իմ Անսահման սիրուց, աղջիկս:

Ե՛կ ընկերակցի՛ր Ինձ, Ես պետք է հանգստանամ[1]. մոտեցի՛ր Ինձ, կիսի՛ր Իմ վիշտը:

Աստվա՛ծ իմ, կանեմ այնպես, ինչպես Դու ես ուզում: Սակայն, մի՛ մոռացիր նաև, որ շատերն են Քեզ կաթոգին սիրում: Մի՛ մոռացիր նրանց զոհողությունները, որով իրենց սերն են ցույց տալիս Քո հանդեպ:

Այո՛, նրանք թեթևացնում են Իմ վշտերը և դարմանում Վերքերս, բայց Ես կարիք ունեմ ավելի մեծ թվով նման հոգիների, որոնք պատրաստ են հատուցելու *(ուրիշների համար)* և տարածելու Իմ Անսահման Սերը՝ սփռելով այն մշուշի նման: Ես ցանկանում եմ, որ նրանք իրենց սրտերը բացեն և Ինձ ընդունեն: Ես նրանց սրտերը Իմ սիրով կլցնեմ, և երբ նրանց սրտերը հեղեղվի սիրով, նրանք կկարողանան տարածել այն՝ կերակրելով Իմ գառներին:

Սիրելիս, թույլ կտա՞ս հանգչել քո մեջ:

Այո՛, Աստված իմ:

Դու էլ Ի՞մ մեջ:

Այո՛, Աստված իմ:

Արի՛ ուրեմն, Ես սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում, Աստված իմ:

Մարտի 27, 1987

Ես քեզ սիրում եմ, Վասուլա:

Ես էլ Քեզ եմ սիրում, Հիսուս:

Որքան եմ փափագում, որ Իմ քահանաները սուրբ լինեն, որովհետև Ինձ են ներկայացնում: Ես ցանկանում եմ, որ նրանք մաքուր, սրբակյաց, խոնարհ և բարեգութ դառնան: Ուզում եմ, որ նրանք Ինձ թույլ տան, որ իրենց սրտերի մեջ ներարկեմ Իմ հորդառատ սերը: Ուզում եմ, որ Իմ Սրտի Գանձերից ավելին քաղեն և լցնեն իրենց սիրտը, այնքան լիառատ, որ այն դուրս հորդի՝ տարածվելով աշխարհով մեկ: Անհրաժեշտ է, որ նրանք ջանան հասկանալ Իմ գառներին և նրանց սիրեն ու բժշկեն: Բայց այս ամենը կարողանալու համար նրանք պետք է սովորեն Ինձ սիրել նույնչափ, որչափ որ Ես եմ սիրում նրանց: Պետք է սովորեն սիրել Իմ

[1] Որ մխիթարվի սիրող սրտի մեջ

զավակներին այնպես, ինչպես Ես եմ սիրում նրանց: Նրանք պետք է պատվեն Իմ Եկեղեցին:

Ես սեր եմ ցանկանում, Վասուլա: Ասա՛ նրանց, թող իմանան, որ Իմ շրթունքները պապակել են ու ծարավի են սիրո: Ի՞նչ օգուտ Ինձ ուղղված այն գոհաբերություններից ու ծեսերից, երբ նրանց սրտերը քարացած են ու անպտուղ:

Ես ցանկանում եմ պարարտացնել այս ամայությունը Մաքրությամբ և Սրբությամբ: Ինձ ջերմություն է պետք, կենդանի բոց է պետք՝ մաքրություն, նվիրվածություն և ջերմ սեր: Ձեզ թույլ տվեք վերցնել այս Անսահման Սիրուց և լցնել ձեր սրտերը: Ձեզնից միայն հավատարմություն եմ հայցում, մաքրություն և սեր: Եկե՛ք, եկե՛ք և ապաշխարեք Ինձ մոտ: Եկե՛ք և փոխե՛ք ձեր կյանքերը: Ես կբարձրացնեմ ձեզ, և դուք կընդունեք Ինձ: Ես ուզում եմ ձեզ հիշեցնել Իմ ուղիների մասին:

Ես ձեզ այնքան շատ պատգամներ ու նշաններ եմ տվել: Նշաններ, որոնք սակայն դուք անտեսում եք: Մոռացե՞լ էք Իմ խոսքերը: Մի՛ զարմացեք, երբ Ես թույլ գործիքներ եմ օգտագործում՝ Իմ խոսքերը հայտնի դարձնելու համար: Չէ՞ որ Ես կարող էի վերցնել այս քարերից որևէ մեկը և այն վերածել Ինձ նվիրված հետևորդների:

Ձեզնից ոմանք ապացույց կփնտրեն, թե Ես իրոք Հիսո՞ւսն եմ, որ տալիս եմ ձեզ այս Պատգամը: Մի՞թե չեմ ասել, որ Ես Իմ Հոգին պիտի թափեմ ողջ մարդկության վրա, և որ Իմ որդիներն ու դուստրերը պիտի մարգարեանան, ինչպես և հրաշքներ պիտի ցույց տամ երկնքում և երկրի վրա: Իմ ուղիները ձեր ուղիները չեն, և Իմ նշանները ձեր նշանները չեն:

Ես Իմ Դեմքն եմ ցույց տալիս կրկին, բայց ձեզնից քանի՞սը պիտի հավատան: Ցավից հառաչում, խեղդվում եմ, շնչահեղձ եմ լինում, երբ տեսնում եմ, որ Իմ սերմը անկենդան խոսքերով է լցված: Հավատարմություն... Դուք ինքներդ ձեզ հավատարի՞մ եք կոչում, երբ ձեր սրտերը մեռած են:

Եկե՛ք, եկե՛ք և ներծծեք Իմ Սրտից: Ես լրջորեն խնդրում եմ ձեզ՝ զղջացե՛ք և ուղղվե՛ք: Սիրե՛ք Ինձ անկեղծորեն և պատվեք Իմ Սուրբ Հաղորդությունը: Այո՛, դուք ամենքդ, որ ձեզ համարում եք արդար և բարեպաշտ, եկե՛ք, փոխեք ձեր սրտերը, բացե՛ք ձեր սրտերը և Ինձ ընդունեք: Ու երբ դուք դա անեք, Ես բաց կանեմ ձեր աչքերն ու ձեր ականջները:

Վասո՛ւլա, Ես քեզ վաղը կթելադրեմ, կարող ես հանգստանալ, սիրելիս: Դու Ինձ նշմարեցի՞ր, երբ Ես խմբագրում էի:

Այո՛, Տեր, Դու Իմ աչ կողմո՞ւմ էիր: Այնտեղ էիր, չէ՞:

Այո՛, այնտեղ էի: Այո՛, հիմա Ես կանգնած եմ քո առաջ, Վասուլա, զգա Իմ Ներկայությունը, ինչպես որ զգում ես: Մի՛ վախեցիր: Ես քեզ մոտ կլինեմ:

Արի հանդչենք մեկս մյուսի մեջ:

Մարտի 30, 1987

Այդ ես եմ՝ Հիսուս Քրիստոսը:

Բոլոր հայտնություններն Ինձնից են: Ըմպե՛ք Ինձնից: Ծաղիկն աճում է Իմ կողքին, Ինձնից ըմպելով: Ծաղիկս, խմի՛ր, որ աճես, ներծծի՛ր Ինձնից: Ե՛կ, ես քեզ սիրում եմ:

Հիսո՛ւս, ես չեմ ուզում Քեզ հետ խոսել իմ առօրյա լեզվով, որը շատ անհարգալից է հնչում, սակայն ուրիշը չգիտեմ: Այժմ, երբ կարդում եմ կրոնավորների, միանձնուհիների գրքերը, տեսնում եմ, որ նրանց խոսակցությունը Քեզ հետ շատ տարբեր է: Գուցե նրանց սովորեցրե՞լ են: Ես չեմ ուզում գռեհիկ հնչել. թերևս իմ սի՞րտն է խոսում:

Վասո՛ւլա, ես ներում եմ քո անգիտությունը: Ես կսովորեցնեմ քեզ: <u>Դու սովորում ես</u>: Դու գիտակցում ես, թե որքան թշվառ ես: Միևնույնն է, ես սիրում եմ քեզ: Թշվառ լինելն Ինձ գրավում է, որովհետև քեզ կարող եմ առաջարկել Իմ Ողորմածությունը: Ես ընտրել եմ քեզ, որ աշխարհին ցույց տամ Իմ Գթասրտությունը:

Ես հպարտ չեմ, որ ինձ ընտրեցիր իմ վատ կողմերի և ոչ թե իմ արժանիքների պատճառով: Ես Հուդայի նման եմ զգում... (ես հավանաբար ներկայացնում եմ մեր «ժամանակակից» աշխարհի մեծ մասին):

Լո[1]: Վասո՛ւլա, դու Հուդայի նման չես, դու այնքա՜ն անօգնական ես, անտեղյակ և թշվառ: Դու Իմ սիրելին ես, որին Ես սրբացրի: Ես էի, որ իրագործեցի մեր միությունը, որովհետև դու ի վիճակի չէիր: Ես ուզում եմ քեզ ձևավորել: Ես քեզ Ինձ հետ միացրեցի՝ խնդրելով, որ Իմ հարսը լինես:

Հիսո՛ւս, ես իմացա, որ միանձնուհիներն իսկապես «ամուսնանում» են Քեզ հետ:

Այո՛, նրանք Ինձ մոտ են գալիս և դառնում Իմ հարսերը: Ես հրճվում եմ նրանցով: Դու չգիտեիր, որ կարող ես լինել Իմ հարսը և միացած լինել Ինձ հետ, ուստի Ես իրագործել եմ մեր միությունը, հասկացա՞ր: Ես մեր պսակադրությունը սրբացրի՝ քո մատին մատանի դնելով: Գործի՛ր Ինձ հետ և հիշի՛ր, որ Ես Սուրբ եմ. երբեք չմոռանաս այս բանը:

Ապրիլի 3, 1987

Ես հետևում եմ քեզ. հիշի՛ր, որ մենք միացած ենք: Ես Յահվեն եմ և սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում, Տե՛ր:

[1] Lo=ոչ, (եբրայերեն)

Կերակրվե՛ք Ինձնից, Ես ձեզ ամենքիդ եմ սիրում: Ես ասել եմ, որ Իմ Թագավորությունը երկրի վրա պիտի լինի այնպիսին, ինչպիսին որ Երկնքում է: Ես արմատախիլ եմ անելու չարը և զորացնելու եմ Իմ նվիրյալ հետևորդներին: Ես Յահվեն եմ և Իմ խոսքը հաստատուն է: Մի՛ վախեցիր, փոքրիկս, որովհետև Ես եմ, որ առաջնորդում եմ. Ես Ամենաբարձրյալն եմ: Ես Իմ հացն[1] եմ առաջարկելու ողջ մարդկությանը՝ դրանով իսկ մեղմելով նրանց քաղցը: Բայց Ես փոխադարձ սեր եմ ուզում նրանցից: Ես ծարավի եմ սիրո: Ասա՛ նրանց, թող որ իմանան, թե ծարավից որքան են պապակել շուրթերս:

(Ես նկատել էի Նրան, Նրա Ներկայությունը ակնհայտ էր: Նրա շրթունքները չոր էին, ճաքճքած, վերքերով: Նա դժվարանում էր խոսել, որովհետև բերանը չոր էր, և լեզուն հազիվ էր կարողանում շարժել: Կարծես անապատից էր եկել, ուր օրերով մնացել էր առանց ջրի: Սրտաճմլիկ տեսարան էր):

Ապրիլի 4, 1987

(Շվեցարիայում շրջելիս, դիտում էի մարդկանց և նրանց ապրելակերպը: Շատերը, ինչպես ամենուր, առօրյա շատ հոգսեր ունեն, ոմանք՝ ավելի, քան մյուսները: Շատերը դժբախտ են ու դժվարությամբ ճանապարհ են հարթում: Առաջ, նախքան Աստծուն մոտենալս, այս բանը բնավ չէի նկատել):

Այո՛, Վասուլա, ուզում եմ, որ ամեն բան տեսնես, ուզում եմ դիտես և լսես նրանց ամեն ասածը: Ես շատ եմ վշտանում, երբ դիտում և լսում եմ Իմ դառներին: Ինչո՞ւ են նրանք Ինձ մոռացել, չէ՞ որ Ես նրանց Մխիթարիչն եմ: Ես նրանց կարող եմ մխիթարել, նրանք կարող են դեպի Ինձ դառնալ:

(Այդ պահին ես մտածում էի, Նա Յահվե՞ն է, թե Հիսուս):

Վասո՛ւլա, Ես Մե՛կ եմ, Ես Մե՛կ եմ[2]: Վասուլա: Ես Աստված եմ, որը քեզ կյանք տվեց: Ես հաստատեցի Իմ խոսքը: Ես աշխարհ եկա մարմնով: Ես Մեկ եմ: Ես օրհնում եմ քեզ, Վասուլա: Սուրբ Երրորդությունը Մեկ է, Ես Մե՛կ եմ[3]:

(Ես էլ մտածում էի այդ մասին հարցուփորձ անել քահանաներին):

Ինձ հետ դու կսովորես:

(Ավելի ուշ)

[1] Նրա Խոսքը, Իր Պատգամը
[2] էությամբ մեկ
[3] էությամբ մեկ

Աղջի՛կս, երբ կըմբռնես, թե որքան անտարբեր է դարձել աշխարհն Իմ հանդեպ, այդժամ կհասկանաս Իմ դառնությունը: Ողորմության Իմ բաժակը լեցուն է, լեցուն է նաև Իմ Արդարության բաժակը: Նրանք վշտացնում են Ինձ, դառնացնում, հեղափոխություններ[1] առաջ բերում, ապստամբում Իմ և Իմ Օրենքի դեմ: Ես նույն Կենդանի Աստվածն եմ, բայց Իմ ժողովուրդը աներկյուղ է դարձել. նրանք մարտահրավեր են նետում Ինձ. նրանք բարկացնում են Ինձ: Նրանց արարումը հրճվանք էր Ինձ համար: Ինչո՞ւ են նրանք ապստամբում Իմ դեմ: Էլ ո՞ւմ կողմը պիտի շրջվեն: Ես տանջվում եմ: Ի՞նչ են կարծում նրանք, դեպի ո՞ւր են գնում: Իմ Մարմինը հոգնած է և վիրավոր[2], կարիք ունի հանգստի և սփոփանքի:

Դու նկատի ունես եկեղեցի՞ն, Տե՛ր:

Այո՛: Եկեղեցին Իմ Մարմինն է: Վասո՛ւլա, Ես ուզում եմ միավորել Իմ Եկեղեցին: Ուզում եմ միաբանել Իմ բոլոր քահանաներին, ինչպես մի բանակ, փրկարար մի բանակ: Իմ ոչխարները ցրված են. բոլոր քահանաները պետք է միավորվեն:

Աստվա՛ծ իմ, ես ինքս մկրտված եմ որպես հույն ուղղափառ. Դու ո՞ւմ նկատի ունես՝ կաթոլիկներին, բողոքականներին, կամ թե աղանդավորներին, կամ այլ կրոնների: Եթե համարձակվում եմ Քեզ սա հարցնել, ապա դա նրանից է, որ այդ բանը գոյություն ունի:

Օ՜, Վասուլա, Վասուլա, Ես Մեկ եմ, Ես՝ Աստված, Մեկ եմ: Իմ զավակները բոլորն էլ ստեղծված են Իմ Ձեռքով: Ինչո՞ւ են Իմ բոլոր զավակները ցրված: Ես Միություն եմ ցանկանում[3]: Ուզում եմ, որ Իմ զավակները միաբանվեն: Ես Մեկ Աստված եմ, և նրանք պետք է հասկանան, որ Սուրբ Երրորդությունը, բոլորը Մեկի մեջ է: Սուրբ Հոգին, Սուրբ Հայրը, Հիսուս Քրիստոս Որդին, բոլոր երեքը Մեկի մեջ են[4]: Վասուլա, կառչի՛ր Ինձնից, սովորի՛ր Ինձնից:

Աստված իմ, իսկ ի՞նչ կասես Լույսի մասին:

Ես եմ Լույսը: Ես Մեկ եմ[5]:

Ապրիլի 5, 1987

Վասո՛ւլա, Ես անսահման սիրում եմ քեզ: Ես թույլ կտամ քեզ, որ զգաս Իմ Սերը, թույլ տալով, որ դու շոշափես Իմ Սիրտը:

---

[1] կարծում եմ՝ նկատի ունի կրոնական հեղափոխություններ
[2] Եկեղեցին
[3] Միություն... Ես բարձրաձայն իսկ չեմ համարձակվի մտածել, թե որոնք են Աստծո ցանկությունները: Ես հասկացա...
[4] Մեկ Աստված
[5] Մեկ Աստված

Ես ձեռքս դրեցի Նրա Կրծքին և զգացի, թե ինչպես էր բաբախում Նրա Սիրտը:

Սրտիս ամեն մի բաբախումը կանչ է՝ ուղղված մի հոգու: Ես տենչում եմ, որ Իմ սիրելին Ինձ լսի և Ինձ մոտենա: Այսօր Ես վերցրել եմ Իմ հանդեպ ունեցած քո սիրո կենսահյութը, որպեսզի այն օգտագործեմ մի հոգու բժշկության համար, Վասուլա:

Ես դա զգացել էի...

Արարա՛ծ, ապրիր Իմ Լույսի մեջ[1]:

Ես Քեզ սիրում եմ, Տե՛ր:

Ո՛վ կին, ապրի՛ր Իմ մեջ[2]:

Սովորեցրո՛ւ, որ Քեզ ավելի սիրեմ:

Ե՛կ, սիրելիս, ե՛կ, թույլ տուր քեզ թաքցնեմ Իմ Սրտում[3]: Գործի՛ր Ինձ հետ, երբեք չհոգնես գրելուց: Մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը:

Ապրիլի 6, 1987

(Ուղղափառների Զատիկից երկու շաբաթ առաջ)

Վասո՛ւլա, քեզ պատրաստիր Իմ չարչարանքների համար: Քեզ Ինձ նվիրիր. դու կզգաս Իմ ցավերը: Ես պատրաստում եմ քեզ Իմ խաչելության համար: Ես պիտի տառապեմ, իսկ դու պիտի կիսես Իմ տառապանքները: Սիրելիս, դու պիտի զգաս Իմ չարչարանքը և Իմ վերքերը: Դու կտառապե՞ս Ինձ հետ[4]: Արի հանդչենք մեկս մյուսի մեջ:

Ապրիլի 7, 1987

(Ես այնպես զգացի, որ կարծես ողջ առաջնորդությունը ճնշում էր Ինձ վրա, և ես միայնակ եմ Աստծո Խոսքի հետ, որը <u>ծանրորեն ընկած է Ինձ վրա</u> և տեղ չունեմ այն բեռնաթափելու: Զգիտեմ, ինչ անեմ: Ես աննկարագրելիորեն անօգնական և միայնակ էի զգում Ինձ, միայնակ, այս բեռը ուսերիս):

Վասո՛ւլա, երբևիցե Ես լքե՞լ եմ քեզ: Ես Աստված եմ, ապավինի՛ր Ինձ, վստահի՛ր Ինձ:

---

[1] Տիրոջ տոնը խիստ էր:
[2] Տիրոջ տոնը դարձավ ավելի մեղմ:
[3] Տիրոջ տոնը դարձավ շատ քնքուշ և սիրով լեցուն:
[4] Ես կկատարեմ Քո կամքը:

Ես պետք է վստահեմ, բայց լինում են պահեր, երբ դա իմ ուժերից վեր է: Ոչինչ չեմ կարող անել: Ես պատասխանատու եմ զգում:

Զավա՛կս, համբերություն ունեցիր, վստահի՛ր Ինձ: Ե՛կ Ինձ մոտ, Ես կհանգստացնեմ քեզ:

Ես բառեր չեմ գտնում ասելու, թե որքան եմ սիրում Քեզ, Հայր:

(Զգացի, որ Նա պատրաստ էր ինձ մխիթարելու):

Ես սիրում եմ քեզ, աղջիկս:
Ես այնպես կանեմ, որ դու զգաս չարչարանքներս, երբ Իմ խաչելությունը մոտենա: Ես կգամ քեզ մոտ, թողնելով քեզ Իմ մեխերը և փշե պսակը. Ես կտամ քեզ Իմ խաչը: Սիրելիս, կիսի՛ր Ինձ հետ Իմ տառապանքները: Քո հոգին կզգա Իմ տառապանքը, և քո ոտքերն ու ձեռքերը կզգան Ինձ տանջող ցավերը: Վասո՛ւլա, Ես սիրում եմ քեզ և քանի որ դու Իմ հարսն ես, ուզում եմ քեզ հետ կիսել այն ամենը, ինչ որ Ես ունեմ: Հավատա, դու Ինձ հետ պիտի լինես: Մի՛ վախեցիր, քանզի Ես՝ Հիսուս, քեզ հետ եմ:
Ե՛կ, դու աստիճանաբար կհասկանաս Իմ գործելու ձևը: Իմ խաղաղությունը քեզ, սիրելիս. Ես քեզ համար տեղ եմ պատրաստել:

Ապրիլի 8, 1987

(Այսօր ինձ հարկավոր էր մի քանի բան անել, բայց ես չկարողացա ընդդիմանալ և չգրել Աստծո թելադրությունը: Դրա համար արագ հարցրի Հիսուսին. «միայն մեկ բառ, Տե՛ր, միայն մեկ բառ»):

Մեկ բա՞ռ, Վասուլա: Սե՛Ր:

Ես սիրում եմ Քեզ:

(«Մեկ բառ» ասելով, ես նկատի ունեի մի կարճ նախադասություն, կամ՝ նման մի բան):

Ապրիլի 9, 1987

(Շվեցարիայում գտնված ժամանակ ես մտածում էի, թե արդյոք իմ տունը մի օր ո՞ւր է լինելու: Մենք տակավին մեր շուրջն ենք նայում, դեգերում, դեգերում ու դեգերում):

Զգա՛ Իմ ներկայությունը:

(Հիսուս մատնացույց էր անում Իր Սիրտը):

Քո տունն այստեղ է... Իմ Սրտի ճիշտ մեջտեղում: Աղջիկս, փառաբանի՛ր Ինձ՝ հոգիներին Ինձ մոտեցնելով:

(Առաջին անգամն էր, որ մեծ քույրս իմացավ այս Պատգամի մասին: Նա կարդաց վերջին հինգ օրինակները: Սրա ազդեցությունն այն եղավ, որ ութ տարի տևող ընտանեկան վիճաբանությունը մեր զարմիկի հետ ավարտվեց հաշտությամբ: Նրանք նորից լավ ընկերներ դարձան: Ես ոչ մի բառ չասացի: Հետո նա գնաց Ռոդոս, որտեղ որ ապրում էր:

Առաջին գիշերն իսկ, նա այդ մասին խոսում է իր ամուսնու հետ, որն ավելի է ցնցվում, քան քույրս: Նրանք միասին կարդում են 5-րդ և 6-րդ նոթատետրերը և հետո գնում են քնելու: Բայց ամուսինը չի կարողանում քնել: Նա սկսում է աղոթել և խնդրել Աստծուն ներելու իր մեղքերը: Այդտեղ մի հրաշք է կատարվում: Աստված տալիս է նրան նույն տեսիլքը, ինչ որ ես էի տեսել: Գեղեցիկ պարտեզը և հետո այդ կլոր «արևը», որն ամբողջապես պահպանվում էր միլիոնավոր հրեշտակներով: Աստված, ինչպես ինձ, այնպես էլ նրան թույլ է տվել թափանցելու այդ կլոր լույսի մեջ, և նա շատ մոտիկից զգացել է Աստծո Ներկայությունը, սկսել է դողալ ու արտասվել: Հետո, նա արթնացնում է քրոջս՝ պատմելով նրան կատարվածը: Քույրս ապշում է: Նրանք չեն կարողանում սպասել մինչև հաջորդ առավոտը, որ ինձ պատմեն այդ մասին...

- Երբ ես գնեցի Ենովքի գիրքը, որը միշտ ցանկացել էի ունենալ, բաց արեցի 102 էջը: Հենց այդպես: Եվ ի՞նչ եմ կարդում: Նույն տեսիլքը Ենովքն էր տեսել, ինչպես ես՝ կլոր պայծառ Լույսը, պաշտպանված հազարավոր հրեշտակներով[1]: Սա արդեն շատ-շատ էր պատահականություն լինելու համար, որովհետև այս տեսիլքը ես տեսա Բանգլադեշում, մարտի 26-ին, հետո ապրիլի 11-ին, Փարիզում՝ գրադարանում գիրք փնտրելիս, երբ անսպասելի մի գիրք գտա, որը կոչվում էր «Metania», և որի կազմը գրավեց իմ ուշադրությունը: Կազմի նկարը նույն իմ տեսիլքն էր՝ Ենովքի և իմ փեսայի տեսիլքը, կլոր Լույսը՝ հրեշտակներով պաշտպանված: Քրոջս մեկնելուց հետո, ես սկսեցի նորից գրել, թույլ տալով, որ Աստված օգտագործի իմ ձեռքը: Աստված Ստրատոյին տվեց մի գրավոր պատգամ):

Ես սիրում եմ Իմ գառներին, միավորի՛ր նրանց: Ով որ կարդա Իմ Պատգամը, կճաշակի Իմ Հացից: Ով Ինձնից նշան ստանա, կլինի նրանցից, որոնց Ես ցանկանում եմ լուսավորել Իմ շնորհով[2]: Նկարիր Իմ նշանը:

ΙΧΘΥΣ ichthis

Վասո՛ւլա, սկսիր ամփոփել առաջնորդությունը և նորից գրել Իմ Պատգամը: Ես կառաջնորդեմ՝ քեզ լուսավորելով: Այն ամենը, ինչ կրկնվում է, քեզ ուսուցանելու համար էր: Դա հարկավոր էր քեզ:

Իմ Պատգամը կոչվելու է Խաղաղություն և Սեր[1]:

[1] Հետագայում, 1996 թվին, իմ բարեկամը Սուրբ Հիլդեգարդի տեսիլքի նկարը ուղարկեց ինձ, որը նույնն էր:

[2] Աստված ինձ հասկացնել տվեց, որ նրանք, ովքեր կարդում են Իր պատգամը և լուսավորվում են, դա բավարար նշան է, որ այդ Ինքն է, որ կերակրում է նրանց, և պատգամն էլ Նրանից է:

(Սարսափելի է. ես շատ իրապաշտ եմ և շատ թերահավատ: Այսօր կրկին կասկածներ ունեմ, որ այսպիսի բան է ինձ հետ կատարվում: Ինչո՞ւ են նրանք ամբողջությամբ և հաստատապես հավատում, իսկ ես այսքան անկայուն եմ: Ես, որ շատ լավ գիտեմ, որ չեմ կարող տիրապետել ձեռքիս և գիտեմ նաև, թե որքան անզոր եմ դառնում, երբ Աստված տիրապետում է ձեռքիս: Ինչպես է Նա կարողանում մատիտը գցել իմ ձեռքից և ինչպես է կարողանում շարժել մատիտը, առանց իմ մատների ուժեղ սեղմումի: Դա պատահում է ինձ հետ: Նա այնքան շատ ապացույցներ է տվել ինձ, բայց, արի ու տես, որ կասկածի ալիքներ կան դեռ: Եվ հետո, շատ անգամ մտածում եմ, որ ես միգուցե մոլորեցնում եմ բոլորին: Այնքան շատերն են ընդգրկված այս առաջնորդության մեջ, որ չեմ կարող հաշվել, այն դեպքում, երբ այս պատգամները դեռ չեն հրատարակված...)

Սիրելիս, ես Յահվեն եմ. տո՛ւր Ինձ քո թուլությունները, և թող Իմ ուժը վերացնի դրանք:

(Ինչ համբերություն պիտի ունենա Աստված ինձ հետ, որ հանդուրժի ինձ... Կարծում եմ հիմնական պատճառը, որ ես կասկածներ ունեմ, այդ ես եմ, որովհետև, ես ինձ գիտեմ: Ես համեմատում եմ ինձ նրանց հետ, ովքեր դերբենական մոտեցում են ունեցել Աստծո հետ և պատգամներ են ստացել: Նրանք այնքան լավն են եղել և այնքան նվիրված: Հենց դա է, որ տպավորություն է թողնում ինձ վրա. դա նման է ինչպես, եթե գիշերը ցերեկվա հետ համեմատես: Այսուհանդերձ, ես ընդունում եմ մի բան, որը դրական է. առնվազն, ես խորապես սիրում եմ Աստծուն և այս մասին ոչ մեկը չի կարող ասել, որ դա իմ երևակայության արդյունքն է: Սակայն մի քահանա այս մասին ինձ ասաց, որ դա նույնիսկ սատանան կարող է դնել քո ուղեղում: Եթե ես թույլ մեկը լինեի և լսեի այդ բոլորը, ես կցնորվեի: Այսօր, ես լսեցի մի տիկնոջից (որը սկսել է Ֆրոյդ կարդալ), որ այս բոլորը կարող է իմ ենթագիտակցության մեջ լինել, այսինքն՝ սիրո բարդույթ Աստծո հանդեպ: Ստացվում է, որ Աստծուն սիրել՝ նշանակում է հոգեբանորեն հիվանդ լինել: Բայց նրա տեսությունը, կամ Ֆրոյդը, բոլորովին չեն ազդում ինձ վրա: Աստված ինձ <u>արդեն</u> զգուշացրել էր այս տեսությունների մասին և այն մասին, որ ես պիտի մեղադրվեի: Հետո, ես առանձնապես չեմ սիրում Ֆրոյդին, քանի որ նա անաստված էր. անգամ Եունգը թողեց նրան: Ֆրոյդի համար մենք միմիայն իբրև <u>նյութ</u> ենք դրսևորվում:)

Զավակս, մարդիկ միշտ դատում են մարդկային ձևերով: Ես Աստված եմ, լեցուն Ողորմությամբ և Սիրով, բայց և այնքա՜ն քիչ հասկացված:

Բայց, Տե՛ր, Դու ընտրել ես «անպետք մեկին», այդ է որ կասկած է հարուցում իմ մեջ:

Դու նույնպես Իմ աղջիկն ես: Ես սիրում եմ անգամ ձեզանից ամենաթշվառին:

---

[1] Ժամանակի ընթացքում Հիսուս լուսավորում է ինձ, որ եկեղեցական հրատարակությունները վերաբերվում են նաև հրեաներին և մուսուլմաններին:

Ապրիլի 10, 1987

Հիշի՛ր, Իմ Խաչելությունը ժամեր տևեց. Ես երկար ժամեր տառապեցի. Իմ ամբողջ արյունը հեղվեց: Ես սիրում եմ քեզ, ե՛կ և մխիթարիր Ինձ՝ սիրելով Ինձ:

(Հիսուս տխուր էր և կարոտ էր մխիթարանքի: Նա այդ օրերին շարունակ ինձ հիշեցնում էր Իր Խաչելությունը՝ տալով ինձ դրան վերաբերող պատկերներ: Երբեմն այնքան ուղղակի էի զգում Նրա Ներկայությունը, որ թվում էր կարող էի Նրան ամուր դիպչել: Կարող եմ ասել, ես զգում էի, որ երբ Նա շարժվում էր, օդն էլ էր շարժվում):

Ապրիլի 16, 1987

(Զատիկի շաբաթ, Ավագ Հինգշաբթի)

Վասո՛ւլա, Ես ներկա էի Իմ Եկեղեցում: Ես քայլում էի Իմ Խաչի առջևից: Ես մի քանի վայրկյան կանգ առա քո առջև[1]: Աղջի՛կս, այս բոլոր տարիներին Ես սպասել եմ քեզ, որ դու լինես Իմ այնքան սիրելի Եկեղեցում[2]:

Տե՛ր և փրկիչ, Դու իսկապես ինձ փնտրել, գտել ու բերել ես դեպի Քեզ և Քո Եկեղեցին: Տարիներ, տարիներ շարունակ Դու սպասել ես ինձ:

Ես մնացի Իմ Խաչի առաջ և հերթով օրհնում էի յուրաքանչյուրին, ովքեր գալիս էին Ինձ երկրպագելու:

(Սուրբ Խաչը դրվել էր եկեղեցու մեջտեղում. մարդիկ դրա առջևից անցնում ու համբուրում էին Այն):

Ապրիլի 17, 1987

(Սուրբ Պատարագի վերջում, Ավագ Ուրբաթ օրը, քահանան ծաղիկներ բաժանեց, որոնք ծածկել էին Հիսուսի գերեզմանը: Նա ժողովրդին փնջեր էր տալիս: Ես երեք ծաղիկ ստացա և դա ըմբռնեցի որպես Աստծուց մի նշան՝

[1] Բավական տաբօրինակ էր, որ մինչ թափորը առաջանում էր, մենք պիտի շարժվեինք քահանային ճամփա տալու համար, որը կրում էր Սուրբ Խաչը (մոտ երկու մետր երկարությամբ), և եկեղեցու տղաները մեծ մոմերով հետևում էին նրան: Քանի որ եկեղեցու ներսում մշուշոտ էր, քահանան չէր տեսնում, թե ուր էր գնում և եկավ ուղիղ դեպի ինձ: Գլխի ընկնելով՝ նա մի քանի վայրկյան կանգնեց իմ առաջ՝ փորձելով իր ճանապարհը գտնել: Իմ զարմիկը, որն ինձ հետ էր, անմիջապես նկատեց այս: Սիրտս սկսեց արագ բաբախել, և քանի որ ետ գնալ չէի կարող (որովհետև, իմ ետևում ժողովուրդը վառած մոմեր ուներ՝ իրենց ձեռքերին բռնած), ես դեմ առ դեմ դուրս եկա հսկայական Խաչին:

[2] Ես այդ եկեղեցում, կարծում եմ, տասնհինգ տարի չէի եղել իմ ավագ որդու մկրտությունից ի վեր:

հիշեցնելու ինձ Սուրբ Երրորդության հարցը, որը ես հասկանալու դժվարություն ունեի:

Երկու օր անցավ և ես չգրեցի և սարսափելի կարոտեցի, քանի որ, երբ գրում եմ, ինչպես խոկման պահերին, ես կապվում եմ Աստծո հետ և ուժգին զգում եմ Նրան):

Աստված իմ, որքան ժամանակ է անցել:

Ինչքա՞ն:

Երկու օր:

Երկո՞ւ օր, Վասուլա: Իսկ Ես քեզ տարիներով եմ սպասել, ուրեմն Ես ի՞նչ ասեմ:

Ես խոսք չունեմ ասելու, Հիսո՛ւս, կներես, որ վիրավորեցի Քեզ: Ների՛ր ինձ:

Ե՛կ, Ես ներում եմ քեզ: Ես ուզում եմ Իմ սիրելի հոգիներից, որ Նրանք Ինձ թույլ տան միայն մի քանի րոպեով գերել Նրանց սրտերը և թողնել, որ Ես այն լցնեմ Իմ լիառատ Սիրով:

(Հիսուսն այդ ասաց մի այնպիսի քնքշությամբ ու սիրով: Ամեն անգամ, երբ Աստված մոտենում է ինձ մի կարևոր ու երկար պատգամ տալու, սատանան, կամ նրա հետևորդները, հարձակվում են ինձ վրա: Ես նրան մարմնապես չեմ զգում, բայց միակ բանը, որ նրան թույլ է տրված անել այս առաջնորդության մեջ, դա գրությունների միջոցով ի հայտ գալն է՝ որով և վիրավորում ու հայհոյում է ինձ:[1] Բայց, քանի որ ես Աստծուց սովորել եմ հասկանալ տարբերությունը և ճանաչել Իր խոսքերը, ես սովորաբար կանգնեցնում եմ նրան՝ մինչև իսկ իր խոսքն ավարտելը, որը կատաղեցնում է նրան: Եթե դա վրիպում է իմ ուշադրությունից, Աստված արգելակում է իմ ձեռքը, և ես չեմ կարողանում գրել: Այս թուղթը իմ նոթատետրից է: Այս հարձակումները միշտ ավելի ուժեղ են լինում, երբ Աստծո կարևոր պատգամներից մեկն է գրվելու: Ես հիմա հակաց եմ ձևը... Դրա համար ես չեմ հրաժարվում, թեև երբեմն հուսահատ վիճակում եմ լինում):

Ապրիլի 23, 1987

(Երբեմն ես զարմանում եմ, թե ինչ է ազատությունը: Մինչ Աստծո կանչը, ես էլ էի ազատ: Ես ունեի ներդաշնակ ընտանեկան կյանք և իսկապես ոչ մի պարտականություն չունեի և ոչ էլ հոգս՝ ինչպիսին այս պատգամն է, որը ճմլում է ինձ և ճնշում ինձ վրա: Բայց այն ժամանակ ես հեռու էի Աստծուց: Հանկարծ Աստված հափշտակեց ինձ... Սկզբում դա ինձ դուր չէր գալիս, քանի որ ես սեր չունեի Նրա հանդեպ: Բայց կարճ ժամանակամիջոցում, (երեք ամիս) քարոզելուց հետո, Նա ինձ սովորեցրեց սիրել Իրեն: Այժմ, ութ

[1] Մի ձևով դա լավ նշան էր, որովհետև ցույց էր տալիս որ ինքը գոյություն ունի և որ այս հայտնությունը բարկացնում է իրեն:

ամիս անց, ամբողջ Պատգամը գրեթե լրացված է[1]: Դա ծանր ճնշում է ինձ վրա, և ես մի տեղ եմ փնտրում, որ կարողանամ բեռնաթափել այն. դա այնքան ծանր է: Ի՞նչ է ազատությունը: Ծանրությունն անտանելի է):

Ես՝ Տերը, կասեմ քեզ, թե ինչ է ազատությունը:

Գրի՛ր, ազատությունը այն է, երբ քո հոգին անջատում է իրեն երկրային հոգսերից և դեպի Ինձ մոտ է թռչում: Ես՝ Աստված, եկա և ազատեցի քեզ. դու ազատ ես հիմա: Երբ դու կապված էիր աշխարհին, Վասուլա, դու գերի էիր նրա բոլոր փորձություններին: Բայց քո հոգին հիմա աղավնու նման ազատագրված է: Դու բանտարկված էիր վանդակում, սիրելիս: Թող քո հոգին ազատորեն նավարկի, թող նա զգա այս ազատությունը, որ Ես տվել եմ Իմ բոլոր հոգիներին: Բայց ձեզանից շատերը մերժեցին այս շնորհը, որը Ես առաջարկեցի:

Դու քեզ թույլ մի տուր, որ նորից բռնվես, կապվես և բանտարկվես: Ես ազատագրել եմ քեզ: Երբ ես անցնում էի, քեզ տեսա քո վանդակում դանդաղ թառամելիս և մեռնելիս: Վասո՛ւլա, ինչպե՞ս կարող էր Իմ Սիրտը տեսնել սա և չփրկել քեզ: Ես եկա և ջարդեցի քո վանդակը, բայց դու անկարող էիր օգտագործել քո թևերը, որովհետև այնքան վնասվածքներ ունեիր, որ Ես տարա քեզ Իմ օթևանը՝ գորովանքով բժշկելով քեզ՝ թողնելով, որ նորից թռչես: Եվ հիմա Իմ Սիրտն այնքան ուրախանում է տեսնելով Իմ փոքրիկ աղավնուն ազատ թռչելիս, գնալով այնտեղ, ուր որ պետք է լիներ հենց սկզբից[2]:

Ես՝ Տերը, ազատեցի քեզ. ես վերականգնեցի քեզ. Ես ազատեցի քեզ քո խեղճությունից: Իմ աչքերը երբեք չեն թողնում քեզ իրենց տեսադաշտից դուրս գալու: Ես դիտում եմ Իմ աղավնուն ազատ թռչելիս, համոզված լինելով, որ դու միշտ կվերադառնաս դեպի Ինձ, քանզի դու ճանաչում ես քո Փրկչին և Տիրոջը: Քո հոգին կարիք ունի Իմ ջերմությանը, և դու գիտես, որ քո օթևանը այժմ Իմ Սրտի միջումն է, ուր որ Ես միշտ ցանկացել եմ, որ լինես: Դու Ինձ ես պատկանում հիմա, և Ես քո Տերն եմ, որը սիրում է քեզ:

(Շվեցարիա գնալու միտքը մտահոգեց ինձ: Ես վախենում եմ, որ կարող եմ այնտեղ փոխվել...)

Վասո՛ւլա, Ես թույլ չեմ տա, որ դու նորից քեզ ապականես: Մի՛ վախեցիր, Ես միշտ կողքիդ կլինեմ, որ մաքրեմ քեզ: Ես ցանկանում եմ, որ դու այդտեղ լինես և դրա համար Իմ պատճառներն ունեմ:

(Ես փորձում էի մտածել Աստծո պատճառների մասին: Հետո՝ հարցրի):

Ես ուզում եմ Իմ սերմերը ցանվեն Եվրոպայում: Եղի՛ր Իմ սերմնացանը, Վասուլա: Ապրի՛ր մարդկանց մեջ, ովքեր վիրավորում են Ինձ: Թող որ քո աչքերը ամեն ինչ տեսնեն. դիտի՛ր, թե ինչ է դարձել Իմ արարածը: Թող որ քո սիրտը զգա, թե որքան քիչ նշանակություն ունեմ Ես նրանց համար: Թող քո ականջները լսեն, թե ինչպես են նրանք պղծում և

[1] Ես այդպես էի կարծում...
[2] Հիսուսն այս ասում էր երջանկությամբ և խորը շնչելով:

վիրավորում Ինձ: Մի՞թե քո հոգին չի ըմբոստանա: Դու չե՞ս ողբա Ինձ համար, երբ տեսնես ու հասկանաս, թե Իմ ժողովուրդը ինչպես է մոռացել նձ:

Վասո՛ւլա, քո հոգին պիտի դեմ հանդիման գտնվի չարությանը, անտարբերությանը, անօրինությանը և աշխարհի մեղքի անարգ ծալքերին: Որպես աղավնի, թռչելով դրանցից վեր, դու պիտի դիտես աշխարհը՝ դառնությամբ տեսնելով այն ամենը, ինչ կատարվում է:

Դու պիտի լինես Իմ զոհը, դու պիտի լինես Իմ թիրախը: Ինչպես որսորդներ, ընկած որսի ետևից, նրանք պիտի որսան քեզ և դուրս քաշեն իրենց զենքերը՝ հետապնդելով քեզ: Նրանք բարձր գին պիտի տան նրան, ով կկարողանա ոչնչացնել քեզ:

Տե՛ր, ի՞նչ պիտի պատահի ինձ հետ:

Ես դա կասեմ քեզ, աղջիկս: Այս բոլորը իզուր չի լինելու: Ստվերները երկրի վրա կաղոտանան և կանհետանան: Կավը միշտ անձրևի առաջին կաթիլների հետ թրջվելով կանհետանա, բայց քո հոգին երբեք չի վախճանվի: Ես՝ Տերը, հիշեցնում եմ քեզ, թե ինչ էր Իմ հարցին տված քո պատասխանը: Ես քեզ մի անգամ հարցրել եմ. «Ո՞ւմ տունն է ավելի կարևոր, քո՞ տունը, թե Իմ Տունը»: Դու ճիշտ պատասխանեցիր, որ Իմ Տունը ավելի կարևոր է:

Այո,

Ես քեզ միշտ կպահեմ Իմ Սրտում: Ես սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում:

Արի գնանք, մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը:

Ապրիլի 26, 1987

Թույլ տուր քեզ ասեմ, սիրելիս, որ Ես նախագծել էի Իմ ծրագրերը մինչ քո ծնունդը: Մենք միշտ միասին պիտի գործենք: Դու կամենո՞ւմ ես դա:

Աստվա՛ծ իմ, Ես կամենում եմ, եթե Դու ընդունում ես ինձ իմ անկարողությամբ:

Սիրում եմ քեզ, Վասուլա, Ես կօգնեմ քեզ:

Անցած շաբաթվա սկզբին դու չարի կողմից վնասվեցիր և հարձակման ենթարկվեցիր, բայց, այնուամենայնիվ, Ես գրեցի քեզ հետ Իմ ուղած բոլոր բառերը. Ես պաշտպանեցի քեզ:

Այն ժամանակ, երբ սատանան հայհոյե՞ց ինձ:

Այո՛, մինչ նա խայտառակ ձևով հայհոյում էր, ես օրհնում և պաշտպանում էի քեզ:

(Ավելի ուշ)

Թույլ տուր քեզ ասել, Վասուլա, որքան դու փոքր լինես, ես այնքան ավելի մեծ կլինեմ: Թող Ինձ, որ գործեմ քո մեջ և Իմ կամքը կատարեմ քո մեջ: Եղիր ոչինչ և քեզ զգա ոչինչ: Թող որ Ես լինեմ ամեն ինչ, որպեսզի Իմ Խոսքը հասնի մինչև աշխարհի վերջը և Խաղաղության ու Սիրո Իմ Գործերը հրապուրեն ամեն մի սիրտ:

Թող որ քեզ հիշեցնեմ քո խեղճությունը, որպեսզի այս հիշեցումը կանխի քեզ հպարտանալուց՝ այն բոլոր շնորհների համար, որ տվել եմ քեզ: Եղի՛ր Իմ մաքուր խորանը... Մարդկանց որսորդ, տարածի՛ր Խաղաղության ու Սիրո Իմ Ուռկանը ամբողջ աշխարհով մեկ: Քաշիր Այն, և թող որ Ես հրճվեմ Դրա շահավետ որսով: Երբ մարմնապես երկրի վրա էի, Ես մարդկանց մի փոքրիկ խմբի ուսուցանեցի, որ դառնան մարդու ձկնորսներ: Ես թողեցի նրանց աշխարհում՝ Իմ Խոսքը ողջ մարդկությանը տարածելու համար: Ես՝ Տեր Հիսուս, կսովորեցնեմ և ցույց կտամ քեզ, թե ինչպես է այս գործը կատարվել:

(Ի՞նչ կարող եմ ասել: Ես ինչպե՞ս կարող եմ որևէ բան անել, ուր մնաց, որ մի այսպիսի առաքելություն իրագործեմ: Ես զգում էի, որ պատգամը օրեցօր ավելի ու ավելի է ծանրանում: Ես ուզում եմ հաճոյանալ Աստծուն, բայց ինչպե՞ս: Ես Իմ դիմաց տեսնում եմ միայն ալպյան մի լեռնագագաթ և զգում հայտնության ծանրությունը):

Ես կրում եմ Իմ Խաչը քեզ հետ միասին: Այո՛, իրոք ծանր է Այն: Բայց մի՛ հոգնիր, Ես՝ Տերը, օգնում եմ քեզ, մոտ մնա Ինձ: Ես քեզ չեմ լքի:

Բայց և այնպես, դա տակավին շատ ծանր է:

(Հիսուս խրախուսում էր ինձ, որ շարունակեմ):

Վասո՛ւլա, մի՞թե Ես չեմ օգնել քեզ մինչև այստեղ. ուրեմն, ինչո՞ւ քեզ պիտի լքեմ: Ամբողջապես Ինձ ապավինիր. վստահի՛ր Ինձ: Ինչ որ սկսել եմ և օրհնել, Ես կհասցնեմ մինչև վերջ:

Ապրիլի 27, 1987

Ես Տերն եմ, Վասո՛ւլա, կանգնած քո առջև:

(Հիսուս կանգնած ժպտում էր՝ զգացնել տալով ինձ Իր Ներկայությունը: Նա երկու ձեռքով բռնել էր Իր թիկնոցը, որը բացելով՝ ինձ ցույց տվեց Իր Սիրտը: Նրա կուրծքը լուսավորված էր):

Մտի՛ր Իմ Սրտի մեջ, ներթափանցի՛ր, և թող Այն պարուրի քեզ: Թող Սիրտս հափշտակի քո սիրտը՝ բոցավառելով այն, թողնելով այն հրավառ՝

ճառագելով Իմ Խաղաղությունն ու Սերը: Ե՛կ միասին լինենք, թույլ տուր որ լինեմ քո Սուրբ Ընկերակիցը: Համաձա՞յն ես, աղջիկս:

(Ես զգում եմ, որ չեմ կարող Նրան մոտենալ. ես ո՛վ եմ, որ Նրան մոտենամ: Ես հակացա, թե որքան անարժան եմ: Մարդ ինչպե՞ս կհամարձակվի անգամ Աստծո հետ խոսել: Մենք, որ երախտամոռ մեղավորների մի ամբողջ փունջ ենք, էլ չասած, որ շնորհներ խնդրենք և անգամ «խոսակցություն» ունենանք Նրա հետ: Մենք այնքան անարժան ենք, և ես վատ եմ զգում դրա համար, ասես ուզում եմ բերանս սոսնձով պատել: Ես մտքով մի քող գցեցի իմ և Իր միջև՝ հարգանքից դրդված):

Այդ ի՞նչ արեցիր, աղջիկս[1]: Ինչո՞ւ, աղջիկս, ինչո՞ւ:

Քեզ հարգելու համար, Տե՛ր:

Ուզում եմ, որ ճաչակես:

(Ես Նրա ձեռքին Հաց տեսա):

Վերցրո՛ւ Իմ Հացը, փոքրիկս: Ստիպված ես քողդ հանել, որ վերցնես այն: Ե՛կ, Ես Ինքս կվերցնեմ այս անջրպետը... Ահա՛, վերցրու Իմ Հացը, մոտեցիր:

(Ես Նրա ձեռքից վերցրեցի Հացը):

Գիտե՞ս, թե որքան եմ հրճվում, երբ կերակրում եմ քեզ:

(Հիսուս լի էր Սիրով և ուրախ էր):

Զգո՞ւմ ես Իմ ուրախությունը, Վասուլա: Բե՛ր քո թուլություններն ու թշվառությունը, որ Ես դրանք վերացնեմ Իմ Ուժով և Ողորմությամբ: Ազատ թռիր, Իմ աղունիկ, բայց միշտ վերադարձիր Ինձ մոտ և կերակրվիր Իմ Հացից: Ես սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում, Տե՛ր:

(Այս բանից հետո, մի ամբողջ օր, ես Նրա սերը զգում էի ինձ վրա: Զգիտեմ, ինչպես դա անվանեմ, «զմայլական վիճա՞կ»: Այդ վիճակում ես Իր Ներկայությունը շատ ավելի էի զգում, քան լինում էր սովորաբար):

(Ավելի ուշ)

Դու տեսել ես Իմ Սրբարանը, ուր մենք մուտք գործեցինք, և Ես թույլ տվեցի, որ քո աչքերը տեսնեն, թե Իմ Սերովբեները ինչպես են հսկում Իմ Սրբարանը: Այսօր Ես քեզ ցույց կտամ, թե ինչ ունեմ Սրբարանիս

[1] Հիսուս ցնցված էր:

ներսում: Տեսնո՞ւմ ես այս ուժեղ ճառագայթը, որ ընկած է Իմ Սրբազան Գրվածքների վրա:

Այո՛, Տեր:

Դրանք Իմ Սրբազնագույն Գրվածքներն են, որ գրվել են նախքան քեզ ստեղծելը: Իմ Սուրբ Գրքում են պահված Երկնային Իմ Արքայության և Իմ ողջ Արարչագործության գաղտնիքներն ու բանալիները: Իմ Սուրբ Գրքի մոտ ես երկու հրեշտակապետ եմ նշանակել, որոնք ջերմեռանդորեն հսկում են Իմ Սուրբ Գրվածքների վրա: Ե՛կ, ես քեզ ուրիշ բաներ էլ ցույց կտամ Իմ Փառքից, փոքրիկս:

(Աստված ինձ մի տեղ տարավ, ուր ես ինձ շատ անհանգիստ զգացի):

Տեսնո՞ւմ ես կրակե այս լեռը:

(Այն գեղեցիկ էր, բայց՝ սարսափազդու):

Դրա կողքից հոսում են երկու գետեր, որոնք ամբողջովին կրակ են:

(Ասես հոսող կրակե լավա լինեին, բայց ավելի բաց կարմիր էին):

Ես՝ Տերը, Իմ Դատաստանի օրը չար հոգիներին պիտի բաժանեմ բարի հոգիներից: Ապա՝ սատանայի բոլոր հետևորդները պիտի գցվեն կրակե այդ երկու գետերը՝ հենց արդարների աչքերի առաջ: Վասո՛ւլա, Ես թույլ կտամ, որ աչքերդ ավելին տեսնեն Երկնային Իմ Արքայությունից, քանզի մի քանի այլ բաներ էլ կան Իմ Սրբավայրի ետևում: Արարա՛ծ, Իմ Կամքը պիտի կատարվի, քանզի Ես Աստված եմ՝ Յահվե Սաբավովթը (Զորաց Տերը). թույլ տուր Ինձ ազատ գործել քո մեջ: Մենք սիրով պիտի աշխատենք իրար հետ, մինչև որ Ես հաստատեմ Իմ գործերը, որից հետո Ես նորից կգամ Իմ Սուրբ Գրքով և թույլ կտամ քեզ կարդալու Գրքից մի հատված, որը դու պիտի գրես՝ դրանով իսկ կնքելով Խաղաղության և Սիրո Իմ Պատգամը:

(Գիշերվա կեսին ես արթնացա Հիսուսի բարձր աղաղակից, որը գալիս էր Խաչից: Այդ աղաղակի մեջ շատ տառապանք, կսկիծ ու ցավ կար՝ վշտահար և դառնացած: Դա հնչում էր շատ ուժեղ ողբի նման՝ ծանրորեն ճգելով):

Ապրիլի 29, 1987

(Հաջորդ առավոտյան)

Ես եմ՝ Տեր Հիսուս, դու լսեցիր Իմ աղաղակը. այդ ես էի: Դա արթնացրեց քեզ[1]: Ես աղաղակեցի Իմ Խաչից: Դա Իմ վերջին բարձրաձայն արձակած ճիչն էր, երբ Ես դեռ մարմնավոր էի. ճիչ՝ լի տառապանքով, ցավով և

[1] «դա արթնացրեց քեզ», խորհրդանշանա՞կ է:

դառնությամբ, որ գալիս էր Հոգուս խորքից՝ ճեղքելով Երկնքի բարձունքները: Այն ցնցեց երկրի հիմքերը և կիսեց Ինձ սիրողների սրտերը, նույնպես և պատռեց Տաճարի վարագույրը: Այն Ինձ նվիրյալ հետևորդներ առաջ բերեց. մեռածներին արթնացրեց գերեզմաններից՝ դեն նետելով հողը, որը ծածկում էր նրանց, ինչպես և տապալեց Զարին:

Մեծ որոտը ցնցեց Երկինքը, և յուրաքանչյուր հրեշտակ դողալով երեսն ի վայր ընկավ և քար լռությամբ Ինձ երկրպագեց: Մայրս, որ մոտ էր կանգնած, Իմ ճիչը լսելով ծնկաչոք գետին ընկավ և արտասվալի երեսը ծածկեց՝ մինչ իր ննջման օրը, իր հետ կրելով այդ վերջին ճիչը: Նա տառապեց...

Ես դառնացած եմ՝ տակավին տառապելով աշխարհի բազմաթիվ անարդարություններից՝ չարությունից, անօրենությունից և եսասիրությունից: Իմ ճիչը օրեօր ավելի բարձրաձայն է հնչում: Ինձ մենակ թողեցին Խաչի վրա, ուսերիս վրա մենակ կրելու աշխարհի մեղքը, մենակ՝ տառապելու, մենակ՝ մեռնելու, թափելով Իմ Արյունը, որը պատեց ողջ աշխարհը, ազատագրելով քեզ և Իմ սիրելիներին:

Այդ նույն ճիչն այժմ երկրի վրա է, որպես անցյալի արձագանք: Մի՞թե Ես անցյալի ստվերներում եմ ապրում և զուր էր Իմ Զոհաբերությունը: Ինչպե՞ս կարող եք չլսել ուրեմն Խաչից արձակված Իմ ճիչը: Ինչո՞ւ եք փակել ձեր ականջները և այն ձեզնից հեռու եք վանում:

Ո՞ւմ է ուղղված այս պատգամը, Տե՛ր:

Բոլոր նրանց, ովքեր ականջ ունեն Իմ ճիչը լսելու:

(Ես շատ զգացվեցի, իմանալով, թե Նա մեն-մենակ որքան է տառապել և տառապում է դեռ):

Աստվա՛ծ իմ, ես համաձայն եմ լինել այնպիսին, ինչպիսին Դու ես ուզում, որ լինեմ ապրիլի 23-ի Քո պատգամում՝ Քո զոհը, Քո թիրախը: Թող որ կրեմ Քո Խաչը Քեզ համար և թող որ Քեզ հանգստացնեմ, թույլ տուր մխիթարեմ Քեզ: Ես մենակ չեմ, ինչպես առաջ ասացի, ես Քեզ հետ եմ[1]*:*

Ես սիրում եմ քեզ, Իմ փոքրիկ աղունիկ: Ես չփացրել եմ քեզ Իմ բոլոր շնորհներով: Թույլ տուր, որ քեզ գործածեմ Իմ շահախնդրությունների և Իմ իսկ Փառքի համար: Քեզ համար ոչինչ մի՛ պահիր, այլ նկատի ունեցիր միայն Իմ սեփական հետաքրքրությունները: Փառաբանի՛ր Ինձ, Ի՛նձ համար գործիր, քո տառապանքներին ավելացրու և Իմը:

Երանի ողջ աշխարհը փառաբաներ Քո Անունը և դրա ձայնը հասներ Քեզ:

Միասնությունը կուժեղացնի Իմ Եկեղեցին, միասնությունը կփառաբանի Ինձ: Վասուլա, սիրի՛ր Ինձ:

Սովորեցրու ինձ Քեզ այնպես սիրել, ինչպես Դու ես ցանկանում, Տե՛ր:

[1] Ես ետ եմ վերցնում ինչ որ ասացի 1987 թվի ապրիլի 7-ին:

Կսովորեցնեմ, ես չեմ լքի քեզ, մի՛ հոգնիր Իմ Խաչը կրելուց: Ես քո կողքին եմ և կիսում եմ Այն, սիրելիս:

(Փարիզում, Զատիկի օրերին
Երբ Վանահայրը նայեց պատգամին, ինձ ասաց. «Սա մի հրաշք է»: Ես նույնպես մտածեցի, թե որքան հրաշալի և որքան գեղեցիկ է, որ Աստված մեզ պատգամ է տալիս, բայց մյուս կողմից, որքան սոսկալի է: Սոսկալի է, որովհետև այն ցույց է տալիս մի տխուր Աստված, մի տառապող Աստված: Աստված պատգամ է տալիս տառապանքի մեջ, տխուր և լքված շատերից: Դա տխուր պատգամ է):

Արդյո՞ք ես մի բան սովորում եմ, Հիսուս: Հարցնում եմ, ոչ թե ինձ բավարարելու համար, բայց գոնե իմանալու, թե ինչի՞ եմ հասել, այսինքն՝ առաջադիմել եմ, թե ոչ:

Վասո՛ւլա, Ես՝ Հիսուս, քո առջև եմ, և դու իսկապես աճում ես: Ես բարձրացրի քեզ մեռելների միջից և կերակրեցի. դու ուտում ես Իմ Հացը: Իմ Լույսը փայլում է քեզ վրա: Ես քո Ուսուցիչն եմ և դու սովորում ես Իմաստությունից:

Հիսո՛ւս, շատ անգամ Դու հիշեցրել ես ինձ, որ աննշան լինեմ և մնամ որպես ոչնչություն, հիմա Դու ինձ ասում ես, որ ես աճո՞ւմ եմ:

Այո՛, դու պիտի աճես հոգով՝ սիրո մեջ, խոնարհության մեջ, հնազանդության և հավատարմության մեջ: Թող որ բոլոր առաքինությունները աճեն քո մեջ, բայց և լինես մի ոչնչություն՝ ունայնության, չարության և այն բոլոր սովորությունների մեջ, որոնք անհանդուրժելի ու նողկալի են Իմ աչքում: Ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես:

Ապրիլի 30, 1987

Հիսո՛ւս, այսօր ուզում եմ Քեզ հարցնել, թե արդյոք ուզո՞ւմ ես հատուկ մի պատգամ տալ մի մահամերձ մարդու:

Մահամե՞րձ [1]. նա չի մահանում: Նրա հոգին ազատվելու է, նա ազատագրվելու է և ապրելու է: Նա Ինձ մոտ է գալու, նրա հոգին ազատ է լինելու:
Գրի՛ր և նրան ասա, թե Ես ինչպես եմ փնտրում ամեն մի հոգու, ինչպես եմ կերակրում քաղցած հոգիներին, ինչպես եմ բժշկում հիվանդներին, և թե ինչպես է Իմ Հացը նրանց հավիտենական կյանք տալիս: Թող նա իմանա, որ Ես Կյանքի և Հարության Կենսահյութն եմ:

(Մահամերձ այդ կնոջ համար Հիսուսն առանձին մի թղթի վրա ինձ պատգամ տվեց):

[1] Հիսուս մի փոքր զարմացած թվաց իմ խոսքերի վրա:

Մայիսի 1, 1987

Ես՝ Աստվածս, քեզ բավարար ուժ եմ տալու, որ կարողանաս իրագործել Իմ Գործերը: Ինձ երբեք չուրանաս և երբեք չհետապնդես քո սեփական շահերը, այլ միմիայն՝ Իմը: Ինձ ազատ թող, որ քեզ գործի դնեմ և երկիր իջնեմ՝ քո միջոցով բացահայտելով Իմ Խոսքը, մինչև որ գամ քեզ ազատելու:

Վասո՛ւլա, Ես պիտի կանխորոշեմ քո վախճանը: Իմ բոլոր ընտրյալ հոգիները երբեք չեն վախեցել այդ ժամից: Ես քեզ հինգ խորհուրդ ևս պիտի բացահայտեմ Իմ խորհուրդներից. այժմ ե՛կ և համբուրի՛ր Իմ Հինգ Վերքերը:

(Ես համբուրեցի. առաջինը՝ Իր Ձեռքերը, հետո՝ Ոտքերը և Իր Կողը): Այնուամենայնիվ, ես տակավին չեմ հասկանում, թե Հիսուսն ինչ նկատի ուներ հինգ խորհուրդները համընկեցնելով Իր հինգ վերքերի հետ: Բայց ես գիտեմ, երբ ժամանակը հասնի, Նա ինձ կհայտնի: Այնպես որ, ես սովորեցի չհարցնել):

Վասո՛ւլա, Ես քեզ կասեմ Իմ գաղտնիքները, երբ դու մի փոքր ևս աճես[1]: Խնդրի՛ր Իմ շնորհները և Ես դրանք կպարգևեմ քեզ:

Աստվա՛ծ իմ և Հա՛յր իմ,
ես միայն մի բան պիտի խնդրեմ,
որն ունի մի քանի կետեր
և որը միայն
Քո հետաքրքրությունների
ըւ փառքի համար է:
Թող որ Քո պատգամը հասնի
մինչև աշխարհի վերջը
և դեպի Քեզ ձգի
բազմաթիվ սրտեր,
թող Քո կամքը կատարվի և
Քո Սուրբ Անունը փառավորվի:
Թող Ջարը կորցնի իր ուժը և
ջախջախվի հավիտյան:
Սա է, որ այժմ ես ցանկանում եմ:
Եվ ամեն անգամ,
երբ Դու լսես իմ ձայնը
որևէ մի խնդրանքով,
դա այլ բանի համար չի լինելու,
եթե ոչ Քո Փառքի:
Որևէ շնորհ,
որ ես կխնդրեմ Քեզնից,
միայն Քո Փառքի համար է լինելու:
Օգնության որևէ կանչ իմ կողմից՝
Քո նպատակների համար է լինելու

[1] Տարիների ընթացքում ես սովորեցի թափանցել Նրա հինգ վերքերի մեջ Սուրբ Հոգու զորությամբ: Դրանք հինգ խորհուրդներն էին:

և ոչ մի բան ինձ համար:
Ամբողջ ուժը, որ ես պիտի խնդրեմ,
պիտի լինի Քո շահերի համար,
Ամենակարող Աստված:

Փոքրի՛կս, դիր ոտքերդ Իմ ոտնահետքերի մեջ և հետևիր Ինձ:
Այդ Ես եմ՝ Հիսուս:

Հիսո՞ւս:

Ես եմ, սիրելիս, Ինձ նաև Փեսա և Հայր կանչիր: Ես սիրում եմ քեզ, ե՛կ աշխատենք[1]: Սիրիր Ինձ ջերմորեն և հատուցիր ուրիշների համար:

Աստվա՛ծ իմ, ես մտածում էի, թե ինչպես կարող եմ աղավնու նման թռչել այս չար աշխարհի վրայով, երբ ինքս ապականված եմ մեղքով: Լինելով միևնույն վիճակում, ինչպես մնացած բոլորը, ես անկարող կլինեմ «տեսնել ամեն ինչ» և «լսել ամեն ինչ», ինչպես Դու ասացիր, որովհետև ես ավելի լավը չեմ, քան նրանք, ովքեր վիրավորեցին Քեզ...

Վասուլա, թափանցի՛ր Իմ մեջ, աշխատի՛ր մաքրություն ձեռք բերել, քաղի՛ր Իմ Մաքրությունից, որը Ես առաջարկում եմ: Մոտեցի՛ր, ըմպի՛ր Ինձնից, կլանի՛ր Ինձ, Ես Անսահման հարստություն եմ և ամեն ոք կարող է վերցնել Ինձնից:

Այսքան շնորհներ ստանալով, ես կարող եմ փառամոլ դառնալ և չարը կարող է ինձ հեշտությամբ գայթակղեցնել:

Ես քեզ միշտ պիտի հիշեցնեմ քո թշվառությունն ու քո անցյալի ստվերները: Ես քեզ պիտի հիշեցնեմ, թե ինչպես Ինձ ուրացար և մերժեցիր Իմ մեծ Սերը, երբ Ես մոտեցա քեզ. և ինչպես Ես քեզ գտա՝ մեռած, պառկած խավարում մեռածների մեջ, և ինչպես Ողորմությունից և Սիրուց մղված, Ես կենդանացրի քեզ՝ բարձրացնելով քեզ Իմ կրծքին:
Արի՛ աղոթենք, սաս.

«Հա՛յր Իմ,
առաջնորդիր Դու ինձ,
Ուր Քո կամքը կցանկանա,
որ ես գնամ:
Թույլ տուր, ապրեմ
Քո Լույսի մեջ
Ու ջերմացրու իմ սիրտը,
Որպեսզի այն չիկանա,
Ու ջերմություն տա նրանց,
Ովքեր, որ ինձ կմոտենան:

[1] Հիսուսն այս ամենն ասաց այնպիսի մի շնորհալիությամբ ու պարզությամբ, որ միայն Աստված կարող էր այսպես խոսել:

Օրհնյալ լինի Քո Անունը,
Որ ինձ տվիր այս շնորհները՝
Չնայած իմ ոչնչությանը:

Օրհնյալ լինի Քո Անունը
Քո տված Բարիքների համար,
և Ողորմությանդ համար,
որ ինձ ցույց տվիր՝
Բարձրացնելով ինձ
Քո Սրտի մոտ: Ամեն»:

Արի կրկնենք:
Հիշի՛ր, որ բոլոր շնորհները, որ տալիս եմ քեզ Իմ սեփական շահերի համար է: Ինքդ մնա ոչնչություն, փառաբանիր Ինձ՝ կիսելով Իմ ուրախությունը:

Երանի կարող լինեի Քեզ փառաբանել և աշխարհը կարողանար գովերգել Քո Անունը, և նրանց աղոթքները Քեզ հասնեին՝ խնկի բարձրացող քուլաների նման ու նրանց գովերգը Երկնքում հնչեր, որպես մի զարկ Քո դռանը:

Սերը պիտի հաղթի չարին:
Սիրի՛ր Ինձ քո ողջ հոգով ու մտքով, և թող որ Ես լինեմ ամեն ինչ. Տերը պիտի հոգա քեզ համար մինչև վերջ:

Ուրեմն, վերցրո՛ւ ինձ, չնայած որ ես ոչինչ եմ, վարվիր ինձ հետ ինչպես ուզում ես: Ես Քոնն եմ:

Ե՛կ, թող որ միշտ հրճվեմ՝ լսելով լիակատար անձնատուր լինելու այս խոսքերը. Ես սիրում եմ քեզ, աղջիկս:

Ես սիրում եմ Քեզ, Հա՛յր:

Մայիսի 2, 1987

Ես Հիսուսն եմ:

Հիսո՛ւս, ես զգում եմ, որ Դու ինձ կարևոր պատգամ ես տալու: Ջարը հարձակվում է ինձ վրա, որ վհատեցնի գրելուց:

Իմ պատգամը նրանց համար է, ովքեր սիրում են Ինձ[1] և իրենց հոգիները զոհում են Ինձ համար: Ես կամենում եմ նրանց քաջալերել՝ Ուժ տալով նրանց:

[1] Բոլոր քահանաները, կրոնականները, քույրերը, եղբայրները, բոլոր նրանք, ովքեր անկեղծորեն սիրում են Նրան:

Ես՝ Բանը, Իմ Խոսքերը հայտնի պիտի դարձնեմ այս թույլ գործիքի միջոցով: Ես պիտի իջնեմ երկրի վրա այս Պատգամի միջոցով՝ թույլ տալով, որ Իմ Լույսը փայլի ձեր ամենքի վրա:

Ես օրհնում եմ ձեզ՝ Իմ Հոգու սիրելիներ, և սիրում եմ ձեզ: Իմ մեջ, Իմ Մտերմիկ Հոգու խորքերում, Ես ունեմ Կենդանի և Անմար մի Բոց. Ես Մաքրություն եմ, Նվիրում և Հարստության մի ամբողջ վիհ: Սիրելիներս, եկե՛ք և վերցրե՛ք Ինձնից, ձեր սրտերը հագեցրեք, եկե՛ք և ըմպե՛ք Ինձնից, եկե՛ք ու թափանցե՛ք Իմ բաց Վերքերի մեջ, եկե՛ք և ձեր հոգիները թաթախեք Իմ Արյան մեջ, խմե՛ք Իմ Կենդանի Աղբյուրից, որ կարողանաք ողողել՝ ոռոգելով այս ամայի անապատը, բժշկելով Իմ դառներին:

Վերցրե՛ք Կենդանի այս Բոցից և թող այն պարուրի ձեր սրտերը: Ես սիրում եմ ձեզ այն աստիճան, որ ձեր միտքն իսկ անկարող է ընբռնել: Եկե՛ք, Իմ Սուրբ Խաչը կրելուց մի հոգնեք, քանզի Ես ձեզ հետ եմ, և ձեզ հետ միասին կրում եմ Այն: Ինձ հետևեք և մոտ կանգնեք Ինձ. ձեր ոտքերը դրեք Իմ ոտնահետքերի մեջ: Պայքարելուց և տառապելուց մի՛ հոգնեք: Ինձ փառաբանեք և թող ձեր ձայները Երկինք բարձրանան, որպես խնկի անուշ մի բուրմունք:

Գովերգե՛ք Ինձ, թո՛ղ ցնծամ, թո՛ղ ուրախանամ ձեզնով, թո՛ղ հրճվեմ ձեր Իմ հանդեպ ունեցած սիրով: Այս Անսահման Սիրուց լցրեք ձեր սրտերը, և թող այն դուրս հորդի Իմ դառների վրա՝ բժշկելով նրանց:

Թող ամեն կենդանի արարած երկրի վրա զգա Իմ ջերմությունը, թող ամեն մի պաղ ու քար սիրտ հալվի և տարրալուծվի Իմ Մաքրության մեջ՝ ձուլվելով Իմ Մարմնին՝ դառնալով Ինձ հետ մեկ միասնություն: Թող անցյալի յուրաքանչյուր ստվեր վերածնվի ու դառնա կենդանի հոգի՝ Սրբությամբ, Խաղաղությամբ և Սիրով լի: Իմ արարչությունը դրախտի վերածեք:

Միացե՛ք, միացե՛ք և դարձեք մեկ, քանզի Ես, Աստված Մեկ եմ: Միասնությունը զորություն է բերում, միացեք: Եղեք Իմ նվիրյալ սերմնացանները՝ սերմանելով Խաղաղության և Սիրո Իմ սերմերը:

Ես սերմնահատեր եմ ստեղծել, <u>որ երկրի վրա երկնայինն են պտղաբերելու</u>, որովհետև Իմ Թագավորությունը երկրի վրա պիտի լինի այնպիսին, ինչպիսին Երկնքում է: Վերցրե՛ք Իմ հատիկները, որոնք Սրտումս են՝ մաքրված Իմ Արյամբ, և տարածեք ամենուր: Ես կրում եմ այդ սերմերը, սիրելիներս, և Ես ցանկանում եմ, որ դուք մտնեք Իմ Սրտի մեջ ու դուրս բերեք դրանք: <u>Ձգտեք միասնության</u>:

Ես պիտի բժշկեմ իմ ծաղիկներին: Ես անուշ բուրմունք պիտի տամ նրանց, պիտի ծաղկեցնեմ նրանց: Ես պիտի զարդարեմ Իմ պարտեզը, Ես պիտի ոռոգեմ ձեր սրտերը, Ես պիտի կենդանացնեմ ձեզ:

Արարչությո՛ւն, Ես սիրում եմ ձեզ: Ես պիտի փայլեմ ձեզ վրա և պիտի թողնեմ, որ Իմ ջերմ Ճառագայթները տարրալուծեն սպառնացող ծանր ու մութ ամպերը՝ ցիրուցան անելով ու փարատելով դրանք: Իմ Լույսը պիտի ճեղքի դրանց և ողջ խավարն ու չարը, որը ծանրորեն ընկած են ձեզ վրա, պիտի անհետանան: Մի խավար, որը միայն տկարություն, թշվառություն և չարություն է ձեզ պատճառել:

Իմ Ջերմ Ճառագայթները պիտի կենդանացնեն Իմ բոլոր ծաղիկներին, և Ես Երկնքից պիտի թափեմ Արդարության, Սրբության, Մաքրության,

Միասնության, Խաղաղության և Սիրո Իմ ցողը: Ես ձեր Հավատարիմ Պահապանն եմ՝ աչքս զգոն պահած ձեզ վրա: Հիշե՛ք, որ Ես այս աշխարհի Լույսն եմ, Ես Բանն եմ:

Խաղաղություն ձեզ բոլորիդ: Փառաբանե՛ք Ինձ, Ի՛նձ ապավինեք, ճիգ թափեք և Իմ Խաչը կրելուց մի՛ հոգնեք՝ բժշկելով Իմ զավակներին:

Իմ Վասուլա, երբեք չճանձրանաս գրելուց: Ես սիրում եմ քեզ: Իմաստությունը քեզ պիտի ուսուցանի:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, թող Քո կամքը լինի:

Մայիսի 5, 1987

(Երբ ես զգում եմ Աստծո սերը ինձ (մեր) վրա, իմ գլուխը գրեթե պտտվում է: Երբ Նա տարրալուծում է ինձ Իր Մարմնի մեջ և Իր Մարմինը ոչնչացնում է ինձ, այդ պահին է միայն, որ ես ինձ կարծես եթերում եմ զգում: Կարծես, իրոք, ես անմարմին հոգի լինեմ: Զմայլանքի վիճա՞կ է արդյոք: Անգամ այս խոսքերը չեն կարող ամբողջովին նկարագրել այն վիճակը, որ Իր Սերը պատճառում է ինձ: Նրա շնորհը և բարությունը անհնարին է նկարագրել: Բառեր չկան նկարագրելու Նրա Սրբության մեծությունն ու պայծառությունը: Եվ գիտակցել, թե ես ինչպես, նախքան ինձ մոտենալը, մերժում էի Նրան...)

Վասո՛ւլա, եկ Ինձ մոտ. Իմ հինգ Վերքերը բաց են: Վասո՛ւլա, թափանցիր Իմ Վերքերի մեջ և զգա Իմ ցավը: Ե՛կ, և թող Իմ Արյունը սրբացնի քեզ Իմ Վերքերի մեջ: Փառաբանի՛ր Ինձ. Ես քեզ կառաջնորդեմ աղջիկս: Ես ձրի եմ տալիս, դու էլ ձրիբար տուր: Ես՝ Տերը, պիտի վերադառնամ Իմ Սուրբ Գրքով:

(Հիսուս մի փոքրիկ գիրք ուներ Իր հետ):

Զանազանիր ու կարդա, ուր որ մատնացույց կանեմ: «Նշանածս, Հոգուս օրհնյալ դուստր Իմ, կերակրի՛ր Իմ գառներին, ցրի՛ր Իմ սերմերը, թող որ նրանք հարուստ բերք տան: Հավաքի՛ր այն, և Իմ Հացը ձրի բաժանիր: Ե՛ս եմ Կյանքի Հացը: Կերակրի՛ր Իմ ոչխարներին: Ես միշտ քեզ հետ եմ, մինչև ժամանակների վերջը[1]:

Աստվա՛ծ իմ, շնորհակալ եմ Քո Առաջնորդության համար: (Ես չոր եմ հնչում իմ այս մերկ բառերով, բայց ես թղթին պիտի հանձնեմ դրանք): Թող Քո Անունը օրհնյալ լինի հավիտյանս հավիտենից:

Ես սիրում եմ քեզ. Ես չեմ լքի քեզ: Մենք միասին կգործենք, մի՛ հոգնիր գրելուց: Այժմ Ես կնքել եմ Խաղաղության և Սիրո Իմ Պատգամը. Ես պիտի առաջնորդեմ քեզ, Վասուլա: Ե՛կ Ինձ մոտ:

[1] Գրքի բովանդակությունը հայտնում էր իմ առաքելությունը, Առաքելական գործունեությունը:

Ես կհետևեմ Քեզ, Տե՛ր: Ես սիրում եմ Քեզ:

Թող Ինձ, որ ազատ գործեմ քո մեջ:

Տե՛ր, թող Քո կամքը լինի:

Ես քեզ Իմաստությամբ կուսուցանեմ:

(Ավելի ուշ)

(Երեկ, Աստծո պատգամը ավարտելուց հետո, Ես զգացի, որ Աստված իմ մեջ է, իսկ ես Նրա մեջ, և զգացի, որ չէի կարող երբևիցե բաժանվել Նրանից):

Ի՛մ ընկերակից, Ես սիրում եմ քեզ: Վասուլա, տո՛ւր Ինձ ամեն ինչ, տո՛ւր Ինձ, ինչ որ ունես:

Ես տվել եմ Քեզ իմ սերը, ինքս ինձ տվել եմ Քեզ: Ես անջատել եմ իմ զգացումներն աշխարհից, ես անձնատուր եմ եղել: Մի՞թե կարող եմ ավելին տալ Քեզ:

Աղջի՛կս, ուրախ եմ լսել, որ դու հանձնվել ես Ինձ: Թույլ տուր լինելու քեզ Գերողը:

(Երեկոյան ես այնքան ուժեղ զգացի Հիսուսին, որ պարզորոշ կարողացա տեսնել Նրա Դեմքը, որը հեշտ չէր նախորդ դեպքերում: Այս երեկո Նա շատ լարված էր թվում, խանդավառ, եռանդոտ, նման այն մարդուն, որը հաստատուն վճռականությամբ գալիս էր համոզելու մեկին, որն անտարբեր էր):

Դու կհամբուրե՞ս Իմ Վերքերը:

(Ես համբուրեցի «խորհրդավոր» ձևով: Հետո խնդրեցի Հիսուսին, որ նստի մոտիկ աթոռին: Անմիջապես, ես նորից «խորհրդավոր» ձևով զգացի, որ Նա նստեց, դեմքով դարձավ ինձ և երկարեց Իր թևը սեղանի վրա՝ հանելով իմ տետրակին: Հիսուս մտքիս մեջ դրոշմում է այս տպավորությունները):

Ծաղի՛կս, քեզ ամբողջովին Ինձ նվիրիր: Դու պատրա՞ստ ես Ինձ լսելու:

Այո՛, Հիսուս:

Նշանածս, օրհնյալ Իմ Հոգու, Ես քեզ ձրի տվեցի, ուստի դու էլ ձրիաբար տուր: Միացի՛ր Ինձ. մե՛կ եղիր Ինձ հետ: Աչքերիս մեջ նայի՛ր:

(Ես նայեցի):

Հիսո՛ւս, ավելին ի՞նչ կարող եմ անել:

Սիրի՛ր Ինձ:

Բայց ես սիրում եմ Քեզ: Ես շատ անգամ եմ այդ ասել, և Դու գիտես, որ դա այդպես է: Իմ հոգին փափագում է Քեզ: Դու ուզում էիր, որ ես անջատվեմ աշխարհից, և ես անջատվեցի:

Վասո՛ւլա, մի՞թե ես չեմ տենչում ու փափագում քեզ[1]: Մի՞թե ես, որպես քո Աստվածը, նույնպես չեմ տառապում[2]: Սիրելիս, ապրի՛ր Իմ մեջ և ես՝ քո մեջ, դու՝ Իմ մեջ և ես՝ քո մեջ, մեկտեղ:

Հարմարվի՛ր Ինձ, միացի՛ր Ինձ:

Բայց Դու միացրել ես մեզ, Հիսո՛ւս, Դու ասացիր, որ միացրել ես:

Ես միացրել եմ:

(Ես հանկարծակի զգացի, որ մարմնապես հոգնեցի, դրա համար թուլությունն խնդրեցի որ գնամ):

Գնա՞նք, Հիսուս:

Ինչո՞ւ, աղջիկս:

Հոգնած եմ, Հիսուս:

Սիրելիս, ես ուզում եմ, որ դու մնաս, կմնա՞ս:

(Դա առաջին անգամն էր, որ Հիսուս պնդում էր):

Ուրեմն կմնամ...

Սիրտս ճաքում է, երբ ես մենակ եմ մնում:

Բայց Դու ինձ հետ ես, մենք միասին ենք...

Ես քեզ հետ եմ հիմա, բայց դու շատ անգամ մոռանում ես Ինձ: Ինձ ազատ թող և թող որ Իմ Աստվածային Ձեռքերը կերտեն քեզ, ինչպես որ ցանկանում եմ: Ես կձևավորեմ քեզ Իմ պատկերի համաձայն: Ինձ ազատ թող, որ գործեմ քո մեջ: Ես Հիսուսն եմ և Հիսուս՝ նշանակում է Փրկիչ: Աղջիկս, ես սիրում եմ քեզ խանդելու աստիճան. ես ուզում եմ, որ դու ամբողջովին Իմը լինես: Ամեն ինչ, որ դու անում ես, ես ուզում եմ, որ Ինձ համար լինի: Ես մրցակիցներ չեմ հանդուրժում: Ես ուզում եմ, որ դու պաշտես Ինձ և ապրես Ինձ համար:

Շնչի՛ր Ինձ համար, սիրի՛ր Ինձ համար, սնվի՛ր Ինձ համար, ժպտա՛ Ինձ համար, զոհաբերի՛ր քեզ Ինձ համար: Ամեն ինչ, որ անելու ես, արա Ինձ համար: Ես ուզում եմ կլանել քեզ, ուզում եմ բոցավառել քեզ, որ միմիայն <u>Ինձ</u> ցանկաս: Զարդարի՛ր Ինձ, ծաղիկս, քո ծաղկաթերթերով:

---

[1] Հենց այդտեղ էր, որ հասկացա, թե ինչ է նշանակում՝ «Հոգին տենչում է իր Աստծուն, և Աստված էլ տենչում է իր Հոգուն»:

[2] Բաժանված լինելով, քանի որ Հոգին գտնվում է մարմնի մեջ:

Թագադրի՛ր Ինձ քո սիրով: Հեռացրո՛ւ Իմ փչոտ պսակը և փոխարինիր այն քո նուրբ թերթերով: Քո անուշահոտությամբ օծի՛ր Ինձ: Սիրի՛ր Ինձ և միմիայն Ինձ:

Ես Իմ կյանքը քեզ համար եմ զոհել՝ Վսեմ Սիրուց ելնելով: Մի՞թե դու նույնը չես անի Ինձ՝ քո Փեսայի համար: Նշանածս, ուրախացի՛ր քո Փեսայով, երջանկացրու Ինձ: Քեզ Ինձ կապիր հավիտենական կապերով, ապրիր Ի՛նձ և միմիայն Ինձ համար: Եղի՛ր Իմ Զոհը, եղի՛ր Իմ Թիրախը, եղի՛ր Իմ Ուռկանը: Արարա՛ծ, դու սիրո՞ւմ ես Ինձ:

Ես Քեզ ինչպես կարող եմ չսիրել, Աստվա՛ծ իմ, սիրում եմ:

Ասա՛ այդ, ասա այդ շատ անգամ, թող որ ես լսեմ. ես սիրում եմ այդ լսել: Հազար անգամ ասա դա օրվա մեջ և ամեն առավոտ, երբ Իմ մեջ հանդչես, կանգնիր Իմ դիմաց և ասա Ինձ. «Իմ Տեր, ես սիրում եմ Քեզ»:

Հիսո՛ւս, ես սիրում եմ Քեզ, բայց Դու ինչո՞ւ այդպես խստացար[1]:

(Միգուցե արածս բավարար չէ):

Ինձ սխալ մի՛ հասկացիր: Այդ Սերն է Խոսում, այդ Սիրո ցանկությունները են, այդ Սիրո Բոցն է, այդ Սիրո խանդոտ Սերն է: Ես մրցակիցներ չեմ կարող հանդուրժել: Ապավինի՛ր քո Սուրբ Հորը, Փեսային, Ընկերակցին և Աստծուն: Ե՛կ, արի հանդչենք մեկս մյուսի մեջ: Սիրի՛ր Ինձ աղջիկս, նույնպիսի խանդոտ մի սիրով[2]:

Մայիսի 6, 1987

(Իմ պատգամն է ուղղված Աստծուն, նախ քան Իր 1987 թվի մայիսի6-ի պատգամը: -

Ես սովորում եմ, թե Աստված ինչ նկատի ունի ամբողջական հանձնում ասելով: Լինել անջատված. թողնել ամեն ինչ և հետևել Նրան: Նրա խոսքերը խորհրդանշական են, դրանք նյութական չեն: Ես հանձնվել եմ՝ սիրելով Նրան ամեն բանից առաջ ու ամեն բանից վեր, և ցանկանում եմ, որ Նա ինձ օգտագործի: Կտրված լինել, այո՛, այն աստիճան, որ մարմնիցս անջատված լինեմ, այսինքն գիտակցել, որ ես հոգի ունեմ, որն ուզում է անջատվել մարմնից՝ Նրան միանալու և միմիայն Նրան հետևելու համար:

- Տառապել, այո՛, տառապել, որովհետև Նրա հետ չեմ, որովհետև տակավին նյութական մարմնի մեջ եմ երկրի վրա և այստեղ այրի լինելու զգացումն ունեմ: Տառապել՝ գիտենալով, որ ես պետք է հետևեմ ամենօրյա կյանքին, նյութական կյանքին: Դա իսկապես մի բեռ է՝ մշտապես շփվել տեխնիկայի ու գիտության հետ, անհավատների, կասկածամիտների հետ, մարդկանց հետ, որոնք կարծում են, որ դու խելքդ կորցնում ես տարիքի պատճառով: Տառապել, որ պիտի հետևեմ իրենց ծրագրերին: Տառապել՝ թաքցնելով

[1] Այսինքն՝ պահանջում էր: Հիսուս պահանջում էր, իր ջերմ սիրուց դրդված:
[2] *Մրցակից* բառը նշանակում է ամեն ինչ, որ մենք Աստծուց ԱՌԱՋ ենք դասում: Մենք պետք է առաջինը դասենք Աստծուն:

զգացումներս, այն դեպքում, երբ միայն ու միայն զգում եմ, որ ուզում եմ անջատվել աշխարհից և մենակ լինել Աստծո հետ: Միայն Ինքը և ես, և ուրիշ ոչ մեկը, և ոչ մի բան իմ շուրջը, որ ինձ կարող է շեղել...

Անգամ սա, որ գրեցի, Աստծուց խնդրեցի, որ օգնի ինձ զգացումներս գրի առնելու, քանի որ ինքս անկարող եմ արտահայտվելու: Եվ Նա օգնեց ինձ՝ ճիշտ բառերը շշնջալով իմ ականջին: Նա ուզում է, որ մնամ մարդկության մեջ՝ մի խաչ ևս կրելու համար: Մարմինս ցավում է):

Իմը նույնպես. այն ամենը ինչ դու զգում ես, ես էլ եմ զգում: Աղջիկս, օրհնի՛ր Ինձ:

Օրհնյալ լինես, իմ սիրելի Աստված:

(Ավելի ուշ, երբ դեռ զգում էի անէացած Աստծո մեջ):

Ես սիրում եմ քեզ, հասկանո՞ւմ ես: Սերը տանջում է, սերը կապում է, սերը մեծ հավատարմություն է տալիս, սերը զոհաբերում է իրեն առանց սահմանափակման:

Վասո՛ւլա, ժամերը թռչում են, քո ժամանակը մոտ է: Նվիրաբերի՛ր քեզ, աճի՛ր համեստության մեջ, ճաշակի՛ր Իմ ձեռքից, սիրելիս: Ես պիտի արձակեմ քո չղթաները և քո հոգին շատ շուտով դեպի Ինձ պիտի թռչի:

Ես սիրում եմ Քեզ, Աստված իմ...

Մայիսի 7, 1987

Ես սիրում եմ քեզ: Այդ ես եմ, քո Փեսան:

Ծաղիկս, Ես պիտի մաքրագործեմ քեզ, Ես պիտի հագեցնեմ քեզ՝ Իմ Լույսով կենդանացնելով և Իմ Զորությամբ կերակրելով քեզ: Վասո՛ւլա, Ես պիտի պատվեմ քեզ՝ թույլ տալով, որ դու կրես Իմ փշե պսակը:

Հիսո՛ւս, Դու ինչպե՞ս կարող ես ինձ վստահել:

Ես սիրում եմ քեզ: Կրելով Իմ Պսակը, դու կհասկանաս այն ծաղրն ու ծանակը, որ Ես ստանում եմ, քանզի շուտով դու նույնպես ծաղրի պիտի ենթարկվես: Մի՛ մոռացիր, Ես պիտի տանջվեմ այնքան, որքան որ դու պիտի տանջվես, որովհետև Ես քո մեջ եմ և դու Իմ մեջ: Ես Ինքս ինձ միացրել եմ քեզ: Մենք մեկ միասնություն ենք: Այժմ ե՛կ, սիրելիս, մենք պիտի շարունակենք Իմ Գործերը: Ես քեզ բավարար Զորություն պիտի տամ մինչև վերջ:

(Ես ավելի ուշ հասկացա, որ Հիսուսն այս պատգամով պատրաստում էր ինձ: Ես պիտի ծաղրվեի և ծիծաղի առարկա պիտի դառնայի, բայց գոնե Նա ինձ հետ է: Մենք միասին կկիսենք ծաղրանքը: Երբ ես աշխարհ նետվեի իմ առաքելության համար, ծաղրանքներն ու հալածանքները սկսվելու էին):

Հիսո՛ւս, գիտե՞ս, որ ես նույնիսկ չհասցրի հարյուր անգամ ասել «Ես սիրում եմ Քեզ», իսկ Դու խնդրեցիր ինձ հազար անգամ ասել այն:

Վասուլա, ա՜հ, Վասուլա, դու չգիտե՞ս, որ ամեն ինչ, որն արվում է սիրով, Ինձ ասում է՝ «Ես սիրում եմ քեզ»: Դու քո սերը Ինձ ցույց ես տալիս այդ ձևով ևս:

Ամեն բան, ինչ անում ես քո կյանքում, դու անում ես Ինձ համար:

Ե՛կ, զարդարվի՛ր, ծաղկի՛ր, շողա՛, բուրի՛ր: Զարդարիր Ինձ սիրո պսակով: Թող քո ամեն մի թերթիկը Իմ փշե պսակից մի փշի փոխարինի: Որքան ավելի ծաղկաթերթեր, այնքան ավելի քիչ փշեր կծակեն Ինձ: Ցույց տուր նրանց Իմ կոչը:

Քո օգնությամբ, ես ցույց եմ տալիս նրանց: Ես շատ բան չեմ կարող անել:

Սիրի՛ր Ինձ և բժշկի՛ր Իմ Վերքերը. թող որ Ինձ համար թափված արցունքները բալասան լինեն Իմ Վերքերին: Վասո՛ւլա, պսակներ չեն սարքվում միայն թաղումների համար: Դրանք արվում են նույնպես հարսերի համար: Թույլ տուր Ինձ Օգոստոսին պսակ դնել քո գլխին:

Մայիսի 8, 1987

Հիսո՛ւս, այսօր ես շատ գործ ունեմ տանը, բայց Քեզնից երկու խոսք լսելը ինձ կուրախացնի:

Միայն երկո՞ւ. «Սիրիր Ինձ»:

Մայիսի 9, 1987

Երբ դեռ նոր էի դիտել «Ֆաթիմայի հրաշքը» վավերագրական ֆիլմը, ես մտածում էի, թե այդ հրաշքի դեպքում անգամ շատ մարդիկ թերահավատ էին՝ ամեն տեսակ բաներ ասելով: Ինչպես օրինակ՝ «զանգվածային հիպնոս», և այլն: Հին ժամանակներում այս տեսակ հրաշքին կհավատային և կգրեին Սուրբ Գրքի մեջ, բայց այս օրերին, տարիներ պիտի անցնեն, մինչև որ ընդունվեն: Ես վախենում եմ, որ այս պատգամը նրանք չեն համարելու որ Քեզնից է, քանի որ նրանում չկա նյութական ապացույց կամ կանխահայտնում: Բարձր հեղինակության տեր յուրաքանչյուր անձ, եթե նույնիսկ այդքան հեռու գնա, նա ուշադրություն չի դարձնի Քո կոչին, և ես գիտեմ, որ Քո Համբերության Բաժակը լցված է հիմա: Աշխարհը Քեզ շատ է վիրավորում: Նրանք չեն լսի:

Կա՞ ավելի բարձր հեղինակություն, քան քո Աստվածը:

Ո՛չ, Աստված իմ, ոչ մեկը չկա, բայց եթե նրանք չեն լսո՞ւմ: Մի քանիսը կարող են մտածել, որ դա քարոզչություն է եկեղեցու համար: Նկատի ունեմ նրանց, ովքեր բարձր հեղինակություն ունեն և հակաեկեղեցական են:

Նրանք կարող են մտածել, որ այս բոլորը շինծու բաներ են, սարքված Եկեղեցու կողմից:

Վասո՛ւլա, ես Ամենաբարձրյալն եմ և ողջ հեղինակությունը գալու է Ինձնից:

Իսկ եթե նրանք չեն հավատո՞ւմ:

Եթե համառությունից դրդված նրանք չլսեն, ես չեմ գրի, թե ինչ կպատահի: Փոքրի՛կ, դու վախենո՞ւմ ես Ինձնից:

(Հավանաբար Աստված իմ մեջ մի վախ զգաց, որն անցավ մարմնիս միջով նույն այն ժամանակ, երբ Նա գրում էր «պատահի» բառը, և ես տխուր մի ցավ զգացի Աստծո Սրտում):

Այո՛, վախենում եմ Քո բարկությունից:

Ես կհանդուրժեմ և կներեմ ձեր մեղքերը, բայց ձեր ատելությունն Իմ հանդեպ ես չեմ հանդուրժի: Ես ձեր Արարիչն եմ, և ձեր շունչը Ինձնից է գալիս: Ես Իմ ամբողջ արարչությունը պահում եմ Իմ Ձեռքերում:
Ես ատում եմ հեթանոսությունը[1]:
Վասո՛ւլա, թող որ քեզ առաջնորդեմ: Ե՛կ զավակս, հանգչիր Իմ մեջ:

(Ավելի ուշ)

Քո հոգոցը, նշանած Իմ, Ինձ համար սիրո միլիոն բառ արժե: Այո՛, ես խոսում եմ այն հոգոցի մասին, որ դու Ինձ ուղղեցիր այս առավոտ:

(Ճիշտ է, այս առավոտ ես հատկապես սիրով էի մտածում Հիսուսի մասին: Ես այնքան էի ուզում Նրան ասել այդ մասին, բայց ճիշտ բառեր չէի գտնում: Ես միայն հոգոց հանեցի, բայց թվում է, Նա իմ հոգոցից շատ բան հասկացավ):

Վասո՛ւլա, կուրորեն սիրիր Ինձ և թող քեզ գործածեմ ինչպես ուզում եմ: Եղիր բացարձակ ոչնչություն, այնպես որ, լինելով ոչինչ, ես կլինեմ ամեն ինչ, և դրանով կավարտեմ Իմ Գործերը: Քո արարումը մի հրճվանք էր Ինձ համար:

Աստվա՛ծ իմ, վախենում եմ հիասթափեցնեմ Քեզ՝ անհավատարիմ լինելով: Անգամ համոզված չեմ, որ երբևէ Քեզ հավատարիմ եղել եմ: Այնպես որ, ես ինչ եմ խոսում հավատարիմ մնալու մասին, եթե վստահ չեմ, թե երբևէ հավատարիմ եղել եմ:

Հավիտենականությունից ի վեր ես գիտեի, որ դու տկար և թշվառ ես, բայց ես սիրում եմ քեզ: Ես միջոցներ եմ ձեռք բերել, որ դու հավատարիմ մնաս Ինձ: Դու կարծում ես, որ ես այդ բոլորը ամենևին

[1] անաստվածությունը

չգիտեի՞: Ես գիտեի ամեն ինչ, և հենց դրա համար էլ Ես քեզ ընտրեցի: Ես ասացի քեզ, որ քո անասելի թուլությունն ու խեղճությունը գրավում են Ինձ: Ե՛կ, այս առաջնորդությունը կվերահաստատի Իմ պատիվը: Ես ուրախանում եմ, թե ինչպես է այն բժշկելու ձեր անարդարությունները:

Վասո՛ւլա, պսակի՛ր Ինձ քնքուշ խոսքերով:

Տե՛ր, իմ խոսքերը ինչ արժեք կարող է ունենալ այսպիսի մի Վեհասքանչ Ներկայության համար:

Ամեն մի քնքուշ և սիրալիր խոսք, որն անգամ քեզնից է գալիս, Իմ Ներկայությամբ դառնում է աստվածային. դա Իմ ականջներին հիանալի է հնչում:

Երբեք չհոգնես գրելուց, Իմ փոքրիկ գործիք: Ամեն ինչ, որ դու անում ես, գալիս է Ինձնից: Ես ընդհատում եմ քեզ Իմ Ուժով ու կանչում եմ, երբ ցանկանում եմ: Ես սիրում եմ քեզ, դու էլ սիրիր քո Տիրոջը:

(Ես նորից զգացի, որ Իր Մեծությունը ինձ ամբողջովին ոչնչացրեց: դա նման էր խոր օվկիանոսում ընկղմումի: Հրաշալի մի զգացում՝ ցանկանալ գրավված լինել Աստծուց և ուրախ լինել, որ այդպես է):

Մայիսի 10, 1987

Վասո՛ւլա, հիշո՞ւմ ես, երբ Ես Իմ ժողովրդին կերակրեցի մանանայով: Ես այն նետեցի Դրախտից. այդ գալիս էր Դրախտի Իմ պաշարներից: Դու գիտե՞ս, որ այդ Ես էի, որ բարձրացրի ծովերը, որպեսզի Իմ ժողովուրդը կարողանար անցնել դեպի Սինայի անապատը:

Այո՛, Տեր:

Ես Ամենակարող եմ, փոքրիկս: Ես այն Մեկն եմ, որ քեզ հետ միասնաբար հաստատում է այս առաջնորդությունը՝ շատերին կերակրելու համար: Վասո՛ւլա, Ես քեզ հետ ամբողջ ժամանակ կապի մեջ եմ եղել: Տեսնո՞ւմ ես:

Աստվա՛ծ իմ, իսկ ես դեռ վախենում եմ, որ սա իմ ենթագիտակցությամբ է արվում...

Թույլ տուր իսկույն Քեզ ասել, որ դու երբեք միայնակ չէիր կարողանա անել այս ամբողջ գործը: Դու հավատո՞ւմ ես հրաշքների:

Այո՛, հավատում եմ:

Ուրեմն սա մի հրաշք համարիր: Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Հայր: Ինչպե՞ս կարող եմ բացատրել ժողովրդին, երբ նրանք ինձ հարցնում են, թե Քեզ ինչպես եմ տեսնում: Ես զգում եմ Քո Ներկայությունը, և դա երևակայություն չէ:

Ասա՛ նրանց, որ դու տեսնում ես Ինձ քո հոգու աչքերով:

Հիսո՛ւս, երբեմն կարծում եմ, թե ես երևակայում եմ Քեզ և ուզում եմ աչքերս Քեզնից հեռու շրջել, ինքս ինձ համոզելու, որ այդ Դու չես...

Դու այդ անելով, վիրավորում ես Ինձ, Վասուլա: Ես տվել եմ քեզ այս շնորհը.[1] ընդունի՛ր Իմ պարգևը, ընդունի՛ր ինչ որ տալիս եմ:

Տե՛ր, երբեմն, և հատկապես Բանգլադեշում, ես տոթից ուժասպառ էի լինում. կուզեի ավելի շատ գործ արած լինեի: Դրա համար, երբեմն ուզում եմ, որ ամիոբայի նման մի քանի մասերի բաժանված լինեմ:

Ես քեզ բավարար ուժ եմ տալիս՝ ավարտելու համար Իմ Գործերը: Ղուկասը *(Ավետարանիչը)* մի անգամ ասաց. «Ես երբեք ուժաթափ չեմ լինի, քանի որ աշխատում եմ Տիրոջ համար, որովհետև, Տերն Ինքը՝ իմ ուժն է»: Փոքրիկս, Ես քեզ առաջնորդել եմ, ինչպես մի հայր կառաջնորդեր իր փոքրիկ երեխային՝ ձեռքից բռնած դեպի դպրոց տանելիս: Գնահատիր, ինչ որ վաստակել ես Ինձ հետ:

Ես իսկապես շատ բան եմ վաստակել: Դու ինձ շատ բան սովորեցրիր, քանի որ ես երբեք կրոնով չէի զբաղվել, և ոչ էլ տանը Աստվածաշունչ էի ունեցել դպրոցական տարիներից սկսած, և եկեղեցում չէի եղել իմ առաջին որդու կնունքից հետո (15 տարի): Ոչ թե հիմա ես ինձ մի գիտնական եմ համարում, բայց, առնվազն, Դու սովորեցրիր ինձ, թե ով ես Դու, թե Դու ինչքան ես մեզ սիրում և թե Քեզ ինչպես պետք է սիրել:

Ես տվել եմ քեզ Իմ սեփական այգու պտուղը: Ես ցանկանում եմ քո պահեստները լցնել Իմ պտղով:

(Ես Նրան մի բան հարցրեցի, որը չեմ ուզում գրել):

Գիտեմ, Վասուլա, թող դա լինի այնպես, ինչպես Ես եմ ցանկանում:

(Ես լայն ժպտացի: Հաճելի էր, երբ այս ձևով փոքրիկ խոսակցություն էի ունենում Հիսուսի հետ: Ես Նրա հետ այնպես էի զգում, ինչպես կզգայի իմ լավ ընկերներիցս մեկի հետ խոսելիս: Ես չէի կարողանում զսպել իմ ժպիտը: Ես ուրախ էի և գրեթե ծիծաղում էի):

Ես էլ եմ ուրախ:

(Այո՛, Նա ուրախ էր. դա սքանչելի էր):

Վասո՛ւլա, դու գիտե՞ս, թե Ես որքան եմ հրճվում և հաճույք ստանում այս պահերից, այս վայրկյաններին, երբ դու Ինձ հետ խոսում ես, որպես մի ընկերակցի: Վասո՛ւլա, մենք դեռ գործ ունենք կատարելու, օրհնյալ լինես. Ես քեզ Իմ Ներկայության համար նշան կտամ, սիրելիս:

[1] Մտապատկեր ունենալ մտքով, կամ երևակայությամբ:

Հիսո՛ւս, ի՞նչ նշան, ուզում եմ ասել, որտե՞ղ:

Քո տանը: Ես կապացուցեմ քեզ, որ ներկա եմ:

Սիրում եմ Քեզ, Հիսուս, երանի կարողանայի գոհացնել Քեզ:

Խորա՛ն, շարունակիր վերցնել Ինձնից՝ վառ պահելով քո մեջ Իմ հրավառ բոցը:

Մայիսի 13, 1987

(Երեկ, մայիսի 12-ի երեկոյան, մինչ անցնում էի աստիճանների մոտով, ես կանգ առա խնկի ուժեղ բուրմունքից: Հոտը հասնում էր մինչև երկրորդ հարկ: Ես զարմացա: Գնացի հարցրի տղային, թե արդյոք նա ինչ-որ մի բա՞ն է վառել մժեղների համար: (Թեև, այն ամենևին այդ հոտի նման չէր, այլ եկեղեցու հոտ էր, մաքուր խնկի հոտ): Նա ասաց՝ ո՛չ: Ես դա մի կողմ թողեցի և զբաղվեցի ուրիշ բաներով: Մի ժամ հետո ուզեցի գնալ աշխատասենյակ, որ մատիտ վերցնեի, և այդ ժամանակ, երբ սենյակ էի մտնում, նորից խնկի հրաշալի բուրմունք զգացի, որն ինձ ամբողջովին ողողեց: Ես հեռացա այդտեղից, որպեսզի տեսնեմ, թե մի այլ տեղ բուրում է, թե ոչ: Ուրիշ ոչ մի տեղ չէր բուրում, բացի այն տեղից, ուր երկրորդ անգամ զգացի, և ուր այն կրկին պարուրեց ինձ):

Օ՛, սիրելիս, երբ ես քեզ պարուրեցի Իմ բուրմունքով, ես միաժամանակ օրհնեցի քեզ:

Օ՛հ, Հիսուս, այդ Դո՞ւ էիր:

Այո՛, դու զգացիր Իմ Ներկայությունը: Դա Իմ նշանն[1] էր. խնկի հոտը Ինձնից էր գալիս:

Եթե միայն այդ երեկո ես հաստատ գիտենայի...

Ես Իմ Ներկայության այլ նշաններ ևս կտամ քեզ, ծաղիկս, աչալուրջ եղիր:

Հիսո՛ւս, իմ Սեր,
իմ Շունչ, իմ Կյանք,
իմ Ուրախություն,
իմ Հոգոց, իմ Հանգստություն,
իմ Սուրբ Ընկերակից,
իմ Փրկիչ, իմ Տեսողություն,
իմ Ամեն ինչը,
ես սիրում եմ Քեզ:

[1] Մի օր առաջ Հիսուս կանխասացել էր, որ Նա Իր Ներկայության համար նշան է տալու:

Վասուլա, սիրի՛ր Ինձ ջերմորեն, անէացի՛ր Իմ Մարմնի մեջ, զարդարի՛ր Ինձ քնքուշ խոսքերով, սիրո խոսքերով: Թող Իմ ցավերը քչանան: Հանգստացրու Իմ Վերքերը սիրո բառերով:

(Այսօր, կարդալով Սուրբ Թերեզայի մասին, ես հայտնաբերեցի, որ բուրմունքներ գոյություն ունեն: Եթե դրանք սատանայից են, սարսափելի գարշահոտ են, ասում է նա: Տարօրինակ էր, որ սա կարծես մեկ ուրիշ ապացույց էր այսօր ինձ՝ ցույց տալու համար, որ խնկի հոտը գալիս էր Հիսուսից: Ես շատ ուրախ էի):

Մայիսի 14, 1987

(Ինչ ուրախություն էր այսօր կարդալ Սուրբ Թերեզայի կյանքը, որն ապրել է Ավիլայում և որը ունեցել է տեսիլքներ: Աչքս ընկավ դժոխքի մի տեսիլքի նկարագրության վրա, և ես շատ ուրախացա գտնելով, որ նրա նկարագրությունը համընկնում է դժոխքի իմ նկարագրությանը, որն Աստված ցույց տվեց ինձ: Նա բացատրում է այսպես. «մութ և նեղ պատերի մեջ ամփոփված: Գետինը կարծես լիքն էր ջրով, որը նման էր կեղտոտ, հրեշային գարշահոտ ցեխի... և այլն»: Այո՛, ամբողջապես նման էր քարանձավի, ցածր առաստաղով... Իմ նկարագրությունը 1987 թվի մարտի 7-ին էր):

Մայիսի 15, 1987

Ե՛կ, հանձնվիր, ես հրճվում եմ, երբ լսում եմ, որ հանձնվում ես, քանզի այդ ուրախացնում է Իմ Սիրտը, փոքրիկս: Խնդրի՛ր Ինձ, որ գործի դնեմ քեզ...

Հա՛յր, եթե կարող եմ որևէ օգուտ տալ Քեզ, ապա ուրեմն ինձ օգտագործիր:

Ես սիրում եմ քեզ: Ե՛կ, ուզո՞ւմ ես գրել:

Կգրեմ, եթե այդ Քո ցանկությունն է:

Գրի՛ր ուրեմն:

Թող հայտնի դառնա, որ ես՝ Յահվեն, կամենում եմ լուսավորել քեզ: Քո միակ ապավենը Ես եմ: Իմ Սիրտը Ներողամտության և Ողորմության մի վիհ է: Փոքրիկս, ինչպես որ Ես լուսավորել եմ քեզ, այնպես էլ պիտի լուսավորեմ նրանց, ովքեր դեպի Ինձ կդառնան:

– Վասուլա ե՛կ,[1] ավելի մոտ եղիր Ինձ, դու կստանա՞ս Ինձ...

(Իմ կողմից լռություն էր):

Ինձ մի վշտացրու...

[1] Հիսուս Հիմա խոսում է ինձ հետ:

(Լռություն):

Ինձ հետ եղիր, մաքրագործի՛ր քեզ, սիրի՛ր Ինձ...

(Լռություն):

Մի՛ վշտացրու Ինձ, սիրելիս...

(Լռություն):

Դու Ինձ կստանա՞ս... Ինձ ուրախությամբ ողողիր և Ինձ հետ եղիր: Սիրի՛ր Ինձ, Ես սիրում եմ քեզ: Ավելի հաճախ արի Ինձ մոտ, ավելի հաճախ ստացիր Ինձ: Ես սիրում եմ քեզ: Դու կաղոթե՞ս Ինձ հետ[1]: Մի՛ վիրավորիր Ինձ:

(Ես համաձայնվեցի):

Սիրելի Հայր,
Մաքրի՛ր ինձ Որդուդ Արյունով,
Հա՛յր, մաքրիր ինձ
Քո Որդու Մարմնով,
Սիրելի Հայր,
Հեռու պահիր չար ոգին,
Որ փորձում է ինձ հիմա: Ամեն:

(Մինչ Հիսուս գրում էր, Ես դա ասում էի:

Հանկարծ ես հասկացա, որ Հիսուսի աղոթքը կարծես արթնացրեց ինձ: Ես հասկացա, թե ինչի համար էր այս աղոթքը: Հիսուսն ինձ կանչում էր Սուրբ Հաղորդության, բայց ես ձևացնում էի, թե չեմ հասկանում: Կարծես անգամ ուզում էի պատասխանել՝ «ո՛չ»: Ես վիրավորում էի Նրան և դեռ դժկամում էի պատասխանել: Ես ստիպեցի Նրան, որ դա որոշակի ասվի: Հիսուս շտապեց ինձ փրկելու: Ես զգացի, որ գրեթե ընկնում եմ: Նրա աղոթքից անմիջապես հետո (Նա ինձ հետ միասին աղոթեց), ես գլխի ընկա, որ չար ոգին փորձում էր ինձ: Տարօրինակ զգացում ունեցա, երբ զգացի, որ չար ոգին բաց թողեց ինձ, երբ ասացի հետևյալ բառերը. «Սիրելի Հայր, հեռու պահիր չար ոգին, որ փորձում է ինձ հիմա»:

Հիսուսն այնքան ուժ էր գործադրել ձեռքիս վրա, որ իմ ձեռքը ծանրացել էր, բայց, միևնույն ժամանակ, ես զգացի Նրա վիթխարի, ամենազոր ուժը, որն ինձ պահում էր մի զորեղ Հսկայի նման: Աղոթքից հետո ես կարծես արթնացա):

Ինձ ավելի մոտեցիր, սրբագործի՛ր քեզ: Ես սիրում եմ քեզ, և Ես քեզ կպահեմ անկումներից. դու երբեք չպիտի կորչես: Ծաղիկը, իր գեղեցկությունը պահելու համար, կարիք ունի ջրվելու և պարարտացվելու: Ես քո Ջերմեռանդ Պահապանն եմ:

Ես սիրում եմ քեզ:

[1] Այստեղ քիչ էր մնում ասեի. Օ՜ ո՛չ, ո՛չ նորից:

Ես էլ Քեզ եմ սիրում:

(Հիսուս տեսել էր, որ չար ոգին սեղմում էր ինձ: Ես չէի հասկացել դա: Երբ չար ոգին փորձում էր, ես ինձ կարծես հիմարացած էի զգում: Հիսուս շատ արագ ազատեց ինձ: Եվ, երբ միայն չար ոգու սեղմումից ազատվեցի, հասկացա, որ ես ինչքան մոտ էի անկման: Չեմ կարող հավատալ, թե ինչ պատահեց):

Մայիսի 16, 1987

(Անցյալ գիշեր, ճաշարանից վերադառնալուց հետո, ես աստիճաններով բարձրացա վերև և կրկին խնկի հիանալի մի բուրմունք զգացի: Ես հասկացա):

Վասո՛ւլա, երբ խնկի հոտ զգաս, այդ Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը: Ես ուզում եմ, որ դու զգաս Իմ Ներկայությունը: Վասուլա, Ես քեզ սիրում եմ խենթի նման և չափից ավելի: Ավա՜ղ, այս Սերը, որը հորդում է Իմ Սրտից դուրս, այս կրակոտ Սիրո այրող Բոցը, այնքան քիչ է հասկացված, այնքան քչերն են գալիս ստանալու Դրանից... այնքան քչերը...

Հիսո՛ւս, շատ մարդիկ չգիտեն, թե Քեզ ինչպես մոտենան: Ես այնքան վստահ եմ դրանում:

Նրանք կարող են գալ և խոսել Ինձ հետ. Ես լսում եմ նրանց. Ես ժամերով կարող եմ հաճույք ստանալ որևէ մի զրույցից: Դա Ինձ այնքան ուրախություն է պատճառում, երբ նրանք Ինձ համարում են իրենց ընկերը:

Անցյալ գիշեր մի մարդ ինձ ասաց, որ բոլոր կանայք ցանկանում են լինել Մագդալինացու նման:

Ո՛չ, ո՛չ բոլորը:

Դեհ՛, նրանք, ովքեր սիրում են Քեզ, հավանաբար ցանկանում են:

Ես էլ եմ ցանկանում:

Հիսո՛ւս, կարծում եմ, մենք պիտի շտապենք:

Դեպի ո՞ւր:

Ներքևի հարկը, փուռը պիտի ստուգեմ[1]:

Դեհ, ե՛կ, ուրեմն, գնանք:

[1] Ես մոռացել էի փուռն անջատելու:

Հիսո՛ւս, մինչ Քո ինձ մոտենալը, ես Քո մասին լսել էի որպես մի առասպել: Ես երբեք չէի պատկերացնում, թե Դու որքան ԻՐԱԿԱՆ ես: Դու այնքան հեռու էիր թվում իմ աչքում, ինչպես գրքի մեջ մի պատմություն:

Գիտեմ, Վասուլա, գիտեմ: Շատերի համար ես դեռ մի առասպել եմ:

Հաջորդ անգամ, երբ մենք հանդիպենք, գտի՛ր Ինձ Գեթսեմանիում: Ես ցույց կտամ քեզ Իմ տառապանքները, Իմ տանջանքները և այդ գիշերվա Իմ երկյուղները: Ե՛կ, թող որ Ես հանգչեմ քո մեջ, աղջիկս:

(Հաջորդ օրը)

Ե՛կ, գտիր Ինձ, ուր որ ես քեզ ասացի:

Օ՜, Գեթսեմանի, ի՞նչ ունես երևան հանելու, եթե ոչ՝ միայն երկյուղ, տառապանք, դավաճանություն և լքում: Գեթսեմանի՛, դու մարդկանց զրկեցիր արիությունից. դու քո անշարժ օդում առհավետ առկախ թողեցիր Իմ տագնապները:

Գեթսեմանի՛, ի՞նչ ունես ազդարարելու, որ չազդարարվեց: Սրբության անդորրում դու ականատես եղար քո Աստծո մատնությանը, դու դարձար Իմ վկան:

Ժամը հասել էր, Սուրբ Գրվածքները պիտի կատարվեին:

Աղջի՛կս, Ես գիտեմ, որ թեպետ շատ հոգիներ Ինձ առասպել չեն համարում, սակայն կարծում են, թե Ես գոյություն եմ ունեցել միայն անցյալում: Շատերի համար, Ես սոսկ անցողիկ մի ստվեր եմ՝ արդեն խավարած ժամանակի և դարերի հոլովույթի մեջ: Շատ քչերն են գիտակցում, որ Ես մարմնով ապրել եմ երկրի վրա և որ այժմ էլ ձեզ հետ եմ:

Ես եմ Ամենը, այն ինչ եղել է, և այն ինչ լինելու է: Ես գիտեմ նրանց երկյուղը, Ես գիտեմ նրանց տառապանքը, Ես գիտեմ նրանց տկարությունները. <u>մի՞թե Ես Գեթսեմանիում ականատես չեղա բոլոր այդ տկարություններին</u>:

Աղջի՛կս, երբ Սերն աղոթում էր Գեթսեմանիում, հազարավոր դևեր սոսկացին. նրանք երկյուղած փախուստ տվին, ժամը հասել էր. Սերը փառավորում էր Սիրուն:

Օ՜, Գեթսեմանի՛, վկա՝ Մատնվածի, վկա՝ Լքյալի. ելի՛ր, վկայի՛ր և հաստատի՛ր: Աղջի՛կս, Հուդան Ինձ դավաճանեց, բայց քանի՜-քանիսը Հուդայի պես դեռ շարունակում են Ինձ դավաճանել: Ես այդ պահին արդեն գիտեի, որ նրա համբույրը տարածվելու է շատերի մեջ, և եկող սերունդների կողմից այդ նույն համբույրը կրկին ու կրկին տրվելու է Ինձ՝ նորոգելով վիշտս, պատռելով Սիրտս:

Վասո՛ւլա, ե՛կ, թող մխիթարվեմ, թող հանգրվանեմ քո սրտում

(Հաջորդ օրը)

Վասո՛ւլա, կգրե՞ս:

Այո՛, Հիսուս, եթե դա Քո ցանկությունն է:

Սիրի՛ր Ինձ, աղջիկս, Գեթսեմանիի Իմ չարչարանքների մեջ: Ես խաբվեցի Իմ յուրայիններից մեկի կողմից, Իմ սիրելիներից մեկի կողմից: Եվ մինչ այսօր Ես դեռ վիրավորանքներ եմ ստանում՝ մտաբերելով Իմ անցյալի տառապանքները: Իմ Սիրտը ուռել է ու լցվել դառնությամբ:

(Հանկարծակի ես դժվարություններ ունեցա և վստահ չէի, որ կարող եմ շարունակել):

Հիսո՞ւս:

Ես եմ:
Փոքրիկս, գրի՛ր: Իմ տառապանքի քրտինքը դուրս էր թափվում, ինչպես արյան մեծ կաթիլներ:

(Հանկարծ մտածեցի այն մասին, երբ ես գրեթե գայթակղվեցի չար ոգու կողմից... և ամաչեցի):

Թուլությունը գրավում է Ինձ, քանի որ Ես քեզ կարող եմ տալ Իմ Զորությունը: Ե՛կ, բեր Ինձ քո սերը, հենվի՛ր Ինձ վրա:

(Ես հենվեցի):

Այո՛:

(Հիսուսն ուրախ էր):

Ահա, ճաչակի՛ր Ինձնից, լցրո՛ւ սիրտդ Իմ Սրտից, սիրի՛ր Ինձ, մտածի՛ր Իմ մասին, եղիր Ի՛մը, ամբողջովին Իմը: Պաշտի՛ր Ինձ և միայն Ինձ: Ես կանչում եմ, որ Ինձ ստանաս, այո՛, փոքրիկ ճերմակ Նշխարի մեջ... ե՛կ և ըմպի՛ր Ինձ, մաքրվիր: Ես սիրում եմ քեզ և Ես ուզում եմ վստահ լինել, որ դու Ինձ կստանաս: Ինձ երբեք մի՛ մերժիր. տենչա՛ Ինձ և միմիայն Ինձ:
Ես կսպասեմ քեզ Իմ Տապանակում: Դու Ինձ կտեսնես քո հոգու աչքերով, ինչպես որ Ես սովորեցրել եմ քեզ:

Հիսո՛ւս, դա իմ մեղքն է, որ ընդհատեցի Քեզ: Դու ուզո՞ւմ ես շարունակել:

Այո՛, ուզում եմ: Լսի՛ր Ինձ: Հողը ներծծեց այդ կաթիլները, բայց այսօր հողն ավելի չոր է, քան երբևիցե և կարիք ունի ոռոգման: Այն խաղաղության է տենչում և ծարավի է սիրո:

(Հիսուս հանկարծակի կանգ առավ):

Մի՛ վշտացրու Ինձ. կուզեի՞ր Ինձ հետ աղոթել նորից. սիրի՛ր Ինձ Վասուլա: Աղոթի՛ր.

Օ՜, Հա՛յր, իրագործիր այն,

ինչ որ կատարվելու է:
Թող որ Քո Խոսքերը
ներթափանցեն,
օրհնե՛ն և մաքրագործե՛ն
սրտերը Քո զավակների:
Հա՛յր, արա այնպես,
ինչպես Քո Սիրտն է կամենում
և թող Քո կամքը լինի: Ամեն:

Դու դեռ ցանկանո՞ւմ ես գործել Ինձ համար:

Ես կշարունակեմ գործել Աստծո համար, եթե այդ Նրա կամքն է:

Դա Իմ կամքն է:

Ուրեմն ես կշարունակեմ աշխատել, բայց, այնուամենայնիվ, մի՛ մոռացիր Իմ անկարողությունը:

Ամբողջապես հենվի՛ր Ինձ վրա՝ քո Հիսուսի: Ես գիտեմ, թե որքան անօգնական ես դու: Ես ուզեցի սոսկ մի զավակ ունենալ, որն ամբողջապես կախյալ լինի Ինձնից:

Հիսո՞ւս:

Ես եմ:

Քո Գեթսեմանիի պատգամը ավարտվե՞ց:

Ո՛չ, ես պիտի շարունակեմ: Իմ զավակներին պետք է ուշքի բերել և ցույց տալ, որ ես նրանց մեջ եմ Իմ Պատգամով, որը ես օրհնել եմ: Նրանք Ինձ կտեսնեն ու կզգան: Շատերը կվերադառնան դեպի Ինձ՝ Նրա մոտ, Ով տենչում է Իր սիրելիներին:

Հիսո՛ւս, ես ինչպե՞ս կարող եմ որևէ բան անել:

Վասո՛ւլա, մի՞թե հայրը չի օգնի իր զավակին կտրել ու անցնել ճանապարհը, եթե նա իր օգնության կարիքն ունենա: Ուստի ես պիտի օգնեմ քեզ մինչև վերջ:

Ես չգիտեմ, ճի՞շտ եմ անում, թե սխալ՝ բաժանելով Քո պատգամը:

Ո՛չ, դու Իմ Հացն ես տալիս, ինչպես որ ես Այն տվել եմ քեզ: Իմ Հացը ձրի պետք է տրվի:

Մայիսի 17, 1987

(Ես կարդացի Սուրբ Միքայելի աղոթքը):

Կարդա՛ հաջորդը:

(Մի բանով մտահոգված, ես կարդացի Սուրբ Բեռնարդի աղոթքը (Սուրբ Մարիամին): Երբ իմ ընկերները պատգամները ընթերցեցին՝ կրկին սկսեցին մտածել Աստծո մասին: Ոմանք Աստծո կողմը շրջվեցին, ոմանք էլ հույսով ներշնչվեցին: Ցավոք սրտի, այնպես է պատահում, որ նրանք այդ մասին խանդավառված խոսում են մի քահանա ընկերոջ հետ, որը զգուշացնում է նրանց, որ չհավատան, որ դա Աստծուց է: Փաստորեն, ես հակացա, որ այն չորս քահանաներից երկուսը, որոնք ծանոթ էին գրություններին, վհատեցրին ինձ, իսկ մյուս երկուսը՝ խրախուսեցին: Այսուհանդերձ, ես կուզեի, որ նրանք, ովքեր վհատեցրին ինձ և մյուսներին, բոլոր պատգամները սկզբից մինչև վերջ կարդալուց հետո միայն որոշեին այդ: Եվ հետո, եթե դեռ այն կարծիքին էին, որ դրանք ոչնչություն են, նրանք պետք է ասեին, թե ինչու են ոչնչություն և բացատրեին այդ: Ինչպե՞ս կարող է մեկը կարծիք հայտնել առանց գրություններին հետևելու և միայն մեկ անգամ ինձ հետ քննարկելով այն):

Լցրո՛ւ սիրտդ Աստծո Բոցով: Ես սիրում եմ քեզ:

Սիրելի մայր, ես վախենում եմ, որ Աստծո պատգամը ոտնահարվի մարդկանց կողմից, որոնք նույնիսկ չեն հետևում և չեն կարդում այն:

Մի՛ վախեցիր զավակս:

Ես մտահոգված եմ:

Գիտեմ, դու կընդունե՞ս Հիսուսի Գործերը, Վասուլա:

Այո՛, կընդունեմ:

Վասո՛ւլա, Ես աղոթեցի քեզ համար, Agapi mou: Համբերատար եղիր, ապավինի՛ր Հիսուսին:

(Ես աղոթեցի Հիսուսին):

Ինձ ապավինիր:

Ես վախենում եմ, որ Քո պատգամը կոչնչացվի նրանց կողմից, ովքեր նույնիսկ չեն կարդացել դրանք:

Մի՛ վախեցիր, սիրի՛ր Ինձ, քո հոգին մաքրագործելը փառավորում է Ինձ: Արի գնանք. հիշի՛ր՝ մեզ, մենք... մի՛ վշտացիր:

(Երեկ Հիսուսն ինձ առաջնորդեց Կիրակնօրյա Պատարագին: Ես չեմ կարողանում ինչպես հարկն է հետևել Պատարագին, ինչպես մնացած ամեն ինչին, քանի որ ինձ երբեք չեն սովորեցրել երգերն ու արարողակարգը: Ես միշտ մի քայլ ետ եմ մյուսներից, բայց գիտեմ, որ Հիսուսն այնտեղ է և խոսում է ինձ հետ: Հաղորդությունը սփոփիչ է):

Մայիսի 18, 1987

(Ես ներկա գտնվեցի ժամը 6:30-ի Սուրբ Հաղորդությանը, ինչպես որ Հիսուս խնդրել էր ինձ: Հաղորդության միջոցին Հիսուս սկսեց խոսել ինձ հետ: Ես հացը ընդունեցի և իմ բերանում դա նման էր բզկտված մարմնի մի կտորի[1], որը պոկվել էր խարազանումից: Տարօրինակ է, թե երեկ և այսօր ես որքան տարբեր էի զգում: Թվում էր, թե Հիսուսն ինձ տարբեր զգացողություններ էր տալիս):

Հիսո՞ւս:

Ես եմ:

Սիրի՛ր Ինձ, մոտեցի՛ր Ինձ: Ամեն անգամ Ես քեզ տարբեր զգացողություններ պիտի տամ, երբ դու ինձ ընդունես: Վասուլա, Ես վշտանում եմ, երբ դու հեռանում ես Ինձնից:

(Դա ճիշտ է, երբեմն, երբ կասկածի «ալիքը» ծածկում է ինձ, ես մերժում եմ խոսել Նրա հետ կամ տեսնել Նրան, ինքս ինձ ասելով, որ Նա չէ, և ես խուսափում եմ Նրա պատկերից, խուսափում եմ խոսել Նրա հետ և խուսափում այն ամենից, որ Նա ուսուցանել է ինձ: Ես փորձում եմ ինձ համոզել, որ իմ երևակայությունը խաղեր է խաղում):

Դու Ինձ վշտացնում ես, սիրելիս: Դու վիրավորում ես Ինձ, երբ դու վանում ես Ինձ և Ինձնից այդքան հեռու ես մնում: Հասկացի՛ր, որ սատանան է այս բոլորի ետևում: Նա ճարահատվում է և ուզում է հավատաս, որ դու միայն երևակայում ես այն բոլոր շնորհների մասին, որոնք Ես տվել եմ քեզ: Նա ուզում է, որ դու մոռանաս Իմ բոլոր Երկնային ուսուցումները: Նա ուզում է քեզ ետ քաշել դեպ իրեն:

Երբ դու այդքան հեռանում ես Ինձնից, Ես վախենում եմ, Ես վախենում եմ քեզ համար: Երբ հովիվը տեսնում է իր հոտից մեկը թափառում է հեռվում, մի՞թե նա հանգիստ կնստի: Բարի հովիվը կշտապի դեպի նա, կվերցնի նրան և ետ կբերի:

Երբ Ես տեսնում եմ, որ դու հեռվում դեգերում ես, Ես չեմ սպասի: Ես կշտապեմ դեպի քեզ և կբռնեմ քեզ: Ես քեզ Ինձ մոտ կբերեմ: Փոքրի՛կս, երբ դու մրսես, Ես քեզ Իմ թիկնոցով կծածկեմ, Ես կկերակրեմ քեզ, կբարձրացնեմ քեզ Իմ Սրտի մոտ: Ես քեզ համար ի՞նչ չեմ անի:

Հիսո՞ւս:

[1] Հիսուսն ինձ ցույց էր տալիս, որ Սուրբ Հաղորդությունը, որը մենք ստանում ենք, դա սովորական հաց չէ, այլ Քրիստոսի իսկական Մարմինն է:

Ես եմ:

Ինչո՞ւ այս բոլոր շնորհները ինձ տվեցիր: Ինչո՞ւ:

Ինձ ազատ թող տալու նրան՝ ում որ կամենում եմ:

Բայց ես չեմ ուզում տարբեր լինել մյուսներից:

Վասո՛ւլա, դու պիտի ընդունես Ինձ, թող որ քեզ գործածեմ: Ձեմ ասե՞լ, որ քեզ ազատելու եմ:

Ես չեմ հասկանում:

Ես ցանկանում եմ շատ հոգիների ազատել իրենց շղթաներից, չարի շղթաներից: Ես քեզ որպես գործիք եմ օգտագործում: Սխալ չհասկանաս Իմ Գործերը: Իմ կոչը միայն քեզ համար չէ: Խաղաղության և Սիրո Իմ կոչը ամբողջ մարդկության համար է:

Այո՛, Տեր, բայց ես մի փոքր անհարմար եմ զգում, երբ ընկերներս իմանում են այս մասին: Այսինքն, ես անհարմար եմ զգում, երբ մի քանիսը նայում են ինձ և ասում, որ դու «արտոնյալ» ես: Ես ինձ սարսափելի վատ եմ զգում:

Աղջիկս, Քեզ սարսափելի զգա, թշվառությանդ պատճառով ընտրված լինելու համար: Ես քեզ չեմ ընտրել քո արժանիքների համար: Ես արդեն քեզ ասել եմ, որ դու ոչ մի արժանիք չունես և ինչ որ ասվում է Տիրոջ բերանով՝ միայն ու միայն ճշմարտություն է: Հաճախ եկ և թողություն խնդրիր Ինձնից: Հիշի՛ր, Ես քեզ ավելի չեմ նախընտրում, քան Իմ մյուս զավակներին:

Գիտե՛մ, Հիսուս, ես գիտեմ դա, և դրա համար ամաչում եմ, որ Դու տալիս ես ինձ այս շնորհը՝ ցանկացածս պահին Քեզ կանչելու:

Վասո՛ւլա, Վասո՛ւլա, Ես տալիս եմ անգամ ամենաթշվառին: Թող քո ընկերները տեսնեն, որ Իմ Սիրտը Ողորմության և Ներողամտության մի վիհ է: Թող նրանք տեսնեն, որ Ես բարձրացնում եմ անգամ մեռածներին: Թող նրանք տեսնեն, որ Ես սիրում եմ անգամ նրանց, ովքեր հերքում են Ինձ:

Հիսո՞ւս:

Ես եմ, սիրելիս:

Ես չգիտեմ ինչ ասեմ:

Ասա՛, որ սիրում ես Ինձ:

Ես սիրում եմ Քեզ, և Դու այդ գիտես:

Ես քեզ սիրում եմ աղջիկս, անկախ քո թշվառությունից: Հիշի՛ր, խոսի՛ր Ինձ հետ: Ես քո Փեսան եմ, կիսվի՛ր Ինձ հետ, ժպտա՛ Ինձ, երբ Ինձ տեսնում ես:

Այո՛, Հիսուս, ես այնպես եմ զգում, որ իմ ներկայությունն իսկ վիրավորում է Քեզ: Եվ ես գիտեմ, որ ես կրկնում եմ ինքս ինձ: Դու ինչպե՞ս ես ինձ հանդուրժում:

Ես սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում:

Զգա՛ Ինձ, նայի՛ր Իմ աչքերի մեջ[1]: Այո՛, հիշիր աղջիկս, որ Ես քո Սուրբ Հայրն եմ: Արի գնանք հիմա:

Մայիսի 19, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ: Վասուլա, հիշի՛ր որ այս առաջնորդությունը Ինձնից է:

Հիսո՛ւս, Դու գիտե՞ս, թե ես ինչ եմ ցանկանում:

Գիտեմ, աղջիկս:

Երբեմն ուզում եմ, որ այս շնորհը, որ տվել ես ինձ՝ հանդիպելու Քեզ այս ձևով և տեսնելու Քեզ իմ հոգու աչքերով, լիներ միայն ինձ համար: Դու և ես, ես և Դու: Ես ինձ այնքան հիանալի կզգայի: Մեր գաղտնիքը ոչ մեկին ցույց տալու մտահոգություն չէր լինի:

(Ես հոգոց քաշեցի):

Աղջի՛կս, Ես հարցրեցի, թե դու ուզո՞ւմ ես գործել Ինձ համար, և քո պատասխանը Ինձ դուր եկավ: Թույլ տուր քեզ հիշեցնել, որ դու Իմ սիրելի հոգին ես, որի միջոցով Ես պիտի բացահայտեմ Ինձ և Իմ ցանկությունները, քանի որ սա է Իմ Կամքը:

Բայց, Աստված իմ, առանց Քեզ վիրավորելու ասեմ, որ Քո Խոսքը կարող է ծանր լինել, եթե այն չթեթևանա: Ես ի՞նչ կարող եմ անել:

Սիրելիս, մի՞թե Ես չեմ օգնի քեզ, Ե՛ս եմ Տերը:
«Եղբայրներ, կարդացե՛ք Իմ Պատգամը, Ինձ ուրախությամբ լցրեք և հիշե՛ք Իմ Գործերը, հավատացե՛ք Իմ Անսահման Հարստությանն ու Ողորմությանը:

[1] Ես նայեցի Նրան: Նրա աչքերը լուրջ էին, բայց ՍԻՐՈՎ լեցուն...

Վասուլա, հետևի՛ր Ինձ, Ես կառաջնորդեմ քեզ. փոքրիկս, Ես կտամ քեզ Իմ Ուժը. երբե՛ք չթողնես Իմ Ձեռքը»:

Աստվա՛ծ իմ... ի՞նչ ես ուզում ինձնից...

Վասուլա, Ես սեր եմ ուզում. սե՛ր, սե՛ր, սե՛ր: Իմ Մարմինը ցավում է սիրո պակասությունից: Իմ Շուրթերը ցամաքել են սիրո ծարավից: Փոքրիկս, Ես ուզում եմ քեզ գործածել, որպես գործիք Իմ առաջնորդության համար:

Տե՛ր իմ, թող Քո կամքը կատարվի, թող որ Դու իրագործես Քո բաղձանքները:

Սիրելիս, Ի՛նձ ապավինիր, լսի՛ր Իմ Ձայնը. երբեք մենակ չզգաս, որովհետև Ես՝ Աստված, քեզ հետ եմ.

(Ես ինձ մասամբ մխիթարված զգացի):

Տե՛ր, սկսե՞նք այսօր:

Ե՛կ, սկսենք: Ամբողջապես հենվիր Ինձ վրա. Ես առաջնորդում եմ քեզ:

(Ավելի ուշ)

(Բաբեթը եկավ: Նա խոսեց Հիսուսի հետ: Երեքս միասին էինք: Բաբեթը կարիք չուներ նրան բարձրաձայն հարցեր տալու: Սոսկ մտածմունքը, որ անցնում էր նրա մտքով, իսկույն պատասխանվում էր Հիսուսի սեփական ձեռագրով: Հիսուսն այս անելով, խրախուսում էր մեզ Իր Հավատի Ներկայությամբ: Նա կանչում էր մեզ, որ ավելի մտերիմ դառնանք Իր հետ, հիշենք Իր Ներկայությունը ու սիրենք Նրան:
Պետք է ասեմ, որ տպավորված էի, որ Հիսուս Բաբեթին հանդիպում էր այս ձևով...)

Ի՛նձ ապավինիր:

Հիսո՛ւս, ընկերս խնդրեց ինձ, որ Քեզ հարցնեմ, թե ինչո՞ւ Դու մեզ մոտ նորից չես գալիս մարմնապես, ինչպես առաջ, որպեսզի մարդիկ փոխվեն:

Ա՛հ, Վասուլա... Ես պիտի ետ գամ: Ամեն մի անցնող արշալույսի հետ Իմ գալուստը դեպի քեզ ավելի է մոտենում, Վասուլա: Դու գիտե՞ս դա ինչ է նշանակում:

Ասա՛ ինձ, Տեր:

Սերը նորից կվերադառնա: Սերը ձեր մեջ պիտի լինի մեկ անգամ ևս. Սերը կրկին խաղաղություն կբերի: Իմ Թագավորությունը երկրի վրա կլինի այնպես, ինչպես երկնքում է: Սերը կփառավորի Սիրուն: Ես շուտով քեզ հետ կլինեմ, սիրելիս: Աղոթի՛ր, քանզի ժամանակը մոտ է:

Փոքրի՛կս, դու դեռ կգործե՞ս Ինձ համար:

Ես ուզում եմ լսել Քո անունը:

Ես Սեր եմ:

Այո՛, ես իմ անկարողությամբ պիտի գործեմ Սիրո համար՝ ամբողջապես կախյալ լինելով Քեզնից:

Գիտեմ, որ դու կորած ես առանց Ինձ, սիրելիս: Դու Իմ ծաղիկն ես, որը կարիք ունի Իմ Լույսին:

Ես այնքան երջանիկ եմ:

Օ՜, աղջիկս, Ես սիրում եմ քեզ խենթի պես: Հենվիր ամբողջովին Ինձ վրա: Ես պիտի ավելացնեմ զանազանելու քո կարողությունը:

Տե՛ր իմ, Դու ավելացնո՞ւմ ես՝ Քեզ զգալու, Քեզ տեսնելու, Քեզ լսելու իմ զգացումները:

Այո՛, դու Ինձ պիտի զգաս և պիտի կարողանաս Ինձ ավելի զանազանել:

Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ այս բոլոր շնորհները ինձ: Ես ոչինչ չեմ արել որևէ բանի արժանի լինելու համար:

Գիտե՛մ, բայց Ես սիրում եմ քեզ: Այսուհանդերձ մի՛ մոռացիր, թե դու ով ես:

Խնդրում եմ օգնիր՝ հիշեցնելով ինձ, Տե՛ր:

Ես կկանխեմ քեզ, որ դու չխանդավառվես Իմ տված շնորհներով՝ հիշեցնելով քեզ քո թշվառությունը: Ես քեզ կհիշեցնեմ, որ բոլոր շնորհները, որ դու ստանում ես Ինձնից, Իմ Փառքի համար են: Ամեն մի շնորհ, որ դու ստանում ես Ինձնից, պիտի լինի Իմ սեփական նպատակների համար և ոչ թե՝ քո: Այնպես որ, Իմ Սրտից վերցրու և լցրու քո սիրտը: Ես ուզում եմ, որ Իմ Խորանը մշտապես բոցավառ լինի: Ապրի՛ր Ինձ համար, չնչի՛ր Ինձ համար, հավիտենապես Իմը եղիր:

(Ես կլինեմ Աստծո համար):

Աստվա՞ծ իմ:

Ես եմ, սիրի՛ր Ինձ և փնտրիր Իմ սեփական շահերը:

Տե՛ր ... (ես հառաչեցի), ես զրո եմ, և Դու գիտես այդ... Տե՛ր, խնդրում եմ մի՛ վստահիր ինձ:

Ինձ ազատ թող գործել քո մեջ:

Ե՛կ, ես կբավարարեմ քո հարցումը: Սերը կվերադառնա ձեր մեջ, որպես Սեր: Մենք պետք է միասին աղոթենք.

Օ՜, Երկնային Հայր, Հա՛յր Սիրո,
Արի մեզ մոտ՝ ազատելով
մեզ չարից.
Սիրի՛ր մեզ Հա՛յր,
և թույլ տուր մեզ,
Որ մենք ապրենք Քո Լույսի մեջ:
Արա այնպես,
ինչպես Քո Սիրտն է կամենում.
Փառավորվի Քո Անունը: Ամեն:

Թող Ինձ, որ քեզ գործածեմ:

Թույլ տուր ինձ նորից լսել Քո անունը:

Ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո սիրելի Որդին: Ինչ որ խնդրում եմ քեզանից, Վասուլա, սե՛ր է, և այն, որ դու ինձ հետ միասին կիսես Խաղաղության ու Սիրո Իմ Խաչը:

Այո՛, Տեր:

Աղջիկս, մի՛ թողնիր Իմ Ձեռքը, սիրի՛ր Ինձ, աղջիկս:

Ինձ սովորեցրու Քեզ սիրել այնպես, ինչպես Դու ես ցանկանում, որ մենք սիրենք Քեզ: Եթե ուզում ես, թող որ ես աշխարհում ամենից շատ սիրեմ Քեզ:
Դու ժպտում ես...

Այնքան ուրախ եմ: Դու ուզո՞ւմ ես դա անել Ինձ համար:

Այո՛:

Սիրելիս, դու կսովորես Ինձ հետ: Դու կամենո՞ւմ ես նաև տառապել Ինձ համար:

Տիրոջ համար, այո՛, եթե Նա այդ ձևով էլ է ուզում ...

Ուրեմն, ամեն բան կկատարվի Իմ Կամքի համաձայն:

(Դու գիտես, թե հոգու համար որն է լավը, դրա համար ես կապավինեմ Աստծուն):

Ես Աստված եմ: Հիմա եկ այն հատուկ տեղը, որ Ես Իմ Սրտում ունեմ քեզ համար ու մնա այնտեղ:

Մայիսի 20, 1987

(Երբեմն ես զարմացնում եմ ինքս ինձ: Ինչո՞ւ եմ զգում այս մղումը՝ Հիսուսին այս ձևով հանդիպելու: Ինչպե՞ս և ինչո՞ւ համար եմ այսպես հափշտակվում գրի առնելու Նրա պատգամները, մի բան, որն անհրաժեշտություն է դարձել այս ամբողջ ամիսների ընթացքում):

Ես սիրում եմ քեզ: Այդ ես եմ՝ Հիսուս, որ քեզ տալիս եմ Ինձ հանդիպելու այս մղումը: Վասո՛ւլա, Ինձ միշտ սիրիր, քույր: Ես քեզ կասեմ, Իմ ցանկությունները:

(Հիսուսն այնքան քնքուշ էր, բայց Նրա դեմքը տխուր տեսք ուներ):

Ես ուզում եմ միավորել Իմ բոլոր քահանաներին: Ես ցանկանում եմ, որ նրանք Ինձ ավելի շատ սիրեն: Ես նրանցից ուզում եմ մաքրություն, եռանդ, հավատարմություն: Քահանաները պետք է ըմբռնեն, որ միասնությունը ամրապնդում է սերը, միասնությունը հաստատում է սերը:

Որքա՞ն ժամանակ պիտի շարունակվեն այս տարաձայնությունները նրանց մեջ: Սերը միասնություն է: Իմ Սերը նրանց միացնում է Ինձ հետ: Իմ Եկեղեցին թույլ է՝ իր տարաձայնությունների պատճառով: Իմ բաղձանքը միասնությունն է: Ես ցանկանում եմ, որ Իմ Եկեղեցին մեկ դառնա:

Բայց, Տե՛ր, եթե Դու ասում ես, որ սա տարաձայնություն է, ուրեմն ինչ-որ մեկը պիտի տեղի տա: Նրանք ինչպե՞ս պիտի իմանան:

Նրանք պիտի աղոթեն լուսավորվելու համար: Նրանք պիտի Ինձ մոտ գան և վերցնեն Իմ Սրտից:

Հիսո՛ւս, Դու ո՞ւմ նկատի ունես, երբ խոսում ես նրանց մասին:

Իմ ամբողջ Եկեղեցուն: Ես ցանկանում եմ որ նրանք միանան և դառնան մեկ: Իմ Եկեղեցին թուլացել է այս տարաձայնության պատճառով: Այն չափազանց թուլացել է:

Տե՛ր իմ, ինձ թվում է, թե սա մի նոր պատգամ է:

Ես պիտի լուսավորեմ քեզ, Վասուլա, մաս առ մաս ցույց տալով քեզ, թե ես ինչպես եմ գործում:

Նախ՝ ինձ տված Քո ուսուցումները...

Այո՛:

...ապա ինձ պատրաստելը, հետո՝ խաղաղության ու Սիրո Եկեղեցական հրատարակությունները, և ապա խաղաղության ու Սիրո Քո առաջնորդությունը պատգամների միջոցով:

Այո՛, Վասուլա, իսկ հիմա՝ Իմ ցանկությունները: Իմ Եկեղեցին միավորելու Իմ իղձերը: Մարմինը ինչպե՞ս կարող է գործել, եթե նրա անդամներից մեկը կամ երկուսը հաշմանդամ են, կամ՝ վիրավոր ու մասնատված: Արդյո՞ք այն կունենա նույն ուժն ու կարողությունը ինչպես մեկ ուրիշը, որն ամբողջական է:

Իմ Եկեղեցին, Իմ Մարմինն է: Ինչպե՞ս կարող է Իմ Մարմինը գործել, եթե նրանք անդամահատել են Այն: Աղջիկս, նկարի՛ր Իմ նշանը.

ΙΧΘΥΣ

Սա առաջին քրիստոնյաների նշանն է: Սերը մեկ էր, Սերը միասնական էր:

Հիսո՛ւս, գիտեմ, որ Զատիկը տարբեր ամսաթվերի է տոնվում: Կարո՞ղ ես ինձ ասել, թե որն է ճիշտ ամսաթիվը՝ մերը, թե՞ նրանցը: (Խնդրում եմ, գրիր այդ առանձին թղթի վրա):

Վասո՛ւլա, ուրեմն մի թուղթ վերցրու:

Շնորհակալ եմ Հիսուս: (Հիսուսն ինձ տվեց Զատիկի ճիշտ ամսաթիվը):

Այժմ եկ միասին աղոթենք: Աղոթենք Հորը՝ Միասնության համար.

Հա՛յր, ես գալիս եմ Քեզ մոտ
Ու խնդրում Քեզ,
որ լուսավորես Քո ոչխարներին,
Լուսավորի՛ր նրանց,
Որ Խաղաղություն և
Սեր գտնեն Միասնության մեջ:
Ամեն:

Միավորի՛ր իմ ոչխարներին, Վասուլա:

Հիսո՛ւս, ես ով եմ, որ միավորեմ կամ որևէ բան իմանամ քահանաների ու նրանց բանավեճերի մասին, թե նրանց միջև ինչ է կատարվում: Ով եմ ես, որ ասեմ, թե ինչ է գրված մի կտոր թղթի վրա, և նրանց ասեմ, որ այդ Դու ես գրել:

Հիսո՛ւս, Դու ինձ պատգամներ ես տալիս, Դու հայտնում ես ինձ Քո Սրտի իղձերը: Տե՛ր, ավելի դյուրին չէ՞ր լինի, որ այս ամենը տրվեր Եկեղեցուց մեկին, որն արդեն Եկեղեցում է, մեկին, որը հնարավորություն ունի մոտենալու բարձր հեղինակությունների՝ վստահության արժանացած մի անձի՝ ճանաչված առաքինությամբ: Տե՛ր, Դու իրոք ընտրեցիր մեկին, որը խեղված ու վհատեցված է քահանաների կես մասի կողմից, ովքեր գիտեն գրությունների մասին և հետաքրքրված չեն հետամուտ լինելու: Ես հոգնեցի գրությունները ցույց տալուց, քանի որ գիտեմ, դա ձանձրացնում ու գրգռում է նրանց: Ուրեմն, ի՞նչ անել:

Վասուլա, սա ա՛յն է, ինչ որ քո ուսերը կրում են: Սա Իմ Խաչն է քեզ վրա: Ես կկիսեմ Այն քեզ հետ, երբեք չհոգնես:

Տե՛ր, Քո պատգամն ինչպե՞ս է հասնելու այն մարդկանց ականջներին, որոնց որ ուղղված է: Ես դրսից մեկն եմ:

Կհասնի: Այն գետակի նման հոսում է, կամաց-կամաց ընդլայնվելով: Հոսելով, այն պիտի սկսի հորդել, հետո՝ հեղեղել: Գետակը պիտի վերածվի մի ընդարձակ օվկիանոսի: Վասո՛ւլա, Ինձ ապավինիր, երբ դու հոգնած ես: Ես սիրում եմ քեզ և պիտի օգնեմ քեզ՝ Ինձ հետ կրելու Իմ Խաչը: Սիրելիս, երբեք լքված չզգաս քեզ:

Ես զգացի, որ Հիսուսն ինձ միշտ վեր կբարձրացնի, երբ ես սայթաքեմ: Նա ինձ հասկացրեց, որ ես միշտ կարող եմ ապավինել Նրան՝ վերականգնելու համար իմ ուժը:

Վասո՛ւլա, Ես քեզ կառաջնորդեմ:

Մայիսի 23, 1987

(Երեկ, ես Հիսուսին գրությամբ չհանդիպեցի: Բայց Նա Իր Ներկայությունը զգալի դարձրեց, Իր խոսքերը՝ նույնպես: Նա խոսում էր ինձ հետ միևնույն ժամանակ, երբ ամուսինս կամ ընկերներս էին խոսում ինձ հետ: Դա այնպես էր, կարծես Նա ինձ քաշում էր մի թևից, իսկ մյուսները[1] մյուս):

Հիսո՞ւս:

Ես եմ. Հավատ ունենալը նույնպես շնորհ է, սիրելիս: Խոսի՛ր Ինձ հետ, Ես քո Փեսան եմ:

(Ես Նրան մի բան ասացի. Նա պատասխանեց ինձ):

Թող որ քեզ հետ վարվեմ այնպես, ինչպես որ ուզում եմ, Վասուլա: Ես Աստված եմ, և մինչև հիմա դու պիտի հասկանայիր, որ Ես քեզնից մի բան եմ ուզում դուրս քերել՝ բարձրացնելով քեզ դեպի Ինձ, սովորեցնելով քեզ Ինձ սիրել, և թույլ տալով, որ հանդիպես Ինձ հետ այս ձևով:

Դու սովորեցիր գրել Իմ կողմից տրված շնորհով: Այս շնորհը տրվել է քեզ, որ Ես կարողանամ քեզ գործածել: Ես պարգևել եմ քեզ բազում շնորհներ, որպեսզի դու Ինձ փառաբանես:

Ես քեզ Ինձ եմ միացրել, Ես ընդունել եմ քեզ որպես Իմ հարսը, Ես և դու մեկ ենք հիմա: Դու ավելի պարզորոշ չե՞ս տեսնում, աղջիկս: Ես սիրում եմ բոլորիդ, և Ես քեզ մոտեցա Իմ սեփական նպատակների համար:

[1] աշխարհը

Աստվա՞ծ իմ:

Ես եմ:

(Ես Նրան մի բան հիշեցրի):

Վասո՛ւլա, Ես միշտ իրագործում եմ Իմ նպատակները:

Գիտե՛մ, գիտե՛մ: Կուզեի, որ ավելի պարզ ասեիր ինձ:

Աղջի՛կս, Ես սիրում եմ քեզ, քո հասկացողությունից էլ այն կողմ: Ես գիտեմ, որ դու անասելի թույլ ես, գիտեմ, որ առանց Ինձ դու բոլորովին անկարող ես շարժվել: Մի՛ մտահոգվիր: Ես կբարձրացնեմ քեզ, ինչպես հայրը կբարձրացներ իր անդամալույծ զավակին: Ես կհոգամ քեզ, Ես կհայթայթեմ քեզ համար անհրաժեշտը. Ես պիտի հետևեմ, որ Իմ բոլոր Գործերը իրականանան: Հիշի՛ր, Ես սովորեցրել եմ քեզ լինելու Իմ պատգամատարը: Ես չեմ թողնելու, որ դու հեռանաս, առանց քո առաքելությունը կատարելու: Ես սիրում եմ քեզ. սիրի՛ր Ինձ և միմիայն Ինձ. Ես մրցակիցներ չեմ ուզում: Պաշտի՛ր Ինձ, քանզի Ես քո Աստվածն եմ:
Վասո՛ւլա, սպասարկել քո Աստծուն, նշանակում է ծառայել Նրան: Ծառայի՛ր Ինձ. ե՛կ, մեկ եղիր Ինձ հետ: Ես ընդունում եմ քեզ քո տգիտությամբ, աղջիկս: Արդարև, Իմ շուրջը Ես ունեմ հավատարիմ ծառաներ: Նրանք Իմ Հոգու սիրելիներն են: Նրանք մեծ արժեք ունեն Իմ աչքին. Ես Իմ Գործերը վստահում եմ նրանց: Նրանք մեծարում են Իմ Անունը՝ ջերմեռանդորեն Ինձ ծառայելով, զոհաբերելով իրենց Հոգին Ինձ համար, մեծաշնորհ ձևով օրհնելով Իմ Խոսքը: Ես սիրում եմ նրանց և սիրով եմ նայում նրանց: Անհարմար մի՛ զգա հարց տալու:

Ինչո՞ւ Դու ինձ ընտրեցիր, եթե ես հարմար չեմ[1]:

Խեղճությունը գրավում է Ինձ. դու ընդհանրապես ոչինչ ես, բոլորովին՝ ոչինչ: Բայց լինելով ոչինչ, Ես ամեն ինչ եմ, որ դու չես, քանզի ո՞վ է Իմ մրցակիցը: Ես ոչ մի մրցակից չեմ գտնում քո մեջ, քանի որ դու ոչինչ ես: Սա է, որ Ինձ հաճույք է պատճառում, աղջիկս:

Ես չեմ կարող հասկանալ:

Ո՛չ, դու չես կարող հասկանալ, բայց մի՞թե դա կարևոր է, մի՞թե իսկապես կարևոր է: Ես Գերագույնն եմ բոլոր արարչության մեջ, դուք բոլորդ Իմն էք: Իսկ դու, փոքրիկս, առանց չնչին իսկ հետաքրքրության, գրավում ես Ինձ: Փոքր ու աննշան լինելը գրավում է Իմ ուշադրությունը, ոչնչությունը՝ հրապուրում[2] է Ինձ: Վասո՛ւլա, մի օր դու լիովին կհասկանաս Իմ Խոսքերը: Եթե դու ծառայես Ինձ, Ես քո մեջ միմիայն չարչարանք ի հայտ կբերեմ:

[1] Նա թույլ չտվեց, որ խոսքս վերջացնեմ:
[2] Ես իմ կյանքում երբեք չէի լսել այս բառը:

Զարչարա՞նք...

Այո՛, չարչարանք: Դու...

(Իմ տկարության պատճառով, ես չթողեցի, որ Նա Իր հարցը գրի: Թեև ես լսեցի... Ոչինչ չի կարող ետ պահել Նրան՝ ինձ լսելի դարձնելու այն, ինչ Նա ուզում է ասել...)

Ես կարող եմ ապրել քո մեջ, անդամ քո ահավոր տկարության մեջ: Սիրի՛ր Ինձ, Վասուլա, մի՛ վախեցիր Ինձնից, Ես Սեր եմ և շատ եմ սիրում քեզ: Ես երբեք չեմ խնդրի որևէ բան, որ քեզ վնասի: Ես Սեր եմ և Սիրո Վարպետ: Զավա՛կս, անկախ քո տածած անվերջ կասկածներից ու պակասությունններից, Ես ընտրել եմ քեզ լինելու Իմ Խորանը: Քանի որ Ես գիտեմ, որ դու անկարող ես ձեռք բերել Իմ Կրակից, Ես քո մեջ պիտի լցնեմ Իմ այրող ցանկությունները՝ այս ձևով Իմ Բոցը վառ պահելով: Ե՛կ, սիրելիս, դու Իմ ծաղիկն ես, որը կարիք ունի Իմ Լույսին: Ապրի՛ր Իմ Լույսի տակ, Ես չեմ ուզում քեզ կործանված տեսնել:

Տե՛ր, Դու էլ ինձ ես գրավում, Դու գիտես որ...

Դա զարմացնո՞ւմ է քեզ: Քո թշվառությունը հրապուրված է Իմ Ողորմությամբ, քո անասելի տկարությունը՝ Իմ Ուժով, քո ոչնչությունը՝ ամեն ինչով, որ Ես եմ: Ապրի՛ր Ինձ համար:

(Ես ասացի Նրան Իմ ցանկությունը):

Վաստակի՛ր քո ցանկությունը, Վասուլա:

(Ես տեսա Հիսուսին, որ փորձում էր ցույց տալ Իր ցանկությունը):

Վասուլա, ե՛կ: Ինձ ավելի մոտ եկ, Վասուլա:

(Ես վարանում էի):

Ես նորից խնդրում եմ, որ դու միմիայն Ինձ ցանկաս. Վասուլա, մի՛ մերժիր Ինձ: Լսի՛ր Իմ Սրտի զարկերը. դու կարո՞ղ ես դիմադրել Ինձ:

Ինչպես կարող եմ դիմադրել Աստծուն:

(Բայց և այնպես, ես փորձում եմ, որովհետև չգիտեմ, թե ինչ պիտի լինի իմ վերջը):

Ես սիրում եմ Քեզ, Աստված իմ:

Ուրեմն Ինձ մոտ արի, բաղձանքներ մի՛ ունեցիր քեզ համար: Ուզո՞ւմ ես Ինձ այնտեղ տեսնել:

(Զգիտեմ ինչու հիշեցի Հիսուսի մի նշանավոր նկարը, նշանավոր մի վայրում):

Եթե այդ Քո ցանկությունն է, Տե՛ր: Բայց մի՛ պատասխանիր Ինձ. արա այնպես, ինչպես կամենում ես:

Աղջի՛կս, քո ամբողջ անելիքը թող որ լինի Իմ Փառքի համար: Իմ բաղձանքները պիտի լինեն նաև քո բաղձանքները: Ես պիտի գրեմ Իմ ցանկությունները ու առաջնորդեմ քեզ:

Դա միասնության մասի՞ն է:

Այո՛, Իմ Եկեղեցու Միասնության. Ես ուզում եմ Իմ Մարմինը զորանա. միասնությունը կուժեղացնի Իմ Եկեղեցին:
Դու կհիշե՞ս Իմ Ներկայությունը. դե՛, ուրեմն, արի գնանք:

Մայիսի 24, 1987

Ես քեզ հետ եմ:

Ուզո՞ւմ ես որ ծառայեմ Քեզ:

Ուզում եմ, շատ եմ ուզում: Վասուլա, ե՛կ, Ես քեզ ցույց կտամ, թե ինչպես և որտեղ դու կարող ես Ինձ ծառայել: Հիշի՛ր ամեն ինչ, որ քեզ սովորեցրել եմ:

(Նա նկատի ուներ խորհրդավոր ուսուցումները, որպեսզի իմ ունակություններն ամբողջովին զգոն լինեին, և, որպեսզի իրազեկ լինելով, ես լսեի ու զգայի ավելին):

Իմ խաղաղությունը քեզ, լսի՛ր Իմ Ձայնը:

Երանի հստակ և մաքուր լսեի քեզ...

Վասո՛ւլա, դու բավականաչափ լավ կլսես Ինձ՝ գրի առնելու այն ամենը, որ Իմ Սիրտն է բովանդակում, այն ամենը, որ Իմ Սիրտն է ցանկանում: Սիրելիս, քեզ ազատ պահիր, որ կարող լինես ծառայել ու սպասարկել Ինձ. դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում ազատ լինել, Վասուլա: Ես կասեմ քեզ, վստահություն ունեցիր:

(Ես զգացի, որ այն, ինչ որ Նա սովորեցրել էր ինձ, իր նպատակին չէր ծառայելու, և ես կարող էի չարդարացնել Նրա սպասելիքները):

Ազատ լինել նշանակում է հեռացնել հոգին աշխարհային հոգսերից: Ազատի՛ր հոգիդ և սիրի՛ր Ինձ և Իմ Գործերը: Ծառայիր Ինձ այս ձևով, տարանջատիր քեզ:

Ինձ դժվար պիտի լինի, Տե՛ր:

Lo[1]:

Այո՛, Տեր իմ, ես տեսնում եմ այդ դժվարությունները:

Ո՛չ, ո՛չ, մնա Ինձ մոտ:

Վախենում եմ հիասթափեցնեմ Քեզ և չարդարացնեմ Քո իղձերը:

Մի՛ վախեցիր, քույր. սիրելիս, սիրի՛ր Ինձ:

(Ես զգացի Նրան և սիրեցի Նրան):

Սեր՝ սիրո դիմաց: Սիրիր Ինձ, ինչպես այժմ, աշխատի՛ր և ծառայի՛ր Ինձ, ինչպես այժմ, եղիր այնպես, ինչպես որ կաս: Ես ծառայողների կարիք ունեմ, որոնք ընդունակ են Ինձ ծառայելու այն տեղերում, ուր ամենից շատ սիրո կարիքն է զգացվում: Բայց տքնաջան գործիր, քանզի ուր որ դու գտնվում ես, չարերի մեջ ես, անհավատների մեջ, դու մեղքի զազրելի խորքերում ես գտնվում: Դու պիտի ծառայես քո Աստծուն, ուր խավարն է իշխում: Դու հանգստություն չպիտի ունենաս, դու Ինձ պիտի ծառայես այնտեղ, ուր ամեն բարի բան այլակերպվում է չարի: Այո՛, ծառայիր Ինձ թշվառության մեջ, չարության մեջ և աշխարհի անօրենությունների մեջ: Ծառայի՛ր Ինձ անաստված մարդկանց մեջ, նրանց մեջ, ովքեր Ինձ ծաղրում են, նրանց մեջ, ովքեր խոցում են Իմ Սիրտը: Ծառայի՛ր Ինձ խարազանողների մեջ, Ինձ դատապարտողների մեջ: Ծառայի՛ր նրանց մեջ, ովքեր կրկին խաչում են Ինձ և թքում Ինձ վրա: Օ՜, Վասուլա, ինչպես եմ Ես տառապում: Ե՛կ, մխիթարիր Ինձ:

Աստված իմ, արի՛, արի նրանց մոտ, ովքեր սիրում են Քեզ: Գնա նրանց մոտ, գոնե միառժամանակ. գնա՛, Դու կսիրվես այնտեղ: Հանգստացի՛ր նրանց սրտերում, մոռացի՛ր: Մի՞թե չես կարող մի որոշ ժամանակ գոնե մոռանալ:

(Հիսուսն <u>ԱՅՆՔԱ՛Ն</u> դառնացած էր երևում):

Մոռանա՞լ, Վասուլա: Ինչպե՞ս կարող եմ մոռանալ. ինչպե՞ս, երբ կրկին ու կրկին խաչում են Ինձ[2]. Իմ Հինգ Վերքերը բաց են մնացել բոլոր նրանց համար, ովքեր ուզում են թափանցել դրանց մեջ:

(Հիսուս հենվեց ինձ վրա: Ես վշտացա: Նա անմխիթար էր թվում, հոգնած):

Վասուլա, ե՛կ, դու Իմ փոքրիկ ծաղիկն ես: Ես քեզնից հարթ և փափուկ ծաղկաթերթեր եմ ուզում, որ փոխարինեմ Իմ փշերին:

[1] ոչ (եբրայերեն)
[2] Նա այնքան արագ էր թելադրում, որ ես հազիվ էի կարողանում հետևել Նրան:

Հիսո՛ւս, թող որ նրանք, ովքեր Քեզ սիրում են, թեթևացնեն Քո բեռը: Թող նրանք, ովքեր Քեզ սիրում են, հանգստացնեն և փոխարինեն Քեզ՝ Քո վերստին խաչելության մեջ:

(Ես չգիտեի ինչպես սփոփել նման մի տառապանք):

Սիրելիս, նրանք, ովքեր սիրում են Ինձ, աշխատում ու տանջվում են Ինձ հետ: Նրանք կիսում են Իմ խաչը, նրանք հանգստացնում են Ինձ, բայց նրանք քիչ են: Ես ավելի շատ հոգիների կարիք ունեմ, որ Ինձ հետ միանան ու կրեն Իմ տառապանքները: Ծաղիկս, սիրի՛ր Ինձ, երբեք մի՛ մերժիր Ինձ:

Հիսո՞ւս:

Ես եմ:

Ինձ կօգնե՞ս, որ Քեզ ավելի շատ սիրեմ:

Կօգնեմ, սիրելիս:

(Ես պապանձվեցի, ինչ կարող էի ասել: Եթե որևէ մեկը գիտենար, թե որքան ցավալից էր տեսնել Նրան այդպես վիրավորված: Կարծես Նա կրկին անգամ մեռնում էր: Ինչպե՞ս կարելի է մխիթարել մեկին, որը մեռնում է վերքերից, և ի՞նչ ասել Նրան: Ասել, որ ամեն ինչ լա՞վ կլինի, երբ գիտես, որ Նա մահացու վիրավորված է):

Մայիսի 25, 1987

(Սկսեցի գիտակցել, թե որքան հեշտ է Աստծուն հանդիպել՝ Նրա կողմից ինձ տրված այս շնորհով, եթե ես առանց ամենափոքր կասկածի կամ անհավատության մոտենամ Նրան՝ զգալով Նրան, տեսնելով Նրան ու թողնելով, որ Նա գրի: Ես սկսեցի հասկանալ: Լիակատար հավատը այնպես է անում, որ բոլոր դևերը փախչում են և անելանելի դրության մեջ են ընկնում՝ դառնալով անկարող: Նրանք վախենում ու զայրանում են: Երբ ես անվճռական եմ մոտենում ու կասկածամիտ, նրանք իրենց ուժեղ են զգում և հարձակվում են ինձ վրա՝ գրելով իրենց վիրավորանքները: Լիակատար հավատը և Աստծո առջև սրտաբաց լինելը՝ կարող են լեռներ շարժել: Ես զգում եմ Նրան իմ մեջ, ինչպես մի էլեկտրական հոսանք, որը հրաշալի է: Ես երբեք չեմ ուզում Նրան թողնել, կամ հեռացնել Աստծո մատը իմ վրայից... Ես ուզում եմ, որ դա ընդմիշտ շարունակվի):

Սիրի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ, զգա՛ Ինձ, զգա Իմ անհագ սերը քո հանդեպ: Ես ծարավ եմ քո սիրուն: Ես ավելի սեր եմ պահանջում քեզնից, Վասուլա: Լսի՛ր Իմ Սրտի զարկերը:

(Հիսուս սաստիկ հուզված էր):

Ես ամենևին մրցակիցներ չեմ հանդուրժում, ընդհանրապես ոչ մեկին: Եթե տեսնեմ կամ հանդիպեմ մրցակիցների, ես կոչնչացնեմ նրանց: Ոչինչ չի փոխարինի Ինձ: Ես Տերն ու Տիրակալը պիտի մնամ: Հրաժարվի՛ր (այս աշխարհից)՝ Ինձ փառաբանելով: Այս գիշեր Ես Իմ Երկնային Գործերով պիտի մաքրագործեմ քեզ՝ ի խնդիր Խաղաղության և Սիրո[1]: Աղոթի՛ր, սիրելիս, օրհնյալդ. համախմբի՛ր Իմ Եկեղեցին՝ նկարելով Իմ նշանը, որը Ես տվել եմ քեզ: Նկարի՛ր հիմա.

ΙΧΘΥΣ

Այդ օրհնյալ նշանի միջոցով, Ես՝ Տերը, քեզ պիտի ցույց տամ դեպի Ինձ գալու ճանապարհը: Հավատա՛, հավատա՛, հավատա՛. ծաղկի՛ր և օգնիր մյուսներին: Ծաղկի՛ր՝ Սերը ետ բերելու համար, ծաղկի՛ր՝ Խաղաղություն բերելու[2]:

Ես սիրում եմ քեզ, Վասուլա, մի՛ վշտացիր, սիրելիս: Օրհնյալդ, ե՛կ Ինձ մոտ՝ քո Հոր, քո փեսայի, քո Աստծու մոտ: Մի՞թե, երբևէ Ես կլքեմ քեզ: Սիրուց մղված, Ես պիտի գրավեմ քեզ, խանդավառ ու անհագ Իմ սիրուց մղված, Ես պիտի ազատեմ քեզ: Աղոթի՛ր Ինձ հետ.

«Հայր Երկնավոր,
թող որ փառաբանեմ Քեզ,
Փրկիր չարից Քո զավակներին,
Թող Քո Լույսի մեջ նրանք լինեն,
Թող նրանց սրտերը բացվեն
և Քո Ողորմությամբ
Քեզ ընդունեն: Ամեն»:

Վասո՛ւլա, դու ամբողջովին կընկալե՞ս Իմ Ներկայությունը և կհամբուրե՞ս Իմ Վերքերը:

Այո՛, Տեր Հիսուս:

(Ես զատորոշեցի Նրան և նորից տեսա Իրեն՝ Իր ողջ փառքով: Իմ հոգու աչքերով ես նկատեցի, որ Նա գեղեցիկ էր այս անգամ և մի հիասքանչ թագ ուներ Գլխին: Նա եկավ ինձ մոտ որպես մի Թագավոր):

Տե՛ր, տուր ինձ Քո աջ Ձեռքը:

(Ես համբուրեցի Նրա աջ Ձեռքը):

Ես սիրում եմ քեզ:

(Ես համբուրեցի Նրա ձեռքերը, ոտքերը և կողի վերքը):

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր:

---

[1] Հիսուս նկատի ուներ խորհրդավոր ձևով:
[2] Ես անհանգստացա:

Քեզ առաջնորդելը հրճվանք էր Ինձ համար:

(Ես զգացի... Ես ճիշտ բառեր չեմ գտնում):

Ե՛կ Ինձ հետ, Ես քեզ մի բան եմ ցույց տալու:

(Ես տեսա Իր կուրծքը, որը լուսավորված էր և կայծկլտում էր):

Յուրաքանչյուր կայծ, որ պոկվում է Իմ Սրտից ու դիպչում քո սրտին, պիտի բոցավառի քո սիրտը ու կլանի այն: Իմ կայծը կբոցավառի քեզ, քաղի՛ր Իմ Սրտից: Ես մի օր ամբողջապես պիտի բոցավառեմ քո սիրտը՝ թողնելով, որ Իմ Բոցը պարուրի սիրտդ՝ կլանելով այն:

Ի՞նչ կպատահի Ինձ հետ, եթե սոսկ մի կայծով ես Ինձ այսպես եմ զգում:

(Հիսուս կարծես հաճույք էր ստանում, իմանալով, որ Նա Ինձ նվաճել է):

Այո՛, Ես հրճվում եմ՝ տիրելով և գրավելով քո սերը: Երբ Իմ Բոցը ամբողջովին կպատի քո սիրտը, դու այլևս չես բաժանվի Ինձնից: Դու պիտի լինես Իմ հարսը երկնքում: Ես արարել եմ քեզ Ինձ համար:

Ուրեմն, ես ինչո՞ւ եմ այստեղ, չեմ հասկանում:

Ո՛չ, դու չես կարող հասկանալ, Վասուլա, բայց մի օր, դու կհասկանաս: Երբ Ես քեզ հետ եմ, և դու նայում ես քո ժամացույցին, ժամանակը մրցակցության մեջ է Ինձ հետ:

(Ես վիրավորել էի Նրան, որովհետև նայել էի ժամացույցիս):

Ե՛կ, աղջիկս, վերցրու Իմ Ձեռքը և գնանք: Ե՛կ, մենք այնքան շատ գործ ունենք:

Այս գործը, թե՞ մյուսը (տան):

Երկուսն էլ: Աղջիկս, ուր որ գնում ես, Ես այնտեղ եմ[1]: Խորա՛ն, Իմ Բոցը հավիտյան վառ պետք է մնա. անէացիր Իմ մեջ:

Մայիսի 26, 1987

Հիսո՛ւս, ընկերներիցս մեկն ասաց. «Ինչո՞ւ մենք Հիսուսին նկարներում երբեք ուրախ կամ լայն ժպտալիս չենք տեսնում»: Ասացի Նրան, որ ես շատ անգամ Քեզ ուրախ եմ տեսել, և ես չեմ մոռանա այն ժպիտը, որ Դու ընծայեցիր Ինձ: Քո ողջ դեմքը ժպտում էր այդ առավոտ: Դու ասացիր, որ հանդչել ես իմ սրտում:

[1] Ես Աստծուն կարոտեցի այնպես, ինչպես երբեք չէի կարոտել: Ես ծարավի էի Աստծո:

Վասո՛ւլա, ես ժպտում եմ մաքուր հոգիներում: Ես ժպտում եմ և հրճվում հեզաբարո մարդկանց մեջ, ես հրճվում եմ սուրբ մարդկանցով:

Հիսո՛ւս, Աստված իմ, Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ եմ սիրում մեկին, որին երբեք չեմ տեսել կամ հանդիպել բնական վիճակում: Ինչպե՞ս և ինչո՞ւ եմ ես Քեզ սիրում:

Ա՜հ, Վասուլա... ամեն բան, որ գալիս է Ինձնից՝ Սեր է: Ես արարեցի քեզ, որ սիրես Ինձ: Ես արարեցի քեզ Սիրուց դրդված. քո հոգին ծարավի է Սիրո:

Բայց որքան քչերն են, որ հասկանում և ընդունում են այս շնորհը:

Մայիսի 27, 1987

Տե՛ր, Քո ողջ առաջնորդությունը դյուրին է հասկանալ: Դա մի բարդ լեզու չէ:

Մեծամտությունը հոգնեցնում է Ինձ. սովորեք խոնարհ լինել՝ պարզ, համեստ, ինչպես Ես:

Վասո՛ւլա, եթե ուզում ես, որ Ես լինեմ քո Հայրը, Ես կվարվեմ քեզ հետ որպես Իմ երեխայի: Եթե ուզում ես, որ Ես լինեմ քո Փեսան, Ես կվարվեմ քեզ հետ որպես Իմ Հարսի: Եթե դու ընբոստանաս Իմ դեմ, Ես Դատավորի նման կվարվեմ քեզ հետ: Ես քո Փրկիչն եմ: Ինձ ամենքից և ամեն ինչից վեր դասիր, երբեք չուրանաս Ինձ: Հաճախ եկ, ըմպիր ու ճաշակիր Ինձ: Ես հրճվում եմ քեզնով:

Մայիսի 28, 1987

Տե՛ր, Դու ասացիր, որ լինեմ քո զո՞հը:

Այո՛, Վասուլա, եղիր Իմ զոհը:

Տե՛ր, արժանի արա Ինձ, որ լինեմ Քո զոհը: Աստվա՛ծ իմ, իսկապես չգիտեմ, թե «զոհ» միանգամայն ինչ է նշանակում: Զոհը կարող է բազմատեսակ լինել, բայց ես այնպես եմ հասկանում, որ այն իր մեջ ինչ-որ տառապանք է պարունակում: Եթե Դու ուզում ես, որ ես նման մեկը լինեմ Քեզ համար, թող այդպես լինի: Բայց Աստծուն զոհ լինելու համար պետք է որոշ արժեք ունենալ Աստծուն փառավորելու համար: Քանի որ գիտեմ, որ փոշու մի մասնիկ եմ և ընտրված եմ, որովհետև ամենաթշվառն եմ, ուրեմն ես ի՞նչ տեսակ պատշաճ զոհ պիտի լինեմ: Հետևաբար, անգամ Աստծուն զոհ լինելու համար պետք է այնպիսի մի վիճակում լինես, որ կարողանաս պատիվ բերել Նրան: Այսինքն, ուզում եմ ասել, որ «զոհ» լինելը մի տեսակ վարկ եմ համարում՝ Աստծուն մեծարել կարողանալու համար: Անգամ այդ, Աստված իմ, ես անկարող եմ անել, մինչև որ Դու ինձ վայելուչ չդարձնես լինելու Քո զոհը, որով և այն ընդունելի կդառնա:

Վասո՛ւլա, դու հիշո՞ւմ ես, երբ ես եկա և խնդրեցի քեզ Ինձ սիրել: Հիշո՞ւմ ես, երբ հրեշտակը անսպասելի եկավ և քեզ սթափեցրեց[1]: Ես այդ ձևով եմ գալիս, այնպես որ, արթուն եղիր, մի՛ ննջիր: Ես անսպասելի եկա քեզ մոտ և սեր խնդրեցի: Ես ցանկացա, որ դու Ինձ պատվես: Ես ուզեցի գրավել քո սերը և լինել քո Տերը՝ իշխելով քեզ վրա: Ես ուզեցի, որ դու Իմ կարիքը զգաս: Ինչպես էի ծարավել քո սիրուն, "lama sabachtani": Ես եկա քեզ մոտ, բայց դու մերժեցիր Ինձ:

(Այո՛, երբ իմացա, որ այդ Նա է, ես մերժեցի Նրան):

Վասո՛ւլա, Ես մեկուսացրել եմ քեզ, բայց դեռ է՛լ ավելի պիտի մեկուսացնեմ. Իմ Խաղաղությունը քեզ:

Սիրելիս, հատուցի՛ր, հատուցի՛ր, հատուցի՛ր:

Ես մեռելներից հարություն տվի քեզ, որ կարող լինես միավորել Իմ Եկեղեցին:

(Ես հոգոց հանեցի):

Թույլ տուր քեզ ցույց տալ ճանապարհը: Անկախ քո կասկածներից, Ես Իմ Սրտի իղձերը պիտի բացեմ քո առաջ: Երբեք չհոգնես գրելուց: Ես պիտի գործեմ քո մեջ. ամբողջապես Ինձ ապավինիր:

Հիսո՛ւս, մի անգամ ինչ-որ մեկը նկատեց, որ Դու այլևս նշաններ ցույց չես տալու, ինչպես Դու ասել էիր փարիսեցիներին: Նա այդպես ասաց, երբ ես նշեցի, որ այս առաջնորդությունը (պատգամը) Քեզնից է:

Վասո՛ւլա, երբ Ես դա ասացի փարիսեցիներին, նկատի ունեի այդ ժամանակի հրաշքները, երբ Ես մարմնավոր ապրում էի նրանց մեջ: Այժմ Ինձ դատապարտել դրա համար՝ նշանակում է դատապարտել Իմ Երկնային Գործերը, ցույց տալով, թե որքան չոր և կողված են դարձել մարդկանց սրտերը: Իմ նշանները երբեք չեն վերջանալու: Իմ Ներկայությունը պիտի զգացվի աշխարհում, և Ես պիտի շարունակեմ Ինձ հայտնել նշաններով:

Հավատացե՛ք, հավատացե՛ք, օ՜ թերահավատ մարդիկ: Մի՛ խեղաթյուրեք Իմ Խոսքը: Ի՞նչ պիտի ասեք Ֆաթիմայի մասին. դուք սարսափո՞ւմ էք հավատալ, որ Ես Նա եմ, որ տվել եմ ձեզ այդ նշանը: Օ՜, թերահավատ մարդիկ, ինչ ասես, որ դուք չեք հայտարարի՝ քան թե կընդունեք, որ Երկնային նշաններն Ինձնից են: Սիրե՛ք Իմ Գործերը, ընդունե՛ք Իմ Գործերը: Հավատացե՛ք, հավատացե՛ք Ինձ, Ես, որ Անսահման Հարստություն եմ և Ողորմություն: Իմ նշանները նրա համար են, որ բոլոր մարդիկ տեսնեն, որ Սերը ձեզ չի մոռացել: Սերը չի նահանջել, այլ փառավորվում է Իր Փառքի մեջ: Սերը ձեր մեջ է և բնավ չի լքի ձեզ:

[1] Երբ առաջին անգամ իմ ձեռքը գրեց: Դա անսպասելի էր:

Մայիսի 29, 1987

Սիրելիս, ապաշխարի՛ր: Արարա՛ծ, օրհնիր Ինձ. հավատա՛, ինչ որ խնդրում ես:

(Ես հարցրել էի Նրան, որ ների իմ մեղքերը, բայց հասկացա, որ դա իմ շուրթերից դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ Աստված ասաց. «Հավատա՛, ինչ որ խնդրում ես»):

Ես ներում եմ նրանց: Սիրի՛ր Ինձ՝ պատվելով Ինձ, սիրի՛ր Ինձ՝ փառաբանելով Ինձ:

(Ես Նրան նորից խնդրեցի և օրհնեցի Նրան):

Ես Աստված եմ, արարա՛ծ, եղիր Իմ Խաչի Կայաններում: Ամեն մի կայանում միայն Ինձ ցանկացիր: Ես կանգնած եմ յուրաքանչյուր Կայանում: Ես պիտի լինեմ Իմ Խաչի Կայաններում, և Ես ուզում եմ, որ դու այնտեղ լինես. Ես ուզում եմ, որ դու ծնկի գաս Իմ Կայաններում:

Տե՛ր, Ես չգիտեմ ինչ ես ուզում ասել: Ի՞նչ Կայաններ[1]:

Ես այնտեղ քեզ պիտի սպասեմ: Քննի՛ր, ինչ որ Ես պահանջում եմ քեզնից, զննի՛ր ու հետևիր:

Ես պիտի կմաքրագործեմ քեզ, որ հնարավորություն տամ քեզ լինելու Իմ զոհը: Ցանկացի՛ր Ինձ, բավարարի՛ր Իմ անհագ ծարավը, բավարարի՛ր Իմ Սիրո այրող Բոցը, բավարարիր Ինձ՝ քո Աստծուն: Երբ դու Ինձ լիակատար հավատ ընծայես, Ես քո քողը ամբողջովին կբարձրացնեմ, որ դու առանց դժվարության Ինձ տեսնես: Դու վստահաբար ուրիշներից լսել ես Իմ գեղեցկության մասին, որոնք տեսել են Ինձ քեզնից առաջ: Հավատա՛, լիովին հավատա՛. մոտեցի՛ր քո Հորը, և Ես ամբողջապես կբարձրացնեմ քողդ: Աղջիկս, մի՞թե Ես չեմ բերել քեզ Իմ Սրահը:

Այո՛, Տեր:

Ուրեմն հավատ ունեցիր Իմ հանդեպ: Մի՛ թող, որ մարդիկ քեզ Ինձնից հեռու քշեն. Ես քեզ տվել եմ այս նվերը, այնպես որ, օգտագործիր այն Ինձ հասնելու համար: Մի՛ վախեցիր Սիրուց. Ես Ամենակարող եմ. հավատա Իմ Ամենակարողությանը: Աղջի՛կս, Ես ցանկացա, որ դու լինես Իմ Սրահում, ուրեմն որքան ավելի պիտի ցանկանայի, որ դու մնայիր այնտեղ:

Աստված իմ, իմ սեփական մեղքով մենք կարող ենք կորցնել իրար:

Մոռացե՞լ ես մեզ կապող օղակները: Ես քո Փեսան եմ, և դու ապրում ես Իմ Տանը: Ես կերակրում եմ քեզ, Ես պարուրում եմ քեզ Իմ Լույսով: Ես

[1] Մենք՝ ուղղափառներս, չենք ասում Խաչի Կայաններ:

պահպանում եմ քո փխրուն էությունը և քո խեղճության պատճառով քեզ հետ վերաբերվում եմ ինչպես մի երեխայի: Ես ի՜նչ չէի անի քեզ համար: Դու երջանի՞կ ես Ինձ հետ, Վասուլա:

Այո՛, Տեր: Թող որ հավիտյան օրհնյալ լինես Դու, քանզի այդ Դու ես, որ ինձ երջանկություն ես տալիս: Դու իմ ժպիտն ես:

Սիրի՛ր Ինձ, անկախ քո կասկածներից:

Տե՞ր:

Ե՛կ, դու տկար ես, բայց Ես կուժեղացնեմ քեզ: Ես ուզում եմ, որ դու ուժեղ լինես Իմ Պատգամների համար[1]: Կուզեի՞ր, որ Ես ամբողջովին բացեի քո աչքերը, և դու Ինձ ավելի հստակ տեսնեիր:

Կուզեի, եթե դա նույնպես Քո ցանկությունն է:

Դու կարիք ունես մի քանի քայլ ևս անելու դեպի Ինձ, դու գրեթե հասել ես: Ես պիտի բացեմ քո աչքերը, և քո դիմաց դու պիտի տեսնես քո Փրկչին: Իմ Հինգ Վերքերը բաց պիտի լինեն, որպեսզի դու թափանցես նրանց մեջ: Ես քեզ թույլ կտամ ճաշակելու Իմ վշտերը. Ես կարոտով սպասում եմ այդ րոպեին:

Ողողի՛ր Ինձ սիրազեղ խօսքերով: Վասո՛ւլա, դու կապված ես Ինձ, բայց և այնպես, մի՞թե ինքդ քեզ ավելի ազատ չես զգում: Ժպտա՛ Ինձ, երբ դու զգում ես Իմ Ներկայությունը և տեսնում ես Ինձ: Ես լիովին տեղյակ եմ քո կարողությանը և իմաստությանը: Ես գիտեմ, որ դու մի ոչնչություն ես, բոլորովին մի ոչնչություն: Ինձ սխալ մի՛ հասկացիր: Լավ է ունենալ մի ոչնչությո՞ւն, թե ավելի լավ է ունենալ մի ինչ-որ մրցակից: Իհարկե, Ես կընտրեի մի ոչնչության, որպեսզի աշխարհ ուղարկեի Իմ Խոսքերն ու Իմ Ցանկությունները, չհանդիպելով չնչին իսկ մերժման:

Տե՛ր, Դու ինձ այնքան շատ ես տվել, որ ես ինձ ծանր պարտքի տակ եմ զգում:

Դու որևէ բան ունե՞ս Ինձ տալու, Վասուլա:

(Ես վարանում եմ, ի՞նչ կարող եմ տալ):

Անկասկած, դու ինչ-որ մի փոքր բան ունես տալու, բայց եթե անգամ ոչինչ չունես Ինձ տալու, Ես սիրում եմ քեզ:

Միգուցե ես ինչ-որ բա՞ն ունեմ Քեզ տալու:

Դու քեզ հարցրեցի՞ր, թե արդյոք Ես ուզում եմ այն, թե՝ ոչ: Ես ինքնաբավ եմ: Ես բավարարված եմ Ինձնով:

[1] Իսկական առաքելությունը դեռ չէր սկսվել:

Կուզենայի՞ր, համենայն դեպս, որ մի բան տայի Քեզ:

Կուզենայի:

Բայց այդ ժամանակ, ինչ էլ որ Քեզ տամ, Քո աչքին անպետք է երևալու:

Ինչո՞ւ:

Որովհետև, Դու Կատարյալ ես:

Ես կընդունեմ այն, և եթե անգամ դա չար է, Ես դա բարիքի կվերածեմ: Ես Աստվածությունն եմ:

Ուրեմն, ես որևէ լավ բան ունե՞մ Քեզ առաջարկելու:

Ունես, բայց ամեն բարիք գալիս է Ինձնից: Ես եմ տվել քեզ. ամեն ինչ, որ բարի է՝ գալիս է Ինձնից :

(Ես մի փոքր հուսախաբվեցի. ես չեմ կարող Նրան գոհացնել):

Ուրեմն, ես ոչինչ չունեմ Քեզ տալու:

Ո՛չ: Ես քեզ տվել եմ այն ամենը, ինչ դու ունես և ինչ որ լավ բան կա քո մոտ:

Միգուցե մի լավ նկար առաջարկեմ Քեզ[1]:

Քո նկարնե՞րը, Վասուլա: Մի՞թե Ես չեմ տվել արվեստի այդ պարգևը քեզ: Մի՞թե դա ևս Ինձնից չի գալիս:

Ուրեմն, ի՞նչ կարող եմ առաջարկել Քեզ:

Սե՛ր: Պաշտիր Ինձ պաշտիր Ինձ: Առաջարկիր Ինձ քո կամքը՝ հանձնվելով Ինձ: Դա ամենագեղեցիկ բանն է, որ դու կարող ես Ինձ առաջարկել:

Դու գիտես, Տե՛ր, որ ես Քեզ սիրում եմ ու գիտես նաև, որ Քեզ եմ հանձնվել:

Ես հաճույք եմ ստանում լսելով այդ, փոքրիկս:

Մայիսի 29, 1987

(Ես հանկարծ զգացի, որ Իր Խաչը ինձ վրա է: Կարծեցի, թե երբեք չեմ կարողանա այն կրել):

[1] իմ ձեռքով արված նկարներ

Բարձրացրո՛ւ, բարձրացրո՛ւ Իմ Խաչը: Տքնի՛ր Ինձ հետ. միասի՛ն... միասի՛ն... Ես սիրում եմ քեզ, բարձրացրո՛ւ Իմ Խաչը: Ես այժմ պիտի հանգչեմ քո մեջ:

(Ավելի ուշ՝ նախքան (խարիզմատների) շնորհյալների հետ հանդիպումը):

Դու կկերակրե՞ս Իմ դառներին: Բռնի՛ր Իմ Ձեռքը: Ես կառաջնորդեմ քեզ՝ հսկելով քեզ վրա:

(Այդ երեկո ես նորից խնկի հոտ զգացի):

Երբեք չկասկածես Իմ Ներկայությանը:

(Ես խնդրեցի Հիսուսին, որ հեռու վանի այն չար հոգիներին, որոնք շրջապատել էին երիտասարդ մի մարդու, որը մերժում էր ընդունել Աստծուն ու բաց անի նրա աչքերը (այդ մասին ես իմացա խարիզմատների Charismatic խմբում)):

Ինձ ուրախությամբ ողողիր և կանչի՛ր Ինձ այն ամենի համար, որ դու ուզում ես: Վասուլա, հիշեցրո՛ւ նրան Իր Եղբոր մասին: Ես եմ նրա Եղբայրը, որը սիրում է ու հոգում է նրան: Հիշեցրո՛ւ նրան Իմ գոյության մասին: Ես սիրում եմ նրան խելագարության աստիճան. Ես մեռա նրա համար: Դու կանե՞ս դա Ինձ համար, փոքրիկս: Հավատա Իմ Փրկարար Սիրուն:

Մայիսի 31, 1987

(Կիրակի)

Վասուլա, ե՛կ և ստացիր Ինձ[1]: Ես այնտեղ կլինեմ, ուրախացրու Ինձ: Ե՛կ և տես Ինձ: Ասա՛, որ դու Իմն ես, թող որ Ես լսեմ այդ:

Ես Քոնն եմ Հիսուս, և ես սիրում եմ Քեզ:

Վասո՛ւլա, տարիներ շարունակ Ես սպասում էի այդ խոսքերին. սիրի՛ր Ինձ այժմ, երբ դու Իմն ես:

Սովորեցրու ինձ Քեզ սիրել այնպես, ինչպես Դու ես ուզում:

Վստահի՛ր Ինձ, կսովորեցնեմ:

(Ավելի ուշ)

(Ես դեռ զարմանում եմ, թե ձեռքս ինչպես է շարժվում...)

[1] Դա Սուրբ Հաղորդության կանչ էր:

Դու այդ գիտե՞ս Հիսո՛ւս:

Գիտեմ, բայց մի՞թե ես Ամենակարող չեմ: Վասուլա, խաղաղ եղիր, հանդարտ եղիր, անդորը եղիր՝ Ինձ նման:

(Գրելիս, ես երկու անգամ ընդհատվեցի տղայիս պատճառով, որը ներս մտավ դուռը շրխկացնելով... ես բարկացա: Շատ աղմուկ էր):

Սիրի՛ր Ինձ, պատասխանի՛ր Ինձ:

Ես սիրում եմ Քեզ, ես սիրում եմ Քեզ, Տե՛ր:

Երբեք Ինձ չփոխարինես: Ինձ առաջինը դասիր: առաջինը Ինձ դիմավորիր և մնա հավիտյան Իմ դիմաց: Ինչպես մի հայելի, եղի՛ր Իմ արտացոլումը: Բացի Ինձնից, ուրիշներին երբեք չփնտրես: Երբեք չփնտրես քո վաղ կյանքի հին սովորությունները: Ես Սուրբ եմ և Տեր: Ես ու դու մեկ ենք հիմա, և Ես մտադիր եմ քեզ պահել միայն Ինձ համար և հավիտենապես: Խոնարհի՛ր քեզ, սովորի՛ր Ինձնից, ցանկացի՛ր միայն Ինձ, չնչի՛ր Ինձ համար, մի՛ շրջվիր աջ ու ձախ. շարունակիր ուղիղ գնալ: Սիրելի՛ս, թող որ քեզ օգտագործեմ: Կառչի՛ր Ինձնից, հափշտակի՛ր Ինձ քո բառերի պարզությամբ: Պարզությունը գրավում է Ինձ: Ասա՛ Ինձ քո խոսքերը: Թող որ դրանք կրկին լսեմ. ասա՛ Ինձ. «Ես սիրում եմ Քեզ, Հիսուս, դու Իմ ուրախությունն ես, իմ շունչը, իմ հանգստությունը, իմ աչքի լույսը, իմ ժպիտը»:

Աղջի՛կս, եթե դու ավելի ժամանակ հատկացնեիր խորհելու և խոկալու, դու Ինձ ավելի ևս կգոհացնեիր: Դու այսուհետև Ինձ պիտի փնտրես լռության մեջ, սիրես Ինձ՝ բացարձակ լռության մեջ, աղոթես՝ լռության մեջ[1]: Լռությամբ մտիր Իմ Հոգևոր Աշխարհը: Վարձատրի՛ր Ինձ այժմ. Ես սիրում եմ քեզ: Պատվիր Ինձ՝ քեզ Ինձ հանձնելով, մի՛ վշտացրու Ինձ: Եղիր Իմը, սիրելիս, խոսի՛ր:

Ինչպե՞ս լռության մեջ, Տե՛ր:

Լռության մեջ՝ Ինձ նայելով: Ես ուզում եմ, որ հանդարտ մնաս, առանց թույլ տալու, որ որևէ բան քեզ խանգարի: Փնտրիր Ինձ լռության մեջ:

Առանց որևէ խանգարմա՞ն:

Բոլորովին: Անդորրություն փափագիր:

Հիսո՛ւս, ես ինչպես կարող եմ գտնել այդ անդորրությունը իմ ընտանիքում: Դա գրեթե անհնարին է:

Ես դա կտամ քեզ: Ես խղճում եմ քեզ, Վասուլա: Ի՛մ մնացորդ, ի՛մ զմուռս, ի՛մ սեր. Ես ինչեր ասես չեմ անի քեզ համար: Իմ Սիրտը կարեկցությամբ է լցվում քո խեղճության և քո սայթաքումների

[1] հարատև աղոթք

հանդեպ: Ես՝ Տերը, կօգնեմ քեզ: Դու քեզ երբեք չզգաս լքված կամ չսիրված:

Դու գիտե՞ս, թե Ես ինչ զգացի այն ժամանակ, երբ դու քեզ չսիրված էիր զգում:

Որտե՞ղ:

Իմ Եկեղեցում[1]:

Ո՛չ, Տեր:

Ես կրկին անգամ Ինձ խաչված զգացի, կապտած, մտրակահարված, թքված, կրկին դամված: Վասուլա, Ես քեզ ինչպես եմ սիրում: Օգնի՛ր Ինձ վերակենդանացնելու Իմ Եկեղեցին, օգնի՛ր Ինձ՝ թույլ տալով գործածել քեզ: Արիացի՛ր աղջիկս, արիացի՛ր:

Հիսո՛ւս, ես չգիտեի, որ այս ամենը, այսինքն՝ նկատի ունեմ իմ չսիրված լինելու զգացումը, կվիրավորի Քեզ:

Ո՛չ, դու չգիտեիր նույնպես, որ Ես երբեք չեմ մերժում որևէ մեկին՝ որ գալիս է դեպի Ինձ: Ես Սեր եմ և Սերը բոլորի համար է, անկախ այն բանից, թե դու որքան ապականված կարող ես լինել:

Հունիսի 1, 1987

Վասո՛ւլա, Իմ զույգ Ձեռքերն էլ վերքեր ունեն, զույգ Ոտքերն էլ վերքեր ունեն, Իմ կողը բաց է, լայն բացված՝ ցուցադրելով Իմ Սիրտը: Նրանք կրկին խաչում են Ինձ:

Տե՛ր:

Նրանք վնասում են Իմ Եկեղեցուն:

Տե՛ր, մի՞թե այդքան վատ է:

[1] Երբ Ինձ ասացին, որ Հիսուս երբեմն մերժում է մարդկանց, և Նա կարող է դուռը փակել նրանց առաջ: (Հոգևոր ճեմարանում մի քահանա վիճաբանության ժամանակ Ինձ մի հատված տվեց Ավետարանից կարդալու քանանացի կնոջ մասին, որին Հիսուս մերժում է: Բայց վերջում Նա չի մերժում նրան, այլ միայն առարկում է՝ այդ կնոջ հավատը ցույց տալու համար: Ես սակայն այդ չգիտեի, և նա, ով Ինձ ցույց տվեց այս հատվածը, թույլ չտվեց մինչև վերջ կարդալ): Ես գնացի եկեղեցի Սուրբ Հաղորդություն ստանալու և, ըստ մեր վիճաբանության, զգացի, որ ես վերցրել եմ մի բան, որը չէր թույլատրվում՝ խախտելով Կաթոլիկ Եկեղեցու բոլոր օրենքները: Եվ այն հանդամանքը, որ ես առանց թույլտվության վերցրի այն, այդ պատճառով ես Ինձ շատ վատ զգացի: Հաջորդ Կիրակի ես գնացի եկեղեցի և կանգնեցի դռան մոտ, կիսով չափ դուրս (քանի որ ինքս Ինձ անբաղձալի էի զգում), քանի որ հավատում էի, որ ես վատն էի, և որ Աստված շատ բարկացած է Ինձ վրա: Ես առաջ չէի շարժվում Հաղորդություն ստանալու մյուսների հետ՝ վախենալով, որ ավելի վատ կլինի, եթե գնայի:

Վատ է: Զարը կուրացրել է նրանց: Սերը պակաս է նրանց մեջ: Նրանք անկեղծ չեն, նրանք աղավաղել են Իմ Խոսքը, նրանք նույնիսկ հաշմանդամ են դարձրել Իմ Մարմինը: Արդարության Իմ բաժակը լեցուն է, թույլ մի՛ տվեք, որ դուրս թափվի: Ես ուզում եմ, որ նրանք դադարեն Իմ Մարմինը հեղձամահ անելուց: Ես՝ Հիսուս, Սեր եմ, և ուզում եմ, որ նրանք դադարեն միմյանց թունավոր նետեր արձակելուց: Համերաշխության հաստատումը Նրանց միջև կվերականգնի վնասի մի մասը: Ճշմարտությունը դիմակազերծ կանի չարին: Ինչո՞ւ համար են բոլոր այս ծիսակատարությունները, երբ իրականում նրանք ոչինչ չունեն ինձ մատուցելու: Ինձ մաքրություն է պետք, սեր, հավատարմություն, խոնարհություն, սրբություն:

Իմ մեջ փնտրեք այն ամենը, ինչ որ <u>Ես</u> ցանկանում եմ, և Ես այն ձեզ կտամ: Փնտրե՛ք <u>Իմ</u> շահերը և ոչ՝ ձերը: Փառաբանե՛ք <u>Ինձ</u>, պատվե՛ք <u>Ինձ</u>: Խոսքերը քիչ են. Սիրո և համագործակցության գործերը կնորոգեն Իմ Մարմինը: Եղբայրներ, սիրեցե՛ք միմյանց: Օ՜, սիրելիս, որքան բան ունեմ Ես վերականգնելու:

Ե՛կ, աղջիկս, հանգչի՛ր Իմ մեջ, խաղաղություն քեզ:

Հունիսի 2, 1987

Հանդիպիր Ինձ ավելի ուշ և Ես քեզ նախնական խորհուրդներ կտամ. Վասո՛ւլա, գծիր՝

միացրու այդ գծերը,

Միավորվելու համար դուք բոլորդ պետք է խոնարհվեք, դուք բոլորդ փափկելով պետք կամենաք խոնարհվել:

(Ես հասկացա: Նա ինձ տվեց երեք երկաթյա ձողերի մի հստակ ու պարզ տեսիլք: Դրանք ուղղահայաց էին, իրար մոտ: Նա ասաց. «Մինչև որ նրանք բոլորը չխոնարհվեն, ինչպե՞ս կարող են նրանց գլուխները[1] իրար մոտ դալ»: *Կեսօրվա մոտ ես տնից դուրս եկա: Որքան ավելի էի մտածում այս տեսիլքի մասին, այնքան ավելի մեծ էր երևում «լեռը»: Ես շնչահեղձ էի լինում...)*

Հիսո՞ւս:

[1] Ավելի ուշ ես հասկացա, որ գլուխները նշանակում է նաև հեղինակություն, առաջնորդներ:

Ես եմ: Արիացիր: Վե՛ր կաց, սանիկ. բարձրացրո՛ւ, բարձրացրո՛ւ Իմ խաչը, սիրելիս, վեր կաց հիմա: Մի՛ վշտացիր, միասին... միասին...

Իմ Վասուլա, մենք միասին ճիգ կթափենք: Հենվի՛ր Ինձ վրա, երբ դու կհոգնես և թող որ Ես էլ քեզ վրա հենվեմ, երբ հոգնած եմ:

Ընդառաջի՛ր Ինձ, թող որ կատարեմ Իմ ցանկությունները: Եղիր փափուկ, ինչպես մեղրամոմ, և թող որ Իմ Ձեռքը փորագրի քեզ վրա Իմ խոսքերը: Կամեցի՛ր, մի՛ վախեցիր: Ես սիրում եմ քեզ, սիրելիս: Օ՜, ե՛կ, Սերը չի վնասի քեզ:

(Ես վախենում եմ այս աշխատանքից):

Արի աղոթենք.

Օ՜ Հայր,
ինձ հետ եղիր մինչև վերջ,
Տկար եմ ես, տուր ինձ Քո Ուժը,
Որ փառաբանեմ Քեզ: Ամեն:

Սիրելիս, ե՛կ, թող քո վախերը և Ինձ լսիր: Ծառայի՛ր քո Աստծուն: Ես ուզում եմ միավորել Իմ Եկեղեցին:

Վասո՛ւլա, Ես պատրաստել եմ քեզ, որ Ինձ ընդունես: Սիրելիս, արիացի՛ր:

Ես կարիք ունեմ Քո արիությանը, ես ամենևին քաջություն չունեմ:

Ես կխրախուսեմ քեզ և կամրապնդեմ քո սերն Իմ հանդեպ՝ բոլորն Իմ Փառքի համար:

Վասո՛ւլա, կգրե՞ս Իմ խոսքերը: Կում առ կում ըմպի՛ր Ինձնից: Հարմարավետություն մի՛ փնտրիր, եղիր աղքատ, եղիր Ինձ նման, երբ Ես մարմնավոր էի երկրի վրա: Եղիր պարզ, որպեսզի մենք երկուսս էլ զգանք հակադրությունը՝ ի դեմ նրանց չքեղության, ովքեր խարազանում են Ինձ: Թող որ զգամ այդ հակադրությունը: Քաղի՛ր Իմ Սրտից, զարդարի՛ր Իմ Եկեղեցին: Քաղիր Իմ Սրտից և դու կհասկանաս, Իմ փոքրիկ աղջիկ:

(Այդտեղ ես սկսեցի հասկանալ, թե սա ինչ գործ է: Դրա համար եմ վախենում: Հիսուս սկսել է խրվել Եկեղեցու մեջ...)

Հունիսի 3, 1987

(Ես «գրությամբ» կրկին հարձակման ենթարկվեցի չարի կողմից: Նրանք կատուների նման թռան մեջքիս: Ես զգվեցի նրանցից. թվում էր, ողջ դժոխքը դուրս էր թափվել: Նրանք ինձ այնպես բարկացրին, որ ես ասացի նրանցից մեկին. «Հիսուսի անունով՝ հեռացի՛ր և նետվիր կրակի մեջ»: Նա թողեց գնաց: Սրա նման շատերը կային, որոնք մեկ առ մեկ նույն ձևով հեռացան, ինչպես առաջինը: Հիսուսն ինձ ասաց. «Խնդրի՛ր Իմ անունով և դա կկատարվի. բայց դու հավատ պիտի ունենաս այն բանի հանդեպ, ինչ

որ խնդրում ես. գործի՛ր այս ձևով: Աղոթի՛ր և խնդրի՛ր: Աղոթի՛ր Իմ Անունով, աշխատի՛ր Իմ Անունով, խնդրի՛ր Իմ Անունով: Վերակենդանացրո՛ւ Իմ Անունը: Եղի՛ր Իմ արտացոլումը, համատեղ քայլիր Ինձ հետ: Բարձրացրո՛ւ գլուխդ դեպի Ինձ. հավատա՛, ինչ որ խնդրում ես»:

Նա ինձ ասաց, որ դևերը վախենում են ինձնից, որովհետև ես սպառնալիք եմ ներկայացնում նրանց համար: Ավելի ուշ ես գլխի ընկա, թե որտեղ եմ գտնվում: Ես զգացի, որ իմ ոտքերը թաց և լպրծուն ցեխի մեջ են: Մի ակնթարթում ես ճանաչեցի դժոխքի միջավայրը: Դա միայն մի ակնթարթ էր: Ես հետո հասկացա, թե ինչո՞ւ այսօր այդքան չարի միջամտություն կար գրելիս: Երբ ես հարցրեցի այդ մասին, Հիսուսն ասաց. «Կարո՞ղ էր դա մեկ ուրիշ տեղ լինել»: Մենք միասին անցնում էինք դժոխքի դարպասներից[1] հոգիներ բժշկելով, նրանց խլելով սատանայի դարպասներից: «Վասուլա, թույլ տուր քեզ այս ձևով ևս գործածել: Սա նաև քո գործի մի մասն է կազմում»*):*

Հունիսի 4, 1987

(Այսօր Աստված ինձ բարձրացրեց Իր ափի մեջ, և ես ինձ այնքան փոքր զգացի: Նա խնդրեց ինձ, որ նայեմ Իրեն: Ես նայեցի և տեսա Գեղեցիկ Ժպտացող մի Հսկայի):

Վասո՛ւլա, Ինձ նայիր, նայի՛ր Իմ Դեմքին:

(Նա ժպտում էր՝ փայլելով գեղեցկությամբ: Ես ինձ մի փոքրիկ կետ զգացի Իր ափում):

Մի՞թե դա էական է Ինձ համար: Ի՞նչ նշանակություն ունի Ինձ համար, որ դու ոչ այլ ինչ ես, եթե ոչ փոշու մի մասնիկ: Զգա՛, թե որքան եմ սիրում քեզ:

(Նա Գեղեցիկ էր, և այս ամենը Գեղեցիկ էր):

Ես Գեղեցիկ եմ: Վասուլա, երբ դու մտածում ես Իմ մասին, մտածիր այնպես, ինչպես որ Ես երկրի վրա էի մարդու կերպարանքով, ձեր պատկերով: Իմ մասին մտածիր այդ ձևով:

Բայց, Տե՛ր, Դու իսկապես ի՞նչ տեսք ունես: Ինչպիսի՞ն են Քո դիմագծերը:

Ես Ամեն բան եմ: Ես Ալֆան եմ և Օմեգան: Ես Հավիտենականությունն եմ: Ես Կենաց Ջուրն եմ: Սիրի՛ր Ինձ:

Մնա Իմ մեջ, <u>երբեք մի՛ վախեցիր Ինձնից</u>: Թող որ այս վախը, որը սխալմամբ ուսուցանվել է մարդկանց կողմից, փոխարինվի սիրով: Ապրի՛ր Իմ մեջ առանց վախի: Վախեցիր Ինձնից միայն այն ժամանակ, երբ

[1] Քավարանի ամենացածր մասը՝ դժոխքի մոտ:

կըմբոստանաս Իմ դեմ: Ես Սեր եմ: Ասա՛ նրանց, ասա՛ նրանց, թե Սիրո ինչպիսի մի վիհ է Իմ Սիրտը:

Հունիսի 5, 1987

Վասո՛ւլա, գտիր Ինձ Իմ Խաչի Ճանապարհի Կայաններում: Օրհնյալ լինես. մենք միասին կգործենք:

(Ես դեռ չեմ գնացել Իր Խաչի Կայանները: Բայց պիտի գնամ: Սպասում եմ քահանային, որին Հիսուս խնդրել է, որ Ինձ հետ լինի):

Հունիսի 6, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ: Նայել Աստծո Դեմքին՝ նշանակում է տեսնել Սերը:

Ես նայում էի Նրա նկարին, Սուրբ Վարշամակին:

Ուզո՞ւմ ես, որ Ես ամբողջովին իշխեմ քեզ վրա, Վասուլա:

Այո՛, Աստված իմ, կուզեմ, եթե դա Քո ցանկությունն է:

Ուրեմն Ինձ ազատ թող, երբեք մի՛ խանգարիր Ինձ, ապրի՛ր Ինձ համար:

Տե՛ր, ես Քեզ ինչպե՞ս եմ խանգարում, ասա Ինձ, որպեսզի նման խոչընդոտներ չլինեն:

Ինձ խանգարում են մեղքերը, մեղքերը, Վասուլա: Դու իսկապես թույլ կտա՞ս Ինձ գործել քո մեջ, ինչպես որ Ես եմ ցանկանում:

Այո՛, Աստված իմ, արգելի՛ր Ինձ մեղք գործելուց, ների՛ր իմ մեղքերը, գործի՛ր իմ մեջ, ինչպես ցանկանում ես: Նկատի մի՛ ունեցիր իմ երկչոտությունը: Ուշադրություն մի՛ դարձրու դրա վրա: Քա՛րշ տուր Ինձ քո ետևից, եթե պետք է: Ինձ հետ ազատ զգա, Քո գործը արա:

Ես չեմ ուզում պատճառ լինել որևէ հապաղման, ես չեմ ուզում խոչընդոտ լինել Քո գործերին: Այնպես որ, ուշադրություն մի՛ դարձրու իմ թուլություններին, արա՛ ինչպես կամենում ես:

Աղջի՛կս, Ես գոհ եմ քո խոսքերից: Ե՛կ, Ես կշարունակեմ Իմ Գործերը: Ինձ ազատ թող կատարելու Իմ Կամքը: Ե՛կ, թող որ Ես պարզաբանեմ, թե ինչպես եմ գործում: Ես քեզ շատ շնորհներ եմ տվել, Վասուլա, բայց Ես ուզում եմ, որ դու ճանաչես ու գնահատես Իմ շնորհները: Բերկրանք պատճառիր Ինձ և է՛լ ավելի հավատա Ինձ:

Ես վախենում եմ, որ եթե Քեզ չգոհացնեմ, Դու կարող ես ետ վերցնել այդ շնորհները:

Ես ինչո՞ւ պիտի ետ վերցնեմ Իմ տված շնորհները:

Որովհետև, եթե ես չաճեմ և Քեզ չհետևեմ, ժամանակի ընթացքում Դու կարող ես դրանք ինձնից ետ վերցնել:

Ո՛չ, երբեք:

Ինձ թվում է ճիշտ կլիներ ետ վերցնել, եթե մեկը չի գոհացնում Քեզ:

Դա քո աչքին է ճիշտ թվում, զավակս: Մինչև որ ես գամ քեզ ազատելու, ես պիտի կերակրեմ քեզ. ես երբեք չեմ զլանա քեզ Իմ կերակուրը տալուց: Ես, որ տարիներով քո կարոտն եմ քաշել, տարիներով սպասել եմ, որ քեզ սեղմեմ Իմ Սրտին՝ սիրելով քեզ, մի՞թե հիմա ես քեզնից ետ պիտի պահեմ Իմ կերակուրը: Ե՛կ, հենվիր Ինձ վրա, որքան որ ցանկանում ես: Հիշի՛ր, ես Սեր եմ. ես ձրիաբար եմ տալիս և ետ չեմ վերցնում ինչ որ տալիս եմ: Ես միշտ պիտի հիշեցնեմ քեզ Իմ ուղիները:

Հունիսի 7, 1987

Վասուլա, այո՛, նայիր Իմ Դեմքին: Ես սփոփվում եմ, երբ նայում են Ինձ: Ասա նրանց, որ շատ քիչ բան է պետք Ինձ սփոփելու համար: Ե՛կ և գովերգիր Ինձ՝ սիրելով Ինձ:

(Իմ դիմաց Սուրբ Վարշամակի պատկերն էր ու ես նայում էի դրան, երբ Հիսուս գրում էր այդ պատգամը):

Հունիսի 8, 1987

Վասո՛ւլա, ես ուզում եմ հաստատել Իմ Գործերը:

Ես ի՞նչ պետք է անեմ:

Ես կառաջնորդեմ քեզ: Ես քեզ նույնիսկ ավելի հեռուն կառաջնորդեմ: Կառչի՛ր Ինձնից, Իմ Խաղաղությունը քեզ:

Հունիսի 9, 1987

(Անցյալ երեկոյան ես տեսա Աստծո Դեմքը երկնքում: Երկինքը մի Գեղեցկություն էր: Դա կարծես մի նկար լիներ՝ արված վարպետ մի նկարչի կողմից: Ես դրա մեջ ճանաչեցի Աստծո Գեղեցկությունը: Դա բացահայտ էր):

Այո՛, Վասուլա, Ինձ տես Իմ Արարչագործության մեջ, ճանաչի՛ր Ինձ և Սիրիր Ինձ:

Հունիսի 10, 1987

(Դհակա, Բանգլադեշ)

(Երեկ, վերջին փաթեթավորումները կատարվեցին մեր մեկնման համար: Ահագին աշխատանք էր):

Տե՛ր, ես մտածում եմ մի տեսության մասին, որը կոչվում է «Հիսուսի գիտակցություն»: Կարծում եմ դա «մեր ներքին բարի եսն» է: Միգուցե այս ձևո՞վ են գրությունները ստացվում:

Վասուլա, քեզ չեմ ասե՞լ, որ մենք միացած ենք. մենք մեկ ենք, սիրելիս: Անվանիր այն «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ»: Ապրի՛ր Ինձ համար:
Ահա, թե ինչ եմ ուզում, որ դու գրես:

(Ես մտածում էի, թե Աստված ինչ պիտի գրեր հիմա...)

Իմ իղձերը, փոքրիկս:

(Աստված ինձ ստիպեց մի հատված կարդալ Սուրբ Գրքերից):

Այո՛, բարձրացիր, լսի՛ր Ինձ: Դու կգա՞ս Ինձ տեսության Իմ Եկեղեցում: Վասուլա, ե՛կ Ինձ մոտ:

Ո՞ր Եկեղեցում, Տե՛ր, ո՞ր մեկը նկատի ունես:

Բոլորն էլ Իմ Եկեղեցիներն են, նրանք բոլորը Իմն են: Նրանք Ինձ են պատկանում և միմիայն Ինձ: Ե՛ս եմ Եկեղեցին: Ես Եկեղեցու Գլուխն եմ:

Բայց Դու այնպես ասացիր, Հիսո՛ւս, որ կարծես ուզում էիր, որ ես մի որոշակի Եկեղեցի գնամ: Ես այդպես լսեցի ու հասկացա:

Դու կարող ես Ինձ մոտ գալ ցանկացած ժամանակ և ցանկացած Եկեղեցին: Տարբերություն մի՛ դիր ուրիշների նման: Նրանք բոլորը Ինձ են պատկանում[1]: Ես Մեկ Աստված եմ և Մեկ Մարմին ունեմ, մի Մարմին, որը նրանք խեղանդամ դարձրին: Աղորիքի քարերը փչացրել են Իմ Մարմինը:

Աստված իմ, Դու այնքան վշտացած ես թվում:

Օ՛, Վասուլա, ինչո՞ւ, ինչո՞ւ են նրանք դաժանորեն մասնատել Ինձ:

[1] Եկեղեցին երբեք չբաժանեց Իրեն, այլ մարդիկ էին, որ բաժանեցին Այն, ինչպես և իրենք իրենց:

(Աստված շատ դառնացած էր: Նա ինձ հիշեցրեց այն ժամանակները, երբ շուռ տվեց բոլոր լումայափոխների սեղանները Երուսաղեմի տաճարում: Մինչև հիմա ես երբեք Նրան ԱՅԴՊԵՍ ԲԱՐԿԱՑԱԾ, լսած կամ տեսած չկայի):

Վասուլա՞:

Հիսո՞ւս:

Ես եմ:

Այդ Դո՞ւ ես, իսկապես այդքան դառնացած:

Օ՛, այո՛, Ես եմ: Օ՛, այո՛, Ես վերջապես կարող եմ քեզ վրա բարձել Իմ Խոսքերը: Վասուլա, քո հետաքրքրությունների համար չէ, որ քեզ տրվել է այս շնորհը: Դա տրվել է քեզ, որպեսզի Իմ Խոսքերը փորագրվեն քեզ վրա:

Ես անցյալում Քեզ երբեք չեմ տեսել այդպես հուզված, այդպես չէ՞:

Այո՛, բարկացած եմ: Իմ Մարմինը ցավում է: Այն պատառոտվել է:

Աստվա՛ծ իմ, բայց ես ի՞նչ կարող եմ անել: Ես անօգնական եմ:

Մի՞թե Ես այդ բոլորը չգիտեմ, Վասուլա: Ես պիտի տնօրինեմ քեզ մինչև վերջ: Երբեք չվախենաս Ինձնից, աղջիկս: Իմ Եկեղեցու միավորումը՝ Իմ Մարմնի Փառքը պիտի լինի: Խաղաղություն քեզ, սիրելիս:

Այո՛, Տեր, ես չեմ նայի աջ ու ձախ, ոչ էլ ետ: Ես միայն առաջ պիտի նայեմ:

Այո՛, հասկացիր, թե ինչպես եմ Ես գործում: Հանդարտ եղիր, ինչպես այժմ, հոժարի՛ր Ինձ գոհացնել: Մեկ եղիր Ինձ հետ:

Տե՛ր, ենթադրենք նրանք, ովքեր Դու ուզում ես որ լսեն, չեն լսում: Հետո՞:

Այժմ, դու մի քայլ Ինձնից առաջ ես ընկնում: Զավակս, քայլի՛ր Ինձ հետ, միասին: Այո՛, հետևի՛ր Ինձ, վստահի՛ր Ինձ: Ե՛կ, Ես կառաջնորդեմ քեզ:

(Ես հանկարծ անակնկալի եկա: Լսեցի մի շան հաչոց (անսովոր էր): Հետո իմ ննջարանի դուռը բացվեց, և ես ճանաչեցի իմ դիմաց կանգնած գողին, որը երեք օր առաջ, դիշերով, մտել էր մեր սենյակը, փող էր գողացել ու փախել: Ահա և նորից նա: Ես հրամայեցի նրան դուրս գնալ: Նա շուռ եկավ և հեռացավ, որից հետո ես ահազանգեցի: Գիտեի, որ Աստված որոշակիորեն ինձ մի բան էր փորձում ասել):

Վասո՛ւլա, ես ուզում եմ քեզ մի բան հիշեցնել: Երբ գողը[1] մտավ քո սենյակը, դու սպասո՞ւմ էիր նրան:

Ո՛չ:

Ուրեմն, ես էլ այդպես հանկարծակի պիտի գամ: Ոչ էլ որևէ մեկը ճանաչեց նրան, որովհետև ոչ ոք չէր սպասում, որ նա այդտեղ լիներ:

(Հիսուս նկատի ուներ տասը փաթեթավորողները և գրասենյակի աշխատող մարդը, որոնք տեսան նրան, բայց չհավատացին, որ նա գող էր: Ես զգում եմ, որ այս վերջին նախադասությունը շատ կարևոր է և ավելի շատ բան է թաքցնում իր մեջ, քան ասում: «Ճանաչեց» բառը նույնպես շատ խոր նշանակություն ուներ):

Դա քեզ մի այլ բան չի հիշեցնո՞ւմ: Թույլ տուր քեզ ասել, որ նա մեղք գործեց, բայց նրանք, ովքեր դատավճիռ կայացրին նրա հանդեպ՝ ճիպոտը ջարդելով նրա մեջքին, արդյո՞ք նրանք նույնպես չմեղանչեցին:

Ես չգիտեմ, թե Դու ինչ ես ուզում հասկացնել ինձ: Այո՛, մենք բոլորս մեղավորներ ենք:

Վասո՛ւլա, այս բոլորը տեսնելով, ես պետք է լռե՞մ:

Տե՛ր, Դու գողի՞ն ես պաշտպանում:

Ո՛չ, Վասուլա, Ես չեմ պաշտպանում[2]... Մի մարդու անուն տուր, որը չի մեղանչել:

(Չեմ կարողանում որևէ անուն տալ):

Մեծ մեղքեր, փոքր մեղքեր, բոլորը մեղքեր են: Մեղք գործելը վշտացնում է Ինձ: Վասուլա, Ես այնքան շատ մեղքերի եմ ականատես: Սերը տառապում է. Սերը տրտմում է, տրտմում... Արարչությո՛ւն, Իմ արարչություն, վերադարձի՛ր դեպի Սերը...

Աղջի՛կս, հագեցրու Ինձ սիրով: Հատուցի՛ր, սիրելիս, հատուցի՛ր:

Հունիսի 11, 1987

(Մինչ այժմ, մեր կահույքի մեծ մասը տեղափոխվեց: Ես աթոռ պիտի փնտրեմ, որպեսզի նստեմ ու գրեմ: Տունը դեռ խառն է փաթեթավորողների գնալուց հետո: Այստեղ ու այնտեղ թղթերի կույտեր են, կոշիկներ, շշեր, թղթեր, գոտիներ՝ բոլոր գրասեղաններին: Բայց և այնպես, այս ամբողջ տեղափոխման մեջ, երբ մենք պետք է հրաժեշտի համար սեղաններ

[1] Աստված ճիշտ բառն օգտագործեց, քանի որ մենք ավելի ուշ իմացանք, որ նա գողերի մի խմբի էր պատկանում:
[2] Հիսուս լուռ էր մի որոշ ժամանակ:

պատրաստեինք (մեկը՝ ութսուն մարդու համար, մյուսը՝ երեսուն), Աստծո ձեռքը ամենևին չդադարեց դրելուց: Ես, օրական երկուսից երեք ժամ, միշտ գրում էի Նրա համար: Նա ինձ անհավատալի ուժ է տալիս, և ես ամենևին հոգնած չեմ զգում ինձ: Ես բացարձակ խաղաղության մեջ եմ, Նրա խաղաղության):

Վասո՛ւլա, Իմ Հոգու սիրելին, Ինձ մոտ մնա: Դարձի՛ր Ինձ, թող որ Իմ Մատը դիպչի քո սրտին: Զավա՛կս, եթե իմանաս, թե որքան եմ քեզ սիրում: Ես քեզ առաջնորդելու եմ մինչև վերջ: Ավելին զոհիր Ինձ համար: Հանուն Ինձ, դու կտառապե՞ս:

Այո՛, Տեր, արա ինչպես կամենում ես:

(Նա ինձ նախկինում հարցրել էր դա, բայց ես վախից վարանում էի: Նա կրկին հարցրեց):

Վասո՛ւլա, ես այնքան ուրախ եմ: Դու Ինձ համար կզոհաբերվե՞ս, որպես մի գառ:

Արա՛, ինչպես կամենում ես, Տե՛ր:

Այս ամենը իզուր չի լինելու. ամեն ինչ պիտի լինի Խաղաղության և Սիրո համար: Իմ Ծարավը մեծ է, Վասուլա: Ես պիտի առաջնորդեմ քեզ դեպի անջրդի հողեր, ուր քո աչքերը կտեսնեն այնպիսի բաներ, որ դու երբեք չես տեսել: Ես Երկնային Ուժերով պիտի առաջնորդեմ քեզ ուղղակի Իմ Արյունլվա Մարմնի խորքերը: Ես պիտի մատնանշեմ քեզ բոլոր քահանայական դասի մեղավորներին, որոնք Իմ Մարմնի փշերն են: Ես չեմ խնայելու նրանց. Ես ուժասպառ եմ եղել: Իմ Վերքերը ավելի լայն են բացված, քան երբևիցե եղել են. Իմ Արյունը դուրս է հորդում: Ես կրկին խաչվում եմ Իմ յուրայինների կողմից, Իմ հարազատ քահանայած հոգիներից:

Աստվա՛ծ իմ, Դու ինձ այնքան ցավ ես պատճառում: Ինչո՞ւ են նրանք Քեզ այդպես անում, ինչո՞ւ:

Վասո՛ւլա, նրանք չգիտեն, թե ինչ են անում: Սիրելիս, տքնի՛ր քո Աստծո հետ: Հոժարակամ եղիր դիմագրավելու Իմ տառապանքները և կիսելու դրանք Ինձ հետ:

Ես կլինեմ, որպեսզի մխիթարեմ Քեզ: Հիշի՛ր նրանց, ովքեր սիրում են Քեզ:

Նրանք Իմ Հոգու սիրելիներն են: Ես կարիք ունեմ շատ ավելի նման հոգիների, որոնք զոհաբերում են իրենց սրտերն Ինձ համար: Ես սիրում եմ նրանց, Ես վստահում եմ նրանց: Նրանք ճաշակում են Ինձնից, նրանք Ինձ համար զոհաբերվողներն են, նրանք այն ողորկ թերթիկներն են, որոնք փոխարինում են Իմ փշերին, նրանք Իմ զմուռսն են:

Վասուլա՛, մի՛ վախեցիր. մենք դեռ ավելի խորը կթափանցենք, ուր խավարն է տիրապետում: Ես պիտի առաջնորդեմ քեզ:

(Ավելի ուշ, իմ հոգին սկսեց զգալ Աստծո դառնությունը: Ամեն ինչ, ուտելիք թե խմելիք, որ մտնում էր բերանս, դառը համ ուներ: Նա այնպես արեց, որ ես խմեմ Իր Բաժակից: Այնուհետև, ես դժվարություն ունեցա շնչելիս: Հոգիս ու մարմինս ցավում էր):

Հունիսի 15, 1987

(Երեկ, ես մեկնեցի Հոնկոնգ՝ արձակուրդի: Մինչ անցնում էի Բանկոգով, մի բան պատահեց: Ես նստեցի փոխանցման սրահում, աթոռների շարքի վերջում, և ուզում էի կարդալ: Մի արաբ մարդ, ուրիշ երկու արաբների հետ, անսպասելի ոտքերիս տակ նետեց մի կարպետ՝ բոլորովին անտեսելով ինձ: Ապա, նրանք ընկան գետնին՝ բարձր ձայնով երկրպագելով Աստծուն ու մեծ ուշադրություն գրավելով: Ես անհարմար զգացի, չնայած իմ շուրջը ոչ ոք չէր նստած: Զգացի, որ խանգարում եմ, որովհետև հենց իրենց դիմացն էի: Ես չշարժվեցի: Նրանց ձայները ավելի բարձրացան և ինչ-որ մեկը իմ ետևից նկարեց ողջ տեսարանը:

Ավելի ուշ, Աստված ինձ ասաց. «Այս մարդն իր աղոթքներն այնքան բարձր ասաց, որ բավարար էր մեծ ուշադրություն գրավելու համար: Դա լսվեց փոխանցման սրահում, բայց այդ սրահում միայն պատերը լսեցին նրան: Իմ Սիրտը ոչինչ չլսեց. բոլոր բառերը մնացին նրա շուրթերի վրա: Սակայն ես լսեցի քո ձայնը, թեև ոչ ոք չլսեց քեզ և ոչ ոք չգիտեր, թե ինչ ես ասում Ինձ. բայց այն եկավ քո սրտից և ոչ քո շուրթերից»:

Ես չէի ուզում գրի առնել այս, որովհետև զգուշանում էի խտրականությունից: Բայց Աստված ասաց ինձ. «Ի՞նչ ունես վախենալու: Ես եմ Ճշմարտությունը և մի՞թե սա քրիստոնյաների հետ չի պատահում»:

Այսօր մենք ավտոբուսով մի շրջագայություն կատարեցինք քաղաքում և արվարձաններում: Հանկարծակի, բարձր շենքերի փոխարեն, ես հսկայական սև խաչեր տեսա[1]*: Ես կարծեցի դա իմ երևակայությունն է, բայց լսեցի Աստծո ձայնը, որն ասում էր. «Ո՛չ, դա քո երևակայությունը չէ: Դրանք Իմ Խաչերն են»: Երբ տեսա «Գնորդների դրախտը», մտածեցի, որ եթե ես ապրեի դրա մեջ՝ կմեռնեի: Դա չարչարանք կլիներ ինձ համար. իսկ ընդամենը մեկ տարի առաջ ես կարծում էի, որ դա դրախտ էր ...*

Աստված չէր ուզում խնայել ինձ նաև այս մեկն ասելուց: Ավտոբուսով շրջագայելիս, մեզ ուղեկցող անձը ցույց տվեց մի բացառիկ գեղեցկություն ունեցող ամառանոց, որը Հոնկոնգի ամենահարուստ մարդուն էր պատկանում: Նա մեզ ասաց, որ երկու միլիոնատեր կա, որոնք շատ հայտնի են Հոնկոնգում՝ իրենց անուններով: Աստծո ձայնը հասավ իմ ականջին, ասելով. «Բայց ես չգիտեմ, թե ովքեր են նրանք: Նրանք աշխարհին են պատկանում»*):*

«Նրանց հարստությունը աշխարհիկ հարստություն է, նրանք ոչինչ չունեն Իմ Թագավորության մեջ»:

(Աստված Ինքը գրեց սա):

[1] ես հիշեցի «անջրդի հողեր» խոսքերը:

Սիրելիս, ես քեզ նշաններ եմ տալիս, աչալուրջ եղիր: Վասո՛ւլա, հավատա՛ ինչ որ լսում ես Ինձնից:

Ես մտածում էի արաբի մասին...

Սրբությունը պակասում էր նրան: Անգամ դու կարող էիր տեսնել դա:

(Ավելի ուշ)

Օ՛, Վասուլա, մի՞թե ես ավելի հարգանքի արժանի չեմ:

(Ես վախեցա դրանից: Ես հնարավորություն չունեի Աստծո հետ լինելու, որպեսզի գրեի: Այնպես որ, ես առիթը օգտագործեցի գրելու հյուրանոցի սենյակում՝ տղայիս և ամուսնուս ներկայությամբ: Հեռուստացույցը միացրած էր: Ականջներս փակեցի ականջակալներով): Ուրիշ ոչ մի տեղ չունեի գնալու:

Ես իրավացիորեն ետ եմ վերցնում քո բոլոր հարմարությունները:

Ինչո՞ւ, Տեր:

Որպեսզի քեզ սովորեցնեմ ցանկալ քո Աստծուն: Սպասիր, մինչև մենք մենակ մնանք:

Ների՛ր ինձ...

Ես ներում եմ քեզ: Դե՛հ, Վասուլա, գործի՛ր, չնայած, որ դու առայժմ կախյալ վիճակում ես:

Ինչպե՞ս, Տեր:

Թույլ տուր քո ականջին չչնջալ Իմ բոլոր ցանկությունները: Վասուլա, Ի՛նձ փափագիր: Օգտագործի՛ր շնորհները, որ ես պարգևել եմ քեզ: Հիշի՛ր, դա միայն Իմ Ձեռքը չէ, որ գործածում է քո ձեռքը: Ես բաց արի քո ականջները: Ես ցույց տվի քեզ, ինչպես տեսնել Ինձ, և ինչպես Ինձ զգալ: Այնպես որ, գործածիր մյուս շնորհները ևս: Ես սիրում եմ քեզ:

Հիսո՞ւս:

Ես եմ, Վասուլա:

Մենք նորից միասին ենք այս ձևով:

Այո՛, բայց ոչ երկար: Ինձ մի՛ վերապահիր հետագայի համար, պարզապես այն բանից ելնելով, որ դու այլևս չես հետևում քո նախկին կյանքի ոճին: Ինձ կողպի՛ր քո սրտում, զավակս:

Տե՛ր, մի՞թե ես դեռ ավելի մեծ փորձությունների պիտի հանդիպեմ:

Օ՜, այո՛, դու պիտի դիմադրավես շատ ավելի դաժան փորձություններին:

(Ես հոգոց հանեցի):

Ինձ վստահիր: Ես քեզ մոտ կլինեմ: Մի՞թե դու Իմ զոհը չես: Ուրեմն, Ես քեզ ինչո՞ւ ամբարիշտների մեջ պիտի թողնեմ: Ես քեզ տալիս եմ նրանց, որպեսզի դու լինես ամբարիշտների մեջ:

Բայց ես էլ ամբարիշտ եմ, ո՞րն է տարբերությունը: Ես նրանց նման եմ:

Իսկապե՞ս, այդ դեպքում ինչո՞ւ ես ուզում Տուն գալ՝ Ինձ մոտ:

Որովհետև ես սիրում եմ Քեզ:

Ես քեզ Ինձ նման ձևավորեցի, որպեսզի քեզ կարող դարձնեմ, որ ուրիշներին դեպի Ինձ բերես: Ես քեզ դեռ ավելի պիտի անջատեմ աշխարհիկ հոգսերից: Սպասի՛ր և կտեսնես: Այո՛, Վասուլա:

(Ես տեսա Նրան իմ դիմաց):

Սիրիր Ինձ: Ե՛կ, բռնիր Իմ Ձեռքը, ինչպես արեցիր երեկ:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, դրիր սպիդ բառը:

ՍՊԻ՞Դ: (AIDS)

Այո՛, փոխարինիր այն *Արդարություն*[1] բառով: Իմ Ողորմության Բաժակը դուրս է թափվում եզրերից, իսկ Իմ Արդարության Բաժակը լեցուն է: Թույլ մի՛ տուր, որ Այն թափվի: Ես ձեզ անցյալում ասել եմ, որ աշխարհը անարգում է Ինձ: Ես Սիրո Աստված եմ, բայց և ճանաչված եմ որպես Արդարադատ Աստված: Ես ատում եմ անաստվածությունը:

(Ավելի ուշ)

Սիրելիս, դու պիտի թափանցես Իմ Մարմնի մեջ: Ես քեզ թույլ կտամ տեսնել Իմ փշերն ու մեխերը:

Տե՛ր, ես ինչպես պիտի տեսնեմ այդ բոլորը:

Ես քեզ տեսողություն կտամ, որպեսզի դու տեսնես: Ես քեզ ուժ կտամ՝ դուրս քաշելու Իմ մեխերն ու փշերը: Ես վերստին խաչված եմ:

Սակայն, Տե՛ր, Դու ինչո՞ւ ես թույլ տվել, որ Քեզ կրկին խաչեն:

[1] կարդա Հռոմ. 1:18-32

Վասո՛ւլա, Վասո՛ւլա, Ես բռնված եմ Իմ յուրայինների կողմից, արհամարհված եմ Իմ սիրելիների կողմից[1]: Ե՛կ, պատվիր Ինձ, սիրի՛ր Ինձ:

Ես սիրում եմ Քեզ, ես փարվել եմ Քեզ: Ե՞րբ պիտի դա պատահի:

Ա՜հ, Վասուլա, մի՛ վազիր Իմ առջևից: Ամեն ինչ կգա ժամանակին:

Բայց, Տե՛ր, Դու գիտես, որ ես կողմնակի մեկն եմ: Մի ոչնչություն, որը չգիտի, թե ինչ է կատարվում այնտեղ, որտեղ Դու նկատի ունես: Ուրեմն, ո՞վ պիտի ուզենա տեսնել իմ թղթերը (Քո գրությունները): Նրանք այդ բոլոր գրությունները դեմքիս կշպրտեն՝ ծիծաղելով, և հավանաբար, որպես կոնֆետներ, իրենց շուրջը շաղ կտան: Վերջապես, ո՞վ եմ ես, եթե ոչ՝ մի «պրոֆեսիոնալ մեղավոր»:

Հիշի՛ր, ով է քեզ առաջնորդում: Ես Աստված եմ: Հիշո՞ւմ ես ինչ ասացիր քո ընկերոջը, այո՛, անհավատին: Դրանք Իմ խոսքերն էին. «Դու նման ես մի մկան, որ փախչում է մի Հսկայից»: Դու փոշու մի մասնիկ ես:

(Իրոք, մեր ընկերներից մեկը, մի «անհավատ», Աստծուց պատգամ ստացավ: Նա ինձ ասաց. «Մի կես բոպեում, այս պատգամը ոչնչացրեց քսան տարիների մասնական իմ կայուն հավատը: Այդ ինչո՞ւ, ես՝ լինելով մի պրոֆեսիոնալ մեղավոր, պիտի այսպիսի պատգամ ստանամ: Բայց ես կպայքարեմ դրա դեմ ու կփախչեմ»: Ես ծիծաղեցի և նրան ասացի Աստծո խոսքերը):

Վասո՛ւլա, վստահիր Ինձ:

Տե՛ր, ես վստահում եմ: Բայց ե՛ս եմ հարցը. Դու ինչո՞ւ ես ինձ վստահում: Դու չպիտի վստահես, Տե՛ր իմ, թեև ես ամբողջովին բարյացակամ եմ, բայց, ինչպես Դու ասացիր, շատ թույլ եմ: Մի՛ վստահիր ինձ: Ես շատ մեղավոր եմ:

Վասո՛ւլա, դու անասելի տկար ես, Ես այդ գիտեի դեռ Հավիտենականությունից: Բայց եղիր ոչնչություն: Ես ուզում եմ, որ դու լինես ոչնչություն: Էլ ուրիշ ի՞նչ կերպ Ես Ինքս Ինձ կկարողանայի բացահայտել, եթե մենք երկուսս լինեինք: Ինձ միշտ ազատ թող և Ես կգործեմ քո մեջ: Ե՛կ, Ինձ ապավինիր:

Հունիսի 17, 1987

(Դհակա)

Դու ինձ իրազեկ դարձրիր իմ թշվառությանը և մոտեցար ինձ՝ անկախ իմ չարամտությունից, և բացարձակապես ոչ մի արժանիք չգտնելով հանդերձ, նման շնորհներ տվեցիր ինձ: Սա համեմատելով սրբերի հետ, շատ ակներև է երևում: Ուրեմն, Դու հասկանո՞ւմ ես, թե ինչու է գալիս այս «կասկածների

[1] Նա այդ ասաց շատ տխուր ձայնով: Նա նման էր մեկին, որ կարծես դավաճանվել էր իր ամենալավ ընկերոջ կողմից:

ալիքը»: Հենց միայն իմ անարժանության համար: Հիշի՛ր, Դու ինձ ամեն ինչ սովորեցրիր զրույց: Հիշի՛ր, թե ես սկզբում ինչպե՞ս էի ուրանում Քեզ, իմանալով, որ այդ Դու ես: Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում: Երբ ես «կասկածների ալիքին եմ ենթարկվում», վերևում նշված պատճառներով, ես գիտեմ, որ վիրավորում և ցավեցնում եմ Քեզ, ինչպես Դու մի անգամ ասացիր. «Դու վիրավորում ես Ինձ, երբ դու մոռանում ես, թե քեզ ով փրկեց խավարից»: Մյուս կողմից, գլուխս գրեթե պտտվում է, որ հասկանամ, թե Դու ինչու մոտեցար այնպիսի մի հոգու, ինչպիսին ես եմ, տալով նման կարևորություն ունեցող մի առաքելություն, որը սկզբից պիտի սկսեր կարդալ Սուրբ Գրքերը և որը մեղավոր էր հարյուր հիսուն տոկոսով:

Որքան Քո առաջնորդությունը շարունակվում է, այնքան ավելի հրաշքներ է այն բերում: Բացարձակ անասվածները խոնարհվեցին, իսկ Դու օրհնեցիր Այն, Տե՛ր, այնպես որ, ես չպետք է զարմանամ: Մեկը մյուսի ետևից անհավատները վերադարձան դեպի Քեզ՝ կարդալով Այն (պատգամները), անգամ այնպիսի մարդիկ, որոնք ասում էին, թե «Դու ինձ <u>երբեք</u> չես կարող համոզել, որ նույնիսկ մեկ էջ կարդամ այս բոլորից, ես ոչնչի չեմ հավատում, բացի շոշափելի բաներից, փողից, գործից...»: Այս բառերը դեռ հնչում են իմ ականջներում... Իսկ այժմ, զարմանալի է տեսնել այս մարդուն, որն ավելի ջերմեռանդ է, քան իր կինը (որը սկզբից փորձում էր համոզել նրան և չէր հաջողվում), և ցանկանում է ունենալ Հիսուսի Առաջնորդության բոլոր հրատարակությունները, ասելով, որ Այն տալիս է իրեն վիթխարի խաղաղություն... Ես երբեք չեմ խոսել նրա հետ, քանի որ ես այնքան էլ լավ չեմ խոսելու հարցում. դա պարզապես այդպես պատահեց: Հիսո՛ւս, Դու իսկապես, Հիասքանչ ես:

Այդ ես եմ՝ Հիսուս, Աստծո սիրելի Որդին: Ես ուղարկում էի քեզ այդ բոլոր գրքերը, որպեսզի դու հավատայիր Իմ Գերբնական Գործերին: Ես քեզ կերակրում էի Իմ Հացով. երբեք չկասկածես Իմ Գործերին: Ես ցանկանում եմ, որ դու սովորես Իմ բոլոր շնորհների մանրամասները, որպեսզի արթուն լինես բոլոր նոր հայտնությունների համար: Ամեն ինչ պետք է դա Ինձնից:

(Կարծես թե Խաչը նորից ճզմեց ինձ: «Խաչ»ը, դա Աստծո Պատգամն է):

Հիսո՞ւս:

Ես եմ: Բարձրացի՛ր, բարձրացի՛ր: Վայր մի՛ ընկնիր. Ես քեզ մոտ եմ, որ օգնեմ քեզ: Բարձրացրո՛ւ Իմ Խաչը, մի՛ նմանվիր Կյուրենացուն (Սիմոն), եղիր հոժարակամ: Ե՛կ, սիրելիս, ուղին կարող է խորդուբորդ լինել, բայց Ես միշտ քեզ մոտ եմ՝ կիսելով Իմ Խաչը: Վասո՛ւլա, Ինձ նայիր:

(Ես նայեցի Նրան: Այնտեղ էր Նա, կանգնած անկյունում, շատ խղճալի տեսքով: Նա կրում էր Իր փշե պսակը և Նրա հագուստը (Նա կիսամերկ էր) ամբողջովին թաթախված էր արյան մեջ: Ամենուր Նա ծածկված էր քրտինքով ու արյամբ. ավելի արյուն էր, քան մարմին... խարազանումից անմիջապես հետո):

Մի՞թե Ես արժանի եմ սրան:

Ո՛Չ, Տեր իմ:

Պատվի՛ր Ինձ, աղջիկս:

Ո՞վ Քեզ այսպես արեց, Տեր իմ:

Ո՞վ: Նրանք՝ հոգիները, Վասո՛ւլա, այդ նրանք են՝ Սոդոմի կրկնօրինակը:

(Ավելի ուշ)

Աղջի՛կս, ես միասնություն եմ ցանկանում Իմ Եկեղեցում, **ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ**:

(Հիսուս հաստատակամ էր, և Նա այս խոսքերն ասաց բարձրաձայն):

Հունիսի 18, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ: Ես պիտի օգտագործեմ քեզ, Վասուլա:

Օգտագործիր ինձ մինչև վերջ, Տե՛ր:

Սիրելիս, ասա՛ նրանց, որ Ինձ ազատ թողնեն գործելու, ինչպես որ Ես եմ ցանկանում: Ինձ ուղղված իրենց աղոթքներում և բոլոր խնդրագրերում՝ նրանք պետք է ավելացնեն. «Բայց ոչ թե մեր կամքը, այլ թող Քո կամքը լինի»: Սովորե՛ք Ինձնից, պատվե՛ք Ինձ:

Հունիսի 19, 1987

Վասուլա՝ գործե՛ր, գործե՛ր. Ես ուզում եմ գործեր տեսնել: Ես հրճվում եմ լսելով քո սիրասուն բառերը, որոնք բալասան են Իմ Վերքերին, բայց Ես դեռ ավելի պիտի հրճվեմ, երբ քեզնից գործեր տեսնեմ: Ե՛կ, Ես քեզ կհիշեցնեմ, թե Ես ինչպես էի գործում երկրի վրա, երբ դեռ մարմնավոր էի, թե Ես ինչպես Իմ առաքյալներին ուսուցանեցի նույն ձևով գործել:

Պադրե Պիոն գործեց, ինչպես Դու:

Նա գործեց Ինձ համար: Ես տվեցի նրան բոլոր այդ շնորհները՝ պատվելու Ինձ և վերակենդանացնելու Իմ Անունը: Իմ Անունով գործելը փառավորում է Ինձ և մաքրագործում է ձեզ: Հիշի՛ր, Ես փայլում եմ յուրաքանչյուրի վրա:

Ներառյալ ինձ նման մարդկա՞նց:

Այո՛, ներառյալ քեզ նման հոգիների:

Հունիսի 20, 1987

(Թայլանդ)

Այնքան գոհ մնացի ստանալով քո լույսը:

(Մեր Սուրբ Մայրը)

Զարդարի՛ր Մեզ սիրով: Մեր խաղաղությունը քեզ:

(Սուրբ Մարիամն այս խոսքերն ասաց շատ քնքշորեն: Ես մոմ էի վառել Սուրբ Մարիամի համար, նախքան Խաչի Կայանները կատարելը):

Հունիսի 21, 1987

Տե՛ր, ինչո՞ւ այսքան մարդիկ մոռացել են Քեզ:

Օ՜ Վասուլա, Իմ Մարմինը խեղված է անդամալույծ դառնալու աստիճան: Լույս բեր Իմ Խաչի Կայաններում՝ ծնկի գալով ամեն մի Կայանում:

(Ես լուռ մնացի):

Վասո՛ւլա, Ես քեզ եմ ասում:

Տե՛ր, ես ի՞նչ կարող եմ անել:

Ոչի՛նչ. թող որ Ես անեմ ամեն ինչ:

(Այո՛, բայց ոչ ոք չի անի դա, քանի որ ոչ մեկը չգիտի):

Հավատ ունենալը նույնպես մի շնորհ է՝ Իմ կողմից տրված: Վասուլա, Իմ հանդեպ հավատ ունեցիր:

(Ավելի ուշ)

Այժմ, որ Դու հրապուրել ես ինձ, ի՞նչ պիտի լինի ինձ հետ:

Ուզո՞ւմ ես իմանալ: Ես քեզ դուրս պիտի նետեմ Իմ բազուկներից այս աքսորի մեջ, որպիսին դարձել է Իմ արարչությունը: Դու պիտի ապրես նրանց մեջ:

Աստվա՛ծ իմ, Դու ինձ այլևս չե՞ս սիրում:

(Ես լրջորեն տագնապեցի):

Հիանալի էր լինել Քո բազուկների մեջ: Եվ հիմա Դու ուզում ես ինձ դո՞ւրս նետել:

Օ՜, Վասուլա, դու ինչպես կարող ես նման բան ասել[1]:
Իմ Սիրտը կտրատվում ու պատառ-պատառ է լինում քեզ այս ողջ չարության մեջ տեսնելով: Հասկացի՛ր զավակս, Ես զոհաբերում եմ քեզ, որ լինես անաստված մարդկանց մեջ: Ես տառապում եմ, որ քեզ աքսորի մեջ եմ թողնում: Աղջի՛կս, շատերը կփորձեն խոցել քեզ: Ես հիմա կարող եմ կրել քո տառապանքները[2], բայց Ես չեմ կարող տանել, ո՛չ, չեմ կարող տանել, եթե նրանք քեզ խոցեն:

Դու ի՞նչ կանես, Տե՛ր:

Ես անտարբեր չեմ մնա:

Բայց Դու ինչո՞ւ էիր կրծքիդ սեղմում ու հրապուրում ինձ, որ հիմա էլ ինձ դո՞ւրս նետես: Դա արդար չէ:

(Ես գրեթե ճչում էի):

Զե՞մ ասել, որ դու պիտի լինես Իմ զոհը: Ես օգտագործում եմ քեզ: Դու Իմ ուռկանն ես: Այո՛, Ես քեզ դեպի աշխարհ եմ նետում, և դու Ինձ հոգիներ ես բերելու՝ իրենց փրկության համար: Ես պիտի փրկեմ նրանց: Դա առանց քո տառապանքի չի կատարվելու: Սատանան ատում է քեզ, և նա չպիտի վարանի քեզ դաղել, բայց նա ձեռք չի դնի քեզ վրա: Ես դա թույլ չեմ տա:

(Դա ինձ հիշեցնում է անցյալ օրվա դեպքը, երբ ես, իմ ամբողջ քաշով, ձախ ձեռքով հենվեցի նավի արտափքման խողովակի վրա: Նավը հենց նոր էր մեզ մոտեցրել ափին և խողովակն այնքան տաք էր, որ կարելի էր ձու տապակել: Ես գրեթե ուշաթափվեցի ցավից: Ամբողջովին այրելով իմ ձախ ձեռքի ափը, ես ուժգին ցանկություն ունեցա ձեռքս ծովի ջրի մեջ մտցնելու, որը կհանգստացներ ինձ: Բայց նաև հիշեցի, որ երբեք պետք չէ որևէ այրվածք դնել սառը ջրի մեջ, որովհետև վնասվածքներ է առաջացնում: Ջեռքս դեռ տասը բոպե ցավում էր՝ կարմրել էր և ուռել: Բայց կես ժամից ամեն ինչ անցավ. ո՛չ ցավ մնաց, ո՛չ այրվածք. այն կատարյալ վիճակում էր, ինչպես մյուս ձեռքը):

Զավա՛կս, Ես քեզ վիրավորված չպիտի տեսնեմ: Ես սիրում եմ քեզ և սիրուց դրդված՝ Ես կընտրեմ Իմ սրբագործման միջոցները քեզ համար: Ես երբեք թույլ չեմ տա, որ որևէ բիծ լինի քեզ վրա: Հասկացիր, թե ինչ նկատի ունեմ[3]:

---

[1] Ես մի սուր ցավ զգացի Նրա մեջ:
[2] Այսինքն՝ կկված լինել. հոգիս՝ Իր Սրտում, իսկ մարմինս՝ աշխարհում:
[3] Դա նշանակում է, որ որևէ տառապանք, որ գործադրվում է սատանայի կողմից, չպիտի իրականացվի, բայց որևէ տառապանք, որ գալիս է Աստծուց, պիտի իրականանա՝ դրանով մաքրագործելով հոգին:

Տե՛ր, այն <u>ամենը</u>, ինչ որ Քեզնից կգա՝ ես սիրով կընդունեմ՝ լինի այն հաճույք, թե՝ տառապանք:

Այո՛, սիրելիս, քո սիրտը արքայությունն դարձրու Ինձ համար: Ինչպես եմ ես հրճվում, երբ դա լսում եմ քեզնից, զավակս[1]:

Այո՛, որևէ տառապանք, որ քո սեփական կամքով կընտրես, մտածելով, որ դա կգոհացնի Ինձ, սարսափելի կլինի Իմ Աչքում: Դու միայն ինքդ քեզ կխաբես: Այն կլինի սատանայի համար և ոչ թե՝ Ինձ համար: Փոխհատուցումները պետք է Իմ կողմից հրահանգվեն:

Ես սիրում եմ Քեզ և ամբողջովին կախյալ եմ Քեզնից:

Այո՛, սիրելով Ինձ, դու փառավորում ես Ինձ:

(Լսեցի, որ սատանան ասում էր. «Այդ բոպեները տանջանք են ինձ համար»): Նա տանել չէր կարող փոխադարձ սերը, երբ սիրտս հրճվում էր իմ հանդեպ ունեցած Աստծո սիրով և իմ սիրով՝ հանդեպ Աստծո:

Դա նման է, երբ սատանային դաջում են ամբողջությամբ՝ հրաշեկ, կասկարմիր խաչով:

Հունիսի 23, 1987

Հիսո՛ւս, Դու հենց սկիզբից եղել ես իմ Ուսուցիչը: Բայց հարկավոր չէ՞, որ ես ունենամ հոգևոր ղեկավարի նման մի ինչ-որ մեկին՝ մասամբ ինձ առաջնորդելու համար: Մինչև այժմ ես ոչ մեկին չեմ ունեցել, իսկ նրանց, որոնց մոտեցել եմ, կամ՝ հետաքրքրված չեն եղել, կամ շատ զբաղված են եղել և կամ՝ սարսափած: Ոչ ոք ինձ նուրբ ձևով չի ասել. «Զավակս, այս արա, կամ այն, կամ սրան հետևիր»: Միայն մեկն էր, որ որոշակի հրաման տվեց ու ասաց. «Վերջացրո՛ւ, դա Աստծուց չէ: Այնպես որ, գոնե մի քանի օր դադարիր գրելուց և տես ինչ է ստացվում»: Ես լսեցի նրան: Ես դադարեցի, բայց Քո Ձեռքը հաջողեցրեց գրել, երբ գրի էի առնում իմ նշումները. «Ես՝ Աստված, սիրում եմ քեզ, երբեք չմոռանաս այդ»: *Դու ամբողջապես տիրապետեցիր իմ ձեռքին: Հետո նորից, մի քանի բոպեում, Դու գրեցիր.* «Երբևիցե չմոռանաս, որ Ես՝ Աստված, սիրում եմ քեզ»: *Դա այնպիսի զգացում էր, կարծես ինչ-որ մեկը, որն ինձ սիրում էր, մի անսպասելի այցելությամբ եկել էր բանտում ինձ տեսնելու: Դա սքանչելի էր:*

<u>Զավա՛կս, թող որ Ես լինեմ քո Հոգևոր Ղեկավարը</u>: Մի՞թե Ես բավարար չափով չեմ գոհացնում քեզ: Ես Ամեն ինչ եմ, որ դու չունես: Վասո՛ւլա, հաճույք պատճառիր Ինձ՝ փոփոխելով Իմ խաչի Կայանները՝ պարզապես ավելացնելով լույսը. պատվի՛ր Ինձ՝ ծնկի գալով Իմ յուրաքանչյուր Կայանում: Ես դեռ էլի հրահանգներ պիտի տամ քեզ, ամեն բան իր ժամանակին:

[1] Աստված Ինքն է որոշելու իմ տառապանքները:

Հիսո՛ւս, շնորհակալ եմ, որ թույլ տվիր ինձ Դավիթին հանդիպելու:

Զավա՛կս, հաղորդիր Իմ խոսքերը և հարցրու նրան. «Ինձ թույլ կտա՞ս քեզ օգտագործել»:

Տե՛ր, մի՞թե Դու արդեն չես հարցրել դա: Իսկապես ի՞նչ նկատի ունես:

Սրանով ուզում եմ ասել, թե արդյոք նա կկամենա՞ գործել Ինձ համար: Իմ խաչը ծանր է: Դու չե՞ս թեթևացնի Իմ բեռը միառժամանակ:

Այո՛, Տեր:

Ավելի մոտեցիր:

Հունիսի 26, 1987

(Բանգոգ)

(Առավոտյան, 7:30-ին, ես մի գունավոր ամպ տեսա, որը շատ գրավիչ էր: Հետո, հինգ ճառագայթներ դուրս եկան աստղերի նման: Ես ասացի՝ «Տե՛ս», և մի ձեռք ետևիցս ինձ առաջ հրեց: Հետո, մեկ ուրիշ բան փոխվեց: Ճառագայթներից մեկի վրա մի մոմ երևաց: Ես նորից ասացի՝ «Տե՛ս»: Ձեռքը ետևիցս ցած հրեց ինձ, ու ես ընկա ծնկներիս վրա: Ես չէի փորձում ետ նայել՝ տեսնելու համար, թե ով էր դա, քանզի ես չէի ուզում և ոչ մի վայրկյան կատարվածից որևէ բան բաց թողնել: Հինգ ճառագայթները արագությունն ստանալով պտտվում էին մի լուսավորված օղակի նման: Եվ հանկարծ, այդ օղակի ճիշտ կենտրոնում, երևաց Հիսուս: Ես ասացի. «Տե՛ս»: Նորից ձեռքը ետևիցս հրեց ինձ և իմ ձեռքերը գետնին դիպան: Հանկարծ լսեցի, որ հարյուրավոր ձայներ պաշտում էին Հիսուսին: Նրանք ամբողջ ժամանակ միայն ասում էին՝ Հ-Ի-Ս-Ու-Ս: Հետո Հիսուսի պատկերը գնաց և դրա փոխարեն մի տեսարան երևաց: Ես կրկին ասացի՝ «Տե՛ս»: Եվ ձեռքը հրեց ինձ, և ես գետնատարած ընկա գետնին՝ միայն գլուխս բարձրացնելով, տեսնելու համար վերջին տեսարանը: Եվ ես տեսա, որ ինչ-որ մեկը ծնկի եկավ՝ շրջապատված հինգ հոգով: Այս տեսարանի դիմաց կար մի շատ պայծառ արծաթյա գավաթ: Հինգը, ինչ-որ մի բան էին անում՝ մեջտեղում ծնկաչոք եկածի հետ: Ես լսեցի «ՕԾՈՒՄ» բառը: Հետո, ամեն ինչ անհետացավ):

Աստվա՛ծ իմ, ես չհասկացա ինձ տված Քո երազ տեսիլքը:

Իմաստությունը կուսուցանի քեզ:

Հունիսի 27, 1987

(Եվ այսպես, հիմա ես հասկանում եմ. ես կիսված էի: Մարմինս շրջում է, բայց առանց հոգու: Աստվա՛ծ իմ, Դու վերցրել ես հոգիս: Ես ինձ զգում եմ

ինչպես մի դիակ՝ ամբողջապես անջատված: Որևէ մեկը ունեցե՞լ է նման փորձառություն. մտածել միմիայն Աստծո մասին, որքան ժամանակ որ արթուն ես ու գիտակից: Արդյոք որևէ մեկը ունեցե՞լ է Աստծո գիտակցության զգացողությունն ամեն օր, օրական քսանչորս ժամ և ավելի քան մեկ տարի: Եվ այն բոպեին, երբ սկսում եմ մոռանալ, կզակս բռնվում է մի Ձեռքով, որը շրջում է գլուխս ու դեմքս՝ Հիսուսի ժպտացող Դեմքին: Զարմանում եմ ինքս ինձ, թե դեռ ինչպես եմ գլուխ հանում մնացած բաների հետ...)

Վասո՛ւլա, ես միայն վերցրել եմ քո սիրտը և տեղադրել այն Իմ Սրտում[1]: Ես Յահվեն եմ և սիրում եմ քեզ: Փայփայիր Իմ Սերը: Արարա՛ծ, մնա քո Արարչի շնորհի մեջ:

Ինչպե՞ս, ինչպե՞ս ես կարող եմ մնալ Քո շնորհի մեջ:

Դու պետք է սուրբ լինես:

Ես ինչպե՞ս կարող եմ սուրբ լինել:

Ինձ ջերմեռանդ սիրելով:

Ուրեմն, եթե այդ Քո կամքն է, օգնիր, որ այդպես լինի:

Ես կօգնեմ քեզ: Իմ օրհնությունները քեզ: Ես քեզնից երբեք չեմ պահանջի որևէ մի բան, որը քեզ կվնասի. միշտ հիշիր այս:
Ե՛կ, ես պիտի բացահայտեմ Իմ ամենախոր և ամենամտերիմ ցանկությունները: Թույլ տուր Ինձ, որ դրոշմեմ դրանք քեզ վրա, փոքրիկս:

Հունիսի 30, 1987

(Դհակա)

(Ես շտապում էի, որովհետև Հիսուս ստիպում էր ինձ գրե)լ:

Ես կանչեցի քեզ:

(Ես զգացի և տեսա, որ Հիսուսն ուրախ էր):

Այո՛, ես ուրախ եմ: Ե՛կ, սկսենք աշխատել: Ես պիտի կրկնեմ Իմ ցանկությունները: Վասուլա, մի՛ վախեցիր Իմ Գործերը ցույց տալուց:

Տե՛ր, ես ինձ հիշեցնում եմ մեր լավ ընկերներից մեկին՝ դյուրագրգիռ Մարթային: Ես նրա նման անհամբեր եմ հիմա: Ուզում եմ, որ հանգամանքները <u>արագ</u> շարժվեն՝ վաղը, այսօր, հիմա: Եթե հնարավոր է, Քո

[1] Սա այնպես ասվեց, կարծես իմ սիրտը դատարկ մի բան էր, շատ հասարակ մի բան...

բոլոր ցանկությունները ԱՅԺՄ ԹՈՂ ԿԱՏԱՐՎԵՆ. փչերը դուրս քաշվեն ու հեռու նետվեն, տեգը դուրս հանվի Քո Սրտից և Քո բոլոր ցանկությունները կատարվեն:

Վասուլա, մի՛ շտապիր:

(Զգացի, որ Իր Ձեռքը շոյում է գլուխս):

Նորից լսիր Իմ ցանկությունները: Ես ուզում եմ նրանց հիշեցնել Իմ ուղիները: Ես ուզում եմ, որ նրանք դադարեն իրար թունավոր նետեր ուղղելուց: Վասուլա, արդյոք Ես քաղաքագե՞տ էի:

(Հիսուսն ինձ զարմացրեց այս հարցով: Նա մի տարբեր երանգ ուներ Իր Ձայնի մեջ):

Անգամ ես գիտեմ, որ Դու քաղաքագետ չէիր...

Միանգամայն ճիշտ է. Ես քաղաքագետ չէի: Վասուլա, դու ի՞նչ կասեիր, թե Ես ով եմ:

Տե՛ր, նկատի ունես այն ժամանակ, երբ Դու դեռ մարմնավո՞ր էիր այստեղ:

Այո՛:

Աստծո Սիրելի Որդին:

Այո՛, տեսնո՞ւմ ես, անգամ դու գիտեիր, որ Ես քաղաքագետ չէի: Վասուլա, թող որ մտածեմ...

(Հիսուս մտածում էր Իր սովորական դիրքով: Մի թևը ստամոքսի վրա էր, իսկ մյուս թևը արմունկով հենել էր գոտկատեղին՝ ցուցամատն այտին):

Դու չարությանորևէ նշույլ երբևիցե զգացե՞լ ես Իմ կողմից՝ Իմ ամբողջ առաջնորդության ընթացքում:

Ո՛չ, ոչ մի նշույլ, Տե՛ր, երբե՛ք:

Լավ:

Տե՛ր, բանն ինչո՞ւմն է:

Դու քեզ ինչպե՞ս ես զգացել, Վասուլա:

(Հիսուսն անտեսեց իմ հարցը): Ես ինձ շփացած եմ զգացել Քո կողմից, չափազանց սիրված, փայփայված, ներված:

Շարունակի՛ր:

Ես խանդավառված էի Քո սիրով, խաղաղ ու հիանալի: Ես երբեք ավելի երջանիկ չեմ զգացել ինձ, քան այն ժամանակ, երբ Քեզ հետ էի, երբ Քո սիրով Դու ինձ կրկին ցույց էիր տալիս ճանապարհը՝ սովորեցնում ինձ սեր, սրբություն ու համեստություն:

Այո՛, տեսնո՞ւմ ես, Վասուլա, որ ոչ մի հետք չկա քաղաքական տեղաշարժերի, ո՛չ մի:

(Հիսուս մի շարժում արեց Իր Ձեռքով, որը ցույց էր տալիս կամ՝ ընդգծում «ո՛չ մի» բառը):

Ես այդպիսին եմ: Ես Ամբողջովին Սեր եմ, և սա այն ուղին է, որ Ես ուզում եմ, որ Իմ ճշմարիտ, իսկապես ճշմարիտ հետևորդները լինեն:
Լսի՛ր Ինձ. Ես Եկեղեցին եմ, սա <u>երբեք</u> չմոռանաս: Խաղաղություն քեզ, Վասուլա:

Ես սիրում եմ Քեզ խենթանալու աստիճան, և Դու հիմա գիտես այդ, Հիսուս:

Սիրելիս, Իմ Սիրտը Իր Սիրո Բոցերով պիտի կլանի քեզ: Թույլ տուր քեզ պահեմ Իմ Սրտում:

(Ես մտածեցի տեսիլքի մասին):

Հինգ ճառագայթները դուրս են գալիս Իմ հինգ Վերքերից:

Իսկ այն մո՞մը, որ ճառագայթներից մեկի վրա էր:

Ես ուզում եմ ներկայացնել լույսը:

Քո Կայաններո՞ւմ:

Այո՛:

Հետո, ես տեսա Քեզ:

Այո՛, Ես դրել էի Իմ փշե պսակը, հիշո՞ւմ ես:

Այո՛, հիշում եմ: Բայց ի՞նչ էր վերջին տեսարանը:

Իմ օծումը:

Իսկ ես ինչո՞ւ գետնատարած դիրքով ընկա:

Դու գետնատարած պիտի լիներիր:

Իսկ սկի՞հը, Տե՛ր:

Այդ քեզ սրբագործելու և Իմ Սուրբ Հաղորդությունը պատվելու համար էր:

Շնորհակալ եմ, Տե՛ր:

Վասո՛ւլա, Մարմնիս խորքում տեգի սուր ծայրը ծակում է Սիրտս. դա միշտ այնտեղ է: Ուզում եմ տեգը հեռացվի: Փառաբանի՛ր Իմ Մարմինը՝ հաստատելով Խաղաղություն, Միասնություն և Սեր:

Սիրելի Աստված, ամեն ինչ աղոտ է ինձ համար: Ես չգիտեմ Քո բառերի իմաստը:

Հանի՛ր փչերը, որոնք խրվել են Գլխիս մեջ: Վասո՛ւլա, դու այդ կանե՞ս Ինձ համար: Ես միշտ պիտի լինեմ քո առջևում: Բժշկի՛ր Իմ Մարմինը, սփոփի՛ր Այն: Իմ Հինգ Վերքերը լայն բացված են, տեսնո՞ւմ ես: Սիրի՛ր Ինձ, պաշտի՛ր Ինձ, զարդարի՛ր Ինձ: Հիշեցրու նրանց առաջին քրիստոնյաների մասին, որոնք իրենց կյանքից էլ ավելի Ինձ սիրեցին:

Տե՛ր, Քո պատգամները պատճենահանելուց և բաժանելուց բացի, ես ավելի ոչինչ չեմ կարող անել:

Դու շատ ավելին պիտի անես, քան այդ: Երբեք մի՛ մոռացիր, թե ով է առաջնորդում քեզ:

Այո՛, Տեր, ես Քեզնից եմ կախված:

Հուլիսի 3, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ:

Սիրելիս, ներշնչումները գալիս են Ինձնից, ինչպես ցողի կաթիլներ տերևների վրա:

Ես դաշն եմ կնքել քեզ հետ, որ հավատարիմ լինեմ քեզ: Ես միջոցներ եմ ձեռք բերել, որ դու էլ Ինձ հավատարիմ մնաս, հասկացա՞ր[1]:

Վասո՛ւլա, ի սեր Ինձ, դու կմիավորե՞ս Իմ Եկեղեցին: Ես քո առջևում եմ, և այդ Ես եմ, որ քեզ սովորեցնելու եմ, ուղղակի հետևիր Ինձ: Ես ուզում եմ, որ Իմ բոլոր Եկեղեցիները միավորվեն: Ուզում եմ, որ Իմ քահանաները հիշեն նախկին Իմ Գործերը, ինչպես նաև Իմ առաքյալների պարզությունը, խոնարհությունն ու հավատարմությունը, որ առաջին քրիստոնյաներն ունեին: Ե՛կ, ես կբացահայտեմ Իմ Սրտի ամենախոր և ամենամտերիմ ցանկությունները: Թույլ տուր, դրանք դրոշմել քեզ վրա, փոքրիկս:

[1] Գիտենալով, թե որքան տկար մեկն եմ, Հիսուսն ուզում էր վստահ լինել, որ ես խույս չեմ տա Նրանից...

(Այստեղ, ես իսկապես անօգնական զգացի: Զգում եմ, որ Աստված բազում կարևոր բաներ է ցանկանում, որոնք Նա հայտնում է ինձ՝ դրանք գրի առնելով, իսկ ես անդամալույծի նման նստում եմ դրանց վրա: Զգում եմ, որ ես այն չեմ անում, ինչ Նա ուզում է, քանի որ ոչինչ չի փոխվում: Բայց ինչպես կարող է փոխվել, եթե ոչ ոք իսկապես չգիտի այս մասին: Զգում եմ, որ չեմ գոհացնում Նրան՝ լինելով անհնազանդ, չկատարելով այն, ինչ Նա ամենից շատ է ցանկանում):

Հիսո՞ւս: Շուրջ հարյուր մարդ ունի այս հայտնությունների կրկնօրինակները, սակայն դա բավարար չէ:

Ես եմ. ապրիր խաղաղությամբ: Ես պետք է վերականգնեմ Իմ Եկեղեցին: Թույլ տուր, Վասուլա, որ Իմ Խոսքերը դրոշմեմ քեզ վրա: Ես սիրում եմ քեզ. փառաբանիր Ինձ՝ սիրելով Ինձ: Իմ Եկեղեցու միավորումը Իմ Գործն է: Դու պիտի լինես միայն Իմ պատգամատարը: Դու հասկանո՞ւմ ես տարբերությունը[1], անգամ, երբ Ես ասում եմ՝ կենդանացրու կամ միավորիր Իմ Եկեղեցին, Վասո՛ւլա, դա երբեք ուղղակիորեն քեզ չի վերաբերվում: Դու կսովորես: Մի՞թե դու Ինձ հետ չսովորեցիր Իմ Գործերի մի մասը:

Այո՛, Տեր, սովորեցի:

Սպասիր, և դու կտեսնես[2]:
Ես ուզում եմ քեզ մի հարց տալ: Ինչո՞ւ դու սփոփվելու համար Ինձ մոտ չես գալիս հիմա:

(Մի քանի վայրկյանի ընթացքում, Հիսուսն ինձ մի տեսիլք տվեց և մի ամբողջ պատմություն, որը նման էր առակի: Դա մի երեխայի և իր մոր մասին էր: Մայրը տարիներով կորցրել էր իր զավակին: Վերջապես, գտնելով նրան շատ ուրախանում է և փորձում սովորեցնել երեխային, որ իր մոտ գա իր բոլոր կարիքների համար, քանի որ սիրում էր նրան, և նա պատկանում էր իր մորը: Երեխան մեծ դժվարություն է ունենում կրկին հարմարվելու մեկին, որն ասում էր, թե իր մայրն է, և որը հոգում էր իր համար: Նա սովոր էր ապրել իր տառապանքների մեջ՝ չունենալով ոչ մեկին, որին կարող էր դիմել: Բայց երեխան մոռանում է, որ միայն մայրն է, որ կարող է օգնել ու մխիթարել իրեն: Տեսիլքը ցույց է տալիս, որ վտիտ երեխան կրկին ամբողջապես վշտի մեջ է՝ տրտնջալով ու անտեսելով մորը: Մայրը ցավում է, տեսնելով զավակին տառապելիս: Ցավում է, տեսնելով զավակի թշվառ վիճակը, ցավում է, որ զավակը չի ուզում գալ և նետվել մոր բազուկների մեջ և ցույց տալ, որ կարիք ունի նրա գորովանքին: Մոր սիրտը խիստ կոտրվում է ոչ միայն նրա վշտից, այլ նաև նրանից, որ զավակը անտեսում է իր մորը, որն այնքան բան կարող էր անել, եթե նա վստահություն ունենար մոր հանդեպ:
- Երեխան ես էի, իսկ մայրը՝ Հիսուս:

---

[1] Դա տարիներ տևեց... (Ես դա հասկացա, օգոստոսի 29-ին, երբ նորից կարդում էի պատգամները):
[2] Երկար ժամանակ ընդմիջում էր: Նա իմ ձեռքին դաղար էր տվել թղթի վրա, մինչև որ ասաց. «Ես ուզում եմ մի հարց տալ» և այլն:

- Եվ այս ամենը այն պատճառով էր, որ ես զգում էի, որ տեղ չեմ հասնում, պատգամը շպակիս՝ չկարողանալով շատ բան անել: Ես որոշեցի մոռանալ: Դրա համար մտա անկողին և փորձեցի քնել: Սա կեսօրին էր. ես մտածում էի Հիսուսի մասին, բայց այնքան թշվառ էի զգում, որ չէի ուզում անգամ հանդիպել Նրան):

Այո՛, միանգամայն ճիշտ է: Սիրելիս, ես քո Մխիթարիչն եմ: Հենի՛ր գլուխդ Ինձ վրա: Թույլ տուր Ինձ փաղաքշել քեզ և մեղմել քո ցավը: Թույլ տուր Ինձ քո ականջին շշնջալ Իմ Խոսքերը: Իմ Սրտում ես տեղ ունեմ քեզ համար: Ուրիշ տեղ ժամանակ մի՛ վատնիր: Ե՛կ հիմա և գրավիր քո տեղը[1]:

Ես անընդունակ եմ...

Ես վեր կբարձրացնեմ և քեզ այնտեղ կդնեմ:

Հուլիսի 7, 1987

(Շվեյցարիա)

Վասո՛ւլա, դու ծանր փորձությունների պիտի դիմագրավես[2]: Մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը: Ես քեզ մոտ եմ:

Իմ Երկնային Գործերին հավատալը նույնպես Իմ կողմից տրված մի շնորհ է: Իմ Գործերը ձեր աչքում ամենևին ուղղափառ չեն երևում, բայց ես Աստված եմ, և ո՞ւմ հետ դուք կարող էք Ինձ համեմատել: Եվ ինչի՞ հետ կարող էք համեմատել Իմ Գործերը:

Վասո՛ւլա, ես ողբում եմ, երբ տեսնում եմ, թե ինչպես են Իմ քահանաներից շատերը ժխտում Իմ նշաններն ու Գործերը, ինչպես են վերաբերվում նրանց հետ, որոնց ես շնորհներ եմ տվել ու հիշեցրել աշխարհին, որ ես ձեր մեջ եմ... Նրանք իրենց կամքից անկախ վնասում են Իմ Մարմինը, pono[3]: Նրանք ժխտում են Իմ Գործերը, և դրանով իսկ՝ հողը պտղաբեր դարձնելու փոխարեն, անապատի են վերածում:

Տե՛ր, եթե նրանք ժխտում են Քո Գործերը, դա պատճառներ պետք է ունենա:

Նրանք հոգևորապես մեռած են: Նրանք հենց ինքներն անապատներ են, և երբ մի ծաղիկ են նկատում իրենց ստեղծած այդ մեծ ամայության մեջ, ապա շտապում են դեպի այն ու ոտնակոխ անում՝ ոչնչացնելով այն:

Ինչո՞ւ:

Ինչո՞ւ: Որովհետև, այն չի սազում իրենց ամայության մեջ: Նրանք ուզում են վստահ լինել, որ իրենց անապատը չոր ու անբերրի կմնա: Ես

[1] Նա սա ասաց այնպիսի մի քնքշությամբ, որ միայն Աստված կարող էր խոսել այս ձևով:
[2] Տերն Ինձ պատրաստում էր Իմ առաքելության համար:
[3] Ես ցավում եմ (հունարեն):

ոչ մի սրբություն չեմ գտնում նրանցում, ո՛չ մի: Նրանք ի՞նչ ունեն Ինձ մատուցելու:

Պաշտպանություն, Տե՛ր: Պաշտպանություն՝ չաղավաղելու Քո Խոսքը:

Ո՛չ, նրանք Ինձ չեն պաշտպանում: Նրանք ուրանում են Ինձ, որպես Աստծո: Նրանք ժխտում են Իմ Անսահման Հարստությունը, նրանք ժխտում են Իմ Ամենակարողությունը, նրանք իրենք իրենց համեմատում են Ինձ հետ: Դու գիտե՞ս, թե նրանք ինչ են անում: Նրանք աջակցում են անաստվածությանը, նրանք բազմապատկում են Ինձ խարազանողների թիվը, նրանք ավելացնում են հոգևոր խլությունը. նրանք Ինձ չեն պաշտպանում, նրանք ծաղրում են Ինձ: Անկախ նրանց ուրացումներից, ես կամեցել եմ օգնել նրանց, որպեսզի, իրենց հերթին, նրանք Ինձ օգնեն ու կերակրեն Իմ գառներին:

Սիրի՛ր Ինձ, Վասուլա, պատվիր Ինձ՝ երբեք չուրանալով Ինձ:

Ես երբեք չեմ ուրանա Քեզ. Ես երբեք չեմ ուրանա, որ <u>սրանք</u> Քո Գործերն են, Տե՛ր, եթե անգամ մեռնելու լինեմ:

Իմ քաղցր զմուռս, Իմ մնացորդ, Իմ սիրելի. փնտրի՛ր Իմ շահախնդրությունները, եղի՛ր Իմ խորանը, մնա՛ աննշան, որպեսզի Ես աշխատեմ քո մեջ և գործեմ քո մեջ: Ե՛կ, աղոթենք.

Ողորմած Հայր,
միավորի՛ր Քո ոչխարներին,
միմյանց մոտ բեր նրանց կրկին:
Թող որ հասկանան
չորությունն իրենց:
Դու ների՛ր նրանց
և ձուլի՛ր նրանց,
ինչպես ուզում ես
որ նրանք լինեն:
Հիշեցրո՛ւ նրանց Քո ուղիները:
Ողջ Փառքը լինի
Քո Սուրբ Անվանը,
Հավիտյանս հավիտենից: Ամեն:

(Ես տխրում եմ Աստծո համար):

Սիրելիս, վշտացի՛ր աշխարհի համար, թե ինչի է այն վերածվել: Հանգչի՛ր Իմ մեջ:

Հուլիսի 8, 1987

Տե՛ր, մի քահանա ինձ ասաց, որ Քո մահից և թաղվելուց հետո Քո Մարմինը տարրալուծվեց օդում, և դրա համար նրանք չկարողացան Քեզ գտնել: Ուրիշ խոսքով, այս քահանան ժխտում էր Քո Հարությունը:

Վասո՛ւլա, նրանք աղավաղում են Իմ Խոսքը. Ես հարություն եմ առել: Ես չեմ տարրալուծվել. Իմ Մարմինը հարություն է առել:

Տե՛ր, Դու ինձ հետ նշաններո՞վ ես խոսում, թե ասում ես, որ իսկապես հարություն ես առել Մարմնով:

Զավա՛կս, Ես բառացի խոսեցի քեզ հետ: Իմ Մարմինը հարություն է առել: Ասա նրանց, որ դադարեն Իմ Խոսքը աղավաղելուց՝ մարդկային հասկացողությանը հաճոյանալու համար:
Ես Ամենակարող եմ:

(Ավելի ուշ)

Տե՛ր, վախենում եմ, որ ուշացնեմ Քո ծրագրերը:

Դու ինչպե՞ս կարող ես ուշացնել Ինձ, երբ Ես եմ Գործողը:

Մեղքերով, որոնք խանգարում են:

Ես պիտի խնդրեմ քեզ հաճախ ապաշխարել մեղքերիդ համար: Ես ցույց կտամ քո մեղքերը: Ես ուզում եմ, որ դու մաքուր լինես:

Հուլիսի 9, 1987

Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Վասո՛ւլա, Ես այնքան խորհուրդներ ունեմ քեզնից ծածկված: Դրանցից մի քանիսը, որ Ես ցույց տվեցի քեզ, մարդկային աչքերով են «դիտվում»[1], և դրա համար հասկանալի չեն նրանց: Կամ դրանք մի կողմ կդրվեն, կամ սխալ բացատրություն կտրվի: Ինչպե՞ս կարող ես համեմատել Իմ Գործերը մարդկային գործերի հետ: Գիտությունը չի կարող համեմատվել Երկնային Գործերի հետ: Դա նույնն է, եթե դուք փորձեք Ինձ համեմատել մարդկանց հետ:

Ճի՛շտ է, Իմ Գործերը ուղղափառ չեն թվում ձեզ, բայց ինչը որ ամենից շատ է վշտացնում Ինձ, դա այն է, երբ Ես տեսնում եմ, որ Իմ իսկ քահանաները կասկածում են Իմ Գործերին՝ մերժելով հավատալ դրանց, և այդպիսով Ինձ «հեռացնում» են, փոխանակ առաջ քաշելու:

Իմ արարածը վեր է ածվել՝ չոր, անբերրի, սիրո պապակ մի անապատի: Ինչո՞վ պիտի կերակրվեն Իմ գառները, երբ նրանք ոչինչ չունեն տալու:

[1] հասկացվում են

Հուլիսի 10, 1987

Իմ ծաղիկ, ճուլվի՛ր Իմ Մարմնին: Անապատում ապրելը դժվար է, բայց Ես քեզ միշտ պիտի առաջնորդեմ դեպի Իմ Աղբյուրը, ուր Ես պիտի հագեցնեմ քո ծարավը և հանգստություն ու ապաստան տամ քեզ: Աղջիկս, եղի՛ր Իմ զոհը. ոչ մի բան իզուր չի լինելու: Կառչի՛ր Ինձնից, դու միայնակ չես: Մենք միասին ենք կտրելու այս անապատը: Թույլ տուր Ինձ դրոշմել քեզ վրա Իմ հատուկ պատվիրանը. «Սիրի՛ր մերձավորիդ, ինչպես քո անձը կսիրեիր»:

Բայց, Տե՛ր, դա նոր չէ. Դու այդ ասել ես անցյալում:

Դու հետևո՞ւմ ես դրան: Յուրաքանչյուր հոգևորական պետք է դեռ սովորի հնազանդվել Իմ Պատվիրանին: Թող նրանք Իմ Անսահման Սիրուց վերցնեն և սովորեն սիրել միմյանց:

Շոշափիր ինձ. Իմ Մարմնի բոլոր մասերը բզկտված են, Վասուլա: Ես չեմ ավարտել Իմ ցանկությունների թելադրանքը և դեռ մի ավելի մեծ ցանկություն ունեմ Իմ մեջ ամբարված: Վասո՛ւլա, դու սկսում ես զգալ այդ, որովհետև Ես լուսավորում եմ քեզ, որ զգաս, թե ինչ եմ ցանկանում: Ես Իմ արարածին անսահման եմ սիրում:

Աստված իմ, եթե Քո ցանկացածը «այդ է», ապա, Քո Թագավորությունը երկրի վրա իսկապես կլինի այնպես, ինչպես որ Երկնքում է:

Կամաց-կամաց դու կհասկանաս:

Հիսո՞ւս:

(Ես անօգնական զգացի: Ես ինչ-որ բան ասացի Նրան):

Գիտեմ, բայց մի՞թե Ես քեզ չեմ առաջնորդել մինչև հիմա: Ես քեզ տեսիլքներ կտամ և դու դրանք գրի կառնես: Եղիր քո Աստծո հետ, որը նույնպես տառապում է:

Արարչությո՛ւն, Իմ արարչություն: Այսօր դուք ուրանում եք ինձ, որպես ձեր Աստվածը, վաղը սակայն դու փառաբանելու ես Ինձ, պաշտելու ես Ինձ և բաղձալու եք Ինձ:

Ե՛կ, Վասուլա, երբեք չմոռանաս, թե ով եմ Ես: Կառչի՛ր Ինձնից: Կանչի՛ր Ինձ ինչպես երեկ[1], և Ես կշտապեմ քեզ մոտ: Ես սիրում եմ քեզ: Պատվիր Ինձ՝ ցանկանալով եւ սիրելով Ինձ:

Նման հանգամանքներում, ձեզնից շատերը կասեին, թե բախտի բան էր՝ մոռանալով Ինձ: Իմ բառարանում չկա այդպիսի բառ, ինչպիսին «բախտ» բառն է: Այդ Ե՛ս եմ, որ օգնում եմ ձեզ, արարչություն:

[1] Դա երեկ գիշեր էր: Մեր նոր բնակարանում, դռնապանը, գիշերը ժամը 10-ին, կողպում է բնակարանների գլխավոր մուտքի դուռը: Մենք մեր բանալին մոռացել էինք տանը: Դուռը փակ գտնելով հակացանք, որ դուրսն ենք մնացել: Ես գնացի դեպի դուռը խնդրելով. «Օ՜ Աստված, խնդրում եմ փակ չլինի, երանի թե բաց լինի»: Դուռը փակ էր, բայց այդ րոպեին հարևաններից մեկը, որը նույնպես ժամանում էր, բաց արեց դուռը:

Հուլիսի 11, 1987

Ապաշխարի՛ր:

Շնորհակալ եմ, որ հոգում ես ինձ, Աստված իմ:

(Ես ապաշխարեցի):

Սիրելիս, ամեն ինչ ներված է, քանզի այդպիսին է Իմ Ողորմությունը:
Ես քեզ կսովորեցնեմ ուշադիր լինել նախքան քո հաջորդ քայլն անելը: Զգոն եղիր, Ինձ բոլորից վեր դերադասիր, մի՛ շրջիր քո դեմքը Իմ Լույսից: Նայի՛ր Ինձ. Ի՛նձ դարձիր, ծաղկի՛ր:

Ես թույլ եմ և երբեմն զգում եմ, որ դժվար է կրել Քո Խաչը:

Իմ մնացորդ, միացի՛ր Ինձ և Մեկ եղիր: Միասի՛ն, միասի՛ն, մենք կվերականգնենք Իմ Եկեղեցին:

Հուլիսի 12, 1987

Վասո՛ւլա, Ես հրճվում եմ, երբ դու գիտակցում ես:

(Երբեմն Ես լիովին գիտակցում եմ, որ իսկապես Աստծո հետ եմ, որ Նա ինձ հետ հաղորդակցվում է այս ձևով. դրա համար սիրտս թրթռում է: Դա պատահում է ելևէջներով: Մեծ մասամբ ես գիտակցում եմ, բայց ոչ՝ ամբողջապես):

Դու այդ գիտե՞ս, Տեր:

Գիտե՛մ, շատ լավ գիտեմ: Վասուլա, հիշո՞ւմ ես Խուանին:
Մենք նրան Ինձ պիտի միացնենք:

Աստվա՛ծ իմ:

Ես եմ:

Դու շատ ես մտածում Խուանի մասին:

Նա Իմ սիրելի հոգին է: Ես սիրում եմ նրան: Ես ուզում եմ, որ նա Ինձ մոտ լինի: Ես ցանկանում եմ առաջնորդել ու հիանալի ծառայող դուրս բերել նրանից: Օ՜, Վասուլա, գիտե՞ս, թե ինչ մեծ գործեր նա կարող է անել Ինձ համար:

Բայց, Տե՛ր, դա անհնարին է: Նախ՝ նա չի հավատում Քեզ, բացի այդ, նա ուրիշ զբաղմունքներ ունի իր կյանքում:

Փոքրիկս, դու գիտակցո՞ւմ ես, թե ով է առաջնորդում քեզ:

Այո՛, Աստված իմ...

Ես Ալֆան եմ և Օմեգան, ամեն ինչի Արարիչը: Դու հասկանո՞ւմ ես, որ նա տարիներ է արդեն, որ Ինձ է փնտրում:

Իսկապե՞ս: Ես կարծում էի, թե նա չի հավատում:

Նա միշտ հավատացել է, սակայն նրան այլ ճանապարհով են տարել: Ես սիրում եմ նրան և պիտի առաջնորդեմ, որ նա Ինձ գտնի: Ես Սեր եմ և նա կգա դեպի Սերը: Ես նրան կլցնեմ Իմ Սիրով: Իմ բոլոր օրհնությունները կվերականգնեն նրան:
Սիրելիս, հիմա դու պետք է հանգստանաս:

Տե՛ր, Դու դեռ ուզո՞ւմ ես, որ ես միշտ ծնկի գամ գրելիս:

Այո՛, ուզում եմ, պատվի՛ր Իմ Ներկայությունը:

Այո՛, Տեր:

Հուլիսի 13,1987

Վասո՛ւլա, Իմ պատգամատարը լինելու համար դու պետք է սիրես Ինձ այնպես, ինչպես որ Ես քեզ սովորեցրի: Կենդանացա՛ր, դու վերջապես կենդանացար: Ես քեզ հարություն տվեցի մեռելներից:

Իսկ մյուսնե՞րը:

Արարա՛ծ, մյուսները դեռ պետք է հարություն առնեն: Իմ Սիրո ցողը կընկնի նրանց վրա. Իմ Լույսը կպարուրի նրանց ու նրանք կվերակենդանանան: Արարա՛ծ, Ես պիտի վերակենդանացնեմ քեզ: Քո վերակենդանացումը քո փառքի համար չէ: Ես կենդանացրի քեզ Իմ փառքի համար:

Այո՛, Տեր:

Փոքրիկս, Ինձ Abba (Հայր) կանչիր, այո՛, մոտ եղիր Ինձ: Ես երբեք չեմ լքի քեզ:

Հուլիսի 18, 1987

(Շվեյցարիա հասնելուց հետո ես չեմ կարողանում գրել, որովհետև լավ չեմ զգում ինձ: Առաջինը՝ հարբուխ ունեի, որին հաջորդեց բերանի բորբոքումը. հազիվ էի կարողանում ուտել: Դրան հետևեց կողիս սուր ցավը, որն ինձ հինգ գիշեր չթողեց քնել, և որը դեռ շարունակվում է, ինչպես և շրթունքի բորբոքումը):

Թույլ տուր քեզ ասեմ, որ ամեն ինչ գալիս է Ինձնից: Սրանք Իմ մաքրագործումներն են:

Աղջի՛կս, Ես սիրում եմ քեզ: Սովորի՛ր, թե Ես ինչպես եմ գործում. Ես պիտի նեցուկ լինեմ քեզ, եթե անգամ դու տառապելիս լինես: Ես հոգում եմ քեզ համար և թույլ չեմ տա, որ որևէ հետք մնա քո հոգու վրա: Հասկացի՛ր, թե Ես ինչպես եմ գործում, բայց և զգա Ինձ: Թող լսեմ, որ դու խոսում ես Ինձ հետ. հիշի՛ր Ինձ: Ես երբեք թույլ չեմ տա, որ որևէ բան Իմ առջև ծառանա: Ես եմ Առաջինը: Եթե քո հոգին հղկվի, ապա այն ոսկու նման փայլուն կդառնա. իսկ այժմ Ես պետք է քեզ հիշեցնեմ, թե ինչու քեզ ընտրեցի: Ես քեզ ընտրեցի քո անասելի թշվառության և անկարողության պատճառով: Ես Ողորմության Աստված եմ:

Այժմ դու կարող ես գործել, բայց Ինձ միշտ քո մտքում պահիր: Ես երբեք Իմ տեսադաշտից դուրս չեմ թողնի քեզ: Նայիր Իմ Շուրթերին, երբ խոսում եմ քեզ հետ: Ես սիրում եմ քեզ: Վե՛ր կաց. երեսդ Ինձ դարձրու և թող որ այժմ լսեմ քեզ:

(Ճիշտ է, ես որոշ ժամանակ անտեսել էի Աստծուն: Երկրից երկիր մեր տեղափոխությունը շատ ուրիշ բաներով զբաղեցրեց ինձ):

Թող Ինձ, որ քեզ գործածեմ մի որոշ ժամանակ ևս:

Այո՛, Տեր:

Իմ օրհնությունները քեզ:

Ես օրհնում եմ Քեզ, Տեր:

Հուլիսի 21, 1987

(Սթոկհոլմ)

(Այսօր ինձ մոտ երկու տիկիններ եկան «Եհովայի վկաներից», ինչպես նրանք անվանում են իրենց: Մենք լեզվի պրոբլեմ ունեինք: Նրանք շատ վճռական էին և ինչոր ձևով հարձակվեցին կաթոլիկ դավանանքի վրա: Ասացին, որ կարող են ետ գալ անգլերեն գրքերով: Ես կուզեի նրանց լսել, որ հասկանայի թե ինչ են ուզում: Նրանք եկան այն ժամանակ, երբ Աստված թելադրում էր ինձ: Կարճ ասած, ես ցույց տվեցի նրանց այս հայտնությունները, և նրանք երկուսն էլ հոհոացին. ես հասկացա «դև» բառը: Ես թույլ տվի, որ նրանք գնան: Մի՞թե Աստված ինձ չէր ասել, որ ես պիտի շուտով ծաղրվեմ: Նա ինձ տվեց Իր փշե պսակը, որպեսզի ես ըմբռնեի ծաղրանքի զգացումը (Կանխասացված՝ 1987 թվի մայիսի 7-ին): Ես վախենում եմ, որ սա միայն սկիզբն է...)

Վասուլա, Ես քեզ մոտ եմ, մի՛ վախեցիր:

Հուլիսի 22, 1987

Վասո՛ւլա, կարո՞ղ ես տեսնել այս բոլոր հոգիներին: Բոլորը հերթով սպասում են:

(Ես տեսա Հիսուսին և մի խումբ հոգիներ Նրա ետևում կանգնած):

Հիսո՞ւս:

Ես եմ, այո՛, նրանք հոգիներ էին:

(Այս հոգիներին տեսնելուց անմիջապես հետո, մեկ ուրիշ պատկեր ինձ երևաց, տարիներ առաջ տեսած մի պատկեր: 17-18 տարեկան էի, երբ ես հաճախ տեսնում էի, որ հյուրասենյակում, իմ շուրջը հոգիներ էին նստած հատակին, որոնք լռեցնում էին միմյանց, որ հանդարտ մնան և ինձ մոտ լինեն. կարծես եկել էին մի ճառ լսելու: Այդ ժամանակ ես զարմանում էի, թե ես ինչո՞ւ եմ այդ «մեռած մարդկանց» տեսնում, ինչպես սովորաբար կոչում էի նրանց, բայց ուշադրություն չէի դարձնում, քանի որ նրանք ինձ երբեք չէին խանգարում, և, վաղ թե ուշ, իմ ուշադրությունը ցրվում էր շրջապատումս գտնվող այլ բաներով: Սա շատ հաճախ էր պատահում և բավական սովորական էր, բայց ես ամենևին ուշադրություն չէի դարձնում այս ամենին):

Այո՛, Վասուլա, նրանք սպասում էին:

Ինչի՞ էին սպասում, Տե՛ր:

Սպասում էին, որ դու մեծանաս:

Նրանք գիտեի՞ն:

Այո՛, գիտեին: Ես սպասել եմ քեզ, որ սիրես Ինձ ու հատուցես: Ինձ ջերմորեն սիրելը հատուցում է: Հետևաբար այդ հոգիները քավարանում բուժվում են[1], կրակները մարում են ու նրանք դուրս կորզվելով մաքրագործող կրակներից, վերջապես կարողանում են Ինձ մոտ գալ:

Վասուլա, դու գիտե՞ս, թե նրանք որքան են տառապում քավարանում, ցանկանալով ու չկարողանալով Ինձ տեսնել: Նրանք այնքա՜ն կախում ունեն քեզնից: Ա՜հ, Վասուլա, դու կօգնե՞ս նրանց:

Այո՛, Տեր, ես կուզեի նրանց վերջնականապես Քեզ հետ տեսնել:

Իմ Խաղաղությունը քեզ: Ես՝ Տերը, շուտով քեզ ցույց պիտի տամ, թե ինչպես պիտի օգնես նրանց: Միշտ Ինձ փնտրիր, զոհաբերվի՛ր և երբեք մի՛ դժգոհիր: Ես կօգնեմ քեզ, բավարարելու Իմ ցանկությունները: Սիրելիս, սիրի՛ր Ինձ, քանզի քո սերը բժշկում է նրանց:

[1] այսինքն՝ մաքրագործվում են

Հիսո՛ւս, Դու ինձ իմաց կտա՞ս, երբ նրանք վերադառնան Քեզ մոտ:

Կտամ:

Հիսո՛ւս, իսկ ինչ կասես «ԵՀովայի վկաների» մասին:

Թող որ նրանք քեզ տան ինչ որ ուզում են. ընդունիր նրանց Ինձ հետ: Դու կհասկանաս, թե Ես ինչու նրանց ուղարկեցի քեզ մոտ: Ինձ ապավինիր, սիրելիս:

Հիսո՛ւս, մի՞թե ես չեմ հանդիպելու <u>Քո Աշխարհից</u> որևէ մեկին:

Թույլ տուր, որ անմիջապես ասեմ, որ Ես քեզ կվերցնեմ ու կդնեմ Իմ յուրայինների մեջ: Աղջիկս, եթե դու արժանի լինեիր Իմ շնորհներից որևէ մեկին, ապա Ես ցույց կտայի քեզ, թե Սերն ինչպես է առաջնորդում՝ առանց դժվարություններ դիմադրավելու՝ բացելով բոլոր «դռները»[1]:

Նշանակո՞ւմ է:

Նշանակում է, դու չես արժանացել այն բոլոր շնորհներին, որ Ես տվել եմ քեզ, ու Ես Իմ Անսահման Բարության պատճառով է, որ հաշվի եմ առել քո թշվառությունը: <u>Այսուհետև Ինձ ավելի ցանկացիր, քան երբևիցե ցանկացել ես</u>: Դու ամեն մի շնորհ կվաստակես՝ Սիրո նոր գործեր Ինձ տալով: Սիրո ամեն մի արարք կվերականգնի այն ամենը, ինչ դու ավերել ես:

Ի՞նչ եմ ավերել, Աստված իմ:

Իմ կողմից տրված բոլոր բարիքները, որոնք դու վեր ես ածել չարիքի: Պատվի՛ր Ինձ, Ես սիրում եմ քեզ:

Տե՛ր, Դու կօգնե՞ս ինձ այդ բարի գործերը կատարելու:

Կօգնեմ: Հիշի՛ր, այն ամենը, որ Ես տվել եմ քեզ, պետք է տրվի ուրիշներին՝ նույնպես ձրիաբար: Ես ուզում եմ, որ Իմ խորանը մաքուր լինի:

(Ավելի ուշ)

(Աստված ցույց տվեց ինձ, որ ես երբեք չեմ արժանացել Նրա շնորհներից որևէ մեկին: Դրա համար ես հիմա Նրան եմ դիմում ավելի երկչոտությամբ և աղաչելով):

[1] «Դռներ»՝ նշանակում է, որ սատանան ու նրա հետևորդները կարող են ներթափանցել ու գրել իրենց վիրավորանքները, և կամ սխալ բառեր ասել ինձ: Այս պատճառով, Աստված ինձ ուսուցանել է ճանաչել դևերին: (Սատանան երբեք չի կարող իր ներկայությամբ խաղաղության մեջ թողնել հոգուն: Դա մատնում է իրեն):

Տե՛ր:

Ես եմ:

Թույլ տուր, որ լինեմ Քո Լույսի մեջ:

Եղիր Իմ Լույսի մեջ և մնա այնտեղ:

Թույլ տուր, որ Քեզ ապավինեմ[1]*:*

Ես քեզ միշտ թույլ եմ տալիս:

Թույլ կտա՞ս, որ բռնեմ Քո Ձեռքը և Քեզ մոտ լինեմ:

Ե՛կ քո Հոր Բազուկների մեջ:

Թույլ տուր խոսեմ Քեզ հետ:

Մե՛կ եղիր Ինձ հետ, դեմքով Ի՛նձ շրջվիր, եղիր Իմ արտացոլումը, և թող որ Ես խոսեմ քո փոխարեն:

Թույլ կտա՞ս, որ ես մխիթարվեմ Քեզնով:

Փոքրի՛կս, Ես կլինեմ քո Մխիթարիչը: Ե՛կ, զգա Ինձ, համաքայլ եղիր Ինձ հետ, Մեկ եղիր, անէացի՛ր Իմ մեջ: Թող որ ամբողջովին տիրանամ քեզ և իշխեմ քեզ վրա. թող որ քեզ մխրճեմ Իմ Սրտի մեջ: Մոտեցի՛ր, մնա Իմ մեջ, իսկ Ես՝ քո մեջ: Ինչպես եմ քեզ սիրում, աղջիկս:

(Ես զգացի, որ Աստված շոյված էր):

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր:

(Ես զգացի, որ Իր Սերը ամբողջապես պատում է ինձ):

Այժմ Ինձ հետ եղիր, մնա՛[2]: Ինձ ոչինչ մի՛ մերժիր: Վասո՛ւլա, Ես բարձրաձայն աղաղակում եմ: Իմ աղաղակը թնդացնում ու ցնցում է ողջ երկինքը: Իմ աղաղակը պետք է լսելի լիներ Իմ հոգիներին, որոնք սիրում են Ինձ: Նրանք պետք է որ լսած լինեն Ինձ: Ասա՛ նրանց, որ նրանք չեն երևակայում այդ: Այդ Ես եմ՝ Հիսուս, Աստծո Սիրելի Որդին: Ես ուզում եմ, որ նրանք միավորվեն և առաջադրեն Միասնություն, Խաղաղություն և Սեր: Ես ուզում եմ, որ նրանք լինեն ինչպես փրկարար մի բանակ, վերանորոգելով այն ամենը, ինչ որ քանդված է ու

[1] «Թույլ տուր» բառը Հիսուսի կողմից ուսուցանվել էր ինձ, որովհետև, որպես Աստված և Գերագույն, Նա ինձ՝ իր արարածին, դիմում է միշտ, ասելով. «Թույլ տուր ինձ՝ այս կամ այն...»:

[2] Ես պատրաստվում էի վեր կենալ ու գնալ:

աղավաղված: Իմ աղաղակը բխում է վիրավոր Հոգուս խորքերից: Օրհնի՛ր Ինձ, աղջիկս:

Ես օրհնում եմ Քեզ, Աստված իմ. թող որ Քո իղձերը իրականանան:

Հավատարիմ մնա Ինձ, միաձուլվի՛ր Իմ Մարմնին, կառչի՛ր Ինձ:

Հուլիսի 24, 1987

(Ես ծնկի եմ իջնում իմ սեղանի մոտ, իսկ Հիսուսն իմ դիմացն է՝ նստած բազմոցի վրա: Ես սպասողական նայեցի Նրան, որ խոսի):

Սիրելի՛ս, ավելացրու քո սերն Իմ հանդեպ՝ հոգիներ բժշկելու համար: Սիրի՛ր Ինձ և ազատիր նրանց: Այժմ դու հինգ հոգի վերադարձրիր դեպի Ինձ: Գոհացրո՛ւ Ինձ՝ հոգիներ տալով: Ես ուզում եմ փրկել բոլոր այն թշվառ հոգիները, որոնք մոտ են սատանայի դռներին: Ես այնքան շատ եմ սիրում ձեզ բոլորիդ:

(Ավելի ուշ)

Agapa Me[1]:

Հիսո՞ւս:

Ես եմ: Ասա Սիրկա Լիսային, որ Ինձ ավելի շատ սիրի: Նա ինչո՞ւ Ինձ մոտ չի գալիս: Ես նրա Խորհրդատուն եմ: Ես՝ Նա եմ, ով պահպանում է ձեզ: Ես ձեր Մխիթարիչն եմ: Նա գիտի՞, թե Սիրո ինչպիսի վիհ է Իմ Սիրտը: Ես սիրում եմ նրան, Վասուլա. Ես կսպասեմ նրան: Ես պիտի շարունակեմ կանչել նրան: «Պատասխանի՛ր, հոգի, պատասխանի՛ր Իմ կանչերին, կանչի՛ր Ինձ քո աղոթքներում: Խոսի՛ր այս Սրտի հետ, որը սիրում է քեզ: Ես կսպասեմ»:

(Հիսուսն Ինձ այս պատգամը տվեց իմ ընկերուհիներից մեկի մասին):

Հուլիսի 25, 1987

Ես քո Երկնային Հայրն եմ, որ սիրում է քեզ: Ուրիշ ոչ մեկին Հայը մի՛ կանչիր, բացի Ինձնից՝ քո Արարչից: Սովորի՛ր Ինձնից: Վասուլա, մի՞թե չեմ ասել, որ Ես դեռ ձեր մեջ եմ: Ես Սեր եմ. դեպի Սերը առաջնորդիր Իմ հոտը, որ Ես կարողանամ փրկել այն: Նվազեցրո՛ւ հեթանոսությունը[2], խթանի՛ր Սերը: Օգնի՛ր Իմ զավակներին՝ տալով նրանց նույն կերակուրը, որ Ես տվել եմ քեզ:

[1] Սիրիր Ինձ (հունարեն):
[2] անաստվածությունը

Քո օգնությամբ, ես կկատարեմ Քո ցանկությունները: Եղի՛ր ինձ առաջնորդող Լույսը:

(Ավելի ուշ)

(Այն միտքը, որ «Եհովայի վկաները» պիտի գան, ինձ անհանգստացնում է: Ի՞նչ ասեմ նրանց):

Գրի՛ր:

(Հիսուսն Իր ձեռքով նշան արեց՝ ցույց տալով այս նոթատետրը):

Սիրի՛ր նրանց:

(?)

Արա այն, ինչ ասում եմ: Սիրի՛ր նրանց, բոլորն էլ Իմ զավակներն են:

Բայց ես վախենում եմ, որ նրանք ինձ սխալ խորհուրդ կտան: Թվում է, նրանք ուզում են ասել, որ միակն են ամբողջ աշխարհում, որ ճշմարիտ կրոն ունեն, և որ մնացած բոլորը, ինչպես՝ կաթոլիկները, բողոքականները, մուսուլմանները, հրեաները և այլն, հարյուր տոկոսով սխալ են, և որ իրենց հավատով է, որ մարդ կարող է դրախտ հասնել:

(Հիսուսն անդրդվելի էր թվում):

Սիրելիս, սիրի՛ր նրանց:

Լա՛վ, բայց, եթե նրանք սկսեն ինձ մոլորեցնե՞լ:

Մի՞թե Ես լուռ կմնամ, եթե լսեմ, որ նրանք մոլորեցնում են քեզ:

Ո՛չ:

Աղջիկս, մի՛ վախեցիր, Ես կառաջնորդեմ քեզ:

Ուրախ եմ, որ Քեզ հետ եմ, Աստված իմ:

Ինչո՞ւ[1]:

Որովհետև սիրում եմ Քեզ, որովհետև Դու իմ երջանկությունն ես, իմ ուրախությունը և ժպիտը. Դու իմ ուրախ կյանքն ես, ահա թե ինչու:

Ինձ խնդությամբ ողողիր, Վասուլա. սիրի՛ր Ինձ: Վասո՛ւլա, մխրճվիր Սրտիս ամենախոր ծալքերում և թող որ Իմ ողջ Սերը ամբողջապես կլանի

[1] Թվում է Հիսուս ցանկություն ուներ լսելու պատճառները: Նա հաճույք էր ստանում դրանից:

քեզ, որպեսզի դու դառնաս ոչ այլ ինչ, քան Սիրո մի Կենդանի Բոց՝ Սիրուց բխած: Սիրելիս, հանդչի՛ր Իմ մեջ և թող որ Ես հանդչեմ քո մեջ: Եղիր Իմ արքայությունը:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 26, 1987

Աստվա՞ծ իմ:

Ես եմ, փոքրիկս, էլ ով պիտի առաջնորդի քեզ յուրահատուկ այս ուղիով, եթե Ես՝ Աստված, չընտրեի այն քեզ համար:

Սկզբում ես շատ վարանում էի, վախենալով, որ դա չարից է:

Սատանան կփախչի, երբ դու պաշտես Ինձ: Նա դիմակազերծ կլինի, բացահայտելով իր մտքի նենգ ծրագրերը: Նա չի հանդուրժի խոնարհությունը, սերը և նվիրումը: Սա միշտ մտքումդ պահիր: Բռնիր ձեռքս և մագլցիր[1]. մի՛ հոգնիր, հաճախ զղջա ու ապաշխարիր:

Հիմա ինչպե՞ս պիտի շարունակես:

Դու ի՞նձ ես հարցնում, Տե՛ր:

Այո՛:

Ես չեմ կարող, մինչև որ Դու ինձ չօգնես:

Բարի: Նա, ով որ պայքարում է Իմ ցանկությունների դեմ, հակադրվում է մի խթանի:

Հուլիսի 27, 1987

(Վհատության ինչ-որ մի զգացում է պատել ինձ: Զգում եմ, որ Աստված այնքան մոտ չէ, ինչպես առաջ):

Մի՛ վշտացիր, իմ Վասուլա: Ես կպարզեմ այս բոլորը: Ես քեզ մոտ եմ:

Հուլիսի 28,1987

(Վհատության զգացումը դեռ ինձ չի թողել):

[1] «Մագլցել» բառն այստեղ նշանակում է հոգևոր վերելք:

Հիսո՛ւս, այնպես եմ վախենում մարդկանց մոլորեցնելուց, երբ նրանց ասում եմ, որ երբեմն զգում եմ, որ Քո ձեռքը փաղաքշում է իմ գլուխը. միգուցե սխալվո՞ւմ եմ: Սարսափելի կլինի, եթե սխալվեմ:

Մի՛ վշտացիր. հավատա՛ Իմ Փրկարար Սիրուն: Ես քեզ շատ անգամ եմ փաղաքշել, ինչպես անցյալում, այնպես էլ հիմա: Ո՛չ, Վասուլա, դու չես երևակայում. այդ Ե՛ս եմ, Հիսուս:

Հուլիսի 29, 1987

(Վհատության զգացումը դեռ ինձ հետ է):

Հիսո՞ւս:

Ես եմ: Ես ասել եմ քեզ, որ Իմ կապերը հավերժական կապեր են: Ինչի՞ց ես վախենում: Դու թյուրիմացաբար այդպես ես կարծում, որովհետև չես օգտագործվում[1] նույն չափով, ինչպես առաջ: Ես ավելի քիչ եմ լինում քեզ հետ: Մի՛ կարծիր, որ անտեսել եմ քեզ և կամ՝ բարկացած եմ քեզ վրա: Ո՛չ, ո՛չ, Վասուլա, դրանք չեն պատճառը. Իմ Սերը չի փոխվել. Ես քեզ չեմ լքել: Ես կշարունակեմ ոգեշնչել քեզ:

Հուլիսի 30, 1987

(Ես դեռ անհանգիստ եմ. ինչո՞ւ Աստծուն չեմ զգում այնպես, ինչպես առաջ):

Հիսո՞ւս:

Ես եմ: Ե՛կ, նայի՛ր Ինձ: Այո՛, նայիր:

(Ես նայեցի Աստծո աչքերի մեջ և հալվեցի):

Անկախ նրանից, թե դու ով ես, մի՞թե Ես քեզ չեմ բարձրացրել ու դրել Իմ Սրտում: Վասուլա, Ի՛մ Վասուլա, մի՞թե Ես երբևէ կմոռանամ քեզ[2]: Խորհի՛ր, Ես Սեր եմ և մինչև որ գամ քեզ ազատեմ, Ես պիտի ողողեմ քեզ Իմ Սիրով: Ela thipla mou ime՛ o Christos[3]:

---

[1] որպես Աստծո գործիքը

[2] Նա այդ ասաց այնպիսի քաղցրությամբ, որ միայն Աստված կարող էր այդպես խոսել:

[3] Ե՛կ Ինձ մոտ, Ես Քրիստոսն եմ (Հունարեն): (Հիսուս փորձում էր հանգստացնել ինձ, և ես մի փոքր-ինչ լավ զգացի):

Հուլիսի 31, 1987

Վասուլա, ե՛կ, ես պիտի պարզաբանեմ լքվածության քո անհիմն վախը: Դա խորաթափանցություն է, որ ես ուսուցանում եմ քեզ: Մի՛ կարծիր, թե ես լքում եմ քեզ:

Ես քեզ տալիս եմ Իմ շնորհը՝ խոկման ավելի բարձր աստիճանի հասնելու համար, բայց, միևնույն ժամանակ, ես մաքրագործում եմ քո հոգին՝ ավելի բարձր ձեռքբերումների համար: Վստահ եղիր, սիրելիս, որ ես քեզ հետ եմ և հեռու չեմ քեզնից: Ես խթանում եմ քո սերն Իմ հանդեպ և զորացնում եմ քեզ: Այս բոլորի արդյունքը կլինի առավել խորունկ նվիրումն ու լիառատ սերն Իմ հանդեպ:

Վասո՛ւլա, ես ցանկանում եմ, որ դու հասնես խոկման ավելի բարձր աստիճանի: Դու պիտի աճես: Սիրելիս, կասկածի բոլոր ստվերները հանիր քո մտքից, ստվերներ, որոնք անհանգստացնում են քեզ: Ես ուզում եմ, որ դու առաջադիմես: Ես ուզում եմ, որ քո հոգին հասնի կատարելության և մաքրության: Ես ուզում եմ, որ քո հոգին առաջադիմի ավելի բարձր ու ավելի նուրբ այս լույսի մեջ: Այս ձևով, քո մաքրված հոգին կարող կլինի ինձ առաքինություններ մատուցել՝ պատսպարված կատարելությամբ ու մաքրությամբ:

Խոկումով դու կհասնես ներհայեցողության ավելի բարձր աստիճանի: Այս չորության և լքվածության զգացումը, որը քեզ մտահոգում է, թե «ամեն ինչ անհետացավ», այդպես է թվում, որովհետև ես քեզնից մասամբ հեռացնում եմ Իմ Լույսը: Սակայն մի՛ վախեցիր. ուրախ եղիր, որ զգում ես տարբերությունը: Իմ Լույսը մասամբ հեռացնելով, ես ուժեղացնում եմ Ինձ որոնելու քո ցանկությունը, և այդպիսով, ես քո իմացությունը ողողում եմ ավելի նրբազգաց Լույսով: Սակայն Լույսն ամբողջովին երբեք չի հեռացվել, քանզի ես միշտ մի փոքր Լույս եմ թողնում քեզ համար, որ դու կարողանաս տեսնել ու հետևել դրան՝ պահելով քեզ սայթաքումից:

<u>Ես</u> քեզ տալիս եմ այս կորովը, որ դու շարունակես Ինձ ավելի եռանդուն փնտրել, քան երբևէ փնտրել ես: Իմ մեջ որոնիր Իմ ցանկությունները, Վասուլա: Ես երբեք չեմ թողնի քեզ: Ինչո՞ւ, որովհետև ես քո Երկնային Հայրն եմ, որն ուզում է, որ դու աճես ու ծաղկես, և սրանք են Իմ Ուղիները: Մի՛ վախեցիր, բայց արթուն եղիր, երբեք մի՛ քնիր. իմ մեջ փնտրիր այս բոլորը: Ինձնից դու կսովորես. ես քո Ուսուցիչն եմ: Սիրի՛ր Ինձ, Վասուլա, ժպտա՛ Ինձ, երբ տեսնում ես Ինձ և բռնիր Իմ Ձեռքը, երբ տալիս եմ քեզ: Իմ Խաղաղությունը քեզ, վստահի՛ր Ինձ: Ես սիրում եմ քեզ:

Օ՜, Հայր, շնորհակալ եմ, որ ինձ թեթևացրիր և բացատրեցիր այս ամենը: Շնորհակալ եմ Քո ուսուցման համար: Ես սիրում եմ Քեզ:

Օգոստոսի 4, 1987

(Ես դեպի Շվեցարիա)

(Այն, ինչ կատարվում է, գրեթե վախեցնում է ինձ: Մի՞թե սա այն խորաթափանցությունն է, որի մասին Աստված խոսեց անցյալ շաբաթ):

Աստվա՞ծ իմ:

Ես եմ, սիրելիս:

Ես ճի՞շտ եմ հասկանում Քեզ, Տե՛ր:

Այո՛: Սերը քեզ կդարձնի մի հայելի, ուր կարտացոլվեն բոլոր տառապող մարդկանց ցավերն ու տառապանքները: Դու պիտի զգաս նրանց տագնապներն ու տառապանքներն այնպես, ինչպես, եթե նրանք քոնը լինեն:

Երբ դու կլսես կամ կտեսնես որևէ տառապանք, կամ, երբ մեկը մի մեծ ցավի մեջ կլինի, Ես՝ Տերը, քեզ կտամ այդ ցավերը զգալու շնորհը, որպեսզի դու այն զգաս նույնքան ուժգին, որքան որ նա է տառապում: Այդպես, դու կարող կլինես ամբողջովին ներթափանցել նրանց վերքերի մեջ և հասկանալ նրանց զգացումները:

Վասո՛ւլա, սիրելիս, այս խորաթափանցությամբ, որ Ես տալիս եմ քեզ, դու վիթխարի օգնություն կլինես նրանց համար: Տառապի՛ր, երբ նրանք տառապում են, և եթե դու մերժես նրանց, Ես միշտ կհիշեցնեմ քեզ, որ դու պիտի կիսես նրանց տառապանքները:

Օ՜, Աստված իմ, մարմինս կկարողանա՞ դիմանալ այս բոլորին: Ոչ թե հոգիս է վախենում, այլ մարմինս թույլ է:

Հիշի՛ր, մինչև վերջ Ես բավարար ուժ եմ տալու, թե՛ հոգուդ և թե՛ մարմնիդ: Հավատա՛ Ինձ, սա շնորհ է, փոքրիկս: Սիրի՛ր Իմ զավակներին այնքան, որքան Ես եմ սիրում նրանց: Եղի՛ր Իմ արտացոլումը, գործիր Իմ և նրանց հետ միաժամանակ: Ես սիրում եմ քեզ և վեհ այս Սիրուց մղված, Ես տալիս եմ քեզ այս շնորհը: Մի՛ հոգնիր, ե՛կ, Ես կներարկեմ քեզ Իմ Սերը՝ տալով քեզ Իմ մեխերը: Զգա ողջ տառապանքները: Աղջիկս, դու կանե՞ս այս բոլորը Ինձ համար:

Այո՛, Աստված իմ, եթե դա Քո կամքն է:

Սերը կառաջնորդի քեզ:

(Ես այդ բանը ակնկալում էի և ահա թե ինչու:

Երեք օր առաջ հեռուստատեսության լուրերում ցույց տվեցին երկու երեխաների, որոնք մեռել էին փակված գետնահարկում: Ես խղճացի երեխաներին և նրանց ծնողներին: Ես աղոթեցի ծնողների համար: Հաջորդ օրը նրանք ցույց տվեցին մի փոթորիկ, որը տեղի էր ունեցել Կանադայում: Սարսափած ժողովուրդը դեռևս վախեցած, խոսում էր այդ մասին: Նույն գիշեր ես աղոթեցի նրանց համար ևս: Ես խղճացի, բայց ոչ այնպես, ինչպես, եթե նրանց մաշկի տակ լինեի: Հանկարծակի, Աստված ինձ վրա նետեց Իր ծակող Ճառագայթը: Զգացի որ դա ծակում է կուրծքս և դուրս է գալիս մեջքիցս: Դա այնպես այրեց ինձ և այնպիսի մի տառապանք պատճառեց, որ

ես ուզեցի վազել և ջուր խմել. կարծես բոցերի մեջ լինեի: Հետո, ավելի ուշ, ես քնեցի: Նա ինձ մի վառ պատկեր ցույց տվեց, թե ես ինչպես պետք է զգայի: Երազումս իմ որդին մեռել էր: Ես տանջանքից արթնացա և Աստված ինձ ասաց, որ քանի դեռ այս սարսափելի տանջանքի մեջ եմ, ես պետք է անհապաղ աղոթեմ ծնողների համար, որոնք կորցրել են իրենց զավակներին: Ես ջերմեռանդորեն աղոթեցի այնպես, ինչպես կարծես նրանք իմը լինեին: Ես քնեցի և անմիջապես Աստված կրկին մի պատկեր ցույց տվեց ինձ, ուր ես փոթորիկի մեջ էի ընկել: Ես անցա մահվան բուռն տագնապների միջով: Նա ինձ կրկին արթնացրեց և ասաց, որ աղոթեմ նրանց համար, ովքեր այս փորձություններին էին ենթարկվել: Ես ջերմորեն աղոթեցի, քանի որ աղետի թարմ տպավորության տակ էի: Կուրծքս դեռ զգում է կրակե ճառագայթը, որով Աստված ինձ խոցեց մի քանի օր առաջ):

Օգոստոսի 5, 1987

Հիսո՞ւս:

Egho imei[1]:

Շնորհակալ եմ այս շնորհի համար, թեև գիտեմ, որ դա նույնպես նկատի է առնված ուրիշներին կերակրելու համար:

Անվերջ ժամեր, դու և Ես միասին պետք է լինենք: Վասուլա, չեմ ասե՞լ, որ իմաստունը չպիտի հասկանա այն, ինչ որ բխում է Հոգուց: Փիլիսոփայությունը չի կարելի համեմատել հոգևորության հետ, երբե՛ք: Դա ամենագլխավոր պատճառներից մեկն է, որ բոլոր նրանք, ովքեր իշխանություն ունեն, և ովքեր իրենց իմաստուն են համարում, պիտի ծաղրեն քեզ, պիտի արհամարհեն քեզ, պիտի վհատեցնեն քեզ և պիտի քննադատեն քեզ: Այնպես որ, պատրաստ եղիր, սիրելիս, որովհետև գայլերը քեզ պիտի հալածեն: Մի՛ վախեցիր, Ես քեզ մոտ պիտի լինեմ:

(Ես հառաչեցի):

Վասո՛ւլա, ամեն բան, ոչ այլ ինչ է, եթե ոչ մի անցնող ստվեր: Մի՛ վհատվիր, Ես քո կողքին պիտի լինեմ:

(Հիշեցի, թե ինչպես տեղս չէի գտնում՝ լինելով դրսում, «աքսորի» մեջ, և որքան այդ ինձ դուր չէր գալիս: Այն, ինչ որ կարծում էի հաճելի էր ինձ, իմ նախկին կյանքում, տանջանք էր հիմա, և ես չեմ կարող սիրել այլևս այդ բաները: Ես տանել չեմ կարող դրանք... Ես անհարմար եմ զգում դրանց համար):

Գիտե՛մ, Ինձ ապավինիր:

(Ես հուսահատություն զգացի):

[1] Ես եմ (հունարեն)

Վասուլա, Վասուլա, ո՛չ, դու չես կարող հաճույք ստանալ այդ երկրային բաներից, ինչպես առաջ, որովհետև դա Իմ կամքն է: Ես չեմ ուզում, որ դու կրես այդ բաները:

Հիսո՞ւս:

Ես եմ. նայի՛ր Իմ Ձեռքերին, նայի՛ր, Վասուլա, դրանք արյունոտ են: Վասուլա, վերակենդանացրո՛ւ Իմ Եկեղեցին: Լսի՛ր Ինձ: Դու տեսե՞լ ես այս արյունը, որը հոսում է Իմ բազուկներից: Ես տառապում եմ:

Տե՛ր, ինչո՞ւ ես ինձ այսքան ցավ պատճառում՝ ցույց տալով ինձ այս բոլորը:

(Տեսիլքն այնքան կենդանի էր, որ ես կարծեցի, թե Նրա արյունը կկաթի այս տետրի վրա):

Որպեսզի հասկանաս, սիրելիս, թե Ես ինչպես եմ տառապում՝ այսքան շատ հոգիներ տեսնելով սատանայի իշխանության ներքո: Թող որ գործածեմ քեզ մինչև վերջ:

Ես սիրում եմ Քեզ:

Եղիր Ինձ հետ՝ «մեզ»: Ես քեզ միշտ կհիշեցնեմ՝ «մենք»[1]: Սիրի՛ր Ինձ:

Օգոստոսի 7, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ:

(Հիսուս կրկին Իր խարազանման պատկերներից էր ինձ ցույց տալիս. Նրա դեմքի աջ կողմը ուռած էր: Ես նորից քանդվեցի):

Վասո՛ւլա, Ես ձեզ բոլորիդ այնքան շատ եմ սիրում:

Արա՛գ, արա՛գ[2]:

Իմ զորությամբ Ես վեր կհանեմ անգամ մեռածին: Վասո՛ւլա, Ես ուզում եմ պարզաբանել անցյալ շաբաթվա Իմ տված Պատգամը: Դու գիտե՞ս, որ Իմ Լույսը Ես փոքր-ինչ հեռացնում եմ: Դու զգո՞ւմ ես այդ:

Զգում եմ:

---

[1] *Մենք* ասելիս, Նա մատնացույց էր անում Իր ցուցամատով, ինչպես մի Ուսուցիչ:

[2] Ուզում էի ասել՝ շտապիր և կատարիր Քո կամքը, որպեսզի ավելի շատ չտանջվես: Ես չեմ կարող տանել Նրա տառապանքը:

Լավ: Իմ Լույսը փոքր-ինչ հեռացնելով միայն, ես սնում եմ քո միտքն այն իմաստով, որ ես ստիպում եմ քեզ Ինձ ավելի ցանկալ՝ բարձրացնելով քեզ ներհայեցողության աստիճանին՝ կենդանացնելով ու ծաղկեցնելով այն, և դրանով իսկ՝ քեզ դարձնում ավելի արդասաբեր:

Դու ինչպե՞ս ինձ սնեցիր, նախքան ինձ այստեղ հասցնելը:

Ես քեզ տվել եմ միջոցներ, որոնք քո հասկացողությունից դուրս են: Այժմ ես ցանկանում եմ, որ դու ներթափանցես խոկման ավելի բարձր ոլորտներ: Վասո՛ւլա, դու պիտի առաջ գնաս: Այս չնչին փոփոխությամբ, ես միայն հարստացնում եմ քո կերակուրը: Ես ուզում եմ, որ սա պարզ լինի քեզ: Ես ասել եմ, որ ամեն առումով պիտի մեկուսացնեմ քեզ, այնպես չէ՞:

Այո՛, ասել ես, Տե՛ր:

Այժմ, որ դու մեկուսացած ես, ես պիտի աշխուժացնեմ քո կարողությունները:

Խորաթափանցության մասի՞ն է խոսքդ:

Այո՛, քո խորաթափանցության: Քեզ հոգևոր շնորհ տալը կօգնի մյուսներին:

Ինչպե՞ս թե մյուսներին, Տե՛ր:

Դու կկարողանաս հասկանալ Իմ զավակներին և դրանով դու կկարողանաս օգնել նրանց: Իմ Լույսի այս չնչին հեռացմամբ, մի՛ կարծիր, որ լքում եմ քեզ: Ո՛չ, Վասուլա, ես միայն քո հոգին առաջ եմ մղում՝ դեպի սրբություն:

Տե՛ր, վախենում էի, որ առանց թիակների մի նավակ կդառնամ և կքշվեմ դեպի ետ՝ կորցնելով այն ամենը, ինչ որ Դու սովորեցրել էիր ինձ: Ես խուճապի մատնվեցի:

Վասո՛ւլա, ես պետք է մաքրագործեմ քեզ: Իմացի՛ր, որ հոգին մաքրագործվելու համար պետք է անցնի սոսկալի երկյուղների ու տառապանքների միջով: Բայց ես քեզ հետևյալն եմ ասում. քո կարոտը Իմ հանդեպ կօգնի քեզ հասնելու այս օրհնությանը:

Որը

Որը ներհայեցողությունն է: Ես ուզում եմ, որ քո սերը հասնի կատարելության՝ քեզ ամբողջովին Ինձ հանձնելով:

Հիսո՛ւս, հոգիս Քեզ է տենչում:

Փոքրիկս, մի՞թե ես էլ քեզ չեմ տենչում:
[1]Մենք, մեզ: Արի գնանք:

(Հիմա ես հասկացա, որ Հիսուս միաժամանակ երկու բան էր ինձ սովորեցնում՝ ներհայեցողություն և խորաթափանցություն ձեռք բերել:

Հուլիս 26-ի պատգամում, Աստված կարծես պատրաստում էր ինձ այս փոփոխության համար: Արդեն հաջորդ օրը ես զգացի, որ Իր Լույսը թեթևակի հեռացվեց: Ես խուճապի մատնվեցի: Անմիջապես հոգիս սկսեց պատճառներ փնտրել, որ ես մեղավոր եմ և լեցուն մեղքերով: Ես մտածում էի, թե այդ մեղքերից որո՞նք կարող էին Աստծուն այնքան բարկացնել, որ Նա թեթևորեն ետ քաշեր Իր Լույսը: Մի՞թե ես վիրավորել էի Նրան: Կամ՝ արդյոք սա սատանա՞ն է անում: Մտածեցի, որ երկու դեպքերում էլ, ես պետք է ավելի ամուր կառչեմ Իմ Փրկչից, ավելի շատ աղոթեմ, քան սովորաբար, ավելի խոկամ, լիարժեք օգտագործեմ ինձ տրված մնացած բոլոր շնորհները, զգամ Իր Ներկայությունը, ավելի հաճախ խոսեմ Նրա հետ, քան երբևիցե խոսել եմ, երբեք չմոռանամ Նրա Ներկայությունը և աշխատեմ ավելի տքնաջան, քան երբևիցե: Եթե դա սատանան է, նա «մխալով» փախուստի կդիմի: Ես կթողնեմ, որ նա բորբոքվի, և նա ինձ հանգիստ կթողնի: Մյուս կողմից, եթե այն գալիս է Աստծուց, իբրև մի քննություն, ապա՝ ես, որպես մի ուշիմ աշակերտ, կուզեի այն հաջողությամբ հանձնել: Ես ուզում եմ, որ Նա ժպտա:

Անցավ մի քանի օր և ոչ մի փոփոխություն: Ուժերս տեղի էին տալիս, սկսեցի վախենալ: Ես փորձեցի Նրան ծառայել ավելի եռանդով ու նվիրումով, բայց դեռ չէի կարողանում հասկանալ, թե ինչու այս բոլորը չէր օգնում: Համենայն դեպս, ես այդպես էի համոզված: Այնուհետև, իմ Փրկիչն ու Ուսուցիչը բացատրեց ինձ, թե ինչ էր կատարվածը: Երբ ես կարծում էի, թե Նա լքել էր ինձ, Նա մաքրագործում էր ինձ՝ բարձրացնելով խոկման ավելի բարձր աստիճանի, ձևավորելով իմ միտքը, հեղելով այն մեզմ[2] լույսով, սնելով ինձ խորաթափանցությամբ):

Օգոստոսի 10, 1987

(Անցյալ գիշեր ես արթնացա Տիրոջ կողմից, և Նա խնդրեց ինձ նորից Իրեն հանձնվել: Ես ասացի Նրան հետևյալը.

«Շնորհակալություն, Հա՛յր,
որ նայեցիր ինձ վրա՝ ինձ,
որը ոչ այլ ինչ է,
եթե ոչ այս աշխարհի
մեղքերի մարմնացումը:
Շնորհակալ եմ
Քո Ողորմության համար,

[1] «Մենք, մեզ» ասելով Նա հիշեցնում է ինձ, որ Իր հետ խոսելիս ես գործածեմ այս երկու բառերը:
[2] Ակնհայտ է, որ նոյնիսկ, երբ ես բացատրում եմ իմ սեփական զգացումները, Աստված է որ դրանք թելադրում է ինձ: «Մեզմ» բառը բարձրաձայն ասվեց ինձ, երբ ես երկմտում էի, թե ինչպես նկարագրեի այս լույսը: Ես փնտրեցի բառարանում պարզելու համար, թե ինչ է նշանակում. ես չգիտեի...

այն ժամանակ,
երբ ես մերժում էի Քեզ.
շնորհակալ եմ Սիրո համար,
որ Դու ունես իմ հանդեպ:
Անկախ իմ մեղքերից,
Դու բարձրացրիր ինձ
դեպի Քո Սիրտը:
Թող որ Քո կողքին լինեմ,
Քո ոտքերի մոտ:
Թույլ տալով ինձ այս ամենը,
Դու ավելին տվիր ինձ,
քան ես արժանի եմ:
Թույլ տալով ինձ
խոսել Քեզ հետ՝ ավելին է,
քան ես արժանի եմ:
Ես ոչ մի բանի արժանի չեմ:
Հա՛յր, ես ամբողջապես
հանձնվում եմ:
Գիտեմ, որ ես ոչինչ եմ,
բայց այս ոչնչությունը
Քեզ է պատկանում:
Ուզո՞ւմ ես ինձ
անկյուն նետել՝ արա՛ այդ:
Ուզո՞ւմ ես ինձ տրորել՝
արա՛ այդ:
Ուզո՞ւմ ես,
որ միայն տառապեմ՝ արա՛ այդ:
Ուզո՞ւմ ես ինձ
Քո Սրտում ունենալ՝
դա ավելին է,
որին ես երբևիցե արժանի եմ:
Ինչ էլ որ Դու ցանկանաս, Տե՛ր,
ես միայն շնորհակալ կլինեմ
և կսիրեմ Քեզ:
Գործածի՛ր ինձ, եթե ցանկանում ես,
որ իմ վերջին ուժերով
օգնեմ մյուսներին:
Արժանի արա ինձ,
որպեսզի կարողանաս
ինձ լիովին օգտագործել:
Ես Քոնն եմ և միմիայն Քոնը,
Թշվառ, սակայն սիրում եմ Քեզ»):

(Ավելի ուշ)

Հիսո՞ւս:

Ես եմ. Վասո՛ւլա, Օգոստոսին էր, երբ Ես սկսեցի ուսուցանել քեզ: Վասո՛ւլա, դա մի որոշ առումով տարեդարձ է մեզ Համար, ուրախացի՛ր:

Սիրելիս, դա մեր տունն է: Թող որ Սիրո ծաղկեպսակ դնեմ քեզ վրա: Ե՛կ, տունիր Ինձ հետ: Ես այժմ քեզ թույլ կտամ որ գնաս[1], բայց արի Ինձ մոտ՝ տունելու Իմ Օգոստոսը:

(Երբ Նա ինձ սա ասաց, ես վազեցի ու փնտրեցի օգոստոսի ամսաթվերը իմ նոթատետրի հին օրինակներում: Ուրախությունից ցատկեցի, որ այդ Դանն էր (պահապան հրեշտակը), որն ինձ ասաց. «Ես՝ Դանը, օրհնում եմ քեզ մեր Հայր Աստծո, Նրա Սիրելի Որդու Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու անունով: Օրհնյալ են այն մաքուր հոգիները, քանզի նրանք պիտի տեսնեն Աստծուն»: *Հետո Դանը ինձ Աստծուն հանձնեց, որից հետո Ցահվեն սկսեց ուսուցանել ինձ: Դանը վերջացրեց՝ ասելով.* «Փառք Աստծո, Ես կատարեցի այն ամենը, ինչ Աստված ուզում էր, որ անեմ»:

Ես արագ վազեցի ու պատմեցի իմ զարմուհուն. երջանկության մեջ լողում էի: Ես տունում էի՝ Աստծո հետ: Իմ զարմուհին նույնպես ուրախ էր, բայց ինձ զգուշացրեց, ասելով, թե ուրիշները, որոնք չեն հասկանում, կմտածեն, թե ես սիրահարված եմ Աստծո վրա, ոչ ճիշտ ձևով սիրելով Նրան: Ինչ որ նա ասաց, շատ տխրեցրեց ու վախեցրեց ինձ: Արդյո՞ք նա ճիշտ էր):

Հիսո՞ւս:

Աղջի՛կս:

Ես վախենում եմ սրա համար:

Ես գիտե՛մ. Վասուլա, Մորս հետ եղիր: Ես ուզում եմ, որ դու հասկանաս, թե որքան սխալ են քո մտքերը:

Ես սովորեցրել եմ քեզ սիրել Ինձ, քո Աստծուն, ինչպես որ ուզում եմ, որ ամեն ոք սիրի Ինձ: Ես տունում եմ մեկ տարվա ավարտը: Սիրելիս, դու կլինե՞ս խաղաղության և Սիրո Իմ դուստրը: Ես շատ մարդկային կյանքեր եմ տեսել, որոնք ատելությամբ են լցված: Իմ Թագավորությունը լցրել եմ Երկնային խաղաղությամբ: Ես մի՞թե չեմ տեսնելու, որ Իմ արարածը տքնաջան աշխատի խաղաղության համար:

Փոքրի՛կս, Ես մոտեցա քեզ անկախ քո թշվառությունից, մերժումներից ու ձախողումներից: Ես Սիրո Աստված եմ: Ես սիրող աչքերով եմ նայում Իմ զավակներին: Թող ամեն մեկը սովորի ճանաչել Ինձ, մինչ Ես գամ ազատեմ նրանց: Յուրաքանչյուր հոգի թող մոտենա Ինձ առանց երկյուղի: Թող նրանք իմանան, որ Ես բազկատարած կընդունեմ նրանց, քանզի Ես սիրող Հայր եմ: Թող իմանան, թե Ես ինչպես կարող եմ քարերը վերածել Ինձ նվիրված հետևորդների, թող իմանան, թե ինչպես եմ ազատագրում նրանց հոգիները և իսկական ազատություն տալիս նրանց:

Վասո՛ւլա, Ես չեմ լքի քեզ, սակայն քո երկյուղի համար, թող որ Մայրս սովորեցնի քեզ, թե որքան սխալ ես դու: Ես միշտ քեզ մոտ կլինեմ: Մե՞զ, Մե՞նք:

Այո՛, Տեր:

[1] Ես պետք է շտապեի, որովհետև ժամադրված էի:

(Ես հակացա: Սուրբ Մարիամը որոշ ժամանակ ուսուցանելու էր ինձ և ապացուցելու, որ իմ երկյուղներն անիմաստ էին:

Ամսի տասի և տասնչորսի միջև, զգացի, որ Սուրբ Մարիամը ինձ մոտ է, խոսում է ինձ հետ, և ես սկսեցի ըմբռնել, որ իմ զգացումները նույնքան ուժեղ էին, որքան Հիսուսինը: Դրանք նույնն էին):

Օգոստոսի 14, 1987

Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Գրի՛ր այսօրվա Իմ խոսքերը. «Ով որ Ինձ փնտրի, կգտնի»:

Սիրելիս, միշտ սիրիր Ինձ խանդավառությամբ ու փառաբանիր Ինձ: Իմ կողմից ասա Օրջանին. «Հավատա՛... հավատա՛... հավատա՛: Ե՛կ, սիրելիս, ես քեզ իսկապես եղբայր անվանեցի. ինչպես եմ Ես քեզ սիրում: Ես՝ քո Փրկիչը, առաջարկում եմ քեզ Իմ Սերը: Ես Խաղաղություն եմ: Ե՛կ, ե՛կ Ինձ մոտ և խորը թափանցիր Իմ Վերքերի մեջ, զգա՛ Իմ Սիրտը, զգա Ինձ... ապրի՛ր Իմ Վերքերում, եղբայր»:

Ծաղի՛կ, սիրելիս, մնա[1]: Ահա Իմ Մայրը:

Ա՜հ, Վասուլա, թույլ տուր ասեմ, թե ինչ է պատահելու: Դու փառավորելու ես Իմ Որդուն: Աղջի՛կս, կերակրվիր Նրանից:

Օ՜հ, Սուրբ Մարիամ, Դու սկզբից ևեթ միշտ խրախուսել ես ինձ: Դու իմ նեցուկն ես եղել:

(Ես նույնքան մեծ սեր զգացի Նրա հանդեպ, որքան ես ունեմ Աստծո հանդեպ: Նա իսկական մայր էր):

Միշտ կրիր Իմ մեդալիոնը, որովհետև Ես այն օրհնել եմ քեզ վրա: Մեր խաղաղությունը քեզ:

(Ես ընկա գետնատարած՝ երկրպագելով Նրան և մեծարեցի նրան աղոթքով):

Օգոստոսի 16, 1987

Աստված իմ, ես սիրում եմ Քեզ:

Վասո՛ւլա, Դու վայելուչ ես Իմ աչքին: Լսի՛ր և գրիր: Այսօրվա Աբելը պետք է ապրի. ուղղակի ապավինիր քո Աստծուն. Աբելը պետք է ապրի. Աբելն այս անգամ պետք է ապրի: Սիրելիս, աշխարհն իր տկարության մեջ լեցուն է կայեններով: Մի՞թե Ես կարող եմ հավիտյան դիտել, թե ինչպես են Իմ աբելները դատապարտվում և սպանվում կայենների կողմից: Եվ դեռ ինչքան պիտի զոհվեն Իմ աչքի առջև: Ո՛չ, Վասուլա, Ես վերքեր ունեմ, որոնք նորից բացվել են. այս սերունդը Կայենի ցեղն է:

[1] Ես պատրաստվում էի գնալ:

Սիրելիս, ամեն անգամ, երբ մի Աբել է հայտնվում, մի Կայեն կրկնում է իր ոճիրը՝ առանց ամենափոքր վարանման: Հասկանո՞ւմ ես, փոքրիկս:

(Թվում է Աստված տխուր էր, երբ ինձ հետ խոսում էր այս մասին, և ես նույնպես տխրեցի):

Ի՞նչն է դրա պատճառը:

Այդպես է, որովհետև աբելները Իմ սերմն են, նրանք գալիս են Ինձնից:

Իսկ կայեննե՞րը:

Կայեննե՞րը: Նրանք պատկանում են աշխարհին: Նրանք սերում են մարդկանցից: Այս անգամ, ես պետք է կանգնեմ Կայենի և Աբելի միջև: Ես պետք է արմատախիլ անեմ այն ամենը, ինչ որ գալիս է Կայենից: Ես պիտի դեն նետեմ Կայենի ձեռքից իր զենքը, մերկացնելով նրան: Նա պետք է Աբելին անզեն դիմագրավի: Վասուլա, ես կպարզաբանեմ քեզ այս ամենը: Շրջվի՛ր դեպի Ինձ և, երբ դա անես, նայի՛ր Իմ Շուրթերին և դու կհասկանաս: Դու տակավին պիտի գործե՞ս Ինձ համար:

Այո՛, Աստված իմ, եթե Դու թույլ տաս ինձ:

Հիսո՞ւս:

Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո սիրելի Որդին և Փրկիչը:

ΙΧΘΥΣ

Մե՞նք, Մե՞զ:

Այո՛, Տեր:

(Ես երջանիկ եմ, Նա ժպտում է):

Ուրեմն, արի՛. մենք միասին պիտի գործենք:

Օգոստոսի 20, 1987

Աստվա՞ծ իմ:

Ես եմ:

Կարծում եմ ես հասկացա Քո նախորդ պատգամը:

Միայն մի մասն ես հասկացել, զավակս:

Այն մասը, որ հասկացա, ասում էր նաև, որ Կայենի գործելակերպը գալիս էր մարդկանցից, ոչ հոգևոր տարրերից:

Այո՛, Կայենը ներկայացնում է այն ամենը, ինչ պատկանում է աշխարհին: Գրի՛ր: Կայենը ներկայացնում է այն ամենը, ինչ անհաճո է Իմ աչքին. նա ներկայացնում է այս դարաշրջանի անօրինությունը, նյութապաշտությունը, հեղափոխությունները, ատելությունը, հեթանոսությունը [1], անբարոյականությունը, կեղեքիչներին, որոնք կեղեքում են նրանց, որոնց Ես օրհնել եմ: Կայենը երբեք չհասկացավ Աբելին, որին Ես ձևավորեցի Իմ նմանությամբ: Աբելը սերում է Ինձնից, նա Իմ սերմն է:

Նշանակում է նա հոգևո՞ր է և սիրո՞ւմ է Քեզ:

Ճիշտ այդպես, և այս տարբերության պատճառով նա չսիրվեց Կայենից: Ես ասել եմ, որ իմաստունը չպիտի հասկանա այն, ինչ գալիս է Հոգուց:

Տե՛ր, ես անհանգստանում եմ մի բանի համար:

(Ես դա չեմ ուզում գրել):

Գիտեմ: Ես միայն ուզում եմ արթնացնել նրա իմաստությունը: Ո՞րն է ավելի կարևոր քեզ համար՝ թողնել նրան ծանր ջրաղացքարերի տակ, թե՞ թույլ տալ, որ դա մտահոգի քեզ: Եթե անգամ դու պիտի տանջվես, դու ո՞րը կընտրեիր:

Առանց տատանման, ես կընտրեի տանջվել նրա համար:

Ես արթնացրի քեզ քո քնից: Մի՞թե Ես նույնը չեմ անի մյուսներին:

Այո՛, Տեր իմ:

Լավ, ուրեմն Ինձ ազատ թող, որ Ես գործեմ քո միջոցով: Սրբագործվածդ Իմ ձեռքով. Իմ Հոգին քեզ վրա է: Նշանածս, Իմ Հոգու սիրելին, Ես քեզ ձրի եմ տվել, դու ևս ձրի տուր: Ե՛կ, անէացիր Իմ մեջ և Մեկ եղիր Ինձ հետ: Ես սիրում եմ քեզ, Իմ Վասուլա:

Հիսո՛ւս Ես կանեմ այն ամենը, ինչ Դու ցանկանում ես:

(Ես բառեր չէի գտնում, որովհետև ինչ էլ ասեի, բավարար չէր):

Ուրեմն ե՛կ, Ես պիտի վերականգնեմ Իմ արարածին: Մե՞զ, Մե՞նք:

Այո՛:

[1] անաստվածությունը

Օգոստոսի 23, 1987

(Երեկ, մի շատ արտակարգ բան պատահեց: Զբաղված մի օր էր, լվացք էի անում: Լվացքի մեքենան աշխատում էր, իսկ չորացուցիչը՝ չորացնում: Եվ քանի որ գեղեցիկ և տաք օր էր, ամուսինս տղայիս լողավազան տարավ: Ժամը 11-ն էր, երբ նա գնաց և ասաց, որ ժամը 3-ին կվերադառնան: Այնպես որ, մինչև ժամը երեքը ես ճաշը պատրաստած պիտի լինեի: Ես տանը մենակ մնացի ու աշխատում էի: Ժամը երկուսին տաս էր պակաս, երբ մտածեցի, լավ կլինի որ սկսեմ ճաշը պատրաստել: Դրա համար ես օջախը վառեցի՝ կարագը հալելու, երբ հանկարծ բոլոր լույսերը հանգեցին: Գլխավոր ապահովիչը այրվեց. բոլոր մեքենաները կանգ առան: Ես ստուգեցի բոլոր սենյակները, թե արդյոք որևէ էլեկտրականություն կա՞ր, թե՝ ոչ: Ոչ մի տեղ չկար: Փնտրեցի ապահովիչը, որ փոխեմ, բայց ամուսինս փոխել էր տեղը: Խանութները փակ էին, որովհետև Կիրակի էր: Մեր ավտոմեքենան փչացել էր, և ես շատ զգաստ վիճակի մեջ էի... Երբ մի փոքր հանգստացա, գնացի ու պառկեցի անկողնում: Հինգ րոպե անց, խոհանոցում աղմուկ լսեցի: Վեր ելա որ տեսնեմ, թե ինչ աղմուկ էր դա, և մեծ զարմանքով տեսա, որ փռի լույսերը վառվում են, իսկ կարագը հալվում է ամանի մեջ: Բայց մեքենաները չէին աշխատում և տան մնացած մասերը դեռ առանց էլեկտրականության էին: Ես չէի կարողանում հասկանալ: Եթե գլխավոր ապահովիչը և մնացած ամեն ինչը փչացած էր, փուռն ինչպե՞ս կարող էր աշխատել: Ես պատրաստեցի կերակուրը և փռի մեջ դրի խորոված: Ժամը երեքին ամուսինս վերադարձավ, և ես նրան պատմեցի կատարվածը: Նա ստուգեց էլեկտրականությունը, որը բացի օջախից չէր աշխատում: Ստուգեց գլխավոր ապահովիչը և տեսավ, որ այն այրված էր: Մինչ այդ ժամանակ, ճաշը պատրաստ էր: Ապահովիչը ստուգելիս, տեսանք, որ հաշվիչը պտտվում է: Այն վայրկյանին, երբ ասացի, որ «ճաշը պատրաստ է», հաշվիչը դադարեց պտտվելուց, թեև փուռը դեռ վառվում էր: Ես ներս մտա և օջախը անջատեցի: Ամուսինս փոխեց ապահովիչը և նորից ամբողջ էլեկտրականությունը կանոնավոր աշխատեց: Նա էս չկարողացավավ բացատրել կատարվածը):

Օգոստոսը մեր տոնն է: Մենք չենք կարող մեր տոնակատարությունը փչացնել:

Ուզում ես ասել, որ[1]...

Ուզում եմ ասել, որ Ես քեզ վշտացած չեմ ուզում տեսնել մեր տոնի օրերին: Վասո՛ւլա, դու Իմ ծաղիկն ես: Դու գիտե՞ս, թե ծաղիկը ինչի նշան է: Ծաղիկը դյուրաբեկություն է խորհրդանշում... Դրա համար էլ Ես հոգ եմ տանում քեզ, որպեսզի չլինի թե քո փխրունությունը քեզ վնասի:

Շնորհակալ եմ, Աստված իմ, ես գիտեմ որ Դու շատ մոտ ես ինձ, և ես Քեզ սիրում եմ:

[1] Հիսուս չթողեց, որ ավարտեմ խոսքս:

(Ես համաչեցի, որովհետև ես ոչ մի բանի արժանի չեմ: Երեկ երեկոյան, երբ տղայիս սենյակում էի, ես պարուրվեցի խնկի բուրմունքով: Հոտը գալիս էր հատկապես մի տեղից: Ես ինձ երջանիկ զգացի):

Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Ես սիրում եմ քեզ, մի՛ կասկածիր: Դու միայնակ չես: Ես՝ Հիսուս, քեզ հետ եմ, ծաղիկս: Ես միշտ սիրել եմ քեզ խենթանալու աստիճան: Տարածիր քո բուրմունքն այնպես, ինչպես ուսուցանվել է քեզ: Զարդարի՛ր Իմ պարտեզը, հաճույք պատճառիր Ինձ: Տեսնո՞ւմ ես, Վասուլա, դու սկսել ես Ինձ հասկանալ: Ես այժմ քեզ ուղղակի հեռացրել եմ բոլորից, սիրելիս: Դու բոլորովին անտեղյակ էիր, թե Ես ինչ էի անում քեզ հետ: Մի՞թե դու չես զգացել, որ թևս ուսերիդ գցած, Ես քեզ հեռացնում էի բոլորից՝ չշնչալով քո ականջին Իմ Սրտի ցանկությունները: Հիմա, որ դու գլուխդ բարձրացրել ես, հանկարծ գիտակցում ես, որ դու ոչ ոք չունես քո շուրջը, բացի Ինձնից: Ինչպես եմ Ես քեզ սիրում: Ես այնքան երջանիկ եմ զգում Ինձ: Սովորեցրու քեզ մենակ մնալ միմիայն Ինձ հետ: Այո՛, ուղղակի մենք երկուսով՝ Ես և դու, դու և Ես:

Ա՛հ, Վասուլա, դեպի Ինձ շրջվիր հիմա. շրջվի՛ր Ինձ, քո Աստծուն: Վասուլա, այժմվանից սկսած, Ե՛ս, և միմիայն Ես պիտի լինեմ, Ես քո Աստվածն եմ, Ես քո Սուրբ Ընկերակիցն եմ, Ես քո Փրկիչն եմ, Ես քո Փեսան եմ: Ես պիտի ապահովեմ քո բոլոր կարիքները, սիրելիս: Դու օգնությա՞ն կարիք ունես, Ես կշտապեմ քեզ մոտ: Արիությա՞ն՝ Ես կտամ քեզ Իմ Ուժը: Մխիթարությա՞ն ընկի՛ր Իմ բազուկների մեջ, ապրի՛ր Իմ Սրտում: Գովերգի՛ր Ինձ, Վասուլա, գովերգի՛ր Ինձ, աղջիկս: Ե՛կ ու փառաբանիր Ինձ: Փառաբանի՛ր Ինձ, դեռևս ատարած ընկիր Իմ Ոտքերի առջև. պաշտի՛ր Ինձ: Եղիր Իմը: Ա՛հ, Վասուլա, սիրի՛ր Ինձ, ինչպես Ես եմ քեզ սիրում: Օրհնի՛ր Ինձ, ինչպես Ես եմ քեզ օրհնում: Պարուրի՛ր Ինձ քո բուրմունքով, ինչպես Ես եմ պարուրում քեզ Իմ բուրմունքով: Ես կանգնած եմ քո դիմաց, Ես՝ քո Փրկիչը: Պաշտի՛ր Ինձ: Զգա Իմ Սիրտն այս անգամ և այս ժամին. գիշերը շուտով գալու է: Մի՞թե դու քո լամպի պակասը չես լրացնի Ինձնից: Երբեք մի՛ սպասիր, մինչև օրը վերջանա: Թող որ Ես լցնեմ քո լամպը:

Ե՛կ և վերցրու Ինձնից, թող որ Ես մենակ լինեմ քեզ հետ, ապրի՛ր Ինձ համար, Ես հրճվում եմ մեր առանձնությամբ: Ես սիրում եմ քեզ խանդելու աստիճան: Իմ Սերն այնպիսին է, որ Ես քեզ հեռացնում եմ բոլորից: Դու կփորձե՞ս Ինձ հասկանալ: Ես փափագում եմ մենակ լինել քեզ հետ: Սերը բոցավառված է, և երբ Սերը բոցերի մեջ է, Ես Ինձ թույլ եմ տալիս անել այն, ինչ որ Ինձ դուր է գալիս: Հիմա դու իմն ես, և Ես ցանկանում եմ, որ դու զարդարես Ինձ Սիրո պսակներով: Գրավի՛ր Ինձ քո մանկական բառերով: Թո՛ղ Ինձ ազատ, որ քեզ սիրեմ այնպես, ինչպես որ կամենում եմ հիմա: Մի՞թե դու ինքդ Ինձ ազատություն չես տվել քեզ գործածելու, ինչպես որ ուզում եմ:

Այո՛, Տեր, տվել եմ:

Ուրեմն, ես կօգտագործեմ այդ ազատությունը: Իմ մատը կդիպչի քո սրտին և երբ դիպչի, դու ոչինչ չպիտի պահես Ինձնից: Սա մեր Օգոստոսն է, ի վերջո: Ես միշտ պիտի հիշեցնեմ քեզ, որ մենք տոնում ենք դա:

Օգոստոսի 24, 1987

Վասո՛ւլա, զղջա և ապաշխարիր[1]:

Ես ներում եմ քո մեղքերը: Հիմա ուզում եմ, որ գովերգես Ինձ[2]: Վասո՛ւլա, ասա՝ «Թող փառավորվի Ամենակարող Աստված»: Դու գիտե՞ս, ես ով եմ:

Դու Ալֆան ես և Օմեգան, ամեն ինչի Արարիչը:

Դու լավ ասացիր, զավակս: Այժմ ես քեզ կասեմ հետևյալը. «Օրհնյալ են նրանք, ովքեր կկարդան Իմ Պատգամը և կհավատան, որ ես եմ գրել այն՝ առանց <u>տեսնելու</u> Ինձ այն գրելիս: Օրհնյալ են նրանք, ովքեր լսում են Իմ Պատգամը և հետևում են դրան: Օրհնյալ են նրանք, ովքեր միանում են և առաջ են քաշում խաղաղությունն ու Սերը: Տարածի՛ր Իմ Պատգամը, տարածի՛ր Իմ խաղաղությունը և թող որ այն իշխի բոլոր սրտերում: Երբեք չկասկածես Իմ Սիրուն»:

Ինչպե՞ս ես ուզում, որ տարածեմ: Ինչպե՞ս կարող եմ ես մի բան անել, ես անօգնական եմ:

Սպասի՛ր, Վասուլա, և դու կտեսնես: Ես կօգնեմ քեզ: Արի՛, մե՞զ, մե՞նք:

Այո՛, Աստված իմ՝ մենք, մեզ:

Օգոստոսի 25, 1987

Հիշի՛ր, զավակս, այն սերը, որ ունեմ քո հանդեպ: Վասո՛ւլա, փոքրիկս, ես օրհնել եմ քո կարմիր խաչը, որ դու կրում ես պարանոցիդ: Հավատա՛, հավատա՛ Իմ Երկնային Գործերին, Վասուլա:

Աստվա՛ծ իմ, շնորհակալ եմ: Որքան ավելի ես ինձ տալիս, այնքան ավելի եմ զգում, որ ավելի ու ավելի քչին եմ արժանի:

Ես սիրում եմ քեզ, մոտ մնա Ինձ: Ես սիրում եմ քեզնից լսել այն բաները, որ ես ասել եմ Իմ Ներկայության մասին, ինչպես և ուրիշ բաների մասին, երբ սովորեցնում էի Իսմինիին: Ապրի՛ր Ինձ համար, փառաբանի՛ր Ինձ:

[1] Ես ապաշխարեցի:
[2] Ես վարանում էի, ճիշտ բառեր փնտրելով:

Տե՛ր, երբեմն ես ավելի թույլ եմ զգում Քո Ներկայությունը՝ մտածելով, որ «Աստված այնքան էլ մոտ չէ ինձ»: Ինչո՞ւ է այդպես, Տե՛ր:

Դու սխալվում ես հավատալով, որ ես Քեզ բավական մոտ չեմ, մինչդեռ այդ պահին ես այնքան մոտ եմ քեզ, որքան որ մեկը կարող է մոտ լինել: Դու ԵՐԵՔ միայնակ չես:

(Հանկարծակի, ես Նրան այնքան պարզորոշ նկատեցի (Նա Իր որոշակի շարժումներով հաստատեց Իր կենդանի Ներկայությունը): Դա մի քանի րոպե տևեց, հիանալի էր):

Ամեն ինչ հոգևոր է:

(Սրանով ես հասկացա, որ ամեն ինչ գերբնական է և դա անհնարին է ըմբռնել, եթե այս գործողությունները դիտարկվեն նյութական տեսանկյունից: Դրանք նյութական չեն, որով և անհնարին է, որ բացատրվեն նյութականորեն: Սրանք տեղադրված են գերմարդկային ոլորտում և ոչ թե մեր «իրապաշտ» միջավայրում):

Ձեզանից շատերը հակված են մոռանալու, որ ես Հոգի[1] եմ, և դուք էլ նույնպես հոգի էք:

Օգոստոսի 26, 1987

Վասո՛ւլա, դու դեռ կամենո՞ւմ ես լինել Իմ պատգամատարը:

Այո՛, Տեր, եթե տակավին Դու ուզում ես ինձ՝ իմ բոլոր անկարողություններով ու պակասություններով:

Զավա՛կս, ես կօգնեմ քեզ ի կատար ածելու քո առաջադրանքը, հետո ես կազատեմ քեզ: Իմաստությունը կուսուցանի քեզ: Դու կամենո՞ւմ ես հրաժարվել քո ազատ ժամերից և ավելին զոհաբերել Ինձ համար:

Այո՛, կամենում եմ:

Բռնի՛ր Իմ ձեռքը, ես կաջակցեմ քեզ: Վասո՛ւլա, ձեր դարաշրջանը կորցրել է իր ողջ հոգևոր արժեքները, բայց և այնպես, ես միշտ մոտ կլինեմ, որ քեզ օգնեմ: Ես՝ Հիսուս Քրիստոսն եմ, Աստծո Սիրելի Որդին: Ես պատրաստում եմ քեզ: Թույլ տուր Ինձ առաջնորդել քեզ ինչպես մի կույրի: Հավատա՛ Ինձ կուրորեն, մինչև վերջ[2]:

[1] Բ Կոր. 3:17 և Ա Պետ. 1:11

[2] Այսինքն՝ առանց ապացույցի, ուղղակի հավատալ: Կուրորեն հավատալը փառավորում է Նրան:

Օգոստոսի 28, 1987

Վասո՛ւլա, եկ Իմ Գործերը թարգմանիր Ֆրանսերենի: Ես կօգնեմ քեզ: Թող որ Իմ Հացը ձրիաբար տրվի:

Կանեմ, Տե՛ր, գիտեմ, որ կօգնես ինձ:

Վասո՛ւլա, Ես ցողել եմ քեզ խորաթափանցությամբ և գիտելիքներով: Դու Ինձնից ես ուսում ստացել: Ես քեզ Իմ Հացն եմ տվել Իմ շտեմարաններից, Ես քեզ պտուղ եմ տվել Իմ պարտեզից, Ես Իմ Գործերը քեզ վրա եմ հեղել՝ լուսավորելու համար այս աշխարհը՝ ցույց տալով Իմ Դեմքը: Մի՛ մոռացիր, թե ինչու եմ քեզ ընտրել: Գոհացի՛ր, ինչ որ Ես տվել եմ քեզ, աղջիկս: Ես քեզ առատորեն տվել եմ Կենաց Ծառից՝ մյուսներին ևս կերակրելու համար: Հենվի՛ր Ինձ վրա, ապավինիր Ինձ: Դու կտա՞ս Ինձ այն ամենը, ինչ որ ունես:

Ինչ որ ունեմ Քոնն է: Ես ինձ համար ոչինչ չեմ ուզում պահել:

Այն ամենն ինչ դու ունես, իրոք Իմն է, բայց Ես քեզ ազատություն եմ տվել ընտրելու:

Ընտրել ի՞նչը, Տեր:

Ընտրություն անել չարի ու բարու միջև: Ես ամեն մեկին տվել եմ ընտրելու այս ազատությունը:

Ուրեմն, եթե դա միակ բանն է, որ ես ունեմ, ապա ես նախընտրում եմ մնալ Քեզ հետ:

Թող որ ուրեմն ավելի ամուր Ես քեզ Ինձ կապեմ: Թող որ առաջնորդեմ քեզ այնտեղ, ուր որ Ես ամենից շատ եմ փնտրված:

Ես սիրում եմ Քեզ, Հա՛յր, թող Քո կամքը կատարվի:

Սիրի՛ր Ինձ, զավակս, լսի՛ր Ինձ. մինչև Իմ Գործերը չավարտեմ, Ես չեմ արձակի քո շղթաները, որ դաս Ինձ մոտ: Ես Ինձ թույլ կտամ քեզ գործի դնել, որ գրի առնես Իմ ցանկությունները: Սերը սիրում է Քեզ: Գծիր Իմ նշանը.

ΙΧΘΥΣ Հիսուս Քրիստոս՝ Աստծո Սիրելի Որդին և Փրկիչը:

Օգոստոսի 30, 1987

(Երեկոյան)

Հիսո՞ւս:

Ես եմ,
թույլ կտա՞ս, որ հանգչեմ քո մեջ:

Այո՛, Տեր:

Ծաղիկս, որոնի՛ր Ինձ, փափագի՛ր Ինձ ջերմորեն, օրհնի՛ր Ինձ:

Ես օրհնում եմ Քեզ, Տե՛ր:

Իմ օրհնություններն էլ քեզ: Դու միայնակ չես:

(Ես այնքան մոտիկից զգացի Նրան, որ կարծես կարող էի Նրան դիպչել):

Օգոստոսի 31, 1987

Վասո՛ւլա, գիշերային անդորրության մեջ ես պիտի գամ. ժամը մոտ է: Դու միայնակ չես: Թվում է, աշխարհը մոռացել է Իմ Ներկայության մասին: Ես Աստված եմ, սակայն քանի՞սն են մտածում Իմ մասին: Շատ քչերը:

(Տեսա գիշերը աստղերով լեցուն, հանդարտ, և աստղերից այն կողմ՝ Աստծո աչքերը մեզ վրա):

Արթուն մնա, քանզի գիշերային այս անդորրության մեջ ես պիտի ցած իջնեմ: Ես Իմ ծրագրերը կազմել եմ մինչ քեզ ստեղծելը, փոքրիկս: Ես կբարձրացնեմ քեզ դեպի Ինձ և քեզ մի բան ցույց կտամ:
Այժմ հանգչի՛ր, սիրելիս:

Սեպտեմբերի 1, 1987

Հավատարմությունն է, որ Ես սիրում եմ: Վասուլա, Ես մի տեսիլք ցույց պիտի տամ՝ բարձրացնելով քեզ դեպի Ինձ: Ես քեզ ցույց կտամ, թե երկինքը ինչ տեսք պիտի ունենա:

(Նա ինձ ցույց տվեց երկինքը: Դա սովորական աստղազարդ գիշերային մի երկինք էր: Հետո այն փոխվեց: Նկարչի ներկապնակի նման, այն նմանվեց ներկված բծերի, ուր սակայն մի գույն էր տիրապետում, գերազանցելով մյուսներին: Այդ թանձր կարմիր գույնն էր, որն ինչպես մի թթխմոր, աճում էր իր թանձրությամբ՝ վերևից թափվելով մեզ վրա):

Վասո՛ւլա, Ես պիտի բացեմ երկինքը, թույլ տալով, որ դու տեսնես այն, ինչ ոչ մի աչք չի տեսել: Դու լավ նկատեցիր, արթուն մնա. Ես կպահպանեմ քեզ: Լսի՛ր Ինձ, գրի՛ր. ժամանակների սկզբից ի վեր, Ես սիրել եմ Իմ արարչությանը, բայց Ես ստեղծեցի նրան, որ նա ևս սիրի ու ճանաչի Ինձ, որպես իր Աստծուն: Ժամանակների սկզբից ի վեր, Ես

սրբագործել եմ այն ամենն, ինչ Իմ Ձեռքերն արարեցին: Ես Սիրո Աստված եմ, Ես Վսեմ Սիրո Հոգին եմ: Արարա՛ծ, հին ժամանակներից սկսած, Ես Իմ Սերը ցույց եմ տվել մարդկության հանդեպ, բայց Ես ցույց եմ տվել նաև Իմ Արդարությունը: Ամեն անգամ, երբ Իմ արարչությունը ըմբոստացել է Իմ դեմ և Իմ Օրենքի դեմ, Ես սրտով կարծրացել եմ: Իմ Սիրտը մորմոքվել է նրանց անօրենություններից: Ես եկա հիշեցնելու նրանց, որ Ես Սիրո Հոգին եմ, և որ նրանք նույնպես Հոգի են. Ես եկա հիշեցնելու նրանց, որ նրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ անցնող ստվերներ երկրի վրա, փոշուց շինված, որոնք Իմ անձրևի առաջին կաթիլների հետ կթրջվեն ու կանհետանան՝ չթողնելով և ոչ մի հետք: Ես Իմ Շունչն եմ փչել նրանց վրա՝ կյանք տալով նրանց:

Աշխարհն անվերջ վիրավորել է Ինձ, իսկ Ես անդադար հիշեցրել եմ նրանց Իմ գոյության մասին, և թե ինչպես եմ Ես սիրում նրանց: Իմ Համբերության Բաժակը լեցուն է, արարչությո՛ւն: Իմ Արդարությունը ծանրորեն ընկած է քեզ վրա: Միավորվի՛ր և վերադարձիր դեպի Ինձ. պատվի՛ր Ինձ, արարչություն: Երբ դու այդ անես, Ես էլ Իմ Արդարությունը կվերացնեմ: Իմ աղաղակներն արձագանքում ու ցնցում են ողջ երկինքը՝ Իմ բոլոր հրեշտակներին դողի մատնելով գալիքի ահից: Ես Արդարության Աստված եմ և Իմ աչքերը հոգնել են տեսնելով կեղծավորություն, անաստվածություն, անբարոյականություն: Իմ արարչությունը իր անկումով դարձել է Սոդոմի կրկնօրինակը: Ես պիտի շանթահարեմ ձեզ Իմ Արդարությամբ, ինչպես որ շանթահարեցի Սոդոմացիներին: Ապաշխարի՛ր, արարչություն, մինչև Իմ գալը:

Արդարև Ես շատ անգամներ զգուշացրել եմ ձեզ, բայց դուք չհետևեցիք Իմ հրահանգներին: Ես սրբեր ոտքի հանեցի, որ զգուշացնեն ձեզ, բայց, աղջիկս, նրանք փակեցին իրենց սրտերը: Իմ արարչությունը գերադասում է ապրել տարփանքի մեջ ու անտեսել Ինձ: Ես նշաններ եմ տվել, որ արթնացնեմ նրանց:

Աստվա՛ծ իմ, Քո զավակները սոսկ քնած են: Խնդրում եմ, ե՛կ ու արթնացրու նրանց, նրանք պարզապես քնած են:

Նրանք քնած են ժամեր՝ ժամերի ետևից, տարիներ՝ տարիների ետևից:

Բայց, Տե՛ր, ո՞ւմ մեղադրել, երբ նրանց չի ուսուցանված: Նրանք գրեթե անմեղ են, եթե ոչինչ չգիտեն Քո մասին:

Ես երկրի վրա ծառայողներ և ուսուցիչներ ոտքի հանեցի նրանց ուսուցանելու համար:

Տե՛ր, Քո ուսուցիչներն ու ծառայողները աշխատանք տանում են, բայց նրանք ավելի ի՞նչ կարող են անել, երբ բազում մարդիկ <u>բացասաբար</u> են տրամադրված: Նրանք անօգնական են:

Անօգնակա՞ն: Նրանք պետք է ապաշխարեն, նրանք դեպի Ինձ պետք է գան ու զղջան: Ժամանակների ընթացքում Ես նրանց նշաններ եմ տվել, բայց նրանք մերժել են՝ չնդունելով, որ դրանք Ինձնից են գալիս: Ես

նրանց զգուշացրել եմ թույլ և թշվառ հոգիների միջոցով, բայց նրանք կասկածել են Իմ խոսքի վրա: Նրանք մերժել են Իմ բոլոր օրհնությունները՝ վշտացնելով Ինձ: Օ՜, մարդիկ, քարացած սրտերով, թերահավատ մարդիկ: Եթե նրանք մի փոքր ավելի սեր և կարեկցություն ունենային և, եթե նույնիսկ հիմա ունենային, Ես կօգնեի նրանց: Ես ցնցեցի նրանց իրենց քնից, բայց քանի՞ երրորդ անգամ նրանք փակեցին իրենց աչքերը՝ կրկին ընկնելով քնի գիրկը:

Ինչո՞ւ նրանք աշխարհին հայտնի չեն դարձնում, երբ Դու տալիս ես նրանց Քո նշանները:

Մի քանիսը հաղորդում են, բայց Իմ քահանայական հոգիների մեծ մասը փակել են իրենց սրտերը՝ կասկածելով ու վախենալով: Նրանցից շատերը վախենում են: Վասո՛ւլա, հիշո՞ւմ ես փարիսեցիներին:

Այո՛, Տեր:

Թույլ տուր Ինձ ասել, որ նրանցից շատերը փարիսեցիների կրկնօրինակն են՝ կասկածամիտ, վախեցած՝ կուրացած ունայնությամբ ու կեղծավորությամբ: Հիշո՞ւմ ես, թե Ես քանի անգամ եմ նրանց նշաններ տվել: Ես նրանց հարյուր անգամ նշաններ եմ տվել, իսկ նրանք ի՞նչ արեցին: Ժամանակները չեն փոխվել: Իմ քահանայական հոգիներից շատերը նույն փարիսեցիների կրկնօրինակն են: Ես նրանց նշաններ եմ տվել, բայց նրանք այնպիսի նշաններ են ուզում, որոնք կարող են բացատրվել փաստերով: Նրանք ապացույցներ են ուզում:

Դու կտա՞ս նրանց Քո նախորդ նշաններից <u>մի ապացույց</u> և որևէ <u>ապացույց</u> այս հայտնության մասին:

Այն ամենը, որ Ես կտամ նրանց՝ դու ինքդ ես, զավակս:

Սակայն, Տե՛ր, դա չի համոզում, ես համոզիչ չեմ: Ես ոչինչ եմ համոզելու համար: Նրանք ուղղակի կծիծաղեն իմ երեսին:

Ես օրհնել եմ քեզ:

Սակայն, Տե՛ր, ես գիտեմ, որ այդ Դու ես, և մի քանիսը նույնպես, բայց <u>շատերը</u> տարակարծիք են լինելու, քանի որ կայուն ապացույց չկա, որ դա Քեզնից է: Ես ոչինչ եմ, և Դու գիտես այդ:

Աղջի՛կս, թող որ Ես լինեմ ամեն ինչ: Մնա ոչինչ, և թող Ես լինեմ ամեն ինչ: Որքան դու չնչին լինես, Ես այնքան ավելին կլինեմ: Ես այժմ Իմ Արդարությունը դրել եմ մարդկության վրա: Նրանց է մնում, թե ինչ կքաղեն:

Մի՞թե որևէ լուծում չկա: Ես նկատի ունեմ, մի ինչ-որ ձևով ամեն ինչ կատարվի այնպես, ինչպես Դու ես ցանկանում, որպեսզի Քո Արդարությունը (Դատաստանը) վերացվի:

Վասո՛ւլա, երբ ես կընդունվեմ և ոչ թե կմերժվեմ Իմ քահանայական հոգիների կողմից, այդ ժամանակ ես կվերացնեմ Իմ Դատաստանը: Ես զգուշացրել եմ նրանց, բայց նրանք Իմ զգուշացումները գաղտնի են պահում:

Խնդրում եմ ինձ ասա պատճառը, թե նրանք ինչո՞ւ են այդպես անում:

Թվում է նրանք մոռանում են Իմ Ամենակարողությունը և Իմ Հարստությունը: Նրանք հակված են ամեն ինչ կենտրոնացնելու մի բանի վրա՝ [1] կհավատան, երբ միայն <u>կտեսնեն</u>՝ վշտացնելով Ինձ, հաշվի չառնելով Իմ օրհնությունները:

[2]Արարա՛ծ, արարա՛ծ, կենդանացրու Իմ Եկեղեցին: Վասո՛ւլա, պատվիր Ինձ. ժամը մոտ է, սիրելիս, ժամը մոտ է: <u>Սերը նորից կվերադառնա, որպես Սեր</u>:

Շնորհակալ եմ Քեզնից, Տե՛ր, ես օրհնում եմ Քեզ:

(Այս վերջին երեք օրերին, սեպտեմբեր մեկի և չորսի միջև, հոգումս մի անբացատրելի տաղնապ զգացի):

Սեպտեմբերի 4, 1987

(Իմ անձնական ծոցատետրում, Հիսուսն ինձ մի պատգամ տվեց, որը վախեցրեց ինձ: Ես վեր ելա՝ մի կողմ թողնելով պատգամը: Ավելի ուշ, գնացի գրելու և Հիսուս կրկնեց պատգամը: Սկսեցի վախենալ. մտքերս, ինչպես առաջ, շփոթության մատնվեցին: Ես հարցրի ինձ ու Աստծուն՝ «Ինչո՞ւ, ինձ»: Իսկապես, ինչո՞ւ սկսվեց այս գրելը: Ինչո՞ւ եմ ես այսպես զգում՝ կապված Աստծո հետ: Ինչպիսի՞ն էի ես մեկ ու կես տարի առաջ և ինչպիսին եմ հիմա: Ես ապրում եմ Ճշմարտության մեջ, և ես պատասխանատու եմ զգում այն ամենի համար, ինչ պատահում է: Զգում եմ, որ պետք է հաճելի բան անեմ Աստծո համար: Հետո կրկին՝ կասկածներ, կասկածներ, որոնք ինձ մղեցին փորձելու Հիսուսին: Ես Նրա մոտ եկա կասկածելով: Նա գիտեր այդ: Ես մտադիր էի իմ անձնական նշումները գրել՝ ինքս ղեկավարելով ձեռքս):

Հիսո՞ւս:

Ես եմ: Դե, դու նորից կարող ես փորձել[3]:
Գրիր... գրի՛ր: Սեր Սեր Սեր Սեր:

(Երեք կետերը ցույց են տալիս, թե ես ինչպես էի պայքարում գրել, բայց չէի կարողանում: Հետո Նա գրեց. «Գրի՛ր», և ձեռքս թղթին սեղմեց՝ գրելով չորս անգամ «Սեր» բառը, մինչ ես ընդդիմանում էի, որ կանգնեցնեմ ձեռքս):

[1] հիմնավոր, կոնկրետ, շոշափելի ապացույց
[2] Հետո Նա դեպի ինձ շրջվեց, և Իր հրամանը ինձ ուղղելով ասաց.
[3] փորձելով ղեկավարել ձեռքս

Ես Սեր եմ: Պետք է հիշեցնեմ քեզ, որ Ես քո ուսերին եմ դրել խաղաղության և Սիրո Իմ խաչը: Վե՛ր, վե՛ր, բարձրացրու, բարձրացրո՛ւ: Աղջի՛կս, դու գիտակցո՞ւմ ես, թե ինչու եմ Ես քեզ մեծացրել: Ես մեծացրել եմ քեզ Իմ Եկեղեցին միավորելու համար: Խորա՛ն, մի՞թե ես չեմ ասել, որ մանուկի բերանից դուք պիտի լսեք ճշմարտությունը և ոչ թե իմաստունի: Ես ասել եմ, որ իմաստունը պիտի լսի ու լսի և չհասկանա, կրկին ու կրկին տեսնի, բայց չըմբռնի, քանզի նրանց սրտերը կոշտացել են: Նրանք ծածկել են իրենց ականջները ու փակել իրենց աչքերը:

Վասո՛ւլա, Ես քեզ վեր հանեցի մեռածների միջից՝ քեզ Իմաստությամբ ուսուցանելով: Մի՛ վախեցիր և առաջացիր:

(Հիսուսն ինձ վերաբերող մի տեսիլք ցույց տվեց: Ես կանգնած էի Նրա դիմաց և անվստահ էի զգում ինձ: Նա բռնել էր իմ ձեռքերը և մինչ ետետ էր քայլում, Նա ստիպում էր ինձ քայլել, առաջ տանելով ինձ):

Օ՜, աղջիկս, ինչպես եմ սիրում քեզ: Ծաղի՛կ, ամեն ինչ, որ դու զգում ես, Ինձնից է գալիս. առաջացի՛ր:

(Ես այնպես զգացի, կարծես Իմ առաջին քայլերն էի անում և դողում էի <u>հուզմունքից</u>):

Վասո՛ւլա, երկչոտ լինելով, դու գրավում ես Ինձ: Աղջիկս, գրի՛ր

«ԳԱՐԱԲԱՆԴԱԼ» բառը:

Վասո՛ւլա, երբ Ես ցնցեցի քեզ քո քնից, դա միայն քեզ արթնացնելու համար չէր: Դա նաև քեզ օգտագործելու համար էր, սիրելիս: Քո մաքրագործումը լոկ քեզ մաքրելու համար չէր: Դա արվեց, որպեսզի դու զգաս Իմ Ներկայությունը և <u>գտնվես Իմ Ներկայության մեջ</u>: Իմ պատգամներն ու ցանկությունները գրելու համար չէր միայն, որ Ես քեզ օգտագործեցի: Դա նաև այն բանի համար էր, որ Ես գրի առնեմ Իմ օրհնությունները՝ Գարաբանդալի Իմ փոքրիկ երեխաների համար:

Ես գալիս եմ, որ Իմ Պատգամը փառավորվի: Խորա՛ն, վառ պահիր այս բոցը: Իմ Զորությամբ, Ես պիտի վերանորոգեմ Իմ Եկեղեցին: Սիրի՛ր Ինձ, մի՛ երերա. հենվի՛ր Ինձ վրա և հանգստացիր. Ես կօգնեմ, որ դու առաջանաս: Ժամը մոտ է, աղոթի՛ր Ինձ հետ:

Հա՛յր,
ընդունիր ինձ բազուկներիդ մեջ,
Թույլ տուր հանգչեմ Քո կողքին.
Սրբացրու ինձ, Հա՛յր,
Երբ ընդունես ինձ:
Ների՛ր մեղքերս,
ինչպես ես ներեցի մյուսներին:
Փառք Աստծուն, Իմ Հորը.
Ես օրհնում եմ Քեզ: Ամեն:

Սեպտեմբերի 5, 1987

Վասուլա, մի՛ վախեցիր. գրիր «Գարաբանդալ» բառը:

Գարաբանդալը մյուս նշանների շարունակությունն է. Գարաբանդալի երևումները հավատի են: Հավատացե՛ք, դուք՝ ամենքդ, որ չեք տեսել, հավատացե՛ք, հավատացե՛ք: Աղջիկս, Ես գործի դրի քեզ, որպեսզի կարողանամ քո միջոցով ի հայտ բերել Ինձ: Իմ Մայրը երևացել է Իմ ընտրած հոգիներին: Նրանց բերաններից ճշմարտությունն ասվեց, բայց Իմ քահանաներից շատերը հայտարարեցին, որ դրանք ստույգ չեն, իսկ մի քանիսը՝ ընդհանրապես ժխտեցին:

Ես ինձ հայտնեցի քո միջոցով՝ վերացնելու համար Գարաբանդալի վերաբերյալ այս կասկածը: Գարաբանդալի երևումները վավերական են, և Իմ զավակները իսկապես տեսել են Իմ Մորը և լսել նրա պատգամները: Վասո՛ւլա, ավելի ծանր փորձություն է գալու քեզ վրա՝ էլ ավելի ծանրացնելով Իմ Խաչը քո ուսերին ու լցնելով Արդարության Իմ Բաժակը: Ես նախազգուշացրել եմ աշխարհին:

Աստվա՛ծ իմ, հավանաբար շատ քչերը գիտեն այս պատահածի մասին:

Ճի՛շտ է, շատերը չգիտեն՝ Իմ հոգևոր հովիվների կասկածների ու երկյուղների պատճառով: Կասկածելով, նրանք ժխտում են Իմ Երկնային Գործերը. նրանք մոռացել են, որ Ես Ամենակարող եմ: Կարծրացած սրտերով, նրանք կորցրել են իրենց հոգևորությունը: Կուրացած, նրանք փնտրում են առանց Լույսի և առանց Իմաստության:

Իմ բոլոր Գործերը միշտ տրվել են միայն երեխաներին, բայց երբեք՝ ուսյալին: Իմ Գործերը ուղղափառ չեն երևում նրանց աչքերում, բայց դա այն պատճառով է, որ նրանք իրենց համեմատում են Ինձ հետ:

Ես երբեք չեմ լքել ձեզ[1], սկսած նախնական ժամանակներից: Վասուլա, հիշո՞ւմ ես փարիսեցիներին:

Այո՛, Տեր:

Նրանք մի անգամ Ինձ մեղադրեցին, որ Մովսեսի Օրենքի դեմ եմ քարոզում: Ի՞նչ տարբերություն կա այսօր: Ես մեղադրվել եմ խառնաշփոթության և Օրենքին հակառակ գնալու մեջ: Գարաբանդալյան երևումների դեմ եղած մեղադրանքներն ու տարակուսանքները հեռու չեն սրանից: Թույլ տուր ասեմ, որ նրանք, ովքեր ժխտում են Գարաբանդալի երևումներն ու Պատգամները, դրանք այն անձիք են, ովքեր խոցում են Ինձ. նրանք Իմ Մարմնի փշերն են: Սրանից առաջ[2] Ես քեզ հայտնել եմ, որ Երկնային Զորությամբ Ես քեզ պիտի առաջնորդեմ ուղղակի Իմ Արյունոտված Մարմնի խորքերը: Ես ասել եմ, որ քեզ մատնացույց պիտի անեմ նրանց, ովքեր վիրավորում են Ինձ: Ես՝ Հիսուս

[1] Նա ինձ հասկացնել տվեց, որ տրված նշանները հիշեցնելու են Իր Ներկայությունը մեր մեջ՝ խրախուսելով մեզ:

[2] Հունիսի 11-ին, Աստված ինձ նույն պատգամը հայտնեց: Նա ասաց, որ չի խնայելու նրանց: Այդ ժամանակ ես չգիտեի, թե ում էր ուղղված Իր խոսքը:

Քրիստոսն եմ, Աստծո Սիրելի Որդին: Վասուլա, մի՛ վախեցիր, քանզի Ես քո առջևում եմ:

Սեպտեմբերի 6, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ: Մի՞թե երբևէ Ես կլքեմ քեզ: Ծաղի՛կ, շրջապատիր ինձ սիրո պսակներով, շուրջս հավաքիր Իմ զավակներին. թող որ Ես օրհնեմ նրանց: Ես, որ սպասում էի նրանց՝ սպասում էի այս ժամվան: Ես գալիս եմ ողջունելու նրանց և օրհնելու նրանց: Հավաքի՛ր Իմ սիրելիներին, Իմ յուրայիններին, Իմ գառներին. Իմ փոխարեն գրկի՛ր նրանց, փաղաքշի՛ր նրանց Իմ փոխարեն, հիշեցրու նրանց Իմ Խոստումը: Սիրի՛ր նրանց, միավորի՛ր նրանց: Ավելի մոտեցիր Ինձ, թույլ տուր քեզ Իմաստությամբ ուսուցանեմ:

Սեպտեմբերի 7, 1987

Խաղաղություն քեզ:

Նույնը Քեզ, Տե՛ր:

Կլանի՛ր Ինձ, ծաղիկ, թող որ Իմ Լույսը փայլի քեզ վրա և թող որ նվազեն քո մտահոգությունները: Իմ Շունչը հեռու կքշի նրանց և նրանց կառույցը կփլվի ու դու կժպտաս: Իմ արդարության ցողը պիտի զարդարի քեզ: Ծաղի՛կ, ստացիր Իմ այսօրվա Պատգամը: Մի՛ վախեցիր, որովհետև Ես Իմ ծրագրերը պատրաստել եմ քո ծնվելուց դեռ շատ առաջ:

Արդյո՞ք այդ նշանակում է, որ ինչ էլ որ պատահի ինձ, կամ Քո Պատգամներին ու բոլորին, դա Քո կամքով է լինելու:

Այո՛, սիրելիս, ամեն ինչ, որ պիտի դա, պիտի դա Ինձնից:

Վախենում եմ, որ ձախողեմ սպասելիքներդ, Տե՛ր:

Դու ինչպե՞ս կարող ես ձախողել Իմ ծրագրերը: Մտածի՛ր, դու ոչինչ ես, այնպես որ, ինչպե՞ս կարող է մի ոչնչություն իրենից ինչոր մի բան ներկայացնել, և այդ ինչոր բանը կարողանա երբևիցե ձախողել Իմ ծրագրերը: Բայց դու ոչնչություն ես, այնպես որ, մի՛ մտահոգվիր. թող ամեն ինչ Իմ Ձեռքերում: Վասո՛ւլա, Ես քո Ուսուցիչն եմ, մի՛ վախեցիր, երբ դու Ինձ հետ ես:

Ես մի բան եմ ուզում ասել, խնդրում եմ:

Ազատ զգա:

Դու գիտե՞ս, լինում է ժամանակ, երբ կարծում եմ, թե ես մի բացարձակ խենթ եմ, խելացնոր:

Գիտեմ:

Ուրեմն պատկերացրու նրանց, որոնց ես սա պիտի ցույց տամ մի օր: Նրանք կցնցվեն: Նրանք կասեն, որ ոչ մի բնական բացատրություն չեն գտնում, պարզապես չեն հավատա:

Հավատալը՝ նույնպես մի շնորհ է, հավատ ունենալը՝ նույնպես մի շնորհ է, տեսնել, լսել ու հասկանալ Իմ Երկնային Գործերը՝ նույնպես մի շնորհ է՝ բոլորը տրված Իմ կողմից:

Այո՛, Տեր:

Վասո՛ւլա, ես աշխատել եմ քեզ հետ, պատվի՛ր Ինձ, աղջիկս:

Քո օգնությամբ, ես Քեզ պիտի հուսախաբ չանեմ:

Ուրեմն լսիր այս խոսքերը, որոնք գալիս են Իմ Մորից.

Վասո՛ւլա, pethi mou[1], մի՛ վախեցիր. ես քեզ հետ եմ: Իմ Որդին՝ Հիսուս, դիտավորյալ կերպով սահմանափակել է քեզ փաստեր ու նշաններ տալուց, որոնք դու խնդրել էիր Նրանից, որ տա քեզ: Բայց Նա Իր պատճառներն ունի: Այնուամենայնիվ, Նա քեզ տվել է հավատի շնորհը, Նա քեզ ուսուցանել է Իմաստությամբ: Վասո՛ւլա, դու իսկապես կուրորեն ես հավատացել:

Իսկապե՞ս:

Այո՛, այդպես է, այլապես դու չէիր ունենա Մեզ մոտ գալու և գրելու այս մղումը՝ թույլ տալով, որ Նա քեզ գործածի Իր կամքի համաձայն: Այս անելը, սիրելիս, ապացուցում է, որ դու կուրորեն ես հավատացել, և Աստված հիանում է դրանով: Քո հավատը մեծ է: Հիսուս սրանով ուզում է ուրիշներին ևս սովորեցնել, որ հավատ ունենան և կուրորեն հավատան Նրա Երկնային Գործերին: Եղի՛ր անմեղ, եղի՛ր ինչպես երեխաներն են, որոնցով Աստված հրճվում է:

Ի՞նչ կլինի, եթե նրանք չհավատան, Սուրբ Մարիամ[2]:

Քո տառապանքը մեծ կլինի: Դու կլինես ինչպես մի հայելի՝ արտացոլելով Հիսուսի պատկերը: Նրա տառապանքները պիտի արտացոլվեն քեզ վրա, զավակս:

Անհավատություն և արհամարհա՞նք:

---

[1] զավակս (հունարեն):
[2] Սուրբ Մարիամի ձայնը հանկարծ փոխվեց և դարձավ շատ լուրջ:

Ճիշտ այդպես. Հիսուս կտառապի և քեզ վրա պիտի երևա Իր տառապանքները:

Բայց, քանի որ Նա Իր ծրագրերը նախօրոք էր պատրաստել, ինչո՞ւ Նա չէր կարող այնպես անել, որ հակառակություններ չլինեին:

Զավա՛կս, մարդիկ հակված են այդ ձևով մտածելու: Մի՛ մոռացիր Իր ուսուցումները: Հիսուսն ուզում է, որ Իր Գործերը շնորհով ճանաչվեն[1]:

Հիսուսն ասաց, որ Նա ձեռնպահ չի մնա, եթե տեսնի, որ ինչոր մեկն ուզում է ինձ վնասել:

Նա իրոք ասել է դա, և ես կասեմ հետևյալը, աղջիկս, որ ես նույնպես ձեռնպահ չեմ մնա: Ես սիրում եմ քեզ և թույլ չեմ տա, որ նրանք քեզ վնաս պատճառեն:

(Այստեղ ես շատ հուզվեցի):

Ես վախկոտ եմ, վախենում եմ, սակայն պիտի փարվեմ Քեզ ու Հիսուսին:

Աղջի՛կս, ես դեռ ավելին կասեմ. Աստված Իր Դատաստանն իջեցրել է մարդկանց վրա: Նրա բաժակը այժմ լեցուն է: Ինձ ուշադիր լսիր. այս բառերի ետևում շատ ավելին է պահված, փառաբանի՛ր Աստծուն: Վասուլա, ես քո Սուրբ Մայրն եմ: Աղջի՛կս, հավատ ընծայիր Ինձ, մի՛ հոգնիր ջանքեր գործադրելուց: Հիշի՛ր, որ Խաչելության ճանապարհին Քրիստոսը լքվեց բոլորի կողմից. Նա Իր Խաչը միայնակ կրեց:

Այո՛, Մայր իմ, ես ավելին ոչինչ չեմ խնդրելու, քան այն, ինչ որ Նա տալիս է ինձ:

Վասո՛ւլա, թույլ տուր քո հոգում թաքնված հարցին պատասխանեմ: Եթե նրանք կրկին չհավատան, Աստծո բարկությունը կավելանա՝ Համբերության Իր Բաժակը լցնելով. դա կլինի այն տեսիլքի նման, որ Աստված տվել է քեզ[2]: Աղոթի՛ր և հատուցի՛ր, քանզի ժամանակների վերջը[3] մոտ է:

Այո՛, Մայր իմ, Աստված օրհնի Քեզ:

Այդ ես եմ՝ Հիսուս: Փոքրի՛կս, մնա փոքր. արի խոսենք միմյանց հետ, արի կիսենք այս օրը: Թող Ինձ, որ լինեմ քո Սուրբ Ընկերակիցը:

Տե՛ր, թույլ տուր, որ խոսեմ Քեզ հետ: Ես պիտի հիշեմ Քո Ներկայությունը:

Արի՝ մեզ, մենք:

---

[1] Այլ խոսքով, մենք ազատ ենք, և ունենք մեր սեփական ազատ կամքը:
[2] սեպտեմբերի 1, 1987
[3] մի ժամանակահատվածի վերջը

Սեպտեմբերի 7, 1987

Խաղաղություն քեզ, աղջիկս: Հիշի՛ր այս խոսքերը, որը ես քեզ մեկ անգամ ևս կասեմ: Ավելի հաճախ հիշիր դրանք՝ հատկապես հիմա.

«Ես՝ Տերը, կանգնած եմ դռան մոտ՝ դուռը թակելով: Եթե ձեզնից մեկը լսի Իմ կանչը և դուռը բացի, ես ներս կմտնեմ՝ նրա հետ կողքկողքի կիսելու իր կերակուրը: Նրանք, ովքեր հաղթական դուրս կգան, ես թույլ կտամ նրանց կիսելու Իմ Գահն, այնպես, ինչպես ես Ինքս հաղթանակ տարա և գրավեցի Իմ տեղը Հորս կողքին, Իր Գահի վրա: Եթե որևէ մեկը ականջ ունի լսելու, թող լսի, թե Հոգին ինչ է ասում Եկեղեցիներին»:

Աղջիկս, ասա՛ նրանց, ասա՛, հիշեցրո՛ւ նրանց Իմ խոսքերը, քանզի նրանք մոռացել են դրանք:

Հիսուս, օգնի՛ր ինձ:

Ես միշտ քեզ կօգնեմ, Վասուլա:

(Ես հոգոց հանեցի):

Ես շնորհակալ եմ Քեզ, Տեր:

Սեպտեմբերի 8, 1987

Ուրախացրու Ինձ, Վասո՛ւլա, և ստացիր Ինձ: Ես ուզում եմ, որ դու Ինձ հետևես: Ես քեզ կտանեմ Իմ Խորանը. ստացի՛ր[1] Ինձ, և Ես քեզ կօրհնեմ: Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր: Ես կգամ:

Սեպտեմբերի 9, 1987

Վասո՛ւլա, այն բառերը, որոնք տալու եմ քեզ, ես ուզում եմ, որ հայտնի դառնան: Ցանկանում եմ, որ այդ բառերը տարածվեն ամենուր. «Ես՝ Տերը, օրհնում եմ Գարաբանդալի Իմ զավակներին»:

Վասուլա, օրհնի՛ր նրանց, միավորի՛ր նրանց:

Քո օգնությամբ կանեմ, Տե՛ր:

(Ապա, «ողջ դժոխքը դուրս ժայթքեց»: Սատանան կատաղեց: Նրա դևերը՝ նույնպես: Նրանք անգամ անուններ ունեին: Ես գիտեմ նրանց, ովքեր հարձակվում են ինձ վրա):

Վասուլա, ե՛կ. ես քեզ կհասկացնեմ, թե նրանք որքան են ատում քեզ: Մի՛ վախեցիր:

[1] Հիսուս կրկին ինձ կանչեց Սուրբ Հաղորդություն ստանալու:

(Հիսուսն ինձ քաշեց ու տարավ գետնի տակ: Այնտեղ մենք կանգնած էինք: Ես ճանաչեցի դժոխքը. դա մի քարանձավ էր, ուր ոտքերս կեղտոտ, կպչուն ու սև ցեխի մեջ էին: Հիսուս պատվիրեց ինձ, որ լսեմ: Սատանան ասաց. «Ահա, նորից նա է, մի այլ վհուկ: Պո, զգուշացի՛ր հիմա, վնասի՛ր նրան, մեկընդմիշտ հաշմանդամ դարձրու: Վիրավորի՛ր նրան, որպեսզի մենք հաղթենք, անարգի՛ր նրան: Նա զգում է իմ ատելությունը, որ ես ունեմ իր և մնացած արարածների հանդեպ: Սաբի՛, դու էլ գնա և խոցիր նրան, ես ձեզ բոլորիդ ատում եմ»: Սատանան նորից խենթի նման էր: Հիսուսն ինձ ետ քաշեց, դեպի դուրս):

Այժմ, երբ դու զգացիր նրա ատելությունը, դու պետք է հասկանաս, թե ինչ վճռականությամբ է նա քեզ հետապնդում, որ դադարեցնի գրելուց: Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ, և Իմ թևերի տակ պահպանում եմ քեզ՝ ոչ մի ակնթարթ դուրս չթողնելով Իմ տեսադաշտից:

(Ավելի ուշ)

Վասուլա, մի՛ կարդա այդ գրքերը: Դրանք ո՛չ Իմաստություն ունեն, և ո՛չ էլ Ճշմարտություն: Իմաստությունը գտնվում է Աստվածաշնչում: Ուրախ եմ, որ լսեցիր Ինձ:

(Ես շատ բան չէի արել, քանի որ խոկման մեջ էի ամբողջ օրը: Երբ գլխի ընկա, որ ժամանակն անցել է, ես գնացի ճաշ պատրաստելու: Հենց սկսեցի աշխատել, Հիսուս, որ ինձ էր նայում, ընդհատեց իմ գործը, ասելով. «Վասուլա, մի բոպե ունե՞ս ինձ համար»: Ես ասացի. «Այո՛, Քեզ համար ես միլիոնավոր բոպեներ ունեմ և ոչ թե՝ մեկ»: Ես թողեցի գործս և գնացի գրելու: Նա ինձ ասաց, որ դադարեմ կարդալուց այն գիրքը, որ կարդում էի, խորհուրդ տալով, որ դա լավ չէ: Գրքում խոսվում էին այնպիսի բաների մասին, որ ես երբեք չէի լսել, ինչպես նաև լեգենդների ու կրոնների մասին՝ գրված ոչ աստվածաբանների կողմից):

(Ավելի ուշ, երեկոյան)

Իմ Դեմքի բոլոր այդ մասերը վնասված էին:

(Ես դիտում էի Սուրբ Վարշամակի լուսանկարը):

Ամբողջությա՞մբ, Տե՛ր:

Այո՛, ամբողջությամբ: Նրանք պոկեցին Իմ մորուքի մի մասը, նրանք վնասեցին Իմ աջ աչքը:

Հիսո՛ւս, չգիտեմ ինչ ասեմ:

Ասա Ինձ. «Ես սիրում եմ Քեզ»:

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ:

Վասուլա, ԵՐԲԵՔ մի՛ վհատվիր. Ես քեզ հետ եմ: Մենք միասին ենք կրում Իմ Խաչը:

Սեպտեմբերի 10, 1987

Ես սիրում եմ քեզ: Մինչ Ես դամ և ազատեմ քեզ, դու Ինձ կուրորեն հավատա, Վասուլա:

Հիսո՛ւս, գիտեմ, պահեր կան, երբ Դու հավանաբար շատ դժգոհ ես լինում ինձնից: Դրանք այն պահերն են, երբ ես ընկնում եմ կասկածանքի մեջ: Այդ պահերին ես նման եմ Սուրբ Թովմասին՝ տաս անգամ բազմապատկված:

Ծաղի՛կս, դու դյուրաբեկ ես, և Ես հրապուրված եմ դրանով: Մի՞թե Ես այդ բոլորը չգիտեմ, սիրելիս: Ես քո Զորությունն եմ:

(Հիսուս մի բան շշնջաց ականջիս. ես դա պիտի գաղտնի պահեմ):

Վասո՛ւլա, Գարաբանդալը Հրաշքների Շարունակությունն է: Այս Հրաշքների միջև, Ես ուրիշ նշաններ եմ տվել:

Կարո՞ղ ես գրել, թե որ հրաշքներն են:

Գրիր՝ Լուրդը, հետո՝ Ֆաթիման: Ես ուզում եմ, որ հիմա էլ գրես Գարաբանդալը՝ ՍանՍեբաստիանում: Փառաբանի՛ր Ինձ: Հիշի՛ր, Ես եմ այս աշխարհի Լույսը:

(Հանկարծ Հիսուս հիշեցրեց ինձ անցյալ գիշեր տեսած երազս, որը մոռացել էի: Դա տեսիլք էր, որ ես վերջերս տեսնում էի, բայց դա ավելի վաղ երևաց երազումս):

Լսի՛ր, Ես քեզ թույլ եմ տվել, որ քնած ժամանակ դու տեսնես տեսիլքը, որպեսզի այն քեզ զգալի դառնա: Ո՛չ, դրանից փախուստ չկա):

(Հիշում եմ, երբ տեսա, որ այն գալիս էր մի հսկայական ալիքի նման, և ես փորձում էի վազել ու թաքնվել, գիտենալով, որ դա անհնարին է):

Բայց ինչո՞ւ ես անում այդ, եթե Դու սիրում ես մեզ, ինչո՞ւ:

Ես հայտնի եմ որպես Սիրո Աստված, ինչպես նաև Արդարության Աստված:

Ի՞նչ կարող ենք անել, որ սա վերջ գտնի:

Վիթխարի հատուցումներ են այժմ պահանջվում բոլորից: Միավորվե՛ք և եղեք միասնական, սիրե՛ք միմյանց, Ինձ հավատացեք, Իմ Երկնային Գործերին հավատացեք, քանզի Ես միշտ ձեր մեջ եմ:

Սեպտեմբերի 11, 1987

Վասո՛ւլա, թույլ տուր ասել, որ Իմաստությունը քեզ չի ուսուցանել միայն, որ դու Խաղաղություն գտնես: Իմաստությունը քեզ լոկ զմուռսով չի պատել, որ միայն իր Վեհ Սիրով բուրավետ դարձնի քեզ: Իմաստությունը չի առաջնորդել քեզ ոլորապտույտ ուղիներով՝ վախ ներշնչելով ու փորձության ենթարկելով, որ հիմա էլ լքի քեզ: Ո՛չ, Վասուլա, Ես առաջնորդել եմ քեզ լինելու այնտեղ, ուր որ Ես եմ ուզել, որ դու լինես: Ինչ որ Ես սկսել ու օրհնել եմ, Ես պիտի ավարտեմ: Ե՛կ, հանգչիր Իմ ուսին:

(Ավելի ուշ)

Փոքրի՛կս, Ես հազվադեպ եմ հավատարմություն գտնում մարդկանց մեջ:
Ես ուզում եմ զգուշացնել քեզ մարդկային տկարության մասին, որը անհավատարմությունն է: Ես քեզ սիրում եմ և նեցուկ կլինեմ քեզ՝ գիտենալով, թե դու որքան դյուրաբեկ ես: Ծաղի՛կս, թույլ տուր Ինձ քեզ համբուրել:

(Ես թեքվեցի դեպի Աստված, և Նա համբուրեց իմ ճակատը, ինձ՝ Իր զավակին):

Ես սիրում եմ քեզ. Ես սրբացրի քեզ, Ես ազատեցի քեզ: Ե՛կ, Ես և դու, դու և Ես, մենք, մեզ, պատվի՛ր Ինձ՝ ջերմեռանդորեն Ինձ սիրելով:

Ես սիրում եմ Քեզ, Սուրբ Հայր: Կարո՞ղ եմ համբուրել Քո Ձեռքերը:

Միշտ կարող ես, աղջիկս:

(Ես համբուրեցի Նրա դաստակները):

Սեպտեմբերի 12, 1987

Հավատարմությունը միշտ ուղիներ է գտնում լինելու Ինձ հետ: Սիրի՛ր Ինձ և հավատարիմ եղիր, զավակս: Իմ Գործերը տեսանելի չեն իմաստունի աչքերին. Ես դրանք գաղտնի եմ պահել նրանցից: Իմ թաքնված Իմաստությունը Ես տալիս եմ խոնարհին և միայն երեխաներին:
Աղջի՛կս, Ես Հոգի եմ[1], և Ես մոտեցել եմ քեզ ուսուցանելով, ինչպես Հոգին՝ Հոգուն կուսուցաներ: Իմ Ուսուցումները քեզ են տրվում Հոգևոր ձևով և ոչ թե այնպես, ինչպես փիլիսոփայությունն է դասավանդվում: Վասո՛ւլա, իրազեկ եղիր, թե ինչ է լինելու, քանզի ոչ Հոգևոր անձը չի ընդունելու, որ այս գործերը Աստծո Հոգուց են: Նա ժխտելու է դրանք, որովհետև դա իր հասկացողությունից դուրս է, քանի որ այն կարող է

[1] Բ Կոր. 3:17 և Ա Պետ. 1:11

միայն հասկացվել Հոգու միջոցով: Ես՝ Տերը, գիտեմ, թե ինչ է մտածում իմաստունը, և Ես քեզ ճշմարիտ եմ ասում, նրանք Ինձ չեն համոզում:

(Նոյն երեկոյան հոգիս անհայտ պատճառներով տառապում էր: Ես Աստծուն էի տենչում: Ես զղջացի իմ մեղքերի համար ու թողություն խնդրեցի: Ես Նրան հարցրեցի, թե Նա ցանկանո՞ւմ է լսել ինձ և մի քանի րոպե ունի՞ լսելու իմ զղջումը: Ես Աստծո դիմաց էի՝ կրկին ծանրաբեռնված մեղքերով):

Սեպտեմբերի 13, 1987

(Ամսի 8-ին, Հիսուսն ինձ կանչեց Սուրբ Հաղորդության: Այսօր գնացի և ստացա Նրան):

Հա՛յր, որ Երկնքում ես,
մի՛ թույլ տուր, որ մարդիկ լինեն
իմ կործանման պատճառը:
Մի՛ թող, որ նրանք վերցնեն այն,
ինչ որ Դու արդեն տվել ես ինձ:
Իմ վախը նրանց
անտարբերությունն է,
երբ նրանք կողպում են
իրենց սրտերը
Քո Երկնային Գործերի հանդեպ
ու փակում իրենց ականջները:
Ես շատ թույլ եմ և խոցելի:
Միայն մեկ բառով
նրանք հեշտությամբ
կկարողանան ինձ կոտրել,
ինչպես մի եղեգ:

Օ՜, Վասուլա, Վասուլա, բռնի՛ր Իմ Ձեռքը: Եթե նրանք հալածեն քեզ, նրանք Ինձ հալածելիս կլինեն. եթե նրանք ծաղրեն քեզ, նրանք Ինձ ծաղրելիս կլինեն: Սերը տառապում է:

Օգնի՛ր ինձ, Հայր, այս մարդկանցից:

Սերը կօգնի քեզ: Զարդարի՛ր Ինձ մաքրությամբ, եղի՛ր Իմ Խորանը, Իմ Խաչը կրի՛ր Ինձ հետ: Խորան, մի՛ վշտացիր:

Ես օրհնում եմ Քեզ, Հայր, ես տենչում եմ Քեզ:

(Ավելի ուշ)

(Այս Կիրակի, սեպտեմբերի 13-ին, երկրորդ անգամն էր այս հայտնությունների սկզբից ի վեր, որ հոգիս ապրեց մի կատարյալ տառապանք, անբացատրելի մի տխրություն՝ մի դառնություն, որ ես կարծեցի, թե էլ չեմ դիմանա: Մարմինս նույնպես ցավում էր, կուրծքս ծանր էր, իսկ ցավը թևերիցս իջնում էր ցած: Հիսուսն ինձ կանչեց).

Վասուլա, միացի՛ր Ինձ և զգա Իմ ցավը: Նրանք վերստին խաչում են Ինձ:

Ինչո՞ւ, ինչո՞ւ են նրանք Քեզ այդպես անում:

Սիրելիս, նրանք չգիտեն, թե ինչ են անում:

Ո՞վ է անում դա:

Բազմաթիվ հոգիներ: Ես սիրում եմ նրանց, մինչդեռ նրանք արհամարհում են Ինձ: Վասուլա, կիսի՛ր Իմ ցավը. մեկ եղիր Ինձ հետ:

Մե՞նք, մե՞զ, Տեր:

Այո՛, աղջիկս, մենք տառապում ենք երկուսով՝ մարդկանց անհավատարմության պատճառով: Բռնի՛ր Իմ Ձեռքը: Իրար հետ միասին:

Միասին, Տե՛ր:

Սեպտեմբերի 15, 1987

Հիսո՛ւս, ես չեմ կարող տանել, որ նրանք Քեզ անվերջ խոցեն: Շտապի՛ր և դուրս հանիր այդ փշերը:

Օ՛, աղջիկս, մեկը մյուսի ետևից, ես նրանց ցույց կտամ քեզ: Ես քեզ կասեմ, թե նրանք որտեղ են դրված և Իմ Ուժով դու մեկ առ մեկ նրանց դուրս կքաշես, և այդ փշերի փոխարեն, որոնք Ինձ խոցեցին, ես կթողնեմ քեզ, որ դու միայն ծաղիկներ մատուցես Ինձ՝ բերկրանքների Իմ պարտեզից, քանզի նրանք աճել են Իմ Լույսի տակ՝ արտաշնչելով երկրի վրա իրենց քաղցր բուրմունքը, զարդարելով Իմ այգին: Իմ Սրտի մեջ և Նրա ամենամտերիմ խորքերում, ես դեռ կրում եմ տեգի սուր սայրը: Վասո՛ւլա, սա նույնպես պետք է հեռացվի: Իմ զորությամբ ես այն դուրս կքաշեմ: Այս անգամ ես նրանց չեմ խնայելու:

Միավորիր Իմ դառներին և ասա նրանց. «Ես՝ Տերը, օրհնում եմ նրանց»:

Սեպտեմբերի 17, 1987

Վասո՛ւլա, ես ուղարկում եմ քեզ նրա մոտ[1], որպեսզի նա լսի Իմ Պատգամները: Դու կխնդրե՞ս նրանից, որ ընդունի քեզ: Դու կխնդրե՞ս նրան, որ առաջնորդի քեզ[2]:

[1] Հույն ուղղափառ քահանա Ալեքսանդրոսի մոտ:
[2] Այսինքն՝ խորհուրդ տա Ինձ:

(Մի ակնթարթում, ես մի տեսիլք տեսա Տիրոջ կողմից տրված, ուր երկրի վրա շրջող գևերը՝ տապալված էին: Կարծես չոր հողը, որի վրա նրանք կանգնած էին, ցնցվեց ու ճաքեց, և ինքն իրեն վեր բարձրացավ, ինչպես մի բռունցք՝ ոչնչացնելով նրանց: Նրանք անօգնական ու անզոր գետին տապալվեցին):

Ես գալիս եմ միավորելու Իմ զավակներին և օրհնելու նրանց:

Սեպտեմբերի 18, 1987

(Այս ուրբաթ ես հանդիպեցի հույն քահանային, հույն ուղղափառ եկեղեցում: Ես նրան պատմեցի ամեն ինչ: Նա լսեց և ընդունեց այն ամենը ինչ ասացի: Նա այժմ ուզում է ուսումնասիրել հայտնությունը):

Սեպտեմբերի 20, 1987

Աղջի՛կս, մինչև հիմա դու պիտի հասկանայիր, թե ես ինչպես եմ գործում: Հավատա՛, Իմ Վասուլա, քանզի քո մեջ ես պիտի ներշնչեմ շատ ավելի հայտնություններ: Ամբողջովին անձնատուր եղիր Ինձ և թող որ Իմ մատը քեզ վրա դրոշմի Իմ խոսքը: Արի՛, փոքրիկս և փաղաքշիր Ինձ:

Այո՛, Տեր:

(Հիսուս նկատի ուներ, որ փաղաքշեմ Իրեն Սուրբ Վարշամակի Իր մեծ նկարի վրա, որ ես ունեմ: Դա իմ սովորությունն է. այն ժամանակ, երբ ես խոկում եմ ու խոսում Նրա հետ, հաճախ երկարում եմ ձեռքս Նրա նկարին՝ փաղաքշելով Իր Վերքերը. կարծես ուզում եմ սրբել արյան բծերը՝ հանգստացնելով Նրան: Սա ես անում եմ առանց մտածելու՝ խոկման մեջ, որն ինձ ամբողջովին կլանում է):

Վասո՛ւլա, Իմ և Մորս երևումները Գարաբանդալում պետք է վավերացվեն: Լսի՛ր Ինձ, Վասուլա, ամեն անգամ, երբ Մայրս երևացել է Իմ ընտրյալ հոգիներին՝ Իր շնորհով լուսավորելով նրանց, ես կանգնած եմ եղել Նրա կողքին, բայց ոչ մի աչք չի կարողացել տեսնել Ինձ: Ես երբեմն երևացել եմ որպես մի երեխա, օրհնելու նրանց, ովքեր փառաբանել են Ինձ:

Աղջի՛կս, Ես ցանկանում եմ, որ երևումների այդ վայրերը ավելի մեծարվեն: Ես ցանկանում եմ, որ Մայր Աթոռը Ինձ պատվի՝ օրհնելով այդ Սուրբ վայրերը: Վասո՛ւլա, Ես նկատի չունեմ Լուրդը և Ֆաթիման, Ես նկատի ունեմ Գարաբանդալը: Ես գալիս եմ փառաբանելու Գարաբանդալի հայտնությունները:

Ես ցանկանում եմ այնտեղ տեսնել Իմ Մայր Աթոռը և օրհնել այդ վայրը՝ ուղղելով այն ամենը, ինչ որ խեղաթյուրվել և սխալ է հայտարարվել Իմ քահանայած հոգիների կողմից, որոնք խոցել են Ինձ: Վերացրու կասկածները և ջնջիր նրանց աղավաղումները, ովքեր ժխտեցին հայտնությունները: Իմ Մայր Աթոռը կանի՞ սա Ինձ համար:

Տե՛ր, Աստված իմ, նրանք ինչպե՞ս պիտի իմանան այս ամենը:

Այդ գործը թող Ինձ, Վասուլա: Ես մի ձև կգտնեմ նրանց իմաց տալու: Աղջի՛կս, ցանկանում եմ, որ ամեն անգամ, երբ Ես նրանց Իմ Ներկայության մի նշան եմ տալիս, նշանակություն չունի, թե որքան փոքր է դա, Ես ցանկանում եմ, որ Իմ Մայր Աթոռը փառաբանի Իմ նշանը՝ օրհնելով այն: Ես ուզում եմ, որ աշխարհն իմանա Իմ Ներկայության մասին, Իմ Հարստության մասին, Իմ Ողորմության մասին և Իմ Երկնային Գործերի մասին: Ես ցանկանում եմ, որ Իմ Մայր Աթոռը Իմ տված նշանները ավելի լայն չափերով տարածի՝ կերակրելով աշխարհին: Ես ուզում եմ, որ Իմ հողը բերրի լինի: Մի՛ թող նրանց, որ քաղեն մնացած մի քանի ծաղիկները: Ես ուզում, եմ որ այս ամայությունը ոռոգվի. ո՞վ պիտի ջրի Իմ պարտեզը: Ինչո՞ւ են նրանք անտեսում Իմ ծաղիկներին:

Սիրելի Հիսուս, եթե չեմ սխալվում յոթ տարի տևեց Ֆաթիմայի Քո հրաշքի հաստատումը: Աստվա՛ծ իմ, ես պատկերացնում եմ մերժումները, հանդիմանություններն ու ընդունման դժվարությունները:

Ծաղիկ, մի՛ վշտացիր, թող որ քեզ օգնեմ: Վասո՛ւլա, Ես միշտ հասնում եմ Իմ նպատակներին:

Սեպտեմբերի 21, 1987

Աստվա՛ծ իմ, որքան եմ ուզում, որ ամեն ոք սիրի Քեզ և շրջվի Քո կողմը՝ ճանաչելով Քեզ:

Օ՜ աղջիկս, Ես էլ այնքան եմ դա ուզում:

(Թվում է Աստված շատ էր փափագում, որ այդ կատարվի):

Ինչպես եմ ուզում, որ աշխարհը գիտակցի, որ Դու <u>միշտ ներկա ես</u> մեր մեջ և <u>որքան</u> շատ ես մեզ սիրում: Ինչպես եմ ուզում, որ նրանք հասկանան, որ մենք միայն անցնում ենք երկրի վրայով, և որ Դու սպասում ես մեզ: Որքան եմ ցանկանում, որ նրանք սիրեն միմյանց, <u>դադարեցնեն իրենց ատելությունն ու եսասիրությունը</u>, ապրեն մեկը մյուսի համար, հոգ տանեն մեկը մյուսին, պաշտեն Քեզ՝ մեր Հորը, միավորվեն: Ինչքան եմ ուզում, որ նրանք հավատան Քո նշաններին և չծածկեն դրանք՝ մտածելով որ բարեհաճություն են անում Քեզ: Որքան եմ ուզում, որ նրանք ըմբռնեն, թե որքան սխալ են իրենք ու <u>տեսնեն</u> Քո Գանձերը:

Վասո՛ւլա, քո ցանկությունները տրված են քեզ Իմ կողմից, դրանք ներթափանցում են քո մեջ: Ես հավիտյան կպահեմ Իմ Բոցը, որ բոցավառվի քո մեջ, խորան: Տարածի՛ր Իմ խոսքերը. «Ես՝ Տերը, օրհնում եմ Գարաբանդալի Իմ զավակներին»:

Տե՛ր, Ես տարածում եմ իմ կարողության չափով: Ինձ մարդիկ են հարկավոր դրանք լայնորեն ցրելու համար:

Վասո՛ւլա, Ես քեզ վկաներ եմ տվել:

Նկատի ունես իմ ընկերներին:

Ուրիշներին էլ:

Նկատի ունես եկեղեցո՞ւց, քահանաների՞ց:

Այո՛, Վասուլա, նրանք քո վկաներն են:

Այո՛, Տեր:

Թող որ Իմ բառերը դրոշմեմ քեզ վրա:

Հիսո՛ւս, հենց նոր հիշեցի. մեկը կա, որ բոլորովին չի հավատում, որ առաջնորդությունը Քեզնից է: Դա առաջին մարդն է:

Գիտեմ:

Բայց, ինչո՞ւ:

Մի պարզ պատճառով, որ ինքն իմաստուն է:

Օ՜հ, Աստված իմ, Ես այնքան շատ իղձեր ունեմ:

Դու միայն խնդրիր Ինձնից:

Միայն խնդրե՞մ:

Այո՛, սիրելիս, խնդրի՛ր:

Որևէ մի բա՞ն:

Որևէ մի բան:

Ես բարեփոխություն եմ ցանկանում, Աստված իմ: Ես ցանկանում եմ, որ նրանց սրտերը սիրով բոցավառվեն Քեզ համար, և որ մի՛ քարդավոր մարդիկ ծնկաչոք երկրպագեն Քեզ: Ես ցանկանում եմ, որ նրանք զգան այնպես, ինչպես Ես՝ թե Դու որքան Ես սիրում մեզ, որքան մոտ Ես մեզ, և մենք որքան մոտ կարող ենք լինել Քեզ՝ իբրև Հայր, Ընկեր, Աստված՝ բոլորը մեկի մեջ: Զե՞ս կարող Քո Լույսը փայլեցնել նրանց վրա և արթնացնել նրանց, ինչպես Դու վարվեցիր ինձ հետ: Ես ուզում եմ, որ նրանք բաժանեն նույն ուրախությունն ու մոտիկությունը, որ Ես ունեմ Քեզ հետ: Խնդրում եմ, Հայր, նրանք նույնպես Քո զավակներն են:

Վասո՛ւլա, այդ բոլորը կարվի. ես շատերին կառաջնորդեմ ետ, դեպի Ինձ: Անկախ նրանց չարությունից, ես կօգնեմ նրանց: Մի՛ հոգնիր տքնելուց քո Աստծո հետ:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Սեպտեմբերի 22, 1987

Փոքր-ինչ գիտակցումը գոհացնում է Ինձ: Աղջիկս, ես ուրախ եմ:

(Հիսուս սա ինձ ասաց, որովհետև ես կենտրոնացել էի Նրա իրական Ներկայության վրա՝ փորձելով տեսնել, թե Նա ինչ տեսք ուներ: Նրա մազերն այսօր ամբողջապես ետ էին տարված):

Երբ ես տեսնում եմ, որ դու փորձում ես հասու լինել Իմ Ներկայությանը, դա փառավորում է Ինձ: Ե՛կ աղոթենք: Աղջիկս, սկսիր այս ձևով.

Օ՛, Սիրելի Արարիչ, Սուրբ Հոգի,
Ես օրհնում եմ Քեզ
Գործերիդ համար,
որ տեղացիր Դու ինձ վրա:
Ես օրհնում եմ Քեզ
այն Լույսի համար,
որ սփռեցիր Դու ինձ վրա:
Փառք Ամենակարող Աստծուն:
Ամեն:

(Հիսուս գիտեր, որ ես հարմար բառեր գտնելու դժվարություն ունեմ՝ Նրան գովերգելու համար: Այս աղոթքը ճիշտ ինձ համար էր):

Սեպտեմբերի 23, 1987

Նշանածս, մի՛ լսիր նրանց, ովքեր խոր քնի մեջ են, քանզի նրանք ոչինչ չգիտեն, ոչինչ չեն զգում, ոչինչ չեն տեսնում, ոչինչ չեն լսում: Ինչպես կարող են, երբ քնած են և բոլորվին անտեղյակ:

(Հիսուսն ինձ տվեց երկու աշխարհների հակացողությունը: Մեկը, որը նյութական է՝ մարմնականը, մյուսը՝ անտեսանելին, հոգևորը:

Բավական ժամանակ հետո, երբ իմ առաքելությունը սկսվեց, ես հրավիրված էի հանդիպելու Գարաբանդալի տեսանողներից մեկին: Թվում էր, որ Աստված ինձ տարավ Իր Թևերի վրա, որ օրհնեի նրան, ինչպես Աստված ցանկացել էր, որ անեի, և հեռախոսով օրհնեի նաև մյուսներին: Ես սկսեցի հասկանալ, թե Աստված ինչպես է գործում: Նա մեզանից մի բան է

խնդրում, որն անկարելի է թվում մեզ, բայց Նա մեզ օգնում է, որ դա անենք Սուրբ Հոգու Զորությամբ):

Ե՛կ, այդ ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Սիրելի Որդին: Եթե կամենամ, ես կարող եմ քեզ ավելի ապացույցներ տալ, բայց ես սահմանափակում եմ քեզ, քանզի պատճառներ ունեմ: Քեզ կուրորեն առաջնորդելը Ինձ դուր է գալիս. դա փառավորում է Ինձ:

Հետո, ուզում եմ, որ սա դաս լինի նրանց համար, ովքեր կուրացած են իրենց իմաստությամբ: Ես քեզ անմեղ եմ ուզում, միամիտ: Ես առաջնորդում եմ քեզ յուրահատուկ այս ուղիով, որպեսզի Իմ հավատացյալ հոգիները հասկանան, որ Ես՝ Տերը, առատորեն եմ շնորհում: Աղջի՛կս, ասա նրանց, որ դժվար չէ հավատալ Իմ Գերբնական Գործերին. մի՞թե Ես Աստված ու Հոգի չեմ:

Եղե՛ք ինչպես երեխաներ ու հավատացեք: Երեխաներից ո՞վ կկասկածեր, որ այդ Ես եմ՝ գրում, առաջնորդում այս ձևով, եթե դու ցույց տայիր նրանց Իմ Գործերը: Եղեք անմեղ:

Սեպտեմբերի 24, 1987

(Ես զգացի, որ Սուրբ Մարիամն ինձ մոտ է):

Վասուլա, այո՛, այդ Ես եմ, քո Մայրը: Ես երևացի Գարաբանդալի Իմ զավակներին: Ես թույլ տվի, որ նրանք Ինձ տեսնեն ու Ինձ լսեն: Ես հայտնվեցի նրանց, և նրանք այդ գիտեն: Ես ուզում եմ, որ դու օրհնես նրանց:

Սուրբ Մարիամ, օգնի՛ր ինձ իրագործելու Քո ցանկությունները:

Ես կառաջնորդեմ քեզ, Վասուլա:

Շնորհակալ եմ:

(Ես զարմացա: Ավելի ուշ, ես իմ շուրջը խնկի բուրմունք զգացի):

Այդ Ես եմ՝ Հիսուս. Ես օրհնեցի քեզ և բուրեցի քեզ Իմ խնկով:

Եկեղեցին պիտի վերակենդանանա: Մենք մեկ ենք: Երբ Ես կմիավորեմ Իմ Եկեղեցին, Ես այլևս չեմ սպասի. դու զգո՞ւմ ես, թե Հոգիս ինչպես է քեզ տենչում: Ես քեզ Ինձ մոտ պիտի բերեմ, սիրելիս: Ես սիրում եմ քեզ:

(Ես շոյվեցի լսելով այս):

Զգացի, որ ես այլևս այստեղ չեմ պատկանում, և որ աշխարհը իսկապես մի աքսոր է:

Սիրելի՛ս, քեզ այս աքսորում թողնելը Ինձ նույնպես տառապանք է պատճառում, բայց այս ամենը իզուր չի լինելու: Ես սիրում եմ Իմ

արարածին և դու ետ պիտի բերես Իմ արարածին դեպի Ինձ: Ես տառապում եմ տեսնելով քեզ ներքեվում, երկրի վրա: Ապրի՛ր Ինձ համար, աղջիկս. դու պետք է հիշես, թե ես ինչպես Ինձ զոհաբերեցի: Դու կանեի՞ր նույնը Ինձ համար՝ քո Հոր համար:

Ինձ արժանի դարձրու Քեզ և որևէ այլ զոհողության համար, Տե՛ր:

Սիրելիս, Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ: Այս ամբողջը իզուր չի լինելու:

Սեպտեմբերի 25, 1987

(Այս առավոտ ես նորից խնկի հոտ զգացի: Ես գիտեի, որ այդ նույն որոշակի տեղում Նա կանգնած էր):

Ի՛մ մնացորդ, ես քեզնից միայն սեր եմ խնդրում. սիրի՛ր Ինձ: Տարածի՛ր Իմ խոսքերը.

«Ես՝ Տերը, օրհնում եմ
Գարաբանդալի Իմ զավակներին,
Ես սիրում եմ նրանց»:

Սիրելիս, հավաքի՛ր նրանց, միավորի՛ր նրանց, ընդունի՛ր այն ամենը, ինչ որ գալու է՝ լինի դա ուրախություն, թե՝ տառապանք: Ես քո առջևում եմ:

Այո՛, Տեր, թող Քո կամքը լինի, և Քո ցանկությունները թող իրականանան:

Ե՛կ, զգա Ինձ, արի կիսենք ամեն ինչ:

Սեպտեմբերի 26, 1987

Վասուլա, ե՛կ փրկենք Ինձ համար շատ սիրելի մի հոգու, որը շատ մոտ է սատանայի կրակին: Նա չի գիտակցում սատանայի լարած նենգ թակարդը, որը վերջինս նախապատրաստել է նրա համար:

Ո՞վ է այս հոգին, Տե՛ր:

Իմ հարսերից մեկը:

Միանձնուհի՞ է:

Այո՛, միանձնուհի է: Նա անտեսել է Ինձ՝ տարված իր ունայնամտությամբ: Սիրելիս, քո սիրով նրան ետ բեր դեպի Ինձ. Ես սիրում եմ նրան: Սիրի՛ր Ինձ, և նա կփրկվի: Վասո՛ւլա, այս Գործերը առեղծվածային են թվում քեզ և շատերի համար, բայց հավատա՛ Ինձ, Ես

Հիսուսն եմ և Իմաստությունը: Հիմա դու պիտի օրհնես Ինձ: Զգա՛ Ինձ, դա փառավորում է Ինձ: Ամեն ինչ պիտի արվի համաձայն Իմ ծրագրի:

Հիսո՛ւս, ԱՅՆՊԵՍ հիանալի է Քեզ հետ լինել այս ձևով:

Վասո՛ւլա,

Սքանչե՛լի է, հրաշալի:

Վասո՛ւլա, մի՞թե ես քեզ երբևէ կլքեմ[1]: Սիրի՛ր Ինձ, փոխհատուցի՛ր ուրիշների համար, որոնց սրտերը սառցակտոր են դարձել Իմ հանդեպ: Խորա՛ն, ապրիր Ինձ համար, ավելացրո՛ւ քո բոցը Իմ Բոցից: Խորա՛ն, երբեք չմոռանաս, թե ես որքան եմ քեզ սիրում: Մնա լույսով ողողված, բոցավառի՛ր սրտերը, հագեցրո՛ւ Իմ ծարավը:

Սիրելի Հիսուս, ինձ Քեզ մոտ պահիր, որովհետև առանց Քեզ ես կորած եմ:

Դու Ինձ մոտիկ պիտի մնաս: Մոռացե՞լ ես մեր կապերը: Դու Ինձ կապված ես հավերժական կապերով:

Շնորհակալ եմ, Տե՛ր, որ հոգում ես ինձ՝ զրույից զրույին, մեկին, որը Քեզ ուրացավ:

Ինձ ուրացել է անգամ Պետրոսը, բայց ես նրա վրա հիմնեցի Իմ Եկեղեցու հիմքի առաջին քարերը, մոռացե՞լ ես: Ես Տերն եմ, որն անասելի սիրում է քեզ և քեզ վրա, ո՛վ հոգի, ես փորագրել եմ Իմ Բառերը: Ես քո Ուժն եմ: Պահի՛ր Ինձ քո սրտում՝ այժմ և հավիտյան:

Ես դա կանեմ, Տե՛ր, ես հավատարիմ կմնամ:

Ե՛կ, արի կիսենք այս օրը, եղիր Իմ ընկերակիցը:

Սեպտեմբերի 27, 1987

(Անցյալ գիշեր ես որոշեցի գնալ, այստեղ, Լոզանում գտնվող Խարիզմատների կենտրոնը: Եվ նորից ողջ դժոխքը կարծես դուրս ժայթքեց: Սատանան կատաղեց, չարչարելով հոգիս այն աստիճան, որ ես Աստծուն խնդրեցի, որ շարունակի առանց ինձ: Ասացի, որ ես միշտ կսիրեմ Նրան, բայց պարզապես ուժ չի մնացել առաջ գնալու: Անմիջապես ես զղջացի իմ խոսքերի համար, խնդրելով Աստծուն, որ հրաժարվի ինձնից իմ անարժանության համար: Երբ հանգստանում էի, ես ինձ տեսա ընկած մի անհարթ ճամփի վրա: Ես տեսա Հիսուսին՝ ոտաբոբիկ կանգնած ինձ մոտ: Նա կռացավ և ինձ նորից բարձրացրեց: Այնուհետև, իմ առջև ես տեսա մի լայն սանդուղք, գրեթե հարյուր աստիճաններով: Վերևում սրբերն էին կանգնած

[1] Երբ Նա ամեն անգամ ասում էր սա, ես գրեթե մեռնում էի: Միայն Աստված կարող է ունենալ ձայնի այս երանգը:

և կանչում էին ինձ, որ վեր մագլցեմ: Ես շրջվեցի և տեսա ծանոթ մի քահանայի կերպարանք: Նա ինձ հետ հումորով խոսում էր խոսում: Ես ճանաչեցի Պադրե Պիոյին: Նրա մոտ ես տեսա Սուրբ Ֆրանցիս Ասիզեցուն, որը մոտեցավ ինձ: Բոլորը խրախուսում էին, որ շարունակեմ):

Հիսո՞ւս:

Ես եմ, Վասուլա, մի՛ վախեցիր:

Հիսուս, ների՛ր ինձ, որ տկար գտնվեցի:

Քո տկարությունը պիտի վերացվի Իմ Ուժով:

Io sono con te, Padre Pio.

Աստված իմ, մի՞թե սա հնարավոր է:

Այո՛, նա Ինձ հետ է, Վասուլա, և երանելիների կարգն է դասված Իմ կողմից: Ես քեզ հետ եմ, Իմ Մոր և բոլոր սրբերի հետ:

(Ավելի ուշ, ես գնացի շնորհյալների (խարիզմատների) պաշտամունքին, որին չէի կարողանում հետևել իմ անտեղյակության պատճառով: Բացի այդ, ես լռություն էի տենչում: Ես մեղավոր էի զգում, շատ մեղավոր՝ իմ անգիտության համար):

Վասուլա, մի՛ անհանգստացիր. ամեն մարդ Ինձ փառաբանելու և գովաբանելու իր կերպն ունի: Ես քեզ այս միջոցն եմ տվել[1]: Ես և դու, դու և Ես. դու պիտի պաշտես Ինձ Լռության մեջ: Հիշի՛ր, մի քանի ամիս առաջ Ես արդեն սովորեցրել եմ քեզ:

(Ճիշտ է. մայիսի 31, 1987)

Ես քո կողքին եմ կանգնած:

(Ես Նրան այնքան մոտիկից զգացի, որ ամուր կարող էի դիպչել Նրան: Հոգիս նորից երջանիկ էր և խաղաղության մեջ):

Փոքրիկս, մի՞թե Ես քո Փեսան չեմ: Դեհ, ուրե՞մն, մի՞թե Ես քեզ չեմ մխիթարի, երբ դու մխիթարության կարիք ունենաս:
Ե՛կ Ինձ մոտ, և Ես կվերցնեմ քո բեռը. ե՛կ Ինձ մոտ և Ես կմխիթարեմ քեզ: Ի՛նձ ապավինիր, աղջիկս, Ես քո Հոգևոր ղեկավարն եմ, Ես քո Փեսան եմ, Ես Նա եմ, ով քեզ ամենից շատ է սիրում: Ես քո Արարիչն եմ և Աստվածը: Ե՛կ ու ընկիր Իմ Բազուկների մեջ և զգա Իմ ջերմությունը:

(Հիսուսն իմ հոգին թողեց լիակատար ներդաշնակության և խաղաղության մեջ):

[1] գրելու միջոցը

Սեպտեմբերի 28, 1987

(Հիսուս կանչում էր ինձ: Ես նույնքան անհամբեր էի Նրան հանդիպելու, որքան Նա: Զգիտեմ, բայց թվում էր, թե դարեր ի վեր մենք միասին էինք):

Օ՜, ե՛կ, սիրելիս: Այնքան անհամբերությամբ եմ սպասել այս րոպեին, հանդիպելու քեզ այս ձևով:
Միասի՛ն, Վասուլա, միասի՛ն. դու և Ես պետք է սրբացնենք Գարաբանդալը: Սուրբ է այն,[1] քանզի Իմ Մայրն ու Ես երևացել ենք այնտեղ:

Թող Քո կամքը կատարվի, Տե՛ր:

Վասո՛ւլա, ամաչկոտ ու երկչոտ լինելը մեղք չէ[2]: Ես քեզ ասում եմ սա:

(Ես ուրախ էի լսելով այս: Հանկարծ հոգիս կարոտեց Նրան):

Նայի՛ր Ինձ, փոքրիկս, քո տառապանքը փառավորում է Ինձ: Տանջվի՛ր Ինձ համար: Ես քեզ համար վճարեցի Իմ Արյան գնով:
Վասուլա, ինչո՞ւ ես շուրջդ նայում Հոգևոր ղեկավար փնտրելու համար:

Զգիտեմ:

Ինձ հետ դու կսովորես, քանզի Ես Իմաստությունն և Ճշմարտությունն եմ: Ինձ մոտ արի և Ես կուսուցանեմ քեզ: Վասո՛ւլա, Ես քեզ սիրում եմ:
Ասա Նրան[3], որ վերականգնելու եմ Իմ Եկեղեցին. Ես պիտի վերակենդանացնեմ Իմ Եկեղեցին: Ես ընտրել եմ քեզ, որ աշխատես Ինձ հետ: Վասուլա, հանդիպի՛ր Նրան, խոսի՛ր Նրա հետ: Փաղաքշի՛ր Ինձ, ինչպես որ Ես սովորեցրել եմ քեզ փաղաքշել՝ փառաբանելով Ինձ[4]: Սիրի՛ր Ինձ, Վասուլա, քանզի սերը կանխում է աստվածային Արդարությունը *(ցասումը)*, երբ այն գրեթե պատրաստվում է հարվածել մեղավորներին:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, դու ուրա՞խ ես, որ Ես ազատագրեցի քեզ:

Այո՛, Աստված իմ, ես շատ ուրախ եմ, որ Քեզ հետ եմ: Ես ինձ կապված եմ զգում Քեզ և երջանիկ եմ դրա համար:

Դու հիմա հավատո՞ւմ ես, որ Ես Սիրո շղթաներով կապված եմ քեզ հետ:

Հիմա հավատում եմ, Տե՛ր:

---

[1] Թեև իմ գնալն այնտեղ տեղի ունեցավ առանց որևէ ծրագրի, բայց դա կատարվեց շատ բնական ձևով:
[2] Ես ուզում էի իմանալ, թե ամաչկոտ ու երկչոտ լինելը մեղք է, թե՝ ոչ:
[3] Նրան: Խարիզմատների քահանային: Նա նոր է եկել այստեղ:
[4] Սուրբ Վարշամակի նկարի վրա

Փոքրիկս, օրհնի՛ր Ինձ:

Ես օրհնում եմ Քեզ, Հիսուս, ես սիրում եմ Քեզ և շնորհակալ եմ Քեզնից:

Վասո՛ւլա, դու գիտե՞ս, այն նշանները, որ Ես տվել եմ և պիտի շարունակեմ տալ՝ Իմ Անունը ձեզ ճանաչելի դարձնելու համար է, որպեսզի Սերը, որ Ես ունեմ ձեր բոլորի հանդեպ, լինի ձեր մեջ և, որպեսզի՝ Ես լինեմ ձեր մեջ: Սակայն Իմ քահանաներից շատերը մարդկանց առջև ուրանում են Ինձ:

Ինչպե՞ս, Տե՛ր:

Ուրանալով Իմ նշանները, նրանք ուրանում են Ինձ՝ իրենց Աստծուն: Չեմ ասե՞լ, որ, եթե մեկը Ինձ ուրանա մարդկանց առջև, ապա նա պիտի ուրացվի Իմ հրեշտակների առջև:

Չեմ ասե՞լ, որ Ես պիտի շարունակեմ Իմ Անունը ճանաչելի դարձնել ձեզ: Ուրեմն, ինչո՞ւ են նրանք կասկածում, որ Ես ձեր մեջ եմ և որ Իմ Ողորմությամբ է, որ Ես ձեզ նշաններ և հրաշքներ եմ ցույց տալիս, որոնք հազիվ են մեծարվում, քանզի թույլ տուր ասել, աղջիկս, նրանք իրենց ձեռքն են վերցրել գիտության բանալին: Եվ նրանք, ոչ իրենք են ներս թափանցել, ոչ էլ թույլ են տվել ուրիշներին այդ անել:

Աստվա՛ծ իմ: Դու այնքան բակացած ես երևում, Տե՛ր:

Վասո՛ւլա, ժամանակը եկել է Ինձ Փառավորելու: Արթուն եղիր և մոտ մնա Ինձ: Ես սիրում եմ քեզ, փոքրիկս, մեկ եղիր Ինձ հետ:

Այո՛, Տեր:

Մե՞զ, մե՞նք:

Այո՛, մեզ:

Արի գնանք:

Սեպտեմբերի 29, 1987

Աստվա՛ծ իմ, Դու Քո քահանաներից մի քանիսի հանդեպ վշտացած ես երևում:

Վասո՛ւլա, նրանք պատասխանատու են բազում հոգիների համար: Նրանք ոչ միայն իրենք են ընկնում, այլև իրենց հետ բազմաթիվ այլ հոգիներ են ցած քաշում:

Սակայն, Տե՛ր, շատերը կան, որ լավն են՝ Քեզ սիրող, աշխատող, այնպես, ինչպես Դու ես ցանկանում որ աշխատեն: Ես գիտեմ մի քանիսին:

Ա՜հ, Վասուլա, շատերը կան, որ հետևում են Իմ ուսուցումներին՝ զոհաբերվելով, խոնարհ ապրելով, սիրելով մեկը մյուսին, կերակրելով Իմ գառներին: Նրանք երկրի աղն են, Իմ Հոգու սիրելիները: Նրանք Իմ աբելներն են, նրանք բալասան են Իմ վերքերի համար՝ մեղմացնելով Իմ ցավը: Ցավոք սրտի, նրանց մեջ կայեններ էլ կան, Իմ Մարմնի նետերը՝ նենգ, կուրացած սնափառությամբ, չար և արհամարհելի հակումներով: Նրանք Իմ Գլխի փշերն են և բազմաթիվ են նրանց մեղքերը: Կեղծավորությունը տիրապետում է նրանց և այդպիսիների հանդեպ է, որ բորբոքվում է Իմ աստվածային Արդարությունը:

Վերցրո՛ւ Իմ Ձեռքը, աղջիկս, մոտ մնա Ինձ, և Ես ցույց կտամ քեզ այդ փշերը: Ես աստվածային ուժով քեզ կառաջնորդեմ ընդհուպ Իմ Մարմնի ամենախոր ծալքերը. Ես թույլ կտամ քեզ ճանաչելու տեգի սուր սայրը: Ես չեմ խնայելու կայեններին, Վասուլա. քանզի ի՞նչ ունեն նրանք Ինձ մատուցելու: Նրանց ձեռքերը դատարկ են և ոչինչ չունեն մատուցելու Իմ գառներին: Նրանք սիրում են ժողովրդի առաջ ցույց տալ իրենց. նրանք սիրում են, որ ողջունվեն քծնանքով: Նրանք նման են աղի, որը կորցրել է իր համը: Ճշմարիտն ասած, աղջիկս, նրանք այսօրվա փարիսեցիներն են:

Օ՜, Աստված իմ, դա սարսափելի է:

Վասո՛ւլա, այդ պատճառով, ամեն ինչ, որ ծածկված է պիտի բացահայտվի, և քողարկված ամեն բան պիտի քողազերծվի, որովհետև սա է Իմ Կամքը:

Արի՛, մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը:

Ո՛չ, Տեր, ես ընդունում եմ Քեզ, որպես Իմ Սուրբ Հորը, Սուրբ Ընկերոջը, Սուրբ Եղբորը, իսկ Սուրբ Մարիամին ես նայում եմ որպես իմ Սուրբ Մորը. Դուք իմ Սուրբ Ընտանիքն էք, ինչպե՞ս կարող եմ ես Ձեզ մոռանալ:

Սիրելիս, Ես նաև քո Փեսան եմ: Այդ ձևով է, որ Ես ուզում եմ, որ դու սիրես Ինձ: Սիրի՛ր Մեզ մտերմաբար, այսուհանդերձ՝ պատվի՛ր Մեզ, երբեք չմոռանալով, որ Մենք Սուրբը ենք: Մենք քո Սուրբ Ընտանիքն ենք, Ես քո Աստվածն եմ: Ձգոն եղիր:

Այո՛, Տեր:

Արի գնանք:

Գնանք:

Հոկտեմբերի 1, 1987

(Առավոտյան ես ամբողջ ժամանակ զբաղված էի մի այցելուի հետ, որն ինձ փորձում էր կոսմետիկ ապրանքներ ծախել: Դա բոլորովին կարևոր չէր, քանի որ ժամանակի կորուստ էր: Բայց նա իմ ընկերուհու կողմից էր ուղարկված):

Փոքրիկս, ես սիրում եմ քեզ խելագարի պես, ես քո շատ Սիրելին եմ: Վասուլա, մի՛ հեռացիր Ինձնից: Դու ճիշտ ես կռահում[1]: Իմ սերը կրկին բորբոքվել է, և երբ այդ տեղի է ունենում, ես ինձ թույլ եմ տալիս սեր պահանջել: Ես ցանկանում եմ, որ դու միայն Ինձ համար ապրես: Ես ուզում եմ, որ դու քո աչքերը Ինձ սևեռես: Նայի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ, բուրի՛ր Ինձ, պաշտի՛ր Ինձ, օրհնի՛ր Ինձ, ցանկացի՛ր Ինձ, շնչի՛ր Ինձ համար, միայն Ինձ համար ժպտա. ասա՛, թե որքան ես սիրում Ինձ՝ քո Աստծուն: Աշխատի՛ր, որ ուրիշներին դեպի Ինձ բերես. բավարարի՛ր Իմ անհագ ծարավը: Ես ծարավ եմ, Վասուլա: Ես ծարավի եմ սիրո, ես ծարավի եմ հոգիների: Վասուլա, ինչո՞ւ ես Ինձ մրցակիցներ բերում. այլևս մրցակիցներ չբերես, չբերես: Գովերգի՛ր Ին, Ես քեզ առատորեն եմ տվել: Մի՞թե դու Ինձ չես գոհացնելու այն ամենի համար, որ Ես տալիս եմ քեզ:

Ես քայլել եմ քեզ հետ բերկրանքների Իմ պարտեզում, մենք կիսել ենք այդ զեղեցկությունը: Իմ ուրախություններն ու տառապանքները Ես բաժանել եմ քեզ հետ: Ես Իմ Խաչը դրել եմ քեզ վրա: Մենք միասին կիսում ենք այն՝ բաժանելով Դրա տանջանքները, վշտերն ու ցավերը. մենք կիսում ենք Դրա Սերը: Մի՞թե Ես քեզ չբարձրացրի Իմ կրծքին՝ կերակրելով քեզ, բժշկելով քեզ: Ես ընտրել եմ քեզ, որպես Իմ հարսը՝ քեզ հետ կիսելով Իմ Խաչը, որպես մեր ամուսնական անկողինը: Դու կնայե՞ս Ինձ:

(Ես նայեցի Հիսուսի դեմքին):

Մի՞թե ես կարող եմ երբևիցե քեզ լքել, ծաղիկ: Ես Նա եմ, ով քեզ ամենից շատ է սիրում: Ինձ մոտ մնա[2], լսի՛ր: Լսի՛ր, Ես հիմա է՛լ ավելի պիտի ամրացնեմ մեր կապերը. Ես ուզում եմ, որ դու ավելի մոտիկ լինես. Ես ուզում եմ, որ դու մեկ լինես Ինձ հետ: Ո՞վ էր առաջինը, որ գրավեց քեզ:

Ինչպե՞ս, Տեր:

Ես առաջինն էի, որ սրբագործեցի քեզ և նայեցի քեզ վրա: Վասո՛ւլա, Ես քեզ ստեղծել եմ Ինձ համար: Թող որ հիշեցնեմ, թե դու ով ես: Դու ոչ այլ ինչ ես, եթե ոչ փոշի ու մոխիր, և Իմ անսահման կարեկցությունից էր, որ մեռածների միջից Ես բարձրացրի քեզ դեպի կյանք: Միշտ հիշիր այս:

(Պատվելին եկավ և ես նրան ցույց տվի հայտնությունը: Նախ՝ նա չհավատաց[3]: Ապա՝ ժխտեց, որ Սուրբ Մարիամը մեր Սուրբ Մայրն է, և ապա այն, որ նա երբեք չի լսել երևումների մասին: Նա չէր հավատում որևէ Հոգևոր Գործի և դեմ էր սրբապատկերների: Նա հավանաբար մտածեց, որ ես խանգարված եմ):

---

[1] Ես զգացի, որ Հիսուսի Սիրտը նորից բոցավառվել է՝ համակված սիրով:

[2] Կարծես մի մտքից Նա հանկարծ կանգ առավ և մատնացույց արեց մեր ոտքերը, որոնք ես տեսա որ իրար էին կապված:

[3] Հետագայում ես իմացա, որ նա ավետարանչական էր: Այդ ժամանակ ես չգիտեի տարբերությունը:

Վասո՛ւլա, ես Հարուստ եմ, բայց շատ քչերը գիտեն Իմ Գանձերի մասին: Երբ ես մարմնավոր էի, մի՞թե արհամարհված չէի, մի՞թե ինձ չէին համարում Աստծուն հայհոյող: Ես չմերժվեցի՞, ինչպես այն քարը, որը մերժվեց շինարարների կողմից, բայց որը դարձավ անկյունաքարը:

Պատվի՛ր Ինձ՝ ընդունելով արհամարհանք, ստորացում. խոնարհի՛ր քեզ, եղի՛ր Ինձ նման, հիշո՞ւմ ես: Չեմ ասե՞լ, որ դու Ինձ պիտի ծառայես թշվառների մեջ: Չեմ ասե՞լ, որ դու հանգիստ չես ունենալու: Ընդունի՛ր, ինչ որ Ես առաջարկում եմ քեզ, մի՛ վախեցիր քեզ նվաստացնելուց:

Ես Իմ Արյունոտված Սրտից[1] երկու կաթիլ Արյուն կկաթեցնեմ քո սրտի վրա՝ ամբողջովին ծածկելով այն: Սրբացած Իմ Ջեռքով՝ ապրիր Իմ Լույսի տակ, սովորիր մերժված լինել մարդկանց կողմից:

(Ես զգացի, որ Սուրբ Մարիամն ինձ մոտ է):

Սուրբ Մարիա՞մ:

Ես եմ: Մոմ վառիր Ինձ համար, Վասուլա, և փոխհատուցիր նրա մեղքի համար[2]: Խնդրիր Հիսուսին, որ ների նրան: Դու կանե՞ս սա Ինձ համար:

Կանեմ, Սուրբ Մարիամ:

Հատուցի՛ր, սիրելիս, մի՛ կասկածիր Հիսուսի Գործերին: Պատվի՛ր մեզ:

Կանեմ, Սուրբ Մարիամ:

Հոկտեմբերի 2, 1987

Այդ ես եմ՝ Հիսուս: Թող հայտնի լինի, որ պետք է հարգվի Իմ և Իմ Մորը վերաբերող որևէ պատկեր, քանզի դա Մեզ է ներկայացնում, ինչպես որ Իմ Խաչը ներկայացնում է Ինձ: Թող հայտնի լինի, որ Իմ Սուրբ Վարշամակը իսկապես վավերական է. Դա նույնն է, որ ծածկեց Ինձ: Օրհնյալդ Իմ, Վասուլա, մտի՛ր Իմ Սրտի մեջ. թող որ Ես քեզ թաքցնեմ այնտեղ: Հանգչիր, ե՛կ, ե՛կ դեպի քո Հայրը:

(Ես այնպես զգացի, որ կարծես Աստված պարուրում էր ինձ. ես պատված էի Նրանով ու երջանիկ էի):

Հոկտեմբերի 5, 1987

(Ես պիտի գնայի ու հատուցեի պատվելիի համար, ինչպես որ Սուրբ Մարիամը ինձ խնդրել էր: Ավելի ուշ զարմիկս՝ Իսմինին, ինձ հեռաձայնեց, ասելով, որ իրենք գնում են Թուրին՝ Իտալիա, և հարցնում էր, թե մենք

[1] Այս ասելիս, Հիսուս շատ տխուր էր թվում: Իմ ցավը ոչինչ էր համեմատած Նրա հետ: Մոռանալով իմ ցավը, ես ուզում էի մխիթարել Նրան:
[2] Իրեն մերժելու համար:

կուզենայի՞նք գնալ իրենց հետ: Ես մտածեցի՝ վերջապես. դա միշտ իմ երազանքն է եղել, գնալ այնտեղ և այցելել Մայր Եկեղեցի, ուր գտնվում էր Հիսուսի Սուրբ Վարշամակը: Այս անգամ ևս, Հիսուս կարգադրել էր դա ինձ համար: Ես պետք է գնամ:

Զարմիկս վարեց ավտոմոբիլեն և մենք գնացինք դեպի այն հյուրանոցը, ուր նրանք սովորաբար գնում էին: Թուրինը մի հսկայական քաղաք է, բայց մեր հյուրանոցը հինգ հարյուր մետր հեռու էր այնտեղից, ուր որ գնալու էի: Հիսուս հեշտացրել էր դա ինձ համար: Մենք հասանք շաբաթ օրը կեսօրին և, որոշ ժամանակ անց, ես գնացի Մայր Եկեղեցի և շատ տպավորվեցի: Սուրբ Վարշամակը երկրորդ հարկում էր՝ եկեղեցու գմբեթում: Ինձ թվաց, թե ես տեսա ամենասուրբ վայրը աշխարհում: Խաղաղությունն ու սրբությունը իշխում էին այդ գմբեթի տակ: Ես դա զգացի իմ մեջ, սքանչելի էր:

Ավելի ուշ, ես գնացի հյուրանոց: Երեկո էր, երբ զարմիկս վերադարձավ գնումներից: Ես շտապեցի նրան պատմելու, թե ուր էի գնացել, բայց նա կարծես պանում էր դեպի ինձ: Նա չէր ուզում ինձ լսել. ուզում էր, որ ես նրան լսեի, որովհետև, այն, ինչ որ տեսել էր ու հայտնաբերել, շատ սքանչելի էր թվացել նրան:

Նա ասաց. «Վասուլա, այդ ճանապարհին, որտեղից տաս անգամ անցել ենք այսքան տարիներ, ես այնտեղ երբեք չէի տեսել Սուրբ Մարիամի արձանը: Դա հսկայական մի արձան է. գրեթե երեք մետր բարձրություն ունի: Այնքան սիրուն է Նրա հագուստը՝ բազմաթիվ դարսերով և կապույտ թիկնոցով: Նա այնքան գեղեցիկ է երևում և իր թևերը այնպես է բացել, որ կարծես ուզում է գրկել աշխարհը: Դու <u>պիտի գաս</u> ու տեսնես Նրան: Դու Նրա մոտից ես անցել, դու չտեսա՞ր Նրան: Նրա երկու կողմերում ատլաս վարագույրներ էին՝ ալ կարմիր գույնի, փայլուն ու գեղեցիկ»: Ես ասացի, որ անցել եմ, բայց տեսել եմ միայն մաշված՝ կեսը կարմիր, կեսը դեղին վարագույրներ: Նա ինձ ասաց, որ ինքը նույնպես տարիներ շարունակ չի նկատել դա: Ես ոչ մի արձան չէի տեսել:

Հաջորդ օրը կիրակի էր և նա ուզում էր, որ ես գնամ տեսնեմ այդ հսկայական արձանը: Ասացի, որ ես քեզ նախ Մայր Եկեղեցի կտանեմ, ուր գտնվում էր Սուրբ Վարշամակը, և նա ինձ հետևեց: Կիրակնօրյա պատարագ էր եկեղեցում: Մենք մի կես ժամ մնացինք և մոմ վառելուց հետո գնացինք տեսնելու Սուրբ Մարիամի մեծ արձանը: Մենք տեղ հասանք և իմ զարմիկը գրեթե ուշաթափվեց, քանզի այդտեղ ո՛չ մեծ արձան կար, և ո՛չ էլ՝ փոքր: Զկային փայլուն և ալ կարմիր վարագույրներ: Կային սովորական, մաշված, դեղին և կարմիր վարագույրներ, որ ես տեսել էի, բայց՝ ոչ մի արձան:

Նա ոչինչ չէր հասկանում: Բայց ես հասկացա: Վարագույրների տակ մի ներքին դուռ կար: Նա դուռը հրեց. դա մի եկեղեցի էր: Ես ասացի նրան. «Ահա թե ինչու մենք Թուրին եկանք: Եկանք, այցելելու այս եկեղեցին, որը կոչվում է Սուրբ Մարիամի Եկեղեցի (Madonna di Rosario)՝ հատուցելու համար: Վիթխարի գեղեցիկ արձանը, որ տեսել ես, դա մեզ ձգելու և այստեղ բերելու համար էր: Մեր Մայրը կանչեց մեզ: Նա՝ ինքը, երևաց քեզ, որպես մի մեծ արձան, որպեսզի դա տպավորի քեզ և մեզ այստեղ բերի: Եվ Նա ուզում է իր մոմը վառվի իր եկեղեցում՝ պատվելիի խոսքերի հատուցման համար»: Մենք ներս մտանք. դա մի այնպիսի գեղեցիկ եկեղեցի էր, որտեղ պատարագ էր մատուցվում: Մենք մնացինք այնտեղ մինչև այն ավարտվեց, ապա գնացինք դեպի Սուրբ Մարիամի և Հիսուս Մանուկի ոսկե արձանը և այդտեղ մոմ վառեցինք՝ աղոթելով, որ Հիսուս ների մեզ և պատվելիին):

Հիսուս, ճի՞շտ է սա:

Այո՛, Վասուլա, դա ճիշտ այնպես էր, ինչպես դու շարադրեցիր:
Ես քեզ կբարձրացնեմ Ինձ մոտ, հենց որ դու ավարտես քո առաքելությունը: Իմ հոգին քեզ է տենչում: Վասուլա, լսի՛ր Իմ Մորը:

Վասո՛ւլա, Իսմինիին ասա, թե Ես նրան որքան եմ սիրում: Զավա՛կս, Ես նրան Իմ այդ պատկերը տվեցի՝ նրա ուշադրությունը գրավելու և ձեզ առաջնորդելու համար Իմ Եկեղեցին: Սիրելիներս, ինչպես եմ Ես ձեզ սիրում: Մեծարե՛ք Մեզ, սիրելիներս, պատվե՛ք Մեզ, հատուցե՛ք ձեր եղբայրների համար:
Հիշե՛ք, թե Մենք որքան մոտ ենք ձեզ, բոլորիդ: Վասուլա, երբեք մի՛ հուսալքվիր, քանզի Ես քո կողքին եմ: Միշտ Հիսուսին ապավինիր: Աղջիկս, մտածի՛ր Հիսուսի Զարչարանքների մասին, ապրի՛ր Նրա համար, փառաբանի՛ր Նրան:

Միայն Քո և Հիսուսի օգնությամբ ես կարող կլինեմ այդ ամենն անելու: Ես ուզում եմ մեծարել Քեզ:

Ես ձեզ բոլորիդ սիրում եմ: Օրհնի՛ր Իսմինիին: Ես Իմ Եկեղեցում օրհնել եմ Իսմինիին ու նրա ամուսնուն:

Ես օրհնում եմ Քեզ, Սուրբ Մարիամ:

Ես էլ քեզ եմ օրհնում:

(Ավելի ուշ)

Ներիր ինձ, Տե՛ր, իմ լիակատար անարժանության, ձախողումների և ոչ բարի լինելու համար, որով և վիրավորում եմ Քեզ՝ Քո Ներկայությամբ:

Ես քեզ միանգամայն ներում եմ:

Ես սիրում եմ Քեզ, սիրելի Տեր:

Ամեն անգամ, երբ դու ասում ես Ինձ՝ «Ես սիրում եմ Քեզ», Ես անտեսում եմ քո ողջ թշվառությունը՝ թույլ տալով, որ այն անցնի դնա և չթողնի, որ Իմ աստվածային Արդարությունը հարվածի քեզ, Վասուլա, քանզի դու իսկապես թշվառ ես բառիս բուն իմաստով: Դու մեղմացնում ես Իմ բարկությունը ասելով, որ սիրում ես Ինձ:

(Հիսուս խիստ էր թվում: Ես վախեցա Նրանից):

Ես վախենում եմ Քեզնից:

Ես Սեր եմ, այնպես որ, մի՛ վախեցիր Ինձնից:

Օ՜հ, Հիսուս, երանի ես այդպես չար, անշնորհակալ և ոխակալ չլինեի:

Ես խղճում եմ քեզ և խղճահարությունից է, որ հազվադեպ եմ բորբոքվում քո դեմ:

Գիտեմ, ես մի կաթիլ շնորհի իսկ արժանի չեմ: Դու անչափ բարի ես եղել իմ հանդեպ և համբերատար: Դու երբեք չես բարկացել ինձ վրա: Դու միայն սիրել ես ինձ՝ իմ սխալներով հանդերձ: Դու շփացրել ես ինձ:

Վասո՛ւլա, որովհետև այդպիսին է Իմ Ողորմությունը...

Հիսո՞ւս:

Ես եմ:

Աստվա՛ծ իմ:

Ես եմ:

Ես խնդրում եմ, որ ինձ սովորեցնես Քեզ ավելի շատ սիրել, այնպես, ինչպես որ Դու ցանկանում ես, որպեսզի խնայես ինձ, և որպեսզի ես մեծարեմ Քեզ:

Փոքրի՛կս, Ես քո երկնային Ուսուցիչն եմ, որը քեզ պիտի ուսուցանի: Երբեք չկասկածես, երբեք չկասկածես Իմ Ներողամտության վրա:

Ո՛չ, Տեր, Ես չեմ կասկածի: Ինձ արժանի արա Քեզ՝ Քո տված շնորհով, և մոտեցիր ինձ: Թույլ տուր, որ փառաբանեմ Քեզ: Արգելի՛ր ինձ մեղանչելուց և իմ մեղքերով Քեզ մշտապես վիրավորելուց, Սիրելիս:

Օրհնի՛ր Ինձ:

Հիսո՛ւս, օրհնում եմ Քեզ, Հա՛յր, ես սիրում եմ Քեզ:

Ես ցանկանում եմ տեսնել քեզ Իմ Խաչի Կայաններում:

Օ՜հ, Հիսուս, ինչպե՞ս: Ես ուզում եմ, բայց ինչպե՞ս, ո՞ւմ հետ, ո՞վ պիտի առաջնորդի ինձ:

(Հուսահատությունից իմ աչքերը լցվեցին):

Արցունքներդ պահիր այն ժամանակվա համար, երբ դու վիրավորանքներ կլսես, որոնք կասվեն Իմ Մոր հասցեին:

Օ՜հ, Հիսուս, օգնի՛ր ինձ:

Աղջիկս, հենվի՛ր ինձ վրա. թող որ Ես ուսուցանեմ քեզ: Գոհացրու Ինձ՝ լինելով զիջող, ինչպիսին կաս հիմա: Ե՛կ, մոտ մնա Ինձ, Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Հիսուս. ողորմի՛ր ինձ տգիտության համար:

Ողորմում եմ: Ուրախացրո՛ւ Ինձ և ասա. «Տե՛ր, թող որ ես Քո զոհը լինեմ, Քո այրող սիրո զոհը: Ես ցանկանում եմ պաշտել Քեզ և միմիայն Քեզ, Քո խաչի վրա Քեզ հետ դամված՝ երբեք չնայելով աջ ու ձախ: Ես ցանկանում եմ հագեցնել Քո ծարավը՝ Քեզ համար հոգիներ վաստակելով: Ես կլինեմ Քո սիրո զոհը, ես սիրում եմ Քեզ»: Ասա՛ դա:

(Ես ասացի այն):

Այսուհետև դու երբեք չես լքելու Իմ Սիրտը, Վասուլա: Ընտրի՛ր, Վասուլա, կամ՝ քո կյանքը, և կամ՝ զոհի կյանքը: Ընտրի՛ր:

Հիսո՛ւս, ես չեմ ուզում, որ Դու ինձ թողնես: Ես ուզում եմ Քեզ հետ լինել, Քո կողքին:

Ուրեմն, դու լավ ընտրություն արեցիր: Դու Ինձ պիտի նմանվես: Եղի՛ր Սիրո մի զոհ: Ծաղի՛կ, դու պիտի ծաղկես Իմ Լույսի տակ:

Շնորհակալ եմ, օրհնյալ լինես այն ամենի համար, որ տալիս ես ինձ, ինչպես նաև՝ իմ հանդեպ ունեցած Քո կարեկցության համար:

Իմ Խաղաղությունը քեզ, աղջիկս, երբեք մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը: Թույլ տուր հանգչեմ քո մեջ, քանզի սա Իմ տունն է:

Հիսո՛ւս, Դու ինձ ուրախություն ես պատճառում, և ես սովորում եմ Քեզնից:

Ծաղիկ, ես քո Տերն եմ և Աստվածը: Ե՛կ, մե՞զ, մե՞նք:

Այո՛, Տեր:

Հոկտեմբերի 6, 1987

(Ես ինձ խեղճ ու ողորմելի էի զգում: Եվ այդպես է: Ես չեմ գոհացնում Աստծուն՝ իմ տգիտության և դանդաղ հակացողության պատճառով: Ես ինձնից գոհ չեմ: Նա ճիշտ էր, երբ նշում էր իմ մասին, որպես Իր արարածներից ամենաթշվառը: Ես հիմա չեմ ուզում խոսել այդ մասին, թե դա ինչպես սկսվեց, որովհետև գտնում եմ, որ իմ մասին խոսելը տհաճ է, շատ տհաճ: Բայց ընկերներս ու ժողովուրդը ուզում են լսել, թե դա սկզբում ինչպես պատահեց: Ես ինձ պարտավոր էի զգում բացատրել և որքան ավելի էի բացատրում, այնքան ավելի էի արհամարհում ինքս ինձ, երբ ամեն անգամ մի բան էի ասում իմ մասին: Դա ստիպեց ինձ որոշել, որ այսուհետև ես չպիտի բացատրեմ, թե ինչպես սկսվեց: Այդպես ես կխուսափեմ ինքս իմ մասին խոսելուց: Ես մտածեցի, թե նրանք կարող են ուրիշներից իմանալ, եթե հետաքրքրասեր են, և դա պիտի բավարարվի ոչ իմ կողմից: Եթե նրանք ուզում են կարդալ, որովհետև, եթե հավատում են, ապա Աստված կլուսավորի նրանց: Ես չեմ ուզում լինել իմ անձի վկան: Ես ամեն ինչ պիտի թողնեմ Աստծո Ձեռքերում: Նա անհնարինը հնարավոր է դարձնում, այնպես որ, ես այսուհետև պիտի լինեմ միայն Նրա մատիտն ու թուղթը, Նրա քարտուղարը,

մի քարտուղար, որին հենց Ինքն է սովորեցրել սիրել Իրեն: Գրի առնելով Նրա խոսքերը, ես պիտի լինեմ Նրա գրատախտակը):

Այո՛, եղիր Իմ գրատախտակը, թույլ տալով Ինձ քեզ վրա փորագրել Իմ խոսքը: Բայց և այնպես փափուկ եղիր, որպեսզի հնարավոր լինի Իմ խոսքը խորը փորագրել քեզ վրա:

(Ես մոռացա ինքս ինձ. նստել էի հատակին: Նա ինձ նայեց, հիշեցնելով ինձ... Ես ծնկի եկա):

Ես սիրում եմ քեզ, Վասուլա: Դու և Ես, միասին, մենք կիսում ենք Իմ խաչը:

Լսի՛ր Ինձ, Վասուլա, դու Իմ Հոգու սիրելին ես: Մի՞թե դու դեռ չես հասկացել դա: Զգա՛, զգա, թե ինչպես Ես՝ քո Աստվածը, սիրում եմ քեզ, զավակս, Իմ շատ սիրելի հարսը:

(Ես զգացի, որ Հիսուսն ինձ պարուրում էր Իր մեջ):

Լսի՛ր, Վասուլա, ամբողջ երկինքը թնդում է Իմ աղաղակներից: Իմ ցանկությունը անսասան է, այն պետք է հասած լինի քո ականջներին: Ես ցանկանում եմ, որ զիջողություն ցուցաբերեք: Դուք ինչպե՞ս պիտի միանաք, եթե դուք անզիջող եք: Ես ուզում եմ միավորել Իմ Եկեղեցին: Դուք արդյոք կզգա՞ք Ինձ և պիտի լսե՞ք Իմ Ձայնը:

Աստվա՛ծ իմ, Դու ինչո՞ւ Եկեղեցու գլխավորներին չես տեղեկացնում Քո Պատգամի մասին:

Ես դա կանեմ, աղջիկս, զարդարի՛ր Իմ Եկեղեցին, սիրի՛ր Ինձ: Եկեղեցին պիտի վերակենդանանա:

(Ես Հիսուսի մի սքանչելի պատկեր տեսա՝ Վեհափառ, Փառավոր, գեղեցիկ մի պատկեր, հաղթական, որպես Թագավոր՝ Ձեռքը բարձրացրած, Մատներով ինձ մի նշան անելիս: Կարծես Նա <u>Հաղթանակի</u> ազդանշան էր տալիս):

Հոկտեմբերի 8, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ:

Հիսո՛ւս, ես ուզում եմ հատուցել յուրաքանչյուր վիրավորանքի համար, որ ուղղված է մեր Օրհնյալ Մորը: Ես չեմ կարող վիրավորանքներ լսել Նրա մասին, որոնք ասվում են Քո արարածների կողմից՝ հատկապես քահանաների: Եթե անգամ գլուխս ոլորեն՝ ես պիտի պաշտպանեմ Նրան:

Վասո՛ւլա, Ես թույլ կտամ քեզ, որ հասկանաս, թե Սերն ինչպես է տառապում նման վիրավորանքներ լսելով:

Վասուլա, թող հայտնի դառնա, որ Ես՝ Տերը, մեծարում եմ Իմ Մորը, թող հայտնի դառնա նրանց, ովքեր վիրավորում են Նրան, որ Նա Երկնքի Թագուհին է, որ Նրա Գլխի վրա, Ես՝ Տերը, թագ եմ դրել տասներկու աստղերով: Նա թագավորում է, սիրելիս, և սա գրված է Իմ Խոսքում: Ես մեծարում եմ Իմ Մորը, և, ինչպես որ Ես եմ մեծարում Նրան, դու էլ պիտի մեծարես Նրան:

Ես սիրում եմ քեզ: Իմ Մայրն ու Ես, օրհնում ենք քեզ:

Տե՛ր, պատվելին չընդունեց, որ մենք պետք է մեծարենք Նրան, որպես մեր Սուրբ Մորը: Եվ երբ Ես ասացի, որ այդ Դու Խաչից Ես ասել, նա ասաց, որ Դու այն նկատի ունեիր միայն Հովհաննեսի համար, քանի որ Ավետարանում, ոչ մի տեղ չի գրված, որ Նա նույնպես մեր Մայրն է, իսկ մենք՝ Նրա զավակները:

Սակայն, Ես քեզ նորից եմ ասում, աղջիկս, որ Իմ Մայրը նաև քո Մայրն է, դուք Նրա զավակներն եք: Դա գրված է Իմ Խոսքում և Ես նորից կրկնում եմ դա նրանց համար, ովքեր չգիտեն: Սուրբ Գիրքն ասում է...

Որտե՞ղ, Տե՛ր:

Հայտնության գրքում, երբ սատանան պարտվեց Իմ Մորը հետապնդելուց, նա կատաղեց Նրա դեմ և հեռացավ՝ պատերազմելու Նրա մյուս զավակների դեմ, այսինքն, բոլոր նրանց, ովքեր հնազանդվում են Պատվիրաններին ու վկայում Իմ մասին:

Շնորհակալություն Քեզ, ինձ օգնելու համար, Տե՛ր Հիսուս:

Վասո՛ւլա, Ես ասել եմ քեզ, որ Ես միշտ քո առջևում եմ: Մնա փոքր, որպեսզի Ես կատարեմ Իմ Գործերը, Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, և օրհնում եմ Քեզ:

Մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Տեր:

Հոկտեմբերի 10, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ:

Օ՜հ, Հիսուս, Ես երբեք չէի կարծում, որ քրիստոնյաները Սուրբ Մարիամին չեն հավատում և չեն մեծարում: Ես ամենևին չգիտեի, թե նրանք ինչ են զգում Նրա հանդեպ: Ես բոլորովին չգիտեի, որ այդպիսի հսկայական տարբերություն կա քրիստոնյաների միջև, և չգիտեի, որ դա այդքան սուր է:

Օ՜հ, Վասուլա, շատ ավելի վատ է, քան դու կարծում ես:

Օ՜հ, Հիսուս, ինչո՞ւ է այդքան վատ:

Որովհետև, Վասո՛ւլա, Իմ Մարմինը մասնատվել է: Ես ուզում եմ Իմ Մարմինը միավորվի:

Նրանք կմեծարե՞ն մեր Օրհնյալ Մորը, եթե միավորվեն:

Նրանք պետք է մեծարեն, զավակս:

«Նրանք պետք է», նշանակում է, որ դա պիտի լինի՞:

Ես նրանց կծռեմ: Ես կծալեմ նրանց ծնկները, և նրանք կմեծարեն ու կպատվեն Իմ Մորը:

Այո՛, Հիսուս:

Փոքրի՛կս, Ես պիտի վերակենդանացնեմ Իմ Եկեղեցին:
Արի գնանք, մե՞զ, մե՞նք:

Այո՛, Տեր:

Հոկտեմբերի 12, 1987

(Ինչ-որ մեկին այցելելիս, ես մի գիտական ամսագիր գտա, որն առաջ էր քաշում գիտական լուծումներ՝ հերքելով ամեն մի հոգևոր գործ: Այս օրերիս, որևէ գերբնական երևույթ ունի իր «բնական» բացատրությունը, ինչպիսիք են՝ «զույգ անհատականություն», «արտակարգ զգայական ընկալում», «ենթագիտակցություն», «մտային ներշնչում», «հիպնոս», «զանգվածային հիպնոս», կամ «ինքնաներշնչում»: Օրինակի համար՝ խարանը (վիրակրություն), կարելի է «բացատրել» որպես ինքնաներշնչում, այսինքն՝ ինքնապարտադրում, շիզոֆրենիա կամ սեռային բարդույթ: Թվում է, մարդիկ միշտ ուզում են տրամաբանական մի բացատրություն գտնել: Այս օրերին մեծ մարգարեներ չէին գտնվի, ինչպես Եսային, որովհետև նրանց գործերը տեղ կգտնեին միայն գիտական թղթապանակներում: Ավելի շուտ, չէին լինի խարանված սրբեր՝ առանց դասակարգելու նրանց, որպես շիզոֆրենիկների և իրենք իրենց ճաղկողների, որոնք դա անում են ինքնաներշնչումով և հիստերիայով: Ինձ այնպես է թվում, որ նրանք փորձում են մրցել Աստծո հետ և հաստատել, որ կարող են ապացուցել Աստծուն, որ Նա Ամենակարող չէ):

Օ՜հ, Աստված, ինչո՞ւ:

Վասո՛ւլա, բազմաթիվ են նրանք, ովքեր չեն հավատում Ինձ:

Բայց ես մի բան եմ ուզում խնդրել, ես իսկապես եմ ասում: Ես խնդրում եմ, որ Դու ոչնչացնես բոլոր այս տեսություններն ու ուսուցումները, որոնք փորձում են ժխտել Քո գոյությունը: Նրանք Քո թշնամիներն են: Ինչո՞ւ նրանց թողնել, որ բազմանան: Ոչնչացրո՛ւ դրանք, հակառակ դեպքում այն պիտի կործանի մեր հավատը: Խնդրում եմ, արա այդ[1]*:*

Կանեմ. լսի՛ր Ինձ, մի՛ վշտացիր: Երբեք չկասկածես, հավատ ունեցիր, երբեք մի՛ հոգնիր գրելուց: Սիրելիս, սրա համար էր, որ Ես եկա, որպեսզի քեզ կորած չտեսնեմ: Դու հիմա հասկանո՞ւմ ես, Վասուլա: Փոքրի՛կս, ես քեզ երբեք չեմ թողնի, որ ընկնես:

Իսկ մյուսնե՞րը: Ես չեմ ուզում, որ մյուսներն էլ ընկնեն: Ես ցանկանում եմ, որ Դու նրանց նեցուկ լինես այնքան, որքան որ ինձ ես նեցուկ լինում:

Վասո՛ւլա, Ես ձեզ բոլորիդ պիտի օգնեմ:

(Թվում է Աստված գոհ էր):

Օ՜հ, Աստված, ների՛ր ինձ, որ այսպիսի բաներ եմ պահանջում. ես անմիջական մեկն եմ, բայց ես չեմ կարող տանել անարդարությունը: Ների՛ր ինձ, այսպես անմիջական լինելու համար:

Ես ներում եմ քեզ, զավակս, խոսի՛ր:

(Ես ուրիշ բաներ ունեի մտքումս):

Ես Քեզ պիտի ասեմ, այնպես, ինչպես որ կա հիմա, այս մարդիկ չեն համոզվելու մինչև իրենց մահվան վերջին շունչը: Ամենաշատը, նրանք այն կդասեն «անբացատրելի»-ների շարքին, բայց չեն ասի, «Դեհ, ուրեմն, այսինչ կամ այնինչ բանը գալիս է Աստծուց»:

Ես նրանց կհամոզեմ: Իմ զորությունը նրանցից ավելին է: Ես ցույց կտամ ձեզ բոլորիդ, որ Ես Ամենակարող եմ: Իմ Ամենակարողությունը պիտի երևա ուր էլ որ դուք գտնվեք: Ոչ մի աչք չի կարողանա ժխտել այն. ոչ մի մարդ չի ժխտելու, որ այդ նշանը Ինձնից է գալիս[2]: Սիրելիս, նրանց տեսություններն ինչպե՞ս պիտի բացատրվեն այդ ժամանակ[3]: Ինչպե՞ս պիտի զգան նրանց գիտունները: Ի՞նչ պիտի պատահի նրանց ամբողջ իմաստության հետ: Ես պիտի ցույց տամ, թե նրանց իմաստությունը ինչպես է երևում Իմ Իմաստության առջև:

Ես պիտի ջնջեմ այս աշխարհից այն, ինչ որ նրանք իմաստություն են համարում: Սա պատճառներից մեկն է, որ Ես գործածում եմ քեզ, փորագրելով Իմ բառերը քեզ վրա, որպեսզի նախապես հայտնեմ Իմ Ծրագիրը: Ես՝ Տերն եմ, Էի և միշտ պիտի լինեմ, և դա ձեզ չի տրված, որ դուք Ինձ համարեք որպես ոչ այդպիսին: Ես եմ:

---

[1] Ես Աստծուն ասում էի, թե ինչ անի: Դա իմ ուժերից վեր էր:
[2] Արդյոք այս նշանը մի օր կլինի՞ երկնքում:
[3] Աստված չպատասխանեց:

Օ՜, սիրելի Աստված, որին ես պաշտում եմ, ցանկանում եմ, որ այս ծրագիրը լիներ հիմիկվա, այսօրվա կամ մյուս շաբաթվա համար:

Ես պիտի իրագործեմ Իմ Ծրագիրը, Վասո՛ւլա, ինչպես որ միշտ իրագործել եմ այն ամենը, ինչ Ես սկսել եմ:

Փոքրիկս, արի աղոթենք.

Սիրելի Հա՛յր,
Ես սիրում եմ Քեզ,
ես օրհնում եմ Քեզ,
Շնորհակալ եմ
Ողորմությանդ համար.
Ինձ արժանի արա Քեզ,
Որպեսզի Դու կարողանաս
ինձ գործածել լիովին:
Գործածիր ինձ,
ինչպես որ Դու ցանկանում ես:
Ես սիրում եմ Քեզ: Ամեն:

Սիրելիս, Ես օրհնում եմ քեզ: Ինձ նայիր:

(Ես նայեցի):

Դու ժպտում ես[1]:

Գրի՛ր դա:

Եվ երբ Դու ժպտում ես ինձ, ցույց ես տալիս Քո այտերի փոսիկները:

Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր:

Հոկտեմբերի 13, 1987

(Ես տեսա Հիսուսին ննջարանի դռան մոտ: Ես գիտեի, որ Նա մատնանշում էր ինձ, որ գրեմ. կարծես սպասում էր):

Ես դռան մոտ էի: Ե՛կ, դու աշխատելու ես Ինձ հետ:

(Երբեմն Հիսուսն ուզում է ինձ ապացուցել, որ ես ճիշտ եմ նկատում):

Ես պիտի կանխապես հայտնեմ, թե ինչ է լինելու, որպեսզի նրանք, ովքեր իրենց իմաստուն են համարում, այսուհետև հավատան Իմ Գործերին և հետևեն Ինձ:

[1] Ես վարանեցի ավելին գրելու:

Աղջի՛կս, ես շատերին պիտի բժշկեմ: Սերը ձեզ պիտի վերադառնա որպես Սեր, իրագործելով Իմ Խոսքը: Կարճ ժամանակում ես պիտի ապացուցեմ ձեզ, Վասուլա, որ սա գալիս է Ինձնից: Ես եմ Տերը, սիրելիս: Դուք դեպի Ինձ պիտի գաք: Լսի՛ր Ինձ, ուզում եմ քեզ հիշեցնել այն, ինչ խնդրեցի մի քանի օր առաջ: Թող որ Հայտնի դառնա ամենուր, տարածիր Իմ Խոսքերը. «Ես՝ Տերը, օրհնում եմ Գարաբանդալի Իմ զավակներին»: Ես ուզում եմ, որ նրանք լսեն Ինձ: Օ՜հ, Վասուլա, ես ինչպես եմ տենչացել այս օրվան:

Տե՛ր Հիսուս, ես կփորձեմ իմ կարողության չափով, համաձայն այն աղբյուրների, որոնք Դու տվել ես ինձ: Ես անկարող եմ, իսկ Դու՝ Ամենակարող: Դու ինձ կօգնե՞ս, Հիսուս:

Ես կօգնեմ քեզ: Հիշի՛ր, թե Ես ինչպես եմ գործում:

Վասուլա, Թող Հայտնի լինի, որ մի կարճ ժամանակ անց, Ես ձեզ բոլորիդ վերևից մի նշան կուղարկեմ: Դուք կհասկանաք, որ դա Իմ կողմից եկավ: Ես պիտի Փայլեմ ձեզ վրա: Ես սիրում եմ ամենքիդ:

Ինչպե՜ս եմ սիրում ձեզ, բոլորիդ: Ես ձեզ սիրում եմ ձեր հասկացողությունից էլ այն կողմ: Ես ձեր Արարիչն եմ: Չեմ ասե՞լ, որ ձեր պատկերը Ես փորագրել եմ Ձեռքիս ափի մեջ: Ինչպե՞ս կարող եմ Ես երբևիցե ձեզ լքել:

Ես մտածում եմ այն տեսիլքի մասին, որ Դու տվեցիր ինձ: Պատիժը, որից ես վախենում էի:

Ես նորից ցույց կտամ քեզ, որպեսզի այն հետք թողնի քեզ վրա:

Դարձյալ խնդրում եմ Տե՛ր, օգնիր մեզ, որ խուսափենք դրանից: Ես գիտեմ, որ Դու չես ուզում դա մեզ անել և հաճույք չես ստանում դրանից: Ասա՛ ինձ, ի՞նչ անեմ:

Վասուլա, ճի՛շտ է, Ես ոչ մի հաճույք չեմ ստանում ձեզ պատժելուց: Երանի Իմ արարչությունը վերադառնար Սիրուն: Վիթխարի փոխհատուցումներ պետք է արվեն: Հատուցե՛ք, նրանք, ովքեր կարող են, թող հատուցեն ուրիշների համար: Իմ արարչությունը պետք է փոխվի: Աղջի՛կս, Իմ արարչությունը պետք է սովորի և հավատա Իմ Հոգևոր Գործերին: Իմ արարչությունը պետք է Ինձ ընդունի որպես Ամենակարող: Իմ քահանայացած հոգիները պետք է հասկանան, թե իրենք որքան սխալ են՝ ժխտելով այսօրվա Իմ Գործերը:

Բայց շատերը կան, որ ընդունում են:

Բայց և կան այնպիսիները, որոնք չեն ընդունում և դրանց մասին է, որ Ես խոսում եմ: Ես խոսում եմ նաև նրանց մասին, ովքեր կիսել են Իմ Մարմինը: Հավատա՛ Ինձ, աղջիկս, Արդարության Իմ բաժակը լեցուն է՝ Իմ Մարմինը պատառոտելու համար: Ես նրանց այլևս չեմ խնայելու:

Վասո՛ւլա, թույլ տուր Ինձ, որ քեզ հղկեմ մի որոշ ժամանակ ևս, շուտով ես հավաքելու եմ Իմ բերքը: Ե՛կ, սիրելիս:

Տե՛ր, թող Քո կամքը լինի:

Հոկտեմբերի 15, 1987

Վասո՛ւլա, ես պիտի նվաստացնեմ քեզ, ինչպես Ինքս նվաստացվեցի: Ես պիտի խոնարհեցնեմ քեզ: Վասո՛ւլա, ես սիրում եմ քեզ և քո հանդեպ ունեցած սիրո համար է, որ ես պահպանում եմ քեզ: Այն ժամանակվանից, երբ ես ղեկավարում եմ քեզ, ես գիտեմ, թե որն է հոգուդ համար ամենալավը: Ես քեզ պիտի տամ այս ապաշխարանքը, որպեսզի այն մաքրի և հեռու վանի սնափառության հակումներդ: Ես՝ Տերս, կանեմ այն, ինչ հարկավոր է, որ քո հոգին որևէ բանի պակասություն չունենա: Ես միշտ կպահպանեմ քեզ:

Շնորհակալ եմ, Աստված իմ, որ օգնում ես ինձ:

Ես հիմա օգտագործում եմ քեզ, բայց շուտով դու պիտի ազատագրվես և պիտի լինես Իմ գրկում:

Աղջիկս, հիշի՛ր, երբ Ես մարմնով ձեր մեջ էի, Իմ կյանքը ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ միմիայն տառապանք, զոհաբերություն, տանջանք, վիշտ, կամ այս բոլորը միասին: Ես հանգիստ չունեի:

Վասո՛ւլա, Ես մեծացրի քեզ այս Պատգամի համար: Ծաղի՛կս, մինչև վերջ դու Իմ Խաչը պիտի կրես Ինձ հետ միասին: Ես անսահման սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, և եթե Դու ուզում ես, որ ես նվաստացվեմ, ես կկատարեմ Քո կամքը:

Եղի՛ր կակուղ, որ Ես կարողանամ քեզ հետ անել այն ամենը, ինչ որ Ես եմ ուզում: Փոքրիկս, խոսի՛ր Իմ մասին:

(Հիսուսն ուզում էր, որ Իր մասին ասեմ Հռոդոսցիներին: Հույները մեծ ցանկություն ունեն լսելու և հաճույքով լսում են):

Հոկտեմբերի 16, 1987

Վասո՛ւլա, Ես միշտ հասնում եմ Իմ նպատակներին:

Եկ, հիմա ասեմ քեզ: Մի օր Իմ թագավորությունը[1] երկրի վրա կլինի այնպիսին, ինչպիսին Երկնքում է: Իմ եկեղեցին միավորվելու է և օրհնվելու, քանի որ Իմ բոլոր նվիրյալները հասկանալու են մեկը

[1] Եկեղեցին

մյուսին: Իմ Ձեռքով բարձրացված և Իմ Արյամբ մաքրագործված Իմ Եկեղեցին Մեկ պիտի լինի:

Տե՛ր, թող քո ցանկությունը իրականանա: Մեզնից շատերն են այդ ցանկանում: Լուսավորի՛ր նրանց, ովքեր կարիք ունեն հասկանալու Քո ցանկությունները:

Հոկտեմբերի 18, 1987

Աղջի՛կս, դու կբռնե՞ս Իմ ձեռքը ու կշարունակե՞ս Իմ Գործերը:

Այո՛, Տեր, ես ուզում եմ երբեք բաց չթողնել Քո ձեռքը:

Վասո՛ւլա, Ես ուզում եմ, որ քեզ պարզ լինի, ինչ որ նախապես ասել եմ: Ես կանխապես հայտնելու եմ տեղի ունենալիք իրադարձությունները, որպեսզի ոչ մի կասկած չլինի, որ դրանք Ինձնից են գալիս:

Հիսո՛ւս, Դու չասացի՞ր, որ միակ նշանը, որ Դու պիտի տաս՝ այդ ես եմ:

Այո՛, Ես ասել եմ, որ դու լինելու ես Իմ Գործերի նշանը: Ես կանխամտածել եմ Իմ ծրագիրը քո ծնվելուց շատ առաջ:

Ծաղի՛կս, բացված մնա, որպեսզի Իմ արդարության ցողը կաթի քո մեջ: Ըմպի՛ր Ինձանից Իմ առաքինությունները. Ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես: Ես ուզում եմ, որ Իմ ծաղիկը զարդարված լինի՝ հագեցած Իմ Կատարելությամբ: Ես ուզում եմ, որ Իմ ծաղիկը բուրի Իմ աստվածային Զմուռսը: Նայի՛ր Ինձ, Վասուլա:

(Ես նայեցի Հիսուսին):

Բոլոր Իմ ցանկությունները պիտի իրագործվեն: Դու ավելի ժամանակ կհատկացնե՞ս Ինձ, Վասուլա:

Իմ ժամանակը Քո ժամանակն է, Ես Քեզ համար եմ ապրում:

Ուրեմն լցրո՛ւ քո կանթեղը, վերցրո՛ւ Ինձանից

Հիսո՛ւս, ինչ կարող եմ ասել. Դու ինձ այնքան շատ ես տալիս, մինչդեռ ես ոչնչի արժանի չեմ: Դու շարունակում ես ինձ տալ, իսկ ես չեմ կարող անգամ Քեզ որևէ բան տալ, որ գոնե մի քիչ մոտ լինի քո տվածներին: Դու ինձ լույս ես տալիս, Դու ինձ արթնացրիր մեռացներից, Դու բժշկեցիր ինձ և Քո գործերը ինձ վրա հեղեցիր:

Փառաբանի՛ր Ինձ: Ո՞վ քեզ ազատեց, Վասուլա:

Դու ազատեցիր, Տե՛ր: Կարո՞ղ եմ մի բան ասել:

Ասա՛ Ինձ, սիրելիս[1]:

Աստված իմ, Քո Ողորմությամբ, Սիրով և Զորությամբ իմ եղբայրներին արա այն ամենը, ինչ որ արեցիր ինձ համար: Ազատի՛ր նրանց: Բարձրացրո՛ւ նրանց դեպի Քեզ, նրանց միացրո՛ւ Քեզ հետ և թույլ տուր, որ նրանք զգան Քո սերը, ինչպես որ ես եմ զգում այն: Ես ուրախանում եմ տեսնելով, որ հոգիները մոտենում են Քեզ: Ուրեմն միավորի՛ր բոլոր քրիստոնյաներին և նրանց, ովքեր մերժում են մեր Օրհնյալ Մորը:

Վասո՛ւլա, դու կամենո՞ւմ ես զոհողություն անել:

Այո՛, Տեր, եթե դրանով կարող եմ օգտակար լինել Քեզ:

Ես քեզ ցույց կտամ, թե ինչ եմ ուզում: Սիրելիս, մշտապես վերցրո՛ւ Ինձնից: Ես սիրում եմ քեզ, ծաղիկս[2]: Հիշի՛ր, որ քո արցունքները հարկավոր են հետագայի համար, երբ քո ականջները կլսեն, թե ինչպես են յուրայիններս վերաբերվում Մորս հետ:

Մի՛ թույլ տուր նրանց, որ շարունակեն դա անել:

Վասո՛ւլա, կգա օրը և այդ օրը շատ մոտ է, երբ Իմ Եկեղեցին կխոսի մեկ լեզվով: Բայց, մինչ այդ փառավոր օրը, սարսափելի տեղաշարժեր կլինեն՝ մասամբ մարդկության սիրո պակասի, փառասիրության ու մեղքի պատճառով, և մասամբ էլ այն պատճառով, որ Իմ Մարմինը մասնատված է: Թույլ տուր մեկ անգամ ևս քեզ ասել, որ Ես պիտի փառավորեմ և միավորեմ Իմ Մարմինը: Ծաղիկս, սերը ձեզ բոլորիդ կմիավորի: Սա էլ գրի առ, մնա՛ փոքր, որպեսզի ողջ իշխանությունը դա Ինձնից[3]: Թող հայտնի լինի, որ Իմ ցանկությունները անսասան են, նրանք ավելի ամուր են, քան երբևիցե եղել են:

Քո ո՞ր ցանկությունները նկատի ունես, Հիսո՛ւս[4]:

Վասո՛ւլա, Ես ցանկանում եմ տարածել հետևյալ խոսքերը և դրանք մատչելի դարձնել Իմ զավակներին.

«Ես՝ Տերս, օրհնում եմ ձեզ,
եկե՛ք Ինձ մոտ»:

Տե՛ր, ինձ դեպի նրանց առաջնորդիր, օգնի՛ր ինձ տարածելու Քո Խոսքերը:

Վասուլա, հենվի՛ր Ինձ վրա, ապրի՛ր Իմ Լույսի մեջ ու հանգստացիր:

---

[1] Աստված խոսում էր այնպես, ինչպես մի համբերատար հայր կխոսեր:
[2] Իմ աչքերը լցվեցին:
[3] Կարծում եմ, որ Հիսուս դա նկատի ուներ բոլորի համար:
[4] Հիսուսն Իր խոսքը շարունակեց առանց ինձ պատասխանելու:

Հոկտեմբերի 19, 1987

(Այստեղ ուզում եմ ավելացնել, որ երբ Հունաստանում էի գտնվում, ես կարդում էի Սուրբ Թերեզայի կենսագրությունը, որը Լիսիոյից էր: Նա մշտապես իմ մտքում էր: Եվ երբ մի օր ես ավտոբուսում էի՝ խոր մտահայեցողության մեջ ընկած, սիրով մտածելով նրա մասին, ավտոբուսը կանգնեց, և այդտեղ, իմ ամենախոր հայեցողության պահին, ես տեսա՝ «Ես սիրում եմ քեզ» հունարեն բառերը և երկու սրտեր: Ամեն մի տառը մի ոտնաչափ բարձրություն ուներ: Դրանք գրված էին ավտոբուսի կայանի տանիքին, չորս մետր ինձնից հեռու: Եվ քանի որ իմ զգացումները ուրիշ մակարդակի վրա էին, ես գիտեի, որ այդ Նա էր ասում: Դա ինձ ուղղված Իր պատգամն էր):

Աղջի՛կս, դու հասկանո՞ւմ ես, որ Իմ ծրագրերը նախատեսված էին քո ծնվելուց շատ առաջ:

Սպասի՛ր ու կտեսնես Հանգստացի՛ր հիմա: Քո պաշարը միշտ ավելացրու՝ վերցնելով Ինձնից: Ես սիրում եմ քեզ:

Հիսո՛ւս, ես սիրում եմ քեզ, Սիրելիս:

Իմ խաղաղությունը քեզ, աղջիկս: Ես կհոգամ քո բոլոր կարիքները Քո հանգիստը Իմ Սրտից դուրս ոչ մի այլ տեղ չփնտրես:

Տե՛ր, ես ուզում եմ իմանալ, թե ինչ կարելի է անել Տիկին X-ի որդուն օգնելու համար:

Լսի՛ր Ինձ: Սիրո գործերը կարող են փրկել նրան:

Ո՞ւմ միջոցով, Տե՛ր:

Բոլորիդ միջոցով, Վասո՛ւլա:

Հիսո՛ւս, Սիրելիս, ես խնդրում եմ, որ Քո Աստվածային Ձեռքով օրհնես Բանգլադեշի ժողովրդին: Ես խնդրում եմ, օրհնի՛ր նրանց բոլորին, օգնի՛ր նրանց:

Վասուլա, ասա՛ նրանց, որ գուրգուրեն Իմ սերը, քանի որ այն իրենց մեջ է. Ես Իմ սիրելիների մեջ եմ: Աղջի՛կս, Ես Իմ Ձեռքով օրհնում եմ նրանց:

(Ես աղոթեցի Տիկին X-ի որդու համար):

Հավատա՛, ինչի համար որ խնդրում ես: Փոքրի՛կս, հավատ ունեցիր Իմ հանդեպ:

Հիսո՛ւս, Դու գիտե՞ս, թե նրան ինչն է անհանգստացնում:

Գիտեմ:

Դու չէի՞ր ցանկանա, որ նա Քեզ մոտ լիներ, Տե՛ր:

Ես ջերմորեն ուզում եմ այդ, սիրելիս, սատանան է նրան բռնել:

(Ես լսեցի թե ինչպես սատանան ճչաց. «Ես չե՛մ թողնի, որ նա գնա»: Նա կատաղած էր):

Տե՛ր, Հիսուս, եթե ուզում ես, որ ես տառապեմ և այդպիսով նրան Քեզ մոտ բերեմ, ապա թույլ տուր ինձ, որ դա անեմ: Բայց ի՞նչ կարող եմ անել: Միգուցե երկու օր ջուր չխմե՞մ:

Վասուլա, ոչ մի հեղուկ մի՛ խմիր և տառապիր նրա համար, մինչ դու կրում ես Իմ Խաչը:

Ես այդ կանեմ, որպես զոհաբերություն:

Սիրելիս, ավելի ուշ դու կհասկանաս: Հոգ տար եղբորդ համար, զոհողություն արա նրա համար: Ես սիրում եմ նրան:

Այո՛, Հիսուս, ես դա կանեմ:

Հոկտեմբերի 21, 1987

(Այսօր ես մի վհատեցնող լուր ստացա: Լիոնի կաթոլիկ աստվածաբանը, որի վրա հույս էի դրել, երբ իմացավ, որ ես չեմ պատկանում կաթոլիկ համայնքին, նրա խանդավառությունը սառեց: Նա ասաց, որ ես զգում եմ Աստծուն: Բայց նա չի համարում, որ իմ փորձառությունը դրանից այն կողմ է գնում: Աստված մեզ բոլորիս պատգամ է տալիս, եկեղեցական իշխանություններին, ինչպես և Մայր Աթոռին: Բայց նա ինչո՞ւ պիտի հավատա: Չէ՞ որ, այսպես ասած, հայտնի չէ, թե ես որտեղից եմ գալիս: Ինչպես մեկ անգամ ասել եմ, եթե ես նրանցից մեկը լինեի, ես կընդունվեի, և նրանք կփորձեին թերևս մի հայացք նետել պատգամների վրա: Եվ սա հենց այն է, ինչ Աստված փորձում է մեզ սովորեցնել, այսինքն՝ տարբերություն չդնել: Մենք բոլորս մի իշխանության տակ ենք՝ Աստծո իշխանության տակ: Եվ ինչո՞ւ նշանակություն տալ տարբերություններին, նույնիսկ մարդու արտաքին հատկանիշների տարբերություններին: Այդ ճիշտ է, որ ես չեմ հետևում ընդունված սովորությանը: Բայց մի՞թե դա նշանակություն ունի. կարո՞ղ եմ դրա պատճառը հարցնել Աստծուն: Նա ինձ ընտրել է, ինչպես որ կամ և ուզում է, որ ես այդպիսին լինեմ):

Վասո՛ւլա, դու նույն ապրումներն ունես, ինչպիսիք ես ունեի երկրի վրա, մարմնով եղածս ժամանակ Հիշի՛ր, Վասուլա, թե ինչպես էին փարիսեցիները քննում Ինձ, հարցնելով, թե ո՞վ է Ինձ քարոզելու իշխանություն տվել:

Այո՛, Տեր:

Սիրելիս, քեզ տրված Իմ Պատգամը Ինձնից է գալիս և ողջ իշխանությունը գալու է Ինձնից, դու Ինձ ես պատկանում: Ես երբևիցե նշե՞լ եմ, որ մարդկանց կողմից քեզ իշխանություն պետք է տրվի: Փոքրի՛կս, գլուխդ դեպի Իմաստությունը հակիր:

(Ես անհանգստացա և տխրեցի, արցունքներս ցած հոսեցին ու ստիպված եղա որոշ ժամանակ կանգ առնել, որպեսզի ուշքի գամ):

Ի՛մ զոհ, Ես ընտրել եմ քեզ, որ դու լինես Իմ Սրտի զոհը, որ Ես լինեմ քո Հոգու Քաղցր Տառապանքը, և դու լինես Իմ Մարմնի և Իմ Հոգու զոհը՝ մերժումներով, տառապանքով ու վշտերով: Վասո՛ւլա, դու Իմ կյանքը պիտի ճաշակես երկրի վրա: Այդ ամենը Ես քեզ ճաշակել կտամ փոքր չափերով, այնքան, որքան քո հոգին կարող է կրել: Քեզ չպիտի հավատան, ինչպես որ արդեն չեն հավատում, և դու պիտի մեղադրվես, ծաղրվես, մերժվես: Վասո՛ւլա, դեռ շատ ավելին է լինելու: Այսուհանդերձ, Ես քեզ տվել եմ մարդիկ, ովքեր հավատում են Իմ Խաղաղության և Սիրո Պատգամին: Նրանք քո վկաներն են:

Թույլ տուր հիշեցնել քեզ, որ դու նույնպես պիտի դավաճանվես[1]:

Վասո՛ւլա, Ես սիրում եմ քեզ: Ես՝ Տերս, քո ապավենն եմ: Ե՛կ Ինձ մոտ և մխիթարվիր. թույլ տուր, որ Իմ Խաղաղությունը քեզ պարուրի: Քաջալերվի՛ր, Ողջ իշխանությունը գալիս է Ինձնից և ոչ թե մարդկանցից: Դու պատկանում ես Իմ Իշխանությանը, որը Մեկն է Մեկ Իշխանություն:

Աստվա՛ծ իմ, շնորհակալ եմ Քո աջակցության համար: Շնորհակալ եմ նաև, որ ինձ վկաներ ես տալիս: Ես իմ ձայնը այլևս չեմ բարձրացնի: Ես կպահեմ իմ խոսքը. «Վարվի՛ր ինձ հետ, ինչպես ցանկանում ես: Ինձ հաճույք կպատճառես, թե տանջանք, ես նույն ձևով շնորհակալ կլինեմ: Կուզենաս ինձ շպրտել՝ կշպրտվեմ, կուզենաս ինձ կրծքիդ սեղմել՝ ես արժանի չեմ դրան: Արա՛ այնպես, ինչպես որ Քո Սիրտն է ամենից շատ ցանկանում: Ես քոնն եմ»:

Այո՛, եղիր կակուղ, որպեսզի Ես կարողանամ Իմ Խոսքերը խորը փորագրել քո մեջ: Հիշի՛ր Իմ Ներկայությունը և Իմ Սերը:

Հոկտեմբերի 22, 1987

(Գիշերը, ժամը երկուսն անց կեսին, ես արթնացա բերանս ու շուրթերս ծարավից չորացած, ինչպես մագաղաթ: Հիսուս ինձ ասաց. «Այժմ վեր կաց և խմիր, երկու օրն ավարտվեց»: Ես գնացի ու մի փոքր ջուր խմեցի՝ ոչ շատ, որովհետև չէի կարող:

Այս առավոտ իմ հոգին աներևակայելի տխուր է և կարոտում է Նրան: Ինչո՞ւ Նա ինձ արթնացրեց, որպեսզի ինձ մերժի նրանց մեջ լինելու առանձնաշնո՞րհը, ովքեր ապրում են Իր Տանը: Եթե նրանք գիտենային իրենց առանձնաշնորհման մասին: Իսկ ի՞նձ: Ցանկություն ներշնչել, բայց և

[1] մեկի կողմից

թույլ չտալ, որ Իր Տուն մուտք գործեմ ու շրջապատված լինեմ Նրա խաղաղությամբ... դրա փոխարեն ես պետք է գտնվեմ աքսորում և այսքան փորձություններ մեջ...)

Օ՜, աղջիկս, օրհնյալդ Իմ Հոգու, օրհնյալդ Իմ Սրտի: Իմ սրտից էլ է ցավ հորդում: Սակայն Ես ստեղծել եմ քեզ, Վասուլա, որ մնաս մարդկանց մեջ և միաձուլվես նրանց: Ես քեզ անսահման եմ սիրում, այն աստիճան, որ Իմ սերը խենթության է հասնում: Անասելի թշվառ Վասուլա, զոհաբերի՛ր քեզ սիրելիս և եղի՛ր թշվառության և անաստված մարդկանց մեջ, որովհետև դու լինելու ես Իմ Ուռկանը: Թո՛ղ որ քո Սուրբ Հայրը ուրախանա քո որսով, թո՛ղ որ այս անգամ Իմ Սիրտը լցվի ուրախությամբ: Հոգիներ ձգիր դեպի Ինձ:

Արցունքներդ խնայիր, որովհետև դրանք սպառված կլինեն, երբ քո ականջները անարգալից խոսքեր կլսեն Իմ Մոր մասին:

Հիսուս, մի՛ թույլ տուր, որ նրանց լեզուն խոսի, երբ անպատիվ խոսքեր ուզենան ասել:

Վասո՛ւլա, Ես՝ Տերս, նրանց ներում կշնորհեմ, որովհետև նրանք չգիտեն, թե ինչ են ասում:

Իսկ նրանք երբևիցե կիմանա՞ն, Տե՛ր:

Բոլորն էլ կիմանան, ամեն մի արարած կիմանա, պայմանով, որ լսեն Թույլ տուր Ինձ պատասխանել մտքումդ եղած հարցին:

Բայց, Տե՛ր, Դու ասում ես «պայմանով», նշանակում է կլինեն որոշ մարդիկ, որոնք չեն ուզենա լսել:

Ցավոք սրտի, կլինեն այդպիսիները, որոնք կփակեն իրենց ականջները: Նրանք, ովքեր կմերժեն լսել, այս անգամ նրանց չեմ խնայի: Իսկ այժմ վեր կաց և Ինձ հետևիր:[1]

Հոկտեմբերի 23, 1987

(Այս առավոտ ես մտածում էի, թե Հիսուս ինչ պետք է զգացած լիներ, երբ փարիսեցիները չհավատացին Իրեն, և որքան դժվար պետք է եղած լիներ համոզել նրանց, որ Ինքն իսկապես Աստծո Որդին է: Որքա՜ն սխալ էր Նա հասկացված նրանց կողմից: Մարդկային կարողությունից վեր էր ըմբռնել, որ նման բան կարող էր պատահել այդ ժամանակներում: Նրանք պարզապես չէին կարող հասկանալ կամ ընդունել նման մի հրաշք):

Իսկ հիմա քանի՞սն են հասկանում կամ ամբողջովին հավատում Իմ Պատգամին:

[1] Հիսուս կողքիս կանգնած՝ հորդորում էր Ինձ վեր կենալ

Շատերն են հավատում և նրանք ավելին են՝ քան նրանք, ովքեր չեն հավատում:

Ասա՛ Ինձ, նրանց մեջ ովքեր են ավելի գերակշռում, որ լսում, հավատում և ամբողջովին հասկանում են Իմ Պատգամը, Իմ ոչխարնե՞րը, թե Իմ գառները:

(Ոչխարները՝ քահանաներն են, գառները՝ աշխարհիկ մարդիկ):

Ովքե՞ր են, որ ավելի հաճույքով են լսում:

Իմ փորձից ելնելով, Քո գառներն ավելի հաճույքով են լսում:

Այսօր էլ երեկվա նման է: Աղջի՛կս, ժամանակները չեն փոխվել, այսօր էլ երեկվա նման է: Մարմնով երկրի վրա եղածս ժամանակ որոշ մարդիկ Ինձ ընդունում էին որպես մի նոր մարգարե: Միայն մի քանիսն էին հավատում Ինձ որպես Փրկչի: Երբ փարիսեցիները լսեցին Ինձ, նրանք շտապեցին Ինձ քարկոծել հայհոյանքի համար: Եվ հիմա, Վասուլա, ինչո՞ւ ես դու զարմանում, թե ինչ բանի են հավատում մարդիկ: Դու գալիս ես Ինձնից, և այսօր Ես ուղարկում եմ քեզ, որպես Իմ Խաղաղության և Սիրո Պատգամի պատգամատարը: Ես գալիս եմ միավորելու Իմ Եկեղեցին, բայց այսօր նույնն է, ինչ երեկ էր:

Թույլ տուր քեզ ասեմ, իշխանավորները ապշած պիտի մնան և շատերը բոլորովին պիտի մերժեն, որ այս Պատգամը ուղղակի Ինձնից է գալիս: Շատերը քեզ պիտի ծաղրեն՝ հանդգնորեն քննեն, իսկ մյուսներն իրենց նեղությունն անգամ չեն տալու, որ Քեզ նույնիսկ մի բոպե լսեն: Մի քանիսը սխալ են հասկանալու Իմ Պատգամը, <u>որովհետև դա նորից իրենց իմաստությունից վեր է</u>:

Ահա գալիս եմ Ես՝ Ջեռքումս բռնած Իմ Սիրտը՝ առաջարկելով Այն, որպես համակ Ողորմություն, օգտագործելով քեզ նման թույլ ու թշվառ մեկին լինելու Իմ գործիքը, որ Ինձ բացահայտեմ քո միջոցով, որ երկիր իջնեմ և ձեզ միավորեմ: Բայց Ես քեզ ճշմարիտ եմ ասում, եթե նրանք տեսնեին Իմ սիրելի Հովհաննեսի[1] ներշնչումով գրված գրությունները, որոնք բոլորն էլ գալիս են Ինձնից, նրանք կհասկանային, որ ժամանակը մոտ է: Փնտրեցե՛ք նրա խոսքերը, քանի որ նրա կողմից ասված ամեն մի մարգարեություն իսկապես գալիս է Ինձնից: Փոքրի՛կս, թող նրանք բոլորը տեսնեն, թե Ես ինչպես եմ գործում:

Աստված իմ և սիրեցյալ Հայր իմ, ես երբեմն վախենում եմ դիմագրավել բոլոր հերքումները, ծաղրանքները, խլությունը, մերժումները, որովհետև ես հավատում եմ, որ այդ իսկապես Դու ես: Նրանք որքան երջանիկ կլինեին, եթե իսկապես հավատային, որ Քո անսահման Ողորմությունից և Սիրուց գրգված ես իջել մեզ մոտ, որ կրկին օգնես մեզ, որ միավորես, փրկես մեզ և վերակենդանացնես Քո Եկեղեցին:

[1] Հովհաննես 23-րդ Հռոմի Պապը աղոթում էր երկրորդ հոգեգալստի համար, որի ժամանակ տեղի պիտի ունենա վերանորոգումը, վերանորոգում և վերակենդանացում Աստծո արարչության և Աստծո եկեղեցու, որպեսզի եկեղեցին առաջ տանի դեպի միասնություն:

Ի՛մ մնացորդ, մի՛ վախեցիր: Եթե նրանք ծաղրեն քեզ, նրանք Ի՛նձ ծաղրած կլինեն, եթե ժխտեն քեզ, նրանք Ի՛նձ ժխտած կլինեն: Ինչ որ անեն քեզ, նրանք Ինձ արած կլինեն[1]:

Երանելի է քո հոգին, որ տեսնում է այն, ինչ որ դու ես տեսնում, որովհետև ասեմ քեզ, Իմ աչքում մեծ հարգանք ունեցող շատ հոգիներ ցանկացել են տեսնել ու զանազանել այն, ինչ որ դու ես տեսել ու զատորոշել, բայց երբեք չեն կարողացել: Ուզեցել են լսել այն, ինչ որ դու ես լսել, բայց չեն լսել, զգալ այն, ինչ որ դու ես զգացել, բայց չեն զգացել: Վասո՛ւլա, Իմ Շնորհը քեզ վրա է:

Ես օրհնում եմ Քեզ, Հա՛յր,
որ նայեցիր
Քո ամենաթշվառ արարածին
և ինձ վրա տեղացիր Քո շնորհները:
Փառք Ամենակարող Աստծուն,
որ փայլեց ինձ վրա:

Մոտ մնա Ինձ, որովհետև դու դեռ շատ փորձություններ պիտի դիմագրավես:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

Հոկտեմբերի 26, 1987

(Հոկտեմբեր 24-ի գիշերը Աստված լուսավորեց ինձ ավելի լավ ըմբռնելու Սբ. Մարիամի հայտնության իմաստը, որն իբրև մի հսկայական արձան երևացել էր իմ զարմուհուն: Դա նպատակ ուներ հաստատելու, որ Աստված կամենում է և թույլ է տալիս արձաններ ունենալ Իր Եկեղեցում, որոնք ներկայացնում են Իր և Սբ. Մարիամի պատկերները: Ապա, հոկտեմբերի 25-ի գիշերը, Աստված կրկին ինձ լուսավորեց և հասկացրեց, որ Նա համաձայն է և թույլ է տալիս զարդարել եկեղեցիները Իրեն ներկայացնող պատկերներով, լուսանկարներով և այլն: Սա երկրորդ պատգամն էր, որ թույլ էր տալիս անել այն, ինչ մյուս քրիստոնյաները դատապարտում էին):

Ես թույլ եմ տալիս Իմ Եկեղեցուն կրելու Իմ Պատկերը: Մի՛ մերկացրեք Իմ Մարմինը[2], Ինձ զարդարե՛ք, գեղեցկացրե՛ք, թողե՛ք Այն, ինչպես որ կա[3]: Լսի՛ր, Վասուլա, Ես Եկեղեցին եմ: Վստահի՛ր Ինձ:

(Ավելի ուշ)

Սիրելիս, Ես Եահվեն եմ: Գրի՛ր աղջիկս.

---

[1] Աստված ինձ հիշեցնում էր, որ Նա կիսում է իմ բոլոր տառապանքներն ու ցավերը, և դա մխիթարում էր ինձ:

[2] Եկեղեցին

[3] Ինչպես կաթոլիկներն ու հույն ուղղափառներն են զարդարում եկեղեցիները:

Օ՜, արարչություն, մի՞թե ես սրբեր և մարգարեներ վեր չեմ հանել, որ ձեզ զգուշացնեմ Վերջին Ժամանակների մասին: Մի՞թե ես կանխավ չեմ ասել, որ Երկնային Իմ Սրահներից մի հրեշտակ պիտի ուղարկեմ հայտարարելու Իմ գաղտնի մտադրությունը, որպեսզի այն իրագործվի: Իմ Խոսքերի անփոփոխությունը պիտի նորից հաստատվի:

Մի՞թե ես կանխավ չեմ ասել, որ Իմ պատգամատարի առաքելությունը պիտի լինի ձեզ հաղորդել Իմ Հայտնությունը: Իմ վկայությունը՝ դա մարգարեության Հոգին է: Ուրախացե՛ք և ցնծացե՛ք բոլորդ, ովքեր հավատարիմ եք Ինձ: Վա՜յ անհավատարիմներին, որովհետև Իմ Խոսքը նրանց վրա կիջնի որպես մի Սուր, հարվածելով նրանց, քարուքանդ անելով նրանց կեղծ իմաստությունը, իմաստություն, որն Իմ արարչությանը ներշնչեց ընկնելու սատանայի ցանցը՝ դարձնելով Իմ գառներին Անաստված, աներկյուղ և անբարո մի ժողովուրդ:

Վասո՛ւլա, ես քեզ տվել եմ զգուշացնող մի տեսիլք, մի ակնարկ, թե ես ինչ եմ արել Սոդոմին և Գոմորին: Թող նրանք ուշադրություն դարձնեն Իմ զգուշացումին, որովհետև, ես՝ Տերս, նախապես ասել եմ Իմ արարչությանը, որ եթե նրանք չզղջան և Ինձ չընդունեն որպես իրենց Արարիչը, Իմ Սուրը կհարվածի նրանց:

Իմ անսահման Ողորմությունից դրդված, ես աշխարհ իջա[1] ձեզ զգուշացնելու ես՝ Ճշմարտության Հոգին եմ, որը խոսում է, լսեցե՛ք, թե ես ինչ եմ ասում Իմ Եկեղեցիներին: Արարչություն, քարացած մի՛ մնա, աջակցի՛ր Իմ զգուշացումը տարածելուն: Ես կանգնած բախում եմ դուռը, եթե մեկը լսի Իմ ձայնը և բացի դուռը, ես՝ Տերս, ներս կմտնեմ՝ նրա հետ միասին կկեսելու իր հացը Մի՛ վախեցեք, ես իրագործում եմ Իմ Խոսքը ես կանգնած եմ ձեր առաջ:

Տե՛ր, միգուցե Դու ի՞նձ նկատի ունես, որ տարածեմ Քո նախազգուշացումը: Եթե այդպես է, ապա պատճենահանելուց բացի, էլ ուրիշ ի՞նչ կերպ, Տեր:

Այն, ինչ ես խնդրում եմ քեզնից, սեր է, թույլ տուր ինձ դրոշմել քեզ վրա: Ես արդեն ընտրել եմ նրանց, ովքեր պետք է տարածեն Իմ Պատգամը:

Ես քեզ հետ եմ, զգա՛ Ինձ, զգա՛ Իմ Ներկայությունը այո[2]: Սիրի՛ր Ինձ:

Ես սիրում եմ Քեզ, Հիսո՛ւս, սովորեցրու ինձ Քեզ ավելի շատ սիրել, այնպես, ինչպես որ Դու ես ուզում, որ Քեզ սիրենք:

Ես եմ:

Հոկտեմբերի 27, 1987

Վերջին կաթոլիկ աստվածաբանը անմիջապես կորցրեց իր հետաքրքրությունը իմ հանդեպ, որովհետև ես չեմ պատկանում իր համայնքին):

[1] պատկերավոր ձևով
[2] Ես նկատեցի Հիսուսին:

Բայց, Վասուլա, իհարկե դու նրանց չես պատկանում, դու Ինձ ես պատկանում: Ես եմ քո Արարիչը և Սուրբ Հայրը[1], դու պատկանում ես Իմ Իշխանությանը:

Տե՛ր, այո՛, մենք Քո Իշխանության[2] տակ ենք, բայց գոյություն ունի քրիստոնյա համայնքներից մեկին պատկանելու կարգ: Ինձ այդպես ասացին:

Իմ աչքում ամենքը նույնն են: Ես երբեք չեմ ուզել, որ Իմ Մարմինը մասնատվի. այդ դուք եք, որ Ինձ անդամահատել եք: Դուք որոշում եք կայացրել Իմ Մարմնի համար: Դուք հաշմանդամ[3] եք դարձրել Ինձ:

Օ՜հ, Աստված իմ...

Աղջիկս, չե՞մ ասել, որ արցունքներդ պահես Իմ Մոր համար:

(Թեև Նա խստորեն ասաց դա, սակայն ես նկատեցի, որ Նա նույնքան տխուր էր, որքան ես):

Այո՛, Տեր, բայց դու այնքան վիրավորուած ես թվում: Ես ընդամենը մարդ եմ:

Վասո՛ւլա, դա այդպես է, որովհետև մենք կիսում ենք Իմ Բաժակը: Իմ Բաժակը դառն է: Ասա՛ Մայր Աթոռին, որ այդ Ես Եմ, որ քեզ ուղարկում եմ նրանց մոտ: Լսի՛ր Ինձ, եթե նրանք հարցնեն, թե ինչ համայնքի ես դու պատկանում, ասա՛ նրանց, որ դու Ինձ ես պատկանում և գտնվում ես Իմ Իշխանության ներքո:

Տե՛ր, չեմ ուզում վիճել, բայց չե՞մ կարող ասել, որ ես ուղղափառ եմ:

Ուղղափա՛ռ, կաթոլի՛կ, բողոքակա՛ն, դուք ամենքդ Ինձ եք պատկանում: Դուք քոլորդ Մեկ եք Իմ Աչքում: Ես ոչ մի տարբերություն չեմ դնում, ուրեմն ինչի՞ց եք վախենում: Հանդիպում խնդրիր Իմ շատ սիրելի Հովհաննես-Պողոս Պապի հետ: Նա ոչ մի տարբերություն չի դնի: Վասո՛ւլա, ասա նրան հետևյալը. «Սիրելիս, ես՝ Տերս, կանգնած եմ քո դռան մոտ ու բախում եմ այն, դու կլսե՞ս Իմ կանչը ու կբացե՞ս դուռը: Եթե այդ անես, ես կմտնեմ քո տունը և կողք-կողքի նստած քեզ հետ՝ կկիսեմ քո հացը: Քեզ հաղթական ցույց տուր, և Ես թույլ կտամ քեզ կիսելու Իմ Գահը: Լսի՛ր Ինձ, լսի՛ր, թե ինչ է ասում Հոգին Եկեղեցիներին»:

«Ես քո Հովիվն եմ,
Ինձ հետ դու ոչ մի բանի
պակաս չես զգա:

[1] Ես 9:5-6
[2] Հիսուս եկեղեցու գլուխն է:
[3] Մի վայրկյան լռություն տիրեց: Հիսուս դառնացած և տխուր էր հնչում: Ես մեղավոր զգացի, որ հիշեցրի Նրան այդ մասին:

Կանաչ խոտի մարգագետիններում
Ես քեզ թույլ կտամ հանգչել,
Իմ սիրելի հոգի,
դեպի հանդարտ ջրերը
Ես կառաջնորդեմ քեզ,
ուր կնորոգեմ քո հոգին:
Առաքինության ուղիներով
Ես կառաջնորդեմ քեզ
Իմ Մարմնի փառքի համար:
Թեև դու անցնում ես
մի մռայլ հովտի միջով,
մի՛ վախեցիր,
Ես քո կողքին կանգնած՝
կքաջալերեմ քեզ:
Քեզ հալածողների աչքերի առաջ
Ես կկերակրեմ քեզ:
Ես օծել եմ քեզ
և միշտ կկշտացնեմ քեզ,
որովհետև Ես անհատակ Սեր եմ՝
անսահման Ողորմությամբ:
Ե՛կ և բնակվիր
Իմ Սրտի կենտրոնում»:[1]

Օ՜, Տե՛ր, Դու իմ Լույսն ես
և իմ փրկությունը,
ես վախենալու ոչինչ չունեմ:
Ես գիտեմ, Դու ինձ կպատսպարես:
Իմ ողջ սրտով
ես շնորհակալ եմ Քեզնից,
Տե՛ր իմ Աստված,
ես հավիտյան փառաբանում եմ
Քո անունը:
Քո Սերն իմ հանդեպ այնքան մեծ է,
խղճա ինձ ու իմ անկարողությանը:

Մնա՛ փոքրիկ, ծաղիկս, աճի՛ր հոգով, ըմպիր Իմ առաքինություններից: Թույլ տուր Ինձ միշտ քեզ վրա դրոշմել Իմ Խոսքերը:

Այո՛, Տեր, ես ուրախ եմ, որ Քեզ հետ եմ:

Սերը երբեք չի լքի քեզ Մե՞զ մեն՞ք:

Այո՛, Տեր:

[1] Սաղմ. 23

Հոկտեմբերի 30, 1987

Ես իմ արարչությանը նախազգուշացնող անթիվ նշաններ եմ տվել: Ես վեր եմ հանել իմ ցանկությունների մասին ազդարարող սրբերի, բայց մի՞թե նրանք[1] լսեցին: Մի՞թե փոխվել է որևէ բան:

Տե՛ր, ենթադրենք այս անգամ նրանք կանեն, ասենք նրանք ցանկանում են: Ենթադրենք, թե նրանք կարդան, հավատան, միավորվեն և ձգտեն Քեզ ավելի փառաբանել, քան թե իրենց շահերը փնտրել այս անգամ, եթե հավատան Քո այս պատգամին:

Վասո՛ւլա, ա՜հ Վասուլա, շատերը կվախենան: Անգամ նրանք, ովքեր հավատում են Իմ Պատգամին և ընդունում, որ այդ Ես Եմ, կվախենան ծաղրվելուց և իրենց վերադասից: Շատերը կգերադասեն մարդկանց կողմից տրված պատիվը, քան այն պատիվը, որը գալիս է Ինձնից: Պատվի՛ր Ինձ ու տարածիր Իմ Պատգամը:

Տեր՛, իսկ եթե նրանք խոնարհվեն:

Այդ ժամանակ Ես կվերացնեմ Իմ Արդարությունը (դատաստանը), որը ծանրորեն ընկած է նրանց վրա: Բայց նրանք թունավոր նետերով դեռ վիրավորում են միմյանց՝ վնասելով Իմ Մարմինը: Նրանց միջև միշտ տարաձայնություն կտիրի, որովհետև սերը պակասում է:

Վասու՛լա, եթե նրանք հետևեին Իմ պատվիրանին՝ միմյանց սիրելու այնպես, ինչպես Ես եմ սիրում նրանց <u>և</u> խոնարհեցնեին իրենց, ապա Իմ Մարմինն այսօր կիշխեր ներդաշնակության մեջ: Նրանք երբևէ խոնարհե՞լ են իրենց՝ լվալով մեկը մյուսի ոտքերը:[2] Մի՞թե Ես դա որպես օրինակ ձեզ չտվեցի, որ դուք կարողանաք կրկնել այն, ինչ Ես արեցի: <u>Խոնարհվե՛ք, խոնարհվե՛ք, որ կարողանաք միավորվել:</u>

Հոգի՛, ժամանակը եկել է, որ Իմ սիրելի սպասավորը՝ Հովհաննես-Պողոսը, լսի Ինձ: Ես արդարև լսեցի նրա կանչերը. նրա աղաչանքները հասել են Երկինք, նրա ողբը արձագանքում է ողջ տիեզերքում, նրա աղաչանքները հասան Իմ ականջներին:

Թույլ տուր ասել, որ մոտ ժամանակներում կլինի մեկ հոտ և մեկ հովիվ: Ես կառաջնորդեմ Իմ բոլոր ոչխարներին, անգամ նրանց, ովքեր այս փարախից չեն: Սերը ձեզ կմիավորի, բայց նախքան այդ կլինեն սարսափելի արհավիրքներ: Ամբողջ երկինքը պիտի ցնցվի: Արթուն եղիր, աղջիկս, փոխանցի՛ր Իմ ուսուցումները. դրանք բոլորը ընդգրկված են Իմ Սուրբ Գրվածքներում: Դու կհասկանաս, երբ կտարածես[3] Իմ Պատգամը:

Հիսո՛ւս, օ՜ Սուրբ Մարիամ, նրանք ի՞նչ կասեն, հասկացի՛ր ինձ, Սուրբ Մարիամ, ես ի վիճակի չեմ հակառակվելու բոլոր այդ վերադաս մարդկանց:

---

[1] արարածները

[2] Ես այստեղ այն տպավորությունն ունեցա, որ Հիսուս նկատի ուներ որ այս վարմունքը պետք է գործադրվի մի եկեղեցուց մյուսը:

[3] երբ հայտնի կդարձնես

Վասուլա, մի՛ վախեցիր, քո անկարողությունը գրավում է Հիսուսին, մնա փոքր:

Սուրբ Մարիամ, իսկ եթե նրանք չլսեն:

Փոքրի՛կս, այս աստվածային հայտնությունը կլինի Նրա վերջին զգուշացումը: Եթե նրանք չուզենան լսել կամ հասկանալ, ես կթողեմ որ Նրա Ձեռքը իջնի նրանց վրա ու հարվածի: Վասո՛ւլա, այն, ինչ որ դու պիտի անես՝ դա Նրան սիրելն է: Արթուն եղիր, որովհետև սատանան կատաղած է և կփորձի ամեն տեսակ որոգայթներ լարել: Մի՛ վախեցիր, ես պահպանում եմ քեզ:

Շնորհակալ եմ Սուրբ Մարիամ ինձ քաջալերելու համար, շնորհակալ եմ ինձ պահպանելու համար: Ես օրհնում եմ Քեզ:

Վասո՛ւլա, ես օրհնում եմ քեզ, զավակս:

Նոյեմբերի 3, 1987

Ե՛կ, Սերը կուսուցանի քեզ: Թող հայտնի դառնա, որ Ես հրճվում եմ «թույլ տուր ինձ, Հայր» և «եթե այդ է Քո կամքը» խոսքերը լսելիս: Ձեր աղոթքներում ասվող այս խոսքերը, հրապուրում են Ինձ: Խնդրե՛ք, և ձեզ կտրվի՝ միշտ հիշելով այդ խոսքերը: Ե՛կ, Վասուլա, Իմ Խաղաղությունը քեզ:

Ես սիրում եմ Քեզ Հիսուս, թույլ տուր Քեզ օրհնել:

Սիրելիս, ես օրհնում եմ քեզ:

Նոյեմբերի 5, 1987

Վստահի՛ր Ինձ, թույլ տուր քեզ առաջնորդել, ուր որ Ես եմ ցանկանում, պահի՛ր ձեռքդ Իմ Ձեռքում: Մի՛ վախեցիր, Ես կառաջնորդեմ քեզ Իմ Վիրավոր Մարմնի ամենախորքերը: Վասո՛ւլա, կատարի՛ր Իմ Խոսքը:

Աղջիկս, մի՛ վախեցիր: Ես ցանկանում եմ, որ դու զարդարես Իմ այգին:

Հա՛յր իմ Արդար,
ես չեմ կարող ուրանալ,
որ վախենում եմ:
Օգնի՛ր ինձ,
թույլ տուր ինձ ստանալ Քո ուժը,
թույլ տուր ինձ
աճել Քո Լույսի մեջ,
Քո մեջ, մի՛ թողնիր ինձ:
Եթե այդ է Քո կամքը,

ինձ արժանի արա,
որ ծառայեմ Քեզ
և մասնակից դառնամ
Քո ցանկությունների
իրականացմանը:
Ես խնդրում եմ Քեզ,
որ Քո Ողորմությամբ
Դու ներես իմ տկարությունները
ու անկարողությունները:
Վարվիր այնպես,
ինչպես Քո սիրտն է ցանկանում.
թող Քո կամքը լինի
և ոչ թե իմը: Ամեն:

Սերը կօգնի քեզ: Բայց հիշի՛ր, հենց որ Իմ Խոսքը հաստատվի, դու պիտի գաս Ինձ մոտ. Ես այլևս չեմ կարող տանել, որ դու մնաս, աքսորում: Իմ Հոգին կարոտում է քեզ:

Հա՛յր, Դու ինձ այնպիսի ուրախություն ես պարգևում, այնպիսի երջանկություն և մխիթարություն են տալիս Քո խոսքերն իմ հոգուն: Ես այնքա՜ն երջանիկ եմ:

Այո՛, սիրելիս, սիրի՛ր Ինձ, ծարավի՛ր Ինձ, գոհացրո՛ւ այս Սիրտը, որը փնտրեց քեզ: Ես շուտով կգամ քեզ մոտ, բայց քանի դեռ աշխարհում ես, մոտ մնա Ինձ՝ ըմպելով և ճաշակելով Ինձ, գովաբանելով Ինձ, մեծարելով Ինձ: Թույլ տուր Ինձ ուրախանալ լիովին:

Մի՛ վհատվիր, եթե աշխարհը մերժի քեզ, որովհետև դու աշխարհին չես պատկանում, այնպես, ինչպես Ես չէի պատկանում աշխարհին, երբ մարմնով երկրի վրա էի: Դու սերում ես Ինձնից. Ես քո Հայրն եմ, և Ես քո մեջ եմ ապրում, ինչպես՝ դու Իմ մեջ: Մեծարի՛ր Իմ Անունը, փառավորի՛ր Իմ Մարմինը, մնա Իմ Սիրո մեջ, հետևի՛ր Իմ հրահանգներին և մնա Իմ Սիրո մեջ: Ես քեզ հուսախաբ չեմ անի և չեմ լքի քեզ, այնպես որ, ոչ մեկից մի՛ վախեցիր, սիրելիս, ցանի՛ր Իմ սերմերը, որոնք կտան սրբության պտուղներ: Սո՛ւրբ եղիր, քանզի Ես Սուրբ եմ:

Ես լսում եմ: Ի՞նչ է ասում Եհովեն:
Այն, ինչ Աստված ասում է,
նշանակում է Սեր և Խաղաղություն
Իր զավակների համար,
աշխարհի համար,
Իր Մարմնի համար,
եթե միայն նրանք
հրաժարվեն իրենց անմտությունից:
Աստծո փրկությունը մոտ է նրանց,
ովքեր երկյուղում են Նրանից,
և այդ ժամանակ
Փառքը կապրի երկրի վրա:
Սերն ու Ողորմությունը

այժմ իջել են երկրի վրա,
Արդարությունն ու խաղաղությունը
այժմ պարուրելու են մեզ:
Արդարությունը
միշտ նախորդում է Նրան,
իսկ խաղաղությունը
հետևում է Նրա ոտնահետքերին:

(Աստված առաջնորդեց ինձ, որ գրեմ այս հատվածը, վերցված Սաղմոս 85:8-13-ից, փոխելով մի քանի բառեր):

Սիրելիս, ես ասացի, որ պիտի ջրեմ Իմ այգին: Ես մտադիր եմ ոռոգելու Իմ ծաղկաստանները: Լսի՛ր Ինձ, Իմ առվակը գետի է վերածվելու, իսկ Իմ գետը վերածվելու է օվկիանոսի, և Ես այնպես եմ անելու, որ Իմ բարեկարգությունը Փայլի: Ես Իմ Լույսը ուղարկելու եմ ամենուր՝ փառավորելով Իմ Մարմինը: Բռնի՛ր Իմ Ձեռքը և թույլ տուր Ինձ քեզ առաջնորդել:

Աղջիկս, այսօր այլևս ոչինչ մի՛ արա: Հանգչի՛ր Իմ Սրտում:

Նոյեմբերի 8, 1987

Հիսո՞ւս:

Ե՛ս եմ:

Եթե Ես քեզ չազատեի, դու դեռ խոր քնի մեջ կլինեիր:

Ես շատ ամաչեցի: Ես իսկապես արժանի չեմ, որ խոսեմ: Ինչ էլ որ անեմ, Տե՛ր, և ինչպես էլ փորձեմ փոխհատուցել ու շնորհակալ լինել Քեզնից, դա անհնարին է համեմատել այն ամենի հետ, որ Դու արել ես ինձ համար: Անգամ, երբ ես ուզում եմ աղոթել ուրիշների համար, մեղավոր եմ զգում ինձ և տատանվում եմ, որովհետև ես ինչպե՞ս կարող եմ աղոթել ուրիշների համար, Տե՛ր, որոնք շատ ավելի լավն են, քան ես: Ինչպե՞ս կարող է «ամենից թշվառը» աղոթել ինչոր մեկի համար, որն ավելի լավն է, քան ինքը: Դա հիշեցնում է ինձ Քո խոսքերը, որ մեկի աչքի մեջ գերան է, իսկ մյուսի աչքի մեջ՝ շյուղ: Ես զգում եմ, որ գերան ու մի ողջ անտառ կա իմ աչքերում: Դրա համար ինչպե՞ս կարող եմ համարձակվել ու ձայն հանել այս ողջ անտառն իմ աչքում... Մինչև որ Դու ինձ չազատես, Տե՛ր... Ես խնդրում եմ Քեզ, որ մաքրագործես ինձ: Ողորմի՛ր իմ հոգուն: Եթե ուզում ես, արժանի դարձրու ինձ, որ կարողանամ արժանապատվությամբ աղոթել իմ եղբայրների համար:

Վասո՛ւլա, Ես ուրախ եմ լսելու քո խոսքերը, որովհետև մինչև որ դու չգիտակցես քո անարժանությունը, դու չես կարող քայլել կատարելության ուղիով:

Եթե այդ Քո կամքի համաձայն է,
Հա՛յր, թույլ տուր ինձ
Քո օգնությունը խնդրել:

Աղջիկս, լցրո՛ւ քո կանթեղը Ինձնից, մի՛ սպասիր: Աճի՛ր Իմ Լույսի մեջ, փոքրիկս: Ով որ հավատա այս Պատգամին, նա կհավատա ոչ թե քեզ, այլ Ինձ: Ես՝ Լույսը, աշխարհ եմ իջնում քո միջոցով, որպեսզի, ով որ հավատա Իմ Պատգամին, կարիք չունենա այլևս խավարում մնալու: Քո վկայողները գիտեն ճշմարտությունը: Նրանք գիտեն, որ այս խոսքերը քո խոսքերը չեն: Ո՛չ, Իմ Վասուլա, այն բոլորը ինչ գրված է, գալիս է Ինձնից՝ Տիրոջից: Ճշմարիտ եմ ասում քեզ, ով որ ողջունում է քեզ, ողջունում է Ինձ:

Ո՛չ, Տեր, ես արժանի չեմ:

Ինչո՞ւ, Վասուլա, մի՞թե Ես չեմ մաքրագործել քեզ: Մի՞թե Ես Անձամբ քեզ չեմ օծել, որ Իմը լինես: Ես իսկապես Ինձ հայտնելու եմ քո միջոցով: Հետևաբար պատվի՛ր Ինձ, աղջիկս:

Ե՛կ, Ես քեզ կսովորեցնեմ Իմ ուղիները, Ես և դու: Թույլ տուր Ինձ չնչել քո մեջ, թույլ տուր Ինձ հանգստանալ քո մեջ, աղջիկս, հանգստանալ նրանցից, ովքեր վիրավորում են Իմ Հոգուն: Օ՜հ, Վասուլա, եթե դու միայն իմանայիր. Արյունս այսօր նորից դուրս է հորդում:

Օ՜հ, Աստված իմ, և այսօր Կիրակի է: Բայց ինչո՞ւ:

Փոքրի՛կս, նրանք նորից ու նորից խոցում են Իմ Սիրտը:

Աստված իմ, թող որ <u>ինձ</u> խոցեն <u>Քո</u> փոխարեն:

Լսի՛ր Ինձ, քեզ կխոցեն, նրանք կխոցեն քեզ: Ե՛կ այժմ, թույլ տուր Ինձ հանգչել քո մեջ, կիսի՛ր Իմ Բաժակը, աղջիկս:

(Ինչո՞ւ, ինչո՞ւ է այդպես, ի՞նչ է կատարվում: Ինչո՞ւ են նրանք այդպես վարվում մեր Աստծո հետ՝ Սիրո Աստծո, Խաղաղության Աստծո, Հոր և Ընկերոջ հետ: Ինչպե՞ս կարող են դա անել: Ես վատ եմ զգում: Հիսուս այսօր նորից արյունաքամ է լինում՝ տառապելով մեր չարությունից: Աշխարհը, կարելի է ասել, հափշտակվել է սատանայի կողմից, և Հիսուս փորձում է կրկին մեզ փրկել):

Աստված իմ, Դու ինձ այնքան ցավ ես պատճառում, որովհետև ես զգում եմ Քո ցավը: Դու միայն Անսահման Բարություն ես և Սիրո մի Վիհ, ինչո՞ւ են նրանք Քեզ տանջում: Ես այլևս չեմ կարող տանել այն, որ Դու տառապում ես: Ոչ թե նրա համար, որ ես ավելի մտահոգ եմ իմ մարմնի և ցավերի համար, այլ Քո տառապանքների, Քո ցավերի համար: Տե՛ր, Ես հոգում եմ քեզ համար և սիրում եմ Քեզ:

Վասո՛ւլա, Իմ Վասուլա, Իմ Հոգու զոհ, Իմ Սրտի զոհ, կրի՛ր Իմ տառապանքները և կիսի՛ր դրանք Ինձ հետ: Խմի՛ր Իմ Բաժակից, զգա՛ նրանց հարվածները, ովքեր խարազանում են Ինձ: Իմ Հոգու սիրելին, Ես քեզ համար ինչ չեմ անի սիրուց դրդված: Ես թույլ կտամ քեզ կիսել Իմ տառապանքները: Ես քեզ ընտրել եմ, որ լինես Իմ Արյունահոսող Սրտի զոհը՝ անցնելու այն բոլոր ցավերի միջով, որ քո սիրտը ընդունակ է

կրելու: Իմ Հոգու զոհ, ե՛կ և կիսի՛ր Իմ Խաչը քո բոլոր տառապանքներով, մերժումներով և ծաղրանքներով, որոնք հոգիդ կարող է կրել:

Ես քո միակ Սերն եմ, Ես հասա Իմ նպատակին: Թույլ տուր Ինձ լինել Քո մտքի և հոգու քաղցր տառապանքը: Դու հաճելի ես Ինձ, որովհետև այժմ Ես արմատախիլ եմ արել բոլոր Իմ մրցակիցներին, նրանք բոլորը անհետացել են և ոչ մեկը չի մնացել: Այդ Ես եմ, որ միայն մնացել եմ քեզ հետ, քո Հիսուս: Ինչպես եմ Ես հրճվում: Եվ թույլ տուր Ինձ հիմա քեզ անկաշկանդ սիրել. թույլ տուր իշխել քեզ վրա. Ես տեղ եմ գտել Իմ մեծության և առատաձեռնության համար: Ես քեզ չեմ սիրում այնպիսին, ինչպիսին որ կաս, այլ՝ ինչպիսին որ չես:

Ե՛կ, քո ոչնչությունը հրապուրում է Ինձ: Քո անկարողությունը պապանցում է Ինձ:

Տե՛ր, ես ամաչում եմ:

Վասո՛ւլա, երբեք չձգտես ինչ-որ մի բան լինել: Մնա ոչինչ, որովհետև ամեն մի աստվածային գործ, որ Ես պիտի իրագործեմ, բացառապես Իմն է լինելու և ոչ թե՝ քոնը:

Իմ Եկեղեցին մեկ է լինելու՝ <u>մեկ Իշխանության ներքո</u>: Ես Ինքս Պետրոսին չխնդրեցի՞ կերակրել Իմ գառներին: Մի՞թե Ես չընտրեցի նրան, որ նա հովվի Իմ ոչխարներին: Մի՞թե Ես Անձամբ չեմ ասել այս բառերը.

«Դու Պետրոսն ես,
և Ես <u>այս</u> վեմի վրա
պիտի կառուցեմ Իմ Եկեղեցին»:

Ինչո՞ւ համար է այս մեծամտությունը և ապարդյուն դավերը մարդկանց միջև: Ես ընտրել եմ Պետրոսին, Իմ ցանկացած մարդուն՝ մի վեմ, որի վրա կառուցելու եմ Իմ Եկեղեցին: Այդ դեպքում, ինչո՞ւ աղավաղել Իմ Պատվիրանը:

Ո՞ւմ մասին է խոսքը, Տե՛ր:

Ես նկատի ունեմ նրանց, ովքեր բանսարկություններ ու դավեր են լարում Իմ հաստատության դեմ: Դուք չե՞ք հասկանում, որ ձեր դավերը անօգուտ են:

Տե՛ր, ես չեմ հասկանում, թե Դու ում նկատի ունես:

Գիտեմ, Վասուլա, այս ամենը պարզ չէ քեզ համար, բայց այդ խաբեբաների համար ցերեկվա լույսի պես պարզ է: Իմ աչքերը անթարթ նայում են նրանց, Իմ սուրը բարձրացված է և պատրաստ հարվածելու: Նրանք գիտեն իրենց և հավատա՛ Ինձ, նրանց օրերը հաշված են: Այո՛, նայեք ձեր շուրջը, խաբեբաներ: Ինչո՞ւ եք զարմանում: Դուք կկործանվեք, քանզի այս օրերիս Ես մի բան եմ անում, որ դժվար կլինի հավատալ, եթե այդ մասին ձեզ պատմեն:

Սիրելիս, թույլ տուր պատասխանել մտքումդ եղած հարցերին: Իմ Պատգամը պիտի կարդացվի նաև այդ խաբեբաների կողմից: Սիրելիս, զգա՛ Ինձ, Ես ցավի մեջ եմ, ինչպես և դու: Իմ Խաչը քեզ վրա է, սիրով կրիր Այն. Իմ Խաչը ճշմարիտ կյանքի դուռն է. ընդունիր Այն պատրաստակամությամբ: Վասո՛ւլա, ինքնաժխտումը և տառապանքը առաջնորդում են դեպի աստվածային ուղին, սրբության և առաքինության ուղին[1]:

Օ՜, ե՛կ սիրելիս, Ես քեզ հետ եմ[2]:

Տե՛ր, ես սարսափելի տխուր եմ: Գիտեմ, որ այլևս արցունք չպիտի թափեմ և պիտի պահեմ դրանք հետագայի համար, որ փոխհատուցեմ: Ես պատրաստ եմ հեղելու իմ արյունը արցունքներիս փոխարեն, երբ իմ արցունքներից այլևս ոչինչ չմնա:

Իմ Վասուլա, հիշի՛ր, դու այս աշխարհից չես, դու պատկանում ես Ինձ: Կարո՞ղ ես տեսնել Իմ Սուրբ Սիրտը[3]: Մուտք գործիր Իմ Սուրբ Սիրտը. դրա խորքերում դու կգտնես քո հանգիստը: Ես կվերցնեմ ու կսուզեմ քեզ Սրտիս խորքերը: Իմ ցավն անտանելի է[4]: Դու հիշո՞ւմ ես, երբ դու կատարյալ մի երեխա էիր, Ես ի՞նչ արեցի քեզ:

(Հիսուսն Ինձ ցույց տվեց նույն տեսիլքը, երբ ես թերևս տաս տարեկան էի. առաջին կանչը):

Դու անկարող էիր շարժվել: Ես աստվածային Զորությունն եմ, սիրելիս, դու այստեղ ես պատկանում[5]: Այժմ ե՛կ, Ես կարիք ունեմ մխիթարության. թող որ հանգչենք մեկս մյուսի մեջ:

(Հիսուս շատ էր տառապում և տխուր էր:)

Ես ինչպե՞ս կարող էի մխիթարել նման վիշտը:

Նրանով, որ Ինձ ջերմորեն ես սիրում: Սիրի՛ր և մխիթարիր Ինձ, Վասուլա, սիրի՛ր Ինձ քո ողջ հոգով:

Ես սիրում եմ Քեզ, և Դու դա գիտես, Տե՛ր:

Անչափ սիրիր Ինձ:

Սովորեցրո՛ւ Ինձ քեզ անսահման սիրել:

Ես դա կանեմ: Իսկ հիմա, Ես մի գաղտնիք ունեմ, որն ուզում եմ քեզ ասել: Մի՛ վախեցիր, Ես դա կշշնջամ քո ականջին:

---

[1] Ես անհույս տխրություն զգացի:
[2] Հիսուս շոյում էր իմ գլուխը:
[3] Հիսուս ցույց տվեց Իր լուսավորված Կուրծքն ու Սիրտը:
[4] Այն բանի համար, որ ես գտնվում եմ աքսորում:
[5] Հիսուսն Իր ցուցամատով ցույց էր տալիս Իր Սիրտը:

(Հիսուսն ինձ հայտնեց գաղտնիքը՝ մեծ ուրախություն պատճառելով ինձ):

Օ՜, Աստված, Դու <u>իսկապես</u> դա կանե՞ս:

Կանեմ, սիրելիս, կանեմ, երբեք չկասկածես. ամեն ինչ կարվի, ինչպես որ հարկն է, Իմ Վասուլա:

Հիսո՜ւս, Աստված իմ, շնորհակալ եմ, թույլ տուր Քեզ օրհնել:

Ես էլ քեզ եմ օրհնում, սիրելիս: Դե՛, արդեն ուշ է, մենք կհանդչենք մեկս մյուսի մեջ:

Այո՛, Տեր:

Ուրեմն, գնանք:

Նոյեմբերի 10, 1987

Աստված իմ,
Դու կարող ես ինձ օգտագործել՝
դրոշմելով ինձ վրա այն ամենը,
ինչ Քո Սիրտը ցանկանում է:
Թող Քո կամքը կատարվի,
և Քո Անունը փառավորվի:

Ժամանակը եկել է Իմ սերմերը մարդկության մեջ ցրելու. տարածե՛ք Իմ Պատգամը: Ես ձեզ կօգնեմ ձեր բոլոր գործերում: Թո՛ղ որ Իմ խոսքերը հայտնի դառնան, թո՛ղ որ Իմ արարչությունը իմանա Իմ Մեծ Սիրո մասին, Իմ անսահման Ողորմության մասին: Իմ թագավորությունը պիտի լինի Խաղաղության, Սիրո և Միասնության թագավորություն: Ես ընտրել եմ Վասուլային, իբրև անկարող ու թշվառ մի էակի, անօգտակար և խոսելու կարողությունից զուրկ: Սա նույնպես գրի առ[1]: Այո՛, մեկը, որն Իմ Եկեղեցու մասին որևէ հիմնական գիտելիքներ չունի, մի դատարկ կտավ, որին Ես՝ Տերս, ազատ էի այն ծածկելու միմիայն Իմ Գործերով, որպեսզի հստակ լիներ, որ ամեն բան, ինչ գրված է, դուրս է գալիս Իմ Բերանից: Բոլոր գործերը կատարվելու են Իմ կողմից, նրա միջոցով: Ես պիտի խոսեմ նրա միջոցով, գործեմ նրա միջոցով: Ես ձևավորել եմ նրան, հեղելով նրա վրա Իմ բոլոր Գործերը, որպեսզի նրան կարող դարձնեմ լինելու Իմ պատգամատարը այս Պատգամի համար, որը պիտի հայտնի դառնա:

Դու կտարածե՞ս Իմ Պատգամը, դու դա կանե՞ս Ինձ համար: Հիշիր, այդ Ես եմ՝ Հիսուս, Աստծո Սիրելի Որդին, ողջ մարդկության Փրկիչը՝ Բանը, որն օրհնում է քեզ: Ես օրհնում եմ քո նախաձեռնությունները: Ինչի էլ որ դու հանդիպես, ուրախության, թե տառապանքի, վստահ եղիր, որ Ես քեզ կտամ Իմ աջակցությունը: Ես միշտ քո առջևում եմ և առաջնորդում

[1] Ես լսեցի, ինչ որ Նա ասաց, ու Նրան նայեցի ամաչելով և տատանվելով:

եմ քեզ: Իմ Եկեղեցու միավորումը Կփառավորի Ինձ: Ես քեզ կառաջնորդեմ Իմ Արյունոտ Մարմնի ամենախորքերը. Ես մատնացույց կանեմ Իմ փչերը, դու կճանաչես դրանք:

Ուրիշ ոչ մի հետաքրքրություն մի՛ ունեցիր, բացի Ինձ փառավորելուց: Երբե՛ք չկասկածես Իմ Գործերի վրա: Սերը փայլում է քեզ վրա, Իմ շատ սիրելին, ջանա գոհացնել Ինձ: Ահա՛, քո կողքին Ես եմ: Իմ Խաղաղությունը[1] քեզ: Աղոթենք Հորը.

«Արդար և Սիրելի Հայր,
օրհնյալ լինի Քո Անունը.
միավորի՛ր Քո բոլոր
հավատարիմներին:
Թող որ երկինքը հռչակի
քո Արդարությունը.
թող որ ամեն մի բերան
շարունակ գովերգի
Քո Սուրբ Անունը:
Զար մտադրությունները
պետք է վերանան խաբեբաներից:
Օգնի՛ր նրանց,
ում հոգին որ փչված է:
Կենդանացրո՛ւ նրանց,
ինչպես որ երաշխավորում է
Քո Խոսքը:
Ուխտը, որ արել եմ,
ես կպահեմ և կիրագործեմ:
Ես աղոթում եմ
Քո եկեղեցիների համար.
թո՛ղ որ Նրանք բոլորը Մեկ լինեն:
Հա՛յր, թող որ Նրանք
Մեկ լինեն Քո մեջ: Ամեն»:

(Հիսուսն օգնեց ինձ աղոթելու: Սրանք Իր խոսքերն են):

Նոյեմբերի 12, 1987

Սիրելիս, այդ Ես եմ՝ Հիսուս:

Բռնի՛ր Իմ Խաչը այնպես, ինչպես Ես քեզ սովորեցրել եմ անել, երբ հանգստանում ես:

(Հիսուսն ինձ սովորեցրեց գիշերը հանգստանալիս խաչը ձեռքումս բռնել: Այս ձևով, երբ պատահում է որ արթնանամ, ես խաչը զգում եմ իմ ձեռքում, և միտքս անմիջապես Նրա կողմն է շրջվում):

[1] Հիսուս սա ասաց, դառնալով դեպի ինձ:

Երբե՛ք չթողնես Ինձ, անգամ մի վայրկյան: Ես Ամենն եմ և Ամեն ինչ: Բռնելով Իմ Խաչը, դու փառավորում ես Ինձ և պատվում Ինձ: Ես՝ քո Աստված, մաքրագործում եմ քեզ և մխիթարում եմ քեզ, զավակս, այնպես որ, պատվի՛ր քո Հորը, որն այնքան քեզ փնտրեց, երբ դու Ինձնից շատ հեռու էիր թափառում՝ շեղվելով Իմ աստվածային ուղիներից: Տեսնո՞ւմ ես, զավակս, դու միշտ Ինձ ես պատկանել: Այժմ, երբ Ես գտել եմ քեզ, Իմ թիկնոցի տակ պատսպարում ու պահում եմ քեզ, տե՛ս:

(Ես տեսա Հիսուս Քրիստոսին ալ կարմիր երկար թիկնոցով: Երկու ձեռքերով Նա բաց արեց այն, ցույց տալով մի վառ հրացոլք, որը դուրս էր գալիս Իր կրծքից: Հանկարծ, ինչպես լույսի մի բռնկում, մի կրակե լեզու ելավ այդ տեղից և եկավ ուղիղ դեպի իմ կողմը՝ ծակելով ինձ: Դա չէր ցավեցնում, դա միայն բոցավառում էր Իմ սերը Նրա հանդեպ՝ իմ ծարավն ավելի ու ավելի սաստկացնելով Նրա նկատմամբ):

Իմ Բոցը կբոցավառի քո սիրտը: Իմ Բոցը հավիտյան վառ կմնա քո մեջ, խորան: Ես քո մեջ նորոգել եմ Իմ Բոցը, որպեսզի դու շարունակես Իմ աստվածային Պատգամը: Քանի որ դու անկարող ես վերցնել Ինձնից, այդ դեպքում Ես կհոգամ, որպեսզի Իմ Բոցը վառ մնա քո մեջ: Ես սիրում եմ քո անկարողությունը, որովհետև Ես քեզ շնորհ եմ տվել հասկանալու այն: Ես փառավորվում եմ, երբ դու ամեն բանի համար Իմ կարիքն ես զգում: Քո թուլությունը գրավում է Իմ Ուժը, քո խեղճությունն ու տառապանքը հրապուրում է Իմ Գթասրտությունը: Սիրի՛ր Ինձ, Վասուլա. կիսի՛ր Իմ փշերն ու մեխերը. կիսի՛ր Իմ Խաչը. թագադրի՛ր Ինձ քո սիրով. պատվի՛ր Ինձ քո հավատով. թույլ տուր Ինձ քեզ, ինչպես մի կույրի, առաջնորդել, մինչև վերջ: Ես երբեք չեմ թողնի քեզ: Հավատա՛ ամեն մի բառի, որ խոսվում է Սուրբ Գրքերում:

Նոյեմբերի 13, 1987

Իմ Վասուլա, Ես քեզնից միայն սեր եմ խնդրում: Ամեն մի առաքինություն ծաղկում է սիրուց: Ամեն մի առաքինության արմատը սերն է: Սերը նման է մի մրգի ծառի, որը նախ ծաղկում է, իսկ ավելի ուշ պտուղ է տալիս. ամեն պտուղ մի առաքինություն է:

Ե՛կ, դու և Ես միասին նախ լուռ աղոթենք Հորը: Ե՛կ աղոթենք բացարձակ լռության մեջ: Ես կթելադրեմ.

«Հա՛յր Արդար, իմ Ապաստան,
ուղարկի՛ր Քո Լույսն
ու Ճշմարտությունը:
Թող որ դրանք լինեն
իմ ուղեկիցները՝
առաջնորդելու ինձ
այն Սուրբ Վայրը,
ուր Դու ապրում ես:
Ես ողջ սրտով սիրում եմ Քեզ:

Ես կպահեմ իմ խոստումը՝
կատարելու Քո Խոսքը:
Սուրբ Հայր,
ես գիտակից եմ իմ սխալներին,
իմ մեղքերին, ողորմի՛ր ինձ:
Քո Բարությամբ
և Գթառատությամբ
ների՛ր իմ մեղքերը:
Մաքրագործի՛ր ինձ,
Տե՛ր, եղիր իմ Փրկիչը:
Նորոգի՛ր ինձ,
իմ հոգին հավատարիմ
և պատրաստակամ պահիր Քեզ:
Ես իմ կամքն եմ
Քեզ առաջարկում՝
հանձնվելով Քեզ:
Ես պատրաստ եմ
Քո քարետախտակը լինել:
Ես գովերգում եմ
Քո Սուրբ Անունը
և շնորհակալ եմ
բոլոր այն օրհնությունների
և խաղաղության համար,
որ Դու տվել ես ինձ: Ամեն»:

Այժմ կրկնի՛ր այդ Ինձ հետ:

(Մենք այն կրկնեցինք միասին):

Շնորհակալ եմ, Հիսուս, ինձ քայլ առ քայլ առաջնորդելու համար: Դու իմ Սուրբ Ուսուցիչն ես՝ Սիրով ու համբերությամբ ուսուցանում և ուղեկցում ես ինձ, ինչպես և մյուսներին, որպեսզի Քեզ ավելի լավ ճանաչեն, որ իմանան, թե ինչ Անսահման Սեր ես Դու: Երբեք Դու մեզ չես լքում և միշտ պատրաստ ես կորածներիս որոնելու ու Քեզ մոտ բերելու: Ես երբեք Քո կողմից խստություն կամ անհամբերություն չեմ զգացել, այլ միայն սիրված եմ զգացել: Դու Սեր և Խաղաղություն տվեցիր իմ հոգուն: Ահա թե ինչպիսին ես Դու: Ես Քեզ երբեք չեմ թողնի, Տե՛ր:

Աղջի՛կս, միշտ Ի՛նձ փափագիր: Սիրի՛ր Ինձ և պատվի՛ր Ինձ, մնա՛ Ինձ հավատարիմ:
Թող որ միասին լինենք, մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը:

Նոյեմբերի 14, 1987

Հիսո՛ւս, Դու ուրա՞խ ես, երբ ես հանդիպում եմ Քեզ այս ձևով, որը Դու ես ինձ թելադրել:

Ես ուրախ եմ, ինչպե՞ս կարող եմ ուրախ չլինել:

Դու Ինձ մոտ ես գալիս, Իմ Վասուլա, բայց դու Ինձ չես ասում, թե ինչ կա քո սրտում: Ես զգում եմ քո սիրտը, Վասուլա. այն ծանրաբեռնված է վշտով ու ցավերով: Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչու: Ասեմ, թե ինչու: Դա այդպես է, որովհետև Սերը տառապում է: Երբ Ես տառապում եմ, դու ևս տառապում ես: Ես քեզ տվել եմ միշտ Ինձ հետ միաժամանակ տառապելու շնորհը: Դու Իմ արտացոլումն ես: Ինչ որ Ես եմ զգում, դու էլ ես զգում: Ես թույլ եմ տալիս, որ զգաս Ինձ: Հոգիները նորից խոցում են Ինձ:

(Իմ տառապանքը հասավ գագաթնակետին: Ես պետք է պահեմ իմ արցունքները, բայց չեմ կարողանում):

Աղջի՛կս, մի՞թե դու կարծում ես, որ Իմ աչքերը չոր են[1]: Նրանք լցված են այնքան, որքան որ քոնը: Ես տառապում եմ: Իմ աչքերը նույնպես թաց են:
Օ՜, Վասուլա, ծաղի՛կս, դու ինչպե՜ս ես Ինձ հասկանում հիմա: Աղջի՛կս, մենք իրար հետ արցունք ենք թափում, միասին տառապում ենք, միասին կրում Իմ խաչը[2]: Իմ Սիրտը վիրավորված է բազմաթիվ հոգիների կողմից, որոնք դառնացնում են Ինձ: Օ՜, Վասուլա, քո արցունքները Իմ արցունքներն են: Ահա, կրի՛ր Իմ խաչը, վերցրո՛ւ մեխերս նույնպես: Ինձ թույլ կտա՞ս հանգչել:

Այո՛, Հիսուս:

(Իմ հոգին երբեք նման վիշտ ու տառապանք չէր ապրել, ինչպես այժմ):

Վասո՛ւլա, օ՜ Վասուլա, ինչպես եմ սոսկում սա քեզ ասելուց. բոլոր դեպքերում ես պետք է քեզ ասեմ ճշմարտությունը. կրի՛ր Իմ Փչե Պսակը, և դու կհասկանաս Ինձ:

Կարծում եմ, որ գիտեմ, Տե՛ր: Ես պիտի ծաղրվե՞մ, մերժվե՞մ:

Հոգիները Ինձ չեն լսելու. նրանք մեղանչելու են: Սրա ապացույցն այն է, որ նրանք չեն ուզում հավատալ Իմ Ողորմության Պատգամին և դժկամություն ու վախենում են ընդունել իրենց կատարած մեղքերը[3]: Ահա՛, կրի՛ր Իմ Պսակը:

(Նա այն դրեց իմ գլխին):

Դու փառավորելու ես Ինձ: Լսի՛ր, ժամանակը կգա, փաստորեն ժամանակը հասել է: Ես քեզ հրահանգներ կտամ առատորեն ցրելու Իմ սերմերը:

[1] Ես վերև նայեցի, որովհետև Հիսուսի ձայնը դողում էր տառապանքից: Ես տեսա, որ Նրա աչքերը թաց էին ու արցունքով լի:
[2] Հիսուս շատ արագ էր թելադրում:
[3] Հիսուս լուսավորեց իմ միտքը, որպեսզի ես հասկանամ Նրա այդ խոսքերը: Ես գիտեմ, թե սա ում է վերաբերվում: Այն թափանցում է եկեղեցու խորքերը:

Սերը քեզ կուսուցանի իրագործել Իմ մտադրությունները. ցույց տուր, որ հաղթական կլինես, Վասուլա:

Աղջի՛կս, Ինձ հաճույք պատճառիր և Իմ կողմը շրջվիր, ինչպես հիմա: Ես թույլ տվի քեզ զգալու Իմ Արյունոտ Սիրտը՝ Իմ Արյան կաթիլները թողնելով քո սրտի վրա: Ես թույլ տվի քեզ կիսելու Իմ Բաժակը: Ես քո գլուխը զարդարել եմ Իմ Պսակով: Ես դրել եմ Իմ Խաչը քեզ վրա: Իսկ հիմա տալիս եմ քեզ Իմ մեխերը. էլ ավելի ի՞նչ կարող է առաջարկել ամուսինը: Այս ամենը, որ Ես տվել եմ քեզ՝ Իմ ամենաթանկագին Գանձերն են: Սիրելիս, հիմա, երբ դու հասկանում ես Ինձ, դու կամենո՞ւմ ես է՛լ ավելի խորանալ Իմ Արնահոսող Մարմնի մեջ:

Այո՛, Տեր, տար ինձ այնտեղ:

Աղջիկս, ուրեմն մենք առաջ պիտի շարժվենք, կառչի՛ր Ինձնից, օրհնի՛ր Ինձ:

(Ես օրհնեցի Հիսուսին):

Ե՛կ, Ես էլ քեզ կօրհնեմ, դու ևս աչքերդ ցած խոնարհիր:

(Հիսուս օրհնեց ինձ):

Ինձ Աբբա կանչի՛ր. հիմա դու գիտես, թե դա ինչ է նշանակում:

Աբբա՞:

Այո՛, Ես որքա՛ն եմ քեզ սիրում: Ես քեզ ստեղծել եմ նաև այն բանի համար, որպեսզի ունենամ մեկին, որի հետ կարողանամ կիսել Իմ տառապանքները: Դու Ինձ կճանաչես, Վասուլա, Դու կիմանաս, թե ով է քո Հայրը: Ծաղի՛կս, ամենասիրելի աղջիկս, թող Հայտնի դառնա, թե Ես որքան եմ սիրում Իմ արարչությունը[1]:

Վասո՛ւլա, դու գիտե՞ս, թե ինչու եմ քեզ տալիս այս հզոր շնորհը, այն, որ դու կարող ես Ինձ կանչել, երբ որ ցանկանաս:

Այն պատճառների համար, որ Դու արդեն ասել ես ինձ, Տե՛ր:

Մի պատճառ ևս կա:

Խնդրում եմ, մի՛ գրիր այն: Ես լսեցի Քեզ:

Այո՛, դու լսեցիր Ինձ:

Բայց, Տե՛ր, «այդ» գալիս է Քեզնից և ոչ թե՝ ինձնից:

---

[1] Այստեղ Աստված ինձ հասկացնել տվեց, որ Նա ինձ ավելի չի սիրում, քան Իր մյուս արարածներին, բայց որպես մի օրինակ ցույց է տալիս, թե Նա որքան է սիրում ինձ: Ես հանդիսանում եմ որպես մի նմուշ:

Ծաղիկս, հիշի՛ր, ես քեզ տվել եմ ընտրության մեծ ազատություն:

Այո՛, Սիրելի Տեր, բայց Դու նույնպես տվել ես մեզ մեր իմացականության շնորհը՝ հասկանալու և ընտրելու հնարավորություն տալով մեզ: Դու ինձ սովորեցրել ես դա:

Այո՛[1], ես սիրում եմ քեզ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

(Ես հանկարծ զգացի Աստծո, Սբ. Մարիամի և բոլոր սրբերի կարիքը: Հետո մի արտակարգ զորությամբ հայտնվեց Սբ. Մարիամը):

Ժամերը թռչում են: Հիսուսն առաջնորդում է քեզ: Մի՛ վախեցիր, սիրելի աղջիկս, Իմ Խաղաղությունը քեզ: Հիսուս քեզ հետ է, Հիսուս քո Առաջնորդն է: Սիրի՛ր Նրան, ինչպես որ սիրում ես, Իմ Վասուլա. դու անչափ շատ ես հատուցում: Եղի՛ր բալասան Հիսուսի համար, ուրախացրո՛ւ Նրան: Ես՝ քո Սուրբ Մայրը, կօգնեմ քեզ. մի՛ վախեցիր և առաջ շարժվիր. դու ճիշտ ուղու վրա ես: Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ քեզ, Սուրբ Մարիամ: Եթե ինձ հարկավոր է շտապել, ես դա չեմ կարող անել, եթե Աստված ճամփա չբացի ինձ համար: Ուրեմն ես առաջ կշարժվեմ Աստծո ձեռքից բռնած: Ես վստահում եմ Նրան: Ես ապավինում եմ Նրան: Ես քեզ խնդրում եմ, Սիրելի Մայր, որ ինձ նեցուկ լինես՝ խրախուսելով և օգնելով ինձ:

Ես կաջակցեմ և կօգնեմ քեզ:

Շնորհակալ եմ: Ես օրհնում եմ Քեզ:

Նոյեմբերի 16, 1987

Սիրելիս, ես մի այնպիսի բան եմ անելու, որին դժվար է հավատալ այս օրերին: Այն, ինչ որ պիտի անեմ, Իմ Պատգամը հաստատելու նպատակ ունի. մի՛ վախեցիր:

Աստվա՛ծ իմ, արդեն իսկ շատերի համար դժվար է հավատալ, որ Դու հաղորդակցության մեջ ես ինձ հետ այնպիսի մի պարզ ձևով, որ ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում կարող ես հանդիպել ինձ հետ:

Հավատա՛ Իմ հրաշքներին, հավատա՛ Ինձ:

[1] Մի փոքր դադար եղավ:

Նոյեմբերի 18, 1987

Աստվա՛ծ իմ, սկսած այն օրից, երբ Դու ցույց տվիր ինձ Քո գաղտնի մտադրությունը, ես վախենում եմ. ես վախենում եմ առաջ շարժվել: Ես վախենում եմ՝ զգալով, որ դժվարությունները գտնվում են առջևում: Դա նման է Քո վիճակին՝ նախքան Երուսաղեմ մտնելդ: Դու գիտեիր, թե ինչ դժվարություններ էին Քեզ սպասվում:

Իմ Պատգամն իրագործում է Իմ Խոսքը: Դու պետք է առաջ շարժվես: Կմերժվես, թե ոչ, դու կկատարես քո գործը: Ես քո առջևում եմ

Փոքրի՛կս, աննշան մնա, որպեսզի Ես կարողանամ ամբողջությամբ երևալ: Որքան դու աննշան լինես, այնքան ավելին Եմ Ես: Թույլ տուր Ինձ առաջ շարժվել. թույլ տուր Ինձ լինելու այն Մեկը, ով գործում է և խոսում:

Այո՛, փոքրիկս, նրանք[1] բոլորը պետք է խոնարհվեն միավորվելու համար: Ես խոնարհ և ոտաբոբիկ եմ գալու. Ես չեմ գալիս զենքերով բեռնված: Ե՛ս Իմ ոչխարներին ետ պիտի բերեմ Պետրոսի մոտ: Ե՛ս պիտի միավորեմ, իսկ Պետրոսը պիտի կերակրի Իմ գառներին: Ես՝ Տերս, ասել եմ: Վստահե՛ք Ինձ, սիրելիներս, Ես Իմ ամբողջ Սրտով սիրում եմ ձեզ բոլորիդ:

Նոյեմբերի 21, 1987

Վասո՛ւլա, Ես Իմ ցիրուցան ոչխարներին ետ եմ բերելու Պետրոսի մոտ: Ես՝ Տերս, բոլորիդ երաշխավորում եմ սա:

(Հանկարծ Տերը ինձ տեսիլքով ոչխարների երկու հոտեր ցույց տվեց, որոնք իրարից հեռացած էին, բայց հետո միացան):

Ծաղի՛կս, սա պիտի լինի Իմ Մեծ Նշանից հետո:

Հա՛յր, ներիր իմ անհամբերությունը: Ես պետք է սովորեմ Քեզ նման համբերատար լինել:

Փոքրի՛կս, որ վեր ես բարձրացվել Իմ Ձեռքով, վերցրո՛ւ Իմ պաշարներից և լցրո՛ւ քո սիրտը. հագեցրո՛ւ այն, որ կարողանաս մյուս սրտերը ևս հագեցնել: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ: Ես քեզ տեսիլքներ եմ տալու: Ես սրում եմ քո տեսողությունը, որ դու զանազանես մարդկանց սրտերը և կարողանաս կարդալ դրանք: Սիրելիս, Ես տալիս եմ քեզ այս շնորհը, բայց հիշի՛ր, որ դու այն պիտի օգտագործես միայն Իմ շահերի և Իմ փառքի համար՝ ոչինչ չպահելով քեզ համար:

Իմ շատ Սիրելի Հիսո՛ւս, Աստվա՛ծ իմ, որ երբեք չես դադարում Քո պարգևները ինձ վրա հեղելուց, ինձ նման մի ոչնչության վրա, թույլ տուր ինձ, որ մոտ լինեմ Քեզ: Հիսո՛ւս, ես, որ մի ոչնչություն եմ, որին Դու

[1] տարբեր եկեղեցիները

այսքան պարգևներ ես շնորհում, ինչեր չէիր անի ու չէիր տա նրանց, ովքեր իսկապես հաճելի են Քո Աչքում և մեծարում են Քեզ:

Այո՛, տեսնո՞ւմ ես, Վասուլա. թվում է դու հիմա Ինձ ավելի ես հասկանում: Եթե ես տալիս եմ քեզ, քե՛զ, որ իսկապես ամենաթշվառն ես Իմ արարածների մեջ, ապա ուրեմն ինչե՞ր չէի տա Ես նրանց, ովքեր իսկապես արժանի են Իմ շնորհներին. նրանց, ովքեր պատվում են Ինձ, և նրանց, ովքեր զոհաբերվում են Ինձ համար:

Խնդրե՛ք, սիրելիներս, և Ես կտամ ձեզ: Հավատացե՛ք, ինչ որ խնդրում եք: Վստահություն և հավատ ունեցեք Ինձ վրա: Մի՛ նմանվեք Պետրոսին, երբ ջրի վրա քայլելիս կորցրեց իր վստահությունը: Հավա՛տ ունեցեք Իմ հանդեպ: Վստա՛հ եղեք, հավատացե՛ք:

Նոյեմբերի 22, 1987

Վասո՛ւլա, օրեցօր քամին ավելի ու ավելի ուժգին է փչում: Այն փչում է այս անապատի վրայով, որպիսին դարձել է Իմ արարչությունը՝ ավելով անապատի ավազը և ավելի ու ավելի մոտ բերելով փոքրիկ ու բերքառատ այն հողակտորին, որը դեռևս մնացել է: Ավազն արդեն ծածկել է դրա մի մասը: Եթե մենք չշտապենք, փոքրիկս, շուտով այնտեղ ոչինչ չի մնա, բացի անապատից:

Տե՛ր, խնդրում եմ համբերող եղիր, որովհետև ես դանդաղ եմ սովորում:

Ծաղի՛կս, հիշո՞ւմ ես, թե Ես որքան երկար սպասեցի քո դռան առջև: Մի՞թե Ես համբերատար չեմ եղել բոլոր այդ տարիներին:

Հիսո՛ւս, ինչո՞ւ ես Քեզ չեմ լսել այդ բոլոր տարիներին:

Որովհետև դու խաբված էիր աշխարհի կողմից: Դու սկզբից ևեթ Ինձ էիր պատկանում, բայց աշխարհը խաբեց քեզ՝ հավատացնելով, որ դու նրանց ես պատկանում: Ահա թե որքան նենգ ու ստախոս է սատանան: Այսօր նրա գործն այն է, որ համոզի Իմ արարչությանը, որ ինքը գոյություն չունի: Այս ձևով նա գործում է առանց վախենալու, իսկ Իմ արարածները, ինչպես գառներ, ծուղակն ընկած խժռվում են գայլի կողմից: Սա է նրա այսօրվա ծրագիրը:

Նոյեմբերի 23, 1987

(Երբ Լիոնում էի գտնվում, խոսեցի մի կաթոլիկ աստվածաբանի հետ: Նա և իր կինը միանգամայն չհասկացան իմ մեկուսացման պատճառն այս աշխարհից: Նա ասաց, որ ես պարտականություններ ունեմ: Ես ասացի՝ «այո՛», բայց Աստված ինձ համար ամեն բանից առաջ է: Բացի այդ, նա նույնպես չկարողացավ հասկանալ, որ Աստված մեկուսացրել է անգամ իմ հոգին: Նա չէր համաձայնվում դրա հետ: (Աբրահամը չէ՞ր, որ պատրաստ էր զոհաբերելու իր սեփական որդուն):

Փոքրի՛կս, ես քեզ սիրում եմ խենթանալու աստիճան: Սերը սահմաններ չունի, և ես ցանկանում եմ, որ դու էլ խենթանալու աստիճան Ինձ սիրես: Իմ նպատակն է ավելացնել քո սերը: Ես ձգտում եմ, որ դու Ինձ անսահման սիրես: Ինձ հաճելի է փորձել[1] քո հավատարմությունն Իմ հանդեպ: Ես հրճվում եմ լսելով, որ դու մեծարում ես Ինձ: Դու հիմա զոհաբերվում ես Ինձ համար, բայց քո զոհաբերությունը նույնպես իզուր չի լինելու: Ինքդ քեզ անվերապահորեն Ինձ հանձնիր: Հաճելի եղիր Ինձ՝ լինելով կակուղ, զավակ, թույլ տալով վարվել քեզ հետ, ինչպես որ Ինձ հաճելի է: Հոգի՛, երբեք մի՛ վախեցիր Ինձնից, ես Սեր եմ[2]:

Տե՛ր, թվում է, շատերը նույնպես չեն հասկանում ինձ, երբ ես ցանկանում եմ Քեզ հետ լինել, և որ մահը լոկ փրկություն է:

Սիրելի՛ս, սուրբ եղիր. մնա սուրբ և Աստվածային Սերը քեզ դեռ ավելի վեր կբարձրացնի: Մի՛ վախեցիր, սիրելիս: Հենվի՛ր Ինձ վրա. եղի՛ր Ինձ հավատարիմ՝ սիրելով Ինձ՝ քո Աստծուն, քո ողջ հոգով և սրտով, քո ողջ մտքով և զորությամբ: Հիշի՛ր, թե ես ինչպես եմ խոնարհվում դեպի քեզ՝ քո հոգուն հասնելու համար:

Նոյեմբերի 24, 1987

Վասո՛ւլա, ես քեզ կտամ կարդալու այն բառերը, որոնք որ ես ասացի Մարգարիտ-Մարիին: Ասացի. «Ես պիտի թագավորեմ հակառակ իմ թշնամիների և հակառակ բոլոր նրանց, ովքեր փորձում են դիմադրել Ինձ». հետևաբար, վստահություն ունեցեք, սիրելիներս:

Վասո՛ւլա, ես ուզում եմ, որ դու մեկ անգամ ևս գծագրես, թե ինչպիսին է Սուրբ Երրորդությունը:

Այո՛, Տեր: (Սա մի տեսիլքից հետո էր, որ Տերն ինձ մի անգամ ցույց տվեց, երբ ես դժվարանում էի այն ըմբռնել):

(Դա լույսի մի տեսիլք էր, մեկը մյուսից դուրս գալով: Ապա՝ մի լույսից դուրս եկավ մեկ ուրիշը, հետո՝ մեկ ուրիշը, կազմելով՝ երեք: Երբ Որդին Հոր մեջ է, ապա նրանք մեկ են: Սուրբ Երրորդությունը մեկ է և միևնույնը: Նրանք կարող են երեք լինել, բայց երեքը միասին կարող են լինել՝ Մեկ: Արդյունքը՝ Մեկ Աստված: Աստված երեք Անձերից է բաղկացած, բայց մեկ է էության միասնությամբ):

[1] Ինչպես որ Ինքը Աբրահամին փորձեց:
[2] Դա նշանակում է, որ Աստված երբեք չի խնդրի մի բան, որը կվնասի մեր հոգուն:

Նոյեմբերի 25, 1987

(Ես Հիսուսին տեսա ինձ մոտ նստած):

Հիսո՛ւս, Դու այստե՞ղ ես:

Ես եմ: Դու Ինձ նկատեցիր: Տեսնո՞ւմ ես, Վասուլա, Իմ Հանդեպ ունեցած քո այդ փոքր հավատի համար, մի հավատ, որն ավելի փոքր է, քան մանանեխի սերմը, Ես կարող եմ այնպես անել, որ տեսնես Ինձ, զգաս Ինձ ու գրես Ինձ հետ: Ե՛կ, Ես պիտի լինեմ քո Սուրբ Ընկերակիցը:

(Ավելի ուշ)

«Սիրելիս, դու մի՛ վախեցիր, որ Ես Իմ ծրագրերը կազմել եմ քո ծնվելուց դեռ շատ առաջ: Ողջ հավիտենականությունից սկսած, Ես գիտեի, որ դու ծառայելու ես Ինձ, սիրելիս: Սիրտդ մի՛ նեղիր, թե ինչ ես ասելու կամ անելու, որովհետև Ես՝ Տերս, Իմ Խոսքերը դնելու եմ քո շուրթերին:

Ես առաջնորդում եմ քեզ, դու Իմ մեջ ես, Իմ Սիրո մեջ: Ես սրբացրել եմ քեզ, դու օրհնված ես: Ես առաջնորդում եմ քեզ Իմ Արյունոտված Մարմնի ամենախոր անկյունները: Իրագործի՛ր Իմ ցանկությունները՝ կատարելով Իմ Կամքը:

Ես կօգնեմ քեզ տալով զանազանության շնորհը: Մնա՛ Իմ մեջ, տո՛ւր Ինձ քո բոլոր թուլությունները, սիրելի հոգի, տո՛ւր բոլորը Ինձ և թող որ Իմ Ուժը ոչնչացնի դրանք:

Դու կկատարես Իմ բոլոր Գործերը, որոնք Ես սահմանել եմ քեզ համար՝ փառավորելով Ինձ: Վստահի՛ր Ինձ, և Ես քեզ վեր կբարձրացնեմ: Օրհնյալդ Իմ ձեռքով, պահի՛ր Ինձ քո սրտում, ինչպես Ես եմ քեզ պահում Իմ Սրտում: Հագեցրո՛ւ քո սիրտը Իմ Սրտից, որպեսզի կարող լինես հագեցնել մյուսներին ևս: Ես՝ Տերս, կկերակրեմ քեզ. վստահի՛ր Ինձ, համարձակ եղիր: Ե՛կ, ե՛կ, սիրելի հոգի և հանդչիր Իմ մեջ: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ և քո բոլոր նախաձեռնումները»:

Վասուլա, բռնի՛ր Իմ Ձեռքը, բռնի՛ր Իմ Ձեռքը և հետևիր Ինձ: Տեսնո՞ւմ ես:

(Հիսուսն առաջնորդում էր իմ հոգին, ես քարշ էի գալիս Նրա հետևից: Նա ինձ տարավ Սբ. Պետրոսի Եկեղեցին: Երկարելով Ձեռքը, Նա մատնացույց արեց միայնակ մի անձի: Դա Հովհաննես-Պողոս Պապն էր: Նա նստած էր մենակ, մտահոգ՝ խոր մտքերի մեջ թաղված):

Տեսնո՞ւմ ես, Վասուլա, նա սպասում է, նա սպասում է:

Հա՛յր, թող որ Քո ծրագրերը իրագործվեն: Ամեն:

Իմ Պատգամները պետք է նրան հանձնել՝ իրագործելով այն ամենը, ինչ գրված է:

Ե՛կ, սիրելիս, ժամանակը մոտ է, մի՛ վախեցիր: Հիշի՛ր, Ես գնում եմ քո առջևից: Ինչ որ Ես սկսել և օրհնել եմ, պիտի ավարտեմ: Ե՛կ, Սերը սիրում

է քեզ և առաջնորդում է քեզ: Պահի՛ր ձեռքերդ Իմ Ձեռքերի մեջ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր: Միասին: Օ՛, ինչպես եմ ես Քեզ սիրում, Հիսո՛ւս:

(Հիսուս, որ գալիս է Սիրտը Ափի մեջ՝ առաջարկելով Այն մեզ: Սերն Իր քնքուշ սրտով, գալիս է նորից մեզ օգնելու, որ ազատվենք սատանայի որոգայթներից):

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր:

Սիրելի՛ս, ինչպե՞ս, ինչպե՞ս կարող եմ Ես քեզ թողնել, տեսնելով այս բոլորը: Ես ամբողջ Սրտով սիրում եմ քեզ: Ես ամբողջ Սրտով, սիրում եմ ձեզ բոլորիդ:

(Ես զգացի Նրա Սիրտը, և աներևակայելի սերը, որ Նա տածում է մեր հանդեպ):

Նոյեմբերի 28, 1987

Փոքրիկս, զարդարի՛ր Իմ պարտեզը: Այնպես, ինչպես որ կա Հիմա, Ես ոչինչ չեմ տեսնում, բացի չորությունից ու անբերրիությունից: Այնտեղ չորություն է տիրում: Չոր քամիները փչում են նրա վրա՝ չորացնելով այն քիչը, որ դեռ մնացել է նրանում: Իմ ծաղիկները կարիք ունեն ջրվելու, հակառակ դեպքում նրանք բոլորը կմեռնեն: Իմ կոկոնները չեն դիմանա. մինչև ծաղկելու ժամանակը գա, նրանք կմեռնեն մեկը մյուսի ետևից: Օ՛, եթե նրանք միայն լսեին:

Աստված իմ, ինչո՞ւ է այդքան դժվար որոշում կայացնելը: Ինչո՞ւ է այդքան դժվար նման մի որոշման հանգելը: Ինչո՞ւ պետք է այն ամիսներ ու տարիներ տևի: Մի՞թե այդքան բարդ է միմյանց սիրելը և միավորվելը, որպես մի ընտանիք: Նրանք հենց նույն անձերը չե՞ն, որ մեզ սովորեցնում են սիրել միմյանց, զոհաբերվել և տալ: Մի՞թե տարիներ են հարկավոր միավորվելու համար: Հա՞րկ է, որ նրանք հատուկ խորհուրդներ և ժողովներ ունենան: Ինչո՞ւ նրանք չեն կարող վճռորոշ մի հավաք ունենալ՝ միացնելով ձեռքերը՝ Պետրոսին տալով այն իշխանությունը, որ Դու մի անգամ տվել էիր նրան, որպեսզի Քեզ զոհացնեն ու Քեզ ժպիտ պատճառեն:

Ինչպե՜ս եմ սիրում քո պարզությունը, զավակս: Քո մտածած ձևը մանկական է: Երեխաները Իմ թուլությունն են:

Տեսնո՞ւմ ես, երբ երեխաները վիճում են, նրանց վեճը երբեք մի քանի րոպեից ավել չի տևում, որովհետև նրանց մեջ չարություն չկա: Բայց սրանք, աղջիկս, երեխաներ չեն. նրանք կորցրել են իրենց ողջ անմեղությունը, որն ունեին մի ժամանակ: Նրանք կորցրել են իրենց պարզությունը, իրենց սրբությունը, կուտակելով չարություն անմեղության փոխարեն, փառամոլություն՝ պարզության փոխարեն,

պղծություն՝ սրբության փոխարեն, կեղծավորություն՝ խոնարհության փոխարեն:

Տեսնո՞ւմ ես, զավակս, սա է պատճառը, որ ես նորից իջնում եմ նրանց հիշեցնելու, թե ինչպիսին եմ ես՝ Հիսուս: Ես խոնարհ և ոտաբոբիկ եմ գալու: Ես պիտի մտնեմ Իմ սեփական Տունը և ծնկի գամ Իմ ծառաների ոտքերի առաջ ու լվամ դրանք[1]: Մի՛ արտասվիր Իմ Վասուլա, այս ամենը միավորվելու համար է: Թույլ տուր քեզ օգտագործեմ: Այս անգամ նրանք չեն կարող ժխտել, որ այդ ես եմ՝ Հիսուս, քանի որ ես նախօրոք եմ ասել այս իրադարձության[2] մասին, իր ժամանակից շատ առաջ: Ես թույլ տվեցի, որ դու կարդայիր միայն մի մաս, ինչ որ ես ներշնչեցի Իմ ծառային՝ Հովհաննես 23-րդ Պապին, իսկ մնացածը...:

Մնացա՞ծը, Տեր:

Ես հետո նրա ականջին չշնջացի այն մեծ արհավիրքների մասին, որին ենթարկվելու է Իմ Եկեղեցին:
Ես՝ Հիսուս, սիրում եմ բոլորիդ: Մնա՛ Իմ մեջ, Իմ Սիրո մեջ:

Նոյեմբերի 29, 1987

Վասո՛ւլա, դու պատրա՞ստ ես հիմա ավելի զոհողություններ անելու Ինձ համար:

Տե՛ր, Դու կարող ես օգտագործել ինձ որքան որ քեզ հաճելի է, ես հանձնվել եմ Քեզ: Ես ամեն օր հանձնվում եմ Քեզ:

Մնա՛ Իմ մեջ, մնա՛ Իմ Սիրո մեջ: Աղջիկս, քո փորձությունները բազմաթիվ են լինելու[3]: Դու ավելի շատ զոհողություններ կանե՞ս Ինձ համար, քո Աստծո համար[4]:

Աստված իմ, վերցրո՛ւ իմ կյանքը Քո Ձեռքերի մեջ և արա այն, ինչ որ Քո Սիրտն է ցանկանում:

Իմ շատ սիրելի հարս, նայիր ուրեմն Իմ Խաչին:

(Ես նայեցի ու տեսա Հիսուսին մուգ փայտե մի վիթխարի Խաչի հետ):

Ես խաչված էի դրա վրա՝ փառավորելով Իմ Հորը: Դու տեսնո՞ւմ ես, թե ինչ է սպասվում քեզ: Ես՝ Տերս, կկիսեմ այն քեզ հետ. այդ ժամանակ դու պիտի կրես այն ողջ տառապանքը, որ քո հոգին ընդունակ է կրելու: Ես կավելացնեմ քո տոկունությունը, փոքրիկս:

---

[1] Հիսուսն այլաբանորեն էր խոսում:
[2] Այնքա՜ն սպասված ՄԻՈՒԹՅՈՒՆԸ:
[3] Աստված ինձ զգուշացնում էր:
[4] Զգուշացումից հետո, Աստված հարգելով իմ ազատությունը, ինձ նորից էր հարցնում:

Հա՛յր, վարվիր ինձ հետ այնպես, ինչպես քո Թանկագին Սիրտն է ցանկանում: Արա այն ամենը, ինչ Քեզ ավելի փառք կարող է բերել: Այն ամենը, ինչ Քեզնից է գալիս, ինձ բավականություն է պատճառում:

Հնազանդ եղիր և գոհացրու Ինձ: Հնազանդությունը սատանային անօգնական է դարձնում և ստիպում է նրան հեռու փախչել:

Նոյեմբերի 30, 1987

Հիսո՞ւս:

Ե՛ս եմ:

Ես՝ Հիսուս, երաշխավորում եմ ձեզ բոլորիդ, որ Իմ Եկեղեցին մեկ պիտի լինի, միավորված: Սիրելիս, հավատարիմ եղիր Ինձ, վստահի՛ր Ինձ և համարձակ եղիր:

Դեկտեմբերի 1, 1987

Ես ընտրել եմ քեզ, որպեսզի աշխարհին ցույց տամ, թե որքան Ողորմած եմ: Ես գտա քեզ այնտեղ, ուր դեռ գտնվում է Իմ զավակների մեծամասնությունը: Եթե Ես չգայի քո ետևից, դու այսօր կլինեիր այնտեղ, ուր որ դեռ մյուսներն են գտնվում: Ես գալիս եմ Իմ անսահման Ողորմությամբ ձեզ զգուշացնելու, ինչպես նաև ձեզ դեպի Ինձ ձգելու և հիշեցնելու ձեր հիմքերի մասին:

(Ես սկսեցի հասկանալ, որ Աստծո արարչության մեջ խաղաղության և Սիրո այս Պատգամն ու եկեղեցիների միավորումը լինելու է Աստծո վերջին փորձերից մեկը, նախքան նրա Արդարությունը կբորբոքվի մեր հանդեպ):

Ինչքան լավ ես դու հիմա Ինձ հասկանում, աղջիկս: Դու վախենո՞ւմ ես Ինձնից:

(Աստված հավանաբար իմ մեջ մի վախ զգաց, այն բանի համար, թե Նա ինչ կարող է անել, եթե մենք չփոխվենք):

Այո՛, վախենում եմ, Աստված իմ, այն տեսիլքից հետո, որ Դու ինձ ցույց տվեցիր:

Ես քեզ ցույց տվեցի դրա մի մասը միայն[1]: Վասո՛ւլա, Իմ արարչությանը պետք է զգուշացվի. թույլ մի՛ տվեք որ միևնույն սխալները կրկնվեն:

Այսինքն, ե՞րբ, Տե՛ր:

[1] Այդ նշանակում է, որ վատթարագույնը դեռ թաքնված է:

Երբ ես Իմ մեծ Հրաշքը ցույց տվեցի Ֆաթիմայում, այն ժամանակ զգուշացրեցի Իմ արարչությանը, բայց նրանք շատ քիչ ուշադրություն դարձրին Իմ զգուշացմանը: Դրա փոխարեն նրանք իրենց ժամանակը անցկացրին կասկածելով ու վիճելով, Մորս խոսքերը չտարածելով, ինչպես որ հարկն է: Հետևաբար շատ քչերը գիտեին այդ Պատգամի անհետաձգելիության մասին: Նրանք իրենց ձեռքերը ոճրագործությամբ արյունոտեցին՝ իրենց հետ քարշ տալով շատ հոգիների:

Ես պիտի հիշեցնեմ նրանց իրենց անցյալի մեղքերը[1]: Ես նրանց կհիշեցնեմ Գարաբանդալի Պատգամի անհետաձգելիության մասին:

Ինչո՞ւ եք կասկածում Իմ Գործերին: Իմ զգուշացումները փոխանցե՛ք Իմ արարչությանը. վիթխարի փոխհատուցումներ են հարկավոր անել: Իմ Արարչությունը պետք է զգուշացում ստանա, և նրանք պետք է հավատան Ինձ: Հիշեցրո՛ւ նրանց Իմ Սիրո մասին[2], օգնե՛ք Իմ Խոսքի տարածմանը, աջակցե՛ք Ինձ... աջակցե՛ք Ինձ: Ինձ հեռու մի՛ վանեք: Դուք հիմա Ինձ հեռացնում եք, չեք պաշտպանում Ինձ: Բացեիբաց հայտարարե՛ք անցյալի ու ներկայի Իմ Գործերի մասին. Ես Ամենակարող եմ:

Իմ Գլխի փշերը բոլոր այն քահանայական հոգիներն են, որոնք պահում են գիտելիքների բանալին, ո՛չ իրենք են մտնում, և ո՛չ էլ թույլ են տալիս ներս մտնելու նրանց, ովքեր ցանկանում են: Սրանք Իմ փշերն են: Այդ փշերը պետք է հիմա Ինձ գտնեն, ընդունեն և ապաշխարեն: Նրանց ձեռքերին դեռ թարմ արյուն կա անցյալից. նրանք պատասխանատու են այնքա՜ն ոճիրների ու դաժանությունների համար: Ես ուզում եմ, որ նրանք զղջան և ապաշխարեն: Նրանք անտեսեցին Իմ Մոր Պատգամը Գարաբանդալում, երբեք չտարածեցին Այն, ինչպես որ հարկավոր էր անել՝ անտեսելով դրա ծայրահեղ անհրաժեշտությունը: Օ՜, ինչ ստացա Ես, Վասուլա[3]: Քարե՜ր... նրանց սրտերը կարծրացել են: Ընդունե՛ք Ճշմարտությունը, բա՛ց արեք ձեր սրտերը: Գարաբանդալը Ֆաթիմայի շարունակությունն է: Մի՛ կրկնեք ձեր սխալները... Պետրո՛ս[4]:

Պետրոս, եղի՛ր Իմ Արձագանքը, կերակրի՛ր Իմ գառներին: Պետրո՛ս, մի՛ ուրացիր Ինձ նորից, սիրելիս:

(Երբ Տերն ասաց. «Պետրո՛ս, եղիր Իմ արձագանքը, կերակրի՛ր Իմ գառներին, մի՛ ուրացիր Ինձ նորից, սիրելիս», ես կարող էի տեղնուտեղը մեռնել, լսելով, թե Նա ինչպե՜ս այդ ասաց):

Եկ, թույլ տուր Ինձ քեզ օգնել. հանգչի՛ր Իմ մեջ:

(Ես այնպես զգացվեցի, որ այլևս ինքս Ինձ կորցրել էի: Հիսուս փորձում էր Ինձ նեցուկ լինել: Երբ ես ուշքի եկա, ասացի).

---

[1] Աստված, հավանաբար, մեղքերը հիշեցնում է միայն այն դեպքում, երբ մեղանչողները ներում չեն խնդրել կամ չեն զղջացել: Երբ որ դա անեն, ներում կստանան, և Աստված երբեք մեզ չի հիշեցնի մեր նախկին մեղքերը:

[2] Ներառյալ Աստծո Պատգամները խաղաղության և Սիրո մասին:

[3] Աստված այնքան ցավագին ողբաց, որ անհնարին է նկարագրել:

[4] Աստված այնքան բարձ ձայնով ասաց, կարծես դիմում էր մեկին, որը հեռվում էր, և նա չէր լսի Իրեն, եթե չգոռար:

Հիսո՛ւս, ես կնկարագրեմ հիմա. Աստված աղաչում էր: Նա այդ ասաց աղերսանքով:

Այո՛, այո՛, Վասուլա, սիրուց դրդված:

Ես սիրում եմ Քեզ, Աստված իմ: Ինչպես կարող եմ ես Քեզ լսել ու տեսնել այդքան տխուր և չցանկանալ միլիոն անգամ մեռնել: Եթե ես հազար կյանք ունենայի, ամեն մեկը կտայի Քեզ, մեկը մյուսի հետևից, հանուն Քո փառքի՝ բժշկելով Քո Վերքերը:

Իմ Վերքերը կբժշկվեն միայն այն ժամանակ, երբ Իմ արարչությունը կվերադառնա դեպի Սերը: Ինձ ընդունե՛ք որպես Ամենակարող և միավորվեք: Իսկ հիմա արի կիսենք Իմ վիշտը:

Հիսո՛ւս, երանի թե կարողանայի շատ ավելին անել՝ Քեզ հատուցելու և փառավորելու համար:

Մնա՛ Ինձ մոտ, և ես կկիսեմ քեզ հետ այն ամենը, ինչ որ ես ունեմ: Հանգստացիր:

Դեկտեմբերի 2, 1987

Գարաբանդալի Պատգամը վավերական է, և այն պետք է տարածվի ու մեծարվի: Սրբացրեք Գարաբանդալը: Դուք չե՞ք տեսնում, կամ չե՞ք հասկանում, որ ձեր սխալները կրկնվում են: Դուք կրկնում եք Ֆաթիմայի ձեր սխալները: Օ՜, արարչություն, ե՞րբ եք դուք Ինձ հավատալու: «le emphnises itn»[1]:

Աստվա՛ծ իմ, որքան սարսափելի է լսել ու զգալ, որ Դու նման վշտի մեջ ես:

Վասո՛ւլա, սփոփիր Ինձ:

Օ՜հ, եկ Տեր, ես ուզում եմ Քեզ սփոփել: Երանի ամեն մի հոգի իմանար այդ մասին, որպեսզի նրանք սփոփեին Քեզ, Տե՛ր, և Դու այդ ձևով շատերի կողմից կսփոփվեիր:

Եթե նրանք Ինձ սիրեն՝ կանեն:
Եկ, ես պետք է հիշեցնեմ քեզ, որ Ես՝ Հիսուս, կանգնելու եմ Կայենի և Իմ Աբելի միջև: Կայենն այս անգամ դեմ հանդիման է կանգնելու Ինձ՝ իր եղբոր փոխարեն: Եթե նա ձեռք բարձրացնի, ապա պետք է Ինձ հարվածի: Նա ամեն ինչից կզրկվի և իրեն մերկ կգտնի Իմ դիմաց՝ Իր Աստծո դիմաց:

[1] որ երևումներ եղան (հունարեն)

Իմ Աբել, Իմ շատ սիրելի Աբել[1]: Այս անգամ դու պիտի ապրես: Քո արյունը, որն Իմ Արյունն է, չի թափվելու, և Իմ բուրմունքը զարդարելու է Իմ պարտեզը, հենց այն պարտեզը, ուր Իմ Աբելի արյունը թափվեց: Եկ, Ծաղի՛կս, Ես պիտի հիշեցնեմ քեզ Իմ Ներկայության մասին. արթուն մնա:

Դեկտեմբերի 4, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ: Աղջի՛կս, ուզում եմ, որ Իմ Խոսքերը պարզ լինեն: Ես չեմ մեղադրում նրանց, ովքեր հալածեցին երևումները: Ես ուզում եմ, որ նրանք հասկանան և ընդունեն իրենց սխալները և զղջումով դան Ինձ մոտ: Ես կներեմ նրանց՝ թողություն տալով իրենց մեղքերին: Աղջի՛կս, շատերն Իմ Պատգամը հալածելու են նորից, ժխտելով, որ այդ Ես եմ՝ Հիսուս, քանզի վախենում են ընդունել իրենց մեղքերը, քանզի դա նորից վեր է նրանց իմաստությունից[2], զավակս:

Միգուցե նրանք դա մտադրված չեն անում: Միգուցե իրենց ենթագիտակցության մեջ նրանք հավատում են, որովհետև, ես վստահ եմ, եթե նրանք հասկանային, կգովերգեին Քեզ: Նրանք ուղղակի չեն հասկանում:

Ես այնքան եմ սիրում քո տրամաբանությունը: Ինչո՞ւ ես պաշտպանում նրանց:

Որովհետև նրանք չգիտեն, և եթե չգիտեն՝ չեն հասկանում...

Ես լսում եմ:

Այդ դեպքում ես համարձակվում եմ Քեզ մի բան խնդրել: Ես խնդրում եմ, որ Դու նրանց ներես և ողորմած լինես նրանց հանդեպ:

Բայց նրանք քո հալածողներն են լինելու, զավակս, տառապանք պատճառելով քո հոգուն: Նրանք պիտի լինեն քո խարազանողները:

Նույնիսկ այդ դեպքում, եթե նրանք չեն հասկանում, ուրեմն նրանք դիտմամբ չեն անում: Նրանք չգիտեն, թե ինչ են անում, որովհետև տկար են: Դու Քո Աստվածային Սիրով կարող ես նրանց օգնել հասկանալու, որ այդ Դու Ես: Աստված իմ, մի՛ թող, որ Քո Աստվածային Ձեռքը հարվածի նրանց, որովհետև, հարվածելով նրանց, շատ անմեղ հոգիներ ևս կպատժվեն:

[1] Աստված այդ ասաց այնպիսի մի քնքուշ ձայնով, որ միայն Ինքը կարող էր այդպես խոսել և ուրիշ ոչ ոք:
[2] Նրանց հասկացողությունից վեր էր իսկապես հասկանալ և հավատալ, որ Հիսուս Աստծո Որդին էր նրանց մեջ, ինչպես որ ոմանց ըմբռնումից վեր է հավատալ, որ այս Աստվածային Գործը գալիս է Աստծուց:

Վասո՛ւլա, Իմ արարչությունը այլասերվել է. վիթխարի փոխհատուցումներ պետք է արվեն: Ես ուզում եմ, որ Իմ արարչությունը հասկանա, թե ուր են գնում իրենք: Ես ուզում եմ, որ Իմ քահանայական հոգիները վերցնեն Ինձնից և սիրով ու գիտությամբ կշտացնեն Իմ Գառներին: Այժմ նրանք[1] ապրում են բացարձակ խավարի մեջ:

Այո՛, Հիսուս, բայց լուսավորի՛ր եկեղեցական իշխանություններին: Եթե անգամ այս «ոչ-ուղղափառ» ձևով Քեզ հետ լինելը նրանց հասկացողությունից դուրս է, բա՛ց արա նրանց աչքերն ու ականջները, Տե՛ր, որ նրանք կարողանան հասկանալ:

Ես իմաստություն կտամ միայն երեխաներին և ոչ՝ գիտունին:

Տե՛ր, այդ դեպքում նրանց փրկվելու հնարավորությունները շատ քիչ են, նրանք կորած են:

Նրանք կկորչեն, եթե Ինձ մոտ չգան որպես երեխաներ:
Վասո՛ւլա, Ես քեզ ավելի տոկունություն կտամ տառապանքի մեջ, քանզի դու պիտի խարազանվես[2]: Ինձ ազատ թող և մի՛ միջամտիր Իմ Գործերին:

Տե՛ր, Դու կներե՞ս նրանց և ներողամիտ կլինե՞ս նրանց թուլությունների հանդեպ:

(Ես դեռ համարձակվում էի միջամտել):

Ես չեմ կարող տանել, եթե տեսնեմ, որ նրանք վնաս են պատճառում քեզ, զավակս:

Զգիտեմ Քեզ ինչ ասեմ, բայց կարո՞ղ եմ խնդրել, որ ներողամիտ լինես նրանց թուլությունների նկատմամբ:

Ծաղի՛կս, Ես չեմ ուզում տեսնել, թե ինչպես են նրանք քեզ ոտնահարում: Ես չեմ կարող հանդուրժել, որ նրանք քեզ ճզմեն:

Բայց մի՛ հարվածիր նրանց, սովորեցրո՛ւ նրանց, Տեր:

Ուրեմն նրանք պետք է բացեն իրենց ականջները:
Վասուլա՛, դու գիտե՞ս, թե ինչ է սպասվում քեզ: Դու տեսել ես Իմ խաչը: Հիշի՛ր, որ քո փորձությունը թեև ծանր է լինելու, բայց Ես երբեք չեմ լքելու քեզ: Իմ կողքին քո Սուրբ Մայրն է, լսի՛ր Նրա խոսքերը:

«Աղջի՛կս, սիրելիս, սրբացրո՛ւ Գարաբանդալը: Ես երևացել եմ Գարաբանդալում՝ տալով Իմ Պատգամը: Իմ Պատգամը չի տարածվել ինչպես հարկն է: Քահանայական հոգիներից շատերը մերժում են Իմ

[1] Աստծո արարչությունը
[2] Խորհրդանշում է հոգու տառապանքը:

երևումները՝ դրանով իսկ մերժելով իրենց հոգում Մեզ տեղ տալուց: Բայց ես չեմ մոռացել Իմ սիրելի զավակներին: Եղել են ժամանակներ, երբ նրանք կասկածեցին և, չփոթության մեջ ընկնելով, ժխտեցին Իմ երևումները: Սա տրված էր, որպես մի օրինակ, ցույց տալու Իմ զավակներին[1], թե ինչպիսի չփոթություն է իշխում այսօրվա Եկեղեցում: Ես խոստացել եմ, որ հաստատելու եմ Գարաբանդալի Իմ երևումները: Ժամերը թռչում են, իսկ Իմ Պատգամները չեն տարածվել ինչպես հարկն է, և ոչ էլ Իմ Սրբությունն է մեծարվել»:

Աստվա՛ծ իմ, դա այնքան անհետաձգելի է հնչում, կարծես այն պետք է որ տարածվի այսօր, հենց այս ժամին: Ես Քեզնից եմ կախված, որ բաց անես մեր ուղին: Մենք կամենում ենք տարածել Քո Պատգամները, բայց ուժ տուր մեզ, արիություն և հնարավորություններ իրագործելու Քո իղձերը: Ամեն:

Մի՞թե Ես քեզ կլքեմ հիմա, Իմ Վասուլա:

Ո՛չ, Տեր, մենք Քո ուժի կարիքն ունենք, որ շարունակենք:

Դուք բավարար ուժ կստանաք կատարելու այն, ինչ որ նախատեսված է իրագործվելու :

Դեկտեմբերի 6, 1987

Գրի՛ր, Վասուլա:
Ես՝ Տերս, ցանկանում եմ, որ դու պատվես Իմ Խաչի Կայանները: Լո՛ւյս վառիր, նախ՝ մեծարելով Իմ Մորը, մոմ վառելով Նրա համար, ապա՝ Ես ցանկանում եմ ձեզ տեսնել ծնրադրած Իմ բոլոր Կայաններում, պատվելով Ինձ՝ վառվող մոմեր բռնած Իմ Կայաններում:

Տե՛ր, Դու արդեն բացահայտել ես Քո ծրագրերը: Ես խնդրում եմ, որ մեզ ճամփա բացես Քեզ պատվելու համար:

Ես դա կանեմ: Հենվի՛ր Ինձ վրա, և Ես քեզ կտանեմ:
Վասո՛ւլա, երբ սա իրագործվի, քեզ կհիշեցնեմ, որ շուտով վրա է հասնելու երկրորդ իրադարձությունը: Ես քեզ հիշեցնելու եմ, որ դու այլևս քո հանգստությունը չփնտրես:

Աստվա՛ծ իմ, Դու մեր բոլորի մասի՞ն ես խոսում:

Ո՛չ, Ես խոսում եմ քեզ հետ, Վասուլա, նայի՛ր Իմ Դեմքին: Ես պիտի հիշեցնեմ քեզ, որ այդ դեպքից սկսած, դու Իմ զորեղ Ձեռքը պիտի զգաս քեզ վրա: Իմ Աստվածային ուսուցումները պիտի հոսեն քո մեջ: Դու պետք է զիջող լինես, պատրաստակամ՝ Ինձ ծառայելու, և հավատարիմ՝ մեծարելով Ինձ: Ես օգտագործելու եմ քեզ: Դու պիտի օգտագործվես

[1] աշխարհին

ամբողջությամբ, լինելով անգամ Իմ թիրախը: Դու Իմ քարետախտակն ես, փոքրիկս: Ես մտադիր եմ Իմ ոչխարներին ետ բերել դեպի Պետրոսը:

Տե՛ր, Աստված իմ, մի տարուց ավելի է, որ ես Քեզ հետ եմ, լինելով Քո քարետախտակը: Ամեն օր Դու գործածել ես ինձ, և ես սիրում եմ Քեզ, որովհետև այս ձևով ես ավելի մոտ եմ զգում Քեզ: Դու կարող ես ինձ գործածել, ես հավատարիմ կլինեմ և կլինեմ նաև Քո գերին:

Վասո՛ւլա, Ես քեզ որքան եմ սիրում: Խաչի Կայանները կատարելուց հետո, դու կհամբուրե՞ս Իմ ոտքերը:

Այո՛, Տե՛ր, կհամբուրեմ:

Լսի՛ր, մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը: Թվում է, թե դու Ինձ աչքաթող ես անում այս օրերին:

Աստվա՛ծ իմ, ուժ տուր ինձ, որ կարողանամ ամեն ինչ կատարել: Դու գիտես, թե ես ինչպես եմ ուզում գոհացնել Քեզ, բայց իմ կարողությունը սահմանափակ է: Դու կներե՞ս ինձ:

Օ՛, Վասուլա, ինչպես եմ քեզ սիրում: Ես ներում եմ քեզ: Գրի՛ր, ինչ որ հիմա տեսնում ես:

(Երբ Հիսուսն ասաց, որ աչքաթող եմ արել Իրեն, Նա տխուր ու լուրջ տեսք ուներ: Հետո ես խնդրեցի Նրան, որ ինձ ների և շատ շուտով Նրա Աստվածային Դեմքը լուսավորվեց մի պայծառ ժպիտով, որից Իր այտերի վրա փոսիկներ հայտնվեցին, և լայն բացեց Իր թևերը, որպեսզի ես Նրա գրկի մեջ ընկնեմ: Ապա Նա ինձ հայտնեց մնացյալը՝ ներելով ինձ):

Ներումը միշտ կտրվի՝ առանց ամենափոքր իսկ տատանման: Ես քեզ կարողություն տվեցի Ինձ լիովին նշմարելու, որպեսզի դու կարողանաս պատմել Իմ զավակներին, թե ինչպես եմ Ես ներում:
Ե՛կ, մենք, մեզ:

(Երբ Հիսուս ասում էր այդ, Նա մի շարժում արեց Իր ցուցամատով՝ ուսուցչի նման զգուշացնելով ինձ):

Դեկտեմբերի 7, 1987

Ես առաջնորդում եմ քեզ «ոչ-ուղղափառ» ուղիով, Ես Աստված եմ, և Ես եմ ընտրում ցանկացած ուղին: Ժամերը թռչում են, ժամը մոտ է: Ես պիտի առաջնորդեմ քեզ այնպես, ինչպես ուզում եմ, Վասուլա:

Դեկտեմբերի 8, 1987

(Ես խուճապի մատնվեցի՝ մտածելով, թե ինձ ինչ է սպասվում: Սրանք ծայրահեղ թուլության վայրկյաններ էին: Ես շատ անհանգստացա):

Աստվա՛ծ իմ, մի՞թե չեմ կարող Քեզ սիրել սովորական ձևով, ինչպես յուրաքանչյուր ոք: Սիրելի Աստված, Դու չե՞ս կարող ինձ առաջնորդել սովորական ուղիով, փոխանակ ինձ տանելու այս ճանապարհով: Օ՜հ, Աստված, Ես ինձ այնքան պատախանատու եմ զգում այս բոլորի համար: Ինձ համար տառապանք է իմանալ, որ հակառակ ինձ պարգևած Քո բոլոր շնորհների, ես դեռ մնում եմ թշվառ, մեղավոր ու չար: Ինչո՞ւ, Տե՛ր, ինչո՞ւ ես Դու ինձ պահպանում: Ես այլևս Քո դեմքին չեմ կարող նայել: Ես Քեզ արժանի չեմ: Թույլ տուր, որ գնամ իմ անկյունը, ինձ մի՛ պահիր Քեզ այսքան մոտ ...

Ինչո՞ւ, ինչո՞ւ:

Ո՛չ, Աստված իմ, ես Քեզ կհետևեմ ու կսիրեմ սովորական ձևով, ինչպես մյուսները:

Սիրեցյալս, Ես սիրում եմ քեզ[1]:

Օ՜հ, Հիսուս, ես միայն վիրավորում եմ Քեզ, թույլ տուր, որ գնամ: Ես կմնամ Իմ թշվառության մեջ, բայց չեմ դադարի Քեզ պատվելուց ու Քեզ սիրելուց[2]:

Սպասի՛ր:

Տե՛ր, այս բոլորն իմ հասկացողությունից բարձր է, իմ ուժերից վեր[3]:

Ո՛չ, սա քո հասկացողությունից բարձր չէ, ոչ այլևս: Սիրեցյալս[4], Իմ Վերքերից հինգը լայնորեն բացված են, և Իմ արյունը հոսում է առատորեն: Ես տառապում եմ, Քո Աստվածը տառապում է: Դու Իմ Մարմինը չե՞ս փառաբանի: Իմ հինգ Վերքերը բաց են քեզ համար, որ դու տեսնես, թե Իմ արարչությունը ինչ տառապանք է պատճառում Ինձ:

Ես սիրում եմ ամենքիդ՝ հակառակ ձեր չարության, հակառակ ձեր պակասությունների, հակառակ ձեր կասկածների, հակառակ ձեր անօրենությունների, հակառակ ձեր մերժումների, հակառակ ձեր կասկածամտության և հակառակ Իմ Մարմնի հանդեպ ունեցած ձեր կեղծավորության: Դու դեռ չե՞ս հասկանում: Ինչո՞ւ եք դուք ձեր սրտերը ընդմիշտ փակել Իմ հանդեպ: Ինչո՞ւ է ձեր մեծամասնությունն Ինձ լքել: Ինչո՞ւ են Իմ հետևորդները փոխել իրենց ուղին: Ինչո՞ւ նրանք անուշադրության մատնեցին Իմ պարտեզը: Ինչո՞ւ նրանք չջրեցին Իմ ծաղիկները: Ինչո՞ւ:

---

[1] Ես տեսա, որ Հիսուս վիրավորվեց իմ խոսքերից: Ես սարսափելի վատ զգացի:
[2] Ես ուզում էի անկողնում պառկել ու քնել, որպեսզի ազատվեմ իմ սարսափելի վիճակից:
[3] Նկատի ունեի այս գերբնական մոտեցումը և գալիք բոլոր իրադարձությունները:
[4] Հիսուս «պոռթկաց» ցույց տալով ինձ, թե նա ինչպես է տառապում:

Ո՞ւր են Իմ գառները, Պետրո՛ս: Դու Ինձ կօգնե՞ս գտնել ու միավորել նրանց: Ե՛կ, Ես քեզ կօգնեմ, որ գտնես նրանց: Ես ուտելիք կբերեմ նրանց համար և կսնեմ: Ո՛չ, Պետրոս, դու ոչինչ չես գտնի այս ամայության մեջ, ոչինչ չի մնացել: Այն քիչը, որ մնացել էր, այժմ չոր է ու ամայի, քանզի, որքան որ հայացքով կարելի է ընդգրկել ոչինչ չկա, բացի ամայությունից: Բայց Ես՝ Տերս, Իմ Հացը պիտի բերեմ Իմ շտեմարաններից և պիտի լցնեմ ձեր շտեմարաններն Իմ մթերքով: Ես պիտի կերակրեմ Իմ գառներին: Ես պիտի ոռոգեմ այս ամայությունը: Վստահե՛ք Ինձ, սիրելիներս, վստահե՛ք Ինձ, և Ես նորից պիտի միավորեմ ձեզ բոլորիդ: Միասի՛ն, Իմ Վասուլա: Ծաղի՛կս, Ես չեմ ուզում տեսնել, թե նրանք ինչպես են քեզ տրորում: Ես նպատակ ունեմ քեզ օգտագործել Իմ Մարմնի փառքի համար: Ես՝ Աստվածս, սիրում եմ քեզ:

(Երբ մեր Տերը այս պատգամում ասաց. «Հակառակ Իմ Մարմնի հանդեպ ձեր ունեցած կեղծավորությանը», Նա նկատի ուներ նրանց, ովքեր աշխատում են ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ համար: Սովորաբար, երբ եկեղեցական իշխանությունները իրար են հանդիպում մի լուծում գտնելու համար, պատահում է հետևյալը. այն մեկը, որ գալիս է հանդիպելու մյուսին, հույսով է լինում, որ նա, որին հանդիպելու է, տեղի կտա «ինչ-որ բանում»: Ի վերջո նրանք բոլորն էլ շատ չնչին բան են գիշում: Սա ինձ ասվեց Տիրոջ կողմից երեկ գիշեր):

Դեկտեմբերի 11, 1987

Հիսո՞ւս:

Ես եմ:

Հիսուս, այդ ինչպե՞ս է պատահում, որ սովորական աշխարհիկ մարդիկ ավելի հեշտությամբ են հավատում, քան թե քահանա աստվածաբանները, և այլն... Հիշո՞ւմ ես, երբ Դու ինձ հարցրիր այդ, Տե՛ր:

Հիշում եմ:

Երբ նրանք կարդում են առաջին գիրքը, ուզում են մնացածն էլ կարդալ: Հետո, նրանց մեծ մասը, առաջին գիրքը կարդալուց հետո, ուզում է միշտ աղոթել, անգամ նրանք, ովքեր երբեք չեն աղոթել իրենց կյանքում: Դա սքանչելի է:

Վասո՛ւլա, Իմ զավակները քաղցած են: Երբ նրանք տեսնում են Իմ Հացը, նրանք խլում են Այն, որ մեղմացնեն իրենց քաղցը: Եթե նրանք էլի են ուզում, գալիս են Ինձ մոտ[1], որ նորից ստանան, և Ես առաջարկում եմ այն ամենը, ինչ որ ունեմ:

[1] աղոթելով Նրան

Բայց, Տե՛ր, մեկ կամ երկու անգամ պատահել է, որ նրանք, ովքեր կարդացել են այն, ուզեցել են իրենց ուրախությունը կիսել քահանայի հետ, մտածելով, որ նա նույնպես կուրախանա, բայց հիասթափվել են, տեսնելով, որ քահանան ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում: Իրականում քահանաները վհատեցնում են նրանց:

Վասո՛ւլա, դրանք այն անձիք են, ովքեր Ինձ վիրավորում են ու խոցում նորից ու նորից: Ես անտանելի տառապում եմ տեսնելով, որ Իմ յուրայինները մերժում են Ինձ: Նրանք ոչինչ չունեն մատուցելու Իմ գառներին:

Բոլոր դեպքերում, Տե՛ր, հակառակ քահանաների ժխտական կեցվածքին ու անտարբերությանը, դա չի վհատեցնում նրանց, ովքեր կարդում են պատգամները, որովհետև նրանք իսկապես խաղաղություն են ձեռք բերում՝ կրկին հանդիպելով Քեզ: Բայց նրանք ցավ են զգում, որ դա այդպես է, հատկապես, երբ պարզվում է, որ նրանք ոչինչ չգիտեն երևումների մասին: Նրանք զարմանում են, թե ինչու Եկեղեցին ավելի շատ չի խոսում այդ մասին: Նրանցից մեկը ակնարկեց, որ այս բաների մասին դիտմամբ խոսվում է շշուկով և միայն «իրենց» միջավայրում:

Այո՛, Վասուլա, Իմ քահանաները ճնշում են գործադրում այսօրվա Իմ Գործերի վրա: Աղջիկս, Ես ասել եմ և նորից կասեմ, որ նրանք պահում են գիտության բանալին, բայց ո՛չ իրենք են ներս մտնում, և ո՛չ էլ թույլ են տալիս, որ ցանկացողները ներս մտնեն: Նրանք թերահավատությամբ, կասկածներով ու կեղծավորությամբ փակում են Ճանապարհը: Իբրև զավակներ, Ես կորցրել եմ նրանց: Նրանց իմաստությունը կուրացրել է իրենց՝ շեղելով դեպի Ինձ բերող ուղուց:

Սիրելիս, զոհաբերի՛ր ամեն ինչ[1], որ քեզ անհանգստացնում է հիմա և աղոթիր Ինձ հետ:

Այո՛, Հիսուս:

«Հա՛յր,
թող նրանց քննարկման առարկան
խաղաղությունը լինի:
Ների՛ր նրանց
անուղղամտությունը:
Հա՛յր, հեռու մի՛ մնա,
եթե նրանք հալածեն Ինձ.
ե՛կ, ե՛կ Ինձ պաշտպանելու[2]:
Եղի՛ր իմ կողքին,
լուսավորի՛ր և սովորեցրու նրանց.
թույլ տուր, որ տեսնեն

[1] Թողնել տնային գործերս, որոնք կուտակվել են, տղայիս կերակուրը, որ պետք է պատրաստեմ, ամուսնուս, որը շատ հիվանդ է և հնարավոր է, որ լարդաբորբ ունի: Ես պատրաստվում էի գնալու:
[2] Պաշտպանելու Իր խոսքը և ոչ թե՝ ինձ:

իրենց սխալները:
Դու՝ Արդար ես,
փայլի՛ր նրանց վրա
փոխանակ (դատելու),
որպեսզի նրանք
գովերգեն Քեզ և ասեն.
«Մեծ է մեր
Ամենաբարձրյալ Աստվածը,
որն ուզում է
Իր զավակներին տեսնել
Խաղաղության մեջ:
Գովերգենք Տիրոջը,
որը գալիս է միավորելու մեզ:
Գովերգե՛նք Տիրոջը, որը գալիս է
հայտարարելու Իր այսօրվա
Գործերի մասին: Ամեն»:

Գնա՛նք, սիրելիս, հանդիպիր Ինձ ավելի ուշ: Հիմա հիշի՛ր Իմ Ներկայության մասին: Ես սիրում եմ քեզ, աղջիկս:

Այո՛, Տեր, ես կհիշեմ:

Դեկտեմբերի 11, 1987

Ծաղի՛կս, երբեք չկասկածես նրանում, որ այդ Ես եմ, Հիսուս՝ քո Փրկիչը: Տե՛ս, ետ նայիր այնտեղ, ուր Ես գտել եմ քեզ[1]: Ես քեզ գտա թշվառության մեջ, ուր դեռ մնում են Իմ զավակներից շատերը: Ե՛կ, Վասուլա, դու տեսնո՞ւմ ես այս խաչը:

(Հիսուս նկատի ուներ ձիթապտղի փայտից պատրաստված խաչը, որը բերված էր Երուսաղեմից և այժմ դրված էր ինձ մոտ, նոթատետրի վրա: Դա այն խաչն է, որն ամբողջ գիշեր պահում եմ իմ ձեռքում):

Այո՛, Իմ Վասուլա, հիմա բռնիր այն քո ձեռքում և բարձրացրու Իմ Շուրթերին. այո՛, բարձրացրու այն:

(Հիսուս այնպես քաղցրորեն համբուրեց խաչը, երբ ես այն բարձրացրի Նրա Աստվածային Շուրթերին):

Դու էլ չե՞ս համբուրի:

(Ես համբուրեցի):

[1] Դա մի արագ պատկեր էր անցյալից:

Բարձրացրո՛ւ այն հիմա. Ես օրհնեցի այն: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, սիրելիներս:

Դեկտեմբերի 12, 1987

Աստվա՛ծ իմ, լսած կլինես, թե հիմա ինչի համար եմ ես մեղադրվում, Տեր: Երրորդ անգամն է, որ ԵՀովայի վկաները մեղադրում են ինձ: Նախկինում, երկու անգամ նրանք ասացին, որ սա սատանայի գործն է (առանց կարդալու այն): Այս անգամ, ես, իբր անցյալում ընկած հրեշտակների մի ժառանգ եմ: Տե՛ր, ինչո՞ւ: Ինչո՞ւ քրիստոնյաները այդքան տարբեր են մեկը մյուսից, ինչո՞ւմն է սխալը:

Իմ Եկեղեցին դեռ երբեք նման խառնաշփոթության մեջ չի եղել: Հիշի՛ր քո Սուրբ Մոր խոսքերը. «Գարաբանդալի խառնաշփոթությունը որպես մի օրինակ է տրված, ցույց տալու համար, թե ինչքա՜ն մոլորված է այսօրվա Իմ Եկեղեցին. <u>այն իշխում է խառնաշփոթության մեջ</u>»:

Աստվա՛ծ իմ, այնքա՜ն տխուր եմ, այնքա՜ն տխուր, Տե՛ր:

Դու վշտանում ես, որովհետև զգում ես Ինձ, դու սկսում ես Ինձ ճանաչել: Ինչպես եմ ուրախանում, երբ դու հասկանում ես, թե Ես ինչից եմ տառապում: Վասո՛ւլա, Ես էլ եմ նրանց սիրում, բայց նրանք սատանայի կողմից սխալ ուղիով են առաջնորդվել: Սատանան կուրացրել է նրանց, և երբ նրանք կուրացած էին, առաջնորդեց նրանց մեկ ուրիշ ճանապարհով և իրենց մոլորության մեջ, նրանք ոչ միայն անտեսում են Իմ Մորը, որպես Երկնքի Թագուհու, այլ նաև անտեսում են Իմ Պետրոսին և չեն ընդունում նրա իշխանությունը Իմ բոլոր գառների վրա, որ Ես Ինքս եմ տվել նրան: Նրանք նաև հալածում են Իմ ծաղիկներին և դատապարտում Իմ այսօրվա բոլոր Երկնային Գործերը: Սատանան սովորեցրել է նրանց աղավաղել այն ամենը, ինչ նրանք չեն հասկանում՝ խանգարելով, որ նրանք Ճշմարտությունն ընկալեն: Նրանց ուսմունքը ներծծվել է ձեր մեջ, սիրելիներս, և սրանք նրանք են, որոնց մասին Ես զգուշացրել եմ[1]: Նրանք սիրում են «սատանայի ձեռքի գործ» համարել Իմ զավակներին տրված շնորհները՝ մերժելով ձեր Սուրբ Մորը:

Վասո՛ւլա, դա քո գործը չէ, որ մեղադրես նրանց: Դրա փոխարեն սովորիր ասել. «Թող Տերը լինի դատավորը և ուղղի նրանց»:

Սիրելիս, ժամանակների Վերջը մոտ է: Ես ասել եմ, որ ձեզ նշաններ և զգուշացումներ եմ տալու: Ես տանջվում եմ, երբ նայում եմ[2], թե նրանք ինչպես են ծաղրում Իմ հաստատությունը[3] և հետևում միմիայն իրենց սեփական ուսմունքին: Դրանք Կայեններն են և վտանգ են սպառնում Իմ Աբելներին: Նրանք խոչընդոտ են նրանց համար, ովքեր ուզում են աճել Իմ Տան մեջ, մոլորեցնող մի ջահ, որը սխալ ուղիով է տանում Իմ ժողովրդին: Ինչպես մի կարծրացած ժայռ, նրանք ըմբոստացել են Իմ

[1] կեղծ կրոնների մասին
[2] ԵՀովայի վկաներին
[3] Հռոմի Եկեղեցին

հաստատության դեմ: Ես ինչպե՞ս կարող եմ նրանց թագավորություն առաջարկել երկրի վրա, երբ իրենց ներսում նրանք ընդունել են ուսմունքներ, որոնք գալիս են Կայենից:

Ես պիտի հարուցեմ ձեզ և ձեր հոգին պիտի գա դեպի Ինձ, Իմ Բազուկների մեջ: Դուք ոչ այլ ինչ եք, եթե ոչ՝ մի անցնող ստվեր երկրի վրա, սոսկ փոշու մի մասնիկ, որն անձրևի առաջին կաթիլների հետ կանցնի, կգնա: Ես չե՞մ ասել, որ Իմ Հոր Տան մեջ շատ օթևաններ կան, և որ Ես ձեզ համար տեղ կպատրաստեմ, որպեսզի, որտեղ որ Ես եմ, դուք էլ կարողանաք այնտեղ լինել: Դեպի Ինձ և դեպի Իմ Տունն են գալու հոգիները[1]: Վասուլա, նրանք դավեր են նյութում Իմ հաստատության դեմ: Նրանք փորձում են արմատախիլ անել Իմ տիրապետությունը: Ես սիրում եմ քեզ, մի՛ արտասվիր, ծաղիկս:

(Երբ Ես զգում եմ, որ Հիսուս տխուր է, Ես նույնպես տխրում եմ):

Ես քեզ վրա կդնեմ Իմ փչե պսակը, ... իսկ գեղարդը նրանց մոտ է: Նրանք դավ են հյուսում Իմ Տան դեմ՝ ժողով, ժողովի ետևից, որպեսզի Պետրոսի վերջը տան:

Օ՜հ, Աստված: Ո՛չ, Տեր:

Ի մի եկեք, սիրելիներս, ամրացրե՛ք Իմ Եկեղեցին: Միավորվե՛ք, սիրելիներս, նորից իրար մոտ եկեք, մե՛կ եղեք: Ծաղի՛կս արթուն մնա:

Սերը կփրկի ձեզ, Իմ սիրելիներ: Ծաղիկս, բացվի՛ր, բացվի՛ր և թույլ տուր, որ լցնեմ քո մեջ Իմ կենսահյութը, որը կբարձրացնի քեզ, զորացնելով քեզ, որպեսզի կարող լինես ոտնահարել Իմ թշնամիներին: Հիշի՛ր, ես՝ Տեր Հիսուս Քրիստոս, քո առջևում եմ:

(Այս պատգամը շատ անհանգստացրեց ինձ):

Ինչպե՜ս կուզենայի, որ նրանք լսեին: Դա ծայր աստիճան կարևոր է:

Դեկտեմբերի 19, 1987

Ես սեր եմ:

Ասա՛ նրանց, ասա՛ նրանց, Վասուլա, որ անկեղծությունը կհաղթի չարին: Խոնարհությունը կթուլացնի դևին, սերը դիմակազերծ կանի սատանային: Ֆաթիմայի սրբավայրը կանչում է, որ բարեփոխումներ կատարվեն: Վերադարձի՛ր դեպի Ինձ, արարչություն: Ե՛կ ու ճանաչիր Ինձ, արարչություն: Եկե՛ք և Ինձ աղոթեք, մեղք մի՛ գործեք այլևս: Հավատացե՛ք Ինձ և մի՛ կասկածեք, եկե՛ք և ապաշխարեք. եկե՛ք և Ինձ ստացեք: Սո՛ւրբ եղիր, Վասուլա: Օ՜, Վասուլա, ետ բեր Իմ արարչությունը դեպի Ինձ: Խորան: Ես քո մեջ կլցնեմ Իմ Բոցը՝ քեզ սիրով բոցավառելով: Դու պետք է փնտրես Իմ շահերը՝ փառաբանելով

[1] Եհովայի վկաները, մոլորված, հավատում են, որ մարդ հավիտյան կարող է ապրել դրախտում՝ երկրի վրա, և մեր հոգին մեռնում է, երբ մենք մեռնում ենք:

Ինձ: Մի՛ եղիր մյուսների նման, որոնք փնտրում են իրենց սեփական փառքն ու մեծությունը:

Տե՛ր, ասել եմ և նորից կասեմ, որ ես փնտրելու եմ միայն Քո շահերը, Տե՛ր, և այն, ինչ որ Քեզ ավելի փառք կբերի: Վերցրու իմ կամքը, ես այն Քեզ եմ հանձնում:

Այո՛, Վասուլա, հագեցրո՛ւ Իմ ծարավը: Վերաբերվի՛ր Ինձ հետ, ինչպես մի թագավորի. պատվի՛ր Ինձ՝ քո Աստծուն. երբեք չըմբոստանաս Իմ դեմ: Սրբացրո՛ւ քո մարմինը՝ պատվելու համար Իմ Ներկայությունը քո մեջ: Սիրելիս, այն ամենը ինչ ծածուկ է, շուտով հայտնի կդառնա: Իմ Աստվածային Ձեռքը կբարձրացնի ծածկույթը, և ես կբացահայտեմ այն ամենը, ինչ որ թաքցված է եղել: Գարաբանդալը Ֆաթիմայի շարունակությունն է, իսկ Իմ թագավորությունը պիտի շարունակվի հավիտյան, քանզի այդ ես եմ: Ես եմ Ալֆան և Օմեգան:

Ինչպես եմ ես ձեզ սիրում, արարչություն, Իմ յուրայիններ, Իմ զավակներ: Սիրելիներս, եկե՛ք, եկեք Իմ լայն բացված բազուկների մեջ, վերադարձե՛ք դեպի ձեր Հայրը:

(Աստծո ձայնը լեցուն էր սիրով: Նա գրեթե աղաչում էր):

Ես սիրում եմ ձեզ:

Լսի՛ր, Վասուլա, երբ դու կլինես Իմ Աբելների մեջ, ես կլինեմ ձեր մեջ: Ես քո ականջին կշշնջամ Իմ հրահանգները: Ես Հաց ունեմ առաջարկելու, Իմ Հացը Սուրբ է: Ես միայն մի փոքր թթխմոր եմ օգտագործել Իմ պահեստներից, և դա բավարար էր խմորելու ողջ զանգվածը, այն խմորը, որն Իմ Նոր Հացն է հիմա: Դրա համար դե՛ն նետեք ձեր հին թթխմորը. այն կորցրել է իր ազդեցությունը: Սիրելիներս, եկե՛ք և օգտագործեք Իմ նոր թթխմորը: Ձեզ ամբողջովին նորոգե՛ք, որպես մի նոր թխված հաց, որը գրավիչ է քիմքի համար և որը կհրապուրի Իմ Գառներին՝ կերակրելով նրանց: Պատվի՛ր Իմ Հացը՝ Անկեղծության, Ճշմարտության և Սիրո Իմ Հացը, որը ես սրբացրեցի: Թույլ տվեք, սիրելիներս, որ ես ուրախանամ: Թողե՛ք, որ Իմ գառները ճաշակեն Իմ Նոր Հացը, բաժանե՛ք Այն նրանց միջև և թողեք որ քաղցած զանգվածները ճաշակեն, թույլ տալով նրանց, որ կշտանան: Ինձ չեն համոզի իմաստունի փաստարկները. դրանք Ինձ վրա տպավորություն չեն գործում: Դրա համար դու նույնպես թույլ մի՛ տուր, որ նրանք քեզ վրա տպավորություն գործեն, աղջիկս: Իմ նպատակն է վերադարձնել Իմ ցրված գառներին: Վերադարձրու նրանց դեպի Սերը:

Գրի՛ր Իմ Անունը:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 21, 1987

Արդարադատ իմ Աստված, անգամ իմ ոչնչությամբ և իմ այս մեծ անկարողությամբ, իմ ցանկությունները Քո կողմից են արմատավորված իմ մեջ: Դրանք Քո ցանկություններն են: Ես ցանկանում եմ, որ Քո Անունը փառավորվի և Քո գառները կրկին հավաքվեն՝ ճանաչելով Քեզ, ճանաչելով մեր Երկնային Մորը, որ Քո թագավորությունը հարատևի հավիտյան՝ հաղթելով չարին: Ես փնտրում եմ միայն Քո շահերը...

Այո՛, Վասուլա, փնտրի՛ր միայն Իմ շահերը: Եղիր անկեղծ ու ճշմարիտ. մի՛ եղիր միայն արտաքինով սուրբ, ինչպես մի քանիսն են: Ես՝ Տերս, գիտեմ նրանց: Նշանակություն չունի, թե նրանք որքան շատ են փորձում Աբելի նման երևալ, նրանք չեն կարող խաբել Ինձ. դիմակ կրելը չի օգնի նրանց թաքցնելու իրենց ինքնությունը: Ճշմարիտ եմ ասում քեզ, այս անգամ Ես քեզ ցույց կտամ այդ խաբեբաներին: Անսպասելի մի ժամի Ես պիտի գամ նրանց մոտ: Ինչի՞ են պետք Կայեններն Իմ Տան մեջ, որոնք փնտրում են միայն իրենց շահերը և ոչ՝ Իմը: Երկնային Զորությամբ Ես դիմակազերծ կանեմ նրանց. Ես կմերկացնեմ այն, ինչ որ թաքնված է: Մի՛ վախեցիր, սիրելիս: Ես կմաքրեմ Իմ Եկեղեցին: Ես կքշեմ բոլոր նրանց, ովքեր փակում են դեպի Աստվածային Սեր տանող ճամփան և արգելում են մուտք գործել Իմ Սուրբ Սրտի մեջ: Դու տեսնո՞ւմ ես, Վասուլա, Իմ Բաժակը դառն է: Աշխարհն Ինձ վիրավորում է, սիրելիս: Այդ Կայենները փակում են Ճանապարհը՝ հսկայական քարաբեկորներով արգելափակելով Այն: Նրանք փակում են Իմ գառների մուտքը, որոնք ուզում են գալ Ինձ մոտ: Նրանց ձեռքերը դատարկ են. նրանք այլևս ոչինչ չունեն առաջարկելու Իմ գառներին: Ոչինչ այլևս: Վասո՛ւլա, Իմ Հոգու օրհնյալ, հետևի՛ր Ինձ: Ես պիտի առաջնորդեմ քեզ, մի՛ հուսահատվիր: Մի՞թե Ես քեզ երբևիցե կլքեմ:

Ո՛չ, Տեր, Ես Քեզնից եմ կառչում, Սիրելի Հայր:

Ահա, բռնի՛ր Իմ Ձեռքը. երբեք չթողնես Այն: Ընդունի՛ր այն ամենը, որ գալիս է Ինձնից:

Դեկտեմբերի 22, 1987

Վասո՛ւլա, ժամանակը եկել է միավորելու Իմ Եկեղեցին: Միավորվե՛ք նորից, սիրելիներս, եկե՛ք և վերակառուցեք այս հին փլատակները: Վերակառուցե՛ք Իմ հին հաստատությունը, մի հաստատություն, որը հիմնադրվել է Իմ սեփական Ձեռքերով: Պատվե՛ք Իմ Մորը, ինչպես որ Ես եմ մեծարում Նրան, Ես, որ Բանն եմ և վեր ամենքից: Մի՞թե Ես չէի ցանկանա, որ դուք, որ փոշի ու մոխիր եք, ճանաչեք Նրան որպես Երկնքի Թագուհի և պատվեք Նրան: Այսօր Ինձ համար ցավալի է տեսնել, թե որքան քիչ գիտի Իմ արարչությունը Նրա կարևորության մասին: Նրանք, ովքեր Լյութերի անվան տակ են գտնվում և որոնք ամբողջապես մեկուսացրել են իրենց, պետք է վերադառնան դեպի Պետրոսը:

Տե՛ր, նրանք կցնցվեն:

Վասո՛ւլա, ես նրանց ծնկի կբերեմ՝ մեծարելու Իմ Մորը: Այդ ես եմ՝ Տերը, որ խոսում է. ես կծռեմ նրանց: Եվ երբ դա նրանք անեն, ես թույլ կտամ, որ Իմ Լույսը փայլի նրանց վրա ու բարձրացնի նրանց: Ես կզորացնեմ ձեր ցողունները, և դուք կնմանվեք մի ոռոգված պարտեզի, կնմանվեք մի աղբյուրի, որի ջրերը երբեք չեն ցամաքում: Ես կվերակառուցեմ Իմ Հաստատությունը:

Ե՛կ, սիրելիս, եղիր կակուղ և փափուկ, ինչպես այժմ, որպեսզի ես դրոշմեմ քեզ վրա Իմ խոսքերը. երբեք չմոռանաս Իմ Սուրբ Ներկայությունը:

Այո՛, Տեր:

Դեկտեմբերի 23, 1987

Աստվա՛ծ իմ, բողոքականները կցնցվեն:

(Ես ոչ մի կերպ չէի կարողանում այդ մտքից ազատվել):

Վասո՛ւլա, տարիներ շարունակ ես սպասում եմ, որ նրանք փոխվեն: Այժմ Ինձ ազատ թող դրի առնելու Իմ ցանկությունները:

Բայց նրանք կցնցվեն:

Լսի՛ր, կարո՞ղ է մեկը Ինձ լսել միայն այն ժամանակ, երբ իրեն է ձեռնտու, իսկ հետո փակի իր ականջները, եթե հարմար չի գտնում Իմ ասածը:

Այդ դեպքում նրանք իսկույն կմերժեն <u>ամեն ինչ</u>, քանի որ նրանք չեն կարողանալու ինչ-որ մասեր ընտրել: Դրա համար նրանք պիտի պնդեն, որ այդ Դու չես:

Եթե նրանք այդ անեն, ուրեմն նրանք Ինձ որպես իրենց Աստվածը չեն ճանաչի:

Տե՛ր, կարո՞ղ եմ համարձակվել ասելու, որ դա շատ ծանր կլինի նրանց համար: Նրանք չեն զգում, որ չեն ընդունում Քեզ: Բոլոր դեպքերում նրանք սիրում են Քեզ և <u>պաշտում են</u> Քեզ, Տե՛ր:

Վասո՛ւլա, <u>ես եկել եմ ձեր բոլորին միավորելու</u>: Մի՞թե Իմ աշակերտներից որևէ մեկը կմերժի Իմ կոչը:

Ո՛չ, չի մերժի, <u>եթե նրանք անկեղծ են</u>, Տե՛ր:

Քո այդ հայտարարության մեջ ընդգրկված է այն ամենը, որ կարելի է ասել. «<u>Եթե նրանք անկեղծ են</u>...», ուրեմն կլսեն:

Ես գալիս եմ փայլելու ձեր բոլորի վրա ու լուսավորելու ձեզ, որպեսզի կարողանամ միավորել ձեզ: Բայց, ցավոք սրտի կլինեն այնպիսիները, որոնք խավարը կգերադասեն Լույսից, որովհետև չար են նրանց գործերը: Նրանք կմերժեն գալ Իմ Լույսի տակ, քանզի վախենում են ցուցադրել իրենց գործերը: Բայց Իմ նվիրյալները և նրանք, ովքեր անկեղծորեն ընդունում են Իմ Գործերը և հետևում են Ինձ, կգան դեպի Իմ Լույսը՝ առանց վախենալու ցուցադրել իրենց գործերը, որովհետև նրանք ցույց կտան, որ ինչ որ իրենք անում են, անում են Իմ մեջ՝ իրենց Աստծո մեջ:

Ես ասել եմ, եթե դուք ապրեք Իմ Խոսքով, ապա դուք իսկապես կլինեք Իմ աշակերտները: Դուք կսովորեք Ճշմարտությունը, և Ճշմարտությունը ձեզ կազատագրի: Իսկ հիմա, Ես ձեզ կասեմ հետևյալը. եթե դուք հավատ ընծայեք Իմ այսօրվա Խոսքի հանդեպ, դուք իսկապես կլինեք Իմ աշակերտները: Դուք Անկեղծություն կսովորեք Ճշմարտության մեջ, իսկ Ճշմարտությունը ձեզ կազատագրի ու ձեզ կօգնի միավորվել Սիրո մեջ և Ինձ Փառավորել:

Ես գալիս եմ դեպի ձեզ՝ Իմ Սիրտը բռնած Իմ Ձեռքում, առաջարկելով Այն ձեզ: Բայց չնայած Իմ կոչին շատերն Ինձ պիտի մերժեն, չընդունելով Ինձ որպես Աստված, որովհետև նրանց սրտերը կարծրացել են: Եթե նրանք Ինձ սիրեին, նրանք կլսեին Իմ կոչը: Եթե նրանք չեն ուզում լսել, այդ նրանից է, որ իբրև զավակներ Ես կորցրել եմ նրանց: Նրանց իմաստությունը կուրացրել է իրենց, բայց ճշմարիտն ասեմ ձեզ, այն ոչխարները, որոնք Ինձ են պատկանում, կճանաչեն Իմ Ձայնը: Նրանք, ովքեր չեն ճանաչի Իմ Ձայնը, դրանք Իմ ոչխարները չեն, որովհետև նրանք չեն հավատում Իմ Ամենակարողությանը:

Դուք գիտե՞ք, թե ինչու են Իմ գառները ցրված, իսկ Իմ Մարմինը՝ խեղված: Գիտե՞ք, թե ինչու է անհամաձայնություն տիրում Իմ Եկեղեցում: Դա նրանից է, որ նրանք քայլել են գիշերով, առանց որևէ առաջնորդող լույսի: Փնտրե՛ք Ինձ, որ Լույսն եմ, և Ես կառաջնորդեմ ձեզ: Դե՛ն նետեք ձեր կեղծավորությունը և համառությունը: Եղե՛ք հեզ ու խոնարհ. բա՛ց արեք ձեր սրտերը և թույլ տվեք Իմ կենարար հյութով լցնել ձեզ: Ես ձեր Բարի Հովիվն եմ, որ սիրում է ձեզ:

Վասո՛ւլա, խոսի՛ր Ինձ հետ, վարվիր Ինձ հետ, որպես քո Սուրբ Ուղեկցի:

Այո՛, Աստված իմ: Ես Քեզ սիրում եմ, Տե՛ր: Ես ցանկանում եմ փառավորել Քո Անունը, Տե՛ր:

Սիրելիս, Ես փառավորել եմ Իմ Անունը և կրկին կփառավորեմ: Իմ թագավորությունը հավիտյան է լինելու:

Արիացի՛ր, աղջիկս, Ես քեզ հետ եմ:

Դեկտեմբերի 26, 1987

(Դեկտեմբեր 25-ի լույս 26-ի գիշերը, Հիսուս ընդգծում էր Գարաբանդալի պատգամի կարևորությունը Ցաթիմայի պատգամի հետ միասին, և այն, որ նրանք երկուսը մեկ ամբողջություն են կազմում: Այդ գիշեր ես չկարողացա

հանգստանալ: Պատգամն անդադար կրկնվում էր իմ ականջներում: Հիսուս շեշտում էր Իր Ներկայությունը):

Ֆաթիմայի սրբավայրը աղաղակում է Գարաբանդալի սրբացման համար: Ես ձեզ սովորեցրել եմ կարդալ ժամանակների Նշանները: Դուք փնտրո՞ւմ եք այդ Նշանները: Դուք ինչպե՞ս կարող եք չնկատել նշանները: Մի՞թե դուք չեք ըմբռնում, թե ձեր մտքերն ինչո՞ւ են փակված: Ինչո՞ւ եք դուք հրաժարվում տեսնելուց, ինչո՞ւ եք հրաժարվում լսելուց: Մի՞թե դուք մոռացել եք Իմ Խոսքերը: Ինչո՞ւ եք կամենում կրկնել ձեր սխալները: Սիրելիներս, ինչի՞ համար են բոլոր այս չարակամ հարձակումները Գարաբանդալի Պատգամների վրա, որոնք տրված են ձեր Սուրբ Մոր կողմից, Որն Իմ Խոսքի Ուխտի Տապանակն է ձեզ համար: Ընդդիմությունը, որ քահանաներն ունեն Գարաբանդալի երևումների և պատգամի հանդեպ, դրանք բոլորը սատանայի խորամանկություններն են: Մի անգամ ևս, ինչպես Ֆաթիմայում, նա փորձում է խոչընդոտել Իմ Պատգամը տիեզերական դառնալուց:

Մի՞թե դուք չեք հասկացել, որ սատանան գիտենալով Իմ Փրկության Ծրագրի արժեքը, որը տրված է պարզ երեխաներին Իմ Մոր կողմից Գարաբանդալում, փորձում է մեկ անգամ ևս ջնջել Իմ Ծրագիրը և դրանով իսկ ձեզ թողնում է խավարում, որ կործանվեք: Այժմ սատանան, ավելի քան երբևէ, կրկնապատկում է իր ջանքերը, որ հաղթի ձեր Սուրբ Մորը, խորամանկություն բանեցնելով Իմ Եկեղեցու վրա, որ մերժի այդ երևումները, որոնք Ֆաթիմայի Փրկության Պատգամի շարունակությունն են կազմում: Սատանան իր մոլեգնության մեջ փորձում է խոչընդոտել ձեզ, որ չկերակրվեք Ինձնով:

Իմ Փրկության Ծրագիրը պարզ է. Ես գալիս եմ փրկելու Իմ զավակներին: Ճանաչե՛ք Իմ Ձայնը. մի՛ զարմացեք, թե ինչ տեսակ գործիքներ եմ Ես օգտագործում: Ես ընտրել եմ մի ոչնչություն, որը ոչինչ չգիտի, մի դատարկ կտավ, որպեսզի պարզ լինի, որ այս կտավը ծածկող[1] Գործերը գալիս են Ինձնից, և որպեսզի դուք հավատաք, որ այդ Ես եմ՝ Հիսուս, Աստծո Սիրելի Որդին, որը խոսում է այս անգամ: Իմ Թագավորությունը Ձեր մեջ է:

Ի՛մ Աբելներ, Ես գիտեմ, որ դուք Ինձ նորից կճանաչեք: Օ՛, սիրելիներս, ինչպես եմ Ես ձեզ սիրում: Ես շուտով կբացահայտեմ ձեզ Իմ Ծրագիրը:

Տե՛ր, եթե քահանայական հոգիները չճանաչեն Քո Ձայնը, ի՞նչ կպատահի:

Վասո՛ւլա, այդ մասին հարցնելը քո գործը չէ, հող և մոխիր[2]: Թույլ տուր առաջնորդել քեզ, ինչպես որ ուզում եմ: Այդ բաները դու Ինձ թող:

Այո՛, Տեր:

[1] քաթան
[2] Այս երկու բառերով Աստված հիշեցնում էր ինձ, որ ես ամենափոքրն եմ Իր բոլոր արարածներից:

Օ՜, լսիր, Ինձ սխալ չհասկանաս: Ես Սեր եմ. սովորի՛ր ընդունել: Ե՛կ, մե՞զ, մե՞նք: Ես պիտի լցնեմ քո լապտերը:

Այո՛, Տեր, շնորհակալ եմ Քեզ, որ Սիրով հոգում ես ինձ:

Արի գնանք:

Դեկտեմբերի 28, 1987

(Եթե ես ինձ մոռանում և համարձակվում եմ քննադատել որևէ մեկին, կամ մտածում, որ ես ավելին եմ հասկանում, քան մյուսները, Աստված անմիջապես հիշեցնում է ինձ այն մասին, թե Նա ում է տալիս Իր Պատգամը: Թափանցող մի հայացքով, Նա ինձ դնում է այն տեղը, որտեղ ես պետք է լինեմ: Հենց միայն երեք բառերով՝ «Հող ու մոխիր», Նա ինձ հիշեցնում է, որ ես ոչինչ եմ և նվազագույնը Իր բոլոր արարածներից: Ո՛չ, ոմանք սա չեն հասկանա, մտածելով, թե քանի որ Նա ինձ ընտրել է ստանալու Իր խոսքը, ուրեմն ես արժանի եմ դրան: Բայց մի՞թե չեք հասկանում, որ ինձ՝ ամենից նվազագույնին ընտրելով, Աստված ցույց է տալիս, թե Նա ինչպիսի անհատակ Ողորմություն ունի մեր հանդեպ, որ Նա անգամ ամենից աննշանին է տալիս: Եվ մի՞թե Նա <u>չառ</u> ավելին չի տա նրանց, ովքեր ավելի արժանավոր են Իր Աչքում, քան ես, եթե նրանք հավատով խնդրեն: Մի՞թե չեք նկատում, թե Նա որքան համբերատար է իմ նկատմամբ: Փոխանակ ինձ հարվածելու, Նրա Սերն ավելի առատորեն է հոսում: Ինչպե՞ս կարող են Իր արարածները մերժել Նրան: Բայց ես չպետք խոսեմ, քանի որ ես առաջ նրանց նման էի: Հիմա ես ասում եմ. «Փայփայե՛ք ձեր Աստծուն, ինչպես ձեր շունչն եք փայփայում, քանզի առանց շնչառության դուք կմեռնեք: Աստված մեզ կյանք է տվել՝ Իր շունչը փչելով մեր մեջ: Նրա Շունչը մեր կյանքն է, Աստված մեր շունչն է, Աստված մեր կյանքն է»):

Օ՜, Վասուլա, Իմ Աբելը այս անգամ պետք է ապրի Անկեղծությունը կոչնչացնի չարին[1]: Օրհնյալ են նրանք, ովքեր խրախուսում են Իմ Խոսքը: Օրհնյալ են Իմ ոչխարները, ովքեր ճանաչում են Իմ Ձայնը: Օրհնյալ են նրանք, ովքեր Իմ գառներին կրկին կկերակրեն:

Օրհնյալ են սրտով պարզերը: Օրհնեալ են նրանք, ովքեր կաղոթեն վարդարանով՝ Գարաբանդալի սրբացման[2] օրը, որոնք ծնրադրելով՝ կողջունեն Իմ Մորը: Օրհնյալ են նրանք, ովքեր միավորվելով՝ կկրեն խաղաղության և Սիրո Իմ խաչը: Օրհնյալ են Իմ ոչխարները, ովքեր կվերադառնան դեպի Պետրոսը: Օրհնյալ են նրանք, ովքեր խոնարհում են իրենց և հետևում Իմ օրինակին: Օրհնյալ են նրանք, ովքեր կատարում են Իմ պատվիրանը և սիրում են միմյանց, ինչպես որ Ես եմ սիրում ձեզ: Օրհնյալ են նրանք, ովքեր վկայում են Ինձ և չեն ամաչում Ինձ համար:

[1] «Անկեղծությունը կոչնչացնի չարին» արտահայտությունը կարելի է նաև թարգմանել այսպես. «Աբելը պիտի հաղթի Կայենին»:
[2] Աստված կանխատեսում է այս իրադարձությունը:

Վասո՛ւլա, Իմ Հոգու սիրելին, հավատա՛ և վստահիր Ինձ. Ես քո Երկնային Ուսուցիչն եմ. երբեք չկասկածես Իմ Խոսքին: Քաջալերվի՛ր, դու Թույլ ես, ե՛կ, հենվիր Ինձ վրա, քանզի Ես քո Ուժն եմ:

Այո՛, Տեր, ես Քո կարիքն ունեմ: Առանց Քեզ ես երբեք ոչինչ անել չեմ կարող:

Սիրի՛ր Ինձ, տենչա՛ Ինձ, եղի՛ր Իմ արքայությունը: Ա՜հ, Վասուլա, դու այժմ ինձ համար զոհողություններ ես անում, բայց շուտով դու Իմ մոտ կլինես:

Ես անձկությամբ սպասում եմ այդ օրվան:

Մոտ մնա Ինձ, Ես մի բան պիտի խնդրեմ քեզ:

Այո՛, Տեր:

Հանուն Ինձ, Վասուլա, հանուն Ինձ, դու կսովորե՞ս Վարդարանը: Միշտ ողջունիր Իմ Մորը, Վասո՛ւլա, դու այդ կանե՞ս Ինձ համար:

Այո՛, Տեր: Ես ցանկանում եմ սովորել: Տե՛ր, օգնիր ինձ, որ սովորեմ:

Հենց այս է, որ Ես ցանկանում եմ լսել բոլորիցդ, այս նույն բառերը, ովքեր որ չգիտեն. «Այո՛, Տեր, ես ցանկանում եմ սովորել. Տե՛ր, օգնիր ինձ սովորել»: Ես կսովորեցնեմ ձեզ բոլորիդ, ով որ ցանկանում է սովորել:

Ե՛կ, աղջիկս, հանգչի՛ր Իմ մեջ, Ես քեզ երբեք չեմ լքի:

(Հավանաբար, Հիսուս զգացել էր, թե ինչպես եմ կարոտում Նրան և տառապում այստեղ (Իրենից հեռու): Դա նորից «Աստծուն ծարավելու» մի պահ էր՝ ցանկանալով լինել Նրա զոհը, ամբողջովին անջատված: Թվում է, ես տատանվում եմ: Այստեղ մնալով ես կարող եմ «կերակրել» Իր գառներից մի քանիսին, ովքեր երբեք չեն մերժում Նրա Նոր Հացը՝ ուրախացնելով Նրան մի քանի հոգիների վերադարձի համար: Նրա հետ լինելը նույնպես հիասքանչ կլինի ինձ համար: Ո՞րն է ավելի լավ:

Դեկտեմբերի 31, 1987

Աստվա՛ծ իմ, ես աղոթում եմ, որ եկեղեցիները հավատան Քո Պատգամին:

Վասո՛ւլա, Ինձ հավատալը՝ դա մի շնորհ է տրված Իմ կողմից[1]:

Լսի՛ր Ինձ, Վասուլա: Դու Իմ Բերանով պիտի խոսես, և Ես պիտի խոսեմ այն փորձությունների մասին, որ կրելու է Իմ Եկեղեցին: Այս հայտնությունը Իմ Ձայնն է: Ճանաչե՛ք ժամանակի Նշանները.

[1] Մարդ պետք է աղոթի և Աստծուն խնդրի, որ ստանա այդ շնորհը:

ընդունե՛ք Իմ Պատգամը. համտե՛ս արեք Իմ Պատգամը. ճաշակե՛ք Իմ Պատգամը: Ողբացե՛ք անհավատի համար:

(Ավելի ուշ)

Փոքրիկս, դու սիրո՞ւմ ես Ինձ:

Ես անդադար պաշտում եմ Քեզ, Տե՛ր:

Այո՛, Վասուլա, սիրի՛ր Ինձ: Հատուցի՛ր անցյալիդ համար. հատուցի՛ր նրանց համար, ովքեր Ինձ չեն սիրում: Ծաղի՛կս, ամեն մի ծաղիկ լույսի կարիք ունի, որովհետև գիտի, թե Այն ինչ ազդեցություն ունի իր ծաղկաթերթերի վրա: Աղջի՛կս, դու կգղջա՞ս ու թողություն կխնդրե՞ս:

(Ես թողություն խնդրեցի անցյալի և ներկայի իմ մեղքերի համար, մինչ Նա պատրաստում էր ինձ Սուրբ Հաղորդություն ստանալու համար):

Մինչև հոգուդ խորքերը վրդովվիր այդ բոլոր բաների համար: Վրդովվիր անմաքրությունից[1], որովհետև այդպիսին էր Սոդոմի չարիքը:

[1] հոգու անմաքրությունից

1988

Հունվարի 1, 1988

Աստվա՛ծ իմ:

Ես եմ, բռնիր Ձեռքս. հիմա բռնիր մյուս Ձեռքս և քայլիր:

(Այս խոսքերը նախկինում մի անգամ ևս ասվել էին ինձ, տալով միևնույն տեսիլքը, երբ Աստված, երկու ձեռքս բռնած, ինձ առաջ էր տանում այն ժամանակ, երբ ես պետք է առաջ գնայի և անցնեի նոր թեմայի):

Քայլի՛ր, քայլի՛ր, սիրելիս, առաջ գնա, մի՛ վախեցիր: Ես նշանակել եմ քեզ լինելու Իմ պատգամատարը ոչ միայն Իմ արարչության մի մասի համար, այլ ամբողջի:

Վասուլա, սպասի՛ր և դու կտեսնես. ես դեռևս չեմ հասել Իմ Պատգամի կեսին: Առանց քեզ ես կարող եմ գործել, Վասո՛ւլա, բայց ես հրճվում եմ Իմ Գործերը քեզ հետ կիսելով, ծաղիկս: Ես Աստված եմ և ինքնաբավ եմ: Ես օրհնում եմ քո յուրաքանչյուր նոր քայլը: Ուրեմն առաջ ընթացի՛ր, սիրելիս, առաջ ընթացի՛ր Ինձ հետ, առաջ գնա:

Ամենակարող Տեր, օգնի՛ր ինձ որ առաջ գնամ, քանի որ այդ է Քո Կամքը: Ես միայնակ չեմ կարող, և ինչպես միշտ, ես պիտի խնդրեմ, որ Դու տանես ինձ: Ես որևէ բանի ընդունակ չեմ:

Վասո՛ւլա, Ես կօգնեմ քեզ, որովհետև Ես քո Ուժն եմ:

Հունվարի 2, 1988

Ամենակարող Տեր, պահպանի՛ր մեզ սխալ գործելուց, որովհետև դա կարող է աղետալի լինել և ամբողջությամբ ազդեր բնաջնջել երկրի երեսից: Բավական է միայն մի սխալ գործել, ինչպես պատահեց Սկզբում:

Այո՛, Վասուլա, վախեցիր այդ ժանտախտից, քանզի Սխալը դա մի ապականող ժանտախտ է:

Աստված իմ, ես մի տեղ կարդացել եմ, որ Եկեղեցին գրկաբաց չի ընդունում անձնական հայտնությունները, որովհետև ինչ որ մեզ հարկավոր է իմանալ արդեն գրված է Սուրբ Գրքում: Հետևաբար, նրանք չեն ընդունում որևէ նոր հայտնություն: Այսինքն, ուզում եմ ասել՝ նոր, ոչ թե թեմայի առումով, այլ մի բան, որը Սուրբ Գրքից դուրս է: Սրանից ելնելով նրանք վախենում են՝

մտածելով, որ նոր կամ անձնական հայտնությունները կարող են իրենց մոլորեցնել...:

Վասո՛ւլա, մի՞թե ես պարզապես կնստեմ ու կդիտեմ նրանց անկումն առանց օգնության փութալու, երբ տեսնեմ, որ Իմ արարչությունը ենթակա է ընկնելու Իմ թշնամու լարած թակարդի մեջ: Հիշո՞ւմ ես, երբ ես շաբաթ օրով բժշկեցի ջրդողությամբ տառապող մարդուն: Ես ի՞նչ հարցրեցի փարիսեցիներին:

Տե՛ր, ես պետք է Սուրբ Գրքում ստուգեմ:

Ուրեմն, փնտրի՛ր Իմ Խոսքը:

(Ես ստուգեցի՝ Ղուկ. 14.3 համարներն էին):

Այո՛, աղջիկս, ես հարցրեցի. «Օրենքին դե՞մ է բժշկել մարդուն շաբաթ օրով, թե՝ ոչ»: Նրանք չպատասխանեցին: Ես ասացի. «Ձեզանից ո՞ր մեկը, եթե իր զավակը կամ եզը շաբաթ օրով ընկներ հորը, առանց վարանելու դուրս չէր հանի նրան»: Եվ մինչև այսօր նրանք պատասխան չեն գտել[1]:

Այսօր հետևյալ հարցումն եմ ուղղում նրանց, ովքեր մերժում են այս հայտնությունը. «Մի՞թե Իմ Օրենքին հակառակ է, որ ձեր դարաշրջանում կործանումից փրկեմ Իմ արարչությունը այսօրվա Իմ Նախախնամության Գործերով»: Վասո՛ւլա, Ես Հիսուսն եմ և Հիսուս նշանակում է Փրկիչ:

Ասա՛ նրանց, Տեր, հիշեցրո՛ւ նրանց այս բոլորի մասին:

Սիրելի՛ս, նրանք թաղադրել են Իմ Սիրտը փշե պսակով: Իմ Սուրբ Սրտից արյուն է հոսում:

Հիսո՛ս, նրանք գիտե՞ն այդ:

Ես լուռ կանգնելու եմ նրանց դռան առաջ, առանց բախելու մտնելու եմ նրանց տունը և ցույց եմ տալու Իմ Սուրբ Սիրտը: Նրանք, ովքեր անկեղծ են, կգիտակցեն իրենց Սխալը: Ե՛կ, աղջիկս՝ մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, միացած:

Հունվարի 4, 1988

Վասո՛ւլա[2], օ՜, Վասուլա: Իմ սիրելի դուստրերից մեկը մեռած է, քո քույրը:

Ո՞վ է մեռնողը, Տե՛ր:

[1] Սա խորհրդանշանակ խոսք է նաև մեր դարաշրջանի համար:
[2] Աստծո ձայնը թախանձագին և տխուր էր հնչում:

Իմ շատ սիրելի դուստր Ռուսաստանը: Ե՛կ: Ե՛կ, Ես քեզ ցույց կտամ նրան: Տե՛ս:

(Աստված ինձ տարավ անապատի մի ծայրամաս: Նա Իր բազուկը երկարեց և ցուցամատով ցույց տվեց մեռած իր աղջկան և իմ քրոջը, որը պառկած էր կիզիչ արևի տակ: Նրա մարմինը, որն ազատագրված էր բռնապետության լծից, մեռած ընկած էր ամայության մեջ: Թվում էր, որ անգամ իր մահացած վիճակում, նա լքված էր և մեռել էր միայնության մեջ, և ոչ մեկը չկար, որ նրան մխիթարեր: Երբ ես տեսա այս ցավալի տեսարանը՝ կարեկցությամբ լցված սկսեցի արտասվել: Ես դառնորեն հեկեկացի, երբ տեսա նրան):

Օ՛, մի՛ արտասվիր, Ես նրան հարություն եմ տալու, Վասուլա: Ես հարություն եմ տալու նրան Իմ Փառքի համար: Ես նրան վերակենդանացնելու եմ, ինչպես որ Ղազարոսին վերակենդանացրի:

Օ՛, Աստված, Դու ինձ այնքան ցավ ես պատճառում:

Այդ ցավը, որ դու զգում ես, ոչինչ է համեմատած Իմ ցավի հետ: Ես սիրում եմ նրան, Վասուլա, դու ևս խղճա նրան: Ես չեմ թողնի, որ նա մեռած մնա այրող խորշակների տակ: Վասուլա, սիրի՛ր քրոջդ, խղճա՛ նրան, գնա՛ նրա մոտ, սիրի՛ր նրան: Սիրի՛ր նրան, քանզի նա սիրված չէ ոչ մեկի կողմից:

Վասո՛ւլա, նա լքեց Ինձ և Իմ դեմ ելավ: Նա Իմ դեմ ելավ, երբ նա աճեց և նրա սիրո ժամանակը եկավ: Ես կանչեցի նրան՝ թիկնոցիս տակ պատսպարելու համար, բայց դրա փոխարեն նա թողեց հեռացավ: Ինքն իրեն հասունացած զգալով, նա հավատացած էր, որ կկարողանա կերակրել իրեն: Նա շրջվեց մեջքով Ինձ ու թողեց հեռացավ, փախավ, ինչպես մի անհավատարիմ կին:

Սիրելիս, դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում աղջկա կորուստը: Սիրտս պատառոտվեց, և Ես արտասվում էի: Կարծես այդ բավարար չէր, նա հպարտորեն, և առանց խղճի խայթի, բացարձակ պատերազմ հայտարարեց Իմ դեմ՝ իր Հոր և բոլոր նահատակ սրբերի դեմ: Նա այլևս Ինձ չէր հավատում: Նա դադարեց Ինձ պաշտելուց, հուսալուց և սիրելուց: Թվում է, նա մոռացել էր այն սերը, որ մի ժամանակ կար մեր միջև:

Ես նրան որդիներ ու դուստրեր էի տվել, բայց նա իր կատաղության մեջ կոտորեց Իմ զավակներին և հանձնեց նրանց սատանային, այնպես, ինչպես ողջակեզ են մատուցում: Այնուհետև, կարծես դա բավարար չէր, նա շրջվեց դեպի սատանան և դաշն կնքեց նրա հետ, որ հավատարիմ կլինի նրան ու կպաշտի նրան, եթե սատանան տար նրան այն ամենը, ինչ որ նա ցանկանում էր: Սատանան համաձայնվեց մի պայմանով, որ իրեն ազատ թողնեն: Ապա նրան ամբողջապես հեռացրեց Ինձնից: Նա սատանային թույլ տվեց, որ կտրի մեզ կապող կապերը: Սատանան այնպես արեց, որ նա վստահեց իրեն: Նենգ, ինչպես միշտ, սատանան նախ առաջնորդեց Իմ աղջկան ճահճոտ մի վայր, ուր նա պետք է հենվեր սատանայի վրա: Վախից, որ կարող է խեղդվել խրվող ավազուտներում, նա խնդրեց սատանային թույլ տալ իրեն ամբողջապես հենվել նրա վրա:

Վասու՛լա, այնպես ինչպես մի ժամանակ Երուսաղեմը փախավ Իմ Տնից՝ Սրբության Իմ Տնից, որ դառնա անբարո մի աղջիկ՝ մեկը մյուսի ետևից զոհ մատուցելով իր զավակներին: Իմ աղջիկը ևս՝ Ռուսաստանը, խելացի համարեց նույն բանը անել: Նա վերցրեց Իմ Սուրբ Նվերները և առաջարկեց դրանք սատանային, որն այդ ամենը վերածեց զենքերի: Սատանան նրան կուրացրեց իր փառքով և կուրացած վիճակում դուրս բերեց նրան ճահճուտներից ու դրեց ամայության մեջ, որ ծարավից մեռնի: Ես տեսա նրան մերկ քայլելիս, իր արյան մեջ պայքարելով: Ես կանչեցի նրան, բայց նա չլսեց: Ես նորից կանչեցի, բայց նա չլսեց Իմ կանչը: Դրա փոխարեն նա Ինձ բարկացրեց՝ կանչելով իր երիտասարդ քույրերին, պաշտպանելու իր բարոյական սկզբունքները: Եվ եթե նրանք մերժեին, նա բռնանում էր նրանց վրա իր սրով: Մի՞թե Ես չեմ ասել. «Նա, ով սուր բարձրացնի, սրով էլ կկործանվի»:

Ես սահմանափակեցի նրա հացը, որպեսզի նա Իմ Հացի կարիքը զգա: Բայց նա գերադասեց սովամահ լինել, քան թե կերակրվել Ինձնից: Ուժասպառ ու քաղցած, նա իր կրտսեր քույրերին ուղարկեց գաղտագողի շարունակելու իր չար գործերը, որովհետև նրա սնափառությունը ներշնչված էր սատանայի կողմից, որն ինքնին՝ Սնափառությունն է: Նրա հողերը բավարար չէին պտղաբերում նրան կերակրելու համար: Նա, այսպես ասած, «կախյալ» դարձավ Իմ թշնամուց:

Աղջի՛կս, այսօրվա համար բավարար է: Ես վաղը կշարունակեմ այս Պատգամը: Ե՛կ, օրհնեմ քեզ, աղջիկս:

Կերակրվի՛ր Ինձնից: Մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Տեր:

Հունվարի 5, 1988

(Երբ նորից կարդացի մեռած Ռուսաստանի մասին հատվածը, ես դարձյալ ողողվեցի դառն արցունքներով):

Մի՛ արտասվիր, Վասուլա, Ես քեզ ասացի, որ հարություն եմ տալու նրան:

Ես սիրում եմ նրան, Տե՛ր, խղճում եմ նրան, Տե՛ր, սիրում եմ նրան:

Սիրի՛ր նրան, ինչպես Ես եմ սիրում. նա նույնպես Իմ աղջիկն է՝ քո քույրը:

Տե՛ր, Դու կգնա՞ս նրա մոտ և հարություն կտա՞ս նրան: Նա կվերադառնա՞ դեպի Քեզ, օ՜, Տեր:

Ես պիտի գնամ նրա մոտ և հարություն պիտի տամ նրան ու պիտի տանեմ Իմ Տունը: Ես ուզում եմ, որ Իմ բոլոր զավակները սիրեն նրան: Մենք ամենքս նրան Սիրով կշրջապատենք:

Աստվա՛ծ իմ, Դու ասացիր, որ շարունակելո՞ւ ես ամսի 4-ի Քո Պատգամը:

Շարունակելու եմ.

Երբ Ռուսաստանը սատանայից կախյալ դարձավ, քանի որ նրա հողը անպտուղ էր, սատանան նրան մահացու պտուղ առաջարկեց, որը նա պահում է նրանց համար, որոնց Ես սիրում եմ: Այն սպանում է աստիճանաբար: Որքան որ մեկը ուտում է, այնքան ավելի է դրա կարիքը զգում: Այն մահացու է և դանդաղորեն սպանում է: Նա սնեց նրան իր պտղով ու սպանեց նրան: Նա մեռավ, այդ պտուղը սեղմած իր ձեռքում:

Վասուլա, վստահի՛ր Ինձ, Ես հարություն եմ տալու նրան:

Աղջի՛կս, հանգիստ եղիր, մի՛ մտահոգվիր: Ինձ ազատ թող, և Ես կավարտեմ Իմ Գործերը:

Տե՛ր, Ես անհանգստանում եմ, քանզի Դու խնդրեցիր ինձ, որ օրհնեմ Գարաբանդալի Քո զավակներին ու նրանց հաղորդեմ Քո Պատգամի մասին: Օ՜հ, Տեր, հիմա էլ Ռուսաստանը: Եվ Դու ամբողջ ժամանակ ինձ հասկացնել ես տալիս, որ Քո սպասավոր Հովհաննես-Պողոսին պետք է հանձնեմ այս պատգամը, և Ես դեռ ՈՉԻՆՉ չեմ արել: Քո Խոսքն ինձ վրա է դրված և դժվար է այն կրել ...

Ասա՛ այն հիմա:

Ուզում էի ասել, որ... բոլորովին մենակ[1], ների՛ր ինձ:

Վասո՛ւլա, Ես կրում եմ այն քեզ հետ միասին: Ես կիսում եմ Իմ Խաչը քեզ հետ: Վասո՛ւլա, Ես ներում եմ քեզ: Ես քեզ տվել եմ վկաներ, որոնք կրում են նույն Խաչը: Դու մոռանում ես, որ այդ Ե՛ս Եմ, Տե՛րը, որ անելու եմ բոլոր այդ բաները և ոչ թե՝ դու: Դու պիտի Ինձ սիրես և կերակրվես Ինձանից:

Ե՛կ, Ես պիտի շշնջամ քո ականջին Իմ Սերը: Ուրախացի՛ր, աղջիկս, քանզի ժամանակը եկել է: Սիրի՛ր Ինձ, ինչպես Ես եմ սիրում քեզ: Ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո Սիրելի Որդին և Փրկիչը: Նկարի՛ր Իմ նշանը:

ΙΧΘΥΣ

Հունվարի 6, 1988

Հիսո՛ւս, արդյո՞ք Քո փառավորյալ Մարմինը տառապում է: Մի՞թե Դու և մեր Սուրբ Մայրը հիմա տառապանքից զերծ չեք երկնքում:

Վասո՛ւլա, Ես ֆիզիկական մարմին չունեմ, Ես Հոգի եմ: Քանի որ Ես Հոգի եմ, Ես մարմնական ցավ չունեմ, բայց Իմ Հոգին անտանելի տառապում է, ինչպես նաև քո Սուրբ Մոր Հոգին, երբ մենք տեսնում

[1] Ես ամաչեցի, բայց քանի որ Նա Ճշմարտությունն է, Նա խնդրեց, որ ավարտեմ նախադասությունը, որը ես չասացի:

ենք, թե ինչպես են մեր զավակները գնում ուղիղ դեպի սատանայի լարած թակարդները:

Բայց, Տե՛ր, Դու է՞լ ես տառապում, երբ ես տառապում եմ: Այսինքն, եթե մեկն անարդարացի մեղադրի ինձ, Դու կտառապե՞ս:

Եթե դու անարդար կերպով մեղադրվում ես, ես տառապում եմ երկուսիդ համար էլ. և՛ մեղադրողի, և՛ մեղադրյալի համար: Անարդարությունը գալիս է սատանայից, և քանի որ այն բխում է նրանից, դա նշանակում է, որ մեղադրողը գտնվել է սատանայի ազդեցության տակ: Իմ Սիրտը ցավում է ինչպես մեղադրյալի, այնպես էլ նրա զոհի համար: Ես հաստատում եմ Սուրբ Գրքի Իմ Խոսքերը: Ես փառավորված եմ, բայց, որովհետև Ես միացած եմ քեզ, Ես զգում եմ այն ամենը, ինչ դու ես զգում:

Շնորհակալ եմ, Տե՛ր:

Հունվարի 8, 1988

(Իմ ծարավն ու կարոտը Աստծո հանդեպ անսահման էր):

Պատվի՛ր Ինձ՝ փափագելով Ինձ: Վասո՛ւլա, մեկուսացումը խորհրդապաշտ ձևով կզարգացնի քեզ՝ Ինձ ավելի մոտեցնելով: Այն քեզ հնարավորություն կտա, սիրելիս, որ դու ավելի խորը թափանցես Իմ Վերքերի մեջ: Դրանից հետո, Ես կմատակարարեմ քեզ այն ամենը, ինչ քո հոգուն պակասում է՝ ավելացնելով Իմ Գործերը քեզ վրա: Մի՛ կասկածիր, Ես կբարձրացնեմ քեզ դեպի Ինձ: Ես քեզ համար ընտրել եմ այս ճանապարհը, որն առաջնորդում է Իմ բոլոր սիրելի հոգիներին դեպի Իմ Զարչարանքները՝ վերածելով նրանց Ինձ նմանվող կենդանի կերպարների:

Ե՛կ, Ես կհիշեցնեմ քեզ Իմ Ներկայությունը, քանի որ դու ինքդ անկարող ես զգալու այդ: Այո՞:

Ուզում էի ասել..., գիտեմ, որ անկարող եմ և ոչ մի լավ բանի ընդունակ չեմ: Ես ամբողջապես կախման մեջ եմ Քեզնից, Տե՛ր: Քո անսահման ողորմությունից Դու տալիս ես ինձ այն ամենը, ինչ որ պակասում է ինձ:

Այո՛, հասկացիր, որ ողջ բարիքը Ինձնից է գալիս:

Եկ, Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Հունվարի 9, 1988

Տե՛ր, ես կարդացել եմ մի քանի գիտնականների մասին, որոնք չեն հավատում վիրակիրներին: Նրանք ասում են, որ այդ մարդիկ հոգեպես խանգարված են, և նրանց վերքերը մտավոր ներշնչման արդյունք են: Նրանք ուղղակի ընդունում են, որ չեն հավատում հրաշքների: Նրանք ասում են, որ այդ բոլորին կարելի է բնական մի բացատրություն տալ, բայց ոչ մի բացատրություն էլ չեն տալիս:

Գիտությունը կմնա իմաստունների ամենասիրելի զենքը՝ ուղղված Իմ դեմ: Ձեր մեջ կան հոգիներ, որոնք միշտ մերժում են լսել. դրանք ամենից խղճալիներն են Իմ Աչքում: Աղոթի՛ր այդ կորած հոգիների համար:

Հունվարի 10, 1988

Աստվա՛ծ իմ, այնքան լավ է ժամանակ առ ժամանակ լսել հոգիների մասին, որոնք ստանում են Քո Գործերը, ինչպես որ ես, թեև տարբեր կերպով, բայց գերբնական ձևով: Արդեն ես լսել եմ երկու կանանց մասին, որոնք ստանում են գրեթե նույն պատգամները, ինչպես որ ես, բայց դա կատարվում է, երբ նրանք գտնվում են մտային հափշտակության (էքստազի) մեջ, Սուրբ Հովհաննեսի նման՝ տրված Սուրբ Հոգու կողմից:

Ես Իմ խոսքը ձրիաբար եմ տալիս և միշտ պիտի տամ: Ինձ հաճելի եղիր, սիրելիս, և աղոթիր Ինձ հետ: Դու Իմ Հոգու սիրելին ես: Ե՛կ աղոթենք[1]:

«Հայր Արդար,
ես պատրաստ եմ
Քո Սուրբ Կամքը կատարել,
ես պատրաստ եմ շարունակել
գոհացնելու Քո Սիրտը՝
որն այնքա՜ն նուրբ և զգայուն է,
փոխարինելով փշերն իմ սիրով,
փշեր, որոնք դեռևս Քո մեջ են:
Ամեն»:

Ե՛կ, Ես քեզ կսովորեցնեմ մի ուրիշ աղոթք, որն ամենից ազդեցիկն է հատուցումների համար: Կրկնիր այս բառերն Ինձ հետ.

«Ես հավատում եմ,
ես պաշտում եմ,
ես հույս ունեմ,
ես սիրում եմ Քեզ: Ամեն»:

Բայց, Տե՛ր, սա ասել է խաղաղության Քո հրեշտակը՝ Ցաթիմայում:

[1] Հիսուս մոտեցավ և Իր Ձեռքը դրեց իմ ուսին:

Իմ հրեշտակներին ես սովորեցրել եմ այս ձևով աղոթել: Այժմ ես սովորեցնում եմ Իմ զավակներին, որ աղոթեն ու հատուցեն այս ձևով:

Այո՛, Տեր, Դու իսկապես իմ Հույսն ես: Դու իմ Երջանկությունն ես, իմ Ժպիտը: Ես հավատում եմ Քեզ: Դու իմ կյանքի Ուրախությունն ես, Դու իմ կյանքն ես: Ես երկրպագում ու հավիտյան պաշտում եմ Քեզ. ամեն:

Հիմա Ինձ մոտ եկ[1]: Այո՛ խաչակնքիր:

(Ես բարձրացա տեղիցս և գնացի Նրա մոտ, ծնկի եկա և խաչակնքեցի):

Այո՛, Երրորդության անունով: Ես սիրում եմ քեզ աղջիկս: Մե՞զ, մե՞նք:

Այո՛, Տեր:

Ասա՛ նրանց... ասա՛ նրանց...:

(Հիսուս նկատի ուներ իմ խաչակնքումը, որ ես կատարեցի, այնպես, ինչպես որ ուղղափառներն էին սովորեցրել ինձ՝ բութը, ցուցամատը և միջին մատները իրար միացրած, որը Սուրբ Երրորդության նշանն է, հաստատելով Սուրբ Երրորդությունը):

Հունվարի 12, 1988

Տե՛ր իմ Աստված:

Վասո՛ւլա, թույլ տուր քեզ օգնել: Դու հիշո՞ւմ ես այն տեսիլքը երեք ձողերի մասին՝ ուղիղ և ձիգ կանգնած:

Այո՛, Տեր, հիշում եմ:

Դե՛, ուրեմն, որպեսզի երեքն էլ կարողանան միանալ, նրանք պետք է խոնարհվեն: Ես երբեք չեմ ասել, որ միայն երկուսը պետք է խոնարհվեն: Վասո՛ւլա, դու հասկանո՞ւմ ես, որ ես՝ ձեր Աստվածը, ծրագրել եմ, որ միավորեմ ձեզ:

Ես մտածում էի Քեզ հարցնել երեկվա պատգամի մասին, այն մասին, թե ինչպես պետք է խաչակնքվել:

Գիտեմ, աղջիկս, դրա համար է, որ ուզում եմ դու հասկանաս, թե ինչ նկատի ունեմ ասելով. «Միավորվելու համար դուք բոլորդ պետք է խոնարհվեք»: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ և Իմ անսահման Ողորմությունից ելնելով, ես գալիս եմ օգնելու, որ միավորվեք:

Վասո՛ւլա, Ինձ փնտրեք պարզ սրտով: Ես սիրո Աստված եմ: Ես հեզ եմ և խոնարհ: Հիշե՛ք Իմ ուղիները, որպեսզի կարողանաք միավորվել: Դեն

[1] Հիսուս նկատի ուներ, որ մոտենամ Սուրբ Վարշամակի նկարին:

զցեք ձեր եսասեր միտումները, ճանաչե՛ք Իմ Ձայնը, դո՛ւք, որոնց Ես Իմ Խոսքն եմ վստահել և որոնց վստահել եմ հազարավոր հոգիներ: Դո՛ւք, որոնց Ես Իմ հոտի տերեր հռչակեցի, ինչո՞ւ եք փնտրում ձեր շահերը և ոչ՝ Իմը: Իմ գառները ցրված են, ցրված...

Ծաղիկս, Ես քո միջոցով իջնում եմ ժողովելու ազգերին՝ հավաքելու Իմ քահանայական հոգիներին և ձեզ նորոգելու Իմ Սիրով:

Տե՛ր եւ Փրկիչ, նրանք ինչպե՞ս պիտի իմանան կամ ճանաչեն իրենց սխալները:

Որպեսզի ճանաչեն իրենց սխալները, նրանք պետք է փնտրեն Իմ Կամքը: Ապաշխարե՛ք, մտածե՛ք Իմ Ողորմության մասին, հավատացե՛ք Իմ Նախախնամության Գործերին, փոխանակ տրորելու: Պաշտե՛ք Ինձ անկեղծորէն: Փնտրե՛ք Իմ շահերը և ոչ՝ ձերը:

Տե՛ր, ներիր ինձ, որ թերևս անկարող եմ հասկանալ, թե Դու ինչ նկատի ունես «շահեր» ասելով: Տե՛ր, արդյո՞ք «շահեր» նշանակում է, որ Դու ուզում ես հավաքել ու ի մի բերել Քո հոտը, որն այժմ ցրված է:

Սիրելիս, անգամ դու հասկացար, թե Ես ամենից շատ ինչ եմ ցանկանում, բայց սա բոլորը չէ, ինչ Ես ցանկանում եմ: Դու կհասկանաս, երբ կրկին կկարդաս այս հայտնությունը, Վասուլա:

Այո՛, Տեր:

Ես քեզ կհիշեցնեմ, աղջիկս, որ օրհնես նրանց, ովքեր քեզ կհալածեն: Սերը միշտ համբերող է ու բարի: Սուրբը ապրիր: Մտածի՛ր քո հանդեպ ունեցած Իմ համբերության մասին[1]: Դարձիր Իմ պատկերը, հավա՛տ ունեցիր Իմ հանդեպ, հույս և սեր: Ե՛կ, հանդչիր Իմ մեջ, հոգի՛, որ այնքան սիրելի ես Ինձ: Մե՞զ, մե՞նք:

Շնորհակալ եմ, Տե՛ր, Քո սիրո համար, որով Դու պարուրեցիր ինձ, համբերության համար, Քո բարության և կարեկցանքի համար, որ Դու ունես իմ հոգու հանդեպ: Ես հավատում եմ, ես պաշտում եմ, ես հույս ունեմ, ես սիրում եմ Քեզ. ամեն:

Ա՜հ, սիրելիս, Իմ Սիրտը ուռչում է սիրուց, լսելով այդ բառերը, որ ասում ես Ինձ[2]:

Օ՜հ Աստված,
ես Քեզ ինչպես կարող եմ չսիրել:
Ես Քոնն եմ,
եթե անգամ ես կավ եմ:
Այն ամենը, ինչ ես անում եմ,
անում եմ

[1] Եթե Ինքը Սերը չլիներ, Նա վաղուց ինձ հարվածել էր:
[2] Աստված շատ ուրախ էր երևում:

Քո հանդեպ ունեցած սիրուց:
Ես չեմ փնտրում իմ շահերը,
այլ ձգտում եմ,
որ փառավորեմ Քո Անունը:
Ես ձգտում եմ Քո դառներին
ետ բերել դեպի Քեզ,
ես ձգտում եմ
Քո Կամքին հետևել, Տե՛ր:
Ես սիրում եմ Քեզ:
Քո հանդեպ ունեցած այդ սերը
Դու ես տվել ու սովորեցրել ինձ:
Եվ հանուն այդ սիրո,
ես խնդրում եմ
զորացրո՛ւ իմ հավատը՝
Քեզ անսահման սիրելու համար,
եթե դա Քո ցանկությունն է,
որպեսզի ես կարողանամ շարունակել
և փառավորել Քեզ: Ամեն:

Ես պիտի կերակրեմ քեզ Իմ պարտեզի պտուղներով: Սիրելիս, Ես պիտի կերակրեմ քեզ հալածողների աչքերի առաջ, քանզի այդ է Իմ Կամքը:

Շնորհակալ եմ, Տե՛ր Հիսուս:

Պինդ բռնիր այն, ինչ որ Ես քեզ տվել եմ և մի՛ թույլ տուր, որ որևէ մեկը քո պարգևը խլի քեզնից: Հաստա՛տ եղիր Իմ հանդեպ քո ունեցած հավատով: Ահա, վերցրո՛ւ Իմ Ձեռքը և լսիր Ինձ, երբ Ես չշնչում եմ քո ականջին:

Հունվարի 13, 1988

Տե՛ր, շատերը մեղադրում են Քեզ նրանում, որ Դու անարդար ես, և դրա համար նրանք փորձում են հեռանալ Քեզնից, ասելով. «<u>Եթե</u> Աստված կա, եթե Նա գոյություն ունի, ապա, Նա անարդար է»:

Ծաղի՛կս, այդպիսիներին Ես ասում եմ. «Եթե դուք մեռնեք, դրա պատճառը այն չարությունն է, որ դուք կատարեցիք ինքներդ ձեր հանդեպ. դա ձեր ուրացության արդյունքն է: Ապաշխարե՛ք, հրաժարվե՛ք ձեր մեղքերից, վերադարձե՛ք դեպի Ինձ, և Ես կներեմ ձեզ:

Ինձ ընդունեք որպես ձեր Փրկիչը, ձեր Մխիթարիչը: Ես գալիս եմ որպես մի Լույս փայլելու այս մութ աշխարհում:

Իմ Տունը թագավորում է խառնաշփոթության մեջ, վիճաբանությունների մեջ, անմաքրության մեջ՝ հետապնդելով իր սեփական շահերը: Պետրո՛ս, Պետրո՛ս, ինչո՞ւ են Իմ աշակերտները թշնամաբար ցիրուցան եղել: Եղբա՛յր Իմ, սրբացված Իմ Ձեռքով, Ես հավիտենությունից սիրում եմ քեզ:

Իմ Սուրբ Սիրտը վիրավորված է. վիրավորված փշերով, որոնք խրվել են Սրտիս մեջ Իմ յուրայինների կողմից, յուրայիններ, որոնց սիրում եմ: Ես քեզ ցույց կտամ Իմ Վիրավորված Սիրտը: Նրանք Իմ Սուրբ Սիրտը խոցում են նորից. Իմ արյունը դուրս է հոսում: Նրանք վերստին խաչում են Ինձ: Նրանք անկեղծ չեն: Իմ Մարմինը ցավում է սիրո պակասությունից. Իմ շուրթերը չորացած են սիրո պակասությունից: Ես ծարավ եմ, սիրելիս...

Նրանք մոռացել են Իմ ուղիները: Նրանք մոռացել են, որ Ես խոնարհ եմ, հեզ և սիրով լեցուն: Ես ձեզնից միայն սեր եմ ուզում, սիրե՛ք մեկդ մյուսին այնպես, ինչպես Ես եմ սիրում ձեզ: Ինչո՞ւ կռվել Իմ Եկեղեցու ներսում: Ինչի՞ համար են այդ բանավեճերն Իմ ներկայությամբ: Ինչի համար է այդ ատելությունը: Ինչի՞ համար են այդ բոլոր չար ու թունավոր հայտարարությունները: Որտե՞ղ է նրանց սրբությունը: Ինչո՞ւ են նրանք անուշադրության մատնում Իմ պարտեզը: Նրանք ավելի քան երբևէ ցրում են Իմ գառներին, իսկ մի քանիսը, որ մնացել են, նույնպես կանհետանան փարախից, որովհետև նրանք լքել են նրանց:

Պետրո՛ս, Իմ աչքերը հոգնել են դիտելուց, թե նրանք ինչպես են մեղադրում մեկը մյուսին: Նրանք ամայացրել են Իմ հողերը և ոչինչ չունեն առաջարկելու Իմ գառներին: Նրանց ուղիները Ինձ համար ընդունելի չեն: Ես նրանց սեր և խաղաղություն եմ տվել: Ես նրանց երբեք չեմ սովորեցրել ուրիշներին դատել:

Վասո՛ւլա, Ես բարությամբ եմ ղեկավարում: Իմ Սուրբ Սիրտը արյունոտվում է և բզկտվում: Ինչո՞ւ են նրանք Ինձ բարկացնում: Մի՞թե չեմ ասել, որ եթե մեկը հավատացած է, որ Իմ Լույսի մեջ է, բայց ատում է իր եղբորը, նա դեռ խավարում է գտնվում: Նրանք լիովին հասկացե՞լ են արդյոք, թե ինչ են նշանակում Իմ այս խոսքերը. «Եթե դու քո նվերը բերում ես խորանի մոտ և հանկարծ հիշում ես, որ քո եղբայրը մի բան ունի քո դեմ, թո՛ղ քո ընծան այդտեղ, խորանի առաջ, և գնա՛ դտիր եղբորդ. նախ հաշտվիր նրա հետ, ապա եկ մաքուր սրտով մատուցիր քո ընծան»:

Այս ասելով, Ես նկատի ունեմ, թե ինչպես պետք է իրար հետ համերաշխ լինել, մեկը մյուսին սիրել, հաշտ լինել միմյանց հետ ու հաշտվել՝ նախքան Իմ Տան մեջ ձեր նվերների մատուցումը: Զավա՛կս, ոչ Իմ Սրտում, ոչ էլ Իմ առաջին աշակերտների սրտերում, երբեք սիրո պակաս չի եղել:

Տե՛ր, ես տառապում եմ զգալով Քո տառապանքը: Քո համբերությունը մեծ է:

Վասո՛ւլա, զավակս, որ հարուցվել ես մեռելներից, հավա՛տ ունեցիր Իմ հանդեպ: Հուսա՛ և սիրի՛ր Ինձ: Ես՝ Տերս, երբեք չեմ լքի քեզ:

Տե՛ր, ես Քեզ խնդրում եմ, որ Դու Քո մյուս զավակներին ևս հարուցես, ինչպես որ ինձ հարուցեցիր:

Կհաղորդեմ, բայց ոչ թե նրա համար, որ դու Ինձ խնդրեցիր: Ես կհաղորդեմ նրանց, որովհետև այդ է Իմ Կամքը: Մի՛ մոռացիր Իմ Ներկայությունը: Սիրելիս, Ես վերջում պիտի հաղթեմ:

Հունվարի 18, 1988

Տե՛ր, եթե ամեն ինչ լինում է Քո Կամքի համաձայն, և ինչ որ պատահելու է պիտի պատահի, որովհետև Դու այդպես կամեցար, այդ դեպքում ես չեմ հասկանում, եթե Դու ուզում ես որ Քո պատգամը ընդունվի, ապա ինչո՞ւ Դու այնպես չես անում, որ նրանք, ովքեր տեղյակ են այդ մասին, ընդունեն այն, քանի որ այդ է Քո ցանկությունը: Ինչո՞ւ Դու չես լուսավորում նրանց:

Օ՜, աղջի՛կս, սիրելիս, ուրախացի՛ր և երջանիկ եղիր, որ դարձի բերեցի քեզ, բժշկելով քեզ: Իմ Ողորմությունը դարեր ի վեր հասնում է նրանց, ովքեր երկյուղում են Ինձնից: Բայց փշերը, որոնք ծակում են Ինձ, մեկ անգամ ևս կրկնում են Եսայու մարգարեությունը.

«Դուք պիտի կրկին լսեք ու լսեք, բայց չպիտի հասկանաք, տեսնեք ու տեսնեք, բայց չպիտի ըմբռնեք: Քանզի, այս ազգի սիրտը կոպտացել է, նրանց լսողությունը ծանրացել է, և նրանք վախից փակել են իրենց աչքերը, որ չտեսնեն իրենց աչքերով, որ չլսեն իրենց ականջներով, որ չհասկանան իրենց սրտով և դարձի չգան ու չբժշկվեն Իմ կողմից»:

Աղջի՛կս, դեռևս հավիտենությունից Ես կանխատեսել եմ նրանց խստասրտությունը: Նախախնամության այսօրվա Գործերի ժխտումը նրանց գրկել է առանձնաշնորհումներից:

Վասո՛ւլա, հարյուրավոր անգամ աղոթիր, որ ձեռք բերես այն, ինչ որ Ես ամենից շատ եմ փնտրում քո մեջ, որն է՝ սերը, հավատը և հույսը[1]:

Ես լուսավորում եմ նրանց, ովքեր անկեղծ են: Ես չպիտի լուսավորեմ իմաստունին, որովհետև նրանց պակասում է անկեղծությունը: Ես՝ Տերս, փնտրում եմ խոնարհին և համեստին: Որքան դուք փոքր լինեք, այնքան Իմ Մեծությունը ավելի հակված կլինի դեպի ձեզ թեքվելու՝ ձեզ հասնելու և բարձրացնելու համար: Որքան ավելի փոքր լինեք և աննշան, ձեզ ավելի հեշտ կլինի թափանցել Իմ Սուրբ Սիրտը: Վասո՛ւլա, դու տեսնո՞ւմ ես:

(Հիսուս ինձ մի տեսիլք ցույց տվեց: Դա մի թունել էր և հսկայական ժայռի մի կտոր փակել էր անցումը: Դրա ետևից, ես տեսա մի ուժեղ պայծառ լույս, բայց ժայռաբեկորը խանգարում էր, որ լույսը թափանցի թունելի մեջ):

Այդ նրանք են, ովքեր փակում են ճանապարհը, որ բերում է դեպի Ինձ և նրանց նողկալի արարքները խավարեցնում են Լույսը բոլոր նրանց համար, ովքեր փնտրում են Ինձ: Այդպիսիներին, Ես՝ Տերը, ասում եմ. Ես չեմ կարող տանել ձեր շքեղությունները. ձեր ամբարտավանությունը հոգնեցնում է Ինձ: Իմ Բաժակը լիքն է: Երբ ժամանակը գա, Ես կկանչեմ

[1] Նրանք, ովքեր կույր են և խուլ, պետք է խնդրեն, որ Տերը բացահայտի ճշմարտությունը:

նրանց, որ ապաշխարեն մեկը մյուսի ետևից: Վա՜յ անհավատներին. նրանք պետք է կանգնեն Իմ առջև:

Հիսո՛ւս, ինչ որ ես սկսել եմ հասկանալ՝ հետևեալն է. նրանք, ովքեր Քո իսկական աշակերտներն են՝ համեստ ու խոնարհ, նրանք կուրախանան Քո Պատգամով, բայց շատերը, ովքեր անհավատարիմ են Քեզ, չեն սիրի այս հայտնությունը: Ուրիշ խոսքով, դա լավ է ոմանց համար, իսկ մյուսների համար՝ վատ:

Այո՛, Վասուլա, հիմա դու գիտես[1]:

Սուրբ Մարիամ, չնայած որ խղճուկ մեկն եմ, Դու ինձ նեցուկ կլինե՞ս: Խրախուսի՛ր ինձ: Մի՞թե այնտեղ եկեղեցական իշխանություններից մեկը չկա, որը լսել ցանկանա: Գոնե մե՞կը:

Վասո՛ւլա, աղջիկս, Հիսուս սիրում է քեզ: Օրհնյալդ, ես սիրում եմ քեզ: Հիսուսն ու ես քեզ կօգնենք հիմա: Աղոթի՛ր, որ ձեռք բերես Նրա բարեհաճությունը:

Այո՛, Մայր, օգնիր ինձ գտնելու ճիշտ բառերը:

Ես օգնում եմ քեզ, ծաղիկս: Ես սիրում եմ բոլորիդ երբեք չկասկածես:

Շնորհակալ եմ ինձ օգնելու համար:

Սերը կօգնի քեզ, որ համբերությամբ կրես բազմաթիվ փորձություններ, զավակս: Հիսուս կտա քեզ Իր Ուժը: Ես քեզ միշտ կխրախուսեմ. մի՛ վախեցիր[2]: Ես պաշտպանում եմ քեզ:

Ես Տերն եմ, սիրելի Հոգի, պատվի՛ր Ինձ հիմա և քայլիր Ինձ հետ: Ես քեզ կտամ Իմ Ուժը՝ իրագործելու Իմ իղձերը. որքան եմ Ես քեզ սիրում: Ես քեզ այնքան եմ սիրում, որ քո հոգին երբեք չի կարող ըմբռնել:
Խաղաղության, Ողորմության, Սիրո և Արդարության Իմ Պատգամը այժմ իջնում է ձեր մեջ:
Փառավորե՛ք Ինձ: Իմ Սերը կփրկի ձեզ Իմ Արդարությունից՝, Արդարություն, որն իջնելու է ձեզ վրա, եթե Իմ արարչությունը չլսի նորից: Իմ անսահման Ողորմությամբ, Ես գալիս եմ զգուշացնելու ձեզ. Ես ցանկանում եմ, որ Իմ արարչությունը ապաշխարի և ճանաչի Ինձ: Ցաթիմայի Սրբավայրը բարձրաձայն արտասվում է Գարաբանդալի արհամարման և ժխտման համար: Իմ Հոգին խորունկ վշտի մեջ է կրկին, այն նույն վշտի, որ Ես ունեի Ցաթիմայում: Ինչպես կարող են հիմա նրանք կասկածել, երբ Իմ Հոգին նրանց մեջ է, իսկ նրանք՝ Իմ մեջ: Իմ Պատգամը Ցաթիմայում անտեսվեց: Նրանք դա ընդունեցին միայն այն ժամանակ, երբ արդեն շատ ուշ էր:

[1] Հիսուս այս ասաց տխուր ձայնով:
[2] Սբ. Մարիամն այստեղ ակնարկում էր, որ չվախենամ սատանայից, որը շարունակ փորձում էր ինձ վհատեցնել:

Ես ձեզ բոլորիդ սիրում եմ: Ես Տերն եմ, որ խոսում է. երբեք չկասկածեք: Աղոթե՛ք այն հոգիների համար, ովքեր քայլում են խավարում:

Օ՜, Պետրոս[1], կարգված Իմ կողմից, սրբացված Իմ կողմից. Իմ Աչքերը երբեք չեն հեռանում քեզնից: Բոլոր այս տարիներին Ես նայում եմ քեզ: Ես հիմա քո դռան մոտ եմ, եղբա՛յր, Իմ յուրային: Ես բախում եմ քո դուռը, Ինձ թույլ կտա՞ս ներս մտնելու: Մի՛ մերժիր Ինձ, Պետրոս. Ես սիրում եմ քեզ: Լսի՛ր Ինձ, լսի՛ր Իմ Ձայնը: Ճանաչի՛ր Իմ Ձայնը. այդ Ես եմ՝ Տերը: Խաղաղություն քեզ, հոգի՛, ուրախացիր: Ես եկել եմ միավորելու Իմ Արյունոտված Մարմինը, Ես եկել եմ հավաքելու Իմ գառներին, Ես եկել եմ ոռոգելու Իմ պարտեզը, Ես Հիսուսն եմ՝ քո Փրկիչը:

Տե՛ս[2]: Տե՛ս, Պետրոս, Իմ Սուրբ Սիրտը մեկ անգամ ևս խոցվում է անհամար փշերից, փշեր, որոնք Իմ մեջ են խրվել նրանց կողմից, որոնց Ես սիրում եմ: Իմ Հոգին մեկ անգամ ևս վիրավորված է. նրանք կոխոտում են մեր Սրտերը[3]: Մեր երկու Սրտերը կրկին անգամ թագադրվել են երկու փշե պսակներով: Իմ կողը լայնորեն բացված է, և Իմ Արյունը դուրս է հորդում: Ես քո դռան մոտ եմ հիմա: Ես կրում եմ Ինձ հետ Փրկության Իմ թաքուն Ծրագիրը. դա այստեղ է:

Այս Հայտնությունը Իմ Ձայնն է: Ես սիրում եմ բոլորիդ Իմ ողջ Սրտով: Իմ ողջ Սրտով Ես սիրում եմ ձեզ:

Հունվարի 24, 1988

Վասո՛ւլա, Ես ուզում եմ Իմ զգացմունքները բացահայտել (...) հանդեպ: Լսի՛ր Ինձ, եղբայր: Հոգի՛, մեկընդմիշտ դեն նետիր այն տեսությունը, որ Աստված մոտենում ու բարձրացնում է միայն այն հոգիներին, որոնք Ինձ են նվիրված: Ես չեմ մոտենում միայն բարեպաշտ հոգիներին, Ես տարբերություն չեմ դնում: Մի՞թե Ես նախասիրության Աստված եմ: Իմ Սիրտը ցավում է՝ տեսնելով, որ ձեզանից շատերը դեռևս հավատում են, թե Իմ շնորհները տրված են միայն բարեպաշտ քույրերին ու եղբայրներին: Տեսնու՞մ ես, զավակս, որքան քիչ եմ Ես հասկացվում իմ յուրայինների կողմից:

(Հիսուս տխրությամբ Իր Գլուխը մի կողմ շրջեց, և ձեռքը տարավ Սրտին: Որոշ ժամանակ մնաց այս դիրքով: Նա հիասքանչ էր):

Ես շատերին եմ մոտեցել, ովքեր Իմ Եկեղեցուց դուրս են, այո՛..., թշվառ հոգիների[4]՝ ... դարձնելով նրանց Իմ բարեպաշտ հետևորդները: Ես նրանցից աշակերտներ պատրաստեցի, Ես նրանցից սրբեր պատրաստեցի,

[1] Հանկարծակի Հիսուս դիմում է Հովհաննես-Պողոս պապին՝ անմիջականորեն խոսելով նրա հետ:
[2] Հիսուս բաց է անում Իր զգեստը՝ ցույց տալու Իր Սիրտը: Նա ուզում է, որ Հովհաննես-Պողոս 2-րդ պապը տեսնի Իր Սիրտը:
[3] Իր և մեր Օրհնյալ Մոր Սրտերը:
[4] Հիսուսն այդ ասաց մեղմ ու տխուր ձայնով:

բայց, այնուամենայնիվ, շատ եկեղեցական իշխանություններ չեն ճանաչում և անտեսում են Իմ այս Գործերը: Նրանք երբեք չեն ճանաչել այս հոգիներին: Նրանք երբեք չեն իմացել սրանց մասին: Շատերը մերժվել են նրանց նախասիրությունների պատճառով: Սխալ է այն տեսությունը, թե «Աստված մոտենում է միայն բարեպաշտ հոգիներին, որոնք կրոնավորի զգեստներ են կրում»: Օ՜, որքան սխալ եք դուք:

(Հիսուսի հանդարտ տխրությունը վերածվեց անհանգստության):

Եթե դուք միայն իմանայիք այն հոգիների թիվը, որոնց Ես մոտեցել եմ ու նրանցից սրբեր պատրաստել՝ չնայած այն բանին, որ նրանք միշտ չէ, որ կրոնավորի զգեստներ են կրել, կամ Իմ հանդեպ նվիրված հոգիներ են եղել:
Սիրելիս, միթե դու մոռացե՞լ ես, թե ինչպես դու ինքդ զգացիր Իմ Ներկայության բուրմունքը: Ես քեզ ողողել եմ Իմ բուրմունքով, օրհնելով քեզ: Ե՛կ, դու կսովորես: Ես շատ հոգիների եմ դարձի բերել խաղաղության և Սիրո Իմ Պատգամով: Կորած գառները վերադարձան Ինձ մոտ՝ ընկնելով Իմ բազուկների մեջ: Ցնծա՛ հոգի: Ի՜նչ ավելի մեծ հրաշք, քան մի կորած գառ, որը գտնվում է իր Տիրոջ կողմից: Ի՜նչ ավելի մեծ ուրախություն Հովվի համար, քան Իր կորած ոչխարին վերստին գտնելը[1]: Փառաբանի՛ր Ինձ (...) Փառաբանի՛ր Իմ Գործերը, սիրելիս... Տարածի՛ր Իմ սերմերը, փառաբանի՛ր Ինձ և կրիր խաղաղության և Սիրո Իմ խաչը: Ճանաչի՛ր Հովվի կանչը, հայտնի՛ր Փրկության Իմ Հրաշքները քո եղբայրներին, քո հարևաններին: Հաղորդի՛ր բարի լուրը, հայտնի՛ր Իմ Գործերը: Թող հայտնի դառնան Իմ Գործերը, թող հայտնի դառնա Իմ Հրաշքը:
Ես եկա քեզ մոտ և կրկին լցրեցի քո լապտերը: Ես Իմ Լույսը տվել եմ քեզ: Մի՛ թաքցրու այս լապտերը քո անկողնու տակ, քանի որ դրանից ոչ մի օգուտ չի լինի: Ե՛կ, ցնծա եղբայր, որովհետև Ես կրկին լցրել եմ քո լապտերը, որ այն փայլի լամպակալի վրա: Թող նրանք բոլորը տեսնեն Լույսը և իմանան, որ Այն գալիս է Ինձանից:
Հայտարարի՛ր Իմ Սուրբ Գործերը: Պատվի՛ր Ինձ... ցուցադրելով Իմ Լույսը քո տան տանիքին. որպեսզի ամեն ոք կարողանա տեսնել Այն: Թող բոլորը Այն տեսնեն: Երբ նրանք ընկալեն այս Լույսը, նրանք կհավաքվեն ամեն տեղերից: Թող նրանք իմանան, թե Ես ինչպես եկա քեզ մոտ՝ տալով այս Լույսը:
Իմ խաղաղությունը քեզ:

Հունվարի 25, 1988

Հիսու՞ս:

Ես եմ:

[1] Հիսուսի ձայնը ուրախ էր հնչում այս խոսքերն ասելիս: Կարծես Նրա Սիրտը պիտի պայթեր ուրախությունից:

Հիսո՛ւս, մինչև այսօր այս ամենը դեռ զարմացնում է ինձ: Ես նկատի ունեմ հայտնությունը, որը տրվել է: Այն նման է մի երազի և ինձ թվում է, թե կարթնանամ ու կտեսնեմ, որ ես երազում էի: Դա զարմանալի է:

Վասո՛ւլա, Ես Ամենակարող ու Ամենակալ եմ: Ես կամեցա քեզ մեռելներից հարուցանել և լուսավորել քեզ: Դու հիշու՞մ ես «Արևի» տեսիլքը:

Այո՛, Տեր, լույսի կլոր գունդը[1]:

Այդ կլոր Լույսը այն նույն «Արևի հրաշքն» է, որը ձեզ հայտնի է որպես «Արևի Հրաշք»: Լույսի այդ կլոր գունդը, որ թույլ տվի քեզ տեսնել, նույնն է, ինչ Ցաթիմայինը: Ես քեզ թույլ եմ տվել թափանցել դրա մեջ: Ես քեզ թույլ եմ տվել մտնել Դրա մեջ: Օ՜, Վասուլա, եթե դու միայն իմանայիր Իմ՝ քեզ տված առանձնաշնորհը: Փոքրի՛կս, դու դեռ չես գիտակցում, որովհետև Ես քո աչքերը քողարկված եմ պահում:

Ես սիրում եմ քեզ, Աստված Իմ:

Ես կթաքցնեմ քեզ Իմ Սուրբ Սրտում, դու թանկ ես Ինձ համար: Ես՝ քո Աստված, սիրում եմ քեզ. երբեք մի՛ վախեցիր Ինձանից, քանզի Ես Սեր եմ: Ես այնքա՜ն քնքուշ Հայր եմ: Ինձանից վախեցիր միայն, երբ դու կապստամբես Իմ դեմ: Ա՜հ, Վասուլա, Իմ Խորհուրդները շատ են: Դրանցից շատերը քողարկված են քեզանից:

Վասո՛ւլա, այժմ ուշադիր լսիր. յուրաքանչյուր մարդարեություն, որ ասվել է, պիտի կատարվի: Սուրբ Գրքում գրված յուրաքանչյուր բառ պիտի կատարվի:

Վասո՛ւլա, Ես ուզում եմ, որ դու երկու Սիրտ նկարես:

Այո՛, իրար մոտ, փաստորեն՝ միացած: Օղակիր դրանք մի փչե պսակով: Այո՛, Իմ Մոր Անարատ Սիրտը միացած է Իմ Սրտին: Ես ցանկանում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը Նրա հանդեպ ցուցաբերի այնպիսի մի նվիրում, որին արժանի է Նրա Անարատ Սիրտը: Տեսնում ես, աղջիկս, թե Մեր Աստվածային Սրտերն ինչպես են փշերով պատված մարդկանց կողմից, որոնք մեր հանդեպ ցուցաբերում են միայն ապերախտություն, սրբապղծություն ու սիրո պակաս: Դա նրանց մեղքերի <u>ամբողջությունն</u> է:

Վասո՛ւլա, Ե՛ս, որ Բանն եմ, սիրում և հարգում եմ Նրան: Ես ցանկանում եմ, որ դուք էլ մոտենաք Իմ Մորը և մեծարեք Նրան, ինչպես Ես եմ մեծարում: Ես ցանկանում եմ, որ ամեն ոք ծնկի գա՝ պատվելով Նրան: Ես ցանկանում եմ, որ դուք աղոթեք Վարդարանով և Ողջունեք

[1] մարտի 26, 1987

ձեր Սուրբ Մորը: Ես ուզում եմ, որ դուք հատուցեք ձեր մեղքերը՝ խնդրելով Նրան, որ սովորեցնի ձեզ:

Զգոն եղիր, աղջիկս: Ե՛կ, Ես քեզ ցույց եմ տվել, թե Իմ Մոր Սիրտը ինչպես է միացած Իմ Աստվածային Սրտին՝ շրջապատված մի փշե պսակով Ես կհիշեցնեմ քեզ Իմ Ներկայությունը: Ես սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում, Հիսո՛ւս:

Ե՛կ: Վասուլա, դու կաղոթե՞ս Ինձ հետ:

Այո՛, Տեր:

«Հա՛յր, օ՛, Աբբա,
ես տալիս եմ Քեզ իմ կամքը,
ես հանձնում եմ Քեզ իմ կյանքը,
ես հանձնվում եմ Քեզ:
Հայր Արդար, եթե Քո Կամքով է,
ապա արժանի արա ինձ,
որպեսզի Դու կարողանաս
լիովին օգտագործել ինձ:
Ինձ Քո այրող
ցանկությունների զոհը դարձրու:
Արա՛, ինչպես որ
Քո Սիրտն է ցանկանում:
Ամեն»:

Վասուլա, օրհնի՛ր քեզ ճնշողներին, աղոթի՛ր նրանց համար: Ե՛կ, աղոթիր քո Սուրբ Մորը, աղոթի՛ր Ինձ հետ.

(Հիսուս թելադրում է)

«Օ՛, Սուրբ Մայր,
ես կհատուցեմ Քո Անարատ Սրտին
ուղղված վիրավորանքների համար՝
կամենալով սիրո զոհ դառնալ՝
Սիրո համար: Ամեն»:

Վասուլա, աղոթի՛ր Ինձ հետ՝ Հորը, ե՛կ, միասին.

«Հա՛յր, Սիրելիս,
ես Քո կարիքն ունեմ,
որ Դու ավելացնես իմ հավատը,
իմ սերը և իմ հույսը,
որ ես կարողանամ
կրկին փառավորել
Քո Սուրբ Անունը: Ամեն»:

Հունվարի 26, 1988

Վասո՛ւլա, դու կաշխատե՞ս քո Սուրբ Մոր հետ: Մենք անբաժան ենք:

Այո՛, Հիսուս:

Ես սիրում եմ քեզ: Ես միշտ Նրա կողքին եմ: Քո Սուրբ Մայրը այժմ կսովորեցնի քեզ:

(Հիսուս Սբ. Մարիամի հետ միասին էր: Նա ինձ հասկացրեց, որ եթե ես Նրան Իր հետ չէի տեսնում ամեն անգամ, դա չէր նշանակում, որ Նա Իր հետ չէր: Նրանք մշտապես միասին են):

Աղջի՛կս, Ես միշտ եղել եմ քեզ հետ, Ես պաշտպանում և օգնում եմ քեզ:

(Հետո ես հասկացա, որ Սբ. Մարիամը օգնում է ինձ հասկանալու որոշ բաներ: Նա օգնում է ինձ ընթանալ այն ճանապարհով, որ Աստված ընտրել է ինձ համար):

Ես քեզ մինչև վերջ կօգնեմ:

(Ներքին ձայնով Սբ. Մարիամն ինձ հասկացրեց, որ մենք պետք է նորից կարդանք Հայտնության 12-րդ գլուխը):

Ե՛կ, Ես կբացատրեմ: Երբ սատանան պարտվեց, նա երդվեց հետապնդել մնացած բոլոր Իմ զավակներին և պատերազմել նրանց դեմ: Մոլեգնած կատաղությամբ նա երդվեց կործանել նրանց, որովհետև նա գիտի, որ իր օրերը հաշված են, և դրա համար էլ ուզում է իր հետ որքան հնարավոր է շատ հոգիներ քարշ տալ: Այո՛, նա վիշապն է, և իր պոչով նա փորձում է Աստծո ողջ արարչությունը տանել կործանման[1]: Վասո՛ւլա, զավակս, քանի որ նա հենց ինքը Սնափառությունն է, նա մեղադրում է Ամենակարողի Գործերը՝ ցանկանալով ապացուցել Աստծուն, որ Նա ձախողվել է Իր արարչագործության մեջ, և որ Մեր զավակները ստեղծված են, որ հետևեն նրա չար ուղիներին:

Վասո՛ւլա, Ես քեզ մի բան կասեմ, մի բան, որ կուրախացնի բոլոր նրանց, ովքեր Ինձ սիրում են. այս տարի Իմ Փառքի համար կլինի[2]: Ո՛չ, դու լրիվ չես հասկանում. Իմ Անարատ Սիրտը կՀաղթի[3]: Ես շատ հոգիների կբերեմ ետ՝ դեպի Հիսուս:

(Սբ. Մարիամը իմ ուշադրությունը սևեռեց Իր երևումներին):

Ինչպես որ Ես երևացել եմ Լուրդում և Ֆաթիմայում, նույն ձևով Ես երևացել եմ Գարաբանդալում՝ տալով համանման մի պատգամ: Գարաբանդալը Ֆաթիմայի Պատգամի շարունակությունն է, սակայն մեկ

[1] Ակնարկում է Աստծուն մոռանալու բազում ուղիների մասին:
[2] Ես չէի հասկանում:
[3] Այստեղ ես հասկացա:

անգամ ևս սատանան փոշի է ցանել եկեղեցական հեղինակությունների աչքերին, որ չփոթեցնի նրանց: Նա իր սերմերն է ցանել նրանց սրտերում[1], որպեսզի նրանք հերքեն Իմ երևումները ու արգելեն Իմ Պատգամի համընդհանուր դառնալը: Վասո՛ւլա, Մեր Սրտերը արյունոտվում են ու խոցոտվում նրանց մեջ խրված փշերից: Ինչպես եմ Ես արտասվում ձեզ համար, զավակներս, Ես սիրում եմ ձեզ, Վասուլա: Իմ վիրավոր Սիրտը կտոր-կտոր է լինում՝ տեսնելով, թե վիշապն իր պոչով ինչպես է ավլում ձեզ:

(Սբ. Մարիամը մեծ ցավի մեջ էր):

Վասո՛ւլա, Ես քո ականջին մի բան կասեմ: Լսի՛ր: Այո՛:

(Սբ. Մարիամը մի գաղտնիք շշնջաց իմ ականջին: Երբեմն ինձ թվում է, թե ես երազ եմ տեսնում և ուր որ է կարթնանամ):

Վասո՛ւլա, դա այդպես է, որովհետև Հիսուս քո աչքերը քողով է ծածկել: Նա ճիշտ ժամանակին կբարձրացնի այդ քողը: Աղջիկս, Ես ուզում եմ, որ դու վստահես Նրան, և թույլ տաս Նրան քեզ առաջնորդել այս ձևով: Մի՛ վշտացիր, ծաղիկս, Ես միշտ քեզ հետ եմ: Հիշի՛ր, թե ինչպես Ես երևացի Թուրինի Իմ եկեղեցու բակում:

Այո՛:

(Սբ. Մարիամը, որպես մի հսկա արձան երևաց իմ զարմիկին, որ մեզ ցույց տար, թե որտեղ է Իր Եկեղեցին և հասկացներ, որ Ինքը մեզ ներս է կանչում):

Այո՛, Ես երևացի ձեզ կանչելու համար: Ես կամեցա, որ դուք գաք Իմ Եկեղեցին, սիրելի զավակս: Ես երևում եմ շատերին և տարբեր վայրերում՝ Իմ զավակներին կանչելու համար: Եթե դուք միայն իմանայիք, թե Ես որքան եմ սիրում ձեզ: Ես ուզում եմ գրկել ձեզ բոլորիդ ու մոտեցնել Սրտիս:

(Իմ մեջ մի միտք ծագեց, տխուր մի միտք, որ եկեղեցական իշխանություններին կարող է կասկածելի թվալ այս հայտնության հսկայական ծավալը: Դա նորից վեր է նրանց իմաստությունից, ինչպես Հիսուսն ասաց երկու անգամ այդ մասին: Կասկածնե՛ր, կասկածնե՛ր, կասկածնե՛ր, թերահավատությո՛ւն, թերահավատությո՛ւն, թերահավատությո՛ւն...)

Զավա՛կս, ինչո՞ւ Ես մոռանում, որ Հիսուս նույնը ապրեց, երբ մարմնով երկրի վրա էր: Փարիսեցիները հալածեցին, ծաղր ու ծանակի ենթարկեցին ու չհավատացին Նրան: Այսօր, աղջի՛կս, նրանք[2] չեն հավատում Աստծո Երկնային Գործերից շատերին: Ձեր դարաշրջանը, աղջի՛կս, այնքան ցած է

[1] Ես հասկացա «նրանց մեջ»:
[2] շատ եկեղեցական իշխանություններ:

ընկել, որքան որ Սոդոմը: Հիսուս զգուշացրեց, որ քեզ ճնշողները շատերն են լինելու, սակայն Ես պաշտպանում եմ քեզ ամենավատթարից, որ կարող է պատահել:

Ե՛կ, Վասուլա, մի՛ մոռացիր Աստծո Ամենասուրբ Վայրի իրաղարձությունը: Ես սա ասում եմ հիշեցնելու համար, որ Աստված քեզ դրել է Իր Սուրբ Սրտում: Նա թույլ է տվել քեզ թափանցել Իր Լույսի մեջ: Այո՛, «Արևի մեջ»[1]: Դու տեսել ես Աստծո Ամենասուրբ Վայրը:

Սբ. Մարիամ, այն ժամանակ ես չէի հասկանում, որ այս հսկայական «Լույսի Գունդը» նույնն է, ինչ որ Ցաթիմայինը:

Դու այն ժամանակ չգիտեիր: Սերը քեզ բարձրացրեց ու դրեց Իր Սրտում. Նա նույնը կանի մնացած Մեր զավակների համար: Մենք կանչում ենք Մեր զավակներին: Աստված կների նրանց մեղքերը: Նա կսովորեցնի նրանց ապաշխարել ու հատուցել: Նա կսովորեցնի նրանց Իր ուղիները: Նա կանի նրանց Աբդաբությամբ և Սրբությամբ, ու նրանք Դարձի կգան:

Ե՛կ, մեծարիր Ինձ: Վասո՛ւլա, Ինձ հետ վերաբերվիր որպես քո Սուրբ Մորը. դու Իմ զավակն ես:

Այո՛, Սուրբ Մայր, ես այժմ Սուրբ Ընտանիք ունեմ: Ես սիրում եմ Քեզ:

(Ես անհանգստացա վաղվա համար):

Մի՛ անհանգստացիր, Ես քո ականջին կշշնջամ Իմ խոսքերը: Ես, Վասուլա, բոլորի Մայրն եմ: Ե՛կ:

(Ես զգացի Նրա Սիրտը. մեր Սուրբ Մայրը նույնքան վիրավորված էր, որքան Հիսուս):

Այո՛, Իմ Վասուլա, Ես վիրավորված եմ այն սխալների համար, որ եկեղեցական իշխանությունները կրկնում են՝ մերժելով Գարաբանդալի Իմ Պատգամը: Գարաբանդալը Ցաթիմայի Պատգամի ընդլայնումն է:

Վասո՛ւլա, այժմ հանգստացիր. ես քեզ վաղը կկանչեմ:

Այո՛, Սբ. Մարիամ, ես օրհնում եմ Քեզ:

Աղջիկս, ե՛կ Ինձ մոտ, երբ կամենաս:

Հունվարի 29, 1988

(Անցյալ գիշեր ես երազում հստակորեն տեսա իմ մահը, թե ինչպես եմ ես մեռնելու: Իմ մեռնելու պահին Հիսուսն ինձ նեցուկ էր: Ես կանգնած երերում էի: Նա այնպես արեց, որ իմ կզակը Իր ուսին դնեմ. ես զգացի Նրա մազերի հպումը իմ աջ այտին: Նրա մազերը այնպիսին էին, ինչպես Սուրբ Վարշամակի նկարում: Կարծես Նա բռնությամբ էր ենթարկվել: Նա ինձ

[1] Ես այն Արև եմ կոչում:

օգնում էր՝ մխիթարական խոսքեր շշնջալով, հրահանգների հետ մեկտեղ, թե ես ինչպես պետք է «թուլանայի» և թողնեի, որ հոգիս լքի մարմինս, մինչ Նա կընդուներ այն: Երբեմն Նա խոսում էր բժշկի նման: Այն ամենը, ինչ ես տեսա, տագնապալի չէր, և ես բնավ տանջանք չզգացի):

Վասո՛ւլա, Մենք միասին ենք, զավակս:

(Հիսուս և Սբ. Մարիամը)

Ծաղի՛կս, երբ քո ժամանակը գա, ե՛ս, որ քո Հնձվորն եմ, կքաղեմ քեզ ու կտնկեմ բերկրանքների Իմ Այգում: Վասո՛ւլա, այն, ինչ դու տեսար, իրականության արտացոլումն է միայն: Այժմ ե՛կ և ապաշխարիր, սիրելիս: Ես լսում եմ:

(Ես ապաշխարեցի, ներում հայցելով իմ մեղքերի համար):

Ամեն բան ներված է: Ես քեզ կսովորեցնեմ մաքրության, ողջախոհության և այն մասին, թե ինչպես պետք է սրբությամբ ապրել: Այլևս մեղք մի՛ գործիր:

(Սբ. Մարիամ)

Այո՛, Վասուլա, սիրիր Աստծուն քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ: Նա անսահման սիրում է քեզ: Այո՛, զավակս, երբեք մի՛ մոռացիր, թե Նա ինչպես ազատեց քեզ չարից: Նա երբեք չի հանգստանում: Նա դռնից դուռ է գնում՝ Իր ձեռքի մեջ պահած Իր Սիրտը՝ փափագելով, որ այդ հոգին լսի Իրեն: Ավա՜ղ, այնքան քչերն են լսում Նրան...

Վասո՛ւլա, դու գիտե՞ս, թե ինչպես եմ Ես գործում:

Ո՛չ, ոչ այնքան...

Ես աղոթում եմ, Ես աղոթում եմ հոգիների փրկության համար: Ես պաշտպանում եմ ձեզ չարից. <u>Ես ձեր Պաշտպանն եմ</u>: Ինչպես յուրաքանչյուր մայր, որ կպաշտպանի իր զավակին վնասվելուց, Ես էլ ձեզ պաշտպանում եմ սատանայից և նրա ամբարիշտ որոգայթներից: Ես աղոթում եմ, որ հոգիները վերադառնան Հիսուսին: Ես հավաքում և օրհնում եմ նրանց: Ճիշտ է, նրանք չեն տեսնում, սակայն շատերը զգում են Ինձ:

Երանի թե կարողանայի Քեզ մի բան տալ, որն իսկապես կուրախացնի Քեզ, մի բան, որ իմ կարողության սահմաններում լինի:

Ա՜հ, Վասուլա, փորձիր Ինձ հաճելի դառնալ հետևյալ ձևով. հնազանդվի՛ր, հնազանդվի՛ր Աստծո Կամքին:

Poss?[1]

Մի՛ փորձիր հասկանալ, թե ինչու է Աստված Իր Պատգամով քեզ մոտ եկել և ոչ թե՝ ուրիշների: Ընդունի՛ր: Հնազանդվի՛ր Նրան, զավակս, երբ Նա քեզանից որևէ բան է խնդրում:

Դու աղոթե՞լ ես այն աղոթքները, որ Նա խնդրեց քեզ աղոթել գրելուց առաջ:

Ո՛չ:

Ես կօգնեմ քեզ, Վասուլա:

Սբ. Մարիամ, Նա հիմա բարկացած է ինձ վրա և հիասթափված, այո՞:

(Ես ատեցի ինքս ինձ. ես երբեք չեմ ուզում հիասթափեցնել Նրան):

Ո՛չ, Վասուլա, Նա բարկացած չէ, որովհետև Նա գիտի, որ դու անասելիորեն թույլ ու թշվառ ես: Մի՛ հուսահատվիր, Հիսուս սովորեցնում է քեզ, և դու գոհացնում ես Նրան, բայց Նրան առավել գոհացրու՝ հնազանդվելով Իր պահանջներին: Հիշի՛ր, Հիսուս երբեք քեզանից չի խնդրի մի բան, որը կարող է քեզ վնասել: Հիսուս քո փրկությունն է ցանկանում: Հիսուս նշանակում է Փրկիչ:

Ես օրհնում եմ քեզ, Սբ. Մարիամ:

Ես միշտ պիտի պաշտպանեմ քեզ, Վասուլա: Կրկին եկ Ինձ մոտ. Ես սիրում եմ քեզ, աղջիկս:

Հունվարի 30, 1988

Վասո՛ւլա, Ես արտասվում եմ Իմ զավակների համար, որոնք մոլորվել են:

(Սբ. Մարիամը արտասվում էր, Նրա ձայնը շատ տխուր էր):

Այժմ Սերն ու Ողորմությունը իջել են ձեր մեջ՝ մեկ անգամ ևս ձեզ սնելու Ողջախոհության, Մաքրության և Սրբության Իր հացով: Սերն իջնում է, որ ձեզ տա Հույս և Խաղաղություն: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, Վասուլա:

(Դադար)

Դու կգա՞ս Ինձ մոտ, Թուրինի Իմ Եկեղեցին: Ինձ հաճախ հանդիպիր այնտեղ: Դու կտա՞ս Ինձ հավատարմության քո խոստումները: Աղջի՛կս, Իմ զավակի նշանածը, դու այդ խոստանո՞ւմ ես Ինձ:

[1] Ինչպե՞ս (հունարեն):

Սուրբ Մայր, ես ուզում եմ գոհացնել Քո Անապական Սիրտը: Ես կգամ Թուրին, Քեզ մոտ: Բայց իմ տգիտության պատճառով ես չգիտեմ, թե ինչ է նշանակում «հավատարմության խոստումներ»: Ես քեզ կտամ ինչ որ ուզես: Խնդրում եմ թույլ տուր իմանալ, թե ես ինչ պիտի տամ քեզ: Այնպես չլինի, որ իմ տգիտության պատճառով ես խախտեմ դրանք:

Գոհացրու Իմ Որդուն, Նրան տալով նաև քո ողջ սերն ու նվիրումը Իմ Անարատ Սրտին: Գոհացրու Իմ Որդուն նաև Նրան հոգիներ մատուցելով, որ Նա փրկի նրանց: Գոհացրո՛ւ Ինձ տալով հավատարմության քո խոստումները: Դու կկատարե՞ս այդ, հետևելով Հիսուսին: Եղի՛ր Նրա արտացոլումը: Հավատարիմ եղիր Նրան: Վասո՛ւլա, Ես կաղոթեմ քեզ համար, Ես կբարեխոսեմ քեզ համար:

Նշանածը Հիսուսի, Մեր Երկուսի Սրտերը օղակված են փչե պսակով: Գարաբանդալի Իմ Պատգամը անտեսվեց: Թող Իմ սիրելի որդին՝ Հովհաննես-Պողոս 2-րդը, գա Ինձ մոտ և զգա Իմ Անարատ Սիրտն ու Հիսուսի Աստվածային Սիրտը: Թող նա զգա, թե ինչպես են Մեր Սրտերը ծվատվում և պատառոտվում՝ դառնալով մի մեծ վերք: Նրանք պատռել են իրենց Աստծո Սիրտը և Իմ Անարատ Մայրական Սիրտը:

Ես ուզում եմ, որ դու աղոթես բոլոր նրանց համար, ովքեր կմերժեն քեզ: Զավա՛կս, դու որքա՞ն ես տանջվելու...

Ես պատրաստ եմ տանջվելու Աստծո Փառքի համար:

Մի՛ մոռացիր, որ Հիսուս և Ես քեզ հետ ենք: Ծա՛ղիկս, Մենք կսփոփենք քեզ: Այժմ Ես քեզ ասում եմ հետևյալը. դու ինքդ չպետք է Հիսուսի Պատգամը փոխանցես որևէ եկեղեցական իշխանության: Հիսուս քեզ վկաներ է տվել, ովքեր վկայելու են քեզ համար:

Օ՜, Սբ. Մարիամ, ուրեմն սխա՞լ էր այն, ինչ մենք արել ենք:

Այո՛ Վասուլա: Թող քո ընկերները կարդան Հիսուսի Պատգամները՝ դարձի բերելով նրանց, բայց դու ինքդ մի՛ գնա և մի՛ ներկայացրու քեզ որևէ եկեղեցական իշխանության: Դու պետք է այս գործը թողնես քո երկու վկաներին: Հիսուս լուսավորել է նրանց, որ հասկանան, թե ինչպես է Ինքը գործում: Ես միշտ նրանց հետ կլինեմ:

Այո՛, մեր Տերը դարեդար եղել է մեր ապաստանը: Իր հավատարմությունը վահան է և պաշտպանություն: Թող Քո որդիները վայելեն Քո վայելչությունը, Աստվա՛ծ իմ:

Իմ[1] պատգամը բժշկում է և դարձի է բերում կորած հոգիներին:
Վասո՛ւլա, ո՞րն է Իմ Պատգամը վավերացնող ամենամեծ հրաշքը:

Հոգիների դա՞րձը:

[1] Դա Հիսուսն էր:

Այո՛, Իմ Վասուլա, Իմ քահանա, հիմա դու էլ գիտես, որ Իմ մեծագույն հրաշքը հոգիների դարձն է:
Աղջի՛կս, վերջում Մեր Սրտերը պիտի հաղթեն:

Աղջի՛կս:[1]

Այո՛, Սբ. Մարիամ:

Ե՛կ Ինձ մոտ, Թուրինի Իմ Եկեղեցին: Ուրեմն դու ինձ կտա՞ս քո խոստումները:

Կտամ, Սբ. Մարիամ:

Ես հրճվում եմ քեզ այնտեղ տեսնելով: Իսմինիին էլ ասա: Քո ընկերներին նույնպես վերցրու քեզ հետ. Ես կօրհնեմ նրանց բոլորին:

Հունվարի 31, 1988

Վասո՛ւլա, Մենք երկուսս քո կողքին ենք:

(Անմիջապես դրանից առաջ, բազմոցին նստած ժամանակ, ես զգացել էի, որ Հիսուսի պատմուճանը թեթևակի դիպավ իմ աջ թևին: Նա Իր ձեռքը դրեց իմ ուսին: Ես կրկին պարզորոշ զգացի Նրա Ներկայությունը: Ես վեր ելա տեղիցս գրելու համար և զգացի, որ Սբ. Մարիամը նստած է իմ կողքին):

Խոստումը, որ Ես սպասում եմ քեզանից, հավատարմությունն է: Հավատարիմ եղիր Հիսուսին: Միշտ առաջինը դասիր Նրան: Պատրաստ եղիր կատարել Նրա Կամքը:

Սբ. Մարիամ, կարծես թե ես դեռ չեմ հասկանում: Գիտեմ, որ լիովին չեմ հասկանում այս ամենը:

Զավա՛կս, Աստված վարագուրել է քո աչքերը: Ընդունի՛ր այն ձևը, որով Նա գործում է քո մեջ: Վստահի՛ր Նրան,

Վասուլա, Ես սպասում եմ քեզ Իմ Եկեղեցում[2]: Ես պիտի օրհնեմ բոլոր նրանց, ովքեր կմտնեն Իմ Տունը: Այո՛, Ես կօրհնեմ բոլոր նրանց, ովքեր կգան Ինձ մոտ:

Վասուլա, մի՛ վհատվիր, երբ փորձություններ լինեն: Աղոթի՛ր, ե՛կ Ինձ մոտ. օրհնի՛ր նրանց, ովքեր հալածում են քեզ, աղոթի՛ր քեզ ճնշողների համար, չարին սիրով հատուցիր: Վերջում Իմ Անարատ Սիրտը պիտի հաղթի:

Ցաթիմայում Ես մի մեծագույն Հրաշք էի կատարել, որ բոլորը հավատան. դուք այն «Արևի Հրաշք» եք կոչում: Դու գիտե՞ս, ծաղիկս, որ Աստված թույլ տվեց, որ քո հոգին մտնի Դրա մեջ: Դու մտել ես Նրա

[1] մեր Օրհնյալ Մայրն է խոսում
[2] Թուրինում

Բնակատեղին: Վասո՛ւլա, դու որքան քիչ ես հասկանում Աստծո կողմից քեզ տրված շնորհը:

Այո՛, Սբ. Մարիամ, ես երբեք լիովին չեմ հասկանում, սակայն, եթե Աստծո Կամքն է, ես ընդունում եմ դրանք այնպես, ինչպես որ կան:

Այո՛, երբեք մի՛ փորձիր հասկանալ պատճառը, այլ բարյացակամորեն ընդունիր այն ամենը, ինչ Աստված տալիս է քեզ: Շնորհով հնազանդվիր Աստծո պահանջներին: Աչքերդ ծածկված պահելով՝ Նա քո հոգին զերծ է պահում հպարտանալուց, երբ Նա Իր բոլոր շնորհները տեղում է քեզ վրա: Նա քեզ թույլ տրվեց մտնել Նրա Ամենասուրբ Վայրը, որտեղ միլիոնավոր սերովբեներ շրջապատում են Նրա Գահը՝ անդադար պաշտելով Նրան: Նրա ամենից սուրբ Հրեշտակներին է միայն թույլատրված մտնել Աստծո Սուրբ Բնակատեղին: Հիմա դու գիտես, աղջիկս, այն մեծագույն շնորհը, որ Նա տվել է քեզ:

Սբ. Մարիամ, ների՛ր ինձ լիովին չհասկանալու համար:

Ես կբարեխոսեմ քեզ համար:

Շնորհակալ եմ Քեզանից, Սուրբ Մայր, ինձ օգնելու համար:

Ահա՛, Հիսուս:

Վասուլա, Ես նույնպես ներկա կլինեմ[1]: Ես կօրհնեմ բոլոր նրանց, ովքեր կգան:

Այժմ եկ, զգա՛ Ինձ, ուրախացրո՛ւ Ինձ, ժպտա՛ Ինձ, խոսի՛ր և թող որ Ես լսեմ քեզ: Փնտրի՛ր Ինձ Իմ Մոր կողքին, քո Սուրբ Մոր: Մենք միասին ենք: Ես սիրում եմ քեզ:

Փետրվարի 1, 1988

(Սուրբ Մարիամը)

Վասուլա, Ես շատ անգամներ եմ խնդրել Իմ դուստր Ռուսաստանի նվիրաբերման համար: Ես աղերսել եմ նրա նվիրաբերման համար: Այսօր[2], Վասուլա, այն օրն է, երբ նա տեսավ Լույսը. նա պիտի նշի իր հազարամյա տարեդարձը:

Վասո՛ւլա, քո քույրը[3] մեռած է, սակայն Տերն այժմ նրա մոտ է: Նա հարություն պիտի տա նրան, և Սերը պիտի սիրի նրան՝ Զսիրվածին, և նա պիտի աղաղակի Նրան. «Դու Իմ Աստվածն ու Փրկիչն ես»: Այս աղաղակով դևերը փախուստի կդիմեն. վախեցած դևերը կփախչեն, քանի որ այս ազգը պիտի դառնա Աստծո միասնական և նվիրյալ սպասավորը:

[1] Հիսուսն ինձ հասկացրեց Թուրինում, Սբ. Մարիամի Տանը:
[2] այս տարի
[3] Ռուսաստանը

Աստծո զորությամբ բժշկված և հարություն առած, Նրա սրբության բարձրությունը՝ Ամենակարողին նվիրված իր պաշտամունքներով, պիտի գրավի բոլոր իր հարևաններին: Ռուսաստանը պիտի լինի Աստծո Փառքի, Աստծո Ողորմության և Սիրո խորհրդանիշը: Նրա շարականներն ու օրհներգությունները, որոնք այնքան քաղցր են Մեր ականջներին, իրենց նրբերանգներով, որպես խնկարկություն պիտի բարձրանան երկինք: Սերը հարություն պիտի տա նրան, ինչպես Նա հարություն տվեց նրան հազար տարի առաջ:[1]

Ես եմ Տերը՝ Հարությունը: Երբ Ես հարություն տամ Ռուսաստանին, նա կվերականգնի Իմ պարգևները, նա սիրով կրկին կզարդարի Իմ Տունը, և Ես կրկին կմիացնեմ նրան Ինձ հետ: Ես կառաջարկեմ նրան Իմ Հացն ու Գինին, և նա չի մերժի Իմ Կերակուրը: Նա կընդունի Իմ առաջարկը և կճաշակի Իմ Հացն ու կխմի Իմ Գինին՝ նորոգելով ինքն իրեն ու փառաբանելով Ինձ: Ես նրան կծածկեմ Իմ Փառքով, Ես փառահեղորեն նրան կզարդարեմ, Ես կոռոգեմ նրան Իմ Սեփական Աղբյուրներից, Ես կլցնեմ նրա շտեմարանները, Իմ Աչքերը նրա վրա են: Ա՜հ, Վասուլա, միայն սպասիր և տես[2]: Աղջիկս, որքան եմ Ես փափագում տեսնել Պետրոսին, Իմ Պետրոսին, իր քրոջը այցելելիս...

Տե՛ր, խրախուսիր նրան, որ գնա: Տե՛ր, բաց արա նրա ճանապարհը, եթե դա Քո կամքն է:

Ե՛կ, Ես գործում եմ շատերի սրտերում, Վասուլա: Աղոթի՛ր ձեռք բերելու Իմ Հոր բարեհաճությունը: Ես կվերականգնեմ Իմ Եկեղեցին: Վա՜յ անհավատարիմին:

Վասո՛ւլա, Ես ուզում եմ հիշեցնել քեզ, որ այդ Ես եմ, որ դադարեցնում եմ բարձր ծառերի աճը, իսկ ցածրերին օգնում եմ, որ աճեն: Ե՛կ այժմ, մենք, այո՛[3], մեզ, այո՛[4]: Այո՛, Վասուլա, երբեք մի՛ կասկածիր, Ես սովորեցրի քեզ, որ դու Մեզ տեսնես քո հոգու աչքերով: Ես քո Ուսուցիչն եմ: Ես սիրում եմ քեզ, երբեք մի՛ կասկածիր:

Փետրվարի 2, 1988

Խաղաղություն քեզ, ծաղի՛կս: Այդ Ես եմ, Հիսուս՝ քո Փրկիչը: Սերը քեզ թշվառացած գտավ թշվառության մեջ: Սիրելիս, Ես՝ Տերս, Իմ Աստվածային Ձեռքը դրել եմ քեզ վրա և զարդարել քեզ... Դու փառավորում ես Ինձ, երբ նայում ես Ինձ:[5]

---

[1] Այստեղ ավարտվում է Սուրբ Մարիամի պատգամը:
[2] Հիսուսն այն տպավորությունն էր թողնում, որ շատ ավելի քողարկված բաներ կան, որոնք պետք է բացահայտվեն: Նա շատ ուրախ և խանդավառ էր թվում:
[3] Հանկարծ ես Նրան տեսա՝ բազկաթոռի մեջ նստած: Ես տեսա Նրա գեղեցիկ դեմքը, մինչ Նա Իր Ձեռքով ցույց էր տալիս «մենք» բառը: «Այո» բառը մատնանշում էր, որ ես Նրան ճիշտ էի նկատել:
[4] Մյուս «այո»-ն վերաբերում էր Սբ. Մարիամին, որը կանգնած Հիսուսի մոտ ժպտում էր:
[5] ես նայեցի նրա պատկերին

Հիսո՛ւս, ես ատում եմ ինքս ինձ, որ այսքան թշվառ եմ:

Ի՞նչ ես ասում, Վասուլա:[1] Կարծես, դու մոռացել ես, թե ես ինչպես եմ միացած քեզ հետ: Զգուշացի՛ր, թե ինչ ես խոսում: Հիշի՛ր, «մենք, մեզ»:

Օ՜, Հիսուս, քո համբերությունը Մեծ է...

Ես սիրում եմ քեզ: Ե՛կ, լսիր Իմ Մորը:

[2]Որքան եմ քեզ սիրում, Վասուլա "To Spiti Mou se zitai, i portes ine orthanikhtes yia sena pethi Mou[3]. to noritero meta ti thefteri praxi".

Փետրվարի 3, 1988

Վասո՛ւլա, դու գիտե՞ս, թե որքան առավել եմ սիրում քեզ, երբ դու Ինձ մոտ ես գալիս այս ձևով: Դու գալիս ես Ինձ մոտ թշվառ ու ծնկաչոք. Դու Ինձ քո սիրտն ես բացում: Քո արցունքները, զավա՛կս, քո սիրո ու տենչանքի արցունքները Իմ Վերքերը թեթևացնող բալասան են: Օ՜, աղջիկս, Իմ զմուռս, Իմ մասնիկ: Քո հառաչանքները, նշանածս, կարծես սիրո միլիոնավոր խոսքեր լինեն Ինձ ուղղված: Իմ ձեռքով սրբագործված ծաղիկս, մի՛ վհատվիր: Աբելն այս անգամ չի ոչնչացվի... Աբելը կապրի: Այո՛: Քո սրտի մեջ մի դրախտ ստեղծիր Ինձ համար, Ես հոգնած եմ և հանգստի կարիք ունեմ: Ինձ քո բուրմունքով պատիր, ծաղիկս, ամոքի՛ր Ինձ քո սիրով:

Փոքրիկս, Ես քեզ կծածկեմ գեղեցկությամբ, Ես կներեմ քո բոլոր մեղքերը և քո հին զգեստները այլևս չեն լինի: Դու զարդարված կլինես, ծաղիկս. Ես քեզ ամբողջովին կնորոգեմ: Վասուլա, Ես սիրում եմ քեզ: Իմ շնորհը քեզ վրա է: Ահա, բռնի՛ր Իմ Ձեռքը. Ես առաջնորդում եմ քեզ:

(Սբ. Մարիամ)

"O, Vassula, min amfivalis, Se zitao, tha zissis mono yia to Christo, to Potiri Tou ine ksekhilo me tis amarties tou cosmos, afto ine to telefteo Tou Minima, ean to arnithown thafisso to Kheri Tou na pessi apano tous, then tha boresso alo na to kratisso, ekhi varini. Avrio Vassula, tha kana to thavma Mou, I ora plissiazi".

(Այս օրերին, մեր Օրհնյալ Մայրը սովորեցնում էր ինձ: Ես նկատեցի, որ նա շատ էր ընդգծում «Մայր» բառը: Նա ինձ սովորեցնում էր, որ Ինքը բոլորի Մայրն է:

[1] Հիսուս ցնցվեց
[2] Սբ. Մարիամ:
[3] Ես մի հարց տվեցի Մեր Սուրբ Մորը:

Ես նաև սովորեցի, որ Հիսուս և մեր Մայրը իրարից անբաժան են: Որտեղ որ Հիսուսն էր, այնտեղ է նաև Իր Մայրը: Նրանց սրտերը միացած են և մեկ են:

Երբ մեր Մայրը խոսում է «Ժամանակների Վերջի մասին» դա պէտք է հասկանալ որպես մի ժամանակաշրջանի Վերջը: Այս ներկա ժամանակաշրջանը, որի մեջ մենք ապրում ենք, չար և ուրացող ժամանակաշրջան է: Դրա համար Աստված միջամտում է):

Դարձի գալու ժամանակը մոտ է[1]: Աստծո Թագավորությունը ձեր բոլորի մեջ է: Հիշե՛ք ժամանակների Վերջի մասին: Հիշե՛ք այն մասին, թե ինչպես Իր Պատգամը պիտի բժշկի Իր Մարմինը և միավորի Այն: Հիշե՛ք, թե ինչպես Հիսուսի Փրկագործության Ծրագիրը միլիոնավոր հոգիներ պիտի փրկի: Նրա Խաղաղության և Սիրո Պատգամը մեր զավակներին ետ կբերի դեպի Սերը: Հիսուս դարձի է բերում նրանց, հենց որ նրանք ճաշակեն Իր Հացը. այն է՝ Սիրո պտուղը: Սերը կվերականգնի ձեզ բոլորիդ: Սերը և Ողորմությունը կազատեն ձեզ Սատանայի ամբարիշտ որոգայթներից: Ե՛կ, սիրելիս, կատարիր Աստծո կամքը: Ես միշտ քո կողքին եմ: Ես օրհնեցի քեզ Ինձ հիշելու համար:
Դու դա կանե՞ս Ինձ համար: Իմ Խաղաղությունը քեզ[2]:

Փետրվարի 4, 1988

(Այս առավոտ Հիսուսն այնքան որոշակի էր երևում: Երբեմն ես այնքան եմ վախենում, թե այս ամենը կարող է ճիշտ չլինել: Միգուցե ես չեմ տեսնում Նրան, բայց կարծում եմ, թե տեսնում եմ: Սակայն, երբ ես նման կասկածներ եմ ունենում, Նա մի հնարք է գտնում ինձ համոզելու, որ այս ամենը ճշմարիտ է):

Այդ իրո՞ք Դու ես, Հիսուս:

Ես եմ: Դու տեսար Ինձ այնպես, ինչպես Ես քեզ սովորեցրի: Ես ցույց կտամ քեզ Իմ Սիրտը: Գրի՛ր, ինչ որ դու տեսնում և զգում ես Իմ Ներկայությամբ:

(Աստծո Ներկայության այս պահերին ես ինձ վերացած եմ զգում: Ես չեմ ուզում, որ այս պահը վերջանա: Ես ոչ մի ուրիշ բանի կարիք չեմ զգում. իմ շուրջն ամեն բան դառնում է այնքան անիմաստ ու անկարևոր: Աստծո Ներկայությունը լցնում է ամեն դատարկ անկյուն: Այն լցնում է քեզ, և դու քեզ լցված ես զգում, ամբողջացած: Ես Նրան տեսնում եմ հագնված այնպես, ինչպես որ մենք գիտենք Հիսուսին: Իմ ականջները լսում էր Նրա թիկնոցի շրշյունը, Նրա ոտնաձայնը: Այժմ Նա կանգնած է իմ ձախ կողմում, մինչ ես ծնկի եմ եկել իմ փոքրիկ սեղանի առջև, որտեղ իմ առաջ Սուրբ Պատանքի Նրա նկարն է և մի սրբապատկեր՝ Սուրբ Մարիամը մանուկ Հիսուսի հետ: Հիսուս ինձնից երկու քայլ հեռու է. Նրա Սուրբ դեմքը Ինքնին

[1] Այսինքն Եկեղեցու դարձը:
[2] Այդ նույն գիշեր, եթե սատանային թույլ տվեր ինձ մարմնապես վնասել, նա ինձ կսպաներ: Նա նորից տանջեց իմ հոգին, ատելով ինձ:

Գեղեցկություն է: Նա խնդրեց, որ Իրեն նայեմ: Նա ցույց տվեց Ինձ Իր Սիրտը: Նրա ողջ Կուրծքը լուսավորված էր, փայլում էր՝ լուսարձակում Սիրուց):

Ամեն բան ճիշտ է: Այն ամենը, ինչ դու զանազանեցիր, ճիշտ է: Օ՜, Վասուլա, Իմ Վասուլա, որքան եմ քեզ սիրում: Սիրեցյալ Հոգի, դու կարող ես գալ Ինձ մոտ, երբ կամենաս. դու տեսել ես Իմ Սիրտը:

(Սկզբում, մի որոշ ժամանակ, ես աղոթում էի այս աղոթքները, սակայն հետո ընդհատեցի: Սբ. Մարիամը հիշեցրեց ինձ, որ շարունակեմ: Նրա հիշեցումից հետո, ես կանոնավոր կերպով աղոթում էի: Հիսուս այստեղ բացատրում է, որ նախքան պատգամները գրի առնելը, այս երեք աղոթքներով պետք է սկսել օրը: Քանի որ ես վստահ չէի, թե արդյոք ամեն անգամ գրելուց առաջ պետք է աղոթեի, որը կարող էր օրը երեք կամ չորս անգամ լինել, (և կամ երբեմն կարող է լինել միայն մեկ նախադասություն), թե՞ Նա նկատի ուներ օրվա մեջ միայն մեկ անգամ աղոթել, որպես սկիզբ):

Վասո՛ւլա, հավաքիր Իմ զավակներին և կարդա[1] Իմ Պատգամը, որը մի ժամանակ թելադրել էի քեզ: Ես ուզում եմ, որ դու Այն բարձրաձայն կարդաս նրանց համար: Ես սիրում եմ նրանց, և նրանց բոլորի մեջ՝ Ես եմ: Իմ արարչություն, դու Իմն ես, դու Իմ սերմն ես: Սիրելիներս, Ես ձեր Փրկիչն եմ: Դուք կվերադառնա՞ք Ինձ մոտ, կընկնե՞ք Իմ բազուկների մեջ: Ես կներեմ ձեր մեղքերը: Եկե՛ք և ճաշակեք Իմ Հացը, եկե՛ք և համտեսեք Իմ Գինին: Եթե դուք զղջաք, Ես կներեմ ձեզ: Լսե՛ք Իմ Սրտի զարկերը, յուրաքանչյուր զարկը մի կանչ է մի հոգու համար:

Վասուլա, դու կկարդա՞ս նրանց համար Իմ նախորդ Պատգամն ու այս մեկը:

Այո՛, Տեր, կկարդամ:

(Ավելի ուշ)

(Մի ընկերոջ նամակը և թերթի կտրոնը կարդալուց հետո, ուր ասվում էր, թե ինչու եկեղեցիներն ու մարդիկ կասկածամիտ են «հայտնությունների» հանդեպ, ես հասկացա, թե ինչու որևէ կրոնավորի համար այդքան դժվար է ընդունել հայտնությունները: Դա այդպես է, քանի որ շատ խարդախություն և խաբեբաներ կան: Ես դեռևս չեմ կարողանում մոռանալ, թե նրանք որքան թերահավատ էին անգամ Ֆաթիմայի հրաշքի հանդեպ: Նրանք այսօր թերահավատ են Գարաբանդալի հանդեպ, իսկ վաղը նրանք կընդունեն այն, սակայն չափազանց ուշ կլինի: Թերահավատությունը չափից շատ է):

Հա՛յր, ես[2]...

Ասա՛:

---

[1] Պատգամը թելադրված է Հիսուսի կողմից, 1986 թ. հոկտ. 14-ին: (Պատգամը նկատի ունի 1988թվի փետրվարի 21-ի ժողովը)

[2] Ես տատանվում էի:

...Ես վախենում եմ, որ Պապը կմերժի: Նա ինչո՞ւ պետք է ինձ հավատա, ինչո՞ւ որևէ մեկը պետք է ինձ հավատա: Եթե միայն դա պատահեր նրանց հետ, միայն այդ դեպքում...

Վասո՛ւլա, Ես քեզ տվեցի Իմ Հացը և կերակրեցի քեզ Իմ այգու պտղից, Ես քեզ կերակրեցի Իմ Սեփական Ձեռքով: Օ՜, սիրելի զավակս, ո՞վ դարձի բերեց քեզ. Ես չէ՞ի: Ո՞վ սովորեցրեց քեզ սիրել Ինձ. Ես չէ՞ի: Ո՞վ փնտրեց և քեզ մեռած գտավ մեռելների մեջ և խոնարհվեց, որ բարձրացնի, որ հարություն տա քեզ. Ես չէ՞ի: Ո՞վ կարեկցանքով քեզ փոխադրեց Իմ Տունը բժշկելու և խնամելու քեզ՝ առողջությունդ վերագտնելու համար. Ես չէ՞ի: Ո՞վ էր քեզ սովորեցնում ամեն օր Իմ Ուղիները. Ես չէ՞ի: Եվ հիմա ո՞վ է դարձի բերում Իմ զավակներին: Ե՞ս չեմ:

Ես քո Փրկիչն եմ, Վասուլա, դու Իմ մի մասն ես այժմ: Դու չես կարող ապրել միայնակ, դու Իմ կարիքն ունես: Ինչպես ճյուղը չի պտղաբերի ինքն իրեն, այլ պետք է կցված լինի Ծառին, այնպես էլ դու՝ Ինձ: Քո պտուղը գալիս է Ինձանից: Իմ պտուղը[1] կերակրում է շատերին: Իմ Պտուղը քո վկայությունն է: Նրանք, ովքեր կասկածում են, կկարողանան քեզ ճանաչել քո պտղից. «առողջ ծառը լավ պտուղ է տալիս»:

Երբ Իմ քաղցած զավակները ճաշակում են Իմ Պտուղը և դառնում են դեպի Ինձ՝ արցունքներն աչքերին զղջալով, Ես ինձ երջանիկ եմ զգում, Ես երջանկանում եմ, Ես այնքա՜ն երջանիկ եմ դառնում: Ես կորզում եմ նրանց չարի երախից: Վասո՛ւլա, համբերություն ունեցիր, Ես ասել եմ, որ Իմ Խոսքը հոսող գետակի պես է և գետակից այն կսկսի թափվել գետի մեջ, ապա լայնանալով այն կհորդի և Իմ Խոսքը կվերափոխվի անծայրածիր օվկիանոսի, Սիրո Օվկիանոսի՝ ընկղմելով ձեր սրտերը սիրո մեջ, և Սերը կլինի ձեր մեջ որպես Սեր:

Ես զգուշացրել եմ քեզ, Վասուլա, որ դու կմերժվես շատերի կողմից[2], սովորի՛ր դա ընդունել: Ես կտրուկ մերժվեցի շատերի կողմից, և նրանց խստասրտությունը ինձ ստիպեց արտասվել:

(Հիսուս խոսում էր ինձ հետ այնպես, ինչպես մի երեխայի հետ՝ միաժամանակ ժպտալով, փորձելով ինձ համոզել ու ցույց տալ, թե դա Իր համար ևս որքան դժվար էր եղել):

Ե՛կ, դու կսովորես: Ես սիրում եմ քեզ. Ես կօգնեմ քեզ: Ես շատ շատերին դարձի կբերեմ:

Մե՞զ: Մե՞նք: Զգա Իմ Ներկայությունը. դու Ինձ ուրախացնում ես այդ անելով:

Այո՛, Տեր: Շնորհակալ եմ Քո աջակցության համար:

Փետրվարի 10, 1988

Վասո՛ւլա, լսիր Ինձ և գրիր:

---

[1] Պատգամները

[2] Տե՛ս Հոկտ. 23, 1987թվի պատգամը և ուրիշներ:

Այո՛, Տեր:

Ես եմ Բանը, Ալֆան և Օմեգան: Ես եմ Կենաց Ջուրը, Սիրո Աղբյուրը և Ինձանից է գոյանում ամեն բան: Ես երկիր եմ իջել մարմնով, որ ձեզ փրկեմ:

Աղջի՛կս, Իմ Եկեղեցում այնքան շատ անհասկացողություն կա Իմ այն խոսքերի վերաբերյալ, որ Խաչի վրայից ասացի Հովհաննեսին և Մորս: Թույլ տվեք ամենից առաջ հիշեցնել ձեզ բոլորիդ, թե Ես՝ Տերս, ինչպես եմ թագադրել Իմ Մորը որպես Երկնքի Թագուհի:

Տե՛ր:

Այո՞, Վասուլա:

Դու եկել ես ներկայանալով որպես Աստված և երկու անգամ ասել ես «Իմ Սուրբ Մայրը»: Դու, Տե՛ր, պարզապես հայտարարել ես, որ Սբ. Մարիամը Քո Մայրն է՝ դրանով հաստատելով «Աստվածամայր» տիտղոսը: Դու այդ ասել ես, Տե՛ր: Բողոքականները ժխտում են այդ տիտղոսը:

Որքան եմ Ես ուրախանում, աղջիկս: Ես իզուր չէի սովորեցնում քեզ: Ես գոհ եմ, որ դու հասկացել ես Իմ Գործերը: Փորձի՛ր հարատևել սովորելու մեջ, աղոթի՛ր այն ձեռքբերման համար: Ես հասկացողություն կտամ քեզ, եթե դու այդ խնդրես Ինձանից, Վասուլա: Լսի՛ր Ինձ կրկին: Ես ուզում եմ, որ Իմ խոսքերը հայտնի դառնան:

Ես, որ Աստված եմ, աճեցի Իմ Մոր Որովայնում: Նա սնեց ձեր Աստծուն, արարչություն: Ես սնվեցի Նրանից: Ես, որ Բանն եմ, սիրում և մեծարում եմ Նրան: Վասուլա, հենց սկզբում Ես քեզ պատմեցի Իմ Խաչելության մասին: Հիշի՛ր, երբ ասացի. «Իմ հայացքը ընկավ Մորս վրա, Ես նայեցի Նրան և Մեր Սրտերը խոսեցին[1]: Ես տալիս եմ Քեզ Իմ սիրելի զավակներին, որ լինեն նաև Քո զավակները: Դու պետք է նրանց Մայրը լինես»:

Այո՛, Տեր, բայց բողոքական մեր եղբայրները ասում են, որ այն, ինչ դու ասացիր Խաչի վրայից տառացիորեն ուղղված է եղել Հովհաննեսին: Քո Մայրը, դառնալով «որբևայրի», խնամակալվել է Հովհաննեսի կողմից, երբ Դու նրա հետ չես եղել: Նրանք ասում են նաև, որ Սբ. Մարիամը «Աստվածամայր» չէ:

Այնուամենայնիվ, Իմ Վասուլա, Սուրբ Գիրքը երբեք չի ստում: Սուրբ Գիրքն ասում է այս խոսքերը. «Իմ Տիրոջ Մայրը», ասաց Եղիսաբեթը, որը ներշնչված էր Սուրբ Հոգուց: Գրիր. «Օրհնյալ ես դու կանանց մեջ և Օրհնյալ է Քո Որովայնի Պտուղը: Ինչպե՞ս է, որ ես այս մեծ պատվին եմ արժանանում, իմ Տիրոջ Մոր այցելությամբ:

[1] Լուռ ըմբռնում Հիսուսի և Սբ. Մարիամի միջև:

Խաչի վրայից ասված Իմ Խոսքերը առավել խորն են, քան ձեզանից շատերը կարծես թե հասկանում են[1]: Մեծարե՛ք Իմ Մորը, որը նաև ձեր Սուրբ Մայրն է:
Հանգչի՛ր այժմ Իմ Սրտում. ուրախացրո՛ւ Ինձ՝ Իմ Ներկայությունը հիշելով: Ուրախացրո՛ւ Ինձ, Իմ Վասուլա:

Այո՛, Աստված իմ:

Փետրվարի 19, 1988

(Հռոդոս)

Հա՞յր:

Ես եմ:

Շնորհակալ եմ, որ ինձ թույլ ես տալիս հանդիպել այսքան շատ հոգիների, շնորհակալ եմ, որ բաց ես անում ճանապարհը, շնորհակալ եմ ինձ առաջնորդելու համար: Օգնի՛ր նրանց, Աստված իմ, որ նրանք լսեն Քեզ ու կարողանան բժշկվել:

Վասուլա, հենվի՛ր Ինձ վրա. Իմ Ձեռքը քո ձեռքում, մենք առաջ կգնանք:
Օ՜, թշվառության դարաշրջան, որքա՜ն հեռու եք գնացել: Դուք այնքան հեռու եք գնացել, որ հավատում եք, թե դուք կարող եք առանց Ինձ ընթանալ: Այնքան հեռու եք գնացել, որ հավատում եք, թե դուք արժանավոր եք: Դուք թույլ եք տվել սատանային, որ նա ձեզ կերակրի իր սնափառությամբ: Անասելի թշվառ, մեղավոր և կույր լինելով՝ թույլ մի՛ տվեք ձեզ հանգստանալ. արթո՛ւն եղեք, մի՛ քնեք, որովհետև ժամանակը մոտ է: Ա՛ճեք Իմ Հոգու մեջ. մոտեցե՛ք Ինձ վստահությամբ, և բա՛ց արեք ձեր սրտերը Ինձ ընդունելու համար:
Ձեզանից շատերը աղոթում են, բայց ձեր աղոթքները Ինձ չեն հասնում: Սովորե՛ք, թե ինչպես պետք է աղոթել, թույլ տվեք Ինձ զգալ ձեզ: Շատ աղոթքներ են թափվում դատնին՝ երբեք չհասնելով Ինձ:

Դու նկատի ունես միայն շուրթերով ասված աղո՞թքը, Տե՛ր:

Այո՛, ես նկատի ունեմ միայն շուրթերով ասված աղոթքը:
Ես տվեցի ձեզ Իմ Խոսքը, որ սովորեք, իսկ այժմ Ես տալիս եմ ձեզ Իմ Պատգամը՝ հիշեցնելու համար Իմ Ուղիները: Եկե՛ք և սովորե՛ք: Ես ձեր չարամտությունը կփոխարինեմ սիրով: Ընդունե՛ք Իմ Ուղիները՝ Առաքինության Իմ Ուղիները: Անհավատարմության դարաշրջան, ինչո՞ւ ես մոռացել Իմ Աստվածային Ուղիները: Վերադարձե՛ք դեպի Ինձ՝ ձեր Փրկիչը. Ես չեմ լքել ձեզ և, չնայած ձեր բոլոր մեղքերին, Ես սիրում եմ ձեզ: Իմ Սիրտը Սիրո մի վիհ է, Ներողամտության մի վիհ:

[1] Հիսուս նկատի ուներ նաև նման այլ խոսքեր, ինչպիսին են. «Աստված իմ, Դու ինչու լքեցիր Ինձ»:

Փետրվարի 20, 1988

Սերը քեզ մոտ է: Աղջի՛կս, հանդիպիր Ինձ մինչ Իմ տառապանքները: Իմ ժամանակը մոտենում է: Ես ուզում ձեր մեջ տեսնել զոհաբերություն: Խոկացեք և ծոմապահություն արեք:

Վասո՛ւլա, սովորի՛ր Ֆրեդերիկից, նրա ուղիները Ինձ դուր են գալիս[1]: Սովորի՛ր պատվել Իմ տառապանքները. հետո եկ և նայիր քո Փրկչին խաչի վրա. զոհացրո՛ւ Ինձ խոկմամբ, ծոմապահությամբ: Ապրի՛ր Իմ Վերքերի մեջ: Հայտնիր բոլորին Իմ Զարչարանքի ժամանակը: Ցույց տուր նրանց Իմ Խաչելության ստույգ ժամը: Խաղաղություն թող լինի ձեր միջև:

(Անցյալ տարի Տերն ինձ տվեց ստույգ ամսաթիվը, ինչպես որ ուղղափառներն են նշում, համաձայն ուղղափառ օրացույցի):

Թող հիմա խաղաղություն լինի ձեր միջև: Այժմ դուք բոլորդ գիտեք:

Ինձ հաճախակի կանչիր, Վասո՛ւլա: Հիշի՛ր Իմ Ներկայությունը, զոհացրու Ինձ: Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր:

(Հռոդոս)

(Աստված ինձ թույլ տվեց կրկին այցելել Հռոդոս: Նրանք, ովքեր տեղյակ էին պատգամներին, ինձ հրավիրեցին, որ ուրիշ մարդկանց հետ հանդիպեմ: Մարդիկ լսեցին, հասկացան ու փառաբանեցին Տիրոջը Իր Ողորմության համար: Շատերը մանավոր պատգամներ ստացան Տիրոջից: Օր օրի խումբը ավելի մեծացավ: Շատերը Աստծուն էին դառնում՝ փառաբանելով Նրան: Ես իմ օրերն անցկացնում էի մարդկանց հանդիպելով ու պատգամները նրանց տալով: Շատերը դարձի եկան ու բժշկվեցին: Նրանք, ովքեր ցանկացան հետևել եկեղեցիներ ու մատուռներ այցելելու ծրագրին, եկան ինձ հետ: Մենք գնացինք քաղաքից դուրս գտնվող սարավանդների վրայի մատուռները:

Հայր Յաննին իր Եկեղեցում բոլոր ներկաներին հայտարարեց հայտնությունը, որը տեղի էր ունեցել փետրվարի 24-ին, Սուրբ Անարիրոյում: Նույն օրը, ցերեկը, ես հրավիրվեցի Սբ. Նիկողայոսի եկեղեցին և հայր Վասիլին թույլ տվեց ինձ ու ողջ խմբին, ովքեր գիտեին ու հետևում էին հայտնությանը (մոտ 12 կին և իրենց ամուսինները, որոնք նույնպես հետևում էին հայտնությանը, սակայն գործի մեջ էին այդ պահին), պատգամը հայտարարել իր եկեղեցում: Կանանցից մեկը ընթերցեց Աստծո Պատգամներից մեկը՝ 8-րդ նոթատետրից:

Թող Աստված այժմ գործի նրանց մեջ):

[1] նրա ծոմապահության ձևը

Փետրվարի 24, 1988

(Հոոդոս)

Գովյալ է Տերը:

Սիրելիս, ես օրհնում եմ քո ամեն մի քայլը, որ դու անում ես:

Շնորհակալ եմ, Հայր,
թող փառավորվի Տերը,
թող Քո Սուրբ Անունը
կրկին փառաբանվի: Այո՛, Տեր:

Ես ձեզ բոլորիդ կօգնեմ: Ես կվերականգնեմ Իմ Տունը: Ես Իմ զավակներին ետ՝ դեպի Սերը կբերեմ, Ես նրանց կսովորեցնեմ Առաքինության Իմ Ուղիները, քանի որ նրանք մոռացել են դրանք: Ես կլուսավորեմ Իմ ուսուցիչներին ու կբախեմ ամեն մի դուռ՝ տալով նրանց հույս, հավատ և սեր: Ես կզարդարեմ Իմ Այգին: Հասկանու՞մ ես:

Ես շնորհակալ եմ Քեզանից, Տե՛ր և Փրկիչ՝ Քո ողջ Սիրո և Ողորմության համար: Դու բաց ես արել Ողորմության դարպասը, և շնորհակալ եմ, որ Քեզ դարձրիր մեր Փրկիչը:

Դարաշրջան: Օ՛, Թշվառության դարաշրջան, ժամը հասել է, ձեր փրկության ժամը մոտ է: Իմ Եկեղեցին կվերակենդանանա, քանզի Արդարությունը, Սերը և Խաղաղությունը ձեր մեջ կլինեն: Իմ Թագավորությունը ճիշտ ձեր դռների մոտ է:

Մարտի 1, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ:

(Ես տեսա Հիսուսին՝ ինձ մոտ կանգնած):

Ամեն անգամ Ինձ տեսնելիս ժպտա Ինձ. այո՛, ծաղիկս, մնա Քո Փրկչի մոտ: Ե՛կ, աղոթենք Հորը.

«Նայի՛ր, Հայր,
թե ինչ կա Քո Աչքի առաջ...
Թշվառություն:
Ների՛ր ինձ, Հայր,
քանզի ես արժանի չեմ ստանալու
բոլոր այս շնորհները:
Ես ոչնչի արժանի չեմ,
քանզի ես Ոչինչ եմ:

Քո անմեկնելի Բարությամբ
Թույլ տուր այս Ոչնչին
Հենվել Քեզ վրա:
Ես սիրում եմ Քեզ, Սիրելի Հայր՝
չնայած իմ
Թշվառությանն ու ոչնչությանը:
Ես Քո զորության կարիքն ունեմ,
որ կարողանամ աշխատել
ու կատարել այն ամենը,
ինչ պետք է իրագործվի
Քո Շնորհով: Ամեն»:

Ա՜հ, Վասուլա, ձգտի՛ր ձեռք բերել Իմ բոլոր Առաքինությունները, հետևի՛ր դրանց և ճի՛ր դրանց մեջ: Ես՝ Տերս, սիրում եմ քեզ՝ չնայած քո ոչնչությանը: Միշտ Ինձ ապավինիր, Ես ամբողջովին նեցուկ կկանգնեմ քեզ: Վստահի՛ր Ինձ և թույլ տուր ինչպես կուզի՛ր, առաջնորդել քեզ մինչև վերջ: Ժամանակ առ ժամանակ Ես Իմ խաչը պիտի դնեմ քո ուսերին, որ դու այն կրես. Ես և դու, դու և Ես: Ես պիտի հանգչեմ քո մեջ և դու Իմ մեջ: Ես Ամենից Հավատարիմն եմ և երբևիցէ չեմ լքի քեզ:

Ինձ առավել ուրախացրու՝ քո հոգին ամբողջությամբ Իմ Գործերին նվիրելով: Դու պետք է պահես քո խոստումը, հավատարմության քո խոստումը, այո՛: Օ՜ ինչպես էի Ես սպասում այս խոսքերին, Ես փափագում էի քեզանից լսել այս խոսքերը:

Տե՛ր, օգնիր ինձ պահել իմ խոստումը, ես չեմ վստահում ինձ:

Մի՛ վախեցիր, Ես միշտ կհիշեցնեմ քեզ, քանի որ Ես գիտեմ քո անասելի թուլությունը: Դու թույլ ես, բայց Ես Իմ Զորությամբ կվերացնեմ քո թուլությունը: Հիշի՛ր Իմ Ներկայությունը: Մենք, մեզ, միշտ, հավիտյանս հավիտենից:

Սիրի՛ր, հուսա՛ և հավատա՛: Ես՝ Տեր Հիսուս Քրիստոսը, երբեք քեզ չեմ լքի:

Մարտի 2, 1988

(Ես ասացի երեք աղոթքները):

Թող գովաբանվի Տերը: Թող փառավորվի Աստված:

(Դա Սբ. Միքայելն էր):

Հիսո՞ւս:

Սերն այստեղ է: Փառաբանի՛ր Իմ Անունը, վերակենդանացրո՛ւ Իմ Եկեղեցին, վերականգնի՛ր Իմ Տունը, զարդարի՛ր Իմ Այգին: Դադարե՛ք չարիք գործելուց:

Եկեղեցին կվերակենդանանա և Խաղաղություն կլինի ձեր բոլորի միջև:

Վասո՛ւլա, ես ուզում եմ քեզ կատարյալ տեսնել... եղի՛ր անմեղ ու պարզամիտ: Ես սիրում եմ երեխաներին իրենց անմեղության ու պարզամտության համար. նրանք չարակամություն չունեն: Ե՛կ, ե՛կ և ներիր բոլոր նրանց, ովքեր մերժեցին քեզ: Թող նրանց մեղքը լինի անցած-գնացած ջրերի նման: Ծաղի՛կս, Ես կզարդարեմ քո հոգին՝ քարսիրտ մարդկանց զինաթափ անելու համար: Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր նրանց, փոխարինիր չարը սիրով: Եղի՛ր Իմ արտացոլումը:

Օ՜, Պետրոս, իմ Պետրոս[1]: Իմ Հոգու սիրելին, առաջնորդի՛ր Իմ հոտը դեպի մաքրություն և արդարություն: Պետրո՞ս: Նայի՛ր Ինձ, նայիր Իմ Դեմքին, սիրելիս, մեծարիր Ինձ՝ քո Տիրոջը: Սերն ու Հավատարմությունը այժմ հանդիպում են: Արդարությունն ու Խաղաղությունը այժմ ճիշտ ձեր դռների մոտ են: Ես փրկում եմ բոլոր նրանց, ովքեր կառչում են Ինձանից, Ես ձեր Ապաստարանն եմ: Նայի՛ր քո շուրջը, Պետրոս, մի՞թե չես տեսնում: Մի՞թե չես նկատում: Իմ աչքերը հոգնել են նայելուց, թե ինչպես են Կայենները կոտորում Իմ Աբելներին, քանզի Ես նրանց ականջներ եմ տվել, բայց նրանք հրաժարվում են լսել: Ես նրանց աչքեր եմ տվել, բայց նրանք հրաժարվում են տեսնել: Նրանց սրտերը կարծրացել են, նրանք փնտրում են իրենց փառքը և ոչ թե Իմը: Օ՜, Պետրոս, Ես այնքա՜ն հոգնած եմ... Սեր չկա: Փառաբանի՛ր Ինձ, Պետրոս: Փառաբանի՛ր Ինձ, սիրելիս:

(Հիսուս, սիրով լցված, խոսում էր Պետրոսի հետ: Մեր Տիրոջ ձայնն այնքան տխուր ու հոգնած էր: Պետրոսի հետ խոսելիս Նրա ձայնը հնչում էր այնպես, կարծես Նա գիտեր, որ կարող է վստահել նրան):

Մարտի 3, 1988

Վասո՛ւլա, զարդարիր Իմ Եկեղեցին[2]: Բոկոտն մտիր Իմ Տիրապետությունը: Կրի՛ր քեզ հետ Իմ Պատգամը: Աչ ու ձախ մի՛ նայիր, քայլի՛ր Ինձ հետ ուղիղ դեպի Պետրոսը և հանձնիր նրան Իմ պատգամը[3]: Ես ամբողջ ժամանակ քեզ հետ կլինեմ: Ես նրանց կհիշեցնեմ, թե Ես՝ Տերը ինչպիսին Ես: Հետևիր Իմ հրահանգներին, զավակս:

Այո՛, Տեր իմ:

Իմ հանդեպ հավատ ունեցիր, և հիշիր, թե Ես ինչպես եմ գործում:

Եկեղեցին պիտի վերակենդանանա և քո Հոր Տան մեջ դու պիտի հավաքես բոլորին՝ օրհնելով նրանց: Ես պիտի ազատեմ նրանց չարից և Ես՝ Ամենաբարձրյալը, ձեր մեջ պիտի լինեմ, և դու պիտի խոսես Իմ

[1] Պետրոսը ներկա Պապի խորհրդանիշն է: Ամեն անգամ, երբ Հիսուս ասում էր այդ անունը, ես զգում էի, որ Նրա Սիրտը ուռչում էր այնպիսի սիրով:
[2] Նշանակում է խոնարհ և խեղճ:
[3] Ես դա արեցի Աստծո նշած ժամանակում: Աստված մի անկարելի առաջադրանք էր խնդրում ինձանից, իսկ ես չգիտեի թե դա ինչպես պիտի կատարվեր: Այնուամենայնիվ, նույնիսկ սա կատարվեց ավելի ուշ:

Բերանից: Մոտեցե՛ք ձեր Աստծուն, դուք բոլորդ, որ փափագում եք Ինձ և կուշտ ճաշակե՛ք Իմ Պտղից[1]: Եկեք բոլորդ, ովքեր սիրում եք Ինձ և հետևեք Իմ Ուղիներին:

Եկեք և հագեցեք: Ճաշակե՛ք Իմ Պտուղը և դուք ավելի պիտի քաղցեք: Եկե՛ք, բոլոր ծարավածներդ, խմե՛ք Ինձ և դուք էլ ավելի պիտի ծարավեք: Իմ առաքինություններին հետևողը երբեք ամոթով չի մնա, ով գործում է Իմ ուզած ձևով՝ կփառավորի Ինձ:

Ա՜հ, Վասուլա, մի՞թե Ես երբևէ կլքեմ քեզ: Նորից լսիր. Ես զարդարելու եմ Իմ մրգաստանը: Ես ջրելու եմ Իմ այգին, ոռոգելու եմ Իմ ծաղկի մարգերը և այնպես եմ անելու, որ կարգապահությունը փայլի: Ամեն մի խոսք պիտի գրվի Իմ կողմից: Ես՝ Տերս, հաղորդակից եմ դարձրել քեզ Իմ Խորհուրդների իմացությանը, Իմ շահերի ու Իմ Փառքի համար:

Սիրելի Հայր, ես անսահման սիրում եմ Քեզ: Ես անչափ սիրում եմ Քեզ:

Ե՛կ, հիշիր, մենք, մեզ...

Մարտի 7, 1988

(Ես Աստծուց խնդրեցի, որ Նա գեթ մի րոպե բարձրացնի իմ քողը: Բոլոր Հայտնություններ առջև կանգնած ես նայեցի դրանց: Հանկարծ ինձ ապշեցրեց դրանց քանակը և այն աշխատանքը, որ կատարված էր այդ էջերում: Էջեր, որ ես չէի կարողանա ինքս գրել այդքան կարճ ժամանակամիջոցում: Ինձ պաշարեց տարօրինակ, ցնցող մի զգացում: Կարծես սկսեցի ավելի խորը հասկանալ ամեն ինչ: Ես շատ ցնցված էի):

Հիսուս, արդյոք մենք իրականում միասի՞ն ենք աշխատել:

Վասո՛ւլա, այո՛, մենք միասին ենք աշխատել[2]: Դու Ինձ հիմա կհամբուրե՞ս:

(Ամբողջ մարմնով դողալով, ես վեր ելա, կանգ առա Սուրբ Պատանքի պատկերի առաջ ու համբուրեցի Հիսուսին):

Տեսնո՞ւմ ես: Տեսնո՞ւմ ես, թե դու ինչպես ես զգում, երբ Ես գեթ մի փոքր բարձրացնում եմ քողը, որ դրել եմ քո աչքերին: Ե՛կ, երբեք մի՛ կասկածիր Իմ Նախախնամության Գործերին: Դրանք բոլորը Իմ Տան Վերականգման և Իմ գառներին միավորելու համար են, դրանք Իմ ծաղկի մարգերը ջրելու համար են: Ե՛կ, Ես՝ Տերս, անընդհատ պիտի հիշեցնեմ քեզ Իմ Ներկայությունը:

Վասուլա, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

---

[1] Այս Պատգամը

[2] Ես ցնցված էի և դողալով արտասվում էի:

Ե՛կ:

Մարտի 8, 1988

Պետրո՛ս, Ես ճիշտ քո դռների մոտ եմ այժմ: Փառավորի՛ր Իմ Մարմինը: Ես կմիավորեմ Իմ դառներին, անգամ նրանց, ովքեր այս փարախից չեն: Ես կկանչեմ, և նրանք կճանաչեն իրենց Հովվի Ձայնը: Ժամերն արագ անցնում են, և Իմ Վերադարձը այժմ շատ մոտ է: Սերը ձեզ կվերադառնա որպես Սեր, և Իմ Թագավորությունը երկրի վրա պիտի լինի այնպես, ինչպես Երկնքում է, քանի որ Արդարությունը, Սերը և Խաղաղությունը կցողվեն երկնքից ձեզ վրա, Արարչությո՛ւն:

Վասո՛ւլա, քանի որ հիմա գիտես, թե որքան կախման մեջ ես Ինձանից՝ քո Աստծուց, կաղոթե՞ս ավելի հաճախ: Ես սիրում եմ քո պարզ խոսքերը: Ասա Ինձ.

«Ես սիրում եմ Քեզ,
Տե՛ր, ես շնչում եմ Քեզ համար,
ես ժպտում եմ Քեզ համար,
իմ հույսը Քեզ վրա է,
ես հավատում եմ Քեզ,
Դու իմ ուրախությունն ես,
իմ թռիչքը, իմ խաղաղությունը»:

Այո՛, ասա այս բաները Ինձ՝ քո Սուրբ Ընկերակցին: Ինձ հետ կիսիր օրերդ: Որքան եմ Ես փափագում, որ Իմ զավակները գիտակցեն Իմ մոտիկ Ներկայությունը: Ես միշտ ներկա եմ նրանց կողքին՝ ամենուր, ամեն ժամանակ: Եթե նրանք միայն սա գիտակցեին, նրանք ավելի քիչ կընկնեին, ավելի քիչ մեղք կգործեին: Ասա՛ նրանց, Ես ուզում եմ, որ նրանք մտերմանան Ինձ հետ: Ե՛կ, Ես քեզ սիրում եմ. դու էլ սիրիր քո Ուսուցչին:

[1] Եվ Իմ Տան մեջ դու կհավաքես մեծերին ու հզորներին, նրանց զինաթափ անելով, և կխոսես Իմ բերանից՝ թագադրելով քո Աստծուն Սիրո և Խաղաղության պսակներով, փոխարինելով Իմ փշե Պսակը, իսկ Ես՝ Տերս, Իմ Երկնային Գավիթից կտեղամ Մաքրություն, Սեր և Խաղաղություն:

Փոքրի՛կս, քո Աստծուց խաղաղություն ստացիր: Ես առաջնորդեցի քեզ, Իմ Վասուլա: Ես ձևավորեցի քեզ, և այժմ դու շարունակելու ես Ինձ հետ, քո ձեռքը սեղմված Իմ Ձեռքում: Իմ Արյունահոս Մարմնի միջով հետևի՛ր Ինձ և հիշի՛ր, որ աջ կամ ձախ չնայես. քայլի՛ր ուղիղ՝ կատարելու համար քո առաջադրանքը:

Մի՛ վախեցիր, Ես կզարդարեմ քո հոգին, որ կարողանաս դուրս նետել և զինաթափել Իմ թշնամիներին: Ես՝ Տերս, ձեր բոլորի միջև եմ գտնվում: Ես ճիշտ ձեր դռների մոտ եմ: Ինձ հետ երեք Պսակ ունեմ՝ Խաղաղության Պսակ, Սիրո Պսակ և Արդարության Պսակ:

[1] Հիսուս մի պահ դադարեց խոսելուց, հետո Նա մի մարգարեություն տվեց:

Մարտի 9, 1988

Տե՛ր, Դու լսեցի՞ր: Հայր Վասիլին միտքը փոխել է: Այժմ նա ասում է, որ այս ամենը չարից է: Նա ասում է նաև, որ Դու միայն գնում ես այն հոգիների մոտ, ովքեր հասուն հավատ ունեն և ոչ թե անարժանների մոտ:

Զավա՛կս, ահա ևս մեկը, որ պետք է սովորի հավատալ Իմ Անսահման Ողորմությանն ու Անսահման Հարստությանը: Գրի՛ր Իմ Պատգամը նրա համար:

Ինչու՞ ես դու կոխկրտում Իմ ծաղիկը: Մի՞թե քեզ աչքեր չեմ տվել, որ տեսնես, և ականջներ, որ լսես: Մի՞թե չես գգում: Ես Տեր Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո Սիրելի Որդին: Այդ ե՛ս եմ, այդ ե՛ս եմ, որ դադարեցնում եմ բարձր ծառերի աճը, և այդ ե՛ս եմ, որ թույլ եմ տալիս ցածրերին աճել: Պահպանի՛ր Իմ այսօրվա Գործերը: Հավատա՛ Իմ Նախախնամության Գործերին: Ես քեզ տվել եմ Իմ զավակին՝ Իմ Գործերով քեզ լուսավորելու համար: Ես՝ Տերս, Անհուն Հարստություն եմ, մի՛ վախեցիր: Ես ինչպես կարող էի ցրված տեսնել Իմ գառներին: Ես եկել եմ գտնելու և կերակրելու նրանց: Ես եկել եմ զարդարելու Իմ այգին: Ես եկել եմ ոռոգելու այս անապատը: Մի՛ կոխկրտիր Իմ ծաղիկը: Ե՛կ Ինձ մոտ և զղջա. ականջ մի՛ դիր սատանայի ձայնին: Ես ձեզ անսահման եմ սիրում և դրա համար եկել եմ միավորելու ձեզ բոլորիդ, Արարչությո՛ւն: Քայլիր Ինձ հետ՝ քո Աստծո հետ: Ո՛չ հեռացրու, և ո՛չ էլ հարվածիր Իմ աղյուսներին, որոնք նորոգում են Իմ Տունը այս Տունը, որն այսօր ավերված է: Երբեք մի՛ կասկածիր, որ այդ Ես եմ՝ Տերը:

Վասուլա, Ի՛նձ ապավինիր, Ինձ մոտ եղիր, թող Իմ Ձեռքը սեղմի քո ձեռքը: Ես՝ Տերս, սիրում եմ քեզ: Մենք, մե՞ղ:

Այո՛, Տեր:

Ուրեմն, ե՛կ:

Մարտի 10, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ: Խաղաղություն քեզ: Դու կամենո՞ւմ ես շարունակել քո աշխատանքը Ինձ համար, Վասուլա:

Այո՛, կամենում եմ, եթե դա Տիրոջ կամքն է:

Ես Տերն եմ, փոքրի՛կս: Այդ Ես եմ՝ Հիսուս, որ կերակրում է քեզ: Ես ուզում եմ, որ դու զարդարես Իմ այգին: Ես ուզում եմ, որ դու վերակենդանացնես Իմ Եկեղեցին: Հետևի՛ր Ինձ, և Ես պիտի գործեմ քո մեջ: Քո միջոցով հագեցրու Իմ ծարավը:

Խորա՜ն, բոցավառված պահիր Իմ Կրակը՝ ջերմացնելու համար այն սառը քամիները, որոնք թափանցել են Իմ զավակների սրտերի մեջ: Օ՜, դարաշրջան, դու այնքան ցած ես ընկել, որքան Սոդոմը: Եվ ձեր սերունդը Կայենի սերունդն է. շատ քչերն են Աբելի նման: Ձեր դարաշրջանի սիրտը կարծրացել է, գիտե՞ս թե ինչու, արարչություն: Որովհետև ձեր մեջ բացակայում է սերը: Դուք մոռացել եք Ինձ, և դուք չեք հավատում Իմ այսօրվա Նախախնամության Գործերին:

Այո՛, արարչություն... անցել-գնացել են այն առաքինի օրերը, երբ օրհնությունները ուրախությամբ էին ընդունվում: Թշվառության դարաշրջան, ես կվերակենդանացնեմ քեզ: Ես Իմ Ավիշը կլցնեմ ձեր մեռած սրտերի մեջ, որը կբժշկի ձեզ: Օ՜, որքան եմ Ես սիրում ձեզ բոլորիդ:

Գրի՛ր:

Այո՛, Տեր:

(Աստված վիրավորված էր և տխուր: Եթե Նա ամբողջովին Ողորմած և Գորովալից չլիներ, կարող էր հեշտությամբ հարվածել և ոչնչացնել մեզ: Սակայն Իր Անհուն Ողորմությունից և Իր Անսահման Սիրուց դրդված՝ Նա կարեկցում է մեզ, ներում է մեզ և կբժշկի մեզ):

Այո՛, ես սիրում եմ ձեզ, անկախ նրանից, թե դուք ինչ եք դարձել: Մի՞թե երբևէ ես ձեզ կլքեմ: Երբե՛ք:

Մարտի 11, 1988

Թող փառավորվի Աստված:

(Երեք աղոթքները կարդալուց հետո ես երկնքից լսեցի երկնային Ձայներ, որոնք ասում էին. «Թող փառավորվի Աստված»: Այդ պատճառով գրառվեց):

Հիսո՞ւս:

Ես եմ: Ես քո կողքին եմ: Աղոթի՛ր, սիրելիս, Ռուսաստանի դարձի համար:

Ռուսաստանը հարություն պիտի առնի Իմ Աստվածային Ձեռքով, և Սրբության այդ բարձրակետին, երբ Իմ Ձեռքը դրված կլինի նրա վրա՝ ջերմացնելով նրա սառը սիրտը, վերակենդանացնելով նրան, նա հարություն կառնի մահվան լռությունից, իսկ նրա խավարի աշխարհը կվերափոխվի Խաղաղության ու Լույսի Իմ Աշխարհի: Բարձր աղաղակով նա կհրապարակի իր ուրախությունը՝ իր կողքին տեսնելով իր Փրկչին: Ես նրան դեպի Ինձ կբարձրացնեմ և Իմ Սիրո Հուրը կբոցավառի նրա սիրտը՝ մաքրագործելով նրան ու թողնելով նրան լիակատար հիացմունքի մեջ, Իմ՝ Իր Աստծո հանդեպ:

Օ՜, Ռուսաստան, Իմ Ռուսաստան, ես՝ Տերս, ինչպես եմ սիրում քեզ[1]: Ես որքան արտասվեցի՝ քեզ մեռած տեսնելով: Ես այնքան դառը և

[1] Աստված կրկին այնպիսի մեծ սիրով էր խոսում, ինչպես ոչ ոք չէր կարող խոսել:

վշտալի արտասուքներ թափեցի քեզ վրա, սիրելիս, երբ կորցրեցի քեզ, և ողջ Երկինքն էր սգում քեզ համար: Սիրելիս, ինչո՞ւ, ինչո՞ւ էիր մերժում Ինձ՝ խոցելով Սիրով ու Գթառատությամբ լի Իմ Սիրտը...

(Ես իմ կողքին զգացի Սբ. Մարիամին):

Խաղաղություն քեզ, զավակս: Ես քո Սուրբ Մայրն եմ: Աղոթի՛ր քո քրոջ համար, որովհետև Տերը նրա կողքին է այսօր, և շուտով Իր Աստվածային Ձեռքը կդիպչի նրա սառը և մեռած սրտին: Օ՜, Արարչություն, Տերը, կվերակենդանացնի քո այնքան չսիրված քրոջը: Արթուն եղիր, աղջիկս, որովհետև նրա փառքի ժամանակը մոտ է:

Պետրոս[1], Իմ այնքան սիրելի Պետրոս[2]: Այո՛, Վասուլա, տարիներ շարունակ ես խնդրում էի քեզ[3] սրբագործել Ռուսաստանը: Այժմ Տերը և բոլոր Նահատակ Սրբերը լսել են քո խնդրանքներն ու աղաչանքները: Քո բոլոր զոհողությունները ապարդյուն չէին, սիրելիս: Իզուր չթափվեցին քո բոլոր արցունքները. այդ արցունքները բալասան էին Հիսուսի Վիրավոր Սրտի համար: Փառավորի՛ր Տիրոջը, Պետրոս: Հիսուս հենց ձեր դռների մոտ կանգնած բախում է:

Խաղաղություն ձեզ: Խաղաղություն ձեզ բոլորիդ: Ես սիրում եմ ձեզ ամենքիդ:

Մարտի 13, 1988

Տեր իմ, շնորհակալ եմ
բոլոր այն շնորհների համար,
որ տվել ես ինձ,
որպեսզի լինեմ Քեզ հետ
այս յուրահատուկ ձևով
և այսքան մոտիկ: Ամեն:

Վասո՛ւլա, այս շնորհները քեզ են տրվել Իմ Շահերի և Իմ Փառքի համար: Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ: Հասկացի՛ր քո առաջադրանքը. ե՛կ, ես քեզ կօգնեմ:

Վասո՛ւլա, ես կամեցա ոգեշնչել քեզ, հավատ ունեցիր, զավակս: Ես կամեցա ոգեշնչել Իմ Հովհաննեսին[4], և խնդրել մի Նոր Հոգեգալստի համար: Այս ոգեշնչումը բխում է Իմաստությունից, և Ես՝ Տերս, այդ Նոր Հոգեգալուստը պիտի հաստատեմ հենց Իմ Հաստատության հիմքում: Ես

[1] Հանկարծ Սբ. Մարիամը չրջեց իր գլուխը դեպի Հովհաննես-Պողոս 2-րդը, այնպես, կարծես նա ներկա էր: Այդ անունը արտասանելիս, նրա ձայնը շատ քաղցր, բայց միաժամանակ տխուր էր՝ մի հատուկ սիրով լցված նրա հանդեպ:

[2] Սբ. Մարիամը փորձում էր պահել Իր արցունքները, բայց չէր կարողանում: Այդ խոսքերը ասելիս, Նա արցունքներով ողողվեց. Նա շատ արտասվեց: Ես էլ սկսեցի արտասվել նրա հետ: Ես զգացի, որ Մեր Սուրբ Մայրը թուլություն ունի Պետրոսի նկատմամբ:

[3] Հովհաննես-Պողոս 2-րդ Պապին

[4] Հովհաննես 23-րդ Պապին, որն աղոթում էր երկրորդ հոգեգալուստի համար, որը նույնպես կոչվեց Պապ միաստության:

կմիավորեմ ձեզ բոլորիդ, և Մեկ Հովվի ներքո դուք կհամախմբվեք, Արարչություն: Եվ Ես այնտեղ կհիմնեմ Իմ Թագավորությունը: Իմ Տունը պիտի թագավորի Խաղաղության և Սիրո մեջ, և Իմ Արարչությունը կրկին պիտի վերածնվի, և նրանք Ինձ մոտ պիտի վերադառնան ինչպես երեխաներ՝ անմեղ և առանց չարակամության: Սա կլինի Մեծ Վերադարձը, Վերածնունդը, Հովվի Կանչը, Նոր Հոգեգալուստը, ինչպես սկզբում, երբ Քրիստոնեությունը դեռևս իր վաղ շրջանում էր որպես մի մանուկ՝ անմեղ և անշահախնդիր: Ա՜խ, արարչություն, միայն սպասիր և տես:

Վասո՛ւլա:

Այո՞, Տեր:

Զգա՛ Ինձ. Ես քո կողքին եմ: Դու հավատո՞ւմ ես սրան, զավա՛կս, թեև դու չես կարող տեսնել Ինձ քո ֆիզիկական աչքերով:

Այո՛, Տեր, ես հավատում եմ, որովհետև Դու ինձ սովորեցրել ես տեսնել Քեզ իմ հոգու աչքերով ու նաև զգալ ու լսել Քեզ և պարզապես հավատալ:

Ինչպես եմ Ես քեզ սիրում, երբ տեսնում եմ քո աչքերը Ինձ որոնելիս, քանի որ գիտեմ, որ Իմ առաջ իսկական մի երեխա է՝ անօգնական ոչնչություն: Ես խղճում եմ քեզ, Վասուլա, որովհետև դու գայլերի մեջ ես. Ես երբեք քեզ չեմ թողնի: Օրհնում եմ քեզ, զավակս: Թույլ տուր քեզ առաջնորդել մինչև վերջ: Այո՞:

Հիսո՛ւս, Դու այնտեղ ես, որտեղ ես Քեզ տեսնում եմ, չէ՞:

Այո՛, այնտեղ եմ: Սիրելիս, Իմ Խաղաղությունը քեզ:

Մե՞զ: Մե՞նք, Տեր:

Այո՛, մենք, մեզ:

Մարտի 16, 1988

Ես եմ, Տերը: Անկախ նրանից, թե դու ով ես, Ես պիտի հաստատեմ Իմ Խոսքը: Դու ոչինչ ես և շատ անգամ Ինձ վշտացնում ես՝ դառնացնելով ու բազմիցս ցավ պատճառելով Ինձ: Իմ Ձեռքերում Թշվառությունն է՝ ձեր դարաշրջանի պատկերը: Թեև այնպես, ինչպես դու կաս, Ես ներել եմ քեզ ու դրել Իմ Սուրբ Սրտում: Աղջի՛կս, Ես Աստված եմ և Ամենակալ, Արարիչը Ամենի, Հոգին Վսեմ Սիրո, Անմեկնելի Սիրո:

Դու գիտակցո՞ւմ ես, թե Ես որքան նախապատվություն եմ տվել քեզ: Թե Ես ինչպես քեզ ազատեցի Ստախոս Լեզվից: Արարա՛ծ, նվիրաբերվիր

Ինձ: Ինչո՞ւ թողնել, որ քո միտքը մոլորվի: Դու մոռացե՞լ ես մեր կապերը[1]:

Տե՛ր, իմ միջավայրը գայթակղեցնում է ինձ, և ես թույլ եմ:

Ես ցանկանում եմ, որ դու դեմքդ Ինձ դարձնես: Մի՛ վախեցիր Ինձանից: Ասա՛ Ինձ.

«Թող փառավորվի Աստված:
Օրհնյալ լինի մեր Տերը:
Գովյալ լինի Տերը:
Թույլ տուր ինձ
քայլել Քո կողքով: Ամեն»:

(Ես կրկնեցի):

Այո՛, Վասուլա, մի՞թե ես երբևէ լքել եմ քեզ: Ես Հավատարիմ եմ քեզ, այնպես չէ՞:

Այո՛, այդպես է, Տեր:

Ես սիրում եմ քեզ այն բանի համար, որ դու չես: Ես կոչել եմ քեզ պատգամատար և որպես պատգամատար էլ դու կմեռնես: Ես տենչում եմ, որ դու ապրես միմիայն Ինձ համար: Ես կլինեմ քո միջավայրը, միայն ես՝ քո Աստվածը: Թույլ տուր Ինձ պարուրել քեզ ամբողջապես: Դու հոժա՞ր ես:

Այո՛, անշուշտ հոժար եմ:

Վասուլա, դու գիտե՞ս, թե ինչ ես ասում Ինձ[2]:

Այո՛, Տեր, գիտեմ:

Ուրեմն, կախյալ եղիր Ինձնից: Ես կամեցա, որ դու այսօր լինես այնտեղ, որտեղ որ կաս, և կրկին Իմ Կամքով Ես կբարձրացնեմ ու կլցնեմ քեզ, որպեսզի դու կարողանաս իրագործել Իմ Խոսքը: Իմ ծառաների հետ միասին դու անհամար փորձություններին պիտի հանդիպես, բայց վերջում մեր սրտերը[3] պիտի հաղթանակեն: Այսօր դու Իմ քարտուղարն ես, իսկ վաղը՝ Իմ պատգամատարը:[4]

Տե՛ր, իրոք հույս չկա՞, որ ես բարեփոխվեմ: Քո սաածներից ելնելով, ես տակավին սկզբնական վիճակի մե՞ջ եմ:

---

[1] Իմ միտքը իսկապես որ շեղվեց:
[2] Աստված ուզում է, որ ես մտածեմ իմ պատասխանի մասին:
[3] Հիսուսի և Մարիամի Սրտերը
[4] Ութ ամիս անց, Աստված վստահեց ինձ դուրս գալ աշխարհ լինելու իր վկան, և ճիշտ երեք տարի անց ամեն ինչ սկսվեց:

Ո՛չ, Իմ Վասուլա, մի՛ հուսահատվիր: Այս ամենը, ինչ դու անում ես, ապարդյուն չի լինի: Ես քեզ կսովորեցնեմ կատարելություն ձեռք բերել: Չե՞մ ասել, որ ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես:

Այո՛, Տեր, սակայն այնպիսին, ինչպիսին որ ես կամ այսօր, թվում է դեռ երկար ճանապարհ ունեմ անցնելու, մինչև հասնեմ այնտեղ, ուր Քո Սիրտն է ուզում, որ ես լինեմ:

Միթե ես քո Ուսուցիչը չե՞մ:

Այո՛, Տեր, բայց ինձ չի թվում, որ Դու լավ աշակերտ ունես:

Դու թույլ ես, սակայն Իմ Զորությունը քեզ կպահի անկումներից: Ուրեմն, Վասուլա, ավելի հոյակապ ի՞նչ կարող է լինել, քան թե Ինձ ունենալ որպես քո Հոգևոր Առաջնորդը: Մի՞թե սրանից ավելի մեծ չնորհ կա:

Շնորհակալ եմ ամեն բանի համար, որ Դու տալիս ես ինձ, քանի որ ես բացարձակապես ոչնչի արժանի չեմ:

Ա՛խ, Վասուլա: Ես գիտեմ, որ դու այս բաները չես անում Ինձ վիրավորելու միտումով: Քո մեղքերը մոռացված են Իմ կողմից, ինչպես ջրերը, որոնք անցան, գնացին և չորացան: Ես ետ չեմ նայում քո մեղքերին և ոչ էլ քեզ հիշեցնում եմ դրանց մասին: Ես քեզ թույլ կտամ վերստին սկսել: Ես կնորոգեմ քեզ, սիրելիս, զգա Իմ՝ քո հանդեպ ունեցած սերը: Ես ընդունում եմ քեզ, ինչպես որ դու կաս: Ես քո ձեռքերի մեջ եմ դրել Խաղաղության և Սիրո Պսակները, և դու կրելու ես այդ երկու Պսակները՝ Արդարության Պսակի հետ միասին, մատուցելով Դրանք Իմ սեփական Տան մեջ, Իմ սիրելի Պետրոսի ոտքերի առաջ[1]:

Այո՛, Տեր, տար ինձ այնտեղ:

Ե՛կ, ես քո կողքին եմ: Մենք միասին կվերականգնենք Իմ Տունը Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր:

(Ավելի ուշ)

Ե՛կ, Վասուլա, թող քո Խորհրդանիշը լինի այս Սուրբ Բառը՝

<u>ՀԱՎԱՏ</u>:

Մանկան հավատ:

[1] Հիսուսն այլաբանորեն էր խոսում:

Մարտի 17, 1988

Վասո՛ւլա, ականջ դիր Իմ Ձայնին, ինչպես սկզբում, երբ Ես կանչեցի քեզ: Քո գոյությունից շատ առաջ, Ես շատերին կանչեցի Ինձ ծառայելու: Այո՛, դրանք Առաքինության Օրերն էին, երբ օրհնություններն ընդունվում էին ուրախությամբ: Ես կանչեցի թշվառ հոգիների, և նրանք երբեք չկասկածեցին, որ այդ Ես էի նրանց կանչողը՝ նրանց Աստվածն ու Փրկիչը: Նրանց միջավայրը նույնպես չէր կասկածում, ինչպես նրանք են կասկածում այսօր: Ձեր դարաշրջանը մեռած է, Վասուլա: Նրանք անապատ են սարքել դատապարտելով Իմ այսօրվա Գործերը, ընդարձակելով այս ամայությունը: Իմ Արյունը հեղվեց ոռոգելու ձեր սրտերը և ձեզ թույլ տալու, որ ապրեք Իմ Լույսի մեջ:

Օ՜, Արարչություն, մի՞թե Իմ Արյունն ի զուր հեղվեց: Այս դարաշրջանը կարող է քեզ ասել. «Մի՛ լսիր: Փակի՛ր ականջներդ, քանի որ ձայնը, որ դու լսում ես, անկասկած սատանայի ձայնն է»: Եվ նրանց, որոնց Ես օրհնեցի, տալով տեսիլքներ, այսօր այդ օրհնյալ հոգիները ծաղրանքի կ'ենթարկվեն ու կվհատեցվեն Իմ յուրայինների կողմից, նրանց կողմից, ովքեր պատկանում են Ինձ, ովքեր պատկանում են Իմ Տանը: Նրանք վճռական կլինեն և միշտ պատրաստ դատապարտելու Ինձ: Իրենց փոխարեն, նրանք Ինձ են դատապարտում մարդկանց ներկայությամբ, երբ մերժում են և չեն ընդունում Իմ Շնորհները: Երբ Իմ Օրհնությունները ողջունելի էին, և այն բառերը, որոնք Ես լսում էի Իմ յուրայինների կողմից՝ ուղղված նրանց, ովքեր պատմում էին Իմ Կանչի մասին, հետևյալն էին. «Բա՛ց արա քո ականջները, որդյակ, քանի որ հնարավոր է, որ իսկապես Աստված է կանչում քեզ»: Թող Իմ Արարչությունը կրկին կարդա Սամուելի կանչը[1]: Դրանք Առաքինության Օրերն էին, երբ օրհնությունները ողջունելի էին:

Արարչություն, երանի թե այսօր քեզ համար կարողանայի ասել. «Փոքր Հավատի Դարաշրջան», ինչպես առաջ էի ասում: Բայց այսօր ձեր մասին Ես կարող եմ միայն ասել. «Օ՜, բացարձակ Անհավատության Դարաշրջան»:

Աղջի՛կս, Ես հոգնած եմ. թույլ տուր հանգստանալ քո սրտում, զավակս:

Օ՜, Ե՛կ, Տեր:

Մենք, Մե՞զ:

Այո՛, Տեր:

(Հիսուս այնքա՜ն տխուր ու հոգնած էր թվում):

Գրի՛ր:

Այո՛, Տեր:

[1] Ա. Թագ. 3.8-9

(Աստված տխուր է, որովհետև շատերը Իրենից առաջ են գասում սատանային: Ավիլայի Սբ. Թերեզան ասում է. «Ես չեմ հասկանում այս վախերը. «Օ՜, սատանան, սատանան», ասում ենք մենք, երբ կարող ենք ասել. «Աստված, Աստված», և սատանային դող պատճառել»: Այսօր դա շատ է պատահում. մենք սատանային առաջին տեղն ենք դնում: Եվ տակավին կլինեն այնպիսիք, որ կծաղրեն ու կասեն. «Գնա՜, սիրելիս, և քննության ենթարկվիր, մենք լավ բժիշկներ ունենք այսօր»: Կամ՝ այնպիսիք, որ կպարծենան հոգեբանության իրենց գիտելիքներով, (ինչպես հիպնոսացում, հեռազգացողություն), որովհետև նրանց համար Աստծո կանչը հնացած է: Բայց ամենից վատթարը Աստծո Աչքին՝ կեղծավորությունն է. դա դիվանագիտական պատասխանն է, որը ոչ այո՝ն է, ոչ էլ՝ ոչ-ը: Նրանք կլինեն ինչպես Պիղատոսը, նրանք պարզապես կլվանան իրենց ձեռքերը, ինչպես Պիղատոսն արեց մեր Տիրոջ հետ: Գիտե՞ք ինչու: Որովհետև Հավատը բացակայում է):

Մարտի 18, 1988

Ծաղի՛կս, թող քո խորհրդանիշը լինի այս Սուրբ Բառը՝

ՀԱՎԱՏ:

Այո՛, Թշվառության դարաշրջան:

Մարտի 19, 1988

Հիսո՛ւս, քեզ մոտ եմ գալիս:

Ա՜հ, Վասուլա, մի՛ հոգնիր գրելուց:
Այսօր ես կերակրում եմ Իմ քաղցած գառներին: Վաղը ես ձեզ կմիավորեմ և կուսուցանեմ Իմ Խորհուրդները: Ինձ ուրախությամբ պարուրիր և Սուրբ Վարդարանի աղոթքը փոխանցիր բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ և վկայում Իմ մասին:

Դա նշանակում է բոլոր քրիստոնյաների՞ն:

Այո՛, սիրելիս: Դու պետք է պատվես Իմ Մորը, ինչպես Ես եմ պատվում Նրան: Բոլոր նրանց, ովքեր վկայում են Ինձ, դու պետք է փոխանցես և ցույց տաս, թե ինչպես կատարել Իմ Խաչի Կայանները, այնպես, ինչպես դուր է գալիս ձեր Տիրոջը, բոլոր նրանց, ովքեր Ինձ են վկայում:

Բոլոր քրիստոնյաների՞ն, Տեր:

Այո՛, բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ: Ես՝ Տերս, որևէ բաժանում չեմ ցանկանում Իմ Եկեղեցում: Ի սեր Ինձ դուք կմիավորվեք, և Իմ Անվան ներքո կսիրեք Ինձ, կհետևեք Ինձ և կվկայեք Ինձ: Դուք կսիրեք միմյանց, ինչպես Ես եմ սիրում ձեզ: Դուք կմիանաք ու կդառնաք մեկ

հոտ՝ Մեկ Հովվի ներքո:[1] Ինչպես դուք բոլորդ գիտեք, ես ընտրել եմ Պետրոսին՝ իշխանություն տալով նրան: Ինչպես դուք բոլորդ գիտեք, ես նրան եմ տվել երկնքի թագավորության բանալիները: Ես խնդրել եմ Պետրոսին կերակրել Իմ գառներին և ոչխարներին՝ հոգ տանելով նրանց համար[2]: Այս իշխանությունը տրվել է Իմ կողմից. ես չեմ ուզել, որ դուք փոխեք Իմ Կամքը:

Միավորվե՛ք, սիրելիներ, ամրացնելով Իմ Եկեղեցին: Փնտրե՛ք Իմ մեջ այն, ինչ Ես եմ ցանկանում, փնտրե՛ք Իմ Շահերը և ոչ թե՝ ձերը: Ձգտե՛ք փառավորել Ինձ: Փառավորե՛ք Ինձ միավորվելով, Արարչություն: Կենդանացրե՛ք Իմ Մարմինը: Ես սիրում եմ ամենքիդ: Բա՛ց արեք ձեր ականջները և լսե՛ք Իմ աղաղակը, որը գալիս է Իմ խաչից:

Վասուլա, հիշի՛ր, թե որտեղ է քո տունը: Այո՛, Իմ Սուրբ Սրտում: Ե՛կ, ե՛կ, սիրելիս, Ես սպասում եմ: Ես անսահման սիրում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր և Փրկիչ,
խնդրում եմ սովորեցրու ինձ
գոհացնել քեզ այնպես,
որպեսզի կարողանամ
լինել Քեզ հետ,
որպեսզի կարողանամ գործածվել
Քո կողմից:

Ես սովորեցնում եմ քեզ: Ճկուն եղիր և հոգ տար միայն Իմ Շահերի համար: Մենք, մեզ, ամեն ժամանակ: Ես քեզ համար, դու՝ Ինձ: Ես քո կողքին եմ: Աղոթի՛ր, Վասուլա, հոգիների փրկության համար: Ես ստեղծել եմ քեզ այս Պատգամի համար:

Շնորհակալ եմ, Հիսուս:

Մարտի 23, 1988

Հիսո՞ւս:

Ես Եմ: Սերը կհաղթի: Ես Սեր եմ: Իմ խաղաղությունը քեզ: Մի՛ վախեցիր, այդ Ես Եմ՝ Հիսուս: Դու կգա՞ս: Ես սպասում եմ: Ես կառաջնորդեմ քեզ այնտեղ, ուր մյուսներին ևս առաջնորդեցի, որպեսզի նրանք էլ Ինձ սիրեն: Սիրելիս, Ես քեզ այնտեղ կտանեմ: Աղոթի՛ր, Իմ Վասուլա: Իրազեկ եղիր սատանայի որոգայթներին, քանի որ, եթե Իմ արարչությունը չփոխվի, կամ չապաշխարի...

Տե՛ր, ինչպե՞ս է, որ Դու ասում ես «եթե», երբ շատ անգամներ ասել ես, որ մեզ կփոխես և որ Քո Թագավորությունը կգա: Ես չեմ հասկանում:

[1] Պապը
[2] Հովհ. 21. 17

Լսի՛ր և հասկացիր: Ես ձեզ տվել եմ ընտրելու ազատություն: Ես, Տերը և Ամենակալը, Լույսը, իջնում եմ ձեզ վրա, Արարչությո՛ւն: Ես իջնում եմ այս թանձր խավարի մեջ, Իմ Սիրտն Իմ Ձեռքում՝ առաջարկելու ձեզ, որ փրկեմ ձեզ և ցոլամ ձեզ վրա: Ես գալիս եմ մաքրելու ձեր անհամար մեղքերը և Ինձ ուղղված վիրավորանքները: Ես գալիս եմ ձեզ ետ կանչելու դեպի Ինձ: Ես գալիս եմ Իմ Եկեղեցին միավորելու: Ես գալիս եմ ձեզ հիշեցնելու, թե Ես՝ Տերս, ում եմ տվել Իշխանությունը և Երկնային Արքայության Բանալիները: Ես գալիս եմ ձեզ բոլորիդ սովորեցնելու պատվել Իմ Մորը և ծնրադրել Նրա առաջ, որովհետև Նա թագադրվել է Իմ Ձեռքով և Նա Թագուհին է Երկնքի:

Արարչությո՛ւն, զգուշացե՛ք սատանայից, քանզի նա կրկնապատկում է ձեզ ծուղակը գցելու իր ջանքերը՝ միևնույն ժամանակ ձևացնելով, թե ինքը գոյություն չունի, որպեսզի նա խորամանկորեն գործի՝ առանց վախ ներշնչելու: Օ՜, արարչություն, նա մի մեծ սպանդ է պատրաստում ձեզ համար: Օ՜ ինչպես եմ Ես աղաղակում Իմ Խաչի վրայից՝ արարչություն, վերադարձի՛ր Ինձ մոտ: Թույլ մի՛ տվեք, որ նա ձեզ ծուղակը գցի, ուրանալով Ինձ: Աղոթե՛ք, աղոթե՛ք հոգիների վերադարձի համար. թող ամեն հոգի սովորի Իմ տված աղոթքները: Թող նրանք սովորեն այդ աղոթքները: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Աղջիկս, մի՛ հոգնիր Ինձ մոտ գալուց և ծնկաչոք գրելուց: Ես քո Փրկիչն եմ, քո Փեսան և կիսում եմ քեզ հետ ամեն բան: Ե՛կ, սփոփիր Ինձ. Ես հոգնած եմ:

Օ՜, եկ, Տեր:

(Հիսուս հոգնած էր թվում: Նրա լայն ուսերը թեթևակի կքված էին: Նա տխուր էր: Ես էլ նույնն եմ զգում և ուզում եմ գոհացնել Նրան: Ես ամեն օր աղոթում եմ, որ պապը ընդունի Իր կոչը: Ես հույս ունեմ, որ Նորին Սրբությունը կստանա Հիսուսի պատգամը մինչև ուրբաթ որը, Մարտ 15-ը):

Դու կհիշե՞ս Իմ Ներկայությունը, Վասուլա:

Այո՛, Տեր Հիսուս, կհիշեմ:

Մենք, մեզ:

Այո՛, մենք, մեզ, հավիտյանս հավիտենից:

(Հիսուս այսօր շատ հոգնած ու տխուր էր):

Խաղաղություն քեզ, հոգի:

Վասուլա, Ես հոգնել եմ, հոգնել եմ՝ տեսնելով, թե սերն ու պարզությունը որքան են պակասում: Իմ ինչի՞ն են պետք ձեր ծեսերն ու զոհաբերությունները, երբ սեր չկա դրանց մեջ:

Ծաղիկս, ի՞նչ ավելի մեծ ուրախություն կարող է Ինձ պատճառել, քան Իմ բոկոտն հետևորդները[1], երբ նրանք իրենց ձեռքում միայն մի

[1] պարզ և խոնարհ, առանց չարության

գավազան ունեին՝ պահպանելով Իմ գառներին: Ես պարզություն եմ սիրում. պարզությունն ու աղքատությունը գրավում են Ինձ: Իմ ճշմարիտ հետևորդները բոկոտն էին, սակայն՝ հոգով հարուստ:

Վասո՛ւլա. խիզախ եղիր: Ես խաչված եմ, պարզված Իմ Խաչին Իմ յուրայինների կողմից: Մենք կիսում ենք Իմ Խաչը՝ Ես և դու, դու և Ես: Սերը տառապում է:

Մարտի 24, 1988

Խաղաղություն քեզ:

(Սբ. Մարիամը)

Ես սիրում եմ քեզ: Փառավորի՛ր Աստծուն, աղոթի՛ր հոգիների փրկության համար: Փառավորի՛ր Նրան՝ հնազանդվելով Նրա Կամքին, լինելով Նրա պատգամատարը: Հոգի, Նա քեզ քնքշորեն է սիրում: Երբեք մի՛ հոգնիր գրելուց: Եկ և աղոթիր՝ ասելով Նրան.

«Ամենակարող Աստված,
սովորեցրո՛ւ ծառայիդ
Քո Ուղիները:
Սովորեցրո՛ւ ինձ խոնարհություն,
համբերատարություն և սեր:
Առաջնորդի՛ր ինձ Արդարության և
Առաքինությունների
Քո Ճանապարհով:
Ես անձնատուր եմ լինում Քեզ՝
տալով Քեզ իմ կամքը:
Ների՛ր մեղքերս, նորոգիր ինձ,
արժանի դարձրու ինձ,
որ կարողանաս
գործածել ինձ ամբողջովին:
Ամեն»:

Ա՜հ, Վասուլա, Ես միշտ հոգ կտանեմ քեզ: Բռնի՛ր Ձեռքս:

Եկեղեցին պիտի վերակենդանանա և վերջում Մեր Սրտերը[1] պիտի հաղթեն:

Իմ երևումները հոգիներին՝ Աստծո Գործերով խրախուսելու համար են: Դրանք դեպի Մեզ վերադառնալու կոչ են՝ զգուշացնում: Այս տարի Ես շատերին եմ երևալու: Ես տեսիլքներ կտամ և այդ տեսիլքները տեսանողներ կլինեն: Աղոթի՛ր, որ Սուրբ Եկեղեցին դառնա այնպիսին, ինչպիսին էր սկզբում, երբ Աստծո ամեն մի Գործ ընդունվում էր առանց անհավատության և արհամարհանքի: Աղոթե՛ք, որ վերանորոգվի Սուրբ Եկեղեցու հավատը, ինչպես անցյալում, և հավատացե՛ք Հրաշքներին,

[1] Հիսուսի Սիրտն ու Իր Սիրտը:

երևումներին ու տեսիլքներին, քանի որ սա մի ձև է, որի միջոցով Աստված խոսում է ձեզ հետ: Խնդրեցե՛ք վերանորոգման համար:

Շնորհակալ եմ Սբ. Մարիամ [1]:

Մի՛ անհանգստացիր, ես օր ու գիշեր աղոթում եմ: Ահա Հիսուս:

Վասուլա[2], ես եմ: Նայի՛ր Ինձ, հոգի: Ես նրանց մեջ ոչ մի սրբություն չեմ գտնում:

Հիսո՛ւս, Դու նկատի ունես նրանց, ովքեր մերժո՞ւմ են Քո այսօրվա Գործերը:

Այո՛, ոչ մի: Ամեն անգամ, երբ ես աղաղակում եմ Իմ խաչից, այդ նրա համար է, որ նույն պահին ես տեսնում եմ, որ Իմ յուրայիններից մեկը տեղիք է տալիս սատանային:

Վասուլա, Իմ հարազատ, Իմ քահանա[3], ես սիրում եմ քեզ:

Հիսուս, ինչո՞ւ ես ինձ կոչում քահանա, երբ կին քահանաներ չեն թույլատրվում:

Ես սրբացրել եմ քեզ, հոգի. ես ընտրել եմ քեզ, հոգի: Հասկացի՛ր, Իմ աչքերը տեսնում են քո հոգին: Իմ Սիրտը զգում է քո հոգին: Ես սիրում եմ քո հոգին, ոչ թե՝ քո մարմինը: Հոգիդ քո մարմնի մեջ է: Փորձի՛ր հասկանալ Իմ խոսքերը[4]. նայի՛ր դրան այնպես, ինչպես ես՝ քո Աստված է տեսնում այն:

(Հոգին է, որ Աստծո համար նշանակություն ունի: Մահից հետո հոգին գնում է երկինք, և կին կամ տղամարդ լինելը տարբերություն չունի. բոլոր հոգիները կլինեն հրեշտակների պես: Հիսուս նայում է հոգուն և ոչ թե նրան, ով կրում է այն: Ուստի Նա տարբերություն չի դնում Իր ընտրյալների միջև):

Ես սիրում եմ քեզ: Քայլի՛ր Իմ ոտնահետքերով: Ե՛կ, մենք, մեզ:

Այո՛, Տեր:

Մարտի 26, 1988

«Աստված իմ,
ես այլևս չեմ կարողանում

[1] Ես խնդրեցի Սուրբ Մարիամին աղոթել մեզ համար:
[2] Ես նկատեցի Հիսուսին, բայց վստահ չէի:
[3] Ա Պետ. 2:10
[4] Աստված չի ուզում, որ մենք սխալ հասկանանք այս հատվածը: Մենք բոլորս գիտենք, որ մեր մարմինը Աստծո Տաճարն է: Բայց և այնպես, Աստված գործում է մեր հոգում և զարդարում է մեր հոգին և ոչ թե մեր մարմինը:

աչքերս կտրել
Քո Աստվածային Դեմքից:
Պաշտամունքի անվերջանալի
ժամերի ընթացքում,
իմ աչքերը սևեռված են Քեզ վրա,
և իմ միտքը չի կտրվում Քեզանից,
Սիրելի Հայր:
Ամեն վայրկյան
երկրի վրա և երկնքում
իմ միտքը Քեզնով է կլանված
և Քեզ հետ է:

Ես ապրում և շնչում եմ
Քեզ համար:
Դու ես իմ ուրախությունը
և իմ ժպիտը:
Ես հավատում եմ,
ես պաշտում եմ, ես ապավինում եմ,
ես սիրում եմ Քեզ անսահմանորեն:
Ամեն»:

Ես սիրում եմ քեզ, Հոգի: Խաղաղություն քեզ: Երկրպագի՛ր Ինձ: Օրհնյալ եղիր: Շրջվիր դեպի Ինձ՝ քո Աստծուն, և ուրախացրու Ինձ: Ես տենչացել եմ այս պահի համար. որքան էի փափագում քեզ Ինձ մոտ բերել:

Թող գովաբանվի Քո Անունը, Տե՛ր:

Իմ Սուրբ Սրտի խորքերում Ես տեղ եմ պահել քեզ համար: Քո տունը Իմ Սուրբ Սրտում է: Ե՛կ, եկ Ինձ մոտ:

(Հիսուս կրկին ցույց տվեց Ինձ միևնույն տեսիլքը, որ ես տեսել էի, երբ մոտ տաս տարեկան էի, և ասաց նույն խոսքերը. «Ե՛կ, եկ Ինձ մոտ»: *Դա Հիսուսի առաջին կանչն էր Ինձ ուղղված):*

Ե՛կ, Ես սիրում եմ քեզ, Վասուլա: Կառչի՛ր Ինձանից, և Ես կառաջնորդեմ քեզ: Դու հենց սկզբից Ինձ ես պատկանել: Աղջիկս, դու սիրո՞ւմ ես Ինձ:

Խենթանալու չափ, Տեր:

Ինձ սիրելը մաքրագործում է քեզ և փառավորում է Ինձ: Հետևի՛ր Իմ Ոտնահետքերին, դրանք կառաջնորդեն քեզ այնտեղ, ուր Ես եմ ուզում, որ լինես: Ե՛կ, աղոթենք:

«Սուրբ Հոգի,
իջի՛ր մեզ վրա՝ նորոգելով մեզ:
Լցրո՛ւ մեր հոգին Քո Սիրով:
Հանգչի՛ր
մեր տառապած հոգիներում՝

տալով մեզ խաղաղություն:
Պարուրի՛ր մեզ Քո թևերով՝
պատսպարելով մեզ չարիքից:
Խոնարհեցրո՛ւ մեզ,
առաջնորդիր քո լույսի մեջ,
որ կարողանանք տեսնել
Քո ցանկությունները
և իրագործել դրանք: Ամեն»

Մարտի 29, 1988

Հիսուս, ո՞վ Հիսուս, ի՞նչ պետք է պատասխանել այն եկեղեցականներին, ովքեր քմծիծաղով են լսում «երևումներ» բառը: Մենք[1] անօգնական ենք և գաղափար չունենք նման արտահայտությունների մասին, ինչպիսին այս մեկն է. «Երևումնե՞ր, Ճշմարտությունը փնտրեք և ոչ թե երևումները»: Սա ասվել է ընկերուհուս՝ Բեատրիսին, մի կաթոլիկ քահանայի կողմից: Նա ոչինչ չի կարողացել ասել, և ոչ էլ ես կկարողանայի ասել: Մենք անօգնական ենք, Տե՛ր:

Ծաղի՛կս, ես քեզ կվստահեցնեմ, որ ես եմ Ճշմարտությունը և Իմ Խոսքն[2] է Ճշմարտությունը, սակայն Իմ յուրայիններից շատերը մոռացել են Իմ Խոսքերը: Կարծրացնելով իրենց սրտերը, նրանք փնտրում են խավարում: Գրված է[3], որ Ես Իմ Հոգին կհեղեմ ողջ մարդկության վրա, և որ Իմ զավակները կրկին կմարգարեանան: Ես շատերին երազներ ու տեսիլքներ կտամ, անգամ նրանցից ամենանվաստին: Ես Հույս կտամ և կխրախուսեմ ձեզ՝ հրաշքներ ցույց տալով երկնքում և երկրի վրա: Սրանք են Իմ այսօրվա Նշանները[4]: Ես ասել եմ, որ մանուկների բերանից դուք կլսեք Ճշմարտությունը:

Հետևաբար, նրանց, ովքեր դատապարտում են այսօրվա Իմ Աստվածային Գործերը, Ես կասեմ հետևյալը. «Ձեր ուրացությունը դատապարտում է ձեզ[5]: Դուք բոլորդ, ովքեր չեք հավատում և ամայացրել եք Իմ Այդին, եկե՛ք Ինձ մոտ և ապաշխարեք»:

Ե՛կ, զավակս, Ես սիրում եմ քեզ: Իմ Խաղաղությունը քեզ: Սնվի՛ր Ինձանից, կառչի՛ր Ինձանից. Ես քո կողքին եմ:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, Թող գովաբանվի Տերը:

Փորձիր պահել Իմ Ուսուցումները և հետևիր Դրանց: Ես՝ Տերս, սիրում եմ քեզ: Որտեղ էլ որ լինես, Ես ներկա եմ. ուրեմն, ժպտա՛ Ինձ նայելիս:

---

[1] Բեատրիսը և ես
[2] Սուրբ Գիրքը
[3] Հիսուս շատ բարկացած էր և աղաղակում էր: Դա ինձ հիշեցրեց, թե Նա ինչպես բղավեց Տաճարում փարիսեցիների վրա:
[4] Հովել 2:29-30, Գործք 2:17-20
[5] Հիսուս խիստ բարկացած էր և ավելի բարձր էր բղավում:

Երանի սրտով պարզերին, որովհետև նրանցն է Երկնքի Թագավորությունը:

Արդարությունը պիտի հաղթի և Իմ Տունը Պարզությամբ կվերականգնվի՝ պարուրված Մաքրությամբ ու Արդարությամբ: Թույլ տուր, զավակս, քեզ վրա դրոշմել Իմ Աստվածային Խոսքերը: Ես քեզ հուսախաբ չեմ անի: Հանդչի՛ր Իմ Սրտում և թող, որ քո Տերը հանդչի քո սրտում:

Հիսու՛ս, ինձ ուժ տուր,
հավատ և սեր,
որ կատարեմ Քո կամքը:
Սովորեցրո՛ւ ինձ հնազանդվել Քեզ
և ինքս ինձ խոնարհեցնել,
սովորեցրո՛ւ ներել ինձ ճնշողներին
և չարին սիրով հատուցել:

Ես սովորեցնում եմ քեզ, Վասուլա: Այո՛[1], ժպտա՛ Ինձ, հավատա՛ Իմ Ներկայությանը, հավատարիմ եղիր Ինձ, եղի՛ր Իմ արտացոլումը: Այո՛, Վասուլա, Իմ Մարմինը ցավում է, գեղարդի սայրը գտնվում է ճիշտ Իմ Սրտի մեջտեղում:

Որտե՞ղ, Տեր:

Հենց Իմ Սրբարանում և Իմ Հաստատության խորքերում: Իմ Սուրբ Սիրտը արնահոսում է: Իմ տառապանքի մեջ Ես փորձեցի նախազգուշացնել նրանց: Վե՛ր կաց, աղջիկս: Եկեղեցին քո կարիքն ունի: Իմ Տունը խավարի մեջ է գտնվում՝ ուրացության և անօրենության հետևանքով, և Իմ հոտը ցիրուցան է եղել նրանց մեղքերի պատճառով: Ինչպես եմ Ես աղաղակում Իմ խաչից: Ա՜խ, Պետրոս[2], Ես դալիս եմ քեզ մոտ, որովհետև գիտեմ, որ դու Ինձ հավատարիմ մնացիր: Օ՜[3], Պետրոս, նայի՛ր Իմ Սրտին... լսի՛ր Իմ աղաղակները, սիրելի հոգի: Ես՝ Տերս, այդ Կայենների մեջ ո՛չ սեր եմ տեսնում, և ո՛չ էլ սրբություն: Նրանք շատ են: Նրանք ամայացրել են Իմ Տունը: Ինչո՞վ պետք է սնվեն Իմ գառները, երբ նրանց ձեռքերը դատարկ են: Նրանք ոչինչ չունեն առաջարկելու, քանի որ անապատի վերածեցին Իմ Հաստատությունը: Աղոթի՛ր, Պետրոս, և Ես քեզ այնքան կբարձրացնեմ, որ քո աչքերը վերևից կտեսնեն այս ամայությունը. և Ես քեզ թույլ կտամ թափանցել Իմ Սրտի Վերքի մեջ. Ես թույլ կտամ քեզ տեսնել գեղարդի սայրը: Քո սիրտը ցավից կաղաղակի, երբ դու տեսնես այն: Պետրո՛ս, Ես քեզ ուժ և խիզախություն կտամ, որի կարիքը դու ունես, որպեսզի կարողանաս դուրս քաշել այն[4]:

---

[1] Ես ժպտում էի Նրան:

[2] «Պետրոսն» ասվեց երկար աղաղակով. Այսպես՝ Պեեետրոո՛ոս:

[3] Սա ավելի շուտ տառապանքի հեծեծանք էր:

[4] Հիսուս մեծ տառապանքի մեջ էր: Երբ նա ասաց «եղիր իմ արտացոլումը», ես վեր կացա՝ մտածելով, որ այսօրվա պատգամը վերջացավ, սակայն մի քանի րոպե անց, ես ստացա այն հատուկ մղումը, որը ստանում եմ, երբ կանչ է լինում կամ պետք է լինի: Իմ ներսում ես սկսեցի զգալ Աստծո տառապանքը: Ես գիտեի, որ այն, ինչ զգում էի, Իրենից էր, որովհետև դա անցավ մարմնիս միջով՝ արտացոլվելով ինձ վրա: Ես լսեցի նրա

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, Իմ Սիրտը խոցվում է խավարում քայլող հոգիների համար, որոնք լիքն են արատներով: Իմ Վասուլա, Ես կանգնած եմ նրա դռան առջև ու թակում եմ դուռը, սակայն նա հրաժարվում է բացել: Նրա ամենօրյա զբաղմունքները տեղ չեն թողնում իր Փրկչի համար՝ տանելով նրա հոգին դեպի ավելի թանձր խավարի խորքերը: Չնայած Ես տվել եմ նրան իմացության և ընկալման շնորհը, սակայն նա հակված չէ փոխվելու, քանի դեռ հրաժարվում է Ինձ ներս թողնել: Ես ոչինչ չեմ պահանջում, Ես միայն խնդրում եմ մի փոքր ճանաչում, մի փոքր սեր: Հասկանո՞ւմ ես, Վասուլա:

(Հիսուս տխուր էր):

Նրան արարելը հաճույք էր Ինձ համար, բայց նա արդյո՞ք կիմանա այս ամենը, եթե նա Ինձ ներս չի թողնում: Այո՛[1], Վասուլա, սիրի՛ր Ինձ, Իմ Վասուլա, դու սփոփում ես Ինձ: Փոխհատուցի՛ր նրանց համար, ովքեր Ինձ չեն սիրում:

(Հիսուս սա գրեց մեր ազգականներից մեկի համար, որը այժմ մի քանի օրով մեզ հետ է մնում: Լսելով այս պատգամների մասին՝ մեր հյուրը խնդրեց ինձ, որ տեսնի դրանք: Նա կարդաց 1987թ. հոկտեմբերից մի քանի պատգամ և հետո թողեց դրանք: Նա հորանջեց, ապա ասաց. «Ինձ թվում է, երբ հասնեմ թոշակի տարիքի, ես հոգ կտանեմ իմ վարդերի այգուն և իմ հոգևոր կյանքին, բայց ոչ այժմ»: Նա խնդրեց, որ գրելու ժամանակ ինձ հետևի, որ բավարարի իր հետաքրքրասիրությունը և տեսնի այդ արտասովոր երևույթը: Ես մերժեցի նրա խնդրանքը: Ոչ ոք չի կարող ինձ տեսնել, բացի այն դեպքում, երբ Աստված է կանչում նրան այդ բանի համար: Այդ պատահեց երկու անգամ. մեկը հատուկ մի դեպքի համար էր, իսկ մյուսը պատահեց Դհակայի խարիզմատիկ կենտրոնում: Այն սուրբ է և չպետք է պղծվի հետաքրքրասիրությամբ):

Մարտի 30, 1988

(Այսօր սատանան հուսահատ էր և սաստիկ ջանում էր համոզել ինձ, որ բոլոր այս պատգամները ոչինչ են, և ես պետք է դադարեմ գրելուց ու Աստծուն հանդիպելուց: Ես քաջալերանքի կարիք ունեի, քանի որ իմ թուլությունն ինձ դեպի ցած, դեպի հատակն էր քաշում: Գիտակցելով կասկածանքի հանդեպ իմ ունեցած թուլությունը, ես վախեցա, որ Աստված ի վերջո կհոգնի ինձանից և կկորցնի համբերությունը):

Ծաղիկս, մի՛ վախեցիր Ինձանից. Ես քեզ ո՛չ կվնասեմ, ո՛չ էլ կհրաժարվեմ քեզանից: Ես քեզ Ինձ մոտ չեմ բերել, որ այժմ քեզ Ինձանից հեռու

տառապանքի աղաղակը: Դրա համար չտապեցի ետ գնալ՝ հազիվ տեսնելով արցունքներիս միջից: Հիսուս տանջվում էր, Նա ցավերի մեջ էր: Նրա համար ցավալի էր խոսել ու գրել այդ մասին:

[1] Տեսնելով Հիսուսին այդքան տխուր, ես արտասվեցի:

վանեմ, կամ քեզ վրա որևէ ցասում կամ խստություն բանեցնեմ: Ես գթառատությամբ և սիրով եմ ձևավորել քեզ: Ես առաջնորդել եմ քեզ սիրով: Ես սնել եմ քեզ սիրով: Ես մեղմությամբ եմ գործել քեզ հետ. մի՛ վախեցիր Ինձանից: Ահա լսի՛ր և իմացի՛ր, որ Ես Հեզ եմ ու Խոնարհ: Խաղաղություն քեզ, հոգի: Ես սիրում եմ քեզ:

Տե՛ր, շնորհակալ եմ Քո համբերատարության համար, և այն բանի համար, որ շտապում ես ինձ փրկելու: Ես օրհնում եմ Քեզ, Տեր:

Մարտի 31, 1988

Վասո՛ւլա, երբեք մի՛ կասկածիր, որ այդ Ես եմ՝ Տերը: Մի՛ վախեցիր, այդ Ես եմ՝ Հիսուս:

(Ես խուճապի մատնվեցի՝ վախենալով, թե միգուցե այս ամենը Աստծուց չէ, սակայն այդ դեպքում ինչպե՞ս է այս ամենը գրվել: Ես շփոթության մեջ էի):

Վասո՛ւլա, այդ Ես եմ՝ Հիսուս, քո Փրկիչը, ով որ քեզ փրկեց և հարուցեց մեռելներից: Ե՛կ, մի՛ վախեցիր... Ես ուզում եմ առաջ տանել Իմ Եկեղեցին: Հերձվածողությունը ներս է թափանցել և դրանով պղտորել Ճշմարտությունը և ձեր մեջ բաժանումներ առաջացրել՝ շեղելով ձեզ Ճշմարտությունից:

Իմ Եկեղեցին կենդանացման կարիք ունի: Աղոթե՛ք այն քահանաների, եպիսկոպոսների և կարդինալների համար, ովքեր ոչինչ չունեն առաջարկելու Իմ դառներին, մի բան, որը նրանց խոտորման արդյունքն է: Նրանք այդպես եղել են և մինչև այժմ էլ գործունյա չեն, երբեք չփնտրելով Իմ շահերը, այլ՝ իրենց սեփականը: Իրենք իրենց ներսում անապատ են ստեղծել և նրանք գիտեն այդ: Ոչ մի դառան չի հրապուրի անապատը: Բնականաբար, որևէ ոչխար մոլորվելով կթափառի, քանի որ հսկող հովիվ չունի: Սիրեցե՛ք նրանց, պատսպարե՛ք ու կերակրե՛ք:

Ժամանակների սկզբից ի վեր Ես աշխարհին շատ հրաշքներ եմ ցույց տվել: Սիրելիս, քանի որ աշխարհը մերժում է Իմ Երկնային Գործերը՝ ձեզանից հեռու քշելով ամեն մի հույս՝ դրանով հեռացնելով Ինձ, Իմ զայրույթը բորբոքվում է այդ հովիվների դեմ: Ժամանակը մոտ է, երբ Ես կհայտնեմ նրանց Իմ Փառքը, և դա ցույց կտրվի մի նշանով, մի մեծազդու նշանով, որպեսզի նրանք կարողանան հասկանալ, թե որքան սխալ են եղել: Այդ նշանը ձեզ կտրվի, որպեսզի շատերը հավատան: Աղոթի՛ր, քանի որ ժամանակը մոտ է: Աղոթի՛ր Խաղաղության և Սիրո Մեծ Վերադարձի համար:

Ապրիլի 5, 1988

Թող փառավորվի Աստված: Դու կգործե՞ս Հիսուսի հետ:

Այո՛, Սբ. Մարիամ, սովորեցրո՛ւ ինձ, խնդրում եմ, հնազանդվել Նրան՝ ավելացնելով իմ հավատը, սերը և հույսը:

Ես դա կանեմ: Փորձի՛ր զիջող լինել, զավակս: Իմ խաղաղությունը քեզ: Իմաստությունը կսովորեցնի քեզ: Ամեն ինչ Նրա Ձեռքը հանձնիր: Նա քեզ հուսախաբ չի անի:
Ահա Հիսուս:

(Հիսուս կանգնած էր իմ ձախ կողմում՝ ինձ ցույց տալով Իր ոտքը, որը կապված էր իմ ոտքի հետ):

Հիշի՛ր, այս կապերը Հավիտենական են: Ես միշտ քո կողքին եմ: Ե՛կ, աղոթիր հոգիների փրկության համար: Ես ուզում եմ, որ դու խոկաս Իմ տառապանքի մասին. Ես խաչվել էի այս շաբաթ: Երբեք մի՛ կասկածիր:

Իմ զմուռս, զարդարի՛ր Իմ Եկեղեցին: Թող ոչ ոք չհեռացնի այն շնորհը, որ Ես տվել եմ քեզ: Ես երբեք քո լապտերն անյուղ չեմ թողնի. Ես մշտապես պիտի լցնեմ քո լապտերը: Եկեղեցին քո կարիքն ունի: Իմ Տունն այսօր ավերված է:

Վասուլա, դուք պետք է վերակառուցեք Իմ այս Հին Հաստատությունը՝ վերանորոգելով Դրա պատերը: Վերանորոգե՛ք Իմ Սրբավայրը: Ե՛ս եմ Տերը, ու Իմ Զորությամբ դուք կվերակառուցեք այս հին ավերակները և կզարդարեք Իմ Հին Հաստատությունը: Վերանորոգե՛ք Դրա պատերը, և Ես կրկին կյանքի կկոչեմ բոլոր մեռածներին: Ես կարթնացնեմ այդ անկենդան դիակները՝ կյանքի կոչելով նրանց: Սա պիտի լինի Մեծ Վերադարձը՝ Մեծ Վերադարձը դեպի Կյանք, քանի որ Իմ լուսաշող ցողը պիտի զարդարի քեզ, արարչություն: Ես պիտի տարածեմ Իմ Թագավորությունը, և ամբողջ Երկինքը պիտի ցնծա:

Դուք անուշադրության եք մատնել Իմ Այգին, սակայն Ես՝ Տերս, որ դրա Պահապանն եմ, սիրում եմ ձեզ խենթի պես և տեսնել չեմ կարող, թե փշերն ինչպես են խեղդում Իմ մնացած մի քանի ծաղիկները: Մաքրելու ժամանակը եկել է, որպեսզի արմատախիլ արվեն այդ փշերը՝ թույլ տալով Իմ կոկոններին բացվել՝ զարդարելով Իմ Այգին:

<u>Աղդարությունը</u> կհաղթի. Ես՝ Տերս, նրանց թույլ կտամ հաշտվել Ինձ հետ: Նրանք, ովքեր անկեղծ են, կվերադառնան Ինձ մոտ զղջալով: Դուք բոլորդ, որ փնտրում եք Ինձ և տենչում եք իմանալ Աղդարության ու Մաքրության Իմ Ուղիները, մոտ եկեք, և դուք կլսեք Իմ աղաղակները խաչի վրայից: Ես կարիք ունեմ Սիրո՛, Սիրո՛, Սիրո՛: Բա՛ց արեք ձեր սրտերը, և Ես <u>կբժշկեմ</u> ու կմխիթարեմ քեզ, արարչություն:

Պետրո՛ս, հավաքի՛ր Պետրոս բոլոր ազգերին ու ներգրավիր նրանց Իմ Սրտի մեջ: Ես կանչում եմ Իմ խաչի վրայից. «Արածեցրո՛ւ իմ բոլոր ոչխարներին, Պետրոս»: Ես կրկին քեզ հարց եմ տալիս, Պետրո՛ս. «Դու ինձ ավելի շա՞տ ես սիրում, քան՝ մյուսները»: Եթե սիրում ես, թույլ մի՛ տուր այս Կայեններին համոզել քեզ. հաստատ մնա: Նրանք քեզանից օրենքներ կպահանջեն, որոնք ճիշտ կթվան, որպեսզի ցանկացած հոգու հետ վարվեն այնպես, ինչպես որ կամենան: Հենց նույն այդ օրենքները, որ գալիս են մարդկանցից, մի՛ թույլ տուր, որ քեզ համոզեն: Հիշի՛ր, թե ինչպիսին եմ Ես՝ Տերս. Ես Հեզ եմ ու Խոնարհ: Եղի՛ր Իմ արտացոլումը:

Եթե նրանք տենչում են, որ Ես իրենց մոտ գամ, ապա ինչո՞ւ իրենք չեն լսում Իմ Ձայնը: Ես նրանց դռների մոտ կանգնած թակում եմ: Ինչո՞ւ են նրանք հրաժարվում լսել: Եթե նրանք Ինձ են տենչում և չեն լսում Ինձ, դա նրանից է, որ իրենց ուրացությունը դարձել է տիղմի պես թանձր: Ես հիմա այստեղ եմ՝ սպասելով, որ նրանք բացեն իրենց դռները, սակայն նրանք Ինձ մի կողմ են հրում՝ ճնշելով Ինձ:

Վե՛ր բարձրացրեք ձեր աչքերը, և դուք կտեսնեք ձեր Փրկչին. ճանաչե՛ք Ինձ: Մի՛ ոտնահարեք Իմ Նախախնամության Գործերը՝ առանց խաղաղություն առաջարկելու Իմ զավակներին, որի համար էլ նրանցից և ոչ մեկը չի հետևում ձեր ավանդույթներին: Տվե՛ք նրանց Իմ խաղաղությունը: Թող ձեզ չզարմացնեն Իմ օգտագործած այս թույլ գործիքները, որոնց միջոցով Ես հայտնում եմ Ինքս Ինձ: Ես Աստված եմ, և Ե՛ս եմ ընտրում ում որ ուզում եմ:

Աղջիկս, ապավինի՛ր Ինձ: Վստահի՛ր Ինձ: Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Ե՛կ:

Ապրիլի 7, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ:

Իմ Խաղաղությունը քեզ, Վասուլա: Հասկացի՛ր, Ես քեզ չեմ բերել մինչև այստեղ՝ ձևավորելով քեզ, որ այժմ քեզ լքեմ: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Այդ Ես եմ՝ Տերը, որ հոգիներ է փնտրում, որպեսզի բժշկի և փրկի նրանց: Օ՜, հոգի[1], այո՛, այդ Ես եմ՝ քո Փրկիչը, որ եկա[2] բժշկելու քեզ, սիրելի հոգի: Այդ Ես եմ՝ Տերը, որ եկա քո դուռը բախելու: Օ՜, շատ սիրելի հոգի, Ես բերել եմ քեզ Ինձ մոտ. Ես այժմ կերակրում եմ քեզ[3]: Ե՛կ:

Մոտեցի՛ր Ինձ, Ես կզարդարեմ և կսրբացնեմ քեզ: Ես կբժշկեմ քո բոլոր վերքերը: Ես կվերահաստատեմ քեզ, զավակս: Այդ Ե՛ս եմ, որ եկա քեզ մոտ. Ես փնտրեցի քեզ, հոգի: Ե՛կ և Ես կսփոփեմ քեզ, ե՛կ և հանգչիր Իմ մեջ, հոգի: Ե՛կ Ինձ մոտ և ճաշակի՛ր Ինձ, ե՛կ և ըմպի՛ր Ինձ: Լսի՛ր քո Փրկչի կանչը և քո հոգին պիտի ապրի: Ես սիրում եմ քեզ, սիրելի հոգի: Հանուն քեզ Իմ Արյունը Գետերի վերածվեց՝ քո փրկության համար:

Հոգի՞: Ե՛կ ու տեղ գտիր Իմ թիկնոցի տակ: Ես կպատսպարեմ քեզ. Ես կլինեմ քո Ապաստարանը: Ես Հիսուսն եմ, իսկ Հիսուս՝ նշանակում է Փրկիչ:

(Հիսուս տվել է այս պատգամը՝ դիմելով բոլոր նրանց, ովքեր կարդում են Այն: Սա զուգադիպություն չէ, որ դու կարդում ես Նրա Խաղաղության և

[1] Սա մի աղաղակ է ուղղված նրան, ով հիմա կարդում է այս պատգամը:
[2] Այստեղ Հիսուս խոսում է նրա հետ, ով ընթերցում է Իր Պատգամը:
[3] Կերակրել նշանակում է կարդալ և հասկանալ (հոգևոր կերակուր):

Սիրո Պատգամը: Այդ Նա է՝ Հիսուս, ով փնտրեց քեզ, եկավ քեզ մոտ և քեզ տվեց կարդալու այս պատգամը):

Ընդարձակիր Իմ Թագավորությունը՝ տարածելով Իմ Պատգամը, ինչպես դու անում ես: Այդ Ես Եմ, որ պիտի հաստատեմ Իմ Գործերը՝ տարածելով Իմ Թագավորությունը: Հիշի՛ր, Ես միշտ հանում եմ Իմ նպատակներին: Ժպտա՛ քո Փրկչին: Օրհնի՛ր Ինձ:

(Ես շրջվեցի և օրհնեցի Հիսուսին):

Ես օրհնում եմ Քեզ, Հիսուս Քրիստոս: Ես օրհնում եմ Քեզ:

Ես էլ քեզ եմ օրհնում: Ինձ հետ վերապրի՛ր Իմ տառապանքն այս գիշեր: Ես լքվել էի Իմ եղբայրներից ու մատնվել նրանցից մեկի կողմից: Կիսի՛ր Գեթսեմանիի Իմ տառապանքները. մի՛ լքիր Ինձ:

Չեմ լքի, Տե՛ր:

Ինձ մշտապես մտքիդ մեջ պահիր. Ինձ այս ձևով մխիթարի՛ր: Ցույց տուր, որ դու չես լքի Ինձ, Վասուլա: Կիսի՛ր Իմ տառապանքը, կիսի՛ր Իմ բաժակը: Մինչև վերջ Ինձ հետ եղիր: Զգա և ապրի՛ր Իմ Չարչարանքները: Փառավորի՛ր Ինձ: Մնա Ինձ մոտ:

Կմնամ, Հիսուս:

(Հիսուս, կարծես, ամբողջովին Իր Չարչարանքներն էր վերապրում):

Օ՜, Վասուլա, մտի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ, մտի՛ր Նրա խորքերը. այնտեղ դու խաղաղություն կգտնես: Ես՝ Տերս, տեղ եմ պահել քեզ համար: <u>Դու պատկանում ես Ինձ, իսկ Ես՝ քեզ</u>: Սերը կառաջնորդի քեզ:

Տե՛ր, ես տվել եմ Քեզ իմ սիրտը: Դու նրա հետ կարող ես անել, ինչ որ կամենաս:

Ուրեմն, վստահի՛ր Ինձ: Բռնի՛ր Ձեռքս: Ես երբեք քեզ չեմ թողնի:

Առաջնորդի՛ր ինձ, Տեր, քանի որ Դու ես իմ Առաջնորդը և Աստվածը:

Ե՛կ, մի՛ մոռացիր Ինձ: Օրհնի՛ր Բեատրիսին: Ես՝ Տերս, օրհնում եմ նրան: Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր, հավիտյան միասին:

((Զատիկ) Ավագ Հինգշաբթին

Զորեքշաբթի օրը ես Եկեղեցում էի, և քահանան օրհնեց ամենքին յուղով խառնված զմուռսով: Մեզ թույլ տրվեց բամբակի մի կտոր թաթախել Եկեղեցու կողմից օրհնված այս խառնուրդի մեջ և տանել տուն:

Բեատրիսը եկավ ինձ մոտ, որ գնանք Եկեղեցի: Հիսուս խնդրեց ինձ օրհնել նրան: Ուստի ես օրհնեցի նրան պահածս յուղով ու զմուռսով: Օրհնում ենք այսպես. օրհնելիս զմուռսով և յուղով խաչ ենք անում ճակատին, ձախ և աջ այտերին, կզակին, ձեռքերի վրա և ոտքերին: Քահանան որոշ բառեր էր ասել մարմնի և հոգու բժշկության մասին: Ներքին ձայնով Հիսուսն ինձ հասկացրեց, որ Ինքն էր ասում այդ բառերը:

Ավելի ուշ, երբ ես Եկեղեցում էի, երբեմն միտքս շեղվում էր դասական հունարենի պատճառով, որը ես գրեթե չեմ հասկանում: Այս երեք ժամում միտքս շեղվելուց պահելը դժվար էր, սակայն Հիսուսն այնպես արեց, որ դա չլինի: Ամեն անգամ, երբ միտքս շեղվում էր, Հիսուսն ասում էր. «Ինձ մոտ եղիր», կամ՝ «Ինձ մոտ մնա»: Կարծում եմ, Նա այդ ասաց մոտավորապես տասն անգամ):

Ապրիլի 8, 1988

(Ավագ Ուրբաթ)

Հիսո՞ւս:

Ես եմ: Ինչո՞ւ կասկածեցիր[1]:

Ա՜հ: Այն, ինչ Ես խնդրում եմ քեզանից, սեր է: Սիրի՛ր Ինձ և Իմ ծարավը կհագեցնա: Սիրի՛ր Ինձ և Իմ Վերքերը կհանգստանան: Սիրի՛ր Ինձ և Իմ Հոգին կցնծա քեզնով: Սիրի՛ր Ինձ և դու պարտության կմատնես Իմ թշնամիներին: Իմ Հոգին քեզ վրա է, զավակս: Մենք, մե՞զ:

Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր: Այո՛, Սբ. Մարիամ: Մենք, մեզ, հավիտյանս հավիտենից:

Ապրիլ 9, 1988

((Զատիկ) Ավագ Շաբաթ)

Ես սիրում եմ քեզ: Դու այժմ միացած ես Ինձ, և Ես օրհնում եմ քո յուրաքանչյուր քայլը, զավակս: Ես եմ քո կյանքի Աղբյուրը: Ես եմ Հարությունը:

---

[1] Ես փնտրում էի, թե Աստվածաշնչում որտեղ է գրված այն խոսքերը, որ Հիսուսն ասել էր մարտ 29, 1988թվի պատգամում («Ես պիտի դուրս հորդեմ Իմ Հոգին ողջ մարդկության վրա»): Ես այն գտա Գործք 2:17-ում, և գիտեի, որ այն Աստվածաշնչում մեկ այլ տեղ էլ կա նշված, որովհետև մի անգամ Հիսուսն ինձ ցույց էր տվել այդ հատվածը: Ես խնդրեցի Հիսուսին ինձ կրկին ցույց տալ, թե դա Աստվածաշնչում որտեղ էր գտնվում: Փոքր ինչ փնտրելուց ու չգտնելուց հետո, ինձ թվաց, թե ես ասեղ էի փնտրում հարդի դեզի մեջ: Ես մտածեցի, հավանաբար Հիսուս չլսեց ինձ, և ասացի բարձրաձայն. «Օ՜ Հիսուս, դուցե ես պետք է գոռամ, դուցե Դու չլսեցիր»: Նախքան իմ վերջին բառն ավարտելը, ես հայտնաբերեցի, որ այս բառերն ասում էի այն ժամանակ, երբ իմ առջև բացվել էր ինձ հարկավոր էջը, որ ես փնտրում էի: Դա հենց իմ քթի տակ էր: Դրա համար էլ Նա ասաց ինձ. «Ինչո՞ւ կասկածեցիր»:

Տե՛ր, չնայած այս Պատգամը դարձի է բերել շատ աշխարհիկ մարդկանց, և նրանք ուրախ են, սակայն ես տխուր եմ այն բանի համար, որ ամենաքիչը 33 եկեղեցական իշխանությունների ենք մենք ուղարկել Պատգամի պատճենները, սակայն ոչ մեկը չի պատասխանել, բացառությամբ երկուսի: Նրանցից մեկն ասում է, որ ինքը պարտավորված չի զգում իր գաղափարից հրաժարվելու, իսկ մյուսն ասում է, որ ինքը գործով ծանրաբեռնված էր և ժամանակ չուներ սրա համար: Տե՛ր, ես այնքա՜ն տխուր եմ:

Իմ Վասուլա, թող այդպես լինի: Վասո՛ւլա, Ինձ ազատ թող վարվելու Իմ ձևով: Ես մի օր պիտի հաստատեմ Իմ Գործերը, որոնք Ես տվել եմ քեզ: Դու, զավակս, քեզ վրա պիտի կրես «Սիրո Զոհ» անունը: Ես ո՛չ կլքեմ քեզ, ո՛չ էլ երբևիցե կթողնեմ քեզ: Ամեն մի բառ կգրվի հազարավոր անգամներ, մինչև Ժամանակների Վերջը:

Ես Իմ և քո միջև հաստատել եմ հավիտենական Կապեր: Այս Կապերը մեր Սիրո Դաշինքն են: Այս Կապերը կրում են Իմ Անունը, և նրանք մշտական են ողջ Հավիտենականության համար: Ես՝ Տերս, սիրում եմ ձեզ բոլորիդ և հանուն նրանց, ովքեր փնտրում են Ճշմարտությունը, Ես գալիս եմ կրկին ցույց տալու, թե իրականում ինչ է Ճշմարտությունը և դա ինչ է նշանակում, քանի որ նրանք մոռացել են Այն: Ես եմ Ճշմարտությունը և Ճշմարտությունը Սեր է, Անմեկնելի Սեր, Վսեմ Սեր, Հավիտենական Սեր: Իմ Գիրքը Սիրո Գիրք է:

Իմ Հարս, ե՛կ և սիրիր Ինձ. Ես փառավորվում եմ քո սիրով: Այժմ հասկացիր, թե ինչու եմ Ես ցած իջել քո միջոցով, զավակս: Դա Իմ Սերը միայն քեզ ցույց տալու համար չէ, այլ նաև Իմ ողջ[1] արարչության համար է: Ես գալիս եմ հիշեցնելու, թե որքան եմ Ես սիրում նրանց:

Սիրտս կտոր-կտոր է լինում և տանջվում է տեսնելով, որ Իմ արարչությունից շատերը տեղիք են տալիս սատանային: Որքան եմ տանջվում տեսնելով, որ Իմ քահանայական հոգիներից շատերը գտնվում են կործանման ճանապարհին: Ես եմ Բանը, Սրբությունն Սրբոցը, Հավիտենական Աստվածը, Էմմանուելը և ձեր Փրկիչը, ում դուք խոցեցիք շատ տարիներ առաջ և երբեք չեք դադարի խոցելուց մինչև վերջ: Ինչո՞ւ: Ի՞նչ տարբերություն այժմյան և այն վաղնջական օրերի միջև, երբ ես մարմնով երկրի վրա էի և գամվեցի Խաչին: Ես կրկին ու կրկին խոցվում եմ ձեր կեղծավորությամբ, ամբարտավանությամբ, ձեր ուրացությամբ և ձեր չլսելու համառությամբ: Դուք տակավին թմրած եք մնում Իմ Նշանների, Իմ Հրաշքների, Իմ Աստվածային Գործերի հանդեպ: Այսօր դուք ծաղր ու ծանակի եք ենթարկում Ինձ, ինչպես երեկ: Ես ծաղրվում եմ ձեր կողմից, ձեզնից, որոնց Ես միլիոնավոր հոգիների եմ վստահել: Դուք նորից եք խաչում Ինձ ու ձեր անտարբերությամբ Ինձ կրկին գամում եք փայտին: Օ՜, դուք, բոլորդ, որոնց սիրտը դեռևս ամուլ է,[2] որոնց սիրտը գրանիտի է վերածվել, դուք երբևէ թույլ կտա՞ք Ինձ հպվել ձեր սրտերին, որպեսզի նրանք փափկեն ու բացվեն[3]: Դուք կդադարե՞ք մի օր Ինձ խոցելուց[4]:

---

[1] «Ողջը» արտասանվեց այսպես. «ոոո՛ղջ»:
[2] Հիսուսի ձայնը տխուր էր ու աղերսագին:
[3] կրկին տխուր ու աղերսագին
[4] կրկին տխուր ու աղերսագին

Իմ բերանը մագաղաթից էլ չոր է Սիրո ծարավից: Իմ աչքերը հոգնել են տեսնելով, թե ինչպես եք շաղ տալիս ձեր խոսքերն Իմ Խորանի վրա: Դուք մատուցում եք Ինձ ձեր աղոթքները, սակայն նախքան Ինձ հասնելը դրանք <u>օդում մեղի պես գոլորշիանում</u> են: Ես շուռ եմ տալիս Իմ աչքերը ձեզանից, քանի որ Ես գիտեմ, թե ինչ կա ձեր սրտերի խորքում... Ես շնչահեղձ եմ լինում... Ես խեղդվում եմ, ստիպված լինելով դիտել, թե Իմ սերմը ինչպես է լցված մեռած խոսքերով, ստիպված լինելով դիտել, թե ինչպես եք անվախորեն դեպի Ինձ գալիս՝ այնքա՜ն բացահայտորեն ոտնահարելով Մեր Աստվածային Սրտերը[1]: Ուրեմն ինչպե՞ս եք ակնկալում, որ Իմ գառները վստահեն ձեզ:

<u>Ա՜հ, Վասուլա:</u> Իմ Սիրտը առատորեն արյունում է: Մտի՛ր Իմ Սրտի մեջ և զգա քո Աստծո Վերքերը:

<u>Հ-Ի-Ս-ՈՒ-Ս</u>: Իմ Սիրտը աղաղակում է ցավից՝ զգալով Քո վիճակը: Օ՜, իմ սիրելի Աստված: Նրանք ի՞նչ են արել... Նրանք ի՞նչ <u>են</u> անում:

Ցո՛ւյց տուր Սիրո Իմ Գործերը, ցո՛ւյց տուր դրանք բոլոր <u>մարդկանց</u>, նույնիսկ նրանց, զավա՛կս, ովքեր քեզ հետ կվերաբերվեն իբրև խեղկատակի. վերջում նրանք կտեսնեն Իմ Փառքը:

(Ես փչրված եմ. Տերը դա գիտի: Ինձ արդեն իսկ վերաբերվել են որպես խեղկատակի, որպես խաբեբայի, որպես ցնդածի, որպես Հակաքրիստոսի, որպես մտավոր հիվանդի: Ես վիրավորված էի, որովհետև մարդիկ անգամ չեն թաքցնում իրենց զգացմունքները, երբ նրանք մտադիր են վիրավորել քեզ: Կդիմանա՞մ ես՝ այսպես շարունակելով: Ես թույլ եմ... հոգիս հոգնած է... իմ երկու վկաները չունեն իրական հեղինակություն և ոչ էլ ուժ: Նրանք գնում են նույն ճանապարհով, որով ես եմ գնում: Արհամարհված և ընկճված, հավատ չընծայված և անտեսված՝ մենք բոլորս խմում ենք նույն գառը Բաժակից՝ կիսելով Այն Հիսուսի հետ):

Վասո՛ւլա, Ես քո առջևում եմ: Այդ Ես եմ՝ քո Աստվածը, Որը վերջում ցույց կտա ձեզ բոլորիդ Իր Փառքը: Ես գիտեմ, թե ինչ եմ ընտրել: <u>Ես գտել եմ Իմ ողջ արարչության մեջ ամենից նվաստին</u>: Ես ընտրեցի քեզ, որ բոլորը կարողանան տեսնել, որ ողջ Իշխանությունը գալիս է ուղղակի Ինձանից և միայն Ինձանից... և ոչ թե ձեզանից: Վասո՛ւլա, Ես այս Այգու Պահապանն եմ և ոչ ոք չի դադարեցնում բարձր ծառերի աճը, բացի Ինձնից՝ թույլ տալով ցածրերին աճել: Որպես կայծակ ու որոտ, Իմ Խոսքը կիջնի ձեզ վրա, արարչություն: Վա՜յ նրանց, ովքեր անհավատարիմ են:

Վասուլա, պահի՛ր Ինձ քո սրտում: Մեր Խաղաղությունը քեզ:

Ապրիլի 11, 1988

Տե՛ր, մի՛ մերժիր Ինձ,
որովհետև ես ամենանվաստն եմ
Քո Աչքում:

[1] Սուրբ Մարիամի և Իր Սրտերը

Խղճա՛ ինձ և եթե կամենում ես,
կերակրիր ինձ,
թեկուզ մնացած փշրանքներով, Տե՛ր:
Սբ. Մարիամ, մի՛ արհամարհիր ինձ,
ողորմի՛ր խնդրում եմ,
և թող Տերը ինձ
մի քանի մնացած փշրանքներ նետի.
խնդրում եմ ինձ
կենդանի պահիր: Ամեն:

Ե՛կ: Ընդունի՛ր Իմ հացը: Ես չեմ մերժի քեզ: Իմ սեփական Ձեռքով ես պիտի կերակրեմ քեզ:

Վասուլա, ե՛ս պիտի զարդարեմ քեզ: Ուրախացրո՛ւ և գովաբանիր Ինձ:

Օրհնյալ է իմ Տերը:

Եկ, գրի՛ր, գրի՛ր: Կայենը այս անգամ չի իրագործի իր ծրագիրը և չի ձերբազատվի իր եղբորից: Ես կխոչընդոտեմ նրան: Ես անակնկալի կբերեմ նրան: Նա չի ենթադրում, որ Ես մտնում եմ իր սենյակը, ինչպես գողն է մտնում[1], որպեսզի խափանեմ նրա ծրագիրը՝ թողնելով նրան մերկ: Եվ Կայենը մերկ կմնա՝ մինչև որ նա դեպի Ինձ չգա զղջալով: Աղոթի՛ր այդ ժամի համար. ժամ, որը խնդրանքներ, աղաչանքներ և վախ առաջ կբերի: Դա պիտի լինի Արդարության ժամ:

Օրհնյա՛լ եղիր, զավակս: Ես՝ քո Սուրբ Հայրը, սիրում եմ քեզ: Ես Սուրբ Երրորդությունն եմ. դու լավ ես նկատել: Գրի՛ր դա:

(Այն ժամանակ, երբ Հիսուսն ասում էր «Ես քո Սուրբ Հայրն եմ», ես տեսա մի «եռյակ» Հիսուս՝ նման այն երևակայական նկարներին, որտեղ մի մարդ ներկայացվում է այնպես, որ կարծես նրանք երեքը լինեն՝ մեկը մյուսից դուրս գալով, բոլորն էլ իրար նման և բոլորն էլ՝ նույնը):

Ես Սուրբ Երրորդությունն եմ, բոլորը Մեկի մեջ: Ես սիրում եմ քեզ: Ե՛կ, զավակս, Ես քեզ հաղորդակից պիտի դարձնեմ խորին գաղտնիքների. բոլորը Իմ Փառքի համար: Բռնի՛ր Իմ Ձեռքը: Ես Նա եմ, Ով ստեղծեց քեզ:

Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Ապրիլի 12, 1988

(Երեկվանից սկսած, իմ թուլության պահերից օգտվելով, սատանան գրոհում է ինձ վրա՝ հուզելով հոգիս: Անմիջապես ես զգացի, որ Հիսուս ամրացնում է մեր կապերը. դրանք փափուկ պարաններ էին թվում: Ես զգացի Նրա բազուկն ամբողջությամբ, որովհետև կապերը ավելի ամրացել էին: Մենք

[1] Արդյոք հիմա Հիսուսն անո՞ւմ է դա:

կարծես նման էինք Սիամի երկվորյակների: Նա առաջ էր թեքվում և անձկալից նայում էր ինձ: Ես սփոփվեցի):

Ես քեզ մոտ եմ: Ե՛կ, Ես օրհնում եմ քեզ: Ես սիրում եմ քեզ, Իմ Վասուլա: Իմ Աչքերը երբեք չեն թողնում քեզ: Հատկապես թուլության այս պահերին, Ես ամրացնում եմ մեր կապերը: Մտածի՛ր, Վասուլա: Ես քեզ բժշկեցի, որպեսզի աշխարհը տեսնի, որ մինչև այժմ Ես ձեր միջև եմ:

Վասո՛ւլա[1], Ես քեզ բժշկեցի, որ գործածեմ քեզ՝ Իմ բազուկներից դուրս նետելով քեզ, այո՛, Իմ բազուկներից դուրս, աշխարհի մեջ, որպես Իմ ուռկանը: Աղջիկ՛ս, թույլ տուր Ինձ գործածել քեզ այս ձևով: Երբեմն-երբեմն Ես քաշում եմ Իմ Ուռկանը և հրճվում եմ, երբ Իմ Ուռկանում որս եմ տեսնում:

Այո՛, փնտրիր Իմ շահերը, և դու կհասկանաս: Ես գիտեմ, քեզ համար դաժան է ապրել այս աշխարհում, որովհետև դու այլևս չես պատկանում նրան: Ես քեզ հայտնել եմ քո ծագման մասին, ինչպես և այն, թե դու ում ես պատկանել հենց սկզբից, սակայն չարը այս ամբողջ ընթացքում խաբել է քեզ:

Դու պատկանել ես Ինձ, դու սերում ես Ինձնից, դու Իմ սեփականն ես, ինչպես Աբելը, որն <u>Իմ սերմն</u> էր: Երբ դու այս աշխարհում ես գտնվում, աշխարհը չի ճանաչում քեզ որպես յուրայինի, և դրա համար նրանք պիտի փորձեն ծուղակը գցել քեզ: Դու շրջապատված ես չարությամբ, և նրանք պիտի փորձեն կործանել քեզ, անարգել և վհատեցնել քեզ: Ես հայտնում եմ այս բաները, որպեսզի դու նախօրոք պատրաստված լինես և կարողանաս համբերությամբ տանել բոլոր փորձությունները, այն բոլոր փորձությունները, որոնք կծառանան քո առջև: Ես քեզ ցույց եմ տվել քո խաչը, սակայն Ես քեզ հետ եմ՝ կիսելով այն քեզ հետ: Դու մենակ չես: Ես քեզ մոտ եմ և Իմ մեջ դու հանգիստ կգտնես: Արիացի՛ր, աղջիկս, Ինձ վրա հենվիր, երբ հոգնած ես, և Ես <u>կհանգստացնեմ</u> ու <u>կսփոփեմ</u> քեզ:

Ե՛կ, ժպտա Ինձ, մի՛ մոռացիր ինչ որ Ես ուսուցանել եմ քեզ: Երբեք մի՛ կասկածիր Իմ Ներկայությանը: Տարածի՛ր Իմ Թագավորությունը, աղջիկս: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Դու որոշիր ինձ համար այն,
ինչ որ Քեզ ավելի փառք կբերի:
Ամեն:

(Մեր Սուրբ Մայրը)

Վասո՛ւլա, քանի որ դու Տիրոջը տալիս ես այս ազատությունը, իմացի՛ր, որ Նա գոհ է քեզանից. ավելի լավ Առաջնորդ դու չես կարող ունենալ: Իմաստությունը կսովորեցնի քեզ: Եղիր զիջող և ամեն բան հանձնիր Նրա Ձեռքերին. դա դուր է գալիս Տիրոջը: Լիովին ապավինիր Աստծուն: Ես սիրում եմ քեզ. օրհնյալ լինես:

Ես օրհնում եմ Քեզ, Սբ. Մարիամ:

[1] Հիսուսի ձայնը տխուր էր հնչում:

Մենք, մե՞զ:

Այո՛, մենք, մեզ:

Ապրիլի 18, 1988

(Ես մտածում էի միայն Հիսուսի մասին):

Ես եմ: Խաղաղություն քեզ, հոգի: Քաղի՛ր այն, ինչ որ տվել եմ քեզ: Սովորեցրո՛ւ Իմ զավակներին. սովորեցրո՛ւ նրանց, որ դադարեն ապստամբել Իմ դեմ: Սովորեցրո՛ւ նրանց սիրել միմյանց: Աղոթի՛ր հոգիների փրկության համար: Աղոթի՛ր Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի համար: Աղոթի՛ր Մեծ Վերադարձի համար. ձեր դարաշրջանը մեռած է: Աղոթի՛ր ձեր դարաշրջանի նորոգման համար, նրա վերածննդի համար, Նոր Դարաշրջանի համար: Աղոթի՛ր այն բանի համար, ինչը որ Իմ սիրելի Հովհաննեսը[1] սկսեց Իմ Սուրբ Հոգու ներշնչմամբ:[2] Իմ Եկեղեցին մեկ պիտի լինի նորոգված Ինձնով՝ շատ հոգիներ ետ բերելով դեպի Իմ գիրկը:

Իմ բոլոր ոչխարները ցրվել են: Սատանան իր զայրույթն է թափել ձեր մեջ՝ բաժանելով, պառակտելով, ցիրուցան անելով, խառնակելով ձեզ... Պետրոս, օ՜, Պետրոս, ճանաչի՛ր Վերջին Ժամանակները: Ինչպե՞ս է, որ ձեզանից շատերը չեն կարողանում ճանաչել ժամանակները: Որովհետև սատանան իր թևերի ստվերը նրանց վրա է գցել: Ձեզանից շատերին սատանան շեղել է Ճշմարտությունից: Բռնի՛ր Ձեռքս, Պետրոս, և Ես կառաջնորդեմ քեզ: Լսի՛ր Իմ աղաղակը, հավաքի՛ր քո Արևելյան եղբայրներին: Կանչի՛ր նրանց Ինձ հանդիպելու Իմ հարկի տակ: Հավաքի՛ր քո Արևելյան եղբայրներին Իմ Հաստատության մեջ, կանչի՛ր նրանց Ինձ մոտ: Որքան եմ Ես փափագում այս Միությունը: Պետրո՞ս: Պետրո՛ս, եթե դու Ինձ լսես, Ես բոլոր ազգերին <u>կկանչեմ</u> Իմ Հարկի տակ: Ես կսրբագործեմ նրանց՝ նորոգելով նրանց բոլորին: Որպես անձրև, Ես Երկնքից կտեղամ Արդարության Իմ ցողը, և Իմ Այդին կզարդարվի: Ես կլցնեմ ձեր պահեստները Իմ Պահեստներից: Լսի՛ր Իմ Ձայնը, Պետրոս: Իմ Թագավորությունը ճիշտ ձեր դռների մոտ է. Իմ Թագավորությունը ձեր մեջ է: Ինչպե՞ս է, որ դուք չեք ճանաչում Այն:

<u>Պետրո՛ս, դու գիտեիր, որ որևէ թագավորություն, որը բաժանված է ինքն իր դեմ՝ կփլուզվի: Իմ Տունը բաժանված է և այսօր Այն գտնվում է ավերված վիճակում:</u> Ասա՛ նրանց, սիրելիս, Իմ Փրկության Ծրագրի մասին: <u>Պետրո՛ս, ազատիր Իմ զավակներին:</u>

Խաղաղություն ձեզ բոլորիդ:

Հիսո՛ւս, Աստված իմ, դու կանչում ես Ուղղափառ պատրիարքի՞ն: Դու նրա՞ն ես ուզում, Տեր:

---

[1] Հովհաննես 23-րդ Պապը

[2] Նա աղոթում էր միության և երկրորդ հոգեգալուստի համար

Այո՛: Իմ ծրագիրն է միավորել բոլոր ազգերին, Արևելքից Արևմուտք, Հյուսիսից Հարավ և նրանց բոլորին ի մի բերել Իմ Լույսի ներքո, Իմ թևերի տակ՝ բոլորը միավորված, մեկ հոտի մեջ, Իմ պահպանության տակ, Մեկ Աչալուրջ Հովիվով:

Ես խոստացել եմ երբեք ձեզ չլքել և դալ ձեզ մոտ դժբախտության ու աղետի ժամանակ: Ծաղի՛կս, Ես պահում եմ այս խոստումը: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ և համբերությամբ սպասում եմ, որ բացվեն ձեր սրտերը և ընդունեն Ինձ: Մի՛ կարծրացրեք ձեր սրտերն այնպես, ինչպես Ապստամբության ժամանակ: Բա՛ց արեք ձեր սրտերը. Ես ճիշտ ձեր դռների մոտ եմ: Իմաստությունը կսովորեցնի ձեզ: Իմ խաղաղությունը ձեզ:

Թող փառավորվի Տերը:
Թող գովաբանվի Տերը:
Թող Քո Թագավորությունը գա:

Ես պիտի կերակրեմ քեզ, Իմ Վասուլա: Մենք. մե՞զ:

Հավիտյանս

Հավիտենից:

Ապրիլի 19, 1988

Հա՛յր,
թող որ մենք միավորված լինենք
մեկ Հավատով և մեկ Մկրտությամբ
Քո Սուրբ Անվան ներքո:
Թող մենք մեկ լինենք Քո մեջ,
ինչպես որ, Հիսո՛ւս,
Դու մեկ ես մեր Հոր հետ:
Պահի՛ր մեզ Քո անվամբ,
որը Դու ես մեզ տվել: Ամեն:

Տե՛ս, թե որքան ուրախ կլինեմ Ես, երբ դուք հավաքվեք Մեկ Խորանի շուրջ և այս նույն Խորանի շուրջ Ինձ փառավորեք՝ ընդունելով ձեր սխալները, զղջալով ձեր ըմբոստացման համար, հիշելով Իմ Սերը ձեր հանդեպ և սիրելով միմյանց, ինչպես Ես եմ ձեզ սիրում:

Զավակներս, կատարյալ եղեք:

Ապրիլի 20, 1988

Տե՛ր, քույրս խնդրել է, որ, եթե հնարավոր է, նրա խաչն էլ օրհնես, ինչպես իմն ես օրհնել՝ համբուրելով այն:

Իմ խաղաղությունը քեզ: Ես սիրում եմ քեզ: Ես ուզում եմ, որ Ինձ ամբողջովին զատորոշես: Զատորոշի՛ր Ինձ: Ես նստած եմ քո կողքին: Այժմ, երբ դու գիտես Իմ տեղը, Յանուլայի տված մեդալիոնը և խաչերը մոտեցրու շուրթերիս. Ես կհամբուրեմ՝ օրհնելով դրանք: Մոտ եկ, Ես քեզ եմ սպասում ... Այո՛[1], Վասուլա, մի՛ տարակուսիր, դրի՛ր: Ես քեզ ասում եմ. ովքեր որ ուզում են, որ օրհնեմ իրենց խաչերը և մեդալիոնները, Ես՝ Տերս, կանեմ այդ պատրաստակամորեն: Ե՛կ, մի՛ երկմտիր:

Օ՜ Տեր, օգնիր Ինձ՝ հասկանալու այս ամենը:

Պարզապես հավատա, միամիտ եղիր, եղիր մանկան նման: Ես սիրում եմ քեզ:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, Ես Ինքս կարող եմ ծաղկեցնել Իմ Այգին: Այո՛, Ես Ինքս կարող եմ վերականգնել Իմ Եկեղեցին, Ես Ինքս ինքնաբավ եմ. Ես Ամենազոր եմ: Քեզանից Ես միայն սեր եմ խնդրում: Սիրիր Ինձ և թույլ տուր քեզ հետ կիսելու այս ամենը:

Օ՜ Տեր, ես անսահման սիրում եմ Քեզ:

Ծաղիկս, մի՞թե դու չես հասկացել: Մի՞թե դու չես նկատել: Ե՛կ, Ես քեզ կպատմեմ: Ժամանակների սկզբից ի վեր Ես հայտնվել եմ բազմաթիվ վայրերում, տարբեր մարդկանց, տարբեր դարերում: Այդ ինչպե՞ս է, որ քո դարաշրջանն այլևս չի կարողանում նկատել Իմ Նշանները: Ես երբևէ ասե՞լ եմ, որ Ես կդադարեմ Ինքս Ինձ և Իմ նշանները հայտնելուց:

Քո դարաշրջանը մեռած է, և նրանք իրենց սեփական ձեռքերով կործանել են իրենց... Ես եմ Տիրակալների Տիրակալը, Կենդանի Աստվածը: Ինչո՞ւ եք ուզում, որ Ես լուռ մնամ: Ինչո՞ւ եք ուզում, որ Ես մեռած լինեմ: Վասո՛ւլա, Ես քեզ ցույց եմ տվել և հիմա էլ ցույց եմ տալիս, թե ինչի է վերածվել Իմ արարչությունը: Հասկացի՛ր, որ Ինձ հետ կապված լինելով Ես քեզ քարշ եմ տալիս Ինձ հետ: Ես քաշում եմ քեզ Իմ ետևից, կտրելով այս ամայությունը, մատնացույց անելով այն ամենը, ինչ կար անցյալում, ինչ որ եղել է դրանից հետո, և ինչ որ դեռ մնում է: Ես նոսրացնում եմ այդ մացառները և կտրում այդ փշերը, որպեսզի դրանք չվնասեն քեզ, որովհետև, եթե դրանք քեզ դիպչեն, զավակս, կծակեն քեզ՝ պատառոտելով ու քեզ ծվեների վերածելով: Ես քեզ հետ եմ՝ բացելով ու մաքրելով քո ուղին: Ես քեզ անսահման սիրում եմ և չեմ ցանկանում, որ մեր ճանապարհին այդ փշերը ճանկռեն ու ծակեն՝ մահացու կերպով վիրավորելով քեզ: Ես գիտեմ, որ դրանց մոտենալն իսկ բավական է, որ քեզ մեծ տառապանք պատճառեն: Ես տեսնում եմ այս ամենը, Իմ Վասուլա, և Իմ Սիրտը խորապես խոցված է, սակայն, սիրելիս, բոլոր այս զոհաբերություններն իզուր չեն:

[1] Ես հերթով մոտեցրի առարկաները. Հիսուս համբուրեց և օրհնեց դրանցից յուրաքանչյուրը:

Ա՜հ, որքան եմ ես քեզ սիրում, հոգի... Ով որ փնտրի Ինձ, նա Կգտնի: Թակե՛ք, և ես կբացեմ դուռը: Ե՛կ, ես քեզ պիտի հիշեցնեմ Իմ Ներկայության մասին:

Ապրիլի 25, 1988

(Ինչպես միշտ, ես կարդացել էի երեք աղոթքները և երկու անգամ ասվեց «Փառք Աստծո»):

Աստված իմ, այդ իսկապե՞ս Դու ես:

Ես եմ:

Աղջի՛կս, հակառակ այն բանի, որ դու անընդունակ ես ընկալելու քեզ վրա տեղացող Իմ շնորհները, ես քեզ անսահման սիրում եմ: Ապրի՛ր Ինձ համար և Ինձ միշտ առաջինը դասիր: Իմ Տունը փլատակների է վերածվել, Վասո՛ւլա, ես ուզում եմ վերակառուցել այն: Ես քեզ ցույց կտամ, թե ինչպես: Սերը տենչում է սիրո: Խոսի՛ր Ինձ հետ ինչպես հիմա: Զգա՛ Ինձ, ես քո մոտ եմ:

Ինձ մոտ եկ անկաշկանդ. բա՛ց արա քո սիրտն Իմ առաջ, վարվի՛ր Ինձ հետ որպես ընկերոջ, ինչպես քո Հոր հետ: Այնուամենայնիվ, երբեք մի՛ մոռացիր, որ Ես Սուրբ եմ և քո Աստվածն եմ: Ասա՛ նրանց, որ սրտից բխող անպաճույճ խոսքերն ավելի քաղցր են, քան նրանց շուրթերից ելնող կեղծ խոսքերը: Մի՛ վերաբերվիր Ինձ հետ որպես օտարի:

Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ:

Ապրիլի 26, 1988

Երեկ, երբ քրոջս հետ զրուցում էի այն մասին, թե Աստված ինչ է ուզում, որ անեմ, խոսակցության ամենաթեժ պահին հանկարծ հետևյալը ասացի. «O babas mou ipe na...», որը նշանակում է. «Աբբան ասել է ինձ, որ...» (Հայրիկն ասել է ինձ, որ...): Հանկարծ նկատեցի, որ ես Աստծուն շատ բնական ձևով Հայրիկ կոչեցի հունարենով:

Ես իսկույն կանգ առա, որովհետև տեսա, որ քույրս ապշած ինձ է նայում: Ես ձեռքերով փակեցի բերանս ու բացատրեցի նրան, որ Աստծուն Հայրիկ եմ կոչել՝ անկախ ինձանից: Որովհետև, շատ հաճախ, ես ինձ այնքան մոտ եմ զգում Նրան, որ բազմիցս ասել եմ, ես երկու ընտանիք ունեմ. մեկը երկրի վրա, իսկ վերևում, ապրում է իմ իսկական Սուրբ Ընտանիքը:

Փոքրիկ՛ս, մնա Իմ Թիկնոցի տակ. Ինձ մոտ դու ապահով ես սատանայի հարձակումներից: Այո՛, նա կրկնապատկում է իր ջանքերը ամեն տեսակ որոգայթներ լարելով՝ որսաշան նման հալածելով քեզ: Զավակս, բանսարկությունները անելով, նա մոլեգնում է այն ամենից, ինչ որ տեղի է ունենալու: Ես սա ասում եմ քեզ, զավակս, որպեսզի կրկնապատկես քո աղոթքները:

Տե՛ր, ուզում ես, որ ծո՞մ պահեմ, արդյո՞ք դա կօգնի:

Ծոմ կպահե՞ս:

Եթե Դու ցանկանում ես:

Այո՛: Ե՛կ, ես քեզ կօգնեմ այդ բանում:

Վասո՛ւլա, երբ դու Ինձ կոչեցիր baba[1], ես այդ բառն ընդունեցի իբրև մի գոհար: Դու չգիտես, թե որքան հրապուրիչ է Ինձ համար պարզությունը: Այո՛, ես քեզ բոկոտն անվանեցի, որովհետև դու սրտով այդպիսին ես:

Լսի՛ր Ինձ, ես ստեղծեցի քեզ Իմ Լույսի մեջ: Ես ընդունեցի քեզ Իմ Երկնային Սրահում, ես ողջունեցի քեզ կիսելու Իմ Խաղաղությունը, Իմ Խաչն ու Իմ Սերը: Շուտով ես քեզ մի երկիր կառաջնորդեմ, ուր դու կընդարձակես Իմ Թագավորությունը: Ես քեզ խորհուրդ կտամ և կուսուցանեմ, երբ ժամանակը գա:

Ապրիլի 27, 1988

(Այս օրերին սատանան շարունակ հարձակումներ է գործում՝ շշնջալով ականջիս, որ այս հայտնությունից ոչինչ չի ստացվի, ստիպելով ինձ մոռանալ բոլոր այն լավ բաները, որոնք արդեն կատարվել են և որոնք դեռևս կատարվում են: Նա այնպես արեց, որ կորցնեմ իրականության իմ զգացողությունը: Նա խլեց իմ վստահությունը և մի կողմ շպրտեց: Տիրոջ նկատմամբ տածածս սերը քողարկեց, որպեսզի Նրա հանդեպ ունեցած իմ այդ վեհ սերը արատավոր թվա: Նա ինձ պատկերներ տվեց աշխարհի մասին, թե որքան իրական է այն, և որքան կեղծ ու անիրական է հոգևոր աշխարհը: Նա ինձ տանջեց և տակնուվրա անելով մտքերս, շփոթության մատնեց ինձ: Տերն ինձ նախազգուշացրել էր: Որքան ավելանում է Նրա Հայտնությունը, այնքան սաստկանում են ամեն ինչ խոչընդոտելու սատանայի ջանքերը: Ես գիտեմ, դա սատանան է, քանի որ նա իմ հոգին թողնում է անմխիթար ու հուսախաբ վիճակում):

Թող գովաբանվի Տերը: Թող փառավորվի Աստված:

(Երբ ես աղոթեցի Նրան Սբ. Միքայելի և Սբ. Մարիամի աղոթքները, Սբ. Միքայելը գովաբանեց Աստծուն):

Ծաղի՛կս, Հանդեպ Ինձ հավատ ունեցիր: Աղոթի՛ր, Վասուլա: Աղոթի՛ր, Իմ Վասուլա, որ աշխարհը բաց անի իր աչքերը ու լսի իր ականջներով: Արդարությունը պիտի հաղթի: Այլասերված արարչություն: Սոդոմի մեղքերն անգամ ձեր մեղքերի համեմատ ավելի քիչ այլասերված են թվում: Նրա մեղքերը մեծ են, բայց ձեր մեղքերը թափանցել են մինչև հավիտենականություն: Գարաբանդալը մոռացության չպետք է մատնվի: Գարաբանդալի շնորհները վերստին կյանքի պիտի կոչվեն:

[1] Abba – հունարենով նշանակում է հայրիկ:

Հիսո՛ւս, Օ՜ Հիսուս, ես այնքան երջանիկ եմ, որ կրկին համընթաց եմ շարժվում Քեզ հետ:

Լսի՛ր, ես՝ Հիսուս, երբեք քեզ չեմ լքել: Ընդունի՛ր այդ փորձությունները, ամեն ինչ գալիս է Ինձնից:

Վասո՛ւլա, սատանան որսաշան պես հալածում է քեզ, ուստի մի՛ քնիր: Նինջը քեզ փորձության է տանում: Սատանայի համար դու ավելի հեշտ որս ես դառնում, եթե անտեղյակ ես. ուրեմն զգոն եղիր, աչալուրջ եղիր: Երբ դու իրազեկ ես, զգում ես Իմ Ներկայությունը: Հիշի՛ր Իմ Ներկայությունը:

(Այն օրերին, երբ ես սատանայի կողմից հարձակման էի ենթարկվում, Հիսուսն ինձ ցնցում էր, որ սթափվեմ):

Ապրիլի 30, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ: Հայտնությունները Ես եմ: Վասո՛ւլա, ում վրա Ես դրոշմում եմ Իմ խոսքերը, համընթաց շարժվիր Ինձ հետ, որպեսզի Ինձ հասկանաս:

Ես խելացնորության աստիճան սիրում եմ ձեզ, արարչություն, սակայն դուք ետ եք քաշվել Ինձանից: Դավաճանություն է թափանցել Իմ Սրբավայրը՝ պատճառ դառնալով ցրման:

Վասուլա, փորձի՛ր, սիրելիս, Ինձ ամբողջովին զատորոշել:

(Ավելի ուշ)

Հիսո՞ւս:

Ես եմ:

(Հիսուսի Ներկայությունը շատ ակնհայտ է: Կարծես, ես դուրս եմ եկել մշուշից և Նրան տեսնում ու զգում եմ ավելի լավ, քան վերջին մի քանի օրերին, երբ սատանան հետապնդում էր ինձ: Հիմա այնպես է թվում, կարծես Հիսուս մարդացած է կրկին երկրի վրա, կամ թե՝ ես հետ եմ գնացել Նրա ապրած ժամանակաշրջանը: Ամեն ինչ կենդանի է թվում, և դա հրաշալի է):

Վասո՛ւլա, այն, ինչ ես ուզում եմ՝ Սեր է: Փառք Աստծո, որ այս բաները Նա սովորեցրել է լոկ երեխաներին և թաքցրել գիտունից ու իմաստունից:

(Այդ ասելով, Հիսուսն Իր Գեղեցիկ Գլուխը վեր բարձրացրեց: Հիսուս շատ գոհ էր, որ ես չեմ փորձում բանական դարձնել այս ամենը: Նա ուզում է, որ մենք հավատանք կուրորեն, մաքուր սրտով և միամտորեն):

Ես եմ Ալֆան և Օմեգան, Սկիզբը և Վերջը:

(Նրա Ներկայությունը ես շատ ուժեղ էի զգում: Աստծո «թրթիռները» իմ ամբողջ մարմինը և հոգին «թրթռացնում» էին. այդ զգացումը շատ դժվար է բառերով նկարագրել: Միևնույն ժամանակ Նրա Խաղաղությունն է համակում ինձ, և այս բոլորը միասին ինձ սքանչելի ապրումներ են պարգևում: Դա նման է Սիրո ծովի մեջ սուզվելուն: Ես ինձ թափանցիկ էի զգում: Ես ինձ երջանիկ էի զգում, այնքան երջանիկ, որ երջանկության արցունքները ցած էին հոսում իմ այտերից):

Երբեք մի՛ կասկածիր Իմ Ներկայությանը: Վասուլա, այժմ Ինձ մոտ մնա, աղոթի՛ր, Ես քեզ կլսեմ:

(Հիսուս նկատի ուներ, որ ես հենց այդ պահին աղոթեի, այն վիճակում, որի մեջ Նա ինձ դրել էր):

Ես լսեցի ամեն մի բառը:

(Ես աղոթում էի «Հայր Մերը», բայց <u>շատ դանդաղ</u>: Այն իմ սրտից էր բխում, մինչ արցունքներս ոչ մի պահ չէին դադարում, որովհետև ես գտնվում էի մի երջանիկ զգացողության մեջ:)

Ե՛կ, Ես և դու, դու և Ես, միասին՝ միշտ և հավիտյան: Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ, հոգի:
Մենք, մեզ:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, Ես երջանիկ եմ, որ Դու իմ կողքին ես: Ա՜հ, Վասուլա, Ես որքան եմ մտահոգվել քեզ համար: Սատանան ատում է քեզ ու մտադիր է ի դերև հանել Իմ Ծրագրերը: Իր մոլեգնությանն մեջ նա տանջում է քեզ, խաբում է քեզ, մեղադրում է քեզ, որպեսզի հուսահատության հասցնի: Աղջի՛կս, Ես քեզ նախազգուշացրել էի այս հարձակումների մասին: Օրհնյալս, սատանային տեղի մի՛ տուր, Ինձ կառչիր. Ես օգնում եմ քեզ հաղթահարելու բոլոր փորձությունները: Վասուլա, հիշի՛ր, թե որքան հեշտորեն է սատանան քեզ մոտենում, երբ դու նիրհում ես: Ուրեմն զգոն եղիր, զավակս, միշտ արթուն և աչալուրջ մնա:

Տեր, աղոթելո՞վ:

Այո՛, աղոթելով: Աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր:

(Հիսուսն ինձ բացատրում է, որ աղոթքը հեռու է պահում սատանային. աղոթքներ, որոնք <u>հասնում են</u> Իրեն):

Մայիսի 1, 1988

Վասուլա, լսի՛ր Իմ Ձայնը և համընթաց քայլիր Ինձ հետ: Խորհի՛ր Իմ Բացարձակության մասին[1]: Քո միտքը դեպի Ինձ դարձրու: Քո տունն Իմ Սուրբ Սրտում է, Իմ Սուրբ Հոգին արթնացրեց քեզ: Աղջի՛կս, այն ամենը, ինչ դու նշմարում ես, ճիշտ է:

(Երբ Հիսուսն ասում էր. «Իմ Սուրբ Հոգին արթնացրեց քեզ», ես նախ տեսա մի աղավնի, որը ճախրում էր դիակների վրայով, որոնց մեջ ես էլ էի պառկած: Հետո Երկնքից Լույսի մի ճառագայթ ընկավ ինձ վրա և ինձ վեր բարձրացրեց):

Վասո՛ւլա, դու կամենո՞ւմ ես շարունակել Իմ Գործերը:

Օ՜, այո՛, Տեր, եթե Դու դեռ այդպես ես ցանկանում: Հիշի՛ր իմ անկարողությունը Տե՛ր և օգնիր ինձ: Շնորհակալ եմ Քեզ, որ այդքան համբերատար ես իմ նկատմաբ: Շնորհակալ եմ, որ ինձ վրա ես լցրել Քո շնորհները, որոնց ես արժանի չեմ: Ես մահու չափ սիրում եմ Քեզ, Տեր:

Ես քեզ սիրում և օրհնում եմ, աղջիկ՛ս: Իմ Գործերը լույս կսփռեն Իմ ծածուկ Գործերից շատերի վրա, որոնք մարդկանց կողմից չարաշահումների են ենթարկվել: Իմ կողմից բժշկված ու հարուցված, մնա աննշան, որպեսզի դու կարողանաս ավելի խորը թափանցել Իմ Սրտի մեջ:
Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

Մայիսի 2, 1988

(Տերը կրկին ինձ խնդրեց «Հայր մերը» աղոթել Իր Ներկայությամբ՝ այդ կերպ Իր հետ միանալով: Ես կրկին շատ դանդաղ աղոթեցի: Թվում էր, թե Նա գլխով էր անում՝ ցույց տալով ինձ, որ լսում է, քանզի, երբ այն սրտից է բխում, ես զգում եմ, թե Նա դեմքով դեպի ինձ էր շրջված: Մենք դեմ առ դեմ էինք կանգնած: Հիսուսին շատ էր դուր գալիս այս ձևով աղոթելը):

Այո՛, Վասուլա, գոհացրու Ինձ՝ այս ձևով աղոթելով: Աղոթի՛ր սիրով:

(Ուզում եմ ավելացնել, որ ես ծնկաչոք էի աղոթում):

Նշանածս, ես պահպանում եմ քեզ չարից: Իմ Մոր և Հրեշտակների հետ միասին՝ Մենք բոլորս քո կողքին ենք:

Շնորհակալ եմ Քեզ, Իմ Տեր, որ պաշտպանում ես մեզ չարից:

[1] Ես պետք է խոկամ Նրա Ամենակարողության և Հավիտենականության մասին:

Մայիսի 4, 1988

(Ես աղոթեցի մի հատված սուրբ Վարդարանից: Միգուցե ես ամեն ինչ չէ, որ ճիշտ եմ անում, սակայն փորձում եմ: Հետո ես աղոթում եմ այն երեք աղոթքները, որոնք Տերն ուզում է, որ մենք աղոթենք: Ես դրանք գրելու եմ, որպեսզի յուրաքանչյուր ոք գիտենա):

Հիսո՞ւս:

Ես եմ: Իմ խաղաղությունը քեզ, այդ ես եմ՝ Տերը, մի՛ վախեցիր[1]:

Օ՜ Տեր, ուրիշ էլ ի՞նչ կարող եմ անել:

(Ես ուզում էի գոհացնել Աստծուն):

Պաշտի՛ր Ինձ, Սիրի՛ր Ինձ: Իմ Սուրբ Խաչը Մեջյուգորիայում կենդանի է և բոցերի մեջ է: Ես այդ տարածքն օրհնել եմ՝ տալով Իմ շնորհները Մորս միջոցով, Որն Իմ Աստվածային Գործերի Ուխտի Տապանակն է[2]:

(Այս վերջին օրերին Աստված ինձ մի լեռան վրա հսկայական մի խաչ էր ցույց տալիս: Այդ խաչը բոցերի մեջ էր, բայց կարծես այն կրակից չէր բռնկվել, այլ թվում էր կրակը դուրս էր գալիս խաչի միջից՝ ձևավորվելով որպես խաչ: Դա պայծառ, անվերջ և անսպառ մի կրակ էր):

Լսի՛ր Ինձ: Շատ կարճ ժամանակամիջոցում ես անհավատներին ծնկի կբերեմ այս նույն լեռան վրա: Իմ Սուրբ Խաչը կենդանի է՝ կենդանի Բոցով[3]:

(Ես հարցրեցի Տիրոջը, թե կրակը ինչ է ներկայացնում, Նա ասաց՝ ԿՅԱՆՔ:)

Վասո՛ւլա, ժամանակը մոտ է, նույնիսկ շատ մոտ[4]: Օ՜ ԵԿԵՔ ԻՆՁ ՄՈՏ, ՍԻՐԵԼԻՆԵՐՍ: Եկե՛ք Ինձ մոտ: Ե՛ս եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը: Եկե՛ք Ինձ մոտ հիմա՛, երբ դեռ ժամանակ կա, երբ խոտը դեռ կանաչ է, և ծաղիկները դեռ ծաղկում են ծառերի վրա: Օ՜ եկեք[5]: Ես ձեզ չափազանց շա՜տ եմ սիրում:

Ես ձեզ միշտ սիրել եմ՝ չնայած ձեր չարակամությանն ու չար գործերին: Արարչությո՛ւն, ինչո՞ւ ես դու քեզ այդպես հոժարակամ սատանայի ոտքերի տակ գցում: Արարչություն, վերադարձի՛ր Ինձ մոտ,

---

[1] Հաճախ ես վախենում եմ, որ Հիսուսի փոխարեն սատանան կհայտնվի ինձ՝ ձևացնելով, թե ինքն է Հիսուս: Ես շատ շուտ եմ նկատում, երբ նա անում է դա: Դրանից հետո նա խույս է տալիս:

[2] Մեջյուգորիան Հարավսլավիայի հեռավոր գյուղերից է, ուր 1981 թվից սկսած մինչև այսօր ամեն օր Սուրբ Մարիամը հայտնվում է մի քանի պատանիների:

[3] Ես մտածում եմ, թե արդյոք, դա մի օր խոստացված նշաններից մեկը չի՞ լինելու Մեջյուգորիայում:

[4] Հիսուս հանկարծակի բացականչեց այդ խոսքերը Իր Սրտի խորքից:

[5] Հիսուս՝ մեր Փրկիչը, աղաչում էր:

քանի դեռ Գարնան զեփյուռն է փչում, և քանի դեռ ժամանակ կա քո դարձի համար:

Ա՛հ, Վասուլա, ժամանակը գրեթե սպառվել է[1]: Ինչ որ կատարվելու է, այնքա՜ն մոտ է ձեզ: Այս Խոսքը, որը Կենդանի է, մարդիկ ինչպե՞ս կարող էին մտածել, թե կարող են թաղել Իմ Խոսքը[2]: ՀԱՎԱՏՆ աղավաղվել է, նմանվելով մի տգեղ ու խեղված չար գազանի[3]: Ահա թե ինչպիսին են դարձրել Այն: Այն ամենն, ինչ Աստվածային է ու Կենդանի, այսօր խեղաթյուրվել է այս ձևով, որպեսզի ստանա մի այնպիսի տեսք, որ ստիպի ձեզ վախենալ դրանից և փախչել: Ինչո՞ւ եք դուք ուզում, որ ձեր Աստվածը լուռ ու անկենդան լինի:

Ես Կենդանի եմ և որպես այդպիսին, Ես պիտի գործեմ: Հոգևոր իշխանությունները մշտապես պիտի մերժեն քեզ: Ես մերժվեցի փարիսեցիների կողմից, քանի որ նրանք հավատում էին, որ ամբողջ ուժն ու իշխանությունն իրենց ձեռքում էր գտնվում: Նրանք մոռանում էին, որ ոչինչ չէին կարող անել առանց ի վերուստ տրված ուժի և իշխանության: Եվ այժմ Կայենի այս որդիները շարունակում են մոռանալ, որ ոչինչ չեն կարող անել, մինչև որ Ես նրանց ուժ և իշխանություն չտամ: Ես Եմ Իշխանությունը, եղել եմ ու կլինեմ Հավիտյան: Ներկայումս, նրանք, ովքեր մերժում են Իմ Նախախնամության Գործերը՝[4] կուրացած են իրենց սնափառությամբ, որը նրանց խավարով է պատել: Նրանք, այն նույն կույր առաջնորդներն են, որոնք կրկնում են Սխալը, արտաքինից լինելով մաքուր ու փայլուն, սակայն ներքինից ամբողջովին ապականված և լեցուն մարդկային փտած ոսկորներով:

Ես ցանկանում եմ, որ դուք Իմ նվիրած Գոտին կապեք ձեր մեջքին, որը ներկայացնում է Մանկան Հավատ՝ հրճվանք պատճառելով Ինձ: Այո՛, թող այդ Գոտին լինի որպես Խորհրդանիշ: Ես ուզում եմ, որ դուք ոտաբոբիկ լինեք: Եղեք վանականների պես: Ես ուզում եմ, որ դուք Հին ժամանակների Իմ Զգեստները հագնեք:

Որո՞նք, Տեր:

Իմ Զգեստները Պարզ ու Հասարակ են[5]:

Սիրելի՛ Տեր, նրանք կմտածեն, թե մենք մի աղանդ ենք:

Ա՛հ, Վասուլա, որքա՜ն քիչ ես դու հասկանում: Աղջի՛կս, Ես կլուսավորեմ քեզ ու Իմ որդիներին և կասեմ, թե ինչ նկատի ունեմ՝ «Հին Ժամանակների Իմ Զգեստներից հագնել» ասելով: Ես քեզ սիրում եմ այն

[1] Մինչ Հիսուսն ասում էր այս խոսքերը, ես մի տեսիլք տեսա: Մի տոթակեզ, թունավոր ու ուժեղ մահացու քամի էր փչում մեզ վրա և բնության վրա՝ իր ճանապարհին միայն մահ սփռելով: Այն ինչի որ դիպչում էր, ոչնչացնում էր:
[2] Հիսուս զարմացած էր թվում այս խոսքերն արտասանելիս:
[3] Ես տեսա այլանդակ մի փոքրիկ սև կենդանի:
[4] Այս Պատգամը և մյուսները:
[5] Հիսուսն այլաբանորեն էր խոսում, բայց ես դա բառացի հասկացա:

բանի համար, որ այսօր դու կարողացար զատորոշել Ինձ: Երբեք մի՛ կասկածիր Իմ Սիրուն. հիշի՛ր Իմ Ներկայությունը:

Այո՛, Տեր, շնորհակալություն Քեզ, Տեր Հիսուս:

(Ստորև բերված են այն աղոթքները, որոնք Հիսուս մեզ պատվիրել է ամեն օր աղոթել).

Սուրբ Սրտի վստահության իննօրյա աղոթք

«Ո՛վ Տեր, Հիսո՛ւս Քրիստոս,
Քո Ամենասուրբ
Սրտին եմ հանձնում
այս խնդրանքը...
(նշեք ձեր խնդրանքը...)
Նախ ինձ նայիր, ապա արա այն,
ինչ Քո Սիրտն է կամենում...
Թող Քո Սուրբ Սիրտը որոշի...
Նրան եմ ես ապավինում...
Նրան եմ վստահում...
Նրա Ողորմությանն եմ
ինձ հանձնում:

Տե՛ր Հիսուս,
Դու ինձ հուսախաբ չես անի,
Սուրբ Սիրտ Հիսուսի,
ես Քեզ եմ վստահում,
Սուրբ Սիրտ Հիսուսի,
ես հավատում եմ
իմ հանդեպ տածած Քո սիրուն:
Սուրբ Սիրտ Հիսուսի,
թող Քո Արքայությունը գա:

Ո՛վ Սուրբ Սիրտ Հիսուսի,
ի թիվ բազում խնդրանքներիս,
հատկապես այս մեկն եմ հայցում:
Վերցրու այն և դի՛ր
Քո Սուրբ Սրտում:
Երբ երկնավոր Հայրը տեսնի այն՝
Քո Թանկագին Արյամբ պատված,
ամենևին Նա չի մերժի,
քանզի աղոթքն այլևս
իմը չի լինի, այլ Քոնը, Հիսուս:
Ո՛վ Սուրբ Սիրտ Հիսուսի,
ես միշտ Քեզ եմ ապավինում:
Մի՛ թող ինձ երբեք,
որ ես մոլորվեմ: Ամեն»:

Սա երկրորդ աղոթքն է, որ Հիսուս պատվիրում է մեզ ամեն օր աղոթել:

Աղոթք Սուրբ Միքայել Հրեշտակապետին

«Սուրբ Միքայել Հրեշտակապե՛տ,
կռվի օրը պաշտպանիր մեզ,
եղիր պաշտպան ընդեմ չարի
և դևերի ծուղակների:
Թող Աստված սաստի նրանց,
մենք խոնարհաբար
աղոթում ենք, և դո՛ւ
ո՛վ իշխան երկնային զորաց,
Աստծո զորությամբ
դժոխք նետիր սատանային
և մյուս բոլոր չար ոգիներին,
որ սողոսկում են աշխարհ
հոգիներ կործանելու համար»:

Եվ սա երրորդ աղոթքն է, որ Հիսուս պատվիրում է մեզ նույնպես աղոթել ամեն օր.

Սուրբ Բեռնարդի աղոթքը՝

«Հիշի՛ր ինձ,
ով ամենագութ Կույս Մարիամ.
դեռ չի եղել դեպք,
որ պաշտպանությանը Քո դիմեն,
օգնությունն Քեզնից հայցեն,
կամ բարեխոսությունը Քո
խնդրեն և մնան անպատասխան:
Այս վստահությամբ համակված՝
դեպի Քեզ եմ գալիս ես,
ո՛վ կույսերի Կույս, իմ Մայր,
մեղավոր և վշտահար
դեպի Քեզ եմ գալիս
ու կանգնում Քո առջև:
Ո՛վ Մայրդ Խոսքի Մարմնացյալ,
անտես մի արա թախանձանքն իմ,
այլ ողորմությամբդ լսիր
և պատասխան տուր ինձ:
Ամեն»):

Մայիսի 7, 1988

(Սուրբ Մարիամը)

Վասո՛ւլա: Ես միշտ պիտի սփոփեմ քեզ, երբ գայլերի այրող խոսքերը խոցեն քո հոգին: Հագեցրո՛ւ Իմ Որդու ծարավը, հագեցրո՛ւ Սիրո նկատմամբ Նրա անհագ ծարավը: Ե՛կ աղոթենք Հորը:

«Ողորմած Հայր,
Քո ոտքերն ընկած՝
Քեզ եմ ես երկրպագում,
Հուլյոս Քեզ վրա եմ դնում
Եվ Քեզ եմ Հավատում:
Ես սիրում եմ Քեզ
անսահմանորեն: Ամեն»:

(Ես կրկնեցի):

Շնորհակալ եմ, Սուրբ Մարիամ, թույլ տուր, որ Քո վրա հենվեմ:

Սիրելիս, Իմ Որդին և Ես երբեք չենք լքի քեզ:
Լսի՛ր Իմ Որդուն:

Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ, հոգի:

Ես Քեզ սիրում եմ, Տե՛ր: Տե՛ր, մենք ի՞նչ պետք է անենք:

(Ես նկատի ունեի, թե այժմ որոնք են լինելու հետագա հրահանգները):

Ամեն ինչ Իմ միջոցով պիտի կատարվի: Ես եմ Միակ Սուրբ Մաքուր Եկեղեցին: Աղոթի՛ր այս Միասնության համար, աղոթի՛ր այն հոգիների համար, որոնք մերժում են ձեզ:

Ես սիրում եմ ձեզ և ձեզ հետ եմ ամեն ժամանակ[1]: Եկե՛ք Ինձ մոտ, երբ ձեր սիրտը կվիրավորվի գիշատիչ գայլերի կողմից: Լսե՛ք Ինձ, ավետարանչական պատվելին վայրագորեն ու անվերջ խարազանում է Ինձ Իմ թիկունքից: Ես ուզում եմ հարցնել(...), թե արդյոք նա կամենո՞ւմ է հատուցել պատվելիի սխալների համար՝ զոհողության մի գործ կատարելով: Աղոթի՛ր այս մոլորված ոչխարի համար, աղոթի՛ր նրա համար, հատուցի՛ր Իմ սիրելի, ամեն ուրբաթ հաց ու ջրով ծոմ պահելով: Դու արդյոք ցանկանո՞ւմ ես մեղմացնել քո Փրկչի տառապանքները: Ես սիրում եմ քեզ, սիրելի հոգի: Լսի՛ր Իմ Վասուլա.

Իմ Թագավորությունը ձեր մեջ է:

«Իմ Սրտի Պետրոս», «Իմ Գառների Պետրոս»: Սա է այն Սուրբ Անունը, որը Ես տվել եմ նրան՝ «Իմ Գառների Պետրոս»: Սակայն Կայենները նրան գահընկեց արեցին՝ նրանից գողանալով Պսակը, որով Ես պատվել էի նրան: Ես՝ Տերս, սիրում եմ նրան, քանզի նա Իմ Հոգու շատ սիրելին է: Այդ գողացված Պսակը Ես կվերադարձնեմ նրան:

[1] Հիսուսի ձայնը մեղմ էր ու մտերմիկ:

Ես կտապալեմ կեղծ թագավորությունները, որոնք տկարացրին Իմ Մարմինը՝ հեղհեղուկ թագավորություններ, թագավորություններ՝ առանց արմատների: Ես գլխիվայր կշրջեմ այդ կեղծ թագավորությունները և կբարձրացնեմ Իմ Լույսի մեջ, ինչպես մի Ջահ՝ Իմ Ճշմարիտ Թագավորությունը, իսկ Պետրոսին ամբողջովին ետ կվերադարձնեմ Իր Աթոռը՝ դահ բարձրացնելով նրան, ու նրա ձեռքը կհանձնեմ մի երկաթյա գավազան, որով Ես նրան զորություն կտամ իշխելու՝ որպես մի հովիվ: Ես կհավաքեմ Իմ ցրված դառներին[1] և դա անելուց հետո Ես կշրջապատեմ այդ Հոտն Իմ Բազուկներով և ո՛չ ոք, ո՛չ ոք, և անգամ իսկ չարը, չպիտի կարողանա նույնիսկ մի դառ առևանգել այս Հոտից: Իմ Թիկնոցը Ես կփռեմ նրանց վրա և Իմ ջերմությամբ կպարուրեմ՝ պահպանելով նրանց: Պետրոսին Ես կվերադարձնեմ այն, ինչ տվել էի նրան, երբ մարմնով երկրի վրա էի: Ոչ մեկը չի կարող խախտել Իմ Կամքի սահմանները, որովհետև այդ բոլորը, ինչ որ կա հիմա, ձեր գործն է և ոչ թե՝ Իմ: Ես զարշում եմ անիշխանությունից և Իմ դեմ ուղղված ըմբոստությունից:

Վասո՛ւլա, Իմ Հարս: Եղբայրնե՛ր: Ես՝ Տերս, օրհնում եմ ձեր ձեռնարկած ամեն մի քայլը: Ես՝ Տերս, Որին դուք փնտրում եք, հանկարծակի կհայտնվեմ Իմ Տաճարում: Ես բախում եմ ձեր դուռը. թույլ կտա՞ք Ինձ ներս մտնել: Ինձ հետ Ես բերում եմ Փրկության Իմ Ծրագիրը. Իմ Գալարն արդեն գրված է և պատրաստ է գործադրության: Պետք է նշվի, որ Ես փոխանցել եմ Խաղաղության ու Սիրո Փրկության Իմ Ծրագիրը՝ պատվելու համար Պետրոսի Աթոռն այնպես, ինչպես որ դա պետք է մեծարվեր: Ես գալիս եմ վերադարձնելու նրան հովվի իր Պսակը: Պետրո՛ս, մոտեցիր... Պետրո՛ս, մոտեցիր... Մոտեցի՛ր քո Տիրոջը:

Շնորհակալություն, Տեր:

Մի՛ հոգնիր գրելուց: Մե՞նք, մե՞զ:

Այո, Տե՛ր, մենք, մեզ:

Մայիսի 10, 1988

Տե՞ր:

Ես եմ: Ամբողջովին Ինձ վրա հենվիր: Ես եմ քո Խաղաղությունը:

Ե՛կ, գայթակղությանը տեղի մի՛ տուր, սովորի՛ր Ինձանից՝ հիշելով Իմ ուղիները: Աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր: Թող քո շուրթերից դուրս ելած ամեն մի բառը մի աղոթք լինի, որ հասնի երկինք՝ վեր բարձրանալով խնկաբույրի պես: Հարատև կապի մեջ մնա Ինձ հետ, բարձրացրո՛ւ քո միտքը դեպի Ինձ, մտածիր միայն Իմ մասին: Այն ամենն, ինչ դու ունես և ինչը որ լավ է, Ինձանից է գալիս: Ես վերակենդանացրի քեզ: Գրի՛ր այդ:

[1] Ես տեսա հրեշտակների, որոնք փորձում էին դառներին մի փարախի մեջ հավաքել:

(Նստելով իմ կողքին՝ Հիսուս Իր ձեռքը դրեց իմ ուսին):

Ես ձևավորել եմ քեզ, ես կօղակեմ քեզ Իմ Թևերի մեջ: Ծաղի՛կ, խոսիր Ինձ հետ. դու պակասեցրել ես քո խոսակցությունները Ինձ հետ: Ես ամեն ինչ տալիս եմ քեզ: Ես կիսում եմ Իմ Գործերը քեզ հետ, ուստի նույն կերպ վարվիր Ինձ հետ՝ քո Սուրբ Ընկերակցի՝ քո Ամուսնու հետ: Ես ուզում եմ քեզ հետ կիսել քո առօրյա գործերը:

Իմ Վասուլա, երբ քո շուրթերը բացվում են որևէ բառ ասելու համար, ապա թող որ նրանք միայն սուրբ բառեր լինեն: Եղիր հարատև աղոթքի մեջ:

Տեր, մի՞թե դա հնարավոր է, Տեր:

Ասեմ քեզ: Թող քո վերաբերմունքը, քո մտքերը, քո ցանկությունները, քո խոկումները, քո մտորումները, քո ծառայությունները, քո կարիքները՝ ամեն ինչ, թող որ լինեն մի աղոթք՝ Իմ Պատկերը: Քեզ տրված ամեն մի առիթ կամ հնարավորություն, պետք է սրբություն արթնացնի քո մեջ, այն սրբությունը, որը տրվել է քեզ Իմ կողմից, սակայն հոգիները մոռացել են, թե ինչպես օգտագործեն այն: Յուրաքանչյուր հոգու Ես օժտել եմ այս շնորհով: Ես պետք է արթնացնեմ այս շնորհը, որը ձեր բոլորի մեջ քնած է հիմա: Ես սրբություն եմ սիրում:

Տե՛ր, ուրեմն Դու Քո շնորհով ինձ սո՞ւրբ ես դարձնելու:

Այո՛, սիրելիս, քանի որ յուրաքանչյուր հոգու համար Ես այդ եմ ցանկանում: Ես՝ Տերս, քեզ համար այս ուղին եմ ընտրել: Դու պետք է Ինձ՝ քո Աստծուն պաշտես լռության մեջ[1], ուր միայն Ես ու դու ենք, ուր դու ապրում ես Ինձ համար: Վայելի՛ր և ուրախացիր Իմ արարչությամբ, սիրի՛ր Ինձ, գտի՛ր Ինձ Իմ արարչության մեջ, սիրի՛ր Իմ արարչությունը, Վասուլա:

(Հիսուս նայեց ինձ: Մի պահ դադար տալով՝ Նա ձեռքերն իրար միացրեց, արմունկներով հենվեց ծնկներին՝ Ձեռքերը ցած կախելով: Նրա Սուրբ Դեմքը ինձ էր ուղղված: Նրա մազերը երկար էին և արձակ, շատ բաց շագանակագույն՝ կարմիր ցոլքերով):

Վասուլա՞:

Այո՛, Տեր:

Տո՛ւր Ինձ քո սիրտը, և Ես կտեղավորեմ այն Իմ Սուրբ Սրտի խորքերում... Մտի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ... Մտի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ... Մտի՛ր այստեղ:

(Հիսուս ցուցամատով ցույց տվեց Իր Սիրտը):

[1] Աստված Ինձ խոկման շնորհ է տվել: Այդ անելու համար ես պետք է մենակ լինեմ:

Օ՜ եկ: Ես միշտ կանչել եմ քեզ՝ ծնվածդ պահից սկսած: Ես քեզ համար տեղ եմ պահել. Վասուլա՜, Վասուլա՜:

Տե՛ր: Ես Քեզ արդեն տվել եմ իմ սիրտը, իմ կյանքը, բոլորը Քոնն է:

Ա՜հ, Վասուլա, փորձի՛ր հասկանալ Իմ Կամքը: Լսի՛ր Իմ Սրտի զարկերը. ամեն մի զարկը մի կանչ է քեզ համար: Ինչո՞ւ ես դու Ինձ դիմադրում:

Տե՞ր:

Ես եմ:

Տե՛ր, կարո՞ղ եմ Քո ականջին մի բան ասել:

Ես լսում եմ:

(Ես Հիսուսին ինչ-որ բան ասացի):

Մտի՛ր Իմ Սուրբ Սիրտը և <u>հանգչիր</u> այնտեղ:

(Ես Հիսուսից մեկ ուրիշ բան խնդրեցի):

Այո՛, թող այդպես լինի: Ես սիրում եմ քեզ:

Ես սիրում եմ Քեզ, Տեր:

(Ավելի ուշ)

(Ես միշտ այնպես եմ տխրում, երբ որոշ մարդիկ Սուրբ Մարիամին որպես Տիրամայր չեն ընդունում: Ես ահավոր տխուր էի և արտասվում էի Նրա համար: Ես ուզում էի մխիթարել նրան: Սատանան հարձակվեց ինձ վրա):

Վասո՛ւլա, խնայիր քո արցունքները, Ես ատում եմ բոլոր այդ նահատակներին_____:

Հեռացի՛ր: Ետիս գնա, սատանա:
...Տեր Հիսո՞ւս:

Ես եմ: Ես քեզ ժամանակ առ ժամանակ ցույց կտամ, թե չարը որքան է ատում քեզ և Իմ Սուրբ ուղիները, այն ուղիները, որոնք Ես սովորեցնում եմ քեզ: Երբ դու սիրո արցունքներ էիր թափում Իմ Մոր համար, դա կատաղեցնում էր չարին:

<u>Օրհնյալ են նրանք, ովքեր ապրում են Իմ Տանը և կարողանում են ճանաչել քո Սուրբ Մորը որպես «Տիրամայր» և «Երկնքի Թագուհի»</u>:

Ե՛կ, սիրելիս, Ես քեզ կօրհնեմ[1]: Ես օրհնում եմ քեզ, Իմ Վասուլա:

[1] Հիսուս վեր կացավ, ձեռքերը դրեց գլխիս՝ օրհնելով ինձ:

Ես օրհնում եմ Քեզ, Հիսուս:

(Ես դիպա Նրա Սուրբ Գլխին):

Շնորհակալություն Քեզ ինձ ուսուցանելու համար:

Ե՛կ, հիշի՛ր[1]: Ե՛կ կիսվենք: Մե՛նք, մե՛զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

Մայիսի 12,1988

Տե՞ր:

Ես եմ: Երբեք մի՛ կասկածիր, Վասուլա: Ամեն ինչ Ինձնից է գալիս: Գրի՛ր.

(Հիսուս նկատի ուներ իմ զգացումների այն «թրթիռները», որ ես ունենում էի Իր Ներկայության ժամանակ: Հիսուս կրկին ինձ պատկերներ ցույց տվեց Իր Խաչելությունից, երբ Նրա արյան ամեն մի կաթիլը հեղվեց մեզ համար երկրի վրա: Նա ցույց տվեց Խաչի վրա Իր չարչարված Դեմքը՝ կապտած, ծածկված քրտինքով ու արյունով. Նրա մազերը արյունով սոսնձվել էին միմյանց, իսկ Աչքերը վիրավոր Ճակատից հոսող Արյունով էին լցվել: Եվ այս ամենն ինձ համար, մեզ համար):

Խորա՛ն: Վառ պահի՛ր քո բոցը Իմ Եկեղեցու կատարելագործման համար: Գնանք միասին, զգա Իմ Ներկայությունը:

Մայիսի 16, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ: Ե՛կ: Մտքումդ պահիր Իմ ուսուցումները: Ես քո Աստվածային Ուսուցիչն եմ, որը թելադրում է քեզ: Վասո՛ւլա, առնվազն երկու տարի է, ինչ քեզ սովորեցրել եմ Իմ Աստվածային Գործերից շատերը, որոնք խորհրդավոր են մարդու համար և վեր են մարդկային հասկացողության կարողությունից: Շատ հոգիներ չեն արձագանքում Իմ Գործերին, քանի որ քիչ է պատահում որ այդ հոգիները ուզենան փոխվել:

Տե՞ր: Ի՞նչ նկատի ունես՝ «փոխվել» ասելով:

Այդ հոգիները կապված են աշխարհին, այն, ինչ որ նյութական է: Թեև նրանք իրենց հոգևոր[1] են անվանում, սակայն նրանք այդպիսին չեն,

[1] Ուսուցչի նման ցուցամատն ուղղելով՝ Նա ասաց. «Հիշի՛ր»:

քանի որ կառչում են այն ամենին, ինչ տեսնում են իրենց ֆիզիկական աչքերով և դիպչում իրենց մարմնով: Նրանք համառ են՝ չոր ու անբերրի ապրելով: Նրանց սրտերը չեն բացվի, որ թույլ տան Իմ Աստվածայնությունը հորդի իրենց մեջ[2]: Այո՛, շատ գործոններ կան, որոնք խոչընդոտում են նրանց, որ բնակվեն Իմ Լույսի մեջ: Ես ասել եմ և նորից ու նորից կկրկնեմ այս շատ կարևոր խոսքերը. «Եթե որևէ մեկը փոքրիկ մանկան նման չընդունի Աստծո Թագավորությունը՝ նա երբեք ներս չի մտնի»: Եղե՛ք պարզ, հավատացե՛ք մանկան հավատով, որից հետո Իմ Աստվածային Լույսը կպարուրի ձեզ, և դուք ծաղկի նման ձեր դեմքը կդարձնեք արևին ու կբացվեք՝ թույլ տալով, որ Իմ Լույսը լցվի ձեր մեջ: Հավատացե՛ք, սիրելի զավակներս, որ Ես միշտ ձեզ հետ եմ[3]: Իմ սերն անսպառ է հանդեպ ձեզ:

Հիսո՛ւս, Դու կշարունակե՞ս մեզ ուսուցանել:

Այն ամենը, ինչ Ես կասեմ, պետք է գրի առնվի: Ես միշտ ձեր կողքին եմ՝ սիրելով ու ուսուցանելով ձեզ: Նրանք, ովքեր ականջ ունեն, թող լսեն, որ այդ Ես եմ՝ Հիսուս, ձեր Տերը, որ հայտնում եմ Ինձ այս գործիքի միջոցով: Ես ձեզ երբեք չեմ լքել:

(Հիսուսն ինձ նայեց):

Վասո՛ւլա, ես քեզ պիտի սովորեցնեմ առաջ ընթանալ:

(Ավելի ուշ)

Հիսո՞ւս:

Ես եմ: Աղոթի՛ր այն հոգիների համար, ովքեր դեռևս չեն հասկացել Սուրբ Գիրքը և սխալ են մեկնաբանում շատ հատվածներ, դուրս թողնելով ամբողջական մասեր, որոնք կարող էին ձեզ լուսավորել, արմատախիլ անելով այնպիսի հարուստ գործոններ, որոնք կարող էին լույս սփռել ձեզ վրա: Լսի՛ր և փորձիր հասկանալ.

«Մի սերմնացան կար, որը մի հսկայական արտ էր հերկել, ամենալավ սերմնահատիկներն էր ընտրել ցանելու՝ լավագույն ցորենը ստանալու համար: Այն ժամանակ, երբ բերքը պատրաստ էր հնձելու, և շատ հարուստ բերք էր այդ, նրա թշնամին ագռավների մի երամ ուղարկեց՝ թռչելու արտի վրայով, մի արտ, որը Նա նախապատրաստել էր մեծ սիրով և զոհողությամբ: Հասուն և առատ այդ բերքը կարող էր կերակրել ողջ երկիրը՝ սոված չթողնելով և ոչ մեկին: Սակայն թշնամու կողմից

[1] Ա Կոր. 2:14: «Ոչ հավատացյալ մարդը նա է, որը չի ընդունում Սուրբ Հոգուց որևէ բան, նա այդ բոլորը դիտում է որպես անհեթեթություն» (Որևէ մեկը, որ մերժում է Աստծո ողորմության գերբնական գործերը չի կարող հոգևոր համարվել):

[2] Քահանայական հոգիները, ինչպիսիք են Գարաբանդալի եւ Մեջյուգորիայի եպիսկոպոսները, որոնք պատերազմ հայտարարեցին մեր Սուրբ Մոր հայտնությունների համար:

[3] Մենք չպետք է զարմանանք գերբնական մոտեցումների համար: Դրանք հեքիաթներ չեն:

ուղարկված ագռավները սկսեցին կտցել այստեղից-այնտեղից, ոչնչացնելով ու ավերելով բերքից այնքան, որքան հնարավոր էր: Եթե սերմնացանը չտեսներ այս ամենը ու իր ծառաներին չուղարկեր ագռավներին քշելու, ապա նրանք կավերեին ամբողջ հունձը»:

Տե՛ր, կբացատրե՞ս Դու հիմա, խնդրում եմ:

Լսի՛ր: Սերմնացանը Ես եմ՝ Տերը, իսկ հունձը՝ Իմ Խոսքը[1]: Թշնամին սատանան է: Ագռավներն այն հոգիներն են, որոնք սատանայի ազդեցության տակ են գտնվում, և տարիների ընթացքում ժամանակ առ ժամանակ Իմ Խոսքերից շատ կարևոր տարրեր են վերացնում: Սակայն Ես՝ Հիսուս Քրիստոսը՝ Տերը, կրկին ու կրկին պետք է հայտնեմ Ինձ, որպեսզի ձեզ վերադարձնեմ այդ դուրս հանված տարրերը: Ես պիտի զարդարեմ ու վերականգնեմ Իմ Եկեղեցին:

Ես սիրում եմ քեզ, արարչություն: Իմ ողջ Եկեղեցին պիտի վերանորոգվի: Ձեզ վերադարձրած այս բաղադրամասերը պիտի զարդարեն և կատարյալ պիտի դարձնեն Այն: Սակայն, նախ Ես կթագադրեմ Պետրոսին՝ «Իմ Գառների Պետրոսին»: Ես նրան տվել եմ այս անունը, որը նա պիտի պահպանի:

Ես պիտի մտնեմ Իմ Տաճարը. այնպես, ինչպես Ես արել եմ, երբ երկրի վրա էի, և Իմ արդարության Գոտիով պիտի հարվածեմ բոլոր այդ ինքնակոչերին: Ես զորությամբ պիտի մտնեմ ու տապալեմ բոլոր դրամապաշտներին:

Ես Երուսաղեմ պիտի մտնեմ, որպեսզի Նոր Երուսաղեմը սկսի տեսնել Լույսը: Ես պիտի ոչնչացնեմ այդ խոչընդոտները և պիտի բացեմ ճանապարհը: Սա, Իմ Վասուլա, հայտնի կլինի որպես Իմ Եկեղեցու Մեծ Փորձություն:

Այնուհետև, Ես Պետրոսի ձեռքի մեջ պիտի դնեմ մի երկաթյա գավազան, որով նա պիտի հսկի Իմ ոչխարներին, և նրանք, ովքեր չգիտեն ու դեռևս իրենք իրենց հարց են տալիս, թե «Ինչո՞ւ մենք պետք է առաջնորդ ունենանք», Ես նրանց կասեմ. «Դուք երբևէ տեսե՞լ եք կամ իմացե՞լ եք, որ ոչխարների մի հոտ լինի՝ առանց հովվի»:

Ես ձեր Երկնային Հովիվն եմ, և Ես ընտրել եմ Պետրոսին, որպեսզի պահպանի Իմ Գառներին մինչև Իմ վերադարձը: Ես նրան եմ հանձնել պատասխանատվությունը, ուստի ինչո՞ւ համար են այս բոլոր կռիվներն ու ապարդյուն բանավեճերը:

Իսկ բոլոր նրանց համար, ովքեր դեռ չգիտեն Իմ Խոսքերը, Ես ասում եմ՝ կարդացեք դրանք Սուրբ Գրքում. դրանք գտնվում են Իմ առաքյալ Հովհաննեսի[2] վկայություններում: Եվ այն ժամանակ Ես կմիավորեմ Իմ Եկեղեցին ու կօղակեմ ձեզ Իմ թևերով՝ հավաքելով մեկ հոտի մեջ: Որովհետև, ինչպես որ դուք այսօր կաք, դուք ամբողջովին ցիրուցան եք եղել, գոյացնելով բազմաթիվ համայնքներ ու պառակտված խմբեր: Իմ Մարմինը դուք բաժան-բաժան եք արել, և դա այդպես <u>ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ</u>[3]: Ես ձեր բոլորին պիտի միավորեմ:

---

[1] Սուրբ Գիրքը
[2] Հովհ. 21. 15-17
[3] Հիսուս հստակ ու որոշակի էր խոսում:

(Հիսուսն այստեղ նկատի ունի Հռոմի Կաթոլիկների, Ուղղափառների և Բողոքականների միավորումը, բայց և դրանից բացի՝ ուրիշ խմբերի, անգամ աղանդավորների: Տերը մեզ կկանչի Պետրոսի շուրջը, կամ Պետրոսը կգա մեզ մոտ):

Հետո, ես ու Պետրոսը միասին պիտի աշխատենք: Ես ցույց կտամ նրան Իմ թաքցված բաղադրամասերը, Ես ցույց կտամ նրան Իմ խորհուրդներից շատերը, որպեսզի նա կարողանա սովորեցնել դրանք Իմ զավակներին, և, այս ուսուցման ներքո, դուք կտեսնեք մի նոր երկինք ու նոր երկիր: Ես՝ Տերս, կնորոգեմ Իմ Սրբավայրի պատերը:

Ա՛հ, Վասուլա: Այնքա՜ն շատ բան կա վերանորոգելու: Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ:

Այո՛ Տեր, խնդրում եմ, տուր ինձ անհրաժեշտ ուժը: Ամեն:

Թող Իմ մատը լինի քո սրտի վրա՝ Իմ Խորանի բոցը վառ պահելու համար: Ես՝ Տերս, սիրում եմ քեզ՝ չնայած քո բացարձակ ոչնչությանը: Ես քեզ կտամ անհրաժեշտ զորությունը, որպեսզի դու կարողանաս իրագործել քո առաքելությունը: Այն առաքելությունը, որի համար Ես քեզ ուղարկել եմ: Մի՛ վհատվիր. համբերատար եղիր: Շուտով դու կվերադառնաս Տուն՝ դեպի Ինձ, դեպի Մեզ[1]: Ընդունի՛ր Մեր Խաղաղությունը: Աղոթի՛ր այն վերանորոգման համար, որին Իմ Եկեղեցին ենթարկվելու է: Ես՝ Տերս, սիրում եմ ձեզ բոլորիդ: Մե՛նք, մե՛զ:

Այո՛, Տեր, ընդմիշտ:

Ե՛կ:

Մայիսի 19, 1988

Տե՞ր: Թերևս եկեղեցական իշխանությունների չարձագանքման պատճառն այն է, որ քո Խաղաղության ու Սիրո Պատգամը ապաշխարության մի «հիշեցում» է Լուրդի և Ֆաթիմայի պատգամների նման, և հետևաբար հնարավոր է, որ նրանք իրենց պարտավորված չզգան դրանց մեջ խորանալու և, այս բոլորի հետ մեկտեղ, նրանք ծանրաբեռնված են աշխատանքով: Չնայած, սա միայն հիշեցում չէ: Այն խոսում է նաև միության, Ռուսաստանի դարձի գալու և «Պետրոսի» աթոռի մասին:

Վասո՛ւլա, Ես եմ Բանը՝ Հավերժական Խոսքը: Իմ Խոսքը Հավիտենական Կյանք է: Եթե Ես նույնիսկ որոշեմ Իմ արարչությանն ամեն օր հիշեցնել Իմ սիրո մասին, զանազան գործիքների միջոցով ու ձեզ կանչեմ ապաշխարության, ապա որևէ արարածի, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հող ու մոխիր, արտոնված չէ դեն նետել Իմ ասած բառերից որևէ մեկը: Ես՝ Տերս,

[1] Սուրբ Մարիամը մեզ հետ էր, հիշեցնելով ինձ այն տեսիլքի մասին, որը ես տեսել էի տաս, թե տասնմեկ տարեկան հասակում:

գիտեմ ձեր կարիքների մասին և ասում եմ ձեզ՝ Իմ Ողորմությունը Մեծ է ձեր հանդեպ[1]:

Ե՛կ, զգա՛ Իմ Ներկայությունը:

Այո՛, Տեր:

Մենք, մեզ:

Մայիսի 24, 1988

Տե՛ր:

Ես եմ:

Եկե՛ք Ինձ մոտ, ո՛վ ծարավածներ: Եկե՛ք: Եկե՛ք և խմեք: Ես ձեզ կհագեցնեմ հավերժական ջրով Իմ Աղբյուրից, որը երբեք չի ցամաքում[2]:

Վասո՛ւլա, Ինձ մի՛անտեսիր: Ես Ամենից Հավատարիմն եմ: Եղի՛ր իմ կողքին: Մե՞նք, մե՞զ:

Մե՞նք, մե՞ զ:

Այո՛, Տեր: Այո՛, Սբ. Մարիամ: Շնորհակա՛լ եմ, Տեր: Օրհնյալ լինի Քո Անունը: Թող գովյալ լինի Տերը:

Մայիսի 25, 1988

(Այս առավոտ ես շատ զբաղված էի, և ինձ համար դժվար էր նշմարել Տիրոջը ու խոսել Իր հետ: Ավելի ուշ, պատշգամբում նստեցի նախաճաշի: Մինչ ուտում էի, հանկարծակի, ներքնապես, հոգուս աչքերով տեսա Տիրոջը, որ նստած էր սեղանի մոտ և հետևում էր իմ ուտելուն: Նա ասաց. «Համե՞ղ է»: Ես ասացի. «Այո՛, Տեր, համեղ է, շնորհակալ եմ, Տեր»: Մի կարճ լռություն եղավ, հետո Նա հարցրեց ինձ. «Ուզո՞ւմ ես, որ օրհնեմ քո կերակուրը»: Ես ասացի. «Այո՛, Տեր, օրհնի՛ր»: Հիսուսն օրհնեց իմ կերակուրը: Նա մնաց ինձ մոտ մինչև ես ավարտեցի: Հետո ես շնորհակալություն հայտնեցի Նրան կերակուրի համար: Սա տեղի ունեցավ ինձ ցույց տալու համար, որ ես կարող էի Նրանից խնդրել, որ Նա օրհնի իմ կերակուրը՝ նախքան իմ ուտելը):

Սիրելի՛ս, ջանա՛ խնդրել Իմ օրհնությունը. ես <u>կօրհնեմ</u> քո կերակուրը:

Այո՛, Տեր, շնորհակալ եմ ինձ սովորեցնելու համար:

Վասո՛ւլա, ես սիրում եմ քեզ: Ես մինչև վերջ կլինեմ քո Երկնային Ուսուցիչը:

---

[1] Տերն <u>ուղղակի</u> ընդգծեց այս նախադասությունը:
[2] Հիսուս նայեց ինձ մի կարճ դադարից հետո:

Շնորհակալ եմ, Հիսուս: Տե՛ր, ես կանչեցի սբ. Ֆրանցիսկին և աղոթեցի նրան: Արդյոք նա լսե՞ց իմ աղոթքը, երբ ես աղոթում էի նրան:

Ոչ մի բան անլսելի չի մնում. ամեն ինչ լսելի է Երկնքում: Նա լսել է քեզ: Սուրբ Ֆրանցիսկը քո կողքին է:
Ե՛կ, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Աստված իմ: Թող գովյալ լինի Տերը:

Մայիսի 31, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ: Սուրբ Վարդարանը դու լավ ասացիր:

Շնորհակալ եմ, Տեր և Սուրբ Տիրամայր, ինձ ուսուցանելու համար:

(Ես աղոթեցի ամենօրյա երեք աղոթքները և Սուրբ Վարդարանն ամբողջությամբ՝ այս անգամ այն ավարտին հասցնելով):

Այս օրերին քո ժամանակը նվիրիր Սուրբ Վարդարանին:

Այո՛, Տեր: Տե՛ր, ես կարդացել եմ Գաբրիելի «Տուն-դարձի առաքելությունը», սակայն այնտեղ չի հիշատակվում Սբ. Մարիամի կամ Սուրբ Վարդարանի մասին:

Վասո՛ւլա, թող հայտնի լինի, որ դա այն է, ինչ Ես՝ Տերս, անվանում եմ մոլորեցնող ջահ. աղոթի՛ր այդ աղանդների համար: Ես՝ Տերս, թույլ չեմ տալու, որ Իմ Մարմինը բաժանեն Իմ Գլխից: Դրանք, աղջի՛կս, այն երերուն թագավորություններն են, թագավորություններ՝ առանց արմատի, որոնց մասին Ես քեզ պատմում էի: Այժմ Ես քեզ տվել եմ դրանցից մեկի ապացույցը: Կարիք չկա քեզ պատմել, թե ինչ է զգում Իմ Սուրբ Սիրտը: Վասուլա, խոկա՛ Իմ Սուրբ Սրտի մասին, որը երբեք քեզ հուսախաբ չի անի: Ես մինչև վերջ պիտի լինեմ քո Սուրբ Ուսուցիչը: Բաց մի՛ թող Իմ Ձեռքը: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Սբ. Մարիա՛մ: Թող փառավորվի Աստված:

Հունիսի 1, 1988

(Մինչ ես խոսում էի մի հույն երիտասարդ տիկնոջ հետ մեր Երկնավոր Հոր մասին, նորից Աբբա բառը օգտագործեցի՝ հունարենով՝ «Օ՛, բաբա»):

Վասո՛ւլա, Ինձ «Բաբա» կանչիր: Ես սիրով եմ ընդունում դիմելու այդ ձևը: Ես քո Երկնավոր Հայրն եմ:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, հավիտյան:

Հունիսի 2, 1988

(Fete-Dieu)

(Արդեն երրորդ օրն էր, որ ես աղոթում էի ամբողջ Վարդարանը և, իհարկե, այն երեք աղոթքները, որոնք Տերն ուզում է, որ մենք աղոթենք):

Տե՞ր:

Ես եմ: Իմ Վասո՛ւլա, հաստատակամությունը և հետևողականությունը տկարացնում է[1] սատանային, չարիքը նվազում է: Սովորի՛ր Սուրբ Վարդարանը: Զարդարի՛ր Իմ Եկեղեցին:

(Տերը նկատի ուներ, որ Ուղղափառ, Բողոքական և ուրիշ Եկեղեցիներ, որոնք չեն աղոթում Սուրբ Վարդարանը՝ պետք է սովորեն այն աղոթել: Դրանով իսկ Սուրբ Եկեղեցին կհարստանա և սատանան կհեռացվի ու կջախջախվի: Եկեղեցում կնվազի ինչպես հերետիկոսությունը, այնպես էլ ուրացությունը, որը ներս է թափանցել անհավատարմության և անհնազանդության պատճառով):

Այո՛, Վասո՛ւլա, սերն աճելու է, իսկ չարը՝ նվազելու: Եվ նրանք, ովքեր վիճում են ասելով, թե դա չի ասվել Իմ[2] կողմից, Ես ցույց կտամ քեզ, թե որքան անիմաստ են նրանց պնդումները: Նրանց նախանձախնդրությունը սխալ ուղղությամբ է և թվում է, թե հստակ չեն տեսնում Իմ Արդարությունը: Նրանք ազդարարում են միայն իրենց գաղափարները: Նրանք պատրաստ են հրաժարվել Ինձանից[3]: Զարմացած այն խեղճ գործիքի համար, որ Ես ընտրել եմ, որպեսզի Ինձ բացահայտեմ, նրանք մերժելու են և չեն ընդունելու, որ դու Ինձանից ես գալիս: Նրանք մոռացել են, թե ինչ է ասում Սուրբ Գիրքը: Սուրբ Գիրքն ասում է[4]. «Ես գտնվեցի նրանց կողմից, ովքեր Ինձ չէին փնտրում, և Ինքս Ինձ հայտնեցի նրանց, ովքեր Իմ խորհուրդը չէին հարցնում»: Ուստի Ես՝ Տերս, ասում եմ ձեզ, բա՛ց արեք ձեր սրտերը, և ոչ թե ձեր մտքերը:

---

[1] Փորձել ամեն կերպ դոհացնել Սուրբ Մարիամին և Հիսուսին, աղոթելով Սուրբ Վարդարանով՝ հնազանդվելով նրանց կամքին:

[2] Սովորել Սուրբ Վարդարանը:

[3] Ազդարարել, որ այս գրվածքները Աստծուց չեն, որովհետև Աստծո կողմից այստեղ գրված շատ բաներ նրանց հարմար չեն:

[4] Ես. 65:1-2

Իմ Սուրբ Սրտի Վասո՛ւլա, դու լսեցիր, թե ես ինչպես չշնչացի քո ականջին[1]: Ես ուզում եմ քեզ ցույց տալ Տիմոթեոսին գրված Ա և Բ ուղերձներում այն ամենը, ինչը կանխատեսվել է քո դարաշրջանի վերջին օրերի համար: Իմ արարչությունն այլասերվել է և ավելի ցած է ընկել, քան սոդոմացիները: Խավարը նրանց վրա իջել է որպես մահացու մի շղարշ՝ ուղարկված սատանայի կողմից: Սատանան ուղարկել է բազմաթիվ կեղծ ուսուցիչներ, կեղծ մարգարեներ, որոնք այսօր հայտնվում են որպես փիլիսոփաներ՝ սովորեցնելով դավանաբանություններ, որոնք չեն գալիս Ինձանից՝ քո Տիրոջից: Իսկ Իմ զավակները՝ կուրացած իրենց տգիտությամբ, ընկնում են սատանայի կողմից լարված թակարդները: Ես ցանկանում եմ, որ Տիմոթեոսի այս հատվածները հրապարակայնորեն կարդացվեն՝ որպես մի զգուշացում. Ա Տիմոթեոս 4:1-16 և 6:20-21 և Բ Տիմոթեոս 2:14-26: Այս մարգարեությունները ազդարարվել են հատկապես ձեր ժամանակների համար: Բ Տիմոթեոս 3:1-17-ի այս հատվածում, այն կանխատեսում է ձեր դարաշրջանի վիճակը, ինչպիսին կա այժմ, որովհետև սրանք ժամանակների վախճանին նախորդող վերջին օրերն են:

Ես ամենայն լրջությամբ խնդրում եմ ձեզ բոլորիդ կրկնապատկել ձեր աղոթքները «վերադարձի» համար: Իմ Սուրբ Սիրտը բաց է յուրաքանչյուր հոգու համար, ով որ կապաշխարի և կկամենա վերադառնալ դեպի Ինձ:

Ծաղի՛կ, միշտ փնտրիր Ճշմարտության ու Ջանազանության Հոգին՝ նախքան կսկսես գրել Ինձ հետ: Սերը սիրում է քեզ և կառաջնորդի քեզ: Արի՛, հանգչի՛ր Իմ Սուրբ Սրտում. Ես երբեք քեզ չեմ լքի Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, Այո՛, Սուրբ Մայր:

ΙΧΘΥΣ

Հունիսի 3, 1988

Տե՞ր:

Ես եմ:

Վասո՛ւլա, երբեք չվհատվես: Հիշի՛ր քո հանդեպ ունեցած Իմ Սերը: Շատ սիրելի Հոգի, Ես սիրում եմ քեզ քո բոլոր տկարություններով: Դու փխրուն ես: Թույլ տուր որ Իմ Հոգին առաջնորդի քեզ: Անէացի՛ր Իմ մեջ, Իմ զորության մեջ: Տարրալուծվի՛ր Իմ մեջ և թույլ տուր անել ամեն ինչ, որպեսզի նրանք տեսնեն, որ այս ողջ աշխատանքը Իմ կողմից է կատարվում: Դու ոչնչություն ես: Մնա՛ ոչինչ և տեղ թող Իմ Հոգուն, որ աճի քո մեջ: Այո՛, թույլ տուր, որ շնչեմ քո ոչնչության մեջ, թույլ տուր ուրախանամ քեզնով: Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ այս ձևով, որպեսզի փրկեմ ձեզ բոլորիդ և միավորեմ ձեզ:

[1] Երկու գիշեր առաջ Հիսուս չշնչաց ականջիս, որ ես պետք է կարդամ Աստվածաշնչում Տիմոթեոսին ուղղված առաջին եւ երկրորդ թղթերը:

Այո՛, Տեր:

Ծաղի՞կս: Այս օրերին ես սովորեցնում եմ քեզ ճշմարիտ հայտնությունները և տեսիլքները զանազանել կեղծ հայտնություններից, կեղծ ուսմունքներից ու կեղծ տեսիլքներից: Այն ամենը, ինչ կեղծ է՝ գալիս է սատանայից: Նա շփոթության սերմեր է ցանում Ճշմարտությունն արատավորելու համար, ճիշտ այնպես, ինչպես Պեսկարայում[1]: Նա որոմ է ցանում ցորենի մեջ՝ շփոթեցնելով բոլորիդ: Կատաղած Մեջյուգորիեի երևումներից՝ նա ջանում է շփոթեցնել բոլորիդ՝ փորձելով պիտակ փակցնել, որ այս Աստվածային Գործերը Ինձանից չեն գալիս:

Աղջիկս, երբ կարդաս մի որևէ հայտնություն, որը բացեիբաց <u>անմիաբանություն</u> է արտահայտում Իմ Եկեղեցու հանդեպ, մերժելով Պետրոսին, մերժելով քո Սուրբ Մորը, ուրեմն իմացիր, որ դա Ինձանից՝ ձեր Տիրոջից և ձեր Աստծուց չի գալիս, այլ գալիս է Իմ թշնամուց, որը հայտնվում է Իմ կերպարանքով՝ իրականացնելու համար իր ծրագրերը, որոնց նպատակն է հնարավորին չափ բաժանել ձեզ: Իմացի՛ր, Ես՝ Տերս, չեմ ուզում որ Իմ գառները ցիրուցան լինեն: Ես ուզում եմ, որ դուք միաբանվեք Պետրոսի ներքո՝ բոլորդ մեկ հոտի մեջ: Ես փափագում եմ, որ բոլորդ ի մի գաք: Ես նորից կրկնում եմ, որ Ես՝ Հիսուս Քրիստոսը, Տերը, ձեր Փրկիչը, ընտրել եմ Պետրոսին, որ կերակրի և պահպանի Իմ գառներին և ոչխարներին, մինչև Իմ վերադարձը: Այսօր այդ Պետրոսը, Հովհաննես-Պողոս 2-րդն է: <u>Լսի՛ր, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին</u>:

Վասո՛ւլա, սատանան գիտի, որ իր օրերը հաշված են և այս պատճառով կարմիր վիշապը ջանում է իր հետ քարշ տալ այնքան հոգիներ, որքան կարող է: Շատերի մտքերում, այն մտքերում, որոնք պետք է լցված լինեին հոգևորությամբ և սրբությամբ, նա ներարկել է ամեն տեսակ խոտորումներ՝ շեղելով ձեզ Ճշմարտությունից և այն ամենից, ինչ որ սուրբ է: Նայի՛ր շուրջդ, սիրելիս, և դու կհասկանաս: Այս բոլոր խոտորումները, զավակնե՛րս, ներկայացվել են ձեզ, ինչպես Սոդոմի և Գոմորի ժամանակներում, որպեսզի նրանք լցնեն ձեր հոգիները՝ տեղ չթողնելով այն բանի համար, ինչը սուրբ է, տեղ չթողնելով Ինձ՝ Ձեր Արարչի և Աստծո համար:

Այո՛, Իմ Վասո՛ւլա, Ես Ինձ մերժված[2] եմ զգում: Ես Ինձ մոռացված ու չսիրված եմ զգում: Ե՛ս, որ ձեր հանդեպ ունեցած սիրուց դրդված մեռա Խաչի վրա, Ե՛ս, որ Սիրո Հոգին եմ. տեսնո՞ւմ ես, թե նրանք ինչպես են Ինձ հետ վարվում: Մի՞թե Ես արժանի եմ սրան:

Աստվա՛ծ իմ, սիրտս կտոր-կտոր է լինում, Տե՛ր, ինչո՞ւ է այդպես: Տե՛ր, օ՜հ, Տեր, խնդրում եմ, հրաշք գործիր: Ես չպետք է հրաշքներ խնդրեմ, բայց ես սիրում եմ Քեզ և չեմ ուզում, որ այլևս ցավ կրես, Տեր:

Վասուլա, աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր հոգիների դարձի համար: Սատանան սաստկացնում է իր ճիգերը Իմ արարչագործության վրա, որպեսզի ձեզ իր հետ Դժոխք քարշ տա: Օ՜, արարչություն: Որքա՜ն տկար ես դու, որքան

[1] Սխալ կանխատեսում մի երևումի վերաբերյալ:
[2] Տերը շա՜տ... տխուր էր: Ես բառ չեմ գտնում, *տխուր* բառը բավական չէ:

ահավոր թույլ ես դու: Որևէ հայտնություն, որն ուրանում է Սուրբ Հաղորդությունը՝ Այն անվանելով «արարողություն»[1], կամ ուրանում է ձեր Սուրբ Մոր Անարատ Սիրտը՝ Ինձանից չէ: Ես՝ Տերս, անսահման սիրում եմ ձեզ և ցանկանում եմ մեկ անգամ ևս զգուշացնել այդ սուտ մարգարեների մասին:

Շնորհակալ եմ Քեզնից, Տե՛ր:

Սիրի՛ր Ինձ:

Ես պաշտում եմ Քեզ, Տե՛ր:

Մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Տեր:

Հունիսի 4, 1988

Տե՞ր:

Ես եմ: Ես երբեք քեզ չեմ հիասթափեցնի: Ես քեզ ավելին կուսուցանեմ Իմ Եկեղեցու մեջ գոյություն ունեցող Շփոթության մասին: Փորձիր լսել Ինձ և ուրախացրու Ինձ՝ աղոթելով Սուրբ Վարդարանը: Զգա՛ Խորհուրդները, տե՛ս դրանք քո Սուրբ Մոր Աչքերով. այն Խորհուրդները, որոնք ձեր դարաշրջանը փորձում է բանապաշտական[2] դարձնել: Աղջի՛կս, նրանք տակավին չեն հասկացել, որ Ես ուզում եմ, որ իրենք լինեն երեխաների նման անմեղ և մանկան հավատով:

Իմ Եկեղեցին Ես լցրել եմ Հարստությամբ ու Փառքով, որպեսզի կերակրեմ շատ հոգիների, բովանդակ ազգերի: Այն հարուստ է Իր Խորհուրդներով, Խորհուրդներ, որոնք ձեզնից շատերը չեն ընդունում որպես Խորհուրդ: Այսօր իմ ժողովուրդը չունի խոնարհություն, պարզություն. նրանք չունեն Հավատի անաղարտություն: Ձեր դարաշրջանն այսօր փորձում է բանականացնել ամեն ինչ՝ նույնիսկ Իմ

[1] Շատերն այն անվանում են խորհրդանշական, և չեն հավատում Հիսուսի իրական ներկայությանը Սուրբ Հաղորդության մեջ:

[2] Բանապաշտությունը (ռացիոնալիզմը) մի տեսություն է, երբ բանականությունը ամենակարևոր գործոնն է դիտվում, երբ մարդն իր բանականությամբ, դատողությամբ ու իմացականությամբ է հասկանում ու բացատրում կյանքի երևույթներն ու իրականությունը: Ըստ բանապաշտության ճշմարտությանը կարելի է հանդել գիտական ու տրամաբանական հիմնավորումներով ու փորձով:
Բանապաշտությունը հակառակ դիրքորոշում ունի կրոնի ու հավատքի հանդեպ և փորձում է կրոնական ճշմարտությունը բացատրել տրամաբանական մոտեցումով: Մերժելով Աստծուն և Նրա արարչագործությունը, բանապաշտությունը մարդկային ճանաչողության և կարողությունների համոզմունք է՝ հավատ մարդկային բանականության նկատմամբ, որով և հիմնավորապես հակադրվում է Աստվածային Իմաստությանը: (Տե՛ս՝ Արշակ Տեր-Միքելեան, Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, էջմիածին, 2007, էջ 61):

Խորհուրդները[1]... Ինչպե՞ս կարող են նրանք հավատալ, որ կարող են քողազերծ անել Ինձ՝ իրենց Աստծուն: Նրանք փորձում են բանականությամբ նկարագրել Իմ Խորհուրդները:

Աղջի՛կս, սրանք այն «ագռավներն» են, որոնց մասին Ես պատմում էի քեզ Սերմնացանի և Ագռավների[2] առակում: Այս «ագռավները», կորցնելով հավատը, ջանում են ստեղծել իրենց սեփական տեսությունները՝ բավարարելու համար իրենց մարդկային միտքը, ջանալով գոհացնել չրջապատին: Իսկ իրականում դա այդպես է, որովհետև նրանք կորցրել են Իմ հանդեպ ունեցած հավատը: Իմ Խորհուրդները պետք է անփոփոխելի մնան՝ թողնելով դրանք անբասիր: Այդ «ագռավները» Իմ Եկեղեցում ՍԽԱԼՆԵՐ են սփռել՝ այլափոխելով Ճշմարտությունը, Իմ Խոսքը և Իմ առակի հարուստ հունձը: <u>Իմ Խոսքն ու Իմ Խորհուրդները պետք է մնան անփոփոխ:</u>

Իմ Եկեղեցին այսօր ընկղմված է խավարի ու չփոթության մեջ: Սա հերետիկոսություն է, որ ներթափանցում է Իմ Սրբարանի մեջ՝ Իմ քահանաներից շատերին դրդելով սխալների մեջ ընկնել: Հոգին կանչում և ասում է բոլոր եկեղեցիներին. <u>հեռքե՛ք սուտը, ուղղե՛ք սխալները, հնազանդության կոչ արե՛ք</u>, բայց այս բոլորն արեք համբերությամբ և ուսուցանելու[3] դիտավորությամբ: Ժամանակը եկել է, երբ մարդիկ չբավարարվելով առողջ ու ողջամիտ ուսուցումներով,[4] անկուշտ են դարձել ամենավերջին նորույթների նկատմամբ, և իրենց համար ընտրում են մի շարք ուսուցիչներ՝ համապատասխան իրենց անձնական ճաշակի: Եվ փոխանակ Ճշմարտությունը լսելու, նրանք դիմում են առասպելների[5]: Ասա՛ Ինձ, Վասուլա, կարո՞ղ է Ավետարանը մասնատվել և բաժանվել:

Ո՛չ, Տեր, դա անհնար է:

Թող սա նույնպես քեզ օրինակ լինի Իմ Մարմնի համար: <u>Իմ Մարմինը ևս չի կարող բաժանվել</u>, այդուհանդերձ, նրանք բաժանել են Այն... Ապստամբությունը ներթափանցել է Իմ Եկեղեցու ճիշտ սրտի մեջ: Սկզբում՝ մի ներքին ապստամբություն, որը ներշնչված էր սատանայից, թափանցեց Իմ մի շարք քահանաների, եպիսկոպոսների և կարդինալների հոգիների մեջ, մթագնելով նրանց: Սատանայի թևերի հովանու տակ, նրանք ընկան նրա թակարդները: Այս ապստամբությունն այժմ նրանց մեջ է ու պատառոտում է Իմ Սուրբ Սիրտը:

Սկզբում այդ քահանայական հոգիները, սատանայից կլանելով Ապստամբության Սերմը, մտորեցին այդ սերմի վրա չար մտադրություններ հղանալով ու դավեր նյութելով: Նրանք Ընդդիմություն նյութեցին՝ հակադրվելով Պետրոսի հաջորդին, Իմ կողմից ընտրված Իմ «գառների Պետրոսին»: Այս Ապստամբության Սերմը, այժմ աճած ու փարթամացած, նրանց ուժ տվեց բացեիբաց հայտարարելու իրենց ապստամբության մասին, նորից պառակտելու

[1] Աստված <u>զարմացած</u> էր թվում (մեր բթության վրա):
[2] տե՛ս մայիս 16, 1988
[3] Բ Տիմ. 2:3
[4] Հիսուս ինձ ասաց, որ բաց անեմ Սուրբ Գիրքը և գրեմ այս հատվածը:
[5] Բ Տիմ. 4:3-5

համար՝ թունավոր նետեր արձակելով Իմ Եկեղեցու վրա... Նրանք դավաճանեցին Ինձ[1]: Նրանք դավաճանեցին այս Սիրով լցված Սիրտն այնպես, ինչպես Հուդան՝ Գեթսեմանիում... Նրանք Ինձ քարշ են տալիս, որպեսզի խարազանեն, նրանք խարազանում են Ինձ: Օ՜, Վասո՛ւլա, ինչպե՜ս եմ Ես տանջվում...

Օ՜, Տեր, ո՛չ:

(Մի ներքին տեսիլքով ես տեսնում էի մեր Տիրոջը մտրակվելիս՝ կապված մի սյան, և յուրաքանչյուր մտրակի հարվածից պատառոտվում էր Նրա Մարմինը, որից Նա թպրտում էր՝ շնչասպառ հևալով: Նրա Մարմինը մի մեծ վերք էր):

Օ՜հ, Տեր, երբ են նրանք դադարելու:

Նրանք չեն դադարում: Նրանք վայրենաբար խարազանում են Ինձ: Փառասիրությամբ ու անհնազանդությամբ հարբած՝ նրանք հնազանդ ու հավատարիմ են միայն Իմ թշնամուն: Նրանք ավերում են Իմ Հաստատությունը: Նրանք ցիրուցան են անում Իմ ոչխարներին: Նրանք կոխկրտում են Պետրոսի ոտքերը՝ նրան մի կողմ հրելով: Նրանք փորձում են լռեցնել նրան...

Կայենը երբեք չհասկացավ Իմ Աբելին: Օ՜հ, Աբել... Ես քեզ չեմ լքի: Քո Աստվածը քո կողքին է: Քո Աստվածը գալիս է հրեշտակների մի գնդով, որպեսզի պաշտպանի քեզ և կոխկրտի Իմ թշնամուն, որը քո թշնամին է: Ես նախապատրաստում եմ Իմ հրեշտակներին, և Կայենը չի հարվածելու քեզ: Նա ստիպված պիտի լինի իր ձեռքը բարձրացնել Իմ դեմ՝ իր Աստծո դեմ: Ես՝ Տերս, անակնկալի եմ բերելու նրան:

Իմ Եկեղեցին միավորված է լինելու Իմ Սուրբ Սրտի և ձեր Սուրբ Մոր Անարատ Սրտի միջոցով: Ինչպես որ մեր երկուսի Սրտերն են միացած, այնպես էլ Իմ Եկեղեցին է միավորվելու: Իմ Եկեղեցին Մեկ պետք է լինի:

Հունիսի 7, 1988

Տե՛ր:

Ես եմ: Ես շատ մոտ եմ քեզ, զավակս, լսի՛ր Իմ Սրտի բաբախյունը: Ես Իմ բոլոր հրեշտակներին բերելու եմ Իմ Սրտի մեջ, որպեսզի նրանք տեսնեն և զգան Իմ Վերքերը: Եվ երբ նրանք զգան իրենց Աստծո վերքերը, նրանց ձայնն այնքան կբարձրանա, որ Իմ թշնամին կդողա ու երկրի հիմքերը կցնցվեն: Երբ նրանք տեսնեն, թե ինչ վիճակում է Իմ բզկտված Սիրտը, իրենց սեփական սրտերում սիրո մի բոց կզգան Իմ հանդեպ՝ իրենց Աստծո հանդեպ: Այդ հրեշտակները ձեր Սուրբ Մոր կողմից դաստիարակված և սիրով ուսուցանված այն գունդն է, որը ձեր Սուրբ

[1] Երբ Հիսուսն ասաց «դավաճանեցին»՝ Նա դա ասաց շատ դառնորեն:

Մայրը նախապատրաստել է Մեր Եկեղեցին պաշտպանելու համար: Այս հրեշտակները պետք է սիրով փոխհատուցեն չարին:

Ե՛կ, Իմ Սուրբ Սրտի Վասո՛ւլա, Ես՝ Տերս, սիրում եմ քեզ: Նայի՛ր Ինձ: Հիշի՛ր, Ես այժմ գալիս եմ Սիրտս Ձեռքերիս մեջ առած՝ առաջարկելով Այն ողջ մարդկությանը[1]: Որքա՜ն եմ Ես սիրում բոլորիդ:

(Մի ներքին տեսիլքով ես տեսա Մեր Սուրբ Մորը արեգակի ներսում, ինչպես և՝ մի Սիրտ ու մի Խաչ):

Վասո՛ւլա, մի՛ անտեսիր Սուրբ Վարդարանն աղոթելը:

Ո՛չ Հիսուս, չե՛մ անտեսի:

Ե՛կ, Մե՞նք, Մե՞զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ: Թող գովաբանվի Տերը:

Հունիսի 8, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ: Ես քեզ կհասկացնեմ, թե ինչ նկատի ունեի մի քանի օր առաջ Իմ տված Պատգամներից մեկում ասված արտահայտությամբ, երբ ասում էի, որ «դուք պետք է հագնեք Հին ժամանակների Իմ Զգեստները, երբ հանդիպեք Պետրոսին»[2], դա նշանակում էր, որ Իմ Ավետարանը անփոփոխելի է, և Այն պետք է քարոզվի այնպես, ինչպես Ես էի քարոզում: Ես ասել եմ նաև, որ «Իմ Զգեստները Պարզ են»: Դրանով Ես ուզում եմ ասել, որ ձեզ անհրաժեշտ է մոտենալ Ավետարանին և հասկանալ Այն, ինչպես մի մանուկ՝ մանկան հավատով:

Այսօր, Վասո՛ւլա, շատ քահանաներ այլևս չեն հավատում Իմ Խորհուրդներին, ուստի և չեն քարոզում Ավետարանը այնպես, ինչպես որ պետք է քարոզվի: Նրանք միմիայն հետաքրքրված են գոհացնել ձեր դարաշրջանին և հարմարվել ձեր մշակույթի պահանջներին: Այդ քահանաները հագնում են «նոր զգեստներ», որոնք տարբեր են Իմ զգեստներից: Նրանք պետք է իմանան, թե դա որքան է տխրեցնում Ինձ: Իմ Ավետարանը պետք է քարոզվի առանց սխալների, իսկ Իմ Խորհուրդները պետք է Խորհուրդներ մնան:

Շնորհակա՛լ եմ, Տեր: Թող փառավորվի Աստված: Ամեն:

---

[1] Դրանով ես հասկացա, որ Հիսուս սիրում է կիսել Իր Աստվածային գործերը մեզանից շատերի հետ, խնդրելով մարդկանց միանալու Իր Աստվածային Ծրագրին:

[2] Մարգարեությունը իրականացավ 2004, Նոյեմբերին:

Հունիսի 9, 1988

Վասո՛ւլա, չնայած քո թշվառությանը, ես՝ Տերս, սիրում եմ քեզ: Դու աղքատ ես հոգով, բայց ես ասել եմ, որ «Երանելի են հոգով աղքատները, որովհետև նրանցն է Երկնքի արքայությունը»: Ա՜հ, Վասուլա, դա հենց այն է, որ ես և ձեր Սուրբ Մայրն անում ենք: Մեր Սրտերն ընտրել են թշվառ հոգիներին, հոգով աղքատներին և Իմ արարչության նվաստագույններին, որպեսզի հայտնեն Իմ Նախախնամության Գործերը՝ չփոթեցնելու համար նրանց, ովքեր իրենց իմաստուն են համարում: Իմ Հոգին միշտ կընտրի նրանց, որոնց դուք «ոչնչություն» և «արհամարելի» կհամարեք, ամոթահար անելու համար իմաստուններին:

Վասո՛ւլա, հաստատակամ եղիր[1]: Ես միշտ օգնելու եմ քեզ: Արի՛, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Սուրբ Մարիամ, մենք, մեզ:

Հունիսի 10, 1988

(Սուրբ Մարիամն է խոսում)

Սուրբ Վարդարանի[2] միջոցով ես պիտի հաղթեմ: Աղջի՛կս, այս քայլը սկիզբն է գալիք շատ ուրիշ իրադարձությունների: Հասկացի՛ր, Վասուլա, որ Ֆաթիմայում ես հայտնվեցի որպես Վարդարանի Տիրուհի: Վասո՛ւլա, ես անսահման սիրում եմ քեզ: Դու կամենո՞ւմ ես Սուրբ Վարդարանն աղոթել ամեն օր:

Այո՛, ես կհնազանդվեմ Քեզ և Հիսուսին:

Հնազանդությո՛ւն... Թո՛ղ Իմ զավակներն իմանան, թե հնազանդությամբ չարը ինչպես է հաղթվում:

Եկեղեցին զարթոնք է ապրելու: Հիսուս և ես միշտ միասին ենք աշխատել, որովհետև Մեր Սրտերը միացած են: Եվ Հիսուսի Սուրբ Սիրտը Իր Խաղաղության ու Սիրո Պատգամը նախապատրաստել է քո միջոցով՝ ընտրելով ողջ մարդկության ամենատկար, ամենահետին և ամենաթշվառ զավակին: Բայց, չնայած այն հանգամանքին, թե ինչպիսին ես դու, Հիսուսն անսահման սիրում է քեզ: Նա քեզ ընտրեց աշխարհին ցույց

[1] Ջանալ լավագույն ձևով աղոթել Սուրբ Վարդարանը:

[2] Քանի որ Տերն ինձ խնդրել էր, որ սովորեմ Սորբ Վարդարանը, ես զանգահարեցի իմ հին հարևաններից մեկին, որը կաթոլիկ էր, և խնդրեցի ինձ սովորեցնել Վարդարանի աղոթքը: Նա զարմացավ, որովհետև ես պատկանում էի Հույն Ուղղափառ Եկեղեցուն, բայց և այնպես՝ եկավ:

տալու համար Իր անսահման Ողորմությունը: Նա ընտրեց քեզ՝ քո միջոցով Իր Սերը ցույց տալու համար: Վերադարձի՛ր, արարչություն:

Վերադարձի՛ր մեզ մոտ: Այժմ ժամանակը գրեթե վերջացած է: Լսի՛ր Մեր կանչը: Ձավակնե՛րս, շատ ժամանակ չի մնացել: Օ՜, սիրելիներս, լսեք Մեր Ձայնը: Լսե՛ք Մեր աղերսը: Լսե՛ք այս Սրտերին, որոնք սիրում են ձեզ, այն Վիրավոր Սրտերին, որոնք անդադար արտասվում են ձեզ համար: Վերադարձե՛ք Մեզ մոտ:

Հունիսի 20, 1988

Ծաղի՛կս, Իմ Գրքից կարդա այս խոսքերը և գրի առ դրանք: Գրի՛ր, Իմ Վասուլա: «Ես՝ Տերս, ուզում եմ ավելի զարգացնել Իմ խորհրդածությունները: Թույլ կտա՞ս Ինձ՝ քո Աստծուն, քեզ օգտագործել»:

Այո՛, Տեր, բայց խնդրում եմ երբեք չմոռանաս Իմ անկարողության մասին:

Չե՛մ մոռանա: Ուրեմն, լսի՛ր Ինձ և ծաղկիր: Խնկի նման անուշ բուրիր: Տարածի՛ր քո բուրմունքը շատ հեռուներում: Օրհնի՛ր Ինձ՝ քո Տիրոջը, Իմ բոլոր գործերի համար: Ազդարարիր Իմ Անվան մեծությունը: Հայտարարիր, թե որքան հրաշալի կարող են լինել Իմ Նախախնամության Գործերը: Այն, ինչ Ես թելադրում եմ՝ ճշգրտությամբ կատարվում է: Սովորեցրո՛ւ նրանց չդատել և չասել. «Ի՞նչ է սա», կամ «Ինչի՞ համար է դա»: Ամեն ինչ կուսուցանվի ժամանակին[1]: Թող նրանք սովորեն ասել. «Մեր Տիրոջ բոլոր գործերը բարի են»: Ամեն մի կարիք Ես կբավարարեմ իր ժամանակին: Նրանք չպետք է ասեն. «Սա ավելի վատ է, քան այն», որովհետև ամեն ինչ իր արժեքը ցույց կտա իր ժամանակին:

Հետևաբար, այժմ Ես ասում եմ ձեզ, որ ցնծաք և օրհնեք Ինձ՝ ձեր Աստծուն: Ես սիրում եմ ձեզ՝ բոլորիդ: Մե՛կ եղիր Ինձ հետ, զգա՛ Ինձ, զանազանի՛ր Ինձ և հետևի՛ր Ինձ:

Այո՛, Տեր:

Հունիսի 21, 1988

Տե՞ր:

Ես եմ: Աղոթե՛ք Իմ Եկեղեցու վերանորոգման համար: Աղոթե՛ք այն հոգիների համար, որոնք հակառակվում են Պետրոսին: Աղոթե՛ք նրանց համար, ովքեր փորձում են լռեցնել Պետրոսին: Այժմ օրերը հաշված են, և Իմ Հոգին ողողված է վշտով: Իմ Սուրբ Սիրտը լցված է դառնությամբ: Իմ Հոգին տենչում է, որ նրանք գիտակցեն իրենց Սխալը:

[1] Այս պատգամների ուսումնասիրությունը արված է C.D.F-ի կողմից Վատիկանում, 2002-2004 թթ., դրական արդյունք ստանալով:

Նրանք, ովքեր հակառակվում են Պետրոսին, հակառակվում են Իմ Եկեղեցուն: Նրանք հակառակվում են Իմ Օրենքին: Նրանք հակառակվում են Ինձ՝ իրենց Տիրոջն ու Աստծուն: Նրանք դատապարտում են «Իմ դառների Պետրոսին»՝ որով և դատապարտում են Իմ Օրենքը: Սատանայի փառասիրությամբ կուրացած՝ նրանք այլևս պարզորոշ չեն տեսնում, որ դատապարտելով Պետրոսին, նրանք չեն հետևում Օրենքին, այլ փոխարենը դառնում են Իմ սեփական Օրենքի դատավորները: Օ՜հ, լսե՛ք, թե Հոգին ինչ է ասում Եկեղեցուն: Վերադարձի՛ր, ե՛տ դարձիր, սիրելիս[1]: Այդ ես եմ, Տերը՝ որ ընտրել եմ Պետրոսին, Պետրո՛սը, որն այսօր կրում է Հովհաննես-Պողոս 2-րդ անունը: Ես քեզ եմ ասում, սիրելիս, Իմ Սուրբ Սիրտն է ընտրել նրան: Ե՛տ դարձիր և հաշտվի՛ր հանուն Ինձ, սիրելիս: Ես՝ Տերս, կներեմ քո մեղքերը և կմաքրագործեմ քեզ:

ՎԵՐԱԴԱՐՁԻ՛Ր: Վերադարձե՛ք դուք բոլորդ դեպի Պետրոսը, որովհետև այդ Ե՛ս եմ՝ ձեր Աստվածը, որ ընտրել եմ նրան: Այդ Ե՛ս եմ, որ տվել եմ նրան առաքյալի լեզու և Իմ միջոցով նա կարողանում է պատասխանել հոգնաբեկ մարդկանց: Օ՜հ, արարչություն: Մի՞թե այլևս իմաստություն չի մնացել ձեր մեջ: Արարչությո՛ւն: Դուք չեք գնահատում Իմ Անհուն Սերը, որն ունեմ ձեր հանդեպ, այդուհանդերձ, Ես պատասխանում եմ ամենքին, ովքեր կանչում են Ինձ: Ես ձեզ հետ եմ, երբ դուք դժվարին կացության մեջ եք, Ես՝ ձեր Ապաստարանն եմ:

Այսօր Ես՝ Տերս, մի պատվիրան ևս պիտի ավելացնեմ: Գրի՛ր. «Խոնարհվե՛ք: Խոնարհվե՛ք, որ կարողանաք հաշտվել և միաբանվել: Խոնարհեցրե՛ք ինքներդ ձեզ, որ միավորվեք»: Զավա՛կս,

Այո՛, Տե՛ր:

Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Հնազա՛նդ եղիր՝ թույլ տալով Ինձ օգտագործել քեզ այնպես, ինչպես կամենում եմ: Վստահի՛ր Ինձ. դու քո Հոր Ձեռքերում ես:

Տե՛ր, ես միայն քեզ եմ հետևում,
և իմ հոգին խաղաղության մեջ է,
ինչպես երեխան իր մոր կողքին:
Ես ամբողջովին վստահում եմ Քեզ,
և ինչպես մի երեխա,
ուզում եմ հնազանդվել Քեզ:

Հիշի՛ր իմ ներկայությունը: Ես քեզ հետ եմ: Մե՞նք, մե՞ղ:

Մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Տեր: Այո՛, Սբ. Մարիամ:

[1] Լեֆեբվրե եպիսկոպոս

Հունիսի 29, 1988

Տե՞ր:

Ես եմ: Ծաղի՛կս, այս սերը, որ Ես ունեմ ողջ մարդկության հանդեպ, երբեք չի հասկացվել այնպես, ինչպես որ հարկն է: Ես տառապում եմ: Ես խորապես տառապում եմ: Շատ սիրելի հոգի, հանգստացրո՛ւ Ինձ: Հանգստացրու Ինձ՝ սիրելով Ինձ:

Օ՜, Տե՛ր, եթե ես կարողանայի
թեթևացնել Քո տառապանքները՝
բաժնեկից լինելով դրանց,
թույլ տուր ինձ անել այդ:
Օգտագործի՛ր ինձ,
գործածի՛ր իմ յուրաքանչյուր բջիջը,
սովորեցրո՛ւ ինձ
Քեզ անսահման սիրել:

Ես սիրում եմ քեզ, Իմ Սուրբ Սրտի Վասուլա: Մենք կիսում ենք ամեն ինչ: Իմացի՛ր, որ դու կիսում ես Իմ Խաչը, դու կիսում ես Իմ տառապանքը: Օ՜, Վասուլա: Իմ Արյունը գետի նման դուրս է հորդում Մարմնիցս: Ես վերստին խաչվում եմ Իմ յուրայինների կողմից, այն ուրացության պատճառով, որ տեղ է գտել հենց Իմ Եկեղեցու սրբարանում՝ կարդինալների, եպիսկոպոսների և քահանաների կողմից: Իմ ամենամոտ բարեկամները դավաճանում են Ինձ: Ես լքվել եմ շատերի կողմից: Ես խարազանվում եմ շատերի կողմից: Ես խոցվել եմ Իմ ամենամոտ բարեկամների կողմից: Ես տառապում եմ և անցնում եմ մի երկրորդ Ձարչարանքի միջով:

Տե՛ր իմ:

Սիրի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ: Թող ես կարողանամ ասել այն նույն խոսքերը, որոնք ասաց քո պահապան հրեշտակը: Նրա խոսքերը հետևյալն էին. «Ոչ մի մարդ երբևիցե այնքան չի սիրել իր հրեշտակին, որքան դու ես սիրել»: Փոքրի՛կս, թող որ Ես էլ մի օր կարողանամ ասել քեզ. «Ոչ ոք քո դարաշրջանում երբևիցե չի սիրել Ինձ այնքան, որքան դու»:

Հուլիսի 3, 1988

(Հռոդոս)

Տե՛ր իմ:

Խաղաղություն քեզ, զավա՛կս: Իմ Եկեղեցին վերազարթնելու է, բայց նախքան այդ վերանորոգումը, Նա է՛լ ավելի շատ[1] է տառապելու: Նա իր Փորձությունների շեմին է գտնվում
Ահա՛, նայիր Իմ Արդարության Բաժակին:

(Ես նայեցի մի գեղեցիկ ոսկե բաժակի, որը զարդարված էր թանկագին քարերով: Այն բերնեբերան լիքն էր: Եթե մեկը շարժեր այն, անպայման թափվելու էր):

Տեսնո՞ւմ ես, թե որքան լիքն է այն: Այն գրեթե թափվում է: Այն հեղվելու է ձեզ վրա, արարչություն, բացահայտելով վաղուց մարգարեացված եկեղեցական նզովքը: Դուք ընկղմվելու եք խավարի մեջ: Ես գողի պես անսպասելի գալու եմ ձեզ մոտ:

Ես ձեզ զգուշացումներ եմ արել: Ես ձեզ նշաններ եմ տվել՝ աչալուրջ մնալու համար, բայց դուք մերժում եք դրանք: Դուք չեք ուզում ընդունել և ճանաչել Ժամանակների Վախճանը, անկախ այն բանից, թե Ես որքան եմ փորձել զգուշացնել ձեզ: Ձեր անհավատությունն Իմ հանդեպ ամբողջական է: Իմ զգուշացումը նման է լինելու Մաքրագործման՝ ձեզ դարձի բերելու համար, որն արվելու է մեծ խղճահարությունից դրդված: Ավա՛ղ, արարչություն: Ավա՛ղ, անհավատներ, որ ավելացնելու եք ձեր անհավատությունը՝ էլ ավելի ծառանալով Իմ դեմ: Խավարով պարուրված, ձեր հոգին քշվելու է որպես մի հոսանք, հենց Իր՝ Խավարի կողմից[2]:

Արարչությո՛ւն: Որքա՛ն եմ Ես խղճում ձեզ: Որքա՛ն եմ տառապում՝ տեսնելով, որ դուք կորած եք հավիտյան: Զավակնե՛րս, Ես Շունչ փչեցի ձեր մեջ՝ կյանքի կոչելով ձեզ, սրբագործելով ձեզ՝ նախքան ձեր ծնվելը. Ինձ վերադարձեք: Սիրտս կտոր-կտոր է լինում տեսնելով, թե որքան շատերն են ընկղմվելու այս հոսանքի մեջ՝ գնալով դեպի լիակատար խավարը և հավիտենական դատապարտությունը:

Արարչությո՛ւն, թեև ձեր մեղքերն ալ կարմիր են, Ես այնքա՛ն եմ ուզում ձեզ ներել: Եկե՛ք, եկե՛ք Ինձ մոտ, վերադարձե՛ք դեպի Ինձ՝ դեպի ձեր Հայրը: Ես սիրով կընդունեմ ձեզ և հազար անգամ ավելի սիրով կընդունեմ ձեզ, քան «անառակ որդու հայրը»: Վերադարձե՛ք Ինձ՝ նախքան Իմ Բաժակը դուրս կհորդի: Վերադարձե՛ք, նախքան Իմ Արդարությունը կփչի ձեզ վրա՝ անհամար պալարներ առաջացնելով, կիզելով ձեզ և ձեր շուրջը գտնվող ամեն մի կենդանի էակ: Դուք կուզենաք շնչել, բայց միայն այրող քամի կուլ կտաք, որը ներքուստ կայրի ձեզ՝ վերածելով ձեզ կենդանի ջահերի:

Արարչությո՛ւն, հասկացի՛ր, թե որքան մոտալուտ է այս ժամը, որովհետև այսօր դուք տեսնում եք, որ ծառերը տակավին ծաղկում են, բայց վաղը նրանցից ոչ մեկն անգամ չի մնալու: Դուք ծածկվելու եք սատանայի ծխով՝ մահացու շղարշով: Օ՜, հասկացեք, որ այս ավերմունքները և դժբախտությունները ձեզ վրա են թափվելու ձեր չար գործերի՝ ձեր ուրացության, Իմ դեմ ձեր ապստամբելու պատճառով:

[1] Ավելի, քան Նա տառապում է հիմա:
[2] Այս ասելիս Աստված ցավի մեջ էր և տանջվում էր:

Ապաշխարեցե՛ք հիմա, քանի դեռ ժամանակ կա, դարձի եկեք հիմա: Ես պատրա՛ստ եմ ներելու ձեզ:
Վասո՛ւլա, թույլ տուր Ինձ, որ գործածեմ քեզ:

Այո՛, Տեր, թող ամեն ինչ Քո Կամքով լինի:

Ուրախացրո՛ւ Ինձ: Հնազանդվի՛ր Ինձ՝ Քո Տիրոջը: Ես երբե՛ք քեզ չեմ լքի: Իմ Սուրբ Սիրտը Իմ խաղաղությունն է տալիս քեզ:

Հուլիսի 11, 1988

(Հռոդոս)

(Ես մենակ մնալու և գրելու դժվարություն ունեմ, չափազանց շատ մարդիկ կան շուրջս):

Օ՜, աղջիկս, ես՝ Տերս, սիրում եմ քեզ: Ե՛կ, առաջարկի՛ր Ինձ այն ամենն, ինչ որ ունես, նույնիսկ քո չարությունը, և Ես այն կվերափոխեմ բարիքի: Ես՝ Տերս, Աստվածային եմ և որևէ բան, որ մատուցվում է Ինձ, կարող է վերափոխվել Իմ Աստվածայնությամբ: Ես մաքրագործում եմ յուրաքանչյուր արարք: Իմ Սրբությամբ ու Մաքրությամբ Ես կարող եմ վերափոխել ամեն ինչ: Վասո՛ւլա, հաճախակի առանձնացիր: Ե՛կ Ինձ մոտ, թեկուզ և մի կարճ ժամանակով:

(Ավելի ուշ)

(Ես հարցնում էի Հիսուսին, թե որոնք են լինելու Հռոմի կաթոլիկների և ուղղափառների միավորման առաջին քայլերը):

Ես տալի՛ս եմ քեզ Իմ խաղաղությունը:

Ես իմ կամքն եմ տալիս Քեզ:

Հանդարտ մնա և լսի՛ր: Տո՛ւր Ինձ քո կամքը և թող որ Իմ Սուրբ Սիրտը ուրախությամբ թրթռա: Ցնծա՛ քո Աստծով, ուրախություն պատճառիր Ինձ: Ուրախացրու այս բոցավառ Սիրտը: Տո՛ւր Ինձ քո կամքը, դու տալիս ես այն քո Հորը, Որը ստեղծել է քեզ: Ե՛կ, Ես կպատասխանեմ քեզ: Քո եղբայրները պետք է հասկանան և հավատան, որ այդ Ես եմ՝ Տերը, որ ցանկանում եմ միավորել ձեզ: Քո եղբայրները[1] պետք է հասկանան, որ Ես քեզ իբրև քարետախտակ եմ գործածում՝ Իմ ցանկությունները գրի առնելու համար: Նրանք բոլորն էլ պետք է պատրաստակամ լինեն ցած իջնելու այն բարձր աթոռներից, որոնք նախապես ստեղծել էին իրենց համար:

Իմ Նախնի Եկեղեցին մաքուր էր, խոնարհ և սիրով լեցուն: Այսօրվա Իմ Եկեղեցին վերափոխվել է, նմանվելով գահերի մի բազմության:

[1] Հռոմեադավան կաթոլիկները և ուղղափառները

Նրանք բոլորն էլ պետք է իջնեն իրենց այդ բարձր աթոռներից և հետևեն նոր պատվիրանին, որ ես տվել եմ նրանց: Ես սիրում եմ Իմ զավակներին, իսկ նրանք մի կողմ են քշվել այդ կայենների կողմից: Նրանք Իմ Տունն անապատի են վերածել, ուր այժմ միայն փշեր ու մացառ են աճում: Վասո՛ւլա, ժամանակը մոտ է. Իմ վերադարձը շուտով է լինելու. Սերը կվերադառնա որպես Սեր: Սերը սիրում է քեզ:

Մի՛ փորձիր հասկանալ, թե ինչու եմ Ես քեզ ընտրել գրի առնելու Իմ Պատգամները: Հասկացի՛ր միայն, որ քեզ նման մի ոչնչություն ընտրելով, Ես է՛լ ավելի եմ փառավորվում այս Խաղաղության ու Սիրո Պատգամի համար, որովհետև, որքան ավելի դու փոքր ես, այնքան ավելի մեծ եմ Ես: Որքան ավելի նվաստ ես դու, այնքան ավելի Ես կխոնարհվեմ դեպի քեզ, որ հասնեմ քեզ: Եղիր բացարձակ մի ոչնչություն, թույլ տալով, որ Իմ Հոգին շնչի քո մեջ: Ամբողջապես անտեսանելի դարձիր, որպեսզի Ես միայն տեսանելի լինեմ: Բավարարի՛ր Ինձ, հոգի, հաճախ Ինձ հանձնվելով: Տալով Ինձ քո կամքը, դու հանձնվում ես Սիրուն:

Մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Հավիտյան:

Հուլիսի 14, 1988

(Այն ժամանակ, երբ ես Հռոդոսում էի գտնվում, Հիսուս համբուրեց և օրհնեց շատ մեդալիոններ ու խաչեր):

Խաղաղությո՛ւն քեզ, զավակս: Գոհացրու Ինձ, և ժպտա՛ Ինձ, երբ տեսնում ես Ինձ: Ա՜հ, Վասո՛ւլա, նրանք Ինձ շեմից այն կողմ չեն թողնում... մոռանալով Ինձ՝ դարձել են իրենց երկրորդական պարտականություններին: Տեսնո՞ւմ ես:

Արթնացե՛ք: Ձեր դռների մոտ Ես եմ՝ որպես մի մուրացկան: Նայե՛ք ձեր Գերիշխանին, որն աղաչում է ձեզ ինչպես մի մուրացկան: Ես ձեզանից սեր եմ աղաչում... Եղե՛ք բարի... Եղե՛ք կատարյալ... Սիրե՛ք միմյանց: Հաճա՛խ ապաշխարեք: Հաճա՛խ աղոթեք և աղոթեք ո՛չ միայն ձեր շահերի համար: Սիրուց դրդված Ինձ մոտ եկեք:

Ես՝ Տերս, սիրում եմ ձեզ, մի Սեր, որը դուք երբեք չեք հասկանա մինչև Երկինք չհասնեք: Գրկե՛ք Ինձ այնպես, ինչպես Ես՝ Տերս, գրկում եմ ձեզ: Այլևս մեղք մի՛ գործեք... Ես գիտեմ ձեր տկարությունները, ձեր թուլությունները: Ես ճանաչում եմ ձեր հոգին: Եկե՛ք, եկե՛ք Ինձ մոտ և ամեն ինչ տվեք Ինձ ու Ես կզարդարեմ ձեզ:

Վասո՛ւլա, ասա՛ նրանց, որ նրանք Ինձ ավելի լավ կճանաչեն, եթե ամբողջությամբ բացեն իրենց սրտերը և թույլ տան Ինձ ներս մտնել: Ես նրանց մեջ կլինեմ ու կլսեմ նրանց:

Տե՛ր, Դու խոսում ես այն մասին, երբ մենք բոլորս հանդիպե՞նք:

Այո՛: Մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Տեր[1]*:*

Վասո՛ւլա, զավակս:

Այո՛, Սբ. Մարիամ:

Ուրախացրո՛ւ Ինձ և եկ Ինձ[2] մոտ իմ մյուս զավակների հետ միասին: Եկե՛ք, և Ես կօրհնեմ ձեզ բոլորիդ: Ես սիրում եմ ձեզ:

Ես օրհնում եմ քեզ:

(Հետո Հիսուսն ասաց).

Հիշեցրո՛ւ նրանց, թե ինչպես Ես՝ Տերս, տակավին կանչում եմ նրանց: Ես ուզում եմ, որ նրանք գան ու մոտենան Ինձ: Ինչո՞ւ ետ քաշվել Սիրուց... Ես միշտ համբերությամբ սպասում եմ Իմ Տապանակի մեջ, թե նրանցից որևէ մեկը երբ է գալու Ինձ այցելության: Ավա՜ղ, Ես տակավին սպասում եմ...

Զգուշացե՛ք սատանայից, որը միշտ ամեն տեսակ պատրվակներ է ստեղծում հավատացնելու համար, որ դրանք խելամիտ են և ընդունելի: Նա զարդարում է դրանք, որպեսզի շատ տրամաբանական թվան՝ ետ պահելով ձեզ Ինձ մոտ գալուց:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Բացատրի՛ր նրանց, որ Ես քեզ ավելի շատ չեմ սիրում, քան իրենց: Նրանցից ոմանք պետք է ամբողջապես հասկանան սա: Եթե նրանք կարդան Խաղաղության ու Սիրո Իմ Պատգամը, ապա կհասկանան, որ Ես՝ Տերս, սիրում եմ ձեզ նույն սիրով: Ես սա կրկնում եմ նրանց համար, ովքեր դեռևս չեն հասկացել: Ուստի եկե՛ք Ինձ մոտ, այցելե՛ք Ինձ, եկե՛ք ու խմե՛ք Ինձանից և դուք ավելի կծարավեք: Եկե՛ք ու ճաշակեք Ինձ և դուք ավելի կբաղձաք Ինձ: Բացե՛ք ձեր սրտերը և ընդունե՛ք Ինձ. մի՛ թույլ տվեք, որ Ես ձեր դռան մոտ կանգնեմ: Սիրո՛վ ընդունեք Ինձ ձեր սրտերում: Ես գիտեմ ձեր կարիքները, Ես գիտեմ ձեր տկարությունները: Ձեր հոգին Իմ կարիքն ունի և միայն Իմ միջոցով է, որ դուք կարող եք Դրախտ մտնել: Ինչո՞ւ եք թույլ տալիս, որ ձեր հոգին ընկնի ցանցի մեջ, որ լարված է Իմ թշնամու կողմից:

Վերադարձե՛ք դեպի Ինձ. Ի՛նձ դարձեք. ուսուցանե՛ք ինքներդ ձեզ՝ կարդալով Իմ Սուրբ Խոսքը: Ժամանակը, որ դուք ապամագրում եք Ինձ կարդալով՝ իզուր չի անցնելու: Դուք վստահաբար կարող եք օրվա մեկ ժամը տալ ձեր Փրկչին:

Սիրե՛ք միմյանց: Խաղաղությամբ վարվեք միմյանց հետ: Ներե՛ք, ինչպես Ես եմ ներում ձեր մեղքերը: Զարին սիրո՛վ հատուցեք: Եղե՛ք բարի: Եղե՛ք կատարյալ: Եկե՛ք, Սերը սիրում է ձեզ, և Սերը երբեք չի թողնելու ձեզ: Սերն օգնելու և առաջնորդելու է ձեզ մինչև վերջ:

---

[1] Հիսուս շատ գոհ չէր Հռոդոսցիներից:

[2] Յամբիկայի մատուռը գտնվում է Հռոդոս կղզում, մի թեք սարի գագաթին, որը նայում է Սիջերկրական ծովին: Այն նշանավոր է մեր Տիրուհու սրբանկարով, որը մանավորապես հայտնի է չբեր կանանց զավակ պարգևելով:

Հուլիսի, 17 1988

(Կիրակի՝ Մարինայի տունը)

Վասո՛ւլա, Իմ Անարատ Սիրտն ամեն անգամ հրճվում է, երբ Ես հանդիպում եմ Իմ զավակներին Յամբիկայի Իմ փոքրիկ Տանը: Ես՝ ձեր Սուրբ Մայրը, սիրում եմ բոլորիդ: Ե՛կ, մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Սբ. Մարիամ, մենք, մեզ:

(Հռոդոսցիները ինձ խաչեր ու մեդալիոններ էին տվել, որ Հիսուս համբուրեր դրանք):

Տե՞ր:

Ես եմ:

Տե՛ր, ուզո՞ւմ ես համբուրել այս առարկաները՝ օրհնելով դրանք:

Բարձրացրո՛ւ դրանք Իմ շուրթերի մոտ. դրանք բոլորն էլ կօրհնվեն:

(Ես ամեն բան մոտեցրի Հիսուսի շուրթերին):

Հուլիսի 25, 1988

(Դարձյալ Շվեյցարիայում)

Հիսո՛ւս:

Ես եմ: Սովորեցրո՛ւ Իմ զավակներին ասել այն աղոթքները, որոնք Ես տվել եմ քեզ:

Երեք աղոթքնե՞րը, Տե՛ր:

Ճիշտ այդպես: Սիրելի՛ս, քեզ ամբողջությամբ Ինձ նվիրիր: Հետամո՛ւտ եղիր Իմ շահերին և փառավորի՛ր Ինձ:

Քո օգնությամբ, Տե՛ր:

Ինձնի՛ց կախյալ եղիր: Ես քեզ առաջնորդելու եմ մինչև վերջ և ամեն ինչ կիրագործվի իր ժամանակին: Իմ Գործերը կարելի է համեմատել խաղողի որթատունկի հետ: Դրանք ծաղկելու են և Իրենց պտուղն են տալու ճիշտ ժամանակին, այնպես, ինչպես խաղողի որթը իր պտուղն է տալիս տարվա իր եղանակին: Հանուն Ինձ կրի՛ր այն դժվարությունները, որոնք շրջապատում են քեզ և հենվի՛ր Ինձ վրա՝ քո Աստծո վրա: Վստահությունդ մի՛ կորցրու: Քո դարաշրջանն անապատ է: Թույլ մի՛

տուր, որ այդ չորությունը ազդի քեզ վրա, զավա՛կս. դու պետք է վստահես Ինձ: Մի՞թե ես քեզ հարություն չեմ տվել մեռելներից.

Ես եմը՝ Լույսը և Կյանքը: Ժամանակ առ ժամանակ թույլ տուր, որ փորձեմ քեզ: Թո՛ւյլ տուր, որ առաջնորդեմ քեզ կույր հավատով: Թույլ տուր, որ փորձեմ Իմ հանդեպ ունեցած քո սերը: Թույլ տուր, որ ձգեմ այն սերը, որ դու ունես Իմ հանդեպ: Եղի՛ր Իմ Լույսի զավակը՝ ապրելով Իմ Լույսի ներքո: Ես եմ այս աշխարհի Լույսը, որը զարդարելու է քեզ: Մնա՛ Ինձ հավատարիմ:

Իմ Օրը մոտենում է, և Ես պետք է գամ ձեզ մոտ գողի նման անսպասելի, առանց ձեզ զգուշացնելու: Երուսաղե՛մ: Դու դավաճանել ես Ինձ՝ քո Տիրոջը և ճիշտ քո սրտի կենտրոնում չարն արմատավորել է իրեն: Այո՛, Երուսաղեմ, քո ներսում գեղարդի սայրն է գտնվում: Դավաճանություն և հերետիկոսություն է ներթափանցել քո մեջ:

Ինչպե՞ս կարող էիր երբևէ հավատալ, որ Ես չեմ տեսնելու քո չարությունը: Ես անսպասելի գալու եմ քեզ մոտ՝ քեզ տապալելու համար: Ես այժմ ճիշտ քո դռների մոտ եմ և կայծակի նման իջնելու եմ քեզ վրա և ոչնչացնելու եմ քեզ: Դու ընտրել ես Իմ թշնամու զորությունը և ոչ թե Իմ շնորհը: Դու ընտրել ես չարությունը հենվելով Սև գազանին, փոխանակ Ինձ՝ Լույսին ընտրելու: Ես գալու եմ Իմ սեփական ձեռքերով տապալելու ձեր աթոռները՝ ջախջախելով այն բոլոր չարագործներին, որոնք փակում են Ճշմարտության Ճանապարհը:

Երուսաղե՛մ: Քո Փորձությունները դեռ նոր են միայն սկսվել: Ես մաքրելու և զտելու եմ քեզ Իմ կրակի մեջ: Ես արմատախիլ եմ անելու քո չար արմատները՝ այրելով դրանք և այն բոլոր ուսմունքները, որոնք դալկացրին Իմ Մարմնը: Դու այլևս չես ուզում Քո Հովվին [1]: Սնափառությամբ հարբած, Անհնազանդությամբ հարբած, Տարաձայնությամբ հարբած, ինչպե՞ս կարող էիր հավատալ, որ ի վիճակի ես գոյատևելու: Անհնազանդության պատճառով դուք սովի էք մատնել Իմ գառներին՝ փնտրելով ձեր շահերը և ոչ թե Իմը:

Երուսաղե՛մ: Դու Ինձ այնքա՛ն շատ ցավ ես պատճառում: Ես միշտ այնքա՛ն եմ ցանկացել միավորել ձեզ բոլորիդ և հավաքել քո զավակներին, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևերի տակ՝ պատսպարելով նրանց... բայց դու մերժեցիր: Իմ Աչքերը և ձեր Սուրբ Մոր Աչքերը երբեք չդադարեցին Արյան Արցունքներ հեղելուց՝ դիտելով այդքա՛ն անարդարություններ Իմ սեփական Տան մեջ: Ես սիրել եմ ձեզ հավիտենական սիրով, սակայն Ես միայն դավաճանվել ու վիրավորվել եմ Իմ մտերիմների կողմից... Իմ Ողորմությունը Մեծ է, և Ես պատրաստ եմ իսպա՛ռ ներելու ձեզ: Ես չեմ նայի իմ վերքերին: Ես պատրաստ եմ մոռանալու ձեր մեղքերը:

Վասո՛ւլա, նրանք անդադար խարազանում են Ինձ: Այնուամենայնիվ, չնայած Իմ անտանելի տառապանքներին, Ես պատրաստ եմ ներել նրանց և մոռանալ... Ե՛կ, զավա՛կս, մնա՛ Իմ Սուրբ Սրտում: Սերը ծարավի՛ է սիրո:

(Հիսուսի շրթունքները մագաղաթի պես չոր էին):

[1] Հովհաննես-Պողոս 2-րդ Պապին

Այժմ հանգստացի՛ր: Ես քեզ հետ եմ: Աղոթի՛ր այն հոգիների համար, որոնք մերժում են Ինձ: Թեթևացրո՛ւ Իմ ցավերը՝ սիրելով Ինձ: Հաճեցրու քո Աստծուն, քո Աբբային: Ե՛կ, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Աբբա:

(Ես վերստին շատ զգացվեցի և խղճահարվեցի մեր Հոր համար, որին նրանք մերժում են):

Վասուլա, խղճա՛ քո եղբայրների համար, խղճա՛ նրանց անկումների համար: Խղճա՛ նրանց կուրության համար և աղոթիր նրանց համար:

Հուլիսի 26, 1988

Տե՞ր:

Իմ Եկեղեցին դաժանորեն վիրավորվել է և Եկեղեցու Հիմքերը շուտով ցնցվելու են: Սրան հետևելու է նրանց բոլորի ընաջնջումը, ովքեր որ Նրան Վերքեր պատճառեցին և ովքեր հավաքվեցին Իմ Մարմնի մեջ՝ Նրան վնասելու մտադրությամբ:

Նրա փորձությունները դեռ նոր են սկսվել: Երուսաղեմի պատերը փլվելու են՝ վերածվելով հողի մի կույտի, որպեսզի Իմ Նոր Երուսաղեմը կարողանա վերակառուցվել: Այդ Ես եմ՝ Տերը, որ նորից կառուցելու եմ այն: Ես վերանորոգելու եմ Նրա պատերը, Ես նրան զարդարելու եմ այնպես, որ դուք բոլորդ կարողանաք ապրել նրա նոր Տանիքի տակ՝ նոր երկնքի և նոր երկրի ներքո: Եվ Սերը կվերադառնա ձեզ մոտ որպես Սեր, ապրելով ձեր մեջ: Ես պիտի լինեմ ձեր Աստվածը և Իմ Անվան ներքո դուք բոլորդ պիտի ապրեք խաղաղությամբ: Ձեր հոգին պիտի լցվի սրբությամբ և մաքրությամբ:

Այո՛, Վասուլա, Ես կիջնեմ Երկնքից Կայծակի նման՝ նրան ամբողջապես նորոգելով: Շատ փորձություններ են լինելու, որովհետև նրանք ամայացրել են Իմ Տունը, նրանք կողոպտել են Այն: Հասկանո՞ւմ ես, Վասո՛ւլա: Սա նման է այն բանին, երբ Տանտերը Իր տնտեսությունը վստահում է Իր ծառաներին: Թեև նրանց խստորեն հրամայված էր, որ կարգ ու կանոնի մեջ պահեին Իր Տունը և կողոպտիչներից պաշտպանեին, սակայն նրանք չհնազանդվեցին նրա հրամաններին՝ իրենց անփութության և անհոգության պատճառով: Իր վերադարձին Տերը կտեսնի, որ Իր ծառաները քնել են և նրանց քնած ժամանակ Իր Տունը կողոպտվել է, և Իր թանկարժեք իրերը թալանվել են: Ծառաները չեն հնազանդվել և ապստամբել են Նրա հրամանների դեմ և այդ նույն ծառաները շատ խիստ պատժի պիտի ենթարկվեն, երբ Տերը վերադառնա:

Իմ Վերադարձին Ես Իմ Տունն ավերակների մեջ եմ գտնելու, իսկ Իմ Տան Հիմնական Բաղադրամասերը՝ կորած: Իմ գառներին գտնելու եմ ցիրուցան վիճակում և սովամահ դարձած: Ա՜խ, Վասո՛ւլա, Ես որքա՜ն բան ունեմ վերանորոգելու և վերականգնելու... Փշերն ու մացառներն են գրավել շուշանների և վարդերի տեղը, որոնց Ես տնկել էի Իմ սեփական

Ձեռքերով: Նրանք մեկը մյուսի ետևից խեղդել են Իմ ծաղիկներին: Նրանք աճել են սատանայի օգնությամբ, որպեսզի չրջապատեն և ծուղակը գցեն Իմ ծաղկին[1]: Նրանք օր-օրի մոտենում են, իսկ այժմ այնքան են մոտեցել նրան, որ անհանգստացնում են[2] նրան, և նա զգում է նրանց թունավոր խայթոցները: Այդ փչերը չնչահեղձ են անում նրան: Պետրոսը ծուղակն է ընկած և անօգնական է մնացել նրանց մեջ:

Վասո՞ւլա:

Այո՛, Սո՛ւրբ Մարիամ:

(Մեր Սուրբ Մայրը եկավ):

Հավատա՛, որովհետև այս ամենը տեղի է ունենում: Իմ Որդու Արյունը էլ ավելի հորդառատ է հոսելու: Պետրոսի վախճանը մոտ է: Սերը բացակայում է:

Հուլիսի 27, 1988

Տե՞ր:

Ես եմ: Հաճեցրո՛ւ Ինձ և զանազանիր Ինձ: Ես ներկա եմ: Ես լսում եմ: Ես ձեր մեջ եմ: Փորձի՛ր:

Փորձում եմ:

Ավելի ուժեղ փորձիր: Հետևի՛ր Իմ հրահանգներին և Ինձ քո սրտում փակված պահիր:

Այո՛, Տեր:

Ամեն ինչ, որ անում ես, արա Ինձ համար, և միայն Ինձ համար: Ե՛կ, ժամանակ առ ժամանակ Ես քեզ պիտի հիշեցնեմ Իմ Ներկայության մասին: Ամենաչնչին կասկածն իսկ մի՛ ունեցիր: Փորձի՛ր ըմբռնել այն, ինչ քեզ տվել եմ որպես գործ: Աշխատի՛ր խոնարհաբար ամբողջությամբ Ինձ վրա հենվելով: Ինքդ քեզ ամբողջովին աննկատելի դարձրու, որպեսզի Ե՛ս միայն տեսանելի լինեմ: Թույլ տուր, որ Իմ Հոգին շնչի քո ոչնչության մեջ. ուրախացրո՛ւ Ինձ այս ձևով: Այն բոլորը, ինչ ես տվել եմ քեզ՝ Իմն է: Ինքդ քեզ խլաառ անջատիր այս աշխարհից, որպեսզի զգաս Ինձ և ամբողջապես Իմը լինես: Ես՝ Տերս, քո ուսուցիչն եմ, և Իմ Խոսքերը գալիս են Իմաստությունից:

Մե՞նք, մե՞զ: Քո Սուրբ Ընտանիքի հետ միասին:

Այո՛, Տեր: Այո՛, Սուրբ Մարիամ:

---

[1] Հովհաննես-Պողոս 2-րդ Պապին

[2] Հետաքրքրական է, որ Պապը, մահից առաջ շնչառության լուրջ խնդիր է ունեցել:

Հուլիսի 29, 1988

(Սբ. Մարթայի տոնը)

Սիրելիներ: Ծաղկե՛ք սիրով: Ձեր մեջ զգացեք Իմ Ներկայությունը: Զգացե՛ք Իմ խոր Սերը, որը Ես տածում եմ բոլորիդ հանդեպ. Հավատացե՛ք այս Սիրուն: Ե՛ս եմ Սիրո Աղբյուրը: Իմ Հոգին ձեզ վրա է: Եկե՛ք ... Ես ցանկանում եմ, որ դուք մաքուր դառնաք, սուրբ և ողորմած: Թույլ տվեք, որ Իմ հանդեպ ունեցած ձեր սերը Ես ավելացնեմ՝ վերածելով այն անսահման սիրո: Թույլ տվեք Ինձ՝ ձեր Տիրոջը, որ ձեր սրտի մեջ թափեմ Իմ հորդառատ Սերը և ձեզ լցնեմ Աստվածային և Վսեմ Սիրով, որպեսզի այն դուրս հորդի և ողողի այս աշխարհը՝ պատվելով Իմ Եկեղեցին: Ձեզ թույլ տվեք վերցնել այս Անսահման Սիրուց և լցնել ձեր սրտերը:

Այն ամենն, ինչ Ես խնդրում եմ ձեզնից, սիրելի եղբայրներ, սեր է, հավատարմություն և մաքրություն: Մի՛ վհատվեք, փոքրիկներս, երբ փորձություններ են գալիս. Ես երբեք չեմ լքի ձեզ: Ես ձեր Հովիվն եմ, և Ես ձեզ կթաքցնեմ Իմ Թիկնոցի տակ: Ինձ հետ դուք կճաշակեք: Ինձ հետ դուք երբեք չեք ծարավի:

Վարվե՛ք միմյանց հետ այնպես, ինչպես Ես եմ վարվում ձեզ հետ: Սիրե՛ք միմյանց այնպես, ինչպես Ես եմ ձեզ սիրում: Պատասխանե՛ք միմյանց այնպես, ինչպես Ես եմ պատասխանում ձեր աղոթքներին: Կերակրվե՛ք Ինձանից և մի՛ ընդունեք սատանայի պտուղները, որոնք են՝ անհավատարմությունը, նախանձը, անմիաբանությունը և պղծությունը: Եղե՛ք մեկ: Կատարյալ եղեք: Թող Իմ Տունը շողշողա մաքրությունից: Թույլ տվեք, որ Իմ Արդարության ցողը իջնի ձեզ վրա և տարրալուծի այդ ծանր ամպրոպաբեր ամպերը՝ ցաք ու ցրիվ անելով դրանք: Թույլ տվեք, որ Իմ Լույսը թափանցի նրանց մեջ, որպեսզի ողջ խավարն ու չարը անհետանան: Եղե՛ք ծաղիկների նման, որոնք նայում են արևին, և թող Իմ Ջերմ Ճառագայթները կենդանացնեն ձեր սրբությունը, մաքրությունը, արդարությունն ու սերը: Հետևե՛ք Իմ պատվիրաններին՝ միշտ սիրելով միմյանց այնպես, ինչպես Ես՝ Տերս սիրում եմ ձեզ:

Ես՝ Տեր Հիսուս Քրիստոսը, անսահման սիրում եմ ձեզ: Ես շուտով պիտի գամ: Ես օրհնում եմ բոլորիդ:

Օգոստոսի 2, 1988

Ես՝ Տերս, զթառատ եմ և Իմ Ողորմությունն անհամեմատելի է: Իմ Ողորմությունը Մեծ է և անչափելի: Արարչությո՛ւն: Քո մեղքերը սև են, ինչպես ածուխը, և առանց Իմ Անսահման Ողորմության, Իմ Արդարությունը ձեզ ամբողջապես կկործաներ: Ես հիմա ձեր դռների մոտ եմ և ներս եմ մտնելու ինչպես գող: Ուշադրություն դարձրեք Իմ Նշաններին: Պատրաստ եղեք:

Աղոթի՛ր, Իմ Վասուլա: Աղոթի՛ր նրանց համար, ովքեր տակավին դիմադրում են Ինձ և աղոթի՛ր նրանց համար, ովքեր վիրավորում են Ինձ և մթագնում են աշխարհը՝ դատապարտելով Իմ գառներին, որոնք

քայլում են ճիշտ ուղիով: Ազատի՛ր նրանց: Ազատի՛ր նրանց՝ բերելով Ինձ մոտ: Ա՜հ, Վասուլա: Փոքրիկ գառնուկ: Ինձ մոտ մնա: Մնա՛ Իմ Թիկնոցի տակ թաքնված, պահված Իմ Սրտի մեջ: Փրկությունը Ինձնից է գալու. թույլ տուր Ինձ, որ քեզ օգտագործեմ:

Այո՛, Տեր:

(Սուրբ Մարիամը)

Եղիր հոժարակամ: Աղջի՛կս, հիշիր Իմ Ներկայությունը: Մենք, մեզ, հավիտյանս հավիտենից: Մենք, մեզ, միասին:

Օգոստոսի 4, 1988

(Հռոմ)

(Պապի հետ հրապարակային ունկնդրության ժամանակ, այն պահին, երբ նա ինձ մոտ էր կանգնած, ես կարողացա նրա գոտու մեջ դնել Հիսուսից մի պատգամ: Այդ պահին լուսանկարեցին: Ես այսօր շուրջս տեսա Հիսուսին՝ լայն ժպիտով՝ անընդհատ ինձ նայելիս):

Հիսո՞ւս:

Ես եմ: Ծաղի՛կ, հետամուտ մի՛ եղիր հասկանալու Իմ Ուղիները: Պարզ եղիր և ընդունիր այն ամենն, ինչ գալիս է Ինձանից: Ես՝ Տերս, առաջնորդել եմ քեզ դեպի Իմ Տունը: Ես առաջնորդել եմ քեզ տեսնելու և հանդիպելու Իմ այնքան սիրելի ծառա Հովհաննես-Պողոս 2-րդին: Շատ սիրելի հոգի, դու հնազանդվեցիր Ինձ, դու վստահեցիր Ինձ, դու ապավինեցիր Ինձ: Հրճվի՛ր, հոգի: Որովհետև Ես՝ քո Աստվածը, հրճվում եմ: Պարզությունը հմայում է Ինձ, հնազանդությունը թրթռացնում է Իմ Սուրբ Սիրտը, որովհետև դա է չարի դեմ կռվելու Զենքը:

Տե՛ր, արդյոք ճի՞շտ էր Քո նամակը պապի գոտու մեջ դնելը:

Դու հնազանդվեցիր Ինձ, թող սա հնազանդության մի օրինակ լինի ուրիշների համար: Էական չէ, թե որքան դժվարին կթվա քեզ իրավիճակը՝ վստահի՛ր Ինձ և հնազանդվի՛ր: Ես միշտ կօգնեմ քեզ, երբ տեսնեմ, որ դու հնազանդվում ես Ինձ և կատարում ես Իմ Կամքը: Հետամուտ մի՛ եղիր հասկանալու, թե Ես ինչու եմ ասել քեզ, որ դու այդ բանն անես Ինձ համար: Հիշի՛ր, որ այդ Ես եմ՝ Տերը, որ միավորելու եմ ձեզ բոլորիդ Իմ Անվան ներքո, և Իմ Զորության միջոցով է, որ Իմ բոլոր ցանկությունները իրականանալու են:

Թող Իմ Մատը մնա քեզ վրա, զավա՛կս, քեզ այս ձևով գործածելով: Թույլ տուր Ինձ Իմ քողը թողնել քեզ վրա, դրանով քեզ հեռու պահելով չարից ու խանդավառել քեզ բոլոր այն շնորհներով, որ Ես հեղել եմ քեզ վրա: Ես՝ քո Աստվածը, սիրում եմ քեզ և երբեք քեզ չեմ լքի, նույնիսկ՝ ամենից ճգնաժամային վիճակներում: Սերը ներշնչելու է քեզ:

Իմաստությունը սիրում է կյանքը: Իմաստությունը կրում է Սրբության անունը, և Նա տրվում է բոլոր նրանց, ովքեր հնազանդվում են Ինձ: Բոլոր ուսուցումները գալիս են Իմաստությունից: Վստահի՛ր Ինձ և ցանիր Սրբության սերմերը:

Խաղաղություն քեզ: Ե՛կ, հիշի՛ր Իմ Սուրբ Ներկայությունը: Ժպտա՛ Ինձ:

Օգոստոսի 6, 1988

(Հռոմ)

(Մեր Սուրբ Մայրը)

Վասո՛ւլա, երբեք մի՛ կորցրու արիությունդ. Ես քո կողքին եմ: Մտի՛ր Հիսուսի Վերքերի մեջ: Մտի՛ր Իմ Տանջահար Սիրտը և զգա՛ Իմ վիշտը: Զգա՛, թե ինչպես եմ Ես արտասվում:

Ես շատերին եմ այցելում[1]: Ես նրանց ցույց եմ տալիս Իմ Սիրտը: Ես նշաններ եմ տալիս՝ թույլ տալով, որ Իմ Կերպարները արցունքներ հեղեն: Ես հայտնվում եմ զանազան վայրերում, բայց Իմ զավակների սրտերը պատված են հաստ կեղևով՝ անհավատության ծածկույթով: Նրանք ծաղրում են նրանց, ովքեր հավատում են: Նրանց համար Աստծո Խոսքը ոչինչ չի նշանակում: Աստծո կոչերն անտեսվում են: Նրանք քիչ ուշադրություն են դարձնում Մեր զգուշացումներին: Ոչ ոք չի ուզում լսել հայտնությունները, որոնք տրվել են Աստծո կողմից ու խոսվել են Նրա Բերանով: Ձեր դարաշրջանի հավատը անհետացել է, կուլ է գնացել անհանդուրժողականությամբ, այլասերմամբ, դաժանությամբ ու անարգությամբ: Որքա՜ն վշտահար է Իմ Անարատ Սիրտը: Իմ Ձեռքն այլևս չի կարողանում պահել Աստծո բազուկը ձեզ վրա իջնելուց:

Եկեղեցին կարիք ունի զարթոնքի և Նրա Մաքրագործման ժամանակը այժմ գրեթե լրացել է: Սուրբ Հոգին կիջնի բոլորիդ վրա՝ տալով ձեզ <u>հույս, սեր և հավատ</u>՝ նորոգելով ձեր հավատը և սնելով ձեր հոգին: Սա հայտնի կդառնա որպես Մեծ Վերադարձ, որպես մի Հավերժական Աղբյուրի բխում, որպես Ծաղիկների Ծաղկունք: Եկեղեցու մաքրագործումը կպատրաստի ձեր բոլորին տեսնելու մի Նոր Երկինք ու մի Նոր Երկիր: Նա կպատրաստի ձեզ <u>հանդիպելու ձեր Աստծուն</u>: Հասկացի՛ր Իմ խորին սերը, որ Ես տածում եմ բոլորիդ հանդեպ:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, մենք, մեզ:

Ե՛կ:

[1] հայտնվում

Օգոստոսի 7, 1988

(Հոմ)

Ես ուզում եմ, որ դու զգաս Ինձ՝ զգաս Իմ Սրտի ցանկությունները, Իմ Սիրո ծարավը, քեզ Ինձ մոտ պահելու Իմ փափագը, ողջ մարդկության հանդեպ ունեցած Իմ խանդոտ Սերը: Հրաժարվիր քո ճգտումներից, բացարձակապես՝ բոլորից: Իմ Ներկայությամբ դու կարիք չունես դրանց, քանի որ Ես Ինքս կերակրում եմ քեզ: Թող Իմ Գործերն ամբողջությամբ Ինձնով իրագործվեն: Ընդունի՛ր այն եղանակը, որով Ես քեզ առաջնորդում եմ: Մտի՛ր Իմ Սուրբ Սիրտը:

Ես օրհնում եմ քեզ:

Օգոստոսի 8, 1988

(Հոմ)

Սիրելի՛ս, Ես ուզում եմ քեզ հիշեցնել, որ Ես քո Հովիվն եմ, որը փնտրեց քեզ և ի վերջո գտավ: Դու մեռած ընկած էիր մյուս մեռելների մեջ: Ես եմ Հարությունը և Իմ միջոցով է միայն, որ դու կյանք ես գտնելու՝ Հավիտենական կյանք: Բայց վերադարձի ժամանակ Հովիվն Իր գառներին կգտնի ցիրուցան եղած և շատերին էլ՝ սովահար, իսկ Փարախը, ուր որ գտնվում էին նրանք, Իր իսկ ընկերների կողմից՝ ավերված: Իմ գառները, որոնց հետ կոպիտ էին վարվել և որոնք սովահար էին եղել, մեռած ընկած էին: Այն հովիվները, որոնք հսկում էին Իմ Փարախին, չէին հնազանդվել Ինձ. նրանք անհավատարիմ էին գտնվել Իմ հանդեպ: Ուստի Ես ստիպված եմ նրանց հեռացնել, վախենալով ավելի մեծ վնասներից: Սա Իմ Եկեղեցու համար հայտնի կդառնա, որպես մի մեծ փորձություն: Ե՛կ, դու սովորում ես: Սերը սիրում է քեզ:

Օգոստոսի 9, 1988

(Հոմ)

Հիսո՞ւս:

Ես եմ: Թանկագին հոգի, որքա՜ն եմ Ես սիրում քեզ:

Եկեղեցին պիտի վերակենդանանա Իմ միջոցով: Թույլ տուր, որ Ինքս Ինձ հայտնեմ քո միջոցով, Իմ զմուռս: Անուշ բույրով պարուրիր Ինձ՝ քո Տիրոջը: Ես քեզ ցույց եմ տվել Իմ Սուրբ Սիրտը: Ես քեզ մոտ եմ եկել, հոգի, սովորեցնելու Իմ Ուղիները և առաջնորդելու քեզ դեպի Ճշմարտություն: Քո սերունդը փնտրում է Ճշմարտությունը, երբ Ճշմարտությունը Սերն է: Բայց Սերը բացակայում է նրանց մեջ: Իմ

Անունը[1] այլևս ոչինչ չի նշանակում նրանց համար: Այդուհանդերձ, Իմ Ողորմությունը Մեծ է նրանց վրա, ովքեր պղծում են Ինձ:

Իմ արարչությունը լքել է Իմ ուղիները: Նրանք իրենց թույլ են տվել, որ առաջնորդվեն Կույր Առաջնորդներով: Նրանք ապստամբել են Իմ Օրենքի դեմ՝ ուսուցանելով մի օրենք, որն Իմը չէ: Արարչությո՛ւն: Եթե միայն իմանայիք, թե որքա՜ն մոտ եք կանգնած Անկմանը: Հոգ տարեք միմյանց[2] համար՝ փոխանակ իրար հալածելու: Սովորե՛ք Իմ Ճանապարհները՝ Իմաստության Ճանապարհները: Թո՛ղ որ յուրաքանչյուր գործ կամ միտք Սիրով պարուրված լինի:

Ծաղի՛կ, Ես եմ քո Նվիրյալ Պահապանը, ուստի վստահի՛ր Ինձ: Ես պահում եմ քեզ Իմ Լույսի ներքո՝ սնելով քեզ իմ Ավիշով: Վստահի՛ր Ինձ՝ քո Աստծուն, որովհետև քեզ շատ շնորհներ եմ տվել: Ես միշտ մոտիկ կլինեմ քեզ՝ զարդարելով քեզ: Ես-Ամենայն-Հավատարիմն-եմ:

Ե՛կ, մենք, մեզ: Մե՛կ եղիր Ինձ հետ:

Շնորհակալ եմ, Աստված Իմ Քեզանից:

(Ես մի ակնթարթ տեսա Աստծո գեղեցկությունը և ինձ բերկրանք պատճառեց Աստծով պարուրված լինելը):

(Ավելի ուշ)

(Մեր Սուրբ Մայրն է խոսում)

Պայքարն ավարտված չէ: Եթե միայն իմանայիր, թե ամեն օր քանի-քանի՜ հոգիներ են ընկնում դժոխք... Քանակը զարհուրելի է ...

(Ես հարցրեցի, թե՝ «ովքե՞ր»...)

Կարդինալներից[3] ... մինչև մանուկները: Քո դարաշրջանն այլասերվել է. արդարև, այն դարձել է Մեր հակառակորդի տիրապետությունը: Նա իր տիրապետությունը ամբողջապես ընդլայնել է երկրի վրա: Ա՜հ, Վասո՛ւլա ... Ատված հաշվում է օրերը: Օրեր, երբ Նա ձեզ վրա կթափվի ինչպես ցող՝ կենդանացնելով ձեզ, որպես Նոր ու Լիառատ մի Պարտեզ: Այն հայտնի կդառնա որպես Նոր Հոգեգալուստ: Եկե՛ք ու ծնրադրեք բոլորդ և աղոթե՛ք Տիրոջը այս Փառավոր Իրադարձության համար: Աղոթե՛ք այդ դալստյան համար, աղոթե՛ք, որ Սերը ետ վերադառնա:

Վասո՛ւլա, Ես Վարդարանի Տիրուհին եմ:

Սո՛ւրբ Մայր, ինչո՞ւ Ես Ինքդ Քեզ այս ձևով ներկայացնում, արդյոք մի հատուկ հիշատակություն կա՞ Քո պատգամում:

Այո՛, այն ամենն, ինչ Ես ասել եմ Ֆաթիմայում, իրականանալու է նախքան այս դարաշրջանի վախճանը: Ե՛կ, այժմ հանգստացիր Իմ

[1] Նրա Անունը Սեր է:
[2] Նկատի ունի հոգևորականներին:
[3] Մեր Սուրբ Մայրը տատանվում էր, և Ես զգացի Նրա սուր ցավը:

Անարատ Սրտում և Հիսուսի Սուրբ Սրտում: Ուրախացրո՛ւ Հիսուսին՝ ծառայելով Նրան, ինչպես որ անում ես և սիրելով Նրան՝ հատուցում ես նրանց համար, ովքեր չեն սիրում Մեզ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, հավիտյան:

Օգոստոսի 15, 1988

(Սբ. Աստվածածնի Վերափոխման տոն)

Տե՛ր Հիսուս, օրհնյալ լինես:

Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ: Իմ Սուրբ Սիրտը երկնում է ցավերով: Փշերով լցված՝ Ես թեթևացում և մխիթարություն եմ փնտրում բոլոր նրանց մեջ, ովքեր սիրում են Ինձ: Օրհնի՛ր Ինձ և փնտրի՛ր Ինձ: Ես շրջվում և հասնում եմ Իմ փոքրիկ հոգիներին, որովհետև նրանց փոքրության մեջ Ես գտնում եմ Իմ հանգիստը, Ես գտնում եմ Իմ մխիթարությունը:

Ա՜հ, Հիսուս, այնքան ցավալի է զգալ, որ Դու տառապում ես այդպես...

Աղոթի՛ր այն հոգիների համար, որոնք փրկության կարիք ունեն: Աղոթի՛ր Ինձ, որովհետև Իմ Անունն է «Նա-Ով-Փրկում է»: Ժամերը փախչում են, հաշիվ տալու օրերը սկսվել են, հատուցման օրերը հասել են: Այս սերնդի անիրավությունն <u>այնքան մեծ է</u> և ուրացությունն <u>այնքան լուրջ</u>, որ Մեր Երկուսի Սրտերն էլ կրկին ու կրկին խոցվում են նրանց անարդարությամբ ու սարսափելի վիրավորանքներով:

Ես աղաչում եմ, որ վերադառնաք Ինձ մոտ և դեպի Ինձ շրջվեք, և Ես <u>կնեբեմ</u> ձեզ: Ամո՛ւր կառչեք Սիրուց, և Ես օրհնություններ կտեղամ ձեզ վրա: Արդար ու բարի եղեք միմյանց հանդեպ: <u>Սիրեցե՛ք միմյանց:</u> Դարձե՛ք Իմ Լույսի զավակները: Հասկացե՛ք, թե ինչպես է, որ այսքան շատ աղետներ են գալիս ձեզ վրա: Դրանք գալիս են այն չարության պատճառով, որ կուտակվել է ձեր հոգու մեջ: Վերադարձե՛ք Ինձ և թույլ տվեք, որ Իմ Արյունը մաքրագործի ձեզ:

(Ավելի ուշ)

Ես ձեր Սուրբ Մայրն եմ: Զավակներս, վերադարձե՛ք Աստծուն: Ես աղերսում եմ ձեզ, որ ետ դառնաք և Աստված կների ձեզ: Նրա Ողորմությունը ցողի նման իջնում է ձեզ վրա, արարչությո՛ւն, և ծաղիկների նման դուք կբացվեք ու կկլանեք Նրա Լույսը: Ես կանչում եմ ձեզ, Ես քաջալերում եմ ձեզ, բայց քանի՞ն են, որ տեղյակ են Մեր Կանչերի մասին: Քանի՞ն են, որ հավատում են այդ կանչերին: Իմ Սիրտը ցավում է ասելու, որ ձեզանից քչերն են վստահում այդ կանչերին: Այս սերնդի սիրտը գրանիտի է վերածվել: Բանապաշտությամբ *(ռացիոնալիզմով)* կուրացած՝ նրանք մոռացել են Աստծո ճամփաների մասին: Նրանք մոռացել են Աստծո հրաշքների մասին: Նրանք մոռացել

են, որ Նա Ամենազոր է և Ողորմությամբ լեցուն: Երբեք Աստծո արարչությունն այսպիսի անկում չէր ունեցել, ոչ անգամ Սոդոմի և Գոմորի օրերին: Ձեր անտարբերությունը թափանցել է Հավիտենականությունը: Ձեր անհավատությունը դատապարտում է ձեզ: Ձեր անվերջ հալածանքները Իմ երևումների հանդեպ և նրանց հանդեպ, որոնց Աստված օրհնել է՝ տալով Իր պատգամները, լինելու են ձեր անկման պատճառներից մեկը:

Ես՝ ձեր Սուրբ Մայրը, ձեր Փրկչի Մայրը, աղաչում ու աղերսում եմ ձեզ. ապաշխարե՛ք և փոխվեք: Վերադարձե՛ք դեպի Մեզ: Սուրբ ապրեք: Սուրբ ապրեք Աստծո Աչքերի ներքո: Պատրաստ եղեք դիմավորելու Նրան՝ ձեռքներդ լեցուն բարի գործերով ու մաքրությամբ:

(Այսօր եկեղեցուց դուրս գալուց հետո, աստիճաններով ցած իջնելիս, ես այնպիսի զգացողություն ունեցա, որ կարծես թե քայլում էի վարդի պարտեզի միջով: Ո՛չ մի ծաղիկ չկար շուրջս, այլ միմիայն բեռոն էր):

(Ավելի ուշ)

Ես քեզ վրա տեղացել եմ Իմ Քաղցր Բուրմունքը: Ես ուզում էի, որ զգաս Իմ Ներկայությունը: Քեզ ցույց տրված այդ շնորհով Ես ցանկացա հիշեցնել քեզ, թե դու որքան սիրելի ես Մեզ, զավակս: Ես քո Սուրբ Մայրն եմ, և Ես ուրախ եմ, որ դու Մեզ մոտ ես նորից: Սիրելի՛ս, Ես օրհնում եմ քեզ և քո ողջ ընտանիքը:

Սո՛ւրբ Մայր, շնորհակալ եմ Քեզանից ամեն ինչի համար, ես օրհնում եմ Քեզ:

Ծաղի՛կ:

Այո՛, Հիսուս:

Քո Սուրբ Մորը «մամա» կանչիր: Այս պահից սկսած Նրա հետ նույնքան մտերիմ եղիր, որքան Ինձ հետ ես: Մենք, մեզ: Հիշի՛ր Իմ ուսուցումները:

Այո՛, Տեր:

Ես՝ Տերս, օրհնում եմ բոլորիդ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 16, 1988

Տե՛ր:

Ես եմ: Երբեք չկասկածես, այդ ե՛ս եմ՝ Հիսուս Քրիստոսը: Ես կանչել եմ քեզ Իմ Խաչից: Ես կանչել եմ քեզ Իմ տառապանքի մեջ, որպեսզի ցույց

տամ, թե ես, որ Իմ Եկեղեցու Գլուխն եմ, ինչ վիճակում եմ գտնվում այսօր: Պատկերը, որ ներկայացնում է Ինձ՝ մեռած, պառկած Մորս բազուկների մեջ[1], մի խորհրդանշանակ ձև է ցույց տալու ձեզ բոլորիդ, թե ինչպես է ձեր ուրացությունը դավաճանել Իմ Եկեղեցուն:

Տեսնո՞ւմ ես, աղջիկս, ես առաջնորդեցի քեզ, որ տեսնես Իմ ներկա Եկեղեցու ճշգրիտ պատկերը: Իմ Մոր վրա դու տեսար Նրա տառապանքը և Իր Բազուկներին՝ Իմ մեռած Մարմինը՝ դավաճանված, ծեծված ու կապտած, խարազանված, խոցված ու խաչված: Եվ ճիշտ այսպիսին է այսօրվա Իմ Եկեղեցու իրավիճակը: Իմ Մայրն արտասվում է Նրա վրա արյունոտ արցունքներով, ճիշտ այնպես, ինչպես Նա արտասվեց Իմ Մարմնի վրա Գողգոթայում: Բայց մի կարճ ժամանակ հետո Նա[2] նորոգվելու է, այլակերպվելու և հարություն է առնելու, ինչպես ես՝ Տերս, Հարություն առա: Նա այլևս այսպիսի ողորմելի վիճակում չի լինելու: Իմ թշնամիները ավերեցին Իմ Տաճարը, բայց երկնքից իջած Իմ Զորությամբ և Իմ Շնորհով ես՝ Տերս, վերաշինեցի Իմ Տաճարը ճիշտ երեք օրում:

Ես խոստանում եմ ձեզ, որ Իմ Եկեղեցին պիտի վերակենդանանա, և ես նրան կնորոգեմ ու կայլակերպեմ, ինչպես ես այլակերպվեցի: Ես կվերաշինեմ Իմ Տաճարը, և Արդարությունը պիտի լինի Նրա մեջքի փաթաթանը, իսկ Հավատարմությունը պիտի լինի Նրա ազգրերի ծածկոցը[3]: Եվ Մաքրությունը պիտի լինի Նրա Ջահը, որպեսզի բոլոր նրանց, ովքեր արատավորեցին Իմ Անունը, առաջնորդի Իր Լույսի մեջ ու մաքրագործի: Որովհետև ես՝ Տերերի Տերը, Գառը, ապրելու եմ Նրա մեջ, և Նա ընդունվելու է Իր յուրայինների կողմից այնպես, ինչպես ես ընդունվեցի Իմ յուրայինների կողմից, Իմ Հարությունից հետո: Այնուհետև, ինչպես մայրն է հանգստացնում իր երեխային, ես նույնպես, կհանգստացնեմ ձեզ, անգամ ավելին: Ես մեծ սիրով կգրկեմ ձեզ Իմ Բազուկներով:

Ա՜հ, սիրելի զավակներ, ես պատրաստում եմ ձեզ համար մի Նոր Երկինք ու մի Նոր Երկիր, որպեսզի ապրեք այնտեղ, մի Երկիր՝ լի պտուղներով, որոնք գալիս են Կենաց Ծառից: Դրա պտուղները կրելու են Խաղաղության, Սրբության և Սիրո անունները, քանի որ Դրա Աբմատը Սերն է[4]: Այդ ժամանակ դուք կդառնաք Ինձ՝ ձեր Աստծուն՝ լցված Իմ Սուրբ Հոգով, ինչպես առաջին Հոգեգալստի ժամանակ: Իմ Հոգին ձեզ լցնելու է Սիրով ... Ես զարդարելու եմ Իմ Պարտեզը: Ես ոռոգելու եմ Իմ ծաղկի մարգերը: Իմ Արդարության ցողը իջնելու է ձեզ վրա, սիրելինե՛ր, և Իմ Լույսը զորացնելու է ձեր ցողուններն այնպես, որ բարեկարգությունը փայլի:

Քաջալերվի՛ր, աղջիկս, քաջալերվե՛ք, սիրելիներ: Ես գիտեմ, որ դժվար է ապրել անապատում, բայց այս Ժամանակների Վախճանը մոտալուտ է[5]: Ես շուտով իջնելու եմ ձեզ մաքրագործելու համար: Ես՝ Տերս,

---

[1] Սբ. Մարիամի և Հիսուսի արձանը խաչելությունից հետո Սան Սիլվեստրոյում, Հռոմում:
[2] Եկեղեցին
[3] Ես. 11:5
[4] Հուդայի ցեղի Առյուծը՝ Դավթի Աբմատը, Հայտ. 5.5: Այս ըմբռնումը տրվեց ինձ հետագայում՝ սեպտ. 1, 1988թվին:
[5] ուրացության ժամանակները

հանդիսավոր կերպով ասում եմ, որ Ես ձեզ անակնկալի կբերեմ՝ լուսավորելով Իմ Լույսով: Իմ ողջ Երկինքը ցնցելու է երկիրը, և բոլոր նրանք, ովքեր սիրում են Ինձ, փառավորելու են Ինձ՝ ծալելով իրենց ձնկները: Եվ շատերը հիշելու են Ինձ և վերադառնալու են Ինձ մոտ: Սա հայտնի կդառնա որպես Եկեղեցու Մեծ Դարձը:

Բայց, ցավոք, լինելու են այնպիսի համառ հոգիներ, որոնք հայհոյելու են Իմ Սուրբ Անունը և որոնք կռվելու են Իմ հակառակորդի կողմից: Այդ հոգիները է՛լ ավելի են Ինձ մերժելու: Երբ այս տեղի ունենա, սատանան նրանց բնաջնջելու է՝ իր հետ քարշ տալով դեպի Հավիտենական Կրակը:

Վասո՛ւլա, զգա՛ Իմ Սուրբ Սիրտը... Ես տառապում եմ այն աստիճան, որ մարդկային բառերն ի վիճակի չեն արտահայտելու այն, ինչ ուզում եմ ասել: Որովհետև Ես Սիրո Աստված եմ, Ողորմության Աստված եմ, բայց Ես նաև Արդարության Աստված եմ, և Ես պետք է ձեր Դատավորը լինեմ, երբ Իմ արարչությունը ապստամբի Իմ դեմ: Իմ Հոգին վիրավորված է, և Իմ Արյունը դուրս է հորդում վաքաք Գետի պես: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Բայց դուք վիրավորեցիք Ինձ: Ես ձեր Սուրբն եմ, բայց դուք խոցեցիք Ինձ: Ես ձեր Փրկիչն եմ, Որն այսօր Իր Խաչից աղաղակում է ձեզ. Վերադարձե՛ք դեպի Ինձ, ե՛տ դարձեք դեպի Ինձ: Եկե՛ք և սուրբ եղեք, ինչպես որ Ես Եմ Սուրբ:

Ե՛կ, զավակս, Ես ձեզ հետ եմ, պահե՛ք Ինձ ձեր սրտում և հանգստացրեք Ինձ, Ինձ հետ մե՛կ եղեք:

Այո՛, Իմ Տեր, ես պաշտում եմ Քեզ:

Պաշտի՛ր Ինձ և հանգստացրու Ինձ: Ես այնքա՜ն հոգնած եմ...

Մե՞նք, մե՞զ, Տե՛ր:

Այո՛, մենք, մեզ, Հավիտյան:

Ամեն:

(Ավելի ուշ)

(Սբ. Մարիամ)

Վասո՛ւլա, Ինձ հետ մտերիմ եղիր: Ինձ Մամա կանչիր, Իմ խաղաղությունը քեզ: Ես սիրում եմ քեզ:

Ես էլ Քեզ եմ սիրում, սովորեցրու Ինձ Քեզ ավելի շատ սիրել:

Վասո՛ւլա, Ես քեզ դրել եմ Իմ Սուրբ Սրտում:

Տե՛ր, շնորհակալ եմ Քեզանից՝ Քեզ հետ հանդիպելու այս շնորհի համար, Քեզ զգալու և Քեզ տեսնելու համար:

Դա քեզ տրված իմ պարգևն է: Այնուամենայնիվ, մի՛ մոռացիր, որ այդ պարգևը տրված է քեզ Իմ Շահերի և Իմ Փառքի համար: Փաղաքշի՛ր Ինձ քո սիրով: Բուրի՛ր Ինձ քո սիրով: Մխիթարի՛ր Ինձ քո սիրով: Փառավորի՛ր Ինձ՝ քո Տիրոջը քո սիրով: Բարձրացրո՛ւ քո միտքը դեպի Ինձ և միմիայն Ինձ: Ես Միակն եմ, որ կա: Ես Ամեն Ինչ եմ: Ես Հավիտենական եմ՝ Ալֆան և Օմեգան: Ես քո Արարիչն եմ՝ «Նա Ով Փրկում է»: Ես Սրբությունն Սրբոցն եմ: Ես Սիրո Հոգին եմ, ուստի ե՛կ Ինձ մոտ: Ես գիտեմ, թե որքան փխրուն ես դու: Ե՛կ դեպի Ինձ և սիրի՛ր Ինձ: Ես միշտ կհիշեցնեմ քեզ, որ քո Աստվածը ես եմ:

Որքան էլ որ թույլ ու թշվառ լինես դու. Իմ Զորությունը կպահի քեզ: Շատ սիրելի հոգի, մի բան ևս հիշիր. հիշի՛ր, որ ես ոչ մեկի կարիքը չունեմ: Ես բավարարված եմ Ինքս Ինձնով՝ իրականացնելու համար Իմ Գործերը, բայց Ես սիրում եմ Իմ Գործերը կիսել Իմ արարչության հետ: Ուստի, նայիր Ինձ և ցնծա՛, հոգի, այս չնորհին արժանացած լինելու համար: Շատերը կփափագեին տեսնել այն, ինչ դու ես տեսնում, բայց երբեք չտեսան այն, լսել այն, ինչ դու ես լսում, բայց երբեք չլսեցին, զգալ այն, ինչ դու ես զգում, բայց երբեք չզգացին: Ուստի ցնծա՛, հոգի: Ցնծա՛: Պարուրի՛ր Ինձ փառաբանություններով, թագադրի՛ր Ինձ Սիրո պսակներով: Բուրի՛ր Ինձ խնկով: Զարդարի՛ր Ինձ քո սիրո մանկական խոսքերով. օրհնի՛ր Ինձ՝ քո Տիրոջը և պաշտի՛ր Ինձ, սիրելիս:

Դու միշտ Ինձանից լիառատ կստանաս Իմ Հացը: Ես կսնուցեմ քո հոգին: Ես քո Փրկիչն եմ, և Խոստանում եմ, որ մինչև վերջ Ես միշտ մոտ կլինեմ քեզ այս յուրահատուկ ձևով:

Իմաստությունը Իր պաշարներից տալիս է ոչ միայն արդարին, այլ նաև անարդարին... Ե՛կ:

Օգոստոսի 17, 1988

Տե՛ր իմ:

Ես եմ: Ես քո Փրկիչն եմ, ուստի վստահիր Ինձ: Ես եկել եմ քո միջոցով համընդհանուր Խաղաղության ու Սիրո Իմ Պատգամը տալու և Իմ ողջ արարչությանը ցույց տալու Իմ Սուրբ Սիրտը, թե որքան եմ Ես ձեզ սիրում:

Օ՜, Վասո՛ւլա: Իմ Ողորմությունը Մեծ է բոլորիդ վրա: Շատ սիրելի հոգիներ, ձեր մաքրագործման ժամանակը մոտենում է: Այն, ինչ Ես անելու եմ, սիրուց դրդված եմ անելու: Ձեր մաքրագործումը կատարվելու է, որպեսզի դուք փրկվեք դժոխքի դարպասներից: Ես իջնելու եմ ձեր վրա Կայծակի նման և նորոգելու եմ ձեզ Իմ Կրակով: Իմ Սիրո Հոգին ազատելու է ձեզ, քաշելով դեպի Սերը, վերածելով ձեզ սիրո կենդանի մի բոցի: Ես թույլ կտամ, որ Իմ Հոգին թափվի երկնքից և մաքրագործի ձեր արատավոր հոգիները՝ վերածելով նրանց սուրբ և անբիծ հոգիների՝ մաքրագործելով ձեզ, ինչպես ոսկին է մաքրագործվում կրակի մեջ: Դուք կճանաչեք, երբ Փրկության ժամանակը կգա, և այն ժամանակը, երբ Իմ Սիրո Հոգին կիջնի ձեզ վրա: Մինչև սա տեղի չունենա, դուք չեք տեսնի

ոչ Նոր Երկինքը և ոչ էլ Նոր Երկիրը, որոնց մասին նախապես ասել եմ ձեզ:

Զավա՛կս, Իմ սերմերը [1] ծլելու են Իմ Կրակով, Իմ Սիրով, Իմ Ողորմությամբ և Իմ Արդարությամբ ու բացվելու են նոր շուշանների նման, որոնք նայում են արևին՝ փնտրելով Իմ Լույսն ու Իմ Ցողը: Եվ Ես Իմ Երկինքներից հեղելու եմ Իմ Լույսը՝ զարդարելով ձեզ, և Իմ Ցողը՝ սնելով ձեզ, որպեսզի դուք տեսնեք Սիրո նոր դարաշրջանը:

Իմ Զորությամբ Ես կվանեմ ողջ անիրավությունը, այլասերումն ու չարիքը: Ես կիջնեմ ձեզ վրա, ինչպես մաքրող ջրերի շռնդալից տարափ, և կլվամ ձեր ողջ չարությունը և ձեզ կկանգնեցնեմ ուղիղ՝ մաքուր ոսկու սյուների նման:

Բուռն Սիրո Իմ Տարափներով Ես կոչնչացնեմ այն ամենը, ինչ սուտ է և կեղծ: Ինչպես կավն է լվացվում անձրևի մի քանի կաթիլներով, այնպես էլ Իմ Վսեմ Սերը լվալու է ձեր մեղքերը, որոնք արատավորել են ձեր հոգին:

Ես՝ ձեր Փրկիչը, նորոգելու եմ ձեզ, արարչությո՛ւն, և առաջարկելու եմ ձեզ Իմ Պարգևը: Իմ Պարգևն իջնելու է Երկնքից՝[2] Մի Շողարձակող Նոր Երուսաղեմ, Մի Նորոգված Եկեղեցի՝ Մաքուր և Սուրբ, որովհետև Ե՛ս, Որ եղել է, կա և գալու է՝ ապրելու է Նրա մեջ և Նրա Հոգու մեջ: Դուք բոլորդ զգալու եք Նրան՝ շոշափելի և կենդանի, որովհետև Իմ Սուրբ Սիրտը բաբախելու է Նրա ներսում:

Ես՝ Տերերի Տերը, կարծես այրվում եմ [3], և Իմ Սուրբ Սիրտը բոցավառվում է՝ ձեզ բոլորիդ պարուրելու մեծ ցանկությամբ, նետելու ձեզ Իմ Սիրո Հնոցի մեջ, թողնելով ձեզ հրաբորբոք՝ լիակատար բերկրանքի ու սիրո հափշտակության մեջ Իմ հանդեպ, ձեր Սիրելի Աստծո հանդեպ:

Այո՛, Ես ձեզանից յուրաքանչյուրին կենդանի խորան եմ դարձնելու՝ բոցավառված Իմ Կրակով: Օ՜, արարչություն: Երբ Իմ Կրակը առկայծի ձեր սրտերում, դուք ի վերջո Ինձ կաղաղակեք.

«Դու Ես Միակ Աստվածը՝ Արդարը. Դո՛ւ, արդարև, Գառն Ես: Դու մեր Երկնային Հայրն Ես: Ինչպե՞ս կարող էինք մենք այսքան կույր լինել: Օ՜, Սրբություն Սրբոց, եղիր մեր մեջ, ապրիր մեր մեջ: Ե՛կ, օ՜, Փրկիչ»:

Եվ ձեր այս աղաղակը լսելով՝ Ես չեմ հապաղի: Ես պիտի իջնեմ ձեզ վրա կայծակի արագությամբ և պիտի ապրեմ ձեր մեջ: Եվ դուք, սիրելիներ, պիտի հասկանաք, որ հենց Սկզբից Դուք Իմն էիք և Իմ սերմը:

Այդ ժամանակ Ես ձեր մեջ պիտի լինեմ և պիտի թագավորեմ ձեզ վրա հավիտենական սիրով: Ես պիտի լինեմ ձեր Աստվածը, իսկ դուք՝ Իմը: Շատ սիրելի հոգի, վարվիր Ինձ հետ, ինչպես քո Թագավորի հետ. թագադրի՛ր Ինձ քո սիրով:

Մենք, մեզ: Ե՛կ:

---

[1] Սերմերը, այսինքն՝ մենք

[2] Տերը մտային մի տեսիլք տվեց, որտեղ միլիոնավոր հրեշտակներ իջնում էին երկնքից և պահում էին մի նոր քաղաք, կարծես մի մեծ ափսեի վրա: Օրհնված, մի Նոր Եկեղեցի իջնում էր երկնքից:

[3] Տերը, ասես, անհամբերությունից այրվում էր:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 18, 1988,

(Վանքում)

(Ես խնդրեցի Տիրոջը, որ օգնի մի խումբ մարդկանց, որոնց ես հանդիպեցի և որոնք ապրում էին տառապանքի մեջ: Նրանք զգում էին, որ սատանան հալածում է իրենց):

Տե՞ր:

Ես եմ:

Աղջիկս, ամեն մի հոգի կարող է ազատագրվել միայն այն դեպքում, երբ նրանք իրենց հոգին կբացեն և կկամենան այդ անել: Ես ամեն մի հոգու տվել եմ այդ ազատությունը և նրանց կամքը միայն իրենց է պատկանում: Եթե հոգին կարծր է և չի բացվում Իմ առջև, այդ դեպքում ես ինչպե՞ս կարող եմ մտնել նրա սիրտը: Ես Եմ, Տերը ու Աստվածը, բայց ես տվել եմ ձեզ ձեր ողջ ազատությունը և ձեր կամքը: Եթե դուք հավատաք և ձեր կամքը առաջարկեք Ինձ՝ հանձնվելով Ինձ, ապա ես կմտնեմ ձեր սիրտը և կբուժեմ ձեզ: Ես հարկադրաբար չեմ մտնի: Ես նրանց դռների մոտ եմ և սպասում եմ, որ բացեն այն և Ինձ սիրով ներս ընդունեն:

Օգոստոսի 19, 1988

Ես պարզապես ուզում եմ ասել,
թե որքա՜ն եմ սիրում Քեզ
և ուզում եմ
շնորհակալություն հայտնել, Տե՛ր,
այն ամենի համար, որ Դու արել ես
և տակավին անում ես Ինձ համար:
Ես երբեք չեմ կարող հատուցել Քեզ
այս բոլոր շնորհների համար:

Տե՞ր:

Ես եմ:

Ծաղիկս: Հենվի՛ր Ինձ վրա: Ես տալիս եմ անդամ ամենից թշվառներին: Ես Ողորմության մի Վիհ եմ, բայց ցավոք սրտի, ձեզանից շատերը մոռացել են, թե իրականում ինչպիսին եմ Ես: Ես անկողմնակալ Աստված եմ, Ես Արդար եմ և տալիս եմ նույնիսկ ձեզանից ամենաչարին:

Տո՛ւր Իմ Սուրբ Սրտին ուրախության թրթիռ: Տո՛ւր ինձ քո սերը, եթե այն նույնիսկ երբեմն դաղջ է. Ես կընդունեմ այն: Տո՛ւր Ինձ քո սերը, և Ես այն կատարյալ կդարձնեմ Իմ Աստվածությամբ: Ե՛կ դեպի Ինձ, ինչպես այժմ, առանց սեփական շահի և մատուցի՛ր Ինձ քո սերը: Մի՛

սպասիր, մինչև որ կատարյալ դառնաս, որ մատուցես Ինձ քո սերը: Մի սպասիր, որ սուրբ դառնաս, որ մատուցես Ինձ քո սերը: Արի ինչպես որ կաս՝ քո բոլոր թերություններով, և Ես Իմ Մաքրությամբ քո սերը կփոխակերպեմ անարատ սիրո՝ արտացոլելով այն Երկնքից քեզ վրա: Փոքրի՛կ հոգի, Ես կզարդարեմ այն ամենը, ինչ դու Ինձ կառաջարկես: Ուստի, ե՛կ դեպի Ինձ, ինչպես որ կաս՝ մատուցելով Ինձ քո սերը, այն սերը, որը բացակայում է շատ-շատերի մեջ:

Հոգի՛, եթե միայն իմանայի՛ր, թե ինչքա՜ն հոգիներ են այժմ չարչարվում քավարանում... ազատի՛ր նրանց քավարանից, որպեսզի կարողանան գալ դեպի Ինձ: Նրանք տենչում են լինել Ինձ հետ, բայց ի վիճակի չեն իրենց հոգու արատների պատճառով: Ազատի՛ր նրանց աղոթքներով և զոհողություններով: Ազատի՛ր նրանց սիրելով Ինձ, պաշտելով Ինձ: Ազատի՛ր նրանց՝ Ինձ և Իմ Խաչին քեզ շղթայելով: Ազատի՛ր նրանց սիրո գործերով: Ազատի՛ր նրանց՝ մասնակից լինելով Իմ չարչարանքներին: Վասո՛ւլա, այդ հոգիները նվաղում են Ինձ համար և Ինձ հետ կրկին ու հավիտյան միանալու համար, բայց նրանք նախ պետք է մաքրագործվեն՝ նախքան Իմ Ներկայության մեջ գտնվելը:

Տե՛ր, Դու ասացիր. «...Ինձ հետ կրկին միանալու համար...»: Արդյոք Քեզ հետ եղե՞լ են նրանք մի որոշ ժամանակ իրենց մահվանից հետո:

Ես նրանց հոգին ազատել եմ նրանց մարմնից: Ես Իմ Սուրբը Դեմքը նրանց ցույց եմ տվել միայն մի ակնթարթ և հենց այդ ակնթարթում նրանց աչքերը քողազերծվեցին՝ իրենց դիմաց տեսնելով Ինձ՝ Իմ Մաքրության և Իմ Լույսի մեջ: Նրանք անմիջապես տեսան Ճշմարտությունը դեմ առ դեմ կանգնած և հասկացան, թե մեղքերով որքան արատավորված է իրենց հոգին: Եվ հակառակ նրանց տոչորուն ցանկությանը՝ ընկնելու Իմ բաց բազուկների[1] մեջ և հետևելու Ինձ, նրանք հասկանում են, որ դա անհնար է նախքան իրենց հոգու մաքրվելը: Ուստի վշտի սուր ցավով նրանք ընկրկում են և պատրաստվում են մաքրագործվելու: Դա անասելի ձևով տանջում և այրում է նրանց, որովհետև նրանք չեն կարողանում Ինձ տեսնել: Իմ բացակայությունն այրում է նրանց և քավարանում նրանց չարչարանքների ամենամեծ պատճառը Իմ Բացակայությունն է: Նրանք անցնում են նաև այլ տառապանքներով, կրակով՝ նայած իրենց մեղքերի:

Արարչությո՛ւն, նախօրոք պատրաստեք ձեր հոգին, մի՛ սպասեք, որ մահը իր ստվերը գցի ձեզ վրա: Ձեր հոգիները մաքուր պահեք և անարատ: Կերակրե՛ք ինքներդ ձեզ Իմ Մարմնով և Իմ Արյունը ըմպեք, որքան հաճախ որ կարող եք: Հաճա՛խ ապաշխարեք. պատրաստ եղեք այդ օրվա համար: Ծոմապահություն արեք. ծոմապահությունն օգնում է ձեզ: Լսե՛ք Իմ Ձայնը և պատրաստեք ձեր հոգին այնպես, որ թվա թե մեր հանդիպումն այսօր է լինելու: Մի՛ սպասեք. սպասելը քնել է, սպասելը նշանակում է առանց յուղի թողնել ձեր լապտերները: Պատրաստ եղեք հանդիպելու ձեր Փրկչին:

[1] Հաստատելով, որ Աստված Իր կողմից փականք չի դնում, արգելքը մեր կողմից է:

Ես սիրում եմ բոլորիդ խենթանալու չափ: Հասկացե՛ք, որ Իմ Անհուն ողորմությունից դրդված Ես ուզում եմ պատրաստել ձեզ բոլորիդ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

(Սբ. Մարիամ)

Մամա՞:

Իմ խաղաղությունը քեզ:
Ես քո Մաման եմ, այո՛[1], Իմ Վասուլա, Ես դա արեցի: Իմ արցունքներն ու Հորն ուղղված Իմ աղաչանքները փրկեցին քո զավակին: Սիրի՛ր Հորը, որովհետև Նա չափազանց Կարեկից է:

Ի՞նչ կարող եմ ասել: Քեզ շնորհակալություն հայտնելը բավարար չէ, ինչ էլ որ ասեմ կամ անեմ, բավարար չի լինելու:

Զավա՛կս, ինքդ քեզ Նրան հանձնիր: Հաճա՛խ հանձնվիր. դա անսահման ուրախացնում է Աստծուն: Վստահ եղիր, որովհետև դու Նրա Ձեռքերի մեջ ես: Ես քեզ կտամ Իմ խաղաղությունը: Փառավորի՛ր Աստծուն՝ հնազանդվելով Նրան:

Ես օրհնում եմ Քեզ, Մա՛յր:

Ես օրհնում եմ քեզ և քո ընտանիքը:

(Ավելի ուշ. հոգեկան այս ապրումներից հետո)

Վասո՛ւլա, Ես ցանկանում եմ քեզ ասել, որ Ֆաթիմայում Իմ կողմից կանխագուշակված շատ բաներ շուտով իրականություն են դառնալու: Ես լեցուն եմ Շնորհներով և այս տարվանից սկսած Ես կամենում եմ դրանք հեղել Իմ զավակների վրա: Ժամանակը մոտ է. և քանի որ ժամանակը կարճ է, Ես՝ ձեր Սուրբ Մայրը, ավելի մոտ եմ լինելու ձեզ, քան երբևէ եղել եմ: Ձեզանից շատերի վրա ես հեղելու եմ Իմ Շնորհները՝ ձեզ զարդարելու և ձեզ Հիսուսին ավելի մոտեցնելու համար, դրը~սաստիկ տանջվում է:
Ա՜Հ, աղջիկս... ամեն անգամ Մեր Սրտերից մի փուշ է հանվում, երբ մի հոգի վերադառնում է Մեզ: Ամեն անգամ մի փուշ է հանվում և փոխարինվում է մի ծաղկով, երբ ինչ-որ մեկն աղաղակում է Մեզ. «Ես սիրո՜ւմ եմ Քեզ»:
Խաղաղություն քեզ, աղջիկս:

[1] Սբ. Մարիամն ինձ ինչ-որ բան ասաց՝ կապված ավագ որդուս հետ: Մեր Մայրը ինձ հասկացրեց, որ այդ Ինքն էր և Հորն ուղղված Նրա պաղատանքների շնորհիվ էր, որ ավագ որդիս փրկվեց իր հիվանդությունից: Դա տասներեք տարի առաջ էր: Դա ինձ շատ հուզեց և շատ ուժեղ անհանգստացրեց:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛: Մենք, մեզ:

Օգոստոսի 20, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ:

Սիրելիս, այս օրերին սատանան խաբում է շատերին՝ հարձակվելով հայտնությունների և երևումների վրա, որոնք գալիս են Ինձանից: Եթե ես եկած չլինեի ձեզ ազատելու, ապա դուք տակավին նրա մագիլների մեջ էիք լինելու: Հավատա՛, հավատա՛ Իմ Ողորմությանը: Հավատա՛ իմ Գործերին: Համեմատիր քեզ, թե ինչպիսին ես հիմա և ինչպիսին էիր առաջ: Մի՞թե Ես չէի, որ եկա քեզ փրկելու: Ես եմ Լույսը: Ես քեզ փրկեցի խավարից:

Վասո՛ւլա, սատանան ճարահատված փորձում է շփոթեցնել քեզ և ձեզ բոլորիդ միմյանց դեմ հանել: Հասկացի՛ր, թե ինչպես է նա աշխատում. նա ջանում է շփոթեցնել բոլորիդ: Նա գիտի, թե ինչպես են Իմ Գործերը փրկում շատ հոգիների, և այդ իսկ պատճառով նա ուզում է խափանել Իմ ծրագրերը և պատերազմում է դրանց դեմ: Ես միշտ քեզ մոտիկ կլինեմ: Գործք Առաքելոց 2-րդ գլուխը կարդա: Իմ Հոգին վերևից տրվում է շատերին, բայց, ինչպես միշտ, ոմանք ծիծաղում են՝ չկարողանալով բացատրել Դրա գաղտնիքները:

Ես նորից ու նորից ասել եմ, որ Ես Իմ Հոգին հեղելու եմ ողջ մարդկության վրա, և դուք պիտի մարգարեանաք: Երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն[1], իսկ ծերերը՝ երազներ: Ես Իմ Հոգին պիտի հեղեմ նույնիսկ ձեզանից ամենանվաստի վրա[2]: Ես հրաշքներ պիտի գործեմ երկնքում և նշաններ երկրի վրա: Արարչությո՛ւն: Արդյոք իսկապե՞ս դուք հասկացել եք այս մարգարեությունը:

Ես լրջորեն խնդրում եմ Իմ ուսուցիչներին, որոնք չեն հավատում Իմաստության Գործերին, որ փնտրեն առակների թաքնված նշանակությունը և թափանցեն բոլոր Նախնիների իմաստության մեջ: Նրանք պետք է խնդրեն, որպեսզի լցվեն Հասկացողության Հոգով, որը կառաջնորդի նրանց հասկանալու Իմ Անվան Մեծությունը:

Զգուշացի՛ր սատանայի որոգայթներից: Ես նախազգուշացրել եմ Քեզ նրա չար մտադրությունների մասին, զավակս: Ես՝ Տերս, քեզ անսահման սիրում եմ և երբեք քեզ չեմ թողնի, որ կորչես:

Բայց, Տե՛ր, չէ՞ որ կան կեղծ երևումներ, նույնիսկ հայտնություններ:

Այո՛, կան, բայց շատ շուտով Ես կմերկացնեմ դրանք և ցույց կտամ, որ կեղծ են: Ո՞ր հայրն է, որ տարիներով հետևում է իր զավակին և

[1] Մեր օրերում երեխաներն են սովորաբար տեսիլքներ տեսնում. օր.՝ Մեջյուգորիայում, Ֆաթիմայում, Գարաբանդալում:
[2] Ինչպես ես, որ ոչնչություն եմ:

տեսնելով, որ նա սխալ ուղղությամբ է ընթանում, չի զգուշացնի նրան: Կամ, ո՞ր Հայրն է, որ իր զավակին խաբված տեսնելով, լուռ կմնա: Մի՞թե նա չի զգուշացնի և ցույց չի տա նրան ճշմարտությունը: Ուստի, ե՛ս, որ Սեր եմ ու Ողորմություն, մի՞թե լուռ կմնամ ու կթողնեմ ձեզ այդ վտանգներին ենթարկված և չեմ փութա ձեզ մոտ ճշմարտությունը ձեզ հայտնելու: Փորձի՛ր հասկանալ[1]...

Շնորհակա՛լ եմ Քեզանից, Աստվա՛ծ Իմ, բոլորիս հանդեպ ունեցած քո համբերության համար: Քո ողորմությունն արդարև Մեծ է...

Ա՜Հ, Վասուլա: Եթե նրանք միայն հասկանային Իմ Ողորմությունը: Ե՛կ Ինձ մոտ:

(Ինձ այնպես թվաց, կարծես Նա ուզում էր, որ ես մոտ լինեի Իրեն, որպեսզի հենվեի Նրա վրա):

Ես ուզում եմ, որ դու հենվես Ինձ վրա: Ես ուզում եմ, որ Իմ ողջ արարչությունը Ինձ ապավինի:

Օգոստոսի 25, 1988

Տե՞ր:

Ես եմ:

Վասուլա, աղոթի՛ր Սիրո Վերադարձի համար, աղոթի՛ր Իմ Եկեղեցու վերանորոգման համար, աղոթի՛ր Նրա Վերածննդի համար: Ներկայիս Նրա գաղջ վիճակը փոխվելու է սիրո կրակի. նրա անտարբերությունը փոխակերպվելու է խանդավառության՝ Ինձ ճանաչելու և Ինձ հետևելու անհագ փափագի: Նրա անհավատարմությունը վերածվելու է հավատարմության: Նրա անբերրիությունը վերածվելու է կանաչ արոտավայրի և մաքրության աղբյուրի, որը մխիթարելու է Իմ գառներին՝ հագեցնելով նրանց ծարավն ու ապաստան դառնալով նրանց: Իմ գառները Նրա ջերմության մեջ կգտնեն այն, ինչը որ Ես մի անգամ տվել եմ Նրան: Նրանք Խաղաղություն և Սեր են գտնելու, նրանք վերադառնալու են:

Ուստի աղոթի՛ր Իմ Եկեղեցու այս Վերանորոգման համար: Աղոթի՛ր, որ Ավետարանը լիովին հասկացվի և այն մասերը, որոնք դուրս են թողնված՝ լրացվեն: Աղոթի՛ր, զավակս, որ Իմ Եկեղեցին Միավորվի և զգեստավորվի Իր Հին Ժամանակների Զգեստով: Աղոթի՛ր, որ դադարեն Իմ Խոսքերի բոլոր այն սխալ մեկնաբանությունները, որոնք հիմա մատուցվում են ձեզ: Այս սխալ մեկնաբանությունները թունավոր ուտելիք են ձեզ համար: Իմ Ուտելիքը Մաքուր է և Ամբողջական: Աղոթի՛ր, որ Իմ հոգևորականները ամբողջապես հասկանան Իմ Ուղիները և այն, թե

[1] Աստված խոսում էր, ինչպես շատ համբերատար մի հայր:

ինչպիսին եմ ես իսկապես: Նրանք տակավին Ինձ չեն հասկանում: Աղոթի՛ր, որ նրանք կարողանան լուսավորվել:

Օ՜հ, զավա՛կս, աղոթի՛ր Իմ Փառքի համար, որ վերջում Իմ Սուրբ Անունը նորից փառավորվի և մեծարվի բոլոր Ազգերի կողմից:

Օ՜հ, Հիսո՛ւս, այս ամենն ինձ այնքան շատ հեռու է թվում, իսկ Քո դալը՝ նույնիսկ ավելի հեռու:

Աղջիկս, ընդունի՛ր Իմ խաղաղությունը, պատրաստակամ եղիր և փափագիր ընդունել Ինձ: Ես շատ լրջորեն ասում եմ քեզ. ժամերը թռչում են, տարրալուծվում են ինչպես ստվերներ, և դուք ապրում եք արդեն Իմ Վերադարձի Առաջին Նշանների մեջ: Երկունքի առաջին ցավերը արդեն սկսվել են, բայց Հիմարի նման Իմ արարչությունն այն կատակի է վերածում, մերժելով Իմ առաջին նշանները: Նրանք հրաժարվում են հավատալ, որ Երկունքի ցավերն արդեն սկսված են: Ուստի քեզ Ի՛նձ նվիրաբերիր, զավակս, և սնվիր Ինձանից: Ես հոգ կտանեմ, որ դու ոչնչի կարիք չունենաս: Ձախ կամ աջ մի՛ նայիր, ե՛կ ուղիղ դեպի Ինձ: Ե՛ս եմ Տերը, և Ես կմնամ քո Ուսուցիչը և քո Հոգևոր Ղեկավարը: Դու սովորում ես Իմաստությունից, դու սովորում ես Ինձանից, և այդ Ե՛ս եմ, որ պահում եմ դեպի Իմաստություն տանող Բանալիները: Նրանցից և ոչ մեկին, որոնց աչքերը իմաստուն են, Ես ներս չեմ թողնի և չեմ թույլ տա, որ տեսնեն Նրան: Ես Նրան տալիս եմ միմիայն երեխաներին: Ես թույլ կտամ, որ միայն երեխաները թափանցեն Նրա մեջ և հանդիպեն Նրան:

Շնորհակա՛լ եմ, իմ Հիսո՛ւս:

Օգոստոսի 26, 1988

(Ես հրավիրված էի հանդիպելու որոշ ծայրահեղական մուսուլմանների հետ և նրանց երկու իմամներին ու շեյխերին: Իմ աստվածաբան ընկերներից մեկի հետ ես գնացի նրանց մոտ: Ամեն ինչ կարգադրվել էր, որպեսզի նրանք ինձ դատապարտեն և գաղտնաբար դիվահալածության ենթարկեն, որը և նրանք արեցին: Բայց չկարողանալով իմ մեջ հայտնաբերել որևէ չար ոգի, նրանք խիստ բարկացան և դարձան շատ հարձակողական, հատկապես այն ժամանակ, երբ ես նրանց համար սիրո մի պատգամ ստացա:

Տեսնելով, որ ես բացարձակ խաղաղության մեջ եմ, նրանք ավելի բորբոքվեցին և նույնիսկ ինձ մեղադրեցին որպես ստախոսի ու խաբեբայի: Նրանք ասում էին, որ. «Դո՛ւ, Տե՛ր իմ, Սիրո Աստված չե՛ս»: Ես և աստվածաբան ընկերս հանդարտ ոտքի կանգնեցինք և հեռացանք նրանց մոտից: Եթե մենք Շվեյցարիայում չլինեինք, նրանք կսպանեին մեզ):

Տե՞ր:

Իմ Վասո՛ւլա, Սերը ամենից կարևորն է: Ես Սիրո Աստված եմ: Հիշո՞ւմ ես, թե Ես ինչպես էի սովորեցնում քեզ, որ Սերը դա Արմատն է: Ես քեզ տվել եմ բարի ծառի օրինակը, որը բարի պտուղ է բերում: Այդ ծառը

Կատարյալ Ծառն է, որովհետև նրա արմատը Սեր է, դրա բոլոր ճյուղերը առաքինություններ են և բոլորը լավն են: Առանց Սիրո Արմատի այս ծառը ոչ մի առաքինություն չի ունենա և հետևաբար՝ ոչ մի պտուղ: Երբ կտեսնես մի ծառ, որն ամուլ է, կամ էլ պտուղը՝ նեխած, ուրեմն իմացիր, զավակս, որ դրա արմատը չինված է ամենազազրելի չարիքներից, որ գոյություն ունի:

Ես ամենայն լրջությանբ ասում եմ քեզ, որ բոլոր առաքինությունների Արմատը կոչվում է ՍԵՐ: Ես Սեր եմ, Ե՛ս եմ Արմատը, որը սնում է քեզ, զարդարելով քեզ: Ե՛կ, մտիր Իմ մեջ և դու կապրես Հավիտյան:

Օգոստոսի 29, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ: Խաղաղություն քեզ:

Հասկացիր, թե քեզ որքան շնորհներ եմ տվել Ես՝ բարձրացնելով դեպի Ինձ: Իմ Վասուլա, Ես ուզում եմ հիշեցնել Իմ ուսուցիչներին Իմ Լիառատ Սիրո մասին: Ես ուզում եմ հիշեցնել նրանց, որ Ես հեզ եմ ու խոնարհ՝ լի գթառատությամբ: Ես սովորեցնում եմ սիրով: Ես քեզ սիրով եմ սովորեցրել: Ես մեծացրի քեզ սիրով, նրբանկատությամբ և համբերությամբ: Ես հաճախ եմ հարցրել քեզ, թե արդյոք դու կամենո՞ւմ ես շարունակել Իմ Գործերը: Ես՝ Տերս, հարգել եմ քո ազատությունը: Ես երբեք չեմ ճնշել քեզ: Ես երբեք խստասիրտ չեմ եղել քո հանդեպ: Ես սնել եմ քեզ սիրով ու շատ քնքշությամբ: Ես սովորեցրել եմ Իմ աշակերտներին հետևել Իմ ուսուցման Ուղիներին և տարածել ուսուցման այս միջոցը: Ես սովորեցրել եմ Նրանց, որ Իմ գառներին հեզությամբ ու սիրով ուղղեն դեպի Ինձ:

Այդ ինչպե՞ս եղավ, որ այսօր Իմ ուսուցման Ուղիները մոռացվել են: Ինչպե՞ս եղավ, որ Իմ Տունը դարձավ չորության ու անզիջողության ժամանցի մի վայր՝ կորցնելով այն ամենը, ինչն աստվածային էր: Այսօր Իմ տունն ամուլ է՝ մարդկային անփույթ կանոններով ու մտածողությամբ թուլացած. այն ընկած է ամայության մեջ: Իմ Տունը ղեկավարվում է այնպիսի կանոններով, որ «ազատությունն» այլևս ոչինչ չի նշանակում:

Իմ Վասուլա, Իմ աղավնի, դու ազատ ես, քանի որ դու Ինձ հետ ես: Ես քո Տերն եմ: Ես առաջնորդում եմ քեզ, բայց քո ազատ կամքով: Ես չեմ ստիպել քեզ երբևէ աշխատել Ինձ համար: Ես երբեք քո վզին չեմ փաթաթել Իմ գործերը: Իմ վարվելաձևը բոլորովին տարբերվում է նրանցից, ովքեր պատասխանատվություն են ստանձնում ուրիշների համար: Ե՛ս, որ Տերն եմ և թագավորում եմ ձեզ վրա, միշտ մոտենում եմ ձեզ՝ օգտագործելով այս բառերը. «Թույլ տուր Ինձ...»:

Իմ Տունը պետք է փոխվի... Իմ Տունը պետք է հիշի Իմ Ուղիները... Ես Սեր եմ:

Սեպտեմբերի 5, 1988

(Վաղ առավոտից Տերն Ինձ ասում էր, որ շուտով ես մերժվելու եմ տեղի որոշ քահանաների կողմից):

Տե՛ր, ես իսկապե՞ս նորից եմ մերժվելու որոշ քահանաների կողմից: Տե՞ր:

Ես եմ: Մի՛ վախեցիր: Շուտով ամեն ինչ կլուսաբանվի և բոլոր նրանք, ովքեր մերժել են քեզ՝ հրաժարվելով հավատալ Իմ Պատգամին, աղոթելու են Հորը ներման համար:

Վասո՛ւլա, եթե նրանք «կույր» լինեին, Ես նրանց կբուժեի, բայց նրանք պնդում են, թե «տեսնում են»: Նրանք սերում են նույն այն կույր առաջնորդներից, որոնք կային այն ժամանակ, երբ Ես երկրի վրա էի: Զավա՛կս, եթե նրանք ապրեին այն ժամանակ, երբ Ես երկրի վրա էի, ապա նրանք կլինեին նրանց մեջ, ովքեր Ինձ խաչեցին: Նրանք կմասնակցեին նրանց գործերին: Նրանք կլինեին մարգարեներին քարկոծողների և նրանց լռեցնողների մեջ: Ինչո՞ւ, ի՞նչ տարբերություն կա ներկայիս և այն ժամանակվա միջև: Նրանք պնդում են, թե հավատում են Ինձ, բայց մերժում են այն, ինչ գալիս է Հոգուց՝ կրկին մերժելով Ինձ: Դու գալիս ես Ինձանից, Իմ Պատգամով, բայց դպիրների և փարիսեցիների նման նրանք ապացույցներ են պահանջում, լուրջ ապացույցներ:

Պատրաստի՛ր քեզ, զավակս, պատրաստի՛ր մեջքդ խարազանման: Ես՝ Տերը, թույլ տվեցի նրանց խարազանել Իմ Մեջքը, ուստի Դու ևս առաջարկիր քոնը նրանց: Թող նրանք կրկնեն իրենց սխալները, քանի որ հրաժարվում են լսել: Ես՝ Տերը, մերժվեցի և վերջում դամվեցի փայտին, ուստի հլու եղիր և կիսիր Իմ Խաչը: Այսօրը նման է երեկվան: Ում էլ որ Ես ուղարկում եմ, նրանք քննադատյան են ենթարկում, հալածում են, կամ էլ՝ մերժում: Նրանց արյունը, որոնց ես ուղարկում եմ, շարունակ հեղվում է՝ սկսած Աբելի արյունից մինչև այս սերունդը:

Ինչպես որ զգուշացրել եմ դպիրներին ու փարիսեցիներին, այնպես էլ այսօր Ես զգուշացնում եմ նրանց, ովքեր հալածում են Իմ Պատգամաբերներին և դատապարտում են Իմ Խոսքը: Ես զգուշացնում եմ նրանց, ովքեր հեգնում են Հոգուն: Մեկ անգամ ևս Ես նրանց ասում եմ. «Ձեր անձնական վկայությունը ձեր դեմ է խոսում: Ձեզանից ոչ ոք չի փոխվել, ձեր գործերը նույնն են մնում, ձեր մտածելակերպը ձեր դեմ է խոսում: Առաջնորդներ, որոնք քարոզում են Հոգևոր պատգամներ, բայց և անտեսում են այն, ինչ գալիս է Հոգուց: Առաջնորդներ, որոնք Իմ գառներին կերակրում են Իմ Մարմնով, բայց հեռու են պահում Իմ Արյունը[1]: Դուք մոռացե՞լ եք Իմ ուսուցումները»:

Իմ Վասո՛ւլա, Ես թույլ կտամ, որ զգաս Իմ փշերը: Ես թույլ կտամ, որ զգաս, թե ինչպես է բանապաշտությունը թագավորում այդ հոգևորականների սրտերում: Ես քեզ կբացահայտեմ նրանց առջև: Ես կերակրում եմ քեզ Իմ Հացով. Ինձ հետ մե՛կ եղիր: Զգա՛ Իմ փշերը և թույլ տուր, որ դրանք դառնան նաև քոնը: Թող յուրաքանչյուր մեխը

[1] Ընդգծված տողերն Հիսուսն ասաց զայրույթով:

խոցի քո հոգին այնպես, ինչպես դրանք խոցեցին Ինձ: Ես զգուշացրել եմ քեզ: Պատրաստվիր այժմ խարազանման: Բայց հիշի՛ր, որ իմ մեջքը նույնպես մերկացված է նրանց առջև, և ինչ որ նրանք քեզ են անում, նրանք նույնպես անում են Ինձ:

Մե՞նք, Մե՞զ:

Այո՛, Տեր:

(Երեք ժամ անց ես լուր ստացա, որ քահանաներից մեկը, որին ես վստահում էի և կարծում, թե նա հավատում էր Աստծո պատգամին, «դավաճանել» էր ինձ: Նա բոլորովին չէր հավատացել, բայց միշտ <u>ձևացրել էր</u>, թե հավատում է: Նա պարզապես ասաց. «Աստված Ինքն Իրեն չի հայտնում այս ձևով և <u>ոչ էլ այս տեսակ անձի</u>»: Սա ինձ շատ ցավ պատճառեց, որովհետև ես կարծում էի, թե նա հասկանում էր և ընկեր էր ինձ: Ես կորցրեցի մի «ընկերոջ»...: Այս լուրը ես ստացա մեկ այլ ընկերոջ միջոցով):

Սեպտեմբերի 6, 1988

Տե՞ր:

Ես եմ: Ես քեզ զգուշացրել էի այս դավաճանության մասին, զավա՛կս:

Ե՛կ, հենվիր Ինձ վրա: Թող հայտնի լինի, թե որքան անիմաստ են նրանց պնդումները, որոնք ասում են քեզ, թե սա Ինձանից չի գալիս: Նրանց եռանդը սխալ ուղղությամբ է գնում: Թվում է, նրանք հստակ չեն տեսնում Իմ Արդարությունը և միայն հայտարարում են իրենց անձնական գաղափարները:

Սուրբ Գիրքն ասում է. «Ողջունելի են բարի լուր բերողների ոտնաձայները», իսկ նրանք, ովքեր զարմացած են, թե ինչ տեսակ գործիքներ եմ Ես ընտրում, Սուրբ Գիրքն ասում է. «Ես գտնվեցի նրանց կողմից, ովքեր Ինձ չէին փնտրում և հայտնեցի Ինքս Ինձ նրանց, ովքեր Ինձ հետ չէին խորհրդակցում»:

Թեև Նրա առարկությունը ճիշտ էր: Իսկապես որ ես սխալ անձ եմ այս «պարգևը» ստանալու համար: Ես լավը չեմ: Բայց և այնպես, իմ ընկերուհին՝ Բեատրիսը, հարցրեց նրան. «Իսկ ի՞նչ կասես Մարիամ Մագդաղենացու մասին»: Նա պատասխանեց. «Ա՜հ, այո՛, բայց նա հետո դարձի եկավ»: Ուրեմն նա կարծում է, որ ես դարձի չե՞մ եկել:

<u>Խաղաղվի՛ր</u>: Ես քեզ Իմ Սուրբ Սրտի մեջ եմ դրել:

Եթե նա երկու հազար տարի առաջ ապրեր, նա կմասնակցեր Ինձ քարկոծելուն, որպես մեղավորի:

Ես դա թույլ չէի տա: Ես կասեի այն նույն խոսքերը, որոնք մի ժամանակ ասել եմ. «Նա, ով անմեղ է, թող առաջին քարը նետի»: <u>Բացե՛ք ձեր սրտերը, ոչ թե ձեր մտքերը</u>:

Վասուլա, Ինձ վրա հենվիր՝ քո Փրկչի: Աղոթի՛ր նրանց համար, որոնց սրտերը փակ են մնում: Աղոթի՛ր նրանց համար, ովքեր փակում են իրենց ականջները:

Այո՛, Տեր:

Պատրաստվի՛ր Իմ մնացած Զարչարանքների համար: Հիշի՛ր, ես քեզ ցույց եմ տվել քո խաչի չափը:

Այո՛, Տեր:

Բայց ես և դու Այն միասին ենք կիսելու: Ոչ մի բան իզուր չի լինելու: Ես կօգնեմ քեզ իրագործելու քո առաքելությունը, հետո... դու Ինձ մոտ կգաս, այո՛[1]:

Ե՛կ: Ես Ներկա եմ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

(Ավելի ուշ)

Տե՞ր իմ:

Ես եմ: Նայի՛ր Աչքերիս մեջ և մի՛ նայիր աջ ու ձախ: Նայի՛ր Ինձ՝ քո Տիրոջը: Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Հավիտենական Կյանքը: Հիշի՛ր, թե ինչ մեծ սիրով եմ Ես սովորեցրել քեզ Իմ Խոսքը: Եվ այն ամենը, ինչ դու գիտես, Ինձանից ես սովորել:

Իմ ողջ Թագավորությունը լեցուն է հրաշալիքներով: Ես եմ Ալֆան և Օմեգան: Սիրի՛ր Ինձ... Ինձ հետ թագավորի պես վարվիր՝ մատուցելով Ինձ քո ունեցած սիրո յուրաքանչյուր կաթիլը: Ես ստեղծել եմ քեզ, որ Ինձ սիրես. քո ունեցած ողջ սերը թո՛ղ միայն Ինձ համար լինի[2]: Ես գիտեմ, թե որքան թույլ ու թշվառ ես դու առանց Ինձ, բայց գիտեմ նաև, որ Իմ Ձեռքերում ես ունեմ պարզապես մի մանուկ և մի ոչնչություն, ուր Իմ Հոգին կարող է ազատորեն շնչել այս տարածքում, որը դու տալիս ես Ինձ: Թույլ տուր Իմ Հոգուն ձուլել ու ձևավորել քեզ: Այն ամենը, ինչ դու սովորում ես, գալիս է Իմաստությունից, իսկ <u>Իմաստությունը ես եմ</u>:

Սեպտեմբերի 7, 1988

Գովյալ լինի Տերը:
Օրհնյալ լինի մեր Տերը:
Փառավորյալ լինի Աստված:
Ես մեռնելու չափ
սիրում եմ քեզ, Հա՛յր:

[1] Հիսուսն ուրախ էր թվում:
[2] Սովորելով սիրել Աստծուն՝ մենք սովորում ենք նաև սիրել միմյանց:

Տե՞ր:

Ես եմ: Զավա՛կս, լսի՛ր: Կշարունակե՞ս գործել Ինձ համար, քո Տիրոջ համար:

Եթե Դու ուզում ես Ինձ այնպես, ինչպես որ կամ:

Դու Ինձ հարկավոր ես: Քո անասելի տկարությունն Ինձ գրավում է: Ե՛կ և կլանի՛ր Ինձնից:

Կենդանի ու բժշկված: Դու տեսել ես ճշմարտությունը դեմառդեմ: Ես բժշկել եմ քեզ: Ես դարձի եմ բերել քեզ: Ես բարձրացրել ու դրել եմ քեզ Իմ Սուրբ Սրտի մեջ: Ես օրհնել եմ քեզ, և այն, ինչ սկսել եմ քեզ հետ, կավարտեմ: Դու պիտի մնաս Իմ Սրահում և պիտի կերակրվես միայն Իմ կողմից: Ես սքողել եմ քո աչքերը՝ քեզ չարից հեռու պահելու համար: Ես չէի ուզենա, որ դու խանդավառվեիր այս բոլոր շնորհներով, որոնք Ես տվել եմ քեզ: Ես մատուցել եմ քեզ Իմ Սուրբ Սիրտը, որ այն լինի քո Տունը: Մտիր Նրա խորքերը: Թաքնվի՛ր Նրա խորությունններում և այնտեղից երբե՛ք դուրս մի եկ: Ես՝ քո Փրկիչը, քեզ այնտեղ թաքցրած պիտի պահեմ մինչև վերջ:

Շնորհակալ եմ, Տե՛ր:

Սեպտեմբերի 9, 1988

Տե՛ր, ես վստահում եմ Քեզ, և այն, ինչ սովորել եմ, սովորել եմ միայն Քեզանից: Բայց, Տե՛ր, շատ եկեղեցականներ ծաղրում են Ինձ: Նրանք չեն ուզում հավատալ, որ այդ Դու ես: Նրանք մի կողմ են հրում Քո Գործերը, երեխաների տեսիլքները, երևումները, հայտնությունները, այդ բոլորը ոտքի տակ են առնում: Նրանք ուզում են, որ Դու ԼՌԵՍ: Խնդրում եմ, մի՛ քաշվիր մի կողմ, Աստված Իմ, փութա մեզ մոտ և օգնիր մեզ, Տե՛ր, մեր Փրկիչ: Տե՞ր:

Ես եմ: Վասո՛ւլա, իմ խորհուրդը նրանց համար, ովքեր ճնշում են քեզ, այս է. «Մինչև դուք նորից երեխաների նման չդառնաք, չեք կարող մտնել Իմ Թագավորության մեջ»: Զավա՛կս, ժամանակը կգա, երբ ամեն մի տեսիլք կհռչակվի որպես ճշմարտություն: Ես ասել եմ, որ Իմ Եկեղեցում ոչ մի սին տեսիլք չի լինելու, ոչ մի խաբուսիկ մարգարեություն: Այն, ինչ Ես ասացի, շուտով պիտի իրականանա, քանի որ, ինչ որ Ես հայտարարում եմ՝ պիտի իրագործեմ քո կյանքի ընթացքում:

Շնորհակալ եմ, Տե՛ր:

Մե՞նք, մե՞ղ:

Հավիտյանս: Ամեն:

Սեպտեմբերի 10, 1988

Թող փառավորվի Աստված: Թող փառավորվի Աստված:

Սբ. Միքայե՞լ:

Վասո՛ւլա, ես կասեմ քեզ հետևյալը: Այս ամբողջ հայտնությունը գալիս է Ամենաբարձրյալի Բերանից. վստահ եղիր Նրա Ողորմածությանը:

Շնորհակալ եմ, Սբ. Միքայել:

(Սա ասվեց այն ժամանակ, երբ ես աղոթում էի Սբ. Միքայելի աղոթքը չարին ջախջախելու համար):

(Ավելի ուշ)

Տե՞ր:

Ես եմ:

«Հիսուսի վերջին փորձությունը» ֆիլմը իսկական խայտառակություն է: Տեսնենք հաջորդը ի՞նչ է լինելու:

Օրհնյալ են նրանք, ովքեր հետամուտ չեն լինի գնալու ու տեսնելու այն:

(Այս ասելուց հետո Հիսուս լռեց):

Սեպտեմբերի 12, 1988

Տե՞ր Իմ:

Ես եմ: Վստահի՛ր Ինձ[1]:

Ես միշտ քեզ հետ եմ: Ամեն հոգու չի տրված այն շնորհը, որ Իմ Կամքով դու ստացել ես: Այսուհանդերձ, դեռ ինչքա՞ն դու պիտի կասկածես: Հավատա՛...

Թո՛ղ նրանց, ովքեր քեզ դեպի իրենց են քաշում: Նրանց սրտերը փակ են, և նրանք ապրում են խավարում: Ինչո՞ւ հետևել մի կույր մարդու, որը թափառում է՝ ավելի խորանալով ամայության մեջ: Ես Միակն եմ, որին դու պետք է հետևես. ուստի, բաց ականջդ, քանի որ լսում ես: Փորձի՛ր հասկանալ, զգա՛ Իմ Ներկայությունը: Ինչո՞ւ ես դու երեսդ շրջում, երբ տեսնում ես Ինձ: Հետևի՛ր սևեռուն Իմ հայացքին, զավա՛կս: Այո՛[2]: Տեսնո՞ւմ ես: Դու կարող ես, եթե փորձես: Նշանա՛ծս, ուրախացրո՛ւ

[1] Ես ասացի Հիսուսին. «Ինչ մեծ շնորհ են այս մարդիկ ունեցել, որոնք ապրել են երկրի վրա Քո ապրած ժամանակ»:

[2] Այն պահին, երբ Աստված ասաց «զավակս», ես զգացի Նրան, ես զգացի նրա Ներկայությունը, և սիրտս «վեր թռավ ուրախությունից»:

Ինձ: Խորհրդածի՛ր այն ամենի մասին, ինչ Ես տվել եմ քեզ և պատվի՛ր Ինձ:

Տե՛ր, ես սարսափելի թույլ եմ:

Աղոթի՛ր քո տկարության համար և Ես չեմ ուշանա, Ես կբարձրացնեմ քեզ, սիրելիս: Ճաշակիր Իմ Մարմինը: Գրի՛ր այդ:

(Հիսուսն ինձ թույլ տվեց, որպեսզի «Ճաշակիր Իմ Մարմինը» բառերով ես հիշեի այն մասին, որ նախորդ օրը գիշերը, երազումս տեսել էի, թե ես ինչպես Հիսուսի ողջ Մարմինը պոկեցի իմ ունեցած մի խաչից (20սմ երկարությամբ) և կերա Նրա ողջ Մարմինը՝ խաչը դատարկ թողնելով):

Ես եմ քեզ տվել այդ տեսիլքը: Դու պետք է ճաշակես Իմ Մարմինը: Ես տվել եմ քեզ Իմ Մարմինը: Ըմպիր Իմ Արյունը: Ես ուզում եմ, որ դու ըմպես նաև Իմ Արյունը:

Վասո՛ւլա, ուզո՞ւմ ես իմանալ, թե դու ինչու ես երբեմն կասկածում: Որովհետև դու ապրում ես որպես Իմ վարդը անապատում: Վարդը երբեք չի դիմանում անապատում, եթե նրան արտակարգ ուշադրություն ու խնամք չի տրվում: Ամեն ինչ, որ չբնապատում է նրան, ազդում է նրա վրա: Ես եմ քո Պահապանը, որ երբեք Իր Աչքերը քեզանից չի հեռացնում, որովհետև վախենում է, թե կիզիչ քամիները կայրեն քեզ: Ես շարունակ հսկում եմ քեզ՝ մոտիկից հետևելով քեզ: Ես հեռու եմ քշում քո թշնամիներին, որպեսզի չլինի թե հանկարծ կոխկրտեն քեզ: Ես շարունակ հսկում եմ, որ դու ոչնչի պակաս չունենաս: Ես էտում եմ քեզ, երբ հարկ է լինում և պարարտացնում եմ քո հողը:

Նշանածը Իմ Հոգո՛ւ, Ես պարզապես ուզում եմ հիշեցնել քեզ, որ չվհատվես, որովհետև Ես, Տերս, քո Պահապանն եմ և երբեք քեզ չեմ լքի այս անապատում: Ուրեմն, վստահի՛ր Ինձ և թույլ մի՛ տուր, որ այս ամայի անապատը վախեցնի քեզ: Իմ խաղաղությունը քեզ: Ես կօգնեմ քեզ, որ ավելացնես Իմ հանդեպ ունեցած քո հավատը, քանի որ դու ուզում ես այդ:

Սնվի՛ր Ինձանով: Մե՞նք, մե՞զ:

Հավիտյանս:

Հավիտենից:

Մենք, մեզ: Մամա՞:

Այո՛, մենք, մեզ: Միշտ մոտ եղիր Հիսուսին:

Այո՛, Մայր, ուզում եմ լինել:

Ե՛կ:

Սեպտեմբերի 14, 1988

(Վերացումն Սուրբ Խաչի)

Հիսո՞ւս:

Ես եմ: Լսի՛ր Իմ Ձայնը: Ես աղաղակում եմ այս ամայի անապատում: Բոլոր նրանք, ովքեր կլսեն՝ Ես պիտի բարձրացնեմ, և նրանց մեղքերը պիտի լվացվեն ու մոռացվեն, ինչպես վազող ջրերը:

Վա՜յ նրանց, ովքեր կփակեն իրենց ականջները: Բայց, ավա՜ղ: Շատերը կլինեն ձեր մեջ, որ մոլորվելու են և չեն լսելու Ինձ, Ինձ՝ որը Ճանապարհն է: Դուք լքել եք Ինձ: Այնքա՜ն երկար ժամանակ է արդեն, որ դուք մոլորվել եք մեղքի մեջ՝ կուլ տալով միայն սատանայի ծուխը, և Իմ անունն այժմ անիմաստ է ձեզ համար: Դուք նման եք երկրի վրա գտնվող ստվերների, բայց և այնպես ձեր չարության մեջ դուք այլափոխել եք Ճշմարտությունը սատանայի օգնությամբ: Դուք նսեմացրել եք Ինձ զարգացման ձեր տեսությամբ (էվոլյուցիայով):

Ես ձեզ շատ անգամներ եմ զգուշացրել: Ես նախապես զգուշացրել եմ այս օրերի մասին: Իմ անսահման ողորմածությունից դրդված՝ Ես նշաններ եմ տվել ձեզ, բայց, այնուամենայնիվ, դուք նախընտրեցիք ձեր աչքերը փակել Իմ Ողորմության առջև: Առաջնորդնե՛ր: Դուք, որ գիտեք Իմ Խոսքը և ծառայում եք Ինձ համար և ճանաչում եք Ժամանակների Վախճանը,[1] ընդունելով, որ Այն մոտ է, բայց ձեր երկչոտությունից մղված հեռու եք կանգնել ու կողքից եք դիտել այն Շնորհները, որ Ես հեղում եմ ձեզ վրա՝ պատվելով մարդկանց: Հետամուտ եղեք հասկանալ և մեկ անգամ ևս թափանցել Իմ առակների ծածուկ խորհուրդների մեջ: Ես ամենայն լրջությամբ խնդրում եմ ձեզ, որ աղերսեք հասկացողության Սուրբ Հոգու համար, որ Այն իջնի ձեզ վրա, որպեսզի դուք ձեռք բերեք Գիտության ավելի խոր ըմբռնում:

Օրերը հաշված են, ձեր հոգիները՝ նույնպես: Պատրաստվե՛ք, վերցրեք այն քողը, որն Իմ թշնամին գցել է ձեր աչքերին, որովհետև, քանի դեռ մնում է ձեր սնափառությունը, ձեր մեղքն էլ ձեզ վրա կմնա: Խոնարհեցրե՛ք ինքներդ ձեզ և ընդունեք Իմ Ուղիները: Արձագանքե՛ք Իմ Ձայնին, որը տառապալից աղաղակում է այս անապատում[2]:

Արի՛, զավակս, հենվիր Ինձ վրա: Միասին... միասի՛ն մենք կկիսենք իմ տառապանքը:

Այո՛, Տեր իմ, ես ուզում եմ կիսել այն Քեզ հետ:

Մենք, մեզ:

Հավիտյան:

---

[1] Սուրբ Գրվածքներում

[2] Երբ Հիսուսն ասաց այս խոսքերը, Նա ինձ ևս մասնակից դարձրեց իր տառապանքին: Հիսուսն ահավոր տառապում է:

Սեպտեմբերի 15, 1988

(Վշտի Սուրբ Մայրը)

Տե՞ր:

Ես եմ:

Ինչպե՞ս է, որ այսքան շատ կրոնավորներ չեն գնահատում Քո Ողորմության նշանները, որոնք այս օրերին Դու տալիս ես մեզ: Տե՛ր, գիտե՞ս, թե ինչ են ասում նրանք: Նրանք ասում են, որ սա Իրական Հավատ չէ, այլ կերպ ասած՝ «Մենք արդեն դարձի ենք եկել առանց նշանների, ուրեմն մենք կարող ենք առանց դրանց էլ առաջ գնալ: Ուստի Աստվա՛ծ, մեզ այլևս մի՛ տուր դրանք, մենք հետաքրքրված չենք նման արտասովոր բաներով»: Փոխանակ երեսն ի վայր ԳԵՏՆԱՏԱՐԱԾ ընկնելու և Քեզ աղաղակելու. «Փառավորվի՛ր Աստված, գովյալ լինես, Տե՛ր, Քո Անսահման Ողորմածության համար: Դու արդարև իրականացնում ես Սուրբ Գիրքը»: Ո՞րն է նրանց համար Իրական Հավատը, երբ մի կողմ են հրում Հոգին: Նրանք վիճարկում են՝ ասելով. «Հիշե՛ք, թե ինչ ասաց Հիսուս Թովմասին. «Երանելի են նրանք, ովքեր չեն տեսել, բայց հավատում են...»: Նրանք մոռացել են, թե էլ ուրիշ ինչ է ասում Սուրբ Գիրքը. «Երբեք մի՛ փորձեք մարել Հոգին, կամ՝ արհամարհանքով մի՛ վարվեք մարգարեության պարգևին»: Եվ Հոգին շնչում է այնտեղ՝ ուր կամենում է ... Երբ այս մարդիկ վիճում են, նրանք կարծես չեն հասկանում, որ միայն Քեզ հետ են վիճում, Տե՛ր իմ:

Զավա՛կս, բարձրաձայն աղաղակիր ազգերին, աղաղակի՛ր, որպեսզի ամեն մարդ լսի այն.

«Ահա քո Աստվածը: Մեր Աստվածը մեզ հետ է. Նա երբեք մեզ չի լքել: Նա եկել է որպես հովիվ կերակրելու իր հոտը և հավաքելու իր գառներին իր թևերի տակ, որովհետև Նրա Թագավորությունը մոտ է»:

Ես պիտի կերակրեմ Իմ փոքրիկ հոտը և մեծ սիրով նրանց բոլորին հավաքեմ Իմ գրկում:

Նրանք անտարբեր են Քո նշանների հանդեպ: Նրանք լսում են դրանք և ապա գնում թղթապանակի մեջ: Թվում է, թե դրանով Քեզ ուզում են ասել, որ դադարեցնես Քո նշանները:

Կարիք չկա, որ որևէ մեկը Ինձ խորհուրդ տա: Ես այդ խորհրդատուներից և ոչ մեկի կարիքը չունեմ, որովհետև նրանց իմաստությունն ամոթ է Ինձ համար: Մի՞թե Ես չգիտեմ, թե ինչպես չափեմ ձեզ և ինչպես կերակրեմ ձեզ: Ավա՛ղ, ձեզանից միայն մի մասնիկ է մնացել, որ ողջունում է Իմ Հոգուն: Արդյոք նրանք հասկացե՞լ են, որ հակառակության հոգի ունենալով, Ինձ հուսախաբ են արել: Եվ Ինձ հուսախաբ անելով՝ նրանք չկարողացան տեսնել Ճշմարտությունը:

Արդյոք կավն իրեն ձև տվողին ասո՞ւմ է. «Ի՞նչ ես շինում»: Խոնարհությամբ ընդունեք այն, ինչ ստանում եք Հոգուց՝ ընդունելով

Իմ Գործերը և Նրա խորհուրդները: Ես կամեցել եմ ավելացնել Իմ Նշանները ձեր օրերում, ուստի ուրախությամբ ընդունեք այն, ինչ ստանում եք Հոգուց: Ցնծացե՛ք և ընդունե՛ք Ինձ, ուրախ եղեք՝ փոխանակ ձեր թիկունքն Ինձ շրջելու: Նայե՛ք Ինձ և ճանաչեք Ինձ: Մի՛ ճնշեք իմ Հոգին. փոխարենը՝ Ինձ սիրով ընդունեք: Վա՜յ ձեզ, որ խեղդում եք Իմ Հոգին, վա՜յ ձեզ՝ Ունայնությամբ փքված կույր առաջնորդներ, դո՛ւք, որ ամայացրել եք Իմ Սուրբ Եկեղեցին: Քննելով ինքներդ ձեզ՝ հետամուտ եղեք Ճշմարտությանը, որպեսզի վստահ լինեք, որ դուք Ճշմարիտ Հավատի մեջ եք:

Խորա՛ն, Ես՝ Տերը, մինչև վերջ քո բոցը վառ պիտի պահեմ: Իմ գործերը դեռ չեն ավարտվել: Ե՛կ հիմա: Մե՞նք, մե՞ զ:

Հավիտյանս, ամեն:

Սեպտեմբերի 18, 1988

Աստվա՞ծ իմ[1]:

Ես եմ: Սիրի՛ր Ինձ, մի՛ վախեցիր Ինձանից: Վախեցի՛ր Ինձնից միայն այն դեպքում, երբ դու ապստամբում ես Իմ դեմ:

Սիրո յուրաքանչյուր կաթիլ օգտագործվում է քավարանից հոգիներ ազատելու համար: Ինձ ջերմորեն սիրելով՝ դուք հանդցնում եք նրանց կրակները՝[2] ազատելով նրանց տառապանքից: Դրանից հետո, Ես՝ Տերս, վերջապես կարող եմ ընդունել նրանց: Ուստի սիրի՛ր Ինձ, փափագի՛ր Ինձ, պաշտի՛ր Ինձ: Ազատի՛ր նրանց, մեկը մյուսի հետևից:

Մարդկությունը պետք է հասկանա, որ սերը յուրացնում է Երկնքի Զորությունը և այն հանդիսանում է ազատության ու կյանքի Բանալին: Դու հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչու է սատանան ատում քեզ: Իմ Վասուլա, հենվի՛ր Ինձ վրա: Ոչ մի բան ապարդյուն չէ:

Մե՞նք, մե՞ զ:

Հավիտյանս, հավիտենից:

Սեպտեմբերի 24, 1988

Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Հիշի՛ր, որ Ես Հոգի եմ, և այն ամենը ինչ Ես ունեմ, կիսում եմ քո հոգու հետ: Դու և Ես մեկ ենք՝ կապված Սիրո միությամբ, միացած իրար Սիրո մեջ, Ես՝ քո Աստվածը, իսկ դու՝ Իմ փոքրիկը, Ես՝ քո Արարիչը, դու՝ Իմ արարածը:

---

[1] Ես սիրում եմ Աստծուն այն աստիճան, որ Ինձ այստեղ՝ երկրի վրա, զգում եմ որպես այրի:

[2] Մինչ Հիսուսն ասում էր այս ամենը, ես մի տեսիլք տեսա, որտեղ մի քանի հոգիների այրվող ձեռքերի կրակը հանգեց:

Թող նրանք, որոնց սրտերը խստացել են, հիշեն, որ Իմ Սիրտը սրբացնում է: Թող նրանք իմանան, որ Ես կանչում եմ նույնիսկ անուն չունեցող և անհայտ մարդկանց, մարդկանց՝ առանց առաքինությունների, առանց որևէ արժանիքի: Ես փոխակերպում եմ քարեղեն սիրտ ունեցողներին և բարձրացնում եմ նրանց ոչնչությունից: Ես անսպասելի գալիս եմ մեռածների մեջ և կարող եմ հարություն տալ բոլորին: Նայի՛ր ինքդ քեզ, Վասո՛ւլա, դու ոչ մի արժանիք չունեիր, սակայն Ես քեզ վեր հանեցի մեծ կարեկցությամբ: Այժմ դու գիտես, թե ինչ է նշանակում Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ: Ե՛ս եմ Կյանքը:

Փառավորի՛ր Ինձ, զավակս: Երբե՛ք մի ըմբոստանա Իմ դեմ: Մտքումդ պահիր իմ ուսուցումները:

Տե՞ր:

Ես եմ:

Մի բան է ինձ անհանգստացնում: Մեկը կա, որն ինձ ասում է, թե ես մշտապես մեղքի մեջ եմ, քանի որ ամուսնալուծված և նորից ամուսնացած եմ: Դրա համար նա ասում է, որ անկասկած այս հայտնությունը Քեզանից չէ:

Թող այն մարդը, որ մեղք չունի, իրեն ցույց տա Ինձ: Թող նա առաջ գա և ցույց տա Ինձ իր դեմքը:

Այո՛, Աստված իմ, օգնի՛ր ինձ, ես չգիտեմ ինչ պատասխանեմ այս մարդկանց ասածներին:

Մի՛ պատասխանիր: Անմիջապես Ինձ մոտ եկ. քո Հայրը հոգում է քեզ համար: Մե՞նք, մե՞զ, զավակս:

Հավիտյանս հավիտենից, ամեն:

Իմաստությունը սիրում է երեխաներին:

Սեպտեմբերի 25, 1988

Աստվա՛ծ իմ, Քո մի քանի Պատգամները ես տվեցի Լ...ին, և նա ասաց, որ դրանք ընթերցողի համար շփոթեցուցիչ են և ամոթալի: Նա անհարմար է զգում կարդալով Քո արարածի՝ իմ հանդեպ տածած Քո Սիրո մասին, ինչպես և Քո՝ իմ Աստծո հանդեպ տածած իմ սիրո մասին: Նա ասում է, որ դրանք ցնցող են: Տե՞ր:

Ես եմ: Ես Աստված եմ: Ես Սեր եմ: Ով էլ որ ասի, թե Իմ Պատգամները ամոթալի են, միմիայն դատապարտում է Ինձ, և Ինձ դատապարտելով, դատապարտում է ինքն իրեն:

Ոչ հոգևոր մարդը անկարող է իր մտքով հասկանալ Հոգուն և ոչ էլ կարող է թափանցել Իմաստության մեջ, որպեսզի հասկանա Հոգուն:

Անհրաժեշտ է, որ նա բաց անի իր սիրտը և թույլ տա Հոգուն ներս մտնել ու հանդիպել իր Հոգու հետ: Հետո Իմ Հոգին կսնի նրա Հոգին և Իմաստությունը կլուսավորի նրան, որպեսզի նա տեսնի, թե ինչ է Հոգին, ինչպես է գործում Հոգին, և ինչ է զգում Հոգին: Ես Աստված եմ: Ես Սիրո Աղբյուրն եմ, որ ստեղծել եմ բոլորիդ՝ Իմ անսահման սիրուց ելնելով, որ սիրեք Ինձ:

Փառավորյա՛լ լինի մեր Տերը:

Սեպտեմբերի 26, 1988

(Պատգամը տրված է խմբի հավաքի առթիվ)

Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Իմ Վասուլա, Ինձ հետ վերաբերվիր որպես Թագավորի: Բոլոր Հոգիներին դեպի Ինձ առաջնորդիր: Նրանց, ովքեր ուզում են լսել, Ես կբարձրացնեմ ու կդնեմ Իմ Սուրբ Սրտի մեջ:

Սիրելիս:

Այո՛, Սուրբ Մա՞յր:

Այո՛: Լսի՛ր Ինձ: Ես տարածում եմ ձեր մեջ Իմ անուշ բուրմունքը[1]: Իմացե՛ք, որ Մենք Ներկա ենք ձեր մեջ և լսում ենք ձեր սրտերին: Որքա՜ն ենք Մենք սիրում ձեզ: Զավակնե՛րս, Ես ձեր Մայրն եմ: Թույլ տվեք Որդուս, որ առաջնորդի և բժշկի ձեզ՝ մաքրագործելով ձեզ: Թույլ տվեք, որ Հիսուս բժշկի ձեզ: Ընդունե՛ք այս շնորհը, որն Իմ Որդին պարգևում է: Հասկացե՛ք, թե Նա ինչու է փնտրում ամեն մի հոգու, որովհետև Հիսուս անսահմա՜ն սիրում է ձեզ:

Ես՝ ողջ մարդկության Մայրը, ձեր Փրկչի Մայրը, ձեզ մոտ եմ, զավակներս, և միշտ պատրաստ եմ օգնելու ձեզ: Եկե՛ք: Բացե՛ք ձեր սրտերը մեր առջև: Մենք ձեր Սուրբ Ընտանիքն ենք. ընդունե՛ք Մեր Խաղաղությունը: Հիսուսն ու Ես օրհնում ենք բոլորիդ:

Ես օրհնում եմ Քեզ, Սուրբ Մայր՝ Աստվածամայր:

Սեպտեմբերի 27, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ:

[1] Շատերը, ովքեր հետևել էին այս հայտնությանը, խնկի և վարդերի հոտ էին զգացել:

Հետևիր քեզ տրված Իմ ուսուցումներին և թույլ տուր Ինձ խոսել: Մնա՛ ոտաբոբիկ և աննշան:[1] Ճանաչի՛ր Իմ հարթած ուղին: Իմ Ուղին չիտակ է, ուստի ո՛չ ձախ նայիր, ո՛չ էլ աջ: Ես արդարև հաղորդակից եմ արել քեզ Իմ խորհուրդներին: Ես ընտրել եմ քեզ, որ լինես Իմ քարետախտակը: Ես քեզ բոկոտն առաջնորդել եմ Իմ Տունը, որ հանդիպես Պետրոսին:

Իմ Խաղաղության ու Սիրո Պատգամը զինաթափ է անելու Իմ թշնամիներին. սպասիր միայն և կտեսնես: Ես դեռևս չեմ ավարտել Իմ Գործերը: Իմ տունն այսօր ավերակների մեջ է, բայց ամենավատը դեռ գալու է:

Կայենները, որոնք ապրում են Իմ մարմնի մեջ և, որոնք Իմ Գլխի փչերն են՝ լեցուն ամբարտավանությանբ, ջանալու են կոտորել Իմ Աբելներին, այն Աբելներին, որոնք հասկանում են Իմ Հոգուն և անկեղծորեն սիրում են Ինձ: Բայց Ես ձեզ ճշմարիտ եմ ասում, որ նրանց ամբարտավանությունը սուգի է վերածվելու և Իմ Կրակն այրելու է այդ անհավատարիմ ծառաներին, որովհետև ի՞նչ ունեն այժմ նրանք Ինձ առաջարկելու: Նրանք կոխկրտում են Իմ Հոգուն՝ առաջնորդված իրենց անձնական ցանկություններով ու մոլեռանդությանբ: Անհավատարմությունը մոլորեցրել է նրանց, և նրանք այլևս չեն կարողանում պարզորոշ տեսնել:

Վասո՛ւլա, գրի առ քո հարցը, քանի որ այդ հարցը ձեզնից շատերն են տալիս իրենց:

Տե՛ր, այլևս բարի ծառաներ չե՞ն մնացել, ծառաներ, որոնք ճշմարտապես սիրում են Քեզ և անկեղծ են:

Շատ քչերն են մնացել, որ իսկապես սիրում են Ինձ, և առավել քչերը, որ հասկանում են Իմ Հոգուն: Այդ հոգիները հանգստացնում են Իմ Վերքերը, և Իմ Սուրբ Սիրտը նրանց տունն է:

Տե՛ր, իսկ ի՞նչ կասես աշխարհականների մասին:

Նրանց մեջ ևս շատ քչերն են մնացել, որ հավատում են Ինձ ու Իմ Նախախնամության Գործերին: Մեծամասնությունը լքել է Ինձ՝ իրենց Աստծուն: Եվ Իմ Սուրբ Սրտի խորքում մնում է գեղարդի սայրը, այն սայրը, որն այսքան շատ արյունահեղման պատճառ է հանդիսանում: Այսօր Ես ձեզ ասում եմ, որ նա Իմ տառապանքների պատճառներից մեկն է: Ես՝ Տերս, նրա վրա եմ հասնելու անակնկալ ձևով: Հանկարծակի, երբ ոչ ոք Ինձ չի սպասում, Ես մտնելու եմ Իմ Տաճարը: Այդ օրերը հաշված են: Ես իջնելու եմ ինչպես մի Կայծակ, սրբազործելով Երուսաղեմը, որն ընկնելով, վերածվելու է մի հողակույտի՝ իր հետ քարշ տալով բոլոր նրանց, ովքեր Ինձ չեն սիրում: Ես մտադիր եմ լինել նրա Դատավորը և դատել նրան խստությամբ:

Բայց բոլոր նրանք, ովքեր հավատարիմ են մնացել Իմ Սուրբ Անվանը, Ես՝ Տերը, բարձրացնելու եմ և տեղավորելու եմ Իմ Նոր Երուսաղեմում:

[1] պարզ և խոնարհ

Նրանք պետք չէ որ վախենան, քանի որ հետևում էին Իմ ուսուցումներին և Իմ Օրենքին: Թեև նրանք ճնշված էին և Ինձ ուղղված նրանց աղաղակը խեղդվում էր Իմ թշնամիների կողմից, այնուամենայնիվ, Ես լսում էի նրանց: Իմ աչքերը երբեք չեն լքել այդ սրբերին: Նրանք երկյուղել են Ինձանից և փառաբանել են Ինձ՝ շարունակելով հավատարիմ մնալ Իմ Խոսքին, կիսելով այն բոլոր միջոցները, որը Ես տվել էի նրանց և բարի գործեր անելով, գոհացնում Ինձ:

Սիրելի արարչություն, դուք ապրում եք Ժամանակների Վերջում[1]: Ես զգուշացրել էի ձեզ, որ այդ ժամանակներում կլինեն այնպիսի մարդիկ, որոնք կծաղրեն հավատը՝ ճնշելով մարգարեության Հոգին և ծաղրելով տեսանողներին, որպեսզի նրանք կարողանան հետևել չարության իրենց խաբուսիկ ուսմունքներին: Նրանց հմտությունները վերածվել են այլասերված հնարքների, որոնք խոտորում են իրենց: Նրանք չարիքի սիրահարներ են և ամենևին չեն կարող իրենց մտքերը մաքուր պահել: Խենթի նման նրանք հրապուրված են զարտուղի արարողություններով և սև պատարագներով՝ պաշտելով սատանային: Նրանք կամ այդ են անում, և կամ էլ՝ ահավոր անօրեն կյանք են վարում, որովհետև Նրանց տգիտությունն այնպիսին է, որ հենց դրանով իսկ միայն նրանք դատապարտում են իրենց կյանքերը: Քանի որ նրանք փակել են իրենց ականջները և հրաժարվում են Ճշմարտությունը տեսնելուց՝ Ինձ որպես իրենց Աստվածը ընդունելուց, ուստի իրենց մեղքը մղել է նրանց անառակության ու իրենց հոգու ապականության:

Ասվել է նաև, որ ձեր ժամանակներում Իմ ծառաներից միայն մի մնացորդ է հավատարիմ մնալու Ինձ՝ քարոզելով Ավետարանն այնպես, ինչպես որ այն պետք է քարոզվեր, և որ շատերը հետևելու են բանապաշտությանը՝ անհավատարմությամբ դավաճանելով Ինձ: Այս բանապաշտությունը Իմ Եկեղեցին անապատ դարձրեց, Այն վերածելով ավերակների, որի խորքերում իժերն են բույն դրել:

Նրանց համար, ովքեր արատավորում են Իմ Անունը և ովքեր գահակալած նստած են երկրային փառքի մեջ՝ բավարարելով դրամի հանդեպ իրենց ծարավը, հետամուտ լինելով իրենց անձնական շահերին և ոչ թե Իմ, Ես կանչում եմ անապատում, որը դուք ստեղծեցիք, որ գաք դեպի Ինձ և զղջաք՝ նախքան մաքրագործման օրը: Ես՝ Տերս, ձեզ զգուշացնում եմ, որ չճնշեք Իմ Ճշմարտության Հոգուն, որը խոսում է այս տկար գործիքի միջոցով: Ես ամենայն լրջությամբ խնդրում եմ Իմ Եկեղեցուն, որ հիշի այն պայմանները, որոնց մեջ Ես ու Իմ աշակերտները գործեցինք և որտեղ հանգչեցին մեր գլուխները: Մենք պալատներ չունեինք ... և ո՛չ մի հատ: Պալատները թագավորների համար էին, ոչ թե Ինձ համար, և ոչ էլ Իմ աշակերտների համար:

Տե՛ր, նրանք, որոնց Դու նկատի ունես և որոնք ճանաչում են իրենք իրենց, չեն ցանկանա լսել այս հատվածը, և սա ևս մի պատճառ կլինի նրանց համար, որ արգելեն այս պատգամը:

[1] Մի ժամանակաշրջանի վերջը, և ոչ թե աշխարհի վերջը:

Ճիշտ է, որ նրանցից ոմանք չեն ուզենա լսել Իմ խոսքերը: Նրանք խեղդում են Ինձ և Իմ Տունը իրենց սնափառությամբ: Իմ Տունն ու Ես չնչահեղձ ենք լինում նրանց ուխտադրժություններից: Ես չնչելու տեղ չունեմ: Նրանք փակել են Իմ Տան բոլոր պատուհանները, և Իմ Լույսը չի կարողանում ներս թափանցել, և ոչ էլ Իմ Հոգին է կարողանում ներս փչել մաքրելու համար օդը: Այս հոգիները նման են համը կորցրած աղի, նման են կեղտոտված ապակու, արգելելով, որ Իմ Լույսը նրանց մեջ թափանցի՝ արգելելով, որ Իմ Սրբությունը մաքրագործի նրանց:

Սատանայի գոլորշիներն այս օրերին մառախուղի պես են, որոնք թափանցում են բանալիների անցքերից ու ծղնիների արանքներից: Քանի որ նրա գոլորշիները մահացու են, ուստի Ես ամենայն լրջությամբ խնդրում եմ, որ կրկնապատկեք ձեր զոհողություններն ու ձեր աղոթքները: Ահավոր մեծ փոխհատուցումներ պետք է արվեն նրանց կողմից, ովքեր սիրում են Ինձ: Այս տարի սատանան իր մոլուցքի մեջ կրկնապատկել է իր գործերն ընդդեմ Իմ Եկեղեցու: Այս տարի, որ նվիրված է Մարիամին, նա որոշեց տարանջատել Իմ Եկեղեցու մի հատվածը: Ես կանխասացել էի քեզ այս պառակտման մասին ու նաև այն մասին, որ այդ բոլորի մեջ դու պիտի իջնեիր Իմ Տունը:

Այժմ բռնիր ձեռքս և քայլիր Ինձ հետ: Կիսի՛ր Իմ խաչը, Իմ Վասուլա, Իմ գործերը դեռևս ավարտված չեն: Խաղաղության մեջ եղիր: Ես՝ Տերը, քեզ եմ տալիս Իմ խաղաղությունը, զավակս: Հիշի՛ր, ժպտա Իմ Ներկայությամբ: Երբեք չմոռանաս Իմ Ներկայությունը, ասա Ինձ Kyrie elleisson (Տեր Ողորմյա՝): Հաճեցրու Ինձ, Ես քեզ այնքա՜ն շատ եմ տվել:

Այո՛, Տեր իմ,
Դու ինձ այնքա՜ն շատ ես տվել:
Ես սիրում եմ Քեզ,
Սրբություն Սրբոց:
Դու ինձ
այնքան լավ բաներ ես տվել,
որ ես ուզում եմ շարունակ
հայտարարել այդ բոլորը,
բայց դրանք ավելին են,
քան ես կարող եմ հաշվել:
Դու բացել ես իմ ականջները,
որ լսեմ Քեզ:
Դու հարություն ես տվել
ինձ մեռելներից:

Թող Քո սերն ու
հավատարմությունը
մշտապես պահպանեն ինձ:
Այն ամենը,
ինչ Դու արել ես Ինձ համար,
արա նաև Իմ եղբայրների համար,
թող նրանք ևս բաժնեկից լինեն,
Տե՛ր:

Զավա՛կս, ես կանչում եմ ամենքիդ: Ես փնտրում եմ ձեզնից յուրաքանչյուրին: Թույլ տվեք, որ ես մտնեմ ձեր սրտերը, և ես կբժշկեմ ձեզնից ամեն մեկին:
Ե՛կ, հանգստացիր այժմ: Ես միշտ քեզ հետ եմ. երբեք մի՛ մոռացիր այդ մասին:

Սեպտեմբերի 29, 1988

(Սուրբ Գաբրիելի, Սուրբ Միքայելի և Սուրբ Ռաֆայելի տոնը)

(Ես աղոթեցի Սուրբ Միքայելին)

(Սբ. Միքայել)

Փառք Ամենաբարձրյալին, քանզի Նա քեզ հարություն է տվել մեռելներից: Դու պետք է միշտ զգուշանաս սատանայից: Կենտրոնացի՛ր Տիրոջ առջև: Աղոթի՛ր Ինձ:

Սբ. Միքայելին ուղղված աղոթքը չար հոգիների դե՞մ:

Այո՛, եթե Աստծո արարչությունը լոկ իմանար, թե ինչպես է այս աղոթքը պատերազմում չարի դեմ, ապա նրանք ամեն օր այն կասեին: Միշտ պատրաստ եղիր Տիրոջ Խոսքի համար: Հավիտենական Աստվածը սիրում է քեզ. փառաբանի՛ր Նրան:

Ա՜հ, Սուրբ Միքայել, շնորհակալ եմ Քեզնից՝ մեզ պաշտպանելու և մեզ համար պատերազմելու համար:

Տե՞ր Իմ:

Ես եմ: Հիշի՛ր, որ քո շրջապատը մի անապատ է:
Վասուլա, ապաշխարիր և խոստովանիր Ինձ մեղքերդ. Ես լսում եմ[1]: Ես ամբողջովին ներում եմ քեզ: Ես ներում եմ քո մեղքերը, որոնք աղտոտել են քո հոգին: Իմ Խաղաղությունը քեզ: Ես կուզենայի շեշտել սա Իմ ողջ արարչության համար.
Ես ձեզ տվել եմ Իմ բովանդակ Օրենքը: Դուք բոլորդ պետք է հնազանդվեք այդ Օրենքին: Ես ձեզ տվել եմ ուսուցիչներ, որոնք ծառայում են Իմ Եկեղեցում: Նրանք պետք է առաջնորդեն ձեզ և սովորեցնեն ձեզ բոլորիդ, թե որքան կարևոր է Ինձ ստանալը Սուրբ Հաղորդությամբ: Ստացե՛ք Իմ Արյունն ու Մարմինը: Գետերի վերածված Իմ Արյունը ի զուր չի թափվել: Իմ Արյունը թափվել է ձեզ համար, որ դուք ըմպեք Այն: Այս կրոնավորները չպետք է ձեզնից հեռու պահեն Իմ Արյունը: Իմ Արյունը հեղվել է ձեր Փրկության համար: Դուք ևս պետք է ըմպեք Իմ Արյունը: Ուստի եկե՛ք ու ըմպե՛ք Ինձ, և դուք ավելի պիտի ծարավեք: Հնազանդվե՛ք Իմ Վերջին Ընթրիքի Խոսքերին և, երբ դուք

[1] Ես խոստովանեցի Աստծուն:

գաք Ինձ մոտ, նախ իմացեք, թե ինչպես եք Ինձ ստանալու: Քննեցե՛ք ինքներդ ձեզ, կենտրոնացե՛ք: Ինձ ամբողջովին պատվեք՝ (ձեր մեղքերի համար) զղջալով և հաճախ խոստովանելով. Ես ձեզ խոստովանահայրեր եմ տվել: Սիրելիներս, երբ դուք խոստովանում եք նրան, ապա դուք Ինձ եք միայն խոստովանում, Ի՛նձ է, որ խոստովանում եք դուք: Ուխտի Արյան հետ մի՛ վարվեք այնպես, որ իբր թե Այն Սուրբ չէ:

Հիշե՛ք Իմ Սուրբ Ներկայությունը: Մենք, մեզ:

Այո՛:

Մենք, մեզ:

Այո՛, Սուրբ Մայր:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա:

Սբ. Միքայե՞լ:

Այո՛, այդ ես եմ: Ես կուզենայի, որ դու չարի դեմ այս աղոթքով հիշատակեիր Իմ տոնակատարության օրը, ինչպես նաև Սբ. Գաբրիելինը և Սբ. Ռաֆայելինը: Տպագրե՛ք դրանք և տարածեք այս աղոթքները: Ձեր դարաշրջանը հուսակտուր դրա կարիքն ունի: Ես հնազանդվում եմ Ամենաբարձրյալի կամքին: Թող փառավորվի Աստված:

Թող փառավորվի Աստված: Օրհնյալ լինի մեր Տերը:

Զավա՛կս, այդ ես եմ՝ Տերը: Միշտ զգոն եղի՛ր, երբ աղոթում ես այս աղոթքները: Ես՝ Տերս, սիրում եմ Քեզ, որ դու լսում ես Ինձ: Երբեք մի՛ կասկածիր, ես կսնեմ քո հոգին: Ե՛կ, մեկ եղիր Ինձ հետ

Մենք, մեզ:

Հավիտյանս:

Հավիտենից:

Ամեն:

Մենք, մեզ:

Հավիտյանս:

Հավիտենից, ամեն:

Սբ. Մարիամ, ես օրհնում եմ Քեզ:

Սեպտեմբերի 30, 1988

(Փա՛ռք Աստծո, մի մասնի և մի Եհովայի վկայի լրիվ դարձի համար: Փա՛ռք Աստծո նախորդ դարձերի և ամենավերջինի համար ևս):

JESUS ♥ [1]

Թող մարդկային զանգվածները դեպի Քեզ դառնան:

Տե՞ր:

Ես եմ: Քո զոհողությունը գոհացրեց Ինձ: Ես քո Հովիվն եմ և եկել եմ հավաքելու և պաշտպանելու Իմ գառներին: Կերակրի՛ր Իմ գառներին: Տարածի՛ր Իմ Պատգամը: Ե՛կ, դու և Ես, Ես և դու, Սիրո միության մեջ:

Հոկտեմբերի 5, 1988

Տե՞ր իմ:

Ես եմ: Այդ Ես եմ՝ Տերը, Որը սիրում է ձեզ բոլորիդ հավիտենական սիրով: Ես միշտ ներկա եմ ձեր բոլորի մեջ:

Ժամանակների սկզբից ի վեր, ամեն անգամ, երբ Իմ զավակներն ընկել են ապստամբության մեջ, Ես՝ Տերը, իջել եմ շատ տկար գործիքների միջոցով, որ զգուշացնեմ նրանց և ետ բերեմ դեպի Ինձ: Ես՝ Աստված, միշտ միևնույն ձևով եմ գործել: Ես իջել եմ Մուրճի նման, որ կոտրեմ ժայռերը. կոտրելով այն կարծր կեղևը, որը պատել է Իմ արարչության սիրտը: Ես միշտ բացահայտել եմ Ինքս Ինձ, երբ Իմ արարչությունն Իմ օգնության կարիքն է ունեցել, կամ, երբ նրանք շատ ցած են ընկել՝ հնարավորին չափ մոտենալով սատանայի դարպասներին:

Իմ Վասուլա, Խաղաղության ու Սիրո Իմ բովանդակ Պատգամի միջոցով Ես կանչում եմ, Ես կանչում եմ բոլորիդ ու մեծ տառապանքով աղաղակում, որ բոլորդ վերադառնաք դեպի Ինձ և ապաշխարեք: Ես աղաղակում եմ այս անապատում, բայց Իմ Ձայնը հնչում է ինչպես մի արձագանք՝ արձագանքելով դատարկության մեջ... Եթե միայն լսեիք Ինձ և բացեիք ձեր սրտերը, որ Ես բժշկեի ձեզ:

Ես իջնում եմ այս Լայնարձակ Անապատի մեջ՝ Իմ մնացյալ ծաղիկներին փնտրելով, բայց Ես լոկ ժայռերին եմ բախվում. ժայռ ժայռի ետևից... Ես մեծ հույսով շուրջս եմ նայում, բայց միայն փշեր ու մացառներ եմ գտնում, որոնք պատառոտում են Ինձ ու այն քչերին, որոնք սիրում են Ինձ: Ես սեր եմ փնտրում, բայց ատելություն եմ գտնում: Ես կարիք ունեմ մխիթարվելու, բայց այն չեմ գտնում: Ես ծարավ եմ կարեկցանքի, բայց միայն ծաղր ու ծանակ եմ գտնում: Ես սեր

[1] ՀԻՍՈՒՍ անունն ու սիրտը գրված են իմ մատի արյամբ՝ որը ես ծակել էի՝ որպես փոքրիկ զոհողություն:

չեմ գտնում: Ես հույս չեմ գտնում, հավատ չեմ գտնում այս սերնդի[1] մեջ, որովհետև նրանք դադարել են Ինձ պաշտելուց: Իմ բոլոր վախերն իրականացել են... Օ՜, դարաշրջան՝ առանց հավատի, առանց հույսի, առանց սիրո: Դուք դադարել եք Ինձ պաշտելուց և Իմ Սուրբ Անունն այժմ ձեզ համար ոչինչ չի նշանակում: Այո՛, Իմ Անունն անիմաստ է ձեզ համար... Եթե դուք հետևեիք Իմ Ճանապարհներին, և եթե լսեիք Իմ աղաղակները, ապա այս ողջ անապատը չէր գոյանա: Ես խնդրում եմ նրանց, ովքեր սիրում են Ինձ, որ աղոթեք ձեր եղբայրների համար, որոնք Ինձ չեն աղոթում: Մի՛ կրկնեք այն սխալները, որոնք ձեր նախնիներն արեցին Ապստամբության ժամանակ, Փորձության այդ ժամանակ անապատում:

Երբեմնի Իմ կանաչ արոտավայրերը մնացել են դատարկ ու ամայի, իսկ Իմ փոքրիկ հոտը խոցվել է իր իսկ հովիվների կողմից, որոնք ցիրուցան են արել նրանց... Ինչո՞ւ եք զայրացնում Ինձ... Ինչո՞ւ... Յուրաքանչյուր սերունդ, որը վանել է Ինձ՝ պատժվել է: Բայց ձեր մտքերը չար են, քանի որ դուք չեք դադարում խաբելուց ինքներդ ձեզ՝ կարծելով, որ դուք ավելի լավ եք վարվում, քան փարիսեցիները, ասելով. «Եթե մենք այն ժամանակ ապրեինք, ապա երբեք մասնակից չէինք լինի նրանց չար գործերին: Մեր հավատը կփրկեր մեզ»: Ես այսօր ձեզ հետևյալն եմ ասում. «Դուք Ինձ այնքան էլ տարբեր չեք ընդունում այն օրերից, երբ Ես մարմնով ձեր մեջ էի: Ձեզնից շատերը նույնիսկ դատապարտել են Իմ Պատգամները[2], առանց իմանալու, թե ինչ են ասում դրանք»:

Աղջի՛կս, Ես եկա նրանց մոտ, նրանց անապատը, որպեսզի ասեի, թե Ես էի Մեսիան, որին իրենք սպասում էին, բայց նրանք չհավատացին Ինձ, մերժեցին Ինձ և հալածեցին Ինձ՝ խաչը հանելով: Այսօր Իմ Սուրբ Հոգին հասնում է ձեզ, ձեր խավարի մեջ, բայց ձեզ չի հաջողվում հասնել Նրա Գործերին՝ ձեր անհնազանդության և մեղքի հանդեպ ունեցած ձեր հրապուրանքի համար, որը կուտակվել է ձեր մեջ:

Ձեր դարաշրջանի ամայությունը գերազանցել է մյուս բոլոր ամայություններին: Ինչո՞ւ են նրանք զարմանում, նույնիսկ ձանձրանում ու հոգնում Իմ Սուրբ Հոգուց, որն իջնում է լուսավորելու նրանց: Նրանց անտարբերությունը անապատ է ստեղծում անապատի ետևից... Ժայռ՝ ժայռի ետևից... Ինչպե՜ս եմ Ես շնչահեղձ լինում ու խեղդվում՝ դիտելով Իմ մի քանի մնացյալ ծաղիկներին այդ ապստամբ մարդկանց կողմից կոխկրտվելիս... Վասո՛ւլա, եթե քո Սուրբ Մայրը բազուկս հեռու չպահեր նրանց հարվածելուց, և եթե Իմ Անհուն Ողորմությունը չլիներ, ապա ե՛ս, որ նաև Արդարության Աստված եմ, շատ վաղուց նրանց կհարվածեի: Որովհետև այս սերունդն իր մեջ ստեղծել է մի Նոր Սոդոմ ու Գոմոր:

Նրանք այնքան առաջ գնացին հավատալով, որ աղետները, որոնք այժմ իրենց վրա են հասնում, գալիս են Ինձնից: Նրանք երբեք չհասկացան, որ չարը ձգում է Չարին, և որ նրանք այժմ վճարում են իրենց չարության համար:

[1] Մենք մեզ այդպես ենք պահում ոչ միայն Աստծո նկատմամբ, այլ նաև միմյանց:
[2] իրական հայտնությունները, երևումները, նշանները

Ես ուզում եմ, որ նրանք, ովքեր սիրում են Ինձ, աղոթե՛ն, աղոթե՛ն, աղոթե՛ն, որպեսզի այս Ապստամբությունը վերջ գտնի: Ես ցանկանում եմ քաջալերել Իմ բարեկամներին, որ հարատևեն իրենց բարի գործերի մեջ[1]: Ես օրհնում եմ բոլոր նրանց, ովքեր տարածում են Իմ Խաղաղության ու Սիրո սերմերը. վստահեք Ինձ մինչև վերջ: Ես ամենայն լրջությամբ խնդրում եմ նաև, որ աղոթեք Հասկացողության Իմ Սուրբ Հոգու համար, որ լուսավորի բոլորիդ: Մինչև ե՞րբ նրանք չպիտի հասկանան Իմ Սուրբ Գրքերը: Մինչև ե՞րբ են նրանք մի կողմ հրելու Իմ Խորհուրդները: Իմ Պատուղները գտեք Իմ Առակների մեջ: Ընկալեք, և եթե դժվարանում եք հասկանալ, ապա խնդրեք Իմ Հասկացողության Սուրբ Հոգուն, որ իջնի ձեզ վրա: Իմ Խորհուրդներից շատերը տակավին թաքնված են մնում, որոնք բացահայտված են Իմ Իմաստության Գրքերում:

Ես խոստանում եմ, որ Սերը վերադառնալու է որպես Սեր և ապրելու է ձեր բոլորի մեջ: Ես վերահաստատելու եմ Իմ Տունը: Ես բերելու եմ ձեզ մի Նոր Երուսաղեմ՝ Մաքրության և կատարելության մի Քաղաք, Հավատարիմ մի Քաղաք, որովհետև Արդարությունը հաղթելու է: Եկե՛ք, քաղե՛ք Իմ Հունձը, բարեկամներ: Քաղե՛ք այս Հունձը, որը Ես ծածուկ եմ պատրաստել: Հավաքե՛ք Իմ Գործերը և ցրեք դրանք: Դրանք կթարմացնեն անապատի քամիները: Դրանք կոռոգեն չորացած հողը, և նորից կյանք կտան այս Ամայությանը: Աղոթի՛ր, Իմ Վասուլա, Իմ Վերադարձի համար:

Օ՜, Աստված, այո՛: ԱՐԻ: ԱՐԻ մեզ մոտ, օ՜Հ, Տեր, վերադարձի՛ր մեզ մոտ[2]:

Շատ շուտով Ես կվերադառնամ: Իմ Վերադարձն այժմ հեռու չէ: Ասա մյուսներին, որ աղոթեն Իմ Վերադարձի համար: Ես՝ Տեր Հիսուս Քրիստոսը, Փրկիչը, վերականգնելու եմ այն ամենն, ինչ վնասվել է և դեռ պիտի վնասվի: Մի՛ մոռացեք այն Մեծ Փորձությունների մասին, որի միջով անցնելու է Իմ Եկեղեցին, նախքան Ես ամբողջապես կվերանորոգեմ Այն...

Ուստի, զավակս, թույլ տուր Ինձ գործածել քեզ որպես Իմ քարետախտակը: Կիսի՛ր քո Տիրոջ հետ, Խաղաղության ու Սիրո Իմ Խաչը: Մենք, մեզ, հավիտյանս:

Այո՛, Տեր:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, իմ Սուրբ Մայր, հավիտյան:

(Պատգամ, տրված այն խմբին, որին ես հանդիպում եմ, որպեսզի այն ընթերցվի նրանց համար).

---

[1] Այն բոլոր «նոր աշակերտներին», ովքեր օգնում են թարգմանել, բազմացնել և տարածել այս հայտնությունները:

[2] Այստեղ հանկարծ ես ինձ նորից որպես մի այրի զգացի, և Տիրոջը աղաղակեցի՝ ԱՐԻ՛ ՏԵՐ: Ես փափագում էի Տիրոջը:

Իմ Լիառատ Սերը փնտրելու է ձեզանից յուրաքանչյուրին: Ես հեռու չեմ ձեզանից: Մենք միասին ենք ուտում... մենք միասին ենք գործում... ուստի, զգացե՛ք Իմ Ներկայությունը: Վերադարձեք Ինձ մոտ, և Ես նույնպես կվերադառնամ ձեզ մոտ[1]: Իմ Ներկայությունը զգալի է լինելու ձեզանից շատերի համար, որպեսզի քաջալերվեք: Ով որ փնտրի Ինձ, կգտնի Ինձ: Թույլ տվեք Իմ Հոգին աճի ձեր մեջ: Բռնե՛ք Իմ Ձեռքը, զավակներս, և պատրաստակամ եղեք հետևելու Ինձ:

Ես՝ Հիսուս, ձեզ եմ տալիս Իմ Խաղաղությունը, այն Խաղաղությունը, որը բացակայում է այս աշխարհում: Ես երբեք չեմ լքել ձեզ: Ձե՞մ ասել, որ Ես միշտ ձեզ հետ կլինեմ, մինչև ժամանակների վախճանը: Հավատացե՛ք Իմ Սուրբ Ներկայությանը: Հավատացե՛ք Իմ Ներկայությանն այժմ, որովհետև այս Հայտնությունը գալիս է Իմ Բերանից: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ես օրհնում եմ բոլորիդ: Եկե՛ք...

Հոկտեմբերի 10, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ:

Օրհնյա՛լ լինի Տերը:

Ես սիրում եմ քեզ, աղջի՛կս, Իմ հանդեպ ունեցած այս քո հավատի համար: Մի՛ տագնապիր: Ինձ վրա հենվիր և լսիր Իմ Սրտին, մի Սիրտ, որը փնտրում է ձեզ ամենքիդ և սիրում է ձեզ, բայց շատերն այն դատապարտում են: Աղջի՛կս, Ինձ հաճախ աղոթիր, որպեսզի քեզ տամ Իմ Զորությունը. Ես միշտ կտամ քեզ Իմ Զորությունը: Ինձ հետ աղոթիր այս աղոթքը. Աղոթք Իմ Վերադարձի համար.

«Ե՛կ, Տեր: Վերադարձի՛ր մեզ մոտ:
Լսի՛ր այս անապատից
մեր վշտալի աղաղակը,
զգա՛ մեր ծարավը և Ողորմիր մեզ:
Վերադարձի՛ր մեզ մոտ:
Ե՛կ և ոչնչացրու ողջ չարիքը՝
Սիրով փոխարինելով այն: Ամեն»:

Եվ դուք կլսեք, թե Ես ինչպես եմ պատասխանում այս աղոթքին, որ Ես, Սերը, վերադառնալու եմ ձեզ մոտ որպես Սեր: Գեթ մի փոքր էլ համբերատար եղեք, Իմ սիրելիներ, և Ես կվերադառնամ ձեզ մոտ:

Արթուն և զգույշ եղեք, քանի որ Իմ վերադարձը հանկարծակի է լինելու, ուստի պատրաստ եղեք: Ապաշխարե՛ք: Մաքուր սրտով նայեք Ինձ՝ ձեր Տիրոջը, և ստվերները երկրի վրա այլևս ձեզ չեն վախեցնի, և ոչ էլ խավարի ժամը կսարսափեցնի ձեզ: Դուք ո՛չ նեղություն, ո՛չ էլ

[1] Մաղ. 3:7

տառապանք եք զգալու մահաբեր լռության այս ժամին: Ուստի լսե՛ք Ինձ, լսե՛ք Իմ խոսքերը և դրանք սփոփանք պիտի լինեն ձեզ համար, երբ խավարի այդ ժամը իջնի Իմ ողջ արարչության վրա:
Ես լրջորեն ասում եմ ձեզ, որ այդ օրը ձեզանից հեռու չէ: Ես, որ Սեր եմ, Ինձ կմոտեցնեմ բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ, և Ես կմեղմացնեմ նրանց վախը: Ես կծածկեմ նրանց Իմ Սիրով, կսփոփեմ նրանց Իմ Սրտով, և նրանք ապաստան կգտնեն Իմ մեջ:

Ավա՜ղ: Ես ցավում եմ նրանց համար, ովքեր պատրաստ չեն և երբեք չեն սիրել Ինձ: Նրանք մեռնելու են իրենց իսկ չարությունից և մնալու են փոշու մեջ՝ իրենց մեղքերի ծանրությունից չնչահեղձ: Քանի որ նրանք պղծեցին Իմ Սուրբ Անունը երկրորդ վիշապի օգնությամբ, վիշապի, որը սև թիկնոց է կրում, վիշապ, որը հակառակվում է Լուսյին:

Օ՜, արարչություն, անիմաստ մտքերի արարչություն[1]: Որքան եմ Ես խղճում ձեզ: Տվե՛ք Ինձ գեթ մի բարի հայացք, և Ես կազատեմ ձեզ:

Ձեր ծննդյան օրից սկսած Ես գիտեի, որ դուք անաստված եք, բայց, այնուամենայնիվ, Ես պատրաստ եմ մոռանալ այդ մասին և խոսել ձեզ հետ: Ձեր պորտալարը տակավին կապված է Ինձ: Եթե դուք Ինձ ասեիք, որ դուք խոտորվել եք և կդադարեք մեղք գործելուց, եթե միայն ասեք Ինձ այդ մասին, Ե՛ս, որ Սեր եմ, կփրկեմ ձեզ, զավա՛կս: Իմ ներումը նախօրոք երաշխավորված է: Այլևս մի՛ բարկացրեք Ինձ, վերադարձե՛ք Ինձ մոտ, և Ես իրոք ձեզ կտամ Իմ խաղաղությունը:

Ե՛կ, աղջիկս, Ես օրհնում եմ քեզ, որովհետև դու թույլ տվեցիր Ինձ գործածել քո ձեռքը. որքա՜ն եմ Ես քեզ սիրում: Օ՜հ, աղջիկս, Ես շատ գոհ եմ քեզանից: Միշտ կանչիր Ինձ, փաղաքշի՛ր Ինձ քո սիրով, ուրախացրո՛ւ Ինձ, մեղմացրու Իմ ցավերը, հանգցրո՛ւ Իմ բարկությունը՝ սիրելով Ինձ: Ծաղի՛կս, Ես թույլ եմ տալիս քեզ լինել Իմ Սրահում քո ոչնչության պատճառով, ուստի մնա ոչնչություն: Ես քեզ եմ տալիս Իմ խաղաղությունը: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Իմ Ներկայությունը Սուրբ է:

Հոկտեմբերի 11, 1988

Խաղաղություն քեզ:

Փառավորվի Աստված:

Այս հայտնության հենց սկզբից Ես ասել եմ քեզ, որ Իմ Եկեղեցին ավերակների մեջ է և այդ ավերակներում իժերն են հանգրվանել և Նրա խորքերում իրենց բներն են հաստատել:

[1] Աստված այնքան տխուր էր թվում, գրեթե անվճռական էր այն հարցում, որ Նա պետք է պատժի:

Ա՜հ, Վասուլա[1], որքա՜ն եմ ես տառապում... Ես ստիպված եմ գալ ու քանդել այդ օձերի խճճված կծիկը, որոնք ամենուրեք սողում են Իմ Սրբազնագույն Խորհուրդների վրա, ու նրանց նորից դուրս նետել Իմ Եկեղեցուց: Զավա՛կս, ապրել և շրջապատված լինել այս ավերիչ ամայությամբ, դժվար է և ահարկու, բայց Ես մոտ եմ բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ ու սիրով պաշտում են Իմ Սուրբ Անունը:

Բոլոր նրանց, ովքեր ոտնահարում են Իմ Երկնային Գործերը, Ես ուզում եմ հիշեցնել այն մասին, որ Ես Անհուն Հարստություն եմ: Ամեն անգամ, երբ Ես տեսել եմ Իմ արարածներին ապստամբության մեջ ընկած, Ես միշտ պատգամաբերներ եմ ուղարկել, որոնք փոխանցել են Իմ Խոսքը, որովհետև Ապստամբությունը անապատի է վերածում հողը, որի վրա ապրում եք դուք: Թեպետ ձեր նախահայրերը ըմբոստացան, այնուամենայնիվ, նրանց կասկածները երբեք այնքան սուր չէին, որքան ձեր սերնդի կասկածներն այն բանում, որ Ես խոսում եմ Իմ ընտրյալ հրեշտակների հետ՝ տալով նրանց Իմ Պատգամները:

Այսօր, զավակս, Ես կրոնավորներ ունեմ Իմ Եկեղեցում, որոնք հայտարարում են, թե հավատում են Ինձ, բայց մերժում են Իմ բոլոր Աստվածային Գործերը, որոնք Ես առաջարկում եմ ձեզ ձեր օրերում և որոնք գալիս են Սուրբ Հոգուց: Նրանց չորությունը դատապարտում է իրենց և Դատաստանի Օրը Ես նրանց խստորեն եմ դատելու: Այս մարդիկ պետք է դեպի Սուրբ Գրքերը դառնան և կարդան, թե ինչպես է Իմ Հոգին գործում, և թե ինչպես եմ Ես օրհնում այն պարգևները, որոնք Ես տալիս եմ Իմ ընտրյալներին: Նրանք բոլորը գալիս են Ինձանից[2]:

Զավա՛կս, Ես և դու, դու և Ես կտրում ենք այս անապատը, այս մահացու անապատը, որն առաջ է եկել բանապաշտության, հավատի բացակայության, սիրո բացակայության, անբարոյության, ինքնահաճության, ունայնության պատճառով, ինչպես նաև դժգոհության պատճառով այն ամենի հանդեպ, որը բխում է Սուրբ Հոգուց: Նրանց կամակորությունը, որ թույլ չի տալիս լսել, դատապարտում է իրենց: Ամեն ոք, որ մերժում է Իմ Սուրբ Հոգու Գործերը՝ Ինձ է մերժում, որովհետև Սուրբ Հոգին և Ես Մե՛կ ենք և Նույնը...[3]

Այս մարդիկ աջակցում են, որ ավելի ընդլայնվի այս անապատը և ջանում են, որ ոչինչ չաճի դրանում: Եթե մի ծաղիկ տեսնեն, նրանք կտրորեն և կոչնչացնեն այն, և կամ՝ այն դիտավորյալ կանտեսեն և երբեք չեն ջրի, որպեսզի թառամի, որ այս ձևով ազատվեն դրանից... Իմ Արդարության Բաժակը թափվում է պռունկներից, և արդեն նրանք զգում են Իմ Արդարության առաջին կաթիլներն իրենց վրա: Այն ամենը, ինչ Ես խնդրում եմ այդ մարդկանցից, հատկապես նրանցից, ովքեր ծառայում են Ինձ, բայց և մերժում Սուրբ Հոգու Գործերը այն է, որ նրանք աղոթեն, աղոթե՛ն, աղոթե՛ն լուսավորման և զորեղ հավատի համար: Ե՛կ, զավակս, միշտ Ինձ հաճեցրու՝ հիշելով Իմ Սուրբ Ներկայությունը:

Մենք, մեզ, Տեր:

---

[1] Աստված՝ տառապանքով ու ցավով լեցուն, բարձր աղաղակով կանչում էր:
[2] Հիսուս խնդրեց ինձ նշել Ա Կոր. 12:1-11
[3] Էության միասնությամբ

Ես սիրում եմ քեզ: Այո՛, մենք, մեզ:

Մենք, մեզ:

Այո՛ Սուրբ Մայր:

Հոկտեմբերի 13, 1988

Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Ես սիրել եմ քեզ ողջ հավիտենությունից ի վեր, և հենց հավիտենությունից էլ սկսած ես փափագել եմ, որ դու սիրես Ինձ: Ես Սիրո Հոգին եմ: Քո հոգին բաց Իմ առաջ, որպեսզի Իմ Սերը արտացոլվի քո մեջ: Որպես մի հայելի եղիր Իմ դիմաց. ես ցանկանում եմ արտացոլել Իմ Սերը քո մեջ: Ես՝ Իմ Վասո՛ւլա, դաժան Աստված չեմ: Ես Գթառատ եմ և սիրում եմ նույնիսկ բոլոր նրանց, ովքեր արհամարհում են Ինձ: Ծաղի՛կս, քանի որ դու սկսում ես հասկանալ, թե Ես որքան շատ սեր ունեմ քո հանդեպ, հետևաբար կարո՞ղ ես հասկանալ, թե որքան է Սերը տառապում այս սիրո բացակայությունից:

Այո՛ Տեր, ես սկսում եմ հասկանալ:

Ուրեմն ե՛կ Ինձ մոտ և սփոփի՛ր Ինձ. մի՛ զրկիր Ինձ: Դու կարող ես սփոփել Ինձ: Օրհնյալ լինես:

Հոկտեմբերի 14, 1988

Տե՛ր, ես Քեզնից միայն
Քո Զորությունն եմ խնդրում:
Ես ավելի կարիք ունեմ հավատի,
որպեսզի Քեզ ավելի սիրեմ,
այն ձևով,
ինչպես որ Դու ես ուզում:
Ես հաստատակամության և
հույսի կարիք ունեմ՝
իրականացնելու համար
այն առաքելությունը,
որը տվել ես Ինձ,
որպեսզի նորից փառավորեմ
Քո Սուրբ Անունը:

Այդ ամենը ես քեզ կտամ Իմ Շահերի և Իմ Փառքի համար, բայց նաև քո հոգու ավելի բարձր կատարելության համար: Ես Տերս, սիրում եմ քեզ: Հասկացի՛ր, թե սատանան որքան է ատում քեզ այս գործի համար, որ դու կիսում ես Ինձ հետ: Դու փառավորում ես Ինձ քո այս սիրով և փառավորում ես Ինձ՝ հոգիներն Ինձ մոտեցնելով: Դու, ում նա մի

անգամ «որդ»[1] անվանեց, փառավորում ես Ինձ և վիրավորում ես նրան, որովհետև, որքան ավելի փոքր ես դու, որքան ավելի աննշան ես դու, այնքան ավելի է վիրավորվում նա: Հիշի՛ր, թե նա որքան դոռոզ է ու սնափառ:

Այո՛, Տեր իմ:

Ես սիրում եմ քեզ և միշտ կպաշտպանեմ քեզ: Միշտ եկ Ինձ մոտ, և Ես երբեք չեմ մերժի քեզ Իմ խաղաղությունը տալուց: Սերը սիրում է քեզ:

Փառավորվի մեր Տերը:

Հոկտեմբերի 15, 1988

Տե՞ր:

Ես եմ:

Ողջ հավիտենությունից ի վեր Ես երբեք չեմ հանդիպել այնպիսի տկարության, ինչպիսին քոնն է. դա ապշեցուցիչ է[2]... Զավա՛կս, դու Իմ կարիքն ունես: Քո տկարությունը գրավում է Ինձ, Ի՛նձ, որ Անհուն Զորություն եմ: Քո տկարությունը հրապուրում է Ինձ: Տկարությունը մագնիսի նման միշտ գրավել է Ինձ:

Լսի՛ր Իմ Սրտի Զարկերը. Ես Հիսուսն եմ, և Իմ Սուրբ Սիրտը քո տունն է: Աղջիկս, Իմ Սրտի յուրաքանչյուր զարկը սիրո մի երգ է ուղղված քեզ: Ես թուլացրել եմ քո շղթաները, որոնք քեզ կապում են աշխարհին: Մնա հիմա աշխարհից անջատված այնպես, ինչպես Ես ցանկացել էի ողջ հավիտենությունից: Նման անջատում Ես սպասում եմ ամեն մի հոգուց: Մտածի՛ր, թե ով կարող էր դա անել, բացի Ինձանից՝ Քո Փրկչից: Ես Նա եմ, ով քեզ փրկագնել է մեղքի կապանքներից, և դա է պատճառը, որ դևերը հարձակվում են քեզ վրա: Այս շաբաթ դու զգացել ես նրանց մոտիկ ներկայությունը: Ինքդ քեզ Ինձ նվիրիր, քանի որ քո նվիրումն ու հավատարմությունը հաճելի են Իմ Սուրբ Սրտին, այս Սրտին, որը ծարավի է սիրո ու հավատարմության:

Բարձրացի՛ր Մեզ մոտ այդ քարայրի[3] մեջ. կանչի՛ր Մեզ այնտեղ:

Այո՛, Հիսուս, այո՛, Սբ. Մայր:

Իմ Սուրբ Սրտի Վասուլա, սիրված զգա քեզ Իմ կողմից, սիրված զգա քո Սուրբ Մոր կողմից: Թույլ տուր Ինձ, որ գործածեմ քեզ մի փոքր ավելի երկար ժամանակով: Մենք, մեզ:

Այո՛, Տեր: Տե՞ր:

---

[1] տես մարտ 7, 1987

[2] Դքա պատճառը կասկածների սարսափելի ալիքն էր նորից: Այնտեղ, որտեղ բազմակետերն են, Աստված խոսք չէր գտնում ասելու ինձ:

[3] Քարայրը գտնվում է Լոնգեբորնի Ճգնարանի վերևում:

Ես եմ:

Այս սերը, որ ունեմ քո հանդեպ, և քեզ զգալու իմ ջերմ ցանկությունը, որ մշտապես լինես ինձ հետ՝ ավելի ու ավելի Քեզ ծարավելով ու գիշեր-ցերեկ միայն Քո մասին մտածելով, կարճ ասած, ապրելով Քեզ համար, երբեմն ցանկանալով «մերկ» աչքերով տեսնել Քեզ... Արդյո՞ք սրանք Քեզ «տեսնելու» նույն զգացումներն են, որ Քավարանի հոգիներն ունեն Քո հանդեպ, որոնք դեռ Քեզ հետ չեն:

Դրանք շատ մոտ են նրանց զգացումներին, բայց առավել խորը և առավել հստակ զգացումներով:

Այդ դեպքում այն պետք է որ իրոք սարսափելի լինի:

Այո՛, նրանք շատ-շատ են տառապում: Եթե նրանք երբեք չեն փափագել Ինձ երկրի վրա, ապա սովորում են փափագել Ինձ քավարանում: Այնտեղ նրանք չեն տեսնում Իմ Դեմքը և նրանք այրվում են այդ ցանկությամբ:

Այո՛, Տեր իմ: Շնորհակալ եմ Քեզանից, Տեր իմ:

Հոկտեմբերի 16, 1988

(Ես այցելեցի Լոզանի Անգլիկան Եկեղեցին, որովհետև ես սիրում եմ Սուրբ Հաղորդություն ստանալ նրանց մոտ: Մենք բոլորս առաջ ենք գնում և առջևում <u>ծնրադրում</u>: Քահանան նախ գալիս է <u>Նշխարով</u>, ապա գալիս է Սկիհը ձեռքին, ուր Հիսուսի Արյունն է, և մենք բոլորս հերթով խմում ենք: Կարծում եմ դա հենց այն է, ինչ որ Հիսուսն ուզում է, որ մենք Սուրբ Հաղորդությունն ընդունենք ճիշտ այդ ձևով: Բայց, որովհետև նրանք չեն ողջունում Մարիամին, ես այնտեղ եմ գնում, առանց որևէ մեկի իմացության, որ ողջունեմ Նրան: Հավանաբար, այդ եկեղեցում առաջին անգամն էր ասվում «Ողջույն Քեզ Մարիամ» աղոթքը):

Հոկտեմբերի 18, 1988

Տե՞ր Իմ:

Այդ Ես եմ, Տերը:

Աստվա՞ծ իմ:

Ես եմ:

Կուզենայի՞ր օրհնել այն կրոնական առարկաները, որոնք ինձ են տվել իմ ընկերները:

Մոտեցրո՛ւ դրանք Իմ Շուրթերին: Ես կօրհնեմ այն ամենն, ինչ որ պետք է օրհնվի[1]:

Տե՛ր, դրանցից մի քանիսը փաթաթված են տոպրակների մեջ, կարո՞ղ ես համբուրել դրանք:

Ես սիրում եմ քո անմեղությունը: Մոտեցրո՛ւ դրանք ինչպես որ կան: Ես Ամենակարող եմ: Ես կվերցնեմ այն փոքրիկ հավատը, որ դու ունես Իմ հանդեպ ու կդնեմ Իմ Սուրբ Սրտում, որը կսնի նրան և ավելի զորավոր կդարձնի:

Ե՛կ, հանգստացիր այժմ:

Այո՛, Տեր իմ: Շնորհակալ եմ, Տեր իմ:

Հոկտեմբերի 19, 1988

Փա՛ռք Աստծո:[2]:

Փառավորյալ լինի մեր Տերը:[3]:

Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Ե՛կ:[4]

Ես՝ Տերս, հետևյալն եմ ասում նրանց[5]. Ես օրհնում եմ նրանցից յուրաքանչյուրին: Ես օրհնում եմ բոլոր նրանց, ովքեր օգնում են Իմ Աստվածային Պատգամին՝ առանձնապես նրանց, ովքեր իրենց ազատ ժամանակը զոհաբերում են Ինձ համար:

Իմ կոչերն իզուր չեն լինելու: Սիրե՛ք միմյանց այնպես, ինչպես Ես եմ սիրում ձեզ: Իմ Պատգամը տարածեք նույնիսկ նրանց մեջ, ովքեր կծաղրեն ձեզ: Աղոթե՛ք լուսավորման համար: Արդարացի վերաբերվեք միմյանց հետ: Սիրելինե՛րս, Ես ներկա եմ բոլոր ժամանակներում: Ես՝ Հիսուս, բոլորիդ սիրում եմ հավիտենական սիրով: Ե՛կ Ինձ մոտ,

Վասո՛ւլա, ցո՛ւյց տուր նրանց Իմ Սուրբ Սիրտը: Ես՝ Տերս, սովորեցնելու եմ նրանց քայլել Ինձ հետ: Ես ցույց եմ տալու նրանց, թե ինչ է նշանակում ճշմարիտ Կյանք Աստծո մեջ: Ես նրանց կհասկացնեմ, որ նրանք բոլորն էլ Իմ սերմն են, և որ նրանք Ինձ են պատկանում:

Ես նրանց ցույց կտամ, թե ինչպես է Սատանան նրանց բոլորին խաբել և, թե որքան նենգ է նա: Ես նորից ու նորից ուզում եմ ասել նրանց, որ Սատանան գոյություն ունի: Նա չարն է: Նա՛ է, որ ձեզ խաբել է հենց Սկզբից, և Վերջում նա հաղթվելու է ու ջախջախվելու: Աղոթե՛ք, սիրելիներս, Ես կլսեմ: Աղոթե՛ք և զրուցե՛ք Ինձ հետ: Ես ներկա եմ: Ես

[1] Հիսուսն այս ասաց և ինձ հասկացրեց, որ մեդալիոններից մեկը մյուս կրոնական իրերի հետ միասին չի օրհնվելու, որովհետև ինչ-որ մեկը ոչ կրոնական մեդալիոն էր տվել:
[2] Պատասխան Սբ. Միքայելի աղոթքին
[3] Պատասխան Սբ. Մարիամի աղոթքին
[4] Պատասխան Սուրբ Սրտի աղոթքներին
[5] Վերաբերում է այն փոքրիկ խմբին, որը մենք կազմել էինք աղոթելու համար:

ձեր Սուրբ Ընկերակիցն եմ: Ես միշտ ձեր մեջ եմ. հավատացե՛ք Իմ Ներկայության այս Խորհրդին:

Ձեր հանդեպ Իմ սերը հավիտենական է: Դուք դրա խորությունն ու ամբողջականությունը կհասկանաք միայն այն ժամանակ, երբ Երկնքում լինեք: Զգացե՛ք Իմ Ներկայությունը... Զգացե՛ք Իմ Ներկայությունը... Ես օրհնում եմ բոլորիդ:

Հոկտեմբերի 23, 1988

Զավա՛կս, դու հասկանո՞ւմ ես, թե որքան բարեհաճ եմ գտնվել քո հանդեպ:

Վասուլա, <u>փառավորի՛ր Ինձ՝ Ինձ փափագելով</u>[1]: Ծարավի՛ր Ինձ, ինչպես մի ծաղիկ, որը ջրի կարիք է զգում:

Դու արդեն ավելի մոտ ես Ինձ[2]: Այո՛, Ես անձկալից օրերն եմ հաշվում: Ինձ տե՛ս քո մտքով, Ինձ տե՛ս քո սրտով, Ինձ տե՛ս քո հոգով: Ես տվել եմ քեզ Ինձ տեսնելու և զատորոշելու շնորհը. ուրեմն օգտագործի՛ր այն: Տե՛ս Ինձ և ժպտա՛ Ինձ. ժպտա՛ Ինձ սիրով, հատուցի՛ր այն բոլոր հոգիների փոխարեն, որոնք երբեք չեն ժպտում Ինձ, այլ գալիս են Ինձ մոտ միայն իրենց շահերի համար:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր: Մենք, մեզ:

Հոկտեմբերի 24, 1988

Տեր Իմ և Աստված իմ:

Ես եմ:

Ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը, զավա՛կս: Ես սիրում եմ քեզ: Աղջի՛կս, Քո աղոթքներով բոլոր հոգիներին դեպի Ինձ առաջնորդիր, խնդրի՛ր նրանց փրկության համար: Գոհացրու Իմ Սիրտը ներելով նրանց, ովքեր մերժում են քեզ: Երբեք մի՛ մեղադրիր նրանց, երբեք մի՛ դատապարտիր: Ե՛ս եմ Դատավորը, և Ես կդատեմ նրանց Դատաստանի Օրը: Ուստի, զավա՛կս, դու պետք է ներես նրանց. չարին սիրո՛վ հատուցիր: Հենվի՛ր Ինձ վրա, որպեսզի հանգստանաս և քո մխիթարությունը գտիր Իմ Սուրբ Սրտում, Իմ փաղաքշանքները գտիր Դրա խորքերում:

Ե՛կ, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր իմ:

---

[1] Աստծուն փափագելը նաև Նրան փառավորել է նշանակում : Եթե Նրան չփափագեք երկրի վրա, ապա Նրան կփափագեք Քավարանում, որտեղ մարդիկ տառապում են Նրան տեսնելու ցանկությունից:

[2] Այսինքն՝ ավելի քիչ օրեր ունեմ երկրի վրա:

Այդ դեպքում, ես ուզում եմ լսել, որ դու ասես այդ: Մի՛ մոռացիր Ինձ: Հիշի՛ր Իմ Ներկայության մասին: Գիտե՞ս, թե որքան եմ ես ցանկանում, որ դու խոկաս Իմ Ներկայության մասին: Իմ Ներկայությունը նույնպես մի շատ կարևոր Խորհուրդ է, որը ձեզանից շատերը, կարծես թե, մոռանում են: Խորհրդածե՛ք Իմ Ներկայության մասին: Գոհացրե՛ք Ինձ զավակնե՛րս, որոնց ես սիրում եմ հավիտենական սիրով, հիշելով Իմ իրական Ներկայության մասին: Վարժեցրե՛ք ինքներդ ձեզ՝ օգտագործելով այս խոսքերը. մենք, մեզ, դու և ես, ես և դու, մեզ: Ընդգրկե՛ք Ինձ ձեր գործունեությունների մեջ, ձեր քննարկումների և մտքերի մեջ: Հարգե՛ք Իմ Ներկայությունը՝ երբեք չմոռանալով, որ ես Սուրբ եմ: Հիշելով Ինձ՝ դուք ավելի քիչ մեղք կգործեք՝ իմանալով և հիշելով, որ ես ձեզ հետ եմ:

Ես՝ Հիսուս Քրիստոսը՝ Նազովրեցիս, օրհնում եմ ձեզ բոլորիդ:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 25, 1988

Տե՞ր իմ:

Ես եմ:

Աղջիկս, ցնծա՛, որովհետև ես քեզ սիրել եմ ողջ հավիտենությունից ի վեր մի սիրով, որը դու երբեք չես հասկանա՝ սեր, որը մի հատուկ նախասիրություն ունի: Ես քեզ ստեղծել եմ Իմ Հոգուն բերկրանք պատճառելու և Իմ Սիրտը քո սիրով լցնելու համար: Ես քեզ ստեղծել եմ՝ մեղմելու Իմ բարկությունը և ամոքելու Իմ Վերքերը քո արցունքներով: Ես քեզ ստեղծել եմ, որ հանգստացնես Ինձ, երբ հոգնած եմ և խոսես Ինձ հետ, երբ ես մոռացված եմ: Ես խենթի պես սիրում եմ քեզ: Սիրելի՛ս, ես քեզ ընտրել եմ, որ իմանաս Իմ Սուրբ Սրտի բաղձանքները: Ես քեզ ընտրել եմ, որ կիսես այն ամենը, ինչ ես ունեմ:

Եղի՛ր Լուսո Իմ զավակը: Ես Նա եմ, ով քեզ ամենից շատ է սիրում, և Նա եմ, ով ամենից շատ է քեզ օրհնում: Այն խանդոտ սերը, որն ունեմ քո հանդեպ, բոցավառելու է քո փոքրիկ սիրտը՝ դարձնելով այն լուսե մի ջահ, որպեսզի դու էլ քո հերթին ուրիշ սրտեր բոցավառես, որ նրանք էլ Ինձ սիրեն: Եղի՛ր Իմ զոհասեղանը՝ այրվելով Իմ Սիրով: Տարածի՛ր այդ կրակը և կենդանացրու նույնիսկ քարերը՝ դարձնելով դրանք Ինձ նվիրված հետևորդներ: Ո՛չ մի տարբերություն մի՛ դիր գույնի կամ դավանանքի մեջ: Դուք բոլորդ ստեղծված եք Իմ Պատկերով և Իմ Զոհաբերությունը կատարվել է բոլոր Ազգերի համար: Մե՛կ եղեք Իմ Սուրբ Անվան ներքո:

Արարչությո՛ւն, ես քեզ սիրում եմ խենթի պես: Զարթնի՛ր, արարչություն: Հավատա՛, որ ես Ներկա եմ ձեր մեջ: Թույլ տվեք Ինձ մտնել ձեր սրտերը, որպեսզի կարողանամ բժշկել բոլորիդ:

ΙΧΘΥΣ

Ծաղիկ, փափագի՛ր Ինձ, հարգի՛ր Իմ Օրենքը և հաճեցրո՛ւ Ինձ: Ինձ առաջինը դասիր և ամեն բանից վեր: Ատի՛ր այն ամենը, որ երկրային է: Հսկայական հատուցումներ պետք է արվեն, փոխարինելու համար այս աշխարհում կատարվող բոլոր չարիքները: Հատուցի՛ր ուրիշների համար: Վասո՛ւլա, Ես երբեք քեզ չեմ լքի: Իմ ուսուցումները առաջնորդել են քեզ դեպի Ինձ: Ես և դու, դու և Ես՝ իրար հետ կապված ողջ հավիտենության համար: Իմ Խաղաղությունը քեզ:

Ե՛կ:

Հոկտեմբերի 31, 1988

(Հռոդոսում ես ավտոբուս նստեցի, որպեսզի գնամ քաղաք: Տոմսավաճառը գալիս է, և ես նրան ասում եմ. «Մի տոմս, խնդրեմ»: Նա ինձ մի տոմս է տալիս: Հիսուս նստած էր իմ կողքին: Ես շրջվեցի Նրա կողմը և ծիծաղելով ասացի Նրան. «Ես մեկ տոմս խնդրեցի, բայց մենք, փաստորեն երկուսն ենք, բայց այդ մարդը այդ մասին գաղափար անգամ չունի»: Հիսուս զարմացած շրջվում է իմ կողմը և ասում.)

Ի՞նչ ես ասում: Մի՞թե մենք <u>միացած ու մեկ չենք</u>: Ե՛կ:

Նոյեմբերի 2, 1988

Վասո՛ւլա, Իմ Խաղաղությունը քեզ:

Ե՛կ, Ես գոհ եմ, որ դու փորձում ես հասկանալ Ինձ, անկախ այն բանից, թե որտեղ եմ Ես քեզ դրել: Սիրելիս, թեթևացրո՛ւ Իմ ցավերը Ինձ սիրելով, ցույց տուր քո Աստծուն քո մանկական հավատը: Գոհացրո՛ւ Ինձ այդ ձևով և ամբողջովին Ինձանից կախյալ եղիր:

Կլինեմ, Տեր: Իմ հարազատ Հորից բացի էլ ո՞ւմ եմ դիմելու: Քեզանից բացի ես ոչ ոք չունեմ:

Իմ սերմ, միշտ Ինձ հաճույք պատճառիր, եղի՛ր Իմ ուրախությունը: Ես քո Աբբան եմ: Իմ սերմ, փթթի՛ր, զարդարվի՛ր և թող քո պտուղները շատերին կերակրեն: Ես Իմ ծրագիրը կազմել եմ քո ծնվելուց շատ առաջ, որովհետև <u>Ե՛ս Եմ Իշխանությունը</u>: Մարդիկ հակված են հեշտությամբ մոռանալու, որ Իմ Եկեղեցին միշտ առաջնորդվելու է <u>վերևից</u> և ոչ թե ներքևից: Նրանք հակված են մոռանալու, որ ողջ զորությունը տրված է վերևից:

Դրա համար Ես ասում եմ, որ որևէ երկրային իշխանություն, որևէ երկրային թագավորություն, որ թափանցել է Իմ Եկեղեցուց ներս, չի հարատևելու: Ես կջախջախեմ ու կտապալեմ այն՝ վերածելով փոշու մի կույտի: Դուք նախկինում էլ գիտեիք այս ամենը, բայց և այնպես, ո՛չ լսեցիք, և ո՛չ էլ հնազանդվեցիք Ինձ: Դուք Ինձ դուրս թողեցիք, բայց Ես բացելու եմ ձեր բոլոր դռները և նույնիսկ ձեր լուսամուտները, որպեսզի Իմ Հոգին ազատորեն շնչի Իմ Տիրապետության մեջ: <u>Ոչ ոք</u>

զորություն չի ունենա փակելու այն ուղիները, որոնք Ես եմ բացելու: Մեկ անգամ ևս Ես նրանց կհիշեցնեմ, որ Ես եմ Ալֆան և Օմեգան, Ես՝ Սրբերի Սուրբը, Սուրբ Երրորդությունը՝ բոլորը Մեկի մեջ, Իշխանությունը. Ես շուտով ձեզ հետ եմ լինելու: Բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ, Ես դնելու եմ Իմ Սրտում. Իմ Սիրտը լինելու է Նրանց Նոր Տունը:

Ես գալիս եմ վերևից, և վերևից է իջնելու ձեր Նոր Տունը: Սա կլինի Իմ Պարգևը, և Իմ Նոր Սուրբ Անունը նորից կվերադարձվի ձեզ , Իմ սիրելիներ: Ուստի եկե՛ք և փառաբանեք Ինձ: Եկե՛ք ու բարձրացրեք Ինձ: Եկե՛ք ու հաշտություն կնքեք Ինձ հետ, և Ես կբացեմ Իմ Տունը ձեր առջև և սիրով կընդունեմ ձեզ, որպես Իմ հարազատի: Եկե՛ք Ինձ մոտ:

[1]Այո՛, բայց արդ Ե՞ս եմ Տերը, որը սիրում է քեզ: Օրհնյալ լինես, զավակս: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Մենք, մեզ:

Այո՛, Սուրբ Մայր:

Նոյեմբերի 8, 1988

(Այսօր Ես զգացի Հիսուսի Խաչը: Ես զգացի, որ Նա տխուր էր և Նրան տխուր տեսա անգամ Իր նկարում):

Ես եմ: Սիրելիս, վերցրո՛ւ Իմ Խաչը և թեթևացրու Իմ բեռը. քո Քրիստոսն այնքա՜ն հոգնած է: Ես Ինձ թույլ եմ տվել Իմ Արյան մի քանի կաթիլը թողնել քո սրտի վրա՝ Ինձ հանգստացնելու համար: Սատանան այժմ որոշել է վհատեցնել քեզ, բայց Ես թույլ չեմ տա, որ նա քեզ դիպչի: Այն, ինչ սկսվել է Իմ կողմից և օրհնվել՝ իր ավարտին է հասցվելու, փառավորելով Ինձ:

Այսօր դու Ես գրելու Իմ Պատգամը քո սեփական ձեռագրով[2], որպեսզի նրանք, ովքեր դեռևս լիովին չեն հասկացել, որ Ես քեզ լցրել եմ Իմ շնորհներով՝ կարողանան հասկանալ, որ Ես քեզ տվել եմ նաև շնորհը՝ Իմ Ձայնը լսելու: Թույլ տուր Ինձ քեզ թելադրել այսօր: Լսի՛ր Ինձ և գրի՛ր:

Վասո՛ւլա, այժմ օրերը հաշված են՝ ձեր մաքրագործման օրերը: Նրանք, ովքեր աղոթել են Ինձ՝ Իմ Եկեղեցու նորոգման համար, Ես լսել եմ, Ես լսել եմ Ինձ ուղղված նրանց բոլոր աղոթքները: Ես խոստանում եմ քեզ, որ Ես՝ Տերը, պիտի նորոգեմ Իմ Եկեղեցին: Ես պիտի ջնջեմ այն բծերը, որոնք Նրա ներքին անմաքուր կյանքի հետևանքով արատավորել են Նրան, և Ես նորից պիտի վերաշինեմ Այն: Այդուհանդերձ, սիրելիներս, Ես սարսափով եմ ասում, որ մինչ Այդ Օրը Նա դեռ որքան ավելի է չարչարվելու: Նրա Սրտի Մեծ Փորձությունները կսկսվեն նախքան Իմ

[1] Զգիտեմ ինչու, հենց այդ ժամանակ Ես հիշեցի, թե ինչպես Իմ պահապան հրեշտակ Դանիելը նույնպես սկզբում գրավոր ձևով էր հաղորդակցվում Ինձ հետ:
[2] Այս պատգամի մնացած հատվածը գրված է Վասուլայի սեփական ձեռագրով:

գալուստը՝ նրան ամբողջապես նորոգելու համար: Այդ օրը պետք է գա, որպեսզի իրագործվի Սուրբ Գիրքը:

Բայց Ես մխիթարելու եմ բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ այդ ցավատանջ օրերի մեջ: Ես, ավելի քան երբևէ, մոտ եմ լինելու ձեր սրտերին: Ես այնպես կանեմ, որ դուք զգաք Ինձ: Ես Հրեշտակների և Սուրբերի մի լեգեոն կուղարկեմ ձեզ մոտ, որպեսզի մխիթարեն ձեզ բոլորիդ. ուստի քաջալերվե՛ք, սիրելիներս, քաջալերվե՛ք: Ես տառապում եմ հիմա, և դուք, ովքեր սիրում եք Ինձ, զգում եք Ինձ: Դուք զգում եք Իմ Վերքերը, դուք զգում եք Իմ Սուրբ Սիրտը՝ բեռնված վշտով: Դուք զգում եք Իմ հայացքն ուղղված ձեզ, արարչություն, դուք, որ ընկած եք խավարի մեջ: Իմ Աչքերը լեցուն են արյան արցունքներով, այո՛, Ես ուրիշ ի՞նչ կարող էի զգալ այսօր, երբ տեսնում եմ, որ ձեր մեծամասնությունը սահելով ընկնում է Սատանայի ցանցերի մեջ: Բայց թող որ նրանք, ովքեր չեն ուզում լսել, շարունակեն իրենց չարությունը: Արդեն մի քանի տարի է, Ես զգուշացնում եմ նրանց: Ես նրանց կանչել եմ ապաշխարության, բայց նրանք ուշադրություն չեն դարձնում Իմ զգուշացումներից որևէ մեկին: Ես հոգնած եմ, Ես առավել քան երբևէ հոգնած եմ նրանց կուրությունից ու համառությունից:

Ըմբոստությունը տարածվել է մառախուղի նման, թափանցելով նույնիսկ Իմ Տան մեջ՝ թելադրելով Պետրոսին ինչ անել, Պետրոսին, որը նրանց առաջնորդն է: Այո՛, նրանք չեն լսում նրան և իր թիկունքում նրան անիծում ու խաբում են: Նրանք չեն լսում նրան և մի կողմ են հրում նրան: Օ՜, նա գիտի այս ամենը, բայց նրան հակառակվողները շա՜տ-շա՜տ են, շա՜տ-շատերն են դավաճանում նրան: Իմ Տունը դարձել է Ապստամբների Տուն: Այնտեղ շատ քչերն են մնացել, որոնք ճանաչում ու պատվում են Ինձ:

Ես՝ Տերս, Իմ բոլոր Սրբերի և Հրեշտակների հետ իջնելու եմ Մաքրագործման օրը և մաքրելու եմ այս բոլոր չարիքները: Իմ Կրակը կիջնի հյուսիսից հարավ, արևելքից արևմուտք: Սպասի՛ր, և կտեսնես...

«Հիսու՞ս»

Դու լա՛վ գրեցիր, զավա՛կս, միայն Ինձ լսելով: Վասուլա՛, սա նաև նրանց համար է, ովքեր կարծում են, թե քո ձեռքը շարժվում է Իմ կողմից, և դու բոլորովին Ինձ չես լսում: Նրանցից ոմանք չէին կարող հավատալ, որ Ես՝ Տերս, ներշնչում եմ քեզ: Այժմ մենք կշարունակենք Իմ նախընտրած ձևով, Ի՛մ Վասուլա:

Իմ Խաղաղությունը քեզ, զգոն եղիր:

Խնդրում եմ, Տե՛ր, բժշկիր Ս...ին: Եթե Դու մարմնով այստեղ լինեիր ինձ հետ, և Ես Քեզ տանեի նրա մոտ և Քո ձեռքից բռնած նրան Քեզ ցույց տայի, Քո Սիրտը չէր դիմանա և Դու կբժշկեիր նրան:

Զավա՛կս, նա չի հավատում քեզ: Նա անմիջապես մերժում է այն ամենը, ինչ դու ասում ես նրան: Եթե նա հրաժարվում է իր սիրտը բացել Ինձ համար, ապա Ես ինչպե՞ս կարող եմ ներս մտնել ու մխիթարել նրան:

Բայց և այնպես, ես գիտեմ, որ եթե անգամ նա Քեզ չի լսում, տակավին Դու կարող ես բժշկել նրան:

Ուրեմն աղոթի՛ր նրա համար, Վասուլա: Ես սիրում եմ նրան, ուստի շարունակիր աղոթքներդ: Ես քեզ կհիշեցնեմ Իմ Սուրբ Ներկայության մասին: Ես և դու միացած ենք սիրով:
Մենք, մեզ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

Նոյեմբերի 10, 1988

Փառք Աստծո[1]*:*

Փառք Աստծո[2]*:*

(Սա ասվեց նրանց ուղղված աղոթքներից հետո):

Աստվա՞ծ Իմ:

Ես եմ: Ես անհամբերությամբ սպասում էի այս պահին:

(Հիսուս և ես բուռն ցանկությամբ հանդիպում էինք այս ձևով):

Լսի՛ր Ինձ, Իմ Վասուլա: Ե՛կ և դիպչիր Իմ Սուրբ Սրտին, զգա՛ Նրա Վերքերը: Իմ Սուրբ Սիրտը տառապում է ցավից և անճանաչելիորեն խոցված է: Հոգիներն Ինձ չեն լսում... Նրանք հարյուրներով Սատանայի ցանցն են ընկնում:

(Ավելի ուշ)

Ես հուսախաբ չեմ անի ու չեմ լքի քեզ, փոքրիկս: Լսի՛ր և գրի՛ր:
Իմ Եկեղեցու կրած Մեծ Փորձություններից հետո, դուք երկնքում մի մեծ Նշան եք տեսնելու և բոլոր նրանք, ովքեր սիրում են Ինձ պիտի ցնծան ու պիտի փառավորեն Ինձ: Իսկ բոլոր նրանք, ովքեր պղծել եմ Իմ Սուրբ Անունը, քաշվելու են ավելի խորը խավարի մեջ և ընկնելու են բովանդակ անիրազեկության մեջ:
Իմ Նշանն օրհնություն է լինելու նրանց համար, ովքեր պահել են Իմ Պատվիրանները, որովհետև նրանք պահել են Իմ Խոսքը պատվելով Ինձ, փառաբանելով Ինձ: Նրանք եղել և մնում են Իմ Եկեղեցու ոսկե սյուները, Նրա Մարմնի ամուր հիմքը և առողջ կառույցը: Նրանք մաքրագործող խունկն են Նրա ներսում: Ես՝ Տերս, այդ հոգիներին բարձրացնելու եմ և հավիտյան դնելու եմ Իմ Նոր Երուսաղեմում: Նրանց Նոր Տունը վերևից է տրվելու իրենց, որովհետև Իմ Նոր Անունը ևս

[1] Սբ Միքայել
[2] Սբ Մարիամ

վերևից պիտի տրվի ձեզ, և նրանք ու Ես մեկ պիտի լինենք: Դուք՝ Իմ ժողովուրդ, Իմ Նոր Անունով, անաստված չեք կոչվելու, այլ Ես վերադարձնելու եմ ձեզ Իմ Անունը:

Երբ Իմ Օրը գա Ես հեռացնելու եմ ողջ չարիքը և կողպելու եմ այն: Ես՝ Սիրո Տերը, թույլ կտամ, որ այս Նոր Երկիրը Սիրո սերմեր ծլարձակի: Ես նրան բաց կանեմ և նույնիսկ ժայռերից նոր աղբյուրներ կբխեցնեմ: Արդարև, Ես ծաղկեցնելու եմ Իմ Պարտեզը: Հանուն ձեզ, Ես թույլ կտամ, որ Իմ սուրբ հրեշտակներն իջնեն ձեզ վրա ու սնեն ձեզ: Ես թույլ կտամ, որ Իմ Սրբերը դառնան ձեր ուսուցիչները՝ ուսուցանելով ձեզ Իմ Սուրբ Խոսքը՝ որպես բարեկամներ առաջնորդելով ձեզ: Եվ Սերը կթագավորի յուրաքանչյուրի սրտում, և Առաքինությունը, որպես մի թագ կկրի Իմ Նոր Երկրի Իմ ողջ ժողովուրդը: Այս Նոր Երկրի մասին Ես ձեզ խոստացել եմ շատ վաղուց, և Ես պահում եմ Իմ Խոստումը: Այն շուտով կիրագործվի:

Բայց նախքան այդ, Ես իջնելու եմ ներքև ձեզ մաքրագործելու համար: Ես ձեզ կմաքրագործեմ, ինչպես ոսկին է մաքրագործվում կրակով, և բոլոր ապականությունները կանհետանան այդ Կրակի մեջ: Ես ստիպված կլինեմ անել այս բոլորը, որպեսզի լվանամ այն ամբողջ ապականությունը, որն անեծքի նման ծածկում է երկիրը:

Ես ամենայն լրջությամբ ասում եմ ձեզ, որ այն ամենն ինչ կատարվել է և կատարվելու է, արդեն հայտարարվել է ձեզ: Ամեն բառ գրված է եղել Իմ Գալարում , այն Գալարը, որը պիտի բացվի, պիտի կարդացվի և ապա օգտագործվի: Ես՝ Տերս, մաքրագործել եմ Իմ Փաթեթը Իմ սեփական Արյամբ, ուստի ճաշակե՛ք Այն: Կարդացե՛ք Ինձ:

Աղոթե՛ք, արարածներ, որ Իմաստությունը կարողանա իջնել ձեզ վրա, որ սնուցի ձեզ և կարող դարձնի ձեզ բացահայտելու ճշմարտությունները և խորհուրդները, որոնք տակավին ծածուկ են մնում Իմ Իմաստության Գրքերում: Աղոթե՛ք զանազանելու համար: Հաճա՛խ թողություն խնդրեք, և Ես միշտ կներեմ ձեզ:

Աղջի՛կս, Իմ Խաղաղությունը քեզ: Ես սիրում եմ քեզ, որովհետև դու թույլ ես տալիս, որ Ես օգտագործեմ քո փոքրիկ ձեռքը: Ես կավարտեմ Իմ այսօրվա Պատգամը ասելով. «Ովքեր ականջ ունեն՝ թող լսեն»: Ե՛կ, Ես օրհնում եմ քեզ: Մե՞նք, մե՞զ:

Հավիտյանս, Տե՛ր: Թող փառավորվի Տերը: Ամեն:

Նոյեմբերի 14, 1988

(Այսօր Ես նայում էի Պադրե Պիոյի նկարին, որը, ըստ Հիսուսի խոսքերի, մի մեծ Սուրբ է: Նրա նկարի տակ ցելոֆանե ծրարի մեջ դրված էր նրա մուգ շագանակագույն հագուստից մի կտոր, որովհետև նա կապուչին էր: Նրան նայելով հասկանում եմ, որ այդ նկարը, նրա հագուստի մի փոքր կտորի հետ միասին ես ստացել էի, որովհետև նա էր այդպես ցանկացել: Ուստի ես աղոթեցի նրան, քանի որ նա մի մեծ Սուրբ էր և նրան խնդրեցի ուղղել այն, ինչը որ ամենից վատն էր իմ մեջ: Հաջորդ միտքս այն էր, որ, թեև ես բեռնավորված եմ հավանաբար շատ արատներով, ես խնդրեցի, որ նա

առնվազն երկու բան ինձանից հեռացներ: Ես առաջարկեցի, որ նա խպառ վերացներ իմ սնափառությունը և զորացներ իմ հավատը Տիրոջ նկատմամբ:)

Տե՞ր:

Ես եմ:
Այդ Ես եմ, որ ներշնչել եմ քեզ, որ խնդրես Պադրե Պիոյի բարեխոսությունը քեզ համար: Ե՛կ, այսօր դու գրելու ես Իմ Պատգամն առանց Ինձ լսելու: Ես միայն քո ձեռքն եմ առաջնորդելու:

(Այստեղ Հիսուս բթացրեց իմ լսողությունը):

«Հաճախ ապաշխարիր, Ինձ տուր քո բոլոր սխալները, որպեսզի ներեմ դրանք: Ե՛կ Ինձ մոտ, ինչպես որ կաս, և Ես քեզ կատարյալ կդարձնեմ: Փառավորի՛ր Ինձ՝ սիրելով Ինձ, միշտ գովերգիր Ինձ: Ես եմ Տերը»:

(Սա գրվեց այնպես, ինչպես Տերը ցանկացավ):

Իմ սիրելի, որին Ես սրբացրել եմ, բռնի՛ր Իմ ձեռքը և շարունակիր առաջ գնալ Ինձ հետ: Ես քեզ Իմաստությամբ կուսուցանեմ:

(Հանկարծ ես շատ կենդանի զգացի Տիրոջ ներկայությունը):

Վասո՛ւլա, գիտե՞ս, թե Ես որքան եմ հրճվում քեզանով, երբ դու ամբողջովին հավատում ես[1]:

(Հիսուս չափազանց ուրախ էր, ես՝ նույնպես):

Զատորոշի՛ր Ինձ. դա Ինձ այնքան դուր է գալիս:
Ե՛կ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, մենք, մեզ:

Նոյեմբերի 15, 1988

(Այսօր ես ուսերիս զգացի Հիսուսի Խաչը: Ես զգացի Նրա սիրտը, որը լեցուն էր ահռելի ցավով: Ինչպե՞ս է Նա տառապում ... Աշխարհի համար, որը մերժում է Տիրոջը):

Տե՞ր:

Ես եմ: Զգա՛ Իմ Խաչը: Հանգստացրո՛ւ Ինձ, Իմ Լուսո զավակ: Ես այնքան հոգնած եմ: Ինձ մոտ մնա: Ես կարիք ունեմ մխիթարվելու այս ամայության մեջ: Իմ Վասուլա, լսի՛ր Ինձ և գրիր.

[1] Տիրոջ իսկական Ներկայությանը

Օ՜ Արարչություն, Իմ սերմ, Ես քո Սուրբն եմ, բայց դուք դատապարտում եք Ինձ: Ես սիրել եմ ձեզ ողջ Հավիտենությունից ի վեր: Բայց դուք արհամարհում եք Ինձ: Ես փրկել եմ ձեզ Մահից. այդուհանդերձ դուք հարձակվում եք Ինձ վրա: Ամեն օր Ես կերակրում եմ ձեզ Իմ Հացով ու հագեցնում Իմ Գինով, բայց ձեր չարությամբ դուք վիրավորում եք Ինձ: Ես ծարավի եմ Սիրո: Բայց դուք Ինձ թողնում եք ծարավ: Ես սիրով ընդունում եմ ձեզ, երբ տեսնում եմ ձեզ խոնջացած, որպեսզի հանգստացնեմ ձեզ Իմ Սրտում, բայց երբ Ես եմ խոնջացած, դուք մերժում եք Ինձ: Ես Իմ Սիրտը բացում եմ ձեր առջև ցույց տալով, թե դուք որքան եք վիրավորել Այն, բայց ձեր չարության մեջ դուք կրկնում եք ձեր դաշույնի հարվածները նորից ու նորից խոցելով Ինձ: Ես բաց եմ անում Գիրկս, որպեսզի ողջունեմ ու գրկեմ ձեզ, բայց դուք շրջվում եք՝ թիկունք դարձնում Ինձ: Քնքշությամբ լեցուն, Ես բացում եմ Իմ Սուրբ Սիրտը ձեզ ջերմացնելու համար, սակայն երբ Ես գալիս եմ ձեզ մոտ, դուք ձեր դուռը փակում եք Իմ Դեմքին՝ թողնելով Ինձ դրսում սառնամանիքի մեջ:

Ես ամբողջ օրը կանչում եմ ձեզ, <u>ինչպես մի մուրացկան</u> Ձեռքերս դեպի ձեզ պարզելով, որպեսզի բարձրացնեմ և բժշկեմ ձեզ, բայց դուք փոխարենը անտեսում և մերժում եք Ինձ: Իմ և Մորս Աչքերը խամրել են տառապանքից: Մարմինս իր Վերքերով այնքան է տանջված, որ անճանաչելի է դարձել: Այն ամենը, ինչ Ես խնդրում եմ ձեզանից, խաղաղություն և Սեր է, բայց դուք հրաժարվում եք Իմ աղերսները լսելուց: Ես եկել եմ նախ Իմ յուրայինների մոտ, բայց Ես դարձյալ մերժվել եմ նրանց կողմից, արհամարհվել և հալածվել: Դուք հալածեցիք Ինձ՝ վարվելով Ինձ հետ որպես մի խեղկատակի: Դուք դավաճանեցիք ինձ [1]: Ձեր դավաճանությունը խլեց Իմ Աչքերում մնացած բոլոր արցունքները: Ձեր չարությունը խոցել է ողջ Հավիտենությունը՝ թողնելով, որ նույնիսկ դևերը զարմանքից ապշեն ձեր չարությունը տեսնելով:

Ա՜հ, Վասուլա, Ես եկել եմ դժբախտությունից և մեծ Ողորմությունից դրդված, որպեսզի զգուշացնեմ ձեզ և ազատեմ ձեզ Մահից: <u>Ես ուղարկեցի քեզ յուրայիններիս մոտ, բայց նրանք խլացրին Իմ Ձայնը՝ վախենալով, որ Լույսի տակ հայտնվելով երևան կհանեն իրենց հանցանքը</u>: Քանի որ նրանք խլացնում են Իմ Ձայնը, և չեն ընդունում Ճշմարտության Իմ Հոգին, Ես այնպես կանեմ, որ նրանց մեղքերը երևան ելնեն օտարների միջոցով: Ես այնպես կանեմ, որ Իմ Ձայնը շեփորի նման հնչի ձեր տների տանիքներին:[2]

Ես ջերմ ընդունելության արժանացա օտարների կողմից, որոնք երբևէ չէին ճանաչել Ինձ: Ես թակեցի նրանց դուռը, և նրանք Ինձ թույլ տվեցին ներս մտնել: Չնայած իրենց աղքատությանը, նրանք Ինձ թույլ տվեցին կիսել իրենց ուտելիքը: Իրենց խեղճության պատճառով նրանք թեև Ինձ չեն փնտրել, բայց գտել են Ինձ: Ես նրանց ցույց եմ տվել Իմ Վերքերը, որոնք Ես ստացել եմ Իմ լավագույն բարեկամների կողմից, և <u>նրանք ծնկի են եկել Իմ Վերքերի առջև</u>: Տեսնելով այդ Վերքերը և

[1] Հիսուսի ձայնը լեցուն էր դառնությամբ:
[2] Մի պահ լռություն տիրեց, ապա Նա տխրությամբ ավելացրեց:

ազդվելով Դրանց խորությունից, ազդվելով այն վայրագությունից, որին ենթարկվել էր Իմ Մարմինը, նրանց սրտերը հալվեցին մեղրամոմի նման: Մի՛ արտասվիր, զավակս:

...Օտարները կփոխանցեն Իմ Ձայնը: Երբ դու լսես Արձագանքը, իմացի՛ր, որ այն Ինձանից է գալիս: Ես վեր եմ բարձրացվելու օտարների կողմից, որոնք Ինձ երբեք չէին փնտրել, Ես փառավորվելու եմ նրանց կողմից, որոնք Ինձ երբեք չէին ճանաչել, և Ես դառնալու եմ նրանց Ուսուցիչը և ուսուցանելու եմ նրանց և ցրելու եմ նրանց սխալները: Ես կհամոզեմ նրանց, և նրանք կհասկանան Ինձ: Նրանք կբժշեն Իմ Վերքերը:

Ես եմ Հովիվը, և Ես հավաքելու եմ Իմ Գառներին, քանի որ նրանց հարվածել են իրենց հովիվները և նրանք ցաք ու ցրիվ են եղել: Օ՜, Վասուլա, հիմա այս ամենն այնքան շուտ է կատարվելու:

Ե՛կ, հանգչիր Իմ մեջ: Թո՛ւյլ տուր, որ Ես էլ հանգչեմ քո մեջ: Սիրով կապված՝ եկ կիսենք ամեն բան:

Այո՛, Տեր իմ:

Մենք, մեզ:

Հավիտյանս, ամեն:

Նոյեմբերի 16, 1988

(Երեկվանից սկսած Սատանան կատաղի հարձակումներ է գործում ինձ վրա: Հիսուսն ինձ զգուշացրել էր: Սատանան գիտի իմ թույլ կողմերը և դրանց վրա է հարձակվում: Իմ ամենաթույլ կողմը այս հայտնության հանդեպ անվստահությանս զգացումն է, որի պատճառը հիմնականում իմ ով լինելն է: Ես ո՛չ հրեշտակի նման եմ, և ո՛չ էլ սուրբ եմ: Ես շատ եմ սայթաքում և իսկապես ոչինչ չգիտեմ: Հետո, երբեմն զգում եմ, որ Հիսուս չի ավելացնում արտասովոր, գերբնական նշաններ, ինչպես մյուս միստիկների դեպքում, ուստի Սատանան այդ թույլ կողմերից գրոհում է ինձ վրա և սնում դրանք ի օգուտ իրեն՝ չարչարելով ինձ:)

Վասո՛ւլա, այդ Ես եմ՝ Տերը: Ամեն անգամ, երբ դու կասկածում ես, Ես խոր տխրության մեջ եմ ընկնում, Իմ Սիրտը ցավում է: Դու կամենո՞ւմ ես շարունակել Իմ Գործը:

Ասա՛, Փառք Աստծո, Օրհնյալ լինի մեր Տերը:[1]

Փառք Աստծո: Օրհնյալ լինի մեր Տերը:

Վասո՛ւլա[2]: Վասուլա, զավակս, մի՛ խաբվիր Սատանայից. նա պայքարում է քո դեմ՝ մտքեր ներշնչելով: Նա կռվում է Իմ Ծրագրի դեմ: Ամեն անգամ, երբ քո ոտքը մի քայլ բարձրանում է, նա

[1] Ես կասկածում էի:
[2] Հիսուսի ձայնը այնքան մեղմ ու քնքուշ էր, որ ես հալվեցի:

կատաղությունից մոլեգնում է: Ես քո կողքին եմ, փոքրիկս, որ զգուշացնեմ քեզ:

Վասո՛ւլա, Իմ նշաններն այս անգամ սահմանափակ են այս հայտնության համար: Ես ավելի շատ եմ փառավորվում, երբ այս ձևով եմ տալիս այն: Ես քեզ բացատրել եմ, թե ինչու: Ես ուզում եմ, որ Հավատը առաջնայինը լինի այս հայտնության մեջ՝ առանց բազմաթիվ արտասովոր նշանների: Ես ուզում եմ, որ պարզ լինի այն: Ես քեզ ասել եմ, որ միակ նշանը, որ Ես տալու եմ դու ինքդ ես և քո պտուղները, որոնք հիմնականում դարձի եկողներն են: Ես գիտեմ, որ հավատ չկա քո դարաշրջանում: Այդ պատճառով էլ դու հալածվելու ես, բայց մի՞թե Ես էլ չհալածվեցի: Ինձ չհավատացին, հակառակ Իմ Պտուղների:

Ես քեզ շատ շնորհներ եմ տալիս, Վասուլա, թեպետ դու ոչ մեկին արժանի չես: Ես ծառաներ ունեմ, որոնք քեզանից շատ ավելի արժանի են, բայց Ես նրանց սահմանափակ շնորհներ եմ տվել: Ես չեմ դատում քեզ, Ես միայն հիշեցնում եմ քեզ: Այն ամենը ինչ Ես քեզանից խնդրում եմ, սեր է: Սիրի՛ր Ինձ՝ քո Աստծուն, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով, որովհետև Ես քեզ ստեղծել եմ, որ սիրես Ինձ, սիրես Ինձ մի առանձնահատուկ խոր, անհատակ սիրով:

Ես Իմ Դարպասները բացել եմ Երկնքում և թույլ եմ տվել, որ ներս մտնես: Ես ջերմորեն ընդունել եմ քեզ Իմ Սրահի մեջ, ուր միայն Ընտրյալները կարող են գտնվել: Ես Իմ Ընտրյալներին ասել եմ Փրկության Իմ Ծրագրի մասին: Իմ Անսահման Ողորմածությունից ելնելով էր, որ Ես պատրաստել էի այն գաղտնաբար: Ես Նրանց հայտնեցի այդ մասին Իմ Սրահում: Ես ասացի Նրանց, որ Ես Իմ Աչքերը սևեռել էի քեզ վրա: Ես ասացի, որ ընտրելու եմ բոլոր Իմ արարածներից ամենահետինին, ամենաթուլին և ամենաթշվառին ողջ հավիտենության ի վեր, որպեսզի ցույց տամ Իմ Մեծ Ողորմությունն ու Իմ Իշխանությունը: Ես ցած եմ իջել մինչև քեզ մոտ, որպեսզի փնտրեմ քեզ մեռելների մեջ և հարություն տամ քեզ և բարձրացնեմ դեպի Ինձ, որովհետև այդ էր Իմ Կամքը:

Հետո Ես սեղան բացեցի քեզ համար, և Ես՝ Ինքս, Իմ կերակուրը Իմ Ձեռքով դրեցի քո բերանում: Ես՝ քո Աստվածը, որքա՜ն եմ սիրում քեզ: Ես խանդոտ սիրով սիրում եմ քեզ: Այնուհետև Ես օծեցի քեզ Իմ յուղով և քեզ Իմը դարձրեցի: Ես պսակեցի քեզ Ինձ հետ և դարձա քո Ուսուցիչը: Ես ծածկեցի քեզ շնորհներով և հարստացրեցի քեզ Իմ Զարդերով: Մի՞թե Ես քեզ չտվեցի Իմ Խաչը, Իմ Մեխերը, Իմ Փշե Պսակը: Ի՞նչ ավելի արժեքավոր գանձ կարող էր Փեսան առաջարկել Իր սիրեցյալին:

Ես, որ Սիրո Հոգին եմ, սովորեցրել եմ քեզ, թե ինչպես սիրես Ինձ և ինչպես աճես այս սիրո մեջ: Ես քեզ ցույց եմ տվել Իմ հրեշտակներին: Ես կիսում եմ քեզ հետ այն ամենը, ինչ Ես ունեմ: Դու ապրում ես Իմ Տան մեջ: Դու ապրում ես Իմ Սուրբ Սրտում: Օրհնված Իմ խակ Ձեռքով, սրբացված Իմ Շնորհով:

Փորձի՛ր և հասկացիր, թե Սատանան ինչու է հալածում քեզ: Նա ուզում է խափանել Իմ Ծրագիրը: Եթե միայն իմանայիր, թե ինչ ճակատամարտ է տեղի ունենում... Բայց երկիրը զգում է այդ ճակատամարտի ցնցումները, ուստի զգույշ եղիր նրանից և <u>թույլ մի՛ տուր, որ նա խաբի քեզ</u>:

Ինչպես կարող եմ ես որևէ բան անել, եթե Դու ինձ չօգնես: Խնդրում եմ, թույլ մի՛ տուր դա անել: Խնդրում եմ, հեռացրո՛ւ նրան ինձանից:

Եթե իմանայիր, թե ինչպես եմ ես քեզ պաշտպանում: Ահա, նայի՛ր այստեղ:

(Ես ինքս ինձ տեսա կանգնած և իմ շուրջը հրեշտակների մի շրջան էր կազմվել, որոնք ձեռք-ձեռքի փակել էին բոլոր անցքերը, ինչպես այս նկարում):

Սատանային չի թույլատրվում անգամ, որ նա մատով քեզ դիպչի[1]. սա ես խոստանում եմ քեզ: Ես, Ինքս, երբեք քեզ չեմ լքի, ոչ էլ կանտեսեմ. Ինձ հետ դու ոչնչի պակաս չես ունենա: Իմ Խաղաղությունը ես տվել եմ քեզ և քեզ ցույց եմ տվել փոքրիկ հոգիների հանդեպ Իմ ունեցած նախասիրությունը:. Ես քեզ ցույց եմ տվել Իմ Սուրբ Սիրտը:

Ուստի, Իմ Վասուլա, դու ստեղծվել ես, որ Ինձ անչափ սիրես և Իմ Հոգուն ուրախություն պատճառես: Դու պիտի միշտ Ինձ ցանկանաս: Դու պետք է Ինձ հնազանդվես, հաճեցնելով Ինձ: Դու պիտի մեղմացնես Իմ բարկությունը: Դու պիտի մխիթարես ու հանգստացնես Ինձ: Դու պիտի պաշտես Ինձ: Դու Ինձ պիտի ապավինես: Դու պիտի հավատաս Ինձ ամբողջապես և կուրորեն: Սրանք Իմ Սրտի սկզբունքներն են:

Պատվի՛ր Ինձ, լինելով Իմ Արտացոլումը և փառավորի՛ր Ինձ՝ ընդունելով այն ամենը, ինչ Ես եմ տալիս քեզ: Ծաղի՛կս, ապրիր միայն Իմ շահերի և Իմ Փառքի համար: <u>Միշտ ուրախությամբ ընդունիր այն ամենը, որ Ես տալիս եմ քեզ</u>:

Այո՛, Տեր իմ, ես փորձում եմ:

Ես միշտ Ներկա եմ: Հիշի՛ր, եթե Ես եկած չլինեի քեզ փրկելու, արդյոք դու այժմ կփափագեի՞ր <u>Ինձ և միմիայն Ինձ</u>:

Ո՛չ, Տեր:

Ես քեզ սովորեցրել եմ, թե ինչ է նշանակում <u>Ճշմարիտ Կյանք Իմ մեջ</u>: Հաճախ աղոթիր, ամեն օր աղոթիր Սուրբ Վարդարանը, որովհետև այս փոքրիկ շղթան լինելու է <u>Այն Շղթան</u>, որի մեջ շղթայվելու և հաղթվելու է Սատանան: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը, երբեք չկասկածես: Մե՞նք, մե՞ղ:

Հավիտյանս: Ամեն:

(Ես կարծում եմ, որ երբ Սուրբ Գիրքն ասում է, որ Սատանան <u>շղթայվելու է</u> (Հայտ. 20:2), իմ կարծիքով դա տեղի կունենա այն ժամանակ, երբ <u>ողջ</u> մարդկությունը, ողջ երկրագունդը միասին կաղոթի Սուրբ Վարդարանը: Երբ այդ օրը դա, Սատանան կհաղթվի և կջախջախվի Վարդարանի «շղթայով»):

[1] Ինձ հիվանդություն կամ մահ պատճառելով:

Նոյեմբերի 21, 1988

Փառք Աստծո: Օրհնյալ լինի մեր Տերը: Տե՛ր Իմ:

Ես եմ: Զգա՛, թե ինչպիսին է Իմ Սուրբ Սիրտը:

(Հիսուսի Սուրբ Սիրտը Ամենաքնքուշ, Ջերմ ու Ներողամիտ սիրտն է բոլոր սրտերից):

Ինչպե՞ս կարող եմ ես դիմադրել Քեզ:

(Պատգամ մեր աղոթաժողովի համար)

Ես Սեր եմ: Ես Սիրո Գերագույն Աղբյուրն եմ, ուստի մի՛ դիմադրեք Ինձ: Եկե՛ք դեպի Ինձ, ընկղմվեք Իմ մեջ, որովհետև Ես Քնքշության ու Խաղաղության մի Օվկիանոս եմ: Վերցրե՛ք բոլորդ Իմ Սուրբ Սրտից և լցրեք ձեր սրտերը: Ես զարդարելու եմ ձեզ, Ես ձեզ կատարյալ եմ դարձնելու: Եկե՛ք և ճաշակե՛ք Ինձնից և դուք հավիտյան կապրեք[1], քանի որ Ես եմ Կենդանի Հացը, Կյանքի Հացը[2]:

Սիրելիներս, մի՛ կասկածեք Իմ Նախախնամության Կանչերին: Ես տակավին բոլորիդ մեջ եմ: Ես ձեր աղոթաժողովներում եմ՝ օգնելով և ներկա գտնվելով. զգացե՛ք Իմ Ներկայությունը: Ես այն Քահայանապետն եմ, որ խոսում է ձեր սրտերում և քաջալերում է բոլորիդ, որ Ինձ մոտենաք: Ես առավել քան երբևէ ջանում եմ ձեզ Ինձ մոտեցնել: Ա՜հ, Ես որքան եմ փափագում պահել ձեզ Իմ Բազուկների մեջ և մեծ Քնքշությամբ գրկել բոլորիդ: Որքա՜ն եմ փափագում, որ դուք մոտենաք Ինձ և մտերմանաք Ինձ հետ: Ես ձեր Քահանայապետն եմ, բայց նաև ձեր Սուրբը, ձեր Եղբայրը, ձեր Ընկերակիցը, ձեր Ամուսինը: Ես ձեր Արարիչն եմ և դուք բոլորդ Իմ սերմն եք...

Վասո՛ւլա, Ես ներկա եմ և միշտ լինելու եմ այս աղոթաժողովներում: Ձեր խոսքերը Ինձանից են գալու, ձեր բառերը Իմ Շուրթերից են դուրս գալու: Ես չե՞մ ասել, որ ջրելու եմ Իմ մրգաստանը և ոռոգելու եմ Իմ պարտեզը: Որպես վաղորդյան մշուշ, Ես տարածվելու եմ ձեր բոլորի վրա՝ թողնելով Խաղաղության ու Սիրո Իմ Ցողը ձեզ վրա, ուստի Ինձ մի՛ դիմադրեք: Ես մտադիր եմ ձեզ զարդարել, արարածներ: Երանի նրանց, ովքեր կբացվեն Իմ առջև և թույլ կտան, որ Իմ Խաղաղության ու Սիրո Ցողը թափանցի իրենց մեջ: Երանելի են նրանք, ովքեր հավատարիմ են Ինձ և սիրում են Ինձ, որովհետև Ես նրանց է՛լ ավելի եմ Ինձ մոտեցնելու ու ծածկելու Իմ Սիրով:

Դուք ստեղծված եք Իմ Պատկերով, և դուք կոչված եք ապրելու այդ Պատկերով, մի Պատկեր, որ ձեզանից շատերը մոռացել են: Բայց Ես՝ Քահայանապետս, հիշեցնելու եմ ձեզ Իմ Աստվածության և Իմ Սրբության մասին: Ես հիշեցնելու եմ ձեզ, որ Ես Սուրբ եմ:

Հիսո՞ւս:

---

[1] Հովհ. 6:51
[2] Հովհ. 6:35

Ես եմ: Ես ձեզ բոլորիդ հիշեցնելու եմ, որ Ես Սուրբ եմ, որպեսզի սրբությամբ ապրեք: Ես Սեր եմ և Իմ Անսահման Սիրուց դրդված Ես ձեզ զգուշացումներ և նշաններ եմ տալիս զանազան վայրերում, ողջ երկրագնդով մեկ: Մի՞թե չեմ ասել, որ Պաշտպանը, Սուրբ Հոգին, որին Հայրն ուղարկելու է Իմ Անունով, սովորեցնելու է ձեզ ամեն ինչ և հիշեցնելու է բոլորիդ այն ամենը, ինչ ասել եմ ձեզ:

(Սբ. Մարիամ)

Ծաղի՛կս, Իմ Խաղաղությունը քեզ: Զգույշ եղիր հիմա, հնազանդ եղի՛ր և դու վախենալու ոչինչ չունես: Օ՜ Վասուլա, Հիսուսն անսահման սիրում է քեզ: Նա հոգում է քեզ համար: Դու և Նա կիսում եք Նրա Խաչը: Հիսուս երբեք, երբեք քեզ չի լքի: Ե՛կ, հանգստացիր: Ես քեզ հետ եմ: Մե՞նք, մե՞ղ:

Հիսո՞ւս:

(Պատգամի շարունակությունն է՝ տրված աղոթաժողովի համար):

Ես եմ: Ես ձեր Տերն եմ՝ Խաչյալը: Իմ Հոգու զավակներ, Իմ Սրտի սիրեցյալներ, Սերը խորապես տառապում է:

Հասկացե՛ք, թե Ես ինչպես եմ զգում: Ես Ինձ լքված, մոռացված և դավաճանված եմ զգում յուրայիններիս կողմից: Այսօր Ես Իմ Խաչի վրա եմ և Իմ Երկրորդ Զարչարանքի մեջ: Երկիրը առավել քան երբևէ չոր է, և դուք, սիրելիներս, տառապում եք դրա հետևանքներից, դուք զոհերն եք: Ձեզանից շատերը սովամահ են լինում, իսկ մյուսները շարունակ խաբվում են Զարի կողմից: Որքան եմ Ես ձեզ բոլորիդ խղճում: Իմ Սրտից արյուն է կաթում՝ Խաչի վրայից այս ամենը դիտելիս: Իմ Աչքերը լեցուն եմ Արյան Արցունքներով:

Ես ձեզ բոլորիդ այնքան շատ նշաններ եմ տալիս, բայց և այնպես շատ քչերն են նկատում դրանք: Եկե՛ք Ինձ մոտ ձեր աղոթքներով. Ես Ներկա եմ, և Ես լսում եմ ձեզ: Եկե՛ք ձեր Փրկչի Բազուկների մեջ: Հանձնե՛ք Ինձ ձեր սխալները, և Ես կմաքրեմ և կբժշկեմ ձեզ: Ես ձեզ կաստվածացնեմ, որովհետև Ես Աստվածություն եմ, Ես ձեզ կատարյալ կդարձնեմ: Եկե՛ք Ինձ մոտ այնպես, ինչպես կաք, մի՛ վախեցեք Ինձանից: Ես Սիրող Աստված եմ: Ես Ողորմությամբ լեցուն եմ թշվառների հանդեպ: Ես Գթառատ Աստված եմ: Աղոթե՛ք Ինձ, զրուցե՛ք Ինձ հետ, մի՛ վարանեք: Ես անձկալից սպասում եմ ձեզ...

Ձեր բոլորի հանդեպ իմ ունեցած Սերը <u>այնքան Մեծ է</u>, որ Ես՝ Սուրբերի Սուրբը, Իմ ողջ Արարչության Աստվածը և Գերիշխանը, խոնարհվել եմ դեպի ձեզ, որպեսզի կարողանամ հասնել ձեզ և բժշկել ձեր տկարությունները: Ես միշտ ձեր մեջ եմ, մինչև վերջ...

Երանի նրանց, ովքեր առաջ են տանում Խաղաղության ու Սիրո Իմ Պատգամը: Երանի նրանց, ովքեր Ինձ մոտ են գալիս և մխիթարում են Ինձ: Մե՛կ եղեք Ինձ հետ: Հավիտյան մնացեք Իմ Սիրո մեջ:

Իմ շատ սիրելի զավակներ, Ես ձեր Սուրբ Մայրն եմ՝ Ես ողջ Մարդկության Մայրն եմ: Սիրելինե՛րս, Հիսուսն այնպես է տառապում, որ մարդկային բառերն ի զորու չեն այն նկարագրել. Նա այժմ Իր Երկրորդ Զարչարանքի մեջ է: Զգացե՛ք, թե մեր Սրտերը ինչպես են տառապում:

Այսօր մեծ մարտ է տեղի ունենում: Սատանան կատաղի գրոհում է, և Սբ. Միքայելը պատերազմում է նրա դեմ՝ Աստծո հրեշտակների հետ: Երկիրը զգում է այս մեծ պատերազմի ցնցումները: Ես ձեր աղոթքների կարիքն ունեմ, սիրելիներս: Երբեք մի՛ դադարեք աղոթելուց: Աղոթե՛ք, Իմ սիրելիներ, լույսի չողացող հրեշտակների նման եղե՛ք այս խավարում: Աղոթե՛ք հոգիների փրկության համար: Աղոթե՛ք, սիրելիներս, հոգիների դարձի համար: Ես ձեզնից յուրաքանչյուրից ակնկալում եմ սա:

Խնդրում եմ հասկացեք, թե ինչ կզգար մի մայր, եթե նա տեսներ իր զավակներին դեպի հավիտենական կրակն ընթանալիս, և ինչպես կզգա նա, երբ տեսնի, որ իր սիրելիներից ոմանք ընկնում են այս հավիտենական կրակի մեջ:

Խոկացե՛ք այս մասին, և դուք ավելի լավ կհասկանաք Ինձ:

Ես կավարտեմ Իմ Պատգամը օրհնելով ձեզ Հոր, Որդու և Սուրբ Հոգու Անունով:

Եկե՛ք և մխիթարեք Հիսուսին:

Տե՞ր իմ:

Ես եմ: Ես միշտ ուրախանում եմ, երբ տեսնում եմ քեզ, որ տքնաջան փորձում ես գոհացնել Ինձ, երբ Վարդարանն աղոթելիս դու զգում և վերապրում ես Խորհուրդները: Օրհնյալ զավակ, ուրիշներին ևս սովորեցրու դանդաղ աղոթել Սբ. Վարդարանը: Օգուտ չունի լոկ շուրթերով արագ աղոթելը: Յուրաքանչյուր աղոթք պիտի սրտից բխի: Դուք պիտի զգաք այն, ինչ ասում եք: Ուստի մի՛ շտապեք և խորհրդածեք ամեն մի Խորհրդի շուրջ:

Շնորհակալ եմ, Տեր իմ:

Դեկտեմբերի 3, 1988

(Տրված է դեկտեմբեր 16-ի աղոթաժողովի համար)

Տե՞ր իմ:

Ես սիրում եմ Քեզ:
Ես փափագում եմ Քեզ հետ լինել:
Շնորհակալ եմ Քեզանից,
որ Դու ինձ տվիր այս շնորհը,
Քեզ հետ լինելու
և այսքան մոտիկից
Քեզ զգալու այս պարգևը:
Շնորհակալ եմ Քեզ՝

Ինձ սովորեցնելու և ինձ դեպի Քեզ
բարձրացնելու համար:
Փառավորվի Աստված,
Գոհություն մեր Տիրոջը,
Օրհնյալ լինի մեր Տերը:

Տե՞ր:

Ես եմ: Ուրախացրո՛ւ Իմ Սուրբ Սիրտը, մանկան հավատով հավատալով Ինձ: Հետամուտ մի՛ եղիր իմանալու, թե ինչու եմ Ես քեզ ընտրել ու բարձրացրել դեպի Ինձ: Պարզապես ընդունիր առանց ինչու-ների և ով-երի: Ոչ մի հարց մի՛ բարձրացրու, պարզապես ընդունիր այն, ինչ Ես տվել եմ քեզ:

Ա՜հ, զավակս, տարիներ շարունակ Ես քո դռան առաջ էի:

Ների՛ր ինձ Տեր:

Ես ներել եմ քեզ: Ես չեմ հանդիմանում քեզ, քանի որ սա անցած բան է:

Ես միայն ցանկանում եմ քեզ ցույց տալ այն ուրախությունը, որ ունեմ Իմ Սուրբ Սրտում, քանի որ Ես նորից քեզ հետ եմ հիմա: Ես քեզ կրթել եմ, որ ընդունես Ինձ: Ուստի գոհացրու Իմ Սուրբ Սիրտը և ընդունիր Իմ զավակներին: Նրանց ընդունելով, դու Ինձ ես ընդունում: Ես բերում եմ նրանց մինչև քո դռան շեմը. զոհաբերի՛ր քո ժամանակը: Նրանք Իմ Խաղաղության կարիքն ունեն: Նրանք քաջալերվելու կարիք ունեն: Քաջալերի՛ր նրանց, որ Ինձ մոտենան մտերմորեն, բայց այդուհանդերձ երբեք չմոռանալով, որ <u>Ես Սուրբ եմ</u>:

Տե՛ր, Դու ցանկանո՞ւմ ես որ մենք ունենանք այս աղոթաժողովները:

Դա Իմ Կամքն է: Փարվի՛ր Ինձ և թույլ տուր, որ քեզ առաջնորդեմ: Ինքդ քեզ Ինձ հանձնի՛ր: Ես՝ Հիսուս, քո առջև եմ:

Տե՛ր, լավ է չէ՞, որ աղոթաժողովներում կարդում ենք այս պատգամները:

Դուք փառավորում եք Ինձ, սիրելիս:

Շնորհակալ եմ, Տեր իմ:

Երբեք մի՛ մոռացիր, որ Ես քեզ առաջնորդում եմ, վստահի՛ր Ինձ: Նրանք, ովքեր սիրում են Ինձ, կսովորեն աճել Իմ Սիրո մեջ, որպեսզի նրանք էլ իրենց հերթին կարողանան ուրիշներին բերել դեպի Ինձ, որ սիրեն Ինձ: Իմ Սուրբ Սիրտը Սիրո Բոցերի մեջ է և առավել քան երբևէ ձգտում է ձեզ բոլորիդ ներքաշել Դրա խորքերը: Ես ծարավի եմ Սիրո: Այն ամենը, ինչ Ես ձեզանից ուզում եմ, սեր է, որովհետև <u>Սերն Առաքինության Ծառի Արմատն է</u>:

Եկե՛ք բոլորդ, նրանք, ովքեր չեն հաշտվել Ինձ հետ, եկե՛ք, եկե՛ք ու հաշտվեք և ընդունեք Իմ Խաղաղությունը[1]: Եկե՛ք և կիսե՛ք Իմ Սերը: Եկե՛ք բոլորդ, ովքեր տակավին չեք հասկացել Ինձ, հաշտվե՛ք Ինձ հետ, եկե՛ք և հաշտվեք Սիրո հետ: Ես՝ ձեր Տեր Հիսուս Քրիստոսը, ցանկանում եմ, որ դառնաք Իմ Լուսո Զավակները, այո՛, Սիրո և Խաղաղության Իմ աշակերտները՝ պատվելով Ինձ:

Օ՜հ, Տեր: Ոմանք հալածանքների են ենթարկվելու ինչպես մյուս ժամանակներում:

Գիտեմ, զավակս, ոմանք հալածվելու են նրանց կողմից, որոնց սրտերը դեռևս փակ են, և ովքեր մտածում են ոչ թե սրտով, այլ մտքով: Բայց Իմ Շնորհով ես նրանցից շատերին ևս կքաշեմ Իմ Սուրբ Սրտի մեջ: Փոքրիկ ծաղիկներ, սրտապնդվե՛ք, ես ձեր կողքին եմ և Իմ Աչքերը ձեզ վրա են, ուստի մի՛ վախեցեք: Իմ բաղձանքն է, որ Իմ Խաղաղության ու Սիրո Պատգամը տարածվի հյուսիսից հարավ, արևելքից արևմուտք, ուստի հավատ ունեցեք Իմ հանդեպ. Ես Այն գաղտնի պատրաստել եմ ձեր Դարաշրջանի համար:

Իմ Պատգամում ես խնդրում եմ, որ Իմ Եկեղեցիները միավորվեն, որովհետև, ինչպես Հայրն ու Ես ենք Մեկ, այնպես էլ Իմ Եկեղեցին պիտի Մեկ լինի՝ բոլորը միավորված և մեկ Փարախի մեջ: Ես ընտրել եմ Պետրոսին, որ լինի ձեր պահապանը և պահպանի ձեզ Ճշմարտության մեջ, մինչև Իմ Վերադարձը: Բայց մարդիկ չեն հնազանդվել Ինձ: Նրանք բաժանվել են՝ հայտարարելով իրենց սեփական կանոնները:

Ես ձեզ ճշմարտապես եմ ասում՝ մի՛ լսեք նրանց, ովքեր ընդդիմանում են Պետրոսին: Իմ Գառների Պետրոսին, որն այժմ Հովհաննես-Պողոս II-ն է, որովհետև նա Իմ ընտրյալն է, և Իմ Հոգու սիրեցյալը: Մի՛ լսեք նրանց, ովքեր դատապարտում են նրան, նրանք մոլորվել են:

Սիրելինե՛ր, երբ դուք վերջերս բաժանվեցիք՝ Իմ մի մասը կտրվեց Ինձնից: Այո՛, նրանք չեն գիտակցում, որ պոկել են Իմ Մարմնի մի մասը: Օ՜հ, սիրելիներս, մի՞թե ես արժանի եմ սրան: Ինչո՞ւ պատռել Իմ Սիրտը: Ինչո՞ւ պատռել ձեր Աստծո Սիրտը: Ինչո՞ւ ավելացնել Արյան Արցունքներն Իմ Աչքերում[2]: Ես աղերսում եմ ձեզ, ինչպես մի մուրացկան, որը հաշմվել է իր ընկերների կողմից, որպեսզի վերադարձնեմ բոլորիդ դեպի Պետրոսը, որ մեկ լինեք, ինչպես Ես և Հայրը Մեկ ենք: Ես նաև կանչում եմ բոլոր նրանց, ովքեր մերժում են Իմ Մորը[3], որպեսզի նրանք բացեն իրենց ականջները ու լսեն: Իմ Մայրը. Երկնքի Թագուհին է: Նա կոչվում է այս Անունով՝ «Աստծո Մայր»:

Ես չեմ մեղադրում նրանց, ովքեր չեն իմացել: Ես պարզապես ջանում եմ ձեզ վերադարձնել դեպի Ճշմարտությունը: Ես նաև կոչ եմ անում այս աշխարհի դարձի համար, Ես նաև հիշեցնում եմ նրանց, ովքեր մոռացել են Իմ Ամենակարողությունը, որ իրենք չպետք է Ինձ համեմատեն իրենց

[1] Հովհ. 14:26
[2] Հիսուսի պատկերը երևաց ծայրաստիճան չարչարանքների մեջ: Նրա Աչքերը լցված էին Արյամբ, իսկ աչքերի շուրջը՝ չորացած արյուն էր:
[3] Բողոքականները:

հետ[1]: Ես բոլորիդ հիշեցնում եմ, որ դուք ապրում եք Ժամանակների Վերջում, և դրա համար Իմ Նշանները շատացել են... Սուրբ Գրքերը իրագործվում են...

Ես Խաղաղություն և Սեր եմ: Ես՝ ձեր Տեր Հիսուս, առավել քան երբևէ Ողորմած եմ, այո՛, Իմ Ողորմությունը Մեծ է: Հավատացե՛ք Իմ Ողորմությանը, միաժամանակ չմոռանալով, որ Ես նաև Արդարության Աստվածն եմ:

Իմ մաքրագործումը, որը Ես ուղարկելու եմ ձեզ, սիրուց դրդված է լինելու: Սխալ մի՛ հասկացեք կամ սխալ մի մեկնաբանեք այն՝ անվանելով Աստծո կողմից սպառնալիքներ: Ես չեմ սպառնում ձեզ. Ես սիրուց դրդված ձեզ զգուշացնում եմ: Ինչպես մի հայր, որը զգուշացնում է իր զավակին, և որը փորձում է համոզել ու խելքի բերել նրան, Ես ևս ջանում եմ համոզել ձեզ և ցույց տալ, թե որքան սխալ և մոլորված են ձեզանից ոմանք, և թե ինչպես մեղքերը կարող են խափանել Իմ Լույսը:

Ես գալիս եմ արթնացնելու ձեզ, որովհետև ձեզանից շատերը խորը քնի մեջ են: Ես գալիս եմ ձեզ բոլորիդ մոտ Իմ Անսահման Ողորմությունից դրդված, որպեսզի կենդանացնեմ մեռելներին: Ձեր հանդեպ ունեցած Իմ Անսահման Սիրուց դրդված, Ես գալիս եմ խնդրելու ձեզ, որ ապաշխարեք և փոխեք ձեր կյանքերը և սուրբ լինեք: Ապրե՛ք սրբությամբ, որովհետև Ես Սուրբ եմ: Ես ձեզ տալիս եմ Իմ Խաղաղությունը, որպեսզի դուք Խաղաղության մեջ լինեք և որպեսզի դուք կարողանաք այս Խաղաղությունը տալ ձեր եղբայրներին: Եկե՛ք, ամփոփեք ինքներդ ձեզ աղոթքի մեջ այս տարվա վերջում: Եկե՛ք և սիրեք միմյանց, ինչպես Ես ձեր Տերն եմ սիրում ձեզ: Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 7, 1988

(Պատգամ աղոթախմբի համար):

(Սբ. Մարիամ)

Ի՛մ Վասուլա, Իմ Խաղաղությունը քեզ:

Սիրելի զավակներ, Ես օրհնում եմ ձեզ: Ես ձեր Սուրբ Մայրն եմ, որը ձեզ նման տառապում է այն երաշտի համար, որը տարածվում է: Մի՛ վհատվեք. Ես ձեր կողքին եմ: Ես կքաջալերեմ ձեզ, որ տարածեք Հիսուսի Խաղաղության ու Սիրո Պատգամը:

Տեսե՛ք, Հիսուս բացահայտում է Իր Պատգամը այս թույլ գործիքի միջոցով՝ մի դյուրաբեկ ծաղիկի, որին Նա ձևավորել է: Բայց շատ քահանաներ չեն հավատալու դրան: Թվում է նրանք չեն հասկանում Աստծո Անբավ Հարստությունը: Նրանցից շատերը չեն հավատալու, եթե անգամ տեսնեն, որ մեղավորները հավատում և ապաշխարում են: Այս

[1] Նրանք, ովքեր բանական են դարձում Աստծո այժմեան գործերը (ռացիոնալիստական բացատրություն են տալիս):

մեղավորները այդ քահանաներից առաջ են մտնելու Երկնային Թագավորություն:

Մի՛ վախեցեք, սիրելիներս, ես՝ ձեր Սուրբ Մայրը, տեսնում եմ այն, ինչ տեղի է ունենում: Ես ձեզ միշտ կքաջալերեմ: Ես միշտ ձեզ կմխիթարեմ. հավա՛տ ունեցեք և միշտ ապավինեք Հիսուսին:

Վասո՛ւլա, զավակս, երջանիկ եղիր այնժամ, երբ մարդիկ Հիսուսի համար չարաշահում են քեզ, հալածում ու ամեն տեսակի զրպարտություն են անում քո դեմ: Ցնծա՛ և ուրախ եղիր, որովհետև քո վարձատրությունը մեծ է լինելու Երկնքում: Այսպես էլ նրանք ձեզանից առաջ հալածեցին մարգարեներին, զավակս[1]: Շատ քահանաներ կան, որոնք հավատում են Աստծո այսօրվա նշաններին և հայտնություններին, բայց հալածվելու վախից նրանք թաքցնում են իրենց զգացմունքները: Այդ հոգևորականները պետք է աղոթե՛ն, աղոթե՛ն, աղոթե՛ն՝ արիություն խնդրելով Հիսուսի Սուրբ Սրտից: Հիսուս նրանց քաջություն կտա:

Ես կավարտեմ Իմ Պատգամը, օրհնելով ձեզ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

(Հիսո՞ւս:)

Վասուլա, խմբագրի՛ր Իմ Պատգամը: Ես փափագում եմ այս Պատգամը տալ բոլոր նրանց, ովքեր եկան մեզ մոտ:

Ա՜հ, զավակս, թող նրանք զգան Իմ Սուրբ Սիրտը: Իմ Հինգ Վերքերը լայն բացված են, որպեսզի բոլորը ներս մտնեն ու կիսեն Իմ ցավերը: Սիրելիս, այդ ես եմ՝ Հիսուս, Հիսուս՝ ձեր Փրկիչը, որ Ինքս Ինձ բացահայտում եմ այս թույլ գործիքի միջոցով, որպեսզի ձեզ բոլորիդ և համայն ազգերին տամ <u>Սիրո ու Խաղաղության</u> Իմ Սուրբ Պատգամը: Ես, որ Գերիշխան եմ և ամենքից վեր, խոնարհվում եմ դեպի ձեզ, Իմ փոքրիկ ծաղիկներ, որպեսզի կարողանամ հասնել ձեզ: Իմ Անհուն Սիրուց և Անսահման Ողորմությունից դրդված, ես գալիս եմ առաջարկելու ձեզ Իմ Խաղաղությունն ու Իմ Սերը:

Ես այս աշխարհի Լույսն եմ, և ես եկել եմ շողալու այս մութ աշխարհում, որի մեջ դուք այժմ ապրում եք: Փոքրիկ ծաղիկներ, դուք Իմ Լույսի կարիքն ունեք, ինչպես որևէ ծաղիկ, որն ապրելու համար կարիք ունի լույսի և արևի ճառագայթների: Դուք ևս Իմ Սիրո Ճառագայթների կարիքն ունեք, որպեսզի ապրեք Սիրո համար և սիրո մեջ, որովհետև այդպիսին է Իմ Շնորհի հարստությունը: Ես ձեզ խենթի պես սիրում եմ, արարածներ: Շարունակե՛ք ձեր աղոթքները, ձեր ապաշխարությունը և սիրո ձեր գործերը, որովհետև այդ բոլոր գործերը բալասան են Իմ Վերքերին: Ես սիրում եմ ձեզ, և ձեր հանդեպ ունեցած Իմ այդ սիրո պատճառով ես այնպես եմ անելու, որ այս անապատում, որպիսին դարձել է ձեր դարաշրջանը, նոր սերմեր ծլարձակեն՝ Խաղաղության ու Սիրո սերմեր:

Ես իջնելու եմ մեռելների մեջ, որ կենդանացնեմ նրանց և նրանցից Ինձ հավատարիմ ծառաներ դարձնեմ, որոնք կպատվեն Իմ Սուրբ Անունը

[1] Մատթ. 5.11-12:

և կփառավորեն Ինձ: Փոքրիկ ծաղիկներ, օրերն այնքան մոտ են, այն օրերը, որոնց մասին ես պատմում էի ձեզ՝ Նոր Երկրի և Սիրո Դարաշրջանի մասին, որն իջնելու է վերևից: Այս բոլորը տեղի է ունենալու, որով Սուրբ Գրքերը իրագործվելու են:

Սիրելիներս, Իմ Լուսո զավակներ, միաբան եղեք և միշտ Ինձ մոտիկ եղեք: Ինձ հետ եղեք և աղոթեք ձեր կորած եղբայրների համար: Աղոթե՛ք այն քահանայական հոգիների համար, որոնք վիրավորում են Իմ Սուրբ Սիրտը՝ ուրանալով Իմ Նշանները: Տարածե՛ք Իմ Խաղաղության ու Սիրո Պատգամը, ազդարարե՛ք Այն համայն ազգերին: Փառավորե՛ք Ինձ՝ բաժանելով այս Հունձքը[1], որը պատրաստ է և կսնուցի շատերին:

Իմ և ձեր Սուրբ Մոր Աչքերը ձեզ վրա են հառած: Մենք ձեզ ենք տալիս մեր Խաղաղությունը: Վերցրե՛ք այս խաղաղությունը և կիսեք Այն ուրիշների հետ: Ես օրհնում եմ բոլորիդ:

Հիսո՞ւս:

Դեկտեմբերի 16, 1988

Տե՞ր:

Ես եմ: Ահա այսօրվա հավաքի Իմ Պատգամը:

Ես հետևյալը կխնդրեմ Իմ ծաղիկներից: Ծաղիկնե՛րս, Ես խնդրում եմ բոլորիդ, որ աղոթել սովորեք: Երբ աղոթում եք, սրտանց աղոթեք: Ես կարիք ունեմ աղոթքների, որոնք գալիս են ձեր սրտից և ոչ թե ձեր շուրթերից: Արագ մի՛ աղոթեք: Կենտրոնացեք և դանդաղ աղոթեք՝ նայելով Ինձ: Ես ներկա եմ: Թող ձեր աղոթքներն Ինձ հասնեն:

Սովորե՛ք հարատև աղոթքի մեջ լինել: Սրանով Ես նկատի չունեմ, որ անվերջ ժամեր ծնրադրեք, ո՛չ, պարզապես հիշելով Իմ Ներկայության մասին, դուք հարատև աղոթքի մեջ կլինեք. ձեր մտքերը դեպի Ինձ կբարձրանան: Ամեն ինչ, որ դուք կասեք, կամ կանեք, կամ կխորհեք՝ Ինձ համար կլինի: Ես նվիրումի ու հավատարմության կարիք ունեմ: Սիրե՛ք Ինձ անսահման և փափագեք Ինձ:

Ես ձեր Փրկիչն եմ և Մխիթարիչը, ուստի առանց վարանելու եկեք Ինձ մոտ: Ես բոլորիդ կմխիթարեմ: Ես ձեզ հույս կտամ: Ուստի մի՛ նվազեցրեք ձեր աղոթքներն ու զոհաբերությունները, այլ ավելացրեք դրանք՝ շարունակ աղոթքի մեջ լինելով: Ես՝ Տերս, ավարտում եմ Իմ Պատգամը, 1989 թվականի համար ձեզ տալով մի նշանաբան.

«Սո՛ւրբ ապրեք
և չարին սիրով հատուցեք:
Սիրեցե՛ք միմյանց,
ինչպես Ես եմ ձեզ սիրում»:

Ես Խաղաղություն ու Սեր եմ, և Ես օրհնում եմ բոլորիդ:

[1] Պատգամները

Դեկտեմբերի 17, 1988

(Մեր հավաքից հետո)

Տե՞ր իմ:

Ես եմ:

Ես զարմացած էի, որ այդքան շատերը եկան: Հավանաբար 130 հոգի կլինեին:

Վասո՛ւլա, Ես ասել եմ նախապես, երբ դու լցվես Սուրբ Հոգով, դուք բազմաթիվ կդառնաք:

Տե՛ր, Դու նկատած կլինես, որ բանավեճ ծագեց՝ կապված ծրագրի հետ:

Ինչպե՞ս կարող էի այդ ամենը նկատած չլինել[1]: Վասո՛ւլա, կլինեն հակառակվող ուժեր, բայց Ես թույլ չեմ տա, որ որևէ մեկը քեզ ոտնակոխ անի: Մեկուսացրու ինքդ քեզ և Ինձանից կախյալ մնա: Այսուհետև, այդ ե՛ս եմ, որ կազմակերպելու եմ և տալու եմ Իմ Աղոթաժողովների ծրագիրը: Այդ <u>Ե՛ս</u> եմ, որ ասելու եմ քեզ, թե ինչ խոսես: Ծրագիրը քեզ տրվելու է վերևից: Ես Իմաստությունն եմ և Իմաստությունից ես դու ստանալու Այն:

Գրի՛ր. Նախ՝ դու սրբագործելու ես այն վայրը, որտեղ անցկացնելու ես Իմ Աղոթաժողովը, ինչպես որ արել ես, աղոթելով Սբ. Միքայելին ուղղված աղոթքը:

Սկսի՛ր Իմ Աղոթաժողովը, ասելով այս խոսքերը. «Խաղաղությո՛ւն ձեզ»: Հիշի՛ր, որ ասես Իմ փոքրիկ ծաղիկներին, որ այդ Ես եմ՝ Տերս, որ տալիս եմ նրանց Իմ Խաղաղությունը և որ այդ խոսքերը գալիս են Իմ Շուրթերից: Ապա՝ դուք բոլորդ պիտի կանչեք Սուրբ Հոգուն: Դուք բոլորդ Սբ. Միքայելի աղոթքը պիտի աղոթեք. ձեր դարաշրջանը չափազանց կարիք ունի այս աղոթքին:

Ես միշտ Մատնացույց եմ անելու քեզ Սուրբ Գրքից կարդացվելիք հատվածը: Ինչպես որ այս վերջին աղոթաժողովի ժամանակ Ես մատնանշեցի քեզ կարդալ Հովելի 3:28-32-ը, նույն ձևով ևս Ես ցույց կտամ քեզ այն հատվածը, որը պետք է կարդացվի: Իմ ցանկությունն է, որ դու նրանց համար կարդաս դրանք, ապա ասես, թե ինչու եմ ընտրել այս հատվածը:

Սրանից հետո դու պետք է նրանց համար կարդաս հատվածներ Իմ Խաղաղության ու Սիրո Պատգամից:

Ինչպե՞ս եմ ես իմանալու, թե որ հատվածն եմ կարդալու նրանց համար:

Մի՛ անհանգստացիր, Ես չե՞մ քո Խորհրդատուն ու Առաջնորդը:

Այո՛, Տեր իմ:

[1] Հիսուս բնավ էլ գոհ չէր: Իրականում Նա բարկացած էր որոշ անձանց դեմ:

Պատգամը նրանց մոտ կարդալուց հետո դու կարող ես հարցնել, թե արդյոք հարցեր կան: Սա ազատ խոսակցության ժամանակ է. ես քեզ կներշնչեմ, փոքրիկ:

Այնուհետև Ես ուզում եմ, որ դու կարդաս նրանց վերաբերող Իմ Պատգամը:

Հաճույք պատճառիր Ինձ՝ նրանց հանդեպ սեր ցույց տալով: Ինձ հաճույք պատճառիր՝ աղոթաժողովն ավարտելով Սուրբ Վարդարանով:

Եթե որևէ մեկն ուզենա խոսել ինձ հետ, ես պե՞տք է ընդառաջեմ նրան:

Այո՛, սիրելիս, խոսիր նրանց հետ:

Շնորհակալ եմ, Տեր իմ Հիսուս:

Դեկտեմբերի 20, 1988

Տե՞ր:

Ե՛ս եմ:

Օ՜հ, Աստված:[1]

Վասուլա, փարվի՛ր Իմ Խաչին: Խաչակից եղիր Ինձ: Իմ Խաչը կառաջնորդի քեզ դեպի Իմ Տիրապետությունը: Բնակվի՛ր Իմ Սուրբ Սրտում, սողոսկի՛ր Դրա խորքերը, և դու Խաղաղություն կգտնես:

Զավակս, աղոթի՛ր քո եղբայրների համար, որոնք լքել են Ինձ և հմայված են միայն աշխարհի հարստություններով: Աղոթի՛ր այն կորած հոգիների համար, որոնք վախենում են Իմ Խաչից... Զավակս, աղոթի՛ր Իմ Եկեղեցու համար, որ միաբանվի և մեկ լինի: Ամեն մի քահանա պետք է հասկանա, որ Ես՝ Տերս, փափագում եմ այս Միությունը: Ոչ մի բաժանում Ինձանից չի գալիս, այլ գալիս է Իմ հակառակորդից: Իմ Թագավորությունը պետք է Մեկ և Սուրբ լինի:

Տե՞ր:

Ես եմ:

Տե՛ր, հույն ուղղափառ քահանաներից մի քանիսը, որոնք կարդացել են ինձ տված Քո հայտնությունից մի քանի էջ, չեն համաձայնում միության հարցում, իսկ երբ կարդում են, որ այն Պապի հետ միաբանվելու մասին է, գրգռվում են ու ասում, որ այս հայտնությունը դիվական է:

Հույն ուղղափառ մի տիկին, այս հայտնությունն ընթերցելուց հետո, բարյացակամորեն գնում է Կաթոլիկ եկեղեցի: Երբ նրա խոստովանահայրը լսում է այդ մասին, դատապարտում է այս հայտնությունը, որպես սատանայից տրված հայտնություն, ապա վտարում է նրան եկեղեցուց: Նա

[1] Հիսուսն այնքան ջերմությամբ ու սիրով պատասխանեց՝ «Ես եմ»:

լսել անգամ չէր ուզում միավորվելու մասին: Բայց շատ հույն ուղղափառ աշխարհականներ պատրաստակամ են, որովհետև, երբ կարդում են Քո հայտնությունը՝ հասկանում են և գիտեն, որ Դու միություն ես ցանկանում, մինչդեռ հույն ուղղափառ քահանաները դազազում են:

Կարծում ես այս ամենը ես չգիտե՞մ, զավակս: Իմ խորհուրդները նրանց խորհուրդները չեն, Իմ ուղիները նրանց ուղիները չեն: Նրանք ծանրաբեռնում են Ինձ իրենց մեղքերով և այլևս հստակ չեն տեսնում... Միությունը վերևից է գալու: Հիմա, ինչպես որ կա, դուք ամբողջապես բաժանված եք և չեք ապրում ըստ Իմ Աստվածային Պատկերի: Դուք չեք հնազանդվում Իմ Օրենքին: Ձեր բաժանումը ապականող է և տարածվում է: Ձեր բաժանումը միշտ պիտի մնա, և եթե ես դրան վերջ չդնեմ, այն չի հաղթահարվելու:

Ինչպե՞ս կարող էիք հավատալ, որ կարող եք միաբանվել, <u>եթե ձեր մեջ սեր չկա</u>: Ձեզանից շատերը անդրդվելի են և կարծր են՝ երկաթե ձողերի նման: Բայց ես բոլորիդ կծռեմ: <u>Ես կմիավորեմ ձեզ</u>: Այս ամայի անապատը ես վերածելու եմ մի լճի, իսկ չոր հողը՝ աղբյուրի: Այնուհետև ես ձեզ բոլորիդ կդնեմ այս Նոր Երկրի մեջ, սիրելիներ, և Իմ Թագավորությունը երկրի վրա կլինի այնպես, ինչպես Երկնքում է: Իմ Թագավորությունը պիտի գա: Օ՜հ, ես ինչպես եմ այժմ տենչում այս Նոր Դարաշրջանին: Դուք բոլորդ ապրելու եք կատարյալ միաբանությամբ Իմ Սուրբ Անվան ներքո, և ես, որ Կյանքի Գերագույն Աղբյուրն եմ, պիտի վերածնեմ ձեզ բոլորիդ՝ դարձնելով մի Սուրբ Ժողովուրդ: Իմ Աստվածային Պատկերը հայելու նման արտացոլվելու է Երկնքից ձեզ վրա, և դուք հասկանալու եք, որ ես՝ Սուրբ Սրբոցը, մեկ անգամ ևս վերականգնեցի ձեզ:

Սուրբ Գրքերը իրագործվում են: Իմաստությունը չի սպասելու: Նա մշակելու է Իմ ժողովրդին, ինչպես հողագործն ու սերմնացանը: Նա պիտի մշակի չոր երկիրը՝ վերածելով այն մարգագետինների: Ես առաջ եմ մղելու նրան և նրա դաշտերը վերածելու եմ Խաղաղության ու Սիրո մարգագետինների: Ես այս աշխարհի Լույսն եմ, և ես միշտ կիջնեմ ձեզ վրա, երբ տեսնեմ ձեզ խավարով պատված:

Տե՛ր, որոշ հոգևորականներ կան, որոնք մերժում են լսել կամ հավատալ, որ Դու կարող ես այս ձևով Ինքդ Քեզ հանդես բերել իմ միջոցով: Նրանք ասում են, որ Դու՝ Հիսուս, մեզ տվել ես ողջ Ճշմարտությունը, և իրենց այլևս ուրիշ բան պետք չէ, բացի Սուրբ Աստվածաշնչից: Այլ կերպ ասած, այս ողջ աշխատանքը կեղծ է:

Ես ձեզ բոլորիդ ասել եմ, որ Պաշտպանը՝ Սուրբ Հոգին, որին Հայրն ուղարկելու է Իմ Անունով, սովորեցնելու է ձեզ ամեն բան և <u>հիշեցնելու</u> է ձեզ այն ամենը, ինչ Ես ասել եմ ձեզ: Ես ձեզ որևէ նոր ուսմունք չեմ տալիս: Ես միայն հիշեցնում եմ ձեզ Ճշմարտության մասին և մոլորվածներին առաջնորդում եմ ետ՝ դեպի կատարյալ Ճշմարտությունը:

<u>Ես՝ Տերս, շարունակ արթնացնելու եմ ձեզ հիշեցումներով</u> և Իմ Սուրբ Հոգին՝ Բարեխոսը, միշտ ձեր մեջ է լինելու, որպես <u>Իմ Խոսքի Հիշեցնողը</u>: Ուստի մի՛ զարմացեք, երբ Իմ Սուրբ Հոգին խոսի ձեզ հետ: Այս

հիշեցումները տրվում են Իմ Շնորհի միջոցով՝ ձեզ դարձի բերելու և Իմ Ուղիների մասին ձեզ հիշեցնելու համար:

Ե՛կ, ժպտա՛, երբ դու տեսնում ես Ինձ, ծաղիկ:

Ա՜հ, Տեր: Օրհնյալ լինի Քո Անունը, շնորհակալ եմ Քո ուսուցումների համար:

Իմաստությունը կուսուցանի քեզ, զավակս: Մե՞նք, մե՞զ:

Հավիտյանս հավիտենից:

Դեկտեմբերի 21, 1988

Տե՛ր, թերևս, Դու տխրում ես, երբ որոշ մարդիկ սխալ են հասկանում Քո Սերը Քո Պատգամում և համեմատում են այն զգացական սիրո հետ: Տե՞ր:

(Որոշ մարդկանցից ես մեկ կամ երկու ակնարկություն լսել էի այդ մասին):

Ես եմ:

Իմ Սերը չի գնահատվում կամ հասկացվում այս դարաշրջանում: Դու գիտես, թե ես որքան եմ սիրում Իմ զավակներին[1]: Ես նրանց խենթի պես սիրում եմ: Բայց քո դարաշրջանի մեղքերն այնքան լուրջ ու այնքան մեծ են, որ այն չի ճանաչում այլևս Ինձ՝ ձեր Աստծուն: Արդյոք նրանք մոռացե՞լ են այն փրկագինը, որ Ես վճարել եմ նրանց համար: Ես ստորացվել եմ, չարչարվել ու խոշտանգվել եմ և կամովին կրել ամենացավալի մահը, և այս ամենը՝ սիրուց դրդված: Հապա ինչպես կարող էի Ես Ինքս Ինձ չկրկնել միլիոն անգամ ձեզ ասելով, թե որքան եմ ձեզ սիրում՝ փորձելով ձեզ հասկացնել Դրա խորությունն ու մեծությունը: Ես Ինքս Ինձ կրկնում եմ և պիտի շարունակեմ կրկնել մինչև որ Իմ խոսքերը թափանցեն ձեր սիրտը: Նույնիսկ այժմ Ես պատրաստ եմ առանց Ինքս Ինձ խնայելու կրկնել Իմ Զարչարանքը:

Օ՜, արարչություն: Որքա՜ն շատ տառապանք ես դու պատճառում Ինձ: Քո Հանդեպ Իմ Սերն Անհուն է. ջանա՛ հասկանալ այս Սերը:

Դեկտեմբերի 24, 1988

(Ծնունդի գիշերը)

Հիսո՞ւս:

Ես եմ, սիրելիս:

Այսօր Քո Ծննդյան Նախօրյակն է:
Տե՛ր: Ես այնքան եմ ուրախանում,

[1] Այս ասելիս Հիսուս շրջվեց Ինձ և նայեց դեմքիս:

սիրելիս, Սուրբ Սրբոց:
Թող Փառավորյալ լինի մեր Տերը:
Օ՛, Աստված, տարրալուծիր ինձ
Քո Սրբության մեջ և ցույց տուր,
թե ինչպես սուրբ ապրեմ:
Տե՛ր Հավիտենական,
տարրալուծիր ինձ
Քո Մաքրության մեջ՝
ինձ անարատ դարձնելով:
Սիրելի Տեր, սրբացրո՛ւ մեզ,
Քո զավակներին,
և միացրո՛ւ բոլորիս
մեկ Փարախի մեջ՝
փառավորելով և գովաբանելով
Քեզ մեկ Խորանի շուրջ:
Թույլ տուր, որ Ճշմարտության
Քո Սուրբ Հոգին իջնի բոլորիս վրա
և ցույց տա Ճշմարտությունը:
Թող Քո Լույսը լինի մեր
Առաջնորդն այս խավարում
և առաջնորդի մեզ
Ճշմարտության մեջ՝
համախմբելով մեզ մեկ հովվի ներքո՝
մինչև Քո Վերադարձը: Տե՛ր, Ե՛կ:

Ա՜հ, սիրելի հոգի, ես բոլորիդ հավաքելու եմ մեկ Փարախի մեջ և Իմ Բազուկները լինելու են ձեր Ցանկապատը, իսկ Իմ Սուրբ Սիրտը՝ ձեր Տունը: Սերը վերադառնալու է որպես Սեր: Այո՛, սիրելիներս, աղոթե՛ք Իմ Վերադարձի համար: Ես Սեր եմ: Ես եմ Կյանքի Գերագույն Աղբյուրը, ուստի եկեք դեպի Ինձ՝ ձեր Փրկչի մոտ, եկե՛ք:

Այո՛, Տեր:

Դեկտեմբերի 26, 1988

Հիսո՛ւս: Այսօր միայն ես լիովին հասկացա, որ կարելի է Քեզանից ուղղակի օրհնություններ խնդրել: Ուզում եմ ասել, որ ես կարող եմ Քեզանից խնդրել, որ օրհնես ինձ: Ես կարծում էի, թե կարելի է Քեզանից օրհնություններ խնդրել ուրիշների համար, բայց ոչ ինքներս մեզ համար:

Ես քեզ ասել եմ, որ դու թշվառ ես... Վասո՛ւլա, Ես միլիոն անգամ օրհնել եմ քեզ, մի՞թե չես նկատել: Թեպետ դու երբեք չես խնդրել Ինձանից, բայց Ես օրհնում էի քեզ: Քո անտեղյակությունն Ինձ անվերջ շփոթեցնում է, զավակս, քո անօգնականությունը Ինձ է՛լ ավելի է մղում քեզ մոտ փութալու, և քեզ ձգելու դեպի Իմ Սիրտը: Ես սիրում եմ երեխաներին:

Ինձ ազատ թող, որ մնամ քո Տերը, և Նա, Ով առաջնորդում է քեզ: Ամբողջապես ենթարկվիր Իմ Տիրակալությանը, որովհետև դա անելով է միայն, որ դու ինքդ քեզ լիովին հանձնում ես Իմ Ձեռքերի մեջ՝ այսպիսով կատարելով Իմ Կամքը:

Դեկտեմբերի 27, 1988

Հիսո՞ւս:

Ես եմ:

Ա՜հ, այն, ինչ ես խնդրում եմ քեզանից՝ սեր է: Փառավորի՛ր Ինձ՝ տարածելով Իմ Պատգամը, ցույց տուր Իմ Սերը աղոթաժողովներում: Վասուլա, մի՛ նայիր Իմ ուսից այն կողմ[1] իմանալու համար, թե ինչ է լինելու հետո: Նայի՛ր, թե ներկան ինչ է բերում քեզ:

Տե՛ր, մի՞թե սխալ է ծրագրելը:

Ես ասել եմ, որ չանհանգստանաս վաղվա համար: Մի՛ անհանգստացիր, վստահիր Ինձ: Երանի թե հասկանայիր, որ եթե Ինձ շնչելու տեղ թողնեիր քո մեջ՝ Ես Ինձ ազատ կզգայի Իմ Գործն անելու համար: Երանի մի օր ամբողջությամբ հասկանայիր, որ այն բոլորը ինչ դու ունես, գալիս է Ինձանից, և դա Իմ Աշխատանքն է և ոչ թե՝ քոնը: Առանց Ինձ դու անկարող ես անգամ թարթելու քո աչքերը, ուստի քեզ Ի՛նձ հանձնիր: Թող քո անհատական ըմբռնումը չխաբի քեզ: Ես սիրում եմ քեզ և չեմ թողնի, որ ընկնես:

Փափագի՛ր Ինձ և ուրիշ ոչինչ: Ընդունի՛ր այն, ինչ ունես, և այն, ինչ Ես եմ տալիս քեզ: Մի՛ լսիր մարդկանց բամբասանքներին: Ապավինի՛ր Ինձ, որովհետև սա Իմ Գործն է: Անհատական մոտեցումը քեզ միշտ սխալ տեղ է առաջնորդելու: Թող որ դեպքերը կատարվեն այնպես, ինչպես որ ինքնըստինքյան կատարվում են: Սա է Իմ գործելակերպը: Մի «հրի՛ր» իրադարձությունները: Դրանք «հրելով», դու նաև Ինձ ես հրում հեռու, ուստի մնա ոչինչ: Թույլ տուր, որ ամեն ինչ Ինձանից գա:

Տե՛ր, ինչպես կարող եմ իմանալ «ներշնչանքի» և «անհատական ըմբռնման» տարբերությունը: Դժվար է:

Սիրելի՛ս, Ես քեզ հետևյալը կասեմ. ամեն մի քայլ անելուց առաջ՝ նախ եկ Ինձ մոտ: Ե՛կ և խորհրդակցիր Ինձ հետ: Աղոթի՛ր Խորհրդի ու Խորհրդատվության Սուրբ Հոգուն: Ես նկատի ունեմ քո ամեն մի քայլը, ամեն ինչ, որ դու ուզում ես ձեռնարկել: Նախ Ինձ մոտ եկ, Ես քեզ կառաջնորդեմ: Երբեք ինքնուրույն մի՛ ծրագրիր:

Վասուլա, աղոթի՛ր զատորոշման համար: Մի՛ շտապիր: Ես Իմ Ծրագիրը կազմել եմ քո ծննդից շատ առաջ: Աղջի՛կս, Ես հանձնարարել եմ քեզ ազդարարել և փոխանցել աշխարհին Իմ Պատգամը, բայց լա՛վ հիշիր, Ես

[1] Հիսուս նկատի ուներ իմ մտահոգությունը հաջորդ ժողովի համար:

չեմ ասում, որ դու նրանց համոզես. ով ականջ ունի, թող լսի: Ուստի հիշի՛ր, Իմ բոլոր հրահանգները, ծաղիկս:

Մե՞նք, մե՞զ:

ΙΧΘΥΣ

Այո՛, Տեր իմ:

Դեկտեմբերի 28, 1988

(Սա աղոթախմբի համար տրված պատգամ է)

Ես Տերն եմ:

Իմ Ծաղիկներ, խաղաղության մեջ եղեք, որովհետև Ես՝ ձեր Տերը, Խաղաղություն եմ: Իմ սիրելի արարածներ, որքա՜ն եմ Ես ձեզ սիրում: Դուք թանկագին եք Ինձ համար: Դո՛ւք, որոնց Ես ծաղիկներ անվանեցի, աճե՛ք, աճեք Իմ Աստվածային Լույսի մեջ: Աղոթե՛ք ձեր եղբայրների համար, ովքեր դեռևս չեն տեսել Իմ Լույսը: Աղոթե՛ք նրանց դարձի համար:

Ծաղիկնե՛րս, Ես մտադիր եմ ուռոգել ձեզ: Այո՛, Իմ վտակը մեծանալով վերածվելու է գետի, իսկ Իմ գետը մեծանալով վերածվելու է Խաղաղության ու Սիրո օվկիանոսի: Ես ասել եմ, որ[1] Իմ Լույսը կուղարկեմ ամենուր և «կհեղեմ ուսմունք, ինչպես մարգարեություն, որպես ժառանգություն բոլոր գալիք սերունդներին»: Ես եմ ձեր Մխիթարիչը, և Նա, ով ձեզ ամենից շատն է սիրում:

Ծաղիկնե՛ր, Ես գիտեմ, որ դուք ապրում եք խավարի ժամանակաշրջանում, որը բերում է միայն տառապանքներ, աղետներ և անբերրիություն: Ասված է, որ այդ ժամանակներում շատերը կորցնելու են Աստվածայինի զգացումը և ապրելու են իրենց ցանկացած ձևով ու չեն կարողանալու չարը բարուց տարբերել:

Ծաղիկնե՛րս, երբ հոգին ինքն իրեն նյութապաշտությամբ է լցնում և կառչում է այն ամենին, ինչ աշխարհն է առաջարկում, ապա նա ինքն իրեն թույլ է տալիս լցվել խավարով՝ տեղ չթողնելով Սրբության համար, ոչ մի տարածություն, որպեսզի Իմ Հոգին աճի նրանում, ոչ մի տեղ՝ Ճշմարտության համար, և ոչ մի տեղ՝ Իմ Լույսի համար: Նա ապրում է խավարի մեջ: Այդ պատճառով էլ երիտասարդ այս սերնդի մեծամասնության մեջ պակասում է հոգեկանությունը, և նա մերժում է լսել Իմ Խոսքը ու Ինձ ճանաչել որպես Աստված: Նրանք հետամուտ են նվաստացուցիչ կրքերի, քանի որ հրաժարվել են Աստվածային Ճշմարտությունից և նյութականի հետևից են ընկնում:

Ես գիտեմ, ծաղիկներս, թե ձեզանից քանիսն են տառապում տեսնելով ձեր յուրայիններից որևէ մեկին քայլելիս այդ խավարում՝ մնալով մշտական քնի մեջ: Բայց Ես ասում եմ ձեզ, որ Ես՝ Տերս, նրանց դռան առաջ եմ կանգնած: Ես միշտ այնտեղ եմ լինելու՝ բախելով դուռը, մինչև

[1] Սիրաքի 24:46

որ նրանք Ինձ լսեն: Ես երբեք չեմ հոգնի բախելուց, և երբեք չեմ լքի նրանց: Ես բոլորիդ սիրում եմ հավիտենական սիրով, մի սեր, որը չի հասկացվել:

Եկե՛ք Ինձ մոտ ձեր բոլոր խնդիրներով՝ դրանք Ինձ հանձնեք և հանգստացեք: Եկե՛ք ու հենվեք Ինձ վրա. Ես ձեր Մխիթարիչն եմ, և Ես մխիթարելու եմ ձեզ՝ տալով ձեզ Իմ խաղաղությունը: Եկե՛ք ձեր Քնքուշ Փրկչի մոտ և Ես կբժշկեմ ձեր վերքերը: Երբեք մի՛ հոգնեք Ինձ կանչելուց և Ինձ աղոթելուց: Ես միշտ ձեզ հետ եմ: Ես սիրում եմ ձեզ և օրհնում եմ ձեզնից յուրաքանչյուրին: Ես օրհնում եմ ձեր ողջ ընտանիքը:

(Ավելի ուշ, մեր Սուրբ Մայրը)

Զավակներս, մոտեցե՛ք Հիսուսին: Նա Իր խաչից կանչում է բոլորիդ: Գոհացրե՛ք Հիսուսին <u>միմյանց սիրելով այնքան, որքան Նա է սիրում ձեզ</u>, որովհետև ողջ Օրենքը ամփոփված է մի պատվիրանի մեջ. «Սիրի՛ր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ կսիրես»[1]:

Խաղաղություն ու Սեր գտեք Նրա Սրտում: Վերցրե՛ք Նրա խաղաղությունն ու Սերը և տարածե՛ք այն ձեր մեջ: Հագեցրե՛ք ողջ աշխարհը Նրա Աստվածային Սիրով, լցրե՛ք ձեր հոգիները այն ուրախությամբ, որն Իմ Որդին է առաջարկում ձեզ:

Փոքրիկներս, աղոթե՛ք, աղոթե՛ք և զրուցեք Աստծո հետ, անվերջ կապի մեջ եղեք ձեր Երկնավոր Հոր հետ: Աղոթե՛ք ջերմեռանդությամբ. թող ձեր աղոթքները հասնեն Նրան: Աղոթե՛ք սիրով. թող Նա զգա ձեր աղոթքները:

Օ՜, զավակներս, որքան եմ Ես ձեզ սիրում: Ես միշտ ձեզ հետ եմ: Այժմ Ես այստեղ եմ՝ ձեզ հետ, և Ես ձեզ հետ եմ լինելու, երբ դուք դուրս գաք այս վայրից, և Ես ձեզ հետ եմ լինելու, երբ մտնեք ձեր տները: <u>Մենք միշտ Ներկա ենք</u> և հավիտյանս Ներկա ենք լինելու:

Ես բոլորիդ օրհնում եմ Հոր, Որդու և Սուրբ Հոգու Անունով:

Մենք: Մեզ:

(Տերն ասաց ինձ, որ աղոթաժողովին կարդամ Գաղատացիս 5 և 6-ը, որը ես անելու եմ):

[1] Գաղ. 5:14-15:

1989

Հունվարի 10, 1989

(Պատգամ աղոթախմբին)

Տե՛ր:

Ես եմ:

Այն, ինչ Ես խնդրում եմ ձեզանից, դա սրբությամբ աղոթելն է, անդադա՛ր աղոթելը, սրտա՛նց աղոթելը: Բարի՛ եղեք միմյանց հանդեպ: Եղե՛ք Իմ Արտացոլումը՝ Իմ Աստվածային Պատկերը: Եղեք ինչպես հայելիներ՝ արտացոլելով Իմ Սրբությունն ու Մաքրությունը: Թող որ աշխարհը ձեզանով տեսնի, որ դուք Իմն եք, որ դուք Սիրո զավակներն եք, որովհետև, որտեղ Տիրոջ Հոգին է՝ այնտեղ Սրբություն ու Սեր է, Լույս է, պայծառություն է. ուստի սիրեցե՛ք միմյանց: Սիրեցե՛ք ձեր թշնամիներին: Կատարյալ եղեք այնպես, ինչպես ձեր Հայրն է Երկնքում Կատարյալ:

Օրհնյալ եք դուք բոլորդ: Օրհնյալ են նորեկները: Ես ձեզ ճշմարիտ եմ ասում սա. Ես եմ Հավիտենական Կյանքի Դուռը: Նա, ով հավատում է Ինձ, եթե անգամ մեռած է, այնուամենայնիվ ապրելու է: Ե՛ս եմ Հարությունը: Վերցրե՛ք Իմ Խաղաղությունը: Ես առաջարկում եմ ձեզ Իմ Խաղաղությունը. վերցրե՛ք Այն և տարածեք աշխարհով մեկ: Եղե՛ք Իմ զավակները, թող որ ամեն մի հոգի ճանաչի Ինձ ձեր մեջ:

(Ճիշտ այն պահին, երբ Տերն ուզում էր, որ Ես հրապարակայնորեն ներկայացնեի Իր Պատգամը, ինչ-որ մեկը եկավ և ինձ առաջարկեց Ֆաթիմայի մեր Տիրուհու մի գեղեցիկ արձան (70 սմ բարձրությամբ): Ես գիտեի, որ մեր Տիրուհին այդտեղ ժամանեց ճիշտ ժամանակին, որպեսզի ինձ ընկերակցեր իմ բոլոր հրապարակային ժողովներում:

Լոգանից դուրս կազմակերպված ժողովներից մեկի ժամանակ ինձ ասվեց, որ հետս չտանեի Ֆաթիմայի մեր Տիրուհու արձանը, որովհետև ամեն ինչ կարգադրված էր: Այդ նույն գիշեր, երազումս ես տեսա Ֆաթիմայի մեր Տիրուհուն, որպես մի արձան, որն ինձ էր նայում: Ես խնդրեցի Նրան, որ ինձ մի նշան տար, որպեսզի իմանայի, թե արդյոք հակացել էի, որ Նա եկել էր ընկերակցելու ինձ իմ հանդիպումների ժամանակ: Եվ հենց որ ես ասացի այս խոսքերը, Մեր Տիրուհին բացեց Իր թևերը և ամուր գրկեց ինձ և այդպես մնաց: Ես արթնացա և այդ նույն առավոտյան Ֆաթիմայի մեր Տիրուհին գրեց. «Խնդրում եմ, Ինձ մի թող այստեղ, վերցրո՛ Ինձ քեզ հետ»):

Վասուլա՛, Իմ Խաղաղությունը քեզ: Կարդա՛ այն նշանները, որոնք Տերն է տալիս քեզ. նկատի՛ր դրանք և հետևիր դրանց:

Խնդրում եմ, օգնի՛ր, որ նկատեմ դրանք:

Ես օգնում եմ քեզ:

Շնորհակա՛լ եմ, Սո՛ւրբ Մայր:

(Երեկ ես իմացա մի քահանայի կարծիքի մասին, որն ասել էր իմ մասին. «Հեռու մնացեք նրանից, նա խաբեբա է»: Ինչ-որ տեղ այս դիտողությունը գոհացրեց ինձ, որովհետև ես մեղադրվում էի որպես մի ինքնակոչ, ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն էր մեղադրվում Փարիսեցիների կողմից, որպես մի կեղծ մարգարե: Սա ինձ հիշեցրեց այն պատգամի մասին, որ Հիսուս տվել էր ինձ: Շատ անգամ, Հիսուսն ինձ ասել էր, որ Ես մեղադրվելու եմ, հալածվելու եմ, մանրազննին քննվելու եմ. հետևաբար դա միայն ապացուցեց Նրա խոսքերը: Ես ուրախ եմ, որովհետև մեղադրվում և հալածանքի եմ ենթարկվում Նրա համար):

Զավակս, աղոթի՛ր նրանց համար, ովքեր մեղադրում են Ինձ և դատապարտում են քեզ: Աղոթի՛ր, որ նրանք բացեն իրենց սրտերը: Աղոթի՛ր բոլոր այն հոգիների համար, ովքեր չեն ճանաչում Տիրոջ Գթառատ Նշանները:

Մոտ մնա Ինձ: Մե՞նք, մե՞ղ:

Այո՛, մենք, մեղ:

Հունվարի 13, 1989

Հիսո՞ւս: Հիմա էլ մի քահանա ասում է, որ Քո գործերը՝ ակնարկելով գրությունները, որոնք Դու տալիս ես ինձ, ոգեկանչություն են: Խնդրում եմ, օգնիր ինձ:

Վասո՛ւլա, Ես կօգնեմ քեզ: Փառք Աստծո քեզ չարից ազատելու համար: Թող բոլոր նրանք, ովքեր կասկածում և մեղադրում են քեզ ամեն տեսակ զրպարտություններով, հիշեն Սուրբ Գրքի Իմ խոսքերը. «Բարի ծառը բարի պտուղ է տալիս»: Խաղաղությո՛ւն, Իմ Վասուլա: Ցնծա՛, երբ մարդիկ վիրավորում են քեզ ու հալածում, որովհետև քո վարձքը մեծ է լինելու Երկնքում:

Սիրելի՛ս, նրանք, ովքեր պնդում են, որ այս Գործերը Ինձանից՝ Տիրոջից չեն, այլ ոգեկանչություն կամ աղանդ են, Ես նրանց հետևյալ հարցն եմ տալիս. «Կարո՞ղ է Սատանան բաժանում ստեղծել ինքն իր դեմ: Եթե նա բաժանված է ինքն իր դեմ, ապա ինչպես կարող է նրա թագավորությունը կանգուն մնալ»: Իմ շնորհը քեզ վրա է, զավակս, բայց նրանք չեն հասկացել:

Տե՛ր, նրանք, ովքեր մեղադրում և դատում են ինձ առանց պատգամները կարդալու կամ Ինձ հանդիպելու, չեն ուզում հավատալ նաև այն բանին, որ շատերը Քո Պատգամի միջոցով դարձի են եկել: Նրանք ինձ <u>չեն</u> հավատում:

Որովհետև նրանք ականջներ ունեն, բայց չեն լսում: Վասուլա՛, ժամանակների սկզբից ի վեր Ես միշտ մարգարեներ եմ ուղարկել, բայց շատերը սպանվել և հալածվել են: Մարդիկ չեն փոխվել:

Ես՝ Տերս, հետևյալն եմ ասում. եթե ինչ-որ մեկը Ինձ բացեիբաց վկայի մարդկանց առջև, Ես Ինքս էլ վկայելու եմ նրան Աստծո հրեշտակների առջև: Իսկ, եթե մեկը ուրանա Ինձ մարդկանց առջև, Ես ևս ուրանալու եմ նրան Իմ հրեշտակների առջև: Յուրաքանչյուր ոք, որ Ինձ հետ չէ՝ Իմ դեմ է, և նա, ով Ինձ հետ չի հավաքում՝ ցրում է:

Ես հայտարարում եմ բոլոր սերունդներին, որ Իմ Գործերը երբեք չեն ավարտվելու: Իմ Հոգին արդարև ձեր մեջ է: Ես ձեզ բոլորիդ սիրում եմ հավիտենական սիրով և այս սիրո պատճառով Իմ Սուրբ Սիրտը թույլ չի տա, որ դուք ընկնեք: Ճանաչե՛ք Իմ Գործերը: Զանազանե՛ք հոգիները: Սուրբ Գիրքն ասում է. «Իսկ նա, ով մարգարեանում է, մարդկանց հետ է խոսում ի շինություն, ի մխիթարություն և ի սփոփանք[1]»:

Իմ Սուրբ Սիրտը, որն այնքա՜ն չհասկացված է, Սիրո և Ողորմության մի վիհ է: Ձեր դարաշրջանը մեռած է, բայց Ես, որ Հարությունն եմ, պիտի վերակենդանացնեմ այն: Աղոթի՛ր այն քահանաների համար, որոնք ականջներ ունեն, բայց մերժում են լսել: Նրանց հանդեպ Իմ Սերը Մեծ է, սակայն նույնքան մեծ է նաև Ինձ հասցրած նրանց տառապանքներն ու վշտերը: Կիսի՛ր Իմ Խաչը, զավակս, պայքարը դեռևս չի ավարտվել:

Ես՝ Տերս, ձեզ հետ եմ մինչև վերջ: Մե՞նք:

Այո՛, Տեր:

Մե՞զ:

Այո՛, Տե՛ր Իմ: Հավիտյանս հավիտենից, ամեն:

(Հունվարի 16-ին ես հրավիրված էի Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին՝ հանդիպելու Արքեպիսկոպոս Դամասցինոսին: Նա ուզում էր լսել և ուսումնասիրել Պատգամը: Հիսուսն ուղարկեց ինձ իսկ և իսկ Տիեզերական Եկեղեցու Տոնակատարության շաբաթվա օրերին: Դա մի նշան էր: Տոնակատարությունը տեղի էր ունենալու Հունվարի 18-ին, որը նաև Սբ. Պետրոսի Աթոռի Տոնի օրն էր, ինչպես նաև իմ ծննդյան օրը:

Ես տակավին հիշում եմ, թե ինչպես 1987թ. մայիսի 20-ին, երբ դեռ ոչ մի քահանա ինձ չէր աջակցում, իսկ նրանք, ովքեր գիտեին և աջակից էին, մի քանի ընկերներ էին միայն, Եկեղեցու և նրա ապագա միավորման մասին Հիսուսի պատգամի թելադրանքից հետո, ես սրտնեղեցի և հարցրի նրան, թե ինչպես է այս Պատգամը հասնելու ճիշտ ականջներին, որովհետև ես դրսեցի եմ և ապրում եմ Ասիայում (պետք է ընդունեմ, որ այդ ժամանակ ես գաղափար չունեի Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի մասին), Հիսուս պարզապես ասաց. «Այն կհասնի»: Ես հասկացա, որ «այն կհասնի»-ն կատարվեց ճիշտ հունվարի 16-ին: Բայց թե նրանք կմերժեն Պատգամը թե ոչ, դա արդեն ուրիշ պատմություն է:)

[1] Ա. Կոր. 14:3-4:

Հունվարի 17, 1989

(Ես զգում եմ, որ դեպի ետ եմ գնում, ուստի աղոթեցի Հիսուսին, որ ինձ բարձրացներ և հիշեցներ Իր սովորեցրած խոկումների մասին, որպեսզի ես զատորոշեմ Նրան ու լսեմ Նրա Ձայնը):

Հիսո՞ւս:

Ե՛ս եմ:

Ծաղի՛կս, Ես քեզ կհիշեցնեմ, թե ինչպես խոկաս և ինչպես Ինձ լսես: Ես, որ Խոսքն եմ, ներշնչելու եմ քեզ և սովորեցնելու եմ Իմաստությամբ: Բացվի՛ր, բացվիր և թույլ տուր որ Իմ Հոգին լցնի քեզ: Այո՛, խոկա, ուրիշ ինչպե՞ս կարող ես հասնել Ինձ: Քո Հոգին դեպի Ինձ բարձրացրու՝ լռությամբ ու հավատով: Առաջարկիր Ինձ՝ քո Հորը, քո կամքը, և Ես, որ գիտեմ քո կարիքները, կառաջնորդեմ և կսնեմ քեզ: Ուստի աշխատի՛ր, փոքրիկս, ավելի տքնաջա՛ն աշխատիր:

Փորձում եմ, Տե՛ր:

Գոհացրո՛ւ Ինձ, հետս զրուցելով: Աղոթի՛ր Ինձ: Աղոթի՛ր, աղոթի՛ր, այն ինչ որ ես խնդրում եմ՝ աղոթքներ են:

Տե՛ր, Քեզ հետ գրելը դա նույնպես աղոթքի մի ձև՞ է:

Այո՛, որովհետև դու զրույցի մեջ ես Ինձ՝ քո Ամենակարող Աստծո հետ: Ես գոհ եմ, երբ Ես քեզ հետ եմ, որովհետև ուրիշ ի՞նչ ավելի մեծ բան կա, քան Ինձ՝ Քո Աստծո հետ անվերջ կապի մեջ լինելը: Ես այժմ միացած եմ քեզ: Ես և դու, դու և Ես՝ միասին սիրով միացած:

Ա՜հ, Վասո՛ւլա, խաղաղություն, զավակս: Ինչպե՞ս կաքոդ էիր պատկերացնել, որ դու ինքդ կարող էիր գրած լինել այս բոլոր Պատգամները: Ես, արդարև, մի որոշ ժամանակ քեզանից թաքցրել էի Իմ Դեմքը, որպեսզի քեզ զգալ և հասկացնել տայի, որ դու Գիտության մեկ խոսք անգամ անկարող ես գրել առանց Ինձ: Ե՛ս եմ Հայտնությունը, որ խոսում է, որ առաջարկում է, որ ուսուցանում է, որ հայտնում է, հարություն է տալիս և որ կերակրում է անաստվածներին:

Իմ Վասուլա, դու ուրա՞խ ես Ինձ հետ: Ուրա՞խ ես իմանալով, թե ում ես պատկանում: Ես Աստված եմ՝ Կենդանի Աստված, քո Արարիչը: Ես Սեր եմ: Ես քո Հայրն եմ, որ խոսում է քեզ հետ այժմ: Ես Ամենասուրբ Երրորդությունն եմ: Ինքդ քեզ Ինձ ընծայիր:

Թեև դու բացարձակապես ոչինչ ես, Ես հետապնդել եմ քեզ՝ ինչպես սիրահարն է հետևում իր սիրած աղջկան: Ես համոզեցի քեզ, որ սիրես Ինձ և կիսես Իմ Գործերը: Փոքրի՛կս, Ինձ քիչ է հետաքրքրում այն, որ քեզանում ինչ-որ մի բան պակասում է: Ես Ինքնաբավ եմ, բայց Ես հրճվում եմ, որ քեզ ունեմ Իմ Լույսի մեջ: Ես հրճվում եմ, որ քեզ ունեմ Իմ Սրահում: Ես հրճվում եմ, որ սնում եմ քեզ և ծաղկեցնում: Զավա՛կս,

դու հասկանո՞ւմ ես: Ինձ մի տխրեցրու[1]: Աբբաները միշտ մոտ են իրենց զավակներին: Ինձ հետ միշտ մտերիմ եղիր, այդուհանդերձ, երբեք մի՛ մոռացիր Իմ Սրբությունը: Ես սիրում եմ քեզ և ուզում եմ, որ սիրես Ինձ սրբությամբ:

Հարգի՛ր Իմ Օրենքը: Հարգելով Այն, դու կհարգես Ինձ: Սիրի՛ր Իմ Օրենքը, որովհետև Այն սիրելով, դու նաև Ինձ ես սիրում: Հետևի՛ր Իմ Օրենքին: Հետևելով Դրան, դու Ինձ կհետևես: Իմ Օրենքը քեզ կառաջնորդի դեպի Ինձ Իմ Տան մեջ, որը նաև քո Տունն է:

Հավատա՛ Ինձ, որովհետև Իմ Զորությունը Մեծ է: Մե՞նք, մե՞զ:

Հավիտյանս, Տեր:

Գովերգի՛ր Ինձ:

Տե՛ր, ինձ համար Սուրբ Գրքում Գովաբանության մի գլուխ գտիր, որ կարդամ Քեզ համար:

Կգտնեմ: Բաց արա Սուրբ Աստվածաշունչը:

(Ես բացեցի, դա Դանիելի Գիրքն էր՝ Գլուխ 3-րդ, 52-90-ը: Ես կարդացի Տիրոջ համար այդ համարները: Դա գոհացրեց Նրան):

(Պատգամ աղոթախմբի համար: Գրված փետրվարի 17-ի համար):

Խաղաղություն ձեզ: Իմ Խոսքը Լույս է, Իմ Խոսքը Խաղաղություն և Սեր է, Իմ Խոսքը Միություն և Հույս է: Եկեք Ինձ մոտ և ավելի հաճախ կարդացեք Իմ Խոսքը:

Սիրելինե՛րս, այդ Ես եմ, Հիսուս, Ողորմածը, ձեր Փրկիչ Հիսուս, որ իջնում եմ այս թույլ գործիքի միջոցով՝ նրա վրա Իմ Խոսքերը փորագրելու համար: Իմ Անսահման Սիրուց ու Իմ Շռայլ Ողորմածությունից դրդված, Ես իջնում եմ այս խավարի մեջ, Ես իջնում եմ այս անապատի ու չորության մեջ, որպեսզի հեղեմ Իմ Հոգին ձեզ վրա Արարչություն: Ես իջնում եմ, որ առավոտյան ցողի նման ձեզ վրա հեղեմ Իմ Օրհնությունները, Ես գալիս եմ, որ ցրեմ այս ամբողջ չարությունն ու արմատախիլ անեմ անօրինությունը, փոխարինելով դրանք Խաղաղությամբ ու Սիրով: Այսօր Իմ Շուրթերը չորացել են սիրո ծարավից, Ես ձեր սիրո կարիքն ունեմ, Ես ծարավի եմ սիրո, Ես ծարավի եմ սիրո... Ինչպե՜ս է Իմ Սուրբ Սիրտը ցանկանում, որ դուք սովորեք սիրել ինձ: Ինչպե՜ս եմ Ես ուզում, որ մի օր դուք հասնեք սիրո դաստիճանակետին և լսեմ, թե ինչպես եք կանչում «Աբբա»: Այդ ժամանակ... միայն այդ ժամանակ Իմ Վերքերը կսկսեն լավանալ...

Ինչպե՜ս Ես ուզում, որ Իմ քահանաները վերցնեն Իմ Անսահման Սիրուց և լցնեն իրենց սրտերը: Իմ Սերը հանդեպ նրանց Մեծ է, այնքան Մեծ, որ մինչև նրանք Երկնքում չլինեն, չեն կարողանա հասկանալ դրա

[1] Այսպիսի մոտիկության ու մտերմության պատճառով, մի կարճ պահ, ես հանկարծակի կասկածներ ունեցա իմ մեջ, մտածելով, թե արդյոք Աստվա՞ծ է խոսում ինձ հետ: Սա ցավ էր պատճառել Նրան:

ամբողջությունը: Բարեպաշտությունը պետք է լինի նրանց դրոշը, Հավատարմությունը՝ նրանց Կերոնը, Մաքրությունը՝ նրանց Տոնական Հագուստը, և Սերը՝ նրանց Խորհրդանիշը, որպեսզի Իմ գառները նրանց մեջ կարողանան ճանաչել Ինձ և հստակորեն տեսնել Իմ Պատկերը: Ես ուզում եմ, որ Իմ հովիվները մաքուր լինեն, որպեսզի իրենց մաքրության մեջ իրենց պտուղը անապակ ու կատարյալ լինի:

Ուրախացրե՛ք Իմ Սուրբ Սիրտը և ամբողջովին հետևեք Իմ Պատվիրաններին: Սիրել՝ նշանակում է հետևել Իմ Պատվիրաններին: Սիրեցեք մեկդ մյուսին: Օ՜, Իմ Լույսի զավակներ, ապրեք Իմ Խոսքերը, ապրեք Իմ Խոսքերը... Ընդունեք Իմ Խաղաղությունը, և թող այն ձեր մեջ լինի, ընդունեք Իմ Սերը, և թող այն լցնի ձեզ: Ես ամբողջությամբ կնորացնեմ ձեզ, եթե դուք բաց լինեք Իմ հանդեպ, վստահեք Ինձ, եկեք դեպի Ինձ, և Ես ձեզ մի նոր ազգ կդարձնեմ, մի անաղարտ ազգ: Ապրե՛ք Իմ Պատգամները, Խորհրդածեք Իմ Պատգամի վրա:

Եկե՛ք դեպի Ինձ սիրով, հետևե՛ք Իմ Ոտնահետքերին, որոնք ձեզ կառաջնորդեն Ինձ մոտ, Իմ Տունը, որը նաև ձեր Տունն է: Մի՛ եղեք անվստահ, անգամ ձեր անկատարության մեջ, Ես կբացեմ Իմ Գիրկը ձեզ համար, անգամ եթե ձեր սերը դաղջ լինի.ընկե՛ք Իմ Գիրկը, և Ես, որ Սիրո Ուսուցիչն եմ, կսովորեցնեմ ձեզ սիրել Ինձ և սիրել մեկդ մյուսին:

Եկե՛ք Ինձ մոտ, անգամ նրանք, ովքեր չեն սիրում Ինձ, Ես ներել եմ ձեզ, եկե՛ք, և Ես կբժշկեմ ձեզ: Օրհնյալ եք դուք բոլորդ, ովքեր հավատում եք առանց տեսնելու: Օրհնյալ են Իմ փոքրիկ հոգիները, քանզի նրանք նախասիրված են Իմ կողմից: Մնացեք փոքր ու պարզ, երբեք մի՛ փորձեք որևէ բան լինել, մնացեք փոքր, որ կարողանաք սողոսկել Իմ Սուրբ Սրտի խորքերը: Եղեք մանուկների նման, մանկական Հավատով, քանզի դա է, որ դուր է գալիս Իմ Հորը:

Երբեք մի՛ դադարեք աղոթելուց: Գոհացրեք Ինձ և աղոթեք սրտով: Ես ուզում եմ, որ դուք աղոթեք միասնության համար, Իմ Մարմնի Միասնության: Ես ուզում եմ, որ աղոթեք Պապի ու Պատրիարքի համար: Ես ուզում եմ, որ աղոթեք բոլոր քահանաների համար: Աղոթեք, որ այն ոչխարները, որոնք Պետրոսի առաջնորդության ներքո չեն, վերադառնան Պետրոսի մոտ և հաշտվեն: Աղոթեք, որ լինի մեկ Հոտ, մեկ հովվի ներքո: Աղոթեք խաղաղության և Միասնության համար, աղոթեք, որ ավելի մեծ սեր լինի ձեր միջև: Աղոթեք, որ կարողանաք փառաբանել Ինձ մեկ խորանի շուրջ: Միավորվեք, սիրելիներս, և մեկ եղեք, ինչպես Հայրը և Ես Մեկ ենք և միևնույնը:

Ես օրհնում եմ բոլորիդ:

Հունվարի 22, 1989

Տե՛ր:

Ես քեզ հետ եմ, զավակս: Հետևի՛ր այն օրնակին, որ տալիս եմ քեզ: Աղոթի՛ր, որպեսզի խորաթափանցության ու ճշմարտության Հոգին միշտ քեզ վրա իջնի: Ամուր եղիր, երբ նույնիսկ հալածում են քեզ: Ձեռք

մեկնի՛ր Ինձ և քո Սուրբ Մորը: Վասո՛ւլա, կառչի՛ր այն ամենին, որ Ես տվել եմ քեզ:

Դու Իմ առաջին մարգարեն չես, որին Իմ յուրայինները դատապարտում են և անարդար են վերաբերվում, ո՛չ, դու առաջինը չես: Իմ լավագույն բարեկամները Ինձ ամենախոր վերքերը պատճառեցին: Նրանք չեն հասկացել, նրանք չգիտեն, թե ինչ են անում: Նրանց սրտերն անհանգիստ են, անհանգիստ են այն փաստից, որ Ես քեզ եմ ընտրել, զավա՛կս: Անհանգիստ, որ Ես կարող եմ առնչվել մի Խեղճության հետ ու անդամ սիրել նրան: Նրանք Իմ Սիրտը չեն հասկացել, որը Ողորմության մի Վիհ է:

Նրանցից շատերը ոխակալ են: Երբ նրանք իրենց ամենօրյա աղոթքն են ասում Հորը, արդյոք նրանք մաքուր խղճո՞վ են ներկայանում Նրան՝ խնդրելով Հորը, որ ների իրենց, ինչպես իրենք են ներում ուրիշներին: Նրանք ինչպե՞ս կարող են խնդրել Հորը, որ ների իրենց, եթե նրանք մինչև այսօր չեն ներել քեզ: Նրանք չեն վարանում դատել քեզ: Նրանք աղաղակում են խաղաղության համար, բայց խաղաղություն գոյություն չունի: Նրանցից ոչ մեկը չի զղջում իր չարության համար: Ո՞ւր է ձեր խաղաղության եռանդը: Ո՞ւր է ձեր միաբանության փափագը: Եթե դուք այսօր բաժանված եք, ապա դա ձեր չարության, ձեր չներող հոգու պատճառով է:

Ո՞ւր է սերը: Արարչությո՛ւն, արդյոք ձեր մեջ սեր մնացե՞լ է ընդհանրապես: Մի՞թե որևէ իմաստություն չի մնացել ձեր մեջ: Ես՝ Տերս, ասել եմ, որ ձեզանից ամենանվաստին անդամ շնորհներ եմ տալու և՛ անծանոթ լեզուներով խոսող մարդկանց միջոցով, և՛ օտարների շուրթերով, Ես պիտի խոսեմ ազգերի հետ, բայց, այդուհանդերձ, նրանք Ինձ չեն լսելու:

Իմ Վասուլա, մի՛ մտահոգվիր, հալածանքներ միշտ լինելու են: Դո՛ւ, սիրելիս, ամուր բռնիր այն, ինչ Ես տվել եմ քեզ: Դու այժմ Իմ դուստրն ես, որովհետև դու շարժվում ես Իմ Սուրբ Հոգու կողմից, ուստի կառչի՛ր Ինձ: Անդրդվելի՛ եղիր: Ես երբեք քեզ չեմ թողնի:

ΙΧΘΥΣ

Փառք Աստծո, այն Ողորմության ու Սիրո համար, որ Նա ցույց է տվել ինձ:

Վստա՛հ եղիր, դու քո Աբբայի բազուկների մեջ ես: Մենք, մեզ:

Այո՛, հավիտյանս:

Հունվարի 27, 1989

Ես՝ Տերս, սիրում եմ քեզ: Ես քո կյանքի Սկզբունքն եմ, և թող միշտ դա այդպես լինի, որովհետև Ես եմ:

Մնա Իմ Լույսի մեջ: Բավականություն պատճառիր Ինձ՝ հոգիներ Ինձ բերելով: Փաղաքշի՛ր Ինձ քո մանկական խոսքերով, անդադար աղոթիր: Միշտ իրազեկ եղիր Իմ Ներկայության մասին: Ինձ հետ այժմ Արքայի

նման վարվիր: Մատուցի՛ր Ինձ Սիրո ծաղկեպսակներ: Մատուցի՛ր Ինձ խունկի նման աղոթքներ, որոնք հասնում են Երկինք: Ինձ հոգինե՛ր մատուցիր, որպեսզի Ես փրկեմ նրանց: Մատուցի՛ր Ինձ նրանց, որպեսզի Ես նրանց մխրճեմ Իմ Սուրբ Սրտի Հնոցի մեջ: Ես ուզում եմ նրանցից յուրաքանչյուրին դարձնել Սիրո Հնոցի Կենդանի Ջահեր: Պատվի՛ր Ինձ այժմ և ավետարանի՛ր սիրով, Սիրո համար:

Ե՛կ, գովերգիր Ինձ:

Թող գովաբանվի Տերը նրա համար,
որ նայեց մի աննշան
խեղճության վրա
և բարձրացրեց ինձ:
Թող գովաբանվի Տերը՝
մեռելներից ինձ
հարություն տալու համար:
Փառավորվի Տերը՝ երկնքից իջնելու
և դեպի մեզ խոնարհվելու համար,
որպեսզի մեզ չարից ազատի:
Օրհնյալ լինի Տերը
այն կարեկցանքի համար,
որ Նա ունի
Իր զավակների հանդեպ: Ամեն:

Սնվի՛ր Ինձանից: Ե՛կ, մենք, մեզ:

Այո՛, Տեր իմ:

Հունվարի 29, 1989

(Անցյալ գիշեր ես մի խորհրդանշական երազ տեսա:

Ես մտա մի եկեղեցի, որը լիքն էր մարդկանցով: Պատարագը դեռևս շարունակվում էր. այն մարդաշատ էր, մարդիկ նույնիսկ կանգնած էին, և օդը հագեցած էր խնկի բուրմունքով:

Քահանան իր հետ մի արկղ բերեց, և մենք բոլորս գիտեինք, որ արկղի ներսում մի կենդանի Աղավնի կար: Քահանան պետք է ազատ արձակեր նրան, որպեսզի այն թռչեր մեր շուրջը՝ մեզ ուրախություն պատճառելով: Աղավնին ազատ արձակվեց, և այն թռչում էր մեր շուրջը: Մենք բոլորս երկարում էինք մեր ձեռքերը, որպեսզի այն դեպի մեզ գար՝ իմանալով, որ եթե այն իջներ մեզ վրա, ապա դա մի Շնորհ կհամարվեր: Աղավնին, որ երկնագույն էր, դեպի ինձ եկավ: Ես զգում էի, որ սիրում եմ Նրան և նաև գիտեի, որ Նա էլ ինձ էր սիրում: Դեպի Նա պարզած իմ թևերի վրա, Նա որոշակի դիրք ընդունեց և նստեց մատներիս ծայրերին:

Շուրջս ակնածալից ուրախություն կար: Ոմանք զարմացած էին, ոմանք էլ հուսով էին, որ Նա իրենց վրա էլ կգար: Բայց Նա նորից թռավ մեր շուրջը, առանց դադարի, հետո մեկ անգամ ևս իջավ մատներիս ծայրերի վրա: Ես զգուշորեն Նրան ձեռքերիս մեջ վերցրեցի և այն սիրատոչոր սեղմեցի ձախ այտիս, ականջներիս մոտ՝ լսելով Նրա սրտի արագ զարկերը: Նրա սիրտը տրոփում էր:

- Հետո ես ինքս ինձ գտա միայնակ մի փողոցում, մի արահետով քայլելիս: Ճանապարհի ողջ երկայնքով, անծանոթ ինչ-որ փոքրիկ կենդանիներ, անողորմաբար կուլ էին տալիս իրար: Ինձ վախեցնելու համար, դեպի ինձ էր գալիս մի առնետ՝ բերանում բռնած մեռած մի կենդանի: Ես չէի վախենում, և որպեսզի ցույց տայի առնետին, որ ես կացության տերն էի, արագացրեցի քայլերս: Այն հասկացավ դա և, հետևաբար, ճանապարհի մի կողմն անցավ, և թիկունքից հարձակվելով մի սկյուռի վրա, ուղղակի կուլ տվեց նրան: Այնուհետև, ինձնից յոթ մետր հեռու, ճանապարհի ողջ լայնությամբ, մի մետրանոց օձ էր պառկել՝ փակելով իմ ուղին: Ես շնորհակալություն հայտնեցի Աստծուն, որ թույլ տվեց ինձ տեսնել այն, որովհետև ցելոֆանի նման թափանցիկ էր, որպեսզի մարդիկ այն չտեսնեն, տրորեն և ապա՝ խայթվեն: Ես չէի վախենում նրանից, քանի որ որոշել էի նրա վրայով անցնել և խուսափել դրանից:

Հանկարծակի իմ հետևից, աջ կողմից, մեկ ուրիշ օձ եկավ, բայց այն տարբեր էր, որովհետև այն «հարձակվող» օձ էր: Այն նույնպես թափանցիկ էր, միայն մեջքին մի փոքրիկ նախշ ուներ: Այդ օձը մատներիս չափ բարակ էր, բայց երեք մետրանոց էր: Ես տեսա, որ ծուղակն եմ ընկել, բայց անմիջապես բարձրացվեցի գետնից իմ Երկնավոր Հոր կողմից, գրեթե երեք մետր վերև, սակայն տակավին վախենում էի, որ այս երկար օձը կարող էր կանգնել և հասնել ինձ: Ուստի Երկնավոր Հայրս ինձ օդում առաջ տարավ, անցկացնելով այդ բոլոր օձերի վրայից և ինձ դրեց գետնի վրա, մի բարեկամի մոտ:

Երկուսս էլ կանգնած էինք ճանապարհի վերջում: Մի պատ կար, որը փակուղի էր: Ես գլուխս շրջեցի դեպի աջ, որովհետև ինչ-որ բան լսեցի: Ես տեսա այն առաջին օձին, որն ինչ-որ բան էր փնտրում: «Մի՛ շարժվիր, անշարժ կանգնիր», ասացի բարեկամիս, որը չէր տեսել օձին: Ես չէի ուզում ասել, որ օձ կար, որովհետև նա վախից կարող էր շարժվել: Տեսա նաև, որ երկրորդ օձն էլ մոտենում էր առաջինին: Հետո, առաջին օձը քաղցած լինելով, հարձակվեց բարակ օձի վրա այնպես կատաղի, որ կուլ տվեց նրան մի տհաճ աղմուկով: Ես հանգստացա ու խաղաղվեցի՝ իմանալով, որ օձն այժմ հետաքրքրված էր միայն քնելով և հետևաբար մեզ հանգիստ կթողներ):

Ես կերակրելու եմ քեզ՝ քեզ իսկ հալածողների աչքերի առաջ: Ես բարձրացնելու եմ քեզ դեպի Ինձ, որպեսզի չլինի թե նրանք ոտնատակ տան քեզ: Այդ ե՛ս եմ, որ հեղելու եմ Իմ Արդարության Ցողը քեզ վրա և <u>ո՛չ մի մարդ</u> չեմ թողնելու, որ արմատախիլ անի քեզ, ծաղիկս: Ես հսկում եմ քեզ, և դու թաքնված ես քո հարազատ Աբբայի թևերի մեջ: Մի՛ վախեցիր, Ես մոտ եմ: Սերը սիրում է քեզ:

Հունվարի 30, 1989

Տե՞ր իմ: Օ՜, Յահվե, <u>ես Քեզ որքա՜ն եմ սիրում</u>:

Ես եմ:

Ծաղի՛կս, Ես սիրում եմ քեզ: Իմ Հոգին քեզ վրա է՝ զգա Իմ Ներկայությունը: Առանց Ինձ դու տակավին ընկած մեռած կլինեիր

մեռելների մեջ: Ես՝ Ողորմած Տերս, հարություն եմ տվել քեզ, որպեսզի Իմ Պատգամով հարություն տամ այս անաստված ժողովրդին:

Օրերը թռչում են, ժամերն էլ անցնում են ահավոր արագությամբ, իսկ Իմ Արարչությունը խուլ է: Խավարի մեջ ընկղմված, նրանք ո՛չ լսում են, ո՛չ էլ հավատում են Իմ Ողորմած Նշաններին: Իմ Սիրով ու Կարեկցությամբ, Ես փրկել եմ ձեզ և բարձրացրել եմ ձեզ դեպի Ինձ և օրորել եմ ձեզ Իմ Սուրբ Սրտում: Ես իջել եմ Երկնքից, խոնարհվել Իմ Սուրբ Գահից, որպեսզի հասնեմ այս ապերախտ սերնդին: Ձեր ձեռքերը դեռևս թաց են Իմ զավակների արյամբ որովհետև դուք մերժեցիք հավատալ Ֆաթիմայում տրված Իմ Պատգամներին: Այդ ժամանակ դուք մերժեցիք հավատալ Դրա հրատապությանը և այժմ դուք կրկնում եք ձեր սխալները: Նոր արյուն է հեղվելու ձեր խստասրտության պատճառով:

Օ՜, զավակներս, Իմ յուրայիններից շատերը այնքան կուրացած են սատանայի ծխից: Իմ յուրայինները աներկյուղ ապստամբում են՝ առանց ամենափոքր հապաղման: Անկեղծությունը իսպառ վերացել է նրանց մեջ: Ես ոչ էլ սրբություն եմ գտնում նրանցում: Ես Սեր եմ փնտրում և այն բոլորովին չեմ գտնում նրանց մեջ: Ընդհանրապես արդարություն չկա, իսկ Իմաստությունը փոխարինվել է անմտությամբ՝ լքելով նրանց, որովհետև նրանց լեզուները ճյուղավորված են՝ միայն դավաճանություն մրմնջալով: Այս ապստամբները Ունայնությունը դարձրել են իրենց թագը և Անհնազանդությունը՝ իրենց գավազանը: Ես նրանց մեջ խաղաղություն չեմ գտնում, ամենևին չեմ գտնում: Նրանց մտածելակերպը Իմը չէ: Նրանք հետամուտ են Իմ Քաղաքի կործանմանը և ավերածությանը:

Օ՜, Կայեն: Կայեն, ո՞ւր է այն Հոգին, որով Ես օժտել էի քեզ: Մի՞թե դու նորից հետամուտ ես քո իսկ կործանմանը: Քո ծննդյան օրից ի վեր Ես գիտեի, որ դու կատաղի ես, և քանի որ դու գիտեիր, որ դա Ինձ համար նորություն չէր, դու գալիս ես դիմակավորված՝ զգեստավորված որպես Քահանայապետ: Դու հագել ես ոսկյա ու արծաթյա Իմ զգեստները, որպեսզի քողարկես քո գորշ պատմուճանը, որը տրվել է քեզ Սև Գազանի կողմից: Դու բոլորովին լույս չունես քո մեջ, և որպեսզի թաքցնես քո սոսկալի դեմքը, դու դիմակ ես հագել քո նողկալի դեմքին, որպեսզի քո արտաքինը ամբողջովին խաբի նույնիսկ Իմ Ընտրյալներին: Քո դիմակը չի կարող խաբել Ինձ, որովհետև Իմ Աչքերը գիտեն, որ դառան դիմակի տակ դու քողարկել ես վիթխարի մի կործանում: Դու ինքդ քեզ մինչև ատամներդ զինել ես Զարությամբ: Եվ այժմ դու ծրագրում ես նվաճել աշխարհը՝ իսպառ ջնջելու համար այն փոքրիկ լույսը, որը մնացել է նրանց մեջ: Քո մտադրությունն է անօրինությունը շատացնել և արմատախիլ անել այն, ինչ Սուրբ է՝ հեռացնելով զորեղ մարդկանց, քո մենաշնորհը դարձնելով Իմ Սրբարանը:

Սրանք, զավակս, այն Իժերն են, որոնք Ես ցույց տվեցի քեզ տեսիլքով և որոնք սողում են Իմ Սուրբ Խորհուրդների վրա և Իմ Խորանով մեկ: Նա խաբելու է շատերին և մարդիկ կուրանալու են, կուրանալու են նրա խարդախ զգեստներից: Այս խեղճ հոգիները համոզված են լինելու, որ այն, ինչ տեսնում են իրենց աչքերի առջև իրենց իսկ դարաշրջանում, դա հենց Ինքը՝ Քահանայապետն է: Ծպտված փառավոր ձևով, նա Մեծ Ուրացություն է պատճառելու Իմ ողջ Եկեղեցում: Նա ամայություն է

պատճառելու, բայց ամեն ինչ քողարկված է լինելու հրաշքներով, մեծ նախանշաններով և նշաններով երկնքում:

Նա վայր է նետելու Իմ մշտնջենական Զոհաբերությունը՝ կոխկրտելով և կործանելով այն, բայց այս ամենն արվելու է քողարկված ու նենգությամբ: Իմ Սուրբ Քաղաքը Կայենի իշխանության ներքո է լինելու, որովհետև նրանք մերժեցին Իմ Զգուշացումները: Անակնկալ ու բոկոտն, Ես եկա նրանց մոտ, բայց նրանք ծաղրեցին Ինձ: Կայենի իշխանությունը միայն մի կարճ ժամանակ է տևելու՝ շնորհիվ Իմ սիրելի հոգիների, որոնք հատուցում են, որոնք աղոթում ու զոհաբերում են իրենք իրենց: Ես հաշվի եմ առել այս ամենը և ձեր զոհողությունները իզուր չեն եղել: Անիրավություններն ու հանցանքները կարող են կասեցվել ձեր աղոթքներով:

Տե՛ր, ի՞նչ կպատահի Քո սրբերի հետ:

Ինձ ցավ է պատճառում, որ շատերը խաբվելու են նրա արտաքին տեսքից: Իր գառան դիմակի պատճառով, նա շատերին իր կողմն է գրավելու, բայց Ես թույլ եմ տվել, որ դու տեսնես, թե իրականում ինչի է նման նրա ներքինը, որը հենց մահացու Իժի ներքինն է:

Վասո՛ւլա, ահարկու որոտումով և Իմ Կրակով, Ես տապալելու եմ այս Ապստամբին և նրա բոլոր հետևորդներին: Ես ոտնատակ եմ տալու նրանց թաքստոցը, քանի որ այն սարքված է Կեղծիքից, իսկ նրանց ապաստանը մի հողակույտի եմ վերածելու, քանի որ դրա հիմքը ստի վրա է հիմնված:

Ապա, Ես կանչելու եմ իմ Աբելներին և մեծ սիրով ողջագուրվելու եմ նրանց հետ: Ես պատսպարելու եմ նրանց Իմ Սուրբ Սրտում: Նրանք աղավնիների նման անապական են լինելու, իսկ Իմ Սուրբ Սիրտը աղավնատուն է լինելու նրանց համար: Նայի՛ր շուրջդ, մի՞թե չես տեսնում: Դու չե՞ս նկատել, թե եղբայրներիցս քանիսն են դավեր նյութում Իմ դեմ:

Զավա՛կս, Ինձ դավաճանում են, հենց Իմ յուրայինները:

Տե՛ր, ինչո՞ւ են այդպես վարվում Քեզ հետ, միգուցե նրանք իրականում չե՞ն գիտակցում:

Զավա՛կս, նրանք կուրացած են Ունայնությամբ (Անափառությամբ) ու Անհնազանդությամբ:

Նրանք անկեղծորեն կարծում են, որ ճիշտ են անում:

Նրանք ինչպե՞ս կարող են հավատալ, որ ճիշտ են անում, քանի որ խախտում են Իմ Օրենքը: Նրանք չեն հնազանդվում, իսկ անհնազանդությունն Ինձանից չի գալիս: Նրանք հետևում են Իմ հակառակորդի օրենքին, նրանք իրենց ոտքերը դնում են ուղղակի նրա ոտնահետքերի մեջ և առաջնորդվում են դեպի կործանում ու անկում: Արևելյան քամու նման Ես ցրելու եմ այդ ապստամբներին. միայն սպասիր և կտեսնես:

Աղերսի՛ր նրանց անունից: Սիրի՛ր Ինձ և մեղմացրու Իմ Արդարությունը: Փառավորի՛ր Ինձ՝ իրենց փրկության համար Ինձ հոգիներ բերելով: Իմ Աչքերը հատկապես այս մութ դարաշրջանի երիտասարդների վրա է հառված: Եկե՛ք, աղոթեք Հորը.

«Օ՜ Հայր, խղճա՛ Քո զավակներին,
հատկապես երիտասարդներին:
Վերցրո՛ւ այդ հոգիներին
և տեղավորիր նրանց
Քո թևերի ներքո:
Ազատի՛ր նրանց Չարից:
Փրկի՛ր նրանց թմբիրից,
որ շրջապատում է նրանց:
Լցրո՛ւ նրանց
Ճշմարտության Քո Սուրբ Հոգով
և նրանց բեր Քո Լույսի մեջ,
հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Ե՛կ, հանգստացիր, զավակս: Ես երբեք քեզ չեմ լքի: Նրանց[1] չի հաջողվի քեզնից խլել այն Լույսը, որ Ես եմ քեզ տվել: Մի՛ վախեցիր, Ես քեզ հետ եմ:

Ե՛կ, մե՞նք, մե՞զ: Իմ Ներկայությո՞ւնը:

Այո՛, Տեր: Ես մեռնելու աստիճան սիրում եմ Քեզ:

Փետրվարի 5, 1989

Վասո՛ւլա, Իմ Խաղաղությունը քեզ: Թույլ տուր Ինձ պարզաբանել Իմ Պատգամը: Դու չպետք է բառացիորեն վերցնես պատգամի որևէ մի հատված: Դու պարզապես չես կարող անել այն բաները, որոնք Ես քեզնից պահանջում եմ:

Սկսենք նրանից, որ չնայած Ես գրում եմ «դու», իրականում սակայն խոսքը քո մասին չէ: Քանի՞ անգամ եմ Ես գրել. «Արթնացրո՛ւ Իմ Եկեղեցին, Վասուլա»: Ե՛ս եմ, որ Իմ Եկեղեցին արթնացնելու եմ Իմ Զորությամբ: Ծաղի՛կ, Ես Նա եմ, Ով օրհնելու է Գարաբանդալի Իմ զավակներին:

Ծաղի՛կս, Ես մտադիր եմ միավորել Իմ Եկեղեցին: Մի՞թե Ես չեմ գրել նաև. «Վասուլա, միավորի՛ր Իմ Եկեղեցին»: Դու իսկապե՞ս կարծում ես, որ այդ դու ես, որ միավորելու ես Իմ Եկեղեցին: Այդտեղ ևս Իմ Խոսքերը խորհրդանշական են: Այժմ դուք գիտեք, ուստի մի՛ խաբեք ինքներդ ձեզ այլևս: Ես եմ անելու ողջ Գործը, հրեշտակներս: Ես ձեզ շատ շնորհներ եմ տվել, օգտագործե՛ք դրանք: Մի՛ խճճվեք: Խաղաղության մեջ եղեք: Իմ

[1] Ինձ հալածողներին

Աստվածային Պատգամներով կերակրեք Իմ Գառներին և կախման մեջ եղեք Իմ Առաջնորդությունից: Ես սիրում եմ ձեզ՝ բոլորիդ:

Փետրվարի 9, 1989

(Տերն ինձ արթնացրեց կեսգիշերին և խնդրեց, որ մի պատգամ գրի առնեմ):

Ես կանչեցի քեզ, Վասուլա: Լսի՛ր Ինձ:

Ամուր եղիր, ժայռի պես ամուր եղիր. մի՛ եղիր սահուն ավազի պես: Չնայած քո տկարությանը, Ես քեզ եմ ընտրել, բայց այդուհանդերձ, Ես գիտեի, որ դու չպիտի կարողանայիր կուլ տալ Իմ Խոսքերը, ինչպես սորուն ավազը: Իմ Խոսքը դրվելու է քեզ վրա, դրոշմվելու է քեզ վրա և դրանք մնալու են այնտեղ, որպեսզի ամենքը կարդան: Վասո՛ւլա, մտածիր, արդյոք հողագործը կընտրե՞ր մի արգավանդ հող, որպեսզի տքնաջան աշխատանքով մշակեր ու ցաներ իր հացահատիկները, թե՞ կնետեր դրանք ճահիճների և ավազուտների մեջ: Իմ Վասո՛ւլա, դու ինչի՞ց ես վախենում: Աղոթի՛ր զատորոշման համար: Մնա՛: Թույլ տուր, որ Իմ Մատը դրոշմի քեզ վրա Իմ ցանկությունները: Թույլ տուր Ինձ, որ օգտագործեմ քեզ որպես Իմ քարետախտակը: Ընդունի՛ր այն ամենը, ինչ Ես տալիս եմ քեզ: Ճաշակի՛ր Ինձանից: Խաղաղություն քեզ:

Վասո՛ւլա, այժմ Ես գրելու եմ Իմ ծրագիրը ամսի տասնյոթի աղոթաժողովի համար, ապա կգրեմ նաև նրանց ուղղված Իմ Պատգամը: Զավա՛կս, դու պիտի օրհնես սրահը՝ խնկով ու սուրբ ջրով: Դու պիտի աղոթես Սուրբ Միքայելին ուղղված դիվահալածության աղոթքը:

(Այստեղ Աստված ինձ հասկացրեց, որ ծրագրի մնացած մասը պետք է մնար իմ անձնական նոթատետրում):

Լա՛վ, Վասուլա, դու հասկացել ես, ե՛կ, ահա Իմ Պատգամը:

Իմ Խոսքը Լույս է: Իմ Խոսքը Խաղաղություն ու Սեր է: Իմ Խոսքը Միաբանություն և Հույս է: Եկե՛ք Ինձ մոտ և ավելի հաճախ կարդացեք Իմ Խոսքը:

Սիրելինե՛ր, այդ Ե՛ս եմ՝ Հիսուս, Ողորմածը, Հիսուս՝ ձեր Փրկիչը, որ վերևից ցած եմ իջնում այս տկար գործիքի միջոցով, դրոշմելով նրա վրա Իմ Խոսքերը: Իմ Անհուն Սիրուց և Ողորմությունից դրդված, Ես իջնում եմ այս խավարի մեջ, Ես իջնում եմ այս անապատի և այս չորության մեջ, որպեսզի Իմ Հոգին հեղեմ ձեզ վրա: Արարչությո՛ւն, Ես իջնում եմ, որպեսզի ոռոգեմ չոր հողը և այս ծարավ երկրից գետեր բխեցնեմ: Ես իջնում եմ, որ վաղորդյան ցողի նման հեղեմ ձեզ վրա Իմ Օրհնությունները: Ես գալիս եմ, որ վանեմ այս ողջ Չարիքը և արմատախիլ անեմ Անօրենությունը՝ փոխարինելով դրանք Խաղաղությամբ ու Սիրով:

Այսօր Իմ Շուրթերը ճաքել են սիրո ծարավից. Ես նրանց սիրո կարիքն ունեմ: Ես ծարավի եմ սիրո, Ես ծարավի եմ սիրո... Իմ Սուրբ Սիրտը որքա՜ն է փափագում, որ դուք սովորեք սիրել Ինձ: Որքա՜ն եմ Ես փափագում, որ մի օր դուք հասնեք սիրո դպրոցակետին, և Ես լսեմ ձեզ

աղաղակելիս՝ «Աբբա՛»: Այդ ժամանակ... միայն այդ ժամանակ Իմ Վերքերը կսկսեն բուժվել: Որքան եմ Ես փափագում, որ Իմ քահանաները վերցնեն Իմ Անհուն Սիրուց և լցնեն իրենց սրտերը: Նրանց Հանդեպ Իմ Սերը Մեծ է, այնքան Մեծ, որ մինչև նրանք երկնքում չլինեն չեն կարող հասկանալ դրա կատարելությունը: Նվիրումը պետք է լինի նրանց Դրոշը, Հավատարմությունը՝ նրանց Ջահը, Մաքրությունը՝ նրանց Տոնական Հագուստը, իսկ Սերը՝ նրանց Խորհրդանիշը, որպեսզի Իմ դառները կարողանան նրանց մեջ Ինձ ճանաչել և հստակ տեսնել Իմ Պատկերը: Ես ուզում եմ, որ Իմ Հովիվները անարատ լինեն, որպեսզի իրենց անարատության մեջ իրենց պտուղն ամբողջական լինի:

Ուրախացրե՛ք Իմ Սուրբ Սիրտը և ամբողջապես հնազանդվեք Իմ Պատվիրաններին: Սիրել, նշանակում է հետևել Իմ Պատվիրաններին: Սիրեցե՛ք միմյանց: Օ՜, Իմ Լուսո զավակներ, լսե՛ք Իմ Խոսքերը և ապրեք դրանք... Ապրե՛ք դրանք... Եթե դուք լսեք Ինձ, Ես ձեզ Խաղաղություն կտամ, որպես ձեր դրոշը, և Սերը կլինի ձեր թագը: Ես կնորոգեմ ձեզ, եթե դուք ինքներդ ձեզ լիովին բացեք Իմ առջև: Վստահե՛ք Ինձ: Ես կնորոգեմ ձեզ, և ձեզանից մի նոր ժողովուրդ կստեղծեմ, մի սուրբ ժողովուրդ: Ապրե՛ք Իմ Պատգամը: Խոկացե՛ք Իմ Պատգամի շուրջ: Եկե՛ք սիրով դեպի Ինձ: Հետևե՛ք Իմ ոտնահետքերին, որոնք ձեզ առաջնորդելու են դեպի Ինձ Իմ Տան մեջ, որը նաև ձեր Տունն է: Մի՛ վարանեք, անգամ ձեր անկատարությամբ, Ես դրկաբաց կընդունեմ ձեզ: Թեև ձեր սերը դաղջ է, այնուամենայնիվ ընկե՛ք Իմ Բազուկների մեջ, և Ես, որ Սիրո Ուսուցիչն եմ, կսովորեցնեմ ձեզ սիրել Ինձ և սիրել միմյանց: Եկե՛ք դեպի Ինձ, նույնիսկ նրանք, ովքեր Ինձ չեն սիրում: Ես ձեզ ներել եմ: Եկե՛ք, և Ես կբժշկեմ ձեզ:

Երանելի եք դուք բոլորդ, որ հավատում եք առանց Ինձ տեսնելու: Երանելի են Իմ փոքրիկ հոգիները, որովհետև այդպիսիների վրա է Իմ նախասիրությունը: Մնացե՛ք փոքրիկ ու պարզ, երբեք մի՛ փորձեք ինչ-որ բան լինել: Մնացե՛ք փոքր, որպեսզի կարողանաք սողոսկել Իմ Սուրբ Սրտի խորքերը: Նմանվե՛ք փոքր երեխաներին մանկան հավատով, որովհետև հենց դա է գոհացնում Իմ Հորը:

Երբեք մի՛ դադարեք աղոթելուց: Գոհացրե՛ք Ինձ և սրտանց աղոթեք: Ես ցանկանում եմ, որ դուք աղոթեք Իմ Մարմնի Միության համար: Ես ցանկանում եմ, որ դուք աղոթեք Պապի և Պատրիարքի համար: Ես ցանկանում եմ, որ դուք աղոթեք բոլոր քահանաների համար: Աղոթե՛ք, որ այն ոչխարները, որոնք չեն գտնվում Պետրոսի առաջնորդության ներքո, վերադառնան դեպի Պետրոսը և Հաշտվեն: Աղոթե՛ք, որ լինի մեկ Հոտ՝ մեկ հովվի ներքո: Աղոթե՛ք Խաղաղության ու Միության համար, որպեսզի ավելի մեծ սեր լինի ձեր միջև: Աղոթե՛ք, որ դուք կարողանաք փառաբանել Ինձ Մեկ Խորանի շուրջ: Միավորվե՛ք, սիրելիներ, և մեկ եղեք, ճիշտ ինչպես Հայրն ու Ես ենք Մեկ և Միևնույնը:

Ես օրհնում եմ ձեզ Իմ Սրտի խորքից:

Իմ Վասո՛ւլա, գրի կառնե՞ս Իմ Պատգամը:

Այո՛, Սուրբ Մայր:

խաղաղություն ձեզ:

Սիրելիներս, այսօր ես ձեզ խնդրելու եմ, որ ավելացնեք ձեր աղոթքները միության համար՝ միություն, որն այնքան շատ փափագում է Իմ Որդին: Աղոթե՛ք այն քահանաների համար, որոնք ցիրուցան են եղել, որպեսզի վերադառնան դեպի Փարախ՝ միակ Փարախը Պետրոսի: Աղոթե՛ք, որ նրանք կարողանան անկեղծությամբ միաբանվել: Աղոթե՛ք խաղաղության համար և այն զավակների համար, որոնք չեն հաշտվել Աստծո հետ: Աղոթե՛ք այն կեղծ թագավորությունների, այն երերուն թագավորությունների համար, որպեսզի նրանք կարողանան հասկանալ, թե որքան են սխալվում:

Ե՛կեք և փառաբանեք Կենդանի Աստծուն, Որն այս օրերիս բացահայտում է Ինքն Իրեն տարբեր վայրերում: Փառաբանե՛ք Նրան Իր Անհուն Սիրո ու Ողորմության համար. Նրա Շնորհը կշարունակվի հեղվել ողջ մարդկության վրա: Թող նրանք, ովքեր ստանում են Նրան՝ օրհնեն Նրա Սուրբ Անունը: Օրհնեցե՛ք Նրան, որովհետև Նա Սիրող Հայր է: Բոլոր նրանք, ովքեր ականջ ունեն, թող լսեն Երկնքից եկող այս բարձրաձայն Աղաղակը.

«<u>Սո՛ւրբ եղեք, քանի որ Ես Սուրբ եմ</u>»:

Ծաղիկներս, ապրե՛ք Մեր Պատգամով... ապրե՛ք Մեր Պատգամով: Դուք ստացել եք Նրա ողջ Ողորմությունը: Փորձե՛ք հասկանալ Աստծո Կամքը, եղե՛ք Նրա Լույսի զավակները:

Ես օրհնում եմ ձեզ Հոր, Որդու և Սուրբ Հոգու Անունով: Ամեն:

Փետրվարի 15, 1989

Իմ Վասո՛ւլա, երբեք մի՛ վհատվիր, քանի որ Ես կանգնած եմ քո առջև: Եվ ո՞ւմ հետ դու կարող ես Ինձ համեմատել: Ես եմ Սկիզբը և Վախճանը՝ Հավիտենականը, որովհետև Ե՛ս Եմ, Ե՛ս էի և լինելու եմ հավիտյանս հավիտենից: Իմ Խոսքը հայտնի է լինելու այս ողջ երկնակամարի ներքո: Նրանք, ովքեր ոտքով հարվածում են Իմ Խոսքին՝ պիտի հայտնաբերեն, որ հարվածում են մի խթանի:

Աշխարհի ամեն մի անկյունում ավելի շատ հալածողներ են երևան գալու: Նրանք գրանիտի հսկայական քարակտորների նման պարիսպ են ստեղծելու, որպեսզի փակեն Իմ Ճանապարհը ողջ մարդկության առջև: Հենց սկզբից էլ Ես գիտեի, որ նրանք անսիրտ էին՝ լեցուն սնապարծությամբ ու նենգությամբ, մի ավերիչ անապատ: Նրանց բանակները իզուր պիտի ապստամբեն: Իմ մեկ Շնչով Ես նրանց կնվաճեմ՝ հեռու քշելով նրանց: Ես եմ Տերը՝ քո Սուրբը, և Ես հայտնի եմ թագավորներ և թագավորություններ տապալելով, որպեսզի Իմ Խոսքը հայտնի դառնա: Ես Իմ Զորությամբ գահեր եմ տապալել և ամոթով եմ թողել նրանց, ովքեր իրենց «իշխանություն» են համարում և այդպես էլ պիտի լինի այս անգամ: Ես դրանց մերկացնելու եմ, որպեսզի ամեն աչք տեսնի: Ես բավական երկար եմ զսպել Իմ բարկությունը: Այսօր, Ես՝

Տերս, լրջորեն խնդրում եմ նրանց, որ իջնեն իրենց գահերից և ապաշխարեն:

Իմ Հոգին շարունակ հեղվելու է մարդկության վրա և ոչ մի մարդու չի հաջողվի խափանել Այն, անկախ այն բանից, թե որքան տքնաջանորեն են փորձում ճնշել Այն: Վա՜յ նրանց, ովքեր ոտնակոխ կանեն Իմ Հոգին: Ես Իմ Շնչով ջնջելու եմ անհավատներին ու կեղծավորներին: Եթե նրանք միայն իմանային, թե Ես ինչպես եմ զսպում Իմ Արդարությունը, որ Այն չընկնի նրանց վրա, ապա նրանք երբեք չէին դադարի աղոթելուց և ապաշխարելուց: Եթե նրանք միայն իմանային, թե Ես ինչ եմ առաջարկում, և Ով է Նա, որ ասում է նրանց բոլորին. «Միավորվե՛ք, միավորվե՛ք: Մեկ եղեք այժմ, ինչպես Հայրն ու Ես ենք Մեկ և Միևնույնը»: Բայց նրանք չեն լսելու, որովհետև չեն հասկացել: Ես նրանց զգուշացրել եմ, բայց նրանք ո՛չ լսել, ո՛չ էլ հավատացել են:

Ես ամենայն լրջությամբ ասում եմ ձեզ, որ առավել քան երբևէ ժամը հասել է և մոտ է: Հաշիվները մաքրելու ժամանակը հասել է: Ոչ մեկն այժմ չի կարող ասել, որ Ես չեմ զգուշացրել ձեզ այս ժամի համար: Նույնիսկ մեռելները արթնացան լսելով Իմ Աղաղակը. անգամ նրանք...[1]

Ես՝ Տերս, հարություն եմ տալու ձեր մեջ գտնվող մեռելներին: Այո՛, Ես հարություն եմ տալու այս դիակներից յուրաքանչյուրին, որովհետև նրանք լսեցին Իմ Աղաղակը: Ես այդ դիակներից կենդանի Լույսի սյուներ եմ ստեղծելու: Նրանցից ոմանց, Ես դնելու եմ որպես ամուր սյուներ Իմ Եկեղեցում: Եվ դրանցից յուրաքանչյուրի աջ ձեռքում դնելու եմ Իմ Գալարը, իսկ ձախ ձեռքում՝ Իմ Ջահը, որպեսզի դրանք լինեն նրանց առաջնորդը: Ես նրանց տալու եմ Իմ աշակերտների լեզուն և նրանց սպասավորներ եմ դարձնելու ձեր առաջ: Ես այնպես եմ անելու, որ բոլոր ազգերը տեսնեն նրանց մաքրությունը, ուղղամտությունը, և նրանք մինչև աշխարհի ծայրերը պիտի հռչակեն Ճշմարտությունը:

Եվ Ես խոստանում եմ, որ ինչպես երկիրն է դալար բույս աճեցնում, ինչպես պարտեզում ծլարձակում են սերմերը, այդպես էլ Ես՝ Տերս, վերածնելու եմ այդ դիակները և Իմ Սեփական Բերանով Ես նրանց եմ շնորհելու Իմ Նոր Անունը:

Ե՛կ, Ինձ հետ եղիր, զավակս: Մնա՛ քո Հոր բազուկների մեջ: Մե՞նք, մե՞ զ:

Հավիտյանս հավիտենից, Տեր:

Ստորագրի՛ր Իմ Անունը

ΙΧΘΥΣ

Այո՛:

(Ավելի ուշ)

[1] Աստծո ձայնը շատ տխուր էր:

Տե՛ր, այնքան շատ մարդիկ կան այժմ, որոնք ցանկանում են Քեզանից «անձնական» պատգամներ ստանալ: Նրանց հարցերի որոշ մասը շատ աշխարհային բնույթ ունեն: Նրանցից ոմանք ինձ նայում են որպես երկնքի «տեղեկատվության բյուրոյի»:

Վասո՛ւլա, նրանցից շատերին ես տվել եմ Իմ պատասխանները: Դրանք գտնվում են Սուրբ Գրքում, ինչպես նաև այս պատգամում:

Տե՛ր, այդուհանդերձ, ինձ թույլ տուր, որ նրանց անունները նշեմ Քեզ համար:

Քեզ ազատ զգա:

(Ես նշեցի այդ անունները)

Նշանած, ես չեմ պատասխանելու այն հարցերին, որոնք արժանի չեն Իմ Սրբությանը: Ես կանչելու եմ խոնարհին: Ես հարություն եմ տալու մեռածին: Ես քաջալերելու եմ տկարին: Ես հետապնդելու եմ մեղավորին: Անհաշիվ անգամներ Ես կանչելու եմ անաստվածներին: Հիմիկվանից սկսած, դրանք լինելու են անձնական պատգամներ, ինչպես դու ես անվանում դրանց: Երբեք մի՛ հոգնիր գրելուց: Եղիր շրջահայաց, ինչպես հիմա: Միշտ եկ և նախ Ինձ հետ խորհրդակցիր:

Տե՛ր, երբեմն պատահում է, որ ոչ ոք ինձանից անձնական պատգամ չի խնդրում, բայց Դու տալիս ես այդպիսի պատգամներ:

Այդ Ե՛ս եմ ընտրելու և որոշելու: Ես առաջնորդելու եմ քեզ՝ չշնչալով քո ականջին այն ամենը, ինչ Ես ուզում եմ ասել:
Ե՛կ, մեզ, մենք:

Փետրվարի 20, 1989

(Այսօր մեր աղոթաժողովի օրն է, որի ընթացքում մենք կարդում ենք նաև Սուրբ Գիրքը և պատգամները):

Հիսո՞ւս:

Ես եմ: Սիրելիս, հետևի՛ր Իմ Ծրագրին: Ես միշտ քեզ հետ եմ:
Ե՛կ, մենք միասին ենք աշխատելու: Մենք, մեզ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

(Պատգամ տրված աղոթաժողովի համար)

Ես եմ Տերը՝ ձեր Աստվածը: Ես Գերագույնն եմ և ամենքից վեր: Ես Նա եմ, ով արարել է ձեզ: Ես անզուգական Աստված եմ: Ես Սրբերի Սուրբն եմ: Յուրաքանչյուր դասից անթիվ, անհամար հրեշտակներ գետնատարած երկրպագում են Իմ Ներկայությամբ՝ անդադար պաշտելով Ինձ: Ո՞ւմ հետ կարող ես Ինձ համեմատել: Ողջ Երկինքը օրն ի բուն փառաբանում է Իմ հոյակապությունը: Ես նստած եմ քերովբեներից պատրաստված գահի վրա (Ես գահակալում եմ քերովբեների վրա): Ես զգեստավորված եմ մեծափառությամբ և զորությամբ: Ես Խոսքն եմ՝ Ճշմարիտ Լույսը:

Բայց և այնպես, Իմ ողջ Գերիշխանությամբ հանդերձ, Իմ ողջ Մեծափառությամբ հանդերձ, մեծ խղճահարությունից դրդված ես իջնում և խոնարհվում եմ ձեզ հասնելու համար: Ես գալիս եմ ձեզ մոտ՝ մի ժողովրդի մոտ, որն այնքան շատ շնորհներ է վայելում: Ձեզ մոտ եմ ես գալիս բոկոտն, սիրելիներս, և մուրացկանի նման կանգնում եմ ձեր առջև, Ձեռքերս դեպի ձեզ պարզած: Ես աղերսում եմ ձեզ Սիրո, Խաղաղության և Միության համար: Դուք լսելո՞ւ եք Իմ Աղաղակը:

Ես անճանաչելիորեն Վիրավորված եմ: Իմ Վերքերը շարունակ բազմապատկվում են ուխտադրժությամբ, անիրավությամբ և մեղքի հանդեպ մեծ հրապուրանքով: Իմ արարածները մինչև ե՞րբ պիտի շարունակեն անաստված և չար լինել: Ես հարցնում եմ նրանց, ովքեր արհամարհում են Իմ Պատվիրանները. «Ի՞նչ եք անելու դուք Պատժի օրը: Ո՞ւմ մոտ եք վազելու օգնության համար: Ո՞ւր եք թողնելու ձեր հարստությունները»[1]:

Իմ անհուն ողորմությունից և մեծ կարեկցությունից դրդված Ես լցրել եմ երկինքները նախանշաններով: Իմ Հոգին Ես անդադար հեղում եմ ողջ մարդկության վրա: Ես տեսիլքներ եմ տալիս ձեր երիտասարդներին: Ես հեղեղում եմ ձեզ Նշաններով ու Շնորհներով: Տեսնո՞ւմ ես: Ես բացել եմ Իմ Երկնային Շտեմարանները այս քաղցած սերնդի համար: Դուք ճաշակելու եք մինչև որ ձեր սրտերը բավարարվեն: Դուք ուտելու եք, մինչև որ կշտանաք:

Սուրբ Գրքերը իրագործվում են: Ես ձեզ Նշաններ եմ տալիս Ժամանակների Վախճանի վերաբերյալ, բայց և այնպես, Իմ յուրայիններից շատ շատերն են մերժում ճանաչել այդ նշանները... Ինչպես է, որ դուք չեք կարողանում տարբերել Ժամանակները:

Բայց այժմ, չնայած որ իմ զավակների մեծ մասը երես են շրջել Ինձանից, թեև նրանք լքել են Ինձ, Ես հավիտենական սիրով, առանց հոգնելու հետապնդելու եմ նրանց: Ես երբեք չեմ դադարի կրկին ու կրկին ամեն մեկին կանչելուց. «Ձեր ողջ սրտով դեպի Ի՛նձ վերադարձեք: Ծո՛մ պահեք և ապաշխարեք: Բացե՛ք ձեր սրտերն Իմ առջև և Ես կբժշկեմ ձեզ»: Դարձեք Ինձ՝ ձեր Հորը. և նույնքան քնքշորեն, ինչպես Հայրն է վարվում իր երեխաների հետ, Ես էլ նույն ձևով եմ վարվելու նրանց հետ, ովքեր կապաշխարեն ու կդառնան դեպի Ինձ, որովհետև տկարների նկատմամբ Ես Ամենաքնքուշն եմ, և թշվառների հանդեպ Ամենակարեկիցը՝: Ես լեցուն եմ Գթությամբ և Հարուստ՝ Ողորմությամբ:

Օ՛, սիրելի հոգիներ, լսե՛ք Իմ աղաղակը վերևից. «Լցրե՛ք ձեր սրտերը Իմ Աստվածային Սիրուց»: Լցրե՛ք ձեր սրտերը և սովորե՛ք ներել

[1] Ես. 10:3

միմյանց, մի՛ դատեք միմյանց: Միմյանց ներելով՝ դուք կսկսեք մուտք գործել Միության Ուղին: Ձեր մերձավորին չդատելով դուք Ճշմարտապես Իմը կհամարվեք: Թույլ տվեք Ինձ՝ ձեր Աստծուն, ցնծալ ձեզնով, դառներս:

Ես ձեզ Իմ Խաղաղությունն եմ մատուցում: Վերցրե՛ք Իմ Խաղաղությունը և կիսեք Այն ուրիշների հետ: Վերցրե՛ք Իմ Սերը, և թող Այն շրջապատի ձեզ ծաղկեշղթայի նման: Իմ Սրտի զավակներ, ինչպես եմ Ես զարհուրում սա ձեզ ասելիս, այդուհանդերձ, Ես պետք է ձեզ Ճշմարտության մեջ պահեմ: Չնայած ձեզ ուղղված Իմ աղաչանքներին, չնայած Իմ բոլոր զգուշացումներին, շատերը շարունակելու են մեղանչել: Նրանք գնում են դեպի իրենց հոգիների կործանումը:

Դուք ապրում եք մի ապստամբ դարաշրջանում և ասվել է, որ ձեր օրերում այդ մարդիկ քամահրելու են կրոնը և ծաղրուծանակի են ենթարկելու խոստումը: Այդ մարդիկ խստացած սրտերով հրաժարվելու են լսելուց: Դուք ապրում եք վերջին օրերում, մինչ Մաքրագործման Օրը: Օր ու գիշեր զգույշ եղեք, երբեք մի՛ դադարեք աղոթելուց: Ես հանդիսավորությամբ ասում եմ ձեզ, որ Մաքրագործման Օրերը մոտ են:

Ես ձեզ բոլորիդ սիրում եմ հավիտենական սիրով և այս Անհուն Սիրո պատճառով, Ես իջնում եմ այս երկրի շատ վայրերում, որպեսզի զգուշացնեմ ձեզ: Սխալ մի՛ հասկացեք Ինձ, այս զգուշացումներն ընդունելով որպես սպառնալիք: Ես Սուրբ եմ, և Ես փափագում եմ, որ դուք, որ Իմ Պատկերով եք ձևավորված, Սուրբ ապրեք: Ժամանակների սկզբից ի վեր, Ես մարգարեներ ու սրբեր եմ ի հայտ բերել, որպեսզի հիշեցնեմ ձեզ, որ Ես Սուրբ եմ: Ես պատրաստել եմ ձեզ բոլորիդ այս Օրվա համար՝ այս Իմ Մաքրագործման Օրվա համար, երբ Իմ Կրակի Հոգին հեղվելու է ձեզ վրա և մաքրելու է ողջ չարությունը: Նա մաքրելու է այն ամենը ինչ որ սուրբ չէ: Նախապատրաստվե՛ք այս Օրվա համար և լսեք Իմ Աղաղակը, լսե՛ք Իմ աղերսը:

Թող որ իմաստուն մարդը հասկանա այս խոսքերը: Ե՛տ դարձեք դեպի Ինձ, վերադարձե՛ք: Ես ձեր Ապաստանն եմ: Ճանաչե՛ք Նշանները, ճանաչե՛ք ժամանակների Վախճանի Նշանները: Մի՛ փակեք ձեր ականջները, մի՛ փակեք ձեր աչքերը: Ճանաչե՛ք ժամանակները... Հիշե՛ք, որ Ես՝ Տերս, ձեր Ապաստանն եմ: Սիրելի հոգիներ, անդրդվելի եղեք:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: Ես օրհնում եմ ձեր սիրելիներին:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 26, 1989

Տե՞ր:

Ես եմ: Իմ Խաղաղությունը քեզ: Ավելի քան երեք տարի է, ինչ Ես սովորեցնում եմ քեզ, այդպես չէ՞:

Այո՛, Տեր, այդպես է:

Այդ դեպքում համոզված եղիր, որ ես այժմ չեմ լքի քեզ: Իմ Կապերը Հավիտենական Կապեր են, դու կապված ես Ինձ հետ: Ես և դու, դու և ես՝ հավիտյան Սիրով միացած: Օ՜, այո՛[1]: Փափագի՛ր Ինձ, դու Իմ Շնորհի տակ ես: Փափագիր Ինձ՝ Քո Աստծուն: Փափագիր Ինձ՝ քո Հորը. թող ես զգամ, որ դու չես պատկանում աշխարհին: Գոհացրո՛ւ Ինձ, ծաղիկ, և դեպի Ինձ դարձի՛ր, փնտրելով Իմ Լույսը: Ծարավի՛ եղիր Ինձ: Ինչպես մի ծաղիկ, որը կարիք ունի խնամողի իր գեղեցկությունը պահպանելու համար, այնպես էլ դու զգա Իմ կարիքը, Իմ Լույսի կարիքը, Իմ Աղբյուրների կարիքը: Աճի՛ր, սիրելիս, աճի՛ր հավատիդ մեջ:

Ե՛կ, Ես չչնջալու եմ քո ականջին Սուրբ Գրքից այն մասը, որը դու կարդալու ես հաջորդ ժողովին: Ապավինի՛ր Ինձ և Ես կաջակցեմ քեզ: Հիշի՛ր. դու ոչինչ ես: Թո՛ւյլ տուր, որ քո ոչնչության մեջ Ես լինեմ Ամեն Ինչ: Ես միշտ ստուգելու եմ քո լապտերի յուղը: Երբեք չեմ թույլ տալու, որ այն չորանա: Ես քո բոցը վառ կպահեմ: Ես երբեք քեզ խավարի մեջ չեմ թողնի: Իմ Առաջնորդությունը խաղաղությամբ է լինելու, ուստի Ես ուզում եմ, որ դու Ինձ երբեք դուրս չթողնես քո տեսադաշտից:

Տե՛ր:

Ես եմ:

Կարո՞ղ եմ Քեզ մի բան հարցնել:

Ազատ զգա քեզ, հարցրո՛ւ:

Տե՛ր, Դու ինձ հարություն ես տվել մեռելներից, այդպես չէ՞:

Ես հարություն եմ տվել քեզ:

Տե՛ր և Փրկիչ,
Դու կերակրում ես ինձ
անբավ առատությամբ,
Դու հսկում ես ինձ օր ու գիշեր,
որպեսզի չլինի թե
ինձ չարիք պատահի,
Դու ինձ բարձրացնում ես
դեպի Քեզ այն պահին,
երբ ինձ հալածողները
ուր որ է կոխկրտելու են ինձ:
Դու Իմ խնամակալն ես,
Առաջնորդը, Ուսուցիչը,
Ամուսինը, Սուրբ Ընկերակիցը:
Դու Ամենաքնքուշ Աստվածն ես:
Թույլ տուր ինձ, Տեր,

[1] Ես հանկարծակի կարոտ զգացի իմ Երկնավոր Հոր հանդեպ, կարոտ, որ լինեմ Նրա հետ: Ես ինձ զգացի ինչպես մի որբ, մի որբևայրի: Շատ ցավալի է Աստծո հանդեպ զգալ այս փափագը:

Հարցնել Քեզ հետևյալը.
Դու, որ հեղել ես
Քո Հոգին ինձ վրա,
մի՞թե չես հեղի Քո Հոգին
նույնպես իմ եղբայրների վրա:
Դու, որ փնտրել ես
ինձ մեռելների մեջ
և հարություն ես տվել,
մնացած մեռելներին էլ
հարություն չե՞ս տա:

Իմ Վասո՛ւլա, Ես հարություն եմ տալու մեռելներին: Ես արդեն այդ դիակների շուրջն եմ, որովհետև նրանք իրենց շուրջը տեսնելու են մի բան, որի մասին երբեք չի խոսվել և ականատես են լինելու մի բանի, որի մասին երբեք չի լսվել: Նրանք, որոնց հետ երբևէ չի խոսվել Իմ Գեղեցկության մասին, տեսնելու են Ինձ՝ Լույսին, և նրանք, որոնք երբևէ չեն լսել Իմ Սիրո մասին՝ հասկանալու են և դարձի են գալու: Նրանք Իմ Խոսքի նոր անոթներն են լինելու, որպեսզի ձեր երիտասարդությանը վերադարձնեն դեպի Ինձ: Այո՛, օտարներն են, որ վերաշինելու են Իմ Եկեղեցին: Նրանք վերաշինելու են հին ավերակները: Նրանք բարձրացնելու են այն, ինչ այժմ քանդված է: Նրանք վերահաստատելու են այն ամենը, ինչ այժմ ավերված է: Մի՞թե չես նկատել:

Բայց նրանք թվով այնքան քիչ են համեմատած Քո Եկեղեցու սարսափելի ավերածությունների հետ, Տեր:

Ես բազմապատկելու եմ նրանց, պարզապես սպասիր և կտեսնես: Սերը վերադառնալու է որպես Սեր: Ես միշտ ձեզ հետ եմ: Ե՛կ այժմ, հանգստացիր Իմ մեջ: Մե՞նք, մե՞ղ:

Հավիտյանս:

Փետրվարի 27, 1989

Խաղաղություն Քեզ *(Սբ. Միքայել):*

Փառավորյալ լինի Տերը *(Սբ. Մարիամ):*

Օ՜, լսիր Ինձ՝ Ես Տերն եմ: Ե՛կ դեպի Ինձ, ինչպես այժմ՝ այդ Հոգիներին Ինձ մատուցելով[1]: Ես երբեք ոչ մի աղոթք չեմ մերժում, եթե անգամ այն գաղջ է և բխում է ինքնին «խեղճությունից»: Ես լսում եմ այն: Ես գիտեմ քո տկարությունը, բայց Իմ Զորությունը կպահի քեզ: Աղոթի՛ր, որ հավատդ աճի: Ես քեզ եմ ուղարկում այդ բոլոր Հոգիներին: Աղոթի՛ր

[1] Ես դիմեցի Տիրոջը և Նրան մատուցեցի բոլոր Հոգիներին, որոնք խնդրել էին Ինձանից աղոթել իրենց համար: Զգիտեմ ինչու, ես մի ինչ-որ չորություն զգացի:

ճանաչելու համար Իմ Կամքը: Անդադրում աղոթիր: Խնդրի՛ր և կտրվի քեզ, խնդրի՛ր: Երբեք մի՛ դադարիր աղոթելուց, ես լսում եմ: Նույնիսկ այն հոգոցը, որ ուղղում ես Ինձ՝ Ես նկատի եմ առնում, եթե այդ ամենը բխում է սրտից: Ուստի հավատա այն ամենին, ինչ խնդրում ես, և Ես դրա հարյուրապատիկը կտամ քեզ: Դու խնդրում ես, որ ներվե՞ս: Ես ներելու եմ քեզ: Դու օգնություն ես խնդրում: Ո՞ր հայրը չի տա այն իր զավակին:

Տե՛ր, երբեմն հայրեր կան, որ չեն օգնում իրենց զավակներին:

Այդ հայրերն Ինձանից չեն, եթե նրանք Իմը լինեին, ապա կսիրեին Ինձ և, հետևաբար, կսիրեին իրենց զավակներին և կօգնեին նրանց: Ես այստեղ եմ, որ օգնեմ քեզ՝ քո հոգևոր աճի մեջ: Ես երբեք չեմ մերժի Իմ Կերակուրը քեզ տալուց:

Ե՛կ, Իմաստությունը կուսուցանի քեզ:

Փետրվարի 28, 1989

(Ես բացարձակապես ինձ ցամաքած զգացի, սոսկալի ցամաքած ու սառը):

Իմ Վասո՛ւլա, ինչպե՞ս կարող ես կասկածել Իմ Սիրուն: Թույլ տուր, որ Մատս քեզ վրա լինի: Իմաստությունը կուսուցանի քեզ, հիշի՛ր, թե ով է Նա, որ առաջնորդում է քեզ: Մտածի՛ր: Թույլ տուր Ինձ օգտագործել քո սիրո էությունը՝ տաքացնելու համար ուրիշ սրտեր, որոնք սառն են և չեն սիրում Ինձ: Ես քեզ արդեն սովորեցրել եմ այս Երկնային Գործերը, այդպես չէ՞:

Այո՛, սովորեցրել ես: Տե՛ր, բայց, երբ դա լինում է, դա ինձ մոտ վախ և անհանգստություն է առաջացնում:

Ես միշտ մոտ եմ քեզ, դու կարիք չունես վախենալու, աղջիկս:

Ե՛կ, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Այդ դեպքում ինչպե՞ս է որ Ես չեմ լսում, երբ Դու ասում ես այդ: Ե՛կ, Ես կհիշեցնեմ քեզ Իմ Ներկայության մասին:

Մարտի 1, 1989

(Սբ. Միքայելի պատգամը աղոթաժողովի համար)

Վասո՛ւլա, Փառք Աստծո: Գովյա՛լ լինի Տերը: Տիրոջ Ողորմությունն անսահման է, Տիրոջ Շնորհը ձեզ վրա է: Արթնացե՛ք: Արթնացե՛ք: Դեպի Տիրոջը վերադարձեք դուք բոլորդ, որ լքել եք Ճշմարտությունը:

Վերադարձե՛ք և ապաշխարեք: Աղոթե՛ք ձեր եղբայրների դարձի համար: Ուշադրություն դարձրեք Տիրոջ զգուշացումներին: Հաշտվե՛ք, հաշտվե՛ք, հաշտվե՛ք Աստծո հետ:

Ես՝ Սուրբ Միքայելը, ձեզ մոտ եմ՝ ձեզ պաշտպանելու համար: Անդադար աղոթեք, ձեր աղոթքներն առավել քան երբևէ անհրաժեշտ են Պահքի այս օրերին:

Ես օրհնում եմ ձեզ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

Մարտի 3, 1989

(Սուրբ Մարիամի պատգամը աղոթաժողովի համար)

Խաղաղություն ձեզ: Սիրելինե՛րս, ես այսօր ձեզ խնդրում եմ, որ հարատևեք Սիրո մեջ:

Ես ուզում եմ քաջալերել բոլորիդ: Փառավորե՛ք Աստծուն՝ հավատարիմ մնալով Նրան: Ձեզ ամբողջապես Աստծուն նվիրեք: Թող այն կրակը, որն այժմ առկայծում է, կրկին բոցավառվի և դառնա մի Կենդանի Ջահ, որպեսզի յուրաքանչյուր աչք տեսնի այն: Ամուր եղեք ձեր հավատի մեջ և ձեր սրտերն ամբողջությամբ բաց արեք Տիրոջը և Նրան ուրախությամբ ընդունեք: Փառավորե՛ք Տիրոջը՝ Ողորմության Իր Կանչերը ձեզ ուղարկելու համար:

Մի՛ ակնկալեք որևէ նոր հայտնություն: Նրա Կանչերը միմիայն Աստվածային Ճշմարտության հիշեցում են, հիշեցում այն մասին, թե ինչպես սուրբ ապրեք, հիշեցում այն մասին, որ Աստված Սեր է: Աստված ձեզ հիշեցնում է Էական Ճշմարտությունների մասին, ուստի ձեր միտքը լցրեք այն ամենով, ինչը ճշմարիտ է ու մաքուր: Ձեր ներսում բոլորովին դատարկ տեղ մի թողեք, որ չլինի թե Փորձիչը դա և խաբի ձեզ: Ուրեմն՝ ինքներդ ձեզ լցրեք Աստծո Աստվածային Սիրով, որովհետև դուք ստեղծվել եք սիրելու համար:

Աղոթե՛ք Խաղաղության համար: Աղոթե՛ք ձեր եղբայրների դարձի համար: Աղոթե՛ք, որ սերն աճի ձեր մեջ: Ես ձեր կողքին եմ, որպեսզի օգնեմ ձեզ, և Ես բարեխոսելու եմ ձեզ համար: Ուստի մի՛ վարանեք և դեպի Ինձ եկեք: Ես ձեր Մայրն եմ, որը միշտ կօգնի ձեզ:

Սիրով եկեք Տիրոջ մոտ, և Նա կլցնի ձեզ Իր Խաղաղությամբ: Խնդրե՛ք սիրով և կստանաք, աղոթե՛ք սիրով և լսելի կլինեք:

Իմ Խաղաղությունը ձեզ: Հիշե՛ք. ապրե՛ք Մեր Պատգամներով: Ես ձեզ բոլորիդ օրհնում եմ Հոր, Որդու և Սուրբ Հոգու Անունով: Ամեն:

Մարտ 1989

(Պատգամներ Բիարիցի համար Ֆրանսիայում: Այս պատգամները ինձ տրվել էին, որպեսզի դրանք կարդացվեին Ավագ Շաբաթվա ընթացքում):

Խաղաղություն ձեզ բոլորիդ:

Ես Տերն եմ: Սիրելինե՛ր, Ես ձեզ մոտ եմ գալիս Իմ ծառայի միջոցով և խոսելու եմ նրա միջոցով: Ա՜հ, սիրելիներս, Ես Իմ Խաղաղությունն եմ տալիս այս տանը: Եկե՛ք, եկե՛ք և ունկնդրեք Ինձ այժմ: Ես ձեր Աստվածն եմ և ձեր Արարիչը, որ ձեր մեջ Կյանք է փչել: Ես սրբագործել եմ ձեզ սիրով: Ես Վսեմ Սիրո Աղբյուրն եմ, և Ես ստեղծել եմ ձեզ Սիրուց դրդված, որպեսզի դուք էլ սիրեք Ինձ՝ ձեր Աստծուն: Հոգինե՛ր, դուք պատկանում եք Ինձ, դուք Իմ Սերմն եք:

Ես փափագում եմ, որ դուք ամբողջապես հասկանաք Իմ Խոսքերը: Հավատացե՛ք Իմ Սուրբ Գործերին, հավատացե՛ք Իմ Անհուն Սիրուն և Իմ Գերառատ Ողորմությանը: Հավատացե՛ք Ինձ: Ողորմությունից դրդված, Ես ցած եմ իջնում, որպեսզի վերակենդանացնեմ ձեզ, սթափեցնեմ ձեզ այս Անտարբերությունից, որն այժմ քողի նման ծածկել է ձեր աչքերը: Ես Հիսուսն եմ, իսկ Հիսուս նշանակում է Փրկիչ:

Ես ինչպե՞ս կարող էի ձեզ տեսնել, որ մոլորված գնում եք է՛լ ավելի թանձր խավարի խորքերը ու չփութայի ձեզ փրկել: Ես, որ Տերն եմ, Սրբերի Սուրբը, Որը շրջապատված է ամեն կարգի անթիվ հրեշտակներով, որոնք գետնատարած Իմ առջև անդադար պաշտում են Ինձ, Ես թողեցի Իմ Փառքն ու Իմ Երկնային Գահը, որպեսզի իջնեմ ձեզ մոտ և փրկեմ ձեզ հավիտենական կրակից: Ես թողել եմ Երկինքը՝ Իմ Թագավորությունը, որպեսզի գամ ձեր Անապատի ու Ամայության մեջ՝ այս երկրի վրա: Այո՛, Ես թողել եմ Իմ Գահը՝ շրջապատված քերովբեներով, որպեսզի գամ և ծնվեմ աղքատության մեջ՝ ձեզ փրկելու համար: Ես՝ Գերիշխանը, որին ողջ Երկինքը փառաբանում է Հավիտենությունից ի վեր, համաձայնվեցի, որ նվաստանամ մարդկանց կողմից՝ մատուցելով մեջքս, որ ձաղկեն: Ես թույլ տվեցի, որ նրանք Ինձ թագադրեն փշե պսակով: Ես թույլ տվեցի նրանց, որ ծաղրեն Ինձ և թքեն Իմ Սուրբ Երեսին: Ես թույլ տվեցի, որ նրանք խաչեն Ինձ և այս բոլորը՝ ձեր հանդեպ Իմ ունեցած սիրուց դրդված:

Օ՜, Խաչյալի զավակներ, ինչպե՞ս կարող էիք մոռանալ այն ամենը, ինչ Ես արել եմ ձեզ համար: Իմաստությունն իջել էր, որպեսզի զավթվեր ուժով և օրենքով: Ես արհամարհվեցի և մերժվեցի մարդկանց կողմից, որպեսզի կրեմ <u>ձեր</u> տառապանքները: Ես մեխվեցի փայտին, որ <u>ձեզ</u> ազատեմ: Ես թույլ տվեցի նրանց, որ Ինձ խոցեն՝ ձեզ փրկելու համար: Ես ընդունեցի ամենացավալի մահը, որպեսզի ձեր հոգին կարողանա ապրել և բաժնեկից լինել Իմ Թագավորությանը: Ես թույլ տվեցի, որ Իմ Արյունը Գետերի վերածվի, որպեսզի դուք կարողանաք Հավիտենական Կյանք ձեռք բերել: Ձեզ համար, Ես թույլ տվեցի, որ Ինձ մեղավոր համարեն:

Այսօր Իմ Վերքերը կրկին բացվել են այս սերնդի անիրավության պատճառով: Անթիվ, անհամար ժամերով Ես ձեզ դարձի կոչ եմ անում: Վերադարձե՛ք Ինձ: Ես ձեզ սիրում եմ հավիտենական սիրով: Եկե՛ք և հաշտվե՛ք Ինձ հետ: Ես չեմ պատժի ձեզ. Ես կազատագրեմ ձեզ: Ես ձեզ այլևս Անաստված չեմ կոչի. դուք Իմ Յուրայինները կկոչվեք: Դուք անհայր չեք, դուք արդեն հայր ունեք Երկնքում՝ չափազանց Քնքուշ մի հայր: Ես ձեզանից խնդրում եմ միայն, որ դուք ճանաչեք և ընդունեք Ինձ: Վերադարձե՛ք Ինձ մոտ և Ես հավիտյանս կպսակեմ ձեզ Ինձ հետ: Ես կպսակադրեմ ձեզ Շիտակությամբ, Հավատարմությամբ, Մաքրությամբ ու մեծ Քնքշությամբ: Ես կսովորեցնեմ ձեզ հավատարիմ

լինել Ինձ՝ գրավելով ձեր սերը, որը ես կդնեմ Իմ Սրտում, որպեսզի զարդարեմ այն: Ինչպես մի ամուսին, ես ձեզ կզարդարեմ Իմ Սիրով և Իմ Խաղաղությամբ:

Սիրելիներս, Ինձանից մի՛ վախեցեք: Օ՜, եկե՛ք: Եկե՛ք Ինձ մոտ: Նետվե՛ք Սիրո Բազուկների մեջ. ես ձեզ չեմ հանդիմանի: Ես այստեղ եմ, որպեսզի մոռանամ և ներեմ: Այդքան պատրաստակամ մի՛ եղեք ընկնելու Սատանայի որոգայթները: Բացե՛ք ձեր աչքերը և տեսեք: Բացե՛ք ձեր ականջները և լսեք Իմ Աղաղակը Վերևից: Բացե՛ք ձեր սրտերը և հասկացեք, որ այդ ե՛ս եմ՝ Հիսուս, որ կանչում է ձեզ: Ես ձեր Հոգին ստեղծել եմ Հավիտյան ապրելու համար: Կուզեի՞ք խոսել այս մասին:

Ես Սուրբ եմ: Երանի այն Հոգիներին, որոնք զգեստավորված են սրբությամբ, որովհետև Երկնքի Դարպասները չեն դիմադրի նրանց: Բայց վա՜յ այն Հոգիներին, որոնք չեն մաքրել իրենց, այլ լեցուն են արատներով: Սրանք չպիտի կարողանան մտնել Իմ Թագավորությունը: Դարձի՛ եկեք և հետևեք Իմ Ուղիներին՝ լսելով Ողորմության Իմ Կանչը: Խոկացե՛ք Իմ Պատգամի շուրջ, ապրե՛ք Իմ Պատգամներով:

Ես՝ Տեր Հիսուս Քրիստոսը, սիրում եմ ձեզ բոլորիդ: Ես ձեզ սիրում եմ Իմ ողջ Սրտով:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին:

ΙΧΘΥΣ

(Հետևյալ պատգամը նույնպես տրվել է Մեր Սուրբ Մոր կողմից Բիարիցի (Ֆրանսիա) համար)

Փառաբանե՛ք Տիրոջը: Օրհնե՛ք Տիրոջը:

Զավակնե՛րս, լսեք Իմաստության Խոսքերը. երբեք մի՛ մերժեք Տիրոջը: Փնտրե՛ք Ճշմարտությունը և մի՛ ընդդիմացեք Ճշմարտությանը: Ինքներդ ձեզ հետևյալը հարցրեք. «Ինչո՞ւ Տերը Իր մասին մեզ հայտնեց»: Սիրելիներ, Տերը եկել է ձեզ մոտ Սիրուց և Խղճահարությունից դրդված, որովհետև այսօր այնքան շատերն են խոտորվել՝ առանց հասկանալու, թե դեպի ուր են գնում: Ձեր դարաշրջանը մեռած է, և Հիսուս փնտրում է ձեր Հոգին, որպեսզի այն նորից վերակենդանացնի: Թույլ տվեք, որ ձեր սրտերը բացվեն, թույլ տվեք, որ Տերը մտնի ձեր սրտերը, ուրիշ ինչպե՜ս Նա կարող է ձեզ բժշկել:

Ես ձեր Սուրբ Մայրն եմ, որ զոր ու գիշեր արտասվում է ձեր խոտորված Հոգիների համար: Ողջ երկրով մեկ Տերը ձեզ անհամար Նշաններ է տալիս, որպեսզի զգուշացնի ձեզ: Դուք ապրում եք Վերջին ժամանակներում: Զավակներս, վերադարձե՛ք դեպի մեզ. լսե՛ք Մեր Կանչերը:

Աղոթե՛ք Ինձ և Ես կբարեխոսեմ ձեզ համար: Եկե՛ք և Սիրով աղոթեք: Ես միշտ ձեզ հետ եմ, թեպետ և դուք Ինձ չեք տեսնում, ձեր քայլերը մոտ են Իմ քայլին: Սիրելիներ, Մենք միշտ Ներկա ենք: Գոհացրե՛ք Տիրոջը՝ հիշելով Իր Ներկայության մասին: Ես օրհնում եմ բոլորիդ Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

(Տերն ինձ հրահանգեց կարդալ նրանց համար Սուրբ Գրքից Բ Տիմ. 3:1-17-ը):

Հիսո՞ւս:

Ես եմ: Զգա՛ Իմ Ներկայությունը: Սերը սիրում է քեզ: Ես միշտ նախապատրաստելու եմ քո ուղին այդ բոլոր աղոթաժողովներում:

Թույլ տուր, որ Իմ Հոգին շնչի քո մեջ: Ես կսովորեցնեմ քեզ պատրաստակամ լինել: Ես կսովորեցնեմ քեզ չբարձրանալ: Ես կսովորեցնեմ քեզ փոքր մնալ: Իմ Հոգին քեզ վրա է: Ես սեր եմ փափագում, սե՛ր, որպեսզի ջնջեմ անարդարությունը, սե՛ր, որպեսզի վերանորոգեմ այն վնասները, որոնք հասցվել են Իմ Եկեղեցուն, սե՛ր, որպեսզի կերակրեմ Իմ սոված գառներին, սե՛ր՝ հատուցելու համար չարին, սե՛ր՝ հագեցնելու համար Իմ անհագ ծարավը: Օ՜, զավա՛կս, հսկայական հատուցումներ պետք է կատարվեն, բայց ձեզանից այնքան քչերն են, որոնք անկեղծ են և կհատուցեն: Դուք այժմ մի բուռ եք: Իմ արարչության մնացորդը անկեղծ է: Ուստի շատերը, որոնք հետևում են Իմ Նշաններին, գրավված են միայն զգայացունց բաներով և ոչ ավելին: Դու նույնիսկ տեսնում ես[1] այդ հոգիներին:

<u>Իմ Նշանները ձեզ չեն տրվում այս աշխարհում զգայական ցնցումներ առաջացնելու համար</u>: Ես ամենայն լրջությամբ խնդրում եմ բոլոր նրանց, ովքեր հետամուտ են զգայացունց բաների, խոնարհությամբ գալ Ինձ մոտ և աղոթել: Եկե՛ք Ինձ մոտ առանց հետամուտ լինելու հրաշքների, նշանների և զարմանահրաշ բաների: <u>Եկե՛ք Ինձ մոտ աղոթքով: Սո՛ւրբ եղեք, ապաշխարե՛ք և ծոմ պահեք</u>՝ ձեր հոգիները սին պատրանքներով լցնելու փոխարեն: Իսկ երբ Ես չեմ գոհացնում ձեր հոգին՝ դուք բոլորովին թիկունք եք դարձնում Ինձ... Ո՞ւր է այն Հոգին, որով Ես օժտել եմ ձեզ: Թող ձեր հոգին պահի Իմ սկզբունքները:

Խոնարհե՛ք ձեր աչքերն Իմ առջև, ծնկի եկեք Իմ Սուրբ Ներկայության մեջ և զղջացեք ձեր չարության համար: Ես՝ Տերս, բարձրացնելու եմ նվաստին: Ե՛կեք դեպի Ինձ, որպեսզի լսեք Իմ Ձայնը: Ե՛կեք և հայտնաբերեք Իմաստությունը՝ խոնարհությամբ և անկեղծությամբ: Իմ Սուրբ Սիրտը չի ախորժում նրանց, ովքեր հետամուտ են սենսացիաների և ոչ էլ նրանց, ովքեր պնդում են, թե բարիք են գործում, բայց գալիս են հետաքրքրասիրությունից դրդված: Որքա՜ն քիչ բան են նրանք սովորելու:

Զավակս, թեև դու անընդունակ ես ամբողջապես հասկանալու Իմ Իմաստությունը, այդուհանդերձ, Ես եղել եմ և մնում եմ քո միակ Ուսուցիչը: Ես քեզ առաջ եմ տանում քայլ առ քայլ: Ես կրթում եմ քեզ Իմաստության Ուղիներով: Ես առաջնորդում եմ քեզ առաքինության արահետով: Հետամուտ մի՛ եղիր շրջվել՝ ո՛չ աջ, ո՛չ էլ ձախ. կառչի՛ր այն ամենից, ինչ Ես եմ քեզ տվել:

Զավա՛կս, Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Դու կհամբուրե՞ս քո Տիրոջ Ոտքերը:

Այո՛, Տեր:

[1] Ես ճանաչում եմ նրանց, ովքեր միայն հետամուտ են զգայացունց բաների:

Ե՛կ, ես Ներկա եմ:

Մարտի 6, 1989

Խաղաղությո՛ւն, ես քո հրեշտակն եմ, Դանիելը: Ես քեզ հետ եմ՝ առաջնորդելով քեզ: Ես Տիրոջ Կամքն եմ կատարում: Ես անդադար աղոթում եմ քեզ համար: Փափագի՛ր Տիրոջը: Ընդունի՛ր այն ամենը ինչ Նա տալիս է քեզ, զգուշացի՛ր չարից:

Հեռո՛ւ վանիր չարին, երբ նա ինձ մոտ է, խնդրում եմ:

Ես դա անում եմ: Ջերմեռանդությամբ աղոթի՛ր, Իմ Վասո՛ւլա, որովհետև Տերն այդպես է սիրում: Երբեք մի՛ դադարիր աղոթել: Խաղաղության մեջ մնա:

Մարտի 8, 1989

Տե՞ր:

Ես եմ: Ես առաջնորդել եմ քեզ կարդալու Հովնանի գիրքը, որովհետև Ես ուզում եմ, որ դու և Իմ զավակները հասկանաք, որ Ես միշտ կարող եմ մեղմել այն Պատիժը, որը վերապահել եմ ձեր չար սերնդի համար: Ես չեմ ուզում, որ Իմ Արդարության Բաժակը պռունկներից թափվի, ինչպես այսօր, ուստի ասում եմ ձեզ՝ ապաշխարե՛ք, ծո՛մ պահեք և սո՛ւրբը եղեք:

Տե՛ր:

Ես եմ:

Տե՛ր, ոմանք ծոմ են պահում, ապաշխարում են և..., դա բավարար չէ՞: Մենք ճիշտ ճանապարհին չե՞նք:

(Ես այնպիսի տպավորություն ունեի, որ մենք մի փոքր ավելի լավ ենք այս վերջին տարիներին և ճիշտ ճանապարհի վրա ենք գտնվում):

Իմ Վասուլա, շատերը կործանման ճանապարհին են գտնվում այն չարի պատճառով, որը կուտակվել է նրանց մեջ: Նրանց ներսում գիշեր է, ուստի ինչպե՞ս կարող ես ասել, որ այս սերունդը ճիշտ ճանապարհի վրա է գտնվում:

Ի՞նչ կարող ենք անել, որ <u>ամեն մարդ</u> իմանա, որ մենք աղետի եզրին ենք գտնվում: Ոմանք գաղափար անգամ չունեն:

Քանի դեռ Իմ Հոգին ճնշվում է և քանի դեռ Իմ Յուրայինները խլացնում են Իմ Զգուշացումները ընկճելով Իմ Հոգուն,

արհամարհանքով վերաբերվելով մարգարեությունների և գրեթե հրճվանքով հայտարարելով, որ Մեր Ներկայությանը վերաբերող երևումները ճշմարիտ չեն՝ Ես այլևս չեմ տանելու այն. Իմ Արդարությունը հաղթելու է: Այսօր Ես տակավին գալիս եմ ձեզ մոտ, որպես Ամենագթառատ Բարեկամ, բայց վաղը իջնելու եմ ձեզ մոտ, որպես ահարկու մի Դատավոր: Նրանք ճնշում են Իմ Հոգուն, նրանք ծաղրում են Իմ Օրհնությունները. սրանք այսօրվա կայենները են:

Ես խենթի պես սիրում եմ բոլորիդ: Միշտ հիշեք սա: Ես կմեղմեմ Իմ Արդարությունը միայն այն ժամանակ, երբ հսկայական հատուցումներ կատարվեն:

ΙΧΘΥΣ

Սերը սիրում է ձեզ: Ահա Սուրբ Միքայելը

Աստծո զավա՛կ, ոչինչ անհնար չէ Աստծո համար:

Հսկայական հատուցումներ պետք է արվեն: Եթե ձեր սերունդը դարձի գա, ապա Սրբերի Սուրբը կմեղմի Իր Պատիժը: Թող նրանք, ովքեր ականջ ունեն՝ լսեն, քանի որ Նրա Ողորմությունը, դարեդար է ձգվում նրանց համար, ովքեր վախենում են Նրանից: Աչալո՛ւրջ եղեք: Երբեք մի՛ դադարեք հատուցելուց: Նրանք, ովքեր այժմ ծաղրում են ձեզ՝ հետագայում իրենց ատամներն են կրճտացնելու: Ես՝ Սուրբ Միքայելը, անդադար աղոթում եմ այս չար սերնդի համար:

Աղոթի՛ր, զավակս, և հնազանդվիր Տիրոջը: Փառավորի՛ր Տիրոջը, որ Իր Հոգին առատորեն հեղում է ձեզ բոլորիդ վրա:

Սուրբ Միքայել, շնորհակալ եմ:

Խաղաղություն քեզ:

Վասո՛ւլա:

Այո՛, Տե՞ր:

Սա ևս ավելացրու: Ինչպե՞ս կարող են Իմ Յուրայինները խաղաղությամբ աղոթել առաքյալների հավատամքը և ասել. «Ես հավատում եմ Սուրբ Հոգուն», երբ նրանց մեծ մասը մերժում է Իմ Հոգու Գործերը, մերժում ու խեղդում է Նրան: Ես ձեզ ճշմարիտ եմ ասում. Ես բնավ սրբություն չեմ գտնում նրանց մեջ: Երբ այս խավարի մեջ հեռվից մի փոքրիկ կրակ են նշմարում, մրրիկի նման վրա են տալիս, որ հանգցնեն, որպեսզի խավարում շարունակեն իրենց չար գործերը և որպեսզի երևան չգան: Ո՛չ, Վասուլա, չի երևում, որ նրանք ուզում են ապրել Լույսի մեջ:

Ես պաշտում եմ Քեզ, Տե՛ր, Իմ Լո՛ւյս, աշխարհի Լույս[1]*:*

Ե՛կ, դու ուրախացնում ես Ինձ: Մի օր, զավա՛կս, դու միայն Լույս ես տեսնելու, միմիայն Լույս: Երբեք մի՛ վհատվիր, որովհետև Ես քեզ հետ եմ մինչև վերջ:

ΙΧΘΥΣ

Շնորհակալ եմ, Տեր Հիսուս: Օրհնյալ լինես: Փառավորվի՛ Տերը:

Մարտի 20, 1989

(Ֆրանսիա, Լուրդ)

Վասո՛ւլա, այդ Ես եմ՝ Հիսուս: Թույլ մի՛ տուր, որ խաբեբան խաբի քեզ: Այն ամենը որ Ես տվել եմ քեզ՝ Իմն է: Ինչո՞ւ ես դու լսում նրան: Ես վարժեցրել եմ քո ականջները, այդպես չէ՞: Ես բացել եմ քո աչքերը, որ Ինձ տեսնեն, ուրեմն ինչ՞ու ես կասկածում: Իմ ծառաներից շատերին է տրվել այս նույն պարգևը, ուրեմն ինչո՞ւ ես կասկածում: Վասո՛ւլա, գառնո՛ւկս, Ես քո Բարի Հովիվն եմ, որն առաջնորդում է քեզ կանաչ արոտներ, որ հանգստանաս: Ես պատսպարում եմ քեզ Իմ Բազուկներում: Ես կերակրում եմ քեզ Իմ Առաքինություններով: Ես թույլ եմ տալիս, որ հանգստանաս Իմ Սրտում: Իմ Աչքերը միշտ քեզ վրա են, ուստի ինչո՞ւ ես կասկածում Իմ Գործերին:

Որովհետև ես ինքս լավը չեմ:

Գիտեմ, բայց թույլ տուր կատարյալ դարձնել քեզ: Տե՞ս[2]: Ես Սեր եմ: Այժմ միասին՝ Ես և դու, քո ձեռքը Իմ Ձեռքում: Ես չեմ թողնի քո ձեռքը, որպեսզի դու հիշես Իմ Ներկայությունը:
Ե՛կ, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր:

Ուրեմն, թույլ տուր, որ Ես լսեմ դա:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ, Լուրդում մենք գնացինք այցելելու այն քարայրը, որտեղ Մեր Տիրուհին հայտնվել էր Սուրբ Բեռնադեթին: Մենք այցելեցինք ստորերկրյա մատուռը, որտեղ երևումներից հետո կառուցվել էր առաջին եկեղեցին: Այնտեղ ես մի ներքին ձայնով լսեցի Մեր Սուրբ Մորը, ասելիս).

[1] Մինչ ես գրում էի «այս աշխարհի Լույս»՝ հապաղեցի, ջնջեցի «այս» բառը, մտածելով, որ մեր այս իրական աշխարհը թագավորում է խավարի մեջ: Դա Հիսուսին ժպիտ պատճառեց:
[2] Ես զգացի Աստծո կողմից սիրո մի հեղեղ, որը ծածկեց ինձ: Դա հիանալի էր:

«Վերջում Մեր Սրտերը հաղթելու են»:

Մարտի 26, 1989

(Գարաբանդալ՝ իմ այցելությունից հետո)

Ես խնդրել եմ քեզ, որ սրբագործես Գարաբանդալը: Ես քեզ բարձրացրել եմ այնտեղ և հիմա դու արել ես դա:

Հիշի՛ր, Իմ ուղիները քո ուղիները չեն: Ես սովորեցրել եմ, որ դու քեզ ամբողջությամբ Ինձ հանձնես՝ տեղ թողնելով Իմ Հոգու համար, որպեսզի Այն շնչի քո մեջ, տեսնո՞ւմ ես: Ես քեզ երբեք չեմ լքի: Ես նպատակ ունեմ օգտագործել քեզ մինչև վերջ, մինչև դու կավարտես քո առաքելությունը: Թող որ Մատս հանդչի քեզ վրա՝ թույլ տալով որ քո Աստծո ցանկությունները դրոշմվեն քեզ վրա:

Իմ վարդ, Ես սիրում եմ քեզ: Ինձ մոտ գալով այս ձևով՝ դու հետևում ես Իմ հրահանգներին, դու քո կամքն ես Ինձ մատուցում: Ինձ առաջինը դասիր՝ երբեք չհաշվելով Ինձ հետ անցկացրած ժամանակդ: Ձգտիր Ինձ հետ մշտական կապի մեջ լինել՝ Ես քո Կյանքն եմ: Ինձ հետ կապված լինելը շնորհ է քեզ համար: Ես քեզ ավելի խորը կտանեմ Իմ Սուրբ Սրտի մեջ և քո հոգին դեպի կատարելություն կառաջնորդեմ:

Ուստի գոհացրու Ինձ՝ այս ձևով, ինքդ քեզ Իմ Ձեռքերին հանձնելով: Վստահ եղիր: Ե՛կ, ուրախացրու Ինձ և փառաբանիր Ինձ: Իմ Մայրը, որը նաև քո Մայրն է, պատսպարում է քեզ, առաջնորդում է քեզ, օգնում է քեզ: Աղջիկս, օրհնի՛ր Նրան: Երբեք մի՛ դադարիր աղոթելուց:

Ես երկրպագում եմ քեզ, Աստված իմ:

Միշտ երկրպագիր Ինձ:

(Այսօր, մի որոշ ժամանակ անց, ես ինձ սպառված զգացի: Ես զգացի, որ այս առաջադրանքը, որ Աստված տվել է ինձ, ջախջախում է Ինձ: Արդյոք այս բոլոր զոհողությունները որևէ բանի հասցնելո՞ւ են, թե՞ ամեն ինչ իզուր է լինելու: Արդյոք ես դեռ ուժ կունենա՞մ առանց կանգ առնելու այս ընթացքը շարունակել, թե՞ մի օր սա անհաղթահարելի կհամարեմ և ձեռք կքաշեմ:)

Իմ խաղաղությունը քեզ, լսի՛ր Ինձ: Իմաստությունը ուսուցանել է քեզ, մի՛ վախեցիր: Ուրախ եղիր, որ Ես ընտրել եմ քեզ, որ կիսես Իմ տառապանքները: Իմ խաչը, որն այնքան թանկագին է, քո վրա է դրված: Ես հանգստի կարիք ունեմ: Այն, ինչ դու տալիս ես Ինձ, իզուր չի անցնելու... ոչինչ իզուր չի անցնելու: Ես Փառավորվում եմ:

Մնա՛ Իմ զոհը: Սիրելի զոհ, որին Հայրս շնորհել է, որ կիսես Ինձ հետ Սիրո և խաղաղության Իմ խաչը: Քո փորձություններ որպես զոհի, թեթև չեն լինելու այս աշխարհում: Հասկացի՛ր, որ դու այլևս չես պատկանում այս աշխարհին և այդ պատճառով աշխարհը պախարակելու է քեզ՝ նրանց նման չլինելու համար: Մոռանալով այն մասին, թե իրենց մարմինները մոխիր են դառնալու, նրանք ծաղրելու են քեզ: Ուստի

զգույշ եղիր, որ դատարկ բանի համար չդժգոհես[1]: Այն, ինչ ես խնդրում եմ քեզանից՝ դա բաժնեկից լինելն է, կիսվել Սիրո հետ՝ սիրուց դրդված: Սիրո բաժակը դառնահամ է, շատ դառը: Չես կարո՞ղ դա կիսել Ինձ հետ: Մի՛ ընդդիմացիր Ինձ: Ես երբևէ ընդդիմացե՞լ եմ՝ երկրից եկող քո աղաչանքները լսելուց: Ես վստահեցնում եմ քեզ՝ ոչինչ իզուր չի անցնելու:

Ողջ հավիտենությունից ի վեր, Ես իմացել եմ, որ դու դյուրաբեկ ես: Ճիշտ ինչպես վարդը, որը հատուկ խնամքի կարիք ունի, դու խնամվում ես Իմ Կողմից: Երբ որ հարկն է, Ես էտում եմ քո ճյուղերը: Իմ Աչքերը շարունակ քեզ վրա են՝ խանդոտ կերպով հսկելով քեզ, որպեսզի չլինի թե մի օտարական քաղի քեզ: Ես ոչ ոքի թույլ չեմ տալիս որ քեզ դիպչի, որպեսզի չլինի թե նրանց մատները ճմլեն քո թերթիկները: Ես հսկում եմ քեզ օր ու գիշեր: Ես քո Պահապանն եմ, ուստի համոզված եղիր, որ Ես թույլ չեմ տա ոչ մեկին, որ վնասի քեզ:

(Այդ նույն երեկոյան, մեր նախորդ օրվա երկար ճամփորդությունից ուժասպառ - 12 ժամ մեքենայով -, ես գնացի աղոթելու վարդարանը և աչքերս հառեցի Ֆաթիմայի արձանին: Ես չորրորդ խորհրդի վրա էի, երբ հանկարծ Սբ. Մարիամի թիկնոցն ու գլեստը դարձավ վառ արծաթագույն: Այնքան շողշողուն էր այդ արծաթի լույսը, որ թվում էր, թե այն <u>դուրս</u> էր գալիս արձանի <u>մեջից</u>: Արձանը կարծես կենդանանում էր: Սա հազիվ թե հինգ վայրկյան տևեց: Դա գեղեցիկ էր, որովհետև այն ինձ խրախուսեց, որ ավելի լավ աղոթեմ և ես ինձ շատ երջանիկ զգացի:

Հաջորդ օրը, երբ ես նորից վարդարանն էի աղոթում և նայում էի Ֆաթիմայի Սբ. Մարիամի արձանին, հայացքս ուղղած Նրա Աչքերին, հանկարծ նկատեցի, որ Նրա աչքի վրա գտնվող թերի մասը (որն անհանգստացնում էր ինձ), այլևս չկար: Երկու աչքերն էլ այժմ անթերի էին: Դա մի փոքր արատ էր: Հավանաբար կոպերից մեկի ներկն էր թափված, և ես մտածում էի, որ պետք է այդ սպիտակ գծերը ներկեի շագանակագույն, ինչպես և արտևանունքները, որոնք չկային այդ ճերմակ գծի պատճառով: Այժմ դա անհետացել էր և երկու աչքերն էլ անթերի էին):

Մարտի 27, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ, սիրելիս: Իմ Թագավորությունը գալու է:

Թույլ տուր, որ օգտագործեմ քեզ Իմ Փառքի համար: Ես չեմ լքի՝ քեզ, չնայած, որ քո հոգին երբեմն կարծես հեռանում է Ինձանից՝ քո Աստծուց: Վստահի՛ր Ինձ, ապավինի՛ր Ինձ, ամենասիրելի զավակս: Թույլ տուր որ Իմ Հոգին ամբողջությամբ և ազատորեն շնչի քո մեջ: Փոխհատուցի՛ր այժմ, զավակս, հնազանդ լինելով և միմիայն Իմ շահերը հետապնդելով: Ես միշտ քո առջև եմ, ուստի մի՛ վախեցիր անցնել այս հովիտը, որն առանց ապաստարանի է, առանց արոտավայրերի, անպտուղ ու չոր: Ես գիտեմ, որ դրա մռայլությունը սարսափեցնում է քո հոգին,

[1] Իմաստ. 1:11

բայց ես հայտնի եմ նրանով, որ երբեք ծարավ չեմ թողել նրանց, որոնց ես առաջնորդել եմ անապատով: Ես քո առջև եմ, որպեսզի Իմ Սիրով պատսպարեմ քեզ չոր քամիներից: Ես կերակրում եմ քեզ Իմ Խոսքով:

Մինչ դու քայլում ես, Ես հարթում եմ քո ճանապարհը: Ես հեռացնում եմ բոլոր քարերն ու խութերը, որպեսզի դու չսայթաքես: Ես հեռացնում եմ դրանք, որպեսզի բացեմ քո ճանապարհը: Իմ Սուրբ Ներկայությունը հեռու է վանում Իմ թշնամիներին, որոնք քո թշնամիներն են: Երբ մացառներն ու փշերը ի հայտ են գալիս, դրանք շատ արագ կտրվում ու այրվում են Իմ հրեշտակների կողմից, որոնք շրջապատում են քեզ: Ես՝ քո Փրկիչը, թույլ չեմ տալիս, որ այդ փշերից որևէ մեկը ճանկռի ու վիրավորի քեզ, զավա՛կս: Իմ շատ սիրելի արարած, ապավինի՛ր Ինձ: Ամենակարող եմ Ես, Ամենաբարձրյալն եմ Ես: Այն, ինչ Ես ուզում եմ քեզանից՝ սեր է, սե՛ր, սե՛ր, ուստի ե՛կ ու կիսիր այն Ինձ հետ. թող Ես քո Ուրախությունը լինեմ: Ա՜հ, Վասո՛ւլա, քո մանկական սրտով սիրիր և մխիթարիր Ինձ: Ե՛կ և հանգիստ տուր Իմ Գլխին, եղի՛ր Իմ գլխակալը, եղի՛ր Իմ պատվանդանը, եղի՛ր Իմ Երկինքը: Թույլ տուր, որ քեզ առաջնորդեմ այս մահվան հովտի միջով: Շուտով այս ամայությունից Ես կտանեմ քեզ Իմ Տունը, որը նաև քո Տունն է, զավակս: Ինձ հետ մե՛կ եղիր, օ՜, ամենասիրելի զավակ: Դու կմխիթարե՞ս Ինձ՝ քո Փրկչին:

Օրհնյա՜լ լինի մեր Տերը,
որ սիրո հրաշքներ է
կատարում ինձ համար,
որ ողջ մարդկությունը տեսնի:
Տե՛ր, որքա՜ն մեծ է Քո բարությունը՝
վերապահված նրանց համար,
ովքեր երկյուղում են
Քեզանից տրված նրանց,
ովքեր ապաստանում են Քո մեջ,
որպեսզի
համայն մարդկությունը տեսնի:

Ցնծացե՛ք մեր Տիրոջով և Փրկչով,
հրճվե՛ք առաքինիներ,
աղաղակե՛ք ուրախությամբ,
ո՜վ արդար սրտեր:

Ես դիմազերծելու եմ Իմ բոլոր թշնամիներին և Իմ Շնչով քշելու եմ բոլոր նրանց, ովքեր փակում են դեպի Ինձ բերող Ճանապարհը: Ես վերստին հայտնելու եմ Իմ Սուրբ Դեմքը, իսկ այս ամայի Անապատը ծածկելու եմ Մաքրությամբ, Սրբությամբ և Ուղղամտությամբ: Սերն ու Խաղաղությունը ձեզ հետ են լինելու և բնակվելու են ձեր մեջ, հասկանո՞ւմ ես: Ես չե՞մ ասել, որ Ես բնակվելու եմ ձեր մեջ և դուք Իմ յուրայիններն եք լինելու:

Զավա՛կս, հիշեցրու նրանց, թե Իմ Հոգին որքան հակառակ է ամբարտավաններին և որ Իմաստությունը տրվում է նվաստներին ու պարզերին:

Ե՛կ...

Մարտի 29, 1989

(Պատգամներ, տրված Քուրթեթելում տեղի ունեցած աղոթաժողովի համար, Շվեյցարիայի Հյուսիսում):

Խաղաղություն ձեզ:

Ես Տերն եմ, զգացե՛ք Իմ Ներկայությունը, զատորոշեք Իմ Ներկայությունը: Այսօր Ես գալիս եմ ձեզ մոտ՝ խոսելով Իմ ծառայի միջոցով: Ես միշտ ձեզ հետ եմ՝ ձեր կյանքի յուրաքանչյուր պահին: Իմ Սուրբ Սիրտը ցնծում է՝ զգալով ձեր սերն Իմ հանդեպ: Գառնե՛րս, որքա՜ն եմ Ես միշտ ցանկացել հավաքել բոլորիդ Իմ Թևերի տակ և թաքցնել ձեզ չարից: Ես սիրում եմ ձեզ: Ես սիրում եմ ձեզ հավիտենական սիրով. մի խանդոտ սիրով, որը կհասկանաք միայն այն ժամանակ, երբ Երկնքում կլինեք:

Բայց այնուամենայնիվ, չնայած Իմ Անհուն Սիրուն, Իմ զավակների մեծ մասը թիկունք է դարձնում Ինձ... Նրանք մոռացել են Իմ Զարչարանքները և Իմ Անունը աստիճանաբար փոփոխվելով, այժմ իմաստազուրկ է դարձել նրանց համար: Տվե՛ք նրանց կուռքեր և նրանք առաջինը կլինեն, որ կպաշտեն դրանք, բայց տվեք նրանց այն, ինչ Սուրբ է՝ նրանք ծաղրուծանակի կենթարկեն Այն:

Ես՝ ձեր Սուրբը, տառապում եմ, և Իմ Մարմինը խեղվում է այս գորշ աշխարհի անհնազանդությունից, ապականությունից և անիրավությունից: Ա՛հ, արարչություն: Տառապելից հնչող Իմ Աղաղակը ցնցում է բովանդակ Երկինքը՝ դողացնելով Իմ հրեշտակներին և գետնատարած թողնելով նրանց: Մի՞թե դուք դեռ չեք լսել Ինձ, Իմ դուստրեր և ուստրեր: Ձեր խլության պատճառով Երկնքից եկող Իմ Աղաղակները նույնիսկ դևերին են շշմեցնում... Զօր ու գիշեր, ժամեր շարունակ, Արյան Արցունքները հեղեղում են Իմ Աչքերը: Ես անդադար ձեզ եմ սպասում: Մի՞թե դուք հավիտյան մերժել եք Իմ Հոգուն: Իմ Ձայնն արձագանքում է այս կործանարար անապատում, որտեղ մեկ արոտ անգամ չկա հանգստանալու համար, ոչ մի աղբյուր, որ հոսի ու թարմացնի ձեզ:

Ես իջնում եմ Երկնքից, Իմ Գահից, դեպի Իմ հին Արոտավայրերը, և դրանք գտնում եմ լքված ու անպտուղ: Իմ ծաղիկները, որոնց Ես Իմ Սեփական Ձեռքերով այնքան մեծ սիրով տնկել էի, փչանում են մեկը մյուսի ետևից: Իմ ծաղկի մարգերը արհամարհվել են ու չորացել: Իմ ջրհորներն այժմ միայն դատարկ, ցեխոտ, մռայլ փոսեր են, որտեղ բույն են դրել իժերը: Ո՞ւր են գնացել Իմ պահապանները: Ինչո՞ւ են նրանք լքել Իմ պարտեզը: Արդյոք վերադարձիս Ես գեթ մի ծաղիկ կգտնե՞մ:

Իմ Հոգին փշրվում է սիրո պակասից, հավատի պակասից, խաղաղության պակասից: Իմ Սուրբ Սրտի զավակներ, լսե՛ք Իմ Աղաղակն այս անապատում, ճանաչե՛ք Իմ Ձայնը, գոնե Ժամանակները ճանաչեք: Եկե՛ք դուք՝ բոլորդ, որ չեք հաշտվել Ինձ հետ, այժմ եկեք և հաշտվեք: Ձեր անիրավությունները խոցել են ողջ հավիտենությունը՝ ձեզ Ինձանից հեռու մղելով: Զարությունն մի՛ գործեք և ոչ մի չարիք ձեզ չի հասնի: Բարյացակամ եղեք միմյանց հանդեպ, սիրեցե՛ք միմյանց, ներե՛ք ձեր

թշնամիներին: Ես կրկնում եմ Իմ խոսքերը, որոնք դուք բոլորդ գիտեք, բայց ձեզանից քանի՞սն են դրանք գործադրում:

Սրտա՛նց աղոթեք, ես սիրո կարիք ունեմ: Եկե՛ք և զարդարեք Ինձ աղոթքներով, որոնք ձեր սրտից են բխում: Եկե՛ք և վերցրեք Իմ Սրտից, որը Սիրո մի Վիհ է ու լցրեք ձեր սրտերը: Ես ձեզ ամենայն լրջությամբ եմ ասում, ժամերը թռչում են, շատ սիրելի հոգիներ, վերադարձե՛ք դեպի Ինձ: Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն: Աղաղակե՛ք ազգերին խաղաղության համար: Խաղաղությո՛ւն, որպեսզի միավորվեք, խաղաղությո՛ւն, որպեսզի փառավորեք Ինձ: Գալիս է օրը, երբ Իմ տեսանողների տեսած յուրաքանչյուր տեսիլքը իրականանալու է, որովհետև այն, ինչ հայտարարում եմ Ես՝ միշտ կատարում եմ: Աղոթե՛ք, սիրելիներս, Իմ Պետրոսի համար: Աղոթե՛ք Պատրիարքի համար, աղոթե՛ք Իմ բոլոր քահանաների[1] համար: Աղոթե՛ք, որ Իմ Փարախը մեկ լինի, ինչպես Ես և Հայրն ենք Մեկ և Համազոյ: Աղոթե՛ք, որ Իմ Գառները վերադառնան դեպի միակ Փարախը՝ Պետրոսի առաջնորդության ներքո, մինչ Իմ Վերադարձը:

Օ՜, եթե միայն լսեիք և հնազանդվեիք: Կաղոթե՞ք հիմա «Հայր Մերը», Ես լսում եմ (...) և Ես խոստանում եմ ձեզ, որ Իմ Թագավորությունը գալու է և Իմ Կամքը կատարվելու է երկրի վրա, ինչպես Երկնքում է: Զավակնե՛րս, խաղաղության պտուղ տվեք: Ես՝ Տերս, սիրում և օրհնում եմ բոլորիդ:

(Պատգամ մեր Սուրբ Մորից՝ միևնույն ժողովի համար):

Սիրելիներ, մխիթարե՛ք Հիսուսին...մխիթարե՛ք Հիսուսին: Խաղա՛ղ եղեք միմյանց հետ և սիրեք միմյանց: Հավատարիմ եղեք Աստծուն և ինքներդ ձեզ ամբողջությամբ հանձնեք Նրան և այդպիսով դուք ինքներդ ձեզ Սիրո հանձնած կլինեք, թույլ տալով, որ Նա սնուցանի ձեզ Իր Սիրով ու խաղաղությամբ: Տերն ու Ես օրհնում ենք բոլորիդ: Ես սիրում եմ ձեզ: Տերը և Ես օրհնում ենք այն բոլոր կրոնական առարկաները, որոնք գտնվում են այս սենյակում:

Աղջի՛կս, Իմ խաղաղությունը քեզ: Պարզապես ինքդ քեզ հանձնիր Սիրո Ձեռքերին, և Սերը միշտ քեզ կառաջնորդի: Ես սիրում եմ քեզ, Իմ օրհնությունները քեզ:

Ապրիլի 1, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ: Թող Սերն առաջնորդի քեզ: Մի՛ լսիր իմաստուններին, նրանք նման են Իմ ժամանակի գրագիրներին: Սիրով ավետարանիր Սիրո համար, թող նրանք զգան Իմ Անսահման Սերը:

[1] «Քահանաներ» ասելիս, Հիսուսի Սուրբ Սիրտը մի առանձնահատուկ սիրով էր լցվում նրանց հանդեպ, բայց, միևնույն ժամանակ մի ցավ խոցում էր Նրա դյուրազգաց Սուրբ Սիրտը՝ խոցելով նաև իմ սիրտը: Երբ ես զգացի Նրա ցավը, աչքերս լցվեցին:

Ես կարոտում եմ Քեզ, Տե՛ր:

Փոքրի՛կս, Սիրտս հրճվում է քեզ զգալով և լսելով, երբ ասում ես. «Ես կարոտում եմ Քեզ, Տե՛ր...»: Սա Նվիրումի արդյունքն է: Եղի՛ր Իմ արտացոլքը, Իմ կրկնօրինակը: Փափագի՛ր Հորը: Ես կարոտում էի Հորը, երբ երկրի վրա էի: Ես անդադար աղոթում էի: Ես մեծ ցանկություն ունեի, որ մշտական կապի մեջ լինեի Իմ Հոր հետ՝ Նրա հետ Սիրով միացած:

Իմ սանուհի, Ես քո Ուսուցիչն եմ, որ մեծացրեց քեզ Իմաստությամբ, ուստի Ինձ ուրախությամբ լցրու և Ինձ հետ մշտական կապի մեջ եղիր: Ինձ առաջինը դասիր և միշտ Ինձ փափագիր: Ցնծա՛, երբ հանդիպում ես Ինձ այս ձևով, որը Ես եմ տվել քեզ: Ինձ մոտիկ մնա: Այն ամենն, ինչ Ես խնդրում եմ քեզանից, Սեր է:

Տե՛ր, ես խղճում եմ այն հոգիներին, որոնք դժոխք են գնում: Ի վերջո նրանք նման են մեզ՝ մեզանից մեկը երկրի վրա: Եթե մի կերպ հնարավոր լիներ նրանց դժոխքից դուրս բերել և փոխել նրանց...

Ես նրանց տվել էի բարու ու չարի ընտրության ազատությունը, բայց նրանք նախընտրեցին չարը՝ հակառակ Իմ աղերսներին ու Սիրո կանչերին:

Բայց, Տե՛ր, մի՞թե մեկ ուրիշ հնարավորություն չկա այլևս...

Զավա՛կս, դու չես հասկանում, որ նրանք ամբողջապես մերժում են Ինձ: Ես սիրել եմ նրանց մինչև վերջին պահը: Սատանայի կողմից առաջնորդվելով, նրանք նախընտրեցին հետևել նրան: Նույնիսկ նրանց մահվանից հետո, Ես նրանց առջևում եմ եղել, բայց նրանք իրենց կամքով Սատանային հետևեցին՝ առանց փոքր-ինչ հապաղելու: Դա ամբողջապես նրանց ընտրությունն է, նրանք ընդմիշտ դժոխքը ընտրեցին:

Օ՜, Տեր, թող ես միշտ Քո կամքը կատարեմ:

Վասո՛ւլա, Ձեռքս երբեք բաց մի թող: Մենք, մեզ, հավիտյանս հավիտենից: Սիրո յուրաքանչյուր կաթիլն օգտագործվում է: Ես սիրո կարիք ունեմ, որպեսզի հոգիներ փրկեմ, որոնք գնում են դեպի կործանում: Ե՛կ:

Ապրիլի 2, 1989

Տե՞ր:

Ես եմ: Նայի՛ր Ինձ մանկան հավատով և զարդարի՛ր Իմ Եկեղեցին:

Տե՛ր, ինչո՞ւ ոմանց համար այսքան դժվար է ընդունել այս դարաշրջանի մարգարեներին և Քո կողմից ասված Խոսքը:

Ես քեզ ամենայն լրջությամբ եմ ասում, որ Իմ ոչխարները ճանաչում են Իմ Ձայնը:

Բայց, Տե՛ր, եթե անգամ թերահավատներին կարելի է ապացուցել, որ մեծ մեղավորներից շատերը դարձի են գալիս և բժշկվում, այնուամենայնիվ, այս պտուղները տեսնելով հանդերձ, նրանք չեն համոզվում:

Իմ Վասո՛ւլա, նույնիսկ, եթե ինչ-որ մեկը հարություն առնի մեռելներից՝ իրենց իսկ աչքերի առջև, միևնույնն է՝ նրանք չեն համոզվի: Այս կապակցությամբ Եսայու մարգարեությունը տակավին գործում է[1]. Դուք կլսեք ու վերստին կլսեք, բայց չեք հասկանա, կտեսնեք ու կտեսնեք վերստին, բայց չեք ընկալի, որովհետև այս ազգի սիրտը կոշտացել է, նրանց լսողությունը բթացել է, և նրանք փակել են իրենց աչքերը՝ վախենալով, որ միգուցե կտեսնեն իրենց աչքերով, կլսեն իրենց ականջներով, կհասկանան իրենց սրտով և դարձի կգան ու կբժշկվեն Իմ կողմից:

Շատերը մոռանում են, որ Իմ մարգարեները նույնպես Իմ Մարմնի մասերն են: Ես, իսկապես, ձեզանից յուրաքանչյուրին մի շնորհ եմ բաշխել, որպեսզի բոլորդ միասին մի միասնություն կազմեք: Շատ սիրելի զավակս, ոմանց Ես ձևավորել եմ, որ լինեն առաքյալներ, ոմանց՝ քահանաներ, վարդապետներ, ոմանց էլ՝ որ մարգարեներ լինեն ապստամբության ժամանակ: Ուրեմն ինչո՞ւ են ձեզանից շատերը զարմանում և մերժում Իմ մարգարեներին: Ինչպե՞ս կարող է Իմ Մարմինը գործել, երբ Նրա անդամներից մեկը կտրված է: Ես հոգնած եմ, Իմ Մարմինը շարունակ խեղվում ու անդամահատվում է: Ծաղի՛կս, սիրով ընդունիր քեզ հալածողներին, մի՛ դատիր նրանց: Իմ մարգարեները միշտ էլ հալածվելու են, դատվելու են, ձաղկվելու են, ճնշվելու են, քաղաքից քաղաք են հետապնդվելու, արհամարհանքով են դիտվելու և խաչվելու են: Հետևաբար դուք ձեր վրա եք թափելու երկրի վրա հեղված յուրաքանչյուր սուրբ մարդու արյունը: Սուրբ Գիրքը երբեք չի ստում, Ե՛ս եմ Խոսքը:

Ե՛կ, զավակս, Ես ձևավորել եմ քեզ, որպեսզի հատուցես քավարանում գտնվող հոգիների համար: Աղոթի՛ր, ծաղիկս, դու քիչ բան գիտես այն մասին, թե աղոթքներն ինչ ազդեցություն կարող են ունենալ քավարանի հոգիների վրա: Հանգցրո՛ւ նրանց կրակը աղոթքներով: Հատուցի՛ր նրանց համար: Ե՛կ:

Ապրիլի 5, 1989

Իմ Հիսո՞ւս:

[1] Ես. 6:9-10:

Ես եմ: Ա՛հ, որքան եմ Ես հրճվում այն պահերին, երբ դու գալիս ես Ինձ մոտ՝ առաջարկելով Ինձ քո կամքը: Մնա՛ Ինձ հետ, և Ես կգրեմ Իմ զավակներին:

(Հիսուս պատգամ էր գրելու ժողովի համար, որը տեղի էր ունենալու 1989 թվի ապրիլի 21-ին):[1]

Խաղաղություն ձեզ: Ե՛ս եմ Տերը, Ե՛ս եմ Խոսքը, և Ե՛ս ձեր մեջ եմ: Զգացե՛ք Իմ Ներկայությունը, փոքրիկ զավակներս: Իմ Սուրբ Սիրտը հրճվում է՝ տեսնելով բոլորիդ մեկտեղ հավաքված[2]: Ես մտադիր եմ ձեզ առաջ տանել Սրբության Ճանապարհով: Նրանք, ովքեր դեռ չեն մտել Իմ Ճանապարհը, Ես նրանց չեմ անտեսելու: Ես ետ կգնամ և կփնտրեմ նրանց: Ես կգնամ և կբերեմ ձեզանից յուրաքանչյուրին և ցույց կտամ ձեզ Արդարության ու Սրբության Իմ Ուղին: Ես կբարձրացնեմ և կտանեմ ձեզ: Գորովալից հոր նման Ես ձեզ կբարձրացնեմ ու կսովորեցնեմ Իմ հրահանգները: Ես կհարստացնեմ ձեզ Իմ Սիրո Հոգով:

Ե՛ս, որ Սիրո Ուսուցիչ եմ, կսովորեցնեմ ձեզ սիրել Ինձ լիովին և սիրել միմյանց, ինչպես Ես եմ ձեզ սիրում: Սա պիտի լինի դեպի Ինձ կատարած ձեր առաջին քայլը: Ես նայում եմ բոլորիդ, որպես Իմ փոքրիկ զավակների, որոնք հազիվ թե գիտեն, թե ինչպես մենակ քայլեն: Ես ձեզ կառաջարկեմ Իմ Երկու Ձեռքերը և դուք ձեր փոքրիկ ձեռքերը կդնեք Իմ Ձեռքերի մեջ և միասին, միասին դուք և Ես մի քանի քայլ կանենք դեպի առաջ... Գիտե՞ք, թե որքան եմ Ես հրճվում արդեն[3]: Ես ձեզ առաջ կտանեմ և կզարդարեմ ձեր հոգին՝ առաջնորդելով այն դեպի կատարելություն, եթե դուք կամենաք ամբողջովին բացվել Իմ առջև:

Թույլ տվեք, որ սովորեցնեմ ձեզ Իմ կանոնները, և Ես կբացատրեմ ձեզ, թե ինչպես հետևեք Իմ հրահանգներին: Ես բացելու եմ Առաքինության Դարպասները բոլոր նրանց առջև, ովքեր ուզում են սովորել: Այո՛, Ես, Ինքս Իմ Սեփական Ձեռքով ձեր բերանն եմ դնելու Իմ Պտուղները: Ամուր կառչեք Ինձնից, և Ես կփրկեմ ձեզ այս դժվարին ժամանակներում, երբ սանձազերծվում է կատաղության մոլուցքը, այս ժամանակներում, երբ շատերը ընկնում են չփոթության մեջ՝ աչ ձեռքը չտարբերելով ձախից:

Այսօր, առավել քան երբևէ, չարը և դևերը շրջում են երկրի ամեն մի անկյունում՝ հետամուտ լինելով խաբել ձեզ բոլորիդ, որոգայթներ լարելով ձեզ համար, որ վայր ընկնեք: Այս է պատճառը, որ Ես խնդրում եմ ձեզ, որ անդադար աղոթեք: Թույլ մի՛ տվեք, որ Իմ հակառակորդը ձեզ քնած գտնի: Սթա՛փ եղեք այս օրերին և թույլ մի տվեք, որ նա որևէ դատարկ անկյուն գտնի ձեր մեջ: Լցրե՛ք ձեզ Իմ Խոսքով, Իմ Սիրով, Իմ Խաղաղությամբ, Իմ Առաքինություններով: Եկե՛ք հաճախ և մաքրությամբ ստացեք Ինձ՝ փոքրիկ, ճերմակ Հաղորդությամբ, որպեսզի փորձության մեջ չընկնեք:

---

[1] Հիսուսն ինձ ասաց, որ կարդամ նրանց համար Սուրբ Գրքից Եփես. 4:17-32 և 5:1-20:
[2] Այստեղ Հիսուս նկատի ունի բոլոր քրիստոնյաներին՝ Հռոմի կաթոլիկներից մինչև բողոքականներն ու ուղղափառները:
[3] Հիսուսն այնքան ուրախ էր թվում:

Աղոթե՛ք առանց դադարի: Ես ձեր կարիքները ավելի լավ գիտեմ, քան դուք անգամ մինչ ձեր խնդրելն Ինձնից: Ես գիտեմ ձեր սիրտը: Ամեն հնարավոր առիթով նայեցե՛ք Ինձ և աղոթե՛ք: Աղոթե՛ք հատուցման համար և լրացրեք աղոթքների պակասն այս աշխարհում: Թող ձեր աղոթքները ձեր զրահը լինեն՝ պատսպարելով ձեզ բոլոր չարիքներից, որոնք չրջում են ձեր շուրջը: Սատանային սիրով զինաթափեք: Թող սերը լինի ձեր զենքը, թող խաղաղությունը դրված լինի ձեր ճակատներին, որպեսզի ամեն ոք տեսնի այն: Ձեր մարմնի յուրաքանչյուր անդամը դուք պետք է մի զենք դարձնեք, կռվելով Իմ կողքին և այդ ժամանակ մեղքն այլևս չի իշխի ձեր կյանքում[1]: Թող Իմ խոսքը լինի ձեր Ճրագը: Տարածե՛ք Սիրո ու Խաղաղության Իմ Պատգամը երկրագնդի բոլոր անկյուններում՝ սրտեր շահելու և նրանց դարձի բերելու համար: Թող նրանք, ովքեր դեռևս չեն ճանաչում Ինձ, գան և տեսնեն, թե Սիրո ինչպիսի մի Հնոց է Իմ Սուրբ Սիրտը: Եկե՛ք ու զգացեք Սիրո Բոցերում գտնվող Իմ Սուրբ Սիրտը, և երբ դա անեք, եթե անգամ ձեր սրտերը կարծրացել են և չորացել սիրո պակասից, Ես Իմ Սիրո Բոցերով ձեր սրտերը կվերածեմ կենդանի ջահի:

Սիրելինե՛ր և Իմ Հոգու օրհնյալներ, որքա՜ն է Սիրտս ցավում, երբ տեսնում եմ որ ձեզանից ոմանք դեռ ընդդիմանում են Ինձ... Մի՞թե Ես երբևէ հայտնի եմ եղել որպես անհավատարիմ: Ես Ամենահավատարիմն եմ, որը երբեք ձեզ չի մերժում կամ լքում նեղության մեջ. Ես երբևէ չեմ լքել ձեզ: Ես հետապնդելու եմ ձեզ, ինչպես մի երիտասարդ, որը հետապնդում է իր սիրեցյալին, որովհետև Ես ձեր Հավատարիմ Աստվածն եմ, որը ձեզ վերևից նայում է մեծ սիրով: Եկե՛ք Ինձ մոտ և սիրով Ինձ տվեք ձեր տառապանքները: Ես և դուք, դուք և Ես, կկիսենք այդ տառապանքները:

Իմ դուստրեր և ուստրեր, դուք և Ես միասին աղոթե՞նք Հայր Մերը: Նախքան աղոթելը կենտրոնացեք և սրտանց ու դանդաղ աղոթեք. թող այս աղոթքը հասնի Հորը: Խորհրդածե՛ք այն ամենի շուրջ, ինչ ասում եք: Աղոթե՛ք, Ես լսում եմ... Եվ Իմ Թագավորությունը գալու է և Իմ Կամքը լինելու է երկրի վրա, ինչպես Երկնքում է:

Ներկայիս խավարը Ես լույսով կփոխարինեմ: Չարությունը Ես կփոխարինեմ սիրով, իսկ այս թմբիրը՝ կենսուրախ պայծառությամբ, որ առաջնորդի ձեր քայլերը. Ես ձեզ հուսախաբ չեմ անի: Ես կբժշկեմ ձեր ցավերը և կմաքրեմ ձեր արատներն Իմ Քնքշությամբ: Ուստի եկեք Ինձ մոտ և սիրեք Ինձ: Թող ձեր սերը հանգցնի Իմ Արդարության Վառ Բոցը: Թող սրտից բխած ձեր աղոթքները ամոքեն Իմ Վերքերը: Թող ձեր աղոթքները խունկի պես բարձրանան Երկինք, փառաբանելով և գովաբանելով Ինձ: Հատուցե՛ք ուրիշների հանցանքների համար, որոնք գալիս են գիշերով ավերելու Իմ Խաղողի Այգին, որպեսզի Խաղող չտա: Բարի՛ք գործեք և դադարեք չարություն անելուց: Ինչ էլ որ անում եք, արեք Իմ Փառքի համար:

Եկե՛ք, սիրելի հոգիներ, և Ինձ հետ կիսեք Իմ Խաչը: Իմ Խաչն աղաղակում է Սիրո, Խաղաղության ու Միության համար: Մենք Այն միասին ենք կրելու, դուք և Ես, Ես և դուք՝ սիրով միացած: Ես՝ ձեր Տեր

[1] Հռոմ. 6:13-14:

Հիսուս Քրիստոսը, ձեզ բոլորիդ տալիս եմ Իմ օրհնությունները: Մե՛կ եղեք:

(Ավելի ուշ)

Ծաղի՛կս, ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը, Իմ Հոգին քեզ վրա է: Նորոգի՛ր Իմ Եկեղեցին, ինչպես սկզբում էր, հին ժամանակներում, Սեր ունենալով իրար հանդեպ մինչ Իմ Վերադարձը: Սիրով ու խաղաղությամբ հարությո՛ւն տուր մեռելներին: Թող, որ ուրվականների այս երկիրը մի նոր կյանք ծնի: Ա՜հ, սիրելիներ, որքա՜ն եմ Ես փափագում Իմ այդ Փառահեղ Օրվան:

(Ավելի ուշ Մեր Սուրբ Մայրը տալիս է իր պատգամը աղոթախմբի համար):

Փառաբանի՛ր Տիրոջը, զավակս, քեզ Իմաստություն տալու համար:

Փառավորյալ լինի Տերը Իր Ողորմության, Իր Սիրո և Իր Գործերն ինձ հետ կիսելու համար:

Ահա Իմ Պատգամն ուղղված Իմ փոքրիկ հոգիներին.

Խաղաղաղություն ձեզ, զավակներս: Սիրելինե՛ր, պարզությամբ մոտեցեք Աստծուն, երեխաների նման եղեք, որովհետև Տիրոջը գտնում են միայն նրանք, ովքեր Նրան չեն փորձում: Նա Ինքն Իրեն ցույց է տալիս խոնարհներին և նրանց, ովքեր վստահում են Իրեն: Հասկանում եք, զավակներս, Ամենակարողությունը փորձի ենթարկելը չփոթեցնում է հիմարներին: Ո՛չ, Իմաստությունը երբեք չի մտնի խորամանկ հոգու մեջ:

Ուստի, բացե՛ք ձեր սրտերը Տիրոջ առջև և սրտի պարզությամբ ընդունեք Նրան: Թողե՛ք, որ ձեր սրտերն ապավինեն Նրան, որովհետև դուք ապավինած կլինեք Իմաստությանը: Աղոթե՛ք, որ ձեր հավատն աճի Տիրոջ հանդեպ: Հավատ ունենալը նույնպես մի շնորհ է Տիրոջից տրված:

Սիրելիներս, մտե՛ք Իմ Անապական Սիրտը և Ես կհանգստացնեմ ձեզ բոլորիդ: Դուք բոլորդ, որ տառապում եք, դուք բոլորդ, որ ցավերի մեջ եք, եկե՛ք Ինձ մոտ, և Ե՛ս, որ ձեր Մայրն եմ, կմխիթարեմ ձեզ: Ինչպես ամեն մի մայր տառապանքի ժամանակ սփոփում է իր զավակին, Ես նույնպես սփոփելու եմ ձեզ և նույնիսկ ավելին: Ես Հոր առաջ բարեխոսելու եմ ձեզ համար և ձեզ երբեք հուսախաբ չեմ անելու: Եկե՛ք և ապաստան գտեք Մեր Սրտերում: Թող այս փշերի պսակը, որն այժմ խեղդում է Մեր Սրտերը, կորցնի իր փշերը և նրանից նոր ընձյուղներ բողբոջեն, որոնք ծաղիկներ կտան: Հավա՛տ ունեցեք Աստծո հանդեպ, վստահե՛ք Նրան:

Ես օրհնում եմ բոլորիդ Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

Ահա Սբ. Միքայելը

Աստծո զավակներ, ո՛չ լսեք, ո՛չ էլ զրուցեք Սատանայի հետ: Ստել, նշանակում է զրուցել Սատանայի հետ: Ձեր մեջ բարկություն կուտակելով, Սատանային հենակետ եք դառնում: Թույլ մի՛ տվեք, որ ձեր լեզուն ձեր ավերման պատճառ դառնա:

Աղոթե՛ք Ինձ և Ես կբարեխոսեմ ձեզ համար: Վստահություն ունեցեք Աստծո և Նրա անհուն Ողորմության հանդեպ:

Ես օրհնում եմ բոլորիդ:

Ապրիլի 11, 1989

(Այսօր սկսվում է իսկական հալածանքը: Հիսուսն ինձ հասկացրեց, որ հույն ուղղափառների այս Ջատկին, ես զգալու եմ Նրա Ջարչարանքը: Մենք արդեն մոտ ենք մեր Ջատկին):

Տե՛ր, շատերն ինձ մեղադրում են կեղծ մարգարե լինելու մեջ: Նրանք փաստեր են փնտրում իմ դեմ, թեկուզ և սխալ, և հիմնվում են դրա վրա, որ կարողանան ասել, որ պատգամն աստվածային չէ: Արդեն կան մի քանի կեղծ վկաներ: Ինձ մեղադրում եմ այն բանում, որ ես Սատանայի գենքն եմ դարձել՝ կործանելու համար շնորհյալների (խարիզմատիկ) մեկ այլ շարժում:

Ամուր բռնեք Ինձ: Խաղաղությո՛ւն, զավակս: Ինձ ոչինչ մի՛ մերժիր: Մենք[1] երկուսս էլ քեզ հետ ենք: Հիշի՛ր, որ դա Սատանայի ծուխն է և հավատա՛ Ինձ, ծուխը երբեք չի հարատևում. այն շոգիանում է և անհետանում:

Վասո՛ւլա, ես՝ քո Աստվածը, սիրում եմ քեզ մի սիրով, որը դու միայն Երկնքում կհասկանաս:

Օրհնյալ եղիր զավակս, այն բոլոր զրպարտությունների համար, որոնք ասվում են քո մասին և այն բոլոր սխալ հայտարարությունների համար, որոնցով մեղադրում են քեզ: Ուրա՛խ եղիր, որովհետև քո վարձքը մեծ է լինելու Երկնքում: Այժմ դու հավատո՞ւմ ես Ինձ: Քանի՞ անգամ եմ Ես քեզ ասել, որ դու հալածվելու ես այնպես, ինչպես Ես եմ հալածվել: Իմ Պատգամը հափշտակելու է սրտերը, բայց ոմանք, հակառակ այս ամենին, դեմ են դուրս գալու քեզ՝ չիմանալով որ դատապարտում են Ինձ, քանի որ դատապարտում են Իմ Պատգամը: Ես չե՞մ ասել քեզ, որ նրանք քննելու են քեզ, որպեսզի մի սխալ գտնեն, ինչպես որ արել են մյուսներին, ում Ես ուղարկել եմ: Օրհնի՛ր քեզ հալածողներին, աղոթի՛ր քեզ ամբաստանողների համար, ների՛ր բոլորին քո ամբողջ սրտով: Իմացի՛ր, Իմ Վասուլա, որ Ես Սեր եմ: Սիրի՛ր Ինձ: Ես կարիքն ունեմ այդ սիրո, որպեսզի տամ այն ուրիշներին: Սիրի՛ր Իմ եղբայրներին այնպես, ինչպես Ես եմ սիրում քեզ:

Բայց, Տե՛ր, ոմանք խսպառ կուրացած են:

Վստահի՛ր Ինձ, փոքրիկս, Ես Իմ Լույսով լուսավորելու եմ և շողալու եմ շատերի վրա:

[1] Մեր Սուրբ Մայրը և Հիսուս:

Իմ Հոգու օրհնյալ[1], դու մոռացե՞լ ես Իմ Զարչարանքները: Ես տառապեցի սիրուց դրդված: Մեկ եղիր այժմ ինձ հետ: Այդ ե՛ս եմ, որ թույլ եմ տվել, որ ամեն բան պատահի, այնպես, ինչպես կա, որպեսզի դու ճաշակես այն նույն Բաժակը, որից Ես խմել եմ Իմ Զարչարանքների ժամանակ[2]: Ես սիրում եմ քեզ և քո հանդեպ ունեցած Իմ սիրո պատճառով է, զավա՛կս, որ Ես թույլ եմ տվել քեզ այս անգամ խմել Իմ Բաժակը: Ես վեր եմ բարձրացնում փոքրիկ հոգիների, որպեսզի ձևավորեմ նրանց, որ նրանք նմանվեն Իմ Զարչարանքները կրող փոքրիկ կերպարների: Երջանիկ ես դու, դու, որ առաջարկել ես Ինձ քո սիրտն ու հոգին, որպեսզի Իմ Աստվածային Ձեռքերով կերտեմ մեկ ուրիշ փոքրիկ խաչելություն:

Ցնծա՛, հոգի: Ցնծա՛ և ուրախացիր Իմ Պարգևով, բայց հիշի՛ր, փոքրիկս, այն նույն երկնքի տակ, որտեղ դու ես ապրում, լինելու են նաև գիշատիչ գայլեր՝ գառան մորթու տակ քողարկված: Դրանք այն կեղծ մարգարեներն են, որոնց մասին Ես քեզ զգուշացրել եմ:

(Ես խնդրեցի Տիրոջից, որ Նա ինձ մի պատասխան տա այդ մարդկանց մասին՝ այս անգամ՝ Աստվածաշնչից: Ես բացեցի Աստվածաշունչը և մատս դրի Երեմիա 23:10-ի վրա: Այս հատվածը խոսում է կեղծ մարգարեների մասին:)

Սիրելիս, մի՛ վախեցիր, Ես գնում եմ քո առջևից: Ուրախ եղիր այն բանի համար, որ նրանք ամեն տեսակի զրպարտություններ են անում քո մասին: Իմ Աչքերը դիտում են այս մարդկանց, և Ես լսում եմ, թե ինչ են խոսում նրանց լեզուները, և զգում եմ նրանց սիրտը:

Այո՛, բայց Դու ինձ հետ ես, և ես վախենալու բան չունեմ:

Քա՛ջ եղիր, Ես քեզ տալու եմ Իմ Զորությունը, որպեսզի շարունակես առաջ ընթանալ: Մե՞նք, մեզ:

Հավիտյանս հավիտենից:

(Այդ բոլոր հալածանքները կարծես թե բավական չէին: Այն մեծ սրահը, որը վարձել էինք մեր ժողովներն անցկացնելու համար, մերժեցին տրամադրել մեզ: Հենց այդպես: Չնայած, որ պայմանավորվածություն էինք ձեռք բերել դրանից շատ առաջ: Նրանք ասացին, որ չէին ուզում, որ իրենց սրահում կրոնական շարժումներ լինեին: Ահա և ես, 200 մարդ ինձ հետ, և ոչ ոք չէր ուզում տեղ տալ մեզ: Իսկ ժողովին մնացել էր միայն մեկ շաբաթ: Բայց Տերը եկավ մեզ փրկելու: Տերը մեզ հնարավորություն տվեց, որ լինենք Իր Եկեղեցում: Դա մի փոքրիկ եկեղեցի էր, որը պատկանում էր կապուչիններին: Այո՛, Նրա Մեծափառությունը ընտրել էր ամենախոնարհին և խեղճին բոլոր եղբայրների մեջ, որպես նշան նրանց համար, ովքեր հալածում էին Հիսուսի Պատգամը:)

[1] Երբ ես լսում եմ այս խոսքերը Աստծո Բերանից, ես պարզապես հալվում եմ և Նրա Մեծափառությունը ավելի քան երբևէ ինձ զգացնել է տալիս, որ ծածկում է իմ մարմինը ինչպես մի վրան: Ինձ թվում է, որ այս աքսորը, որի մեջ եմ ես, անվերջ է լինելու:

[2] Հիսուսն այնպես էր խոսում, կարծես Նա ինձ հաճելի մի բան էր առաջարկում, և ես ուրախ էի, որ Նա ինձ էր մատուցում Իր Բաժակը:

Ապրիլի 23, 1989

(Սուրբ Մորիսի փոքրիկ եկեղեցում աղոթաժողովի ժամանակ, աղոթքների և Պատգամների ընթերցանությունից հետո: Փոքրիկ եկեղեցին լեփ-լեցուն էր):

Օրհնյալ լինի իմ Տերը,
որ մեզ չզրկեց
Իր Անունով հավաքվելուց:
Տերը բարի է
նույնիսկ նրանց հանդեպ,
ովքեր արժանիքներ չունեն:
Տե՛ր իմ, Դու արձագանքեցիր
մեր աղոթքներին,
Դու պատասխանեցիր
Քո օրհնյալ զավակների
Քեզ մատուցած
ծոմապահությանն
ու զոհողություններին:
Ես օրհնում եմ Քո Անունը:
Մենք օրհնում ենք Քո Անունը:
«Իմ[1] *Տերը բարի է,*
Նրա սերը հավիտենական է,
Նրա հավատարմությունը
տևում է դարեդար»:
Եկե՛ք ծառայենք Տիրոջը:

Ե՛ս եմ Տերը, որ սիրում է քեզ: Քեզ հալածողների աչքերի առջև ես կերակրելու եմ քեզ: Օրհնյալ լինեք դուք բոլորդ, որ լսում ու ճանաչում եք Հովվի կանչը: Օրհնյալ լինեք բոլորդ, որ Ինձ զոհաբերություններ մատուցեցիք:

Ես ազատում եմ բոլոր նրանց, ովքեր կառչում են Ինձ: Իմ Բազուկները ձեր օրորոցն են, Իմ Սուրբ Սիրտը՝ ձեր Ապաստանը: Ես ձեր Աստվածն եմ, և դուք Իմ ժողովուրդն եք: Ցնծացե՛ք, ցնծացե՛ք, սիրելիներ: Հետամուտ մի՛ եղեք հասկանալու, թե ինչու է Իմ Ձայնը այս թույլ գործիքը ձեզ բերում: Հավատացե՛ք պարզ սրտով: Խուսափե՛ք Ինձ փորձելուց: Հաճելի եղեք Իմ Աչքին՝ անմեղ ու մաքուր երեխաների նման:

Նայեցե՛ք Իմ Սուրբ Սրտին, ես ձեր առջև եմ՝ Սիրտս ցույց տալով ձեզ բոլորիդ: Զգացե՛ք Իմ բուռն սերը ձեր հանդեպ: Մի՛ ընդդիմացեք Ինձ, մի՛ ընդդիմացեք Իմ աղերսներին: Եկե՛ք Ինձ մոտ և թույլ տվեք Ինձ ձեզ մխրճել Իմ Սուրբ Սրտի խորքերը: Թող Իմ Սիրտը դառնա ձեր Ապաստանը: Ինչպե՞ս կարող էի Ես չփութալ ձեզ ազատելու, սիրելիներս: Ե՛ս, որ Սիրո Վսեմ աղբյուրն եմ, մի՞թե Ես ձեզ երբևէ հուսախաբ կանեմ:

Ձեր տառապանքի աղաղակը արձագանքեց ողջ Երկնքում: Ես լսեցի երկրից եկող ձեր աղերսները: Ո՛չ, սիրելիներս, մի՛ վախեցեք, Իմ Աչքերն ամեն ինչ տեսնում են: Ես լսում եմ ամեն ինչ և ճշմարիտ եմ ասում, որ Ես առաջնորդելու եմ ձեր յուրաքանչյուր քայլը և օրհնելու եմ այն: Ես

[1] Սաղմ. 99:5:

ձեր նվիրյալ Այգեպանն եմ, և Իմ Խաղողի Այգին ջրվելու ու պահպանվելու է Իմ Սեփական Ձեռքերով: Ես հսկելու եմ Այն, որպեսզի չլինի թե հանկարծ գիշերով գավթիչներ թափանցեն Իմ Խաղողի Այգին: Բոլոր նրանք, ովքեր ուզում են գալ և տեսնել Իմ Խաղողի Այգին, թող մոտենան օրը ցերեկով. աղվեսներն են միայն գալիս գիշերով: Ուստի, զարթնե՛ք արշալույսին, ինչպես խելամիտ մարդիկ և այցելեք Իմ Խաղողի Այգին: Ես՝ Տերս, Դրա Այգեպանն եմ և Իմ Անսահման Սիրուց ու մեծ խղճահարությունից դրդված է, որ Ես գալիս եմ վերականգնելու Իմ Խաղողի Այգին:

Ուրա՛խ եղեք, և թող Երկինքը լսի ձեր փառաբանությունները: Ցնծացե՛ք և ազդարարեք Տիրոջ Փառքը: Եղե՛ք փոքրիկ խոսափողեր, որոնք փոխանցում են Իմ Խոսքը: Նրանք, ովքեր քնած են, թող արթնանան ձեր ձայնից: Իմ Սիրո մասին հռչակեք բոլոր ազգերին: Թող նրանք, ովքեր հեռացել են Ինձանից՝ վերադառնան: Ես չեմ մերժի նրանց, թեև նրանց սրտերում երաշտ է, իսկ նրանց մեղքերը ալ կարմիր են: Ես ցույց եմ տալու նրանց Իմ Ներողամիտ Սրտի Հարստությունը: Երգեցե՛ք և ցնծացե՛ք, որովհետև Ես ձեր մեջ եմ մնալու մինչև վերջ:

Ապրիլի 28, 1989

Տե՞ր:

Ե՛ս եմ:

Ես շնորհակալ եմ Քեզանից:
Ես շնորհակալ եմ Քեզանից
և փառաբանում եմ Քեզ
Քո այն հրաշալիքների համար,
որոնցով Դու բառացիորեն
ողողում ես մեզ:
Իմ սիրտը ցնծում է և բարձրացնում
Քո Սուրբ Անունը:
Դու իմ Վահանն ես,
որ պաշտպանում է ինձ:
Դու Արդար Դատավորն ես:
Ես իմ կամքն եմ մատուցում Քեզ:

Իմ Վասո՛ւլա, միշտ մատուցիր Ինձ քո կամքը: Իմ տրամադրության տակ եղիր: Պատրաստակա՛մ եղիր լինելու իմ քարետախտակը՝ թույլ տալով Ինձ օգտագործել քո ձեռքը: Ինձ ոչինչ մի՛ մերժիր, և Ես կգործեմ քո մեջ. թույլ տուր Ինձ, որ ավելի ամուր բռնեմ քեզ: Շատ սիրելի հոգի, հասկացի՛ր, որ դու ոչ մի բանի պիտանի չես առանց Ինձ: Ե՛ս եմ Իմաստությունը:

Իմ Պատգամը, քո մահից հետո նույնիսկ, կարդացվելու է շատերի կողմից: Այն հասնելու է այս երկրի ամեն մի անկյունը՝ սերը, հավատը և հույսը ավելացնելու համար: Վստահի՛ր Ինձ, զավակս, Ե՛ս եմ քո

Ուսուցիչը, քո Փրկիչը, քո Խաղաղությունը, քո Արարիչը և Նա՝ Ով-քեզ-Ամենաշատն-է-Սիրում:

ΙΧΘΥΣ

Մայիսի 1, 1989

Տե՛ր, կուզենայի՞ր գրել քո Պատգամը այսի 19-ի ժողովի համար:

Դու պատրա՞ստ ես:

Ես երբեք պատրաստ չեմ, բայց Դու կարող ես ինձ պատրաստել:

Խնդրի՛ր, և կտրվի քեզ:

Ես խնդրում եմ Քեզ, Տե՛ր իմ, որպեսզի ինձ պատրաստես Քո Ձայնը լսելու և գրելու:

Ուրեմն՝ ականջդ բաց և ուշադիր լսիր: Գրի՛ր.

Խաղաղություն բոլորիդ: Ե՛ս եմ Տերը, Էմմանուելը, Սրբերի Սուրբը, որ Ինքս Ինձ ցույց եմ տալիս այս տկար գործիքի միջոցով:

Ես գալիս եմ ձեզ մոտ, փոքրիկներս, մի ժողովրդի մոտ, որն արժանացել է բարձր շնորհների: Դեպի ձեզ եմ Ես գալիս՝ բացելով Իմ Սուրբ Սիրտը հենց ձեր աչքերի առջև: Իմ Սուրբ Սիրտը Անարատ է, Մաքուր և լեցուն սիրով: Ուստի արթնացե՛ք, ինչպես անցյալում: Սթափվե՛ք ձեր թմբիրից, սթափվե՛ք և զգացեք Ինձ:

Իմ Հոգին շարունակ թափվում է ձեր մեջ մի աննախընթաց առատությամբ, բայց և այնպես, ձեզանից շատ շատերը դեռևս չեն հասկացել... Ես՝ Տերս, մարգարեներ եմ կերտել այն ժամանակվանից սկսած, ինչ Ես ստեղծել եմ ձեզ, բայց Իմ յուրայինները կրկնում են այն, ինչ միշտ կրկնել են: Նրանք մինչև հիմա հալածում են Իմ բոլոր մարգարեներին՝ հետապնդելով նրանց՝ քաղաքից-քաղաք: Աբելի Սուրբ Արյունը անդադար հեղվում է: Այդ մարդիկ Ինձանից արդար օրենքներ են խնդրում: Նրանք տենչում են, որ Ես մոտ լինեմ նրանց, սակայն, երբ Ես Իմ Շնորհի Սուրբ Հոգին եմ ուղարկում նրանց, նրանք փակում են իրենց աչքերը և հրաժարվում են լսել՝ թույլ տալով, որ իրենց սրտերը գրանիտի վերածվեն: Նրանք հավաքվում են միասին և դուրս քշում Շնորհի Իմ Սուրբ Հոգուն, ինչպես մեկը դուրս կքշեր մի գիշատիչ թռչունի:

Իմ Սուրբ Սիրտը ցավում է: Բա՛ց արեք, բա՛ց արեք[1]: Մի՛ փակեք Իմ Ճանապարհը: Հեռացրե՛ք այն խոչընդոտները, որոնք արգելում են Ինձ հասնելու Իմ ժողովրդին, որին դուք սովի եք մատնել: Ես եկել եմ ձեզ մոտ, որ բժշկեմ ձեզ և մխիթարեմ ձեզ: Ես եկել եմ, որ ձեզ

[1] Հիսուս բղավում էր:

Խաղաղություն ու Սեր բերեմ: Ես եկել եմ, որ պարարտացնեմ Իմ դաշտը և մշակեմ դրա հողը:

Իմ Անունը Սուրբ է, և սուրբ են Իմ հրահանգները ու Իմ օրենքները: Այո՛, Ես Իմ Սիրով ջրելու եմ այս ծարված հողը և Ես՝ Տերս, շարունակ հեղելու եմ Իմ Հոգին Իմ զավակների վրա՝ օրհնելով նրանց:

Մի՞թե դուք չեք նկատել, չե՞ք նկատել, որ Ես նախապատրաստում եմ ձեզ, որ ընդունեք մի Նոր Երկինք ու Նոր Երկիր, որ վաղուց ի վեր խոստացել եմ ձեզ: Դուք տակավին չե՞ք հասկացել: Մի՞թե չեք տեսել, թե ինչպես եմ Ես աշխատում: Ես կանչում եմ ձեզ բոլորիդ այս աշխարհի մի ծայրից մյուսը, որպեսզի լսեք Իմ Ձայնը:

Ա՜հ, սիրելիներ, Ես եկել եմ բժշկելու ձեր խոցերը, ձեր վերքերը և ձեր թուլությունները, այն ամենը, որոնք վայրագորեն հասցվել են ձեզ այս խավարում: Ո՛չ, սիրելիներս, ձեր խոցերը անբուժելի չեն: Ձեր վնասվածքները բուժելի են, որովհետև Ես-Ձեզ-Հետ-Եմ և շատ մոտ եմ ձեզ: Ուստի Ինձ մոտ եկեք սիրով, սիրով խնդրե՛ք Ինձանից և կստանաք. կանչե՛ք Ինձ սիրով և Ես կլսեմ ձեզ: Ես կբարձրացնեմ ձեզ Իմ Կրծքին ու կօրորեմ՝ հանգստացնելով ձեզ: Լսե՛ք Սիրո ու Խաղաղության Իմ Աղաղակը:

Սերը սիրում է ձեզ. Սերը Կենաց Ծառի Արմատն է, ուստի թող, որ ՍԵՐԸ բխի ձեր սրտերից: Երբ Սերն իրեն հանդես է բերում այնտեղ, ուր չարիք կա, Սերը ջնջում է ողջ չարությունը՝ հալեցնելով այնպես, ինչպես մշուշը ցրվում է արևի առաջին տաք ճառագայթներից:

Ի սեր Իմ նվիրյալների, Ես վերակենդանացնելու եմ բոլոր դիակները: Ես լուռ չեմ մնալու, Ես ձեզ բոլորիդ հարություն եմ տալու Իմ Խոսքով: Ես չեմ լռելու մինչև որ Զփառավորեմ Իմ Մարմինը և չնորոգեմ Իմ Համայն Եկեղեցին: Իմացե՛ք բոլորդ, ով ուզում է ճնշել Շնորհի Իմ Հոգուն և ով որ ուզում է խեղդել Իմ Ձայնը, ձեր չար ջանքերն ու ձեր չար դիտավորությունները բոլորն իզուր են: Ես Իմ Ձեռքը շարունակ մեկնելու եմ բոլորին, նույնիսկ ապստամբներին, նույնիսկ նրանց, ովքեր զայրացնում են Ինձ գիշեր ու զօր: Հասկանո՞ւմ եք:

Դուք բոլորդ Իմ ժողովուրդն եք, անկախ այն բանից, թե ինչ դավանանքի կամ ցեղի եք պատկանում: Հիշե՛ք, որ Ես ՍԵՐ եմ, և Ե՛ս եմ ստեղծել բոլորիդ:

Այսօր Իմ Փրկության Ծրագիրը ընդգրկում է ողջ աշխարհը: Ես պատգամաբերներ եմ ուղարկել ձեզ և տակավին ուղարկում եմ ամեն ազգի մեջ, որպեսզի ձեր հավատն առաջ տանի, որպեսզի դարձի բերի ձեզ, խաղաղություն ու սեր հաստատի, միավորի ձեզ: Ուստի մի՛ ջանացեք խլացնել Իմ Ձայնն ու Մորս Կանչերը: Մեր Ձայները մուրճի նման շարունակ իջնելու են ձեզ վրա, փշրելով ժայռերը՝[1] մինչև Իմ Փառքի Օրը:

Ցնծա՛ և ողջունիր Իմ Բերքառատ Խաղողի Այգին, որովհետև Իմ Սեփական Ձեռքով է, որ հողը փորվում և մշակվում է, և Իմ Ձեռքով է, որ փշերն ու մացառները հանվում են ու այրվում: Իմ Սեփական Թիկնոցով Ես Այն պատսպարում եմ չոր քամիներից ու փոթորիկներից, որոնք Իմ թշնամիներն են պատճառում: Ես եմ Դրա Նվիրյալ Պահապանը, որը

[1] Ժայռերը քարե սրտերն են:

հավիտյան ջերմորեն հսկում ու պահպանում է Այն: Խաղողի այս Այգին Իմ Պարգևն է ձեզ, իսկ Դրա Խաղողները ճրիաբար մատուցվելու են ձեզ և լցնելու են համայն աշխարհը՝ կերակրելով այն:

Ա՜հ, Իմ Հոգու սիրելիներ, ուշադիր լսեք Իմ Խոսքերը և փորձեք հասկանալ դրանք: Մի՛ կասկածեք, անվերջ Ինձ փորձելով... Ես՝ Տերս, ամենայն հանդիսավորությամբ ասում եմ ձեզ. Սուրբ Գրքերը իրագործվում են: Ուստի ինչո՞ւ ձեզանից այսքան շատերը զարմացած են Իմ Հոգու հեղման վրա: Ինչո՞ւ եք զարմանում, երբ ձեր երիտասարդները տեսիլքներ են տեսնում:

Ես գալիս եմ ձեր առաջ, որպեսզի ուղղեմ Իմ Խոսքի վերաբերյալ ձեր գիտելիքները: Ես գալիս եմ մեծ սիրով, որ կենդանացնեմ Իմ որդիների ու դուստրերի դիակները: Ես գալիս եմ, որ դարձի բերեմ ձեզ և հիշեցնեմ Իմ օրենքների մասին: Ես գալիս եմ մեղավորներին խոստովանության կանչելու: Ես գալիս եմ ապաշխարության կանչելու այն բոլոր քահանաներին, եպիսկոպոսներին ու կարդինալներին, որոնք այնքան չարությամբ վիրավորել են Իմ Սուրբ Սիրտը և դավաճանել են Ինձ՝ իրենց Բարեկամին ու Աստծուն:

Ես չեմ գալիս որպես Դատավոր, ո՛չ տակավին: Ես գալիս եմ ձեզ մոտ, ինչպես Մուրացկանը, ցնցոտիներով ու բոկոտն, ճաքճքած շրթունքներով, ողբալով ու աղերսելով գեթ մի փոքր սիրո համար, փոխադարձ սիրո համար: Այսօր ձեր աչքերի առջև դուք ունեք մի Ողբացող Մուրացկան, որն Իր Ձեռքը անվերջ մեկնելով, ձեզանից փոխադարձ սեր է աղերսում: Ես աղաչում եմ ձեզ, վերադարձե՛ք դեպի Ինձ և սիրեցե՛ք Ինձ: Սովորե՛ք Ինձ սիրել, սովորե՛ք Ինձ սիրել: Հաշտվե՛ք Ինձ հետ, հաշտվե՛ք Ինձ հետ. Ես ձեզ չեմ մերժի: Ես Սեր եմ, և Ես հավիտենապես սիրում եմ ձեզ:

Եկե՛ք Ինձ մոտ, երբ դեռ ժամը չի հասնել: Մի՛ սպասեք, որ Իմ Արդարությունը ժամանի, թույլ մի՛ տվեք, որ Իմ Արդարությունը անակնկալ ու անիրազեկ ձևով ձեզ վրա հասնի: Ուստի հիշեցեք, որ այդ սարսափելի, ահավոր ժամին Ես կանգնելու եմ ձեր առջև, որպես մի Մեծաշուք Ահեղ Դատավոր, և Իմ Ձայնը, որը ողբացող մուրացկանի ձայն էր, վերածվելու է մի շլացուցիչ Լափող Կրակի՝ տեղատարափի, հեղեղի ու կարկտախառն մրրիկի մեջ: Իմ Շունչը լինելու է ծծմբի գետակի նման, որն այրելու է ամենուր՝ մաքրագործելու և ձեզ բոլորիդ նորոգելու համար, միավորելով ու ձեզ դարձնելով Մեկ Սուրբ Ժողովուրդ:

Երջանիկ են բոլոր նրանք, որոնց հույսն Իմ վրա է և, որոնք սիրով ընդունում են Շնորհի Իմ Հոգին, որը Ես այժմվանից այսքան շռայլորեն հեղում եմ ողջ մարդկության վրա, որովհետև դուք տեսնելու եք Ինձ՝ ձեր Աստծուն:

Երանի՜ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի թագավորությունը:

Երջանիկ են բոլոր նրանք, ովքեր ականջ ունեն, որ լսեն և սրտով պարզ են՝ մանկան հավատով ընդունելով Շնորհի Իմ Հոգուն, որովհետև այդ փոքրիկ սրտերում է, որ Իմ Խոսքը արմատ է գցում:

Երանի՜ նրանց, որոնք հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը: Գեթ մի փոքր էլ, փոքրիկ աղավնյակներս, և Ես ձեզ հետ կլինեմ: Իմ Խաղաղությունը ձեզ:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Ես՝ Հիսուս Քրիստոսը, օրհնում և ներում եմ ձեզ Հալածողներին, որովհետև նրանք չգիտեն, թե ինչ են անում: Ես՝ Տերս, հավիտենապես սիրում եմ բոլորիդ:

(Տերը հետո մատնանշեց, թե այս մասին որ հատվածները պետք է կարդայի նրանց համար Սուրբ Գրքից: Դրանք Եբր. 3:7-19 և Եբր. 4:1-17 էին):

Յահվե՛, իմ Աբբա՛,
հիշեցրու ինձ Քո պատվիրանները,
որպեսզի ես կարողանամ
հետևել դրանց
և հավատարիմ լինել Քեզ:
Ես գիտեմ,
որ Քո կանոնները արդար են,
իմ Աբբա,
և ես գիտեմ և հավատում եմ,
որ Քո հավատարմությունից
ելնելով է, որ Դու ինձ
տառապանք ես պատճառում:
Ինձ համար օգտակար էր
Քո դառը Բաժակից
ճաշակելն ու խմելը:
Այժմ, Տեր, խնդրում եմ,
թող Քո Սերը մխիթարի
և հանգստացնի ինձ:
Ե՛կ, քնքշությամբ վարվիր ինձ հետ
և ես կապրեմ,
քանի որ Քո օրենքը
իմ կյանքն է ու բերկրությունը:
Առաջնորդի՛ր քայլերս
դեպի Քո Տունը,
ինչպես խոստացել ես ինձ:
Հա՛յր, ես փափագում եմ Քեզ,
որ Երկնքում ես:
Ես սպասում եմ Քեզ՝ Յահվե.
իմ Աբբա, ես սպասում եմ Քեզ:

Սերը սիրում է քեզ, զավակս, և Ես ոչ ոքի թույլ չեմ տա, որ քեզ Ինձանից բաժանի: Այժմ դու Իմ մասն ես կազմում: Արի՛ աշխատենք:

(Ավելի ուշ)

(Գիշերը ես մի երազ-տեսիլքում տեսա Հիսուսի դիմանկարը: Ես նկատեցի, որ Հիսուսի Աչքերը լցվում էին արցունքով և նախքան դրանք կընկնեին հատակին, ես շտապ բացեցի իմ ձեռքը: Ձեռքս լեցուն Հիսուսի թանկագին արցունքներով՝ ես սկսեցի հեռանալ: Ես մտադիր էի խմել Նրա Արցունքները):

Աղջի՛կս, Իմ Խաղաղությունը քեզ: Ե՛կ, ես քեզ հետ եմ: Ուրա՞խ ես Ինձ հետ լինելով:

Օ՜հ, այո՛, Տեր իմ Հիսուս:

Դու տակավին ուզո՞ւմ ես Ինձ հանձնել քո կամքը և գործել Ինձ համար:

Այո՛, Տեր, խնդրում եմ նորից ասա Քո անունը:

Ես Տեր Հիսուս Քրիստոսն եմ, քո Փրկիչը:

Այո՛, Տեր, եթե դա Քո ցանկությունն է:

Դա Իմ ցանկությունն է. ուրեմն, տո՛ւր Ինձ քո կամքը, և Ես կգործածեմ այն:

Ես Քեզ եմ տալիս իմ կամքը, վերցրո՛ւ իմ կամքը, և վարվիր ինձ հետ, ինչպես Քեզ հաճելի է:

Ուրեմն, բռնի՛ր Ձեռքս, ես և դու միասին. Ես սիրում եմ քեզ: Սիրի՛ր Ինձ:

ΙΧΘΥΣ

(Ես փորձում էի կենտրոնանալ Տիրոջ առջև: Ես փորձում էի զգալ Նրա Սուրբ Ներկայությունը ու միանալ Նրան):

Փոքրի՛կս, ամեն անգամ, երբ զգում եմ, թե դու ինչպես ես փորձում անել այդ, Իմ Սուրբ Սիրտը լցվում է խորը ցնծությամբ: Ես Ամենաբարձրյալն եմ, և Ես սիրում եմ քեզ: Դու կկենտրոնանաս և կաղոթե՞ս հավատով:

Կփորձեմ Տեր իմ: Օգնի՛ր ինձ աղոթել այնպես, ինչպես Դու ես ուզում:

Ուրեմն ինքդ քեզ ամբողջովին Ինձ հանձնիր, հաճույք պատճառիր Ինձ և ասա՝ «Հիսո՛ւս, Ես սիրում եմ քեզ»: Ինձ երջանկացրու սիրո անմիջական խոսքերով, որոնք անկեղծ են և սրտից են բխում: Իմ Սուրբ Սիրտը քո Ապաստանն է, հանգստացի՛ր Իմ մեջ: Ե՛կ, ավելացրու Իմ հանդեպ ունեցած քո սերը: Ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես:

Ես ուզում եմ Քո կամքը կատարել և ամբողջապես գոհացնել Քեզ:

Ես կօգնեմ քեզ, Իմ Վասո՛ւլա, Մե՞նք, մե՞զ:

Հավիտյա՛նս:

Ե՛կ, հանգստացիր Իմ Սրտում:

Հանգստացի՛ր իմ սրտի մեջ, Տեր:

Կհանգստանամ:

Մայիսի 12, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ: Զգա՛ Ինձ և զննի՛ր Ինձ քո մտքով: Ես Սեր եմ և Սուրբ:

Սիրի՛ր Ինձ և սուրբ եղիր: Ես կսովորեցնեմ քեզ, որովհետև Ես Իմաստություն եմ: Ե՛կ, Իմ Մայրը սիրում է քեզ. այժմ Նա է գրելու Պատգամը:

(Պատգամ Մարտինիում, Շվեյցարիա, 1989 թ. մայիսի 19-ի աղոթաժողովի համար):

Զավա՛կս, Ես՝ քո Սուրբ Մայրը, օրհնում եմ քեզ: Ահա Իմ Պատգամը.

Խաղաղությո՛ւն ձեզ բոլորիդ, Ես սիրում եմ ձեզ և օրհնում եմ ձեզ: Լսե՛ք և ուշադրություն դարձրեք այսօրվա մեր Կանչերին: Հասկացե՛ք, թե որքան սուղ է ժամանակը:

Հիսուս և Ես զոր ու գիշեր ձեզ ենք կանչում դարձի գալու համար: Մեր Կանչերը ձեր դարձի համար այժմ հնչում են ողջ աշխարհով մեկ և դեռ բազմապատկվելու են: Ժամանակը սուղ է, զավակնե՛րս:

Այսօր Իմ Սիրտը ցավում է, որովհետև ձեզանից շատերը կարծես չեն հասկանում Մեր Կանչերի հրատապությունը: Ես խնդրում եմ ձեզ, որ որոշ ժամանակ խորհրդածեք և քննեք ինքներդ ձեզ: Փորձե՛ք ինքներդ ձեզ, քննեք ու տեսեք, թե արդյոք դուք դարձի եկե՞լ եք և Աստծո Ճանապարհի վրա՞ եք: Իմ սիրելի զավակներ, հարցը միայն Աստծուն հավատալն ու աղոթելը չէ: Դարձի գալ նշանակում է գոհացնել Աստծուն՝ գտնվելով Նրա հետ ամբողջական մտահայեցողության մեջ: Դարձի գալ նշանակում է սուրբ լինել ու սրբությամբ ապրել: Դարձի գալ նշանակում է Աստծո հետ հաշտվել ու ամբողջ հոգով Աստծուն սիրել: Մտածե՛ք այն սիրո մասին, որ Հիսուս հեղում է ձեզ վրա: Ապրե՛ք Քրիստոսի մեջ, մաքրե՛ք ինքներդ ձեզ և ամբողջովին բացեք ձեր սրտերը, որպեսզի Հիսուս բժշկի ձեզ: Դարձի գալ նշանակում է ցանկանալ լինել Աստծո հետ, ամբողջ սրտով բաղձալով Նրան:

Շատերը մոռանում են, որ ամենամեծ հոգևոր պարգևը սերն է: Ես ձեզ նորից հիշեցնում եմ Հիսուսի պատվիրանի մասին, սիրեցե՛ք միմյանց, ինչպես Ես ձեզ սիրեցի: Հաճեցրե՛ք Ինձ և ապրե՛ք Մեր Պատգամներով, եղե՛ք մեր փոքրիկ խոսափողերը՝ տարածելով ամենուր Մեր սերմնահատիկները: Ականջ ունեցողները թող լսեն, հասկանան Մեր Պատգամների հրատապությունը:

Ես ուրախ եմ այս երեկո ձեզ բոլորիդ այստեղ՝ միասին հավաքված տեսնելով: Մենք օրհնում ենք ձեր բոլոր կրոնական առարկաները, որոնք ձեզ հետ են: Թող այս երեկոն հոգևոր խորհրդածության, ձեր հոգիների

լիակատար ինքնաքննման երեկո լինի: Հիսուսն ու Ես միշտ ներկա ենք ձեզ օգնելու համար: Ուրեմն, սրտանց խոսե՛ք Մեզ հետ և Մենք կլսենք:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, ամեն:

Մայիսի 13, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ: Ամբողջովին զատորոշիր Ինձ այն կարողությամբ, որ Ես տվել եմ քեզ:

Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի Թագավորությունը: Օրհնյալ եղի՛ր: Զգուշացի՛ր չարից, որը կրկնապատկում է իր ջանքերը քեզ վհատեցնելու համար: Ես օգնում եմ քեզ, որ չընկնես նրա լարած թակարդները: Ես հարթում եմ քո ուղին, միթե չե՞ս նկատել:

Այո՛, Տեր իմ, նկատել եմ և օրհնում եմ քեզ:

Հիշի՛ր, այդ Ես եմ, որ քեզ առաջ եմ տանում, Իմ շատ սիրելի հոգի: Երբեք մի՛ մոռացիր քո անկարողությունն ու անընդունակությունն այն բանում, որ առանց Ինձ դու նույնիսկ չես կարող շնչել: Միշտ հիշի՛ր Իմ գործելու եղանակը: Մյուսների շարքում Ես ընտրել եմ նաև քեզ, որպեսզի ընդունես Իմ Պատգամները: Ես հայտնի եմ այն բանով, որ մոտենում եմ խեղճ հոգիներին՝ բժշկելու և նրանց միջոցով Իմ Խոսքը հայտնի դարձնելու համար:

Տե՞ր, կարող եմ համարձակվել ու մի բան ասել:

Սերը լսում է:

Տե՛ր, շատ անգամ է Քո Խոսքը տրվել, բայց շատ անգամ էլ ո՛չ լսել են, ո՛չ էլ հավատացել:

Գիտե՛մ, բայց և այնպես ոչինչ իզուր չի անցնում, որովհետև, եթե նույնիսկ շատերը չեն լսում, այդուհանդերձ, կան քչերը, որոնք լսում են: Ուստի, եթե անգամ մեկ սերմնահատիկ էլ արմատ է գցում, ապա արժեն այս բոլոր զոհողությունները:

Տե՛ր, Քո Շնորհով և Քո կարեկցությունից դրդված, Դու մեզ ես տալիս այս բոլոր Պատգամները, որոնք կարող էին բազմաթիվ անձիք կարդալ և դարձի գալ, սակայն ցավոք այդպես չէ: Քո Պատգամները ճնշվում և շատ անգամ անտեսվում են Քո իսկ յուրայինների կողմից:

Ծաղի՛կս, դա Իմ Եկեղեցու մեծ ուրացությունն է: Իմ Եկեղեցին լեցուն է կայեններով, որոնք իրենց գահ են բարձրացնում Իմ Սրբարանում:

Նրանք ավելի շատ ուշադրություն են դարձնում ձևականություններին, քան թե Սիրո Իմ ուսուցումներին: Ես նրանց եմ վստահել միլիոնավոր հոգիների, որպեսզի սիրով դեպի Ինձ առաջնորդեն նրանց, բայց նրանք վերցրել են գիտության բանալին՝ ո՛չ իրենք են ներս մտնում, ո՛չ էլ թույլ են տալիս, որ ցանկացողները ներս մտնեն:

Տե՛ր, դեռ որքան է տևելու այս մեր տառապանքը:

Ոչ շատ երկար, հույսդ Ինձ վրա դիր: Ե՛կ, ես Իմ խոսքից կկարդամ քեզ համար մի հատված:

(Հիսուս մատնացույց արեց Երեմիա 4:5-31):

Արարչություն, մի՛ հապաղիր, դարձի եկ և լսիր Իմ խոսքը: Եկ, մե՞նք, մե՞ղ:

Այո՛, Տեր իմ, կարծես թե այս օրերին ես երբեք չեմ ասում այս խոսքերը:

Իսկ ես ուզում եմ, որ դու այդ ասես, Վասուլա... Ժպտա՛ Ինձ:

Իսկապես <u>այդ</u> Դո՞ւ ես:

Ես եմ, ծաղի՛կս, որքան հաճախ պիտի քեզ ասեմ:

Գիտեմ, Հիսուս, բայց ես սիրում եմ լսել դրա հաստատումը:

Ուրեմն հասկացի՛ր, թե ես էլ եմ սիրում լսել, երբ դու կրկնում ես Իմ Անունը: Ես երբեք չեմ հոգնում լսելուց, երբ դու կանչում ես Ինձ: Իմ Անունը միշտ պահիր քո մտքում և քո սրտում: Միշտ և ամենուր արտասանի՛ր Անունս, խոսի՛ր Իմ մասին: Դա փառավորում է Ինձ:

Ա՜հ, Հիսո՛ւս, Դու այնքան շատ ես տվել ինձ: Օրհնյալ լինի Քո Անունը, Փառք Աստծո:

Իմ խաղաղությունը քեզ: Դու կհամբուրե՞ս Իմ Ոտքերը:

Այո՛, Տեր իմ:

(Ես հոգով համբուրեցի Տիրոջ ոտքերը, նույնպես և՝ խաչի վրա):

Փառավորիր Ինձ՝ Ինձ հավատարիմ մնալով:

Մայիսի 15, 1989

(Հալածանքը սաստկանում է)

Տե՞ր:

Ես եմ:

Ես չեմ եկել աշխարհին խաղաղություն բերելու: Ոչ թե խաղաղություն բերելու եմ եկել, հապա սուր[1]... Ավետարանի՛ր սիրով Սիրո համար, հրեշտակս, Ես կօգնեմ քեզ:

Այդ Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, և Ես սիրում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Մայիսի 16, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ:

Երբեք Ինձ հուսախաբ չանես: Առավել քան երբևէ փափագիր Ինձ: Ա՛ճիր քո փորձությունների մեջ: Թող նրանք[2] սովորեն սիրել Ինձ՝ իրենց Աստծուն: Թող նրանք սովորեն գետնատարած ընկնել և պաշտել Ինձ՝ իրենց Սրբին: Ինձ ի՞նչ օգուտ միայն շրթունքներով ասված նրանց աղոթքներից: Ես սիրո ու պաշտամունքի կարիք ունեմ: Իմ Հոգու սիրելի, աղոթի՛ր Իմ քահանաների, եպիսկոպոսների ու կարդինալների համար, որպեսզի նրանք զատորոշեն Իմ Կամքը:

Ես՝ Տերս, կարիք ունեմ ՍԻՐՈ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ և ՄԻՈՒԹՅԱՆ՝ բոլորը միասին մեկ Խորանի առջև: Եթե նրանք հետամուտ են Իմ շահերին, ապա կհասկանան, թե Իմ Սուրբ Սիրտը որքան է փափագում ու տենչում այս միությանը, Իմ Պետրոսի առաջնորդության ներքո, այն Պետրոսի, որին Ես Ինքս եմ տվել Երկնքի թագավորության բանալիները: Ուստի դուք բոլորդ ջերմեռանդ աղոթեք, որպեսզի նրանք կարողանան հասկանալ, որ Ես՝ Տերս, կանչում եմ նրանց, որ միավորվեն: Ես կանչում եմ բոլոր նրանց, ովքեր գտնվում են Իմ Անվան տակ, որ վերադառնան ճշմարիտ միության՝ Իմ~Գառների~Պետրոսի ներքո:

Հետագայում Ես կկանչեմ նաև բոլոր մյուս ազգերին, որպեսզի ընդունեն Իմ Անունը որպես Օծյալի: Ես խոսելու եմ նրանց սրտերում:

ΙΧΘΥΣ

Մայիսի 22, 1989

(Մեջուգորիե)

Տե՞ր:

Ես եմ:

[1] Մատթ. 10:34-35
[2] Յուրաքանչյուր ոք:

Ես սիրում եմ Քեզ: Ես պաշտում եմ Քեզ, Սրբերի Սուրբ, Սուրբ Հիսուս:

Սիրի՛ր Ինձ և պաշտի՛ր Ինձ: Ինձ միշտ այսպես ջերմ ընդունիր:

Մայիսի 24, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ: Սիրելիս, սիրի՛ր Ինձ: Զավա՛կս, թող այս օրը մի ցնծալից օր լինի: Ուրախացի՛ր, որովհետև Ես՝ Տերը-Ձեզ-Հետ-Եմ ողջ ճանապարհին: Եկե՛ք և երկրպագե՛ք Ինձ: Եկե՛ք և զգացե՛ք Իմ Սուրբ Սիրտը: Եկե՛ք և Ինձ հետ մեկ եղեք, փոքրիկներս:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Սերը ձեզ հետ է, Սերը սիրում է ձեզ:

ΙΧΘΥΣ

(Այս պատգամը տրվել էր Մեջուգորիեի մեր փոքրիկ խմբի համար: Այս առավոտ Հիսուս մեզ խնդրում էր գալ և երկրպագել Իրեն: Ավելի ուշ, ճաշի ժամին, քահանան եկեղեցում հայտարարեց, որ երեկոյան երկրպագության պաշտամունք է լինելու: Մենք «վազեցինք» այնտեղ, որովհետև Հիսուսն էր մեզ կանչում):

Մայիսի 25, 1989

Տե՞ր:

Ես եմ: Աղջի՛կս, մի՛ դրիր աճապարանքով: Բա՛ց արա ականջդ և լսիր Ինձ: Ես Սեր եմ, բայց Սերն այնքա՛ն քիչ է սիրվում: Սերն այնքա՛ն չհասկացված է:

Ե՛կ, մե՞նք, մե՞զ:

Հավիտյա՛նս, Տեր:

Հունիսի 1, 1989

(Հիսուսի Սուրբ Սրտի տոնակատարություն)

Սուրբ Սիրտ Հիսուսի՞:

Ես եմ: Այսօր Իմ Սուրբ Սիրտը բոլոր ազգերին կանչում է Իմ Ձայնը լսելու: Ես Սեր եմ: Ես Խաղաղություն եմ: Ե՛ս եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը: Ձեր հոգու փրկության համար ոչ մի ուրիշ

Ապաստան չկա, բացի Իմ Սուրբ Սրտից: Աղջիկս, գրի՛ր Ինձ հետ այն աղոթքը, որը Ես քեզ թելադրել էի անցյալ տարի:

Օ՜, Սուրբ Սիրտ Հիսուսի,
Սովորեցրու ինձ Քո Ուղիները:
Սուրբ Սիրտ Հիսուսի,
առաջնորդիր, ինձ Արդարության
ու մաքրության ճանապարհով
Ինձ հեռու պահիր չարից
և մի՛ թող ինձ նրա կամքին:
Սուրբ Սիրտ Հիսուսի,
Ինձ Պատսպարող Վեմ եղիր,
որովհետև Դու ես իմ Ապաստանը:
Թող Քո Սերն ու Խաղաղությունը
առաջնորդեն ու պահպանեն ինձ:
Ամեն:

Սուրբ Սիրտ Հիսուսի,
Դու մեզ վրա օրհնությունների
տեղատարափ ես հեղում:
Սուրբ Սիրտ Հիսուսի,
Դու միայնակ մարդուն
մշտական Տուն ես տալիս:
Քո ընտանիքը Տուն է գտել:
Օրհնյալ լինի մեր Տերն ամեն օր,
որ փրկում է մեզ
և մեկը մյուսի ետևից
մեզ բերում Իր Սուրբ Սրտի մեջ:
Օրհնյալ լինի մեր Տերը,
որ կրում է մեր բեռը
և կիսում է մեր տառապանքները:

Տե՞ր:

Ես եմ: Զգա՛ Իմ Ներկայությունը, ինքդ քեզ հավաքիր և լսի՛ր Ինձ:

(*Պատգամ աղոթաժողովի համար*)

Խաղաղություն ամենքիդ:

Ես եմ Տերը՝ ձեր Փրկիչը, և Նա, ով փնտրում է ձեր սրտերը: Ես Նա եմ, որ առանց հոգնելու կանգնում է յուրաքանչյուր դռան դիմաց ու բախում այն: Ես Նա եմ, որ հետապնդում է մեղավորին, և Նա եմ, որ ապշած է թողնում իմաստունին: Ես Նա եմ, որ ավելացնում է Իմ օրհնությունները, և Նա, որ քնքշորեն նախապատրաստում է ձեզ՝ մտնելու Իմ Նոր Երուսաղեմը:[1] Ես Սուրբ Երրորդությունն եմ՝ բոլորը Մեկի մեջ և Համագո, Նա, որ Իր Փրկության Ծրագրով

[1] Այսինքն՝ մաքրագործումից հետո

նախապատրաստում է բոլորիդ միավորվելու մեկ սուրբ և միակ փարախում: Ես Նա եմ, որ դաղարեցնում է բարձր, փարթամ ծառերի աճը և թույլ է տալիս փոքրերին աճել:

Մի՛ վախեցեք սիրելիներս, որովհետև այս անապատում Ես ցանելու եմ Սիրո և Խաղաղության Նոր սերմնահատիկներ: Ես վերակենդանացնելու եմ Իմ պարտեզը, որպեսզի նրանք, որ անաստված ու չար են, տեսնեն և իմանան, որ Իմ Աստվածային Ձեռքը ձեր բոլորի վրա է: Քարե սրտերը հասկանալու են Իմ Անսահման Ողորմությունը, որ Ես՝ Սուրբս, ձեր մեջ եմ: Ես բռնել եմ ձեր աջ ձեռքը, զգացե՛ք Իմ Ներկայությունը: Ես չեմ լքի ձեզ, ուստի, մի՛ վախեցեք: Այո՛, Ես կբռնեմ յուրաքանչյուրիդ ձեռքից և կձևավորեմ ձեզ, որ կոչվեք Լուսո զավակներ և ծառայեք արդարությանը Ես՝ Տերս, հենց սկզբից ասել եմ, որ Ես ուզում եմ, որ դուք սուրբ լինեք, ինչպես Ես եմ Սուրբ:

Քանի որ Ես ձեր Աստվածն եմ, իսկ դուք Իմ ժողովուրդը, ուրեմն դուք պետք է հետևեք Իմ Օրենքին: Իմ Օրենքը Սիրո Օրենք է: Սովորե՛ք, թե ինչպես պետք է Ինձ սիրել: Սովորե՛ք, թե ինչպես պետք է Ինձ պաշտել: Ես փնտրում եմ ձեր սիրտը: Մի՛ լսեք աշխարհին, լսե՛ք Իմ Սիրո Աղաղակը, լսե՛ք Իմ Սրտի զարկերը. Սրտիս յուրաքանչյուր զարկը մի հոգու ուղղված կանչ է:

Եկե՛ք դեպի Ինձ, Իմ բաց Բազուկների մեջ, ձեզ նետեք Իմ Գիրկը և զգացե՛ք այն Սերը, որ ունեմ ձեր հանդեպ, զգացե՛ք այն Ողորմությունը, որ ունեմ ձեր բոլորի հանդեպ: Վերադարձե՛ք դեպի Ինձ և Ես կբժշկեմ ձեզ: Գանձի պես պահպանե՛ք Իմ Խոսքերը և փորագրե՛ք դրանք ձեր սրտերում: Մի՛ թույլ տվեք, որ չորս կողմից փչող քամիները քշեն Իմ Խոսքերը:

Եկե՛ք ձեր աչքերը սևեռեք Ինձ վրա և թույլ մի՛ տվեք, որ որևէ մեկը Ինձնից հեռացնի ձեր հայացքը: Ճանաչե՛ք այն շնորհները, որոնք Ես տալիս եմ ձեզ, երբ Ես՝ Տերը...

Ծաղիկ, հաղթահարի՛ր քո անտարբերությունը:

Տե՛ր, Հիսուս, օգնի՛ր ինձ ազատվել դրանից:

Գոհացրո՛ւ Ինձ և լսիր Ինձ:

Օգնի՛ր ինձ լսել Քեզ, Տեր իմ:

...Ներկա եմ [1]: Ես հանդիսավոր կերպով խնդրում եմ բոլորիդ, որ խոստովանեք ձեր հանցանքները և Ի՛նձ փափագեք: Շնորհի Իմ Հոգին հեղվում է բոլորիդ վրա, որպեսզի ձեզ հեռու պահի թմրությունից ոգուց, որը ծանրորեն իջել է ձեզ վրա, որպեսզի վերակենդանացնի ձեզ՝ նախքան ձեր քայքայումը: Ուստի, բացե՛ք ձեր ականջները և լսեք Ինձ: Ես գիտեմ, որ ձեզանից շատերը մեռած են հիմա, չնայած, որ դուք կարծում եք, թե կենդանի եք: Դա նրանից է, որ դուք դիմադրում եք և ինքներդ ձեզ ամբողջովին չեք հանձնում Ինձ:

[1] Հիսուս շարունակում է Իր թելադրությունը:

Վստահե՛ք և մի՛ ընդդիմացեք Ինձ, Ի՛նձ հանձնվեք. անձնատո՛ւր եղեք, անձնատո՛ւր եղեք: Թույլ տվեք Ինձ՝ ձեր Սիրող Աստծուն, լինելու ձեր փոքրիկ սրտերի նվաճողը: Մի՛ վախեցեք, Ես Սեր եմ և Սիրո բաղձանքն է զարդարել ձեր սիրտը. ուստի, ուշադիր եղեք Իմ Խոսքերին: Դրանք կարող են ձեզ պարզ թվալ, բայց Ես Պարզությունն Աստված եմ. Ես Հեզ եմ և Խոնարհ:

Ես գիտեմ, որ ձեզանից շատերը անդադար մտածում են, որ Ես շարունակ նույն բանն եմ ասում, բայց դա այն պատճառով է, որ Իմ Խոսքերը բնավ չեն թափանցում ձեր մեջ: Եթե Ես նույն բանն եմ կրկնում, ապա դա ձեր թմրության պատճառով է, ձեր խլության պատճառով է: Դա այն պատճառով է, որ ձեզանից շատ-շատերը Իմ Խոսքերը ի գործ չեն դնում:

Ես գալիս եմ ձեզ մատուցելու Իմ Սիրտը՝ Ջեռքիս մեջ բռնած: Ես գալիս եմ մատուցելու ձեզ Իմ Խաղաղությունն ու Իմ Սերը: Ես գալիս եմ բոլորիդ նորից մեկ Փարախի մեջ միավորելու: Ես գալիս եմ այս մեռած դարաշրջանին հարություն տալու և կենդանացնելու: Եկե՛ք և փառավորեք Ինձ՝ ձեր Տիրոջը: Ե՛ս Իմ Երկնային Գահից խոնարհվում եմ դեպի ձեզ, որպեսզի բարձրացնեմ դեպի Ինձ և վերակենդանացնեմ: Փառավորե՛ք Ինձ բոլորդ, որ սպասել եք Շնորհի Իմ Հոգուն, որպեսզի իջնի ձեզ վրա: Գնացե՛ք և հռչակե՛ք Իմ Արդարությունը բոլոր ազգերի մեջ և թող Իմ Պատգամը հասնի աշխարհի ծայրերը: Թող նրանք լսեն Սիրո Իմ Աղաղակները: Այժմ ցնծացե՛ք և ուրախ եղեք, դուք բոլորդ, որ ծարավի եք Ինձ, որովհետև Ես հագեցնելու եմ ձեզ: Սրբե՛ք ձեր արցունքները, դուք բոլորդ, որ ճնշված եք օր ու գիշեր, որովհետև Ես եկա նրա համար, որ մխիթարեմ և պաշտպանեմ ձեզ:

Իմ Սուրբ Սիրտը կանչում է բոլորիդ, որ սրբությամբ Ինձ մոտ գաք, ապավինեք Ինձ, և Ես կառաջնորդեմ ձեզ դեպի Իմ Խորանը, ուր Ես սպասում եմ ձեզ օր ու գիշեր: Ես Ինքս Ինձ մատուցում եմ ձեզ ամեն օր: Եկե՛ք, եկե՛ք և Ինձ ստացեք սրբությամբ ու մաքրությամբ: Մի՛ վիրավորեք Ինձ, մաքուր ու սուրբ եղեք, երբ ընդունում եք Ինձ: Ներամփոփվե՛ք և ճանաչե՛ք Իմ Կենդանի Ներկայությունը՝ փոքրիկ ճերմակ Նշխարի մեջ: Թող Ես զգամ ձեր սրբությունն ու մաքրությունը: Օ՜հ, եթե միայն իմանայիք, թե ինչ Շնորհ եմ մատուցում ձեզ:

Եկե՛ք, Ինձ հաճույք պատճառեք՝ խորհրդածելով Իմ Պատգամի մասին: Գոհացրե՛ք Ինձ, ապրե՛ք Իմ Պատգամով, գոհացրե՛ք Ինձ և փոխեք ձեր կյանքը: Երջանիկ է այն մարդը, որ խորհրդածում է այն մասին, ինչ որ Ես տալիս եմ այսօր և հետազոտում է իր սիրտը ու քննում է իր հոգին, որովհետև Ես նրան բարձրացնելու եմ: Երջանիկ են Իմ այն քահանաները, եպիսկոպոսներն ու կարդինալները, ովքեր գալիս են դեպի Ինձ՝ մաքսավորի[1] նման ընդունելով իրենց հանցանքը, որովհետև Իմ Խոսքը այդպիսի սրտերում է արմատ գցելու և ծաղկելու: Այնուհետև Ես բացելու եմ նրանց աչքերը, որպեսզի նրանք կարողանան տեսնել և հասկանալ իրենց սրտերով, որ այն, ինչի կարիքը Ես ունեմ, Սերն է՝ Սեր և Պաշտամունք:

[1] Ղուկ. 18:9-14:

Բայց, ավա՜ղ, այս սպասավորներից շատերը ընկել են սատանայի հմայության մեջ: Ինչպես կարող եմ ես տանել նրանց ձևականություններն ու կեղծ խոնարհությունը, երբ նրանց մեջ սեր չկա: Էլ ով է մնացել, որ պաշտի Ինձ: Այս ամենքի մեջ ով է լինելու առաջինը, որ օրինակ լինի Իմ զավակների համար և դա դեպի Ինձ՝ սիրտը սիրով լեցուն, գետնատարած ընկնի Իմ Սուրբ Ներկայության մեջ և երկրպագի Ինձ լռության մեջ:

Այն, ինչ ես խնդրում եմ, սիրելինե՛րս, սերն է սրբության մեջ: Ես փնտրում եմ ձեր սրտերը: Եկե՛ք, և մատուցեք Ինձ ձեր սիրտը, և ես այն կլցնեմ Իմ Սիրով, որպեսզի դուք էլ ձեր հերթին կարողանաք լցնել Իմ զավակների սիրտը: Ես ձեր Սուրբն եմ, որ տալիս է ձեզ այս պարզ հարցումը. «Ո՞ւր է այն հոտը, որը մի ժամանակ ձեզ էր վստահվել, այն հոտը, որ ձեր պարծանքն էր[1]: Մաքրե՛ք ինքներդ ձեզ, ապաշխարե՛ք, հնազանդվե՛ք Իմ Եկեղեցու Փոխանորդին՝ Հովհաննես-Պողոս II-ին, որը ձեզ երբեք հուսախաբ չի անի, բայց որին դուք մի կողմ եք հրում և անտեսում: Դուք քոլորդ, որ դեռ ծաղրում եք նրան, անչափ ճնշում եք Իմ Սուրբ Սիրտը... Ես եմ՝ մատնված Իմ յուրայիններից... Որքա՞ն ժամանակ դուք դեռ պիտի շարունակեք լինել խափուսիկ օազիսի պես Իմ Հոտի համար, ինչպես մի պատրանք անծայրածիր անապատում:

Եղբայրնե՛ր, այն, ինչ ես խնդրում եմ ձեզանից, Սե՛ր է: Եկե՛ք ու երկրպագեք Ինձ: Ժամանակ մի՛ վատնեք Ինձ փնտրելով այնտեղ, որտեղ ես չկամ: Օրինակ հանդիսացեք Իմ հոտի համար: Սերը սպասում է, եկե՛ք ու երկրպագեք Ինձ, եկե՛ք ու երկրպագեք Ինձ՝ ձեր Աստծուն ու Թագավորին: Վերադարձե՛ք Ինձ մոտ, եղբայրներ, և ես՝ ձեր Հիսուս, Իմ Սուրբ Սրտով, որը բաբախում է հավիտենական սիրով, գթալու եմ ձեզ և ձեր մեղքերը անտեսելու եմ՝ բնավ չհիշեցնելով դրանցից և ոչ մեկի մասին:

Փնտրե՛ք Ինձ, քանի ես դեռ Ողորմած եմ,[2] և ես կգամ ու կբացեմ կույրերի աչքերն ու նրանց ականջները, որոնց ես խլացրել եմ: Ես կպոկեմ կնիքը. ես թույլ կտամ, որ դուք տեսնեք Իմ Լույսը, և լսեք ու հասկանաք Իմ Խոսքը, որպեսզի դարձի գաք և կարողանաք ձեր սրտի խորքից գովաբանել, մեծարել ու փառաբանել Ինձ՝ ձեր Աստծուն:

Ես՝ Տերս, Զեռքս դնում եմ ձեր գլխին և օրհնում եմ ձեզ: Մե՛կ եղեք»:

ΙΧΘΥΣ

Ես օրհնում եմ քեզ, զավակս: Ե՛կ և լսիր Իմ Մորը:

Ծաղի՛կս, զգա Ինձ, ես սիրում եմ քեզ: Հիշի՛ր, որ ես պաշտպանելու եմ քեզ այնպես, ինչպես մայր առյուծն է պաշտպանում իր փոքրիկ ձագին: Օրհնյա՛լ եղիր և լսիր Իմ Պատգամը.

Իմ փոքրիկ զավակներ, մի՛ ընդդիմացեք Աստծո Կանչերին: Հանձնվե՛ք, ապավինեք Նրան և թույլ տվեք, որ Նա լիովին գրավի ձեր սիրտը: Լսե՛ք Նրան և արե՛ք այն, ինչ որ Նա է ասում: Ես ձեր Սուրբ Մայրն եմ, որը

[1] Երեմ. 13:20:
[2] Նախքան Նրա Արդարությունը կգա:

բոլորիդ հիշեցնում է, որ Տիրոջ Խոսքը Կյանք է, Աստծո Խոսքը Լույս է: Ձեզանից շատերը լսում են Նրա Սիրո Աղերսը, այդուհանդերձ, հենց որ դուք հեռանում եք այս վայրից, աշխարհը նորից ձեզ կլանում է և այդպիսով Նրա Սիրո Աղերսը մոռացվում է:

Իմ ամենավերջին Պատգամում ես ձեզ խնդրել էի, որ խոկաք ու քննեք ձեր գիտակցությունը: Այսօր ես ձեզ հարցնում եմ. «Ինչո՞ւ ձեզանից շատերը, որոնք լսել են Իմ Պատգամը, այսօր եկել են մի նոր Պատգամ լսելու, երբ նախորդը ո՛չ խորհրդածության առարկա է դարձել, և ո՛չ էլ կրկին կարդացվել:

Իմ Անապական Սիրտը սիրում է բոլորիդ, սիրելի զավակներ, և այդ պատճառով ես այսօր ձեզ խնդրում եմ, որ վերստին կարդաք Իմ նախորդ Պատգամը ու այն գործադրեք: Ես սիրում եմ բոլորիդ: Երբեք մի՛ մոռացեք, որ Իմ Անապական Սիրտը ձեր ցավերի բալասանն է:

Ես օրհնում եմ բոլորիդ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, ամեն:

(Սուրբ Գրքից ընթերցվող հատվածները, հետևյալներն էին՝ Ա Տիմ. 4:1-16, Ա Տիմ. 6:20-21, Բ Տիմ. 2:14-26, Բ Տիմ. 3:1-17):

Հունիսի 5, 1989

Տե՞ր իմ:

Ես եմ:

Փառք Աստծո: Ես պետք է կատարեմ այն, ինչ խոստացել եմ Քեզ, Տեր իմ, որ հավատարիմ լինեմ Քեզ և հետամուտ լինեմ միմիայն Քո շահերին, և այն ամենին, ինչը Քեզ ավելի է փառավորում, որովհետև Դու եկար ինձ փրկելու: Քո Գահից խոնարհվելով՝ Դու նայեցիր ինձ՝ իմ անարգության մեջ, Դու բարձացրիր ինձ, որպեսզի ես քայլեմ Քո Ներկայության մեջ, ապրողների Լույսի մեջ:

Ծաղի՛կ, հարազատս, փառավորիր Ինձ՝ Ինձ սիրելով: Ե՛կ և երկրպագիր Ինձ լռության մեջ, նայի՛ր Ինձ լռության մեջ, սիրի՛ր Ինձ լռության մեջ: Իմ խաղաղությունը քեզ, աղջիկս: Ես ավելի եմ ուժեղացնելու Իմ Երկնային Գործերի հեղումը մարդկանց վրա:

Մտի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ և այնտեղ դտիր քո հանգիստը: Եկ:

Հունիսի 10, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ, հավա՛տ ունեցիր, Վասուլա, որովհետև սրանք Իմ Իմաստության գործերն են:

Ընկալիր Իմ Ձայնը և մի՛ անհանգստացիր մնացյալի մասին: Յուրաքանչյուր անհատ, որ կիսում է այս Գործը, կիսում է Իմ

խաղաղության ու Սիրո խաչը: Երբեք թույլ մի՛ տուր, որ իմաստունը խաբի քեզ, ուստի վստահություն ունեցիր Իմ հանդեպ մինչև վերջ:

Երկրպագի՛ր Ինձ, սա է Ինձ մոտ բերող Ճանապարհը:

ΙΧΘΥΣ

Հունիսի 12, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ:

Հիսո՛ւս, դա դժվար է...

(Ես նկատի ունեի այս ողջ գերբնական մոտեցումը: Ես տակավին չեմ կարողանում ըմբռնել...)

Ծաղիկս, հավատա՛, ինչպես մի մանուկ:

Օ՜, ինչ գեղեցիկ է:

Շուրջս Իմ հրեշտակներն են: Ես եկել եմ Իմ հրեշտակների հետ:

Ինչ գեղեցիկ է, Տե՛ր:

Ուրախացրո՛ւ Ինձ և միշտ Գիտություն փնտրիր: Թող Իմ Պատվիրանները քեզ հրճվանք պատճառեն և դու կօրհնվես: Ուրախացրո՛ւ Իմ Հոգին և Ինձ Աբբա կանչիր ժամանակ առ ժամանակ: Օ՜սրբագործված Իմ իսկ Ձեռքով, եղի՛ր Իմ արտացոլքը, եղի՛ր սուրբ: Թող քո սիրտը հենարան լինի Իմ Գլխի համար: Ես՝ Տերը-Քեզ-Հետ-Եմ: Դու կհիշե՞ս Իմ Ներկայությունը:

Ինձ մտքումդ պահիր, որպեսզի գիտակցես քո կատարած գործերը, մտքերը և խոսքերը: Իմ խաղաղությունը քեզ:

Հունիսի 12, 1989

Այդ Ես եմ՝ Հիսուս: Ե՛կ, Ես Պադրե Պիոյի հետ եմ:

sono con te Vassula. askolta nostro Buono Signore

(Պադրե Պիոն հաճախ է քաջալերում ինձ):

Հունիսի 14, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ: Իմ Կամքն այն է, որ քեզ կատարյալ դարձնեմ: Դու է՞լ ես այդ ուզում:

Այո՛, Տեր իմ, ուզում եմ, բայց իմ միջավայրում դժվարություններ կան:

Ընդունի՛ր քո միջավայրը և այն ամենը, որ Ես տվել եմ քեզ: Իմ Կամքն է, որ դու Ինձ մոտիկ լինես, ապավինես Ինձ և ուրիշ ոչ ոքի: Ես քո Ուսուցիչն եմ և քո Հոգևոր Առաջնորդը:
Իմ Վասուլա, թույլ տուր քեզ համար կարդալ Իմ Խոսքից մի հատված:

(Հիսուսն ինձ բացել տվեց Աստվածաշնչից՝ (Սիրաքի գրքից Գլուխ 4:11-22): Իմաստությունը որպես Ուսուցիչ և Դաստիարակ: Ես Սուրբ Գրքից պատահաբար բացեցի մի էջ):

Տեսնո՞ւմ ես: Ե՛ս եմ Իմաստությունը, և Ե՛ս եմ քո դաստիարակը:

Տե՛ր, 19-րդ տունը մտահոգում է ինձ:

Դա նշանակում է, եթե դու իսպառ մերժես Ինձ. բայց չանհանգստանաս, Ես ամեն անգամ կբարձրացնեմ քեզ, երբ դու ընկնելիս լինես: Ես քեզ դրել եմ Իմ Սուրբ Սրտի մի հատուկ անկյունում, Իմ Վասուլա: Թույլ տուր Ինձ լիովին դաստիարակել քեզ: Սերը սիրում է քեզ: Ես հաճույք եմ ստանում, երբ ամեն անգամ դու հիշում ես Ինձ: Դու կխոկա՞ս այս ամենի շուրջ:
Իմ խաղաղությունը քեզ:

Աստված իմ, մի՞թե այս ամենը հնարավոր է, Աստված խոսում է ի՞նձ հետ:

Ես եմ, ծաղի՛կս, Ինձ հետ եղիր:

Փառք Աստծո:

Հունիսի 15, 1989

Աստված իմ:

Ես եմ, զանազանի՛ր Ինձ: Պատրա՛ստ եղիր Ինձ ընդունելու, հրեշտակս: Կրկնիր Ինձ հետ այս բառերը.

Օ՜, Սուրբ Սիրտ Հիսուսի,
Տեր Իմ, որին պաշտում եմ ես,
Ես Քեզ եմ հանձնում իմ կամքը:

Դարձրո՛ւ ինձ Քո խաղաղության
ու Քո սիրո գործիքը,
Դարձրո՛ւ ինձ Քո Սուրբ Սրտի
Բոցավառ Իղձերի զոհը: Ամեն:

Այո՛, իսկ այժմ ինքդ քեզ անմնացորդ Ինձ հանձնիր: Ես զոհաբերվող հոգիների կարիք ունեմ, ուստի հանձնի՛ր Ինձ քո կամքը, Վասուլա: Մեկ եղիր Ինձ հետ, Ինձ հետ, որ Սիրո Գերագույն Զոհն եմ: Իմ մնացորդ, Իմ հարազատ, Իմ զմուռս, Իմ զոհասեղան, Ես կզարդարեմ քո հոգին, թույլ տալով, որ Իմ Խաղաղության ու Սիրո Խաչը կիսես մինչև վերջ: Ես և դու, դու և Ես, Սիրով միացած:

ΙΧΘΥΣ

Հունիսի 19, 1989

(Պատգամ Ֆրիբուրգի աղոթաժողովի համար՝ տրված Բարի Հովվի Քույրերի վանքում):

Տե՛ր:

Ես եմ: Խաղաղություն ձեզ, Իմ շատ սիրելի հոգիներ, զգացե՛ք Ինձ, զգացե՛ք Իմ Ներկայությունը: Ես ձեր բոլորի մեջ եմ: Եկե՛ք և վերցրեք այս քողը, որը ծանրորեն իջել է ձեր աչքերին ու տեսեք Ինձ Իմ Փառքի մեջ:

Ես գիտեմ, թե որքան տկար եք դուք և որ ամենաթույլ փոթորիկը, որ բարձրացնում է Իմ թշնամին, ցնցում ու վայր է գցում ձեզ: Բայց մի՛ վհատվեք այս Ապստամբ ժամանակներում, որովհետև Ես՝ Տերս, որ ձեր Ապաստանն ու Մխիթարիչն եմ, առավել քան երբևէ մոտ եմ ձեզ: Ես Ապաստան եմ կարիքավորի և հուսահատի համար, Պատսպարան եմ այն փոթորիկների դիմաց, որ պատճառում է Իմ թշնամին, Հավիտենական Աղբյուր նրանց համար, ովքեր ծարավի են, Հովանի՝ ձեզ պաշտպանելու համար այս անապատի կիզիչ տոթից, որի մեջ այժմ դուք ապրում եք: Իմ Սուրբ Սիրտը լայնորեն բացված է՝ ձեզ գրկաբաց ընդունելու և հանգստացնելու համար:

Ես Սեր եմ, որը փնտրում է յուրաքանչյուր սրտի, որպեսզի մխիթարի և սիրի նրան: Ես Սեր եմ, որը հավիտենապես սիրում է ձեզ: Հասկանո՞ւմ եք, Ես իջել եմ Իմ Երկնային Գահից, խոնարհվելով դեպի ձեզ, որպեսզի ձեզ դեպի Ինձ բարձրացնեմ և ձեր հոգին ուղղակի սնեմ Իմ Երկնային Շտեմարաններից: Ես ձեզ մոտ եմ գալիս, Իմ սովալլուկ գառներ: Ես գալիս եմ, որպեսզի բոլորիդ հավաքեմ Իմ տաք բազուկների մեջ: Ի սեր ձեզ, Ես բազմացնելու եմ Իմ Շնորհները ձեր բոլորիդ վրա և Իմ Սիրո Բոցավառ Կրակով հարություն եմ տալու ձեր մեռելներին:

Ես գալիս եմ Իմ Սուրբ Սիրտը Իմ Ձեռքում՝ Այն ձեզ մատուցելով: Դուք կընդունե՞ք Այն:

Սիրելինե՛րս, մոտ է այն Օրը, երբ յուրաքանչյուր տեսիլք իրականանալու է: Յուրաքանչյուր տեսիլք շուտով կատարվելու է և հենց ձեր կենդանության օրոք: Ուստի բացե՛ք ձեր սրտերը և ջանացեք հասկանալ, թե ինչու է Իմ Շնորհի Հոգին այսքան առատորեն հեղվում այս սերնդի վրա: Օրը մոտենում է, երբ բոլոր սերունդները մեկ են լինելու մեկ Հովվի ներքո, մեկ Սուրբ Խորանի շուրջ, և Ես՝ Տերս, Միակն եմ լինելու նրանց համար: Հետևաբար, աղոթե՛ք սիրելիներս, աղոթե՛ք այս Միության համար: Ես՝ Տերս, ամբողջապես զբաղված եմ դրա նախապատրաստությամբ:

Այժմ դուք ցրված եք և ձեր արոտավայրերն անպտուղ ու չոր են: Իմ Հովվի[1] ոդբը լսվում է ողջ Երկնքում, որովհետև Կայենները կոտրել, մի քանի կտորների են վերածել նրա գավազանը և Միությունը բեկորների վերածել, որպեսզի եղբայրությունը[2] ջլատեն նրանց միջև: Բայց մոտ է Իմ Մարմնի Փառքի Օրը, և ինչպիսի ուրախություն է այն լինելու: Այն լինելու է հրաշքի մի օր, և այն վերքերը, որոնք Ես ստացա Իմ լավագույն բարեկամների տանը՝ բժշկվելու են:

Իմ Սուրբ Սիրտն այսօր անբասիր սեր է փափագում: Այն, ինչի կարիքը Ես ունեմ, փոխադարձ սերն է: Արդյոք սիրուց դրդված չէ՞ր, որ Ես Ինքս Ինձ որպես անուշահոտ պատարագ ու զոհ մատուցեցի: Արդյոք չա՞տ կլինի ձեզանից խնդրել, որ հանձնվեք Ինձ: Մի՞թե շատ կլինի ձեզանից խնդրել, որ փոքր-ինչ Ինձ ճանաչեք և վերադարձնեք Իմ սերը: Սերը սեր է փափագում, Սերը ծարավի է սիրո, Սերը ձեզանից փոխադարձ սեր է աղերսում:

Մի՛ ըմբոստացեք Իմ Օրենքի դեմ, որը Սիրո Օրենք է: Օ՛, սիրելիներս, որքան եմ Ես ձեզ սիրում: Ինչո՞ւ են ձեզանից այսքան շատերը դադարել Ինձ պաշտելուց: Ես ձեզ հիշեցնում եմ, որ Ես ներկա եմ այս Սուրբ Ժամին՝ շրջապատված Իմ սերովբեներով ու քերովբեներով: Ես լուռ կանգնած եմ ձեր առջև: Ես՝ Սրբերի Սուրբը, տվել եմ ձեզ ձեր անունը՝ Սիրելիներ:

Չնայած դուք մեղանչել եք Իմ դեմ, բայց Ես ներել եմ ձեզ: Դուք Իմ սերմն եք: Արդյոք տեսնելո՞ւ եմ ձեզ Պաշտամունքի նշանակված ժամին, սիրելիներս: Դուք վեր կկենաք ու կգա՞ք Ինձ մոտ: Ես սպասելու եմ ձեզ Իմ Խորանում: Եկե՛ք դեպի Ինձ... Եկե՛ք դեպի Ինձ... Մի՛ մերժեք այն, ինչ Հոգին առաջարկում է ձեզ այս օրերին: Ինքներդ ձեզ պահեք Իմ Սիրո մեջ և ընդունեք Իմ Ողորմությունը: Հիշե՛ք, որ ամեն ինչ անհետանալու է և ոչինչ չի մնալու, ջնջվելու է մի օր ամեն ինչ, բայց ձեր Հոգին հավիտյան մնալու է:

Ես՝ Տերս, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ տալով ձեզ Իմ Խաղաղությունը, որպեսզի դուք էլ այն կարողանաք տալ ուրիշներին:

ΙΧΘΥΣ

[1] Մեր Սուրբ Հայր Հովհաննես-Պողոս 2-րդը:
[2] Այստեղ ես զգացի, որ Աստված մահու չափ վշտացած էր:

Հունիսի 21, 1989

Տե՞ր:

Ես եմ: Երբեք մի՛ դադարիր աղոթելուց: Հետևի՛ր Իմ ուսուցումներին, սիրելիս, և միշտ պատրաստ եղիր Ինձ՝ քո Աստծո համար: Ես միշտ մոտ եմ քեզ՝ քո հոգու համար հայթայթելու այն, ինչ որ այն չունի:

Իմաստությո՞ւն: Ես ձրիաբար կուսուցանեմ քեզ Իմաստությամբ: Հարատևությո՞ւն: Ես եռանդ կներարկեմ քո հոգու մեջ: Համբերությո՞ւն: Ես քեզ Իմը կտամ: Տոկունությո՞ւն, որ հատուցես քեզ և ուրիշների համար: Դու կներծծես Ինձանից: Սե՞ր: Ես կլցնեմ քո սիրտը Իմ Սրտից: Խաղաղությո՞ւն: Իմ Խաղաղությունը քոնն է: Ա՛հ, զավակս: Ինչո՞ւ այլևս չես խնդրում Ինձանից այս Շնորհները, որոնք կարող են սնել քո հոգին:

Ես իսկապես չգիտեմ...

Հիշի՛ր, Ես Իմաստություն եմ և քո Դաստիարակն եմ, ուստի Ինձանից կախված եղիր: Միթե մինչև հիմա Ես չե՞մ սնել քո հոգին և մյուսներինը նույնպես:

Ես շարունակելու եմ ուսուցումներ հեղել քեզ վրա, ինչպես մարգարեություն: Վստահի՛ր Ինձ, փնտրի՛ր Ինձ, քայլի՛ր Ինձ հետ, հնազանդվի՛ր Ինձ, սիրի՛ր ու պաշտիր Ինձ: Ես բոլոր ժամանակներում Ներկա եմ, ուստի քեզ ապահով զգա: Ես եմ Իշխանությունն ու Կարգապահությունը, որը հեղվում է քեզ վրա: Ա՛հ, զավակս, Ես քեզ հավիտենապես սիրում եմ: Մի՛ տանջիր հոգիդ՝ փորձելով հասկանալ Իմ Ուղիները, որովհետև այդպես անելով ինքդ քեզ գցում ես ոլոր-մոլոր ճանապարհների մեջ, որոնք երբեք վերջ չեն ունենում: Իմացի՛ր, որ Իմ Ճանապարհները քո ճանապարհները չեն և սրանց տարբերությունը, ասեմ քեզ՝ ահռելի է: Ընդունի՛ր այն, ինչ Ես տալիս եմ քեզ Խաղաղությամբ: Թույլ տուր ինձ Իմ Մատը պահել քեզ վրա: Ես և դու՝ Սիրով միացած:

Ե՛կ, մե՞նք, մե՞զ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 29, 1989

Օրհնյալ լինի մեր Տերը՝
Ամենակարողը, որ միայն Ինքն է
հրաշքներ գործում:
Աստվա՛ծ իմ,
Դու ինձ սովորեցրել ես Քո Խոսքը,
և ես առաջվա նման
հայտարարում եմ Քո հրաշքները:
Գթությամբ լեցուն,
Դու ներեցիր իմ մեղքը

և ինձ գիտակցության բերիր:
Դու ինձ օգնեցիր, որ հասկանամ
և ընկալեմ Իմաստության խոսքերը.
«Նրանք, ովքեր կճաշակեն Ինձ՝
ավելի քաղց կզգան Իմ հանդեպ,
նրանք, ովքեր կխմեն Ինձ՝
ավելի կծարավեն»[1]:
Նման մի կնոջ, որն այրիացել է,
ես էլ դեգերում եմ այս անապատում՝
փնտրելով Քո Հավիտենական
Աղբյուրն ու
Քո կանաչ արոտավայրերը,
որտեղ ես կարող եմ
գլուխս դնել ու հանգստանալ:

Աղջի՛կս, անպտուղ ծառից ես քեզ ծաղկեցրել ու պտղատու եմ դարձրել, չարակամ հեթանոսից՝ ջերմեռանդ երկրպագու, անտարբերությանդ փոխարեն՝ ես քեզ խանդավառություն եմ տվել Իմ՝ քո Աստծո հանդեպ: Ե՛կ, մնա Իմ շնորհի մեջ և մեկ եղիր Ինձ հետ:

Տե՛ր, ես մտածում էի երեկվա մեր ժողովի մասին...

Ես՝ Տերս, Իմ լրաբերներին Իմ լուրերն եմ տալու: Տեսե՛ք, այսօր ես արձակել եմ ձեր ձեռքերի շղթաները, ազա՛տ զգացեք... Եթե դուք ուզում եք գալ Ինձ հետ և կիսել Իմ Սիրո ու Խաղաղության խաչը, ապա՝ եկեք: Ես հոգ կտանեմ ձեր մասին: Ազատ զգացեք... Դուք շատ լավ գիտեք, որ ես ինքնաբավ եմ, ես Բարձրյալն եմ: Ես սիրում եմ ձեր անմեղությունը, և ես չեմ զրկի ձեզ Իմ Նշաններից: Ես տալու եմ կարիքավորներին ու աղքատներին, որպեսզի նրանք կարողանան փառավորել Իմ Անունը: Եկե՛ք դեպի Ինձ մաքուր սրտով, ես մտադիր եմ ձեզ առաջ տանել: Եկե՛ք, <u>բարձրացրե՛ք</u> և <u>պաշտեք</u> Ինձ, որովհետև ես Սուրբ եմ:
Սերը Հավիտենապես սիրում է ձեզ, եկե՛ք:

Տե՞ր:

Ես եմ: Աղոթի՛ր և թող որ ես լսեմ քո աղոթքը, այն աղոթքը, որը ես թելադրել եմ քեզ.

«Օ՜, Սուրբ Սիրտ Հիսուսի,
Տե՛ր Իմ, որին ես պաշտում եմ,
ես հանձնում եմ Քեզ իմ կամքը:
Դարձրո՛ւ Ինձ Քո Խաղաղության
ու Սիրո գործիքը,
Դարձրո՛ւ ինձ Քո Սուրբ Սրտի
Բոցավառ Իղձերի զոհը: Ամեն»:

[1] Սիրաք 24:29

Փո՛քր մնա և աճիր միայն Իմ Հոգու մեջ: Ես երբեք քեզ չեմ լքի:

Հուլիսի 4, 1989

Տե՞ր իմ:

Ես եմ:

Ներամփոփվիր յուրաքանչյուր աղոթաժողովի ժամանակ: Կենտրոնացի՛ր, մի՛ վախեցիր: Իմ ուսուցումները ամուր ու հաստատուն են: Թույլ տուր, որ Ես կրթեմ քո հոգին, թույլ տուր, որ շարունակեմ Իմ Աստվածային Ծրագիրը: Այն, ինչ Ես ուզում եմ՝ քո կամքն է[1]: Ես քեզ տալիս եմ Իմ խաղաղությունը, Իմ Սերը ողջ Հավիտենության համար: Ես քեզ երբեք չեմ հիասթափեցնի:
Խաղաղություն, զավակս: Լսի՛ր Իմ Մորը:

Այո՛, Տեր:

(Սբ. Մարիամը՝ մեր Սուրբ Մայրը):

Վասո՛ւլա, թող քո հոգին հանգստանա Հիսուսի Սուրբ Սրտում, իսկ մնացածը թող նրան: Ե՛կ, Ես թելադրելու եմ քեզ Իմ Պատգամը[2]:

Խաղաղություն ձեզ: Ես ձեր բոլորի հետ եմ այս հավաքում, Ձեռքերս ձեզ մեկնած, օրհնելով ձեզ բոլորիդ:

Լսեցե՛ք Իմաստության խոսքերը: Այն ամենն, ինչ Տերը փնտրում է, ձեր սիրտն է: Մի՛ մերժեք Նրան: Եթե դուք հանձնեք Նրան ձեր սիրտը, Նա կտա ձեզ Իր Սիրո Պարգևը, որպեսզի առաջնորդի ձեզ և տանի ձեզ դեպի Իր Սուրբ Սիրտը, որը ձեր Տունն է, ձեր Հոգու Տունը: Վերադարձե՛ք Տիրոջը և հանձնեք Նրան ձեր կամքը: Վերադարձե՛ք դեպի Բարձրյալը, և Նա կողոդի ձեզ Իր Սիրո բույրով:

Այսօր Ես կանչում եմ ձեզ՝ բոլորիդ քաջալերելու համար: Մեր Կանչերը ամենուր են այս խավար աշխարհում, այս տառապանքի ու կսկիծի աշխարհում, ինչպիսին դարձել է ձեր դարաշրջանը: Ես ամենայն լրջությամբ յուրաքանչյուր հոգուց խնդրում եմ խորհրդածել այն մասին, թե ինչու Հիսուս և Ես, զանազան ձևերով և աշխարհի այսքան շատ մասերում, ստիպում ենք բոլորիդ որ դարձի գաք: <u>Մենք նման ենք խելակորույս Ծնողների, որոնք դիմում են բոլոր միջոցներին, որ հասնեն ու զգուշացնեն ձեզ, ձե՛զ, որ Մեր այնքան սիրելի զավակներն եք: Մեր Զգուշացումներն ու Կանչերը մոտ ընդունեք ձեր սրտերին</u>:

Ապաշխարե՛ք, սրտա՛նց աղոթեք, սիրո՛վ եկեք Տիրոջ մոտ, <u>եկե՛ք ու պաշտե՛ք Տիրոջը</u>: Ընդունե՛ք Նրա Սերը, որ Նա առաջարկում է ձեզ: Ուրախացրե՛ք Նրա Սիրտը, և թող Նա տեսնի ձեզ բոլորիդ Պաշտամունքի ժամին: Սերը սեր է փափագում: Սերը ձեր սրտերն է փնտրում: Ուրեմն,

[1] Ես ներքնապես տեսա Հիսուսին, որ մեկնել էր Իր Ձեռքը, ասելով՝ «Այն, ինչ Ես ուզում եմ՝ քո կամքն է»:
[2] Պատգամ Ֆրիբուրգի մեր աղոթաժողովի համար՝ տրված 1989 թվի հուլիսի 14-ին:

եկե՛ք դեպի Սերը, եկե՛ք դեպի Սուրբը, Որն աղաղակում է ձեզ փոխադարձ սիրո համար:

Ես ձեր Սուրբ Մայրն եմ, Որը սիրում է ձեզ: Մի՛ տարակուսեք: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

(Սուրբ Միքայելը մեզ պատգամ է տալիս):

Ես Սուրբ Միքայելն եմ: Ես ձեր Սուրբ Միքայելն եմ, որին դուք աղոթում եք պահպանության և չարի դեմ պաշտպանության համար: Մի՛ վախեցեք, այս աղոթքով ձեր զրկանքները կփոխհատուցվեն:

Թույլ տվեք, որ Սիրո Հոգին ընդարձակի Իր Շնորհի Կանչերը: Լսե՛ք Շնորհի Հոգուն, լսե՛ք Հոգուն, որովհետև Նրա Ողորմությունը Մեծ է:

Ձեր նախնիների նման չնչահեղձ մի՛ արեք նրանց, ովքեր ընդունում են Սուրբի Պատգամները՝ տեսանողներին ասելով. «Տեսիլքներ մի՛ տեսեք», իսկ մարգարեներին՝ «Մեզ համար մի՛ մարգարեացեք, քանի որ մենք Ճշմարտության մեջ ենք գտնվում»: Դրա փոխարեն, բարձրացրե՛ք ձեր աչքերն ու նայեք ձեր շուրջը: Բոլորը հավաքվում են ու վերադառնում են դեպի Աստծուն: Ձեր տղաներն ու աղջիկները քնքշությամբ բերվում են հեռվից, որովհետև Տերը ազդարարել է հետևյալը. «Թեև գիշեր է տիրում ձեր դարաշրջանի վրա, բայց Իմ Լույսը ճեղքելու է այն և ծածկելու է այս երկիրը և բոլոր ազգերը դեպի Ինձ են դառնալու, իսկ Իմ հոտը Ես նորից հավաքելու եմ մի Սուրբ Փարախի մեջ՝ Իմ Սուրբ Անվան ներքո»:

Աղոթե՛ք, օ՜, Տիրոջ զավակներ, և թույլ տվեք Տիրոջը, որ վերականգնի Իր Ժողովրդին՝ ընդունելով այն, ինչ դուրս է գալիս մանկան և խոնարհի բերանից: Մի՛ վախեցեք, Փրկությունը մոտ է, հենց ձեր դարպասների մոտ:

Ես օրհնում եմ ձեզ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

Թույլ տուր Տիրոջը, որ գործածի քեզ, Վասուլա: Բաղձա՛ Տիրոջը, սիրի՛ր Նրան, որովհետև Նա Ամենագթառատն է:

(Ավելի ուշ Տակավին ծարավի լինելով Աստծուն, ես գալիս եմ Նրա մոտ՝ Նրա կողմից ինձ տրված այս յուրահատուկ ձևով, եթե անգամ դա ընդամենը տաս վայրկյան է տևելու: Ես փոխադարձ մտերմության կարիք ունեի, զրուցելու իմ Փրկչի հետ):

Տե՛ր, ես սիրում եմ Քեզ:

Ես եմ, ծաղի՛կս, սիրի՛ր Ինձ: Դու ուրախացնում ես Ինձ, մոտեցի՛ր, Ես մոտ եմ քեզ:

Հուլիսի 5, 1989

Տե՞ր իմ:

Ես եմ: Խաղաղությո՛ւն քեզ:

Տե՛ր, երբեմն դա դժվար է:

Իմ Վասո՛ւլա, ես գիտեմ, որ դժվար է ապրել անապատում, բայց հիշի՛ր, որ Իմ Աչքերը երբեք չեն լքում Քեզ: Ապավինի՛ր Ինձ: Իմ խոսքերը չեն տարբերվում անցյալի Իմ խոսքերից: Ես երբեք չեմ դադարել յուրաքանչյուր սերնդի ապաշխարության կանչելուց: Մեծ սիրով ու կարեկցությամբ, ես միշտ Իմ Ձեռքը քեզ կմեկնեմ: Դու կամենո՞ւմ ես շարունակել Իմ Սիրո Գործերը:

Այո՛, Տեր, ես կամենում եմ, եթե այդ Քո ցանկությունն է:

Դա Իմ ցանկությունն է: Իմ ցանկությունն է զարդարել երկրի վրա գտնվող ամեն մի հոգու: Իմ ցանկությունն է, որ յուրաքանչյուր հոգի ճաշակի Իմ Հացը: Ես սիրում եմ բոլորիդ: Իմ ցանկությունն է կշտացնել ձեզ ճրիաբար: Իմ ցանկությունն է անաստվածներին գիտակցության բերել:

Իմ Վասուլա, զգա՛ Իմ Սուրբ Սիրտը: Այն երբեք այսքան պատառոտված ու ցաված չի եղել, որքան այս խավար դարաշրջանում:

Օ՛, Աստված...

Բայց և այնպես, շատ ավելի մեծ է Իմ ցավը, երբ տեսնում եմ, որ այսքան շատ հոգիներ գնում են դեպի հավիտենական կրակը... Հասկացի՛ր, զավակս, որ քո տառապանքները ոչինչ են, համեմատած Իմ տառապանքների հետ: Թո՛ւյլ տուր Ինձ հանգստանալ քո մեջ:

Խաղա՛ղ եղիր:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 6, 1989

Տե՛ր, այս անցնող օրերին Դու ակնհայտ կերպով պահում ես Քո Դեմքն ինձանից: Ես չեմ զգում Քո Լույսը, ինչպես առաջ: Ինչո՞ւ ես ինձ թողնում: Տե՞ր:

Ես եմ, երբեք մի՛ դադարիր աղոթելուց:
Ես քո Փրկիչն եմ, Սուրբը: Քո հանդեպ Իմ սերը մեծ է, և Ես սովորեցնում եմ քեզ, թե որն է լավը քո հոգու համար: Այդ Ես եմ, որ կերտում եմ քեզ: Մի՛ կարծիր, թե Ես լքում եմ քեզ: Մի՛ տրտմիր, դու իզուր չես տքնում: Լսի՛ր, Իմ Վասուլա, Ես սիրում եմ քեզ և երբեք չեմ դադարի Իմ Հացով քեզ կերակրելուց:

Լսի՛ր Ինձ: Մեծ դժբաստությունից դրդված, ես այս սերնդի համար պատրաստում եմ մի զմայլելի Խաղողի Այգի: Ես նման եմ Խաղողի մի Որթի, որը շնորհալի մատաղ ճյուղեր[1] է տալիս: Իմ Ծաղիկները Սիրո ու

[1] Սիրաք 24.23:

Խաղաղության Պտուղներ են տալիս: Մոտեցե՛ք Ինձ, դո՛ւք, որ փափագում եք Ինձ, և կշտացեք Իմ Պտուղներով[1]: Նրանք, ովքեր ճաշակում են Ինձ, ավելի են քաղցելու. նրանք, ովքեր խմում են Ինձ՝ ավելի են ծարավելու[2]: Ա՜հ, աղջիկս, որքա՜ն եմ ուզում, որ ամեն մի հոգի Իմ քաղցն ու ծարավը զգար: Այդ դեպքում Եկեղեցին այսպիսի ավերածության մեջ չէր լինի, ինչպես հիմա է: Որովհետև, Ինձ ինչ օգուտ նրանց ձևականություններից ու արարողություններից, երբ սեր չկա: Ծառը կարո՞ղ է գոյատևել առանց արմատի: Իմ Եկեղեցու Արմատը Սերն է, և եթե Սեր չկա, ապա ինչպե՞ս կարող է Իմ Եկեղեցին գոյատևել:

Հիսո՛ւս, ես ուզում եմ մխիթարել Քեզ:

Հանգստացրու Գլուխս քո սիրով, սիրի՛ր Ինձ, և թույլ տուր, որ ես հանգչեմ քո մեջ: Ես խորապես ուրախանում եմ այն բանի համար, որ տեսնելու եմ ձեզ բոլորիդ Իմ Խորանում[3]:

Սերը սիրում է քեզ: Ես Եմ Տերը, այնպես որ, ապահով զգա:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 7, 1989

Սովորեցրո՛ւ ինձ հնազանդվել Քեզ, որովհետև Դու ես իմ Աստվածը, և Դու ես, որ կրթում ես ինձ: Հոգիս նվաղում է ու ես անմխիթար եմ ինձ զգում այս աքսորի մեջ: Տե՛ր, լսիր իմ աղերսը: Որտե՞ղ ես Դու:

Ծաղի՛կս, խաղաղություն քեզ: Ես մոտ եմ քեզ: Այսուհետև Ես ուզում եմ, որ դու ավելի շատ հավատ ունենաս Իմ հանդեպ: Մի՞թե Ես չեմ քո Դաստիարակը: Ուրեմն ինչո՞ւ ես անհանգստանում: Խաղա՛ղ եղիր: Ես Ներողամտություն եմ:

Հավատարիմ մնա Ինձ և մնացյալը Ինձ թող: Ես երբեք քեզ չեմ մերժի Իմ Հացը, ոչ էլ Իմ Սերը: Հոգ տարեք միմյանց մասին: Հաճախ աղոթիր Ինձ, թեկուզ և մի բոպե: Ես միշտ քո առջև եմ, և Ես Միակն եմ, որն առաջնորդելու է քեզ: Ուրեմն վստահ եղիր, քանի որ քո ձեռքն Իմ Ձեռքում է: Ես գիտեմ, որ դու աղքատ ես, բայց մի՞թե Ես Անհուն Հարստություն չեմ: Կարիք չկա անհանգստանալու, որովհետև այդ Ես եմ, որ ապահովելու եմ քեզ: Երբեք, մեկ վայրկյան անգամ չմտածես, որ Ես քեզ կթողնեմ խավարում: Ես քո լապտերը յուղով կլցնեմ: Ես երբեք չեմ դադարի քեզ կերակրելուց: Փոքրի՛կս, Ես հոգ եմ տանում քեզ համար: Անդադար աղոթիր: Թույլ տուր, որ մինչև վերջ Ես լինեմ քո Դաստիարակը:

Փաղաքշի՛ր Ինձ քո սիրով: Զարդարի՛ր Ինձ քո աղոթքներով: Հրապուրի՛ր Ինձ քո պարզությամբ: Փնտրի՛ր Ինձ, և դու քո սրտի

[1] Սիրաք 24.26:
[2] Սիրաք 24.29:
[3] Հիսուսն ակնարկում էր նրանց, ովքեր ներկա էին լինելու պաշտամունքի ժամին:

պարզությամբ կգտնես Ինձ: Փափագի՛ր Ինձ, ծարավի՛ր Ինձ և երբեք մի՛ հոգնիր Սիրո համար սիրով ավետարանելուց: Ես՝ Տերս, խանդելու աստիճան սիրում եմ քեզ: Մնա՛ Իմ Սուրբ Սրտում: Իմ Սուրբ Սիրտը կտա ձեզ բոլորիդ այն ամենը, ինչ ձեր հոգին չունի: Ես փափագում եմ այս սերը, քանի որ Ես եմ Սիրո Աղբյուրը:
Սերը սիրում է ձեզ բոլորիդ:

Հուլիսի 8, 1989

Տե՛ր, իմ հոգին չունի Իմաստություն, հետևողականություն, ջերմեռանդություն, համբերություն: Ես Քո Զորության կարիքն ունեմ հարատևելու համար, բայց ես գիտեմ, որ Ինձ միայն անհրաժեշտ է ասել՝ «Ես Քեզ հիասթափեցնում եմ, ես հեռանում եմ Քեզանից», և Քո Սերն անմիջապես գալիս է Ինձ աջակցելու, իսկ Քո Ձեռքը՝ Ինձ բարձրացնելու:
Տե՞ր:

Ես եմ: Երբեք մի՛ կասկածիր: Ես եմ Տերն ու քո Ապաստանը: Վտանգների ժամանակ, երբ Իմ կարիքն ես զգում, հիշի՛ր, որ Իմ Անունն ես կանչելու, և Ես կփութամ քեզ օգնելու: Կառչի՛ր Ինձանից, սիրելիս, որովհետև Ես եմ քո Աստվածը, որը պաշտպանում է քեզ:

Ես պատասխանում եմ բոլոր նրանց, ովքեր կանչում են Ինձ: Վստահի՛ր Ինձ, և Ես երբեք քեզ հուսախաբ չեմ անի: Հենվի՛ր Ինձ վրա, թող Իմ Ուսը քո գլխի հենարանը լինի, Իմ Սուրբ Սիրտը՝ քո Տունը: Դու երբեք լքված չես լինի: Մի՞թե Իմ Անսահման Ողորմությունից դրդված չէր, որ Ես քեզ դեպի Ինձ բարձրացրի: Մի՞թե Ես օրհնությունների տեղատարափ չեմ հեղել քեզ վրա: Վե՛ր ել ուրեմն և մի՛ վախեցիր: Ես գիտեմ, որ դու թուլասիրտ ես, բայց Ես կտամ քեզ Իմ Զորությունը, որպեսզի դիմակայես Ինձ ընդդիմացողներին: Նրանք մեկը մյուսի ետևից ընկնելու են: Ոչ ոք քեզ չի դիպչելու, որովհետև Ես եմ քո Ապաստանը: Այս աքսորից անցնելիս, դու չպետք է վախենաս: Հիշի՛ր, թե ինչպես եմ Ես քեզ փրկել չարից: Ես եմ քո հույսի Աղբյուրը: Մինչև վերջ Ես միշտ բաժնեկից եմ լինելու քեզ հետ: Ուստի, ե՛կ և սիրտդ դատարկիր Իմ առջև, Ես և դու միասին:

Հասկացի՛ր, թե ինչպես եմ Ես առաջնորդում քո հոգին, որը չունի որևէ արժանիք, աղջիկս: Ամեն ինչ, որ Ես տալիս եմ քեզ, ձրի է: Միացի՛ր Ինձ և մեկ եղիր: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Այլևս մի՛ մեղանչիր:

Α Ω *Ալֆա և Օմեգա՞:*

Ես եմ:

Փառք Աստծո: Օրհնյալ լինի մեր Տերը:

Ծաղիկս, հիշի՛ր, երբ տեսնում ես Ինձ, ժպտա Ինձ: Ես Սեր եմ, և Ես քո կողքին եմ: Թույլ տուր, որ Ես լինեմ քո Դաստիարակը: Արդեն ասվել է,

որ Իմ որդիներն ու դուստրերը Իմ կողմից են ուսուցանվելու և, որ Սերն է լինելու ձեր Դաստիարակը, ձեր Ուսուցիչը, և բոլոր ուսուցումները գալու են հենց Իրենից՝ Իմաստությունից: Այդ Ես եմ, որ առաջնորդելու եմ ձեզ մինչև վերջ:

Մոտ <u>ե՛կ</u>, դո՛ւ, որ մինչև օրս մոլորված ես այս ամայության մեջ՝ ասելով, թե. «Ես փնտրել եմ Իմ Փրկչին, բայց չեմ գտել»: Ինձ գտի՛ր, սիրելի՛ս, մաքուր սրտով, անշահախնդիր սիրելով Ինձ:. Ինձ գտի՛ր սրբության մեջ՝ հանձնվելով Ինձ ինչպես Ես եմ փափագում: Ինձ գտի՛ր Իմ Պատվիրանները պահելով, Ինձ գտի՛ր՝ չարությունը սիրով փոխարինելով, Ինձ գտի՛ր սրտի պարզությամբ: Այլևս մի՛ մեղանչիր. դադարի՛ր չարիք գործելուց. սովորիր բարիք գործել. արդարությո՛ւն փնտրիր, օգնի՛ր նեղյալներին: Թող այս ամայությունն ու անբերրիությունը կենդանություն առնեն, թող քո գաղջությունը հրավառ բոցի վերածվի: Ջերբազատվի՛ր անտարբերությունից և այն փոխարինիր ջերմեռանդությամբ: Արա՛ այս ամենը, որ կարողանաս ասել. «Ես փնտրում էի Իմ Փրկչին ու գտա Նրան. այս ողջ ընթացքում Նա միշտ ինձ մոտ էր, բայց ես խավարի մեջ էի ու Նրան չէի կարողանում տեսնել: Օ՜ թո՛ղ փառավորվի Աստված: Օրհնյա՛լ լինի մեր Տերը: Ինչպե՞ս կարող էի այսքան կույր լինել»: Այն ժամանակ Ես քեզ կհիշեցնեմ, որ պահես և փայփայես Իմ Օրենքները, <u>որպեսզի ապրես</u>:

Շնորհակալ եմ, Տե՛ր իմ, որ Դու այժմ այս անապատը վերածելու ես հորդահոս աղբյուրների:

Հիշի՛ր Իմ Ուսուցումները: Ե՛կ, միշտ հիշիր Իմ Ներկայության մասին: Սերը սիրում է քեզ[1]: Ուզո՞ւմ ես կիսվենք:

Օ՜հ, այո՛, Տեր:

Ուրեմն արի բաժնեկցենք սիրով: Մե՛կ եղիր Ինձ հետ:

Հուլիսի 9, 1989

(Տերը Սուրբ Գրքից մի հատված տվեց ինձ կարդալու այն մասին, որ Նա վերակառուցելու է Երուսաղեմը):

Տե՞ր:

Ես եմ: Այն ամենն, ինչ կարդացիր, իրականանալու է: Ես վերաշինելու եմ Իմ Եկեղեցին: Այսօր Իմ Եկեղեցին ավերակների ու ահավոր խառնաշփոթի մեջ է, բայց շուտով օրեր են գալու, երբ յուրաքանչյուր ոք հետևելու է Իմ Օրենքին, այն Սիրո Սերմերի պատճառով, որոնք այժմ Ես ցանում եմ նրանց սրտերում: Նրանք Իմ Օրենքը կրելու են իրենց սրտի խորքերում և կոչվելու են «Բարձրյալի Վկաներ»: Նրանք լինելու են Իմ

[1] Հանկարծ ես հիշեցի իմ տնային գործերի մասին:

ժողովուրդը, իսկ Ես՝ նրանց Աստվածը, և Գիտություն են ձեռք բերելու ուղղակի Իմ Շուրթերից: Ես լինելու եմ նրանց Ուսուցիչը, իսկ նրանք լինելու են Իմ Աշակերտները:

Այդ ժամանակ Ես Կարգ ու Կանոն կհաստատեմ, որը երբեք չի անհետանա: Եվ նրանք բոլորը կճանաչեն Ինձ Իմ Սուրբ Անունով, նույնիսկ նրանք, ովքեր բնավ արժանիք չունեն, որովհետև Ես Անսահման Ողորմություն, Ներողամտություն ու Գթություն եմ: Այո՛, Իմ Սրբարանի Պատերը վերաշինվելու են, շերտ առ շերտ, աղյուս առ աղյուս: Ամեն ինչ վերաշինվելու է Իմ Սեփական Ձեռքով:

Հետո Ես գնալու եմ և ամեն մի փողոցի անկյունում փնտրելու եմ մեռելներին և մեկը մյուսի ետևից հարություն եմ տալու, որպեսզի նրանք կարողանան դառնալ Իմ նոր խոսափողերը: Եվ Ես Իմ Սուրբ Հոգով ուղարկելու եմ նրանց, որ ծառայեն ձեր առջև, և երբ դուք հարցնեք նրանց թե «Ո՞վ է տվել ձեզ այս իշխանությունը», նրանք կպատասխանեն, որ հենց Ինքը՝ Իշխանությունն է տվել իրենց այդ իշխանությունը: Իսկ դո՛ւք, սիրելիներս, դո՛ւք, որ տառապում եք այս անապատում, դառնալու եք ոռոգված պարտեզի նման, ջրի աղբյուրի նման, որի ջրերը երբեք չեն չորանում: Սերն ապրելու է ձեր մեջ, և Ես շրջապատվելու եմ Յուրայիններով, որոնք գովաբանելու են Ինձ, փառաբանելու են Ինձ՝ բոլորը միացած Իմ Նոր Սուրբ Անվան ներքո: Եվ Ըմբոստությունը դադարելու է և հասնելու է իր վախճանին: Իմ խոսքով խոցված, այն մեռնելու է և այլևս երբեք չի բարձրանալու: Ես մտադիր եմ ազատել ձեզ Չարի ձեռքերից, ամրապնդելով ձեզ Իմ Լույսի մեջ[1]: Միայն ի սեր նրանց, ովքեր սիրում են Ինձ և զոհաբերվում են Ինձ համար, Ես նվազեցնելու եմ Իմ Կրակը: Ի սեր ձեզ, սիրելիներս, Իմ Ձեռքն այդքան ծանր չի իջնելու, որքան ձեզ ասվել է:

Ձեր դարաշրջանի հանցանքը տակավին մեծ է և նրա մեղքերն անհամար են: Նրա անիրավությունն այնքան լուրջ է, որ ձեր ծառերը հազիվհազ են պտուղ տալիս: Դուք զարմանո՞ւմ եք խաղողի որթերի վրա խաղող չտեսնելով, պտղատու ծառերի վրա ոչ մի պտուղ և անգամ ոչ մի կանաչ տերև չտեսնելով: Դուք զարմանո՞ւմ եք, որ դրանք այլևս չեն ծաղկում և ոչ էլ բուրում են: Դա պայմանավորված է նրանով, որ Իմ թշնամիները թունավորել են Իմ աղբյուրները, որոնք ջրում են Իմ Պարտեզը, որպեսզի չորացնեն այն սակավ բերքը, որը մնացել է դրանց վրա: Ես տեսել եմ, թե նրանք ինչպես են ոչնչացնում ծաղիկ ծաղկի ետևից: Նենգ ու չար, ինչպես իժերը, նրանք գալիս են գիշերով Իմ Սրբարանը՝ առանց երկյուղի ցուցադրելով իրենց զազրելի հակումները, չար մարդկանց մի այնպիսի սադրանքով, որ ոչ մեկը չի հրաժարվում իր չարագործությունից:

Բայց, Տե՛ր, նրանք պետք է իմանան, որ Դու հետևում ես իրենց:

Նրանք ապստամբներ են, ապստամբած Իմ Օրենքի դեմ: Այդ նրանք են, որոնց մասին Սուրբ Գիրքն ասում է. «Նրանք Իմ ժողովրդի վերքերը կապում են անտարբերությամբ: Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն են

[1] Հանկարծ ես հիշեցի Կրակով Մաքրագործումը:

ասում, բայց խաղաղություն չկա: Նրանք ո՛չ ամոթ ունեն, ո՛չ էլ սեր, նրանք անսիրտ են»: Բայց Ես Իմ Մեկ Շնչով տապալելու եմ այս ապստամբներին: Ես ջախջախելու եմ այդ բոլոր Կայեններին, որոնք իրենց դրել են Կեղծիքի բարձր գահերի վրա: Ինձ ինչ օգուտ նրանց գահերից: Ես նրանց զգուշացրել եմ և որքան ավելի եմ զգուշացրել, այնքան ավելի համառորեն են մերժել լսել, որ չլինի թե հանկարծ դեպի Ինձ դառնան ու դարձի գան:

Այս Կայենները բազմաթիվ տասնամյակներ հարատևել են ուրացության մեջ, երբեք չհրաժարվելով իրենց չար գործերից: Նրանք կառչում են պատրանքներից ու կեղծիքից: Նրանք ոտքի տակ են առնում Իմ նվիրյալներին և նրանց, ովքեր հավատարիմ են մնում Իմ Պետրոսին: Այո՛, նրանք ծաղրուծանակի են ենթարկում բոլոր նրանց, ովքեր դեռևս հավատում են նրան: Այս Կայեններն այն աստիճան են վնասում Իմ Եկեղեցուն, որ Իմ Աչքերը վերածում են Արցունքների Աղբյուրի, արտասվելով օր ու գիշեր...

Աստվա՛ծ իմ,
ինչ ցավ ես Դու ինձ տալիս...
Քո Օրենքներն այնքան հրաշալի են:
Ինչու պետք է որևէ մեկը
այսպես վարվի Քեզ հետ:
Քո Օրենքները իմ հավիտենական
ժառանգությունն են:
Օ՜հ, Տե՛ր,
որ այդքան Սիրող և Քնքույշ ես,
իմ աչքերը նույնպես արցունքի
աղբյուրների են վերածվում,
որովհետև ուրիշները
արհամարհում են Քո Օրենքը:[1]

Այդ պատճառով Ես ձեզ[2] մոտ եմ ուղարկում հենց նրանց, որոնց դուք անվանում եք թույլ, անարժան, արհամարհելի և հիմար: Ես մտադիր եմ ամաչեցնել ձեզ բոլորիդ, ով որ իրեն իմաստուն է համարում: Դուք անակնկալի եք գալու, որովհետև Ես մտադիր եմ ձեզ այնպես շփոթեցնել, որ ձեր անունն իսկ չիմանաք, կամ, թե որտեղից եք եկել:

Սիրելիս, հանգստացի՛ր այժմ, Ես հույս ունեմ քեզ հետ միասին ավելի շատ ժամանակ անցկացնել: Աչալուրջ եղիր բոլոր վտանգների հանդեպ, հաստատուն մնա հավատի մեջ և թող ամեն արածդ սիրով լինի: Ես օրհնում եմ քեզ: Մե՞նք, մե՞զ:

Հավիտյանս, Տե՛ր իմ:

Ե՛կ, հանգստացի՛ր Իմ Սուրբ Սրտում, <u>քո տանը</u>:

ΙΧΘΥΣ

[1] Սաղմ. 118:136
[2] մեր սերնդի, մեր դարաշրջանի

Հուլիսի 15, 1989

Տե՛ր իմ, եկ, բարձրացրո՛ւ ինձ
և թույլ տուր հանդիպել Քեզ հետ:
Թող Քո Լույսը ճառագի ինձ վրա:
Ես փորձում եմ չմոռանալ
Քո կանոնները,
թեև ինձ հալածողների օղակները
ավելի թույլ չեն թվում այնտեղ,
ուր ես ապրում եմ այս անապատում,
բայց սրտումս հիշելով
Քո Ներկայությունը,
ես քաջալերվում եմ:
Ես ցնծում եմ Քո Ներկայությամբ,
Սրբերի Սուրբ:

Իմ Սուրբ Սրտի Վասուլա, սիրի՛ր Ինձ և հատուցիր նրանց համար, ովքեր չեն սիրում Ինձ: Ուրախացրո՛ւ Իմ Սուրբ Սիրտը և սովորիր այս փոքրիկ աղոթքը.

Ո՜վ Սուրբ Սիրտ Հիսուսի,
Նորոգի՛ր իմ հոգին,
Թաքցրո՛ւ իմ սիրտը
Քո Սուրբ Սրտի մեջ,
որպեսզի ապրեմ: Ամեն:

Այս աղոթքը նվիրիր Իմ Սուրբ Սրտին:

Աղջի՛կս, քո տքնությունն իզուր չի լինելու: Ա՜հ, Իմ մնացորդ, երբեք մի՛ դադարիր աղոթելուց, մի՛ դադարիր Ինձ նայելուց, հառի՛ր աչքերդ Ինձ վրա, թող որ Ես միշտ Ներկա լինեմ քո մտքում, որովհետև Ես Սուրբ եմ, Սուրբ, Սուրբ: Քեզ հալածողները, զավա՛կս, նաև Ինձ հալածողներն են: Այդ նրանք են, որոնք գալիս են դիշերով Իմ Խաղողի Այգին, որպեսզի ավերեն Այն: Բայց մի՛ վախեցիր, Ես նման եմ մի պահակի, որ զգույշ հսկում է այդ սողոսկողներին: Ես ոչ մեկին թույլ չեմ տա, որ դիպչի Իմ Խաղողի Այգու պտուղներին:

Հուլիսի 17, 1989

Տե՛ր:

Զավակս, լսի՛ր Ինձ և գրիր:

Ես եմ Իմ Հոտի Մեծ Հովիվը: Ես կրթել եմ հովիվների, որ հոգ տանեն Իմ հոտի մասին, բայց Իմ ընկերակիցներից շատերը այդ կարողությունը չունեն և չեն անհանգստանում կորածի համար և մոլորվածին ետ չեն բերում դեպի փարախ:

Իմ լավագույն բարեկամներն են, որ Ինձ տալիս են ամենամեծ ցավերը, և Իմ Մարմնի ամենախոր Վերքերը հասցվել են այն գավազանի միջոցով,

որը ես Ինքս եմ նրանց տվել: Նրանք Իմ լավագույն բարեկամներն են, բայց և այնպես ես անճանաչելիորեն խոցված եմ նրանց սեփական ձեռքերով: Մեջքս անդադար ճաղկվում է, ողջ Մարմինս ցնցվում է ցավից, պապակ շուրթերս դողդողում են: Առանց վախենալու նրանք աղաղակում են խաղաղության համար, բայց խաղաղություն չկա, որովհետև նրանք թույլ են տվել իրենց, որ գրավվեն և հրապուրվեն Բանականությամբ, Անհնազանդությամբ և Սնափառությամբ: Որքա՜ն ցավ են նրանք պատճառում Ինձ, և ինչ Վերքեր են հասցնում Ինձ:

Տե՛ր, ինչո՞ւ ոմանց համար դա այդքան դժվար է:

Դժվար է թողնել Կեղծիքի գայիսոնը, երբ մի անգամ արդեն բռնել են այն: Դժվար է հրաժարվել մարդկային իրենց ուսմունքներից և կանոններից: Դժվար է սպանել իրենց սեփական ընչաքաղցությունը, դժվար է ընդունել ինքնանվաստացման պատմուճանը: Սրանց ես ասում եմ՝ ոռնացե՛ք հովիվներ, ճչացե՛ք, ընկե՛ք գետնատարած, դո՛ւք, հոտի տերեր, որովհետև ձեր սպանդի օրերը հասել են: Ընտիր խոյերի նման դուք մեկդ մյուսի ետևից ընկնելու եք:

Իմ ընկերների մեջ ես ամենալավ ժառանգությունն եմ առաջարկել ձեզ: Ես ձեզ ընտրյալների շարքին եմ դասել. ձեզ եմ վստահել Իմ Տունը, բայց դուք չեք հետևել Իմ կանոններին: Դուք ուրացել եք, արել այն, ինչ ես չարիք եմ համարում: Ես կանչեցի ձեզ, բայց դուք չլսեցիք, դուք չհնազանդվեցիք Ինձ[1]...

Ա՜հ, Աստվա՛ծ իմ, ողորմյա՛ մեզ, լվա՛, մաքրիր այս հովիվներին իրենց հանցանքից, մաքրագործի՛ր նրանց իրենց մեղքից:

Իմ փոքրիկ հարս, թույլ տուր, որ կիսեմ ցավերս քեզ հետ:

Ես սիրում եմ քեզ, Տեր իմ Աստված,
որ այնքան Քնքուշ ես
ու այնքան Ողորմած:
Ես ապրում եմ միայն Քեզ համար:
Իմ հայացքը միայն
Քեզ է ուղղված և ուրիշ ոչ ոքի:
Ես պաշտում եմ Քեզ:

Ա՜հ, քո սիրո խոսքերը որքան են մեղմացնում իմ Արդարությունը: Սիրո յուրաքանչյուր կաթիլ հաշվի է առնվում, անհամար հոգիներ կարող են սիրով փրկվել: Թույլ տուր, որ քեզ օգտագործեմ որպես Իմ քարետախտակը: Ես գալիս եմ քեզ մոտ, որպեսզի ցույց տամ Իմ Վերքերը և որպես բարեկամ պատմեմ քեզ Իմ վշտերի մասին: Ես քեզ ցույց եմ տալիս Իմ Սուրբ Սրտի Վերքերը:

Օրհնյալ լինի մեր Տերը:

[1] Սա ասվեց մեծ դառնությամբ:

Իմ Վասուլա, Ես այժմ Ողորմության դարաշրջանում եմ: Մի՞թե դուք չեք նկատել, թե ինչպես է Իմ Շնորհի Հոգին հեղվում ձեզ վրա: Հիմա՛ է, որ դուք պետք է ապաշխարեք, հիմա՛ է, որ պետք է փոխեք ձեր կյանքը: Անդադա՛ր աղոթեք, սիրո՛վ աղոթեք: Մի՛ համառեք ըմբոստության մեջ, որովհետև Արդարության սարսափելի Ժամը շուտով ձեզ վրա է հասնելու: Պատրաստ եղեք այդ ժամանակ Ինձ հանդիպելու որպես Դատավորի:

Իմ ուստերը և դուստրը, վաղուց ի վեր Ես ազատել եմ ձեզ ձեր չղթաներից, որոնք ձեզ կապում էին մահվան հետ և մեծ Կարեկցությամբ ձեզ ետ եմ վերցրել: Ես փրկել եմ ձեզ չարից, Ես ցույց եմ տվել ձեզ Իմ Սիրտը, թե ինչպես է Այն խոցվել ձեր նախնիների կողմից: Ես Ինքս Ինձ զոհաբերել եմ, որպեսզի ձեզ ազատ արձակեմ:

Ձեր դարաշրջանն անդադար բարկացնում է Ինձ, բայց և այնպես, մեծ գթասրտությունից դրդված Ես թույլ եմ տալիս, որ Շնորհի Իմ Հոգին հիշեցնի ձեզ Իմ կանոնների մասին: Այսօր Իմ Ողորմությունը երկրի մի ծայրից մյուսն է հասնում: Լսե՛ք այսօրվա Իմ Ձայնը, ընդունե՛ք այսօրվա Իմ Ողորմությունը: Ես ամենայն լրջությամբ խնդրում եմ ձեզ, որ սրտա՛նց աղոթեք, ծո՛մ պահեք, ապաշխարե՛ք, սիրե՛ք միմյանց, նորոգե՛ք ինքներդ ձեզ՝ բոլորովին նորը դառնալով, որպեսզի Ես կարողանամ ցույց տալ Իմ Փառքը ձեր փոխակերպության միջոցով:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 19, 1989

Սուրբ Աստված,
իմ Հոգին տենչում է
Քո Սուրբ Սրտին:
Երջանիկ են բոլոր նրանք,
ովքեր ապրում են
Քո Սուրբ Սրտում և ամբողջ օրը
կարող են Քեզ պաշտել:
Երջանիկ են նրանք, ովքեր
շնորհներ են ստանում Քեզանից:
Կյանքի կոչի՛ր նորից բոլոր նրանց,
ովքեր դեռ մեռած ընկած են,
որպեսզի նրանք կարողանան
ցնծալ Քեզնով:
Ցույց տուր նրանց Քո Սերը,
ցույց տուր նրանց Քո Սուրբ Սիրտը,
որպեսզի նրանք կարողանան
Քեզ համար
Սիրո մի Նոր Օրհներգ երգել:

Իմ Հոգու սիրելի, բռնի՛ր Ձեռքս և գնահատի՛ր այն ամենը, ինչ Իմաստությունն է ուսուցանել քեզ: Ես քեզ ուսուցանել եմ Սիրո լեզվով, Ես ուսուցանել եմ քեզ, որ զանազանես ու լսես Իմ Ձայնը, Ես ուսուցանել եմ քեզ, թե ինչպես գտնես Ինձ՝ քո Տիրոջը: Ես կենդանացրել եմ քո

հոգին: Ես հիշեցրեցի քեզ Իմ Գեղեցկության մասին, ու նաև այն, որ Ես Սիրո Գերագույն Աղբյուրն եմ: Ողջ Հավիտենությունից ի վեր Իմ բաղձանքն էր քեզ հետ լինել, քո մեջ լինել, իսկ դու՝ Իմ մեջ: Թերևս այժմ, դու սկսում ես հասկանալ Իմ այս բոցավառ Սերը, և այն, թե Ես՝ քո Աստվածը, որքան անհամբեր եմ և որքան ծարավի եմ Սիրո:

Ծաղի՛կս, Ես միշտ քեզ հետ եմ և քեզ հետ եմ լինելու մինչև վերջ և հավիտյան: Իմ Սուրբ Սիրտը դարձրու քո Տունը: Ինչպես մի աղավնի, որն ունի իր բույնը, թո՛ղ Իմ Սուրբ Սիրտն էլ լինի քո Տունը:
Իմ Սերը ձեր բոլորի հանդեպ հավիտենական է:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 25, 1989

(Պատմոս՝ Հայտնության կղզին, ուր Սուրբ Հովհաննեսն աքսորված էր):

Ես քեզ բերել եմ մի բերրի երկիր, որպեսզի վայելես դրա բերքն ու բարիքը:[1]

Տե՛ր իմ, ես Քո թույլտվությունն եմ հայցում, որ ինձ շնորհ տաս «ստանալու» Քո Խոսքը, եթե հնարավոր է այն քարայրում, ուր Սուրբ Հովհաննեսը նույնպես Քո Խոսքը ստացավ: Տե՛ր, սրտիս խորքերից ես կանչում եմ Քեզ: Կարեկցությամբ լսի՛ր իմ աղերսը. ես ապավինում եմ Քո պատասխանին: Ամեն:

Երբ դու սկսեցիր քո աղերսը, մի խոսք հնչեց, և Ես եկել եմ քեզ ասելու, թե ինչ է դա. «Դու հատուկ ընտրված մի մարդ ես»:[2]

Դա իսկապես ի՞նչ է նշանակում:

Լսի՛ր Ինձ, եկ Ինձ մոտ ցանկացած ժամանակ, որպեսզի նրանք իմանան, որ Ես Եմ Նա: Ես՝ Խոսքը, իջել եմ ձեր մեջ, որպեսզի ներեմ ձեզ և բոլորիդ ետ բերեմ դեպի Ինձ:

(Պատգամ տրված հույն շնորհյալների խմբին, որ եկել էր Պատմոս կղզին աղոթելու և սովորելու վարդարանը: Ոմանք եկել էին Աթենքից, ուրիշները՝ Հռոդոսից: Իրար միացած բոլորը գնում էին դեպի Պատմոս ուխտագնացության):

Արթնացե՛ք սիրելիներ, Ես ձեր Փրկիչն եմ, Խաչյալը, ձեր Ազատարարը: Զգացե՛ք Իմ Սերը...

Ի սեր ձեզ Ես եկել եմ սերը ավելացնելու, իսկ չարը՝ նվազեցնելու: Ես եկել եմ, որ հայթայթեմ ձեր հոգու համար այն ամենը, ինչ պակասում է: Մի՛ վախեցեք, փոքրիկներ: Մի՞թե Ես Առատաձեռն չեմ: Մի՞թե Ես

[1] Երեմ. 2:7
[2] Դան. 9:23

Բարձրյալը չեմ. ուրեմն վստահություն ունեցեք, որովհետև դուք ձեր Հոր Բազուկների մեջ եք: Ես՝ Սուրբ Երրորդությունը, Մեկ եմ և Նույնը:

Անմնացորդ հանձնվեք Իմ Բազուկներին և թույլ տվեք, որ Ես ձեզ դարձնեմ Լույսի Կենդանի Սյուներ: Թույլ տվե՛ք, որ ձեզ հետ կիսեմ այն ամենը, ինչ Ես ունեմ: Ես սիրում եմ ձեզ: Սիրելինե՛րս, լույսն այս խավար աշխարհում երերում է ու դողում, որովհետև չարը հանգցնում է այն չնչին լույսը, որն այժմ մնացել է այս աշխարհում:

Ձեր սերունդը անողոք հրճվանքով չարին կոչում է բարի, իսկ բարուն՝ չար: Առանց խղճահարության նրանք անվերջ հայհոյում են Իմ Սուրբ Անունը՝ պատրաստ դեմքով դառնալու դեպի չարը ու ծնրադրելու նրա ոտքերի առջև: Ինպե՛ս եմ Ես տառապում այս ամենը տեսնելով: Զգա՛ Իմ Սուրբ Սիրտը, թե որքա՜ն է Այն բզկտված, ինչպե՛ս է Այն արյունահոսում՝ տեսնելով այս մեռած դարաշրջանը պայքարելիս, որպեսզի կտրի Ինձ հետ կապող իրենց պորտալարը, որպեսզի բերկրանքով իրենք իրենց կարողանան կոչել «Անաստված», որպեսզի կարողանան ասել. «Կարիք չկա մտածելու, թե մենք ում ենք պատկանում: Տեսե՛ք, մենք ազատված ենք, մենք հիմա կգնանք ու կկառուցենք Բաբելոնի մի Աշտարակ: Մի՞թե նախկինում չենք արել սա. ինչո՞ւ կված մնալ Աստծուն. ի՞նչ ենք շահում Նրա Օրենքով»:

Նրանք այս ամենն անում են, որովհետև երբեք չեն ճանաչել ո՛չ Հորը, ո՛չ էլ Ինձ: Այս սերնդի մեծ մասը Բահաղի երկրպագուներ են: Այո՛, նրանք հետնորդներն են իրենց նախնիների, որոնք երկրպագեցին սուտ աստվածների: Նրանք միայն չորացնում են իրենց հոգին, քանի որ նրանք կտրել են իրենց պորտալարը, որը կված էր Ինձ և կերակրում էր նրանց հոգուն...Նրանք կամավոր ուղղվում են դեպի հավիտենական կրակները: Նրանք հարձակվում են Իմ Սուրբ Անվան վրա և դիտավորյալ բարկացնում են Ինձ...

Եկե՛ք, Ես կանչել եմ ձեզ, և դուք լսել եք Ինձ: Ես եմ ձեր Տերը, իսկ դուք՝ Իմ Ժողովուրդը, Իմ Սեփականը: Ընդունե՛ք Ինձ սիրով ու խաղաղությամբ: Երկիրը պղծվել է այս սերնդի ոտքերի տակ: Ահա սրա համար էլ Իմ Մաքրագործող Կրակը իջնելու է երկնքից նրանց վրա, որպեսզի մաքրի կուպրով պատված հողը:

Ձեր հոգին դեպի Ինձ բարձրացրեք և մեկ եղեք Ինձ հետ: Իմ Խաղաղությունն ունեցեք: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ և այն ամենն, ինչ դուք բերել եք, որպեսզի օրհնվեն: Իմ Հառաջը յուրաքանչյուր սրբապատկերի ու կրոնական առարկայի վրա է: Մե՛կ եղեք:

ΙΧΘΥΣ

(Վերոհիշյալ պատգամը տրվել էր «Նավի դեպքից» հետո: Մինչ նավարկում էինք Հռոդոսից Պատմոս, ինչ-որ մեկը սկսեց կրոնից խոսել: Տասնհինգ րոպե հետո, մենք՝ տասներկուսս, շրջապատվեցինք երիտասարդներից բաղկացած մի մեծ բազմությամբ: Նրանց մեծ մասն աթեիստներ էին և բանավիճում էին մեզ հետ: Նրանք կռվում էին Աստծո Խոսքի դեմ: Բայց հակառակ նրանց կատաղի հարձակմանն ու ծաղրուծանակին, նրանցից մեկը տեղնուտեղը դարձի եկավ):

Տե՛ր իմ, թող նրանք տեսնեն
քո խանդոտ սերը:
Դու ես մեր
Խաղաղությունն ու Հույսը:
Մենք արժանի չենք ո՛չ Քո Սիրուն,
ո՛չ էլ Ողորմությանը:
Մեզ հետ եղիր,
որովհետև մենք տկար ենք
ու դյուրաբեկ ծաղկի նման,
և մենք կարիք ունենք
Քո Ավիշին, որ սնի մեզ:

Սո՛ւրբ եղեք, ինչպես Ես եմ Սուրբ: Կարդացե՛ք Իմ Խոսքը, ապրե՛ք Ինձ համար և միմիայն Ինձ համար: Զարին սիրով փոխհատուցեք: Եղե՛ք մատաղ շիվերի նման, որոնք աճում են Խաղողի Որթի վրա: Շուտով դուք բողբոջելու եք ու ծաղկելու և աշխարհը լցնելու եք պտուղներով: Իմ Խաղաղությունը ձեզ, մնացեք Իմ Կրծքի վրա: Սուրբ է Իմ Անունը, ուստի հիշեք, որ սուրբ լինեք:
Եկե՛ք:

Հուլիսի 26, 1989

(Հայտնության Քարայրի ներսում, ճիշտ այնտեղ, որտեղ դպիրը կանգնած է եղել գրելիս, ես դրեցի իմ նոթատետրը և ստացա Տիրոջ Պատգամը):

Տե՞ր:

Ես եմ: Երբեք մի՛ կասկածիր: Ես ձեզ հետ եմ հիմա և մինչև ժամանակների վերջը և Հավիտյան:

Տե՞ր:

Ես եմ: Սերը մոտ է ձեզ, մի՛ վախեցեք: Եկե՛ք: Այն, ինչ Ես խնդրում եմ ձեզանից, Սեր է, <u>փոխադարձ Սեր</u>: Իմ Խաղաղությունը ձերն է, վերցրե՛ք Իմ Խաղաղությունը, որպեսզի Այն կարողանաք տալ ուրիշներին: Դադարե՛ք չարիք գործելուց:
Միացե՛ք, միացե՛ք և մեկ եղեք, ինչպես Ես ու Հայրը Մեկ ենք և Նույնը:
Խաղաղություն... Խաղաղություն: Եկե՛ք հաշտվեք Ինձ հետ: Սերը կանչում է ձեզ հիմա:

Հուլիսի 28, 1989

(Հռոդոս)

Տե՞ր:

Ես եմ: Փոքրի՛կս, հասկացի՛ր, թե ինչ ձևով եմ Ես Ներկա:

Իսկ ես լսելո՞ւ եմ Քեզ, Տե՛ր իմ:

Փոքրի՛կս, Ես ուզում եմ, որ լսես Ինձ և զգաս Ինձ: Թո՛ւյլ տուր, որ Մատս հանդչի քեզ վրա, թո՛ւյլ տուր, որ Իմ Հոգին չնչի քո մեջ:

Օ՜, Տեր, որքան անարժան եմ ես այս ամենին:

Մեկ եղիր Ինձ հետ... Ես՝ Տերս, որքան եմ սիրում քեզ: Հասկանո՞ւմ ես, Իմ Սուրբ Սիրտը բաց է, և նա, ով ուզում է մտնել Այնտեղ, սիրով է ընդունվում: Դուք բոլորդ ազատ եք ընտրություն կատարելու: Եթե ընտրեք Իմ Սուրբ Սիրտը, ապա Ես կլցնեմ ձեզ, Ես թույլ կտամ ձեզ, որ ապրեք Իմ Լույսի մեջ, դուք կկլանեք Ինձանից: Ես կանեմ ձեզ, ապա կհարցնեմ, թե արդյոք կամենում ե՞ք կիսվել Ինձ հետ: Փեսայի ու Հարսի նման մենք կիսելու ենք (ամեն ինչ), և Ես բոլորովին նորոգելու եմ ձեզ Իմ Սիրով:

Տե՛ր, այնպես արա, որ ամենքը դեպի Քեզ վերադառնան: Մեր սերնդին էլ նորոգիր, ինչպես հին ժամանակներում:

Եկե՛ք ուրեմն, վերադարձե՛ք դեպի Ինձ, <u>Ես</u> չեմ մերժում ձեզ: Ես Ամենաողորմածն եմ և չափազանց՝ Կարեկից: Գիտակցե՛ք և ընդունեք ձեր մեղքերը, ապաշխարե՛ք և Իմը եղեք: Ես-Նա-Եմ-Ով-Փրկում-է: Ես ձեր Փրկիչն եմ: Ես Սուրբ Երրորդությունն եմ՝ բոլորը Մեկի մեջ: Ես Շնորհի Հոգին եմ, և չնայած ձեր սերունդը կարծում է որ Հայր չունի, այնուամենայնիվ, Ես պատրաստ եմ ներելու և մոռանալու ու ետ ընդունելու բոլոր նրանց, ովքեր ուրացել են: Շնորհի Իմ Սուրբ Հոգին պատրաստ է բարձրացնելու և նորոգելու ձեզ: Ինչո՞ւ եք շարունակում ձեր երկիրը անապատի վերածել: Դուք չե՞ք հոգնել անապատում ապրելուց: Վերադարձե՛ք դեպի Ինձ, եղե՛ք նրանցից մեկը, ով փնտրել է Իմ Ջրհորները և գտել է դրանք: Ես նորոգելու եմ ձեզ Իմ Կատարելությամբ, Իմ Գեղեցկությամբ, Իմ Փառքով: Ես մտադիր եմ բարձրացնել ձեզ կատարելության, որպեսզի ձեր Հոգին կարողանա ապրել:

Ես ցանկանում եմ խոսել Իմ սիրելի զավակների[1] հետ: Ես սիրում եմ նրանց և նրանց հանդեպ տածած Իմ Սերը հավիտենական է: Ես կանչել եմ նրանց, որպեսզի ցույց տամ Իմ Սիրտը, և նրանք լսել են Ինձ, նրանք լսել են Իմ Խաչից եկող Աղաղակը: Ես միշտ փափագում էի հրապուրել նրանց Հոգին, քանի որ նրանք Իմ սերունդն են: Ժամանակների սկզբից ի վեր Ես փափագում էի, որ նրանք Ինձ հետ այսպես մոտիկ լինեին: Ողջ հավիտենությունից սկսած Ես փափագում էի, որ նրանք սիրեին և պաշտեին Ինձ՝ իրենց Աստծուն: Ես ցանկանում եմ հիշեցնել նրանց, թե ինչպես կարող եմ Ինքս Ինձ բացահայտել տարբեր ձևերով՝ նվիրյալ հոգիների մեջ, հայտնելով Իմ գաղտնիքները, հայտնելով Իմ

[1] Աթենացիների խումբը

Իմաստությունը: Ես ուզում եմ, որ նրանք սովորեն զանազանել, թե ինչն է գալիս Հոգուց և ինչն է գալիս իրենցից:

Սկզբից ևեթ, Ես նրանց անվերջ հորդորել եմ, որ հետևեն Իմ Շրթունքներին: Զանազանելու անկարողությունն առաջ է բերում խակ պտուղներ, անմտություն, ենթադրություններ: Այն կարող է միայն ավելի դրդռել նրանց սրտերը: Ես արթնացրել եմ նրանց թմբիրից, որպեսզի նրանք կարողանան ապրել, և Ես մեծ անհամբերությամբ սպասել եմ այս ժամին: Ինձ հետ նրանք կսովորեն: Հասկացե՛ք, թե ինչպես է գործում Իմ Հոգին: Ես սիրում եմ բոլորիդ և չեմ ուզում, որ ընկնեք անմտության մեջ: Ես չեմ ուզում, որ մոլորվեք ձեր անձնական դատողությունների պատճառով: Խոնա՛րհ եղեք, փո՛քր մնացեք և թույլ տվեք, որ <u>Ես</u> կերակրեմ ձեզ այն ձևով, որը Ես եմ ընտրել:

Ես երբեք չեմ դադարի ձեզ հետևելուց: Ես՝ Տերս, տալիս եմ ձեզ Իմ Օրհնությունները, Իմ Սերն ու Խաղաղությունը:

Հուլիսի 29, 1989

(Հռոդոս)

(Ես վազեցի Տիրոջ մոտ միայն մի բոպեով):

Սերը քեզ մոտ է: Փոքր մնա, որպեսզի Իմ Հոգին կարողանա աճել քո մեջ: Ես եմ Ճշմարտությունը, Կյանքը և Ճանապարհը: Փառավորի՛ր Ինձ, Ինձ սիրելով:

Հուլիսի 30, 1989

(Հռոդոս)

(Այսօրվա ընթերցանությունը Կողոս. 2:1-15 էր: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ ես հանդիպեցի մի մարդու, որը ավետարանական էր: Նա ասում էր, որ բոլոր պատգամները գեղեցիկ են, բայց Սատանան անկասկած միջամտել է, վերցնելով Մեր Մոր անունը: Նա ասում էր, որ Սատանան ինքն է միավորելու Եկեղեցիները: Ապշեցուցիչ է, թե ինչպես է Սատանան կարողանում բարի մարդկանց մոլորեցնել...)

Տե՞ր:

Ես եմ: Իմ Խաղաղությունը քեզ, Իմ Խաղաղությունը քոնն է:

Իրապես մի՛ խաբվեք բանական փիլիսոփայությունից և ոչ ողջամիտ ուսուցումներից: Իրականացրե՛ք ձեր առաքելությունը Իմ Փառքի համար և կրկնեք այն ամենը, որ Ես սովորեցրել եմ ձեզ: Ես եմ Իմաստությունն ու ձեզ Դաստիարակողը: Իմ Սեփական Շրթունքներից եք դուք սովորում: Ինձ հետ կրկնեք հետևյալ խոսքերը.

Տե՛ր,

առ ինձ հոգով, առ ինձ շնչով:
Տեր իմ Հիսուս, առ սիրտս,
ամբողջը քոնն է:
Քո Սերը նախընտրելի է,
քան ինքը՝ կյանքը:
Ես հույսս դնում եմ Քեզ վրա:
Ամեն:

Փոքրիկ՛ս, Սերը միշտ քեզ մոտ է մնալու: Դու միշտ կհիշե՞ս, թե ով է քո Փրկիչը:

Գիշեր ու զօր, երկինքը սգում է այն հերետիկոսությունների համար, որոնք թափանցել են Իմ Մարմնի մեջ, հերետիկոսություններ, որոնք գիշատում են Իմ Մարմինը: Քաղցկեղի նման նրանք զարգանում են Իմ Մարմնի մեջ: Նրանց թթխմորը թափանցել է Իմ Հացի մեջ... Ես ձեզ ամենայն լրջությամբ եմ ասում, որ այս մարդիկ կրելու են իրենց մեղքի և իրենց հետևորդների մեղքերի ծանրությունը: Սա այնքան լուրջ է լինելու, որքան Բահաղին երկրպագող իրենց նախահայրերի մեղքերը:

Ծաղի՛կս, հիշի՛ր Իմ Սուրբ Ներկայությունը, Աչքերս երբեք չեն կտրվում քեզանից: Ե՛կ: Մե՞նք, մե՞զ:

Հավիտյանս:

Օգոստոսի 4, 1989

(Անցյալ գիշեր, ես հասկացա, որ Սուրբ Հոգին ինձ համար աղոթում էր Հավատամքը: Ես հետևում էի Ջայնին, որը աղոթքի կեսին էր հասել, և ինքս ավարտեցի աղոթքը: Այդ նույն գիշեր, ավելի ուշ, ես նորից արթնացա և հասկացա, որ Սուրբ Հոգին աղոթում էր Սուրբ Միքայելի աղոթքը: Ես արթնացա այդ աղոթքի կեսին և ավարտեցի աղոթքը Սուրբ Հոգու հետ միասին: Սուրբ Հոգին անդադար աղոթում է իմ մեջ, նույնիսկ, երբ ես քնած եմ):

Տեր իմ ու Աստված իմ, Սուրբ Սիրտ Հիսուսի, արդյոք Քո կա՞մքն է, (...) որպեսզի դա լինի նրանց համար, ովքեր սիրում են Քեզ: Խնդրում եմ, տուր ինձ Քո պատասխանը Քո Խոսքում:

(Ավելի ուշ, Տերն ինձ ցույց տվեց Կողոս. 3:1-4-ը:)

Ես գրելու եմ այն. «Քանի որ Ինձ հետ դուք վերադարձել եք ճշմարիտ կյանքին, ուրեմն պետք է փնտրեք այնպիսի բաներ, որոնք երկնքում են գտնվում, ուր Ես նստած եմ Աստծո աջ կողմում: Թող ձեր մտքերը միայն երկնային բաների վրա կենտրոնացած լինեն և ոչ թե այն բաների վրա, որոնք երկրի վրա են, որովհետև դուք մեռաք, իսկ հիմա, այն կյանքը որ դուք ունեք, պահված է Ինձ մոտ: Բայց, երբ Ես հայտնվեմ, ե՛ս, որ ձեր կյանքն եմ, դուք նույնպես հայտնվելու եք Ինձ հետ ձեր ողջ փառքով», որովհետև այն ողջ բարիքը, որ դուք անում եք Իմ Անվան ներքո, փառավորում է Ինձ: Ես Սեր եմ:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛, մենք, մեզ:

Մե՞նք, մե՞զ

Այո՛, Սուրբ մայր, մենք, մեզ:

Տե՛ր, խնդրում եմ օգնիր ինձ, որ իմանամ, որտեղ եմ գտնվում, որովհետև հիմա այն հողը, որի վրա կանգնած եմ, կարծես թե շարժվում է: Դու ինձ վստահեցրիր, որ ուրիշ ոչ ոք չի լինելու Իմ Հոգևոր Առաջնորդը, և միայն Քեզանից եմ ես ստանալու ողջամիտ ուսմունք և խորհուրդ: Հիմա իմ սիրտը տխրում է , որ չեմ իմանում (այն մեծ խնդիրը, որի առաջ եմ կանգնած): Դու ասացիր, որ ուսուցումը կբացատրես իր նրբություններով ու գիտության մասին կարտահայտվես կատարյալ ճշգրտությամբ: Այժմ ես կոպիտ ընդդիմության եմ հանդիպում, քանի որ փորձում եմ զգուշացնել և ուղղել ինչ-որ մեկին: Ես Քո Խորհրդի կարիքն ունեմ: Նախ Քեզ աղերսում եմ Հայր, որ ինձ ասես, թե արդյո՞ք ես սխալ էի: Հավաստիացրու ինձ՝ իմ հարցերին տալով Քո հաստատուն պատասխանը Քո Խոսքից, ապա խոսիր ինձ հետ, Տեր իմ:

Ողջամիտ ուսմունքը, որ դու լսել ես Ինձանից, որպես օրինակ պահիր քեզ համար, այն հավատով ու սիրով, որ Իմ մեջ է: Քեզ վստահվել է, որ դու հոգ տանես մի թանկագին բանի մասին: Պահպանի՛ր այն Իմ Սուրբ Հոգու օգնությամբ, որը ապրում է բոլորիդ մեջ:[1]

Վասո՛ւլա, թույլ տուր, որ սա ևս գրեմ: Դու քո ողջ կյանքը պետք է ապրես այն ձևով, ինչ ձևով որ դու ընդունել ես Ինձ՝ քո Տիրոջը: Դու պետք է արմատավորվես Իմ մեջ և հաստատվես Ինձ վրա և ամրապնդվես այն հավատով, որ քեզ ուսուցանվել է և լինես շնորհակալությամբ լեցուն: Վստահ եղիր, որ ոչ ոք քեզ ծուղակը չի գցի ու չի զրկի քո ազատությունից՝ ինչ-որ երկրորդական, դատարկ, բանական փիլիսոփայությամբ, որը հիմնված է այս աշխարհի սկզբունքների վրա, փոխանակ հիմնված լինելու Ինձ վրա՝ Քրիստոսի վրա:

Ես ուզում եմ Մեր Սուրբ Մոր խորհուրդը ևս հարցնել: Սուրբ Մայր, Հավերժ Աջակից, նորից եկ ինձ օգնելու, ինչպես հալածանքների ժամանակներում, բարեխոսիր ինձ համար: Ես ինձ շատ թշվառ եմ զգում, որովհետև չգիտեմ, թե ես արդյոք սխալ էի՝ ուղղելով այդ անձին: Միգուցե ես շատ խի՞ստ էի, կամ էլ՝ սխալ: Խնդրում եմ ինձ խորհուրդ տուր Տիրոջ Խոսքից, երբ որ ես բացեմ այն:

(Ես բացեցի Սուրբ Աստվածաշնչում Փիլիպ. 4:4-6: Այն ասում էր. Վերջին խորհուրդ՝ «Ես ուզում եմ, որ դուք ուրախ լինեք, միշտ ուրախ եղեք Տիրոջով: Դարձյալ ասում եմ. Ես ձեր ուրախությունն եմ ուզում: Թող ձեր համբերատարությունը հայտնի լինի բոլորին: Տերը շատ մոտ է»):

[1] Բ Տիմ. 1:13-14

Շնորհակալ եմ, Սուրբ Մայր, միշտ խորհուրդ տուր ինձ, ես կախված եմ Քո խորհրդից:

(Մեր Սուրբ Մայրը երեք հավելյալ հատվածներ էլ տվեց Սուրբ Աստվածաշնչից ինձ քաջալերելու համար, որոնք հետևյալներն են.

«Բայց դու խոսիր այն, ինչ որ վայելում է ողջամիտ վարդապետությանը» (Տիտ. 2:1):

«Թող որ ոչ ոք քո երիտասարդությունը չարհամարհի, այլ՝ օրինակ եղիր հավատացյալներին՝ խոսքով, վարմունքով, սիրով, հավատով և մաքրությամբ...» (Ա Տիմ. 4:12):

«... ու ձեր նախանձախնդրությունը շատերին խթանեց» (Բ Կոր. 9:2):

Տե՞ր:

Ես եմ, Իմ վարդապետությունները ողջամիտ են, ուստի մի՛ անհանգստացիր: Անհանգստացիր նրանց համար, ովքեր բարին չարով են փոխարինում և ձևացնում են, թե բարիք են անում, երբ իրականում չարիք են գործում: Անհանգստացի՛ր Իմ Եկեղեցու ներսում տեղի ունեցող խոտորումների և բաժանումների համար: Անհանգստացի՛ր նրանց համար, ովքեր անտեսում են Հոգու Գործերը, որովհետև այդպիսինների վրա Ես թափելու եմ Իմ բարկությունը: Նրանք Իմ զավակների անկման պատճառն են հանդիսանում:

Տեր իմ, մի՛ ծածկիր Քո Սուրբ Դեմքը նրանցից, ովքեր սիրում են Քեզ: Թեքվիր ցած, դեպի մեզ և եկ մեզ ազատիր: <u>Ե՛տ արի մեզ մոտ</u>, վերադարձի՛ր մեզ մոտ: Փութա՛ և <u>վերադարձիր</u>: Թող Քո զավակները տեսնեն, թե ինչ կարող ես անել նրանց համար, թող նրանք տեսնեն Քո Փառքը:

Աղոթի՛ր և ուղղիր, փոխհատուցի՛ր այս դարաշրջանի մեղքերի և անիրավությունների համար: Ես զոհաբերվող հոգիների կարիք ունեմ: Սիրո՛վ կենդանացրու այս մեռած դարաշրջանը: Թեև դու ոչինչ ես, բայց կարող ես մեղմացնել Իմ Արդարությունը՝ սիրելով Ինձ: Փառավորի՛ր Ինձ, սիրելով Ինձ:

Հիշի՛ր, թե ինչպես եմ Ես քո հոգին սրբության առաջնորդել: Ե՛կ դեպի Ինձ, սիրելիս, ինչո՞ւ ուրիշ տեղ նայել: Զգո՛ւյշ եղիր, աղջիկս, խոսելիս, բամբասանք ու դիտողություններ անելիս՝ այս ամենը փոխարինելով լռությամբ, Իմ Լռությամբ:

ΙΧΘΥΣ

Sono con te, Padre Pio recordatilo sempre

Օգոստոսի 7, 1989

Տե՞ր:

Ես եմ:

Նայի՛ր շուրջդ և հասկացիր: Իմ Խոսքը քեզ է տրվել. ճանաչիր Իմ Նշանները և մի՛ վախեցիր: Օրհնյա՛լ, Ես մնում եմ քո մեջ, քո ոչնչության[1] պատճառով: Ես ազատագրել եմ քեզ քո չղթաներից: Թող ոչ ոք թակարդը չդցի քեզ: Հիշի՛ր, Ես իմացություն և խորաթափանցություն եմ ցողել քեզ վրա: Սիրելի՛ս, թող ոչ ոք չխաբի քեզ: Փոքրի՛կս, Ես տալիս եմ նրան[2] Իմ Խաղաղությունն ու Իմ Սերը: Օրհնի՛ր նրան և ների՛ր նրան, ինչպես Ես՝ Տերը ներել եմ նրան:

Իմ Վասուլա, Ես ասել եմ, որ այն, ինչ Ես տվել եմ քեզ, պետք է ծառայի Իմ շահերին: Դու ուղղակի ճաշակել ես Ինձանից, և դա այն բանի համար էր, որ զարդարես քո հոգին: Մնա՛ Իմ շնորհի մեջ, մնա՛ Իմ Բազուկների մեջ: Ես՝ Տերս, երաշխավորում եմ, որ քեզ երբեք չեմ ձախողի: Քո խստության պատճառով, նրանք քեզ կոպիտ կհամարեն: Նրանք կհակադրվեն քեզ, որովհետև Իմ Ուղիները նրանց Ուղիները[3] չեն: Բայց այս մարդիկ միայն զետի հոսանքի դեմ են պայքարելու:

Խաղա՛ղ եղիր, աղջիկս, Ես օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 9, 1989

(Պատգամ, տրված Քոյի կաթոլիկ մատուռում, օգոստոսի 18-ի աղոթաժողովի համար):

Տե՛ր:

Ես եմ: Լսի՛ր Ինձ:

Սիրելի՛ս, Ես Սուրբ եմ, և Ես պատրաստում եմ քեզ, որ քայլես Սրբության Ճանապարհով: Իմ փոքրիկ զավակներ, հիշեցե՛ք, որ պետք չէ կառչել երկրային ունեցվածքին: Կառչե՛ք այն ամենին, որ գալիս է երկնքից և երկնային է ու սուրբ: Ես Սուրբ եմ, և քանի որ դուք Իմ զավակներն եք, փափագում եմ, որ սրբությամբ ապրեք: Սո՛ւրբ պահեք Իմ Անունը, սրբացրեք Իմ Անունը:

Հարազատնե՛րս, եկեք դեպի Ինձ և գտեք Ինձ Լռության մեջ, զգացե՛ք Ինձ... Թույլ տվեք ինքներդ ձեզ ամբողջապես բացվել Իմ առջև, և երբ դուք դա անեք, այդ ժամանակ Ես կսկսեմ մեծ ուրախությամբ դաստիարակել ձեզ: Ես ձեզ վրա իմացություն կցողեմ և ձեր հոգին կբարձրացնեմ Ինձ մոտ՝ զարդարելով այն: Ես Իմ Սուրբ Խոսքի Մշտական Հիշեցումն եմ: Ե՛ս Եմ Վարդապետությունն ու Իմաստությունը: Ես այն Մեկն եմ ու Միակը, որ դաստիարակում է բոլոր նրանց, ովքեր իրենց Ինձ են հանձնում: Ապրե՛ք Իմ Լույսի մեջ և ձեր Ապաստանը գտեք Իմ Թևերի տակ:

---

[1] Սա ասվեց, երբ նորից հարցրեցի Տիրոջը այն նույն անձնավորության մասին, որին Ես ուղղել էի: Ես այլևս չգիտեի, թե արդյոք Իմ զանազանելու կարողությունը ուղղակի «զգացում» էր, ինչպես այդ մարդն էր ասում, թե՝ իսկական զանազանում:

[2] Նույն այդ անձին:

[3] Դա մի որոշում էր, որը ներշնչված էր Աստծուց, բայց որը սարսափով ընդունվեց:

Ճաշակե՛ք Ինձանից և մի՛ փորձեք ձեր Պորտալարը վաղաժամ կտրել: Թույլ տվեք Ինձ, որ ամբողջովին ձեզ պատրաստեմ և կերակրեմ ձեր հոգին մինչև հասունության և կատարելության հասնելը, որպեսզի դուք կարողանաք ապրել: Մի՛ շրջվեք Ինձանից, քայլե՛ք Ինձ հետ զոր ու գիշեր:

Ես նորից ու նորից կանչում եմ բոլոր նրանց, ովքեր տակավին մոլորված շրջում են այս անապատում՝ փնտրելով Ինձ: Մոտ ե՛կ, դո՛ւ, որ մինչև օրս մոլորված ես այս ամայության մեջ՝ ասելով, թե. «Ես փնտրել եմ Իմ Փրկչին, բայց չեմ գտել»: Ինձ գտի՛ր, սիրելի՛ս, մաքուր սրտով, անշահախնդիր սիրելով Ինձ:. Ինձ գտի՛ր սրբության մեջ՝ հանձնվելով Ինձ ինչպես Ես եմ փափագում: Ինձ գտի՛ր Իմ Պատվիրանները պահելով, Ինձ գտի՛ր՝ չարությունը սիրով փոխարինելով, Ինձ գտի՛ր սրտի պարզությամբ: Այլևս մի՛ մեղանչիր. դադարի՛ր չարիք գործելուց. սովորիր բարիք գործել. արդարությո՛ւն փնտրիր, օգնի՛ր նեղյալներին: Թող այս ամայությունն ու անբերրիությունը կենդանություն առնեն, թող քո գաղջությունը հրավառ բոցի վերածվի: Ջերբազատվի՛ր անտարբերությունից և այն փոխարինիր ջերմեռանդությամբ:

Արա՛ այս ամենը, որ կարողանաս ասել. «Ես փնտրում էի Իմ Փրկչին ու գտա Նրան. այս ողջ ընթացքում Նա միշտ ինձ մոտ էր, բայց ես խավարի մեջ էի ու Նրան չէի կարողանում տեսնել: Օ՜ թո՛ղ փառավորվի Աստված: Օրհնյա՛լ լինի մեր Տերը: Ինչպե՞ս կարող էի այսքան կույր լինել»:

Այն ժամանակ Ես քեզ կհիշեցնեմ, որ պահես և փայփայես Իմ Օրենքները, <u>որպեսզի ապրես</u>:

Օ՜, եկեք Ինձ մոտ, դուք՝ բոլոր հովիվներդ, որ չեղվել եք Ճշմարտությունից: Դուք ինչպե՞ս կարող էիք ասել, որ անօրենության կամ կործանման որևէ չհետազոտված արահետ չեք թողել: Ինչպե՞ս կարող էիք պարծենալ, թե դուք անցել եք անապատն առանց հետքեր թողնելու: Ի՞նչ է տվել պարծենկոտությունն ու հանդգնությունը Իմ հոտին: Այո՛, ո՞ւր է այժմ ձեր հոտը, որով դուք պարծենում էիք: Կարո՞ղ եք հիմա ասել, թե արդարությամբ եք կառավարել: Երբևէ ինքներդ ձեզ անկեղծորեն հարցրե՞լ եք, թե արդյոք վարվել եք այնպես, ինչպես Ես՝ Հովիվը, կուզենայի որ վարվեիք: Ուրեմն լսեք Ինձ, հասկացեք և ընդունեք այս խոսքերը, որպես զգուշացում, դո՛ւք, որ փոխանակել եք ձեր հովվի գավազանը Ստության գայլսոնով և հազարավորներ ունեք ձեր իշխանության ներքո: Մի՞թե Ես չէի, որ ձեր ուսերը ազատեցի բեռից: Մի՞թե Ես չէի, որ հատուցեցի ձեզ համար: Մի՞թե Ես դեռ կարող էի ձեզ դիտել արցունքի հացն ուտելիս: Այն ամենն, ինչ Ես արել եմ, նպատակ ուներ ձեզ հանգստացնելու և ձեզ փրկելու: Եվ մեծ քնքշությամբ Ես անվանել եմ ձեզ Իմ Հովիվներ:

Ժամանակը հիմա կարճ է, Ես ձեզ Հրաշքներ ու Նշաններ եմ տալիս՝ լցնելով Երկինքը Նախանշաններով: Ես ձեզ մեկը մյուսի ետևից զգուշացումներ եմ տալիս: Ես ձեզ տալիս եմ Իմ Սիրո ու Իմ Ողորմության Մեծ Նշանները, բայց դուք անտեղյակ եք այս ամենին...

Արդյոք ձեր սիրտն այսօր պատրա՞ստ է Ինձ ընդունելու: Արդյոք ձեր բերանները պատրա՞ստ են խոսելու և ընդունելու Շնորհի Իմ Հոգուն, որը Ես հեղում եմ ձեզ վրա այս օրերիս: Ձեր աչքերն արդյոք կամենո՞ւմ են տեսնել: Ձեր ականջներն արդյոք պատրա՞ստ են ճանաչելու Սիրո Իմ

Աղաղակները: Ձեր սրտերն արդյոք կամենո՞ւմ են բացվել և ընդունել այսօրվա Իմ Շնորհները: Ձեր ոտքերն արդյոք պատրա՞ստ են քայլելու, <u>գալու</u>, և գետնատարած ընկնելու Պաշտամունքի Ժամին, ճիշտ այնպես, ինչպես առաջին հովիվները, որոնք եկան երկրպագելու Ինձ Իմ Ծնունդի Ժամանակ՝ փառավորելով Ինձ: Արդյոք այս անգամ դուք պատրա՞ստ եք փառավորելու Ինձ ձեր սրտով և Իմ հոտին ցույց տալու ձեր սերն ու հավատարմությունն Իմ հանդեպ:

Դուք պնդում եք, որ կենդանի եք և ոչ թե մեռած: Այդ դեպքում, ինչպե՞ս է, որ ես ոչ մի ձայն չեմ լսում ձեզանից: Այդ ինչպե՞ս է, որ ես որևէ օրհնություն չեմ լսում: <u>Ես Նա եմ, ով հանդիմանում ու կրթում է բոլոր նրանց, ում սիրում է</u>: Եկե՛ք ու ապաշխարեք, Իմ Սուրբ Սիրտն այսօր լցրե՛ք ուրախությամբ և ձեր աչքերը հառեք Ինձ՝ <u>ձեր Հովվին</u>, որպեսզի այլևս աննպատակ չշրջեք այս անապատում: Ես ներկա եմ, որպեսզի առաջնորդեմ ձեր ոտքերը Խաղաղության, Սիրո ու Միաբանության Ճանապարհով:

Հետևաբար Ես աղերսում եմ ձեզ, որ վերցնեք Իմ Թագավորության Բանալին և գործածեք Այն: Իմ Թագավորության բանալին <u>ՍԵՐՆ</u> է, Սերն իր ողջ Փառքով: <u>Սերն ու Խոնարհությունը</u> լինելու է <u>ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ</u> մյուս Բանալին: Վերցրե՛ք այդ Բանալիներն ու օգտագործեք Դրանք: Օգտագործե՛ք Դրանք, սիրելիներս, և <u>մեկ եղեք, դարձեք Մեկ Սուրբ Ժողովուրդ</u>:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Հառաչանքը ձեր ճակատներին:

ΙΧΘΥΣ

Ես ուզում եմ Իմ Պատգամին ավելացնել հետևյալը.

Որևէ մեկը, որ պնդում է, թե լույսի մեջ է, բայց ատում է իր եղբորը, տակավին խավարի մեջ է գտնվում: Ներե՛ք, ներե՛ք, ինչպես Ես՝ Տերն եմ ներում: Սուրբ եղեք, այնպես ինչպես Ես եմ Սուրբ: Խոկացե՛ք Իմ Պատգամի շուրջ: Խոկացե՛ք, կլանե՛ք Իմ Պատգամը: Սերը սիրում է ձեզ բոլորիդ:

ΙΧΘΥΣ

(Մեր Սուրբ Մայրը այժմ տալիս է մեզ Իր Պատգամը):

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին:

Ես ուզում եմ, որ դուք շարունակ փառաբանեք Տիրոջը՝ շնորհակալ լինելով Նրա Պատգամի համար: Այն մի կենդանի զորություն է ձեր մեջ, ովքեր հավատում և հետևում են Դրան: Ուրեմն վստահությամբ մոտեցեք Շնորհի Գահին, որովհետև դուք ունեք Նրա Ողորմությունն ու Նրա Սերը, քանի որ Նա շատ Ողորմած է: Հետևե՛ք Նրա հրահանգներին և ապրեք Նրա Պատգամներով: Մի՛ կարդացեք և մի կողմ դրեք Դրանք՝ սպասելով Հաջորդ Պատգամին: Գործադրե՛ք Դրանք, որովհետև այդ գոհացնելու է Նրա Սուրբ Սիրտը:

Լսե՛ք Նրա Ձայնը: Զավակներս, հանձնեք Նրան ձեր խնդիրներն ու տառապանքները, և Նա կօրհնի ձեզ: Նրա Անունը Սուրբ պահեք:
Սերը ձեր մեջ է: Եկե՛ք, Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին:

Օգոստոսի 12, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ:
Ծաղի՛կս, միությունը, Ինձ հետ կապված լինելը, հավատարմությունը, նվիրվածությունը բարձրացնելու են ձեզ դեպի Ինձ: Պաշտե՛ք Ինձ՝ Ես ձեր Աստվածն եմ: Հանգստացրե՛ք Ինձ՝ Ես ձեր Սուրբ Ընկերակիցն եմ: Մխիթարե՛ք Ինձ՝ Ես ձեր Ամուսինն եմ: Հուսացե՛ք Ինձ և միմիայն Ինձ, որովհետև Ես Նա եմ, Ով Փրկում է:
Ես Հիսուսն եմ:

Օգոստոսի 13, 1989

Զավա՛կս, Իմ Հոգին քեզ վրա է, Իմ Ձեռքը՝ քո ձեռքի վրա, Իմ Խոսքը՝ քո շուրթերին: Իմ Առակները քո լապտերն են, որոնք առաջնորդում են քո քայլերը: Եթե դու միշտ պահես քո սերն Իմ հանդեպ և հետևես Իմ Կանոններին ու պահես Իմ Պատվիրանները, Սերն ու Հավատարմությունը երբեք քեզ չեն թողնի: Ես պիտի մնամ քո Հույսը, իսկ դու պիտի մնաս Իմ ժառանգորդը:
Ես հաղթահարելու եմ ողջ չարիքը, զավա՛կս, որը շրջապատում է քեզ: Ես մի կողմ չեմ քաշվելու քո դժբախտությունների ժամանակ, և դո՛ւ, զավակս, հռչակելու ես Իմ Արդարությունն ու Զորությունը, որը փրկում է նույնիսկ փտած դիակներին: <u>Ես Եմ Հարությունը</u> և ամեն ազդ փառավորելու է Ինձ և գովաբանելու է Ինձ:
Ես ձեզ հետ եմ լինելու մինչև վերջ:
Մե՞նք, զավակս:

Մե՞նք [1]: Միշտ հիշիր, որ Ես՝ քո Մայրը, ընդմիշտ քո կողքին եմ: Անդադա՛ր աղոթիր:

Օգոստոսի 14, 1989

(Վերափոխումից մի օր առաջ)

Ես Տերն եմ, զավակս: Ես հազիվ էի անցել այս աքսորավայրը, երբ գտա քեզ, քե՛զ, որին սիրում է Սիրտս: Ես ամուր բռնեցի քեզ և ետ տարա նորից դեպի ուղիղ ճանապարհը: Ես չէի թողնի, որ դու գնայիր, մինչև որ

[1] Երկրորդ «մենք»-ը՝ Մեր Սուրբ Մորից էր:

չքերեի քեզ Մորս Տունը, Նրա Սենյակը, ուր հղացավ Ինձ: Վաղը քո օրն Ինձ նվիրիր և եղիր Իմ խունկը և բուրիր քո շրջապատում:

Իմ Հոգին հանգչում է քեզ վրա: Արիացի՛ր, ես չեմ լքի քեզ: Իմ օրհնությունները քեզ վրա են, զավակս:

Օգոստոսի 16, 1989

Խաղաղությո՛ւն, զավակս: Սիրի՛ր Ինձ այնպես, ինչպես ես եմ սիրում քեզ: Ձգա՛ Ինձ, զանազանի՛ր Ինձ և դիպչիր Ինձ, երբ տեսնում ես Ինձ: Ես քեզանից չեմ խնդրե՞լ, որ դա անես, զավակս:

Այո՛, Տեր, խնդրել ես:

Դու այդ կանե՞ս: Հենց հիմա՞: Այո՛, բռնի՛ր Ձեռքս, ճանաչի՛ր Ինձ այն խաղաղությամբ, որը ես տալիս եմ քեզ... Ճանաչի՛ր Ինձ այն Սիրով, որ ես տալիս եմ քեզ:

Ես դեռ ինչո՞ւ պիտի թափառեմ այս աքսորում: Թվում է, դա վերջ չունի, Տեր իմ:

Գիտեմ, բայց ես հանձնարանել եմ քեզ այս առաքելությունը, որը դու շուտով կիրագործես: Ես չեմ լքի քեզ, և ես այնպես կանեմ, որ դու փառավորես Ինձ: Վասո՛ւլա, Ինձ մոտիկ մնա: Դու կանե՞ս դա Ինձ համար:

Ես ուզում եմ միշտ հնազանդվել Քեզ, Տե՛ր իմ:

Ես քեզ երբեք հուսախաբ չեմ անի: Բռնի՛ր Ինձ: Հիշի՛ր, որ ես քո Դաստիարակն եմ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր իմ, հավիտյան:

Օգոստոսի 22, 1989

Թող Քո Անունը փառավորվի: Թող ամեն մի շնչավոր էակ փառավորի Քեզ, Տե՛ր իմ:

Սերը սիրում է քեզ: Իմ վերերկրային Սերն ու Ողորմությունը քեզ վրա են:

Ապավինի՛ր Ինձ: Ես քո Առաջնորդն եմ: Մի՛ կասկածիր, սիրելիս, ես միշտ կլցնեմ քեզ: Միթե՞ ես քեզ չեմ ուղարկում Իմ Խաղաղության ու Սիրո հորձանքը, ինչպես մի դետ: Ուրեմն՝ ցնծա՛, որովհետև ես՝ Տերը-քեզ-հետ-եմ:

Կարդա՛ Իմ Խոսքը:

(Այդ ժամանակ ես պատահական բացեցի Ես. 49:6):

(Ավելի ուշ ...)

Այժմ Իմ Խաղողի Այգին ես խնամում եմ Իմ Սեփական Ձեռքերով, քանի որ ես լսել եմ կարիքավորների ու արդարների նեղության աղաղակը: Ես լսեցի, որ նրանք պտուղ էին հայցում, ուստի ես՝ Տերս, Ողորմությամբ լեցուն, բազմացնում եմ Իմ Պտուղը, ինչպես բազմացրեցի նկանակներն ու ձկները և կերակրեցի բազմությունների: Այդ Պտուղը լինելու է այս երկրի գեղեցկությունն ու փառքը: Ես պարիսպ եմ կառուցելու, որ չրջապատի Իմ Խաղողի Այգին, որպեսզի թույլ չտամ Իմ թշնամուն կոխկրտել Այն: Սիրելի՛ս, ես Խաղողի Այգու Տերը, ձեր մեջ եմ:

Սրտապնդվե՛ք, սիրելիներս, ես գիտեմ, թե դուք որքան եք զրկվել լույսից, և ես գիտեմ, թե դուք ինչպես էիք բանտարկված խավարում, բայց ես իջնում եմ, որպեսզի հակադրվեմ այս խավարին Իմ Սիրո Հրաբորբ Կրակով: Ողջ երկիրը շողշողալու է պայծառ լույսով, և ես, որ Սերն եմ, ապրելու եմ ձեր մեջ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 23, 1989

Վասո՛ւլա, հանդարտ եղիր. խաղաղությամբ ընդունիր Ինձ: Քեզ հետ Իմ հաղորդակցությունը լռությամբ է: Աչ ու ձախ հռչակիր Իմ Խոսքը և երբեք մի՛ հապաղիր: Իմ Անսահման սիրուց դրդված, ես քեզ տվել եմ մի պարգև ողջ մարդկության համար: Փառավորի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ, Սուրբ պահիր Անունս, Իմ Շնորհը քեզ վրա է:

Լսի՛ր Ինձ, հենց որ Խաղողի բերքը հասնի, դու Ինձ մոտ ես գալու: Ես քեզ ամբողջությամբ պիտի անէացնեմ Իմ Մարմնի մեջ: Ես՝ Բարձրյալը, երբեք չեմ լքի քեզ՝ իմանալով, որ դու մի ոչնչություն ես: Ուրեմն տեսնո՞ւմ ես, թե ես ինչքան եմ փափագում քեզ: Մնա՛ ոչինչ և դու Իմ մեջ կբնակվես: Եղի՛ր բարեհոգի ու հնազանդ Ինձ՝ քո Աստծուն, որը չրջապատված է ամեն դասի հրեշտակների հազարավոր բույլերով: Զգա՛ Իմ Սրբությունը, զգա՛ Իմ Աստվածությունը, թող քո աչքերը սևեռվեն Իմ վրա, Իմ Սուրբ Սրտի վրա: Եղի՛ր Իմ ծաղիկը: Ե՛կ, խոնարհիր քո աչքերը, երբ ես օրհնում եմ քեզ: Դու դա կանե՞ս հիմա: Ընդունի՛ր այս Ուղին, որն ընտրել եմ քեզ համար: Սրտով պարզ եղիր, որովհետև դա ուրախացնում է Ինձ:

Ինձանից Իմաստություն խնդրիր և ես կբազմապատկեմ Այն քո մեջ: Խնդրի՛ր Զանազանության շնորհ և ես կհեղեմ Այն քեզ վրա: Այս ամենը խնդրիր Ինձ քո պաշտամունքի ժամանակ: Ե՛կ, գնահատիր այն ամենն, ինչ սովորել ես Ինձանից: Ե՛ս եմ քո Ուսուցիչը, քո Դաստիարակը: Դու Իմաստության չրթունքներից ես սովորում, հասկանո՞ւմ ես: Ես եմ կերակրում քեզ, Իմ Վասո՛ւլա, և գիտե՞ս, թե ինչով՝ Հոգեկանությամբ, Իմ Պտղով, Կենաց Ծառի Իմ Պտղով, հասկանո՞ւմ ես:

Իմ Յահվեն Բարի է իմ հանդեպ:
Նրա Սերը հավիտենական է:
Նրա Հավատարմությունը
դարեդար է տևում:
Նա հանել է ինձ վիհից
և բժշկել է ինձ:
Նա իմ ոտքերը
հաստատել է ժայռի վրա
և ամրապնդել է քայլերս:
Որքա՜ն հրաշքներ ես արել
մեզ համար, Տեր իմ:

Օգոստոսի 24, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ: Փոքրի՛կս, մի բարի հայացք, մի փոքրիկ ժպիտ քո կողմից և Սիրտս կխայտա ցնծությամբ:

(Ավելի ուշ ...)

Վասուլա, օրհնի՛ր և փառավորիր Ինձ: Ծաղի՛կս, դու երջանի՞կ ես, որ Ինձ հետ ես: Իմացի՛ր, որ Իմ Անունը վերստին փառավորվելու է:

Այո՛, Տեր իմ, ես երջանիկ եմ այն ամենով, ինչ Դու արել ես, և Քո մեծ ձեռքբերումները Օրհնություն են մեզ բոլորիս համար:

Ուրեմն, զավակս, հռչակի՛ր Անունս երկրագնդով մեկ, որպեսզի ամեն ոք իմանա, որ Իմ Անունը ՍԵՐ է:

Տե՛ր, թույլ տուր, որ կարդամ Քեզ Դավթի Սաղմոսը, որը ես պատահաբար բացեցի՝ «Փառաբանության Երգ Յահվեհ Թագավորին» Սաղմ. 145:

Ես ընտրել եմ այս Սաղմոսը, որպեսզի դու այն կարդաս Ինձ: Կարդա՛, Իմ Վասուլա, նայելով Ինձ. Ես լսում եմ:

(Ես Սաղմոսը կարդացի Տիրոջը):

Ե՛կ, աղոթի՛ր, ծո՛մ պահիր, կարդա՛ Իմ Խոսքը, ընդունի՛ր Ինձ Սուրբ Հաղորդությամբ, աղոթի՛ր Վարդարանը, պաշտի՛ր Ինձ: Մե՞նք, մե՞զ:

Հավիտյանս:

(Ավելի ուշ, գիշերը):

Կարող ենք գնալ ու հանգստանա՞լ, Տեր իմ:

Այո՛, արի հանգստանանք, բայց մեկ պայմանով, որ Ես հանգստանամ քո սրտում, իսկ դու՝ Իմ Սուրբ Սրտում:

(Դա ստիպեց ինձ ժպտալ ու հրճվել ուրախությունից):

Այո՛, Տեր իմ: Ես օրհնում եմ Քեզ, Հիսուս:

Ես օրհնում եմ քեզ, ծաղի՛կս: Արի՛:

Օգոստոսի 28, 1989

Տե՛ր իմ, խնդրում եմ, տո՛ւր ինձ Սուրբ Գրքից այս հարցի Քո պատասխանը: Ինչպե՞ս ես ուզում, որ Քո Պատգամը փոխանցվի, քանի որ Դու արդեն ընտրել ես Քո ծառային այս գործի համար: Դու ցանկանում ես, որ այն մասա՞մբ տրվի, թե՝ ամբողջությամբ, ինչպես թելադրել ես ինձ:

(Պատասխանը՝ Մարկոսի Ավետարան 4:21-25):

Իմ Վասո՛ւլա, Իմ Խոսքը լապտերի նման է, որ լուսավորի և փայլի , որպեսզի ամեն ոք կարողանա տեսնել Ինձ: Զգա՛ Ինձ և վերադարձի՛ր Ինձ մոտ, հասկանո՞ւմ ես, Ես ցանկանում եմ վերացնել այս խավարը, որը թանձրորեն պատել է այս աշխարհը: Ես տալիս եմ քեզ Իմ Լապտերը, որպեսզի դու այն դնես աշտանակի վրա և ոչ թե մահճի տակ:

Շնորհակալ եմ, իմ Տեր Հիսուս:

Ե՛կ, ծաղիկս, Ես օրհնում եմ այն տունը, որն ընդունեց քեզ և օրհնում եմ Իմ զավակներին: Ես անսահման սիրում եմ նրանց: Ես երբևէ չեմ լքի նրանց: Կրե՛ք Իմ Խաչը ձեր ուսերին եւ կիսե՛ք Իմ Խաչը նույնպես: Դուք կանե՞ք դա Ինձ համար:

Սերը սիրում է ձեզ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 29, 1989

Տե՛ր, պատրաստիր սիրտս,
որ լսեմ Քո Խոսքը:
Ես աղոթում եմ Քեզ՝ Սիրո Տեր,
Ողորմության Տեր:
Քո մեծ Սիրով պատասխանիր ինձ:
Աստված, շողա՛ ինձ վրա
և կենդանացրու ինձ Քո Լույսով:
Ամեն:

Ես եմ Հունձքի Տերը, և քանի որ դու մշակներ ես խնդրել , որ հնձեն այս առատ Հունձքը, ուրեմն Ես կուղարկեմ քեզ մոտ այդ օգնականներին: Ավելի մոտ արի Ինձ հիմա, մոտեցի՛ր:

[1] Ես Եմ Հարությունը և Կյանքը, և Ես խոստանում եմ ձեզ, որ Պաշտամունքի Օրը այժմ հեռու չէ: Ձեր մեռելները վերստին կյանքի են կոչվելու և նրանց բոլորին, ովքեր դեռևս պառկած են գետնի տակ ու թաղված են իրենց մեղքերով՝ Ես վերստին կյանքի եմ կոչելու: Ես ընդարձակելու եմ Իմ Թագավորությունը և վերահաստատելու եմ ձեր հողերը, որոնք այժմ խոպան են ու ողորմելի են նայողի աչքին: Ես կրկնելու եմ Սուրբ Գրքից այս խոսքերը. «Մի՞թե կինը կմոռանա իր կաթնակեր մանկանը կամ չի գթա իր որովայնի ծնունդին: Եթե անգամ նրանք մոռանան, <u>Ես</u> քեզ երբեք չեմ մոռանալու»:[2]

Ես ձեզ համար պատրաստում եմ մի Նոր Երկինք ու մի Նոր Երկիր, և Սերը վերադառնալու է ձեզ մոտ և ապրելու է ձեր մնացորդի մեջ, որպես սեր: Եվ այս բոլոր դիակներին, որոնց դուք հանդիպում եք ամեն մի փողոցի անկյունում, Ես հարություն եմ տալու:

Եվ քամու նման Ես փչելու եմ ձեր հովիվներին ու ետ եմ բերելու դեպի Նոր Արոտավայրեր, և նրանք իրենց հովվի ցուպով դեպի արոտավայր են առաջնորդելու Իմ Հոտը, ինչպես հին օրերում: Որովհետև, թեպետ և նրանց չարությունը մտել է նույնիսկ Իմ Սեփական Տունը և խաբել է շատերին, և չնայած նրանց մեղքերը անաստվածությունը տարածել են ողջ երկրով մեկ, բայց և այնպես, Ես պատրաստ եմ ներելու և մոռանալու: Եվ Իմ բարկությունը կվերանա, այնպես, կարծես երբեք չէր եղել, եթե անգամ այսօր նրանք ճանաչեին իրենց հանցանքը:

Բայց մինչ այսօր, Իմ Սուրբ Սիրտը կոտրված է սիրո պակասից և ձեր դարաշրջանի մեղքերի ահավոր քանակից: Մեղքեր, որոնք խոցել են Իմ Սիրտը և ամոթից կարմրեցրել են Երկինքը, մեղքեր, որոնք ապականել են Իմ Սրբարանը և պղծել են Իմ Սուրբ Անունը: Այնուամենայնիվ, եթե միայն իմանայիք, թե Ես որքան պատրաստակամ եմ ներելու ձեր դարաշրջանի հանցանքները. բավական է Ինձ ուղղված դեթ մի սիրալիր հայացք, վայրկենական զղջում, տարակույսի մի հոգոց, հպանցիկ մի անդրադարձ, Իմ Սուրբ Դեմքին ուղղված մի ժպիտ, և Ես կներեմ ու կմոռանամ, Ես նույնիսկ չեմ նայի Իմ Վերքերին: Իմ տեսադաշտից Ես կջնջեմ ձեր բոլոր անիրավություններն ու մեղքերը, եթե դուք միայն մի պահ զղջաք, ապա ողջ Երկինքը կտոնի ձեր այդ արարքը, որովհետև ձեր ժպիտը և ձեր սիրալիր հայացքը որպես խունկ կընդունվեն Իմ կողմից, և այդ կարճ զղջման պահը կհնչի Ինձ համար որպես մի նոր երգ:

Այսօր, Ողորմությամբ լեցուն, Ես իջնում եմ ձեզ վրա, որպեսզի փրկեմ ձեզ հանուն ... Իմ Սիրո: Շնորհի Իմ Սուրբ Հոգին կլինի մեգի նման և կծածկի երկիրը: Ես ամենայն լրջությամբ ասում եմ ձեզ, որ Ես բազմացնելու եմ Իմ Շնորհները ձեզ վրա: Իմ Խոսքը հայտնվելու է և լսվելու է շատերի կողմից, և Ես բազմացնելու եմ ձեր տեսիլքներն այնպես, որ բոլոր նրանք, ովքեր անտեսում են Շնորհի Իմ Սուրբ Հոգին

[1] Պատգամ աղոթաժողովի համար:
[2] Ես. 49:15

և փորձում են, ճնշել Նրան, սոսկ խթանին ոտքով հարվածած կլինեն: Նրանց բոլոր ջանքերը իզուր են լինելու, որովհետև Ես Տերս, մտադիր եմ հարուցիչ տալ ձեզ և մշակել այս անապատը, որտեղ ապրում եք դուք և ձեր խաբուսիկ պատրանքները օազիսների վերածել:

Ես՝ ձեր Աստվածը, կանգնած եմ ձեր առջև և հետևյալն եմ հարցնում նրանց, ովքեր տակավին ճնշում են Իմ Սուրբ Հոգին. «Այդ ինչպե՞ս եղավ, որ դուք չեք ճանաչում ժամանակները: Այդ ինչպե՞ս է, որ դուք որոշեցիք չընդունել Իմ Նշաններն ու Իմ Հրաշքները: Ինչո՞ւ եք դուք շարունակ խլացնում Իմ Ձայնը և շարունակ հալածում Իմ մարգարեներին: Ինչո՞ւ եք դուք վախենում և այդքան փափագում հանգցնել այն փոքրիկ բոցը, որը տեսնում եք, որ լուսավորում է <u>ձեր</u> խավարը: Ինչո՞ւ եք փուլթկոտ կոխկրտում և ոչնչացնում ամեն մի ծաղիկ, որն աճում է Իմ Շնորհով ձեր անապատում ու ձեր չորության մեջ: Այդ ինչպե՞ս է, որ դուք ուզում եք Ինձ՝ ձեր Աստծուն, լուռ և մեռած տեսնել»: Թույլ տվեք ուրեմն ձեզ ասել և հիշեցնել, թե Ով եմ Ես.

<u>Ես Եմ Խոսքը, և Ես Կենդանի եմ:</u>
<u>Ես պիտի Գործեմ</u>:

Մինչ երկրի վրա էի, Ես բազմացրի Իմ Հացն ու Ձկները և կերակրեցի բազմությունները, և երբ Մովսեսը անցնում էր անապատով հազարավորների հետ և ուտելու ոչինչ չուներ, Երկնքի Շտեմարանները բացվեցին և նրանց բոլորին կերակրեցին մանանայով:

Այդպես է նաև այսօր: Քանի որ երկիրը ամայացել է և չի կարողանում բավարար Հաց արտադրել ձեզ կերակրելու համար. Ես Շնորհի Իմ Հոգով բազմացնելու եմ Իմ Հացը ձեզ սնելու համար, սիրելիներս, ձեզ, որ սովալլուկ ու անտեսված եք: Ձեր օրերում սա կոչվում է՝ <u>Իմ Սուրբ Հոգու Հեղում</u>: Դուք սնվելու եք ուղղակի Ինձանից, որովհետև Ես մտադիր եմ բազմացնել Իմ Հացը ու ոչ ոքի քաղցած չթողնել: <u>Վա՜յ նրանց, ովքեր Շնորհի այս ժամանակներում փորձում են ետ պահել Իմ զավակներին Ինձ մոտ գալուց</u>: Ուստի, բացե՛ք ձեր սիրտը, դո՛ւք, որ տակավին կասկածում եք և ոչ թե՝ ձեր միտքը:

Իմ ուսուցումները ողջամիտ են ու բուժիչ, մի՛ վախեցեք: Հավատացե՛ք պարզ սրտով: Մի՛ դատեք ու մի՛ վիրավորեք Իմ հրեշտակներին, որոնց Ես ուղարկել եմ Իմ Հոգով: Նույնիսկ Միքայել Հրեշտակապետը, երբ սատանայի հետ վիճում էր Մովսեսի դիակի համար, չհամարձակվեց մեղադրել նրան վիրավորական խոսքերով: Այն, ինչ նա ասաց, հետևյալն էր. «Թող Տերը քեզ սաստի»[1]:

Ի՛նձ հուսացեք, Հավա՛տ ունեցեք և Սիրեք Ինձ: Սուրբը ապրեք, որովհետև Ես Սուրբը եմ: Ծո՛մ պահեք և հատուցեք: Ապաշխարե՛ք և ամեն օր ինքներդ ձեզ Ինձ հանձնեք: Ինքներդ ձեզ Իմ Ձեռքերի մեջ դրեք, և Ես ձեզ լույսի կենդանի սյուներ կդարձնեմ: Անդադա՛ր աղոթեք, սրտա՛նց աղոթեք: Ընդունե՛ք Ինձ[2] մաքրությամբ և Իմ շնորհները կհեղվեն ձեզ վրա: Եկե՛ք պաշտամունքի ժամին և երկրպագե՛ք Ինձ: Խոստովանե՛ք ձեր

[1] Հուդա 9
[2] Սուրբ Հաղորդությամբ

բազում մեղքերը: Գոհացրե՛ք Ինձ՝ ձեր Աստծուն, և քայլեք Ինձ հետ: Հետևե՛ք Իմ կանոններին և աջ ու ձախ մի՛ նայեք, կատարյալ եղեք: Եղեք Իմ Երկինքը:

Օ՜, արարչություն, եթե միայն իմանայիր, թե ինչպես եմ Ես՝ քո Աստվածը, քեզ սիրում, ապա չէիր հապաղի հետևել Ինձ Իմ Ոտնահետքերով: Ինչո՞ւ մխիթարություն փնտրել մի այլ տեղ: Իմ Սուրբ Սիրտն է ձեր վերքերի բալասանը: Իմ Սուրբ Սիրտը ձեր Տունն է: Իմ Աչքերը ձեր բոլորի վրա են:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին, Ես օրհնում եմ ձեր ընտանիքները, Ես օրհնում եմ բոլոր նրանց, ովքեր կարդում են այս Պատգամը՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատներին: Սերը սիրում է ձեզ բոլորիդ:

Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ

Շնորհակալ եմ, Տե՛ր իմ: Ես օրհնում եմ Քեզ:

Սեպտեմբերի 4, 1989

(Հալածանքների ժամանակ)

Քո մեջ իմ հոգին
տաքուկ Ապաստան է գտնում,
մինչև որ կատաղի փոթորիկը
կրկին դադարի:
Ես ականջս ուղղում եմ
դեպի Երկինք,
լսելու համար Քո Քնքուշ Ձայնը,
որն այնքա՜ն սփոփիչ է:
Ես կարիք չունեմ վախենալու.
Քո Սուրբ Ներկայությունը
մխիթարում է ինձ:
Ոչ ոք չկա,
որ կարողանա փոխարինել
Քո Հավատարմությանը:
Դու իմ Ուսուցիչն ես այժմ,
Բարձրյալը, Տերերի Տերը,
իմ Փրկիչը,
ուստի ես ամբողջությամբ
ինքս ինձ հանձնում եմ Քեզ:
Իմ հոգին ու իմ սիրտը
ես հանձնում եմ
Քո Աստվածային Ձեռքերին: Ամեն:

Իմաստությունը, զավա՛կս, քո Ուսուցիչն ու քո Դաստիարակն է: Ե՛կ, նետվի՛ր, քո Աբբայի գիրկը, որպեսզի սփոփանք գտնես, ավելի լավը դու

չես գտնի, Ինձ վրա դիր հույսդ: Ինձ հանձնիր քո վշտերը, ես դրանք լավագույնս կօգտագործեմ: Եկ և թո՛ւյլ տուր, որ ես քեզ համար լինեմ մի թաքստոց: Ես ասել եմ. «Ես պահպանելու եմ քեզ»: Ես չեմ թողնի, որ քեզ հալածողների հեղեղները, որոնք իրականում Ինձ են հալածում, քեզ քշեն տանեն իրենց մոլեգնած ալիքների մեջ: Որքան ավելի քեզ հալածեն, զավա՛կս, այնքան ես՝ Տերս, քեզ ավելի եմ բարձրացնելու և օրհնելու: Երբեք չմոռանաս այս:

Ապավինի՛ր Ինձ, թող քո աղոթքները խունկի նման լինեն: Թույլ տուր, որ անաստվածների համար քեզ օգտագործեմ որպես Իմ խայծը: Այս բոլոր զոհաբերությունները իզուր չեն լինելու: Հիշի՛ր, որ Իմ Սուրբ Սիրտը Քո Տունն է:

Մե՞նք, մե՞զ:

Մենք, մեզ, Տե՛ր իմ:

Բարի եղի՛ր:

(Մեր Սուրբ Մոր Պատգամը աղոթաժողովի համար):

Խաղաղություն ձեզ բոլորիդ: Միմիայն Աստված է Իմաստությունը: Լսե՛ք Իմաստության Ձայնը, որը կանչում է ձեզ այս անապատում: Բացե՛ք ձեր ականջները և ճանաչեք Նրա Ձայնը: Հիսուս կանչում է բոլորիդ, մեկ առ մեկ, որպեսզի վերադառնաք դեպի Նա, որպեսզի վերադառնաք դեպի Սերը և հետևեք Նրան Իր Ոտնահետքերով:

Իմ Որդին իրազեկ է ձեր տկարություններին ու մեղքերին: Բայց դուք կարիք չունեք անհանգստանալու, եթե ինքներդ ձեզ անմնացորդ հանձնեք Նրա Աստվածային Ձեռքերին և վստահեք Նրան: Եկե՛ք Նրա մոտ, ինչպես որ կաք, և Նրան հանձնեք ձեր կամքը: Հանձնե՛ք Նրան ձեր սերը, հանձնե՛ք Նրան ձեր տառապանքները, ձեր վշտերը, ձեր ցավերը, ձեր խնդիրները. հանձնեք Նրան ամեն ինչ: Վստահե՛ք Նրան, թույլ տվեք, որ Նա ձեզ առաջնորդի Իր Սուրբ Սրտի խորքերը, որտեղ դուք կգտնեք Նրա Խաղաղությունը, այն Խաղաղությունը, որի կարիքը ձեր հոգին այնքան շատ ունի:

Ես ուզում եմ, որ դուք միշտ զգոն լինեք չարի նկատմամբ, որը խրախուսում է անհանգստությունը, բաժանումներն ու խառնաշփոթությունը և ավելի քան երբևէ պայքարում Աստծո փրկության Ծրագրի դեմ: Նա խաբում է անգամ ընտրյալներին, շփոթեցնելով նրանց: Բայց որևէ մեկը, որ կկանչի Աստծո անունը, կլսվի և կփրկվի անկումից: Իսկ նրանք, ովքեր կանսան չարի ձայնին, պիտի չկարողանան ճանաչել արդարությունը, որը գալիս է Աստծուց: Նրանք չեն ճանաչելու Սիրո Ձայնը:

Միշտ հիշեք, որ բարի լուր բերողների ոտնաձայները ողջունելի ձայներ են: Սիրելի զավակներ, սրտանց աղոթե՛ք և ուրախությամբ ընդունեք Հոգին, որն այժմ հորդում է շատ ազգերի վրա: Զգացե՛ք, թե ինչպես են Սիրո Վերադարձի օրերը մոտենում, և որ Շնորհը առատորեն հեղվում է ձեզանից այնքան շատերի վրա:

Ես կվերջացնեմ Իմ Պատգամը՝ հիշեցնելով ձեզ, որ դուք արարվել եք սիրուց դրդված, Սիրո համար, որ սիրեք ձեր Արարչին, և որ այն ամենը ինչ գոյություն է կոչվել, ստեղծվել է Նրա կողմից և Նրա համար: Ուրեմն գովաբանեք Նրան և փառք տվեք Նրան, Ով արարեց ձեզ: Հաճեցրե՛ք Ինձ՝ ձեր Մորը, և խոկացե՛ք Մեր պատգամների մասին, ապրե՛ք Մեր Պատգամներով:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: Ես օրհնում եմ ձեր ընտանիքները: Ես՝ ձեր Սուրբ Մայրը, սիրում եմ ձեզ բոլորիդ:

Սեպտեմբերի 5, 1989

Տե՛ր իմ, ես ժամերով մտածեցի անցյալ երեկոյան իմ ունեցած անպտուղ զրույցի մասին: Դրանից հետո ես այնքան էի գլուխս կորցրել, որ նույնիսկ չկարողացա մոտենալ Քեզ: Ամոթից ես չէի համարձակվում քեզ հանդիպել: Ես ի՞նչ ասացի Քո անունից: Ոչի՛նչ: Ես հիասթափեցրի Քեզ... Ես ո՛չ մեծարեցի քեզ, ո՛չ գովաբանեցի Քեզ և սակայն, ես ուրախանում եմ միայն Քեզանով, Տեր իմ: Ես տանջվում եմ Քո սիրուց, Տեր Աստված: Իմ սիրտը մաքուր պահիր և գայթակղություններից հեռու:

Իմ Վասուլա, զգա՛ քո հանդեպ ունեցած այս սերը...

Իմ Ողորմությունը Մեծ է և Իմ Քնքշանքը հաղթահարել է Իմ բարկությանը: Իմ Ուղիները Սուրբ են, աղջի՛կս, ուրեմն սուրբ եղիր, քանի որ Ես Սուրբ եմ: Թող քո զրույցները երաժշտության նման լինեն Իմ Ականջներին: Իմաստությունը, զավա՛կս, քո Ուսուցիչն ու Դաստիարակն է: Խուսափի՛ր դատարկ խոսակցություններից, խուսափի՛ր անօգուտ զրույցներից, պտղավետ եղիր: Խոսի՛ր Իմ Ուսուցումներից: Ես քո Խորհրդատուն եմ, և խորհուրդը միշտ գալու է Ինձանից: Ես ուզում եմ իմ աշակերտները կատարյալ լինեն: Ուրեմն՝ կատարյալ եղիր: Ընդվզի՛ր այն ամենի դեմ, ինչը որ վայրաքարշ է, ինչպիսիք են բամբասանքը, դատարկ խոսակցությունը: Ես սիրում եմ քեզ և ցանկանում եմ, որ դու կատարյալ լինես:

Զգա՛ Իմ Ներկայությունը և փառաբանիր Ինձ՝ լինելով Իմ արտացոլումը, խոսի՛ր Իմ փոխարեն: Այն աշակերտը, որ Իմ Ձեռքերում է գտնվում, պետք է մաքուր մնա և լսի Իր Ուսուցչի Ձայնը:

Իմ Շնորհը քեզ վրա է: Ես ցանկանում եմ, որ դու պահես Իմ ցուցումները և հետևես դրանց: Հասկացի՛ր, որ հենց սկզբից Ես քեզ դրել եմ Իմ Սուրբ Սրտի մեջ: Իմ Հոգին քեզ վրա է: Ես օրհնեցի քեզ, սիրելիս: Արիացի՛ր, այս ամենը իզուր չէր: Միակ բանը, որ դու պետք է անես՝ Ինձ սիրելն է, Ինձ պաշտելը և Ինձ թույլ տալը, որ գործածեմ քո ձեռքը: Ես ուզում եմ, որ դու լինես Իմ Արձագանքը:

Ի՞նչ նկատի ունես, Տեր:

Ես նկատի ունեմ, որ կարդաս Իմ Պատգամները աղոթաժողովներում: Ես Ինձ փառաբանված եմ զգում: Հաճախ խոկա և ընդունիր այն ամենը, ինչ տալիս եմ քեզ: Ծաղի՛կս, Ես գալիս եմ քեզ մոտ Իմ Խաչով: Ես մի որոշ

ժամանակ կարիք ունեմ հանգստանալու. դու Իմ Խաչը կկրե՞ս Իմ փոխարեն:

Սիրո՛վ, Տեր իմ:

Լա՛վ հիշիր, թե ինչ եմ տալիս քեզ: Իմ Խաչը թանկարժեք է: Բարձրացրո՛ւ Իմ Խաչը: Հետո Ես կվերադառնամ, որ այն վերցնեմ քո ուսերից: Զավա՛կս, Ինձ հաճելի են այն հոգիները, որոնք պատրաստակամ են Ինձ համար: Երբեք մի՛ մերժիր Ինձ որևէ բանում: Միշտ պատրաստ և մատչելի եղիր Ինձ՝ քո Աստծո համար:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 6, 1989

Տե՞ր:

Ես եմ: Ես քո առջև եմ կանգնած: Ճանաչի՛ր այս Շնորհը, Իմ Վասուլա:

Ինչ-որ պատճառով, Տե՛ր, ես լիովին չեմ ըմբռնում: Ես ի վիճակի չեմ ըմբռնելու, սակայն հավատում եմ:

Այո՛, հավատա: Հավատա մանկան հավատով, քանի որ դա ուրախացնում է Ինձ ու Հորը: Դու ուզո՞ւմ ես գրել: Այո՞:

Ես հասկացա, որ մոռացել եմ գրի առնել:

Իմ Խաչի մասի՞ն:

Այո՛, Տեր:

Ուրեմն գրիր այն հիմա:

Շնորհակալ եմ, Աստված իմ:

(Ավելի ուշ, երբ Հիսուս խորհրդավոր ձևով ինձ մոտ թողեց Իր Խաչը, ես այնպես զգացի, կարծես ինձ վրա մինչև ուշ գիշեր վշտերի հեղեղ էր թափվել: Կարծես, աշխարհն իր մեղքերով, ամեն տեսակ մեղքերով ծանրացել էր ինձ վրա: Հանկարծ ես այս տառապանքի մեջ հիշեցի Հիսուսին՝ Գեթսեմանիում: Ես դառնորեն լաց եղա, բայց մյուս կողմից ես գոհ էի, որ Հիսուսին գոնե մի կարճ պահ հանգիստ էի տվել: Ավելի ուշ, Հիսուս եկավ և վերցրեց Իր Խաչը):

Այժմ Ես կիսում եմ Այն քեզ հետ, սիրելիս:

Տե՛ր, ես լսում եմ:

Լսի՛ր և հասկացիր: Դու լսե՞լ ես, որ որևէ մեկը, փորձի Ինձ նվիրվել առանց հարձակումների կամ հալածանքների ենթարկվելու :

Ո՛չ, Տեր, նրանցից ոմանք նույնիսկ զոհվել են որպես մարտիրոսներ:

Այո՛: Ուրեմն, տեսնո՞ւմ ես, փոքրիկս, այժմ մենք դրանով հաստատում ենք այն, ինչ ասվել է մարգարեություններում: Մինչ այսօր, նա, ով հանդես է գալիս Իմ Բերանով ու բարձրացնում է իր ձայնը Իմ Պատգամը տարածելու համար, անկասկած, կհալածվի Կայենների կողմից: Ես կանչում եմ նրանց, բայց նրանք հրաժարվում են լսել: Ես նշան եմ անում, սակայն ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Նրանք արհամարհում են Իմ զգուշացումները. նրանք ծաղրում են Իմ խոստումը: Ձե՞մ ասել, որ ձեր օրերում Ես Իմ Հոգին հեղելու եմ մարդկության վրա և Իմ Օրենքները ուղղակի ձեր սրտի մեջ եմ դնելու և գրելու եմ ձեր մտքում:

Ոչ մի մարգարեություն չի գալիս մարդու նախաձեռնությամբ, ինչպե՞ս կարող էր այդպես լինել: Իմ Խոսքը տրվում է Իմ Սուրբ Հոգու կողմից՝ մղելով մարդկանց, որ խոսեն Իմ մասին: Ես՝ Տերս, խոստացել եմ ձեզ Նոր Երկինք ու Նոր Երկիր, և Ես, Իմ Վասուլա, ամբողջապես այս պատրաստության մեջ եմ: Սակայն ձեր օրերի մարդիկ անձնակենտրոն են, անկրոն, անսիրտ, իրենց սեփական հաճույքը գերադասելով Աստծուց: Սակայն օրերը թռչում են, և շուտով այս ողջ չարությունը կմոտենա իր ավարտին՝ սրբվելով ու մաքրվելով Իմ Սիրո Կրակով: Ուրեմն արիացի՛ր, փոքրիկս, փորձություններ միշտ կլինեն, սակայն Իմ Զորությունը մշտապես քեզ նեցուկ կլինի: Շուտով դուք կտեսնեք Իմ Նոր Երկինքը և կապրեք Նոր Երկրի վրա, քանի որ Իմ Խոստումը պիտի կատարվի և Իմ Եկեղեցու նորոգումը ընթացքի մեջ է: Դուք արդեն ապրում եք դրա երկունքի շրջանում: Ուրեմն արիացե՛ք, սիրելիներս, դուք, որ կրում եք Իմ Անունը և Իմ զավակներն եք: Մի՛ վհատվեք, Իմ Խոսքը իրագործվում է: Ասել եմ, որ Ես ձեզ հետ կլինեմ և կապրեմ ձեր մեջ: Դուք կճաշակեք ուղղակի Ինձանից, և Ես ձրիաբար Կյանքի Աղբյուրից ջուր կտամ ձեզնից ամեն մեկին, որ ծարավ է:

Իմ Կրակն արդեն Երկնքից իջնում է ձեզ վրա՝ կլանելով ձեզ Իմ Մեծ Սիրով: Ես ազգից ազգ պիտի տարածեմ այս լափող Կրակը՝ ձեր չարությունը սիրո փոխելով, գրավելով ձեր կարծրացած սրտերը, բոցավառելով դրանք, ձեր թմրությունը վերածելով ջերմեռանդության, Իմ՝ ձեր Աստծո Հանդեպ: Իմ Կրակի այս Սուրբ Ժամը կտարածվի ձեր մեջ, որպես այրվող մի հնոց, և դուք կլցվեք Իմ Սիրո Կրակով, Իմ Սուրբ Հոգու Կրակով՝ վերջին Հոգեգալստի նման: Ես կնորոգեմ ձեզ՝ ընդարձակելով Ճշմարտության, Միության, Արդարության, Խաղաղության և Սիրո Իմ Թագավորությունը:

Ուստի ուրախացեք: Ցնծացե՛ք ձեր ամբողջ սրտով, սիրելիներս, Ես պիտի գամ և հեռացնեմ բոլոր հպարտ սնապարծներին, որոնք ձեր ցիրուցան լինելու և ընկնելու պատճառներից մեկն էին: Նրանք, ովքեր փորձում են խեղդել Իմ Հոգին, կպարտվեն Իմ Շնչով: Դուք կմաքրագործվեք Սիրո Իմ Կրակով: Աղջիկս, սիրի՛ր Ինձ, պաշտի՛ր Ինձ, ուրախացրո՛ւ Ինձ: Սերը սիրում է քեզ:

Ես օրհնում եմ քեզ, զավակս:

Մենք, մե՞զ, Տեր:

Մենք, մեզ, զավակս: Եկ:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 13, 1989

Ինձ հալածողները
խմբվում են իմ շուրջը, Տեր իմ,
նրանք որոշել են ինձ ջախջախել:
Ականջ դիր իմ աղոթքին:
Պահպանի՛ր ինձ
ամբարտավան պնդումներից
և ստախոս լեզուներից:
Իմ Պաշտպան,
թույլ տուր ինձ ապաստանել
Քո Սուրբ Սրտում:

Զավա՛կս, ամեն բան Իմ Ձեռքը հանձնիր: Քեզ մեղադրողները իրականում Ինձ մեղադրողներն են, քեզ դատապարտողները Ինձ դատապարտողներն են, քեզ հալածողները Ինձ հալածողներն են: Իմ զավակները կործանվում են գիտելիքի պակասից, մինչդեռ, երբ ձրիաբար ի վերուստ Գիտելիք է տրվում, նրանք մերժում են Այն:

Սակայն, Տե՛ր, Դու միշտ էլ կարող ես տարածել Խաղաղության և Սիրո Քո Պատգամը այն հոգիների միջոցով, ովքեր սրտաբաց և հոժարակամ են Քո առաջ:

(Հանկարծ ես ցավեր զգացի ափերիս մեջ):

Ծաղի՛կս, քո ցավերը տեսանելի չեն աչքի համար: Լսի՛ր, Իմ Աստվածային Գործերը պիտի ծածկեն այս երկիրը: Ես կհոգամ այն մասին, որ դրանք ծածկեն այս երկիրը, և ոչ ոք չի կարող միջամտել Իմ Ծրագրին: Ծաղի՛կս, վստահ եղիր, որովհետև սա է Իմ Կամքը:

Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ, ինչպես Ես եմ ցանկանում: Ես սիրում եմ քեզ և քո հանդեպ Իմ Սիրո վեհության պատճառով, Ես թույլ կտամ քեզ ըմպել Իմ դառնության Բաժակից: Որքան մեծ է Իմ Սերը քո հանդեպ, այնքան ավելի քեզ թույլ կտամ ըմպել դրանից: Ես՝ որպես քո փեսացուն, առաջարկել եմ քեզ Իմ ամենաթանկարժեք զարդեղենը: Մի՞թե Ես չեմ վստահել քեզ Իմ Խաչը, Իմ Գամերը և Իմ Փշե Պսակը: Տեսնո՞ւմ ես որքան եմ Ես քեզ սիրում:

Իմ Ուղիները ձեր ուղիները չեն: Ես մաքրագործում եմ քո հոգին՝ առաջնորդելով այն դեպի կատարելություն և դեպի սրբության ճանապարհը: Իմ հարս, թույլ տուր քեզ զարդարել Իմ զարդեղենով, թույլ

տուր Ինձ ցույց տալ Իմ Զարչարանքը: Անձնազոհությունը կառաջնորդի քեզ դեպի կատարելություն: Ուրեմն ազատ թող Ինձ անելու այն, ինչը լավագույնն է քո հոգու համար, և հիշի՛ր, չնայած դու ամբողջովին չես հասկանում Իմ Խոսքերը ու Իմ Ուղիները, հիշի՛ր, որ Հիսուս նշանակում է Փրկիչ:

ΙΧΘΥΣ

Տե՛ր, նրանք, ովքեր մերժում են անձնական հայտնությունները, պատճառաբանում են, որ միակ ճշմարիտ հայտնությունը Աստվածաշունչն է: Մենք բոլորս էլ դա գիտենք, սակայն Դու ի՞նչ կասես, Տեր իմ:

Աստվածաշունչը իրոք Ճշմարտությունն է՝ Ճշմարիտ Հայտնությունը, սակայն Ես չեմ դադարել գոյություն ունենալուց: Լսիր, Ես Խոսքն եմ և Ես գործում եմ Հոգու մեջ: Իմ Միտիթարիչը ձեր բոլորի հետ է՝ Ճշմարտության Հոգին, որին շատերը հակված են մոռանալու կամ անտեսելու, որովհետև այն ամենը, ինչ Հոգին ասում է ձեզ, վերցված է Իմ Խոսքից: Նա Իմ Խոսքը Հիշեցնողն է, ձեր մտքի Ներշնչողը: Դրա համար էլ, զավա՛կս, Ես շարունակաբար հիշեցնում եմ քեզ միևնույն Ճշմարտությունները: Հասկացի՛ր այն պատճառները թե ինչու եմ Ես անընդհատ ցնցում քեզ՝ հիշեցնողի (*Սուրբ Հոգու*) միջոցով: Ընդունի՛ր Ճշմարտության Իմ Սուրբ Հոգին: Ես գալիս եմ հիշեցնելու Իմ Խոսքը, Ես գալիս եմ ձեզ ապաշխարության կանչելու՝ մինչ Իմ Օրը կգա:

Զավակս, ավետարանի՛ր սիրով՝ Սիրո համար: Ես քո կողքին եմ, երբեք մի՛ վախեցիր: Եկեղեցին կկենդանանա, քանի որ Սերը Կենաց Ծառի Արմատն է և ձեր մեջ է: Ես կկերակրեմ այս մեռնող սերնդին Իմ Ծառի Պտուղով՝ այն ուղղակի դնելով նրանց բերանը: Թույլ տուր օգտագործել քեզ որպես Իմ քարտեսխտակը: Ճաչակիր Ինձանից: Ե՛կ, Մենք, մե՞զ:

Այո՛, Ես քո Մոր հետ միասին եմ: Ես քեզ սիրում եմ: Agapa me[1]: Աղոթի՛ր:

Վասուլա, գոհացրո՛ւ Ինձ և հաճախ եկ Ինձ մոտ քո առօրյա գործերի արանքում:

(Ես հաճախ թողնում եմ ամեն բան, ինչ էլ որ անելիս լինեմ տանը, որպեսզի Մեր Տիրոջ հետ լինեմ՝ անգամ երկու րոպեով: Ահա թե ինչպիսին է կարոտը Աստծո հանդեպ):

Ուրախացրո՛ւ Ինձ և ցույց տուր, որ դու միացած ես Ինձ: Հիշի՛ր փրկագինը, որ Ես վճարեցի քեզ համար: Ուրեմն արի Ինձ մոտ ցանկացած ժամանակ և խոսիր Ինձ հետ: Փոքր մնա:

Հասկացի՛ր, որ Ես, սիրուց դրդված, յուրաքանչյուր հոգու կանչելու եմ դեպի Ինձ: Ես ուզում եմ, որ դուք հասկանաք, որ ձեր իմաստունների սրտերը գտնվում են սգո տան մեջ: Իրենց, այսպես կոչված, բարձրության վրա նրանք հակված են մոռանալու Իմ Զորությունը և Իմ Աստվածությունը: Նրանց այլասերվածությունն ու ծախվածությունը

[1] սիրիր Ինձ (հունարեն)

կուրացնում են իրենց, տեղ տալով իրենց մեջ Սատանային և թույլ տալով, որ նա խոսի իրենց հետ, քանի որ նրանք փակել են իրենց սիրտը Սիրո առաջ: Նրանց միտքն ու սիրտը ավելի մոտ են բանական աշխարհին, քան թե Իմ Հոգևոր Աշխարհին:

Այս վարակը թափանցել է նաև Իմ Եկեղեցու մեջ: Իմ հովիվներից շատերը նման են այն առակի ագռավներին, որ Ես պատմեցի քեզ: Նրանք են այսքան շատ տարաձայնությունների պատճառը Իմ Եկեղեցու մեջ: Նրանց խոսքերում և քարոզներում պակասում է Հոգեկանությունը, Հավատարմությունը Իմ Խոսքին ու Իմ հրահանգներին: Նրանք ուրանում են Իմ Խորհուրդներն Իմ Ներկայությամբ. նրանք ծաղրում են բարեպաշտությունը: Հիշո՞ւմ ես այն արարքները, որ կատարեց նրանց նախահայր Կայենը: Նրանք որդեգրել են նրա լեզուն՝ առաքինության փոխարեն ծառայելով չարիքին, և մաքրության փոխարեն՝ անբարոյականությանը: Նրանք անվերապահորեն հանձնվել են մեղքի գերությանը: Այս Կայենները կենդանի են մեղքի համար, սակայն անկենդան են Ճշմարտության Իմ Հոգու համար: Երբ Իմ Օրը գա, նրանք պիտի պատասխան տան և հաշվետու լինեն Ինձ՝ Իրենց Հովվի Ավանդույթները չպահելու համար: Այսօր նրանց բերանը դատապարտում է իրենց, և նրանց իսկ շուրթերը պիտի վկայեն իրենց դեմ: <u>Սա իրենց ուրացության պտուղն է</u>:

Բայց, Տե՛ր, լսիր Աբելի աղաղակը. մի՛ թող մեզ այստեղ միայնակ ընկած, ուր չկա մեկը, որ մեզ բարձրացնի: Քո Տունն ավերված է, Քո Տունը մեր Ապաստանն է, և մենք ուրիշ տեղ չունենք գնալու: Հաղարավորներ կմեռնեն Հացի պակասից, մենք ապրում ենք փլատակների մեջ: Լսի՛ր մեր ձայնը և Քո զավակների ողբը, <u>լսի՛ր Քո Աբելին</u>:

Զավակս, աղոթի՛ր, երբեք մի՛ դադարիր աղոթելուց: Աղջի՛կս, խոստանում եմ, որ չսպասված ժամին/անակնկալ կերպով կմտնեմ Իմ Տաճարը և բարձր Աղաղակով կասեմ Երուսաղեմին՝ «<u>վերաշինվի՛ր</u>», իսկ Տաճարին՝ «<u>թող քո հիմքերը դրվեն</u>»: Եվ Այն կլինի Իմ Նոր Քաղաքը՝ կենդանացած Իմ Հոգով, և Սերը կբնակվի ձեր բոլորի մեջ, Իմ սիրելի մնացորդ: Եվ Ես կլցնեմ Այն Իմ Կենաց Ծառերով, և դուք, Իմ սիրելիներ, կճաշակեք հագենալու աստիճան:

Ես եմ աշխարհի Լույսը և Նա, ով ցոլում է ձեզ վրա: Զգո՛ն եղեք և մի՛ ննջեք, քանի որ օրերը հաշված են: Խաղաղություն քեզ, զավակս: Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ: Թույլ տուր կերակրել քեզ ու քաղցած այս սերնդին:

Այժմ հանգչիր Իմ Սուրբ Սրտում, Ես քեզ երբեք հուսախաբ չեմ անի: Սերը քո կողքին է:

Սեպտեմբերի 14, 1989

(Խաչվերաց)

Վասո՛ւլա, ավելի շատ աղոթիր, երբեք մի՛ կասկածիր Իմ Սիրուն:

Միշտ հարգիր Իմ Օրենքը: Տեղ տուր Իմ Մորը, Նրան քո գիրկն առ: Ես կսպասեմ քեզ Իմ Մոր Տանը, Նրա այն Սենյակում, ուր Նա հղացավ Ինձ:

Աշխատի՛ր Ինձ համար անխոնջ ջանքերով և հոգու մեծ լրջությամբ: Աշխատի՛ր սիրով՝ Սիրո համար: Պաշտիր Ինձ՝ քո Աստծուն, և թույլ տուր Ինձ կրթել քեզ, եթե անգամ դա նշանակում է անցնել տանջանքի միջով: Ես առաջարկում եմ քեզ Իմ Զարչարանքը: Քո շուրթերը այժմ պիտի արտաբերեն միայն սրբություն և ճշմարտություն: Հանուն Ինձ, սիրելիս, զարդարի՛ր Ինձ խոսքերով, որոնք գալիս են քո սրտից: Զարդարի՛ր Իմ Խաչը սիրո պսակներով, զարդարի՛ր Իմ Խաչը քո մեջ եղած սիրո ամեն մի կաթիլով: Ջանա՛ Ինձ այժմ ուրախացնել: Ես քեզ այնքան շատ եմ տվել: Ինձ առաջինը դասիր: Թող Ես այժմ զգամ քո նվիրվածությունն ու եռանդը. դա Ինձ հաճույք է պատճառում:

Ես քո Ուսուցիչն եմ և Ինձանից դու պիտի սովորես: Վասուլա, աղոթի՛ր և խնդրիր Իմ Զորությունը: Թույլ մի՛ տուր Սատանային օգտագործել քո թուլությունը քեզ փորձելու համար: Մի՛ ձանձրացիր գրելուց, հիշի՛ր Իմ պատվիրանները և հետևիր դրանց: Ես կլուսաբանեմ քեզ համար այն բաները, որոնք անհանգստացնում են քո հոգին: Մի՞թե Ես չեմ քո Հոգևոր Ղեկավարը: Ուրեմն, հավատ ունեցիր Իմ հանդեպ: Նույնիսկ քո ապշեցուցիչ թուլության մեջ, Ես կկարողանամ ավարտել այս Հայտնությունը: Հասկացի՛ր, զավակս, որ ընտրելով քեզ քո խեղճության և թուլության մեջ, Իմ Սուրբ Անունը է՛լ ավելի է փառաբանվելու:

Ես օրհնում եմ քեզ: Եկ, սիրիր Ինձ:

(Այսօր, կարծես, ամբողջ դժոխքը ազատ էր արձակվել: Սատանան անընդհատ հարձակվում էր ինձ վրա: Ես անցնում եմ մեկ այլ փորձության միջով, իմ հոգին չարչարվում է:

Ավելի ուշ, երեկոյան)

Հիսո՞ւս:

Ես եմ: Հրեշտակս, մի՛ վախեցիր, պարզապես սպասիր և տես, թե ինչպես եմ Ես գործում: Ես՝ Հիսուսս, սիրում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Ես պաշտում եմ Քեզ, Սուրբդ Սրբոց:

(Ավելի ուշ: Ես կրկին գալիս եմ Հիսուսի մոտ վստահության և սփոփանքի համար: Ես ինձ զգում եմ հարձակման ենթարկված և թշվառ: Ինչպես եմ վախենում, սխալված լինելուց):

Տե՛ր իմ, պահպանիր ինձ չարից և նրա հարձակումներից: Թույլ մի՛ տուր ինձ ընկնել Սատանայի ծուղակները, նախքան իմ հոգու թուլանալը: Եկ:

«Քո փրկության ցնծությունը
ինձ վերադարձրու
Եվ ազնիվ հոգի հաստատիր իմ մեջ:

*Ամբարիշտներին պիտի սովորեցնեմ
Քո ճամփաները Ու մեղավորները
Քեզ պիտի դառնան»:*[1]

Ծաղի՛կս, խաղաղություն քեզ: Աղոթի՛ր, Իմ Վասուլա, որ Սատանան քեզ քնած չգտնի: Անդադար աղոթիր[2]: Որքան եմ Ես խղճում քեզ... Ինձ սիրել՝ նշանակում է ամեն բան տալ Ինձ: Ես ուզում եմ այն ամենը, ինչ դու ունես:

Հիսուս, վերցրո՛ւ ամեն բան, ինչ որ Դու ուզում ես:

Դու հոժա՞ր ես ավելին զոհել Ինձ համար:

Ես հոժար եմ, եթե անգամ մարմինս տկար է: Ես խնդրել էի Քեզ, Տե՛ր իմ, քարշ տալ ինձ, եթե հարկ է: Խնդրում եմ, արա՛ այդ:

Ա՜հ, Վասուլա, Ես ուզում եմ, որ դու հոժարակամ անես ամեն ինչ: Ես սիրում եմ քեզ:

Տե՛ր, ես հոժար եմ:

Այդ դեպքում թույլ տուր Ինձ... վերջ տուր Ինձ դիմադրելուն: Անձնատուր եղիր Ինձ և մի՛ վախենա: Խաղաղվի՛ր, զավակս: Ջարը ատում է քեզ և շարունակում է իր հարձակումները քեզ վրա: Բաց մի՛ թող Իմ ձեռքը, բռնիր Ինձ:

Սեպտեմբերի 15, 1989

(Այնուհետև ես գնացի անկողնում հանգստանալու: Դա ժամը տասնմեկից հետո էր: Ես աղոթեցի, աղոթեցի, և մինչև այս սարսափելի բառը՝ «քունը», հաղթեց ինձ, ես հասցրեցի մի քանի անգամ KYRIE-ELEISSON, CHRISTE-ELEISSON (Տե՛ր ողորմեա, Հիսո՛ւս ողորմեա) ասել, երբ հանկարծ իմ մեջ մի բարձր Ձայն, որն ինձ վախեցրեց և ստիպեց վեր թռչել տեղիցս՝ ասաց. «ԵՍ ԿՕԳՆԵՄ ՔԵԶ»: Գիշերը մի քանի անգամ Այդ Ձայնը իմ մեջ շարունակ աղոթում էր ինձ համար, երբեմն ես կրկնում էի Այդ Ձայնի ասած աղոթքից որոշ բառեր՝ չնայած ես չէի հասկանում դրանք:)

(Հաջորդ առավոտ)

Վասո՛ւլա, Ես քեզանից ավելին եմ ուզում: Դու ուզո՞ւմ ես ինձ ավելին տալ:

---

[1] Սաղմ. 50/51.:14-15

[2] Ես կարծեցի, որ Հիսուսն ուզում է, որ ես ամբողջ գիշեր արթուն մնամ և աղոթեմ: Բայց ես գիտեի, որ սպառված լինելով անկարող պիտի լինեմ դա անել: Երբ Հիսուսն ասաց. «Որքան խղճում եմ քեզ», Նրա Ձայնը չափազանց գորովալից էր:

Հիսո՛ւս, վերցրու ինձանից այն ամենը, ինչ Դու կամենում ես:

Նուլնիսկ քո կյա՞նքը:

Իմ կյանքը Քոնն է:

Ծաղի՛կս, ես Սիրուց դրդված քեզ տառապանք կպատճառեմ: Հիշի՛ր, սրբությունը գալիս է տառապանքից: Թույլ տուր Ինձ այժմ քեզ համար կարդալ Աստվածաշնչից մի հատված:[1]: Հավատարիմ մնա Ինձ: Հիշի՛ր, ես Ամենահավատարիմն եմ, ուրեմն վստահիր Ինձ, մի դիմադրիր Ինձ: Ամբողջովին անձնատուր եղիր Ինձ: Ես գիտեմ՝ ինչն է լավագույնը քո հոգու համար:

Ես Սեր եմ:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 20, 1989

Տեր իմ և Փրկի՛չ:

Ես եմ: Իմ Խաղաղությունն եմ տալիս քեզ: Իմ Վասուլա, լսի՛ր Ինձ և գրիր: Ես երջանիկ եմ, որ Դու Իմ կողքին ես: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ: Դու պատրա՞ստ ես:

Սիրելինե՛ր, նայեք Ինձ՝ ձեր Աստծուն, որպես Ամենակարեկից Սուրբ Ընկերակցի, Ով նստած է Փառքի Գահի վրա Երկնքում: Բայց, միևնույն ժամանակ Իմ Աստվածության մեջ ես խոնարհվում եմ ներքև դեպի ձեզ, դեպի երկիր, որ թույլ տամ ձեզ զգալ Ինձ, լսել Ինձ, հասկանալ Ինձ և այսպիսով ճանաչել Ինձ՝ ձեր Տիրոջը: Այո՛, ես խոնարհվում եմ Իմ Գահից դեպի ձեզ՝ բարձրացնելու համար ձեր հոգին դեպի Ինձ և ձեզ Իմ Լույսի մեջ կենդանացնելու համար:

Նայե՛ք Ինձ, սիրելիներս, որպես ձեր Ամուսնու, որ ձեզ առատորեն պիտի տա այն ամենը, ինչի կարիքը դուք ունեք: Ես կվերցնեմ ձեր սգի քողը և ձեր ազգերին պարուրող ծածկոցը: Ես կսրբեմ արտասուքները ձեր այտերից՝ սփոփելով ձեզ: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ հավիտենական սիրով, և Մեծ Կարեկցանքից դրդված՝ ես կնորոգեմ ձեզ: Ես՝ ձեր Ամուսինը, Իմ ողջ ունեցածը կկիսեմ ձեզ հետ: Ես Ինձ հետ ունեմ Իմ Ամենաթանկ Զարդերը՝ Իմ Խաչը, Իմ Գամերը և Իմ Փշե Պսակը, որոնցով ես կզարդարեմ ձեզ, եթե դուք այդ կամենաք: Ես պատրաստ եմ կիսելու ձեզ հետ, դուք հոժար և պատրա՞ստ եք կիսելու Ինձ հետ Խաղաղության, Սիրո և Արդարության Իմ Խաչը:

Ինձ նայե՛ք որպես ձեր Փրկչի: Ես փրկում եմ բոլոր նրանց, ովքեր կառչում են Ինձ: Ես պատասխանում եմ յուրաքանչյուրին, ով կանչում է Ինձ: Ես կարեկցանքով եմ նայում ձեզ բոլորիդ, քանի որ գիտեմ՝ որքան փխրուն եք դուք և որքան հեշտ եք դայթակղվում Փորձչի կողմից: Ես

[1] Եբր. 3:1-6

փրկել եմ ձեզ ամենքիդ հանուն Իմ Անսահման Սիրո, Սեր, որն այնքան քիչ է հասկացված: Ես եմ Սերը և որևէ մեկը, որ ապրում է Իմ մեջ, ապրում է Ճշմարտության մեջ:

Ես եմ Կենաց Ծառի Արմատը և Կյանքի Աղբյուրը: Ես բերել եմ Ինձ հետ և՛ Կենաց Ծառի Պտուղը, և՛ Իմ Հավիտենական Աղբյուրներից բխող Կենդանի Ջուրը: Ուրեմն եկեք Ինձ մոտ, եկե՛ք և հագեցեք, եկե՛ք և ճաշակեք, եկե՛ք և խմեք Իմ Կենդանի Ջրից, դուք, բոլորդ, որ ծարավ եք: Ես ձեզ երբեք չեմ մերժի: Ես՝ Աստվածս, կվարժեցնեմ ձեզ իրական Կերակուրին, Կերակուր, որը կմնա ձեր մեջ այնքան, որպեսզի աղքատության մատնված ձեր հոգին կարողանա ապրել: Ձեր հողերը վերածվել են անապատների, և այրող քամիները չորացրել են ձեր կոկորդները, սակայն Ես, որ ձեր Փրկիչն եմ, վերևից տեսնում եմ բոլոր այս անիրավությունները: Ուստի, մի ասեք. «Տերը մոռացել է մեզ»: Ես-Ամենա-Հավատարիմն-եմ և ձեր հանդեպ ունեցած Իմ Խանդավառ Սերը փրկում է ձեզ: Ես երբեք Իմ Սուրբ Դեմքը չեմ շրջել ձեզանից: One agio omga elneah rima, rima, purdripgara nedro ha unu Amen rima[1]:

Գրի՛ր: Ես Խաղաղություն և Սեր կսփռեմ ձեր՝ մեռածներիդ երկրներում: Ես մտադիր եմ Իմ Խաղաղությունն ու Սերը տարածել ամենուր և այն բոլոր ազգերի մեջ, ուր Սերը Բացակա է: Ես մտադիր եմ տապալել ամեն մի Անարդարություն, և այս մեռած դարաշրջանը հարություն կառնի և կհետևի Ինձ դեպի Նոր Երկիր, որ Ես պատրաստում եմ նրա համար, և նա Նոր Երկնքի տակ կփառավորի և կգովաբանի Ինձ զոր ու գիշեր:

Դուք դեռևս չե՞ք հասկացել, թե ինչպես է Շնորհի Իմ Սուրբ Հոգին մեկը մյուսի ետևից Խաղողի Այգիներ պատրաստում ձեզ համար՝ քնքշորեն ու մեծ սիրով Դրանք տարածելով ամեն ազգի մեջ: Մինչ հիմա դուք դեռ չե՞ք հասկացել, թե ձեր Սուրբ Մայրը և Ես ինչպես ենք տարածում Մեր Թևերը ձեզ վրա՝ ծածկելով ձեզ Մեր Օրհնություններով՝ ձեզ համար պատրաստելով Խաղողի Այգիներ, Այգիներ, որոնք մենք պետք է բազմացնենք, Այգիներ, որոնք պիտի բավականաչափ պտուղ տան բազմություններ կերակրելու համար: Շնորհի Իմ Հոգին նման է նուրբ շիվեր տվող Խաղողի վազի: Իմ ծաղիկները կրում են Սիրո և Խաղաղության պտուղը: Մոտեցի՛ր Ինձ, դո՛ւ, որ տենչում ես Ինձ և հագեցիր Իմ պտուղներից, քանի որ Իմ մասին հիշողությունները մեղրից էլ քաղցր են: Ինձ ժառանգելը ավելի քաղցր է, քան մեղրախորիսխը: Նրանք, ովքեր ուտում են Ինձ, ավելի կքաղցեն, նրանք, ովքեր խմում են Ինձ, է՛լ ավելի կծարավեն: Ով որ լսում է Ինձ, երբեք ամոթով չի մնա: Ով վարվի այնպես, ինչպես Ես եմ թելադրում, երբեք մեղք չի գործի[2]:

Ես չե՞մ ասել, որ գալիք օրերին՝ շիվեր կարձակեմ, որոնք կծլարձակեն ու կծաղկեն ու ամբողջ աշխարհը պտուղով կլցնեն: Այս պտուղը կաճի շնորհիվ Իմ Լույսի, և Երկինքը Իր Ցողը կտեղա ձեզ վրա՝ թարմացնելու համար ձեր չոր կոկորդները: Ես Իմ Ժողովրդին պարգևում եմ բոլոր այս օրհնությունները:

[1] Ես հանկարծ լսեցի մի անհասկանալի լեզու:
[2] Ժողով. 24:17-22

Ձեզ սիրված զգացեք Իմ կողմից, Իմ փոքրիկներ: Սերը սիրում է ձեզ և օրհնում ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Սիրո Հառաչանքը ձեր ճակատների վրա:

ΙΧΘΥΣ

Մեկ եղեք:

(Ավելի ուշ)

Տեր իմ,[1] Դո՛ւ, որ
Արմատն ես Կենաց Ծառի
և Ինքնին Սերն ես, և Քո Պտղից է,
որ Դու Հավիտենական
Կյանք ես տալիս մեզ,
օրհնյալ լինես: Քո Տերևները,
որ երբեք չեն թոշնում
կամ չորանում,
պատրաստված են զուտ
Սպիտակ Ոսկուց,
Որից էլ պայծառ Լույս է ճառագում:
Ես պաշտում, ապավինում,
հավատում և սիրում եմ Քեզ:
Խնդրում եմ ներիր նրանց,
ովքեր չեն պաշտում,
չեն ապավինում, չեն հավատում,
ոչ էլ սիրում են Քեզ:
Խնամի՛ր մեզ, էմմանուել:
Ես օրհնում եմ Քեզ,
ես օրհնում եմ Քեզ,
Դո՛ւ, որ գիշերներն իմ
Խորհրդատուն ես,
լցնելով ինձ անվերջ աղոթքներով,
աղոթելով ինձ վրա: Ես գիտեմ,
որ Դու չես լքի իմ հոգին,
քանի որ Դու ցույց ես տալիս մեզ
Կյանքի Քո Ուղին՝
մեր ձեռքը Քո Ձեռքում բռնած:
Փրկի՛ր մեզ Քո Սիրով:
Տե՛ր, Դու ես Աղբյուրը մեր հույսի՝
տեսնելու Նոր Երկինքն ու Նոր Երկիրը:

Ես եմ Արմատը Կենաց Ծառի և Ինձանից է բխում Հավիտենական Կյանքը: Ծաղիկս, կարդա՛ Սուրբ Գրքերը:

(Հիսուսն ի նկատի ուներ, որ ես պատահականորեն բացեմ Աստվածաշնչի այն էջը, որ Նա ցանկանում էր, որ կարդամ: Ես բացում եմ Ես. 40:9):

[1] Հիսուս, Մի ներքին տեսիլքով, ցույց տվեց ինձ Կենաց Ծառը:

Կարդա՛ և գրի՛ր: «Ելի՛ր բարձր լեռան վրա, ով Սիոնի ավետաբեր: Քո ձայնը բարձրացրո՛ւ, ով Երուսաղեմի ավետաբեր, բարձրացրո՛ւ, մի՛ վախեցիր, Հուդայի քաղաքներին ասա. «Ահա ձեր Աստվածը»: Ձեր Նոր Երուսաղեմը արդեն մոտ է:

Ես՝ Աստվածս, իջնում եմ այս դարաշրջանի մեջ՝ դեմ առնելով անկենդան մարմինների: Այն ամենը, ինչից ես սոսկում էի, կատարվեց: Ես ցած եմ իջնում ու չեմ գտնում ո՛չ հավատ, ո՛չ հույս, ո՛չ սեր, և Իմ գառները, որ ես թողել էի արածելու Իմ Կանաչ Արոտավայրերում, սովատանջ են, և ողբալի է նրանց նայելը: Ապրելով ավերակների մեջ՝ նրանք ապաստան և կերակուր են փնտրում, սակայն չեն գտնում: Նրանք հույսով բարձրացնում են քարը քարի ետևից մի փշրանք գտնելու համար, կամ, թերևս, սերմնահատիկ, որը կարողանային ցանել: Սակայն փշրանքի կամ սերմի փոխարեն նրանք կարիճներ են գտնում, որոնք պատրաստ են խայթելու ներարկելով նրանց իրենց թույնը: Իմ գառները թափառում են քաղաքից քաղաք, գտնելով միայն երբեմնի Մեծ Քաղաքի մնացորդները: Այո, Ես խոսում եմ Երուսաղեմի մասին, բայց միայն մի քանիսն են պատրաստ Ինձ լսելու:

Ես կանչում եմ Իմ հովիվներից յուրաքանչյուրին իր անունով, սակայն շատ քչերն են լսում Իմ Ձայնը: Ես խեղդվում եմ, Ես շնչահեղձ եմ լինում՝ տեսնելով նրանց մեռած խոսքերով լցված: Լսի՛ր Ինձ, աղջիկս, Ես կանչել եմ քեզ ճշմարիտ գործին ծառայելու: Ես ձեռքդ բռնեցի և պատրաստեցի քեզ վկայելու համար: Ես ցույց եմ տվել քեզ Ճշմարտությունը և քո աչքերից վերցրել եմ քողը, որպեսզի դու տեսնես, թե ում եմ Ես ընտրել նստելու Պետրոսի Աթոռին և ում եմ ասել մի անգամ. «Դու Պետրոսն ես, և այս վեմի վրա Ես պիտի կառուցեմ Իմ Եկեղեցին, և դժոխքի դռները այն երբեք չպիտի հաղթահարեն: Երկնքի թագավորության բանալիները Ես քեզ պիտի տամ: Ինչ որ երկրի վրա կապես, երկնքում կապված պիտի համարվի, և ինչ որ երկրի վրա արձակես, երկնքում արձակված պիտի համարվի»[1]:

Ես տվել էի նրան այս Իշխանությունը, և այսօր դուք փորձում եք տապալել նրան և գողանալ նրա հովվական ցուպը, որպեսզի դուք ղեկավարեք Ստության և Անառակության գավազանով: Պետրո՞ս: Իմ Գառների Պետրոս, Իմ սիրելի հովիվ, Ես գիտեմ, թե քո սիրտը ինչպես է պատառ-պատառ լինում և նրանից արյան գետեր են հոսում այս անշնորհակալ և անհավատարիմ սերնդի համար: Ես գիտեմ, թե ինչպես են նրանք քո աչքերը արտասուքների աղբյուր դարձրել: Ես գիտեմ, թե քո եղբայրներից քանիսն են թիկունք դարձրել քեզ: Սրանք, սիրելիս, այն հովիվներն են, ովքեր ոչինչ չգիտեն, ոչինչ չեն զգում: Նրանք բոլորը գնում են իրենց սեփական ճանապարհով, յուրաքանչյուրն իր սեփական շահի հետևից՝ Իմաստության փոխարեն ծառայելով Անմտությանը, Ժուժկալության փոխարեն՝ Հեշտասիրությանը, Հնազանդության փոխարեն՝ Անհնազանդությանը:

Ես Իմ Խաչի վրայից նայում եմ բոլոր նրանց, ովքեր բնակեցնում են երկիրը, և Ես ասում եմ ձեզ՝ բազում ազգերի ժողովուրդներիդ, որ շուտով ժամը կհասնի ձեզ վրա: Ժամանակը գրեթե վերջացել է, և շատ

[1] Մատթ. 16:18-19

օրեր չեն մնացել, մինչ դուք կանցկացնեք ձեր դիշերները արտասվելով: Դուք, անհավատարիմ հովիվներ՝ հովիվներ, որ մեղանչեցիք Իմ դեմ անհավատությամբ, դուք, որ աղաղակում եք. «Խաղաղություն», երբ խաղաղություն չկա: Վերադարձե՛ք Պետրոսի մոտ, դուք ամենքդ, որ հեռացել-մոլորվել եք տարբեր ուղղություններով: Ծառայե՛ք Ինձ, ինչո՞ւ եք ծառայում Պղծությանը: Եղեք Իմը, և ոչ թե Ապստամբինը: Ինչո՞ւ եք դուք այդքան ձգտում ծառայել Ապստամբին: Նույնիսկ օտարները, նույնիսկ նրանք լսեցին Իմ Ձայնը և հասկացան Իմ Խոսքերը: Իմ Սկզբունքները Սուրբ են, և Ես ասում եմ ձեզ մեծ հանդիսավորությամբ, որ Դրանք Սուրբ են մնալու Հավիտյանս Հավիտենից:

Աղջիկս, կարդա՛ Իմ Խոսքը:

(Տերը ինձ ցույց տվեց, թե որտեղ պետք է կարդամ: Կրկին Մատթ. 5:18-19):

Կարդա՛ և գրի՛ր. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. մինչև որ երկինքն ու երկիրը անցնեն, Օրենքից ոչ մի կետ, ոչ մի նշանագիր չի անհետանա, մինչև որ այս բոլորը կատարվի: Ուստի, ով որ այս պատվիրաններից անգամ ամենափոքրը կխախտի ու մարդկանց այդպես կուսուցանի, երկնքի արքայության մեջ փոքր պիտի համարվի: Բայց ով որ պահի դրանք և ուսուցանի, երկնքի արքայության մեջ մեծ պիտի համարվի»:

Ձավակս, հանգստացի՛ր այժմ, ուրախացրու Իմ Հոգին մանկական քո հավատով: Եկ, հանգստացիր Իմ մեջ: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ: Սիրի՛ր Ինձ:

Գովյալ լինի մեր Տերը:

Սեպտեմբերի 22, 1989

(Մեր Սուրբ Մոր Պատգամը)

Սիրելի աղջիկս, Աբբան սիրում է ձեզ բոլորիդ:

Գովյալ լինի Տերը:

Ասա՛ Իմ զավակներին հետևյալը. Խաղաղություն ձեզ: Իմ որդիներ և դուստրեր, թույլ տվեք ձեզ բացվել այնպես, որ Հիսուս մուտք գործի ձեր սրտի մեջ և բժշկի ձեզ:

Իմ Պատգամն այսօր հիշեցնելու է ձեզ, թե ով է Հիսուս: Հիսուս Վսեմ Սիրո Աղբյուրն է, աշխարհի Լույսը: Ձեզ փրկելու համար Նա համբերությամբ տարավ խաչը՝ անտեսելով դրա պատճառած նվաստացումը: Նա հեզ ու խոնարհ է: Եկե՛ք, ճանաչե՛ք և ընդունեք Նրան, որպես ձեր Աստծուն, որովհետև Նրան ընդունելը կատարյալ առաքինություն է: Ձգացե՛ք Նրան, զգացե՛ք Նրա Սուրբ Ներկայությունը: Սովորե՛ք հաշվի առնել Նրան ձեր մեջ, սովորեք ասել «մենք, մեզ»: Մի՛ մոռացեք հիշել Նրան ձեր աղոթքներից դուրս: Նրան մշտապես ձեր սրտում պահեք. թող Նա փակված մնա ձեր սրտերում:

Մեր Պատգամները որպես սպառնալիք մի՛ ընդունեք: Մեր Պատգամները Աստծո Անսահման Ողորմությունից բխող Սիրո և Խաղաղության Պատգամներ են:

Ուրախացրե՛ք Աստծուն խորհելով ձեր ասածի մասին՝ նախքան ձեր շուրթերը բացելը և որևէ բան արտաբերելը: Թույլ մի՛ տվեք, որ ձեր շուրթերը դատապարտեն ձեզ: Այն ամենը, ինչ դուք ասում եք, թող վկայի, որ դուք սրբության, հնազանդության և մաքրության հոգով Աստծո զավակներն եք: Եռանդով ծառայեք ճշմարիտ գործին:

Այսօր ես ձեզ՝ Ինձ լսողներին, այս հարցն եմ տալիս. «Սիրո՞ւմ եք դուք ձեր մերձավորին ձեր անձի նման»: Ես ուզում եմ հիշեցնել ձեզ, որ անգամ ձեր թուլության մեջ դուք կարող եք հասնել կատարելության, եթե թույլ տաք Տիրոջը առաջնորդել ձեզ: Ամեն օր անձնատուր եղեք Նրան. տվե՛ք Նրան ձեր կամքը առանց վախենալու: Նա գիտի ձեր կարողությունները և երբեք ձեզանից չի խնդրի մի որևէ բան, որ կարող է ձեզ վնասել: Բարձրացրե՛ք ձեր հոգիները աղոթքով: Աճե՛ք սրբության մեջ, աճե՛ք Սիրո մեջ, որն Աստված այսքան առատորեն առաջարկում է ձեզ:

Երբեք մի՛ լսեք Ապստամբին, ձեր սրտում դատարկ տեղ մի՛ թողեք, որպեսզի թույլ չտաք Սատանային փորձել ձեզ: Ապրե՛ք Հավատի, Հույսի և Սիրո մեջ. թող սրանք լինեն ձեր սրտերը կշտացնող պտուղները: Աստված ձեր մեջ է՝ հայթայթելու համար ձեր հոգու կարիքները: Տիրոջ Խաղողի Այգիները պիտի բազմանան և հազարավորներին կերակրելու համար բավականաչափ պտուղ պիտի տան:

Արարիչը պատրաստում է ձեզ Սիրո Նոր Դարաշրջան մտնելու համար: Նայե՛ք ձեր Արարչին, որպես ձեր Սուրբ Ուղեկցի, ձեր Հոր, ձեր Փեսայի, ձեր Ազատարարի, ձեր Խորհրդատուի: Փառաբանե՛ք Տիրոջը Իր Գթառատ Կանչերի համար, քանի որ Նա ասում է. «Ես պիտի ավելացնեմ և չպիտի պակասեցնեմ Իմ Կանչերը: Ես Իմ զավակներին շատ պիտի մոտեցնեմ Ինձ, որպեսզի սնեմ նրանց Իմ Սեփական Ձեռքով: Ես Իմ Օրենքը կդնեմ նրանց սրտում, և նրանք պիտի ապրեն ու պատսպարվեն Իմ Սիրո մեջ: Ես նրանց կսփոփեմ՝ առաջնորդելով ետ դեպի Ինձ, դեպի Ճշմարտությունը: Ես նրանց կրկին կվարժեցնեմ իսկական Կերակուրին: Մեռած, անցած կլինեն այն օրերը, երբ օրհնությունները սիրով չէին ընդունվում: Ես կբացեմ մեռելներին ծածկող պատանքը և Իմ Լույսով հարություն կտամ նրանց»: Սերը կվերադառնա ձեր մեջ որպես Սեր և կապրի ձեր մեջ:

Խոկացե՛ք Մեր Պատգամների շուրջ և ապրեք Մեր Պատգամներով: Ձեզ ապահով զգացեք, քանի որ Մենք ձեր բոլորի հետ ենք: Ես օրհնում եմ ձեզ և ձեր ընտանիքներին: Աղոթե՛ք, և Ես ձեզ հետ կաղոթեմ:

Ե՛կ, աղջիկս:

Սեպտեմբերի 24, 1989

Իմ հոգին հպարտանում է Տիրոջով:
Ե՛կ և օգնիր ինձ
լսել Քեզ, զգալ Քեզ,

որպեսզի իմ հոգին կարողանա
հրճվել Քո Լույսի մեջ:

Սիրելիս, քեզ սիրված զգա Իմ կողմից: Այլևս մեղք մի՛ գործիր: Գնահատի՛ր այն ամենը, որ դու սովորեցիր Իմ Բերանից: Արիացի՛ր, աղջիկս: Հիշի՛ր, Ես քո կողքին եմ և ճշմարիտ եմ ասում, որ քեզ տրված Իմ Խոսքը կտարածվի վաղորդյան մեգի նման:

Թույլ տուր Ինձ գործածել քեզ ամեն օր, թույլ տուր Ինձ Իմ Այրող Ցանկությունները քո մեջ ներարկել: Ես ցանկանում եմ, որ Իմ զոհասեղանը մշտապես բոցավառվի Ինձ համար քո Աստծո համար: Դու կապված ես Ինձ հետ, բայց, այսուհանդերձ, ավելի ազատ ես, քան երբևիցե եղել ես: Սկզբից ևեթ Ես քեզ որևէ բան չեմ պարտադրել, Ես միշտ հարգել եմ քո ազատությունը: Հիշո՞ւմ ես՝ ինչպես էի քեզ առաջնորդում քայլ առ քայլ, ամեն օր քեզ ավելի ու ավելի Ինձ մոտեցնելով:

Աղոթի՛ր, Իմ Վասուլա, և Ես քեզ կտամ Իմ Զորությունը և կամքը՝ հաստատակամորեն հարատևելու համար, քանի որ Իմ ուսերը հոգնել են Իմ Խաչը կրելուց, և Ես կարիք ունեմ Իմ Սիրո համար կամավոր զոհաբերվող հոգիների, որ Ինձ հանգիստ տան և Իմ Խաչը կիսեն Ինձ հետ: Ես խենթանալու չափ սիրում եմ ձեզ բոլորիդ և չէի ցանկանա ձեզանից որևէ մեկին կորած տեսնել: Ես կարիք ունեմ կիսելու Իմ տառապանքները վեհանձն հոգիների հետ:

Դու Ինձ հասկանո՞ւմ ես հիմա, Իմ Վասուլա: Ինձ մոտ բերող ճամփան նեղ ու դժվարին է: Այն ավելի շատ զոհողություններ կպահանջի քեզանից, քան հիմա դու անում ես Ինձ համար, սակայն Ես կօգնեմ քեզ, որ չարունակես: Մի՛ վախեցիր, ինչպես երբեմն վախենում ես, Ես առաջնորդում եմ քեզ դեպի սրբացում: Ես միշտ քո առջևում եմ, ուստի մի՛ դիմադրիր Ինձ: Անձնատուր եղիր Ինձ. հիշի՛ր, թե ինչպես է Իմ Սերը փրկում: Տենչա՛ Ինձ և Ինձ առաջինը դասիր: Երբեք մի՛ դադարիր աղոթելուց: Տեղիք մի՛ տուր Սատանային, որ նա քեզ փորձի: Դադարի՛ր կասկածելուց. դու դեռ որքա՞ն պիտի կասկածես:

Ծաղի՛կս, Ես գիտեմ, որ դու փխրուն ու թույլ ես, բայց հավատա Ինձ, Ես քո թուլությունը կրում եմ Իմ Ուսերին: Ես կտանեմ քեզ մինչև Իմ Տունը: Ես՝ քո Աստվածը, որդեգրել եմ քեզ, այնպես չէ՞: Մի՞թե Ես կլքեմ Իմ «որդեգիր զավակին», պարզապես այն բանի համար, որ նա ուժի պակաս ունի ու դեռևս թշվառ է: Երբե՛ք: Ես քեզ որդեգրել եմ, որպեսզի դու Իմ Սեփականը լինես և դու հիմա իսկապես Իմն ես, զգա՛ Իմ ուրախությունը: Ես մեծացրել եմ քեզ քնքշանքով և ընդունել եմ քեզ ինչպես որ կաս՝ բոլոր քո մեղքերով, թուլություններով ու սխալներով, որպեսզի քո միջոցով ցույց տամ ամբողջ աշխարհին, որ Իմ Ողորմությունը դարեդար է և չնայած ձեր մեղքերին ու թերություններին՝ Ես ամբողջովին ներում եմ ձեզ: Ես պատրաստ եմ որդեգրել ձեզ բոլորիդ, որպես Իմ զավակների, որպեսզի դուք բոլորդ կարողանաք մասնակից դառնալ Իմ Երկնքի Թագավորությանը:

Իմ Սերը ձգվում է սերնդից սերունդ և ընդմիշտ այդպես կլինի: Ուրեմն, բռնի՛ր Ձեռքս և թույլ տուր Ինձ առաջնորդել ձեզ բոլորիդ դեպի Իմ Տունը: Այժմ եկե՛ք դեպի Ինձ, ինչպես որ կաք, Ես սիրում եմ ձեզ,

զավակներս: Եկե՛ք Ինձ մոտ, ինչպես որ կաք, և Ես սիրով Իմ Ուսերին դրած ձեզ կտանեմ Իմ Տունը:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 26, 1989

Տե՞ր իմ:

Ես եմ: Երբեք մի՛ կասկածիր: Հիշի՛ր, այդ Ես եմ, որ պահում եմ բազում դռների բանալիները: Ես կբացեմ դրանք մեկը մյուսի հետևից, ամեն մեկը ճիշտ ժամանակին: Հասկանո՞ւմ ես, զավակս:

Դու կարիք չունես անհանգստանալու, դու կարիք չունես շտապելու: Ես՝ Տերս, ամեն բան կանեմ ճիշտ ժամանակին:

Սեպտեմբերի 28, 1989

Տե՛ր իմ, այնքան էլ հեշտ չէ ընկալել Քո մտքերը: Ես ուզում եմ հաճելի լինել Քո Աչքերին: Երբեմն ես զգում եմ, որ Դու թաքնվում ես ինձանից: Իմ մեղքերի պատճառո՞վ է, որ Դու թաքնվում ես ինձանից:

Վասո՛ւլա, Իմ Սերը քո հանդեպ երբեք չի սպառվի: Ավելի շատ աղոթիր, թույլ տուր հիշեցնել քեզ, որ ժամանակ առ ժամանակ աղոթես այն աղոթքները, որ Ես տվել եմ քեզ: Աղոթի՛ր այն սաղմոսը, որ Ես ընտրել եմ քեզ համար[1]: Թույլ տուր երբեմն-երբեմն գործածել քեզ, և երբ որ Ես կամենամ, թույլ տուր Ինձ ազատ զգալ և իշխել քո վրա: Ուրեմն մի՛ վախենա, այժմ ամբողջովին կախյալ եղիր Ինձանից:

Ես բարձրացրել եմ քեզ, որպեսզի Ինձ հետ լինես և ուրիշ՝ ոչ ոքի: Ես միշտ կոչնչացնեմ բոլոր Իմ մրցակիցներին, ովքեր կմոտենան քեզ: Ես երբեք թույլ չեմ տա նրանց շեղել քեզ՝ քո միտքը հեռացնելով Ինձանից: Դու Իմն ես այժմ և հավիտյան: Ե՛կ Ինձ մոտ և պաշտի՛ր Ինձ Լռության մեջ: Այժմ ամբողջովին կախյալ եղիր Ինձանից. դա ուրախացնում է Ինձ: Կախյալ եղիր Ինձանից ճիշտ այնպես, ինչպես Ես սովորեցրել եմ քեզ: Խոկա՛ լռության մեջ, ծարավի եղիր Ինձ, այդ ինձ դուր է գալիս: Տենչա՛ Ինձ, մշտապես ծարավիր Ինձ՝ քո Աստծուն:

Դադարի՛ր շարունակ ինքդ քեզ հարցեր տալուց և զարմանալուց: Մի՞թե Ես չեմ Տերերի Տերը: Երբեք մի՛ կասկածիր Իմ Գործերին: Ես գիտեմ քո կարողությունը. ուրեմն սիրիր Ինձ անսահմանորեն՝ հոժարակամ զոհելով ինքդ քեզ ուրիշների համար: Հավատարիմ մնա Ինձ: Իմ Հոգին քեզ վրա է և մշտապես առաջնորդելու է քեզ: Խոսի՛ր Ինձ հետ. ինչո՞ւ Ես Ինձ անտեսում: Մի՞թե քո մտահոգությունները ավելի կարևոր են, քան Իմ Ներկայությունը: Ապավինի՛ր Ինձ: Բազում անգամներ Ես առաջարկում եմ քեզ Իմ Ուսը, որ դու հենվես:

[1] Սաղմ. 86

Ե՛կ, ես ուզում եմ տեսնել քո դեմքը զվարթ և ուրախությունից լուսավորված: Տես՝ թե ես քեզ ինչ եմ տվել: Եղի՛ր արևածաղկի պես. շրջիր դեմքդ դեպի Ինձ և հետևիր Իմ Լույսին: Ես չեմ թաքցնում Իմ Դեմքը քեզանից, ծաղիկս: Եթե միայն դադարես գլուխդ կախ գցելուց, և նայես վեր՝ դեպի Ինձ, ապա քո մտահոգությունները քեզ կթողնեն: Վստահի՛ր Ինձ, ամեն բան հանձնիր Ինձ, և Ես կօգնեմ քեզ:

Ե՛կ, այս բոլոր զոհողությունները իզուր չեն լինի, քո Հիսուս սիրում է քեզ[1]: Դու ոչինչ չունե՞ս Ինձ ասելու:

Այո՛, Տեր իմ, ունեմ: Ես ուզում եմ Քեզ ասել, որ Դու անընդհատ, ամբողջ օր ու գիշեր իմ մտքում ես: Ես խորհում եմ Քո մասին ամբողջ գիշեր: Ես ավարտում եմ օրս մտածելով Քո մասին, սկսում եմ օրս մտածելով Քո մասին: Իմ հոգին կառչում է Քեզ:

Ուրեմն, ուրախացի՛ր: Թող քո սիրտն ու հոգին ցնծան: Քո Թագավորը եկավ քեզ մոտ՝ քո մերկության ու քո աղքատության մեջ: Քո Թագավորը ծածկեց քո մերկությունը Իր Սիրով, և Իր Խաղաղությամբ ու Իր Քնքշությամբ քեզ զարդարեց փառահեղորեն Իր ամենաթանկարժեք Զարդերով: Մի՞թե Ես չեմ զարդարել քո գլուխը Իմ Փչե Պսակով: Մի՞թե Ես չեմ վստահել քեզ Իմ Գամերը: Մենք չե՞նք կիսում Իմ Խաչը որպես մեր ամուսնական առագաստ: Մի՞թե Ես ցույց չեմ տվել քեզ Իմ Գեղեցկությունը: Ես պսակել եմ քեզ Ինձ հետ: Խոսի՛ր, աղջիկս:

Տե՛ր իմ, ինչ էլ ես ասեմ, բավարար չէ: Ողորմի՛ր իմ թշվառությանը: Ես վստահում եմ Քո սիրուն: Ես ուրախ կլինեմ ավելին զոհել:

Ուրեմն բա՛ց արա ականջներդ և լսիր Իմ հարսանեկան երգը: Ես գիտեմ դու ինչից ես շինված՝ հող ու մոխրից: Դո՛ւրս եկ քո խավարից, բարձրացնելով գլուխդ, նայի՛ր Ինձ: Ես Նա եմ, ով հարություն տվեց քեզ և Նա, ով պահում է քո հոգին անխռով ու հանդարտ: Իմ Բազուկների մեջ պարուրած՝ Ես պահպանում եմ քո հոգին: Ես ամեն բան տվել եմ քեզ, որպեսզի քո հոգին բարձրացնեմ դեպի Ինձ:

Ես ցույց եմ տվել Իմ Անսահման Ողորմությունը և շնորհ եմ տվել քեզ՝ թույլ տալով, որ խմես Իմ Բաժակից, այնպես չէ՞: Փորձիր ուրախացնել Ինձ, աղջիկս, փնտրի՛ր Իմ Ուղիները, Իմ Ուղիները Սուրբ են: Ուրեմն զգուշացիր դանդատվելուց չնչին բաների համար: Ես միշտ քո կողքին եմ եղել՝ պահպանելով քեզ: Միշտ Ինձ մոտ եկ սրտի պարզությամբ, Իմ Վասուլա, քանի որ քո օրերը երկրի վրա լոկ անցնող ստվերներ են, մակերեսային մի անցում, որ պիտի անհետանա: Երկրի վրա ոչ մի բան հավիտյան չի շարունակվում,

ուրեմն պահիր Իմ կանոնները և հետևիր Իմ Պատվիրաններին: Ես վստահել եմ քեզ Իմ Ամենաարժեքավոր Զարդը. պահպանի՛ր Այն, Փարվի՛ր Դրան և ամուր պահիր Այն: Խաղաղության և Սիրո Իմ Խաչը քաղցր տանջանք կլինի քո հոգու համար: Իմ Խաչը Ինձ հետ կիսելու քո ձգտումը պետք է լինի ինչպես մի բոցավառ կրակ քո մեջ, այնպես,

[1] Մի պահ լռություն տիրեց:

ինչպես Իմ մեջ է: Իմ Խաչի հանդեպ քո ծարավը պետք է աճի, և դառնա ինչպես Իմը: Մինչ այժմ դու պետք է որ հասկացած լինեիր, թե ինչպես եմ Ես ցույց տալիս Իմ Սերը: Այո՛, թույլ տալով քեզ տառապել:

Հոգի, Ես քո չորությունը հոսող աղբյուրի եմ վերածել, Իմ հանդեպ քո թշնամությունը՝ քնքշանքի, քո անտարբերությունը՝ ջերմեռանդության Իմ Խաչի հանդեպ, քո թմրածությունը՝ կարոտի՝ քո Տան և քո Հոր հանդեպ: Ցնծա՛, Հոգի: Քո Թագավորը հանեց քո մարմինը ծածկող պատանքը և հարություն տվեց քեզ ինչպես Ղազարոսին, որ տիրապետի քեզ:

Ա՛հ, Հիսուս, Դու շատ դժվարահաճ չես ընտրության մեջ:

Ընտրությունը Իմն է: Ես ուզում եմ, որ դու ժառանգես և Երկնքում Ինձ հետ կիսես Իմ Թագավորությունը: Ամեն Գործ, որ Ես անում եմ, Իմ Փառքի համար է:

Նայի՛ր, դու ազատ ես այժմ, աղավնյակս, Ես քո Տերն եմ և դու միշտ կգաս Ինձ մոտ և միշտ կՀանգստանաս Իմ Սուրբ Սրտում: Իմ Սուրբ Սիրտը քո աղավնատունն ու քո ապաստարանն է, հասկանո՞ւմ ես: Ես վարժեցրել եմ քեզ, որ ճանաչես, թե Ով է քո Տերը և ինչ է պահանջում քեզանից. քո Տերը և քո Թագավորը սեր է ակնկալում քեզանից այժմ: Ե՛կ, վերադարձրու Իմ Սերը՝ որպես հայելի արտացոլիր Իմ Սերը: Ես ստեղծել եմ քեզ Սիրուց դրդված, որ Ինձ սիրես. երբեք դա չմոռանաս:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 29, 1989

Ալելուիա: Ամեն անգամ կանչելիս,
Տերը խոնարհվում ու լսում է ինձ:
Իմ հայացքը սևեռված է
Քո վրա, իմ Տեր: Ես անդադար
խորհում եմ Քո մասին:
Դու իմ Կերակուրն ես,
իմ Հացն ու Գինին ես:
Այս չարակամ աշխարհում
ես ավելին ոչինչ չեմ ուզում:
Իմ հոգին ծարավում է Քեզ,
իմ շուրթերը ծարավից
չորանում են Քեզ համար:
Դո՛ւ ես իմ Աստվածը,
որ փնտրեց ու գտավ ինձ
իմ թշվառության մեջ:
Թույլ տուր ինձ
ապրել Քո Սուրբ Սրտում:

Դու Իմ կողմից երբեք չես մերժվի: Ամեն անգամ, երբ դու գալիս ես Ինձ ստանալու, Իմ Սուրբ Սիրտը թրթռում է ուրախությունից: Ես Ինձ

չափազանց փոքրացրել եմ այս փոքր սպիտակ Նշխարի մեջ: Երբ դու ստանում ես Ինձ, դու ընդունում ես Ինձ, և այս ձևով ընդունելով Ինձ, դու ճանաչում ու ընդունում ես Ճշմարտությունը: Այսպիսով, Ես և դու մեկ ենք: Դու Հաղորդության մեջ ես Ինձ հետ: Ի՞նչ ավելի բերկրալի բան կա, քան Ինձ հետ՝ քո Աստծո հետ միասին լինելը: Ի՞նչը կարող է ավելի մաքուր ու սուրբ լինել, քան այս հանդիպումը: Ես՝ քո Աստվածը, հանդիպում եմ քեզ հետ, Իմ արարածի հետ: Ես՝ քո Փրկիչն եմ, իսկ դու՝ Իմ փրկյալը: Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ խենթանալու աստիճան, ինչպե՞ս կարող էին ձեզանից ոմանք կասկածել Իմ Սիրուն՝ պղծելով այս անբիծ ու սուրբ Սերը: Ինչպե՞ս կարող էին ձեզանից շատերը կասկածել Իմ Սուրբ Ներկայությանը Նշխարի մեջ:

Իմ Սուրբ Հաղորդությունը չպետք է թափել կամ վերաբերվել Նրան որպես ոչ սուրբ մի բանի: Եթե դուք լիովին հասկանայիք միայն, թե ես ձեզ ինչ եմ տալիս և Ում եք դուք ստանում ձեր մեջ, դուք անդադար կօրհնեիք Ինձ: Տե՛ս. անգամ Իմ Հրեշտակները, նայելով ձեզ վերևից՝ ցանկանում են այս Կերակուրը, որ դուք կարող եք ստանալ, բայց ոչ՝ նրանք: Սակայն ձեզանից շատերը, թվում է չեն ընկալում Դրա Լիակատարությունը:

Ես Սիրո Բանտարկյալն եմ ամեն մի խորանի ետևում, սպասելով և հուսալով, որ դուք կգաք: Ինձ մոտ եկեք բոլորդ, ովքեր դեռևս թափառում եք այս ամայության մեջ: Ինձ մոտ եկեք անբիծ ու մաքուր: Թող, որ Ես ցնծամ ձեզանով: Ուրեմն ավելի ուրախացրեք Իմ Սիրտը՝ ապաշխարելով և ճանաչելով ձեր մեղքերը: Մի՛ ասեք. «Ինչո՞ւ պետք է խոստովանեմ, ես ոչինչ չունեմ ասելու իմ խոստովանահորը»: Մի՛ եղիր նրանցից մեկը, որ կորցրել է մեղքի զգացումը: Դուք հեռու եք կատարելությունից, սակայն ձեզանից ոմանք իրենց այնպես են պահում, կարծես անբիծ են և հասել են կատարելության: Խոնա՛րհ եղեք, խոնա՛րհ եղեք: Դուք կարող եք հեշտությամբ հայտնաբերել ձեր մեղքերը, եթե դուք աղոթեք սրտի անկեղծությամբ և խնդրեք Ինձ, որ օգնեմ ձեզ գտնել դրանք:

Օրհնյալ լինեն նրանք, ովքեր հնազանդվում են Իմ Օրենքին և հետևում Իմ կանոններին: Մեծարե՛ք Իմ Սուրբ Խորհուրդները: Օրհնյալ լինեն բոլոր նրանք, ովքեր գալիս են Ինձ մոտ լի հավատով՝ ճաշակելու և ըմպելու Ինձ: Ես Սուրբ եմ, ուստի Ինձ հետ վարվեք Սրբությամբ, որպեսզի այդ Սուրբ պահին՝ ձեզ վրա տեղամ Իմ Շնորհները, որոնք կկենդանացնեն ձեր հոգին: Ես չեմ թաքցնում Իմ Հարստությունները, Ես տալիս եմ Դրանք ձրիաբար՝ նույնիսկ ձեզանից ամենահետինին:

Եկե՛ք, Ես այնքան փափագում եմ ձեզ հետ լինել: Ուստի մի՛ շտապեք և անհամբեր մի՛ եղեք ձեր աղոթքների մեջ. մի՛ արհամարհեք բարեպաշտությունը: Խորհրդածե՛ք և մտորեք Իմ պատվերի մասին: Թեև դուք չեք կարող տեսնել Ինձ, սակայն Ես ասում եմ ձեզ, որ Իմ Ձեռքը ձեզանից յուրաքանչյուրի վրա է՝ ձեզ օրհնելով, Իմ Շունչը թողնելով ձեզ վրա:

Միավորվե՛ք:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Լավ կլինի, որ ես տառապեմ,
որպեսզի ավելի լավ սովորեմ
քո կանոնները:[1]
Ես գիտեմ, որ Դու ինձ
տառապանք ես պատճառում
Սիրուց դրդված: Դու շռայլում ես
Քո Սերը իմ հանդեպ,
որովհետև Դու դարձրել ես ինձ
Քո զավակը: Ես գիտեմ, որ Դու
վարժեցնում ես նրանց,
ում սիրում ես:
Դու, Տե՛ր, սպառող Կրակ ես:

Իմ Վասուլա, ամեն անցնող օր քեզ ավելի է մոտեցնում Ինձ: Օր-օրի ես տալիս եմ քեզ Իմ Սիրո ապացույցները և այդ ես եմ, որ այս ձևով հայտնում եմ քեզ Ինքս Ինձ, սակայն ձեր սերունդը անհանգստացնում է քեզ: Այս սերնդի ժանտախտը կոչվում է բանապաշտություն, որը մահացու է: Բանայնականությունը գալիս է Խավարի Իշխանից, և բոլոր նրանք, ովքեր ապրում են Խավարի մեջ, այլ հիվանդությունների հետ մեկտեղ այս հիվանդությունը ունեն: Սակայն ամեն բան, որ գալիս է Ինձանից, գալիս է Լույսից, և երբ Ես իջնում եմ Իմ Ընտրած հոգիների մոտ, նրանց միջոցով լուսավորելու այս խավար աշխարհը, ուր դուք ապրում եք, Իմ Լույսը անհանգստացնում է բոլոր նրանց, ում գործերը չար են: Իմ Լույսը այնքան է անհանգստացնում նրանց, որ նրանք պատրաստ են սպանել, որովհետև նրանց չարությունը բացահայտվում է, և նրանց մերկությունը տեսանելի է դառնում բոլորի աչքերի առաջ: Նրանց վերաբերմունքը այնքան էլ չի տարբերվում Ադամի ու Եվայի վերաբերմունքից, ովքեր փորձում էին խուսափել և թաքնվել Ինձանից:

Այո՛, լույսի Իմ զավակ, դու պատկանում ես Ինձ և դրա համար էլ Խավարը քո թշնամին ու հալածիչն է: Խավարի որդիները մշտապես կհալածեն Իմ որդիներին: Իմ Լույսը անհանգստացնում է նրանց: Լույսի տարածման ժամը ձեր ազգերի վրա սարսափեցնում է այս մարդկանց, քանի որ նրանք իրենց ողջ կյանքը անց են կացրել չարիք հղանալով և բանայնականություն բուծելով: Լույսի ժամը անընդհատ տառապանք է այս խավար հոգիների համար, ովքեր հանգչում են գերեզմաններում, բայց Ես կցոլացնեմ Իմ Լույսը նրանց վրա: Իմ Լույսը կթափանցի այս Խավարից ներս, և Իմ Ջերմ Ճառագայթները կվերակենդանացնեն ամեն բան, որ քանդված ու ավերված է: Խավարն այլևս իր ստվերը չի ձգի ազգերի վրա: Իմ Լույսը կծաղկեցնի նրանց նուրբ բողբոջները, և Իմ Ճառագայթները կբացեն նրանց ծաղիկները և երկրի ոստերը կրկին կկանաչեն:

Երբեք մի՛ դադարիր աղոթելուց, զավակս: Սերը սիրում է քեզ հավիտենապես:

[1] Սաղմ. 119.71

Սեպտեմբերի 30, 1989

Քո Սիրով ես հավիտյան կհրճվեմ,
Իմ Հիսուս, օրվա բոլոր ժամերին
ես անվերջ կհռչակեմ
Քո Սերն ու Հավատարմությունը,
քանի որ Սերը ստեղծված է,
որ մնա հավիտյան
և ամուր արմատավորված
Երկնքում ու երկրի վրա:
Կգա ժամանակ, երբ ոչ ոք
չի կարողանա մերժել այս Սերը:

Զավակս, հենվի՛ր Ինձ վրա և թույլ տուր վայելել Իմ հանդեպ տածած քո սերը: Ա՜հ, աղջի՛կս... այն, ինչ Ես խնդրում եմ քեզանից՝ սեր է. գնահատի՛ր Իմ Սերը: Թող քո աղոթքները խնկարկության նման լինեն: Թող քո սիրտը խնկամանի վերափոխվի՝ գոհացնելով Ինձ, մեղմացնելով Իմ Արդարությունը և Իմ լավագույն բարեկամներից ստացած Վերքերը: Զգա՛ այն սերը, որ Ես ունեմ ձեր բոլորի հանդեպ: Հավատա՛ մանկան հավատով, երբեք մի՛ փորձիր այն բանական դարձնել, քանի որ այդպես անելով դու միայն կհեռացնես Մանկության-Քողը, որ ծածկում է քո աչքերը:

Իմ Խորհուրդները պետք է հարգվեն որպես Խորհուրդներ, և Իմ Ներկայությունը, որ քեզ տվել եմ այս ձևով, նույնպես Խորհուրդ է: Իմ ցանկությունն է, որ Ինձ տաս քո սրտում <u>ունեցած սիրո ամեն մի կաթիլը</u>, և Ես Իմ հերթին քո սիրտը <u>միշտ</u> կլցնեմ Իմ Սրտից: Այժմ մի որոշ ժամանակ կրիր Իմ Խաչը և թույլ տուր Ինձ հանգստանալ:

Ես ուզում եմ, որ Իմ զավակները իմանան, որ մեռցնելով ձեր զգացումները և ձեր մարմինը, Ես այդ ամենը օգտագործում եմ Իմ Երկնային Գործերի համար: Ես օգտագործում եմ ձեր զոհաբերությունները՝ հոգիները Քավարանից ազատելու համար: Ես ջերմացնում եմ սրտերը երկրի վրա, որ դարձի բերեմ նրանց: Ես մաքրագործում եմ ձեր հոգին: Այն ամենը, ինչ դուք տալիս եք Ինձ, օգտագործվում է փոխհատուցման համար: Դա մեղմացնում է Իմ Արդարությունը, որ չբռնկվի ու ձեզ չհարվածի: Այն մեղմացնում է Ինձ, այն մեղմացնում է Ինձ: Իմ Ողորմությունը Մեծ է:

(Ես զգացի դևի կատաղի հարձակումը ինձ վրա):

Մի՛ վախեցիր: Ես՝ Տերս, քեզ հետ եմ: Երբեք, մի վայրկյան անգամ, Ես քեզ մենակ չեմ թողնի: Սովորական բան է, որ դևը մոլեգնում է: Եթե իմանայիր, թե նա որքան է ատում նրանց, ում Ես առանձնահատուկ ձևով եմ սիրում: Ուստի հասկացիր, զավակս, թե ինչու է նա հարձակվում քեզ վրա: Սակայն Ես պահպանում եմ քեզ Իմ Թիկնոցի տակ: Ես նրան երբեք չեմ թողնի, որ դիպչի քեզ և դրա համար նա չափազանց չարացած թափանցում է այն հոգիների մեջ, ովքեր լսում են նրան՝ այդ զոհերին

դնելով քո ճանապարհին, որպեսզի հետապնդեն և հալածեն քեզ[1], և որպեսզի ստիպեն քեզ բոլորովին լռել: Սատանան, որպես զենք օգտագործելով այս մարդկանց, մտադիր է քեզ լռեցնել, որովհետև դու նման ես տների տանիքներից հնչող շեփորի բարձրաձայն ազդարարելով այն Ճշմարտությունը, որ քեզ տրված է Իմ ողջ Իշխանությամբ:

Զավակս, շարունակի՛ր ազդարարել, շարունակի՛ր աղաղակել քո ձայնի ամբողջ ուժգնությամբ: Եղիր Իմ Արձագանքը, քանի որ քո ձայնը Իմ Ձայնն է, դու խոսում ես Իմ Բերանից, ուրեմն շարունակիր աղաղակել: Ազգերին բարձրաձայն աղաղակիր Ճշմարտությունը: Դու չպետք է վախենաս: Բոլոր Իմ հալածիչները պետք է ցիրուցան լինեն, որովհետև իրականում նրանք Իմ հալածիչներն են և ոչ թե՝ քո: Կեղծիքը հետապնդում է Ճշմարտությանը, խավարը՝ Լույսին, բայց վերջում Ես՝ Տերս, պիտի հաղթեմ:

Ինձ մո՛տ մնա, փոքրիկ, նվիրվի՛ր Ինձ, թույլ տուր Ինձ մշտապես շնչել քո մեջ. հենարան եղիր Իմ Գլխի համար: Խաղաղություն քեզ: Ավելացրո՛ւ քո հավատը, դա ուրախացնում է Ինձ: Ե՛կ: Մենք, մեզ:

Այո՛, Հիսուս, մենք, մեզ:

Հոկտեմբերի 2, 1989

Հիսո՞ւս:

Ես եմ: Ե՛կ, զավակս, բռնիր Ձեռքս և մենք միասին կաշխատենք: Ես եմ Իմաստությունը, քո Ուսուցիչը, ուստի միայն Ինձանից կախում ունեցիր: Իմացած եղիր, որ ոչ ոք քեզ չի կարող տալ ավելի լավ գիտելիք, քան Ես, որ Տերն եմ: Լսի՛ր և գրի առ.

Արարչությո՛ւն: Հոգի՛: Դու, որ կարդում ես Ինձ, դու, որ լսում ես Ինձ, փառաբանի՛ր Ինձ, գովաբանի՛ր Ինձ: Փառաբանի՛ր Ինձ առավոտից երեկո, փառաբանի՛ր և գովերգիր Ինձ անդադար: Հատուցի՛ր նրանց համար, ովքեր երբեք չեն փառաբանում և ոչ էլ՝ փառաւորում: Օրհնի՛ր Ինձ, պաշտի՛ր Ինձ և տենչա Ինձ: Քեզ ոչ ոք չի՞ պատմել Երեք Երիտասարդների Օրհներգության մասին[2]: Ուրեմն սովորիր այն և պատմիր այն ազգերի մեջ: Ճշմարտության Հոգին ձեր բոլորի հետ է: Իմ փոքրիկ զավակներ, Ես կհիշեցնեմ ձեզ, որ Ես Աստված եմ, որին դուք գալիս եք հանդիպելու և աղոթելու: Եվ քանի որ Ես կենդանի Աստված եմ, Ես զգում եմ, երբ դուք Ինձ մոտ եք գալիս աղոթելով միայն շուրթերով: Ես ուզում եմ, որ դուք փափագե՛ք Ինձ, փափագե՛ք Ինձ, փափագե՛ք Ինձ, ծարավե՛ք Ինձ, փնտրեք Ինձ մեծ տենչանքով: Ինձանից բացի ուրիշ ոչ մի փափագ մի՛ ունեցեք: Փափագե՛ք անընդհատ կապի մեջ լինել Ինձ հետ, փափագե՛ք հաճեցնել Ինձ, փափագե՛ք զգալ ու լսել Ինձ, փափագե՛ք Իմ Ներկայությունը, թող ոչ մի բան այս աշխարհում չխաբի

[1] Սա Ինձ հիշեցրեց իմ տեսիլքը: Հունվ. 29, 1989:
[2] Գտնվում է Դան. 3:52-90:

ձեզ, քանի որ, եթե աշխարհը ատում է ձեզ, հիշե՛ք, որ այն ձեզանից առաջ Ինձ ատեց:

Ինձ առաջինը դասեք: Մի՛ խոցեք Իմ Սուրբ Սիրտը՝ անտեսելով Ինձ: Իմ կողքին դուք կզգաք Իմ Սերը, Իմ Խաղաղությունը, և այս ներդաշնակությունը, որ Ես ունեմ Երկնքում Իմ Հրեշտակների հետ, կարող է լինել նաև ձերը, եթե դուք ավելի մոտենաք Ինձ: Ես ձեզ բոլորիդ սիրում եմ հավիտենական սիրով, մի սիրով, որ դուք չեք կարող հասկանալ երկրի վրա: Եկե՛ք և եթե կամենում եք, Ես ձեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ: Ես հանդիսավորությամբ ձեզ ասում եմ, որ ամեն ոք, ով ապրում է Սիրո մեջ, ապրում է Իմ մեջ՝ ձեր Աստծո մեջ, և Ես էլ ապրում եմ նրա մեջ:

Արթնացե՛ք ձեր քնից, արթնացե՛ք ձեր նիրհից և մի՛ խաբեք ձեզ՝ ասելով. «Բայց ես սիրում եմ Տիրոջը, և Նա գիտի այդ: Ես միշտ սիրել եմ Նրան, ուրեմն իմ խիղճը մաքուր է»: Այսօր Ես ասում եմ ձեզ, որ վերադառնաք դեպի Ինձ: Եթե դուք հարցնեք. «Բայց ինչպե՞ս վերադառնանք», Ես կասեմ ձեզ՝ դարձի գալով: Եթե դուք ասեք. «Սակայն մենք դարձի եկել ենք, ինչպե՞ս կարող ենք դարձի գալ», այդ դեպքում Ես ձեզ կասեմ՝ Ինձ բաղձալով, Ինձ ծարավելով: Փնտրե՛ք Ինձ՝ Սրբին: Եկե՛ք և պաշտեք Ինձ: Թող Ես լինեմ ձեր բաժինը՝ ձեր Սուրբը: Թող Իմ Ներկայության մեջ ձեր աչքերը սիրո առատ արտասուք թափեն:

Զգո՛ն եղեք, զգո՛ն եղեք: Եթե դուք գիտենայիք, թե որքան տագնապալի է չիմանալ ձեր մեղքերի պատճառը, չզգալ ձեր մեղքերը և կորցնել զգացողությունը այն բանի, թե որն է բարի և որը՝ չար: Դիմադրե՛ք սատանայի հնարքներին, արթուն եղեք աղոթքների մեջ, անդադար աղոթեք Ինձ: Աղոթե՛ք առանց դադարի: Թող Ես զգամ, որ դուք անընդատ տենչում եք Ինձ, անդադար աղոթեք: Սրտաբուխ աղոթքը՝ Աստծո Ցանկությունն է: Իմ սիրելիններ, եթե դուք ուզում եք աճել Իմ Սիրո մեջ, ապա վերջ տվեք ձեր նիրհին և շուրթերով ասված աղոթքին: Անընդհատ աղոթքի մեջ լինել, նշանակում է տենչալ ձեր Տիրոջը: Փորձե՛ք հասկանալ Իմ Պատգամը: Փափագե՛ք Ինձ ուրախությամբ, փափագե՛ք Ինձ ձեր սրտով և ոչ թե՝ ձեր շուրթերով: Թող Ես լսեմ, որ աղաղակում եք «Աբբա»: Ուստի, կրկին եկեք Ինձ մոտ, որպես փոքրիկ երեխաներ, վերադարձե՛ք Ինձ մոտ և սրտով խնդրեք Ինձ, սրտով փնտրեք Ինձ: Եկե՛ք Ինձ մոտ՝ տալով Ինձ ձեր սիրտը: Նվիրումը կզարդարի ձեր հոգին: Մի՛ շեղվեք Ճշմարտությունից, քանի որ Ճշմարտությունը Սեր է: Ուրեմն, Ինձ մոտ եկեք Սիրով լեցուն՝ վերցնելով Իմ Սրտից: Եղե՛ք Ճշմարտության մեջ, ապրե՛ք Ճշմարտության մեջ՝ անդադար Ինձ տենչալով: Արեք այս ամենը, որպեսզի կարողանաք ապրել:

Այս վերջին օրերին Ես հեղում եմ Շնորհի Իմ Հոգին ամբողջ մարդկության վրա: Դուք չե՞ք նկատել, որ Ես տալիս եմ անգամ ամենահետինին: Շնորհի Իմ Հոգին հեղվում է ձեր սերնդի վրա, որպեսզի սովորեցնի ձեզ սիրել Ինձ: Ես գալիս եմ որպես Իմ Խոսքի Հիշեցնողը: Ես գալիս եմ լուսավորելու այս խավարը Իմ Լույսով: Ես գալիս եմ զգուշացնելու ձեզ և արթնացնելու ձեզ՝ ձեր խոր քնից: Ես չեմ գալիս բարկությամբ: Ես գալիս եմ Սիրով, Խաղաղությամբ ու Ողորմությամբ, որպեսզի հանեմ ձեր ազգերի մահվան պատանքը: Ես գալիս եմ

հիշեցնելու ձեզ, որ Ես Սուրբ եմ, և որ դուք սուրբ պետք է ապրեք: Ես գալիս եմ հիշեցնելու և սովորեցնելու ձեզ, թե ինչպես աղոթել: Ես տվել եմ ձեզ ամեն բան, որպեսզի ձեր հոգին բարձրացնեմ դեպի Ինձ և Իմ Թագավորությանը բաժնեկից դարձնեմ:

Ես գալիս եմ ձեզ մոտ, որպես մի Մուրացկան, աղերսելով ձեզ: Ես գալիս եմ ձեզ մոտ որպես Իմաստություն՝ ձեզ կրկին ուսուցանելով Սրբության Գիտությունը: Ես այնքան ջերմորեն առաջարկում եմ ձեզ Իմ Սիրտը, այնքան խոնարհաբար Ես ձեզ եմ մատուցում Ինքս Ինձ ամեն օր, որպես հանապազօրյա Հաց: Ես ձեզ Սնունդ եմ տալիս, որ ճաշակեք ձեր սրտի ուզածի չափ, մինչև որ հագենաք: Ուրեմն, եկե՛ք Ինձ մոտ, վերադարձե՛ք Ինձ մոտ և փառավորեք Ինձ՝ ձեր Աստծուն:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ թողնելով Սիրո Իմ Հառաչանքը ձեր ճակատին: Սերը սիրում է ձեզ բոլորիդ: Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 5, 1989

Իմ Հիսո՞ւս:

Ես եմ: Խաղաղություն քեզ, զավակս: Մենք աշխատելու ենք միասին: Կարդա՛ Իմ Խոսքը[1], ապա գրիր այն:

(Ես բաց արեցի Հովհ. 10.14-16):

Գրի՛ր. «Ես եմ Բարի Հովիվը: Ես ճանաչում եմ յուրայիններիս, և յուրայիններս էլ ճանաչում են Ինձ: Ինչպես Հայրն է Ինձ ճանաչում, Ես էլ Հորն եմ ճանաչում և Իմ Կյանքը կտամ Իմ ոչխարների համար: Ուրիշ ոչխարներ էլ ունեմ, որոնք այս Փարախից չեն. և Ես նրանց նույնպես պետք է առաջնորդեմ: Նրանք ևս պիտի լսեն Իմ Ձայնը. և պիտի լինի մեկ հոտ և մեկ Հովիվ»: Դրանով երկիրը լուսաշող պիտի դառնա: Ես մաքրություն և խաղաղություն կտարածեմ, ու երկիրը, ինչպես մի ժամանակ նախկինում, կաճի թարմությամբ:

(Ես վեր կացա և համբուրեցի Հիսուսի աջ այտը: Ես համբուրեցի Իմ առջևում դրված Սուրբ Սրտի արձանը: Իմ սրտով ես տեսա Հիսուսին՝ նստած Իմ կողքին և, համբուրելուց անմիջապես հետո, Նա բարձրացրեց Իր ձեռքը շոշափելու համար Իր Այտը, ճիշտ այն տեղում, ուր ես համբուրեցի Նրան: Նա նման էր մի Երջանիկ Երեխայի: Հիսուս խնդրեց, որ ես գրի առնեմ այս դրվագը):

Սիրելիս, սա նրա համար էր, որ քեզ ցույց տամ, թե Ես ինչպես եմ զգում ամեն բան: Ե՛կ, զավակս, թող որ միասին լինենք, թող որ անբաժան լինենք:

[1] Հիսուս նկատի ուներ Սուրբ Գիրքը:

Հոկտեմբերի 7, 1989

(Torino (Թուրին) – կիրակի)

Խաղաղություն քեզ: Կրկնի՛ր Ինձ հետ.
«Հիսո՛ւս, ես սիրում եմ Քեզ: Հիսո՛ւս, ներիր իմ մեղքերը: Հիսո՛ւս, ազատիր ինձ իմ կասկածներից: Հիսո՛ւս, թույլ մի՛ տուր չարին, որ ինձ մոտենա»:

(Մեր Սուրբ Մայրը)

Ծաղի՛կս, սիրելով Հիսուսին՝ դու հանգստացնում ես Նրա Վերքերը: Սերը սիրում է քեզ:

Հոկտեմբերի 8, 1989

(Torino (Թուրին) – կիրակի)

(Ես այցելեցի Սուրբ Վարշամակի Եկեղեցին: Աղոթելուց և Հիսուսի հետ խոսելուց հետո, մենք դուրս եկանք, և ես մի անսահման ուրախություն զգացի իմ մեջ: Ես փառաբանեցի Տիրոջը Իր Մեծ Սերը ինձ ցույց տալու համար՝ Սեր, որ ես երբեք չէի զգացել բոլոր այդ անցած տարիներին: Հենց այդ պահին ինձ պարուրեց խունկի ուժեղ մի բուրմունք: Իմ ուրախությունը կրկնապատկվեց Իր նշանի համար:
Մենք քայլեցինք դեպի Սան Դոմինիկո Եկեղեցին, որտեղ երկու տարի առաջ իմ զարմիկը տեսավ մեր Սուրբ Մոր տեսիլքը եկեղեցու դռան վերևում, որ մեզ ներս էր կանչում, քանի որ Տիրամոր տոնն էր, և մենք չգիտեինք այդ մասին: Մենք եկել էինք պատարագից առաջ, դրա համար Ես նստած աղոթում էի Հիսուսին: Ես խոսում էի Նրա հետ ֆրանսերեն: Անդրադառնալով դրան՝ ես Նրան ասացի անգլերեն. «Ինչո՞ւ եմ ես ֆրանսերեն խոսում քեզ հետ: Ես Քեզ հետ կխոսեմ անգլերեն»: Անմիջապես Հիսուսն ասաց ինձ. «Ես կգերադասեի, որ դու խոսեիր Ինձ հետ քո սրտով», և Նա ինձ ողողեց խունկի բույրով:)

Հոկտեմբերի 9, 1989

Խաղաղություն քեզ: Աղոթի՛ր նրանց համար, ովքեր դիշերով դեռ փորձում են ոչնչացնել Իմ Խաղողի Այգին: Աղոթի՛ր, Իմ Վասուլա, որ այս հոգիների հանդեպ Իմ բարկությունը նվազի: Ես Վերքեր եմ ստացել այս սերնդի այն բոլոր հանցագործությունների պատճառով, որոնք բորբոքում են Իմ Հոր Արդարությունը: Երբ Նա տեսնում է, թե նրանք ինչպես են վերաբերվում (մեղքերի) Իմ Թողությանը և տեսնում ծեծված, խարազանված ու պատառոտված Իմ Մարմինը, Նրա մղումը մեծանում է ցիրուցան անելու ազգերն ու նրանց վերածելու փոշու մի կույտի: Անգամ Իմ հրեշտակներն են դողում ի տես այն ամենի, ինչ կարող է կատարվել

ողջ երկրի վրա: Իմ Աբբան մեղմանում է այն մի քանի հոգիների պատճառով միայն, ովքեր զոհաբերվում են և սիրում են Ինձ:

Ա՜խ, Վասուլա, Իմ Ցավերը մեծ են: Փոքրիկ հոգի, Ես սիրում եմ քեզ բուռն սիրով: Ես հղկում ու մաքրագործում եմ վեհանձն հոգիներին. այն հոգիներին, որոնք հոժար են քավել և փոխհատուցել ուրիշների համար: Ես կարիք ունեմ զոհաբերվող հոգիների, որ դառնան սիրո զոհեր, Իմ Զարչարանքի զոհերը, զոհե՛ր, որոնք մեռցնում են իրենց «Ես»-ը, զոհե՛ր, որոնք հոժար են կիսել Իմ Խաչը: Ես կարիք ունեմ վեհանձն հոգիների, որոնք հոժար են, որ Իմ Սեփական Ձեռքով ձևավորվեն ու դառնան խաչելության կենդանի պատկերներ: Ուրիշ ինչպե՞ս Ես կարող էի ետ պահել Իմ Հոր Ձեռքը ձեզ հարվածելուց:

Աշխարհը պետք է փոխվի, դարձի գա և սրբությամբ ապրի: Ես այլևս թույլ չեմ տա, որ Իմ Սուրբ Անունը պղծվի: Իմ Զարչարանքը կրկնվում է Իմ Խորհրդավոր Մարմնի մեջ, և Ես տանջվում եմ այնքան, որքան տանջվել էի Իմ Զարչարանքի ժամանակ: Աղջի՛կս, Ես կրկին ու կրկին անցնում եմ Գողգոթայի Ճանապարհը, ամեն ժամ Ես վերստին խաչվում եմ: Ե՛ս, որ Սերն Եմ, մի՞թե արժանի եմ այս ամենին:

Տե՛ր Հիսուս, փչի՛ր մեզ վրա, որ դառնանք սիրո զոհեր և կարողանանք փոխհատուցել ուրիշների համար:

Հարազա՛տս, դու կարող ես հանգստացնել Ինձ քո սիրով: Սիրի՛ր Ինձ և փոխհատուցիր, ծոմ պահիր և զոհողություն արա. բոլոր այս բաները զսպում են Իմ Հոր ցասումը: Վասո՛ւլա, թույլ տուր Ինձ լցնել քեզ, թույլ տուր գործածել քեզ: Ա՜խ աղջիկս... քո արտասուքները սփոփում են Ինձ: Ծաղի՛կս, թող քո արտասուքները լուծվեն Իմ Արտասուքների մեջ և մեկ լինեն: Երբ Հայրը տեսնի քո արտասուքները Իմ Արտասուքների մեջ, Նա կմեղմանա: Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: Ես օրհնում եմ բոլոր այն սուրբ իրերը, որ դու ունես քո տան մեջ[1]: Կրկնիր դա[2]:

Օ՜, ես որքան եմ ուզում սփոփել Քեզ:

Ա՜հ, Վասուլա, դու արդեն սփոփում ես Ինձ, երբ ցանկանում ես Ինձ սփոփել: Ես ստեղծել եմ քեզ, որ միխիթարես Ինձ: Ես ստեղծել եմ քեզ, որ հանգստացնես Ինձ, սիրես Ինձ և կիսես Ինձ հետ Իմ տառապանքները: Հիշի՛ր, Ես շուտով քեզ հետ եմ լինելու:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 10, 1989

Այսօր իմ հոգին կարոտում է Քեզ:
Ես տվել եմ Քեզիմ սիրտն ու հոգին,

[1] Ես ասացի Հիսուսին. «Օ՜, որքան եմ ուզում սփոփել Քեզ»:
[2] Հիսուս անակնկալի եկած, գոչեց. « Կրկնի՛ր սա»: Ես զգացի, որ Իր Սուրբ Սիրտը ուրախությունից թրթռաց:

որ վերակերտես:
Իմ Տերը եկավ ինձ մոտ
Իր ողջ շքեղությամբ և վեհությամբ,
որպեսզի բարձրացնի
իմ հոգին Իր մոտ՝ ցույց տալու ինձ
Իր Մեծ Սերն ու Ողորմությունը:
Նա ինձ քնքշությամբ բարձրացրեց՝
ազդարարելու համար բոլոր ազգերին
Իր անսահման
Սերն ու Ողորմածությունը:
Նրա Սերը հավիտենական է:

Սիրելի՛ս, փոքր մնա, որպեսզի հեշտությամբ կարողանաս թափանցել Իմ Սուրբ Սրտի մեջ: Սերը սիրում է քեզ: Լսի՛ր և գրիր.

Խաղաղություն ձեզ բոլորիդ: Ես Խաղաղություն եմ, Ես Սեր եմ: Ես գալիս եմ ձեր ժողովրդի մոտ Իմ անսահման Ողորմածությունից դրդված՝ ձեր երկրում ևս տարածելու Իմ Խաղողի Այգին, որպեսզի նրա Այգիները բավարար պտուղ տան ձեր մեռնող ժողովրդին կերակրելու համար: Իմ Աստվածային Գործերը ծավալվում են այս հողագնդով մեկ, և Դրանք բոլորը բարի են, քանի որ յուրաքանչյուր կարիք բավարարում են իր ժամանակին: Լսե՛ք Իմ Ձայնը, բարեպաշտ զավակներ, և ծաղկե՛ք, ինչպես ծաղիկներն են ծաղկում, երբ գարուն է գալիս: Ծաղկե՛ք ձեզ վրա սփռված Մաքուր Լույսի Իմ Ճառագայթներից:

Ես օրհնություններով եմ լցնում ձեր ժողովրդի խավարը: Ես ցանկանում եմ բժշկել ձեր խեղճ հոգին: Ես ուզում եմ հանգստացնել ձեր հոգնած հոգին, ուստի ձեզ նետեք իմ Բաց Բազուկների մեջ: Ես ձեր Փրկիչն եմ, որը կանչում է ձեզ, որ դառնաք դեպի Ինձ: Տեսնո՞ւմ եք, զավակներս, անտարբերության ոգին ծածկել է շատ ազգերի՝ նրանցից շատերին թողնելով խոր քնի մեջ, և Ես վերևից դիտում եմ այս ամենը տառապանքով ու ցավով: Այսօր, Ես՝ Տերս, փնտրում եմ ձեր սիրտը, քանի որ այն, ինչի կարիքը Ես ունեմ, սերն է՝ փոխադարձ սերը:

Եկե՛ք, եկեք Ինձ մոտ միամիտ սրտով, ինչպես մանուկն է իր հորը մոտենում վստահությամբ: Դուք ևս եկեք Ինձ մոտ՝ ցույց տալով Ինձ ձեր թուլությունը և պատմելով Ինձ ձեր խնդիրները: Թող ձեր Երկնավոր Հայրը լսի ձեզ...

Ես Սեր եմ, Սիրո Վսեմ Աղբյուրը, ով ծարավի է փոխադարձ սիրո: Մի՛ մերժեք Իմ Աղերսը: Մերժե՛ք ձեզ շրջապատող գայթակղությունները, զավակս: Մերժե՛ք Սատանային հենակետ տալ: Եթե դուք միայն գիտենայիք, թե որքան մոտ եմ Ես ձեզ և որքան եմ ցանկանում բարձրացնել ձեր հոգին դեպի Ինձ ու վարժեցնել ձեզ ճշմարիտ Կերակրի:

Փորձե՛ք հասկանալ Ինձ, փորձե՛ք ըմբռնել Իմ Կամքը: Ձեր այստեղ լինելը ձեր հետաքրքրությունը բավարարելու համար չլինի միայն, այլ սովորելու: Ընդլայնե՛ք ձեր սրտերը միայն Ինձ համար, որպեսզի Ինձ թույլ տաք, ձեր մեջ հաստատելու Իմ Տունը: Մի՛ խեղդեք Իմ Հոգին ձեր մեջ՝ անբարոյականությամբ, բանայնականությամբ, եսասիրությամբ ու այլ մեղքերով: Մի՛ խեղդեք Ինձ. թողե՛ք Իմ Հոգին շնչի ձեր մեջ և բարձրացրեք ձեր աչքերը դեպի Երկինք և աղոթեք լռության մեջ, ինչպես Ես էի աղոթում Իմ Հորը:

Սրտա՛նց աղոթեք... և Նա կլսի ձեզ:

Աղոթե՛ք սիրով... և Նա չի մերժի ձեզ:

Աղոթե՛ք Հավատով... և Նա չի մերժի ձեր խնդրանքը:

Ամեն բան, որ անում եք, արեք սիրով՝ Սիրո համար, և Ես լուռ չեմ մնա, անտարբեր ու անպատասխան ձեր խնդրանքին, քանի որ Ես լի եմ Ողորմությամբ ու Քնքշությամբ:

Ես եմ Բարի Հովիվը, որ խճաքարերի մեջ Իմ գառներին ու ոչխարներին եմ որոնում: Ես գալիս եմ փնտրելու ձեզ՝ Սիրտս Ափիս մեջ, Այն ձեզ առաջարկելու համար: Ես գալիս եմ փնտրելու ձեզ ձեր աղքատության մեջ՝ հիշեցնելու համար նորից, որ դուք անհայր չեք, և որ դուք բոլորդ Ինձ եք պատկանում: Ես գալիս եմ հիշեցնելու քեզ, որ քեզ համար Իմ Հոր Տանը օթևան կա, զավակս[1]. օթևան, որը պատկանում է քեզ... Իմ Հոգին փափագում է քեզ... Իմ Հոգին ամեն անգամ անպատմելի կսկիծ է ապրում, երբ օթևաններից մեկը դատարկ է մնում հավիտենապես: Ես՝ Տերս, Իմ Ձեռքերի մեջ[2] Երկինքն եմ բերում ձեզ որպես նվեր՝ առաջարկելու Այն ձեզ, սակայն Իմ թշնամին արգելում է, որ Այն ստանաք:

Նա բազմիցս օգտագործում է խղճուկ հոգիներին՝ լռեցնելու համար Իմ Ձայնը՝ կշտամբելով Իմ Սուրբ Հոգու Շնորհները, դրանով իսկ ծանր վերքեր հասցնելով Իմ Մարմնին: Թաքնվելով Մութ Ամպի ետևում, այս հոգիները վերածվում են Ձարության և Սնապարծության Վարդապետների՝ մերժելով Իմ Ճանապարհները: Այս մարդիկ ծանրորեն ճնշում են Իմ Սիրտը: ,Առանց երկյուղի, դատարկ ու ձեռնունայն Նրանք գալիս են Ինձ մոտ: Նրանք ծաղրում են Խոստումը: Նրանք կրկին Իմ աջ Ձեռքում եղեգ են դնում՝ ծաղր ու ծանակի ենթարկելով Ինձ, ապա վերցնում այն Իմ Ձեռքից՝ դրանով Իմ Գլխին հարվածելու համար: Այնուհետև նրանք ծնկի են գալիս՝ իրենց հարգանքը Ինձ հավատելու համար, որպեսզի եկեղեցուց դուրս գտնվող մարդիկ լավ արտահայտվեն իրենց մասին: Այս ամբարիշտները ամեն օր կրկին խաչում են Ինձ: Նրանք կրկին ու կրկին քարշ են տալիս Ինձ դեպի Գողգոթա: Նրանք ատում են Ինձ առանց որևէ պատճառի: Ա՜խ, զավակներս...

Այս մարդիկ Իմ և Իմ Մոր Աչքերը վերածել են արցունքի հավերժահոս աղբյուրների: Լսե՛ք Աղաղակս Իմ Խաչից, քանի որ մարդկանց անհամար բազմություններ մշտապես ընկնում են Հավիտենական կրակի մեջ: Լսե՛ք Հոգուս, որ կյանք է բերում:

Ձեր ազգերը կարծրասիրտ են դարձել և թողել են Գիտության աղբյուրը: Ձեր աչքերը շրջեք դեպի Ինձ: Բարձրացրե՛ք ձեր գլուխը դեպի Ինձ: Եկե՛ք և կլանեք Իմ Լույսը: Թույլ տվեք Ինձ հեռացնել ձեր ազգերին փաթաթված պատանքը: Ես ձեր Հոգու և ձեր սրտի Պահապանն եմ, որն աղերսում է ձեզ սիրո վերադարձի համար, սեր՝ առանց շահախնդրության: Սպանեք ձեր «ես»-ը և թույլ տվեք, որ Հոգին ղեկավարի ձեր սիրտը, և Հոգին կառաջնորդի ձեզ դեպի Ճշմարտությունը, և դուք կճանաչեք Ինձ: Լսե՛ք Իմ Ձայնը, Իմ Հոգու

[1] Հիսուս շատ հուզված ասաց այդ:

[2] Ես մի ներքին տեսիլքով տեսա Հիսուսին Իր Ձեռքում բռնած մի շողշողուն և լուսավոր գունդ, հիշեցնելով Ինձ Սուրբ Միքայել Հրեշտակապետի պայծառությունը:

Ձայնը: Ավելացրե՛ք ձեր աղոթքները և սուրբ ապրեք: Սո՛ւրբ եղեք, քանի որ Ես Սուրբ եմ:

Եթե այսօր Իմ Տունը ավերված է, և անաստվածությունը իշխում է այդքան շատ հոգիներում[1], դա նրանից է, որ ձեր սերունդը մերժում է Ինձ տեղ տալ իր սրտում: Ես գալիս եմ և չեմ գտնում ո՛չ սեր, ո՛չ հավատ, ո՛չ հույս: Իմ Տունը ավերված է, վերածված փլատակների՝ բանայնականությամբ, անհնազանդությամբ և սնափառությամբ: Անցյալի Իմ փառահեղ արոտավայրերը անբերրի են այժմ Մեծ Ուրացության պատճառով, որը թափանցել է Իմ սրբարանը:

Հնազանդություն չկա: Ես հովվի Իմ ցուպը տվել եմ բացառապես Պետրոսին՝ առաջնորդելու համար Իմ գառներին, մինչև Իմ Վերադարձը: Սակայն իրենց չարությամբ և իրենց անձնական շահերի համար և ոչ թե Իմ, նրանք կոտրել են հովվի Իմ ցուպը երկու մասի, իսկ հետո՝ մանր կտորների: Եղբայրակցությունը խզվել է, հավատարմությունը՝ խորտակվել է և Իմ Հոտի գառներն ու ոչխարները մեծ քանակությամբ ընկել մեռել են Սիրո, Խաղաղության ու Միասնության ցամաքած աղբյուրների մոտ, որոնք մի ինչ որ ժամանակ եղել են հոսող աղբյուրներ: Այս հովիվներից, ովքեր մեջքով դարձել են դեպի Պետրոսը, Իմ խնդրածն այն է, որ խոնարհեն իրենց գլուխը և ընդունեն իրենց Սխալը: Ես ուզում եմ, որ նրանք հասնեն հանգստի այն վայրը, որ Ես պատրաստել եմ նրանց համար: Ես չեմ ուզում, որ նրանք աստղերի նման մեկը մյուսի հետևից ընկնեն: Եթե միայն նրանք լսեին, թե Հոգին ինչ է ասում իրենց այսօր: Ես չեմ հիշեցնի նրանց իրենց ուրացության մասին, ոչ էլ այն Վերքերը, որ նրանք հասցնում են Ինձ:

Աղոթե՛ք այս քահանաների համար: Իմ Սերը Մեծ է նրանց հանդեպ, սակայն մեծ են նաև այն դառնությունները, որ նրանք այսօր պատճառում են Ինձ: Աղոթե՛ք, որ նրանք կարողանան խոնարհվել և լվանալ միմյանց ոտքերը խոնարհությամբ ու սիրով:

Ես՝ ձեր Տեր Հիսուս Քրիստոսը, թողնում եմ Սիրո Իմ Հառաչանքները ձեր ճակատին և Մեծ Սիրով Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին միավորվելու և մեկ լինելու, ինչպես Սուրբ Երրորդությունն է Մեկ և համազո: Դուք նույնպես մեկ եղեք Իմ Սուրբ Անվան ներքո:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբեր 12, 1989

Տե՛ր շնորհակալ եմ ինձ փրկելու համար: Ես սիրում և պաշտում եմ Քեզ և միմիայն Քեզ, Աստված իմ:

Ա՜խ, թող որ հաճախ Ես լսեմ Այս, թող որ քո սիրտը խոսի Ինձ հետ: Ե՛կ և խոկա Իմ մասին, խոկա Նրա մասին ով Ճանապարհն է, Ճշմարտությունը և Կյանքը: Եկ հայեցողական պաշտամունքի, քանի որ դա Ինձ դուր է գալիս: Ես և դու, դու և Ես, դեմ առ դեմ՝ լիակատար

[1] Հիսուսն այս ասելիս շատ տխուր էր:

լռության մեջ. Ես՝ հայտնելով Իմ Գեղեցկությունը քեզ, և դու փառաբանելով Ինձ:

Իմացի՛ր, որ Իմ Սիրտը թախծում է յուրաքանչյուր Հոգու համար: Ես այժմ քեզ վերադարձրել եմ Ինձ մոտ, բայց դեռ որքան շատ Հոգիների Ես պիտի վերադարձնեմ դեպի Ինձ:

Եկ և հանգստացիր Իմ Սրտում և թույլ տուր Ինձ հանգստանալ քո սրտում: Սերը սիրում է քեզ:

Տե՛ր, որքան եմ ես Քեզ սիրում:
Որքան եմ Ես Քեզ ցանկանում:
Որքան ծարավի եմ Քեզ:
Ես որքան կարիք ունեմ Քեզ:

Վերջապես դու ազատ ես[1]:

(Այստեղ ես ուրախությունից ճչացի):

Հոկտեմբերի 17, 1989

(Հունաստան – Հռոդոս)

Տե՞ր իմ:

Ես եմ: Հիշի՛ր, թե ով է առաջնորդում քեզ: Համընթաց եղիր Ինձ հետ: Մշտապես սրտանց խնդրիր և կտրվի քեզ: Քո սրտից բխող աղոթքները Իմ Ականջներում քաղցր երաժշտության նման են հնչում:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 22, 1989

(Այդ մի շաբաթը, որ ես Հռոդոսում էի, այս պատգամներին հետևող մարդիկ ինչ-որ ձևով երկու աղոթաժողով կազմակերպեցին տեղի Կաթոլիկ և Ուղղափառ քահանաների հետ: Կարելի է ասել, որ Սուրբ Ֆրանցիսկը և Պադրե Պիոն Սուրբ Վասիլիի հետ միասին՝ Մշտական Օգնության մեր Մոր առաջնորդությամբ, կազմակերպեցին այս անակնկալ ժողովները: Մեկը տեղի ունեցավ Սուրբ Ֆրանցիսկ Եկեղեցում, իսկ մյուսը՝ Անալիպսիսի Հունական Ուղղափառ Եկեղեցում):

Հայրի՞կ: Ես աղաղակեցի, ինչպես Դու խնդրել էիր ինձ անել Սեպտեմբերի 30-ի պատգամում: Ես աղաղակեցի Ճշմարտությունը:

Լսի՛ր, զավակս, մի՛ շփոթվիր, քանի որ Ես Բարձրյալն եմ և Իմ Խոսքը վերևից է իջնում ձեզ մոտ: Ես գալիս եմ վերակենդանացնելու Իմ

[1] Հիսուսն այս ասաց մեծ ուրախությամբ:

Եկեղեցին: Միշտ հիշիր սա. ո՛չ մի զորություն, կամ բարձրություն, կամ խորություն երբեք չեն կարող կործանել Իմ Եկեղեցին: Իմ Եկեղեցին կրկին կվերականգնվի Իմ կողմից: Իմ Վասուլա, դու ոչինչ ես, բոլորովին ոչինչ, բայց և այնպես Ես կարող եմ գործածել քեզ: Իմ Հոգին կարող է խոսել և գործել քո մեջ՝ մթագնելով այն, ինչ «դու» ես: Իմ Հոգին քո մեջ չպետք է հանդիպի որևէ մրցակցի: Մի՛ վախեցիր, եթե անգամ Իմ Հոգին հանդիպի որևէ մրցակցի, Ես վստահաբար կոչնչացնեմ այդ մրցակցին:

Անձնատուր եղիր Ինձ ամեն օր, պատրաստ եղիր կատարել Իմ Կամքը, իսկ մնացածը թող Ինձ՝ քո Աստծուն:

Հոկտեմբերի 23, 1989

Տե՞ր:

Ես եմ: Երբեք մի՛ կասկածիր: Ինչպես եմ քեզ սիրում: Իմ հանդեպ այս փոքր հավատը նման է մի ծաղկեփնջի, որ դու ամեն օր առաջարկում ես Ինձ: Ես այն ընդունում եմ այս ձևով[1]: Փոքրի՛կս, Ինձ ոչինչ մի՛ մերժիր, հապաղի՛ր բարկանալիս, այնպես, ինչպես Ես՝ քո Աստվածը: Արագ եղիր միայն բարիք գործելիս. հավատարիմ եղիր Ինձ: Իմ Հոգու սիրելին, դու, որ կամեցար տալ Ինձ քո կամքը, քո հոգին և քո սիրտը, մի՛ վախեցիր, քանի որ դու քո Հոր Ձեռքերում ես, և ի՞նչ կա ավելի հրաշալի, քան միմյանց կապված լինելը: Ինձ ոչինչ մի՛ մերժիր: Բոլորովին աննկատելի դարձիր, որպեսզի Ես երևամ ամբողջապես: Փոքր մնա, որպեսզի Իմ Զորությունը գրավի քո ամեն մի մասը: Սպանի՛ր քո անձը ամեն օր և եղիր ոչինչ, որպեսզի Ես կարողանամ լինել ամեն ինչ:

Հավատա՛ Ինձ Մանկան-Հավատով, որպեսզի Ես փառավորվեմ այս ձևով և գործածեմ քեզ, երբ ցանկանամ: Այն, ինչ Ես խնդրում եմ քեզնից՝ սեր է, սեր, սեր: Այն ամենը, ինչ դու անում ես սիրով Իմ Անունից, փառավորում է Ինձ և մաքրագործում է քեզ: Ավետարանի՛ր սիրով Սիրո համար: Ամեն օր մտիր Իմ Սուրբ Սրտի մեջ և թույլ տուր Ինձ հանգստանալ քո սրտում: Մնա՛ խաղաղության մեջ, քանի որ Ես եմ Խաղաղությունը: Ես խոստանում եմ, որ ամեն օր Ես քեզ կտամ Իմ Հացը: Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ և այժմ բոպեներն եմ հաշվում, որ քո հոգին բերեմ Ինձ մոտ[2]: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ:

Ես էլ եմ օրհնում Քեզ, Տեր իմ ու Փրկիչ:

Հոկտեմբերի 25, 1989

(Մեր Սուրբ Մոր պատգամը աղոթախմբի համար):

Իմ Խաղաղությունը ձեզ հետ է: Եկեղեցին կվերակենդանանա:

[1] Հիսուս նկատի ուներ, որ ամեն օր գալիս եմ Նրա մոտ և թույլ եմ տալիս, որ ձեռքս գործածի:
[2] Հիսուս Երկինքը նկատի ուներ:

Եկե՛ք, հաճելի եղեք Տիրոջը և հանձնվեք Նրան ամեն օր: Թույլ տվեք, որ Նա դարձնի ձեզ նվիրյալ զավակներ, Լուսո զավակներ: Փոխե՛ք ձեր կյանքը՝ կտրվելով աշխարհիկ բաներից, քանի որ դուք, զավակներս, միայն անցորդներ եք այս աշխարհում: Ես շարունակ հիշեցնում եմ ձեզ, որ ձեր հոգին պիտի ապրի հավիտյան և անվերջ զգուշացնում եմ ձեզ, որ փոխեք ձեր կյանքը:

Ի՞նչ է ուզում Աստված ձեզանից և ի՞նչն է լավագույնը, որ դուք կարող եք անել: Աստված ուզում է, որ դուք ամեն օր անձնատուր լինեք, ամբողջովին անձնատուր լինեք, որպեսզի ձեզանից կատարյալ մարդ ձևավորի: Լավագույն բանը, որ պիտի անեք, Աստծո Կամքին հնազանդվելն է՝ տալով Նրան ձեր կամքը: Փնտրե՛ք Նրան, փնտրե՛ք այն ամենը, ինչ Նրանն է: Աղաչում եմ, ականջ մի՛ դրեք դևի փսփսոցներին, բարձրացրե՛ք ձեր հոգին <u>հարատև աղոթքով</u>: Ես սիրում եմ ձեզ, զավակներս, և մի ակնթարթ անգամ Իմ Աչքերը ձեզ մենակ չեն թողնում:

Մեր Պատգամներից սովորեք բարիք անել: Թող Մեր Պատգամները սնեն ձեր թշվառ հոգիները և նորից ետ բերեն ձեզ դեպի Գիտությանը: Թող դրանք ձեզ առաջնորդեն դեպի Աստվածաշունչը, Ճշմարտությունն ու Կյանքը: Ես ուզում եմ ազատել ձեզ դևի որոգայթներից: Ես ուզում եմ աղոթքի ավելի բարձր մակարդակի բարձրացնել ձեր հոգին:

Զավակնե՛րս, այս երեկո, Ես ձեզ բոլորիդ համար կբարեխոսեմ Հորը յուրահատուկ ձևով: Դուք պետք է իմանաք, որ Նրա Բարության շնորհիվ կարող եք շատ շնորհներ ստանալ: Դուք պետք է իմանաք, որ Նա անսահմանորեն հարուստ է Շնորհով: Փափագե՛ք Տիրոջը, միշտ Տիրոջ քաղցն ունեցեք: Ազատվե՛ք ձեր բոլոր մտահոգություններից՝ դրանք տալով Նրան: Վստահե՛ք Նրան:

Ընդարձակե՛ք Նրա Թագավորությունը՝ սիրելով Նրան և ձեր եղբայրներին: Զարին սիրով հատուցեք: Թող սերը լինի ձեր կյանքի սկզբունքը, թող սերը լինի ձեր արմատը: Քննեք ձեր մտքերը: Մի՛ դատեք միմյանց, քանի որ ձեր ճամփաները Տիրոջ ճամփաները <u>Չեն</u>: Ջանացե՛ք հաճեցնել Տիրոջը՝ լինելով խոնարհ, առանց ուրիշներին դատելու: Աստծո Սերը հայտնվում է նույնիսկ ձեզանից ամենահետինին:

Գնացե՛ք խաղաղությամբ, սիրելիներս, մտեք ձեր տները՝ չթողնելով Մեզ ետևում. Մեզ տարեք ձեզ հետ: Սովորե՛ք զգալ Մեր Սուրբ Ներկայությունը, սովորեք ասել «մենք»՝ «ես»-ի փոխարեն, «մեզ»՝ «իմ»-ի փոխարեն: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: Մեկ եղեք, ինչպես Տերն է ուզում: Մի՛ բաժանվեք, քանի որ Երկնքում դուք մեկ <u>եք</u>:

Եղե՛ք և ապրեք Խաղաղության մեջ:

Հոկտեմբերի 26, 1989

Տե՞ր: Ես ինձ զգում եմ, ինչպես առանց թիակների մի նավակ:

Ես եմ: Ծաղի՛կս, Իմ Ճամփան ուղիղ է, բայց՝ նեղ, և միայն շատ քչերն են Այն գտնում: Զավակս, իրար մի՛ անցիր ամեն անգամ, երբ Ես էտում եմ քեզ: Ես էտում եմ քեզ, որ է՛լ ավելի զորանաս, որպեսզի կարողանաս է՛լ ավելի շատ պտուղներ տալ: Ես ուզում եմ բազմապատկել քո պտուղները:

Ես գիտեմ, թե դու ինչ ես ուզում ասել Ինձ. ուզում ես ասել, որ Ես քեզ շատ հաճախակի եմ կտրատում[1]: Ես գիտեմ, թե ինչն է լավագույնը քեզ համար, զավա՛կս: Ի վերջո, մի՞թե դու ինքդ Ինձ չես առաջարկել քո ազատությունը:

Այո՛, ես հավիտյանս Քեզ եմ տվել իմ ազատությունը:

Ես օգտագործում եմ այն, ինչ դու տվել ես Ինձ, հոգի: Ես չեմ գործածի քո կամքը, մինչև որ դու ինքդ Ինձ այն չտաս: Վստահի՛ր Ինձ: Միշտ հավատա Ինձ, քանի որ Ես չափազանց Քնքուշ եմ: Հաստատակամ եղիր, զավակս, և փուլթաջան եղիր արդարության գործին ծառայելիս, եռանդուն եղիր դարձի բերելու այլ հոգիների փոքր մնա և մշտապես Իմ Խորհուրդը հարցրու որևէ որոշում կայացնելուց առաջ: Օգնությունը միշտ քեզ է վերուստ կտրվի:

(Ավելի ուշ)

Իմ Վասուլա, նկարի՛ր երեք երկաթյա ձողեր՝ վերևում գլխիկով:

Սրանք ներկայացնում են Կաթոլիկներին, Ուղղափառներին և Բողոքականներին: Ես ուզում եմ, որ նրանք խոնարհվեն ու միանան, սակայն այս երկաթյա ձողերը դեռևս շատ կարծր են և չեն կարող ինքնուրույն խոնարհվել: <u>Դրա համար Ես ստիպված կլինեմ Իմ Հրով գալ նրանց մոտ և Իմ Կրակի բոցի զորությունը կփափկացնի նրանց ու նրանք կխոնարհվեն և մեկ կարծր երկաթյա ձող կդառնան, ու Իմ փառքը կլցնի ամբողջ աշխարհը</u>:

ΙΧΘΥΣ

Հաճախ աղոթիր Սուրբ Հոգուն այս աղոթքը.

Ե՛կ, Սուրբ Հոգի,
Քո շատ սիրելի Հարսի՝
Սուրբ Մարիամի Անարատ Սրտի
մեծազոր բարեխոսությամբ, եկ:
Ամեն:[2]

Այս աղոթքով Իմ Սուրբ Հոգին կշտապի ու կգա ձեզ վրա: Աղոթե՛ք, որ Իմ Սուրբ Հոգին հեղվի ձեզ վրա:

[1] Սա ստիպեց ինձ ժպտալ:
[2] աղոթք տրվեց ինձ

Հոկտեմբերի 30, 1989

Ծաղի՛կս, Իմ Սերը առաջարկում է քեզ Իր Նվերը՝ Իմ Զարչարանքը, Իմ Զարչարանքը: Գնա՛ դրա միջով և գոհացրու Հորը, ինչպես Ես եմ գոհացրել Նրան: Ես բուռն սիրով սիրում եմ քեզ և սա է հոգիներին Իմ Սերը ցույց տալու Ուղին: Թույլ տուր Ինձ քո առաջնորդը լինել՝ առաջնորդելով քեզ Իմ Զարչարանքի Ճանապարհով:

Ես հոգիներին սովորեցնում եմ անտրտունջ տանել Այն և յուրաքանչյուրին տալիս եմ՝ ըստ իր կարողությունների, Վասուլա: Իմացի՛ր, կատարելության հասնելու միայն մեկ ճանապարհ կա՝ Իմ Զարչարանքի Ճանապարհը, որն է՝ Իմ Խաչը: Կրի՛ր Այն սիրով, կրի՛ր Այն համբերությամբ: Փարվի՛ր Իմ Խաչին, զավակս, ամեն ինչ շուտով կվերջանա, և դու Ինձ մոտ կլինես: Պաշտի՛ր Ինձ, երկրպագի՛ր Ինձ: Ես օրհնում եմ քեզ:

(Ավելի ուշ)

Տեր, փրկի՛ր մեզ Քո Սիրով:
Թող Քո Սուրբ Երեսը ժպտա նրանց,
ովքեր սիրում են Քեզ:
Մեր Պահապան,
Ե՛կ Քո Աբելների մոտ:
Մենք Քո կարիքն ունենք:

Ե՛կ, զավակս, մնա Ինձ մոտ: Դու, որ Ինձ հետ պսակված ես, հասկացի՛ր, թե Ես ինչ եմ տվել քեզ: Ես տվել եմ քեզ Իմ Սիրտն ու Սերը: Պսակված լինելով Ինձ հետ՝ Ես տալիս եմ քեզ այն ամենը, ինչ Ես ունեմ: Ժամանակ առ ժամանակ Ես տալիս եմ քեզ Իմ Բաժակը, տալիս եմ քեզ Իմ Հացը, որ կենդանի մնաս և Իմ Անուշահոտությունը՝ հիշեցնելու համար քեզ Իմ մշտատև Ներկայությունը: Աղջի՛կս, Ես և դու հավիտյան կապված ենք միմյանց հետ:

Ե՛կ:

Հոկտեմբերի 31, 1989

Սիրելիս, խաղաղություն քեզ: Լսի՛ր Ինձ:

Ես սովորեցնում եմ սիրով: Ես ուսուցանել եմ քեզ Իմաստությամբ: Ես բարձրացրել և ձևավորել եմ քեզ: Իմ շնորհի և կարգուկանոնի մեջ մնա, ամեն բան գալու է Ինձանից: Անսասան մնա Իմ Ուսմունքի մեջ:

Իմ Վասուլա, մեղմացրո՛ւ Իմ Հոր բարկությունը հաճեցնելով Նրան՝ չարին սիրով հատուցելով: Քո սիրով մեղմացրու Նրա Զայրույթը այս չար սերնդի հանդեպ: Թող որ ես երևամ քո մեջ, որպեսզի դու սիրով ավետարանես Սիրո համար: Աստված-քեզ-հետ-է, զավա՛կս, դու լիազորվել ես ավետարանելու: Ես ընտրում եմ թուլությունը՝ ցույց տալու համար Իմ Զորությունը, և ընտրում եմ աղքատությունը՝ ցույց տալու համար Իմ Հարստությունն ու Իմաստությունը: Երբեք որևէ պահանջ մի

ներկայացրու քեզ համար: Մնա ոչինչ, քեզ էլ ավելի փոքրացրու հիմա, որպեսզի Ես կարողանամ ավարտել Իմ Գործը:

Իմ Տեր ու Փրկիչ, այդ Դո՞ւ ես:

Ես եմ: Խաղաղություն քեզ, զավակս: Մի՛ վախեցիր, երբեք մի՛ վախեցիր Իմ Ներկայությունից. վախեցիր Ինձանից, այն ժամանակ, երբ կըմբոստանաս Իմ դեմ: Նա, ով Ինձ հետ չէ, ցրում է: Մտածի՛ր այս մասին: Քեզ տրված Իմ Հայտնությունը չի ցրում, Այն հավաքում է. Իմ Հայտնությունը միավորում է ձեզ մեկ Մարմնի մեջ: Իմ Խաղաղությունը քեզ, զավակս: Մնա ոչինչ, մնա Իմ մեջ: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ:

(Սա ասվեց այն կասկածների պատճառով, որ ես ունենում եմ ժամանակ առ ժամանակ, մտածելով, թե միգուցե ես սխալ եմ):

(Ես կռացա դեպի Ֆաթիմայի Տիրամոր արձանը, որն իմ փոքրիկ սեղանի վրա է գտնվում, որի վրա ես գրում եմ: Ես մոտեցա Նրա աջ ականջին և շշնջացի. «Դու գիտես, Հիսուսն ինձ մի շատ թանկարժեք բան տվեց, որ պահպանեմ: Դա կապված է Իր Մարմնի Փառավորման հետ: Դա նաև հոգիների փրկության համար է: Դրա համար էլ, սիրելի Մայր, ես եկել եմ Քեզ մոտ և խնդրում եմ, որ Դու պահես, պահպանես և պաշտպանես Այն ինձ համար: Այո՛, դա Տիրոջ Հայտնությունն է: Ես Այն ամբողջովին հանձնում եմ Քո ձեռքերի մեջ: Մինչ այդ, ես պետք է շարունակեմ Հիսուսի Սուրբ Սրտի գործը, Նա, Ով աճեցրեց ինձ այս առաքելության համար, և Նա, Ով ձևավորեց ինձ»: Շուտով մեռելները, Նրա Ձայնը լսելով, կթողնեն իրենց գերեզմանները, և այս ամենը լինելու է Նրա Փառքի համար: Շուտով մի Ազգ հարություն կառնի, Քո Սուրբ անվանը նվիրաբերված մի ազգ, քանի որ սա վաղուց արդեն հայտնվել էր):

Զավա՛կս, ոչ մի բան չի խանգարի մարդկության հանդեպ ունեցած Աստծո Սիրուն: Եթե անգամ հալածեն, անհանգստացնեն և հարձակվեն քեզ վրա, եղիր շրջահայաց և հնազանդվիր Աստծուն: Ոչ ոք իրավունք չունի մեղադրելու նրանց, ում Աստված ընտրում է: Ես կպահպանեմ այս Հայտնությունը, ինչպես Ես պահպանում եմ Աստծո մյուս բոլոր հայտնությունները: Վստահի՛ր Սրբին: Նա հսկում է Իր Գործերի վրա:

Անվախորեն հայտնի՛ր Աստծո Սերը, Իմ Վասուլա: Եկ, անդադար աղոթիր Հորը:

Շնորհակալություն, ես օրհնում եմ Քեզ, Սուրբ Մայր:

Նոյեմբերի 2, 1989

(Տերն այս օրերին անընդհատ ինձ ցույց է տալիս «երեք երկաթյա ձողերը»: Այս անգամ դրանք բաց նարնջագույն են, որովհետև, թվում է, դրանք չափազանց տաք են):

Իմ Վասուլա, Իմ Կրակով և Իմ Հրի զորությամբ, ես ոչ միայն կփափկացնեմ այս երկաթյա ձողերը, այլև Իմ Շնչով ես ամբողջապես կհալեցնեմ դրանք և հավիտյանս հավիտենից կդարձնեմ դրանք մեկ ամուր ձող: Այդ ժամանակ դուք բոլորդ լիովին կհասկանաք Իմ Կամքը և Իմ Հասկացողությունը: Սա կլինի Իմ Պարգևը ձեզ՝ մի երկնային Եկեղեցի: Այն պիտի ճառագայթի Իմ Փառքով և ձեր օրհներգերը պիտի հնչեն միայն Մեկ Խորանի շուրջ և ուրվականների ձեր երկիրը նորից կվերակենդանանա՝ պայծառակեդրպված ու հարություն առած:

Ե՛կ, աղջիկս, Իմաստությունը կուսուցանի քեզ:

Ես օրհնում եմ քեզ: Սիրի՛ր Ինձ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 3, 1989

Թույլ տուր մեզ միանալ Քո Հրեշտակների թափորին, որոնք շրջապատում են Քեզ, Աստված իմ, քանի որ Դու Եզակի ես Սուրբ Երրորդության մեջ, և քանի որ նրանք անդադար փառաբանում են Քեզ և օրհներգեր են երգում Քեզ համար, թող մենք ևս ազդարարենք Քո բոլոր հրաշքները Միայն Մեկ Խորանի շուրջ: Ես սիրում եմ Քո Տունը, Տեր իմ: Շտապիր միավորել մեզ բոլորիս Քո Տան մեջ: Թող Քո Հրեշտակները և Քո Սրբերը օրինակ լինեն մեզ համար, թող մենք սովորենք նրանցից, թե ինչպես պաշտենք Քեզ Մեկ Խորանի շուրջ:

Ծաղի՛կս, ամեն բան կկատարվի իր ժամանակին: Մինչ այդ հաճելի եղիր Իմ Հոր Աչքերում: Թող քո զարդարանքներն ու գեղեցկությունը ներքուստ լինեն, քանի որ ես նայում և մանրազնին ուսումնասիրում եմ յուրաքանչյուր սիրտ: Ուրեմն, ուրախացրո՛ւ Ինձ և հաճելի եղիր Իմ Աչքին՝ զարդարելով և գեղեցկացնելով քո հոգին: Վերցրո՛ւ Ինձանից: Ինչ որ ես ունեմ թանկարժեք է, ու դա Կյանքն է ինքնին: Վերցրո՛ւ Իմ Գանձարանից: Ես ձրի եմ տալիս: Ծարավի եղիր Իմ Հարստությանը և վերցրու Իմ Սրտից ու լցրու քո սիրտը:

Իմ Վասուլա, չարունակի՛ր անել այն բոլոր բաները, որ դու սովորեցիր Իմ Իմաստությունից, ինչ որ ուսուցանվել է քեզ Իմ Նուրբ Վարպետությամբ, և ինչ որ լսել ես Ճշմարտության ձայնից:

Մնա խաղաղության մեջ: Հիշի՛ր Իմ Ներկայությունը:

Այո՛, Տեր, ես օրհնում եմ Քեզ:

Ես օրհնում եմ քեզ և ամեն մի քայլ, որ դու անում ես:

ΙΧΘΥΣ

Տե՞ր:

Ես եմ: Վասո՛ւլա, խնդրիր հավատ ունենալու համար: Հիշիր՝ Ես կարող եմ քեզ լիակատար հավատ տալ:

Ես նույնիսկ չգիտեմ, թե ինչպես պատշաճ ձևով Քեզանից ավելի ուժեղ հավատ խնդրեմ, Տեր:

Եթե անգամ դու չգիտես, փորձի՛ր. Իմ Ողորմությունը Մեծ է: Ծաղի՛կս, վստահ եղիր... Ուրախացրո՛ւ Ինձ, ծաղիկս, և հանգցրո՛ւ կրակի բոցը ևս մի քանի հոգիների մեջ, ովքեր քավարանում են: Սերը հանգցնում է նրանց մաքրագործող կրակները: Միշտ հիշիր դա: Իմացի՛ր, որ Ես գործածում եմ Իմ հանդեպ քո սիրո էությունը՝ հանգցնելու համար նրանց կրակները, նրանց վեր փոխադրելու համար: Ոմանք նույնիսկ ի վերջո կարող են Ինձ մոտ գալ: Ես՝ Տերս, տվել եմ ձեզ Իմ Խոսքը. սա է ձեր հոգևոր Սնունդը:

Դանդաղի՛ր և Ինձ լսիր[1]: Նույնիսկ քո բացարձակ տկարության մեջ, Ես քեզ կարող եմ տալ բոլոր Իմ Պատգամները: Չնայած քո ոչնչությանն ու որևէ բան անելու անկարողությանը՝ Ես՝ Տերս, կավարտեմ Իմ Գործը: Փոքր մնա, զավա՛կս, հավատարիմ մնա Ինձ: Ես՝ Տերս, սիրում եմ քեզ Իմ ամբողջ Սրտով:

Փառաբանի՛ր և պատվիր Ինձ: Ընդունի՛ր Ինձ, քանի որ դա հաճելի է Ինձ: Թույլ տուր գործածեմ քեզ: Միշտ սրտանց աղոթիր: Ե՛կ, մենք, մե՞զ:

Այո՛, Տեր իմ և Մայր իմ:

Նոյեմբերի 6, 1989

Աղջի՛կս, խաղաղություն քեզ: Յուրաքանչյուր հոգի, որ <u>սիրում է</u> Ինձ, հատուցում է իր անցյալի մեղքերը: Այն սերն ու զղջումը, որ Ես ստանում եմ այս հոգիներից, սփոփում են Իմ Վիրավոր Սիրտը և մեղմում են Իմ Հոր Արդարությունն ու շարժում Նրա գութը, քանի որ Նա տեսնում է ձեր ջանքերը և արդարև հաշվի է առնում բոլոր ձեր բարի մտադրությունները: Դուք շատ չեք, սակայն նույնիսկ այս մի քանիսի համար Իմ Հոր Ձեռքը ողորմած է դառնում:

<u>Հավա՛տ</u> ունեցեք, աղոթե՛ք և հավատացեք, այն բանին, ինչ խնդրում եք: Ձեր <u>Հույսն</u> Ինձ վրա դրեք: Ես Հարություն եմ առել և ձեր փրկությունը գալիս է Ինձանից: Մշտապես Ինձ փափագեք: Ես օրհնում եմ ձեզ:

Նոյեմբերի 7, 1989

Իմ Հիսո՞ւս:

[1] Հիսուս նկատի ուներ, որ իմ ձեռքը Իր Խոսքերից առաջ չգնա:

Ես եմ: Խաղաղություն քեզ: Ընդունի՛ր Ինձ այնպես, ինչպես Ես եմ սովորեցրել քեզ: Ծաղիկս, սիրի՛ր Ինձ, կլանի՛ր Ինձ, ստացիր Ինձ և եղիր Իմ արտացոլանքը, աղավնյակս:

Տե՛ր իմ, թույլ տուր ինձ հասկանալ, թե ինչու են ուղղագրական սխալներ լինում:

Վասո՛ւլա, դրանք քոնն են, ոչ թե՝ Իմը: Ես ընտրել եմ քեզ, որովհետև դու կատարյալ չես և շատ թուլություններ ունես: Ես Աստվածս, ընտրում եմ թույլ գործիքներ, որովհետև Իմ Զորությունը լավագույն ձևով գործում է թուլության մեջ:

Սակայն, ժամանակ առ ժամանակ Դու թելադրում ես նոր բառեր, որոնք անծանոթ են ինձ:

Այո՛: Երբ անհրաժեշտ է: Ես թելադրում եմ քեզ, և սխալ է դա Իմ ձեռագիրը համարել:

Այդ դեպքում ինչո՞ւ են ձեռագրերը տարբեր, Տե՛ր:

Ես այդպես եմ ուզում: Ես օգտագործում եմ Իմ գործիքները, ինչպես որ կան, իրենց բոլոր անկատարություններով և իրենց բոլոր թուլություններով, որ թելադրեմ նրանց Իմ Գիտությունը և նրանց ու մյուսներին կերակրեմ Իմ Խոսքով: Ես գիտեմ, որ նրանցից շատերն Իմ Խոսքերը բառացի են հասկանում, որոնք շատ անգամ խորհրդանշական են, սակայն սա, մի անգամ ևս, արտացոլում է նրանց թուլությունը, նրանց հնազանդությունը և մանկան հավատը Իմ հանդեպ և Ինձ դուր գալու նրանց փափագը: Երանելի է այն մարդը, ով հաստատուն կմնա փորձությունների ժամանակ[1]:

Ե՛կ, զավակս, թույլ տուր գործածեմ քեզ, ինչպես Ինձ հաճելի է: Քո բոլոր զոհողությունները իզուր չեն լինելու: Մեկ եղիր Ինձ հետ: Սերը սիրում է քեզ:

Նոյեմբերի 8, 1989

Իմ Վասուլա, ապավինի՛ր Ինձ, հաճեցրո՛ւ Ինձ և վերանորոգիր հավատարմության քո խոստումը:

Ես նորոգում եմ
հավատարմության իմ ուխտը
Քեզ հետ իմ Տեր ու Փրկիչ:
Օգնի՛ր ինձ պահել այն:
Օգնի՛ր ինձ հավատարիմ լինել Քեզ:
Տե՛ր, Դու մեծամեծ բաներ ես արել
ինձ համար:

[1] Հակ. 1:12

Դու բարձրացրել ես
իմ հոգին դեպի Քեզ
և թույլ ես տվել ինձ,
որ ապրեմ Քո Լույսի ներքո:
Դու ծածկել ես իմ մերկությունը
Քո Փառահեղ Պարգևներով:
Դու նորոգել ես ինձ:
Դու հարություն ես տվել ինձ,
ինչպես հարություն
տվեցիր Ղազարոսին:
Դու ազատել ես ինձ,
և ես սիրում ու պաշտում եմ Քեզ:

Իմ Սրտի սիրելին, ապավինի՛ր Ինձ: Ես և դու, դու և Ես, միասին մենք կկիսենք Խաղաղության և Սիրո Իմ Խաչը: Ա՜հ, Վասուլա, դու Իմն ես այժմ՝ ազատագրված և կենդանի: Լսի՛ր և գրիր.

Իմ Խաղողի Այգիները Ես նույնիսկ ավելի եմ տարածելու հիմա, քանի որ այս սերունդը հոգեկանությունից այնքան զուրկ է, որ չի կարող տարբերել իր աջ ձեռքը ձախից: Քանի որ նրանք շղարշով են պատված և ապրում են խավարի մեջ, Ես գալիս եմ այս ձևով ձեզ բոլորիդ այցելելու: Ես շուտով կվերադառնամ, և ոչ ոք չի կարող Ինձ կանգնեցնել, նույնիսկ նրանք, ովքեր ապրում են գազանի իշխանության տակ, և ուղարկվում են ավերումներ կատարելու և կոխկրտելու Իմ Խաղողի Այգիները: Իմ Զորությամբ Ես կշարունակեմ էլ ավելի ընդարձակել այդ Խաղողի Այգիները: Սա Սուրբ Ճակատամարտ է Սրբերի և Սանդարամետի անկյալ հրեշտակների միջև: Երկիրը նույնպես զգում է այս Ճակատամարտի ծանրությունը: Ոչ ոք չի խանգարի Ինձ, որ կերակրեմ Իմ Գառներին:

Ես միայ խոսք չեմ, Ես՝ Տերս, Զորություն եմ: Ես չեմ գալիս ձեր սերնդին սպառնալու, Ես գալիս եմ խնդրելու, որ դարձի գաք, Ես գալիս եմ ձեր վրա շողալու: Ես իջնում եմ ձեզ մոտ, ամբողջովին Ողորմությամբ լի, և Մեծ Սիրով գալիս եմ, որ ետ բերեմ ձեզ Ինձ մոտ: Ես՝ Տերս, Սիրո և Ողորմության Աստված եմ: Մի՛ հապաղեք հասկանալու, որ այդ Ես եմ՝ Տերը, որ ձեր չոր հողերը վերածելու եմ Խաղողի Այգիների:

Միայն մի փոքր ժամանակ է մնացել, մի շատ կարճ ժամանակ, և այն Մեկը, որի գալստյանը դուք սպասում եք, եկած կլինի: Ես չեմ ուշանա, Իմ Ժամը հայտնի է: Ես Իմ Խոստումը տվել եմ ձեզ Իմ Վերադարձից ոչ շատ առաջ և ասում եմ ձեզ ամենայն հանդիսավորությամբ, որ <u>Ես Իմ վերադարձի Ճանապարհին եմ</u> գտնվում: Սերը վերադառնում է և Սերը կվերադառնա ձեզ մոտ որպես Սեր: Ես՝ Տերս, Սեր եմ և Ես կբնակվեմ ձեր մեջ: Փորձե՛ք հասկանալ, փորձե՛ք ճանաչել Ժամանակները:

Ես ձեզ ասում եմ ամենայն հանդիսավորությամբ, որ մինչև դուք դարձի չգաք, պահք չպահեք և անդադար չաղոթեք, դուք չեք կարող տեսնել Իմ Լույսը: Ճաչակե՛ք Իմ Պտուղները, քանի դեռ ժամանակ կա, դարձի՛ եկեք և սուրբ ապրեք: Երբեք մի՛ դադարեք աղոթելուց: Իմ Սուրբ Հոգին կշարունակի տարածվել մարդկության վրա: Կարդացե՛ք Ժամանակների նշանները. Ես Ներկա եմ բոլոր Ժամանակներում:

Ե՛կ, աղջիկս, Սերը սիրում է քեզ Անսահմանորեն:

Նոյեմբերի 9, 1989

(Ես գալիս եմ Տիրոջ մոտ այսպիսի ձևով, վախենալով, թե կրկին սխալված կարող եմ լինել: Թվում է, ես չեմ ընկալում և չեմ հասկանում այս ամենը: Ես նորից անցնում եմ փորձության միջով: Սակայն ես գալիս եմ Քեզ մոտ Քո սովորեցրած այս եղանակով:)

Հիսո՞ւս:

Ես եմ: Մնա խաղաղության մեջ: Իմ Վասուլա, թող ոչ ոք չվերցնի այն պարգևը, որ Ես տվել եմ քեզ:

Թույլ մի՛ տուր, որ դա տեղի ունենա, Տեր իմ:

Ես թույլ չեմ տա, բայց հիշիր Իմ Ուսուցումները, հիշի՛ր, թե Ես՝ Տերս, ինչպես եմ գալիս քեզ մոտ:

Հիսո՛ւս, Դու գիտես իմ վախերը:

Գիտե՛մ:

Դու գիտես իմ տանջանքները:

Գիտե՛մ:

Երբեմն ես վախենում եմ, թե մոլորության մեջ եմ:

Գիտե՛մ: Ես կարեկցում եմ քեզ և տենչում եմ, որ քեզ է՛լ ավելի ամուր սեղմեմ Իմ Սրտին: Մի՛ վախեցիր և մնա խաղաղության մեջ: Ես այսօր ասում եմ քեզ. Ես ցույց եմ տալու, որ այն, ինչ դու ունես, գալիս է Ինձանից: Սովորի՛ր համբերատար լինել, սովորի՛ր Ինձանից: Լսի՛ր Ինձ, ապավինի՛ր Ինձ, նվիրիր Ինձ քո ժամանակը. երբեք մի՛ դադարիր աղոթելուց[1]... Վասուլա, երբվանի՞ց ես Ինձ սիրում:

Ես սիրում եմ Քեզ՝ այն ժամանակվանից, երբ ես «գրել» սկսեցի, երբ Դու մոտեցար ինձ <u>այս</u> ձևով, իմ պահապան հրեշտակ Դանիելից անմիջապես հետո:

Ես եկել եմ քեզ մոտ «գրվածքների» միջոցով, և Ես արթնացրել եմ քեզ այս «գրվածքների» միջոցով: Ես ձևավորել եմ քեզ այս «գրվածքների» միջոցով և ուսուցանել եմ քեզ Իմ Գիտությունը «գրվածքների» միջոցով: Ես փոխակերպել եմ քեզ այս «գրվածքների» միջոցով: Ես դարձի եմ բերել շատ Անաստված մարդկանց այս «գրվածքների» միջոցով: Ես ցույց եմ տվել քեզ Իմ Եկեղեցու վիճակը՝ կրկին այս «գրվածքների» միջոցով: Ես ցույց եմ տվել քեզ Իմ Սուրբ Սիրտը այս «գրվածքների» միջոցով: <u>Ինչպե՞ս կարող էիր դու երբևէ մտածել, որ այս</u>

[1] Մի պահ դադար տիրեց:

ջերմեռանդությունը, որ ես տալիս եմ քեզ, քոնն է, կամ գալիս է քեզանից: Ծաղի՛կս, ես ընտրել եմ քեզ, որովհետև դու այնքան թշվառ ես և այնքան հեռու ես եղել Իմ Եկեղեցուց: Ես ընտրեցի քեզ, որովհետև դու մեռած էիր, աշխարհին ցույց տալու, որ Իմ ծրագրերը իրականացնելու համար Ես ո՛չ մարդու զորության կարիք ունեմ, ո՛չ էլ նրանց սրբության[1]:

Ինչպես Աստվածաշունչն է ասում. «Իմաստուններին ամաչեցնելու համար էր, որ Աստված ընտրեց այն, ինչը որ մարդկային հասկացողությամբ հիմարություն է համարվում, և հզորներին ամաչեցնելու համար էր, որ Նա ընտրեց մարդկային հասկացողությամբ տկարներին, նրանց, որոնց աշխարհը հասարակ ու արհամարհելի է համարում: Հենց սրանց է, որ Աստված ընտրել է, որ ոչինչ են, ի հեճուկս նրանց, որ ամեն ինչ են»: Եվ Ես չնորհակալ եմ Հորից, որ մինչ օրս այս բաները ծածուկ պահեց իմաստուններից ու գիտուններից և սոսկ երեխաներին հայտնեց:[2]

Խաղաղության մեջ եղիր, զավակս: Խաղաղության և Սիրո Իմ Խաչը ապաշխարության, սիրո, խաղաղության և միասնության կոչ է անում աշխարհին: Իմ Գործերը մարդկային այս ցեղին կրկին բերելու են դեպի աստվածայնությունը: Իմ Գործերը բխում են Իմ Ողորմությունից:

Մտի՛ր Իմ սուրբ Սրտի մեջ և հանգստացիր, Իմ Վասուլա: Ազատություն, նշանակում է սիրել Աստծուն: Ես ազատեցի քեզ:

Փառք Աստծո: Փառավորվի մեր Տերը:

Ես՝ Նազովրեցի Հիսուսս, քո կողքին եմ: Այսօր Ես կգամ քեզ մոտ Իմ «այցելող արձանի» միջոցով[3]: Ես երբեք չեմ մերժում այն չնորհները, որ դու խնդրում ես Ինձանից: Օրհնյալ եղիր: Ես կօգնեմ քեզ: Աղոթի՛ր, քանի որ աղոթքով դու խոսում ես Ինձ հետ և հետևաբար Ես լսում եմ քեզ:

Ես էլ եմ քեզ հետ, Իմ փոքրիկ հրեշտակ[4]: Մենք, մեզ:

Հավիտյանս հավիտենից:

Նոյեմբերի 13, 1989

Խաղաղություն քեզ, զավակս: Ավետարանի՛ր սիրով, Սիրո համար: Եկեղեցին պիտի վերակենդանանա, քանի որ Ես՝ Տերս, տապալելու եմ Նրա մեջ գտնվող բոլոր խաբեբաներին, ովքեր իրենք իրենց նստեցրել են բարձր աթոռներին: Աղջիկս, հեռացրո՛ւ այս փչերը, որոնք խոցում են Իմ Գլուխը, որոնք այնքան շատ արյունահոսության պատճառ են դառնում: Մի՛ վախեցիր դրանցից, քանի որ Ես քո կողքին եմ և ճշմարիտ եմ ասում

[1] Հիսուսն այս ամենը ինձ ասաց մի շնչով:
[2] Մատթ. 11:25
[3] Հիսուսի Սուրբ Սրտի ուխտավոր արձանը, որը յուրաքանչյուր տան մեջ մնում է ինը օր:
[4] Սա ասաց Մեր Սուրբ Մայրը:

քեզ, որ Իմ Զորությամբ և Մեծ Ողորմածությամբ ես պիտի տապալեմ սրանցից յուրաքանչյուրին:

Տեսնո՞ւմ ես, զավա՛կս, ողջ Երկինքը շատ երկար սգաց քո Այնքան-Չսիրված-Քրոջ համար: Տարիներ շարունակ մենք կուլ ենք տալիս Մեր դառը Արտասուքները... «Օ՜, Ռուսաստան, սոսկ մարմնավոր արարած: Չարը գալարվել է քո որովայնում, արարած, որ սոսկ փոշի ես և մոխիր: Ես՝ Բարձրյալը, հարություն եմ տալու քեզ, որովհետև Ես եմ Հարությունը: Ես քեզ խնամելու եմ և ետ՝ դեպի Կյանք եմ բերելու, Ես Մատս դնելու եմ քեզ վրա և փոխակերպելու եմ քեզ մի փառավոր ազգի, այնպես, ինչպես Ես պայծառակերպվեցի: Դու վեհաշուքորեն հանդերձավորվելու ես շլացուցիչ ճերմակ հագուստներով և ողջ Երկինքը հանելու է Իր սգո զգեստները ու Երկնքի դառն Արտասուքները փոխվելու են ուրախության արցունքների: Ամբողջ Երկինքը տոնելու է քո Հարությունը և բոլոր նահատակված սրբերը, ովքեր անդադար աղոթեցին ձեր Սուրբ Մոր Ոտքերի մոտ Նրա բարեխոսության համար, Իմ Մոր և Նրա անթիվ հրեշտակների հետ միասին, այդ օրը ևս բոլորը իջնելու են քո զավակների տները և ապրելու են նրանց հետ միասին: Այդ ժամանակ Ես կկերակրեմ նրանց Իմ Մարմնով և նրանց կտամ Իմ Արյունը, որ ըմպեն»:

Ռուսաստանը պիտի ճաչակի Ինձ և մեծ սիրով պիտի խմի Ինձ՝ փառավորելով Ինձ: Իմ Ռուսաստանը պիտի լինի ձեր ժամանակների և գալիք սերունդների համար կենդանի օրինակ իր Մեծ Դարձի պատճառով: Շատերի կողմից ձեր այդքան չսիրված-քույրը պիտի հրաժարվի իր բոլոր չար արարքներից և Ինձ իր Աստվածը պիտի կոչի իր ողջ զորությամբ:

Վասուլա, լսո՞ւմ ես: Լսի՛ր... Լսիր քո Քրոջ զավակների ողբը[1]... Նրա զավակները ողբում ու սգում են: Այդ Իմ Ռուսաստանի զավակներն են, որ լալիս են: Ողջ Երկինքը պարզորոշ լսում է նրանց կսկիծը: Երկինքը խորապես հուզված է նրանց տառապանքով: Եվ Ես, որ երբեք չեմ դադարել նրան սիրելուց, այժմ նրա մեռած մարմնի կողքին եմ: Իմ Ձեռքը նրա սառած սրտի վրա է, և նրա ոսկորները նորից պիտի ծաղկեն իր շիրիմից, և նա լավ անուն պիտի վաստակի, քանի որ Ես զարդարելու եմ նրան, նրա տղաներին ու աղջիկներին: Այդ ժամանակվանից խաղաղության և Սիրո ուխտ պիտի ստորագրվի և կնքվի Իմ ու նրա միջև: Ես սիրում եմ ու միշտ սիրել եմ նրան: Չնայած Իմ հանդեպ նրա անհավատարմությանն ու նրա չարությանը, Ես օրհնելով օրհնեցի նրան: Սա կլինի Իմ Փառահեղ Հրաշքը. միայն սպասեք և տեսեք: Նրանք, ովքեր ընկել են ատելության քնի մեջ, առանց որևէ պատճառի ատելով Ինձ, նրանց նույնպես Ես կյանքի պիտի կոչեմ, որովհետև նրանք ևս նրա զավակներն են ու դեռևս ապրում են նրա արգանդում: Այս բոլոր բաները պիտի շուտով տեղի ունենան:

Աղջի՛կս, Ես Սուրբն եմ՝ Բարձրյալը, Ես եմ Ամենասուրբ Երրորդությունը: Հաճեցրո՛ւ Ինձ և լսիր Ինձ, ինչպես լսեցիր Ինձ այսօր:

(Աստված գոհ էր թվում):

[1] Այստեղ ես սկսեցի արտասվել, ոչ միայն Ռուսաստանի զավակների համար, որոնք տառապում են, այլ նաև այն բանի համար, որ Աստծո ձայնը աննկարագրելիորեն տխուր էր հնչում:

«Ալելուիա մեր Օծյալին: Հաճեցրու Տիրոջը և Նրան փնտրիր սրտի մաքրությամբ, փնտրի՛ր Նրան սրտի պարզությամբ: Մենք քո հրեշտակներն ենք, որ անդադար պահպանում ենք քեզ»:[1]

«Աստված սիրում է քեզ, և Ես՝ Դանիելը, մշտապես քեզ հետ եմ: Փոքր մնա, քանի որ դա հաճեցնում է Տիրոջը»:[2]

Ա՜խ, Դանիել... Ինչպես կարող եմ խուսափել այն հանդիպումներից, երբ մարդիկ սկսում են ճանաչել հայտնությունը և ինձ: Ինչպե՞ս կարող եմ «փոքր» մնալ: Դու գիտես, որքան չեմ սիրում ցուցադրվել:

Վասո՛ւլա, փոքր մնալ նշանակում է խոնարհ մնալ և գոհացնել Տիրոջը: Հիշի՛ր, որ դա Տիրոջ ցանկությունն է, որ դուք հավաքվեք[3]: Մի՛ վախեցիր, Նրա Պատգամը պետք է հայտնի դառնա, աշխարհը պետք է դա և հանդիպի Խաղաղության Արքային: Ձեր սերունդը պետք է ճանաչի Աստծուն և դարձի գա: Շնորհակալություն հայտնիր Աստծուն Իր Ողորմած գործերի համար: Ես՝ Դանիելը, անդադար աղոթում եմ քեզ համար: Աստված ուզում է, որ դու բարի լինես: Հայտնի դարձրու Նրա Սերը ողջ մարդկության հանդեպ առանց երկյուղի: Բարձրյալը օրհնում է քեզ և բոլոր նրանց, ովքեր իրենց նվիրվում են այս Պատգամը ազգերին հայտնելու համար:

Սերը սիրում է ձեզ բոլորիդ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 14, 1989

Տե՞ր իմ: Ես է՛լ ավելի մեծ հավատ եմ ուզում: Ես դրա կարիքն ունեմ:

Իմ Վասուլա, մի՛ պահանջիր, այլ՝ խնդրիր: Հասկացի՛ր Իմ Անսահման Ողորմությունն ու Սերը: Ուրեմն ասա այս խոսքերը.

«Փրկիչ իմ, ավելացրո՛ւ իմ սերը,
ավելացրո՛ւ իմ հավատը,
ավելացրո՛ւ իմ հույսը:
Թող այս ամենը
կատարվի համաձայն
Քո Աստվածային Կամքի: Ամեն»:

[1] Սա ասվեց հրեշտակի ձայնով:
[2] Դանիելն էր, իմ պահապան հրեշտակը:
[3] Ամեն ամսվա աղոթաժողովներին

Մի՛ շտապիր: Դու կարծես միշտ շտապում ես: Ինչո՞ւ[1]: Ես լսում եմ քեզ, բայց թվում է, դու կարծում ես, թե ես կհեռանամ և հետևաբար շտապում ես, ինչո՞ւ: Մի՛ շտապիր: Ես լսում եմ քեզ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ ես քեզ հետ եմ լինում այս յուրահատուկ ձևով: Դանդաղի՛ր և ամեն մի բառի վրա խոկալով աղոթիր: Ինչո՞ւ ես շտապում: Ես քո Դաստիարակն եմ, և դու Իմ աշակերտն ես: Ես սովորեցրել եմ քեզ զանազանել: Ես քո Ուսուցիչն եմ, որը ձևավորեց քեզ: Ես երբեմն-երբեմն կհիշեցնեմ քեզ, երբ դու սկսես մոռանալ Իմ կանոնները և կշարունակեմ հեղել քեզ վրա բազմաթիվ հայտնություններ:

Ե՛կ, եկ աշխատենք:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 15, 1989

(Մինչ ես կգնայի հանգստանալու[2], ես խնդրեցի Հիսուսին, որ ինձ մի խոսք ևս տա Աստվածաշնչից: Նրան խնդրելուց հետո ես պատահականորեն բաց արեցի գիրքը, և Հիսուսն ինձ ասաց Սուրբ Գրքի միջոցով).

«Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չեք կարող տանել»:[3]

(Այս խոսքի մեջ ես սուրբ հումորի նշույլներ նկատեցի):

Նոյեմբերի 16, 1989

Տե՛ր: Ես բարձրացնում եմ
իմ աչքերը դեպի Քեզ:
Ես բարձրացնում եմ
իմ հոգին դեպի Քեզ:
Ես կարոտում եմ Քեզ, իմ Փրկիչ:
Քո Սուրբ Ներկայությունը
իմ բերկրանքն է, օ՜,
իմ կողմից եղիր և պաշտպանիր ինձ:

Ծաղի՛կս, Սերը քո կողքին է: Զնայած դու տեսնում ես Ինձ միայն քո հոգու աչքերով, սակայն մի՛ թուլացրու քո հավատը: Ժպտա՛ Ինձ, դա դուր է գալիս Ինձ: Ա՜խ, զավակս, ե՛կ, վերցրու Իմ լուծը, Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև: Աղոթի՛ր այնպես, ինչպես ես եմ սովորեցրել քեզ՝ սրտանց: Շատ կարևոր է, որ աղոթես և խնդրես Իմ շնորհները: Սա Իմ

[1] Երբեմն ես փորձում եմ իմ աղոթքները շտապ ասել, որ անցնեմ նոթատետրերին և «գրեմ» Հիսուսի հետ լինելով:
[2] Ես *հանգստանալ* բառն օգտագործեցի *քնել* բառի փոխարեն, որովհետև գերզգայուն էի դարձել *քնել* բառի նկատմամբ, քանզի ես քնած էի տարիներով, մինչև որ Հիսուս եկավ և ինձ արթնացրեց:
[3] Հովհ. 16:12

Օրենքն է: Ամեն բոպե մտի՛ր Իմ Սուրբ Սիրտը: Ես փափագում եմ մխիթարել քեզ, ես տենչում եմ հանգստացնել քեզ: Թույլ տուր, որ Մայրս քեզ սովորեցնի:

(Մեր Սուրբ Մայրը)

Իմ Վասուլա, ես քո կողքին եմ, վստահ եղիր սրանում: Սփոփի՛ր Իմ Որդուն՝ սիրելով Նրան, սփոփի՛ր Հիսուսին՝ խոսելով Նրա հետ և Առաջինը դասիր Նրան: Երբեք բաց մի՛ թող Մեր Ձեռքը, երբեք մի՛ փորձիր նայել Նրա Ուսերից այն կողմ: Մեզ հետ համաքայլ գնա: Պաշտի՛ր Նրան և սիրով ավետարանիր Նրա համար: Մի՛ անհանգստացիր վաղվա համար. վաղվա օրը ինքը կհոգա իր համար: Այլ կամ ձախ մի՛ նայիր: Տերն ուզում է, որ դու լիովին անձնատուր լինես, որպեսզի քեզ Իր Աստվածային Պատկերը արտացոլելող կատարյալ մի արարած դարձնի՝ Աստվածային այն Պատկերը, որը ձեր դարաշրջանը կորցրել է:

Հիսուս և ես չենք «իջնում» Մեր Պատգամների միջոցով ձեզ դատելու: Մենք չենք գալիս ո՛չ դատելու, ո՛չ էլ դատապարտելու ձեզ: Մենք գալիս ենք ձեզ մոտ մեծ Սիրով ու Ողորմությամբ, որպեսզի ձեզ ետ՝ դեպի Մեզ բերենք և ձեզ բոլորիդ աստվածային արարածներ դարձնենք:

Ես օրհնում եմ ձեզ: Ես ձեզ հետ եմ:

Ես էլ Քեզ եմ օրհնում, Սուրբ Մայր: Ամեն:

Նոյեմբերի 20, 1989

Ա՜հ, Վասուլա: Գիտակցի՛ր, գիտակցի՛ր, թե ես քեզ ինչ եմ տվել: Ե՛կ, ես և դու, դու և ես: Ինձ Առաջինը դասիր: Աղջի՛կս, այն ամենը, ինչ ես խնդրում եմ քեզանից, սեր է: Ես՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Սիրելի Որդին և ձեր Փրկիչը, վերադառնում եմ ձեզ մոտ, հասկանո՞ւմ եք: Ես արդեն Իմ Վերադարձի Ճանապարհին եմ: Շուտով դուք ավելի ու ավելի հստակ կլսեք Իմ ոտնաձայները, քանի որ Ես մոտենում եմ ձեզ: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

ΙΧΘΥΣ

Մեկ եղեք:

Նոյեմբերի 22, 1989

Խնդրում եմ, Տեր, խոսի՛ր Ինձ հետ Սուրբ Գրքերի միջոցով:

(Ես բաց արեցի Աստվածաշունչը պատահական տեղում և կարդացի. «Սուրբ Հոգին կիջնի ձեզ վրա»:[1]

[1] Ղուկ. 1:35

Աղջիկս, հիշեցրո՛ւ աշխարհին Իմ Ներկայության մասին, ծանուցի՛ր Իմ Պատգամը մինչև աշխարհի ծայրերը: Աղոթի՛ր, Ես լսում եմ[1]: Ես կօգնեմ քեզ:

Խնդրում եմ,
Հա՛յր, ցույց տուր ինձ Քո Սերը,
քանի որ ցույց տալով Քո Սերը
Դու ցույց ես տալիս ինձ
Քո Սուրբ դեմքը:
Ցոլա՛ ինձ վրա,
թող ոչ ոք ինձ չխաբի:
Եղիր իմ Առաջնորդը,
իմ Ուսուցիչն ու Դաստիարակը:
Թույլ տուր, որ սովորեմ
Իմաստության Շուրթերից: Ամեն:

Հասկանո՞ւմ ես: Ուղղակի խնդրի՛ր Իմ օգնությունը և Ես չեմ հապաղի: Ե՛կ, դու դեռ սովորում ես, սակայն մնա Ինձ մոտ: Հիշի՛ր Իմ Ներկայության մասին, որի համար Ես այդքան շատ պնդում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը սովորի: Իմ Ներկայությունը նաև Խորհուրդ է: Ինձ անուշադրության մի՛ մատնեք, Ես էլ ձեզ անուշադրության չեմ մատնի... Ես դեռ խոսում եմ[2]: Թող որ Ես լինեմ ձեր Մխիթարիչը: Ես՝ Տերս, կառաջնորդեմ ձեզ մինչև վերջ, թեպետև դուք ամբողջովին չեք հասկանում այն, ինչ Ես տալիս եմ ձեզ որպես Շնորհ: Ես, Իմ Անսահման Ողորմությունից դրդված, անդադար կլցնեմ ձեզ Իմ Հոգով և Իմ Խոսքերն ու Օրենքը կհեղեմ ձեզ վրա և կբարձրացնեմ ձեզ դեպի Ինձ:

Ես՝ Տերերի Տերը, ուշադիր հետևում եմ ձեզ: Իմ Խաղաղությունն ու Սերը ձեզ: Ես օրհնում եմ ձեզանից ամեն մեկին: Բարի եղեք:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 23, 1989

Իմ Արքա,
առաջնորդի՛ր յուրաքանչյուր հոգու
դեպի ճշմարտությունը,
որպեսզի նրանք կարողանան
փառաբանել Քեզ
միայն մեկ Խորանի շուրջ:
Թող նրանք,
ովքեր կրկին ու կրկին լսում են,
բայց չեն հասկանում,
հասկանան այս անգամ, նրանք,
ովքեր կրկին ու կրկին տեսնում են,

[1] Ես չէի կարողանում գտնել ճիշտ բառերը և Աստված եկավ ինձ օգնելու:
[2] Ես փորձեցի ընդմիջել՝ մի բան ասելու համար:

բայց չեն ընկալում
ընկալեն այս անգամ՝
մտնելով քո Խորհրդի մեջ:
Փափկացրո՛ւ նրանց սիրտը,
որպեսզի նրանք կարողանան
հասկանալ իրենց սրտով
և ոչ թե իրենց մտքով
և այսպիսով դարձի գան
ու բժշկվեն Քո կողմից՝
փառաբանելով Քեզ, Արքա իմ:
Ամեն:

Զավա՛կս, ես հարություն կտամ անգամ մեռածներին: Աղոթի՛ր այն հոգիների համար, ովքեր չեն հասկացել Իմ Կամքը:

Հաստատուն մնա Իմ ուսուցումների մեջ: Անսասան մնա Իմ Ուղիների մեջ և տարհամոզիր նրանց, ովքեր վերքեր են հասցնում Իմ Մարմնին: Բարությամբ վերաբերվիր քո թշնամիներին, որոնք Իմ թշնամիներն են, սակայն միևնույն ժամանակ սովորեցրու նրանց հաստատակամորեն: Ես կառաջնորդեմ քո ամեն մի քայլը, զավակս: Սիրի՛ր Ինձ քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով, քանզի այդպես անելով դու կտեսնես Ինձ՝ քո Աստծուն: Աղջի՛կս, օրվա մեջ եկ Ինձ մոտ թեկուզ մի քանի րոպե Ինձ հանդիպելու համար, ինչպես ես եմ սովորեցրել քեզ. դա դուր է գալիս է Ինձ: Շատ սիրելի հոգի, տուր Ինձ քո սերը. մի՞թե ես չեմ տվել քեզ Իմը:

Ես քո Փեսան եմ, որ կերակրում, լցնում, սփոփում, պաշտպանում եմ քեզ, հոգ եմ տանում քո մասին և բարձրացնում եմ քո հոգին դեպի Ինձ: Ես Նա եմ, ով քեզ ամենից շատն է սիրում, սիրելի հոգի: Գիտեմ[1], սակայն Ես վարժեցրել և ձևավորել եմ քեզ այս առաքելության համար: Հենվի՛ր Ինձ վրա, երբ հոգնած ես, և Ես քեզ կբարձրացնեմ: Ծաղի՛կս, այն ամենը, ինչ դու անում ես Իմ Անունով, փառավորում է Ինձ: Ճաշակի՛ր Ինձանից: Ես սիրում եմ քեզ և ստեղծել եմ քեզ, որ սիրես Ինձ: Ես ստեղծել եմ քեզ, որ հանդստացնես Ինձ: Ես ստեղծել եմ քեզ, որպեսզի կիսես Ինձ հետ այն ամենը, ինչ Ես ունեմ: Աղոթի՛ր Հորը, որ Նա մեղմի Իր Արդարությունը, որը ծանրորեն ընկած է ձեզ վրա[2]: Մեղմի՛ր Նրա Բարկությունը, սիրելով Նրան, սրտանց աղոթելով, պահեցողությամբ, ապաշխարելով և խոստովանելով մեղքերդ: Մտի՛ր Խաղաղության և Սրբության աշխարհը: Սուրբ ապրիր՝ արտացոլելով Իմ Աստվածությունը:

Իմ Վասուլա, հիմա դու ուրա՞խ ես, որ Ես ազատագրել եմ քեզ:

Փառք Տիրոջը, ԱՅՈ՛:

Ուրեմն գոհացրու Ինձ՝ թույլ տալով, որ Ես օգտագործեմ քեզ Իմ Փառքի համար, հասկանո՞ւմ ես: Հասկացի՛ր, որ Ես զոհողություններ կպահանջեմ քեզանից, տառապանքներ և մեծ համբերություն, սակայն ոչինչ իզուր չի լինելու: Հիշի՛ր, Ես կրթել եմ քեզ, որ դառնաս ևս մեկ փոքրիկ խաչյալ Իմ

[1] Ես ինչ-որ մի բան ասացի Հիսուսին:
[2] Մեր սերնդի

Փառքի համար: Ամեն մի փոքրիկ խաչյալ դառնում է լույսի մի սյուն՝ դրանով նվազեցնելով ձեզ շրջապատող խավարը: Այժմ վերաբերիր Ինձ որպես Թագավորի և հոգիներ բեր Ինձ. Ես ծարավի եմ հոգիների: Ես կօգնեմ քեզ, և Իմաստությունը կուսուցանի քեզ: Մնա՛ Ինձ մոտ և հիշիր Իմ Ներկայությունը:
Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: Սիրիր Ինձ:

Նոյեմբերի 26, 1989

Զավա՛կս, խաղաղություն քեզ: Լսի՛ր Ինձ, զգույշ եղիր: Մի՛ նշիր բաներ, որ այս հայտնությունից չեն: Օգտագործիր Իմ Բառերը այս հայտնությունից և Աստվածաշնչից: Ես քո Ուսուցիչն եմ, խոհեմ եղիր: Վստահի՛ր Ինձ: Քո Փրկիչը Ես եմ, քո Սուրբը Ե՛ս եմ: Ես եմ, որ եմ: Ուրեմն ինչո՞ւ չվստահել Ինձ: Ինձ հաճելի է, երբ դու ժպտում ես Ինձ: Ես սիրում եմ մանկական հավատը:

Վասուլա, արիացի՛ր, Ես կտապալեմ Իմ բոլոր թշնամիներին, արիացի՛ր, աղջիկս: Ես գիտեմ, որ դժվար է ապրել աքսորում և մահվան հովտում, բայց համոզված եղիր Իմ Սիրո մեջ: Ես քո կողքին եմ և քեզ կօգնեմ անգամ ամենափոքր բաներում: Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 27, 1989

Տե՛ր, եղիր իմ Զորությունը: Ես Քո Խաչը կգրկեմ մինչև վերջ: Շնորհակալ եմ Քեզանից ամեն բանի համար, որ Դու տալիս ես ինձ:

Իմ Խաղաղությունը քեզ, Իմ Սուրբ Սրտի Վասուլա: Մի՛ վախեցիր. շնորհը, որ Ես տվել եմ քեզ, կմնա քեզ հետ մինչև այն օրը, երբ Ես կգամ քեզ բերելու: Ուրախ եղիր, որ Ես կամենում եմ քեզ սնել այս ձևով: Ուրախ եղիր, որ Ես կամենում եմ այս շնորհը թողնել քեզ հետ մինչև վերջ: Ուրախ եղիր, որ Ես այսքան բարեհաճ եմ գտնվել քո հանդեպ: Ուրախ եղիր, աղջի՛կս, որ Ես քեզ նորից կյանք տվեցի: Ես օրհնում եմ քեզ այս փոքրիկ հավատի համար, որ դու տալիս ես Ինձ: Վերցրո՛ւ Իմ Խաչը, գրկի՛ր Իմ Խաչը. Իմ Խաչը քո Կյանքն է:

Ես՝ Հիսուս Նազովրեցիս, օրհնում եմ քեզ և բոլոր նրանց, ովքեր աշխատում են Իմ Պատգամի վրա՝ տարածելով Այն: Ես օրհնում եմ նրանցից յուրաքանչյուրին: Ե՛կ, մենք, մեզ:

Այո՛, Տեր:

Մենք, մե՞զ:

Այո՛, Սուրբ Մայր:

Նոյեմբերի 28, 1989

Իմ Հիսո՞ւս:

Ես եմ: Սերը քեզ մոտ է: Վերցրո՛ւ Իմ Խաչը և հանգստացրու Ինձ, զավակս: Սերը հոգնած է և կարիք ունի հանգստի: Ա՛խ, զավակս, մի՛ լքիր Ինձ: Ես կլցնեմ քեզ ուսուցումներով և խորաթափանցությամբ, սակայն Ես ուզում եմ, որ դու լիովին Ինձ հանձնվես ամեն օր, որովհետև ուրիշ ինչպե՞ս Ես կարող եմ գործադրել Իմ Կամքը քո մեջ:

Ե՛կ, հիշիր Իմ Ներկայությունը: Սերը օրհնում է քեզ:

Նոյեմբերի 29, 1989

Աստված իմ, իմ Սիրտը պատրաստ է ընդունելու Քեզ: Ահա Ես լսում եմ:

(Դեկտեմբերի պատգամը աղոթախմբի համար):

Իմ Վասուլա, Ինձ շատ է դուր գալիս, որ դու թույլ ես տալիս Ինձ, որ գործածեմ քեզ: Լսի՛ր և գրիր:

Խաղաղություն ձեզ: Ես ձեր Փրկիչն եմ, Խաղաղության Թագավորը: Ես ձեր Մխիթարիչն եմ, Ես Սեր եմ և Սիրուն է, որ դուք ականջ եք դնում և ձեր Խաղաղության Թագավորի համար է, որ դուք եկել եք հեռվից, որ լսեք Նրան: Այդ ձեր Փրկիչն է, ով փրկագնել է ձեզ, որին դուք լսելու եք այսօր:

Դուք եկել եք Խաղաղություն փնտրելու, և Ես ասում եմ ձեզ. «Ես տալիս եմ ձեզ Իմ Խաղաղությունը»: Դուք մխիթարությո՞ւն եք փնտրում, Իմ սիրելիներ: Եկե՛ք, Ես առատորեն ձեզ մխիթարություն կտամ: Դուք ծարավի եք Սիրո՞: Օ՛, եկեք: Նետվե՛ք Իմ բաց Բազուկների մեջ: Ես Սեր եմ: Իմ փոքրիկ զավակներ, մի՛ թողեք, որ ձեր սրտերը անհանգստանան, Ես երբեք չեմ լքել ձեզ: Ես՝ Հիսուս, միշտ ձեր կողքին եմ: Հետևաբար Ես ցած եմ իջնում այս ձևով, այն պատճառով, որ ձեզ մխիթարեմ և Իմ Օրենքը ձեզ հիշեցնեմ: Ես ձեզ բոլորիդ ուզում եմ ետ կանչել դեպի Սերը, դեպի Խաղաղությունն ու դեպի Միությունը: Ես գալիս եմ ո՛չ դատելու, ո՛չ էլ դատապարտելու ձեզ: Իմ Անսահման Ողորմությունից դրդված Ես գալիս եմ հիշեցնելու ձեզ, որ Ես Սուրբ եմ, և որ դուք պետք է սուրբ ապրեք:

Ես Սիրո Աստված եմ, ոչ թե մի Աստված, որ տանում է ձեզ հուսահատության: Ես Հույսի Աստված եմ և գալիս եմ ձեզ հույս տալու: Օրհնյալնե՛ր, Ես Նա եմ, ով ձեզ ամենից շատ է սիրում: Ես Նա եմ, ով Իր Կյանքը զոհեց ձեր Հանդեպ ունեցած Սիրո համար: Ուրեմն, մի՞թե Ես բոլոր հնարավոր միջոցները չէի ձեռնարկի այս խավար օրերում գալու և ձեզ զգուշացնելու, ձեզ չարից հեռացնելու և Իմ Սրտին մոտեցնելով ձեզ ցույց տալու, որ ձեր Ապաստանը, իրոք, Իմ Սուրբ Սիրտն է:

Ես գալիս եմ խնդրելու նրանց, ովքեր դեռևս չեն հաշտվել Ինձ հետ, որ հաշտվեն և Խաղաղություն կնքեն Ինձ հետ: Այն, ինչ Ես խնդրում եմ, ՍԵՐ է: Իմ Հոգին շռայլորեն հեղվում է ձեր սերնդի վրա՝ Իմ Անսահման

Ողորմությունից դրդված, ու դա չպետք է ձեզ անհավատալի թվա, որ ես խոսում եմ այս ձևով, քանի որ ես եմ Ամենակարողը: Իմ Պատգամները պետք է գիտակցության բերեն ձեզանից շատերին, նրանց, ովքեր շեղվել են ուղուց և մոլորվել, որ հիշեցնեն ձեզ Ճշմարտության մասին: Իսկ նրանց, ովքեր մինչ այժմ չեն հավատում Ողորմության այս աստվածային գործերին, ես կտամ միևնույն հարցը, որ տվեցի փարիսեցիներին. «Ձեզանից որի՞ որդին կամ եզը եթե շաբաթ օրը ջրհորը ընկնի, առանց վարանելու չի հանի նրան»[1]:

Սիրելինե՛րս, ես Ողորմության մի Վիհ եմ, ես Անսպառ Հարստություն եմ, և Իմ Ձայնը պիտի լսվի ամբողջ երկրագնդով մեկ և անդամ ներքևում, այս երկրի խավար որովայնում, ուր մեռելներն են պառկած: Իմ Ձայնը պիտի լսվի և ես պիտի գնամ նրանց մոտ ու հարություն պիտի տամ նրանց՝ նրանցից լույսի այուներ սարքելով, իսկ նրանց, ովքեր շարունակում են դատապարտել Իմ Գործերը, ես ասում եմ. «Փնտրե՛ք Տիրոջը միամիտ սրտով»:

Իմ քահանաներ, Իմ քահանաներ... Դուք բոլորդ, որ Իմ Աստվածային Պատկերի արտացոլումն եք, թույլ տվեք հիշեցնել ձեզ այս տարեվերջում գալ Ինձ մոտ և վերցնել Իմ Սրտից, որը Սիրո մի Վիհ է, և լցնել ձեր սրտերը: Լսե՛ք Իմ Խոսքերը և գործեք դրանց համաձայն: Մի՛ եղեք այն տան նման, որ կառուցված է ավազի վրա, առանց հիմքի, որը կփլուզվի, երբ գետը վարարի ու դա ձեզ վրա: Ամուր եղեք և գործադրեք Ինձանից սովորած դասերը: Ես բոլոր մարդկանց դեպի Ինձ պիտի ձգեմ և Սիրո Հոգին ձեզ բոլորիդ պիտի ցուցադրի Իմ Սուրբ Դեմքը:

Ես գալիս եմ քաջալերելու ձեզ, Իմ սիրելի եղբայրներ: Մնացե՛ք Իմ Սիրո մեջ: Շարունակե՛ք հովվություն անել Իմ ժողովրդին՝ սիրով Սիրո համար: Քայլե՛ք Իմ Լույսի մեջ և ես կառաջնորդեմ ձեզ: Ես եմ աշխարհի Լույսը, և դուք, որ Իմ ընկերներն եք, Իմ ընտրյալները, մտե՛ք Իմ Սուրբ Սրտի մեջ, մտե՛ք Սիրո այս Հնոցը և թույլ տվեք Ինձ բոցավառել ձեր սիրտը, որպեսզի դուք ևս ձեր հերթին գնաք և բոցավառեք այլ սրտեր:

Եկե՛ք Ինձ մոտ անկատար, ինչպես որ կաք և կիսեք Իմ Մեծ Սերը: Ձեր սերը չպետք է միայն բառեր կամ սոսկ խոսքեր լինեն, այլ մի բան, որ իրական ու գործուն: Ձարին՝ բարով հատուցեք... անարդարությանը՝ արդարությամբ... ատելությանը՝ սիրով... Ներե՛ք, ներե՛ք: Թող որ սերը միշտ ներկա լինի ձեր բոլոր գործերում:

Իմ Սուրբ Սրտի զավակներ, դուք ապրում եք դժվար ժամանակներում, երբ Իմ թշնամին տարածել է իր իշխանությունը ինչպես մի ծածկոց: Դրա համար ես գալիս եմ ձեզ խնդրելու, որ կրկնապատկեք ձեր աղոթքները, սրտաբուխ աղոթքները, որ հասնում են Ինձ:

Ե՛կ, ապաշխարի՛ր... խոստովանի՛ր քո մեղքերը, զավակս, մի՛ եկ անարժանորեն Ինձ ընդունելու փոքրիկ սպիտակ Նշխարի մեջ: Ե՛կ և խմի՛ր Ինձ, ե՛կ և ճաշակիր Ինձ և հիշիր, թե Ում ես դու ընդունում այս Սուրբ պահին: Դու ընդունում ես Ինձ, դու Կյանք ես ընդունում: Մաքուր եղիր, որպեսզի Ինձ ընդունես: Առավել քան երբևէ տենչա՛ այս Սուրբ պահը, տենչա՛ ընդունել քո Աստծուն: Նույնիսկ Իմ հրեշտակները վերևից նայում են ձեզ՝ տենչալով այս Կերակուրը, փափագելով լինել

[1] Ղուկ. 14:5

ձեզանից մեկը: Թող քո սիրտը թրթռա ազնվախոհ մտքից՝ ասելով. «Հիսո՛ւս, ես՝ մեղավորս, խնդրում եմ ինձ ներես: Ես արժանի չեմ Քեզ ընդունել, բայց ես գիտեմ, որ Քո միայն մեկ բառով ես կարող եմ բժշկվել»: Մի՛ դադարեք այս բառերն ասելուց, դրանք դուր են գալիս Ինձ և ստիպում Ինձ՝ ձեր Աստծուն, վազել ձեզ մոտ: Դրանք Կարեկցանքով են լցնում Իմ Սուրբ Սիրտը:

Կանչի՛ր Ինձ. «Տե՛ր ողորմեա, Հիսո՛ւս ողորմեա: Ների՛ր ինձ, մեղավորիս»: Խոնարհվե՛ք, և Ես կբարձրացնեմ ձեզ... Ոչնչացրե՛ք ձեզ, և Ես կբարձրացնեմ ձեզ դեպի Ինձ և կպահեմ ձեզ Իմ Սուրբ Սրտում: Ես ձեզ խնդրում եմ, որ այսուհետև <u>ապրեք հաստատուն հավատքով, սիրով և սրբությամբ</u>: Թող Իմ խնդրանքները ձեր կարգախոսը լինեն այս եկող տարում:

Եկե՛ք, մեկ եղեք Իմ Սուրբ Անվան ներքո, ինչպես Ես և Հայրն ենք Մեկ և Միևնույնը:

Ես՝ Տեր Հիսուս Քրիստոսը, օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ Սիրո Իմ Հառաչանքները թողնելով ձեր ճակատին.

ΙΧΘΥΣ

Սերը սիրում է ձեզ:

(Մեր Սուրբ Մոր Պատգամը):

Աստծո զավակներ, խաղաղություն ձեզ: Ես՝ ձեր Սուրբ Մայրը, կարիք ունեմ աղոթքների, որպեսզի իրականացնեմ Աստծո Փրկության Ծրագիրը: Ես կարիք ունեմ սրտից բխող աղոթքների: Թող ձեր աղոթքները հասնեն երկինք, թող դրանք լինեն խնկի նման:

Լցրե՛ք ձեր սրտերը Աստծո Սիրով և ուրախացեք, քանի որ Փրկիչ է ծնվել ձեր փրկության համար, սրտով խոնարհ մի Փրկիչ, որն իջավ երկիր, որ ծառայի և կանչի ճնշվածներին. «Նա եկավ կույրերի աչքերը բացելու, գերիներին՝ բանտից, և խավարում ապրողներին՝ զնդանից[1] ազատելու համար»: Սիրելի զավակներ, այդ նույն Փրկիչն է, որ կանչում է ձեզ այսօր: Այդ նույն Փրկիչն է, որ կանչում է ձեզանից յուրաքանչյուրին իր անունով, որ վերադառնաք Իր մոտ: Դա նույն Հիսուսն է, որ հիշեցնում է ձեզ Իր ուսուցումները: Դա նույն Հիսուսն է, ում Ես, որպես Նրա Մայրը, պահեցի Իմ Գրկում, խանձարուրով փաթաթեցի, որ ծնված էր ծառայելու, որ ծնված էր փրկելու ձեզ: Եվ այժմ այդ նույն Հիսուսն է մշտապես կանչում ձեզ ձեր փրկության համար: Այդ նույն Փրկիչն է, որ հիշեցնում է ձեզ, որ դուք բոլորդ պատկանում եք Իրեն: Նա տեսանելի դարձավ մարմնով և զոհաբերվեց ձեզ համար, զավակներս, որպեսզի ձեզ ազատ արձակի:

Եկեք ուրեմն, ցնծացե՛ք ու լցվեք ուրախությամբ: Եկե՛ք և հռչակեք Նրա Սուրբ Անվան մեծությունը: Եկե՛ք և եղեք Նրա խոսքը տանող ուրախ պատգամատարները: Ես սիրում եմ ձեզ, և հավատացեք Ինձ, Իմ

[1] Ես. 42:7

Թիկնոցը բավականաչափ լայն է ձեզ բոլորիդ դրա տակ պահելու համար[1]: Եկե՛ք Տիրոջ մոտ, մի՛ վախեցեք Նրան ցույց տալ ձեր թուլությունները: Եկե՛ք Տիրոջ մոտ և տվեք Նրան ձեր սիրտը, և Նա այն կընդունի որպես կնդրուկ, զմուռս և ոսկի:

Մենք սիրում ենք ձեզ... Մենք սիրում ենք ձեզ անսահմանորեն: Անձնատուր եղեք Նրան: Հիսուս գալիս է ձեզանից յուրաքանչյուրի մոտ: Նա գալիս է ազատելու այս աշխարհի գերիներին, որ նրանց ազատություն տա, գերվածների, որոնք աղավնիների նման բռնվել են և չարի կողմից վանդակներում բանտարկվել: Սակայն Հիսուս առանց հոգնելու գնում է վանդակից վանդակ և ազատում ամեն մի բանտարկյալի:

Զավակներս, ապրե՛ք Տիրոջ Երկնային Պատվիրանների և Օրենքի համաձայն, քանի որ Երկնքի Օրենքը ամփոփվում է մի եզակի բառի մեջ, և այդ բառը <u>ՍԵՐՆ</u> է:

Ես՝ ձեր Սուրբ Մայրը, գիշեր ու զոր բարեխոսում և աղոթում եմ ձեզ համար: Ես տալիս եմ ձեզ Իմ Սերը և օրհնում եմ ձեզ բոլորիդ և ձեր բոլորի ընտանիքները:

(Ես կրկին լսեցի, թե ինչպես էր Սուրբ Հոգին ինձ համար ամբողջ գիշեր անդադար աղոթում և վերջում, վաղ առավոտյան, Սուրբ Հոգին խնդրեց ինձ կրկնել Իր հետ այս աղոթքը.«Pere aide moi, car Ta Puissance est Amour». այն տրվեց ինձ ֆրանսերենով և նշանակում է. «Հա՛յր, օգնիր ինձ, քանի որ Քո Զորությունը Սեր է»):

Տե՛ր, չնայած, որ շատ ազգեր
ընկել են իրենց իսկ փորած փոսը,
և նրանց ոտքերը բռնվել են
իրենց իսկ լարած ծուղակում,
սակայն Դու ողորմիր նրանց:
Տե՛ր, լսիր նրանց,
նրանցից լիովին Քեզ փառաբանող
նոր սերունդ պատրաստիր,
իմ Արքա:
Ես քեզ նորից եմ խնդրելու,
Տեր Սիրո, Տեր Ողորմության
որ նրանք, ովքեր լսեցին ու լսեցին,
բայց երբեք չհասկացան,
որ լսեն այս անգամ՝
հանուն Քո Սիրո,
և նրանք, որ կրկին ու կրկին տեսան,
բայց չընկալեցին,
ընկալեն այս անգամ՝
հանուն Քո Մեծ Ողորմության՝
մտնելով Քո Խորհրդի մեջ:
Փափկացրո՛ւ նրանց սիրտը,
որպեսզի նրանք կարողանան

[1] Մեր Սուրբ Մայրը ժպտում էր:

ամբողջապես հասկանալ
իրենց սրտով և ոչ թե մտքով,
և այսպիսով դարձի գան
ու բժշկվեն Քո Աստվածությամբ:
Այդ ժամանակ նրանք կհասկանան,
թե որքան հրաշալի են
Քո Որոշումները,
և նրանց հոգին չի ընդդիմանա,
այլ կհարգի դրանք:

Զավա՛կս, Իմ Անունը նորից ես կփառավորեմ. միայն սպասիր և տես: Սա միայն սկիզբն է:

Տե՛ր, Դու նման ես կլանող Կրակի, և ես գիտեմ, որ Դու գործում ես շատ սրտերում: Տե՛ր, ես ապրում եմ Քեզ համար, ինձ շատ մոտ մնա այս աքսորի մեջ:

Ապրի՛ր Ինձ համար՝ համակված Ինձանով, ապրի՛ր Իմ Թևերի տակ: Իմ սիրով տոգորված՝ ծաղկիր այժմ և բարգավաճիր: Տարածի՛ր քո ճյուղերը բևեկնիի նման: Ասա՛ Ինձ, որ ես Նա եմ, ում դու սիրում ես ամենից շատ: Եղի՛ր Իմ Երգը, փոքրիկս, եղի՛ր Իմ Երկինքը և կրկին փառավորիր Իմ Սուրբ Անունը: Հենվիր Ինձ վրա, երբ հոգնած ես, օ՜, այո՛: Ուրախացրո՛ւ Ինձ և զգա՛ Իմ Ներկայությունը: Օ՜, այո՛: Քաղցիր ու ծարավիր Ինձ համար, նայի՛ր քո Թագավորին: Նայի՛ր Նրան, ով փրկեց քեզ: Նայի՛ր, ծաղիկս, Իմ Գեղեցկությանը: Ազատ ես, աղավնյակս, վերջապես ազատ ես:

Մտի՛ր այժմ Իմ Սուրբ Սրտի մեջ, և թող Այն կլանի քեզ ամբողջապես և դարձնի ոչ այլ ինչ, եթե ոչ մի կենդանի կրակ՝ խանդոտ Սիրուց բխող Սիրով: Ես Սիրո Բոցավառ Կրակ եմ, և Իմ Սերը, իրոք, կլանող Կրակ է: Փափագի՛ր Ինձ: Ես փառավորվում եմ: Տարածի՛ր այս սերը Հանուն Ինձ: Իմ Ձեռքը շատ ազգերի վրա է: Ամեն բան շուտով կկատարվի ճիշտ ժամին ու ժամանակին:

Սիրի՛ր Ինձ: Փափագի՛ր Ինձ: Ե՛կ, մենք, մե՞զ:

Այո՛, Տեր, հավիտյան: Փառք Աստծո:

Դեկտեմբերի 4, 1989

Տե՛ր իմ, ինձ մի թող հալածիչների կամքին: Սուտ վկաներ են դուրս եկել իմ դեմ: Այն օրից, ինչ ես փորձում եմ այսօրվա երիտասարդությանը հայտնի դարձնել Քո ուղիները և սովորեցնել նրանց Քո ճամփաները, Զարը կրկնապատկել է իր կատաղությունն իմ դեմ: Այո՛, Տեր, այն օրից, ինչ ես հաղորդեցի Քո Պատգամները և ցույց տվեցի Քո Սուրբ Դեմքի քաղցրությունը, Զարն օգտագործում է ինձ մեղադրողներին, որոնք նրանից խաբված և կուրացած՝ հալածում և թունավորում են ինձ:

Իմ Վասուլա, ուժեղ եղիր, Իմ Սուրբ Սիրտը քո Ամրոցն է: Ե՛կ, զավակս, և թաքնվիր Նրա խորքերում: Ազատված Իմ Ձեռքով, Սերը սիրում է քեզ: Տեսնո՞ւմ ես, զավակս, այս մարդիկ չեն խոսում Իմ Լեզվով: Սիրո Իմ Լեզուն, իրոք, երբեք չի թափանցել նրանց մեջ: Դու այժմ լիովին գիտես, որ որևէ մեկին, որ ես բարձրացնում եմ դեպի Ինձ, ով խոսում է Իմ լեզվով և փորձում է նվիրումով Ինձ մոտ ապրել, նա անպայման հարձակման է ենթարկվում: Իմ լեզուն Սիրո լեզու է, բայց նրանք չեն հասկացել, որ եթե իրենք հերետիկոս են կոչում քեզ[1], նրանք Ինձ են կոչում հերետիկոս և Իմ Ողջ Թագավորությունը, քանի որ Իմ Թագավորությունը հիմնված է Սիրո վրա: Այս սպասավորները կարիք ունեն շատ աղոթքների՝ զոհաբերությունների հետ մեկտեղ:

Ամեն հոգի, ով դատապարտում է Իմ Պատգամը, ստիպված կլինի Դատաստանի Օրը Իմ առաջ կանգնել և հաշիվ տալ Ինձ: Հավատա ես խստորեն կդատեմ նրան: Հիշի՛ր, որ այնուամենայնիվ ես միշտ քո կողքին եմ: Մշտապես մտածիր այս բանի մասին, Իմ Վասուլա: Ե՛կ, եկ աղոթենք.

Հա՛յր, Դու, որ բարձրացրեցիր
իմ հոգին այս խավար աքսորից
և տեղավորեցիր ինձ
Քո Թևերի տակ, ողորմի՛ր ինձ:
Բարձրացրո՛ւ ինձ,
երբ ես վախենում եմ,
շնորհի՛ր ինձ
Քո Խաղաղությունն ու Սերը:
Հաստատի՛ր ինձ
ավելի մեծ Հավատի մեջ,
որպեսզի կարողանամ կրկին
փառավորել Քո Սուրբ Անունը:
Ամեն:

Սերը քո կողքին է, և Ես ճանաչում եմ յուրայիններիս և յուրայիններս ճանաչում են Ինձ: Բայց Ես կվերցնեմ տեսողությունը նրանցից, ովքեր տեսնում են և կտամ նրանց, ովքեր կույր են:

Ե՛կ, եղիր Իմ Խունկը և հաճեցրու Ինձ՝ չմերժելով Ինձ ոչինչ: Իմաստությունը կսովորեցնի քեզ, ե՛կ:

Մենք, մե՞ղ, Տեր:

Մենք, մեզ, սիրելիս:

ΙΧΘΥΣ

[1] Մի քահանա ինձ հերետիկոս կոչեց, որովհետև Հիսուսն այնքան քնքշորեն է վերաբերվում ինձ և ինձ «նշանած» է կոչում: Նա մոռանում է, որ բոլոր միանձնուհիները «ամուսնանում են» Հիսուսի հետ, և Նա նրանց Փեսան է: Հետևաբար, ես ինչո՞ւ չեմ կարող Հիսուսի նշանածը լինել:

(Ես զգացի, որ Հիսուս կանչում է ինձ: Ես պետք է փութայի Նրա մոտ):

Աղջի՛կս, դու Իմ Աչքի լույսն ես: Թող ոչ ոք քեզ չմոլորեցնի, որ այլ կերպ մտածես: Քո թուլությունը անընդատ դրվում է Ինձ, քո անկարողությունը հիշեցնում է Ինձ Իմ առաջին աշակերտներին, երբ նրանք ստիպված էին շարունակ կախված լինել Իմ Կարողությունից: Աղջիկս, պաշտի՛ր Ինձ և կառչի՛ր Ինձ, քանի որ Ես եմ Կյանքը:

ΙΧΘΥΣ

Իմ Վասուլա, Ինձ՝ քո Աստծուն հնազանդվելը ավելի առաջնային է, քան թե մարդկանց հնազանդվելը: Խորհրդածիր այս խոսքերի վրա:

Տե՛ր, ես այսօր չեմ կարողանում կենտրոնանալ:

Բարձրացրո՛ւ քո հոգին դեպի Ինձ՝ ճնշելով դրսի մտահոգություններդ: Ամփոփվի՛ր քո մեջ և զգա Իմ Ներկայությունը: Թող քո հոգին խոկումից բարձրանա դեպի հայեցողություն: Հանդիպիր Ինձ՝ քո Աստծուն լռության մեջ: Ինձ մոտ եկ հայեցողական երկրպագության, հասկանո՞ւմ ես: Այժմ Վարդարանն աղոթիր:

(Հիսուս նկատի ուներ, որ ես դա անէի, թելադրության ժամանակ):

Ես լսում եմ Իմ Մոր հետ միասին:

(Ես աղոթեցի Վարդարանի սկզբը, մինչև առաջին խորհուրդը, որն այսօր Փառահեղ խորհուրդն էր):

Ես հարություն առա: Աղոթե՞նք: Ես կօգնեմ քեզ խոկալու, ե՛կ:

(Առաջին խորհուրդը վերջացնելուց հետո)

Զգույշ եղիր, որ չկորցնես կենտրոնացումդ: Անցի՛ր հաջորդ խորհրդին, երբ Ես Հոր մոտ համբարձվեցի: Սիրելիս, աղոթի՛ր: Ամեն...

Այժմ անցի՛ր Իմ երրորդ խորհրդին, երբ Իմ Սուրբ Հոգին իջավ Կրակի լեզուների պես: Աղոթի՛ր գալիք Հոգեգալստի համար: Ձեր սերունդն արդեն զգում է Դրա երկունքի ցավերը: Գիշերը գրեթե վերջացել է, շուտով արևածագ կլինի, և երբ այն գա, չարը, որը հեշտությամբ սողոսկել էր գիշերով, արշալույսի հետ պիտի փախչի: Այո՛, արդարև, Շնորհի Իմ Հոգին հեղվելու է ողջ մարդկության վրա, և ձեր սերունդը կերակրվելու է ուղղակի Իմ կողմից: Ես սովորեցնելու և առաջնորդելու եմ ձեզ և նույնիսկ Երկնքի Իմ սրբերը և Իմ հրեշտակները հանդիպելու են ձեզ փողոցի ամեն մի անկյունում: Ես տեղալու եմ ձեզ վրա Իմ Հացը: Ցնծացե՛ք և ուրախացեք: Ես՝ Տերս, աշխարհի Լույսն եմ. ով ականջ ունի, թող լսի: Արիացե՛ք, արշալույսը շուտով ձեզ վրա կբացվի:

Ե՛կ, խոկա՛: Այժմ գալիս է չորրորդ խորհուրդը՝ Իմ Սիրելի Մոր Վերափոխումը: Օրհնյա՛լ եղիր... և խոկա:

Օրհնյալս, եկ այժմ սկսենք հինգերորդ խորհուրդը, որտեղ Ես՝ Տերս, թագադրում եմ Իմ Մորը և կոչում Նրան Երկնքի Թագուհի: Աղջի՛կս, Ես ուզում եմ, որ դու հայեցողությամբ մոտենաս այս փառավոր խորհրդին: Ե՛կ, Իմ Մոր նկատմամբ ամեն մի բարեպաշտություն հաճելի է Իմ Սրտին:

Ե՛կ, գրիր: Ես քո կողքին եմ: Ցնծա՛ հոգի, վերցրու մատիտդ և արտագրիր այս ամենը:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 6, 1989

Տե՛ր իմ, եթե Քեզ հաճելի է, սովորեցրու ինձ համբերատար լինել, ինչպես որ Հոբն էր համբերատար ու հավատարիմ Քեզ:

Վստահի՛ր Ինձ, Ես կսովորեցնեմ քեզ Ինձ նման համբերատար լինել:

Տե՛ր իմ, եթե դա քո ցանկությունն է, ապա ինձ քաջություն տուր ճիշտ այնպես, ինչպես Քո աշակերտներին տվեցիր:

Ծաղի՛կս, երբ Ես հիշեցնեմ քեզ, թե ինչպիսի համբերությամբ Ես կրեցի Իմ Խաչը՝ անտեսելով Դրա ամոթալի լինելը, այդ ժամանակ դու չես ընկրկի քաջության պակասի պատճառով: Դու առաջնորդվում ես Իմ Հոգով: Իմ նպատակը անաստվածությանը վերջ տալն է:

Ա՜հ, զավակս, շատերը չեն լսի Իմ Ձայնը, որովհետև ձեր սերնդին պակասում է խոնարհությունը: Ամեն անգամ, երբ Ես մոտենում եմ Իմ զավակներին մի թույլ գործիքի միջոցով, Իմ յուրայինները, նրանցից շատերը, խլացնում են Իմ Ձայնը: Աղջի՛կս, նրանց զգուշությունը դառնում է անխոհեմություն, քանի որ նրանք չեն ճանաչում Իմ Աստվածային Գործերի Պտուղները և հրաժարվում են հավատալ: Բայց, ինչպես նախկինում եմ ասել, նրանք չեն հավատում, որովհետև նրանք Իմ ոչխարները չեն: Այն ոչխարները, որոնք Ինձ են պատկանում, լսում են Իմ Ձայնը: Ես ճանաչում եմ նրանց, և նրանք ճանաչում և հետևում են Ինձ: Եվ այս առումով, նրանց վերաբերող մարգարեությունները իրականանում են.

«Ժամանակների վերջում կլինեն մարդիկ, որոնք կծաղրեն կրոնը և կհետևեն բացառապես իրենց ամբարիշտ ցանկություններին: Այս ոչ-հոգևոր և եսասեր մարդիկ ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ խառնակիչներ[1]», և «դու, որ կենդանի ես համարվում, սակայն մեռած ես»: «Արթնացի՛ր, ասում եմ քեզ, վերակենդանացրու այն քիչը, որ մնացել է և որը մեռնելու մոտ է»[2]:

Նրանք ոչ միայն մեռած են, այլև իրենց ընկած վիճակում ուզում են նաև զրկել Իմ զավակներին Իմ Երկնային Հացը ճաշակելուց: Նրանք մոռանում են, որ Ես եմ, որ իշխում եմ նրանց վրա, և տալիս եմ Շնորհի

[1] Հուդա 1:18-19
[2] Հայտ. 3:2

Իմ Հոգին նրան, ում ուզում եմ և բարձրացնում եմ մարդկանց մեջ ամենանվաստին: Նրանք չարությամբ փակում են դուռը Երեսիս: Զայրույթով լցված Իմ հրեշտակների հանդեպ, նրանք ոչնչացնում են այս սերնդի բոլոր հույսերը: Նրանք Շնորհի Իմ Սուրբ Հոգուն վերաբերվում են ոչ ավելի լավ, քան փարիսեցիներն էին վերաբերվում Ինձ՝ երկրի վրա:

Իմ Վասուլա, Իմ Հոգու սիրելի, արիացի՛ր, թույլ տուր քեզ ասել հետևյալը. Ես ձեզ բոլորիդ[1] դրել եմ Իմ Ճանապարհի վրա, որպեսզի կիսեք խաղաղության և Սիրո Իմ խաչը:

Տե՛ր, իսկ ի՞նչ կասես «...»-ի համար:

Նա ևս Իմ Սիրո զոհն է, Իմ Հոգու զոհը, Սիրո խանդոտ սիրո զոհը: Ցնծա՛, որովհետև դու արդեն զգում ես Գեթսեմանիի[2] իմ տառապանքները: Սակայն հավատա ու վստահիր Ինձ, քանի որ Ես քո կողքին եմ, որպեսզի Իմ խաչը քեզ հետ կիսեմ մինչև վերջ: Ես և դուք, Իմ սիրելիներ, դուք և Ես, միասին կլանանք և ասում եմ ձեզ՝ լեռները կցնցվեն և հովիտները կձևափոխվեն, բայց Իմ Սերը ձեզ երբևիցէ չի թողնի: Ձեր հանդեպ Իմ Սերը անխախտ է և Իմ Հավատարմությունը՝ հաստատուն, հասկանո՞ւմ եք:

Ապավինի՛ր Ինձ, և Ես կհանգստացնեմ քո հոգին, սակայն Ինձ ևս թույլ տուր քեզ խնդրել, որ դու էլ Ինձ հանգստ տաս, երբ Իմ Հոգին հոգնած է: Թույլ տուր Իմ խաչը դնել քո ուսերին՝ հանգստանալու համար: Ես՝ Տերս, կհիշեցնեմ քեզ Իմ Ներկայությունը:

Խաղաղություն քեզ: Փափագի՛ր Ինձ: Սերը սիրում է քեզ, սիրի՛ր Ինձ:

ΙΧΘΥΣ

Ավետարանի՛ր սիրով Սիրո համար:

Դեկտեմբերի 7, 1989

Քանի որ Դու Մեկ ես,
Տեր, առաջնորդի՛ր մեզ Մեկ Հավատի
և Մեկ Մկրտության:
Տե՛ր, Դու Մեկ Աստված ես,
ամենքի Հայրը,
ամենքի վրա, ամենը՝ ամենի մեջ:
Մենք, բոլորս, անընդունակ ենք
հանդելու մեկ հասկացողության,
մենք համառ ենք...
Մի՞թե Դու մեզ այդպես կթողնես:

[1] Բոլոր նրանց, ովքեր այս կամ այն ձևով մասնակցած են այս պատգամների ցրմանը:
[2] Սա ուղղված էր (x)-ին:

Աղոթեք, որ դուք բոլորդ մի հասկացողության հանեք: Ես ձեզ ստեղծել եմ, ձեզ ազատություն տալով, որ ընդունեք ձեր սեփական որոշումները: Ձեր կարողության սահմաններում է գտնվում Ինձ հավատարիմ լինելը և Իմ Պատվիրանները պահելը: Ես ձեզ երբեք չեմ պատվիրել մեղանչել. ուրեմն աղոթեք, որ Իմաստությունը լուսավորի այս սերնդին, որպեսզի նա սկսի տարբերել իր աջ ձեռքը ձախից:

(Այս պատգամը երիտասարդական աղոթախմբի համար է):

Հայտնի դարձրեք Ինձ մարդկությանը, այնպես, ինչպես Ես եմ ձեզ սովորեցրել: Ես Սիրո ու Ողորմության Աստված եմ: Ես բարդ Աստված չեմ, և Ես երբեք չեմ հալածում որևէ մեկին հասցնելով նրան մահվան դուռը: Հասկացե՛ք՝ Ես տալիս եմ և ակնկալում ստանալ ըստ կարողության: Ես երբեք որևէ մեկից ավելին չեմ պահանջի, քան այն, ինչ նա կարող է տալ: Ես չեմ խնդրում ավելին, քան նա ընդունակ է տալու: Ես յուրաքանչյուրից խնդրում եմ մի փոքր փոխադարձ սեր, մի ժպիտ, մի մտածում, մի բարի խոսք: Սրտաբուխ դեթ մի խոսքն Իմ կողմից կընդունվի որպես միլիոնավոր աղոթքներ: Սա կարևոր նշանակություն ունի... անգամ պարզ մի մտածում Ես կընդունեմ որպես մի շատ թանկարժեք բան:

Ես խենթի նման սիրում եմ ամեն մի հոգու: Ես շատ Քնքուշ ու Հեզ Աստված եմ: Ես Մեղմ եմ Իմ զավակների նկատմամբ: Ով Ինձ ներկայացնում է Իմ զավակներին որպես մի խստապահանջ ու շուտ բարկացող Աստծո, նա վնասում է Իմ Եկեղեցուն: Ես համբերատար եմ և հապաղում եմ բարկանալիս, սակայն փութկոտ եմ ներելիս ու մոռանալիս:

Ոչ ոք թող չասի, որ Ես միայն սուրբ մարդկանց եմ փնտրում: Ես հայտնի եմ նրանով, որ ման եմ գալիս ու գտնում եմ հիվանդին ու թշվառին: Նրանց թշվառությունը գրավում է Ինձ, նրանց՝ Ինձ հասնելու անկարողությունը ավելի մեծ ցանկությամբ է լցնում Ինձ՝ բարձրացնելու նրանց Ինձ մոտ և սեղմելու նրանց Իմ Սրտին:

Ես Հիսուսն եմ, իսկ Հիսուս նշանակում է Փրկիչ, և Ես գալիս եմ փրկելու և ոչ թե դատապարտելու:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Զավա՛կս, դու հավատո՞ւմ ես, որ այդ Ես եմ՝ Հիսուս, որ հանդիպում եմ քեզ այսպիսի յուրահատուկ ձևով:

Այո՛, հավատում եմ, Տեր:

Դու հավատո՞ւմ ես, որ այդ Ես եմ՝ Հիսուս, ում դու ամբողջ ժամանակ տեսնում ես ամենուր:

Այո՛, հավատում եմ, Տեր: Ինչո՞ւ ես հարցնում ինձ, Տեր:

Որ լսեմ քեզ դա ասելիս, զավակս: Ուրեմն ուրախ եղիր, և օրհնի՛ր Ինձ, քանի որ դու Իմ Հոր շնորհի տակ ես գտնվում, թեև դու պետք է ջանաս անդադար բաձրացնել քո հոգին: Ես քեզ տվել եմ քո հոգու աչքերով Ինձ տեսնելու և Իմ Ձայնը զանազանելու շնորհը: Թույլ մի տուր աշխարհին, որ քո նկատմամբ մենաշնորհ ունենա այժմ, երբ դու արդեն չես պատկանում իրեն: Իմ Իմաստությունը կընդլայնի քո գիտելիքները:

Մեղմ ու բարի եղիր աղքատների հետ, ինչպես Ես եմ մեղմ ու բարի քեզ հետ. պաշտպանի՛ր նրանց շահերը: Ոչ մի հայր չի թողնում իր զավակին անապատում, ուրեմն համբերատար եղիր, ինչպես Ես եմ համբերատար քեզ հետ: Աղջիկս, մի՛ ջանա բացահայտել բաներ, որոնք վեր են քո ուժերից, քանի որ դու կարող ես մոլորվել քո սեփական ենթադրությունների պատճառով և այդպիսով մոլորեցնել նաև ուրիշներին: Վստահի՛ր Ինձ, և Ես քեզ գիտելիքներ կտամ, որ դու կարողանաս ընկալել քո կարողության համեմատ: Լսի՛ր Իմ Խոսքերը և ոչ թե ուրիշներինը: Հենվի՛ր Իմ Ուսին, երբ հոգնած ես: Թող Իմ Ուսը քեզ Գլխատակ, և Իմ Սուրբ Սիրտը քեզ Ապաստան լինի:

(Ավելի ուշ)

Կերակրվձաչակի՛ր Ինձանից, սովորի՛ր Ինձանից, մխիթարի՛ր Իմ զավակներին: Կգրե՞ս այժմ[1]: Ես երջանիկ եմ զգում, որ դու կառչում ես Ինձ: Նվիրվածությունը բաց կպահի քո աչքերը և քո հոգին հեռու կպահի նիրհից: Ե՛կ, ուրախ եղիր, որ Ես հարություն տվեցի քեզ մեռելներից, նրանցից, ովքեր տարիներով մեռած էին ու քայքայված:

Հիսո՛ւս, ես արդեն այս մասին խնդրել եմ Քեզ և խնդրում եմ նորից, եթե Քո Կամքն է, մեռածների և անդամ քայքայվածների հետ արա այն, ինչ դու արեցիր ինձ հետ: Կյանքի կոչիր նրանց և թույլ տուր ապրել Քո Լույսի ներքո:

Մահը կուլ կգնա հաղթանակով Հարուցյալի առջև, քանի որ Ե՛ս եմ Կյանքը: Ե՛ս եմ Հարությունն ու Կյանքն ինքնին, և նա, ով գալիս է ճաշակելու Իմ Մարմինը և խմելու Իմ Արյունը, հավիտենական կյանք կունենա:

Ե՛կ, Ես քեզ կթելադրեմ ուրիշ հայտնություններ Իմ Սուրբ Հաղորդության մասին: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ Ինձ այս ձևով միանալու համար և թույլ տալու համար, որ գործածեմ քեզ՝ գրելու Իմ Խոսքերը: Աշխատի՛ր տքնաջան, Իմ Վասուլա, այս ամենը զուր չի լինելու: Ե՛կ, Ես կառաջնորդեմ քեզ քո բոլոր նախաձեռնությունների մեջ, ամուր եղիր:

(«Ամուր եղիր»-ը ասվեց, որովհետև, երբ Հիսուս ինձ թելադրում էր, չարը փորձեց կրկին ինձ ներշնչել, որ այս ամենը գալիս է իմ ենթագիտակցությունից: Եվ դրա համար Հիսուսն ինձ ասաց. «ամուր եղիր»: Սատանան իսկապես տհաճ ու ձանձրալի է, մինչդեռ մյուս դևերը, որոնց ես մեծ ուշադրություն չեմ դարձնում, նույնպես տհաճ են, սակայն քիչ թե շատ

[1] Ես կառչել էի Հիսուսին և չէի ուզում թողնել այդ պահը և թույլ տալ, որ Նա հեռանա:

նման են շուրջս բզզացող ճանճերի, և նրանք վախենում են ինձանից՝ չնայած կուզենային, որ հակառակը լիներ: Այնուամենայնիվ, նրանք չար են և անհրաժեշտ է զգույշ լինել: Այս դևերին հաջողվում է հարձակվել, երբ նկատում են, որ հոգին նիրհում է, կամ թուլացած է ու վարանած: Աղոթքները ուղղակի «սպանում են» ու հեռու պահում նրանց: Հավատը Տիրոջ Սիրո և Ողորմության հանդեպ ոչնչացնում է այս դևերին, որոնք «բզզում» են մարդու ականջների մոտ, որպեսզի մեզ չարիք «ներշնչեն» Ճշմարտության քողի տակ և Սիրուց հեռացնեն: Դրա համար էլ Տերը ուզում է, որ մենք իրազեկ լինենք և անդադար աղոթենք: Անդադար աղոթքը այս դևերին հեռու է պահում և իրեն՝ Սատանային նույնպես: Աղոթքները ապահովության պատնեշ են դառնում մեր շուրջը՝ հեռու պահելով Սատանային և բոլոր մնացած դևերին: Այո՛, սա մշտական պայքար է:)

Դեկտեմբերի 13, 1989

Իմ Տեր ու Փրկիչ, այդ Դո՞ւ ես:

Սիրելիս, սիրի՛ր Ինձ: Հիշի՛ր, Վասուլա, որ Ես շատերի միջից քեզ նախընտրեցի: Այս Շնորհը, որ Ես տալիս եմ քեզ, մեծ պարգև է, որպեսզի դու ոչնչանաս Իմ մեջ, քո Աստծո մեջ: Իմ փոքրիկ տունկ, դու ոչ մի արժանիք չունես, այնուամենայնիվ, քեզ Ինձ մոտ բաձրացնելու և քեզ Իմ մեջ ունենալու բաղձանքն այնպիսին է, որ Ես անտեսում եմ, թե ինչպիսին ես դու և նույնիսկ քո մեղքերին ուշադրություն չեմ դարձնում և ներում եմ քեզ: Հիմա դու հասկանո՞ւմ ես Իմ բուռն Սերը:

Փոքր մնա, երբե՛ք մի դադարիր Ինձ կանչելուց, երբե՛ք մի դադարիր Ինձ ծարավի լինելուց: Հենվի՛ր Ինձ վրա, երբ հոգնած ես, մնա Իմ մեջ, որովհետև դա Ինձ դուր է գալիս:

Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 14, 1989

Փառավորիր Ինձ, սիրելով ու պաշտելով Ինձ՝ քո Աստծուն, հասկանո՞ւմ ես: Այժմ դու գիտես, թե ինչ է նշանակում լինել Աստծո մեջ և ապրել Իմ մեջ: Ես քո Սիրելի Հայրն եմ, որ քեզ ամուր պահում է Իր կրծքին, այնպես, ինչպես մայրն է իր մանկանը պահում կրծքին՝ կերակրելով ու տաքացնելով նրան: Այդպես էլ Ես եմ քեզ հետ: Ես կերակրում ու հանգստացնում եմ քեզ: Դու չպետք է անհանգստանաս, քանի որ քո կյանքի աղբյուրը բխում է անմիջապես Ինձանից: Դու չպետք է վախենաս, քանի որ պարուրված ես Իմ Սիրով և Իմ Բազուկների մեջ ես դու: Ես եմ քո Պաշտպանը և Իմ կողքին դու ապահով ես: Ես՝ Տերս, աճեցրի քեզ, ինչպես մի մայր, որը լավ է խնամում իր զավակին: Սիրելիս, Կյանքի Աղբյուրը բխում է Ինձանից, օրհնյալ եղիր:

Դեկտեմբերի 16, 1989

Խաղաղություն քեզ:

Սրբությունը չի գալիս մեկ օրում, դու պետք է շարունակես այս ճանապարհը, որը լի է խոչընդոտներով և փոքրիկ խաչերով: Ինձանից մի՛ հեռացիր: Դու ուզո՞ւմ ես շարունակել: Դու կշարունակե՞ս այս ճանապարհը Ինձ հետ մինչև վերջ:

Ես Քեզ չեմ թողնի, Տեր իմ: Օգնի՛ր, որ իմ ձեռքերը, որոնք ամուր կառչած են Քո Հագուստին, չթուլանան:

Կառչի՛ր Իմ Խաչին, և Իմ Խաչը կառաջնորդի քեզ դեպի Կատարելություն: Քո կողքին ես եմ, ես միացած եմ քեզ:

Աղոթի՛ր, Իմ Վասուլա, քանի որ նվիրումն է, որ առաջին հերթին բխում է սիրուց: Ես՝ Տերս, համակել եմ քեզ Իմ Սիրով: Ես խնդրում եմ ամեն մի հոգու գալ և մխրճվել այս Սիրո Օվկիանոսում, որպեսզի նրանք ևս կարողանան հագենալ և զգալ այս Սերը: Ես՝ Հիսուս, սիրում եմ ձեզ բոլորիդ: Մտի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ: Ես տենչում եմ պահել քեզ Իմ Սրտի Խորքերում, պահել քեզ ընդմիշտ և միայն Ինձ համար: Ծաղիկս, սիրի՛ր Ինձ, սիրի՛ր, պաշտի՛ր Ինձ, պաշտի՛ր, և Ես մնացածը կանեմ: Սովորի՛ր ասել. «Հիսո՛ւս, իմ սիրտը դարձրու Քո հանգստի վայրը, ե՛կ և հանգստացիր, Տեր»:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 17, 1989

(Ես այն զգացումն ունեի, թե Տերը հեռու է ինձանից: Ես խուճապի եմ մատնվում, երբ այսպիսի զգացողություն եմ ունենում: Ես գիտեմ, սա ամբողջովին իմ մեղքն է, և դա ևս մի ծանր փորձություն է: Իմ ձեռքից միայն խզբզոց դուրս եկավ իմ նոթատետրի էջի վրա: Տերը անմիջապես եկավ ինձ օգնության և ասաց գրելով.

«Մի՞թե քեզ պիտի հիշեցնեմ, որ ձեռքդ «ազատ» չթողնես: Ես ուզում եմ, որ դու լսես: Ես քո կողքին եմ, բայց քո հոգին հեռու է Ինձանից: Լսի՛ր, Ես՝ Տերս, ուզում եմ, որ դու լսես: Միացի՛ր Ինձ, մե՛կ եղիր Ինձ հետ, Ես և դու, դու և Ես: Այդպիսով ՄԵՆՔ կարող ենք աշխատել միասին, հասկանո՞ւմ ես: Ուշադիր եղիր, Վասուլա: Միավորված լինելով, ՄԵՆՔ կարող ենք միասին աշխատել»:

Ես խուճապի մատնվեցի, որովհետև, հայտնություններ ստանալով և առաջնորդվելով այսպիսի արտասովոր կերպով ու ճաշակելով Երկինքն ու Աստծո Ներկայությունը՝ առանց որևէ արժանիք ունենալու, հանկարծ ինձ թվաց, թե Երկինքը մի փոքր փակել է Իր դռները, և Ես չէի զգում Նրա Ներկայությունը):

Մի՛ վախեցիր, Ես անհամբեր սպասում էի այս պահերին, երբ Ես քեզ հետ միասին կլինեի: Այնպես որ, երբևէ այլևս չհավատաս, թե Ես քեզ դուրս

կզցեմ: Ես պարզապես փորձեցի քեզ, որ դու ուշքի գաս քո թմբիրից, և ես աշխատեմ քեզ հետ միասին մինչև վերջ: Թող քո սիրտը ցնծա ուրախությունից Իմ Ներկայության մեջ: Ես դեռևս շատ բաներ ունեմ քեզ ասելու, բայց դու ի վիճակի չես դրի առնել այդ ամենը: Դու փխրուն ես, և Ես գիտեմ, որ դու նաև թույլ ես:

Ե՛կ, դու կարիք չունես բառերի միջոցով Ինձ հետ խոսելու՝ ասելու համար, որ դու սիրում ես Ինձ. խոսի՛ր քո սրտով: Տենչա՛ Ինձ, սիրի՛ր Ինձ, հայի՛ր Ինձ, և դու կկատարես Իմ Կամքը, քանի որ Իմ Կամքն այն է, որ դու սիրես ու պաշտես Ինձ: Հետևաբար, հենց միայն այս անելով, <u>ԱՄԵՆ ԲԱՆ</u> կկատարվի Լռության մեջ: Տո՛ւր Ինձ քո կամքը, տուր Ինձ այն, ինչ դու ունես՝ կամքդ, անձդ, հաճույքներդ, ամեն-ամեն բան:

Տե՛ր իմ, ես տալիս եմ Քեզ իմ կամքը, անձը, հաճույքները և այն ամենը, ինչ Դու ուզում ես: Քեզ ԱՋԱՏ զգա, իմ Թագավոր, վերցնել ինձանից այն, ինչ Դու ուզում ես:

Դրա փոխարեն դու տակավին ուզո՞ւմ ես Խաղաղության ու Սիրո Իմ Խաչը:

Այո՛, Տեր իմ, լիովին: Եթե անգամ Դրա չափերի պատճառով ես երեսնիվայր գետին տապալվեմ, ես կկրեմ Այն, նույնիսկ, եթե ստիպված լինեմ սողալ ծնկներիս վրա:

Աղջի՛կս, Խաղաղության ու Սիրո Իմ Խաչը կսրբացնի Իմ զավակներից շատերին: Թույլ տուր Ինձ ներս մտնել և հանգստանալ քո սրտում: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ: Սիրելիս, սպասի՛ր և կտեսնես:

Ես այնքան եմ սիրում, երբ Դու ասում ես. «Սպասի՛ր և կտեսնես»:

Գիտեմ, փոքրիկս: Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր իմ:

Մենք, մե՞զ:

Այո՛, Սուրբ Մայր:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 18, 1989

Իմ Վասուլա, Ես՝ Տերս, կերակրելու եմ քեզ քո հալածողների աչքերի առաջ: Զգա՛, թե որքան ցավալի է Ինձ համար, զավակս, տեսնել քեզ այս գայլերի մեջ...

Իմ Հոգին անմխիթար է, և Իմ Սիրտը վշտացած է այն աստիճան, որ Ես գործի եմ դրել հրեշտակների լեգեոններ, որ գան ու մխիթարեն Ինձ: Քեզ

հալածողները թունավոր ջուր են տալիս քեզ, որ խմես, բայց ես շարունակ կբժշկեմ քեզ՝ քո հանդեպ տածած Իմ մեծ Սիրով: Ես կտապալեմ բոլոր այդ արգելքները, որոնք արհամարհում են բոլորիդ, Իմ հրեշտակներ[1], որոնց հետ լինելը Իմ Սիրտը ցնծությամբ է լցնում, և որոնց մեջ Ես մխիթարություն ու հանգիստ եմ գտնում: Իմ դառներ, դո՛ւք, որ ստանում եք Իմ Պատգամներն Իմ Շնորհով, դառնուկներս, դուք, որ հանգստացնում եք Իմ Սիրտը, դո՛ւք, որ Իմ նախասիրած հոգիներն եք, Ես թույլ չեմ տա, որ այս Կայենները հարձակվեն ձեզ վրա, այս Կայենները, որոնք թաթախված են մեղքի մեջ, և որոնք, երբեք չեն դադարել ձեր կոկորդը իրենց նշանակետը համարելուց, իմ Աբելներ:

Տե՛ր, Կայենները անխղճաբար հարձակվում են մեզ վրա: Նրանք նախկինում սպանել են Քո մարգարեներին, և այսօր նրանք ուզում են կրկնել իրենց ոճիրները: Նրանց նպատակը մեկը մյուսի հետևից Քո բոլոր Խորանները կործանելն է: Նրանք ուզում են մեզ ջնջել այս աշխարհի երեսից, որ մեր աքսորավայրն է:

Իմ մնացորդ... Իմ Խորան... Դու, ում Ես բարձրացրեցի փոշուց, որպեսզի ձևավորեմ ու դարձնեմ կենդանի մի խորան Ինձ՝ Բարձրյալիս համար, դու իմ խորաններից մեկն ես, խորաններ, որոնց Ես դնում եմ երկրագնդի տարբեր անկյուններում և որոնց մեջ Ես լցնում եմ Իմ Այրող Ցանկությունները Իմ Սիրո Կիզիչ Կրակից: Ես ասում եմ քեզ, որ Կայենն այս անգամ ստիպված է լինելու դեմ առ դեմ հանդիպելու Ինձ, նա, որ դեռ ծարավ է սպանելու, որովհետև շարունակում է իր չար սերմերը ցանել իր վարած հողի մեջ, և այսօր ուտում է այն, ինչ որ իր հունձքն է տալիս: Նա ստիպված կլինի դեմ առ դեմ հանդիպելու Ինձ: Լսի՛ր, աղավնյակս, ո՛չ ուժով, ոչ սրով նա քեզ քարշ չի տա դեպի անապատ քո արյունը կրկին թափելու համար, ոչ էլ Ես թույլ կտամ նրան մարել այն Բոցը, որ Ես եմ տվել քեզ:

Իմ փոքրիկ խորաններ, դուք, որ Իմ Ուրախությունն եք, արիացե՛ք, մի՛ վախեցեք: Նրա ամեն մի մեղքը հենց իր գլխին կընկնի... Եսայու մարգարեությունը մինչ օրս դեռ մնում է այս Կայենների համար, որ Ես՝ Տերս, նրանց տալու եմ «ծույլ հոգի, չտեսնող աչքեր և անուշադիր ականջներ, և նրանք դեռևս այդպիսին են այսօր» և հավիտյան այդպիսին կլինեն:

Ես Կայենին իր երկրից վտարեցի դեպի անապատ, մի երկիր, որտեղ Ես չեմ բնակվում, մի երկիր, որտեղ չարությունը հոսում է գետերով և ջրում նրա ափերը և ոռոգում նրա հողը: Արդարությունը դուրս էր նետել նրան Իմ տեսադաշտից, բայց և այնպես, երբ անգամ Ողորմությունն այսօր գալիս է նրան փրկելու և Իր Ձեռքը մեկնում բարձրացնելու նրա աչքերի ծածկոցը, նա մերժում է... Ես նույնիսկ իջա երկրի ընդերքը, անցյալի մարդկանց մոտ, որպեսզի գեհենից բարձրացնեմ քո կյանքը, Կայեն, բայց մինչ այսօր դու չես լսում Ինձ և չես կամենում ճանաչել Ինձ՝ քո Աստծուն:

[1] Այսօրվա պատգամատարները

Վասո՛ւլա, աղավնյակս, մի՛ վախեցիր խոսելուց, քանի որ ես օժտել եմ քեզ իմ Հոգով: Այս աքսորն անցնելը դժվար է, բայց քո կողքին ես եմ: Ես՝ քո Սուրբ Ընկերակիցը, քո կողքից եմ քայլում, որպեսզի քեզ տամ խոսելու կարողություն, ընկերակցություն և մխիթարություն: Ես քո կողքին եմ, որ սպառնալիք լինեմ քո թշնամիներին: Ես քո կողքին եմ, որպեսզի հանգստացնեմ և խաղաղեցնեմ ցանկացած մրրիկ, որ ուզում է բարձրանալ և վախեցնել քեզ: Ես քո կողքին եմ, որպեսզի հեռու քշեմ այն գայլերին, որոնք գալիս են քեզ որսալու: Ես քո կողքին եմ, որպեսզի պատսպարեմ քո գլուխը կիզիչ արևից: Ես քո կողքին եմ, սիրելիս, որպեսզի իմ Լույսով հեռու քշեմ բոլոր իժերին ու կարիճներին, որոնք հայտնվում են քո ճանապարհին: Ես առաջնորդում եմ քեզ այն ճանապարհով, որով դու պետք է գնաս, և Իմ Խնկի բուրմունքով ես ամեն օր պարուրում եմ քեզ և բոլոր նրանց, ովքեր ուղեկցում են մեզ՝ օրհնելով նրանց արած ամեն մի քայլը:

Իմ Աչքերը ձեզ վրա են, աղավնյակներս, ձեզ վրա, ում Ես դուրս էի եկել փնտրելու անապատում: Իմ Սերը ձեր հանդեպ Կենդանի Կրակ է և Իմ Խանդը անողոք է, ինչպես երբեք, ուրեմն լսեք Իմ երգը: Իմ հանգստի Վայրը այժմ հեռու չէ ձեզանից: Ես Նա եմ, ով ձեզ սիրում է ամենից շատ, և Ես տալիս եմ ձեզ Իմ Սիրո Պարգևը:

Եկե՛ք և լսեք իմ ուսուցումները: Իմ ուսուցումները Լույս են, ուսուցումներ, որոնք աշխարհը մոռացել է, հենց այն ուսուցումները, որոնք պետք է լինեին նրանց աչքի լույսը:

Ե՛կ, մենք, մե՞զ:

Այո՛, Հավիտյան, Տեր:

Մենք, մե՞զ:

Հավիտյան, Սուրբ Մայր:

Ես սիրում եմ քեզ:[1]

Դեկտեմբերի 19, 1989

Օ՜, Ուսուցման Սուրբ Հոգի, թույլ մի՛ տուր, որ իմ հոգին չփոթվի: Դու իմ Աստվածային Ուսուցիչն ես, և Դու ես, որ ուսուցանել ես ինձ, Քո Բերանից եմ ես սովորել: Ես այստեղ եմ, որ լսեմ քեզ, իմ Տեր և Ուսուցիչ:

Փոքրի՛կ, երբ փորձությունները գան, չբողոքես, քո կարծիքը չհայտնես: Քեզանից բխող միակ բանը Իմ Խաղաղությունը պետք է լինի՝ Տիրոջ Խաղաղությունը: Վիճաբանության ժամանակ չմտածված պատասխանները կարող են վերածվել անուղղելի սխալների: Վերցրո՛ւ այն, ինչ Ես քեզ տվել եմ Իմ Սրտից. ո՛չ ավել, ո՛չ պակաս, վերցրո՛ւ Իմ տվածներից, դու հիմա Ինձ հասկանո՞ւմ ես:

[1] Մեր Սուրբ Մայրը

Այո՛, Տեր իմ: Տե՛ր, ինձ նորից ասա, թե Դու ով ես:

Ուրեմն, լսիր Ինձ: Այդ ես եմ՝ Հիսուս, Աստծո Սիրելի Որդին, Բանը մարմնացյալ, որ եկավ ձեր մեջ ապրելու: Այդ ես եմ՝ քո Փրկիչը, որ խոսում է քեզ հետ[1]: Ծաղիկս, արիացի՛ր: Գլուխդ դի՛ր Իմ Սրտին և ականջ դի՛ր Իմ Սրտի Զարկերին, այնպես, ինչպես Աղավնին քո տեսիլքում: Լսի՛ր, Ես ձեզ բոլորիդ սիրում եմ խենթանալու չափ: Հիմա դու Ինձ ավելի լավ դիտես: Պանտոկրատոր: Ես քո Դաստիարակն եմ և Ես քեզ հաստատելու եմ հավատով, հավատով, հավատով: Ես սիրում եմ քեզ և հավատով ու հավատի մեջ եմ ուզում կրթել ու մեծացնել քեզ: Դու միշտ ներքին ձայն կլսես: Ինձ լսելու համար դու պետք է ամփոփվես քո մեջ, որպեսզի կարողանաս ներհայեցողության մեջ մտնել և հիշես Իմ Ներկայության մասին: Ընդունի՛ր այս ամենը, քանզի դրանք Ինձանից են բխում և Ես այդպես եմ ուզում: Մի՞թե չես նկատել, որ ամեն ինչ, որ սովորել ես, Ինձանից է եկել: Այս ձևով Ես պիտի առաջնորդեմ քեզ մինչև վերջ: Ուրախացի՛ր, աշակերտուհիս:

Աստված իմ, ես բառեր չեմ գտնում:

Ուրախ եղիր, որովհետև դու ինքդ չես վաստակել այս շնորհներից որևէ մեկը: Ե՛կ, Սերը սիրում է քեզ:

Դեկտեմբերի 23, 1989

Աղջի՛կս, խաղաղություն քեզ, դիպչի՛ր Իմ Սրտին... Զգա՛, թե որքան բզկտված է Իմ Սիրտը:

(Ես հոգով զգացի Մեր Տիրոջ Սիրտը):

Հանի՛ր այն փշերը, որոնք այժմ խոցում են Իմ Սիրտը:

Տե՛ր, ցույց տուր ինձ, թե ինչպես կարող եմ դրանք հեռացնել:

Փշերը կարելի է հանել սիրով: Սիրի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ: Վասո՛ւլա, եղիր Իմ բալասանը, սփոփի՛ր Ինձ և Ինձ մոտ բեր փոքրիկ հոգիների, ցույց տուր նրանց Իմ Սիրտը, պատմիր նրանց Իմ Սիրո մասին: Հանիր ամեն մի փուշը և փոխարինիր այն մի փոքրիկ հոգով...

Հսկայական նորոգումների կարիք ունի Իմ Տունը, սակայն Ես կվերակառուցեմ Այն աղյուս առ աղյուս, շերտ առ շերտ: Զնայած այն բազում հարձակումներին, որոնց ենթարկվում է Իմ Տունը, Ես՝ Տերս, վերջում հաղթելու եմ: Այնուհետև Ես լցնելու եմ Իմ Տունը մաքուր հոգիներով, այնպես, ինչպես աղավնիներն են լցնում իրենց բույնը. այդպես էլ կլինի Իմ Սեփական Տանը: Ես թույլ եմ տալու այդ մաքուր հոգիներին ճաշակել ուղղակի Իմ Ձեռքից, որպեսզի նրանք սովորեն ասել.

[1] Հիսուս սա ասում էր այնպես, կարծես Նա առաջին անգամն էր ասում այդ ինչ-որ մեկին:

«Աբբա»: Աստվածությունը հաղթելու է ապականությանը, այն ապականությանը, որն այս աշխարհի անառակության հետևանքով Իմ զավակներին վերածեց անաստվածների:

Ես մտադիր եմ այս մաքուր հոգիներին դարձնել աստվածային էակներ, որոնք կարտացոլեն Իմ Աստվածությունը: Ահա թե ինչու այս օրերին ես անվերջ հիշեցնում եմ ձեզ Ճշմարտությունը: Թեև ես կրկնում եմ Ինքս Ինձ, ու թեև դրա պատճառով ձեզանից շատերը վրդովվում են, այնուամենայնիվ ես շարունակելու եմ հիշեցնել ձեզ նույն ճշմարտությունները, քանի որ դա մեղկ և ծույլ հոգիներին տեղից շարժելու միակ միջոցն է:

Այսօր Իմ Շնորհի Սուրբ Հոգին մերժված է անհավատների կողմից, սակայն նրանք չգիտեն, թե ինչից են հրաժարվում: Ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Այն վեմը, որն անարգեցին շինողները, ա՛յն եղավ անկյունաքար, ինչպես նաև վեմ գլորման և վեմ գայթակղության»[1]: Այս անհավատները անկյունաքարի վրա գայթում են, որովհետև նրանք չեն հավատում Իմ Սուրբ Հոգու Գործերին: Այո՛, այսօր Իմ Շնորհի Սուրբ Հոգին, որն իջնում է ցույց տալու ձեզ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը, <u>արդարև Անկյունաքարն է</u>, այն Անկյունաքարը, որը դուք չեք ճանաչում և բոլորովին մերժում եք:

Աղջի՛կս, նույնիսկ քո անկատարության մեջ, ես կկարողանամ ավարտին հասցնել Իմ Պատգամները: Որպես օրհնություն ընդունի՛ր քո տառապանքները: Մտածիր այն տառապանքների մասին, որ ես կրելու էի, որպեսզի ավարտին հասցնեի Իմ Գործը, և Իմ Վերքերի միջոցով ես ձեզ բոլորիդ բժշկեցի: Ես՝ Տերս, վեհանձն հոգիների կարիք ունեմ, որոնք իրենց կզոհաբերեն ուրիշների համար և կդառնան փոքր խաչյալներ: Բոլոր այս զոհաբերություններն իզուր չեն լինի: Հսկայական հատուցումներ պետք է արվեն, սակայն ժամանակը սուղ է:

Այսպիսով, փոքրիկս, հենվիր Իմ Ուսին, երբ հոգնած ես, ցած մի՛ ընկիր: Հենվի՛ր Ինձ, մենք միացած ենք: Աղոթի՛ր, Իմ Վասուլա, աղոթի՛ր հաղագս քո դարաշրջանի փրկության: Փաղաքշի՛ր Ինձ՝ քո Աստծուն, քո փոքրությամբ, փաղաքշի՛ր Ինձ քո սրտից բխող աղոթքներով: <u>Ես անկեղծություն եմ ուզում</u>. Ինձ պարտավորություններ պետք չեն: Ինձ ձեր սիրտն է հարկավոր: Եղե՛ք կատարյալ:

Եկե՛ք, Իմ Աչքերը ձեզ չեն լքի[2], դուք բոլորդ Իմ Ուրախությունն եք, Իմ Երջանկությունը:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 24, 1989

(Սուրբ Ծննդյան նախօրյակ)

Հիսո՞ւս:

[1] Ա Պետ. 2:8

[2] փոքր հոգիներին

Ես եմ: Փառք Աստծո:

Փառք Աստծո:

Աղոթի՛ր, զավակս: Քեզ Ինձ նվիրիր, Սերը մոտ է քեզ և միշտ էլ մոտ է եղել՝ սկսած քո օրորոցային օրերից մինչ այսօր և հավիտյան մոտ կլինի: Մոտ մնա Ինձ և մի կողմ նետիր բոլոր չփոթեցնող մտքերը, միայն Ինձ ապավինիր, Ինձ հետ մեկ եղիր, բավարարիր Իմ անհագ սիրո ծարավը: Պանտոկրատոր:

(Կոմունիզմի անկումը Ռումինիայում):

Ծաղի՛կս, ե՛ս եմ աշխարհի Լույսը: Երգի՛ր և երջանիկ եղիր, երգի՛ր խնդությամբ, քանզի այդ ես եմ՝ Հիսուս, որ գործում է այդ հրաշքները:

Իմ խաչը կրկին կբարձրացվի ամեն մի եկեղեցու վրա, դու այդ տեսնո՞ւմ ես[1]: Շուտով համընդհանուր խաղաղություն կլինի: Խաղաղությունը ծնվելու վրա է. աղոթի՛ր խաղաղության և Սիրո ծննդի համար: Այսօր երկիրը զգում է երկունքի այդ ցավերը: Սիրելիներս, սրանք Իմ Սիրո վաղ Նշաններն են[2]: Ես եմ երկնքի ու երկրի Տերը, և Ես Իմ Զորությամբ ամեն ազգի ցույց եմ տալու, որ Ես ամենազոր եմ: Ես ասել եմ, որ Ես Իմ Շնչով տապալելու եմ բոլոր նրանց, ովքեր ձեզ ստրկացրել են: Թող ձեր ազգերը հասկանան, որ ամեն բան ենթակա է Իմ Ուժին և այն, ինչ Ես արեցի մի շնչով, Իմ Փառքի համար է: Ոչ մի մարդ չի կարող ջնջել Իմ Օրենքը:

Թող բոլոր ազգերը հասկանան, որ այդ Ես եմ՝ Տերը, որ եկա բանտից ազատելու այս բանտարկյալներին ու բարձրացնելու նրանց Ինձ մոտ: Այդ Ես եմ, որ ձեր թշնամիներին հավիտենական ամոթի մատնեցի, և սա դեռ ամենը չէ: Ես ձեր քույր Ռուսաստանի հետ Խաղաղության և Սիրո ուխտ եմ կնքելու, Ես մոռանալու եմ նրա մեղքերը, Ես նրան կրկին Իմ Հարսն եմ դարձնելու և նրա սրտից այս երգը կհնչի

«Ես իմ սերը
միշտ Նրա համար կպահեմ,
Եվ իմ ուխտը
իմ Աստծո հետ հաստատ կլինի»:

Իմ Հոգին ծարավի է այս փառահեղ պահին: <u>Ես մտադիր եմ ցույց տալ Իմ Հոյակապությունը և Փառքը այս երկնքի տակ ապրող բոլոր ազգերին՝ ձեր քույր Ռուսաստանի միջոցով</u>: Ես հանդերձավորելու եմ նրան Իմ զեղեցկությամբ և Իմ մաքրությամբ Ես ցուցադրելու եմ նրան քո եղբայրներին[3], որպեսզի նրա միջոցով և նրա մեջ նրանք կարողանան

[1] Ես ներքնապես տեսա մի եկեղեցու տանիք, որի վրա 2-3 մարդ ջանում էին մի ծանր խաչ վերտին տեղադրել իր տեղում:
[2] Նոյեմբ. 29-ին, Ռումինիայի դեպքերից մեկ ամիս առաջ, Հիսուս և մեր Սուրբ Մայրը մեզ տվեցին Ծննդյան մի Պատգամ, որ ես կարդամ դեկտ. 22-ին, աղոթախմբում: Մեր Սուրբ Մոր Պատգամը ակնարկում էր Ռումինիայի ազատագրման մասին:
[1] Տերը նկատի ունի կաթոլիկներին:

տեսնել Իմ գեղեցկությունն ու մաքրությունը: Աղջի՛կս, քո քրոջ դարձի հարսանիքը մոտ է:

Ես ասել եմ, որ Ես Նա եմ, ով իջել է ձեր դարաշրջանի թշվառության մեջ՝ սփոփելու ճնշվածներին, բանտից ազատելու գերիներին և նրանց, ովքեր ապրում են զնդանի խավարում: Այդ Ես եմ՝ ձեր Փրկիչը, որ գալիս եմ փրկելու ձեզ կարմիր վիշապի երախից, աղավնիներս: Այդ Ես եմ՝ ձեր Հիսուս, որ գալիս եմ ջարդելու ձեր վանդակները, որ ազատեմ ձեզ: Այդ Ես եմ, ձեր Սուրբը, ով երբեք ձեզ չի լքել, և ճշմարիտ եմ ասում ձեզ, ձեր[1] դարպասները փակ չեն լինի Ինձ համար:

Վասուլա, Ես խայտառակելով և նվաստացնելով կործանելու եմ այս բոլոր չար ուժերին, որոնք քանդեցին Իմ Տունը և այն վերածեցին բացված գերեզմանի: Իմ Լույսը կվերակենդանացնի քո քույր Ռուսաստանին և նրա բոլոր հարևան երկրներին: Ես ջարդելու եմ ձեր բոլոր վանդակները և ազատելու եմ ձեզ: Իմացե՛ք, որ փրկությունն ու ազատագրումը միայն Ինձանից է գալիս: Աղոթե՛ք ձեր քրոջ համար, աղոթե՛ք նրա հարևանների համար:

Տե՛ր իմ, Դու ասել ես, որ փորձանք կպատահի այն մարդուն, ով իրեն չպատկանող բարիքներ է կուտակում և ծանրաբեռնում է իրեն գրավներով: Մի՞թե նրա վարկատուները հանկարծակի գլուխ չեն բաձրացնի և նրա պարտատերերը չեն արթնանա: Հետո նա կդառնա նրանց զոհը[2]: Ճիշտ այս պատահեց Ռումինիայում, սակայն անմեղ մարդիկ վճարեցին իրենց արյամբ:

Վստահ եղիր, որ Ինձ հետ են ձեր ժամանակի բոլոր նահատակ-սրբերը՝ Սատանայի կատաղության զոհերը: Ինձ հետ են բոլոր նրանք, ովքեր մեռան որպես զոհեր: Ասում եմ քեզ, որ նրա կատաղությունը այնպիսին էր, որ նա գիտենալով, որ կորցնում է իր իշխանությունը, մտադրվեց ոչնչացնել Իմ բոլոր ծաղիկները:

(Հետո Հիսուս վերևից նայեց Ռումինիային):

Մի՛ ողբա, փոքրիկս[3], քանզի Ես՝ Տերս, կվերակառուցեմ քո ավերակները, կբարձրացնեմ քեզ, որպեսզի վկայես Իմ Անվան համար: Իմ Անվան ներքո մեծագործություններ ցույց կտամ քեզ: Վերջապես ազատ ես: Ազատ ես գալու Ինձ մոտ՝ քո Փրկչի մոտ և ապրելու Իմ Սուրբ Սրտում: Ես Իմ Լույսով կհետապնդեմ քո թշնամիներին, որոնք նաև Իմ թշնամիներն են: Մի՛ ողբա քո երեխաների համար, որոնք այլևս չկան, քանզի այսօր Ես ասում եմ քեզ, որ նրանցից յուրաքանչյուրին Ես տեղ եմ տվել Իմ Սրտի խորքերում:

Օրհնյալ լինի մեր Տերը՝
Ողորմության Աստվածը,
քանի որ Նա այցելեց Իր ժողովրդին:
Նա եկել է նրանց փրկելու,

[1] Ռումինիայի դարպասները
[2] Ամբակ. 2:6-7
[3] Հիսուսն Իր խոսքը ուղղում է Ռումինիային:

Նա եկել է Լույս տալու նրանց,
ովքեր ապրում են խավարում
և մահվան ստվերում:
Փառք Նրան,
որ գալիս է մեր քայլերն ուղղելու
դեպի Խաղաղության
և Սիրո ճանապարհը: Ամեն:

Դեկտեմբերի 29, 1989

Տե՛ր, Աստված իմ,
Ում ես լռության մեջ
պաշտում եմ օր ու գիշեր:
Դու, որ երկնքից նայեցիր ներքև
և Քո Սուրբ ու փառավոր տեղից
գթացիր Քո զավակներին,
որոնց պահում էին գերության մեջ,
ինչպես աղավնիներին
վանդակներում՝
սովալլուկ ու կոտրված,
ճնշված թշնամու կողմից,
թող գովաբանվի Քո Անունը,
որը լի է բարությամբ:

«Խավարի մեջ շրջող ժողովուրդը
մեծ լույս տեսավ,
Մահվան ստվերի երկրում
ապրողների վրա լույս ծագեց:
Դու նրանց
ուրախությունը մեծացրեցիր,
Դու նրանց
ցնծությունը ավելացրեցիր:
Նրանք Քո Ներկայությամբ
ուրախանում են, ինչպես մարդիկ
բերքահավաքին են ուրախանում,
Ինչպես ցնծում են
ավար բաժանողները:
Տոն Աստվածահայտնության»:[1]

Փրկությունը Ինձանից է գալիս: Ես Նա եմ, Ով փրկում է:

ΙΧΘΥΣ

Խաղաղություն ձեզ: Պաշտեք ու սիրեք Ինձ Իմ Սուրբ Հաղորդության մեջ: Եկե՛ք և ընդունեք Ինձ Իմ Զոհաբերության մեջ, ինչպես մի անբիծ գառնուկի: Դուք պետք է մաքուր գաք Ինձ մոտ:

[1] Ես 9:2-3

Եթե միայն դուք հասկանայիք որ ես Ներկա եմ Մարմնով և Արյամբ, որով ես ձեզ բոլորիդ համար հավիտենական փրկություն եմ շահել, դուք Ինձ կմոտենայիք անթերի ու հարգալիր: Իմ Անսահման Սիրուց դրդված ես Ինքս Ինձ մատուցեցի, որպես կատարյալ Զոհ, որպեսզի ձեզ բոլորիդ մաքրեմ մեղքից: Ես ուզում եմ, որ դուք բոլորդ ամբողջովին հասկանաք այս Զոհողությունը: Այո՛, Ես ուզում եմ խրախուսել ձեզ՝ հասկացնելով, թե ինչ եմ Ես ձեզ մատուցում, և դրանով ձեզ արթնացնեմ, որ պատասխանեք Իմ սիրուն: Այս Զոհողությունը կարող է առաջնորդել ձեզ դեպի սրբագործում և աստվածայնություն: Զավա՛կս, Այն կարող է իրագործել Իմ Նպատակը քո մեջ և քեզ հասցնել հավիտենական կատարելության: Սիրելիս, Իմ Զոհողությունը հավիտենության համար է, և դու, որին Իմ Հոգին սիրում է, ընդունիր այն ամեն օր:

Իմ Սրբարանն այս Սուրբ պահին լի է ամեն դասի հրեշտակներով, որոնք պատրաստ են հանդիպելու Ինձ՝ իրենց Աստծուն: Գետնատարած նրանք երկրպագում են Ինձ, սփոփելով Իմ Սիրտը, և դուք, որ պատրաստ եք ընդունելու Ինձ, մի՞թե չեք երկրպագի Ինձ, մի՞թե չեք պաշտի Ինձ:

Իրազեկ եղեք Իմ Սուրբ Ներկայության մասին, և մի՛ քնեք Իմ Ներկայությամբ: Թույլ մի՛ տվեք, որ Իմ Ներկայությամբ ձեր Հոգին ճախրի մեկ այլ տեղ: Մի՞թե դուք ձեզ թույլ կտայիք նիրհել, եթե լինեիք Գողգոթայի վրա՝ Իմ Խաչի տակ: Սիրելիներս, ի՞նչ կզգայիք, եթե դուք ներկա լինեիք Իմ Խաչելությանը լեռան վրա: Մի՞թե դուք թույլ կտայիք, որ ձեր Հոգին լցվեր օրվա անկարևոր իրադարձություններով, թե՞ գետնատարած կընկնեիք Իմ Խաչի տակ և կերկրպագեիք Ինձ՝ ձեր Աստծուն: Խաչի վրա Ես մեռա ձեզ համար անտեսելով այն տառապանքները, որոնց միջով Ես պիտի անցնեի: Արդյոք դուք թույլ կտայի՞ք ձեզ Իմ Զոհաբերության առջև լինել անուշադիր ու անհոգ: Ես ներկա եմ Իմ Խորանում, ինչպես որ ներկա էի՝ Իմ Սուրբ Խաչի վրա գամված: Ուրմեն այս անգամ եկեք Ինձ մոտ լիովին գիտակցելով, թե Ում եք դուք ընդունում, և Ով է Նա, որ միանում է ձեզ, որպեսզի մաքրի ձեզ՝ տալով հավիտենական կյանք:

Աղջի՛կս, համբերատար եղիր, ինչպես որ Ես եմ համբերատար: Ե՛կ, հանգստացիր Իմ Սուրբ Սրտում և թույլ տուր Ինձ հանգստանալ քո սրտում: Սերը սիրում է քեզ:

«Օ՜, Հիսուս Քրիստոս,
մեր Տեր ու Փրկիչ,
Դու խոստանում ես մեզ
հավիտյան մեզ հետ մնալ:
Դու կանչում ես բոլոր քրիստոնյաներին
մոտ գալ և հաղորդվել
Քո Մարմնին ու Արյանը,
սակայն մեր մեղքը բաժանել է մեզ
և մենք կարողություն չունենք
միանաբար մասնակցելու
Քո Սուրբ Հաղորդությանը:
Մենք խոստովանում ենք
մեր այս մեղքը
և աղոթում ենք Քեզ,

Ներիր մեզ և օգնիր մեզ ծառայելու
Հաշտության ուղիներին՝
Համաձայն Քո Կամքի:
Բոցավառիր մեր սրտերը
Սուրբ Հոգու Կրակով, տուր մեզ
Հոգին Իմաստության և Հավատքի,
Խիզախության
և համբերատարության,
Խոնարհության
և հաստատակամության,
սիրո և զղջման՝ օրհնյալ Տիրամոր
և բոլոր սրբերի աղոթքներով»:

(Հայր Սերգեյ Բուլգակովի աղոթքը)

1990

Հունվարի 5, 1990

Տե՞ր:

Ես եմ: Ապավինիր Ինձ: Գիտակցի՛ր, թե որքան թույլ ես դու: Թույլ տուր Ինձ առաջնորդել քեզ. առանց Ինձ դու կորած ես և խավարի մեջ ես: Ես եմ Լույսը, որը առաջնորդելու է քեզ: Զգույշ եղիր, քանզի Սատանան միշտ, և այժմ ավելի քան երբևէ, մտադրված է քեզ վայր գցել և չփոթեցնել: Ե՛կ Իմ հարսնացուս, և մեկ եղիր Ինձ հետ: Ես գիտեմ քո թուլությունները, Ես գիտեմ, թե ամեն մի թույլ գրոհից ինչպես է քո հոգին ցնցվում և տանջում քո էությունը: Ես խաղաղությունն եմ և խաղաղությամբ է, որ առաջնորդում եմ քեզ, ու սիրո միջոցով է, որ ուղղություն եմ տալիս քո քայլերին:

Սիրելիս, մի՞թե ես չգիտեմ այս բոլոր տանջանքները: Թույլ տուր, որ գործեմ քո մեջ և ամեն ինչ կկատարվի: Իմ Պատգամը[1] շուտով կթելադրվի քեզ, պատրաստ եղիր: Հիսուս է Իմ Անունը, իսկ Հիսուս Սեր է: Աճի՛ր Իմ Հոգում, ուրիշ ինչպե՞ս դու կարող ես վկայել: Ես ամեն կերպ պատրաստում եմ քեզ, որպեսզի վկայես ու փառավորես Ինձ:

Ես քեզ սիրում եմ: Մտի՛ր Իմ Աստվածային Սրտի մեջ և հագեցիր Ինձանից: Գուրգուրիր Ինձ՝ քո Տիրոջը, ազնվությամբ ու խոնարհությամբ: Ես քո Ուսուցիչն եմ և Դաստիարակը, որը երբեք քեզ չի լքում, թեև շատ հաճախ քեզ այդպես է թվում: Հիշի՛ր, որ առանց Ինձ դու անկարող ես անգամ մի փոքրիկ գիծ քաշել: Ես Նա եմ, ով առաջնորդում և ուսուցանում է քեզ, Ես քո կողքին եմ: Թույլ տուր քեզ այսպես առաջնորդել: Աղոթի՛ր և քո հավատքը ամրություն ձեռք կբերի: Ե՛կ, Ես կօգնեմ քեզ հետևելու [Ինձ]: Ես՝ Հիսուսս, սիրում եմ քեզ[2]:

(Ավելի ուշ)

Զավակս, խաղաղության մեջ եղիր: Իմ Ներկայությամբ մոռացիր քո անհանգստությունները: Ինձ հայիր լռության մեջ: Եղիր խաղաղության մեջ, և զգա Իմ Խաղաղությունը: Ես քեզ մոտ եմ, սակայն դու Ինձ չես կարող տեսնել քո մարմնավոր աչքերով: Ես քո կողքին եմ, և Ես, զավակս, սովորեցրել եմ քեզ նշմարել Ինձ, ինչպես որ սովորեցրել եմ

[1] Աղոթամբի համար:

[2] Ես գիտեի, որ Հիսուս ուզում էր դա ինձ ասել, բայց ես չէի ուզում, որ դա գրի առնվեր, որովհետև որոշ մարդիկ քննադատում էին, թե շատ հաճախ է կրկնվում «Ես սիրում եմ քեզ» արտահայտությունը, բայց Հիսուս համենայն դեպս դա շատ արագ գրեց, նախքան ես կկարողանայի իմ ձեռքը բարձրացնել թղթից և Սուրբ Հումորով ավելացրեց բացականչական նշանը...

ուրիշներին: Նույնիսկ հիմա ես դեռ սովորեցնում եմ մի քանի ընտրյալ հոգիների լսել և նշմարել Ինձ:

Հանգչի՛ր, ե՛կ, մենք մեզ:

Հավիտյանս հավիտենից ես փառավորում եմ Քեզ, Տեր:

Հիսո՞ւս:

Ես եմ: Իմ Սերն ու Հավատարմությունը ձեր նկատմամբ հավիտյան է: Ամեն օր անձնատուր եղեք Ինձ, իսկ ես կանեմ մնացյալը: Աղոթե՛ք Ինձ անդադար, ես միշտ ծարավի եմ լսելու ձեր աղոթքները: Երբեք մի՛ մոռացեք Ինձ, քանզի <u>ես</u> երբեք ձեզ չեմ մոռանում. մշտապես մտածեք Իմ մասին: Զավա՛կս, եթե միայն դու իմանայիր, թե ես որքան մոտ եմ քեզ: Վերաբերվի՛ր Ինձ որպես Թագավորի: Գիտակցիր, թե որքան մերկ էիր դու և ինչպես ես ծածկեցի քո մերկությունը Իմ Շնորհներով: Գիտակցիր, թե ինչպես ես՝ քո Թագավորը, նայեցի քեզ վրա, որ ոչինչ էիր, ձևավորեցի քեզ և բարձրացրեցի: Ուրեմն համբերատար եղիր բոլոր նրանց հանդեպ, ում ես այդքան շատ չեմ տվել, որքան քեզ: Ինձանից օգնություն խնդրիր և ես կտամ: Ես չեմ կշտամբում քեզ, ես սիրում եմ քեզ և չեմ ցանկանում, որ դու ընկնես: Ես միշտ կհիշեցնեմ քեզ Իմ Ներկայության մասին, որ հաղթես չարին: Ես միշտ կհիշեցնեմ քեզ Իմ Հրահանգները. վերցրո՛ւ և փայփայիր դրանք: Հիշի՛ր, որ Սերն է խոսում և Սիրո մեջ է, որ դու աշխատում ես: Ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես: Ես ուզում եմ, որ լինես ներողամիտ ու բարեպաշտ: Միշտ հիշիր Իմ Ներկայությունը, մեկ եղիր Ինձ հետ:

ΙΧΘΥΣ

Հունվարի 8, 1990

Տեր ի՞մ:

Ես եմ:

Այս ամենն անհավատալի է:

Ա՜հ, Վասուլա, ես եմ: Ես ցանկանում եմ, որ դու դառնաս Իմ պատգամատարը: Ես չնորհ եմ անում նույնիսկ Իմ ամենահետին արարածին: Սիրելիս, Իմ Սերը քո հանդեպ ավելին է, քան կարելի է պատկերացնել: Ես ցանկանում էի, որ դու Ինձ սիրես, Ինձ հանդիստ պատճառելով: Ես ձեզանից յուրաքանչյուրին խնդրել եմ սիրել Ինձ ձեր ամբողջ սրտով, ամբողջ հոգով ու ամբողջ մտքով, սա է Իմ Օրենքը, ամենամեծ ու առաջին Պատվիրանը:

Ես օրհնում եմ քեզ, օրհնի՛ր Ինձ: Սերը հրճվում է քեզնով:

Ես օրհնում եմ Քեզ, Տեր իմ:

ΙΧΘΥΣ

Հունվարի 9, 1990

Ես Նա եմ, ով ամենաշատն է քեզ սիրում: Մնա՛ Իմ շնորհի մեջ՝ սիրելով Ինձ և կատարելով Իմ Կամքը: Ամբողջ սրտով ձգտիր ավարտին հասցնել Իմ Գործը: Զավա՛կս, հասկացիր այս ամենը և թույլ տուր Ինձ գործածել քեզ:

Ես սիրում եմ քեզ: Ինձ նվիրվիր, և Ես կբարձրացնեմ քեզ, կերակրելով ու հագեցնելով քեզ Իմ Արյամբ: Գործի՛ր սիրով, խոսի՛ր սիրով, մտածի՛ր սիրով, ամեն կերպ եղիր Իմ արտացոլումը: Այն ամենը, ինչ Ես խնդրում եմ քեզանից, դա նվիրվածություն է, սեր ու անկեղծություն: Վերաբերվի՛ր Ինձ, որպես քո Սուրբ Ընկերակցի, համարելով Ինձ ձեր մեջ: Հաճախ ասա Ինձ, թե որքան շատ ես Ինձ պաշտում: Ես խանդոտ Աստված եմ և ուզում եմ, որ դու անդադար աղոթես, հասկանո՞ւմ ես:

Ծաղի՛կս, Ես Իմ Պարտեզի զգոն Պահապանն եմ, ու թեև այն անտեսված է ու չորացած, բայց Ես խոստանում եմ քեզ, որ կվերակենդանացնեմ այն, և ամեն բան Ես ինքս կանեմ: Ես ձեզ բոլորիդ ցույց կտամ Իմ Դեմքը և ձեզանից շատերը կճանաչեն ու կպաշտեն Ինձ զոհաբերություններով և աղոթքներով: Այո՛, շատերը դեպի Ինձ կդառնան և տեսնելով Ինձ՝ նրանք կհասկանան Իմ Սերը, և Ես կբժշկեմ նրանց:

Սերը սիրում է ձեզ բոլորիդ: Ես Նա եմ, ով հրաշքներ է գործում և լսում է ձեզանից յուրաքանչյուրին՝ փոքր թե մեծ, արդար թե մեղավոր, բարեպաշտ թե հեթանոս: Ես լսում եմ բոլորիդ:

Հունվարի 10, 1990

(Հիսուս կանչեց ինձ, որ թելադրի Իր Պատգամը մեր հունվարի 27-ի աղոթաժողովի համար).

Խաղաղություն ձեզ: Զգացե՛ք Իմ Ներկայությունը: Ես ձեր մեջ եմ: Պատրաստե՛ք ձեր սրտերը՝ լսելու և հասկանալու համար Իմ Խոսքերը: Սիրելի զավակներս, մեկ տարուց ավել է, ինչ Ես՝ Տերս, ձեզ հետ եմ այս յուրահատուկ ձևով՝ տալով ձեզ Իմ Պատգամները: Եվ այս ձևով եմ Ես ձեզ ցույց տվել Իմ Սուրբ Սրտի Վերքերը: Ես ձեզ հայտնել եմ Իմ Եկեղեցու այսօրվա վիճակը և Իմ Հոգու դառնության պատճառը: Ես կիսել եմ ձեր բոլորի հետ Իմ Խաղաղության և Սիրո Խաչը: Ես հայտնել եմ ձեզ Իմ ամենամտերմիկ ցանկությունները, իսկ Իմ Սուրբ Հոգին ձեզ հիշեցրել է Իմ Պատվիրանները: Ես հիշեցրել եմ ձեզ Իմ Եկեղեցու ուսմունքները, Ես ի մի եմ բերել ձեզ, քանի որ դուք Իմ յուրայիններն եք, և Ես յուրայիններին է, որ եկել եմ ցույց տալու Իմ Փառքը:

Ես ձեր մեջ եմ, և դուք Իմ մեջ եք: Ես եմ աշխարհի Լույսը, իսկ դուք փոքրիկներս Խաղաղության և Սիրո Իմ Պատգամները կրող անոթներ եք: Ինչպես հովիվն է իր ոչխարներին հավաքում փարախում, այնպես էլ Ես եմ հավաքել և օղակել ձեզ Իմ Ձեռքերով: Ես դեռ ուրիշ ոչխարներ էլ

ունեմ, որոնց նույնպես պետք է առաջնորդեմ: Ես պատրաստում եմ ձեզ ապրելու Նոր Երկինքի տակ և Նոր Երկրի վրա, որովհետև մոտենում է այն ժամանակը, երբ Սերը պետք է վերադառնա և ապրի ձեր մեջ: Շուտով դուք կլսեք Սիրո ոտնաձայները վերադարձի ճանապարհի վրա, և այդ պատճառով է, որ ողջ երկրագնդով մեկ Իմ Ձայնն է լսվում, և այդ նույն պատճառով է, որ ձեր երիտասարդները տեսիլքներ են տեսնում: Ես ասել եմ, որ Իմ Հոգին կտեղամ ողջ մարդկության վրա և ձեր որդիներն ու դուստրերը կմարգարեանան և նույնիսկ ամենանվաստին Ես կտամ Իմ Օրհնությունները: Այո՛, Իմ Ձայնը աղաղակում է ամայության մեջ: Ես կանչում եմ ձեզանից <u>յուրաքանչյուրին</u>, բայց ոմանք չկարողացան հասկանալ, թե ինչ էր ասում Իմ Հոգին. նրանք ոչ հասկացան Իմ Նշանները, և ոչ էլ ձեր երիտասարդների տեսիլքները: Նրանք այլևս հաշվի չեն առնում Մեր Սրտերի պտուղները, այլ Իմ ընտրյալ հոգիներին վերաբերվում են որպես խաբեբաների:

Հիմա Ես այս ձևով ևս մի կարճ ժամանակ կմնամ ձեզ հետ, սակայն Ես ձեզ չեմ թողնի, մինչև վստահ չլինեմ, որ դուք ապաստան և արոտավայր ունեք: Ես ձեր Բարի Հովիվն եմ, որ հոգ է տանում ձեր մասին: Ես Տերն եմ, որը Պահակի նման հսկում է ձեզ վերևից: Ինչպե՞ս կարող էի Ես դիմանալ, չիջնել և ամեն գնով ձեզ չհասնել, երբ Ես լսում եմ ձեր ողբն ու տառապանքը: Ինչպե՞ս կարող էի հապաղել և չփութալ ձեզ մոտ, երբ տեսնում եմ ձեզանից որքան շատերն են ընդանում դեպի հավիտենական կրակը: Ես այս ձևով գալիս եմ ձեզ մոտ ոչ թե ձեզ դատապարտելու, այլ՝ զգաստացնելու: Ես գալիս եմ փրկելու աշխարհը: Ես չեմ գալիս դատապարտելու աշխարհը, սակայն աշխարհը կրկին սխալ է գնահատելու Ժամանակները, ինչպես որ նրանք սխալ դատեցին Իմ Գալու Ժամանակը, որպես Մեսիայի և չճանաչեցին Ինձ, այլ վարվեցին Ինձ հետ այնպես, ինչպես կամեցան՝ հանձնելով Ինձ հեթանոսներին:

Աշխարհը կրկին սխալ գնահատեց նրա Ժամանակը, ով ճանապարհ պետք է հարթեր Իմ առաջ: Նրանք չճանաչեցին Հովհաննես Մկրտչին, որը եկավ ողջ արդարությամբ, որպես Եղիան, այլ <u>նրա հետ</u> ևս վարվեցին այնպես, ինչպես ցանկացան, և այսօր ձեր սերունդը դարձյալ սխալ է դատելու Ժամանակների մասին, <u>քանզի այս ժամանակները հակասում են նրանց շահերին</u>: Ես ասել էի, որ գալիք վերջին օրերին, Ես երկիր կուղարկեմ Մովսեսին ու Եղիային, սակայն ձեր սերունդը չի ճանաչի Նրանց. ո՛չ կլսի, ոչ էլ կհասկանա Նրանց, այլ կանարգի՝ մերժելով Նրանց, ինչպես որ մերժեց Հոհաննես Մկրտչին և Ինձ՝ որպես Մեսիայի: Ես ասել եմ, որ վերջին օրերին շատ սուտ Քրիստոսներ կգան, և Ես խորհուրդ եմ տվել ձեզ զգոն լինել այդ սուտ Քրիստոսների նկատմամբ, որոնք ձեր օրերում սուտ կրոններն են: Ես տվել եմ ձեզ Իմ Խոսքը և զգուշացրել եմ ձեզ չհետևել այդ աղանդներին: Ես Պետրոսին եմ հանձնել Իմ Եկեղեցու խնամքը և խնդրել եմ նրան կերակրել ձեզ, հոգ տանել ձեր մասին և սիրել ձեզ:

Ես ձեզ հանդիսավորությամբ ասում եմ, որ մինչ այս սերնդի անցնելը, <u>այն ամենը, ինչ Ես ձեզ ասում էի, կկատարվի</u>, ուստի չխաբվեք, այլ դիմադրեք ձեր հակառակորդներին, դիմադրեք նրանց, ովքեր հակառակվում են Պետրոսին: Ես Ինքս ձեզ պերճախոս կդարձնեմ, որպեսզի դուք պատշաճ կերպով արտահայտեք այն, ինչ Հոգին այսօր

ասում է Եկեղեցիներին, ուստի, մի՛ պատրաստեք ձեր պաշտպանական խոսքը:

Թշենին հասել է, և Իմ Թագավորությունը մոտ է ձեզ այժմ[1]: Աղոթե՛ք նրանց համար, ովքեր չեն հասկանում. հավատքը նույնպես Իմ կողմից տրված շնորհ է: Ես ընտրել եմ ձեզ և այդ պատճառով դուք կհալածվեք, սակայն մի՛ թողեք, որ ձեր սրտերը տագնապեն. սիրեք միմյանց և մի՛ դատեք: Թող այս սերը, որը Ես ցույց եմ տվել ձեզ լինի Իմ նոր աշակերտների խորհրդանիշը, որպեսզի նրանք ճանաչեն, որ դուք Իմ Հոտից եք, որ դուք Աստծո զավակներն եք և Աստծո մեջ եք: Իմ փոքրիկ զավակներ, սիրեցե՛ք միմյանց, ինչպես Ես եմ ձեզ սիրում: Նշաններ մի՛ խնդրեք, բավարարվեք նրանով, ինչ որ ձեզ հիմա տալիս է Հոգին: Ես ձեզ հանդիսավորությամբ ասում եմ, որ շուտով կլինի Միայն Մեկ Հոտ, որը կառաջնորդվի և կղեկավարվի Մեկ Հովվի կողմից:

Ես Հոգի եմ և Ես ցանկանում եմ, որ դուք երկրպագեք Ինձ Հոգով և ճշմարտությամբ և ոչ թե անկենդան բառերով, ուրեմն սովորեք աղոթել սրտով: Աղոթե՛ք ողջ Եկեղեցու համար: Եղե՛ք Իմ Եկեղեցու Խունկը: Սրանով ուզում եմ ասել, որ աղոթեք բոլոր նրանց համար, ովքեր վկայում են Իմ Խոսքը՝ սկսած Տեղապահից, որը ներկայացնում է Ինձ, մինչև ձեր օրերի առաքյալները և մարգարեները, քահանայական և կրոնական հոգիներից մինչև աշխարհականները, որպեսզի նրանք պատրաստ լինեն հասկանալու, որ դուք բոլորդ, ում ես նշեցի, Մեկ Մարմնի՝ Իմ Մարմնի մասն եք կազմում: Այո՛, դուք բոլորդ Ինձանով մեկ մարմին եք:

Աղոթե՛ք նրանց համար, ովքեր հրաժարվում են լսել, որպեսզի դժկամության փոխարեն նրանք պատրաստակամ լինեն Հոգու կողմից ոգեշնչված քարոզ կամ հայտնություն լսելու: Աղոթե՛ք, որպեսզի նրանք կարողանան հասկանալ, թե ինչպես է Իմ Հոգին գործում տարբեր ձևերով, թե ինչպես է Իմ Հոգին սովորեցնում, հիշեցնում և զգուշացնում ձեզ: Աղոթե՛ք, որ նրանք թույլ տան Իմ Հոգուն արտահայտվել:

Ես ոչ մի նոր բան չեմ հայտնում: Այս ամենը Ես ասել եմ ձեզ նախօրոք, որպեսզի ձեր հավատքը չսասանվի, երբ ավելի դժվարին ժամանակներ կգան: Հիշե՛ք, փոքրիկներս, որ նա, ով փորձության չի ենթարկվել, շատ քիչ բան գիտի: Ես Իմ կողմից անընդհատ կհետևեմ ձեզ, սակայն ես ցանկանում եմ, որ դուք նույնպես լիովին Ինձ հանձնվեք, որպեսզի Ես ձուլեմ ձեզ այնպես, ինչպես կամենում եմ: Ես ուզում եմ, որ դուք կավի նման լինեք բրուտի ձեռքերում: Ես ուզում եմ ձեզ բոլորիդ կերտել իմ Աստվածային Կերպարանքով, Ես մտադիր եմ վերադարձնել ձեզ ձեր աստվածայնությունը, որը մի ժամանակ ունեիք, սակայն կորցրեցիք:

Ծաղիկներս, Ես Նա եմ, Ով ամենից շատ է սիրում ձեզ: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ ձեր ճակատներին թողնելով Իմ Սիրո Հառաչանքը: Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ

[1] Հիսուսն այս խոսքն ասաց մեծաշուք ձևով, կարծես Նա խոսում էր Ինքն Իր հետ:

Եկե՛ք, լսեք իմ Մորը:

Լսի՛ր Իմ Պատգամը, Վասուլա, ծաղիկս, Ես օրհնում եմ քեզ:

Ես օրհնում եմ Քեզ, Սուրբ Մայր: Լսում եմ:

Լսի՛ր Ինձ, Մեր Սերը ձեր հանդեպ այնպիսին է, որ երկրագնդի վրա ոչ մի մարդ երբևէ չի կարող անգամ փոքր ինչ հասկանալ այն: Ոչ ոք երբևէ չի տեսել Աստծուն[1]: Սուրբը ձեր ազգին ցույց է տվել իր Սուրբ Դեմքը. Նա բացահայտել է Իր Սերը և ցույց տվել ձեզ Իր Սուրբ Սրտի Վերքերը:

Աստված այնքան սիրեց աշխարհը, որ ուղարկեց Իր Միակ Որդուն լինելու այն Զոհը, որ վերացնում է ձեր մեղքերը՝ Նա, Ով նստած է Հայր Աստծո աջ կողմում, և Իր Անսահման Ողորմությունից դրդված իջավ ներքև, որ այսպիսի ուրույն ձևով ձեզ հետ լինի և ներկա լինի Իր Յուրայինների մեջ: Սրբերի Սուրբը եկել է հիշեցնելու ձեր ժողովրդին, որպեսզի սուրբ ապրեք, քանզի Նա Սուրբ է, Նա եկել է հիշեցնելու ձեզ, որ ամեն մարմին խոտ է, իսկ նրա գեղեցկությունը նման է դաշտի ծաղիկների: Խոտը չորանում է, ծաղիկները՝ թափվում, սակայն Իր Խոսքը մնում է հավիտյան[2]:

Իմ փոքրիկ զավակներ, Տիրոջ Խաղողի Այգին ձեր օրերում տարածվում է երկրագնդի շատ մասերում, իսկ Նրա Ձայնը ավելի ու ավելի է լսվում ձեր անապատում: Նա կշարունակի բազմապատկել Իր Թագավորությունը այս փոքրիկ օազիսները, որպեսզի երկրի վրա Իր Թագավորությունը լինի այնպես, ինչպես երկնքում է: Մի՛ ապշեք և մի՛ զարմացեք, ընդհակառակը՝ ցնծացե՛ք: Ցնծացե՛ք, որ Նրա Սուրբ Հոգին այսքան առատորեն թափվում է ամեն ազգի վրա՝ ավելացնելով նոր աշակերտներ: Եթե միայն դուք մեզ լսեիք այսօր և չկարծրացնեիք ձեր սրտերը, ինչպես Ապստամբության ժամանակ: Ժամանակը թռչում է, և Ես աղերսում եմ ձեզ , որ լսեք Մեզ, քանզի մի կարճ ժամանակ անց դուք այլևս Ինձ չեք տեսնի:

Իմ սիրելի զավակներ, ապրե՛ք Քրիստոսի մեջ, ապրեք Նրա մեջ՝ միշտ պատրաստ լինելով հանդիպելու Տիրոջը, քանի որ Տերը ձեր մեջ է: Երջանիկ եղեք և ուրախացեք Ինձ հետ, շարունակե՛ք անել այն ամենը, ինչ սովորել եք մեզանից: Ապրե՛ք Մեր Պատգամներով և Աստված դրանք ձեզ համար պարզ կդարձնի. խորհե՛ք Մեր Խոսքերի մասին, որպեսզի ի վերջո Աստծո Ծրագիրը ի կատար ածվի: Նրա մտադրությունն է այլափոխել ձեր մարմինները Իր Աստվածային Կերպարանքի օրինակով: Նա մտադիր է ձեզ վերադարձնել դեպի աստվածայնությունը և ձեզ բոլորիդ դարձնել Մեկ Անարատ և Սուրբ Մարմին:

Միասնությունը կարող է միայն Աստծո Փառքի համար լինել, ուրեմն եկեք և գովաբանեք Տիրոջը, մի՛ եղեք հեթանոսների նման՝ տարբերվելով իրարից Քրիստոսի մեջ: Դուք բոլորդ, որ Քրիստոսի մեջ եք, պետք է օգնեք մեկմեկու և այսպիսով կատարեք Քրիստոսի Օրենքը. սա կոչ է բոլոր քրիստոնյաներին ձեր Տիրամոր կողմից: Տերը պատրաստում է ձեզ բոլորիդ, ովքեր Իր Անվան տակ են, այս փառավոր օրվա համար: Այո,

[1] Դա նշանակում է, որ ոչ ոք երբեք ամբողջապես չի հասկացել Աստծո սերը, հետևաբար «մենք» չենք տեսել Նրան:
[2] Ա Պետ. 1:24-25, Ես. 40:7-8

Տերը կմիավորի Իր ժողովրդին ու կփրկի նրանց ամեն չարիքից: Ողորմությունն ու Արդարությունը այնպիսի հրաշքներ են գործում, ինչպիսիք ոչ մի անգամ չեն կատարվել բազում սերունդների մեջ: Միասնությունն Արշալույսի նման կծագի ձեզ վրա, և այնպես անսպասելի կգա, ինչպես կոմունիզմի փլուզումը. այն կգա Աստծո կողմից, և ձեր աղգերը կանվանեն այն Մեծ Հրաշք՝ Օրհնյալ Օր, ձեր պատմության մեջ: Այս Հրաշքը Աստծո Փառքի համար կլինի, և այդ օրը ողջ Երկինքը կտոնի և կցնծա: Ահա թե ինչու, զավակներս, Ես աղերսում եմ ձեզ անդադար աղոթել և սիրել մեկմեկու: Լիովին անձնատուր եղեք Աստծուն, և Նա կանի մնացածը:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Ձեզանից շատերը կզգան Իմ Ներկայությունը, երբ դուք կմտնեք ձեր տները: Ես սիրում եմ բոլորիդ:

Հունվարի 15, 1990

Հրաշալի է ապրել Քո մեջ:

Ծաղիկս, սա սքանչելի պահ է Ինձ համար: Ես բարձրացնում եմ քո հոգին Ինձ մոտ հասցնելով այն հայեցողության, և այս պահերը բերկրանք են պատճառում Իմ Հոգուն: Դու գիտե՞ս տարբերությունը: Ես բարձրացնում եմ քո հոգին՝ հասցնելով գիտակցության գագաթնակետին. այդ պահին[1] դու գիտակցում ես Իմ Ներկայությունը ավելի, քան որևէ այլ ժամանակ: Անձդ Ինձ հանձնիր և աճիր Իմ Հոգում: Ինձ առաջինը դասիր:

Աստված իմ, Քեզ հետ լինելը հրաշալի է: Տե՞ր:

Ես Եմ, փոքրիկս[2]: Մի՞թե Ես երբևէ կլքեմ քեզ:

Ուզում եմ ասել, որ ԱՆՀԱՎԱՏԱԼԻ է այսպես Քեզ հետ լինելը, Մովսեսի Աստված, Աբրահամի Աստված, Դու՝ Հիսուս:

Ծաղի՛կս, դու անկասկած լսել ես Իմ Հրաշքների մասին, որոնք նույնիսկ գերադասում են սրան:

(Աստված նկատի ուներ գրությամբ Իր հետ հաղորդակցվելու այս հրաշքը):

Սերը մոտ է քեզ և այդ Սերն է, որին դու լսում ես: Սերն է, որ կլանում է քեզ: Սիրի՛ր Ինձ և Ես կանեմ մնացածը: Իմ Խաղաղությունը քեզ: Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ. սրբերը քեզ հետ են:

[1] դրելու պահին
[2] Ես Հառաջեցի:

Հունվարի 17, 1990

Խաղաղություն քեզ, ծաղիկս, թույլ տուր Ինձ այսօր գործածել քո ձեռքը՝ գրելու համար Իմ Պատգամը[1]:

Ես տալիս եմ ձեզ Իմ Խաղաղությունը: Սիրելիներս, Ես արթնացրել եմ ձեզ, որպեսզի ձեզ որպես միջոց գործածեմ Իմ պատգամները աշխարհով մեկ հայտնի դարձնելու համար: Ես արթնացրեցի ձեզ, որ դարձնեմ ձեզ կենդանի զոհասեղաններ՝ տալով ձեզ Իմ Կրակը: Ես արթնացրեցի ձեզ, որպեսզի փոխակերպեմ ձեզ կենդանի տաճարների: Իմ Շնորհը ձեզ վրա է, և Իմ Աչքերը ձեզ երբեք չեն լքում: Եկե՛ք և վերցրեք Իմ Հարստությունից: Եկե՛ք, զոհացրեք Ինձ, ասեք այս բառերը.

Օրհնյալ լինես, Ամենողորմ Տեր,
Ողջ Մեծափառությունը,
զորությունն ու վայելչությունը
Քոնն է:
Քոնն է վերին իշխանությունը,
և Դու կառավարիչն ես
բոլորի և բոլորի վրա,
և Քեզանով ու Քո միջոցով է,
որ Միասնությունն
իջնելու է կայծակի նման՝
Մեծարելու և փառավորելու
Քո Մարմինը: Ամեն:

Ես ձեզ ասում եմ, որ միասնության մեջ դուք կլինեք Իմ Լույսը կրող անոթների պես, հուշակելով Իմ Թագավորությունը՝ սովորեցնելով Ճշմարտությունը կատարյալ ազատությամբ և առանց խոչընդոտման որևէ մեկի կողմից:

(Մի քանի տող էլ գրիր Իմ ընտրյալների համար):

Պատրաստ եղեք ևս մի քանի փորձություններին, Ես ձեր առջևում եմ, որ բացեմ ձեր ճանապարհը. ուրեմն մի՛ վախեցեք: Շատերը կվրդովվեն, սակայն նա, ով վկայում է Ճշմարտությունը, երբեք զերծ չի մնա փորձություններից: Ձեզ ճնշողները շրջապատում են ձեզ, բայց դուք զգացե՞լ եք որևէ բան: Ասում եմ ձեզ, որ մինչ ձեզ հասնելը, Ես կցրեմ նրանց: Ես՝ Տերս, քայլում եմ ձեր կողքով:

Լսե՛ք Ինձ. միանալու համար, դուք <u>բոլորդ</u> պետք է խոնարհվեք, <u>ձեր մեջ չպետք է լինի ո՛չ մի մրցակցություն</u>, ոչ մի սնապարծություն, այլ յուրաքանչյուրը պետք է ուրանա իր անձը: Ես Աստվածային եմ և ցանկանում եմ, որ դուք ևս աստվածային լինեք: Սիրելիներս, <u>դուք բոլորդ պետք է խոնարհվեք</u>, քանի որ դուք բոլորդ կիսում եք Իմ Հոգին:

Ես՝ Տերս, օրհնում եմ ձեզ:

ΙΧΘΥΣ

[1] Այդ պատգամը տրված է, որ կարդացվի հունվ. 18, 1990թվին, Միասնության տոնի առաջին օրը, որը նաև իմ ծննդյան օրն է:

Հիսո՞ւս:

Ես եմ:
Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ: Աղջիկս, ասա՛ Ինձ, եթե Ես այս ձևով եկած չլինեի փրկելու քեզ, մի՞թե դու կսպասեիր Ինձ, կծառայեիր Ինձ: Եվ եթե Ես չբարձրացնեի քեզ, մի՞թե դու կիմանայիր այն ամենի մասին, ինչ կատարվում է Իմ Եկեղեցում:

Ո՛չ, ո՛չ, Տեր, ես արժանի չեմ, որ ինձ տրվի այս ամենը:

Ծաղիկս, եթե նույնիսկ արժանի չես, Ես այստեղ քեզ հետ եմ, որեսզի օրհնեմ քեզ և քեզ Իմ Սրտի ավելի խորքերը ձգեմ: Կերակրվի՛ր Ինձանից այս ձևով: Իմ խաղաղությունը քեզ:

<u>Բարձրացրո՛ւ քո աչքերը դեպի Ինձ</u>

և Իմ Սուրբ դեմքը կփայլի քեզ վրա: Ես օծել եմ քեզ, որ լինես մեկը Իմ հարսնացուներից. Ես բարձրարցրել եմ քեզ, որ Իմը լինես: Սերը սիրում է քեզ: Ես լցրել եմ քեզ Իմ քնքուշ բույրով: Ես Իմ բույրը սփռել եմ մինչև իսկ քո ընկերների վրա: Ես զարդարել եմ քեզ Իմ զարդերով, որ նմանվես Ինձ: Ես քեզ ամուր կապել եմ Ինձ:

<u>Բարձրացրո՛ւ քո աչքերը դեպի Ինձ</u>

և տես Իմ Սուրբ դեմքը. Ես քո Փրկիչն եմ, որը սիրում է քեզ: Ընդունի՛ր այն ճանապարհը, որով Ես քեզ առաջնորդում եմ: Ես կազմել եմ Իմ Ծրագրերը քո ծնունդից դեռ շատ առաջ: Ծոմ պահի՛ր, սիրելիս, մեռցրո՛ւ քո զգացմունքները, հատուցի՛ր նրանց համար, ովքեր խոցում են Ինձ:

<u>Բարձրացրո՛ւ քո աչքերը դեպի Ինձ</u>

և զգա, թե ինչպես է Իմ Սերը պարուրում և կլանում քեզ: Ինձ գոհացնելու համար քավության զոհ դարձիր ուրիշների համար: Տե՛ս: Ես Նա եմ, ով քեզ ամենից շատ է սիրում: Դու կարո՞ղ ես Իմ կանչին ընդդիմանալ: Դու դեմ կկանգնե՞ս Ինձ. Ես, որ կանչեցի քեզ քո անունով և կերտեցի քեզ ըստ Իմ Պատկերի: Ես, որ բարձրացրեցի քեզ մեռածների միջից և քո հոգին հանեցի ստորգետնյա վայրերից:

<u>Բարձրացրո՛ւ քո աչքերը դեպի Ինձ</u>

և նայիր քո Թագավորին, որը զարդարեց քո մերկությունը Իր Օրհնություններով: Ես ընդունել եմ քեզ Ինձ մոտ և դաստիարակել քեզ Իմաստությամբ: Ախ, Վասուլա, Իմ աշակերտուհի, ուրախացրո՛ւ Ինձ և կիսվիր Ինձ հետ:

<u>Բարձրացրո՛ւ քո աչքերը դեպի Ինձ</u>

և նայիր Նրան, ով փրկեց քեզ: Ես Նա եմ, Նա, ով քեզ ստեղծեց:

Բարձրացրու քո աչքերը դեպի Ինձ

և նայիր Ինձ: Ես Նա եմ, ով Իր Սուրբ Դեմքը քեզ ցույց տվեց: Ես Նա եմ, ով ծաղկուն դարձրեց քո զգացմունքները, Ես եմ Տերը, որ նայեց քեզ վրա, գնահատեց քեզ և հեղեց քեզ վրա Իմ Ուսմունքները: Նայի՛ր Շուրթերիս[1], քո Աստծո հենց այս Շուրթերից դու սովորեցիր այն ամենը, ինչ այսօր գիտես: Քո Աստծո շուրթերից է քեզ թելադրվել, և այն բոլոր գիտելիքները, որ դու ունես, Ինձանից են գալիս: Ես քո Ուսուցիչն եմ, դու կամենո՞ւմ ես, որ Ես մինչև վերջ քեզ քարշ տամ Իմ Ոտնահետքերով: Դու թույլ կտա՞ս Ինձ, որ դա անեմ:

Ես հենց Քո Ձեռքից եմ կերակրվել
առանց որևէ արժանիքի:
Ո՞վ եմ ես,
որ շնորհներ տեղան ինձ վրա:
Ամեն բան Քեզանից է գալիս:
Քո սեփական Ձեռքերից եմ
ես պարգևներ ստացել:
Ես օրհնում եմ քեզ, օ՜, Տեր:
Ես կցնծամ և կուրախանամ
Քո Սիրով, և մինչև վերջ կհետևեմ
Քեզ խանդավառությամբ
և առավել վճռականությամբ,
քան երբևէ:

Ուրեմն վերցրու Իմ Սիրո ու Խաղաղության Խաչը և մենք միասին կշարունակենք Ճանապարհը: Հիշի՛ր, սիրելիս, որ ես ամբողջ ժամանակ քեզ մոտ եմ. հիշի՛ր Իմ Սրբությունը, որպեսզի կարողանաս քայլել սրբության մեջ: Տո՛ւր Ինձ քո թշվառությունը և Իմ Հոգին կսփոփի քեզ: Քո Փրկիչը քո կողքին է: Ես Նա եմ, ով բարձրացնում է աղքատին փոշու միջից: Տեսնո՞ւմ ես, Վասուլա, հավատքով և Իմ հանդեպ ունեցած հավատքի միջոցով է, որ Ես թույլ եմ տվել քեզ լինելու շնորհի այս վիճակում:

(Տերն ուզում է ասել, որ Իր հավատքի շնորհով և մանկան հավատքով եմ մոտեցել նրան):

Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ: Միշտ ուրախացրու Ինձ:

Հունվարի 18, 1990

Տեր Հիսուս Քրիստոս,
Որդի Աստծո, ողորմի՛ր մեզ:

[1] Հիսուսն այս ասաց, Իր երկու մատներով ցույց տալով Շուրթերը:

Տեր Հիսուս Քրիստոս,
Որդի Աստծո, ողորմի՛ր մեզ:

Ասում եմ ձեզ, եթե որևէ մեկը աղոթում է Ինձ այս վարդարանը[1], երկինքը կբացվի նրա առաջ և Իմ Ողորմությունը կփրկի նրան: Հաշտվե՛ք Ինձ հետ, հաշտվե՛ք Ինձ հետ: Խնդրե՛ք Ինձ ամեն օր. «Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, ողորմի՛ր ինձ, մեղավորիս»:

Աղջիկս, սովորեցրո՛ւ քո եղբայրներին[2] այս աղոթքը, սովորեցրո՛ւ նրանց առանձնանալ և լռության մեջ աղոթել այս Վարդարանը: Զարդարի՛ր Իմ Եկեղեցին, աղջիկս: Ե՛կ, առաջ շարժվիր սրտի մաքրությամբ:

ΙΧΘΥΣ

Հունվարի 19, 1990

Խաղաղություն քեզ: Խոկա Իմ Ներկայության խորհրդի մասին:

Օ՜, Վասուլա, աշխարհում այնքան շատ փորձություններ կան, որ հոգիները մի վայրկյան անգամ չպետք է քնեն. նրանք պետք է հարատև աղոթքի մեջ լինեն ու արթուն մնան: Այս փորձությունները ծագում են չնչին բաներից: Սատանայի լարած որոգայթները այնքան խորամանկորեն քողարկված են, որ հոգիները իսկույն ընկնում են դրանց մեջ՝ լիովին անտեղյակ, որ ընկել են: Բայց, եթե հոգիները միայն Ինձ լսեին և աղոթեին ավելի հաճախ և Իմ Ներկայությունը զգային ավելի հաճախ՝ խոսելով Ինձ հետ որպես իրենց Ընկերակցի, կամ աղոթելով Ինձ որպես իրենց Հոր, ապա նրանք ավելի իրազեկ կլինեին այս որոգայթներին: Անդադար աղոթքները չարին հեռու են պահում, իսկ իրենց հոգիները՝ ավելի են մոտեցնում Ինձ:

Ե՛կ, գովաբանիր Ինձ, աղջիկս, ժամանակ առ ժամանակ. դա փառավորում ու նաև ուրախացնում է Ինձ: Ասա՛ այս խոսքերը.

Փառք Աստծուն, Բարձրյալին,
Օրհնյալ լինի Նրա Անունը:

Միայն ասա այս խոսքերը և Ես փառավորված կլինեմ: Այնուհետև ասա.

Իմ Հիսուս, Դու,
որ ինձ շնորհ արեցիր,
Ես օրհնում եմ Քեզ:

Այս խոսքերը ուրախացնում են Ինձ: Մենք, մե՞զ:

Այո՛, Տեր:

[1] Ուղղափառ Վարդարանը
[2] Կաթոլիկներին:

Մենք, մե՞զ:

Այո՛, Սուրբ Մայր:

Դու Իմ ծաղիկն ես:

Հունվարի 21, 1990

Խաղաղություն քեզ: Երբեք մի՛ դադարիր Ինձ փափագելուց, դրանով ես փառավորվում եմ, իսկ դու՝ փոքրիկս, մաքրագործվում: Թափանցի՛ր Իմ Սուրբ Սրտի խորքերը և թույլ տուր Ինձ քեզ այնտեղ պահել: Ես քեզ միայն Ինձ համար եմ ուզում: Ես խանդելու աստիճան սիրում եմ քեզ: Քո Աստվածը սիրում է քեզ՝ չնայած քո ոչնչությանը, քո անկարողությանը հետևելու Իմ կանոններին և հարմարվելու Իմ Օրենքին: Ես խենթանալու չափ սիրում եմ քեզ՝ չնայած քո անկատարություններին: Ես սիրում եմ քեզ, որովհետև դու ուզում ես հետևել Ինձ: Իմ փոքրիկ դառնուկ, Ես կդնեմ քեզ Իմ Ուսերին և դու կգաս Ինձ հետ, ուր որ Ես գնամ[1]:

ΙΧΘΥΣ

Հունվարի 22, 1990

(Պատգամ Ֆրանսիայի համար, Նիսում փետրվարի 11-ի մեր աղոթաժողովի համար)

Խաղաղություն ձեզ:

Ես Սիրո, Խաղաղության և Հաշտության Հոգին եմ: Ես Նա եմ, ով ամենից շատ է ձեզ սիրում:

Ես ձեր Արարիչն եմ: Ես հանդիսավոր կերպով ասում եմ ձեզ, որ Ես կշարունակեմ տարածել Իմ Սուրբ Հոգին ձեր որդիների ու դուստրերի վրա, ինչպես երբեք չի եղել սերունդներ շարունակ, որպեսզի ուղղակի կերակրեմ ձեզ Իմ իսկ Ջեռքով և Իմ Ողջ Օրենքը դնեմ ձեր սրտերում:

Ձեր օրերում Ես ցույց եմ տալիս բոլորիդ Իմ Սուրբ Դեմքը, այո՛, Իմ Սուրբ Դեմքը կփայլի ձեզ վրա, Իմ սիրելիներ: Ես կհայտնեմ ձեզ Իմ Փառքը և դուք, որ միգուցե դեռևս չեք ճանաչում Ինձ, Ես կգամ նաև ձեզ մոտ և կվերցնեմ ձեր ձեռքը Իմ Ջեռքի մեջ ու կդնեմ Իմ Սուրբ Սրտի վրա: Ես թույլ կտամ, որ դուք զգաք Իմ Սրտի զարկը և եթե դուք ինձ թույլ տաք, Ես կգրավեմ ձեր փոքրիկ սիրտը և կկլանեմ Իմ Բոցավառ Սիրով և ձեզ ամբողջովին կդարձնեմ Իմը:

Եթե դուք անձնատուր լինեք, Ես կձևավորեմ ձեզ Իմ Աստվածային Կերպարանքով, Ես ձեզ ետ կտամ ձեզ ձեր աստվածայնությունը և ձեզ սուրբ կդարձնեմ, ինչպես Ես եմ Սուրբ: Ուրեմն եկե՛ք Ինձ մոտ՝ ձեր

[1] Հիսուսի սերը պատեց ինձ: Ես բառերով չեմ կարող նկարագրել Նրա Մեծ Սերը:

Փրկչի մոտ, ինչո՞ւ մեկ այլ տեղ փնտրել: Ինչո՞ւ փնտրել այն, ինչ աշխարհն է տալիս և որն անցողիկ է: Փնտրե՛ք այն, ինչը Սուրբ ու Հավիտենական է: Ինչո՞ւ հույս դնել այն բանի վրա, ինչ աշխարհն է առաջարկում, երբ այն, ինչ նա տալիս է, անցողիկ է: Մի՞թե դուք չեք լսել, որ Ես ասել եմ՝ մարմինը խոտ է: Խոտը չորանում է, ծաղիկը թոշնում, բայց Իմ Խոսքը մնում է հավիտյան: Դարձե՛ք Ինձ և վստահեք Իմ Սիրուն:

Իմ փոքրիկ զավակներ, Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը: Մի՛ լսեք Փորձչին, որն ուզում է կործանել ձեր հոգին, և որի իշխանությունն այս աշխարհում է, այլ լսեք Ինձ՝ ձեր Աստծուն, որն այսօր ձեզ է մեկնում Իր Ձեռքը և որը խոնարհվում է դեպի ձեզ՝ բարձրացնելու համար ձեզ փոշուց՝ ձեզ Իր Սրտում սրբացնելու համար: Լսե՛ք Ինձ և դուք կժառանգեք Իմ Թագավորությունը:

Եկե՛ք և հաշտվեք Ինձ հետ: Ես կտակում եմ ձեզ Իմ Խաղաղությունը՝ մի խաղաղություն, որ աշխարհը չի կարող տալ: Ե՛կ, դու, որ Ինձ չես ճանաչում դեռևս որպես քո Ազատարարի և ձերբազատվիր այն ամենից, ինչը պատկանում է բնության տարերքներին, որոնք չեն կարող ո՛չ բարձրացնել, և ո՛չ էլ սնել քո հոգին. ինչո՞ւ դերի լինել դրանց: Վերադարձիր Ինձ մոտ: Անգամ քո թշվառությամբ և մեղքով, Ես ընդունում եմ քեզ ինչպես որ կաս և ասում եմ քեզ, որ Ես արդեն ներել եմ քեզ: Թույլ տուր ասեմ քեզ, զավակս, որ ոչ մի մարդ ավելի մեծ սեր չունի քո հանդեպ, որքան Ես:

Բարձրացրո՛ւ քո աչքերը դեպի Ինձ և տես, թե Ով է աղերսում քեզ: Այդ Ես եմ՝ Հիսուս՝ քո Փրկիչը, որն այսօր գալիս է քեզ մոտ՝ խոսելով ձեզանից ամենանվաստի բերանով: Ես գալիս եմ բոկոտն[1] և որպես մի Մուրացկան ձեզանից փոխադարձ սեր եմ աղերսում: Ես փնտրում եմ քո սիրտը, մի մերժիր Ինձ: Գիշեր ու զոր Ես մեկնում եմ Իմ Ձեռքերը դեպի քեզ: Դու ե՞րբ ես Ինձ մոտ գալու: Ե՞րբ եմ քո պատասխանը լսելու: Ես պատասխան կգտնե՞մ այս ամայության մեջ, զավակս, թե Լռությունը կպարուրի Իմ Հոգին: Լսի՛ր, լսիր Իմ խնդրանքը, սա այն սփոփանքն է, որ դու կարող ես տալ Ինձ: Մի՛ վախեցիր, Ես կօգնեմ քեզ, լսո՞ւմ ես: Ես կնորոգեմ քեզ, եթե դու անձնատուր լինես ինձ:

Ես եկել եմ մինչև քո դուռը և այսօր, եթե դուք հավաքված եք միասին լսելու, թե Իմ Հոգին ինչ է ասում ձեզ, դա եղավ, որովհետև Ես այդպես կամեցա որ լինի: Ես եկել եմ քեզ Հույս տալու, Ես եկել եմ քեզ Լույս տալու, Ես եկել եմ ոչ թե դատապարտելու, այլ արթնացնելու քեզ, զավակս, և ցույց տալու քեզ Իմ Սուրբ Սիրտը և թե Ով է կանգնած քո առջև: Դուք Իմն եք՝ չնայած ոչ բոլորդ, որովհետև ձեզանից ոմանք մարդկանց տված պատիվը գերադասում են Աստծո տված պատվից: Հետևաբար հանդիսավորությամբ ասում եմ ձեզ.

ընդունե՛ք Իմ Սուրբ Հոգին այսօր,
ընդունե՛ք Իմ Սուրբ Հոգին այսօր,
ընդունե՛ք Իմ Սուրբ Հոգին այսօր:

[1] «Բոկոտն»՝ պարզորեն, առանց սուրբ հոգիներ ընտրելու անհրաժեշտության՝ նրանց միջոցով Իրեն բացահայտելու համար :

Վերադարձե՛ք Ինձ մոտ: Ես ուզում եմ ազատել ձեզ չարից և բորբոքել ձեր սերն Իմ հանդեպ: Ես ուզում եմ Ինքս Ինձ ցույց տալ ձեզ և ձեզ տալ Իմ Սուրբ Ներկայության Նշանը, ինչպես տալիս եմ ուրիշներին՝ պարուրելով ձեզ խնկի Իմ նուրբ բույրով:

Ուրեմն եկ ինձ մոտ և խոսիր Ինձ հետ: Ինձ հետ խոսելը աղոթելն է, սրտանց աղոթելը: Ես դիշերվա անդորրի մեջ գալիս եմ հիշեցնելու ձեզ Իմ պատվիրանները: Դուք գիտե՞ք, որ ժամանակների սկզբից, երբ մարդը դրվեց երկրի վրա, Երկնքում օթևան էր պատրաստված ձեզ համար: Ձեր տունը Երկնքում է Ինձ հետ՝ Իմ կողքին. թող քո ներկայությունը լցնի այդ օթևանը: Մի վշտացրու Ինձ տեսնելով քո օթևանը հավիտյան դատարկ: Վերադարձի՛ր Ինձ մոտ: Վերջ տուր աննպատակ դեգերելուն այս ամայության մեջ: Փնտրի՛ր Ինձ, զավակս: Դադարի՛ր չարիք գործելուց: Սովորի՛ր ներել, սովորի՛ր բարիք անել. վստահիր Ինձ՝ քո Աստծուն: Սովորի՛ր սիրել քո թշնամիներին, հաշտվի՛ր Ինձ հետ: Ես հանդիսավոր կերպով ասում եմ քեզ, եթե երկիրն այսօր ծածկված է աղետներով, դա իր ուրացության պտուղն է:

Ա՛խ, Իմ ընկերներ, դուք բոլորդ, որ սիրում եք Ինձ և ձեր ամբողջ կյանքը նվիրել եք Ինձ, դուք, որ ազատեցիք կարիքավորներին, երբ նրանք կանչեցին և ձեր ջերմությունը տվեցիք որբին, որը սեր չէր տեսել, դուք, որ անտարբեր չեք աղքատների կարիքներին և մխիթարում եք այրիին և լայն բացում ձեր դռները հորից զրկվածի առաջ, և՛ դուք, որ ձգտում եք ծառայել արդարության գործին, երբեք ձեռք չբարձրացնելով անմեղի վրա, ուրախացե՛ք, որովհետև դուք իսկապես Իմ զավակներն եք:

Սիրելիներս, այսօր Ես խնդրում եմ ձեզ, որ ջերմորեն աղոթեք և հատուցեք նրանց համար, որոնց Իմ Սիրտը սիրում է, բայց որոնք Իմ դեմ են դուրս եկել: Ես խնդրում եմ զոհաբերեք ինքներդ ձեզ բոլոր նրանց համար, ովքեր խորացնում են Իմ Վերքերը, երբ տեսնում եմ, թե ինչպես են նրանք սպանում իրենց երեխային նույնիսկ նախքան նրա ծնվելը: Աղոթե՛ք այն արգանդի համար, որը ձևավորում է այս երեխաներին, բայց մոռանում նրանց, և նրանց անունները այլևս չեն հիշվում:

Կանչե՛ք Ինձ, երբ դժվարությունների մեջ եք, և Ես կշտապեմ ձեզ մոտ: Հիշեք՝ թե որքան բարիքներ և օրհնություններ եմ տվել ձեզ և փառաբանեք Ինձ: Մի՞թե չեք լսել, որ Ես օգնության եմ հասնում բոլոր նրանց, ովքեր կառչում են Ինձանից: Դուք անհայր չեք, դուք Հայր ունեք Երկնքում, որն անսահմանորեն սիրում է ձեզ, և Նրա Անունը զմուռսի նման է, որը դուրս է հոսում Իրենից, որպեսզի օծի և օրհնի ձեզ:

Սիրելիներս, Ես տալիս եմ ձեզ Իմ Սիրո պարգևը: Արիացե՛ք դուք բոլորդ, որ ձեզ զոհաբերում եք ուրիշների համար. Ես ձեր կողքին եմ՝ սփոփելու ձեզ: Արիացե՛ք, զավակներս, ձեր Աստվածը շատ մոտ է ձեզ, և շատերը լսել են Իմ Ոտնաձայնը: Սերը վերադառնում է ձեզ մոտ, որպես սեր և բնակվելու է ձեր մեջ:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Սիրո Իմ Հառաչանքը ձեր ճակատին: Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ

Հունվարի 26, 1990

Խաղաղություն քեզ: Սերը սիրում է քեզ: Ավետարանի՛ր սիրով Սիրո համար, կրկնի՛ր Ինձ հետ այս խոսքերը.

Իմ Տեր ու Թագավոր,
Պահիր իմ հոգին
հաստատուն և հոժարակամ:
Եվ ես անօրեններին
պիտի սովորեցնեմ
Քեզ մոտ բերող ճանապարհը,
և մեղավորները
Քեզ պիտի դառնան: Ամեն:[1]

(Ավելի ուշ)

Գոհացրո՛ւ Ինձ և մնա Իմ Լույսի մեջ. Ես եմ Լույսը: Աղոթի՛ր, Իմ Վասուլա, որպեսզի այն հոգիները, որ վիրավորում են Ինձ, կարողանան տեսնել Իմ Լույսը և զանազանեն իրենց ձախ ձեռքը աջից:
Լսի՛ր Իմ Մորը.

Այսօր Իմ Սիրտն արցունքների մեջ է այսքան շատ մեղքերի պատճառով: Աշխարհն անշնորհակալ է Սիրո հանդեպ: Ես շատերին եմ հայտնվում և կանչում[2], աղերսելով նրանց, որ դառնան դեպի Աստված և փոխեն իրենց կյանքը, սակայն իրականում շատ քչերն են այդ անում: Շատ շատերը չեն փոխվում, աղջիկս, աղոթի՛ր այդ համառ հոգիների համար:

Կաղոթեմ, Սուրբ Մայր:

Ես օրհնում եմ քեզ և բոլոր նրանց, ովքեր աղոթում են սրանց համար:

Հունվարի 29, 1990

Տե՞ր:

Ես եմ: Փոքրիկս, ե՛կ աղոթենք.

Տեր իմ Աստված,
Բարձրացրո՛ւ հոգիս
այս խավարից վեր,
դեպի քո Լույսը: Պարուրի՛ր հոգիս
Քո Սուրբ Սրտում,
Սնի՛ր հոգիս Քո Խոսքով,
Օծի՛ր Քո Սուրբ Անունով,

[1] Սաղմ. 50/51:14-15
[2] Մարդկությանը:

Պատրաստի՛ր Հոգիս Խոսքդ լսելու:
Փչիր Քո անուշ բուրմունքը
Հոգուս վրա՝
վերակենդանացնելով նրան:
Հափշտակի՛ր իմ Հոգին
Հոգուդ բերկրանք պատճառելով:
Հայր, զարդարի՛ր Ինձ՝
Քո զավակին՝ մաքուր զմուռսդ
կաթեցնելով վրաս:
Դու տարել ես ինձ
Քո Երկնային Գավիթը, ուր բոլոր
Ընտրյալներդ են նստած:
Դու ցույց ես տվել ինձ
Քո Հրեշտակներին,
Ախ, առավել քան սա,
ի՞նչ ես խնդրում Հոգի իմ:
Քո Հոգին է ինձ կյանք տվել
և Դու, որ Հացն ես Կենաց,
վերահաստատել ես իմ կյանքը:
Դու ինձ առաջարկել ես
խմել Քո Արյունը,
որ կարողանամ հավիտենապես
բաժանել Քեզ հետ
Քո Թագավորությունը
և ապրել հավիտյանս հավիտենից:
Փառք Բարձրյալին:
Փառք Սրբերի Սրբին:
Փառավորյալ լինի մեր Տերը,
Օրհնյալ լինի Մեր Տերը,
որովհետև
դարեդար են երկարաձգվում
Նրա Ողորմությունն ու Նրա Սերը,
և կհարատևեն հավիտյան:
Ամեն:

Հիանալի է, զավակս:

(Հիսուս գոհ էր իմ գրառումից):

Հունվարի 30, 1990

Տե՛ր իմ:

Ես եմ: Ապավինիր Ինձ ամեն անգամ, երբ քեզ թույլ ու վհատված ես զգում: Ես քեզ սիրում եմ և, սիրուց դրդված, թույլ եմ տալիս քեզ որոշակի իրավիճակների և իրադարձությունների մեջ հայտնվել, որպեսզի

ցույց տամ, որ առանց Ինձ դու ոչինչ ես: Ես թույլ եմ տալիս, որ այդ դեպքերը պատահեն՝ որպեսզի քեզ Ինձ մոտ պահեմ, և որպեսզի քո հոգին կախված լինի Ինձանից և ապավինի Ինձ: Ես եմ, որ պահում եմ երկրի հիմերը:

Ասա՛, որ սիրում ես Ինձ, ծաղիկս, ապավինիր Ինձ: Լսիր Իմ Ձայնը և հետևիր Ինձ կուրորեն: Գործիր քո Աստծո հետ: Եկ, դա հաճույք է պատճառում Ինձ: Ես և դու, դու և Ես: Հասկանո՞ւմ ես:

Հունվարի 31,1990

(Երեկ Տերը ինձ թելադրեց յոթ ժամ, այսօր՝ մոտ վեց ժամ, իսկ վերջում ես Հիսուսին հարցրեցի. «Հիսո՛ւս, այժմ կա՞րող ենք գնալ և որևէ այլ գործ կատարել»: (Ես մտադիր էի սկսել խոհանոցը մաքրել): Եվ Հիսուսն առանց փոքր-ինչ տատանվելու ասաց.«Ուրեմն, եկ գնանք»: Նա մեծ եռանդով ինձ հորդորեց վեր կենալ և սկսել խոհանոցը մաքրել: Նա այնպես էր վարվում, կարծես, ես պետք է կատարեյի մի <u>շատ</u> կարևոր ու անհետաձգելի գործ):

(Մեր Սուրբ Մոր պատգամը ամսի 11-ին Նիսում կարդալու համար).

Խաղաղություն ձեզ: Իմ փոքրիկներ, ես եմ ձեր Երկնային Մայրը, ձեր Փրկչի Մայրը, ձեր Ազատարարի Մայրը: Այսօր ես ձեզ հրավիրում եմ փնտրելու այն բաները, որոնք երկնքում են: Ես խնդրում եմ ձեզ, որ կտրվեք այս աշխարհի սկզբունքներից և բարձրացնեք ձեր հայացքը դեպի երկինք: Փնտրեք այն ամենը, ինչ երկնային է, փնտրեք Լույսը և Լույսը չի պակասի ձեզանից: Գոհացրեք Աստծուն և դարձեք դեպի Նա, մի կառչեք աշխարհին, կառչեք Միակին, ով ձեր քայլերը երկինք կառաջնորդի:

Ախ, սիրելի զավակներս, դուք դեռ չե՞ք հասկացել: Երկինքը ձեր տունն է, իսկ երկիրը ձեր պատրաստությունն է՝, պատրաստությունը Աստծուն հանդիպելու: Աստված տվել է ձեզ Իր սիրո պարգևը, մի՞թե դուք չեք պատասխանի Նրա Ընծային: Ձեզանից շատերը բազում նշաններ են տեսել: Այդ նշանները պետք է նկատի առնվեն. դրանք ժամանակների վերջի նշաններն են: Հիսուս և Ես պատրաստում ենք ձեզ, որպեսզի մտնեք Սիրո և Խաղաղության դարաշրջանը, Նոր Երկինքը և Նոր Երկիրը, որը ձեզ խոստացված է դեռ շատ վաղուց:

Հետևաբար Ես ձեզ աղերսում եմ, որ դարձի գաք մինչև մաքրագործման օրը, որովհետև ժամանակը չի սպասում, և Ես ձեզ ասում եմ. մինչև այս սերնդի անցնելը, այն ամենը, ինչի մասին Ես ձեզ ասացի Իմ ընտրյալ հոգիների միջոցով՝ Ֆաթիմայի ժամանակից մինչև այսօր, պիտի կատարվի: Սիրելի զավակներ, հիշեք, որ Մեր Ներկայությունը նույնպես խորհուրդ է, և դուք պետք է միշտ հիշեք, որ ԵՐԲԵՔ միայնակ չեք:

Սովորեք աղոթել առանց դադարի և ամբողջ սրտով, սովորեք պահք պահել և զղջալ, սովորեք խոստովանության գնալ ամիսը մեկ անգամ, մի ձանձրացեք բարիք գործելուց և գործադրեք այն ուրիշների հանդեպ: Ապրեք Տիրոջ Օրենքով: Ես սիրում եմ ձեզ, զավակներս, և սիրուց դրդված՝ Ես նախապատրաստում եմ ձեզ Տիրոջ հետ հանդիպմանը: Ես

օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Գնացեք ձեր տները Մեր խաղաղությամբ և մի մոռացեք, որ Մենք ձեզ հետ ենք:

(Աստվածաշնչից ընթերցվածքը, Ղուկ. 18:1-8):

Տե՞ր:

Ես Եմ: Ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը: Ցույց տուր Իմ Սուրբ Դեմքը Նիսում: Ես շատերի առջև կկանգնեմ: Զավակս, եղիր անվեհեր: Սերը սիրում է քեզ:

(Հիսուսն ինձ խրախուսում էր Նիսի աղոթաժողովի համար):

Երկինքը շինված է Լույսից, և երբ Երկնքի դռներն անգամ մի փոքր բացվում են քո առջև, այդ Լույսը կլանում է քեզ ամբողջովին: Ես ընձեռնել եմ քեզ երկնքից մի մաս «ճաշակելու» հնարավորությունը: Ուրեմն թող որ Ես լինեմ քո փառաբանության նյութը և Իմ Սրբավայրում վկայիր քո եղբայրներին Իմ Անունը: Փառաբանիր Ինձ մարդաշատ ժողովում, հրապուրիր Իմ զավակների սիրտը, ողջ փառքը քո Աստծուն նվիրիր: Սերը քեզ հետ է:

Ես ուզում եմ
իրագործել այն խոստումը,
որ տվել եմ Քեզ, Տեր իմ:
Ես անպայման կփորձեմ
վարձահատույց լինել Քեզ
իմ շնորհակալական ընծաներով:
Տուր ինձ ճիշտ խոսքեր
Քեզ հետ խոսելու
և Քեզ մեծարելու համար:
Ես օրհնում եմ քեզ, իմ Տեր,
ինձ երես տալու
և թույլ տալու համար,
որ քայլեմ Քո ներկայության մեջ,
ողջերի Լույսի մեջ:

Փետրվարի 9, 1990

(Պատգամ Սիոնի համար: Կապուչիններին մենաստան).

Խաղաղություն ձեզ: Այն ամենը, ինչ ես խնդրում եմ ձեզանից, սեր է: Սիրելի զավակներս, այդ ես եմ՝ ձեր Հիսուս, որ ձեզ այսքան պատգամներ եմ տալիս՝ հիշեցնելու ձեզ Իմ Օրենքը, հիշեցնելու թե ով եմ Ես: Եթե դուք Իմ խոսքը դարձնեք ձեր բնակարանը, ձեր հոգին կբարձրանա դեպի Ինձ և դուք կհասնեք Ինձ: Եկեք Ինձ մոտ մինչև ձեր հոգու տկարանալը, եկեք և խորհրդածեք այն ամենի մասին, ինչ Ես տվել եմ ձեզ, եկեք և խորհեք Իմ ցանկությունների մասին: Փնտրեք Ինձ, ծարավի եղեք Ինձ:

Եկեք և խորհեք այն ամենի մասին, ինչ Ես հայտնեցի ձեզ և ի սրտե ընդունեք Իմ Խոսքերը: Ես ցանկանում եմ, որ դուք փութաջանորեն գործադրեք այն ամենն, ինչ Ես հայտնել եմ ձեզ և որպես դանձ փայփայեք այն:

Ախ, սիրելի զավակներս... եթե դուք միայն իմանայիք, թե ամեն անգամ Իմ Սուրբ Սիրտը ինչպես է խոցվում, երբ ձեզանից որևէ մեկը հետաձգում է Իմ Ցանկությունները հետագայի համար: Եթե դուք միայն իմանայիք, թե ինչ եմ Ես ձեզ մատուցել ու մատուցում, ձեր ուրախությունը կատարյալ կլիներ: Գովաբանեք Ինձ՝ ձեր Փրկչին զօր ու գիշեր, գովաբանեք Ինձ՝ ձեզ Իմ Ձեռքերով կերակրելու համար: Ես լսել եմ ձեզ վերևից և այդ պատճառով եկել եմ ձեզ օգնելու, մի՞թե դուք չեք լսի Ինձ: Ընդունե՛ք և հնազանդվե՛ք Իմ Ուսուցումներին և Ցանկություններին, որոնք որպես սերմեր աճեցրել եմ ձեր մեջ: Ուստի արեք այն, ինչ Ես՝ ձեր Փրկիչը, խնդրում եմ ձեզ և ոչ թե միայն լսեք Իմ պատգամները և խաբեք ինքներդ ձեզ:

Սիրելիներս՝ դուք որոնց սիրում է Իմ Հոգին, Ես հանդիսավորությամբ ասում եմ, որ փափագում եմ սրտաբուխ աղոթքներ: Ես ցանկանում եմ, որ աղոթեք բոլոր եպիսկոպոսների և քահանաների համար: Ես ցանկանում եմ, որ լսեք բոլոր նրանց ուսուցումները, ովքեր ներկայացնում են Ինձ: Ես ցանկանում եմ, որ պահեցողություն անեք և ապաշխարեք, որ Իմ Սուրբ Հաղորդությունը ստանաք այնքան հաճախ, որքան կարող եք, որ ամիսը գոնե մեկ անգամ գնաք խոստովանության: Ես ցանկանում եմ, որ ամեն օր մեկ հատված կարդաք Սուրբ Գրքից: Ես ցանկանում եմ, որ դուք զոհաբերությամբ փոխհատուցեք այլոց համար: Ես ուզում եմ, որ Վարդարան աղոթեք և եթե հնարավոր է՝ բոլոր երեք խորհուրդները: Իմ նպատակն է ձեզ ետ բերել դեպի աստվածայինը, որ սրբությամբ ապրեք, քանզի Ես Սուրբ եմ: Սրանք են Իմ Սկզբունքները: Ես ցանկանում եմ ձեզանից ամենօրյա անձնանվիրում:

Ես եմ Սիրո աղբյուրը, և դուք կարող եք այդ ամենը ստանալ Իմ Սրտից՝ տալով այդ Սերն ուրիշներին: Այնուհետև Ես ուզում եմ, որ սովորեք Ինձ երկրպագել և մշտապես հիշեք Իմ Ներկայությունը. Իմ Ներկայությունը նույնպես խորհուրդ է: Դուք պետք է միշտ հիշեք, որ ԵՐԲԵՔ միայնակ չեք. Ես միշտ ձեզ հետ եմ: Հասեք կատարելության... Թույլ տվեք՝ այս ամայի երկիրը ծաղկի... Ես ձեզանից չեմ խնդրում ձեզ անծանոթ կամ ձեր հնարավորություններից վեր բաներ: Ես ձեզանից խնդրում եմ այն ամենը, ինչ սուրբ է: Եվ այն ամենը, ինչ ես ունեմ, Սուրբ է. Իմ Մարմինը Սուրբ է, ուստի եկեք և ճաշակեք Իմ Մարմինը և ըմպեք Իմ Արյունը, քանի որ, ով էլ որ դա Ինձ մոտ, Ես չեմ շրջվի նրանից: Ես եմ Կենաց Հացը:

Աղոթեք, որպեսզի չարը չկարողանա խաբել ձեզ, թույլ մի տվեք, որ Իմ Աչքերը վշտից պղտորվեն: Հռչակեք Իմ Սերը ձեր տների տանիքներից: Հռչակեք, որ Իմ Սերն ավելի սքանչելի է, քան գինին: Ես ձեզ կհիշեցնեմ, որ Հայր ունեք Երկնքում, որը անսահման սիրում է ձեզ և Նրա Անունը մեռոնի նման հոսում է Նրանից՝ օծելով ու օրհնելով ձեզ, Նրա Անունը Սեր է:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ Սիրո շունչը թողնելով ձեր ճակատին: Սերը սիրում է ձեզ և ձեզ հետ է ամեն օր: Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ

(Մեր Սուրբ Մոր Պատգամը)

Խաղաղություն ձեզ:

Իմ զավակներ, գործեք այնպես, ինչպես Տերն է ձեզ խնդրում: Աղոթեք Իմ այն որդիների և դուստրերի համար, որոնք հեռու են Մեզանից, աղոթեք նրանց դարձի համար: Միշտ փնտրեք այն, ինչ սուրբ է:

Նմանվեք արևածաղկի, որ փնտրում և շրջվում է դեպի արևը՝ հետևելով լույսին: Ընդունեք այն, ինչ Տերն առաջարկում է ձեզ և փառաբանեք Նրա Սուրբ Անունը: Մոտեցեք դուք բոլորդ, ովքեր ցանկանում եք, որ Նա ձեզ շատ մոտ լինի և հագեցեք Նրա Պտուղներով. Աստված ձեր Արարիչն է և Նա կարող է լինել նաև ձեր Դաստիարակը:

Մի դադարեցրեք ձեր աղոթքները, երբ ամեն ինչ ձեզ համար հաջող է ընթանում, աղոթեք անգամ ձեր ուրախության մեջ: Եկեք և ուրախացրեք Նրան, Աստված նաև ձեր Պահապանն է: Կախյալ եղեք Նրանից և Նա երբեք ձեզ չի լքի, քանի որ Նրա Լույսը ձեր ուղեկիցն է խավարի մեջ: Հետևեք Նրա պատվիրաններին, սիրելիներս, հնազանդ եղեք ձեր Հոր Ձեռքերում: Ջերմեռանդ եղեք՝ վերցնելով Իմաստությունը՝ որպես ձեզ Դաստիարակ և Ուղեկից: Աճեք Իմաստության մեջ, աճեք Տիրոջ Հոգու մեջ, որպեսզի դուք կարող լինեք Տիրոջ հետ խաղաղության և կատարյալ միասնության մեջ լինել:

Եվս մեկ խորհուրդ այսօրվա համար. անցեք Հավատքի արահետով՝ պահելով Օրենքը: Խնդրում եմ ապրեք Մեր Պատգամների համաձայն, խորհեք Մեր Պատգամների մասին: Գիտակցեք, թե որքան մեծ ուրախությամբ ենք Հիսուսն ու Ես ձեզ ուսուցանում, իսկ Մեր ուրախությունը կատարյալ կլինի այն օրը, երբ դուք վերջնականապես կհաղթահարեք ձեր անտարբերությունը և ամբողջապես Աստծուն անձնատուր կլինեք՝ վստահելով Նրան:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Հիշեք Մեր Սուրբ Ներկայությունը, մի թողեք մեզ ետևում... Աղոթե՛ք, իմ սիրելի զավակներ, ձեր օրերը լցրեք Սիրո Ներկայությամբ:

Փետրվարի 13, 1990

(Այսօր, երբ Հայր (...)-ի հետ աղոթում էինք վարդարանը, 4-րդ խորհուրդը աղոթելիս, որը Խաչը կրելու խորհուրդն էր, ես հանկարծ մի տեսակ հափշտակության մեջ հայտնվեցի: Ես կորցրեցի ձայնս և ստիպված էի չշնչել, և արտաբերածս յուրաքանչյուր բառ մեծ դժվարությամբ էր ինձանից դուրս գալիս: Ես գտնվում էի Զարչարանքների մեջ՝ կիսելով Հիսուսի տառապանքները, Խաչելության հինգերորդ խորհրդի ընթացքում ինձ թվաց՝ ես դանդաղ դուրս եմ գալիս այդ վիճակից: Երբ դա վերջացավ, ես ծանրություն և հոգնություն զգացի և խոսքս ու շարժումներս սովորականից դանդաղ էին. հոգիս դեռ Նրա տառապանքների ազդեցությունն էր կրում):

Հիսո՞ւս:

Ես եմ: Թանկագին հոգի, Իմ տառապանքը մեծ է, թույլ տուր Ինձ կիսել այն քեզ հետ: Ստեղծիր Իմ երկինքը քո ներսում: Օրհնիր Սերը սիրում է քեզ: Խաղաղություն քեզ: Նայիր Ինձ... Դու կամենո՞ւմ ես անցնել Իմ Չարչարանքների միջով: Դու պատրա՞ստ ես ավելի մեծ զոհողության:

Ես կամենում եմ կատարել Քո Կամքը:

Այսուհետև Ես և դու կկատարենք մեծամեծ գործեր: Վասուլա, այսօր քիչ կեր և վաղը խիստ ծոմ պահիր: Գոհացում տուր Ինձ և օրդ Ինձ նվիրաբերիր, հիմա այլևս մի գրիր: Ես ուզում եմ, որ դու այսօր Իմ ներկայությունը ամբողջությամբ հիշես:

Ես սիրում եմ քեզ և օրհնում եմ քեզ: Մենք, մեզ, հիշո՞ւմ ես: Աղոթիր:

Փետրվարի 15, 1990

Հիսո՞ւս:

Ես եմ: Ամբողջովին Ինձ ապավինիր: Կանչել Իմ գառներին, նրանց Իմ Հացով կերակրեմ, այդ փառավորում է Ինձ: Ե՛կ, թույլ տուր Ինձ քեզ մի քանի Լուսո Խոսքեր ասել: Ես եմ Հարությունը, որը մեռածին Կյանքի է կոչում: Շարունակիր այժմ քո ճանապարհը և հիշո՞ւմ ես... դե, շարունակի՛ր, ասա՛ այդ:

Քո Ներկայությունը, Տեր:

Այո՛, Իմ Ներկայությունը և Իմ Մոր Ներկայությունը նույնպես, աղջիկս:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 16, 1990

(Կեսօրից քիչ անց Հայր (...)-ն ու Ես ծնկել էինք Իմ փոքրիկ խորանի առջև՝ աղոթելով վարդարանի տրտմության խորհուրդները: Հենց որ մենք սկսեցինք Գեթսեմանիի վշտալի խորհուրդը, ես բառերն արտասանելու մեծ դժվարություն ունեցա: Ես ի վիճակի չէի արտաբերել որևէ բառ և թվում էր, որ Իմ հոգին կրկին ընկել է մի տեսակ հափշտակության մեջ և այս ձևով Ես մտա Գեթսեմանիում Հիսուսի տառապանքների մեջ: Ես այդ վիճակում էի մինչև վերջին «Ողջույն քեզ, Մարիամը», այնուհետև, երբ Հայր (...)-ը, որը, այնուամենայնիվ, շարունակում էր [աղոթել], սկսեց 2-րդ խորհուրդը՝ խարազանումը, ես ինձ գտա կատաղորեն գորգին շպրտված, գետնատարած և ձեռքերս գլխիցս փոքր-ինչ վերև բարձրացված վիճակում: Ես անցնում էի խարազանման միջով: Մարմինս ամեն անգամ սաստիկ ցնցվում էր, երբ «մտրակը» հարվածում էր ինձ: Առաջին անգամ լինելով, Մեր Սուրբ Մայրը պատրաստում էր ինձ յուրաքանչյուր խորհրդին: Այսպիսով ես անցա բոլոր

Զարշարանքների միջով մինչև Խաչելություն՝ կրելով Հիսուսի տանջանքները և տառապանքները: Ես մարմնական ցավեր չունեի: բոլոր ցավերս ներքին էին:

Դրանից մեկ ժամ հետո, Ես անցա ողջ Զարշարանքների միջով մեկ անգամ ևս: Հետո, 18:30-ի մոտ, նորից, ևս մեկ անգամ ենթարկվեցի Զարշարանքների, ավելի ուժգին և կատաղի քան երբևէ):

Այս Պարգևը հիմա քեզ տրվում է Իմ Սիրուց ելնելով: Դու չես արժանացել Իմ Պարգևին, այնուամենայնիվ, Ես Քո Աստվածն եմ և Ես անտեսում եմ քո բոլոր թուլությունները, և քո մեղքերը Ես ներել եմ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 19, 1990թ

Ախ, Վասուլա... Իմ Սիրո Հոգին կհամակի քո ողջ էությունը: Թող Իմ Հոգին հանգչի քեզ վրա և դու մեծամեծ հրաշքների ականատես կլինես:

Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 20, 1990թ

(Այսօր կրկին, մինչ աղոթում էինք վշտալի խորհուրդները, ես վերապրեցի Տիրոջ Զարշարանքների մի մասը: Ես վերապրեցի Գեթսեմանիի և Խաչելության որոշ պահեր):

Զավակս, ավելի խորը թափանցիր Իմ Վերքերի մեջ, լսիր Իմ Սրտի Տրոփյունը... Իմ սերը քո հանդեպ այնպիսի խենթության է հասել, որ Ես ուզում եմ, քեզ այժմ մասնակից դարձնել Իմ Զարշարանքներին: Սիրիր Ինձ, ինչպես Ես եմ քեզ սիրում: Իմ Զարշարանքները կրկնվում են ամեն օր: Ամեն օր Ինձ քարշ են տալիս Գողգոթա տանող ճանապարհով բոլոր նրանք, ովքեր այլևս չեն հետևում Իմ Ուղիներին: Իմ տանջանքները կրկնապատկվում են, երբ տեսնում եմ, թե ինչպես են Իմ զավակները դեպի հավերժական կրակը գնում, Իմ Սիրտը խորասուզվում է անտանելի ցավի մեջ՝ այս երկրի վրա այսքան շատ ապերախտություն տեսնելով: Իմ Մարմինը անգութ կերպով խարազանվում է:

Ես տառապում եմ, բայց և այնպես նրանց տները լցրել եմ բարիքներով, Ես տվել եմ նրանց Իմ Խաղաղությունն: Ես սիրում եմ նրանց և մինչև հիմա սիրում եմ նրանց Զարշարվելու աստիճան, չնայած, որ այդ մարդկանց կողմից Ես թաղադրվել եմ փչե պսակով: Իբրև մի Մուրացկան, Սիրտս Ձեռքիս մեջ առած, Ես կանգնած եմ նրանց առջև՝ աղերսելով, սակայն բարի վերաբերմունքի փոխարեն նրանք ծաղրում են Ինձ, թքում Ինձ վրա, ծաղր ու ծանակի ենթարկում, Գլխիս հարվածում և բռնությամբ տանում դեպի այն լեռը, ուր Ինձ կրկին խաչում են: Ես

դանդաղորեն արտասվում եմ և Իմ Արյունը հոսում է առանց դադարի: Ես ամեն օր վերստին խաչվում եմ մեղավորների ձեռքով: Ես հանգստի կարիք ունեմ, թույլ կտա՞ս Ինձ հանգստանալ: Վերցրու Իմ փշե պսակը, Իմ մեխերը և Իմ Խաչը... Դու ոչինչ չունե՞ս Ինձ ասելու:

Տեր իմ, Սիրելիս,
Դու, որ ինձ վստահել ես
Քո Սրբազան Գանձերը,
Դու, որ պատել ես Ինձ
Քո Սիրով ու Քնքշանքով,
Դու, որ որպես զմուռս
Հեղել ես ինձ վրա
Քո Ուսուցումները
և բուրել ես ինձ
Քո Անուշահոտությամբ,
Ես հրճվում եմ Քո Ներկայությամբ:
Դու տվել ես ինձ Քո Սիրո Պարգևը,
Դու տվել ես ինձ
Քո Զարչարանքների Պարգևը,
և ես իմ աղքատության մեջ
ոչինչ չեմ կարող առաջարկել Քեզ,
բացի իմ օրհնությունից,
իմ կամքից, իմ հոգուց և իմ սրտից:

Փետրվարի 23, 1990

(Ուրբաթ - ժամը 15:00-ին, առանց թերանալու, ես գնացի Սիրո հետ ժամադրության, հանդիպելու Հիսուսին Զարչարանքների մեջ Իր Խաչի վրա):

Մարտի 2, 1990

(Ուրբաթ - Հիսուս կրկին ինձ հանդիպեց Իր Զարչարանքների մեջ և Խաչի վրա:)

Զավակս, մենք կիսում ենք Իմ Զարչարանքները հետևյալ պատճառներով՝ հոգիների դարձի գալու համար, հատուցման համար, բոլոր նրանց համար, ովքեր խեղաթյուրում են Իմ Խոսքը, այն ուսուցիչների համար, ովքեր պնդում են, թե Ես Իմ Մարմնով չեմ հարություն առել, բոլոր նրանց համար, ովքեր Ինձ շնչահեղձ են անում, այն կեղծության համար, որ իշխում է Իմ Տեղապահին շրջապատողների մեջ, այն կեղծության համար, որ իշխում է նրանց մեջ, ովքեր խաղաղության ու Միաբանության կոչ են անում, սակայն չեն ապրում իրենց խոսքի համաձայն, նրանց համար, ովքեր խեղդում են Իմ Սուրբ Հոգու Ձայնը և բոլոր նրանց համար, ովքեր այս երկնքի տակ շարունակում են ապրել մեծ չարակամությամբ: Սիրելիս, հատուցիր բոլոր այն հոգիների համար, ովքեր ժամ առ ժամ տանում են

Ինձ Գողգոթա տանող ճանապարհով: Բոլոր այս քավություններն իզուր չեն:

Սերը նույնպես կաջակցի քեզ [1]: Եկ:

ΙΧΘΥΣ

Մարտի 3,1990

Հիսո՞ւս:

Ես եմ:

Երբեք մի վարվիր վրդովեցուցիչ ձևով, արհամարհիր այն ամենը, ինչ Ինձանից չի բխում. Ես Մաքուր եմ և Սուրբ: Այլապես ինչպե՞ս կարող է Իմ Հոգին գործել քո մեջ այնպես ինչպես Ես եմ ցանկանում [2]: Վասուլա, չկա մի բան, որ դու կարողանաս անել առանց Ինձ, այդ Ես եմ, որ կրկին փառավորելու եմ Իմ Անունը: Մեղավորները վերադառնալու են Ինձ մոտ, Իմ Անունը Սուրբ է համարվելու, և ինչ որ ասել եմ, իրագործվելու է:

Զավակս, Ես եմ Խորհուրդների Բացահայտողը, և Ես եմ շատերին հայտնում, թե ինչ է տեղի ունենալու: Դու մեկն ես Իմ ընտրած հոգիներից, ում Ես ցույց եմ տվել Իմ Սուրբ Դեմքը և Իմ մտադրությունները: Այն, ինչ որ դու պետք է անես, Իմ Պատգամները փոխանցելն է: Դու չես համոզելու որևէ մեկին: Ծաղիկս, արա այն ամենը, ինչ կարող ես, իսկ մնացածը Ես կանեմ: Ես գիտեմ, թե որքան սահմանափակ ես դու, սակայն մի անհանգստացիր. Ես քո կողքին եմ՝ քեզ քաջալերելու համար: Կրկնապատկիր աղոթքներդ, գոհացրո՛ւ Ինձ և մնա Ինձ մոտ: Հիշի՛ր, դու մեռած էիր, և Ես քեզ բարձրացեցի, սառն էիր Իմ հանդեպ, և Ես քո մեջ Իմ Հուրն արթնացրի՝ կլանելով Իմ Սիրով, անտարբեր էիր Իմ նկատմամբ, և Ես ջերմեռանդ ու ծարավի դարձրի քեզ Իմ հանդեպ:

Տարիներ ի վեր Ես՝ քո Աստվածը, ապրել եմ քո ամայության մեջ՝ հանգիստ ու սփոփանք չգտնելով այն արարածից, որին Ես արարել եմ այսքան մեծ սիրով: Մեծ վհատությամբ տեսնում էի քեզ՝ Ինձանից հեռանալիս: Ինձ հարկավոր էր միայն ասել. «Թող այս ամայի ու չոր երկիրը ցնծա», սակայն Ես ուզում էի քո մասնակցությունը. Ես չէի ուզում բռնանալ քո ազատությանը: Քեզ ազատելու համար, սիրելիս, Ես ստիպված էի քեզ քարշ տալ մինչև անապատ և թողնել միայնակ՝ ինքդ քեզ հետ: Միայն դրանից հետո դու սկսեցիր գիտակցել, թե որքան անպաշտպան էիր, և որքան արատավոր էր քո հոգին, ուստի սարսափահար դու սլացար Իմ Ոտքերի մոտ: Դու սկսեցիր գիտակցել, թե որքան անկարող էիր ինքդ քեզ համար: Հետո Ես քեզ հասկացրեցի, թե որքան եմ տառապել քո ամայության մեջ, և թե ինչպես են Շրթունքներս մագաղաթից էլ ավելի չորացել սիրո ծարավից : Հետո Ես քեզ հնարավորություն տվեցի տեսնել քո ներսը, որը վերածվել էր մի

[1] Հիսուս նկատի ուներ, երբ Ես այդ օրը կեսօրին ապրելիս կլինեմ Նրա Զարչարանքները.
[2] Հիսուս կշտամբում է ինձ որոշ բաների համար, որ ասել էի ինչ որ մեկի հասցեին:

կատարյալ ամայության, որտեղ իժը առանց վախենալու բուն կդներ ու ձվեր կածեր քո ներսում[1]:

Ապա Ես թույլ տվեցի, որ քո քողն ընկնի, որպեսզի աչքերդ տեսնեն Իմ Գեղեցկությունը և Իմ Մատով Ես քեզ դիպա՝ վերափոխելով քեզ: Ես գնացի բոլոր ուղղություններով՝ փնտրելով միջոցներ քեզ հավիտյան դրաձնելու Իմը և Իմ Խորհուրդներին հաղորդակից դարձնելու համար: Ես քո անապատը աղբյուր եմ դարձրել և քո ամայի երկրից գետեր բխեցրել: Այո: Ես այն Մեկն եմ, ով շուտով ձեր[2] կիզված հողերը լճեր կդարձնի և ձեր խանձված հողերը՝ ջրի աղբյուրներ: Ես չեմ թողնի, որ դուք մեռնեք, Ես կարթնացնեմ ձեզանից շատերին, և Իմ Ձայնը լսելի կլինի Իմ Սուրբ բնակավայրից: Ես մտադիր եմ ցույց տալ Իմ Սրբությունն ու Ողորմածությունը շատ ազգերի, որպեսզի այս կերպ նրանք կարողանան ճանաչել Ինձ:

Ես Սուրբ եմ և Ես մտադիր եմ ձեզ հասկացնել, որ դուք նույնպես պետք է սուրբ ապրեք:

«Ուշ ես Քեզ սիրեցի, Ով Գեղեցկություն, այնքան հին ու այնքան նոր: Ուշ ես Քեզ սիրեցի: Դու իմ ներսում էիր, իսկ ես դրսում էի և այնտեղ էի փնտրում քեզ: Իմ անդրավչությամբ ես ընկղմվեցի սքանչելի բաների մեջ, որոնք Դու ստեղծեցիր: Դու ինձ հետ էիր, բայց ես քեզ հետ չէի: Ստեղծված բաները ինձ Քեզանից հեռու պահեցին, մինչդեռ, եթե դրանք չլինեին Քեզանում, չէին լինի ընդհանրապես: Դու կանչեցիր, աղաղակեցիր և փշրեցիր իմ խլությունը: Դու առկայծեցիր, շողացիր և ցրեցիր իմ կուրությունը: Դու փչեցիր Քո բուրմունքն ինձ վրա: Ես այն շնչեցի և հիմա շնչահեղձ եմ լինում Քեզ համար: Ես ճաշակել եմ Քեզ, այժմ առավել սոված եմ ու ծարավ: Դու դիպար Ինձ և ես այրվեցի Քո Խաղաղությունը ունենալու համար».[3]

Իմ Տեր, միտքս միաբանությամբ է զբաղված. արդյոք անկե՞ղծ են նրանք միավորվելու հարցում:

Երբևէ չե՞մ պատմել և ցույց տվել քեզ, զավակս, թե որքան անդրդվելի են նրանցից ոմանք: Նրանք Խաղաղության և Միաբանության կոչ են անում, սակայն իրենց ասածներից մեկ բառ նկատի չեն առնում: Նրանց սիրտը ժայռի պես կարծր է և նրանք ջրաղացքարի պես անկոտրում են, բայց և այնպես, Ես <u>նրանց բոլորին կկռեմ Իմ Հրով</u>, միայն սպասիր ու տես...

Մարտի 5, 1990

Խաղաղություն քեզ: Լսիր Ինձ, Ես եմ Բարձրյալը, որը բարեհաճ գտնվեց քո հանդեպ: Աղոթիր:

---

[1] Այս հայտնության ամենասկզբում Աստված ինձ մի տեսիլք էր տվել՝ տեսնելու իմ հոգու ներաշխարհը. ես տեսա, որ կերակրում էի մի օձի:

[2] Ամբողջ աշխարհը

[3] Սուրբ Օգոստինոսի Խոստովանությունները, գիրք X

(Ես աղոթեցի):

Հիշիր, Վասուլա, դու կավ ես, և Ես կարող եմ ծեփագործել քեզանից, ինչ որ կամենամ: Աղջիկս, թույլ տուր ամեն հինգշաբթի և ուրբաթ քեզ կերտել ըստ Իմ պատկերի՝ քեզ տալով Իմ Զարչարանքների տառապանքը: Իմ Բաժակը դառնությամբ է լցված, բայց դու կկիսե՞ս այն Ինձ հետ: Ասա Ինձ, զավակս, կկրե՞ս Իմ Զարչարանքները այնպես ինչպես Ես կցանկանայի:

Այո՛, Տեր, ինչպես Քեզ ցանկալի է:

Իմ Ողորմությունը քեզ վրա է: Ես կպատրաստեմ քեզանից մի փոքրիկ խաչելություն: Իմ Մարմինը ծածկված է անթիվ [վերքերի] հետքերով, որ հասցվել են նրանց կողմից, ում Ես ամենաշատն եմ սիրում: Կկիսե՞ս Ինձ հետ Իմ Մարմնի խարանները:

Այո՛, Տեր, ինչպես ցանկանում ես:

Սերը, որ Ես տածում եմ քո հանդեպ, անչափելի է: Մոտ եկ:

Մարտի 10, 1990

(Պատգամ 1990թ. մարտի 31-ին՝ ուղղված աղոթախմբին).

Խաղաղություն ձեզ: Ես՝ Տեր Հիսուսս, սիրում եմ ձեզ: Թանկագին զավակներս, իմացեք, որ Ես եմ Հավիտենական Ճշմարտությունը: Ես եմ ճանապարհը, որը ձեզ դեպի Հավիտենական Կյանք է առաջնորդում:

Պատրա՞ստ եք Մեծ պահքի այս օրերին Իմ Արահետով ընթանալու: Պատրա՞ստ եք ճանաչելու, որ Ես Նա եմ, ով Իմ Արյան հետքը թողել է Իր անցած Արահետի վրա: Ես եմ Հինգ Վերքերով Խաչյալը, որ խոսում է ձեզ հետ: Ես եմ Սիրո զոհը, որ փնտրում է ձեր սիրտը: Եկ, մոտեցիր, դու, ում Իմ Սիրտը սիրում է, դու, որ դեռ տատանվում ես: Եկ Ինձ մոտ և թափանցիր Իմ Սրտի վերքերի մեջ, այդ ժամանակ Ես կարող եմ քեզ հրապուրել և հասկացնել, որ այնտեղ դու կգտնես քո Խաղաղությունն ու Ուրախությունը:

Ինձ ավելի մոտ եկ, հոգի՛, և թույլ տուր Իմ անուշ բույրը փչել քեզ վրա՝ վերակենդանացնելով քեզ: Անձնատուր եղիր Ինձ, և Ես կծրարեմ քո հոգին Իմ Սուրբ Սրտում, կանչիր Ինձ, և Ես կպատասխանեմ, փնտրիր Ինձ ջերմեռանդորեն և կգտնես: Հրաժարվիր քո չար ճանապարհներից և կանգնիր Իմ արահետի վրա, Ես կբարձրացնեմ քեզ ու կհափշտակեմ քո հոգին՝ որպեսզի Իմ հոգին զմայլվի:

Իմ Սերը նման է Աղբյուրի, Կենդանի ջրերի Ակնաղբյուրի, ուստի եկեք և լցրեք այս Աղբյուրից և դուք կապրեք: Մի եղեք աշխարհի նման, որովհետև աշխարհը թերանում է գնահատել Իմ Մեծ Սերը:

Զավա՛կս, արդյոք ամբողջովին ընդունե՞լ ես Իմ Զարչարանքները: Ես եմ Միակը, Ես այն Մեկն եմ, ով քեզ ազատել է Մահից: Հալածված էի քեզ

համար, հարվածներից և ապտակներից այլանդակված, թքված արհամարված, ծաղր ու ծանակի ենթարկված քո ազատագրության համար: Ես խարազանված էի անողոքաբար՝ հանուն քո հանդեպ Իմ Մեծ Սիրո: Ես անտրտունջ կրել եմ քո մեղքերն Իմ Ուսերին, ինչպես մի դառ, որ մորթվելու է տարվում, և ինչպես մի ոչխար, որ համր է իրեն խուզողների առաջ՝ երբեք չբացելով բերանը[1]: Եվ քեզ ազատելու համար, սիրելիս, Ես թույլ տվեցի, որ Իմ Անձը խոցվի նրանց կողմից, որոնց Ես եմ արարել: Այո, նրանք ծակեցին այն Ձեռքերը, որոնք արարել էին իրենց, և Իմ Վերքերի միջոցով Ես բժշկեցի քեզ... Քեզ համար Ես համբերությամբ տարա տառապանքի ժամերը, որպեսզի հոգիդ բարձրացնեմ խորխորատից: Ես քո Սուրբն եմ, բայց և այնպես Ես քեզ թույլ տվեցի Ինձ խաչի վրա պահել՝ մինչև որ Իմ Ոսկորները հոդախախտ եղան: Զգա այսօր Իմ տառապանքը, զգա Իմ ծարավը սիրո պակասի համար, մի սեր, որը ոչ մի հեղեղ երբեք չի կարող հագեցնել և ոչ մի հեղեղ չի կարող ողողել:

Երբևէ կտեսնե՞մ քեզ, քեզ. որ դեռևս մոլորված ես անապատում: Ետ դարձիր դեպի Ինձ և հաշտվիր Ինձ հետ ու ապրիր սրբորեն՝ հրաժարվելով քո ճանապարհներից: Վշտի ու արցունքների միջից Ես դիտում էի այս անսուրբ սերնդին, որը հեռացավ՝ հետևելով Անառակությանը՝ Առաքինության փոխարեն, Մահվանը՝ Կյանքի փոխարեն, որովհետև այս սերունդն ապավինել է ստին՝ ու կեղծիքին՝ այդպիսով հղանալով բանայնականության գաղափարը, որը ծնունդ տվեց անաստվածությանը: Ուստի, դեռ որքա՞ն երկար Ես պետք է լքված ու միայնակ մնամ յուրաքանչյուր Տապանակի հետևում, այն դեպքում երբ արցունքախառն Արյան կաթիլները հոսում են Այտերովս՝ պատռելով Սիրտս: Գեթսեմանիի Իմ տառապանքները կրկնվում են Հոգումս ամեն ժամ: Թափանցիր Վերքերիս մեջ, և դու կհասկանաս Իմ տառապանքները:

Ես կանխավ, հենց ամենասկզբից, գիտեի, որ, չնայած Իմ Զոհաբերությանը, կլանները կապստամբեն Իմ դեմ և կբաժանեն Իմ Մարմինը՝ առաջացնելով այսքան նոր ուսմունքներ, և հենց որ նրանց ճիշտ ու սխալի զգացողությունը բոլորովին բթանա իրենց իսկ տարաձայնություններից, նրանք կկորցնեն եղբայրության զգացումը: Եվ այն ժամանակվանից Իմ Գառների ողբն ու լացը ծակում է Ականջս... Եվ այժմ, Իմ Աղաղակը Խաչի վրայից արձագանքի պես հասնում է տարբեր ազգերի՝ ձեզ բոլորիդ ետ կանչելու և մեկ դարձնելու համար: Հետևաբար, եթե որևէ մեկը Ինձ հարցնի. «Ինչո՞ւ են այս Արյան Արցունքները Այտերովդ ցած հոսում», Ես կպատասխանեմ. «Սրանք թափվում են քեզ համար, զավակս, սրանք արցունքներ են, որոնք մեղքերի ու պղծությունների հետևանք են»: Եվ եթե դու Ինձ հարցնես. «Իսկ այդ ի՞նչ նշաններ են Մարմնիդ վրա: Ինչո՞ւ են Վերքերդ լայն բացված», Ես կպատասխանեմ. «Սրանք, զավակս, ամեն օր անողոքաբար Ինձ հասցվում են նրանց կողմից, ում Ես ամենից շատ եմ սիրում, սակայն այժմ Իմ դեմ են ելել՝ Վերքերս բացված թողնելով», թեպետ հենց նրանք էին, որ մի ժամանակ ասում էին. «Մենք ուզում ենք ճանաչել Քո Ճանապարհները և հետևել Քեզ»: Մտքով նրանք խավարի մեջ են և <u>քանի դեռ նրանք չեն մեռել իրենց «ես»-ի համար</u>, նրանք ի վիճակի չեն լինի տեսնելու Լույսը:

[1] Ես. 53:7

Այսօր՝ Մեծ պահքի այս օրերին, ես կրկին գալիս եմ քեզ մոտ, զավակս՝ մեղավոր, արդար կամ անարդար, կամ մարդկանցից մերժված, կամ այս աշխարհի ուղիներում այս ու այն կողմ նետված, ես գալիս եմ խնդրելու քեզ հաշտության համար: Գնա՛ և հաշտվիր եղբորդ հետ, քանի որ հաշտվելով նրա հետ՝ դու հաշտվում ես Ինձ հետ՝ քո Աստծո հետ: Տուր Ինձ քո խաղաղությունը, ինչպես ես քեզ Իմն եմ տալիս, նմանվիր Ինձ և սուրբ եղիր, զոհողությունն արա և պահք պահիր, որպեսզի կարողանաս աճել Իմ Հոգու մեջ, որը Սեր է, Սրբություն և ճշմարտություն:

Այն, ինչի կարիքը ես ունեմ, քո սրբությունն է: Մի՛ նվանվիր չնազայլերին, որոնք իրենց կյանքն անց են կացնում գիշերով, որովհետև քո մտադրությունները ես գիտեի քո ծնվելուց շատ առաջ: Այս օրերին ես տեղում եմ Իմ Հոգին ձեր ժողովրդի վրա, ուստի դուք աճում եք ինչպես կանաչ խոտը՝ ջրառատ վայրում. ես ցած եմ իջնում՝ այս կերպ լցնելու ձեր շտեմարաններն Իմ բերքով: Ես գալիս եմ արթնացնելու ձեզ լեթարգիական նիրհից և դուրս հանելու չար ուղիներից:

Իսկ այժմ ես հատուկ կոչ եմ ուղղում բոլոր նրանց, ովքեր կրում են Իմ Անունը և գործում են Միաբանության և Խաղաղության համար, ես խնդրում եմ ձեզ, որ դաք Ինձ մոտ ինչպես մի երեխա և դեմքով դեպի Ինձ շրջվելով, պատասխանեք այս հարցերին. Եղբայրներ, դուք արե՞լ եք այն, ինչ կարող էիք՝ պահպանելու համար Իմ Մարմնի միասնությունը: Ասացեք Ինձ, եղբայրներ, որտե՞ղ է Խաղաղությունը, որ ավանդել եմ ձեզ, , որ տվել եմ ձեզ: Ինչ՞ու եք դուք անընդհատ տարբերություն դնում ու զատում ձեզ Իմ մեջ: Անկեղծորե՞ն եք փորձում կրկին միավորվել ձեր հավատքի և գործունեության մեջ: Ես Հանդիսավոր ձևով ասում եմ ձեզ. նորոգեք ձեր միտքը հոգևոր հեղաշրջմամբ, սիրո հեղաշրջմամբ: Ներեցեք չարությունը, որ ունեք միմյանց հանդեպ և եկեք Ինձ մոտ նորոգված, Ինձ մոտ եկեք մաքուր: Արթնացեք ձեր քնից: Ես ձեր դռան առաջ եմ և բախում եմ: Նման մի՛ եղեք աղի, նմանվեք այն ծառին, որը նրբագեղ ընձյուղներ է արձակում և կրում սրբության պտուղները: Կատարեք Իմ Օրենքը՝ միավորվելով և օգնելով միմյանց:

Ինչպես երեկ, ես բարձրացնում եմ Իմ Աչքերը դեպի Հայրը և աղոթում եմ Նրան.

Սուրբ Հայր, պահպանիր նրանց,
ում տվել ես
Ինձ հավատարիմ Քո Անվանը:
Որպեսզի մեկ լինեն,
ինչպես Մենք[1]:
Թող նրանք բոլորը մեկ լինեն[2]:
Արդար Հայր, հիշեցրու նրանց
Իմ հնազանդության,
խոնարհության, անկեղծության
և մեծ Սիրո մասին,
որպեսզի նրանք կարողանան

[1] Հովհ. 17:11
[2] Հովհ. 17:21

վերջ տալ Իմ Տառապանքին,
այն Տառապանքին,
որն Իմ Մարմնում այսքան շատ
արյունահոսություն է
պատճառում:
Թող նրանք ճանաչեն
իրենց սխալները
և հաշտվեն, որպեսզի,
երբ նրանք մոտենան
Ինձ ստանալու,
խմելով և ճաշակելով Ինձ,
ըստ արժանավույն մոտենան:
Հայր, կանչիր հովիվներին
և սովորեցրու նրանց լինել զիջող
ու հնազանդ միմյանց նկատմամբ,
համեստ և անձնուրաց:
Թող նրանք գիտակցեն
Իմ Քավության շնորհը
Մեծ պահքի այս շրջանում
և Ինձանում փնտրեն
ճշմարիտ Իմաստությունը: Ամեն:

Երանի այն մարդուն, ով լսում է Ինձ, երանի նրանց, որ հետևում են Իմ Ուղիներին, երանի այն մարդուն, ով խոնարհեցնում է իր անձը, երանի հոգով աղքատներին, քանի որ նրանցն է Երկնքի Արքայությունը:

Ես՝ ձեր Տերը, օրհնում եմ ձեզ և ձեր ընտանիքները՝ թողնելով Իմ Սիրո շունչը ձեր ճակատին և Իմ Խաղաղությունը՝ ձեր փոքրիկ սրտերում: Երբեք մի մոռացեք, որ Սերը միշտ ձեզ հետ է:

Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ

(Սուրբ Մարիամի պատգամը)

Խաղաղություն ձեզ: Զգացեք Իմ ներկայությունը ձեր մեջ, թող այս շնորհը տրվի բոլորիդ…

Սիրելի զավակներս, Ես այսօր խնդրում եմ ձեզ, որ մաքրեք ձեր հոգին: Պատրաստեք ձեր հոգին Մեծ պահքի այս օրերին, որպեսզի հասկանաք Քրիստոսի Զարչարանքները և ամբողջովին թափանցեք նրանց մեջ: Հասկացե՛ք, որ Նա զոհաբերեց Իր Անձը ձեզ համար՝ ձեզ ամեն տեսակ չարությունների ազատելու և մաքրագործելու համար, որպեսզի դուք կարողանաք լինել Նրա որդեգիր զավակները: Աստված խնդրում է ձեզանից հաշտություն և զղջում: Ապաշխարեք և հավատացեք Բարի Լուրին, հաշտ եղեք Աստծո հետ և դուք կդառնաք Նրա ժառանգները Հավիտենական Կյանքի համար: Աստված ուզում է, ձեզ կատարյալ տեսնել, և որպեսզի հասնեք կատարելության, Ես հիշեցնելու եմ ձեզ, որ դուք չեք հասնի դրան առանց հաշտություն ձեռք բերելու Նրա միջոցով

և Նրա համար: Անձնուրացությունը ձեզ կառաջնորդի կատարելության ճանապարհով:

Ես՝ ձեր Սուրբ Մայրը, անդադար բարեխոսում եմ Հոր առաջ բոլորիդ համար՝ ձեր կամավոր անձնվիրման և ձեզ կատարյալ դարձնելու համար: Հիսուս և Ես այս կերպ գալիս ենք ձեզ մոտ, որպեսզի նախազգուշացնենք ձեզ և արթնացնենք ձեզ ձեր քնից: Ժամանակը թռչում է, ու թեև ձեզանից շատերն արթնացել են, Սատանան, կրկնապատկելով իր չարությունները ու որոգայթները, ստիպել է նրանց զգալի մասին նորից խոր քնի մեջ ընկղմվելու: Նրա նպատակն է բաժանել ձեզ, վեճեր առաջացնել ձեր միջև և կտրել ձեզ Որթատունկից: Դիմադրե՛ք բոլոր գայթակղություններին, դիմադրե՛ք չարին և հաղթեք սիրո միջոցով: Հաղթահարե՛ք անձնասիրությունը անձնազոհությամբ, հաղթահարեք ոխակալությունը բարությամբ: Աստծոն հանդեպ ձեր սերը ապացուցեք բարի գործերով, սիրեք ձեր մերձավորին, ինչպես ձեր անձը: Մեր Պատգամներին պետք է հետևել և ոչ թե լոկ ընթերցել, դրանք պետք է ապրել: Ապացուցեք Աստծուն, որ դուք նրա Ջավակներն եք՝ լինելով մաքուր, խոնարհ, հնազանդ ու անձնուրաց:

Իմ քահանաներ: Ես սիրում եմ ձեզ, դուք, որ այն ոչխարներն եք, որոնց Հիսուս Իր Գիրկն է առնում և ուսուցանում: Եկե՛ք և վերցրեք Հիսուսի Սուրբ Սրտից, որ կենդանացնեք ձեր սերը վերածելով մի բոցավառ կրակի և փոխանցեք այն Հիսուսի գառներին: Հետևեք Խաղաղության Արքային և դուք կսովորեք ճանաչել Նրան: Հիսուս, որն ինքը Ջոհն է, կօգնի ինքներդ ձեզ ավելի շատ զոհաբերելու: Գտե՛ք նրան, սիրելիներս, սրտի պարզությամբ. Աստված բարդ չէ: Սրբերի Սուրբը նախ խոսում է մի ձևով, իսկ հետո մի այլ ձևով՝ ձեզ հասկացնել տալով, որ ժամանակը չի սպասում: Ես լի եմ տառապանքով ու խեղդվում եմ Արցունքներից, և Սիրտս ուռչում է վշտից՝ տեսնելով Իմ զավակներից շատերին խոր քնի մեջ՝ մերժելով Մեր բոլոր Գթառատ զգուշացումները: Ես կանչում եմ օրնիբուն,, Ես հայտնվում եմ ամենուր երկրագնդով մեկ՝ աղերսելով ձեզ դարձի գալ և մոտենալ Աստծուն:

Ես չեմ գալիս ձեզ նախատելու, զավակներս, Ես գալիս եմ հանուն սիրո ձեզ զգուշացնելու, օգնելու և ձեզ կրթելու՝ ձեր հոգևոր աճման մեջ: Լինելով ձեր Մայրը՝ Ես դիտում եմ, թե ինչպես եք դուք աճում, Ես ձեզ սիրում եմ և Իմ նպատակն է՝ դաստիարակել ձեզ, որ աճեք Աստծո մեջ: Ուրախությամբ ընդունեք շնորհի այս օրերը, Աստված ձեզ չի լքել և ոչ էլ դատապարտել է: Նա երբեք Իր Սուրբ Դեմքը ձեզանից չի շրջել, ուստի ընդունեք Նրա Շնորհի Սուրբ Հոգին ուրախությամբ և երգեցողությամբ:

Ուրախացրեք Մեր Սրտերը և տարածեք Մեր Պատգամները մինչև աշխարհի ծայրերը և այդ կերպ դարձի բերեք մյուս հոգիներին: Ես փափագում եմ լեցուն տեսնել բոլոր եկեղեցիները, կենդանի ու ջերմ, ուստի ապրեք Մեր Պատգամներով: Ես ձեզ վրա շնորհներ եմ հեղում՝ քաջալերելու ձեզ. օրհնյալ եղեք և ավելի մոտ եղեք Խաչին Հիսուսի Ոտքերի մոտ, ինչպես Ես՝ Հովհաննեսի և սուրբ Կանանց հետ: Եկե՛ք և երկրպագեք Նրան, եկե՛ք և երկրպագեք Նրան, թող Սրբության Հոգին հավիտյանս հավիտենից բնակվի ձեր մեջ:

Ես՝ ձեր Սուրբ Մայրը օրհնում եմ ձեզ և ձեր ընտանիքները:

(Սուրբ Գրքի ընթերցանություն, Մաթ. 5.17-26):

Մարտի 29, 1990

Ծաղիկս, ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը: Կրիր Իմ խաչը մինչև վերջ: Երբեք մի մոռացիր Իմ մեծ սերը քո նկատմամբ, մի սեր, որը ոչ ոք երբեք չի կարող քեզ տալ:

Միշտ հիշիր Իմ մեղմ ու քնքուշ Իշխանության մասին: Ես հրճվում եմ՝ քեզ Իմ կողքին այս կերպ ունենալով: Ես քեզ շնորհ արեցի, ուրեմն ցնծա՛: Վասո՛ւլա, դու ո՛չ աղոթում էիր, ո՛չ էլ որևէ սեր ունեիր Իմ նկատմամբ: Ես չէի մեղադրում քեզ ո՛չ քո զորության և ո՛չ էլ Իմ հանդեպ քո թշնամության համար, բայց և այնպես Կարեկցանքից դրդված՝ Ես քո հոգին հանեցի վիհից: Սա, զավակս, <u>պետք է դրոշմված լինեի քո հիշողության մեջ:</u>

Ես՝ Տերս, սիրում եմ քեզ: Ե՛կ, մի օր դու կհասկանաս լիովին: Այժմ բարձրացրու աչքերդ դեպի Ինձ և ասա.

«Թո՛ղ գովաբանվի Տերը:
Թո՛ղ փառավորվի Աստված»:

Ես՝ Տերս, օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ՝ երեկոյան.)

Տեր Իմ, որտե՞ղ ես: Ես չեմ տեսնում Քեզ:

Փոքրիկս, Ես քո սրտում եմ:

Ապրիլ 2, 1990

Ես ուզում եմ միշտ պահել
Քո նկատմամբ իմ սերը:
Գիտեմ, չեմ կարող նկատել
իմ սեփական սխալները,
այդ իսկ պատճառով
ես եկել եմ խնդրելու Քեզ,
որ պահպանես ինձ
ամեն տեսակ չար հակումներից:
Ազատիր ինձ մահացու մեղքից,
թույլ տուր ինձ, քաղցր Յահվե,
ապաստանել Քո մեջ:

Իմ Հոգու սիրելին, ես քեզ կշնորհեմ այն ապահովությունը, որի համար դու հեծում ես, գոհ եղիր: Միշտ ընտրիր այն, ինչ որ Ինձ է գոհացնում: Երբեք մի վախեցիր. ես քո կողքին եմ: Ես քեզանից հայցում եմ սեր, հնազանդություն, անձնուրացություն, խոնարհություն, հեզություն, և այս ամենով, դու կզինաթափես ատելությունը, անհնազանդությունը, ցուցամոլությունը, սնափառությունը և չարակամությունը: Ուրախացի՛ր, Հոգի: Եթե մի նայի՛ր, դեմքով դեպի Ինձ շրջվիր և անձնատուր եղիր Ինձ:

Իմ գալուստը մոտ է, ամեն ոք, ով երկյուղում է Ինձանից՝ Տիրոջից, կիմանա այդ: Իմ Հոգին քեզ վրա է, Իմ շատ սիրելիներ: Ես՝ Ով մեծացրել և դաստիարակել է քեզ, միշտ կհիշեցնեմ քեզ Իմ Սիրո մասին: Քեզ երջանիկ զգա: Ասում եմ քեզ. ուրախացիր, ուրախացիր: Թույլ տուր Իմ Հոգին գործի քո մեջ: Չնայած քո ծայրահեղ տկարությանը, ես կարող եմ ավարտին հասցնել ամեն ինչ: Որքան դու փոքր ես, այնքան մեծ եմ Ես: Ընդունիր Իմ Շնորհը և մոռացիր քո անկամությունը և անճարակությունը: Թող Խաղաղությունը միշտ քեզ հետ լինի:

Գուրգուրիր Ինձ քո սրտով, երբևէ Ինձ մի՛ անտեսիր: Ես կսովորեցնեմ քեզ շատ բաներ: Ես կծանոթացնեմ քեզ ճշմարիտ Գիտելիքին. դու կսովորես Իմ Շուրթերից: Իմաստությունը գնում է քո առջևից և քո դաստիարակն է: Այն ամենը ինչ որ դու անում ես, արա՛ սիրով: Զարդարի՛ր Իմ այգին, զարդարիր Իմ Գլուխը՝ Փչեպսակը փոխարինելով Վարդեպսակով:

Ես՝ Տերս, ավելի քան անհամբեր սպասում եմ Իմ Փառքի Օրվան:

Ապրիլ 3, 1990

Ես փափագում եմ Քեզ,
Հիսուս, իմ Փրկիչ,
Քեզ, որ հանեցիր ինձ վիհից:
Ես գիտեմ, որ Դու ինձ
վերաբերվում ես գորովով
և որ տառապանքի ես
ենթարկում ինձ՝ լավագույնս
դաստիարակելու համար:
Կրկին եղիր իմ Փրկիչը:
Վերականգնիր իմ ուրախությունը,
արմատախիլ արա իմ միջի
ողջ չարությունը,
քանի որ Դու սիրում ես Սրբությունը
և սրտի անկեղծությունը:

Խաղաղության մեջ մնա, զավակս: Տառապանքը քեզ տրված Իմ պարգևն է, որ մաքրագործի քեզ: Ես կլինեմ քո մերկ հոգու քաղցր չարչարանքը, քո մտքի տանջանքը [1], քո բերանի անհագ ծարավը, քո սրտի բաբախյունը... Բա՛ց արա աչքերդ, Հոգի, և անցիր առաջ սրբության ճանապարհով: Տուր ինձ քո կամքը... Բա՛ց արա աչքերդ և նայիր, Հոգի:

[1] Այսինքն՝ ծարավի լինել Աստծուն և տառապել Երկնքում Նրա հետ չլինելու մտքից:

Նայիր Իմ հետևից թողած հետքերին: Իմ Ուղին նշված է Իմ Արյամբ, հետևիր այդ նշաններին և դրանք քեզ կառաջնորդեն դեպի Ինձ: Դաշնակից մի փնտրիր և մի հարցրու՝ ինչ՞է այս կամ ինչ՞է այն: Իմ զորությունը կպահի քեզ անկումներից: Միշտ Ինձ մոտ եկ, հոգի, և Ես կտամ քեզ Իմ Բաժակը: Վասուլա, մի մերժիր Իմ Բաժակը: Թեև Իմ Բաժակը լի է դառնությամբ, ըմպի՛ր այն, ըմպի՛ր և Փառք տո՛ւր Ինձ ու որպես օծման անուշահոտ յուղ Ես քեզ վրա կհեղեմ Իմ Օրհնությունները:

Լսի՛ր, Վասուլա, աղջիկս, թեպետ շրջապատված ես Իմ թշնամիներով, սակայն դու ինքդ անվնաս կմնաս, ուստի մի վախեցիր, այլ առաջ ընթացիր: Հետևիր Իմ Արյան հետքերին և մի նայիր աջ ու ձախ, Ես քո առջևում եմ՝ սպասելով, որ քեզ սրբագործեմ: Ե՛կ, ե՛կ միայնակ, ես չեմ կամենում քո մեջ մրցակիցներ գտնել: Հանուն քո նկատմամբ Իմ Մեծ սիրո՝ քիչ կեր մաքրագործման այս օրերին: Ես եմ քո Փրկիչը, որ կանգնած է այս ճանապարհի վերջում: Բացի՛ր աչքերդ և տես Արյանս հետքերը, որ Ես թափել եմ քեզ համար, թող, որ այս օրերը քեզ համար հիշարժան լինեն: Արթնացիր, հոգի, ինչո՞ւ ես քնել: Եկ և գտիր քո ուժը Իմ մեջ, եկ և Ես կհագեցնեմ քո ծարավը, եթե դու էլ հագեցնես Սիրո Իմ ծարավը. սա աղջիկս, քո պարտականությունն է՝ քանի որ այդ Ես էի, որ եկա քեզ ազատելու վիհից և քանի որ այդ Ես էի, որ եկա քեզ փրկելու՝ ցույց տալով Իմ մեծ Սերը քո նկատմամբ: Ե՛կ, հիմա և տուր Ինձ քո կամքը, ցույց տուր սիրո Իմ անհագ ծարավը հագեցնելու քո ջերմեռանդությունը՝ թողնելով քո սիրո մի քանի կաթիլ Իմ պապակած Շուրթերին, Ես կընդունեմ դրանք ինչպես անապատի վայրի ծաղիկներն են ընդունում վաղորդյան ցողը:

Հոգի, դու ոչ անմեղ ես եղել, ոչ էլ հավատարիմ, բայց և այնպես Ես քեզ ներել եմ Իմ Մաքրության ու Լույսի մեջ: Ես ջնջել եմ քո բոլոր մեղքերը, ուստի երախտապարտ եղիր, բարձրացրո՛ւ աչքերդ այժմ դեպի Ինձ, բարձրացրո՛ւ աչքերդ և նայիր այն դրոշին, որ հիմա Ես տարածել եմ քո գլխավերևում... Շատերի միջից Ես քեզ ընտրեցի, որ քո միջոցով մարդկությանը ցույց տամ Իմ Ողորմության ու Սիրո դրոշը, որը Ես այժմ պարզել եմ քո գլխավերևում:

Սերո՛ւնդ, իր սիրեցյալի ետևից ընկած մի սիրահարի նման, Ես ուղիներ եմ որոնում, թե ինչպես կարող եմ ձեզ Իմը դարձնել հավիտենապես: Ցույց տուր Ինձ սերունդ, որ ձեր այդ պատնեշի ետևում Ես դեռ կարող եմ գտնել մի հավատարիմ ընկերոջ, իսկ եթե անգամ այդպիսին չկա՝ մի տատանվող ընկերոջ... և Ես ձեր խաբեբայությունը կվերածեմ անկեղծ խոսքերի, որ կործանման Օրը ձեզ չհարվածի: Ընկեր, որ դեռ տատանվում ես չարի ու բարու միջև, մի՛ եղիր դաղջ: Դու դեռ չե՞ս հասկացել, որ Իմ Սիրտը հիվանդ է Սիրով: Եկ և զգա Իմ Սրտի զարկերը, ամեն մի Զարկ Սիրո մի հիասքանչ երգ է քեզ ուղղված, ընկե՛ր, Խանդոտ Սիրուց բխած Սիրո մի կանչ:

Ե՛կ Ինձ մոտ, նախքան արևը մայր կմտնի և նախքան դիշերվա ստվերները կնկնեն քեզ վրա ինչպես մի շղարշ: Ե՛կ Ինձ մոտ, մի՛ թող Ինձ տագնապի մեջ մինչև վաղը: Ե՛կ նախքան Հողմն ու Կրակը դարմանի պես քեզ ցիրուցան անելու կգան: Ե՛կ Ինձ մոտ, և Ես կպահպանեմ քո հոգին վշտի օրերին: Թող լսեմ քեզ, հոգի, թող լսեմ քո ոտնաձայնը, թող

լսեմ քո ձայնը դիշերամուտից առաջ[1]... Թզենին արդեն հասունացել է, և շուտով դու կճաշակես նրա առաջին պտուղները... Երանի քեզ, որ քաղցած ես Հիմա, դու կհագեցնաս:

Սերը սիրում է քեզ, Իմ Տունը քո Տունն է: Նետվիր Իմ բազուկների մեջ, և Ես կհագեցնեմ քո չորությունը Իմ Սիրո հեղեղով:

Եկ, Ես՝ Հիսուս, անչափ սիրում եմ քեզ:

Ապրիլ 10,1990

(Պատգամ Լենսի համար)

Խաղաղություն ձեզ... Ես ձեր Սուրբն եմ, ով ձեզ հսկում է վերևից: Սթափվե՛ք, ընկղմվե՛ք աղոթքի վերանցական վիճակի մեջ և զգացեք Իմ ներկայությունը... Զգացեք Իմ ներկայությունը, զգացեք ձեզ ուղղված Իմ Աչքերը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ոչ մի մարդ չունի ավելի մեծ սեր, քան Իմն է: Ես Նա եմ՝ Նա, ով սիրում է ձեզ ամենից ավելի՝ կենդանի Աստվածը:

Այսօր, սիրելինես, ձեր ազգերն ապրում են խավարի մեջ, սակայն Իմ անսահման Ողորմությունից դրդված՝ Ես իջնում եմ ցած, որ վերականգնեմ Իմ Տունը և վերադարձնեմ ձեզ Ինձ մոտ: Ես արդարև հեղում եմ Իմ Հոգին ողջ մարդկության վրա, որպեսզի Իմ խոսքով կերակրեմ ձեր հյուծված ազգերին և, <u>հիշեցնեմ ձեզ, որ Ես Սուրբ եմ</u>:

Ես գալիս եմ ձեզ մոտ, որ խրախուսեմ ձեր բարի գործերը և ետ պահեմ չար հակումներից: Ես կանգնած եմ, հոգի՛, ճիշտ ձեր դռների մոտ և թակում եմ դուռը: Ես Նա եմ, ում դուք փնտրում եք, Ես Նա եմ, ով բարձրացնում է ձեր հոգին և մեծարում է այն:

Ես ձեզ ասում եմ ամենայն հանդիսավորությամբ, որ Սերը վերադարձի ճանապարհին է: Ես շուտով վերադառնալու եմ ձեզ մոտ, ուստի աղոթեք հոգիների դարձի համար, աղոթեք նրանց համար, որպեսզի դարձի գան մինչև Իմ վերադարձը: Աղոթե՛ք եռանդով, որպեսզի Իմ Աղաղակն այս ամայության մեջ կարողանա հասնել նրանց ականջներին և ճեղքել նրանց խլությունը: Աղոթեք Հորը, որ Նրա Արդարության Բաժակը չլցվի և չթափվի մինչև ձեր դարձի գալը:

Սերունդ, կանչե՛ք Ինձ և Ես կլսեմ ձեզ: Օ՜, սերունդ, սերունդ... անասելիորեն պղծված, աննկարագրելիորեն ապականված, ձեր մեղքը կործանում և սպանում է ձեզ: Ձեր այլասերվածությունը, սերունդ, և ձեր անհավատարմությունը թափանցել են ողջ Հավիտենականությունը՝ ցնցելով երկնքի սյուները: Ձեր անօրենությունները ձեր հոգին զրկել են ողջ իմաստությունից: Եթե դուք իմանայիք, թե ինչպես են դողում Իմ հրեշտակները՝ տեսնելով, թե ինչ է սպասվում ձեզ... երկի՛ր, որը ձեր ուրացության պատճառով պիտի ծածկվի ձեր սեփական արյունով, երկի՛ր, որը պատառ-պատառ պիտի լինի հենց Իմ հրեշտակների աչքերի առաջ: Եթե դուք բոլորդ պատկերացնեիք այն ցնցումը, որը գալու է, ձեր շունչը չէիք վատնի դատարկ խոսքերի և անաստվածության վրա, ինչպես այժմ:

[1] Հիսուս, հանկարծ փոխեց աղերսող տոնը

Ես՝ Տերս, Իմ Հոգին հեղում եմ, որ ձեզ նախապատրաստեմ, երկնքից ձեզ սովորեցնեմ և ապաշխարության ու դարձի կոչեմ: Ես Ողորմածության Աստվածն եմ, Ով ցած է խոնարհվում դեպի ձեզ՝ Շնորհի այս օրերին ձեզ փրկելու համար:

Լսեք Իմ վշտի Աղաղակները, սիրելինե՛ր, Ես գալիս եմ արթնացնելու ձեզ, Ես չեմ հոգնում Իմ աղերսանքները կրկնելուց, երախտամոռ սերունդ, և Ես կշարունակեմ կրկնել ձեզ Իմ Աղերսանքները: Իմ Շրթունքները երբեք չեն հոգնի ձեզ կանչելուց, բայց մինչ Ես խոսում եմ, Իմ տառապանքը մնում է... Լույսը ձեզ մոտ է՝ ցրելու ձեր խավարը, սերունդ...

Բացեք ձեր աչքերը, բացեք ձեր աչքերը և դուք կտեսնեք Ինձ Իմ փայլի մեջ: Ես պատրաստ եմ ձեր աչքերին լույս տալու, որպեսզի տեսնեք և չընկնեք մահվան քնի մեջ: Ձեր սերնդի գործերն այլասերված են ու նողկալի, հեռու՝ Իմ Պատկերը լինելուց, հեռու՝ Սիրուց, հեռու՝ Սրբությունից: Ես ձեր Սուրբն եմ, սակայն դուք վերստին խաչում եք Ինձ ամեն րոպե: Ես Նա եմ, որ այսօր այսքան մեծ Սիրով գրկում եմ ձեզ Իմ Բազուկներով և Իմ Ձեռքով քնքշորեն սնում եմ ձեզ Իմ Խոսքով, որպեսզի վերականգնեմ ձեր աստվածայնությունը սերունդ, որ միշտ այնքա՜ն տկար ես:

Ես գալիս եմ ձեզ ազատելու չարից, Ես չեմ գալիս ձեզ սպառնալու: Իմ Անսահման Ողորմածությունից դրդված Ես գալիս եմ միայն, որ զգուշացնեմ քեզ: Իմ ամբողջ էությունը ձգտում է, որ տիրանա ձեզ և ձեզ Իմը դարձնեմ ողջ Հավիտենականության համար և ձեզ հագցնեմ շլացուցիչ ճերմակ պատմուճաններ: Իմ Սիրտը հուսահատորեն ձգտում է ետ պահել ձեզ ձեր նողկալի հակումներից: Ես կանչում եմ, սակայն ձեզանից այնքան շատերը այսօր չեն պատասխանում: Ես խոսում եմ թույլ գործիքների միջոցով, սակայն ձեզանից շատերը չեն լսում, դրա փոխարեն մարդիկ Իմ պատգամաբերներին վերաբերվում են որպես ինքնակոչերի: Այս մարդիկ ավելի կնախընտրեն անել այն, ինչն ամենից շատ տհաճ է Ինձ համար... անձնասպան են լինում[1] ... կարծելով, թե մի սուրբ ծառայություն են մատուցում Ինձ: Նրանց Հոգին խավարի մեջ է ու անտեղյակ, չի ճանաչում Ողորմության Իմ Սուրբ Հոգին, ոչ ավելի, քան Հրեաները ճանաչեցին Ինձ՝ որպես Մեսիայի: Նրանք բարկացնում են Ինձ, նրանք չեն ուրախացնում Ինձ, նրանք փակում են Իմ ճանապարհը փուշ ու մացառով՝ անմաքրություն ու խառնաշփոթություն առաջացնելով այս աստվածազուրկ ու անզգա սերնդի մեջ: Զգա Իմ Տառապանքը, զգա Իմ Վիշտը... Իմ Աչքերը աղոտանում ու մաշվում են արցունք թափելով:

[1] «Կիսլեն իրենց կյանքը...» այս երեք բառերը ավելին են նշանակում: Սա նաև նշանակում է, որ նրանք, ովքեր հարձակվում են Սուրբ Հոգու վրա և լռեցնում են Նրան՝ Սուրբ Հոգուն, որը խոսում է Իր պատգամաբերների միջոցով, լռեցնելով Աստծո զգուշացումները: Այդ մարդիկ պատասխանատու են այն հոգիների համար, որոնք կորստյան են մատնվելու: Շնորհի Սուրբ Հոգին այսօր ընտրել է արթնացնելու մեզ այն բաների միջոցով, ինչի կարիքը մեր սերունդն ունի. երևումների բազմապատկում, տեսիլքների միջոցով տրված պատգամներ: Ֆաթիմայի կանչը լրջորեն չընդունվեց, այն անտեսվեց 13 տարի, դա նախազգուշացում էր: Արդյունքը երկրորդ համաշխարհային պատերազմն էր ու կոմունիզմը:

Ամեն անգամ ես ձեզ մոտ եմ գալիս մեծ սիրով՝ առաջարկելու ձեզ Իմ Սիրո պարգևը, Իմ Հոգու պարգևը, Իմ Աստվածայնության պարգևը: Ես գալիս եմ հիշեցնելու ձեզ Իմ Սրբության մասին, խոսե՛ք, ուրեմն, Ինձ հետ, թույլ տվեք լսել ձեզ, ձեզ, ում Իմ Սուրբ Սիրտը սիրում է և տրոփում: Երբևէ կտեսնե՞մ ձեզ այս անապատից դուրս գալիս: Վերադարձե՛ք Ինձ մոտ. քանի որ երկար չեմ կարող մնալ տառապանքի մեջ՝ ձեր ոտնաձայներին սպասելով:

Ես չեմ հանդիմանի ձեզ, ո՛չ, Ես միայն թույլ կտամ ձեզ ընկնել Իմ Գիրկը և կօրորեմ ձեզ Ուրախության արցունքներով, զավակս: Ես կպատեմ ձեզ Իմ Սիրո հեղեղով՝ թողնելով ձեր հոգին Իմ խաղաղության մեջ: Ես կխնամեմ ձեզ, չէ՞ որ Ես ձեր Հովիվն եմ: Տե՛ս, դուք ապրում եք խոստացված օրերի սկզբում: Ես ասել եմ, որ Իմ Շնորհի Սուրբ Հոգին շունչ կփչի ձեր մեռելների վրա: Ես մտադիր եմ հարուցելու ձեզ ձեր գերեզմաններից ու առաջնորդելու ետ՝ դեպի ձեր տիրույթը,

Իմ Սուրբ Սրտի մեջ:

Եվ Ես կլցնեմ ձեզ Իմ Հոգով՝ բժշկելով ձեզ, և դուք կճանաչեք Ինձ՝ ձեր Աստծուն: Դուք, ձեր կողմից, բացե՛ք ձեր աչքերն ու սիրտը, անձնատո՛ւր եղեք Ինձ, առաջարկե՛ք Ինձ ձեր կամքը և մնացածը Ես կանեմ:

Հիշե՛քիր Իմ Սուրբ Ներկայությունը: Եղեք Իմ Լույսի անոթներից մեկը՝ կրելով Իմ Խոսքերը և սփռելով Իմ Պատգամները: Ես՝ Տերս, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Շունչը ձեր ճակատին: Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 12, 1990

(Փարիզի և Իտալիայի համար)

Խաղաղություն ձեզ:

Ես Հարությունն եմ: Եթե մեկը հավատում է Ինձ, անգամ եթե մեռնի, նա կապրի: Ես Ճշմարտության Սուրբ Հոգին եմ: Ես Իմ Խոսքի Հիշեցնողն եմ, որ գալիս ու արթնացնում է ձեզ խորը քնից:

Ասվել է, որ Իմ Շնորհի Հոգին շռայլորեն կհեղեղվի ամբողջ մարդկության վրա, և ձեր որդիներն ու դուստրերը կմարգարեանան: Այն ամենը, ինչ ասում է Աստվածաշունչը, կատարվում է: Ես Երկնքից պատրաստում եմ ձեզ, որ ճանաչեք Ճշմարտությունը: Ես խրախուսում եմ ձեզ՝ ցույց տալով նշաններ Երկնքում և երկրի վրա: Ես թշվառներին ու նվաստներին տեսիլքներ եմ տալիս: Ես Իմ Մորն եմ ուղարկում ուսուցանելու ձեզ, որպես Ուսուցիչ տարբեր ազգերի մեջ: Ես ցույց եմ տալիս Իմ անսահման Ողորմությունը, ինչպես մի դրոշ ձեր գլխավերևում, սերո՛ւնդ, որպեսզի ձեզ ուսուցանեմ ու ետ վերադարձնեմ դեպի աստվածություն: Եթե դուք լսեք Ինձ այսօր, Ես կբարձրացնեմ ձեր հոգին, ու դուք կհասնեք հանգստյան մի վայր:

Սերո՛ւնդ, դուք բավական երկար եք երկրպագել անանուն կուռքերին, մեռած կուռքերին, հորինվածքներին, որոնք վնասել են ձեզ՝ սպանելու աստիճան: Դուք աստվածային պատիվներ եք մատուցել նրանց, ապականելով ձեր կյանքը: Տարիներ շարունակ Ես չեմ լսել ո՛չ ձեր ձայնը, ո՛չ էլ ձեր քայլքը: Դուք չեք դիմել Ինձ և չեք ներբողել Իմ Հրաշքները: Ա՜հ, սերունդ, ինչո՞ւ եք դուք մերժել Ինձ՝ ձեր Սրբին: Եկեք ու լսեք Ինձ նորից: Սերը ետ կգա ձեզ մոտ, որպես Սեր: Սա է Իմ Խոստումը: Ուստի պատրաստ եղեք ընդունելու Ինձ, և Ես կտամ ձեզ իմ Սիրո և Իմ Սրբության պարգևը:

Սիրելիներս, դո՛ւք, որ այսօր հավաքվել եք այստեղ, իմացե՛ք, որ այդ Ե՛ս եմ, Հիսո՛ւսը, որ փնտրել ու կանչել է ձեզ անապատից, որ մտնեք Իր Հրաշալի Այգին՝ Իմ Ժողովքում:

Ես, Սուրբ Սիրտն եմ, անչափ զգայուն, որը խնդրում է ձեզ խաղաղություն կնքել Ինձ հետ և հաշտվել Ինձ հետ: Թող Իմ Սուրբ Սիրտը օղակող փշերը ծաղկեն ծաղկեպսակների նման: Բացե՛ք ձեր սիրտն Իմ առջև և ողջունեք Ինձ: Մատուցե՛ք Ինձ ձեր սիրտը, և Ես կհափշտակեմ ձեզ, որ հաճույք պատճառեմ Իմ Սրտին: Խոսեք Ինձ հետ սրտով, և Ես ձեզ անպատասխան չեմ թողնի: Հասկացե՛ք, որ Ես, որ ձեր Թագավորն եմ ու Տերն Ամենայնի, իջնում եմ դեպի ձեզ, մեղքի մեջ թաթախված այս աշխարհում, որպեսզի փնտրեմ ձեզ, Իմ բարեկամներ: Որքա՞ն երկար դեռ պիտի փնտրեմ: Աչքերս հոգնել են Իմ Շնորհի Հոգուն ուղղված ձեր ողջունող պատասխանը փնտրելուց: Ես բացում եմ բերանս տենչագին փափագելով ձեր պատասխանը, բայց դուք նույնիսկ խոսք չունեք ասելու... Իմ Շնորհի Հոգին կանչում է ձեզ, որ առաջնորդի Իմ Սուրբ Սրտի Խորքերը, բայց այսօր Իմ Շնորհի Հոգին երախտագիտություն չի ստանում Իր Ողորմության համար...

Ես մինչև վերջ խոնարհվում եմ դեպի ձեզ՝ Իմ Գահից դեպի ձեր դուռը: Ես հոգնած գալիս եմ ձեզ մոտ, ինչպես մի ցնցոտիավոր Մուրացկան, անճանաչելիորեն խոցված, բոկոտն ու լքված: Լսե՛ք իմ ողբը. այդ Ե՛ս եմ, Քրիստոսը... Ես ծարավ եմ... Ես ծարավ եմ սիրո պակասից... Իմ Շուրթերը չորացել են սիրո ծարավից... Իմ Բերանը մագաղաթից էլ չոր է՝ Իմ կոչերը կրկնելուց... Իմ Սիրտը հիվանդ է սիրով... Ես խելացնորության աստիճան սիրում եմ ձեզ, չնայած ձեր սարսափելի հպարտությանն ու չարությանը:

Ես գալիս եմ ձեզ մոտ, փոքրիկներս, Սիրտս Ափիս մեջ դրած: Ես գիտեմ, թե որքան թշվառ եք դուք, բայց Ես կարո՞ղ եմ կիսել ձեզ հետ ձեր ընթրիքը: Դուք արդյոք կհագեցնե՞ք Իմ ծարավը: Դուք կամոքե՞ք Իմ Վերքերը:

Ո՛չ, դուք չեք փնտրել Ինձ: Այդ Ե՛ս եմ, որ փնտրել եմ ձեզ ու մերկ եմ գտել այս անապատում, ուր դուք ապրում եք: Թույլ տվեք Ինձ մտնել ձեր սիրտը, և Ես վսեմորեն կզարդարեմ ձեզ: Եթե դուք Ինձ թույլ տաք մուտք գործել ձեր սիրտը, Ես ձեզ ցույց կտամ Իմ Վերքերը, որոնք Ինձ տրվեցին Իմ լավագույն բարեկամների տանը: Դուք կարսափեք դրանց խորությունից և կցնցվեք Իմ Մարմնին դաժանորեն հասցված բազմաթիվ խարաններից: Իմ Մարմնի վերքերն այնպիսին են, որ Ինձ խեղանդամ թողեցին այդ ճակատամարտում:

Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. ով Աստծո Արքայությունը չի ողջունում

ու ընդունում ինչպես մի մանուկ, նա երբեք չի մտնի այնտեղ: Փնտրեք Ինձ պարզ սրտով և կգտնեք Ինձ: Մի փորձեք Ինձ, և դուք կտեսնեք Ինձ, ճանաչելով Իմ Ամենակարողությունը: Անտարբեր ու սառը մի՛ մնացեք Մեր Կանչերի հանդեպ, խուլ մի՛ եղեք Մեր Կանչերի հանդեպ: Լսե՛ք Մեր աղերսները, բա՛ց արեք ձեր ականջները ու ճանաչեք Հովվի Կանչը: Եթե դուք թույլ եք, Ես կբարձրացնեմ ձեզ ու կտանեմ Իմ Ուսերի վրա: Ես պատրաստ եմ վերացնելու ձեր բոլոր մեղքերը Իմ Մաքրության ու Իմ Լույսի մեջ:

Օ՜, բարեկամ, ինչո՞ւ ես տակավին վարանում տատանվելով: Քո պորտալարը դեռևս կապված է Ինձ. Ես քո կյանքի Աղբյուրն եմ: Ես ամեն ինչ սնող Լիառատ Աղբյուրն եմ, և Իմ Խոսքով է, որ Ես քեզ կյանք եմ տալիս ու պահպանում մահից: Բարեկա՛մս, քո կերած բազմապիսի ուտելիքները չեն, որ քեզ կյանք են տալիս, այլ այդ Ես եմ, որ քեզ կյանք եմ տալիս: Ուրեմն, բարձրացրու աչքերդ դեպի Ինձ, և որպես դանձ Իմ Խոսքը պահիր քո սրտում, և դու կապրես: Արի՛ ու Ինձ խնդրիր բացել քո աչքերը, և Ես անձկալով կգամ ու մի կողմ կքաշեմ քո շղարշը, բարեկամս: Արի՛ ու Ինձ խնդրիր քեզ ետ բերել քո աքսորից, որտեղ ձեզանից շատերն են մոլորվել, և Ես կգամ, թռչելով դեպի քեզ, անգամ եթե դու, քո չարացած պահին, պատ կառուցած լինես Իմ Ճանապարհին, Ինձ քեզանից բաժանելու համար, Ես մի Շնչով կփլուզեմ այդ պատը: Ապա, Ես կհիշեցնեմ քեզ Իմ սիրո մասին: Ես կհիշեցնեմ քեզ, որ Ես Նա եմ, ով բոլորից շատ է քեզ սիրում, և որ քո օթևանը Իմ Սուրբ Սիրտն է: Ես կհիշեցնեմ, որ ինքներդ ձեզ չտարբերեք ու չառանձնացնեք Իմ մեջ: Ես կհիշեցնեմ ձեզ, որ միացած լինեք հոգով ու սրտով և մեկդ մյուսին սիրեք այնպես, ինչպես Ես եմ ձեզ սիրում:

Այո՛, այդ Ես եմ, Իմ Խոսքի Մշտական Հիշեցնողը, որ խոսում է ձեզ հետ՝ ձեր հիշողությունները թարմացնելու համար: Ընդունեք Իմ Սուրբ Հոգին...

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրիդ և հենց այս պահին Ես կթողնեմ Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին, մեկ եղեք:

Ապրիլի 13, 1990

(Ավագ Ուրբաթ - Պատգամ բոլոր նրանց համար, ովքեր աշխատում ու տարածում են այս պատգամները):

Խաղաղություն քեզ, Ես Նա եմ, ով խթանում է Իր գործիքներին: Դադարի՛ր անհանգստանալուց, Ես քո կողքին եմ, զավակս.

Տե՛ր: Նվաճիր ինձ:

Ես դա կանեմ, եթե դու թույլ տաս: Տեղ տուր Ինձ, Ես սիրում եմ քեզ: Դու հասկանո՞ւմ ես, որ Իմ միջոցով պետք է հայտնի դառնան Իմ պատգամները: Իմ ձեռքում են բոլոր դռների բանալիները: Եթե որևէ արգելք կա, հիշի՛ր, որ Ես դա թույլ եմ տվել Իմ Փառքի համար: Խորաթափանց և հմուտ եղիր Իմ Գործում, և Ես սա ասում եմ

յուրաքանչյուրին, ում ես ընտրել եմ Իմ սերմնահատիկները տարածելու համար: Նրանք, ովքեր չեն արդարացնի իմ սպասելիքները, կփոխարինվեն:

Օձերի նման խելացի եղեք, բայց աղավնու պես՝ անվնաս: Ոչ ոքից մի՛ վախեցեք: Զգոն եղեք վտանգների հանդեպ, վստահեք մեկդ մյուսին, կիսվեք մեկդ մյուսի հետ, մնացեք Իմ Սիրո մեջ:

Հիշե՛ք, որ այդ դուք չեք, որ փնտրել եք Ինձ: Այդ ես եմ ձեզ ընտրել, և այդ ես եմ, որ ձևավորել եմ ձեզ, փոխակերպել ու փութաջան դարձրել: Ես ձեզանից յուրաքանչյուրին տվել եմ մի առաջադրանք, որ դուք դուրս գաք ու պտղաբեր դառնաք: Այդ ես եմ, որ ձեզ գործի եմ դրել այս աշխատանքի համար:

Ես սիրում եմ ձեզ, և ես կառաջնորդեմ ձեզ մինչև վերջ: Համառորեն շարունակեք մինչև վերջ: Մի՛ քնեք, որ Սատանային հենարան չտաք: Արթուն կացեք, հանգստացեք, եթե կարիք ունեք, բայց մի անտեսեք Իմ Աշխատանքը: Արեք ամենը, ինչ կարող եք, և Ես կանեմ մնացյալը: Ես եմ Դուռը և ոչ ոք չի կարող մտնել Իմ Արքայությունը, եթե նա չանցնի Իմ միջով:

Խնդրում եմ, Տե՛ր, ասա այն մարդկանց անունները, ում մասին խոսում ես:

Վասուլա, ամեն ոք, ով կրում է Իմ Խոսքը, կրում է Իմ Լույսը: Ես ընտրել եմ նրանց, և նրանք գիտեն իրենց: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ, բոլորիդ, ովքեր տարածում են Իմ Պատգամը:

Վասո՛ւլա, գառնուկս, Ես միշտ գիտեի, որ դու թույլ ես, և դա է պատճառը, որ քեզ եմ ընտրել: Թուլությունը դրավում է Ինձ: Իմ Ուժը լավագույն ձևով է դրսևորվում թուլության մեջ: Դու միշտ փորձություններ կունենաս, բայց դրանք քո աճման համար են: Ես ուզում եմ, որ ուժեղ լինես: Ես ուզում եմ, որ դու կարողանաս շրջահայեցությամբ դիմադրավել դժվարություններին: Ես ուզում եմ, որ փառաբանես Ինձ:

Ուստի, Իմ Վասուլա, թույլ մի՛ տուր, որ օձը փորձի քեզ: Նա թափառում է քո շուրջը՝ համառորեն փորձելով, որ ցած գցի քեզ: Միշտ զգոն եղիր: Ես քեզ հետ եմ ու կպաշտպանեմ քեզ ընկնելուց: Անդադար աղոթիր, որ գայթակղիչը հնարավորություն չունենա քեզ մոտենալու: Սա է Իմ խորհուրդը. աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր և միշտ հիշիր Իմ Ներկայությունը: Ծոմապահություն արա, խոստովանիր ու պաշտիր Ինձ, ճաշակիր Ինձ ու ըմպիր Ինձ: Զարին սիրով հատուցիր և ուրախացիր այն ամենի համար, որ Ես տալիս եմ քեզ: Ա՜հ, Վասուլա... հրճվանք պատճառիր Ինձ և մնա ամնշան:

Տե՛ր, տրորիր ինձ, եթե պետք է, բայց ինձ ամնշան պահիր:

Ես քեզ ամնշան կպահեմ... Հիմա բռնիր Ձեռքս ու արի բարձրանանք:

Ես՝ Հիսուս, սիրում եմ ձեզ բոլորիդ: Հիշե՛ք, Ես եմ Հարությունը:

Ապրիլի 22, 1990

Այն քարը,
որ շինարարներն արհամարհեցին՝
դարձավ անկյունաքար[1]:

Տեր իմ Հիսուս, այն ժամանակ Դու մերժվեցիր որպես Մեսիա, քանզի նրանց հոգին պատրաստված չէր: Նրանց սրտերը փակ էին ու դաժան, մինչ Դու հաստատեցիր, որ Դու ես Անկյունաքարը: Մեր սերնդի մեջ, Տեր իմ, Քո Սուրբ Հոգու հեղումը նույնպես մերժվում է «շինարարների» կողմից, բայց և այնպես, մի օր, Քո Սուրբ Հոգին մեզ բոլորիս կապացուցի, որ Ինքն էր Անկյունաքարը: Մերժելով ու ճնշելով Քո Սուրբ Հոգին, որը գալիս է մեզ մոտ, որպես Հիշեցնողը, «Շինարարները» կրկին պատրաստում են իրենց սեփական կործանումը:

Տեսնո՞ւմ ես, ինչպես են իրականանում անցյալի կանխասացությունները: Ես իսկապես ասել եմ, որ «Պաշտպանը՝ Սուրբ Հոգին, ում Հայրը կուղարկի Իմ Անունով, կուսուցանի ձեզ ամեն ինչ և <u>կհիշեցնի</u> այն ամենը, ինչ Ես ասել եմ ձեզ», բայց Ես միշտ գիտեի, որ ձեզանից միայն մի մնացորդ կլսի ու կվերադառնա Ինձ մոտ: Հենց նրանց էլ, ովքեր կլսեն Ինձ, Ես կպարուրեմ Իմաստության ու Ներըմբռնման Իմ Սուրբ Հոգով: Այո՛, Ես կպարուրեմ նրանց Խորհրդի ու Գիտության Իմ Սուրբ Հոգով, և այն առկայծող ճրագը, որ մնացել է այս աշխարհում, մի բոցավառ կրակ կդառնա:

Ես կրկնում եմ, որ Շնորհի Իմ Սուրբ Հոգին ուղարկվում է աշխարհի չորս անկյունները, որպեսզի ուսուցանի ձեզ սուրբ լինել, որպեսզի ձեզ կրկին դարձնի աստվածային էակներ: Երկիրը Երկնքի պատկերը կդառնա, և այդպիսով Իմ Կամքը կկատարվի, և աղոթքը, որ սովորեցրել եմ ձեզ, կիրագործվի:

Տե՛ր, ուրեմն շուտ ետ դարձրու
մեզ բոլորիս
մոլորության ճանապարհից:
Թող մենք լինենք
մեկ ու միասնական,
և ապրենք սրբությամբ, ինչպես Քո
հրեշտակները երկնքում, ինչպես
բոլոր հոգիները,
որ անբաժան ապրում են
երկնքում և Քո Սիրո մեջ:
Թող, որ մենք էլ
նրանց նման միության մեջ
կիսենք Քո սերը, որ երկիրը դառնա
երկնքի արտացոլումը:
Թող Քո Արքայությունը գա ու
վերանորոգի երկիրը թարմությամբ:

[1] Սաղմ. 117:22

Թող Քո Սուրբ Հոգին այս
երկրորդ Հոգեգալստին շուտով գա,
որպեսզի նորոգի մեզ
սիրո նոր հոգով ու մեզ բոլորիս
փոխակերպի աստվածային էակների:
Մարանաթա:

Խաղաղություն ձեզ, Ճշմարիտ եմ ասում, որ մոտ են օրերը, երբ Իմ Արքայությունը երկրի վրա կլինի այնպես, ինչպես Երկնքում: Դուք երկար բաժանված չեք մնա այս երկնքի ներքո: Շուտով դուք բոլորդ մեկ եք դառնալու, և Սերը բնակվելու է ձեր մեջ: Սա է Իմ Խոստումը: Բայց և այնպես, սիրելիներս, այս վերածնունդը առանց փորձությունների չի գալու: Ինչպես և ամեն ծնունդ, այս վերածնունդը նույնպես կունենա իր երկունքի ցավերը, բայց այդ ցավերը արագորեն կփոխարինվեն ուրախությամբ:

Ես Իմ Հոգին հեղում եմ ձեզ վրա, սերո՛ւնդ, որ ջրեմ ձեր անապատը և ձեր ցամաքած հողից գետեր հորդեցնեմ: Այո՛, ես կջրեմ ձեր անապատը, և այն Պարտեզի կվերածեմ: Ի վերջո դուք կտեսնեք Իմ Խոսքերի զորությունը և Իմ Գեղեցկության փայլը: Ես մտադիր եմ ձեզ բոլորիդ, մեկդ մյուսի ետևից, աստվածության վերադարձնել: Ես ձեր Հույսն եմ, Ես ձեր Ապաստանն եմ, ձեր Մխիթարիչը: Ամենակարողը՝ Ես եմ:

Ճանաչե՛ք Ժամանակները, ճանաչե՛ք Շնորհի Իմ Սուրբ Հոգու մեղմ Շունչը ձեզ վրա: Ես այժմ փչում եմ ձեր ազգերի վրա՝ Իմ Շնչով հարություն տալով ձեր մեռածներին, որպեսզի նրանց դարձնեմ Իմ Պատկերի արտացոլումը: Ես ամեն օր աճեցնում եմ նոր աշակերտներ, որ նորից փառաբանեն Իմ Անունը և ավետարանեն սիրով՝ Սիրո համար:

Ուրեմն խնդրում եմ ձեզ, սիրելիներս, ամեն օր աղոթեք Իմ Երկրորդ Գալստյան համար, որը երկրորդ Հոգեգալուստն է: Աղոթե՛ք հոգիների դարձի համար, որպեսզի նրանք կարողանան դարձի գալ, մինչև Իմ Գալուստը: Եկեք դեպի Ինձ, ինչպես որ կաք ու հենվեք Ինձ վրա, ինչպես Հովհաննեսը՝ Իմ սիրեցյալը, հենվեց Ինձ վրա: Դուք նույնպես, ձեր գլուխը դրեք Իմ Կրծքին ու լսեք Սիրո Սրտի զարկերը: Ամեն մի զարկը Սիրո մի կոչ է: Այն, ինչ խնդրում եմ ձեզանից, փոխադարձ սեր է: Սիրե՛ք Ինձ, պաշտե՛ք Ինձ, ուրախացրե՛ք Ինձ՝ ձեր Աստծուն:

Ես օրհնում եմ ձեզ, Իմ Սիրո Հոգոցը թողնելով ձեր ճակատին: Եղեք մեկ:

ΙΧΘΥΣ

(Պատգամներ Լենսի աղոթախմբի համար՝ տրված Մեր Սուրբ Մորից, ինչպես նաև պատգամներ՝ Իտալիայի ու Փարիզի համար):

Խաղաղություն ձեզ, փոքրիկներս: Ես ձեր Սիրո Սուրբ Մայրն եմ, մարմնացյալ Խոսքի Մայրը:

Այս խավար օրերում Ես գալիս եմ ձեզ մոտ, որ ուսուցանեմ ձեզ աստվածության ճանապարհով: Զգոն եղեք և միանգամայն գիտակից, քանզի սատանան՝ թշնամին, թափառում է ձեր շուրջը, ինչպես մռնչացող

առյուծ և որևէ հնարավորություն է փնտրում, որ ձեզ ցած գցի: Համարձակ դիմադրե՛ք նրան և պայքարեք նրա դեմ Ինձ հետ միասին: Պայքարե՛ք նրա դեմ ձեր աղոթքներով: Ձեր աղոթքները ամենահզոր զենքն են նրա դեմ: Հնազանդությունն ու խոնարհությունը ստիպում են դևին փախուստ տալ:

Աստված տալիս է ձեզ Իր Սիրո պարգևը: Արձագանքեք Նրա Ողորմած կանչերին: Աստված խոսում է, և Նա ու Ես կանչում ենք ձեզ աշխարհի չորս անկյուններից՝ ձեր դարձի համար, քանզի ժամանակը սուղ է: Իմ փոքրիկներ, մնացեք անշնչան ու պարզ, եղեք երկրի աղը անշնչան մնալով, քանզի դուք եք աշխարհի լույսը, դուք Մեր Սրտի նախասիրած հոգիներն եք... Երկնքի Արքայությունը մանուկներին ու ամենափոքրերին է պատկանում:

Ես այսօր հայտնվում եմ տարբեր ազգերի մեջ, որպեսզի ձեր սիրտն ուղղեմ դեպի Սուրբ Լույսը: Ես ուզում եմ վերականգնել ձեր հոգին: Ես ուզում եմ հիշեցնել ձեզ, որ դուք բոլորդ պատկանում եք Հորը: Իսկ Հայրը Սուրբ է, ուստի դուք էլ պետք է որպես սուրբ ապրեք: Բայց մի՛ վհատվեք, որովհետև Ես ահա ձեզ հետ եմ, որպեսզի քայլ առ քայլ ուսուցանեմ ձեզ: Եվ Ես ձեզ կարող եմ վստահեցնել, որ Մենք օրհնում ենք ձեզ: Մենք օրհնում ենք ձեր կատարած ամեն մի քայլը:

Եթե դուք թույլ տաք Ինձ, Ես ուզում եմ ձեզ դարձնել Հավերժական Լույսի արտացոլումը, որպեսզի, երբ Աստծուն հանդիպեք, լինեք Աստծո հզոր ուժի ու Նրա Սրբության ու Բարության անբիծ արտացոլումը:

Այսօր Ես բոլորիդ հրավիրում եմ ջերմորեն աղոթելու Եկեղեցու նորոգման համար, Տիրոջ երկրորդ Գալստյան՝ երկրորդ Հոգեգալստի համար: Դրա համար Հիսուս և Ես այսօր հայտնվում ենք տարբեր երկրներում, որպեսզի ձեզ բոլորիդ նախապատրաստենք այդ Գալստյան համար: Աղոթե՛ք ու ձեր կյանքը վարեք պաշտամունքով: Աղոթե՛ք հոգիների դարձի համար, որ ամեն ոք կարողանա պատրաստ լինել Տիրոջ Վերադարձի համար: Սերը Վերադարձի Ճանապարհին է: Ականջ դրեք ու դուք կլսեք Նրա Ոտնաձայները:

Դրա համար է, որ Ես աղերսում եմ ձեզ փոխել ձեր կյանքը և ապրել միայն Աստծո համար ու Աստծո մեջ:

Հիշե՛ք, Աստվածաշունչն ասում է.

«Ով ասում է,
թե ինքը Լույսի մեջ է
և ատում է իր եղբորը, սուտ է
և խավարի մեջ է տակավին»[1]:

Հաշտվե՛ք ձեր եղբոր հետ, հաշտվե՛ք Աստծո հետ, խաղաղություն կնքեք Աստծո հետ. սիրելիներս: Հիշե՛ք Մեր Ներկայությունը:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրիդ. մնացեք խաղաղությամբ:

[1] Ա. Հովհ. 2:9

Ապրիլի 24, 1990

Ես վստահում եմ Քո Սիրուն:
Թող Քո Սերը մեզ վրա լինի:
Թող այն ապրի մեր մեջ,
ինչպես երբեք չի եղել նախկինում:

Սիրելիս, այն ամենը, որ տվել եմ քեզ, նրա համար է, որ քեզ ավելի մոտեցնեմ Ինձ և քեզ վարժեցնեմ Ինձ հետ լինելու: Ես քեզ տվել եմ այս չնորհը, որովհետև դա հաճույք է պատճառում Ինձ: Ես ուզում էի հանգստացնել քեզ: Դա, զավա՛կս, քո փրկության համար է, և Ես այս ձևով քեզ մոտ կմնամ մինչև վերջ: Դու Իմ զոհասեղանն, ես և Ես ուզում եմ, որ Իմ զոհասեղանը անբիծ լինի: Ես ուզում եմ լցնել քեզ Իմ պայծառ բոցով՝ Իմ Կրակով, Իմ Սուրբ Հոգով:

Աղջի՛կս, ընդամենը երեկ էր, որ Ես քեզ գտա չարի կողմից բռնված ու նրա ծուղակում, իսկ այսօր, տեսնո՞ւմ ես, դու ազատ ես: Ես՝ քո Փրկիչը, ազատեցի քեզ, և ոչ միայն քեզ ազատեցի, այլ նաև քեզ Կյանք տվեցի: Դու բանտարկված էիր, ու Ես ազատագրեցի քեզ: Դու մերկ էիր, բայց Ես վեմաբար զարդարեցի քեզ: Դու անպտուղ էիր, բայց Իմ չնորհիվ դու բարգավաճեցիր ու ծաղկեցիր: Դու երբեք ծնկի չէիր եկել Ինձ՝ Քո Տիրոջը փառաբանելու կամ պաշտելու համար, մինչ Ես անընդհատ խոնարհվում էի դեպի քեզ, որ հանեմ ու օծեմ քեզ՝ օրհնելով քեզ: Ես երբեք չէի լսել Ինձ ողջունող քո ձայնը, ոչ էլ տեսել էի քեզ Իմ Տանը՝ գիտակցաբար դեպի Ինձ գալուց, մինչդեռ, Ես գալիս էի մինչև քո տունը, քո սենյակը, որպեսզի դու լսես Իմ ձայնը: Ես Սիրո երգ էի երգում քեզ համար, որ դու, քո հերթին, գնաս ազգերի մեջ ու սովորեցնես նրանց Իմ Երգը:

Ես ամպի նման ցրել եմ քո մեղքերը, մառախուղի նման՝ քո հանցանքները: Դե՛ ուրախացիր Իմ Ներկայությամբ, ո՛վ հոգի: Ես կշարունակեմ քո միջոցով Իմ մեծ Սերն ու Ողորմությունը ցույց տալ մարդկությանը, որ նրանք վերջապես հասկանան, որ այդ Ես եմ, <u>Ես ՍԵՐ եմ</u>: Ահա այս ձևով Ես կկանչեմ Իմ ժողովրդին ու կպարուրեմ նրանց Իմ Սիրով: Ես նրանց համար կլինեմ ինչպես մի Հրե պատ, չրջապատելով նրանց, ու Ես կլինեմ իրենց փառքը՝ իրենց մեջ: Արի՛, իմ Վասուլա...

Օ՜, Աստված իմ, որքան եմ Քեզ սիրում:

Այդ բառերը նման են թագի փայլուն գոհարներին... Այո՛, սիրիր Ինձ՝ քո Աստծուն, հետևիր Իմ առաջին պատվիրանին, առանց անտեսելու մյուսները:

Հանգստացիր հիմա, չմոռանալով Իմ Ներկայությունը, մե՞նք. մե՞զ:

Այո՛, Տեր իմ, մենք, մեզ, հավիտյանս հավիտենից:

Ես օրհնում եմ քեզ, դու էլ Ինձ օրհնիր:

Ես օրհնում եմ Քեզ, Տեր իմ, և չնորհակալ եմ այն ամենի համար, որ տալիս ես ինձ:

(Սա իմ ռուս ուղղափառ ընկերոջը տրված պատգամն էր Ռուսաստանի վերաբերյալ):

(...) Ես Ռուսաստանին կտամ Իմ Վերահաստատող Խաղաղությունը, հավիտենական մի ուխտ, որ կնքելու եմ նրա հետ: Ինչպես գայլերի երախից իր գառներին փրկող մի հովիվ, այնպես էլ Ես կփրկեմ Ռուսաստանի զավակներին: Ես մտադիր եմ բարձրացնել ու սրբացնել նրան և նրա որդիներին սրբեր դարձնել, որոնք կուսուցանեն անկաշառ լինել, քանզի Իմ Հոգին պիտի ապրի նրա մեջ և սրբությամբ ու արդարությամբ պիտի ղեկավարի նրան (...)

Ապրիլի 30, 1990

Տե՛ր իմ, Աստվա՛ծ իմ,
փրկիր մեզ Քո Սիրով,
բարձարցրո՛ւ մեզ Քո Լույսի մեջ
և Քո Անսահման Ողորմածությամբ
ներիր մեզ:
Զորացրո՛ւ մեր հավատը,
միավորի՛ր մեզ, որ մեկ լինենք,
որպեսզի միասին
մեկ Սուրբ Տապանակի շուրջ
կարողանանք ասել.
«Մեկ Տեր կա, մեկ հավատ,
մեկ մկրտություն,
և մեկ Աստված,
որ Հայրն է ամենի, ամենի վրա,
ամենի հետ և ամենի մեջ»:[1]

Այդ դեպքում փորձեք նմանվել Ինձ:

Ուրեմն տուր մեզ Իմաստություն՝ Քեզ նմանվելու համար:

Իմաստությունը տրված է սոսկ մանուկներին: Քանի դեռ նրանք չեն փնտրի Ինձ սրտի պարզությամբ, նրանց Իմաստություն չի տրվի: Ու քանի դեռ նրանց իմացականությունը գործում է, Իմաստությունը ծածուկ ու առեղծված կմնա նրանց համար:

Դեն նետիր նրանց իմացականությունը, Տե՛ր, որպեսզի նրանք վերջապես կարողանան իրենց աչքերով <u>տեսնել</u> Քո Գեղեցկությունն ու Քո Փայլը:

Ուրեմն աղոթի՛ր նրանց համար, փոքրիկ սիրտ, աղոթիր այս անաստված ժամանակներում: Թող քո աղոթքները լինեն անուշահոտ մի բուրմունք: Աղոթի՛ր, որ Ես նրանց կարողանամ վերադարձնել իրենց տեսողությունը: Աղոթի՛ր, որ կարողանամ գնալ նրանց մոտ ու արթնացնել իրենց

[1] Եփես. 4:5-6

մշտնջենական քնից:

Աղոթի՛ր, փոքրիկս, դո՛ւ, որ Ինձանից Իրավունք ես ստացել և առաջնորդվում ես Իմ Սուրբ Հոգու կողմից, աղոթի՛ր, որ նրանք մեռնեն իրենց մեղքի հանդեպ ու հարություն առնեն Սրբության, Սիրո ու Հավատի համար: Եվ եթե կան ինչ-որ իմաստուն մարդիկ, թող նրանք սրտի պարզությամբ իրենց իմաստությունը ցույց տան Իմ հանդեպ, իրենց եռանդը այն ամենի հանդեպ, որ սուրբ է, և իրենց ջերմեռանդությամբ հոգիներ բերեն դեպի Ինձ: Թող այս ամենն արվի խոնարհությամբ ու սիրով: Հիշի՛ր, որ եթե չես ստանում այն, ինչ խնդրում ես, դա նրանից է, որ բավական եռանդով ու սրտով չես աղոթում:

Դե՛ արի, ու երբեք մի մոռացիր Իմ ներկայությունը: Ես քո Սուրբն եմ, և Նա, ով քեզ բոլորից շատ է սիրում[1]:

Տե՛ր, Դու Բարի ես,
Համբերատար ու Ներող,
և ամենից շատ ես սիրում նրանց,
ովքեր կանչում են Քեզ:
Լսի՛ր մեր աղոթքները, Տեր իմ:
Թեև նրանք կարող են
չափազանց թշվառ լինել,
սակայն ողորմած եղիր մեր հանդեպ
ու բաց արա Ականջդ:
Մենք մեղավորներ ենք, ոչ սրբեր,
բայց Դու հայտնի ես նրանով,
որ գնում էիր հիվանդների մոտ ու
բժշկում էիր նրանց Քո Սիրով:
Մենք բոլորս հիվանդ ենք՝
մի հիվանդոտ սերունդ,
մեղքի մեջ թաթախված:
Արի մեզ մոտ ու բժշկիր մեզ:
Օգնիր մեզ,
որ հավատանք մեր անհավատալի
անհավատությանը:

Իմ Արդարությունը հավիտենական է, Իմ Սերը ձեր բոլորի հանդեպ Անսահման է, Իմ Կարեկցությունը թշվառների ու հիվանդների հանդեպ Մեծ է ու մարդկային հասկացողությունից վեր: Խնդրեք ու կտրվի ձեզ: Ես բացում եմ Բերանս, անձկագին հևքով փափագելով ձեր աղոթքները:

Իմ եղբայրների անունից ես խնդրում են նաև, որ Դու, Տե՛ր, գաս ու փրկես մեզ Քո սիրով: Վերադարձի՛ր դեպի մեզ, մաքրագործի՛ր մեզ:

Ես կվերադառնամ ձեզ մոտ, որպես Սեր, և Իմ Կրակը կմաքրագործի ձեզ բոլորիդ:

Դու մեզ խոստացել ես մի Նոր Երկինք ու Նոր Երկիր, Տե՛ր:

[1] Ես պնդում եմ:

Ես ձեզ ավելին եմ խոստացել, փոքրիկս: Ես ձեզ խոստացել եմ մի նոր Երուսաղեմ, և Ես խոստացել եմ ձեզ, որ Ես կապրեմ ձեր մեջ: Ես Իմ տունը ձեր մեջ կշինեմ: Հասկանո՞ւմ ես: Շատ շուտով Ես արդեն ձեզ հետ կլինեմ:

Ուրեմն շտապիր, Տե՛ր, շտապիր: Մենք բոլորս բաղձանքով սպասում ենք Երկրորդ Հոգեգալստին ու Քո Սուրբ Հոգու զեղմանը՝ Երկրորդ Գալստին:

Արդյո՞ք բոլորդ պատրաստ եք ընդունելու Ինձ: Ինչո՞ւ ես լռում:

[1]Որովհետև, Տե՛ր իմ, դժվար է ասել այս խոսքերը. «Շատերը պատրաստ չեն ընդունելու Քեզ...»:

Աղոթիր նրանց համար, ովքեր անտեսում են Ինձ: Աղոթի՛ր անաստվածների համար, աղոթի՛ր նրանց համար, ովքեր պատրաստ չեն Ինձ ընդունելու: Պատրաստվե՛ք: Թշենին հասել է ու շուտով դուք կուտեք դրա պտուղները:
Արի՛, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

Մայիսի 12, 1990

Հիսո՞ւս:

Ես եմ, խաղաղություն քեզ: Վասո՛ւլա, թող որ Ես վաղը լսեմ քո քայլերի ձայնը Իմ Եկեղեցում: Ես անհամբեր կսպասեմ քեզ... Դու էլ նույնքան անհամբե՞ր ես այս ժամի համար, որքան Ես, երբ Ես պիտի միանամ քեզ: Վասո՛ւլա[2], ... թույլ տուր, որ գրեմ սա. Ես սիրում եմ քեզ: Դու տակավին ցանկանո՞ւմ ես պատասխանել Ինձ:

Այո՛, Տեր: Ես կգնամ Հունական Եկեղեցի, բայց ես միշտ լեզվի խնդիր ունեմ: Ես հազիվ եմ կարողանում հետևել քահանայի ասածին:

Բայց Ես այնտեղ եմ, ու լսում եմ քո սիրտը: Խոսիր Ինձ հետ... Արի՛, լսիր, թե ինչ եմ ասում: Ենթադրիր, որ գնում ու այցելում ես քո ընկերներից մեկին, որն անհամբեր սպասում է, որ քեզ տեսնի: Արդյոք դու ընկերոջդ հանդիպելիս կմնաս հեռվում կանգնա՞ծ, թե կմոտենաս ու ջերմորեն կողջունես ու կհամբուրես նրան: Հետո, մի՞թե միասին չեք նստի ու խոսի: Թե՞ կնստեք ու լուռ կմնաք: Իհարկե կխոսեք: Նույն ձևով էլ Ես ուզում եմ, որ լինես Ինձ հետ, երբ դու դաս ու այցելես Ինձ Իմ Տանը: Ես ուզում եմ զգալ, որ քո սիրտն ուրախանում է ամեն անգամ, երբ հանդիպում ես Ինձ: Ես ուզում եմ լսել, որ քո սիրտը խոսում է Ինձ հետ: Իսկ խոսել Ինձ հետ՝ քո Աստծո հետ, նշանակում է աղոթել: Այդ անելիս Իմ Ականջը կհպվի քո շուրթերին, ու Ես ամեն մի բառը կընդունեմ, որպես

[1] Ես երկչոտ ու տխուր ասացի:
[2] Հիսուսն ասաց. «Ես սիրում եմ քեզ», ու ես խանգարեցի Նրան, որ դա չգրի:

մեղրի կաթիլներ:

Աղջի՛կս, հետո գալիս է Իմ մեծ ու վսեմ պահը, այն պահը, որին ես այնքան սպասում եմ, այն պահը, երբ ես Ինքս Ինձ քեզ տվեցի Գողգոթայում՝ Իմ Զոհաբերության Սուրբ Ժամը, քո փրկության Սուրբ Ժամը, այն Սուրբ Ժամը, երբ ես Ինձ միացնում եմ քեզ: Ես կսպասեմ ձեզ երկուսիդ[1], որ ճաշակեք Ինձ ու ըմպեք Ինձ: Ես օրհնում եմ քեզ, զավակս: Մի՛ մերժիր Ինձ սիրո այս պահը, Սուրբ Հաղորդության այս պահը:

Տե՛ր իմ, գովյալ լինի Տերը, փառաբանյալ լինի Աստված, օրհնյալ լինի Տերը:

Խաղաղություն քեզ, փոքրիկս: Գոհացրու Ինձ և զանազանիր Ինձ: Այս պահերը, երբ դու Ինձ հետ ես, հաճույք են Ինձ համար: Դրանք ծարավ հողին տեղացող ցանկալի անձրևի են նման: Ես հաճույք եմ ստանում քեզ լսելիս[2] ...վերցրո՛ւ ու կարդա, ինչ որ տվել եմ քեզ... Ասա՛ Ինձ, դու ուրա՞խ ես, հակառակ այս բոլոր փորձություններին:

Այո՛:

Ծաղի՛կ, երբ քո թերթիկներից մեկը պոկվում է, ես ապահովում եմ, որ մեկ այլ թերթիկ գրավի դրա տեղը: Իմ Լույսով Ես ամրացնում եմ քո ցողունը: Եթե միայն իմանայիր, ինչպես եմ պահպանում քեզ ու ինչ հոգածությամբ եմ վերաբերվում... Հենվի՛ր Ինձ վրա, երբ հոգնած ես, ու Ես կհանգստացնեմ քեզ: Արի:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

(Պատգամ Լենսում, Սիոնից վեր):

Խաղաղություն ձեզ, սիրելի զավակներ: Իմ Սիրտը հրճվանքով երգում է՝ տեսնելով ձեզ բոլորիդ այստեղ Իմ Սիրով միացած: Ձեր աղոթքները Իմ Ականջին հնչում են ինչպես մի երաժշտություն: Եկե՛ք Ինձ մոտ, ու Ես ձեր հոգին Իմ Հոգով կլցնեմ: Եկե՛ք Ինձ մոտ ինչպես կաք, ու Ես կբարձրացնեմ ձեզ, որ ձեզ սուրբ դարձնեմ, սիրելիներս:

Այսօր Իմ Խաչը Սրբության կոչ է անում: Իմ Ձայնը հնչում է երկրի չորս անկյուններում՝ հիշեցնելու ձեզ բոլորիդ, որ Ես Սուրբ եմ, և դուք պետք է սրբորեն ապրեք:

Օ՜, սերունդ... մի՞թե Ես չգիտեմ, որքան թույլ եք դուք: Ձեր դարաշրջանը ստեղծել է կերպարներ, որոնք տհաճ են Իմ Աչքին և անհամապատասխան՝ Իմ Մտքին: Եվ այս Բաբելոնում, որ դուք եք ստեղծել, Ես ցած եմ իջնում ու Իմ արարչության մեծ մասին գտնում եմ բանտարկված, այո՛, գերված չարի կողմից, որը սնում է նրանց անաստվածությամբ,

[1] Իմ ռուս ընկերոջն ու ինձ:

[2] Հիսուս մի պահ լուռ մնաց, ապա Նա հարցրեց ինձ. «Ուզո՞ւմ ես գրել»: Ես ասացի «այո՛»:

բանապաշտությամբ ու անօրինությամբ: Մի՞թե ես չեմ տեսնում այս բոլորը: Սրբերի աղերսները հասել են Իմ Ականջներին: Ես ասում եմ ձեզ, որ Ես հիմա կրակով բռնվածի նման եմ, և շատ երկար չեմ սպասելու: Ես ձեզ ավելի երկար չեմ թողնի այս խավարում: Ես կվերադառնամ ձեզ մոտ: Շատ շուտով աշխարհը կրկին կտեսնի Ինձ: Այո՛, Սերը կիջնի ձեզ վրա և կապրի ձեր մեջ:

Բայց մինչ ձեր ծառերը կսկսեն ծաղկել հոյակապ ճյուղերով, խիտ տերևներով ու բարձր բներով, և մինչ դրախտի թռչունները կսկսեն իրենց բույնը հյուսել նրանց ճյուղերի մեջ, և մինչ Ես գետեր կհեղեմ ձեր ծարավ հողը ջրելու համար, Ես երկնքից Իմ Մաքրագործող Կրակի Այուները պիտի ուղարկեմ: Ես մտադիր եմ ձեզ բոլորիդ մաքրագործել: Անցած կլինեն այն օրերը, երբ մեռելները զվարճանում էին մեռելների ներկայությամբ... Դուք այս մաքրագործումից հետո մի լեզվով պիտի խոսեք, Իմ Սեփական լեզվով, որի անունն է ՍԵՐ, ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԵՐ:

Ես մտադիր եմ ամբողջովին ոչնչացնել չարն ու մեղքը: Դա է պատճառը, որ այս օրերին Իմ Շողարշը ծածկելու է արևը, լուսինն ու աստղերը: Ես արևը կծածկեմ մութ ամպերով, և լուսինը ձեզ չի տա իր լույսը: Ես կմարեմ երկնքի բոլոր լուսատուները ձեզ համար և ձեր երկրները խավարով կպատեմ, որպեսզի Բաբելոնն այլևս դադարի մեղսագործումից: Այն ժամանակ նա կընդունի Իմ Սիրո Օրենքը: Քանզի Ես բոցերի մեջ կգցեմ նրա ուրացողներին:

Եթե ձեր դարաշրջանը չի կարողացել գնահատել Իմ մեծ սերը ու պղծել է Իմ Սուրբ Անունը, դա այն մեծ ուրացության պատճառով է, որ թափանցել է Իմ Սրբավայրի խորքերը:

Սերո՛նդ, այսօր, Իմ Շնորհի Հոգին գալիս է ձեզ օգնելու ավելի շուայլորեն, քան երբևէ, հասկանո՞ւմ ես: Ես երկրի ամեն անկյունում նոր զոհասեղաններ եմ բարձրացնում ձեր հողերն ու ձեզ բոլորիդ սրբացնելու համար: Իմ Շնորհով է, որ Ես մտադիր եմ բարձրացնել ձեզ ու ձեզ Իմ Կրակը կրող կենդանի զոհասեղաններ դարձնել, քանզի ձեր մեջ ապրելու է Իմ Սրբության Հոգին՝ մի Հոգի, որը եզակի է, նուրբ, անաղարտ ու Մաքուր: Հետո Ես ձեզ կուղարկեմ աշխարհով մեկ, և ձեր պատգամը պիտի լինի հայտարարել Իմ Անսահման Սերը: Եվ Ես խոստանում եմ ձեզ, ձե՛զ, ովքեր սիրում են Ինձ, որ խավարի այդ օրերում, որ գալու են ամբողջ աշխարհի վրա, Ես ձեզ ապահով կպահեմ ու կփակեմ ձեզ Իմ Սուրբ Սրտի խորքերում: Ես ձեզ հետ կլինեմ:

Բայց վա՛յ բոլոր նրանց, ովքեր իրենց ժամանակը անցկացնում են Իմ զոհասեղանները քանդելու ու կոխկրտելու վրա: Վա՛յ նրանց, ովքեր սպանում են Իմ մարգարեներին: Վա՛յ այդ հոգիներին: Վա՛յ նրանց, ովքեր հետևում են սև գազանին: Վա՛յ բոլոր նրանց, ովքեր մերժում են Իմ զգուշացումները, արհամարհում ու անտեսում են դրանք: Նրանք կկանչեն Ինձ այդ խավար օրերում, բայց Ես պատասխան չեմ տա... Իմ հինգ վերքերը լայն բացված են ու Արյունը կրկին հորդում է: Ապաշխարի՛ր սերունդ, ապաշխարի՛ր... Կրկին անգամ մտածեք, մինչև ձեր շուրթերը կբացեք խոսելու համար:

Ինձ փնտրեք սրտով, և ոչ թե՝ մտքով: Նմանվեք Ինձ՝ ձեր Աստծուն, հետևեք Ինձ Իմ ոտնահետքերով: Հարցրեք ինքներդ ձեզ, նախքան խոսելը. «Ի՞նչ կասեր Քրիստոսն այս իրադրության մեջ», կամ «Ի՞նչ կաներ

Քրիստոսն այս իրադրության մեջ»: Կրկին անգամ մտածեք, մինչ կբացեք ձեր շուրթերը: Թույլ մի՛ տվեք, որ ձեր շուրթերը ձեր անկման պատճառ դառնան: Թույլ մի տվեք ձեր հոգուն մոլորեցնել ձեզ: Նմանվեք Ինձ և եղեք Իմ Պատկերի կատարյալ արտացոլումը: Անգամ եթե անկարող եք ճիշտ ձևով աղոթել, Իմ Հոգին կաղոթի ձեզ համար, հասկանո՞ւմ եք: Ես երբեք չեմ լքի ձեզ...

Անգամ, երբ դուք չեք կարողանում գնահատել Իմ մեծ Սերը, Իմ Սուրբ Անվան սիրույն ձեզ դեպի Ինձ բարձրացնելու համար, Ես նույնիսկ ավելի շատ եմ խոնարհվում դեպի ձեզ, և Իմ բարությամբ ներում եմ ձեր մեղքերը: Այն պահին, երբ բացում եք ձեր բերանը Ինձ կանչելու համար, Ես շտապ գալիս եմ դեպի ձեզ ու Իմ ականջը հպում եմ ձեր շուրթերին... ու ձեր արտասանած ամեն մի բառը մխիթարում է Իմ Սիրտն ու ուրախացնում Ինձ:

Վերադարձե՛ք Ինձ մոտ ձեր ողջ սրտով, և թող ձեր աղոթքները հասնեն Ինձ: Քանզի ոչ ամեն մարդ, որ Ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, Երկնքի Արքայություն կմտնի, այլ նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է[1]: Ուրեմն, խոսե՛ք սիրով, ու Ես կլսեմ ձեզ, տվե՛ք սիրով, ու Ես կիմանամ ձեզ, աղոթե՛ք սիրով, ու Իմ Արքայության դռները կբացվեն ձեզ համար, որ ձեզ ընդունեն: Գործե՛ք սիրով, որպեսզի Ես կարողանամ ասել ձեզ. «Դուք Իմն եք, դուք Իմ սերմն եք, եկե՛ք ձեր Հոր մոտ»:

Ես Սեր եմ, և ամեն ոք, ով ապրում է սիրո մեջ, ապրում է Իմ մեջ, ու Ես ապրում եմ նրա մեջ: Կատարե՛ք Իմ Հոր կամքը, որ երկնքում է, որպեսզի մտնեք Իմ Արքայությունը: Հիշե՛ք, որ Կենաց Ծառի Արմատը Սերն է:

Ավելի շատ սրտով աղոթեք, զավակներս, և վստահ եղեք, որ Իմ Ականջը ձեր շուրթերի մոտ է: Ես օրհնում եմ ձեզ և օրհնում եմ ձեր արած ամեն մի քայլը: Սերը սիրում է ձեզ: Հիշե՛ք Իմ Ներկայությունը: Ես թողնում եմ Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին, եղեք մեկ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Մարդիկ մանրացել են ու այլասերվել... Եթե միայն նրանք հրաժարվեին իրենց անմտությունից... Աղոթի՛ր աղջիկս, անգամ ձեր այլասերված վիճակում Ես սիրում եմ ձեզ ու ողբում եմ ձեր քայքայման վրա...

(Ես Հիսուսի հետ էի, մինչ Նա թելադրում էր: Երբ Նա ավարտեց թելադրելը, ես շտապեցի իմ այլ գործերին, առանց օրհնելու կամ փառաբանելու Նրան: Ես ինձ մեղավոր զգացի, որ ես Նրան վերաբերվեցի իբրև մի սովորական մարդու, որն ինձ պատգամ էր թելադրում՝ մոռանալով Նրա Աստվածությունը: Ես շատ ամաչեցի, ուստի, շտապելով ետ եկա դեպի Նա ու խնդրեցի ներել ինձ: Երբ Նա ասաց ինձ այս ամենը, թվում է, որ զարմացած չէր: Նա հանգիստ էր, բայց տխուր):

[1] Մատթ. 7:21

Մայիսի 14, 1990

Տե՛ր և Փրկիչ, լսիր իմ աղոթքը:
Լսի՛ր, Ամենաողորմ Տեր,
իմ աղոթքներն
անշուշտ շատ թույլ են:
Ես թշվառ եմ ու կարիքավոր,
բայց ես այստեղ եմ ու
Քեզ օգնության եմ
կանչում այս անապատից:
Դու գիտես մեր կարիքները և
անշուշտ լսում ես
մեռնողի աղերսները:
Անգամ Քո մեկ Օրհնությամբ,
Տե՛ր, նրանք կբժշկվեն:

Ես քեզ դուրս բերեցի Եգիպտոսից: Դու միայն պետք է բա՜ ցես քո բերանը, որպեսզի Ես լցնեմ այն: Եվ Ես նույնը կանեմ քո բոլոր եղբայրների համար:

ΙΧΘΥΣ

Մայիսի 15, 1990

(Մեր Սուրբ Մոր պատգամը Լենսում/Սիոն):

Խաղաղություն ձեզ, զավակներս:

Ես՝ ձեր Սուրբ Մայրը, պատրաստում եմ ձեզ Տիրոջը դիմավորելու համար: Ես ուսուցանում եմ ձեզ՝ ձեր հոգևոր աճման մեջ: Ես ձեզ շնորհներով եմ ծածկում, որ օգնեմ և խրախուսեմ ձեզ: Հասկացե՛ք, որ սրանք յուրահատուկ օրեր են, որ դուք ապրում եք ձեր ժամանակներում: Սրանք Տիրոջ Գալստին նախորդող օրերն են: Սրանք բացում են այն ճանապարհը, որով գալու է Տերը: Այս օրերը նախապատրաստություն են ձեր Թագավորի գալստյան համար: Աղոթե՛ք, որպեսզի ամեն ոք պատրաստ լինի: Ջերմորեն աղոթեք, փոքրիկներս, այն հոգիների համար, ովքեր մերժում են լսել ու մերժում են տեսնել: Այսպես աղոթեք ձեր Հորը, որ Երկնքում է.

Ողորմա՛ծ Հայր, Թող որ նրանք,
ովքեր լսում են ու լսում,
Մինչդեռ երբեք չեն հասկանում,
Լսեն Քո Ձայնն այս անգամ,
Եվ հասկանան, որ այդ Դու ես,
Սուրբդ Սրբոց:
Բաց աչքերը նրանց,
Ովքեր տեսնում են ու տեսնում,

Սակայն երբեք չեն ընկալում:
Թող այս անգամ նրանք տեսնեն
Քո Սուրբ Դեմքն ու Փառքը Քո,
Հպիր Մատդ նրանց սրտին,
Որ բացվի սիրտը նրանց,
Ու հասկանան
Քո Հավատարմությունը:
Ես աղոթում և
Հայցում եմ այս ամենը,
Ո՛վ Հայր Արդար, Որ դարձի գան
ու բժշկվեն համայն ազգերը
Վերքերի չնորհիվ
Սիրեցյալ Որդուդ
Հիսուս Քրիստոսի. Ամեն:

Խնդրեք Հորը ներել համառ հոգիներին, ովքեր մերժում են լսել և տեսնել: Հայրն Ամենողորմ է, և Նա կնայի Իր բոլոր զավակների վրա: Այո՛, փոքրիկներ, դուք խունկ եք Աստծո համար, երբ աղոթում եք ձեր եղբայրների փրկության համար: Որքան ավելի ջերմեռանդորեն եք աղոթում, այնքան հզոր են դառնում ձեր աղոթքները:

Շնորհակալ եղեք Տիրոջը, որ կանչեց ձեզ ու Իր ողորմածությամբ թույլ տվեց լսել Իր Կանչը: Ուստի աղոթե՛ք նրանց համար, ովքեր մերժում են լսել:

Ժամանակը սուղ է, իսկ շատերը դեռ անտեղյակ են ու խորը քնի մեջ: Օրերն անցնում են, ու Իմ Սիրտը խորը վշտով է պատվում, երբ Ես վերևից նայում եմ այսօրվա երիտասարդությանը: Սերը բացակայում է... բայց նրանք երբեք սեր չեն տեսել: Նրանցից շատերը նույնիսկ երբեք չեն ստացել իրենց մոր ջերմությունն ու սերը, քանզի նա ոչինչ չի ունեցել տալու: Աշխարհը դարձել է սառը, սառույցի պես սառը, և ծնողները դուրս են գալիս մեկը մյուսի դեմ, իսկ զավակը դուրս է գալիս իր ծնողների դեմ, որովհետև սեր չկա: Մայրը մերժում է զավակի սիրո աղերսները: Աշխարհը մեռած է սիրո հանդեպ: Այն գտնվում է խորը խավարի մեջ, քանզի ատելությունը, ագահությունն ու եսասիրությունը իշխում են ամբողջ երկրի վրա, հասնելով մինչև երկրի խորքերը:

Ես ցնցված եմ սարսափելի տեսարաններով, այս մութ աշխարհի անօրինությամբ ու մինչև սրբավայր թափանցած ուրացությամբ, աղետներով, սովով, դժբախտություններով, պատերազմով ու համաճարակով: Այս բոլորը հարուցվել է ձեր կողմից: Ամեն ինչ, որ ծնվում է հողից, վերադառնում է հողին: Երկիրն ինքը քայքայում է իրեն և Աստված չէ, որ տալիս է ձեզ այս բոլոր աղետները, ինչպես ձեզանից շատերը հակված են կարծելու: Աստված Արդար է ու Ամենողորմ, իսկ չարը չարություն է բերում: Աղոթե՛ք եռանդով, աղոթե՛ք սրտով ձեր դարաշրջանի դարձի ու փրկության համար: Զավակնե՛րս, աղոթեք Ինձ հետ: Ես ձեր աղոթքների կարիքն ունեմ: Աղոթե՛ք, ու Ես կմատուցեմ դրանք Աստծուն:

Վստահեցնում եմ ձեզ, որ Ես ձեզ հետ եմ, ուր էլ որ գնաք: Ես երբեք չեմ լքում ձեզ, ձեզ, որ Իմ զավակներն եք: Ես օրհնում եմ բոլորիդ:

Մայիսի 16, 1990

Խաղաղություն ձեզ: Ես՝ Տերը, գալիս եմ, որ բաց անեմ սրտերը և ձեզ բոլորիդ ազատեմ չարից: Դուք ապրում եք շնորհի ժամանակներում: Ես ասել եմ, որ Իմ Հոգին կհեղվի ամբողջ մարդկության վրա:

Երանի նրանց, ովքեր ընդունում են Շնորհի Իմ Հոգին, առանց կասկածելու: Երանի հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայությունը: Երանի պարզասիրտներին, քանզի Իմաստությունը հայտնի կդառնա նրանց: Երանի նրանց, ովքեր կատարում են Իմ Հոր Կամքը, որ երկնքում է, քանզի Իմ Թագավորության դռները կբացվեն նրանց ընդունելու համար: Երանի Իմ լույսի անոթներին, որ կրում են Իմ Խոսքը ու տարածում Իմ Սուրբ Հոգուց ձեզ տրված Իմ Պատգամները, քանզի ձեր մեղքերից շատերը կներվեն: Արի:

ΙΧΘΥΣ

Մայիսի 22, 1990

Խաղաղություն քեզ, ծաղի՛կս: Ուրախացրո՛ւ Ինձ ու ավելի շատ խորհրդածիր, ավելի շատ աղոթիր, կակուղ եղիր, որ Ես կարողանամ կերտել քեզ Իմ Պատկերի նման: Վախեցիր միայն այն ժամանակ, երբ չես խոսում Իմ Լեզվով: Դու հիմա կարողանո՞ւմ ես ճանաչել Քո Տիրոջ Ձայնը:

Այո՛, Տեր իմ, կարողանում եմ:

Ինչո՞ւ:

Որովհետև Դու ինձ լավ բաներ ես սովորեցնում, և Քո լեզուն Սերն է:

Ուրմեն կիսիր բոլոր այս ուսմունքները մյուսների հետ: Այն ամենը, ինչ սովորում ես Ինձնից, կիսիր ընկերներիդ հետ, փառաբանի՛ր Ինձ:

Ուրախացրո՛ւ Ինձ ու կիսիր Իմ Զարչարանքները Ուրբաթ օրերին: Թափանցի՛ր Իմ Վերքերի մեջ: Ավելի շատ ժամանակ տրամադրիր Ինձ, ապրիր սրբությամբ: Զոհաբերի՛ր, տալով այն ամենը, ինչ ստացել ես Ինձնից:

Մի՛ հաշվիր Ինձ հետ անցկացրածդ ժամերը: Ես ուզում եմ, որ առատաձեռն լինես: Ես ուզում եմ, որ ամեն օր քո կամքը մատուցես Ինձ: Մատուցի՛ր Ինձ ցավերդ, մատուցի՛ր Ինձ քո տառապանքները, մատուցիր Ինձ անգամ ամենափոքր քերծվածքդ, որպեսզի Ես կարողանամ օգտագործել քո տվածը՝ մեղքերդ ջնջելու ու մաքրագործող կրակներից հոգիներ ազատելու համար: Թույլ մի՛ տուր, որ այս ամենը իզուր անցնի: Մատուցիր Ինձ դրանք, և Ես կօգտագործեմ այդ ամենը: Արի՛, մինչ հանգստանալդ աղոթիր «Սալվե Ռեգինան» (Սուրբ Տիրամոր աղոթքը. «Ուրախ լեր Սուրբ Տիրամայր»): Ես լսում եմ: Ուրախացրու Իմ Սիրտը, ինչպես և Մորդ Սիրտը...

(Ես աղոթեցի այդ):

Լա՛վ է: Իսկ հիմա, աղջի՛կս, գնա ու հանգստացիր: Ես օրհնում եմ քեզ ու քո զավակին: Հանգչիր Իմ Սրտում, ինչպես Ես կհանգչեմ քո սրտում: Վստահ եղիր այն ամենում, որ դու ստանում ես: Սերը սիրում է քեզ:

Մայիս 23, 1990

Խաղաղություն քեզ, այդ Ես եմ, Հիսուս: Երբեք մի՛ դադարիր Ինձ կանչելուց, երբեք մի՛ դադարիր աղոթելուց: Ես քեզ տալիս եմ Իմ Խաղաղությունն ու Իմ Սերը: Աղջիկս, դու ոչինչ չունե՞ս ասելու:

Ես Քեզ տալիս եմ իմ չնչին սերն ու իմ ոչնչությունը, Տեր:

Ա՜հ, Ես ցանկանում եմ քո սերը, անգամ եթե այն չնչին է, իսկ ինչ վերաբերվում է քո ոչնչությանը, փոքրի՛կս, միշտ ոչնչություն մնա: Ոչնչացրո՛ւ ամբողջովին ինքդ քեզ: Ոչնչացրո՛ւ այն ամենը, որ <u>դու</u> ես, կլանելով այն ամենը, որ <u>Ես</u> եմ: Լցրո՛ւ քո հոգին Իմ Հոգով, որպեսզի քո հոգին դառնա լույսի մի կենդանի կերոն: Թափանցիկ եղիր, այո՛, թափանցիկ, որպեսզի քո լույսը փայլի քո միջով, առանց որևէ բծերի, այլ միայն մաքրություն արտացոլի: Եթե ամեն օր դու Ինձ խնդրես ներել քո մեղքերը և եթե թույլ տաս մաքրագործել քեզ, եթե անգամ դա տառապանքներ ու փորձություններ պատճառի, Ես այդ կանեմ առանց տատանվելու: Ես գիտեմ քո կարիքները:

Ես քեզ թույլ չեմ տա մեղք գործել: Ես երբեք քեզ չեմ հրահանգել, որ մեղանչես: Ես հաճույք չեմ ստանում քո լեզվի սայթաքումից: Մի՞թե Ես քեզ չեմ խնդրել, որ Իմ խունկը լինես՝ հանգստացնելով Ինձ քո բուրմունքով: Ես զարդարեցի քեզ տպավորիչ հանդերձներով և քեզ լեզու տվեցի փառաբանելու Ինձ և հիշեցնելու Իմ ժողովրդին իրենց նկատմամբ ունեցած Իմ Սիրո մասին: Ուրեմն ուշադիր եղիր, սանի՛կ, և լսիր Իմաստության հրահանգները: Սուրբ պահիր Անունս և ճշգրտորեն կատարիր Իմ Օրենքն ու Իմ Ուսմունքները, և Ես երբեք քեզ չեմ լքի: Ես քո Աստվածն եմ, և եթե Ես քո կողքին եմ, ապա ո՞վ կարող է քո դեմ լինել:

Հաստատ եղիր, որ այսպիսի պարգև ստանալուց հետո, որին դու արժանի չէիր, Ինձ <u>ոչինչ չմերժես</u>, Ես <u>նկատի ունեմ</u>՝ ոչ մի բան: <u>Ուրեմն ապրիր Ինձ համար</u>, ապաշխարիր ու ծոմապահություն արա, ծոմ պահիր՝ հացով ու ջրով: Քամահրանքով մի՛ մերժիր այն փորձություները, որ քեզ տալիս եմ: Ուրախացի՛ր, երբ քեզ հալածում են: Ուրախացի՛ր, երբ քեզ սպառնում են Ինձ համար: Ուրախացիր, երբ հարձակման ես ենթարկվում Իմ թշնամիների կողմից: Սրանք, զավա՛կս, այն փորձություններն են, որոնցով Ես քեզ կատարելության եմ հասցնելու:

Անդադար աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր, առանց հաշվելու րո՜ պեները: Վասո՛ւլա, Ես քեզ չեմ խնայելու տառապանքից, ինչ՜ պես Հայրը Ինձ չխնայեց տառապանքից: Ես ուզում եմ, որ դու մի կենդանի խաչելություն լինես, հիշեցնելով Ինձ: Զգիտեի՞ր, որ տառապանքի պարգևը գալիս է Իմ Անսահման առատաձեռնությունից ու Իմ Անսահման Սիրուց: Ուրեմն, մի՛

տատանվիր փարվելու Իմ Խաչին: Թող քո թևերը տենչանքով գրկեն Իմ Խաչը, և Այն քեզ կտանի դեպի Կյանքի Ճանապարհը: Եթե քո ոտքերը մոլորվեն ճիշտ Ճանապարհից, վստահ եղիր, որ Իմ Սերն ու Հավատարմությունը կպահպանեն քեզ: Ես կշտապեմ քեզ փրկել:

Թող քո հոգին միշտ ծարավի լինի Ինձ, թող Ես զգամ ու լսեմ քո սիրո հառաչանքները: Հոգի՛, Ես քո ճակատին խորը դրոշմել եմ Իմ Սիրո Հառաչանքները, այն Հառաչանքները, որ Ես անդադար տալիս եմ քեզ: Ես խարանել եմ քո ճակատը Իմ Սուրբ Անունով և քեզ Իմն եմ դարձրել Հավիտյան: Ուրեմն, բարձրացրո՛ւ աչքերդ դեպի Ինձ, և Ճշմարիտ խաղաղություն գտիր Իմ Ներկայության մեջ:

Հետևապես ասա Ինձ, աղջի՛կս, ում Իմ Սիրտը սիրում է, կվերադարձնե՞ս Ինձ այս Սերը, որ ունեմ քո հանդեպ:

Իմ սերը չնչին է:
Ես ինչպե՞ս կարող եմ
երբևիցե փոխարինել Քո Փչե Պսակը
վարդերի ծաղկեպսակով:
Իմ հոգին անընդհատ
խորհրդածում է սրա մասին
ու մարում է իմ մեջ:
Ուրեմն, բացատրիր ինձ,
առանց հոգնելու ինձանից,
ու ես կսովորեմ:
Սովորեցրու ինձ սիրել Քեզ այնպես,
ինչպես Դու ես ուզում,
որ Քեզ սիրենք: Սովորեցրու ինձ
հավիտյանս հավիտենից
անթերի կերպով հետևել
Քո Օրենքին, որպեսզի ես քայլեմ
Արդարության ճանապարհով:
Առաջնորդիր իմ քայլերը
Սիրո Ճանապարհով,
ինչպես խոստացել ես:

Ա՛հ, աղջիկս... Ես լարել եմ Աչքերս, սպասելով, որ շուրթերդ արտասանեն քո հավատարմության երդումները...

Քաղցրիկ ու քնքուշ Հիսուս,
Սիրելիս, ուրեմն քաջիր ու
տար ինձ հավատարմության
Քո Ոտնահետքերով:
Թող հիվանդ լինեմ Քո սիրով,
թող ճաշակեմ Քո Տառապանքները:
Դրանք իմ բերանում կլինեն
Քո Պարտեզի հազվագյուտ
պտուղի նման:

Դե՛, բացվիր Ինձ համար, որ Ես կարողանամ մեղմորեն փչել քեզ վրա: Իմ

Շունչը ամենանուրբ բույրերից է, Իմ Բուրմունքը խունկի զմուռսի խառնուրդ է: Բացվիր Ինձ համար, հոգի՛, որ Իմ Սիրո Հոգին փչի քեզ վրա: Իմ Շունչը Կյանք է: Բացվիր Ինձ համար, սիրելիս, աղջի՛կս: Ես տենչագին փափագել եմ այս պահը, որ ցույց տամ քեզ Իմ Աստվածային Սիրտը: Ես գալիս էի Երկնքից, որ քո դռան շեմին հանդիպեմ քեզ, ու հիմա, երբ Ես գտել եմ քեզ, չեմ թողնի գնաս:

Խոսի՛ր, հոգի, պատասխանիր Ինձ:

Ե՛կ, եկ մեզ մոտ,
Տե՛ր, ու բացմապատկիր
Քո Սուրբ Հոգու
Սիրո Կնիքը մեր ճակատի վրա,
Խոստումի Կնիքը: Աստված իմ,
մաքուր սիրտ ստեղծիր մեր մեջ:
Ես գիտեմ, որ Դու
ամեն մի հոգու դռան շեմին ես,
սպասելով նրանց պատասխանին,
ու Քո Աչքերը
թախիծով սպասում են
նրանց դռների բացվելուն:
Քո Խաղողի Այգիները
ծաղկում են հիմա, Տեր իմ, և շուտով
դրանք բավական պտուղ կտան՝
սնելու ամեն մի անապատ:
Մեռյալները չեն կենդանանա
այնքան ժամանակ, մինչև որ Դու
չփչես նրանց վրա,
արթնացնելով նրանց
Քո քաղցր բույրով:
Հանուն Քո Սիրո,
թող որ այս ուրվականների երկիրը
կրկին կյանքի գա:

Ուրեմն, Ես կժպտամ նրանց, ու Իմ Լույսը կթափանցի նրանց դռների ծխնիների արանքով և ամեն մի բանալու անցքով, անդամ նրանց դռների տակից կթափանցի Իմ Լույսը:

Ալելո՛ւիա, փառք Աստծուն:

Այո՛: Բացականչիր, փոքրիկ սիրտ, ցնծությամբ, ձեր անբերրի հողերը կպտղավորվեն: Ուրախության արցունքներ թափեք, դուք բոլորդ, ովքեր լսում եք Ինձ: Անսահման սիրով Ես խղճացել եմ ձեզ: Խաղողի այգիներ կաճեն փշերի փոխարեն: Ես մտադիր եմ ցույց տալ Իմ Սրբությունն ու Իմաստությունը, որպեսզի ջնջեմ Իմ Աստվածության հանդեպ այս դարաշրջանի թշնամությունը և նրա, այսպես կոչված, իմաստությունը:

Հունիսի 8, 1990

Տե՛ր, օգնիր կատարել իմ տված երդումը:

Խաղաղություն քեզ: Ես կօգնեմ քեզ, շատ սիրելի հոգի: Ընդունիր Շնորհի Իմ Սուրբ Հոգին: Հիշի՛ր Իմ Ուսմունքները: Հիշի՛ր, որ Իմ Ճանապարհները ձեր ճանապարհները չեն: Աղոթիր, զանազանման շնորհի համար:

Ես աղոթում եմ Քեզ, Տե՛ր,
որ ինձ տաս ճանաչելու շնորհը,
որ պահպանեմ Քո Խոսքը ու
կարողանամ զանազանել
ճիշտը՝ սխալից, չարը՝ բարուց,
Ճշմարտությունը՝ Ստից:

Ես կկերակրեմ քեզ ճանաչողությամբ: Ես քեզ չեմ թողնի առանց օգնության, մնա Իմ Սիրո մեջ: Լսի՛ր Ինձ. ձայն տուր ազգերին, որ Իմ Վերադարձը մոտ է: Ով ականջ ունի, թող լսի, և ով աչք ունի, թող տեսնի: Ես՝ Տերը, իջնում եմ Իմ Անսահման Ողորմությունից դրդված, որ զգուշացնեմ ձեզ ու ետ կանչեմ Ինձ մոտ:

Լսի՛ր, Իմ Վերադարձից անմիջապես առաջ, Ես նույնիսկ ավելի մեծ Նշաններ պիտի ցույց տամ մարդկությանը, քան այն, ինչ այսօր տալիս եմ ձեզ: Զգոն եղեք, քանզի որքան ավելի ուժգին դառնան Իմ Նշանները, այնքան ավելի կասատկանա սատանայի կատաղությունը ձեզ վրա:

Ես մարգարեներ եմ ոտքի հանել, որպեսզի հայտարարեն ժամանակների Վերջը: Եվ Ես Իմ Մորը ուղարկում եմ, որպես Ուսուցիչ ողջ աշխարհով մեկ, որպեսզի ուսուցանի ձեզ բոլորիդ: Ես Նրան ուղարկում եմ, որ այս անապատում ճանապարհ պատրաստի Իմ Վերադարձի համար, հարթ ու լայն մի ճանապարհ ձեր անապատով, Ինձ համար՝ ձեր Աստծո համար: Զգոն եղեք, քանզի որքան ավելի շատացնեմ Իմ ձայնափողերը, այնքան սատանան կշատացնի կեղծ մարգարեներին՝ ձեզ բոլորիդ մոլորեցնելու համար: Աղոթե՛ք, սիրելիներս, որ տարբերեք մեկը մյուսից, աղոթե՛ք, որ չխաբվեք:

Ես ձեզ զգուշացրել եմ, որ չվազեք այդ կեղծ մարգարեների ետևից: Հիշե՛ք, նա, ով բարի սերմեր է ցանում Իմ Փառքի համար, հետո կվարձատրվի: Ուզում եմ նաև հիշեցնել ձեզ, որ բարի սերմերի մեջ, որ ցանվել են ու աճում են, որպեսզի լավ բերք տան, Իմ Թշնամին երբեք ժամանակ չի կորցնում: Նա նույնպես ուղարկում է իր կեղծ մարգարեներին՝ իր սերմերը Իմ բարի սերմերի մեջ ցանելու համար: Թողեք դրանք մնան, մինչև Իմ Հունձքի ժամանակը: Ինչպես ասել եմ որոմի Իմ առակի մեջ[1], մի՛ փորձեք որոմը պոկել ու բաժանել մյուսներից, որպեսզի հանկարծ Իմ ցորենն էլ արմատախիլ չանեք: Թողեք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հունձքը, և հունձքի ժամանակ Ես հնձողներին կասեմ. նախ այդ որոմը քաղեք ու դրանից խուրձեր կապեք այրելու

[1] Մատթ. 13:24-30

համար, իսկ ցորենը հավաքեք Իմ շտեմարանների մեջ:

Զգո՛ն եղեք, որ դուք միշտ կարողանաք ճանաչել ու տարբերել: Զգույշ եղեք ու խնդրեք Ինձ առաջնորդել ձեզ: Թող ամեն ոք լսի Իմ խորհուրդը: Ուշադիր եղեք: Իմ Թշնամին նման է վիրավորված վայրի մի գազանի, դառնալով վելի կատաղի ու վտանգավոր,-քանզի Իմ Վերադարձի Ժամը մոտ է, և քանի որ Ես այսօրվա նշաններից ավելի մեծ Նշաններ ձեզ պիտի տամ: Մինչև այս Մեծ Նշանների նախօրյակը, սատանան արդեն ձեր մեջ խառնաշփոթություն է տարածում Իմ Սուրբ վայրերում, որ ձեզ տանի դեպի երկպառակություն:

Մնացեք խաղաղությամբ բոլորդ, վստահեք Ինձ ու հենվեք Ինձ վրա: Արեք ամենը, ինչ կարող եք, իսկ մնացածը Ես պիտի ավարտեմ Իմ Գործերով: Հիշե՛ք, Ինձ մոտ են բոլոր դռների բոլոր բանալիները, և Ես ամեն մի դուռ կբացեմ Իմ ընտրած ժամին:

Սերը սիրում է ձեզ: Ես օրհնում եմ ձեզ: Օրհնեք Ինձ ու սիրեք Ինձ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 13, 1990

Իմ Հիսո՞ւս:

Ես եմ, այդ Ես եմ, քո Հիսուս: Եկեղեցին Իմ կողմից կվերակենդանացվի, և ոչ քո կողմից, մարդկություն: Ես Նա եմ, ով կբարձրացնի Իմ Հարսին: Դու դեռ ուզո՞ւմ ես Իմ պատգամատարը լինել, հակառակ հալածանքներին:

Այո՛, ուզում եմ, Տեր իմ:

Զգա՛, թե Ես ինչպես եմ ուրախանում ամեն անգամ, երբ ասում ես. «այո՛»: Ես քո կարիքը չունեմ, ինչպես գիտես: Ես բավարարված եմ Ինքս Ինձանով, բայց դու գրավում ես Ինձ քո թուլությամբ Ինձ «այո» ասելով: Քո անկարողությունը խթանում է Իմ Ուժը և ուրախացնում Իմ Հոգին: Քո թուլությունն ու քո թշվառությունը ամբողջապես գրավում են Իմ Թողությունը ու Իմ Սրտից դու դուրս ես կորզում ներողամտությունն իր ամբողջությամբ:

Մոտ մնա Ինձ, զավա՛կս, դու ուրախացնում ես Իմ Հոգին, Ես քո Ամրոցն եմ: Զգոն եղիր, փոքրի՛կս, որովհետև, նրանց մեջ ովքեր քեզ մոտենում են, կան դուշակողներ ու կեղծ մարգարեներ:

Ի՞նչ պետք է անեմ, Տեր:

Պահիր Իմ Օրենքները...

Դու կպաշտպանե՞ս ինձ այդ տեսակ մարդկանցից, Տեր:

Դու կապրես անվտանգ: Ես ապահով հսկում եմ քեզ: Ես կշարունակեմ քեզ տանել Իմ Ուսերի վրա, դառնուկս: Մնա խաղաղությամբ:

Հունիսի 14, 1990

Ես եմ Վեմը:

Հունիսի 19, 1990

Իմ Հիսո՞ւս:

Ես եմ:

Խաղաղություն քեզ: Պատվիր Ինձ՝ նմանվելով Ինձ, փառաբանիր Ինձ՝ սիրելով Ինձ: Սրբացրու մարմինդ, որովհետև Ես ապրում եմ քո մեջ, քանզի դու ճաշակում ես Ինձ, ըմպում՝ Ինձ: Պաշտի՛ր Ինձ, ծարավի՛ր Ինձ, հատուցիր նրանց համար, ովքեր Ինձ չեն սիրում ու կուրացած են իրենց բանականությամբ և չեն կարողանում տարբերել իրենց աջ ձեռքը ձախից: Աղոթիր, որ նրանք կարողանան հասկանալ, որ իրենք կարիք ունեն ըմբռնելու, որ չչեղվեն Իմ Խոսքերից, ինչպես նրանցից շատերը հիմա անում են: Աղոթի՛ր, որ նրանք կարողանան հասկանալ, որ այն, ինչ Ես ուզում եմ այդ իմաստուն մարդկանցից՝ պաշտամունք է: Ես ուզում եմ, որ նրանք դան ու մեծարեն Ինձ, ինչպես առաջին հովիվերն ու Մոգերը:

Ես գիտեմ, որ Իմ ձեռքերում պարզապես մի երեխա ունեմ: Մի՛ վախեցիր, մի՞թե չգիտեմ, ուր եմ ուղարկում քեզ: Ես քեզ մեծացրել եմ, որ դառնաս Իմ պատգամատարը, որ վկայես Ճշմարտության համար: Սանի՛կ, դու Իմն ես և Իմ Բերանից ես սովորել: Բռնիր քո Ուսուցչի ձեռքը ու թույլ տուր Ինձ քեզ ուղեկցել այնտեղ, ուր ուզում եմ, որ լինես: Հենվիր Ինձ վրա, երբ դու հոգնած ես ու վհատված, զավա՛կս, և Ես կսփոփեմ քեզ: Ա՜հ, Վասուլա, ամեն անգամ, երբ քեզ թշվառ ես զգում, Իմ Սիրտը Սիրո Այրվող Հնոց է դառնում, պատրաստ կլանելու քեզ: Լսի՛ր, ուրախացիր, քանզի ի՞նչը կարող է ավելի մեծ լինել, քան Իմ Սիրո պարգևը:

Հասկացի՛ր, զավակս, որ Ես Նա եմ, ով քեզ բոլորից շատ է սիրում ու հավիտյան կսիրի:

Ամենողորմ Տեր, մենք շեղվել ենք Քո Ճանապարհից, բայց և այնպես Դու երբեք չդադարեցիր մեզ հետ գործել ողորմածությամբ ու մեծ սիրով: Այսօր ես կանչում եմ Քեզ, Տեր: Մի՛ լքիր մեզ ծանր փորձության օրերին: Փրկի՛ր մեզ կործանումից, ազատի՛ր մեզ չարից, միավորի՛ր մեզ Քո Սիրո ու Խաղաղության մեջ:

Ես քեզ տալիս եմ Իմ Խաղաղությունն ու Իմ Սերը, զավա՛կս:

Եկեղեցին պիտի վերակենդանանա, չնայած այն բոլոր փորձություններին, որին ենթարկվում է: Իմ Եկեղեցին մեկ կլինի ու սուրբ, և Իմ Ժողովուրդը կխոսի մի լեզվով: Այս ամենը շուտով տեղի կունենա: Վասո՛ւլա, Ես կրկին կբարձրացնեմ Իմ Եկեղեցին՝ Իմ Անսահման Սիրուց ու Ողորմությունից դրդված: Ես մտադիր եմ ձեզ բոլորիդ վերադարձնել ձեր խաղողի այգիները և այս մահվան հովիտը Հուսո դարպաս դարձնել, և դուք բոլորդ կպատասխանեք Ինձ, ինչպես անում էիք մի ժամանակ, երբ

դուք երիտասարդ ու մաքուր էիք:

Բավական երկար ժամանակ դուք մերժեցիք (Աստվածային) Գիտությունը՝ Ինձ զոհեր մատուցելով, որոնք երբեք Ինձ չհասան: Բայց Իմ Ողորմությամբ ես կասեմ մահվան ամեն մի հովտին. բարձրացի՛ր, թող ամեն մի մութ հովիտ լցվի Իմ Խոսքով, ամեն մի սար ու բլուր ցածրանա՝ արոտավայր դառնալու համար, և թող ամեն ոք, ում ճակատին Իմ Սիրո Հառաչանքն է դրոշմվել, առաջ գա և ճաշակի Իմ Կենաց Ծառից:

Այսօր ես բոլորին առիթ եմ տալիս, որ հստակ լսեն Իմ Ձայնը Իմ Սուրբ օթևանից: Իմ Ձայնն արձագանքի պես հնչում է Երուսաղեմից ու համնում երկրի բոլոր բնակիչներին: Ոչ ոք հետո չի կարող ասել, որ ես չեմ զգուշացրել ձեզ: Ես թույլ եմ տվել, որ Իմ Հոգին փչի ազգից ազգ: Ես ձեզ եմ ուղարկում Իմ բոլոր ծառաներին՝ մարգարեներին, որպեսզի համառորեն հիշեցնեն ձեզ, թե ով է ձեր Հայրը ու ձեզ ետ պահեն ձեր չար գործերից և ուղղեն ձեր արարքները:

Ես գալիս եմ, որ ձեզ ետ կանգնեցնեմ անաստված տեսությունները աստվածացնելուց: Ես ուղարկում եմ Իմ պատգամաբերներին՝ հիշեցնելու ձեզ Իմ պատվիրանների մասին, հիշեցնելու, որ սուրբ ապրեք, ինչպես ես եմ Սուրբ, որպեսզի բոլորդ արժանի լինեք Իմ առաջ կանգնելու Իմ Վերադարձի օրը:

Աղջի՛կս, եղիր Իմ խունկը: Ես միշտ կմնամ քեզ:

Տե՛ր, ես այնքան շատ բաներ ունեմ Քեզ ասելու:

Շատ բանե՞ր:

- Այո՛: Սկսած նրանից, որ ես արժանի չեմ ոչ մի բանի, որ տվել ես ինձ:

Գիտեմ, բայց ես Իմաստությունը տալիս եմ թշվառներին ու պարզերին: Թող Իմ Սերը պարուրի քեզ: Ե՛կ, երբեք մի մոռացիր Իմ Ներկայությունը:

Թող Քո Բարի Հոգին
մեզ առաջնորդի
հարթ ճանապարհով:
Յա՛հվե, Քո Անվան սիրույն,
պահիր մեզ փրկելու
Քո խոստումը: Ամեն[1]*:*

Հունիսի 27, 1990

Խաղաղություն քեզ:

Աղջի՛կս, աղոթիր փառք տալով Ինձ, որ ես բարձրացրել եմ քեզ մեռյալների աշխարհից ու թույլ եմ տվել մուտք գործել ու ապրել Իմ Խաղաղության ու Սիրո Աշխարհում և Իմ նուրբ հմտությամբ սովորեցրել

[1] Սաղմ. 142:10-11

եմ քեզ նախնիների Գիտությունը: Ուրեմն, մի՛ մեղադրիր որևէ մեկին, որ դեռ չի կարողանում տարբերել իր աջ ձեռքը ձախից: Կարեկից եղիր, ինչպես Ես եմ կարեկից: Մի՛ դատիր, և դու ինքդ չես դատվի: Մի՛ դատապարտիր, և դու ինքդ չես դատապարտվի: Դիմադրիր չարին ու հաղթիր նրան բարությամբ: Հենակետ մի՛ տուր Գայթակղիչին: Մի՛ ասա, որ Ես՝ քո Տերը, լքել եմ քեզ: Իմ Հինգ Վերքերից Ես սնում եմ քեզ, հոգի: Աղոթիր զանազանման համար: Նայի՛ր, աղջիկս, Ես Հույս եմ, Ես Կյանք եմ, և Ես քո կողքին եմ: Ես Խաչյալն եմ և քո Փրկիչը, ով քեզ ասում է. Իմ Սերը քո հանդեպ անսահման է:

Օրհնի՛ր Ինձ ու սիրիր Ինձ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ, այցելող քահանային):

Իմ ծառային ասա հետևյալը, գրիր.

Իմ խաղաղությունը քեզ:

Վերցրու այս նշանը, որպես Իմ Սիրո մի պարգև: Վերցրու Իմ խոսքը և տարածիր ազգերին: Ասա նրանց, որ «մեկ անգամ ևս ձեզ վրա վերևից կհեղվի Իմ Հոգին, և այն ժամանակ ձեր անապատը պարարտ հող կդառնա, արդարությունը խաղաղություն կբերի» [1], խաղաղություն, որպիսին աշխարհը երբևէ չի իմացել: «Իմ ժողովուրդը կապրի մի խաղաղ Տան մեջ»: Այո՛, նրանք կապրեն Իմ Սուրբ Սրտում, քանզի Ես «նրանց ապահով կպահեմ»: Բայց նախքան այս անապատի բարեբեր հող ու ընտիր խաղողի այգի դառնալը, Իմ Շունչը կփչի այս խավար աշխարհում, ինչպես ծծմբի մի հեղեղ, որն ամենուր կրակ կվառի՝ մաքրագործելու այս դարաշրջանը և ամբողջովին նորոգելու այն՝ միավորելով նրան ու դարձնելով Մեկ Սուրբ Ժողովուրդ: Ձեր ուրացողներին Ես սուրբ մարդկանց կվերածեմ, իսկ նրանց անտարբերությունը՝ խանդավառության, Իմ՝ ձեր Աստծո հանդեպ: Ես ձեզ սուրբ կդարձնեմ, ինչպես Ես եմ Սուրբը: Հիշի՛ր, որ Իմ Քաղաքը պետք է վերակառուցվի իր ավերակների վրա (...)

Օրհնյալ եղիր:

ΙΧΘΥΣ

Հունիսի 30, 1990

Տե՛ր, նրանք թերացել են գնահատել
Քո Մեծ Սերը:
Ոչ մի հեղեղ չի կարող
այդ Սերը հանգցնել
և ոչ էլ որևէ տարափ
կարող է ջրասույզ անել:
Եվ հիմա ես ասում եմ Քեզ,

[1] Ես. 32:15-17

ես կորցրել եմ ուժերս
ու իմ հոգին
զուրկ է մխիթարությունից:
Ես կարծում եմ, որ Դու ինձ տվել ես
դառնության իմ բաժինը:
Մի՞թե դեռ էլի ես տալու:
Ես հարվածողին
իմ այտն եմ դեմ արել,
որպեսզի անարդարությամբ ընկճվեմ:
Քո գառները,
որոնց հավաքել ես հիմա,
ընկած են ցիրուցան:
«Ես միայնակ եմ ոտք դրել
գինու հնձանի վրա,
իմ ժողովրդի մարդկանցից
ոչ <u>մեկը</u> չկար ինձ հետ»:

Նայիր: Ո՞վ է երկնքից գալիս հանում քո սենյակը: Այդ Ես եմ, Հիսուս... քո Փեսան: Ուրեմն, մի՛ վախեցիր, Ես կրկին կփրկեմ քեզ: Քո մարմինը թույլ է, իսկ հոգիդ այս օրերին ենթարկվել է փոթորկի: Ես քեզ մոտ եմ, քո կողքին: Մի՛ վախեցիր, աղջիկս, Հարսս: Ես խղճահարությունից չնչահեղձ եմ լինում, տեսնելով քեզ այս փոթորկի մեջ, բայց Ես քեզ դուրս կբերեմ դրա միջից: Իմ թշնամիները[1] նորից են մնում Իմ Հոր Արդարադատությունը, որը հիմա նույնիսկ ավելի է մեծանալու: Նա ինչպե՞ս կարող է մեղմանալ: Նա ինչպե՞ս կարող է մեղմանալ, երբ չարությունը այն միակ հացն է, որ նրանք ուտում են:

Աստվա՛ծ իմ, մի՛ լքիր ինձ:

Կառչիր այն ամենին, ինչ Ես տվել եմ քեզ, զավա՛կս: Կառչիր Ինձանից: Այս մարդիկ չեն կարող քնել, մինչև որ քեզ չվնասեն: Ես դիտում եմ նրանց, ու Իմ Հոր Արդարադատությունը բորբոքվում է, երբ լսում է, թե նրանք դեպի Ինձ են գալիս անկենդան խոսքերով... Մի՞թե նրանք Աստվածաշնչում չեն կարդացել. «Ոմանց Ես օրհնել եմ ու ավելի կարևոր դարձրել, ոմանց Ես սրբացրել եմ ու կողքիս նստեցրել»[2]: Բայց, երբ Իմ օրը գա, Ես նրանցից ոչ մեկին չեմ խնայելու:

Իսկ ինչ վերաբերվում է քեզ, զավա՛կս, դու <u>Իմ սեփականությունն ես</u>, քանզի դու թշվառ ես: Բայց նրանք չեն հասկացել... աղջի՛կս... աղջի՛կս..., մի՛ ողբա... արի... <u>Նրանք հարուստ վաճառականների առևտրի առարկան են եղել: Նրանց գնել են, ինչպես թանկարժեք մի ապրանք</u>... Հուսա՛, Իմ Վասուլա, Հուսա՛... Հավատա՛, զավակս, հավատ ունեցիր Իմ հանդեպ: Ես երբեք չեմ լքի քեզ... երբե՛ք... երբե՛ք... օրհնյալ: Իմ Ներումն արդեն տրվել է նրանց, այո՛, հենց նրանց, ովքեր չեն քնում, մինչև չարիք չգործեն: Ուրեմն, թող լսեմ, որ դու նույնպես ներում ես նրանց...

[1] Այստեղ Հիսուս փոխեց տոնը՝ քնքշությունից խստության անցնելով:
[2] Սիրաք 33:12

Ես ներում եմ նրանց, Տե՛ր, քանզի նրանք չգիտեն, թե ինչ են անում:

Իմ Աչքերը դիտում են քեզ: Ես քո հզոր պաշտպանությունն եմ և քո ճշմարիտ հենարանը: Ուրեմն, ոչինչ չի կարող կանգնել քո և Իմ միջև, անգամ եթե հալածում են, սպառնում ու հարձակվում են քեզ վրա: Եղե՞լ է մի մարգարե, որին չհալածեին, չսպառնային, կամ որի վրա չհարձակվեին: Նրանք Իմ Եկեղեցու երկրորդ շարքին են դասվում, առաքյալներից հետո: Բայց և այնպես, նրանց հետ միշտ վատ են վերաբերվել, ու նրանք միշտ մեղադրվել են, քանզի նրանց բերանից ճշմարտությունն են լսել, իսկ ճշմարտությունը վրդովեցնում է նրանց:

Հիմա ի՞նչ պետք է անեմ,

(հարցրեցի ես Հիսուսին շատ տխուր):

<u>Իմ ժողովրդին</u>
<u>մոտեցրու հավատքին</u>[1]:

...Տարածի՛ր Իմ Պատգամը: Ե՛կ, ես քեզ Իմ Պատգամը տարածելու միջոցներ կտամ: Ես ամեն մի կարիք կհայթայթեմ իր ժամանակին: Ծաղի՛կս, Իմ խունկի բույրը տարածիր ամենուր:

Թող որ Քո կամքը կատարվի: Օգտագործիր ինձ, ինչպես կամենում ես: Ինձ դարձրու խաղաղության ու Սիրո Քո գործիքը:

Հուլիսի 4, 1990

Ժպտա մեզ, Տե՛ր,
և ամեն մի դեմք երկրի վրա
ավելի կպայծառանա:
Հույսը կրկին
կսողոսկի մեր սրտերը,
և ամբողջ երկիրը, ծայրից ծայր,
կհիշի ու ետ կգա դեպի Քեզ:

Դու չե՞ս նկատել, որ Իմ Սիրտը սիրով է կապված անգամ դասալիքի հետ: Դու չե՞ս լսել Իմ Սիրո Հառաչները: Դու չե՞ս կարդացել Իմ Սիրո ձոնը՝ գրված Իմ Ողջ արարչության համար: Արի Ինձ մոտ ու թող որ քեզ տեսնեմ ձեռքերդ երկարած դեպի Իմ Սրբավայրի կողմը: Պաշտի՛ր Ինձ ու օրհնիր Ինձ օր ու գիշեր, գիշեր ու զոր տեղի մի տուր:

Օրհնյա՛լ, ես քեզ մի հարց եմ տալու, միայն մեկը: Ասա՛ Ինձ. դու սիրո՞ւմ ես Ինձ քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով:

Ես սիրում եմ քեզ,

[1] Նա պատասխանեց ինձ վեհաքանչ տոնով և առանց նվազագույն տատանման:

Տեր իմ ու Աստված իմ,
իմ ամբողջ սրտով, իմ ամբողջ հոգով
ու իմ ամբողջ մտքով,
բայց ես գիտեմ, որ իմ սերը չնչին է,
թշվառ ու անբավարար՝
Քո Առատաձեռնության դիմաց:

Ուրեմն, ես քո մեջ կրակ կվառեմ...

Դե արի՛, ու գրավիր ինձ:
Եթե Դու Քո Լույսով
չլցնես հոգիս,
ես ինչպե՞ս գտնեմ ճամփան,
որ իմ հոգին տանի Դեպի
Ճշմարտությունն ու Կյանքը:

Միշտ ընդունիր քո սխալները, և ես կօգնեմ քեզ հաղթահարել դրանք: Արի՛, դու, որ Իմն ես ու Իմ Սեփականությունը: Դու Իմ սեփականությունն ես, քանզի դու թշվառ ես ու ողորմելի: Թշվառությունը գրավում է Ինձ: Ես կվերականգնեմ քո ուժն ու կխրախուսեմ քեզ՝ շռայլելով Իմ խունկի անուշահոտությունը քեզ վրա: Երբեք տեղի մի՛ տուր, զավա՛կս, երբեք մի՛ մերժիր Ինձ տեղ տալ քո սրտում: Ինձ հրապուրում է խեղճությունը: Ես թշվառություն ու խեղճություն եմ փնտրում: Ես քեզ բերել եմ դեպի Ինձ, որպեսզի Իմ Կրակը կլանի քեզ նրանց բոլորի աչքերի առջև, ովքեր տեսնում են քեզ: Ես քո միջոցով Իմ Անսահման Սերն եմ ցույց տալիս ողջ մարդկությանը, որպեսզի ամեն մի մարդ կարողանա տեսնել ու հասկանալ, որ Ես Սիրո Աստվածն եմ, ամենակուլ մի Կրակ:

Աստվա՛ծ իմ,
Դու օրհնությունների
տարափ տեղացիր ինձ վրա,
իմանալով, որ այն,
ինչ քեզ է պատկանում ու Քո
«սեփականությունն» է,
մեղավոր է ու անկատար,
և ես անկարող եմ Քեզ որևէ բան
տալ դրա փոխարեն:

Ես օրհնել եմ Իմ սեփականությունը... Քո անկեղծությունը ուրախացնում է Ինձ... Լսի՛ր. Ես թշվառներին բարձրացնում եմ փոշուց, Ես վեր եմ հանում ողորմելիներին ու դնում եմ նրանց Իմ Սուրբ Սրտում: Հետո, Ես նրանց ցույց եմ տալիս Իմ հրեշտակներին: Ես նրանց ուսուցանում եմ Իմ պատվիրանները ու դառնում նրանց Ուսուցիչը, իսկ նրանք՝ Իմ աշակերտները: Եվ նրանց մեղքերը ներվում են Իմ կողմից: Ինչպես սառնամանիքը արևի շողերի տակ, նրանց մեղքերը հալվում են: Հետո Ես խնդրում եմ սրբերին հսկել նրանց ու աղոթել նրանց համար, ու Ես լցնում եմ նրանց Իմ Հասկացողության Հոգով, որպեսզի նրանք կարողանան ընկալել Ճշմարտությունը և ավելի խորը հասկանալ Իմ Գիտությունը:

Տեր, Դո՛ւ, որ խնամեցիր ու
փայփայեցիր ինձ ինչպես հայր,
մահվան հովտից
ինձ հարություն տալուց հետո,
Դո՛ւ, որ այդ պահից ի վեր
միշտ առաջնորդեցիր ինձ
Քո Լույսի մեջ, Դո՛ւ,
որ ազատեցիր ինձ չարից, ասա՛ ինձ,
մի՞թե բոլորս քո զավակները չենք:

Այո՛, դուք Իմ զավակներն եք:

Քանի որ մենք բոլորս Քո զավակներն ենք, ես <u>աղաչում եմ</u> Քեզ, թույլ տուր նրանց, որ լսում ու լսում են նորից, բայց թվում է չեն հասկանում, թույլ տուր, որ հասկանան նրանք:

Նրանք ապաշխարե՞լ են:

Տե՛ր, ես չգիտեմ, նրանք զղջացել են, թե ոչ, բայց եթե Դու բացես նրանց աչքերը ու թույլ տաս, որ տեսնեն, նրանք կտեսնեն Քո Փառքը, և այդ ժամանակ նրանք կհասկանան Քո Հավատարմությունն ու Քո Գեղեցկությունը: Նրանք այդ ժամանակ կգան Քեզ մոտ ու կապաշխարեն:

Մանկի՛կ, անգամ եթե ես բացեմ նրանց աչքերը, նրանք Ինձ չեն տեսնի: Նրանք Ինձ չեն տեսնի, քանզի շրջապատված են խավարով: Ուրեմն, ինչպե՞ս ես ուզում, որ նրանք Ինձ տեսնեն, չնայած ես նրանց մոտ եմ ամբողջ ժամանակ: Նրանց մթությունը կուրացնում է իրենց:

Դրա համար, աղջի՛կս, խոսիր ու մի վախեցիր նրանցից: Մի՛ վախեցիր Ճշմարտությունն ասելուց, ոչ էլ թույլ տուր որ քեզ լռեցնեն: Ես քեզ հետ եմ, զավա՛կս, աղջիկս: Ո՛չ, մի՛ լռիր, ձեռնամուխ եղիր աշխատելու քո Աստծո հետ: Ես մեծացրել եմ քեզ ու կրթել եմ այս առաքելության համար: Ինչպես կույսի հետ ամուսնացող մի երիտասարդ, Ես առաջարկել եմ քեզ Իմ Սիրտը ու խնդրել եմ քոնը: Այդ Ես եմ, Հիսուս, որ ձևավորել է քեզ ու պսակվել քեզ հետ: Եվ ինչպես փեսացուն է հրճվում իր հարսնացուով, այնպես էլ Ես եմ հրճվում հիմա քո թշվառությամբ ու քո թուլությամբ: Ես քեզ հետապնդել եմ, ինչպես սիրահարն է հետապնդում կույսին: Ես գնացել եմ բոլոր ուղղություններով, փնտրելով, թե ինչ միջոցներով կարող էի քեզ Իմը դարձնել, ու հիմա, որ Իմն ես, Ես պահպանելու եմ քեզ:

Ես փխրուն եմ,
իսկ ինձ հալածողները
հետապնդում են առանց հոգնելու,
բայց իմ հույսը Դու ես:
Ես այս աքսորում ապրում եմ
միայն Քեզ համար:
Այս աշխարհում այլևս
ոչինչ ինձ չի ուրախացնում,
ու իմ աչքերն արդեն թախծում են

Քո աշխարհի համար,
ուր խաղաղություն է տիրում:
Իմ սիրտն ու հոգին
մարում են Քո սիրո համար:
Դու իմ Ապաստանն ես
ու իմ Ուրախությունը:
Ես խնդրել էի Քեզ ընդունել ինձ,
եթե հնարավոր է և լինել Քեզ համար
ստրուկից էլ պակաս,
այո՛, օգնական մի ստրուկ:

Թշվառներն ու պարզամիտները միշտ գովերգել են Իմ Անունը և միշտ կգովերգեն:

(Հիսուսն այստեղ այնպիսի տեսք ուներ, կարծես խոսում էր Ինքն Իր հետ):

Սրա համար է, որ շնորհակալ եմ Հորը՝ Իմաստությունը ուսյալներից ու խելացիներից թաքցնելու և սոսկ երեխաներին բացահայտելու համար: Երանի է ձեզ, որ աղքատ ու ողորմելի եք, ձերն է Աստծո Արքայությունը: Վա՜յ նրանց, ովքեր կշտացել են հիմա. նրանք կքաղցեն: Երանի է <u>ձեզ</u>, երբ մարդիկ Ինձ համար վիրավորում ու հալածում են ձեզ ու ամեն տեսակ զրպարտանքներ են խոսում ձեր դեմ: <u>Ցնծացե՛ք</u> և ուրախացեք, քանզի ձեր պարգևը մեծ է լինելու երկնքում: Նրանք մարգարեներին էլ են հալածել այսպես քեզանից առաջ:

Աղջի՛կս, մի հոգնիր, կատարիր այն աշխատանքը, որ տվել եմ քեզ: Նմանվիր Ինձ՝ քո Տիրոջը, և հետևիր Ինձ, առանց որևէ կասկածի: Ես քեզ ավելի ևս կխոնարհեցնեմ: Մնա թշվառ ու թույլ, խոնարհ ու հնազանդ: Հաճելի եղիր Իմ Աչքին:

Սիրիր Ինձ ու օրհնիր Ինձ:

Ես Քոնն եմ ու Քո Աչքերի ներքո Ես գտել եմ ճշմարիտ խաղաղությունը: Ես օրհնում եմ քեզ:

Հուլիսի 6, 1990

Խաղաղություն քեզ: Ահա Իմ Պատգամը.

Խաղաղություն ձեզ, Ես ձեր Փրկիչն եմ, որ խոսում է ձեզ հետ: Ես Նա եմ, ով բոլորից շատ է ձեզ սիրում: Ես եկել եմ ձեր ժողովրդի մոտ, որ կույրին տեսողություն տամ ու տեսողու~ թյունից զրկեմ նրանց, ովքեր պնդում են, որ տեսնում են... Ես եկել եմ ձեզ մոտ, որպեսզի դուք լսեք Իմ Ձայնը՝ Իմ Սուրբ Հոգու Ձայնը, Մշտապես Հիշեցնողը Իմ Խոսքի և այն ամենի, որ տվել եմ ձեզ: Լսե՛ք Ինձ: Երկրի բնակիչներ, որքան եմ Ես ձեզ սիրում: Չնայած ձեր սարսափելի չարությանն ու Իմ Հանդեպ ձեր ունեցած անտարբերությանը, Ես՝ ձեր Հիսուս, սիրում եմ ձեզ:

Այսօր, սիրելիներս, Ես գալիս ու կանգնում եմ ձեր դիմաց, որպես ձեր Հովիվը, որ ասեմ ձեզ. Իմ Արքայությունը մոտ է և նախքան այս սերնդի վախճանվելը, այն ամենը, որ կանխասացվել է Իմ այսօրվա մարգարեների

կողմից, կկատարվի:

Աղոթե՛ք նրանց համար, ում ես բերան եմ տվել Ինձ գովերգելու, բայց նրանք այն օգտագործում են միայն Իմ Սուրբ Անունը պղծելու համար:

Աղոթե՛ք նրանց համար, ում ես աչքեր եմ տվել Իմ Գեղեցկությունը, Իմ Սրբությունն ու Իմ Հրաշքները տեսնելու համար, բայց նրանք կուրացել են, իրենց մեղքերի չղարշն աչքերին:

Աղոթե՛ք նրանց համար, ում ես ականջներ եմ տվել Իմ Խոսքն ու Իմ Սիրո Օրհներգերը լսելու համար, բայց նրանք թույլ են տվել, որ իրենց լսողությունը բթանա՝ վախենալով, որ կլսեն ու դարձի կգան:

Աղոթե՛ք նրանց համար, ում բերանից սուտ վկայություն է դուրս գալիս, իսկ նրանք անգիտակից են դրան: Նրանց առաջնորդները կտապալվեն, և նրանք ստիպված կլինեն դիմագրավել Արդարությանը:

Աղոթե՛ք նրանց համար, ովքեր չեն դադարում մեկը մյուսի վրա թունավոր նետեր արձակելուց: Նրանք պետք է հասկանան, թե իրենք ինչպես են վնասում Իմ Մարմինը:

Աղոթե՛ք այն աղոթքը, որ ձեր Սուրբ Մայրն է ձեզ տվել Իր նախորդ պատգամում՝ մեղմացնելու ու ետ պահելու Իմ Հոր Արդարադատությունը: Խնդրեք Հորը, որ ձեր սերնդին ունկնդրի: Հատուցե՛ք այն համառ հոգիների համար, ովքեր երբեք չեն դադարում չարիք գործելուց:

Աղոթե՛ք բոլոր այդ հոգիների համար, Իմ փոքրիկ սրտեր, քանզի դուք եք երկրի աղը, ու ես՝ Հիսուս, ասում եմ ձեզ. քաջալերվե՛ք, փոքրիկ սրտեր, քանզի Ես ձեր հետ եմ:

Ես այնպես կանեմ, որ Իմ Անունը Սուրբ պահվի, չնայած, որ Իմ թշնամիները մեծ ուրացություն մտցրին Իմ Եկեղեցում և ավերիչ պղծություն Իմ Սրբարանի սրտում, և դեռևս շարունակում են կառչած մնալ դրան իրենց հպարտության պատճառով:

Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Իմ օթևանը կվերաշինվի իր <u>նախկին ադյուտների</u> վրա: Օրը մոտ է, երբ Ես կգամ այդ իմաստուն մարդկանց վրա ու կոչնչացնեմ նրանց այսպես կոչված ողջ իմաստությունը, և նրանց թշնամությունն Իմ Աստվածության հանդեպ: Ես նրանց դուրս կքաշեմ արմատներով, որպեսզի նրանք այլևս չաճեն: Նրանք ուրացել են Ինձ, այո՛, նրանք սովորություն են դարձրել քայլել Ուրացության հետ և որպես առաջնորդ ու ճանապարհի ուղեկից ունենալ Բանապաշտությունը՝ <u>Իմ Աստվածության</u> դեմ պայքարելու <u>գենքը</u>:

Եթե որևէ մեկը ծարավի է Գիտության, թող գա Ինձ մոտ ու խմի, և Ես կտամ նրան կենարար ջուրը: Մի՛ գնացեք ու մի խմեք այն մարդու ուսմունքից, որը բխում է նրա սեփական բանականությունից: Այդ անձը մարդկանց կողմից տրված պատիվը գերադասում է այն պատվից, որը գալիս է Աստծուց: Ուստի այդպիսիներին Ես ասում եմ. վա՜յ ձեզ, երբ աշխարհը լավ է խոսում ձեր մասին: Կգա օրը, երբ նրանք ստիպված կլինեն խոսել երկրից, բայց մինչև նրանց ձայնը կհասնի Ինձ, նրանք կխեղդվեն փոշով ու իրենց մեղքերի հաստ շերտով: Արդարությունը կհաղթի:

Ես ամենայն լրջությամբ ասում եմ ձեզ, որ այս գալիք օրերում, սատանան և բոլոր պիղծ հոգիները նրբորեն ու անկատ չեն գործի, ինչպես անում էին մինչ այդ: Ո՛չ, ժամանակը հասել է հիմա, երբ նա և այդ պիղծ հոգիները բացահայտորեն իրենց ցույց պիտի տան երկրի ամեն մի բնակչի: Սատանան կեղծ մարգարեներ պիտի ուղարկի ու նրանց պիտի

շատացնի ավազի նման՝ չփոթություն ստեղծելով ձեր մեջ, որ խաբի անգամ ընտրյալներին: Ուստի զգույշ եղեք, որ ոչ ոք չխաբի ձեզ: Այս նշանը նախօրյակն է Իմ Մեծ Նշանների, որ դեռ պիտի պատահեն: Դևն այսօր նման է վայրի գազանի, որ վիրավորվել է ու դրանով իսկ ավելի վտանգավոր դարձել: Բայց դուք մի՛ վախեցեք, որ սիրում եք Ինձ: Ես կշնորհեմ ձեզ այն ապահովությունը, որի համար ախ եք քաշում:

Բայց վա՜յ նրանց, ովքեր պղծեցին Իմ Սրբավայրը՝ մեծ ուրացություն բերելով Իմ Եկեղեցում: Ծծումբ ու կրակ կտեղա նրանց վրա: Ճշմարիտ եմ ասում ձեզ. այն որջերում, որտեղ շնագայլերն[1] են ապրում, շուտով ճանապարհ կանցնի նրանց վրայով, մաքուր ու լայն մի ճանապարհ, որը կկոչվի՝ Սրբազան Ճանապարհ: Անմաքուր անձը չի ճամփորդելու այդ ճանապարհով, բայց ապրողները կքայլեն այնտեղով, քանզի նրանք գիտեն, ինչպես պաշտեն Ինձ, և նրանք ծունկի կգան ու Ինձ կասեն՝ Ամեն... Ամեն...

Փոքրիկ երեխաներ, երբեք ոխակալություն մի ունեցեք մեկդ մյուսի հանդեպ, միացյալ եղեք, միացյալ եղեք, մեկ եղեք:

Այդ Ես եմ, Հիսուս, որ խնդրում եմ դա ձեզանից: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ, Իմ Սիրո Հոգոցը թողնելով ձեր ճակատին, Հոգոց, որ դրոշմում է ձեզ, որպես Իմը:

ΙΧΘΥΣ

(Մեր Սուրբ Մոր պատգամը):

Խաղաղություն ձեզ, զավակներս: Ես ուզում եմ, որ դուք այսօր կարդաք ու խորհրդածեք Ղուկաս 15:4-7 համարների վրա: Այո՛, Հիսուս չի ցանկանում կորցնել ձեզանից որևէ մեկին: Սա է պատճառը, որ Նա անվերջ փնտրում է ձեր սիրտը: Փոքրիկներս, աղոթե՛ք այնպես, ինչպես չեք աղոթել երբևէ: Սուրբ պահեք Աստծո Անունը և հիշեք, որ որևէ մեկը, որ փնտրում է Տիրոջը, կգտնի Նրան: Որևէ մեկը, որ թակում է դուռը, միշտ իր դիմաց բացվում է այն: Աշխատե՛ք ձեր փրկության համար: Աղոթե՛ք այն ամենի համար, ինչի կարիքն ունեք:

Ես ուզում եմ, որ դուք երջանիկ ու խաղաղ լինեք Տիրոջով, քանզի Տերը ձեզ է տվել Իր Սիրո Պարգևը: Ուրեմն ի՞նչ պարգև կարող է ավելի մեծ լինել, քան Նրա Սերը: Տիրոջով խաղաղություն գտեք, այն խաղաղությունը, որ բացակայում է ձեզանից շատերի մոտ: Թափանցեք Աստծո Սիրո մեջ, և Նա կմաքրագործի ձեր հոգին: Փառաբանեք Տիրոջը, քանզի Նա բարի ու համբերատար է: Նրա մոտ մի գաք միայն ձեր շահերի համար: Մի մոտեցեք Նրան անգիտակցաբար՝ զուտ պարտականությունից ելնելով: Եկեք Տիրոջ մոտ՝ Նրան փառաբանելու ու Սիրելու համար:

Հաշվի առեք այն օրհնությունները, որ Աստված ամեն օր տալիս է ձեզ: Խորհրդածեք այն օրհնությունների մասին, որ Նա ամեն օր տալիս է ձեզ և առաջարկեք Նրան ձեր սրտերը: Շնորհակալություն հայտնելով, սիրելիներս, ցույց տվեք նաև ձեր երախտագիտությունը Նրան:

Հիսուս Սեր է, Հիսուս Հույս է, և Հիսուս նշանակում՝ է Նա-Ով-Փրկում

[1] Այստեղ Հիսուսն ակնարկում է Իր Սրբավայրում գտնվող մասոններին:

է: Ուրեմն մի կասկածեք Նրա Սիրո մեծության վրա, Հավատ ունեցեք Նրա հանդեպ: Նա գալիս է, որ փրկի անգամ ձեզանից ամենանվաստին: Վկայե՛ք ազգերին այս Մեծ Սիրո մասին և տարածեք Նրա Պատգամները երկրի չորս կողմերում:

Ես՝ ձեր Սուրբ Մայրը, միշտ ձեր կողքին եմ, զավակներս: Ես օրհնում եմ ձեզ: Թող Իմ Որդու Խաղաղությունը թագավորի ձեր սրտերում:

Հուլիսի 8, 1990

(Լենս - Պատգամ աղոթախմբերի համար):

Խաղաղություն ձեզ բոլորիդ: Ես՝ Հիսուս, օրհնում եմ բոլորիդ... Իմ Ներկայությունը զգացեք ձեր մեջ հենց այս րոպեին, զգացեք Ինձ ձեր սրտերում... Մի՛ կարծրացրեք ձեր սիրտը կասկածելով: Բացե՛ք ձեր սիրտը, որ լրիվ հասկանաք Իմ Սիրո Պատգամը:

Ես ցած եմ իջնում դեպի ձեզ, Ես, որ Թագավոր եմ ու Տիրակալ, որպեսզի հիշեցնեմ ձեր հանդեպ ունեցած Իմ Սիրո մասին և Իմ Զոհաբերության մասին: Ես գալիս եմ հիշեցնելու, թե դուք ում եք պատկանում: Ես փրկագնել եմ ձեզ բոլորիդ, և դուք Ինձ եք պատկանում:

Եթե այսօր Իմ Շնորհի Հոգին այսպես չռայլորեն հեղվում է ձեզ վրա, դա այն պատճառով է, որ թղթին գրեթե հասել է, և շատ շուտով դուք կճաշակեք նրանից: Դուք այլևս չեք կարող ասել. «Ո՞ւր է Իմ Աստվածը»: Ես պիտի կրկին կանաչեցնեմ չորացած արոտավայրերը, որպեսզի դուք այնտեղ ձեր հանգիստը գտնեք: Ես պիտի շարունակեմ բազմացնել Իմ Խաղողի Այգիները, իսկ Իմ մրգատու ծառերը առատ բերք պիտի տան: Դուք պիտի ուտեք Իմ Երկնային Պաշարներից, ինչքան որ ցանկանաք: Լսեք Ինձ՝ ձեր Երկնավոր Հորը: Մի՞թե Նա չի բացել Իր Երկնային Պահեստները՝ սովամահ մի ժողովրդի մանանայով սնելու համար: Ձեր Երկնային Հայրը Իր ժողովրդի վրա հացի տարափ տեղաց ու Քորեբ ժայռի միջից Նա ջուր բխեցրեց, որպեսզի նրանք խմեն: Եվ Ես, մի՞թե չեմ բազմացրել հացն ու ձուկը՝ հազարներին կերակրելու համար:

Օ՜, փոքր հավատով մարդիկ, ուրեմն ինչպե՞ս է, որ դուք չեք կարողանում ճանաչել ժամանակները: Ինչո՞ւ եք հիմա կասկածում, որ Իմ Շնորհի Սուրբ Հոգին[1] այդպես ակնհայտորեն հեղվում է ձեզ վրա: Դուք չե՞ք հասկացել, որ Իմ Սուրբ Հոգին կերակրում ու կշտացնում է ձեզ՝ ձեր անապատում: Ես ասացի. «Ես ջրելու եմ Իմ այգին, Ես մտադիր եմ ոռոգել Իմ ծաղկաթմբերը[2]: «Ես ուսմունք եմ հեղելու, որպես մարգարեություն, որպես ժառանգություն[3] ապագա բոլոր սերունդներին»: Մի՛ վախեցեք, այդ Ես եմ, ձեր Տերը, ձեր Փրկիչը:

Եթե դուք թափանցած լինեիք մանանայի, հացի ու ձկների բազմացման խորհուրդների մեջ, դուք այսօր լիովին կհասկանայիք Իմ Հոգու հեղումը:

---

[1] Հիսուսն այս ամբողջ պարբերության մեջ նշում է Հորը, Իրեն, որպես Որդի, և Սուրբ Հոգուն, ցույց տալով Սուրբ Երրորդության գործունեությունն ու ներկայությունը (մեր) ժամանակների ամայության մեջ:

[2] Սիրաք 24:31

[3] Սիրաք 24:33

Դուք կհասկանայիք Իմ Հրաշագործ Կերակրումները՝ սկսած ձեր նախնիների ժամանակներից...

Ծաղի՛կ,

(Այստեղ Հիսուսն ընդհատում է ինձ. հիմա ժամը 16 անց 23 է):

Աղոթիր հիմա Ինձ հետ Ռուսաստանի համար.

«Օ՜, Աստված,
թող նա հետևի Քեզ,
Օ՜, Տեր, փրկի՛ր նրա հոգին
ու հարություն տուր նրան,
ինչպես Դու հարություն
տվիր Ղազարոսին:
Զարդարի՛ր Քո դստերը,
այնքան սիրված
Քո Աչքերում և դիր նրան
Քո Սուրբ Սրտում,
որ նրա պատկերը արտացոլի
Քո Աստվածությունը:
Հարություն տուր նրան,
որ նա քայլի Քո կողքին:
Ցուցադրիր նրան Քո կողքին ու
ազատիր նրան գերությունից:
Պսակվիր նրա հետ
ու նրան ամբողջությամբ
Քոնը դարձրու, Ամեն:

Ասա՛ դա Ինձ (աղոթքը):

(Ես ասացի):

Գրի՛ր, Իմ Վասուլա...[1] մինչև այս օրերի կերակրումները:

Հասկացեք ու ըմբռնեք Իմ գերազանցությունը և հավատարմությունը Իմ փրկության Խոստումի մասին: Ես ոչ մի գաղտնիք չեմ թաքցնի ձեզնից, սերո՛նդ, քանզի Ես շուտով մի լայն ու բաց մայրուղի կուրվագծեմ, մի անաղարտ ուղի, ու կկոչեմ այն Սրբազան Ճանապարհ, տանելով ձեզ դեպի մի բաց Տապանակ: Այլևս ո՛չ մի որջ չնագայլերի համար, ո՛չ մի ծածուկ գործ գիշերով, ոչ էլ սողոսկումներ խավարի մեջ: Ես՝ Տերը, Հայտնի կդարձնեմ ամեն ինչ: Երբեք նորից խավար չի լինի, քանզի Իմ Լույսը հավիտյան կփայլի ձեզ վրա: Այո՛, Ես կցուցադրեմ Իմ Գիտությունը այս լայն ու բաց ճանապարհին և ուղենիշներ կտեղադրեմ՝ ձեզ այնտեղ առաջնորդելու համար: Ես լավ կնշեմ այդ ճանապարհը:

Հետո Ես ձեզ ջերմեռանդության հոգի կտամ, Ինձ՝ Ձեր Աստծուն, պաշտելու համար, իսկ Իմ անառակ որդիներին ու դուստրերին, Ես կրկին

[1] Նրա Պատգամի շարունակությունը:

մեծ սիրով ետ կընդունեմ Իմ Բազուկների մեջ, և նրանք կապրեն Իմ Լույսի մեջ: Հետո ամբողջ Երկինքը կտոնի նրանց վերադարձը: Ոչ ոք չի ասի. «Ո՞ւր է Մեր Տերը», քանզի Ես Իմ Օրենքը խորը կփորագրեմ ձեր սրտի վրա: Այս Խոստումը գրված է Իմ առջև: Ես կբարձրացնեմ Երուսաղեմը իր նախկին աղյուսների վրա:

Ես հույս ունեի Իմ Վերադարձին սրբություն գտնել, բայց գտնում եմ մի խաբեբա ու մոլորված ժողովուրդ: Հույս ունեի սեր գտնել, բայց լսում եմ միայն նրանց դատարկությունից բխող ատելության ճիչը: Ո՞ւր է այն փառքն ու գեղեցկությունը, որ մի ժամանակ տվել էի նրանց: Ո՞ւր է այն հոգին, որ չնորհել էի նրանց: Այս Կայենները փոխարինել են լույսը խավարով ու խավարը՝ լույսով: Նրանք դարձել են ոչհոգևոր: Իսկ այն ամենը, որ պատվիրում է Իմ Օրենքը և Սուրբ է, նրանք անտեսում են բոլորը ու տրորում իրենց ոտքերի տակ: Այս դարաշրջանը հակառակվում է Իմ Օրենքին, հակասելով դրա ամեն մի տառին: Մի՞թե հստակ չեմ ասել, որ որևէ մեկը, ով ընդունում է Իմ Պատվիրանները ու պահում է դրանք, նա է, ով սիրում է Ինձ:

Ձեր դարաշրջանում շատերը հայտարարում են, որ Օրենքի վարդապետներ են, բայց նրանք չեն հասկացել ո՛չ այն փաստարկները, որ օգտագործում են, ո՛չ էլ այն կարծիքները, որ պաշտպանում են: Օ՜հ, որքան են նրանք Ինձ հոգնեցնում իրենց զրույցներով: Նրանք Ինձ հոգնեցնում են, քանզի չեն պաշտպանում Իմ Գիտությունը, և ոչ էլ Իմ Օրենքը: Ես չեմ գալիս, որ այս Պատգամների միջոցով ձեզ դատապարտեմ: Ես գալիս եմ Սիրուց դրդված ձեզ զգուշացնելու և արթնացնելու ձեր թմբիրից: Ես գալիս եմ նաև, որպեսզի խրախուսեմ մնացորդներին՝ քահանաներից մինչև աշխարհականները, ովքեր սիրում են Ինձ, Հավատարիմ են Ինձ և արտացոլում են Իմ Պատկերը: Դուք, որ ցույց եք տալիս ձեր սերը, ձեր սիրույն Ես լայն ճանապարհ կբացեմ, օրհնյալնե՛ր, և դրա երկու կողմերում Ես մրգատու ծառեր կտնկեմ[1]: Ձեր հողը շատերին պիտի սնի, և ոչ ոք չի կարողանա ոչնչացնել ձեր հողի պտուղները, ոչ էլ ձեզ անբերրի դարձնել: Դուք բոլորդ պիտի կոչվեք Հավատացյալներ և պիտի լինեք այն ամենը, ինչը Հպարտություն, խաբեբայություն ու բանապաշտություն չէ: Ձեր պտուղը պիտի սնի քաղցի մատնված ազգերին, ազգերին, որոնք գլորվել են անաստվածության մեջ:

Ես մտադիր եմ ձեզ բոլորիդ հագցնել Իմ հին ժամանակների հագուստները[2] ու նորոգել Իմ Եկեղեցին դրա նախկին հիմքի վրա: Ես պիտի զարդարեմ Իմ Հարսին իր նախկին Թանկարժեք Զարդերով ու ձեր բերանով դուք պիտի գովերգեք Ինձ ու պիտի փառաբանեք Ինձ անդադար:

Սիրելինե՛րս, Ես եմ աշխարհի Լույսը, և Ես քայլում եմ ձեր առջևից: Ես տակավին ասում եմ ձեզ հետևյալը. Ինձ մոտ կան ուրիշ ոչխարներ, որոնք ձեր հոտից չեն: Ես նրանց բոլորին նույնպես կառաջնորդեմ Իմ Նորոգված Եկեղեցու ներքո, այնպես, որ կլինի մեկ հոտ ու մեկ Հովիվ: Գնացե՛ք ազգերի մեջ ու սովորեցրեք նրանց աղոթել Հորն ուղղված այս աղոթքը.

[1] Նոր դարաշրջանի քահանաները:
[2] Առաջին Եկեղեցին:

Ողորմա՛ծ Հայր, Թող որ նրանք,
ովքեր լսում են ու լսում,
Մինչդեռ երբեք չեն հասկանում,
Լսեն Քո Ձայնն այս անգամ,
Եվ հասկանան, որ այդ Դու ես,
Սուրբդ Սրբոց:
Բաց աչքերը նրանց,
Ովքեր տեսնում են ու տեսնում,
Սակայն երբեք չեն ընկալում:
Թող այս անգամ նրանք տեսնեն
Քո Սուրբ Դեմքն ու Փառքը Քո,
Հպիր Մատդ նրանց սրտին,
Որ բացվի սիրտը նրանց,
Ու հասկանան
Քո Հավատարմությունը:
Ես աղոթում
և հայցում եմ այս ամենը,
Ո՛վ Հայր Արդար, Որ դարձի գան
ու բժշկվեն համայն ազգերը
Վերքերի չնորհիվ
Սիրեցյալ Որդուդ
Հիսուս Քրիստոսի. Ամեն:

Ուրեմն հասկացեք, որ այս աղոթքով դուք խնդրում եք աշխարհի փրկությունը:

Քաջալերվե՛ք, եղբայրներ, Իմ աշակերտներ, քաջալերվեք: Ես ձեզ հետ եմ ամեն օր: Քարոզե՛ք ու պաշտպանեք Իմ Խոսքն առանց վախենալու: Իմ Անունը հռչակեք եռանդով: Հիշեցրեք աշխարհին, որ Ես Սուրբ եմ, սովորեցրեք նրանց սրբությամբ ապրել: Մեղմ եղեք, ինչպես Ես եմ մեղմ: Իմ համբերատարությունն ու Սերն ունեցեք: Միայն մի քիչ էլ, շատ քիչ էլ, և Նա, ում սպասում եք, կգա: Ես կգամ, որպես Սեր: Այո՛, Սերը կվերադառնա, որպես Սեր այս անապատում: Ես շուտով պիտի իրագործեմ Խոստումը:

Բայց հիշեք, սիրելի բարեկամներս, թե ինչ են ասել իմ մարգարեները, որ ակնկալեք վերջին ժամանակներում: Նրանք ձեզ ասել են, որ մեծ աղետներ են լինելու այս Գալստից առաջ, և որ երկրի հիմքերը պիտի ցնցվեն, ու մեծ ցնցումներ են տեղի ունենալու: Երկինքը, հավիտենական մի խավար է թվալու ձեզ: Այդուհանդերձ, երբեք մի՛ վախեցեք, քանզի Ես ձեր կողքին եմ լինելու: Ես դրոշմել եմ ձեր ճակատին Իմ Սիրո Կնիքը:

Ես օրհնում եմ բոլորիդ, Իմ Սիրո Հոգոցը թողնելով ձեր ճակատին: Հիսուս Քրիստոս է Իմ Անունը, և Ես ասում եմ ձեզ. Ես հավիտյանս սիրում եմ ձեզ: Եղեք մեկ:

Հուլիսի 19, 1990

Աստված իմ, Աստված իմ,

արի ու լուսավորիր իմ խավարը:
Շուտ արի ու օգնիր ինձ:
Այցելիր ինձ:
Իմ հոգին ծարավի է Քեզ,
Աստված իմ: Ե՞րբ պիտի տեսնեմ
Քո Սուրբ Դեմքը:
Իմ հոգին հալվում է իմ մեջ... Ինչո՞ւ
են ինձ հալածողները համառորեն
դատապարտում ինձ:
Օ՜, Աստված,
ի՞նչ վատ բան եմ արել նրանց:
Տե՛ր, Դու որտե՞ղ ես:
Թող նրանք, ովքեր ինձ հալածում են,
առնվազն ասեն,
թե ինչ հանցանքի մեջ են
ինձ մեղավոր դտել:
Օ՜, Աստված,
<u>ինչպես</u> եմ կարոտում Քեզ...

Սիրելիս, ես գաղտնաբար չեմ խոսել: Ես հաստատում եմ Իմ Խոսքը, և նրանք գիտեն դա: Դու Ինձ չես տեսել երես առ երես, բայց ես քո կողքին եմ: Ես կարող եմ բացակայել մարմնով[1], բայց Հոգով ես միշտ քեզ հետ եմ[2]: <u>Ես ձեզ հետ եմ՝ սիրո մեջ ձեզ բոլորիդ միավորելու</u> ու ձեր մտքերը արթնացնելու համար, որպեսզի ձեր հասկացողությունը կատարյալ զարգանա, մինչև որ դուք իսկապես ճանաչեք Իմ խորհուրդները, որոնց մեջ պահված են Իմաստության ու Գիտության բոլոր գանձերը[3]: Օրհնյա՛լ, ես ուզում եմ, որ դու Իմ Աստվածության տեսանելի պատկերն ունենաս, այսինքն, որ դու Ինձ ջերմորեն սիրես՝ մեծ զգուշավորությամբ ու ճշգրտորեն ենթարկվելով Իմ Օրենքին: Հետևապես, քիչ-քիչ ես կուղղեմ նրանց, ովքեր վիրավորում են Ինձ ու հալածում են քեզ: Ես կհիշեցնեմ նրանց, թե ինչպես են նրանք ուրացել: Ես նրանց հնարավորություն կտամ ապաշխարելու: Քաջալերվի՛ր, ես ասում եմ քեզ հետևյալը, աղջիկս. ով որ կլսի, թող լսի, ով որ չի լսի, թող չլսի...

ΙΧΘΥΣ

Հուլիսի 20, 1990

Օ՜ Տեր, թող Քո Հոգին
հանգչի ինձ վրա ու <u>ողողի</u> ինձ:

Թող որ օրհնեմ քեզ: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Թող Իմ Հոգին հանգչի քեզ վրա: Ես՝ Տերը, կպարգևեմ քեզ այն ապահովությունը, որի

[1] Մարմին և ոսկոր:
[2] Հիսուս շատ քնքշորեն փորձում էր մխիթարել ինձ:
[3] Կող. 2:2-3

համար դու ախ ես քաշում: Ամուր մնա հավատիդ մեջ, քանզի Ես հավատարիմ եմ Իմ Խոստմանը:

Ես Իմ Սիրո Օրենքը կդնեմ ձեր ազգերի սրտերում և երբեք չեմ հիշեցնի նրանց մեղքերը: Ես կհիշեցնեմ նրանց Իմ Ջոհաբերության մասին, Ես կհիշեցնեմ նրանց Իմ Խաչի մասին, Եսկհիշեցնեմ նրանց, որ Ես Աստված եմ: Իսկ դո՛ւ, դո՛ւ, որին փնտրել ու գտել եմ, մատուցիր Ինձ քո սիրտը, և Ես կընդունեմ այն, որպես բուրումնավետ մի խունկ: Հավատարիմ մնա Ինձ ու տենչա այն ամենին, որ Ես եմ, որպեսզի ջնջես այն ամենը, որ դու ես: Ոչնչացրո՛ւ այն ամենը, որ դու ես, կլանելով այն ամենը, որ <u>Ես</u> եմ:

Աղոթե՛ք հոգիների դարձի համար, աղոթե՛ք խաղաղության, սիրո ու միաբանության համար: Հիշե՛ք, Իմ Սերն Անսահման է, մի Սեր, որ ոչ ոք չի կարող լիովին հասկանալ երկրի վրա:

Ես օրհնում եմ ձեզ: Դարձեք դեպի Ինձ ու օրհնեք Ինձ:

ΙΧΘΥΣ

Հուլիս 21, 1990

(Ես մի տեսիլք տեսա. որ դուրս էի նայում պատուհանից: Ցերեկ էր: Հանկարծ երկիրը սկսեց ուժգնորեն ցնցվել ոտքերիս տակ: Գետինը վեր ու վար էր անում: Երկրաշարժը ութ բալանոց էր, այն չէր դադարում: Ես պատուհանից նայեցի երկնքին, որովհետև այն կորցնում էր իր լուսավորությունը: Ես նայում էի վեր՝ երկնքին, մինչդեռ այն վայրկյան առ վայրկյան մթնում էր, մինչև լրիվ գիշեր տիրեց: Հետո Ես տեսա, որ աստղերն ընկնում են, կամ ավելի ճիշտ, դրանք սուրում էին արևելյան հորիզոնից դեպի արևմտյան հորիզոն: Թվում էր, դրանք հեռանում էին երկնքից: Հետո ցնցումը դադարեց ու սարսափելի խավար տիրեց: Ես տեսա, որ իմ սենյակում մի աղոտ լույս կար: Ես դուրս նայեցի պատուհանից, բայց ընդամենը երեք կամ չորս տուն կար ամբողջ քաղաքում, որ լույս ուներ:)

Հուլիսի 22, 1990

(Պատգամ մեր Սուրբ Մորից):

Խաղաղություն ձեզ, սիրելի զավակներս: Ես ձեր Սուրբ Մայրն եմ, որ խոսում եմ ձեզ հետ, և Ես արդեն իսկ շնորհակալ եմ, որ եկել եք այստեղ Մեզ լսելու: Բացեք ձեր սրտերն ու հասկացեք ամեն մի բառը, որ ասում ենք ձեզ:

Հիսուս ձեզ Իր Սերն ու Խաղաղությունն է տալիս: Նա առաջնորդում է ձեզ դեպի Փրկություն, իսկ Ես ուղարկված եմ Նրա կողմից՝ Իր Վերադարձի համար ճանապարհ պատրաստելու: Ես նորից գալիս եմ, որպեսզի Նրա համար ճանապարհ բացեմ: Մի՛ զարմացեք, փոքրիկներս, Ես գիտեմ, որ դժվար է ապրել անապատում, բայց Ես գալիս եմ Ձեզ մոտ, շատ ազգերի մեջ, որպեսզի պատրաստեմ ձեզ: Ես ուսուցանում եմ ձեզ

արդարության կանոնները՝ ձեզ ազատ դարձնելու համար: Խնդրեք Աստծուն, որ առաջնորդի ձեր քայլերը Իր Պատվիրանների ճանապարհով: Թող ձեր սերը մխիթարի Նրան: Եղեք Նրա Բալասանը: Զգացե՛ք, որ սիրված եք Իմ կողմից, զգացե՛ք, որ սիրված եք Իմ Որդու կողմից:

Այսօր Ես ձայն եմ տալիս հիվանդներին, ասելով նրանց. զավա՛կս, ճնշված մի զգա, Ես՝ քո Սուրբ Մայրը, սիրում եմ քեզ, բայց աղոթիր Տիրոջը, և Նա կբժշկի քեզ: Զղջալով, ձեր սրտերը մաքրեք բոլոր անմաքրություններից, ապա բացեք ձեր սրտերը Աստծո առաջ, ու Նա կողողի ձեզ Իր Սիրով: Անդադար աղոթեք:

Մի՛ ննջեք: Աղոթեք սրտով և եղեք գարնանային վարդերի նման, ինչպես Ամենաբարձրյալին առաջարկված մի ծաղկեփունջ: Թող ձեր աղոթքները լինեն Նրա Գահին հասնող բուրումնավետ խունկի նման: Թույլ տվեք հիշեցնեմ ձեզ, թե ինչ է փափագում Ամենաբարձրյալը. Նա փափագում է ձեր սիրտը: Առաջարկեք Նրան ձեր սիրտը և թույլ տվեք, որ Նա ձեր առաջնորդը լինի այն ճանապարհին, որ Ես պատրաստում եմ ձեզ համար:

Զավակնե՛րս, Սերը ձեր դռների մոտ է: Գովաբանեք Աստծուն ու սիրեք Նրան: Աստված Սեր է: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: Ես օրհնում եմ նաև բոլոր նրանց, ովքեր փակված են բանտում: Ես նրանց եմ հղում Իմ խաղաղությունը, որը հոսելու է նրանց սրտերում, ինչպես մի գետ:

Վասո՛ւլա, համբերատար եղիր, Իմ Որդին Հիսուս քեզ այնքան է սիրում, որ արտասվում է սիրուց: Երբեք մի՛ կասկածիր, զգա Նրա Սերը: Քո օրը միշտ ավարտիր Նրան փառաբանելով: Իմ խաղաղությունը քեզ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Սուրբ Մայր, մենք, մեզ:

Հուլիսի 27, 1990

(Հռոդոս)

Բացատրիր ինձ, իմ Հիսուս,
ինչպե՞ս հարգեմ Քո Օրենքը
ու հետևեմ դրան,
և ինչպե՞ս կատարեմ
Քո Պատվիրանները:
Առաջնորդիր ինձ
Քո Պատվիրանների ճանապարհով:
Ես ուզում եմ խորհրդածել
Քո պատվիրանների վրա:
Ներիր իմ մեղքերն ու հանցանքները:

Խաղաղություն քեզ: Նախքան քո մի բառ ասելը, Ես արդեն ներել եմ քեզ[1]: Եթե չլիներ Իմ Անսահման Ողորմությունը, սիրելիս, դու արդեն զգացած կլինեիր քեզ վրա Իմ Արդարությունը, քանզի այն ամենը, որ ունես, չարություն ու թշվառություն է:

[1] Հիսուս հասկացավ իմ մտադրությունները:

Արի՛... Ինձ հեռվից մի՛ նայիր... Ավելի մոտեցիր Ինձ: Ես փայփայում եմ քեզ Իմ Աչքի Լույսի պես: Փառաբանի՛ր Ինձ, սիրելիս, փառաբանիր Ինձ, քանզի Իմ Անունը Սուրբ է:

(Ավելի ուշ):

(Վանականներից մեկը արտասվեց, երբ Ես բացատրեցի նրան, թե Հիսուսն ինչպես է տանջվում):

Արի ու ականջդ դիր Իմ Կրծքին, որդի՛ս, և լսիր Իմ Սրտի Զարկերը: Ամեն մի զարկը մի հոգու կանչ է, աղաչանք է մի ժպիտի համար, մի մտքի համար... Քո արցունքներն Ինձ վրա մի՛ հեղիր, որդիս, այլ քո եղբայրների, քո քույրերի, ովքեր մեռած են ու քայքայվում են. ո՛չ Ինձ վրա, որդիս, ո՛չ Ինձ վրա... Աղոթի՛ր նրանց համար, որ Հայրս նրանց ուղարկի Իմ Հասկացողության Հոգին, այլապես, ինչպե՞ս կարող են նրանք դարձի գալ:

Վասո՛ւլա, տուր նրանց այն աղոթքը, որ քո Սուրբ Մայրն է քեզ տվել: Եվ Ես խնդրում եմ, որ նրանք ամեն օր ասեն այդ աղոթքը:

Ե՛կ, Աստվածաշունչն իրագործվում է... Ես՝ Տերը, խունկի խորաններ եմ կառուցում այն խորանների վրա, որոնք պետք է լինեին, բայց մնացին քանդված ու ամայացած, քանզի չկար մեկը, որ ձեռք տար դրանց կամ լուսավորեր դրանք:

Հուլիսի 28, 1990

(Հոոդոս)

Հիսո՛ւս, ես պատված եմ թմբիրի քուլաներով ու թվում է դուրս չեմ գալու այս թմբիրից: Ես մի թշվառ ողորմելի եմ...

Ես գիտեմ, բայց ինչո՞ւ Ինձանից օգնություն չես խնդրում: Եվ ինչո՞ւ ես ուրիշ տեղ նայում: Եթե աչքերդ Իմ կողմը դարձնես, կտեսնես Իմ Լույսը, և Ես կշնորհեմ քեզ այն բաները, ինչ խնդրում ես: Դու թշվառ ես, բայց Ես կարող եմ ապահովել քեզ: Բավական է ասեմ. աճի՛ր, ծաղկի՛ր, ու քո անապատում Ես կարող եմ դետեր հորդեցնել: Զավա՛կս, մի՞թե Ես քեզ երբևէ կլքեմ:

Ո՛չ, Տեր իմ, երբեք:

Այդ դեպքում ինչո՞ւ չկարողացար հավատալ Իմ Ներկայությանը[1]: Չե՞ս հասկանում, որ Ես անընդհատ փնտրում եմ քո աչքերը: Ես քեզ Իմ հարսն եմ դարձրել, այդպես չէ՞:

Այո՛, Տեր իմ, այդպես է:

[1] Կեսօրին, երբ ես տեսել էի Նրան իմ հոգու աչքերով:

Ուրեմն ժամանակ առ ժամանակ Ինձ նայիր, սա քո պարտականությունն է: Լսի՛ր, Վասուլա, Ես քո կարիքը չունեմ, ինչպես գիտես, Ես Ինքս Ինձանով բավարարված եմ: Ես քեզ բազմաթիվ անգամներ ասել եմ, որ Ես Ամենակարող եմ, բայց Ես սիրում եմ թուլությունը, քանզի Իմ Զորությունը լավագույն ձևով է դրսևորվում այդ դեպքում:

Փոքրի՛կս, քո կյանքի ամեն մի օր, ամեն մի ժամ ու ամեն մի վայրկյան Ես քեզ հետ եմ: Ես միշտ ձեր մեջ եմ... Հիշի՛ր, Ես Իմ Մոր հետ եմ:

Այո՛, Տեր իմ:

Կրկնիր Ինձնից հետո. մենք, մեզ, Հավիտյանս Հավիտենից:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 30, 1990

(Հռոդոս - Սուրբ Նեկտարիոսի մենաստան):

(Ես այս մենաստանում մնացի հինգ օր՝ ծոմապահության ու անխոսության հինգ օր: Միայն աղոթում ու խոկում էինք:)

Տե՞ր:

Ես եմ, երբե՛ք մի կասկածիր: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը, մտիր Իմ Սիրտը:

(Երբ Տերն ասաց. «Ես քեզ եմ տալիս Իմ Խաղաղությունը», ես տեսա, որ Երկինքը բացվեց, և Հիսուս մեծ սիրով ընդունեց ինձ Իր Սրտում:)

Ժամանակը սուղ է, ժամերը թռչում են... արի Ինձ մոտ ու լսիր ինչ եմ ասում Հռոդոսի եկեղեցուն:

Նայե՛ք Իմ Ձեռքերի Ափերին, Իմ Կողին ու Իմ Ոտքերին, զգացե՛ք Իմ Վերքերը... Նրանք, ովքեր չեն խմի Իմ Վերքերից, կկորչեն. նրանք կթոշնեն ու կչորանան: Ես եմ Փրկությունը: Ուրեմն ինչո՞ւ է այս ժողովուրդը վախենում Ինձ ըմպել ու Ինձ ճաշակել: Նրանք օգնություն են կանչում, բայց ոչ ոք չի գալիս ըմպելու և ճաշակելու Ինձ ու բժշկվելու: Մի՞թե չեմ ասել, որ դուք Իմ Վերքերի միջոցով եք բժշկվելու: Ուրեմն, ընտրեք ձեր քայլերը այս անծայրածիր անապատում ու թույլ տվեք Ինձ լսել ձեր ոտնաձայնը: Եկե՛ք ու ստացեք Ինձ:

Այս ժողովուրդը չի կարողանում հասկանալ Իմ Սիրո Կանչը: Ես Երկնքից նայում եմ ներքև, անհամբեր փրկելու ձեզ բոլորիդ: Ես Իմ Սիրտն եմ հեղում ձեր առջև: Ես Իմաստությունը ուղարկում եմ մինչև ձեր տան շեմը, որպեսզի սովորեցնեմ ձեզ, որ Իմ Թեման ՍԵՐՆ է, բայց որևէ մեկը ականջ ունի՞, որ լսի: Ես մի Նոր Սիրո Երգ եմ ստեղծել ձեզ համար, և Իմ Սուրբ Անվան սիրույն, փոքրիկներս, Ես իջնում համանում եմ մինչև ձեզ: Ես՝ ձեր Քրիստոսը, գալիս եմ, որպեսզի առևանգեմ ձեր սիրտն Իմ Սիրո

Երգով և ուրախացնեմ Իմ Սիրտը: Մի՛ ասեք. ես փնտրեցի Նրան, բայց չգտա, ես կանչեցի Նրան, բայց Նա պատասխան չտվեց, ես սպասեցի Նրան, բայց Նա չեկավ: Սիրելիներս, Ինձ փնտրեք սրտի պարզությամբ, և դուք կգտնեք Ինձ: Կանչե՛ք Ինձ ձեր սրտի խորքից, և Ես կպատասխանեմ ձեզ: Բացե՛ք ձեր ականջները ու սրտերը, ու դուք կլսեք Իմ Վերադարձի Ոտնաձայները: Թզենին հասել է, և դուք շուտով կուտեք դրա պտուղը: Եկե՛ք, քանզի ձեզանից շատերը շեղվել են ճշմարիտ ճանապարհից ու վախենում են ընդունել Ինձ՝ իրենց մեղքերը դաղտնի պահելով իրենց կրծքում: Ազատագրե՛ք ձեզ, խոստովանության գնալով: Իսկապես զղջացեք ու ծոմապահություն արեք, որ ստանաք Ինձ մաքրության ու սրբության մեջ: Իմ դուռը միշտ բաց է ձեզ բոլորիդ համար, սիրելիներս: Ես հայտնի եմ նրանով, որ անտարբեր չեմ թշվառների ու հիվանդների կարիքների հանդեպ: Ուրեմն մի՛ փորձեք ձեր Աստծուն ու մի՛ կասկածեք Իմ Անսահման Ողորմությանը:

Այո՛, այն գործիքները, որ Ես օգտագործում եմ Իմ Խոսքը ձեզ փոխանցելու համար, չնչին են, անարժան ու հասարակ: Նրանք, որոնց մասին աշխարհը կարծում է, որ հասարակ են ու արհամարհանքի արժանի, հենց նրանք են, որոնց Ես ընտրում եմ, ովքեր ընդհանրապես ոչինչ են, որպեսզի դիմակազերծ անեմ նրանց, ովքեր ամեն ինչ են[1]: Իմաստությունը տրված է սոսկ մանուկներին և ոչ թե նրանց, ովքեր իրենց իմաստուն են կոչում: Լսե՛ք Ինձ, Իմաստությունը առեղծված կմնա նրանց համար, ովքեր պարծենում են ու իրենց առաքինի ու սուրբ են կոչում: Արդարև, Ես կոչնչացնեմ իմաստունի իմաստությունը և ավելի խիստ կլինի նրա ստացած դատավճիռը:

Ես մտադիր եմ նրանց մեջ թողնել մի խոնարհ ու համեստ ժողովուրդ, որ կկարողանա Ինձ ասել. «Ալելուիա, Ալելուիա», օր ու գիշեր, գիշեր ու զոր՝ միանալով Իմ հրեշտակների օրհներգին: «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տեր Աստված Ամենակալ, որ Էր, որ Է և որ գալու է»[2]: Ու ոչ ոք չի խանգարի նրանց, քանզի Ես կհեռացնեմ նրանց միջից բոլոր այդ հպարտ պարծենկոտներին: Դրա համար ասում եմ ձեզ. մինչև Իմ ժամը գա ձեզ վրա՝ փնտրեք խոնարհություն, փնտրեք թշվառություն: Դո՛ւք, որ հետևում եք Իմ Պատվիրաններին ու սովորեցնում եք ուրիշներին հետևել դրանց, խոնարհեցրե՛ք ձեզ:

Մի՛ դատեք ու դուք չեք դատվի: Մի՛ դատապարտեք, որպեսզի Ես էլ չդատապարտեմ ձեզ: Ապաշխարե՛ք, ու Ես կհատուցեմ ձեզ այն տարիների համար, որ անց եք կացրել ճնշելով Իմ Հոգին: Ես մտադիր եմ այս վերջին օրերին առաջնորդել այս չարամիտ ու անբարո դարաշրջանը բարության երասաններով, սիրո առաջնորդող թելերով, ցած խոնարհվելով բոլորիդ՝ Իմ Ուսելիքը ձեզ տալու համար: Ես միշտ Ապաստան կլինեմ թշվառների ու կարիքավորների համար: Եկե՛ք, բոլորդ հենվեք Իմ Կրծքին, ինչպես Հովհաննեսը, Իմ աշակերտը, ու լսեք Իմ Սրտի Զարկերը: Այդ զարկերը ձեզ կբերեն Իմ Ոտքերի մոտ, Իմ Խաչի ներքո:

Ես՝ Տերը, ձեր մեջ եմ, և Ես օրհնում եմ բոլորիդ, թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին: Հիշեք այս ամենը, որ Ես տվեցի ձեզ այսօր, և ցույց

[1] Ա. Կոր. 1:28
[2] Հայտ.4:8

տվեք Ինձ ձեր սերը՝ Ինձ հետևելով: Իմ Աչքերը ձեզ վրա են. եղեք մեկ:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 31, 1990

Տե՛ր իմ, վերակենդանացրու ինձ,
ինչպես որ խոստացավ Քո Խոսքը:
Հեռու տար ինձնից
թմրության այս հոգին,
որ ճնշում է ինձ:
Դեռ որքա՞ն պետք է
կրեմ այս հոգին: Ներշնչիր իմ մեջ
մի մնայուն խանդավառության հոգի:
Մի զրկիր ինձ Քո Սուրբ Հոգուց:

Վասո՛ւլա, ես միայն սպասում եմ, որ ողորմած լինեմ քո հանդեպ, բարձրացնեմ քեզ ու դնեմ Իմ Սուրբ Սրտում: Եթե դու միայն զգոն լինեիր Իմ Պատվիրանների հանդեպ, քո հոգին մշտապես Իմ Հոգու հետ կլիներ: Դու բողոքում ես, դու տնքում ես, մինչդեռ Իմ Սուրբ Սիրտը Սիրով ու Խղճահարությամբ է հեղեղվում քո հանդեպ, հոգի: Գործածիր այն ամենը, ինչ տվել եմ քեզ:

Հիշի՛ր Իմ Ներկայությունը, ջանք թափիր: Հեռու մնա այն ամենից, որ ես չեմ: Քո աչքերը հառած պահիր Ինձ վրա, միայն Ինձ վրա: Դու Իմ Խոսքի անոթն ես, բայց հեռու մի քշվիր առաջին իսկ հոսանքից: Ես կանչել եմ քեզ ու պսակվել քեզ հետ, քեզ Իմը դարձնելով: Եթե դու պիտի անցնես այդ հոսանքների կամ՝ փոթորիկների միջով՝ ես քեզ հետ եմ. դրանք քեզ արմատախիլ չեն անի: Եթե պիտի քայլես լժերի բնում, քեզ չեն խայթի: Ես քո ճանապարհը հեշտացրել եմ: Ես ամեն անգամ կբարձրացնեմ քեզ, երբ փշերի ու մացառների հանդիպես: Ես հասկանում եմ քո թուլությունն ու ապշեցուցիչ անկարողությունը: Դրա համար է, որ Իմ համբերատարությունը այսքան մեծ է քո հանդեպ: Ուրեմն, մի՛ համարձակվիր ասել. «Ո՞ւր է Քո Հոգին»: Իմ Հոգին միշտ քեզ հետ է, զավա՛կս:

Լսի՛ր, անհամբեր մի եղիր աղոթքի մեջ...: Մի՛ ասա. «Աստված հաշվի կառնի իմ թուլությունը, Նա Ամենողորմ է», ու հետո շարունակիր մեղք գործել: Դրա փոխարեն բաց արա ականջներդ ու պատրաստակամ լսիր Իմ բոլոր ասածները: Ես քեզ կտամ Իմ Լույսը, որ հասկանաս անգամ խորաթափանց ասացվածքները, քանզի Ես քեզ հետ եմ, որպեսզի քեզ փրկեմ...

Պատրաստիր իմ սիրտը,
սիրելի Տեր,
որպեսզի անվերջ փառաբանեմ Քեզ:
Ես շրջապատված եմ
փորձություններով,

որոնք ինձ մոռացնել են տալիս
Քո Ներկայությունը:

Հիմա տեսնո՞ւմ ես: Այժմ դու խելքի ես գալիս... Դու սկսում ես հասկանալ, թե ինչ ողորմելի վիճակում է քո հոգին: Քո մեջ լույս է վառվել, ուրախացի՛ր, հոգի, ուրախացիր: Քանզի, եթե ես կանգնած չլինեի կողքիդ, դու ամենևին կանգնած չէիր լինի: Սրանից հետո ուշադրություն դարձրու ու երբեք թույլ մի տուր, որ սիրտդ թուլանա: Միշտ արի Ինձ մոտ օգնության համար: Սա, Իմ Վասուլա, քո վերջին անկումը չէ: Ես՝ Տերը, կբարձրացնեմ քեզ ամեն անգամ, երբ դու ընկնես՝ ամեն անգամ ավելի մեծ խղճահարությամբ ու սիրով:

Օրհնիր Ինձ ու սիրիր Ինձ:

Ես օրհնում եմ Քեզ, Տե՛ր,
Դու, որ հայրաբար հոգ տարար ինձ:
Եթե իմ ոտքերը կրկին շեղվեն
Քո Ճշմարիտ ուղուց,
շտապիր ինձ փրկելու:

Վստահիր Իմ մեծ Ուժին, վստահիր Իմ Սիրուն: Ավելի հաճախ եկ այսօր Ինձ մոտ: Սերը քեզ մոտ է, Ես օրհնում եմ քեզ:

(Ավելի ուշ, նույն օրը):

(Ես դիտողություն արի ինչ-որ բանի մասին, որը պարծենկոտության երանգ ուներ):

Աղջի՛կս, նկատի առ Իմ կատարած Աշխատանքը քեզ վրա: Մի՛ պնդիր, որ գիտես: Մարդը չգիտի, թե ինչ է սերը, եթե Ես այն չտամ նրան: Իմաստունն անգամ չի կարող հայտնաբերել այն, չնայած կարող է ասել, որ գիտի: Ես հրաման եմ տալիս երկնքից, և Իմ Խոսքը սլանում է դեպի երկիր: Ես ուղարկում եմ Իմ Խոսքը՝ ջերմացնելու ու հալեցնելու սառած սրտերը: Բարձրացրո՛ւ քո հոգին ու փնտրիր Իմ Ջանազանության ու Ճանաչողության Հոգին: Չնայած քո մեղքերին, Ես կկանգնեմ քո կողքին, որ քեզ հնարավորություն տամ վկայելու այս ամբողջ պատգամը, որպեսզի ամեն ոք լսի:

Օգոստոս, 1990

(Սուրբ Նեկտարիոսի մենաստան)

Տե՛ր իմ, Ճշմարտության
Սուրբ Հոգի, Ես գիտեմ,
որ իմ այստեղ լինելը
պատահական չէ:
Ճշմարտության Սուրբ Հոգի, Դո՛ւ,
որ առաջնորդեցիր

ու առաջնորդում ես ինձ,
ի՞նչ պետք է ասեմ
այս երկու միանձնուհիներին,
որ ապրում են այստեղ:
Ի՞նչ պետք է անեմ նրանց համար:
Խնդրում եմ,
նախ Աստվածաշնչից խոսիր ինձ հետ:
Ես գիտեմ, որ Դու
ինձ հուսախաբ չես անի:

(Ես մի պատահական էջ բացեցի Աստվածաշնչում ու հայացքս ընկավ Հռոմ. 16:1-2):

Ես ձեզ եմ հանձնում մեր քրոջը, Իմ եկեղեցու սարկավագուհուն: Նրան և իր ընկերակցին, Ինձ հետ միացած, սրբերին արժանավայել ընդունելություն ցույց տվեք, և օգնեք նրան ամեն ինչում, ինչի կարիքն ունի: Նա և իր ընկերակիցը (իրեն աղոթքներով, Ինձ ուղղված իրենց գովերգներով, իրենց ապաշխարություններով, խոնարհությամբ ու զոհաբերություններով) հոգ են տարել շատ հոգիների համար:

(Ապա Հիսուս Իր Գլուխը շրջեց ինձանից, նայելով տարածության մեջ: Կարծես միայնակ խոսում էր, այդ երկու միանձնուհիների փոխարեն: Նա ասաց).

Ես աշխատել ու ջանք եմ թափել, հաճախ անքուն մնալով: Ես քաղցած ու ծարավ եմ եղել և հաճախ քաղցի մատնված՝ սիրո բացակայության պատճառով: Ես մնացել եմ ցրտում՝ սիրո պակասից: Ուստի, դո՛ւ, որ կարդում ես Ինձ, դու հոգ կտանե՞ս Իմ մասին, Իմ գառների մասին: Մի՛ ասա. մի անհանգստացրու ինձ, թե ես չեմ կարող գնալ այնտեղ ու Քեզ տալ ինչ որ ինձնից խնդրում ես:

(Ապա Հիսուս կրկին շարունակեց, ինչպես այս պատգամի սկզբում):

Այսօր Ես ասում եմ քեզ, որ կարդում ես Ինձ, որ Իմ օրհնությունները տրվում են յուրաքանչյուրին, ով բավարարում է այս Տան կարիքները, քանզի այն ամենը, ինչ որ դու անում ես, անգամ ամենաքիչը, անում ես Ինձ համար: Ուրեմն, օրհնյալ լինես դու, որ կլսես Ինձ ու կկատարես Իմ Հոր Կամքը: Հետևաբար, ամեն ոք, որ կբավարարի այս տան կարիքները, մեծապես կպարգևատրվի Իմ Հոր կողմից, որ Երկնքում է: Չնայած դրան, զգուշացիր նրանցից, ովքեր որևէ դժվարություն կամ անախորժություն կխրախուսեն: Խուսափիր դրանցից: Ամեն ինչ արա հավատարմությամբ ու հաստատակամությամբ, այն Խաղաղությամբ, որ Ես տալիս եմ քեզ:

Ամեն ինչ կատարիր սիրով, հանուն Սիրո: Այն, ինչ խնդրում եմ, Սեր է: Միշտ հիշիր սա:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Տե՞ր:

Ես եմ: Իմ Վասո՛ւլա, դու ուրա՞խ ես, որ Ինձ հետ հանդիպում ես այս ձևով:

Օ՜, այո՛, Տեր, գովյալ լինի Քո Անունը:

<u>Ավելի շատ աղոթիր</u>. սա է Իմ խորհուրդը: Ես մշտապես սպասում եմ քո աղոթքներին, Ես անընդհատ օրհնում եմ քեզ:

(Ապա Հիսուս խնդրեց ինձ բացել Աստվածաշնչի մի պատահական էջ ու գրել այն, ինչ ցույց կտա):

<u>Արթուն մնացեք և աղոթք արեք, որ փորձության մեջ չընկնեք</u>:

(Սա Մատթ. էր 26:41):

Ես Քո հզոր Ուժի կարիքն ունեմ:

Լսի՛ր Ինձ. <u>աղոթի՛ր</u>, մի՛ քնիր:

Կարո՞ղ եմ խոկալով նայել Քեզ:

<u>Աղոթի՛ր</u>:

(Ես աղոթեցի):

Նորից աղոթիր Ինձ:

Թող որ իմ հոգին
համաքայլ լինի
Քո Հոգու հետ. Ամեն:

(Հիսուսն արագ ինձ հուշեց իմ աղոթքի սկիզբը՝ այն աղոթքը, որն Ինքն էր ուզում: Ես կարծում եմ, որ Նա ինձ թելադրեց այն):

Զավա՛կս, սիրելիս, Ես ինչ չեմ անի քեզ համար... Ես մեծացրել ու դաստիարակել եմ քեզ: Հասկացիր, թե դու հիմա ում ես պատկանում: Երջանիկ եղիր:

Ես ավելի քան երջանիկ եմ:

<u>Ուրեմն ցույց տուր դա</u>: Ես կբացեմ քո բերանը, և դու կխոսես[1]:

Բոնիր աղվեսներին մեզ համար,
նրանց, որոնք քանդում են

[1] Ես հանկարծակի բերանիցս թռցրի հետևյալ խոսքերը:

Քո Խաղողի այգիները,
որ ծաղկում են Հիմա:

Մի Փառավոր Գահ է իջնելու շատ շուտով: Ես Հայտնի կդարձնեմ նրանց[1] թաքստոցները, և նրանց ցեղը կոչնչացվի, կմարի: Հաշիվ տալու ժամանակը շուտով կավարտվի, միայն սպասիր ու տես... Ես մտադիր եմ երկիրը թարմացնել սնուցանող ուտելիքով, և Իմ մնացորդներին լցնել Իմ բարիքներով: Ես ձեզ սիրում եմ Հավիտենական սիրով, և Ես հաստատուն եմ քո Հանդեպ Իմ սիրո մեջ: Թույլ տուր Ինձ, դո՛ւ, որ կարդում ես Ինձ, ուսուցանելու քեզ: Եվ եթե դու ընդունես Իմ ուսուցումը, Ես քեզ ետ կբերեմ դեպի Ինձ: Ես կորդեգրեմ ու կսովորեցնեմ քեզ Իմ Օրենքը: Ինչպես մայրն է մխիթարում իր երեխային, Ես կմխիթարեմ քեզ:

Սերը փափագում է սիրո: Վասո՛ւլա, հաճույք պատճառիր Ինձ և աղոթիր Հավատամքը՝ նայելով Ինձ:

Այո՛, Տեր իմ:

Ես լսում եմ:

(Ես աղոթեցի):

Լա՛վ, արի՛, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տեր, մենք, մեզ:

Օգոստոսի 4, 1990

(Մարգարեություն)

Ծաղի՛կ, խաղաղություն քեզ:

~ Կրակը, Արդարադատությունը շուտով իջնելու է: Եկեղեցին պիտի վերակենդանանա: Երկիրը կրակի պիտի մատնվի:

ΙΧΘΥΣ

Օգոստոս 5-ից - 29-ը, 1990

(Հռոդոս)

(Տասը Պատվիրանները)

Տե՞ր:

[1] Աղվեսների՝ մասոնների:

Ես եմ: Ապավինի՛ր Ինձ, մտածիր Իմ Սիրո մասին:

Ես մենակ եմ քայլել դեպի Խաչը տանող Ճանապարհով: Իմ ժողովրդի մարդկանցից ոչ մեկը չկար Ինձ հետ: Նրանք Ինձ ատում էին առանց որևէ պատճառի: Ինձ բռնեցին բռնի ուժով և օրենքով: Տառապանքն ու նվաստացումն էր Իմ հաղթանակի պարգևը:

Ես Ինձ վրա վերցրի ձեր մեղքերը ու թույլ տվեցի, որ հենց այն ձեռքերը, որ Ես էի ստեղծել, հարվածեն ու խեղեն Ինձ: Բայց այս Վերքերի միջոցով է, որ դուք բժշկվեցիք... Ուրեմն, օրհնիր նրանց, ովքեր հալածում են քեզ: Մի՛ դատիր նրանց, օրհնիր նրանց ու աղոթիր նրանց համար: Այսօր Ես սա ասում եմ ձեզ արցունքն Աչքերիս: Կան շատերը, որ Ինձ ու Իմ Խաչին թշնամաբար են վերաբերվում: Բոլոր նրանք, ովքեր քարոզում են Իմ Ավետարանը, իրականում նրանցից շատ քչերն են աշխատում Ինձ հետ ու Իմ Թագավորության համար:

Ամբողջ Իմ Օրենքը ամփոփված է մեկ պատվիրանում.

ՍԻՐԵԼ

Եթե նրանք հետևեին Իմ Օրենքին ու ամեն օր քննեին իրենց վարքը, կհայտնաբերեին, որ իրենք Իմ Պատվիրանների համաձայն չեն ապրում: Ու եթե նրանք Ինձ ասեն. «Ինչպե՞ս է, որ չենք հետևում Քո Պատվիրաններին: Հապա ինչպե՞ս պետք է հետևենք Քո Պատվիրաններին: Մի՞թե կարող ենք սովորեցնել Քո Պատվիրանները, երբ Դու ասում ես, որ մենք չենք հետևում դրանց»: Բայց և այնպես, դուք <u>չեք</u> հետևում դրանց, քանզի <u>սերը</u> բացակայում է ձեր մեջ: <u>Իմ Պատվիրանների Թագը Սերն է</u>: Սիրել՝ նշանակում է ապրել համաձայն Իմ Պատվիրանների: Մի՛ եղեք Կայենի նման, որ սեր չուներ Իմ հանդեպ ու պարզապես հոգևոր նախանձից դրդված կտրեց իր եղբոր կոկորդը...:

(Երբ ես հասկացա Աստծո մտադրությունը՝ մեկնաբանելու Իր Տառը Պատվիրանները, ես վախեցա, որ անկարող կլինեմ գրի առնել ամեն ինչ):

Օ՛, Աստված, ես երբեք չեմ կարողանա դա մենակ անել:

Ո՞վ ասաց քեզ, որ մենակ ես անելու այդ գործը: Դու պետք է գրես յուրաքանչյուր բառը, որ Ես պիտի ասեմ քեզ: Մի՛ շտապիր: Ես կարող եմ քեզ թելադրել մաս առ մաս, եթե ուզում ես:

Տե՛ր, իմ կարողության համաձայն թելադրիր:

Դու մոռանում ես Իմ Կարողության մասին, որ կարող է լցնել քո կարողությունը, արի՛... Մանակցիր Իմ Գործին, որ հոգիներ ձեռք բերես: Դու հասկանո՞ւմ ես Իմ Ծարավը: Ես ծարավի եմ հոգիների, ծարավի եմ ձեր սրբությանը, ծարավի եմ ձեր դարձի գալուն: Ես ծարավի եմ, Իմ սիրելի զավակներ, այն ամենին, որ Ես եմ ու Իմ Արտացոլումը: Ես ծարավի եմ վերադարձնելու ձեզ ձեր աստվածայնությունը: Ես ծարավի եմ փոխադարձ սիրո: Ես ծարավի եմ նորոգելու ձեր սկզբնաղբյուրն ու միությունը Իմ Սուրբ Անվան մեջ, ձեր սկզբնաղբյուրը, որը բխում է Իմ

Գերագույն Սիրուց:

Ես ծարավի եմ պաշտամունքի, բայց տեսեք, թե ինչ եք դարձել ու ինչ եք արել: Օ՜, դարաշրջան: Դուք դադարել եք Ինձ պաշտելուց ու փոխարենը բազմապատկել եք ձեր կեղծ աստվածներին: Դուք չեք ենթարկվում Իմ Պատվիրաններին, ո՛չ, դուք չեք հետևում Իմ Օրենքին: Թշվառության դարաշրջան, այս ինչ ես դարձել: Դուք հազվադեպ եք Ինձ կանչում, որ պաշտեք Ինձ: Դուք Ինձ չեք կանչում սիրուց դրդված, ոչ էլ այլևս պատվում եք Ինձ, առաջարկելով ձեր ծառայությունները:

Ես կանչում էի ձեզ ձեր կյանքի բոլոր օրերին, որ հիշեցնեմ ձեզ, թե ով է ձեր Երկնավոր Հայրը և դեպի ում կողմը դուք պետք է շրջվեք: Բայց ձեր սիրտը տրամադրված չէ դեպի Ինձ, ոչ էլ ձեր միտքն է պատրաստակամ, քանզի դուք գերադասեցիք կտրել այն պորտալարը, որ միավորում է մեզ ու մեզ մեկ է դարձնում, որպեսզի ստեղծեք ձեր սեփական օրենքը ու ձեզ անաստված անվանեք:

Փառասիրությամբ տարված, դուք ուզում եք ձեզ Ինձ հավասար համարել: Դուք հիմա ասում եք. «Ես Աստծուն հասար եմ, և ես նստած եմ Նրա Գահին, քանզի իմ իմաստությունը մեծ հարստություն է դիզել ու մեծ իշխանություն աշխարհի վրա»: Առ ու տուրի ձեր հմտությունը այնպիսին է, որ բազմաթիվ ազգեր հետևում են ձեր օրինակին: Այո՜, դուք անշուշտ հետևեցիք առաջին դայթակղեցնողի՝ օձի խորհրդին, որն այնպես խորամանկորեն դրդեց ձեր նախնիներին ուտել արգելված պտուղը, հավատացնելով նրանց, թե աստվածների նման կլինեն[1]: Դուք կարծեցիք, որ ձեր աչքերը կբացվեն, բայց իրականում կուրացաք ու մինչ օրս պայքարում եք, որ կտրեք ձեզ Կյանք ու Սրբություն տվող այս Լարը, կարծելով, թե կգտնեք ձեր ազատությունը: Բայց այն, ինչ գտաք՝ Մահ է:

Օ՜, թշվառության դարաշրջան: Դուք ծառայում եք Անմտությանը՝ Իմաստության փոխարեն: Դուք ծառայում եք վիշապին՝ ձեր Սրբին ծառայելու փոխարեն: Դուք չեք հետևում Իմ Պատվիրաններին, ո՛չ, դուք չեք ենթարկվում ձեզ համար սահմանած Իմ Օրենքին, դուք անընդհատ փորձում եք Ինձ: Քո դարաշրջանը, զավա՛կս, մեղավոր է Աստծո հանդեպ իր ծանր անարգությամբ, քանզի այն չի պահպանում Իմ Օրենքը: Նրանք անուշադիր են Իմ Պատվիրանների հանդեպ, որոնցում նրանք կարող են Կյանք գտնել, եթե հետևեն դրանց: Ազգ ազգի ետևից չեղվել են Իմ բոլոր տասը Պատվիրաններից՝ ըմբոստությանը ավելացնելով անարգանք Աստծո հանդեպ: Վիշապի իշխանությամբ, սև գազանը[2]՝ երկրորդ գազանի, այլ կերպ ասած կեղծ մարգարեի հետ միասին, ամեն մի բարձր բլրի վրա ու յուրաքանչյուր տարածվող ծառի տակ, աստվածուրացության այուներ են բարձրացնում իրենց համար, որպեսզի զավթեն աշխարհն ու հանգցնեն այն փոքր լույսը, որ մնացել է այնտեղ: Իր յոթ գլուխներից յուրաքանչյուրի վրա գազանը դրել է իր սեփական աստվածներին ներկայացնող կուռքեր: Այս կուռքերը, վիշապի զորությամբ, դրված են բարձր տեղերում:

Հետո նրանք այդ բարձր տեղերի համար քահանաներ են նշանակել իրենց սեփական շարքերից, ովքեր հիմա սպասավորություն են անում Իմ

[1] Ծննդ. 3:5
[2] Հայտ. 13

Սրբավայրի սրտում: Եվ նրանք չեն պաշտում Ինձ: Նրանք ձևացնում են, որ այդպես են անում: Նրանք դուրս են գալիս բարձրաստիճան հոգևորականների դիմակով[1], երկրպագելով ու սպասարկելով հենց իրեն՝ գազանին և նրա արտադրանքին, որը հարմարեցված է աշխարհին: Նրանք երկրպագում են օտար ու անկենդան աստվածների, ճիշտ այնպես, ինչպես անցյալում վարվեցին իրենց հայրերը: Նրանք արհամարհում են բարեպաշտությունը և հրաժարվում են Իմ Պատվիրաններից, զավա՛կս: Նրանք գնում են սովորեցնելու բոլոր ազգերին պաշտելու մահկանացու մարդու պատկերը[2], անարժեք մի նմանակում, Իմ Հավիտենական Փառքի փոխարեն... Ա՛հ, ինչպես են նրանք[3] ծանրորեն ընկած Ինձ վրա: Վիշապի կողմից իրենց տրված իշխանությամբ[4], նրանք գագաթնակետին են հասցնում իրենց անողոք ատելությունն ու վրեժի հոգին, պատերազմելով սրբերի ու բոլոր նրանց դեմ, ովքեր իրենց կլանին չեն պատկանում և ովքեր հրաժարվում են երկրպագել գազանի արձանին[5]:

Դրա համար, ես ասում եմ ձեզ. երանելի են նրանք, ովքեր հավատում են Ինձ ու պաշտում են Ինձ: Երանելի են նրանք, ովքեր հետևում են Ինձ: Երանելի են նրանք, ովքեր հավատում են, որ Իմ Խոստումը կատարվելու ճանապարհին է, քանզի այդպիսիների ճակատի վրա կդրոշմվի Իմ Սիրո Հոգոցը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մեկը ծառայում է Ինձ, նա պետք է հետևի Ինձ[6]: Օ՜, դարաշրջան, մի՛ վախեցեք դեպի Ինձ վերադառնալուց: Վերադարձե՛ք Ինձ մոտ, քանի դեռ ժամանակ կա, քանզի Իմ Օրը մոտ է: Եվ ինչպե՞ս պետք է դուք դիմավորեք այն:

Ասված է. Ինձանից բացի ուրիշ աստվածներ մի ունեցեք: Մի՛ հետևեք ուրիշ աստվածների, ձեզ շրջապատող ազգերի աստվածներին: Բայց մարդիկ խախտել են Իմ Հոր առաջին Պատվիրանը, բացեիբաց հայտարարելով իրենց ազատությունը սև գազանների միջոցով և նրանց քաջալերմամբ, որոնց գլուխների վրա շատերի արյունը կա:

Իմ Անունը զուր տեղը մի՛ արտասանեք. սա է հաջորդ պատվիրանը: Այժմ, ամբարտավան ազգերը հարձակվում են Իմ Սուրբ Անվան վրա, մարդիկ, որոնց համար ես ոչ մի նշանակություն չունեմ: Նրանց բերանները լեցուն են Աստծո հանդեպ անարգանքի խոսքերով և պատրաստ են շողոքորթել այլոց, երբ ինչ-որ նողկալի օգուտ են տեսնում դրա մեջ: Նրանք անիծում են Իմ Սուրբ Անունը, երբ վիճաբանում են: Նրանք հայհոյում են Իմ Աստվածության ու Իմ Սրբության դեմ: Եվ նրանք, ովքեր այսօր սպասավորություն են անում Իմ Եկեղեցում, բայց պտտվում են գազանի իշխանության շուրջը՝ պարծենալով, որ գիտեն Իմ Օրենքը, այդ հենց նրանք են, ովքեր զուր տեղը կանչում են Իմ Անունը:

Այդ նրանք են, ովքեր փակում են Երկնքի թագավորության դռները մարդկանց դեմքերին՝ ոչ իրենք են մտնում, ոչ էլ թույլ են տալիս ուրիշ ցանկացողներին մտնել: Նրանք «քարոզում են» դողության դեմ, բայց

[1] Կարդա Հուն. 30, 1989թվի պատգամը:
[2] Կեղծ Քրիստոսի:
[3] Աստված տվեց ինձ նրանվ անունը:
[4] Սև զանգվածներ:
[5] Կեղծ Քրիստոսի:
[6] Հետևել Քրիստոսին, նշանակում է նույնպես խաչվել:

իրենք Ինձանից հոգիներ են գողանում: Նրանք «արգելում են» շնությունը, մինչդեռ հենց իրենք են շնանում, քանզի հետևում են սև գաղանին ու նվիրված են նրան:

Նրանք ձևացնում են, թե արհամարհում են կուռքերին, մինչդեռ թալանում են Իմ Սրբավայրը: Ուստի, եթե այս սերունդը հայհոյում է Իմ Սուրբ Անունը և <u>անտեղի</u> օգտագործում է այն, դա արատներով հագեցած այն <u>թույլտվության</u> պատճառով է, որ ազատորեն տրվում է նրանց՝ հենց սև թիկնոց հագած այդ մարդկանց կողմից[1]: Սրբության ու արդարության արմատները ոչնչացնելը և անօրինությունն իր գագաթնակետին հասցնելը՝ նրանց նպատակն է: Սերո՛ւնդ,... Երբ ես վերադառ~նամ, մի՞թե ասելու եմ. ոչ մի բարի մարդ չի մնացել, չկա մեկը, որ հասկանա, մեկը, որ փնտրի Ինձ:

~ Ես ձեզ խնդրել եմ, որ <u>հիշեք սուրբ պահել Շաբաթ Օրը</u>, իսկ դուք հակառակն եք արել ձեր անմաքրությամբ, ու աղտոտել եք Այն նողկալի հաճույքներով ու գործերով, որով անպատվում եք ձեր սեփական մարմիններն ու մտքերը, քանզի դուք հանուն ստի հրաժարվել եք աստվածային Ճշմարտությունից և պաշտում ու ծառայում եք արարածներին՝ Ինձ ծառայելու փոխարեն: Ձեր անմաքրությունների համեմատությամբ Սոդոմն ու Գոմորը համարյա մեղքերից զուրկ են թվում: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ Օրը Ես ձեզ հետ կվարվեմ ավելի խիստ, քան վարվել եմ Սոդոմի ու Գոմորի հետ: Ձեր մեծամասնությունը չի պահում Շաբաթ Օրը: Ո՛չ, դուք չեք ենթարկվում, չեք ենթարկվում Իմ Օրենքին...

Աստվածաշունչն ասում է. «Պատվիր քո հորը քո ամբողջ սրտով, երբեք մի՛ մոռացիր քո մոր երկունքի ցավերը: Հիշի՛ր, որ քո ծնունդով պարտական ես նրանց: Ինչպե՞ս կարող ես վարձահատույց լինել այն ամենի դիմաց, որ նրանք արել են քեզ համար»:[2] Եվ դուք պարտավոր եք հետևել այս Պատվիրանին՝ <u>պատվիր քո հորն ու մորը</u>: Ինչո՞ւ են ձեզանից շատերը զարմանում, որ այդքան քչերն են հետևում այս Պատվիրանին: Անմիտ ու մեղավոր գաղափարները մոլորության առաջնորդեցին այս երեխաներին՝ պաշտելու սին առարկաներ՝ մանկությունից սկսած ծուլությամբ լցնելով նրանց հոգին: Շատ ծնողներ իրենց երեխաներին չեն տվել Իմ Հոգու այդ մշտահոս Աղբյուրը: Իմաստությունը ձայն էր տալիս նրանց օր ու գիշեր, բայց այս սերունդը արգելեց նրան, և օրեցօր ձեր երեխաները ավելի ու ավելի են հեռանում դեպի Ինձ առաջնորդող Ուղուց: <u>Եթե որևէ մեկը, երիտասարդ կամ ծեր, ընդունում է Ինձ որպես իր Աստվածը, նա կարտացոլի Իմ Պատկերը և, սիրուց դրդված, կենթարկվի ու կպատվի իր ծնողներին, այնպես, ինչպես կենթարկվեր ու կպատվեր Ինձ</u>: Բայց ամեն ինչ, որ հարմարեցված է աշխարհի բարքերին, փչացրել ու չեղել է այս մանուկներին գալու դեպի Ինձ: Սերը բացակայում է:

Շատ ծնողներ գանգատվում են իրենց երեխաների անհնազանդությունից, մինչ իրենք ճիշտ նույն բանն են անում Իմ նկատմամբ: Մի՞թե նրանք իսկապես կարող են հավակնել, որ ունեն լիառատ բարություն, հանդուրժողություն ու համբերատարություն: Եթե նրանք իսկապես ունենային այս բոլոր արժանիքները, իրենց երեխաները

[1] Մատթեոսի աղանդը:
[2] Սիրաք 7:29-30

նույնպես կունենային հնազանդության արժանիքը և կպատվեին իրենց երկուսին էլ: Բայց Ես ասում եմ ձեզ. այս սերնդի մտքերը դատարկ են: Ուստի, Խավարը եկել ու լցրել է նրանց, քանզի փիլիսոփա դառնալու պատկերը ավելի կարևոր է, քան Իմ Հավիտենական Փառքը:

Ապա, նրանց սրբության պակասը կլանվել է կրքով և հենց վաղ պատանեկությունից նրանք հրապուրվել են ու նվաստացրել իրենց սեփական մարմինները: Ձեր սերունդը արհամարհել է Իմ Պատվիրանները ու փոխարինել է Դրանք անարգալից ընդօրինակումներով: Եվ մինչև այսօր գազանի բերանից չար ու արատավոր արտադրանքներ են դուրս գալիս, որպեսզի մթագնեն ձեր երեխաների մտքերը և քարշ տան նրանց, որպես զոհերի, ուղիղ առյուծի երախը՝ գրավելով նրանց երիտասարդ մտքերը, որպեսզի պաշտեն առաջին գազանին ու ծառայեն մարդկանց կողմից ստեղծված աստվածների, մատուցելով նրանց այն պատիվն ու հարգանքը, որ Ինձ էր վերապահված, որով և արտացոլում են իրենց ծնողների վարքագիծը:

Ճշմարիտ եմ ասում ձեզ. նրանք, ովքեր չեն հնազանդվում Ինձ, և մերժում են ընդունել Իմ Պատվիրանները որպես ուղեցույց և փոխարենը անառակությունն են ընտրում, նրանց վերջում կրակ է սպասվում: Օ՜, երանի սրտով հնազանդներին. նրանք կատարելության կհասնեն: Ուստի, Ես ասում եմ ձեզ. անհնազանդ մի՛ եղեք Տիրոջ Վախի հանդեպ:

Սերո՛նդ, դուք գիտեք, որ Ես արգելել եմ ձեզ սպանել: Եթե դուք ինքներդ ձեզ Իմն եք համարում, և ինքներդ ձեզ համարում եք Իմ Եկեղեցու մի մասը ու քարոզում եք ընդդեմ սպանության, ապա ինչպե՞ս եք կարողանում սպանել: Մի՞թե դուք համարձակվում եք հաստատել, որ ճիշտ եք, և Դատաստանի Օրը Իմ առաջ կարող եք պնդել, որ անմեղ եք, երբ դուք դիզել եք դեռևս չծնված երեխաների ոճիրները: Ես Երկնքից դիտում եմ սարսափելի տեսարաններ: Ա՜հ, որքան եմ Ես տառապում, տեսնելով, թե ինչպես է արգանդը, որ ձևավորում է այս երեխային, մերժում ու մահվան է ուղարկում նրան՝ առանց անունի ու առանց ափսոսանքի: Նրան ձևավորող արգանդը այլևս չի հիշում նրան: Սրանց Ես ասում եմ.

«Դուք կարող եք սրել ձեր սուրը, բայց ձեր պատրաստած զենքը հենց ձեզ կսպանի: Հիմա դուք հղի չեք զավակով, այլ անօրինությամբ: Դուք Չարով կհղանաք և ծնունդ կտաք Ձախորդության: Դուք փոս եք փորել, խորացրել եք այն, որպեսզի ինքներդ ընկնեք ձեր իսկ ստեղծած ծուղակի մեջ: Ձեր չարությունը ետ կշրջվի ու կհարվածի ձեր գլխին և ձեր դաժանությունը կփլվի ձեր գլխին»[1]:

Եվ դու[2], դո՛ւ, որ Ինձ հավատարիմ ես համարվում և ամուր կառչում ես Իմ Անունից, Ես ամեն ինչ գիտեմ քո մասին: Այո՛, քեզ կենդանի ու բարգավաճ են համարում, մինչ դու այդպիսին չես: Դու մեռած ես ու քայքայվում ես: Ապաշխարի՛ր: Ես քեզ անհաշիվ հոգիներ եմ վստահել, բայց դևը առևտուր է արել քեզ հետ, որ փոխանակես նրանց իր ոսկով ու արծաթով: Այո՛, անշուշտ, Ես գիտեմ թե դու ինչպես ես ապրում հիմա: Դու ապրում ես ինչպես չնագայլերը[3] թաքնված որջերում[1], այդ

[1] Սաղմ. 7:12-16

[2] Այստեղ Հիսուս դիմում է դառան դիմակ հագած կեղծ մարգարեին:

[3] Նրանք, որ մի ժամանակ հավատարիմ էին Աստծուն, բայց «ծախվեցին» սատանային ու հետևում են գազանին:

որջերում, որոնց վրայով ես մի բաց ճանապարհ պիտի անցկացնեմ[2]: Ես հանկարծակի պիտի գամ քեզ վրա ու պիտի բացահայտեմ քո մերկությունը, և երբ Օրը գա, ես քեզ թույլ չեմ տա ուտել Կենաց ծառից: Ուշադիր լսիր: Դու քարոզում ես ընդդեմ սպանելու, մինչդեռ ինքդ սպանում ես Իմ Հոգին: Դու պարծենում ես Օրենքի մասին, բայց չես ենթարկվում դրան, քանզի դու չես հասկացել Իմ թաքնված մանանայի խորհուրդը: Ո՛չ, դու դեռ չես հասկացել Իմ հրաշագործ սնուցումները, ոչ էլ Իմ Պայծառակերպության խորհուրդը:

Ես խոստացել եմ ժամանակների վերջում ձեզ կենդանի պահել Իմ Երկնային Մանանայով: Պերգամոնի Իմ եկեղեցուն[3] ես ասել եմ. «Ով հաղթի, նրան թույլ կտամ, որ ուտի թաքցված մանանայից, և կտամ նրան սպիտակ քարը, որտեղ գրված է մի Նոր Անուն, որ ոչ ոք չգիտի, բացի նրանից, ով այն ընդունում է»:

Այսօր Ես ձեզ եմ առաջարկում այս մանանան, որ վերապահված է <u>ձեր</u> ժամանակների համար, մի Երկնային կերակուր, Իմ Հոգու սնունդը ձեր քաղցած հոգու համար: Ես ամբողջությամբ հեղում եմ Իմ Հոգին, որպեսզի լցնեմ ձեր ներքին անապատը, և Ես ձրիաբար առաջարկում եմ ձեզ Իմ երկնային մանանան, <u>քանզի սա աղքատների կերակուրն է</u>... Բայց դուք չեք հասկացել... Դրա համար դուք մերժում եք այն ուտել ու արգելում եք ուրիշներին, որ ուտեն: Ես արդեն փորագրել եմ Իմ Նոր Անունը «սպիտակ քարի» վրա, որը Հայտնի կլինի <u>միայն աղքատներին</u>: Դուք պնդում եք, որ խոնարհ ու աղքատ եք, մինչդեռ ո՛չ խոնարհ եք, ո՛չ էլ աղքատ: Ձեր հոգին դահ է բարձրացվել սատանայի հարստության մեջ:

- Ես աշխարհի թագավորների Տիրակալն եմ, և <u>Ես խնդրել եմ ձեզ պիղծ գործեր ու շնություն չանել</u>: Շնությունը սատանայի կողմից այնպես է նրբացվել, որ կորցրել է իր նշանակությունը, և՛ եկեղեցական միաբանություններում, և՛ աշխարհիկ մարդկանց մեջ: Իմ համբերությունը ձեր մեղքերի հանդեպ այժմ սպառվել է: Նրանք[4], ովքեր հետամուտ եղան սատանայի աստվածանարգ ուժերին, և որպես դրոշ բարձրացրին դրանք՝ Իմ Աստվածայնությունն ու Սրբությունը ու Իմ Սուրբ Զոհաբերությունը ջնջելու համար, Ես կասեմ նրանց. այդ ձեր մեղքով է, որ Իմ Անունը հիմա անարգվում է անաստվածների մեջ: Դուք պղծել եք Իմ Սրբավայրը, ձեռնադրելով ստոր կրքերով այլասերված մարդկանց: Բոլորը իրար նման արատավորված լինելով, նրանք չեն վախենում Ինձանից: Ուստի, եթե անաստվածներն այսօր շնություն են անում, և դա բնական են համարում, դա <u>այն լայն թույլտվության</u> պատճառով է Իմ Եկեղեցում, որ տրված է գազանի հրահանգներով, որի նպատակն է կեղծել Ճշմարտությունը:

Ինչպե՞ս է, որ դուք այդքան հեշտ մոռանում եք, որ ձեր մարմինները Իմ Մարմնի անդամներն են: Ես ուզում եմ ձեզ այլասերվածությունից զերծ տեսնել, քանզի ձեր մարմինները Իմ Սուրբ Հոգու տաճարն են: Ես՝ ձեր Աստվածը, կուզեի տեսնել, որ դուք սրբությամբ ապրեիք, քանզի Ես Սուրբ եմ: Արարչությո՛ւն, ընդունելով Ինձ, որպես քո Աստվածը, դու

[1] Մասոնների ժողովարանները:
[2] Այսինքն, Աստված կոչնչացնի այդ որջերը:
[3] Հայտ. 2:3-17
[4] Հիսուս կրկին անդրադառնում է նրանց, ովքեր երկրպագում են գազանին:

կկարողանաս ընդունել Իմ Օրենքը, և այդպիսով հետևել դրան: Բայց ձեզանից շատերը չկարողացան անել դա ու հիմա ձեր դիակները աղբակույտի են վերածել այս անապատը... Ես ձեզ չեմ պատվիրել մեղք գործել: Ուրեմն, ինչո՞ւ եք օգտագործում ձեր ազատությունն այն ձևով, որ որոգայթ դառնա ձեր հոգու համար: Աղոթե՛ք Ինձ որպեսզի Ես կարողանամ ներել ձեզ, հակառակ դեպքում դուք տանուլ կտաք: Ամուսնությունը պետք է հարգվի ու սուրբ պահվի:

Ես եմ Տերը, և Ես ձեզ կանչել եմ, որ դուք ապրեք բարեպաշտության, խաղաղության, սիրո ու սրբության կյանքով: Ես ձեզ հավիտյան Ինձ մոտ եմ կանչել: Ես կանչել եմ, որ ձեզ նշանեմ Իմ Քնքշության ու Սիրո հետ, և մինչև որ դուք չհասկանաք, որ Իմն եք ու Իմ նշանածը, դուք չեք դադարի մեղք գործելուց ու Ինձ դավաճանելուց: Իմ Սուրբ Անվան սիրույն, Ես չեմ դադարի ու կդիմեմ ամեն մի միջոցի, որ ձեզ խելքի բերեմ, եթե անգամ ստիպված լինեմ ձեզ անապատ քարշ տալ և այնտեղ Իմ Սուրբ Սիրտն ու Նրա Անհատակ Գանձերը ձեզ ցույց տալ, որպեսզի դուք հասկանաք ձեր հոգու մերկությունն ու ողորմելիությունը: Հետո, ինչպես մագաղաթյա մի գալար, Ես բաց կանեմ ձեզ համար Իմ ամբողջ Գիտությունը, որպեսզի դուք հրաժարվեք ձեր մեղքից: <u>Ես ձեզ բժշկելու զորություն ունեմ</u>: Ուրեմն, եկեք ու ապաշխարեք:

<u>Իմ Սուրբ Հոգին խնդրում է ձեզ չգողանալ</u>: Եթե դու քեզ Իմն ես համարում ու գիտես Իմ Օրենքը և հավակնում ես, որ Ճշմարտության մեջ ես, հապա ինչո՞ւ չես սովորեցնում ինքդ քեզ գողություն չանել, դո՛ւ որ քահանա ես ձեռնադրել քեզ, ինչպես և ուրիշներին[1]: Բայց դու թույլ ես տվել ինքդ քեզ գնվել և ճկուն ու աննկատ ձևով գազանին հետևել, որ սովորեցրեց քեզ անօրինության դրոշներ բարձրացնել: Դու աշխարհին ես պատկանում, և Ես շատ բան ունեմ քեզ դատապարտելու համար: Քո լեզուն հպարտորեն պնդում է, որ դու մեծ գործեր ես անում, բարի գործեր, ազնիվ գործեր՝ դառան դիմակով խաբելով անգամ ընտրյալներին: Բայց Ես ասում եմ քեզ. դու Ինձ չես խաբի, քանզի Ես գիտեմ, որ քո դառան դիմակի տակ դու մարդկության համար զարհուրելի աղետ ես թաքցնում, այնպիսին, որ աշխարհը երբևէ չի տեսել: Քո նպատակն է <u>վերացնել Իմ Ջոհաբերությունը</u>[2] և փոխարինել այն Անարդարությամբ և <u>Ստով</u>:

<u>Դու քեզ ներկայացնում ես իբրև մի Մարգարե, որպեսզի չընդունես Իմ սեփական մարգարեներին</u>: Զե՞ս վախենում, որ քո անունը կջնջվի կենաց գրքից, քանզի ինչ որ դու անում ես, միլիոնավոր հոգիներ ես գողանում Ինձնից ու նրանց դեպի մահ առաջնորդում: Քո հրաշքները շատերին են տպավորում այսօր և անգամ ավելի շատ կտպավորեն այն օրը, երբ դու կազատվես Իմ մարգարեներից, հաղթելով նրանց[3] քո սրով: Հիմա դու զինվել ես մինչև ատամներդ, որ պատերազմես նրանց դեմ, քանզի նրանց վկայությունը անհանգստացնում է քո լսողությունը, իսկ նրանց հնազանդությունն Իմ Պատվիրանների՝ առավել ևս: Նրանք չեն հետևել ո՛չ քեզ, ո՛չ գազանին: Նրանք հենց այն մարդիկ են, ովքեր Ինձ

[1] Գազանի հետևորդը՝ կեղծ մարգարեն:
[2] Դան. 12:11
[3] Հայտ. 11:7

հավատարիմ են մնացել և երբեք թույլ չեն տվել, որ իրենց շուրթերից սուտ հնչի[1]: Նրանք Իմ Աբելներն են: Աշխարհի աչքում դու նրանց հաղթող կերևաս, բայց քո ուրախությունը շատ կարճ կտևի, քանզի, ինչպես կայծակի հարված, ես թույլ կտամ, որ Իմ Արդարությունը հաղթի քեզ: Ես կիջնեմ, որ նրանց մեջ կրկին կյանք փչեմ[2], հարություն տալով նրանց հենց քո աչքերի առաջ, ինչպես լույսի այուներ Իմ Սրբարանում...

Հետո Երկինքը կբացվի ու դու կտեսնես Ինձ[3]: Եվ եթե դու Ինձ հարցնես, թե ինչո՞ւ Քո շքեղ հանդերձները պատված են որդան կարմիր բծերով, Քո հագուստներն ինչո՞ւ են կարմիր, ասես հնձանում խաղող ես տրորել[4], ես կասեմ քեզ. ես հնձանում մենակ եմ ճմլել խաղողը: Իմ ժողովրդի մարդկանցից ոչ մեկը չկար Ինձ հետ: Իմ զայրույթի մեջ ես ոտքով տրորել եմ Իմ թշնամիներին: Նրանք երբեք չեն դադարել Ինձ արհամարհելուց և զայրացնելուց:

Ես եկել եմ երկրի երեսից ջնջելու մարդկային բոլոր ուսմունքներն ու կանոնները, որոնք թունավոր կերակուր էին ձեզ բոլորիդ համար և պարտադրված էին սրով՝ Իմ Աստվածայնությունն ու Իմ Սրբությունը պղծելու համար: Սա կլինի վերջին ժամանակների առաջին ճակատամարտը:

Ես եմ՝ Վեհապանծ Հեծյալը[5], Ես եմ՝ Խոսքը:

Եթե այս աշխարհը սգում է, տոչորվելով և հյուծվելով, և նրա ծառերը պտուղ չեն տալիս, իսկ նրանց տերևները թոշնում են, դա այն պատճառով է, որ դուք չեք ենթարկվում Իմ Օրենքին: Մի՞թե ես չեմ ասել. դուք չպետք է սուտ վկայություն կամ ցուցմունք տաք: Մինչդեռ Իմ Սրբավայրի կենտրոնում, որտեղ գտնվում է գեղարդի սայրը[6], որտեղ Իմ Աբելների հետ կան նաև Կայեններ, այս Պատվիրանին նույնպես չեն հետևում: Կայենի նշանակած քահանաները հիմա ուղարկվում են աշխարհի չորս ծայրերը, ո՛չ Ինձ վկայելու իբրև Հարուցյալի, և ո՛չ էլ վկայելու Իմ Զոհաբերության մասին, այլ որպեսզի Իմ Խոսքը դատապարտեն՝ կապկելով Աստվածաշունչը, և ուսուցանեն բոլոր ազգերին մի Կեղծ Քրիստոս, կեղծ էկումենիզմի (ընդհանրականության) ներքո՝ աշխարհին տալով Բանապաշտության և Բնապաշտության մի բաժին, մի պիղծ կերակուր, մի Սուտ: Ես ասում եմ ձեզ. նրանք հաղթանակող չեն լինի, ոչ էլ հավիտյանս կղեկավարեն: Արդարությունը կհաղթի:

Ես թույլ չեմ տա, որ դու բարգավաճես հավիտյան, քանզի Ես ամեն ինչ գիտեմ քո մասին, և թե ինչպես ես դու, վիշապի զորությամբ, քո սեփական քահանաներին նշանակում, նրանց բարձր պաշտոններ տալով, որպեսզի դուրս մղես ու հաղթես Իմ սեփական քահանաներին: Ես ասում եմ քեզ. ժամանակը համարյա լրացել է: Ես քեզ քարշ կտամ քո բարձր տեղից, որպեսզի դու ընկնես Իմ սեփական քահանաների, Իմ սրբերի ու Իմ հրեշտակների ոտքերը, և Ես կստիպեմ քեզ ընդունել, որ դու գազանի ստրուկն ես... Շուտով, շատ շուտով, Ես անակնկալ կգամ ձեզ մոտ, ինչպես մի գող, և կտապալեմ Սուտը, ձեր Կեղծ Քրիստոսին, ու Ճշմարտությունը

[1] Հայտ. 14:5
[2] Հայտ. 11:11
[3] Մեծ Նշան, Աստծո Որդու Նշանը (Մաթ. 24:30)
[4] Ես. 63:2-3
[5] Հայտ. 19:11
[6] Կեղծ մարգարեն:

կրկին իր տեղը կդնեմ: Ես շուտով կգամ փշուր-փշուր անելու այդ կեղծ պատկերը, որ դուք ստեղծել եք Ինձանից ստիպելով բոլոր ազգերին պատվել այն[1]: Ո՛չ, դուք հաղթող չեք լինի:

Իմ դուստրեր և ուստրեր, դուք, որ աննպատակ թափառում եք այս անապատում, վերադարձեք դեպի Ինձ, ապաշխարե՛ք: Այլևս մեղք մի՛ գործեք: Ես գիտեմ, որ դուք շատ անգամ սխալ վկայություն եք տվել սիրո բացակայության պատճառով: Բայց դուք՝ ձեր Հովվի պաշտպանության տակ չէիք, Իմ հանդեպ ձեր թշնամության պատճառով, որպեսզի ձեզ ուսուցանվեին Իմ հրահանգները: Բայց և այնպես, չնայած ձեր ամբարտավանությանն ու Իմ հանդեպ ունեցած թշնամությանը, Ես ողբագին կանչում եմ ձեզ: Ես ձեզ սիրում եմ և Իմ ներումն արդեն շնորհված է ձեզ: Վերադարձե՛ք դեպի Ինձ, ինչպես որ կաք, ու Ես կզարդարեմ ձեզ Իմ Աստվածայնությամբ: Ես ձեզ կվերադարձնեմ ձեր աստվածայնությունը՝ Իմ Սուրբ Անվան սիրույն:

~ Դուք ուզում եք վկայե՞լ: Վկայեցեք Իմ մեծ Սիրո ու Ողորմության մասին: Դուք ուզում եք վկայությո՞ւն տալ: Վկայություն տվեք Իմ Անունով՝ իբրև Հիսուս Քրիստոսի, Աստծո Սիրեցյալ Որդու և Փրկչի: Սիրեցե՛ք մեկդ մյուսին, ինչպես Ես եմ ձեզ սիրում: Ուրախացե՛ք, դո՛ւք, որոնց տրվել է Իմ թաքցված մանանան, և ովքեր արդեն ստացել են Իմ Սիրո Կնիքն իրենց ճակատին:

~ Երկնից Ես ձեզ պատվիրել եմ չցանկանալ ո՛չ ձեր մերձավորի ունեցվածքը, ո՛չ էլ նրա կնոջը: Աշխարհականից սկսած մինչև քահանաները, չեն պահել նաև այս Պատվիրանը: Իմ Զոհաբերությամբ, Ես բացահայտել եմ Իմ Սերը երկրի յուրաքանչյուր արարածի հանդեպ, և այս Զոհաբերության միջոցով տվել եմ ձեզ հավիտենական կյանք և Իմ Սիրո Պատգամը: Ձեզանից շատերն են քարոզում սեր, ներողամտություն, խոնարհություն, համբերատարություն, սրբություն կրկին ու կրկին, բայց մինչև այսօր ձեզանից շատերը պատրաստ են սպանելու, երբ չեն ստանում այն, ինչ ցանկանում են: Դուք շարունակում եք թունավոր նետեր արձակել մեկդ մյուսի վրա, որովհետև չունեք այն, ինչ որ Ես տվել եմ ձեր մերձավորին: Իմ Աբելի ժամանակից ի վեր մինչ օրս, այս մեղքը անընդհատ կրկնվում է:

Առաջին մարդը, ով ցանկացավ իր եղբոր ունեցվածքը, Կայենն էր, բայց որքա՜ն ավելի շատ Կայեններ կան այսօր, և որքա՜ն ավելի շատ՝ Եսավներ: Մղված լինելով հարմարավետությունից և ոչ այլ բանից, նա հրաժարվեց անդրանիկ զավակ լինելու իր իրավունքից՝ ընկնելով ուրացության մեջ: Ինչո՞ւ չհետևել Աբելի օրինակին ու սուրբ լինել: Սիրել, նշանակում է ապրել սրբորեն և համաձայն իմ Պատվիրանների: Եթե դուք, որ գիշեր ու ցերեկ գովերգում եք Ինձ, բայց ցանկանում եք ձեր մերձավորի ունեցվածքը, Ես խնդրում եմ ձեզ ապաշխարել: Եթե դուք հարցնեք Ինձ. «Ես ինչպե՞ս կարող եմ ցանկանալ իմ մերձավորի ունեցվածքը, ես, որ Քեզ եմ նվիրաբերել իմ ունեցվածքը, իմ կյանքը և ամեն ինչ, ինչպե՞ս կարող եմ ցանկանալ նրա ունեցվածքը», Ես կասեմ ձեզ. ձեր հոգին ցանկանում է ձեր մերձավորի հոգին, և հենց այն շնորհները, որ Ես տվել եմ նրա հոգուն: Դևը ծուղակ է լարել ձեր հոգու համար. վայր չընկնեք: Որտեղի՞ց Իմ Տան

[1] Հայտ. 13:16

մեջ առաջին անգամ ծագեցին այս պատերազմներն ու ճակատամարտերը ձեր միջև, եթե ոչ գլխավորապես հոգևոր նախանձից: Կայենը ցանկացավ մի բան, որն ինքը չստացավ, ուստի նա սպանեց Աբելին: Եսավը ցանկացավ մի բան և հրաժարվեց առաջնեկի իր իրավունքից, որ ստանա այն: Դուք մի ձգտում ունեք, որը բավարարել չեք կարողանում, և դրա համար, կամ անտեսում եք ձեր մերձավորի ուրախությունը, որ նրան բավականություն չպատճառեք, կամ էլ դուրս եք գնում՝ պատրաստ սպանելու:

Ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե ձեր սրտում նախանձի դառնություն, կամ որևէ եսասիրական ձգտում ունեք, երբեք մի՛ արդարացնեք ձեզ, կամ, մի՛ ծածկեք Ճշմարտությունը ստերով, քանզի այնտեղ, որտեղ որ նախանձ կամ փառասիրություն գտնեք, կգտնեք նաև տարաձայնություն, կեղծավորություն ու սառնություն: Մի՛ շարունակեք մեղք գործել, ապաշխարե՛ք: Եվ մի ընկեք նրանց ազդեցության տակ, ովքեր կեղծ մարգարեի կողմից են նշանակված ու սատանայի տան անդամներն են: Մի՛ լսեք նրանց:

Ես շուտով ձեր մեջ կիջնեմ Իմ Գահով: Ուրեմն եկեք ու ապաշխարեք, քանի դեռ ժամանակ կա: Եկե՛ք, դուք, որ անվճռական եք ու տատանվում եք բարու ու չարի միջև, և դուք, որ ձեր մերձավորի տունն եք սողոսկում, որպեսզի գերեք հիմար կանանց, որոնք ծանրաբեռնված են իրենց մեղքերով և հետևում են մի մոլություն, մոլության հետևից՝ փորձելով ուսուցանել իրենց, բայց երբեք չեն կարողանում հասնել Ճշմարտության իմացությանը[1]: Հասկացե՛ք, թե որքան խղճալի եք դուք երևում, և սխալ մի ըմբռնեք Իմ հանդիմանությունները: Հասկացե՛ք, թե ինչպես եմ ձեզ սիրում: Աշխատեք Իմ Փառքի համար և մի նայեք ո՛չ ձախ, ո՛չ աջ: Քանզի եթե ձախ նայեք, կտեսնեք անկուշտ դայլերի, որոնք պատրաստ են հարձակվելու ձեզ վրա ու ձեզ պատառոտելու, իսկ եթե աջ նայեք, կտեսնեք մի փոս, որ փորվել է ձեզ համար, որպեսզի ընկնեք նրա մեջ: Ուրեմն ուրախ եղիր, սերունդ, ինչ որ տվել եմ քեզ, և կքաջք, ինչպես Ես եմ կիսում քեզ հետ:

Իմ Կրակն անխուսափելի է և, ա՜հ... ձեզանից շատերն այնքան անպատրաստ են լինելու, քանզի ձեր դարաշրջանը չի հավատում: Նրանք չեն պաշտում Ինձ, նրանք հույս չունեն ու չեն սիրում Ինձ: Ձեր սերունդը, Ճշմարտությունն ու Իմ Պատվիրանները փոխարինել է հայհոյությամբ: Սերը բացակայում է ձեր միջից: Դուք սիրո կյանքով չեք ապրում, ոչ էլ հասկացել եք, թե ինչ է նշանակում. «Աստծո հանդեպ վախը Իմաստության Սկիզբն է»: Եթե դուք երկյուղեք Ինձանից, դուք օրհնյալ եք: Եթե դուք երկյուղեք Ինձանից, դուք կարող եք կատարելության հասնել: Եթե դուք երկյուղեք Ինձանից, Ես կհարբեցնեմ ձեզ Իմ քաղցր Գինով և կկշտացնեմ ձեզ Իմ պտուղներով: Եթե դուք երկյուղեք Ինձանից, դուք կապրեք խաղաղությամբ: Եթե դուք երկյուղեք Ինձանից, Իմաստությունը կգա մինչև ձեր դռների մոտ: Եթե դուք երկյուղեք Ինձանից, դուք ջերմեռանդորեն կենթարկվեք Իմ Պատվիրաններին, մի գիծ անգամ չփոխելով Դրանց մեջ:

Ուստի, Ես խորհուրդ եմ տալիս ձեզ բոլորիդ չապրել երկակի սրտով: Ներարկեք ձեր հոգում Իմ Աստվածային Շնորհը հիմա, քանի դեռ ժամանակ

[1] Բ Տիմ. 3:6-8

կա: Ապաշխարե՛ք քանի դեռ ժամանակ կա: Վերադարձեք Ինձ մոտ, քանի դեռ ժամանակ կա: Մի՛ կուտակեք մեղքը մեղքի վրա:

Վա՜յ այն անհնազանդ հոգիներին, ովքեր փակում են իրենց ականջները այս վերջին նախազգուշացումների դեմ: Ի՞նչ եք անելու Իմ Վերադարձին: Ես հայտնի եմ, որպես Հավատարիմ ու Ճշմարիտ[1], և Ես ասում եմ ձեզ. Արդարությունը կհաղթի: Մի՛ շփոթվիր, զավակս, տարակուսած մի՛ մնա այն ամենից, ինչ տվել եմ քեզ գրելու, քանզի կանխասացվել է, որ ձեր օրերում Իմ Եկեղեցին պետք է մատնվի Իմ յուրայիններից մեկի կողմից, որն Իմ ամենամոտ բարեկամն էր, ճիշտ ինչպես Հուդան, և Իմ Եկեղեցու ուրացությունը գալու է Իր միջից: Ես պիտի մատնվեմ նրանց կողմից, ովքեր կիսում էին Իմ Կերակուրը, ովքեր կապված էին Ինձ հետ, ովքեր խմում և ուտում էին Ինձ հետ:

Բայց շատ շուտով ամեն ինչ, որ ծածուկ էր, հայտնի կդառնա և այն, ինչ Ես ասել եմ առակներով ու փոխաբերություններով, կպարզաբանվի: Ես կբացահայտեմ Իմ այլաբանություններն ու առակներն աղքատների համար: Նախքան այս սերնդի անցնելը, Իմ Կարողությամբ ու Իմ Փառքով Ես կհաղթեմ Կեղծ Մարգարեին: Ամեն ինչ, որ ասում է Աստվածաշունչը, պետք է կատարվի՝ ընդհուպ մինչև ամենաչնչին մանրամասնությունը: Սա է պատճառը, որ Ես գրի եմ առել ամեն ինչ, որպեսզի այս Պատգամները քննելուց հետո, դուք տեսնեք իսկության դրոշմը ամեն մի տառում, և հասկանաք, որ սրանք Իմ Սեփական Խոսքերն են, որ Իմ Շնորհով տրված են ձեզ բոլորիդ: Ես եկել եմ կենդանացնելու սիրո այս առկայծող կրակը, քանի դեռ կեղծ Մարգարեն լրիվ չի հանգցրել այն...

(Հիսուս լաց եղավ):

... Ես լաց եմ լինում, այո՛, լաց եմ լինում: Նա ապրում է Իմ Տանը և Ինձ անուշահոտ նվիրաբերություններ ու զոհաբերություններ մատուցելու փոխարեն, դրանք փոխարինում է ամեն տեսակ չար ձևերով, որոնք առաջարկվել են նրան չարի կողմից՝ անմաքրությամբ, անառակությամբ, անարդարությամբ, Իմ Օրենքին անհնազանդությամբ, ցոփությամբ ու Իմ մարգարեների՝ Իմ Ամենահարազատ յուրայինների արյամբ հարբելով... Նրա բերանից անդադար դուրս են գալիս պոռոտախոսություններ ու հայհոյանքներ՝ ուղղված աշխարհի չորս ծայրերը: Այդ նույն բերանից դուրս են գալիս նաև կեղծ օրհնություններ ու ճշմարիտ անեծքներ: Ես ամեն ինչ գիտեմ նրա մասին: Ես նրան գիտեմ և՛ ներսից, և՛ դրսից, և Ես ասում եմ ձեզ. նա երբեք չի հասնի հանգստի վայրը: Ես՝ Տերը, քեզ տեսիլքներ կտամ, զավա՛կս, նրա մասին, ով իր վրա շատերի արյունն է կրում, և նրանց մասին, ովքեր երկրպագում են նրան:

Արթուն կաց, անընդհատ աղոթելով, որ հաստատակամորեն Իմ կողքին կանգնելու ուժ ունենաս: Լսի՛ր Ինձ, այս Ապստամբի մեղքերը հասել են մինչև Երկինք, բորբոքելով Իմ ողջ Արդարությունը, ինչպես նաև մի Անսահման Տխրություն Իմ Հոգում, քանզի Ես ստիպված եմ դատելու նրան և իր ողջ տոհմին: Իմ Հայրը նրանց ստեղծեց հաճույքով ու մեծ Սիրով, և Ես սիրել եմ նրանց ու զոհաբերել Ինքս Ինձ, որ փրկեմ ոչ միայն

[1] Հայտ. 19:11

արդարներին, այլ նաև՝ անարդարներին: Ես Իմ Կյանքը տվեցի նրանց համար, բայց դրա փոխարեն, նա և իր խումբը, դուրս եկան Իմ դեմ, լիակատար գիտակցությամբ, ոչնչացնելու իրենց հավատը...

(Հիսուս կրկին լաց եղավ...)

... և դրժելու Իմ Ուխտը հավիտյանս հավիտենից... Նրա նպատակն է ծայրից ծայր աղավաղել Աստվածաշունչը և Իմ Խոսքը, Ճշմարտությունները, Իմաստությունը ու Իմ Խաչի լեզուն վերածել ծնծղաների աղմուկի, բանական և փիլիսոփայական տեսության՝ կապկելով Իմաստությունը և այս սին ուսմունքներով սնել բազմաթիվ մարդկանց ու առաջնորդել նրանց դեպի մահ:

~ Իր պոռոտախոս բերանով նա կապկում է Բարի Լուրը, նա կապկում է Իմ Հարությունը և Իմ ողջ Աստվածությունը: Ա՜հ, քո առևտրի ժամանակը շուտով կլրանա: Վաճառականները, որոնք քեզ հետ առևտուր էին անում և քեզ լավագույն որակի ապրանք էին մատակարարում, կխորտակվեն, և բոլոր մարդիկ կսարսափեն տեսնելով քո կործանումը:

Աղջի՛կս, կարդա Եզեկիել 28~ը:

«Հպարտությամբ տարված, դու ասացիր Աստված եմ ես, ես նստած եմ Աստծո գահին, ծովերով շրջապատված: Չնայած մարդ ես դու, ոչ թե Աստված, դու քեզ Աստծուն հավասար համարեցիր: Դու ավելի իմաստուն ես հիմա, քան Դանիելը, չկա քեզ նման իմաստուն մեկը: Քո իմաստությամբ ու քո խելքով դու քեզ համար մեծ հարստություն ես դիզել, դու ոսկու ու արծաթի կույտեր ունես քո գանձարաններում: Այսպիսին է քո առևտուր անելու հմտությունը: Քո հարստությունը շարունակ աճել է, և դրանով քո սիրտը ավելի մեծամիտ է դարձել: Քանի որ ինքդ քեզ Աստծուն հավասար ես համարում, շատ լավ, ես պատրաստվում եմ օտար ազգեր բերելու քո դեմ, ամենաբարբարոս ազգերին:

Նրանք թուր են իջեցնելու քեզ վրա, քո գեղեցիկ իմաստության վրա և կորստյան են մատնելու քո փառքը: Նրանք քեզ գցելու են փոսը, և դու դաժան մահով ես մեռնելու, շրջապատված ծովերով: Մի՞թե նորից պատրաստվում ես ասել. ես աստված եմ, մարդարե, երբ քեզ սպանողները քո դեմ ելնեն: Ո՛չ, դու մարդ ես, և ոչ թե՝ Աստված: Քեզ սպանողների մագիլներում դու կմեռնես, ինչպես մի անաստված, օտարների ձեռքով:

Դու մի ժամանակ կատարյալ իմաստության նմուշ էիր, լի իմաստությամբ, կատարյալ գեղեցկությամբ: Դու դրախտում էիր, Աստծո պարտեզում, Իմ Սրբարանի Կենտրոնում, բայց քո տգնաջան առևտուրը քեզ բռնությամբ ու մեղքով է լցրել: Դու քո իմաստությունը ոչնչացրել ես հարստությանդ պատճառով, քո անհաշիվ մեղքերով, քո առևտրի խարդախությամբ, դու պղծել ես Իմ Սրբավայրը»:

Հետո կարդա Հայտնություն 18~ը:

~ Հիմա կայացվում է այս աշխարհի դատավճիռը, հիմա այս աշխարհի իշխանը շուտով պետք է տապալվի: Երկրորդ գազանը, այլ կերպ ասած, Կեղծ Մարգարեն, «Քահանայապետը», Գեղարդը, չնագայլերը, բոլորը մեկ են ու նույնը: Այդ նա է, որ զինվել է մինչև ատամները, որպեսզի

պատերազմի Իմ Օբենքի[1] և Իմ մարգարեների[2] դեմ: Նա և իր խումբը այն չնազայլերն են, որոնց մասին ասել եմ քեզ Իմ նախորդ Պատգամներում: Ես հոգնել եմ նրանից և իր ողջ խմբից և ոչ մի հաճույք չեմ ստանում պատժելուց: Ես ուզում էի փրկել նրանց, որպես զավակներ որդեգրելով նրանց, բայց նրանք թույլ տվեցին, որ իրենց գնեն հարուստ վաճառականները, որոնք պիտի ընկնեն նրանց հետ միասին: Զգա՛ Իմ վիշտը, զգա՛ Իմ կսկիծը, զգա՛ Իմ ցավը: Նրանք երկրպագում են փողին...

Աստված իմ, արի ու հանգչիր
Քո Աբելների սրտերում, նրանց,
ովքեր Քեզ իսկապես սիրում են:
Գուցե նրանք քիչ են
և փոքր են թվով, բայց նրանք
Քո սրբերն են, ովքեր դիմանում են
փորձություններին:
Նրանք այն մարդիկ են,
ովքեր սիրում են Քեզ:
Նրանք այն մարդիկ են,
ովքեր հաստատակամություն
ու հավատ ունեն:
Նրանք Քո ուղեկիցներն են,
նրանք Քո երախայրիքն են,
որոնք երբեք թույլ չեն տվել,
որ իրենց շուրթերից սուտ հնչի:
Ես քեզ մատուցում եմ նրանց,
որպեսզի Դու հանգչես նրանց մեջ:

Ես Իմ Գլուխը կդնեմ Իմ նվիրյալ զավակների (քո դարաշրջանի սրբերի) սրտերում: Արի՛, սիրիր Ինձ, սփոփիր Իմ Սիրտը և հատուցիր նրանց համար, ովքեր բովանդակ ազգերի գրկում են Իմ Սիրուց՝ Իմ և Իմ զավակների միջև պատ կառուցելով: Ես ոչ մի հոգու չեմ գրկել Իմ Սիրուց: Անդադար աղոթիր, Իմ Վասուլա: Շատերը կմաքրագործվեն աղոթքներով, շատերը կմաքրվեն զոհաբերությունների ու ծոմապահության միջոցով: Մի՛ հապաղիր, ժամանակը սուղ է: Ավելի շատ օրհնիր Ինձ, ջնջիր աշխարհի անարդարությունը՝ Ինձ ավելի շատ սիրելով ու ավելի սեր ցույց տալով: Ա՜հ, Վասուլա, աղջի՛կս, գոհացրու Ինձ և ասա Ինձ այս խոսքերը.

Հիսո՛ւս, սովորեցրու ինձ
Քեզ քնքշորեն սիրել:
Տուր այս շնորհը նրանց,
ովքեր չեն սիրում Քեզ ու չգիտեն
Քո Սուրբ Սրտի
Կլանող Կրակը, ամեն:

[1] Այլ կերպ՝ Մովսեսի:
[2] Այլ կերպ՝ Եղիայի: Հայտ. 11:1-13

Օգոստոսի 17, 1990

Ես գալիս եմ Քեզ մոտ, իմ Յահվե, խնդրելու Քեզ, որ ներես իմ մեղքերը: Տե՛ր, լսիր իմ աղերսը: Ես գիտեմ, որ Դու ներում ես մեզ ու ներողամիտ ես մեր հանցանքների հանդեպ:

Ես ներում եմ քեզ: Ես ներում եմ քեզ, փոխանակ թույլ տալու, որ Իմ զայրույթը հարվածի քեզ... Դու անպտուղ ու անբնակ էիր, դու հայտնի էիր քո անապատով: Դու նման էիր անջուր պարտեզի, ու Ես, պարտեզում հոսող մի առվի նման, եկա ոռոգելու քո հողին: Ես քեզ փրկեցի Իմ թշնամու ճանկերից: Առյուծը հեռացել է քեզնից, և քո հողը հիմա պարտեզ է դարձել՝ շնորհիվ Իմ Անսահման Սիրո ու Ողորմածության:

~ Ես քո Փրկիչն եմ, և Հիսուս է Իմ Անունը: Թույլ տուր Ինձ գրել հետևյալ պատգամը (....)ի[1] համար... Ես՝ Տերը, նրա առաջ եմ, ու Ես կրակ ու ջուր եմ դնում նրա դիմաց: Ես նրան ընտրելու ազատություն եմ տվել: Նա կարող է ձեռքը դնել այն բանի վրա, ինչ որ գերադասում է: Ես նկատի եմ առնում նրա ամեն մի արարքը: Ես նկատի եմ առնում նրա գիտակցված ու անմիջական անկեղծությունն Իմ նկատմամբ և նրա գիտակցված ու անմիջական կեղծավորությունն Իմ հանդեպ: «Շտապիր ու արի Ինձ մոտ, և Ես կնորոգեմ քո կրակը: Քո մեջ մնացած փոքր կայծը արագորեն մարում է: Ես սիրում եմ քեզ հավերժական Սիրով, ու Իմ Ողորմությունն Անհատակ է: Դու վայելում ես Իմ բարեհաճությունը»:

~ Ձեզանից շատերն այսօր ասում են. «Թող որ այսօր ուտենք ու խմենք, վաղը կմեռնենք»: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ...խելքի եկեք ու շրջվեք դեպի Ինձ՝ ձեր Աստծուն: Ենթարկվել Իմ Օրենքին, նշանակում է սիրել Ինձ, իսկ ամեն ոք, ով ապրում է սիրո մեջ, ապրում է Իմ մեջ: Ես կարիք չունեմ ձեր դարաշրջանի փիլիսոփաներին ու իմաստուններին, ոչ էլ ուսուցիչներին: Ինձ հարկավոր է թուլություն... թշվառություն... պարզություն... հասկանո՞ւմ եք: Գալիս են այն օրերը, երբ Ես Իմ Օրենքն եմ դնելու ձեր սրտերի վրա:

Ողորմության այս օրերին Ես գալիս եմ, որպեսզի պատրաստեմ ազգերին ու հիշեցնեմ նրանց, որ Ես կարող եմ մաքրագործել ձեր ներքին ես~ը ստոր ու մեռյալ արարքներից, որոնք կարող են ձեզ տանել դեպի հավիտենական կրակները: Բայց այս սերնդի սիրտը կոպտացել է, ու չնայած Ես բացեիբաց խոսում եմ ազգերի հետ, նրանք, միևնույն է, չեն լսում Ինձ: Ե՛կ, վերցրու քո խաչը ու հետևիր Ինձ: Ես կօրհնեմ քո կատարած ամեն մի քայլը:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ, մի փոքր աղոթախմբի համար):

Ես շատերին եմ հրավիրել Իմ ճաշկերույթին, բայց շատ քչերն են ցանկանում գալ[2]: Ուստի, Ես ասում եմ ձեզ. գնացեք հիմա աղքատների

[1] Հռոդոսի մի բնակչի:

[2] Այս փոքր աղոթախումբը մի քանի անգամ փորձել էր հրավիրել հայտնի քահանաների ու

մոտ, գնացեք կույրերի մոտ: Ոմանց դուք մեռած կգտնեք, բայց մի՛ անհանգստացեք, ես հարություն կտամ նրանց: Ես բարձրացրել եմ ձեզ բոլորիդ և կբարձրացնեմ շատ շատերին: Ուրեմն, գնացեք աղքատների ու հիվանդների մոտ և վստահ եղեք, որ կլցնեք Իմ Տունը: Նրանք, ովքեր առաջինն էին հրավիրվել Իմ ճաշկերույթին, բայց մերժել էին գալ, թող զարմանան, տեսնելով կույրերին տեսողությունը վերադտած և աղքատներին՝ Իմ Գիտությամբ հարստացած, իսկ մեռածներին՝ վերակենդանացած:

Ծաղկե՛ք Իմ Լիության մեջ ու մի թոշնեք: Հաստատակամ եղեք ու աշխատեք Իմ Փառքի համար... Զավակնե՛րս, ոչնչացրեք ձեր եսասիրությունը: Իմ Թագավորությունը շատ մոտ է ձեզ: Փութաջան եղեք ու հետևեք Իմ Խոսքին: Ձեզ մաքուր պահեք ու սովորեք նվաստ ու աննկատ մնալ, որպեսզի Իմ Հոգին չնչի ձեր մեջ:

- Ես ընտրել եմ ձեզ, հրեշտակներս, ոչ նրա համար, որ դուք արժանի եք, այլ որովհետև դուք թշվառ ու ողորմելի եք: Փառաբանեք նորից Իմ Անունը մեկտեղ հավաքվելով, որպեսզի ծառայեք Ինձ:

Եռանդուն եղեք բոլոր բարի գործերում: Ես ձեզ հետ եմ ամբողջ ժամանակ:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 3, 1990

(Ես գնացի հանդիպելու մի քահանայի: Նա մի ինչ-որ միաբանությունից է, ու ես ճանաչում եմ, թե ինչ տեսք ունեն այդ քահանայի միաբանության հագուստները: Երբ դուռը բացվեց ու ես տեսա նրան, զարմացա, ուղիղ իմ դիմաց տեսնելով մեկին, որ թվում է, ինչ-որ շքեղ-դիմակահանդեսային հագուստ էր կրում: Նա հագել էր բաց մանուշակագույն երկար զգեստ, սատինի նման: Ես տեսնում էի, որ նրա երկար ու լայն թևքերի ներսի կողմը բաց կանաչավուն է, իսկ գոտկատեղին նա կապել էր ոսկե ու արծաթե մի շքեղ գոտի: Պարանոցի շուրջը կրում էր մի հաստ ոսկե շղթա, որի վրա խաչ չկար: Նա նման էր հին ժամանակների թագավորի: Սկզբում ես մտածեցի, որ միգուցե նրան այդ ձևով էին հագցրել, քանի որ նա հատուկ մեկն էր: Հետո, երբ նա ողջունեց ինձ, ես նայեցի նրա դեմքին, մոռանալով, թե ինչ էր հագել: Ես նույն միաբանության մեկ այլ (...) քահանայի հետ էի, ու նա ոչ մի վերաբերմունք ցույց չտվեց: Ես մտածեցի, որ ամեն ինչ սովորական է, ուստի այլևս չմտածեցի դրա մասին, մինչև որ հիշեցի Տիրոջ պատգամը, երբ այս դեպքից մի շաբաթ առաջ Նա ասաց. «Ես՝ Տերը, քեզ տեսիլքներ կտամ նրանց մասին, ովքեր հետևում են գազանին»: Եվ Նա ասել էր, որ նրանք, ովքեր հետևում են գազանին Իր Եկեղեցում, հագնված են, ինչպես քահանայապետներ, զարդարված ոսկով ու արծաթով: Նրանք շատերին կխաբեն, անգամ ընտրյալներին: Այդ օրը ես սովորական մի քահանա չտեսա: Ես տեսա

վանահայրերի, անգամ հայտնի վանականների, բայց նրանցից յուրաքանչյուրը ներողություն էր խնդրել ու ընդհանրապես հետաքրքրություն ցույց չէր տվել Տիրոջ պատգամների հանդեպ: Նրանք քաղաքավարի էին:

մեկին, որ հագնված էր «թագավորի» նման, շքեղ հագուստներով:)

Վասո՛ւլա, ես քեզ ասել եմ, որ ես քեզ մատնացույց կանեմ Իմ Մարմնի բոլոր փչերը[1]: Մի մարդ, որ նման բան է անում, պետք է հեռացվի համայնքից[2]:

Սեպտեմբերի 10, 1990

Զորությունների Աստված,
ետ բեր մեզ,
թող Քո Դեմքը ժպտա մեզ
ու մենք ապահով կլինենք[3]:

Խաղաղություն քեզ:

Հենվիր Ինձ վրա... Ես քեզ իզուր չեմ ձևավորել: Ես չեմ սկսել այս Գործը քեզ հետ, որպեսզի անավարտ թողնեմ այն: Ես օրհնել եմ Իմ Գործը, որպեսզի այն փառաբանի Ինձ, և դու, դո՛ւ, որ ոչինչ ես ու ոչ մի պարգև չունես Ինձ տալու, Ես քո ուսերին եմ դրել Իմ Լուծը՝ իմաստուններին շփոթեցնելու ու նրանց ցրելու համար, և ցույց տալու, որ քանի դեռ նրանք պահում են իրենց դիրքորոշումը, Ես՝ Տերը, Ինձ չեմ հայտնելու նրանց: Իսկ դո՛ւ, աղջիկս, այո՛... ապշեցրու նրանց Իմ ընտրությամբ, քանզի ո՞վ կարող է ասել. «Ես մաքրել եմ իմ սիրտը, ես մաքրվել եմ իմ մեղքից»: Մինչդեռ քեզ հալածողները, որոնք խուլ են Իմ Ուսուցումների հանդեպ, հույս ունեն ինչ-որ մի բան օգտագործել քո դեմ: Ես լրջորեն ասում եմ քեզ. կանանցից ծնված բոլոր երեխաների մեջ երբեք չի եղել քեզանից ավելի նվաստը: Քեզ հասցված վերքը, աղջի՛կս, Ինձ նույնպես խոցում է:

Այո՛, այս ամբողջ սերունդը չնացող է... Բայց Ես մտադիր եմ փրկել քո սերունդը, ինչպես քեզ փրկեցի, անգամ եթե ստիպված լինեմ նրանց անապատ քաշ տալու, և նույնը անելու, ինչ որ քեզ արեցի[4]: Ես կբացահայտեմ նրանց մերկությունն իրենց աչքերում, և զղջման առաջին իսկ բառի հետ, Ես թռչելով կգամ դեպի նրանց, ինչպես թռչելով եկա քեզ մոտ: Ապա, Իմ հրեշտակների ներկայությամբ, Ես կերգեմ նրանց Իմ Սիրո Երգը: Ես նրանց ետ կդարձնեմ մոլորության ճանապարհից և կպարգևեմ նրանց Իմ Օրենքի շնորհը: Հետո ես կվերցնեմ նրանց ձեռքը ու կդնեմ Իմ Ձեռքի մեջ, որպեսզի նրանց առաջնորդեմ ետ՝ դեպի Իմ Տունը, որտեղ Ես նրանց ցույց կտամ Իմ Սուրբ Սրտի բոլոր Հարստությունները: Իմ Սիրտն այս Գանձերը պահել է վերջին Ժամանակների համար, որպեսզի վերակենդանացնի այս առկայծող կրակը ու դարձնի այն մի Ամենակուլ Կրակ՝ լուսավորելու նրանց, ովքեր ապրում են խավարում ու մահվան ստվերում:

– Վասո՛ւլա, աղջիկս, քեզ հալածողները կփորձեն քո վրայից պոկել այն

[1] Ես Աստվածաշնչից պատահական էջ եմ բացում մարգարեության մասին կարդալու համար:
[2] Ա Կոր. 5:2
[3] Սաղմ. 79:4
[4] Մաքրագործում, ինչպես քավարանում: Երբ ես տեսա իմ մեղքերը Աստծո աչքերով:

հանդերձները, որ տվել եմ քեզ ու կողոպտել քեզանից Իմ Զարդերը: Բայց Ես խոստանում եմ հեռացնել յուրաքանչյուր ձեռք, որ կմոտենա քեզ: Ես մտադիր եմ վերջ դնել նրանց անառակությանն ու մոլորեցնող վարքագծին: Ես մտադիր եմ ցուցադրել մի հայտարարություն, որ կմնա հաստատուն ու հավերժ. Արքայից Արքան, Աստծո Գառը, Առաջինն ու Վերջինը, Աստծո Խոսքը, Հարուցյալը, Քրիստոսը, Փրկիչը, որպեսզի ոչնչացվի ու վերջ տրվի նրանց դավադրությանը՝ ուղղված Իմ Եկեղեցուն, և Իմ Խոսքի ու Իմ Պատկերի կեղծ ուսուցումներին: Ես հիմա փոխաբերություններով չեմ խոսում, Ես ասում եմ ձեզ պարզ խոսքերով, որ նրանք Ինձ տալիս են մի տիտղոս, որն Ինձ չի պատկանում և որը Ես չեմ՝ մի կեղծ Քրիստոս, մի անկենդան պատկեր, մի կեղծ աստված՝ ճարտարորեն թաքցված կեղծ ընդհանրականության (էկումենիզմի) ձևի տակ... Բայց Ես խոստանում եմ քեզ, զավա՛կս, որ Ես վերջում կհաղթեմ: Ես կհաղթեմ քո դարաշրջանի այս կեղծ ուսուցիչներին, ու Ես քեզ կտամ Իմ Սուրբ Սրտի թաքցրած Գանձերը, քո լեզվի վրա դնելով Իմ Խաչի Լեզուն, որ Սեր է՝ Իր բոլոր Խորհուրդներով, Հրաշքներով ու Հրաշալիքներով:

Հետո Ես իմ հովիվներին կհիշեցնեմ «առաջնորդություն ու ծառայություն» խոսքերը: Ես նրանց հրաման կտամ, որ չլինեն այնպես, ինչպես աշխարհի ուժեղ մարդիկ, որոնք իրենց իշխանությունը զգացնել են տալիս նվաստների մեջ: Ո՛չ: Ամեն ոք, ով կցանկանա մեծ լինել նվաստների մեջ, պետք է նրանց ծառան լինի, և ամեն ոք, ով կցանկանա առաջինը լինել նրանց մեջ, պետք է վերջինը լինի, ինչպես որ Ես աշխարհ եկա ոչ թե ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և Իմ Կյանքը իբրև փրկագին տալու շատերի համար:

– Եվ դո՛ւ, փոքրիկս, մի վախեցիր Ինձնից[1]: Ես հավիտյանս հավիտենից Իմ Լույսը վառ կպահեմ քո մեջ: Աղոթիր քո դարաշրջանի փրկության ու դարձի համար:

Ես օրհնում եմ քեզ: Օրհնիր Ինձ ու սիրիր Ինձ:

Սեպտեմբերի 12, 1990

Հիսո՞ւս:

Ես եմ, խաղաղություն քեզ, ծաղի՛կ: Գրիր Իմ Պատգամը բոլոր աշխարհամասերի համար:

Խաղաղություն ձեզ, Իմ Սրտի զավակներ: Հասկացեք, թե ինչպես է Երկինքը Իմ Շնորհով ամեն օր բացվում ձեզ համար, որ ձեզ ուղարկի դարձի գալու Իմ կանչերը... Իմ Խոսքի հիշեցումները... Հրահանգներ, որ ուսուցանի ձեզ հետևելու Իմ Պատվիրաններին:

Երկինքն ամեն օր Իր Դռներն է բացում աշխարհի տարբեր վայրերում՝ ձեզ Խաղաղություն ու Սեր բերելու համար, և Իմաստությունը Իր ամբողջ Փառքով իջնում է Գահի վրա, հենց ձեր մեջ, ձեր բոլորի մեջտեղում, որպեսզի բաց անի կույրի աչքերը, բաց անի խուլի ականջները

[1] Ես վախեցա, թե Հիսուս բարկացել էր Ինձ վրա:

ու հարություն տա մեռելներին, որ աղտոտում են այս անապատը: Ո՛չ, Իմաստությունը հայտնի չի դառնա նենգ հոգիներին: Նա կգա ուսուցանելու միայն թշվառներին ու պարզերին և կհեղեղի Իր բոլոր Գործերը նրանց վրա, քանզի հենց այս հոգիները գիտեն վախենալ Ինձանից՝ Տիրոջից, և գուրգուրել ու պահպանել Իմ Խոսքը: Ուրեմն, ի՞նչ ավելի մեծ պարգև կարող է լինել, քան Իմաստությունը մինչև ձեր դռան չեմը բերելը: Ի՞նչը կարող է ավելի մեծ ուրախություն լինել, քան ձեզ ուղղված Նրա ժպիտը: Ի՞նչը կարող է ավելի մեծ հաճույք լինել, քան լսել ձեզ ուղղված Նրա Սիրո Նոր Երգը: Ցնծա՛, ուրեմն, արարչություն, քանզի Ես եմ հենց ձեր դռների մոտ...

Այս Ցնծությունը պահվել է քո ժամանակների համար, սերո՛ւնդ, երբ սատանան ու իր ողջ կայսրությունը աշխարհով մեկ տարածված իր իշխանության հետ միասին, իրենց զորության գագաթնակետին են հասնում Իմ Եկեղեցում ու բոլոր ազգերի մեջ, կեղծ մարգարեի հետ միասին, որի ոտնաձայները դուք ավելի ու ավելի հստակ եք լսում ամեն օր և ամենուր: Նրանք զինված են մինչև ատամները՝ պատերազմելու Իմ Եկեղեցու ու բոլոր նրանց դեմ, ովքեր հետևում են Իմ Պատվիրաններին:

Սիրելի զավակներս, Ես Իմ Հոգու տված այս Երկնային Մանանան պահել եմ ձեր ժամանակների համար: Այս թաքցված մանանան է[1], որ Ես պահել էի ամայության ու անօրենության ժամանակների համար: Այն աղքատների ու քաղցի մատնվածների կերակուրն է: Եվ Ես խոստանում եմ ձեզ, որ նրանք կստանան այնքան, որքան կցանկանան ուտել, և Ես կպարգևեմ նրանց Իմ Նոր Անունը: Այս Երկնային Կերակուրն է, որ Ես հեղում եմ Երկնքից: Այդ Իմ Սուրբ Հոգու հեղումն է, որ լցնում է ձեր ներքին անապատը: Այդ Սերն է, որ խոսում է թշնամական աշխարհի հետ: Այդ Սերն է, որ բախում է ամեն մի փակ դուռ: Այդ Սերն է, որ կանչում է մեզ բաժանող Պատի մյուս կողմից, որն Իմ թշնամիներն են կառուցել: Այդ Սերն է, որ մուրացկանի նման աղերսում է սիրո վերադարձի... մի ժպիտի... մի զրկման... մի հառաչի համար... Այդ Ես եմ՝

Սուրբ Սիրտը:

Ես մի անգամ ևս գալիս եմ, որ կենդանացնեմ այս մարող կրակը ձեր սրտում ու այն վերածեմ Քնքշության ու Սիրո Լափող մի Կրակի: Ես իջնում եմ, որպեսզի շռայլորեն հեղեմ Իմ Սրտի բոլոր Գանձերը քեզ վրա, մարդկությո՛ւն... և լույս տամ նրանց, ովքեր ապրում են խավարի ու մահվան ստվերի մեջ:

Ես գալիս եմ, որ փշուր-փշուր անեմ ձեր զնդանների դռները և Իմ Կրակով հալեցնեմ ձեր մեղքի շղթաները:

Ես գալիս եմ, որ ազատագրեմ ձեզ գերությունից ու անարդարությունից ու վերջ դնեմ ձեր անառակությանը: Ես մտադիր եմ փրկել քեզ, սերո՛ւնդ, եթե անգամ ստիպված լինեմ մինչև անապատ քարշ տալ բոլորիդ ու խոսել ձեզ հետ՝ ցույց տալով ձեր չորությունը, և այն, որ ձեր ամբողջ մարմինը լցված է խավարով: Ես դա կանեմ, որպեսզի փրկեմ ձեզ: Ա՜հ, արարչություն, Ես ի՞նչ չեմ անի քեզ համար... Իմ Հոգին ձեզ վրա է ու

[1] Կես Հայտ. 2 Պերգամոն 17:

կհանդչի ձեզ վրա հավիտյանս հավիտենից: Ուրեմն բացեք ձեր սրտերը ու թույլ տվեք, որ Ես լցնեմ ձեզ Իմ Շնորհով:

Եկեք ու ձեր ուժը Ինձանից վերցրեք, զորացրեք ձեր արմատները Իմ մեջ, քանզի ի՞նչ եք անելու փորձության օրը, եթե ձեր արմատները ամուր չլինեն: Դուք կճոճվեք քամուց ու կպոկվեք ուժեղ փոթորկից, և ձեր ճյուղերը կփչրվեն բարակ ապակու նման: Ո՛չ, դուք անկարող կլինեք դոյատևել:

Ուրեմն, եկեք Ինձ մոտ ու ծաղկեք Իմ Լիության մեջ, որպեսզի չթոչնեք: Եկեք Ինձ մոտ, ինչպես որ կաք: Մի՛ սպասեք, որ սրբեր դառնաք Ինձ մոտ գալու համար: Եկեք Ինձ մոտ, ինչպես որ կաք, ու Ես կներեմ ձեր մեղքերը ու կմաքրագործեմ ձեր հոգին: Հետո Ես ձեզ Իմ Աստվածության հանդերձները կհագցնեմ, հանուն Իմ Սուրբ Անվան, որ պատրաստեմ ձեզ մեր հոգևոր Հարսանիքի համար: Ես՝ Տերը, մտադիր եմ պսակվել ձեզ հետ Իմ Փառքի մեջ ու ձեզ ամբողջովին Իմը դարձնել, սերո՛ւնդ: Ես մտադիր եմ օգնել ձեզ, որ դուք ձեր ճանապարհը գտնեք, և դուրս բերել ձեզ ոլորապտույտ արահետներից: Ես կպատրաստեմ ձեզ, որ Իմը լինեք հավիտյան ու ողջ հավիտենականության համար:

Այսօր Ես խոնարհվում եմ Երկնքից դեպի ձեզ՝ Իմ Սիրուց ու Ողորմությունից դրդված: Բայց միևնույն ժամանակ, Իմ Հոգին տրտում է ու ամբողջովին վշտի մեջ՝ Իմ դառներից ու Իմ ոչխարներից ոմանց ցիրուցան գտնելով, ոմանց՝ կորած, իսկ ոմանց էլ խժռված՝ գառան մորթու տակ թաքնված գայլերի կողմից: Ուրեմն, մի՛ զարմացեք, որ այցելում եմ ձեզ, քանզի անցնող ամեն մի օր դուք Ինձ ավելի ու ավելի հաճախ կտեսնեք, մինչև որ երես առ երես հադիպեք Ինձ:

Ես կգամ բոցավառ կրակով՝ ոչնչացնելու բոլոր նրանց, ովքեր չեն ընդունում Ինձ, որպես իրենց Աստծո: Եվ Ես ասում եմ ձեզ. ժամանակը սուղ է, ժամերը թռչում են, ու Իմ Փառքի Օրը շուտով կհասնի ձեզ: Մի՛ եղեք նրանցից մեկը, որ ասում է. «Լա՛վ, իսկ ո՞ւր է այս Գալուստը», «Ո՞ւր է այս Խոստումը»: Իմ Գալուստը մոտ է, և Իմ Խոստումը կատարվելու ճանապարհին է: Եվ ձեր սպասումը կկարճանա շնորհիվ Իմ Մոր և Իմ բոլոր սրբերի աղոթքների: Ուստի, սիրելիներս, մինչ դուք սպասում եք, հաշտվեք ու սրբորեն ապրեք, որ Ես ձեզ հաշտ ու խաղաղ գտնեմ:

Ես շատ շուտով կգամ, որպես Սեր: Ամեն ինչ շուտով կավարտվի, և մի օր դուք բոլորդ ստիպված կլինեք պատասխանել Ինձ ու հաշիվ տալ Ինձ: Ուրեմն, ի՞նչ կպատահի հանցավորին ու մեղավորին: Եվ ի՞նչ կպատահի նրանց, ովքեր շարունակում են վիրավորել Ինձ: Ես Հավատարիմ եմ ու Ճշմարիտ, և Իմ Խոստումը կկատարվի: Ես չեմ ուշանա:

Քանզի, որքան ավելի շատ լսեք կեղծ մարգարեի և նրա խմբի ոտնաձայներն այս երկրի վրա, այնքան ավելի Ես լսելի կդարձնեմ ձեզ Իմ Սեփական Ոտնաձայները, որպեսզի Իմ Արյունով ջնջեմ այն թույնի հետքերը, որ թողնում են նրանք իրենց ճանապարհին, որպես խայծ ձեզ համար: Այս Ապստամբն ու իր խումբը ծաղկում են հիմա՝ թաքնված Քահանայապետի հանդերձների տակ, թաքնված գառան մորթու տակ, թաքնված Ճշմարտության կերպարի տակ, որպեսզի շատերին մոլորեցնեն ու նրանց բոլորին տանեն դեպի մահ:

Ես առակներով չեմ խոսում հիմա, այլ ուղղակի խոսքերով: Ժամանակները մոտ են, Աստվածաշնչում կանխասացված ժամանակները, երբ

Իմ թշնամիները տալիս են ինձ մի տիտղոս, որն ինձ չի պատկանում, և որը ես չեմ, մի կեղծ Քրիստոս, մի անկենդան պատկեր, մի կեղծ աստված: Մի կուռք, ճարտարորեն թաքցված կեղծ ընդհանրականության տակ. Գեղարդի սայրը, որ Իմ Սուրբ Սրտի խորքում է ու այնքան արյունահոսության պատճառ է դառնում... Նրանք սրով կստիպեն ձեզ ուտել իրենց պիղծ կերակուրը՝ մի օր մի բաժին Բանապաշտություն, հաջորդ օրը՝ մի բաժին Բնապաշտություն, և այպես շարունակ կապկելով Ճշմարտությունը, Իմ Խոսքը, Իմաստությունը ու Իմ Խաչի լեզուն: Բայց կրակ կթափվի նրանց վրա Երկնքից ու կլափի նրան ու իր խումբը: Սա հաստատ է ու կիրականանա:

Ես ասում եմ ձեզ այս բոլորը, սիրելիներս, որ զգուշացնեմ ձեզ այս կեղծ ուսուցիչների ու մարդկային ուսմունքների մասին և ասեմ ձեզ, որ փորձությունների այս գալիք օրերին, Իմ Սուրբ Սիրտը, որ այրվում է, կշարունակի հետապնդել ձեզ: Ինչպես ողորմություն հուսացող մուրացկանը, ես հույս ունեմ նույնպես գրավել ձեր սիրտը՝ նախքան խավարը կպատի ձեզ:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին դրոշմելով: Ես՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Սիրելի Որդին ու Փրկիչը, Իմ խաղաղությունն եմ թողնում ձեզ Իմ ամբողջ սրտով: Ես Անսահման սիրում եմ ձեզ: Եղեք մեկ:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 18, 1990

Տե՛ր իմ,
Դո՛ւ, որ պաշտպանում ես ինձ չարից
ու շրջապատում ես իմ հոգին
Քո սիրո Երգերով,
Թող Քո Սուրբ Դեմքը
ժպտա բոլորին, ով սիրում է Քեզ:
Այսօրվա երիտասարդներին
սովորեցրու հետևել
Քեզ և նմանվել Քեզ:
Ցույց տուր նրանց
Քո Սուրբ Սրտի Գանձերը
և ուսուցանիր նրանց,
ովքեր դեռևս չեն հասկանում
ու անվճռական տատանվում են
Քո ընտրած այս Սուրբ Անվան առջև՝
Սուրբ Սիրտ: Թող որ իմանան,
որ այդ Դու ես, Քրիստոսը:
Թող որ նրանք,
ովքեր շարունակում են
իրենց տարբերել աստվածաբանական
տերմինների պատճառով,
բայց գտնվում են

Քո Սուրբ Անվան ներքո,
խելքի դան ու հասկանան,
թե ինչպես են խրախուսում
Քրիստոնեության մեջ
այս Բաժանումը,
և ինչպես չեն կատարում Քո Կամքը,
այլ սատանային ևս
մի հենարան են տալիս՝
մեզ բաժանված պահելու համար,
դրանով իսկ թուլացնելով
Քո Եկեղեցին:
Դու Հիսուս Քրիստոսն ես,
Աստծո Սիրեցյալ Որդին ու Փրկիչը,
Սուրբ Սիրտը, Խոսքը,
Ալֆան և Օմեգան, Լույսը,
Փրկիչը, Ամենակարողը:
Դու Մեկ Քրիստոս ես,
Դու չես բաժանված մասերի:
Ուստի, ես աղոթում եմ Քեզ,
որպեսզի մեզ
կրկին միավորես սիրով,
սրտով, մեր հավատով ու գործով:

Սա, զավա՛կս, այն է, ինչ դու պետք է սովորեցնես նրանց, որ հավատան ու համոզես որ անեն: Բայց, զավակս, կլինեն մարդիկ, ովքեր չեն լսի իրենց մեծամտության պատճառով: Այդ մարդիկ ծանրորեն ընկած են Իմ Սրտի վրա: Նրանք չունեն խոնարհություն ու ճշմարիտ Իմաստություն: Նրանք միայն լցված են հակասական համոզմունքներով, գիտություն, որն ընդհանրապես գիտություն էլ չէ, երբ սկսում են վիճաբանել, մեղադրել, և վիճել բառերի մասին, առանց դադարի հարցեր բարձրացնելով, բայց երբեք չհասկանալով, որ իրենք Գայթակղեցնողի զոհն են: Օ՜հ, զավակս, կրիր այդ դժվարությունները հանուն Իմ Սիրո: Սրանք բոլորը զուր չեն. մի օր դու կտեսնես Լույսը երես առ երես... Արի ու զվարճացիր հիմա Իմ Սիրով ու Իմ Քնքշությամբ: Դիր գլուխդ Իմ Սրտին ու լսիր Սիրո կանչերը:

Ուրախացիր Իմ մեջ, ուրախացիր Իմ Շքեղության ու Լիության մեջ: Ես պահել եմ այս Հարստությունը քեզ համար, սերունդ, որ քեզ դեպի Ինձ առաջնորդեմ Սիրո շղթաներով: Եվ եթե դուք հարցնեք. «Որքա՞ն ժամանակ կա դեռ, մինչև այս Հրաշքը պատահի», Ես կասեմ, որ դա արդեն պատահում է: Իմ Ոտնաձայները լսվել են ձեզանից ոմանց կողմից: Տերը, ում փնտրում եք, հանկարծակի կգա ձեզ վրա: Նրան, ում սպասում եք, գալիս է: Ուստի, Ես ասում եմ ձեզ. մի՛ դիմադրեք Իմ Սուրբ Հոգուն, որ հիմա գալու է, որպեսզի ամբողջ ուժով քանդի մահվան պատանքը, որ ծածկում է ձեր ազգերին՝ արգելելով ձեզ տեսնել Լույսը: Ես ամբողջ ուժով կիջնեմ Իմ Սուրբ Հոգով, պատռելու մոլորեցնողների դիմակը և քշելու վաճառականներին, ովքեր թափանցել են Իմ Սրբավայրը: Ձեր աչքերը դարձրեք դեպի Ինձ, սերո՛ւնդ, ու տեսեք այն Ցնծությունը, որ շուտով գալու է դեպի ձեզ:

Իմ Սուրբ Հոգին իր ամբողջությամբ կիջնի ոչ միայն թշվառներին փրկելու համար, այլ Ես կիջնեմ նաև դատաստանի համար, որպեսզի տեսողությունն տամ կույրին ու խլեմ տեսողությունը նրանցից, ովքեր ասում են, թե տեսնում են: Իսկ նրանց, ովքեր իրենց իմաստուն և ուսյալ են կոչում, Ես կմթագնեմ նրանց այն աստիճան, որ չեն իմանա թե ովքեր են իրենք ու որտեղից են գալիս: Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. Ես կուսուցանեմ անարժանների, ու նրանց, ում դուք հիմար ու արհամարհելի եք կոչում, Ես նրանց կբարձրացնեմ ու կսովորեցնեմ Իմ Գիտությունը՝ դարձնելով նրանց Ճշմարտության նվիրյալ աշակերտներ, որպեսզի ամաչեցնեմ նրանց, ովքեր Իմ Թագավորությունը թաքցնում են նրանցից: Ես ասում եմ ձեզ. «Մեռածները ձեզանից առաջ կմտնեն Իմ Թագավորությունը»[1]:

Իմ Շնորհի Հոգին եկավ դեպի ձեզ, ձեր դռների մոտ, բայց դուք չուզեցիք հավատալ ո՛չ Իմ Հրաշալիքներին, ո՛չ էլ Իմ Հրաշքներին: Մինչդեռ նրանք, որոնց դուք կոչում եք արհամարհելի, և ովքեր ձեր հասարակության կողմից մերժված են, հավատացին խոնարհությամբ, կրքով ու սիրով: Սրա համար է, որ Ես վերադարձնելու եմ մեղավորներին ու հարություն եմ տալու մեռելներին, ինչպես լույսի այուներ: Բայց և մեծապես ցավում եմ, որ, անգամ այս մեծ հրաշքները տեսնելուց հետո էլ, դուք տակավին հրաժարվելու եք գնահատել ու հավատալ Իմ ներկա Աստվածային Գործերին: Ուստի, Ես ասում եմ ձեզ.

«Իմ Թագավորությունը
ձեզանից ետ կվերցվի
ու կտրվի թշվառ մարդկանց,
մարդկանց,
ովքեր չեն կարողանում տարբերել
իրենց աջ ձեռքը ձախից
և այս ողորմելիներին է, որ <u>Ես</u>
<u>կպարգևեմ Իմ Նոր Անունը</u>»:

Իմ Սուրբ Սրտի Վասուլա[2], թույլ մի տուր որևէ մեկին խլել քեզանից այն պարգևը, որ տվել եմ քեզ:

Տե՛ր, արգելիր նրանց, որ դա անեն, ես ինքս ոչինչ չեմ կարող անել: Իմ հնարավորությունները սահմանափակ են, ինչպես Դու գիտես:

Մի՛ վախեցիր, Վասո՛ւլա, աղջիկս: Ես կհաղթեմ Իմ թշնամիներին, որոնք նաև քո թշնամիներն են, և Իմ Ուսմունքները շատերին դարձի կբերեն, հասկանո՞ւմ ես: Քանի՞ անգամ եմ Ես քեզ փրկել առյուծի երախից: Եվ քանի՞ անգամ եմ Ես լուսավորել քեզ, դավա՛կս: Եվ քանի՞ անգամ եմ Ես

[1] «Իմաստուններից»:

[2] Այստեղ Ես մտածում էի, որ միգուցե ես առաջին ուղղափառն եմ, ում կոչում են «Իմ Սուրբ Սրտի Վասուլա»:

ցույց տվել քեզ Ճանապարհը: Ա՛հ, Իմ Քաղցր աշակերտ[1], ապավինի՛ր Ինձ, վստահի՛ր Ինձ, խնդրիր ու կտրվի քեզ:

Ե՛կ, ավետարանիր սիրով՝ Սիրո համար: Հոգիներ վաստակիր Ինձ համար: Փափագի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ ու վստահիր Ինձ:

Եկեղեցին պիտի վերակենդանանա:

Սեպտեմբեր 19, 1990

Տե՛ր, վերցրու իմ հոգին
ու իմ սիրտը ու դիր
Քո Սուրբ Սրտի մեջտեղում:

Ա՛հ, զավակս, որքան եմ սպասել, որ նորից քեզանից լսեմ Ինձ ուղղված այդ խոսքերը: Որքա՜ն եմ սպասում լսելու այդ խոսքերը ամեն մեկի սրտից:

Սեպտեմբերի 20, 1990

Տե՞ր:

Ես եմ:

Ե՛կ ու մխիթարիր Ինձ, ե՛կ ու սփոփիր Ինձ, հանգստացրու Ինձ: Ես քեզ արարել եմ, որպեսզի Ես Միակը լինեմ քո սրտում: Ես քեզ արարել եմ, որ հեռացնես Մարմնիս մեջ մտած Իմ Փչերը: Ես քեզ արարել եմ, որ դու Իմ Սրտի զոհը լինես: Ես տենդագին սիրում եմ քեզ: Ընդունիր Իմ Սերը, ընդունիր Իմ Գիտությունը: Համբերությամբ ընդունիր փորձությունները և դրանց մի՛ նայիր արհամարհանքով: Ես Իմ Խաչն ընդունեցի մեծ Սիրով, խոնարհությամբ, և Իմ Բաժակը խմեցի մինչև վերջին կաթիլը՝ Սիրուց դրդված, զոհացնելու համար Իմ Հորը, որ Երկնքում է:

Ես քեզ սովորեցնում եմ միայն չափավոր կերպով, աղջի՛կս: Եթե դու լսես Ինձ, կսովորես: Իմ Աչքերը անընդհատ հետևում են քեզ, պաշտպանելով ու օրհնելով քեզ: Ես Նա եմ, ով բոլորից շատ է քեզ սիրում: Ուրեմն, մի՛ վախեցիր, աղջիկս, Վասո՛ւլա: Մի՛ վախեցիր Իմ դաստիարակությունից, որ կկողմնորոշի ու կդարձնի քեզ դեպի Ինձ՝ ցույց տալով քեզ Իմ Գործերի փառավորությունը, դրանց Շքեղությունը և Իմ Սրտի Գանձերն ու Իմ Սիրո Կլանող Կրակը: Մի՞թե Ես երբևէ հուսախաբ եմ արել քեզ: Մի՞թե երբևէ ընդդիմացել եմ քո կանչերին, երբ դու Իմ կարիքն ես ունեցել:

~ Օրհնյալ ազգեր, օրհնյալ ժողովուրդ, օրհնյալ արարչություն: Ուրեմն ինչպե՞ս է, որ դուք ընդդիմանում եք Իմ Սիրուն և մոլորվել եք՝

[1] Հիսուսն այնքան ուրախ էր՝, որ բարձրաձայն գոչեց այս բառերը:

սատանային հեշտ զոհ դառնալու համար, թույլ տալով ինքներդ ձեզ զուր տեղ կանչել Իմ Անունը: Այն հոգին, որ ձեր մեջ է, սերո՛ւնդ, ապստամբ հոգի է, որը ղեկավարում ու առաջնորդում է ձեզ բոլորիդ ապրելու մի զգայական կյանքով, մի անմպատակ կյանքով, մի անաստված կյանքով՝ սրբությունը փոխարինելով այլասերությամբ: Օ՜հ, սերունդ, ո՞ւր է Նշանը Իմ և ձեր միջև: Ի՞նչ եք արել այն: Ո՞ւր է ձեր հավատը Իմ հանդեպ: Ինչպե՞ս եք դուք ձեզ թույլ տվել հրաժարվել Ինձանից: Մի՞թե չեք լսել, թե որքան ավելի մոտենաք Ինձ, այնքան ավելի ես կմոտենամ ձեզ:

Ձեր աչքերը հառած պահեք Ինձ վրա, առանց աջ ու ձախ նայելու: Թույլ տվեք, որ մի օր ասեմ. Զավա՛կս, բարով ես եկել քո Հոր Տունը: Դու Ինձ համար մի հանգստացնող բուրմունք ես եղել: Դու հետևել ես Իմ Օրենքին ու սրբորեն ես ապրել: Դու պտղաբեր ես եղել և կերակրել ես աղքատներին: Ուրեմն, ե՛կ, զավակս, նետվիր քո Հոր Բազուկների մեջ և հավիտյանս հավիտենից ապրիր Իմ Սրտում:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 21, 1990

Իմ սիրելի Յահվե,
մեզ դարձյալ աստվածային դարձրու,
նորոգիր մեզ: Ձևավորիր մեզ
Քո Աստվածային Պատկերով,
Քո Սուրբ Պատկերով,
որը մենք կորցրել ենք:

Իմ Վասուլա, ես կլսեմ քո աղերսները, և ինչպես որ ես քեզ վրա եմ տեղացել Իմ Օրհնությունները, այնպես էլ ես կծածկեմ այս երկիրը շքեղ հանդերձներով, փառավոր կատարելությամբ հագցնելով նրան, և կստիպեմ նրա մարդկանց երեսնիվայր գետնին ընկնել՝ երկրպագելու Ինձ: Բայց նախ Իմ Մաքրագործող Կրակը ես պետք է թափեմ այս սերնդի վրա: Ես պետք է ցած իջնեմ, որպեսզի իրենց որջերից քշեմ աղվեսներին, որոնք ավերում են ամեն մի նոր խաղողի այգի: Ես ձեզ հիմա սա ասացի, մինչ այն տեղի ունենալը, որ երբ դա պատահի, դուք հավատաք: Ինչպես դիակն են արթնացնում մահից, այնպես էլ ես հարություն պիտի տամ այս երկրի քայքայվող մարմնին՝ դարձնելով այն մի փառավոր մարմին, փոխակերպելով ձեզ աստվածային մի ժողովրդի՝ քահանայից մինչև աշխարհականը:

Այսօր ձեր սերունդը հավատ չունի ու մերժում է հավատալ Ինձ, և անցնող ամեն մի օրվա հետ, Իմ հովիվներից ավելի շատերն են գրավվում աշխարհով ու հարստության հմայքով: Նրանք կապվում են Իմաստությանը, և երբ Շնորհը գալիս է նրանց ոտքերի առջև, նրանք մերժում են ընդունել այդ Շնորհը: Նրանք չեն ուզում այդ Շնորհն ընդունել, որովհետև. չեն ուզում Այն հատուցել շնորհով:

Իմ Եկեղեցին բաժանված է, ինչպես Կայենն ու Աբելը, որոնք եղբայրներ են, բայց՝ բաժանված, մեկ արյունով, բայց՝ տարբեր: Աբելը ձեռնհաս էր, իսկ Կայենը՝ ոչ: Մեկն անկեղծ էր, մյուսը՝ ոչ: Մեկը բարեհոգի էր ու գոհացնում

էր Ինձ, մյուսը անբարյացակամ էր ու բարկացնում էր Ինձ: Եվ այսօր Իմ Աբելները, ովքեր ծառայում են Իմ Եկեղեցում, տառապում են... Նրանք տառապում են, քանզի տեսնում են, որ իրենց սեփական եղբայրները դավաճանում են Ինձ: Սա մի պատուհաս է, որ ծանրորեն ճնշում է Իմ հովիվներին և քանդում է նրանց եղբայրությունը ու բաժանում մասերի: Երանի նրան, ով հետևում է Իմ Պատվիրաններին, քանզի նա կզգա Իմ բարերար Սերը: Երանի խաղարարներին, երբ նրանք գործում են խաղաղության համար, նրանք կկոչվեն Իմ որդիները: Սերը շուտով ձեզ հետ կլինի: Սրա համար է, որ պետք է հաստատակամ լինեն Իմ Աբելները, ովքեր հետևում են Իմ Պատվիրաններին ու պահում են իրենց հավատն Իմ հանդեպ:

Իմ Վասուլա, մնացյալը[1] ես քեզ ավելի ուշ կտամ: Հետևողական եղիր քո աղոթքներում և երախտապարտ եղիր: Ուրախացրու քո Հորը, որ Երկնքում է: Մի՛ վախեցիր... Ես քեզ հետ եմ: Սիրո Աչքերը քեզ վրա են:

Հիսուս է Իմ Անունը:

ΙΧΘΥΣ

Ալելուիա:

Սեպտմբերի 24, 1990

Խաղաղություն քեզ Վասո՛ւլա, Ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ: Շարունակիր Ինձ ուղղված քո աղոթքները, դա ուրախացնում է Իմ Սիրտը: Ասա՛.

«Հիսո՛ւս, Դու, որ փրկեցիր ինձ,
օրհնյալ լինես:
Հիսո՛ւս, Դու, որ մնում ես ինձ,
օրհնյալ լինես:
Հիսո՛ւս, ես սիրում եմ Քեզ:
Սովորեցրու ինձ
Քեզ ավելի շատ սիրել. ամեն»:

Փայփայիր Ինձ պարզ խոսքերով, որոնք, այդուհանդերձ, քո սրտից են գալիս: Ա՜հ, սիրելիս, անդադար օրհնիր Ինձ, հանգստացիր Իմ Սրտում ու սփոփիր Ինձ, ինչպես ես եմ քեզ սփոփում: Սա այն է, Իմ Վասուլա, ինչի կարիքը ես ունեմ հիմա:

[1] Նա ցանկանում էր Ինձ սովորեցնել մնացյալը, Աստվածաշնչի մի որոշ հատվածից:

Սեպտեմբերի 25, 1990

(Մեր Սուրբ Մոր Պատգամը ուղղված բոլորիս):

Խաղաղություն ձեզ, սիրելի երեխաներ: Թույլ տվեք հիշեցնել ձեզ, որ Տերը գիտի յուրաքանչյուրի սիրտը: Տերը փնտրում է ձեր սիրտը: Եկեք Նրա մոտ մաքուր սրտով, և Նա կուսուցանի ձեզ: Տերը կհանգստացնի ձեր հոգին: Նա կառաջնորդի ձեզ Իր Ճանապարհով ու Ճշմարտության մեջ: Ես աղաչում եմ ձեզ, դուք, որ դեռևս տատանվում եք, մի՛ փակեք ձեր սրտերը խոհեմության ու ողջամտության համդեպ: Վերադարձեք Տիրոջ մոտ, և Նա կվերադառնա ձեզ մոտ: Երկնքից հիմա մի Ուրախություն կիջնի ձեր մեջ, մի Լույս կփայլի ձեր մեջ: Պատրաստ եղեք ընդունելու այս Լույսը, պատրաստ եղեք ընդունելու Տիրոջը:

~ Ո՞ւմ ձեռքերն են մաքուր այսօր: Եվ ո՞վ կարող է ճշտորեն ասել, որ իր սիրտը մաքուր է: Ո՞ւմ հոգին է Տիրոջ հետ կատարյալ ներդաշնակության մեջ: Սիրելինե՛րս, Իմ յուրայիններ, Իմ զավակներ... Դեպի Տերը տանող ճանապարհը ձեր մեջ է. <u>այն գտնվում է ապրողների երկրում</u>: Ուրեմն ձեր ձեռքերը մեկնեք դեպի Նրա Սրբարանը, և Տերը Երկնքից կհասնի՝ ձեզ դեպի Իրեն քաշելու համար: Ձեր ձեռքերը մեկնեք դեպի Նա, և Նա, Կարեկցանքով լի, կկոնարհվի դեպի ձեզ: Եկեք Տիրոջ մոտ, առանց հապաղելու: Բարձրացրեք ձեր աչքերը դեպի Երկինք և մի՛ նայեք որևէ մեկին, այլ միայն Նրան՝ Տիրոջը, ձեր Աստծուն: Մի՛ ուրախացեք ոչ մեկով, այլ միմիայն Նրանով՝ ձեր Փրկչով: Մի՛ փնտրեք, մի՛ փնտրեք ոչ մեկին, այլ միմիայն Տիրոջը՝ ձեր Փրկչին: Մի՛ երգեք, մի՛ երգեք ոչ մեկի համար, այլ միայն Սրբի համար:

Պե՞տք է, որ Ես ձեզ հիշեցնեմ, որ Տերը Քնքշություն ու Կարեկցություն է, համբերատար է ու լի է Ներողամտությամբ ու Ողորմությամբ: Հիսուսն այն Քարն էր, որը մերժվեց «շինարարների» կողմից ու դարձավ Անկյունաքարը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Աստծո Թագավորությունը ձեր մեջ է, և Նրա Շնորհի Սուրբ Հոգին քնքշորեն փչում է հիմա ձեր ազգերի վրա՝ ձեզ կենդանացնելու համար: Ուրեմն եկեք ու տեսեք Սուրբ Հոգու Հարսանիքը, որը պիտի պսակվի ձեր երկրների հետ: Մի՛ մերժեք Սուրբ Հոգուն, որն այնքան ակնհայտորեն հեղվում է ձեզ վրա: Մի՛ եղեք «շինարարների» պես, ովքեր մերժեցին այն քարը, որը անկյունաքարը դարձավ:

<u>Աստված կամենում է, որ ամեն ոք փրկվի</u>: Իսկ այժմ, սա Իմ հանդիսավոր զգուշացումն է բոլոր նրանց, ովքեր լսում են այս գրքի մարգարեությունները:

<u>Մի՛ ճնշեք Հոգին</u>,

այն Հոգին, որ հիմա փչում է ձեզ վրա, երբ ձեր ուրացությունը հասել է իր գագաթնակետին: Հետո մի՛ ասեք, Դատաստանի Օրը. «Ես երբեք չէի լսել, ես չէի իմացել»: Հիսուսն ու Ես ամեն բան նախապես հայտնի ենք դարձնում, մինչ դրանց պատահելը, որպեսզի, երբ Աստծուն երես առ երես հանդիպեք, չկարողանաք ասել. «Ես չգիտեի...»: ...Գոռոզի միջնաբերդը պիտի ընկնի... ու դևերը դուրս պիտի քշվեն նրա արգանդից:

- Օրհնյալ լինեք: Օրհնյալ լինեք, որ Ինձ լսեցիք: Ես ձեր սիրեցյալ Մայրն եմ, Աստվածամայրը (Theotokos), ով սիրում է ձեզ բոլորիդ:

Սեպտեմբերի 28, 1990

Հիսո՞ւս:

Ես եմ:

Հենվիր Ինձ վրա, հենվիր Իմ Ուսին: Ինչպես որ Ես եկա ու համեցի քեզ զնդանից և տարա Իմ Տունը ու բժշկեցի քեզ, այնպես էլ կշարունակեմ օգնել, որպեսզի քո քայլերը ընթանան արդարության ճանապարհով: Թող քո ձեռքերը կառչեն Ինձանից: Ես գիտեմ, որ դու թուլասիրտ ես[1], բայց Ես քեզ կուժեղացնեմ, որ դիմադրես չարին:

- Ա՜հ, արարչություն, Ողորմությունն այժմ իջնում է Դատաստանից առաջ: Ողջունեք Իմ Ողորմությունը հիմա ու Իմ Հոգին կհանգչի ձեզ վրա: Մոտեցե՛ք Ինձ, դո՛ւք, որ ցանկանում եք Ինձ, և ձեզ լցրեք Կյանքի Իմ Անսպառ Աղբյուրներից, քանզի նրանք, ովքեր ճաշակում են Ինձ, ավելի պիտի քաղցեն, և ովքեր ըմպում են Ինձ, ավելի պիտի ծարավեն[2]: Եվ Ես, ինչպես Մանանա, պիտի լցնեմ ձեր հոգին, և ինչպես մի բրուտ, պիտի ձևավորեմ ձեզ, տալով ձեզ այն, ինչ կորցրել եք՝ Իմ Աստվածությունը:

- Հետո Ես ցույց կտամ ձեզ Իմ Թագավորությունը և Իմաստությունը կուղարկեմ ձեզ, որպեսզի սովորեցնի Իմ Սուրբ գործերի Գիտությունը, և Ես ձեզ Իմը կդարձնեմ հավիտյանս հավիտենից: Դուք կլինեք Իմ որդիներն ու դուստրերը և կփառաբանեք Ինձ Երկնքում Իմ Ժողովքի հետ միասին: Հետո, Ես ձեզ մառախուղի նման կսփռեմ, որպես մի պաստառ ցուցադրելու Իմ Գիտությունը, որը դուք ստացաք հենց Իրենից՝ Իմաստությունից, որպեսզի սովորեցնեք ուրիշներին արդարացի լինել իրենց դիտավորությունների և իմացության մեջ, որպեսզի սերնդից սերունդ Իմ Սուրբ Անունը Սուրբ պահվի: Ձեր հետնորդները կունենան ձեզանից ծնունդ առած մի հարուստ ժառանգություն, և չնորհիվ Իմ Անսահման Ողորմության, նույնը՝ և ձեր զավակների զավակները, և ապագայում ազգերը կիմանան, թե ինչ է նշանակում Աստծու հանդեպ վախը:

Իմ բոլոր բարիքները անցյալ չեն դարձել: Իմ բարիքները անսպառ են և լցնում են ամեն մի հովիտ, և Իմ Գթությունը ձեր հանդեպ ամեն օր նորոգվում է: Ես անվերջ Իմ Սրտից հեղում եմ Իմ Սերը, ինչպես մի հոսող գետ, որպեսզի ջրեմ ձեր անապատը ու կենդանացնեմ ձեզ: Այդ Ես չէի, որ ձեզ ստիպեցի ապրել խավարում: Ես ցանկություն չունեմ ձեզ դիտելու վերևից, թե դուք ինչպես եք ձեզ մեկուսացնում և ձեր հոգիները բանտարկում ամենախավար զնդաններում: Իմ ցանկությունն է ձեզ Տուն բերել խաղաղությամբ: Իմ ցանկությունն է ձեր անապատներն ու չորացած հողերը կանաչ արոտավայրեր դարձնել՝ ձեզ կշտացնելու համար:

Վասո՛ւլա, Իմ բոլոր Պատգամներն աղոթքներ են: Կարդա՛ և գրիր Հռոմ.

[1] Հիսուս ժպտում էր:
[2] Սիրաք 24:29

8:26-27:

Նույնպես և Հոգին օգնության է հասնում մեր տկարություններին, որովհետև երբ մենք ճիշտ բառեր չենք գտնում աղոթելու համար, Հոգին Ինքը այնպես է արտահայտում մեր աղաչանքները, որ բառերն անկարող են արտահայտել: Եվ Աստված, որ տեղյակ է մեր սրտի բոլոր խորհուրդներին, լիապես գիտի, թե ինչ նկատի ունի Սուրբ Հոգին, և որ սրբերի աղաչանքները, որոնք արտայայտվում են Սուրբ Հոգու միջոցով, Աստծո մտքին համաձայն են:

Խորհրդածիր սրա մասին... Ես սիրում եմ քեզ, կրկնիր Ինձ հետ հետևյալը.

Հիսո՛ւս, ո՛չ մահը, ո՛չ կյանքը,
ո՛չ հրեշտակները,
ո՛չ իշխանությունները,
ո՛չ մի բան, որ գոյություն ունի,
ո՛չ էլ գալիքները
և ո՛չ զորությունները,
ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն,
և ո՛չ մի ուրիշ արարած[1]
չեն կարող բաժանել ինձ Քեզանից:
Ես երդվում եմ
հավատարիմ մնալ Քեզ:
Սա է իմ հանդիսավոր երդումը:
Օգնիր, որ հավիտյանս հավիտենից
պահեմ այս երդումը. Ամեն:

(Ես կրկնեցի այն, ինչ Հիսուս տվեց ինձ):

(Ավելի ուշ)

Հոգի, աղոթի՛ր, այսինքն, խոսիր Ինձ հետ: Մի՛ անտեսիր այն, որ Ես Ներկա եմ Ամենուր, լոկ նրա համար, որ գայթակղեցնողը շարունակում է գայթակղեցնել քեզ: Լսի՛ր Ինձ, դիմադրիր, դիմադրի՛ր նրան: Ե՛կ հիմա, Ես կրկին քո միջոցով ցույց կտամ Ինքս Ինձ, եթե դու խոնարհությամբ ենթարկվես Ինձ և թույլ տաս Իմ Հոգուն հանդչել քեզ վրա Իմ Զարչարանքի ժամերին:

ΙΧΘΥΣ

Ես եմ, Քո Հիսուս:

[1] Հռոմ. 8:38-39

Հոկտեմբերի 1, 1990

Իմ Վասուլա, այդ ես եմ, քո Տերը: Զգա՛ Ինձ, ես քո կողքին եմ: Զանազանիր Ինձ[1]:

Ես կիսում եմ Իմ խաչը քեզ հետ, Իմ Փշե Պսակը և Իմ Գամերը: Ես քեզ ընտրել եմ մեռյալների երկրից և վերակենդանացրել Իմ Սրտում, որպեսզի քեզ դարձնեմ Իմ Անհագուրդ Սիրո զոհը և դարձնեմ քեզ փոխհատուցում շատ հոգիների համար, ովքեր գերադասում են բաժանված մնալ և իրենք իրենց տարբերում են Իմ Սուրբ Անվան ներքո: Ես քեզ հետ կիսում եմ Իմ տառապանքներն ու Իմ վիշտը, աղջի՛կս, սփոփիր Ինձ, և Ես կսփոփեմ քեզ:

Վասո՛ւլա, զավակս, Ես հարություն եմ տվել քեզ, որ մեղմացնես Իմ Արդարադատությունը, Ես հարություն եմ տվել քեզ, որ ուրախացնես Հոգիս: Ուրեմն, մի՛ վախեցիր, զավակս, Իմ Հայրը շնորհ գտավ քո մեջ, այն բոլոր բաների համար, որ դու չունես: Դու արժանիքներ չունես, ամենևին չունես, բայց Ես բարեհաճ եմ քո հանդեպ, չնայած քո թշվառությանը, քանզի Իմ Հավատարմությունը և Իմ Ազնվությունը անչափելի են: Ավելի շատ զոհաբերիր, զավակս: - Իմ խունկ և զմուռս, որքա՜ն եմ Ես քեզ սիրում: Ես քեզ կդարձնեմ խանդոտ ու ծարավի Ինձ համար, քո Աստծո համար, և հավատարիմ Իմ Պատվիրաններին: Ես պիտի օծեմ քեզ Իմ յուղով: Օ՜, Իմ սեփականություն, ապրիր Իմ մեջ և թույլ տուր Ինձ ապրել քո մեջ: Ես Նա եմ, ում դու երբեք չպետք է դիմադրես, ում հանդեպ դու երբեք չպետք է թերանաս, երբեք չպետք է մերժես:

Ես Նա եմ, ով քո մեջ Կյանք է փչում: Թույլ տուր ամբողջությամբ տիրեմ քեզ: Ինձ դիմադրություն ցույց մի տուր: Մի՞թե քեզ չնորհներով չեմ հեղեղում: Մի՞թե ամբողջությամբ չեմ կլանում քեզ Իմ Սրտի Բոցավառ Կրակով: Մի՞թե Ես քեզ ցույց չեմ տվել Իմ հրեշտակներին ու Սրբերին, ովքեր ապրում են Իմ Ժողովքում: Մի՞թե Ես երբևէ զրկել եմ քեզ տառապանքից, հոգի: Ուրեմն, Իմ հանդեպ քո պարտքն է սիրել Ինձ: Քո պարտքն է, հոգի, գետնատարած երկրպագել ու պաշտել Ինձ: Քո պարտքն է ուրախացնել Իմ Հոգին և ընդունել Ինձ Իմ Սուրբ Զոհաբերության մեջ:

Արի՛... արի՛... մոտեցիր Ինձ: Թույլ տուր Ինձ, որ ժամանակ առ ժամանակ չշնչամ ականջիդ քո հանդեպ ունեցած Իմ Սիրո մասին: Թույլ տուր, որ փաղաքշեմ քեզ Իմ Քնքշությամբ: Թույլ տուր, որ փաղաքշեմ քեզ Իմ Օրհնություններով: Արի ու գլուխդ դիր Իմ Սրտին: Դու միայն Իմ նոթատետրը չես, հոգի՛, դու նաև Իմ Սիրեցյալ Հարսն ես, ում Իմ Սիրտը սիրում է ու ցանկանում է երգել քեզ համար: Իմ Ձայնը քաղցր է, Իմ Սիրտը՝ Սիրո մի Բոցավառ Հնոց, իսկ Իմ Բույրը հրապուրիչ ու նուրբ է:

Տե՛ս, թե ինչպես եմ շտապով գալիս դեպի քեզ, նախքան դու կբացես շուրթերդ և որևէ բառ կարտասանես Ինձ համար: Դու հիմա Իմն ես, ինչպես ծաղիկը տատասկների մեջ: Ինչպես ծով նետված մի ուռկան, Ես քեզ նետել եմ հոգիներ որսալու Ինձ համար՝ քո Թագավորի համար:

Եթե դու չգիտես սա, Վասո՛ւլա, աղջիկս, Ես քեզ ասում եմ հիմա: Հետևիր Իմ Արյան հետքերին ու վերցրու այն խաչը, որ Ես վստահել եմ

[1] Այստեղ Հիսուս դիպավ իմ ձեռքին:

քեզ: Հետևիր Իմ Արյան հետքերին, այն հետքերին, որ դու փնտրել ես քո մանկությունից ի վեր[1]: Դրանք քեզ կառաջնորդեն դեպի Ինձ, Իմ բազուկների մեջ և Իմ Սուրբ Սրտի մեջ: Օ՜, Վասուլա, Ես կպահեմ քեզ աչքիս լույսի պես: Ես քեզ բարձրացրել եմ զնդանից, որ քեզ տեղ տամ Իմ Սրտի նախասիրած հոգիների հետ: Ես պսակվել եմ քեզ հետ, որ կիսեմ Իմ խաչը, որպես մեր ամուսնական անկողինը, և դրանով իսկ քեզ հավիտյանս Իմն եմ դարձրել:

Այժմ խոնարհեցրու աչքերդ քո Թագավորի ու Ամուսնու առաջ: Խոնարհեցրու աչքերդ ու թույլ տուր, որ Իմ Ձեռքը դնեմ գլխիդ և օրհնեմ քեզ ու փչեմ Իմ Սիրո քաղցր Հոգոցը քո ճակատին, Քնքշության Իմ շունչը: Զավա՛կս, Ես ուզում եմ քեզ ազատ տեսնել ամեն մի մտահոգությունից: Ես միայն սպասում եմ, որ ողորմած լինեմ քո հանդեպ: Ես միայն սպասում եմ, որ հավիտյան թաքցնեմ քեզ Իմ Սուրբ Սրտում, որտեղ դու Ճշմարիտ Խաղաղություն կգտնես:

Հոկտեմբերի 10, 1990

Խաղաղություն քեզ, զավա՛կս: Թույլ տուր Ինձ օգտագործել քո ձեռքը: Այդ Ես եմ, քո Հիսուս, այդ Սերն է, որ խոսում է քեզ հետ ու խնդրում է քեզ…

Օ՜, արի ու կլանիր Ինձ:

Ա՜հ, Իմ Վասուլա, ուրեմն Ես կլցնեմ քեզ… Լսիր Ինձ ու գրիր Իմ Պատգամն ամբողջ աշխարհի համար:

Խաղաղություն ձեզ: Սերը խոսում է, Սերը տալիս է, Սերը բժշկում է անգամ անբուժելի թվացող վերքերը: Սերը սփոփում է նրանց, որոնց մասին հոգ չեն տանում: Իմ Սերը ձեր հանդեպ հավիտյան է, և Ես հայտնի եմ Իմ մշտական սիրով:

Մոտեցե՛ք… մոտ եկեք Ինձ սրտանց աղոթելով: Ես ձեզ տեղ եմ առաջարկում Իմ դպրոցում: Ես ձեզ Իմաստություն եմ առաջարկում, որ սովորեցնեմ ձեզ Իմ Գիտությունը: Երանի նրանց, ովքեր խոնարհությամբ ընդունում են Իմ Հրահանգները և սրտին մոտ են ընդունում Իմ խոսքերը:

Լսե՛ք Ինձ, սիրելիներս, Աստվածաշունչն ասում է. «Իմ խաչի լեզուն կարող է անտրամաբանական լինել նրանց համար, ովքեր փրկության ճանապարհին չեն գտնվում: Բայց ձեզանից նրանք, ովքեր այդ ճանապարհին են, տեսնում են նրանում Աստծո փրկարար զորությունը»[2]: Եվ այդ լեզուն է, որ Ես գալիս եմ սովորեցնելու ձեզ: Այդ

[1] Երբ ես երեխա էի, տեսիլքներ էի ունենում, որ հետևում էի Հիսուսին Գողգոթայի ճանապարհին և նրա մոտ էի, խաչի տակ:
[2] Ա. Կոր. 1:18

Սիրո Լեզուն է, որ դուք կլսեք Իմ դպրոցում: Եվ դո՛ւք, դուք, որ ցանկանում եք սովորել, օրհնյալ եղեք, ուժեղ ու երջանիկ: Թեև խոչընդոտների կհանդիպեք, մի՛ վախեցեք, ապավինեք Ինձ: Բայց վայ նրան, ով ստեղծում է այդ խոչընդոտները: Նա պատասխան կտա Ինձ Դատաստանի օրը:

Իմ Վերադարձը մոտ է, և Ես ձեզ անընդհատ նշաններ եմ տալիս, որ նախապատրաստեմ ձեզ: Սերը վերադարձի Ճանապարհին է: Ես գալիս եմ ետ դեպի ձեզ:

- Ասեք Ինձ, երբ թագավորը մտնում է մի քաղաք, մի՞թե նրան ընդունելու նախապատրաստություններ չեն լինի: Ամբողջ քաղաքը իրարանցման մեջ կլինի, իսկ թագավորը իրենից առաջ կուղարկի իր ընտրյալներին և իր արքունիքին, որ ճանապարհ պատրաստեն իր համար և հարթեն իր ուղիները: Նա իր սուրհանդակներին կուղարկի, որ հայտարարեն իր գալուստը: Նա կխնդրի նրանց բարձր ձայնով բղավել. «Ահա ձեր Թագավորը: Ձեր Թագավորը գալիս է Իր Սիրտն Ափի մեջ, որպեսզի այն ձեզ տա: Ողորմությունը հիմա կխոնարհվի երկնքից և Իր Գահից: Նա խղճացել է ձեզ»:

Սա է պատճառը, որ նախքան Իմ Վերադարձը, Ես Ինձանից առաջ ձեզ եմ ուղարկում Միության Տապանակը: Ես ուղարկում եմ ձեզ Հայտնության Կնոջը, երկրորդ Եվային, որ պիտի ջախջախի օձի գլուխը իր կրնկի տակ: Ես Ինձանից առաջ ձեզ եմ ուղարկում Իմ Մորը, որպեսզի մի լայն ճանապարհ բացի և այն հարթեցնի այս անապատում: Ես ձեզ եմ ուղարկում Երկնքի Թագուհուն, Երկնքի Դուռը, որ նախապատրաստի և ուսուցանի բոլոր նրանց, ովքեր դեռևս պառկած են փոշու մեջ, որպեսզի առաջ գան և խաղաղություն կնքեն Ինձ հետ՝ ձեր Թագավորի հետ, մինչև Իմ Մեծ Վերադարձը: Ես ուղարկում եմ ձեզ Խաղաղության Թագուհուն, որ կալսի երկրի մի ծայրից մյուսը և ձեզ մեկ առ մեկ հավաքի:

Մինչև Իմ Մեծ Վերադարձը, Ես ձեզ եմ ուղարկում Իմ ծառաներին՝ մարգարեներին, որ հիշեցնեն ձեզ Իմ Օրենքի մասին ու ձեզ ետ դարձնեն ձեր չար ճանապարհներից դեպի սուրբ կյանք և ձեզ հայտնեն իրադարձությունները, նախքան դրանց տեղի ունենալը:

Ես ուղարկում եմ ձեզ Իմ հրեշտակներին, որ հիշեցնեն ձեզ Իմ Սրբության, Իմ Հոյակապության ու Իմ Շքեղության մասին: Ես ուղարկում եմ ձեզ Իմ խոսափողերին, որ նրանք ձեր տների տանիքներին բղավեն ու հայտարարեն Իմ Սուրբ Հոգու Հարսանիքի մասին: Ես չեմ հոգնի ձեզ կոչ անելուց, որ պակվեք Ինձ հետ: Ես չեմ վհատվի ո՛չ ձեր թշնամության, ո՛չ ձեր չորության պատճառով:

Ես կհետապնդեմ ձեր սիրտը, և ինչպես կույսի հետ ամուսնացող մի երիտասարդ, Նրան, ում դուք անընդհատ վիրավորել եք՝ կպակվի ձեզ հետ: Եվ Ես Իմ Սիրով կոգնեմ ձեզ, որ Իմ Սիրտը շրջապատող Փշերը փոխարինեք Ծաղկեպսակով, և ինչպես իր հարսանեկան պսակը կրող փեսան, Ես նույնպես կկրեմ այն, քանզի այդ պսակը կլինի Իմ Հաղթանակի Պսակը: Դա կլինի Իմ Ողորմության Պարգևը...

Սերո՛նդ, Ես ձեզ Իմը կդարձնեմ: Ես կբարձրացնեմ ձեզ ու կտանեմ, ինչպես փեսան է տանում հարսին իր բնակարանը, և Իմ հավիտենական Սիրով Ես կտանեմ ձեզ Իմ Սուրբ Սիրտը և ձեզ Իմը կդարձնեմ հավիտյան:

Շուտով, շատ շուտով Ես բաց կանեմ երկինքը և ցած կիջնեմ ողջ

զորությամբ: Եթե դուք լիովին հասկանայիք, թե ինչ եմ ուզում ասել, դուք ձեր ժամանակը չէիք անցկացնի թմրած ու անտարբեր վիճակում, այլ անդադար կաղոթեիք Ինձ, քանզի Ես հանկարծակի և կայծակի նման արագ պիտի իջնեմ լափող կրակի բոցով, և հայտնի պիտի դարձնեմ այն ամենը, ինչ թաքնված է եղել ձեզանից: Ես Իմ Մատով ցույց պիտի տամ բոլոր նրանց, ովքեր Ինձ պատվում էին միայն շուրթերով, երբեք Ինձ չծառայելով այն լեզվով, որ Ես էի սովորեցրել նրանց՝ Իմ Խաչի Լեզվով, Սիրո Լեզվով, այն Լեզվով, որ մարդկային հասկացողությունից վեր բաներ է սովորեցնում ձեզ:

Ես հայտնի կդարձնեմ ձեզ այն Կայենների, որոնց լեզուն Իմ Լեզուն չէ, այլ հարուստ առևտրականների ու առևտրի լեզուն է: Աղոթեք այդ Կայենների համար: Մի՛ դատեք նրանց: Ձեր ժամանակը անցկացրեք նրանց համար աղոթելով: Թույլ մի տվեք, որ ձեր լեզուն սայթաքի:

~ Նման մի՛ եղեք նրանց, ովքեր Իմ տեսանողներին ասում են. «տեսիլքներ մի՛ տեսեք», «մի՛ մարգարեանաք»: Թողեք, որ Իմ Արքունիքը Ինձ համար Ճանապարհ պատրաստի: Ոչ մի մարգարեություն երբևէ չի բխել մարդու նախաձեռնությունից: Երբ Իմ տեսանողներն ու մարգարեները խոսում են Իմ անունից, նրանք դա անում են չնորհով և Սուրբ Հոգու միջոցով, որ լցնում է նրանց, մղում է նրանց ու բացում է նրանց բերանը, որ կրկնեն Իմ խոսքերը: Եվ Ես Իմ խոսափողերի միջոցով պիտի շարունակեմ ձեզ հիշեցնել Ճշմարտությունը, եթե անգամ դուք գիտեք Ճշմարտությունը: Ես պիտի շարունակեմ բացահայտել Իմ ծրագրերն Իմ ծառաներին՝ մարգարեներին, և տեսիլքներով ցույց պիտի տամ Իմ Վեհափառությունը Իմ տեսանողներին: Ազատ թողեք Իմ ընտրյալներին ու Իմ նախընտրած հոգիներին, որ պատրաստեն Ճանապարհն Ինձ համար՝ ձեր Թագավորի համար: Թողեք, որ նրանք ավարտեն իրենց վկայությունը:

Ես ուղարկում եմ ձեզ Իմ Երկնային Արքունիքը՝ ձեր դարաշրջանի ամայության մեջ մարգարեանալու այս Վերջին Ժամանակների համար, որ ձեզ դարձի բերեմ նախքան Իմ Մեծ Օրը կգա: Հասկացեք, որ Ես իջնում եմ ոչ միայն Ողորմության, այլ նաև Դատաստանի համար: Ես Իմ սուրհանդակներին չեմ ասում, որ միայն արդարներին կանչեն: Ես նրանց ասում եմ, որ կանչեն նաև անարդարներին, թշվառներին, կաղերին, ձեր հասարակության մերժվածներին, և բոլորին, ում հանդիպում են փողոցներում, որ գան ու լցնեն Իմ դպրոցը: Ես ուզում եմ կանչել բոլոր նրանց, ովքեր երբեք Ինձ չեն փնտրել, անգամ չեն ճանաչել, որպեսզի գան ու բարգավաճեն Իմ Տանը, քանզի սրանք Ողորմության ու Շնորհի Ժամանակներն են:

Հետո, թող բոլոր նրանք, ովքեր տեսնում են ձեզ, նայեն ու սևեռուն դիտեն ձեր կերպարանափոխումը: Թող ձեր դեմքերի վրա և ձեր սրտի պայծառությամբ երևա, որ դուք հաճախում եք Իմ Դպրոցը, որ դուք Իմ աշակերտներն եք, իսկ Ես՝ ձեր Ուսուցիչը: Թող նրանք տեսնեն ձեր աչքերում այն ամենի արտացոլումը, ինչի մասին վկայել եք: Թող նրանք ձեր մարմնի վրա տեսնեն Իմ Վերքերի հետքերը: Եվ եթե որևէ մեկը հարցնի ձեզ, թե դուք ինչպես եք ստացել դրանք, ասացեք նրանց, որ դուք ստացել եք դրանք Ձեր Ուսուցչի ընկերների Տանը, որտեղ Նա սկզբում ստացավ դրանք... Ապա բարձրացրեք ձեր խաչը ու հետևեք Ինձ:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Սիրեցյալ Որդին և Փրկիչը, Իմ Շունչն եմ

փչում ձեզ վրա և օրհնում եմ ձեզ բոլորիդ, թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին: Գնացեք խաղաղությամբ և մեկ եղեք Իմ Անունով:

ΙΧΘΥΣ

(Մեր Օրհնյալ Մոր Պատգամը):

Խաղաղություն քեզ, Աստծո խունկ, քաջալերվիր, քանզի ես քեզ հետ եմ: Ես քեզ հետ եմ, և Իմ անթիվ հրեշտակներով ես շրջապատում եմ քեզ, որ պաշտպանեմ քեզ: Ես իջնում եմ սրբերի հետ, որ քեզ առաջնորդեմ:

Ես Երկնքի Թագուհին եմ, Ես Խաղաղության Թագուհին եմ, Ես ձեր Փրկչի Մայրն եմ: Ես Նա եմ, ով նախորդում է Տիրոջ Գալստյանը: Ես Նա եմ, ով լայն ճանապարհ բացեց, որ ձեր Փրկիչն իջնի երկրի վրա: Եվ այսօր, կրկին, Ամենաբարձրյալն ուղարկում է Ինձ, որ Ճանապարհ հարթեմ Նրա Վերադարձի համար:

Զնայած սատանան օգտագործում է մարդկանց, որ ուշացնի Իմ Աշխատանքը և խոչընդոտներ է ստեղծում, մի՛ վախեցեք, Տերն Ամենակարող է, և վերջում Մեր Սրտերը կհաղթեն: Ապավինեք Նրա Հզոր Ուժին, քանզի Նա կարող է սարերը շուռ տալ ու հալեցնել ժայռերը: Ոչինչ չի կարող կանգնեցնել Նրա Հզոր Ձեռքը:

~ Դուք ի՞նչ եք տեսնում ձեր գլխավերևում: Նայեք վեր, որ տեսնեք, թե ինչ է բարձրացնում Տերը: Տերը ձեր գլխի վերևում բարձրացնում է Իր Մեծ Սիրո ու Ողորմության Դրոշը: Նա գալիս է ձեզ նորոգելու Իր փաղաքշանքներով և ձեզ սնելու բերկրանքով: Նա գալիս է ձեզ պարուրելու Իր Զմռուռսի նուրբ բուրմունքով: Նա գալիս է հանգստացնելու ձեր վերքերը՝ Քնքշության Իր բալասանով: Նա ցած է իջնում, որպեսզի Իր յուղը թափի ձեզ վրա, սերո՛ւնդ, և օծի ձեզ: Թագավորը ձեզ կբերի Իր Բնակարանը, որպեսզի սփոփի ձեզ ու սրբի ձեր արցունքները: Նա ձեզ հսկում է Իր աչքի լույսի պես: Իսկ դուք, դո՛ւք, ձեր հերթին, կպատասխանե՞ք Նրա Սիրուն: Տվեք Նրան ձեր սիրտն ու ձեր կամքը:

~ Ձեզանից շատերը մոռացել են Աստծո ուղիները: Կարծես լճի վրա մի հոսանք ձեզ քշել տարել է ու գցել անզգայության ջրափոսի մեջ: Աղտոտված նյութապաշտությամբ, ձեր ընթացքը փոխել է իր ուղղությունը, և սրբությունից ու օրինական Ճանապարհից դուք գնացել հասել եք ուղիղ դեպի դևի որոգայթները և առյուծի երախը: Դուք չեք հետևել այն Թանկագին Արյան հետքերին, որ Հիսուս թողեց Իր հետևից, որպես ճանապարհի ուղեցույց ձեզ համար: Ո՛չ, դուք հետևեցիք այն ապականված ուղղություններին, որ սատանան հաստատել էր ձեզ համար, ուղղություններ, որոնք բոլորին առաջնորդում են դեպի անապատ, որտեղ չի գտնվի մեկը, որ հոգ տանի ձեր վերքերին, և չի գտնվի մեկը, որ սփոփի ձեզ, որտեղ և դուք կմեռնեք:

<u>Ձեր սերունդը չկարողացավ գնահատել Աստծո մեծ Սերը</u>: Սրա համար է, որ ձեր երկրները բոցավառվում են եսասիրության, անաստվածության ու սատանայի կատաղության պատճառով: Ու դեռ մինչև այսօր Նրա ձեռքը վեր է բարձրացված՝ ձեզ հարվածելու և բոլոր ազգերին կրակի մատնելու համար: Ձեր անաստվածության և ձեր համառության պատճառով, դուք

ինքներդ ձեզ փաթաթել եք մահվան պատանքի մեջ, դուք ձեր սիրելիներին պարուրել եք կայծքարի քուլայով: Ես երկնքից տառապանքով ձայն եմ տալիս ձեզ բոլորիդ, որ խաղաղություն կնքեք Աստծո հետ, որ հաշտվեք ձեր ընտանիքների հետ:

Երբ դուք դալիս ու աղոթում եք ուխտագնացությունների ժամանակ, արդյոք դուք դալիս եք մաքո՞ւր սրտով: Արդյոք դադարե՞լ եք չար արարքներ գործելուց: Արդյոք դուք հա՞շտ եք ձեր հարևանի հետ: Արդյոք դուք խոստովանե՞լ ու իսկապես զղջացե՞լ եք ձեր մեղքերի համար: Արդյոք դուք օրհնե՞լ եք ձեր թշնամիներին և ներե՞լ եք նրանց: Արդյոք դուք չարին սիրո՞վ եք հատուցել: Արդյոք իսկապե՞ս պատրաստ եք հանդիպելու Տիրոջը՝ ձեր ձեռքերը լի բարի գործերով:

- Օրհնեք նրանց, ովքեր հալածում են ձեզ և աղոթեք նրանց համար: Մի՛ դատեք նրանց: Շարունակեք աղոթել, քանզի ի՞նչ օգուտ ձեր նվիրաբերություններից, եթե ձեր սիրտը ներողամիտ չէ ու ոխակալ է: Ուրեմն, որտե՞ղ է ձեր սրբությունը: Մաքրագործեք ինքներդ ձեզ ու ապրեք Աստծո Լույսի և Աստծո Սիրո մեջ: Եղեք Ավետարանի ճշմարիտ վկան՝ ձեր սրտի ջերմությամբ ու պայծառությամբ: Եղեք Հիսուսի վկան, Նրա Խաչը կրելով Իր հետ: Եղեք Եկեղեցու վկան, հաստատակամ լինելով ձեր հավատի մեջ և միաբան լինելով Քրիստոսի Տեղապահի հետ: Երբեք թույլ մի՛ տվեք, որ ձեր լեզուն սայթաքի: Կատարյալ եղեք, ինչպես Տերն է կատարյալ: Թող երևա, որ դուք, արդարև, Աստծո մեծ Սիրո առաջին պտուղներն եք: Թող ամեն մի աչք վկայի ձեր բարի վարքագծի մասին և իմանա, որ այդ նրա համար է, որ դուք Ամենաբարձրյալի զավակներն եք: Թող Նրա Հինգ Վերքերի նշանները նույնպես երևան ձեր մարմնի վրա: Թող դա այն բանի նշանը լինի, որ դուք Նրա աշակերտներն եք, իսկ Նա՝ ձեր Աստվածային Ուսուցիչը: Ապրեք Մեր Պատգամներով ու եղեք, ինչպես հացահատիկը, որպեսզի սփռեք դրանք: Թող ձեր սիրո կանչը անցնի ամբողջ երկրի միջով, մինչև աշխարհի ծայրերը:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին և շնորհակալ եմ, որ Ինձ տրամադրեցիք ձեր ժամանակը: Գնացեք խաղաղությամբ:

Հոկտեմբերի 17, 1990

Հիսո՛ւս, այս գրքերում Դու մեզ ասել ես շատ բաների մասին, նախքան դրանց կատարվելը, որպեսզի, երբ դրանք կատարվեն, մենք հավատանք: Դու մեզ ասել ես, թե ինչպես ես հարություն տալու մեր քույր Ռուսաստանին, և ինչպես ես վերջ դնելու նրա անաստվածությանը: Եվ ահա, ամսի 14-ին Կարմիր Հրապարակի Սուրբ Վասիլի Եկեղեցին իր դռները բացեց Քեզ համար, և ես, նրա քույրը, շտապեցի նրա մոտ այդ օրը, որ ուրախանամ նրա տոնակատարությամբ: Բայց այն, ինչ ստացա նրանից, ապտակ էր իմ դեմքին... Քո ծառան ու իմ եղբայրը, ում ես սիրում եմ, հարվածեց ինձ: Քո ծառան հրաժարվեց ինձ օրհնելուց, և ասաց թե ինչու: Ես գնում էի մեր եղբայրների՝ կաթոլիկների մոտ և նրանց ձեռքից ստանում էի Սուրբ Հաղորդություն: Ո՞ւրք է, որ ես ամաչեմ Քո առաջ, Տե՛ր իմ: Սա մի տրտմություն էր, որ ես կարող էի տանել, եթե դրան ավելի վատ բան չհետևեր: Նա ասաց. «Այդ նշանակում է արտաքսում»: Մինչ սա պատահելը, Դու ինձ

նշան էիր տվել, թույլ տալով, որ զգամ Քո վիշտը՝ բերանս փայտից էլ չոր ու շուրթերս մագաղաթից էլ չոր դարձնելով:

Դեռ որքա՞ն պետք է
քրիստոնյաները բաժանված մնան:
Արի՛ ու ուղղիր մեր սրտերը,
վերադարձրու մեզ
մեր անմեղությունը:
Արի՛ ու այս խավարը
արշալույս դարձրու:
Ես շնորհակալ եմ, Տե՛ր,
որ ինձ առիթ տվիր
ապտակվելու ու նվաստացվելու,
և ինձ քաջություն տվիր,
որ հերթի կանգնեմ
մյուսների հետ միասին,
չնայած իմ ստացած վիրավորանքին,
և նորից մոտենամ նրան
ու համբուրեմ այն խաչը, որ նա
պահում էր իր ձեռքում, և ձեռքը,
որը հենց նոր հարվածեց ինձ:

Վասո՛ւլա, քո ցավը ոչինչ է Իմ ցավի համեմատ...: Չնայած նա սուր քաշեց Իմ դստեր վրա, մի՛ հուսահատվիր: Հույս կա հաշտության: Շուտով ես կապշեցնեմ քեզ մի մեծ Հրաշքով[1]: Շատ շուտով, ես՝ Տերը, կզարդարեմ Իմ Հարսին Իր երիտասարդության փառավոր կատարելությամբ, որով խաղաղության դաշն կկնքվի եղբայրների միջև: Իմ Եկեղեցին կբարձրանա, ինչպես Առավոտյան Աստղը: Արգելքները կվերանան... Ինչպես բեռնավորված մի ձիթենի, Նա հաստատուն կկանգնի Իմ առջև... Ինչպես գեղեցիկ ընձյուղներ տվող խաղողի մի որթատունկ, Նրա ծաղիկները կկրեն փառքի ու պայծառության պտուղը... Եվ կլինի միայն մեկ հոտ ու մեկ Հովիվ... Ես եմ Հարությունը... Աղջի՞կս[2]: Թող քո հույսը իզուր չլինի, դու վախենալու կարիք չունես: Գիշերվա սարսափները շուտով կավարտվեն[3]:

Հիշի՛ր, ես եմ քո կողքին: Ես երկար չեմ նայում նրանց սխալ վարքագծին, որպեսզի Իմ զայրույթից չբռնկվի Իմ Արդարությունը: Դրա համար ես թողնում եմ, որ Իմ Ողորմությունը հաղթի: Ես բժշկում եմ ձեր բոլոր հիվանդությունները, և Իմ Արյամբ սրբում թույնի բոլոր հետքերը, որպեսզի ձեզ բոլորիդ փրկեմ Գեհենից:

Ես Սեր եմ, իսկ Սերն Իր ամբողջ Քնքշությամբ ներում է հարվածողներին, ծաղրողներին, անարդարներին: Իմ Սուրբ Կարեկցանքով ես ձեզ բոլորիդ կբարձրացնեմ Իմ Սրտում: Մի՛ հուսահատվիր,

---

[1] Հանկարծ մի ներքին տեսիլքով ես տեսա, որ մեկը հագնված էր, ինչպես հարս, սպիտակ ու շլացուցիչ արծաթագույն հագուստներով և ամբողջովին փայլուն:

[2] Հիսուս շրջվեց ու կարեկցանքով լի աչքերով նայեց ինձ:

[3] Հիսուս սփոփում էր ինձ: Նրա խոսքերը նման էին շոյող բալասանի, որոնք բուժում էին իմ վերքերը:

Վասո՛ւլա, աղջիկս, դեռևս հույս կա հաշտության ու զարթոնքի... Դեռևս հույս կա...[1]: Մի՛ վախեցիր նրանցից, ովքեր սպանում են մարմինը, բայց չեն կարող սպանել հոգին: Առավել վախեցիր նրանից, ով կարող է ոչնչացնել և՛ մարմինը, և՛ հոգին դժոխքում[2]:

Ես կգամ, որպեսզի խաղաղություն բերեմ եղբայրներին և հիշեցնեմ նրանց Իմ Սիրո Քնքշության ու Իմ Ողորմության մասին, որ նրանք նույնպես, իրենց հերթին, կարողանան նմանվել Ինձ:

~ Մի շտապիր գնալ[3]... Լսի՛ր, եկեղեցին կկենդանանա, եկեղեցին կկենդանանա, սպասիր ու կտեսնես...

Հոկտեմբերի 20, 1990

Հիսո՞ւս:

Ես եմ:

Այն, ինչ խնդրում եմ քեզնից, սեր է: Սա է Իմ Թեման: Ես կարիք ունեմ քո սրտում գտնվող սիրո ամեն մի կաթիլի: Ես ուզում եմ քո ողջ սերը, որ փրկեմ նրանց, ովքեր գնում են դեպի հավիտենական կրակները: Երբ ես ասում եմ. «կենդանացրու Իմ Եկեղեցին», կամ՝ «զարդարիր Իմ Եկեղեցին», կամ՝ «միավորիր Իմ Եկեղեցին», ես նկատի ունեմ, որ դու աղոթե՛ս, աղոթե՛ս, անդադար աղոթես, աղոթես սրտով: Սիրի՛ր Ինձ ջերմորեն: Եվ քավության համար կատարած քո զոհաբերություններով, որոնք կմիանան Իմ նահատակ սրբերի քավության զոհաբերություններին, դու կփառաբանես Ինձ: Այո՛, աղջիկս, քո քավությամբ ու սիրով, Ինձ ուղղված քո ջերմեռանդ աղոթքներով, դու կարող ես փոխել գալիք աղետները, դու կարող ես փոխել բնական աղետները, դու կարող ես մարել Իմ Հոր բոցավառվող զայրույթը: Աստված կարող է մեղմանալ, քո աղոթքներով Նա կարող է մեղմանալ: Դու կարող ես զարդարել Իմ Եկեղեցին: Դու կարող ես միավորել Իմ Ժողովրդին Իմ Անվան ներքո՝ Պատարագը մեկ զոհասեղանի շուրջ մատուցելու համար: Դու կարող ես նորոգել նրանց հովվի գավազանը, այն գավազանը, որ նրանք նախ մեջտեղից կոտրեցին, իսկ հետո՝ տաշեղների վերածեցին: Մարդկանց համար այս միասնությունը անհնարին է թվում, սակայն Ինձ համար <u>ամեն ինչ</u> հնարավոր է: Ուրեմն, աղոթիր ու հատուցիր քո եղբայրների համար:

Ես կարիք ունեմ զոհաբերվող հոգիների, Ես կարիք ունեմ շռայլ հոգիների, որ չարին բարությամբ հատուցեն, չարին ինքնազոհողությամբ հատուցեն: Ուրեմն, մատուցե՛ք Ինձ ձեր կամքը, և Ես ձեզ կդարձնեմ Խաղաղության ու Սիրո Իմ Գործիքները: Ես ձեզ կդարձնեմ Հաշտության ու Միասնության Իմ Գործիքները:

Տե՛ր,

---

[1] Հիսուս մեկ անգամ ևս փորձում էր սփոփել Ինձ: Այնպես էր թվում, որ մեկը, որ ավելի շատ էր վիրավորված, փորձում էր սփոփել մյուսին, որի վերքերը այնքան էլ ծանր չէին:

[2] Մատթ. 10:28

[3] Ես մտածեցի, որ պատգամն ավարտվեց ու պատրաստվում էի գնալու:

մեր սեփական ուրացությունները
կշտամբում են մեզ:
Ներիր մեզ և օգնիր ուղղվել:
Մեզ ետ բեր մեր հարսանեկան
վաղ օրերի սիրո մեջ,
և հիշեցրու մեզ այն սերը,
որ մի ժամանակ ունեինք Քո հանդեպ
մեր երիտասարդ օրերին:
Թույլ մի՛ տուր,
որ չարը նորից հաղթի մեզ:

Այո՛, մատուցեք Ինձ ձեր աղոթքները, և Ես կնորոգեմ Իմ Տունը, որը նաև ձեր Տունն է: Հավատարիմ եղեք և այս հատուկ շնորհը կտրվի ձեզ: Ինչպես պայծառակերպությունը, Ես կայլակերպեմ Իմ Եկեղեցին, որ Այն ունենա Իր երիտասարդության, Իր հարսանեկան օրերի ողջ ճառագայթող փառքը: Իմ Սուրբ Անվան սիրույն Ես կանեմ այս ամենը: Ես կմիավորեմ ձեզ, որ ցույց տամ Իմ Զորությունը:

Տե՛ր, ուրիշ բաներ էլ կան: Ես Քեզ արդեն խնդրել եմ, բայց կուզենայի կրկին խնդրել, բայց չգիտեմ ինչպես ասեմ դա:

Ես կբացեմ քո բերանը, և դու կխոսես[1]:

Տեր, մի՞թե Դու չես ասել, որ Բարեխոսն ու Պաշտպանը՝ Սուրբ Հոգին, կուսուցանի մեզ ամեն ինչ և կհիշեցնի այն ամենը, ինչ Դու ասել ես մեզ: Հետո, մի՞թե Աստվածաշունչը չի ասում... «Եկեղեցում Աստված առաջին տեղը տվել է առաքյալներին, իսկ երկրորդը՝ մարգարեներին... [2] Եվ մի՞թե Աստվածաշունչը չի ասում... «...Նույնպես և ներկա ժամանակում մնացորդներ կան ըստ ընտրության շնորհի: Իսկ եթե շնորհից է, այլևս գործերից չէ, ապա թե ոչ, շնորհն այլևս շնորհ չի լինի»[3]: Եվ վերջապես, մի՞թե Աստվածաշունչը չի ասում. «Երբ մեկտեղ հավաքվեք, ձեզնից յուրաքանչյուրը շնորհ ունենա սաղմոս երգելու թե ուսուցանելու, Աստծո հայտնությունը բերելու...» [4] : Ուրեմն, ինչո՞ւ, Տե՛ր, մեր օրերում որոշ քահանաներ արհամարհանքով են վերաբերվում, մարգարեական կամ անհատական հայտնությունների մեծ մասին, մեկ աչքով են նայում և ոչ թե՝ երկու: Եվ ինչո՞ւ են որոշ քահանաներ ու անգամ եպիսկոպոսներ արհամարհանքով հարձակվում Քո Պատգամների վրա:

Իրականում, զավա՛կս, նրանք պայքարում են Իմ դեմ, քանզի նրանք ճնշում են Բարեխոսին, Պաշտպանին, աղջիկս: Այդ մարդիկ քեզ չեն առարկում, ո՛չ, հրեշտակս, նրանք Ինձ են առարկում, ոչ՝ քեզ: Եթե նրանք անտեսում են քեզ, ծաղի՛կս, դա այն պատճառով է, որ դու աճել ես նրանց անապատի մեջտեղում: Նրանք քեզ չեն ջրի, որ դու չորանաս ու թոշնես: Բայց նրանք մոռանում են, որ Ես քո Հավատարիմ Պահապանն եմ:

[1] Հանկարծ բերանիցս բառեր հորդեցին:
[2] Ա. Կոր. 12:28
[3] Հռոմ. 11:5-6
[4] Ա. Կոր. 14:26

Վասո՛ւլա, ես պետք է հիշեցնեմ քեզ հարսանեկան խրախճանքի առակը [1]: Աղջի՛կս, շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված: Հավատալը Իմ կողմից տրված շնորհ է, հավատ ունենալը նույնպես Իմ կողմից տրված շնորհ է: Սրանք Շնորհի ու Ողորմության ժամանակներ են: Սրանք այն ժամանակներն են, երբ Իմ Սուրբ Հոգին հեղվում է ձեզ վրա: Սրանք այն ժամանակներն են, երբ Իմ Սուրբ Հոգին ձեզ կբարձրացնի ձեր մեծ ուրացությունից, որպեսզի պսակվի ձեզ հետ: Ձեր դարաշրջանի թշվառությունը կթոթափվի ձեր վրայից, քանզի Իմ Սեփական Ձեռքով ես կքանդեմ ձեր մահվան պատանքը, որ հագցնեմ ձեզ ձեր հարսանեկան հանդերձները: Զգա՛ Իմ ուրախությունը, Իմ Վասուլա, զգա՛, թե ես ինչպես եմ արդեն ուրախանում գալիք իրադարձությամբ:

Իմ Սուրբ Հոգին կգա, որ երկրին Կրակ բերի, և որքան կուզեի, որ այն արդեն բոցավառված լիներ: Սրանք Իմ Սուրբ Հոգու Հարսանիքի ժամանակներն են: Սրանք այն ժամանակներն են, երբ ձեր Խաղաղության Թագավորը ուղարկում է Իր ծառաներին, Իր հրեշտակներին, Իր մարգարեներին ու Իր Երկնային Արքունիքը, որ գնան երկրի չորս ծայրերը և հրավիրեն Իր բարեկամներին Իր Ճաշկերույթին Իր Թագավորության մեջ և մատուցեն նրանց Իր Երկնային Մանանան:

Ես արդարամտությամբ ուղարկում էի Իմ սուրհանդակներին մինչև նրանց շեմքերը, որ հայտարարեն Իմ Վերադարձի մասին: Բայց ձեզանից շատերը չհավատացին ու նրանց վերաբերվեցին ինչպես ինքնակոչերի: Ուրիշները չուզեցին գալ, քանզի նրանք մարդկանցից եկող հարգանքը ավելի բարձր էին դասում, քան Ինձանից եկող հարգանքը: Քանի որ ես հրավիրել եմ ձեզ, իսկ դուք մերժել եք Ինձ, քանի որ ես կանչել եմ ձեզ, իսկ դուք ուշադրություն չեք դարձրել, քանի որ դուք անտեսել եք Իմ բոլոր խնդրանքները և մերժել եք Սիրո առաջարկը, ես Իմ Տունը կլցնեմ և Իմ Թագավորությունը կտամ ձեր հասարակության կողմից մերժվածներին, որ չփոթեցնեմ ձեզ բոլորիդ: Ես նրանց կվերադարձնեմ իրենց տեսողությունը և կբժշկեմ նրանց: Ես լայն կբացեմ Իմ Տան Դռները՝ նրանց ներս թողնելու համար:

Իմ սուրհանդակները բարձր կգոչեն փողոցներում և հրապարակներում: Նրանք կուղարկվեն Իմ կողմից, որպեսզի հրավիրեն այն դիակներին, որոնց հանդիպում են փողոցի ամեն մի անկյունում, և նրանց, որոնց երբեք չի ասվել Իմ մասին: Նրանք կտեսնեն Ինձ, և նրանք, ովքեր երբեք չեն լսել Իմ մասին, կլսեն և կհասկանան: Նրանք, ովքեր չեն փնտրել Ինձ, կգտնեն: Ինչպես որ Ես Իմ Սուրբ Դեմքը քեզ բացահայտեցի, աղջի՛կս, նմանապես Ես Ինձ կբացահայտեմ նրանց, ովքեր հաշվի չէին առնում Ինձ: Դուք չեք կամենում ընդունել Իմ Հոգին, ոչ էլ Իմ Սիրտը, որ ձեզ առաջարկում եմ Ափիս մեջ: Ես սա ասում եմ ձեզ հիմա, նախքան պատահելը, որպեսզի, երբ դա պատահի, դուք կարողանաք հավատալ, որ այդ Ե՛ս Եմ, որ Եմ:

Իմ Թագավորությունը ետ կվերցվի ձեզանից ու կտրվի մարդկանց, որոնց դուք կոչում եք արհամարհելի և հիմար, ձեր հասարակության մերժվածներին, և Իմ Տունը կվերաշինվի ու կբարձրացվի նրանց կողմից, որոնց դուք կոչում եք պարզամիտներ: Նրանք իրենց սիրով կվերականգնեն Իմ Տան փլատակները և այն ամենը, որ ավերվել է: Եվ այդ Իմ Սուրբ

[1] Մատթ. 22:1-14

Հոգին է, որ հովվություն կանի նրանց ու կսփոփի նրանց... Հպարտության միջնաբերդը շուտով կկործանվի ու կվերածվի մի փոշու կույտի... Արդարությունը կհաղթի: Աղոթի՛ր այդ հովիվների համար, աղոթիր նրանց դարձի գալու համար: Օրհնյալ եղիր, զավա՛կս, Ես չեմ ուշանա: Շուտով ու դեմ առ դեմ կտեսնես Ինձ:

Ես եմ:

Հոկտեմբերի 22, 1990

Վասո՛ւլա, սիրելիս, այդ Ես եմ՝ Սուրբը, քո սենյակում: Այդ Ես եմ՝ Հիսուս: Դու ուրա՞խ ես Իմ այցելության համար:

Շատ: Ես օրհնում եմ Քեզ... շատ-շատ, Տեր:

Ամուր պահիր բոլոր այն ուսուցումները, որոնք տալիս եմ քեզ: Թող ոչ ոք չխաբի քեզ: Անվերջ հավաքիր Իմ բարության ու քնքշության բերքը: Ես կշատացնեմ քո տեսիլքները, որ կարողանաս վկայել Իմ Անունով: Ես քեզ կապահովեմ բառերով, որ կարողանաս վկայել: Աղջի՛կս, հիշեցրու աշխարհին Իմ Մեծ Սիրո մասին: Սա պատգամ կլինի բոլոր ժամանակների համար: Խաղաղություն ձեզ, Ես Հիսուսն եմ, ձեր Փրկիչը, Ես Սրբոց Սուրբն եմ, որ խոսում է ձեզ հետ:

Ճշմարիտ եմ ասում ձեզ. Ես հատուկ շնորհներ կհեղեմ նրանց վրա, ովքեր կընդունեն այս վկայությունը, քանզի, ընդունելով Սիրո այս վկայությունը, նրանք հաստատում են Ամենաբարձրյալի ճշմարտացիությունն ու Անսահման Սերը, որովհետև այն ամենը ինչ գրված է, գալիս է Ինձանից: Սիրելիներս, Ես Իմ Հոգին տալիս եմ <u>առանց վերապահության</u>: Ես տալիս եմ Իմ Հոգին, որ կրկին ու կրկին հիշեցնեմ աշխարհին Իմ բարեհաճության ու ձեր հանդեպ ունեցած Իմ մեծ սիրո մասին: Ես անվերապահ տալիս եմ Իմ Հոգին, որ հիշեցնեմ ձեզ բոլորիդ Իմ Հինգ Վերքերի ու Իմ Զարչարանքի մասին:

Զավա՛կս, դու, որ կարդում կամ լսում ես Ինձ, նայիր քո շուրջը: Արշալույսը շուտով քեզ հետ կլինի... Եվ դու ստիպված չես լինի խորհրդակցել գիշերվա ստվերների հետ, որ շշնջում ու մրմնջում են, ոչ էլ ստիպված կլինես քայլել տառապանքի ու խավարի մեջ, քանզի ձեր կախարդները, ովքեր անարգեցին Իմ Սուրբ Անունը և փոխարինեցին լույսը խավարով, կբնաջնջվեն:

Սիրելիներս, Արշալույսը շուտով ձեզ հետ կլինի, և հենց որ լույսը բացվի, ձեր ծիլերը կծաղկեն: Առևտրականները, որոնք թափանցել են Իմ Եկեղեցին, կսարսափեն, իսկ բոլոր գնորդները կվհատվեն: Հարստացած ամեն մի առևտրական՝ կնվաղի, կուրացած Իմ Փառքով ու Իմ Լույսով: Նրանք կմնան մոլորված ու չփոթված Իմ առջև: Ադամանդանը բարձրացվում է ձեր տների կտուրների վրա: Իմ դեսպաններն այժմ ուղարկվում են իրենց պաշտոններին, սպասելով Իմ նշանին: Իմ Վերադարձը

մոտ է: Ուստի դուք, որ Իմ սուրհանդակներն եք, արագացրեք ձեր քայլերը, գնացեք ամեն մի բլրի վրա և հայտարարեք, որ դատաստանը շուտով կիջնի այդ առևտրականների վրա, քանզի նրանք նողկանք են դարձել Իմ Աչքին: Մի՞թե չեք կարդացել, որ արթուն մնաք ու ուշադիր լինեք, որպեսզի, երբ տեսնեք ավերածության պղծությունը հաստատված Իմ Սրբարանում, որի մասին խոսում էր Դանիել մարգարեն, կիմանաք, որ դա մարգարեի ասած նշանն է վերջին ժամանակների մասին: Ինչպե՞ս է, որ չեք կարողանում ճանաչել ժամանակները: Իմ Սրբարանի աղյուսները թափվել են, և դուք ապրում եք ձեր դարաշրջանի այս մեծ ուրացության մեջ:

Ինձ կեղեքողները հիմա կարծում են, որ իրենք հաղթել են, իսկ առևտրականները կարծում են, որ իրենք կշարունակեն առևտուր անել Իմ Սրբարանում: Բայց Ես ասում եմ նրանց. «Դո՛ւք, որ աղճատել եք ձեր իմաստությունը, փոխանակելով Իմ Պատկերը մի անկենդան արձանի հետ, մի կեղծ աստծո, մի կուռքի հետ, դո՛ւք, որ պայքարում եք, որ հաստատեք այս ավերածության պղծությունը և ոչնչացնեք Իմ Մշտնջենական Զոհաբերությունը, կխմեք Իմ Արդարությամբ լեցուն գինու բաժակը»: Պատկերը, ծեփված խառը դույներով, պատկեր, որ այս առևտրականները փորձում են ստիպել ձեզ որ մեծարեք ու հետևեք, Ես չեմ: Դա մարդկային այլասերված հմտության մի հնարք է՝ Իմ Սրբության ու Իմ Աստվածության գաղափարը նվաստացնելու համար: Դա կեղծ էկումենիզմ է, դա արհամարհանք է այն ամենի նկատմամբ, ինչ սուրբ է:

Ես տառապում եմ այս առևտրականների մեղքերի պատճառով: Աղոթե՛ք այս քահանաների համար, ովքեր առևտրականներ են դարձել: Նրանց մեղքը ծանր է: Աղոթե՛ք, որ Ես կարողանամ Իմ Ճշմարտության Հոգին դնել նրանց մեջ և ստիպել, որ նրանք հետևեն Իմ Օրենքին ու անկեղծորեն հարգեն Իմ Աստվածայնությունը: Սիրելինե՛րս, որոնց ճակատին Ես նշան եմ արել, որ Ինձ եք պատկանում, թույլ մի՛ տվեք, որ այդ առևտրականները ստիպեն ձեզ հետևել այս կեղծ պատկերին, զգոն եղեք:

Ես վաղօրոք ասում եմ ձեզ այս ամենը, քանզի ուզում եմ, որ դուք վստահ լինեք Ինձ վրա, ձեր Աստծո վրա, երբ մեծ նեղության ժամանակները հասնեն ձեզ վրա: Ես մտադիր եմ այցելել ձեզ: Արդեն իսկ գալիս է Իմ Մեծ Վերադարձի ժամը, և վա՛յ այն առևտրականներին, ովքեր պայքարում են Իմ Սրբարանում իրենց ավերածության պղծությունը հաստատելու և Իմ Մշտնջենական Զոհաբերությունը ոչնչացնելու համար՝ ստիպելով ձեզ ուտել իրենց պղծված կերակուրը: Վա՛յ այն առևտրականներին, ովքեր դավադրություն են նյութում Իմ Խոսքը ոչնչացնելու համար, բանական մոտեցումով բացատրելով այն: Վա՛յ այն հայհոյողներին, ովքեր տաս անգամ անարգեցին Իմ Սուրբ Անունը: Վա՛յ Գազանի հետևորդներին, ովքեր պատկերներ[1] փորագրեցին, հայհոյելով Իմ յոթ Հոգիների դեմ: Նրանց միջնաբերդը Իմ Բերանի Շնչով փոշու կույտի կվերածվի:

Եվ քեզ, զավա՛կս, որ կարդում կամ լսում ես Ինձ, քեզ, որ այցելեցի քո գերեզմանում ու Իմ Շունչը փչեցի քո մեջ, Ես ասում եմ քեզ. Հետևիր Իմ Արյան հետքերին, որ թողնում եմ Իմ ետևում, որպես նշան քեզ համար: Եվ եթե քո ճանապարհին որևէ անցորդ կանգնեցնի քեզ ու հարցեր տա, ասա նրան, որ դու Իմ աշակերտն ես, իսկ Ես՝ քո Ուսուցիչը, և դու գնում

[1] Կեղծ Քրիստոս, կեղծ ուսմունքներ, բանապաշտության ու բնապաշտության ուսմունքներ:

ես վկայելու խաչյալ Քրիստոսին, հարուցյալ Քրիստոսին: Իսկ եթե քեզ կանգնեցնի որևէ առևտրական, զգուշացիր նրա խարդախությունից, զգուշացիր, որ նա չփոխանակի այն խաչը, որ քեզ տվել եմ, այսպես կոչված մի այլասերված իմաստության հետ: Անխոս ու անբարբառ գրկիր քո ուսերին դրված խաչը, ավելի ջերմորեն, քան երբևէ, և հետևիր Իմ Արյան հետքերին, և դրանք կառաջնորդեն քեզ Ինձ մոտ: Եվ եթե որևէ մեկը նրանցից գործ հարուցի քո դեմ, դեմքդ մի՛ ծածկիր վիրավորանքից կամ հարվածից: Դեմ տուր նաև մեջքդ, որպեսզի նրանք ճանաչեն քեզ քո վերքերից: Թույլ տուր, որ դրանք Իմ Վերքերի կատարյալ պատճենը լինեն, քանզի դրանք քեզ կտրվեն հենց նույն մարդկանց կողմից, ովքեր հարվածեցին Ինձ՝ քո Ուսուցչին:

Եվ այդ ժամանակ Մարդու Որդու Նշանը կհայտնվի երկընքում, մի մեծ լույս կերևա ձեր խավարի մեջ, քանզի Ես, Սուրբը՝ մտադիր եմ փրկել ձեզ Իմ Անվան սիրույն:

Արի՛, զավակս, դու, որ լսում կամ կարդում ես Ինձ: Ես Իմ Սերը քո հանդեպ կրկին ցույց տվի այս վկայությամբ: Մի՛ ասա, որ Ես շատ հեռու եմ սիրելու համար, քանզի հենց այս պահին Իմ Աչքերը նայում են քեզ մի հատուկ քնքշությամբ ու մի սիրով, որ դու երբեք ամբողջովին հասկանալ չես կարող: Եթե ստիպված լինեի վերադառնալ միայն քո սիրո համար, քեզ փրկելու համար, Ես առանց նվազագույն տատանման կգայի ու կկրկնեի Իմ Զարչարանքները միայն քո սիրո համար: Հիմա հավատո՞ւմ ես Ինձ, երբ Ես ասում եմ քեզ, որ մարդ չի կարող ավելի մեծ սեր ունենալ, քան կյանքը զոհել իր բարեկամների համար:

Ես քեզ ասում եմ այս ամենը, որ դու կարողանաս քո խաղաղությունը գտնել Իմ Սուրբ Սրտում, որ կարողանաս ճշմարիտ կյանք գտնել Իմ մեջ, որ դու կարողանաս ճշմարիտ կյանք ու հանգստություն գտնել Իմ՝ քո Աստծո մեջ: Ես գիտեմ, որ դու թույլ ես, զավա՛կս, բայց քո թուլությունը հրապուրում է Իմ Ամենակարողությանը:

Կարո՞ղ ես դու ըմբռնել այն, ինչ որ ասում եմ: Ես ասում եմ. խաղաղություն քեզ: Ես Սիրո Զոհն եմ, ով խոսում է քեզ հետ: Ես նա եմ, ով քեզ տվեց Սիրո այս վկայությունը, որպես Իմ Սիրո հիշեցում: Կլանի՛ր Ինձ ու թույլ տուր, որ գրավեմ քեզ: Զգա՛, թե ինչպես է Իմ Սիրտը փափագում փոխադարձ սիրո: Մի՛ դիմադրիր Ինձ: Ե՛կ Ինձ մոտ, ինչպես կաս, արի ու խմիր Իմ Սրտի հոսքից, ու դու ավելի կծարավես: Օ՜Հ, ձեզանից այնքան շատերն են մոլորվել ու հեռացել Ճշմարտությունից ու գնացել այս կամ այն ճանապարհով: Ճշմարտությունը ՍԵՐ է: Ես եմ Ճշմարտությունը: Եղեք Ճշմարտության վկաները: Ընդունեք Ճշմարտության Սուրբ Հոգին, ընդունեք Շնորհի Սուրբ Հոգին:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ, Իմ Սիրո Հոգոցը թողնելով ձեր ճակատներին: Եղեք մեկ Իմ Սուրբ Անվան ներքո:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 23, 1990

Տե՛ր, Ես ամեն օր հրաշալիքներ եմ տեսնում ինձնից ու իմ խղճուկ

իմացությունից վեր: Ամեն օր Քեզ հանդիպելն այս ձևով իմ հասկացողությունից միանգամայն դուրս է:

Խաղաղություն քեզ: Հասկացի՛ր, թե ինչ ուրախություն ես պատճառում Ինձ, փոքրիկս:

Որքան եմ ուզում հիմա վերևում լինել Քեզ հետ: Դու այդ գիտե՞ս:

Այո՛, զավակս, ես գիտեմ, բայց դու պետք է սպասես: Դու նախ պետք է ավարտին հասցնես քո առաքելությունը, դա քո պարտքն է հիմա: Պարարտացրու այս չորացած հողերը այն ամենով, որ տվել եմ քեզ: Սնիր հողերը: Ես քեզ սիրում եմ խենթանալու աստիճան: Երբեք չկասկածես Իմ Սիրո մեծությանը: Դու երբեք մենակ չես: Ուր էլ որ գնում ես, ես միշտ այնտեղ եմ: Ես քո Սուրբ Ուղեկիցն եմ:

Աղբյո՛ւր, որ չորացած հողերը
բարեբեր այգիներ է դարձնում:
Կենարար Ջրի Աղբյուր:
Տո՛ւր մեզ հոսող առվակներ,
որպեսզի կարողանանք ապրել...
Թույլ տուր ինձ կիսել
Քեզ հետ Քո Գավաթը:

Ուրեմն, վերցրու Իմ Գավաթը ու խմիր դրանից: Եվ եթե թուլանաս դրա դառնությունից, արի ու հենվիր Ինձ վրա, արի ու հանգստացիր Իմ մեջ: Վասո՛ւլա, Իմ սեփականություն, ես՝ քո Թագավորը, քեզ Իմ Սիրո գերին եմ պահում, ու ես կհսկեմ քեզ, ինչպես պահակն է հսկում իր դարպասը: Ես քեզ տվել եմ Իմ Սիրո Պարգևը, պսակելով քեզ Ինձ հետ: Ուստի ես պետք է վստահ լինեմ, որ ոչ մի զավթիչ ոտնձգություն չկատարի Իմ սեփականության հանդեպ: Ես Իմ սեփականությունը հիմա պարտեզ եմ դարձրել, ուր կարող եմ գնալ ու հանգստանալ: Թույլ տուր, որ չնչեմ քո մեջ, թույլ տուր, որ ավարտին հասցնեմ Իմ գործերը քո մեջ: Եղի՛ր հնազանդ և ընդունիր Ինձ՝ քո Ուսուցչին ու քո Թագավորին:

Սեր է Իմ Անունը: Արի Ինձ մոտ ու ճաշակիր Իմ Ջեռքից[1]: Ես կկերակրեմ քեզ մինչև վերջ:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 24, 1990

Սիրտս ցանկանում է ծառայել Քո Մեծությանը, բայց ես կարիքավոր եմ ու թշվառության մեջ և չեմ կարող անգամ մատս բարձրացնել, առանց Քեզ:

Այդ ճիշտ է, քանզի, եթե ես քո կողքին կանգնած չլինեի, դու

[1] Հիսուս նկատի ունի գրելու այս ձևը, որը մնում է հոգիս:

ընդհանրապես կանգնած չէիր լինի: Հո՛գի, պարուրված Իմ Լույսով, դու կամենո՞ւմ ես ենթարկվել Իմ պատվիրաններին:

Ես կամենում եմ ենթարկվել Քո պատվիրաններին:

Ուրեմն արի ու կիսիր Իմ թիկնոցը: Թույլ տուր, որ քո Առաջնորդը լինեմ, և Ես կշարունակեմ բացահայտել քեզ համար Իմ Սուրբ Սրտի գաղտնիքները: Ես կշարունակեմ բաց անել քեզ համար Երկնային արքայության խորքերը: Ես հուսախաբ չեմ անի քեզ, հոգի... Մնա աղքատ, կարիքավոր ու Իմ կերակուրը տենչացող: Այո՛, քաղցիր ու ցանկացիր այն: Մի՛ եղիր հարուստների նման, ովքեր քաղց չեն զգում Իմ Կերակրի համար, ոչ էլ փնտրում են այն: Փնտրի՛ր Իմ Սրտի Գանձերը: Քո ոչնչության միջոցով Ես բացահայտել եմ Իմ Մեծությունը, քո թշվառության միջոցով Ես ցույց եմ տվել Իմ Ողորմությունը, իսկ քո թուլության միջոցով՝ Իմ Ուժը: Ես աշխարհին ցույց եմ տվել Սրտիս Այրող Ցանկությունների բոցավառ Կրակը: Այն, ինչ ցանկանում եմ հիմա քեզանից, փոխադարձ սերն է:

Աղջի՞կս: Ճշմարիտ եմ ասում քեզ, քե՛զ, որ ուզում ես ծառայել Ինձ, քո Աստծուն: Ամեն անգամ, երբ բացես բերանդ Ճշմարտության մասին վկայելու համար, Ես կօրհնեմ քեզ: Ամեն անգամ, երբ խոսես Իմ մասին, Ես կրակ կվառեմ քո մեջ: Աղոթի՛ր ու խնդրիր, և Ես քո խնդրածից ավելին կտամ: Ես քեզ միշտ կհիշեցնեմ Իմ Հրահանգները, որպեսզի դու կարողանաս կրկնել Իմ Խոսքերը: Ես չեմ թողնի քեզ: Ես հայտնի եմ նրանով, որ Ամենից հավատարիմն եմ: Ուրեմն, Իմ Վասուլա, թույլ տուր, որ օգտագործեմ քեզ, մինչև որ գամ ու տանեմ քեզ:

Օրհնյալ[1]: Իմ մնացորդ: Ծաղի՛կ, արի Ինձ մոտ արդար հոգով և վստահիր Ինձ: Դու կհամբուրե՞ս Իմ Ոտքերը:

Արի՛, բռնիր քո Ուսուցչի Ձեռքը և հետևիր Ինձ:

Հոկտեմբերի 30, 1990

Վասո՛ւլա, թույլ ու փոքրիկ արարած, գիտե՞ս, թե քանի փուշ ես հանել Իմ Սրտից:

Ո՛չ, Տեր:

Բավականաչափ, որպեսզի հանգստացնես Ինձ, բավականաչափ, որպեսզի հանգստացնես Ինձ, զավակս: Քեզ ստեղծելու նպատակը նաև Ինձ հանգստացնելն էր: Ես ստեղծել եմ քեզ, և չնայած դու հող ու մոխիր ես, Ես քո մեջ խոր հանգստություն եմ գտնում: Ընդունի՛ր Ինձ, ընդունիր Իմ Խաչը քեզ վրա: Երախտապարտ եղիր Ինձ հիմա:

Զավակս, նայիր Իմ Շուրթերին և ուշադիր լսիր Ինձ: Հավատ ունեցիր Իմ հանդեպ և վստահիր Ինձ: Ես գիտեմ քո անկարագրելի թուլությունը,

[1] Իմ մտքով անցավ, թե ինչ կանի Տերը՝ Ինձ Իր մոտ տանելուց հետո: Դա խելացի միտք չէր: Դրա համար Հիսուս զարմացած ասաց. Օրհնյալ:

և որ առանց Ինձ դու չես կարող անգամ բարձրացնել քո փոքրիկ մատը: Դրա համար եմ ընտրել քեզ: Ես ընտրել եմ թուլությունը, որ աշխարհին ցույց տամ Իմ Զորությունը: Ես պատճառ ունեմ, թե ինչու եմ քեզ ընտրել քո այդ վիճակում: Վստահիր Ինձ և քո ուժը ստացիր Ինձանից:

Ես քեզ կհիշեցնեմ, թե սատանան ինչպես է ատում քեզ, և դու այսօր զգացիր նրա ճիրանները քեզ վրա: Այո՛, եթե Ես թույլ տայի, նա քեզ կտոր-կտոր կաներ, բայց դու Իմ Աստվածային պաշտպանության տակ ես: Ամեն րոպե նա թիրախ է դարձնում քեզ և Իմ մյուս ընտրյալ հոգիներին: Ես ասում եմ քեզ. Քո ոչնչության ու քո աղքատության պատճառով, իմ թույլ արարած, դու քանդում ես սատանայի նախշերը, օղակ առ օղակ դու ոչնչացնում ես նրա ասեղնագործությունը: Նա քեզ որդ անվանեց, երբ իմացավ, որ դու Իմ ընտրյալն ես: Այո՛, եղիր որդի նման և կեր ու ոչնչացրու նրա նախշերը: Հասկանո՞ւմ ես: Ես Իմ Գործերի համար կարող եմ օգտագործել անգամ որդերին... Այո՛, որդի նման կեր նրա նախշերը: Ես քեզ թույլ եմ տվել զգալ նրա ատելությունը: Նա ատում է քեզ, քանզի Հայրն ինքը սիրում է քեզ այն բանի համար, որ դու սիրում ես Ինձ: Դա անհերևակայելիորեն կատաղեցնում է նրան: Երանի այն մարդուն, ով չի կորցնում հավատն Իմ հանդեպ:

Ուրախացրո՛ւ Իմ Հոգին և բերկրանքով լցրու Հոգիս, մնալով ոչնչություն:

Նոյեմբերի 3, 1990

(Մեր Սուրբ Մոր Պատգամը):

Խաղաղություն ձեզ, փոքրիկներ:

Ինչպես մի մայր, որ կերակրում ու սփոփում է իր փոքրիկ զավակներին, Ես նույնպես սնում եմ ձեր հոգին, տալով ձեզ Աստծո Խոսքը: Ինչպես մի մայր, որ դժբախտության ժամանակ սփոփում է իր զավակներին, Ես նույնպես խոնարհվում եմ դեպի ձեզ, որ սփոփեմ ձեզ: Իմ աղոթքներով Ես հոգ եմ տանում ձեր հոգու մասին: Տերը չի հապաղում Իր խոստումները կատարելու մեջ: Բայց նա համբերությամբ սպասում է, որ ամեն ոք Լույսը տեսնելու շնորհը ունենա և դարձի գա:

Խոստացված Նոր Երկինքն ու Նոր Երկիրը հիմա ավելի մոտ են ձեզ, քան երբևէ: Իսկ մինչ այդ, մինչ դուք սպասում եք, Ես աղաչում եմ ձեզ, սրբագործեք ձեր կյանքը և ապրեք սրբորեն: Ես ուզում եմ տեսնել, որ դուք իսկապես դարձի գաք, սիրելի զավակներս: Ցանկացած ոք, ով խուսափել է աշխարհի արատներից, բայց հետո թույլ է տվել իրեն առաջնորդվել այն սկզբունքներով, որոնք Իմաստությունից չեն գալիս, այլ Անմտությունից, անպայման վայր կընկնի:

<u>Աստված Սեր է</u>: Նա ներող է և համբերատար: Աստված ամենաքնքուշ Հայրն է: Ժամանակ առ ժամանակ քննեք ձեր հոգին, որ իմանաք, արդյոք դուք Նրա Լույսի մեջ եք, թե՝ ոչ:

Տիրոջ համար եղեք ինչպես մի պարտեզ, որտեղ նա կարող է Իր հանգիստը վայելել ձեր մեջ, որտեղ Նա կարող է ուրախացնել Իր Հոգին նրա բերկրալի բուրմունքներով, և որի կանաչ խոտի վրա Նա կարող է դնել

Իր Գլուխը: Թույլ տվեք Ինձ, որ ձեր սիրտը Աստծո համար մի գեղեցիկ պարտեզի վերածեմ, որպեսզի, երբ Արքայից Արքան գա ձեզ այցելելու, Նա չչրջի Իր Աչքերը ձեզնից, այլ առաջարկի ձեզ դառնալ Իր Հոգու Զոհը, Իր Սրտի գերին:

Ուրեմն ժամանակ մի կորցրեք, քանզի Նրա Աչքերը հետևում են ձեր յուրաքանչյուր քայլին: Խաղաղության Իշխանը հորդորում է ձեզ աղոթել խաղաղության համար, և Ես՝ Խաղաղության Թագուհին, աղաչում եմ ձեզ աղոթել խաղաղության համար: Սատանան հիմա խելագար ցուլի նման է, և Իմ Սիրտը ցավում է, տեսնելով այն, ինչ պետք է պատահի, թեև, Ողորմությունից դրդված, Հայրն Ինձ ամեն ինչ ցույց չի տվել:

Ես շրջում եմ ամբողջ աշխարհում, որպեսզի վեհանձն հոգիներ գտնեմ, բայց չեմ կարողանում գտնել բավարար մեծահոգություն, որ մատուցեմ Հիսուսին և մեղմացնեմ Հոր Արդարությունը: Դեռևս հսկայական հատուցումներ պետք է կատարվեն: Հիսուս վեհանձն հոգիների կարիք ունի, ովքեր ցանկանում են հատուցել այլոց մեղքերի համար: Դրա համար եմ Ես արտասվում: Իմ Աչքերը Արյան առատ արցունք են թափում, տեսնելով այս սարսափելի գալիք տեսարանները:

Այսօր, եթե Ես ասում եմ այս ամենը, պարզապես ձեզ տպավորելու կամ վախեցնելու համար չէ, այլ ձեզ խնդրելու, որ աղոթեք Խաղաղության համար: Այդ Աստված է, որ Իր ազնիվ նպատակի համար ուղարկում է Ինձ ողջ աշխարհով մեկ ու ամեն մի տուն, մեկ առ մեկ ձեզ հավաքելու և դարձի բերելու մինչև Իր Օրը: Սիրելի զավակներ, մի՛ եկեք այս հավաքներին միայն նշաններ փնտրելու համար: Եթե Ես Երկնքից գալիս եմ ձեր շեմքերի մոտ, դա այն բանի համար է, որ ձեզ բերեմ Տիրոջ Խաղաղությունը և Իմ Խաղաղությունը: Ուրեմն, թույլ տվեք Ինձ մի գեղեցիկ պարտեզի վերածել ձեր սրտերը Սրբի համար, որպեսզի Նա կարողանա ձեր խորքերում սրբության, սիրո, խաղաղության, մաքրության, հնազանդության, խոնարհության ու հավատարմության հոգի գտնել: Այդ ժամանակ ձեր Թագավորը կօգտագործի բոլոր այս շնորհները և կպայքարի չարի զորությունների դեմ:

Արթնացե՛ք ձեր քնից, զավակներս, և փոխեք ձեր սրտերը: Ես ուրախ եմ տեսնելով, որ ձեզանից շատերը ծոմ են պահում հացով ու ջրով: Եվ այսօր Ես խնդրում եմ այս վեհանձն հոգիներին ինչ-որ բան ավելացնել իրենց ծոմապահության օրերին: Ես խնդրում եմ ձեզ զղջալ ու խոստովանել: Սիրելի երեխաներ, զգույշ եղեք, որ ձեր շուրթերը չդատեն մեկդ մյուսին: Ձեր ողջ ծոմապահությամբ, թույլ մի տվեք, որ ձեր շուրթերը ձեր դատապարտության պատճառը դառնան: Սիրեցեք մեկդ մյուսին: Գործադրեք մեր Պատգամները:

Ձեր Թագավորը ձեզ է ուղարկում Իր Խաղաղությունը: Ես կշարունակեմ շրջել աշխարհով մեկ, որպեսզի Տիրոջ մոտ բերեմ նրանց, ովքեր հեռու են Նրանից: Ես ձեր անկեղծ աղոթքների կարիքն ունեմ, զավակներս:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: Ես օրհնում եմ ձեր ընտանիքներին, ձեր բարեկամներին ու անգամ նրանց, ովքեր ծանրորեն ընկած են ձեր սրտին: Այո՛, բոլորը Աստծո զավակներն են:

Նոյեմբերի 7, 1990

Տե՛ր, ամեն ինչ,
որ հիմնվել է Ճշմարտության վրա,
թող պահպանվի, իսկ այն ամենը,
ինչ որ հիմնվել է Կեղծիքի վրա,
թող ոչնչացվի ու նետվի կրակի մեջ:
Տե՛ր, ես զգում եմ,
որ Դու հեռու ես ինձանից,
չնայած գիտեմ, որ այդպես չէ:
Մի՞թե ես անտաբեր եմ
Քո Ներկայության նկատմամբ:

Զավա՛կս, արա քո լավագույնը, իսկ Ես կանեմ մնացածը: Թեև քեզ թվում է, որ Ես հեռու եմ քեզնից, բայց մի՛ վախեցիր: Ես հեռու չեմ: Ես՝ Տերը, աչալուրջ հետևում եմ քեզ: Աղոթի՛ր, հոգի, աղոթի՛ր, որ Արդարադատությունը մեղմանա ու ամպրոպի նման հանկարծակի չգա ձեր ազգերի վրա: Վասու՛լա[1], Ես աղոթել եմ Հորը քեզ համար և խնդրել եմ Նրան արագացնել Իր Քայլերը[2]: Կարդա Երեմիա 44:7-9: Թույլ տուր Ինձ օգտագործել քո փոքրիկ ձեռքը:

Օգտագործիր այն, Տե՛ր, օգտագործիր ինձ ամբողջությամբ, որպես քավություն Քո Սուրբ Մտադրությունների համար:

Ես երջանիկ եմ[3], և Ինձ դուր է գալիս, երբ դու ամբողջությամբ վստահում ես Ինձ, քանզի դու խոսում ես Ինձ հետ, քո Աստծո հետ, և ոչ թե՝ մարդու: Դու վստահում ես Ինձ և պետք է լիովին վստահես: Ուստի, երբ գալիս ես Ինձ մոտ, քո կամքը առաջարկելու Ինձ, նայիր ուղիղ Դեմքիս: Ես հրճվում եմ լսելով, որ հանձնվում եք Ինձ՝ ապավինելով Ինձ: Ես հրճվում եմ, լսելով այս պաշտամունքը, քանզի դա ինքնին պաշտամունք է, երբ դուք Ինձ եք տալիս ձեր ողջ էությունը՝ սիրտը, հոգին ու միտքը:

Վասո՛ւլա, փոքրիկ հոգի, ինչպե՞ս կարող եմ Ես դիմադրել քո խնդրանքներին, իմանալով, որ դրանք գալիս են այնքան խոցելի հոգուց, մի հոգուց, որին Ես միայն երեկ եմ հարություն տվել: Ինչպե՞ս կարող է Իմ Սիրտը, փոքրիկ հոգի, դիմադրել քո կանչերին: Վերցրո՛ւ Իմ Սրտից, փոքրիկ հոգի, և կառչիր Ինձանից: Աղոթի՛ր քո եղբայրների համար, նրանց համար, ովքեր դեռևս դիակների նման պառկած են փոշու հաստ շերտի տակ: Աղոթի՛ր, որ Իմ Շունչը սրբի այդ փոշին, և Իմ Մատը դիպչի նրանց սրտին, որպեսզի նրանք նույնպես դառնան դեպի Ինձ, քանզի նրանք հեռացել են Ինձնից հանուն ժամանցների՝ ավելին չասելու համար:

Օրհնյալ լինես, զավա՛կս, օրհնիր Ինձ:

ΙΧΘΥΣ

[1] Հիսուսն այստեղ տոնը փոխեց:
[2] Պատգամների տարածումը:
[3] Հիսուս ժպտում էր:

Նոյեմբերի 11, 1990

Տե՞ր:

Ես եմ, հանգչիր Իմ մեջ: Ամբողջ Երկինքը բերկրանքով լի է: Սա այն է, ինչ դուք անվանում եք կատարյալ երանություն:

Աղջի՛կս, եթե միայն հոգիներն իմանային, թե որքան հրաշալի է ապրել Աստծո մեջ, ոչ ոք այդքան հեշտությամբ չէր կորչի, եթե նրանք իրենց կորստյան չմատնեին, ինչպես Հուդան: Նա ընտրեց դեպի կործանում տանող ճանապարհը: Թեև Իմ Սիրտը հալվել է վշտից, ամեն անգամ տեսնելով նրան Ինձանից մի քայլ ևս հեռանալիս: Ես աղոթել եմ նրա համար, և Իմ Աչքերը շատ արցունք են թափել նրա համար: Ես այնքան շատ ճանապարհներ եմ բացել նրա համար, որոնք բոլորը դեպի Ինձ էին առաջնորդում: Բայց, երբ նա սկսում էր քայլել որևէ ճանապարհով, նա դուրս էր գալիս այդ ուղուց, հենց որ հասկանում էր, որ այդ Ես եմ, որ բացել եմ այդ ճանապարհն իր համար: Քանզի նա մեղքին ավելացրեց ըմբոստությունը, իր սրտում նախատինքներ կուտակելով Իմ հանդեպ՝ իր Աստծո հանդեպ, երբ հասկացավ, որ Իմ Թագավորությունը երկրային թագավորություն չէր երկրային փառքով: Նա փակեց իր սիրտը, կտրեց մեզ միացնող կապերը և <u>անմիջապես</u> հեռացավ Ինձանից: Արդարացիի և ոչ արդարացիի մասին իր ընկալումը խավարեց, ու նա ենթարկվեց օդի, մթնոլորտի կառավարչին:

Այսօր Ես հարցնում եմ հիվանդներին, ինչպես հարցրի Բեթհեզդա ավազանի հիվանդին[1], «ուզո՞ւմ ես կրկին առողջ լինել»: Ես կարող եմ անմիջապես բժշկել քեզ, և ամբողջ Երկինքը տոնախմբության մեջ կլինի: Իմ պարգևը ձրի է: Ուրեմն արի Ինձ մոտ, ինչպես որ կաս: Ես կբժշկեմ քեզ, հոգի՛, որպեսզի դու կարողանաս կիսել Իմ Թագավորությունը և ապրել Իմ մեջ՝ քո Աստծո մեջ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 15, 1990

Քո Սերը, Յա՛հվե,
Ես կփառաբանեմ հավիտյան:
Սերնդից սերունդ
Իմ բառերը պիտի պատմեն
Քո Հավատարմության մասին,
քանզի ես հավատում եմ,
որ սերը ստեղծված է,
որ հավիտյանս գոյատևի,
և Քո Հավատարմությունը
անսասան հաստատված է Երկնքում[2]:

Բայց հիմա Հույն Ուղղափառ մի աստվածաբան հարձակվում է Ինձ վրա և

[1] Հովհ. 5:1-9
[2] Սաղմ. 88:2

Հալածում է Քո պատգամները: Օ՜, Աստված, ցույց տուր նրանց, որ Դու իմ օգնականն ես ու իմ մխիթարությունը և որ միայն Քո մեծ Սիրո միջոցով է, որ Դու փրկել ես ինձ և ուրիշներին:

Իմ Սուրբ Սրտի Վասուլա[1], Իմ Սուրբ Հոգին եղել է քո ուղեցույցը: Ուրեմն ուշադրություն մի՛ դարձրու աստվածաբանների եզրակացություններին: Աղոթի՛ր, որ նա նույնպես կարողանա ընդունել Հոգին, որպեսզի հասկանա, որ մարդկային դատողություններն ու մարդկային ուսմունքները Իմ Եկեղեցին սարսափելի անապատի են վերածել:

Տե՛ր, նա ցնցված է, Քո պատգամներում կարդալով, որ Դու մեր սերն ես մուրում, ինչպես մի մուրացկան:

Մի՞թե նա չի կարդացել. «Երանի այն ծառաներին, որոնց <u>արթուն</u> կգտնի Տերը, երբ Նա գա: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Նա գոգնոց կկապի, սեղան կնստեցնի նրանց և նրանց կսպասարկի»[2]: Ես հայտնի եմ ոչ միայն որպես Ամենակարող, Վեհափառ և Արդարության Աստված, այլ նաև Ամենաքնքուշ Հայր, և միայն նրանք, ովքեր շարժվում են Իմ Հոգով, Ինձ Աբբա կկանչեն:

Ես Աստված եմ խղճով լեցուն և Իմ Ողորմությունն Անսահման է:

Տե՛ր, նա խորապես անհանգստացած է այս մտերմությամբ, որ ես ունեմ Քեզ հետ: Նա այն քաղցր և զգայական է անվա՜նում:

Նա չի թափանցել Իմ Վերքերի մեջ, որ հասկանա: Եթե նա թափանցած լիներ Իմ Վերքերի մեջ, կհասկանար, որ այս Վերքերը Ինձ տրվեցին իր հանդեպ տածած Իմ Սիրո պատճառով: Մարդ չի կարող ավելի մեծ սեր ունենալ, քան իր կյանքը տալ իր ընկերների համար, <u>և դուք, բոլորդ</u> Իմ ընկերներն եք: Ես Իմ կյանքը տվեցի սիրուց դրդված: Բայց և այնպես, աղջի՛կս, սա այն խաչն է, որ Ես վստահել եմ քեզ: Հիշի՛ր, Ես կրում եմ Այն քեզ հետ միասին: Ձեզ միավորելու համար[3] Արդարությունը պետք է միջամտի:

Իմ Վասուլա, Ես միշտ քեզ հետ եմ, մինչև վերջ: Ուրեմն մի՛ վախեցիր ու անմխիթար մի մնա: Ես գիտեի, հրեշտակս, միշտ գիտեի, որ այս մարդիկ պիտի հալածեն քեզ որսորդների նման: Նրանցից ամեն մեկը դուրս կհանի իր զենքը ու կհետապնդի քեզ: Քանի որ Ես քեզ ուղարկում եմ <u>ոչ քո սեփական ժողովրդի մոտ</u>, քո ազգի առաջնորդները պիտի հալածեն ու ճնշեն քեզ և վերաբերվեն այնպես, ինչպես ուզում են: Քանզի այն, ինչ Ես տվել եմ քեզ, որպեսզի կրես քո ձեռքում, մարդկային ուսմունք չէ, այլ Իմը: Եվ քանի դեռ Իմ Լեզուն ու Իմ Ուսուցումները չեն ներթափանցում նրանց մեջ, նրանք կհակառակվեն և քեզ կվերաբերվեն, որպես մի ինքնակոչի: Ես արդեն ասել եմ, որ աշխարհը կդատապարտի քեզ: Բայց անգամ այն ժամանակ, երբ նրանք դատապարտում են քեզ, հայտարարի՛ր աշխարհին այն, ինչ սովորել ես Ինձանից:

---

[1] Հիսուս հատուկ նպատակով էր ինձ այդպես կանչում, քանի որ «Սուրբ Սիրտ» անունը Հույն Ուղղափառ եկեղեցում ընդունված չէ:
[2] Ղուկ. 12:37
[3] Եկեղեցիները:

Աղջի՛կս, եթե աշխարհը չի կարող հասկանալ Իմ Լեզուն, դա այն պատճառով է, որ նրանց ուսմունքը հիմնված չէ Ճշմարտության վրա, որը Սերն է: Ես քեզ դուրս եմ բերել Եգիպտոսից մի օտար ժողովրդի մոտ, որպեսզի միավորես Իմ Եկեղեցին, բայց դեռևս ոչ ոք չգիտի դեպի միավորում տանող ողջ ճանապարհը և դեռ ոչ ոք չի հասկացել, թե ինչպես սկիզբ առավ Իմ Ծրագրի նախագիծը: Նրանք դեռևս չեն ճանաչել այն ճանապարհները, որ Ես պատրաստում եմ նրանց համար, որոնցով նրանք պետք է քայլեն: Աստվածաբաններն ու փիլիսոփաները դեռևս չեն գտել դեպի Միասնություն տանող բանալին, որն Իմաստության մոտ է գտնվում: Ես խոսում եմ, բայց նրանք չեն ընկալում Իմ ասածները: Միայն նրանք, ովքեր Իմն են, նրանք են հասկանում այն, ինչ ասում եմ: Ես գիտեմ նրանց, իսկ նրանք գիտեն Ինձ: Ուստի, Իմ Վասուլա, կատարի՛ր քո աշխատանքը, մինչև նշանակված ժամանակը դա:

Ես Իմ Խաչը վստահել եմ քեզ: Կրիր այն սիրով: Շուտով գալու է մեծ աղետի ժամանակը, որի նմանը չի եղել: Բայց դրանից անմիջապես հետո մի շատրվան կբխի Իմ Տնից ու կլցրի այս անապատը: Ուրեմն, քաջալերվի՛ր, աղջիկս: Սիրով կրիր քո ուսերին դրված այս խաչը և ոչինչ իզուր չի անցնի: Եթե կավը[1] լվացվում է անձրևի առաջին իսկ կաթիլների հետ, քո հոգին մնում է հավիտյան: Հետևաբար, մահը կուլ կգնա հաղթանակով:

Սերը քո կողքին է, որպեսզի առաջնորդի քեզ: Այնպես որ, զգուշացիր այս փիլիսոփաներից ու աստվածաբաններից: Նրանց ստացած դատավճիռը ավելի խիստ կլինի: Օրհնի՛ր Ինձ ու սիրի՛ր Ինձ, ինչպես սովորեցրել եմ քեզ սիրել Ինձ մտերմորեն՝ երբեք չմոռանալով, որ Ես Սուրբ եմ:

Նոյեմբերի 23, 1990

Խաղաղություն քեզ, աղջի՛կս, ուզո՞ւմ ես առաջ գնալ:

Այո, Տե՛ր, կամենում եմ:

Ուրեմն, զավա՛կս, Ես կօգնեմ քեզ առաջ գնալ: Սա նաև Իմ ցանկությունն է: Մի՛ քնիր, արթուն կաց այն վտանգների հանդեպ, որոնք շրջապատում են քեզ: Ծաղի՛կ, չնայած Իմ թշնամիները հարձակվում են քեզ վրա ու պոկում են քո թերթիկները, Ես միշտ կփոխարինեմ դրանք: Եթե նրանք տրորեն քեզ, մի՛ վախեցիր: Ես Երկնքից Իմ Ցողը կթափեմ ու կկենդանացնեմ քեզ: Դու պետք է գեղեցիկ տեսք ունենաս, և Ես քեզ գեղեցիկ կդարձնեմ ու կպահպանեմ քեզ: Դու Իմ սուրհանդակն ես, և դու ոչինչ չունես մարդկանցից վախենալու: Եթե նրանք մեղադրում են քեզ այն բանի համար, որ դու Ինձ Հայր ես կոչում, դա այն պատճառով է, որ նրանք չեն հասկացել, որ Սիրո Հոգին, որ դու ստացել ես, և որը խոսում է քո միջոցով, քեզ խաղաղություն և սեր է բերում, որպեսզի դու գոչես. Աբբա՛: Իմ Հոգին միացած է քեզ հետ, զավա՛կս: Ես քեզ տվել եմ Հոգով օծված Պատգամներ ձեր դարաշրջանի համար, որ կենդանացնեմ ձեզ: Քեզ տված Իմ ամեն մի

[1] Այլ կերպ ասած. «Դու, որ այլ բան չես, քան հող ու մոխիր, կմեռնես, բայց քո հոգին անմահ է»:

բառը Հոգի է և Կյանք: Ինձ պատկանող ոչխարները հեռվից են ճանաչում Իմ Ձայնը: Շուտով ես ամենուր պիտի ուղարկեմ Իմ Լույսը, մի հորիզոնից մյուսը: Այո՛, ես այնպես պիտի անեմ, որ կարգ ու կանոնը փայլատակի:

Ընդունիր Իմ Խաղաղությունը, սա է Իմ Օրհնությունը: Սիրի՛ր Ինձ, ինչպես ես եմ քեզ սիրում և հիշի՛ր՝ ես քո Թագավորն եմ: Ուրեմն տուր քո Թագավորին այն սերը, որին Նա արժանի է: Օրհնյալ եղիր: Ես եմ:

Նոյեմբերի 27, 1990

Շատ սիրելի Հոգի, խաղաղություն քեզ: Դու ուրա՞խ ես, որ Ինձ հետ ես:

Այո՛, Տեր, շատ: Գովյալ լինի Տերը:

Աղջի՛կս, երբ դու լարված աշխատում ես Ինձ համար, ես քո ջանքերն ու քո հոգնությունն օգտագործում եմ ուրիշ հոգիներ բժշկելու համար: Այո՛, իմացիր, որ ամեն ինչ, որ դու անում ես զոհաբերության հոգով, ես լավագույն ձևով եմ օգտագործում այն... Ես մարդկության Ուսուցիչն եմ:

Մոտ մնա Ինձ, որպեսզի ես քո ականջին շշնջամ Իմ մտադրությունները: Սիրելի՛ս, մնա քո Աստծո կողքին: Այդ Նա է, ով բոլորից շատ է սիրում քեզ: Մնա Իմ կողքին, զավա՛կս, և թույլ տուր Ինձ կերակրել քեզ Իմ Հացով: Արի Ինձ մոտ, աղջի՛կս: Ինձ մոտ դու ոչ մի կոպտություն չես գտնի: Ես միայն կհսկեմ քեզ ու կլինեմ քո խորհրդատուն: Ես կերգեմ քեզ համար Իմ Սիրո Երգը, մի Երգ, որը կփրկի քեզ ու ողջ մարդկությանը: Դու հող ես, բայց մի՞թե դա որևէ նշանակություն ունի: Ես քեզ անմահ հոգի եմ տվել, մի հոգի, որ շուտով վերադառնալու է Ինձ մոտ: Դու վեհություն ու գեղեցկություն չունես, եթե չես արտացոլում Իմ Աստվածային Վեհությունն ու Գեղեցկությունը Քո հոգու մաքրությամբ: Եվ սա, զավա՛կս, կարող է տեսանելի դառնալ եթե <u>միայն</u>, դու նմանվես Ինձ: Ինձ նմանվելը քո կարողության սահմաններում է:

Ուրեմն, մոտեցիր Ինձ, զավա՛կս, և տուր Ինձ քո կամքը, ու ես չեմ ուշանա: Ես թռչելով կգամ քո մոտ սիրո շղթաներով, որպեսզի քեզ կապեմ Ինձ հետ և սովորեցնեմ, թե ինչպես գովերգել և ինչպես պաշտել Ինձ օր ու գիշեր: Ես կսովորեցնեմ քեզ Իմ հրեշտակների օրհներգերը: Ես ցույց կտամ քեզ Իմ Փառքն ու Իմ Զորությունը: Ես կսովորեցնեմ քեզ, թե ինչպես կառչել Կյանքին: Ես կսովորեցնեմ քեզ, թե ինչպես գետնատարած երկրպագել ու պաշտել Ինձ: Ուրեմն մոտ արի Ինձ, և ես կհսկեմ քո հոգուն:

Բայց, Տե՛ր, ի՞նչն է քեզ դուր գալիս իմ՝ մեղավորիս մեջ:

Քո ոչնչությունն ու քո թշվառությունը... Երբ աշխարհի սառնությունը քեզ համար անտանելի դառնա, շտապիր Իմ Սրտի Հնոցը: Ես քո Ապաստանն եմ, և ես <u>կպատսպարեմ</u> քեզ: Քո Հայրը երկնքում գիտի, որ դու այլևս չես պատկանում աշխարհին: Այդուհանդերձ, Նա քեզ աշխարհ է

ուղարկում, որպեսզի ցույց տաս աշխարհին քո Աստծո Սիրտը, և Ես եմ, որ եմ, որ ուղարկեցի քեզ: Արի հիմա ու հանգչիր Իմ մեջ և թույլ տուր Ինձ հանգչել քո մեջ:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 4, 1990

Տե՛ր, Դու Ամենն ես, իսկ ես՝ ոչինչ:
Դու ապշեցնելու աստիճան Մեծ ես:
Ուրեմն ինչ են իմ գովերգները
Քեզ՝ Սրբոց Սրբիդ համար:
Ոչ մի մարդ չի կարող
Քեզ բավարար փառաբանել,
չնայած իմ սիրտն անդադար
կանչում է Քո Անունը,
որովհետև Դու այնպես ես արել,
որ իմ սիրտը ձգտի Քեզ:

Քո գովերգներն ու քո կանչերն իզուր չեն: Սիրիր Ինձ ու գովերգիր Ինձ անդադար, քանզի, եթե դրանք քո սրտից են բխում, ուրեմն ընդունելի են Ինձ համար:

Տե՛ր, Դու ինձ համար բացեցիր
Երկնքի դռները,
ու Երկնքի պաշարներից
Դու կերակրեցիր ինձ
այն Մանանայով,
որ պահել էիր իմ հոգու համար:
Դու ինձ երկնքի Հացը տվեցիր:

Բոլոր խոսքերը, որ Ես ասել եմ քեզ՝ Հոգի <u>են</u>, և դրանք Կյանք են: Ա՛ճիր Իմ Հոգու մեջ, որպեսզի դառնաս Իմ Սուրբ անվան ճշմարիտ վկան:

Իսկ հիմա Ես խնդրում եմ քեզ, որ տեղի չտաս տխրությանը[1]: Հասկացի՛ր, Իմ Վասուլա, Իմ Խաչը <u>ծանր է</u> և... ա՜հ: Ես հանգստանալու կարիք ունեմ ժամանակ առ ժամանակ: Ես ասացի. «Ո՞վ է բավականաչափ մեծահոգի, որպեսզի կրի Իմ Խաչը Ինձ համար», և դու պատասխանեցիր. «Վերցրո՛ւ ինձ, մաքրագործիր ինձ և օգտագործիր ինձ, ինչպես կամենում ես»: Խաղաղության ու Սիրո Խաչը՝ ձեզ բոլորիդ միավորելու համար, հիմա դրված է քեզ վրա... Բայց, սանի՛կս, հավիտենականությունից ի վեր Ես քեզ համար եմ նախասահմանել այս Խաչը: Դու Ինձ ես պատկանում և այդ պատճառով դու պետք է արտացոլես Իմ Աստվածային Պատկերը: Ես Նա եմ, ով քո հոգին ապահովում է Իմ Անսահման Միջոցներից: Ես չեմ լքի քեզ: Ես կլցնեմ քեզ, ինչպես խնկաման, որպեսզի քո սերը հասնի մինչև երկինք, ինչպես բուրավետ ծխի մի քուլա:

[1] Ես տխուր էի հալածանքների պատճառով, որոնք շատացել էին:

Դրա համար, մի՛ հոգնիր գրելուց, մի՛ հոգնիր քեզ հալածողներին օրհնելուց, մի՛ հոգնիր քեզ հարվածողներին մեջքդ առաջարկելուց: Դու կարող ես մեռնելու աստիճան վշտացած լինել, սակայն Թագուհին միշտ հոգ է տանում քո մասին՝ վերադարձնելով քեզ դեպի ուրախություն ու կյանք: Թագուհին քեզ քաջություն է տալիս և գալիս ու վիրակապում է քո վերքերը Իր Մայրական Սիրով ու Ջերմությամբ: Քո Մայրը հոգ է տանում քո մասին, զավա՛կս, ինչպես Նա հոգ է տարել Իմ մասին: Քո թշվառության ու հուսահատության մեջ, Նա սլանում է քեզ մոտ և տանում քեզ Իր Սենյակը[1], նույն այն սենյակը, ուր Նա հղացավ Ինձ:

Դրա համար, մի՛ պահիր արցունքներդ, քանզի մինչ դու արցունք ես թափում այս աքսորում, այն պատճառով, որ Իմ մարդիկ պատեր են կառուցել Իմ Տան մեջ բոլոր ուղղություններով, իրենք իրենց բաժանելով, Ես նույնպես Արյան Արցունքներ եմ հեղում, խառնելով դրանք քո արցունքներին, որպեսզի, երբ Հայրը տեսնի քո արցունքները խառնված Իմ արցունքներին,

Նա չի մերժի արդելքները վերացնելու քո աղերսները, քանզի դրանք այլևս քո արցունքները չեն լինի, այլ՝ Իմը: Աղաղակի՛ր, սանիկս, որ ամբողջ աշխարհը ծայրից ծայր ապաշխարի ու վերադառնա Ինձ մոտ, որպես մեկ՝ Իմ Սուրբ Անվան ներքո: Վասո՛ւլա, կրիր Իմ Խաչը սիրով և ոչ՝ սարսափով: Ուրախ եղիր:

Դեկտեմբերի 6, 1990

(Պատգամ նվիրաբերված հոգու համար):

Իմ շուրթերն ասացին.

Ե՛կ, եկ, Ինձ մոտ,
ու Ես քեզ պիտի հովվեմ:
Ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ,
ոչ էլ երբևէ կմոռանամ
արածեցնել քեզ:
Ինձ հետ դու երբեք քաղցած
կամ ծարավ չես լինի:

Դեկտեմբերի 10, 1990

Աստվա՛ծ, որքան եմ ես տառապում Քո Սիրուց: Որքան եմ տառապում Քո

[1] Իր Սիրտը:

ծարավից:

Աղջի՛կս, դու կկամենայի՞ր ապրել Իմ Վերքերի մեջ:

Ես կուզեմ այն ամենը, որ Դու կցանկանաս ինձ տալ:

Ուրեմն, Ես կզգեստավորեմ քեզ սրբությամբ: Ես կուժեղացնեմ քո սերն Իմ համդեպ, որպեսզի այն հավիտյան լինի: Չնայած դու դեռևս հեռու ես կատարյալ լինելուց, Ես կարող եմ քեզ կատարյալ դարձնել: Ես քեզ ձևավորել եմ այս յուրահատուկ ձևով, որպեսզի վկայես Ճշմարտության համար ու փառաբանես Ինձ: Ես քեզ ուղարկել եմ օտար ժողովրդի մոտ, որ հոչակես Իմ Սերը: Նրանք, ովքեր ուզում են լսել, թող լսեն, իսկ նրանք, ովքեր չեն ուզում լսել, թող չլսեն: Մի՛ հոգնիր խորհրդածելուց ու գրելուց: Դու չպետք է քեզ զրկված զգաս: Ես քեզ հետ եմ, քո կողքին, այս աքսորում:

Սիրի՛ր Ինձ, պաշտի՛ր Ինձ ու ապրիր Ինձ համար, քո Տիրոջ համար: Թույլ տուր Ինձ, որ քեզ պարուրեմ Իմ Անսահման Սիրով, ա՜հ.... Ուրքան եմ ուրախանում, երբ դու փափագում ես Ինձ ու ծարավում Ինձ համար: Վերածնվա՛ծ[1], պաշտիր Ինձ: Անշուշտ, դու չես թողնի, որ քո Փեսան երկար սպասի, այնպես չէ՞: Շուտ արի քո Սրբի մոտ, և Նա քո գլուխը կդնի Իր Սուրբ Սրտի վրա, և երբ Դու լսես Նրա Սրտի Զարկերը, դու այլևս չես դիմադրի Նրան: Դու միայն կցանկանաս փառաբանել Նրան, և Նա կհեղի Իր Հոգին քեզ վրա, որ տիրի քո հոգուն ու ոչնչացնի այն ամենը, որ դու ես: Դու այլևս երբեք «դու» չես լինի: Քո «ես»-ն այլևս գոյություն չի ունենա:

Փոքրի՛կս, Ես քեզ կգրավեմ ամբողջապես, այնպես, որ քո շարժառիթները լինեն Իմ Շարժառիթները, քո ցանկությունները լինեն Իմ Ցանկությունները, քո խոսքերը լինեն Իմ Խոսքերը, քո մտքերը՝ Իմ Մտքերը, ու Ես կթաքցնեմ քեզ Իմ Սուրբ Սրտի ամենախոր տեղում: Ես ամբողջությամբ պիտի ջնջեմ քո «ես»-ը, եթե դու թույլ տաս Ինձ:

Այսուհետև, Իմ Սուրբ Սրտին Քո նվիրաբերումից[2] հետո, դու պիտի պաշտես Ինձ քո սրտի խորքերից և պիտի ծառայես Ինձ քո ներսում այրվող կրակով: Դու պիտի ծառայես Ինձ հավատարմությամբ և ավելի ջերմորեն, քան երբևիցե: Դու թույլ ես, բայց Իմ Ուժը պիտի օգնի քեզ: Ես թույլ չեմ տա, որ դու քո տեսադաշտից կորցնես Ինձ, ոչ էլ թույլ կտամ, որ քո սիրտը մեկ այլ տեղ թրթռա: Քո սիրտը միայն Ինձ պիտի փնտրի ու միայն Ինձ պիտի ցանկանա անդադար: Ես այնպես պիտի անեմ, որ դու չսիրես այն ամենը, ինչը հակառակ է Իմ Սրբությանը և Իմ Կամքին: Ես կմաղեմ քեզ, որպեսզի համոզվեմ, որ քո մեջ ոչ մի մրցակից չի մնացել:

Այսօրվանից սկսած, այն կապանքները, որոնցով Ես քեզ կապել էի, ավելի ևս կամրացվեն Իմ կողմից: Ես այնպես կանեմ, որ հոգիդ ծարավի Ինձ համար, իսկ սիրտդ սիրուց հիվանդ լինի Ինձ համար՝ քո Աստծո համար: Ես հիմա սպասում եմ, որ կլանեմ քո ողջ էությունը Իմ Սրտի ու Իմ Սիրո Բոցերով: Այս պահից ի վեր ինչ էլ որ անես, պետք է անես միայն Իմ

[1] Հիսուսն ինձ կոչեց այդ անունով:
[2] Այդ երեկո ես մտադիր էի նվիրաբերման իմ աղոթքն անել Սուրբ Սրտին:

Շահերի ու Իմ Փառքի համար, և ոչինչ քեզ համար: Այլ կերպ ասած, այս պահից ի վեր դու պետք է լինես Իմ Սիրո ստրուկը, Իմ Սրտի զոհը և Իմ Հոգու զվարճության առարկան: Ես այնպես կանեմ, որ քո հատկանիշները նմանվեն Իմ հատկանիշներին՝ տառապելով այն վշտերից, երբ դու տեսնես հոգիների խլությունը և նրանց անկումը: Իմ Վասուլա, Ես կտամ քո հոգուն իր բաժինը: Ո՛չ, Ես չեմ խնայի քեզ Իմ Խաչից, ինչպես Հայրը չխնայեց Ինձ: Ես ինչպե՞ս կարող եմ:

Իմ Սերը քո հանդեպ անսահման է: Բացի այդ, ամեն ինչ բխում է Իմ Մեծահոգությունից ու Իմ Անսահման Սիրուց: Ես կգերեմ քո աչքերը, քո մտքերը, քո ցանկությունները՝ դարձնելով դրանք Իմ Սրտի գերին: Սերը սեր է փնտրում: Դու անարժան ես և արժանի չես ոչ մի բանի, բայց քո փխրունությունը, քո թշվառությունը, քո լքիվ անկարողությունը և քո ոչնչությունը պաշարեցին Իմ Սերը և ցրեցին Իմ Զայրույթը: Նայիր Աչքերիս...

(Ես նայեցի իմ Փրկչի Աչքերին):

Տեսնո՞ւմ ես: Դու տեսել ես Հավատարմությունն ու Ճշմարտությունը դեմ առ դեմ: Այսուհետև, քո նվիրաբերումը պետք է հավատարիմ լինի՝ օր ու գիշեր, գիշեր ու ցերեկ կանչելով Իմ Անունը: Ես այնպես կանեմ, որ քո հոգին մերժի այն ամենը, որ Ես չեմ: Ինչպես մի ծարավ ճամփորդ, դու ծարավի կլինես այն ամենին, ինչ որ Սուրբ է, բայց Ես միշտ պատրաստ կլինեմ քեզ ջուր ¬առաջարկել Կենաց Աղբյուրներից և Արյուն՝ Իմ Աստվածային Սրտից: Քո հոգին ավելի քան երբևէ պիտի կրի Իմ Մարմնի Խաչանները, շատերին դարձի բերելու համար: Սա է պատճառը, որ դու պետք է ընթանաս Գողգոթայի ճանապարհով: Ես պիտի աշխուժացնեմ քո եռանդը, որպեսզի Ինձ ավելի ևս զոհացնես ու հետևես Իմ Օրենքին, որպեսզի դու զորացնես ու աճեցնես այն ամենը, որ Ես տվել եմ քեզ...

Բարձրացի՛ր հիմա ու վերականգնիր Իմ Տունը: Մի՛ դադարիր Ինձ սիրելուց, հակառակ դեպքում դու խոտի նման արագ կթոշնես ու կթառամես: Եվ հիշիր մի կարևոր բան. Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

Գովյալ լինի Տերը, թող փառավորվի Աստված:

Ինչպես կավը բրուտի ձեռքերում, Ես քեզ կձևավորեմ ինչպես որ կամենամ, քանզի դու Ինձ ազատություն ես տվել, ինչպես և քո կամքը, այդ անելու համար:

Գովյա՛լ է Աստված:
Դու խնդրել ես Ինձ
լինել Քո Սիրո ստրուկը:
Քանի որ ես արժանի չեմ
Քո ստրուկը՝
Աստծո ստրուկը լինելու,
առաջնորդիր Ինձ

Քո մաքրագործող Կրակի մեջ
ու մաքրիր ինձ, Իմ Թագավոր,
ինչպես ոսկին են մաքրում,
որ ես կարողանամ փառաբանել Քեզ,
քանզի ես միայն
մեղք-մեղքի ետևից եմ գործում:
Խղճահարությունից դրդված,
Թույլ տուր, Տե՛ր,
որ Քո Լույսը փայլի իմ խավարի մեջ:

Սովորեցրու ինձ լինել
Քո Սրտի զոհը,
և գրկել Քո Խաչը ջերմորեն
և ոչ թե՝ սարսափով
Գողգոթա տանող ճանապարհին,
այն ճանապարհին,
որը տանում է դեպի երջանկություն,
քանզի դա Սրբության Արահետն է,
որի վրա Դու, որպես Կատարյալ Զոհ,
առաջինը ոտք դրեցիր:

Ես անընդհատ մեղք եմ գործում,
իսկ Դու չես պատժում ինձ,
ինչին որ ես արժանի եմ:
Դու անդադար խնայում ես ինձ
և թույլ ես տալիս,
որ Քո Լույսը իմ մեջ լինի:
Դրա համար ես գիտեմ,
որ <u>Աստված</u> իմ կողմն է:
Հիմա ես պետք է կատարեմ
Քեզ տված իմ երդումները՝
Քո Սուրբ Սրտին
տրված իմ նվիրաբերությամբ:
Թույլ տուր ինձ
հավիտյանս մնալ Քո Վրանում:
Թույլ տուր ինձ կառչել Քեզանից
և սևեռուն նայել Քո Սուրբ Դեմքին,
և ես <u>կօրհնեմ</u> Քեզ իմ ողջ կյանքում,
և իմ հոգին կցնծա Քո Սիրո
և Քո Ներկայության մեջ:

Սանի՛կս, ուրախացիր ուրեմն Իմ Վրանում ու պաշտիր Ինձ: Հիշի՛ր, Ես քեզ տվել եմ մի շատ թանկարժեք բան: Պահպանիր ու փայփայիր այն սիրով: Իմ Խաչը քեզ դեպի սրբություն կառաջնորդի, փոքրիկ հոգի:
Իմ Խաղաղությունը քեզ:

Ես օրհնում եմ Քեզ, Հիսուս:

Նա, ով քեզ բոլորից շատ է սիրում, օրհնում է քեզ:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 18, 1990

(Ես ներքուստ զգում եմ, որ մուտք եմ գործում իմ կյանքի մի նոր հանգրվան Աստծո մեջ, ինչպես մի ուսանող, որն ավելի բարձր դասարան է փոխադրվել, և ավելի տքնաջան աշխատանք է պահանջելու...):

Տե՞ր:

Ես եմ:
Բռնիր ձեռքս ու Ինձ հետ ասա այս աղոթքը.

«Հա՛յր, վերցրու այն ամենը,
ինչ որ ունեմ, Ամեն»:

Տուր Հորը ամեն ինչ և դու կփրկվես: Մի՛ վախեցիր Նրանից, ինքդ քեզ Նրան հանձնիր: Վասո՛ւլա, թույլ տուր Ինձ շնչել քո մեջ: Վստահ եղիր, քանզի Ես քեզ հետ եմ:

ΙΧΘΥΣ

Կարդա Եսայի 55: Վասո՛ւլա, ավելացրու այս տողերը աղոթաժողովի համար տրված Իմ Պատգամում:
Ես այսօր գալիս եմ ձեզ մոտ, որ ձեզ ասեմ, թե որքան լիակատար է Իմ ուրախությունը: Քանզի Ես Նա եմ, ում դուք փնտրում եք, և դո՛ւք, որ հեռվից եկել եք, որ լսեք Ինձ, Ես ասում եմ ձեզ, Իմ շատ սիրելիներ. Ես՝ ձեր Աստվածը, ժպտում եմ ձեզ: Մնացե՛ք Իմ Սիրո մեջ, աղոթե՛ք խաղաղության համար և եղեք շշմարտության վկաները:
Ես՝ Աստված, ձեզ հետ եմ և օրհնում եմ ձեզ:

Դեկտեմբերի 19, 1990

Տե՛ր իմ:

Ես եմ:

Եթե միայն իմ ժողովուրդը[1] լսեր...

Արգելքը կվերացվի, և նրանք կլսեն. դրա համար քաջալերվի՛ր, փոքրիկս... Ես քեզ հետ եմ... Սերը քո կողքին է... Օ՜հ, Վասուլա, սիրելիս, Ես այնքան մոտ եմ քեզ[2]: Ես եմ, և Ես հետևում եմ քո կատարած ամեն մի քայլին:

[1] Ուղղափառները:
[2] Հիսուս նկատի ուներ, որ իմ փոքր դրասեղանի կողքին էր:

Բարձրացիր ու համբուրիր Ինձ: Ես քո կողքին եմ: Համբուրիր քո առաջ գտնվող Սուրբ Սիրտը...

(Ես համբուրեցի Նրա Սուրբ Սիրտը):

Այո՛... Հիմա Ինձ գոհացրու ու գրիր:

(Ես նայեցի Նրա Սուրբ Դեմքին, ու իմ սիրտը ուրախությունից թպրտաց):

Խաղաղություն քեզ: Այդ Ես եմ, սիրելի երեխաներ, Սուրբ Սիրտը: Այդ Ես եմ, ձեր Փրկիչը, որ հետևում է ձեզ, որպեսզի ձեր սիրտը սիրաշահի և ամբողջապես այն Իմը դարձնի: Այսօր Ես հավաքել եմ ձեզ մեկտեղ, ինչպես դպրոցում, որ միասին լինեք և սովորեք ուղղակի Իմաստությունից:

Ես մտադիր եմ տեսողություն տալ կույրերին, որպեսզի նրանք կարողանան տեսնել Իմ Մեծասքանչությունը, և ուսուցանել անուսներին, որպեսզի աճեն Իմ Հոգու մեջ և իմանան, ինչպես տարբերել մեղքը առաքինությունից: Ես մտադիր եմ գրավել ամեն մի սիրտ, անգամ այն սրտերը, որոնք գրանիտ են դարձել և կարծր են, ինչպես ջրաղացի քարերը: Ինչպես մի մարդ, որ հրավիրում է ընկերներին կիսելու իր ունեցվածքը, Ես նույնպես հրավիրում եմ ձեզ կիսել Իմ Ունեցվածքը:

Իմ հավաքները նմանվում են դպրոցի: Դրանց նպատակն է ձեզ առաջ տանել ձեր հոգևոր կյանքում և հիշեցնել ձեզանից յուրաքանչյուրին Իմ Խոսքի բովանդակությունը: Իմ Դպրոցում Ես նախապատրաստում եմ ձեր հոգին Իմ Մեծ Վերադարձի համար, և Իմ Շնորհով Ես երբեմն խոսում եմ ձեզ հետ ապագա իրադարձությունների մասին, որպեսզի դուք իմանաք դրանց արդյունքը:

Եթե դուք չսովորեք Իմաստությունից, ուրեմն ինչպե՞ս պիտի կարողանաք ապրել համաձայն Իմ Օրենքի: Բացի այդ, ձեզանից շատերը Ինձ ավելի չգիտեին, քան այն մեկը, որին Ես ուղարկել եմ ձեզ մոտ: Բայց Ես Հարությունն եմ: Տեսնու՞մ եք, ինչպես են վաղեմի կանխասացություններն իրականանում: Ես բարձրացրի նրան իր գերեզմանից և բռնեցի նրա ձեռքը ու ձևավորեցի նրան, որպեսզի հրապուրեմ նրան: Այո՛, Ես եմ Հարությունն ու Լույսը:

Մի՞թե Ես նույնը չեմ արել ձեզ համար: Մի՞թե չեմ խղճացել ձեզ և նրանց, ովքեր հեռու էին Իմ Սրտից: Մի՞թե չեմ փնտրել ու գտել նրանց: Եվ մի՞թե Ես հավիտենական Սիրով ձեզ չեմ վերադարձրել դեպի Ինձ: Եվ մի՞թե Ես՝ ձեր Տերը, չեմ հրապուրել ձեզ այս բոլոր տարիներին՝ ձեր սիրտը շահելու համար:

Ես արթնացրի Իմ Ողորմությունը, որպեսզի ճնշեմ Իմ Զայրույթը, և հեղեցի Իմ Սերը Իմ Արդարադատության փոխարեն: Ես տվեցի ձեզ Իմ Խաղաղությունը, որին հաջորդեց շնորհը: Եվ Իմ Կարեկցությունը խոնարհվեց Երկնքից՝ շնորհելով ձեզ այն, ինչ խնդրել էիք ձեր աղոթքներում: Ես երբեք չեմ դադարել ձեզ օրհնելուց: Ես ասել եմ. «Դեպի այգի հոսող առվի նման, Ես ջրելու եմ Իմ մրգատու այգին: Ես մտադիր եմ ոռոգելու Իմ ծաղկանոցները, և ահա, Իմ առուն դարձել է գետ, իսկ Իմ

գետը ծով կդառնա»[1]:

Այսօր ես ասում եմ ձեզ. Ձեր Հովիվը շուտով պիտի ապրի ձեր մեջ և Իր հոտը պիտի արածի Իր Քաղաքի պարտեզներում: Ո՛չ, դուք դեռևս մեկ հոտ չեք, բայց ես ձեզ մեկ առ մեկ պիտի հանեմ անապատից: Դրա համար, փոքրիկ Իմ հոտ, երբ դուք հեռվից տեսնեք Ձեր Հովվին անապատից դուրս գալուց, իմացե՛ք, որ Ինձ հետ են լինելու Իմ մնացած դառները: Եվ այն ամենը, աղջի՛կս, որ ես արել եմ քեզ համար, քո եղբայրների համար էլ կանեմ: Ես կփրկեմ ձեզ: Ես ձեզ կմիավորեմ ձեր մյուս եղբայրների հետ, և Իմաստությունը կլինի ձեր Սրբազան Ուղեկիցը, որպեսզի անդադար ուսուցանի ձեզ:

Ես շուտով կվերացնեմ արգելքը, և ձեր մեծ ուրացությունը իր ավարտին կհասնի: Եվ աղոթքը, որ տվել եմ ձեզ, կիրականանա: Իմ Կամքը պիտի կատարվի երկրի վրա, ինչպես Երկնքում է: Եվ Իմ Սուրբ Անվան ներքո, շատ ազգեր պիտի գան հեռվից, երկրի բոլոր ծայրերից, որ բնակվեն Իմ Սուրբ Անվան մոտ՝ փառաբանելով Իմ մեծությունը աստվածայնությամբ, որը ես ձեզ պիտի վերադարձնեմ: Եվ Իմ Թագավորությունը պիտի գա, քանզի Իմ Գահը պիտի իջնի վերևից Իմ Սուրբ Քաղաքում: Եվ Ես պիտի թագավորեմ մնացորդաց մեջ, որոնք Ինձ կտեսնեն երես առ երես:

~ Սերը կվերադառնա,
որպես սեր, ~

և Իմ Կամքը կկատարվի երկրի վրա, ինչպես Երկնքում է, քանզի <u>դուք մեկ պիտի լինեք</u> պաշտելով Ինձ մեկ Տապանակի շուրջ, ձեր սրտերը սիրով լեցուն, իսկ ձեր ներսում՝ Հրավառ Կրակ: Ես պիտի կատարեմ Իմ քահանայական աղոթքը երկրի վրա, ինչպես Երկնքում: Ձեր հոգիները պիտի արմատավորվեն Իմ մեջ՝ Սիրո մեջ, Միասնության մեջ և պիտի լցվեն Իմ Հոգու լիակատար ամբողջությամբ: Այո՛, սիրելիներս, ես ոչ միայն պիտի տամ ձեր հանապազօր հացը, այլ նաև թաքցված Գանձն Իմ Սրտից՝ <u>Երկնային Մանանան</u>[2], որ փոխակերպում, բարձրացնում է ձեր հոգին ու դարձնում Իմ Հոգու մի պատճեն: Դուք պիտի փոխակերպվեք Իմ Հոգու հեղմամբ, որպեսզի իմանաք, ինչպես լիովին ներել նրանց, ովքեր մեղք են գործել ձեր հանդեպ:

Ես ձեր մեջ պիտի դնեմ Հասկացողության ու Ողորմության Հոգի, որպեսզի հասկանաք, թե ինչ է նշանակում «Տիրոջ վախը»: Այո՛, սիրելիներս: Եվ երբ դուք հասկանաք այդ, ես ձեզ Իմաստություն պիտի տամ, որպեսզի այն լինի ձեր ճամփի Ուղեկիցը և ուղեցույցը՝ ձեզ դեպի սրբություն առաջնորդելու համար, այն սրբությունը, որը սատանային հազարավոր տարիներ անդամալույծ կդարձնի՝ արգելելով նրան կանգնել մեր միջև և ձեր ու Իմ Սիրո միջև:

Դրա համար, երբ տեսնեք, որ երկինքը հալվում է բոցերի մեջ, իսկ տարրերը լուծվում են ջերմությունից, իմացե՛ք, որ դա առաջին նշանն է Իմ Խոստման և Նոր Երկնքի ու Նոր Երկրի. Իմ Եկեղեցու Նորացման, Իմ Եկեղեցու Վերածնման,

[1] Սիր. 24:41-43
[2] Այսինքն՝ Սուրբ Հոգին:

ձեր սրտերի Վերածնման:

Իսկ դուք, դո՛ւք, որ Ինձ նվիրաբերված հոգիներ եք, դո՛ւք, որ ներկայացնում եք Ինձ, Ես ասում եմ ձեզ հետևյալը. Հիշու՞մ եք, երբ Ես լսեցի Ինձ ուղղված Եղիայի բողոքը Իսրայելի վարքագծի մասին, թե նա ինչպես էր հավատացած, որ նրանք սպանել էին Իմ բոլոր մարգարեներին ու փշրել Իմ բոլոր զոհասեղանները: Հիշո՞ւմ եք, թե ինչ էր Իմ պատասխանը: Ես ասացի. Ես Ինձ համար պահել եմ յոթ հազար մարդ, որոնք ծնկի չեն եկել Բահաղի առաջ: Եվ այսօր Ես ասում եմ ձեզ, սիրելի եղբայրներ. Ես պահել եմ Ինձ համար մի մնացորդ, ընտրված և փոխակերպված Իմ Շնորհով, որպեսզի հավատարիմ մնա Ինձ: Ես հարություն եմ տալիս այս մնացորդին, որպեսզի վերաշինեն այն զոհասեղանները, որոնք մի ժամանակ կային, և վերակառուցեն Իմ Սրբարանը: Նրանք Իմ Նոր Եկեղեցու կառուցողներն են:

Ուստի, մինչ մեղավորները շարունակում են իրենց չար գործերը, ձեզ՝ վերջին Ժամանակների Իմ մարգարեներին ու Իմ սրբերին հետապնդելով, և մինչ հպարտները պայքարում են համաշխարհային իշխանություն ձեռք բերելու համար, Ես՝ ձեր Փրկիչը, հարություն եմ տալիս և ուսուցանում այդ վերակառուցողներին Իմ Սուրբ Սրտում, որ լինեն Իմ Եկեղեցու այուները: Եղբայրնե՛ր, Ես երբեք չեմ լքի ձեզ, երբե՛ք... Եկե՛ք... Բարձրացրե՛ք ձեր խաչը և հետևեք Ինձ, և երբ ճանապարհին հոգնած կզգաք, հենվեք Ինձ վրա, հենվեք Իմ Սրտին ու Իմ Սրտի Ջարկերը ձեզ անհրաժեշտ քաջություն և ուժ կտան, որպեսզի շարունակեք ձեր ճանապարհը դեպի Գողգոթա:

Օրհնյալ եղեք: Ես այս ամենը ձեզ ասացի այսօր, որ դուք կարողանաք խաղաղություն ու հույս գտնել Իմ մեջ: Ես այսօր խոսեցի ձեզ հետ պարզ բառերով: Սիրելինե՛ր, զգոն ու արթուն կացեք, և դուք կլսեք Իմ Ոտնաձայները: Խոսքը հիմա շատ մոտ է ձեզ և Իր Վերադարձի Ճանապարհին է:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ, թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատներին, այն հոգոցը, որը ձեզ դրոշմում է, որպես Իմը: Մեկ եղեք Իմ Սուրբ Անվան ներքո:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 22, 1990

Իմ Հիսո՞ւս:

Ես եմ:

Ես շատ քնքշորեն եմ քեզ վերաբերվում, որպեսզի դու աճես, ինչպես Իմ ծաղիկը: Ես ուզում եմ, որ ուժեղ լինես, և հավատա Ինձ, Ես դա հնարավոր պիտի դարձնեմ: Դու պիտի ուժեղ լինես, աղջի՛կս, քանզի դու կրում ես Իմ Խոսքը: Քո դիմաց ե՛ս Եմ, որպեսզի վերացնեմ բոլոր այն խոչընդոտները, որոնք առաջ են գալիս, երբ դու վկայում ես: Ես Ամենաբարձրյալն եմ, և Ես ասում եմ քեզ, աղջի՛կս, Ես կհետևեմ, որ ոչ մի

ուժ ներքևից չկարողանա արգելել քեզ հռչակելու Իմ Պատգամը:

Ես քեզ հանել եմ Եգիպտոսից, որ արձագանքես Ինձ օտար հողում և վկայես ոչ քո սեփական ժողովրդին: Դրա համար, չնայած քո վարքագիծը սարսափելի էր և քո զգայարանները արատավորված՝ թույլ չտալով քեզ տեսնել Լույսը, Ողորմությունն[1] ու Կարեկցանքը գրավված էր քո ապշեցուցիչ թշվառությամբ, մեղքով ու ողորմելիությամբ և եկավ քեզ փրկելու:

Ո՜չ, Վասուլա, դու արժանի չես եղել Իմ Պարգևներից և ոչ մեկին: Զէ որ Ես Իմ Ձեռքում ծառաներ ունեի, ովքեր պատվում էին Ինձ՝ Իմ Անունը միայն սրբությամբ արտասանելով, ովքեր Ինձ անդադար օրհնում էին, ովքեր ամբողջ սրտով գովերգում էին Սուրբ Երրորդությունը, բայց Իմ Սիրտը, որ Սիրո մի Վիհ է, քեզ էր կանչում: Դու Իմ Սրտում կուտակում էիր վիշտ վշտի վրա, դավաճանություն՝ դավաճանության ետևից: Դու պայքարում էիր Ինձ հետ, թույլ, փոքրիկ արարած... Բայց Ես գիտեի, որ քո սիրտը բաժանված սիրտ չէ, և հենց որ Ես գրավեմ քո սիրտը, այն ամբողջապես Իմը կդառնա: Լինելով քո դարաշրջանի արդյունքը, դու պայքարում էիր Ինձ հետ, բայց Ես տապալեցի քեզ այդ պայքարում ու գցեցի փոշու ու անապատի մեջ, որտեղ Ես քեզ լրիվ մենակ թողեցի:

Ես քեզ համար պահապան հրեշտակ էի ապահովել քո գոյության սկզբից ի վեր, որպեսզի պահպանի քեզ, սփոփի ու առաջնորդի քեզ, բայց Իմ Իմաստությունը հրամայեց քո պահապան հրեշտակին, որ թողնի քեզ, որպեսզի միայնակ դեմ առ դեմ կանգնես այդ անապատին: Ես ասացի. «Դու պետք է ապրես, չնայած քո մերկությանը»[2], քանզի ոչ մի մարդ ի վիճակի չէ միայնակ գոյատևել[3]: Սատանան ամբողջովին կյուրացներ ու կսպաներ քեզ: Իմ հրամանը նրան էլ տրվեց: Ես արգելեցի նրան դիպչել քեզ: Այդ ժամանակ, քո սարսափի մեջ, դու հիշեցիր Ինձ ու նայեցիր Երկնքին՝ հուսահատորեն Ինձ փնտրելով: Քո ողբերն ու թախանձանքները հանկարծ ճեղքեցին քեզ շրջապատող մահացու լռությունը և քո սարսափած աղաղակները թափանցեցին երկինք, հասնելով Սուրբ Երրորդության Ականջներին...

«Զավա՛կս», Հոր Ձայնը բարձր հնչեց լի բերկրանքով ամբողջ Երկնքով մեկ:

«Ա՜հ... Ես հիմա այնպես պիտի անեմ, որ նա ներթափանցի Իմ Վերքերի մեջ[4] և թույլ պիտի տամ նրան ճաշակել Իմ Մարմինը և խմել Իմ Արյունը: Ես նրան պիտի պահեմ Ինձ հետ, և նա Իմը կլինի հավիտյան: Ես նրան ցույց պիտի տամ իր հանդեպ ունեցած Իմ Սերը և այդ պահից սկսած, նրա շուրթերը պիտի ծարավեն Ինձ համար, իսկ Իմ Գլուխը պիտի հանգստանա նրա սրտի վրա: Նա ամեն օր եռանդով պիտի ենթարկվի Իմ Արդարությանը: Ես նրան Իմ Սիրո ու Իմ Զարչարանքների զոհասեղանը պիտի դարձնեմ: Ե՛ս և միայն Ես պիտի լինեմ նրա միակ Սերն ու Կիրքը:

[1] Ողորմությունը և Կարեկցանքը վերաբերվում է Տիրոջը:
[2] Ես «մերկ» մնացի, հենց որ իմ պահապան հրեշտակը և ամբողջ Երկինքը երես դարձրին ինձնից:
[3] Լքված Երկնքի կողմից:
[4] Այդ ժամանակ խոսեց Որդին:

Եվ ես նրան Իմ Պատգամի հետ միասին պիտի ուղարկեմ աշխարհի ծայրերը, որպեսզի նվաճի անհավատ մարդկանց, և մի ժողովրդի մոտ, որը նույնիսկ իր սեփական ժողովուրդը չէ: Եվ նա կամավոր պիտի կրի Իմ Խաղաղության ու Սիրո Խաչը՝ բռնելով Գողգոթայի ճանապարհը»:

«Իսկ ես, Սուրբ Հոգին, պիտի իջնեմ նրա վրա, որ հայտնի դարձնեմ նրան Ճշմարտությունը և Մեր խորքերը»[1]: Ես նրա միջոցով պիտի հիշեցնեմ աշխարհին, որ բոլոր պարգևներից մեծագույնը ՍԵՐՆ է»:

«Ուրեմն եկեք[2] տոնենք, թող ամբողջ Երկինքը տոնի»

... Ես բռնել եմ քո ձեռքից և քեզ ձևավորել եմ, որ դու դառնաս Իմ Մեծ Սիրո կենդանի նշանը, Իմ Սուրբ Սրտի և Իմ Եկեղեցու նորոգման վկան:

(Խոսեց Հայրը, Որդին, հետո Սուրբ Հոգին):

Ես եմ Հարությունը:

ΙΧΘΥΣ

(Լրացուցիչ բացատրություն այս պատգամի մասին):

Սկզբում, երբ հանկարծ ինձ մոտեցավ իմ պահապան հրեշտակը, որ ճանապարհ բացի Տիրոջ համար, ես, որպես «պրոֆեսիոնալ» մեղավոր, սեր չունեի Աստծո հանդեպ, անգամ, երբ իմ հրեշտակն ինձ Երկնքի մասին էր պատմում: Ես պարզապես բավարարված էի իմ հրեշտակի հետ լինելով: Ես ավելին չէի փնտրում: Երբ Աստված մոտեցավ ինձ, փոխարինելով իմ հրեշտակին, ես ինչ-որ չափով հիասթափվեցի: Ես նրան անծանոթ զգացի, քանի որ արդեն ծանոթացած լինելով իմ հրեշտակի հետ, իմ զարմանքի զգացումները վերածվել էին սիրո: Եվ հետո ես չկարողացա հասկանալ, թե ինչու է Աստված ուզում գրավել իմ հրեշտակի տեղը: Անգամ ավելի հեռուն գնացի, մտածելով, որ Աստված նախանձում էր այն սիրուն, որ ես տվել էի իմ պահապան հրեշտակին, և ես ափսոսանք զգացի իմ հրեշտակի համար:

Ավելի ուշ, իմ հրեշտակի կողմից ինձ տրված շատ ցավոտ մաքրագործումից հետո, Աստված երկրորդ անգամ մոտեցավ ինձ, որ գրավի իմ հրեշտակի տեղը: Նա մնաց ինձ հետ մի քանի օր, դանդաղորեն և իմաստությամբ բացելով իմ սիրտը, որ ինձ չխրտնեցնի: Երբ ես հազիվ էի սովորել Նրան, Նա հեռացավ ու թաքնվեց: Ես շուրջս նայեցի, որ գտնեմ իմ հրեշտակին, բայց Նրան էլ չգտա: Ես զգում էի, որ մի քանի հոգի[3] մոտենում էին ինձ, աղաչելով ինձ աղոթքների ու օրհնությունների համար: Ես աղոթեցի նրանց համար ու օրհնեցի նրանց: Հետո նրանք ինձ խնդրեցին օրհնել իրենց օրհնված ջրով: Ես արագ վազեցի եկեղեցի, և նրանց համար օրհնված ջուր բերեցի և օրհնեցի նրանց՝ օրհնված ջուրը ցանելով նրանց վրա: Ես առիթից օգտվեցի, որ հարցնեմ նրանց, թե արդյոք գիտե՞ն, որտեղ է իմ հրեշտակը, Նա, որին իմ սիրտն արդեն սկսել էր սիրել, բայց պատասխան չստացա:

Ամեն անցնող օր տարի էր թվում: Ես խաղաղություն էի փնտրում, բայց

[1] Սուրբ Երրորդությունը:
[2] Խոսեց Սուրբ Երրորդությունը:
[3] Քավարանից:

չէի գտնում: Ես շրջապատված էի շատ մարդկանցով, բայց երբեէ այդքան մենակ ու լքված չէի զգացել, ինչպես այդ օրերին: Այնպիսի զգացում ունեի, կարծես դժոխքի միջով էի անցնում:

Շատ անգամ ես կանչեցի իմ հրեշտակին, որ վերադառնա ինձ մոտ, բայց նա ինձնից երես էր դարձրել ու հեռացել: «Իմ հոգին նվաղեց, երբ նա հեռացավ: Ես փնտրեցի նրան, բայց չգտա, ես ձայն տվի նրան, բայց նա չպատասխանեց» (Երգ երգոց 5:6): Ես ամբողջ երեք շաբաթ թափառեցի անապատում, լրիվ մենակ, մինչև որ դա անտանելի դարձավ այլևս: Հետո, տառապանքով ես կանչեցի Յահվեին՝ զննելով Երկինքը. «Հա՛յր, Օ՜, Աստված, վերցրու ու օգտագործիր ինձ, ինչպես կամենում ես, մաքրագործիր ինձ այնպես, որ կարողանաս օգտագործել ինձ»: Սրտիս խորքից եկող այս կանչի հետ հանկարծ Երկինքը բացվեց, և ինչպես Ամպրոպ, Հոր ձայնը, զգացմունքով լի, պատասխանեց ինձ. «Ես՝ Աստված, սիրում եմ քեզ»:

Նույն պահին ես զգացի, ինչպես փոթորկի միջից ընկա մի գեղեցիկ, խաղաղ աշխարհ: Իմ հրեշտակը կրկին հայտնվեց և մեծ քնքշությամբ սկսեց կապել իմ վերքերը, այն վերքերը, որ ստացել էի անապատում:
Սա պատահեց 1986 թվի Զատիկի ժամանակ:

Դեկտեմբերի 23, 1990

Օ՜ Հայր, ինչպես ծարավ հողը,
ես ծարավի եմ քեզ:
Դիր ինձ մի պահ
Քո Ծնկների վրա ու սփոփիր ինձ:
Թող ես ինձ պարուրված զգամ
Քո Սփոփող Սրտով:
Ես Քո ջերմության կարիքն ունեմ:

Դիր գլուխդ Իմ Սրտին, հանգստացիր ու սփոփված զգա... Քո Աբբան (Հայրը) հոգ է տանում քո մասին: Քո Աբբան երջանիկ է քեզ Իր կողքին տեսնելով: Դիր գլուխդ Իմ Սրտին, զավա՛կս, և լսիր Իմ Սրտի Ցանկությունները: Իմ Սիրտը դեռևս փնտրում է, տենչում է, թախանձում է Իմ մնացած զավակների սիրո համար...

(Դադար մի քանի վայրկյան):

Զավակս[1], ի՞նչ կտայիր քո Աբբային սփոփելու համար:

Օ՜, Տեր, ինչ որ կամենաս: Իմ սերը, իմ կամքը, իմ սիրտն ու իմ հոգին:

Էլ ի՞նչ:

Իմ կյանքը, որպես հատուցում Քո Ցանկությունների:

Ուրեմն իջիր ցած Իմ Ծնկներից և գնա ու վկայիր Իմ Անունը: Գնա ու

[1] Հանկարծ Հայրը շրջեց գլուխն ու նայեց ինձ:

պատմիր ազգերին Իմ Մեծ Սիրո մասին: Հիշեցրո՛ւ նրանց, որ Իմ Խոստումը շատ մոտ է իր ավարտին հասնելու և Իմ Վերադարձը շուտով կլինի: Նոր Երուսաղեմը[1] մոտ է: Ես պատրաստվում եմ նորոգել Իմ Եկեղեցին ու Իմ Ժողովրդին:

Դրա համար, զավա՛կս, իջիր ցած Իմ Ծնկներից ու գնա դեպի աշխարհ՝ հանուն Իմ Սիրո... և հայտնի դարձրու Իմ Սերն աշխարհին: Թող աշխարհը հասկանա, թե որքան եմ սիրում Իմ Զավակներին: Իրականում, դու չես փնտրել Ինձ: Այդ Ես եմ, որ գտել եմ քեզ ու ընտրել եմ, որ գնաս աշխարհով մեկ՝ մինչև Իմ Մեծ Օրը կգա: Այդ Ես եմ, որ ձևավորեցի քեզ, ու չնայած դու անտարբեր էիր Իմ հանդեպ, Ես ընտրել եմ քեզ ու ցույց եմ տվել քեզ Իմ Սուրբ Դեմքը: Ուստի, երբ ավարտես այն ամբողջ աշխատանքը, որ տվել եմ քեզ, զավա՛կս, Ես պիտի տանեմ քեզ Ինձ մոտ, և այն ժամանակ դու կարող ես հանգստանալ Իմ Ծնկների վրա:

Մինչ դու աշխարհում ես, Ես պիտի պաշտպանեմ քեզ քո կեղեքիչներից: Ես ուզում եմ, որ դու, քո հերթին, անընդհատ նայես Երկնքին ու փնտրես Ինձ և խոսես Ինձ հետ: «Յահվեն քեզ հետ է»: Միշտ պահիր այս խոսքերը քո մտքում և սրտում, քանզի Ես-Քեզ-Հետ եմ: Թող սիրտդ հիմա որպես գանձ պահի այն ամենը, որ ասել եմ քեզ, և հիշիր. մատուցիր Ինձ աղոթքներ, որ հասնեն Ինձ, ինչպես խունկ, հոգիների դարձի և Իմ Եկեղեցու վերակենդանացման համար:

Դեկտեմբերի 25, 1990

(Սուրբ Ծնունդ)

Ես պիտի հայտնեմ
Քո Անունը իմ եղբայրներին[2]
և գովերգեմ Քեզ ժողովի մեջ[3],
անկախ նրանից,
այդ[4] դուր կգա նրանց, թե ոչ:

Աղջի՛կս, չնայած ձեզանից շատերը չգիտեն Խաղաղության ու Միասնության ճանապարհը, մի՛ հուսահատվիր: Հույսդ դիր Ինձ վրա: Ես շուտով պիտի գամ քեզ մխիթարելու: Իսկ դու, զավա՛կս, քո աղերսները[5] Երկնքում լսվել են բոլորի կողմից:

Ես պիտի գամ միավորելու ձեզ: Իմ Խոսքը տրվել է, և Իմ Կամքը պիտի կատարվի: Իսկ մինչ այդ, հավաքիր մի ժողովրդի, որին երբեք չես ճանաչել, և տուր նրանց այն հրահանգները, որ Ես եմ քեզ տվել: Եվ եթե մի

[1] Եկեղեցին:
[2] Հույն Ուղղափառ:
[3] Սաղմ. 21:23
[4] Հույն Ուղղափառ:
[5] Միասնության համար:

«իմաստուն» երբեմն մեղադրում է քեզ Ինձ Հայր կոչելու համար, հիշեցրու նրան, որ այսօր մի Երեխա է ծնվել և Նրա Անունը Հրաշալի-Խորհրդատու, ՀզորԱստված, Հավիտենական-Հայր և Խաղաղության Իշխան է[1]:

Աղոթի՛ր նրանց համար, ովքեր իրենց Օրենքի վարդապետ են կոչում, որպեսզի նրանց հոգին դառնա խոնարհ ու աղքատ հոգի: Աղոթի՛ր, որ բոլոր ազգերը դան դեպի Իմ Լույսը, և վրեժխնդրությունը, որ կրծում է նրանց սրտերը, հեռացվի, որպեսզի Ես կարողանամ նրանց սրտերը պարուրել Իմ Խաղաղությամբ: Աղոթի՛ր, որ արևելքը խաղաղություն կնքի արևմուտքի հետ, իսկ հյուսիսը՝ հարավի: Աղոթի՛ր, որ ավելորդ հպարտությունն ու մեծամտությունը, որ գրավել են Իմ որոշ հովիվների, փոխարինվեն խոնարհությամբ: Աղոթի՛ր, որ նրանք հասկանան, թե Ես ինչ նկատի ունեի, ասելով. «Ձեզնից ով կկամենա մեծ լինել, ձեր ծառան պիտի լինի, և ձեզնից ով կկամենա առաջինը լինել, ձեր գերին պիտի լինի: Այո՛, ինչպես որ մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և Իր Անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն»[2]:

Նմանվե՛ք Ինձ, ձեր Աստծուն,
և դուք կապրեք...

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 30, 1990

Տեր և Փրկի՞չ:

Ես եմ: Ուրախացրո՛ւ Ինձ ու աշխատիր Ինձ համար: Աղոթի՛ր Ինձ ու հիշիր Ինձ, արի:

[1] Ես. 9:6
[2] Մատթ. 20:26-28

1991

Հունվարի 6, 1991

(Աստվածահայտնություն)

(Երբ ես Ուղղափառ եկեղեցում էի, ասացի Հիսուսին. «Կուզենայի այնպիսի ձայն ունենալ, որ կարողանայի երգել Քեզ համար եկեղեցու երգչախմբում»: Հիսուս պատասխանեց. «Երգիր Ինձ համար քո սրտով: Ես ավելի եմ ուրախանում, երբ լսում եմ, թե ինչպես է քո սիրտը երգում Ինձ համար»):

(Ավելի ուշ աչքերս թափառում էին պատի վրայի սրբապատկերների ու որմնանկարների վրա: Ես մտածում էի. «Օ՜հ, նայիր այս ողջ մեծ Սուրբ Ընտանիքին: Մի օր մենք դրա մի մասը կկազմենք՝ հրեշտակները, սրբերը, մեր Սուրբ Մայրը և Սուրբ Երրորդությունը: Ինչ հրաշալի Սուրբ Ընտանիք է»: Եվ իմ հոգին տենչաց լինել նրանց հետ, լինել այդ ընտանիքի մի մասը և մշտապես պաշտել Սուրբ Երրորդությանը):

Օ՜, Աստված, թույլ տուր,
որ այս Երկնային Ընտանիքի
մի մասը կազմեմ:
Ուստի աղոթեք ինձ համար,
Սուրբ Հրեշտակներ,
աղոթեք ինձ համար,
որ մի օր երկնքում ձեզ հետ լինեմ
և միանամ ձեզ ու սրբերի հետ,
մշտապես պաշտելով Սրբին:
Աղոթեք ինձ համար,
սրբեր Ամենաբարձրյալի,
որ սովորեմ կատարելապես
սիրել Աստծուն:

Օ՜, քաղցր Սուրբ Մայր,
բարեխոսիր ինձ համար
և սովորեցրու ինձ,
որ հնազանդ
ու խոնարհ լինեմ մեր Հորը,
որ կարողանամ
կատարել Նրա Կամքը:

Օ՜, Սուրբ Երրորդություն,
Կատարյալ Սիրո Աղբյուր,
Անսպառ Քնքշության Աղբյուր,
արի ու սովորեցրու ինձ

մտերիմ լինել Քեզ հետ,
միացնելով ինձ Քո Սիրո Հոգուն:
Օ՜, պատրաստիր
ինձ այդ ժամի համար,
քանզի գիշերը գրեթե ավարտվել է
և իսկական Լույսը շուտով գալու է:

Սուրբ Հայր,
ես աղոթում եմ ոչ միայն ինձ համար,
այլ նաև ամբողջ մարդկության:
Քանզի մենք բոլորս
Քո զավակներն ենք:
Ես աղոթում եմ ու խնդրում Քեզ
մեզ վրա նայել Ողորմածությամբ:
Հավիտենական Հայր,
սովորեցրու մեզ սիրել մեկս մյուսին,
որ կարողանանք
կատարել Քո Սուրբ Կամքը,
և արդարացիորեն
Քո զավակները կոչվել: Ամեն:

Սիրելի զավակս, Ես եմ, որ Եմ: Լի Կարեկցանքով ու մեծ Ուժով է, որ Իմ Բարությունն ու Իմ Սերը հայտնվում են հիմա ձեզ բոլորիդ:

Ես ցույց եմ տալիս ձեզ Իմ Սուրբ Դեմքն առանց վերապահության, որպեսզի մաքրագործեմ մի ժողովրդի, որը չի կարողանում տարբերել իր աջ ձեռքը ձախից, և որն ապրում է կատարյալ խավարի ու չարության մեջ: Ձեր Աբբան անդադար ձայն է տալիս ձեզ:

Ես Սեր եմ, եթե միայն դուք լսեիք Ինձ այսօր...

Տեր Հիսուս Քրիստոս,
Աստծո սիրեցյալ Որդի, Սուրբ Սիրտ,
Օրհնյալ լինի Քո Անունը:
Սուրբ Սիրտ, օգնիր մեզ
մեր խաչերը կրել այս աշխարհում
և հնազանդ լինել Հորը,
ինչպես Դու էիր հնազանդ
ու խոնարհ Հոր առաջ մինչև վերջ:
Ամեն:

Ես՝ Տեր Հիսուս, օրհնում եմ քեզ: Ես՝ Խոսքն եմ, և Խոսքը տրվել է ձեզ և ձեր մեջ ստեղծել է Իր Տունը: Դրա համար սրբացրեք ինքներդ ձեզ, որ Բանը (Խոսքը) կարողանա գալ ու ապրել ձեր մեջ:

Օ՜, Ճշմարտության Սուրբ Հոգի,
իջիր մեզ վրա և եղիր մեր
Առաջնորդն ու Սուրբ Ընկերակիցը:
Սիրո Սուրբ Հոգի, իջիր մեզ վրա
ու սովորեցրու մեզ լինել

Աստծո ճշմարիտ Սիրո մեջ:
Հիշեցրո՛ւ մեզ
Ճշմարիտ Գիտությունը,
այն գիտությունը,
որ Հայրն էր մեզ տվել,
բայց որը մենք կորցրինք
մեր մեղքերի պատճառով:
Խաղաղության Սուրբ Հոգի,
տուր մեզ Քո խաղաղությունը,
մի խաղաղություն,
որ աշխարհը չի կարող տալ:
Մեզանից յուրաքանչյուրին
դարձրու Լույսի անոթներ
և «խաղաղարարներ,
որպեսզի, երբ մենք
աշխատենք Խաղաղության համար,
կարողանանք սերմեր ցանել,
որոնք սրբության
պտուղներ կտան»[1] Ամեն:

Սիրելինե՛րս, ես հանդիսավոր ասում եմ ձեզ, որ ես՝ Ճշմարտության Սուրբ Հոգին, օր ու գիշեր, գիշեր ու զօր ձեզ բավականաչափ շնորհներ եմ տալիս, որ օգնեմ ձեզ բոլորիդ դեպի կատարելություն տանող ձեր ճանապարհին: Քանի որ ես ձեր Կյանքն եմ, թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ և ձեր Ուղեցույցը լինել այս աքսորում, որտեղ դուք ապրում եք: Ես կարող եմ լինել ձեր Օազիսը ձեր անապատում: Օ՜, որքան քիչ գիտեք դուք Ինձ, արարչություն: Արարչությո՛ւն,

դուք անց եք կացնում ձեր ամբողջ կյանքը, փնտրելով ձեր երջանկությունը դատարկ բաներում, երբ ես, որ Ամենագոյ եմ, առաջարկում եմ ձեզ Սեր, Ուրախություն, Խաղաղություն և Ազատություն, որ ազատեմ ձեզ Չարի գնդամներից: Իմ Շնորհները բազմաթիվ են, մինչ դուք անտեղյակ եք Իմ Ներկայությանը և այն բանին, թե ձեր Հոգին որքան շատ շնորհներ կարող է ստանալ Ինձանից: Ես աղոթքներ եմ խնդրում Իմ հավատարիմներից Հոգիների փրկության համար: Ամեն ինչ կանցնի մի օր, ամեն ինչ կմաշվի, ինչպես հագուստը, բայց ձեր Հոգիները հավիտյան կմնան:

Բերքը հասել է, և շուտով Հնձվորը պիտի գա ու հնձի Իր Բերքը: Պատրաստ եղեք Հնձվորի համար:

Հունվարի 8, 1991

(Մեր Սուրբ Մոր Պատգամը հունվարի 19-ին տեղի ունեցող աղոթաժողովի համար):

[1] Հակ. 3:18

խաղաղություն ձեզ, Իմ սիրելի զավակներ:

Այսօր ձեզ բոլորիդ ես հրավիրում եմ աղոթելու Միասնության համար: Որպեսզի միավորվեք, դուք պետք է սիրեք, որպեսզի միավորվեք, դուք պետք է խոնարհ ու հնազանդ լինեք: Թույլ մի տվեք որևէ մեկին մոլորեցնել ձեզ այլ ուսմունքներով: Հավատարիմ մնացեք և չեք սայթաքի: Այսօր երկրները ո՛չ ուրախություն են բերում, ո՛չ էլ առաքինություն, քանզի ձեր սերունդը լքել է Աստծուն: Սրա հետևանքը մեղքն է: Երանի նրանց, ովքեր զերծ են մնացել դրանից: Եթե ձեր սերունդը քայլեր Աստծո ճանապարհով, դուք կապրեիք խաղաղության մեջ:

Օ՛, զավակներս, Ես կանչում եմ ձեզ: Իմ կանչերն ուղղվածեն բոլոր ազգերին: Մեռածները[1] չեն կարող ո՛չ լսել, ո՛չ գովերգել Տիրոջը, բայց դուք, դո՛ւք, որ ուշադիր եք Իմ կանչերի հանդեպ, գովերգե՛ք Տիրոջը, փառաբանե՛ք Տիրոջը ձեր սիրով, ձեր հավատով ու ձեր հույսով: Երկինքը պատկանում է քեզ, զավա՛կս: Ուստի Ես խնդրում եմ քեզ, դո՛ւ, որ բերան ունես, խոսես Տիրոջ հետ և օրհնես Նրան: Դո՛ւ, որ աչքեր ունես, նայես Նրա Գեղեցկությանը: Ավելի շատ ժամանակ տրամադրիր Նրա Վերքերին հայելու, խորհրդածելու համար, այն Վերքերին, որ Նա ստացավ քո փրկության համար: Դո՛ւ, որ ականջներ ունես, լսիր Մեր աղերսները: Դո՛ւ, որ սիրտ ունես, սիրի՛ր Տիրոջը, պաշտիր Նրան, և Նրան առաջարկիր քո սիրտը:

Ո՛չ, մեռածները[2] չեն կարող խոսել և ոչ էլ կարող են լսել: Նրանք չեն կարող ո՛չ լսել, ո՛չ զգալ: Սիրելինե՛ր, Նա, ով ստեղծել է ձեզ, խոնարհվում է դեպի ձեզ՝ Իր Սիրտն Ափի մեջ դրած, մատուցելով այն ձեզ: Ինչպես փեսան է հարսին մատանի մատուցում, որպես միության նշան, այնպես էլ Սուրբը մատուցում է ձեզ Իր Սուրբ Սիրտը, որպես Իր Սիրո Նշանը, որ պսակվի ձեզ հետ: Ինչպես գոհարազարդ մի հարս, Տերը՝ Արքայից Արքան, զարդարելու է ձեզ Իր Զարդերով[3]: Մի՛ քնեք, այլ արթուն կացեք:

Դուք փրկագնվել եք ու ձեր համար փրկագին է վճարվել Նրա Թանկագին Արյամբ: Մի՛ տարվեք առաջին իսկ հոսանքով: Թույլ տվեք, որ Նրա Կրակը կլանի ձեզ ու դարձնի մի կենդանի կերոն Իր Եկեղեցում: Թույլ տվեք, որ Նա ձևավորի ձեզ Իր Պատկերով, որ հավատարիմ լինեք ու ամուր, և Նա կօգտագործի ձեզ լինելու Իր Նոր Եկեղեցու այուները:

Օ՛, զավակներս, մի՛ վախեցեք, քանզի Աստված միշտ մեծ գործեր է կատարել: Վստահություն ունեցեք Նրա հանդեպ: Ձեզ մոտ հրեշտակներ են ուղարկվում, որպեսզի Երկնային սերմերն ամենուր տարածեն աշխարհում և Խաղաղության ու Սիրո պատգամ բերեն մեծ փորձությունների ժամանակ: Այս սերմերը ուրախությամբ կընդունվեն, ինչպես անձրևը ծարավ հողի վրա: Միթե չե՞ք նկատել, թե Աստված ինչպես է բացել Երկնքի Դռները, որպեսզի ցած տեղա Իր Երկնային Մանանան: Այո՛, մի՞թե չեք նկատել Իր Շնորհի Սուրբ Հոգին: Ամենակարողը խղճացել է ձեզ ու ասել. «Թող Իմ ժողովուրդը ճաշակի, թող նրանք ճաշակեն Երկնքի Հացը»: Նրա հրամանը տրվեց վերևից: Ինչպես Մովսեսի ժամանակներում, Հայրն անապատում Մանանայով կերակրեց Իր ժողովրդին, տալով ավելին, քան նրանք կարող

[1] Հոգեպես մեռածները:
[2] Հոգեպես մեռածները:
[3] Իր Փչե Պսակով, Իր Գամերով ու Իր Խաչով:

էին ուտել: Իսկ Հիսուս, Նրա Որդին, մի՞թե չբազմացրեց հացն ու ձուկը: Մի՞թե ամբոխը չկերավ այնքան, որքան կամենում էր: Եվ այսօր, ինչո՞ւ են ձեզանից ոմանք զարմանում, որ Սուրբ Հոգին ամբողջ ուժով իջնում է ձեզ վրա, որ կերակրի ձեր ազգերին այս Երկնային Մանանայով:

Օ՛հ, դուք որքան քիչ եք ճանաչում Սուրբ Երրորդությանը: Դուք երբեք վշտահար ու սովամահ չեք մնա, ոչ էլ պիտի լքվեք ու սովամահ պիտի թափառեք այս անապատում: Ձեր դարաշրջանի խավարը հավերժ չի տևի: Ձեր մեղքերը շուտով կմաքրվեն, և Գազանը շուտով անդամալույծ կդառնա: Իր խմբի հետ միասին նրանք կսողան փոշու մեջ, քանզի շուտով մի Լույս պիտի հայտնվի հորիզոնում, և սա պիտի լինի Մեծ Նշանը:

Դրա համար, եթե ձեր ոտքերը դեռևս տատանվում են բարու ու չարի միջև, աղոթե՛ք, որ նրանք ձեզ չտանեն դեպի փորձություն: Եթե ձեր սիրտը դեռևս մերժում է Սիրո Երգ երգել Տիրոջը, աղոթե՛ք, որ Չարը չկարողանա խաբել ձեզ: Եթե ձեր աչքերը խուսափում են նայել վեր՝ Երկնքին, երկնային բաներ փնտրելու համար, աղոթե՛ք, որ մի օր Երկնքում բնակվեք ձեր բնակարանում: Եթե ձեր հոգին դեռևս պատկանում է աշխարհին, աղոթե՛ք, որ աշխարհի չարիքները տեղ չգտնեն ձեր մեջ, քանզի դրանով դուք թույլ տված կլինեք Օձին, որ բուն դնի ձեր մեջ: Աղոթեք սրտով, զոհաբերություն արեք ուրախությամբ: Թող ձեր աշխատանքը արդյունավետ լինի, և Ես խոստանում եմ ձեզ, որ ձեր ճրագը չի մարի գիշերով:

Ծարավի եղեք Աստծուն:

Ես հսկում եմ ձեզ բոլորիդ և հենց այս րոպեին Ես խոնարհվում եմ դեպի ձեզ, որ օրհնեմ ձեզ:

(Ավելի ուշ)

Օրհնյալ լինի մեր Տերը,
որ անընդհատ սիրո հրաշալիքներ է
գործում մեզ համար:
Դու լսում ես մեր աղերսանքներն
ու մեր խնդրանքները, երբ մենք
օգնության ենք կանչում Քեզ:
Օրհնյալ լինի մեր Սուրբ Մայրը,
որ իմ ծննդյան օրվա առիթով
ինձ նվիրում է մի եկեղեցի,
որտեղ մենք[1] կարող ենք
հավաքվել ու աղոթել:
Դու մեր պաշտպանն ես
ու մեր Հույսը:

Ծաղի՛կ, մնա Ինձ հետ: Տասը օրից հետո քո ծննդյան օրն է, այն օրը, երբ Ես կանչեցի ու տնկեցի քեզ, ծաղի՛կ: Ա՛հ, նայիր Ինձ, դա Ինձ հաճույք է պատճառում: Իմ սեփականությունը, Իմ յուրայինը, Ես՝ Տերը, ինչքան եմ սիրում քեզ և ինչքան եմ հրճվում քեզանով: Դու հոգեպես մեռած էիր, բայց հիմա Ես քեզ հարություն եմ տվել, որ դաս ու ապրես Իմ

[1] Աղոթքի խումբն ու ամենամսյա հանդիպումները:

աշխարհում: Երջանիկ զգա, քանզի, տե՛ս, թե ինչ եմ տվել քեզ: Նայիր այն գանձին, որ Ես տվել եմ քեզ: Քո խոկումը շատ մեծ արժեք ունի: Այս երկխոսությունը Մեր միջև մի գանձ է, որ շատերն են փնտրում: Բայց Ես բերեցի և այն մատուցեցի քեզ: Ես Երկնքից իջնում էի մինչև քո սենյակը, որ այն քեզ տամ, որպես նվեր: Իմ գանձը շատերն են փնտրում, բայց քչերը կարող են այն ունենալ: Վասո՛ւլա, Վասուլա, Ինձ հետ միացիր միաժամանակ փափագելով Ինձ, քանզի այդ ցանկությունը՝ Իմ հանդեպ ունեցած քո նվիրվածության կատարյալ պտուղն է: Որքան եմ Ես հրճվում, այս պտուղով: Տուր Ինձ քո ժամանակը, տուր Ինձ քո ձեռքը, եղիր Իմ նոթատետրը:

Մի՞թե Ես չեմ սրբագործել քեզ Իմ Սրբության մեջ:Դրա համար, քո հերթին, առաջարկիր Ինձ քո «ես»ը, քո կամքը, քո ուժը: Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ, փոքրիկս: Թույլ տուր, որ Իմ Սերը պատի քեզ, Աղավնյակս:

Սիրիր Ինձ:

Հունվարի 9, 1991

(Ես արտասվեցի բոլոր այն կեղծ մեղադրանքների համար, որ ասվել էին իմ հասցեին «...»-ի կողմից, և որոնք այնքան վնաս էին պատճառում):

Ծաղի՛կս, սա նույնպես Իմ խաչն է: Բայց և այնպես, թույլ տուր Ինձ քեզ հետ վարվել, ինչպես կամենում եմ: Քո սերը Ինձ է հանում, ինչպես խնկի մի բուրմունք: Երբ հանկարծակի ու մահացու խարազան է իջնում քեզ վրա, զավա՛կս, Ինձ տուր այն: Ես դա լավ կօգտագործեմ: Ազգերը[1] պատերազմի եզրին են, հասկանո՞ւմ ես: Փոքրի՛կս, տուր Ինձ քո տառապանքները, քանզի գայրույթը պատրաստ է բռնկվելու... Իմ խաղաղությունը քեզ... Վստահի՛ր Ինձ, Իմ Վասուլա, հիշի՛ր, Ես պիտի սփոփեմ քեզ: Եվ հետո, քո հրեշտակը քո կողքին է, որ սփոփի քեզ և կապի քո վերքերը: Բայց թույլ տուր Ինձ առայժմ թողնել Իմ խաչը քեզ վրա: Քաջալերվի՛ր, աղջիկս: Իմ խաչը ծանր է և ճնշում է քեզ, բայց Ես գիտեմ, որ դու կկամենաս կրել այն մինչև վերջ:

Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ: Ես կվարձատրեմ քեզ երկնքում:

(Դանիելը, իմ հրեշտակը):

Քո Հիսուս սիրում է քեզ: Այդ ես եմ, Դանիելը: Հիշի՛ր, Տերը քեզ հանգստացրեց, իսկ հիմա, դու չե՞ս ցանկանում Նրան նույնպես հանգստացնել: Վասո՛ւլա, ուրեմն գոհացրու Նրան, և թույլ տուր Նրան, որ ճնշի քեզ տառապանքներով: Խաղաղության համար մեծ փրկագին պետք է վճարվի, շատերին վտանգ է սպառնում: Որքա՞ն հաճախ է Տերը ճնշում քեզ նման ծանրությամբ:

Ոչ հաճախ:

[1] Պարսից ծոցի պատերազմը:

Ո՛չ, ոչ շատ անգամ: Ուրեմն, այդ մի քանի դեպքերում, երբ Նա անում է այդ, ընդունիր դրանք և մի՛ բռնկվիր դրա պատճառով: Վասո՛ւլա, բոլոր այս զոհաբերությունները իզուր չեն անցնում: Դրանք նաև կոփում են քեզ: Մնա Աստծո սիրո մեջ:

Նա փափագում է
մաքրագործել քեզ,
իսկ դու փափագիր
Նրան փառաբանել:
Դանիել, քո հրեշտակը

(Ես ժպտացի: Ինչ-որ ձևով, Իմ հրեշտակը միշտ կարողանում է այնպես անել, որ ես ժպտամ: Ես ժպտացի այն չափածոյի վրա, որ նա գրել էր: Դա բնորոշ էր իմ հրեշտակին):

Հունվարի 16, 1991

Օ՜, Տեր, որտե՞ղ ես Դու նորից:
Ինչպես ծարավ հողը,
ես տենչում եմ Քեզ:
Խոնարհվիր վերևից ու այցելիր ինձ:
Իմ ճրագի յուղը սպառվում է:
Արի, ինչպես միշտ,
որ լցնես իմ ճրագը:

Իմ խաղաղությունը քեզ:
Ես քեզ տանում եմ Իմ Ուսերի վրա: Ինչպես Իր թույլ գառանը կրող մի հովիվ, Ես տանում եմ քեզ, քանզի գիտեմ, որ դու թույլ ես, թշվառ և ի վիճակի չես ինքդ քայլելու: Ես՝ Տերը, քեզ վրա եմ հեղում շնորհ շնորհի ետևից, քո գոյատևման համար: Ես անտեսում եմ այն ամենը, որ դու չես անում Իմ օգտի համար, աղջի՛կս: Վստահություն ունեցիր: Ես քեզ փրկել եմ Մահից, որ քայլես Իմ կողքով: Ես փրկել եմ քեզ, ծաղի՛կս, որ դու քայլես Իմ Ներկայության մեջ:

Բայց, Հիսո՛ւս,

Քիչ խոսիր, շշշ... Ինձ լսիր[1], լսի՛ր... Քանի՞ հոգու եմ Ես հարություն տվել այս յուրահատուկ ձևով և քիչ-քիչ կրթել:

Ոչ շատերին, Տե՛ր իմ:

Ուրմեն վստահիր Ինձ[2] ... Ես այնպես կանեմ, որ դու կատարես քո յուրաքանչյուր խոստումը, որ դուրս է եկել քո շուրթերից քո նվիրաբերման

[1] Հիսուսն այս բառերն ասաց, ինչպես մի մեղմ մեղեդի, շշնջալով դրանք: Ես քիչ էր մնում մեռնեի Նրա Քնքշությունից:
[2] Հիսուս կրկին մեղմորեն շշնջաց:

ժամանակ: Լսի՛ր... Ո՞վ էր ավելի վճռական քո փրկության համար, քան Ես ու Իմ Մայրը:

Ոչ ոք:

Այո՛, ոչ մեկը:

Հակառակ քո մանկական հանդգնությանը, Ես առաջարկեցի քեզ Իմ Սուրբ Սիրտը, որ այն դառնա քո բնակարանը: Չէ՞ որ, Վասո՛ւլա, Ես բռնեցի քո ձեռքը ու անցկացրեցի այս անապատով, և ցույց տվեցի քեզ Երկինքը, և քո աչքերը տեսան հազարավոր ու բյուրավոր հրեշտակներ, որոնք շրջապատել էին Ինձ: Աղջի՛կս, Ես քեզ շատ շնորհներ եմ պարգևել և այդ ամենը՝ քո հանդեպ ունեցած Սիրուց ելնելով[1]: Լսիր Ինձ[2]... Ես եկել եմ քեզ ու միլիոնավոր մարդկանց կրթելու այս Պատգամների միջոցով: Միայն քեզ համար չէ, որ Ես եկել եմ: Ես չեմ եկել միայն քեզ հարություն տալու, այլ եկել եմ, որ այս գրությունների միջոցով հարություն տամ ազգերին իրար ետևից, որ փառաբանեն Ինձ: Եվ ինչպես որ քեզ տարել եմ Իմ Խնջույքի Սրահը, այնպես էլ Ես մտադիր եմ իրար ետևից հոգիներին տանելու Իմ Խնջույքի Սրահը:

Մի՛ կանգնիր այդպես հմայված Իմ Գեղեցկությամբ... Ես Կատարյալ եմ... լսի՛ր Ինձ... Թույլ մի՛ տուր, որ աչքերդ շրջվեն Ինձանից: Գովերգի՛ր Ինձ, և Ես, եթե դու թույլ տաս, նրա գերված պիտի պահեմ: Ես քո հայացքը Իմ Կատարելության վրա սևերված պիտի պահեմ, որպեսզի քո մեջ կատարելության ցանկություն արթնացնեմ: Ես ուզում եմ, որ դու գեղեցիկ լինես, օրհնյալ ու սուրբ: Ուրեմն թույլ տուր Ինձ քեզ քայլ առ քայլ առաջնորդել դեպի Երկինք: Ճիշտ է, որ Ես բարձրացրել եմ քեզ, որ միասնության նշան լինես և գնաս ու վկայես: Բայց մի՞թե քո առաքելության համար Ես քեզ չեմ տալիս այն ամենը, ինչի կարիքը որ քո հոգին ունի:

Դու մի անապատ էիր, անբնակ: Լսի՛ր Ինձ, ուրեմն: Իմ նպատակին հասնելու համար, Ես եկա քո անապատը, որ Իմ Վրանը խփեմ քո մեջ, որպեսզի դու բարգավաճես և քեզ Իմ Սեփականությունն ու Իմ Բնակարանը դարձնեմ: Հիմա դու Ինձ ես պատկանում, և դու Իմ յուրայինն ես ու Իմ Տաճարը: Դրա համար Ես Աչքիս Լույսի պես պահպանում եմ քեզ Զրպարտչից, որ անդադար տարբեր մեթոդներով փորձում է ներխուժել ու ավերել քո հողը և քեզ լքված ու ամայի դարձնել: Ինչպես մի պահակ, Ես գիշեր ցերեկ հսկում եմ քեզ: Ինչպես մի ժամապահ, Ես պահպանում եմ քեզ բոլոր ներխուժումներից: Ա՜հ, ո՛չ, ոչ ոքի չի թույլատրվի մուտք գործել Իմ Կալվածքը:

Օ՜, սիրելիս, Իմ Հոգու օրհնյալը, թույլ տուր չշնչամ քո մեջ Իմ Ցանկությունները, որպեսզի դրանք գրվեն և կարդացվեն բազմաթիվ հոգիների կողմից և որ այս տողերի միջից նրանք կարողանան լսել.

<u>Իմ Ձայնը՝</u>

[1] Ես փորձում էի ընդհատել:
[2] Հիսուս նորից քնքշությամբ էր խոսում:

Սիրո Ջայնը:

Ես միայն քեզ հետ չէ, որ խոսել եմ: Ես խոսում եմ ամեն մի հոգու հետ: Ուրեմն եկ Ինձ մոտ, դո՛ւ, որ կարիքավոր ես: Ես պիտի բարձրացնեմ քեզ քո թշվառությունից և պիտի սեղմեմ քեզ Իմ Սրտին: Եկ Ինձ մոտ, դո՛ւ, որ լքված ես ու թշվառ, և Ես քեզանից դեռեր պիտի բխեցնեմ: Օ՜հ, եկ Ինձ մոտ, դո՛ւ, որ հոգնած ես ու դիր գլուխդ Ինձ վրա, հանգչիր Իմ մեջ, հոգի: Քո դժվարությունները, քո մտահոգությունները Ես պիտի տանեմ, տո՛ւր Ինձ դրանք: Մատուցիր Ինձ դրանք, և Ես պիտի սփոփեմ ու հանգստացնեմ քեզ: Ուրախացի՛ր, քանզի քո ոչնչության մեջ՝ Ես Եմ Ամենը, քո աղքատության մեջ՝ Ես Թագավոր եմ: Եվ երբ դու հանձնվես Ինձ, Ես կարող եմ կատարել Իմ Կամքը: Արդարությունն ու Արդարադատությունը հետևում են քեզ: Ուրեմն արդարացրու Իմ սպասումները, հոգի: Փրկությունը քո դռանն է:

– Վասո՛ւլա, թույլ տուր Իմ Սերը ողողի քեզ: Ուշադիր եղիր և մի՛ անտեսիր Ինձ: Հիշի՛ր, Ես քո Ամուսինն եմ: Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ: Ինձ ամուր պահիր քո մտքում: Դա այնքան ուրախացնում է Ինձ: Ես անսահման սիրում եմ քեզ: Արի:

Հունվարի 18, 1991

(Պատգամ իմ ծննդյան օրվա համար):

Խաղաղություն քեզ:

Իմ Աստվածային Սիրտը պիտի խրախուսի քեզ, որպեսզի դու առաջ գնաս առանց վախի, իսկ Հայրը առատաձեռն է: Վստահություն ունեցիր Իմ հանդեպ, վստահիր Ինձ, փոքրիկ զավակս: Ես քեզ կգոհացնեմ մխիթարանքով[1]: Ես փորձեցի քեզ: Թույլ տուր Ինձ ժամանակ առ ժամանակ գնահատել քեզ: Վասո՛ւլա, եթե նույնիսկ քեզ ամեն ինչ կորած թվա, մի՛ վհատվիր: Ես պիտի հարթեմ քո ճանապարհը, բայց միևնույն ժամանակ Ես քեզ պիտի ցուցադրեմ, որպես մերժման մի նշան միասնության մերժման մի նշան: Անկեղծությունը բացակայում է նրանց մեջ: Ուստի ինչպե՞ս կարող են նրանք հարթել իրենց միջև եղած տարաձայնությունները:

Սակայն, Տե՛ր, Դու ուզում ես ասել, որ նրանք վերջում կմերժե՞ն քո պատգամները:

Ո՛չ: Իմ Պատգամները պիտի գնան իրենց ընթացքով առանց քեզ, բայց քեզ այս ու այն կողմ պիտի չպրտեն: Ես թույլ եմ տալու, որ քեզ հալածողների պիղծ ձեռքերը բացահայտորեն հարվածեն քեզ և վատ վերաբերվեն քեզ: Ես թույլ եմ տալու նրանց հակառակվել քեզ... և ինչպես բերքը ավերող ագռավներ, նրանք պիտի հարձակվեն քեզ վրա: Նրանց

[1] Այս անցնող օրերին ես ինձ ո՛չ մոտ էի զգում Աստծուն, ո՛չ էլ «տեսնում» էի Նրան: Ես այնպես էի զգում, կարծես Նա լքել էր ինձ, և ես տխուր էի:

աչքում դու պարտված կհամարվես, որովհետև այդ վերքերը, որ նրանք քեզ կհասցնեն, խորը կլինեն: Այդ վերքերը, զավա՛կս, քեզ պիտի տրվեն Իմ Տան միջից և Իմ Յուրայինների կողմից: Նրանք քեզ կտրվեն Կայենի տոհմի կողմից: Ես նրանց թույլ կտամ հարվածել մի անմեղ մանուկի, բայց նրանց ուրախությունը ողբի կվերածվի: Այո՛, դու կերևաս որպես պարտվող, Իմ Վասուլա, սակայն մի՞թե Ես նույնպես պարտված չերևացի: Թվում էր, թե Ես չկատարեցի Իմ Առաքելությունը: Աշխարհի աչքում Ես երևացի որպես ամենամեծ պարտվողը, որը երբեևիցե եղել է: Դու նրանց տրված մի նշան ես, որպեսզի վիճելի հարցեր հարուցես: Ես չեմ ուզում քեզ վհատեցնել, Վասո՛ւլա: Նույնիսկ, երբ նրանցից մի քանիսը փորձեն դադարեցնել Իմ Պատգամների ավելի լայն տարածումը մարդկության մեջ, պինդ եղիր, Իմ Վասուլա, հաստատուն եղիր ինչպես ժայռ:

Տե՛ր, եթե նրանք «արգելակեն» ինձ այնպես, ինչպես Դու ինձ հասկացնում ես, վիրավորեն հոգիս մահու չափ, ես ինչպե՞ս կկարողանամ հաստատուն ու կանգուն մնալ:

Քեզ պիտի բզկտեն, բայց Ես՝ Տերը, կանգնած պիտի լինեմ քո կողքին, և <u>քո ուժը պիտի լինի Իմ Ուժը</u>: Արի՛, մի՛ վախեցիր, վկայիր Ինձ համար:

Հունվարի 19, 1991

(Պատգամ աղոթախմբի համար):

Խաղաղություն ձեզ:

Ես՝ Սուրբ Միքայելը, խնդրում եմ ձեր օրերն ու գիշերները նվիրաբերել խնդրանքներով, ծոմապահությամբ և աղոթքով: Շուտով այն ամենը, որ թաքցված է եղել ձեզանից, պիտի բացահայտվի: Թող Աստծո կամքը լինի, որ դուք Ողորմություն գտնեք, երբ Իր Օրը գա: Եթե դուք, որ կարծրացրել եք ձեր սրտերը, միայն լսեիք Նրան այսօր... Եթե միայն բացեիք ձեր սիրտը՝ Նրա Ձայնը լսելու համար... Բացե՛ք ձեր սրտերը, և ոչ թե ձեր մտքերը... Ամեն ինչ կատարվում է Աստվածաշնչի համաձայն: Շուտով շատերը ծնկի կգան Աստծո առաջ, և շատերը, որոնց լեզուն ոչ մի աղոթք չի արտասանել, պիտի սկսեն աղոթել:

Դո՛ւք, որ Աստծո մարդիկ եք, միացյալ եղեք ձեր համոզմունքների և ձեր սիրո մեջ. եղեք միացյալ աղոթքով: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու:

Հանգչիր Տիրոջ Սրտում, Վասո՛ւլա: Եղիր Նրա Սիրո նշանը: Իմ Խաղաղությունը քեզ: Սուրբ Միքայել:

Հունվարի 21, 1991

«Դու, որ տեսել ես
իմ թշվառությունը,

և իմացել իմ հոգու խեղճությունը»[1],
խղճա՛ Ինձ, խղճա մեզ բոլորիս:

Աղջի՛կս, երբ Շնորհի այս ժամանակն ավարտվի, կավարտվի նաև Իմ Ողորմությունը: Դրանից հետո քո դարաշրջանը ստիպված պիտի լինի դեմ առ դեմ կանգնել Իմ Արդարադատությանը: Ես օրհնում եմ քեզ, քո ականջը, քո ժամանակը և քո ձեռքը Ինձ տրամադրելու համար: Ես օրհնում եմ քեզ և քո ուղեկիցներին: Բռնի՛ր Իմ Ձեռքը: Ես քեզ Ուրախություն և Խաղաղություն պիտի տամ:

Սերը քեզ մոտ է: Իմ Խաղաղությունը քեզ:

Հունվարի 24, 1991

Տե՞ր իմ:

Ես եմ: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Գրիր:

(Պատգամ աղոթախմբերի համար):

Խաղաղություն ձեզ:

Սիրելինե՛ր, ձեզ, որոնց Իմ Սիրտը անդադար փորձում է գրավել, ձեզ, որոնց Իմ Սիրտը սիրում է խելացնորության աստիճան, և ձեզ, որոնց Ես ստեղծեցի՝ ելնելով Իմ Վսեմ Սիրուց, և ձեր մարմինները Իմ Տաճարը դարձրեցի՝ ապրե՛ք սրբորեն... Իսկ դուք, որ մշտապես մեղանչում եք վիրավորելով Ինձ, Իմ Սիրտը ներել է ձեզ:

Ուրախացե՛ք, ուրախ եղեք, քանզի ձեր Ուսուցիչը հեռու չէ: Ձեր Տերը Իր Վերադարձի ճանապարհին է: Եկե՛ք և փառաբանեք Ինձ, եկեք... Նույնիսկ քարերը և ժայռերը շուտով կաղաղակեն Իմ Վերադարձին. «Օրհնությունն ե՛ր Թագավորին, որ գալիս է»: Ով էլ որ գա Ինձ մոտ, նույնիսկ իր մեղսալից վիճակի մեջ ու ապաշխարի, Ես երես չեմ թեքի նրանից:

Այնուամենայնիվ, մինչև այսօր էլ կան մարդիկ, ովքեր չեն հավատում ո՛չ Իմ Ողորմությանը, և ո՛չ էլ Իմ Սիրուն: Նրանք ոչ միայն չեն հավատում, այլ հատկապես նրանք են, որ դավաճանում են Ինձ: Այսօր Ես ձեզ ասում եմ, ինչպես մի ժամանակ ասել եմ. «Ոչ մեկը չի կարող Ինձ մոտ գալ, մինչև որ Հայրը նրան թույլ չտա»[2]: Ահա թե ինչու Ես ձեզ ասում եմ, որ աղոթեք, որպեսզի բոլորը Շնորհ ստանան Հոր Ողորմությամբ, Շնորհ, որպեսզի դարձի գան: Այո՛, որպեսզի մեկը «գա» Ինձ մոտ, հարկ է, որ նա Ինձ մոտ բերվի վերևից տրված Շնորհով: Ես երբեք չեմ մերժի որևէ մեկին, որ ընդունում է այս Շնորհը: Ուստի ձեր ժամանակը մի վատնեք՝ պատճառաբանություններ փնտրելով Իմ Հոգու Գործերին առարկելու համար: Եթե Ես կանչում եմ, և դուք չեք պատասխանում, դուք չեք պատասխանում Շնորհին: Սիրելինե՛րս, Ես խնդրում եմ ձեզ աղոթել, որպեսզի յուրաքանչյուրը ստանա այս Շնորհը՝ հավատալու և դարձի

[1] Սաղմ. 30:8
[2] Հովհ. 6:65

գալու համար:

Բառերը, որ ես տալիս եմ ձեզ, Հոգի են: Նրանք վեր են բարձրացնում, նրանք վերակենդանացնում են, և նրանք Լույս են սփռում խավարին, որ կա ձեր ներսում: Զավակներս, ես ձեզ տվել եմ շատ նշաններ, որպեսզի հավատաք, որ Հոգին գործում է և կենդանի է: Ուստի մի՛ սպասեք նյութական նշանների: Իմ Հոգին այս օրերին գալիս է ողջ ուժով, որպեսզի ձեզ օգնի հիմա, երբ գիշերն իր խավարը սփռում է ձեր շուրջը: Որքան է Իմ Սիրտը խղճում ձեզ, տեսնելով, թե ինչպես են ձեր փոքրիկ ձեռքերը խարխափելով ճանապարհ փնտրում այս խավարում: Ես ձեզ շատ նշաններ եմ տալիս, որ դուք հավատաք, որ սրանք այն օրերն են, երբ Իմ Հոգին դուրս է հորդում ամբողջ մարդկության վրա, որպիսին չի եղել երբևէ: Ուստի դուք, որ դեռևս տատանվում եք անվստահությամբ ու կասկածանքով, խնդրելով Ինձ նշան տալ ձեզ, ցույց տալու համար, որ այս Պատգամները, աշխարհում սփռված ուրիշ պատգամների կողքին, Ինձանից են, ես ամենայն հանդիսավորությամբ նորից ասում եմ ձեզ. այդ Մովսեսը չէր, որ ձեր նախնիներին Երկնքից հաց տվեց, այլ՝ Իմ Հայրը: Այդ Նա էր, որ նրանց հաց տվեց Երկնքից: Այդ Իմ Հայրն է, որ կերակրում է ձեզ, քանզի Աստծո[1] Հացը, դա այն հացն է, որն իջնում է Երկնքից և <u>աշխարհին կյանք է տալիս</u>:

Ձեր նախնիները մանանա կերան անապատում: Եվ ես արդեն բյուրավոր մարդկանց տվել եմ Իմ Հաղորդության նախակարապետը: Ես բազմացրեցի հացը, որպեսզի կերակրեմ նրանց, ինչպես որ կերակրում եմ ձեզ Իմ Մարմնով, որպեսզի Կյանք տամ ձեզ: Ես բազմացրեցի նաև ձկները՝ Իմ Անվան խորհրդանիշը. խորհրդանիշը Նրա-Ով-Կերակրում-է-Ձեզ, խորհրդանիշը Իմ Անվան, որը նշանակում է՝ Հիսուս Քրիստոս, Աստծո Որդի և Փրկիչ: Ուստի, այսօր, ես ամենայն հանդիսավորությամբ ասում եմ ձեզ, որ Պատգամները, որ Իմ Հոգին հեղում է յուրաքանչյուր ազգի վրա, սոսկ բառեր չեն: Դրանք Հոգի են և դրանք Կյանք են: Մի՞թե դուք չեք կարդացել, թե Աստվածաշունչն ինչ է ասում. «Նա հաց տվեց նրանց Երկնքից, որ ուտեն»[2]: Մի՞թե այս նշանները բավական չեն ձեզ համոզելու համար: Այսօր ես մնում եմ ձեր ներսում գտնվող անապատը Երկնային Հացով, որը նույնպես մի հրաշալի կերակուր է: Մի հրաշալի Կերակուր, որը չի ոչնչացնում, այլ կենդանացնում է ձեր հոգին: Քանզի, ինչպես երկիրը դալար բույսեր է աճեցնում, ինչպես պարտեզն է սերմեր ծլեցնում, այնպես էլ Իմ Փառավոր Կերակուրը վերականգնում է ձեր մեջ՝ <u>Կյանք</u>, եռանդ և նվիրում: Ինչպես մի կայծ, որը կարող է բոցավառել, այնպես էլ Իմ Սուրբ Հոգին իջնում է ձեզ վրա, որպեսզի ձեր ներսում կայծկլտացող բոցը վերակենդանացնի ու դարձնի Սիրո մի այրող Կրակ:

Աստվածաշունչն ասում է. «Ոչ հոգևոր մարդը նա է, ով Աստծո Հոգուց եկած ճշմարտությունները չի ընդունում, որովհետև դա հիմարություն է համարում: Նա չի կարող հասկանալ, քանի որ դրանք հասկանալի են դառնում հոգու միջոցով»:[3]: Նոր Երկինքն ու Նոր Երկիրը հիմա ճիշտ ձեր դռների մոտ են: Բայց և այնպես, ձեզանից շատերը չեն

[1] Հիսուսն այստեղ նկատի ունի Սուրբ Հոգին:
[2] Ել. 16:4
[3] Ա. Կոր. 2:14

հասկացել և այս ամենին նայում են որպես անհեթեթություն: Այդ մարդիկ, որոնք հոգևոր չեն, նախընտրում են Իմ բոլոր Նշաններն ընդունել մակերեսային ձևով և արհամարհել Իմ Երկնային Պատգամները: Բայց Սուրբ Գրքերը իրագործվում են, քանզի դրանք արդարև ասել են, որ վերջին օրերին կլինեն մարդիկ, ովքեր ծաղրի առարկա կդարձնեն Իմ Խոստումը:

Քանի որ Ես գիտեի, որ մարդիկ անսահման կարողություն ունեն մեղանչելու, և որ վերջին ժամանակներում Թշնամին գահին է նստելու Իմ Սրբարանում, այդ պատճառով Ես Ինձ պահեցի մի բուռ մարդկանց (մնացորդացը), որպեսզի նրանք լինեն Իմ Նոր Սրբարանի կառուցողները, Իմ Հոգու Առաջին-Հունձը: Ինչպես որ մի ժամանակ Ես Ինձ համար պահել էի յոթ հազար մարդ, որոնք ծնկի չեկան Բահաղի առաջ Եղիայի օրերին, այսօր նույնպես, Իմ Շնորհով Ես Ինձ համար պահել եմ այդ մնացորդացը՝ հարյուր քառասունչորս հազար մարդ[1], որոնց ճակատներին գրված է Իմ Անունը և Իմ Հոր Անունը[2]: Սրանք այն մարդիկ են, որոնց բերանում սուտ խոսք չգտնվեց[3]: Սրանք Նոր Երկնքի և Նոր Երկրի Իմ առաջին-հունձն են: Սրանք կլինեն կյանքի այն ծառերը[4], որոնք տարվա մեջ տասներկու անգամ բերք կտան[5], ամեն ամիսը մեկ անգամ, և որոնց տերևները բուժիչ կլինեն հեթանոսների համար[6]:

Որպեսզի թարմացնեմ ձեր հիշողությունները, Ես ձեզ մեկ անգամ ևս պիտի բացատրեմ, թե ինչ է ասում Եզեկիել մարգարեի[7] գիրքը. «Գետի երկայնքով, երկու ափերին էլ բուսնելու են <u>ամեն տեսակի պտղատու ծառեր</u>»: Սա նշանակում է. Հոգով-օծված քահանաներից մինչև աշխարհականները, որոնց «տերևները երբեք չեն թառամելու և պտուղն էլ նրանց վրայից չի պակասելու. նրանք ամեն ամիս պտուղ են տալու, որովհետև այս ջուրը[8] բխում է Սրբարանից»[9], քանզի այս ջուրը կգա և կբարձրանա Աստծո և Գառան գահից և հոսելով բյուրեղյա մաքրությամբ կգնա քաղաքի հրապարակների միջով[10], «և նրանց պտուղը համեղ կլինի, իսկ տերևները՝ բուժիչ»: Ինչպես մի ծառ, դուք պիտի նորոգվեք Իմ Սուրբ Հոգով, որը երբեք չի լքի ձեզ, և ձեր տերևները բուժիչ պիտի լինեն: Այո՛, ձեր վկայությունը պիտի բուժի հիվանդներին՝ դարձի բերելով ազգ ազգի հետևից: Բայց դուք չեք, որ անելու եք դա, այդ դուք չեք, որ խոսելու եք, այլ Իմ Սուրբ Հոգին, որն ապրում է ձեր մեջ:

Եվ որպես շինարարներ, Ես պիտի ուղարկեմ ձեզ աշխարհի բոլոր ծայրերից՝ ձեր ձեռքում բռնած մի եղեգ, ինչպես չափող մի գավազան[11], որպեսզի վերակառուցեք Իմ Սրբարանն ու խորանները, որոնք ավերված են և

---

[1] Խորհրդանշական թիվ՝ ողջ աշխարհի կատարյալ մարդկանց: (Հայտ. 14:1):
[2] Հայտ. 14:1
[3] Հայտ. 14:5
[4] Կյանքի ծառերը՝ նոր ծնվածները, առաջին պտուղները:
[5] Խորհրդանշական թիվ՝ Նոր Եկեղեցին, Աստծո մարդիկ:
[6] Հայտ. 22:2. Նոր առաքյալները, որոնք Հոգու միջոցով կգնան դարձի բերելու անաստված մարդկանց:
[7] Եզեկ. 47:12
[8] Քրիստոսի Սրտից դուրս բխող ջուրը:
[9] Քրիստոսի Սրտից դուրս բխող ջուրը:
[10] Հայտ. 22:1-2
[11] Հայտ. 11:1

դարձել են դևերի բնակավայր [1]: Աղոթե՛ք, սիրելիներս, որպեսզի յուրաքանչյուր ոք ժամանակ ունենա դարձի գալու: Աղոթե՛ք, որ Շնորհը գա նրանց վրա, որպեսզի նրանք հասկանան և ճանաչեն Ճշմարտությունը: Աղոթե՛ք նրանց համար, ովքեր գերադասում են շրջվել դեպի առասպելները և ոչ թե՝ դեպի Ճշմարտությունը: Աղոթե՛ք աշխարհի դարձի համար: Աղոթե՛ք, որ Ես բնակվեմ յուրաքանչյուր հոգու մեջ և դարձնեմ նրան Իմ Սեփականությունը: Աղոթե՛ք, որ Ես հոսեմ այդ հոգիների մեջ՝ «ինչպես մի գետ քաղաքի հրապարակի միջով»[2]: Զոհողություններ արեք այդ դարձերի համար, փոքրիկ զավակներս: Ինձ մոտ մնացեք, քանի որ մի հովազ[3] դարան է մտել ձեզ շատ մոտիկ: Մոտ մնացեք Ինձ մշտապես աղոթելով, անվերջ աղոթելով:

Թույլ տվեք Ինձ թողնել Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատներին՝ օրհնելով ձեզ բոլորիդ: Մեկ եղեք Իմ Սուրբ Անվան ներքո:

ΙΧΘΥΣ

Ահա՛, Իմ Վասուլա, սա կկերակրի շատերին:

Ես սիրում եմ քեզ, զավակս: Սերն օրհնում է քեզ: Օրհնի՛ր Ինձ:

Տե՛ր, ես օրհնում եմ քեզ. Մարանաթա:

Հունվարի 31, 1991

(Մեր Սուրբ Մոր Պատգամը փետրվարի 23-ի համար):

Թող փառաբանվի Տերը: Խաղաղություն ձեզ բոլորիդ:

Աստված ձեզ Իր մոտ է կանչում: Իմացեք այդ մասին: Աստված կանչել է ձեզ, ձեր ծնված պահից սկսած: Դուք ծնվել եք Նրա համար: Ծնվել եք Նրան սիրելու համար: Ծնվել եք Նրան գոհացնելու համար: Ծնվել եք Նրան վերադառնալու համար: Աբձագանքե՛ք Նրա Կանչին: Այստեղ, և աշխարհի այլ մասերում տրված Իմ Պատգամների միջոցով, Ես փորձում էի սիրով ձեզ ետ բերել ճշմարիտ Կյանքին Աստծո մեջ՝ հանուն ձեր փրկության:

Փոքրիկներս, այո՛, Ես ձեզ անվանում եմ փոքրիկ, որովհետև Տերը Իր Դեմքը բացահայտել է ձեզ, և ոչ թե՝ գիտուններին, կամ խելացիներին: Հասկացեք նաև, որ մարմինն ու արյունը չեն, որ ցույց տվեցին ձեզ ճշմարտությունը, ոչ էլ ձեր դարաշրջանի այս Պատգամների վերահասությունը և շնորհը, որոնք տրվեցին ձեր փրկության համար ու մղեցին ձեզ հավատալ դրանց, այլ Հայրն Ինքը՝ ձեզ վրա ունեցած Իր Շնորհով: Ուստի, եթե ձեր հարևանը դեռևս չի կնքվել Շնորհի Սուրբ Հոգու կնիքով, աղոթե՛ք, որպեսզի նա նույնպես ստանա այդ Շնորհը իր դարձի համար և մտնի Աստծո Թագավորության մեջ:

[1] Հայտ. 18:2
[2] Հայտ. 22:2
[3] Հայտ. 13:2. Դան. 7:4-6. Օսէ 13:7

Աստված Իր մոտ է կանչում ամեն մեկին: Փորձեք հասկանալ Աստծո Խաղաղության Կանչը: Ես հորդորում եմ ձեզ աղոթել Խաղաղության համար: Փութաջան եղեք Խաղաղության համար: Օրհնյա՛լ զավակներս, թույլ տվեք ձեզ մեկ անգամ ևս ասել, որ Ես ձեր աղոթքների կարիքն ունեմ Խաղաղության համար, քանի որ Ես վերցնում եմ դրանք և մատուցում Ամենակալին, որպես դարնանային ծաղիկների մի փունջ: Ձեր աղոթքներն իզուր չեն անցնում: Դրանք իսկական փառաբանություն են Աստծուն: Դրանք ձեր սիրո ապացույցն են:

Սատանան շատ զորեղ է, և նրա կատաղի բարկությունը հալածում է Տիրոջ ողջ առաջին-հունձը՝ նրանց, ովքեր վկայում են Հիսուսի համար: Հիսուսն Իր նախորդ Պատգամներում ձեզ հասկացրել է, թե ինչպես է սատանան փորձում հանգցնել այն փոքր բոցը, որը մնացել է այս աշխարհում՝ թողնելով ձեզ առանց լույսի, առանց երջանկության: Նա անգթորեն հայհոյում է Աստծո ողջ Զորություններին: Արդարև, աշխարհը, առանց Խաղաղության համար ասվող ձեր ջերմեռանդ աղոթքների, կզգա սատանայի բերանից թափվող փսխունքը[1], որը դուրս է ժայթքում՝ հանգցնելու համար այն փոքր լույսը, որ մնացել է ձեր մեջ:

Իմ տխրությունն անհնար է բառերով արտահայտել: Ես աղոթել եմ ձեզ բոլորիդ համար: Եվ միշտ կաղոթեմ: Զավակնե՛րս, խնդրում եմ խորհեք Մեր Պատգամների մասին: Գործադրե՛ք Մեր Պատգամների ամեն մի բառը:
Ես՝ ձեր օրհնյալ Մայրը, օրհնում եմ ձեզ:

Փետրվարի 4, 1991

Աղջի՛կս, Իմ Խաղաղությունը քեզ:

Խղճա՛ ինձ, Տեր:
Ես փնտրում եմ և կարծես թե
չեմ գտնում Քեզ:
Ես կանչում եմ և կարծես թե
չեմ լսում Քո Ձայնը:
Ես չգիտեմ, թե ուր եմ քայլում:
Ինձ հետապնդողները
հալածում են ինձ:
Եթե Քո Ուժը ինձ վեր չպահի,
ես հաստատապես
գետին կտապալվեմ:
Օ՜, երանի աղավնու թևերով
թռչեմ վեր դեպի Քեզ:
Աստված իմ, որքան եմ Քեզ սիրում:

Խաղաղություն քեզ, աղջի՛կս: Ե՛կ: Ես ուզում եմ, որ դու ավելի վսեմ բաներ փնտրես: Ես միշտ օգնում եմ քեզ, որ հասնես աղոթքի ավելի բարձր մակարդակի: Ես միշտ քեզ մոտ եմ մնում: Ուժեղ եղիր: Ես բուռն սիրով սիրում եմ քեզ, և Իմ Սերը մնայուն է: Սիրելի հոգի, համբերատար եղիր:

[1] Հայտ. 12:15

Ես ամեն ինչ կբացահայտեմ իր ժամանակին: Այո՛, ամեն ինչ ունի իր ժամանակը: Իմ Հոգին ցած է իջել, որպեսզի հանդչի քեզ վրա, այնպես որ թող ոչինչ չանհանգստացնի քեզ:

- Այս աշխարհի իշխանը[1] մեծ ուժ ունի, և այդ ուժը տրվեց նրան, որպեսզի Աստվածաշունչն իրականանա: Ես սա ասել եմ քեզ, որ դու հասկանաս... Երբեք մի՛ կասկածիր Իմ Ներկայությանը:

Ես քեզ հետ եմ, որպեսզի քո քայլերն առաջնորդեմ կատարելության ճանապարհով: Բայց և այնպես, Իմ Վասուլա, ոչ մեկը չի հասնում կատարելության, մինչև չի անցնում Իմ Խաչի ճանապարհով: Իմացի՛ր, որ քո անձից հրաժարումը քեզ կառաջնորդի դեպի կատարելության ուղին: Ես կփառաբանվեմ, իսկ դու կմաքրագործվես: Ես գիտեմ, թե ինչ դժկամությամբ[2] և դժվարությամբ է Հոգիդ ընդունում այս յուրահատուկ գործելակերպը, որը Ես տվել եմ քեզ: Բայց պատճառներից մեկն էլ սա է, որի համար Ես ընտրել եմ քեզ: Ես ցանկանում էի Իմ Ձեռքերում ունենալ մի պարզ և թույլ գործիք, մի ոչնչություն, որպեսզի ամաչեցնեմ իմաստուններին և գիտուններին: Ես ուզում էի ինչ-որ մեկին, որը ոչ մի Գիտելիք չունենար: Ես եմ ընտրել քեզ, այլ ոչ թե դու՝ Ինձ: Այդ Ես էի՝ Սուրբը, որ եկա Իմ Վրանը քո մեջ հաստատելու: Ես անսպասելի եկել եմ քեզ վրա, ինչպես մի քաղցր զեփյուռ, նման այն քամու, որ ոչ ոք չգիտի, թե որտեղից է գալիս:

Այժմ հենվիր Ինձ վրա: Ես պիտի առաջնորդեմ քո քայլերը: Ես քեզ երբեք չեմ լքի: Դու ապրում ես Իմ Լույսի ներքո: Դո՛ւ, Հոգի, ժառանգել ես Իմ Սերը:

Ուստի, հուսա՛, աղջիկս: Ասա՛ Ինձ, որ քո Հույսը Ինձ վրա է:

Իմ Տեր, Յահվե,
իմ Հույսը Քեզ վրա է:

Հավատա՛, աղջիկս: Ասա Ինձ, որ դու ամբողջապես հավատում ես Ինձ, և Ես քեզ կասեմ, որ քո Հոգին պիտի վարձատրվի: Հավատ ունեցիր և ուրախացրու Ինձ՝ տալով այն Ինձ:

Իմ Տեր Յահվե, ես հավատում եմ
և հավատ ունեմ Քո Հանդեպ
և Քո Խոստման Հանդեպ:
Ես վստահում եմ Քեզ:

Սիրի՛ր, աղջիկս: Ասա՛ Ինձ, որ դու Ինձ սիրում ես քո ողջ սրտով, Հոգով և քո ողջ մտքով: Ցույց տուր Ինձ, որ քո սերը մաքուր է, սիրելիս: Ցույց տուր Ինձ, որ դու սիրում ես քո մերձավորին, ինչպես ինքդ քեզ:

Սովորեցրո՛ւ ինձ,
Տեր իմ Յահվե, ինչպես սիրել Քեզ
և սիրել իմ մերձավորին,

[1] սատանան:
[2] Վախից, որ ես սխալվում եմ:

ինչպես ինքս ինձ:

Ես եմ: Սանի՞կս:

Այո՛, Տե՛ր:

Հավատա՛ Ինձ, սիրի՛ր Ինձ և հասիր կատարելության: Նույնիսկ քնած ժամանակ դու միայնակ չես[1]: Քո կողքին Ես եմ: Իմացիր, որ Երկինքը հրճվում է, քանի որ քո ցավերի միջոցով[2] Ես մի հոգի եմ փրկել: Իմ հանդեպ ունեցած քո սիրով, Ես տաքացրել եմ մի սիրտ: Մի՛ վախեցիր, Վասուլա, աղջիկս: Վերցրու Իմ Խաղաղությունը և Ինձ պատվիր՝ հավատարիմ մնալով Ինձ: Արհամարհիր այն ամենը, որ սուրբ չէ: Ծարավիր այն ամենին, որ Ես եմ:

~ Ես մշակեցի քո հողը, որպեսզի այն բերք տա, և շնորհիվ քո հետևողականության (սա քեզ մի վերագրիր), Ես աշխատել և տքնել եմ քո մեջ: Ես վեր եմ բարձրացրել քո հոգին դեպի Ինձ: Ես ասում եմ քեզ. Իմ Ողորմությունը մեծ է: Օ՜հ, եթե դու միայն իմանայիր և հասկանայիր լիովին, թե ինչ եմ առաջարկել քեզ... Ես մոր նման եմ քո հանդեպ: Ես Պահապանում եմ քեզ, ինչպես մի գերզգայուն մայր, որը հոգ է տանում իր զավակի համար: Ես Եմ: Այս վերջին տարիներին Ես բացահայտել եմ Իմ Դեմքը քեզ, այնպես չէ՞:

Այո՛, այդպես է, Տեր իմ:

Ես՝ Լույսը, եկել եմ քո մեջ, և քեզ Լույս եմ տվել քո խավարում: Դու երջանի՞կ ես, որ այս բոլոր տարիներին Ինձ հետ ես:

Այո՛, Տեր իմ: Այնպես երջանիկ, ինչպես դրախտում:

Սպասիր և տես, թե որքան երջանիկ ես լինելու Դրախտում: Ես աղոթել եմ Հորը քեզ համար, որ Նա հաշվի չառնի քո սարսափելի թուլությունը, Իմ Վասուլա, և պահպանի քո ուժը՝ տալով քեզ Իր Զորությունը: Ես երաշխավորել եմ քեզ, որ դու Ինձ կփառավորես վերջում: Աղոթի՛ր, զավակս, որ խաղաղություն լինի այս աշխարհում: Սիրի՛ր Ինձ: Օրհնյալ եղիր:

Փետրվարի 5, 1991

Որտե՞ղ ես Դու նորից, Տեր իմ:
Ինչո՞ւ ես Դու թաքնվում:
Թե՞ նորից մթության մեջ եմ
և չեմ կարողանում Քեզ տեսնել:
Դու ե՞տ ես վերցնում Քո շնորհները:
Սակայն ես գիտեմ,

[1] Հոգևոր քուն:
[2] մեջքի ցավեր և ներքին տառապանքներ

որ դու չես կարող հեռու լինել:
«Եթե իմ ոտքերը
շեղվել են ճշմարիտ ուղուց,
կամ, եթե իմ աչքերը
շեղել են իմ սիրտը,
կամ, եթե իմ ձեռքերը
աղտոտված են բծերով»[1] *ների՛ր ինձ:*

Զավա՛կս: Օրհնյալ եղիր: Խաղաղություն քեզ:
Հարմարվի՛ր Ինձ, Վասուլա, և դադարիր լսել Գայթակղեցնողին: Ես քեզ ասում եմ. մոտեցի՛ր Ինձ, մոտեցի՛ր Ինձ, զավակս: Ես Նա եմ, ով քեզ ճշմարիտ Գիտելիք է տալիս: Օ՜, Վասուլա, քո մեջ մի Լույս է փայլել, դու ինչպե՞ս կարող ես կասկածել: Այդ Ես եմ՝ Տերը, որ փրկեց քեզ: Ես Իմ մարգարեների միջոցով ասել եմ, որ Ես Իմ Հոգին պիտի տամ նույնիսկ ամենանվաստին և ամենաթշվառին, բայց ասեմ քեզ, զավակս, սա միայն Իմ Խոստումի սկիզբն է:
Ես եմ Ամենից Հավատարիմը: Օ՜, զավա՛կս, ուրախացիր: Ուրախացի՛ր, որովհետև Ես Իմ Հոգին շուտով պիտի չնորհեմ ողջ մարդկությանը: Ես բյուրեղի պես մաքուր ջրեր[2] պիտի բխեցնեմ յուրաքանչյուր կենդանի արարածից: Վասո՛ւլա, Ես Իմ Դեմքը քեզանից թաքցրեցի միայն մի քանի օր, որպեսզի դու փնտրես Ինձ: Դու լքված չես:

Ես սարսափած էի, Տե՛ր:

Օ՜ ոչ, մի՛ ահաբեկվիր: Ուրիշ ի՞նչ ձևով Ես կարող էի քո մեջ շահագրգռություն առաջացնել: Շահագրգռություն, որ վերջապես բարձրացնես գլուխդ և զննես Երկինքը՝ փնտրելով Ինձ՝ Սրբին: Դու ներքևից ես, իսկ Ես վերևից եմ: Դու ապրում ես մի տեղ, ուր քո հոգին չի կարողանում բավարարել քեզ, քանզի դու շրջապատված ես այն ամենով, որ Ես չեմ: Իսկ Ես եմ-ը գտնվում է այնտեղ, որտեղ քո հոգին պետք է նվաղի և տենչա լինել: Իմ Հոգու օրհնյալ: Այնքան ժամանակ, քանի դեռ դու չես սովորել մշտապես փնտրել Ինձ և ցանկալ Ինձ, Ես կշարունակեմ երբեմն քեզ փորձի ենթարկել: Ինձ հաճելի է այսօր քեզ ողողել Իմ Հոգով, և ոչ թե՝ երեկ, վաղը, և գուցե՝ ոչ մյուս օրը, հասկանո՞ւմ ես:

Այո՛, Տեր: Կարծում եմ, ի վերջո ես հիմա հասկացա:

Իմ Լույսով ողողված, փնտրիր այն, ինչ Երկնային է՝ պահպանելով Իմ Սկզբունքները: Առանց Ինձ դու միայնակ ես և ոչինչ չես կարող անել: Դու նույնիսկ չէիր կարողանա տիրապետել քո մտքերին: Ուստի, Ես ասում եմ քեզ. մի՛ թող, որ քուն իջնի քո աչքերին:
Ես սա չեմ ասում քեզ վհատեցնելու համար, Վասո՛ւլա, բայց Իմ Շուրթերից են գալիս Ուսմունքներն ու Իմաստությունը: Ես ուզում եմ այնպես անել, որ դու քայլես Իմ կողքով և առաքինության ճանապարհով: Ես ուզում եմ հարստացնել քո հոգին, որպեսզի ցույց

[1] Հոբ. 31:7
[2] Հայտ. 22:1

տամ Իմ Գիտությունը քո միջոցով, որպեսզի դու փառավորես Ինձ: Ուրեմն բարձրացրու աչքերդ դեպի Երկինք և նայիր Ինձ, աղջի՛կս: Եվ երբ դու նորից տեսնես Իմ Սուրբ Դեմքը, դու մեկ անգամ ևս կպայծառանաս, և քո սիրտը նորից կտրոփի հրճվանքից, հասկանո՞ւմ ես: Սիրտդ կզարդարվի վսեմորեն և սրբությամբ, երբ աչքերդ տեսնեն Իմ Վեհասքանչությունը: Հենվի՛ր Ինձ վրա: Ես միայն քննում էի քեզ, զավա՛կս:

Ես օրհնում եմ քեզ: Օրհնի՛ր Ինձ: Սիրի՛ր Ինձ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 6, 1991

Տե՛ր իմ, պահպանիր Ինձ
այս բոլոր չար հարձակումներից,
պաշտպանիր Ինձ:
Ուրիշ էլ ո՞վ կպաշտպանի:
Սատանան մարդկանց տրամադրում է,
որ դավեր նյութեն
Քո պատգամների և իմ դեմ:
Մի՞թե Դու թույլ կտաս,
որ ամեն ինչ շարքից դուրս գա,
Աստված իմ: Քո օգնությամբ
մենք կառուցում ենք,
իսկ նրանք քանդում են:
Ինչպե՞ս կարող եմ շարունակել:
Ես ոչինչ եմ,
և եթե Դու չկանգնես իմ կողքին,
Ինձ կարող են ներքնապես «ջարդել»:

Ծաղի՛կս, Իմ Խաղաղությունը քեզ: Մի՛ վհատվիր: Քո կողքին Ես եմ:

Եվ Ես գիտեմ, օ՜հ, և ինչպես գիտեմ այն ամենը, որ կատարվում է մարդկանց սրտերում... Այնուամենայնիվ, հասկացիր, որ հակառակ այդ բոլորին, Ես՝ Տերը, պիտի աճեմ ու զորանամ: Այո՛, ուզում եմ ասել, որ Ես Իմ Ձայնը ավելի ու ավելի լսելի պիտի դարձնեմ այս Պատգամների միջոցով: Եվ մարդիկ որքան ավելի վիրավորեն քեզ և փորձեն խլացնել Իմ Ձայնը, այնքան ավելի Ես լսելի կդառնամ: Աղջի՛կս, ոչ ոք Ինձ չի խանգարի շարունակել Իմ գործը: Ես՝ Տեր Հիսուս, պիտի օգնեմ քեզ, Իմ Վասուլա: Թող սա միշտ քո մտքում մնա:

(Ես լաց եղա):

Լաց մի՛ լինիր... սիրելիս, լաց մի՛ լինիր... Ե՛կ: Վստահի՛ր Ինձ:

Փետրվարի 7, 1991

(Պատգամ աշխարհին):

Խաղաղություն ձեզ: Ես եմ՝ Հիսուս:

Ես եմ Հույսը, որին փնտրում է աշխարհը: Այս հույսը, որը նրանք փնտրում են, հասանելի է իրենց: Նրանք պետք է միայն երկարեն իրենց ձեռքերը դեպի Երկինք և փնտրեն Երկնայինը: Նրանք կարող են փնտրել Ինձ, և Ես պիտի պատասխանեմ նրանց: Ես չեմ թաքցնում Իմ Դեմքը, ոչ էլ Իմ Աչքերը շրջում եմ նրանցից: Իմ Աչքերը զննում են ձեզ բոլորիդ և հետևում ձեր բոլոր քայլերին:

Արդարև Իմ Հոգին լցնում է ողջ աշխարհը՝ պայծառացնելու համար այս մթությունը, և Հույս տալու նրանց, ովքեր խարխափում են, որ գտնեն իրենց ճանապարհը այս անվերջ գիշերվա մեջ: Սիրելիներ, Երկինքն ունենալով որպես ձեր հայրենիքը, և երկիրը՝ որպես ձեր ուխտավայրը, դուք առավել ևս պատճառներ ունեք ուրախանալու և հուսալու:

Օ՜, արարչություն, մի՞թե Ես պիտի հանեմ ձեր մահվան պատանքը և ձեզ կյանքի չկոչեմ: Կամ թե, Ես՝ ով կյանք է տալիս, մի՞թե ձեզ ետ պիտի տանեմ դեպի մահ: Ես Ողորմություն եմ, Ես Սեր եմ: Նայեք Երկնքին և տեսեք Ժամանակների Նշանները: Ես Ողորմություն եմ: Ես Սեր եմ: Ես գալիս եմ, որպեսզի հավաքեմ ազգ ազգի հետևից և ցույց տամ Իմ Սուրբ Դեմքը ձեզանից յուրաքանչյուրին ու հիշեցնեմ ձեզ Իմ Սիրո մասին:

Բայց տեսեք: Ձեր վշտերն ու տառապանքները արդեն սկսվել են, ձեր երկունքի ցավերը՝ նույնպես: Քանի որ դուք հավատացյալ դարձաք, դուք վկաներ եք այն բանի, որ, ինչ որ կարդում եք Աստվածաշնչում, իրականություն է դառնում: Իմ Հոգու հեղումը այս վերջին խավար օրերին, առատորեն թափվում է մարդկության վրա: Դուք վկաներն եք այն բաների, որոնք նախկինում առեղծվածներ էին ու ասվում էին առակներով: Դուք սատանայի դաժանության վկաներն եք, բայց Ես խոստանում եմ ձեզ, փոքրիկ զավակներս, որ շուտով ձեր վշտերին (որոնք կասատկանան) հաջորդելու է Ուրախությունը, և ձեր երկունքի ցավերից հետո Սերը կծնվի ձեր մեջև: Բայց այսօր, Ես վերևից սարսափով նայում եմ այս սերնդի հանցանքներին, որոնք այժմ գերազանցել են Սոդոմի և Գոմորի մեղքերից, որովհետև ձեր հույսերը հիմնված են մի կեղծ Քրիստոսի վրա:

Այս սերունդը նողկալի է, ըմբոստ, աղտոտված արյամբ ու ապրում է սատանայի ստվերի տակ: Օ՜ դարաշրջան: Ձեր այսպես կոչված հղկված իմաստությունը արդարև պատ է քաշել Իմ և ձեր միջև, քանի որ ձեր փքված և ամբարտավանությամբ լցված սրտերը իրենց հավասար են համարում Ինձ՝ ձեր Աստծուն: «Մի՞թե քեզ սպանողների առաջ ասելու և կրկնելու ես՝ Աստված եմ ես: Բայց մարդ ես դու, ոչ թե Աստված»[1]: Ձեր փողոցներում արդեն արյուն է հոսում: Ձեր չարության մեջ դուք ձեր հույսերը դրեցիք այն ամենի վրա, որը Ես չեմ: Դուք ձեր հույսերը դրել եք մարդկանց վրա, այլ՝ ոչ թե Ինձ վրա, հարստության վրա, որոնք ձեզ չեն փրկում՝ արհամարհելով այն Գանձը, որը Ես առաջարկում եմ ձեզ Երկնքում: Դուք ձեր ակնկալիքները կառուցում եք Ստի վրա

[1] Եզեկ. 28:9

հիմնված մարդկության վրա, քանզի դուք հավատում եք, որ ամեն ինչ կարող եք կատարել ձեր սեփական մարդկային ուժերով: Արդարև, ձեր աշխուժ և գործնական առևտրով, դուք[1] կուտակել եք մեծ կարողություն, սակայն վաղը դուք մեռնելու եք:

Քչերն են, որ հարցնում են. «Ինչո՞ւ Տերը և Նրա Մայրը հանկարծ իջնում են մեզ մոտ» և Իմ քահանայական հոգիներից միայն մի մնացորդն է հետաքրքրված Մեր մշտական և կանոնավոր հայտնություններով: «Ես ասել եմ, որ ուղարկելու եմ Իմ Պատգամատարին, որպեսզի Ինձ համար ճանապարհ պատրաստի»[2]: Եվ սա հենց այն է, ինչ անում է Իմ Մայրը, որը նաև ձեր Մայրն է:

Աստվածաշունչը կատարվում է, և ես ձեզ հանդիսավոր ասում եմ, որ Նա, որին Իմ Աբելներն ու Հակոբները տենչում էին, հանկարծակի կգա, որ մտնի Իր Տաճարը, որպեսզի դուրս վռնդի Կայեններին և Եսավներին, ովքեր կործանեցին և ավերեցին Իմ Եկեղեցին: Դուք արդյունաբերական հաստատություն եք դարձրել Իմ Տունը՝ այն Տունը, որը պետք է լիներ աղոթքի Տուն: Դուք Իմ Տունը իսկապես վերածել եք գողերի մի որջի: Եթե Ես, ինչպես դուք[3] եք ասում, «Սուրբն եմ», ուրեմն, ո՞ւր է այն մեծարանքը, որ պարտ եք Ինձ: Եթե ես, իսկապես, ձեր Տերն եմ, ո՞ւր է Իմ հարգանքը: Եթե Ես ձեր Աստվածն եմ, ո՞ւր է Իմ պաշտամունքը և Իմ խնկարկումը: Ո՞ւր է Իմ նվիրումը: Այդ ինչպե՞ս է, որ դուք չեք կարողանում մեկնել ժամանակների Նշանները: Այդ ինչպե՞ս է, որ դուք չեք կարողանում հասկանալ Երկնային գործերը: Այդ ինչպե՞ս է, որ դուք այլևս չեք հավատում Իմ Հրաշքներին: Ինչո՞ւ եք դուք հալածում Իմ Աբելներին և Իմ Հակոբներին, եթե ոչ բացահայտ, ապա գաղտնի կերպով:

Ես հայտնվում եմ, ինչպես և ձեր Սուրբ Մայրը, և Մենք Մեզ ցույց ենք տալիս հոգիների միջոցով շատ ազգերի մեջ: Սակայն Մեր երևումները հոգնեցնում են ձեզ և նույնիսկ բարկացնում: «Որքան հոգնեցուցիչ է այդ ամենը», ասում եք դուք:[4] Քանզի մինչև օրս դուք չեք հասկացել Երկնային գործերն այնպես, ինչպես իմ Աբելներն ու Հակոբները: Ո՛չ, դուք չեք հասկացել ո՛չ Իմ Սերը, ո՛չ էլ այն նվիրումը, որը պարտական եք Իմ Մորը: Դուք հավատի կոչ եք անում և հենվում եք ձեր ուժի, ձեր իշխանության և ձեր դատողության վրա: Իմ ձայնը, որն այսօր կանչում է մեղավորներին զղջալու, անհանգստացնում է ձեր ականջները: Երբ Արդարությունը հանկարծակի փայլում է իր բուժիչ ճառագայթներով, դուք մերժում եք Իմ Պարգևը, որն այսօր առաջարկվում է ձեր խավար դարաշրջանում:

Մի՞թե Ես նորից ու նորից պետք է ընդունեմ ձեր հալածանքները: Մի՞թե Ես ամեն տարի պետք է զոհաբերեմ Իմ Աբելներին ու Հակոբներին, որոնք Իմ խորանների խունկն են և Իմ Եկեղեցու ամուր այուները: Դուք փակել եք ձեր ականջները Իմ Ձայնի հանդեպ, որպեսզի լսեք միայն ձեր սեփական ձայնը: Դուք շատերին զրկել եք իմ Նոր Խաղողի Այգիների պտուղներն ուտելուց, որովհետև սատանան մտել է ձեր մեջ և դարանակալել ձեր հոգին, և ահա, ուրիշներն են հատուցում ձեր

[1] Աստված այստեղ խոսում է Ֆրիմասոնական հայացքների մասին:
[2] Մաղ. 3:1
[3] Կայենները և Եսավները:
[4] Մաղ. 1:13

հանցանքների համար[1]: Ուրիշներն են հատուցում ձեր մնափառության համար և ձեր անմտության համար,

որպեսզի փրկեն ձեզ: Ամեն օր այդ վեհանձն հոգիներն իրենց այտն են առաջարկում ձեզ, որ հարվածվեն, ստորացվեն ու տանջվեն: Հանուն ձեզ, այդ վեհանձն հոգիները իրենց սեփական արյամբ քավում են ձեր մեղքերը, որպեսզի փրկեն ձեզ:

Ես սպասում եմ, որ ձեզ լսեմ: Սակայն դուք չեք ասում այն, ինչ որ պետք է ասեք: Դուք չեք ապաշխարում, այլ շեղվում եք ճանապարհից՝ շարունակելով գնալ ձեր ուղիով, ձեր ետևից տանելով միլիոնավորների: Դուք գնում եք աթոռների և իշխանության հետևից, այլ ոչ թե հոգիներ շահելու և փրկելու: Բայց դուք պիտի ընկնեք... և այս շարունակվող ուրացությունը պիտի դադարի... Եվ ձեր մեջ, Իմ Աբելներ ու Իմ Հակոբներ, ես պիտի վերակառուցեմ Իմ զոհասեղանները, որոնք մի ժամանակ կային, սակայն հիմա ավերված են:

Ես ձեզանից բյուրեղյա մաքրությամբ գետեր պիտի հոսեցնեմ և ձեր վկայությունը արդասաբեր պիտի լինի, որովհետև այդ ջրերը հոսում են Իմ Ակունքից: Եվ ինչպես կենաց ծառեր, որոնք աճում են այս Սուրբ գետի եզրերին, Իմ զավակները պիտի բարգավաճեն ձեր վկայությունից: Զավակներս, արիացե՛ք: Ես չեմ լքել ձեզ, ոչ էլ մոռացել եմ ձեզ: Որևէ մեկը, ով ապրում է Իմ մեջ, կզգա Իմ Սերը: Որևէ մեկը, ով սնվում է Ինձանից, չի զրկվի Իմ սննդից և չի մեռնի: Նա, ով մնա Իմ մեջ, պիտի ապրի: Ես Փեսան, իջնում եմ, որպեսզի ձեզ հետ պսակվեմ Իմ Խաղաղությամբ և Սիրով, և հիշեցնեմ ձեզ, որ Սկզբից ի վեր դուք Իմն էիք:

Ես՝ Տերը, օրհնում եմ ձեզ, թողնելով իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատներին: Եղեք մեկ, Իմ Սուրբ Անվան ներքո:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 14, 1991

Խաղաղություն քեզ:

Ծաղի՛կս, սիրի՛ր Ինձ: Սրբությունը չի գալիս մեկ օրում: Ինքդ քեզ ամբողջությամբ Ինձ հանձնիր: Պաշտի՛ր Ինձ և սիրի՛ր Ինձ, և Ես կանեմ մնացյալը: Մի՛ քնիր: Հոգի՛, քո մեղքերն անհամար են, ինպես նաև այն վերքերը, որ դու տալիս ես Ինձ: Ամեն անգամ, երբ դու մեղք ես գործում, այդ մեղքն իջնում է Ինձ վրա, ինչպես մի հարված կամ խարազան, կամ՝ գամով բացված մի անցք Իմ Մարմնի մեջ: Ինչո՞ւ, Վասու՛լա, ինչո՞ւ: Ես, որ քեզ ցույց տվեցի իմ Սուրբ Դեմքը: Մի՞թե Ես ցույց տվեցի քեզ Իմ Դեմքը, որպեսզի Ինձ հարվածես: Եվ մի՞թե Ես ցույց տվեցի քեզ Իմ Սրտի Վերքը, որպեսզի դու ավելի շատ խոցես այն: Երկրի վրա ոչ մեկը չի գտնվի ավելի թշվառ, քան դու: Օ՜, ինչպիսի թշվառություն: Հիմա մի՛ գնա, նստիր և լսիր, ինչ որ ասելու եմ: Եթե չլիներ Իմ Անսահման Ողորմությունը, Հոր Արդարությունը հարվածած կլիներ քեզ, և դու

[1] Հանկարծ Հիսուսի Ջայնը դարձավ քնքուշ և տխուր:

վայրկենապես կորած կլինեիր: Մի՞թե ես քեզ սովորեցրել եմ մեղանչել: Որտե՞ղ են այն զոհաբերությունները, որ դու պարտ ես ինձ: Որտե՞ղ են այն զոհողությունները, որ դու խոստացար Ինձ, հո՛գի: Ինչո՞ւ ես դու անտեսում Ինձ: Մեծ պատ այստեղ է: Մեծ պասը կհիշեցնի քեզ Իմ Զարչարանքները: Սակայն դու ո՛չ տրամադրված ես, ո՛չ էլ պատրաստ: Ես քո մեջ լցրեցի Իմ Երկնային կերակուրը, որ աճես Իմ Լույսի մեջ և դառնաս լույսի մի անոթ: Ես քեզ Իմը դարձրեցի, և հարատև սիրով ես քեզ հարություն տվեցի գեհենից, որ ընդմիշտ դառնաս Իմ Հարմնացումն՝ Իմ Ներկայության և Իմ հրեշտակների ներկայության մեջ: Սակայն քո կոպերը քնով ծանրացան՝ քեզանից խլելով այն, ինչ լավագույնն էր քո մեջ: Օ՛, Իմ Վասուլա, եթե դու միայն իմանայիր, թե ինչպես Ես՝ Տերը, սիրում եմ քեզ: Ես ծարավի եմ սիրո:

Ես գիտեմ, սիրելի զավակս, որ հիմա դու ապրում ես չարի ժամանակաշրջանում, բայց մի՞թե Ես քեզ չեմ սովորեցրել տարբերել չարը բարուց: Եվ հիմա Իմ Տարածքի հողը կրկին կոչտանում է: Ասա՛ Ինձ, այդ քո ջանքերի շնորհի՞վ էր, որ դու տեսար Լույսը: Ո՛չ: Ես գործեցի[1] քո մեջ: Իմ Լույսի մեջ պահելու համար, Ես քեզ վրա լցրեցի շնորհ շնորհի հետևից: Ես վարվեցի քեզ հետ ոչ այնպես, ինչպես արժանի էր քո մեղքերին: Ես վարվեցի քեզ հետ այնպես, ինչպես երբեք չէի վարվել ոչ մի հոգու հետ: Ես Սեր տվեցի անտարբերության դիմաց, Քնքշություն՝ անսրբության դիմաց, Ողորմություն՝ թշվառության դիմաց: Այո՛, Ես Իմ Սուրբ Դեմքը ցույց տվեցի մեղքին: Ես քեզ հետ վարվեցի այնպես, ինչպես վարվում եմ Իմ Սրտի զոհարների հետ[2]: Ես աղոթեցի Հորը քեզ համար, Վասո՛ւլա, որպեսզի Նա հիշի Իմ Զոհաբերությունը և այդպիսով խնայի քեզ:

Օ՛ Աստված, ես չէի ուզում ո՛չ վիրավորել քեզ, և ո՛չ էլ բարկացնել:

Ես հավատարիմ եմ Իմ սիրո ու մտերմության մեջ, ծաղի՛կս, և Իմ Սերը քո հանդեպ հարատև է: Սովորի՛ր Ինձանից: Եղիր <u>կայուն և հավատարիմ</u>: Ե՛կ: Ես ուզում եմ, որ Իմ Ներկայության մեջ դու լինես կատարյալ: Ես ուզում եմ, որ քո հոգին լինի մի ոռոգված պարտեզի նման՝ լցված Իմ Ցողով ու նուրբ բուրմունք արձակելով, որպեսզի Իմ Հոգին հրճվի քո մեջ:

Վասո՛ւլա, դու ցանկանո՞ւմ ես Իմ Կամքը կատարել:

Ես ցանկանում եմ քո կամքը կատարել, բայց թվում է, թե միայն հակառակն եմ անում, Տեր...

Ես կօգնեմ քեզ շարունակել Իմ գործը: Ամեն ինչ թող Իմ Ձեռքերում: Օ՛ զավա՛կս, մեղքի թիրախ ես դու, սակայն արի Ինձ մոտ, դեն նետիր քո աչքերից այդ թեփուկները և տես, թե ով է կանգնած քո առջև... Ես Եմ-ը դեմ առ դեմ կանգնած է քո դիմաց՝ քեզ հետ խոսելով և քեզ Իր Սիրտն առաջարկելով Ափի մեջ: Դու ուզո՞ւմ ես Քո Աստծո Սիրտը: Վերցրու Այն: Ես Այն տալիս եմ քեզ, հոգի: Պարզիր քո ձեռքերը, Իմ Սիրտը ստանալու համար:

---

[1] Աստված նկատի ունի, որ Նա աշխատել է իմ մեջ:
[2] Գոհարները, կատարյալ հոգիներն են:

Ես արժանի չեմ Քո Սիրուն, Տեր...

Գիտեմ: Սակայն ոչ մեկը արժանի չէ Իմ Սիրուն: Ահա թե ինչպես եմ գալիս ձեզ բոլորիդ մոտ այսօր: Ես գալիս եմ ձեզ մոտ՝ Իմ Սիրտն Ափիս մեջ: Մի՛ ասեք. «Ես մեղանչել եմ ու մերժեք Այն»: Ես ասում եմ ձեզ. Իմ Մեծ Ողորմությունը ներել է ձեզ: Ուստի ե՛կ, ե՛կ և վերցրու այս Սիրտը, որը սիրում է քեզ: Մի՞թե դու չես լսել, որ Իմ Համբերատարությունն ու Իմ Կարեկցանքը մեծ է: Ե՛կ: Մի՛ հետաձգիր օրեցօր Ինձ մոտ գալը: Այսուհետև, աղջի՛կս, Ես ուզում եմ, որ դու հավատարիմ լինես քո համոզմունքներին և անկեղծ՝ Իմ հանդեպ:

Կենտրոնացիր Իմ Սուրբ Ներկայության վրա: Ես երբեք չեմ բացակայում: Այդ դու ես, որ մշուշում ես լույսը քո աչքերում՝ կուտակելով մեղքն ու անմաքրությունը, որը քո հոգին ներծծում է ամեն օր այն աստիճան, որ դու կուրանում ես: Քո մարմնի լույսը քո աչքն է: Երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը նույնպես լցված է լույսով: Բայց, երբ այն հիվանդ է, քո մարմինը նույնպես ամբողջովին մթության մեջ կլինի[1]: Եվ քո խավարի մեջ, քո մշուշված աչքերով, դու չես կարող տեսնել Ինձ: Սակայն Ես, Ես երբեք չեմ բացակայում:

Վասո՛ւլա, այսօր Ես քեզ հետ խոսեցի պարզորեն՝ Սիրուց ելնելով, քանի որ դու ավելի շատ հակված ես ըմբոստության և մեղանչելու, քան թե սրբության: Ես Ինձ թույլ կտամ քեզ հետ խոսել պարզորեն Իմ Խանդոտ Սիրով: Մի՛ պատկերացրու, որ Իմ Խանդոտ Սերը կարելի է հեշտությամբ մի կողմ դնել: Օ՛հ, ո՛չ: Երբ ես բացում եմ Իմ Բերանը, այդ քո փրկության համար է, որ Ես խոսում եմ, այլ ոչ թե քեզ դատապարտելու: Թույլ տուր Ինձ ժամանակ առ ժամանակ քեզ հանդիմանել՝ ելնելով Իմ Սիրուց:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 24, 1991

(Նախքան իմ ճամփորդությունը Անգլիա, Շոտլանդիա և Իռլանդիա):

Իմ Վասուլա, ընդունիր այս հատվածը, որպես ներածություն այդ երկրներից յուրաքանչյուրի համար:

(Հիսուսն ինձ ցույց տվեց Հովհ. 10:14-16-ը):

Ասա՛ նրանց, որ այդ Ես եմ՝ Տերը, որ քեզ ուղարկում եմ իրենց մոտ: Այն ոչխարները, որ պատկանում են Ինձ, կլսեն Իմ Ձայնը: Ես գալիս եմ նրանց մոտ, որ շատերին առաջնորդեմ այն Ճանապարհով, որն անծանոթ էր նրանց, տանելով ետ՝ դեպի Ճշմարտությունը: Ես գալիս եմ Սիրո մի այրող Կրակով առաջնորդելու ձեզ, սիրելիներս, ետ՝ դեպի Տուն: Իմ Սուրբ Սիրտը ձեր Հանգստյան Վայրն է: Օ՛, ձեզ համար, արարչություն..., Ես ինչ

[1] Ղուկ. 11:34

չեմ անի: Ես ձեր Սուրբն եմ, սակայն ձեր դարաշրջանը վերստին խաչել է Ինձ: Ես Նա եմ, ով ամենից շատ է սիրում ձեզ, բայց և Նա եմ, որ անողորմ խարազաններ է ստանում այս դարաշրջանի անտարբերությունից:

Ես աշխարհի Լույսն եմ, որը գալիս է այս մութ դարաշրջանում Կյանքի Լույսը տալու ձեզ: Իմ խաղաղությունը ձեզ, Իմ փոքրիկ զավակներ: Ես տալիս եմ ձեզ Իմ խաղաղությունը: Ես տալիս եմ ձեզ Իմ Սիրո պարգևը: Եկեք Ինձ մոտ, ինչպես որ կաք: Մի՛ սպասեք, որ սուրբ լինեք, որպեսզի Ինձ մոտ գաք: Եկեք Ինձ մոտ, ինչպես որ կաք: Մի՛ վախեցեք Ինձանից: Ես Ամենաքնքուշ Հայրն եմ: Ես կարող եմ լինել ձեր Սուրբ Ուղեկիցը: Ես և դուք, դուք և Ես, և Ես ցույց պիտի տամ ձեզ Իմ Սուրբ Դեմքը: Ես ցույց պիտի տամ ձեզ ձեր Աստծո Սուրբ Դեմքը: Ձեր աչքերը պիտի տեսնեն Սերը դեմ առ դեմ, և երբ սա տեղի ունենա, զայրացած չարքերը պիտի փախչեն, և դուք այնժամ կհասկանաք, սիրելիներս, որ ի սկզբանե դուք Իմն էիք և Ես ձերն էի ողջ հավիտենականության համար: Մեկ եղեք Ինձ հետ: Սերը ձեր դռան առջև է:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, օրհնում եմ ձեզ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 25, 1991

Սերը փոխադարձ Սեր է փնտրում:

(Ես հանկարծ մտածեցի ուղղագրական ու քերականական սխալների մասին, որոնք երբեմն-երբեմն հանդիպում են այս պատգամներում, և թե ինչ է Նա ասել այդ մասին մեկ այլ խորհրդապաշտի որը հիմա մահացած է, որն ուներ նույն խնդիրը):

Այո՛, դու ստիպում ես Ինձ իջնել քո քերականական մակարդակին, որպեսզի հասնեմ քեզ և բառերի քո սահմանափակ իմացությանը: Օ՜հ, այո՛, որպես գործիք դու չափազանց անկատար ես:

(Հիսուս ժպտում էր):

Բայց Ես կարող եմ քեզ օգտագործել նույնիսկ քո անկատարության մեջ, փոքրիկս: Քո Հիսուս նորից ու նորից օրհնել է քեզ, և մի օր, Վասո՛ւլա, մի օր, Ես պիտի հայտնվեմ Իմ Լույսի մեջ ու կլանեմ քեզ Իմ Լույսի մեջ... Բայց հիմա, Ես ու դու շարունակենք այնպես, ինչպես որ կա:

Թող փառաբանվի Աստված:

(Սատանան ասաց. «Վերջապես», քանի որ ինձանից որոշ ժամանակ պահանջվեց այդ փառաբանող բառերը գրելու համար: Անմիջապես լսվեց Հիսուսի Ձայնը, ասելով նրան. «Լռի՛ր»: Սատանան ուզում էր, որ ես մտածեմ, որ այդ Հիսուսն էր ինձ ասում «վերջապես»):

Փետրվարի 26, 1991

(Այսօր ես մտածում էի, թե արդյո՞ք կարող էի պատգամ ստանալ Սուրբ Պողոսից կամ Սուրբ Պետրոսից: Ես ուզում էի թափանցել գաղտնիքների մեջ և խնդրեցի Տիրոջից պատասխանել ինձ):

Տե՞ր:

Ես եմ:

Լսի՛ր ծաղիկս: Այսօր Իմ մտահոգությունը քո փրկությունն է: Ինչո՞ւ ես փորձում թափանցել Իմ խորհուրդների ու գաղտնիքների մեջ, որոնք Ես չեմ ցանկանում բացահայտել քեզ: Քո սրբությունն է, որ Ինձ շահագրգռում է՝ ապաշխարումը, որ Ես ակնկալում եմ քեզանից: Աղջի՛կս, հասկացիր, թե որոնք են Իմ Հետաքրքրությունները, հասկացի՛ր, թե որն է Իմ մտահոգությունը: Նույնիսկ, երբ Ղազարոսը մահացել էր չորս օր՝ մուտք գործելով Իմ խորհուրդների մեջ, և տեսել ու հասկացել էր այդ գաղտնիքները, Ես խնդրել էի նրան իր վերադարձից հետո լուռ մնալ և ոչ մեկին չպատմել այդ գաղտնիքների մասին: Ես չէի ուզում, որ նա բացահայտեր Իմ Հարստությունները այնպիսի հոգիների, որոնք դրանց իմաստը չէին հասկանա: Հարստություն է դարձի գալը: Հարստություն է ընդունել, որ դու մեղա՝ վոր ես և խոնարհաբար ու զղջալով Ինձ մոտ գաս և սուրբ կյանք վարես՝ հետևելով Իմ Պատվիրաններին: Հարստություն է չփորձել վերծանել Իմ խորհուրդները: Եվ եթե դու փորձես, դա քեզ կտանի միայն ոլորապտույտ ճանապարհներով, որոնք ոչ մի տեղ չեն հասցնի: Ուստի արի Ինձ մոտ, ինչպես մի մանուկ, և թույլ տուր, որ Իմ Ձեռքը մշակի և հարստացնի քեզ <u>այս</u> տեսակի Գիտելիքով: Թող քո հարստությունը Ես լինեմ: Թող քո Գիտելիքը քեզ հասնի Իմ Խոսքի միջոցով: Թող քո հետաքրքրությունները լինեն Իմ հետաքրքրությունները, որը և կլինի՝

<u>Քո կատարելությունը</u>:

Ես սիրում եմ քեզ, արի՛: Համբերատար եղիր աղոթքի մեջ: Սերը քո կողքին է:

Մե՞նք, մե՞զ, Տեր:

Այո՛, ծաղիկս:

Փետրվարի 28, 1991

Տե՛ր, սերնդից սերունդ
Դու մեր ապավենը եղար[1]:

Տե՞ր:

[1] Սաղմ. 89:1

Ես եմ: Հենվի՛ր Ինձ վրա, սիրելիս: Հանգչի՛ր Իմ մեջ: Կլանի՛ր Ինձ: Ես այն Ամենն եմ, ինչի կարիքը դու ունես: Արի՛, մենք պիտի աղոթենք Վարդարանը:

Մարտի 1, 1991

(Լոնդոն)

(Համաժողովից և աղոթաժողովից առաջ, որ տեղի էր ունենալու միևնույն օրը):

Օ՜ Յահվե, Դու իմ Աստվածն ես,
թող օրհնյալ լինի Քո Անունը:
Դու իրագործել ես Քո Ծրագիրը
և բերել ինձ այստեղ,
այս երկրում վկայելու
և Քեզ Փառաբանելու համար:
Բաց արա իմ բերանը Քո Ժողովում
միայն Քեզ փառաբանելու համար:

Ես դա կանեմ: Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ: Լսի՛ր Ինձ: Մարգարեացիր (պատգամախոսիր) նրանց: Վստահիր Իմ վիթխարի Զորությանը: Յուրաքանչյուր նվաճում գալիս է Ինձանից, այլ ոչ թե քեզանից: Ես կրակ ու ջուր եմ դնում յուրաքանչյուր հոգու առջև, և թողնում եմ, որ նրանք ընտրեն: Ես երբեք չեմ ոտնահարել մարդու ազատությանը, երբե՛ք...

Ես մարդուն թույլ եմ տալիս ընտրել, և Ես ուզում եմ, որ նրանք իմանան, թե Ես որքան եմ ուրախանում, երբ նրանք ընտրում են այն, ինչը որ ճիշտ է: Զնայած դրան, Ես միշտ պիտի հետապնդեմ մեղավորին, որ դադարի մեղանչելուց: Ես միշտ պիտի գնամ բոլոր ուղղություններով, որպեսզի նվաճեմ նրան: Եվ ամեն անգամ, երբ նա ընկնի, Ես այնտեղ պիտի լինեմ, որպեսզի բարձրացնեմ նրան: Ես նրան ետ չեմ հրի կամ՝ մեղադրի: Նրա թշնամիները կուրախանան, բայց Ես, Ե՛ս միայն կարտասվեմ իր համար, և կխնդրեմ նրան ընկնել Իմ Բազուկների մեջ: Եվ եթե նա դա անի, այդ ժամանակ, Ես նրան կհարցնեմ, թե արդյոք նա Ինձ թույլ կտա՞ իր մեջ բնակվել: Եթե նա ընդունի, այդ դեպքում Ես նրա հոգին կդարձնեմ Իմ Տիրապետությունը, և այդ Տարածքում Ես կխփեմ Իմ Վրանը (նրա մեջ), և դրանից հետո Ես կշրջապատեմ Իմ Սեփականությունն Իմ Սիրով, որպեսզի վստահ լինեմ, որ ոչ մի անկոչ հյուր չի մտնի նրա մեջ, որին Ես Իմը դարձրի հավիտյան: Երջանիկ է նա, ով տնտեսություն է վարում Ինձ հետ: Նա ձեռք կբերի Գիտելիք և կմտնի հավիտենական Կյանք:

Մարտի 2, 1991

(Սուրբ Հոգու Եկեղեցի - Բելհամ, Լոնդոն:)

(Նախքան մեկնելը իմ առաջին այս մեծ աղոթաժողովին, որը տեղի էր ունենալու Սուրբ Հոգու Եկեղեցում):

- Տե՞ր:

Ես եմ: Ծառայիր Ինձ հիմա, սիրելիս: Ես քեզ հետ կլինեմ: Ես կհաղթանակեմ: Մի՛ վախեցիր, փոքրիկ պատգամատարս: Հռչակիր Իմ Խոսքը Իմ Ժողովում: Ես Նա եմ, ով ասում է Իմ հոգիներին. «Եկե՛ք և կերե՛ք այս Երկնային Կերակուրը»: Թող անապատը ձեր ներսում ծաղկի: Ես ետ կբերեմ աքսորվածներին դեպի իրենց Տունը՝ Իմ Սուրբ Սիրտը:

Մարտի 4, 1991

(Յորք)

(Բոլոր Սրբերի անունը կրող Լոուերի դպրոցում: Ինձ հրավիրել էր Հայր Այեն Փեթիթը):

Ես եմ: Սերը քեզ մոտ է: Սերը մեծահոգի է ու առատաձեռն: Հիշի՛ր Իմ Ներկայությունը և չես չփոթվի: Աղջի՛կս, եկ և աղոթիր Հորը Ինձ հետ միասին.

Հա՛յր, թեև գիշերը դեռևս
ծածկում է այս երկիրը,
Ես գիտեմ,
որ ինձանից վեր, Յահվեն,
որ տեսնում է Իր զավակներին
մթության մեջ՝ կխղճա նրանց:
Զորությամբ և Փառքով Նա կիջնի
ցրելու այս սպառնալի գիշերը՝
դարձնելով այն մի պայծառ օր:
Խաղաղությունն ու Սերը
մեզ կլցնեն, և մեր հոգին
կլցվի Նրա Լույսով:
Ես Եմ-ը հետ կգա:
Ես Եմ-ը կվերադառնա:
Ես Եմ-ը կլինի մեզ հետ:
Փա՛ռք Ամենաբարձրյալին: Ամեն:

(Ավելի ուշ, ես եկա Տիրոջ մոտ, մտածելով, թե արդյոք ես իսկապե՞ս պետք է ճանապարհորդեի վկայելու համար, ինչպես հիմա: Ամեն օր ավտոմեքենայով, գնացքով կամ ինքնաթիռով տարբեր վայրեր ճանապարհորդելը հեշտ չէր, այլ բավականին հոգնեցուցիչ էր:)

- *Տե՞ր իմ:*

Ես եմ, փոքրի՛կս: Ամեն անգամ, երբ դու կանչում ես Ինձ, Իմ Սիրտը

թպրտում է ուրախությունից: Եթե դու միայն սա հասկանայիր, զավա՛կս... Դու Ինձ հարցրեցիր, թե արդեոք պե՞տք է գնայիր ու վկայեիր, ինչպես հիմա ես անում: Այո՛, դա անհրաժեշտ է, ոչ թե այն պատճառով, որ ես քո կարիքն ունեմ, այլ այն բանի համար, Վասուլա, որ երբ դու գնում ու Իմ Անունից վկայում ես, դա փառաբանում է Ինձ և միևնույն ժամանակ մաքրագործում է քեզ: Ծաղի՛կս, ես քեզ կտամ այն ուժը, որի կարիքը դու ունես, այն բառերը, որոնց կարիքը դու ունես: Ինձ հետ վարվիր հիմա այնպես, ինչպես որ արժանի է Թագավորին: Վարվիր Ինձ հետ այնպես, ինչպես հարկ է վերաբերվել քո Սրբի հետ: Ես Եմ-ը քեզ հետ է: Արի՛, Իմ կողմից Փրկված-Զավակս: Արի՛: Քո քայլերը պետք է հետևեն Իմ Քայլերին, քո ոտքերը պետք է լինեն այնտեղ, որտեղ Իմ Ոտքերն են եղել, մինչև քո առաքելության վերջը: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, ընդմիշտ կապված:

Ուրեմն արի Ինձ մոտ, որքան հաճախ որ կարող ես, և Ես կլցնեմ քեզ ամեն անգամ, երբ դաս Ինձ մոտ: Տրամադրիր Ինձ քո ականջը, զավա՛կս, որպեսզի Ես կարողանամ վարժեցնել այն լսելու Իմ Ձայնը: Բավարարի՛ր Ինձ, զավակս, և դու կծաղկես Իմ մեջ: Սերը քեզ հետ է և օրհնում է քեզ:

(Ավելի ուշ ես նորից գնացի Տիրոջ մոտ):

Ա՛հ, այո՛: Դու նորից եկել ես Ինձ մոտ: Այս երեկո Ես հանգամանորեն կմշակեմ քո զեկույցը: Ես Նա եմ, ով կպարզաբանի շատ բաներ: Ինձնից հետո կրկնիր այս բառերը.

«Հիսու՛ս, դիպչիր իմ սրտին:
Դու իմ Ուրախությունն ես:
Խոսի՛ր Ինձ հետ,
առաջնորդիր Ինձ
և խոնարհեցրու Ինձ»: Ամեն:

Հաճույք պատճառիր Ինձ և գովերգիր Ինձ ամբողջ ժամանակ: Ես սիրում եմ քեզ, ու դրա համար Ես Իմ Խաչը կդնեմ քեզ վրա: Ես Նա եմ, Ով կրեց Այն մինչև վերջ: Պատվի՛ր ու փառաբանիր Ինձ՝ ժամանակ առ ժամանակ Իմ Խաչը կրելով, որպեսզի Ինձ թույլ տաս հանգստանալու: Ե՛կ:

ΙΧΘΥΣ

Մարտի 8, 1991

Աղջի՛կս: Եղի՛ր խաղաղության մեջ:

Ես Սեր եմ: Փոքրի՛կս, ես քեզ հետ եմ, որ քեզ օգնեմ սրբագործելու քո կյանքը: Ես խոսում եմ յուրաքանչյուր հոգու հետ այս Պատգամների միջոցով և քո միջոցով: Ես մնել եմ քեզ Իմ Հայցով: Ես խնամել եմ քեզ և քեզ Իմն եմ դարձրել: Այս ամբողջ ժամանակ, Ես երբևէ խիստ ու դաժան

եղե՞լ եմ քեզ հետ: Ես պատժե՞լ եմ քեզ: Ուստի երբեք մի կասկածիր Իմ Սիրուն: Հենիր գլուխդ Ինձ վրա և համբուրիր: Թույլ տուր, որ քո միտքը համբուրի Ինձ վրա: Ուրիշ ոչ մեկի մասին մի՛ մտածիր Ինձանից բացի: Ես Նա եմ, ով ամենաշատն է քեզ սիրում: Այն, ինչ Ես քեզանից խնդրում եմ՝ Սեր է: Սիրի՛ր Ինձ: Պաշտի՛ր Ինձ: Մտածի՛ր Իմ մասին: Թույլ տուր, որ Ես միշտ ներկա լինեմ քո սրտում և քո մտքում:

Ես արթնացրի քեզ քնից, որպեսզի դու տեսնես Իմ Գեղեցկությունը և ապրես Ինձ հետ: Իմ Արյան յուրաքանչյուր կաթիլը քեզ իմը դարձրեց: Ես վճարեցի քո հոգու համար՝ Իմ Թանկագին Արյունը թափելով հանուն քո փրկության: Իմ ամեն մի տառապանքը Ես Սիրով կրեցի, գիտենալով, որ Իմ Զոհաբերությունը կփրկի քեզ: Ամեն ինչ, որ Ես արել եմ, քո փրկության համար էր: Աղջի՛կս, թող այս ամենը պարզ լինի քեզ: Ես Սեր եմ և Սերը շարունակում է փրկել: Ես կանգ չեմ առել միայն այնտեղ (Իմ խաչի վրա): Ես շարունակում եմ կանչել ձեր փրկության համար: Ես շարունակում եմ հետապնդել մեղավորին: Ուստի, պատրաստ եղիր, որովհետև Ես շուտով կգամ ձեզ տանելու: Ես՝ Տերը, սիրում եմ ձեզ բոլորիդ խելացնորության աստիճան: Սիրի՛ր Ինձ, դավերգի՛ր Ինձ և եղիր սուրբ: Զգա՛ Ինձ, որպեսզի կարողանաս հիշել Իմ Ներկայությունը: Ե՛կ:

Մարտի 9, 1991

(Շոտլանդիա)

(Ես Հայր Մաք Գինիթիի հետ քննարկում էի, թե որ աղոթքն է ամենից շատ հաճելի Տիրոջը: Մենք ասում էինք, որ լռության մեջ ներհայեցողությունը լավագույնն էր):

Տե՞ր:

Ես եմ: Հենվի՛ր Ինձ վրա: Ես քո ուժն ու նեցուկն եմ: Այո՛, արդարև, Իմ Վասուլա, Լռությունն է ամենաազդեցիկ աղոթքը: Հանդիպիր Ինձ Իմ Լռության մեջ: Թող քո հոգին ձգվի դեպի Ինձ և կլանվի Ինձնով Իմ Լռության մեջ: Թույլ տուր Ինձ տիրել քեզ, զավա՛կս: Թույլ տուր Ինձ պարուրել քո հոգին Իմ Սիրով: Բացվի՛ր Իմ առաջ և թույլ տուր քո Աստծուն տիրելու Իր Սեփականությանը: Ես եմ այս Սեփականության տերը: Ազատ թող Ես եմ-ին, որ աճի: Թող, որ Ես եմ-ը բազմապատկի քո մեջ Իր Արժանիքները: Մի՛ վախեցիր Ինձանից, զավակս, երբ Ես փոքրացնում եմ քեզ: Ես եմ-ը այստեղ է, որ Իր Սեփականությանը հոգ տանի և քո մեջ փայլի: Թույլ տուր Ինձ, հոգի՛, շրջապատել քեզ Իմ Քնքշությամբ: Դու կցնցվես Իմ Գեղեցկությամբ: Մի՛ նայիր քո մերկությանը, հոգի, ու մերժիր Ինձ: Արի՛ Ինձ մոտ Լռության մեջ, ինչպես որ կաս: Ինքդ քեզ Ինձ հանձնիր Լռության մեջ, և դու կապրես: Օրհնյալ եղիր: Օրհնյալ եղիր, հոգի: Թող ոչ մի բան Ինձ մրցակից չդառնա:

Տե՛ր, թող <u>ոչ մի բան</u> չդառնա Քո մրցակիցը:

Ուրեմն ծոմ պահիր ուրբաթ օրերը: Հիմա սա քո պարտականությունն է հանդեպ Ինձ: Ե՛կ:

(Ես դադարել էի ուրբաթ օրերը ծոմ պահելուց՝ իմ չվացուցակների և ճամփորդության պատճառով: Ես հասկացա, որ չնայած իմ ճամփորդություններին, ես կարող էի հեշտությամբ ծոմ պահել, սակայն սոսկ ծուլությունից և թուլությունից ելնելով, ուզում էի, որ ավելի «հեշտ» լիներ ինձ համար...):

Մարտի 10, 1991

(Բելֆաստ)

(Սուրբ Բրիջիդի ծխական դահլիճում կայանալիք աղոթաժողովից անմիջապես առաջ):

Իմ Վասուլա, Ինձ հետ վերաբերվիր հիմա ինչպես Թագավորի և փառաբանիր Ինձ՝ ծառայելով Ինձ: Իմ Յուրայինները կճանաչեն Իմ Ձայնը: Ես կկանչեմ նրանց, և նրանք կգան:

Տե՛ր, իմ Զորություն, իմ Հենարան,
իմ Ապաստան, իմ Լույս և Կյանք:
Ահա ես այստեղ եմ:
Ես գալիս եմ ենթարկվելու
Քո Կամքին:
Տե՛ր, ես խնդրում եմ Քեզ
ինձ տալ Քո Ուժը, որպեսզի նորից
փառաբանեմ Քո Անունը:
ՆԵՐԿԱ եղիր մեր մեջ
և բաց արա նրանց սրտերը,
որ ստանան Քո Սուրբ Հոգին:

Իմ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ շատ ուժեղ կլինի, աղջի՛կս: Իմ Սուրբ Հոգին ՆԵՐԿԱ կլինի: Արդարությունը կիշխի այս երկրում: Ես՝ Տերը, Իմ Ձեռքը կդնեմ այս երկրի վրա, և Ես կստիպեմ նրանց զգալ Իմ Ներկայությունը[1]: Նրանք, որ ականջ ունեն, թող լսեն: Գնա հիմա, սիրելիս: Քո կողքին Ես եմ:

Մարտի 12, 1991

(Դուբլին)

(Բլաքրաք քոլեջի քահանաների և միանձնուհիների համար):

[1] Մի ներքին տեսիլքով ես տեսա Տիրոջ Ձեռքը՝ ողջ Իռլանդիան օրհնելիս:

Տե՛ր իմ, իմ Ուրախությո՛ւն,
իմ Ամե՛ն ինչը:
Ես սիրում եմ Քեզ մահու չափ:

Տե՞ր:

Ես եմ: Հենվի՛ր Ինձ վրա, զավակս: Ես Նա եմ, ով քեզ ամենաչատն է սիրում, ա՜հ, Վասուլա: Զավա՜կս, թույլ տուր Ինձ նորից օգտագործել քո ձեռքը՝ Իմ Պատգամը զավակներիս հաղորդելու համար, Պատգամ, որը Ես նրանց համար պահել էի Իմ Սուրբ Սրտում[1]:

Խաղաղություն ձեզ: Ես եկել եմ ձեր դռների մոտ: Այդ Ես եմ, Սուրբ Սիրտը, որ խոսում է ձեզ հետ: Ես գալիս եմ, որ ձեզ տամ Իմ Սիրտը: Այսօր Ես ձեզ մոտ եմ գալիս այս հատուկ ձևով, որպեսզի հիշեցնեմ ձեզ Իմ Ճանապարհների մասին: Ես ձեզ մոտ եմ գալիս, որովհետև դուք աղքատ եք, և չնայած շատ բան չունեք, սակայն դեռևս պահել եք ձեր տեսողությունը, քանի որ Երկնքում գտնվող ձեր Հոր Շնորհը ձեզ վրա է:

[2] Բայց Իմ Հոգին այնքան ուժեղ է դառնացած, որ դուք չեք կարող ըմբռնել, երբ վերևից տեսնում եմ այնպիսի տարաձայնություններ ու երկպառակություններ, որպիսին երբեք չի եղել Իմ Սրբարանի Սրտում: Իմ Մարմնից արյուն է հոսում, և Իմ Սիրտը մի Մեծ Վերք է: Հովվի գավազանը, որը Ես տվել էի նրանց ամբողջական վիճակում, հիմա կոտրված է ու փշրանքների վերածված: Սակայն Ես մտադիր եմ շուտով այցելել ձեզ, որպեսզի իրար միացնեմ այդ գավազանի կտորները, որը Ես թողել էի Իմ ետևում: Ուստի, սիրելինե՛րս, դուք, որ ստացել եք այս Շնորհը, աղոթե՛ք նրանց համար, ովքեր դեռևս չեն տարբերում իրենց ձախ ձեռքը աջից: Աղոթե՛ք այնպես, ինչպես չեք աղոթել երբևէ, որպեսզի նրանք էլ կարողանան ստանալ այդ Շնորհը՝ նախքան Մաքրագործվելու Օրը: Հիմա Ես ձեզ ասում եմ, որ շուտով, շատ շուտով, Սերը պիտի լինի ձեզ հետ, որպես Սեր: Աղոթե՛ք, որ բոլորը պատրաստ, դարձի եկած լինեն, որպեսզի ոչ մեկը հավիտենապես չձգվի խավարի ու մահվան ստվերի մեջ: Իմ Ողորմությունից ելնելով, Ես գալիս եմ զգուշացնելու ձեր սերնդին, և Իմ Սիրուց դրդված՝ Ես գալիս եմ ձեզ գիտակցության բերելու Իմ Սուրբ Հոգու զորության Շնորհի միջոցով: Սերը ձգտում է փոխադարձ Սիրո: Սա է Իմ Թեման:

Մարտի 18, 1991

(Մեր Սուրբ Մոր Պատգամը):

Իմ Վասու՛լա, ահա Իմ Պատգամը: Իմ Խաղաղությունը ձեզ, Իմ Սրտի զավակներ, Աստված ձեր մեջ է, և Նրա Թագավորությունը մոտ է ձեզ: Եթե դուք աչքեր ունեք, կտեսնեք այդ:

[1] Բլաքբաք քոլեջի քահանաներն ու միաձնուհիները: Թվում էր, Հիսուս վաղուց սպասում էր այս ժամին:
[2] Այնուհետև, Հիսուս նրանց հետ խոսում է Իր Եկեղեցու մասին:

Թանկագին զավակներս, լսե՛ք Աստծո Ձայնը Մեծ Պասի այս օրերին: Լսե՛ք Աստծո Ձայնը՝ փոքրացնելով ինքներդ ձեզ, որ Աստված կարողանա աճել ձեր մեջ: Ոչնչացրե՛ք ինքներդ ձեզ, որ Նրա Հոգին երևա ձեր մեջ: Ուրացե՛ք ձեր անձերը, որ Աստված կարողանա ապրել ձեր մեջ: Եղեք ոչի՛նչ, որ Նա լինի Ամեն Ինչ: Թույլ տվեք Նրան, որ Նա այս ձևով ամբողջովին տիրի ձեզ և ձեզ Իր Սեփականությունը դարձնի: Ուստի, Ես ասում եմ ձեզ, Իմ Սրտի զավակներ, այնքան ժամանակ, որ դուք պայքարում եք, որպեսզի դառնաք ինչ-որ մի բան, Սրբության Հոգին, որն ուզում է ապրել ձեր մեջ, կխեղդվի ձեր մրցակցությունից: Թույլ մի՛ տվեք, որ ձեր Հոգին դառնա Աստծո մրցակիցը: Ցածրացե՛ք, որպեսզի Նա աճի: Թույլ տվեք, որպեսզի Նրա Հոգին այս ձևով ձևավորի ձեզ (տանելով) դեպի Սրբության ճանապարհը: Հիշե՛ք, որ խոնարհությունը, հնազանդությունը և ինքնաոչնչացումը այն հիմնական արժանիքներն են, որոնք գոհացնում են Աստծուն, և որոնցով դուք դառնում եք հոգով աղքատ, և այդպիսով՝ անմեղ:

Թանկագին զավակներս, Հիսուսն այնքան խոնարհ էր, որ նույնիսկ մահն ընդունեց: Երբեք մի եղեք այն մարդու նման, որն ասում է. «Ես ունեմ ամեն ինչ, և ես գիտեմ ամեն ինչ, և ես ոչ մեկի խորհրդի կարիքը չունեմ»: Մնացե՛ք աղքատ, եղե՛ք աղքատ, որպեսզի ձեր աղքատության մեջ, Աստված կարողանա թագավորել ձեր մեջ և լինել Թագավոր: Թույլ մի՛ տվեք մնապարծությունը իշխի ձեզ: Ես աղոթում եմ, որ ձեր սրբությունը աճի Նրա մեջ, Ով ձեզ ստեղծել է, և որ ձեր սերը միմյանց հանդեպ ավելանա և հորդի, որպեսզի մաքրագործի այս աշխարհը իր չարությունից և իր ուրացությունից:

Երբեք մի՛ դադարեք աղոթել Վարդարանը: Ուրախությամբ եկեք Վարդարանը աղոթելու: Հարուստ մարդը չի պատասխանի, սակայն աղքատը կգա Ինձ մոտ իր Վարդարանով, և Ես կլսեմ նրան իր աղքատության մեջ, մինչ նա կաղոթի այդ պարզ աղոթքը: Որովհետև, այն ինչ որ աղքատ է և պարզ, սարսափելի է սատանայի համար, որն Ինքնին Սնափառությունն է: Սա հիմնական պատճառներից մեկն է, որի համար սատանան ատում է Վարդարանը: Սատանան ուժեղ է, և այսօր նա ձեզ բոլորիդ մաղում է ինչպես ցորեն, որովհետև սա նրա ժամն է: Սա խավարի իշխանությունն է: Հավատարիմ մնացեք Աստծո Տան հանդեպ և պահեք այն Ավանդույթները, որոնք դուք սովորել եք ու լսեք Իմ Որդու սիրելի և օրհնյալ Փոխանորդին:

Աստված յուրաքանչյուր քահանայի շնորհ է տվել գործելու և Իմ Որդուն ներկայացնելու: Այդ պատճառով, Ես աղոթում եմ նրանց համար, ովքեր դեռևս խոնարհաբար չեն ենթարկվում Եկեղեցու Փոխանորդին, որպեսզի նրանք համաձայնվեն ենթարկվել: Հիսուսն արդար է և ճշմարիտ: Ընդօրինակեք ձեր Աստծուն, Նրան, ով Կատարելություն է: Եղեք կատարյալ՝ ընդօրինակելով Նրան Իր Համեստության, Իր Հնազանդության, Իր Հեզության, Իր Խոնարհության մեջ, որպեսզի դուք նույնպես ստանաք Տառապանքի, Նվաստացման և Անձնուրացության մեծագույն պարգևները, որոնք բոլորն էլ ձեզ կառաջնորդեն դեպի սրբագործում և դեպի Նրա Սուրբ Սիրտը՝ ձեր բնակարանը:

Իմ քահանաներ, եղեք այն դաշտի նման, որը լավ ջրվել է հաճախակի անձրևներից, որպեսզի նրա արոտավայրերը դրավիչ լինեն Հիսուսի

գառների համար, որ մնվելու բան ունենան: Ոչ մի գառ չի հրապուրվի արածելու տատասկի և մոշի փշերի մեջ: Թույլ տվեք Ինձ, որ վերակառուցեմ ձեր տաճարները և դրանք հաճելի դարձնեմ Աստծուն:

Երանի այն ականջներին, որ լսում և հասկանում են, թե Ես ինչ եմ ասում: Քանզի Ես ասում եմ ձեզ. Ոչ բոլորի անուններն են, որ գրված են Ջոհաբերված Գառան Կենաց Գրքում: Ուստի աղոթեք նրանց համար, ովքեր թվում է թե չեն հասկանում, ոչ էլ ցանկություն ունեն բացվելու, որպեսզի նրանց էլ տրվի Աստծո Շնորհը, որ լսեն իրենց ականջներով, հասկանան իրենց սրտով և դարձի գան ու տեսնեն Աստծո Փառքը:Իմ թանկագին զավակներ, Ես օրհնում եմ ձեզ և ձեզանից յուրաքանչյուրին: Ես սիրում եմ ձեզ:

Մարտի 20, 1991

Ես՝ Յահվեն, քո Հայրն եմ: Ե՛կ: Դու կավարտես քո աշխատանքն Իմ կողքին, աղջի՛կս: Ես քեզ կզորացնեմ ամեն օր, քանի որ դա անհրաժեշտ կլինի Իմ Գործի համար, որը կտարածվի ամբողջ աշխարհում: Ես վառել եմ քո ճրագը, որ կարողանաս տեսնել, զավա՛կս: Ես ընտրել եմ քեզ՝ որպեսզի սովորեցնեմ քեզ Իմ Ապարանքից: Իմ Սեփական Բերանից դու ստացել ես Իմ Խոսքը: Պահի՛ր Իմ Ուսմունքները աչքիդ լույսի պես:

Այո՛, իմ Տեր և Աստված:

Նույնիսկ հիմա, քո ոչնչության մեջ, <u>Ես, որ Ամենն եմ, պիտի տարածվեմ</u> և մառախուղի նման, որ սողոսկում է ամենուր, Ես մտադիր եմ Իմ մեջ պարփակել Իմ ողջ արարչությանը՝ օտարականից սկսած մինչև Իմ լավագույն ընկերը, քանի որ Իմ Նախանձախնդիր [1] Սերը շրջանցել է Ինձ՝ չկարողանալով զսպել Իմ այդ ցանկությունը: Ես ստեղծել եմ ձեզ մեկ նպատակի համար: <u>Ես ստեղծել եմ ձեզ Սիրուց դրդված, որ Ինձ սիրեք</u>: Երբ մարմինն ու միսը կհյուծվեն ու կմաշվեն, նա, ով հաճելի է եղել Ինձ, ընդմիշտ և հավիտյան կներգրավվի Իմ Հոգու մեջ:

Բայց վա՛յ նրան, ով չի վախեցել Ինձանից: Վա՛յ նրան, ով երբեք չի նայել չարությանը որպես անմտություն, և հիմարությանը՝ որպես խելագարություն: Վա՛յ այն սրտին, որ հավատացել է, որ առանց Ինձ, սեփական ջանքերով կարող է հասնել իր ուժերի գագաթնակետին: Վա՛յ նրան, ով չի հնազանդվել Իմ Պատվիրաններին: Վա՛յ նրան, ում սիրտը լցված է չարությամբ: Վա՛յ այն չնագայլին, որ դավ նյութեց գիշերով: Վա՛յ նրան, ով դատեց իր եղբորը և պատճառ դարձավ, որ նա ապրի սարսափի մեջ: Վա՛յ այն շուրթերին, որոնք սուտ վկայություն տվեցին: Վա՛յ նրանց, ովքեր թափում են չծնված երեխաների անմեղ արյունը: <u>Ձեր վարձքը պիտի լինի դժոխքը</u>: Վա՛յ անմաքուրներին, ովքեր մեղքի մեջ ստանում են Իմ Որդու Մարմինն ու Արյունը: Որքան նողկալի եք դուք Ինձ: Վա՛յ նրան, ով վիրավորում է Ինձ՝ մերժելով խոստովանությունն ու թողությունը և

[1] Նախանձախնդիր Սեր

մեղավոր գալիս է Իմ Որդուն ստանալու: Ապաշխարե՛ք: Ապաշխարեք ձեր մեղքերի համար: Իմ ինչին է պետք ձեր ընծաները, երբ օձ կա գալարված ձեր ներսում: Եթե դուք հարցնեք Ինձ. «Ուրեմն ի՞նչ պետք է անենք Հավիտենական Կյանք ունենալու համար», Ես կասեմ ձեզ. «Ապաշխարե՛ք, հետևե՛ք Իմ Պատվիրանների, տվե՛ք համապատասխան պտուղներ: Եվ Ես, Իմ հրեշտակների ներկայությամբ, ձեզ կառաջարկեմ այն սենյակը, որը Ես պահել եմ ձեզ համար: Ուշադիր և զգույշ եղեք բոլոր այդ բաների հանդեպ: Թույլ տվեք Ինձ ձեր անապատում ի հայտ բերել Իմ Հոգին, այնպես, ինչպես ցանկանում եմ, երբ որ ցանկանում եմ և ում վրա որ ցանկանում եմ, որպեսզի փրկեմ ձեզ»:

Ուղղի՛ր մեզ Յահվե, սիրագորով Հայր, մեղմությամբ և գթասրտությամբ, բայց և՝ շտապ:

Սիրե՛ք Ինձ, պաշտե՛ք Ինձ և Ինձ դասեք առաջինը և ամենից բարձրը...

Սովորեցրու մեզ սիրել Քեզ՝ առանց այլևս Քեզ վիրավորելու: Ես հուսահատ եմ առանց Քեզ, օ՛, Ա՛բբա.

Իմ աչքերը մշտապես քեզ վրա են, զավա՛կս: Եվ Իմ Հոգին պիտի գրավի քեզ առավել քան երբևէ, որպեսզի քեզանից ոչինչ չմնա: Ես եմ Ամենը, և Ես կարող եմ լցնել քեզ Իմ Լույսով: Ա՛հ, արարչություն: Ես Հավատարիմ եմ և Քնքուշ: Թող Ինձ ազատ, ո՛վ արարչություն, և ամենանուրբ սիրով Ես պիտի լցնեմ ձեր Հոգին Իմ Հոգուց բխած աստվածայնությամբ: Ինձ ազատ թողեք ցրելու ձեր թմբիրը, որը ձեզ տարավ դեպի այս մեծ ուրացությունը ու ձեր Հոգու ավերումը: Թույլ տվեք Ինձ լցնել ձեզ Իմ Կրակով, որպեսզի դառնաք Իմ հավատարիմ և ջերմեռանդ ծառաները: Թողեք Ինձ փոխակերպել ձեզ, որ դառնաք Իմ Հոգու բերկրանքը: Ես եմ, որ Եմ-ը ձեզ հետ է:

Օրհնյալ եղեք և ընդունեք Իմ Խաղաղությունը, դո՛ւք, որ կարդում եք Ինձ:

Մարտի 24, 1991

Թող յուրաքանչյուր արարած կատարի Քո կամքը, Տեր Իմ:

Աղջի՛կս, ամենից շատ Ես քեզանից սեր եմ ուզում: Ես ուզում եմ, որ դու սիրես Ինձ, սիրես Ինձ, սիրես Ինձ: Փառաբանի՛ր Ինձ և զգա Իմ Ներկայությունը: Ահա թե ինչ եմ Ես խնդրում քեզանից, Իմ Վասուլա:

Տե՛ր, սովորեցրու մեզ Քեզ սիրել այնպես, ինչպես Դու ես ուզում: Սովորեցրու մեզ սիրել մեկս մյուսին: Մենք Քո Օգնության կարիքն ունենք, որովհետև մենք ինքներս չենք կարող սիրել, մինչև որ դու մեզ չտաս սիրելու շնորհը:

Ես Շնորհով պիտի սովորեցնեմ ձեզ[1]: Ես պիտի սովորեցնեմ ձեզ, ինչպես սովորեցնում եմ ձեր Հայրերի Գիտելիքները: Ես ձեզ բոլորիդ պիտի մատակարարեմ այն, ինչ որ ձեզ ամենից շատ է անհրաժեշտ՝ հոգևոր սնունդ: Ես ձեր բոլորի մեջ սեր և սրբություն պիտի ներարկեմ: Ես չեմ ուշացնի Իմ Խոստումը: Այն ամենը, որ Ես քեզ ասել եմ, շուտով տեղի կունենա, և նա[2], ով ճգմում էր քեզ այսքան տարիներ, անկարող կդառնա: Ես սեր կցանեմ ամենուր: Այլևս գիշերվա մեջ խարխափում չի լինի:

Ե՛կ, աղջիկս: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Իմ Տեր:

Ուրեմն, սիրիր Ինձ: Մի՛ վախեցիր Ինձանից: Սիրիր Ինձ, մի՛ անտեսիր Ինձ: Սիրիր Ինձ: Մի՛ մոռացիր Ինձ: Սա է ընդամենը, որ Ես խնդրում եմ քեզանից, հոգի:

ΙΧΘΥΣ

Մարտի 25, 1991

Տե՛ր, այս շաբաթ Սուրբ Զատկի շաբաթն է Հռոմի կաթոլիկների համար, իսկ մյուս շաբաթ Սուրբ Զատիկի շաբաթն է ուղղափառների համար: Ես զգում եմ, որ ճիշտ չէ տարբեր ամսաթվեր ունենալ և ինքներս մեզ տարբերել Քո մեջ այն աստիճան, որ նույնիսկ լսում ենք այնպիսի դիտողություններ, ինչպիսին է. «Նրանց Հիսուս, մեր Հիսուս չէ»:

Ես ձեզ բոլորիդ սիրում եմ նույն ձևով: Սակայն ձեզանից շատերը, թվում է դա չեն հասկանում: Դուք բոլորդ թշվառ եք: Դուք բոլորդ մեղավորներ եք: Դուք բոլորդ թույլ եք: Բայց դուք բոլորդ Իմ Զավակներն եք, հասկանո՞ւմ ես, Վասուլա: Մի՞թե Ես որևէ տարբերություն դրել եմ: Ես եկել եմ քեզ մոտ և ցույց եմ տվել քեզ Իմ Սուրբ Սիրտը[3]: Ես ամեն ձևով փորձեցի, փնտրելով, թե ինչ ձևով կարող էի քեզ Իմը դարձնել: Ես քեզ վրա օրհնանք օրհնանքի հետևից էի լցնում, որպեսզի հարություն տամ քեզ մեռածների միջից և դաստիարակեմ, քանզի քեզ պակասում էր Իմաստությունը: Ես հրապուրեցի քեզ, և Իմ Քնքշությամբ, Ես Ինքս ընտրեցի քեզ, որ վկայես մի ժողովրդի, որը քո սեփականը չէ և որոնցից շատերը շատ հեռու են հասկանալուց, թե ինչու է Իմաստությունը նրանց միջից ընտրել մի օտարականի:

Ես՝ Սուրբ Սիրտը, հաստատ որոշել եմ ցույց տալ նրանց, որ Ես ընտրել եմ քեզ, մի օտարականի, որպեսզի կիսեմ Իմ Սուրբ Սրտի Գանձերը և կիսեմ Նրա ուրախություններն ու վշտերը: Այո՛, Ես եկել եմ օտարներին նույնպես սովորեցնելու Իմ Սուրբ Սրտի Գանձերի մասին: Այսօր Ես նրանց

[1] Հիսուս ժպտաց՝ ցույց տալով Իր այտի փոսիկները:
[2] սատանան:
[3] Հիսուս նկատի ունի, որ հույն ուղղափառի հետ գործ ունի, ոչ թե կաթոլիկի, և խոսում է կաթոլիկների տերմինաբանությամբ:

համար մի նոր երգ եմ պատրաստել, քանզի Ես մեկ եմ և միևնույնը: Ուստի, սանի՛կս, շարունակիր չտարբերել քեզ Իմ Սուրբ Անվան տակ: Նույնիսկ, եթե դու հեռու քշվես Իմ թշնամիների շնչից, Ես քեզ անպաշտպան չեմ թողնի: Ես միշտ պիտի դամ քեզ փրկության, զավա՛կս: Եթե նրանք մեղադրեն քեզ [1], մի՛ պատասխանիր: Ես կպատասխանեմ քո փոխարեն:

Աստվածաշունչն ասում է. «Աստված չունի նախընտրություն, բայց ցանկացած ազգից որևէ մեկը, ով վախենում է Աստծուց և կատարում է այն, ինչ որ ճշմարիտ է, ընդունելի է Նրա համար»[2]: Սակայն մարդիկ տարաբաժանել են միմյանց: Նրանք առանձնացրել են իրենց Իմ Սրբության ներքո: Սակայն սպասիր և կտեսնես: Իմ Սուրբ Հոգին (ի մեծ զարմանս շատերի), հեթանոսների վրա էլ պիտի լցվի: Ես քեզ հանդիսավոր կերպով ասում եմ. այս բաները տեղի կունենան նախքան այս սերունդը կանցնի: Ուստի արիացիր, զավա՛կս, մի՛ վախեցիր: Վերջում Ես ձեզ բոլորիդ պիտի միավորեմ... Եվ իժին այլևս թույլ չի տրվի իր թույնը լցնել ձեր կերակրի մեջ, սերունդ: Ձեր կերակուրը պիտի լինի անվնաս ու մաքուր: Վշտին ու ողբին վերջ կլինի: Ես սիրում եմ ձեզ, և Իմ Ժողովուրդն այս միասնության մեջ [3] պիտի կրի Իմ Սուրբ Անունը, որպես մեկ ամբողջություն:

Օ՜հ, եթե դու բաց անեիր Երկինքը
և գայիր ներքև: Քո ներկայությամբ
ոչ միայն սարերը կհալվեն,
ինչպես Եսայի մարգարեն է ասել[4],
այլև <u>երեք երկաթե ձողերը</u>,
որ Դու ինձ նկարել տվեցիր,
որոնք ներկայացնում են
Հռոմի կաթոլիկներին,
ուղղափառներին և բողոքականներին:

Ես խոստանում եմ քեզ: Ես երկար չեմ թողնի Իմ Եկեղեցին բաժանված: Ես Ինքս ամբողջ ուժով պիտի իջնեմ Նրա վրա և վերակառուցեմ Այն: Վստահի՛ր Ինձ, սիրելիս: Ես այլևս չեմ հանդուրժի այս անհավատ սերնդին: Վերջիվերջո, Հոր Զայրույթն այլևս հնարավոր չի լինի պահել: Այդ պատճառով էլ Իմ Շնորհները ձեզ վրա կբազմապատկվեն՝ ձեզ փրկելու համար: Վասո՛ւլա, երկիրը դեռևս լիովին չի վայելել Իմ Խաղաղությունը: Ինչպես չոր հող, այն ծարավի է այդ Խաղաղությանը, որը Ես կտակել եմ ձեզ բոլորիդ: Եվ Ես, ինչպես այգում հոսող մի առու, ցած պիտի դամ ոռոգելու ձեզ: Իսկ դու, զավա՛կս, ուրախացի՛ր, քանզի Ես արմատավորվել եմ քո մեջ և Իմ Տունն եմ շինել քո մեջ: Եվ Ես քո մեջ պիտի աճեմ, եթե դու Ինձ թույլ տաս:

---

[1] Աշխարհիկ մարդկանցից մինչև քահանաներն ու եպիսկոպոսները (Հռոմ. կաթոլ.): Ոմանք ասում են, որ ես պետք է դառնամ հռոմեական կաթոլիկ, որպեսզի ապացուցեմ, որ ճշմարիտ եմ:
[2] Գործք 10:34-35
[3] Քրիստոնյաները, Քրիստոսի անունով:
[4] Ես. 64:1

Զավակս, աղոթի՛ր Հորը հիմա Ինձ հետ միասին: Ինձնից հետո կրկնիր այս աղոթքը.

Հա՛յր, օրհնյալ լինի Քո Անունը,
քանզի Քո Սիրելի Որդի
Հիսուս Քրիստոսը աշխարհ եկավ,
ոչ թե այն դատապարտելու,
այլ աշխարհը փրկելու: Գթա՛ մեզ:
Նայի՛ր Քո Որդու Սուրբ Վերքերին,
որոնք հիմա լայն բացված են,
և հիշի՛ր այն գինը,
որ Նա վճարեց մեզ համար,
որպեսզի փրկի մեզ բոլորիս:
Հիշի՛ր Նրա Սուրբ Վերքերը,
և այն երկու Սրտերը, որ
Դու Ինքդ միացրիր Սիրով,
և որոնք տառապեցին միասին՝
Անարատ Հղացման և
Քո սիրելի Որդու Սրտերը:

Ո՛վ Հայր,
հիշի՛ր Նրա Խոստումը հիմա
և ուղարկի՛ր մեզ Պաշտպանին
ամբողջ ուժով,
Ճշմարտության Սուրբ Հոգուն՝
հիշեցնելու աշխարհին
Ճշմարտությունը
և Քո Որդու հնազանդությունը,
հեզությունը,
խոնարհությունը և մեծ Սերը:

Հա՛յր, ժամանակը եկել է,
երբ երկպառակության
տիրապետությունը աղաղակում է
Խաղաղության և
Միասնության համար:
Ժամանակը եկել է,
որ Քո Որդու Վիրավոր Մարմինը
աղաղակի Արդարության համար,
որի մասին աշխարհը դեռ չգիտի:
Սակայն Մարիամի Անարատ Սրտի
և Հիսուսի Սուրբ Սրտի միջոցով,
տուր մեզ, Թանկագին Հայր,
այդ Խաղաղությունը մեր սրտերում
և իրագործիր Աստվածաշունչը՝
իրագործելով Քո Սիրելի Որդու
Աղոթքն ուղղված Քեզ,

որպեսզի մենք բոլորս մեկ լինենք,
մեկ Աստվածային
Սուրբ Երրորդության մեջ,
որպեսզի պաշտենք
և փառաբանենք քեզ բոլորս,
մեկ Խորանի շուրջ: Ամեն:

Աղջիկս, սիրի՛ր Ինձ, ինչպես Ես եմ քեզ սիրում: Սիրե՛ք մեկդ մյուսին, ինչպես Ես եմ ձեզ սիրում: Օրհնյալ եղիր: Ե՛կ:

Ապրիլի 8, 1991

Տե՞ր իմ:

Ես եմ, փոքրի՛կս, խաղաղություն քեզ: Սիրի՛ր Ինձ և կառչիր Ինձանից, քանի որ դու դեռ չես վերջացրել Ինձ հետ աշխատելը[1]:

Ես գոհ եմ և թեթևացած եմ զգում ինձ:

Ես թույլ չեմ տա, որ քո ուժը փչրվի: Ես քեզ Իմ Կերակուրը պիտի տամ, ինչպես մի՛շտ տվել եմ: Ծաղի՛կս, այս անգամ Իմ Պատգամը մի աղոթք է բոլոր ազգերի համար, աղոթք՝ միասնության համար: Ե՛կ, գրիր.

«Գովյալ լինես, Տե՛ր,
Երկնային Կերակրի համար[2],
որ Դու տալիս ես մեզ, նրա համար,
որպեսզի իրագործես
Աստվածաշունչը
և ավարտես Քո Աշխատանքը:
Դու Քո Իմաստությունը
տվել ես սոսկ մանուկներին,
և ոչ թե ուսյալներին, որովհետև
դա է, որ հաճելի է Քեզ, Տեր:

Գովյալ լինես, Տե՛ր,
որ բաց արեցիր ուղիները,
որպեսզի Քո մարդիկ
քայլեն դրանցով և գան դեպի Քեզ
ու լցնեն Քո Տունը:
Եվ չնայած Քո Որդուն
Դու աշխարհ ուղարկեցիր,
և աշխարհը պարզորոշ
տեսավ Լույսը, նրանք բոլորը չէ,

[1] Հիսուս նկատի ունի այս ձևով՝ ներքնապես լսելով Նրան:
[2] Հոգևոր մունդ:

որ ընդունեցին Լույսը,
այլ դրա փոխարեն
շրջվեցին դեպի խավարը
և ընկան ուրացության մեջ:
Աշխարհը ուրացող դարձավ,
որովհետև նրանք
մերժեցին ճշմարտությունը
և գերադասեցին ապրել Ստի մեջ:

Այո՛, Տեր, Դու այնքան
շատ ես սիրում աշխարհը,
որ այսօր,
չնայած մեր թշվառությանը,
Դու առանց վերապահության
մեզ ես ուղարկում
Քո Սուրբ Հոգին՝
կենդանացնելու մեզ
և վերակենդանացնելու աշխարհը,
նորոգելով
յուրաքանչյուր արարածի,

որպեսզի յուրաքանչյուր ոք
տեսնի Քո Փառքը և հավատա
ու այսպիսով դարձի գա:

Գովյալ լինես, Տե՛ր,
որ բացեցիր Երկնքի դռները,
որպեսզի դուրս թափես
քո Պահեստներից
այս Թաքցված Մանանան՝[1]
պահված մեր ժամանակների համար:
Ո՛չ, այդ Մովսեսը չէր,
որ Հաց տվեց Երկնքից,
այդ Դու էիր, Հա՛յր,
որ կերակրեցիր Ճշմարիտ Հացով,
և ինչպես Քո Որդին՝
Հիսուս Քրիստոսն է Կյանքի Հացը,
նույնպես և Սուրբ Հոգին
սնում է մեզ, քանի որ ողջ Հացը,
որն իջնում է Երկնքից՝ Կյանք է:

Աստվածաշնչում գրված է.
«Նրանք բոլորը
կսովորեն Աստծով[2],

[1] Հայտ. 2:17
[2] Ես. 54:13

իսկ միմն ու ոսկորը չեն կարող
բացահայտել Ճշմարտությունը,
մինչև որ այդ Ճշմարտությունը
չտրվի հենց Նրա կողմից,
Ով հաստատել է
այդ Ճշմարտությունը
և դրոշմել Այն մեր սրտերում»:

Հա՛յր,
թող Քո անունը միշտ գովաբանվի
և փառաբանվի կրկին:
Թող աշխարհն անցնի
Խավարից դեպի Լույսը,
Ստից դեպի
կատարյալ Ճշմարտությունը,
Թմրությունից՝
դեպի Ջերմեռանդությունը:

Հա՛յր՝ Երկնքի և Երկրի Արարիչ,
եկել է ժամը ցույց տալու մեզ
Նոր Երկինքն ու Նոր Երկիրը,
որտեղ Քո Սուրբ Հոգին
մեր մեջ կհաստատի
Իր Բնակարանը:
Ամենաքնքուշ Հա՛յր, ինչպես Դու
փառավորեցիր Քո Որդուն
և Քո Որդին փառավորեց Քեզ,
թող Քո Ճշմարտության
Սուրբ Հոգին
կրկին փառավորի Քո Որդուն:

Կարճ ժամանակից, Հա՛յր,
համաձայն Աստվածաշնչի,
առաջին երկինքն ու առաջին երկիրը
շուտով կանհետանան,
որպեսզի աշխարհին ապացուցեն,
որ Քո Խոսքը
Կենդանի է ու Գործուն,
և որ Հիսուսն
իսկապես հաղթել է աշխարհին:
Երբ այդ օրը գա,
Քո Որդու Աղոթքն ուղղված Քեզ,
նույնպես կիրագործվի,
քանի որ մենք բոլորս
մեկ կլինենք Քո մեջ,
ինչպես Սուրբ Երրորդությունն է
Մեկ և միևնույնը:

Մենք այլևս ինքներս մեզ
չենք տարբերակի Քո Անվան տակ:

Գովյալ լինի Տերը
և Փառք Ամենաբարձրյալին,
որ մեր մեծ ուրացության մեջ
մեզ ուղարկեցիր Մեր Սուրբ Որը,
ում Սիրտը Դու Ինքդ Սիրով
միացրիր Հիսուսի հետ,
և որոնք Միասին տառապեցին:
Եվ նորից Միասին է,
որ Երկու Սուրբ Սրտերը
պիտի նորացնեն մեզ
և ետ բերեն մեզ դեպի Կյանք
ու դեպի Քո մեջ:

Կորած ոչխարները կգտնվեն,
թափառող գառները
կհիշեն իրենց ճշմարիտ փարախի
և իրենց Ճշմարիտ Հովվի մասին:
Այն Հովվի,
որը ոչ լքում է Իր հոտը,
ոչ էլ լքում է կորածներին,
այլ բուժում է վիրավորներին
և նեցուկ է կանգնում
հոգնածներին:

Գովյալ լինի Տերը,
որի Սուրբ Հոգով
մենք մկրտություն ենք ստանում:
Արդարև, Կենդանի Ջրի
Աղբյուրներ են բխում ու տրվում
այն մարդուն, ով ծարավ է,
քանի որ նրանք առատորեն
դուրս են հոսում
Քո Սուրբ Սրբարանից[1]:
Այն Սրբարանից,
որը Դու կանգնեցրիր երեք օրում:
Եվ այս վերջին օրերին
Քո Լիությունից
մենք ստանում ենք
Քո Սուրբ Հոգու Շնորհները,
որպեսզի մեզ վերակենդանացնես,
քանի որ դա Քո Մանանան է
Երկնքից,

[1] Հիսուսի Կուրծքը (Մարմինը):

Հոգուց եկող Հոգևոր Սնունդը:

Թո՛ղ, որ Քո ժողովուրդը հասկանա,
Հա՛յր,
որ արդելքը շուտով կվերացվի,
և որ Գառան Գահը,
Քո Գահը շուտով կլինի
Իր Տեղում և մեր մեջ:
Հետևաբար պատրաստիր մեզ,
Արդարադատ Հա՛յր,
այդ Փառահեղ Օրվա համար,
երբ մենք բոլորս կարող ենք
գովաբանել Քեզ
և փառաբանել Քեզ
մեկ Սուրբ Խորանի շուրջ:

Հա՛յր, չնորհակալ եմ Քեզ,
որ լսեցիր իմ աղոթքը
և Քո Խոսքերը տվեցիր ինձ,
որպեսզի աշխարհին ցույց տրվի
Քո Սուրբ Սրտի Գանձերը: Ամեն»:

Այժմ ե՛կ, աղջիկս, ե՛կ հիմա, փոքրիկ ընկերս: Մի՛ դադարիր Ինձ սիրելուց: Խրախուսանքի բառեր դու միշտ կլսես Ինձանից: Ուստի համարձակ եղիր և վստահիր Ինձ:

Ապրիլի 13, 1991

Տե՛ր, մեր բաժանումը, ես խոսում եմ միայն ուղղափառների և կաթոլիկների բաժանման մասին, մի իսկական խայտառակություն է: Ինչպես կարելի է, որ մենք, քրիստոնյաներս, շարունակենք բաժանված մնալ, և դա ոչ թե ժամանակավոր բաժանում է, այլ շարունակվում է խոր արմատներով՝ հիմնված հակասությունների վրա, որոնք <u>այնքան անիմաստ</u> են: Ամեն մեկը մրցում է մյուսի հետ, և մեզանից մի քանիսը դեռևս բարկություն և ատելություն ունեն միմյանց դեմ: Ինչպե՞ս կարելի է խոսել անկեղծությամբ և ազնվորեն, երբ հին վեճը դեռ լուծված չէ մեր սրտերում: Մենք իսկապես կարո՞ղ ենք կանգնել Քո առաջ և ասել, որ մենք հաշտվել ենք մեր եղբայրների հետ, և մաքուր խղճով կարող ենք գալ դեպի Քեզ, որպեսզի Քեզ մատուցենք մեր ընծաները Քո զոհասեղանի վրա: Ո՛չ, չենք կարող: Այնքան ժամանակ, որ ապրում ենք Քո Սուրբ Անվան տակ և հաշտված չենք, մենք չենք կարող հայտարարել, որ մաքուր խղճով գալիս ենք դեպի Քեզ:

Սակայն մենք բոլորս գիտենք, որ Քո մեծագույն ցանկությունը, սիրելի Քրիստոս, <u>ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ է</u>, բայց և այնպես, մենք ամուր պահում ենք այն պատնեշները, որոնք բաժանում են մեզ, և մենք բավականաչափ ազնիվ չենք որ ասենք. «Մենք չենք ուզում խոնարհվել, քանի որ այդ <u>մենք</u> ենք, որ պահում ենք իսկական Հավատքը և Ճշմարտությունը»: Մի՞թե մենք չենք հասկացել, թե որքան ավելի Գեղեցիկ կլիներ Քո Հարսը, եթե մենք

միավորվեինք, որքան ավելի Զորեղ կդառնա Եկեղեցին, որքան ավելի մեծ առաջընթաց կարող է Նա ունենալ, և որքան ավելի շատ Պտուղներ Նա կկարողանա տալ:

Հիմա Նա լճացած է: Կարո՞ղ ենք մենք անկեղծորեն ասել, որ Նա առաջընթաց է ապրում և հոգիներ է բերում դեպի Իրեն, երբ մենք ամեն օր մեր աչքերի առաջ տեսնում ենք, թե ինչպես են հոգիները մեկը մյուսի հետևից թողնում Քո Հարսին՝ մի երկրորդական փիլիսոփայության համար, այո՛, ինչպիսիք են գաղտնի աղանդները՝ Նոր Դարը, Եհովայի Վկաները, և ուրիշներ: Սակայն այս մարդիկ, ես զգում եմ, որ Քեզ են փնտրում: Ուստի օգնիր նրանց, որ գտնեն Քեզ...

Ա՛հ, աղավնյակս: Ես քեզ իզուր չեմ սովորեցնում... Նրանք դեռևս չեն հասկացել, որ միավորվելու համար, Ինձ հարկավոր է իրենց սիրտը: <u>Ինձ պետք է նրանց սիրտը, որ նրա ներսում</u> վերակառուցեմ Իմ Եկեղեցին, որպես Մեկ միասնություն: Միությունը կլինի, եթե սրտերը միասն:

Տե՛ս: Ես հանձնարարել եմ քեզ վկայություն տալու մարդկանց, որոնք քո սեփական ժողովուրդը չեն: Բայց քո յուրայիններից շատերը դեռևս չեն հասկացել, թե ինչու Իմաստությունը քեզ ուղարկեց օտարների մոտ: Քո մարդիկ հավատում են, որ դու տեղի ես տալիս, զիջում ես օտարներին: <u>Նրանք չեն հասկացել որ այդ Ես եմ, Տերը, որ միացրեցի քո սիրտը նրանց սրտերին</u>: Արդարև, քեզ վրա դրված խաչը կրկնակի ծանր է, զավա՛կս, քանի որ քեզ փորձում են շեղել նաև օտարներից մի քանիսը, որոնք անդադար քեզ ստիպում են դառնալ իրենցից մեկը:

Մնալով այնպիսին, ինչպիսին որ կաս, Ես նրանց երկուսին էլ սովորեցնում եմ, թե ինչպես պետք է դուք միասաք, և թե ինչպիսին պիտի լինի միասնությունը: Միասնությունը նրանում է, որ դուք տարբերություն չդնեք ձեր միջև Իմ Սուրբ Անվան տակ: Միասնությունը, դա Սուրբ Հաղորդությունը կիսելն է, և Իմ իրական Ներկայության հավատալը Սուրբ Հաղորդության մեջ: Միասնությունը, զավա՛կս, կայանում է նրանում, որ <u>մեկդ մյուսին տաք ձեր հարստությունները</u>:

«Տե՛ր, սովորեցրու մեզ,
որ երբ մենք դատում ենք,
խորհենք Քո Բարության մասին,
և երբ մենք դատվում ենք,
ողորմություն փնտրենք»[1]:

Ա՛հ, զավակս: Քո մրցավազքը դեռևս չի ավարտվել: Սակայն հիշի՛ր, քո առջև Ես եմ, իսկ քո կողքին՝ Քո Մայրը, որ խրախուսի քեզ, իսկ քո կրունկների մոտ՝ քո պահապան հրեշտակը, որ պաշտպանի քեզ: Լսի՛ր Ինձ, եղբայրների մեջ նրանց առաջնորդը արժանի է պատվի: Ուստի պատվիր Իմ Պետրոսին: Սա լոկ մի հիշեցում է Ամենաբարձրյալից:

Հիմա գիտեմ, որ ես երբեք չեմ լքվի:
Դու իմ հոգին ուղղել ես դեպի Քեզ:

[1] Իմաստ. 12:22

Ես իմ ձեռքերը
մեկնել եմ դեպի Երկինք,
և Դու բարձրացրել ես ինձ:
Իմ հոգին ուրախանում է Քո մեջ:
Ա՜հ, եթե Դու իմ
եղբայրների համար էլ անեիր այն,
ինչ արել ես ինձ համար:

Ես ոչ միայն քո եղբայրներին կբարձրացնեմ դեպի Իմ Սիրտը, աղջի՛կս, այլև դեպի Իմ Սիրտը կբարձրացնեմ այնպիսի մարդկանց, ովքեր նույնիսկ չգիտեն Ինձ: Հետևաբար, Ողորմությունն ու Շնորհը կհասնեն նույնիսկ հեթանոսներին, քանի որ նրանք նույնպես Իմ արարչության մաս են կազմում: Աղջի՛կս, Ես հայտնի եմ նրանով, որ օգնում եմ աղքատներին ու խեղճերին...

Արի հիմա և փայփայիր Ինձ նորից քո նուրբ բառերով, որոնք գալիս են քո սրտից: Կրկնիր դրանք Ինձ համար:

Տե՛ր Հիսուս, օգտագործիր ինձ
որ չորացնեմ Քո Արցունքները:
Տե՛ր Հիսուս, օգտագործիր ինձ,
որ սրբեմ Քո Արցունքները:
Սուրբ Սիրտ, օգտագործիր ինձ,
որ սփոփեմ Քո Սիրտը:
Սուրբ Սիրտ, օգտագործիր ինձ,
որ Գլուխդ ու Սիրտդ
օղակող փշերը դուրս քաշեմ:
Տե՛ր Հիսուս, օգտագործիր ինձ,
որպես Քո Գլխի հենարանը:
Քնքուշ ու քաղցր Հիսուս,
օգտագործիր ինձ ցանկացած ձևով
Քեզ գոհացնելու
և Քեզ սփոփելու համար:
Իմ ցանկությունն է
ժպիտ բերել Քո Շուրթերին:

Ուրեմն Ես կօգտագործեմ քեզ, եթե դու Ինձ առաջարկես նաև քո կամքը:

Ես առաջարկում եմ Քեզ, Հիսո՛ւս,
իմ կամքը, իմ սիրտը,
իմ շունչը, իմ հոգին,
իմ մարմինը, ամեն ինչ:

Այդ դեպքում Սերը պիտի իրականացնի քո մեջ Իր Կամքը: Եվ Իմ Խաղաղությունը պիտի թագավորի քո սրտում, և Իմ Պատկերը պիտի արտացոլվի քո հոգու մեջ, և քո հոգին պիտի պաշտի Ինձ Իմ Հոգուն համապատասխան, և քո մարմինը պիտի մերժի այն ամենը, որ սուրբ չէ, քանի որ Ես կփոխակերպեմ և այն կդարձնեմ կատարյալ՝ Իմ Փառապանծ մարմնի նման, որպեսզի դու Ինձ համար՝ քո Աստծու համար, դառնաս մի

զոհասեղան: Դու պիտի կիսես Իմ տառապանքները, բայց նաև՝ Իմ ուրախությունը: Ես պիտի շարունակեմ սովորեցնել քեզ, որպեսզի դու վկայես ոչ միայն խաչված Քրիստոսի, այլև հարություն առած և հաղթական Քրիստոսի համար:

Ես պիտի հիշեցնեմ ամեն մարդու, որ հրաշքները, տեսիլքներն ու նշանները նույնպես Իմ մասն են կազմում: Արի ուրեմն:

(Ավելի ուշ)

Սերը սիրում է քեզ: Սիրի՛ր Ինձ:
Առանց փորձությունների դու չես աճի: Իմ մտերմությունն ու համակրանքը բացահայտ է դեպի քեզ: Այդ է պատճառը, որ սատանան քեզ ավելի շատ է ատում: Անգամ, եթե զգում ես, որ Իմ թշնամին անվերջ սպառնում է քեզ, Ես քո կողքին եմ, որ օգնեմ քեզ: Հասկացի՛ր, որ Ես պատրաստել եմ քեզ, որպեսզի նրա համար սպառնալիք լինես: Որևէ մեկը, որ նրանից սրտեր է գողանում, սպառնալիք է դառնում նրա համար: Այս է պատճառներից մեկը, որ նա երբեք առիթը բաց չի թողնում քեզ նշանակետ դարձնելու: Շատ հաճախ նա մարդկանց է օգտագործում իր նպատակի համար: Առանց որևէ պատճառի, նա կարող է մեղադրանք հարուցել, որպեսզի ամբողջովին ոչնչացնի նրան, ում որ նա ուզում է հարվածել:
Բայց սա դեռ ամբողջը չէ: Նրա ամենաստոր գործերից մեկն էլ՝ քնած հոգուն ամեն տեսակի գաղափարներ ներշնչելն է, որոնք տագնապում և անհանգստացնում են հոգուն՝ խաղաղությունն ամբողջովին դուրս մղելով այդ հոգու միջից: Այս է պատճառը, որ պետք է արթուն մնաս: Թույլ մի տուր նրան քեզ քնած գտնել:

Ապրիլի 14, 1991

«Օրհնյա՛լ լինի Տերը,
որ Իր աքանչելի սերը
ցույց տվեց ինձ»[1]*:*

Խաղաղություն քեզ: Հիմա սա Ինձ, սանի՛կս, դու երջանի՞կ ես, որ Ես քո Հոգևոր Ղեկավարն եմ:

Այո՛, Տեր, առավել քան երջանիկ: Ես շատ բաներ եմ սովորում ուղղակի Քո Բերանից, ինչպես և ուրիշները:

Կուզենայի՞ր գրել:

Ես պատրաստ եմ ծառայելու Քեզ,
Աստված իմ: Պատրաստիր ինձ

[1] Սաղմ. 30:22

և բաց արա իմ ականջը,
որ միայն Քո Ձայնը լսեմ:

Լսիր Ինձ ուրեմն.

- Երանի՛ նրանց, որ աշխատում են խաղաղության համար: Նրանք պիտի ծաղկեն Իմ Խաղաղության մեջ և պիտի ճառագայթեն Իմ Լույսը հավիտյանս հավիտենից:

- Երանի՛ գթասիրտներին: Նրանք Ողորմություն պիտի գտնեն Դատաստանի Օրը:

- Երանի՛ այն վեհանձն ու նվիրաբերվող հոգիներին, որոնք կիսում են Իմ Բաժակը: Նրանք պիտի կոչվեն Իմ Փրկության ժառանգները:

- Երանի՛ նրանց, որ կպսակվեն Ինձ հետ: Այն ուրախությունը, որ ես կզգամ որպես Փեսա, նրանք էլ պիտի զգան այն օրը, երբ հանդիպեն Ինձ դեմ առ դեմ:

- Երանի՛ է ձեզ, որ չեք ընդունել ոչ մի այլ վկայություն, բացի այն Մեկ և միակ Ճշմարտությունից, որը ես Ինքս եմ տվել ձեզ: Ես ասում եմ ձեզ. Եկե՛ք, մտեք Իմ Թագավորության մեջ և կիսեք Ինձ հետ <u>ամեն ինչ</u>, որ ես ունեմ:

- Երանի՛ նրանց, որ չեն տարբերում իրենց Իմ Սուրբ Անվան ներքո, այլ իրենց միասնությունը ցույց են տալիս խոնարհության և սիրո միջոցով: Նրանք պիտի կոչվեն Աստծո Սրբարանի Այուները և Հիմքը:

- Երանի՛ <u>ձեզ</u>, որ առանց տեսնելու հավատում եք: Ուրախացեք այն Շնորհի համար, որ դուք ստացել եք Իմ Հորից, և աղոթեք նրանց համար, ովքեր դեռ չեն ստացել այդ Շնորհը:

- Երանի՛ ձեզ, որ համաձայն եք խարազանվելու, ստորացվելու և Ինձ հետ խաչի վրա գամվելու, որ կրում եք Իմ Մարմնի խարանները ձեր մարմնի վրա: Երկնքում սենյակ պիտի բացվի ձեզ ընդունելու համար և ձեր փոխհատուցումը մեծ պիտի լինի:

- Երանի՛ նրանց, ովքեր պահում են Իմ Սուրբ Անունը: Երբ նրանք կանչեն ու խնդրեն Իմ Անունով, Ես պիտի լսեմ:

- Երանի՛ փոքրերին, որ փառաբանում և պաշտում են Ինձ: Նրանց մեջ Ես մեծ գործեր պիտի կատարեմ:

- Երանի՛ հավատարիմներին, ովքեր հետևում են Իմ Պատվիրաններին և չեն փոխում Աստվածաշնչում գրված և ոչ մի նիշ: Նրանցն է Երկնքի Թագավորությունը:

- Երանի՛ է ձեզ, Իմ գառներ, որ հանուն Ինձ, գիշատիչ գայլերի կողմից հալածվում եք ինչպես որս, որովհետև Ես կողք կողքի կիսեցի Ձեր կերակուրը ձեզ հետ: Ես ասում եմ ձեզ. ձեր բոլոր տառապանքներն իզուր չեն: Հայրը տեսնում է այս ամենը և հաշվի է առնում յուրաքանչյուրի արարքները: Սոդոմի և Գոմորի համար այնքան ծանր չի լինի, որքան նրանց համար, ովքեր հալածել են Իմ Սուրբ Հոգուն:

Ուստի արթուն մնացեք, որովհետև ոչ մեկը չգիտի ո՛չ Իմ գալու Օրը, և ո՛չ էլ՝ Ժամը: Ձեր Թագավորը շուտով կգա: Նա, ում դուք այդքան երկար սպասել եք, հանկարծակի պիտի գա ձեզ վրա: Ուստի արիացե՛ք, սիրելիներս: Արդարև, չարի ծուխը ներթափանցել է Իմ Սրբարանը, բայց ո՞ր ծուխն է ընդմիշտ մնում: Ես, Իմ Սուրբ Հոգու Շնչով, պիտի ցրեմ ու փչեմ այդ ծուխը և ներքևից եկող ոչ մի իշխանություն, ոչ էլ

որևէ զորություն չի կարողանա միջամտել:

Ես գալիս եմ երկրի վրա Կրակ բերելու և մաքրագործելու ազգ ազգի հետևից: Օրհնյալ եղեք:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 15, 1991

Տե՛ր, արի մեզ մոտ
Քո Սուրբ Հոգու ողջ ուժով:
Որովհետև, ամենաքնքուշ Աբբա,
ինչպես Դու
փառաբանեցիր Քո Որդուն
և Քո Որդին փառաբանեց Քեզ,
եկել է Ժամը,
որ Ճշմարտության Քո Սուրբ Հոգին
փառաբանի Քո Որդուն:
Ապացուցիր աշխարհին,
որ Քո Խոսքը կենդանի է
և գործող, այլ ոչ թե պարզապես
թղթի վրա տպված բառեր:
Թող Քո Սուրբ Հոգին
«Հայրերի սրտերը դարձնի
դեպի իրենց զավակները
և զավակների սրտերը
դեպի իրենց հայրերը»[1]*:*

Խաղաղություն քեզ: Վասո՛ւլա, Աստվածաշունչը երբեք չի ստում: Ասվել է, որ գալիք վերջին օրերին, մարդիկ կպահեն կրոնի արտաքին տեսքը, բայց կմերժեն նրա <u>ներքին ուժը</u>[2]: Ա՛հ, սիրելիս: Արդյո՞ք Իմ Վերադարձին որևէ հավատք մնացած կլինի...

- Իմ Եկեղեցու ներքին ուժը նրա մեջ գտնվող Սուրբ Հոգին է՝ կենդանի և գործող: Ինչպես սիրտը մարմնի մեջ, Իմ Սուրբ Հոգին Իմ Մարմնի Սիրտն է, որը Եկեղեցին է:

- Իմ Եկեղեցու ներքին ուժը Իմ Սուրբ Հոգին է, որը ձրի տալիս է և բաժանում իր պարգևներն ու շնորհները, որպեսզի Եկեղեցին որոշ օգուտ ստանա:

- Իմ Եկեղեցու ներքին ուժը Իմ Սուրբ Հոգին է՝ Իմ Խոսքի Հիշեցնողը, որը նոր ոչինչ չի բացահայտում, այլ միևնույն հրահանգները, որոնք տրված են միևնույն Հոգու կողմից:

- Իմ Եկեղեցու ներքին ուժը Իմ Սուրբ Հոգին է, որ փոխակերպում է, վեր է բարձրացնում և դարձնում է ձեզ Իմ իսկական պատճենները:

- Իմ Եկեղեցու ներքին ուժը Իմ Սուրբ Հոգին է, այն Կրակը, որը կենդանացնում է ձեզ, մաքրագործում է ձեզ, և ձեր Հոգուց պատրաստում է

[1] Մաղ. 4:5
[2] Բ Տիմ. 3:5

կրակի այուներ, սիրո բոցավառ հնոցներ, լույսի կենդանի ջահեր, որպեսզի առանց վախի հայտարարեք Իմ Խոսքը՝ դառնալով Ամենաբարձրյալի վկաները, և սովորեցնեք ուրիշներին փնտրել միայն Երկնայինը:

- Իմ Եկեղեցու ներքին ուժը Իմ Սուրբ Հոգին է, Կյանքը և Շունչը, որը ձեզ կենդանի է պահում և ձեր հոգուն մղում է Ինձ ցանկալ, կանչելով Ինձ՝ Աբբա: Եթե դու մերժես, զավա՛կս, և ճնշես Իմ Սուրբ Հոգու պարգևները, ի՞նչ ծառայություններ դու կարող ես կատարել ու մատուցել Ինձ: Մի՛ եղիր դիակների նման, որոնք պահում են կրոնի արտաքին տեսքը, բայց մերժում են նրա ներքին ուժը դատարկ տեսություններով՝ դրանով իսկ սահմանափակելով Ինձ Իմ Աստվածության մեջ: Մի՛ կանգնեցրու նրանց, ովքեր դեպի Ինձ են գալիս մանուկների նման՝ ապրելով Սուրբ Հոգուն նվիրաբերված մի կյանք: Այդ ե՛ս եմ, որ կանչում եմ նրանց Իմ Սուրբ Հոգու պսակին:

Սրբության գաղտնիքը կայանում է հետևյալում. նվիրում Ինձ՝ ձեր Աստծուն: Եվ դուք ինքներդ չեք կարող ոչինչ անել, մինչև որ ձեր մեջ ապրող Իմ Հոգին ձեզ չառաջնորդի և չսովորեցնի Երկնային բաներ: Ճշմարիտ եմ ասում ձեզ. նա, ով վախենում է Ինձանից, կընդունի Իմ ուղղումները: Ուստի մի՛ քնեք հիմա, քանզի սրանք այն ժամանակներն են, երբ պետք է առավել արթուն և զգոն լինել, քան երբևէ: Սրանք այն ժամանակներն են, երբ պետք է բացեք ձեր ականջները և լսեք Իմ Հոգուն և չանտեսեք նրան: Սխալ պահին իմաստուն մի՛ ձևանաք՝ Իմ Սուրբ Հոգուն մի կողմ հրելով և ճնշելով այն ներքին ուժը, որն աշխուժացնում է Իմ Եկեղեցին:

Ուզո՞ւմ ես խոհեմ լինել, ուրեմն բաց արա աչքերդ:

Ուզո՞ւմ ես խոհեմ լինել, ուրեմն բաց արա սիրտդ ու ականջներդ, բարեկամ, և ոչ թե՝ քո միտքը: Խոհեմ մարդը երբեք չի արհամարհում Հոգուց եկող նախազգուշացումը: Միայն հպարտները ոչինչ չգիտեն վախի մասին: Տիրոջ հանդեպ վախը՝ Իմաստության սկիզբն է:

Ուզո՞ւմ ես խոհեմ լինել: Փնտրիր ճշմարտությունը, որը հուսահատորեն խոնարհվել է քո թշվառության վրա՝ քեզ փրկելու համար: Նայե՛ք, թե Ով է խոնարհվել ձեզ վրա ձեր թշվառության և ձեր խեղճության մեջ, որպեսզի ձեզ քաշի դեպի Իրեն և վեր բարձրացնի ձեր դերեզմաններից, որպեսզի նորից Կյանք ներնչի ձեր մեջ:

Օ՜, եկ: Ինձ սխալ մի հասկացիր: Ես չեմ ստիպում քեզ, ոչ էլ ոտնահարում եմ քո ազատությունը: Ես խղճում եմ քեզ, սերունդ: Մի ասեք, թե այն, ինչ Ես ասելու էի, արդեն ասվել է: Ինչո՞ւ եք Ինձ սահմանափակում, ինչպես որ սահմանափակում եք ինքներդ ձեզ:

Ես Իմ Խոսքը Հիշեցնողն եմ, այո՛, Իմ Եկեղեցու ներքին ուժը, և Ես ազատ եմ ձեզ նոր նշաններ ուղարկելու և նոր հրաշքներ գործելու: Ես ազատ եմ ձեզ հարություն տալու, սերո՛ւնդ, և Իմ Սուրբ Սրտի Հարստությունից ձեզ վրա բուժիչ յուղ լցնելու, երբ որ ցանկանամ և ում վրա որ ցանկանամ: Ես կառուցում եմ, այո՛, վերակառուցում եմ Իմ Եկեղեցին, որը հիմա ընկած է ավերակների մեջ: Ուստի թույլ մի՛ տվեք, սերունդ, որ Դատաստանի օրը ձեր դեմ կանգնեմ և ստիպված լինեմ ասելու ձեզ. «Դո՛ւ, դու եղել ես Ինձ հալածողներից մեկը, որը քանդում էր, մինչ Ես կառուցում էի»: Հիմա Ողորմությունը ձեր դռների մոտ է, և Իմ Կարեկցությունը բախում է ձեր դռները փորձությունների այս

ժամանակներում:

Դուք ինքներդ ձեզ սո՞ւրբ եք համարում: Ապացուցե՛ք, որ սուրբ եք՝ ցույց տալով Ինձ՝ Իմ հանդեպ ձեր պաշտամունքը: Ապացուցե՛ք, որ սուրբ եք, ցույց տալով Ինձ այն հոգիները, որոնց դուք դարձի եք բերում ու բերում Ինձ մոտ, քանի որ, Իմ Թագավորությունը բառերի մեջ չէ, որ դուք խոսում եք, ոչ էլ կրոնի արտաքին տեսքի մեջ, այլ այն ներքին զորության մեջ, որը միայն Ես կարող եմ ձեզ տալ Իմ Սուրբ Հոգու միջոցով, եթե դուք փնտրեք այն: Ձգացե՛ք Իմ ներկայությունը և Իմ Սերը, որը Ես ունեմ ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, ներկա եմ և օրհնում եմ ձեզ բոլորիդ Իմ Սուրբ Սրտի խորքերից թողնելով Սիրո Իմ Հոգոցը ձեր ճակատին: Եղեք մեկ: Եկեղեցին կվերակենդանանա:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 20, 1991

Տե՛ր, ես շնորհակալ եմ Քեզանից՝
ինձ Քո Սեփականությունը և
Քո հարմացուն դարձնելու համար:
Սովորեցրո՛ւ նրանց,
ովքեր չեն հասկանում,
որ Դու թույլ ես տալիս
Քեզ հալածողներին գրոհել ինձ վրա,
որովհետև Դու կարող ես
փառաբանվել նաև այս ձևով:
Եվ Դու շատ պարզ ասացիր,
որ Դու երբեք թույլ չես տա նրանց
վիրավորել կամ դիպչել իմ հոգուն:
Հասկացրո՛ւ նրանց
այդ տարբերությունը,
քանի որ տարբերություն կա:

Ծաղի՛կս, Իմ բաժակը դառն է: Բայց դու դեռ ուզո՞ւմ ես կիսել այն Ինձ հետ:

Ես ուզում եմ կիսել Քո Բաժակը Քեզ հետ:

Այո՛: Ապացուցի՛ր քո սերն Իմ հանդեպ՝ տալով քո կամքը: Ձգտիր փառաբանել Ինձ՝ քո Աստծուն՝ գրկելով Իմ Խաչը: Դու դարձել ես Իմ Սեփականությունը, որտեղից Ես ստանում եմ Իմ ուրախությունները: Դու վստահել ես քո կյանքն Իմ Ձեռքերին:

Աղջի՛կս, լսիր: Մնա տկար, քանի որ քո տկարության մեջ Ես կարող եմ մեծ գործեր կատարել: Եղիր ոչինչ, քանի որ քո ոչնչության մեջ Ես կարող եմ լինել Ամեն Ինչ: Լուռ մնա և այդ լռության մեջ Ես կգտնեմ Իմ հանգիստը: Մնա կակուղ և զիջող, որպեսզի Ես կարողանամ ձևավորել քեզ

և քեզանից պատրաստել Իմ խաչելության մի պատճեն: Մնա սահմանափակ, որպեսզի Իմ Ուժը երևա քո մեջ: Դարձիր Ինձ նման՝ լինելով հլու, համբերատար, մաքուր, հնազանդ, նվաստ, հավատարիմ և մշտական աղոթքի մեջ, ինչպես Ես էի Հոր հանդեպ: Երբեք մի՛ քնիր: Երբեք մի՛ կտրիր այն կապերը, որ ունես Հոր հետ: Երկրի վրա Իմ կյանքը մի անդադար աղոթք էր Աստծուն, պատեհ և անպատեհ ժամանակներում:

Լսի՛ր Հորը և կատարիր Նրա Կամքը: Քո կերակուրը Ես եմ տալիս՝ քո Ազատարարը: Այն ամենը, որ դու ուտում ես, գալիս է Ինձանից, որպեսզի քեզ սովորեցնի միակ Ճշմարիտ Կյանքն ապրել Իմ մեջ՝ քո Աստծո մեջ: Ճշմարիտ եմ ասում քեզ. «Մի՛ վախեցիր նրանցից, ովքեր սպանում են մարմինը, սակայն չեն կարողանում սպանել հոգին: Ավելի շուտ վախեցիր նրանից, ով կարող է ոչնչացնել թե՛ մարմինը, և թե՛ հոգին դժոխքում»[1]:

Մնա Իմ մեջ, և Ես՝ քո մեջ: Ես թույլ պիտի տամ, որ քո մահկանացու էությունը փորձության ենթարկվի, որպեսզի դու աճես փորձությունների մեջ: Բայց քո հոգուն չեն դիպչի: Միայն ու արյունը չեն կարող ժառանգել Իմ Թագավորությունը: Ուստի, մի՛ վախեցիր: Քո փորձությունների միջով Ես նույնպես փառաբանվում եմ:
Դու երբեք լքված չես մնա:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 23, 1991

(Սբ. Գևորգի օրը)

(Պատգամ Կանադայի համար):

Ես գալիս եմ ձեր երկիրը, որ ձեզ թողնեմ Իմ Մեծ Սիրո նշանը: Ես՝ ձեր Թագավորը, գալիս եմ ինչպես մի մուրացկան, ցնցոտիների մեջ և ոտաբոբիկ, որպեսզի խնդրեմ ձեզ խաղաղություն կնքել Ինձ հետ և ձեզանից մի քիչ սեր հայցել: Իմ Անսահման Գթասրտության պատճառով, Ես անընդհատ խոնարհվել եմ դեպի ձեզ, որ ձեզ դուրս համեմ ձեր թմբիրի և ձեր խավարի միջից, որպեսզի դուք կարողանաք ճաշակել ձեր հանդեպ ունեցած Իմ Մեծ Սերը:

Ապրիլի 24 1991

(Շատոգե, Կանադա)

Գոհացրո՛ւ Ինձ, աղջիկս, և փառաբանիր Ինձ:

Օգնի՛ր Ինձ, Տեր, հայտարարելու Քո Սիրո Պատգամը:

[1] Մատթ. 10:28

Ես ամեն ինչ Ինձ վրա կվերցնեմ: Ուստի մի՛ անհանգստացիր: Ես կանգնած կլինեմ քեզ մոտ: Դե՛, արի:

Ապրիլի 25, 1991

(Հանդիպումից առաջ ես նորից աղոթեցի Տիրոջը, որ ինձ օգնի):

Իմ Վասուլա: Կարո՞ղ եմ Ես երբևէ քեզանից պահանջել որևէ բան, որը վեր է քո կարողությունից: Աղջի՛կս, Իմ Օրենքի կատարումը Սերն է: Սերը Իմ Օրենքի Արմատն է, և մյուս Պատվիրանները չեն կարող գործել և ուժի մեջ մնալ, եթե Սեր չլինի: Դուք ստեղծված եք, որ Ինձ փառաբանեք: Լսի՛ր, Իմ Հոգին պիտի կլանի քեզ[1]: Տուր Ինձ այս ազգի ընտանիքներին: Ծաղի՛կ, տուր Ինձ հիմա այն փառքը, որին Ես արժանի եմ: Ասա նրանց[2].

«Ես ձեր Ազատարարն եմ, և Ես չեմ եկել որևէ մեկին դատապարտելու, այլ փրկելու՝ փրկարար արդարությամբ: Ուստի կանչեք Իմ Անունը, սիրելի զավակներս: Հիսուս նշանակում է՝ Նա, Ով Փրկում է: Ես հենց ձեր դռների մոտ եմ, սիրելիներս: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ»:

Մայիսի 2, 1991

(Պատգամ մի անձի համար):

Խաղաղություն քեզ:

Իմ թագավորության գալուստը երկրի վրա մոտալուտ է, և Իմ Կամքը պիտի լինի երկրի վրա, ինչպես որ Երկնքում է[3], և ձեր սրտերում Ես պիտի վերակառուցեմ Իմ Եկեղեցու միասնությունը: Ես այլևս չեմ սպասի մարդկանց հավանությանը և Իմ Հարսնացուն մեկ անգամ ևս պիտի զգեստավորվի պայծառ Փառքով: Բաժանման արդելքը պիտի վերանա և արևով զգեստավորված չքեղազարդ Կինը, որին Ես ուղարկում եմ Ինձնից առաջ ձեզ կրթելու համար, պիտի խրախուսի ձեզ: Ես նրան իշխանություն եմ տվել յուրաքանչյուր ազգի և յուրաքանչյուր երկրի վրա, որպեսզի լայն ճանապարհ բացի Ինձ համար:

Ծուխը, որ ներթափանցել է Իմ Սրբարանի սիրտը՝ արատավորելով Սկիհը, Տապանակը և այն ամենը որ սուրբ է, պիտի ցրվի Իմ Շնչի մի հարվածով: Հետո բոլոր ազգերը պիտի խոսեն մի լեզվով, և նրանք բոլորը պիտի պաշտեն Ինձ Մեկ Տապանակի շուրջ՝ Զոհաբերված Գառան այդ միակ Տապանակի, Մշտնջենական Զոհաբերության այդ միակ Տապանակի, որն Իմ թշնամիները փորձում են ոչնչացնել և փոխարինել իրենց ավերածին պղծությամբ: Շատ շուտով, Իմ ընկեր, Ես նորից ձեզ բոլորիդ հետ պիտի լինեմ: Եվ Իմ քահանայական աղոթքը՝ ուղղված Հորը, պիտի իրականանա: Դուք մեկ պիտի լինեք, ինչպես Մենք Սուրբ Երրորդության

[1] Աղոթաժողովի ժամանակ:
[2] Շատոգեի կանադացիներին:
[3] Այս ասելիս, Հիսուս նայում էր դեպի Երկինք: Նա այդ ասաց չափազանց վսեմ ձևով:

մեջ:

Իմ Սուրբ Սրտում ես դեռ թաքուն շատ բաներ ունեմ քեզ բացահայտելու և քեզ ցույց տալու, քանի որ այն Գանձերը, որ ես ունեմ Իմ մեջ, անհաշիվ են: Բայց հիմա դա քեզ համար չափազանց շատ կլինի[1]: Քո հոգին չի կարող ամեն ինչ ընդունել, բայց կամաց-կամաց ես քեզ պիտի բացահայտեմ Իմ Սուրբ Սրտի Գանձերը, և քայլ առ քայլ ես պիտի առաջնորդեմ քեզ մի տեղ, որը նման է Փարոսի, Անչափելի Հարստության մի Գաղտնիք, որը թաքցված է եղել սերունդներից ու դարերից ի վեր: Ես պիտի բացահայտեմ քեզ, Իմ ընկեր, Հույսի, Իմաստության և Գիտելիքի շքեղ փառքը: Արմատներ գցիր Իմ մեջ, և դու պտուղ պիտի տաս: Մնա Իմ մեջ, և դու կապրես: Ես քեզ ասացի այս ամենը, Իմ ընկեր, որպեսզի երբ փորձությունները գան, դու չերերաս:

Սերը քո կողքին է: Սիրիր ինձ:

Մայիսի 3, 1991

Տե՛ր, ողողիր ինձ Քո Սուրբ Հոգով:
Ե՛կ և նվաճիր ինձ Քո Սուրբ Հոգով,
որպեսզի թշնամին
իմ ներսում տեղ չգտնի:
Թող, որ Քո Սուրբ Հոգին
իջնի իմ հոգու ամենախորքերը,
որպեսզի ոռոգի և պարգևի նրան
այն հարստություններով,
որոնք չեն պատկանում աշխարհին:
Օրհնյա՛լ լինի Աստված:

Ես Եմ-ը քեզ հետ է: Իմ Խաղաղությունը քեզ: Ես իջա քո սենյակը և ընկերացա քեզ: Այն ժամանակ ես օտար էի քեզ համար: Բայց տեսնո՞ւմ ես, Իմ Ուսուցումները քեզ վեր բարձրացրին դեպի Իմ Սիրտը, և այսօր ես քո չորությունը վերածել եմ մի բերրի հողի: Աղավնյա՛կս, ես ուրախանում եմ քեզանով: Փոքրի՛կս, ես ապրում եմ քո մեջ: Իմ գլխի հենարան, ես հանգստանում եմ քո մեջ: Փառաբանի՛ր ինձ հիմա և վերականգնիր Իմ Տունը: Փառաբանի՛ր քո Հորը, որ երկնքում է, որպես Թագավոր վերաբերվելով Նրան:

Ա՛հ, աղջիկս, Իմ Բերանը չոր է սիրո պակասից: Ես ծարավ եմ սիրո պակասից: Բուժի՛ր Վերքերս քո սիրով: Դուրս հանիր Իմ փչերը և սփոփիր Ինձ: Սրտով փառաբանիր ինձ ամբողջ ժամանակ: Խոսիր Ինձ հետ և մի՛ սպասիր մինչև վաղը: Ուրախացրո՛ւ Ինձ և մնա փոքր: Թույլ տուր Ինձ, Իմ Վասուլա, օգտագործել քո փոքրիկ ձեռքը: Տո՛ւր Ինձ քո ժամանակը, և ես պիտի հագեցնեմ քեզ Իմ Աղբյուրով, իսկ Գանձերը, որոնք ես քեզ պիտի տամ, երբեք չեն կարող գնահատվել: Ոչ մեկը չի կարող հասկանալ նրանց հոյակապությունը:

Ես՝ Տերը, Իմ Գահը պիտի հաստատեմ քո մեջ՝ քեզ ղեկավարելու համար: Եվ քանի որ դու տվել ես քո համաձայնությունը, ես Ինձ թույլ պիտի տամ

[1] Հիսուս խոսում էր հումորով:

հետևելու Իմ Սրտի բուռն զգացմունքներին: Ես Իմ Տիրապետության մեջ եմ, և հիմա Ես ամբողջովին իշխանություն ունեմ քեզ վրա:

Փառաբանիր Ինձ և օրհնիր Ինձ: Սերը քեզ հետ է:

ΙΧΘΥΣ

Մայիսի 6, 1991

Տե՛ր, Իմ Աստված, ո՞վ կարող է մեզ
փրկություն բերել Քեզանից բացի:
Ո՞վ կարող է մեզ
ետ բերել տուն Քեզանից բացի:
Ո՞վ կարող է մեզ
երջանկություն բերել
Քեզանից բացի: Ուրեմն՝ Մարանաթա:

Աղջի՛կս, մեռելները չեն կարող փառաբանել Ինձ: Այս է պատճառը, որ Ես ամբողջ ուժով պիտի իջնեմ ձեզ վրա և պիտի բարձրացնեմ ձեզ բոլորիդ՝ հիշեցնելու ձեզ Իմ մեծության, Իմ պայծառության և Իմ իշխանության մասին: Ե՛կ, գրիր, Իմ Վասուլա:

Խաղաղություն ձեզ, Իմ որդիներ և դուստրեր: Ես հաշվել եմ Իմ ոչխարներին, և Իմ Սիրտը փշրված է վշտից: Այսօր միայն մի մնացորդ է մնացել, որոնք զերծ են մնացել Ուրացությունից: Միայն քչերը չեն կորցրել իրենց հավատքը: Միայն մի քանիսն են փրկվել բանապաշտության (ռացիոնալիզմի) վտանգից, և Ես վերևից լարել եմ Աչքերս, սպասելով, որ դուք Ինձ առաջարկեք ձեր սիրտը և Ինձ հանձնվեք: Սակայն այս սերնդի սիրտը դռեհկացած է անխոհեմությամբ:

Բայց և այնպես, եթե դուք նույնիսկ չեք հետևել Իմ Սիրո Օրենքին, այլ շուռ եք տվել ձեր սրտերը և ստեղծել ձեր սեփական օրենքն ու կանոնները, Ես չեմ կանգնի ու կողքից դիտի, թե դուք ինչպես եք ավելի ու ավելի հեռանում Իմ Պատվիրաններից: Ես մտադիր եմ փրկել ձեզ, սերո՛նդ: Ես մտադիր եմ ձեզ սովորեցնել ու խելքի բերել և մեծ սիրով վերադարձնել ձեզ դեպի Արդարության ճանապարհը: Ես պիտի սովորեցնեմ ձեզ կանչել Իմ Անունը: Ես պիտի սովորեցնեմ ձեզ քայլել Իմ Ներկայությամբ: Ես պիտի սովորեցնեմ քեզ ապրել աղոթքի կյանքով, զավա՛կս: Ես պիտի սովորեցնեմ քեզ սիրել Ինձ ամբողջ հոգով: Ես կարձակեմ քո մահվան կապերը, որոնք հոգիդ կապում են այն ամենին, ինչից նողկում է Իմ Հոգին, եթե դու Ինձ տաս քո կամքը, զավա՛կս:

Նայե՛ք, նայեք ձեր շուրջը: Իմ Սուրբ Հոգին գալիս է ձեզ հանդիպելու և ձեզ բոլորիդ կենդանացնելու՝ մուրացկանի պես հագնված, Այտերիցս հոսող Արյան Արցունքներով: Ես իջնում եմ Իմ Գահից՝ ամբողջովին խոնարհվելով դեպի ձեզ, ձեր հոգին աղետից ու սովից փրկելու համար: Իմ Սուրբ Անվան սիրույն, Ես Ինքս Ինձ ցույց պիտի տամ հենց այս գործերի միջոցով, որոնց դուք այլևս չեք հավատում: Ես պիտի ցուցադրեմ Իմ Սուրբ Հոգին սքանչելիքների, հրաշքների միջոցով: Ես պիտի ցուցադրեմ ու ապացուցեմ Իմ Ուժը՝ թուլության ու թշվառության միջոցով, ինչպես չի եղել երբևէ:

Ես պիտի դամ հազարավոր անթիվ հրեշտակների հետ, սերո՛ւնդ, որպեսզի ձեզ վրա թափեմ Իմ Երկնային Մանանան, այս թաքցված Մանանան[1] և լցնեմ ձեր բերանը Իմ Կերակրով, որպեսզի ձեր շուրթերը հռչակեն Իմ Փառքը: Ուրացությունը մարտահրավեր է նետել Իմ Ողորմության դեմ, իսկ բանապաշտությունը՝ ձեր դարաշրջանի այդ ժամտախտը, մարտահրավեր է Իմ Զորության դեմ:

Իմ առջևից Ես ուղարկում եմ Արևով զգեստավորված Կնոջը՝ երկրորդ Եվային՝ ձեզ կրթելու, ձեզ սովորեցնելու և ձեզ քայլ առ քայլ դեպի Երկինք առաջնորդելու համար: Այս Գիշերով Ես ձեզ եմ ուղարկում Իմ Սուրբ Հոգին, որ լինի ձեր Ուղեկիցն ու Սփոփիչը և ձեզ հիշեցնի Իմ Խոսքի մասին: Ես ուղարկում եմ ձեզ հույսի հրեշտակների մի խումբ՝ վանելու ձեր վախը: Եկե՛ք և լսեք դուք բոլորդ, որ քաղցած եք: Երանի նրան, ում Ես կհրավիրեմ Իմ Սուրբ Հոգու Հարսանիքին: Նա պիտի լցվի Իմ Երկնային Կերակրով և չնայած նրանց մեղքերը հաղթահարում են իրենց, Իմ Սուրբ Հոգին պիտի ոչնչացնի այդ մեղքերը ու հանգչի նրանց մեջ:

Հասկացե՛ք, Իմ սիրելիներ, որ Իմ այցը երկիր ոչ թե ձեզ դատապարտելու համար է, այլ ձեզ փրկելու: Ո՞վ կտեսնի Ինձ: Ո՞վ ուշադրություն կդարձնի: Ո՞վ կճանաչի Երկնքից ձեր մեջ իջնող Գահը: Մի՛ մերժեք Շնորհի Իմ Սուրբ Հոգուն: Ես ձեզ հետ եմ միշտ: Աղոթե՛ք ջեմեռանդորեն ձեր դարաշրջանի դարձի համար: Բացե՛ք ձեր սրտերը և խոսեք Ինձ հետ: Կառաջարկե՞ք դուք Ինձ ձեր կամքը:

Օ՜, Իմ Տուն: Արի՛, արի դեպի Ինձ և քայլիր Իմ Լույսի մեջ: Բայց և այնպես, երբ Ես դամ Իմ Մեծ Վերադարձի ժամանակ, Ես հավատ կգտնե՞մ երկրի վրա: Այսօր Ես խոսում եմ պարզ բառերով: Իմ փոքրիկ մանուկներ, կարճ ժամանակում Սերը կվերադառնա որպես սեր: Ես ետ կգամ ձեզ մոտ, և Ես ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե դուք ճանաչեք Իմ Սուրբ Հոգին և տեսնեք Նրան, դա նշանակում է, որ դուք պատկանում եք Ինձ, քանզի աշխարհը չի կարող ո՛չ ճանաչել Նրան, ո՛չ տեսնել Նրան, ո՛չ էլ ստանալ Նրան: Ա՛հ, Իմ փոքրիկներ: Ես ի՜նչ չեմ անի ձեզ համար: Ես ցանկանում եմ ձեզ տեսնել զորացած այն պարգևներով, որոնք Ես լցնում եմ ձեզ վրա[2]:

Ձեր ուժը ստացեք աղոթքով,
դեպի Ինձ ուղղված
մշտական աղոթքով:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Եվ դու[3], որ եկել ես Ինձ մոտ, որովհետև քո խաչը քեզ ճմլում է, հենվի՛ր Ինձ վրա, սիրելի՛ս, և տուր Ինձ քո վիշտն ու դժվարությունը: Ես սիրում եմ քեզ: Ես կօգնեմ քեզ: Փառաբանի՛ր Ինձ, պատվելով Իմ Անունը:

Ընդունեք Իմ Սուրբ Հոգու Շունչը ձեր ճակատներին և մեկ եղեք Իմ Սուրբ Անվան ներքո:

---

[1] Հայտ. 2:17

[2] Հիսուսն այդտեղ դադար տվեց: Ապա, վսեմորեն ուղղվելով, առանց շարժվելու ասաց այս բառերը:

[3] Հիսուս հատկապես նկատի ունի այդ խմբից ինչ-որ մեկին:

ΙΧΘΥΣ

Մայիսի 13, 1991

Զավա՛կս: Թույլ տուր Ինձ խոսել զավակներիս հետ՝ տալով քո համաձայնությունը ձեռքդ և ժամանակդ օգտագործելու համար:

Ես Քեզ հետ կապված եմ Սիրով,
Տե՛ր: Մի՞թե ես
Քո Սեփականությունը չեմ:
Ուստի օգտագործիր ինձ
ամբողջովին,
ինչպես որ Դու կկամենաս,
Տե՛ր իմ, քանի որ
դա է իմ ուրախությունը:
Ե՛կ, Սուրբ Հոգի և կլանիր ինձ:

Քաղա՛ք[1], որին ես այցելում եմ՝ Իմ Սերը քո միջոցով հայտարարելու ձեզ բոլորիդ և բժշկելու քո հիվանդ բնակիչներին, ես չեմ թողնի, որ կործանվես մեղքի մեջ, ոչ էլ կսպասեմ, որ քեզ քայքայված տեսնեմ: Ես պիտի հաղթեմ քեզ: Ես քո Թագավորն եմ: Ես Կատարյալ եմ: Լսի՛ր Ինձ, Սերունդ, ես մտադիր եմ ձեզ ձևավորել ու դարձնել Իմ Աստվածային էության արտացոլումը: Մեղավորի տոհմը ես պիտի ոչնչացնեմ մոլեգնող Կրակով: Ձեր Սերունդը պիտի պսակվի Իմ Սուրբ Հոգու[2] հետ, և ես Իմ լափող Կրակով պիտի փոխեմ այս երկրի մակերևույթը՝ դարձնելով այն մի աստվածային, ծաղկող նոր Երկիր, իսկ այսօրվա աշխարհը պիտի անցնի ու գնա:

Իմ լափող Բոցով ես ձեզ բոլորիդ ոսկու նման մաքուր պիտի դարձնեմ, ապակու նման թափանցիկ[3], որովհետև ձեր սրտերը կլինեն Իմը ու կլինեն Իմ Սրտի մեջ: Ես և Իմ Հայրը կլինենք ձեր Բնակարանը[4], և դուք էլ կլինեք Մեր բնակարանը: Ես մտադիր եմ ձեզ վերադարձնել ձեր աստվածային էությունը, արարչությո՛ւն, որպեսզի Իմ ճառագայթող փառքը լինի մի վառված ջահ[5] ձեր ներսում: Ապա, ինչպես դարպասը հսկող մի ժամապահ, ես ձեզ պիտի պահպանեմ ամեն տեսակ ապականությունից, որ կփորձի թափանցել ձեր մեջ[6]:

Ես ձեզանից յուրաքանչյուրին պիտի դարձնեմ մի պայծառ քաղաք: Ես ամբողջովին ձեզ պիտի նորոգեմ, որովհետև այս ձևով է, որ ես ձեզ պիտի պատրաստեմ Իմ Սուրբ Հոգու հետ պսակվելու: Իմ Սուրբ Հոգին Իր Տունը

---

[1] Աստված հանկարծակի և անսպասելիորեն փոխեց տոնը, և Նա մեծ ուժով բացականչեց՝ անվանելով ինձ Քաղաք:
[2] Հայտ. 21:2
[3] Հայտ. 21:21
[4] Ակնարկում է, որ Ամենակարող Աստված և Գառը հենց իրենք էին տաճարը: Հայտ. 21:22 (մեր մեջ, «քաղաքում»):
[5] Հայտ. 21:23
[6] Հայտ. 21:27

կշինի ձեր մեջ, փոխակերպելով ձեզ, որպեսզի դուք դառնաք Իր Սուրբ Քաղաքը[1], Իր Տիրությունը և Իր Սեփականությունը: Ներկայիս աշխարհը պիտի դնա և երկրի վրա Իմ Կամքը պիտի կատարվի, ինչպես որ Երկնքում է: Սերը ցած պիտի իջնի որպես սեր, և Ես՝ անտեսանելի Աստվածս, տեսանելի կդառնամ ձեր սրտում: Գալիս է այն ժամը, երբ խարխափելով խավարում այլևս չեք փնտրի ձեր ճանապարհը, քանզի ձեր սիրտը կվառվի Իմ ճառագայթող փառքով[2]: Իմ Փառքը տեսանելի կդառնա ձեր սրտերում:

Արի՛, զավակս: Լսիր Հիմա Իմ Մորը: Մնա Ինձ մոտ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, իմ Տեր: Ես հրապուրված եմ Քեզնով: Հրապուրիր նաև մյուսներին…

Բարեխոսիր նրանց համար, և Ես կգամ ու կփնտրեմ ու կփրկեմ այն, ինչ որ կորած էր[3]: Կարդա Եսայի 41:17-20: Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

(Մեր Սուրբ Մոր Պատգամը աղոթախմբերի համար):

Զավակնե՛րս, այսօր Ես դիմում եմ ձեզանից յուրաքանչյուրին, որ քննեք ձեր սրտերը: Թող ձեր համբերատարությունը լինի ձեր վկայությունը: Ես աղերսում եմ ձեզ վերաքննել ձեր սրտերը:

Աստծո Պատգամը՝ ուղղված ձեզ բոլորիդ, այդ Նրա Հավատարմության ապացույցն է: Աստված չի հայտնում Իրեն ձեզ դատելու համար: Աստված հայտնում է Իրեն, որպեսզի ձեր անհավատարմության դեպքում ցույց տա Իր Հավատարմությունը: Աստված փնտրում է ձեր հաշտությունը: Նա գալիս է, որ ձեզ դուրս հանի Խավարի Իշխանությունից և ցույց տա Իր Իշխանությունը երկրի վրա: Անտեսանելի Աստվածը Իր Փառքի մեջ տեսանելի կդառնա ձեր սրտերում: Եվ երկնային բաները տեսանելի կդառնան ձեր սրտերում, և այն զունատ արտացոլումները, որոնք դուք նախկինում ընկալել եք որպես ստվերներ, կապացուցեն իրենց իրական լինելը:

Աստծո Թագավորության Իշխանությունը երկրի վրա շատ մոտ է ձեզ հիմա: Հետևաբար Ես աղաչում եմ ձեզ պատրաստ լինել այդ Օրվան: Եթե դուք ասում եք, որ դուք ինքներդ մեռած եք ձեր համար և այս աշխարհի սկզբունքների համար, ուրեմն արգելեք ձեր սրտերին թրթռալ աշխարհի սիրով: Ապրեք Աստծո համար և թողեք, որ Նա ձեզ համար լինի առաջնակարգ: Այլևս մի՛ կռվեք, մի՛ վիճեք և մեղադրեք: Թույլ մի՛ տվեք, որ ձեր շուրթերը ձեզ դատապարտեն: Վախեցե՛ք Տիրոջից, և Իմաստությունը շուտով արշալույսի պես կիջնի ձեզ վրա: Տերը փնտրում և ցանկանում է մի սիրտ, որը չի բաժանված մասերի:

Ես ձեզ խնդրել եմ ու նորից եմ խնդրում՝ աղոթե՛լ, աղոթե՛լ, աղոթել

[1] կարդա Հայտ. 21:1-3
[2] Հայտ. 21:24
[3] Ղուկ. 19:10

սրտով. անմիջական ու պարզորեն խոսեք ձեր Հոր հետ, որը Երկնքում է: Որովհետև, եթե այսօր ես ձեզանից խնդրում եմ Աստծուն ընծայել մի անբաժան սիրտ, դա այն բանի համար է, որ սովորեցնեմ ձեզ, որ հավատարիմ մնաք այն սկզբունքներին, որ ես ուսուցանել եմ ձեզ:

Աստծո համար արժեքավոր է այն սիրտը, որը պատվում է Նրան՝ հեռու մնալով այն բոլոր գայթակղություններից, որոնք տանում են դեպի մեղք: Եթե դուք կրթել եք ձեր մարմինները ծոմապահությամբ, ես ձեզանից խնդրում եմ կրթել նաև ձեր շուրթերը, որպեսզի նրանք միայն աղոթքներ և փառաբանություններ արտասանեն Տիրոջը: Թույլ մի՛ տվեք, որ ձեր շուրթերը ձեզ դատապարտեն: Ձեր սիրտը, ձեր միտքը, ձեր աչքերը և ձեր շուրթերը դարձրեք դեպի Հիսուս և եղեք ամբողջական ու անբաժան:

Ես հրավիրում եմ ձեզ, սիրելի զավակներս, որպեսզի գործադրեք այս ամենը՝ միևնույն ժամանակ անկատար չթողնելով Օրենքի մյուս արժեքները: Եվ հիշեք, որ Օրենքի Սիրտը՝ Սերն է:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ:

Մայիսի 18, 1991

(Թուլուզի համար):

Հիսո՞ւս:

Ես եմ:

Եղիր Խաղաղության մեջ, փոքրի՛կս: Մեկից ավելի են նրանք, որոնց ես ետ կբերեմ դեպի Ինձ: Իրոք, ես կանչել եմ քեզ այստեղ[1], քանի որ հենց այստեղ է, որ նրանք Իմ կարիքն ունեն:

Ես կրքոտ սիրով սիրում եմ ձեզ, միշտ հիշեք սա: Ես ներգրավում եմ ձեզ դեպի Կյանք: Ես չեմ վանում ոչ մեկին՝ մեղավոր կամ անարդար: Դուք բոլորդ էլ Իմ զավակներն եք: Իմ Պատգամը Սիրո մի Պատգամ է, մի կանչ դեպի ձեր իսկական հիմքերը, Իմ Խոսքի և Իմ Գոյության մի հիշեցում: Մի՛ վախեցեք Ինձանից: Վախեցեք միայն նրանից, ով ձևացնում է թե գոյություն չունի և շատ չարամտորեն տանում է ձեզ դեպի Մահ: Ես եմ Լույսը:

Ե՛կ: Ասա նրանց, որ այս Պատգամը նրանց չի տրվում, որպեսզի ինչ-որ զգայական ցնցում առաջ բերի, այլ որպեսզի նրանց հասկացնի Իմ Կանչի հրատապությունը, լրջությունը և կարևորությունը, նրանց դարձի հրատապությունը, նրանց հոգու վիճակի լրջությունը, իրենց կյանքը փոխելու և սուրբ ապրելու կարևորությունը, Իմ Պատգամների կարևորությունը, որոնք հոգևոր մնունդ են՝ իրենց հոգեկանությունը մնուցող մի նյութ, մի բուժիչ յուղ այն վերքերին, որոնք նրանք ստացել են չարի կողմից այս խավարում:

Ես ուզում եմ, որ Իմ զավակները շատ ուշադիր լսեն այն ամենը, ինչ պետք է ասեմ: Թույլ տվեք, որ Ճշմարտության Իմ Հոգին ձեզ դարձյալ առաջնորդի դեպի Ճշմարտություն: Թույլ տվեք, որ Գիտության Իմ Հոգին հիշեցնի ձեզ այն Մեկ և Միակ Ճշմարիտ Գիտության մասին, որը ես Ինքս

[1] Հիսուսն ուզում էր, որ ես Մոնպելիեի փոխարեն Թուլուզ գնայի:

եմ տվել ձեզ:
Ես՝ Ձեր Տերը և Փրկիչը, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին:

ΙΧΘΥΣ

Մայիսի 23, 1991

Յահվե՛, իմ Աստված,
Դու առատորեն ինձ վրա ես լցնում
Քո բուրմունքները:
Թո՛ղ փառաբանվի իմ Յահվեն:
Դու իմն ես, և ես՝ Քոնը:
Տո՛ւր ինձ Քո Ուսը՝ հենվելու համար:
Զնայած անարժան եմ ես,
ինչպես քամու թեթև շունչ, որն
անցնում է աննկատ և ետ չի գալիս,
փոշու մի հատիկ, որ քշվում է
անձրևի առաջին կաթիլներից,
թո՛ւյլ տուր ինձ լինել
Քո Հոյակապ ու Ճառագայթող
Ներկայության մեջ:
Նրբորեն ու քնքշորեն
առաջնորդիր ինձ
այս անապատի միջով, Սիրելիս:

Վասո՛ւլա, նույնիսկ քո թշվառության մեջ, ես քո միջոցով դիմելու եմ ազգերին, որպեսզի ստիպեմ ձեր սերնդին հայտարարելու իրենց փառաբանություններն ուղղված Ինձ:

Սերո՛ւնդ, ես պատրաստվում եմ
արածացնել քեզ:

Աղջի՛կս, ամեն անգամ, երբ դու կանչում ես Ինձ, ես իջնում եմ Իմ Գահից, որ գամ հասնեմ քո սենյակը և համբուրեմ քեզ: Դո՛ւ, որ հակված ես թշվառական լինելու, գրավել ես Իմ Անսահման Սերը: Ուրախացի՛ր: Ուրախացի՛ր, որ քո Թագավորը ամեն անգամ լսում է քեզ, երբ դու բացում ես քո բերանը և կանչում Իմ Սուրբ Հոգուն, որպեսզի գա և օգնի քեզ: Կանչի՛ր Իմ Անունը, զավակս, և Սերը պիտի պարուրի քեզ ամբողջությամբ ու ընկերակցի քեզ:
Ուրախացրո՛ւ հիմա քո Թագավորին և թույլ տուր Նրան մեկ անգամ ևս լսել Աղքատության Մատնված Իր զավակի խոստումները:

(Ես վեր կացա և կրկնեցի իմ խոստումները Հիսուսի Սուրբ Սրտին:)

Իմ Սուրբ Սրտի Վասուլա, ես ընդունում եմ քո նվիրաբերումը: Քո մատուցումները գոհացրին Իմ Սիրտը: Պատվի՛ր Ինձ, քո Տիրոջը՝ բարեպաշտ և հավատարիմ մնալով Ինձ՝ քեզ Վարձատրողին:

Մայիսի 25, 1991

Հիսո՛ւս, Ես հմայված եմ
Քո Կատարելությամբ:
Ես հրապուրված եմ
Քո Գեղեցկությամբ: Քո Այրող Սերը
պաշարեց իմ դյուրաբեկ էությունը,
որպեսզի համաձայնվի դառնալու
Քո Սիրո զոհը:
Սակայն ես ինչպե՞ս հրաժարվեի՝
տեսնելով միանգամից
այդպիսի մեծ Գեղեցկություն:
Քո Ողորմածությունը
ինձ հմայում է ամբողջ օրը:
Ինչպիսի՞ թովչանք կա Քո Սիրո մեջ:

Իմ Հոգու սիրելին: Քո աչքերը տեսել են Իմ փառապանծ Վեհությունը, քո ականջները լսել եմ Իմ Սիրո Երգը, և Ես Ինքս եմ դրել Իմ Սեփական Լույսը քո մեջ՝ քեզ ընդմիշտ Իմը դարձնելու համար: Իմ Մեխերն ու Իմ Փշե Պսակը Ես տվել եմ քեզ՝ Իմ մոտիկությունը քեզ ցույց տալու համար: Ես դարձել եմ քո Ամուսինը՝ քեզ դարձնելով Իմ հարսը, որ կիսես Իմ Խաչը, որպես մեր ամուսնական անկողինը: Իմ Զարչարանքը կհամակի քեզ, որպեսզի դառնաս Իմ՝ քո Ամուսնու պատճենը: Ես քո Մխիթարիչն եմ վշտի օրերին:

Ես եմ քեզ ընտրել, այլ ոչ թե՝ դու Ինձ, որպեսզի քեզ ցույց տամ Իմ անսպառ Հարստությունները:

Տե՛ր, ի՞նչ ես ուզում, որ ես անեմ Քեզ համար:

Վերադարձրո՛ւ Իմ ժողովրդին ճշմարիտ Հավատքին, որը հիմնված է սիրո վրա: Աղոթի՛ր, որ Իմ Եկեղեցին մեկ դառնա՝ զերծ բոլոր չարիքներից: Քավի՛ր, աղջիկս, քավիր աշխարհի մեղքերն ու անարդարությունները, որոնք այնքան շատ են վիրավորում Իմ Սուրբ Սիրտը...

Իմ դուստր և հարս: Նայի՛ր քո Փրկչի Սրտի մեջ: Նայի՛ր այս Սրտից ներս, որը փրկեց քեզ: Վերցրո՛ւ Իմ Սիրտը, սփոփիր Այն՝ սիրելով Ինձ: Ես՝ Հիսուս, համբուրում եմ քո ճակատը:

Հունիսի 1, 1991

Աղջի՛կս, թույլ տուր Ինձ քեզ քարոզել: Այդ Ես եմ, որ քեզ տվել եմ Գիտությունը: Աղոթի՛ր, որ երկրի վրա Իմ Թագավորությունը դառնա այնպիսին, ինչպիսին Երկնքում է:

Հունիսի 2, 1991

(Այստեղ Հիսուս վերծանում է Հայտ. 21, Հայտ. 22-ի մի մասը և Դան. 11:31-39):

Տե՛ր իմ:

Ես եմ: Խաղաղություն քեզ:

Շուտով, արդեն շատ շուտով, արարչությո՛ւն, Ես պիտի մերկացնեմ ձեր հին վարքագիծն ու ձեր հին էությունը՝ օժտելու ձեզ Իմ Աստվածայնությամբ[1] և հիշեցնելու ձեզ Ճշմարիտ Գիտության մասին: Ուստի, Իմ սիրելիներ, լսեք Իմ Սուրբ Հոգուն: Թույլ տվեք ձեզ բոլորիդ նախապատրաստել այնպես, որ դուք պատրաստ լինեք ստանալու Իմ Թագավորությունը: Ես՝ Տերը, հրավիրում եմ ամեն մեկին, որ կիսվեն Ինձ հետ և տեսնեն Իմ Փառքը:

Իմ Սիրտը տանջվում է ձեր սերնդի հանդեպ ունեցած սիրուց... սերո՛ւնդ: Վա՛յ նրանց, որ երբ Իմ Օրը գա, տակավին իրենց մեղքը կկրեն ոլորված իրենց մեջ, ինչպես կրում են երեխային[2]: Աղոթի՛ր, որ յուրաքանչյուր ոք պատրաստ լինի, երբ այդ օրը գա: Ցավիր քո եղբայրների համար, ովքեր դեռևս ապրում են խավարի մեջ և մի կողմ են նետել Իմ Փառքը՝ հանուն մի անարժեք ու կեղծ փառքի, որի մասին խոսում է Դանիել մարգարեն[3]:

Ես պիտի խոսեմ ձեզ հետ պարզ բառերով՝ հաշվի առնելով ձեր հոգու վիճակը և ձեր Գիտության պակասը: Ես չեմ գալիս Իմ Սուրբ Հոգով բռնի ուժ գործադրելու ձեզ վրա՝ խախտելով ձեր ազատությունը, ոչ էլ գալիս եմ ձեզ դատապարտելու: Ես գալիս եմ ձեզ մոտ Ողորմությունից դրդված՝ առատորեն ձեզ տալու Իմ Կամքի լիակատար Գիտությունը: Իմ Կատարյալ Իմաստության միջոցով, Ես գալիս եմ ավելացնելու ձեր մեջ այն Գիտությունը, որը Ես Ինքս եմ տվել ձեզ: Ես չեմ գալիս նոր բաներ ավելացնելու այն բանի վրա, որն արդեն տրվել է ձեզ, այլ գալիս եմ Իմ Թագավորությունը զետեղելու ձեր սրտերի կենտրոնում:

Ամրոցնե՛ր[4]: Մի՞թե դեռևս չեք հասկացել: Մի՞թե դեռևս չեք հասկացել, որ Ես՝ Տերը, ապրում եմ ձեր մեջ: Մի՞թե չեք հասկացել, որ դուք Իմ սրբարաններն եք: Երբ Ես խոսում եմ ձեզ հետ երկնային գործերից, դուք պատրա՞ստ եք դրանք ընդունելու:

Լսե՛ք: Աստվածաշունչն ասում է. «Քո տան նկատմամբ Իմ նախանձախնդրությունը Ինձ պիտի կլանի»: Արդարև, այսօր Իմ նախանձախնդրությունը նորից հասել է իր գագաթնակետին, և վերևից Կրակ պիտի թափվի ներքև և պիտի հափշտակի Իմ սրբարանները[5]: Ես

[1] Ակնարկում է՝ Նոր Երկինքը և Նոր Երկիրը: Հայտ. 21:1
[2] Ակնարկում է՝ Մատթ. 24:19
[3] Ուղղված է անհավատներին, ովքեր այլևս չեն հավատում Մշտնջենական Զոհաբերությանը՝ Սուրբ Հաղորդությանը, Հարությանը:
[4] Մենք Աստծո տունն ենք, Աստծո համար մի տաճար: Աստված մեզ կանչում է, անվանելով մեզ «Ամրոցներ»: Տես՝ Դան. 11:31-39
[5] Մեզ:

պիտի վերափոխեմ ձեզ, Ամրոցնե՛ր[1], և հասցնեմ Շնորհի մի վիճակի, որի մեջ դուք այլևս չեք վախենա Իմ Փառքը ցանկանալուց, ոչ էլ Իմ Աստվածայնությունը ընդունելուց[2]:

Կողոպտիչը[3] ծխի նման ներթափանցել է ձեր մեջ, որ Իմ Սուրբ Հոգու սրբարանն եք, Իմ Աստվածայնության սրբարանի ամրոցը: Սատանայի ծուխը ծխնիներից ու անցքերից թափանցել է ներս՝ հափշտակելով ձեզ քնի մեջ, քանի որ դուք Ինձ չեք ճանաչել Իմ Աստվածայնության մեջ, այլ գերադասել եք հետևել ձեր սեփական անտրամաբանական գաղափարներին: Ես ձեզ ասում եմ հետևյալը. «Ես ձեր խավարը պիտի լցնեմ Իմ Լույսով, քանզի Ես, սերո՛նդ, մտադիր եմ պսակել ձեզ Իմ Սուրբ Հոգու հետ»[4]:

Ասված է, որ Ապստամբը ձեզ բռնությամբ պիտի կերակրի մի օր մի փոքր Բանապաշտությամբ (ռացիոնալիզմով), հաջորդ օրը՝ մի փոքր Բնապաշտությամբ, որպեսզի ոչնչացնի ու հանգցնի այն փոքր կրակը, որ մնացել է ձեր մեջ, որ իմ տաճարն եք: Զավթիչը[5] հափշտակել է Իմ Ամրոցներից շատերը՝[6] հարկադրաբար հաստատելով[7] ձեր մեջ իր ավերածության պղծությունը, և վերացնելով ձեր միջից[8] Իմ Մշտնջենական Զոհաբերությունը[9], որպեսզի նրա տեղում կանգնեցնի մի անարժեք նմանակում[10], մահկանացու մարդու մի պատկեր, որը պղծություն է Իմ Սրբության մեջ[11]:

Դուք Իմ Սուրբ Քաղաքն եք[12]:

Եվ դո՛ւք, դուք, որ թույլ տվեցիք Իմ Սուրբ Հոգուն հոսել ձեր մեջ ինչպես մի Գետ[13], դուք Իմ Նոր Երուսաղեմն եք[14], Առաջին Պտուղները[15], նրանք, ովքեր համբերություն և հավատք ունեին[16]: Եվ ինչպես Իմ Բերանից դուրս եկող ցող, ինչպես անձրևի կաթիլներ խոտի վրա,

---

[1] Այսինքն՝ մեզ:

[2] Այստեղ Ասված նկատի ունի, որ Իր Շնորհով Նա կփոխի դարձի չեկածներին և անհավատներին, ովքեր մերժում են Սուրբ Հաղորդությունը և չեն ընդունում Քրիստոսի Իսկական Ներկայությունը Սուրբ Հաղորդության մեջ:

[3] սատանան:

[4] Հայտ. 21:2. Հայտ. 21:9-11

[5] սատանան:

[6] Այսինքն՝ մեզ: Ակնարկում է Դան. 11:31 - «Նրա ուժերը կգան և կպղծեն սրբարանի ամրոցը»:

[7] Աղանդները, ինչպիսիք են՝ Նոր Դարը և այլն... նյութապաշտությունը, բանապաշտությունը, որոնք տանում են դեպի անաստվածություն:

[8] Կարդա Դան. 11:31-39, Հայտ. 13:14-18, Հայտ. 21:1-27

[9] Երբ այդ մարդիկ մուտք են գործում աղանդների մեջ, կամ դառնում են անաստված, նրանք նույնպես դադարում են ստանալ Մշտնջենական Զոհաբերությունը, որը Սուրբ Հաղորդությունն է: Դան. 11:31

[10] Աղանդները, որոնք կապկում են Աստծո Խոսքը:

[11] Հիսուս լաց էր լինում:

[12] Հիսուսն այդ ասաց շատ վեհորեն: Հայտ. 21:2

[13] Կարդա Եզեկ. 47:1-12. Հայտ. 22:1-2

[14] Հայտ. 21:2

[15] Հայտ. 14:4

[16] Հայտ. 13:10

դուք Հույս պիտի ներշնչեք շատ ցամաքած սրտերում, որովհետև Իմ Սրտի ամբողջ ճառագայթող Փառքը պիտի արտացոլվի ձեր մեջ՝ դարձնելով ձեզ շողշողուն, ինչպես աղամանդի բյուրեղյա պայծառությամբ թանկարժեք մի գոհար[1]:

Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. ձեզանից շատերը, որոնք չեն ծնվել Հոգուց, Իմ Շնորհով վերևից պիտի ստանան Ճշմարտության Հոգին: Ճշմարտության Հոգին պիտի իջնի Երկնքից Իր ողջ լուսաշող Փառքով, և Իր Տունը պիտի ստեղծի ձեր մեջ: Իմ Սուրբ Հոգին պիտի պսակի ձեզ, որ դառնաք Իր հարսը՝[2] զարդարելով ձեզ Իր Սրբությամբ, և ձեր սրտերում հանկարծ տեսանելի պիտի դառնան Երկնային բաները, և Իմ Թագավորությունը, որը դեռևս անտեսանելի է սրտին, տեսանելի պիտի դառնա և բյուրեղի պես հստակ իր ամբողջ Փառքով: Իմ Հոգու սիրելիներ: Ամրոցներ: Օրհնյալ են նրանք, որ անմեղ կգտնվեն[3]:

[4] (Այս ձևով եմ Ես քեզ երկնային բաներ սովորեցնում: Դա առանց աշխատանքի չի լինի, զավա՛կս: Բայց վստահ եղիր, որ այն ամենը, ինչ ես ասելու եմ, պիտի գրվի և կարդացվի: Այդ Իմաստությունն է քեզ սովորեցնում, Իմ Վասուլա: Ես սիրում եմ քեզ, և Իմ Սերը քո հանդեպ հավիտենական է):

[5] Ես պիտի թույլ տամ, որ յուրաքանչյուր ոք հմայվի Իմ առաջին պտուղներով, և կամաց-կամաց հին աշխարհը կանցնի[6] ու կմաշվի ինչպես հագուստը[7]: Շատ շուտով արդեն, այն ամենը, որ ծածկված է եղել, պիտի բացվի, և այն ամենը, որ թաքցված է եղել, պիտի բացահայտվի հենց ձեր աչքերի առաջ:

Իմ Նոր Երուսաղեմներ: Դո՛ւք, որ Իմ Սիրո առաջին պտուղներն եք, դո՛ւք, որոնց Իմ Սուրբ Հոգին հրապուրեց Սիրո Իմ Նոր Երգով, դո՛ւք, որոնց հետ Ես պսակվեցի, գնացեք ազգերի մեջ և երգեք նրանց Սիրո Իմ Նոր Երգը[8]: Աշխատեք խաղաղության համար: Ցանեք այն սերմերը, որոնք Ես եմ տվել ձեզ: Եղեք այն ծառերի նման, որոնք աճում են Կյանքի Գետի ափերին[9]: Թող ձեր տերևները լինեն բուժիչ բալասան[10] թշվառների համար, և թող ձեր ճյուղերը պտուղ տան սրբության մեջ:

Եղե՛ք Ինձ համար փլատակներ վերականգնողները[11], Իմ ավերված սրբարանների վերաշինողները: Ովքեր ընկել են սատանայի անհավատ ցանցերի մեջ և սնվել բանապաշտությամբ ու բնապաշտությամբ, տվեք նրանց Իմ Կրծքից բխող Իմ բուժիչ Ջուրը՝ գետակը, որը հոսելով Իմ

[1] Հայտ. 21:11
[2] Հայտ. 21:2, Հայտ. 21:9
[3] Ակնարկում է. Մատթ. 24:19-20
[4] Հիսուսն այժմ խոսում է ինձ հետ
[5] Պատգամի շարունակությունն է
[6] Հայտ. 21:4
[7] Եբր. 1:11
[8] Հայտ. 14:3
[9] Հայտ. 22:1
[10] Հայտ. 22:2, Եզեկ. 47:12
[11] Ես. 58:12

Սրբարանից[1], կլցնի և կառողջացնի ձեզ: Ոչ մեկը չի կարող կասեցնել այս գետակը: Հոսանքը կշարունակի առատորեն դուրս բխել Իմ Սրտից: Այն պիտի հոսի ամենուրք, բաժանվելով մի քանի մասերի՝ մասնատվելով ու վերածվելով բոլոր ուղղություններով հոսող բազմաթիվ այլ գետակների: Եվ ուր էլ որ այս բուժիչ ջուրը հոսի, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ՝ հիվանդ, կաղ, կույր՝ պիտի բժշկվի: Նույնիսկ մեռածները նորից կյանքի պիտի դառնան: Ոչ ոք չի կարող կանգնեցնել Ինձ ձեզ մաքրագործելուց:

Ա՛հ, սիրելիներս: Ապստամբների միջից ես պիտի աճեցնեմ զևտացի քահանաներ, և ձեզանից նրանց, ովքեր անարգում են Ինձ, ես պիտի դարձնեմ մարգարիտներ, լույսի պայծառ քաղաքներ, որ մեծարեք ու պատվեք Ինձ: Եվ ես պիտի ապրեմ ձեր մեջ, որովհետև դուք զգեստավորված պիտի լինեք Իմ Սեփական Սրբությամբ: Ես՝ Տերը, կլինեմ ապրողների երկրում: Եվ նրանք, ովքեր խեղդում են Իմ Սուրբ Հոգուն և ամեն ինչ համարում են որպես հիմարություն, ես ասում եմ ձեզ. ես ունեմ բաներ, որոնք ձեր մտքի սահմաններից վեր են: Ես պիտի ցուցադրեմ Իմ Հոգու զորությունը և ձեր շուրթերը կբացվեն, և ձեր սրտերը կկանչեն Ինձ՝

Աբբա:

Սերը պիտի կատարելագործի ձեզ: Իմաստությունը պիտի սովորեցնի ձեզ ճանաչել Իմ Սուրբ Հոգին, և Ես ձեզ ևս պիտի միացնեմ սրբերին:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին, թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին: Եղեք մեկ Իմ Սուրբ Անվան ներքո:

ΙΧΘΥΣ

Եվ դու, որ Իմ ընտրյալ գործիքն ես, որպեսզի Իմ Սերը տանես հեթանոսներին ու ըմբոստներին, շարունակիր քո ճանապարհը Ինձ հետ: Թույլ տուր Ինձ քեզ կանչել, երբ որ ցանկանամ:

Ես Եմ-ը քեզ հետ է և սիրում է քեզ: Ե՛կ:

Հունիսի 6, 1991

Տե՛ր, երբ իմ հոգին սառում է
և ես ընկնում եմ թմրության մեջ,
և երբ ես տրամադրված չեմ լինում
Քեզ հետ երկխոսության մեջ մտնելու
և Քեզ հետ հանդիպելու
այս հատուկ ձևով,
մի՞թե ես տերևի նման
դանդաղորեն թորշոմում եմ
Մո Աչքերի առաջ:

[1] Քրիստոսի Մարմինը (Սիրտը) Եզեկ. 47:12

Ես սպասում էի քեզ... Ես խոսում էի քեզ հետ, հոգի՛, բայց ինչ որ Ես լսեցի քեզանից՝ լռություն էր... Քո ուշադրությունը Ինձ տրամադրիր, հոգի: Ես այնքան շատ բան ունեմ քեզ ասելու և արթնացնելու քո հետաքրքրությունը: Եթե թմրած ես զգում, կանչիր Ինձ: Ես կշնչեմ քեզ վրա, և սառույցը կհալվի:

Տե՛ր, լինում են պահեր, երբ Լույսը, որ Դու տվել ես ինձ, թվում է թե անհետանում է թանձր ծխի հետևում:

Զավա՛կս, քո ձայնը կարող է հասնել մինչև երկինք և հասնել մինչև Իմ Գահին: Ուրեմն <u>կանչիր Ինձ</u>, և, ինչպես ամպերի մեջ մի կայծակ, Ես կպատասխանեմ. «Մենք այստեղ ենք[1]: Մենք կլսենք քո խնդրանքը»:

Ուրեմն արի <u>հիմա</u> և փրկիր ինձ,
լցրու իմ ջահը յուղով,
շնչիր ինձ վրա,
որ վերակենդանացնես ինձ:
Տոգորիր ինձ
Քո անուշահոտ զմուռսով,
կատարյալ դարձրու ինձ
Քո Ներկայությամբ:
Ցույց տուր ինձ Քո բարությունը...

Մի՛ պահիր քո հարցը,
խոսիր զավակս[2]:

Այն, ինչ Դու անում ես ինձ համար
այնքան մեծ Սիրով, Նվիրվածությամբ
և Ողորմածությամբ,
մի՞թե Դու այդ չես անի
Քո զավակներից <u>ամեն մեկի</u> համար,
որոնք նույն բանի կարիքն ունեն,
ինչպես ես:

Օրհնյալ եղիր[3]: Ես՝ Աստված, պիտի գամ և փրկեմ ձեզանից յուրաքանչյուրին: Ես թույլ չեմ տա, որ Իմ Եկեղեցին դալկանա ու տկարանա[4]: Սերո՛ւնդ, Ես մտադիր եմ փրկել ձեզ... Բայց ոչ սպառնալիքով կամ աղետով, զայրույթով կամ մեղադրանքով: Ես մտադիր եմ փրկել ձեզ, սերո՛ւնդ, պարուրելով ձեզ Իմ Սիրով և Գթասրտությամբ, որպեսզի ծածկեմ ձեր մերկությունը: Ես շռայլորեն տարածում եմ Իմ Սուրբ Հոգին ձեզ վրա, որպեսզի ձեր հոգին՝ լցված Իմ Հոգով, կանչի Ինձ.

[1] Սուրբ Երրորդությունը:
[2] Հիսուս կարծես ցանկանում էր լսել իմ նախադասության մնացած մասը, որը ես գիտեի, որ Նա արդեն գիտեր:
[3] Հիսուս շատ ուրախ էր թվում:
[4] Եկեղեցին՝ այդ մենք ենք:

«Ա՛բբա»:

Այսօր Արյան արցունքները հեղեղում են Իմ Աչքերը՝ Իմ արարչության խլության պատճառով: Մի չափազանց համառ հոգի ներս է թափանցել Իմ Տիրապետության մեջ[1]: Նրանց հոգին թուլանում է իրենց մեջ: Ես նայում եմ նրան, որը մի ժամանակ Իմ Հավատարիմ Քաղաքն էր[2], ու տեսնում եմ, որ այն դարձել է անառակի բնակատեղի:

Տե՛ր: Մի՞թե Քո Թագավորությունը դեռ չի սկսվել:

Գրիր հետևյալը. «Երանելի են բոլոր նրանք, ովքեր կանչված են Գառան հարսանիքի ընթրիքին»[3]: Իմ Թագավորությունն արդեն սկսվել է շատ սրտերում: Ես այդ հոգիներին պահել եմ Ինձ հետ՝ նորացնելով նրանց[4]: Եվ Ես ասում եմ ձեզ. Ճշմարտության Իմ Հոգին կշարունակի երամի նման տարածվել Իմ բոլոր արարածների վրա և պաշարել Քաղաք Քաղաքի հետևից[5]: Եվ անառակությունը, անօրինությունն ու բոլոր պղծությունները, որ կգտնվեն նրանց մեջ, Ես արմատախիլ պիտի անեմ Իմ Սեփական Ձեռքով: Այն ամենը, որ ցանվել է Չարի կողմից, Ես արմատախիլ պիտի անեմ Իմ Կրակով, որը Ես կթափեմ Երկնքից: Աղջի՛կս, առաջին երկինքն ու առաջին երկիրը պիտի անհետանան[6]: Եվ ձեզանից յուրաքանչյուրը պիտի նորոգվի Իմ Սուրբ Հոգու Սիրո միջոցով: Ես պիտի փոխեմ այս աշխարհի դեմքը:

Դու մեր նորոգումը ասելով նկատի ունես Քո Եկեղեցո՞ւ նորոգումը, որովհետև մե՞նք ենք Եկեղեցին, Նոր Երուսաղե՞մը:

Սանի՛կս, դու լավ ասացիր: Դուք բոլորդ Իմ Եկեղեցին եք, Իմ Սրբարանի Միջնաբերդը[7], Իմ Տիրապետությունը, Իմ Քաղաքը, Իմ Սեփականությունը, Իմ Երուսաղեմը: Իմ Սիրո Կրակով Ես պիտի նորացնեմ Քաղաք Քաղաքի հետևից[8]: Ես մտադիր եմ հավաքել ձեզ երկրի չորս անկյուններից և ապաքինել ձեզ: Ես մտադիր եմ Իմ Կրակով այրել ավերածության պղծությունը[9], որը գտնվում է Իմ Տաճարի ներսում[10]: Ավերածության պղծությունը՝ Ըմբոստության ոգին է, որն իրեն Ինձ հավասար է համարում: Դա Չարի հոգին է, որ ինքն իրեն դահաղրել է Իմ Սրբարանում[11] գրավելով Իմ Մշտնջենական Ձոհաբերության տեղը[12] ձեր սերունդը դարձնելով

[1] Աստված նկատի ունի մեր հոգին: Իր Տիրապետությունը, որտեղ Նա բնակվում է, գտնվում է մեր հոգու խորքում, որը պատկանում է Աստծուն:
[2] Աստված նկատի ունի մեզ: Նա մեզ անվանում է «Քաղաք»:
[3] Հայտ. 19:9
[4] Ակնարկում է Հայտ. 21:5: «Ահավասիկ, ամեն բան նոր եմ դարձնում»:
[5] Աստված նկատի ունի՝ հոգի հոգու ետևից:
[6] Հայտ. 21:1
[7] Դան. 11:31
[8] Մեզ:
[9] Դան. 11:31, Դան 12:11, Մատթ. 24:15
[10] Տաճարը՝ մենք ենք:
[11] Սրբարանը՝ մենք ենք:
[12] Խուրբ Հաղորդությունը:

Անաստված: Բանապաշտության և Բնապաշտության ոգին է, որ ձեզանից շատերին տարել է դեպի անաստվածություն: Սա այն ոգին է, որը ձեզ ստիպում է հավատալ, որ դուք ինքնաբավ եք ու անկախ, և որ դուք կարող եք հասնել <u>ամեն ինչի</u>՝ միայն ձեր սեփական ջանքերի և ձեր սեփական ուժի միջոցով: Այս սարսափելի պղծությունը ձեզ դարձրեց անջուր ու չորացած մի երկիր, մի անապատ:

Իմ Մշանջենական Զոհաբերությունը դուք ոչնչացրել, վերացրել եք ձեր միջից, որովհետև դուք կորցրել եք ձեր հավատը, սերունդ: Ձեզանից քանի՞սն են ծարավում Ինձ համար: Շատ քչերն են գալիս Ինձ ըմպելու, թեև, դուք Ինձ կարող եք ըմպել անվճար: <u>Ո՞վ</u> է քաղցած Ինձ համար: Դուք Ինձ կարող եք ձրի ստանալ, առանց որևէ վճարի: Սակայն, գրեթե ոչ ոք քաղցած չէ, որ Ինձ ճաշակի: Չարը խեղաթյուրել է ձեր հասկացությունը՝ հմայելով ձեր հոգուն, որ կլանեք այն ամենը, որ Ես չեմ: Իմ Լույսը կլանելու փոխարեն, սատանան ստիպել է ձեզ կլանել իր խավարը: Պայծառ և գեղեցիկ դառնալու փոխարեն, դուք բթացաք, դալկացաք, և ինչպես մի չորացած ճյուղ, դուք հիմա պատրաստ եք կտրվելու և նետվելու կրակի մեջ, որպեսզի այրվեք:

Մի՛ վախեցեք Ինձանից: <u>Ես Կյանքի Գետն եմ</u>: Ես Երկինք տանող ճանապարհն եմ, Ես միակ Ճշմարտությունն եմ, որը ձեզ առաջնորդում է, որպեսզի կիսեք Իմ Փառքը Հավիտենականության համար:

Աստծո Տաճար: Աղջի՛կս, քայլիր Ինձ հետ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 12, 1991

Տե՛ր, Դու հետապնդում ես
ինձ հալածողներին և բռնում նրանց,
ու նրանք չեն կարողանում
ինձ դիպչել: Օտարները[1] փորձում են
արժանանալ իմ բարեհաճությանը,
սակայն... երբ ես գնում եմ
իմ յուրայինների մոտ[2],
ինչպես մի մուրացկան կարիքի մեջ՝
նրանց Քո Հրաշքների մասին
պատմելու համար, թվում է,
թե նրանց ականջները փակված են,
որպեսզի նրանք չլսեն
Քո Սիրո Նոր Երգը:
Մի՞թե ես պետք է մենակ
ճմլեմ հնձանը և իմ ժողովրդից
ոչ մեկն ինձ հետ չի լինելու:

Մի՞թե Իմ Սեփական Բազուկը բավական չէ քեզ համար: Մի՞թե Իմ

[1] Հռոմի կաթոլիկները:
[2] Ուղղափառների մոտ:

Սեփական աչքերը, որ նայում են քեզ օր ու գիշեր, բավական չեն: Աղջի՛կս, շուտով ես նրանց ցույց պիտի տամ Իմ Սուրբ Դեմքը: Ես պիտի ողողեմ քո երկիրը[1] Իմ Հոգով, և Գետեր դուրս պիտի հորդեն ու թափվեն: Ես չեմ թաքցնի Իմ Դեմքը նրանցից... Հուսա՛, Իմ Վասուլա, հուսա՛... Քո Թագավորը ոչ մեկին չի լքի:

Նա պիտի գա, բուժիչ յուղ բռնած իր ձեռքում և պիտի բժշկի ձեզ մեկ առ մեկ: Ուրախացի՛ր, աղջիկս, ուրախացիր: Ես պիտի բացեմ նրանց ականջները Իմ Փառքի համար:

Ե՛կ: Երկնքի թագավորության գաղտնիքները հայտնվել են քեզ: Աղոթի՛ր, որ դրանք բացվեն նաև նրանց համար:

ΙΧΘΥΣ

Հունիսի 13, 1991

(Մեր Սուրբ Մոր Պատգամը):

Վասո՞ւլա: Կգրե՞ս Իմ Խոսքերը, որպեսզի մեղմացնես այս անապատի ծարավը:

Այո՛, Սուրբ Մայր, Աստվածամայր:

Գրի՛ր, աղջիկս.

Իմ Հոգու օրհնյալներ, Իմ Սրտի սիրելիներ: Այսօր Ես ձեզանից յուրաքանչյուրին խնդրում եմ դիմել ձեր սրտին, որ քայլեք Աստծո հետ: Աստված ձեր Ուժն է, ձեր Կյանքը և ձեր Երջանկությունը: Ոչ մեկը չի կարող ապրել առանց Աստծո:

Հիսուս Ճշմարիտ Որթատունկն է, իսկ դուք՝ ճյուղերը: Որթից կտրված ճյուղը անմիջապես չորանում և թոշնում է: Եվ այդ ժամանակ այն պիտանի չէ ոչ մի բանի, այլ միայն կրակի մեջ ձգվելու: Քայլեք Լույսի հետ և մի՛ վախեցեք ամբողջովին Նրան հանձնվելուց: Ինքներդ ձեզ Աստծուն հանձնեք, և ձեր սրտերը կլցվեն Ուրախությամբ:

Հասկացե՛ք, սիրելի զավակներս, որ այս օրերին Աստված գալիս է ձեզ փրկելու ու արձակելու սատանայի ցանցերից և ձեզ ետ բերելու դեպի Իր Սուրբ Սիրտը: Մեր Երկու Սրտերը միացած են՝ չնայած աշխարհը վիճում և մերժում է այս Ճշմարտությունը, որովհետև բոլորը չեն, որ ընդունել են այն, բայց դրա փոխարեն օգտագործում են այս Ճշմարտությունը՝ մեկը մյուսի դեմ կռվելու համար:

Մեր Երկու Սրտերը միացած են և երկուսն էլ ծարավի են ձեր փրկության համար, զավակներս: Եկե՛ք և Մեզ լսեք այս անգամ: Խաղաղություն հաստատեք Աստծո հետ, հաշտվե՛ք:

Բարձրացրեք ձեր դեմքը դեպի Աստված և խնդրեք նրան, որ ձեր սիրտը լցնի Իր Լույսով: Սովորեք սիրել Աստծուն, ինչպես ձեր Հորը, որը սիրում է ձեզ ավելի, քան որևէ մեկը կարող է պատկերացնել, և որը Իր Սրտից

[1] Հունաստանը:

անդադար ձեզ է ուղարկում Իր Խաղաղությունը, ինչպես հոսող մի Գետ, որ հագեցնի ձեր հոգու անապատը:

Թող ձեր կյանքը միայն բառերով չլինի: Գործադրե՛ք և ապրեք յուրաքանչյուր բառով, որ ձեզ տրված է Ավետարանում: Անտարբեր մի՛ եղեք գրված օրենքի հանդեպ, կատարե՛ք այն: Մի՛ վախեցեք, եթե մեկը ծաղրում է ձեզ կամ մերժում է հավատալ այն Հրաշքներին, որ Աստված այսօր տալիս է ձեզ, որովհետև Ես ասում եմ ձեզ. եթե որևէ մեկը լռեցնի ձեզ, ապա քարերը ավելի բարձրաձայն կաղաղակեն[1]: Միայն Աստված կարող է Խաղաղություն և Երջանկություն տալ ձեզ: Ես անդադար աղոթում եմ ձեր համար, որպեսզի այս սերնդի սիրտը, որը կարծրացած քարի է նման, դառնա Աստծուն և նմանվի մի ջրված այգու, անբնակ անապատից Սուրբ Քաղաքի՝ լցված Աստծո Լույսով: Մի Լույսով, որը գալիս է Աստծուց, այլ ոչ թե արևից կամ լուսնից[2]: Երբ հողմը դադարի, ծաղիկներ[3] կբացվեն՝ փոխելով այս երկրի մակերևույթը:

Ես՝ ձեր Սուրբ Մայրը, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին:

Հունիսի 17, 1991

(Պատգամ Պիստոյայի համար, Իտալիայում (Ֆլորենցիայի մոտ)):

Խաղաղություն ձեզ: Ես եկել հասել եմ ձեր մոտ, որ ձեզ ասեմ.

Ես այստեղ եմ:

Սիրելինե՛ր, Իմ Սուրբ Սիրտը Կրակով այրվում է: Սա է պատճառը, որ Ես իջել եմ Իմ Գահից, որ գամ հանեմ ձեզ մոտ և առաջարկեմ ձեզ Իմ Խաղաղությունը և Իմ Սերը: Ողորմությունը ձեր դռների մոտ է: Եթե քո ծնվելու ժամանակ կար մեկը, որ պատրաստվում էր քեզ մեծ սիրով ընդունելու իր ծնկներին և երկու ձեռքերով քեզ հոգածությամբ գրկելու, Ես ասում եմ քեզ. Ես դրանից ավելին եմ արել: Ես Իմ Կյանքն եմ զոհաբերել քեզ համար:

Ես Սիրո Աղբյուրն եմ: Եկե՛ք, հրաժարվեք այն ամենից, որ արատավորում է ձեր հոգին և հետևեք Ինձ: Մի՛ ասեք. «Ես ապրում եմ անբիծ կյանքով»: Դուք գեղեցկությունից և վեհությունից զուրկ եք այնքան ժամանակ, քանի դեռ ձեր հոգին արատավորված է և անկատար: Եկե՛ք, Ես կարող եմ կատարյալ դարձնել ձեր հոգին, քանզի Ես ձրի և առանց որևէ վճարի տալիս եմ ձեզ Իմ Արյունը և Իմ Մարմինը: Ինքներդ ձեզ հանձնեք Ինձ: Ես եմ Կյանքը:

Այսօր Ես հանկարծակի իջնում եմ ձեզ վրա: Ես նայում եմ Իմ շուրջը, և Իմ Սիրտը լցվում է վշտով: Ես մի ժամանակ մշակել էի այս երկիրը և

[1] Արյան Արցունքներ հեղող Հիսուսի և Մարիամի կերպարները Աստվածային Դրսևորումներ են և հայտնվում են այն ժամանակ, երբ մարդիկ փորձում են լռեցնել Սուրբ Հոգուն: (Ղուկ. 19:40):

[2] Հայտ. 21:23

[3] Ծաղիկները՝ առաջին պտուղներն են, նոր դարձի եկածները: (Ակնարկում է Հայտ. 21:1-3):

դարձրել այն մի Պարտեզ՝ իր ծաղիկներից եկող նրբագույն բույրերով: Իմ հետևից ես թողեցի «ղևտացի քահանաների», որ պահպանեն այն: Ես վստահեցի նրանց Իմ Շահերը, բայց Իմ պարտեզը ես գտնում եմ բարձիթողի, Իմ ծաղկամթերը՝ չորացած: Ես շրջապատված եմ մի անծայրածիր ավերված անապատով: Նույնիսկ չնագայլերն են դժվարանում այդտեղ գոյատևել: Կարիճներն ու օձերը այն բնակիչներն են, որոնք բազմանում են նրա դավաճան չորության մեջ, և եթե Իմ գառներից միայն մի մնացորդ է կենդանի, դա այն պատճառով է, որ Ես անդադար ձեզ եմ ուղարկում Իմ Հրեշտակներին, որպեսզի խլեն Իմ գառներին օձի թունավոր ժանիքից և կարիճի խայթոցից: Ինձ ասել էին, որ Իմ Վերադարձին Ես Իմ ողջ հոտը ապահով և անվնաս կգտնեմ, իսկ Իմ Այգին՝ պահպանված ու ջրված: Բայց հազիվ էի Ես հեռացել, հազիվ էի հասցրել թիկունքս շրջել, երբ նրանք Իմ Այգին դարձրին մողեսների ու սարդերի բույն...

Օ՜, եկ: Դու, որ դեռ թափառում ես այս անապատում, ասելով. «Ես փնտրել եմ իմ Ազատարարին, բայց չեմ գտել Նրան»: Գտի՛ր Ինձ, սիրելիս, Սրտի մաքրության մեջ՝ սիրելով Ինձ առանց սեփական շահի: Գտի՛ր Ինձ սրբության մեջ, այն նվիրվածության մեջ, որ Ես տենչում եմ քեզանից: Գտի՛ր Ինձ՝ հետևելով Իմ Պատվիրաններին: Գտի՛ր Ինձ՝ չարին բարությամբ հատուցելով: Գտի՛ր Ինձ սրտի պարզության մեջ: Այլևս մեղք մի՛ գործիր: Դադարիր չարիք գործելուց: Սովորիր բարիք գործել: Արդարություն փնտրիր: Օգնիր ճնշվածներին: Թույլ տուր, որ այս անապատը և չոր հողը ցնծան ու խայտան: Թո՛ւյլ տուր, որ ձեր գաղջությունը բոցավառվի մի պայծառ կրակով: Թո՛ղ քո անտարբերությունը և փոխարինիր այն խանդավառությամբ: Արա այս ամենը, որպեսզի կարողանաս ասել. «Ես փնտրել եմ իմ Ազատարարին, և Ես գտել եմ Նրան: Նա ինձ մոտ է եղել ամբողջ ժամանակ, բայց իմ խավարի մեջ, ես չեմ կարողացել տեսնել Նրան: Օ՜, Փառավորվի Աստված: Թող օրհնյալ լինի մեր Տերը: Ինչպե՞ս կարող էի ես այսքան կույր լինել»:

Եվ այդ ժամանակ, Ես պիտի հիշեցնեմ քեզ, որ պահես ու գանձի նման պահպանես Իմ Սկզբունքները, <u>որպեսզի ապրես:</u> Ես պիտի գամ Իմ Սուրբ Հոգով, ինչպես մի կայծակ, ինչպես մի փայլատակում ամպերի մեջ, որ արցունքները սրբեմ ամեն մի այտից: Ուստի, արիացե՛ք, Իմ սիրելիներ: Սերը պիտի վերադառնա որպես սեր:

Ես՝ Սուրբ Սիրտը, օրհնում եմ ձեզ բոլորիդ, թողնելով Սիրո Իմ Հոգոցը ձեր ճակատին: Եղե՛ք մեկ Իմ Սուրբ Անվան ներքո:

ΙΧΘΥΣ

Հունիսի 18, 1991

Սուրբ Սիրտ,
Դու իմ կյանքի Թեման ես:
Դու իմ կողքին ես
և միշտ պատրաստ օգնելու ինձ:
Հիմա Դու ինձ դարձրել ես
Քո Սեփականությունը

և Քո Սեփական Բազուկները
իմ պատվարն են: Դրանից ավելի ի՛նչ
կարող եմ ես խնդրել:
Դու մի ակնթարթում
քշել տարել ես ինձ մեղադրողներին:
Եվ այն կրակը,
որ շրջապատում էր ինձ, այլևս չկա:

Տե՛ր,
Դու հիմա նորից Քո Սրբազան Սրտի
մի տեսիլք ցույց տվիր ինձ:
Ես հազիվ կարողացա հասկանալ,
որ դա մի սիրտ էր:
Քո Սիրտը նման էր մի մեծ վերքի...
Հազիվ էի ես իմ գլուխը բարձրացրել
ինձ ճնշողներից, երբ տեսա,
որ մեկ այլ կրակ է վառվել,
և մեկ այլ վերք՝ Քո Սրտում,
մեկ այլ մեծ փուշ՝ Քո Գլխում,
իմ Հիսուս... Այս անգամ ես
պայմանավորվելու եմ Քեզ հետ,
եթե Դու ինձ թույլ տաս:
Ահա, թե ես ինչ եմ առաջարկում:
Հանիր Քեզանից այս մեծ փուշը
և խրիր իմ մեջ:
Ես կպահեմ այն, մինչև Հայրը
այդ քահանային տա այն Շնորհը
և Լույսը, որի կարիքը նա ունի,
որպեսզի կարողանա հասկանալ,
որ սխալվում է,
և որ ես պատկանում եմ Քեզ:

Վասո՛ւլա, թող այդպես լինի: Թող լինի այնպես, ինչպես խնդրում ես: Ես ընդունում եմ քո զոհաբերությունը: Զավա՛կս, օրհնյալ եղիր: Ես Իմ Արցունքները միայնակ կուլ չեմ տալիս: Քո Սուրբ Մայրը նույնպես լաց է լինում: Եկ մեզ մոտ այս ձևով՝ կիսվելով մեզ հետ: Այս փոթորիկը նույնպես կհանդարտվի: Հայրը տեսնում է ամեն ինչ, զավա՛կս:

Ես շուռ պիտի տամ ողջ հովիտներ ու արմատից պոկեմ լեռները, եթե դրանք էլ սպառնալիք դառնան Իմ Սիրո Քերթվածներին՝ Սիրո Քերթվածներ, որոնք Կանչ են ձեր դարձի համար: Իմ Սիրո Պատգամները պիտի շարունակվեն: Սատանայի երախակալումը թուլանում է հիմա, և Ես շուտով դնչկալ պիտի դնեմ նրա երախին: Սերը ձեր մոտ է ամբողջ ժամանակ, և Նա երբեմն-երբեմն ուշադրությամբ նայում է Իր սենյակի մեջ[1], այն սենյակի, որտեղ Նա հանգստանում է՝ ստուգելու համար, որ ամեն ինչ կարգին է:

Ես Յահվեն եմ, ծաղի՛կ, Սուրբ Բիդը քո կողքին է:

[1] Սենյակը իմ սիրտն է, Աստծո հանգստավայրը:

Ո՞վ է նա:

Յահվեն սիրում է քեզ:

Հունիսի 22, 1991

Ա՛հ, ինչպես են Ողորմությունն
ու Սերը անվերջ
պարուրում և օրհնում ինձ:
Իմաստությունն իմ
անձնական Ուսուցիչն է,
և Նա ուսուցանում է
ինձ և մյուսներին:
Քո Սուրբ Ներկայությունը,
որ մշտապես իմ կողքին է,
վստահեցնում է ինձ
և հույս է տալիս ու խիզախություն:
Ա՛հ, Յա՛հվե, Հայր իմ,
ես կարոտում եմ Քեզ,
որքան եմ կարոտում Քեզ:
Յա՛հվե, իմ Աբբա:
Դու հրապուրել ես ինձ
ու հասել մինչև իմ ողն ու ծուծը:

Ես ուսուցանեցի քեզ Իմ Գիտությունը: Սովորիր Իմ Բերանից, ձրիաբար: Դու մի օր քո հոգին կհանձնես Իմ Ձեռքերին:

Տե՛ր, ինչպես որ Դու հմայել ես ինձ,
հմայիր նաև աշխարհի
մյուս մարդկանց Քո Շնորհով.
օրինակ՝ հեթանոսներին,
անաստվածներին,
և հատկապես նրանց, ովքեր իրենց
իմաստության պատճառով
իրենց աստվածներ են ներկայացնում
և ովքեր հավակնում են,
որ քեզ հավասար են:

Ես պիտի օգնության գամ նրանց: Հիմա նրանք անօգնական ընկած են սատանայի ցանցի մեջ բռնված: Բայց դու պետք է աղոթես քո եղբայրերի համար, որպեսզի Ես նրանց նույնպես ցույց տամ Իմ Սուրբ Դեմքը:

Հունիսի 27, 1991

Ե՛կ, աշխատենք: Հավատա՛ Ինձ:

- Ասված է. որ Իմ Մեծ Վերադարձից առաջ ձեզ նշաններ կտրվեն: Դուք պիտի դիտեք այդ նշանները, որոնք Իմ Փառքի Օրվա նախաբանն են: Աստվածաշունչն ուշադրությամբ կարդալով, կարելի է հայտնաբերել այս բոլոր ճշմարտությունները: Այդ ինչպե՞ս է, որ ձեր միտքը բաց չէ հասկանալու համար Աստվածաշունչը: Հիմա եկեք ու հասկացեք: Լսիր Ինձ հիմա, զավա՛կս: Ձեր սերունդը բարգավաճում է իր ըմբոստության մեջ: Ինչպե՞ս են նրանք ուրացել: Իմ կողմից, Ես ավելացրի Իմ կանչերը, Իմ զգուշացումները: Ես նշան արեցի ու կանչեցի ձեզ օր օրի հետևից: Ես ավելացրեցի Իմ Օրհնությունները, բայց պատասխան չստացա: Ես ասացի. «Արդյո՞ք Ես որևէ մեկին կգտնեմ, երբ որ գամ»: Ինչո՞ւ ոչ ոք չպատասխանեց, երբ Ես կանչեցի: Բայց Իմ աղաչանքներին պատասխանելու փոխարեն, դուք ձեր թիկունքը դարձրիք Ինձ: «Նա ի՞նչ է կարծում, ո՞ւմ համար է Իր Պատգամը». սա այն էր, ինչ Ես լսեցի: Ինչպե՞ս են նրանք ըմբոստանում, և ինչպես են հայհոյում Իմ Աստվածայնությունը: Բայց ոչ մի մարդ չի կարող հեռացնել Նշանակված ժամանակը, ոչ էլ՝ ժամը: Դրանք վրա պիտի հասնեն այնքան հանկարծակի, որքան որոտի ճայթյունը:

Այսօր, աղջի՛կս, <u>Հակաքրիստոսը Ապստամբության Ոգին է</u>՝ տրված սատանայի կողմից, ինչպես Աստվածաշունչն է նրան բնորոշում՝ <u>Ապստամբը</u> [1], որն ավերածության պղծությունն է հաստատված Իմ Տաճարում, որի մասին Դանիել մարգարեն ասել է, թե ձեզանից յուրաքանչյուրն Իմ Տաճարն է... Նրան, ում Աստվածաշունչն անվանում է Ապստամբ, հենց այն ավերածության պղծությունն է, որը վերջին ժամանակներին նախորդող երկու նշաններց մեկն է: Մյուս նշանը <u>ձեր մեծ ուրացությունն է</u>:

Ձեր դարաշրջանը, զավա՛կս, թերացել է Ինձ տալուց այն պաշտամունքը, որը ոչ միայն ձեր պարտքն է Իմ հանդեպ, այլև՝ ձեր Կյանքը: Սատանայի ծրագիրն էր նվաճել այս դարաշրջանը և ձեզ հավատացնել, որ դուք կարող եք ապրել առանց Ինձ: Ուստի, <u>Ապստամբության Ոգին</u>, որը Հակաքրիստոսն է, մտավ Իմ Բնակարանը [2]: Դա Անօրինության ոգին է, ավելին չասելու համար, և դա այսօր իրեն հաստատել է Իմ Սրբարանի ճիշտ կենտրոնում [3]: Հենց այս ապստամբության ոգին է, որ ում մեջ որ գտնվում է, նրանց ստիպում է բղավել՝ «Ես աստված եմ» [4]: Մարդիկ ուրացել են և նրանց ուրացությամբ բացվել է սատանայի ճանապարհը, որպեսզի մուտք գործի նրանց մեջ ու բոլորին առաջնորդի դեպի բռնի մահ:

<u>Ապստամբության այս ոգին</u>, որը քանդում է մարդու հոգին, միտքը և սիրտը, այն <u>Թշնամին</u> է, որի մասին խոսել է Պողոս առաքյալը: Այդ ոգին է, որ հայտարարում է, թե ինքը շատ ավելի մեծ է, քան այն ամենը, որ մարդիկ կոչում են «աստված», շատ ավելի մեծ, քան այն ամենը, որ պաշտվել է [5] նա, ով ասում է. «Ես կմրցեմ Իշխանության հետ» [6]: Ուստի, այս մարդիկ իրենք իրենց գահադրում են Իմ տեղում [7] և հայտարարում ու

---

[1] Կարդա Բ Թես. 2:1-12
[2] Մեր հոգիները:
[3] Մեր սրտերի խորքում:
[4] Եզեկ. 28:2. Ես. 14:14. Բ Թես. 2:4
[5] Բ Թես. 2:4
[6] Ակնարկում է՝ Ես. 14:14,«Ես կմրցեմ Ամենաբարձրյալի հետ»:
[7] Ակնարկում է՝ Եզեկ. 28:2, «Ես նստած եմ Աստծո Գահին»:

տարածում են իրենց սեփական օրենքը, որպեսզի պատերազմեն Իմ Օրենքի դեմ և այն ամենի դեմ, որ գալիս է Իմ Հոգուց:

Օր օրի հետևից, ժամ ժամի հետևից նրանք շարունակում են Ինձ վշտացնել և վիրավորել Իմ Սուրբ Հոգուն: Օ՜, հող և մոխիր, դո՛ւք, որ հեռացրիք ձեզանից Իմ Ամենօրյա Զոհաբերությունը, ուզում եք մեռնե՞լ: Ինչո՞ւ եք մրցում Ինձ հետ: Ինչու՞ եք մերժում Շնորհի Իմ Սուրբ Հոգուն: Նա, ով ուրանում է Ինձ, Հակաքրիստոսն է, քանի որ նա ուրանում է Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, որոնք մեկ են և միևնույնը, քանզի Մենք Երեքս էլ վկայում ենք միևնույնը[1]:

Այսօր ձեզանից շատերը մերժում են Իմ Սուրբ Հոգու Հեղումը: Այն շնորհները և պարգևները, որոնք Իմ Սուրբ Հոգին տալիս է ձեզ՝ ելնելով Իմ Անսահման Առատաձեռնությունից, մերժվում են ձեզանից շատերի կողմից, անտեսվում և ճնշվում: Այս ազգերը մերժում և ժխտում են Իմ Հոգու բոլոր պարգևները: Շատերը միայն պահում են կրոնի արտաքին տեսքը, բայց մերժում են Իմ Եկեղեցու ներքին ուժը, ներքին զորությունը, որը Իմ Սուրբ Հոգին է:

Նրանք ասում են. «Ես պահել եմ իմ հավատքը: Ինձ մնում է ստանալ միայն արդարության մրցանակը»: Ես ձեզ հարցնում եմ. Դուք արե՞լ եք այն ամենը, ինչ որ կարող էիք, որպեսզի Իմ առջև ներկայանաք: Ես փորձում եմ արթնացնել և ասել ձեզ, որ դուք նման եք չորացած մի գետի, և այն ամենը, ինչ ասում եք դատարկ է: Եվ մինչ մեղավորը դարձի է գալիս Իմ Սուրբ Հոգու միջոցով, հազիվ Իմ Տունը մտած, Իմ Սրտի Գանձերը հազիվ հայտնագործած, որոնք պահված են ձեզ բոլորիդ համար,դուք վրա եք տալիս հողմի պես, որպեսզի նրան դայթակղեցնեք ու ետ դարձնեք դեպի անաստվածությունը: Մեկը, որ հազիվ է ձերբազատվում Իմ դեմ հակառակվելուց, դուք նրան դայթակղում եք, որ նորից ըմբոստանա Իմ դեմ:

Դատաստանի Օրը Ես ձեզ պիտի ասեմ. Դուք Ինձ չհավատացիք, այլ Ինձ ստախոս անվանեցիք, որովհետև դուք չվստահեցիք այն վկայությանը, որ Ես տվեցի Իմ Պաշտպանի մասին, Իմ Խոսքը Հիշեցնողի մասին, այո՛, Ճշմարտության Իմ Սուրբ Հոգու մասին, հենց նրա, որին դուք երբեք չդադարեցիք արհամարհելուց և հալածելուց, երբեք չդադարեցիք մերժելուց և լռեցնելուց: Փոխանակ միանալու սրբերին, որոնք օրհնություններով և ուրախության կանչերով հռչակում և գովերգում են Իմ Սուրբ Հոգուն, դուք անդադար հալածում և հետապնդում եք նրանց՝ կառչելով բարեպաշտության ձեր պատրանքից: Դուք զայրացնում եք Ինձ ձեր մշտական մերժումներով...

Ուրեմն, Ես ինչպե՞ս կարող եմ թույլ չտալ քարերին, որ հայտնի դարձնեն Իմ Վիշտը: Դուք արգելում եք Իմ առաջին պտուղներին, որ ողջունեն Իմ Սուրբ Հոգուն: Դրա համար Ես ձեզ ասում եմ. «Եթե նրանք լռեն, քարերը կաղաղակեն[2] Իմ վիշտը»[3]: Այն, ինչ Ես մի անգամ ասել եմ Երուսաղեմին, Ես ցավով հիմա ասում եմ ձեզ. «Եթե դուք, ձեր հերթին հասկանայիք միայն Խաղաղության Իմ Պատգամի Շքեղությունը... Բայց,

[1] Ա. Հովհ. 5:8
[2] Ղուկ. 19:39
[3] Դրանք Աստվածային դրսևորումներ են, որոնք արտահայտվում են Հիսուսի և Մարիամի արցունքներ հեղող պատկերների և արձանների միջոցով:

ավա՜ղ, այն թաքցված է ձեր աչքերից»: Եթե դուք, ձեր հերթին կարողանայիք միայն ըմբռնել Իմ Սուրբ Հոգու Շքեղությունը, որը ձեր բոլորին պարգևում է օրհնություն օրհնության հետևից... Բայց, ավա՜ղ, դուք ո՛չ տեսնում եք, ո՛չ էլ լսում Պաշտպանին՝ Սուրբ Հոգուն, ում Հայրն ուղարկում է Իմ Անունից, որ սովորեցնի ձեզ և հիշեցնի այն բոլոր ճշմարտությունների մասին, որոնք Ես տվել եմ ձեզ, քանզի այս աշխարհի իշխանն օգտագործում է ձեր ազատությունը ձեր իսկ անկման համար:

Տե՛ր, ցույց տուր
Քո Ողորմությունը նաև նրանց,
և ինչպես որ Դու
սովորեցրիր ինձ Քեզ լսել,
թող որ մյուսներն էլ լսեն:
Եվ ինչպես Դու ինձ
ցույց տվեցիր Քո Գեղեցկությունը՝
թողնելով ինձ շլացած,
նրանց նույնպես ցույց տուր
Քո Կատարելությունը:

Նրանք չեն լսում, նրանք լսում են միայն իրենց ձայնը: Նույնիսկ, երբ Իմ Արցունքները հոսում են նրանց առաջ, պատասխան չկա: Ես գնացել եմ բոլոր ուղղություններով, որ ճանապարհ գտնեմ նրանց խլությունը ճեղքելու և նրանց ասելու, որ գան դեպի Ինձ և իրենց ուժը հիմնեն Ինձ վրա, որպեսզի Ես՝ Իմ հերթին, առաջնորդեմ նրանց դեպի սրբություն և թույլ տամ նրանց ժառանգելու Իմ Լույսը:

Ես այն Սուրբն եմ, որին նրանք այդքան ստորաբար դավաճանում են, և Ես առաջինն եմ, որ կներեմ նրանց, եթե նրանք զղջան թեկուզ մի պահ... Բայց այնքան ժամանակ, որքան որ մնում են ինքնաբավության ու անկախության իրենց դիրքերում, նրանք <u>չեն</u> լսի Ինձ, ոչ էլ ի վիճակի կլինեն տեսնելու, թե ինչպես այսօր Ես լիովին ցույց եմ տալիս Իմ Սուրբ Դեմքն ամբողջ աշխարհին[1]: Ես՝ Տերը, պիտի շարունակեմ փայլել ձեզ վրա, արարչությո՛ւն, և Ես երկրի երեսին պիտի տարածեմ Իմ Լույսը: Արևը, որ մթագնեց, և լուսինը, որ կորցրեց իր պայծառությունը[2] ձեր դարաշրջանում՝ ձեր խավարի մեջ ձեզ ուրացության առաջնորդելով, այդ դժբախտությունները շուտով պիտի ավարտվեն:

Ես մտադիր եմ ձեր ճահիճները այգու վերածել[3], գիշերը՝ ցերեկվա, ձեր քաղաքները[4], որոնք հիմա միայն քարե կույտեր են՝ Լույսի քաղաքների: Ձեր քանդված խորանները[5] կվերակառուցվեն և ձեր տաճարների[6] հիմքերը Ես Իմ Սեփական Ձեռքով պիտի դնեմ[7]: <u>Ես պիտի նորոգեմ ձեզ բոլորիդ Իմ Սուրբ Հոգով</u>: Արի՛, Վասուլա, գառնուկս: Ամեն ինչ պիտի գրվի այնպես,

[1] Ակնարկում է՝ Հովել 2:27-30
[2] Ակնարկում է՝ Մատթ. 24:29
[3] Մեզ:
[4] Մեզ:
[5] Մենք:
[6] Մեր:
[7] Հայտ. 21:5

ինչպես Ես եմ ուզում, որ գրվի:
Սերը քո կողքին է:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 6, 1991

Տե՛ր, բժշկիր ինձ:

Եթե դու Ինձ ուշադիր լսես և առարկություններ չանես, մրցակիցներ ու կասկածներ չունենաս, եթե դաս և ընդունես, որ մեղավոր ես և չտատանվես զղջալ, Ես կբժշկեմ քեզ: Դու պատկանում ես Ինձ, և Ես տվել եմ քեզ Իմ Սիրտը: Դրա համար Ես ուզում եմ, որ դու խաչես այն ամենը, ինչ որ դու ես: Թող քո մարմնի վրա լինեն միայն այն խարանները, որոնք Ես ունեմ Ինձ վրա:

Եթե տեսնես ոտնահետքեր, որոնք Իմը չեն, մի՛ հետևիր դրանց: Իմ ոտնահետքերը ներկված են Արյամբ և զմուռս են բուրում: Եթե դու որևէ բան լսես չքեղ հագուստներով ինչ-որ մեկից, մոռացիր նրան ու նրա ասածը և ուշադրություն մի՛ դարձրու, թե նա ինչ է ասում: Ես՝ քո Փրկիչը, ծածկված եմ ցնցոտիներով[1] և քայլում եմ ոտաբոբիկ: Իմ թիկնոցը ներծծված է Արյամբ, և Իմ Սիրտը ծածկված է Կրակի բոցերով: Իմ Շուրթերը պապակած են Սիրո պակասից:

Տե՛ր, բժշկիր բոլորի՛ն, բոլորի՛ն:

Լցրու Իմ Սիրտն ուրախությամբ և աղոթիր բոլոր նրանց համար, որոնց սրտերը փակ են խոհեմության և Իմ Իմաստության հանդեպ:

Այդ պատճառով, Տե՛ր,
մեզ մոտեցրու Քեզ:
Մենք այնքան հոգնած ենք
աքսորի մեջ քայլելուց...

Իմ Բերանի Ցողը կթեթևացնի ձեր սիրտը: Ես ձեզ պիտի ազատեմ ձեր ցավերից: Իմ Աչքերը նայում են ցած՝ աշխարհին: Նրանք ուշադիր դիտում են ձեզանից յուրաքանչյուրին: Եթե Ես հիմա իջնեի, շատ քչերի ճակատներին կգտնեի Իմ Նշանը:

Ես Իմ Կյանքի գնով եմ բացել Երկինքը, որպեսզի այն նաև ձերը լինի: Ես հարցնում եմ ձեզ. այդ ո՞վ է, որ կառչում է մահից, և ոչ թե՝ Կյանքից: Սակայն դեռ որքա՞ն ժամանակ է պետք, որ դուք խելքի գաք: Ընդմի՞շտ: Որքա՞ն պետք է շարունակեք մերժել Իմ Սերը, հեռացնեք և վիրավորեք ձեր Օծյալին: Ճշմարտությունը և Արդարությունը նստած են այն Գահի վրա, որը Երկնքից իջնում է ձեր մեջ, որպեսզի ձեզ ասի, որ Երկնքում գտնվող ձեր տունը՝ Լույսի Տունը, Իմ միջով է անցնում: Եթե դուք

[1] Հայտ. 11:3

ինքներդ ձեզ հանձնեք Ինձ, ես ձեզ ցույց կտամ Տան ճանապարհը: Եթե դուք վստահեք Իմ Սիրուն, ես ձեզ կտանեմ Նրա Սենյակը, ով Ինձ հղացել է, որպեսզի ձեզ խնամի և ետ բերի ձեր առողջությունը: Ես ձեր ազատությունը չեմ կաշկանդում, ես ձեզ կապում եմ միայն Սիրո պակներով:

Ես սիրում եմ ձեզ մի հավերժական Սիրով, և Իմ Քնքշությունը ձեր հանդեպ մի Անսպառ Աղբյուր է:

Լսի՛ր աղջիկս, պատմիր սա օտարներին և քո մարդկանց: Պատմիր նրանց, թե ինչպես է Իմ Սիրտը ցավում սիրո պակասից:

ΙΧΘΥΣ

(Հիսուսն ինձ ուղարկում է ԱՄՆ-ի բանտերից մեկում վկայություն տալու):

Հուլիսի 8, 1991

(Կանգաս-Սիթիի բանտում՝ բանտարկյալներին կարդալու համար):

Լսե՛ք, այդ ես եմ՝ Նազովրեցի Հիսուս, որ գալիս եմ ձեզ մոտ, խոսելով այս թույլ գործիքի միջոցով:

Ես ասում եմ ձեզ. Աշխարհը դեռ ամբողջությամբ չի ճանաչել խաղաղությունը, որը ես կտակել եմ ձեզ, որովհետև աշխարհը մերժում է Արդարության Իմ Ուղիները: Ես ասել եմ, որ աշխարհում դուք նեղություններ կունենաք: Բայց դուք մենակ չեք, ԵՐԲԵ՛Ք: Ձեր կյանքի յուրաքանչյուր պահին ես ձեզ հետ եմ: Ես միշտ ներկա եմ, Իմ Հոգու սիրելիներ: Այսօր ես ուղարկում եմ Իմ այս գործիքը մինչև ձեր դռան շեմը: Նա ձեզ մոտ չի եկել այն պատճառով, որ ինքն այդպես է ցանկացել: Ո՛չ: Ե՛ս կամեցա նրան ուղարկել ձեզ մոտ: Հետևաբար, այն, ինչ որ նա կարդում է ձեզ համար, ես եմ ասում ձեզ:

- Իմ փոքրիկ մանուկներ, Իմ Վերադարձը մոտ է: Ես ետ կդամ ձեզ մոտ: Սերը պիտի վերադառնա, որպես Սեր: Ես սա հիմա ձեզ ասացի նախքան կատարվելը, որպեսզի, երբ դուք տեսնեք Իմ Խոսքերի ապացույցը՝ հավատաք: Եկեք Ինձ մոտ այնպես, ինչպես կաք: Մի՛ սպասեք, որ դառնաք Սրբեր և հետո գաք ձեր Փրկչի բազուկների մեջ ընկնելու: Եկե՛ք Ինձ մոտ, ինչպես կաք, և Ես կներեմ ձեր մեղքերը, որոնք կաշկանդում են ձեր Հոգին:

Ա՜հ, արարչությո՛ւն, Ողորմությունը խոնարհվում է դեպի ձեզ: Մոտեցե՛ք Ինձ: Մի՛ վախեցեք Ինձանից: Մարդ չի կարող ունենալ ավելի մեծ սեր, քան երբ նա Իր Կյանքն է տալիս իր ընկերների համար: Դուք Իմ ընկերներն եք: Մի՛ ասեք. «Ես ի՞նչ կարող եմ ասել: Ես ինչպե՞ս կարող եմ խոսել: Արշալույսից մինչև գիշեր և գիշերվանից մինչև արշալույս, ես բարձրաձայն աղաղակում եմ, բայց ոչ մեկը չի լսում Իմ աղերսները: Ո՞վ երբևէ կլսի Ինձ»: Բայց չնայած դրան, ես ասում եմ քեզ. ես՝ կենդանի Աստվածս, լսեցի քեզ: Այդ ես եմ, որ գալիս եմ քո սենյակը, Իմ Սիրտն Ափիս մեջ առած, որպեսզի ասեմ. Ես քեզ սիրում եմ, զավա՛կս, և Ես բերում եմ քեզ Իմ Օրհնությունները, որ ծաղկեն քո սրտում:

Որդի՛ս, վերցրու Իմ Սուրբ Սիրտը: Այն ամբողջովին քոնն է: Վերցրո՛ւ այս Սիրտը, որ սիրում է քեզ: Մի՛ մերժիր այն: Ես Նա եմ, ով ամենաչատն է սիրում քեզ:

Լսի՛ր, զավակս, երբ դու տեսնես ոտնահետքեր, որոնք Իմը չեն, մի՛ դիր ոտքերդ դրանց մեջ, քանի որ դրանք կառաջնորդեն միայն դեպի քո մահը: Իմ Ոտնահետքերը, զավա՛կս, ցույց են տալիս, որ Ես ոտաբոբիկ եմ: Նրանք ներկված են Իմ Արյամբ և անուշահոտ զմուռս են բուրում: Զավա՛կս, Իմ Մարմնի Հինգ Վերքերը բաց են նորից, և Իմ Թիկնոցը ներծծված է Արյամբ: Ես ծածկված եմ քրձով և ցնցոտիներով՝ այս սերնդի անարդարությունների և մեղքերի պատճառով: Սիրո պակասից Իմ Շուրթերն ավելի չոր են, քան մագաղաթը: Սերը բացակայում է, քանի որ այս սերունդը դավաճանություն դավաճանության վրա է կուտակում և անընդհատ Ինձ ետ է տանում դեպի Խաչը՝ վերստին խաչվելու համար:

Այդ դու ես, ում Իմ Սիրտը փնտրում է: Այդ դու ես, որ կարող ես սփոփել Ինձ: Այդ դու ես, որ կարող ես բալասան լինել և հանգստացնել Իմ Վերքերը: Դա քեզ համար է, սիրելի՛ս, որին Իմ Սիրտը կանչում է, որպեսզի համնի քեզ: Արի՛, Ես՝ Հիսուս, պիտի վերցնեմ քեզ Իմ Ուսերի վրա և տանեմ քեզ դեպի Իմ Տունը, որը նաև քո տունն է: Ընկերաբար վերաբերվիր Ինձ հետ: Ընկերաբար վերաբերվիր Ինձ հետ, և Ես կդառնամ Քո Սրբազան Ուղեկիցը կյանքիդ բոլոր օրերում: Ես՝ Տերը, ոչ մեկին չեմ զրկի Իմ Գթասրտությունից, ոչ էլ Իմ Շնորհներից:

Ես օրհնում եմ բոլորիդ Իմ Սուրբ Սրտի խորքից: Ես՝ Աստված, ձեզ հետ եմ:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 12, 1991

Տե՞ր իմ:

Ես եմ:

Խաղաղություն քեզ: Թող որ ուրախանամ և զգամ, որ պատրաստ ես լսել Ինձ: Հոգի՛, զգա Իմ ներկայությունը: Ես Եմ-ը քեզ հետ է քո կյանքի յուրաքանչյուր րոպեին: Վասո՛ւլա, ասա Ինձ, դու ուրա՞խ ես, որ Ինձ հետ ես այս ձևով:

Այո՛, Տեր իմ, և ես օրհնում եմ Քեզ:

Ուրախացրու Ինձ և փորձիր հետևել Իմ Շուրթերին, երբ Ես խոսում եմ քեզ հետ, երբ Ես խոնարհվում եմ դեպի քեզ, երբ Ես նայում եմ քեզ: Մի՛ ձևացրու, որ Ես այստեղ չեմ: Բարձրացրո՛ւ գլուխդ դեպի Ինձ, ծաղի՛կս, և ներծծիր Իմ Լույսը: Ես կզարդարեմ քեզ: Ես կվերակենդանացնեմ քո ցողունը: Խաղաղություն, Իմ Խաղաղությունը Ես տալիս եմ քեզ: Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ, որպես Իմ նոթատետրը, մի փոքր ավելի երկար ժամանակով: Իսկ հետո... հետո Ես՝ քո Փրկիչը, քեզ կպոկեմ և կվերատնկեմ Իմ Պարտեզում հավիտյանս հավիտենից:

Ես՝ քո Փրկիչը, հարություն պիտի տամ շատ սրտերի, որ պաշտեն Ինձ: Աղոթի՛ր առանց դադարի: Զրուցի՛ր Ինձ հետ: Հաճախ օրհնիր Ինձ այն ամենի համար, որ Ես տալիս եմ քեզ: Դու միշտ փորձության պիտի ենթարկվես: Դա, սիրելիս, քո աճի համար է: Ես ցանկանում եմ խթանել քո ցանկությունն Իմ հանդեպ, քո ծարավն Իմ նկատմամբ: Եվ ա՜հ... ինչ չեմ անի Ես քո հոգու համար, որ այն կատարյալ դառնա: Եթե քո հոգու կատարելության համար Ես հարկ համարեի քեզ խարազանի հարյուր հարվածից տառապել՝ քեզ մահվան դուռը հասցնելով, Ես կանեի դա առանց տատանվելու, որպեսզի փրկեմ քեզ:

Տե՛ր, դա կարող է հոգուն ստիպել, որ նա ամեն ինչից հրաժարվի:

Դու կասկածո՞ւմ ես Իմ Իմաստությանը:

Ո՛չ, բայց գուցե որոշ հոգիներ չկարողանան տանել այս ամենը:

Ես գիտեմ յուրաքանչյուր հոգու կարողությունը: Ուստի, վստահիր Ինձ: Հիշի՛ր ևս մեկ բան. դու ցանկանո՞ւմ ես փառաբանել Ինձ:

Այո՛:

Ինձ փառաբանելու համար դու պետք է անցնես Իմ Խաչելության միջով: Ես առավել քան երբևէ կարիք ունեմ զոհաբերվող սրտերի: Աղոթիր ավելի հաճախ և հնազանդվիր Իմ խնդրանքներին: Ինքդ քեզ հանձնիր Ինձ, և տուր Ինձ քո կամքը, որպեսզի Ես Իմ Աստվածային Գործերը կատարեմ քո մեջ: Կրի՛ր Իմ Խաչը, երբ Ես հոգնած եմ, և սփոփի՛ր Իմ Սիրտը, որ ցավում է սիրո պակասից:

Աբբան քեզ մոտ է ամբողջ ժամանակ: Ուրախացրու Ինձ և օրհնիր Ինձ:

Հուլիսի 16, 1991

Տե՞ր իմ:

Ես եմ:

Փոքրիկս, մի՛ վհատվիր այս աքսորի մեջ: Ես քո կողքին եմ, որ օգնեմ քեզ, որպեսզի տանես այս բեռը: Արի և հանգստացիր Իմ Սուրբ Սրտում: Դարձրու այն քո Օազիսը այս անապատով անցնելիս: Ես քեզ չեմ լքի, ոչ էլ կմտեսեմ քեզ: Ես քո Հույսն եմ և քո չարչարանքն իզուր չի անցնի: Թանկագին հոգի, Ես տալիս եմ քեզ Իմ Համբերությունը՝ հագեցած Իմ Սիրով: Օ՜հ, ինչ չեմ անի Ես քո համար....

Այն ճանապարհին, որով դու անցնելու էիր, Ես վարդի մարգեր տնկեցի քեզ համար: Ես չեմ թաքցնի, թե Ես՝ ձեր Փրկիչը, ինչպես եմ սիրում ձեզ: Այսօր Ես ամբողջ մարդկությանը բացահայտում եմ Իմ Նախանձախնդիր

Սերը: Ես ձեզ բոլորիդ բացահայտում եմ Իմ Սուրբ Դեմքը, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ լինեք սուրբ և ապրեք սուրբ: Դուք պատկանում եք Ինձ՝ ստեղծված Իմ Վսեմ Սիրո Աղբյուրից, նախասահմանված հավիտենական հիմքեր ունենալու Իմ մեջ, և լինելու Իմ Աստվածային Բնության մի պատկերը: Մահը երբեք նախատեսված չի եղել ձեզ համար, սերո՛ւնդ, բայց դուք ընդունել եք դժոխքի զորությունները:

- Աղջի՛կս, Ես՝ Ամենաբարձրյալը, կանխատեսել էի Իմ Եկեղեցու դավաճանությունը և այն հարվածները, որոնք Իմ Մարմինը ստանալու էր: Այսօր արևը ձեզ լույս չի տալիս, ոչ էլ լուսինն է փայլում ձեզ վրա: Սատանան ամբողջ երկիրը ծածկել է իր ծխով: Դուք անհավատ եք դարձել... Իմ Մշտնջենական Զոհաբերությունը դուք դարձրել եք ծաղրի առարկա, մի անարժեք նմանակում, մի սարսափելի պղծություն: Դուք ծածկում եք Ճշմարտությունը Ստով: Դուք մեղավոր եք Աստծո անարգման համար... Իմ Սուրբ Ներկայությունը Իմ Տապանակի մեջ անհանգստացնում է ձեզ: Դրա համար դուք ստեղծեցիք ձեր սեփական օրենքը՝ Ինձ բռնի ուժով դուրս մղելով Իմ Գահից[1]: Դուք հարցրե՞լ եք Իմ համաձայնությունը նախքան այդ անելը: Բայց սրանք ժամանակների նշաններն են՝ ձեր մեծ ուրացությունը և Ըմբոստության ոգին, որը ձեր օրերում Հակաքրիստոսն է և ավերածության պղծությունը:

Ա՜հ, Վասուլա, գործադրիր այն ամենը, որ Ես տվել եմ քեզ և կիսիր Իմ տառապանքը, զավակս: Այն, ինչ Ես ուզում եմ՝ սեր է, հավատարմություն և ողորմություն:

(Հիսուսի Շուրթերը դողում էին, և Նա զսպում էր Իր Արցունքները):

Ես Ինձ զգում եմ դավաճանված, ինչպես Հուդան դավաճանեց Ինձ:

Արի՛, Տեր, և հանգստացիր այն սրտերում, որոնք սիրում են Քեզ:

Ծաղի՛կ, ասում եմ քեզ. Ես Իմ Սուրբ Հոգին մարդկությանը ցույց եմ տալիս այս ձևով, որպեսզի ձեզ փրկեմ և ձեզ հիշեցնեմ Իմ Խոսքը: Ճշմարտության Սուրբ Հոգին Իմ Վկան է: Սուրբ Հոգին ոչ մի նոր բան չի բերում ձեզ, այլ տալիս է ձեզ այն հիմնական ճշմարտությունները, որոնք Ես Ինքս եմ տվել ձեզ:

Հուլիսի 18, 1991

(Քառմելի Մեր Տիրամոր տոնը)

(Նյու-Յորք, հանդիպում Կոնչիտայի հետ Գարաբանդալից, 13:15):

Տե՛ր իմ, ես շնորհակալ եմ

[1] Հիսուսն այստեղ նկատի ունի այն նոր ձևը, որ Սբ. Տապանակը տեղադրում են եկեղեցու մի կողմում, անգամ կողքի սենյակում այն պատրվակով որ Հիսուսն ավելի ապահով և խաղաղ տեղում է գտնվում:

Քեզ այն ամենի համար,
որ Դու արել ես ինձ համար:
Ես երբեք չպիտի
կարողանամ բավականաչափ
փառաբանել Քո Սուրբ Անունը:

Սերը քեզ մոտ է: Սերը հանդչում է քեզ վրա: Սերը ամեն ինչ պիտի իրագործի հերթով և իր ժամանակին:

Մի՛ վախեցիր, քո Փրկիչը նման է Պահակի, որը անդադար հսկում է քեզ: Ամենաբարձրյալը քեզ չի լքի: Լսի՛ր Ինձ: Ես շատ վաղուց եմ պատրաստել սա: Նույնիսկ մինչ քո ծնվելն եմ ծրագրել այդ, և հիմա Ես իրագործում եմ դա, հասկանո՞ւմ ես: Ես քեզ ուղարկում եմ Իմ զավակների մոտ, որպեսզի դու նրանց տաս քո լուրերը և ամբողջովին խրախուսես նրանց: Հավատ ունեցիր Իմ հանդեպ: Ես գիտեմ քո դժվարությունները ու քո թշվառությունը: Բայց շուտով, շատ շուտով Ես պիտի գամ և պիտի տապալեմ ապստամբին և պիտի թագավորեմ ձեր սրտերում, սերո՛ւնդ: Աստծո Թագավորությունը շուտով ձեզ հետ պիտի լինի:

Ես օրհնում եմ Գարաբանդալի Իմ սիրելի զավակներին: Իմացե՛ք, որ Ես Եմ-ը ձեր կողքին է:

ΙΧΘΥΣ

(Մեր Սուրբ Մայրը խնդրեց ինձ բոլորի համար կարդալ Բ Կոր. 1:10-11):

Հուլիսի 23, 1991

«Քանի որ քո Արարիչը քո Այրն է,
Տեր Զորությանց է Նրա Անունը»[1]:

Յահվե՛, Հայր իմ,
Ում ես պաշտում և տենչում եմ,
Դու ինձ դուրս հանեցիր
ստորերկրյա աշխարհից
և բարձրացրիր իմ հոգին
մուտք գործելով այնտեղ՝
կլանելով այն Քո Կրակով՝
թողնելով ինձ Քեզնով հափշտակված:
Յահվե՛, Ձերդ Մեծություն
և Թագավոր Թագավորաց,
Դո՛ւ, որ առաջնորդեցիր ինձ
այս հրաշալի ճանապարհով,
պահի՛ր ինձ մեղքից ու անկումից:
Ես մեղավոր մեկն եմ
և ավելի հակված մեղք գործելու,
քան թե՝ բարիք:

[1] Ես. 54:5

Ամրացրո՛ւ քո քաղաքը…

Խաղաղություն քեզ: Ես՝ Տերը, սիրում եմ քեզ: Բռնիր Իմ ձեռքը և հետևիր ինձ: Աղոթի՛ր, Իմ Վասուլա, քանզի դեռևս երկար ճանապարհ ունես անցնելու, մինչև կատարելության հասնես: Դու զերծ չես մեղքերից, ոչ էլ այն անկումներից ու սայթաքումներից, որ պիտի ունենաս: Բայց Ես քո կողքին եմ, որ քեզ օգնեմ բարձրանալ և սեղմել քեզ Իմ Սրտին, որպեսզի դու զգաս Իմ Սերն ու Իմ փայփայանքը: Ե՛կ, մենք միասին պիտի աղոթենք:

Հա՛յր, արի մեզ օգնության
և առաջնորդիր մեր քայլերը
դեպի կատարելություն:
Վերադարձրու
մեր աստվածայնությունը
և դարձրու մեզ Քո Սրբության
կատարյալ բնակավայրը: Ամեն:

Հիսո՞ւս:

Ե՛ս եմ:

Իմ Սուրբ Հոգին, Իմ Վասուլա, պիտի գնա մինչև աշխարհի ծայրերը և ամենանվաստին անգամ պիտի փնտրի ձեր մեջ, որպեսզի փրկի ձեզ այն ավերածության պղծությունից, որը բնակվում է հիմա ձեզանից շատերի մեջ… Շուտով Երկինքը պիտի հեղեղվի ձեզ վրա Իմ Գալուստով: Ես՝ Տերը, ձեզ համար շատ հրաշքներ եմ գործել և <u>շատ ավելին պիտի գործեմ այս գալիք օրերին</u>[1]:

Աղոթի՛ր, զավակս, աղոթիր նրանց համար, ովքեր վիրավորում եմ Իմ Սրբությունը և հայհոյում Իմ Սուրբ Հոգուն՝ հիմար անվանելով Նրան: Մի՞թե Ես չեմ ասել. «…Նա, ով մարդու Որդու դեմ բան կասի, նրան պիտի ներվի, բայց <u>ո՛չ մեկը</u>, որ Սուրբ Հոգուն հայհոյի, նրան չպիտի ներվի»[2]: Որովհետև Հոգին հակառակ չէ Որդուն, ոչ էլ Հայրն է հակառակ Հոգուն, քանի որ Մենք բոլոր երեքս էլ նույնն ենք վկայում[3]: Ձեզանից շատերը դատապարտում են Իմ Երկնային հայտնությունները և հալածում նրանց, որոնց միջոցով Իմ Հոգին խոսում է, քանի որ դուք չեք հավատում, որ նրանք գալիս են Ինձանից:

Աղջի՛կս, նայիր Իմ Մարմնի Վերքերին[4]… <u>Հիմա Ինձ քիչ ժամանակ է մնացել, մինչ Իմ Հոր ձեռքը կհարվածի այս սերնդին</u>: Լսե՛ք ձեր Հորը, ումից դուք ստեղծվել եք, լսեք Նրա Ձայնը:

Ես գնացի բոլոր ճանապարհներով՝ փորձելով ի մի հավաքել և հիշեցնել ձեզ, որ սուրբ ապրեք, քանի որ Ես Սուրբ եմ: Բայց ձեզանից միայն քչերն են

[1] Կոմունիզմի անկումը Ռուսաստանում 3-օրյա պետական հեղաշրջումից հետո:
[2] Ղուկ. 12:10
[3] Ա. Հովհ. 5:8
[4] Հիսուսի հագուստը ներծծված էր Իր Սեփական Արյամբ: Նրա կոճերը, որոնք ես կարողանում էի տեսնել, ծածկված էին գծավոր վերքերով:

ուշադրություն դարձնում, երբ Ես խոսում եմ: Ես խոսել եմ Նրանց միջոցով, ում դուք արհամարհելի եք համարում: Ես խոսել եմ թուլության ու աղքատության միջոցով: Բայց դուք, կատաղության աստիճանի հասցնելով, պաշտամունք եք դարձրել Իմ Սուրբ Հոգու հալածանքը, որն առաջնորդում է Նրանց:

Նրանց միջոցով Ես շարունակում եմ ձեզ ուղարկել Եղիայի հոգին ու Մովսեսի հոգին՝ այդ երկու վկաներին քրձեր հագած[1] մարգարեանալու և հիշեցնելու ձեզ Իմ Օրենքը, նախքան Իմ մեծ Վերադարձը: Նրանք եկել են Իմ Անունից ձեզ հետ խոսելու, և ձեզ ետ բերելու դեպի Ճշմարտությունը և ետ՝ դեպի խելամտությունը:

Բայց ձեզ վրա մի ծանր խավար է տարածվել, և ձեր հավակնությունները ձեր գիտելիքի մասին դարձել են մարտադաշտ Իմ Գիտելիքի հանդեպ: Սուտը հալածել է և շարունակում է հալածել Ճշմարտությանը, բայց Աստվածաշունչը երբեք չի ստում: Այնտեղ գրված է, որ «գազանը[2], որը դուրս է գալիս Անդունդից, պատերազմելու է նրանց դեմ, հաղթելու է նրանց և սպանելու է նրանց»[3]: Արդարև ձեր մարտադաշտը հիմա ներծծված է անմեղ արյամբ, որովհետև մարգարեության Իմ Սուրբ Հոգին պատուհաս է դարձել նրանց համար, ովքեր պատկանում են աշխարհին[4]: Նրանց կատաղի հալածանքները և նրանց լիակատար մերժումը Իմ խոսափողների հանդեպ, նման են Սոդոմի արածներին: Իրենց սրտերը բացելու, զիջելու և ենթարկվելու Նրանց համառությունը, և նրանց մերժումը՝ բացելու իրենց ականջները ու լսելու Իմ Ձայնն այսօր, գերազանցել են Եգիպտոսի Փարավոնի համառությունը[5]:

Այսօր Ես ձեզ տալիս եմ «այնպիսի բաներ, որ ոչ մի աչք չի տեսել և ոչ մի ականջ չի լսել, բաներ, որոնք մարդու մտքին հասանելի չեն»[6], և այս բոլորը բարձրացնում են ձեր հոգին, որ Ինձ Աբբա կոչեք: Իմ Սուրբ Հոգին ձեզ բոլորիդ կանչում է ճշմարիտ նվիրումի և Աստծուն ավելի լավ հասկանալու: Այս է պատճառը, որ Ես անընդհատ կրկնում եմ միևնույն ճշմարտությունները, որոնք տրված են ձեզ: Ես պիտի շարունակեմ կանչել ձեզ այնքան ժամանակ, մինչև որ ճեղքեմ ձեր խլությունը, սերո՛նդ: Ես չեմ դադարի տառապանքով ձեզ կանչելուց, մինչև ձեզանից չլսեմ.

Աբբա՛:

Նոր երկինքն ու նոր երկիրը շուտով ձեզ վրա կլինեն:

ΙΧΘΥΣ

[1] Հայտ. 11:3
[2] Այս ենթատեքստում Աստված ինձ հասկացրեց, որ գազան նշանակում էր՝ սուտ:
[3] Հայտ. 11:7
[4] Աստված նկատի ունի Հայտ. 11:10 «...որովհետև այդ երկու մարգարեները երկրի բնակիչներին պիտի չարչարեն»:
[5] Աստված նկատի ունի Հայտ. 11:8... Նրանց դիակները ընկած կմնան Մեծ Քաղաքի գլխավոր հրապարակում, որ հայտնի է Սոդոմ և Եգիպտոս խորհրդանշական անուններով: (...):
[6] Ա. Կոր. 2:9

Հուլիսի 24, 1991

(Հռոդոս)

(Պատգամ Հռոդոսի աղոթախմբի համար):

Նրանց քարոզելու Իմ ցանկությունը վեր է մարդկային հասկացողությունից, և այդ է պատճառը, որ Իմաստությունը նրանց սրտի շեմին է: Ոչ մեկն արժանի չէ Իմ Իմաստությանը, այնուամենայնիվ, Հայրը՝ ելնելով Իր Անսահման Ողորմությունից, կամենում է Իմաստություն տալ սոսկ մանուկներին:

Ա՜հ.... Իմ սիրելիներ, դուք բոլորդ էլ Իմ ժառանգներն եք: Դուք թշվառ եք դարձել և դեռ շարունակում եք մնալ այդպիսին: Բայց ո՞ր Հայրը կարհամարհի իր որդուն թշվառության մեջ և նրան հեռու կքշի, որ նա շարունակի իր անառակությունը մինչև Մահ: Մի՞թե նա չի միջամտի և անմիջապես չի փրկի նրան: Հիմա, երբ ես բարձրացրել եմ ձեզ դեհենից, ձեր հայացքն ուղղեք դեպի Ինձ: Ձեր աչքերը կտեսնեն Կատարելությունը: Թույլ տվեք Ինձ ձեզ հետ միասին վարել ձեր տնտեսությունը, դուք չեք զղջա դրա համար...

Ես՝ Աստված, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Եղեք լույսի մի անոթ ուրիշների համար, ովքեր շրջում են նեխած անոթների պես՝ չկարողանալով տարբերել իրենց ձախ ձեռքը աջից, և բերեք նրանց դեպի Ինձ: Ես ձեզ կտամ Իմ Ուժը, մի՛ վախեցեք:

Մարդկային ցեղն Ինձ վշտացնում է մահու չափ, և Իմ Սիր~ տը բզկտվում է տեսնելով այդպիսի անօրինություն ու մեղք աշխարհում: Դո՛ւք, դուք լսել եք Իմ դառնագին ողբերը, քանզի Ես մոտեցել եմ ձեզ: Դուք լսել եք Իմ Ձայնը: Ցնծացե՛ք: Ցնծացե՛ք և ուրախ եղեք, որ Ես բժշկեցի ձեր աչքերը, որ վատ էին տեսնում, և ձեր սիրտը, որ հիվանդ էր անօրինությամբ: Ես ձեզ ետ բերեցի դեպի Ինձ Իմ Ողորմության շնորհիվ, և հիմա թույլ տվեք Ինձ օգտագործել ձեզ բոլորիդ Իմ Աստվածային Ծրագրի համար՝ երիտասարդներին ու ծերերին հավասարապես:

Աղոթե՛ք և խնդրեք Իմ առաջնորդությունը: Դուք շատ թանկագին եք Ինձ համար: Աղոթե՛ք առանց դադարի, քանզի դա պիտի լինի ձեր մնունդը:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 27, 1991

Տե՛ր, մեզ կատարյալ դարձրու Քո Գեղեցկությամբ:

Փոքրի՛կս, Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Միշտ խնդրիր, և քեզ կտրվի: Աղոթի՛ր հաճախ, ջերմեռանդորեն: Եվ մինչ մեղավորը իր չարությունը դեռևս շարունակում է առանց խղճի խայթի, դու պիտի շարունակես զոհաբերություն անել, սիրել և աղոթել բոլոր նրանց համար, ովքեր իրենց մեջքն են դարձրել դեպի Ինձ: Ակա՛նջ դիր Ինձ, և Ես

կկատարեմ այն ամենը, որ պետք է կատարվի: Ես՝ Հիսուս, կշարունակեմ օգնել քեզ և անել այն ամբողջ աշխատանքը, որ խնդրել եմ քեզանից: Իմ փոքրիկ աշակերտ, մնա Իմ կողքին և սիրիր Ինձ:

Ես՝ Տերը, սիրում և օրհնում եմ քեզ: Իմ Խաղաղությունը քեզ: Ե՛կ: Սերը քո կողքին է:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 29, 1991

(Հռոդոս)

Տեր իմ,
Քո Անունը հոսող մի յուղ է[1]*,*
այնպես, ինչպես
սրբապատկերներից է հոսում:
Դա Քո ստորագրությունն է, Տե՛ր իմ:
«Տերը քո անունը գեղատես
ու վարսավոր ձիթենի կոչեց...»[2]*:*

Աղջի՛կս,

Դու իմ Արարի՞չն ես:

Ես եմ...[3]

Ա՛հ, զավակս, Ես այս ձևով եկա ոչ միայն քեզ համար, այլև Իմ բոլոր մյուս զավակների համար, որպեսզի ձեզ խնդրեմ, որ սուրբ ապրեք և ետ կանգնեք ձեր չար ապրելակերպից: Թույլ տվեք Ինձ ձեզ հույսով լցնել: Ես մտադիր եմ դալ և այցելել ամեն տեսակ թշվառության, որ գտնվում է երկրի վրա, և ձեզ ազատել մեղքից:

Իմ Անունն է՝ Ես Եմ, և Ես Սուրբ եմ: Ուստի ուզում եմ, որ դուք էլ ապրեք սրբորեն: Սրբացրեք ձեր կյանքերը և շրջվեք Իմ ուղղությամբ: Չարը իշխանություն չունի Նրանց վրա, ովքեր արթուն են մնում և աղոթում անդադար:

Բացե՛ք ձեր սրտերը, որպեսզի Ես մտնեմ ձեր մեջ և Իմ տունը դարձնեմ այն: Իմ Խաղաղությունը ձեզ:

Հուլիսի 30, 1991

Իմ Վասուլա, թող ոչինչ չկանգնի Իմ և քո միջև: Ինչպես լուսինը և արևը անխախտ են և հավատարմորեն հետևում են իրենց բնական ընթացքին և պարզապես չեն անհետանում երկնքից, Ես նույնպես հաստատուն եմ և քո

[1] Երգ Երգոց 1:2
[2] Երեմ. 11:16
[3] Ես հոգոց հանեցի ուրախությամբ, բայց նվաղելով ցանկացա լինել Նրա հետ:

կողքին: Եթե նույնիսկ նրանք հաստատուն չմնան, ես երբեք անհաստատ չեմ լինի: Ես եղել եմ, կամ, և միշտ հաստատուն կլինեմ քո կողքին: Երբ ես բացահայտում եմ Ինքս Ինձ, իրականում, երբ ես Իմ անձը ամբողջովին բացահայտում եմ քեզ և ասում եմ, որ երբեք չեմ լքի քեզ, ոչ էլ Իմ պարգևը հետ կվերցնեմ, կամ կխլեմ քեզանից Իմ Գանձերը, Հավատա՛ Ինձ, և նույնիսկ ամենաթույլ կասկածն իսկ մի ունեցիր: Ես հարություն եմ տվել քեզ, որպեզի Ինձ հետ լինես և Ինձ հետևես:

Ուստի, սանի՛կս, հետևիր քո Ուսուցչին: Թող քո մտքերն Ինձ վրա հիմնվեն: Դու մեռած էիր, որովհետև երբեք չգիտեիր Ինձ: Բայց Խոսքը մոտեցավ քո ականջին և օրհնությամբ հարություն տվեց քեզ և Իր Սուրբ Հոգու Շնչով վերակենդանացրեց քեզ ու բացեց քո աչքերը, ապա Իր Բերնի Համբույրով դարձրեց քեզ Իր հարսը:

~ <u>Ես ձեզ բոլորիդ</u>
<u>պիտի փրկեմ այս ձևով</u>: ~

Մի՛ վախեցիր, երբ Ես գալիս եմ Իմ Խաչով, Իմ Փշե Պսակով և Իմ Գամերով և տալիս եմ դրանք քեզ, որովհետև այս անգին Գանձերը, որ Ես տալու եմ քեզ, դրանք հենց այն են, որոնք Ես ջերմորեն և սիրով գրկել եմ: Դրանք քո Փրկության Գործիքներն են: Թույլ տուր Ինձ քեզ օգտագործել, Վասո՛ւլա, որպեսզի քո միջոցով, գրելով կամ խոսելով, Ես կարողանամ Իմ Սիրտը հեղել այս սերնդի վրա:

Հույսդ դիր՛ Ինձ վրա, ցանկացիր Ինձ, քեզ տխուր մի՛ զգա: Ես Եմ-ը այնպես մոտ է քեզ, ինչպես երբևէ չի եղել: Մի՞թե Ես արժանի չեմ ավելի մեծ ուրախության:

Օ՛, այո՛, Տեր, բայց թույլ տուր ինձ, որ Քեզ ավելի ուժեղ զգամ:

Ես քեզ հետ եմ եղել այս ամբողջ ժամանակ, և դու դեռ չե՞ս զգում <u>կամ նկատում</u> Իմ Ներկայությունը: Ես քեզ <u>ուսուցանել եմ</u> բավական երկար տարիներ, և դու դեռևս չե՞ս զգում Ինձ:

Ես <u>շատ</u> ավելին եմ ուզում Քեզանից:
Ես ամբողջովին ուզում եմ ներծծվել
և <u>բառացիորեն նվաճվել</u>
Քո Սուրբ Հոգու կողմից:

Ե՛կ Ինձ մոտ և ճաշակիր Ինձ... Ըմպի՛ր Ինձ, բոլորովին ձրի: Ճաշակի՛ր Ինձ, և դու ավելի կքաղցես, ըմպի՛ր Ինձ, և դու ավելի կծարավես: Ստացի՛ր Ինձ ուրախությամբ, և թող որ Ես ուրախանամ: Իմացի՛ր, թե ինչպես է Իմ Սիրտը բաբախում և ուրախանում ամեն անգամ, երբ Ես ու դու մեկ ենք դառնում՝ սիրով միացած: Արի և սրբացիր՝ ճաշակելով Իմ Մարմինը և խմելով Իմ Արյունը:

Այո՛, ես ծարավի եմ Քեզ, իմ Տեր:

Հուսա՛ Ինձ, ցանկա՛ Ինձ, և շուտով, շատ շուտով, Քո Սուրբը պիտի գա և

պիտի տանի քեզ Իր Տունը, որը նաև քո Տունն է: Ես օրհնում եմ քեզ, աղջիկս:

Ես օրհնում եմ Քեզ, Աստված իմ:

Օգոստոսի 2, 1991

(Հռոդոս)

(Հույն աղոթախմբի համար)

Հիսո՛ւս, Տեր իմ,
Թող օրհնյալ լինի Քո Անունը:
Թող Քո Սուրբ Անունը
կանգուն մնա Փառքի մեջ
հավիտյանս հավիտենից:

Իմ Սուրբ Անունը կանգուն է և միշտ կանգուն կլինի իր ամբողջ Փառքով:

Թող Քո Ձեռքը առաջնորդի մեզ
դեպի Ճշմարտություն,
դեպի Միակ Ճշմարտությունը:
Թող, որ ոչինչ չբաժանի ինձ
այս Ճշմարտությունից,
որ Դու Ինքդ ես տվել մեզ:

Դու դատարկ Ինձ մոտ եկար և գնացիր լիքը: Ես երբեք չեմ երկնչել մեծությունից, ոչ էլ՝ ուժից: Ես Ինքս եմ լցրել քո բերանը Իմ Իմաստությամբ, որպեսզի դու կարողանաս սովորել և չսխալվել: Ես քեզ տվել եմ Իմ ուսուցումները, որպեսզի դրանց մեջ դու կարողանաս գտնել քո պաշտպանությունը: Այժմ լսիր և հասկացիր:

Մեր Երկու Սրտերը,
ինչպես մի կնիք,
դրեք ձեր սրտի վրա:

Ձեր Մոր Սուրբ Սիրտը կլինի ձեր պաշտպանությունը, և Իմ Սեփական Սուրբ Սիրտը՝ ձեր Տունը: Ձեր սրտում կնքված այս Նշանով, աղվեսները, որոնք քանդում են Իմ Խաղողի Այգիները, որ հիմա բերք են տալիս, պիտի բռնվեն: Դո՛ւք, իմ փոքրիկներ, Մեր Խաղողի Այգիներն եք[1] Մեր Երկու Սուրբ Սրտերի:

Եկե՛ք, իմ փոքրիկ զավակներ, և լսեք: Ձեզանից ո՞վ է ուրախանում Հավիտենական Կյանքով:

[1] Աղոթքի խումբը կոչվում է «Երկու Սրտերի աղոթախումբ»:

- Ուրեմն պաշտեք Ինձ Իմ Սրբության վեհության ու շքեղության մեջ: Հարատև աղոթեք:

- Սատանան կշղթայվի Վարդարանով:

- Միշտ խոստովանության գնացեք, փոքրիկ երեխաներ, որպեսզի կարողանաք գալ և Ինձ ստանալ Սուրբ Հաղորդության մեջ, որքան հաճախ որ կարող եք:

- Շաբաթական երկու օր ծոմապահություն արեք հացով ու ջրով, որպեսզի փոխհատուցեք և զոհաբերեք:

- Մի՛ նայեք ո՛չ աջ, ո՛չ էլ ձախ, նայեք ձեր դիմաց, որտեղ որ Ես եմ: Ուր որ Ես գնամ, այնտեղ էլ դուք պիտի գնաք, որտեղ Ես ապրեմ, այնտեղ էլ դուք պիտի ապրեք:

Սրանք, սիրելիներս, Իմ Սկզբունքներն են: Իմ Խոսքը պետք է ընդունեք, ինչպես ձեր ամենօրյա կերակուրը: Դա ձեր Երկնային Հացն է: Դա ձեր Կյանքն է: Հաճախ եկեք Ինձ մոտ և նվիրաբերեք ձեզ Իմ Սուրբ Սրտին, և Ես պիտի շնչեմ ձեզ վրա ու ձեզ Իմը դարձնեմ, որպեսզի Իմ Խոսքը տարածեք այս երկրի չորս անկյուններում: Եվ հիշե՛ք, թող ձեր մտքերը լինեն Իմ Մտքերը, ձեր ցանկությունները՝ Իմ Ցանկությունները,

- Ինձ նմանվեք:

- Օրհնյալ են նրանք, որ Ինձ չեն տեսնում, բայց հավատում են: Ես թողնում եմ Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին: Օրհնեք Ինձ և սիրեք Ինձ:

- Ասա՛ նրանց, Իմ Վասուլա, թե որքան եմ Ես պատվում այն Սենյակը[1], որտեղ Իմ Մայրը հղացել է Ինձ:

ΙΧΘΥΣ

(Մեր Օրհնյալ Մոր Պատգամը նույն խմբի համար):

Օրհնյալ զավակներ, թող ձեր սիրտը լինի ինչպես մի պարտեզ, հաճելի Տիրոջը, մի հանգստավայր ձեր Թագավորի համար: Թույլ տվեք Նրան մուտք գործել ձեր սիրտը, և, եթե անգամ Նա չոր և լքված գտնի այն՝ վերածի բերկրանքների մի պարտեզի: Թույլ տվեք Նրան շնչել ձեր սրտում, որպեսզի վերակենդանացնի այն: Նրա Շունչը ամենանուրբ բուրմունքն ունի: Ապա, Նա Իր Արյամբ, ինչպես առավոտյան ցողը, կմաքրի ձեր արատները, որպեսզի կատարյալ դարձնի ձեզ, փոքրիկներս:

Ա՜հ... որքան եմ Ես ձեզ սիրում... եկե՛ք և լսեք ձեր Աստծուն: Նրա զրույցը ինքնին քաղցրություն է, կարեկցություն միանգամայն: Աղոթե՛ք Իմ սիրելիներ, աղոթեք անդադար: Ձեր մտահոգությունների պատասխանները դուք կարող եք գտնել հարատև աղոթքի մեջ: Թող սա լինի ձեր զենքը: Աղոթեք սրտանց, երկխոսության մեջ եղեք Աստծո հետ այս ձևով: Սատանան փախչում է, երբ դուք ամեն անգամ սիրով կանչում եք Աստծուն: Ուստի այսօր, վաղը և միշտ, Ես ձեզ կասեմ՝ աղոթե՛ք, աղոթե՛ք, աղոթե՛ք: Իմ Սերը ձեր նկատմամբ մեծ է: Թույլ մի՛ տվեք սատանային դայթակղեցնել ձեզ՝ Ինձ ձեր տեսադաշտից կտրելով: Զգոն եղեք: Ես՝ ձեր Սուրբ Մայրը, օրհնում եմ ձեզ բոլորիդ:

[1] Մարիամի Սիրտը:

Այո՞, իմ Հիսուս

(Հիսուս կանչեց ինձ):

Վասո՛ւլա, թող ձեր աղոթքի խմբերը կոչվեն

<u>Երկու Սուրբ Սրտերի</u>
<u>աղոթախմբեր</u>,

քանի որ Մեր Սրտերը միացած են սիրով և մեկ են: - Ես ձեր կողքին եմ: Սերը ձեզ մոտ է:

(Ավելի ուշ, ուշ երեկոյան ես խնդրեցի Հիսուսին բացատրել ինձ, թե ինչ է կատարվում ինձ հետ, երբ ես ապրում եմ Զարչարանքները):

Մենք միացած ենք, ինչպես մի մարմին, ապա... Ես բռնում եմ քեզ, ես ամբողջովին նվաճում եմ քեզ, քանի որ դու Իմ սեփականությունն ես, և ես գրավում եմ քո հոգին: Ինչպես կորիզը ծածկված է իր մրգով, ես նույնպես ծածկում եմ քեզ նման ձևով: Քո հոգին մարմնավորվում է Իմ Հոգում, Իմ մեջ՝ քո Քրիստոսի մեջ: Սիրի՛ր Ինձ, պաշտի՛ր Ինձ և աղոթիր: Ես անքակտելի եմ քեզանից:

Օ՜, ե՛կ, ե՛կ, թող քո սերը լինի մի անմար կրակ: Ես Անմար Կրակ եմ, որը հոգիներ է կլանում: Ուստի նմանվիր Ինձ, քո Աստծուն: Այս է իմ ցանկությունը բոլորի համար: Իմ Խաղաղությունը քեզ:

Օգոստոսի 4, 1991

(Հոդոս)

Տե՛ր
երբ Քո այցելության ժամանակը գա,
մի՞թե մենք պատրաստ կլինենք:
Ոչ ոք չգիտի այն թաքնված բաները,
որ Դու ունես, բայց և այնպես,
շատերը կշարունակեն
իրենց հպածանքները
Քո Պատգամի դեմ:
Նրանք աղավաղում են այն,
ինչ Դու ասում ես:
Նրանք միայն մտածում են,
թե ինչպես աշխարհին ապացուցեն,
որ այս պատգամները
սատանայական են,
Նոր Դար աղանդից կամ չար ոգուց:
Բայց իմ Յահվե,
որին ես պաշտում եմ,
ես մտադիր եմ Քո ուժով «Քեզ

շնորհակալություններ մատուցել,
քանզի Դու փրկել ես ինձ Մահից,
որ քայլեմ Քո ներկայությամբ»[1]:

Իմ քաղցր բուրմունք, հենվի՛ր Ինձ վրա: Լսիր Ինձ. գոռա՛: Գոռա՛ ազգերին՝ առանց վախենալու:

Ապաշխարեք, քանզի Ողորմության ժամանակը գրեթե ավարտվել է: Փոխեք ձեր կյանքերը և ապրեք սրբորեն: Զոհաբերություններ արեք և ուղղեք ձեր կյանքը նախքան Տիրոջ Գալուստը:

Աղոթե՛ք, աղոթեք նրանց համար, ովքեր ճնշում են Իմ Հոգուն: Աղոթեք նրանց համար, ովքեր խոսում են միասնության մասին, բայց թակարդ են լարում միասնությունը գործադրողների դեմ: Նրանք Ինձ հաշիվ պիտի տան Դատաստանի օրը, որովհետև Ես կանչեցի և ոչ ոք չպատասխանեց: Ես խոսեցի բա՜ ցեիբաց, բայց ոչ մեկը չլսեց: Այն Տունը, որը Ես վերակառուցում եմ Իմ նահատակ սրբերի արյան գնով, նրանք շարունակում են քանդել: Աղոթի՛ր Իմ Տան Խաղաղության համար, եղբայրների միջև խաղաղության համար, անկեղծ սրտերի համար, խոնարհության և սիրո համար: Եվ այդ ժամանակ... միասնությունը կբողբոջի ամեն մի սրտում... և Իմ Սուրբ Քաղաքը՝ Երուսաղեմը, ինչպես մի միացյալ ամբողջություն, կփառաբանի Ինձ:

Ա՜հ, Վասուլա, ոչինչ իզուր չէ: Իմ Աշխատանքը, որը քեզ անքուն է պահում մինչև ուշ գիշեր, իզուր չի անցնի: Իմ խոսքը կհասնի այս աշխարհի ծայրերը:

Համոզված եղիր, զավա՛կս, Ես՝ Հիսուս Քրիստոսը, քո Մայրը, սրբերը և քո պահապան հրեշտակը, բոլորս քո կողքին ենք: Զվախենաս, քո Աբբան քո Ուժն է ու քո Ապաստանը: Դու շատ թանկ արժես Ինձ համար, զավա՛կս:

Օգոստոսի 5, 1991

(Հռոդոս)

Տե՛ր, ես կարծես մի նավակ լինեմ
առանց թիակների:
Իմ հոգին հեռու է Քո Հոգուց,
օգնի՛ր ինձ:

Իմ թշվառ հարս: Ո՞վ է հոգ տանում քո մասին: Ո՞վ է հոգ տանում քո կարիքների մասին:

Դո՛ւ, Տեր իմ:

Ասա՛. Դո՛ւ, իմ Ամուսինը: Ես խոսել եմ քո խոստովանահոր բերանով: Ես քո Ամուսինն եմ: Երանելի ես դու, որ ստացել ես այս շնորհը: Երկինքը քո տունն է: Մե՞նք, մե՞զ:

[1] Սաղմ. 55:13

Այո՛, Տեր, ընդմիշտ:
Իմ Տեր և իմ Աստված,
ես օրհնում եմ Քեզ:
Թող գովաբանվի Քո Անունը:
Թող Փառավորվի Աստված:

Ե՛կ, գլուխդ դիր Իմ Սրտին, զգա այս Սերը, որ ես ունեմ քո հանդեպ: Զգա՛ Երկինքը քո մեջ և ուրախացի՛ր, ուրախացի՛ր, Իմ փոքրիկ արարած, քանզի քո Փրկիչը քո կողքին է, և այդ Նա է, որ առաջնորդում է քեզ, և այդ Նա է, որ ձևավորում է քեզ, որպեսզի դու Իրեն նմանվես: Ա՜հ.... ծարավի՛ր Ինձ և ցանկացիր խմել Կյանքի Կենդանի Ջրերից: Ես՝ Տերը, քեզ ընդմիշտ պիտի ապահովեմ այդ Ջրով: Դու մենակ չես, ԵՐԲԵ՛Ք...

Փայփայիր Ինձ քո սիրով, քո մտքերով, քո սրտով, քո բարի գործերով, աղջի՛կս և հարս, Ես կօգնեմ քեզ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 6, 1991

(Հռոդոս)

Փրկի՛ր մեզ բոլորիս, Հիսուս:
Սպասի՛ր, Տեր իմ,
որ Քո բոլոր զավակները դարձի գան,
նախքան Քո Օրը կգա:
Քո Գահը չուտով կիջնի մեր մեջ,
բայց արդյոք
մենք բոլորս պատրա՞ստ ենք:

Թույլ տուր, որ Քո Գետը,
որի առվակները թարմացնում են
չորացած քաղաքները,
հոսի մեր մեջ, ոռոգի մեզ, Տե՛ր:
Նվաճի՛ր մեզ, գրավի՛ր մեզ,
և հենց որ Դու մեր <u>մեջ</u> լինես,
Քո քաղաքները <u>երբեք</u> չեն ընկնի:
Սրբացրո՛ւ Քո բնակավայրը,
սրբագործի՛ր մեզ:

Օծյալն օրհնում է քեզ և քեզ մղում է աղոթելու: Մի՛ հուսահատվիր [1]: Ես բավարար ժամանակ եմ տալիս ինքներդ ձեզ բարեփոխելու համար: Բայց արդյոք ձեր սերունդը դա կհասկանա՞: Արդյոք նրանք կցանկանա՞ն փոխել իրենց կյանքերը: Դու պետք է հաշվի առնես, զավա՛կս, այն վիրավորանքները, որ ամեն օր թույլ են տրվում Իմ

[1] Ես զգացի, որ միայն իմ աղոթքները բավական չեն, ոչ էլ նրանցը, ովքեր աղոթում են, որովհետև մենք այնքան քիչ ենք:

դեմ: Քանզի, դեռ որքա՞ն ժամանակ պետք է վիրավորանքներ կրի ձեր Օծյալը... Դու ինձ բան ունե՞ս ասելու: Աղջիկ՛ս, ես ոչինչ չեմ լսում քեզանից:

Շնորհ: Մենք կարիք ունենք շնորհի,
որ ետ դանք դեպի Քեզ,
այնպես, ինչպես ես:
Ես ոչինչ չգիտեի Քո մասին
և չգիտեի, թե որքան շատ եմ
վիրավորել Քեզ,
Տե՛ր իմ, մինչև որ Դու շնորհով
չեկար ինձ մոտ:

Ուրեմն շարունակիր աղոթել քո եղբայրների համար: Ես ասել եմ. Սոդոմի համար այնքան ծանր չի լինի, որքան այս սերնդի: Հիշո՞ւմ ես Նինվեն: Նրանք մի մեծ աղետի եզրին էին, բայց նրանք լսեցին Հովնանին՝ Իմ խոսափողին, և ամենամեծից մինչև ամենափոքրը՝... բոլորը ծոմ պահեցին, զղջացին և երդվեցին փոխել իրենց կյանքը և ապրել սրբորեն: «Գնացե՛ք հեռավոր անցյալի ճանապարհներով, հարցրե՛ք հին շավիղների մասին»[1], փնտրեք Ճշմարտությունը: Աղջի՛կս, երանի նրանց, ովքեր կհետևեն Իմ խորհրդին: Թույլ տուր ինձ քեզ մի բան էլ ասել: Ես՝ Օծյալս, կկլանեմ ձեզ բոլորիդ Իմ Կրակով և կսպառեմ ձեզ, որպեսզի ձեր հոգուն նոր կյանք տամ: Ինձ քիչ ժամանակ է մնացել հիմա: Ողորմության և Շնորհի այս ժամանակները համարյա ավարտվել են: Ես չեմ թաքցնում Իմ Ծրագրերը, ոչ էլ թաքցնում եմ Իմ Դեմքը: Ես ցույց եմ տալիս Իմ Դեմքը, ինչպես երբեք ցույց չեմ տվել նախկինում:

Սիրելինե՛րս, ձեր պարտականությունն է գնալ և տարածել Երկրորդ Հոգեգալստի այս Պատգամները, և այն, ինչ Հոգին է սովորեցնում:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Իմ Հոգին քո հոգու հետ է: Ես կլցնեմ քեզ: Ա՛հ, Իմ Սուրբ Սրտի Վասուլա, միշտ հիշիր այս բառերը.

Դեպի Իմ Խաչը տանող
Ճանապարհը նշված է Իմ Արյունով,

և ամեն մեկին, ով կամավոր ընտրում է այս ճանապարհը, ես օրհնում և օծում եմ նրան: Քեզ հետապնդում են Իմ պատճառով: Մի՛ վախեցիր, ես քեզ մոտ եմ և քո կողքին, որ քեզ խրախուսեմ: Քեզ դատապարտում են, բայց դա միայն աշխարհի կողմից է: Իմ պատճառով մարդկային շուրթերը անպատվում ու ստորացնում են քեզ: Ուրախացի՛ր, քանզի Ինձ էլ են անպատվել: Մի՞թե Ես չեմ ասել, որ ոչ մեկը Իր Տիրոջից ավելի մեծ չէ:

[1] Երեմ. 6:16:

Դու ծաղր ու ծանակի առարկա ես քո ժողովրդի մոտ[1], բայց Ինձ էլ են ծաղրել՝ քո Թագավորին: Երբ քեզ խարազանեն Գողգոթայի Ճանապարհին, քո արյունը կխառնվի Իմ Արյան հետ: Ի՞նչ ավելի մեծ չնորհ կարող եմ ես առաջարկել քեզ, քան այն, որ քեզ դարձնեմ մի կենդանի խաչելություն Իմ Փառքի համար: Երբ ես տեսնեմ, որ քո ոտքերը պատրաստվում են չեղվել ճանապարհից, ես կվերցնեմ քեզ ու կդնեմ իմ ուսերին, ինչպես մի գառան: Ե՛կ, դու միշտ ապահով կլինես Ինձ հետ:

Հիսու՛ս, Դու իմ Հույսն ես, Իմ Ուժը,
իմ Ուրախությունը և իմ Երգը:
Ես միշտ ապաստան կգտնեմ
Քո Սուրբ Սրտում:

Օգոստոսի 10, 1991

(Հռոդոս)

Ես Եմ-ը խնդրում է ձեզ ամեն օր անձնատուր լինել Ինձ: Փնտրեք Ինձ և պիտի գտնեք Ինձ: Ես և ձեր Սուրբ Մայրը ասում ենք ձեզ. աղոթե՛ք, աղոթե՛ք, աղոթե՛ք և շարունակեք աղոթել: Սատանան գալիս է, երբ դուք քնած եք: Ուստի սատանային մի տվեք ոչ մի հենակետ: Աղոթե՛ք, քանզի աղոթքը ձեր զենքն է սատանայի դեմ:

Սերը սիրում է ձեզ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 11, 1991

(Աթենքի և Հռոդոսի նորաստեղծ աղոթախմբին):

Ես ասել եմ. դուք Լույսի Իմ զավակներն եք և պիտի ասեմ նաև, որ ձեր Տունը Իմ Սուրբ Սիրտն է: Հիշե՛ք: Ձեր բոլորի հանդեպ ունեցած Իմ Սերը Մեծ է: Այլևս երբե՛ք, երբե՛ք մի մոռացեք սա:

ΙΧΘΥΣ

(Հետո Հիսուս խնդրեց մեզ կարդալ Կող. 3:5-17):

Օգոստոսի 12, 1991

(Հռոդոս)

[1] Շատ հույն ուղղափառ աստվածաբաններ և վանականներ ծաղրում են ինձ:

(Պատգամ աղոթախմբի համար):

Տե՞ր իմ և Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Ես ազատորեն պիտի խոսեմ իմ դառների հետ:

Այն, ինչ Ես խնդրում եմ ձեզանից՝ սեր է: Սիրեք Ինձ առանց կաշկանդումի: Ես Վսեմ Սիրո Աղբյուր եմ: Եկեք դեպի Ինձ և վերցրեք Ինձանից ու լցրեք ձեր սրտերը, որպեսզի կարողանաք այդ սերը տալ ուրիշներին: Ես Ներկա եմ, ուր էլ որ դուք լինեք, ուստի երբեք մի՛ մոռացեք, որտեղ որ դուք եք, այնտեղ էլ Ես եմ: Ես՝ Տերը, օրհնում եմ ձեզ: Հոգ տարեք ձեր եղբայրների և քույրերի համար և բերեք նրանց Ինձ մոտ: Թողեք, որ նրանք էլ տեսնեն Իմ Սուրբ Դեմքը: Իմ փոքրիկ երեխաներ, Ես ստեղծել եմ ձեզ Սիրուց մղված, որպեսզի սիրեք Ինձ, սփոփեք Ինձ ու փառաբանեք Ինձ:

– Դուք ուզում եք փառաբանե՞լ Ինձ: Ուրեմն սիրեք Ինձ և պաշտեք Ինձ: Երկինք տանող ճանապարհը՝ Ինձ ուղղված ձեր աղոթքներն են: Ես ուզում եմ աղոթքներ, որոնք բխում են ձեր սրտից: Ուստի Ես ասում եմ ձեզ՝ աղոթե՛ք, աղոթե՛ք, աղոթե՛ք: Հիշե՛ք, որ ձեր Մոր Սիրտը և Իմ Սիրտը միացած են Սիրով: Ուստի դու՛, դո՛ւ, որին Իմ Սիրտը սիրում է, ե՛կ Մեր երկուսի մոտ, և Ես քեզ հանգիստ կտամ Իմ Սուրբ Սրտում, իսկ պաշտպանություն քեզ կտրվի քո Մոր Սրտում: Ես Հարությունն եմ, և Ես հարություն կտամ ձեր նման շատ շատերին, ինչպես որ հարություն տվեցի ձեզ: Ես Ողորմություն եմ, և Իմ Անսահման Ողորմության պատճառով Ես թույլ եմ տալիս դիպչել Իմ Սրտին:

Սերը և Ողորմությունը <u>հիմա</u> հենց ձեր դռների մոտ <u>է</u>:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 13, 1991

(Հռոդոս)

Օ՜ Յահվե,
իմ Աստված և Հայր, ժպտա մեզ:

Տե՞ր:

Ես եմ: Այդ Ես եմ, Յահվեն, քո Աբբան:

Օ՜ Աստված, ողորմյա մեր թշվառությանը:

Ծաղի՛կս, Ես՝ Յահվեն՝ քո Աստվածը, Ամենագթառատն եմ: Ես Ողորմության, Կարեկցության և Քնքշության մի անծայրածիր Օվկիանոս եմ:

Ես ձեզ տվել եմ Իմ Օրենքը, բայց բավական չէ ասել, որ գիտեք Իմ Օրենքը: Դուք պետք է գործադրեք Իմ Օրենքը: Ոչ էլ բավական է ասել,

որ հավատում եք, որ Ես եմ: Ես ցանկանում եմ, որ դուք սիրեք և պաշտեք Ինձ: Նույնիսկ չարքերն են հավատում, որ Ես եմ, բայց նրանք Ինձ չեն սիրում, ոչ էլ պաշտում են Ինձ: Նրանք լսում են Իմ Ձայնը, բայց նրանք Ինձ չեն սիրում:

Հավատարիմ եղեք Ինձ, և դուք, դո՛ւք, որ Իմ սերմն եք, եկեք Ինձ մոտ՝ ձեր Աբբայի, և սփոփեք Ինձ: Ես Հոգնած եմ, և դուք միայն այն մնացորդն եք, որ կարող եք սփոփել Ինձ: Դուք Իմ հոտի ամենափոքրերն եք, և Իմ աչքերը Ձեզ վրա են:

Ձեր Աբբան Իր Գահից ասում է ձեզ. Ես սիրում եմ ձեզ բոլորիդ մի հավիտենական Սիրով: Օրհնյալ եղեք:

(Ավելի ուշ)

Տե՛ր, ներիր մեզ, քանի որ
մենք իսկապես չենք կարողացել
գնահատել Քո Մեծ Սերը:
Մենք չենք կարողացել գնահատել
Քո Մեծ Զոհաբերությունը:
Մենք չկարողացանք սիրել
և միասնական մնալ:
Մենք անընդհատ շարունակում ենք
կրկնել մեր սխալները:
Օ՜, Տեր Հիսուս, մենք անչափ
Քո օգնության կարիքն ունենք
գիտակցության գալու համար:
Արի՛ և փրկիր մեզ:
Սրբության պսակն ընկել է
մեր գլուխներից:
Նայի՛ր մեզ վրա և տես մեր թշվառությունը,
մեր խղճալի ստորացումը,
մեր փչացումն ու այլասերումը
այն ամենի հանդեպ, որ սուրբ է:
Մեզ ետ բեր դեպի Քեզ՝
այցելելով մեզանից յուրաքանչյուրին,
ինչպես ինձ այցելեցիր:
Այցելիր Քո մնացած զավակներին
և ցույց տուր նրանց Քո Սիրտը:

Իմ Վասուլա, Ես ուզում եմ ամեն մի շուրթից լսել.

«Հիսո՛ւս, ես սիրում եմ Քեզ,
փրկի՛ր իմ հոգին
և փրկիր ուրիշների
հոգիները նույնպես»:

Դրա համար աղոթեք այդ խեղճ հոգիների դարձի համար: Աղոթե՛ք ինչօրյա աղոթքներ, և ես կլսեմ: Ես կարող եմ համառությունը հնազանդության փոխել: Ուստի աղոթեք Իմ Սուրբ Սրտին, և Ես կանեմ մնացյալը:

Օգոստոսի 18, 1991

Օ՜ Տեր, Ես այնքան անհանգիստ եմ,
մահու չափ անհանգիստ:
Այսօր իմ Գեթսեմանին է:
Իմ սիրտը կոտրված է և վշտահար:
Սատանան պարզորոշ կերպով
ինձ թիրախ է դարձրել,
որ կտոր-կտոր անի ինձ:
Նա ավելի ու ավելի
անխղճորեն խոցում է ինձ:
Ես ինձ հալածողների թիրախն եմ:
Որտե՞ղ է ուրեմն իմ հույսը:

Իմ Սուրբ Սրտում, Իմ Աղավնի: Իմ Սուրբ Սիրտն է քո աղավնատունը: Շրջվիր դեպի Ինձ, և Իմ Հոգին կափոփի քեզ: Ինձ հանձնիր քո հոգսերը, և Ես դրանք պիտի դնեմ Իմ Սրտում: Ես լավ կօգտագործեմ դրանք: Ես հոգիներ կազատեմ քավարանից... Ուրեմն մոռացիր այս օրերի քո հոգսերը և հանգստացիր Իմ մեջ՝ քո Աստծո մեջ: Ես Խաղաղության մի Օվկիանոս եմ: Տո՛ւր ինձ, աղջիկս, քո բոլոր նեղությունները, և Իմ Խաղաղությունը պիտի կլանի ու ոչնչացնի դրանք:

Իմ Խաղաղությունը քեզ, դառնուկս: - Ես սիրում եմ քեզ: - Ես Խաղաղություն եմ տալիս: Հանգչիր Իմ մեջ: Հիմա գնա Խաղաղությամբ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 19, 1991

Տե՛ր, երբ խաղարարները[1] առաջնորդվելով Սուրբ Հոգով, աշխատում են խաղաղության համար, ցանելով սերմեր, որոնք բարի պտուղ են տալիս, ինչո՞ւ են նրանց սատում, որ լռեն: Ինչո՞ւ են նրանց հետապնդում: Ինչո՞ւ նրանց չեն հավատում:

Որովհետև նրանք[2] վաճառականների կողմից գնվում են, ինչպես թանկարժեք ապրանք: Բանապաշտությունը (ռացիոնալիզմը) մշուշում է նրանց հոգին, բթացնում է նրանց զանազանելու կարողությունը և սպանում է նրանց համեստությունը: Ինչպես Սոդոմը և Եգիպտոսը,

[1] Նրանք, ովքեր քարոզում են Աստծո Խոսքը, որպեսզի աշխարհն առաջնորդեն դեպի Աստված ու հաշտեցնեն Աստծո հետ:
[2] Անհավատները:

նրանք ժխտում են այն ամենը, որ գալիս է Եկեղեցու խորքից, այն ներքին ուժից, որն

Իմ Սուրբ Հոգին է:

Չնայած դրան, ես կտամ քեզ Իմ Ուժը, որպեսզի կարողանաս շարունակել, քանզի դա է Իմ Կամքը:

Օգոստոսի 20, 1991

Ի՜նչ հրաշալի կլինի,
եթե բոլոր քրիստոնյաները
ապրեն եղբայրների պես:
Որքա՜ն ավելի մեծ կլինի Քո Փառքը,
որ մեզ տեսնեն խոնարհ,
մեկ Տապանակի ու Խորանի շուրջ՝
մեկ սրտով, մեկ մտքով
և մեկ ձայնով Քեզ գովաբանելիս...
Մինչդեռ, երբ ես հետևում եմ
Քո հրամաններին
և վկայում եմ միասնության համար,
ինձ ո՛չ հասկանում են,
և ո՛չ էլ հավատում: Նրանք ինձ
գետնին են գցում ու ջարդում,
ինչպես մի ջաղացքար:

Զավա՛կս, Օծյալը քո Հովիվն է, և Նա հովվում է քեզ բացելով քո ճանապարհը: Դո՛ւ, որ ծածկված ես Իմ Օրհնություններով, Ես միայն խնդրում եմ քեզանից, որ փոխանցես ազգերին Իմ կողմից քեզ տրված Սերը: Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ, փոքրիկ Հոգի: Աբբան քեզ Իր Բազուկների մեջ է վերցրել: Ես Եմ-ը քեզ հետ է:

Նայի՛ր Ինձ, Ես քեզ համար ի՜նչ չեմ անի... Իսկ դո՞ւ: Դու կարո՞ղ ես նույն բառերն ասել:

Այո՛, Տեր:

Ուրեմն, ելիր և շարունակիր վկայել: Քո մրցավազքը դեռ չի ավարտվել, բայց սրտով չթուլանաս: Ես քո կողքին եմ, որպեսզի խրախուսեմ քո փոքրիկ սիրտը: Քո կոճերը կապված են Իմ Կոճերին: Եվ Իմ Շուրթերը կպած են քո ականջներին, որպեսզի չշնչան քեզ և հիշեցնեն, որ դու ավելի մեծ չես, քան քո Աստվածային Ուսուցիչը: Դու պարզապես Իմ աշակերտն ես: Մի՞թե նրանք այն նույն խարանները չեն պատճառի քեզ, ինչ որ պատճառեցին քո Ուսուցչին՝ Գլխավոր Նահատակին:

Աղջի՛կս, սիրիր ինձ, և Ես կշարունակեմ քեզ ողողել Իմ Սուրբ Սրտի

Հարստություններով, մի ամբողջ Հարստություն, որը պահված էր ձեր ժամանակների համար: Ես մի անգամ ասել եմ, որ Վերջին Ժամանակներում Իմ Սուրբ Սրտի միջոցով Ես կկատարեմ գործեր, ինչպիսիք չեն կատարվել նախկինում, գործեր, որ կհմայեն ձեզ՝ Իմ Սուրբ Սրտի ճառագող Փառքը ցույց տալու համար: Ես խոստացել էի, որ ամբողջությամբ և անկեղծորեն բաց կանեմ Իմ Սուրբ Սիրտը, որպեսզի հրապուրեմ սրտեր, որովհետև Իմ Խոսքերը մեղրից էլ քաղցր են: Ամեն ինչ պիտի ավարտվի իր ժամանակին: Վստահիր ինձ: Թող ոչ մեկը չխաբի քեզ, զավա՛կս: Իմ Պարգևն արդեն ապացուցել է Իրեն: Ես օրհնում եմ քեզ: Իմաստությունն Իր Բարի Գործերը կշարունակի քեզ հետ:

Օգոստոսի 30, 1991

Տեր իմ և Կյանք իմ:

Ես եմ: Լռությունը լավագույն զենքն է աղոթքից հետո: Ես շուտով ոտնակոխ կանեմ Իմ թշնամուն:

Վասո՛ւլա, լսիր ինձ: Ձեր Սուրբը հարություն է տալիս Ռուսաստանին, որպեսզի այն լինի մի ազնվազարմ ժողովուրդ: Ռուսաստանը կատարյալ կդառնա իր Ամուսնու Բազուկներում: Ես՝ Տերը, կատարյալ պիտի դարձնեմ նրան: Մի՞թե Ես քեզ չեմ ասել, զավա՛կս, որ Ես Իմ Ձեռքը դրել եմ նրա սառը սրտի վրա՝ տաքացնելով այն[1]: Եվ այն օրը, երբ Իմ հարսը կբացի իր աչքերը և կտեսնի Ինձ՝ իր Փեսային, կանգնած իր կողքին, նա պիտի տեսնի ու հասկանա, թե ինչ են արել Իմ Ձեռքերն իր մեջ և, այդ պահից սկսած, Ռուսաստանը՝ Իմ Հարսը, բացահայտ Սուրբ պիտի պահի Իմ Անունը: Եվ բոլոր մոլորված չար ոգիները նրա միջից կփախչեն: Ես ձեզ ասել եմ այս բոլոր բաները նախքան դրանց կատարվելը, որպեսզի դուք հավատաք, որ այդ Ես եմ՝ Ամենակարողը, որ առաջնորդում է ձեզ: Լսի՛ր ինձ: Ես չեմ ծածկի Իմ Ծրագրերը: Եթե մարդիկ փորձեն ծածկել Իմ Ծրագրերը, Ես Իմ Սեփական Ձեռքով պիտի բացահայտեմ ձեզ ամեն ինչ, նախքան դրանց կատարվելը: Սուրբը զգուշացնում է ձեզ: Ես չեմ սպառնացել ձեզանից ոչ մեկին:

~ Լույսի մի Ճառագայթ պիտի գա Երկնքից Իմ Մարմնի մեջ[2] և պիտի փոխի այս երկրի դիմագիծը և խաղաղություն բերի եղբայրների մեջև[3]: Սա կլինի նահատակ սրբերի աղոթքների, զոհաբերությունների, ապաշխարության, հարատևության և հավատքի պարգևը:

~ Զվախենաք, երբ <u>մեծ նեղությունների ժամը գա</u>, եթե հարատևել եք ու պահպանել ձեր հավատքը, որովհետև այդ <u>ժամը</u> պիտի գա, որպեսզի փոխի այս երկրի դիմագիծը: Այսպիսով, այն ամենը, ինչ ասվել է

[1] Տես՝ 1988թ. մարտի 11-ի մարգարեական պատգամը Ռուսաստանի վերաբերյալ:
[2] Եկեղեցու:
[3] Այստեղ ես հասկացա, որ Տերն ակնարկում է եկեղեցիների ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆԸ:

Ֆաթիմայում՝ կկատարվի:

- Հայրը սիրում է ձեզ բոլորիդ, և Նա ոչ մեկին չի դատում: Հնձվորն արդեն գործի է անցել: Հոր Գործերը կզարմացնեն ձեզ բոլորիդ:

- Իսկ ինչ վերաբերվում է քեզ, զավա՛կս, ետ նայիր իմ պատգամներին: Մի՞թե Ես չեմ ասել, որ Ես՝ Տերը, շատ հրաշքներ եմ կատարել ձեզ համար և դեռ շատ ավելին պիտի անեմ գալիք օրերին[1]:

Տեսնո՞ւմ ես, ինչպես են իրականանում Իմ կանխատեսումները: Եվ հիմա Ես ասում եմ ձեզ, որ Իմ Գալուստով Երկինքը շուտով պիտի հեղեղվի ձեզ վրա: Իմ Կրակը սուրալով պիտի թափվի այս երկրի վրա, որպեսզի այրի նրա հանցանքները: Ես ետ չեմ պահի Իմ Ձեռքը: Իմ Սուրբ Անունը ամեն օր անարգվում է, և Իմ կանոնները արհամարհվում են, որպեսզի կատարվեն Աստվածաշնչում գրված խոսքերը:

(Գրիր). «Այդ իսկ ժամին մեծ երկրաշարժ եղավ, և քաղաքի մեկ տասներորդ մասը գետնի տակ թաղվեց. երկրաշարժից մեռավ յոթ հազար մարդ[2]: Դրանից հետո բոլորի մեջ մեծ ահ առաջացավ և փառք էին տալիս երկնավոր Աստծուն»[3]: Հիմա շատ քիչ ժամանակ է մնացել: Ներեցե՛ք ձեր մերձավորին, քանի դեռ ժամանակ ունեք: Ուղղվե՛ք, ծոմ պահեք: Եթե դու մեղավոր ես, որ խռովություն ես սերմանում ընկերների մեջ, զղջա՛ ու ապաշխարիր: Հանուն Իմ Սուրբ Անվան վերադարձիր Ինձ մոտ: Դու քո կամքի տերն ես, բայց ոչ Իմ Ծրագրերի, և Ես հարկադրաբար խնդրում եմ քեզ, որ շտապ հանձնվես:

Սատանան առանց հոգնելու ուղարկում է իր հմուտ հետևորդներին ձեզ բոլորիդ մոտ, ուստի առավել քան զգոն եղեք: Նրա իշխանությունը մոտենում է իր ավարտին: Այս է պատճառը, որ նա մի վերջին անգամ դուրս կթափի իր կատաղությունը այս աշխարհի վրա՝ հուսալով քշել տանել որքան կարող է շատ հոգիների: Այս է պատճառը, որ ձեր մեջ պետք է հաստատակամություն և հավատք լինի, որովհետև այդպիսով դուք կարող եք խուսափել և նույնիսկ հետ պահել սատանային՝ այս երկրի վրա իր կատաղությունը թափելուց:

Խիզախ եղիր, աղջի՛կս, բարձրացրու գլուխդ և հենվիր Ինձ: Ես կշարունակեմ օգնել քեզ:

ΙΧΘΥΣ

Ամենողորմ Տեր, թող նրանք,
ովքեր ասում են. «Մենք կգնանք
մեր սեփական ճանապարհով»,

վերադառնան դեպի Քեզ:
Եվ այն քրիստոնյաները,
ովքեր ասում են Պապին.
«Մենք կգնանք

[1] Տերը նկատի ունի հուլիսի 23, 1991թվի իր պատգամը, որ գալիք օրերին Նա ավելի շատ հրաշքներ
է անելու: Կանխատեսում, որ վերաբերում էր կոմունիզմի անկմանը Ռուսաստանում:
[2] Այսինքն, շատ մեծ թվով, բոլոր դասերից:
[3] Հայտ. 11:13: Կարդա նաև Մատթ. 24:22, Մաթ. 24:29-30

մեր սեփական ճանապարհով»,
ետ վերադառնան
և ենթարկվեն Պապին:

Թող նրանց
մարդկային հպարտությունը
խոնարհի իր աչքերը
և նրանց ամբարտավանությունը
նվաստացվի: Ամեն:

Սեպտեմբերի 3, 1991

Տե՛ր, Հայր և Տիրակալ մեր կյանքի,
մի՛ լքիր մեզ հիմա,
և ոչ էլ՝ դժբախտության օրերին:

Տե՛ր, Հայր և Տիրակալ մեր կյանքի,
Օգնի՛ր Ռուսաստանին
աճելու Քո Հոգով:
Դու խոցել ճեղքել ես
Կարմիր Վիշապին,
որը գրավել էր նրան:

Տե՛ր, Հայր և Տիրակալ մեր կյանքի,
փրկիր մեզ այն Ըմբոստից,
որ դեռևս մնում է մեր մեջ:

Ա՛հ, զավակս, Ես քեզ ամեն ինչ պիտի սովորեցնեմ Իմ Մաքրագործող Կրակով: Սպասի՛ր, և պիտի տեսնես: Լսի՛ր Ինձ հիմա և գրիր, զավա՛կս.

Դեռ մինչև վերջերս աշխարհի ազգերից շատերն ընդհանրապես չէին հավատում, որ թշնամին՝ Կարմիր Վիշապը, այդքան հանկարծակի իր ուժը կկորցնի Ռուսաստանում: Վասո՛ւլա, եթե քո քույր Ռուսաստանն ըմբոստացավ Իմ դեմ, դա աշխարհի մեղքերի և հանցանքների հետևանք էր: Բռնակալությունը գալիս է ներքևից:

Բայց ի՞նչպես էին զգում նրա զավակները, այն նահատակները, որոնք Քեզ էին պատկանում:

Ինչպե՞ս կարող եմ նկարագրել, թե ինչ տանջանքներ են կրել նրա զավակները: Ինչի՞ հետ կարող եմ Ես համեմատել դրանք, աղջի՛կս: Ամբողջ Երկինքը սգում էր նրա զավակների համար: Նրա որդիներն ընկած էին անօգնական, բայց ո՞վ կար այնտեղ նրանց սգացող: Արդյոք նրանց մեջ կա՞ր այնքան ուժեղ մեկը, որ խոցեր Վիշապին: Այն ժամանակ, երբ նրանց մաշկը կծկվել հասել էր իրենց ոսկորներին, ոչ ոք չկար նրանց մոտ: Նրա զավակները Հաց էին մուրում՝ ճնշված թշնամու կողմից. նրանք ուժասպառ ցած էին ընկնում իրենց բեռան տակ: Եթե նրանք գաղտնաբար ապաստան էին գտնում Իմ Բազուկների մեջ, խստորեն պատժվում էին:

Նրանց չէր թույլատրվում ցույց տալ իրենց նվիրվածությունը հանդեպ Ինձ: Նրանց հետապնդողները ավելի արագաշարժ էին, քան օձերը՝ աչառու հետևելով նրանց կատարած յուրաքանչյուր քայլին: Եվ եթե կասկածում էին, որ Կյանքի Գիրքը կարող է թաքցված լինել նրանց անկողնու տակ, Իմ զավակները ենթարկվում էին նեղության, հետապնդման, իսկ հետո՝ կալանքի:

Ա՜հ, աղջիկս, Իմ աչքերն անդադար արցունք են թափում, երբ տեսնում եմ, թե ինչպես սրով այս ազգին ստիպեցին լռել: Քահանաներին ու մարգարեներին կալանավորներ դարձրին և ստիպեցին ապրել խավարի մեջ: Նրանցից շատերին անխղճորեն մորթոտեցին հենց Իմ Աչքերի առաջ: Այս ազգը, որ մի ժամանակ փառաբանում էր Ինձ և գովաբանում էր Ինձ բացահայտ ձևով, որ պայծառ էր, ինչպես մի շափյուղա, և բերկրանքների մի Ամրոց էր, վերածվեց երաշտից չորացած անջուր մի երկրի՝ աշխարհի մեղքերի ու հանցանքների պատճառով: Ասում եմ քեզ, աղջի՛կս, Ռուսաստանը՝ քո քույրը, դեռ քեզ ցույց չի տվել, թե ինչ պիտի կատարի Իմ Անունով:

<u>Տոնախմբության Օրը</u>
<u>դեռ պիտի գա,</u>
<u>և ես որքան կուզենայի, որ այն</u>
<u>արդեն եկած լիներ:</u>

Աղոթի՛ր, աղոթիր այդ Փառահեղ Օրվա համար:

Սեպտեմբերի 9, 1991

Իմ Հիսո՞ւս:

Ե՛ս եմ:
Սիրի՛ր Ինձ, Վասուլա, դա մեղմացնում է Հոր ցասումը այս սերնդի վրա: Ես աղոթեցի Հորը քեզ համար, փոքրիկս, Հորը, որ ազատի քեզ «այն փշից», որը դու վերցրել ես Ինձանից[1]...

Տե՛ր, խնդրում եմ հաստատիր այն, ինչ որ ես հենց հիմա լսեցի Քեզանից՝ Քո Խոսքից ինձ մի հատված ցույց տալով:

(Ես բացեցի պատահական մի էջ Աստվածաշնչից, և իմ մատը կանգ առավ Ղուկ. 22:42-ի վրա): Այնտեղ գրված էր.

> *«Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրու, բայց ոչ թե իմ կամքը, այլ Քոնը թող լինի»:*

[1] Ես առաջարկել էի Հիսուսին ինձ վրա վերցնել այդ «փուշը» (Հունիսի 18, 1991): Դրանով Հիսուսի վրա մի փուշ պակաս կլիներ: «Փուշը», որի մասին Հիսուս խոսում է, նկարագրված է Հունիսի 18, 1991թվի պատգամում: Այս փուշը Հիսուսին է տվել Նրա սիրելիներից մեկը, որը գործուն կերպով հալածում է այս Պատգամները: Սատանան շփոթեցրել է նրան և հիմա օգտագործում է իր նպատակների համար:

Օրհնյալ եղիր: Ես պիտի առաջնորդեմ քեզ:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 11, 1991

Տե՛ր, ես նայում եմ վեր, երկնքին
և փնտրում եմ երկնային բաներ:
Ես փնտրում եմ Քո Սուրբ Դեմքը,
որ խաղաղություն զգամ
և կարողանամ ուրախանալ:
Ես փնտրում եմ Քո Սուրբ Դեմքը,
որպեսզի կարողանամ խորհրդածել:

Իսկ Իմ մասին ես կասեմ. Իմ Աչքերը նայում են ներքև այսօրվա աշխարհին, հետազոտելով ազգ ազգի հետևից, զննելով հոգի հոգու հետևից՝ ինչ-որ ջերմություն գտնելու հույսով, ինչ-որ դիմադրություն գտնելու հույսով և ինչ-որ սեր գտնելու հույսով, բայց չափազանց քչերն են վայելում Իմ բարեհաճությունը: Շատ քչերն են մտահոգված ապրելու սուրբ կյանքով: Եվ օրերն անցնում են արագորեն և ժամերը հիմա հաշվված են նախքան մեծ հատուցման օրը: Իմ քաղաքները[1] դարձել են անառակների բնակատեղի: Անխիղճ ու անողորմ: Նրանք ամբոց են դարձել դևերի համար՝ ներքուստ ամբողջովին ապականված ու որդերից կերված: Իժերի և կարիճների մի ապաստան: Ինչպե՞ս կարող եմ Ես այդ ուխտադրուժների վրա չթափել Իմ Մաքրագործող Կրակը...

(Հիսուս հանկարծ փոխեց տոնը, և մի քանի վայրկյան սպասելուց հետո, չափազանց լուրջ տոնով, որից ես սարսափեցի, ասաց):

- Երկիրը կդողա և կցնցվի, -

և ամեն մի չարիք կառուցված Աշտարակների ձևով[2] կփլուզվի, կդառնա մի քարակույտ և կթաղվի մեղքի փոշու մեջ: Վերևում Երկինքը կցնցվի և երկրի հիմքերը կսասանվեն: Աղոթի՛ր, որ Հոր Ձեռքը ներքև չիջնի ճմռանը:

Ես անսպասելի կայցելեմ կղզիները, ծովը և մայր ցամաքները՝ որոտով և Բոցով: Ուշադիր լսեք նախազգուշացման Իմ վերջին խոսքերը: Լսե՛ք հիմա, քանի դեռ ժամանակ կա: Կարդացե՛ք Մեր Պատգամները[3], և դադարեք արհամարհական ու խուլ լինելուց, երբ Երկինքն է խոսում: Ցածրացրե՛ք ձեր ձայները, և դուք կլսեք Մեր Ձայնը:

Մտածե՛ք կրկին անգամ, նախքան կդատեք, մտածեք ավելի քան երկու անգամ, նախքան կարհամարհեք Սուրբ Հոգու Գործերը: Ես չեմ խնայի ոչ

[1] Այստեղ քաղաքներ բառն օգտագործվում է Աստծու կողմից հոգիներ բառի փոխարեն:
[2] Ինչպես Բաբելոնի աշտարակը:
[3] Երկու Վկաների՝ Հիսուսի և Մարիամի պատգամները:

մեկին, ով ծաղրում է Սուրբ Հոգուն՝ բացահայտորեն հայհոյելով նրան: Արդարությունը այդպիսիներին կուղարկի դժոխք:

Ամենքդ բարձրացրեք ձեր դեմքերը, և Երկնքում փնտրեք Իմ Սուրբ Դեմքը՝ խորհրդածելու համար: Բարձրացրե՛ք ձեր աչքերը դեպի Երկինք, և դուք չեք կորչի:

Ապաշխարե՛ք և խնդրեք Հորը, որ Նա մեղմանա: Շուտով, շատ շուտով, Երկինքը կբացվի, և Ես ձեզ թույլ պիտի տամ տեսնել

Դատավորին[1]:

[1] 2001թվի սեպտ. 11-ի Նյու-Յորքի դեպքերից հետո (վերը նշված պատգամն ստանալու օրվանից 10 տարի հետո), Վասուլան տվեց հետևյալ մեկնաբանությունը:
Ես ուզում եմ, որ մարդիկ ուշադիր լինեն այս պատգամը մեկնաբանելիս: Մարգարեությունը բացատրել հեշտ չէ, եթե այդ մեկնաբանությունը չի տրվում Սուրբ Հոգու լույսով: Այս հայտնության պատգամը պետք է մեկնաբանվի հետևյալ ձևով:
Մեր սերունդը սառել է Աստծո հանդեպ: Եվ քանի որ այսօրվա մեր աշխարհն ապրում է մեծ ուրացության մեջ, Աստված միջամտում է, որ զգուշացնի մեզ, ցույց տալով նշաններ, ինչպես օրինակ՝ արյան արցունքներ հեղող արձաններ, յուղի կամ արյան արցունքներ հեղող սրբապատկերներ: ՃԿԱՄ պատգամները նույնպես մի նշան են, ինչպես մի քանի այլ երևումները, որոնք տրվում են որպես զգուշացում, որպեսզի մեզ աղոթելու մղեն: Այս նշաններից շատերը մերժվել, արհամարհվել ու հալածվել են, և սա մեզ հիշեցնում է Հայտ. 11-րդ գլխի մասին, որը վերաբերում է Երկու Վկաներին, որոնք են Մարիամը և Հիսուս՝ Եղիայի (որը մարգարեությունն է ներկայացնում), և Մովսեսի (օրենքի հիշեցնողի) առաքելական առաջադրանքով, ինչպես նկարագրված է 1991 թվի, դեկտ. 24-ի պատգամում: Այս ամենն ամբողջությամբ հասկանալու համար պետք է կարդալ նշված պատգամը: Ուրացություն նշանակում է աստվածային Ճշմարտության մերժում, որը մեզ առաջնորդել է ապրելու մի կյանք՝ առանց Աստծո: Ուրացությունը չարիք է բերում աշխարհին: Մեր Տիրուհին ինձ մի կարևոր պատգամ տվեց այս առնչությամբ (մայիս 15, 1990):
ՃԿԱՄ-ի պատգամներում Աստված մեզ բավականաչափ հնարավորություն է տալիս, որ մենք ապաշխարենք և ապրենք սուրբ ձևով: Չնայած դրան, աշխարհը խլացել է Աստծո կանչերի հանդեպ և ընդհակառակը, ծաղրում է վերևից եկող ամեն մի կանչը՝ զգուշացնելով մեզ, որ եթե մենք չփոխենք մեր սրտերը և զոհաբերություններ չանենք, չուղղվենք ու չզղջանք, մեր մեղքերը մեզ մահվան կհասցնեն: Քրիստոսը խնդրում է մեզ կարդալ Աստվածաշունչը. (Բ Թես. 2), որպեսզի հասկանանք, որ մենք իսկապես ապրում ենք վերջին ժամանակներում: Պողոսն ասել է, որ ճանաչենք դրանք երկու նշաններով՝ մեծ հավատուրացությամբ և ըմբոստության ոգով: Ըմբոստության ոգին Աստված է համարում իրեն և կապկում է Աստծուն ու վեր է դասում իրեն Աստծուց: Այսօր աշխարհը հավատում է իր սեփական հասկացողությանը: Այդ նրանք են, ովքեր բղավում են Աստծուն, թե «Մենք քո կարիքը չունենք»:
Աստված չի պատժում և չի ցանկանում տեսնել իր մարդկանց տառապելիս, բայց մենք ինքներս ենք մեզ կործանում, և մենք ենք, որ ամեն մի չարիք բերում ենք մեզ վրա: Այս է պատճառը, որ շատ պատգամներում, և ոչ միայն 1991 թվի սեպտեմբերի 11-ի պատգամում, Քրիստոսը մեզ զգուշացնում է, որ սատանան մի մեծ սպանդ է նախապատրաստում մեզ ոչնչացնելու համար:
Այն մարդիկ, ովքեր մահացել են՝ լավ կամ վատ, նրանք մեր այսօրվա մեղքերի և խլության զոհերն են, որով Աստված մեզ նախազգուշացնում է, որպեսզի փրկի ու խնայի մեզ տանջանքից ու մահվանից:

Սեպտեմբերի 15, 1991

Հենվի՛ր Ինձ վրա: Իմ Հոգու օրհնյա՛լ, Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Գրի՛ր:

Օ՜, Երուսաղե՛մ[1], հայացքդ ուղղիր դեպի արևելք և դեպի արևմուտք: Աչքերդ դարձրու դեպի հյուսիս և դեպի հարավ, և Ես եմ այնտեղ: Ճշմարիտ եմ ասում քեզ, որ մեկ անգամ էլ Իմ Հոգին կհեղվի քեզ վրա, և Իմ Պատկերը կտարածվի աշխարհի երեսին: Այն, ինչ Ես ծրագրել եմ, պիտի իրականանա, և այն, ինչ Ես ասել եմ քեզ, պիտի կատարվի: Մոտ արի Ինձ և լսիր ուշադրությամբ: Այսօր Ես գալիս համնում եմ քո դուռը՝ Խաղաղության դրոշը պահած: Ես գալիս եմ փրկելու քեզ, Երուսաղեմ: Դրա վրա գրված է <u>Հավատարիմ և Ճշմարիտ[2], Թագավոր Թագավորաց և Տեր տերանց[3]</u>: Ես երբևիցե կլսե՞մ, Երուսաղեմ, որ դու ասես. «Իմ Թագավոր, այդ Քե՛զ է, որ ես պետք է երկրպագեմ»: Թե՞ դու առաջվա պես չես ճանաչի Նրան, ով առաջարկում է քեզ Իր Խաղաղությունը... Հիմա: Արդյոք դու այս վերջին օրերին, նախքան Հատուցման Օրը, կճանաչե՞ս Իմ Սուրբ Հոգին, որ իջել է վերևից Իր ողջ Փառքով քեզ հետ բնակվելու: Ձեր ամբողջ կյանքի ընթացքում, սերու՛նդ, դուք ծաղրեցիք Իմ Օրենքը և երես թեքեցիք ըմբոստանալով: Դուք երբևէ պատրաստ կլինե՞ք Ինձ՝ ձեր Աստծուն, դիմավորելու: Շուտով Ես կանցնեմ ձեր Քաղաքի միջով[4]: Եվ դա կլինի ավելի շուտ, քան դուք կարծում եք: Սրանք կլինեն Իմ վերջին նախազգուշացումները: Ես հանդիսավոր ասում եմ ձեզ.

Արթնացի՛ր խորը քնից:
Դու գնում ես
դեպի քո կործանումը:
Թա՛փ տուր փոշին վրայիցդ,
որ պատել է քեզ
և բարձրացի՛ր մեռելներից:
Վերջին ժամանակները[5]
ավելի մոտ են,
քան դու կարծում ես:

- Շուտով, շատ շուտով, Ես հանկարծակի պիտի բացեմ Իմ Սրբարանը Երկնքում, և այնտեղ, ձեր աչքերից կընկնի քողը, և ինչպես մի գաղտնի հայտնություն, դուք կտեսնեք բյուրավոր Հրեշտակներ, Գահեր, Տիրապետություններ, Իշխանություններ, Զորություններ՝ բոլորը գետնամած

Իմ Ուխտի Տապանակի շուրջը:

Ապա մի Շունչ կսահի դեմքիդ վրայով, և Երկնքի Զորությունները

[1] Այսինքն՝ Օ, սերունդ:
[2] Հայտ. 19:11
[3] Հայտ. 19:16
[4] Այսինքն մեր միջով, մենք ենք քաղաքները:
[5] Վերջին ժամանակները աշխարհի Վերջը չէ: Այն մի ժամանակաշրջանի վերջն է:

կցնցվեն, կայծակի փայլատակումներին կհետևեն ամպրոպի որոտներ: «Պիտի լինի նեղության ժամանակ, նեղություն, որպիսին չի եղել ազգերի գոյության օրից ի վեր»[1]: Որովհետև, Ես պիտի թույլ տամ, որ հոգիդ տեսնի ու ըմբռնի քո կյանքի բոլոր իրադարձությունները: Ես պիտի բացահայտեմ դրանք մեկը մյուսի հետևից: Ի մեծ սարսափ քո հոգու, դու պիտի հասկանաս, թե զոհաբերվող հոգիներից որքան անմեղ արյուն է թափվել քո մեղքերի պատճառով: Հետո Ես այնպես կանեմ, որ քո հոգին հասկանա ու տեսնի, որ դու <u>երբեք</u> չես հետևել Իմ Օրենքին: Ինչպես բացված մի մագաղաթի գալար, Ես կբացեմ Ուխտի Տապանակը և քեզ գիտակից կդարձնեմ քո անօրինությանը:

- Եթե դու դեռ ողջ լինես և ոտքերիդ վրա կանգնած, քո հոգու աչքերը կտեսնեն մի շլացուցիչ Լույս՝ նման բազմաթիվ թանկարժեք քարերի փայլին, նման բյուրեղյա մաքուր աղամանդների կայծերի, մի Լույս, այնքան մաքուր և այնքան պայծառ, որ չնայած ոչ հեռվում Լռության մեջ կանգնած բյուրավոր հրեշտակներին, դու նրանց ամբողջովին չես տեսնի, քանզի այդ Լույսը ծածկելիս կլինի նրանց, ինչպես մի արծաթագույն-ոսկեփայլ փոշի: Քո հոգին կընկալի միայն նրանց ընդհանուր կերպարանքը, բայց ոչ՝ դեմքերը: Հետո, այդ շլացուցիչ Լույսի մեջ, քո հոգին կտեսնի այն, ինչ որ նրանք տեսել էին այդ վայրկենական ակնթարթում, հենց քո արարման պահին...

Նրանք կտեսնեն
Նրան, ով առաջինը պահեց քեզ
Իր Ձեռքերի մեջ: Այն Աչքերը,
որոնք առաջինը տեսան քեզ:

Նրանք կտեսնեն
Նրա Ձեռքերը, ով ձև տվեց քեզ
և օրհնեց քեզ...

Նրանք կտեսնեն
Ամենաքնքուշ Հորը՝ քո Արարչին,
զգեստավորված
ազդեցիկ վեհասքանչությամբ,
Առաջինին ու Վերջինին,
Նրան, որ է, որ էր, և որ գալու է՝
Ամենակալին,
որն Ալֆան է և Օմեգան՝
<u>Տիրակալը</u>:

Քո աչքերը, որ կկծկվեն արթնանալիս, կգամվեն Իմ աչքերի մեջ, որոնք կլինեն ինչպես <u>Կրակի երկու Բոցեր</u>[2]: Այդ ժամանակ քո սիրտը հետադարձ հայացքով կտեսնի իր մեղքերը և կլցվի զղջումով: Դու, մեծ սարսափով և

[1] Դան. 12:1
[2] Հայտ. 19:12

տանջանքով համակված, կտառապես քո անօրինության պատճառով, որովհետև կհասկանաս, թե ինչպես էիր անընդհատ պղծում Իմ Սուրբ Անունը, և ինչպես էիր մերժում Ինձ՝ քո Հորը... Խուճապահար՝ դու կդողաս և կսարսափես, երբ ինքդ քեզ տեսնես որդերից և անգղներից հոշոտված քայքայվող մի դիակ:

- Եվ եթե ոտքերդ դեռևս քեզ կանգուն պահելիս լինեն, Ես ցույց կտամ քեզ, թե քո Հոգին՝ Իմ Տաճարը և Իմ Բնակավայրը, ինչով էր մնացվում քո կյանքի բոլոր տարիների ընթացքում: Ի սարսափ քեզ, դու կտեսնես, որ Իմ Մշտնջենական Զոհաբերության փոխարեն, դու փաղաքշում էիր Օձին, և որ դու հոգուդ ամենախոր ծալքերում կանգնեցրել էիր այն Ավերածության Պղծությունը, որի մասին Դանիել մարգարեն է խոսել՝

Աստվածանարգությունը:

Աստվածանարգությունը, որ քեզ կտրեց Ինձ հետ կապող քո երկնային բոլոր կապերը և ստեղծեց մի Անդունդ քո և Իմ՝ Քո Աստծո միջև: - Երբ այդ Օրը դա, քո աչքերի քողը կընկնի, որպեսզի հասկանաս, թե որքան մերկ ես դու, և ինչպիսի անապատի ես վերածվել քո ներսում... Դժբախտ արարած, քո ըմբոստությունը և Ամենասուրբ Երրորդության ուրացումը քեզ դարձրին ուխտադրուժ, և Իմ Խոսքը հալածող: - Այնժամ քո ողբն ու աղաղակները միայն քեզ լսելի կլինեն: Ես ասում եմ քեզ. Դու կողբաս և լաց կլինես, բայց քո ողբը միայն քո սեփական ականջները կլսեն:

Ես կարող եմ միայն դատել, ինչպես Ինձ ասված է, որ դատեմ, և Իմ դատն արդար կլինի: Ինչպես եղավ Նոյի ժամանակ, այդպես էլ կլինի այն ժամանակ, երբ Ես բացեմ Երկինքը և ձեզ ցույց տամ Ուխտի Տապանակը: «Որովհետև այն օրերին՝ Զրհեղեղից առաջ, մարդիկ ուտում, խմում էին, կին առնում, ամուսնանում, մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տապանը: Եվ նրանք ոչինչ չէին կասկածում՝ մինչև Զրհեղեղը եկավ և ամեն ինչ սրբեց տարավ»[1]: Ահա այդպես էլ կլինի նաև այդ Օրը: Եվ Ես ասում եմ ձեզ, որ եթե այդ ժամանակը չկարճացվեր ձեր Սուրբ Մոր միջնորդությամբ, նահատակ սրբերի և երկրի վրա հեղված արյան ծովով՝ սկսած Սուրբ Աբելի արյունից մինչև Իմ բոլոր մարգարեների արյունը, ձեզանից ոչ մեկը կենդանի մնացած չէր լինի:

Ես՝ ձեր Աստվածը, ուղարկում եմ հրեշտակ հրեշտակի հետևից ձեզ հայտնելու, որ Ողորմության Իմ ժամանակը սպառվում է, և որ Երկրի վրա Իմ Թագավորության ժամանակը շատ մոտ է: Ես ուղարկում եմ Իմ հրեշտակներին Իմ Սիրո մասին վկայելու «երկրի բոլոր բնակիչներին, բոլոր ազգերին, ցեղերին, բոլոր լեզուներին և ժողովուրդներին»[2]: Ես ուղարկում եմ նրանց, որպես վերջին օրերի առաքյալների՝ հայտարարելու, որ «աշխարհի Թագավորությունը կդառնա, ինչպես Իմ Թագավորությունն

[1] Մատթ. 24:38-39
[2] Հայտ. 14:6

է երկնքում, և որ Իմ Հոգին ձեր մեջ կթագավորի հավիտյանս հավիտենից»[1]: Ես ուղարկում եմ Իմ ծառաներին՝ մարգարեներին այս անապատում աղաղակելու, որ դուք պետք է՝

«Վախենաք Ինձանից
ու փառք տաք Ինձ,
քանզի ժամանակը եկել է,
որ Ես դատեմ»[2]:

Իմ Թագավորությունը հանկարծակի կգա ձեզ վրա: Այդ է պատճառը, որ դուք պետք է հաստատակամություն և հավատ ունենաք մինչև վերջ:

Զավա՛կս, աղոթիր մեղավորի համար, որ անտեղյակ է իր անկմանը: Աղոթի՛ր և խնդրիր Հորը ներել այն մեղքերը, որ աշխարհն անվերջ գործում է: Աղոթի՛ր հոգիների դարձի համար: Աղոթի՛ր խաղաղության համար:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 19, 1991

Տե՛ր իմ, Դու իմ Բաժակն ես, և իմ
ողջ հոգին հրճվում է Քեզանով:
Քո մեծ Քնքշությունն օգնում է ինձ,
որ կտրեմ անցնեմ
այս անապատի միջով՝
Քեզ հետ՝ կողք կողքի,
իմ ձեռքը Քո Ձեռքում:

«Քեզ համար
նախատինք հանդուրժեցի,
և ամոթը ծածկեց երեսն իմ:
Եղբայրներիս համար ես օտար եղա,
և մորս որդիների համար՝ հյուր:
Քո տան նախանձախնդրությունն
ինձ կերավ և նախատողներիդ
նախատինքն ընկավ ինձ վրա»[3]:

Վասո՛ւլա, թող չչնջամ Իմ խոսքերը քո ականջին, որպեսզի դու փառաբանես Ինձ:

- Գառնուկս, մի՛ լսիր այն ամենը, ինչ որ աշխարհն է ասում, որովհետև դրանից ոչ մի լավ բան չի բխում: Լսի՛ր Ինձ, Ի՛նձ, որ քո Հայրն եմ, և ուշադիր լսելով դու կկատարես այն աշխատանքը, որը Ես քեզ եմ վստահել: Վստահի՛ր Ինձ, զավակս, և արի Ինձ մոտ խորհրդի համար:

[1] Հայտ. 11:15
[2] Հայտ. 14:7
[3] Սաղմ. 68:8-10

Արի՛ Ինձ մոտ մխիթարանքի համար: Արի՛ Ինձ մոտ, երբ այս աշխարհը կբորբոքվի քո դեմ և կայրի քեզ: Անմիջապես արի Ինձ մոտ՝ քո Աբբայի մոտ, և Ես կբուժեմ քո այրվածքները: Ես Նա եմ, ով քեզ սիրում է շատ քնքշորեն, և Ես միշտ կխնամեմ ու կառողջացնեմ քեզ: Ես միշտ կհանգստացնեմ այն վերքերը, որոնք աշխարհը պատճառել է քեզ՝ Իմ Սուրբ Անվան համար և Իմ Սիրո մասին վկայելու համար:

Հիշի՛ր, Երկնքում, Ես Եմ-ը հսկում է քեզ և հոգ տանում քո բոլոր խնդիրների համար: Հիշի՛ր նաև, որ ամեն ինչ, որ անում ես, քո շահերի համար չէ, ոչ էլ քո փառքի համար, այլ Նրա Շահերի և Փառքի համար, ով ուղարկեց քեզ:

Թող Ճշմարտության Իմ Հոգին փայլի քեզ վրա, որպեսզի դու, քո հերթին, արտացոլես Իմ Պատկերը՝ հիշեցնելով աշխարհին Իմ Ճշմարիտ Դեմքը, քանզի աշխարհը կարծես թե մոռացել է Իմ Ճշմարիտ Պատկերը: Կարճ ժամանակում դուք <u>բոլորդ</u> կսովորեք, թե ինչպես ապրել

<u>Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ</u>,

և մեկ լինել Ինձ հետ, ինչպես որ Սուրբ Երրորդությունն է Մեկ և միևնույնը, քանզի Մենք Երեքս էլ նույնն ենք վկայում:

~ Իմ փոքրիկներ, Ես չեմ ուշանա: Ես արդեն վերադարձի Ճանապարհին եմ: Ես սա ձեզ ասում եմ, նախքան այն կատարվելը, որպեսզի, երբ դա կատարվի, դուք հավատաք, որ այս Ձայնը, որ դուք լսում էիք այս բոլոր տարիների ընթացքում, գալիս էր Ինձնից: Ես սա ասում եմ ձեզ, որպեսզի դուք ուրախանաք, որովհետև Ես էլ եմ ուրախանում այն Օրվա համար, երբ սատանայի գլուխը կջախջախվի Իմ Մոր կրունկի տակ:

~ Լսե՛ք Ինձ: Ես կհեղեմ Իմ Սուրբ Հոգին այս չար սերնդի վրա, որ սրտեր գրավեմ և ամեն մեկին ետ տանեմ դեպի լիակատար Ճշմարտությունը, որպեսզի Նրանք ապրեն

<u>Կատարյալ Կյանք Իմ մեջ՝</u>
<u>ձեր Աստծո մեջ</u>:

Բայց քա՛ջ եղեք, որովհետև դեռ Կրակ պիտի տեղա նախքան Իմ Օրը կգա: Ուստի մի՛ վախեցեք, ոչ էլ տխրեք, որովհետև առանց այդ Կրակի աշխարհի դեմքը չի կարող փոխվել... Եվ երբ դա պատահի, ցույց կտա աշխարհին, թե որքան սխալ էր այն: Դա ցույց կտա աշխարհին նրա անաստվածությունը, նրա բանապաշտությունը, նյութապաշտությունը, եսասիրությունը, հպարտությունը, ագահությունը և նրա չարությունը, կարճ ասած՝ այն բոլոր չարիքները, որոնց աշխարհը երկրպագում է:

Ոչ ոք չի կարող ասել, որ Ես ձեզ չեմ ասել Իմ Ծրագրերի սկզբնավորման մասին: Ոչ մեկը չի կարող ասել, որ Ես թաքցրել եմ Իմ Ծրագրերը ձեզանից:

Ես եմ Ճշմարտությունը:

Եվ Ճշմարտությունը միշտ կբացի Իր Սիրտը և ցույց կտա ձեզ Իր ջերմեռանդ Ծրագրերն <u>այնպես, ինչպես</u> որ <u>կան</u>... Ճշմարտությունը ձեզ

միշտ հնարավորություն կտա, որպեսզի կարողանաք ձեր հավատարմությունն ապացուցել Իրեն: Եթե Ես չխոսեի ձեզ հետ, և եթե Ես Հիմա ձեզ համար Երկինքը չբացեի, դուք ներված կլինեիք: Բայց Ես կանչել եմ ձեզ օր ու գիշեր, Ես Իմ հրեշտակներին անվերջ ուղարկել եմ ձեզ մոտ՝ ձեզ հետ խոսելու: Ոչնչությունից Ես բարձրացրեցի թշվառ հոգիների և նրանցից պատրաստեցի ջերմեռանդ աշակերտներ, որպեսզի գնան և բախեն ձեր դռները և կրկնեն ձեզ համար այն խոսքերը, որոնք Ես Ինքս եմ տվել նրանց: Ո՛չ, նրանք չէին խոսում իրենց կողմից, այլ միայն կրկնում էին այն Գիտելիքը, որը Ես Ինքս էի նրանց ուսուցանել: Նրանք ձեզ մոտ եկան աղքատ և ոտաբոբիկ, որպեսզի ձեզ ասեն գալիք բաների մասին, առանց որևէ բան ավելացնելու կամ պակասեցնելու այն ամենից, ինչ Ես տվել եմ նրանց: Այն ամենը, ինչ նրանք ասում էին, վերցված էր Հենց Իրենից՝ Իմաստությունից:

~ Հիմա Ես հանդիսավոր ասում եմ ձեզ, որ երբ Մաքրագործման այդ Օրը գա, շատերը մահու չափ կվշտանան, որ թույլ չեն տվել Ճշմարտության Իմ Սուրբ Հոգին մտնի իրենց տուն[1], այլ Նրա փոխարեն ընդունել են Օձին՝ Ավերածության Պղծությանը, և կողք-կողքի կխսել իրենց ճաշը Իմ թշնամու հետ: Նրանք իրենց տան մեջ ընդունեցին նրան, ով կապկում էր Սրբին: Նրանք պաշտեցին Խաբեբային, որը նրանց սովորեցրել էր սխալ հասկանալ Իմ Սուրբ Հոգին.

Իմ Սուրբ Հոգին՝ Կյանք Տվողը և իրենց Հոգու Ներքին Ուժը,

Նա, ով նրանց մեջ փչեց մի առույգ շունչ և ներշնչեց կենդանի Հոգի:

~ Ես հանդիսավոր ասում եմ ձեզ, որ Իմ Կրակը կիջնի այս աշխարհի վրա ավելի շուտ, քան դուք սպասում եք, որպեսզի նրանք, ովքեր չեն տեսնում իրենց մեղքերը, հանկարծակի կարողանան տեսնել իրենց հանցանքը: Ես ի զորու եմ այդ Օրը մոտեցնել, ի զորու եմ նաև կարճել այդ ժամը, քանի որ այդ ժամն այնքան կսկիծ կբերի, որ շատերը կանիծեն իրենց ծննդյան ժամը: Նրանք կուզենան, որ հովիտները բացվեն և կլանեն իրենց, սարերն ընկնեն իրենց վրա ու ծածկեն, անդղներն արագորեն ոչնչացնեն իրենց: Նրանք կցանկանան իրենք իրենց ծվատել մասերի, բայց ոչ մեկը չի փախչի այս ժամից:

Նրանք, ովքեր ճշմարիտ սիրում են Ինձ, կտառապեն միայն նրա համար, որ ավելին չեն արել Ինձ համար: Նրանք նույնպես կմաքրվեն: Բայց վա՜յ նրանց, ովքեր մերժեցին Ինձ և չցանկացան Ինձ ճանաչել: Նրանք արդեն ունեն իրենց դատավորը: Ճշմարտությունը, որը տրվեց նրանց, այդ օրը կլինի նրանց դատավորը:

~ Դուք շատ անգամ եք լսել, որ Ես Իմ պատգամատարների միջոցով ասել եմ.

«Տիրոջ Օրը մոտ է»,

և որ Իմ Վերադարձը մոտալուտ է: Եթե դուք սիրում եք Ինձ, դուք

[1] Այսինքն՝ նրանց Հոգին:

ուրախ կլինեք իմանալու, որ Իմ Սուրբ Հոգին ձեզ վրա կգա Իր ողջ ուժով և Իր ողջ փառքով: Եթե դուք սիրում եք Ինձ, դուք կշարունակեք աղոթել Իմ բոլոր զավակների դարձի համար, որոնք անտեղյակ են և դեռևս ապրում են սատանայի իշխանության տակ: Եթե որևէ մեկը սիրում է Ինձ այնպես, ինչպես Ես եմ սիրում ձեզ բոլորիդ, նա կլսի Ինձ և կմնա հավատարիմ մինչև իր ծառայության վերջը:

Փոքրիկնե՛րս, եթե դուք Ինձ սիրեիք, դուք նույնիսկ ավելի մեծ գործեր կկատարեիք, քան այն գործերը, որոնք Ես կատարեցի, երբ երկրի վրա էի: Բայց ոչ մեկը դեռ դրանից ավելի մեծ բան չի կատարել՝ Իմ նկատմամբ ձեր ունեցած փոքր հավատքի պատճառով, և մեկդ մյուսի նկատմամբ ձեր ունեցած շատ չնչին սիրո պատճառով: Ոչ մեկը դեռ Ինձ այնքան շատ չի սիրել, որքան Ես եմ ձեզ սիրում: Բայց Մաքրագործման Օրը դուք կհասկանաք, թե որքան քիչ եք արել, որովհետև Ես Իմ Սուրբ Դեմքը ցույց կտամ ձեր մեջ:

~ Դուք լսո՞ւմ եք այդ Ոտնաձայները: Դրանք Իմն են: Դուք արդեն լսո՞ւմ եք Իմ Շունչը: Դա Իմ Սուրբ Հոգու քաղցր ձայնն է, որը փչում է ձեր ամայության և անբերրիության մեջ: Դուք զգացիք, որ մի Շո՞ւնչ սահեց ձեր դեմքի վրայով: Մի՛ վախեցեք: Իմ Սուրբ Հոգին աղավնու թևերի պես թեթևորեն դիպավ ձեզ, երբ ճախրում էր ձեր վրայով:

Օ՛, եկեք: Եկե՛ք Ինձ մոտ, և ինչպես Մովսեսը բարձրացրեց օձն անապատում, Ես նույնպես ձեր հոգին կբարձրացնեմ դեպի Ինձ և կվերակենդանացնեմ ձեզ: Ինչպես Ես բարձրացվեցի Երկինք, այնպես էլ դուք վեր կբարձրացվեք Ինձ մոտ, որպեսզի մնուցվեք Իմ Կրծքի վրա: Օ՛, եկեք Ինձ մոտ: Նորից ծարավեք, ծարավեք Իմ Հավերժական Աղբյուրներին: Ծարավի եղեք լինելու Ինձ հետ՝ ձեր Աստծո հետ: Ես առանց տատանվելու ձեզ կառաջարկեմ խմել և Իմ Ջուրը ձեր մեջ կվերածեմ մի աղբյուրի, որ հորդի դեպի հավիտենական կյանք, որովհետև Իմ Կրծքից հոսում է կենդանի ջրի աղբյուրների մի անսպառ Ակունք: Օ՛, եկեք Ինձ մոտ: Նորից քաղցեք Իմ Հացին, և դուք չեք մահանա:

Այսօր, ինչպես երեկ, Ես կանգնած եմ և աղաղակում եմ.

«Եթե որևէ մեկը ծարավ է,
թող Ինձ մոտ գա:
Թող նա, ով հավատում է Ինձ,
գա ու խմի»[1]:

Իմ համբերությունը մեծ է, և չնայած Ես գիտեմ, որ դուք մեղավորներ եք և աղտոտել եք երկիրը անմեղ արյամբ[2], եթե դուք Ինձ մոտ գաք զղջալով, Ես կներեմ ձեր հանցանքն ու ձեր հանցագործությունը: Ես Ողորմության մի Վիհ եմ: Մի՛ վախեցեք... Մի՛ վախեցեք Ինձանից: Ավելի շուտ վախեցեք այդ ժամից, եթե այն ձեզ անտեղյակ և քնած գտնի:

~ Սա ձեր Հոր Ձայնն է: Սա Սիրո Վսեմ Աղբյուրի Ձայնն է: Սա Նրա Ձայնն է, ով մի անգամ ասաց.

[1] Հովհ. 7:37
[2] Հիսուսն իմ մտքում չեշտեց հղիության արհեստական ընդհատման՝ վիժումի մասին:

«Եղիցի լույս»:

Եվ եղավ լույս: Եկե՛ք Ինձ մոտ, և Ես Իմ Հոգին պիտի տամ ձեզ առանց վերապահության: Մի՛ եղեք այն զինվորների նման, որոնք Իմ Խաչի տակ բաժանեցին Իմ զգեստները և վիճակ գցեցին դրա համար: Եկե՛ք Ինձ մոտ Հովհաննեսի ոգով: Եկե՛ք Ինձ մոտ սիրուց դրդված: Եկե՛ք Ինձ մոտ՝ Ինձ սփոփելու և Ինձ հետ լինելու համար:

~Մոտենում է ժամը, երբ աշխարհը իրեն կգտնի միայն վշտի և մթության մեջ, տառապանքի խավարի մեջ և ոչինչ չի տեսնի գիշերվանից բացի: Նրանք չփոթված կկանչեն Ինձ, սակայն Ես չեմ պատասխանի: Ես չեմ լսի նրանց կանչը: Նրանք մոլեգնած կհայհոյեն Իմ Հայտնությունը, Իմաստությունը և Ճշմարտությունը: Ողջ աշխարհը կողողվի վշտով, երբ տեսնեն

Ուխտի Տապանակը՝
Իմ Օրենքը:

Շատերը կընկնեն և կջարդվեն, կասանվեն և կցնցվեն իրենց անօրինության պատճառով:

~ Երբ երկինքը բացվի կիսված վարագույրի պես՝ ցույց տալով, թե նրանք ինչպես մի կողմ նետեցին Իմ Փառքը մի անարժեք նմանակման համար[1], այդ ժամանակ նրանք պիտի ընկնեն երկնքից ընկնող աստղերի նման, հասկանալով, թե ինչպես Ձարը մոլորեցրեց իրենց, թե ինչպես դեպի գագաթը մագլցելու իրենց փորձը ու Ինձ հետ մրցելը, սոսկ հիմարություն է եղել:

Երբ այդ Օրը գա, Ես ցույց կտամ աշխարհին, թե նա որքան չար է եղել, թե ինչպես են նրանք ընկերակցել Ապստամբին և բանակցել նրա հետ՝ փոխանակ Սրբի հետ: Ժամը եկել է, երբ հաստատակամությունն ու հավատքը, աղոթքն ու զոհաբերությունը կենսական են ու ՀՐԱՏԱՊ են դարձել:

Փոքրիկ զավակներս, դո՛ւք, որ տխուր եք հիմա, հետո կուրախանաք: Եկե՛ք: Եկե՛ք աղոթենք:

Գթառատ Հայր, բարձրացրո՛ւ ինձ
դեպի Քո Կուրծքը:
Թո՛ւյլ տուր ինձ խմել
Հավիտենական Կյանքի
Հոսող Գետակներից,
և Ես կիմանամ, որ վայելում եմ
Քո բարեհաճությունը:
Օ՜, արի և փրկիր ինձ,
նախքան ժամը կհասնի ինձ վրա:
Բժշկի՛ր ինձ,
քանզի Ես մեղանչել եմ քո դեմ:

[1] Վկայակոչում Դան. 8:11-12. Այսինքն՝ Սուրբ Հաղորդությունը:

Հա՛յր,
Քո Շուրթերը թաց են Շնորհով,
Քո Սիրտը
Սիրո մի բոցավառ Հնոց է,
Քո Աչքերը կլանող Կրակի
երկու Բոցեր են:

Ո՛վ Հայր,
Քո Գեղեցկությունը
ինքնին Կատարելություն է,
Քո Վսեմությունն
ու Շքեղությունը
շլացրել են անգամ
Քո լուսապայծառ հրեշտակներին:
Հարուստ Առաքինությամբ
և Շնորհով, Մի՛ թաքցրու
Քո Սուրբ Դեմքն ինձանից,
երբ ժամը դա:
Արի՛ և օծի՛ր ինձ սիրո յուղով:
Աստվա՛ծ, լսի՛ր իմ աղոթքը,
լսի՛ր իմ աղերսագին ձայնը:
Ես պետք է կատարեմ
այն խոստումները, որ Քեզ տվեցի:

Հավիտենական Հա՛յր,
չնայած հոսանքն ինձ հակառակ է,
ես վստահում եմ,
ես գիտեմ, ես հավատում եմ,
որ Քո Բազուկն այնտեղ կլինի,
այդ հոսանքից ինձ վեր հանելու
և բարձրացնելու համար:
Օ՜, որքան եմ ես տենչում նայել
Քո Սրբարանին և
տեսնել Քո Փառքը
Ուխտի Տապանակի մեջ:
Օ՜, որքան է իմ հոգին նվաղում,
որ նայի Երկնքի Հեծյալին,
որի Անունը
Հավատարիմ և Ճշմարիտ է:
Նա, ով կսրբի-կվերացնի
անարդարությունը աշխարհից:
Նա, ով Արդար է:
Օ՜, արի՛ և ծածկի՛ր ինձ
Քո Թիկնոցով,
քանզի Քո Սերը հայտնի է
Իր առատաձեռնությամբ:

Ո՛վ հայր, մի՛ նետիր ինձ մի կողմ,
որին ես արժանի եմ
իմ մեղքերի պատճառով,
այլ օգնի՛ր ինձ:
Տո՛ւր ինձ իմ Օրվա Հացը
և ինձ ապահով ու հեռու պահիր
Օձի թունավոր ժանիքներից:
Դարձրո՛ւ ինձ
Քո Տան ժառանգուհին,
դարձրո՛ւ ինձ Լույսի Քո զավակը,
դարձրո՛ւ ինձ կատարյալ պատճենը
Գերագույն Նահատակի,
որ փառաբանեմ Քեզ,
հավիտյանս հավիտենից: Ամեն:

Երկինքը քեզ է պատկանում, զավա՛կս[1]: Ապրի՛ր Ինձ համար, չնչի՛ր Ինձ համար, Ինձ միշտ առաջինը դասիր: Սիրի՛ր Ինձ, զավակս, և այն ամենը, որ ես ունեմ, քոնն է: Քո սիրով ու հավատարմությամբ, Իմ Տունը կլինի նաև քո տունը:

~ Հենվիր Ինձ՝ քո Աբբայի վրա: Արի Ինձ մոտիկ և դրավիր քո տեղը Իմ Սուրբ Սրտում:

Սեպտեմբերի 23, 1991

Ամբողջ օրը,
ես հառաչում եմ Քեզ համար,
իմ Յա՛հվե, իմ հարազատ:
Քո Սերը, որ Դու ցույց տվեցիր ինձ,
ես չեմ կարող մոռանալ: Երբե՛ք:
Քո Բարությունը,
իմ Յա՛հվե, իմ հարազատ,

Ես կհիշեմ քանի դեռ ապրում եմ:
Ես տանջվում եմ օրեցօր
Քո հանդեպ ունեցած իմ սիրուց,
իմ Յա՛հվե,
և ես այլևս չեմ ցանկանում
առնչվել այս աշխարհի հետ,
որ վիրավորում է Քեզ՝ իմանալով,
որ ես առաջիններից մեկն եմ,
որ վիրավորում եմ Քեզ...
Իմ հոգին ուզում է
աշխարհին հայտնել
Քո բոլոր հրաշքները,

[1] Աղոթքը կարդալուց հետո, որն Աստված ինձ թելադրեց, և որն ուղղված էր Իրեն, Նա շատ հուզվեց և հուզված Ձայնով ասաց հետևյալը.

և իմ ոտքերն ուզում են վազել
դեպի սարերի գագաթները,
որ գոռամ աշխարհին.

«Քո Արարիչը քո Ամուսինն է:
Նրա Անունը Տեր Զորությանց է:
Այո՛, ինչպես հոգով վշտացած
մի լքված կին,
Յահվեն քեզ ետ է կանչում:
Մի՞թե մարդ կլքի
իր երտասարդ տարիների կնոջը,
ասում է քո Աստվածը»[1]:
Սակայն ես վախենում եմ,
ո՛վ իմ Յա՛հվե,
իմ Աբբա և իմ հարազատ:

Իմ հոգին տենչում
և դալկանում է Քո Տան համար,
և հիմա իմ միակ ցանկությունն է
Քեզ հետ լինել:
Ուստի, մի՛ հարցրու ինձ,
թե ինչու է իմ հոգին ճնշված,
քանի որ իմ հառաչանքները
գաղտնիք չեն Քեզ համար,
և ինչի համար որ հառաչում եմ,
հայտնի է Քեզ:
Իմ հոգին սպասում է Քեզ,
իմ Յահվե, արի՛ և նվաճիր ինձ,
արի՛ և կլանիր ինձ:

Վասու՛լա... Մի՛ թաքնվիր, զավակս[2]... Դուստր Եգիպտոսի, ես քեզ նշանակել եմ, որ շատ ազգերի փորձես, և դու չափազանց թանկ ես Ինձ համար: Ինձ սխալ մի հասկացիր: Ես քո կարիքը չունեմ, և ոչ էլ դու անհրաժեշտություն ես այս գործի համար, բայց քեզ նման մի ոչնչություն ընտրելը՝ փառավորում է Ինձ և մաքրագործում է քեզ: Ուրեմն ամեն ինչ, որ ես ունեմ, ես ցանկանում եմ կիսել քեզ հետ: Մի՛ վախեցիր Իմ Պատգամները հայտարարելուց: Իմ Սուրբ Հոգին կողողի քեզ Իմ Բառերով, և դու համարձակորեն կհայտարարես Իմ Խոսքը: Ուստի, հիմա գնա Նրանց մոտ, ում մոտ ես քեզ ուղարկում եմ: Ես չեմ լքի քեզ, ոչ էլ միայնակ կթողնեմ քեզ: Իմ Սուրբ Հոգին քո Առաջնորդն է և քո Խորհրդատուն:

Ես դեռ նոր եմ սկսել հնձել Իմ Բերքը... Հնձի՛ր Ինձ հետ... Դու չես ցանել այս Բերքը: Ես եմ, որ ամեն ինչ ցանել եմ քո մեջ, և հիմա ես ուզում եմ, որ այն լինի ամենուր: Հիմա, երբ Բերքը հասել է, ես խնդրում

[1] Ես. 54:5-6

[2] Ես հույս ունեի, որ այլևս կարիք չկար, որպեսզի գնամ ազգերի մեջ և վկայեմ: Հուսով էի, որ Իմ Հայրը համաձայն է Իմ ցանկություններին՝ մնալ տանը, խորհրդածել. սիրել Նրան, գրելով հանդիպել Նրան, հանդիպել Հիսուսին Սուրբ Հաղորդության մեջ և դրանով խուսափել ամբոխից:

եմ քեզանից, որ այն հնձես Ինձ հետ, աղջի՛կս: Առաջարկիր քո օգնությունը, որպես զոհողություն: Ես քեզանից շատ չեմ պահանջում...
...Ի՞նչ ես տեսնում, աղջի՛կս:

Քո Որդու Սուրբ Դեմքը՝ ցավից շնչասպառ եղած: Նրա Դեմքը այնպես է, ինչպես Սուրբ Վարշամակի վրա:

Մի՞թե սա բավարար պատճառ չէ, որ շարունակես առաջ գնալ և քո ժամանակից ու ուժից մի փոքր զոհաբերես: Նորից նայիր, աղջի՛կս... Ի՞նչ ես տեսնում հիմա, Վասո՛ւլա:

Ես տեսնում եմ կաքմիը, փափուկ ամպի նմանվող ինչ-որ մի բան, երկնքի ողջ տարածքում, որը սավառնում է մեր վերևում, բայց և շարժվում է մառախուղի նման և ավելի ու ավելի ծածկում երկինքը: Այն շարժվում է հանդարտորեն, բայց կայուն ընթացքով:

Գրի՛ր. «Ինչպես արշալույս, լեռների վրայով տարածվում է մի մեծ և հզոր զորք, որպիսին երբեք չի եղել առաջներում, որպիսին երբեք նորից չի լինի մինչև ամենահեռավոր դարերը»[1], Այո՛, այն մոտ է... Իսկ հիմա ի՞նչ ես տեսնում, Վասո՛ւլա:

Կենդանի մարդկային ջահեր:

Ուշադիր նայիր հենց այդ հոգիներին, որոնց Ես եմ ստեղծել... Նրանք երբեք չեն հասնի այն Սենյակը, որը Ես պատրաստել եմ նրանց համար: Այդ հոգիները սատանայի իշխանության տակ են, և նրանք չեն կիսի Իմ Թագավորությունը, ոչ էլ Իմ Փառքը: Նրանք գնում են դեպի իրենց դատապարտումը... Ասա՛ Ինձ, մի՞թե Ես որևէ մեկին զրկել եմ Իմ Սիրուց, Իմ Փառքից և Իմ Թագավորությունից:

- *Ո՛չ, Տե՛ր:*

Սակայն նրանք նախընտրեցին չսիրել Ինձ և իրենց կամքով հետևեցին սատանային: Իրենց սեփական ազատ կամքով, նրանք կտրեցին մեզ միացնող կապերը: Իսկ հիմա նորից նայիր, Վասո՛ւլա: Ի՞նչ ես տեսնում:

Մի Կին, ով Տեր, նստած սպիտակ ժայռի վրա: Ես տեսնում եմ Նրան մեջքի կողմից: Նրա հագին երկար սև զգեստ կա, և Գլուխն էլ ծածկել է մի երկար սև գլխաշորով: Երևում է, Նա մեծ վշտի մեջ է, որը կրկնապատկել է իր ցավը: Ես ինձ տեսնում եմ նրան մոտենալիս: Նա բարձրացնում է Իր Դեմքը, և ես նույնպես սկսում եմ լալ Նրա հետ: Դա Հիսուսի Մայրն է, մեր Մայրը: Նրա դեմքը շատ գունատ է և արցունքներով ողողված: Ինձ տեսնելով՝ Նա երկարեց Իր ձախ Ձեռքը և սեղմեց իմ թևը:

Ես Վշտերի Կինն եմ, ծանոթ՝ տառապանքին: Ես Նա եմ, ով ձեզ կվերադարձնի Հույսը: Ես Նա Եմ, ով Իր կրունկով կճզմի և կջախջախի

[1] Հովել 2:2

օձի գլուխը: Այս օրերին Իմ Աչքերն անդադար լալիս են առանց հանգստի: Աչքերս ցավում են Իմ բոլոր զավակների համար լաց լինելուց:

Վասո՛ւլա, աղջիկս, մի՛ փակիր ականջդ Աստծո հանդեպ: Մի՛ փակիր ականջդ Իմ խնդրանքի հանդեպ: Դու լսեցիր Իմ լացը:

Ես պաշտպանել եմ ձեր շահերը և միշտ կպաշտպանեմ: Երբ Տերը կապում է քեզ Իր հետ, դա սիրուց է, որպեսզի Իր Սիրտը լցնի քո սրտի մեջ: Այսօր[1], իր հերթին քեզ կփոխանցվի Նրա Բաժակը: Մի՛ մերժիր խմել, դու չպետք է տատանվես: Ձեր փողոցները աղտոտված են անմեղ արյամբ, և Մեր Սրտերը ցավում են: Սա է Իմ Արցունքների պատճառը, սա է պատճառը, որ Տերը պիտի կիսի Իր Բաժակը քեզ հետ:

Դավաճանությունը արգելում է, որ եղբայրների միջև Միասնություն լինի: Սրտի անազնվությունը ստիպում է, որ լցվի Աստծո Բաժակը: Նրանք կոպտաբար քաշքշեցին Իմ Որդու Մարմինը, բաժանեցին Այն, խեղեցին Այն և անդամալույծ դարձրին: Ես ձեզ բոլորիդ հիշեցնում եմ, որ Նրա միջոցով, Մեկ Հոգու միջով դուք բոլորդ կհասնեք Հորը: Չնայած դրան, դուք մնում եք բաժանված Իմ Որդու Անվան տակ: Դուք խոսում եք միասնության և խաղաղության մասին, մինչդեռ որոգայթ եք լարում նրանց դեմ, ովքեր գործադրում են այն: Աստված չի կարող խաբվել, ոչ էլ Նա կհամոզվի ձեր պատճառաբանություններով: Աստծո թագավորությունը միայն բառեր չեն շրթունքների վրա: Աստծո Թագավորությունը սեր է, խաղաղություն, միություն և հավատ՝ սրտում: Դա Տիրոջ Եկեղեցին է՝ միավորված ձեր սրտերում: Միասնության բանալիները Սերն ու Խոնարհությունն են:

Հիսուս երբեք ձեզ չի պարտադրել, որ ինքներդ ձեզ բաժանեք: Նա չէր ցանկանա, որ այս բաժանումը տեղի ունենար Իր Եկեղեցու մեջ: Ես թախանձում եմ Իմ զավակներին միավորել իրենց սրտերն ու ձայները և իրենց սրտում վերակառուցել Իմ Որդու նախնական Եկեղեցին: Ես ասում եմ Իմ Որդու նախնական Եկեղեցին, քանի որ այդ Եկեղեցին կառուցված էր Սիրո, Պարզության, Խոնարհության և Հավատի վրա: Ես նկատի չունեմ, որ դուք վերակառուցեք մի նոր շինություն: Ես նկատի ունեմ, որ դուք ձեր սրտում վերակառուցեք մի նոր շինություն: Ես նկատի ունեմ, որ դուք ձեր սրտում տապալեք հին աղյուսները՝ անմիաբանության, անհանդուրժողության, անհավատության, անողորմության, սիրո պակասի աղյուսները և վերակառուցեք Իմ Որդու Եկեղեցին՝ միմյանց հետ հաշտվելով: Դուք կարիք ունեք հոգու ծայրահեղ աղքատության և գերագույն մեծահոգության: Եվ մինչև չհասկանաք, որ պետք է խոնարհվեք՝ չեք կարող միավորվել:

- Ուրեմն, Իմ Վասո՛ւլա, աղոթիր Ինձ հետ, ինչպես որ տեսար Ինձ նախկինում աղոթելիս: Ես քեզ հետ եմ, զավա՛կս, ամբողջ ժամանակ: Ենթարկվիր Սիրո ցանկություններին: Հիսուս երբեք չի լքի քեզ: Քո սիրով միացած եղիր Նրան մեկ նպատակի համար,

որպեսզի փառաբանես Նրան:

[1] Նշանակում է՝ եկող այս օրերին:

Հիմա, աղջի՛կս[1], դու հասկանո՞ւմ ես, թե ինչու չպիտի դադարես Ինձ հետ հնձելուց:

Շարունակիր աղոթել: Եվ օրհնիր նրանց, ովքեր հալածում են քեզ: Քո ժամը դեռ չի եկել, աղավնյակս: Ես քեզ հետ քնքուշ կլինեմ, և դու ավելի շատ սիրված կլինես Իմ կողմից: Մի՛ փորձիր հասկանալ այն, ինչ քո կարողությունից վեր է: Գործի դիր գերանդիդ, երբ տեսնում ես Ինձ Իմ Մանգաղով աշխատելիս: Քայլերդ մի՛ դանդաղեցրու: Ինձ հետ համաքայլ արի: Եթե Ես հապաղեմ, դու էլ հապաղիր: Խոսի՛ր, երբ Ես նշան տամ քեզ, և լուռ մնա, երբ Ես նայեմ քեզ: Կյանքի գնով, միշտ պաշտպանիր ճշմարտությունը: Ժամանակ առ ժամանակ քեզ պիտի վնասեն, բայց Ես դա թույլ պիտի տամ այնքանով, որ քո հոգին մաքուր և հնազանդ պահեմ: Իմացիր, որ Ես միշտ քո կողքին եմ: Հնձի՛ր, երբ Ես եմ հնձում: Սովորիր համբերատար լինել, ինչպես Ես եմ: Եղիր չափազանց խոնարհ և անկատ: Ես վստահել եմ քեզ Իմ Շահերը՝[2] Ինձ հետ Իմ Կողքին աշխատելու: Եվ Ես նշանակել եմ նաև ուրիշներին՝ իրենց ծառայություններով միանալու այս աշխատանքին:

– Վասո՛ւլա, զավակս, մի քիչ էլ, շատ քիչ, և քո հոգին կթռչի դեպի Ինձ: Ուստի պատճառ չկա ընկճված զգալու, ինչպես դու ես Ինձ ասում: Դու միայն պետք է բարձրացնես գլուխդ և նայես, թե Ով է գալիս ու հասնում մինչև քո սենյակը. Ով է ընթրում քեզ հետ, Ով է հովվություն անում քեզ: Խնդրի՛ր Ինձ ներել քո մեղքերը, որ ստանաս Իմ խաղաղությունը և կրկին ուրախություն ձեռք բերես: Ասա՛ Իմ զավակներին, որ շուտով Ես Իմ Սուրբ Հոգին կուղարկեմ Իր ողջ զորությամբ, որ ձեզ հովվություն անի և ձեզ բոլորիդ առաջնորդի ետ՝ դեպի ճշմարիտ Հոտը, ապրելու

Ճշմարիտ Կյանք Իմ մեջ՝
ձեր Աստծո մեջ:

Սեպտեմբերի 26, 1991

Իմ աչքերը միշտ Քեզ են ուղղված,
Աստված իմ:
Քեզ ճանաչելու գաղտնիքը[3]
տրված է նրանց,
ովքեր սիրում են Քեզ
և երկյուղում են Քեզանից:

Դու վեր բարձրացրիր
իմ հոգին վիրապից,
Որ հայտնաբերեմ

[1] Կրկին լավեց Հոր Ձայնը:
[2] Ես լսեցի նաև՝ «Ծառայությունը»:
[3] Այսինքն՝ մտերմությունը:

Քո Սուրբ Սրտի Հարստությունը:
Ես հայտնաբերել եմ Գութը,
որի մասին խոսում էին
Քո մարգարեները:
Ես հայտնաբերել եմ
այն Սերն ու Հեզությունը,
որը ճաշակել են Քո առաքյալները:
Ես հայտնաբերել եմ
այն Խաղաղությունը,
որ Դու Ինքդ ես տվել մեզ:
Քո Սուրբ Սրտում
Դու թույլ տվեցիր
իմ հոգուն հայտնաբերել,
որ Տառապանքը Սուրբ է,
և զրկանքն ու նվաստացումը
ընդունելի են Քո Աչքերում:

Ապա մի պայծառ
Լույս մտավ իմ հոգին,
և ինչպես աղավնիների
երգեցիկ մի աղմուկ՝
ես լսեցի և զգացի մի Շունչ,
որը սահեց իմ դեմքի վրայով,
և Դու ողողեցիր ինձ
Քո Խորհուրդներով:

Ավելի շատ ճաշակիր Իմ Գաղտնիքները, զավա՛կս՝ հպատակվելով Իմ Օրենքին: Ավելի ես ցածրացրու քո ձայնը հիմա, որպեսզի լսես միայն Իմը: Ավելի խոնարհիր քո գլուխը, որպեսզի Իմը երևա: Ցածրացրու ինքդ քեզ, որ Ես կարողանամ քեզ վեր բարձրացնել Ինձ մոտ:

Շատ անգամ դու քո սեփական լույսով ես զննում Իմ Սուրբ Սրտի Գաղտնիքները: Միայն խնդրիր Ինձ, զավա՛կս, և Ես քո աչքերը կողողեմ Իմ Աստվածային (վերանցական) Լույսով, և այն կլցնի քո ողջ հոգին: Ուրեմն վստահ եղիր, զավա՛կս, որ քո ներսում եղած լույսը գալիս է Ինձանից: Այդ ժամանակ, միայն այդ ժամանակ, Իմ քահանա՛, դու կհասկանաս, որ Իմ Գործերը Վեհ են, Փառապանծ և Վսեմ: Միայն այդ ժամանակ, Իմ աշակե՛րտ, դու կհասկանաս այնպես, ինչպես Ե՛ս եմ ցանկանում, թե ինչու Հեզությունը թույլ տվեց Իրեն նախատվել, այլանդակվել, արհամարհվել ու խոցվել, և Իր Կյանքը տվեց որպես փրկագին շատերի համար:

– Ես եկել եմ արթնացնելու քո սերը և բորբոքելու այն, հասկանո՞ւմ ես: Ուստի, մի՛ պաշտպանիր քո մարմինը ո՛չ ցավից, ո՛չ էլ որևէ անարգանքից: Թո՛ւյլ տուր, որ քո Փրկչի կնիքը լինի քո մարմնի վրա և քո հոգու մեջ, որպեսզի լրիվ փոխակերպություն տեղի ունենա քո ներսում: Այդ ժամանակ, ԱՅՆ ԱՄԵՆԸ, որ քո էությունը վանում էր, հակառակվում էր ու նայում քամահրանքով՝ քեզ Սուրբ կթվա:

Շնորհի՛ր, Տեր, որ այն ամենը,

Ինչ Դու ասում ես, կատարվի:
Ցածրացրու իմ գլուխը,
ցածրացրու ինձ
և ցածրացրու իմ ձայնը:
Ես չեմ ուզում դատարկաձեռն
հայտնվել Քո Ներկայությամբ:
Ո՛չ, ես չեմ ուզում մնալ
դատարկ ձեռքերով
Քո Ներկայությամբ:
Եվ այն մարդկային մտքերը,
որոնք իմ էությունը
համարում է բնական,
արմատախիլ արա
և այրիր մեկ առ մեկ:

Քո հոգին ամբողջապես նվիրիր Ինձ և խորհիր Իմ Օրենքի մասին, նախքան այն քեզ կհարվածի: Մի՛ մոռացիր, թե ինչպես էր քո բնությունը քեզ հասցրել ամայության և վհատության:

Եթե դու Ինձ թույլ տաս, Ես կազատեմ քեզ քո մարդկային մտքերից, և կփոխարինեմ դրանք Իմ Մտքերով, որպեսզի Ինձ փառաբանես: Ես քեզ խիզախ սիրտ կտամ, փոքրի՛կս, որպեսզի կարողանաս դիմակայել Իմ հակառակորդներին և դեմ կանգնել նրանց հակառակություններին: Ես քեզ կտամ պերճախոսություն, համբերատարություն և դիմադրելու կարողություն՝ քեզ հալածողների սպառնալիքների դիմաց, որոնք նաև Ի՛նձ հալածողներն են: Ես քեզ խիզախություն կտամ, որպեսզի վստահություն ունենաս:

Դու Իմ սերմն ես, և որովհետև Հունձքը պատրաստ է, և բերքը՝ պատրաստ հնձվելու, Ես ժամանակ չեմ կորցնում, ինչպես որ նկատեցիր: Ես անդադար հնձում եմ, որ կերակրեմ շատերին, ովքեր մահվան եզրին են: Ուստի, սիրելիս, «շարժիր քո դերանդին և հնձի՛ր: Հնձի ժամանակը եկել է, և երկրի հունձը հասել է»[1]: Թո՛ւյլ տուր Ինձ ընդլայնել քո սիրտը, որովհետև այժմ քեզ Գերողը կլցնի քեզ Իր Գիտությամբ և Գաղտնիքներով: Ինձ մնում է ողորմած լինել ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ և ձեզանից յուրաքանչյուրին բացահայտել Իմ Հարստությունը, Իմ Առատաձեռնությունը և Իմ Սերը:

Այսօր Ես ձեզ ասում եմ այս ամենը, որպեսզի Իմ Խոսքը այս սերնդից փոխանցվի հաջորդին: Եվ դուք, որ սովորում եք, ձեր հերթին, կսովորեցնեք ձեր երեխաներին: Եթե նրանք լսեն և անեն Իմ ասածը, նրանց օրերը երջանիկ կլինեն:

Ուստի դարձե՛ք Ինձ և գովաբանեք Իմ Գործերը: Խորհրդածե՛ք Իմ Հրաշքների վրա:

ΙΧΘΥΣ

[1] Հայտ. 14:15

Սեպտեմբերի 29, 1991

(Սուրբ Միքայելի տոնը)

(Սուրբ Միքայել):

Ես սիրում եմ քեզ, Աստծո՛ զավակ. Վստահի՛ր Ինձ:

(Տերը):

Հանգչի՛ր Իմ Սրտում: Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ: Արի՛, Իմ Սիրտը քո հանգստավայրն է:

Սեպտեմբերի 30, 1991

Ես շնորհակալ եմ Քո Անվանը՝
Քո Սիրո և Գթասրտության համար:
Զնայած ես ապրում եմ
մի վայրում, որտեղ
շրջապատված եմ հալածողներով,
կեղծ վկաներով ու նախատինքներով,
Դու ինձ պահում ես
կենդանի և կանգուն:
Դու լցնում ես իմ սեղանը,
և, ինչպես չափազանց
քնքուշ մի մայր, Դու սնում ես ինձ
Քո սեփական Ձեռքով:
Ո՛վ Տեր, խղճա՛ ինձ:
Երբեմն ես տագնապում եմ
ավելի, քան կարող եմ դիմանալ:
Եվ եթե Դու ինձ մոտ չլինեիր,
ես կսպառվեի: Ես կատարյալ
խաղաղություն եմ ցանկանում
եղբայրների միջև:

Ես ասում եմ. Խաղաղությո՛ւն քեզ: Կանգնի՛ր և կանչիր Իմ ծառային[1]: Ես Խաղաղության Աստվածն եմ, այլ ոչ թե՝ երկպառակության, և Ես առաջարկել եմ քեզ Իմ Սիրտը: Թող ոչ մեկը չխաբվի: Նրանք, ովքեր երկար կպահեն իրենց ոխն ու չարակամությունը, Ես նրանցից կհեռացնեմ Իմ Սիրտը և այն բոլոր շնորհները, որոնք Ես այնքան առատորեն տվեցի նրանց: Եթե Իմ ծառան չհամագործակցի սիրով և չդադարի այդ մեղքի մեջ մտորելուց, Ես ասում եմ քեզ, որ ետ կվերցնեմ Իմ բոլոր շնորհները: Երբե՛ք մի նմանվիր քո վարքով Նրան, ով բաժանում է:

Ես տալիս եմ քեզ Միասնության Գանձը, որն այնքան դյուրաբեկ է: Սովորի՛ր պաշտպանել այդ Գանձը:

[1] Պատգամ ուղղված որևէ մեկին:

(Ավելի ուշ)

Հիսո՞ւս:

Ես եմ:
Փոքրի՛կս, որ լցված և հագեցված ես Իմ կողմից, դու հուսախաբ չես անի Ինձ: Քո կողքին Ես եմ և միշտ կլինեմ: Օրհնի՛ր Ինձ նրանց փոխարեն, ովքեր երբեք Ինձ չեն օրհնում: Բացահայտիր Ինձ առանց վախի, առանց կասկածի, և դժոխքը կպարտվի: Փաղաքշիր Ինձ: Այո՛, նայիր դեմքիս և ասա. «Հիսո՛ւս, ես սիրում եմ Քեզ: Դու իմ կյանքն ես, իմ ժպիտը, իմ հույսը, իմ ուրախությունը, իմ ամեն ինչը: Օրհնյա՛լ եղիր»:
Ե՛կ, հանգստացիր Իմ Սրտում և թույլ տուր Ինձ հանգստանալ քո սրտում:

Հոկտեմբերի 1, 1991

(Պատգամն ուղղված է կանադացի ուխտավորներին (140 աշխարհական և 9 քահանա), ովքեր եկել էին Լենս, Շվեցարիա՝ մեկ շաբաթ ինձ հետ անցկացնելու):

Ասա՛ նրանց, որ այսօր, ինչպես երեկ և միշտ, Ես օրհնում եմ նրանց: Թող ամեն մի ականջ բաց լինի ու լսի, ամեն մի սիրտ բաց լինի՝ ստանալու Իմ խոսքը:
Այն, ինչ Ես խնդրում եմ նրանցից սեր է, հավատարմություն և մշտական աղոթք: Ես շուտով ձեզ հետ կլինեմ: Ե՛կ:

(Երեկոյան):

Տե՛ր իմ, Դու եկել
և վերակենդանացրել ես իմ հոգին,
և այդ ժամանակից սկսած
մի նոր կյանք է հոսում իմ մեջ,
որովհետև այդ Գետը հորդում է
Քո Սեփական Սրբարանից:
Նայի՛ր Քո զավակին, Տե՛ր:
Նա կենդանի է կրկին:
Դու փրկել ես ինձ,
Դու կրկին հարդարել ես ինձ,
և Դու ինձ ցույց ես տվել
Քո Սիրո Խորքերը:
Քո Բույրը հմայեց ինձ,
Քո Գեղեցկությունը ինձ հավերժ
շլացրեց ու ստիպեց ինձ
կառչել Քեզանից: Քո Քնքշությունը
և Գթասրտությունը
իմ ներսում մի աղբյուր բխեցրին:
Օրհնյա՛լ լինի Քո Անունը

հավիտյանս հավիտենից: Քեզանով
յուրաքանչյուր ազգ կօրհնվի,
և մի օր բոլոր ազգերը միավորված՝
ի վերջո կաղաղակեն.
«Օրհնություններ նրան,
ով գալիս է Տիրոջ Անունով»:
Քանզի, ինչպես անձրևից հետո
երկիրը ծլարձակում է, այդպես էլ
Քո Սրբարանից հոսող Գետը[1],
կոռոգի Քո Քաղաքները[2]:

Հոկտեմբերի 2, 1991

(Կանադացի ուխտավորներին):

Խաղաղություն ձեզ:

Թող այս օրը լինի ուրախության օր: Շուտով Իմ փրկությունը կգա: Ուստի պատրաստ եղեք Ինձ ընդունելու: Ձեզանից բացի, որոնց Ես արդեն հավաքել եմ Իմ Անվան ներքո, ուրիշներ էլ կան, որոնց Ես պիտի հավաքեմ: Խնդրի՛ր Իմ զավակներին խոկալ սրա մասին.

«Քանի որ քո Արարիչը
քո ամուսինն է, Նրա Անունը
Զորությունների Տեր է»[3]:

Թող այսօր ամեն մեկն Ինձ անվանի՝

Փեսա:

Աղոթե՛ք աշխարհի խաղաղության համար, աղոթե՛ք Մեր նպատակների համար:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 3, 1991

Կանադացի ուխտավորների հետ պատարագի ընթացքում, Հիսուս ներքին ձայնով ինձ ասաց.

«Ես քեզ մոտ եմ ուղարկել
Իմ բարեկամներին»:

[1] Սուրբ Հոգին:
[2] Մեր Հոգիները:
[3] Ես. 54:5

Հոկտեմբերի 4, 1991

(Կանադացի ուխտավորների համար):

Հենվե՛ք Ինձ վրա: Տվեք Ինձ ձեր բոլոր մտահոգությունները, այդ բոլորը դցեք Իմ Սրտի մեջ, և Ես պիտի ոչնչացնեմ դրանք: Օրհնե՛ք Ինձ, ինչպես Ես եմ ձեզ օրհնում: Սիրե՛ք Ինձ, ինչպես Ես եմ ձեզ սիրում: Աբարչությո՛ւն, հասկացիր, որ այն, ինչ Ես քեզանից խնդրում եմ, փոխադարձ սեր է: Ես հարատև օրհնություններ եմ ձեզ շնորհում, ուստի այսօր և ամեն օր ձեր հույսը դրեք Ինձ վրա: Վերցրե՛ք Իմ Սրտի Ակունքներից, և Ես պիտի լցնեմ ձեզ՝ ծածկելով Իմ շքեղությամբ: Ես գիտեմ ձեր դժվարությունները և ձեր ծայրահեղ աղքատությունը: Դրա համար մի՛ վախեցեք Ինձ մոտ գալ այնպես, ինչպես որ կաք:

~ Աղքատությունը
գրավում է Ինձ: ~

Ողջունե՛ք Ինձ այնպես, ինչպես Ես եմ ձեզ ողջունում:

~ Գնացե՛ք խաղաղությամբ և եղե՛ք վկաները Նրա, ով ձեզ ավելի է սիրում, քան որևէ այլ մարդ: Եղեք վկաները Նրա, ով առաջարկեց ձեզ Իր Սուրբ Սիրտը:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 5, 1991

(Կանադացի ուխտավորներին):

Խաղաղությո՛ւն ձեզ: Վերականգնե՛ք Իմ Տունը:

~ Ես ձեզ որպես գառների ուղարկում եմ գայլերի մեջ, սակայն մի՛ վախեցեք: Ես եմ~ը ձեզ հետ է:

~ Զարդարե՛ք Իմ Տունը ձեր նվիրվածությամբ՝ Իմ Սուրբ Սրտի և ձեր Մոր Անարատ Սրտի հանդեպ:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին:

Հոկտեմբերի 7, 1991

Հանուն Քո Փառքի,
ես ուզում եմ Քեզ տալ այն ամենը,
ինչ ունեմ:
Ես շատ բան չունեմ, փաստորեն,
ես համարյա ոչինչ չունեմ:
Որովհետև ես անկարող եմ,
աղքատ, թույլ և շատ թշվառ:

Սակայն, ինչ էլ որ ունեմ,
վերցրո՛ւ այն, Տե՛ր իմ:

Իմ մոտիկությունը[1] քեզ հետ կրակ է վառել քո ներսում ու փրկել քեզ և ուրիշներին:

– Ես ուզում եմ քո ազատ կամքը: Ինքդ քեզ Ինձ հանձնի՛ր, և Ես քեզնից դետեր կբխեցնեմ: Ես կարիք ունեմ ծայրահեղ աղքատության՝ Իմ Գործերը երևան հանելու համար: Ես կմնեմ քո հոգին, քանի որ դու Իմ հարսն ես:

Վասո՛ւլա, ձեր քաղաքները լցված են մեռելներով, և նրանց գարշահոտությունը բարձրանում հասնում է մինչև երկինք: Նրանք քայքայվում են միլիոններով: Աղոթի՛ր, աղոթիր խաղաղության, սիրո, հավատի և միասնության համար: Սուրբը (Աստված) տառապում է այն ամենի համար, որ տեղի է ունենալու, և այդ տրտմությունը անհնար է նկարագրել: Ես ստիպված եմ Իմ Ձեռքն իջեցնել այս չար սերնդի վրա:

Աղջի՛կս, հանուն Ինձ, վերցրո՛ւ Միասնության Իմ Խաչը և կրիր այն աշխարհով մեկ: Գնա՛ երկրից երկիր և ասա նրանց, ովքեր խոսում են միասնության մասին, սակայն երբեք չեն դադարում մտածել հակառակը և շարունակում են ապրել հակառակ ձևով, որ <u>նրանց բաժանումը անջատել է Իմ Սիրտը նրանց սրտերից</u>: Աղաղակի՛ր, և ի վերջո Իմ Ձայնը պիտի թափանցի նրանց խլության միջով: Ես քեզ հետ եմ այս անապատում, ուստի մի՛ վախեցիր:

Ես վստահել եմ քեզ Իմ Խաչը: Այս Խաչը կարբագործի և կփրկի քեզ: Դրա համար էլ կրիր այն սիրով և խոնարհությամբ: Իմ Անունը կանչիր անդադար: Քո Առաքելությունը, զավա՛կս, այն է, որ վկայես Սիրո համար ու ցուցադրես Իմ Սրբությունը՝ նրանց սիրո և հավատարմության պակասի մեջ: Առաջ գնա առանց վախի և եղիր Իմ Արձագանքը: Վկայի՛ր ուրախությամբ, ջանասիրությամբ: Սիրով վկայիր Սիրո համար:

Իմ թշնամիները, երբ էլ որ քեզ խոցեն, <u>ուրախացի՛ր</u>, և Ինձ մատուցիր քո բոլոր վերքերը, և Ես անմիջապես քեզ պիտի սփոփեմ: Ամեն անգամ, երբ դու բարձրացնես քո աչքերը Ինձ փնտրելու, Գթությամբ լի Իմ Սիրտը չի ընդդիմանա քեզ: Դու Իմ զավակն ես, որին Ես որդեգրեցի, բարձրացրեցի ու կերակրեցի: Ուստի մի՛ վախեցիր մարդկանցից: Նրանք չեն կարող ոչնչացնել քեզ: Շուտով Ես քեզ ազատ կարձակեմ: Իսկ մինչ այդ, շրջի՛ր Միասնության Իմ Խաչով և փառաբանիր Ինձ: Եղիր

<u>պաշտպանը</u>

այն Ճշմարտության և այն Միակ Եկեղեցու, որը Ես Ինքս եմ հիմնադրել:

Գնա՛ ամեն մի ազգի մոտ և ներկայացիր նրանց: Ասա՛ նրանց, որ Ես ուզում եմ Խաղաղություն և Մեկ Եկեղեցի Իմ Սուրբ Անվան տակ: Ասա՛ նրանց, որ նա, ով իրեն արդար է համարում, սակայն մնում է բաժանված, կճաչակի իր ցանած պտուղից և կոչնչանա: Ասա նաև, թե որքան եմ Ես խորշում կեղծավոր սրտերից: Նրանց հանդիսավորությունները և ճառերը հոգնեցնում են Ինձ: Ասա՛ նրանց, թե ինչպես եմ Ես երես դարձնում նրանց

[1] Նրա մտերմությունը:

մեծամտությունից և անդրդվելիությունից: Նրանց դատողություններն իրոք մեծ և ազդեցիկ են մարդկանց համար, սակայն ոչ Ինձ համար: Ես չեմ կարող ողջունել մեռնող եկեղեցուն, որը քայքայման եզրին է: Ասա՛ նրանց, ովքեր ուզում են լսել, որ

<u>մինչև նրանք չցածրացնեն</u>
<u>իրենց ձայները,</u>
<u>երբեք չեն լսի Իմը</u>:

Եթե նրանք ցածրացնեն իրենց ձայները, նրանք կլսեն Իմ Ձայնը և այդպիսով կկատարեն Իմ Կամքը: Ես Մեկ եմ, սակայն նրանցից ամեն մեկը ստեղծել է իր սեփական Քրիստոսին: Ես եմ Իմ Մարմնի Գլուխը, սակայն Ես տեսնում եմ միայն <u>նրանց</u> գլուխները, ո՛չ թե՝ Իմը: Ասա՛ նրանց, որ ցածրացնեն իրենց գլուխները, որպեսզի տեսնեն Իմը: Ասա՛ նրանց, որ խոնարհվեն, որպեսզի Ես կարողանամ վեր բարձրացնել նրանց Ինձ մոտ:

~ Թող նրանք չսարսափեցնեն քեզ, զավա՛կս: Եղիր համբերատար, ինչպես Ես եմ համբերատար: Եղի՛ր խոհեմ՝ մնալով Իմ կողքին: Դու կկրես Իմ Ձարդերը[1], որպեսզի հավատարիմ մնաս Ինձ: Դրանք կշարունակեն քեզ հիշեցնել Իմ մասին:

Աղոթի՛ր, Իմ հարս, աղոթի՛ր քո Փեսային, և Ես վերջում կպարգևատրեմ քեզ: Փառաբանի՛ր Ինձ, և Ես քեզ կասեմ. տքնի՛ր, զոհաբերություն արա, և ոչինչ իզուր չի անցնի:

Ասա՛ ամեն մեկին, որ Ես կհաստատեմ Իմ Թագավորությունը

<u>թշվառության</u>

մեջ, նրանց մեջ, ովքեր ժամանակ ունեն լսելու Իմ Հոգուն, պաշտելու Ինձ և կատարելու Իմ Կամքը: Նրանց մեջ Իմ Հոգին ուրախանում է:

Աղջի՛կս, չնայած քո թշվառությանը, Ես սիրում եմ քեզ: Թույլ տուր Ինձ Իմ Գործերը շարունակել քո մեջ: Հարմարվի՛ր Ինձ, ինչպես Ես եմ քեզ հարմարվում, և Իմ Ներկայությունը պիտի զգացվի քո միջոցով, և քո մեջ (գործելով) Ես այս սերնդին պիտի բերեմ միասնության:

Վստահ եղիր, որովհետև Ես քեզ հետ եմ: Իմ Կնիքը քո ճակատին է, և, այդ Կնիքով ու Իմ Շնորհով, Իմ Թագավորությունը կհաստատվի երկրի վրա, ինչպես Ես եմ ուզում:

Իմ Խաղաղությունը քեզ: Հիշի՛ր, Ես քեզ հետ եմ ամբողջ ժամանակ: Ե՛կ, թափանցիր Իմ Վերքերի մեջ:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 13, 1991

Տե՛ր, իմ սրտում

[1] Նրա Խաչը, Գամերը և Փշե Պսակը:

Քեզնից բացի ոչ մեկը չկա:
Կամաց-կամաց Դու ուզում ես ինձ:
Դու նվաճել ես իմ սիրտը՝
հեղելով ինձ վրա
օրհնություն օրհնության հետևից:
Բայց մի՞թե հիմա
ես կատարում եմ Քո Կամքը:
Մի՞թե ես Քեզ մոտ եմ
և հետևում եմ Քեզ:
Մի՞թե ես օգնում եմ
իմ մերձավորին այնքան,
որքան կարող եմ:
Մի՞թե ես հետևում եմ
Քո Պատգամներին:
Մի՞թե ես դեռ վայելում եմ
Քո բարեհաճությունը:

Սովորիր հենվել Ինձ վրա: - Աղջի՛կս, դու դեռ կամենո՞ւմ ես կրել այն խաչը, որը Ես նախասահմանել եմ քեզ համար:

Կամենում եմ, եթե միայն չկորցնեմ Քեզ և լինեմ մեկ և միացած Քեզ հետ:

Դու գիտե՞ս, թե դա ինչ է նշանակում և ինչ է պահանջում:

Զոհողություն, նվաստացում, խոնարհություն, անձնուրացություն, <u>Սեր</u>, <u>հավատ</u>, <u>հույս</u>, հնազանդություն, ինքնաժխում, աղոթք, աղոթք, աղոթք, համբերություն, ապաշխարություն, զրկանք, տանջանք, պահեցողություն և վստահություն դեպի Քեզ ու ներողամտության հոգի:

Լավ ասացիր: Բայց բանը միայն դրանք իմանալը չէ: Դու ուզո՞ւմ ես մնալ Իմ բարեհաճության մեջ: Այդ դեպքում դու պետք է կատարես այն ամենը, ինչ նշեցիր: Երկնքի Թագավորությունը նման է մի մրցանակի. նա, ով շահում է, պիտի գուր գուրի այն: Նույնպես էլ, Երկնքի թագավորությունը կտրվի նրանց, ովքեր կներկայանան ձեռքերը լեցուն բարի պտուղներով: <u>Ուստի, Իմ Վասուլա, Ես մտադիր եմ վերակառուցել Իմ Եկեղեցին այն արժանիքների վրա, որոնք դու նշեցիր</u>:

Եթե դու քայլես Ինձ հետ, չես կորչի: Մի՛ դայթակղվիր աջ կամ ձախ նայելու: Ինչպես ասել էի Իմ առաքյալներին. «Ճանապարհին ոչ մեկին մի՛ ողջունեք»[1]: Դու ուզում ես Ինձ ծառայել, ինչպես ասում ես: Ուրեմն, դու պետք է հետևես Ինձ՝ Իմ Խաղաղության, Սիրո և Միասնության խաչով Ինձ փառաբանելու համար: Սարսափով մի՛ նայիր մյուս խաչերին, որոնք Ես դրել եմ քո ճանապարհին, քանզի դրանք բոլորն էլ գալիս են Ինձնից: Փառաբանի՛ր Ինձ: Քո սեղանը միշտ լիքն է, և քո գավաթը հորդում է վրայից, ուստի ոչ մի բանի համար մի՛ բողոքիր: Ժամանակ առ ժամանակ Ես պիտի քննեմ քեզ և փորձեմ քո սերն Իմ հանդեպ, որպեսզի զորացնեմ ու ձևավորեմ քո հոգևոր էությունը: Քարշ մի՛ տուր ոտքերդ Իմ

[1] Ղուկ. 10:4

հետևից, թեթևասիրտ հետևիր Իմ քայլերին: Հանգստացի՛ր Իմ մեջ, երբ հոգնած ես, և թույլ տուր Ինձ հանգստանալ քո մեջ, երբ Ես հոգնած եմ զգում:

- Լսի՛ր հիմա քո Սրբին: Մի՛ քշվիր ամեն մի քամուց, որը հանդիպում է քո ճանապարհին: Արմատ ձգիր Իմ մեջ, և դու արմատախիլ չես լինի, աղջի՛կս: Հարստացրո՛ւ Իմ Եկեղեցին այն ողջ Գիտելիքով, որ Ես տվել եմ քեզ և ասա նրանց, որ Տիրոջ Սիրտը Սիրո մի Վիհ է, թեև ոչ ոք լիովին չի հասկանում ո՛չ նրա խորությունները, ո՛չ էլ նրա դանձերը:

Ես գիտեմ, որ դու փխրուն ես, աղջի՛կս, սակայն մի՞թե դու միջոցների պակաս ես զգացել: Վստահի՛ր Ինձ, վստահիր Ինձ և ինքդ քո օրինակով ցույց տուր, թե ինչպիսին պիտի լինի Միասնությունը: Մի՛ եղիր նրանց նման, ովքեր համառորեն շարունակում են առանձնացնել իրենց Իմ Սուրբ Անվան տակ: Մի՛ եղիր նրանց նման, ովքեր ձևացնում են, թե Միասնությունը ընդունելի է իրենց համար, բայց չեն կատարում իրենց խոսքը՝ դրանով իսկ արժանանալով Հոր զայրույթին: Թե՛ Հայրը, և թե՛ Ես, ատում ենք նրանց վիճաբանությունները, չնայած նրանք այդպես չեն կարծում: Բայց և այնպես, Ինձ ոչինչ հետ չի պահում աղաղակելու իշխանության տեր այդ մարդկանց.

«Իջե՛ք, ցած իջե՛ք ձեր գահերից և թող որ այդ թեփուկները ընկնեն ձեր աչքերից, որպեսզի տեսնեք, թե ինչպիսի անապատի եք վերածել Իմ Տունը: Դուք թալանել եք Իմ Սրբարանը և այն ամենը, որ գտնվում էր նրա մեջ: Դուք ոչ միայն կոտրել եք մեջտեղից Հովվի գավազանը, այլև փշուր-փշուր եք արել այն: Բայց այսօր, բացե՛ք ձեր աչքերը և տեսեք: Բաց պահեք ձեր աչքերը և դուք կճանաչեք աղքատությունը, քուրձը և ոտաբոբիկ լինելը: Բա՛ց պահեք ձեր աչքերը և մի հայացքով կճանաչեք Իմ Սիրտը»:

- Ես կարող էի միայն մեկ բառ ասել նրանց հավաքներում և այդ մեկ բառով միավորել Իմ Եկեղեցին: <u>Սակայն Երկնքի փառքը Ինձ կտրվի Աղքատության, Թշվառության կողմից, և նրանց կողմից, որոնց կոչում են արհամարհելի</u>: Ես թույլ կտամ, որ Իմ Տունը վերակառուցվի օտարների կողմից, քանզի նրանց մեջ Ես կդնեմ Նվիրվածության հոգի, Հավատարմության հոգի: Հետո ձեր ամբարները նորից կլցվեն և ձեր կարասները բերնեբերան կհորդեն Իմ նոր գինով:

Եթե դու ասում ես, որ սիրում ես Ինձ և քեզ դնում ես Իմ Անվան տակ, այդ դեպքում, հանուն Իմ Սուրբ Անվան և հանուն Իմ Սիրո

<u>միավորի՛ր Իմ Եկեղեցիները</u>:

Ճշմարիտ Քրիստոնյան նա՛ է, ով <u>ներքնապես</u> Քրիստոնյա է, և ճշմարիտ Միությունը սրտի <u>մեջ</u> է և սրտում պիտի լինի: Միասնությունը չի լինի ձևով, այլ՝ բովանդակությամբ:

Եթե դու սիրում ես Ինձ, աղջի՛կս, ինչպես որ ասում ես, գրկիր այն խաչը, որը Ես տվել եմ քեզ: Այդ դեպքում քո ոտքերը չեն սայթաքի: Այս աշխարհում ոչինչ չկա Նրան հավասար: Թող քո հայացքը երբեք չհեռանա Իմ Հայացքից: Սանի՞կս, ե՛կ, հետևիր Ինձ...

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, Ես աղոթեցի Հորը քեզ համար: Այդ Ես եմ՝ Հիսուս: Կենտրոնացի՛ր այն բանի վրա, ինչ քեզ հանձնարարվել է: Հիմա գրի՛ր[1]. Խաղաղություն ձեզ: Ես լսեցի, որ դուք Ինձ կանչեցիք՝ «Հա՛յր»:

Ես այստեղ եմ:

Դուք ցանկանո՞ւմ եք ետ դալ: Ես այլևս չեմ խոժոռվի ձեզ վրա, քանի որ Ես Անսահման Ողորմություն եմ: Ոչ էլ Ես կդատապարտեմ ձեզ: Ձեր սիրտն է, որ Ես փնտրում եմ: Ես կարիք ունեմ սիրո: Ես ծարավի եմ սիրո: Իմ Շրթունքները ցամաքել են սիրո պակասից: Ես որոշել եմ չնայել ձեր անցյալի վրա, այլ՝ միայն ներկայի:

Երկնքի Թագուհին[2] Իմ կողքին է, և բոլոր կանանցից Նա է, քան որևէ արարած, որ անդադար աղոթել է ձեզ համար, ավելի քան բոլոր Գերիշխանությունները, Տիրապետությունները, Գահերը, Իշխանությունները և Հրեշտակները: Ուստի ողջունե՛ք Նրան ձեր աղոթքներում, պատվե՛ք Նրան, ինչպես Ես եմ Նրան պատվում:

Դուք բոլորդ մկրտված եք Ինձնով, և եղբայրների մեջ որևէ տարբերություն չպետք է լինի: Եթե միայն իմանայիք, թե այսօր Ես ինչ եմ առաջարկում ձեզ, դուք չէիք տատանվի առաջարկել Ինձ ձեր սիրտը և ինքներդ ձեզ Ինձ կհանձնեիք: Վերադարձեք դեպի Ինձ և մի՛ վախեցեք: Նա, ով այժմ խոսում է ձեզ հետ, ձեր Սուրբ Ուղեկիցն է: Այդ Նա է, ով ամենաչատն է ձեզ սիրում: Հավատացե՛ք Իմ Սիրուն, մտածե՛ք և խոկացեք Իմ Զարչարանքների մասին: Առաջարկե՛ք Ինձ ձեր սիրտը, և Ես այն կդարձնեմ ամենանուրբ բուրմունքներով մի պարտեզ, որտեղ Ես՝ ձեր Թագավորը, կարող եմ հանգստանալ: Թո՛ւյլ տվեք Ինձ այն դարձնել Իմ Սեփականությունը, և դուք կապրեք: Մի՛ շրջեք ձեր սիրտը Ինձնից, Ինձ մի՛ հեռացրեք: Խոսեք Ինձ հետ ազատորեն: Ես լսում եմ:

Ես հրավիրում եմ ձեզ բոլորիդ խոկալ այս բառերի վրա.

~ Սիրով հատուցեք չարին:
Ընդօրինակեք Ինձ: ~

Եվ հիշե՛ք. Ես ընդմիշտ ձեզ հետ եմ: Այլևս երբեք չմոռանաք սա:

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Հառաչը ձեր ճակատին:

ΙΧΘΥΣ

Հիսուս Քրիստոս՝
Աստծո Սիրելի Որդի և Փրկիչ:

[1] Պատգամ կալանավորների համար
[2] Մեր Տիրուհին:

Հոկտեմբերի 14, 1991

Տե՞ր:

Ես եմ:

Սի՛րով ավետարանիր Սիրո Համար: Արմատավորվիր Իմ մեջ, զավա՛կս: Ինձ հանձնիր ամեն ինչ և թույլ տուր լինել քո Հոգևոր Ղեկավարը, որ առաջնորդեմ և քեզ տամ Իմ Հրահանգներն Իմ Եկեղեցիների միավորման համար: Դու մի նշան կլինես նրանց համար, և նրանք կհասկանան, որ, քանի որ Ես Եմ-ը Մեկ է, դուք նույնպես մեկ կլինեք, ինչպես Մենք ենք Մեկ: Սուրբ Գրքերը պիտի իրականանան, որովհետև պիտի կատարվի Հորն ուղղված Իմ Քահանայական Աղոթքը: Ես քո մեջ եմ, ուստի մի՛ վախեցիր:

Դա շատ խոստումնալից է, Տեր:

Քո առաքելությունը, փոքրի՛կս, իմ մարդկանց մեկ Անվան տակ բերելն է՝ Իմ Անվան տակ, որ միասին հաց կիսեն: Կարիք չկա անհանգստանալու: Արա, ինչ կարող ես, և Ես կանեմ մնացածը: Ես կարիք ունեմ խոնարհության, որպեսզի քո մեջ կատարեմ Իմ Գործերը և դրանով ամեն ինչ հայտնի դարձնեմ:

~ Քո անհավատ սերունդը, որն Ինձանից այնքան Արյուն է հոսեցնում, կտրուկ կմերժի քեզ: Բայց, Իմ Վասուլա, Ես քեզ կանգուն պիտի պահեմ, չնայած այն խոր վերքերին, որոնք դու կստանաս այս չար սերնդից: Քեզ օգնություն կտրվի վերևից:

Ես քարոզել եմ քեզ և ուրիշներին, որ մի՛ կանգնիր տեղում, բաժանիր այդ Ուսմունքները, որոնք Ես տվել եմ քեզ և՛ հրապարակավ, և՛ ձեր տներում: Ես գիտեմ, թե որքան դյուրաբեկ ես դու, բայց գիտեմ նաև, թե ինչ եմ Ես ընտրել:

Տե՛ր, Ես ուրախ եմ իմանալու, որ մենք կմիավորվենք, չնայած, դեռևս ոչ ոք իսկապես չգիտի, թե ինչպես: Խնդիրները ակնհայտորեն շատ են, իսկ աղանդները՝ ավելի շատ: Ինչպես Դու ես ասում. «Հովվի գավազանը կոտրվել է ոչ միայն մեջտեղից, այլև փշուր-փշուր է եղել: Եվ քո մարմինը խեղանդամ է դարձել, ջարդվել և անդամալուծվել»: Դու մեզ բոլորիս խնդրում ես <u>խոնարհվել</u>: Ինչպե՞ս: Ի՞նչ պետք է արվի: Ո՞րն է առաջին քայլը: Ես հույն ուղղափառ եմ, և ամեն ինչ կիսում եմ իմ Հռոմի կաթոլիկ եղբայրների հետ: Եվ ես չեմ տարբերում ինձ Քո Անվան տակ, երբ ես նրանց հետ եմ, և ոչ էլ նրանք են ինձ հետ տարբեր վարվում իրենց յուրայիններից: Ես գիտեմ նաև, որ նրանցից շատերը գնում եմ հունական կամ ռուսական ուղղափառ եկեղեցիներ...

Բա՛ձր խոսիր, զավակս:

Տուր ինձ ճիշտ բառերը, Տե՛ր:

Ասա՛... և նրանց թույլ չի տրվում կիսել Քո Մարմինը:

Այո՛: Նրանց թույլ չեն տալիս, չնայած մեր եկեղեցու Խորհուրդները նույնն

են: Մինչդեռ մեզ՝ ուղղափառներիս, թույլ են տալիս ստանալ Քո Մարմինը: Ինձ նույնիսկ ասացին, որ ես արտաքսված եմ, որովհետև գնում եմ Հռոմի կաթոլիկների մոտ, ավելին չասելու համար: Ինձ հալածում են երկու կողմից էլ, որովհետև իմ խոստովանահայրը Հռոմի կաթոլիկ է: Եվ Դու վկա ես այս բոլորին, Տե՛ր իմ Հիսուս:

Սակայն կգա այն օրը, երբ նրանք միասին հաց կկտրեն մեկ զոհասեղանի վրա, և ոչ մեկը չի արգելի Իմ զավակներին Ինձ մոտ գալուց: Ոչ մեկը չի հարցնի նրանց. «Դու ուղղափա՞ռ ես»[1]: Այդ ամրոցը, որ նրանք կառուցել են ձեզ բաժանելու համար, արդեն դատապարտված է Իմ կողմից: Դուք բոլորդ եղբայրներ եք Ինձնով: Ահա՛ այս է, ինչ դու պիտի սովորեցնես նրանց, որ հավատան և համոզես նրանց այդ անել:

- Իսկ նրանք, ովքեր շարունակում են բաժանված մնալ մարմնով ու հոգով՝ տարբերելով իրենց Իմ Սուրբ Անվան տակ, ես ասում եմ նրանց, ինչպես ասել եմ Սարդիկեի Եկեղեցուն[2]. «Աշխարհի աչքում դու կենդանի ես համարվում, բայց ոչ քո Արարչի Աչքերում: Կենդանացրու այն քիչը, որ դեռ մնացել է քեզանից: Այն արագորեն մեռնում է, և որտեղ որ դիակն է, այնտեղ էլ անդղները հավաքվում են»:

Միավորվե՛ք: Հավաքվե՛ք: Միասի՛ն կանչեք Իմ Անունը: Միասի՛ն սրբագործեք Իմ Մարմինը և Իմ Արյունը: Մի՛ հալածեք Ճանապարհը: Հնազանդվե՛ք և խոնարհվե՛ք, որպեսզի կարողանաք միավորվել և փառաբանել Ինձ: Դուք խոսում եք Հոգու մասին, բայց չեք գործում Հոգու մեջ: Դուք խոսում եք Ճանապարհի մասին, բայց առաջիններից եք դասվում Այն փակելու համար: Դուք որքա՜ն քիչ գիտեք Ինձ...

Դուք կանչում եք Իմ Անունը, բայց սպանում եք Իմ զավակներին սրբարանի և զոհասեղանի միջև: Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. այս ամենը ձեր առջև կբերվի Դատաստանի Օրը: Կարո՞ղ եք նայել Ինձ և իսկապես ասել. «Ես հաշտվել եմ իմ եղբայրների հետ»: Կարո՞ղ եք իսկապես ասել. «Ես ինձ չեմ տարբերել եղբայրների մեջ Քո Սուրբ Անվան ներքո: Ես նրանց հետ վարվել եմ որպես ինձ հավասարի»: Երբ դուք Իմ առջև ներկայացնեք ձեր պարագան, այն ժամանակ Ես պիտի ասեմ ձեր երեսին. «Դուք հեռո՛ւ գնացեք, դուք չեք վարվել ձեր եղբայրների հետ որպես ձեզ հավասարի: Դուք ամեն օր ջարդել, սպանել եք Իմ Մարմինը: Որտե՞ղ է ձեր հաղթանակը: Մինչ ես կառուցում էի, դուք քանդում էիք: Մինչ Ես վերստին հավաքում էի, դուք ցրում էիք: Մինչ Ես միավորում էի, դուք բաժանում էիք»:

Չնայած դրան, նույնիսկ այսօր, եթե դուք Ինձ մոտ գաք, ինչպես որ կաք, Ես կարող եմ բժշկել ձեզ: Ես կարող եմ փոխակերպել ձեզ, և դուք պիտի փառաբանեք Ինձ: «Վա՛յ նրանց, որ հղի կլինեն, կամ կաթնակեր երեխա կունենան, երբ Իմ Օրը գա»: Գրի՛ր[3]. «Վա՛յ նրանց, որոնց ներսում

---

[1] Հայտնի է, որ հույն և ռուս ուղղափառ քահանաներն իրավունք ունեն հարցնելու նրանց, ովքեր ցանկանում են Սուրբ Հաղորդություն ստանալ, թե արդյոք նրանք «պատկանո՞ւմ են» իրենց դավանանքին: Նրանք մերժում են Հռոմի կաթոլիկներին Սուրբ Հաղորդություն ստանալ, չնայած խորհուրդները նույնն են:

[2] Հայտ. 3:

[3] Հիսուս սրանով տալիս է Ղուկ. 21:23 բացատրությունը:

Ես կգտնեմ մեղքը՝ ոլորված իրենց մեջ, ինչպես երեխան հղի կնոջ որովայնում, և նրանց հետևորդներին, որոնք կերպավորվել են նրանց կողմից և նման են իրենց: Սակայն ասվել է, որ ձեր սեփական շարքերից առաջ կգան մարդիկ՝ իրենց շուրթերի վրա ճշմարտության ծաղրերգությամբ, որպեսզի աշակերտներին մոլորեցնեն և քարշ տան իրենց հետևից:[1]: Ես բղավում եմ ու փորձում եմ թափանցել ձեր խլության միջով՝ ձեզ փրկելու համար: Եվ եթե Ես հանդիմանում եմ ձեզ, դա այն

Սիրո Մեծության պատճառով է,
որ Ես ունեմ ձեր հանդեպ:

Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ. Ես մի օր պիտի ժողովեմ Իմ Մարմնի բոլոր անջատված մասերը Մեկ միասնական խմբում:

- Լաց մի՛ լինիր, Իմ բարեկամ[2]: Դու, որ սիրում ես Ինձ, կրի՛ր, ինչ որ Ես եմ կրում: Այնուամենայնիվ, սփոփիր Ինձ և հավատ ունեցիր Իմ հանդեպ: Դու մեծ գործեր կկատարես Իմ Անունով: Եղիր համբերող, ինչպես Ես եմ համբերող: Ես քաղցած էի, ծարավ և հաճախ սովամահ էի լինում, և դու եկար Ինձ օգնության: Շարունակիր քո բարի գործերը, և Ես կպարգևատրեմ քեզ:

Ես ճշմարիտ եմ ասում ձեզ, դուք միայնակ չեք: Ես ձեզ հետ եմ: Միացե՛ք Իմ մեջ և ապրեք խաղաղության մեջ: Դուք Իմ Արյան հետնորդներն եք և Իմ Թագավորության ժառանգորդը: Ասա՛ նրանց, որ Տիրոջ Սիրտը Սեր է, և որ Օրենքի Սիրտը հիմնված է Սիրո վրա: Ասա՛ Իմ ժողովրդին, որ Ես վարչականներ չեմ ուզում Իմ Տան մեջ: Այդպիսիները չեն արդարացվի, երբ Իմ Օրը գա: Որովհետև այդ հենց նրանք են, որ առևտրի տուն են դարձրել Իմ Տունը:

Ես ձեզ եմ ուղարկել Իմ Հոգին, որ ապրի ձեր սրտերում: Ահա թե ինչու Հոգին, որն ապրում է ձեր մեջ, ձեզ ցույց կտա, որ Իմ Եկեղեցին պիտի վերակառուցվի ձեր սրտերում, և դուք, մեկդ մյուսին կճանաչեք որպես եղբայրներ ձեր սրտերում:

> [3]Մի՞թե, եղբա՛յր, էլի մի շրջան Ես պետք է անցնեմ այն ցավի միջով, որ Ես անցնում եմ տարիներ շարունակ: Թե՞ դու ինձ հանգիստ կտաս այս անգամ: Մի՞թե Ես մի շրջան ևս խմելու եմ քո բաժանման Գավաթը, թե՞ դու հանգիստ կտաս Իմ Մարմնին և հանուն Ինձ կմիացնես Զատկի Տոնը:

Միավորելով Զատկի ամսաթիվը, դու կթեթևացնես Իմ ցավը, եղբա՛յր, և դու կհրճվես Ինձնով, և Ես՝ քեզնով: Եվ Ես կվերականգնեմ շատերի տեսողությունը: «Իմ Սիրելի՛, իմ Արարի՛չ: Նա՛, որ իմ Ամուսինն է,

---

[1] Գործք 20:30

[2] Հիսուս խոսում է նրանց մասին, ովքեր իսկապես սիրում են Նրան և ճշմարիտ ու անկեղծորեն աշխատում են միավորել Եկեղեցիները: Նրա բարեկամները:

[3] Իմ Հիսուս, այս ամենն ասելիս, խոսում էր զոհի ձայնով՝ հոգնատանջ, աղերսող, կարծես Նա կախում ուներ մեզանից, այնպես, ինչպես կալանավորը բանտախցում գնում է դեպի խցի դուռը և փոքրիկ պատուհանից հարցնում պահակին, թե դեռ որքան է մնացել դատապարտության ավարտին մինչև իր ազատվելու օրը:

հայտնել է մեզ բաներ, որոնք ոչ մի մարդկային ձեռք չէր կարող կատարել»: Ահա թե ինչ կաղաղակեք դուք, երբ ձեր տեսողությունը վերականգնվի Իմ Անվամբ:

- Եվ Ես ձեզ մոտ կգամ[1]: -

Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. Հավաքվե՛ք, բոլորդ ժողովվեք և լսեք այս անգամ ձեր Հովվին.

Ես կառաջնորդեմ ձեզ
այն ճանապարհով,
որով պետք է գնաք:

Ուղարկի՛ր Իմ պատգամը մինչև աշխարհի ծայրերը:
Արիացի՛ր, աղջիկս, ժպտա՛, երբ Ես ժպտում եմ: Ես քեզ հետ եմ, որ քո քայլերն առաջնորդեմ դեպի երկինք:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 17, 1991

(Պատգամ տրված «Հնձվորներին», որոնց Աստված ընտրեց Միացյալ Նահանգներում տպելու այս գիրքը):

Ես տալիս եմ ձեզ Իմ ամբողջ Խաղաղությունը և օրհնում եմ ձեզ: Ես ձեզ հետ եմ, որ խրախուսեմ ձեր աշխատանքն Իմ Անվամբ, աշխատանք, որը Ես օրհնել եմ, քանզի սա ձեզ բոլորիդ հանձնարարված գործ է՝ Ինձ փառաբանելու համար:

- Սովի ժամանակ Ես եկա, -

որ լցնեմ ձեր բերաններն Իմ Երկնային Մանանայով, որպեսզի դուք չկորչեք: Ես երբեք չեմ լքի ձեզ: Սերը կվերադառնա որպես Սեր:

ΙΧΘΥΣ

(Մեր Օրհնյալ Մայրը նույնպես նրանց պատգամ է տալիս):

Եկեղեցին կվերակենդանանա: Փա՛ռք Աստծո: Ես Երկնքի Թագուհին եմ՝ ձեր Մայրը, և Ես օրհնում եմ ձեզ: Աղոթե՛ք խաղաղության համար, աղոթե՛ք հավատքի, սիրո և միասնության համար, աղոթե՛ք Իմ բոլոր զավակների դարձի համար: Ես ուզում եմ, որ բոլորը փրկվեն: Աստծո Լույսի Գործերը չեն կարող ընդմիշտ թաքնված մնալ[2]: Դրա համար Ես ձեզ

[1] Հիսուսն ասաց սա վեհասքանչ կերպով, ինչպես մի թագավոր:
[2] Որովհետև սատանան շատ խոչընդոտներ էր ստեղծել, որպեսզի դադարեցնի Սուրբ Սրտի

ընտրել եմ լինելու Աստծո հնձվորները:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ մեծ սիրով, և Ես շնորհակալ եմ ձեզանից՝ Տիրոջ Գրքերը Ինձ նվիրելու համար[1]: Հավա՛տք ունեցեք, փոքրիկնե՛ր: Տերը ձեզ հետ է, հետևե՛ք Նրան: Ինքնավստահ եղեք, քանզի Ես ձեզ հետ եմ: Եկե՛ք:

Հոկտեմբերի 20, 1991

(Պատգամ՝ Սուրբ Սրտից՝ ուղղված Բելգիային: Կարդացվել է Բրյուսելում, Եզվիտների Քոլեջի Սուրբ Միքայելի դահլիճում, 1991թ. հոկտեմբերի 20-ին):

Տե՛ր իմ, եղի՛ր Ինձ հետ:

Վստահ եղիր, որովհետև Ես Եմ-ը քեզ հետ է: Իմ Վասուլա, ասա՛ նրանց հետևյալը. Եթե շատերը մոռացել են Իմ Սուրբ Սիրտը, Ես երբեք չեմ մոռացել նրանց:

Այսօր Ես կանչել եմ նրանց՝ հավաքելով այստեղ, որ միասին աղոթեն: Ես ցանկանում եմ, որ Իմ զավակները միավորվեն: Ես ցանկանում եմ, որ Իմ ողջ Եկեղեցին միավորվի: Նրանք, ովքեր դեռ համառում են մնալ բաժանված, արդեն անջատել են Իմ Սիրտն իրենց սրտերից: Հասկացե՛ք ձեր բաժանման լրջությունը, Իմ Կանչի հրատապությունը, և Իմ խնդրանքի կարևորությունը: Ինձ հարկավոր է ձեր սիրտը, որպեսզի միավորեմ ձեզ և վերակառուցեմ Իմ Եկեղեցին, որպես մեկ եկեղեցի՝ ձեր սրտի մեջ: Ես միայն սեր եմ խնդրում, որ քանդեմ ձեր բաժանման պատնեշները: Դուք, որ առաջարկել եք Ինձ ձեր սիրտը, աղոթե՛ք, և միացրեք ձեր սիրտը Իմ Սուրբ Սրտին՝ Իմ Եկեղեցիների միասնության համար:

Ես՝ Տերը, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին: Ես՝ Հիսուս, սիրում եմ ձեզ:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 21, 1991

Քո Ողորմությունը, ո՛վ Տեր,
շնչել է իմ մեջ և ներշնչել իմ մեջ
մի կենդանի Հոգի,
ամենախոր այն ծալքերում,
որտեղ Նա ապրում է:
Այդ Քո Խոսքն էր, Տե՛ր,
որ բժշկում է ամեն ինչ և բժշկեց Ինձ:
Եվ անտեսանելի Աստված հանկարծ

Պատգամների տարածումը:

[1] Խումբը, որը տպագրել էր անգլերեն գրքերը, դրանցից մեկը նվիրել էր մեր Օրհնյալ Մորը:

տեսանելի դարձավ ինձ համար:
Եվ իմ մշուշապատ աչքերը
մի Լույս տեսան,
Բոցավառ Կրակի մի սյուն,
որ առաջնորդի
իմ քայլերը դեպի Երկինք:
Եվ Խավարը, որ բանտել էր ինձ
ու սարսափի մատնեց իմ Հոգին,
հաղթահարվեց
Առավոտյան Աստղի կողմից,
և տվեց իմ հոգուն Հույս,
Սեր և Խաղաղություն
և մի մեծ սփոփանք,
քանզի ես գիտեի,
որ Սերն ու Կարեկցանքն
Ի՛նքն էր Իմ Սուրբ Ուղեկիցը
իմ կյանքի ճանապարհին:

Զավա՛կս, Սերը քեզ հետ է, և ներքևից ոչ մի ուժ չի կարող և երբեք չի կարողանա անջատել քեզ Ինձանից: Քայլիր Իմ Լույսի մեջ և մնա Ինձ միացած:

Հոկտեմբերի 22, 1991

Հիսո՛ւս,
զգեստավորիր ինձ խոնարհությամբ,
մաքրությամբ և Քո Օրենքի
պահպանությամբ, քանզի դա
հաճույք կպատճառի Հորը:

Խաղաղություն քեզ: Դրա համար ես քեզ ասում եմ.

եղիր մաքսավորի պես:

Քանզի, ձեզանից շատերը դատապարտում են իրենց հարևանին, մոռանալով, որ դեռ միայն երեկ էր, որ դուք նույնպես ընկած էիք միևնույն քնի մեջ: Մի՛ ասեք. «Ես մաքրել և պատրաստել եմ իմ տունը Տիրոջ համար: Հիմա Նա կարող է ցանկացած ժամանակ գալ ինձ մոտ: Ես պատրաստ եմ ընդունելու նրան: Ես նման չեմ իմ հարևանին, որը ծոմ չի պահում, չի աղոթում, այլ շարունակում է ապրել մեղավոր կյանքով»: Վերականգնիր տեսողությունդ, ասում եմ քեզ, քո շրթունքներն արդեն դատապարտեցին քեզ: Նախ բուժիր ինքդ քեզ և մի՛ դատապարտիր մյուսներին, ովքեր չեն տարբերում իրենց ձախ ձեռքը աջից: Արի՛ Ինձ մոտ մաքսավորի պես և խնդրիր Ինձ դթասիրտ լինել մեղավորիդ հանդեպ[1], քանզի դուք բոլորդ էլ մեղքի ենթակա եք: Տաճա՛ր, բարձրացի՛ր և

[1] Հունական Վարդարանը

ծառայի՛ր Ինձ՝ քո Աստծուն: Օգնելով այրի կնոջը[1] դու կծառայես Ինձ:
Գնա՛ հիմա խաղաղությամբ: Ես քեզ հետ եմ:

Թող փառավորվի Աստված:

Հոկտեմբերի 24, 1991

Տե՛ր, թույլ տուր ինձ ծառայել Քեզ:
Սա հիմա իմ պարտքն է Քեզ:
Դու հայտնի ես Քո Գթասրտությամբ,
և Ես գիտեմ,
որ եթե ես փարվեմ Քեզ,
Դու ինձ չես նետի մի կողմ:
Գիտեմ, որ Դու կփրկես ինձ:
«Ես միայն պետք է
բացեմ իմ բերանը,
որ Դու լցնես այն»[2]:
Խնդրում եմ կերակրի՛ր ինձ
Մեր Մանանայով[3]:

Մնա Իմ չնորհի մեջ: Ես այնպիսի Աստված չեմ, որը չի կարող հուզվել: Իմ Սիրտը լիքն է Կարեկցությամբ, և Ես Ինձ թույլ եմ տալիս հուզվել: Արի՛: Ես քո վահանն եմ ճակատամարտի այս ժամանակներում:

Տե՛ր, Ես դասված եմ նրանց կարգում,
ովքեր կատաղի հարձակման են
ենթարկվում սատանայի կողմից:
Քո ժողովուրդը ինչպե՞ս կարող է
խավարի մեջ լսել
Քո հրաշքների մասին:
Չարը ցանկանում է
անդամալուծել Քո ողջ Ծրագիրը:
Դեռ որքա՞ն ժամանակ
Քո Արդարությունը
պիտի մնա մոռացության գրկում:
Ցույց տուր հիմա,
Ողորմության և Արդարության Տեր,
որ Դու մեր օգնությունն
ու մխիթարանքն ես:

Դու կարիք չունես վախենալու: Մեր Սրտերը կհաղթեն վերջում: Ես ցույց կտամ ամեն մեկին, թե Ես կարող եմ փրկել: Սուրբ Գրվածքները պետք է

---

[1] Այսինքն՝ իմ մորը: Աստված նրան «մայր» չանվանեց, քանի որ միակ Մայրը, որ մենք ունենք՝ մեր Օրհնյալ Մայրն է: Ես պետք է դուրս գամ և ուտելիքի համար գնումների գնամ իմ մոր հետ:
[2] Սաղմ. 80:11
[3] Սուրբ Հոգով:

կատարվեն: Տեսնո՞ւմ ես, գրված է[1], որ գազանը, որը դուրս է գալիս Անդունդից, պատերազմելու է Երկու Ճրագների դեմ, որոնք կանգնած են աշխարհի Տիրակալի առաջ, այն Երկու Վկաների դեմ, որոնք ներկայացնում են Իմ Մարմինը, և ինքնին Իմ Մարմինն են, նրանց դեմ, ովքեր տառապանքի, փորձություններ և հալածանքի ժամանակներում մեծ տոկունությամբ ապացուցել են, որ իրենք իմ սպասավորներն են, նրանց դեմ, ովքեր կրում են Իմ Խոսքը և Իմ խոսափողերն են, և նրանց դեմ, որոնց տրված է Ճշմարտությունը, որպեսզի լինեն հրեշտակների պես և լինեն Խոսքի Արձագանքը, քանի որ նրանք թույլ են տվել, որ Իմ Հոգին լինի իրենց Ուղեցույցը՝ նրանցից յուրաքանչյուրին տալով Եղիայի ծառայությունը և դերը:

Կոչը, որ նրանք անում են Իմ Անունից, իրականում Իմ կոչն է նրանց միջոցով: Նրանք բարձրացնում են իրենց ձայները, որպեսզի հիշեցնեն ձեզ Իմ Օրենքը, ինչպես Մովսեսը Հորեբ լեռան վրա, բայց այդ Ես եմ, որ խոսում եմ նրանց միջոցով: Եվ չնայած աշխարհի մարդկանց համար այս Երկու Մարգարեները[2] Թշնամու կողմից հաղթված կերևան, Ես կյանք կշնչեմ Նրանց մեջ, և նրանք ոտքի կկանգնեն:

«Քանի որ, ինչպես երկիրն է նորից բույսեր աճեցնում, ինչպես պարտեզում սերմերն են ծլարձակում, այդպես էլ Ես՝ Տերը, ի հայտ եմ բերելու արդարությունը և ցնծությունը ազգերի աչքի առաջ»[3]: Ձեր թշվառ մարմինները Ես կփոխակերպեմ ու կդարձնեմ Իմ փառապանծ Մարմնի պատճենը: Հետո դուք կտեսնեք մի նոր երկինք ու մի նոր երկիր, որ ի հայտ կգա: Առաջին երկիրն ու առաջին երկինքը պիտի անհետանան, այսինքն, հին Քաղաքը՝ հայտնի Սոդոմ և Եգիպտոս խորհրդանշական անուններով, քանզի Իմ Խոսքը նորից խաչվեց նրա մեջ[4], որովհետև աշխարհի մարդիկ նորից Ինձ չճանաչեցին, չնայած Ես եկել էի Իմ սեփական Տիրապետությունը: Իմ սեփական ժողովուրդը նորից Ինձ չընդունեց, այլ վարվեց Իմ Սուրբ Հոգու հետ, ինչպես որ ցանկացավ՝ թույլ տալով գազանին պատերազմելու նրանց դեմ, որոնց Ես եմ ուղարկել:

Այս երկու քաղաքների՝ Սոդոմի և Եգիպտոսի միացյալ մերժումը Իմ Պատգամատարներին՝ իր համառ ու բացարձակ խլությամբ, նման է Փարավոնի համառությանը: Այս քաղաքները պիտի փոխարինվեն Նոր Երուսաղեմով: Սոդոմի և Եգիպտոսի փոխարեն դուք պիտի անվանվեք՝

~ Նոր Երուսաղեմ ~

Արդարության Քաղաք, Սրբության Քաղաք: Եվ երբ դա կատարվի՝ կենդանի մնացածները համակված վախով, նրանք միայն պիտի փառաբանեն Ինձ[5]:

Երկիրը հիմա հղի է և երկունքի մեջ, զավա՛կս՝ բարձրաձայն աղաղակելով երկունքի ցավերի մեջ: Սակայն սպասումի ժամանակը շատ շուտով կավարտվի: Ես արդեն փչում եմ ձեզ վրա, արարչությո՛ւն՝ մեկդ մյուսի

[1] Հայտ. 11:7
[2] Եղիայի և Մովսեսի հոգին, մարգարեության հոգին:
[3] Ես.61:11
[4] Հայտ. 11:8
[5] Հայտ. 11:13

հետևից վերակենդանացնելով, մաքրագործելով ձեզ բոլորիդ: Ուստի, եթե որևէ մեկը առարկել է, նա չի առարկել ձեզ, այլ՝ Ինձ, Ի՛նձ, որ տվել եմ ձեզ Ճշմարտության Իմ Սուրբ Հոգին: Եվ եթե նրանք վերախաչեցին որևէ մեկին Սոդոմ և Եգիպտոս խորհրդանշական անուններով այս երկու քաղաքների միջև, նրանք վերախաչեցին Իմ Խոսքը: Սակայն երեք-ու-կես-օրից հետո[1] Իմ Երկու Ճրագները ավելի պայծառ Լույս պիտի տան, քանզի դա պիտի դա այն պայծառությունից, որը չրջապատում է Հոգուն: Ուստի հուսա՛, զավակս, Իմ Հոգու խոստումը ձեր ժամանակների համար է:

Դուք Իմ Ընտանիքի մի մասն եք կազմում: Եկեղեցին պիտի վերակենդանանա:

(Ավելի ուշ)

(Պատգամ Ֆիլիպինների համար)

Խաղաղությո՛ւն քեզ: Ասա՛ Իմ մարդկանց, որ խորհեն Իմ Օրենքի մասին: Գրի՛ր.

~ Ես հաշտեցնում եմ աշխարհը: ~

Ասա՛ նրանց, որ այդ Ես եմ՝ Հիսուս: Եթե նրանք հարցնեն, թե ի՛նչ է Իմ Պատգամն ուղղված իրենց, ասա՛ նրանց,

~ Ես գալիս եմ հաշտեցնելու ձեզ
Իմ Սուրբ Սրտի հետ ~

և, հաշտեցնելով ձեզ Ինձ հետ, Ես պիտի խնդրեմ ձեզ, հանուն Իմ Մեծ Սիրո, հաշտվել մեկդ մյուսի հետ: Ես մտադիր եմ հաշտեցնել աշխարհը Իմ Սուրբ Սրտի հետ և այդպիսով ձեզ բոլորիդ դարձնել մի նոր արարչություն[2]:

<u>Սա Իմ Հոգու խոստումն է</u>:

Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. Նա, ով իրենով տարված, ցանում է իր քմահաճույքները բավարարող սերմեր, ապականված բերք կհնձի, և, երբ նա Իմ դեմ կանգնի Դատաստանի Օրը, Ես կասեմ նրան.

«Գնա՛: Հեռու Ինձանից:
Գնա՛ Ապականության մոտ,
որն ապականեց քեզ»:
<u>Մինչև որ Ես չլսեմ</u>

[1] Հայտ. 11:11 Խորհրդանշական թիվ:
[2] Հայտն 21:1

ապաշխարության մի կանչ,

մահվան գարշահոտությունը, որը տանում է դեպի մահ, կշարունակի բարձրանալ մինչև երկինք: Ես այլևս այդ չեմ ուզում: Այն, ինչ Ես ցանկանում եմ ձեզանից՝

~ խունկ է: ~

Ես ցանկանում եմ, որ դուք լինեք ինչպես խնկով լցված մի խնկաման՝ զոհասեղանի վրա: Սիրելի զավակներ, թող ձեր երկիրը վերածվի մի հսկայական Զոհասեղանի՝ մատուցելով Ինձ խնկի բույրը: Ես ուզում եմ, որ դուք ապրեք սրբորեն, քանզի Ես Սուրբ եմ: Ամեն օր Ես երկարում եմ Ձեռքերս դեպի ձեզ, որպեսզի ձեզ Ինձ մոտ բարձրացնեմ:

Դարեր շարունակ Ես ցույց եմ տվել Իմ Սերը ձեր Հանդեպ և այսօր նորից, ինչպես մի հովիվ, որը փրկում է իր ոչխարներին առյուծի երախից, Ես գալիս եմ ձեզ փրկելու Իժից: Չնայած ձեր սարսափեցնող թշվառությանը, Ես ձեզ չեմ կործանի, ինչպես կործանեցի Սոդոմն ու Գոմորը: Ես գիտեմ, թե որքան ճնշված են ձեր կարիքավորները, և ինչպես են խեղճերը ճզմվում ամեն օր: Ես գիտեմ նաև, թե որքան թշվառ եք դուք, և ո՜հ, Ես գիտեմ ձեր հանցանքները... Եվ դրանք շատ են: Ձեր որդիների հանդեպ ցուցաբերված բռնության պատճառով, հսկայական է ձեր երկրում հեղված անմեղ արյունը:

Դժբախտությունները, որոնք պատահում են ձեր մեղքերի պատճառով շարժել են Իմ Գութը, և հանուն Իմ Սիրո մեծության, Ես այսօր ի մի եմ բերում ձեր ժողովրդին: Կանչեք յուրաքանչյուրին Իմ Սուրբ Անվան ներքո և ասացեք նրանց, որ Ես ոչ մեկին չեմ դատում, ոչ էլ գալիս եմ ձեզ սպառնալու: Ասացեք ձեր ժողովրդին, որ Ես նրանց վրա պիտի հեղեմ Սիրո Իմ Սուրբ Հոգին: Ինչպես մի քող, Ես վերևից պիտի տարածվեմ ձեր երկրի վրա, և ինչպես մառախուղ, Սիրո Իմ Հոգին պիտի պարուրի ձեզ և ներթափանցի նույնիսկ ձեր դռների ու պատուհանների ծխնիների միջով:

Իմ այցը չի հիասթափեցնի ձեր ժողովրդին: Ես, Իմ Մաքրագործող Կրակով, պիտի ոչնչացնեմ այլասերվածությունը, և հնձվորի պես շարժեմ Իմ Գերանդին ու կորեմ չարի այդ բերքը, կապեմ մի փնջի մեջ և նետեմ կրակը, որ այրվի: Դրա փոխարեն Ես սերմեր պիտի ցանեմ Երկնքից՝ Սիրո սերմեր: Այդ ձեր Տերն է խոսում, Նա, ով սիրում է ձեզ ավելի, քան որևէ մեկը կարող է հասկանալ:

Այդ Ես եմ՝ Հիսուս, ձեր Փրկիչը,

որ կանգնած եմ Հիմա ձեր դռների մոտ: Եվ Ես ձեզ նորից եմ ասում. Եկե՛ք, եկե՛ք Ինձ մոտ, դո՛ւք, որ ճնշված եք: Ես պիտի հանգստացնեմ և միխիթարեմ ձեզ: Եկե՛ք, եկե՛ք և ստացեք Իմ Սուրբ Սրտի բոլոր Գանձերը: Աստծո Թագավորությունը[1] ձեր մեջ է, ձեզ մնում է միայն ներս մտնել այնտեղ: Իմ Տունը ձեր տունն է: Ես բացել եմ Իմ Թագավորության դուռը <u>ամեն մեկի</u> համար: Եկե՛ք, այլևս մի՛ դայթակղվեք բռնությամբ: Սիրով

[1] Այսինքն՝ Եկեղեցին:

հատուցեք չարին: ~

Ներեցե՛ք:

Ուրիշ ի՞նչ կերպ Հայրը կների ձեզ, եթե դուք չեք կամենում ներել: Ճաշակե՛ք Իմ պտուղից, և ոչ թե Իմ թշնամու, քանի որ խավարի զավակները նենգաբար կվերաբերվեն նույնիսկ իրենց նմանի հետ, որովհետև Չարն է նրանց տերը, որ սովորեցնում է նրանց նմանվել իրեն, իսկ նա՛, ով անազնիվ է փոքր գործերում, անազնիվ կլինի նաև ավելի մեծ գործերում: Կանչեք ձեր ընկերներին, հավաքվեք միասին և աղոթեք: Ես կլսեմ ձեր աղոթքը:

~ Ամեն մի մեղավոր,
որ կապաշխարի՝ կլսվի ~
~ Երկնքում: ~

Ես՝ Հիսուս, օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 25, 1991

Տե՛ր:

Ես եմ:

Տե՛ր, ավելի ամուր կապիր ինձ
Քեզ հետ հիմա,
և հեռու պահիր ինձ
մարդկանց վիրավորանքներից,
որովհետև ես ապրում եմ
միջեկեղեցական կյանքով:
Կապիր ինձ Քո Սրտին և
թող Քո Լույսը լինի իմ Առաջնորդը,
երբ ես քայլում եմ:
Թող Քո Հոգին հսկի ինձ,
երբ ես քնում եմ,
Թող իմ հոգին խոսի Քո Հոգու հետ,
երբ ես արթնանում եմ:
Թող ես գործեմ Քեզ նման
և ձգտեմ բարեհաճել քեզ:
Դարձրու իմ սիրտն այնպիսին,
որ փնտրեմ Քեզ,
որպեսզի վճարեմ այն ամենը,
ինչ խոստացել եմ Քեզ:
Հիշեցրու մեզ բոլորիս, Տե՛ր,

Թե Դու ի՛նչ ես տվել մեզ:
Դու մեզ տվել ես
մի տոկուն Սուրբ Եկեղեցի՝
լցված Քո Սուրբ Հոգով,
և ոչ թե մի դատարկ քարակույտ:
Դու տվել ես մեզ
Մեկ ամուր Գավազան,
ոչ թե երկու կամ երեք,
ոչ էլ փշրանքների մի կույտ:
Ո՞ւր է գնացել այս ամենը:

Վասո՛ւլա, նախ թույլ տուր քեզ ասել. նրանց վիրավորանքները, ովքեր անարգում են քեզ, ընկնում են Ինձ վրա: Ուստի տեղի մի՛ տուր: Տա՛ր Միասնության Իմ խաչը ազգից ազգ և եղիր Իմ Արձագանքը: Իմ ժողովրդի հիշողությունները թարմացնելու համար, Ես ուղարկում եմ Իմ Սուրբ Հոգին՝ հիշեցնելու նրանց, որ ապրեն փոխադարձ սիրով, որը տանում է դեպի խաղաղություն և փոխըմբռնում: Միասնության վերաբերյալ Իմ նախորդ Պատգամներում, Ես ձեզ բոլորիդ խնդրել էի խոնարհվել, բայց արդյոք այսօր կա՞ մեկը, որը պատրաստ է լսել, թե ինչ է ասում Իմ Հոգին:

- Ձեր մեջ մնացե՞լ է որևէ լավ մարդ:
- Կա՞ մեկը, որն իսկապես փնտրում է Ինձ:
- Արդյոք որևէ մեկն արդեն ցածրացրե՞լ է իր ձայնը, որպեսզի լսի Իմը:
- Ո՞վ է ձեր միջից առաջին արդար մարդը, որ կփոքրանա ու կանհետանա, որպեսզի Իմ Ներկայությունը երևա:
- Ձեզանից ո՞վ է պատրաստ խոնարհելու իր գլուխը և թույլ տալու, որ Իմ Գլուխը երևա:
- Ձեր մեջ կա՞ մի մեծահոգի մարդ, որը կցածրացնի իր ձայնը և կլսի Իմ թախանձագին աղոթքը՝ ուղղված Հորը.

«Մի՞թե Ես, Հա՛յր,
ստիպված եմ մեկ տարի էլ խմել
Նրանց բաժանման Գավաթից:
Թե՞ նրանք վերջապես
կմիավորեն Ձատկի Տոնը՝
մասամբ թեթևացնելով
Իմ ցավն ու վիշտը:

Մի՞թե Խավարի այս Իշխանությունը
դեռ ավելի երկար է տևելու:
Նրանք քրքրել են Իմ Մարմինը
և մոռացել են,
որ այդ Իմ Գլուխն է,
որը զորացնում և պահում է
ողջ մարմինը միասնական:

Ո՛վ Հայր, հաշտեցրու նրանց
և հիշեցրու նրանց, որ
խաչի վրա Իմ մահով
Ես տվել եմ նրանց Իմ
Խաղաղությունը:
Տուր նրանց Ճշմարտության Հոգին
իր ողջ տարողությամբ
իրենց սրտերում,
և երբ նրանք
տեսնեն իրենց մերկությունը,
նրանք կհասկանան:
Ների՛ր նրանց Հայր,
քանզի չգիտեն, թե ինչ են անում»:

Հպարտի ամրոցը կընկնի
ու կվերածվի փոշու կույտի,
զավա՛կս[1]:

Նրանց հպարտությունն ու փառքը կընկնեն, երբ Իմ Հոգին պաշարի նրանց: Միայն սպասիր և կտեսնես:

Գրի՛ր: Դուք իսկապես լսո՞ւմ եք: Դուք իսկապես լսո՞ւմ եք, թե ինչ եմ Ես ասում: Այն, ինչ Ես ձեզ ասում եմ, խաղաղություն է նշանակում Իմ յուրայինների և Իմ ընկերների համար: Նրանք կհասկանան, եթե այսօրվանից հրաժարվեն իրենց հիմարությունից:

Նրանց համար, ովքեր սիրում են Ինձ անվերապահ և երկյուղում են Ինձանից, Իմ փրկարար օգնությունը շատ մոտ է, որից հետո փառքը կապրի ձեզանից յուրաքանչյուրի մեջ: Սեհռ և Հավատարմությունը կարող են համդիպել, Արդարությունն ու Խաղաղությունը կարող են գրկախառնվել: Հավատարմությունը կարող է վեր բարձրանալ երկրից, քանզի Արդարությունը միշտ խոնարհվել է երկնքից: Ես միշտ երջանկություն եմ պարգևել ձեզ, սակայն ձեր հողը ի՞նչ բերք է տվել: Արդարությունը միշտ Իմ առջևից է գնացել, և Խաղաղությունը հետևել է Իմ Ոտնահետքերին: Կարո՞ղ եմ Ես նույն բանն ասել ձեր մասին: Ո՞վ կփոխհատուցի ձեր բաժանման տարիների համար: Համդիսություններն ու ճառերը Ինձ չեն հետաքրքրում: Ոչ էլ ձևականությունն ու սոսկ շուրթերով արված ծառայությունն է Ինձ խաբում:

Ո՛հ, աղջի՛կս: Ես ցանկանում եմ, որ նրանք հասկանան, հատկապես նրանք, ովքեր ապրում են Իմ Վերքերի մեջ, այն, որ Իմ վիշտը մեծ է: Եվ պատճառը, որ Ես խիստ եմ խոսում, այն բանի համար է, որպեսզի նրանք կարողանան քարոզել Հոգով, այլ ոչ թե՝ ձևով: Ես ուզում եմ լցնել նրանց Հոգին Իմ Աստվածային (վերանցական) Լույսով, որպեսզի նրանք ամեն բան տեսնեն Իմ Աչքերով, այլ ոչ թե՝ իրենց, տեսնեն ամեն ինչ Իմ Աստվածային Լույսով, և ոչ թե՝ իրենց:

Ես հայտնի եմ որպես Հավատարիմ ու Արդար, և դա չի նշանակում, որ նրանց նվիրվածության և արդարության պակասի պատճառով, Ես

[1] Այստեղ ինձ թվաց, որ «Հայրն» էր պատասխանում (Որդուն):

նույնպես ավելի քիչ Հավատարմություն, Արդարություն և Խաղաղություն ցույց պիտի տամ և չեմ դա նրանց փրկելու: Նույնիսկ, եթե նրանք բոլորն էլ երես դարձնեն Ինձնից և Իմ Ուղիներից, Ես կմնամ Հավատարիմ և Ճշմարիտ [1]: Իմ Հոգին կգործի՝ վերականգնելով Խաղաղությունը եղբայրների միջև, և Իմ Խաչի ու Իմ Վերքերի միջոցով, Ես կմիավորեմ ձեզ բոլորիդ մեկ Մարմնի մեջ, և դուք Ինձ կփառաբանեք

Մեկ Տապանակի շուրջ:

Եվ այն պատնեշը, որը ձեզ բաժանում է՝ կքանդվի: Այլևս արգելք չի լինի[2], և Իմ Սուրբ Գահը կլինի իր տեղում:

Եկե՛ք Ինձ մոտ մանուկների նման, որ Ես բացեմ ձեր հոգու աչքերը, որպեսզի տեսնեք, թե ինչպիսի հույս է

ձեզ

համար Իմ Կանչը: Օրհնի՛ր Ինձ, աղջիկս: Ե՛կ:

ΙΧΘΥΣ

Ես օրհնում եմ Քեզ, Տե՛ր:

«Առաջ բեր այն մարդկանց,
որ կույր են, չնայած աչքեր ունեն,
որ խուլ են, չնայած ականջներ ունեն:
Թող բոլոր ազգերը հավաքվեն
ու միավորվեն բոլոր ցեղերի հետ:
Թող մարդիկ լսեն քեզ,
որ կարողանան ասել. «Դա ճիշտ է»[3]:

Հոկտեմբերի 29, 1991

Աստված իմ:

Ես եմ: Դու միայնակ չես: Ես ներկա եմ և քեզ հետ եմ: Վասո՛ւլա, թույլ տուր Ինձ խոսել քեզ հետ, հավատ ունեցիր Իմ հանդեպ: Ես մոտ եմ քեզ: Ե՛կ, կենտրոնացի՛ր և խորհիր Իմ մասին: Աշխատիր Իմ Փառքի համար, աղջի՛կս: Ասա նրանց[4] այսպես.

«Երանի հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայությունը»: Դուք բոլորդ էլ շատ թանկ եք Ինձ համար: Աղոթե՛ք ավելի շատ, քան երբևէ, և Ես կմատակարարեմ թշվառներին, Ես կբժշկեմ կույրերին և ձեզանից յուրաքանչյուրին կսովորեցնեմ Իմ Օրենքը՝

[1] Հայտ. 19:11
[2] Հայտ. 22:3
[3] Ես. 43:8-9
[4] Մարդկանց, որոնց Ես հանդիպելու էի Անգլիայում:

օտարականից սկսած մինչև ձեր յուրայինները:
Սերը սիրում է ձեզ:

ΙΧΘΥΣ

(Սա մի նախնական պատգամ է՝ մի ներածություն, Անգլիայում կատարած իմ ուղևորության համար):

(Ավելի ուշ):

Վասո՛ւլա, հետևողական եղիր քո աղոթքներում: Ես սիրում եմ քեզ, զավա՛կս և, ո՛հ, Ես գիտեմ քո թուլությունները, աղջի՛կս: Բե՛ր Իմ զավակներին դեպի ճշմարիտ հավատքը, բե՛ր բոլորին Ինձ մոտ: Սա նույնպես քո առաքելության մի մասն է:
Ա՛հ, զավա՛կս, ջերմեռանդ եղիր Իմ՝ քո Տիրոջ նկատմամբ:

Տե՛ր իմ, ոչ բոլորն են լսում այս պատգամները, երբ ես հայտնում եմ դրանք: Հնարավո՞ր է, որ նրանք չեն հասկացել: Ես չեմ խոսում միայն իմ մասին: Ես խոսում եմ նաև ներկա հայտնությունների և մյուսների մասին, որոնց Դու գերբնական ձևով օգտագործել ես որպես գործիքներ:
Ես ուղղակի կասեմ Քեզ. Քանի՞սն են այսօր բարձր հոգևորականության մեջ ականջ դնում և հավատում: Քանի՞սը:

Իսկ քանի՞սը բարձրագույն հոգևորականներից ու դպիրներից դեռ երեկ ականջ դրեցին և հավատացին Ինձ: Վասո՛ւլա, կա մի մնացորդ՝ շնորհով ընտրված, որ պիտի հավատա: Աստվածաշունչն ասում է. «Գտնված եղա նրանց, ովքեր Ինձ չէին փնտրում»[1], թեև հենց սկզբից Ես հրավիրել էի բոլորին Իմ Դպրոցը:

Իմ Սուրբ Հոգին քո Առաջնորդն է,
քո Ամուսինը[2] և քո Ուսուցիչը:

Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շուտով Ես կհավաքեմ բոլոր ազգերին Սիրո մի շրջանակի մեջ, և Իմ Հոգին կբնակվի ձեր մեջ՝ տեսողություն տալով կույրին, քանզի այն Լույսը, որ տրվելու է ձեզ, Իմ Աստվածային Լույսն է: Բայց ինչքա՜ն դժվար է ներթափանցել իմ Լույսի մեջ նրանց, ովքեր գանձեր են կուտակել իրենց հոգում: Ինչքա՜ն դժվար է իմաստունների համար, որ ներթափանցեն Հոգու մեջ և զգան ու հասկանան Նրա խորքերը: Ինչքա՜ն դժվար է նրանց համար, որ մտնեն Իմ Արքայության մեջ: Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. Ձեր հասարակության մերժվածները, և նրանց, որոնց դուք անարժան եք անվանում, իմաստուններից առաջ կմտնեն:
Այո՛, նրանք, ովքեր չեն կարողանում տարբերել լավը վատից, նրա՛նք, ովքեր չեն կարողանում տարբերել իրենց ձախ ձեռքը աջից: Ես հրավիրել

[1] Հռոմ. 10:20
[2] Վկայակոչում Ես. 54:5

եմ ու դեռևս շարունակում եմ հրավիրել յուրաքանչյուրին Ինձ հետ սեղան նստելու: Սակայն շատերը չարձագանքեցին Իմ հրավերին: Նրանք ծիծաղեցին և արհամարհեցին Իմ Ողորմության Կանչը, և իրենց ուսմունքով պատճառ դարձան, որ նրանք ովքեր ուզում էին գալ՝ սայթաքեն: Այս ամենը համեմատիր հարսանեկան խնջույքի վերաբերյալ Իմ առակի հետ:[1]:

Ես կվերադառնամ[2],

և նրանք կդողան: Նրանք կդողան, երբ հասկանան, թե ում էին իրենք մերժում այս ամբողջ ժամանակ: Նրանք մերժեցին Իմ Հոգին և իրենց թույլ տվեցին, որ առաջնորդվեն իրենց սեփական հոգով: Նրանք ժխտեցին Իմ Լույսը իրենց սեփական լույսի համար: Նրանք ժխտեցին Իմաստության կողմից տրված Իմ Երկնային Գիտելիքները՝ երկրորդական մի փիլիսոփայության և իրենց սեփական բանական գիտելիքների համար:

~ Նրանք ուրացան, ~

քանզի նրանք մերժեցին Իմ Հոգին, Իմ Լույսը և Իմ Գիտությունը: Ես ետ պիտի վերցնեմ Իմ Թագավորությունը նրանցից և պիտի տամ այն ժողովրդին, որը կարող է պտուղ տալ: Հետո Ես պիտի ողջունեմ այդ ժողովրդին, որպես Իմ յուրայինների և պիտի խնդրեմ նրանց գալ Ինձ հետ ու ընակվել Ինձ հետ: Իրականում, այս ժամանակը եկել է արդեն: Ես որոշել եմ Ինձ մոտեցնել անպարկեշտներին, նրանց, ովքեր թափառում են ամեն մի փողոցի անկյունում, անարժանների, ամենահետին ոչնչությունների, թշվառների, և նրանց, ովքեր երբեք չեն իմացել Իմ Անունը: Ես պիտի շրջվեմ դեպի թշվառների բազմությունը, որը երբեք Ինձ չի սիրել և նրանց պիտի դարձնեմ Սիրո մի ազգ, մի սուրբ ազգ, և նրանք պիտի փառաբանեն Ինձ: Նրանք պիտի կոչվեն Կենդանի Աստծո քահանաներ, քահանաները «Ամենի», և այդ քահանայության մեջ, Ես պիտի վերակառուցեմ Իմ Եկեղեցին: Այդ սրտերի մեջ Ես պիտի միավորեմ ձեզ բոլորիդ, և Իմ Մարմինը պիտի հանգստանա: Ժամը հասել է, և ոչ մեկը չի կարող կանգնեցնել Իմ Սուրբ Հոգու այս ժամանակը:

Երբ տեսնեք աշխարհը ձեր ոտքերի տակ քայքայվելիս, երբ ճախ նայեք և տեսնեք սասանվող թագավորություններ ու փոշու կույտերի վերածված քաղաքներ, իսկ աջ կողմում՝ գլորվող սարեր, իմացե՛ք, որ այս նշանները Իմ Սուրբ Հոգու հեղման սկիզբն են: Երբ տեսնեք Իմ աշակերտներին, որոնց Ես Ինքս եմ ձևավորել, անվախորեն Իմ Անունով քարոզելիս, մի՛ ընդհատեք նրանց. դիմադրե՛ք ձեր դայթակղությանը և զանազանեք ու ճանաչեք նրանց ոտնաձայները: Ես կշարունակեմ ուղարկել ձեզ մոտ այդ սրբերին, որպեսզի իրենց ճանապարհին հավաքեն Իմ չարչարված Մարմնի բոլոր անդամները, և ոչ մեկը, ոչ էլ նույնիսկ անմաքուր հոգիները, չեն կարող կանգնեցնել նրանց: Դրա փոխարեն նրանք վայր կընկնեն սրբերի առաջ, որովհետև կիմանան, որ նրանց Տերը Ամենն է:

[1] Մատթ. 22:1-14
[2] Երկրորդ Հոգեգալուստ, Սուրբ Հոգու հեղումը - Հովել 3:

Ամենը շուտով
քեզ հետ կլինի, զավա՛կս:
Նա՛, ով քո Միխիթարիչն է և
ում Տունը
անհասանելի Լույսի մեջ է,
ի վերջո կսուզի քեզ
Իր Լույսի մեջ և կկլանի քեզ:
~ Ես Սեր եմ: ~

Թո՛ղ օրհնյալ լինի Քո Փառապանծ
և Սուրբ Անունը՝ ընդմիշտ
գովաբանված և փառաբանված:

Նոյեմբերի 5-9, 1991

(Անգլիա ~ Մանչեստր)

(Սուրբ Օգոստինոսի Եկեղեցում, աղոթաժողովի գնալուց անմիջապես առաջ, դևը հարձակվեց ինձ վրա՝ ժողովը խափանելու մտադրությամբ: Ես երկու անգամ աղոթեցի Սուրբ Միքայելին և երկու տասնյակ Վարդարանից՝ Ռոզա Միստիկային: (Զարը ինձ բաց թողեց: Հետո Մեր օրհնյալ Մայրը տվեց ինձ այս պատգամը):

Ես քեզ հետ եմ, զավա՛կս: Մի՛ վախեցիր: Ես մի մատնաչափ իսկ հեռու չեմ թողնի քեզ Իմ տեսադաշտից: Աշխատի՛ր խաղաղությամբ, Վասո՛ւլա: Ես սիրում եմ քեզ: Աղոթի՛ր հիմա և գնա՛ խաղաղությամբ ու հիշի՛ր, որ Ես քեզ հետ եմ:

Նոյեմբերի 6, 1991

(Անգլիա)

(Պատգամ՝ տրված նախքան Սթրեյնջուեյի բանտի այցելությունը՝ այնտեղ կարդալու համար):

Զավա՛կս, ողջ զորությունը, որ դու կստանաս, գալու է Ինձնից: Ցույց տուր, զավա՛կս, թե Տերը ինչ է ասում աշխարհին: Ցո՛ւյց տուր նրանց, թե ինչպես են Իմ Կոպերը հեղեղվում արցունքներով: Թող Իմ մարդիկ աղոթեն նրանց համար, ովքեր չեն կանչում Իմ Անունը, և Ես կբժշկեմ նրանց: Անհնարինը կդառնա հնարավոր: Անապատը կվերածվի պարտեզի, և որմնաքարը՝ խորանի, Ինձ՝ ձեր Աստծո համար: Ասա՛ Իմ զավակներին, որ աղոթեն, աղոթեն իրենց սրտով, և Ես կլսեմ:

Ես կանչում եմ բոլոր նրանց, ովքեր ջախջախված են ցավից, որ Ինձ առաջարկեն իրենց ցավը և հանգստանան Իմ Սրտում: Ես կօգնեմ նրանց կրելու իրենց խաչը:

Ուստի, Իմ Վասուլա, զգա՛ Իմ Ներկայությունը: Տե՛ս Ինձ քո հոգու

աչքերով: Խոսի՛ր Ինձ հետ և թույլ տուր օգտագործել քեզ Ինձ փառաբանելու համար:

Նոյեմբերի 8, 1991

(Անգլիա - Մանչեստր)

Խաղաղություն քեզ:

Այս ձևով իջնելու Իմ Նպատակը ձեր փրկության համար է:

Այն, ինչ Ես սկսել եմ և օրհնել, Ես ավարտին պիտի հասցնեմ: Ասա՛ Իմ զավակներին, որ երբ Ես խոսում եմ նրանց հետ, քեզ որպես միջոց օգտագործելով, Իմ մտադրությունը Փրկությունն է, Իմ նպատակը Խաղաղությունն է. Ես չեմ ցանկանում ավերածություն: Բայց սատանայի մտադրությունը կործանումն է, որովհետև ինչի որ նա ձգտում է՝ սպանում է: Հավատարիմ սերը խոնարհվում է երկնքից ցած, որ հասնի ձեզ և առաջարկի ձեզ Իր Սիրտը: Դուք բոլորդ այնքան թանկ եք Ինձ համար: Սուրբը ցույց է տալիս Իր Դեմքը:

Ես կանչում եմ ձեզանից յուրաքանչյուրին առանց խտրականության: Դուք բոլորդ Իմն եք, և դուք բոլորդ պատկանում եք Ինձ, և ձեր կյանքը Իմ Ձեռքերում է մշտապես: Մի՛ եղեք նրանց նման, ովքեր թվում է, խոսում են Միասնության մասին, սակայն սուր են քաշում նրանց դեմ, ովքեր գործադրում են այն: Եկե՛ք Ինձ մոտ որպես մի ընտանիք, և մենք բոլորս միասին պիտի ընթրենք՝ Ես և դուք, դուք և Ես: Ես թույլ եմ տալիս, որ բոլորը լսեն Իմ Ձայնը:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: Զարդարե՛ք Ինձ ձեր սրտից եկող աղոթքներով:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 9, 1991

(Մանչեստր)

Տե՞ր:

Ես եմ, փոքրիկ: Օրհնյա՛լ եղիր:

Դեռևս որոշ բաներ կան, որ Ես կուզենայի գրել քո միջոցով: Ուստի թույլ տուր Ինձ օգտագործել քեզ: Մտածի՛ր, աղջիկս, թե ինչ Գիտելիք ես վաստակել Ինձնից: Ես կհզորացնեմ Իմ տաճարը[1], որպեսզի նրա կառույցը դառնա կայուն և ամուր ու անվնաս մնա որևէ հարվածից, որ կհասնի նրան: Ես քո մեջ կաճեմ, և ոչ թե կնվազեմ: Թող Իմ Հոգին հանգստանա քո մեջ: Սուրբը տալիս է քեզ Իր Խաղաղությունը:

[1] Հիսուս նկատի ունի Ինձ:

Նոյեմբերի 13, 1991

Յա՛հվե, ես սիրում եմ Քեզ:
Ես պաշտում եմ Քեզ:
Յա՛հվե, իմ երկնային սեր:
Ես գիտեմ, որ Դու ինձ հետ ես:
Յա՛հվե, իմ Հայր և Աբբա,
ասա՛ Քո այնքան Սիրեցյալ Որդուն,
ըր իմ սիրտն ապրում է
միայն Նրա համար:
Ասա՛ Նրան, որ Նա այն Օդն է,
որը ես շնչում եմ, Իմ Կյանքն է:

Ասա՛ Նրան,
որ իմ ձայնը Հանուն Նրա
կտարածվի այնքան հեռու,
որքան կարող եմ,
որպեսզի հայտնեմ Նրա Իղձերն ու
Ջերմեռանդ Սերը մեր հանդեպ:

Ասա՛ Նրան, Հայր,
որ ոչ մեկը և ոչ մի բան այլևս
չի կանգնի իմ և Նրա հանդեպ
ունեցած իմ սիրո միջև:
Ասա՛ Նրան, որ Նա իմ Ժպիտն է,
իմ Ուրախությունը և իմ Հույսը:
Ասա՛ իմ Փրկչին,
թե որքան եմ ես կարոտում Նրան
և ինչպես եմ մաշվում գիշեր
ըւ ցերեկ Նրա հանդեպ
ունեցած իմ սիրուց:

Աղջի՛կս, Իմ Հոգու սիրելի, դու չգիտե՞ր: Մի՞թե դու չգիտեիր, թե ինչպես է Իմ Հոգին գալիս հանգչում Ոչնչության վրա: Դու չե՞ս լսել, թե ինչպես եմ Ես հրճվում՝ բացահայտելով Իմ ողջ Դեմքը մանուկներին: Դու չե՞ս կարդացել. «Ինձ գտել են նրանք, ովքեր Ինձ չեն փնտրել, և Ես Ինձ ցույց եմ տվել նրանց, ովքեր Ինձ չեն դիմել»[1]:

- Քո Ուրախությունը քո Արարիչն է:
- Քո Սերը քո Սուրբ Օծյալն է:
- Քո Ջահը Իմ Սուրբ Հոգին է:

Օգտվի՛ր, զավակս, այն բոլոր պարգևներից, որոնք Ես տվել եմ քեզ, ու վերականգնիր Իմ Տունը:

Ես զբոսնում էի մի գետի մոտով, երբ տեսա հոսանքով գնացող մի փայտ[2], որը հեռու էր քշվում աշխարհիկ հոսանքով: Ես կռացա և վերցրի այն հոսանքի միջից: Ես այն Տուն բերեցի Ինձ հետ և տնկեցի Իմ Հրճվանքների Պարտեզում: Փայտի մի չոր կտորից Ես քեզ մի Ծառ դարձրի: Ես ասացի.

[1] Հռոմ. 10:20
[2] Աստված նկատի ունի ինձ:

«Աճի՛ր: Աճի՛ր և արմատ դցիր Իմ Պարտեզում, Իմ սեփական Տիրապետության մեջ: Եվ քո բողբոջներից բուրի՛ր մի անուշահոտ բուրմունք՝ Իմ Արդարադատությունը մեղմելու համար»: Ես ասացի. «Բազմաքանակ մրգեր պիտի աճեն ամեն ամիս և քո տերևները պիտի լինեն բալասան շատերի համար»: Երբեմն - երբեմն Ես Ինձ հաճույք եմ պատճառում՝ քո չորացած ճյուղերը կտրելով: Ես հրճվում եմ տեսնելով քո բողբոջած ծաղիկները և քո պտղի անընդհատ աճը: Միայն ջուրը[1] Իմ Սրբարանից[2], քեզ կարող է տալ աճ և Կյանք:

Ես՝ Յահվեն, կհոգամ, որ դու բարգավաճես: Ժամանակ առ ժամանակ Ես հաճույք եմ ստանում հոսանքով քշվող փայտի կտորներ վերցնել Իմ ճանապարհից[3]: Ես կարող եմ կյանք տալ ամեն ինչի, որ գտնում եմ Իմ ճանապարհին:

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, խաղաղություն քեզ:

- Եթե երկիրը ցնցվի և մոխիր դառնա հենց նրանց աչքերի առաջ, դա կլինի այն պատճառով, որ նրանք ոտնահարել են Իմ Օրենքը, որը հիմնված է Սիրո վրա: Նրանք խախտել են Իմ բոլոր Պատվիրանները: Չնայած ձեր Սուրբ Մոր բազմաթիվ միջամտություններին և չնայած Իմ Նախազգուշացումներին, Ֆաթիմայի ժամանակից ի վեր մինչև այս ժամանակաշրջանը, Իմ Զգուշացումներից ոչ մեկը չի հարգվել:

Ժամերը թռչում են, և մի հզոր զորք, ինչպիսին աշխարհը երբեք չի տեսել, ոչ էլ երբևէ նորից կտեսնի, մոտենում է: Շատ քիչ մարդիկ են մնալու: Ինչպե՞ս եմ Ես աղաղակում, որ հաղթահարեմ ձեր խլությունը: Մի ազգ, որը մոլեգնում է որոտացող ջրերի պես, նորից կհեղեղի աշխարհը՝ կրակով և ծծմբով: Ես շռայլ եմ ներելու մեջ, բայց Ես հազիվ եմ լսում ապաշխարության որևէ ճիչ:

Ո՛հ, թերահավատ մարդիկ, միայն բանավեճերով զբաղվող մարդիկ:

Գրի՛ր. Բացի մի բուռ մնացորդից, Ես մյուսներից միայն այս եմ լսում. «Ինչո՞ւ պիտի հավատանք Պատգամներին: Ինչո՞ւ պիտի ծոմ պահենք, քանի որ պատգամները Նրանից չեն: Ինչո՞ւ ապաշխարենք, երբ արդար ենք: Ինչո՞ւ պիտի հավատանք այդ խելագար բազմությանը: Մի՛ լսեք, քանի որ նրանք տարածում են իրենց սեփական տեսիլքներն ու մարգարեությունները»: Ես ճշմարիտ եմ ասում ձեզ, երբ այդ Օրը գա, ավելի լավ կլիներ, որ դուք երբեք ծնված չլինեիք: Մի մարդն էլ բավական է, որ կրակ բորբոքի բռնկում առաջ բերելու համար:

Այսօր, նորից, մի մարդ կա ձեր մեջ, որն ապրում է միևնույն երկնքի տակ՝ պատրաստ Կրակը վառելու, որը կարող է այրել և հալել երկրի բոլոր տարրերը մի քանի վայրկյանների ընթացքում: Երկիրը, ինչպես հաղուստ,

[1] Այսինքն՝ Սուրբ Հոգին:
[2] Այսինքն՝ Տիրոջ Սիրտը:
[3] Աստված ինձ հասկացնում էր մեկ այլ ընտրյալ հոգու մասին, որին Նա ինձ թույլ էր տվել հանդիպել:

կմաշվի: Ես նախազգուշացրել էի ձեզ, սակայն դուք ուշադրություն չդարձրիք: Իմ տառապանքը մեծ է, բայց ուրիշ ի՞նչ ձևով Իմ Եկեղեցուց դուրս վռնդել վաճառականներին: Ես ինչպե՞ս եմ դուրս շպրտելու Իմ Սրբարանում գտնվող օձերին իրենց բներից, եթե Ես չգամ Բոցով և Բոցավառ Կրակով: Առևտրականները, վաճառականները, ամենը կոչնչացվի, և դա հնարավոր է անել միայն Կրակով:

Գիտուններն այլևս չեն պարծենա իրենց իմաստությամբ, ոչ էլ՝ իրենց իշխանությամբ: Հոգով հարուստները կընկնեն դատարկ ու մերկ և կողբան: Նրանք կփնտրեն Ինձ, բայց այնտեղ, որտեղ կփնտրեն, չեն գտնի: Նրանք նորից ու նորից կկանչեն Իմ Անունը, բայց Ես չեմ լսի նրանց: Ես դուրս կշպրտեմ շատերին:

Մեկ եղիր Ինձ հետ, զավա՛կս: Իմ Խաղաղությունը քեզ: Ես քեզ շատ եմ սիրում: Արդարադատությունը մոտ է:

(Ավելի ուշ):

Հենվիր Ինձ վրա: Ես քեզ հետ եմ, զավա՛կս: Ա՛հ, փոքրիկ զավակս: Հանուն Ինձ, տար քո բեռը ուսերիդ վրա: Սիրի՛ր Ինձ, զավակս, և դու պիտի ապրես: Սիրո՛վ ավետարանիր Սիրո համար: Ընդունի՛ր այն ամենը, որ գալիս է Ինձնից:
Արի՛, Ես և դու, դու և Ես՝ միացած սիրով: Ես քեզ այնքա՜ն շատ եմ սիրում, Իմ Վասուլա, այնքա՜ն շատ, փոքրի՛կ...

Եկեղեցին կվերակենդանանա:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 14, 1991

(Պատգամ Իռլանդիայի համար):

Լսի՛ր, Իռլանդիա, այլևս մի՛ ցրվիր, հավաքվի՛ր, հավաքվիր մեկ ամբողջության մեջ: Արի՛ Ինձ մոտ խաղաղությամբ և միասին աղոթեք խաղաղության համար:

Դատարկե՛ք ձեր սրտերը բոլոր չար հակումներից և իմացե՛ք, թե որտեղ է խաղաղությունը, որտեղ է սերը, որտեղ է սրբությունը: Աղոթե՛ք նրանց համար, ում ձեռքերից արյուն է կաթում: Նրանք չգիտեն, թե ինչ են անում:

Ես եկել եմ մի կողմ տանելու հոտի լավագույն մասը, որպեսզի նրան հարցնեմ, արդյոք նա համաձա՞յն է լրիվ ինքնահրաժարման ենթարկվելու ինն օրերի ընթացքում: Դևերն այս երկրում խուճապահար կլինեն: Ես գիտեմ, որ ձեր հանցանքները շատ են, և միայն մի բուռ մնացորդն է, որ Իմ Կնիքն ունի իրենց ճակատին:

Ես անցել եմ քո միջով, Իռլանդիա, և Ես ցնցվել եմ քո անօրինությունից:

Բայց տե՛ս: Ժամը Մոտ է: Քո հողը մասերի է բաժանված չափագծով, բայց քո սիրտը նույնպես մասերի է բաժանված, Իռլանդիա, Իմ դո՛ւստր, ընդհուպ մինչև քո ընդերքները[1]: Վերականգնեցե՛ք Իմ երերացող Տունը՝ համախմբվելով խաղաղությամբ և առանց ձեզ տարբերակելու Իմ Անվան տակ: Թեև դուք մի մնացորդ եք, որ հավատարիմ եք Ինձ, մի՛ ընկճվեք: Ես ձեզ նոր գինի պիտի բերեմ և օրհնություն, որպեսզի թրջեք ձեր շուրթերը:

Մի՛ վհատվեք: Ձեր Փրկիչը Իր Վերադարձի ճանապարհին է: Դուք Իմ Սրբարանի աղյուսներն եք և միևնույն ժամանակ Իմ Տան կառուցողները: Միավորվելով և վերահամախմբվելով, դուք կկազմեք մի կառույց, բայց եթե դուք մնաք բաժանված և ցրված, ես ինչպե՞ս եմ վերակառուցելու այն, ինչ հիմա ավերված է: Ինձ հարկավոր է, որ դուք բոլորդ միասին լինեք, որ կազմեք մեկ միասնություն և վերակառուցեք Իմ Տունը: Ինձ անհրաժեշտ են բոլոր աղյուսները:

Երկրի վրա Իմ Թագավորությունը Իմ Եկեղեցին է, և Հաղորդությունը Իմ Եկեղեցու Կյանքն է: Ես Ինքս եմ ձեզ տվել այս Եկեղեցին:

~ Ես ձեզ թողեցի մեկ Եկեղեցի, բայց հազիվ էի Ես հեռացել, հազիվ էի մեջքս շրջել, որ գնայի Հոր մոտ, երբ դուք ամայացրիք Իմ Տունը: Դուք այն գետնին հավասարեցրիք: Եվ Իմ հոտը մոլորված թափառում է աջ ու ձախ...

Դեռ որքա՞ն ժամանակ Ես պետք է խմեմ ձեր բաժանման Գավաթը՝ տանջանքի և ավերածության գավաթը: Սրբին, Նրան, ում դուք ասում եք, որ սիրում եք, առաջարկել եք մի լայն և խորը գավաթ, լցված դառնությամբ և վշտով, որից Իմ քիմքը ավելի չոր է քան մագաղաթը, իսկ Իմ Շուրթերը ծածկված են վերքերով: Այս գավաթի համը, որն այս սերունդն է առաջարկում Ինձ, նույնքան դառն է, որքան օձի թույնը:

Ես միայնակ կուլ չեմ տալիս Իմ Արցունքները: Ձեր Սուրբ Մայրը կիսում է Իմ վիշտը, քանզի Նրա Անարատ Սիրտը սիրով միացած է Իմ Սուրբ Սրտին: Սակայն շուտով Ես բոլորիդ պիտի նորոգեմ Իմ Կրակով:

Աղոթե՛ք առանց դադարի, քանզի ժամը մոտ է: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ կնքելով ձեր ճակատները Իմ Սիրո Հոգոցով:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 15, 1991

Տե՞ր իմ:

Ես եմ: Միշտ արի Ինձ մոտ: Աղոթի՛ր Ինձ հետ: Ասա.

Դու իմ միակ Աստվածն ես,
իմ միակ Հույսը, իմ միակ Սերը:
Իմ Աստվածն ես Դու անզուգական,
միշտ այնքան Քնքուշ ու Նուրբ
Հանդեպ թույլերի և թշվառների:

[1] Աստված խոսում է Իր Եկեղեցու տարբեր հարանվանությունների մասին:

Մի՛ թող, որ Արդարության
Քո Բաժակը թափվի մեզ վրա:
Թո՛ւյլ տուր,
որ դերիներն ազատ արձակվեն
Նախքան Քո Օրը, Տե՛ր իմ:
Բազմաթիվ են եղել
մեր մեղքերը Քո Աչքերում,
իսկ մեր ըմբոստությունն
ու անտարբերությունը՝
Նույնիսկ ավելի:
Բայց Քո Սիրտը տրոփում է
Սիրով և Կարեկցությամբ:
Տուր մեզ, ո՛վ Ամենողորմ Հայր,
մի հզոր Շունչ Քո Հոգու,
որ բոլորիս կենդանացնես
Քո Փառքի համար: Ամեն:

Ես օրհնում եմ քեզ, զավա՛կս:

Նոյեմբերի 18, 1991

Հիսո՞ւս: Սուրբ Աստվա՞ծ:

Ես եմ: Փոքրի՛կս, աղջի՛կս, խաղաղություն քեզ: Ես՝ Տերը, օրհնում և օրհնում եմ քեզ:

Սիրով ավետարանիր Սիրո համար: Ասա՛ նրանց, որ Ես նրանցից ամեն մեկին սիրում եմ մի յուրահատուկ ձևով: Ասա՛ նաև, որ Ես բարդ Աստված չեմ: Ես հեռու չեմ: Հենց այս պահին Ես ներկա եմ: Ասա՛ նրանց, թե որքան եմ Ես փափագում նրանց սիրուն: Ցույց տուր նրանց, թե ինչպիսին է Տիրոջ Սիրտը: Ասա նրանց, որ Տիրոջ Սիրտը այլ բան չէ, քան՝ Սեր և Գութ, և եթե Արդարությունը իջնում է ձեզ վրա, դա ձեր մեղքերի և հանցանքների ծանրության պատճառով է: Քանի-քանի անգամ եմ Ես անտեսել այն ամենը, որ դուք չեք անում Ինձ համար, և քանի-քանի անգամ եմ Ես հետ պահել Հոր Ձեռքը ձեզ վրա իջնելուց:

Հիսուս է Իմ Անունը, և Հիսուս նշանակում է Փրկիչ: Ես ողջ մարդկության Փրկիչն եմ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 22, 1991

(Իռլանդիա - Քորք)

Սիրելի զավակներ, Ես ձեզ եմ տալիս Իմ Խաղաղությունը: Հիմա աշխարհը քայքայման մեջ է, բայց Ես ձեզ չեմ մոռացել: Ես այցելում եմ ձեզ ձեր

վշտի մեջ, որպեսզի օգնեմ ձեզանից յուրաքանչյուրին հասնելու իր Սենյակը, որը Երկնքում է: Դուք Իմն եք, և դուք բոլորդ շատ թանկ եք Ինձ համար:

Ես աշխարհի Լույսն եմ:

Ուստի մի՛ վախեցեք: Ես խնդրում եմ աղոթել նրանց համար, ովքեր կարծրացրել են իրենց սիրտը և չեն հավատում Ճշմարտությանը: Երբեք մի՛ դադարեցրեք ձեր աղոթքները:

Ես՝ Տերը, անցել եմ քո քաղաքների միջով, Իռլանդիա, թեև այս պահին դու չգիտես այն Ծրագրերը, որ Ես պատրաստել եմ քեզ համար:

- Մնա՛ Իմ Աստվածային Սիրո մեջ, և դու ուժեղ պիտի զգաս:
- Մնա՛ Իմ Սուրբ Սրտի մեջ, և դու պիտի ծաղկես:
- Մնա՛ Իմ Շնորհի մեջ՝ քո հաստատակամությամբ և հավատքով:
- Մնա՛ Իմ մեջ, և դու պիտի ապրես:

Ես՝ Տերը, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին:

Հիշե՛ք. Սերը սիրում է ձեզ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 24, 1991

Զավա՛կս, Ես ողջ մարդկության միակ Մայրն եմ: Ձեզանից ամեն մեկը Իմ զավակն է:

Սուրբ Մայր, արդյոք մի օր ամեն մարդ կընդունի՞ այս Ճշմարտությունը:

Վերջում ամեն հոգի կընդունի այս ճշմարտությունը: Նրանք, ովքեր հիմա անկեղծորեն սիրում են Աստծուն, կընդունեն այդ:

Երբեք մի դադարիր աղոթել աշխարհի դարձի համար, զավա՛կս: Հասկացի՛ր, որքան շատ աղոթքներ Ես ստանամ, այնքան քիչ չարիք կտարածվի: Աղոթքները երբեք իզուր չեն կորչում: Ես առաջարկում եմ դրանք Հորը, որի Արդարությունը շատ մոտ է: Աղոթե՛ք Աստծո Ողորմությունը ստանալու համար:

Դուք չգիտեք, թե Աստված ինչ է վերապահել այս չար սերնդի համար: Սակայն հիշեք, թե ըմբոստության ժամանակներում ինչպես է Նրա Ձեռքն իջել մեղավոր մարդկանց վրա, և այն, ինչ եղել է այդ ժամանակ, ընդամենը մի մանրիկն է, որ Նա նկատի ունի հիմա ձեզ համար: Նրա Արդարությունը պատասխան կտա Իր Սուրբ Օթևանից՝ համապատասխան այս սերնդի մեղքերի: Նա գալու է Կրակով, որոտով, մրրիկով և լափող Կրակի բոցով՝ այրելու համար աշխարհի մեղքերը: Ո՛չ, դուք չգիտեք, թե Ամենակարողն ինչ է վերապահել ձեզ համար, որպեսզի զտի մարդկությանը:

Բոլոր նշաններն այդտեղ են, ձեր շուրջը, բայց քչերն են տեսնում կամ նկատում դրանք: Իմ որդիների և դուստրերի անմեղ արյունն է հեղվում սատանայի համար: Այդ անմեղ արյունը մատուցվում է Չարին, որպես

ողջակիզում: Սատանայի ծրագիրն է այս աշխարհից վերացնել նրա արարածներին, ձեզ բոլորիդ ոչնչացնել և բոցերի մեջ դցել: Նա ցանկանում է բոլորիդ միասին ողջակիզել: Ես բղավում եմ, Ես բարձրաձայն կանչում եմ, Ես Արյան Արցունքներ եմ հեղում, բայց քչերն են ուշադրություն դարձնում: Աստված պիտի դա ձեզ մոտ, բայց դուք չգիտեք, թե ինչ ձևով:

Սուրբ Մայր, մենք աղոթում ենք, բայց ինչպես Դու ես ասում, մենք շատ քիչ ենք: Ի՞նչ անել:

Ձեր աղոթքները կարող են փոխել աշխարհը: Ձեր աղոթքները կարող են ստանալ Աստծո Շնորհները՝ մեղավորների դարձի համար: Եվ որքան շատ դարձի եկողներ լինեն, այնքան շատ աղոթքներ կարվեն և կլսվեն ուրիշների դարձի համար: Հասկանո՞ւմ եք, աղոթքները զորեղ են: Սա է պատճառը, որ Ես պահանջում եմ ձեզանից չդադարեցնել ձեր աղոթքներն ու ձեր զոհողությունները: Հիմա առավել կարիք կա հավատացյալների, քան երբևէ եղել է:

Աստված կհիշի ձեր բոլոր զոհողությունները, Իմ սիրեցյալ զավակներ: Սիրե՛ք Նրան և փառաբանե՛ք Նրան: Եկեղեցին կվերականգնվի Իր ողջ փառքով:

(Ավելի ուշ):

Տե՞ր:

Ես եմ:
Ուրախացրո՛ւ Ինձ և լուռ մի՛ մնա Ճշմարտությունը հայտարարելիս: Ես օրհնել եմ քո առաքելությունը: Ես քո Ապառաժն եմ և Ապաստանը: Եթե դու խոնարհվես, Իմ Ներկայությունը պիտի երևա Իր ողջ շուքով: Դու պիտի աղոթես: Ես լսում եմ:

Տե՛ր, ներիր մեզ մեր մեղքը,
մեր թշվառությունը, մեր սխալները,
մեր անհանդուրժողությունը,
մեր սիրո պակասը:
Ների՛ր մեզ մեր սիրո և
զգայնության պակասի համար:

Դարձի բեր չարամիտներին,
անթափանցներին, անտարբերներին,
անաստվածներին և փոխակերպիր
ու դարձրու նրանց
լույսի անոթներ՝
Քեզ փառաբանելու համար:
Հնազանդեցրո՛ւ հպարտներին,
ցածրացրո՛ւ բարձրերին, խոնարհի՛ր
անդրդվելիներին: Փոխակերպիր
մեզ բոլորիս, ինչպես
Քո Պայծառակերպության ժամանակ:

Ամե՛ն:

Երբ Իմ Սուրբ Հոգին պաշարի ձեզ, դուք բոլորդ կփոխակերպվեք: Ես միշտ պատրաստ եմ ներելու ձեզ:
Ես սիրում եմ քե՛զ, փոքրի՛կ: Մե՞նք: Մե՞զ:

Այո՛, Տեր:

Նոյեմբերի 25, 1991

Տե՛ր, ես Քեզ հուսախաբ արե՞լ եմ
ինչ-որ մի բանում:
Դու կանչել ես ինձ, բայց
ես <u>իսկապես</u> պատասխանե՞լ եմ քեզ:
Ես իսկապես լսե՞լ եմ Քո Ձայնը, թե՞
մերժել եմ Այն:
Գուցե ես անտարբե՞ր եմ եղել
Քո Սուրբ Սրտի կոչերին:
Մի՞թե Դու հեռացրել ես
Քո սիրող Աչքերն իմ վրայից,
ո՛վ Սուրբդ Սրբոց:

Իմ հոգու տառապանքի մեջ
Ես աղոթում և հարցնում եմ Քեզ.
Ո՞ւր են այն Աչքերը,
որոնք այնքան սիրով նայում էին ինձ:
Ո՞ւր է իմ Օթևանը՝
Քո Սուրբ Սիրտը: Այդ ինչպե՞ս է,
որ ես չեմ կարողանում
լսել Քո Ձայնը,
կամ զգալ Քո Ներկայությունը:
Մի՞թե ես կորցրել եմ
Քո Ընկերությունն
իմ անզգայության պատճառով:
Մի՞թե ես կորցրել եմ
Քո Ընկերակցությունը,
ո՛վ Սուրբդ Սրբոց:
Իմ քահանա՛: Դիակը կնետվի մի փոսի մեջ, կթաղվի և կմոռացվի: Դուստը Եգիպտոսից, Իմ Խաղաղությունը քեզ: Ես քեզ տեղադրել եմ ապրողների երկրում: Նայի՛ր Ինձ և վստահ եղիր Իմ Սիրուն և Ընկերությանը, որ Ես ունեմ քո հանդեպ: Մի՛ ստիպիր Ինձ ցավից արտասվել: Ինչպե՞ս կարող էի Ես քեզ լքել: Բայց չարը հուսահատորեն փորձում է թալանել քո բոլոր գանձերը, որոնք Ես Ինքս եմ քեզ տվել: Փոսի միջից Ես հանել եմ քեզ, իսկ նա ուզում է քեզ ետ տանել դեպի փոսը ու թաղել: Աղջի՛կս, վստահիր Ինձ, Ես քեզ որբացած չեմ թողնի: Ես վստահեցնում եմ քեզ, աղջի՛կս: Ես երբեք քեզ չեմ լքի:

Լսի՛ր Ինձ: Համոզված եղիր, դու զուր չես վատնել քո շունչը[1]: Դու այնքա՜ն, <u>այնքա՜ն</u> թույլ և անօգնական ես և, ա՜հ, ինչպես է Իմ Հոգին կարողանում ազատորեն շնչել քո մեջ: Շշնջալով ու կրկնելով, ինչպես մի արձագանք, ես թրթռացնում եմ քո ականջին Իմ Բառերը, որոնք պետք է արտասանվեն Իմ Հավաքների ժամանակ: Չէ՞ որ, Հոգի՛, դու անգիտակ և անց չափազանցոր ես Գիտելիքի և Իմաստության նկատմամբ: Ուստի ինչպե՞ս կարող էր քո Հոգին հասկանալ այս ամբողջը, եթե այդ Հոգին, որը խոսում է քո միջոցով, Իմ սեփական Հոգին չլիներ:

Վասո՛ւլա[2]... Դու այնքա՜ն թանկ ես Ինձ համար... Լսի՛ր, զավակս: Քո կողքին մի Հրեշտակ կա, որպեսզի կարեկցի քեզ, մխիթարի և աղոթի քեզ համար: Սպասի՛ր, ես ավելին ունեմ ասելու: Ես ճանաչում եմ քո անսահման թուլությունը: Դրա համար ես պիտի օգտագործեմ այդ թուլությունը, որպեսզի Իմ ժողովրդին Միասնության բերեմ և ցույց տամ նրանց, թե ես՝ Տերը, ինչ եմ զգում իրենց անփութության պատճառով: Ես նրանց ցույց կտամ, թե ինչն է ամենացանկալին Ինձ համար: Ես, քո թուլությամբ, նրանց ցույց պիտի տամ, թե ինչ եմ ես զգում այն տարբերությունների նկատմամբ, որ նրանք ստեղծել են իրենց միջև: Ասա՛ Ինձ, մի՞թե դուք բոլորդ նման չեք իրար՝ ստեղծված Իմ Սեփական Ձեռքերով:

Այո՛, Տեր:

Ո՞վ չի ստեղծվել համաձայն Իմ Պատկերի:

Ո՛չ մեկը, Տեր: Ի՞նչ ձևով է նրանց մտածելակերպը վիրավորում Քեզ, Տե՛ր իմ:

Մարդկանց ծայրահեղ հպարտության պատճառով Իմ Հոր Բաժակը լցվել է Նրա Արդարությամբ: Իրենց կարծրության և համառության հետևանքով նրանք մնացել են անբնակ: Նրանցից շատերն են խոսում միասնության և եղբայրության մասին, բայց նրանց բառերը սին են ու դատարկ:

- Հաստատեք ձեզ ձեր Արարչի Աչքերում՝ խոնարհվելով: Հաստատեք ձեզ ձեր Արարչի Աչքերում՝ միասնական դարձնելով Ձատկի ամսաթիվը: Դրսևորեք ինքներդ Ինձ՝ միասին հաց կտրելով: Ձգեստավորեք ինքներդ ձեզ վսեմությամբ ու շուքով, բայց և խոնարհությամբ, և ոչ թե կրոնի ու բարեպաշտության արտաքին տեսքով:

Ապաշխարե՛ք: Կար ժամանակ, երբ դուք ապրում էիք խոնարհության, պարզության և անսահման սիրո մեջ և ձեր սեղանը ծածկված էր ճոխ ուտելիքով: Այո՛, Իմ Եկեղեցու մեծությունը գերազանցում էր ամեն ինչ և ամեն մի կենդանի էակի, որովհետև Սուրբ Հաղորդությունը կազմում էր Իմ Եկեղեցու կյանքը:

- Եթե այսօր Իմ Եկեղեցին պայծառության պակաս ունի, դա այն պատճառով է, որ Իմ Եկեղեցիներից շատերը վերացրել են Իմ

[1] Գայթակղիչը (սատանան) եկավ Ինձ մոտ, ասելով, որ ես բավարար չափով չեմ աշխատում Տիրոջ համար, և իմ բոլոր հանդիպումներն Անգլիայում և Իռլանդիայում ամբողջովին «ձախողում» էին, և նրանց ասած իմ բոլոր խոսքերն իզուր էին: Ես խուճապահար եղա և մտածեցի, որ Տերը Իր թիկունքն է դարձրել դեպի Ինձ:

[2] Հիսուսն իմ անունն արտասանեց համարյա շշուկով:

Մշտնջենական Զոհաբերությունը[1]:

- Կարո՞ղ է որևէ մեկը ուշադիր նայել այս թանձր խավարի մեջ և տակավին պնդել, որ տեսնում է: Ո՞վ կարող է պարծենալ, որ այս մթության մեջ խուսափել է թակարդներից: Բայց քանի դեռ դուք ասում եք. «Մենք տեսնում ենք», ձեր մեղքը մնում է: Ես ասել եմ, որ ուրիշ ոչխարներ ունեմ, որոնք մեկ հոտից չեն, և որոնց նույնպես ես պետք է առաջնորդեմ: Բայց հենց որ ես մի մոլորված ոչխարի բերում եմ ետ դեպի հոտ՝ Իմ մեջ Ճշմարիտ Կյանք վարելու համար, հենց որ ես վերականգնում եմ նրա տեսողությունը, դուք հարձակվում եք նրա վրա՝ Երկնքի Արքայությունը նրանից հեռացնելու համար:

- Մի՞թե չարը կբացի կույրի աչքերը: Մի՞թե չարը այնպես կանի, որ նա բացականչի. «Ա՛բբա»: Ուստի, մինչև չզղջաք, Իմ Հոր Ձեռքը կիջնի ձեզ վրա: Ես այլևս չեմ կարող ետ պահել Նրա Ձեռքը ձեզ վրա իջնելուց: Եթե ձեզանից յուրաքանչյուրը <u>սրտանց</u> չների իր եղբորը, Իմ Հոր ձեռքը կիջնի ավելի արագ, քան դուք կարծում եք:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 3, 1991

(Մեկ այլ պատգամ Ֆիլիպինների համար):

Ասա Իմ ժողովրդին, որ նրանք նման են աղյուսների, և Ես կարող եմ օգտագործել նրանց Իմ Տան վերականգնման համար: Ես կարող եմ, եթե նրանք Ինձ թույլ տան օգտագործել նրանցից ամեն մեկին: Թույլ տվեք Ինձ ձեզ բոլորիդ առաջնորդել: Ինքներդ ձեզ հանձնեք Ինձ՝ առանց հարցնելու թե ինչու: Պարզապես վստահեք Ինձ՝ ձեր Տիրոջը: Առաջարկեք Ինձ ձեր կամքը, սակայն մի՛ առարկեք Ինձ, երբ Ես օգտագործեմ այն: Աղոթե՛ք սրտով և խոստովանեք ձեր մեղքերը: Խորհրդածեք Իմ Զարչարանքների և այն ամենի մասին, որ Ես տվել եմ ձեզ:

Դեկտեմբերի 4, 1991

(Ֆիլիպիններում, աղոթաժողովից առաջ):

Տե՞ր:

Ես եմ: Մի՛ վախեցիր: Ես չեմ լքել քեզ: Ես սիրում եմ քեզ:

Սիրելի աղջի՛կս, քո առաքելությունը Իմ Փառապանծ Լույսը տարածելն է ամեն մի ազգի մեջ: Տարածի՛ր այն ամենը, որ դու ստացել ես Ինձանից: Սա, զավա՛կս, այն է, ինչ դու պետք է անես: Մնացածը Ես կանեմ: Ես պիտի պաշտպանեմ քեզ այդ աշխատանքը կատարելիս, որը Ես քեզ եմ տվել: Դու ոչինչ չունես վախենալու: Ես՝ Հիսուս, այնքան շատ եմ սիրում

[1] Կանխասացված Դանիել մարգարեի կողմից 11:31

քեզ:

~ Լսի՛ր, մի՛ փորձիր հասկանալ: Սակայն քեզ փորձելով, ես քո հոգին աճեցնում եմ սրբության մեջ: Ծառայիր Ինձ, զավա՛կս, կատարելով այն աշխատանքը, որը ես քեզ եմ տվել: Ես միշտ քեզ կխրախուսեմ, որպեսզի նախանձախնդիր կերպով վկայես Ինձ համար և Իմ Տան համար: Եվ ես քեզ միշտ կհամոզեմ, որ չնայես քո աջ ու ձախ կողմերը: Ես խստասիրտ չեմ լինի քեզ հետ, որովհետև դու անասելի թշվառ ես:

~ Քանի որ դու ծառայելու ես հենց իրեն՝ Արդարությանը, ես քեզ ամուր պիտի կապեմ Ինձ հետ, որպեսզի հաստատուն կանգնես Իմ Կողքին: Այլապես, եթե միայնակ մնաս, դու կերերաս:

~ Լսի՛ր, Իմ Հոգին՝ քո Սուրբ Ուղեկիցը, քեզ ոգևորությամբ կառաջնորդի Իմ զավակների մոտ: Շնորհով դու կխոսես Ինձ համար: Ես քեզ հետ եմ, և ես երբեք քեզ հուսախաբ չեմ անի: Ե՛կ:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 5, 1991

(Ֆիլիպինների աղոթախմբի համար):

Ես օրհնում եմ նրանց բոլորին: Ասա՛ Իմ զավակներին, որ Իմ Սիրտը բոցավառ է և այրվում է՝ պատրաստ կլանելու նրանց: Նրանք միայն պետք է ներս մտնեն Իմ Սուրբ Սրտի մեջ, և ես նրանց զմայլված կթողնեմ Ինձանով՝ իրենց Աստծով:

(Հատուկ մեկի համար):

~ Ես այսօր առաջարկում եմ քեզ Իմ Սիրտը: Վերցրո՛ւ Այն: Հիսուս է Իմ Անունը, և Հիսուս նշանակում է

~ Փրկիչ: ~

Սերը սիրում է քեզ:

Իսկ դու[1], զավակս, շարունակիր հյուսել այն, ինչ ես եմ քեզ տվել: Դու դատարկ չես մնա: Նայի՛ր, քո սեղանը լիքն է, իսկ առանց Ինձ քո սեղանը դատարկ կլինի: Այդ ես եմ, որ անում եմ քո հոգին: Ուրեմն, փարվի՛ր Ինձ և դու պիտի ապրես: Իմ Սուրբ Համբույրը քո ճակատին է: Ես սիրում եմ քեզ: Սիրի՛ր Ինձ:

ΙΧΘΥΣ

[1] Հիսուս շրջվեց դեպի Ինձ:

Դեկտեմբերի 5, 1991

(Մանտին Լուպայի կալանավորների համար - Մանիլա, Ֆիլի- պիններ):

Վասո՛ւլա, խաղաղություն, զավակս: Ասա՛ բանտարկյալներին.
- Դուք չգիտեի՞ք, մի՞թե չեք լսել, թե ինչպես է Ողորմությունը խոնարհվում մինչև ներքև, դեպի ողջ մարդկությունը: Ահավասիկ ձեր Աստվածը, որ Իր Գահից խոնարհվում է դեպի ցած, որպեսզի հասնի ձեզ:

- Ես եկել եմ ձեզ մոտ -

ասելու այն Մեծ Սիրո մասին, որ ունեմ ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ:
Ես ձեր Աստվածն եմ, որ խոսում եմ Իմ գործիքի միջոցով՝ Իմ Պատգամը ձեզ տալու համար: Ես եկել եմ ձեր սրտերում խոսելու և մխիթարելու ձեզ, Իմ ընկերներ: Ես ասում եմ ձեզ. աշխարհը ոչինչ է իմ առաջ, ուստի մի՛ վախեցեք աշխարհից: Եկե՛ք Ինձ մոտ և հենվեք Ինձ վրա, և Ես, որպես հովիվ, պիտի առաջնորդեմ ձեզ դեպի Իմ անմահական Ջրերը: Ես պիտի ապաքինեմ ձեր վերքերը և պիտի կապեմ դրանք: Իմ Աչքերը երբեք չեն հեռանում ձեզանից, և Ես ասում եմ ձեզ. Ինձ հետ ձեր սեղանը միշտ լիքը կլինի, Ինձ հետ դուք կընթրեք, Իմ ընկերնե՛ր: Եվ երբ ծանր մտրակն իջնի ձեզ վրա, թույլ չտաք, որ դա չփոթեցնի ձեզ, սիրելինե՛րս: Ամեն անգամ, երբ այն իջնի ձեզ վրա, նայե՛ք Իմ Վերքերին, որոնք բժշկեցին ձեզ և փրկեցին Մահից:
Նայե՛ք Ինձ՝ ձեր Փրկչին: Մի՛ նայեք ոչ աջ, ոչ էլ՝ ձախ: Հետևե՛ք Իմ Ոտնահետքերին: Դուք կճանաչեք դրանք նրանցում եղած արյան հետքերից: Հետևեք դրանց, սիրելինե՛րս, և դրանք ձեզ կտանեն այնտեղ, որտեղ որ Ես Եմ:
Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին, թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատներին: Սերը սիրում է ձեզ:

ΙΧΘΥΣ

(Քույր Թերեզայի համար, որը խնամում է բանտարկյալներին, և որը փոխակերպել է նրանց՝ դարձնելով Աստծուն նվիրված արարածներ):

Ես նրանց տվել եմ մի Ժայռ և, ո՜հ.... որքան եմ Ես սիրում այդ Ժայռը: Ես՝ Տերը, օրհնում և օրհնում եմ նրան, քանզի օձերով բնակեցված անապատը նա դարձրել է

մի բերրի հող, մի պարտեզ, որտեղ
Ես՝ Տերը, կարող եմ հանգչել:

Դեկտեմբերի 8, 1991

Տե՞ր:

Ես եմ: Աղոթի՛ր, նախքան դու կհանդչես Իմ մեջ, սա՛ Ինձ հետ.

Հիսո՛ւս, հանդչի՛ր իմ մեջ,
իսկ ես՝ Քո մեջ,
միացած, միմյանց կապված: Ամեն:

(Ես կրկնեցի դա):

Հաստատուն եղիր Երկու Սրտերի հանդեպ, որոնք միացած են սիրով: Ես արդեն շատ սրտերում եմ խոսել այս ճշմարտության մասին, մի ճշմարտություն, որը շատերը կմերժեն, բայց վերջում Մեր Երկու Սրտերը կհաղթեն: Այսպիսին է աշխարհը: Այսօր նրանք ժխտում են, սակայն վաղը նրանք կպատվեն այս ճշմարտությունը:

Ես՝ Հիսուս, սիրում եմ ձեզ բոլորիդ: Ձեր սրտում ուրիշ ոչ մեկին մի՛ ունեցեք Ինձանից բացի: Ինձ առաջինը դասեք: Իմ խաղաղությունը ձեզ:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 12, 1991

(Ես մտքով տեղափոխվեցի Շվեցարիա):

Տե՛ր, ինչպիսի՞ն է Եկեղեցին Շվեցարիայում:

... Ավերակ է ...

Դեկտեմբերի 24, 1991

(Սուրբ Ծննդյան նախօրյակ)

Տե՞ր իմ:

Ես եմ: Հենվիր Ինձ վրա, զավակս:

(Իմ հոգու աչքերով ես տեսա Հիսուսի Սուրբ Դեմքը: Նա կարծես երեխա լիներ՝ մեծ, անմեղ աչքերով):

Հսկայական փոխհատուցումներ պետք է արվեն այս երկրի վերքերը սպիացնելու համար, այն վերքերն ու կտրվածքները, որոնք հասցվել են թշվառության և մեղքի հետևանքով:

~ Հրճվանք պատճառիր քո Փրկչի Աչքերին և տարածի՛ր:

<u>Թո՛ղ լինի այնպես</u>,

որ Իմ Պատգամը դառնա այնքան լիառատ, այնքան ընդարձակ, վկայելով

իրեն, որ Զարությունը, Անտարբերությունը և Անաստվածությունը նվաճվեն ու հանձն ապաշխարության: Զավա՛կս, կառչիր Իմ հաղուստի քղանցքից և հիմա նույնիսկ էլ ավելի ձգվիր[1], երկրի մի ծայրից մինչև մյուսը: Մտիր Իմ Սրբարանները, եթե նրանք ընդունեն քեզ Իմ Սրբարաններից ներս:

Եթե մարդիկ արգելեն քեզ, թող դա քեզ չտանջի, ոչ էլ վշտացնի: Զհուսահատվես: Մաքրագործման օրը քեզ ճնշողները հետ կնայեն այդ տեսարաններին և կողբան հիշելով իրենց մերժումը: Նրանք կհասկանան, թե ինչպիսին էին իրենք՝ մերժելով Մեր Աստվածային Սրտերը, և ոչ թե՝ քեզ, մերժելով մեր Երկու Սրտերը, որ մարգարեացան:

Աղջի՛կս, հետևիր արյամբ ծածկված Իմ Ոտնահետքերին և հայտարարիր Իմ Սուրբ Անունը ցանկացած հավաքում: <u>Եկել է ժամանակը, որ այլևս չպետք է տատանվես</u>: Խաղողի այգիներ տնկիր ամեն տեղ, և որևէ տեղ, որ կարող ես. անապատները վերափոխիր այգիների: Ես օրհնել եմ Իմ Պատգամները, որպեսզի նրանք ծաղկեն ու արմատակալեն: Ուստի, արիացի՛ր, աղջիկս:

(Հանկարծ ես զգացի, որ «կրակե մի սուր» խոցեց ինձ, և բղավեցի. Տե՛ր, ես կարոտում եմ Քեզ):

Դու կարոտում ես Ինձ, որովհետև դու տեսար Իմ Փառքը.... Գրի՛ր.

~ Ամրոց ամրոցի հետևից պաշարվում է Ապստամբի կողմից: Այսօր Ես գալիս եմ և ողջ մարդկությանը առաջարկում եմ Իմ խաղաղությունը, բայց շատ քչերն են լսում: Այսօր Ես գալիս եմ խաղաղության առաջարկներով և Սիրո Պատգամով: Բայց խաղաղությունը, որ Ես առաջարկում եմ, հայհոյվում է աշխարհի կողմից, և Սերը, որ Ես տալիս եմ նրանց, չարությամբ ծաղրվում է Իմ Ծննդյան Նախօրեին: Մարդկությունը տոնում է այս օրերը առանց Իմ Սուրբ Անվան: Իմ Սուրբ Անունը ոչնչացվել է, և նրանք Իմ Ծննդյան օրն համարում են որպես ժամանցի մի մեծ տոն՝ երկրպագելով կուռքերի:

Սատանան մտել է Իմ զավակների սիրտը՝ նրանց թուլացած և քնած գտնելով: Ես նախազգուշացրել եմ աշխարհին: Ֆաթիմայի Պատգամն ասում է, որ Իմ Օրը Ես արևը ցած պիտի իջեցնեմ կեսօրին և մթնեցնեմ աշխարհը օրը ցերեկով: Ես թույլ կտամ, որ Վիշապը խածնի այս մեղավոր սերնդին, և այնպիսի մի Կրակ կթափեմ, որպիսին աշխարհը երբեք նախկինում չի տեսել և չի տեսնի հետագայում, որ այրի նրա անհամար մեղքերը:

Դուք կհարցնեք. «Բոլո՞ր բնակիչները կոչնչանան, լավը վատի հետ միասի՞ն»: Ես ասում եմ ձեզ. ապրողները կնախանձեն մեռածներին, երկու մարդուց մեկը կվերցվի: Ոմանք կհարցնեն. «Ո՞ւր են Եղիան ու Մովսեսը, որ պիտի գան»: Ես ասում եմ ձեզ, ձե՛զ՝ չար սերունդ. Մենք[2] առակներով չենք խոսել այսքան տարիների ընթացքում: Եղիան ու Մովսեսն արդեն եկել են, բայց դուք նրանց չեք ճանաչել, այլ վարվել եք նրանց հետ, ինչպես

[1] Հիսուս նկատի ունի ընդլայնել Իր հրատապ պատգամները տարածելու շրջանակը:

[2] Քրիստոսը նկատի ունի երկու Սրտերը, որոնք երկու Վկաներն են: (Հայտ. 11:1-13 և Զաք. 4:1-12):

կամեցել եք:

Դուք չեք լսել Մեր Երկու Սրտերին՝ Իմ Մոր Անարատ Սրտին և Իմ Սուրբ Սրտին, անհավա՛տ սերունդ... Մեր Երկու Սրտերը ձեզ հետ չեն խոսել առակներով, և ոչ էլ՝ հանելուկներով: Մեր բոլոր Բառերը Լույս են, և Մեր Սրտերը Երկու Ճրագների պես այնպես պայծառ են փայլում կողք-կողքի, որ ամեն մեկը կարող է տեսնել: Բայց դուք չեք հասկացել՝ Մեր Սրտերը, ինչպես Երկու Ջիթենիներ[1], մեկը աջ կողմում, իսկ մյուսը՝ ձախ, այսքան տարիների ընթացքում փորձում էին վերակենդանացնել ձեզ, ինչպես Ջիթենու Երկու Ճյուղեր, որոնք ձեթ են հեղում[2], որպեսզի ապաքինեն ձեր հիվանդ սերունդը և սպիացնեն ձեր վերքերը: Բայց ձեր սերունդը վարվեց Մեր Երկու Սրտերի հետ այնպես, ինչպես կամեցավ: Մեր Երկու Սրտերը օծված[3] են և ապրում են: Նրանք նման են մի սուր երկսայր սրի[4], որ մարգարեանում է, սակայն այս սերնդի ըմբոստ ոգին վերստին խաչում է Իմ Խոսքը՝[5] երկսայր սուրը, և մերժում Մեր Երկու Սրտերը, որոնք այսօր խոսում են ձեզ հետ, ճիշտ այնպես, ինչպես Սոդոմի և Եգիպտոսի կողմից Իմ պատգամատարները մերժվեցին:

Այս դարաշրջանի համառությունը գերազանցել է Փարավոնի համառությանը, որովհետև նրանց պնդումներն իրենց գիտության մասին դարձել են ռազմադաշտ Իմ Գիտության հանդեպ[6]: Իսկապես, Մեր Երկու Սրտերը ժամտախտ են դարձել աշխարհի բնակիչների համար[7]: Բայց շուտով, շատ շուտով, Իմ Ձայնը նորից պիտի լսվի, և Ես պիտի այցելեմ ձեզ որոտով և կրակով: Արդարությունը մոտ է: Եվ Մեր Երկու Սրտերը, որոնց դեմ դուք պատերազմել եք, վերջում պիտի հաղթեն[8]: Եվ աշխարհի թագավորությունը կդառնա Իմ Թագավորությունը[9]: Այս ամենը շատ մոտ է հիմա:

Բացե՛ք ձեր աչքերը և նայեք ձեր շուրջը: Ես տալիս եմ ձեզ Ժամանակների բոլոր նշանները: Եվ դո՛ւք, դուք, որ աշխատում եք հայտնի դարձնել Երկու Սրտերի Միանության պաշտամունքը, մի՛ կորցրեք ձեր քաջությունը: Հայտնության Գիրքը, ինչպես նաև Զաքարիայի Գիրքը, խոսում են այս Ճշմարտության մասին: Մի՛ վախեցեք, տարածեք այս պաշտամունքը վստահությամբ և արիությամբ:

[1] Հայտ. 11:4 և Զաք. 4:3
[2] Զաք. 4:12
[3] Զաք. 4:13
[4] Հայտ. 1:16
[5] Վկայակոչում Հայտ. 11:8-10
[6] Վկայակոչում Հայտ. 11:7
[7] Հայտ. 11:10
[8] Վկայակոչում Հայտ. 11:11
[9] Հայտ. 11:15

1992

Հունվարի 16, 1992

Օ՜, Տե՛ր, ես բառեր չեմ գտնում Քեզ գովերգելու համար, բայց և այնպես ես ուզում եմ խոսել Քեզ հետ...

Ես կօգնեմ քեզ, գրի՛ր.

Յահվեն այցելեց ինձ,
ինչպես քամու մի պոռթկում:
Նրա Հոգին բարձրացրեց ինձ
և ցույց տվեց ինձ Իր Դեմքը:
Նա ինձ ցույց տվեց Քնքշություն,
Սեր և Անսահման Բարություն:
Ապա Նա ինձ
Օրհնություններով ողողեց
և առատորեն
ինձ Մանանա առաջարկեց,
որ կիսեմ այն եղբայրներիս հետ:

Նա քայլեց ինձ հետ
մոռացության երկրում:
Մեռելների միջից
Նա վերցրեց ինձ, նրանց միջից,
ովքեր մոռացել էին Իրեն,
Նա բարձրացրեց ինձ՝
վերականգնելով
իմ հոգու հիշողությունը:
Օ՜, Տե՛ր, Յահվե,
որքա՜ն երախտապարտ եմ ես:
Թող Քո Քաղցրությունը
մեզ բոլորիս վրա լինի Օ՜, Տե՛ր:
Օրհնյալ լինի Յահվեն
հավիտյանս հավիտենից: Ամեն:

Իսկ հիմա, աղջի՛կս, գիշերվա սարսափները քո ետևում են, իսկ քո առջև Ե՛ս եմ: Ես քեզ ապահով կվերադարձնեմ Տուն՝ այնտեղ, որին դու պատկանում ես:

Հունվարի 17, 1992

Բարեգո՛ւթ Տեր, քո ժողովուրդը
սփոփանքի կարիք ունի:
Քո տարանջատված Մարմինը,
թուլանում է, և շատ քչերն են,
որ կարող են մխիթարել Քեզ:
Քո ժողովուրդը
հուսահատության մեջ է:
Լսի՛ր, ուրեմն, Բարեգո՛ւթ Տեր,
և տե՛ս մեր վիշտը: Ամեն:

Ես թաթախված եմ Իմ Արյան մեջ այն ամենի պատճառով, ինչ տեսնում են Իմ Աչքերը, և այն ամենի պատճառով, ինչ լսում են Իմ Ականջները: Աղջի՛կս, Ես մտադիր եմ քեզ Իմ Խոսքի սուրը դարձնել: Քո միջոցով Ես պիտի ճեղքեմ մարդկանց սրտերը, որպեսզի Իմ Խոսքը խորը թափանցի նրանց մեջ: Իմ Ձայնը պիտի արձագանքի նրանց մեջ, և չնայած կյանքի շունչ չկա նրանց սրտում, Իմ Խոսքը՝ Կյանք պարգևողը, պիտի վերակենդանացնի այն, և դրանից անուշահոտություն պիտի բուրի հանգստացնելով Իմ Վերքերը:

Աղջի՛կս, քաջալերվի՛ր, շատերը պիտի շարունակեն ապրել ոչ սուրբ կյանքով, և շատերը պիտի շարունակեն մեղանչել ու վիրավորել Իմ Սրբությունը՝ անփույթ լինելով Իմ նախազգուշացումների հանդեպ, անփույթ՝ այն նշանների հանդեպ, որոնք Ես այսօր տալիս եմ աշխարհին, և չարությունն ու մեղքերը պիտի շարունակեն լցնել Իմ Արդարության Բաժակը: Այս մարդիկ իրենց մեջ կրում են մեղքեր ու անաստվածություն, իշխանության ծարավ ու բանապաշտություն, ինչպես կրում են կնիքով մատանին:

Ա՜հ, Իմ Վասո՛ւլա... այնպիսի կորուստ պիտի լինի, որի նմանը երբևէ տեսնված չէ: Մեղսագործը թաքնվում է՝ սպասելով հարմար առիթի և, ինչպես մի կողոպտիչ, նա պիտի գա գիշերով: Շատ ողբ պիտի լինի. ղեկավարներից, դատավորներից ու ազդեցիկ մարդկանցից շատերը պիտի ողբան: Աղջի՛կս, լսի՛ր Իմ հառաչանքները, լսի՛ր Իմ Սրտին:

Օ՜, Իմ Հոգո՛ւ սիրելի, արի՛ ու սփոփիր Իմ Սիրտը: Քաղցի՛ր Ինձ համար: Ես եմ Հարությունը: Սիրի՛ր Ինձ: Թող քո աղոթքները պաշտպան լինեն քո սերնդին՝ Իմ Հոր զայրույթից պաշտպանելու համար: Թող քո աղաղակներն ու քո աղոթքները լինեն Հորն ուղղված մի աղաչանք: Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ, զավա՛կս, արի՛...

Հունվարի 18, 1992

(Միասնության շաբաթվա առաջին օրը)

Տո՛ւր մեզ, Տե՛ր,

Քո խորթափանց Հոգին,
որպեսզի Գիտելիք
ու Իմաստություն ձեռք բերենք:
Տո՛ւր մեզ, Յահվե՛,
խոնարհի ու համեստի լսողությունը,
որպեսզի փնտրենք
Քո Գիտելիքն ու Իմաստությունը:

Տո՛ւր Քո Եկեղեցուն իր հաղթանակը՝
միավորելով մեզ բոլորիս
մեկ Մարմնի մեջ: Ամեն:

Քարոզի՛ր Ավետարանը սիրով՝ Սիրո համար: Ապրի՛ր Ինձ համար: Շնչի՛ր Ինձ համար: Այն ամենը, որ ասել եմ քեզ, շուտով պիտի կատարվի: Դու Իմ միջոցով ավելի շատ հրաշքներ պիտի տեսնես: Իմ Եկեղեցին դեռ չի կրում իր զենքն ու զրահը: Նա շուտով պիտի կրի հաղթության պսակը, որը պիտի զարդարի Նրա հաղթանակը: Ես սիրում եմ քեզ, որովհետև դու տալիս ես Ինձ քո ժամանակը և այն շռայլորեն առաջարկում ես Ինձ:

Մենք սիրում ենք քեզ[1]:

Ինձ ուրախալի է իմանալ, որ դու ցանկանում ես կիսել Ինձ հետ Իմ Գործը: Իմ խաղաղությունը քեզ:

ΙΧΘΥΣ

Հունվարի 20, 1992

(Շվեյցարական աղոթախմբի համար)

Այս երկարատև լռությունն[2] Իմ կողմից այդքան չէր տևի, եթե Ինձ սիրով մոտենային: Ինչպե՞ս կարող են նրանք հայտարարել, որ սիրում են Ինձ, եթե իրենց միջև ո՛չ խաղաղություն կա և ո՛չ էլ որևէ սեր: Ինչպես մի հյուծող հիվանդություն, մեղքը քայքայում է նրանց: Իմ Վեհասքանչությունը չի ներթափանցել նրանց մեջ, և ոչ էլ՝ Իմ Մեծությունը:

Ես եկա՝ Իմ Արցունքներով ոռոգելու նրանց չոր հողերը: Ես եկա՝ սփոփելու նրանց: Սակայն երբևէ ստացե՞լ եմ փոխադարձ որևէ սփոփանք: Նրանց քաղաքներն[3] ամայի են այսօր՝ իրենց դատարկությամբ ու փլատակներով: Նրանք չորացան, ինչպես չոր հողը երաշտի ժամանակ: Իմ խոսքը հասավ նրանց ականջին, բայց նրանք չլսեցին այն: Իմ Շնորհի Գահը մոտեցավ նրանց և առաջարկեց Իմ Խաղաղությունը և ողջամիտ Ուսմունքը հենց իրենից՝ Իմաստությունից,

[1] Խոսեց Սուրբ Երրորդությունը:
[2] Հիսուս որոշ ժամանակ ծածուկ էր պահել Իրեն Շվեցարիայում:
[3] Հոգիները:

որպեսզի ազատագրի նրանց, բայց և այնպես նրանք չկիսեցին այն հավատով և սիրով: Ամեն ոք, ով հայտարարում է, որ լույսի մեջ է, բայց ատում է իր եղբորը, նա ատում է Ինձ: Նրանց տրված ամենաառաջին խնդրանքը Իմ Պատգամում, այս էր.

սեր, խաղաղություն,
միություն և հաշտություն
եղբայրների միջև:

Հիմա այն ինչ որ ունեմ ասելու, հետևյալն է.

Քննե՛ք ինքներդ ձեզ նախքան Դատաստանի Օրը գալը: Դուք շատ քիչ ժամանակ ունեք հիմա: Աղոթե՛ք և խուսափե՛ք ամեն տեսակ չարիք գործելուց: Երբեք մի՛ դատապարտեք կամ մի՛ դատեք մեկդ մյուսին: Ուղղե՛ք Ինձ ձեր սրտերը, ուղղե՛ք Ինձ ձեր մտքերը: Արթո՛ւն կացեք, քանզի մաքրագործման ժամանակը շուտով վրա կհասնի:

Ուրեմն լցվե՛ք Իմ Սիրո Հոգով, որպեսզի ձեր մեղքերը չխեղդեն ձեզ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Վասո՛ւլա, զգո՛ն եղիր: Շատերը հայտարարում են, որ լսում են Ինձ և ծրագրեր ունեն, սակայն դրանք Իմ ծրագրերը չեն: Նրանք ծրագրեր են մշակում, որոնք ներշնչված չեն Իմ կողմից: Հիշի՛ր, քեզ կմոտենան մարդիկ, ովքեր Ինձ հետ չեն խորհրդակցում: Նրանք ոգևորված անում են մարգարեություններ, որոնք Իմ կողմից չեն տրված: Դու արդեն լսել և տեսել ես այդ ամենը: Նրանք ամիս առ ամիս հայտարարում են, թե հետագայում ինչ պիտի պատահի ձեզ հետ: Թող որ նրանք առաջ գան, մի՛ վախեցիր: Ես պիտի պատսպարեմ քեզ, զավա՛կս:

(Ավելի ուշ)

<u>Հիսո՛ւս,</u>
<u>թող Քո Սուրբ Դեմքը ժպտամեզ,</u>
և մենք կվերակենդանանանք:
Մեր բաժանումը
մեզ լափեց կրակի պես:
Քանի որ միայն
Դու ես հրաշքներ գործում,
միավորի՛ր մեզ,
և թող մարդիկ հրաժարվեն
իրենց անմտությունից:
Քո Ծրագիրն է
մեզ միավորել՝ միավորելով
Զատիկի ամսաթիվը,
դրանով հաշտեցնելով մեզ:
Դրա համար ես խնդրում եմ
Քո Աստվածային Օգնությունը:

Զավա՛կս, ուրախությամբ կրի՛ր Իմ Խաչը: Գովերգի՛ր Հորը Նրա մեծահոգության համար: Լսի՛ր Ինձ. չարագործները հույս ունեն, որ կկասկածեն Իմ՝ Միության Ծրագիրը, բայց նրանք դեպի անկում կընթանան: Երբ Ես խաղաղություն առաջարկեցի, համընդհանուր խաղաղություն, համայնք բոլորը պատերազմի կողմնակից էին: Ես ինչպե՞ս կարող եմ նրանց կողմնակից լինել և նրանց պաշտպանել, երբ Իմ Հոր Ձեռքը բարձրանում է նրանց վրա: Նրանց նետած ուռկանը այժմ հենց իրենց պիտի բռնի: Ես ի՞նչ կարող էի անել ձեզ բոլորիդ համար, որ չեմ արել: Ես Ինձ վրա եմ վերցրել ձեր մեղքերը, Ես հաշտեցրել եմ ձեզ Հոր հետ և ձեզ համար Իմ Կյանքն եմ տվել: Ուրեմն էլ ի՞նչ կարող էի անել, որ չեմ արել:

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, ուրախացրո՛ւ Ինձ, և թո՛ւյլ տուր, որ Իմ Հոգին մուտք գործի քո Հոգու ներքին սենյակը, թո՛ւյլ տուր, որ Իմ Հոգին շնչի և բնակվի քո Հոգու խորքերում: Ինձ ազա՛տ թող՝ փշրելու բոլոր անմաքրություններն ու պակասությունները, որոնք դիմակայում են Ինձ: Իմ Վասո՛ւլա, թեև քո Հոգին վեր պիտի թռչի, ինչպես կրակի վրա, երբ ամեն անգամ բարձրացնեմ Ձեռքս՝ փշրելու այն ամենը, որ դեռևս քեզ գերության մեջ է պահում, մի՛ վախեցիր, մի՛ փախիր սարսափով: Թո՛ւյլ տուր Ինձ արմատախիլ անել քո միջից այս բոլոր թուլությունները: Ես պիտի դամ քո մեջ, ինչպես մի փոթորիկ, և պիտի իրագործեմ Իմ Սրտի որոշումը, և դա կլինի քո նախապատրաստումը մեր կատարյալ միության համար:

Ես սկզբում ասել էի, որ դու պիտի լինես Իմ Ուռկանը և Իմ Թիրախը, սակայն այն ժամանակ դու չէիր հասկացել վերջինը, այսինքն՝ Թիրախը: Դու չէիր հասկացել, որ այս կատարյալ միությանը քեզ նախապատրաստելու համար Ես պետք է մաքրագործեմ քեզ ու զարդարեմ քո Հոգին: Ես պետք է լարեմ Իմ աղեղը և քեզ՝ որպես թիրախի օգտագործեմ Իմ նետի համար: Օ՜հ, ի՜նչ չեմ անի Ես քեզ համար: Ո՛չ, առանց վերքերի ու տառապանքների դա չի լինի, բայց այդ պատահելիս մի պայքարիր ու վանիր Սրբին:

Թո՛ւյլ տուր, որ Իմ Հոգին աճի քո մեջ, և Իմ Աստվածային Կրակը մոլեգնի քո Հոգում: Դու պիտի հալվես Իմ Աստվածային Կրակի ներգործությունից: Ուրեմն մի՛ ողբա, երբ Ես ինչպես մի մուրճ, գալիս եմ քեզ մոտ՝ փշրելու քո թերությունները: Մի՛ հարցրու քո Սրբին. «Ի՞նչ է անում Նա»: Ես գնում եմ դեպի ներքին սենյակը՝ Իմ բնակարանը, և այնտեղ գտնվող համառ բեկորները ետ չեն պահի Ինձ առաջ ընթանալուց: Ես պիտի խորտակեմ նրանց բոլորին փոթորիկով: Ես պիտի ոչնչացնեմ այդ մրցակիցներին:

Օ՜, Տե՛ր, արա՛ այդ չափավորությամբ:

Ես ցանկանում եմ ավարտին հասցնել քո մաքրագործումը: Դրա համար Ինձ ետ մի՛ պահիր գործելուց: Դու այնքա՜ն սիրելի ես Ինձ: Ուրեմն թո՛ղ, որ Իմ Քնքշությունը պարուրի քեզ. ոչինչ մի՛ մերժիր Ինձ, հոգի՛: Ես ուզում եմ քեզ դարձնել մի հլու ու հնազանդ գործիք: Քանի որ Իմ Ներկայությունը դու պիտի զգաս քո ներսում կրակի ու նետի նման, մի՛ վախեցիր, Ես չեմ կոտրի քեզ: Ես պիտի կոտրեմ միայն Իմ

մրցակիցներին: Ես լոկ պայքարելու եմ քո ներսում: Ես պիտի հաշվի առնեմ նաև քո թուլությունն ու դյուրաբեկությունը: Ես ձևավորել եմ քեզ և կարդել եմ քեզ այս առաքելության համար, որ լինես Իմ Արձագանքը: Ուրեմն թո՛ւյլ տուր, որ քո Թագավորը իշխի քեզ վրա, թո՛ւյլ տուր քո Տիրակալին թագավորել քեզ վրա: Ոչինչ չի խուսափի Իմ Աչքերից: Ամեն մի փոքր անմաքրություն պիտի պաշարվի Իմ Մաքրությամբ ու ոչնչացվի, և Իմ Լույսը պիտի շարունակի փայլել քո ներսում, իսկ Իմ Հոգին պիտի հոսի քո հոգու մեջ, ինչպես մի գետ:

Ուրեմն փնտրի՛ր Իմ Սուրբ Դեմքը առանց հոգնելու, և դու կհասկանաս, որ Ես Եմ-ը ժպտում է քեզ:

(Ավելի ուշ)

Խաղաղություն քեզ: Լսի՛ր Ինձ, աղջիկս, դու նայե՞լ ես քո շուրջը: Դու ի՞նչ ես տեսել:

Ես տեսել եմ հեղաշրջումներ և անգամ ավելի մեծ բաժանումներ, որոնք տեղի են ունենում մեր մեջ, նախքան ՄԻՈՒԹՅՈՒՆԸ: Ես չեմ տեսնում միության համար մեր պայքարի վերջը և ոչ էլ անաստվածության վերջը:

Իմ Հոգին՝ ձեր սերնդի դատավորը, վկայել է շատ ավելին, քան հեղաշրջումները, բաժանումներն ու անաստվածությունը: Ես ասում եմ քեզ՝ շատերն են դավադրություն նյութում Իմ դեմ: Իմ Սեփական Տանը հենց այս րոպեին Ես լսում եմ, թե ինչպես են նրանք դավադրություն նյութում: Բայց շուտով կղզիները կցնցվեն, երբ Իմ Օրը գա, և չնայած այս սերունդը պիտի ողբա, Ես չեմ լսելու: Երկնքի դուռը փակ պիտի լինի այդ Օրը, իսկ երկիրը՝ մերկացած, ինչպես հարազատներից զրկված մի այրի կին, որը պիտի տնքա իր վշտի մեջ:

Սիրտս տակնուվրա է լինում Իմ ներսում և արդեն ցավում է այն խղճալի ձայներից, որոնք պիտի լսվեն քեզանից, սերո՛ւնդ: Արդարև, Ես չեմ չարախնդա ձեզ վրա, քանզի Ես հաճույք չեմ ստանում մարդկությանը նվաստացնելուց ու տանջանք պատճառելուց: Մեկ անգամ ևս, ինչպես երբևէ չի պատահել, ձեզ վրա կհեղվի Իմ Սուրբ Հոգին: Իմ Կրակը պիտի մոլեգնի աղոտ առկայծող Բոցից և նորոգի ձեզ՝ բոլորիդ: Ապա, ինչպես մի մարդ, որը մտնում է գրավված մի քաղաք, Ես՝ Տերը, Իմ Փառքով պիտի ներխուժեմ ձեր մեջ, և եկեղեցին պիտի վերակենդանանա:

Արդարությունը կհաղթանակի վերջում: Իսկ դու, աղջի՛կս, մի՛ վախեցիր Ինձ կանչելուց: Մի՛ վախեցիր մարդկանցից, հատկապես նրանցից, ովքեր հակառակվում են քեզ: Ուրախացի՛ր, աղջի՛կս, Ես կարող եմ թափանցել այդ մարդկանց ամենախոր ծալքերը, և Իմ խանդոտ Ականջը լսում է ամեն ինչ: Նրանք կարծում են, որ ամեն ինչ գիտեն, սակայն նրանք ոչինչ չգիտեն:

Աղջի՛կս, Ես աղոթել եմ քեզ համար Հորը, որ Նա հաշվի առնի քո

թուլությունը: Վասո՛ւլա, փորձի՛ր հասկանալ Հորը: Դու թույլ ես ու փխրուն, բայց ես խորը արմատավորել եմ քեզ Իմ ներսում, որպեսզի դու չչեղվես կամ չտատանվես, երբ ժամանակ առ ժամանակ կատաղի փոթորիկները հարձակվեն քեզ վրա: Դու Նրա զավակն ես, և դա է պատճառը, որ Իր Խանդոտ Սիրուց ու Իր Մեծահոգությունից դրդված՝ Նա թույլ է տալիս նման ընդհմությունններ: Մի՞թե չես լսել՝ ինչպես է Նա տառապանքի միջոցով կատարելության հասցնում հոգիներին, և որ տառապանքը քո դաստիարակության և ձևավորման մի մասն է կազմում:

Ուրեմն համբերատա՛ր եղիր, աղջի՛կս, եղի՛ր նաև մեծահոգի և մի՛ դողա ու մի՛ դանդաղիր իզուր տեղը: Մի՛ հոգնիր աշխատելուց և հետևի՛ր Իմ Արյան հետքերին, որոնք ես թողել եմ Իմ ետևում Հավիտենականության համար: Նրանք, ովքեր կհետևեն այդ հետքերին, մուտք կգործեն Իմ Թագավորությունը: Իմացի՛ր, որ Հայրը անողորմ չէ, այլ չափազանց մեղմ է քո նկատմամբ: Իմաստությունը սիրում է քեզ: Ուստի, աղջի՛կս, հետևի՛ր Պատվիրաններին, ապրի՛ր Ավետարանի համաձայն, ընդունի՛ր Ինձ՝ որպես քո Սուրբ Ուղեկցի, և աղոթի՛ր Իմ քահանաների համար, ովքեր ներկայացնում են Ինձ:

Հունվարի 24, 1992

(Սուրբ Պատարագի ժամանակ Հիսուսն ինձ ասաց.)

«Սա միայն սկիզբն է: Դու սրանից ավելի մեծ բաներ կտեսնես»:

Սա ասվեց այն բանից հետո, երբ ես փառաբանեցի Նրան՝ Իր Հրաշքների ու Իր Գործերի համար, քանի որ Իր Զորությամբ Նա շատերի սրտերը բացեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում: Տերը, ամառվանից սկսած, Պատգամեր էր պատրաստում միության մասին, ցուցումներ՝ Իր Ցանկությունների վերաբերյալ: Հետո Նա թույլ տվեց, որ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում որոշ մարդկանց սրտերը բացվեն, և ընդունեն Իր Խոսքը՝ թույլ տալով ինձ միության այդ շաբաթվա ընթացքում գնալ նրանց մոտ, որպեսզի նրանց տամ Հիսուսի պատգամները):

Հունվարի 26, 1992

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, դու ուզո՞ւմ ես քեզ ամբողջովին նվիրաբերել Ինձ:

Այո՛, Տե՛ր իմ, ուզում եմ:

Ուրեմն ասա՛ այս բառերը.

Հիսուսի՛ Սուրբ Սիրտ,
ե՛կ և գրավի՛ր ինձ կատարելապես՝
դարձնելով իմ մղումները

Քո մղումները,
իմ ցանկությունները՝
Քո Ցանկությունները,
իմ խոսքերը՝ Քո Խոսքերը,
իմ մտքերը՝ Քո Մտքերը:
Ապա թո՛ւյլ տուր
Սուրբ Սրտիդ խորքերը մտնեմ:
Ջնջի՛ր անձս ամբողջությամբ:

Սրտիս խորքից ես՝ Վասուլան,
Քո Սուրբ Սիրտը պիտի պաշտեմ,
խոստանում եմ, Քո Սուրբ Սրտին
ծառայել իմ ներքին կրակով,
մեծ եռանդով
պիտի ծառայեմ Քեզ,
ավելի ջերմեռանդորեն, քան առաջ:

Ես տկար եմ, բայց և գիտեմ,
որ Քո ուժն ինձ
զորավիգ պիտի լինի:
Թույլ մի՛ տուր, որ Քեզ կորցնեմ
իմ տեսողությունից,
ոչ էլ թո՛ւյլ տուր,
որ սիրտս ուրիշ մի տեղ թևածի:

Ես՝ Վասուլան,
միայն Քո Սուրբ Սիրտը
պիտի փնտրեմ
և միայն Քեզ փափագեմ:

Հիսուսի՛ Սուրբ Սիրտ,
Արա՛ այնպես,
որ չսիրեմ այն ամենը,
ինչ հակառակ է
Քո Սրբությանը և Քո Կամքին:

Մաղի՛ր ինձ մինչև վերջ
և հավաստիացի՛ր,
որ ոչ մի մրցակից
չկա իմ ներսում:
Այսօրվանից իսկ ամրացրո՛ւ
Սիրո կապանքները,
որոնցով Դու կապել ես ինձ,
և արա՛ այնպես,
որ հոգիս Քո ծարավն զգա,
և սիրտս ցավի միայն Քո Սիրուց:

Հիսուսի՛ Սուրբ Սիրտ,
մի՛ սպասիր, ե՛կ,
և սպառի՛ր ողջ էությունն իմ
Քո բոցավառ Սիրո կրակով:

Այսուհետև ինչ որ անեմ,
թող լինի միայն Քո շահերի
և Քո փառքի համար,
և ոչ մի բան չլինի ինձ համար:
Ես՝ Վասուլան,
Քեզ եմ նվիրաբերում իմ կյանքը
և այսօրվանից պատրաստ եմ
դառնալ ստրուկը Քո Սիրո,
Զոհը՝Քո այրող Տենչանքների
և Բաղձանքների, նպաստը՝
Քո եկեղեցու և խաղալիքը՝
Քո Հոգու:

Թույլ տուր որ կիսեմ
Խաչելությանդ տառապանքը՝
կրելով այն դառնությունը,
որ պիտի դիմագրավեմ
հոգիների խլության պատճառով՝
տեսնելով նրանց անկումը:
Լիցք տուր Հոգուս:

Հիսուսի՛ Սուրբ Սիրտ,
մի՛ խնայիր ինձ Քո Խաչից,
ինչպես Հայրը չխնայեց Քեզ.
Շղթայի՛ր աչքերս,
մտքե՛րս ու ցանկությունն ե՛րս,
որ Սուրբ Սրտիցդ գերվեն:

Անպիտան և անարժան եմ ես,
բայց Դու օգնի՛ր ինձ,
որ այս նվիրումով ապրեմ՝
Քեզ հավատարիմ մնալով,
Սուրբ Անունդ անվերջ կանչելով:
Թող հոգիս մերժի այն ամենը,
ինչ Քոնը չէ:

Հիսուսի՛ Սուրբ Սիրտ,
արա՛ այնպես, որ ավելի,
քան երբևէ հոգիս
Քո Մարմնի Նշանները կրի,
որ ստացար
հոգիների փրկության համար.

Ես՝ Վասուլան,
ամենայն հոժարությամբ
կամքս ենթարկում եմ Քո Կամքին
այժմ և հավիտյաններում. ամեն:

Իսկ հիմա Իմ Հոգին պիտի հանգստանա քո մեջ... Վասո՛ւլա, Ինձ հաճելի է տեսնել, որ դու քո ժամանակը օգտագործում ես Ինձ համար: Իմ Անունով արված քո բոլոր զոհաբերությունները իզուր չեն անցնում:

ΙΧΘΥΣ

Հունվարի 27, 1992

Խաղաղություն քեզ, փոքրի՛կս:

Այս շնորհը տրվել է քեզ, որպեսզի քո միջոցով Ես բացեմ կույրերի աչքերը և խուլերի ականջները: Ես կշարունակեմ Ինձ ցույց տալ քո միջոցով, այս ձևով: Դու ամենից անկատար գործիքն ես, բայց Իմ Կարեկցությունը տեսնում է քո ջանքերը քո անկատարության մեջ, իսկ Իմ Զայրույթը անզոր է դառնում շնորհիվ Իմ Քնքշության և Բարության: Երբեք մի՛ կասկածիր Իմ Սիրուն: Ինձ հարկավոր է թուլություն, որպեսզի կարողանամ ամեն ինչ անել.

Այդ Ես եմ՝ Հիսուս,
ով ձեզ պիտի ցույց տա[1]
դեպի Միություն
տանող ճանապարհը:

Հասել է ժամը, երբ Իմ Մարմինը պետք է փառավորվի: Մարդիկ շուտով կիմանան, թե ինչ ճանապարհով եմ Ես ուզում, որ իրենք միանան: Իմ Ճանապարհը իրենց ճանապարհը չի լինի...

Ես հիմա նրանց հայտնել եմ Իմ Ցանկությունները: Ես ցույց եմ տվել նրանց Իմ Սիրտը: Իմ Զորությամբ Ես պիտի միացնեմ Զատիկի ամսաթվերը: Այն չի պարտադրվի ձեզ. Ես միջոցներ կգտնեմ խաղաղությամբ անելու այդ: Այո՛, Իմ անսահման Զորությամբ Ես պիտի զարմացնեմ ձեզ: Այսօր Ես ասել եմ նրանց, թե ինչ ուղղություն ընտրեն, իսկ վաղը Ես կառաջնորդեմ նրանց Իմ ընտրած ճանապարհով:

ΙΧΘΥΣ

Հունվարի 30, 1992

(Իտալիա. Ջերա-Լարիո)

[1] Մարդկությանը:

Տե՞ր:

Ես եմ:

Ես արդյոք պե՞տք է գրեմ այն, ինչ որ տեսա լուսաբացին:

Գրի՛ր:

- Ես տեսա Ռուսաստանը:

Մի՛ արտասվիր: Նա կապաքինվի: Փոխարենը դառնորեն արտասվի՛ր նրանց համար, ովքեր հեռացել են Ինձանից: Ես կվերականգնեմ նրան: Արտասվի՛ր մեռած մարդու վրա: Ես կզարդարեմ նրան, Վասո՛ւլա:

Օ՜, Աստվա՜ծ, ես տեսա նրա թշվառությունը: Ես տեսա հետևյալը. ինձ մոտեցավ մի երիտասարդ կին, որը ոչ գեղեցիկ էր և ոչ էլ տգեղ: Նրա անունը Ռուսաստան էր: Նա մոտեցավ ինձ, և ես նրա հագուստներից նկատեցի, որ նա աղքատ է:

- Նա բացեց բերանը, որ խոսի ինձ հետ, և ես տեսա, որ նրա ատամների կեսը թափված էր, և դա շատ էր տգեղացնում նրան: Բայց ես գիտեի, որ այդքան ջահել կինը մի բան կաներ իր թափված ատամների համար, եթե ծայրահեղ աղքատության մեջ չլիներ:

Ռուսաստանը, չնայած իր աղքատությանն ու թշվառությանը, անվախ էր և կանգնած իր ոտքերի վրա: Նա ինձ ցույց տվեց, թե ինչով է հաց վաստակում. դա մի հնաոճ գործիք էր[1]: Ռուսաստանն ինձ ասում էր, որ ինքը պիտի օգտագործի դա, որպեսզի կարողանա ինչոր բան վաստակել ու իր գոյությունը պահպանել:

Տխրությունից սիրտս պատառ-պատառ եղավ: Հետո մի ուրիշ կին եկավ. նա նույնպես Ռուսաստանն էր: Նրա ատամների մեծ մասը նույնպես թափված էր: Հետո էլի երկու կանայք եկան, և նրանց ատամների մեծ մասը թափված էր և երևում էր, որ ծայրահեղ աղքատ են[2]: Հետո հանկարծակի ներս մտավ մի երիտասարդ: Նա Ռուսաստանի Ամուսինն էր: Ես նկատեցի, որ նա լավ կառուցվածք ուներ, առողջ էր, բարձրահասակ ու շատ գեղեցիկ:

- Ես մտածեցի. «Նա ինչպե՞ս կարող է Ռուսաստանի նման մեկին հանդուրժել, որը ոչ մի գեղեցկություն չունի ու վանող է թափված ատամների պատճառով»... Մինչ ես մտածում էի այդ բաները, Ռուսաստանի Ամուսինը քնքշորեն մոտեցավ նրան և գրկեց նրա ուսերը: Եվ ես Նրա Աչքերում տեսա Անսահման Քնքշություն, Սեր և հավերժական Հավատարմություն: Ես տեսա, որ Նա երբեք չի լքի Իր կնոջը, չնայած նրա անհրապույր լինելուն: Ես ճանաչեցի Քեզ, Տե՛ր իմ:

Ո՛չ, ես չեմ լքի նրան, և նա ինձ չի վանի: Ես նրա Հայրն եմ ու Ամուսինը, և Իմ Անունն է Հավատարիմ և Ճշմարիտ: Ես կրկին պիտի հագցնեմ նրան տալով գեղեցիկ հանդերձներ, և նրա սիրտը կլինի բարի ու մեղմ խառնվածքի մի զարդ: Ես երբեք չեմ դադարել օրհնություններ հեղել նրա վրա: Ես երբեք չեմ զրկի նրան Իմ Սիրուց: Ա՜հ, Վասո՛ւլա,

[1] Դա նման էր մի գործող տեքստիլ հաստոցի:
[2] Չորս աղքատ կանայք: Արդյոք դա նշանակո՞ւմ է սովի չորս տարի Ռուսաստանի համար:

համբերատա՛ր եղիր, ինչպես Ես եմ համբերատար: Հենվի՛ր հիմա Ինձ վրա:

ΙΧΘΥΣ

Հունվարի 31, 1992

Որչափ որ բարձր է
երկինքը երկրից, այնքան զորեղ է
Տիրոջ ողորմությունն
Իրենից երկյուղ կրողների վրա:[1]

Արի՛ ու կլանի՛ր այն ամենը, ինչը Ես եմ: Կլանի՛ր Սերը: Ես Սեր եմ, սակայն տառապում եմ միայնությունից՝ Իմ Յուրայինների մերժման պատճառով:

Իմ զավակները թողել են Արդարության ճանապարհները, Իմաստության Աղբյուրը: Նրանք չեն լսում Մեր Երկու Սրտերին: Սակայն ասվել է, որ Ապստամբը, այսինքն՝ Հակառակության ոգին, որ «Բարձրյալի դեմ խոսքեր է բարբառում և և նեղում ու անհանգստացնում է Բարձրյալի Սրբերին»[2], պետք է մարտահրավեր նետի Իմ Իշխանությանը: Այս Հակառակության ոգին «մտածում է փոխել ժամանակներն ու Իմ Օրենքը[3]»: Նայի՛ր միայն շուրջդ և կհասկանաս:

Բանապաշտությունն ու Արդիապաշտությունն Իմ Եկեղեցու գլխավոր թշնամիներն են, քանզի այս երկուսն էլ տանում են դեպի անաստվածություն: Դրանք երկուսն էլ ցանկանում են լափել ամբողջ աշխարհը: Բայց, աղջի՛կս, Ես Իմ Կրակը կփչեմ այս ուխտադրուժների վրա, որպեսզի երբ նրանց աչքերից թեփուկներն ընկնեն, նրանք կարողանան տեսնել, թե ինչ մեծ խառնաշփոթություն են իրենք ստեղծել և ինչ ճնշում են գործադրել Մեր Երկու Սրտերի վրա: Ես անցնելու եմ ձեր բոլորի միջով:

Ապաշխարե՛ք, քանզի
Երկնքի Թագավորությունը մոտ է:

- Արի՛, գրի՛ր Իմ հաջորդ Պատգամը բոլոր նրանց համար, ովքեր հավաքվելու են՝ լսելու Իմ Խոսքը Նիցայում:

(Ֆրանսիա)

Խաղաղություն ձեզ: Իմ Վերադարձը մոտալուտ է, և Իմ Դեմքը պիտի հայտնվի Երկնքից՝ ընդդեմ աշխարհի ողջ անհավատության: Ուստի պատրաստ եղեք: Յուրաքանչյուր ոք, որ պարզվում է՝ կեղծ է ու անազնիվ, պիտի տեսնի, թե ինչ մահացու վերքեր է հասցրել իր հոգուն:

[1] Սաղմ. 102:11
[2] Դան. 7:25
[3] Դան. 7:25

ես պիտի ժամանեմ ձեր մեջ Վեհափառությամբ ու Փառքով: Ճշմարտության Հոգին պիտի հայտնվի ձեր մեջ, որպեսզի մաքրի ձեր հոգին: Դուք դեմ առ դեմ[1] պիտի տեսնեք Ինձ և պիտի տեսնեք ինքներդ ձեզ ամբողջությամբ, ինչպես որ ճանաչված եք:

Ուրեմն հիմա եկե՛ք Ինձ մոտ ինչպես որ կաք: Մի՛ սպասեք, որ սրբեր դառնաք: Եկե՛ք ու հասկացե՛ք, թե ամենից շատ ինչ եմ Ես սպասում ձեզանից: Ես ձեզ սիրում եմ հավիտենական սիրով: Ես Իմ Կյանքն եմ տվել ձեզ՝ ձեր մեղքերը Ինձ վրա վերցնելով: Ես հաշտեցրել եմ ձեզ Հոր հետ, և Ես թույլ եմ տվել, որ այն ձեռքերը, որ Ես Ինքս էի ստեղծել,

~ խաչեն Ինձ: ~

Ուրեմն էլ ի՞նչ կարող էի անել, որ չեմ արել: Եթե դուք ասում եք, որ սիրում եք Ինձ, վերցրե՛ք Իմ խաչը ու հետևեք Ինձ և սարսափով մի՛ նայեք մյուս փոքր խաչերին, որ Ես դնում եմ ձեր ճանապարհին: Սերը սահմաններ չունի: Սերը համբերությամբ դիմանում է ամեն ինչի: Սերը չի վիրավորվում, այլ ուրախանում է Ճշմարտությամբ և այն ամենով, ինչ Ճշմարտությունն է առաջարկում: Սերը մոռանում է ձեր մասին ասված զրպարտությունները: Ուրեմն սե՛ր փնտրեք, օրհնե՛ք ձեր թշնամիներին:

Ես ուզում եմ, որ դուք սուրբ լինեք, բայց, սիրելինե՛րս, դուք դեռ այնքան հեռու եք կատարելությունից, քանզի սերը փողի հանդեպ խոր արմատացած է այս սերնդի մեջ: Սիրելի՛ զավակներս, դուք իսկապե՞ս ուզում եք հետևել Ինձ: Ուրեմն որոշե՛ք գնալ Իմ Ոտնահետքերով, որոնք տակավին ներծծված են Իմ Արյամբ: Մի՛ վախեցեք, Իմ Ոտնահետքերը կառաջնորդեն ձեզ դեպի Ինձ՝ ձեր Աբբայի Բազուկների մեջ: Դրանք կառաջնորդեն ձեզ դեպի Նա, ով առաջինը գրկեց ձեզ: Վստահությո՛ւն ունեցեք ու ապավինեք Մեր փրկարար Սիրուն: Ես ասում եմ ձեզ.

վերջում Մեր Երկու Սրտերը կհաղթանակեն:

Բռնի՛ր ձեռքս, աղջի՛կս, մի՛ վախեցիր, Ես պիտի հոգամ քո մասին: Ես եմ~ը քեզ հետ է:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Օ՜ Աբբա՛, եթե Աստվածաշունչն ասում է.

«Մեծ աշխատանք է սահմանված
ամեն մարդու համար,
և ծանր լուծ է դրված
Ադամի որդիների վրա
իրենց մորից ելնելու օրից

[1] Այսինքն՝ հոգին Հոգուն դեմառդեմ:

մինչև բոլորի մոր ծոցում

թաղվելու օրը»:[1]

Ապա, Տե՛ր իմ, Դու ասել ես ինձ Քո Պատգամներից մեկում Մեր Երկնային Մոր մասին, որ Նա Երկրորդ Եվան է, այսինքն՝ գբաղեցնում է Եվայի տեղը: Եվ ես կրկին հայտնաբերեցի Աստվածաշնչում, որ այն մեկ անգամ ևս հաստատում է, որ Մեր Օրհնյալ Մայրը՝ Մարիամը, ամբողջ մարդկության Մայրն է:

Աղջի՛կս, դու ականջ ես դրել Իմաստությանը, և Իմ Սիրտը ուրախ է, ու Հոգիս բերկրում է, երբ քո շուրթերից դուրս է գալիս այն Գիտությունը, որ Ես տվել եմ քեզ: Մնա՛ ոչինչ և թո՛ւյլ տուր, որ Իմաստությունը ուսուցանի քեզ: Մնա՛ Իմ շնորհի մեջ ու մի՛ վախեցիր կատաղած դայլերից: Մի՛ վախեցիր նրանցից, զավա՛կս[2]:

Օ՜, Ա՛բբա, Դու ցնցված ես
այն սարսափելի տեսարաններից,
որոնք գալիս են մեզնից՝
Քո զավակներից:
Անաստվածություն, ատելություն,
սատանայապաշտություն, վիժումներ,
իշխանության տենչ
անգամ Եկեղեցում,
անարդարություն և այլն,
բայց և այնպես Դու եկար ինձ մոտ,
որ անաստվածության կերպարն էի,
որպեսզի կործանումից փրկես ինձ:

Քո Գթասրտությունը,
որ օրհնությունների հեղեղ է,
հեղվեց ինձ վրա:
Դու առաջարկեցիր ինձ
Քո ընկերությունը և դարձար
իմ Սուրբ Ուղեկիցն ու իմ Ընկերը:
Դու ինձ կանգնեցրիր
Ճշմարտության և Քո Ուխտի առաջ:
Օ՜, որքա՜ն դառն է զգալ,
որ Քո Սիրտն այդքան տխուր է՝
ներշնչելով իմ մեջ
Քո Չարչարանքները,
վշտի հառաչանքներ արձակելով:

Ես խորապես տխուր եմ, աղջի՛կս: Բայց լաց մի՛ եղիր Ինձ համար: Լա՛ց եղիր քո եղբայրների ու քույրերի համար, քանզի մեղքը լափում է նրանց քաղցկեղի նման: Քո արցունքները, աղջի՛կս, պահի՛ր նրանց

[1] Սիրաք 40:1
[2] Խոսքը մի բանի մասին է, որ վերաբերում է ինձ և Աստծուն:

համար: Վասո՛ւլա, քո վերքերը ոչինչ են Իմ Վերքերի համեմատությամբ: Աղոթի՛ր նրանց համար, մինչև որ Իմ Մատը դիպչի երկրին և հալեցնի այն: Ես գիտեմ, որ դու փխրուն ու թույլ ես, սակայն Ես երբևէ լքե՞լ եմ քեզ:

Մարգարեացի՛ր ու ցո՛ւյց տուր Իմ Սիրտը բոլոր ազգերին ու ժողովուրդներին:

Փետրվարի 6, 1992

Աղջի՛կս, Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Եթե որևէ մեկը քեզ հարցնի.«Ինչի՞ մասին է այս ամենը»[1], պատասխանի՛ր. Կարեկցությունն ու Սերը բացահայտում է Իրեն մարդկությանը: Փրկությունը Երկնքի բարձրունքներից խոնարհվում է դեպի ցած, որ հասնի թշվառներին՝ աղերսելով նրանց հրաժարվել իրենց անմտությունից: Այն, ինչ Աստված ասում է մեզ այսօր, նշանակում է Խաղաղություն, Հաշտություն և Սեր,

~ Անսահման Սեր: ~

ΙΧΘΥΣ

Փետրվարի 11, 1992

(Պատգամ՝ Նյու-Յորքի համար, ԱՄՆ)

Վասո՛ւլա, թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քո ձեռքը, գրի՛ր.

Խաղաղություն ձեզ բոլորիդ: Զավակնե՛րս, Ես հանդիսավոր ասում եմ ձեզ, որ Ճշմարիտ Լույսը արդեն Իր Վերադարձի ճանապարհին է: Ես սա ասում եմ ձեզ, Իմ Հարազա՛տ զավակներ, որ դուք բոլորդ պատրաստ լինեք ընդունելու Ինձ: Ձեր դարաշրջանի գիշերը շուտով վերջ կգտնի: Հասկացե՛ք, թե ինչպես են մեղքերը խավարեցնում լույսը ձեր մեջ: Սերը այս անցողիկ աշխարհի համեմատ, զզվելի է, և ձեզ ոչինչ չի կարող տալ, բացի խավարից: Սակայն Ես ասում եմ ձեզ.

գիշերը համարյա ավարտվել է,

և ձեր սայթաքումն ու անկումը շուտով կդադարի, քանզի Իմ Սուրբ Հոգու Ուժը ձեզ բոլորիդ հետ լիակատար միության մեջ կլինի, որպեսզի ձեզ առաջնորդի ապրելու

<u>Ճշմարիտ Կյանք Իմ մեջ՝</u>

[1] Աստված նկատի ունի Պատգամները:

Ձեր Աստծո մեջ:

Երանի՛ նրանց, ովքեր ընդունում են Ճշմարտությունը և ապրում են՝ համաձայն Ճշմարտության: Նրանց սենյակը երկնքում հավիտյան դատարկ չի մնա, այլ պիտի լցվի իրենց ներկայությամբ:

Ես՝ Հիսուս, խնդրում եմ ձեզ, որ ձեր սիրտն առաջարկեք Ինձ, և Ես պիտի դնեմ այն Իմ Սուրբ Սրտում ու կենդանացնեմ այն: Ես բուրումնավետ պիտի դարձնեմ ձեր սիրտը ու մաքրագործեմ այն: Ես պիտի լցնեմ ձեր սիրտն Իմ Լույսով ու Իմ Ջերմությամբ: Ես պիտի հագեցնեմ ձեր սիրտն Իմ Սիրով և ամբողջապես վերականգնեմ այն՝ վերադարձնելով դեպի սրբություն, և զարդարեմ այն Իմ Աստվածայնությամբ: Եթե միայն հասկանայիք, թե ինչ եմ առաջարկում ձեզ, դուք չէիք տատանվի կամ անվճռական լինի՝ Ինձ տալու ձեր ողջ սիրտը, այլ կլսեիք Ինձ այս անգամ.

փնտրե՛ք բարին և ոչ թե չարը,
աղոթե՛ք սիրով և մի՛ դատեք:

Շուտով Իմ Լույսը Կրակի նման պիտի անցնի ձեր միջով, որպեսզի մաքրագործի ձեր հոգին անմաքրություններից: Ես պիտի մտնեմ Իմ քաղաքները[1] և փայլեմ այնտեղ: Դա նշանակում է լույս և ոչ թե խավար: Դա պիտի լինի Լույսի հեղում: Ձեր քաղաքներն[2] այդ ժամանակ պիտի նորացվեն ու պիտի սրբանան Իմ աստվածային Լույսից... Հետո Նոր Երկինքն ու Նոր Երկիրը գալու են ձեզ վրա, և այսօրվա աշխարհը գլորվելով հեռանալու է, ինչպես մագաղաթագալարը: Եվ ինչպես ծաղիկները, որոնք իրենց լույսը ստանում են լույսից, դուք նույնպես, սիրելինե՛րս, պիտի լցվեք Իմ Լույսով, որպեսզի վերակենդանանաք:

- Կարո՞ղ են ծաղիկներն ապրել առանց ջրի: Այդ դեպքում ինչո՞ւ են ձեզանից այդքան շատերն այսօր մերժում Իմ Սուրբ Հոգու հոսքը և կասկածում, որ Իմ Գահից բխող այս Ջուրը[3] գալիս է Ինձանից: Մի՞թե չեք կարդացել.

> Աստծո և Նրա Գառան գահը իր տեղում պիտի լինի քաղաքի մեջ: Եվ Նրա ծառաները պիտի պաշտեն Նրան: Նրանք պիտի տեսնեն Նրան դեմ առ դեմ: Եվ Նրա Անունը գրված պիտի լինի իրենց ճակատների վրա: Եվ այնտեղ գիշեր չի լինի: Այնտեղ ոչ մի կարիք չի լինի ճրագի ու արևի լույսի, քանզի Տեր Աստված պիտի փայլի նրանց վրա[4]:

Մի՞թե դեռևս չեք հասկացել: Իմ Հոգին նման է Գետի, և ամենուր, որտեղ հոսում է այդ Գետը, դրա մեջ լցված <u>ամեն ոք</u>[5]՝ հիվանդ, կաղ,

---

[1] Այսինքն՝ մեր հոգիները:
[2] Այսինքն՝ մեր հոգիները:
[3] Հայտ. 22:1
[4] Հայտ. 22:3-5
[5] Եզեկ. 47:9.

կույր[1], պիտի բժշկվեն և պիտի դառնան Ամենաբարձրյալի վկաները: Դուք բոլորդ պիտի լինեք պտղատու ծառերի նման, որոնց տերևները երբեք չեն թառամում, և պտուղը երբեք չի պակասում[2]: Դուք ամեն ամիս պիտի պտղավորվեք, քանզի այս Ջուրը (Իմ Սուրբ Հոգին) գալիս է Իմ Սրբարանից[3], որտեղ ձեր Հոգին իր Բնակավայրը պիտի դարձնի: Ես մտադիր եմ ազատել ձեզ Չարի ճիրաններից և վերականգնել ձեր Հոգու հիշողությունը: Ես մտադիր եմ բաց անել քարե սրտերը և այնպես անել, որ նրանք այդ պահից ի վեր վեհասքանչ գովերգներ ասեն Ինձ՝ ձեր Աստծուն: Սերո՛ւնդ, մի՛ ասեք.

«Իմ վերքերն անբուժելի են»,

ու նախօրոք մերժեք բժշկվել: Մի՛ ասեք.

«Իմ Փրկիչը երբեք չի լսում ինձ»:

Այսօր ձեր Փրկիչն ասում է ձեզ. Արյան Արցունքները, սերո՛ւնդ, որ Ես թափել եմ ձեզ վրա տարիներ շարունակ, վկայում են Իմ վշտի մասին: Ես ոչ մեկին չեմ զրկում Իմ Ողորմությունից: Ուրեմն եկե՛ք Ինձ մոտ, ընկե՛ք Իմ Գիրկը, և դուք կբժշկվեք: Մի՛ վախեցեք Ինձնից: Ես Սիրո ու Ներման Անսպառ Աղբյուր եմ:

Եվ քեզ, քե՛զ, որ ասում ես. «Իմ Փրկիչը երբեք չի լսում ինձ», Ես ասում եմ. Ես միշտ քեզ հետ եմ, և ինչպես մի ծարավ ճամփորդ, Ես ծարավի եմ քո սիրո խոսքերին, Ես ծարավի եմ քո աղոթքներին: Կանչի՛ր Ինձ քո ողջ սրտով, ու Ես կպատասխանեմ:

Մի՛ ասա. «Նա թաքցնում է Իր Դեմքը ինձանից», ու հետո նայի՛ր մի ուրիշ կողմ: Ես հետևում եմ քո յուրաքանչյուր քայլին, և Ես երբեք Իմ Տեսողությունից դուրս չեմ թողնում քեզ: Ես միշտ քեզ հետ եմ, բայց քո խավարի մեջ դու չես կարողանում Ինձ տեսնել, քո չորության մեջ դու չես լսում Ինձ: Աչքերդ վեր բարձրացրու՝ դեպի Երկինք, ու փնտրի՛ր Երկնայինը, սերո՛ւնդ, և դու կտեսնես Իմ Փառքը:

<u>Այդ դուպետք է որոշես</u>:

Իմ Սիրտը բաց է, և ամեն ոք կարող է գալ ու ապրել այնտեղ: Արմա՛տ գցեք Իմ մեջ, և դուք կապրեք:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ Իմ Սիրո Հոգոցը թողնելով ձեր ճակատներին:

ΙΧΘΥΣ

[1] Հոգով:
[2] Եզեկ. 47:12
[3] Եզեկ. 47:12

Փետրվարի 13, 1992

Տե՛ր, մի՞թե արդար է նոր դարձի եկած հույներից կազմված աղոթախումբը կազմալուծել: Մի՞թե արդար է, որ նրանք դուրս քշվեցին մի քահանայի կողմից՝ և ցրվեցին ու վերադարձան այն անապատը, ուր մինչ այդ գտնվում էին:

Վասո՛ւլա, ձեր քահանաներն աղոթքների կարիք ունեն:

Տե՛ր, մի՞թե Դու թույլ կտաս, որ նա չորացնի մի ամբողջ Խաղողի այգի: Դու անապատները Գետերի ես վերածել, իսկ չորացած հողերը՝ Ջրի Աղբյուրների:

Վասո՛ւլա, ձեր քահանաներն աղոթքների կարիք ունեն:

Դու սովամահներին հագեցրել ես
Քո Պտուղներով, Տե՛ր:
Դու կշտացրել ես քաղցածներին,
Դու ոգեշնչել ես հոգնածներին
ու բարձրացրել ես թշվառներին
ու արհամարվածներին:
Դու երջանկություն ես տվել
տառապյալներին, և հիվանդները
բժշկվել են Քո Սիրով: Իսկ նրանց,
ովքեր տառապում էին ծարավից,
Դու Ջուր ես տվել,
մի՛ լքիր նրանց...

Ես չեմ լքի նրանց: Իմ Վասո՛ւլա, <u>ձեր քահանաներն աղոթքներիկարիքունեն</u>... Նայի՛ր, հավա՛տ ունեցիր Իմ հանդեպ: Եկեղեցին <u>պիտի</u> վերակենդանանա: Իմ բժշկող բալասանը

<u>ՍԵՐՆ Է</u>:

Բայց մեզանից շատերի մեջ սեր չկա:

Ես պիտի հեղեմ Իմ Հոգին ամբողջ մարդկության վրա, Ես պիտի հալեցնեմ կարծր սրտերը ու պիտի մաքրեմ նրանց անօրենություններն Իմ Կրակով:

Տե՛ր, ես համարձակվում եմ մի բան ևս ասել: Այդ փոքրիկ աղոթախումբը հիմա վախեցած է քահանայից, ինչպես գիտես: Ես ինքս արժանի չեմ, ես կորած եմ առանց Քեզ, և լույսը իմ մեջ համարյա մարում է առանց <u>Քո</u> լույսի:

Քո սիրտն ուզում է Ինձ ավելին ասել. ավարտի՛ր նախադա՝ սությունդ, աղջի՛կս:

...Միությունը չի կարող ստեղծվել առանց հույն ուղղափառ քահանաների: Այն միությունը, որ Դու ես ցանկանում, նրանց դուր չի գալիս:

Բայց և այնպես, Իմ Վասո՛ւլա, Ես ունեմ մեծահոգի մարդկանց մի ամբողջ ցուցակ: Նրանք օրինակ պիտի լինեն այս սերնդի դարձի համար: Բայց հիշի՛ր այս քահանային: Պատվի՛ր Իմ քահանաներին ու մատուցի՛ր Ինձ հատուցման զոհաբերություններ, և Ես քեզ վրա պիտի տեղամ Իմ շնորհները:

Ինքդ քեզ Ինձ ենթարկի՛ր և թո՛ւյլ տուր Ինձ ժամանակ առ ժամանակ փորձել քեզ: Ես կբժշկեմ այն ամբողջ անհավատարմությունը, որ Իմ Աչքերը տեսնում են:

Փետրվարի 14, 1992

Վասո՛ւլա, խաղաղություն քեզ, թող որ զգամ քո սերը: Ինձ ենթարկվի՛ր: Մտի՛ր Իմ Սիրտը և գործադրի՛ր այն ամենը, որ տվել եմ քեզ:

Տե՛ր, Դու հեղեղեցիր
ինձ օրհնություններով,
չնայած որ ես նվազագույն
արժանիք իսկ չունեի:
Ինչպես տեսնում ես,
ես Քո Ձեռքերում եմ,
ուրեմն արա՛ ինձ հետ,
ինչ կամենում ես:

Ուրեմն, ապրի՛ր Ինձ համար ու սփոփի՛ր Ինձ: Եղի՛ր միության նշանը, որն այս սերունդը մերժում է: Այո՛, եղի՛ր միության նշանը, որը գալիս է Ինձանից, և որը արհամարհված ու մերժված է քո սեփական Տանը քո ժողովրդի կողմից[1]: Քո միջոցով Ես ցույց եմ տալիս Իմ Սերը <u>բոլոր</u> ազգերի հանդեպ, և քո միջոցով Ես պիտի շարունակեմ խոսել ու ցույց տալ, թե ինչպես են նրանք Իմ Եկեղեցին անապատի վերածել: Ես խաղաղության դաշինք առաջարկեցի քո ժողովրդին[2], որը կարող է ձեզ բոլորիդ դեպի եղբայրական միություն առաջնորդել:

Ես քեզ եմ ընտրել, որպես մի ցուցանշան, թե ինչպիսին է լինելու միությունը, սակայն նրանք չեն լսում: Նրանք ոչ էլ խոնարհվում են: Փոխարենը նրանք շտապում են Ինձ խնկարկել, բայց Ես ի՞նչ անեմ նրանց այդ ողջ խնկարկման հետ:

Ես խնկարկություն եմ ուզում նրանց սրտից,
Ես խաղաղություն եմ ուզում նրանց սրտից,
Ես զովերգություններ եմ ուզում նրանց սրտից,
Ես սեր, ողորմություն ու կարեկցություն եմ ուզում նրանց սրտից:

Ես հաշտություն եմ ուզում նրանց սրտից:

[1] Հույն ուղղափառ քահանաների կողմից:
[2] Հույն ուղղափառ քահանաներին:

Ա՜հ, աղջիկս, մի՛ հոգնիր այս անապատը կտրել-անցնելուց: Քո Փրկիչը քո կողքին է, և մենք կապված ենք միասին: Ես նշանակել եմ քեզ այս առաքելության համար, որ կայծակի նման հաղորդես Իմ Խոսքերը բոլոր ազգերին: Ասա՛ նրանց. որ, եթե նրանք հայտարարում են, որ իրենք Ամենաբարձրյալի վկաներն են, ապա թող ցույց տան Ինձ իրենց խաղաղությունը՝ դրսևորելով մաքրություն, ազնվություն և նվիրվածություն: Ասա՛ նրանց, որ քննեն իրենց ուղին ու վերադառնան Ինձ մոտ, և Ես կտամ նրանց հասկացողության Հոգին:

Այսօր Ես նրանց Ողորմություն եմ առաջարկում տաղնապի ու նեղության այս ժամանակներում: Ես նրանց Կարեկցություն եմ առաջարկում իրենց սարսափելի թշվառության մեջ: Ես նրանց տալիս եմ Իմ Սիրո Պարգևը: Ես անընդհատ մեկնում եմ Ձեռքս՝ նրանց դեպի Ինձ բարձրացնելու համար: Բայց որքա՞ն հաճախ են նրանք պատասխանել: Ես նրանց ցույց եմ տվել Իմ խղճահարությունն ու Իմ Կարեկցությունը: Դեռ որքա՞ն երկար Ես պետք է թույլ տամ նրանց, որ ցնցեն Ինձ վշտով՝ մերժելով կատարել Իմ Կամքը: Արդյոք պե՞տք է շարունակեմ ետ պահել Հոր Ձեռքը: Հոր Արդարությունը արդեն բոցավառվել է, որպեսզի այրի աշխարհի մեղքերը...

Ես մանուկների բերանից դառնագին թախանձանքներ հեղեցի, որպեսզի

խաղաղություն ու հաշտություն
լինի եղբայրների միջև,

բայց տե՛ս, թե ինչպես ընդունվեցին Իմ թախանձանքները... Ա՜հ, աղջի՛կս, եղիր

Ճշմարտության պաշտպանը:

Գլուխդ դի՛ր Սրտիս վրա, և, երբ լսես Իմ Սրտի զարկերը, դու քո քաջությունը նորից ձեռք կբերես: Տեղի մի՛ տուր քո թուլության մղումներին: Վստահի՛ր Ինձ, վստահի՛ր Ինձ...

Նայի՛ր[1], քաջալերվի՛ր, աղջի՛կս, Ես քո կողքին եմ, և այնքան ժամանակ, քանի դեռ քո կողքին եմ, Ես կանգուն կպահեմ քեզ... Աղջի՛կս, Ես երբեք չեմ լքի քեզ...

Լսի՛ր, լսի՛ր Ինձ, Վասո՛ւլա, Ես քեզ հետ կիսում եմ Իմ Խաչը: Նայի՛ր, Իմ Վասուլա, Իմ Սերը քո աչքերի առջև է, և Իմ Հավատարմությունը շրջապատում է քեզ: Ամեն անգամ, երբ Ես հեռվից տեսնում եմ դևերի լեգեոնի բարկությունը, որոնք ուղղվում են դեպի քեզ, որ հարվածեն ու նետվեն քեզ վրա՝ քեզ կտոր-կտոր անելու համար, Ես հայտնվում եմ քո և նրանց միջև՝ թողնելով նրանց սարսափահար: Ուրեմն սփոփի՛ր քո սիրտը Իմ Սրտում և մի՛ վախեցիր, քաջալերվի՛ր: Ես թույլ չեմ տա դևերին հարվածել քեզ, ոչ էլ թույլ կտամ, որ իրենց կրքոտ կատաղության մեջ հարձակվեն քեզ վրա ու այրեն քեզ:

Ես կանգնած եմ քո կողքին, որ ազդանշան տամ քեզ, թե երբ բացես բերանդ ու խոսես Իմ Անունից: Արի՛, Լույսն է քո Ուղեկիցը:

[1] Ես զգացի, որ Հիսուս փորձում էր բարձրացնել տրամադրությունս:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 18, 1992

Տե՛ր, ես չեմ թողնի,
որ աչքերս հեռանան Քեզնից,
որ չլինի թե կրկին
ուրացության մեջ ընկնեմ:
Թույլ տուր երկրպագեմ Քեզ
Քո Ոտքերի մոտ:
Օ՜, Տեր, ցո՛ւյց տուր
Քո Զորությունը մեզ բոլորիս վրա:
Թող մեզ բոլորիս վրա
Քո Փոթորիկը փչի,
որ քշի-տանի մեր մեղքերը:
Թող Քո Կրակը (Սուրբ Հոգին)
գա մեզ վրա, որ կենդանացնի
ու մաքրագործի մեզ:
Դժվար է կտրել-անցնել
այս դավադիր անապատը խավարում:

Մարանաթա: Արի՛:

Խաղաղություն քեզ, սիրելի՛ս, մի՛ սարսափիր:

Ես արդեն Իմ որոշումը կայացրել եմ: Ես պիտի ամայացնեմ երկիրը Իմ Մաքրագործող Կրակով և պիտի իրականացնեմ Իմ Ծրագիրը ավելի վաղ, քան կանխատեսված էր: Սպասման ժամա նակը շուտով կավարտվի: Ինչ վերաբերում է քեզ, զավա՛կս, մի՛ վախեցիր Հիմարությունից (սատանայից): Շրջի՛ր աչքերդ Իմ կողմը և հենվի՛ր Ինձ վրա: Ես եմ քո Ուժը:

- Լսի՛ր, աղոթի՛ր քո քահանաների[1] համար: Աղոթի՛ր, որ նրանք կարողանան շրջվել Իմ կողմը և Ինձանից ստանալ Խելամտություն, Խաղաղություն ու Սեր: Շատերը բարոյալքվում ու քայքայվում են և շատ արագ: Աղոթի՛ր նրանց[2] համար, ովքեր ոչնչացնում են Իմ փթթող ծաղիկները[3]: Ասա՛ քո քահանաներին[4], որ եթե իրենց մեջ կան մի քանիսը, որ դեռևս կենդանի են, դա Իմ Արցունքների շնորհիվ է: Ես ջրում եմ նրանց հավատը Իմ Արցունքներով: Ես լաց եմ լինում տառապանքների մեջ, որպեսզի այդ մնացորդին կենդանի պահեմ: <u>Իմ Եկեղեցին փչրվում ու փուլ է գալիս փտած փայտի նման</u>, և այն, ինչ Ես լսում եմ նրանցից, հետևյալն է.

[1] Հույն ուղղափառ քահանաների:
[2] Հույն ուղղափառ քահանաների:
[3] Նկատի ունի մեր Տիրոջ պատգամների միջոցով նոր դարձի եկած հույն երիտասարդներին:
[4] Հույն ուղղափառ քահանաներ:

«Մի՞թե երաշտ է»:

Նրանք արհամարհում են բարեպաշտությունը: Նրանք կծու մեղադրանքների ցուցակ են կազմում Իմ Սուրբ Հոգու Գործերի դեմ և թույլ են տալիս, որ իրենց լեզուն դատապարտի դրանք: Խավարի ժամը զրոյի հասցրեց Պաշտամունքի ժամը: Եվ դեռ ավելի վատ. նրանք ցուցամոլության ու ինքնահավանության մենաշնորհ են սահմանել:

Ես՝ նրանց Տերը, կանգնած եմ նրանց առաջ ու հարցնում եմ. «Ինչո՞ւ եք դուք ծաղրում ու արհամարհում այն մխիթարանքը, որ այսօր ես տալիս եմ զավակներիս Իմ Եկեղեցու փոք- բաղույն մասի միջոցով»: Երկինքը շուտով կանհետանա, իսկ դուք դեռևս անտեղյակ եք ու խորը քնի մեջ: Ես, ինչպես մի գող, գալու եմ ձեզ մոտ առանց ասելու, թե որ ժամին[1]:

Ես հիմա հարցնում եմ ձեզ՝ Արցունքն Աչքերիս. «Ասացե՛ք Ինձ, ի՞նչ պատահեց Իմ հոտին: Որտե՞ղ են Իմ հավերժական արոտավայրերը: Ինչո՞ւ են Իմ որդիներն ու դուստրերը գերության մեջ: Որտե՞ղ է այսօրվա երիտասարդությունը: Այն անուշահոտությունը, որ տվել էի ձեզ, ինչո՞ւ է գարշահոտության վերածվել»: - Ես լաց եմ լինում ձեզ վրա: - Ես լաց եմ լինում ձեր ծայրահեղ հպարտության վրա... Ձեր ծայրահեղ հպարտությունը Իմ Եկեղեցին դարձրել է ինչպես բացված մի գերեզման: Բայց դուք նույնպես կհնազանդվեք: Իմ Կրակը մոտ է հիմա: Ես ձեզ ցած կտապալեմ ձեր փառքից... Եվ երբ դուք հարցնեք «Ի՞նչ պատահեց», ես կասեմ ձեզ. «Իմ Թագավորությունը վերցվել է ձեզնից և տրվել մի ազգի, որը հիմա պտուղ պիտի բերի»[2]: Հոգին է, որ կյանք է տալիս: Դուք իրո՞ք բավականաչափ հարգանք ունեք Իմ Սուրբ Հոգու հանդեպ: Ուրեմն ինչո՞ւ եք վիրավորում Իմ Սուրբ Հոգուն՝ հալածելով Նրան:

Ինքնե՛րդ դատեք՝ ինչ եմ ասում: Ինչո՞ւ են ձեր երիտասարդները անջատվում Մայր Եկեղեցուց, որ հետևեն մի երկրորդական փիլիսոփայության: Դուք լավ եք արել՝ մշտապես հիշելով Իմ Սուրբ Հոգուն ու պահպանելով ավանդույթներն այնպես, ինչպես փոխանցեցի ձեզ: Այնուամենայնիվ, դուք խո սում եք առանց սիրո, և դուք <u>կուրացել եք</u> ձեր բուռն եռան դեմ: Դուք կորցրել եք Իմ Խորհուրդների ներքին իմաստը ձեր բուռն եռանդի պատճառով: Մի՞թե չեք կարդացել. «Մնացորդներ կան՝ ըստ ընտրության շնորհի: <u>Իսկ եթե շնորհից է, այլևս գործերից չէ</u>, ապա թե ոչ, շնորհն այլևս շնորհ չի լինի»[3]: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, բայց ոչ առանց տառապանքի, քանզի դուք առարկում եք Իմ Սուրբ Հոգու պարգևներին: Դուք չեք մերժում մարդկային իշխանությունը, <u>այլ մերժում եք Ինձ՝ ձեր Աստծուն</u>:

Ես ձեզ հիշեցնում եմ մի վերջին բան. մի օր դուք կտեսնեք Ինձ երես- առ-երես, և Ես հաշիվ կպահանջեմ ձեզանից, թե ինչպես եք հոգ տարել այն հոգիների մասին, որ Ես վստահել էի ձեզ: Այսօր դուք Ինձ դեռևս ստախոս եք ներկայացնում, քան զի դուք այլևս չեք հավատում այն վկայությանը, որ տվել եմ ձեզ բոլորիդ Իմ Խոսքը Հիշեցնողի մասին՝

[1] Հայտ. 3:3
[2] Մատթ. 21:43
[3] Հռոմ. 11:6

Իմ Սուրբ Հոգու մասին:

Մաքրե՛ք ձեր սրտերը, և երկինքը պիտի շողա ձեզ վրա: Վերևից ես նայում եմ քեզ, Ավանդության՝ Քաղաք: Դու ճշտորեն հետևել ես Իմ Նախնական Եկեղեցու Օրենքին, սակայն այսօր դու կուրացած ես ցուցամոլությամբ ու քիչ ուշադրություն ես դարձնում, կամ ընդհանրապես ուշադրություն չես դարձնում Իմ Օրենքի ավելի կարևոր կողմերին՝ Ողորմությանը, Սիրուն, Խոնարհությանը

<u>և Ներման Հոգուն</u>...

Իմ վիշտը մեծ է, և ես ներքուստ տնքում եմ՝ սպասելով, թե երբ պիտի փնտրեք Իմ Հոգու ավելի մեծ շնորհները: Ես հոգնել եմ՝ տեսնելով, թե դուք ինչպես եք հոգևոր բաները քարոզում ոչ հոգևոր ձևով: Եթե նրանք այսօր հասկանային Իմ Հոգու խորքերն ու ավելի ծանրակշիռ հարցերը, ապա նրանք ընդունած կլինեին նաև Իմ Հոգու պարգևները, բայց հպարտությունը, որով դուք սնում եք ձեզ, անդադար տանջում է Ինձ:

Ես ձեզ հազարավոր հոգիներ եմ վստահել, որ խոնարհությամբ սովորեցնեք ու օգնեք նրանց՝ բերելով նրանց դեպի Իմ Սիրտը, հիշեցնելով նրանց <u>Իմ Գթության, Իմ Սիրո</u> և նրանց հանդեպ ունեցած Իմ մեծ ծարավի մասին: Սակայն դուք հապ ճեպ դատավճիռ եք կայացնում նրանց հանդեպ և նրանց վրա անտանելի բեռներ եք դնում, այնպիսի բեռներ, որոնք բարձրացնելու համար դուք ինքներդ մատ անգամ չեք շարժում: Իմ օրերում ես գայթակղության քարն էի, իսկ այսօր Իմ Սուրբ Հոգին կրկին դարձել է

~ գայթակղության քար ~

Իմ քահանայական հոգիներից շատերի համար:

~ Ես ասում եմ ձեզ. Տիրոջ աչքերը ուղղված չեն միայն ար դարների ու առաքինի մարդկանց կողմը: Իմ աչքերը ուղղված են նաև թշվառների կողմը ու նրանց կողմը, ում դուք անարժան եք կոչում:

Աստղերը երկնքից շուտով կընկնեն երկրի վրա, և երկնքի զորությունները կցնցվեն, իսկ դուք տակավին անտեղյակ կլինեք: Այս երկիրը շուտով կանհետանա, և նոր երկինքն ու նոր երկիրը կմոտենան ձեզ, իսկ դուք տակավին պիտի փախչեք Իմ Հոգուց: Բայց և այնպես, եթե անգամ այսօր դուք խոնարհեցնեք ինքներդ ձեզ և անկեղծորեն ընդունեք, որ մեղավորներ եք ու անարժան, ես կհեռացնեմ թմրության հոգին, որ սավառնում է ձեր ազգի վրա:

Դուք ձեր մասին ասում եք, որ հարուստ եք: Ուրեմն ցույց տվեք Ինձ ձեր հարստությունը: «Սովը» միակ բառն է, որ լսում եմ ձեր երկրից: «Սով» է գրված բոլորիդ վրա: Եթե դուք ձեր մասին ասում եք, որ հարուստ եք, այդ դեպքում ո՞ւր են ձեր փառավոր արոտավայրերը: Ինչո՞ւ եմ ես սայթաքում փտող դիակների վրա: Ինչպե՞ս է, որ ոչ մի ձայն չեմ լսում ձեզանից:

~ Իմ Սուրբ Հոգին Իր Անսահման Ողորմածությամբ իջնում է հիմա՝

կերակրելու ձեզ բոլորիդ ու հագեցնելու ձեր հոգին Իմ Երկնային Մանանայով: Ինչպես մի Հովիվ, Ես պիտի փնտրեմ Իմ մոլորված ոչխարներին, Ես պիտի խնամեմ նրանց վերքերը հավիտենական Սիրով: Ես պիտի օգնեմ թույլերին ու հոգնածներին և նրանց, որոնց դուք այլևս չեք արածեցնում: Ես պիտի սփոփեմ Իմ զավակներին: Ուրե՜մ խանդարեք Ինձ և խոչընդոտ մի՛ դարձեք Ողորմության այս օրերին: Մի՛ հակասեք այն, ինչ դուք ուսուցանում եք Իմ Հոգու մասին: Ես այս ամենը ասացի ձեզ հիմա՝ նախքան Իմ Օրը գալը: Արդյոք կլսե՞մ. «Աստվա՛ծ, ահա և ես: Ես գալիս եմ զղջալու: Ես կդադարեմ վիրավորել Քո Շնորհի Հոգին, քանզի գիտեմ, որ եթե վիրավորեմ, ապա խստորեն կպատժվեմ»: Ձեր փրկության համար է, որ Ես խոսում եմ, և եթե հանդիմանեմ ձեզ, դա

այն Սիրո մեծության պատճառով է,
որ ունեմ ձեր հանդեպ:

ΙΧΘΥΣ

Վասո՛ւլա, աղոթի՛ր քո քահանաների համար, որ իսկական խոնարհություն սովորեն Ինձանից:

Մարտ 1992

(Սատանան կարող էր հեշտությամբ սպանել ինձ այս առավոտ: Մինչ ես մաքրում էի ապակյա դարակի փոշին, որի վրա սրբապատկերներ ու կրոնական իրեր կային, այն ընկավ ու կոտրեց նաև դրա ներքևում գտնվող դարակը: Ես տեսա, թե ինչպես էին ամենուր իմ շուրջը մեծ սուր եզրերով բեկորներ թափվում՝ ցրվելով ամբողջ սենյակով մեկ մինչև նախասենյակ: Երբ դա դադարեց, ես լուռ սպասում էի, որ տեսնեմ, թե որտեղից է արյուն հոսելու: Ես ոչ մի վնասվածք, անգամ քերծվածք չունեի: Իրականում ես պետք է կտոր-կտոր լինեի՝ ստամոքսից մինչև ոտքերս):

(Ավելի ուշ)

Իմ Վասո՛ւլա, թո՛ւյլ տուր՝ քայլ առ քայլ առաջնորդեմ քեզ: Մնա՛ փոքր, ծաղի՛կս, և ապավինի՛ր քո Փրկչին:

Ես սիրում եմ քեզ, փոքրի՛կս: Սատանան կատաղաբար փորձում է ձեռք բարձրացնել քեզ վրա և հաշմել քեզ[1]: Նա ոչ միայն օգտագործում է մարդկանց, որ կեղծ մեղադրանքներ հավաքի քո դեմ, այլև իր զայրույթի մեջ կօգտագործի անգամ բնության օրենքը, որպեսզի այն դարձնի քո դեմ: Բայց Ես քո Նվիրյալ Պահապանն եմ ու քո Ապաստանը. ուրեմն մի՛ վախեցիր: Իմ Աչքերը անդադար քեզ վրա են: Միշտ թաքնվի՛ր Իմ Սուրբ Սրտում: Արի՛, մենք պիտի շարունակենք հետամուտ լինել հոգիներին՝ նրանց փրկության համար:

[1] Ես հակացա դա հոգևոր կերպով:

Սիրելի՛ս, ես պիտի առաջնորդեմ քեզ երկրի վրա ամենուր, և որտեղով էլ որ անցնեմ, նուրբ բուրմունքներ պիտի թողնեմ Իմ ետևից: Ես Իմ անուշահոտ զմուռսի բուրմունքը պիտի տարածեմ մի Հոգուց մյուսը, որ հափշտակեմ նրանց սրտերը: Ուրախացրո՛ւ քո Փրկչին, ծաղի՛կս, և թո՛ւյլ տուր Ինձ ավելի ու ավելի օգտագործել քեզ: Ես չեմ կոտրի քեզ, ոչ էլ քեզանից կխլեմ քո ազատությունը: Թող քո սիրտը մնա Իմ Սիրո գերին, սակայն չհոգնի Ինձանից: Ես քո Սիրելի Ուղեկիցն եմ, ով քեզ մի Գանձ է տվել.

Ես տվել եմ քեզ
Իմ Սիրո Պարգևը:

Ես քեզ պիտի տամ Իմ Ուժն ու Իմ Համբերությունը, ծաղի՛կ: Իմ Հոգին քեզ վրա է, որպեսզի առաջնորդի քեզ ու հիշեցնի Իմ Ուսուցումների մասին: Ուրեմն մեծահոգի՛ եղիր ու տո՛ւր քո ժամանակը՝ այս երկիրը կյանքի կոչելու համար: Մի՞չտ պատկառա՛նք ունեցիր Իմ Հանդեպ: Մի՞թե Ես քո միակ Սերը չեմ: Մի՞թե Ես Արքայից Արքան չեմ: Ջանասիրաբա՛ր աշխատիր Ինձ հետ, և հակառակ այն բանի, թե ինչ ես մտածում. քո ջանքերի մեծ մասը զուր չէ: Իմ Զորությունը դրանց Աստվածայնություն է տալիս, որն օգնում է հասնելու իրենց նպատակին: Եթե Գայթակղիչը չչնջում է քո ականջին՝ ասելով քեզ, որ քո խոսքերն անպտուղ են, Ես ասում եմ քեզ, զավա՛կս, մի՛ լսիր նրան:

Ես պիտի շարունակեմ հեղել Իմ Սիրտը ձեզ բոլորիդ վրա և առանց հոգնելու իջնել Երկնքից, որ կերակրեմ քաղցածներին՝ բավարարելով յուրաքանչյուրի ճաշակը: Ես պիտի շարունակեմ ցուցադրել Իմ Սուրբ Սիրտը և ցույց տալ Իմ Քնքշությունը յուրաքանչյուրի հանդեպ: Ամեն ոք, ով ճաշակի Ինձ և ըմպի Ինձ, պիտի փոխակերպվի, որպեսզի ապրի

Ճշմարիտ կյանք Իմ մեջ՝
ձեր Աստծո:

Ով որ չրջվի Իմ կողմը, կփրկվի: Ընդամենը մի հայացք Ինձ վրա, և Ես կկերպարանափոխեմ ձեզ:

~ Աղջի՛կս, մնա՛ անկատ, մնա՛ ոչնչություն, մնա՛ թաքնված քո անօգնականությամբ, քո տկարությամբ, որպեսզի Իմ Առատաձեռնությունն ու Իմ Զորությունը կարողանան անգամ ավելի շատ տարածվել հիմա: Ցանքսը չի ավարտվել, և ամբողջ աշխարհում շուտով պիտի արձագանքի Իմ Ձայնը: Աղջի՛կս, դու շատ թանկ ես Ինձ համար, և Ես սիրում եմ քեզ արտասվելու աստիճան: Ես ձեզ բոլորիդ սիրում եմ արտասվելու աստիճան, և Երկնքից Շնորհով տամկացած Իմ Շուրթերը ձեզ բոլորիդ բերում են Խաղաղության Իմ Պատգամը: Հավիտենականությունից ի վեր Ես սիրել ու օրհնել եմ ձեզ, և ձեր օրորոցից սկսած՝ Ես հետևել ու պաշտպանել եմ ձեզ:

Ես գիտեմ ինչպես է թշվառությունը պարուրել բոլորիդ՝ հասցնելով ձեզ կատարյալ կուրության: Փնտրե՛ք Ինձ, և Ես Լույս պիտի տամ ձեզ: Ես կրկին ձեզ Կյանք պիտի տամ և այնպես անեմ, որ ձեր հոգին փափագի այն ամենը, որ Սուրբ է: Ուստի, աղջի՛կս, շարունակի՛ր փնտրել Իմ

Սրբությունն ու Իմ Կատարելությունը: Օրհնի՛ր Ինձ ու փառաբանի՛ր: Ցանի՛ր, երբ Ես եմ ցանում, ցանի՛ր առատորեն, ուր էլ որ տանեմ քեզ՝ ցանելու համար: Դու շուտով պիտի անցնես այս դարաշրջանի շեմը, որ մտնես Հավիտենական Խաղաղության մեջ: Իսկ առայժմ կրի՛ր այն, ինչ Ես եմ կրում: Դու մենակ չես: Հաստատակամորեն շարունակի՛ր, զավա՛կս, և հիշի՛ր՝ Ո՛վ է քո կողքին, որ օրհնում է քեզ:

Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

Մարտի 3, 1992

(Իմ Հալածանքների Ժամանակ)

Տե՛ր, ես գաղտնի չեմ խոսել:
Այն, ինչ ես ասում եմ,
ասում եմ աղոթքով
և Քո Ժողովում՝
գովաբանելով Քեզ:
Ես փորձում եմ հնազանդվել
Քո Սուրբ Սրտին
և այն ցուցումներին,
որոնք ստացել եմ Քեզնից:
Ես անում եմ ամենը, ինչ կարող եմ,
որ դրանք ցույց տամ այնպես,
ինչպես տրվել են ինձ:
Չնայած ես աղքատ եմ
ու հազիվ թե կարողանամ
Քեզ որևէ բան տալ,
բայց ես տվել եմ Քեզ միակ բանը,
որ ունեմ, այն միակ բանը,
որ Դու ասել էիր, որ իմն է:
Ես Քո Մեծությանը
տվել եմ <u>իմկամքը,</u>
որպեսզի օգտագործես այն,
եթե կամենում ես, Քո Բարեգութ
Մտադրությունների համար:

Գիտեմ, զավա՛կս, մի՞թե նրանք Ինձ էլ չատեցին առանց պատճառի: Որևէ մեկը, որ սերվում է Ինձնից՝ Ճշմարտության համար վկայելու, ատվում է, հալածվում ու հավքի նման մի որս է դառնում: Ծառան իր Տիրոջից ավելի մեծ չէ... Այս հալածողները անմեղ կլինեին Հոր Աչքում, եթե նրանք չիմանային Իմ Օրենքը: Բայց իրականում նրանք տեսել են Իմ Օրենքը, չնայած տեսել են միայն խավարում: Նրանք իրենց կոչում են Օրենքի գիտակներ և հավատում են, որ գիտեն ամեն ինչ: Սակայն իրականում նրանք ոչինչ չգիտեն: Նրանք կարծում են, որ քեզ հրապարակավ դատելով ու մեղադրելով՝ շատ սուրբ պարտականություն են կատարում

Ինձ համար՝ քո Աստծո:

Եթե նրանք հետևած լինեին Իմ Պատվիրաններին ու պահեին դրանք, չէին դատի: Եթե նրանք իրենց մեջ մի փոքր սեր ունենային, կպահեին Իմ Խոսքերը և Իմ Օրենքը: Բայց իրականում նրանք քեզ չեն դատում, նրանք դատում են Իմ Բարի Գործերը, որ Ես անում եմ ձեզ բոլորիդ համար: Ես ընդամենը լիազորել եմ քեզ դնալ և լինել Իմ Արձագանքը: Ես ակնկալում եմ, որ լինելով Իմ Արձագանքը՝ դու պտուղ կտաս, մի պտուղ, որ կպահպանվի... Սակայն նրանք չեն հասկացել... Զավա՛կս, շարունակի՛ր կատարել այն աշխատանքը, որի համար լիազորել եմ քեզ: Հոգինե՛ր բեր Ինձ մոտ, որ Ես կարողանամ կլանել նրանց Իմ Սուրբ Սրտում: Ես ծարավի եմ հոգիների:

Լսի՛ր, Իմ Սուրբ Գործերի վկայությունը շողում է ձեզ բոլորիդ վրա, որպեսզի հեռացնի այս խավարը: Իմ Սուրբ Գործերի վկայությունը դրանց բարի պտուղն է, մի պտուղ, որ պահպանվում է: Իմ Սուրբ Գործերի վկայությունը Խաղաղության պարգևն է, որը Ես տալիս եմ ձեզ, և այն Սերը, որը ներշնչում եմ ձեզ: Իմ Սուրբ Գործերի վկայությունը Իմ փրկության կոչերն են՝

Հաղորդության Կյանքով
ապրելու համար:

Հայրը և Ես ճշմարիտ պաշտողներ ենք ուզում, պաշտողներ, որոնք կպաշտեն հոգով և ճշմարտությամբ: Իմ Ճշմարտության Հոգին իջնում է մինչև ձեր դուռը, որպեսզի հիշեցնի ձեզ, որ վերջում

~ Մեր Երկու Սրտերը
կհաղթանակեն: ~

Այդ նրա համար է, որ Աստվածաշնչում գրված խոսքերն իրականանան. «Երեքուկես օր հետո կենդանության հոգին Աստծուց մտավ նրանց մեջ, և նրանք վեր կացան, կանգնեցին իրենց ոտքերի վրա[1]». այո՛, ամբողջ Փառքով, քանզի «Դրանք երկու Օծյալներն են»[2], որոնք կանգնած են կողք կողքի: Մեր Երկու Սրտերը նման են «երկու ձիթենիների՝ մեկը աջ կողմում և մյուսը՝ ձախ կողմում»[3],: Իմ Սուրբ Սիրտը անհատակ Հարստություններ ունի և շատ բաներ ունի ձեզ բոլորիդ ասելու, Իմ փոքրի՛կ զավակներ:

Ես եմ Հարությունն ու Կյանքը:

Ես գալիս եմ Հարությո՛ւն տալու ձեր նվիրվածությանը Իմ Սուրբ Սրտին և ձեր Մոր Անարատ Սրտին: Դրա համար, մի՛ վախեցեք: Զգո՛ն եղեք, քանզի շատերը կգան չարի ազդեցության տակ օգտագործելով Իմ Անունը, որպեսզի խաբեն ձեզ ու հանգցնեն այն փոքրիկ կայծը, որ մնացել է ձեր մեջ, ու թողնեն ձեզ բացարձակ խավարում: Շատերը կհեռանան, քանզի

[1] Հայտ. 11:11
[2] Զաք. 4:13
[3] Զաք.4:3

նրանց արմատները Իմ մեջ չէին: Աղոթե՛ք, որ փորձության չենթարկվեք Չարի կողմից:

Վա՜յ ձեզ, որ շարունակում եք հալածել Իմ ճայնափողերին ասելով. «Մենք երբեք չէինք մասնակցի մարգարեների արյունահեղությանը, եթե ապրեինք մեր հայրերի ժամանակներում»: Ես ասում եմ ձեզ. այս ամենը կընկնի ձեր իսկ գլխին, եթե չզղջաք ու չապաշխարեք: Իմ սիրելի՛ զավակներ, դողը գալիս է գիշերով[1], այնպես որ արթո՛ն կացեք և թույլ մի՛ տվեք նրան ներխուժելու ձեր տուն:

Մշտապես աղոթե՛ք: Հարատև աղոթքի մեջ լինել նշանակում է գիտակից լինել Իմ Ներկայությանը: Գիտակից լինել Իմ Ներկայությանը՝ նշանակում է արթուն լինել: Արթուն լինել նշանակում է լինել լույսի մեջ և ողջամիտ: Ձեր տունը ձեր հոգին է, ուրեմն հո՛գ տարեք այն մասին, որ լույսը ձեր ներսում խավարի չվերածվի: Թույլ մի՛ տվեք, որ Գայթակղիչը ձեզ քնած գտնի:

Դուք Իմ բարեկամներն եք, հիշո՞ւմ եք: Սիրեք մեկդ մյուսին, ինչպես Ես եմ ձեզ սիրում: Որևէ բան, որ խնդրեք Իմ Անունով, Ես պիտի տամ ձեզ: Ձեզանից ոմանք այսօր տխուր են, քանզի աշխարհը հապճեպ դատավճիռ է կայացնում Իմ Սուրբ Սրտի և ձեր Մոր Անարատ Սրտի վերաբերյալ: Բայց շուտով Մեր Երկուսի Սրտերը ցույց կտան աշխարհին, թե նա որքան սխալ էր՝ այդպես դատելով, երբ Ես կբացահայտեմ Իմ Սուրբ Դեմքը[2] նրանց մեջ:

Աղջի՛կս, գրի՛ր.

«Երբ Ես բացեմ վեցերորդ կնիքը, ուժեղ երկրաշարժ պիտի լինի, և արեգակը սև կդառնա, ինչպես այծի մազից հյուսված կարպետը, իսկ լուսինն ամբողջովին կդառնա արյուն: Եվ երկնքի աստղերը կթափվեն երկրի վրա, ինչպես թզերը թափվում են թզենուց, երբ ուժեղ քամին թափահարում է այն: Եվ երկինքը կանհետանա մագաղաթի նման գալարվելով, և բոլոր լեռներն ու կղզիները կցնցվեն ու կշարժվեն իրենց տեղերից:

Եվ երկրի թագավորներն ու իշխանները, հազարապետներն ու մեծամեծները, հզորներն ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները կթաքնվեն քարայրներում և ժայռերի ծերպերում: Եվ լեռներին կասեն՝ ընկե՛ք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկե՛ք մեզ Նրանից, ով նստած է Գահին, և Գառան բարկությունից»[3]: Քանզի Իմ Մաքրագործման Մեծ Օրը շուտով պիտի գա, և ո՞վ կկարողանա կենդանի մնալ:

Ամեն ոք այս երկրի վրա ստիպված պիտի լինի մաքրագործվել, ամեն ոք պիտի լսի Իմ Ձայնը և ճանաչի Ինձ՝ որպես Գառան: Բոլոր ցեղերն ու կրոնները պիտի տեսնեն Ինձ իրենց ներքին խավարում: Սա պիտի տրվի ամեն մեկին, ինչպես մի գաղտնի հայտնություն, որպեսզի ցույց տա ձեր հոգու խավարը: Երբ դուք, շնորհի այս վիճակում, տեսնեք ձեր ներքինը, դուք անշուշտ կխնդրեք, որ սարերն ու ժայռերն ընկնեն ձեզ վրա: Ձեր հոգու խավարը կլինի այնպիսին, որ դուք կկարծեք, թե արևը

[1] Սա նշանակում է, որ Սատանան մութ հոգու մեջ ավելի հեշտ է մուտք գործում:
[2] Սա Մաքրագործման Օրն է, երբ մենք մեր մեղքերը կտեսնենք Աստծո Աչքերով:
[3] Հայտ. 6:12-17: Այստեղ Հիսուս պարզ նշում է, որ Մաքրագործման Օրը ամեն ոք աշխարհում կտեսնի իր հոգու վիճակը, ամեն ոք կրկին կճանաչի Գառանը, այսինքն՝ Հիսուսին:

կորցրել է իր լույսը, և լուսինը նույնպես արյուն է դարձել: Ահա այսպես կերևա ձեզ ձեր հոգին, սակայն վերջում դուք միայն կփառաբանեք Ինձ:

- Եթե մի անծանոթ դա ձեզ մոտ ու ասի, որ այն կերակուրը[1], որ Ես տալիս եմ ձեզ, պիղծ է, մի՛ լսեք նրան: Լսե՛ք Իմ Սուրբ Սրտի լեզվին, Իմ Խաչի լեզվին: Թող ձեր հավատարմությունը Իմ Սուրբ Սրտի հանդեպ մեկ անգամ ևս ծաղկի: Դուք բոլորդ ձեզ նվիրաբերե՛ք Իմ Սուրբ Սրտին և ձեր Մոր Անարատ Սրտին: Ես կրկին կայցելեմ ձեզ, Իմ փոքրի՛կ զավակներ:

Ուրեմն քաջալերվե՛ք, բարեկամնե՛րս: Դուք հալածված եք, բայց միայն աշխարհի կողմից: Ձեզ անարգո՞ւմ են հանուն Ինձ: Ուրախացե՛ք, քանզի Ինձ էլ են անարգել: Ձեզ վերաբերվում են, ինչպես աշխարհի տականքի՞ն, որովհետև դուք սիրո՞ւմ եք Ինձ: Ես օրհնում եմ ձեզ և միանում եմ ձեզ ձեր տառապանքների մեջ: Դուք ձեր ժողովրդի ծաղը ու ծանակի առարկա՞ն եք: Սակայն նույնը և Ես էի՝ ձեր Թագավորը: Դուք ավելին չեք, քան Ես՝ ձեր Տերը: Իմ գաղտնի մտադրությունները բացահայտվում են <u>հիմա՝</u> ձեր քնաթաթախ ժամանակներում: Իմ Սուրբ Սրտի հայտնությունը նորից բացահայտվում է այս վերջին ժամանակներում, որպեսզի արթնացնի ձեր սրտերը և ձեզ բոլորիդ ջերմորեն ետ վերադարձնի այս Բարեպաշտությանը: Ուստի մի՛ շտապեք դատելու: Սիրեցե՛ք Ինձ ու օրհնեցե՛ք Ինձ: Ես միշտ ձեզ հետ եմ, և Ես պիտի շարունակեմ ցույց տալ Իմ Սուրբ Սրտի Հարստությունները ձեզանից յուրաքանչյուրի մեջ:

Վասո՛ւլա, զավա՛կս, Ես պիտի ամրացնեմ քո ցողունը և փոխարինեմ այն թերթիկները, որոնք քեզ մեղադրողները պոկել են քեզանից, որպեսզի քեզ տամ այն ուրախությունը, որը Ես զգում եմ ամեն անգամ, երբ դու Ինձ ես տալիս քո կամքը: Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

Մարտի 4, 1992

Ես լսում եմ հիմա, Տե՛ր:

Զավա՛կս, լսի՛ր և գրի՛ր:

Ես Անսահման Քնքշություն ու Կարեկցություն եմ, սակայն Իմ ժողովուրդը Իմ Եկեղեցում դավաճանություն դավաճանության վրա է կուտակում: Մի՞թե Ես պետք է լուռ մնամ: Իմ ողջ Մարմինը Ոտքից մինչև Գլուխ ցավում է և մեծ տառապանքի մեջ է: Ես խոր վերքեր եմ ստացել և ծաղրի եմ ենթարկվել Իմ յուրայինների կողմից: Մի մեծ և անհամար բազմություն գնում է դեպի կործանում: Իմ քահանայական հոգիներից շատերը ծաղրում են բարեպաշտությունը:

Ես նախազգուշացումներ եմ անում՝ սկսած Ֆաթիմայի Ժամանակից մինչև օրս: Ես Իմ Սիրտն եմ հեղել ձեզ վրա, սերո՛ւնդ, սակայն ձեզանից

[1] Այս Պատգամները:

շատերը մոռացել են այն փրկագինը, որ վճարվեց ձեզ ազատագրելու համար[1]... Վասո՛ւլա, դու չես լսում այնպես, ինչպես Ես եմ ցանկանում, որ լսես[2]... Հանուն Իմ Սիրո, փոքրի՛կս, խոսի՛ր Ինձ հետ: Մի՛ կորցնիր քաջությունդ, Ես սիրում եմ քեզ:

Տե՛ր, ինձ հալածողները հիմա ինչ-որ բան են տպագրում իմ դեմ:

Նրանք նաև Ինձ հալածողներն են, ոչ միայն քոնը: Բայց Ես ասում եմ քեզ, որ նրանք անպայման կկործանեն իրենց՝ հենց իրենց սեփական ավերիչ գործերով, և նրանց վարձքը չարիք կլինի, քանզի նրանք չար գործ են անում, եթե դու չաղոթես նրանց համար: Իմ Սիրտը Սիրո ու Ներման մի մեծ օվկիանոս է:

Գիտեմ, Տե՛ր, սակայն նրանք կրկին գայթակղեցնում են նրանց, ովքեր հենց նոր են փրկվել Ձարից:

Աղջի՛կս, Իմաստությունը քեզ պարգև է տվել լսելու, գրելու և հասկանալու Սիրո Ցանկությունները: Սրանց իմաստը, աղջի՛կս, հեշտ չէ հասկանալ ոչ հոգևոր մարդկանց համար: Նրանք երբեք ոչինչ չեն ընդունի Իմ Հոգուց: Նրանք այդ ամենին նայում են, որպես մի անհեթեթություն: Նրանք կշարունակեն ուսուցանել աշխարհի ընթացքի համաձայն, ինչպես ուսուցանում են փիլիսոփայությունը: Հետո մի՞թե չես կարդացել, որ Իմ Սուրբ Հոգու հոգևոր պարգևները դժվար կլինի հասկանալ այնքան ժամանակ, քանի դեռ նրանք մտածում ու մոտենում են Ինձ, ինչպես փիլիսոփաներ: Ձե՞ս կարդացել, որ սրանք այն հարցերն են, որոնք այս մարդիկ աղավաղում են այնպես ինչպես աղավաղում են Աստվածաշնչի մնացած մասերը, քանի որ նրանք Հոգու մեջ չեն: Աստվածաշունչը զգուշացրել է ձեզ բոլորիդ այս մարդկանց մասին:

Հավատացե՛ք ու աճե՛ք շնորհի մեջ, որ Ես տվել եմ ձեզ: Շուտով Իմ Մաքրագործող Կրակը պիտի դա ձեզ բոլորիդ վրա, որ բոցերի մեջ հալեցնի այս աշխարհի մեղքերը:

Ձեր Սուրբ Մայրն ու Ես Ֆաթիմայի օրվանից ի վեր դատարկել ենք Մեր Սրտերը ձեր բոլորի առաջ, սակայն Իմ հրահանգների պահպանումը, որ փափագում եմ ձեզանից, չի իրագործվում, և միայն մի մնացորդն է լսում: Այս սերունդը խաբում է ինքն իրեն: Նրանք խախտել են բոլոր Իմ Պատվիրանները: Ես ինչպե՞ս կարող եմ ձեզ մոտ չգալ Կրակով և կայծակնահար չանել ձեզ, ինչպես կայծակնահար արեցի Սոդոմն ու Գոմորը:

Որովհետև, գուցե մենք տասից ավելի՞ն ենք, Տե՛ր

(Մի պահ լռություն տիրեց):

...Դու ապշեցնում ես Ինձ: Դու ապշեցնում ես Ինձ, քանզի Ես սկսել էի

[1] Հիսուս հանկարծ կանգ առավ:
[2] Հիսուս փոխեց տոնը, ասես աղաչում էր:

հավատալ, որ քո շուրթերը երբեք չեն համարձակվի ասել Աբրահամի խոսքերը, երբ նա սակարկում էր Ինձ հետ: Ես ձեզ դրդում էի, որ դուք ողորմության աղաղակներ արձակեք, նախքան մահաբեր ժամը վրա կհասնի: Ես դրդում էի ձեզ, որ դուք Ինձ աղոթքներ մատուցեք, սակայն դրանք բավարար չեն...

Ի՞նչ պետք է անեմ, Տե՛ր:
Ես ամբողջ օրը Քեզ հետ եմ՝
աշխատելով Քեզ համար
և ծառայելով Քո շահերին:

Դու իմ Կյանքն ես,
իմ Շունչն այս աքսորում:
Ես գիտեմ, որ ողորմելի եմ
և նույնքան մեղք եմ գործում,
որքան շնչում եմ: Չնայած դրան՝
Դու եկար ինձ մոտ
ու բարձրացրիր իմ հոգին
դեպի Քեզ, որ համտեսեմ
Քո Քաղցր Գիտությունը,
ինչպես Քո առաքյալներն
արեցին այդ:

Դու կենդանացրել ես իմ սիրտը
և իմ ականջը շրջել ես
Քո Սուրբ Սրտի կողմը:
Քո Զորավոր Ձեռքը
շոյեց իմ գլուխը և այնպես արեց,
որ իմ սիրտն այդ պահից սկսած,
գովերգում է Քեզ:

Ես տառապում եմ միայնությունից
ու սիրտ կեղեքող
տանջալի տագնապներից,
երբ ժամանակ առ ժամանակ
Դու շրջում ես ինձանից
Քո Սուրբ Դեմքը՝ թողնելով
իմ հոգին միայնակ
Խավար Գիշերում:
Սակայն ես դժվարությամբ
շարունակում եմ առաջ գնալ,
քանի որ Քեզ սիրում եմ
խելագարության աստիճան:

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, Ես հարուցել եմ քեզ,

<u>որպեսզի Իմ Եկեղեցին</u>
<u>Միության հասցնես</u>:

(Հիսուսն ասաց դա շատ հանգիստ):

- Ես հարություն եմ տվել քեզ, որպեսզի մեղմացնես Հոր Արդարությունը:
- Ես հարություն եմ տվել քեզ, որպեսզի զարդարես Իմ Եկեղեցին:
- Ես թույլ եմ տվել, որ մտնես Իմ Ապարանքը՝ Ինձ փառաբանելու համար:
- Ես սիրո խոսքերով հրապուրել եմ քեզ, որպեսզի դու Ինձ սիրես:
- Ես քեզ դուրս եմ բերել Եգիպտոսի երկրից, որ քեզ նետեմ, ինչպես մի ուռկան, որպեսզի Ինձ համար հոգիներ որսաս:

Դու պետք է մեղմացնես Հոր Արդարությունը՝ պաշտելով Ինձ, աղոթելով, ապաշխարանքով, զոհաբերությամբ, ծոմապահությամբ <u>և</u> փոքրանալով: Դու արժանիքներ չունես, սակայն քո խոնարհ աղերսը կարող է հասնել Հորը:

Դու կխմե՞ս հիմա այն նույն Բաժակից, որ Հայրը տվեց Ինձ: Մի՛ վախեցիր, դրա մեջ հիմա շատ բան չի մնացել: Ես թույլ եմ տվել քեզ երբեմն-երբեմն փոքր կումերով խմել դրանից, աղջի՛կս: Ես մեղմորեն ձգում էի քո գլուխը Իմ Բաժակի կողմը, ուստի հիմա ետ մի՛ քաշվիր արհամարհանքով: Սիրի՛ր այն, ինչ Ես եմ սիրում: Մի՛ վախեցիր և <u>երբևէ</u> մի կարծիր, որ Ես պիտի առաջնորդեմ քեզ դեպի Ինձ առանց Իմ Խաչի: Մտահոգվի՛ր այն մասին, ինչի մասին Ես եմ մտահոգվում: Խնդրի՛ր Ինձ բժշկել մյուսներին: Խնդրի՛ր Իմ շնորհները, խնդրի՛ր Իմ օրհնությունները... Խնդրի՛ր Հորը, որ մեղմանա:

Խնդրի՛ր Հորը, որ մեղմանա... Մենք գտնվում ենք կործանարար կրակի եզրին:

Շը՛շշ... Խնդրե՛ք Հորը, որ մեղմանա[1]: Ահա թե ինչու Ես նորից ու նորից հրավիրում եմ ձեզ, որ աղոթեք: Իսկ ինչ վերաբերում է այն չար մեղադրանքներին, որոնք տարածվում են մարդկանց մեջ քո դեմ, մի՛ վախեցիր: Մնա՛ խաղաղության մեջ և տեղի մի՛ տուր տխրությանը: Ես կանչել եմ քեզ, որ վերակենդանացնես Իմ Եկեղեցին, և Ես քեզ հուսախաբ չեմ անի: Աշտապես աղոթի՛ր: Համբերատա՛ր եղիր մինչև վերջ: Իմ Օրը շատ մոտ է, և Ես գալու եմ, ինչպես գողը՝ գիշերով: Սա է պատճառը, զավա՛կս, որ Սատանան գազանի[2] հետ միասին անդադար հարձակվում է բոլոր նրանց վրա, ովքեր գալիս են Ինձանից, և պատերազմ է մղում Իմ խոնարհների դեմ: Սակայն վերջում նրանք[3] պիտի պարտվեն: Դևը կատաղորեն հարձակվել է քեզ վրա գազանի հետ միասին, սակայն Սերը պիտի հաղթի չարին:

- <u>Կանաչանիմնէ</u>: Գազանը[4] կարող է ահարկու ձայներ արձակել, որպեսզի խլացնի Իմ Ձայնն այս երկրում, քանզի նա գիտի, որ նրանք այն ժողովուրդն են, որոնց Իմ Սուրբ Սիրտը սիրում է: Բայց Ես՝ Տերը, <u>կմնամ այդտեղ</u>, և Ես ասում եմ քեզ, որ այդ ազգի մեջ թափառող բոլոր չար ոգիները արդեն վախենում են Իմ Ոտնաձայնից և Իմ Սուրբ Սրտի ձայնից: Իմ Սուրբ Հոգին չի խուսափի գազանից, ոչ էլ նրանցից, որոնց նա համոզել է:

---

[1] Հիսուսն այս բառերն ասաց շատ մեղմորեն՝ մեծ հույսեր տալով Ինձ:
[2] Մասոնականության (տես Հայտ. 13):
[3] Սատանան և գազանը:
[4] Մասոնականությունը:

Ես հիմա նույնիսկ ավելի պիտի ծավալեմ Իմ շնորհները, «քանզի ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանները, ոչ մի բան, որ գոյություն ունի, ո՛չ գալիք բաները և ո՛չ զորությունները, ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն և ոչ մի ուրիշ արարած չեն կարող բաժանել մեզ Աստծու Սիրուց»[1]: Ոչ ոք չի կարողանա կանգնեցնել Իմ Սուրբ Հոգու հեղումը:

Ես ուղարկում եմ քեզ նրանց մոտ[2], որ հիշեցնես բոլորին Իմ Սիրո մեծության մասին: Ես քեզ բավականաչափ միջոցներ կտամ, որ ամուր մնաս: Սերը քեզ հետ է:

ΙΧΘΥΣ

Մարտի 27, 1992

(Պատգամ՝ միության կոչ):

Իմ Վասո՛ւլա, գրի՛ր:

Սիրելի՛ բարեկամներ, սիրելի՛ ընկերներ, սիրելի եղբայրնե՛ր, չկա այնպիսի սեր, ինչպիսին Իմն է: Բայց դուք ի՞նչ արեցիք Իմ Սիրո հետ: Իմ եղբայրնե՛ր, միավորվե՛ք՝ հետևելով Իմ Սրտի օրենքներին, որոնք են Սերն ու Խոնարհությունը: Այն բաները, որոնք դուք մտածում եք միավորել, երկրային բաներ են, և դրանք ձեզ չեն հասցնի միասնության: Դրանք չեն կարող ոչինչ անել և ոչինչ առաջարկել: Սակայն ձեզանից շատերը դարձել են ձեր մտքերի ստրուկները: Այնքան ժամանակ, քանի դեռ դուք չեք հաշտվել խոնարհությամբ մեկդ մյուսի հետ և չեք սիրել մեկդ մյուսին, ինչպես Ես եմ ձեզ սիրում, դուք կմնաք բաժանված: Զավակնե՛րս, մի՞թե Ես նորից պետք է ցավ կրեմ այս Զատկի շրջանում[3]:

Ձեզանից շատերը տեսել են համբերին խոսելիս, կաղերին քայլելիս և կույրերին տեսնելիս, բայց դուք տակավին շարունակում եք Ինձ փառաբանել միայն շուրթերով: Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչպես մեկ անգամ արդեն ասել եմ. «Ով որ Սուրբ Հոգուն հայհոյի, նրան չպիտի ներվի»[4]: Հալածելով Իմ Սուրբ Հոգուն՝ դուք կարծրացնում եք ձեր սրտերը, և եթե ձեր սրտերը կարծրացած են մեղքի գայթակղությամբ, դուք չեք տեսնի այն, ինչ որ էար[5]: Դրանով դուք ձեզ կդատապարտեք ու կդատվեք առանց ողորմության, քանի որ դուք ողորմած չեք եղել:

Ես վերևից նայում եմ ձեզ բոլորիդ, ձեզանից յուրաքանչյուրին: Ես ասում եմ ձեզ. նա, ով շարունակում է աշխատել իր սեփական շահերի համար և իր սեփական փառքի համար, արդեն կորցրել է Իմ Սիրտը: Նրանց[6] համոզմունքները Իմ համոզմունքները չեն, քանզի իրենց մտածողությամբ նրանք նույնն են, ինչ որ Սատանան է: Մրցակցությունն

[1] Հռոմ. 8:38-39
[2] Այսինքն՝ կանադացիների:
[3] Այն բանի համար, որ Զատկի տոնակատարությունները տարբեր օրեր են:
[4] Ղուկ. 12:10
[5] Որևէ մեկը չի կարող այս վիճակում ճանաչել իր էությունը և չի կարող ԶՂՋԱԼ՝ ներման արժանանալու համար:
[6] Հիսուս խոսում է ինձ հետ այս մարդկաց մասին:

ու պայքարը երկրային իշխանության համար կլանում է նրանց մտքերը: Եսասիրությունն ու հպարտությունն արդեն դատապարտել են նրանց: Բոլոր այս երկրային բաների գործադրումները նրանց կործանման կհասցնեն: Ես հազվադեպ եմ լսում նրանց աղոթքները: Այսօր դուք շրջապատված եք կեղծ ուսուցիչներով[1], ովքեր հրապարակայնորեն և առանց վախի կանգնած են Իմ առջև և հռչակում են Սատանայի գիտությունը, որը հիմնված է ստի վրա: Նրանք ժխտում են Իմ Աստվածությունը՝ ժխտելով Իմ Հարությունը[2]: Աղոթե՛ք այս կեղծ ուսուցիչների համար, որ նրանք կարողանան խուսափել հավիտենական տանջանքներից: Եվ Ես ձեզանից յուրաքանչյուրին ասում եմ հիմա.

«Ով ասում է,
թե ինքը լույսի մեջ է,
բայց ատում է իր եղբորը,
սուտ է,
և խավարի մեջ է տակավին»[3]:

Նա, ով հավատում է, որ իր խավար այդ վիճակում փառաբանում է Ինձ, հավատում է նրան, ով առաջինը դայթակղեցրեց ձեր ծնողներին[4]:

- Ես ձեզ նշաններ եմ տալիս, սակայն դուք չեք հավատում Իմ նշաններին, քանզի ձեր ձայները խլացնում են Իմ ձայնը, որ խոսում է Իմ խոսափողերի միջոցով: Շուտով գիշերը կիջնի ձեզ վրա, և շատերը կհամտեսեն մահը, քանզի դուք երբեք հիմնավորված չեք եղել ճշմարտության մեջ, այլ հիմնվել եք ստերի վրա: Ես գալիս եմ ձեզ մոտ այս նշանների միջոցով, որպեսզի բացեմ ձեր աչքերը և բժշկեմ ձեզ: Բայց և այնպես, երբ Ես ասում եմ ձեզ ճշմարտությունը և այն, որ այդ Ես եմ՝ Նա, որի մասին դուք ասում եք. «Նա ձեր Տերն է», որ խոսում է ձեզ հետ, դուք շրջվում եք՝ ականջ դնելով Սատանային, որպեսզի նա կարողանա օգտագործել ձեզ:

Ո՛չ, դուք չեք հասկանում Իմ Լեզուն: Դուք հասկանում եք այն ոչ ավելի, քան Իմ հրաչքները, քանզի դուք դերադասել եք դևին: Ինչ էլ որ Ես ասում եմ կամ խնդրում, չի թափանցում ձեր մեջ, քանզի դուք կորցրել եք Իմ Հոգու լեզվի զգացողությունը:

Ես ծարավի եմ ձեր փրկությանը, Ես ծարավի եմ կիսելու Իմ Թագավորությունը ձեզ հետ: Ես ծարավի եմ այն բանին, որ դուք հաշտվեք իրար հետ այնպես, որ կարողանաք իրապես ասել. ես հաշտված եմ Աստծո հետ: Ձեր բաժանումը մեղք է, և ոչ ոք չի կարող պնդել, որ ինքը արդար է, երբ իր շուրթերով նա վարկաբեկում է ոչ միայն իր եղբայրներին, այլև նրան, <u>ով բոլորիառաջնորդն է</u>[5]:

Արդարադատություն, ողորմություն, հաստատուն և խորը հավատ. ահա սրանք են, որ դուք պիտի գործադրեիք կյանքում՝ առանց անտեսելու Իմ Օրենքի մյուս կողմերը: Իսկ ձեզ՝ ձեզ, որ հաճույք եք ստանում ձեր

[1] արդիապաշտներով, մոդեռնիստներով
[2] Սա է պատճառը նաև, որ Սուրբ Վարշամակը նրանց այդքան անհանգստացնում է:
[3] Ա. Հովհ. 2:9
[4] Ադամին և Եվային
[5] Պապին:

բաժանմամբ և երդվում եք Իմ Գահով ու Ինձանով, Ե՛ս, որ նստած եմ դրա վրա, ասում եմ ձեզ, ինչպես մի անգամ արդեն ասել եմ.

«Դուք նման եք սպիտակեցրած շիրիմների, որոնք գեղեցիկ են թվում արտաքինից, բայց ներսից լիքն են մեռած մարդկանց ոսկորներով և ամեն տեսակ ապականությամբ»:

Ինչպե՞ս կարող եք <u>հավատալ</u>, որ կարող եք խուսափել դատապարտությունից: Դուք չեք գոհացնում Ինձ, և ձեր դիակները աղտոտում են այս անապատը, որտեղ դուք ապրում եք: Ձեր բաժանմամբ, մեղանչելով մեկդ մյուսի դեմ, այդ Իմ դեմ է՝ Գառան դեմ, որ մեղանչում եք: Ձեր բաժանման այս մեղքը ամեն օր դաժանաբար սպանում է Իմ Մարմինը: Այդ Ես եմ՝

Գառը,

ում դուք բռնությամբ և ձեր սեփական օրենքով տանում եք կրկին խաչելու: Այդ Իմ Մարմինն է, որ դուք խեղում ու ջարդում եք:

<u>Ես Զոհն եմ</u>:

Ինչպե՞ս կարող եք չտեսնել: Մի՞թե դուք չեք տեսնում, որ հաղորդակցվում եք դևերի հետ: Մի՞թե չեք տեսնում, թե ում հետ եք սեղան նստել: Ես ինչպե՞ս կարող եմ ուրախանալ, երբ ձեզ տեսնում եմ սեղան նստած դևերի հետ: Այնքան ժամանակ, քանի դեռ դուք հաճույք եք ստանում ձեր բաժանումից, դուք Սատանայի իշխանության տակ եք, որը անդադար ստով է օծում նրանց, ովքեր հաճույք են ստանում իրենց բաժանումից: Ձեզանից յուրաքանչյուրը նայում է մյուսին՝ միության այս պատգամների համար հավանություն փնտրելով, և մտահոգված չէ, որ այս Ջատկին Իմ Մարմինը կրկին պիտի անցնի տանջալի ցավերի միջով՝ ձեր բաժանման <u>պատճառով</u>[1]: Հավատացե՛ք, որ Ես Նա եմ, մի՛ եղեք ձեր մտքի ստրուկները: Եկե՛ք Ինձ մոտ, քանի դեռ երկարում է օրը. չուտով գիշերը կպարուրի այս աշխարհը: Ես խնդրեցի, որ տեսնեմ ձեզ[2] ու խոսեմ ձեզ հետ, և այդպես էլ արեցի: Քանզի ձեզ միավորելու համար էր, որ Ես հրահրեցի ձեզ Միության Իմ Պատգամներով:

Սակայն որքան դժվար է նրանց համար, ովքեր իրենց մտքի ստրուկներն են՝ մուտք գործել Իմաստության Խորհուրդների մեջ: Որքան դժվար է հոգով հարուստներին մուտք գործել Իմ Թագավորության մեջ: Ես ասում եմ ձեզ.

Շատերը, որ առաջինն են,
պիտի լինեն վերջինը,
իսկ վերջինները՝ առաջինը:

[1] Քրիստոսը տառապում է խորհրդավոր կերպով:
[2] Բոլոր նրանց, ովքեր ինձ հրավիրել են, որ հաղորդեմ միության այս պատգամները և խոսեմ իրենց հետ ժնևում՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում:

Զավա՛կս, եղիր Իմ Երկինքը՝ ինքդ քեզ Ինձ նվիրելով: Ես քեզ հետ եմ:

ΙΧΘΥΣ

Մարտի 30, 1992

Ամբողջ օրը ես փափագում եմ Քեզ,
Աստվա՛ծ իմ:
Ամբողջ օրը ես նվաղում եմ
Քո հանդեպ ունեցած սիրուց՝
Քո Քնքշության ու Քո Անսահման
Ողորմածության պատճառով,
Աստվա՛ծ իմ: Քո Սերը,
որ ցույց տվիր ինձ,
ստիպում է հոգուս,
ավելի քան երբևէ, կանչել Քեզ,
որ փրկես ինձ:
Ես տենչում եմ այն Տունը,
որտեղ Դու ապրում ես,
ես տենչում եմ
Քո Սրբազան Ապարանքը:
Ուրեմն, ասա՛ ինձ,
Իմ Տե՛ր և Աստվա՛ծ,
ես ի՞նչ կարող եմ ակնկալել:
Դու վերստին հաշվի կառնե՞ս
իմ թուլությունը:
Ա՜հ, ազատի՛ր ինձ
իմ բոլոր մեղքերից
և կրկին նայի՛ր ինձ վրա:
Իմ բոլոր հույսերը Քեզ վրա են,
Աստվա՛ծ իմ: Ամեն:

Ա՜հ, Իմ Վասո՛ւլա, եղի՛ր Իմ սփոփիչ գործիքը: Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: Մի՛ վախեցիր, զավա՛կս, Ես Ամենահավատարիմն եմ ու քո կողքին եմ:

Զավա՛կս, հանուն Իմ Սիրո Ես փորձեցի քո հավատը և Ինձ փառավորված զգացի: Ես օտար չեմ քեզ համար, ուստի թո՛ւյլ տուր Ինձ մեկ անգամ ևս քեզ տանել Իմ Վերքերի մեջ: Մի՛ վախեցիր, Ես ցույց կտամ Իմ փառքը քո միջոցով, և մարդիկ կիմանան, թե ինչպես եմ Ես տառապել:

Արի՛, մոտեցի՛ր Ինձ, Իմ Սիրո Կրակը բոցավառվում է Իմ Սուրբ Սրտից, և եթե դու թույլ տաս Ինձ, Ես կայցելեմ քեզ այս ձևով և քեզ մի պայծառ ջահ կդարձնեմ: Դու կոչված ես Ինձ պատվելու և հոգիներ առաջնորդելու դեպի Ինձ, որպեսզի Ես կարողանամ կլանել նրանց: Ես նրանց Լույսի անոթներ կդարձնեմ, շողշողուն կրակներ, որոնք երբեք չեն մարում, երբեք չեն աղոտանում, և որոնց երբեք չեն կարող հանգցնել: Ա՜հ, փոքրի՛կս, Իմ Սրտի ամեն մի լարը կոչ է անում

Սիրո, Խաղաղության և Միության համար:

Ես ձեր Սուրբ Ուղեկիցն եմ, արարչությո՛ւն, ձեր Ամենահավատարիմ Բարեկամը, Ես գիշեր-ցերեկ հրավիրում եմ ձեզ Իմ սեղանի մոտ: Ես անդադար խնդրում եմ ձեր բարեկամությունը, որ փրկեմ ձեզ... Իմ Հայրը Կրակ է վերապահել այս սերնդի մեղքերի համար, և ինչպես մի փոթորիկ, այն հանկարծակի պիտի դա ձեզ վրա: Մարդիկ ասում են. «Մենք խաղաղություն կունենանք», անդամ երբ նրանց սրտերը Իմ և երկնքի զորությունների դեմ պատերազմի են տրամադրված: Ես պիտի դամ պոռթկացող քամու նման, որպեսզի դատավճիռ հայտարարեմ այս անաստված սերնդին: Ինչպես մի փոթորիկ, Ես պիտի փչեմ ձեզ վրա ու ցաքուցրիվ անեմ հարդի նման:

Տե՛ր, իսկ ի՞նչ կլինի նրանց հետ, ովքեր սիրում են Քեզ: Ի՞նչ կպատահի Քո զոհաբերվող հոգիների հետ: Անկասկած կլինեն մի քանիսը, որ կսիրեն Քեզ: Կան մի քանիսը, իմ Թագավոր, որոնք չեն լքել Քեզ՝ կեղծ աստվածներին կամ գազանին ծառայելու համար:

Դի՛ր նրանց կշեռքի նժարի վրա... և տե՛ս, թե երկուսից որն է ավելի ծանր: Մինչև օրս շատերը ո՛չ վախ են զգում և ո՛չ էլ զղջում են: Ես ուզում եմ ձեզ բոլորիդ տալ Իմ Ողորմությունը նախքան Իմ Արդարադատությունը, և Ես ուզում եմ յուրաքանչյուրին տալ մի սիրտ՝ համակված Սիրո հոգով, բայց Ես ավելի շատ զոհաբերվող հոգիների կարիք ունեմ: Ես զոհաբերվող սիրո կարիք ունեմ: Քանի՞սն են պատրաստ զոհաբերվելու: Քանի՞սն են պատրաստ իրենց մատուցել Ինձ, որպեսզի նրանց դարձնեմ խաչելություններ: Արդյոք որևէ մեկը ականջ կդնի՞ Իմ աղերսներին: Քանի՞սն են ցանկանում դառնալ խաղաղարարներ և սերմեր ցանել, որոնք պտուղ կտան սրբության մեջ: Ո՞վ կարող է անաղարտ մնալ այս աշխարհում մինչև Իմ վերադարձը: Ո՞վ կշտապի լսել:

Ես բարի եմ ու չափազանց կարեկցող, սակայն շատ քչերն են ցանկանում միացած լինել Ինձ հետ: Ո՞վ կհրաժարվի իր շարժառիթներից՝ հանուն Իմ Շարժառիթների: Ո՞վ կհրաժարվի իր շահերից՝ Իմ Շահերի համար: Ո՞վ կփնտրի այն, ինչ որ ամենաքիչն է փնտրված այս աշխարհում, և կկրի Այն սիրով՝

- Իմ Խաչը: -

Եվ ո՞վ է պատրաստ փնտրելու այն, ինչը որ ամենից քիչ է փնտրված ձեր մեջ. ո՞վ կփնտրի Սերը:

Արի՛, աղոթի՛ր աշխարհի դարձի համար:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 9, 1992

(Արիզոնա)

Տե՛ր:

Ես եմ: Ես քեզ տալիս եմ Իմ Խաղաղությունը: Օրհնի՛ր Ինձ:

Ես օրհնում եմ Քեզ, իմ Թագավո՛ր:

Եթե մեկը որևէ պատգամ խնդրի Իմ կողմից, ասա՛ նրանց, որ Ես արդեն հեղել եմ Իմ Սիրտն իրենց վրա: Հետևաբար, Ես խոսել եմ նրանց հետ քո միջոցով[1]: Ես հեղել եմ նրանց վրա Իմ Սուրբ Արտի Գանձերը: Սա է Իմ Պատգամը՝ ուղղված բոլորին:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 10, 1992

(Արիզոնա)

(Մշտնջենական Օգնության մեր Տիրուհու եկեղեցում):

Ասա՛ Իմ զավակներին. պտուղ տվեք սրբության մեջ: Ես տվել եմ ձեզ Իմ Սիրտը: Ի՞նչ եք անելու Նրա հետ:

Վասո՛ւլա, հիշի՛ր Իմ Ներկայությունը: Իմ Ներկայությունն Ուրախություն է, Խաղաղություն, Սեր և Սրբություն:

Ապրիլի 17, 1992

Քանի դեռ Քո Շունչը
փչում ես ինձ վրա,
Դու ինձ անընդհատ կնորոգես
և կանգուն կպահես:
Շնչի՛ր ինձ վրա,
որպեսզի չմեռնեմ, Տե՛ր:
Լցրո՛ւ իմ հոգին Քո Լույսով,
Յահվե՛, իմ Աստվա՛ծ՝
զգեստավորված մեծաշուք Փառքով,
օրհնյալ լինես: Ամեն:

Եղի՛ր Խաղաղության մեջ: Թո՛ւյլ տուր, որ առաջնորդեմ քեզ այնպես, ինչպես ուզում եմ: Ես հավիտյան սիրում եմ քեզ: Երբեք մի՛ կասկածիր Իմ Սիրուն:

Արի՛, զավա՛կս, միասին դու և Ես, միասին՝ Ինձ հետ միացած, միասին՝ կապված Իմ Խաչին, շատ հոգիներ կվերադարձնենք ետ՝ դեպի Ինձ: Արա՛, ինչքան որ կարող ես, իսկ Ես էլ կանեմ մնացյալը:

Թո՛ւյլ տուր մինչև վերջ օգտագործել քեզ Իմ Փառքի համար:

[1] Այսինքն՝ այս ողջ հայտնության միջոցով:

Ուրախացրո՛ւ Իմ Սուրբ Սիրտը և մնա՛ ոչնչություն: Թող քո սիրտը լինի Իմ Երկինքը: Ես պիտի շարունակեմ մատակարարել քո հոգուն: Հաճախ գովերգի՛ր Ինձ և սիրի՛ր Ինձ: Սիրի՛ր քո Տիրոջ այս Սիրտը, սիրի՛ր քո Ուսուցչի այս բզկտված Սիրտը: Ցանկացի՛ր Ինձ ու ծարավի՛ր Ինձ՝ քո Արքային: Արհամարհի՛ր ինքդ քեզ, որպեսզի մնաս Իմ Սիրո մեջ, և դու չես խաբվի: Մի՛ նայիր ո՛չ ձախ, ո՛չ աջ: Եվ այդ ժամանակ Ես ավելի մեծ գործեր պիտի անեմ քո միջոցով:

Ժամանակ առ ժամանակ քո չորացած ճյուղերը կտրատվում են, սակայն Ես նկատել եմ, որ դա դուր չի գալիս քո թույլ էությանը: Ամեն ինչ, որ Ես անում եմ, արվում է իմաստությամբ հենց իր՝ Իմաստության կողմից: Ուրեմն, Իմ Վասո՛ւլա, թո՛ւյլ տուր Ինձ, որ երբեմն-երբեմն կտրեմ քո չորացած ճյուղերը: Հավատա՛ Ինձ. դա անհրաժեշտ է քո աճի համար: Ես ընտրել եմ քեզ այս առաքելության համար, որ գնաս ազգերի մեջ ու պտուղ տաս: Ես գիտեմ՝ որքան փխրուն ես դու, և Սատանան որքան կուզեներ քեզ տեսնել երկրի երեսից վերացած, բայց Ես քո կողքին եմ: Ուրեմն երբեք մի՛ դանդատվիր, այլ ընդունի՛ր քո բոլոր փորձությունները շնորհալիությամբ, սիրով ու մեծ խոնարհությամբ: Դևը կզինաթափվի և կփախչի այս առաքինություններից: Երբեք հենակետ մի՛ տուր դևին:

Ոչ ոք դեռևս չի ընկալել Իմ Սիրո լայնությունն ու երկարությունը, բարձրությունն ու խորությունը: Ես ուզում եմ, որ դու ամբողջապես Իմը լինես, միայն Իմը: Ես սա նորից ու նորից ասում եմ քեզ՝ սկսած հենց սկզբից, երբ Ես կանչեցի քեզ: Ես պսակվել եմ քեզ հետ Իմ փառավորման համար, որպեսզի դու աշխատես Ինձ հետ միասին: Քո միտքը հիմա պետք է ուղղված լինի Ինձ և միայն Ինձ:

Անընդհատ աղոթի՛ր խնդրելով Ինձանից այն ամենը, ինչի կարիքը ունես: Հնազա՛նդ եղիր Սիրո ցանկություններին, որպեսզի բոլորը տեսնեն, որ դու Իմ աշակերտն ես: Ես քեզ Ինձ մոտ վերցրի, որպեսզի դու ապրես սուրբը կյանքով Իմ Լույսի ներքո: Հիշի՛ր, որ դու միայն մեկ Ուսուցիչ ունես, և այդ Ես եմ: Դու միայն մեկ Հայր ունես, և այդ Ես եմ: Դու միայն մեկ Ամուսին ունես, և այդ Ես եմ: Դու միայն մեկ Սեր ունես, և այդ Ես եմ: Ես սովորեցրել եմ քեզ ապրել Ճշմարտությամբ և Սիրո մեջ, որպեսզի հնարավորություն տամ, որ աճես Իմ մեջ: Կար ժամանակ, երբ դու չգիտեիր Իմ մասին և աշխարհի ու արարածների ստրուկն էիր: Բայց Ես՝ քո Արարիչը, մեկուսացրել եմ քեզ, որպեսզի սիրես Ինձ ամեն ինչից ավելի և բոլորից վեր:

Այսօր Ես հարցնում եմ քեզ. դու երջանի՞կ ես՝ Ինձ հետ լինել այս ձևով:

Ես շատ երջանիկ եմ, Տե՛ր: Դու դա գիտես:

Սատանայի համար դու սարսափի առարկա ես դարձել: Այդ պատճառով դու հիմա տեսնում ու զգում ես նրա կատաղությունը: Որքան ավելի շատացավ քո պտուղը, այնքան ավելի կրակներ նա ստեղծեց՝ ստեր ու կեղծիքներ հավաքելով, որ մեղադրի քեզ: Նա պայքարում է այն հրեշտակի դեմ, որին Ես եմ քեզ տվել: Նա կեղծիքներ է հավաքում քո դեմ: Այդուհանդերձ, հակառակ այս բոլորին, դու դեռևս կամենո՞ւմ ես շարունակել այս Աստվածային Գործն Ինձ հետ:

Ես՝ Քո սիրո ստրուկը,
պիտի ծառայեմ Քո Մեծությանը
և Քո Վեհափառությանը
մինչև վերջ:

Սիրելի՛ս, այդ դեպքում Ես պիտի շարունակեմ առաջնորդել քեզ Սիրո սանձերով, արի՛:

Ապրիլի 18, 1992

Նրա բերանը լեցուն է անեծքով,
նենգությամբ ու դառնությամբ,
իսկ լեզվի տակ
ցավ է ու տառապանք:
Մեծամեծների հետ
դարան է մտնում,
որ գաղտնաբար սպանի անմեղին:[1]

Իմ խե՛ղճ ու թշվա՛ռ գործիք, աճի՛ր Իմ Սիրո մեջ: Ես Նա եմ, ով ընդունում է քեզ՝ որպես Իր զավակի, ուրեմն եղի՛ր Իմ Սիրո մեջ և աճի՛ր Իմ Սիրո մեջ: Դու պիտի մնվես Իմ Հարստությունից, որպեսզի բացահայտես ու փառաբանես Ինձ: Իմ Հոգո՛ւ օրհնյալ, գրի՛ր.

Այնտեղ, որտեղ կան անվստահություն ու բանական մտածողություն, այնտեղ կան նաև վիճաբանություն ու տարաձայնություն: Այս տեսակ մարդիկ մտավորապես ապրում են խավարում և օտարացած են Հոգու Գործերից: Աղջի՛կս, նրանք դեռևս չեն ընկալել Իմ Գեղեցկությունը...

Ես ընտրել եմ քո սիրտը, զավա՛կս, որ այն դառնա Իմ Քարետախտակը, որի վրա Ես պիտի գրեմ Իմ Սիրո Երգը բոլոր զավակներիս: Ես քեզ դարձրել եմ Սիրո մի Օրհներգ: Իմ խոսքերը ոչ միայն տպված են, Իմ խոսքերը քեզ վրա կենդանի են և Հոգի են: Ես քեզ առողջ և ողջամիտ ուսմունք եմ տվել:

Մի՛ անհանգստացիր նրանց համար, ովքեր գալիս են քեզ մոտ անվերջ փաստարկներով՝ ամեն ինչ հարցականի տակ դնելու և բառերի մասին վիճաբանելու մոլությամբ: Այդ մարդիկ որս են Գայթակղիչի համար և թույլ են տալիս Գայթակղիչին՝ հենակետ տալով նրան, որ իրենց գցի փառասիրությունների ծուղակը: Ձեռքերդ դի՛ր այս մարդկանց վրա և օրհնի՛ր նրանց «Հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու»: Դու պիտի պատվես Ինձ ու պիտի փառաբանես Ինձ:

ΙΧΘΥΣ

[1] Սաղմ. 10:8

Ապրիլի 19, 1992

Քաղաքները հառնում են
լոկ մեկ օրհնաբանությամբ,
որ ելնում է Քո Շուրթերից,
ավերված խորանները
վերակառուցվում են
Քո մի ակնթարթային հայացքից,
և մեռյալները կենդանանում են
Քեզանից բխող մի շնչից,
որ գովաբանեն Քո Սուրբ Անունը:
Եվ բոլոր նրանք,
որոնց Դու ծածկեցիր
Քո պայծառ ցողով,
հաշտություն կնքեցին Քեզ հետ:
Բայց ամեն ինչ ավերվում է
չարի շուրթերով:
Մահը չի գովերգում Քեզ,
այդ ապրողներն են,
որոնք փառաբանում են Քեզ
գիշեր ու ցերեկ:

Լա՛վ ասացիր, աղջի՛կս, հաղթանակի պարգևը ձեզ բոլորիդ հետ է[1]: Կրկնապատկի՛ր քո աղոթքները, քո զոհաբերություններն ու ծոմապահությունը: Խի՛ստ վերաբերվիր քո մարմնի բնական ցանկություններին: Խի՛ստ վերաբերվիր քո մարմնին և թույլ մի՛ տուր, որ այն տեղի տա իր կրքերին: Ստիպի՛ր քո մարմնին հնազանդվել քեզ: Անընդհատ աղոթիր Ինձ և քո կատարած բոլոր քայլերում Ինձ մտքումդ պահիր: Ես քո Աստվածն եմ:

Աղոթի՛ր քո եղբայրների ու քույրերի համար, որոնք կեղծ կրոնների[2] են հետևում՝ Իմ կեղծ պատկերին: Դևը կատաղությամբ հարձակվում է ձեր սերնդի վրա: Այս աղանդների մասին մարգարեություններ կան Աստվածաշնչում: Վասո՛ւլա, այս կեղծ կրոնները տարածվել են Իմ Եկեղեցում[3], ինչպես քաղցկեղը մարմնի մեջ: Այս աղանդներն Իմ Մարմնի քաղցկեղն են: Նրանք կարող են վիճել, որ ճշմարիտ իմաստությունը իրենց մոտ է, բայց Սատանան փորձում է, եթե հնարավոր է, խաբել ամբողջ աշխարհին, նույնիսկ ընտրյալներին:

Աշխարհը, համառորեն մերժելով զղջալ, մոլորվել է ու ընկել սխալների մեջ: Ձեր սերունդը գիտեր Ինձ, սակայն մերժեց ճանաչել Ինձ: Նա գերադասեց իր խավար մտքով հետևել Սատանայի ուսմունքներին: Ես առաջարկեցի Իմ Խաղաղությունը, բայց աշխարհը մերժեց Իմ Խաղաղությունը: Դրա փոխարեն, աշխարհը Իմ Փառքը Ստով փոխարինեց: Նա Իմ Հավիտենական Զոհաբերությունը փոխարինեց ավերածին պղծությամբ

[1] Այսինքն՝ հաղթանակը մեզանից է կախված:
[2] Այնպիսի աղանդներ, ինչպիսիք են ԵՀովայի վկաները, Նոր Դարաշրջանը, Մունիտները և այլն:
[3] Մենք բոլորս Տիրոջ Եկեղեցիներն ենք:

ապստամբության ոգով,

որը տրվել էր Ապստամբի կողմից:

Աշխարհն Իմ Աստվածությունը փոխարինել է մի անարժեք նմանակումով՝ մի մահկանացուով: Հանուն ստի Նա հրաժարվել է Աստվածային Ճշմարտությունից: Սակայն ասվել է[1], որ Ժամանակների վերջում Սատանան գործի պիտի անցնի, և որ ամեն տեսակ հրաշքներ պիտի լինեն և շատ խաբուսիկ նշաններ[2], նախանշաններ և ամեն տեսակ չարիք, որոնք կարող են խաբել նրանց, ովքեր գնում են դեպի կործանում, քանզի նրանք չհասկացան և չյուրացրին Ճշմարտության Սերը,որը կարող էր փրկել նրանց:

Սա է պատճառը, որ ես ուղարկում եմ մի ուժ, որ մոլորեցնի նրանց և ստիպի նրանց հավատալ ստին, (և դա անում եմ), որ դատապարտեմ բոլոր նրանց, ովքեր չհավատացին ճշմարտությանը և փոխարենը չարը ընտրեցին: Ապստամբի[3] զորությունն այնպիսին է, որ նա հիմա առանց վախի և բացեիբաց հայտնվել է բոլորին: Սա նա է, որի մասին Եզեկիել[4] մարգարեն է խոսել, նա, ով փքվել է հպարտությունից, նա, ով հավակնում է Աստված լինել, նա,ով կապկում է Ճշմարտությունը, նա, ով իրեն Ինձ հավասար է համարում և ասում է, որ նստած է Իմ Գահին: Ապստամբը, անշուշտ, Իմ Եկեղեցու Թշնամին է՝ Նեռը (Հակաքրիստոսը)՝ նա, ով ուրանում է Սուրբ Երրորդությունը:

Մի՞թե չեք կարդացել. «Նա, ով ուրանում է, թե Հիսուս Քրիստոսն է, ստախոս է: Նա Հակաքրիստոսն է, և նա ուրանում է Հորը, ինչպես նաև Որդուն: Որովհետև, ո՛չ մեկը, որ հավատում է Հորը, չի կարող ուրանալ Որդուն: Իսկ ով ընդունում է Որդուն, նա իր մեջ ունի նաև Հորը»[5]:

Սատանայի այս ուսմունքները սովորեցնում են ձեզ հավատալ վերամարմնավորմանը, մինչդեռ վերամարմնավորում գոյություն չունի: Նրանք պահում են կրոնի արտաքին տեսքը, սակայն մերժում են դրա ներքին զորությունը՝ Սուրբ Հոգին և Սուրբ Հաղորդությունը, զավա՛կս: Սատանան ծպտված է, որպես լուսեղեն մի հրեշտակ, որ շատերին խաբի, և Ապստամբի[6] հետ միասին նա մեծ պատիվներ պիտի պարգևի նրանց, ովքեր կճանաչեն իրեն՝ նրանց տալով մեծ իշխանություն, և նրանց բաժանելով երկիրը մի որոշակի գնով[7]:

Բայց ես ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շուտով երկինքը պիտի բացվի, և Իմ Կրակը պիտի թափվի նրանց վրա ու պիտի կլանի նրանց:

Հավատարիմն ու Ճշմարիտը
Ես եմ,
Դատավորն ու Արդարությունը

---

[1] 2 Թես. 2:9-12
[2] Սատանան, կապկելով Աստծուն, կարող է անգամ խարաններ տալ, ինչպես նա տվել է Նոր Դար աղանդին պատկանող մի անձի:
[3] Մասոնությունը:
[4] Եզեկ. 28:1-5
[5] Ա. Հովհ. 2:22-23
[6] Ֆրանկմասոնությունը:
[7] Դան. 11:39

Ես եմ, Աստծո Խոսքը
Ես եմ,
Արքայից Արքան և Տերերի Տերը
Ես եմ,

և ես կրկնում եմ ձեզ Իմ Խոստումը.
Արդարև, ես շուտով ձեզ հետ պիտի լինեմ:

Ապրիլի 20, 1992

Յա՜հվե, ես Քո ստրուկն եմ,
և ես այսօր կրկին
առաջարկում եմ Քեզ իմ կամքը,
որ Դու կարողանաս
անել ինձ հետ այն,
ինչ Սիրտդ կամենում է:
Ինչպիսի՜ վայելք է լինել
Քո Ներկայության մեջ
և կարողանալ քայլել
Քո Վեհափառության հետ:
Ինչպե՞ս կարող եմ
փոխհատուցել Քեզ
այն բոլոր օրհնությունների համար,
որոնք Դու հեղել ես ինձ վրա:
Բավական է միայն,
որ բարձրացնեմ աչքերս
դեպի Երկինք,
և Դու խոնարհվում ես ինձ լսելու:
Եվ երբ ես կանչում եմ Քո Անունը,
Քո Վեհափառությունը
իջնում է Քո Գահից,
որպեսզի Դու,
որ Տերն ես Երկնքի ու երկրի,
լինես ինձ հետ իմ սենյակում
և ընկերակցես ինձ:

Ես գալիս եմ քեզ մոտ: Թշվառությունը գրավում է Ինձ, աղքատությունը հրապուրում է Ինձ: Ուստի ինքդ քեզ մի՛ հոգնեցրու հարստանալու համար: Ինձ՝ քո Աստծուն, որպես կնիք դրոշմի՛ր քո սրտին, և Ես, սիրելի՛ս, պիտի շարունակեմ ցույց տալ Իմ քաղցրությունը քո հանդեպ:

Իմ Աստվածը բարի է իմ հանդեպ,
մի ամրոց, երբ ես ճնշված
ու զրպարտված եմ,
մի ամրոց՝ դժվարին ժամանակներում:
Իմ Աստվածը ինձ

պաշտպանող Վահանն է:
Սատանան կարող է սրել իր սուրը
կամ լարել իր աղեղը
և նշան բռնել ինձ,
բայց Իմ Աստվածը, Իմ Աբբան,
որն այնքան քնքուշ է,
ներկա կլինի և կստիպի,
որ դևը փախչի:

Թող քո սերն Իմ հանդեպ լինի անսահման: Ես Երկնքից ցած եմ նայում ձեզ բոլորիդ, որ տեսնեմ, թե արդյոք գոնե մեկը փնտրո՞ւմ է Ինձ առանց սեփական շահի: Ի՜նչ հաճույք և ի՜նչ ուրախություն եմ ստանում ամեն անգամ, երբ լսում եմ, որ գովերգում են Իմ Անունը: Սակայն շատերը շրջվել են, շատերը ապականվել են մեղքով: Թող Իմ Սիրտն ուրախանա թշվառության մեջ, թող Իմ Սիրտն ուրախանա անշահախնդիր սիրով: Աղջի՛կս, տո՛ւր Ինձ, ինչպես Ես եմ քեզ տվել: Դատարկաձեռն մի՛ հայտնվիր Իմ առաջ:

Իմ շնորհները Քոնն են, իրականում բոլոր այն շնորհները, որ տրվել են ինձ, Քոնն <u>են</u>:

Ինձ զոհաբերությունն՝ մատուցիր: Առատաձե՛ռն եղիր: Մի՞թե Ես առատաձեռն չեմ եղել քո հանդեպ: Տո՛ւր Ինձ հիմա, ինչպես Ես եմ քեզ տվել: Ինձ զոհաբերությունն՝ մատուցիր՝ Իմ Արդարությունը[1] մեղմացնելու համար: Կառուցի՛ր այն, ինչ Ես տվել եմ, որ կառուցես[2]:

Օ՜, Վասո՛ւլա: Տո՛ւր Ինձ ամեն ինչ, որ հագեցնես ծարավս: Հավատա՛ Ինձ և Իմ Սիրո Օրհներգը <u>տուր</u> նրանց, ովքեր սպասում են Իմ Խոսքին: <u>Տո՛ւր</u>, որպեսզի երկրի բոլոր բնակիչները լսեն Իմ Գթառատ Կանչը[3]: Ես չեմ կարող անտեսել Իմ զավակների աղերսը:

Տե՛ր, ես աղաչում եմ Քեզ առաջնորդել իմ քայլերը Ճշմարտության և Լույսի մեջ:

Ուրեմն, դու պիտի շարունակես քո ծառայությունը Իմ առաջ, և Ես պիտի բացեմ քո բերանը, որ լցնեմ այն Իմ Խոսքերով՝ Ինձ փառաբանելու համար: Եվ քո միջոցով Ես պիտի ստեղծեմ Իմ տեսանելի Պատկերը: Ես կդիպչեմ Իմ ժողովրդի սրտին, և նույնիսկ նրանք, ովքեր երբևէ չեն ճանաչել Ինձ, պիտի օրհնեն Ինձ: Արհամարհի՛ր ինքդ քեզ, և Ես չեմ մերժի քեզ:

Ես՝ Յահվեն, կփրկեմ քեզ:

[1] Ես տատանվում էի: Ես ճշգրիտ չգիտեի, թե Աստված ինչ նկատի ուներ:
[2] Ես դեռևս չէի հասկանում:
[3] Ես վերջապես հասկացա, որ ես պետք է շարունակեմ ավելի, քան երբևէ վկայել և հայտնի դարձնել Աստծո Պատգամը:

(Ավելի ուշ)

Վերադարձի՛ր մեզ մոտ
և ապրի՛ր մեր սրտի խորքում:
Թող մեր սիրտը կոչվի
Հավատարիմ Քաղաք
և Քո Սուրբ Լեռը:

Փոքրի՛կս, ես տալիս եմ Քեզ Իմ Խաղաղությունը;

Ձեր Սուրբ Մոր տված խորհուրդներն ու աղերսները [1], Իմ չարչարանքներն ու աղաղակները՝ Իմ Սուրբ Խաչից ուղղված աշխարհին, մնացին անպատասխան: Մենք եկել ենք՝ ձեզ բոլորիդ Մեր Խաղաղությունը տալու և ձեզ պատրաստելու դեպի երկինք ուղևորության համար, բայց Սերը պախարակվել է ու հանդիմանվել, իսկ Խաղաղությունը դավաճանաբարձոխարինվել է մահաբերով և չարությամբ:

Ես արեցի հնարավոր ամեն բան՝ փորձելով միջոցներ գտնել ձեզ արթնացնելու ձեր հավիտենական թմբիրից և վերադարձնե՜լու ձեզ դեպի Ինձ, որպեսզի սրբորեն ապրեք, սակայն ձեզանից ոչ մի ձայն չլսեցի: Ավելին ի՞նչ կարող էի անել, որ չեմ արել: Բարեկամնե՛րս, դուք լրջորեն չեք վերաբերվել Մեր Կանչերին: Ես ցած իջա Իմ Սիրտն առաջարկելու ձեզ: Ես ձեզ դրոշմեցի Իմ Սրտում: Ես գրեցի Իմ Սիրո Օրհներգը ձեզ բոլորիդ համար:

~ Ես այցելեցի ձեզ: ~

Իմ Աչքերից Արցունքներ են հորդում, և Մեր Երկու Սրտերը բզկտվում են, քանզի դուք հաստատակամ չգտնվեցիք Սրբության Ճանապարհին: Աշխարհը ծաղրի ենթարկեց Մեր Ողորմած Կանչերը, և ոչ ոք իրականում չլսեց:

Ես ձեր Աստվածն եմ ու ձեր Վահանը՝ լի Գթությամբ, և արագ միջամտում եմ նեղությունների ժամանակ, բայց դուք գերադասեցիք քայլել խավարի ստվերներում և մահվան հովտում: Իմ բարությունը հատուցվեց չարությամբ՝ մեղադրելով Ինձ, որ փորձում եմ ձեզ փրկել...

Ձեզ ուղղված Իմ Սիրո Օրհներգը [2] անվերջ ծաղրվում է, անարգվում, պախարակվում ու հայհոյվում, քանզի ձեր հոգում խավարի հոգին է տիրում: Դուք հունձք եք անում Խաբեբայի դաշտում, որպեսզի ցույց տաք աշխարհին, որ Իմ Սուրբ Խոսքերը ամոթալի են ու անհիմն [3], բայց այդ դեպքում էլ [4] դուք իզուր կվատնեք ձեր շունչը, երբ մաքրագործման օրերին գաք Ինձ մոտ՝ օգնության համար: Դուք ձայն պիտի տաք, բայց Ես չպիտի լսեմ: Մարդիկ մտադիր են լռեցնել Ինձ՝ ծուղակներ լարելով, ուրիշները նենգ դավեր են նյութում օրն ի բուն:

[1] Ես հասկացա՝ Մեջուգորիեի Մեր Սուրբ Տիրամայրը:
[2] Այսինքն՝ «Ճշմարիտ կյանք Աստծո մեջ» Պատգամները:
[3] Հիսուս հիշատակում է այն մարդկանց, ովքեր որոշել են խեղաթյուրել այս Պատգամների ամեն մի բառը՝ ապացուցելու համար աշխարհին, որ այս Պատգամները նոդկալի են և Աստծուց չեն:
[4] Ինչպես հալածանքների այլ ժամանակներում:

Զարագործները հույս ունեն, որ կոչնչացնեն քեզ, զավա՛կս, քե՛զ, որին ես ընտրել եմ՝ վարվելով քեզ հետ, ինչպես երկրի մի տականքի, բայց ես երդվել եմ կանգուն պահել քեզ ոտքերիդ վրա: Ես պիտի պահպանեմ ու աջակցեմ քե՛զ հանուն Իմ նպատակի...

Ես ասել եմ, զավա՛կս, որ քեզ հալածողներին պիտի թույլատրվի ազդու վերքեր հասցնել քեզ, սակայն դրանք Իմ Փառքի ու քո մաքրագործման համար են: Քո կյանքի տևողությունը ոչինչ է, և դու լոկ մի անցողիկ ստվեր ես երկրի վրա, և քո վերքերն ու տառապանքները երկրի վրա պարզապես քամու փչոց են Իմի համեմատությամբ: Այդ ես եմ՝ քո Փրկիչը, որ պահել եմ քո հոգին Իմ Գրկում, և այնպես եմ արել, որ քո հոգին ապրի միայն Ինձ համար: Այդ ես եմ՝ Վսեմ Փառքը, որ քո բերանն եմ դրել Սիրո մի Նոր Օրհներգ, որպեսզի դու երգես այն աշխարհի համար, և հալեցնես նրա կարծրացած սիրտը:

Տե՛ս, դու Ինձ ես տվել քո կյանքի մեկ կամ երկու կաթիլը, իսկ ե՞ս, որքա՞ն եմ քեզ տվել: Ես քեզ թույլ եմ տվել, որ խմես Իմ Կրծքի Հավերժական Աղբյուրներից: Ես երբեք քեզ հուսախաբ չեմ արել: Դժվարին պայքարում ես գրավեցի քո սիրտը, աննշան, փոքրի՛կ արարած, և քեզ Իմը դարձրեցի: Ես քեզ հետ վարվեցի ավելի ներողամտորեն ու մեղմորեն, քան մեկ ուրիշի հետ՝ չնայած քո երեխայական գոռոզությանը: Ես՝ քո Արարիչը, հրապուրված էի քո աննկարագրելի թուլությամբ ու թշվառությամբ, իսկ դու, Իմ արարա՛ծ, ակնածանքի ու երկյուղածության մեջ էիր մնացել Իմ կատարյալ Գեղեցկությունից ու Իմ շլացուցիչ Լույսից: Հող ես դու, և միևնույն հողից եմ ես ստեղծել ու ձևավորել մյուսներին ևս: Ես Կյանք փչեցի ձեր մեջ և ձեզանից յուրաքանչյուրին դարձրի Իմ Կերպարի Պատկերը: Ես խնդրում եմ, որ կարդաս. «Սովորեցրո՛ւ մեզ, հաշվել մեր օրերը, որոնք այնքան քիչ են, որպեսզի սրտով իմաստուն դառնանք»[1]: Ձեր կյանքը երկրի վրա, ինչպես ասացի, մի անցողիկ ստվեր է: Ուստի փարվի՛ր Ինձ:

- Դու կարիք չունես ապացուցելու քո անմեղությունը[2]. Ես՝ քո Արարիչը, գիտեմ քեզ: Զավա՛կս, որին Ես ընտրել եմ, մի՛ վախեցիր: Արի՛ Ինձ մոտ, և Ես պիտի ջերմացնեմ քեզ: Մի՛ վախեցիր, երբ փառաբանում ես Ինձ:

Շուտով այն ամենը, որ նախօրոք ասել եմ, տեղի է ունենալու, և այնժամ, երբ նախկին կանխագուշակումները կիրականանան, շատերը կցնցվեն, երբ հասկանան, որ

Աստծո Գահին նստած Գառը

իսկապես իրենց մի պատգամատար է ուղարկել, մի պատգամատար, որը բարի լուր ու Սիրո Օրհներգ է կրում իր շուրթերին, որպեսզի երգի բոլոր ազգերին Ամենաբարձրյալի այս Նոր Օրհներգը ճիշտ այնպես, ինչպես ինքն էր լսել հենց Իրենից՝ Բարձրագույն Սիրո Աղբյուրից, և որ ի սկզբանե իսկապես դու Իմն ես եղել:

---

[1] Սաղմ. 90:12

[2] Ինձ մեղադրողները հանդիպել են միմյանց, որպեսզի դատեն ու դատապարտեն ինձ՝ ասելով, որ պատգամները Աստծուց չեն: Նրանք անգամ նեղություն են կրել իմ դեմ գիրք գրելու (5 հոգի):

Ապրիլի 23, 1992

Աստվա՛ծ իմ, Բանապաշտությունը,
Արդիականությունը,
Աղանդներն ու Անաստվածությունը
ներխուժել են Քո Փառքի մեջ:
Դրանք ապականել են
Քո Սուրբ Տաճարը
և պղծել են Քո Սուրբ Անունը:
Նրանք Քո Սրբարանը
ավերակների կույտի են վերածել:
Նրանք իրենց ճանապարհին
թողել են Քո զավակների դիակները՝
գիշակերներին կեր:
Դեռ որքա՞ն ես հեռու մնալու,
Տե՛ր, որքա՞ն երկար:

ՀՈՎԻ՛Վ: Որտե՞ղ ես Դու:
Ուրացությունը լափում է
Քո ոչխարներին,
իսկ Բանապաշտությունը
հարվածում է Քո հոտին:
Արագ միջամտի՛ր գթությամբ:
Մենք չենք կարող
սրանից ավելի ջախջախվել:
Օգնի՛ր մեզ, Աստվա՛ծ և Փրկի՛չ,
ի պատիվ Քո Սուրբ Անվան:
Մենք Քո ժողովուրդն ենք,
այդպես չէ՞, այն հոտը,
որ Դու արածեցնում ես:

Հովի՞վ:
Դեռ որքա՞ն ժամանակ, Հովի՛վ:
Ինչո՞ւ ես ուշացնում Քայլերդ:
Օ՜, արագացրո՛ւ քայլերդ
այս անվերջ փլատակների վրա:
Ուրացությունը մոնչում էր այնտեղ,
որտեղ Քո Սիրտն էր գտնվում,
որ հաստատ մտադրությամբ
ոչնչացներ այն ամենը,
որ Քո Ձեռքով էր ստեղծված:

Իմ Հովի՛վ,
ես բարձրաձայն
աղաղակում եմ Քեզ:

Մեր ուժերը սպառվում են,
ուրեմն սա՛ Ինձ,
դեռ որքա՞ն երկար
պետք է սպասենք:
Ժամանակը եկել է, ողորմի՛ր մեզ,
լսի՛ր մեր հառաչանքները,
և թո՛ղ՝ մեր աղաղակը Քեզ հասնի:

Հոգի՛, ես՝ քո Հովիվը, ներքև եմ խոնարհվել Իմ Օթևանի բարձունքներից, երկնքից նայել եմ ներքև՝ երկրին, որպեսզի լսեմ Իմ գառների հառաչը և փրկեմ նրանց, ովքեր դատապարտված են դաժան մահվան: Այնպես, ինչպես

Իմ Խոսքը

մի լապտեր է դարձել քո ոտքերի համար, մի լույս՝ քո ճանապարհին, այդպես էլ ես տարածելու եմ Իմ Խոսքը յուրաքանչյուր ազգի մեջ, որպեսզի պարուրեմ ձեզ բոլորիդ Իմ Վերանցական (Աստվածային) Լույսով, որպեսզի, երբ քայլեք, ձեր ընթացքը անարգել լինի, իսկ երբ վազեք, չսայթաքեք:

Ես սիրում եմ նրանց, ովքեր սիրում են Ինձ: Նրանք, ովքեր բաղձանքով փնտրում են Ինձ, պիտի գտնեն Ինձ: Ես ձեզ եմ տվել Իմ Սիրտը, որպեսզի սիրեք: Ուրեմն սիրեք Ինձ, և Ես մեծ գործեր պիտի անեմ ձեր մեջ:

~ Փոքրի՛կս, Իմ Վերադարձը ավելի մոտ է, քան դու կարծում ես: Ես գալիս եմ, Իմ Վասո՛ւլա, որպեսզի իշխեմ ամեն մի սրտում: Ես լսել եմ քեզ: Թույլ մի՛ տուր, որ սիրտդ վրդովվի կամ տառապի, քանզի ոչինչ չի կարող կանգնել Իմ և քո միջև: Ես խնդրում եմ քեզ, Իմ սիրելի՛ և Իմ հա՛րս, որ կայուն լինես ու հավատ ունենաս, որպեսզի կարողանաս աճել Իմ մեջ:

Ես օրհնում եմ քեզ, ապրի՛ր Իմ մեջ:

ΙΧΘΥΣ

Մայիսի 1, 1992

Տե՛ր իմ Յահվե,
իմ Սիրելի՛ Հայր Երկնքում,
Քո Անունը հեղված յուղ է:
Դու հայտնեցիր ինձ Քո Անունը՝
ընդառաջ գալով դեպի ինձ
և փրկելով ինձ: Դու կրթեցիր ինձ՝
բերելով Քեզ մոտ:
Յահվե՛, իմ Աստվա՛ծ,
Դու փրկեցիր ինձ:

Ա՛հ, Վասո՛ւլա, չնայած դու մի չորացած փայտ էիր՝ պատրաստ կրակի մեջ

նետվելու, որ այրվես, ես փութացի քեզ մոտ, որպեսզի փրկեմ քեզ: Ես քեզ դտա Մահվան հովտում, ինչը Ինձ խոր տրտմության մեջ թողեց: Իմ Աղաղակը տագնապ առաջացրեց երկնքում: Այդ տեսարանի հիշողությունն իսկ դեռ վշտացնում է ինձ խորապես: Այդպիսին էր վիշտը, որ ես կրեցի: Ես համբերատար էի քեզ հետ երկար տարիներ: Ես շատ անգամներ կանչել եմ քեզ այդ միջոցին, սակայն դու չես լսել: Բայց խորապես սիրելով քեզ ես ձեռք չքաշեցի քեզանից: Փոխարենը ես քեզ ցույց տվեցի Իմ Հավատարմությունը քո մեղսավորության մեջ: Այն ցավն ու վերքերը, որոնք հասցնում էիր Իմ Որդուն, դանդաղորեն սպառում էին Իմ Ողորմությունը: Այնքան մեծ էր քո հանցանքը, և այնքան շատ՝ քո մեղքերը, որ ես պատրաստ էի վրեժ լուծել Իմ Որդու Վերքերի համար՝ քեզ հարվածելով:

Ա՛հ, Վասո՛ւլա, Մշտնջենական Օգնության քո Մայրը լաց էր լինում Իմ Ոտքերի մոտ՝ Արյան Արցունքներ հեղելով քեզ համար: Այո՛, քո Սուրբ Մայրը շնորհ արեց քեզ և հանգստացրեց Ինձ... Իմ Սիրտը խորապես շարժվեց, և Իմ զայրույթն անցավ Նրա Արցունքների պատճառով: Իմ մեջ բարձրացած փոթորիկը հանդարտվեց:

Ես՝ Յահվեն, քո Հավիտենական Հայրը, սիրել եմ քեզ մի Հավիտենական Սիրով այն օրից ի վեր, երբ ստեղծեցի քեզ ու պահեցի Իմ Ձեռքերում: Ա՛հ... երբեք չեմ մոռանա այդ օրը, թե որքա՜ն փոքր էիր դու: Ես ասացի. «Ես Ձավթիչին հեռու կքշեմ շատ հոգիներից այս փոքրիկ ու նուրբ աղջկա միջոցով»: Հետո դու և Ես պայման կապեցինք միասին, որ դու պիտի աշխատեիր Խաղաղության համար՝ ազդարարելով Իմ Սերը, որպեսզի այն արձագանքեր մինչև աշխարհի ծայրերը, և որ քո թուլության միջոցով Ես պիտի հավաքեի կործանման եզրին գտնվողներին: Ես քեզ պիտի անվախ դարձնեի սպառնալիքների և զավթիչների հանդեպ, և քո միջոցով Ես պիտի հետապնդեի ու գտնեի դավաճաններին: Հետո քո մեջ, Ես պիտի բերեմ քո սերնդին հաշտության ու միասնության համար:

Քանի որ Ես արդեն մտադիր էի ջախջախել Իմ Թշնամու ծրագրերը, Ես պետք է քո հոգին համաձայնության բերեի Ինձ հետ և սկզբից ևեթ ուժեղացնեի քեզ: Ես ասացի. «Սրբացրո՛ւ քեզ հիմա և ծո՛մ պահիր ծննդյանդ պահից ի վեր: Սա Իմ ցանկությունն է: Ես լույս չեմ տալու քեզ քո ծննդյան պահին[1]: Երեք օր ու երեք գիշեր դու պիտի մնաս խավարում, և այդպես դու ծոմ կպահես»:

Սա է պատճառը, որ Ես երդվեցի մեկ անգամ ևս լայն տեղ բացել քո սրտում, որպեսզի մուտք գործեմ այնտեղ: Եվ ինչպես մի Փոթորիկ, Ես գրոհեցի քեզ վրա, որ ավերեմ այն ամենը, որ Իմ Սրտին Վերք էր հասցնում: Ես փչեցի, ինչպես փչում են ածուխի կրակների վրա: Ահա այսպես Ես փչեցի քո հոգում, որպեսզի կենդանացնեմ քո մեջ մարող կրակը: Ես ասացի. «Թող քո կրակը հիմա բարձրանա քո խավարում, որ ուրախացնի Իմ Հոգին: Թող քո չորությունը դառնա ոռոգվող մի պարտեզ՝ նման ջրի աղբյուրի»:

Եվ անսահման Քնքշությամբ Ես սեղմեցի քեզ Իմ Սրտին՝ քեզ նորից

[1] Երբ ես ծնվել եմ, իմ կոպերը իրար կպած են եղել՝ աչքերս փակ: Ես աչքերս բացել եմ միայն երեք օրից հետո: Մայրս, վախեցած, որ միգուցե ես կույր եմ, աղոթում է մեր Սուրբ Պարասկևիին (աչքերի համար բարեխոսող հույն Սրբին), և երդվում նրա անունով ինձ կոչել Վասուլա: Պարասկևի հունարեն նշանակում է ուրբաթ:

Իմը դարձնելով: Ես երդվեցի փոխել քո ապստամբ և անհնազանդ սիրտը՝ դարձնելով այն Իմ հանգստավայրը: Ես այնպես արեցի, որ դու հասկանաս, որ Ես պետք է լինեմ քո միակ Աստվածը, քո միակ Սերը՝ առանց մրցակիցների ու հավատարիմ:

Հետո Ես հեռացրի քո շղարշը, որ պատվեմ Իմ Անունը, և բացեիբաց հայտարարեցի Իմ Երկնային Ապարանքում, որ Ես Ինքս պիտի պայքարեմ նրանց դեմ, ովքեր պիտի կռվեն քեզ հետ ու հալածեն քեզ, քանզի այժմ Ես՝ քո Արարիչը, պիտի լինեմ քո Ամուսինը և քո միակ Ապաստանը: Ես պիտի լինեմ Նա, ով վստահելու է քեզ, իսկ դու՝ Ինձ: Ես Իմ խոսքերը կրակ եմ դարձնելու քո բերանում, որպեսզի հռչակես դրանք մինչև աշխարհի ծայրը: Այն ամենը, որ դու սովորել ես, սովորել ես Ինձանից: Ես՝ Յահվեն, քո Հավիտենական Հայրը, զարդարել եմ քեզ, նրբագեղ, փոքրի՛կ աղջիկ: Ես հենց այս պահիս խոնարհվում եմ դեպի քեզ, որ բարձրացնեմ քո հոգին Իմ Սրտի մոտ:

Իմ վիշտը մեծ է, զավա՛կս. երբ տեսնում եմ Իմ Սերը, Իմ Խաղաղությունն ու Իմ Շնորհները մերժող Իմ զավակներին, Սիրտս տակնուվրա է լինում: Ես կարիք ունեմ այնպիսի հոգիների, որոնք կսփոփեն Ինձ: Ես վեհանձն հոգիների կարիք ունեմ, որպեսզի մեղմեն Իմ բուռն զայրույթը: Եղե՛ք Իմ սփոփանքը, եղե՛ք Իմ Արքայությունը: Ես՝ Յահվեն, սիրում եմ ձեզ բոլորիդ:

Եկե՛ք, Ես ցույց պիտի տամ Իմ Փառքը ձեր ոչնչության միջոցով: Հանուն Ինձ՝ վե՛րջ տվեք մեղքերին, վե՛րջ տվեք ապստամբությանը: Դուք բոլորդ մանատված եք և ձեզ մշտապես չի հաջողվում պտուղ տալ (այսինքն՝ միավորվել և սուրբ ապրել: Մի՞թե դուք և ձեր եղբայրները, բոլորդ միևնույնը չեք Ինձ համար: Մի՞թե ձեզանից ոչ ոք չի վերականգնի Իմ Պատիվը՝ վերականգնելով Իմ երերացող Տունը: Մի՞թե Ես ստիպված պիտի լինեմ Իմ Սուրը հանել ձեր դեմ: Մի՞թե պիտի շարունակեք ընդդիմանալ Իմ Սուրբ Հոգուն: Մի՞թե շարունակելու եք վերախաչել Իմ Որդուն: ԱՄԵՆը խնդրում է ձեզանից յուրաքանչյուրին օրհնել՝ ձեր թշնամիներին, ներել նրանց բոլորին և գալ ու հաշտվել Ինձ հետ՝ ձեր Աստծո հետ, որպեսզի կարողանաք հաշտվել ձեր եղբայրների հետ և մեկ Մարմին կազմել Իմ Փառքի համար: Եկե՛ք ու հաշտվե՛ք Ինձ հետ:

Կարդալով Ինձ, թող ամեն ոք լսի Ինձ ու հասկանա, թե ինչ վիճակ եմ ապրում Ես՝ ձեր Հավիտենական Հայրը, երբ ամեն անգամ Աչքերս Երկնքից տեսնում են այն տեսարանները, որոնք բզկտում են Սիրտս, և թե ինչպես Ես կարող եմ ճնշել այն սարսափելի ժանտախտը, որն ավելի ու ավելի է տարածվում ամեն մի հոգում: Ես Ամենն եմ, և Ես կարող եմ փրկել ձեզ, եթե դեպի Ինձ դառնաք:

Վասո՛ւլա, քո մրցավազքը դեռևս չի ավարտվել, բայց Ես՝ Յահվեն, քո Հավիտենական Հայրը, քեզ հետ եմ: Օրհնյա՛լ եղիր այն բանի համար, որ թույլ ես տալիս օգտագործել քո ձեռքն ու ժամանակը: Իմ Մատը քո սրտի վրա է, որպեսզի դու հիշես, թե ով խնամեց ու մեծացրեց քեզ:

Մայիսի 5, 1992

Զավա՛կս, Ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը, գրի՛ր.

Ես Ձեր Թագավորն եմ և այստեղ եմ, որ Խաչի Նշանը դրոշմեմ բոլոր նրանց ճակատներին, ովքեր անկեղծ են ու իրապես սիրում եմ Ինձ: Դուք պետք է կրկնեք Ինձ հետ Իմ Սուրբ Սրտի Նվիրաբերման աղոթքը[1], և մինչ դուք կասեք դա, Ես Իմ Մատով պիտի դրոշմեմ ձեզ Իմ Նշանով: Իմ Խաչը Նշան պիտի լինի ձեր և Իմ միջև, և Ես պիտի սիրեմ ձեզ Իմ ողջ Սրտով և պիտի հսկեմ ու պիտի օծեմ ձեզ Իմ Անուշահոտությամբ:

Ինքներդ ձեզ նվիրաբերե՛ք Իմ Սուրբ Սրտին և ձեր Օրհնյալ Մոր Անարատ Սրտին, որպեսզի Ես կարողանամ ձեր սրտերը դարձնել Իմ Պարտեզը, Իմ Հանգստավայրն ու Իմ Ապարանքը:

Վերադարձե՛ք Ինձ մոտ ձեր ողջ սրտով: Մի՛ եկեք ու կանգնեք դիմացս անկայուն ու անհաստատ սրտով: Եկե՛ք Ինձ մոտ, և Ես Իմ օրհնությունը կթողնեմ ձեզ վրա, երբ անցնեք կողքովս: Ես ձեր Հույսնեմ, ուստի բացե՛ք ձեր բերանը, որ կանչեք Ինձ ձեր սրտով, և Ես կլցնեմ ձեր բերանը, որպեսզի դուք փառաբանեք ու պատվեք Ինձ:

Իմ որդինե՛ր, Իմ դուստրե՛ր, մե՛ղմ ու հեզահամբո՛ւյր եղեք միմյանց հետ, սիրե՛ք մեկդ մյուսիդ, ինչպես Ես եմ ձեզ սիրում, որպեսզի Դատաստանի Օրը Իմ առաջ բարեհաճություն գտնեք: Ես ասում եմ ձեզ. գալիս են օրերը, երբ խակ պտուղն այլևս ոչ մի բանի պիտանի չի լինի, քանզի Ձեր Թագավորը, որ այսօր խոսում է ձեզ հետ, պիտի ցույց տա Իր Փառքը, և դուք պիտի տեսնեք Նրան երես առ Երես: Ուրեմն երանելի են նրանք, ովքեր պատրաստ են ընդունել Ինձ: Նրանք պիտի կոչվեն Ամենաբարձրյալի ժառանգները:

Մե՛կ եղեք, Եկեղեցին պիտի վերակենդանանա:

ΙΧΘΥΣ

(Մեր Օրհնյալ Մայրն է խոսում):

Իմ Սրտի՛ զավակներ, այս օրերին դուք տեսնում եք, թե ինչպես է աշխարհը ինքն իրեն պատառոտում, ինքն իրեն տապալում: Երկիրը կործանում է Իմ զավակներին ոչնչացնելով նրանց՝ իրար ետևից աղետներ բերելով շատ ընտանիքներում: Երկրի հիմքերը երերում են իր իսկ ստեղծած չարիքից: Ես ասում եմ ձեզ. քանի դեռ դուք շարունակում եք թույլ տալ Չարին ստրկացնել ձեզ, կթաղվեք մեղքի փոշու մեջ: Ես խնդրում եմ ձեզ, և Ես աղաչում եմ ձեզ, որ թաղեք այն ամենը, որ սուրբ չէ:

Դեռ որքա՞ն պետք է տատանվեք, որ դուրս գաք փնտրելու Նրան, ով ամենից շատ է ձեզ սիրում՝ ձեր Ամուսնուն և ձեր Արարչին, Նրան, ով ձեզ տվեց ձեր փրկագինն ու Իր Ժառանգությունը: Աշխարհի հիմնումից ի վեր ձեզ համար պատրաստված Թագավորությունը օրն ի բուն կանչում է ձեզ: Դուք կարող եք դառնալ այս սերնդի չինարարներն ու սերմնացանները: Դուք կարող եք դառնալ այս երկրի նորոգողները: Հատուցե՛ք երկրի մեղքի համար՝ ծոմ պահելով, զոհաբերությամբ և

[1] Սուրբ Սրտի կողմից, 1992թ. հունվ. 26-ին, ինձ թելադրված նվիրաբերման աղոթքը:

սրտից բխող աղոթքներով:

Երանի խաղաղարարներին. նրանք պիտի կոչվեն Աստծո որդիներ: Ընդունե՛ք Իմ օրհնությունները:

Մայիսի 6, 1992

«Նա պատերով շրջապատել է ինձ,
ես չեմ կարող փախչել:
Նա ծանր շղթաներով
շղթայել է ինձ»:[1]
Այդուհանդերձ, Դու կարեկցությամբ
գալիս ես նրանց սենյակը,
որ արածեցնես նրանց:

(Պատգամ աշխարհի բոլոր բանտարկյալների համար):

Խաղաղություն ձեզ: Այդ Ես եմ՝ Տերը, ձեր Փրկիչը: Մի՛ զարմացեք, այդ Իմ Սուրբ Հոգին է, որն ապրում է յուրաքանչյուր սրտում ու խոսում է ձեզ հետ: Իմ Սերը հանդեպ ձեզ, ձեր հասկացողությունից վեր է, և դուք չեք կարող ըմբռնել դրա ողջ տարողությունը, քանի դեռ Երկնքում չեք: Խավարի այս օրերում Ես իջնում եմ Իմ Երկնային Գահից մինչև ձեզ մոտ, որպեսզի թույլ տամ ձեզ, որ դուք էլ գիտենաք, թե ինչ է կատարվում, և ինչ եմ Ես անում: Ես գալիս եմ՝ ձեզ բոլորիդ նորից վստահեցնելու Իմ Խոստման մասին: Ես գալիս եմ՝ հավաստիացնելու ձեզ, փոքրիկնե՛ր, ձեր բոլորի հանդեպ ունեցած Իմ Սիրո և Իմ Հավատարմության մասին: Իմ Վերադարձը շատ մոտ է:

Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. նա, ով պահում է Իմ Խոսքը, երբեք մահ չի տեսնի: Եվ դուք, որ տատանվում եք, այլևս մի՛ կասկածեք, այլ հավատացե՛ք: Եթե ձեզ չի հաջողվել ըմբռնել Աստվածաշնչի ուսմունքները, թող ձեր սիրտը չվրդովվի: Այսօր եկե՛ք և վստահե՛ք Ինձ և սիրտ սրտի խոսե՛ք Ինձ հետ: Այդ ո՞ր հայրն է, որ երբ լսի իր զավակի ողբը, նրա սիրտը ամբողջապես չի կոտրվի: Ես ձեր Հավիտենական Հայրն եմ, Նա, ով սիրում է ձեզ Հավիտենական Սիրով: Եվ ինչպես մի հայր, որ հրավիրում է իր զավակներին կիսելու ու ժառանգելու իր ունեցվածքը, այդպես էլ Ես կանչում եմ ձեզ, որ լինեք Իմ Թագավորության ժառանգորդները:

Ա՜հ... երանի թե Իմ այս խոսքերը փորագրված լինեին ձեր սրտի վրա և կլանվեին ձեր կողմից... Իմ փոքրի՛կ զավակներ, դուք լսել եք Ինձ, երբ ձեզ ասել եմ. Ես գնում եմ, բայց իրոք ձեզ հետ կլինեմ շուտով: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Ես ձեզ հետ եմ լինելու շուտով: Ես ասել եմ, որ Իմ Հոր Տանը շատ սենյակներ կան: Ձեզանից յուրաքանչյուրը մի սենյակ ունի: Թող ձեր հոգին խաղաղություն ու հանգիստ գտնի զբաղեցնելով այդ սենյակը: Զբաղեցրե՛ք դրանք՝ Ինձ հետ հաշտություն կնքելով:

Այսօր Սատանան իր ողջ ատելությունը թափում է երկրի վրա: Նա իր կատաղության մեջ ավերում ու տապալում է երկրները: Նա կործանում

[1] Ողբ 3:7

ու աղետ աղետի ետևից է բերում: Սակայն մեծ զորությամբ Իմ Ձեռքը պիտի կառուցի այն ամենը, ինչ նա ավերել է: Ամեն ինչ, որ գրել եմ ձեզ Իմ Սիրո Օրհներգում, լոկ Իմ Խոսքի հիշեցումն է: Դա ձեր հիշողությունները թարմացնելու համար է և Սիրտս Ափիս մեջ ձեզ ասելու, որ Ես ծարավ եմ սիրո պակասից: Ես ոխ չունեմ ոչ մեկի հանդեպ: Դուք բոլորդ Իմ Սերմն եք, և Ես ձեր Հավիտենական Հայրն եմ և Ուղեկիցը:

Ես լավ գիտեմ, թե ինչ կա ձեր մտքում, սակայն Ես այստեղ չեմ եկել, որ մեղադրեմ ձեզ ձեր արարքների համար: Ես այսօր այստեղ եմ, որպեսզի ցույց տամ ձեզ, թե ինչպես վերաբերվեցին Կարեկցության ու Գթության հետ: Իմ Սրտում դեռևս մնում է դեղարդի սայրը, իսկ Փշե Պսակը օղակում է Սիրտս: Երկնքի այուները դողում են այս տեսարանից, և բոլոր Իմ հրեշտակները տագնապահար ծածկում են իրենց դեմքերը: Անգամ լուսինը կորցնում է իր պայծառությունը: Ձեր Աստվածը վերախաչվում է ժամ առ ժամ՝ մարդկանց չարության ու չարակամության պատճառով: Իմ Սեփական Արյամբ Ուղի գծվեց՝ ձեզ փրկելու համար, և եթե ձեր ոտքերը մոլորվել են այդ Ճշմարիտ Ուղուց, Ես ասում եմ ձեզ. Ես եկել եմ ձեզ մոտ Հիմա, որպեսզի բռնեմ ձեր ձեռքը և ձեր քայլերը առաջնորդեմ ետ՝ դեպի այդ Ճշմարիտ Ուղին: Տվե՛ք Ինձ ձեր կամքը, ինքներդ ձեզ հանձնե՛ք Ինձ, և թո՛ւյլ տվեք քանդել այն պատը, որ դուք կառուցել եք Իմ Ուղու վրա, որը արգելում է ձեզ և Ինձ իրար հանդիպել:

Իմ փոքրի՛կ ընկերներ, Ձեր Սուրբը դեռևս շատ բաներ ունի ձեզ ասելու, սակայն դա շատ կլինի հիմա ձեզ համար: Ես կավելացնեմ միայն մի բան. եթե Ես եկել եմ մինչև ձեզ մոտ՝ ձեր խուցը, դա այն Սիրո մեծության պատճառով է, որ Ես ունեմ ձեր հանդեպ: Կանչե՛ք Ինձ, և Ես կլսեմ ձեզ: Ես օրհնում եմ ձեզ՝ Իմ Սիրո Հոգոցը թողնելով ձեր ճակատին:

ΙΧΘΥΣ

Մայիսի 15, 1992

Այդ Դու էիր, Տե՛ր իմ,
որ ինձ տվեցիր
Քո Խորհուրդներից
շատերի ճշմարիտ ուսուցումը,
քանզի Դու Ինքդ խնամեցիր ինձ,
և Դու իմ առաջնորդն ես
Իմաստության մեջ:
Քո Իմաստությունը ինձ դարձրեց
մտերիմ Քեզ հետ:
«Շնո՛րհ տուր ինձ խոսել այնպես,
ինչպես Դու ես ուզում,
և արտահայտել մտքերս
Քո Շնորհին արժանի ձևով»[1]:

[1] Իմաստ. 7:15

Ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ: Մնա՛ Ինձ մոտ, մնա՛ Ինձ մոտ և քայլի՛ր քո Հոր հետ:

Կրկնի՛ր Ինձ հետ այս աղոթքը.

Օ՜, Երկնայի՛ն Հայր,
Սիրո Օրհներգի՝ Հեղինակ,
Արքա՛ ի սկզբանե:
Աստվա՛ծ, Դու ելար,
որ ասելիքդ ասես
երկրի բոլոր բնակիչներին:

Հավատարիմ Քո Ողորմության
մեծությանն ու Քո Անվանը՝
Դու մեզ վրա տեղացիր
օրհնություն օրհնության ետևից:
Ծովի ալիքների վրայով
և ամբողջ երկրի վրայով
տարածվեց Քո Բուրմունքը:

Հզո՛ր Աստված,
երբեք նման գեղեցիկ բաներ
դեռևս չեն եղել մեր սերնդի մեջ:
Սիրո Օրհներգի՛ Հեղինակ,
Քո Գործերը
սքանչելի զարդարանքներ են,
հրաշալի զարդեր՝ աչքն ու սիրտը
ուրախացնելու համար:

Ես ուզում եմ փառաբանել Քեզ,
Հավիտենակա՛ն Հայր,
իմ ամբողջ կյանքում
և երգել Քեզ՝ իմ Աստծո համար,
քանի դեռ ապրում եմ: Ամեն:

Եվ Ես ասում եմ քեզ. տարածի՛ր Իմ Սիրո Օրհներգը Ինձ հետ միասին, ձեռքդ Ձեռքիս մեջ: Փոքրի՛կս, քայլի՛ր Ինձ հետ. դա Ինձ հաճույք է պատճառում: Ես մտադիր եմ գալիք օրերին ոռոգել Իմ ծաղկաթմբերը: Սպասի՛ր, զավա՛կս, ու պիտի տեսնես Իմ Փառքը: Իմ Սիրո Օրհներգը պիտի վերաճի գետի, և այս գետը պիտի վերաճի Սիրո ծովի:

> «Ես այնպես պիտի անեմ, որ գիտությունը փայլի ու լուսավորի, ապա պիտի հեղեմ ուսմունք, ինչպես մարգարեություն՝ որպես ժառանգություն բոլոր գալիք սերունդներին»[1]:

Այո՛, սա է, որ Ես ասում եմ, Ես՝ երկնքի ու երկրի Արարիչը: Եվ իմացի՛ր,

[1] Սիրաք 24:32-33

որ չուտով Իմ ամբողջ նպատակը պիտի իրականանա: Քաղաք քաղաքի ետևից[1] պիտի բնակեցվի Ինձնով և պիտի վերաշինվի[2]: Ես պիտի վերականգնեմ ձեր ավերակները և վերակառուցեմ Իմ խորանները[3] մեկը մյուսի ետևից: Հենց որ ամեծքը վերցվի, ամբողջ մարդկությունը պիտի նվիրաբերվի Իմ Սուրբ Սրտին և ձեր Մոր Անարատ Սրտին:

Եկեղեցին պիտի վերակենդանանա:

Մայիսի 28, 1992

(Դեթրոյտ, Միչիգան)

Վասո՛ւլա, թող ոչ ոք չխլի այն պարգևը, որ Ես եմ տվել քեզ: Քո առջև Ես եմ:

Աղոթի՛ր այն հպարտների համար, ովքեր դատում են Իմ Գործերը[4]: Նրանք սեր չունեն Իմ հանդեպ: Աղջի՛կս, պատվի՛ր Ինձ՝ Իմ Պատգամները հայտարարելով բոլոր այս հավաքներին: Շատ քիչ ժամանակ է մնացել: Սրանք Իմ Ողորմության վերջին օրերն են: Ուստի արթո՛ւն կացեք, զգո՛ն եղեք, Սատանային հենակետ մի՛ տվեք: Թույլ մի՛ տվեք, որ ձեր հոգին հապճեպ դատի: Հեռու պահեք ձեզ անբարեհաճ քննադատությունից, որպեսզի Դատաստանի Օրը չդատվեք:

Ես աշխարհի Լույսն եմ: Պատրաստ եղեք, քանզի Ես կարող եմ ձեր տուն գալ որևէ ժամանակ: Երկնքից՝ Իմ արքայական Գահից, Ես չուտով կիջնեմ ձեր սարսափելի գիշերվա մեջ: Փոքրի՛կ երեխաներ, մնացեք խաղաղության մեջ: Ես տալիս եմ ձեզ Իմ խաղաղությունը: Մի փոքր էլ համբերե՛ք և շարունակե՛ք փառաբանել Ինձ ձեր սիրով: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, Ես Իմ ողջ Սրտով սիրում եմ ձեզ:

Դուք բոլորդ Իմ սերմն եք: Ես օրհնում եմ ձեզ՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատներին:

Մայիսի 29, 1992

(Դեթրոյտ, Միչիգան)

Հիսո՞ւս:

---

[1] Այսինքն՝ հոգին հոգու ետևից:
[2] Այսինքն՝ դարձի պիտի գա:
[3] Հավատարիմները, որոնք հալածվել և վիրավորվել են:
[4] Հիսուս նկատի ուներ այն ընդդիմությունները, որոնք առաջ եկան Դիտրոյտում: Մարդկանց մի փոքր խումբ մեղադրում էր ինձ «Նոր Դար» աղանդին պատկանելու մեջ: Նրանք գալիս էին իմ բոլոր հանդիպումներին, որպեսզի խանգարեն դրանք՝ բաժանելով թուլցիկներ հոդվածների հետ մեկտեղ, որոնք ուղղված էին իմ դեմ:

Ես եմ, բա՛ց արա սիրտդ և ընդունի՛ր Ինձ:

Ասա՛ Իմ ժողովրդին, որ Ես շուտով պիտի գամ նրանց մոտ: Այդ Օրը աշխարհի յուրաքանչյուր բնակիչ պիտի իմանա, որ Ես եմ, որ եմ: Աղոթի՛ր նրանց համար, ովքեր կասկածի տակ են դնում այն, ինչ որ դու ուսուցանում ես: Աղոթե՛ք և թույլ մի՛ տվեք, որ ձեր սրտերը դատապարտեն նրանց: Հավա՛տ ունեցեք Իմ հանդեպ և վստահե՛ք Ինձ: Սերը ձեր կողքին է: Փառաբանե՛ք Ինձ՝ վերականգնելով խաղաղությունն այնտեղ, ուր տարաձայնություն կա, վերականգնելով սերն այնտեղ, ուր ատելություն կա: Նմանվե՛ք Ինձ՝ ձեր Տիրոջը, խավարի այս ժամանակաշրջանում: Ընդունե՛ք Իմ Խաչը: Իմ Խաչը կառաջնորդի ձեզ դեպի սրբություն և դեպի ձեր սենյակը Երկնքում:

Սերը կսեղմի ձեզ Իր գրկում:

ΙΧΘΥΣ

Հունիսի 5, 1992

Փոքրի՛կս, անկեղծությամբ ու նվիրվածությամբ պաշտպանի՛ր ճշմարտությունը մինչև մահ: Շարունակի՛ր ինքդ քեզ տալ Ինձ՝ քո Աստծուն, և քո բոլոր օրերն ու գիշերները նվիրի՛ր աղոթքի, զոհաբերության և ապաշխարության: Տո՛ւր Ինձ քո կամքը, և թշնամին քեզ մոտենալու առիթ չի ունենա: Պահպանի՛ր այն ողջամիտ ուսուցումը, որ սովորել ես Ինձանից, և մի՛ անհանգստացիր, երբ քեզ մեղադրողները զրպարտեն քեզ: Ես միասնության կոչ եմ անում Իմ Խաչից, ուստի երբեք մի՛ կորցնիր վստահությունդ, քանզի այդ Ես եմ՝ Նա՛, Հարուցյալը, որը կանչում է յուրաքանչյուրին: Այդ դու չես, այդ Ե՛ս եմ՝ Քրիստոսը և ձեր Փրկիչը, որ կանչում է իր ցիրուցան եղած ոչխարներին:

Վասո՛ւլա, մե՛ղմ և համբերատա՛ր եղիր քեզ մեղադրողների նկատմամբ, քանի որ նրանք չգիտեն, թե ինչ են անում: Սիրելով նրանց այնպես, ինչպես Ես եմ քեզ սիրում, զավա՛կս, և մատուցելով ինքդ քեզ որպես զոհ, դու հաճելի կլինես Ինձ: Քո զոհաբերության միջոցով Ես կվերականգնեմ Իմ Տունը և շատ հոգիներ ետ կբերեմ դեպի Ինձ: Քե՛զ, որ ավելի նվաստ ես, քան Իմ բոլոր զավակներից ամենանվաստը, վստահվել է Միասնության Իմ Խաչը: Միասնության Իմ Խաչը ծանր է, սակայն դու պետք է կրես այն սիրով և համբերատարությամբ:

Եղի՛ր Իմ Արձագանքը և հայտարարի՛ր ամեն մեկին Իմ Սուրբ Սրտի Անսահման դանձերը: Դու պետք է հայտարարես, որ Միասնությունը կկառուցվի միայն սիրո և խոնարհության վրա: Հավատարի՛մ մնա Ինձ՝ քո Աստծուն, և հիշի՛ր, որ Իմ Հայրը արարել է քեզ հենց այս նպատակի համար՝ Մեզ փառք տալու համար[1]: Ուստի ամո՛ւր կանգնիր և մի՛ երերա փոթորիկներից: Ես քո կողքին եմ: Մի՛ վախեցիր, Ճշմարտությունը պիտի խոսի բարձր ու հստակ:

Այո՛, Իմ հավատարի՛մ օգնական, դու Իմ Հոգուց կստանաս այն ամենը, ինչ Ես ասելու եմ: Իմ բառերը, զավա՛կս, պիտի լինեն որպես ճրագներ,

[1] Սուրբ Երրորդությունը:

որոնք փայլում են սրբազան ճրագակալի վրա: Դրանք քո բերանում պիտի լինեն ինչպես մի սուր: Ես կբացեմ քո բերանը, որ խոսես առանց վախի: Արիացի՛ր, զավա՛կս, Ես Ինքս Ինձ վրա եմ վերցնում քո գործը: Լսի՛ր, այսօր քեզ մեղադրողները չփոթության մեջ են, բայց դու կփախչես նրանց սրից այստեղ[1]... Սա է քո Ապաստարանը: Տեսնո՞ւմ ես: Ահա թե որտեղ ես դու... Ես քո Զորությունն եմ, քո Պատվարը:

Չնայած մտրակն անդադար իջնում է քո մեջքին, մի՛ վհատվիր: Հիշի՛ր, թե Ես ինչպես կամավոր և առանց բողոքի Իմ մեջքը տվեցի ձեր փրկության համար: Այդ քեզ է, Իմ քահանա՛, որ աշխարհը պիտի մերժի, որովհետև դու հաստատում ես այն ճշմարտացիությունը, որը Ես եմ քեզ տվել: Դու չես խոսում քո անունից, ո՛չ, գրված բառերն Իմ Սեփական բառերն են՝ քո Աբբայինը: Ես ապրում եմ քո մեջ, և դու՝ Իմ մեջ: Դու իմ տաճարն ես, և Ես ապրում եմ քո մեջ: Եվ հիմա, երբ Ես զգեստավորել եմ քեզ, մեկ անգամ ևս պիտի հիշեցնեմ քեզ, որ ոչ մի ծառա իր Տիրոջից ավելի մեծ չէ: Եթե աշխարհը չճանաչեց Ինձ, որ Տեր եմ և Աստված, և Իմ Սեփական ժողովուրդը չընդունեց Ինձ, չնայած Ես եկել էի Իմ տիրապետությունը, արդյոք աշխարհն այսօր պիտի ճանաչի՞ և ընդունի՞ որևէ մեկին, որ ուղարկված է Իմ կողմից: Երբե՛ք: Ես ասացի քեզ այս բաները, զավա՛կս, որպեսզի հիշեցնեմ քեզ, որ եթե աշխարհը հալածեց Ինձ, քե՛զ էլ պիտի հալածի, եթե վիրավորեցին Ինձ, քե՛զ էլ պիտի վիրավորեն, եթե չարությամբ ծաղր ու ծանակի ենթարկեցին իրենց Թագավորին, ծաղր ու ծանակի պիտի ենթարկեն նաև նրա բոլոր յուրայիններին, և եթե խաչեցին Ինձ՝ Իրենց Աստծուն, քե՛զ էլ քարշ կտան դեպի Գողգոթա և կխաչեն:

Վասո՛ւլա, քո վազքը չի ավարտվել... Առաջարկի՛ր Ինձ քո կյանքը, ինչպես արժանավոր մի զինվոր, քանի որ Ես ընդգրկել եմ քեզ այս Սրբազան Պատերազմում, որպեսզի պայքարես մոլորության դեմ և սպառնալիք լինես Սատանայի ու նրա ողջ կայսրության համար: Մի՛ վախեցիր այն տանջանքներից, որոնք գալիս են քեզ վրա: Քա՛ջ եղիր փորձություններում, համբերատա՛ր եղիր, ինչպես Ես եմ համբերատար: Այսօր Սատանան խաբում է ձեզանից շատերին: Խաբեբան ձեր մեջ է և տարածում է իր մոլորությունները տգետ ու քնաթաթախ բազմության մեջ, որովհետև նրանք նախընտրեցին իրենց սեփական հաճույքը, քան թե Ինձ՝ իրենց Աստծուն: Ոմանք պահում են կրոնի արտաքին տեսքը, բայց մերժում են նրա ներքին ուժը՝ Իմ Սուրբ Հոգին:

Դրա համար էլ ցանկացած ոք, որ իմ ծառան է և սերում է Իմ տնից, անպայման հարձակման կենթարկվի: Բայց, Իմ հավատարի՛մ օգնական, շուտով Ես քեզ ապահով տուն կբերեմ՝ Իմ Երկնային Թագավորությունը: Աղոթի՛ր և զոհողությո՛ւն արա, աղոթի՛ր և զոհողությո՛ւն արա: Ժամանակ առ ժամանակ նայի՛ր քո թշվառությանը, որպեսզի չընկնես գայթակղության մեջ: Երբեք զոհ մի՛ եղիր ինքդ քեզանից: Նայի՛ր քո թշվառությանը, որպեսզի այն քեզ զգոն և արթուն պահի: Արհամարհի՛ր ինքդ քեզ և խոնարհեցրո՛ւ ինքդ քեզ, որպեսզի Ես միշտ կարողանամ քեզ վեր բարձրացնել Ինձ մոտ և կատարյալ դարձնել

[1] Հիսուս երկու Ձեռքով ինձ ցույց տվեց Իր Սիրտը, որը կարծես այրվում էր մի ոսկեգույն բոցով:

քեզ: Սատանան հզոր է, բայց ոչ երկար ժամանակով:

Հուսա՛, Իմ Վասո՛ւլա, գովաբանի՛ր Ինձ և փառաբանի՛ր Ինձ: Այդ Ես եմ՝ Քրիստոսը, որ խոսում եմ քո մեջ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 10, 1992

Խաղաղություն քեզ: Սերը սիրում է քեզ:

Ծաղի՛կս, լսի՛ր և գրի՛ր: Ինչպես մի մարդ, որը հրավիրում է ընկերներին՝ կիսելու իր հետ իր կերակուրը, այսօր Ես հրավիրում եմ ձեզ՝ աղոթելու, ինչպես նաև Ինձ հետ կիսելու Իմ տառապանքները, Իմ ուրախությունը և Իմ ցանկությունները: Դուք անհամբեր սպասում եք, որ լսեք Ինձ և լռության մեջ ունկնդրեք, թե ինչ եմ Ես ասելու: Եվ ա՜հ... Ես գիտեմ, թե որքան ծարավ են ձեզանից ոմանք:

Այս ժամանակներում, ինչպես երբևէ չի պատահել նախկինում, Ես վերևից իջեցնում եմ Իմ Ջեռքը՝ փրկելու ձեզ չարի ուժերից, որոնք պատրաստվում են հանդցնել այն փոքր լույսը, որը դեռ մնացել է ձեր մեջ, և ստիպել ձեզ, որ ապրեք խավարում: Ուստի մի՛ ասեք. «Չկա մեկը, որ փրկի ինձ, և չկա մեկը, որ օգնի ինձ», և որ ձեզ մերժել են օգնություն ցույց տալ: Կանչե՛ք Ինձ սրտանց, և Ես սուրալով կգամ ձեզ մոտ...

Ես ձեր Ընկերն եմ:

Ես Նա եմ, ով ամենից շատ է ձեզ սիրում: Ես Ամենահավատարիմն եմ: Ես ձեզ սովորեցրել եմ չմերժել որևէ մեկին բարիք անել, ով էլ որ խնդրի այդ: Դուք կմերժե՞ք դուրս քաշել այն փշերը, որոնք ծակում են Իմ Սիրտը: Դրա համար Ես կարիք ունեմ առատաձեռն հոգիների: Այսօր առավել, քան երբևէ, Ես կարիք ունեմ զոհաբերող հոգիների: Արդյոք ձեր մեջ մնացե՞լ է որևէ զգայուն հոգի: Ձեզանից ո՞վ Ինձ կդնի իր սրտի վրա, ինչպես մի կնիք: Ձեզանից ո՞ւմ սերն է Մահից ավելի ուժեղ: Մի՞թե դու դեռ չես հասկացել, թե ինչպես եմ Ես տանջվում քո հանդեպ ունեցած Իմ սիրուց, սերո՛ւնդ: Բացե՛ք ամբողջությամբ ձեր սիրտն Ինձ համար, Իմ քո՛ւյր, Իմ եղբա՛յր, սիրելինե՛րս, որովհետև Իմ Բերանը մագաղաթից էլ չոր է դարձել սիրո պակասից: Ինձ հանձնե՛ք ինքներդ ձեզ: Ինչո՞ւ եք վախենում հանձնվելուց: Դուք հանձնվում եք ձեր Սրբին՝ Նրան, ում ասում եք, որ սիրում եք: Տվե՛ք Ինձ ձեր սիրտն ամբողջությամբ, և Ես նրանից դրախտ կպատրաստեմ, որ փառավորի Ինձ՝ ձեր Թագավորին:

Նվիրաբերե՛ք ինքներդ ձեզ Իմ Սուրբ Սրտին և փառաբանե՛ք Ինձ: Դուք բոլորդ Իմ Տան անդամներն եք, և Ես չեմ ցանկանում, որ որևէ մեկը կորչի: Եթե մնաք Իմ մեջ, դուք պիտի ապրեք: Իմ փոքրի՛կ դառներ, շարունակե՛ք, հայտնի դարձնել ձեր եղբայրներին ու քույրերին նվիրաբերումը Իմ Սուրբ Սրտին, ինչպես նաև նվիրաբերումը ձեր Մոր Անարատ Սրտին:

Ես օրհնում եմ բոլորիդ՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատներին:

ΙΧΘΥΣ

(Պատգամ մեր Օրհնյալ Մորից):

Սիրելի՛ զավակներս, արե՛ք այն, ինչ Հիսուսն է ձեզ ասում:

Շնորհակալությո՛ւն հայտնեք Նրա Անվանը՝ Իր Հավատարիմ Սիրո համար: Գլուխներդ բարձրացրե՛ք դեպի Աստված, և դուք կպայծառանաք: Իմ խե՛ղճ զավակներ, Ես վերևից նայում եմ ձեր քաղաքներին, որտեղ հանդիստ չկա, և որտեղ այնքա՜ն շատ հեղաշրջումներ կան: Ես նայում եմ, սակայն չեմ կարողանում գտնել ո՛չ բավականաչափ սեր, ո՛չ էլ մեծահոգություն ու ողորմածություն: Ես կարիք ունեմ ավելի շատ աղոթքների, ավելի շատ ողորմածության և սիրո, որպեսզի օգնեմ ձեզ: Շատ քչերն են, որ աջակցում են Ինձ Իմ աղոթքներում: Հրաժարվե՛ք ձեր բոլոր չար ուղիներից և ապրե՛ք սրբորեն:

Ես ձեր աղոթքների կարիքն ունեմ, ինչպես ծարավ հողը՝ անձրևի, որպեսզի ձեզ օգնեմ և զարդարեմ ձեզ Իմ Որդու համար:

Այլևս ոչ մի ուշացում չպետք է լինի հիմա: Թշնամին մտադիր է անգթորեն ու անխղճորեն սպանել և շարունակել մարդկանց դուրս շպրտել իրենց սեփական երկրից: Ես սարսափելի բաներ եմ տեսել վերևից, և Իմ Սիրտը կոտրված է Իմ ներսում: Բայց Ես կարող եմ վերականգնել երկրները և կարող եմ վերականգնել Խաղաղությունը եղբայրների միջև, միայն այն դեպքում, եթե դուք զգոն լինեք Իմ Աղոթքների աղերսանքների և զոհողության Իմ Կոչերի համար: Երեխաների կորուստը, այրիությունը անմիջապես վերջ կգտնեն:

Ձեր սրտին մո՛տ ընդունեք Մեր Պատգամներն այս անգամ: Ինքներդ ձեզ Աստծուն հանձնե՛ք, և Նա պիտի բռնի ձեր ձեռքը և ձևավորի ձեզ: Նա ձեզանից կստեղծի Իր Աստվածային Պատկերի արտացոլումը: Նրա հետ դուք կսովորեք, որ տառապանքն աստվածային է, նվաստացումն ու մարմինը ճնշելը՝ ամոքիչ Աստծո Աչքերում, և հնազանդությունը հաճելի է Նրան: Ցանկացե՛ք այն, ինչն ամենից շատ է մերժված այս աշխարհի կողմից՝

Նրա Խաչը:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ Իմ Մայրական Սիրով:

Հունիսի 16, 1992

(Այս առավոտ ես փորձության ենթարկվեցի և մի փոքր կասկածեցի, որ Աստված իսկապես խոսում էր ինձ հետ):

«Ակա՛նջ դիր իմ խոսքերին,
Տե՛ր, Եվ ո՛ւշ դարձրու աղաղակիս,
ընդունի՛ր ձայնն աղոթքներիս,
Թագավո՛ր իմ և Աստվա՛ծ իմ»[1]:

[1] Սաղմ. 5:2-3

Վասո՛ւլա, ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ: Հիշո՞ւմ ես, զավա՛կս, թե որքան տխուր էի ես այն ժամանակ[1], երբ պատմում էի քեզ Իմ զավակների մասին, որոնք լքում են Ինձ: Վասո՛ւլա, ասա՛ Ինձ, որտեղի՞ց ես ստացել Աստվածաշնչում գտնվող իմաստության այդ հսկայական պաշարը, եթե ոչ հենց Իրենից՝ Իմաստությունից, որ ժպտաց քեզ և դարձավ քո անձնական Ուսուցիչը...

Վասո՛ւլա, ես քո Աբբան եմ, թո՛ւյլ տուր Ինձ քեզ ասել. սկզբում դու ապրում էիր մեկ նպատակի համար, դու ապրում էիր ինքդ քեզ համար. դու ծառայում էիր քո մնափառությանը: Այն ժամանակ դու հավատում էիր, թե զգեստավորված ես շքեղությամբ և փառքով: Սակայն իրականում դու բոլորովին մերկ էիր: Ոչ մեկը քեզ չէր ասել, թե որքան մերկ էիր դու, մինչև որ ես Ինքս փայլեցի քեզ վրա քո մթության մեջ: Միայն այդ ժամանակ քո աչքերն առաջին անգամ տեսան ինքդ քեզ Ճշմարտության Լույսի տակ: Դու տեսար քեզ այնպես, ինչպես իրականում կաս: Եթե Իմ Կարեկցանքը չլիներ, քեզ սուր էր սպասվում:

Այնուամենայնիվ, ես խղճացի քեզ, և Իմ Ողորմությամբ ես շնչեցի քո ռունգերի մեջ՝ վերակենդանացնելով քեզ: Հետո ես վերականգնեցի քո հիշողությունը մեր կապի մասին: Ես մեծ բաներ արեցի քեզ համար.

Ես պսակեցի քեզ Ինձ հետ,
և դու դարձար Իմը[2]:

Հետո ես քեզ ձևավորեցի, որպեսզի դառնաս Իմ Սրտին հաճելի մի զավակ, որը պիտի իրագործեր Իմ ողջ նպատակը՝ <u>ետ բերել Իմ ժողովրդին դեպի ճշմարիտ հավատքի՝ հիմնված Սիրո վրա, և կիսել Իմ Որդու Խաչը, Միասնության Խաչը</u>: Ես քեզ ձևավորել եմ՝ ապրելու ոչ թե քեզ համար, այլ Ինձ: Ես քեզ սովորեցրել եմ, զավա՛կս, թե որքան ավելի մեծ բան է ծառայել Իմ Տանը, քան թե քո մնափառությանը:

Իսկ հիմա քո կյանքն անցկացրո՛ւ Ինձ հետ, քանի որ սա է այն ճակատագիրը, որ նշանակված է քեզ կյանքում և Մեծ Ուրացության այս Դարաշրջանում: Ուստի, ինչ աշխատանք էլ որ ես առաջարկեմ քեզ անել, արա՛ այն քո ողջ սրտով, մեկ նպատակի համար՝ Ինձ փառաբանելու համար: Աշխարհը ծանր քնի մեջ է և լուրջ վտանգի տակ է, քանի որ նա չգիտի, թե ինչ է սպասվում իրեն: Իրենց մեղքի պատճառով նրանց ուրացությունը մահ կբերի իրենց: Ոչ մեկը չի կարող ասել, թե Իմ Օրը երբ կգա: Այդ Ժամը հանկարծակի պիտի գա նրանց վրա:

Այսօր ես մեծ գործեր եմ արել՝ ձեզ փրկելու համար: Ես ամենուր խաղողի այգիներ եմ տնկել, ես անապատներից այգիներ ու մրգաստաններ եմ պատրաստել: Ես մի Հայր եմ, որը տրտմած է տարաժամ սգալուց, որովհետև ես տեսնում եմ, թե այս աշխարհը ավելի հակված է սպանելու, քան թե սիրելու: Ամեն օր ծրագրվում են զանգվածային մանկասպանության նախաձեռնումներ: Ամենուր Իմ Աչքերը տեսնում են դավաճանություն, սպանություն, քայքայում, չնություն, խարդախություն,

[1] Դեռևս չհրատարակված պատգամ Հավիտենական Հորից՝ թվագրված սեպտ. 19, 1986 թվին: (տես՝ «Իմ Հրեշտակ Դանիելը»):
[2] Ակնարկում է՝ ես. 54:5. «Քանի որ հիմա քո Արարիչը կլինի քո ամուսինը, նրա անունը Տեր Զորությանց է»:

խռովություն ամուսնության մեջ, մարդիկ, որոնք հեգնում են կրոնը, հոգիների ապականում, սուտ վկայություն, մեղքեր ուղղված ողջ բնության դեմ: Ուրեմն ինչպե՞ս կարող եմ ես լուռ մնալ: Ահա թե ինչու Արդարությունը անակնկալ ձևով պիտի դա այս բազմության վրա: Ես խոսում եմ անկեղծորեն, որպես մի Հայր՝ մտահոգված, բայց և վիրավորված ու վշտացած: Իմ Ձայնը հառաչում է Երկնքից, լսե՛ք Ինձ. Ձեր մեջ որևէ արդար մարդ մնացե՞լ է...

(Հանկարծ Աստծո Աչքերը շրջվեցին դեպի ինձ: Նա կտրուկ դադարեցրեց Իր թելադրանքը):

Վասո՛ւլա, գնա՛ և քո մյուս պարտականություններն էլ կատարի՛ր: Ես գիտեմ քո ժամանակի ու քո կարողությունների մասին: Իմ Հոգո՛ւ սիրելի, Իմ մեջ հագեցրո՛ւ քո ծարավը: Ես Սրբության մի Կենդանի Ակունք եմ, և ես սիրում եմ քեզ:

Արի՛, Մենք[1] օրհնում ենք քեզ, արի՛:

(Ավելի ուշ)

Փոքրի՛կս, Ինձ հետ եղի՛ր: Դու պատրա՞ստ ես:

Այո՛, Տե՛ր:

Ուրեմն լսի՛ր Ինձ: Դեռ որքա՞ն պետք է Ինձ վիրավորեք՝ չլսելով Ինձ, դեռ որքա՞ն պետք է կանչեմ քո ականջին «ապաշխարի՛ր», սերո՛ւնդ, և դու չպիտի լսես: Բայց տե՛ս, ես արթնացնում եմ մեռածներին՝ այն անարժան մարդկանց, որոնց վարքագիծը սարսափելի էր և հեռու սրբությունից: Աշխարհը պիտի լցվի Իմ Գիտությունով և Իմ Փառքով, քանի որ, ինչպես ջրերն են բարձրացնում ծովը, Իմ Հոգին նույնպես, ինչպես մակընթացություն պիտի ներխուժի, և ոչ ոք չպիտի կարողանա կանգնեցնել Իմ Հոգուն ձեր մեջ հոսելուց:

Վասո՛ւլա, աղոթի՛ր Ինձ հետ.

Տե՛ր, Քո Զորությամբ
և Քո Իմաստությամբ
Դու հարություն տվիր ինձ,
Դու խնամեցիր ու մեծացրիր ինձ:
Քո Սիրով Դու օգնեցիր ինձ,
և ես դարձա Քո հարսը:
Տե՛ր, Դու Քո Պատգամը
վստահեցիր ինձ:
Թող գովաբանվի մեր Տերը:
Արի՛, Տե՛ր: Մարանաթա: Ամեն:

[1] Դա ասաց Սուրբ Երրորդությունը:

Եվ ես ասում եմ ձեզ. ես Վերադարձի Ճանապարհին եմ:bԻնչպես մի ճանապարհորդ, որն արդեն դուրս է եկել, ես՝ Հիսուս, արդեն հետադարձի ճանապարհին եմ և գալիս եմ դեպի ձեզ:

Տե՛ր իմ, պատմի՛ր ինձ այդ մասին: Դա ուրախացնում է ինձ:

Զավա՛կս, ես մի անգամ խոսել եմ... Ես նորից չեմ խոսի:

Դու ի՞նչ նկատի ունես, Տե՛ր իմ:

Իմ բառերը պարզ են...

Ես դարձյալ չեմ հասկանում, թե Դու ինչ նկատի ունես, Տե՛ր:

Տե՛ս, զավա՛կս, ձեր Աստվածը գալիս է: Սերը գալիս է: Նա գալիս է՝ ձեր մեջ ապրելու:

Ավելի՛ն ասա այդ մասին, Տե՛ր:
Մենք բոլորս հրճվում ենք լսելով,
որ Հույսն է խոսում այնտեղ,
որտեղ հուսահատություն կա,
Սերն է արտահայտվում այնտեղ,
որտեղ ատելություն կա,
Խաղաղությունն է
հայտարարվում այնտեղ,
որտեղ պատերազմներ
և հակամարտություններ կան:

Արիացի՛ր: Մի՛ վախեցիր կամ տխրի՛ր մնացած այս մի քանի օրերի համար: Ի՛նձ վստահիր ամբողջ սրտով: Ուժե՛ղ եղիր, ամո՛ւր կաց, այո՛, ամո՛ւր կաց, և ես այնպես պիտի անեմ, որ Իմ Պատգամը հայտարարելիս քո ձայնը հասնի մինչև ամպերը: Մոտեցի՛ր Ինձ, մոտեցի՛ր Ինձ...

Հունիսի 17, 1992

Յա՛հվե, Աստվա՛ծ իմ:
Դու, որ այնքան քնքուշ ե
և այնքան մոտ ես ինձ,
լսի՛ր տառապանքները Նրա,
ով Քո Հոգու Բերկրանքն է՝
Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի:
Եկեղեցու բոլոր
մուտքերն ամայացել են,
և Նրա քահանաները հառաչում են

նրա ամայության համար:
Քաղաքը, որը ժամանակին լցված էր
հավատացյալների բազմությամբ,
միայնակ է մնացել.
կարծես հանկարծակի այրիացել է:
Քո տաճարները[1] ոչնչանում են
մեկը մյուսի հետևից,
մինչ նրանք ուտելիք են փնտրում,
որպեսզի կենդանի մնան,
բայց խնկի փոխարեն
չնչում են Սատանայի ծուխը:
Ո՞ւր են այն կալվածքները,
որոնք նման էին այգու:
Ո՞ւր են ծաղկող խաղողի որթերը,
որոնք ժամանակին
բուրմունք էին արձակում:
Ինչո՞ւ են Քո
խորանները քանդված[2]:

Խաղաղություն, զավա՛կս, խաղաղություն... Լսի՛ր Ինձ: Մեծ Օրը մոտ է ձեզ հիմա, ավելի մոտ, քան կարծում եք: Խորա՛ն, ասա բոլորին, որ Ես կրկին ու կրկին ցույց պիտի տամ Իմ Փառքը և պիտի ցուցադրեմ Իմ Սրբությունը: Ես առանց մնացորդի պիտի հեղեմ Իմ Հոգին ողջ մարդկության վրա: Ձեր աչքերը դեռ ոչինչ չեն տեսել, և ձեր ականջները ոչինչ չեն լսել:

Այսօր ձեր սրտերը հիվանդ են, իսկ ձեր աչքերը՝ պղտորված, որովհետև դուք ապրում եք մթության և ամայության մեջ, իսկ Թշնամին թափառում է ետ ու առաջ այդ ամայության մեջ:

Ես՝ Տերը, պիտի բազմապատկեմ ձեր երիտասարդների տեսիլքները, և ձեր որդիներից ու դուստրերից շատ շատերը պիտի մարգարեանան ավելի քան հիմա: Ես պիտի հատուցեմ ձեր անպտուղ տարիների համար, որոնք ձեզ տարան ուրացության: Ես Իմ Հոգին պիտի ուղարկեմ առանց մնացորդի, որպեսզի նվաճեմ Իմ տիրապետությունները, և Իմ Մատով Ես պիտի վերակառուցեմ Իմ քանդված խորանները: Ես պիտի գամ Իմ խաղողի որթերի մոտ, որպեսզի ոռոգեմ նրանց Իմ Հոգով, քանի որ նրանց տերևները թոշնած են, և նրանք նման են անջրդի պարտեզի: Ես պիտի հեռացնեմ նրանց խեղդող փշերն ու տատասկները, և Իմ որթերն իրենց պտուղը պիտի տան: Այդ բոլորը Ես պիտի անեմ ձեզ փրկելու համար: Ինչպես երբեք, Ես նշաններ ցույց պիտի տամ երկնքում և երկրի վրա: Ես պիտի ավելացնեմ տեսիլքները և պիտի երևան բերեմ ու բազմացնեմ մարգարեներին: Հետո Ես ձեզ մոտ պիտի ուղարկեմ Իմ հրեշտակներին, որ առաջնորդեն ձեզ, և Ես՝ Սուրբս, պիտի ապրեմ ձեր մեջ:

Իմ ժողովուրդը հիվանդ է իր անհավատարմության հետևանքով: Նրանք մերժեցին Իմ Հոգու պարգևները, որովհետև վստահեցին իրենց հոգուն,

[1] Մենք Աստծո տաճարներն ենք:
[2] Երեք հարցերը վերաբերում են հոգուն: Կալվածքները, որթերը, խորանները մեր հոգիներն են:

այլ ոչ թե Իմ Հոգուն՝ հետևելով իրենց մտքին: Բայց հիմա ժամը եկել է, Իմ Սուրբ Հոգու ժամը՝ փառաբանելու Իմ Որդու Մարմինը: Արի՛, Վասո՛ւլա, Ես ուզում եմ, որ փութաջան լինես, Ես ուզում եմ, որ սիրես Ինձ: Ուստի, զավա՛կս, Ես եռանդ կներշնչեմ քո մեջ և մի քանի կաթիլ՝ Իմ այրող Սիրուց, որպեսզի կենդանացնեմ քեզ Իմ Բոցով:

Հունիսի 18, 1992

Վասո՛ւլա, թո՛ւյլ տուր Ինձ երգել Իմ Սիրո Օրհներգի մնացած մասը: Թո՛ւյլ տուր Ինձ տարածել Իմ Սիրո Օրհներգը՝ ի սեր նրանց, ովքեր պատրաստ չէին լսելու:

Այո՛, Տե՛ր,
արի՛ և հալեցրո՛ւ մեր սրտերը:
Ցո՛ւյց տուր մեզ,
Թագավո՛ր իմ, Աստվա՛ծ իմ,
Հարստությունը Քո Սուրբ Սրտի:
Ցո՛ւյց տուր մեզ
Լույսը Քո Դեմքի:
Թող մենք հասկանանք,
որ Դու՝ Աստվա՛ծ իմ,
երկնքից ցած ես նայում՝
տեսնելու,
թե արդյոք մնացե՞լ է որևէ մեկը՝
հավատքով ու սիրով,
և գոնե մեկը փնտրո՞ւմ է քեզ:

Օրհնյա՛լ լինի Քո Անունը:
Օրհնյա՛լ լինի մեր Տերը,
մեր Փրկիչը, Էմանուել
(Աստված մեզ հետ),
որովհետև Նա երգեց մեզ համար
Իր Սիրո Օրհներգը:
Ինչպես Նա հայտարարեց
Իր մարգարեների բերանով,
որ կվերադառնա, այդպես էլ
Նա մեզ նախապատրաստում է
հիմա այդ հանդիպմանը:

Եվ Դո՛ւ, Օրհնյա՛լ Մայր,
Դո՛ւ, որ տվեցիր մեզ մեր Փրկչին,
կրկին մեզ հետ ես՝ Տիրոջ համար
ճանապարհ պատրաստելով
և պատրաստելով մեզ
հանդիպելու Նրա հետ:

Եվ Տերը, ելնելով Իր

Անսահման Ողորմությունից,
պիտի այցելի մեզ,
որ մեզ լույս տա մեր մթության մեջ
և ուղղի մեր քայլերը
դեպի Խաղաղության,
Սիրո և Միասնության ճանապարհը:
«Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում,
և երկրի վրա խաղաղություն
և հաճություն մարդկանց մեջ»[1]*:*

Իմ Վասո՛ւլա, Ես պիտի գամ այն մարդկանց մոտ, ովքեր երբեք չեն մտածել Իմ մասին, երբեք ուշադրություն չեն դարձրել, թե Ես ինչ եմ արել՝[2] իրենց փրկելու համար, և Ես պիտի իրականացնեմ Եսայու մարգարեությունները. «Ինձ գտան նրանք, ովքեր Ինձ չէին փնտրում, և Ես Ինձ հայտնի դարձրեցի նրանց, ովքեր Ինձնից խորհուրդ չէին հարցնում»: Եվ մահվան հովիտներն իրենց մեռյալներով ու աճյուններով պիտի նվիրաբերվեն Մեր Երկու Սրտերին:

Մնա՛ Խաղաղության մեջ: Արի՛ և կրկնի՛ր Ինձ հետ այս խոսքերը.

Հիսո՛ւս, եղի՛ր իմ հենարանը,
առանց Քեզ ես ոչինչ եմ,
առանց Քեզ
իմ սեղանը դատարկ է:
Առանց Քեզ ես պարտված եմ:
Եղի՛ր իմ Ներշնչանքը
և լցրո՛ւ ինձ,
եղի՛ր իմ Ապաստանն
ու իմ Զորությունը:
Ես սիրում եմ Քեզ,
և իմ կամքը Քոնն է:
Թող այդպես լինի: Ամեն:

Հուլիսի 2, 1992

(Մեր Սուրբ Մայրը)

Քրիստոսը շուտով ձեզ հետ կլինի: Դու աշխատում ես, զավա՛կս, սակայն ինչ էլ որ առաջարկես Իմ Որդուն՝ Նրա Փառքի համար, պիտի սրբացնի քեզ և պիտի փառաբանի Նրան: Աստծո նպատակն էր Իրեն հայտնել քեզ՝ Հանուն Իր Մարմնի՝ Եկեղեցու:

Աղջի՛կս, հիշի՛ր, Հիսուս երբե՛ք, երբե՛ք չի լքի քեզ: Հիշո՞ւմ ես, թե ինչպես Ինձ վստահեցիր Պատգամները, որոնք դու ստանում ես: Ես, որպես քո Մայրը, պահպանում եմ այն, ինչ տվել ես Ինձ, և այսօր, ինչպես երեկ, Ես շարունակելու եմ շտապ տարածել Իմ Որդու

[1] Ղուկ. 2:14
[2] Ես. 65:1

Պատգամները:

Սատանայի ձայնը կարող է մահաբեր հնչել, և կարող է թվալ, թե նա հրճվում է իր հաղթությամբ ամեն մի ազգի վրա, և որ նրա հաղթանակները փառապանծ են, բայց, Վասո՛ւլա, շուտով ես պիտի հաղթեմ նրան, քանի որ սա Իմ ճակատամարտն է:

Աղջի՛կս, ես կսփոփեմ քեզ և բավարար զորություն կտամ, որ շարունակես քո առաքելությունը:

(Տերն է խոսում հիմա):

Հաճեցրո՛ւ Ինձ և հայտարարի՛ր Իմ Խոսքերն ամենուր, ուր որ ես քեզ ուղարկում եմ: Ամո՛ւր մնա:

Հենվի՛ր Իմ Սրտին և քեզ սիրվա՛ծ զգա: Ասա՛ Իմ զավակներին, որ իրենք իրենց և իրենց ընտանիքները նվիրաբերեն Մեր Երկու Սրտերին: Նվիրաբերե՛ք ինքներդ ձեզ, որպեսզի ես դրոշմեմ ձեզ, որպես Իմը: Լսե՛ք Ինձ, ես հանդիսավոր ասում եմ ձեզ, որ պիտի գա աղետի ու դժբախտությունների մի ժամանակ, ինչպիսին երբեք չի եղել: Երկիրն արդեն տեսնում է այդ ժամանակի սկիզբը: Ամո՛ւր կանգնեք և թույլ մի՛ տվեք, որ ձեզ խաբեն:

Շատերն են հայտարարում, որ լսում են Ինձ պատգամներ հաղորդելիս, բայց այս պատգամների հեղինակը ես չեմ, ոչ էլ ձեր Մայրն է: Ես արդեն զգուշացրել եմ ձեզ այս ժամանակների մասին: Ես բազմիցս զգուշացրել եմ, որ այս ժամանակներում կհայտնվեն շատ կեղծ մարգարեներ, որպեսզի ստերով ավերեն ձեր Տիրոջ Գործերը: Նրանք, ովքեր որ լսում են, զգոն կլինեն: Անխոհեմների սիրտը կխաբվի: (Շատերը կփորձեն խաբել քեզ, Վասո՛ւլա, ասելով, որ Ես՝ Հիսուս, ուղարկում եմ իրենց քեզ մոտ, բայց նրանք կեղծ մարգարեներ են): Հիշե՛ք, շատ կեղծ Քրիստոսներ կհայտնվեն: Ոմանք մեծ նշաններ ցույց կտան և կզարմացնեն նույնիսկ ընտրյալներին: Ահա, Ես նորից զգուշացրի ձեզ:

Աղջի՜կս: Թույլ կտա՞ս Ինձ քո միջոցով շարունակել այս աշխատանքը: Աղոթի՛ր, որ հանկարծ չընկնես փորձության մեջ: Ես կբացեմ ճանապարհը քեզ համար: Մի՛ վախեցիր, Իմ Սերը քո հանդեպ Հավիտենական է:

Հուլիսի 3, 1992

(Մեքսիկա)

Ես ձեր Սուրբն եմ, որ իջնում եմ Երկնքից՝ ձեզ բոլորիդ Իմ Սիրո ցողով ողողելու համար, որպեսզի մարդկության սիրտը հեռանա մեղքից ու չարությունից: Ես ձեզ եմ տալիս Իմ Սիրո հզոր նշանները, բայց ո՞վ կա այդտեղ, որ ճանաչի Իմ Սերը: Մե՛քսիկա, քո Թագավորն այստեղ է, որ վերցնի քեզ Իր Բազուկների մեջ:

Ես այստեղ եմ

և թեքվում եմ ցած՝ դեպի քեզ, որ չշնչամ քո ականջին Իմ Սիրո

մեծությունը:

Մի՞թե դուք հասկացաք, որ այդ Մեր Երկու Սրտերն էին, որ հոգում էին ձեր մասին: Մեր Երկու Սրտերն այստեղ են, որ բնակվեն ձեր տներում և պաշտպանեն ձեզ Սատանայի կատաղի զայրույթից: Այսօր առավել, քան երբևէ, Ես կոչ եմ անում ձեր ազգին, որ ձեր սրտերը ուղղեք Ինձ՝ ձեր Տիրոջը: Փոքրիկնե՛րս, ձեզանից յուրաքանչյուրը այնքա՜ն թանկ է Ինձ համար:

Եկե՛ք, եկե՛ք և սիրե՛ք Ինձ: Խոնավացրե՛ք Իմ չորացած շուրթերը ձեր սիրով: Ես կբուժեմ ձեր ազգի մեջ գտնվող ողջ անհավատարմությունը, և ձեր Թագավորը ձեզ հանգիստ կտա: Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին և ասում եմ Իմ Սրտի խորքից.

Սերը սիրում է ձեզ,
Մե՛կ եղեք Իմ Սիրով:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 7, 1992

(Մազաթլան - Մեքսիկա)

Մենք չկարողացանք գնահատել Քո մեծ Սերը և չենք դադարում պղծելուց Քո Սուրբ Հոգին, որը հիմա փորձում է որդեգրել մեզ և բերել մեզ դեպի Ճշմարտությունը, որը հիմնված է Սիրո վրա: Ուրացությունը զուգակցվել է բանապաշտության հետ և ծնունդ տվել անաստվածությանը: Մենք թերացել ենք Քո հանդեպ և շարունակում ենք թերանալ: Ոմանք դիտավորյալ վիճում են Քո Սրբության շուրջ: Դու խոսում ես, բայց ո՞վ է լսում: Վիշտը մաշում է Քո աչքերը, բայց և այնպես, ինչ որ Դու ստանում ես՝ լոկ արհամարհանք է:

Խաղաղություն քեզ: Փոխանցի՛ր Իմ խաղաղությունը Իմ ամենասիրելի հոգուն[1]:

Դուք պետք է հավատաք Ինձ, երբ Ես ասում եմ, որ Իմ Սուրբ Հոգին ձեր սերնդի մեծ ուրացության մեջ, այնպիսի հալածանքի է ենթարկվում, ինչպիսին չի եղել նախկինում: Նա դարձել է ձեր դարաշրջանի դայթակղության քարը: Ես ասել եմ, փոքրի՛կ զավակներս, որ ձեզ դուրս կվտարեն ձեր Հոր Տնից և կդատապարտեն ձեզ՝ կարծելով, թե սուրբ պարտականություն են կատարում Իմ հանդեպ: Թույլ մի՛ տվեք, որ ձեր փոքրիկ սրտերն անհանգստանան, սիրելինե՛րս: Ես՝ ձեր Փրկիչը, ձեր առջևում եմ:

Այսօր Ես խոսում եմ հանուն բոլոր նրանց, ովքեր վիրավորված են: Ես տալիս եմ ձեզ Իմ խաղաղությունը: Թող այդ խաղաղությունը պարուրի ձեզ, մի՛ վախեցեք և մի՛ ասեք. «Ես ի՞նչ պետք է անեմ, Տե՛ր»: Ես կասեմ ձեզ. աղոթե՛ք անդադար, որպեսզի սրբագործեք ձեր հոգին և մյուսների

[1] Հայր Մասիին Մազաթլանից (Մեքսիկա):

հոգիները: Աղոթե՛ք սրտանց և ստիպե՛ք չարին փախչել: Միացած եղեք Ինձ հետ, և ոչ մեկը ու ոչ մի բան չեն դա ձեր և Իմ միջև: Ժամանակն է, որ դուք այլևս չտատանվեք:

Խաղողի այգիներ ստեղծեք ու տարածե՛ք, որտեղ որ կարող եք: Մի՛ վախեցեք փոթորիկներից, որոնք բարձրանում են ժամանակ առ ժամանակ: Իմ Սուրբ Սիրտը ձեր Ապաստանն է: Ուրեմն եկե՛ք և նվիրաբերե՛ք ինքներդ ձեզ ու ձեր ընտանիքները Ինձ և ձեր Մոր Անարատ Սրտին:

Ես՝ Հիսուս, մտադիր եմ մնալ ձեր երկրում և սրբագործել այն: Դրա համար Ես խնդրում եմ ձեր երկիրը նվիրաբերել Մեր Երկու Սրտերին: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ Իմ Սրտի խորքից:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 8, 1992

«Կար խաղողի մի որթ.
Դու արմատով
հանեցիր նրան Եգիպտոսից:
Այն տնկելու համար
Դու մաքրեցիր մի տարածություն,
որտեղ նա կարող էր աճել:
Նա արմատ գցեց
և լցրեց ողջ երկիրը:
Քո Պատգամը ծածկեց
սարերն իր ստվերով,
Քո մայրիներն իրենց ճյուղերով,
իրենց խիզբերով
տարածվեցին մինչև ծովը, իսկ
նրանց ընձյուղները՝ մինչև գետը:
Խնդրում եմ, Աստվա՛ծ,
ներքև՛ նայիր երկնքից,
նայի՛ր այդ որթին,
այցելի՛ր նրան, պաշտպանի՛ր այն,
ինչ Քո Սեփական
Ձեռքն է տնկել»[1]*:*

Տե՞ր:

Ես եմ: Փոքրի՛կս, հենվի՛ր Ինձ վրա:

Իմ Սուրբ Սրտի՛ Վասո՛ւլա, ուրախացի՛ր: Քո Թագավորը եկել է մինչև քո դռան շեմը և ներս է մտել քո սենյակը: Քո Թագավորը երկնքից խոնարհվել է ցած, որ հանի քեզ: Քայլ առ քայլ Ես սովորեցրել եմ քեզ. Ես քո Ուսուցիչն եմ: Կամաց-կամաց Ես հեռացրել եմ քեզ աշխարհից, որ մխրճեմ քեզ Իմ Սրտի մեջ: Ես քեզ բացահայտել եմ այնպիսի բաներ, որոնք քո իմացությունից և կարողությունից վեր են:

[1] Սաղմ. 79:9-12, 15-16

Հավատա՛, Իմ քա՛ղցր աշակերտ, Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ: Ընդունի՛ր Իմ Խաղաղությունը: Մենք պիտի աշխատենք միասին: Ես և դու պիտի տարածենք Իմ Պատգամը: Ես քեզ կուղարկեմ ևս մի քանի ազգերի մոտ, ապա, երբ Ես զգամ, որ դու ավարտել ես քո առաքելությունը, կվերադառնաս Ինձ մոտ: Ես Ինքս պիտի գամ ու տանեմ քեզ:

Հուլիսի 10, 1992

(Վիլլենոյվ, Շվեցարիա)

«Այնտեղ՝ գահի առաջ, նրանք երգում էին մի նոր օրհներգ չորս կենդանիների և երեցների ներկայությամբ, մի օրհներգ, որը կարող էին սովորել միայն հարյուր քառասունչորս հազարը, ովքեր փրկվել էին երկրից»[1]*:*

Տե՞ր:

Ես եմ: Ես եմ խոսում, ուստի մի՛ կասկածիր: Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, թո՛ւյլ տուր Ինձ գրել մի քանի տող այսօրվա համար:

Շատ սիրելի՛ ընկերներ, Ես եկել եմ երկնքից, որպեսզի ձեզ համար երգեմ Սիրո Իմ Նոր Օրհներգը և ձեզ բոլորիդ հիշեցնեմ Իմ Հավատարիմ Սիրո մասին:

Ես ձեր լավագույն ընկերն եմ,
ձեր Թանկագին Սուրբ Ուղեկիցը:

Ամբողջ ժամանակ Ես ձեր կողքին եմ եղել: Եվ չնայած շատ անգամ անտեսվել եմ, Ես մնացել եմ ձեզ հետ, որպեսզի դուք զգաք Իմ Ներկայությունը: Ամեն անգամ, երբ դուք պատրաստվում էիք ըմբոստանալ Իմ դեմ, Ես՝ Տերը, Կարեկցանքով լցված, բռնում էի ձեր աջ ձեռքից, որպեսզի ձեզ գրավեմ ու քաշեմ Իմ Սրտի մեջ և ցույց տամ ձեզ Իմ Ամսահման Սերը: Իմ Հոգո՛ւ օրհնյալ: Դու միայնակ չես. Ես միշտ քեզ հետ եմ, որպեսզի քեզ սփոփեմ և պահպանեմ, ինչպես պահպանում են աչքի լույսը: Մի՛ ասա. «Իմ շուրջը ամբողջովին մութ է»: Ես քեզ մոտ եմ, որպեսզի դուրս բերեմ այդ մթությունից: Դու միայն պետք է ասես. «Արի՛,Տե՛ր», և Ես կսուրամ քեզ մոտ, զավա՛կս:

Օր ու գիշեր Ես սպասում եմ ձեր հանձնվելուն, մի՛ ուշացեք: Ձեզ ամբողջովին Ինձ հանձնեք, որպեսզի կարողանաք լինել Իմ Լույսի մեջ: Եթե դուք սիրում եք Ինձ, դուք Ինձ թույլ կտաք անել այն, ինչը, Իմ կարծիքով, լավագույնն է ձեզ համար: Մի՛ վախեցեք, Ի՛նձ տվեք ձեր սիրտը, և Ես կդնեմ այն Իմ Սուրբ Սրտի մեջ, որ կլանեմ այն: Եթե դուք սիրում եք Ինձ, ինչպես ասում եք, դուք կերգեք ազգերին Սիրո Իմ Նոր

[1] Հայտ. 14:3

Օրհներգը, որպեսզի փառաբանեք Ինձ և մի նոր կյանք ստեղծեք յուրաքանչյուր հոգու համար:

Իմ Սիրտը ես առաջարկել եմ ձեզ, դուք էլ ձեր հերթին կառաջարկե՞ք Ինձ ձերը: Սերը ձեր կողքին է, և ես օրհնում եմ ձեզ՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր և ձեր ընտանիքների ճակատին: Մե՛կ եղեք:

ΙΧΘΥΣ

(Մեր Օրհնյալ Մայրը):

Ես ձեր կողքին եմ՝ ձեզ սփոփելու համար, բայց Ես, որ ձեր Մայրն եմ, նույնպես ձեր սփոփանքների կարիքն ունեմ, քանի որ մեծ է Իմ Սրտի տագնապը: Իմ զավակներից շատերը ըմբոստանում են Ամենաբարձրյալի դեմ: Ես ձեր աղոթքների կարիքն ունեմ: Մատուցե՛ք Ինձ ձեր աղոթքները Իմ նպատակների համար:

Վասո՛ւլա, ասա նրանց, որ ապրեն որպես Աստծո զավակներ:

Հուլիսի 14, 1992

«Տե՛ր,
երբ առաջին անգամ ինձ հալածեցին,
ես չկարողացա
նույնիսկ պաշտպանել ինձ:
Ոչ մի վկա չկար, որ օգներ ինձ:
Նրանք բոլորն էլ լքեցին ինձ:
Բայց Դու, Տե՛ր, կանգնեցիր
իմ կողքին և ինձ ուժ տվեցիր,
որ իմ միջոցով
ողջ Պատգամը հռչակվի,
որպեսզի բոլոր ազգերը լսեն:
Եվ այդպես ես փրկվեցի
Առյուծի երախից: Տերն ինձ կփրկի
բոլոր չար հարձակումներից,
«և, ո՜հ, դրանք այնքա՜ն շատ են»:
Վերջում Դու ինձ
ապահով կհասցնես
Քո Թագավորությունը:
Քեզ լինի փառք
հավիտյանս հավիտենից»: Ամեն[1]*:*

Իմ Վասո՛ւլա, ապրի՛ր խաղաղության մեջ, սիրի՛ր Ինձ և տարածի՛ր Իմ Խաղաղությունն ամեն տեղ, ուր Ես ուղարկում եմ քեզ: Մի՞թե դու դեռ չես հասկացել Իմ Զորությունը: Ուրեմն ինչի՞ց ես վախենում: Ես դրել եմ Իմ Մատը քո շուրթերին: Դու լիովին չես գիտակցում դա, բայց Ես քեզ ասում եմ, որ Իմ Մատը քո շուրթերին է, որպեսզի դու ասես այն ամենը,

[1] Բ Տիմ. 4:16-18

ինչ ես Ինքս եմ տվել քեզ:

Ո՛չ, դու անվնաս չես կարող մնալ, բայց ես բավականաչափ Զորություն ունեմ, որ քեզ բուժեմ և լավացնեմ քո վերքերը: Իմ Բաժակը դառն է, սակայն Սիրուց ելնելով՝ ես հրավիրեցի քեզ, որ կիսես այն Ինձ հետ: Եթե ես քո կողքին կանգնած չլինեի, քեզ կտոր-կտոր կանեին: Ուստի մի՛ անհանգստացիր, ոչ մեկը չի կարող քեզ խլել Ինձանից:

Լսի՛ր Իմ խորհուրդը. չհոգնես ու չսպառվես: Իմ Տան հանդեպ քո եռանդը կլանում է քեզ, և ես ուրախ եմ՝ Ինձ փառաբանելու քո ոգևորության համար: Այնուհանդերձ, Փեսան ասում է Իր հարսին. մարդարեացի՛ր խաղաղությամբ և թո՛ւյլ տուր Իմ Սուրբ Հոգուն լինել քո Առաջնորդը: Իմ Սուրբ Հոգին չի ծանրաբեռնի քեզ քո ուժերից վեր: Այդ պատճառով էլ մի՛ երկարաձգիր խնդրանքներն ու հանդիպումները: Իմ Հոգին քեզ ուղղություն պիտի տա, որպեսզի դու կարողանաս բավարար չափով տալ նրանց: Պետք է արվի միայն այն, ինչ որ էական է: Ծառայի՛ր խոնարհությամբ, քարոզի՛ր և ուսուցանի՛ր այն ամենը, ինչ ես տվել եմ քեզ: Այդ ձևով դու պիտի փառաբանես Ինձ: Ուշադի՛ր եղիր, թե ինչ ես սովորեցնում: Կրկնի՛ր միայն այն բառերը, որ ես Ինքս եմ քեզ տվել: Մի՛ ավելացրու, ոչ էլ կրճատիր: Եղի՛ր Ինձ նվիրված:

Ես հիշեցնում եմ քեզ այս բաների մասին, որպեսզի անբա- սիր հավատես Իմ Գիտելիքը: Ես ուզում եմ, որ դու լինես Իմ Արձագանքը, որպեսզի նրանք, ովքեր լսում են, ճանաչեն Իմ Ձայնը: Միշտ ուշադի՛ր եղիր, որ ճիշտ գործելակերպ ընտրես:

Վասո՛ւլա, Հա՛րսս, մրցավազքը դեռ չի ավարտվել: Այդուհանդերձ, ամեն ինչ արա՛ խաղաղությամբ: Ես ուզում եմ, որ Իմ հարսը լինի Իմ կողքին և երբեմն-երբեմն գրի առնի Իմ թելադրանքը: Աշխատի՛ր Ինձ հետ ներդաշնակորեն: Ես ուղարկում եմ քեզ՝ հնձելու բերքը, որի համար ես Ինքս եմ աշխատել: Ուստի հիշի՛ր. սփոփի՛ր Ինձ, ցանկա՛ Ինձ, ծարավի՛ր Ինձ Իմ անդորրության մեջ և թո՛ւյլ տուր, որ քո Փրկիչը հանգստանա քո մեջ:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 20, 1992

Ծաղի՛կս, Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ և տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը:

Սկզբից ի վեր ես ձեզ բոլորիդ խնդրել եմ ապրել սուրբ կյանքով, քանի որ ես սուրբ եմ: Ես ձեզ խնդրել և խնդրում եմ, սիրելինե՛րս, փոխել ձեր կյանքը, որպեսզի ժառանգեք Իմ Թագավորությունը: Երբ Իմ հրեշտակները, որոնց գերագույն իշխանություն էր տրված, ըմբոստացան Իմ դեմ, և կործանումը նրանցից խլեց այն, ինչ լավագույնն էր նրանց մեջ, Իմ Արդարությունը չխնայեց նրանց: Նրանք ցած նետվեցին երկրի վրա, որ սպասեն Դատաստանի օրվան: Նրանք նույնպես պիտի դատվեն բոլորի աչքի առաջ: Եվ, ա՜հ... ի՜նչ սարսափելի տեսարան պիտի լինի դա: Ես պիտի դատեմ յուրաքանչյուրին իր արածների և չարածների

համապատասխան: Իմ Գահի առաջ բոլորը պիտի կանգնեն լուռ և սարսափահար, քանի որ վերջին Դատաստանի այդ Օրն այնքան զարհուրելի պիտի լինի, որ ստիպելու է բոլորին վախից դողալ Գերագույն Դատավորի առջև, որ Ես եմ:

Դուք բոլորդ պիտի տեսնեք մեծ թվով ընկած հրեշտակների, որոնք վտարվել էին երկնքից, և որոնք դառնությամբ ու չարությամբ կռվում էին Միքայել հրեշտակապետի և նրա հրեշտակների դեմ: Այո՛, ձեր աչքերը պիտի տեսնեն իմ Հակառակորդներին, Սուրբի՝ Օծյալի Հակառակորդներին: Դուք բոլորդ պիտի տեսնեք այդ ընկած հրեշտակներին, Լյուցիֆերի՝ առաջին օձի կողմնակիցներին, որը փորձեց մոլորեցնել Իմ բոլոր որդիներին ու դուստրերին: Դուք պիտի տեսնեք նրանց բազմությունները, ովքեր պղծեցին Իմ Անունը և խախտեցին Իմ Օրենքը, նրանց, ովքեր մերժեցին կրթվել ու խնամվել Իմ Սրբությամբ, և նախընտրեցին, որ Խաբեբան իր նշանը դնի իրենց ճակատներին[1]... Այո՛, Վասո՛ւլա, սարսափելի տեսիլք ցույց տրվեց քեզ:

Ես ասում եմ ձեզ. Ես շուտով պիտի գամ Իմ սրբերի հետ, որ դատաստան անեմ աշխարհում և պատժեմ մեղավորներին: Այսօր Իմ Շնորհը բացահայտվում է ողջ մարդկությանը, որպեսզի ձեզ բոլորիդ նորոգի Իմ Սուրբ Հոգով նախքան Իմ Օրը և հիշեցնի ձեզ Իմ Օրենքը:

Այդ Օրը Ես ամեն մեկին կհատուցեմ իրենց արժանիքների համաձայն: Ասել եմ, որ Ես խստորեն պիտի պատժեմ ամեն մեկին, ով անարգում է Շնորհի Հոգուն և հիմար է համարում Իմ Հոգին: Ահա թե ինչու դուք պետք է արթուն մնաք: Այսօր առավել, քան երբևէ, Ես խնդրում եմ ձեզ բոլորիդ նվիրաբերել ինքներդ ձեզ, ձեր ընտանիքները և ձեր ազգերը Մեր Երկու Սրտերին:

Թո՛ւյլ տվեք Ինձ ձեր ճակատը կնքել Իմ Սուրբ Հոգու կնիքով: Զատելու, <u>տեսակավորելու ժամանակը եկել է, հաշիվ տալու ժամանակը հասել է</u>: Ես բոլորին ասացի, որ Ես դողի նման պիտի գամ ձեզ վրա: Երբ Ես վերադառնամ, ոչ մեկը ոչինչ չի կասկածելու: Այդ ժամանակ երկու տղամարդկանցից մեկը պիտի վերցվի, մյուսը թողնվի: Երկու կանանցից մեկը պիտի վերցվի, մյուսը թողնվի: Բերքն արդեն պատրաստ է հնձվելու, և անհաշիվ դիակներ պիտի լինեն, երբ Ես ասեմ.

«Ես այստեղ եմ»:

Եվ այդ ժամանակ Ես Իմ հրեշտակին պիտի ասեմ[2]. «Եկել է ժամը ջոկելու և դուրս քաշելու բոլորին, ովքեր Իմը չեն: Առանձնացրո՛ւ նրանց, ովքեր ճանաչեցին և ընդունեցին Ինձ, բոլոր նրանցից, ովքեր չցանկացան ենթարկվել Իմ Օրենքին: Առանձնացրո՛ւ նրանց, ովքեր ընդունեցին և թույլ տվեցին և Իմ Սուրբ Հոգուն լինելու իրենց Առաջնորդը և իրենց Ջահը, բոլոր նրանցից, ովքեր իրենց

[1] Այստեղ ինձ տեսլիք տրվեց: Ընկած հրեշտակների բազմությունը կանգնած էր Աստծո Գահի առջև Դատաստանի Օրը: Դա զարհուրելի էր և տխուր:
[2] Որոմի մասին առակի վկայակոչումը (Մատթ. 13:24-30):

ուրացությամբ ըմբոստացան Իմ դեմ[1]: Առանձնացրո՛ւ նրանց, որոնց ճակատները կնքված են Գառան Կնիքով, բոլոր նրանցից, ովքեր ունեն գազանի անունը կամ 666 թիվը»: Ժամանակը հասել է, և Ես Ինքս եմ կնքում Իմ մարդկանց Իմ Անունով և Իմ Հոր Անունով:

Վասո՛ւլա, Ես երկնքի դարպասները բաց չարեցի, որպեսզի Իմ օրհնությունները առատորեն թափեմ միայն քեզ վրա, այլ Իմ օրհնությունները հեղվում են հիմա ողջ մարդկության վրա նախքան Իմ Մեծ Վերադարձը: Դուք, ինչպես Ես արդեն ասել եմ, ապրում եք մեծ շնորհի ու ողորմության ժամանակաշրջանում, բայց հիմա Օրը գալիս է՝ հնոցի պես այրվելով: Եվ բոլոր նրանք, որոնց ճակատները կնքված չեն լինի Իմ Անունով, այդ Օրը պիտի լինեն հնձված արտի պես: Ես բացահայտում եմ ձեզ այն, ինչ տեղի է ունենալու, նախքան Ես կբացեմ վեցերորդ կնիքը[2]:

Եկե՛ք և ինքներդ ձեզ նվիրաբերե՛ք Իմ Սուրբ Սրտին և Ձեր Մոր Անարատ Սրտին: Ինչպես արդեն Ես ասել եմ, դուք ապրում եք Շնորհի և Ողորմության ժամանակաշրջանում: Աղջի՛կս, ճիշտ այնպես, ինչպես դու, որ անհնազանդ էիր Իմ հանդեպ, փոխվեցիր և հաշտվեցիր Ինձ հետ՝ հաշտություն կնքելով, ու հիմա ողորմություն ես վայելում, այդպես պիտի լինի նաև նրանց համար, ովքեր դեռևս շարունակում են ըմբոստանալ Իմ դեմ: Ես ցույց պիտի տամ Իմ Անսահման Սերն ու Ողորմությունը ողջ մարդկությանը, նախքան երկրի չորս անկյունները Իմ չորս հրեշտակներին ուղարկելը[3], որոնց պարտականությունը երկիրն ու ծովը կործանելն է: Ես հրամայել եմ այդ հրեշտակներին սպասել և ոչ մի վնաս չհասցնել երկրին, ծովին կամ ծառերին, մինչև Ես Իմ Կնիքը դնեմ նրանց ճակատներին, ովքեր ենթարկվեցին Իմ Օրենքին[4], ովքեր օգտվեցին Իմ Շնորհներից և Իմ Ողորմությունից: Ես նրանց ասում եմ. <u>ծառայե՛ք և մի՛ սպասեք, որ ձեզ ծառայեն</u>, որպեսզի Իմ Հայրը, որը երկնքում է, Իր Վրանում ձեզ տեղ հատկացնի:

Ինձ հավատարիմ լինելով՝ դուք մեծ հալածանքների պիտի ենթարկվեք, բայց մի՞թե Ես ձեզ չեմ խոստացել ճերմակ հագուստներ երկնքում: Մի՞թե Ես չեմ խոստացել, որ այլևս սոված կամ ծարավ չեք լինի[5]: Ուստի մի՛ վախեցեք, երբ փոթորիկներ բարձրանան ձեր դեմ, քանզի Աստվածաշունչը իրականանում է: Երանելի եք դուք, որ մեռնում եք Իմ մեջ՝ Տիրոջ մեջ: Արդարև, Ես պիտի վարձատրեմ ձեզ:

Զավա՛կս, Սերը քեզ մոտ է, և Իմ Հոգին քեզ վրա է: <u>Հույսը</u>, զավա՛կս, գտնվում է Իմ Սուրբ Սրտում: <u>Սերը</u>, հարազա՛տս, Ձրի է տրված քեզ, իսկ <u>Հավատքը</u>՝ օրհնություն է Ինձանից:

Իմ Հոգին հրճվում է քո ոչնչությամբ, և Իմ Հոգին ուրախանում է քո դյուրաբեկությամբ: Ես քեզ մեծացրել եմ, որ սփոփես ու հրճվանք պատճառես Ինձ: Ես շնորհով եմ ընտրել քեզ, որպեսզի հագեցնես Սիրո

---

[1] Այս հատվածը հաստատում է Սբ. Պողոսի մարգարեությունը (Բ Թես. 2:1-12): Ժամանակների վերջը կանխագուշակող երկու նշանները՝ Մեծ Խռովությունը (Ուրացությունը) և Ապստամբը (Ապստամբության ոգին):
[2] Հայտ. 6:12-17
[3] Հայտ. 7:1
[4] Հայտ. 7:2-3
[5] Վկայակոչում Հայտ. 7:9-17

Իմ ծարավը: Դա քո արժանիքների հետ ոչ մի կապ չունի, քանի որ դու ոչ մի արժանիք չունես:

Դու պատրա՞ստ ես, զավա՛կս, գոհացնելու քո Փրկչին:

Այո՛, Տե՛ր: Ես ուզում եմ գոհացնել քեզ:

Ամեն գնո՞վ:

Ամեն գնով: Այն բոլոր լավ բաները, որ ունեմ, Քոնն է: Դու իմ մշտապես Հավատարիմ Աստվածն ես՝ Սուրբը:

Ես կառաջնորդեմ քեզ զգայուն և նուրբ ձեռքով, և Ես կշնչեմ քեզ վրա, որ շուրջդ տարածես Իմ քաղցր բուրմունքը: Ուշադի՛ր եղիր, երբ Ես խոսում եմ, սանի՛կս: Ես ետ եմ հրել մի լեգեոն դևերի, որոնք գալիս էին՝ կողոպտելու Իմ սեփականությունը[1]:

Թող գովաբանվի Հիսուս:

Աղի՛, աղջի՛կս. մենք պիտի աշխատենք: Միացած եղիր Մեզ հետ[2]: Մե՞նք, մե՞զ:

Այո՛:

Հուլիսի 21, 1992

Տե՞ր:

Ես եմ: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը և օրհնում եմ քեզ: Ծաղի՛կս, արի աշխատենք: Գրի՛ր.

Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. Ես աշխարհին շատ Նշաններ եմ տալիս, սակայն նրանք պատրա՞ստ են ճանաչելու Իմ Երկնային Նշանները: Այսօր շատերը խոսում են միայն իրենց տեսածի մասին, բայց դեռևս ժխտում են Իմ Սուրբ Հոգու ակնհայտ լինելը, որը հիմա այնքան բացահայտ է: Նմանապես Իմ Սուրբ Հոգին ուղղություն պիտի տա ձեզ, ինչպես որ Ես առաջնորդել եմ Իմ աշակերտներին՝ ձեզ բոլորիդ ծածկելով Իմ կարեկից Սիրով: Ես բոլորին ցույց կտամ, որ Իմ Անունը՝ Հիսուս, նշանակում է Նա-Ով-Փրկում է:

Աղջի՛կս, Ի՛նձ դարձրու հայացքդ և ծաղկի՛ր: Ես ամենից Առատաձեռնն եմ: Ես ծածկեցի քեզ Իմ Գիտությամբ և վստահեցի քեզ Իմ Շահերը: Քո Արարիչը քեզ օղակել է Իր Հզոր Բազուկների մեջ, ուստի մի՛ վախեցիր: Ես ցած կգցեմ քո թշնամիներին, որոնք իրականում Իմ թշնամիներն են: Քո Սուրբ Մայրը քո Պաշտպանն է: Ես՝ Տերը, քեզ հզոր կդարձնեմ, որ Իմ Պատգամը հասցնես երկրի չորս անկյունները: Գիշեր ու ցերեկ Ես հսկում եմ քեզ, ուստի մի՛ անհանգստացրու քո փոքրիկ սիրտը: Այսօրվանից Ես

[1] Ինձ:
[2] Հիսուս և մեր Սուրբ Մայրը:

ավելի շատ դռներ պիտի բացեմ քեզ համար: Այսօրվանից սկսած՝ քահանաները, եպիսկոպոսներն ու կարդինալները կսկսեն բացել իրենց ականջներն ու լսել Իմ Ձայնը: Նրանք կսկսեն լսել, և Իմ Անսահման Ողորմությունից իրենց վրա հեղված շնորհների հետևանքով նրանք կսկսեն հասկանալ, և նրանց աչքերից կընկնեն Ուրացության փոշով կեղև կապած թեփուկները, և նրանք դարձյալ կսկսեն տեսնել Իմ Սուրբ Հոգու Շքեղությունը: Նրանք կընկալեն Իմ Սուրբ Սրտի Անհատակ Հարստությունները, այն Հարստությունները, որոնք պահված էին ձեր ժամանակների համար:

Աղջի՛կս, համարի՛ր քեզ մի մանուկ, որը հենց նոր է իր Արարչի կրծքից կտրվել: Մնա՛ փոքր, որպեսզի Ես կարողանամ հեշտությամբ վեր բարձրացնել քեզ Իմ Կրծքին և սեղմել քեզ Իմ Այտին: Մարդկանցից եկող ողջ իմաստությունը կփտի, և ձեր սերնդի սրաթափանցությունը պիտի ծածկվի:

Իմ Սիրտը քեզ հետ է, աղջի՛կս: Դու պիտի շարունակես վկայություն տալ և լինել Իմ Արձագանքը այս ուրացած սերնդի համար, որը կործանման եզրին է կանգնած: Դու պիտի լինես Իմ Գործերի Դեսպանը: Ես, զավա՛կս, քեզ Իմ Ուսերի վրա պիտի տանեմ մի ազգի մեջ, որը նախընտրեց վստահել խորամանկությանն ու խաբեությանը, ոչ թե Իմ Սուրբ Հոգու Շնչին: Ես հիմա պիտի ուղարկեմ քեզ նրանց մոտ, ովքեր հեռացրել են Ինձ՝ Սրբին, իրենց տեսադաշտից: Ես նրանց դարձի ու փրկության պիտի բերեմ, ինչպիսին երբևէ չի լսվել և չի տեսնվել նախկինում: Ես պիտի ազատեմ այդ ազգին, պիտի խնայեմ նրան և պիտի փրկեմ նրան: Այդ օրը նրանց երգը՝ ուղղված Ինձ, նման պիտի լինի հարսանիքի գիշերը երգվող մի երգի: Ես քեզ պիտի ուղարկեմ նրանց մոտ[1] որպես ուխտավորի:

«Ես կույրերին պիտի
առաջնորդեմ մի ճանապարհով,
որ նրանք չգիտեն:
Պիտի քայլել տամ
այնպիսի շավիղներով,
որոնք ծանոթ չեն նրանց:
Խավարը լույս պիտի դարձնեմ
նրանց համար և քարքարոտ
վայրերը՝ հարթավայրեր:
Այս բաները ես պիտի անեմ
նրանց համար
և չեմ լքելու նրանց»[2]:

Ես կգամ, որ փրկեմ նրանց:

[1] Ես անմիջապես հասկացա, որ Քրիստոսը նկատի ուներ Ռուսաստանը: Ես հրավիրված էի նրանց մոտ՝ որպես ուխտավոր:
[2] Ես. 42:16

Հուլիսի 22, 1992

Տե՛ր, քանի դեռ մենք անհաշտ ենք, շարունակում ենք պղծել Քո Սուրբ Եկեղեցին և դանդաղ, բայց հաստատուն կերպով շարունակում ենք մեր հոգիները վերածել ավերակների կույտի: Մենք իրո՞ք փնտրում ենք Քեզ, երբ խոսում ենք ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ մասին: Դու ե՞րբ ես միջամտելու և մեզ գիտակցության բերելու, որպեսզի մենք լրջորեն փնտրենք Քեզ: Արդյոք մենք մեր լեզուները օգտագործո՞ւմ ենք՝ ուղղակի ստելու Քեզ՝ սոսկ ձևացնելով, թե ցանկանում ենք ՄԻԱՎՈՐՎԵԼ: Դեռ որքա՞ն ժամանակ մենք չենք հնազանդվելու Քեզ, և Դու չես միջամտելու: Մենք նորից ու նորից մարտահրավեր ենք նետում Քեզ: Ե՞րբ ես Դու մեզ մարտահրավեր նետելու:

Սանի՛կս, կրկնի՛ր Ինձ հետ այս աղոթքը.

Աստվա՛ծ, որ լի ես Կարեկցանքով,
թող Քո Դեմքը ժպտա մեզ,
որ միավորի մեզ:
Ցա՛ծ նայիր երկնքից,
նայի՛ր մեր բաժանմանը,
որ տիրում է հիմա
Քո Եկեղեցում:
Քո գառները, Հովի՛վ Իմ,
ոչնչանում են մեծ քանակությամբ,
մինչ արոտ են փնտրում,
որ անվեն ու ապրեն:

Լսի՛ր Եկեղեցու տնքոցները:
Կանխասացված
այս մեծ Ուրացությունը
խլում է Քեզանից
Քո զավակներին:
Քո Եկեղեցուն հասցրո՛ւ
Փառքի այդ Օրվան,
որ Դու կանխատեսել էիր,
որպեսզի բոլորս
կարողանանք մեկ լինել:

Տե՛ր, լուռ մի՛ մնա
և այլևս մի՛ ուշանա:
Արի՛, արի՛, հասցրո՛ւ մեզ
երբեմնի նախատեսված
այդ Օրվան:
Թող որ բոլորը լսեն
Քո Վեհասքանչ Ձայնը:
Դու հայտնի ես
որպես Գթասիրտ ու Ողորմած,

Աստվա՛ծ Իմ,
հաճի՛ր լսել ինձ և պատասխանել...
Ես չնորհակալություն եմ
հայտնում Քեզ,
քանի որ գիտեմ,
որ Դու լսում ես ինձ: Ամեն:

Այո՛, Իմ Վասո՛ւլա, վստահի՛ր Ինձ ամբողջ սրտով: Քո ողջ հավատը Ինձ վրա դի՛ր: Ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ[1]... Ասա՛, ինչ որ պետք է ասես:

Տե՛ր, ուրիշ ո՞ւմ վրա կարող եմ
դնել իմ հույսն ու վստահությունը:
Այդ Դու ես՝ Սուրբը, որ որոշում է:
Դու Ամենակարող ես,
ուրիշ էլ ո՞ւր կարող եմ գնալ:

Այնուամենայնիվ, դու ազատ ես ընտրելու: Եթե նույնիսկ դու անհավատարիմ լինես, Ես միշտ հավատարիմ եմ, արի՛, գրի՛ր: Ես հանդիմանում եմ նրան, ով Ինձ հետ վարվում է օտարականի պես: Ես Իմ Գահը պիտի դնեմ ձեր սրտերի մեջ, որպեսզի պատվեք Իմ Սուրբ Անունը, և Ես պիտի փայլեմ Իմ Շքեղությամբ ձեր փոքրիկ սրտերում: Ժամանակն արդեն համարյա լրացել է: Ես գալիս եմ ձեզ օգնության: Ես գալիս եմ ձեզ՝ ճնշվածներիդ մոտ: Ես պիտի վերադառնամ այն ճանապարհով, որով Ես եկա: Ես Փառքով պիտի մտնեմ Իմ Քաղաքը: Ես գալիս եմ: Ուստի պատրա՛ստ եղեք դիմավորելու Ինձ:

Օ՜, զավակնե՛րս: Ես կանչում եմ ձեզ: Իմ ճիչերը ուղղված են ձեզ բոլորիդ, և երկրի հիմքերը ցնցվում են Իմ Կանչերից: Դեռ որքա՞ն երկար եք մտադիր քնել: Ե՞րբ եք արթնանալու ձեր թմրությունից ու անտարբերությունից: Աղետը հենց ձեր դռների առաջ է և անակնկալ վրա կհասնի ձեր քնի մեջ, հանկարծակի, անդառնալի, և դուք դեռ մնում եք անտեղյա՞կ: Բայց տեսե՛ք, տեսե՛ք, թե Ով է խոնարհվում մինչև ձեզ՝ թակելով ձեր սրտի դռները: Նե՛րս թողեք Ինձ, Իմ յուրայիններ, քանի որ Իմ Սուրբ Սիրտը բզկտված է, շրթունքներս՝ չորացած և վերքերով ծածկված Սիրո պակասից:

Նե՛րս թողեք ձեր Սրբին և սփոփե՛ք Նրան, ինչպես որ Նա կսփոփի ձեզ: Ես ձեր դռների մոտ եմ, մի՛ մերժեք Ինձ ընդունել... Եթե դուք Ինձ թույլ տաք մտնել ձեր սիրտը, Ես ձեր ներսում աղբյուր կցայտեցնեմ, որովհետև ձեր հոգին կճանաչի Ինձ, որպես ձեր Փրկիչ: Ես պիտի ջրեմ ձեր այնքան խղճալի ամայությունը, և դուք պիտի ծաղկեք ու պտուղ տաք Խաղողի Որթի ճյուղի պես:

Արի՛, աղջի՛կս, Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ, որ թույլ ես տալիս օգտագործել քո ձեռքը:

ΙΧΘΥΣ

[1] Հիսուս լուրջ ինձ նայեց և ասաց:

Հուլիսի 23, 1992

Հիսո՞ւս:

Ես եմ: Ավելի շա՛տ սիրիր Ինձ:
Վասո՛ւլա, դու պատրա՞ստ ես: Այդ դեպքում Ամուսինը պիտի շարունակի քո մեջ փորագրել Իր Գործը: Դու և Ես միացած ենք Իմ Սիրով, դու գիտակցո՞ւմ ես դա:

Քո Շունչը փչում է
ինձ վրա՝ ասելով,
որ ես Քո զավակներից մեկն եմ,
թեև իմ հոգին, որ դեռևս թույլ
և անընդունակ է հասկանալու,
չփոթված է Քո ընտրությունից:

Արարա՛ծ, քո Արարիչն անընդհատ քեզ հետ է, ուրիշ ոչ մի բանի մի՛ ձգտիր, Ինձանից բացի: Ես քեզ հետ եմ: Արարա՞ծ: Քո ողջ կյանքը պետք է պտտվի Իմ շուրջը, քո կյանքն Իմ Ձեռքերում է, և դու լոկ փոշու մի հատիկ ես: Տենչա՛ Ինձ: Այսօր Ես քեզ զգալ տվեցի Իմ Սիրո քաղցրությունը և Իմ Սրտի ջերմությունը: Շատ թանկագի՛ն հոգի, մտի՛ր այս Սրտի մեջ, որը սիրում է քեզ և ՄՆԱ այնտեղ:

Հուլիսի 27, 1992

Վասո՛ւլա, Իմ թշվա՛ռ հարս, Ես կանխատեսել էի քո բոլոր ձախողումներն ու թուլությունները քո ծնվելուց դեռ շատ առաջ: Ես ամբողջ ժամանակ գիտեի, որ նա, ում Ես մտադրվել էի նետել աշխարհի այլասերվածության մեջ՝ որպես Իմ Ուռկան, պիտի գալարվի և ոլորվի Իմ Ձեռքերում: Ես գիտեի, թե սատանան հմտորեն լարված թակարդներ պիտի տեղադրի՝ որ ծուղակը գցի նրան, ում Իմ Սիրտը սիրում է: Ուստի մի՛ զարմացիր և մի՛ մտածիր, որ Ես էլ եմ զարմացած... Դու դեռ ուզո՞ւմ ես կրել Իմ Խաչը, որը Ես այնպիսի սիրով առաջարկեցի քեզ:

Այո՛, ուզում եմ: Մի՛ թաքցրո՛ւ ինձնից Քո Դեմքը, ո՛չ էլ Քո Խաչը: Ինձ նայող Քո Սուրբ Դեմքը կտա ինձ անհրաժեշտ ուժը, որ կրեմ Քո Խաչը: Սա այն է, ինչի կարիքը ես ունեմ: Ես արժանի չեմ, որ թագավորների Թագավորն այդքան սիրառատ ինձ վրա նայի երկնքից:

Վասո՛ւլա, մի՛ ստիպիր Ինձ Միտքս փոխել քո սրտի ուղղամտության ու անկեղծության մասին[1]: Այս առաջադրանքը կատարելու համար, որը Ես այնքան բարեհաճորեն առաջարկել եմ քեզ, քո հոգին պետք է <u>միացած</u> լինի Իմ Հոգուն, քո սիրտը՝ Իմ Սրտին, և այս կատարյալ միության մեջ դու կկարողանաս լինել Իմ Արձագանքը: Տե՛ս: Արիացի՛ր, աղջի՛կս: Քո Սիրելին շուտով գալիս է, որ վերջ դնի այս աշխարհի վշտերին ու ողբերին:

[1] Սա մի հանդիմանություն էր Հիսուսից:

Լսի՛ր, աղջի՛կս, Ես երբևէ քեզ զրկե՞լ եմ որևէ բանից:

Ո՛չ, Տե՛ր,
Դու միայն հակառակն ես արել:
Դու լցրեցիր իմ բերանը
Երկնային Մանանայով,
Դու սնեցիր իմ հոգին:
Դու մեծ բաներ արեցիր ինձ համար:

Այո՛: Ես քեզ լեցուն սեղան եմ առաջարկել: Ես քեզ առաջարկել եմ Իմ Տունը, Իմ Սիրտը և Ինձ: Ես քեզ առաջարկել եմ ապրել ինձ հետ Իմ Լույսի մեջ: Ես Իմ Ձեռքի Ափից քեզ առաջարկել եմ Իմ Երկնային Մանանան: Այս անապատի միջով անցնելիս, Ես առաջարկել եմ քեզ Իմ Թիկնոցի մի մասը: Քեզ կենդանի պահելու համար, Ես քեզ առաջարկել եմ ճաշակել Իմ Մարմինը և ըմպել Իմ Արյունը:

Ես սովորեցրել եմ, որ քո քայլերը հետևեն Իմ Քայլերին: Ես հաստատել եմ քո մեջ Իմ շնորհները և Իմ Սուրբ Սրտի Հարստությունները: Ես հետ եմ պահել դևերի լեգեոնների, որոնք պատրաստ էին քեզ բզկտել: Ինչպես մի Ռազմիկ, Ես կռվեցի և պաշտպանեցի քո գործը Խաբեբայից: Ես հեղեղել եմ քեզ և քո ընտանիքն Իմ Օրհնություններով: Ես վերականգնել եմ քո տունը[1] ավերումից ու մահից: Ես մեծ սիրով սեղմեցի քո շուրթերն Իմ Վերքերին և կիսեցի Իմ Բաժակը քեզ հետ: Եվ ինչպես մի Ամուսին, որն առաջարկում է իր ամուսնական անկողինը, Ես առաջարկեցի քեզ Իմ Խաչը, Իմ Փշե Պսակը և Իմ Գամերը, որպեսզի սրբագործեմ քեզ: Ուրիշ էլ ի՞նչ կարող էի Ես անել քեզ համար, որ չեմ արել...

Վասիլի՛կի[2], մի՛ հանձնվիր քո էության մղումներին, որ չլինի թե կորցնես քո պտուղները և լինես չորացած ծառի պես: Ես փայփայել եմ քեզ, Վասիլի՛կի, Իմ ողջ Հոգով, և Իմ ողջ Հոգով Ես մտադիր եմ քեզ ընդմիշտ Իմը պահել: Բայց և այնպես, այժմվանից սկսած, Ես քեզանից ավելի շատ պիտի պահանջեմ, քան առաջ: Եթե դու Իմ Սուրբ Սրտի պահանջներին համապատասխան չլինես, քո խաչերը պիտի կրկնապատկվեն: Հիշի՛ր, դու քո կյանքը պարտական ես Ինձ, ինչպես նաև քո փրկությունը: Հեռո՛ւ մնա աշխարհից, որ ամեն ինչ ունի, Ինձանից բացի:

Թող այն Զորությունը, որը դու ստանում ես Ինձնից, բաց անի քո բերանը և հայտարարի Իմ հրաշքները, թող աշխարհի բոլոր ցեղերը լսեն Իմ Պատգամը: Ես պիտի ցանեմ ամենուր և ամեն երկրում: Ես պիտի մշակեմ ձեր անապատները, և երկրի բոլոր բնակիչները պիտի լսեն Իմ Ոտնահետքերի ձայնը մինչև աշխարհի հեռավոր ծայրերը:

Աղջի՛կս, քնքշորե՛ն վարվիր Ինձ հետ, և Ես պիտի առաջարկեմ քո հոգուն հրճվանքներ և սփոփանքներ, որ մեղմացնեն ծարավդ: Ժամանակ առ ժամանակ վե՛ր կաց կեսգիշերին, որ գովաբանես Ինձ ու շնորհակալություն հայտնես Ինձ այն շնորհների և օրհնությունների

[1] Այսինքն «վերականգնել եմ քո հոգին»:
[2] Հիսուս լրջորեն արտասանեց իմ ծննդյան պաշտոնական անունը:

համար, որոնք ես այնքան առատորեն լցրել եմ քեզ վրա:

Դու սիրելի ես Ինձ համար: Նայի՛ր Իմ աջ կողմը և տե՛ս, թե ով է Ինձ հետ... Այո՛, քո պաշտպանը ու քո Մայրը, որը պահպանում է քեզ վտանգներից ու սպառնալիքներից: Սրբազան պատվանդանի վրա փայլող ճրագի պես[1] Նա քեզ ցույց է տալիս դեպի Ինձ տանող Ճանապարհը:

Հուլիսի 28, 1992

(Դեպի Հռոդոս գնալիս, Հունաստան)

Տե՛ր, ամրացրո՛ւ Քո քաղաքը[2]
պաշարման դեմ:
Ամրացրո՛ւ Քո սրբարանը,
քանի որ ես պետք է
դիմակայեմ մարդկանց,
որոնք տեսանողներին ասում են.
«Տեսիլքներ մի՛ տեսեք»,
Մարգարեներին՝
«Մի՛ պատգամախոսեք մեզ
ճշմարտությունը»,
Եվ Քո նախասիրած հոգիներին՝
«Դուք անիծված եք»:
Մի՞թե նրանք չեն կարդացել.
«Յուրաքանչյուր թագավորություն,
որը բաժանված է ինքն իր մեջ,
կործանման է մատնված,
և ո՛չ մի քաղաք,
ո՛չ մի տուն՝ ինքն իր մեջ բաժանված,
չի կարող կանգուն մնալ»[3]:
Եվ եթե դա
Սատանայի պատճառով է,
որ հազարավոր մարդիկ
դարձի են գալիս Քո
«Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ»
Պատգամի միջոցով,
<u>մի Պատգամ,</u>
<u>որը տրված է Քո Հոգու կողմից,</u>
մի Պատգամ,
որն օծված է Քո Բերանից,
հապա ո՞ւմ միջոցով են
նրանց սուրբ քահանաները
դարձի գալիս:

Հետևաբար ես նորից ու նորից եմ ասում ձեզ. մարդկանց բոլոր

[1] Սիրաք 26:17
[2] Այսինքն՝ ամրացրու իմ հոգին:
[3] Մատթ. 12:25

մեղքերն ու հայհոյանքները կներվեն, բայց Իմ Հոգու դեմ հայհոյանքը չի ներվի: Իմ Սուրբ Հոգու դեմ խոսողները նույնպես չեն ներվի ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ հաջորդ[1]: Թույլ մի տուր, որ քո սիրտը անհանգստանա: Ես քեզ հետ եմ, արի՛, Իմ Վասո՛ւլա, Ես և դու, դու և Ես միասին, հասկանո՞ւմ ես:

Իմ Խաղաղությունը քեզ, մե՞նք, մե՞զ: Արի՛:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 2, 1992

(Հռոդոս, Հունաստան)

Թող օրհնյալ լինի
Տերը՝ Իմ Ապառաժը,
որ սովորեցնում է ինձ,
ինչպես Իր անձնական աշակերտին:

Վասո՛ւլա, սիրի՛ր Ինձ և առաջադիր Իմ Սերը: Այդ քո Տերն է խոսում, Նա, ում դու ասում ես, թե սիրում ես:

Ես օրհնում եմ քեզ, զավա՛կս:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 6, 1992

(Հռոդոս, Հունաստան)

(Ինձ խնդրեցին վկայություն տալ հեռուստատեսությամբ):

Իմ ընկե՛ր, Իմ փոքրի՛կ ընկեր, մի՛ տատանվիր, հայտարարի՛ր Իմ Պատգամը և վստա՛հ եղիր: Ես Եմը քեզ հետ է: Փնտրի՛ր Իմ Սուրբ Սրտի Հարստությունը և տարածի՛ր Իմ Բույրը: Իմ Սիրտը Սիրո մի Վիհ է: Ընդունի՛ր Իմ Խաղաղությունը և ստացի՛ր Իմ Հոգին: Պատվի՛ր Ինձ և փառաբանի՛ր Ինձ:

Օգոստոսի 9, 1992

(Հռոդոս, Հունաստան)

(Հեռուստատեսությամբ իմ խոսելուց հետո հայածանքների տարափ եղավ, գրպարտանքներ և արգելքներ: Հաղորդման ընթացքում դարձի և

[1] Մատթ. 12:31-32

ապաշխարության բազմաթիվ դեպքեր եղան: Բայց հետո մի վանական, որը դեմ էր Տիրոջ Պատգամին, հակադրվեց և խնդիր հարուցեց):

Վասո՛ւլա, Իմ Կանչն արթնացրեց շատ մեռած սրտերի:

Ես պիտի խոսեմ ի սեր բոլոր նրանց, ովքեր կանգնած են քո շուրջը: Մնացե՛ք Իմ մեջ ավելի քան երբևէ, և մի՛ վախեցեք: Ես ձեզ այնքա՜ն շատ եմ գրել Իմ Սիրո մասին: Նա, ով կշարունակի հավատարիմ մնալ Ինձ, արմատախիլ չպիտի արվի փոթորիկներից, բայց նա, ով թույլ կտա, որ աշխարհը հաղթի իրեն, կկորցնի Իմ Սիրտը: Հոգին օծել է այս Պատգամները, Հոգին Ճշմարտություն է, ուստի ոչ մեկը չի կարողանա խափանել Ճշմարտությունը: Ես քեզ համար մի ուղի եմ հարթեցրել, ուստի աղոթի՛ր, որ հայտարարես Իմ Պատգամն այնքան պարզորեն, որքան որ պետք է:

Բռնի՛ր Իմ Ձեռքը և քայլի՛ր Ինձ հետ: Շատ սիրելի՛ հոգի, Ես Եմը քո Սուրբ Ուղեկիցն է: Առայժմ ինչ որ ուզում եմ ասել, հետևյալն է. արիացի՛ր, օրհնյա՛լ եղիր և միացա՛ծ եղիր: Աղոթի՛ր քո փորձությունների ժամանակ: Բոլոր սրբերը քեզ հետ են: Մե՞նք, մե՞զ, արի՛:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

«Ո՛վ Տեր, լսի՛ր իմ աղոթքը,
ակա՛նջ դիր խնդրանքիս
և արտասուքս
լռության մի՛ մատնիր»[1]*:*

Հավատա՛ զավակս, հավա՛տ ունեցիր Իմ հանդեպ և վստահի՛ր Ինձ: Դու երբեք չպիտի վշտանաս, երբ քեզ հալածեն: Դեռ որքա՞ն ժամանակ է պետք, որ հասկանաս Ինձ: Տե՛ս, Ես Եմը առաջնորդում է քեզ, և Ես հայտնի եմ նրանով, որ թագավորներ և ամբողջ թագավորություններ եմ տապալել, երբ նրանք արգելք են դարձել Իմ ճանապարհին: Ես բարձրացրել եմ խոնարհներին և հաղթել ամբարտավաններին: Արի՛, մի՛ մեղադրիր հպարտներին: Աղոթի՛ր նրանց համար:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 10, 1992

(Ընդիմությունները Հռոդոսում)

Ո՛վ Տեր, ինչի՞ համար է այսքան համառությունը: Ո՛վ Տեր, Ես սկսում եմ հասկանալ, որ մեծ անունները իմաստություն չեն տալիս: Կար ժամանակ, երբ ես հույս ունեի ավելին լսելու նրանց բերաններից, երբ նրանք արտասանում

[1] Սաղմ. 38:13

ԷԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ և ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ բառերը, բայց ես նույնիսկ չեմ տեսնում ո՛չ մեկի և ո՛չ էլ մյուսի սաղմնավորումը...

Խաղաղություն քեզ: Քո ձայնի դառնությունը Ինձանից չվրիպեց: Մի՞թե երբևէ Ես քեզ ասել եմ, որ կլքեմ քեզ:

Ո՛չ, Տե՛ր:

Ուրեմն ինչո՞ւ ես անհանգստանում: Ես արարել եմ քեզ այս առաքելության համար:

Արի՛, Ինձ նայիր: Ինձ հետ Դու միշտ էլ լավ բաներ կունենաս ճաշակելու, և քո սեղանը միշտ լիքը կլինի, երբ դու Ինձ հետ լինես: Արարա՛ծ, Ես քեզ պիտի առաջնորդեմ այն ճանապարհով, որով դու պետք է գնաս: Ապաստանի՛ր Իմ Սրտում, երբ հանգստանալու կարիք կունենաս: Մի՛ կորցնիր արիությունդ: Իմաստությունը պիտի ուսուցանի քեզ: Ի՛նձ նվիրիր քո ժամանակը, և Ես պիտի օգտագործեմ քեզ Իմ նպատակների համար: Ես կօգտագործեմ քո բերանը, որ սուր լինի երկսայր թրի պես, երբ դու արտասանես Իմ խոսքերը: Ես մտադիր եմ առողջ դատողություն սովորեցնել տգետներին: Եթե դու Ինձ թույլ տաս օգտագործել քեզ, Ես կիրագործեմ Իմ Ծրագիրը: Մինչև ամեն ինչ չկատարվի և չիրականացվի, միասնության ու հաշտության Իմ բուռն ցանկությունը չէ նվազի: Քո միջոցով Ես թղթին եմ հանձնել այն, թե Ես ինչ ձևով եմ ուզում, որ դուք միավորվեք: Հենց սկզբից Ես պարզ եմ խոսել:

Վասո՛ւլա, զավա՛կս, մի՞թե դու չես կարդացել, որ նույնիսկ թթխմորի մի փոքր քանակությունը բավարար է՝ թթվեցնելու համար ողջ խմորը: Ուստի հապճեպ դատողություններ մի՛ արա:

Օգոստոսի 20, 1992

(Հունաստան, Հռոդոս)

Սիրելի՛ և հավատարի՛մ զավակս, մինչ դու թույլ ես, Ես Թագավոր եմ: Ահա Ես քեզ ուղարկում եմ քո յուրայինների մոտ, որպեսզի նրանց հիշեցնես Իմ սկզբունքների մասին: Ջեզանից ոմանք բարեխառն ու գաղջ են դարձել, որովհետև դուք Իմ խոսքերն ընդունում եք առանց վստահության, երբ միասին հավաքվում եք Իմ Անունով:

Վայ նրանց, ովքեր վաճառում են Իմ Արյունը՝ իրենց անունը պատվելու համար: Վայ նրանց, ովքեր հիմա բավարարված են, իրենց կյանքը ղեկավարում են իրենց բնական հակումներով և արհամարհում են Իմ Հոգին: Վա՛յ նրանց, ովքեր արգելք կդառնան այն դռանը, որը Ես Ինքս եմ բացել՝ Իմ Պատգամը հայտարարելու համար: Վա՛յ նրանց, ովքեր հավատացած են, թե իմաստությամբ են վարվում, միանաբար՝ գործելով աշխարհի հետ: Նրանք աշխարհի ծառաներն են և ոչ թե Իմը: Նրանք աշխարհի ճորտերն են և պակված են կեղծավորության, ապականության և այն ամենի հետ, որից Իմ Սիրտը խորշում է:

Դուք ասում եք, որ ձեզ հետ անարդար են վարվում Իմ Անվան համար: Ուրախացե՛ք, քանի որ շուտով Իմ Օրը կրակով կբացվի ձեզ բոլորիդ վրա: Ուրախացե՛ք և ցնծացե՛ք, երբ մարդիկ մեղադրեն ձեզ և անարգեն ձեզ հրապարակավ՝ ցուցադրելով ձեզ իբրև անարգանքի մի պատկեր Իմ և Իմ Պատգամի համար: Դրանով ավելի մեծ կլինի ձեր պարգևը երկնքում, քանի որ սիրով եք տոկացել աշխարհի վիրավորանքներին ու անարգանքին:

Աղոթե՛ք, որպեսզի ձեր չղթաները, որոնք դեռ ձեզ կապում են աշխարհին, արձակվեն Իմ կողմից: Աղոթե՛ք նրանց համար, ովքեր չեն կարողանում տարբերել իրենց աջ ձեռքը ձախից: Ոչ մեկն արժանի չէ Իմ Կանչին, ուստի մի՛ մեղադրեք հպարտներին: Հիմա շնորհը ձեզ վրա է, և Ողորմությունը պարուրում է ձեզ: Ձեր Թագավորը սրտանց ձեզ է տվել Իր Սիրտը, սակայն Ես նկատել եմ, որ ամեն մարդ չէ, որ իր սիրտը ամբողջովին տվել է Ինձ, ամեն մարդ չէ, որ ցանկանում է ենթարկվել Իմ սկզբունքներին, ո՛չ, ամեն մարդ չէ, որ հետևել է Իմ Սրտի ցանկություններին: Դրա փոխարեն նրանք լսում են իրենց սեփական ձայնը, որը նրանց սեփական օրենքն է իրենց թույլ հավատի պատճառով: Այդպիսիներին Ես ասում եմ. աղոթե՛ք, որ չընկնեք Իմ շնորհից, աղոթե՛ք, որ կատարեք Իմ Կամքը: Թողե՛ք՝ Իմ խոսքը տարածվի հիմա, և մի՛ ենթարկվեք ձեր մարդկային մտածողությանը:

Ես դեռ երեք հարց ունեմ ձեզ տալու.

Ինչո՞ւ եք դուք ցածրացրել Իմ Ձայնը:

Ի՞նչ եք արել այն Պատգամները, որոնք Ես ընտրել էի, որ կարդացվեն:

Ո՞ւր է գնացել մարդը, որը մի ժամանակ այնքան ցանկանում էր գոհացնել Ինձ:

Հա՛յր, ների՛ր նրանց, քանի որ նրանք չգիտեն, թե ինչ են անում...

Զավա՛կս, պատգամախոսի՛ր: Թող քո բերանն Իմ խոսքերով թրի նման լինի... Ծառայի՛ր Ինձ: Սերը քեզ մոտ է:

Տե՛ր, իսկ ի՞նչ կլինի, եթե նրանք չկատարեն Քո Կամքը:

Այդ դեպքում Ես կհեռացնեմ Իմ Սիրտը, Իմ բարեհաճությունն ու Իմ շնորհները, սակայն Իմ խաչը կմնա:

(Այս պատգամը տրվեց նրանց, ովքեր խոչընդոտներ ստեղծեցին այն ճանապարհի վրա, որը Տերն էր բացել: Փորձությունները, վախը, կասկածները որոշ մարդկանց ստիպեցին չվստահել և չապավինել այն ծրագրին, որն Աստված պատրաստել էր Հռոդոսի համար: Հիսուս զգուշացրեց նրանց):

Օգոստոսի 22, 1992

(Հռոդոսի խմբի համար)

Տե՞ր:

Ես եմ: Ես ձեզանից միայն խաղաղություն եմ խնդրում:

Խաղաղությո՛ւն և սեր բերեք այնտեղ, որտեղ երկպառակություն կա: Իմ Լույսը խնդրեք այնտեղ, ուր խառնաշփոթություն կա: Խնդրե՛ք, խնդրե՛ք, և Ես պիտի տամ: Հարգե՛ք մեկդ մյուսին և թույլ մի՛ տվեք, որ ձեր սրտերը կարծրանան: Ոչ մի հենակետ մի՛ տվեք Սատանային: Հանգի՛ստ եղեք և Ինձ մատուցե՛ք ձեր աղոթքները: Քանի՞ աղոթք եմ Ես լսում: Աղոթե՛ք և ծո՛մ պահեք, որպեսզի չարը հեռանա:

Ավելի շա՛տ աղոթեք: Մնացե՛ք Իմ մեջ: Երեխաների նման ապավինե՛ք Ինձ: Աղոթե՛ք, աղոթե՛ք սրտով:

Իմ Ուղիները ձեր ուղիները չեն, ուստի մի՛ ենթարկվեք ձեր սեփական մտքին: Դուք չգիտեք, թե ինչպես եմ Ես գործում: Սերմե՛ր ցանեք ամեն տեղ, որտեղ որ կարող եք: Ես գիտեմ ձեր կարողությունը, և Ես գիտեմ, թե Ես ձեզ ուր եմ ուղարկում: Երանելի են նրանք, ովքեր զրպարտվում և ծաղրվում են Հանուն Ինձ: Ես ասում եմ. ձեր ձայնը անպայման կհասնի Ինձ, երբ կանչեք Իմ Անունը: Եղե՛ք խաղաղ, աղոթե՛ք և հենվե՛ք Ինձ վրա:

Եկեղեցին պիտի վերակենդանանա:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 23, 1992

(Հիսուսին աղոթելուց հետո ես ներքին ձայնով լսեցի, որ Նա ինձ ասաց.

«Ես ուրախ եմ, որ, առավոտյան այսքան վաղ, դու ժամանակ ես տրամադրում՝ Ինձ հետ խոսելու համար: Ասա՛ նրանց[1], որ Իմ Սիրտը Սիրո մի Վիհ է: Ասա՛ նրանց, որ այլևս Ինձ չփորձեն»:

Եվ նրանք պետք է կարդան Ա. Կոր. 14:26-32):

(Ավելի ուշ)

Տե՛ր իմ Հուսուս Քրիստոս, Քո Սուրբ Սրտին եմ հանձնում իմ այս խնդրանքը.

Օգնի՛ր մեզ և հովվի՛ր մեզ,
տո՛ւր մեզ Քո Խաղաղությունը,
Որդի՛ Հավիտենական Հոր:
Ո՛վ Երկնքի Արքա, ցածրացրո՛ւ մեզ,
որպեսզի Քո Աչքերը
կարողանան ցած նայել վերևից:
Մեր Հոր Սիրելի՛ Որդի,
թույլ մի՛ տուր, որ մարդկային

[1] Հուդոսի խմբին

բազմություններ կործանվեն:
Մարդիկ մեռնում են
ապականությունից:
Արագացրո՛ւ Քո Գործը,
ով Սո՛ւրբդ Հոր, և թող որ Քո
Վերադարձն արագանա:

Դու, որ Հոր Ուրախությունն ես,
այլևս թույլ մի՛ տուր
աշխարհին արհամարհելու
Քո Սուրբ Հոգու
փառավոր Ներկայությունը:
Իմ աչքերն ուղղված են դեպի Քեզ,
ո՛վ Տեր, և իմ սիրտն
իր ապաստանն է գտնում
Քո Սուրբ Սրտում,
որ Խաղաղություն և Սեր գտնի:
Մի՛ թողնիր ինձ անպաշտպան: Ամեն:

Ես քեզ անվախ դարձրեցի մարդկանց հանդեպ: Ես արեցի դա: Երբ Իմ Օրը դա, Ես պատասխան պիտի տամ նրանց, ովքեր ծաղրում են Ինձ հիմա: Իսկ քեզ, աղջի՛կս, կասեմ, որ Ես Իմ ուրախությունը գտնում եմ քո ոչնչության մեջ:

Քո Հոր Որդին

ասում է քեզ. Ես պիտի շարունակեմ տարածել Իմ Պատգամները: Նրանք, ովքեր հակառակ են Ինձ, պիտի բախվեն Անկյունաքարին և ջարդվեն:

Հոր Ուրախությունն

ասում է քեզ. Ես մեծ Գործ եմ անում, որը ոչ մի մարդ չի կարող կանգնեցնել: Իսկ ինչ վերաբերում է նրանց, ովքեր քեզ վրա են բարդում դառը մեղադրանքներ, Ես ասում եմ քեզ. նրանց ձեռքերը վայր կընկնեն, և նրանց ծրագրերը չեն իրականանա: Իմ Սիրտն այրվում է քո սիրո կարոտից, սերո՛ւնդ, և բոցավառվում է, ինչպես այրվող մի Հնոց: Ես ձեզ բոլորիդ սիրում եմ Իմ ողջ Սրտով, Իմ ողջ Սրտով սիրում եմ Ես ձեզ: Տեսե՛ք, Ես ձեզ բոլորիդ վրա պիտի լցնեմ Իմ Սերը, որպեսզի զարդարեմ ձեր թշվառությունը:

Տե՛ր, այդ ինչպե՞ս է, որ աշխարհը դարձել է այսքան ապականված:

Մի՞թե չես կարդացել: Այնտեղ, որտեղ առաջնորդություն չկա, մարդիկ ընկնում են[1]: Այլասերվածի բերանից իմաստություն դուրս չի դա, բայց նա, ով այլասերում է, պիտի հայտնաբերվի: Իմ Աչքերից ոչինչ թաքնված չի մնում: Սակայն Ողորմության այս օրերին Իմ Ձեռքը դեռևս պարզված է

[1] Առակ. 11:14

ամեն մեկի համար, ով զղջումի և ապաշխարության խոսքեր կաղաղակի: Նրանք պիտի փրկվեն:

Սերը մոտ է քեզ, Իմ փոքրիկ, հավատարի՛մ ընկեր: Ամենը օրհնում է քեզ: Արի՛ և երկրպագի՛ր Ինձ: Ես եմ:

Օգոստոսի 26, 1992

(Հունաստան - Սիմի կղզի - Պանորմիթի)

(Պանորմիթին Սբ. Միքայելն է):

Ես այցելեցի այդ փոքրիկ կղզին, որը կոչվում է Պանորմիթի և չորս օր մնացի այնտեղ, ուր ընդամենը մի քանի տներ կային, իշխող մի վանք և Սբ. Միքայելի Եկեղեցին: Նրա սրբապատկերը, որը մարդու հասակի չափ էր, ամբողջովին արծաթապատ էր: Դա մի հրաշք սրբապատկեր էր: Ես զգացի, որ կանչված եմ այնտեղ, ուստի գնացի աղոթելու և խնդրելու Սբ. Միքայելի բարեխոսությունը:

Նախքան Պանորմիթի գնալը՝ առավոտյան ժամը 8-ին, Հիսուսն ինձ մոտ եկավ երազ-տեսիլքով: Նա ինձ թույլ չտվեց նայել Իրեն: Նա ուզեց, որ ես միայն զգայի Իրեն: Նա կանգնեց իմ աջ կողքին և Իր ձախ Ձեռքով գրկեց ուսս: Անմիջապես ես զգացի Աստծո ջերմ, սփոփիչ պաշտպանությունը: Հոգիս հրճվեց: Նա ինձ թույլ տվեց դիպչել Իր Ձախ ձեռքին, որով ինձ գրկել էր: Ես զգում էի Նրա յուրաքանչյուր Մատը: Հետո Նա ինձ թույլ տվեց, որ իմ ձախ ձեռքով դիպչեմ Իր Սրտին, Իր Մորուքին, հետո՝ Իր Սուրբ Դեմքի մի մասին: Այդ վայրկյանները իմ հոգին լցնում էին անմկարագրելի սփոփանքով, խաղաղությամբ, հրճվանքով և վստահությամբ: Նա խոսելու կարիք չուներ: Նրա Ներկայությունը, որն ինձ այնքա՜ն մոտ էր, ամեն ինչ ասում էր ինձ: Ես Եմ-ը ինձ հետ էր:

(Ավելի ուշ այդ օրը)

Իմ Խաղաղությունը Ես տալիս եմ քեզ:

Համբերատա՛ր եղիր, ինչպես Ես եմ համբերատար: Հայրը սիրում է քեզ և քեզ է վստահել այս առաքելությունը: Մի՛ կարծիր, թե Ես տեղյակ չեմ դրա ծանրությանը: Ես քո Ամուսինն եմ, որը պիտի ապահովի քեզ[1], սփոփի քեզ և հավատարիմ մնա քեզ: Դու Հոր գրատախտակն ես, և այդ գրատախտակի վրա գրվում է Հոր և Իմ Սիրո Օրհներգը: Զմտածես, թե Ամենաբարձրյալը չի կարող որևէ ուղի գտնել, որպեսզի իրականացնի Իր Ծրագիրը քո ժողովրդի մեջ[2]: Նա Կրակով հետ կգա Իր Խաղողի այգին և վերջ կտա վարձակալներին, որոնց ձրի էր տվել Իր Այգին, և որը նրանք տվել էին ուրիշներին, քանի որ իրենք չէին պահել, այլ անապատ

[1] Հիսուսն ինձ հիշեցրեց տեսիլքը՝ Իր Ներկայությունը:

[2] Այս ամառ Հունաստանում ուղղափառների հետ հանդիպումից և Միասնության մասին խոսելուց հետո իմ տպավորությունն այնպիսին էր, որ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ երբեք չի կայանա: Ես շատ ընկճված էի զգում: Աստված ինձ դարձրեց «Միջնորդ», որպեսզի բոլորին ի մի բերեմ: Դա հեշտ չէր:

էին դարձրել Այն: Տարիներ շարունակ ես փորձում էի զգուշացնել նրանց՝ ծառաներիս ուղարկելով նրանց մոտ, բայց նրանք բոլորին էլ սպանեցին[1]: Այսօր ճշմարիտ եմ ասում ձեզ. «Այն քարը, որը շինարարները մերժեցին, անկյունաքարը եղավ»[2]: Այսօր Շնորհի Իմ Սուրբ Հոգին անկյունաքարն է, և նա, ով կընկնի այդ քարի վրա, կտոր-կտոր պիտի լինի: Իսկ ում վրա այն ընկնի, պիտի ճզմվի:

Ես ձեզ բոլորիդ խստորեն զգուշացրել եմ, այլևս Ինձ մի՛ փորձեք: Իսկ դու, աղջիկս, մի՛ զարմացիր քո ժողովրդի չկամության վրա: Ոչ մի մարգարե երբեք չի ընդունվել իր սեփական երկրում: Եթե դա հնարավոր լիներ, ապա նրանք այսօր չէին դառնա քո թշնամին, սոսկ նրա համար, որ ճշմարտացի ես եղել հանդեպ նրանց:

Արի՛, ես օրհնում եմ քեզ և քո ընկերակիցներին:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 27, 1992

Վասո՛ւլա, լսի՛ր Իմ Հրեշտակապետին, որին եկել ես այցելության.

«Աստծո՛ զավակ, մի՛ վախեցիր, հաստատուն կանգնի՛ր, երբ քեզ հալածում են: Դու միայնակ չես: Տո՛ւր քո Ճշմարիտ Հովվին քո բոլոր հոգսերը, և Նա ուղղություն կտա ու կառաջնորդի քեզ: Եվ Ամենակարողի Ձեռքը քեզ վրա է:

Լսի՛ր, երբ Նա խոսում է, քանի որ Նա մեծ ծրագրեր ունի քեզ համար: Նա կենդանի Աստվածն է, և Նրանից բարձր ոչ ոք չկա: Ես պիտի օգնեմ ամեն մեկին, ով կամենում է հաղթել Չարին, և Հոր մեջ, Հոր միջոցով ես կոչնչացնեմ սատանայի գործը: Որևէ մեկը, որ ցանկանում է պարծենալ, թող պարծենա Տիրոջով: Թող գովաբանվի Աստված: Մնա՛ Նրա Սրտում և հիշի՛ր. Նա իսկապես խոսել է քեզ հետ: Աստծո Հրեշտակապետ Միքայել»:

Սեպտեմբերի 7, 1992

Հավատարմությունը
Քո խոսքի էությունն է,
և Քո խոսքն ինքը արդարություն է:
Մեր կյանքը Քո Ձեռքերում է,
բայց և այնպես
մեր ազատությունը մերն է:
Դա Քո Պարգևն է մեզ:
Բայց ի՞նչ արեցինք մենք

[1] Այստեղ ես հասկացա, որ Աստված պատգամներ էր ուղարկել նրանց՝ ընտրյալ հոգիների միջոցով (հույն քահանաների, վանականների), սակայն նրանց կասկածամտությունը սպանել էր Հոգին:
[2] Սաղմ. 117:22

մեր ազատությամբ:
Մենք այն օգտագործեցինք,
որ ինքներս մեզ ծուղակը գցենք
և այն դարձրինք
մի ավերիչ զենք մեր հոգու համար:
Մենք Քո Սուրբ Հոգու
միջամտության կարիքն ունենք.
այդ մշտահոս ջրի Աղբյուրին,
թող որ այն թափվի հիմա մեզ վրա:

Ա՛հ, Վասո՛ւլա... Վերջում այս սերնդի ճանապարհները պիտի ուղղվեն, և մարդիկ հավատարմություն ու արդարություն պիտի սովորեն: Սպասի՛ր, և դու կտեսնես... Քանի դեռ ապրում ես, և մարմնիդ մեջ շունչ կա, Ես քեզ հովվություն պիտի անեմ: Ես պիտի շարունակեմ ուսուցանել քեզ Իմ ողջ Իմաստությամբ: Ես պիտի հսկեմ քեզ, որ չսայթաքես: Ես Ամենաբարձրյալը, չնորհ եմ արել քեզ, ուրա՛խ եղիր, հոգի՛, ուրա՛խ եղիր: Հիմա լսի՛ր և հասկացի՛ր: Հոգու համար չկա ավելի վատ թույն, քան Իմ Սուրբ Հոգուն ուղղված հայհոյանքի թույնը: Ով հայհոյում Իմ Սուրբ Հոգուն, նրան ներում չի լինի: Ուստի զգուշացե՛ք, որ չհայհոյեք Իմ Սուրբ Հոգուն:

Դա է պատճառը, որ Իմ Իմաստությունն ասում է ձեզ. զգուշացե՛ք, որ չուրանաք և չմերժեք Ճշմարտության Իմ Սուրբ Հոգուն, որը իջնում է ձեզ վրա այս օրերին, որպեսզի արթնացնի ձեզ թմբիրից: Երբ Ես երկրի վրա էի, նրանք ատում էին Ինձ առանց պատճառի, բայց և այնպես խաչի վրա Ես խնդրեցի Երկնային Հորը ներել նրանց: Եթե այսօր մարդիկ մերժում են Շնորհի Իմ Սուրբ Հոգուն և ծաղրում են Նրան՝ չար կամ հիմար անվանելով, նրանք ապաշխարած չեն լինի, երբ Իմ Օրը գա: Դուք, որ մի ժամանակ բաժին եք ստացել Իմ Սուրբ Հոգուց, Իմ Շնորհից կընկնեք և չպիտի վերանորոգվեք մի երկրորդ անգամ: Ինչպե՞ս կկարողանաք վերանորոգվել, երբ դուք անկարող կլինեք սրտանց զղջալու: Եվ Ես կգամ ու ձեզ կգտնեմ դեռևս չապաշխարած՝ քարի պես կարծր սրտով, չոր և անպտուղ[1]...

Ես ստիպված կլինեմ
կտրել ձեզ և նետել կրակը:

Ուստի ողջ ճշմարտությամբ Ես ասում եմ ձեզ. <u>բացե՛ք ձեր սրտերը</u> և հասկացե՛ք, թե ինչպես է Իմ Սուրբ Հոգին փչում այնտեղ, որտեղ ցանկանում է, և ազատորեն շնչում Իմ պատվիրակների մեջ: Ճանաչե՛ք նրանց իրենց պտուղից և մի՛ եղեք ձեր մտքի դերին:

Ամեն մի հոգի պետք է իմանա, թե ինչպես են ծաղրը, նախանձը, անբարեհաճ քննադատությունը, դատելը և զրպարտանքը հակառակվում Ճշմարտության Սուրբ Հոգուն: Դուք պետք է արթուն լինեք և անդադար աղոթե՛ք, որպեսզի փորձության չենթարկվեք: Այսօր Ես հետևյալն եմ ասում ձեզ. եթե ձեր շուրթերը պատճառ են դառնում, որ դուք մեղանչեք,

[1] Այստեղ Հիսուս կանգ առավ, հետո չափազանց լուրջ ասաց հետևյալ բառերը:

ուրեմն ծո՛մ պահեք ձեր շուրթերով[1] ոչ թե թո՛ւյլ տվեք, որ ձեր շուրթերը դատապարտեն ձեզ, և ձեր հոգին այրվի տառապանքով[2]: Դուք պետք է սիրեք ձեր մերձավորին, ինչպես ինքներդ ձեզ: Հիմա դուք կասեք. «Բայց Դու արդեն տվել ես մեզ այդ պատվիրանը»: Այո՛, Ես տվել եմ, բայց արդյոք դուք հետևե՞լ եք դրան: Աղոթե՛ք և խնդրե՛ք Իմ Սուրբ Հոգուն, որ դա և հանդչի ձեզ վրա:

Վասո՛ւլա, թող Իմ Սուրբ Անունը միշտ լինի քո շուրթերին և քո սրտում: Ես քո Դաստիարակն եմ, և Իմ բարեհաճությունը քեզ վրա է: Սփոփի՛ր Ինձ և թող քո սիրտը լինի Իմ երկինքը: Հասկացի՛ր, թե ով եմ Ես: Աղոթի՛ր ուրախությամբ, և Ես պիտի հովվերգեմ քեզ: Գովաբանի՛ր Ինձ, և Ես կպարուրեմ քեզ Իմ անմար Լույսով: Օրհնի՛ր Ինձ և գոհացրո՛ւ Իմ Սիրտը, և Ես Ինքս կգամ քեզ մոտ և քեզ Իմ շեմքից ներս կտանեմ Իմ Տունը: Այո՛, ինչպես Փեսան է իր հարսին շեմքից ներս տանում, Ես նույնպես կգամ նրբորեն, մեծ քնքշությամբ ու սիրով, և կտանեմ քեզ՝ Իմ Փառքի Գահը ցույց տալու:

Ես վերևից քեզ մոտ եմ ուղարկել Իմ Սուրբ Հոգուն, որ հանդչի քեզ վրա և սովորեցնի այն, ինչի մասին երբեք չես լսել, որպեսզի փրկի քեզ և միլիոնավոր այլ մարդկանց: Մնա՛ Ինձ մոտիկ, Իմ քա՛ղցր աշակերտ, մեր ճամփորդությունը դեռ չի ավարտվել: Մենք դեռևս մի մղոն ունենք գնալու, որպեսզի Իմ մյուս զավակներին սովորեցնենք սրբության գիտությունը:

Ես քեզ պիտի ուղարկեմ շատ ազգերի մոտ, որ պատվես Իմ Սուրբ Անունը, և քեզ վրա պիտի գրվի Իմ Գիտելիքը: Ես քեզ շնորհ կանեմ, որ խոսես այնպես, ինչպես Ես եմ ուզում, որ խոսես: Թող հիմա քո սիրտը հրճվի, և դանձի նման պահիր այն, ինչ Ես քեզ ասացի: Ինձ երբեք հուսախաբ մի՛ անի: Սիրի՛ր Ինձ և կլանի՛ր Ինձ:

Ես Սեր եմ:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 9, 1992

(Մեր Սուրբ Մայրը)

Խաղաղություն քեզ:

Ասա՛ Ռուսաստանի Իմ զավակներին, որ Ես Ինքս նրանց հոգևորապես պիտի դաստիարակեմ: Ես նրանց Մայրն եմ: Ես Հայտնության Կինն եմ: Ռուսաստա՛ն, աղջի՛կս, համբերատա՛ր եղիր, մահվան հոտն այլևս չպիտի տարածվի: Արդարև, քո տառապանքները շուտով կավարտվեն, քանի որ Տերն Իր Ողորմությամբ կվերցնի քո վրայից մահվան պատանքը, որը երկար տարիներ պարուրել էր քեզ: Քո աչքերը, Ռուսաստա՛ն, աղջի՛կս, շուտով պիտի տեսնեն իրենց Թագավորին՝ իրենց Փրկչին՝ Իր ողջ Շքեղությամբ: Նրա անունն է Հավատարիմ և Ճշմարիտ: Քո Թագավորն Իր

[1] Հիսուս նկատի ունի լռություն պահել:
[2] Հիսուս նկատի ունի քավարանում:

վերադարձի ճանապարհին է: Ռուսաստա՛ն, լսի՛ր Նրան:

(Հիմա խոսում է մեր Տերը)

Հեռու գտնվողները պիտի գան և ապաշխարեն: Նրանք պիտի վերակառուցեն Իմ Եկեղեցին, և Ես պիտի օծեմ յուրաքանչյուր սիրտ: Եվ ինչպես մեկը, որը նոր է արթնացել քնից, Ռուսաստանը պիտի արթնանա՝ անհամբերությունից դողալով, որպեսզի կլանվի Իմ կողմից: Ես պիտի ազատեմ քեզ և քեզ կարգեմ շատ ազգերի գլուխը[1]: Օտարների սրտերը պիտի նվա- ղեն՝ քո գեղեցկությունը տեսնելով: Քո աջ ձեռքը պիտի լինի Իմ Ձեռքի մեջ: Ես քեզ պիտի բարձրացնեմ բոլորից վեր, և Ես պիտի կատարեմ Իմ ցանկությունը քո մեջ: Հրճվանքով և մեծ ուրախությամբ քո Արարիչը ցույց պիտի տա քո գեղեցկությունն Իր մարդկանց[2], Իր հրեշտակներին և Իր բոլոր սրբերին: Եվ ողջ երկինքը բացահայտորեն պիտի ազդարարի իր ուրախությունը: Երկնակամարը պիտի հռչակի Իմ փառքը աշխարհի չորս անկյուններում:

Ռուսաստա՛ն... Դու մեռած էիր, և Ես քուրձ էի հագել՝ Իմ վիշտը ցույց տալու համար, և ինչպես իր երեխային սգացող մի հայր, Ես շրջում էի վշտահար: Հիմա Ես քեզ ընտրել եմ շատ ազգերի միջից, որ քո միջոցով Իմ Փառքը ցույց տամ:

Շուտով քո Սուրբ Մայրը գետնին պիտի տապալի Սատանայի գահը և պիտի ճզմի Օձի գլուխը: Երեխաների կորուստն ու այրիությունն անմիջապես վերջ կգտնեն: Վիշապը պիտի արժանանա իր ճակատագրին, և աշխարհը կունենա խաղաղության մի ժամանակաշրջան: Վերջում ողջ մարդկության Մայրը պիտի հաղթի, և Ես՝ Տերը, ձեր Աստվածը, պիտի հաղթանակեմ ամեն մի ազգի մեջ, ամեն մի սրտում և ամեն մի ցեղի մեջ[3]:

(Ավելի ուշ)

Աղջի՛կս, աշխարհն ինձ ամեն օր վիրավորում է՝ Իմ Սրբության հանդեպ հարգանք չունենալով: Նրանք չարաշահում են այն ազատությունը, որ Ես տվել եմ՝ իրենք իրենց կործանելով: Իմ Աչքերում այս սերունդը դարձել է մի տգեղ բիծ: Նրանք չարին հատուցում են չարությամբ, որի համար էլ Ես չպիտի խնայեմ այս սերնդին: Ոչ ոք չի կարող ասել, որ Ես չեմ զգուշացրել իրենց, ոչ ոք չի կարող ասել, որ Ես համբերատար չեմ եղել:

Շուտով երկիրը պիտի ցնցվի, և երկինքը շառաչյունով պիտի անհետանա՝ թողնելով բոլորին համատարած մթության մեջ: Եվ մեծ

[1] Կարծում եմ հոգևորապես:

[2] Հիսուսի Ձայնը ուրախ էր հնչում, և Նրա Դեմքը ուրախություն էր արտահայտում, ինչպես մի հայր, որ վեր էր բարձրացնում իր երեխային:

[3] Այս վերջին հատվածը նշանակում է, որ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ճանաչեն Հիսուսին, որպես Քրիստոս՝ Գառը (Ակնարկում է Հայտ. 6:15-16):

ուժգնությամբ երկրի տարրերը՝ սարերն ու կղզիները, կրակով պիտի բռնվեն և անհետանան: Յուրաքանչյուր կանաչ շյուղ պիտի այրվի, և դու, սերո՛ւնդ, Իմ առջև պիտի կանգնես զինաթափված: Դուք հնարավորություն ունեք կանչելու Ինձ և դարձի գալու: Սակայն դուք նախընտրում եք անտուն լինել և թափառել մեղքի մեջ: Դուք նախընտրում եք ապրել անապատներում:

Տե՛ր, ես զգում եմ. որ Քո Սուրբ Սիրտը խիստ վշտացած է: Դու ինձ կասես, որ դրա փոխարեն ես ցավ զգամ իմ եղբայրների և քույրերի հանդեպ: Ես ցավում եմ նրանց համար, բայց ես նաև ցավ եմ զգում Քո տխրության համար, քանի որ Քո Սիրտը բզկտված է: Քո շնորհով, Տե՛ր իմ, Դու կարող ես բոլորին ընդունելի դարձնել Քո Աչքերին: Դու կարող ես մեզ պատրաստել, որ կատարենք Քո Կամքը: Դու ասացիր, որ ես ամենացածրից էլ ցածրն եմ: Բայց Քո Շնորհով այս առաքելությունը վստահեցիր ինձ: Ինձ տրվել է մի ձրի պարգև՝ Քո Շնորհը: Ինչո՞ւ ուրիշները նույնպես չեն կարող ստանալ այն:

Դու համարձակ ես, Վասո՛ւլա, որ քննում ես Իմ Իմաստությունը[1]:

Գուցե ես համարձակ եմ, բայց դա նրանից է, որ ես գիտեմ, թե ինչ է զգում Քո Սիրտը: Քեզ հաճույք չեն պատճառում մեզ պատժելն ու նվաստացնելը:

Ամեն ինչ, որ գալիս է երկրից, վերադառնում է երկրին[2]: Ձեր սերնդի մեղքերը խոցել են ողջ Հավիտենությունը, նրանք խոցել են Իմ Սիրտը: Աղոթի՛ր և բարեխոսի՛ր, Իմ Վասո՛ւլա, որ նախքան Իմ Օրը գալը, դեռևս ժամանակ լինի, հնարավորին չափ շատ մարդկանց կնքել Իմ Կնիքով, որովհետև լավն ու վատը տառապելու են այդ օրերին:

Սեպտեմբերի 10, 1992

Տե՛ր իմ Աստված:

Ես եմ:

Փոքրի՛կս, Ես «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» Պատգամների Հեղինակն եմ: Դրանք Իմ պարգևն են ձեզ բոլորիդ: Նրանց միջոցով դուք կհասկանաք Իմ Սիրտը, և թե ինչպես եմ Ես միշտ և ամենուր կանգնած ձեր կողքին:

[1] Հիսուս վսեմորեն արտասանեց այս բառերը:
[2] Ես հասկացա, որ մենք ինքներս ենք մեզ ոչնչացնում մեր ուրացությամբ:

Սեպտեմբերի 11, 1992

Խաղաղություն քեզ:

Աղջի՛կս, այսօր Ես քեզանից պիտի խնդրեմ հետևյալը.

- Ավելի երկար ինքդ քեզ զրկի՛ր ուտելիքից:

- Հանգստացի՛ր, երբ պետք է հանգստանաս, և մի՛ թող քո վարդարանի աղոթքը կեսգիշերվան:

- Ավելի հաճախ գնա՛ խոստովանության: Մի՛ ասա, այո՛, որ հետո չանես: Ավելի լավ է ասել. «Ես կփորձեմ քեզ գոհացնել, Տե՛ր»:

Քո Թագավորը գիտի քո կարողությունը, քո թշվառության չափը և քո ապշեցուցիչ թուլությունը: Աչակե՛րտս, քո Ուսուցիչը չի զրկի քեզ Իր Լույսից: Նա քեզ բավարար չափով Լույս կտա, որ աճես և հետևես քո Ուսուցչի ոտնահետքերին, և այն, ինչ սպասվում էր Ուսուցչին, պիտի սպասվի նաև աշակերտին: Մի՞թե Ես չեմ ասել. «Աշակերտն իր ուսուցչից ավելի մեծ չէ, ոչ էլ ծառան՝ իր տիրոջից: Բավական է, որ աշակերտն աճի և նմանվի իր ուսուցչին, իսկ ծառան՝ իր տիրոջը: Եթե նրանք տան Տիրոջը Բեեղզեբուղ անվանեցին, ի՞նչ չեն ասի նրա տան անդամների մասին»[1]: Եթե Իմ հարազատները հավատում էին, թե Ես խելքս կորցրել եմ[2], ուրեմն դու ինչե՞ր չես լսի քո իսկ ընկերներից: Արի՛, գրկի՛ր Իմ Խաչը և սովորի՛ր քո Տիրոջից:

Իմ Հոգին հրճվում է ամեն անգամ, երբ Ես լսում եմ քեզ աղոթելիս:

Սեպտեմբերի 14, 1992

Հիսո՞ւս:

Ես Եմ: Դու չգիտես, թե Ես որքան շատ եմ աղոթել Հորը քեզ համար: Էլ չեմ ասում քո Սուրբ Մոր մասին: Ամեն օր Իմ Աչքերից

Արցունքներ են հոսում այս աշխարհի հանցանքների պատճառով... Իմ Աչքերը հոգնել են վեհանձն հոգիներ փնտրելուց: Իմ Սիրտն անհանգստացած է, և Իմ Ողջ Էությունը ցնցվում է ցավից այն աստիճան, որ Ես զսպում եմ Ինձ ցած նայել այս սերնդի մեղքերի վրա, որպեսզի Իմ Բաժակը չհորդի:

Ես Սիրո մի Նոր Օրհներգ եմ պատրաստել[3], որ երգեմ ձեզ համար և երկնքից համեմ ամեն մի սրտի, որպեսզի ձեզ փրկեմ և հիշեցնեմ ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ ունեցած Իմ Հավիտենական Սիրո մասին: Ես խոսել եմ վերևից՝ ոչ թե Իմ օրենքները ձեզ պարտադրելու, այլ Խաղաղության և Սիրո դաշինք առաջարկելու համար, որպեսզի ձեզ բոլորիդ առաջնորդեմ Իմ Թևերի տակ և միավորեմ ձեզ: <u>Ես առաջարկեցի ձեզ պսակվել</u> Ինձ հետ... Բայց ձեզանից քանի՞սը հասկացան, թե Ես ինչեմ ասում: Դուք իսկապես հասկացա՞ք, թե Ամուսինը ինչ էր առաջարկել ձեզ: Ուրեմն բացատրե՛ք Ինձ, թե ինչո՞ւ ամեն անգամ, երբ

[1] Մատթ. 10:24-25
[2] Մարկ. 3:21
[3] Այս Պատգամները

Ես խոսում եմ հաշտության մասին, դուք չրջում եք Ինձանից ձեր աչքերը...

- Ես օտարական էի, և դուք Ինձ չընդունեցիք: Ես ձեր դռան մոտ էի և թակում էի ձեր դուռը, բայց դուք չլսեցիք Ինձ: Թեև Ես ասել եմ Ճշմարտությունը, բայց ձեր լեզուն երբեք չդադարեց Իմ մասին դարշելի ստեր պատմելուց՝ դատապարտելով Ինձ: Ես եկա՝ ձեզ խելամտություն սովորեցնելու և հիշեցնելու ձեզ Իմ Գիտելիքների, Ղեկավարության և ծառայության մասին, բայց դուք ծաղր ու ծանակի ենթարկեցիք Ինձ: Ես ձեզ այցելեցի Սիրով և Քնքշությամբ՝ բոլորիդ Իմ Սրտում միավորելու և բոլորիդ կրկին Իմ նախնական Եկեղեցու կանոնները սովորեցնելու բուռն փափագով, բայց դուք թույլ տվեցիք, որ ձեր սեփական օրենքներով լցվի ձեր հոգին՝ Ինձ ձեր սրտից դուրս նետելով:

Դուք կհարցնեք. «Ես ե՞րբ արեցի այդ ամենը Քեզ, Տե՛ր», Ես կասեմ ձեզ, որ դուք դրանք արդեն հասցրել եք Ինձ: Դուք Ինձ հապճեպ դատեցիք և թույլ տվեցիք, որ ձեր շրթունքները դատապարտեն Ինձ, քանի որ այն, ինչ արեցիք Իմ պատվիրակների հետ, դուք Ինձ արեցիք: Դուք պղծեցիք նրանց անունը՝ կարծելով, թե Ինձ լավություն եք անում, սակայն իրականում դուք պղծում էիք Իմ Անունը: Ինչպե՞ս կարող եք դեռևս ասել. «Քո Խոսքը, Տե՛ր, Ճրագ է իմ ոտքերին, Լույս՝ իմ ճանապարհին», երբ դուք չընդունեցիք Իմ Խոսքը և ոչ էլ հաշտվեցիք ձեր եղբոր հետ:

Այս վերջին օրերին Մեր Երկու Սրտերը մեծ Սիրով և Քնքշությամբ եկել են[1] ձեզ բոլորիդ նորից սովորեցնելու, որ աղոթքը, սերը և խոնարհությունը ձեր փրկության ԲԱՆԱԼԻՆԵՐՆ են, բայց ձեզանից քանի՞սն են իսկապես թափանցել այս Ճշմարտության մեջ: Ձեր սիրտն այն դարպասն է, որով Ես կարող եմ ներս մտնել, որ ձեզ բուժեմ և առաջնորդեմ Իմ Ճանապարհով:

Դուք իսկապե՞ս պահել եք Մեր Խոսքերը, որպես մի գանձ ձեր սրտում, թե՞ դեռևս ձգտում եք թշնամության: Դուք չեք կարող թաքնվել Ինձանից, ոչ էլ կարող եք ասել, որ Ես ձեզ զրկել եմ Ճշմարտությունից: Ուրեմն բացատրե՛ք Ինձ, թե ինչու եք բաժանված, եթե հավակնում եք, որ Ճշմարտության մեջ եք... Բա՛ց աչքերդ, Իմ ընկե՛ր, բաց սի՛րտդ, ոչ թե միտքդ: Ես ձեզ նորից եմ ասում.

Ոչ մի լավ մարդ չի մնացել, ո՛չ, իսկապես ոչ մեկը: Զկա մեկը, որ հասկանա, քանի որ դուք բոլորդ էլ մեղքի տիրապետության տակ եք: Զկա մեկը, որ Ինձ փնտրի: Բոլորը մի կողմ են շրջվել, միանման արատավորվել, բայց չնայած դրան՝ ձեզանից շատերը հայտարարում են, որ Լույսի մեջ են: Ես ասում եմ ձեզ. այնքան ժամանակ, քանի դեռ բաժանված եք, դուք խավարի մեջ եք: Այնքան ժամանակ, քանի դեռ ուրախանում եք ձեր բաժանմամբ, դուք չգիտեք, թե ուր եք գնում, քանի որ չափազանց մութ է տեսնելու համար:

Ես ձեզ մոտ եկա՝ մի ձրի Պարգև առաջարկելու, Իմ Սիրո Պարգևը: Սակայն Սերը նորից չհասկացվեց, մերժվեց և խորթ եղավ ձեր սրտին: Հակառակ ձեզ հաշտեցնելու և միավորելու Իմ բոլոր Աղերսանքներին՝ դուք շարունակում եք մեղանչել: Ինչպե՞ս կարող եմ Ես ներել ձեր

[1] Ակնարկում է՝ Հայտ. 11:

մեղքերը, երբ դուք անընդհատ ճնշում եք Իմ Խոսքերը: Դուք լսում եք Իմ Ձայնը, բայց այլևս չեք ճանաչում Այն: Մինչև Ինձ թույլ չտաք ձեր սրտից արմատախիլ անել այն ամենը, ինչ որ Ես չեմ, դուք երբեք չեք տեսնի, թե ինչպես է այսօր Իմ Սուրբ Հոգին առավել, քան երբևէ, հաշտություն և միասնություն փնտրում ձեր մեջ:

<u>Ես ձեզ ցույց եմ տվել</u>
<u>ինչպես միավորվել:</u>

Միասնությունը պիտի լինի ձեր սրտում: Հաշտությունը պիտի լինի սրտում, այլ ոչ թե ստորագրված պայմանագրով: Ինչպե՞ս կարող է որևէ մեկը պնդել, թե ինքն արդար է, երբ ձեր երկրները պատերազմի և կրակի մեջ են: Իմացե՛ք, որ Իմ Սուրբ Սիրտը խնդրում է ձեզանից

բարեգթություն, մեծահոգություն,
աղոթք ու հաշտության հոգի,
և որ սիրեք մեկդ մյուսին,
ինչպես Ես եմ ձեզ սիրում:

Արդյոք կլսե՞մ Ես ձեզանից ձեր անձնատվության և ապաշխարության կանչը:

Սեպտեմբերի 17, 1992

(Պատգամ նրանց, ովքեր աշխատում են այս պատգամների համար):

Զավա՛կս, վստահի՛ր Ինձ: Դու անկարող ես ինքդ միայնակ բարձրացնել քո ճկույթը: Ողջ զորությունը գալիս է Ինձանից: Հատուցի՛ր Ինձ հիմա և առաջարկի՛ր Ինձ քո կամքը: Ես սպասում եմ...

<u>ԻՄ ԿԱՄՔԸ ՔՈ՛ՆՆ Է:</u>

Ես՝ Հիսուս, ասում եմ քեզ. Դու վայելում ես Իմ բարեհաճությունը, քանի որ դու Իմ իշխանության տակ ես: Ասա՛ բոլոր նրանց, որոնց ընտրել է Իմ Սիրտը, որ Ես երբեք հուսախաբ չեմ անի նրանց: Ամուսինը կապահովի նրանց կարիքները: Թող որ բոլորը նրանց մեջ տեսնեն ճշմարիտ վկաների, թող բոլորն իմանան, որ նրանց մեջ ճշմարտություն կա՝ տեսնելով, թե ինչպես են նրանք կիսվում ու վերաբերվում միմյանց հետ:

Ես նրանց ուղարկում եմ, որ դիմագրավեն աշխարհին: Նրանք պետք է զերծ մնան անբարեհաճ քննադատությունից, որպեսզի նրանց լեզուն չսպանի իրենց կամ՝ չբաժանի իրենց: Նրանցից ոչ մեկը չի վաստակել այս շնորհը: Ես՝ Հիսուս, նրանց ձրի տվել եմ այս շնորհը, ուստի ոչ մեկը

չպետք է փող խնդրի: Ուժեղները պետք է սատարեն թույլերին, հարուստները՝ կարիքավորներին: Ինչպես արդեն ասել եմ. «Ավելի շատ երջանկություն կա տալու, քան թե ստանալու մեջ»[1]: Ես ձեզ բավարար չափով կտամ, որ հոգաք ձեր ծախսերը, ուստի երբեք Ինձ մի փորձեք[2]:

Միացա՛ծ եղեք Իմ մեջ և իրար հետ: Ձեր փորձությունների ժամանակ երբեք մի՛ հուսահատվեք: Արե՛ք, ինչ կարող եք, իսկ մնացածը Ես կանեմ: Արիացե՛ք, աղոթե՛ք, որպեսզի չթուլանաք: Բացահայտե՛ք Իմ Սուրբ Սրտի Հարստությունները և Իմ Փառքը աշխարհին: Դուք ուզո՞ւմ եք լինել Ամենաբարձրյալի վկաները: Ուրեմն ուրացե՛ք ձեր անձերը: Ուզում եք մեկ լինել Ինձ հե՞տ: Հե՛տ պահեք ձեզ աշխարհից: Ուզո՞ւմ եք ծառայել Սիրուն: Հետևե՛ք Իմ Զոհաբերված Արյամբ ներծծված Ոտնահետքերին[3]:

Հիշե՛ք մի բան ևս. ձեր մարդկային հակումներից և թուլություններից ազատվելու համար խնդրե՛ք Իմ Հոգուն, որ օգնի ձեզ: Խնդրե՛ք, և կտրվի ձեզ: Ես քնքուշ եմ և խոնարհ եմ սրտով, և Ես գիտեմ այն ամենը, ինչ որ կա ձեր սրտերում: Ուստի խնդրե՛ք Իմ Հոգուն, և Իմ Հոգին ձեզ օգնության կգա: Հիմա Հոգին ձեզ խնդրում է, որ հաճախ կարդաք այս աղոթքը.

Հիսո՛ւս, ոչ մահը, ոչ էլ կյանքը,
ոչ մի հրեշտակ, ոչ մի իշխան,
ոչ մի բան, որ գոյություն ունի,
ոչ մի բան, որ դեռ գալու է,
ոչ մի զորություն
կամ բարձրություն
կամ խորություն,
ոչ էլ որևէ արարած
երբևէ կբաժանեն ինձ Քեզանից:
Ես խոստանում եմ
հավատարիմ մնալ Քեզ.
սա իմ հանդիսավոր խոստումն է:
Օգնի՛ր ինձ,
որ պահեմ այս խոստումը
հավիտյանս հավիտենից: Ամեն:

...Վե՛ր կաց, աղջի՛կս և կալսի՛ր (գործի անցիր): Թող քո մտքերը լինեն Իմ Մտքերը: Ինքդ քեզ Ի՛նձ հանձնիր, որպեսզի ինչ որ դու անես, անես Իմ Հոգով և համաձայն Իմ Մտքի: Թո՛ւյլ տուր, որ Իմ Հոգին ազատորեն շնչի քո մեջ, և Ես կկատարեմ Իմ Կամքը քո մեջ: Երանելի ես դու, զավա՛կս, որ խորհրդածում ես և թույլ ես տալիս, որ Իմ Իմաստությունը լինի քո անձնական Ուսուցիչը, քանի որ Նա դեռ շատ ավելի գաղտնիքներ պիտի բացահայտի քեզ:

Ստացի՛ր և տո՛ւր, տո՛ւր:

---

[1] Գործք 20:35
[2] Հիսուս նկատի ունի, որ ոչ ոք չպետք է ինչ-որ մեկին կամ ինչ-որ տեղ պարտք ունենա:
[3] Այստեղ Հիսուս մեզանից խնդրում է իսկական զոհողություն:

Սեպտեմբերի 25, 1992

Ահա ես այստեղ եմ,
որ արագացնեմ քայլերս
այս անվերջ ավերակների միջով՝
բեռը մեջքիս:
Ես գալիս եմ Քեզ մոտ
սփոփանքի համար, հանգստի համար,
և հիմա ուժը հեռանում է ինձնից՝
կամաց ծորալով,
և ինձ կրծում է վիշտը,
որը երբեք չի նահանջում:

Վիթխարի ճիգով ես անցնում եմ
այս անվերջ Գիշերվա
սարսափների միջով՝
թուլացած այդ կեղծ
վկաների գռեհկությունից,
ովքեր ամբողջ օրը հարձակվում են
իմ անմեղության վրա:
Քեզ հաճելի էր ինձ տալ
այն հարցերի բանալին,
որոնք հոգիս միայնակ
երբեք չէր կարող հասկանալ,
հրաշքներ, որոնք
իմ հասկացողությունից վեր էին,
և այդ պատճառով
նրանք հալածում են
իմ անմեղությունը:

Այնտեղ՝
ամեն մի խավար անկյունում,
նրանք սպասում են հարմար առիթի,
որ խլեն կյանքս,
եթե դա հնարավոր լինի:
Նրանք իրենց անվանում են
Քո ժողովուրդը՝ կարծելով,
թե իրենց բերանը արքայություն է,
բայց ինչ որ առաջարկում են,
կեղծ է, սխալ և մոլորեցնող:
Ես փորձում եմ համարձակ լինել
և իմ շրջապատում
ինքնավստահ երևալ,
բայց նրանք անդադար
կրծում են ինձ

Անաստվածներն ավելի
շատ բարերարություն և
խոնարհություն ունեն,

քան նրանք,
ովքեր հայտարարում են,
թե հետևում են Քո Օրենքին,
բայց երբեք
չեն դադարում դատելուց
և նվազագույնս չեն տատանվում
դատապարտել՝ ճզմելով ինձ
ցավով ու տառապանքով:
Եթե նրանք, ովքեր ինձ դատում են,
անատված լինեին,
ես կհանդուրժեի դա,
բայց ՆՐԱՆՔ, իրենց անվանում են
Քո ժողովուրդը՝ Աստծո մարդիկ,
որոնց հետ մկրտությունը
մեզ կապում է Քո Տան մեջ...

Ես բողոքում եմ,
բայց մի՞թե ես իրավունք չունեմ
մերթ ընդ մերթ բեռս
Քեզ վրա դնելու, Տե՛ր:
Այո՛, ես գիտեմ,
որ ես հնչում եմ և նման եմ
Ողբերի մի քայլող Գրքի,
բայց ես անմեղ
կյանքով եմ ապրում,
ուստի հանդստացրո՛ւ ինձ, Տե՛ր,
թեկուզ և մի որոշ ժամանակով:

Վասո՛ւլա... Մի՛ վշտանա և դառնորեն մի՛ ողբա, երբ մեխված ես Իմ Խաչին: Ընդունի՛ր ինձ՝ որպես արժանապատվության օրինակի: Շուտով որոմը կհանվի ցորենից, նախքան ձեզանից որևէ մեկը կիմանա: Ես շատ անգամ եմ քեզ փրկել քո թշնամիների որոգայթներից, որոնք հույս ունեին ոչնչացնել քեզ: Ուրեմն, աղջիկս, ինչո՞ւ ես վախենում Գիշերվա սարսափներից: Ես միայն պայքար եմ մղում քո ներսում... Ինձ ազա՛տ թող՝ գնալու քո հոգու ներքին սենյակը՝

Իմ Բնակավայրը:

Ես քեզ նախապես ասել եմ, որ քո հոգին վեր պիտի ցատկի, ինչպես կրակի վրա, ամեն անգամ, երբ Իմ Ձեռքը իջնի՝ ջարդելով Իմ մրցակիցներին, որոնք զբաղեցնում են Իմ տեղը: Ես Տեր եմ և մտադիր եմ մնալ քո Տերը: Ես քեզ դրել եմ որպես Թիրախ Իմ նետերի համար: Ո՛չ, Վասուլա, չնորհը առանց տառապանքի չի լինում: Ո՛հ, ի՞նչ չեմ անի Ես Իմ ամենամտերիմների համար, Իմ ամենասիրելի ընկերների համար[1]:

Ուրեմն, թո՛ւյլ տուր ինձ օգտագործել Ավիլայի Սուրբ Թերեզայի խոսքերը և

[1] Հիսուս լցված էր հրճվանքով:

ասել Քեզ. զարմանալի չէ, որ Դու այդքան քիչ ընկերներ ունես:

Բոլոր մարդիկ թույլ են... Այնուամենայնիվ, ես կպատասխանեմ քո դիտողությանը և կասեմ քեզ. եթե քո հոգին <u>իմանաը</u> միայն, թե ես ինչ եմ առաջարկում և ինչ եմ անում քեզ հետ, <u>դու</u> ինքդ Ինձանից կինդրեիր ավելի շատ փորձություններ, տառապանքներ, խաչեր, ամեն ինչ: Ես դաստիարակում եմ նրանց, որոնց սիրում եմ: Ուստի մի՛ առարկիր այն ամենին, ինչ ես լավ եմ համարում: Դու իմ գոհարն ես, և ինչպես մի թանկարժեք քար, ես կտրում եմ, կոփում և տալիս եմ քեզ այն ձևը, որն իմ Մտքում ունեմ: Ուստի ես քեզ ասում եմ. այնքան ժամանակ, որքան քո մեջ շունչ կա, դու պետք է կատարես այն աշխատանքը, որը ես Ինքս եմ քեզ տվել: Իսկ նրանց, ովքեր իրենց անվանում են Իմը, սակայն անարգական և վիրավորական վերաբերմունք ունեն, երբ հարցը վերաբերում է հոգևոր խնդիրներին, ես ասում եմ. «Եթե դուք կույր լինեիք, մեղավոր չէիք լինի, բայց քանի որ դուք ասում եք. «Մենք տեսնում ենք և կարող ենք զանազանել, - ձեր մեղքը մնում է»: Քանի՞ անգամ ես պիտի հանդիմանեմ նրանց իրենց կասկածամտության և համառության համար:

Արի՛, եղի՛ր Խաղաղության մեջ: Ես քեզ հետ եմ քո ճամփորդության ողջ ընթացքում:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 28, 1992

Ա՜Հ, Իմ փոքրի՛կ աշակերտ, ես օրհնում եմ քեզ: Սիրի՛ր Ինձ և փառաբանի՛ր Ինձ, քանի որ Ես երիցս Սուրբ եմ:

Սեպտեմբերի 29, 1992

Տե՛ր, մեր դարաշրջանը մեղավոր է ծանր հայհոյանքների համար և, ա՜հ, Տե՛ր...

Ասա՛ այդ:

Ես չեմ տեսնում նույնիսկ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ <u>սաղմնավորումը</u>:

Այո՞:

Գուցե այն, ինչ Դու ասացիր, Տե՛ր, այդ «շուտովը» <u>իմ</u> «շուտովը» չէր, այլ Քոնը: Քոնը նշանակում է <u>շատ</u> ԵՐԿԱՐ, շատ երկար ժամանակ:

Ես հանկարծակի պիտի գամ ձեզ վրա բոցավառ Կրակի այունով: Կրակ, որը կփոխի այս երկրի դեմքը...

Արի՛, արիացի՛ր, զավա՛կս: Քո յուրաքանչյուր կատարած քայլը Ես՝ Տերը, օրհնում եմ: Եթե աշխարհը քո դեմ է, այդ նրանից է, որ դու տեսել ես Իմ Փառքը: Այդ նրանից է, որ Ես կիսել եմ քո կերակուրը քեզ հետ կողք կողքի: Այդ նրանից է, որ Ես մտել եմ քո տունը, որ նորից փառավորեմ Իմ Անունը...

Ուրեմն մի՞թե Ես իրավունք չունեմ մեծահոգի ու առատաձեռն լինելու: Դու հանդիմանո՞ւմ ես Ինձ նրա համար, որ Ես մեծահոգի ու առատաձեռն եմ քո հոգու հանդեպ: Մի՞թե մենք չենք համաձայնվել, որ դու Ինձ թույլ կտաս, որ քեզ հետ վարվեմ այնպես, ինչպես Ի՛նձ հաճելի է: Արի՛, դու թույլ ես, տո՛ւր Ինձ քո թուլությունն ու թշվառությունը:

Ա՛հ, մի բան ևս. քանի դեռ հասկի հատիկը չի ընկել գետնին և մեռել, մնում է միայն մեկ հատիկ: Բայց, Իմ Վասո՛ւլա, եթե նա մեռնում է, հարուստ բերք է տալիս... Դու Իմ որդեգրած աղջիկն ես, սովորի՛ր, թե Ես ինչ եմ ուզում ասել: Թող քո մտքերը, քո ցանկությունները, <u>ամենինչը</u> նմանվեն Ինձ: Ուստի վերցրո՛ւ քո խաչը և հետևի՛ր Ինձ:

Ես սիրում եմ քեզ խենթենալու չափ, ուստի դու էլ սիրի՛ր Իմ Խաչը խենթենալու չափ, սիրի՛ր Ինձ խենթենալու չափ:

Հոկտեմբերի 1, 1992

Տե՛ր, թող Քո Սուրբ Դեմքը նորից ժպտա Քո ամպացած կալվածքների վրա[1], մի՛ ուշանա, ցո՛ւյց տուր Քո Փառքը հիմա: Շատերը խոչընդոտներ են դնում, որպեսզի արգելեն Քո պատգամները, արի՛:

Սիրելի՛ս, երբ դու սկսեցիր խնդրել, մի բառ ասվեց, և Ես եկա՝ քեզ ասելու, թե ինչ է դա: Դու հավատո՞ւմ ես, որ Ես Աստծո սիրելի Որդին եմ՝ Հիսուս Քրիստոսը, որ խոսում եմ քեզ հետ:

Այո՛, Տե՛ր, հավատում եմ:

Ուրեմն մի՞թե Ես չեմ հոգա, որ Արդարություն լինի քո նկատմամբ, ընտրյա՛լս, որ աղերսում ես Ինձ օր ու գիշեր: Այդ մարդիկ մարտահրավեր են նետում Իմ Զորությանը: Երբ նրանց անօրենությունների չափը լրանա, նրանք ստիպված կլինեն Իմ առաջ կանգնել, ինչպես

Դատավորի առաջ:

Մինչ այդ ինքդ քեզ նվիրի՛ր Իմ Սուրբ Սրտին, ծառայի՛ր և մի՛ սպասիր,

[1] Մեզ:

որ քեզ ծառայեն, որպեսզի Իմ Հայրը, որ Երկնքում է, այնտեղ քեզ տեղ հատկացնի: Ինձ հավատարիմ մնալով դու կենթարկվես մեծ հալածանքների, բայց մի՞թե Ես քեզ չեմ խոստացել, որ այլևս սոված կամ ծարավ չես լինի[1]: Ուստի մի՛ վախեցիր, երբ փոթորիկները բարձրանան քո դեմ: Սուրբ Գրքերը պետք է կատարվեն: Երանելի եք դուք, որ մեռնում եք Իմ մեջ՝ Տիրոջ մեջ (նկատի ունի Իր անունով նահատակվողներին): Արդարև, Ես պիտի պարգևատրեմ ձեզ:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 5, 1992

Հա՛յր, մի ժամանակ,
նախքան Քո Վսեմությունը
վերականգնեց իմ խեղճ
հոգու հիշողությունը,
ես մոռացել էի,
թե ով է ինձ ստեղծել:
Հաջորդ պահին, երբ Դու
վերականգնեցիր Իմ հիշողությունը,
խնդրեցիր ինձ
աչքերս վեր բարձրացնել
դեպի երկինք:
Ապա Լույսի մի ճառագայթ
փայլեց ինձ վրա,
և կլանող կրակի պես
Քո Հոգին հանգչեց ինձ վրա:

Ճշմարի՛տ Լույս, Անհատնում Գանձ,
Դու ակնածանք ես ներշնչում
և զարմանալիորեն Մեծ ես:
Ինչպե՞ս կարող եմ ես
շնորհակալություն չհայտնել
և չգովաբանել Քեզ,
Ամենաքնքո՛ւշ Հայր,
որ Քո Հոգին հանգցնում ես
իմ թշվառ հոգու վրա,
և Քո Հոգին
մեկ ես դարձնում ինձ հետ:

Խաղաղություն քեզ:

Այդ Ես եմ՝ Յահվեն՝ քո Հավիտենական Հայրը, Նա, ով քեզ Իմաստություն սովորեցրեց: Ես այն Սուրբն եմ, որը մոտեցավ քեզ քո թշվառության մեջ և բժշկեց քեզ:

Ես խոսեցի քեզ հետ քո քնի մեջ, և դրանից հետո դու տեսար Լույսը,

[1] Ակնարկում է Հայտ. 7:9-17:

քանի որ քո աչքերի վրայից թեփուկներն արդեն ընկել էին: Ես քեզ սովորեցրել եմ, աղջի՛կս, չվախենալ Ինձանից, այլ վախենալ միայն այն ժամանակ, երբ դու մերժես Ինձ և ընդդիմանաս Ինձ: Ես սովորեցրել եմ քեզ վստահ լինել Իմ Ներկայության մեջ՝ ցույց տալով քեզ Իմ Անսահման Քնքշությունն ու Հայրական Սերը, որ Ես ունեմ ձեզանից յուրաքանչյուրի համար: Ես Ինքս արմատախիլ արեցի քո մեղքերը և դրանց տեղում՝ Ինձ տրված տարածքում, Ես քո մեջ տնկեցի Իմ չնորհները: Չնայած քո հոգին ցատկոտում էր ինչպես կրակի վրա, Ես պետք է շարունակեի Իմ ընթացքը քո հոգու մեջ և դուրս շպրտեի բոլոր մրցակիցներին, որոնք քեզ հետ էին բնակվում: Իմ Խանդոտ Սիրով՝ Ես այդ մրցակիցներին փոխարինեցի առատ մրգերով, և այդ պահից սկսած՝ Ես դարձա քո սեղանակիցը, քո ուրախությունը:

Լսի՛ր հիմա, աղջի՛կս, հարազա՛տս, և գրի՛ր ու ասա՛ Իմ զա~ վակներին հետևյալը.

Իմ Սրտի խորքերից Ես կանչում եմ ձեզ բոլորիդ: Օրհնյալ են նրանք, ովքեր ականջ ունեն լսելու: Եթե ոչ Իմ մարգարեները, ապա ովքե՞ր, կարո՞ղ եք Ինձ ասել, կանխասացին Իմ Որդու գալուստը: Եթե դուք ասում եք, որ ապրում եք Ճշմարտությամբ և Իմ Սիրո մեջ, ուրեմն այդ ինչպե՞ս է, որ այսօր ձեր սերունդը մի կողմ է հրում Իմ մարգարեներին և հալածում նրանց ճիշտ այնպես, ինչպես ձեր նախնիներն էին անում:

Իմ Անսահման Ողորմությունից ելնելով՝ մի Քաղաք է վերակառուցվում Իմ Սեփական ժողովրդի համար: Արդյո՞ք վերանորոգված այս Քաղաքը պիտի վերակառուցվի նրանց արյան վրա, որոնց դուք պիտի հավիտյանս հալածեք: Այսօր առավել, քան երբևէ, Ես ուղարկում եմ ձեզ Իմ Սուրբ Հոգին, որպեսզի նորոգի ձեզ, բայց դեռ որքա՞ն երկար այս սերունդը պիտի շարունակի ընդդիմանալ Իմ Սուրբ Հոգուն: Ասացե՛ք Ինձ, կարո՞ղ է մարմինն ապրել առանց սրտի: Իմացե՛ք, որ Իմ Սուրբ Հոգին Մարմնի Սիրտն է, Մարմին, որը Եկեղեցին է: Իմացե՛ք, որ Իմ Սուրբ Հոգին Եկեղեցու Շունչն է, Էությունն է մեծ եռանդի՝ ուղղված Ինձ՝ ձեր Աստծուն: Իմ Սուրբ Հոգին Երկնքի քաղցր Մանանան է, որը սնում է աղքատներին:

Երանելի է նա, ով բացում է իր սիրտը Իմ Սուրբ Հոգու համար: Նա պիտի լինի գետի եզերին աճած ծառի նման, որը նոր պտուղ է տալիս տարվա ամեն մի եղանակի, երբեք չթառամող պտուղ՝ բուժիչ տերևներով: Երանելի է նա, ով բացում է իր սիրտը Իմ Սուրբ Հոգուն: Ինչպես բյուրեղյա մաքրությամբ մի առվակ, Իմ Հոգին գետի նման պիտի հոսի նրա սրտում՝ նորոգելով նրան, որովհետև, ուր էլ որ այս գետը հոսում է, կյանք և ուրախություն է ծնում: Մի՞թե չեք կարդացել. Կյանքի Գետը, որը բարձրանում է Իմ Գահից և Գառից, պիտի հոսի քաղաքի փողոցի մեջտեղով:

Իմ Սուրբ Հոգին հեռու պիտի փախչի չար հոգիներից, բայց Իրեն բացահայտորեն ցույց պիտի տա անմեղներին, աղքատներին և պարզասիրտներին: Մեծ ուրախությամբ, Իմ Սուրբ Հոգին պիտի պարուրի այդ հոգիներին և պիտի դառնա նրանց Սուրբ Ուղեկիցը և Առաջնորդը: Եվ, երբ նրանք քայլեն, նրանց քայլերը չեն խոչընդոտվի, երբ նրանք վազեն, չեն սայթաքի, և եթե նրանք մահացու թույն խմեն, չեն վնասվի: Եթե նրանք իրենց ճանապարհին հանդիպեն մի լեգեոն

դևերի, նրանց կողքով կանցնեն առանց վնասվելու:

Իմ Սուրբ Հոգին նրանց կուսուցանի այն քաղցրությունը, որը բուրում է Ինձնից՝ Իմ Հավիտենական Սիրո խորքերից:

Իմ Սուրբ Հոգին կվերցնի անմեղներին և նրանց հետ կկնքի Սիրո և խաղաղության դաշինք, որպեսզի դառնան պիտանի և Նրան հարմար ընկերներ:

Իմ Սուրբ Հոգին կբարձրացնի և կտանի նրանց, ինչպես մի փեսա, որն իր հարսին շեմքից ներս է տանում: Նա նույնպես նրանց կտանի սրբարանի պատերի ետևը, որտեղ անհատակ հարստություններ և խորհուրդներ կան, խորհուրդներ, որոնք նախկինում ոչ մի աչք չի տեսել: Եվ ինչպես մի Փեսա, որն Իր Հարսին զարդարում է գոհարներով, Նա նույնպես կզարդարի նրանց վսեմ ու հոյակապ գիտելիքներով, որ զմայլվեն գահով և գայիսոնով: Ո՜հ, ի՜նչ չի անի Իմ Սուրբ Հոգին ձեզ համար:

Իմ Սուրբ Հոգին ձեր կյանքի համն ու հոտն է, Շքեղության Արքայական Թագը, Իմ Բերանից ելնող Գեղեցկության Պսակը, Կենդանի Աստծո ճառագայթող փառքը, ձեր արարման Գաղտնի Հայտնությունը: Իմ Սուրբ Հոգին ձեր քարոզների համն ու հոտն է՝ տրված Իմ Հավաքներում, և ձեր ժամանակների լրումը... Նա ձեր սրտի Բոցավառ Կրակն է և Իմ Խորհուրդների իմացությունը: Իմ Սուրբ Հոգին Ինձ ուղղված ձեր գովաբանությունների նյութն է, որը ցույց է տալիս ձեր սրտին, որ Ես եմ Որ Եմ, ցույց է տալիս ձեր հոգուն, որ Ես ձեր

Աբբան եմ,

և որ դուք Իմ զավակն եք և Իմ սերմը... Օրհնյա՛լ լինեն սրտով մաքուրները. նրանք կտեսնեն Ինձ: Ուրախացե՛ք և բացվե՛ք, որ ստանաք Իմ Սուրբ Հոգին, որպեսզի դուք էլ հրճվեք և լսեք Իմ Ձայնը: Բացե՛ք ձեր սրտերը, և դուք պիտի տեսնեք Իմ Փառքը: Եվ ինչպես մի երեխայի, որ սփոփանքի կարիք ունի, Իմ Սուրբ Հոգին, որի սերը հանդեպ ձեզ գերազանցում է որևէ մարդկային սիրո, պիտի սփոփի ձեզ:

Ես՝ երկնքի և երկրի Արարիչը ասում եմ ձեզ. Իմ Սուրբ Հոգին Ամուսինն է Հարսի՝ Նրա, ով գրկեց այն Մանկանը, Որը ձեզ փրկելու էր և ազատագրելու էր, և ապա Նրանով, Նրա Արյան միջոցով դուք ազատություն և ձեր մեղքերի համար թողություն պիտի ստանայիք: Նա Ամուսինն է Նրա, Ում Իմ Սուրբ Հոգին գտավ որպես մի փակ պարտեզ, որը պահում էր առաքինությունների ամենահազվագյուտ բուրմունքները, մի կնքված աղբյուր, Կանանց մեջ ամենագեղեցիկը՝ ողողված մաքրությամբ՝ իր եզակի կատարելության պատճառով: Իմ Հոգին եկավ Նրա վրա և ծածկեց Նրան Իր ստվերով և փառավորեց Ինձ՝ Նրան դարձնելով Աստծո Մայրը, ողջ մարդկության մայրը և Երկնքի Թագուհին[1]: Այսպիսին է Իմ Սուրբ Հոգու Հարստությունը...

Ես ձեզ բոլորիդ ողողում եմ Իմ Սուրբ Հոգով հիմա... այսօր... Ես՝ Յահվեն՝ Ամենակարողը, ասում եմ ձեզ. Ես ձեզ բոլորիդ տալիս եմ այս

[1] Ես ուզում եմ նշել, որ երբ Հայրը թելադրում էր ինձ այս հատվածը մեր Օրհնյալ Մոր մասին, եթե Նա Աստված չլիներ, ես կասեի, որ Նա չափից դուրս էր հրճվում, այնքան մեծ էր Նրա Ուրախությունը:

ձրի պարգևը, որպեսզի փրկեմ ձեզ՝ ելնելով այն Սիրո մեծությունից, որ Ես ունեմ ձեր հանդեպ: Սերն ու հավատարմությունն իջնում են հիմա: Ես՝ Յահվեն, խոնարհվում եմ երկնքից ցած՝ ձեզ բոլորիդ գրկելու համար: Իմ փրկարար օգնությունը ձեզ տրվում է վերևից: Դուք կամենո՞ւմ եք ենթարկվել Իմ տված Օրենքին: Դուք կամենո՞ւմ եք Ինձ վստահել ձեր հոգին:

Մի՛ ասեք, որ Ես անտարբեր եմ ձեր թշվառության հանդեպ և անպատասխան եմ թողնում ձեր աղոթքները: Եթե կրակի բոցերը կլանեն ձեր երկրները, և կրակը ոչնչացնի ձեր ժողովրդին, և եթե երկրի բնակիչները ճաշակեն մահվան նախատինքը, այդ բոլորը ձեր մեծ ուրացության հետևանքով է: Դուք խուսափել եք Իմ Սուրբ Հոգուց՝ Նրանից, ով պիտի ծածկեր ձեզ իր օրհնություններով, Նրանից, ով պիտի մղեր ձեր սիրտն ու մարմինը ցատկոտելու ու երգելու ուրախությամբ Ինձ՝ ձեր Աստծուն: Բայց դուք գերադասեցիք դառնալ անտուն, մուրացիկ, անհայր և այսօր հյուծվում եք մահվան ստվերներում: Որքա՜ն եմ Ես խղճում ձեզ... Ո՛հ, սերո՛ւնդ: Դեռ որքա՞ն պիտի չհնազանդվեք Ինձ:

Իմ Սերը լցնում է երկիրը, Իմ կանչերը լցնում են Իմ պատվիրակների բերանները, և չնայած Իմ վիշտը սուր է, և հիմա Իմ Արդարադատությունը դուրս է թափվում եզրերից, Ես դեռևս կարող եմ մեղմանալ և կարող եմ ընդունել այն մեծարանքը, որը կառաջարկեք ինձ: Ես պատրաստ եմ ներել ձեզ Իմ Որդու թափած Արյան միջոցով և Նրա Զոհողության միջոցով, եթե դուք սրտի մոտ ընդունեք Իմ Խոսքը:

Շուտով, շատ շուտով Իմ Սուրբ Հոգին կփչի ձեզ վրա մեծ ուժով՝ մի հզոր ձայնով, որը կտարածվի երկրի չորս անկյուններում՝ որպես մի հիշեցում երկրի բոլոր բնակիչներին: Իմ Սուրբ Հոգու Շնչի ձայնից անմիջապես հետո երկրի բոլոր մարդիկ միասին երեսնիվայր պիտի ընկնեն գետնին՝ պաշտելով Ինձ՝ Տիրոջը, Ամենակարողին, Ամենաբարձրյալին: Եվ վերջում մարդիկ ցած պիտի խոնարհվեն Գառան Գահի առաջ և Օրհնություն պիտի ստանան Գահից:

Իսկ հիմա Ես, որ ստեղծեցի ձեզ, և Ես, որ ձևավորեցի ձեզ, հարցնում եմ. արդյոք կարժանացնե՞ք Ինձ լսելու ապաշխարության ձեր կանչը:

Հոկտեմբերի 6, 1992

Տե՛ր,
երբ Քո բառերը հասնում են ինձ,
Ես կլանում եմ դրանք:
Դու տվել ես ինձ
այս երկնային Մանանան,
որ ինձ կենդանի պահես,
և յուրաքանչյուր բառ,
որ Դու արտասանում ես,
իմ ուրախությունն է

և Քո Սիրո փրկարար ապացույցը:
Քո Խոսքը իմ հոգու հրճվանքն է,
իմ սփոփանքի գավաթը
և իմ սրտի զմայլանքը:

Աշխարհը ոչինչ չի ժառանգել,
Խաբեությունից բացի,
բայց Քո Բերանից ելնող Քո Խոսքը
ժառանգությունից զրկեց աշխարհը
և նրա մեջ գտնվող ամեն ինչ:
Հիշո՞ւմ ես, թե ինչպես էի ես
Քո Ներկայությամբ կանգնել՝
անօրեն ու մերկ: Բայց և այնպես,
փոխանակ կործանման
հրաման տալու
իմ սարսափելի և արհամարհանքի
արժանի վարքի համար,
Քո բառերը խոցեցին խիտ,
մութ ամպերի այդ շերտերը,
և ինչպես քաղաք նվաճող
մի թագավոր, Դու նվաճեցիր ինձ՝
իմ մեջ տեղադրելով
Քո փառավոր Գահը: Դու բխեցրիր
կենդանի Ջրի Քո աղբյուրը
իմ անապատի չորացած տեղերում՝
ցույց տալով ինձ
Քո բարեհաճությունը և այն,
որ այդ պահից ի վեր
ինձ թույլ պիտի տրվեր
քայլել ես Եմ-ի հետ:

Այո՛, աղջի՛կս, Ես երբեք չեմ հրամայել քեզ մեղանչել: Հասկացի՛ր, թե ով է խոսում քեզ հետ, և ում ներկայության մեջ ես դու: Ես ցույց տվեցի քեզ և ձեզ բոլորիդ Իմ Սիրտը: Ես գալիս եմ արմատախիլ անելու այն, ինչ աշխարհն է ցանել՝ խաբեություն խաբեության հետևից՝ Ստի բերքը: Մահը սողոսկում է ձեր դռներից ներս և լուռ իր ճանապարհն է հարթում դեպի ձեր սենյակը[1]՝ գիշերը դարձնելով ձեզ, որոնց Ես ջերմորեն սիրում եմ, ցրելով ձեզ, ինչպես խրձեր՝ թողնված հնձվորի կողմից, և ոչ ոք չկա, որ հավաքի դրանք:

Աշխարհի մեղքերից Իմ Մարմինն ամեն օր խարազանվում է, և, Իմ փոքրի՛կ պատգամատար, քո Տերը, որ խոսում է քեզ հետ հիմա, ասում է քեզ. Ես ծարավի եմ սիրո: Սիրի՛ր Ինձ և սփոփի՛ր այնքան չսիրված և ամբողջովին սխալ հասկացված այս Սիրտը: Աղոթի՛ր մեղավորների համար...

Տե՛ր, մեր Հովի՛վ,
արի՛ և հավաքի՛ր Քո գառներին

[1] Ես հասկացա, որ սենյակ նշանակում է հոգի:

մեկ առ մեկ Քո Բազուկների մեջ՝
պահելով նրանց
Քո Սուրբ Սրտին մոտ:
Մարմինը թույլ է, Տե՛ր իմ,
և Դու գիտես դա. չնայած դրան՝
նրանց մեջ կան լավ մարդիկ:

Վասո՛ւլա, ոչ մի մարդ լավը չէ, այլ միայն Աստված...

Ուրեմն կան վեհանձն հոգիներ,
որոնց լավ գործերը
չպետք է մոռացվեն:
Ես գիտեմ, որ ոչ մեկը
չի կարող փառաբանել Քեզ այնպես,
ինչպես Դու արժանի ես:
Բայց մեր թուլության համար
և հանուն Քո Սիրո, Ո՛վ Մեծդ,
Դու չե՞ս արագացնի Քո վերադարձը
և վերանորոգի
Քո Սրբարանի պատերը:

Դուք պիտի վերակառուցվեք[1]:
Զավա՛կս, որ այնքան սիրված ես Իմ կողմից, Ես քեզ դարձրել եմ սպառնալիք Իմ թշնամիների համար: Այդ սերմնացանները կատարել են իրենց ցանքսը, և նրանք կհավաքեն և կուտեն իրենց սեփական պտուղը[2]... Խոսի՛ր

Ա՛հ, Տե՛ր,
Դու ստեղծեցիր երկինքն ու երկիրն
ուրախությամբ և մեծ զորությամբ:
Դու արարեցիր մեզ
մեծ ուրախությամբ և սիրեցիր մեզ
հավիտենական սիրով:
Թող Քո թշնամիները
նույնիսկ տենչան Քո Քնքշանքին:
Փայլի՛ր յուրաքանչյուր սրտում
և դեպի Քեզ դարձրո՛ւ
ԱՄԵՆ քարե սիրտ...

Ես նրանց վրա էլ պիտի լցնեմ Իմ Հոգին, Իմ Վասուլա: Ըմբոստը պիտի դառնա մի նվիրյալ ծառա՝ ծարավ Ինձ ծառայելու, ծարավ Ինձ պաշտելու: Ես պիտի դրսևորեմ Իմ Սրբությունը յուրաքանչյուր սրտում և նրանց նույնպես պիտի կերակրեմ Իմ քաղցր Մանանայով:
Արի՛, սրբորեն ապրի՛ր, քանի որ Ես Սուրբ եմ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տե՛ր իմ, մենք, մեզ...

[1] Աստված արտասանեց այս բառերը մեծ վեհությամբ:
[2] Ես տատանվեցի, և Նա կանգ առավ:

Հոկտեմբերի 8, 1992

Իմ Վասո՛ւլա, Ես քո Մայրն եմ: «pethi-mou»[1]: Հիշի՛ր, որ դու Մեր Սրտերում ես:

Ապրի՛ր Հիսուսի համար, և Նա քեզ պերճախոսություն կտա, որ փառաբանես Իրեն: Քո տառապանքը քեզ տանում է դեպի սրբացում, և Ես ասում եմ քեզ. Մեր ողջ վշտի մեջ սփոփանքի մի ճառագայթ է ներթափանցում Մեր Երկու Սրտերի մեջ, և Մենք լցվում ենք անսահման ուրախությամբ, երբ տեսնում ենք, որ գալիս ես Մեզ մոտ աղոթելու: Իմացի՛ր, որ աղոթքը, սերը և խոնարհությունը ամենահզոր զենքերն են ընդդեմ Սատանայի: Ձեզանից յուրաքանչյուրը իր մասնակցությունն է բերում Եկեղեցու վերանորոգման ընթացքին: Բայց Սատանան իր կատաղության մեջ ձեզանից յուրաքանչյուրին դուրս կբերի մյուսի դեմ, եթե ձեզ քնած գտնի: Մեր Ծրագիրն է ձեզ բոլորիդ միասին ամրապնդել սիրո մեջ և Եկեղեցին վերակառուցել Սիրո վրա: Հիմա դու տեսար այն աղոտ պատկերը, թե ինչպես է Սատանան գործում:

Ես օրհնում եմ քեզ և բոլոր նրանց, ովքեր նպաստում են այս գործին: Աղոթի՛ր, Իմ Վասո՛ւլա, և չնայած մարտը մղվում է ողջ զորությամբ, մի՛ վախեցիր: Ես քեզ մոտ եմ:

Հոկտեմբերի 9, 1992

Վասո՛ւլա, լսի՛ր և գրի՛ր.

Սատանան ու նրա հրեշտակները մտադիր են տարածել ի~ րենց մահացու ծրագրերը, իսկ այն բոլոր լավ բաները, ինչ Ես ուղարկում եմ ձեզ, վերածել թունավոր և կործանարար ուղիների~ ի: Ես վշտով եմ նայում աշխարհին, որովհետև շատերն են ան~ տեսում այն դասերը, որոնք Ես տալիս եմ ձեզ, և մահը ներթափանցում է շատ տների մեջ: Չնայած դրան՝ շատերն են հրաժարվում հասկանալ, որ չարիքը չարիք է բերում: Աշխարհը, զավա՛կս, իր ուրացության մեջ ոչնչացնում է ինքն իրեն...

Տե՞ր:

Ես եմ: Այո՛, վստահի՛ր Ինձ, դատարկի՛ր սիրտդ և պատմի՛ր Ինձ: Ես լսում եմ:

Ինչո՞ւ է այդ վանականը ուզում արգելել ինձ, որ Քեզ մոտ գամ այս ձևով: Ես երջանիկ եմ այսպես Քեզ հետ: Դու և ես, մենակ: Ի վերջո դա Քո Պարգևն է ինձ...

Այո՛, դա Իմ Պարգևն է քեզ, իսկ դու Իմ Պարգևն ես բոլորին: Մի անգամ Ես Մարթային ասացի. «Մա՛րթա, դու անհանգստանում ես այնքան շատ բաների համար, սակայն այստեղ քիչ բան է պետք, իրականում՝ միայն մեկը: Եվ այդ Մարիամն է, որ ընտրել է լավ մասը, որ

[1] Զավակս (հունարեն):

նրանից չպիտի վերցվի»: Հետևաբար, ես ասում եմ նրան, կամ որևէ մեկին, ով կանգնում է քո ճանապարհին՝ արգելելու քեզ որ Իմ Ոտքերի մոտ գաս, ինչպես հիմա, լսելու Ինձ, գրելու և մշտապես միասին լինելու Ինձ հետ. «Դու անհանգստանում և տանջվում ես շատ բաների համար, որոնք Ինձ պետք չեն: Իրականում այսօր Ես միայն մի բանի կարիքն ունեմ՝

սիրտ սրտի խոսակցության,
անդադար աղոթքի
երկրպագելով Իմ Ոտքերի մոտ:

Միացրե՛ք ձեր սրտերն Իմ Սրտին: Սա է լավ մասը...»
Իսկ դու, աղջի՛կս, ուրախացի՛ր, քանի որ Ես քեզ ձրի եմ տվել այս Պարգևը: Այն քեզանից հետ չպիտի վերցվի:

Հոկտեմբերի 11, 1992

(Ֆամալիկ - Պորտուգալիա)

(Պատգամ Հայր Հովակիմ Միլեյրոյին՝ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պորտուգալերեն թարգմանողին ու հրատարակչին:)

Նրա թարգմանած յուրաքանչյուր բառը շոյում է Իմ այնքան խոցված Սիրտը, և նրանց[1] կատարած յուրաքանչյուր քայլը փառավորում է Ինձ: Ես՝ Տերը, օրհնում եմ նրանց և նրանց կատարած աշխատանքը:
Ես եմ-ը նրանց հետ է:

Հոկտեմբերի 12, 1992

(Ֆաթիմա - Պորտուգալիա)

Խաղաղությո՛ւն քեզ: Կրի՛ր Իմ Խաչը մինչև վերջ: Աղոթի՛ր և խոկա. աշխուժացրո՛ւ Իմ Եկեղեցին:

ΙΧΘΥΣ

[1] Ուղղված է միանձնուհիներին, որոնք օգնում են Հայր Հովակիմին հրատարակելու «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները:

Հոկտեմբերի 14, 1992

(Ֆաթիմա - Պորտուգալիա)

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, վերջում յուրաքանչյուր սիրտ կճանաչի «Հաշտություն» բառը և կընդունի մեկը մյուսին իր սրտում: Միասնությունը պիտի լինի սրտում:

Հոկտեմբերի 15, 1992

(Մեր Օրհնյալ Մայրն է խոսում):

(Ես միացել էի այն ուխտավորներին, որոնք գնում էին Լեհաստան, Չեխոսլովակիա, Ռուսաստան և Հռոմ):

Խաղաղություն քեզ, Իմ Վասո՛ւլա: Հիշի՛ր, որ Ես եմ առաջնորդում այս ուխտագնացությունը:

Ես քեզնից միայն խնդրում եմ, որ լսես Հիսուսին: Ինչ որ պատահի քեզ հետ քո ճանապարհին, թող որ պատահի: Թո՛ւյլ տուր, որ Հիսուս գործի և խոսի քո միջոցով: Փոքրի՛կս, դու դեռ չես հասկացել, թե Հիսուս որքան է սիրում քեզ: Օրհնի՛ր Նրան: Իմ Սիրտն իսկապես միացած է Նրա Սրտին, և վերջում Մեր Երկու Սրտերը պիտի հաղթանակեն:

Մե՞նք, մե՞զ:

Այո՛: Փառք լինի Աստծուն:

Հոկտեմբերի 16, 1992

(Ռուսաստան - Մոսկվա)

Տե՛ր Ամենակարող,
օրհնյա՛լ լինի Քո Անունը:
Հիմա՝ հենց այսօր,
Քո Խոսքը կատարվում է:
1987 թվին Դու ասացիր.
«Գնա՛ քո քրոջ՝
Ռուսաստանի մոտ»:
Այստեղ եմ ես, նրա ոտքերի մոտ:
Դու ասացիր. «Սիրի՛ր Նրան,
ինչպես Ես եմ սիրում»:
Ես այստեղ եմ,
որ սիրեմ Նրան և,
եթե Դու ցանկանում ես,
ծառայեմ Նրան, ես կանեմ այդ:
Միայն հրամայի՛ր:

[1] ... Գանձի պես պահիր այն, ինչ ես ասացի քեզ: Հասկացի՛ր, որ Ռուսաստանի համար Իմ Ծրագիրը մեծ է: Հասկացի՛ր, որ ես պիտի օգտագործեմ քեզ Իմ Փառքի համար:

Զավա՛կս, Իմ Խաղաղությունը քեզ: Քեզ հետ ես եմ:

Հոկտեմբերի 18, 1992

(Ռուսաստան - Մոսկվա)

Մարդկությա՛ն Հովիվ,
տապալի՛ր բոլոր
թագավորությունները,
որոնք չեն կանչում Քո Անունը:

Հովի՛վ, Դո՛ւ, որ քնքուշ
հոգածությամբ մեզ առաջնորդում
ես ետ՝ դեպի Հոտը,
Քո անհանգիստ հայացքները
չեն վրիպում ինձանից,
Քո Սրտի արագ բաբախման ձայնը
իմ սրտում թողել է
տխրության հետքեր:
Ո՛չ, Տե՛ր, իմ ականջները փակ չեն
Քո վշտի գաղտնի
Հոգոցների հանդեպ,
որոնցից նվաղում է շունչս:

Հովի՛վ, իմ հոգու աչքերն
այսօր ականատես են
լինում մի բանի,
որն առաջ երբեք չեն տեսել:
Ո՛չ, Գլուխդ մի կողմ մի՛ թեքիր,
անօգուտ է ինձնից
թաքցնել Քո վիշտը:
Դու ինձ չափազանց
մոտ ես դրել Քո Սրտին,
որ չեմ կարող չնկատել
Քո շարժումները...
Եվ Խաղողի Որթի Ճյուղը
կլանեց Որթից <u>եկող</u> ավիշը...

Ես Իմ Մաշկի տակ եմ քեզ տեղադրել[2]: Երկինքը կանհետանա՝ նախքան Իմ

[1] Այստեղ Տերն ինձ տվեց Իր հրամանը, բայց այն ոչ մեկին դեռ չպետք է ասվի:
[2] Արտահայտությունը նշանակում է, որ ես Աստծո մեջ եմ:

արարչության արթնանալը... Տեսնո՞ւմ ես, թե Ինձ ուր է հասցրել Հանուն մարդկության կրած Իմ Զարչարանքը:

Կարո՞ղ եմ ես որևէ կերպ օգտակար լինել Քեզ, իմ Հովի՛վ:

Դու պիտի աղոթես, դու ծոմ պիտի պահես Հանուն Ինձ, իսկ քո ոտնահետքերը մոտիկից պիտի հետևեն Իմ քայլերին: Աղոթի՛ր, որ Հոր Ձեռքը չիջնի այն ժամին, երբ այս սերնդի միտքը տարված լինի երազներով:

Տե՛ր իմ,
հոգիս կլանում է Քո վիշտը:
Արի՛, աղաչում եմ Քեզ:
Թող որ իմ սիրտը և այն սրտերը,
որոնք սիրում են քեզ, սփոփեն Քեզ
և մեղմացնեն Քո ցավը:
Այն աչքերը, որոնք մի անգամ
տեսել են Քո վիշտը,
երբեք չոր չեն մնա:
Եթե Դու անցնեիր իմ կողքով,
միևնույն է,
ես կտեսնեի Քո շարժումը
և կնկատեի Քո ցավը:

Ես սոսկ քո արարածն եմ,
բայց Դու ինձ տեղադրել ես
Քո մաշկի տակ,
առանց որևէ արժանիքի
և առանց պատճառի:
Դու խնամեցիր ինձ:
Ուրեմն ի՞նչ պիտի ասեմ, երբ Դու,
Աստվա՛ծ իմ, կանգնած ես իմ առջև,
գերագույն Աստվածը՝
այնքա՛ն վիրավորված
և այնքա՛ն վշտացած:
Տեսնո՞ւմ ես: Ես Քո մաշկի տակ եմ,
և սակայն սոսկ մի արարած եմ՝
կավից ձև տված:
Մի՞թե ես արժանացել եմ
Քո Մարմնի և Արյան ջերմությանը,
Քո Սրտի և Քո
մտերմության ջերմությանը: Ո՛չ...

Դու անձկագին սպասո՞ւմ ես ապրելու երկնքում՝ Ինձ մոտիկ, և մուտք գործելու Լույսի մեջ: Քո սիրտը փափագո՞ւմ է քո մշտական բնակարանը:

Այո՛, Սո՛ւրբդ, ո՛հ, այո՛:

Քահանա՛ս... Դու կմտնես Իմ Արքունիքը, երբ քո առաքելությունն

ավարտվի:

Չնայած Իմ Սիրտը տենչում է քեզ տանել Իմ Սրբարանի բարձունքները, Ես չեմ կարող քեզ վերցնել ժամանակից շուտ: Ես դեռևս շատ բան ունեմ ասելու:

Սիրելի՛ս, մենք միասին պիտի անցնենք նրբանցքներով և փողոցի անկյուններով՝ հավաքելով մեռածներին: Դու նրանց Ինձ մոտ պիտի բերես, և Ես պիտի չնչեմ նրանց մեջ: Հետևաբար կամաց-կամաց Ես կարթնացնեմ մեռածներին, որպեսզի քո Հովվի հեծեծանքը դադարի...

Ո՛հ, թող Քո խոսքերն իրականան:

Վե՛րկաց ուրեմն, տարածի՛ր Իմ Պատգամն աշխարհով մեկ՝ որպես զենք ու զրահ: Ես քեզ հետ եմ, և դու պիտի հետևես Իմ աշխույժ քայլերին: Աշխատի՛ր ճշտապահորեն և մի՛ մտահոգվիր: Սատանան թող ինքն իրեն կտոր-կտոր անի, եթե ուզում է, սակայն քեզ, չնայած իր ողջ կատաղությանը, չի կարող լռեցնել կամ վնասել: Դու պիտի ավարտես քո մրցավազքը Ինձ հետ:

(Ավելի ուշ)

Փոքրի՛կս, Իմ խաղաղությունը քեզ: Թող ոչ մի բան քեզանից չհեռացնի այս խաղաղությունը, որը Ես եմ տվել քեզ: Հասկացի՛ր, թե որքան մեծ է Իմ Ծրագիրը: Ես մեծ իրադարձություններ ունեմ դեռ, որոնք պիտի կատարվեն: Այս երկիրը կպատվի Ինձ ավելի շատ, քան որևէ մի այլ երկիր:

Ես արդեն
մեկ քայլ արել եմ նրա մեջ...

Վասո՛ւլա, Ես քեզ խնդրելու եմ, որ քարոզես Ռուսաստանի Իմ զավակներին: Սա կտրվի քեզ, ինչպես Ես քեզ սովորեցրել եմ [1]: Իմաստո՛ւն եղիր և վարվի՛ր այնպես, ինչպես որ Ես ցույց կտամ քեզ: Մնա՛ ոչինչ, և Ես պիտի աճեմ:

Իմ Սիրտը քո տունն է: Ես եմ:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 20, 1992

(Ռուսաստան - Մոսկվա)

[1] Այսինքն՝ Աստված ամեն ինչ կբերի իմ դռան շեմին:

Ռուսաստանը պիտի պատվի Քեզ իր աղքատության մեջ: Գուցե ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ դա նրա միջոցով, քանի որ Դու ասում ես, որ նա պիտի լինի այն մեկը, որն ամենաշատը պիտի փառաբանի Քեզ: Արդյոք սրանք Հորն ուղղված Քո քահանայական Աղոթքի Հոգոցնե՞րը չէին:

Արի՛: Գրի՛ր:

Ես տալիս եմ քեզ
Իմ Խաղաղությունը:
Ես եմ Հարությունը,

և շուտով հարություն պիտի տեղի ունենա Իմ դուստր Ռուսաստանում: Դատավոր մի՛ եղեք նրա որդիներին ու դուստրերին, որպեսզի Ես էլ ստիպված չլինեմ դատել ձեզ: Եթե ձեր մեջ կատարյալ մեկը լիներ, դուք, միևնույն է, ոչինչ կլինեիք Իմ Կատարելության համեմատ: Շուտով Փառքը Ինձ <u>պիտի</u> տրվի իր ամբողջությամբ, և <u>Ռուսաստանը սրբությամբ պիտիղեկավարի Իմ մյուս զավակներին</u>:

Ես՝ Տերը, ձեզանից ձեր աղոթքներն եմ խնդրում, ձեր զոհողությունները և քավության արարքները, որպեսզի այս բոլորը Ինձ մոտեցնեն Իմ Ռուսաստանին: Նրա թշվառության մեջ Ես ցույց պիտի տամ Իմ Գութը, նրա թուլության մեջ՝ Իմ Զորությունն ու Իմ Իշխանությունը, նրա ոչնչության մեջ՝

<u>այն ամենը, ինչ Ես եմ</u>,

և նրա չորության մեջ Ես նրանից Գետեր դուրս պիտի հոսեցնեմ, արմատախիլ պիտի անեմ նրա մեջ եղած այն ամենը, որ Ես չեմ, և այդ դատարկ տեղերում Իմ Շնորհները պիտի ցանեմ Նրա մեջ: Ես պիտի ցանեմ Սիրո և Խաղաղության սերմեր:

«Ռուսաստա՛ն, շատ ժամանակ չի անցել, երբ դու խզեցիր դաշինքդ Ինձ հետ, պոկեցիր կապերդ և ասացիր. «Ես չպիտի ծառայեմ Քեզ»: Հիմա Ես քեզ զավակներ պիտի տամ, ովքեր Իմ Անունը Սրբությամբ պիտի հռչակեն և ասեն. «Օրհնյալ է Նա, ով վերականգնեց մեր տեսողությունը և դիպավ մեր սրտին: Օրհնյալ է Նա, ով փոխեց մեր ուղիները՝ բուժելով մեզ»: Եվ այդ ժամանակ Ես պիտի լինեմ քո մեջ, և դու՝ Իմ մեջ,

և <u>Դուպիտիապրես</u>:

Եվ Մեր Երկու Սրտերը պիտի լինեն քո սրտում, և դու պիտի տաս Ինձ այն Փառքը, որ նախատեսված էր»:

Վասո՛ւլա, հա՛րսս, հանուն Ինձ աղոթի՛ր Ռուսաստանի ամ բողջական դարձի համար:

Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ, զավա՛կս, երբե՛ք մի մոռացիր, որ Ես Նա եմ, ով ամենաշատն է սիրում քեզ: Իմ Սրտին կարելի է դիպչել…

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ՝ այդ երեկոյան, մի ռուս ուղղափառ քահանա, որն աշխատում է Միասնության համար, հրավիրեց ինձ՝ ընկերներիցս մեկի հետ մասնակցելու մի հանդիպման, որը նվիրված էր Ավանդությանը: Նախագահող տիկինն ասաց, որ եթե ունկնդիրներից որևէ մեկը ցանկանա ելույթ ունենալ, նրան կտրվի ութ րոպե:

Ռուս ուղղափառ քահանան հարցրեց նախագահին՝ մի թղթի կտորի վրա գրելով այն մասին, թե արդյոք ես էլ կարո՞ղ էի խոսք ուղղել ժողովրդին: Ենթադրում եմ՝ նա գիտեր, թե ով եմ ես, որովհետև նա ետ ուղարկեց մի գրություն՝ պատասխանելով «ոչ»:

Քահանան գրեց երկրորդ գրությունը և ուղարկեց նրան, և նրա պատասխանը կրկին բացասական էր: Այժմ արդեն հրեշտակների միջամտելու ժամանակն էր: Ես կանչեցի իմ հրեշտակին և խնդրեցի նրան հավաքել ինձ շրջապատող մյուս հրեշտակներին, որ գնան և խոսեն նրա հրեշտակի հետ և ստիպեն նրան փոխել իր միտքը:

Հենց այդ պահին ես զգացի Հիսուսի միջամտությունը, կարծես Նա ինձ հարցնում էր. «Ի՞նչ ես անում»: «Ես ուղարկում եմ իմ հրեշտակներին...»: Նա ասաց. «Նախքան քեզ Ռուսաստան ուղարկելը Ես քեզ ասել էի, որ այս անգամ գնալու ես <u>միայն</u> որպես ուխտավոր»: Ես հանկարծ դա հիշեցի: Բայց ասացի, ինչպեսերես առած մի երեխա. «Օ՜, Տե՛ր, խնդրում եմ: Ես ճառ չեմ ասի, պարզապես տո՛ւր ինձ <u>երեք</u> րոպե՝ միայն Քո Պատգամը ներկայացնելու համար, ուրիշ ոչինչ: Սա այնպիսի մի առիթ է, Տե՛ր»: Հազիվ էի վերջացրել խոսքս, երբ նախագահը հանկարծ ուղարկեց մեկ այլ գրություն՝ ինձ տալով ութ րոպե խոսելու թույլտվություն: Բայց, Բարի՛ Աստված, այնուամենայնիվ, ինձ տվեց ողջ տասը րոպե...)

Հոկտեմբերի 21, 1992

Վասո՛ւլա, գրի՛ր[1] «...և դաշտի յուրաքանչյուր ծառ կիմանա, որ Ես եմ՝ Յահվեն, Նա, ով դանդաղեցնում է բարձր ծառերի աճը և աճեցնում ցածրերը, ով թառամեցնում է կանաչ ծառերը և կանաչեցնում թառամածները: Ես՝ Յահվեն, խոսել եմ, և Ես կանեմ այդ»:

Աղջի՛կս, ամեն անգամ, երբ որևէ մեկը վիրավորում է քեզ, Իմ Սիրտը, որ Սիրո մի Վիհ է, լայն բացվում է քեզ համար, որ կլանի քեզ Իր խորքերում: Քո յուրաքանչյուր վերքի համար Ես հատուցում եմ Քնքշությամբ՝ Իմ Բերանի Համբույրներով... Աղջի՛կս, դու կամենո՞ւմ ես ընդունել այն խաչերը, որոնք Ես տալիս եմ քեզ:

...Ես քեզ հարց տվեցի...

Տառապանքը դարձել է
իմ ամենօրյա հացը,
սակայն ինչպիսի՜ պատիվ է
կիսել այն Քեզ հետ:
Դու ամեն օր գալիս ես իմ սենյակը,
որ կիսես իմ կերակուրը
ինձ հետ կողք կողքի:
Դու ընթրում ես ինձ հետ՝

[1] Տերը խնդրեց ինձ գրել Եզեկ. 17:24

կիսելով իմ ամենօրյա հացը:
Դու ինձ Զոհաբերողն ես:
Դու անխղճորեն լարում ես
Քո աղեղը՝ ինձ վրա նշան բռնելով,
և Քո նետերը տարափով
թափվում են այն Թիրախի վրա,
որը Դու ես ընտրել:
Դու ստիպում ես իմ հոգուն
ցատկոտել, ինչպես կրակի վրա,
Քո նետերի պատճառով:
Եվ չնայած դրան,
երբ ես չունեմ այս հացը,
ես հարցնում եմ.
«Որտե՞ղ է այն հացը,
որն այրում է մարդու սիրտը»:

Իմ ողորմությունն ու բարությունը դեռևս չեն սպառվել: Այն չնորհները, որոնցով ես չնորհ եմ արել քեզ, պիտի նորոգ~ վեն, որովհետև Իմ Բոցավառ Սերը քեզ կսպառի և մոխիր կդարձնի, և Ես քո հոգին կդարձնեմ հարբած, որ ծարավես Իմ նետերին: Դու դրանցից զուրկ չպիտի մնաս... Ուստի ուրախա~ ցի՛ր և հրճվի՛ր, քանի որ իր հերթին Ես քեզ կփոխանցեմ Իմ Բաժակը...

Ես մտադիր եմ արթնացնել ազգ ազգի հետևից, որ ապրեն Իմ ստվերի տակ և հավատան, որ Հայրն է Ինձ ուղարկել[1]: Այո՛, կգա այն Օրը, երբ բոլոր երկրային կառավարիչները, ղեկավարներն ու հրամանատարները, հարուստներն ու ազդեցիկ մարդիկ, ողջ բնակչությունը[2] կճանաչեն Ինձ՝ որպես Քրիստոսի՝ Կենդանի Աստծո Որդու: Եվ ամեն տեղից մարդիկ ակնածանքով վեր կբարձրացնեն իրենց ձեռքերը աղոթքի և պաշտամունքի մեջ՝ բոլորը մեկ ձայնով և մեկ սրտով:

Սրա համար Ես կարիք ունեմ զոհաբերվող հոգիների, սրա համար Ես կարիք ունեմ գործակիցների: Ուստի մի՛ վախեցիր մարդկանցից, Իմ Աչքերը հսկում են քեզ: Եթե մեկը սիրում է օծել Իմ Անունը, իսկ մյուսները, բարեգթության սեր չունենալով, մարտահրավեր են նետում Ինձ, Տերը նրանցից ո՞ւմ կառաջարկի Իր ժառանգությունը: Աղջի՛կս, մնա՛ խաղաղության մեջ: Ես զայրանում եմ նրանց վրա, ովքեր վկայում են Իմ Խոսքը, սակայն ծաղրում ու ծիծաղում են Ինձ վրա ուրիշների մոտ: Թող նրանք հաշտություն կնքեն Ինձ հետ:

Իսկ դու, աղջի՛կս, մի՛ գալարվիր Իմ Ձեռքերի մեջ: Թո՛ւյլ տուր Ինձ հեռացնել այն մասնիկները, որոնք խանգարում են Իմ անցմանը քո հոգու մեջ: Թո՛ւյլ տուր Ինձ առաջ գնալ առանց քո առարկության: Դու հիշեցումների կարիք չունես փորագրված գրությունների միջոցով: Ես ուզում եմ՝ Իմ ճանապարհը ազատ լինի: Ես, ինչպես դու ասացիր, չնորհի եմ արժանացրել քեզ՝ լսելու Իմ Ձայնը: Ես թույլ եմ տվել, որ քո հոգին ձգվի և դիպչի Ինձ: Դու ի՞նչ զգացիր: Քո մատների ծայրերն ի՞նչ զգացին Իմ Սրտի չուրջը: Վարդի թերթիկնե՞ր: Ո՞չ: Ուրեմն ի՞նչ զգացիր:

[1] Հովհ: 17:21
[2] Հայտ. 6:15

Ընտրյալ ծաղիկների զանազան փնջե՞ր: Ո՛հ, ո՛չ: Նրանք, ովքեր ստանում են ծաղկեփնջեր, սիրված են: Ուրեմն ի՞նչ զգացին քո ձեռքերը: Փշե՞ր: Այո՛, և շատ ավելին, քան փշերի պսակը: Դու զգացել ես գեղարդի սայրը... Ես ուզում եմ, որ դու քավես ու հատուցես բոլոր նրանց փոխարեն, ովքեր վիրավորում են Ինձ և խոցում են Ինձ:

Ես մտադիր եմ կատարելագործել քեզ՝ Իմ նետերը քեզ վրա ուղղելով, քո գլուխը խոնարհելով, դարձնելով հնազանդ և խոնարհ: Քո հոգին կսովորի կրել քո դեմ ուղղված բացահայտ և հրապարակավ արվող զրպարտանքների ու ծաղրանքների փորձությունները: Քանի որ դու չես բարեհաճում ցած խոնարհվել, ուրեմն Իմ միջամտությունն անհրաժեշտ է: Ես չէի ցանկանա, որ վերջին րոպեին դու Ինձ մոտ հայտնվեիր անընդունելի վիճակում: Իմ ողջ էությունը տենչում է, որ դու կատարյալ դառնաս: Ուստի երբեք չբողոքես նրանցից, ովքեր քննադատում են քեզ գրավոր ձևով կամ հրապարակավ: Քո տառապանքները փառավորում են Ինձ: Հետևաբար թող որ քո հոգին ծարավ լինի քեզ ուղղված նման վիրավորանքների: Ի՞նչ ավելի մեծ նվեր կարող էի Ես առաջարկել մի հոգու, որը դեռևս այնքան հեռու է կատարելությունից: Մո՛տ արի Ինձ և ապավինի՛ր Իմ ներողամտությանը:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

(Այս պատգամը (...) համար էր: Խոսում է Հայրը):

Տե՛ս, նվերներ և ընծաներ Ես շատ չեմ ստանում: Նրա զոհաբերությունները ու մեծահոգությունը, ում Ես ընտրել եմ՝ քեզ խորհուրդներ տալու, զոհացնում են Ինձ: Խնդրի՛ր Ինձ, որ առաջնորդեմ քո քայլերը այս գործը կատարելիս, որպեսզի դու առաջ գնաս ճշմարտության մեջ: Ես հրճվում եմ, երբ դու լսում ես Ինձ: Խոսի՛ր Իմ հրահանգների մասին Իմ զավակների առաջ: Ասա՛ նրանց, որ Յահվեն՝ քո Հավիտենական Հայրը, բոլորի Հայրը խնդրում է նրանց, որ ժամանակ առ ժամանակ փնտրեն Իր Դեմքը...

(Յահվեն շարունակում է)

Գովաբանի՛ր Ինձ, Վասո՛ւլա: Աղոթի՛ր և շահագրգռվա՛ծ եղիր միայն Իմ Շահերով: Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ Իմ Սրտի խորքից: Ես սիրում եմ քեզ:

Հոկտեմբերի 25, 1992

(Հռոմ)

Խորա՛ն: Ես քեզ վրա կզետեղեմ Իմ Խոսքերը: Լսի՛ր և գրի՛ր.

Դու Իմ Վրանի տակ ես, ուստի ամեն օր ինքդ քեզ Ի՛նձ հանձնիր, որպեսզի Ես կարողանամ Իմ Կամքը կատարել քո մեջ: Եղի՛ր հանդարտ և պատրաստակամ: Դու շատ թանկ ես Ինձ համար, զավա՛կս:

~ Վասո՛ւլա, աղավնյա՛կս, Իմաստությունը, որը մինչ այժմ քո Դաստիարակն է եղել, կշարունակի սովորեցնել քեզ և ասել, թե որոնք են քո պարտականությունները: Ես քեզանից սեր պիտի խնդրեմ քո քույր Ռուսաստանի համար: Ես քեզ ետ պիտի ուղարկեմ նրա մոտ, և քեզ հետ՝ Իմ Սիրտը: Ռուսաստանը հատկապես սիրելի է Ինձ: Հիրավի, այսօր Ռուսաստանը նման է մի բաց դաշտի, որը պատրաստ է ցանքսի: Նրա հողը պատրաստ է ընդունելու որևէ սերմ: Ես հայտնություններ եմ տվել Իմ Հոգու միջոցով, որպեսզի ցանվեն նրա մեջ: Ոչ մեկին թույլ չպիտի տրվի մեկ ուրիշ հիմք դնելու՝ բացի Իմ Սեփական Հիմքից:

Այդ Ես եմ՝ Աստված, որ նախատեսել էի Ռուսաստանը Իմ Փառքի համար, և այդ նրա միջոցով է, որ լույս պիտի փայլի նրա մթության միջից: Այդ նրա լույսի միջոցով է, որ ձեր սերնդի սիրտը պիտի լուսավորվի Իմ Փառքի գիտությամբ: Ես դուրս պիտի հեղեմ Իմ Հոգին այն Տան վրա, որը Ես տվել եմ նրան, և Ես ցույց պիտի տամ Իմ Սրբությունը նրա մեջ, որ պատվի Իմ Անունը:

Այդ նրա մասին էր, որ Ես խոսում էի անցյալում Իմ փոքրիկ մարգարեների միջոցո[1]: Ես ասում եմ քեզ. երբեմնի նրա ունեցած ողջ շուքը Ես նրան պիտի տամ կրկնապատկված, քանի որ նա իր ողջ սրտով Ինձ պիտի հետևի և նորից պիտի փնտրի Իմ Սուրբ Դեմքը: Ոչ մեկը չարախնդությամբ չպիտի նայի նրան, քանի որ Ես նրան պիտի բարձրացնեմ, որպեսզի շատ ազգերի գլխավորը դառնա[2]: <u>Նրա աղքատության մեջ Ես պիտի վերակառուցեմ Իմ Թագավորությունը</u>: Ա՜հ, Վասո՛ւլա: Սպասի՛ր և կտեսնես:

Նոյեմբերի 1, 1992

Քո հանդեպ նվիրվածությունը
կլանում է ինձ, ես Քոնն եմ, Տե՛ր:
Խնդրում եմ, շրջվի՛ր դեպի ինձ
և լցրո՛ւ իմ բերանը,
որ կենդանացնես ինձ:
Փրկի՛ր ինձ մարդկանց լեզվից...

Ընդունի՛ր այն պատիվը, որը Ես հիմա քեզ առաջարկեցի[3]:

[1] Ցաթիմայի երեխաները:
[2] Հոգևորապես:
[3] Հենց այդ պահին ես լսեցի, թե ինչպես ինչ-որ մեկը, որին ես ճանաչում էի, հալածում էր ինձ:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, խելագարության աստիճան:

Սիրի՛ր Ինձ նրանց փոխարեն, ովքեր չեն սիրում Ինձ: Ես Եմը հսկում է քեզ:

Կամաց-կամաց Ես քեզ բարձրացրի, շատ սիրելի՛ հոգի, որ դու փառավորես Ինձ: Դու այս սերնդին պետք է սովորեցնես Սեր և Միասնություն բառերը:

Լսի՛ր, Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, Իմ Սերը կփրկի քեզ: Դու պիտի լինես փոքրիկ, տկար և արհամարհված: Իմ Տան միջից (մարդիկ) քեզ պիտի հալառակվեն ու չհավատան: Հալածանքը պիտի լինի քո ամենօրյա հացը: Սրանք պիտի լինեն քո փոխհատուցումները երկրի վրա, քանի որ այդ բոլորը քո քայլերը կուղղեն դեպի Իմ Թագավորությունը: Հետքերը, որոնք դու պիտի թողնես քո հետևից, ուրիշ շատ հոգիներ պիտի բերեն Ինձ մոտ: Ուստի կենտրոնացի՛ր Իմ հետքերի վրա և հետևիր Ինձ:

Ես ուրախ եմ, որ այս հայտնությունը վստահեցիր Իմ Սորը: Ես ասում եմ քեզ, դու ավելի լավ ընտրություն չէիր կարող անել: Իմ Մայրը պիտի լինի քո պաշտպանը: Ոչ մեկը չի կարողանա վնասել այս գրվածքները. Ես օրհնել եմ դրանք:

Դու այնքան թանկ ես Ինձ համար: Ես սիրում եմ քեզ, երբեք չկասկածես Իմ Սիրուն:

Ես՝ Հիսուս, քեզ հետ եմ: Ես հրճվում եմ քեզնով:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 5, 1992

Խաղաղություն, փոքրի՛կս, որ հարուցված ես Իմ կողմից, մտի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ: Դու կհաղթահարես քեզ ճնշողներին. այո՛, նրանցից ամեն մեկը պիտի ընկնի:

Ես թույլ եմ և շատ հեռու եմ զորեղ լինելուց...

Միշտ հիշի՛ր, որ Ես Եմ-ը Ժայռն է, և քո զորությունը պիտի գա այդ Ժայռից: Խորա՞ն, Ես պիտի հոգ տանեմ քեզ համար: Դու պետք է Ինձ ազատ թողնես, որ մաքրագործեմ քեզ: Հոգուդ արատները տխրեցնում են Ինձ և սարսափելի են Ինձ համար: Ես ուզում եմ՝ Իմ խորանն առանց արատների լինի, Ես ուզում եմ, որ այն մաքուր լինի: Ես ուզում եմ զգեստավորել քեզ հիասքանչ հագուստներով: Օրհնի՛ր Ինձ՝ քո խորհրդատուին:

Ես օրհնում եմ Քեզ, Տե՛ր Հիսուս:

Ես պետք է կողոպտեմ քեզ և աղքատացնեմ քեզ: Ես սիրում եմ աղքատությունը: Երկրի ծնո՛ւնդ, դու ոչինչ չունե՞ս Ինձ ասելու:

Ես Քո զոհն եմ և Քեզ հետ

ու Քո Ձեռքերի մեջ եմ
ուզում լինել,
որ կարողանամ զգալ,
թե ինչ էիր զգում Դու,
երբ երկրի վրա էիր:
Ես ուզում եմ
անցնել քո անցած փորձով:

Ես թույլ կտամ, որ դու անցնես Իմ անցած փորձով, եթե դրա համար ես հոգոց հանում... Ես դա կանեմ, եթե դու Ինձ թույլ տաս, որ քեզ ենթարկեմ Իմ Կամքին... Եվ դու կիմանաս, թե որքան մեծ է Իմ Անունը, և որքան կատարյալ է Նա, ով քեզ հասցրեց այս առաջադիմություններին...

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 10, 1992

Խաղաղություն քեզ: Այսօրվա երկրները ամբողջովին ապականված են և ամեն ինչ ունեն՝ Ինձնից բացի:

Այն, ինչ աշխարհին ճիշտ է թվում, ատելի է Իմ Աչքին և արդեն դատապարտված է Իմ կողմից: Եթե աշխարհն ատում է քեզ, այդ նրանից է, որ դու սիրում ես Ինձ: Թող քո վկայությունը ճիշտ և ընդունելի լինի Իմ Աչքում, և Ես ասում են քեզ. քո վկայությունը հիմնավոր կլինի միայն այն դեպքում, եթե դու ամբողջովին զոհաբերվես հոգիների փրկության համար, և քո սերը ցույց տաս կյանքդ տալով ընկերներիդ համար և նրանց համար, որոնց դու քո թշնամիներն ես անվանում, որ~ պեսզի, երբ Իմ Օրը գա, դու չամաչես:

Ես Ինքս պիտի ապահովեմ քեզ Իմ Զորությամբ: Միևնույն ժամանակ կատարի՛ր այն աշխատանքը, որը Ես եմ տվել քեզ, և ճչա՛ ուրախությունից, հրճվի՛ր, որովհետև Իմ Զորությամբ Ես պիտի ճեղքեմ, անցնեմ նրանց պատերի միջով և թողնեմ, որ ամեն ինչ, որ քեզանից ծածկված է եղել, երևա: Քո աչքերը պիտի տեսնեն քո առջև սողացող ամեն տեսակ կենդանիներ և օձեր, սակայն մի՛ վախեցիր նրանցից, ովքեր սպանում են մարմինը: Ես քեզ ասում եմ, որ նրանք չեն կարող սպանել հոգին: Ավելի շուտ վախեցի՛ր նրանից, ով կարող է կործանել թե՛ հոգին և թե՛ մարմինը դժոխքում: Հետևի՛ր Իմ Ոտնահետքերին և մի՛ փնտրիր պատիվ կամ գովաբանություն:

Եթե աշխարհը ձեզ խաբեբայի տեղ դնի, իմացե՛ք որ դուք անխարդախ եք, քանի որ Ես առաջինն էի, որին աշխարհը խաբեբայի տեղ դրեց: Սիրեցե՛ք և ներեցե՛ք: Աղոթե՛ք նրանց համար, ովքեր անհավատալի դավեր կհյուսեն Իմ Սուրբ Հոգու դեմ, և մի՛ դատեք նրանց, որ չլինի թե այն, որ մահացու է նրանց համար, մահացու դառնա ձեզ համար: Թողե՛ք, որ Ես ուղղեմ նրանց: Թող ամեն ինչ, որ անում եք, սերմանվի սիրո մեջ: Ես պիտի ապահովեմ ձեզ և հագեցնեմ ձեզ սփոփանքներով: Վերջում ամեն մի փուշ պիտի հեռացվի Իմ Մարմնից: Սերը պիտի հաղթանակի:

Նոյեմբերի 15, 1992

«Եթե միայն հնարավոր լիներ իմ դժբախտությունները կշռել և իմ ողջ փորձությունները դնել կշեռքին: Բայց նրանք ավելին են կշռում, քան ծովերի ավազները, ուրեմն ի՞նչ կա զարմանալի, որ իմ խոսքերը հանդուգն են»[1]:

Ես դողում եմ սարսափից՝
մտածելով,
որ կարող եմ սխալ լինել:
Արդյոք ես մեղավո՞ր կհայտնեմ
Քո Ներկայությամբ, Աստվա՛ծ իմ:
Բայց և այնպես
ես արմատավորվել եմ Քո մեջ:
Ես տեսա քեզ այնտեղ կանգնած,
լուռ, Քո Ձեռքը առաջ պարզած,
ինչպես ողորմություն խնդրող մեկը:
Հետո ես մի Ձայն լսեցի[2],
մի Անուն[3] ասվեց ինձ
և իմ հոգին ընկավ
իմ Հոր Բազուկների մեջ:
Օ՜, Աստվա՛ծ,
որքա՜ն եմ Ես Քեզ սիրում:

Զավա՛կս, զավա՛կս... որքա՜ն եմ Ես՝ Տերը, սիրում քեզ: Ես քեզ սիրում եմ արտասվելու աստիճան... Դադարի՛ր չարին լսելուց, որը փորձում է ոչնչացնել այն բոլոր լավ բաները, որ Ես տվել եմ քեզ:

Հավատա՛ Իմ Սիրուն: Ես երբեք քեզ հուսախաբ չեմ անի[4]... երբե՛ք[5]... Ուրեմն Իմ խաղաղությունը քեզ, այս խաղաղությունը, որը Ես եմ քեզ տվել, և իմացի՛ր, զավա՛կս, որ Իմ սիրուց ավելի մեծ սիրո, դու երբեք չես հանդիպի... Ա՛հ, զավա՛կս, կառչի՛ր Իմ հազուստի եզրից: Ես այստեղ եմ և քեզ հետ եմ:

---

[1] Հոբ 6:2-3
[2] Հոր Ձայնը:
[3] Յահվե:
[4] Նա ասաց այս բառերը՝ համարյա չշնչալով:
[5] Նա չշնչաց այս բառը:

Նոյեմբերի 19, 1992

Քո օգնական-ստրուկը Քո Տրամադրության տակ է:

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, Իմ Հոգո՛ւ սիրելի, արի՛ Ինձ մոտ: Երբ քեզ հալածում են, մտի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ և զգա՛ Իմ Սերը: Շատերի միջից Ես քեզ եմ ընտրել, որպեսզի Ինձ հետևես այն Ճանապարհով, որը տանում է դեպի Միասնություն: Ես դարձրել եմ քեզ Իմ աշակերտը, և Ես ոչ միայն դարձել եմ քո Դաստիարակը և Ուսուցիչը, այլև դարձել եմ քո Ամուսինը: Ինձ հետ դու ոչնչի կարիք չես ունենա, սիրելի՛ս:

Դու ուզում ես ինձ թելադրե՞լ, Տե՛ր:

Քո կյանքի ամեն մի րոպեին: Քո կյանքի ամեն մի րոպեին եղի՛ր Ինձ հետ՝ աղոթելիս, թելադրություն գրելիս, խոկալիս, Սուրբ Հաղորդություն ստանալիս, երկրպագելիս՝ պաշտամունքի ժամերին, ապացուցի՛ր քո սերն Իմ հանդեպ: Ապացուցի՛ր քո ծարավն Իմ հանդեպ, ապացուցի՛ր քո հավատարմությունը՝ սիրով միացած մնալով Իմ Սրտին: Եղի՛ր անկուն վստահելով Իմ Ուժին, և միշտ հաճույքո՛վ սպասիր Ինձ հետ հանդիպմանը: Ա՜հ, փոքրի՛կս, մի՞թե չես հասկացել: Մի՞թե դու չես նկատել այն Սիրո մեծությունը, որ Ես ունեմ քո հանդեպ, և Իմ ընկերությունը...

Իսկ հիմա, քանի դեռ այստեղ ես, միացրո՛ւ քո աղոթքները սրբերի աղոթքներին և հիշի՛ր, որ Ես լավ գիտեմ, թե ինչ կա քո սրտում: Ես գիտեմ քո կարիքները, ամեն ինչ: Դուք բոլորդ էլ նույն ձևով Ինձ եք պատկանում, և մի՞թե Ես Իմ Կյանքը նորից չէի տա ձեզ համար, եթե դրա կարիքը լիներ[1]...

Ահա Ես ուղարկում եմ Իմ Հոգին, որ ձեզ հիշեցնի Իմ Սիրո մեծությունը և խնդրի ձեզ հեռու քաշվել աշխարհից, որն ամեն ինչ ունի, բացի Ինձանից: Ձեզանից ամեն մեկի համար Ես տեղ ունեմ Իմ Սուրբ Սրտում: Եկե՛ք, միացրե՛ք ձեր սիրտը Իմ Սրտին և գործադրե՛ք Մեր Պատգամները: Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին: Եղե՛ք մեկ:

Նոյեմբերի 27, 1992

Խաղաղությո՛ւն քեզ: Այդ Ես եմ՝ Հիսուս: Աղոթի՛ր Ինձ հետ և ասա.

Հա՛յր, հիմա Ես Քեզնից միայն
մի բան եմ խնդրում,

[1] Այս բառերն ասվեցին շատ արտահայտիչ ձևով, քանի որ դրանք գալիս էին Նրա Սուրբ Սրտից:

որ զորացնես իմ հավատքը: Ամեն:

(Ես կրկնեցի այն Հիսուսի հետ):

Նոյեմբերի 29, 1992

(Ֆիլիպիններ – Մանիլա)

Ես ձեր բարի Հովիվն եմ: Ես վերևում լսեցի ձեր կանչը: Հետևաբար, ես ինչպե՞ս կարող եմ դիմադրել ձեր կանչին, երբ լսում եմ ձեր ողբն ու տառապանքը: Ես եկա այս ձևով, որ խոսեմ ձեզ հետ և հիշեցնեմ ձեր սրտերին Իմ խնդրանքը[1]. Արդյոք դուք բոլորդ հաշտվե՞լ եք ձեր եղբայրների, ձեր քույրերի և բոլորի հետ: Միայն մի քանիսն են հաշտվել...

Ահա Ես նորից ձեզ խոսք եմ ասում: Ես չեմ գալիս որպես Դատավոր, ո՛չ տակավին, և եթե Ես հանդիմանում եմ ձեզ, դա այն սիրո մեծության պատճառով է, որ Ես ունեմ ձեր հանդեպ... Ես Նախանձախնդիր Աստված եմ, և Ես աղոթքներ եմ ուզում, աղոթքներ՝ առանց դադարի:

Ա՜հ, սիրելի՛ զավակներ, եթե իմանայիք, թե ինչպես է Իմ Սիրտը պատառոտվում ամեն անգամ, երբ ձեզանից մեկն ու մե~կը հետաձգում է Իմ ցանկությունների կատարումը... Ես ասում եմ ձեզ. շուտով Ես կիջնեմ ողջ ուժով Իմ Սուրբ Հոգու հետ, որ կույրերին տեսողություն տամ և խլեմ տեսողությունը նրանցից, ովքեր ասում են, թե տեսնում են...

Հոգին, որը ճախրում է այս աշխարհի վրայով, ըմբոստության հոգի է, որ կառավարում է աշխարհը, որպեսզի նա ապրի Անաստված կյանքով՝ դրամով պղծելով Իմ Սրբարանը: Մի՞թե դուք բոլորդ Իմ Սրբարանը չեք: Ուրախացրե՛ք ձեր Հորը, որը Երկնքում է, և աղոթե՛ք այս աշխարհի Հաշտության համար: Երանի խաղաղարարներին, երբ նրանք աշխատում են Խաղաղության համար: Նրանք կկոչվեն Ամենաբարձրյալի զավակներ:

Աղոթե՛ք, որ Իմ Եկեղեցին մեկ լինի: Այսօր Իմ Եկեղեցում բաժանում կա, ինչպիսին չի եղել նախկինում, նման Կայենի և Աբելի բաճանմանը, որոնք եղբայրներ են՝ սակայն տարբեր են մեկը մյուսից: Մեկն անկեղծ էր, մյուսը՝ ոչ, մեկը բարեհոգի էր, մյուսը՝ չարամիտ և ոչ հաճելի Ինձ, մեկը հավատարիմ էր և բարեպաշտ, մյուսը՝ դավաճան և ըմբոստ: Սրանք են Իմ Եկեղեցու այսօրվա անդամները: Նրանք երկու տեսակի են. մեկը՝ բարեպաշտ, մյուսը՝ ըմբոստ: Իմ Եկեղեցին բաժանված է:

Ես ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Իմ Թագավորությունը ձեր մեջ է: Այսօր Իմ Սուրբ Հոգին փչում է ձեզ բոլորիդ վրա, որպեսզի վերակենդանացնի այն քիչը, որ մնացել է ձեր մեջ, և ըմբոստներին գիտակցության բերի: Շնորհի Իմ Սուրբ Հոգին ձեզ վրա է փչում Իմ Բուռն Սերը: Այն ոչխարները, որոնք Ինձ են պատկանում, հեռվից կճանաչեն Իմ Ձայնը: Շուտով Ես այնպես պիտի անեմ, որ Իմ աշակերտները փայլեն:

Ես՝ ձեր Թագավորը, օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին Իմ Սրտի

[1] Հոկտ. 29, 91թվին , Տերը Ֆիլիպիններին պատգամ տվեց՝ խնդրելով նրանց հաշտվել:

խորքից: Եղե՛ք մեկ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

(Մեր Օրհնյալ Մայրը պատգամ է տալիս Ֆիլիպինի ժողովրդին):

Ինչպես մի Մայր, Ես գալիս եմ խնդրելու ձեզ, որ լսեք ձեր Հորը: Լսե՛ք Նրան և արե՛ք այն, ինչ Նա ձեզանից խնդրում է:

Ես ձեզ ցույց եմ տվել Մեր Սրտերի Վերքերը մի հատուկ ձևով: Ես կմնամ ձեզ հետ այս ձևով հիմա ևս մի կարճ ժամանակ, բայց Ես չեմ թողնի ձեզ, ձեզ, որ Հովվի գառներն եք, մինչև չհամոզվեմ, որ դուք ապաստան և արոտավայր ունեք:

Աշխարհը նորից սխալ է դատում ժամանակների մասին, և ոչ էլ կարողանում է Նշանները ճանաչել: Աշխարհը չի լսում Մեր Երկու Սրտերին, ոչ էլ հասկանում է Նրանց: Նրանք մերժում են Մեզ... Բայց մոտ է ժամը, երբ վերևից մի Լույս պիտի փայլի, և Մեր Երկու Սրտերը, ինչպես Երկու Ճրագներ, որոնք փայլում են կողք կողքի, պիտի վերակենդանացնեն այս աշխարհը դուրս բերելով այն խավարից դեպի լույս: Այս Երկու Սրտերը, որոնց դեմ աշխարհը մարտնչեց, պիտի հաղթանակեն վերջում: Եվ աշխարհի թագավորությունները պիտի անցնեն, և նրանց պիտի փոխարինի Իմ Որդու Թագավորությունը... Այս ամենն այժմ շատ մոտ է ձեզ:

Երբ դուք գնաք այստեղից[1], գնացե՛ք Տիրոջ խաղաղությամբ և Իմ խաղաղությամբ:

Դեկտեմբերի 1, 1992

Քո խոսքն իմ ուրախությունն է,
իմ Կյանքը և իմ հույսը:
Դու ի՞նչ ես գտել
իմ արատավոր սրտում,
որ ուզում ես հաստատել
Քո Գահը նրա ներսում:
Օր ու գիշեր Դու ինձ
Քո շնորհներն ես ցույց տալիս:

Ես Իմ Գահը հաստատեցի քո սրտում, որ փրկեմ և ազատեմ քեզ: Ես Իմ Գահը հաստատեցի քո սրտում, որ թագավորեմ քեզ վրա:

Ես Իմ Գահը հաստատեցի քո սրտում, որ քեզ շնորհեմ Իմ Հոգին: Քո աղքատությունը գրավեց Ինձ, քո թշվառությունը հրապուրեց Ինձ: Եթե այսպիսի շնորհ է տրվում թշվառներին, մի՞թե Ես շատ ավելին չեմ շնորհի արդարներին, ո՜հ, թերահավատնե՛ր:

[1] Այն Եկեղեցին, որի մեջ մենք գտնվում էինք:

Ես Առաջինն եմ և Վերջինը, Սկիզբը և վերջը:

Դեկտեմբերի 2, 1992

Ցո՛ւյց տուր Ինձ
Քո Սուրբ Դեմքի Լույսը,
բարձրացրո՛ւ իմ հոգին
դեպի բարձունքները ու թո՛ղ,
որ Քեզ տեսնեմ:

Ուրեմն փոխհատուցիր Ինձ և սիրով ավետարանիր Սիրո համար: Յուրաքանչյուր բառ, որ դու կարտաբերես Իմ Սուրբ Անվան փառքի համար, պիտի օրհնվի, որպեսզի աղավնու պես ճախրի և համնի այնտեղ, որտեղ իր տունն է շինելու: ic[1], Հիսուս:

Փոխհատուցի՛ր Ինձ և տո՛ւր Ինձ քո ժամանակը, քո միտքը, քո ձեռքը և քո սիրտը, որ օգտագործեմ Իմ Փառքի համար: Հետո նայի՛ր Իմ Շուրթերին, շոշափի՛ր Իմ Սիրտը և գրի՛ր: Երբեք բաց չթողնես Իմ հաղուստի ծայրը:

(Հենց որ Հիսուս ստորագրեց և կնքեց այս պատգամը, շշուկով ասաց ինձ. «Սարաևոն[2] կոչնչանա»):

Դեկտեմբերի 3, 1992

(Նախքան իմ առաքելությունն Ավստրալիայում):

Ի՛նձ նայիր: Ստացի՛ր Նրան, ով քեզ ամենից շատ է սիրում: Գառնո՛ւկս, Ես քեզ հետ եմ, և Իմ Խոսքը պիտի դրվի քո բերանում, և Այն պիտի թափանցի նրանց սրտերը: Լավն ու վատը պիտի լսեն քեզ: Դու պիտի քարոզես և ուսուցանես Իմ Գիտությունը, որը Ես Ինքս եմ քեզ տվել այս տարիների ընթացքում: Հաստատակամությո՞ւն: Քեզ ա՞յդ է պետք, զավա՛կս:

Այո՛, Տե՛ր իմ:

---

[1] "ic" Հունական սրբապատկերների վրա գտնված սկզբնատառերն են, որտեղ Հիսուսն է պատկերված: IC-ը Հիսուս ICTHUS-ի (ՁՈՒԿ):

[2] Սարաևոն քաղաք է նախկին Հարավսլավիայում: Այս ասելուց երեք օր հետո՝ 1992 թվի դեկտ. 5-ին, Սարաևոն հարձակման ենթարկվեց:

Ես պիտի ընկերակցեմ քեզ, որ վերակենդանացնեմ քո հոգին: Իմ ներկայությունը պիտի խրախուսի քո սիրտը, և դու հաստատակամ պիտի լինես: Մենք գործընկերներ ենք, այնպես չէ՞:

Այո՛:

Ուրեմն մի՛ վախեցիր: Ես և դու, դու և Ես, և Իմ Սուրբ Հոգու զորությունը վեր պիտի բարձրացնի քեզ և պիտի չշնչա ու հիշեցնի քեզ այն առողջ Ուսուցումները, որոնք Ես տվել եմ քեզ: Մի՛ վախեցիր, Ես երբեք քեզ հուսախաբ չեմ արել: Ես քեզ ճարտար լեզու կտամ, որ պատվես քո Թագավորին:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Քրիստո՛ս,
Դու իմ գովքի թեման ես
մեր ժողովներում:
Ես գանձի պես պահել եմ
այն հրահանգները,
որոնք Դու տվել ես ինձ
Քո Շուրթերից:
Հիմա ես կանչում եմ Քեզ,
Սո՛ւրբ Սիրտ,
որ օգնես ինձ ցույց տալու
Անհուն Քնքշությունը,
Ամենակարող Աստծո
Մեր Հոր Սերը,
Քո Սուրբ Սրտի նրբությունը
և Քո Հոգու
Անսահման Հարստությունը:

Ես պատռեցի Երկինքը և իջա քո սենյակը: Ուստի հիմա միացի՛ր սրբերի երգչախմբին և երգիր քո ողջ սրտով, այո՛, ողջ սրտով: Իմ փառքը պիտի կիսվի անմեղ հոգիների, աղքատների հետ և նրանց հետ, ովքեր միացրին իրենց սրտերն Իմ Սրտին: Ես ի ցույց կդնեմ Իմ Սերը և բոլորը կհասկանան, որ չեն հանդիպի Իմ սիրուց ավելի մեծ սիրո: Տեսնո՞ւմ ես, թե դու ինչ ունես: Սերն Ինքն է գալիս քո սենյակը, որ խոսի քեզ հետ: Դու Ինձ տեսել ես դեմ առ դեմ:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ Իմ Սրտի խորքից: Սիրվա՛ծ զգա: Ես՝ Հիսուս Քրիստոսը, հարություն եմ առել և կենդանի եմ ու քեզ մոտ եմ, հիմա... ic

Դեկտեմբերի 7, 1992

(Ավստրալիա)

(Աղոթաժողովից անմիջապես առաջ, Աստված՝ մեր Հայրը, տվեց ինձ այս պատգամը):

Գրի՛ր. ասա՛ նրանց, որ Ես Ամենագթառատ Հայրն եմ: Ասա՛ նրանց, թե ինչպես եմ Ես խոնարհվում, որ հասնեմ իրենց, Հիմա:

Սերն ու Հավատարմությունը հիմա իջնում են, որ գրկեն ձեզ բոլորիդ, որպեսզի նորոգեն ձեզ, վերակենդանացնեն և դուրս բերեն ձեզ թմրությունից ու անտարբերությունից, որոնք ծածկում են այս երկիրը: Մի՛ ասեք, թե Ես չափազանց հեռու եմ ու անհասանելի, անտարբեր՝ ձեր թշվառության հանդեպ և չեմ պատասխանում ձեր կանչերին:

Եթե բոցերը կլանեն ձեր երկրները, և կրակը լափի ու ոչնչացնի երկրի մարդկանց, այդ բոլորը կլինի այն մեծ ուրացության հետևանքով, որը համակել է ազգ ազգի հետևից՝ ներթափանցելով Իմ Օրենքի սրտի մեջ: Այս ուրացությունը ձեզ մուրացիկ դարձրեց և հավատացրեց ձեզ, որ դուք հայր չունեք... Որքա՜ն եմ Ես ձեզ խղճում: Ո՛վ սերունդ, Ես դեռ որքա՞ն պետք է սպասեմ: Իմ նախազգուշացումներն ու Իմ կանչերն արձագանքում են երկրի վրա, և չնայած Իմ վիշտը սուր է, և Իմ Արդարության բաժակն այժմ եզրերից հորդում է, Ես տակավին կարող եմ մեղմանալ և կարող եմ ընդունել այն պատիվն ու մեծարանքը, որ կառաջարկեք Ինձ:

Ես պատրաստ եմ ներելու ձեզ՝ շնորհիվ Իմ Որդու հեղած արյան և Նրա Զոհաբերության, եթե դուք սրտին մոտ ընդունեք Իմ Խոսքերը: Ես, որ ստեղծեցի ձեզ՝ Սիրուց ելնելով, հարցնում եմ ձեզ. Արդյոք Ես ձեզանից կլսե՞մ ձեր ապաշխարության կանչը...

Աղջի՛կս, փառավորի՛ր Ինձ և սիրո՛վ բացահայտիր Իմ Սուրբ Դեմքը յուրաքանչյուրին: Ես օրհնում եմ քեզ և ամեն մեկին, ով ուղեկցում է քեզ:

Դեկտեմբերի 9, 1992

Խաղաղություն քեզ: Դու, որ արժանացել ես Իմ Հոր բարեհաճությանը, եղի՛ր Իմ Արձագանքը:

Հաստատի՛ր Իմ Թագավորությունն Ավստրալիայում, Իմ Սիրո Սերմերը ցանի՛ր ամենուր և բոլոր ուղղություններով: Մի՛ հետաձգիր և պատասխանի՛ր քեզ տրված բոլոր խնդրանքներին: Ես քեզ բավականաչափ զորություն կտամ, որ տարածես Իմ Պատգամը...

Ցո՛ւյց տուր Իմ Հոգու համոզիչ ուժը, ցո՛ւյց տուր, թե ինչպես է Իմ Հոգին վեր բարձրացնում, ուսուցանում և բացահայտում Ճշմարտության և Հավիտենական Աստծո խորությունները: Ցո՛ւյց տուր անգետներին հոգևոր բաների իրականությունը, որը տրվում է Հոգու կողմից, և բացահայտի՛ր Իմ Հոգու կողմից տրված Գիտությունը: Ցո՛ւյց տուր Իմ Հոգու ողջ զորությունը, թե ինչպես է Նա զարգացնում, վկայում և վարձատրում աղքատներին, պարզասիրտներին, խոնարհներին, սակայն հեռու է

փախչում հարուստներից, իմաստուններից, հպարտներից, ովքեր չափում են Իմ Հոգին իրենց բնական հասկացողությամբ, և ամեն ինչ գնահատում են իրենց հոգու համաձայն: Վասո՛ւլա, գնահատիր քո հոգևոր աճը և մի՛ կասկածիր Իմ շնորհին:

Ես՝ Հիսուս, քո Ուսուցիչն եմ և Տերը: Երբեք չկասկածես: ic, Իմ խաղաղությունը քեզ:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 10, 1992

(Ադելաիդա - Ավստրալիա)

(Ժողովից առաջ)

Երջանի՛կ զգա, որ Ես փրկել եմ քեզ: Հիմա թո՛ւյլ տուր Ինձ, որ քեզ օգտագործեմ Իմ փառքի համար: Հասկացրո՛ւ Իմ զավակներին այն Գիտությունը, որը Ես փոխանցել եմ քեզ: Արա՛ այն ձևով, ինչպես արել ես մյուս հավաքների ընթացքում: Ժպտա՛ Ինձ, քո հանդեպ Իմ Սերն ավելի մեծ է, քան դու ես կարծում: Արի՛, շնորհով Ես քեզ վեր եմ բարձրացրել և ուրիշ միլիոնավորների: Թո՛ւյլ տուր Ինձ հիմա, որ ուղղություն տամ քո քայլերին, ic:

Հիսո՛ւս:

Ես եմ:

Դեռ մի՛ գնա:

Ինչո՞ւ: Դու ցանկանում ես, որ Ես մնա՞մ[1]: Ա՜հ, տեսնո՞ւմ ես, Ես երբեք Ինձ չեմ պարտադրի քեզ...

Հիսո՞ւս:

Ես եմ:

Խոսի՛ր Ինձ հետ, խնդրում եմ:

Սերը սիրում է քեզ: Սիրի՛ր Ինձ և ծարավի՛ր Ինձ, ինչպես Ես եմ ծարավում քեզ: Փաղաքշի՛ր Ինձ շարունակ՝ թույլ տալով Ինձ խոսել քո սրտում: Հասկացի՛ր, հոգի՛, որ դու այս աշխարհի համար չես ստեղծված, այլ Իմ Թագավորության համար, որը Երկնքում է: Ուստի հրաժարվի՛ր

[1] Ես չկարողացա պատասխանել Նրան: Որպես կանոն՝ Հիսուսն Ինձ խնդրում էր, որ որևէ հանդիպումից առաջ, կես ժամ Իր հետ լինեմ: Այսօր ես ուշ էի եկել: Ժամանակ չկար, և ես նույնպես ուզում էի պատրաստվել:

այն ամենից, որ քեզ կապում է աշխարհին, և փնտրի՛ր երկնային գործեր:
Արի՛: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տե՛ր:

Դեկտեմբերի 13, 1992

Հա՛յր Մեր, որ Երկնքում ես,
թող քո Անունը սուրբ լինի...
Հա՛յր Մեր, ում սերը հայտնվում է
մեզանից ամենաանարժաններին,
խղճա՛ Քո արարածին:
Դու տվել ես մեզ,
որպես ձրի պարգև,
մեր ազատությունը,
որ օգտագործենք,
ինչպես կամենում ենք:
Բայց մենք մեր դեմ ենք
շրջել մեր ազատությունը:
Մենք օգտագործում ենք
այն մանկան ձեռքում գտնվող
ածելու նման՝
կտրատելով ինքներս մեզ,
հասցնելով մահվան...
Օ՛, արի՛
և մեր ուշադրությունը դարձրո՛ւ
դեպի Քո Սուրբ Անունը,
այլապես մենք ինքներս մեզ
կտորների կվերածենք:
Ես կանչում եմ Քեզ,
Ամենակարո՛ղ Աստված,
մեր նեղությունների մեջ:
Դու կփրկե՞ս մեզ,
թե՞ Դու կթաքնվես իմ խնդրանքից:

Աղջի՛կս, դու պատասխանատու ես Իմ Պատգամի համար, և Ես քեզ ուղարկում եմ աշխարհ՝ մեկ ազգից մյուսը, որ ապաշխարության կոչ անես և փոքրացնես այս անապատը: Արդարև, ամբոխները խմբվում են քո շուրջը: Նրանց ականջին հասել է, որ Ես Եմ-ն է խոսում, և ազգ ազգի հետևից խոսում է քո մասին: Նրանք ասում են մեկը մյուսին. «Եկե՛ք գնանք և լսենք, թե Աստված ինչ է ասում»: Նրանք գալիս են հազարներով և նստում քո առջև ու լսում քո խոսքերը: Բայց ո՞վ է գործադրում դրանք: Նրանց համար դու նման ես մի սիրո երգի, որը գեղեցիկ կերպով երգվում է երաժշտությամբ: Քո խոսքերը հմայում են նրանց, բայց նրանցից ո՞վ է գործադրում Իմ Պատգամները: Արդյոք նրանք հասկացե՞լ են «հաշտություն, խաղաղություն, սեր և միասնություն» բառերը:

Երբ ծծումբն ու լափող կրակը վրա կհասնեն, որոնք մեզ շատ մոտ են հիմա, նրանք կիմանան, որ Ես մի մարգարե էի ուղարկել իրենց մեջ:

Սկզբից ի վեր Ես ձեզ տվել էի Իմ Պատվիրանները: Ես ձեզ խնդրել էի սիրել Ինձ՝ ձեր Տիրոջը, ձեր ողջ սրտով, ձեր ողջ հոգով և ձեր ողջ մտքով: Այսօր Ես ձեզ խնդրում եմ, որ թույլ տաք Ինձ դիպչել ձեր հոգուն, որպեսզի ձեր սիրտը կարողանա գովաբանել Ինձ և ասել Ինձ, որ ո՛չ մահը, ո՛չ էլ կյանքը, ոչ մի հրեշտակ, ոչ մի արքայազն, ոչ մի բան, որ գոյություն ունի, ոչ մի բան, որ դեռ գալու է, ոչ էլ որևէ զորություն կամ բարձրություն, ո՛չ խորություն, ոչ էլ որևէ ստեղծված բան երբևէ չի կարող կանգնել ձեր և Իմ հանդեպ ունեցած ձեր սիրո միջև :

Ես ձեր Ամրոցն եմ: Իմացե՛ք, որ Իմ Սերը հայտնվում է նույնիսկ ձեզանից ամենից անարժաններին: Մի՛ փնտրեք ձեր փրկությունը այս աշխարհում, քանի որ գիտեք, որ աշխարհը չի կարող ձեզ Կյանք տալ:

Շուտով Իմ Գահը՝ Գառան Գահը պիտի լինի իր տեղում, և ձեր Հոգին պիտի նորոգվի Իմ Վերանցական Լույսով, որովհետև Ես՝ ձեր Հայրը, մտադիր եմ վերականգնել ձեր հոգու հիշողությունը և այնպես անել, որ ձեր սիրտը երգի Ինձ համար «Աբբա՝ Հայր» բառը: Ես ձեզ ասում եմ. դուք չեք պատկանում աշխարհին, ուրեմն ինչո՞ւ եք դեռ թույլ տալիս ձեզ նորից ու նորից խաբվել:

~ Աշխարհի հիմնումից ի վեր Ես ձեզ կանչել եմ ձեր անունով, բայց երբ Ես Խաղաղություն առաջարկեցի, համընդհանուր Խաղաղություն, դուք բոլորդ գրեթե պատերազմի կողմնակից էիք: Չնայած դրան՝ Ես հիմա դուրս եմ հեղում Իմ Սուրբ Հոգին, որ ձեզ հիշեցնեմ ձեր ճշմարիտ հիմքերի մասին և այն մասին, որ դուք բոլորդ Իմ սերմն եք: Բայց այսօր Իմ սերմը լցված է մեռած բառերով... Ես այն Սուրբն եմ, որ առաջինն է գրկել ձեզ: Ձեր հոգին դեռ որքա՞ն պիտի դիմադրի Այն Աչքերին, որոնք առաջինն են ձեզ տեսել: Եվ դեռ որքա՞ն ժամանակ ձեր հոգին պիտի մերժի Իմ վշտագին կանչերը:

Ձեզանից շատերը դեռևս փաղաքշում են Ավերածին Պղծությունը ձեր հոգու ամենախոր տիրապետության մեջ: Մի՞թե դուք չեք կարողանում տեսնել, թե ինչպես է Օձը կրկին ու կրկին ձեզ խաբում նույն ձևով, ինչպես խաբեց Ադամին և Եվային: Սատանան հուշում է ձեզ առանց հոգնելու և նրբորեն, որ կտրեք ձեր բոլոր երկնային կապերը, որոնք ձեզ կապում են Ինձ հետ՝ <u>ձեր Հոր հետ, որ երկնքում է</u>: Նա հմայեց ձեր հոգու հիշողությունը, որպեսզի ձեզ հավատացնի, որ դուք հայր չունեք՝ անդունդ ստեղծելով ձեր և Իմ միջև՝ ձեր Աստծո միջև: Սատանան ցանկանում է անջատել ձեզ Ինձնից և կտրել ձեր պորտալարը, որը միացնում է ձեզ Ինձ հետ, որով Կյանքի Գետեր են հոսում ձեր մեջ:

Սերո՛ւնդ, դուք դեռևս չեք որոշել դալ դեպի Ինձ: Ե՞րբ եք որոշելու վերադառնալ Ինձ մոտ: Դուք ցանկանո՞ւմ եք անցնել այս դարաշրջանի չեմը բոցավառ կրակով, ծծմբով և լափող բոցով: Ինչպե՞ս կարող էր ձեր հոգին վաճառել Իմ Փառքը մի անարժեք նմանակման դիմաց, որն առաջարկում է ձեզ չարն ամեն օր: Խնդրե՛ք Ինձնից <u>ձեր Հանապազօրյա հացը</u>, և Ես կտամ այն ձեզ: Ինչո՞ւ եք դուք բոլորդ այդքան կամենում լսել Օձին: Դուք և Ես գիտենք, որ Սատանան ստի հայրն է, ուրեմն ինչո՞ւ եք շարունակում լսել նրան: Ես՝ ձեր Արարիչը, ձեր Հայրն եմ, և Ես կանչում եմ ձեզ, որ վերադառնաք Ինձ մոտ: Հավատացե՛ք

Իմ վշտահար կանչերին: Ձեր հոգին պիտի շարունակի՞ բարեկամաբար վերաբերվել Ապստամբին, թե՞ դուք կբարեհաճեք ցած իջնել ձեր դահից և ապաշխարել: Ընտրությունը ձերն է: Շատ ժամանակ չի մնացել:

Ես հիշեցնում եմ ձեզ, որ զգուշանաք կեղծ ուսուցիչներից և կեղծ մարգարեներից, որոնք ձեր հոգում ամայություն են առաջացնում, և սխալ են մեկնաբանում ավետարանները՝ ասելով, թե Սուրբ Հոգին ձեզ հետ չէ, որ ձեզ հիշեցնի ձեր հիմքերի մասին և այն մասին, թե որտեղից եք դուք եկել: Նրանք արդեն ձեր հոգին անապատ են դարձրել և մի լայն փոս են փորել ձեր և Իմ՝ ձեր Հոր միջև: Թույլ մի՛ տվեք նրանց, որ այդ ամայությունը տարածեն ձեր հոգում՝ հավատացնելով, որ Ես ձեզ որբ եմ թողել: Այդ կեղծ մարգարեները Իմ Որդուն՝ Հիսուսին, ստախոս են դարձրել, իսկ ավետարանները՝ արձագանքող ծնծղա՝ ամբողջապես դատարկ: Նրանք Իմ Խոսքը դարձրեցին բաց դերեզման:

Ուստի զգուշացե՛ք այդ կեղծ ուսուցիչներից, ովքեր ասում են ձեզ, թե Իմ Սուրբ Հոգին չի կարող իջնել ձեր մեջ, որ հրաշքներ և հրաշագործություններ կատարի: Զգուշացե՛ք նրանցից, ովքեր դատապարտում են Իմ Սուրբ Հոգուն, որը ձեր օրերում ավելի շատ, քան երբևէ, հիշեցնում է ձեզ ձեր հիմքերի մասին: Զգուշացե՛ք նրանցից, ովքեր պահում են կրոնի արտաքին տեսքը, սակայն մերժում են նրա ներքին ուժը, այն ներքին ուժը, որն Իմ Սուրբ Հոգին է:

Եվ եթե ձեզանից որևէ մեկին զրպարտում կամ ճնշում են այն պատճառով, որ դուք վկայում եք Ճշմարտությունը, շրջվե՛ք դեպի ձեր Սուրբ Մայրը: Նա պիտի սփոփի ձեր հոգին և ձեզ արիություն տա: Եթե աշխարհը ձեզ ծանր վերքեր պատճառի, շրջվեք դեպի ձեր Մայրը, և Նա կկապի ձեր վերքերն Իր Մայրական Սիրով և Հոգատարությամբ: Ինչպես ձեր Սուրբ Մայրը հոգ տարավ Իմ Սիրելի Որդուն, Նա ձեզ նույնպես հոգ կտանի: Ձեր թշվառության և վշտի մեջ Նա սուրալով գալիս է ձեզ մոտ և դնում է ձեզ Իր Սրտում, այն նույն Սրտում, որը հղացավ ձեր Փրկչին: Ձեր Սուրբ Մայրը, որը Երկնքում է, պիտի սովորեցնի ձեզ ընդլայնել Իմ Թագավորությունը երկրի վրա՝ սովորեցնելով ձեզ սիրել Ինձ:

Ուստի թող սերը լինի ձեր կյանքի սկզբունքը: Թող սերը լինի ձեր արմատը: Թո՛ւյլ տվեք Ինձ՝ ձեր Հորը, ձեզ Ինձ հետ կապել: Թո՛ւյլ տվեք Ինձ դիպչել ձեր հոգուն: Եկե՛ք Ինձ մոտ և նեստվե՛ք Իմ Բազուկների մեջ: Էլ ավելի մեծ ի՞նչ երանություն կա, քան լինել այն Ձեռքերում, որոնք ստեղծեցին ձեզ: Դրե՛ք ձեր ականջը Իմ Բերանին, այն Բերանին, որը Կյանք ներշնչեց ձեր մեջ՝ ձեր ռունգերի միջով: Եվ հողի փոշուց Ես կենդանացրի ձեզ, որ նվաճեք երկիրը: Այդ պահից սկսած՝ Ես դիպա ձեզ և խնդրեցի ձեզ լսել Իմ Խոսքը: Լսե՛ք, դուք ձեր սրտերը պետք է ուղղեք: Հրաժարվե՛ք այն անօրինություններից, որոնք արատավորում են ձեր հոգին, և ձեր ողջ սրտով

ՍՐԲԱՑՐԵ՛ՔԻՄԱՆՈՒՆԸ:

Դեկտեմբերի 17, 1992

Տե՛ր,
Հա՛յր և Դաստիարա՛կ իմ կյանքի,
Դու ուսուցանեցիր իմ սիրտը, Դու,
որ զմայլում ես Հոգիս
Քո մի հայացքով, մի՛ թաքցնիր
Քո Սուրբ Դեմքն ինձնից,
վերադարձի՛ր,
որ խորհեմ Քո մասին:
Օ՜, Հիսո՛ւս, արի՛:
Արի՛ մեզ մոտ, որտեղ լույսն ինքը
նման է գիշերվա խավարին:

Քո Թագավորն այստեղ է... Աղոթի՛ր Ինձ հետ Հորը:

Հա՛յր,
Ես ինքս ինձ նվիրաբերում եմ՝
հոգով ու մարմնով
քեզ ծառայելու,
որպեսզի Քո Աչքերն
ու Քո Սիրտը երբեք չթողնեն ինձ:

Դի՛ր Քո Արքայական
Գահն իմ ներսում
և տո՛ւր Ինձ Քո հրամանները:
Թող որ առաջ գնամ
սրտի մաքրությամբ,
որ կատարեմ այն ամենը,
ինչ Դու ես ինձ հանձնել: Ամեն:

Աղջի՛կս, Ես պիտի ավարտեմ այս ճամփորդությունը քեզ հետ: Մի՛ վախեցիր: Ինչ վերաբերում է քեզ, եթե դու համընթաց քայլես Ինձ հետ, դու ոչ մի բանի կարիք չես ունենա: Եթե դու երես դարձնես Ինձնից, Ես կկրկնապատկեմ քո խաչերը, որ փրկեմ քեզ[1]... Ով որ վերադառնա Ինձ մոտ, Ես նրան չեմ մերժի: Լսի՛ր Իմ Սրտի զարկերին, որպեսզի նրանց ձայնը զերծ պահի քեզ ըմբոստության որևէ մտքից: Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

[1] Ես հասկացա, որ եթե չհետևեմ Նրան, Նա նույնպես կհեռանա ինձնից և ինձ կթողնի միայն խաչերը: Տեսնելով, որ ես Իրեն սխալ հասկացա, Նա ավելացրեց հաջորդ նախադասությունը:

Դեկտեմբերի 21, 1992

(Կարդացված է Լոս Անջելեսում և Սակրամենթոյում միասնության շաբաթվա ընթացքում):

Իմ Սուրբ Սրտի՛ աղջիկս, Ես ուզում եմ, որ դու գրես: Լսի՛ր երկնքից եկող Իմ Ձայնը:

Հաշտության, Խաղաղության և Միասնության Իմ Խոսքերը չեն լսվել և ոչ էլ հարգանքի են արժանացել: Ես մեկ անգամ խոսել եմ, և Ես նորից չեմ խոսի: Ես ոչ մի բան չեմ ավելացնելու:

Տե՛ր, ըստ երևույթին, դա հեշտ չէ[1]:

Ես ուզում եմ, որ քո ձայնը բարձր հնչի այս անգամ հունվարին[2]: Ես ուզում եմ, որ քո ձայնը հնչի այնքան բարձր, ինչպես երբևէ չի հնչել: Դու պիտի խոսես Իմ անունից: Թող ողջ աշխարհը լսի: Հիմա օրերը հաշված են, շատ ժամանակ չի մնացել, և այն չնորհը, որը պարուրել էր մարդկությանը, կտրուկ և հանկարծակի կերպով պիտի վերջ գտնի... Դա պիտի արվի, որպեսզի աշխարհը հասկանա, թե որքան մեծ էին Իմ Ողորմությունը և Իմ Բարությունը, որոնք վերևից ցած էին հոսում տարիներ շարունակ...

Ասա՛ նրանց, ովքեր աշխատում են միասնության համար, որ նայեն երկնքին: Տեսնո՞ւմ ես, թե այն որքան հեռու է երկրից: Ահա այդքան էլ հեռու են նրանց սրտերը մեկը մյուսից: Ահա այդքան հեռու են նրանք իրարից[3]: Ե՞րբ են նրանք միաձայն որոշում կայացնելու, որ բոլորը Զատկի տոնը նշեն միևնույն օրը:

Ես հոգնել եմ նրանց ազնվաբարո լեզուն լսելուց: Գուցե այն տեղին է և պերճ է հնչում նրանց համար, բայց Ինձ համար այն հնչում է ինչպես կոչնազանգի հարվածի ձայն, որովհետև այն դատարկ է և անբովանդակ: Ես եկել եմ, որ խոսեմ նրանց հետ՝ նախ՝ մտահոգությունից, ապա՝ խղճահարությունից ելնելով, սակայն մինչև օրս դեռ ոչ մեկը չի ցածրացրել իր ձայնը, որպեսզի լսի Իմ Ձայնը: Վա՛յ ձեզ, որ ասում եք, թե ծառայում եք Ինձ, սակայն արգելում եք, որ Իմ Թագավորությունը միավորվի և կայուն դառնա: Սակայն այդ դուք չեք, որ պիտի միավորեք Իմ Թագավորությունը... քանի որ դուք ոչինչ չեք հասկանում և երբեք չեք հասկանա... Եթե դուք, չնայած Իմ երկնային կանչերին, չկարողացաք չափել Իմ Սրտի խորությունը, ապա ինչպե՞ս կկարողանաք բացատրել Իմ Մտքի փաստարկները, ինչպե՞ս կկարողանաք չափել Իմ Սուրբ Սրտի Հարստությունները:

Ես առակներով չխոսեցի, ո՛չ էլ հանելուկներով: Ես պարզ բառեր ընտրեցի՝ ձեզ հետ խոսելու համար: Ես հանդիմանեցի պաշտոնյաներին, և

---

[1] Ես ուզում էի ասել. «Միասնականացնել Զատկի ամսաթվերը»: Այդպես էին ասում նրանք, ովքեր աշխատում էին միասնության համար: Սակայն Հիսուս կտրուկ ընդհատեց ինձ և շարունակեց զորավոր ձայնով:

[2] Միասնության ամիս:

[3] Այստեղ Հիսուս կարծես ուղղություն է տալիս նրանց քայլերին՝ առաջարկելով նրանց, թե ինչ պետք է անեն:

Ես նրանց մեկտեղ հավաքեցի, որ խոսեմ նրանց հետ[1]: Բայց մի՞թե նրանք հետևեցին Իմ Սրտի մղումներին: Նրանց պարտականությունը պաշտոնական խնդիրք ներկայացնելն էր: Ես հանդիմանեցի իշխանություններին[2]: Ես այդ օրը չէի եկել[3] նրանց վրա հարձակվելու համար, այլ եկել էի՝ նրանց յուղ առաջարկելու, որ լցնեն իրենց ճրագները, որպեսզի հետագայում Իմ Եկեղեցին ավելի վնաս չկրի: Նրանցից քանի՞սը իրենց ձեռքերը պարզեցին երկինք՝ կանչելով Ինձ: Արդյոք նրանք հասկանո՞ւմ են, թե ինչպես կրկնակի անգամ[4] Իմ Արյունը հեղվում է ջրի նման:

– Թող որ այս անգամ Իմ հառաչանքները հասնեն նրանց ականջներին... Այն, ինչ Իմ Աջ Ձեռքը տնկեց, բաժանվել է երկու մասի, ապա՝ երեք, ապա՝ կտոր-կտոր է եղել: Որտե՞ղ է այն ողջ խաղողի որթը[5], որը Ես տնկել էի... Ժամանակին խաղողի մի որթ կար, և ամեն եղանակի Ես նրանից խաղողի բերք էի սպասում: Այն ծածկում էր հովիտները, լեռները և տարածվում ծովերից այն կողմ, որովհետև նա արմատ էր գցել Իմ սեփական կալվածքի մեջ՝ Իմ սեփական ժառանգության մեջ: Ես տարածել էի նրա ճյուղերը, որ հասնեն աշխարհի չորս անկյունները և աշխարհը լցնեն պտղով: Սակայն դա պահպանելու փոխարեն՝ նրանք անտեսեցին այն՝ թույլ տալով, որ փչերն ու տատասկները բազմապատկվեն նրա շուրջը՝ խեղդելով ճյուղ ճյուղի հետևից, ոստ ոստի հետևից: Այդ ընտրյալ տունկը, որն Իմ Աջ Ձեռքն էր տնկել, հիմա արդեն գետնին է հավասարեցված, և այն գեղեցկությունը, փառքը և պտուղը, որոնք նա տալիս էր, հիմա արդեն ընկած են, ինչպես փտած մի պտուղ:

Ուստի կարիք չկա, որ հպարտությամբ փքվեք: Դադարե՛ք հպարտանալուց, քանի որ ձեր սխալները կբազմապատկվեն, և ձեր արարքները հետ ընկնեն ձեր իսկ գլխին: Ես եկել եմ՝ ձեր ճրագը յուղով լցնելու: Վառե՛ք ձեր ճրագը և օգտագործե՛ք այն հիմա, որպեսզի տեսնեք, թե ուր եք գնում: Ով որ մերժի այս անգամ վառել իր ճրագը և օգտագործել, այն պիտի վերցվի նրանից և տրվի մեկ ուրիշին: Թող նրանք աղոթեն և ասեն այս բառերը.

Ո՛վ Տեր,
Դու, որ կանգնած ես մեր մեջ,
Հովվությո՛ւն արա մեզ:
Դի՛ր Քո Արքայական Գահը
Քո խաղողի որթի կենտրոնում
և տո՛ւր մեզ Քո Հրամանները:

Ո՛վ Սուրբ Տեր,
որ ամբողջովին սուրբ ես,
մաքրագործի՛ր մեզ,
որպեսզի մենք պահպանենք

[1] Օգտագործելով ինձ՝ որպես Իր պատգամախոսի:
[2] Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում:
[3] Օգտագործելով ինձ՝ որպես Իր պատգամախոսի:
[4] Երկու Ջատիկները՝ Հռոմի կաթոլիկ և ուղղափառ:
[5] Կարելի է հասկանալ, որպես Եկեղեցի կամ Աստծո ժողովուրդ:

Քո Տան և Քո
խաղողի որթի սրբությունն
ու ամբողջականությունը:
Սիրո՛վ միջամտիր
և պահպանի՛ր այն,
ինչ Քո Աջ Ձեռքը սերմանեց:

Մենք թերացանք Քո հանդեպ,
սակայն մենք գիտենք,
հավատում ենք և վստահում ենք,
որ Դու լայն կբացես
Քո Դարպասները
որ Կյանքի Գետը հոսի
Քո խաղողի որթի վրա,
և մեկ անգամ էլ
նրանից դուրս կգան ճյուղեր,
որոնք պտուղ կտան,
և այն կդառնա
արքայական որթատունկ,
ավելի արքայական, քան երբևէ,
քանի որ Քո Սուրբ Հոգին՝
Կյանք տվողը,
հովանի կանի նրան: Ամեն:

Ի՛մ Վասուլա, քո տառապանքները քեզ կսովորեցնեն համբերատար լինել: Մի՞թե դու չես լսել, որ համբերությունը ծնում է հաստատակամություն, իսկ հաստատակամությունը՝ հույս: Եվ հենց այդ հույսի վրա պիտի բարձրանա Իմ Թագավորությունը: Թող հիմա քո յուրաքանչյուր մանիկը փառաբանի Ինձ:

Իմ Սուրբ Հոգին կնքել է քեզ Իմ Կնիքով, ուստի մի՛ վախեցիր: Եկեղեցու Հովիվները, քահանաները, վարդապետները, եպիսկոպոսները և կարդինալները կճանաչեն Հովվի Կանչը, և Ես կվերանորոգեմ նրանց միտքը, որպեսզի նրանց հին էությունը ոչնչանա, և նրանք լիովին կհասկանան, որ Ես Իմ վերադարձի ճանապարհին եմ՝ կերպարանափոխելու Իմ ողջ արարչությունը այն բարությամբ և սրբությամբ, որոնք հատուկ են

Ճշմարտությանը:

Արի՛, աղջի՛կս, թանկագի՛նս, Ես Եմ-ը քեզ հետ է:

1993

Հունվարի 6, 1993

Հիսո՞ւս:
Հո՛ր Սիրելի, իմ երկրի[1] դաշտերն
ամայացած են ու ավերված[2]:
Նրանք հիմա դարձել են
մողեսի և սարդի բույն:
Մի՞թե Դու այլևս այնտեղ չես:
Մի՞թե Դու այլևս
այդ ազգի մեջ չես:
Ինչո՞ւ նա առաջ չի գնում:
Ինչո՞ւ ես Դու նրանց
թողնում այդքան հետևում:
Մահը ներս է սողոսկել
նրանց դռների տակով...
Ամենակալ Աստծո Որդի,
Դու ե՞րբ պիտի ցույց տաս
Քո Սրբությունը այս ազգի մեջ...
«Vassilia mou, yiati kles?[3]»:

Ես արտասվում եմ նրա չափազանց մեծ հպարտության վրա... Ես ի՞նչպես վարվեմ նրանց չափազանց մեծ հպարտու- թյան հետ: Նրանք չեն լսում Իմ Հոգուն և հետևում են իրենց սեփական հպարտ սրտերի թելադրանքներին:

Մի՞թե, իսկապես,
ո՛վ Տերդ ամենայն Սրբության,
ես չեմ անում իմ լավագույնը՝
ծառայելու համար Քեզ:
Մի՞թե ես չեմ բարեխոսում
Միասնության համար:
Կարո՞ղ եմ ես թեքել
երկաթը մերկ ձեռքերով[4]:
Բայց Քո Կրակը կարող է այդ անել:
Քո Հարստությունը
և Քո Սուրբ Սրտի Գանձերը
կարող են այդ անել:

---

[1] Հունաստանը:
[2] Հոգևորապես:
[3] «Իմ Արքա՛, ինչո՞ւ ես արտասվում» (Հունարեն):
[4] Իմ տեսիլքի երկաթե ձողերը, որոնք ներկայացնում են քրիստոնեական երեք եկեղեցիները:

Ուրեմն ես պետք է ավելին խնդրեմ քեզանից... Ես պետք է ավելին խնդրեմ քեզանից: Այն ամենը, ինչ դու տալիս ես Ինձ, պիտի ծառայի՝ ձեզ բոլորիդ սիրով իրար կապելու և ձեր սրտերը լուսավորելու համար, որպեսզի ձեր հոգին բացվի Իմ Հոգու առաջ, որը ձեզ պիտի ուսուցանի ձեր Երկնային Հոր խորությունները և Իմաստության թաքուն գաղտերը:

Խեղճությունը Քո Ոտքերի մոտ է, որ ծառայի Քեզ, Ամենակա՛լ Տեր:

Այո՛, վստահի՛ր Ինձ: Ես միշտ կաջակցեմ քեզ, ուստի մի՛ վախեցիր... Նայի՛ր Ինձ... Իմ քիմքը մագաղաթից էլ չոր է, և Հայրն արդեն երկար չի համբերի: Աշխարհը վիրավորում է Նրան և Նրա ողջ Թագավորությանը: Աշխարհը դարձել է այնքան չար, որ Իմ Ձեռքն այլևս չի կարող հետ պահել Նրա Ձեռքը ձեզ վրա իջնելուց[1]...

Երկաթը կարելի է հալեցնել, ուստի մի՛ վհատվիր... Մի՛ մոռացիր, որ ես քեզ նշանակել եմ՝ սուրը ձեռքիդ, որ կայծակի նման փայլատակի հպարտ և ինքնագոհ մարդկանց գլխին: Այս Լուրերը, որոնք ես տվել եմ քեզ՝ փոխանցելու, չափազանց տհաճ են նրանց սրտին: Դրանք անհանգստացնում են նրանց հոգին և նրանց ծնկները դողացնում: Իսկ քո ազգի համար կասեի. ես այն կհալեցնեմ, ինչպես երկաթն են հալեցնում՝ Կրակով... Եվ նրանք կառաջանան դեպի սրբություն:

(Պատգամ Սուրբ Սրտից՝ ուղղված ինչ-որ մեկին):

Այն[2], ինչ գոյություն է ունեցել, երբեք չի կարող մեռնել: Երբեք չի հանգչի այն, ինչը ջերմեռանդություն է արթնացնում և կյանք է տալիս Իմ Եկեղեցուն:

Դու քո սեփական աչքերով ականատես ես Իմ Սուրբ Սրտի վերակենդանացմանը և Նրան ում ասում ես. «Ես ճանաչում եմ Նրան, և ես սիրում եմ Նրան»: Այն, ինչ այսօր կատարվում է, առանց տառապանքի և զոհողության չի լինում: Ես վառ պիտի պահեմ Իմ Սուրբ Սրտի Պաշտամունքը, և այն ամենը, ինչ որ Ես սովորեցրել եմ ձեզ՝ կապված դրա հետ: Սա Իմ խոստումն է: Քեզ վիճակվել է ականատես լինել Իմ Սուրբ Սրտի վերակենդանացմանը, որպեսզի կարողանաս քո վկայությունը տալ: Առանձնաշնորհում է լինել Նրա զոհը, ով վերցնում և հեռացնում է քո մեղքերը:

Ես ընդունում եմ վկայությունը, որը դու տալիս ես Ինձ Իմ Հոգով: Ուստի այն, ինչ տեսնում ես քո սեփական աչքերով, ձեր ժամանակների իրագործումն է:

Հունվարի 17, 1993

(Միասնության շաբաթվա նախօրեին Լոս Անջելեսում):

[1] Հանկարծ Մեր Տերը կանգ առավ և նայեց ինձ: Կարծես Նա ինչ-որ բան հիշեց, հետո խոսեց:
[2] Սուրբ Սիրտը:

Տե՛ր, ես աղոթում եմ,
ինչպես Դու ես աղոթել.
թող մենք բոլորս լինենք մեկ,
ինչպես Հայրն է Քո մեջ,
և Դու՝ Նրա մեջ,
որ մնացած աշխարհը հավատա,
որ այդ Հայրն էր,
որ ուղարկեց Քեզ:
Ես աղոթում եմ նաև,
որ այն ոչխարները
որոնք Քո հոտից չեն,
նույնպես լսեն Քո Ձայնը:
Ես աղոթում եմ մուսուլմանների,
հրեաների և մյուսների համար,
որ այսօրվանից սկսած՝
նրանք Քեզ սիրեն: Ամեն:

Ես լսեցի քեզ, Ես լսեցի քեզ, Իմ ընկե՛ր: Վերջում ամեն մարդ պիտի երկրպագի Ինձ:

ΙΧΘΥΣ

Հունվարի 18, 1993

(Սակրամենթո)

(Այսօր իմ ծննդյան օրն է, և Միասնության շաբաթվա առաջին օրը: Ժամանակին դա եղել է նաև Պետրոսի Աթոռի տոնը: Սրբազան եպիսկոպոս Ֆրանցիս Ա Քուինն ինձ հրավիրել էր այսօր՝ խոսելու Սուրբ Հաղորդության տաճարում: Կեսօրից հետո՝ հանդիպումից անմիջապես առաջ, ինձ հրավիրողներն ինձ մի նվեր տվեցին: Երբ ես այն տեսա, զգացի, որ դա Հիսուսի կողմից էր: Քանի որ 1992 թվի հոկտեմբերի 21-ին Նա ինձ ասել էր հետևյալ բառերը).
«Ուրախացի՛ր և հրճվի՛ր, որովհետև <u>Ես քեզ իր հերթին պիտի փոխանցեմ Իմ Բաժակը</u>... Ես մտադիր եմ բերել ազգ ազգի հետևից, որ ապրեն Իմ ստվերի տակ և հավատան, որ Հայրն ուղարկեց Ինձ: Այո՛, կգա այն Օրը, երբ բոլոր երկրների ղեկավարները, կառավարիչները և ազդեցիկ մարդիկ, ողջ բնակչությունը կճանաչեն Ինձ՝ որպես Քրիստոսի՝ Կենդանի Աստծո Որդու: Եվ ամեն տեղից մարդիկ ջերմեռանդորեն վեր կպարզեն իրենց ձեռքերն աղոթքի և պաշտամունքի մեջ՝ բոլորը մեկ ձայնով և սրտով...» Եվ դա այն էր, ինչ Նրանք նվիրեցին ինձ՝ ոսկեզօծ մի Սկիհ: Նրա վրա փորագրված էին հետևյալ բառերը.

Թող որ Նրանք բոլորը մեկ լինեն
Քրիստոնեական Միասնության Տոն
Հունվարի 18, 1993

Այնուհետև երկու եպիսկոպոսները, որոնք ներկա էին, պատարագ մատուցեցին իմ ելույթից հետո: Տաճարում երգում էր երգչախումբը, և ամեն ինչ հիասքանչ էր: Միասնության համար տրված այդ պատարագի ընթացքում, նրանք օգտագործեցին իմ Սկիհը՝ նրա մեջ նվիրաբերելով Հիսուսի թանկագին արյունը:

Ես ելույթ էի ունենում Տաճարում և նայում էի խմբված ամբոխին. ներկա էին մոտ 1800 հոգի. ես տխրեցի: Ես այդտեղ էի՝ ուղարկված Տիրոջ կողմից, որ խոսեմ Միասնության մասին, և իմ դիմաց մոտ 98% հռոմի կաթոլիկներ էին: «Բայց իմ ազգի[1] մարդկանցից ոչ մեկն ինձ հետ չէր»: Տաճարում նույնիսկ մուսուլմաններ և հրեաներ կային... Բայց Տերն իմ ծննդյան իր անակնկալ նվերը ավելի ուշ ժամանակի համար էր պահել: Պատարագից անմիջապես առաջ ներս մտավ մի ուղղափառ քահանա իր օգնականի հետ: Պատարագից հետո նա խնդրեց զրուցել ինձ հետ: Մենք հանդիպեցինք ավանդատանը, և ես հասկացա, թե ինչ էր ասում ինձ Տերը. «Ռուսաստանը պիտի լինի այն երկիրը, որն ամենաշատն է փառաբանելու Ինձ»: Նա ռուս ուղղափառ քահանա էր...

Մեր բաժանման խավարում միասնության հույսի մի փոքր լույս պիտի փայլի: Հույսի այդ փոքր լույսը Ռուսաստանն է: Միասնությունը պիտի գա Ռուսաստանի միջոցով, և նա պիտի փառաբանի Աստծուն: Ես ռուս քահանային ասացի, որ նա Հիսուսի նվերն էր իմ ծննդյան օրվա առթիվ: Նրա անունը հայր Վասիլի է, որն իմ անվան՝ Վասուլայի արական ձևն է:

Մյուս նշանը, որ միասնությունը պիտի գա Ռուսաստանից, այն էր, որ երբ ես խնդրեցի Տիրոջից բացման աղոթք ընտրել, Նա ընտրեց մի ռուս քահանայի՝ հայր Սերգեյ Բուլգակովի աղոթքը: Նա ինձ խնդրեց բացել պատահական մի էջ, և ես այդպես արեցի. իմ աչքերն առաջինը տեսան այդ աղոթքը, որը ես գրել էի 1989թ. դեկտեմբերի 29-ին: Ահա այն.

Ո՛վ Հիսուս Քրիստոս,
մեր Տե՛ր և Փրկի՛չ,
Դու խոստացել ես
մշտապես մեզ հետ բնակվել:
Դու կանչել ես
բոլոր քրիստոնյաներին,
որ մոտենան և հաղորդակից լինեն
Քո Մարմնին և Արյանը:
Սակայն մեր մեղքը բաժանել է մեզ,
և մենք անկարող ենք
միասին մասնակից լինել
Քո Սուրբ Հաղորդությանը:
Մենք խոստովանում ենք
մեր այս մեղքը
և աղոթում ենք Քեզ.
ների՛ր մեզ և օգնի՛ր մեզ,
որ ծառայենք
հաշտության ուղիներին՝
Քո Կամքի համաձայն:

[1] Հույն ուղղափառներ (Ես իմացա, որ հույն եպիսկոպոսն արգելել էր հույն ուղղափառներին ներկա լինել հանդիպմանը):

Բոցավառի՛ր մեր սրտերը
Սուրբ Հոգու կրակով:
Տո՛ւր մեզ Հոգի
Իմաստության և հավատի,
խիզախության
և համբերության,
խոնարհության և հաստատակամության,
սիրո և ապաշխարության՝
Աստծո ամենաօրհնյալ
Մոր և բոլոր սրբերի
աղոթքների միջոցով: Ամեն:

Փետրվարի 2, 1993

(Ես կանչեցի Տիրոջը, բայց չկարողացա լսել Նրան: Դա ինձ տխրեցրեց: Հանկարծ լռությունն ընդհատվեց Նրա քայլերի ձայնից[1]: Եվ Նա խոսեց ինձ հետ՝ հանդիմանելով ինձ):

Իմ Հոգին քեզ վրա է: Օր ու գիշեր ես սպասել եմ քեզ[2]: Հարգի՛ր Իմ օրենքները: Ինչո՞ւ ես հետաձգում մեր հանդիպումները: Հիմա դու ասում ես. «Որքա՞ն կտևի սա»[3], երբ ընդամենը մի քանի րոպե է անցել: Մինչդեռ ես, ես քեզ սպասել եմ մի քանի օր: Մինչև ե՞րբ ես պիտի հանդուրժեմ քեզ: Դու ասում ես, որ քո ուրախությունն այն է, որ մոտիկ լինես Ինձ: Ընդմիշտ թշվառ ես դու, թույլ, փոքրի՛կ արարած: Մի՛ մոռացիր, թե ով է քեզ պահում ոտքերիդ վրա: Ես ազնվությամբ եմ վերաբերվել քեզ հետ և եղել եմ քո Հենարանը: Ուրեմն բացատրի՛ր Ինձ քո բացակայությունը:

Տո՛ւր աղքատին և կարիքավորին
մի առիթ ևս:
Երկրի վրա ես ոչ մի բանով
չեմ ուրախանում՝
Քո Ներկայությունից բացի:

Դե, ուրեմն ընտրի՛ր Ինձ հետ լինել: Ես կանչեցի քեզ դեպի Իմ Սիրտը, Ես քեզ չկանչեցի, որ կառավարես:

Բայց ո՞վ է անելու գործը:

Դու չընդունեցիր քո մեղքը[4]:

Այո՛, ես մեղանչել եմ՝ Քո օրենքները չպահելով:

---

[1] Փոխաբերական իմաստով:
[2] Երեք օր ես Նրա մոտ չգնացի այս ձևով:
[3] Նրա բացակայությունը և Նրա լռությունը:
[4] Այստեղ Տերն ավելի խիստ էր, քան առաջ:

Եվ Ինձ հավատարիմ չլինելով, սա՛ այդ:

Եվ Քեզ հավատարիմ չլինելով:

Ասա՛.

Ես պիտի գովաբանեմ իմ Տիրոջը,
և իմ հոգին պիտի ապրի
միմիայն Նրա համար,
և ես պիտի ծառայեմ
միմիայն Նրան,
և իմ շուրթերը պիտի երգեն
միմիայն Նրա համար,
և իմ սիրտը ուշադրություն
պիտի դարձնի միմիայն Նրան,
և հիմա իմ սիրտը պիտի տրոփի
միմիայն Նրա համար: Ամեն[1]:

Կարո՞ղ են հողն ու մոխիրը գովաբանել Ինձ: Կարո՞ղ են նրանք գովաբանություններ առաջարկել Ինձ: Ո՛չ, ո՛չ, մինչև որ Իմ Հոգին չապրի այդ հող ու մոխրի մեջ: Առանց Ինձ դու ոչինչ ես: Քո աչքերի լույսը գալիս է Իմ Լույսից: Ես քեզ պիտի սովորեցնեմ հպատակվել Ինձ, քանի որ Ես քեզ գետնին պիտի հավասարեցնեմ: Այլ կերպ, Ես ինչպե՞ս պիտի երևամ: Ես մտադիր եմ քեզ առաջ տանել սրբության մեջ: Ես հաջողությամբ եմ պահելու Իմ բոլոր ծրագրերը: Ուստի մի՛ մերժիր Ինձ քեզ հետ հանդիպել: Քո գործն արա՛ այնքան, որքան կարող ես, բայց զգո՛ույշ եղիր, որ չանտեսես լավագույն մասը:

Հենվի՛ր Ինձ վրա, որ քեզ աջակցեմ և զորացնեմ: Աղոթի՛ր: Մե՞նք, մե՞ղ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 3, 1993

Տե՛ր իմ Աստված, Դու հայտնի ես
Քո մեծահոգությամբ՝
աղքատների
և կարիքավորների հանդեպ:
Դու հայտնի ես այն բանով,
որ լցնում ես
քաղցածների բերանները,
ովքեր իրենց ձեռքերն են պարզում
դեպի քեզ: Դու բարձրացնում ես
կարիքավորներին՝

[1] Ես կրկնեցի դա Նրա հետևից:

արքայական տեղ տալով նրանց
ընտրյալների հետ
Քո երկնային պալատում:
Դու թույլերին տեղավորում ես
Քո Տան մեջ:
Դու հայտնի ես նրանով,
որ տապալում ես թագավորներ
ու թագավորություններ, երբ նրանք
խոչընդոտ են դառնում Քո Խոսքին:
Տե՛ր գթության,
Դու կարեկցանքով ես
նայում թշվառությանը՝
նրանց մոտ ուղարկելով
Իմաստությունը,
որ լինի նրանց Դաստիարակը
և սովորեցնի նրանց
քայլել Քո Ներկայության մեջ
և վայելել Քո բարեհաճությունը:
Շատերն են ինձ
հետապնդում և ճնշում,
սակայն Քո Իմաստությունն
ինձ սովորեցրել է, որ <u>ամեն ինչ</u>
Քո մեծագույն փառքի համար է:
Անարդարացիորեն մարդիկ
հետապնդում են ինձ՝
սպասելով ինձ, և հարմար պահի,
որ հարվածեն ինձ՝ Քո զավակին:
Բայց Դու այնպիսի
Ուրախություն ես ինձ համար,
որ անկախ նրանից, թե մարդիկ
ինչ կանեն ինձ հետ, ես պիտի
հաստատակամորեն հայտարարեմ
Քո Անունն ուրախությամբ:
Դու այնպիսի Ուրախություն ես
ինձ համար, որ ոչ մի մարդ,
այո՛, ոչ մի մարդ չի կարող
հեռացնել իմ աչքերը Քեզանից:
Դու անվերջ ողողում ես
իմ հոգին ուրախությամբ,
քանի որ Դու մխրճել ես իմ հոգին
Սիրո մկրտության մեջ,
Կլանող Կրակի մկրտության մեջ՝
թողնելով իմ սիրտը բոցավառված:
Դու շռայլել ես իմ հոգուն
մի մեծ գանձ,
Քո Սուրբ Սրտի գանձը:

Զավա՛կս, քո տոկունությունը քեզ կյանք կբերի: Քո սերն ու համբերատարությունը քեզ համար տեղ կապահովեն երկնքում: Զավա՛կս,

զավա՛կս, թող ես լինեմ քո բաժինը: Փառաբանի՛ր Ինձ և հայտարարիր ազգերին Իմ Սիրո մեծության մասին: Ոչ մեկից մի՛ վախեցիր. ես քո դիմաց եմ: Բարձրացրո՛ւ աչքերդ և նայի՛ր Ինձ[1]... Ես փրկելու եմ Իմ ժողովրդին, և Ես յուրաքանչյուր ազգի, յուրաքանչյուր ցեղի և յուրաքանչյուր լեզվի մարդկանց բռնելու եմ իրենց թևքից և հարցնելու եմ նրանց. «Դուք ցանկանո՞ւմ եք հետևել Ինձ», և նրանք կասեն. «Մենք ցանկանում ենք գալ Քեզ հետ, քանի որ մենք հիմա իմացանք Ճշմարտությունը»: Եվ ես մեկը մյուսի հետևից նրանց հետ կբերեմ, որ ապրեն Իմ Սրտում: Ես մտադիր եմ խաղաղություն բերել յուրաքանչյուր սրտում:

Այո՛, խաղողի որթատունկը, որը ես տնկել էի անցյալում, իր պտուղը կտա Իմ Փառքի համար: Ես չեմ դանդաղի, ոչ էլ կանտեսեմ հավատարիմների կանչերը: Եթե մեկը կառուցում է Իմ Եկեղեցին, մինչ մյուսը քանդում է այն, ո՞ւմ վրա կթափվի Իմ Հոր զայրույթը Դատաստանի Օրը: Լսի՛ր Ինձ: Ես ձևավորել եմ քեզ և դաստիարակել եմ քեզ, որ վերակենդանացնես Իմ Եկեղեցին և եղբայրների միջև միասնություն ստեղծես: Ես ստեղծեցի քեզ, Վասիլի՛կի[2], և կանչեցի քեզ քո ծննդյան անունով, որ Իմը լինես և ապատ գաս Իմ Ներկայության մեջ, ցանկացած ժամանակ, որտեղ էլ որ լինես[3]: Ես ուզում եմ, որ դու մոտիկ լինես Ինձ:

Օ՜, զավա՛կս, որ արժանացել ես Իմ Հոր բարեհաճությանը: Եթե ես ընտրել եմ քեզ, որպեսզի քեզ ցույց տամ Հորը և դրոշմեմ քեզ Մեր Սիրով, և եթե Իմ Սուրբ Հոգին չնչել է քո մեջ՝ քեզ վերակենդանացնելով, քո հոգին լցնելով Իր Լույսով, փոխակերպելով քո ներքին Խավարը Լույսի, Վասիլի՛կի, այդ նրա համար է, որ ազգերը քո միջոցով տեսնեն Իմ Ողորմությունն ու Իմ Սերը:

Դու թերևս կհարցնես ինքդ քեզ. «Ինչո՞ւ ես: Ինչո՞ւ այս ամենը պատահեց ինձ հետ»: Ես ասում եմ քեզ՝ քո սաստիկ թշվառության և քո սարսափելի թուլության պատճառով: Իմ Սիրտը, որը Սիրո մի Վիհ է, խղճաց քեզ: Դա կարող էր լինել որևէ այլ մարդ: Մի՛ կանգնիր տարակուսած Իմ առջև: Դու այլևս չե՞ս ճանաչում քո Փրկչին:

Ո՞վ կխղճա Իմ ժողովրդին, եթե ոչ ես: Երբ ազգերի բազմությունները շարունակ ընկնում են ուրացության մեջ, և սարսափի թագն է յուրաքանչյուր գլխի վրա, և երբ անբարոյականությունն է ղեկավարում նրանց սիրտը, ինչպե՞ս կարող եմ ես լուռ մնալ: Անաստվածությունը տարածվել է աշխարհով մեկ, մի՞թե ես պետք է լուռ մնամ: Ասա՛ նրանց. «Երանի այն սրտին, որ կհաշտվի իր եղբոր հետ[4], քանի որ նա կկոչվի Ամենաբարձ~ րյալի զավակ: Երանի այն սրտին, որ կդադարի գիշերվա մեջ թափառելուց և իսկապես կհաշտվի իր եղբոր հետ[5]: Նա ոչ միայն կվայելի Իմ բարեհաճությունը, այլև ճշմարտապես Ես նրան կբացահայտեմ Իմ Սուրբ Սրտի Անհատնում Հարստությունները, որպեսզի նրա շուրջը գտնվող մարդիկ հմայված նրա ճառագայթող գեղեցկությամբ, ասեն. «Հիրավի, Աստված է թաքնված նրա մեջ»: Իսկ դու, աղջի՛կս, երբեք մի

[1] Ես բարձրացրի աչքերս և ահա թե ինչ տեսա՝ Քրիստոսի ժպտացող Սուրբ Դեմքը:
[2] Իմ ծննդյան պաշտոնական անունը:
[3] Այս հատուկ ձևով:
[4] Նկատի ունի մարդկությունը:
[5] Նկատի ունի մարդկությունը:

բաժանվիր Ինձնից: Ես՝ Տերը, հովվություն կանեմ քեզ մինչև վերջ: Արի՛:

Փետրվարի 18, 1993

Տե՛ր, Դու դեռ որքա՞ն ես թույլ տալու, որ նրանք[1] արհամարհեն Քեզ:

Երբ ես հաջորդ անգամ նրանց հետ խոսեմ, ես փոթորիկ պիտի բարձրացնեմ:

Նրանք արհամարհեցին Քո խորհուրդը միջեկեղեցական խորհրդի կենտրոնում (Մեքսիկա քաղաքում)[2] և վեր կացան ու հեռացան հանդիպման կեսից: Եվ ինչպես գիտես, նրանք, ովքեր ամենից շատ էին ընդդիմանում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդում և չէին ցանկանում ինձ տեսնել այնտեղ, ոչ էլ ցանկանում էին, որ այդ հանդիպումը կայանար, իմ յուրայիններից էին, իմ ազգի մարդիկ:

Բայց ես՝ Հաղթողը, նրանց կրկնակի պիտի խոնարհեցնեմ... Լսի՛ր, Իմ Զարչարանքների՛ Վասուլա, Իմ Խաղաղությունը քեզ: Ուրիշ ոչ մեկին մի՛ փնտրիր՝ Ինձնից բացի: Իմ Զարչարանքների՛ հոգի, դո՛ւրս արի, գնա՛ ազգերի մոտ և Ի՛նձ թող ընդդիմությունները: Ես պիտի ստիպեմ նրանց, ովքեր հակառակվում են Ինձ, վեր կենալ իրենց Աթոռներից և կրկնակի խոնարհվել: Վստահի՛ր Ինձ, գնա՛ ազգերի մոտ և հիշեցրո՛ւ յուրաքանչյուրին Իմ Սիրո մասին, և որ Հիսուս նշանակում է Փրկիչ, Ազատարար, և որ Իմ Սիրո մեծությունը ձեր բոլորիդ համդեպ գերազանցում է ամեն ինչ...

Մի՛ նայիր ո՛չ աջ, ո՛չ էլ ձախ: Հիշի՛ր, թե ինչպես Իմ Հայրը՝ քո թշվառությամբ համակված, քեզ տվեց Իր Խաղաղությունը, որպեսզի դու փոխանցես այդ խաղաղությունը բոլորին: Իմ Հայրը, քո ապշեցուցիչ թուլությունից հուզված, Իր Դեմքը ցույց տվեց քեզ և քո միջոցով՝ ուրիշներին: Իմ Սուրբ Հոգին՝ հիացած քո ոչնչությամբ, նվաճեց քեզ՝ Իր Գահը հաստատելով քո մեջ, որպեսզի տիրի քո հոգուն, իսկ Ես լցրի քո սիրտը Իմ Սուրբ Սրտի Հարստություններով:

Շուտով, Իմ Հոգո՛ւ սիրելի, սպիտակ մի կտավ կծածկի քեզ, և Ես Ինքս կփաթաթեմ քեզ Իմ Սրտում՝ կլանելով քեզ Իմ Լույսով: Ուստի, Իմ Բուռն Տենչանքների՛ զավա՛կ, թո՛ւյլ տուր Ինձ մի որոշ ժամանակ ևս օգտագործել քո փոքրիկ ձեռքը:

Գրի՛ր. Ես դուրս եկա Երկնքից, որ հասնեմ ձեզ, բայց մի՞թե դուք լսեցիք Ինձ: Ես դուրս եկա Իմ Գահից, որ հասնեմ մինչև ձեր սենյակը՝ ձեզ սիրաշահելու և հիշեցնելու, որ դուք Իմ Թագավորության ժառանգներն եք: Ես դուրս եմ եկել Իմ Բնակավայրից և մտել եմ անապատ՝ ձեզ որոնելու համար: Երկնքի Տիրակալը չի զրկել ձեզ Իր Սիրուց, երբե՛ք: Ես թույլ եմ տվել ձեր աչքերին, արարչությո՛ւն, որ նայեք

[1] Հույն ուղղափառ եկեղեցականները:
[2] Բոլորն այնտեղ էին: Հույն ուղղափառներն ուշ եկան, քսան րոպե լսեցին, մինչ ես կարդում էի միասնության մասին Հիսուսի պատգամները, հետո բարկացած վեր կացան և հեռացան:

Թագավորին Իր Գեղեցկության մեջ, որպեսզի գրավեմ ձեզ:

Իմ Անունը պատվելու համար Ես արթնացրել եմ մեռածներին, որ ձեզ քարոզեն Իմ Արքայությունը: Որտե՞ղ է ձեր պատասխանը: Եվ դուք, որ խոսում եք Միասնության մասին, կարծում եք որ դատարկ խոսքերը կմիավորե՞ն ձեզ: Ձեզանից ո՞վ է պատրաստ թողնելու իր բոլոր հարմարություններն ու հետևելու Ինձ: Ասացե՛ք Ինձ, ձեզանից ո՞վ է լինելու առաջինը, որ վերջ է տալու Իմ Տառապանքին և Միասնության ու Խաղաղության իմ հառաչանքներին նախքան ժամը գալը, այն ժամը, որն Իմ բոլոր հրեշտակներին ստիպում է դողալ:

Ո՞վ է ձեր մեջ այն հոգին, որ ազգերին պիտի ցանի Սիրո և Խաղաղության սերմերը: Ո՞վ հանուն Ինձ հավատարմորեն պիտի հետևի Լույսին՝ կանչելով Իմ Անունը օր ու գիշեր: Ո՞վ ձեզանից առաջինը պիտի լինի, որ իր ոտքերը դնի Իմ արյամբ ներկված Ոտնահետքերի մեջ: Դուք արդյոք անկեղծորե՞ն եք Ինձ փնտրում: Տեսե՛ք, գալիս են այն օրերը, երբ Ես պիտի գամ որոտով ու Կրակով, բայց Ես, ի վհատություն Ինձ, ձեզանից շատերին պիտի գտնեմ անտեղյակ և խորը քնի մեջ:

Արարչությո՛ւն, Ես ձեզ մոտ եմ ուղարկում պատգամատար պատգամատարի հետևից, որ թափանցեն ձեր խլության միջով, բայց Ես հիմա հոգնել եմ ձեր դիմադրությունից և ձեր անտարբերությունից: Ես առավել հոգնել եմ ձեր սառնությունից: Ես հոգնել եմ ձեր ամբարտավանությունից և անզիջողությունից, երբ հարցը վերաբերում է միասնության համար հավաքվելուն: Հիմա դուք լցրիք և հորդեցրիք Թմրության Գավաթը: Արբեցած ձեր սեփական ձայնից՝ դուք հակառակվեցիք Իմ Ձայնին, սակայն դա ընդմիշտ չի լինելու: Շուտով դուք պիտի ընկնեք, քանի որ դուք հակառակվեցիք Իմ Ձայնին ձեր ձայնի մոլորեցնող անմտությամբ: Բնականաբար Իմ Եկեղեցին ավերված է ձեր բաժանման պատճառով: Դուք չեք դիմում Իմ խորհրդին, ոչ էլ Իմ ցանկություններն եք կատարում հավատի պակասության պատճառով: Բայց Ես ձեզ և ողջ աշխարհին պիտի բացահայտեմ ձեր սիրտը: Ես պիտի բացահայտեմ, թե դուք ինչպես էիք գաղտնաբար ծրագրում ավերել Իմ Օրենքը[1]:

Վեցերորդ կնիքը բացվելու վրա է[2], և դուք բոլորդ պիտի մխրճվեք մթության մեջ, և լուսավորություն չի լինելու, քանի որ Անդունդից դուրս ելնող ծուխը պիտի լինի մի մեծ քուրայից ելնող ծխի պես, այնպես, որ արևն ու երկինքը պիտի մթնեն դրանից[3]: Եվ համաձայն Իմ Արդարության Բաժակի՝ Ես ձեզ պիտի նմանեցնեմ օձերի, իժերի, Ես պիտի ստիպեմ ձեզ սողալ ձեր որովայնի վրա և հող ուտել[4] խավար այդ օրերին: Ես գետնին պիտի ճզմեմ ձեզ, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ դուք օձերից ավելի լավը չեք... Դուք շնչահեղձ պիտի լինեք ու պիտի խեղդվեք ձեր մեղքերի մեջ:

Իմ բարկության մեջ, Ես ոտնատակ պիտի անեմ ձեզ, պիտի ճզմեմ ձեզ Իմ զայրույթի մեջ, հասկանո՞ւմ եք: Իմ չորս հրեշտակները հիմա անհամբեր կանգնած են Իմ Գահի շուրջը՝ սպասելով Իմ հրամաններին: Երբ լսեք ամպրոպի որոտներ և տեսնեք կայծակի փայլատակումներ,

[1] Զափազանց լուրջ Հիսուսն ասաց հետևյալը:
[2] Հայտ. 6:12
[3] Հայտ. 9:12
[4] Ծննդ. 3:14

իմացե՛ք, որ Արդարության Իմ ժամը հասել է: Երկիրը պիտի ցնցվի և ընկնող աստղի նման պիտի գլորվի իր տեղից՝ արմատախիլ անելով սարերն ու կղզիները: Ողջ ազգեր պիտի ոչնչանան: Երկինքը պիտի անհետանա գալարվող փաթեթի նման[2], ինչպես այն տեսար քո տեսիլքի մեջ, աղջի՛կս[3]: Մի մեծ տագնապ պիտի պատի երկրի բոլոր բնակիչներին, և վա՜յ անհավատին: Լսի՛ր Ինձ: Եվ եթե այսօր մարդիկ քեզ ասեն. «Ա՛հ, բայց Կենդանի Աստված կողորմի մեզ, քո մարգարեությունն Աստծուց չէ, այլ քո սեփական հոգուց», ասա՛ նրանց. «Զնայած դուք համարվում եք կենդանի, դուք մեռած եք: Ձեր կասկածամտությունը դատապարտում է ձեզ, որովհետև դուք մերժեցիք հավատալ Ողորմության Իմ (սահմանած) ժամանակին, և արգելեցիք, որ Իմ Ձայնը տարածվի Իմ պատգամատարների միջոցով, որպեսզի նրանք զգուշացնեն ու փրկեն Իմ արարածներին: Դուք նույնպես պիտի մեռնեք, ինչպես չար և անիրավ մարդիկ»:

Երբ Խավարի Ժամը գա, Ես ձեզ ցույց պիտի տամ, թե ինչ կա ձեր ներսում: Ես դուրս պիտի շրջեմ ձեր հոգին, և երբ տեսնեք ձեր հոգին՝ ածխի նման սև, դուք ոչ միայն պիտի տառապեք, ինչպես երբևէ չեք տառապել, այլև տանջահար պիտի ծեծեք ձեր կուրծքը՝ ասելով, որ ձեր սեփական խավարը շատ ավելին է, քան ձեզ շրջապատող խավարը:

Իսկ ինչ վերաբերում է քեզ[4], (...) Ահա թե ինչպես Ես ցույց պիտի տամ Իմ Արդարությունն ազգերին, և բոլոր ազգերը պիտի տեսնեն Իմ դատավճիռը, երբ այդ ժամը գա: Ես պիտի նվազեցնեմ մարդկության թիվը ավելի, քան երբևէ: Հետո, երբ Իմ զայրույթը հանդարտվի, Ես Իմ Գահը պիտի դնեմ ձեզանից յուրաքանչյուրի մեջ, և միասին, մեկ ձայնով, մեկ սրտով և մեկ լեզվով դուք պիտի գովաբանեք Ինձ՝ Գառանը:

Այսքանը բավական է այսօրվա համար, Իմ Վասո՛ւլա: Մի՛ դառնացիր քո ժողովրդի հանդեպ և ոչ էլ անհանգստացրո՛ւ քո սիրտը, հոգի՛: Ես քեզ ցույց պիտի տամ աշխարհին՝ որպես միասնության նշանի: Քեզ ընդդիմանում են և մերժում, սակայն հիմա դու գիտես, թե ինչու: Որովհետև միասնությունը անցանկալի է, ինչպես Սերն է անախորժ շատ սրտերում: Անկեղծությունը պակասում է...

Արի: Մե՞նք, մե՞ զ:

Այո՛, Տե՛ր իմ...

ΙΧΘΥΣ

Փետրվարի 19, 1993

Խաղաղությո՛ւն, սիրելի՛ս: Դու մե՞կ ես Ինձ հետ:

Իմ հոգին միացրո՛ւ Քո հոգու հետ: Միայն Դու կարող ես անել այդ, Տե՛ր:

---

[1] Ես. 13:13
[2] Հայտ. 6:14
[3] Հուլիսի 21, 1990
[4] Դա վերաբերում է միայն Ինձ:

Ես գոհ եմ, որ դու հասկանում ես քո ոչնչությունը, և այն, որ առանց Ինձ ոչինչ չես կարող անել: Հենվի՛ր Ինձ վրա, և Ես պիտի գրավեմ քո հոգին դեպի Ինձ: Սերը մոտիկ է քեզ, և Իմ Հոգին քեզ վրա է: Թո՛ւյլ տուր Ինձ շարունակել երեկվա պատգամը:

Լսի՛ր Ինձ: Ասա՛ նրանց, որ ողորմությունն ու զայրույթը նույնապես պատկանում են Ինձ, որ Ջորեղ եմ ինչպես ներելիս, նույնպես էլ զայրանալիս: Իմ ողորմությունը մեծ է, բայց Իմ խստությունը նույնքան մեծ է:

(Աստված խնդրեց ինձ գրել Սիրաքի գիրքից 16:12-13 հատվածը):

Հասկանո՞ւմ ես, աղջի՛կս, շուտով Ես ցույց կտամ նաև Իմ Արդարությունը: Իմ Ծրագիրն ունի որոշակի ժամանակ: Իմ Ողորմության կանչերը նույնպես ունեն որոշակի ժամանակ: Երբ Ողորմության այս ժամանակն ավարտվի, Ես ցույց կտամ յուրաքանչյուրին՝ լավին ու վատին, որ Իմ խստությունը նույնքան մեծ է, որքան Իմ Ողորմությունը, որ Իմ զայրույթը նույնքան զորեղ է, որքան Իմ ներողամտությունը: Իմ կողմից կանխասացված ամեն ինչ արագորեն պիտի կատարվի հիմա: Դրանից ոչինչ պակասեցվել չի կարող:

Ես խոսել եմ քեզ հետ Ուրացության մասին, Ուրացություն, որը կապեց[1] Իմ լավագույն ընկերների ձեռքերը զինաթափելով նրանց իր արագության և իր չափերի պատճառով: Չե՞մ ասել, որ կարդինալները պիտի դուրս գան կարդինալների դեմ, և եպիսկոպոսները՝ եպիսկոպոսների, և որ շատերը գտնվում են քայքայման ճանապարհին: Իրենց անվերջ պայքարում նրանք թուլացրին Իմ Եկեղեցին: Այսօր ըմբոստության այդ ոգին ծաղկում է Իմ Սուրբ Վայրի ներսում:

Հիշո՞ւմ ես օձերի մասին այն տեսիլքը, որը Ես քեզ տվեցի, որոնք սողում էին խորանի Սուրբ Խորհուրդների (Սուրբ Հաղորդության) շուրջը: Մի՞թե Ես քեզ չեմ բացահայտել, թե նրանցից քանիսն են հակառակվում Իմ պապին[2] և ինչպես են նրան մի կողմ հրում[3]: Ես քեզ արդեն մանրամասն բացատրել եմ Ապստամբության մասին Իմ Եկեղեցու ներսում[4]:

Իմ հավատարի՛մ ընկեր, թո՛ւյլ տուր Ինձ կանգ առնել այստեղ: Մենք կշարունակենք ավելի ուշ: Մնա՛ Ինձ մոտիկ և գոհացրո՛ւ Ինձ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 22, 1993

«Խրատի՛ր մեզ, Տե՛ր,
բայց արդարությամբ

[1] Դա նշանակում է, որ նրանք անօգնական էին:
[2] Հովհաննես Պողոս II պապին:
[3] Նախորդ պատգամը:
[4] սեպ. 12, 1990, հունիս 2, 1991, հունիս 6, 1991, հունիս 27, 1991, հուլիս 16, 1991

և ոչ թե ցասմամբ,
որ մեզ սակավաթիվ չդարձնես»[1]*:*

Վասո՛ւլա, պատգամատարներն իրար հետևից գնում են՝ աշխարհին ասելու, որ ապաշխարեն: Ես հայտնում եմ Ինձ, ինչպես երբեք չեմ հայտնել նախկինում, որպեսզի հեռվից ամեն մեկին բերեմ դեպի Ինձ՝ հետևելու Իմ Պատվիրաններին: Այս սերնդի ներսում կայծկլտացող փոքր բոցը կհանգչի որևէ մի պահի, եթե Ես չմիջամտեմ: Նույնիսկ այսօր նրանք մերժում են լսել և հավատալ: Որքան ավելի մեծ են նրանք իրենց կարծում, այնքան փոքր են նրանք Իմ Աչքում: Ինչպե՞ս կարող են նրանք Ինձ մոտ շնորհ գտնել, եթե խափանում են Իմ Սուրբ Հոգուն: Ես նրանցից լսում եմ միայն հետևյալը. «Ո՞վ իշխանություն ունի ինձ վրա», «Ես ինքնաբավ ու անկախ եմ»: Իմ կարեկցանքը մեծ է, բայց Իմ խստությունը նույնքան մեծ է: Իմ զայրույթը նույնքան զորեղ է, որքան Իմ ներողամտությունը:

Իմ տաճարները[2] հիմա ընդհանուր շահեր ունեն առևտրականների հետ: Նրանք Իմ Սրբությունը փոխանակել են՝ Սատանային տուրք տալով: Ես խոսում եմ նրանց մասին, ովքեր ուրացել են և թույլ են տվել, որ իրենց շուրթերը Սուտ ասեն, և հիմա նրանք մտադիր են բոլորին ստիպել դրոշմվել այդ ստով, իսկ Ես հոգնել եմ նրանց համբերելուց: Ժամանակին Իմ Տանն ապրում էին սրբությունն ու արդարությունը, քանի որ Իմ Օրենքը նրանց հանապազօրյա հացն էր: Սակայն տե՛ս, թե հիմա Իմ Տունը ինչ է դարձել՝ ամայություն, մողեսի և սարդի բնակավայր: Ա՛հ... Բայց Ես պիտի ոչնչացնեմ այս ամենը:

Իմ Սիրտը կոտրված է Իմ ներսում, զավա՛կս, և Իմ հրեշտակները սարսափահար դողում են այն վերապահված ժամից, երբ Ես զայրույթիդ բռնկված՝ Իմ հրամանները կտամ: Ես այլևս չեմ կարող դիմանալ տեսնելով, թե ինչպես են ձեր Սուրբ Մոր Արցունքները նորից ու նորից հեղվում ամեն անգամ, երբ Իմ Որդին վերստին խաչվում է: Ձեր սերնդի մեղքերն ամեն վարկյան Իմ Որդուն տանում են Գողգոթա:

Աշխարհը մեկ ձայնով հայհոյում է Իմ Սուրբ Հոգուն և երկնքի բոլոր զորություններին: Ամեն օր աշխարհը զայրացնում է Ինձ. «Նայե՛ք, նայե՛ք, թե ինչի է վերածվել մեծ Տիրոջ Տունը», ասում են նրանք, մինչ քանդում են Այն և կեղծավորություն անում: Իմ Հոգին այլևս չի կարող տանել վերստին խաչվող Որդուս տնքոցները, թեև Իմ Որդին և ձեր Սուրբ Մայրը հնարավորին չափ խեղդում են իրենց ցավը: Բայց և այնպես Իմ Ականջները լսում են ամեն ինչ: Իմ Ականջներն ու Իմ Աչքերը մարդկային չեն, և Ինձնից ոչինչ չի վրիպում: Քանի որ ձեր սերունդն է ընտրություն կատարում, այլ ոչ թե Ես[3], Ապստամբություն, որը տեղի է ունենալու Իմ Տան մեջ, ձեզ վրա կիջեցնի Իմ զայրույթը, և ամենախոր Խավարը երկիրը կծածկի շուտով:

Դա Իմ ընտրությունը չէ, այլ ձերը: Ես ուզում էի վեր հանել ձեզ ձեր գերեզմաններից Ողորմությամբ և Սիրով, Կարեկցությամբ և

---

[1] Երեմ. 10:24
[2] Ես հասկացա՝ հոգիները:
[3] Այսինքն՝ Աստծո Խաղաղությունն ընտրելու փոխարեն՝ մենք նախընտրում ենք նոր դարաշրջանն անցնել Աստծո պատժին ենթարկվելով

խաղաղությամբ, բայց տեսե՛ք, թե ձեզանից որքան շատերն են անտարբեր Իմ առաջարկի հանդեպ: Ձեզ այլևս ոչինչ չի կարող հուզել:

Դուք սպառել եք Իմ Համբերությունը, իսկ դու, աղջի՛կս, եղի՛ր Իմ Արձագանքը: Որքան էլ որ նրանք ուժեղ հարձակվեն քեզ վրա, Ես թույլ չեմ տա, որ հաղթեն քեզ: Ընդհակառակը, դու կլինես թրի նման, երբ կարտասանես Իմ բառերը: Հիշեցրո՛ւ նրանց նորից, որ Ես հաճույք եմ ստանում ոչ թե չար և ըմբոստ մարդու մահից, այլ չար ու ըմբոստ մարդու դարձից, մարդ, որը փոխում է իր ուղիները՝ կյանքը շահելու համար: Այս երկիրը, որը ծանոթ է ձեզ, շուտով կանհետանա[1]:

Ես որոշել եմ արագացնել Իմ Ծրագիրը այն մեծ մեղքերի պատճառով, որ հղանում է ձեր սերունդը: Ամեն ինչ պիտի ոչնչանա, ամեն ինչ պիտի մաշվի հագուստի պես[2]: Այս ձևով Ես պիտի ոչնչացնեմ մեղքի առաջացրած ապականությունը, և դուք պիտի հասկանաք, որ սկզբից ի վեր դուք Իմ սուրբ տաճարներն էիք, և որ Իմ Հոգին ապրում էր ձեր մեջ:

Ա՛հ, աղոթե՛ք և ծոմ պահեք Կրակով այս Մկրտության համար այս վերջին օրերին: Ես Եմը մոտ է ձեզ:

Մարտի 1, 1993

«Տե՛ր, երբ Քո խոսքերը հասան ինձ,
ես կլանեցի դրանք:
Քո խոսքն իմ ուրախությունն է
և իմ սրտի ցնծությունը,
քանի որ Քո Անունը
ինձ վրա է գրված,
Յահվե՛, Ամենակարո՛ղ Աստված»[3]:

Իմ աչքերը ծածկված էին,
և ես չէի տեսնում ո՛չ Քեզ,
ո՛չ Քո Հմայքը, ո՛չ էլ Քո Փառքը:
Հանկարծ իմ խավարի
ամենախոր ծալքերից
մի Լույս փայլեց:
Ապշած և շփոթված
Նրա պայծառությունից՝
ես երերացի,
և իմ հոգում բուն դրած
թմրության ոգին՝
համակված <u>Քո</u> Հոգով,
դադարեց իմ մեջ շնչելուց:

[1] Եբր. 1:11. Հայտ. 21:1-4
[2] Եբր. 1:11. Հայտ. 21:1-4
[3] Երեմ. 15:16

Ես տեսա Քեզ՝ այնտեղ կանգնած,
լուռ... և այնպես էր, կարծես
ես ճանաչում էի Քեզ, Սիրելի՛ս:
Հետո Դու բացեցիր Քո Շուրթերը:
Մի Անուն ասվեց ինձ,
և վայրկենաբար
իմ հոգու հիշողությունը
վերականգնվեց:
Քողն ընկավ իմ աչքերից,
և ես գտա իմ հոգին՝
իմ Հոր Բազուկներին հանձնված:
Ո՛վ Աստված,
որքա՜ն թանկ ես Դու ինձ համար:

Ես Սուրբ եմ:

Ես ասացի. Ես պիտի մաքրեմ քեզ և մի նոր սիրտ պիտի տամ, ու քո մեջ մի նոր հոգի պիտի դնեմ: Ես պիտի հեռացնեմ քո հոգուց թմրության և անտարբերության հոգին, և Իմ Հոգին պիտի տեղադրեմ քո մեջ: Այդ օրը Ես երդվեցի քեզ Իմը դարձնել: Ես երդվեցի բուժել քեզ, որ ծառի պես պտուղ տաս Իմ ժողովրդի համար: Ես երդվեցի կշտացնել քաղցածներին և լցնել ամեն մի բերան: Այո՛: Ես երդվեցի գալ քեզ մոտ և շրջվել դեպի քեզ, որ մշակեմ քեզ՝ և քո Ոչնչության մեջ ցանեմ Իմ Փառքը:

Եվ հիմա Ես՝ Աստված, ընդմիշտ վրան եմ խփել քո հոգում: Ուստի մարգարեացի՛ր առանց վախի: Գնա՛ չորացած ոսկորների մոտ, և Ես նրանց մարմին կտամ, Ես նրանց շունչ կտամ, որ գովաբանեն Ինձ և փառաբանեն Ինձ: Այո՛, Ես կփչեմ մեռածների վրա, որպեսզի նրանք ապրեն և բացականչեն. «Ո՞վ է Աստծո նման»: Ես կհիշեցնեմ նրանց, որ նրանք չեն գտնի ավելի մեծ սեր, քան նրանց Արարչինն է:

Մարտի 2, 1993

Խաղաղություն քեզ:

Քո կյանքի յուրաքանչյուր րոպեն նվիրաբերի՛ր Ինձ՝ Սուրբ Սրտին: Այսօր, Իմ Վասո՛ւլա, Ես ասում եմ քեզ. ապրի՛ր այնպես, ասես սա քո վերջին օրն է երկրի վրա: Դու, ամեն ինչ պետք է անես, որ սրբորեն ապրես: Քո կողմից Իմ Օրենքի որևէ խախտում դարշանք կլինի Իմ Աչքերում: Դու հասկացա՞ր, Իմ Վասո՛ւլա, դարշանք... մեղքի առարկա: Այլևս երբե՛ք մի լքիր Իմ կանոնները:

Յուրաքանչյուր զոհաբերություն, որն Ինձ է տրվում սիրով, պիտի օգտագործվի հոգիների փրկության համար: Դու, որ ենթակա ես թուլության, հենվի՛ր Ինձ վրա և վստահի՛ր Իմ Հավիտենական Զորությանը: Արմատավորվի՛ր Իմ Սուրբ Սրտում, որ զորություն և լույս ստանաս: Տե՛ս, մի՞թե Ես քեզ չնորհ չեմ արել՝ Իմ Դեմքը քեզ բացահայտելով, և Իմ Սուրբ Սրտի ողջ Գանձերը քեզ ցույց տալով՝ Փառքը Իմ Եկեղեցու: Եվ Իմ Դեմքը քեզ ցույց տալով, Ես ցույց եմ տվել Այն միլիոնավոր ուրիշ մարդկանց: Հիսուս է Իմ Անունը, և դու Իմն ես հավիտյան, իսկ հիմա Ես քեզ կանվանեմ Իմ Զարչարանքների անունով՝

Հիսուսի Զարչարանքների Վասուլա: Եվ հիմա, Իմ Զարչարանքների՛ Վասուլա, աղոթի՛ր Ինձ հետ, քանի որ Մեծ պահքի այս ժամանակը ծանր է լինելու Ինձ վրա:

Դիմիր Հորը և Ինձ հետ ասա՛ այս բառերը.

Հավիտենակա՛ն Հայր,
թող Քո Անունը սուրբ լինի,
Քեզ ճանաչելը
հավիտենական Կյանք է:
Քեզ ճանաչել նշանակում է
ճանաչել Ճշմարտությունը:

Իմաստությա՛ն Հայր,
սրբացրո՛ւ Ինձ Քո Սուրբ Հոգով,
որպեսզի իմ սիրտը խոսքեր ասի՝
իմաստությամբ լի:
Եզակի՛ և կատարյա՛լ,
Վսեմ Սիրո՛ Ակունք,
Ջերդ Վսեմություն,
զմայլեցրո՛ւ իմ սիրտը,
որ գովաբանեմ Քեզ
գիշեր ու ցերեկ:

Անուշահոտ Զմուռսի՛
և Հալվեի՛ Աղբյուր,
օծի՛ր իմ թշվառ հոգին
Քո նուրբ բուրմունքով,
որպեսզի երբ ես հանդիպեմ
Իմ Թագավորին
և Քո Սիրեցյալ Որդուն,
Նա չշրջի Իր Աչքերն Ինձնից:

Քեզ ճանաչել նշանակում է
լինել Քո Լույսի մեջ, այն Լույսի,
որն Ինձ ցույց կտա
Ճանապարհը և կտանի Ինձ
Քո Սիրեցյալ Որդու
Ոտնահետքերով:

Կենդանի Ջրի՛ Ակունք,
արի՛, արի՛ և մխրճիր Ինձ՝
զավակիդ,
Քո Հոսանքի մեջ,
որ լիառատ դուրս է հոսում
Քո Սրբարանից:

Ո՛վ Աստված,

ես սիրում եմ Քեզ
արտասվելու չափ:
Թող իմ թշվառ հոգին
տենչա այն ամենին, ինչ Սուրբ է:
Թող իմ հոգին ճաշակի
Քո Քնքշությունը,
Յա՛հվե, Դու իմ Աստվածն ես:
Ես գովաբանում եմ Քո Անունը,
քանի որ Դու նայել ես
իմ թշվառ հոգու վրա
և լցրել այն
Քո Փառքի պայծառությամբ:

Իմ սիրտը հիմա Քեզ է երգում,
Հա՛յր,
իմ հոգին հրճվում է Քո Հոգով:
Ո՛վ Աստված, Հա՛յր իմ,
թո՛ւյլ տուր իմ հոգուն կուչ գալ
Քո Սիրող Բազուկների մեջ
և իմ սրտի վրա դիր Քո Կնիքը,
որպեսզի Քո հանդեպ
իմ սերը դառնա ավելի հզոր,
քան Մահն ինքը: Ամեն:

Եղի՛ր աղբյուրի պես, զավա՛կս, որ ջրես ցամաքած հողերը:

Ամենակարո՛ղ Աստված,
թո՛ւյլ տուր իմ հոգուն
արմատ գցել Քո մեջ:
Ես ճշմարիտ
Խաղաղություն եմ գտել
Քո մեջ, Հա՛յր:
Յա՛հվե, Տե՛ր իմ,
Գերիշխա՛ն սկզբից ի վեր:

Երեկոյան, առավոտյան,
կեսօրին ես սիրում եմ,
ես ծարավում եմ այն Սրբին,
ում Մատը դիպավ իմ սրտին
և միայն մեկ Հայացքով
զմայլեց իմ սիրտը:
Տե՛ր, հիմա ես կանգնած եմ
Քո առջև խղճալի տեսքով,
դեռևս գերի այս անապատի:
Արի՛ ինձ մոտ,
քանի որ այնքան շատ հալածողներ
փրկագին են ուզում ինձ համար...

Եղի՛ր ծառի պես, որը տնկված է ջրի ակունքների մոտ: Դու չես մնա առանց հսկողության: Ես Ինքս եմ քո Պահապանը:

Հիմա ես բարձրաձայն
կանչում եմ իմ Փրկչին,
Հիսո՛ւս, Սո՛ւրբ Սիրտ, Դու,
որ սուզել ես իմ հոգին
Սիրո մկրտության մեջ,
մի՛ թող. որ իմ հոգին
հուսախաբ անի Քեզ:

Ես նույնպես քո Պահապանն եմ[1]: Ես ճանաչված եմ իբրև պաշտպան ամենից խեղճերին և փրկում եմ նրանց ճնշողներից: Ես քեզ եմ փոխանցել Իմ Բաժակը, որ խմես այն Ինձ հետ... Դու գիտե՞ս, թե ինչու Ես եկա քեզ մոտ: Մի՛ վախեցիր, խաղաղությո՛ւն քեզ: Ես եկա քեզ մոտ, որ Իմ Անսահման Սերը լցնեմ այս սերնդի վրա քո միջոցով:

Ես եկա՝ նաև ձեզ հիշեցնելու, որ Խաղաղության Իշխանը գալիս է: Նա պիտի վերադառնա այն ճանապարհով, որով հեռացել է: Ես պիտի գամ. դա այնքան հաստատ է, որքան արշալույսը: Ես եկա՝ նաև ասելու ամեն մեկին, թե ինչ է գրված Ճշմարտության Գրքում[2], և պարզ բառերով բացատրելու այն, ինչ չեք հասկացել:

Իմ Հայրը շնորհ արեց քեզ՝ Ինձ հետ կրելու Միասնության և Հաշտության խաչը և անցնելու այս անապատն Ինձ հետ, կողք կողքի: Ամենակարողը մեծ բաներ է արել քեզ համար: Չնայած ընդդիմություններին՝ Ես այնպես պիտի անեմ, որ Իմ Ձայնը լսվի ամենուր:

Լսի՛ր, Վասիլի՛կի, այն խոր վերքերի համար, որոնք քեզ են հասցվել քեզ մեղադրողների կողմից, որոնք իրականում Ինձ մեղադրողներն են, քո հատուցումը մեծ պիտի լինի երկնքում: Ես չեմ կարող ազատել քեզ այդ շնորհից[3]: Իմ Արդարությունը այդ առևտրականների հանդեպ կհասնի իր գագաթնակետին[4], քանի որ, հիրավի, նրանք այն առևտրականներն են, որոնք ուրացան Իմ Եկեղեցուն: Նրանք վաճառեցին Ճշմարտությունը Ստի դիմաց:

Իմ Աչքերը տեսնում են ամեն ինչ, և Իմ Ականջները լսում են ամեն

---

[1] Պատասխանեց Ինձ Հիսուս:

[2] Ես հակացա՝ Սուրբ Գրքերը:

[3] Հիսուս նկատի ունի, որ թույլատրելով նրանց Ինձ վրա հարձակվել, Ինձ շնորհ է անում, քանի որ երկինքը կվարձատրի՝ հատուցելով Ինձ:

[4] «Առևտրականներն» այս հատվածում կանադացի մեղադրողներն են: Առևտրականները Սուրբ Հոգին հալածողներն են: Առևտրականները՝ խորհրդանշում է՝ «շնագայլերին», որոնք աշխատում են «գիշերով»: Առևտրականները կարող են ներկայացնել Հայտ.13-ի երկրորդ գազանին, այսինքն՝ եկեղեցական մասոններին: Առևտրականները բանապաշտության ոգին է՝ հավատն ուրացած և չոր: Առևտրականները ատվածաշնչյան տերմին է այն մարդու համար, որը փոխանակում է Ճշմարտությունը Ստի հետ: Այն նշանակում է նաև ըմբոստության ոգի, այսօրվա կեղծ ուսուցիչներ ու կեղծ մարգարեներ, որոնց մասին Հիսուս մեզ զգուշացրել էր, որ գալու են վերջին օրերին: Սբ. Պողոսն ասել է. «Ուստի մենք սովորեցնում ենք ոչ այն ձևով, ինչպես փիլիսոփայությունն է ուսուցանվում, այլ այն ձևով, որ Հոգին է մեզ սովորեցնում: Մենք սովորեցնում ենք հոգևոր բաներ հոգևոր խոսքերով» (Ա Կորնթ. 2:13):

ինչ: Իմ Սրբարանում ես սարսափելի բաներ եմ տեսել հենց նրանց կողմից, ովքեր մեղադրում են քեզ: Աղոթի՛ր նրանց հոգիների համար, զավա՛կս: Խաբեությունը և խորամանկությունը նրանց վարքագծի սկզբունքներն են: Ա՛հ, <u>ո՛չ, նրանք չեն հաշտվել</u>: Նրանք երբեք կանգ չեն առնում, որ մտածեն, որ Ինձ հայտնի է իրենց ողջ չարությունը: Նրանց սրտերը կատաղի բոցի պես այրվում են իրենց դավի հուզմունքից, թե ինչպես ոչնչացնեն քեզ Իմ Պատգամների հետ միասին: Նրանք դավադ- րում են և գործում են միասին[1]: Աղջի՛կս, այդ միայն նրանց սեփական շահն է, որ դրդում է նրանց խլացնելու Իմ Ձայնը, որը գալիս է քո միջոցով: Խարդախությամբ ու ճնշումով են լցված նրանց բերանները: Նրանք կլարեն իրենց աղեղը և նշան կբռնեն քեզ վրա, բայց նրանց պատրաստած զենքերը կսպանեն իրենց մեկը մյուսի հետևից, եթե <u>չապաշխարեն</u> և չհաշտվեն Ինձ հետ:

Ես ասում եմ այդ առևտրականներին. «Ձեր հարստությունը պիտի գրավվի... և, սարսափով համակված, դուք պիտի մերկացած նստեք գետնին: Եթե հրաժարվեք ձեր կատարած բոլոր մեղքերից, ձեզ ներում կլինի: Շատ ժամանակ չի մնացել: Հե՛տ կանգնեք չարիք գործելուց և վերադարձե՛ք Ինձ մոտ: Ինչո՞ւ եք այդքան ցանկանում, որ մեռնեք որպես Առևտրական: Ես հաճույք չեմ ստանում ձեզ նվաստացնելու ձե՛զ, որ սերում եք Իմ Տնից: Ապաշխարե՛ք և դուք պիտի ապրեք: Հոր Ձեռքը պարզված է՝ օրհնելով բոլոր նրանց, ովքեր փնտրում են Իրեն, Առևտրակա՛ն: Շտա՛պ աղերսիր Հորից Իր Շնորհը, և Նա կլսի»:

Իսկ դո՛ւ աղջիկս, ես ասում եմ քեզ. կանգնի՛ր հաստատ, եղի՛ր հզոր և շարունակի՛ր լինել Իմ Արձագանքը: Եղի՛ր երկայար սրի պես և Իմ Պատգամը հայտարարիր ուժգնությամբ և եռանդով: Սրտանց աղոթի՛ր աշխարհի դարձի համար, որպեսզի ազգերը հասկանան Իմ Սուրբ Հոգու Քնքշությունը: Թող նրանք տեսնեն Իմ Սերը, Իմ Խաղաղությունը, Իմ Համբերությունը, Իմ Ողորմությունը և Իմ Հավատարմությունն այս Պատգամների միջոցով: Անվախ եղիր և հիշի՛ր, որ Ես քեզ հետ եմ և քո առջև: Գրկի՛ր Իմ Խաչը, որը քեզ երկինք կառաջնորդի: Աշխուժացրո՛ւ Իմ Եկեղեցին և հրճվանք պատճառիր Իմ Հոգուն:

Գնա՛ խաղաղությամբ և կատարի՛ր քո մյուս մանր պարտականությունները: Հրավիրի՛ր Ինձ կիսելու դրանք քեզ հետ: Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: Օրհնի՛ր Ինձ և գովաբանի՛ր Ինձ:

ΙΧΘΥΣ

Օրհնյալ լինի Տերը: Փա՛ռք Տեր Հիսուսին:

Մարտի 9, 1993

Maranatha ! Արի՛:

Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը:

[1] Ես հասկացա, որ նրանք պատկանում են միևնույն կլանին:

Ես մոտ եմ, հենց ձեր դարպասների մոտ, սիրելինե՛րս: Հիշե՛ք թզենու մասին Իմ առակը. հենց որ նրա ոստերը առաձգական են դառնում, և նրա տերևները դուրս են գալիս, իմացե՛ք, որ ամառը մոտ է: Այդպես էլ դուք, երբ այդ ամենը տեսնեք, իմացեք, որ Ես մոտ եմ, հենց դարպասների մոտ: Իսկ այդ օրվա և ժամի մասին, ոչ ոք չգիտի՝ ո՛չ երկնքի հրեշտակնե-րը, ո՛չ էլ Որդին, ոչ մեկը, այլ միայն Հայրը[1]:

Արարչությո՛ւն, որքա՜ն էի Ես ցանկանում հավաքել բոլո~ րիդ, ինչպես հավն է հավաքում ճտերին իր թևերի տակ, սակայն ձեզնից այնքա՜ն շատերն են դեռևս մերժում: Դուք չեք կարող հետո ասել, որ Ես չեմ փորձել բոլոր միջոցները՝ Իմ Սուրբ Սրտում ձեզ հավաքելու համար, որպեսզի ձեզ ասեմ, որ ավելի մեծ սեր, քան Իմն է, դուք չեք գտնի: Բայց դուք շարունակում եք մենակ թափառել այս անապատում: Շուտով Ես կգամ ձեզ մոտ: Հիմա Ես ուղարկում եմ պատգամատարներ իրար հետևից, որ հայտարարեն լուրերը: Արթո՛ւն եղեք:

Տե՛ր, ես երջանիկ եմ և ուրախությամբ լեցուն, maranatha!

Մի՛ վախեցիր: Ես հոգատարությամբ հետևում եմ քո յուրաքանչյուր շնչին: Պահքի այս շրջանում Ես քեզ այս կասեմ. քարոզի՛ր, աղավնյա՛կս, քարոզի՛ր ու մարգարեացի՛ր և ուշադրություն մի՛ դարձրու, երբ քեզ մեղադրողները սխալ մեկնաբանեն ու դատեն: Սիրի՛ր և համբերատա՛ր եղիր: Ասա՛ Ինձ, զավա՛կս, կարո՞ղ է Սուրբ Գրքերից մի բառ կամ մի նախադասություն հանվել իր ենթատեքստից և ինքնուրույն վերծանվել:

Ո՛չ, Տե՛ր, որովհետև կարող է թվալ, որ այն հակադրվում է Քո կողմից ասված մեկ այլ բառի կամ նախադասության:

Այդպես էլ ոչ մեկը չի կարող այդ բանը անել այս Պատգամների հետ: Ես ասել եմ, որ Ես եմ միակ Օրենսդիրն ու Դատավորը[2]: Վասո՛ւլա, թող քո աչքերն ու սիրտը փնտրեն միայն անտեսանելի բաներ: Հավիտենական փառքը անտեսանելի բաների մեջ է: Որքա՜ն եմ Ես հրճվում աղքատությամբ և թուլությամբ: Իմացի՛ր, որ այն ուսուցումները, որ Ես քեզ տալիս եմ, քո փրկության համար են և քո ազատության, քանի որ որտեղ Իմ Հոգին է, այնտեղ ազատություն է: Ես՝ Տերը, Հոգի եմ[3]: Գրի՛ր[4].

«Մարմինը հողի մեջ դրվում է իբրև շնչավոր մարմին և հարություն է առնում իբրև հոգևոր մարմին: Ինչպես որ շնչավոր մարմին կա, նույնպես էլ հոգևոր մարմին կա: Առաջին մարդը՝ Ադամը, ստեղծվեց իբրև շնչավոր էակ, մինչ երկրորդ Ադամը կենդանարար հոգի է: Արդ, շնչավոր մարմինը նվազ կարևոր է, քան հոգևորը, դրա համար էլ նախ շնչավորն է գալիս, և ապա՝ հոգևորը: Առաջին մարդը երկրից էր և հողեղեն, մինչ երկրորդ մարդը՝ մեր Տերը, երկնքից էր: Ինչպես որ հողեղենն էր, նույնպես էլ մենք բոլորս հողեղեններ ենք: Եվ ինչպես որ է երկնավորը, նույնպես պիտի

[1] Մատթ. 24: 32-36
[2] Հակ. 4:12
[3] Հովհ. 4:24, Բ Կոր. 3:18
[4] Տերը խնդրեց ինձ արտագրել մի հատված, որը Նա ցույց տվեց ինձ Գրվածքներից:

լինեն բոլոր երկնավորները: Այսինքն՝ ինչպես որ կրում ենք հողեղեն Ադամի պատկերը, այնպես էլ պիտի կրենք նաև երկնավոր Ադամի պատկերը: Ուզում եմ ասել, եղբայրնե՛ր, մարմինն ու արյունը իրենց ներկա վիճակով չեն կարող Աստծո արքայությունը ժառանգել: Եղծանելին չի կարող անեղծությունը ժառանգել:

Հիմա ձեզ ծածուկ մի խորհուրդ հայտնեմ: Բոլորս չէ, որ պիտի մեռնենք: Բայց երբ վերջին փողը հնչի, ամենքս էլ հանկարծ պիտի նորոգվենք մի ակնթարթում: Որովհետև փողը պիտի հնչի, և մեռելները հարություն պիտի առնեն անեղծ մարմիններով, և մենք պիտի նորոգվենք: Որովհետև մեր այս եղծանելի բնությունը պետք է անեղծ բնության փոխվի: Այս մահկանացու բնությունը պետք է անմահ բնության փոխակերպվի: Եվ երբ մեր այս եղծանելի բնությունը անեղծ բնության փոխվի, և այս մահկանացու բնությունը անմահ բնության փոխակերպվի, այն ժամանակ պիտի իրականանա գրված մարգարեությունը, որն ասում է. «Մահը կուլ գնաց հաղթության: Ո՞ւր է մա՛հ քո խայթոցը»: Մահվան խայթոցը մեղքն է, իսկ մեղքը իր ուժը օրենքից է առնում: Բայց փա՛ռք Աստծո, որ մեզ հաղթանակ պարգևեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով»[1]:

Այո՛, ես ձեզ ազատել եմ մեղքի և մահվան օրենքից:

Արի՛, հավատարիմ մնա Ինձ, մինչև քո վազքն ավարտվի: Ես՝ քո Արարիչը, պիտի ավարտեմ այն քեզ հետ: Ինձ հետ դու չպիտի վախենաս: Ինձ հետ քո սեղանը լիքը պիտի լինի:

Ես երբեք չեմ լքի քեզ:

Մարտի 15, 1993

Իմ Զարչարանքների՛ Վասուլա, քո աչքերն Ինձ վրա պահի՛ր: Ուրախացրո՛ւ Ինձ և տո՛ւր, ինչպես տվեցիր[2] երեկ: Հենվի՛ր միշտ Ինձ վրա, և քո բերանը պիտի օգտագործվի որպես Իմ Սուր:

Ես սիրում եմ քեզ: Մե՛կ եղիր Ինձ հետ:

Մարտի 17, 1993

Խաղաղություն քեզ:

Զավա՛կս, դու պետք է Իմ զավակներին սովորեցնես այն ամենը, որ ես եմ քեզ տվել: Մի՛ վախեցիր, քանի որ Ես քո առջև եմ, և Ես քո Վահանն եմ: Այլևս ոչ ոք, որքան էլ չարը փորձի, երբեք չի կանգնի քո

[1] Ա. Կոր. 15:44-57

[2] Արլում, Ֆրանսիա հանդիպման ժամանակ:

և Իմ միջև: Չնայած Սատանան գործի է դնում մարդկանց, որպեսզի խանգարի քեզ, և չնայած նա ստիպում է նրանց ուժերը համախմբել քո դեմ, երբեք չվախենաս: Ես Ամենակարողն եմ, և Իմ Աչքերը ականատես են քո հանդեպ կատարված անարդարությանը: Սիրելի՛ս, Ես կհագեցնեմ քեզ Իմ Զորությամբ, և Ես Իմ բոլոր զավակներին առատորեն հաց կտամ:

Ես այնպես կանեմ, որ Իմ Տան հանդեպ քո ունեցած եռանդն ու ջանասիրությունը կործանեն Իմ թշնամիներին: Ես քեզ սպառնալիք կդարձնեմ նրանց համար: Ուստի երբեք չվախենաս, քանի որ Ես Եմը կանգնած է քո առջև: Իմ օրհնությունները քեզ վրա են, և քո սրտի յուրաքանչյուր մանիկը պիտի ծածկվի խիզախությամբ, Զորությամբ և խաղաղությամբ: Այս կերպ դու պիտի հատուցես հոգիների փրկության և Իմ Տան նորացման համար ամենակատարյալ ձևով:

Բարձրացրո՛ւ ձայնդ առանց վախի և մարգարեացի՛ր: Մարգարեացի՛ր, զավա՛կս, որպեսզի չարությունը ջնջես շատ սրտերի միջից: Նրանք, ովքեր ականջներ ունեն, թող լսեն, թե այսօր Հոգին ինչ է ասում Եկեղեցիներին: Թող բոլոր նրանք, ովքեր ծարավ են, գան: Գրի՛ր և ասա՛ Իմ քահանայական հոգիներին հետևյալը. «Ապստամբությունն արդեն գործում է, բայց գաղտնի, և նա, ով այն հետ է պահում, նախ պետք է հեռացվի՝ նախքան Ապստամբը կհայտնվի բացահայտորեն»[1]: Ես ասում եմ ձեզ, սիրեցե՛ք Իմ Եկեղեցին, ինչպես Ես եմ սիրում Նրան, և ինչպես որ Ես Ինքս Ինձ զոհաբերեցի Իմ Եկեղեցու համար, որպեսզի Նրան ամբողջովին սրբացնեմ, դուք նույնպես, Իմ քահանանե՛ր, զոհաբերե՛ք ձեզ Եկեղեցուն, ընդօրինակե՛ք Ինձ:

Ես ձեզ ասում եմ այս ամենը, և Ես գիտեմ, որ Իմ ոչխարները, որոնք Ինձ են պատկանում, պիտի լսեն Իմ Ձայնը և երբեք Ինձ հուսախաբ չեն անի: Այսօր Ես Իմ Սրտի խորքից դիմում եմ ձեզ՝ ասելու համար միևնույն դառնացած խոսքերը, որ Ես ասացի Իմ Վերջին Ընթրիքի ժամանակ աշակերտներիս. «Իմ սեղանակիցներից մեկը ըմբոստանում է Իմ դեմ: Ես ասում եմ սա ձեզ հիմա՝ նախքան այն կատարվելը, որպեսզի երբ կատարվի, դուք հավատաք, որ Ես Նա եմ, ով այսօր խոսում է»:

Իմ փոքրիկ զավակնե՛ր, մի՛ թողեք ձեր սրտերն անհանգստանան, վստահե՛ք Ինձ և մի՛ վախեցեք: Շուտով Հայրը Կրակի Մկրտությամբ պիտի այրի այս աշխարհի ոճիրները: Այդ ժամը կգա, երբ իշխանավորները կմտնեն Իմ Սրբարանը, մարդիկ, որոնք Ինձ չեն պատկանում: Իրականում այդ ժամն արդեն հասել է:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, ուզում եմ զգուշացնել Իմ քահանաներին, եպիսկոպոսներին և կարդինալներին: Ես ուզում եմ Իմ ողջ Տանը զգուշացնել մի մեծ փորձության մասին: Իմ Եկեղեցուն մի մեծ աղետ է սպասվում: Հիշե՛ք, Ես ընտրել եմ ձեզ Իմ Սրբարար Հոգով, որ փառավորեք Ինձ: Ես սկզբից ի վեր ընտրել եմ ձեզ, որ լինեք Իմ Եկեղեցու հաստատուն սյուները և հավատով ապրեք Ճշմարտության մեջ: Ես ընտրել եմ ձեզ, որ կիսեք Իմ Փառքը և հովվություն անեք Իմ դառներին:

Ես լրջորեն ասում եմ ձեզ, որ դուք շուտով պիտի փորձության ենթարկվեք կրակով: Աղոթե՛ք և ծո՛մ պահեք, որ փորձության չենթարկվեք: Ամո՛ւր կանգնեք և պահե՛ք այն ավանդությունները, որոնք

[1] Բ Թես. 2:7

սովորել եք: Ենթարկվե՛ք Իմ պապին[1], ինչ էլ որ պատահի: Մնացե՛ք նրան հավատարիմ, և Ես կտամ ձեզ այն չնորհներն ու զորությունը, որոնց կարիքը պիտի ունենաք: Ես պնդում եմ, որ հավաքարիմ մնաք նրան և հեռու մնաք որևէ մարդուց, որ ըմբոստանում է նրա դեմ: Եվ հատկապես երբեք մի՛ լսեք որևէ մեկին, որ կփորձի հեռացնել նրան: Երբեք թույլ չտաք, որ ձեր սերը նրա նկատմամբ դառնա կեղծ ու անազնիվ:

Շուտով դուք կկանգնեք մի այնպիսի ծանր փորձության առաջ, որի նմանը երբեք չեք ունեցել անցյալում: Իմ թշնամիները կփորձեն դարանակալ խոսքերի միջոցով կաշառել ու գնել ձեզ: Չարն արդեն սկսել է իր գործը, և Կործանումը ձեզնից հեռու չէ: Պապը[2] շատ է տառապելու: Ահա թե ինչու ձեզ բոլորիդ պիտի հալածեն՝ Ճշմարտությունը հայտարարելու համար և Իմ պապին հնազանդ լինելու համար: Ահա թե ինչու նրանք նաև պիտի ատեն ձեզ, քանի որ նրանց արարքները չար են: Եվ, արդարև, նա, ով աշխատում է չարի համար, ատում է Լույսը և խուսափում է նրանից՝ վախենալով, որ իր Կործանարար արարքները պիտի բացահայտվեն:

Ես լրջորեն ասում եմ ձեզ. Իմ Սրտի յուրաքանչյուր մանիկ խոցված է: Եթե որևէ մեկը հանդիպի ձեզ ձեր ճանապարհին՝ ուսուցանելով մեկ ուրիշ ուսմունք, քան այն, որը Ես Ինքս եմ հաստատել, մի՛ լսեք նրան: Այդ մարդիկ գալիս են Խաբեբայից: Այն, ինչ Ես հիմնել եմ, հիմք է դրված Պետրոսի վրա՝ ժայռի վրա... և դժոխքի դարպասները երբեք չեն կարող դիմանալ նրան... Եթե որևէ մեկը գա և ասի ձեզ. «Թողե՛ք ձեր հավատարմությունը այս պապի հանդեպ և հետևե՛ք մեկ ուրիշի ողջամիտ շարժմանը», չթողնե՛ք: Զգուշացե՛ք: Խաբեբայի թթխմորը կարող է ուժեղ լինել և լավ համ ունենալ, սակայն իրականում այն մահացու խաբեություն է: Թույլ չտաք ոչ մեկին խաբել ձեզ: Դիմադրե՛ք սատանայի գործելակերպին, քանի որ այսօր, Իմ քահանանե՛ր, դուք պիտի հաղթեք չարին այն զորությամբ, որ ստանում եք Ինձնից՝ Ճշմարտությունից: Դուք պիտի լինեք հոգևոր պատերազմի մեջ, ինչպիսին երբեք չեք եղել անցյալում մի բանակի դեմ, որը ծնունդ է առնում Խավարի ուժերից:

Սիրելիներս, աղոթե՛ք ամբողջ ժամանակ: Ես Եմը ձեզ հետ է: Ես ձեզ բոլորիդ սիրում եմ: Մարդ չի կարող ավելի մեծ սեր ունենալ, քան իր կյանքը տալ իր ընկերների համար, ինչպես Ես արեցի: Դուք Իմ ընկերներն եք: Անկե՛ղծ եղեք մեկդ մյուսի հետ, սիրե՛ք մեկդ մյուսին և ամո՛ւր կանգնեք առանց վախի, երբ մեծ Փորձությունը, որն այժմ սև ամպի նման թևածում է Իմ Տան վրա, ծածկի այն սև քողի պես: Ես հիմա ձեզ ասացի այս ամենը նախքան կատարվելը, որպեսզի, երբ այն կատարվի հավատաք:

ΙΧΘΥΣ

[1] Հովհաննես Պողոս II:
[2] Հովհաննես Պողոս II:

Մարտի 19, 1993

(Ես հապաղում էի այս առավոտ, հետո ես տեսա Տիրոջը, և Նա ասաց. «Ե՞րբ ես որոշելու Ինձ մոտ գալ»):

Վասո՛ւլա, Ես՝ Հիսուս, քեզ եմ տալիս Իմ Խաղաղությունը: Ծաղի՛կս, ասա՛ Ինձ, ծաղիկը կապրի՞ առանց ջրի: Ո՛չ: Ես Կենդանի Ջուրն եմ, և այդ Ես եմ, որ կենդանի եմ պահում քեզ:

Երբեմն, Տե՛ր, կարծես Դու հեռու ես քաշվում ինձնից և ինձ թողնում ես Քեզ և ինձ հետապնդողների ձեռքերում: Թվում է, թե նրանք ի զորու են մահ պատճառել: Ես կատարո՞ւմ եմ Քո Կամքը: Գուցե ոչ, գուցե հակառա՞կն եմ անում:

Եվ դու հավատում ես, որ Ես դա թույլ կտա՞մ:

Երբեմն Դու թույլատրում ես այնպիսի բաներ, որ զարմացնում են մեզ, և այդ ժամանակ մենք միայն կարողանում ենք ասել. «Դե՛, Աստված Իր պատճառներն ունի: Աստված թույլ տվեց, որ դա պատահի, և, անկեղծ ասած, մեզ համար դա առեղծված է»:

Ուրախ եմ, որ անկեղծ ես Ինձ հետ: Ճիշտ է, որ Ես թույլ եմ տալիս՝ որոշ բաներ պատահեն, սակայն դրանք Իմ գերագույն Փառքի համար են: Քանի որ Ես և դու Հավատարմության դաշինք ենք կապել, Ես թույլ չեմ տա, որ որևէ խանգարող հանգամանք լինի Իմ և քո միջև: Ես ուզում եմ բուժել այս սերնդին Իմ Զոհաբերության միջոցով և, հուրախություն Ինձ, Ես գտել եմ այն, ինչ միշտ ուզել եմ:

Ես մի չկիսված, մի ամբողջական սիրտ էի փնտրում և երբ գտա քո սիրտը, որոշեցի նվաճել այն... (արիացի՛ր): Ես դուրս էի եկել փնտրելու մի ուշադիր լսող, և գտա այն: Եվ հետո, ինչպես գիտես, Իմ Իմաստությունը միշտ տրվել է սոսկ երեխաներին: Այդ է պատճառը, որ Հայրը բարեհաճեց քեզ Իմաստություն տալ:

Դա ճիշտ է՞:

(Սա շատ անմիջական էր)

Դու կասկածո՞ւմ ես:

Ո՛չ:

Հոր Կարեկցանքը Մեծ է, և չնայած քո վարքագիծը պարզապես սարսափելի էր, Նա տապալեց քո ներսում եղած Իր թշնամիներին, իսկ հետո քո աչքերից վայր նետեց թեփուկները, որպեսզի տեսնես Իմ Գեղեցկությունը: Եվ Ես բացականչեցի Իմ ողջ Սրտով. արի՛, արի՛ Ինձ հետ: Ես քեզ համար սեղան պիտի պատրաստեմ, դու այլևս չես քաղցի, և Ես պիտի կիսեմ Իմ Գավաթը քեզ հետ: Իմ Տունը պիտի լինի քո տունը, և մենք միասին ճանապարհ պիտի ընկնենք, որ նվաճենք անկրոն

ժողովուրդներին: Ես երբեք քեզնից չեմ թաքցնի Իմ Դեմքը, բայց դու միշտ պետք է ընդառաջես Իմ պահանջներին:

Սիրով վերականգնե՛ք Իմ Տունը[1], որպեսզի բոլորը ձեր մեջ ճանաչեն Իմ արտացոլումը: Թող ամեն մի շրթունք ասի ձեր մասին. «Իսկապես, նրանք Աստծո սուրբ ժողովուրդն են»: Եվ Ես հանդիսավոր ասում եմ քեզ, ինչպես մի անգամ նախկինում ասել եմ. եթե քո ձեռքը կամ ոտքը քեզ ստիպի մեղանչել, կտրի՛ր այն և դեն նետիր: Ավելի լավ է կյանք մտնել հաշմանդամ կամ կաղ, քան ունենալ երկու ձեռք կամ երկու ոտք և դցվել հավիտենական կրակի մեջ: Բացե՛ք ձեր սրտերը, ոչ թե ձեր միտքը: Բացվե՛ք ձեր Թագավորի առաջ, թո՛ւյլ տվեք Ինձ մտնել ձեր սրտի մեջ, և Ես ուրախությամբ կլցնեմ ձեր սիրտը:

Հասկացի՛ր, զավա՛կս, որ քո միակ զենքը աղոթքն է, որպեսզի չոչնչանաս: Ես հարցնում եմ ձեզնից յուրաքանչյուրին. ո՞վ է իսկապես փնտրում Ինձ: Ձեր միջից ո՞վ կուզենար կիսել Իմ Գավաթը, Բաժանման Գավաթը, Տարաձայնությունների Գավաթը: Ես համակված եմ ցավով: Ձեր Փրկչի Սիրտն այնպես է խոցոտված, որ դարձել է անճանաչելի:

Երբ Ես վերադառնամ, որքա՞ն հավատ մնացած կլինի: Երբ Ես դամ, արդյոք ձեզ կգտնե՞մ, Իմ ընկերնե՛ր, այնպիսին, ինչպիսին որ Ես կցանկանայի, որ դուք լինեիք: Դուք դեռևս կունենա՞ք այն լեզուն և Ավանդությունները, որոնք Ես էի ձեզ փոխանցել, թե՞ դուք պիտի խոսեք փիլիսոփաների պես՝ քարոզելով Բաբելոնյան Աշտարակի վրա:

Ասացե՛ք Ինձ, ի՞նչ է պատահել այն Հոգուն, որը Ես ժամանակին պարգևեցի ձեզ: Ձեր թթխմորը նույնն է, ինչ փարիսեցիներինը և սադուկեցիներինը: Դուք խոսում եք օրենքից, բայց չեք պահում Այն ձեր սրտում: Իմ Օրենքը կենդանի է: Թերահավատնե՛ր, ձեր մտքից եկող անհիմն հետևությունների պատճառով, դուք Իմ Խոսքը դարձրել եք անվավեր և իմաստազուրկ: Ես ասում եմ ձեզ, ձեր սիրտն այնքան հեռու է Ինձնից, որքան երկինքը՝ երկրից, քանի որ դուք արհամարհել եք Օրենքի ավելի ծանրակշիռ հարցերը՝ սերը, ապաշխարանքը, ողորմությունը, բարեխղճությունը: Ձեզնից ո՞վ է, որ քարոզում է Իմ Անվամբ, իսկապես սիրում է իր թշնամիներին:

Զավակնե՛րս, որքա՞ն դժվար է մտնել Իմ Թագավորությունը: Իմ ժողովո՛ւրդ, դուք ի՞նչ եք դարձրել Իմ Խաչի Լեզուն: Որքա՞ն կարող եմ Ես հաշտվել նենգ ուսմունքների կամ այն պղծության հետ, որ կանգնեցնում եք Իմ Տաճարում: Տեսե՛ք, այսօր Ես ձեզ շնորհ եմ անում հրաշքներ տեսնելու[2]: Նույնիսկ հեթանոսներն են սկսում տեսնել դրանք[3], քանի որ մեկ անգամ ևս Ես ձեզ խղճացի: Ես՝ ձեր Աստվածը, այսօր խոսում եմ ձեզ հետ, մի՛ փակեք ձեր դուռն Իմ Դեմքին...

Ո՞ւմ մասին էիր Դու խոսում, Տե՛ր:

Նրանց մասին, ովքեր կիսում են Իմ սեղանը... Իսկ դու, Իմ նախասիրությա՛ն քաղաք, մի՛ անհանգստացիր և դալարվիր Իմ Ձեռքերում:

---

[1] Հիսուս ասում է բոլորին:
[2] Սուրբ Հոգու հեղումները:
[3] Տեսիլքներ և հայտնություններ ոչ քրիստոնյաներին:

Թո՛ւյլ տուր կառավարեմ քեզ այնպես, ինչպես Ես եմ ուզում, որպեսզի ավարտեմ Իմ Ծրագիրը:

Սերը օրհնում է քեզ:

Ապրիլի 5, 1993

Երանելի է նա, ով Իր հույսը դնում է Քեզ վրա:

Եվ երանելի է նա, ով լսում է Ինձ: Խաղաղություն քեզ: Հավատարմությունը հաճելի է Ինձ: Ա՛հ, աղջի՛կս... Հոգի՛, որին Ես նախընտրում եմ, մի՞թե Ես երբևէ կմերժեմ քեզ, եթե խնդրես Իմ Անունով: Երբե՛ք: Ես և դու պիտի շարունակենք մեր ճամփորդությունը ձեռք ձեռքի տված: Եթե կհոգնես ճանապարհին, հենվի՛ր Ինձ վրա: Եթե քո ոտքերը չպահեն քեզ, Ես քեզ կտանեմ Իմ Ուսերի վրա: Եթե ծարավես կամ քաղցես, Ես կապահովեմ քեզ Երկնային Մանանայով: Լսի՛ր Իմ Ձայնին և չես սայթաքի: Ես պիտի քաջալերեմ քո սիրտը, և նա կերգի ուրախությունից:

Սերը Իր հետդարձի ճանապարհին է, փորձի՛ր հասկանալ... Ես խաղողի Որթատունկն եմ, իսկ դու՝ ճյուղը, Ես ձեր Տերն եմ, և Ես ձեզ մեկ առ մեկ առաջնորդում եմ դեպի Իմ Տունը:

Ես ձեզանից ամեն մեկին սիրում եմ ջերմորեն:

Ապրիլի 8, 1993

Տե՛ր, Աստվա՛ծ իմ, Դու գիտես,
որ կեղծիք չկա իմ շուրթերի վրա:
Դու, որ կարող ես
ցուցադրել իմ հոգին
և քննել իմ մեղքերը,
Գիտես, որ ես անմեղ եմ
և մեղք չունեմ
այն բոլոր մեղադրանքների մեջ,
որոնցով նրանք ինձ
դատապարտում են:
Մի՞թե Դու ինձ չես օժտել
Քո Հոգով:

Իմ քաղա՛ք, Իմ սիրելի՛: Ես Նա եմ, ով քեզ մղել է քայլելու Իմ Ոտնահետքերով և Իմ Լույսի մեջ: Ես եկել եմ՝ ասելու քեզ, որ դու միայնակ չես, հասկանո՞ւմ ես: Իմ Բազուկները Կրակե պատի նման ամբողջապես բոլորում են քեզ: Ես քեզ ասում եմ. մարդկանցից փառք մի՛ փնտրիր, քանի որ նա, ով մարդկանց կողմից հիացմունքի է արժանանում, նողկալի է Իմ Աչքին: Ուստի թող նրանք հալածեն քեզ, թող նրանք

հետապնդեն քեզ: Մի՛ վախեցիր, գառնուկս, նրանցից, ովքեր սպանում են մարմինը, բայց դրանից հետո ոչինչ չեն կարողանում անել: Ես կասեմ քեզ, թե ումից վախենաս: Վախեցի՛ր նրանից, ով սպանելուց հետո զորություն ունի դժոխքի մեջ գցելու:

Ավելի շուտ օրհնի՛ր Ինձ, որ իմաստուններից և խելացիներից դեռևս թաքցնում եմ այս բաները, որոնք քեզ եմ սովորեցնում և բացահայտում եմ դրանք սոսկ երեխաներին, որովհետև այդ է, որ գոհացնում է Ինձ և հրճվանք պատճառում Իմ Հոգուն: Իմացի՛ր, ով որ քեզ դիպչի [1], կդիպչի Իմ Աչքի լույսին: Արա՛, ինչ որ կարող ես, Իմ Վասո՛ւլա, որպեսզի Իմ Ներկայությամբ քեզ ներկայացնես իբրև մի հոգի, որը հավատով է անցել իր փորձությունների միջով: Ցո՛ւյց տուր Ինձ, որ դու հաստատուն պիտի կանգնես, ինչպես մի ծառ, որը խոր արմատներ է գցել Ճշմարտության, Սիրո, Հավատի և Հույսի մեջ: Եվ երբ Ես գամ՝ քո պտղի համը տեսնելու, հրճվեմ: Նախընտրի՛ր տառապանքը՝ քո մարմնի թուլությանը տեղի տալու փոխարեն, զավա՛կս: Ոչ մեկին չի հաջողվի անջատել քեզ Ինձնից, ուստի հրճվի՛ր:

Վա՛յ [2] աշխարհին, որ արգելքներ է դնում Իմ Պատգամի առաջ, և առավել ևս այն մարդուն, ով հարուցում է դրանք: Վասո՛ւլա... Ես Իմ Փառքը ցույց կտամ քո միջոցով: Եթե ինչոր թշնամի հոգիներ շրջապատեն քեզ, նրանց հանդեպ եղի՛ր երկսայր թրի պես, որը խոցում է Սուտը: Աղոթի՛ր, որ Իմ Հոգու կողմից տրված այս Երկնային Կերակուրը բաժանվի սովյալներին և աղքատներին: Թող Իմ Մանանան լցնի ձեր բերանները, իսկ քեզ [3], Իմ Հոգին նետում է որպես ցանց յուրաքանչյուր աղգի մեջ [4]... «ime stenakhoremenos para poli; avrio ine i proti stavrossi, ki pali, o Ios Mou tha ksana-stavrothi se epta meres...»

Ես Երկինքը սևով կծածկեմ... Աղոթի՛ր Զատկի ամսաթվերի միավորման համար: Եղի՛ր Իմ Խաղաղության մեջ: Ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ: Հոչակի՛ր Իմ Խոսքն առանց վախի: Արի՛:

Ապրիլի 9, 1993

Իմ Վասո՛ւլա, խաղաղությո՛ւն քեզ: Ես մտադիր եմ ծաղկեցնել այս անապատը և աղբյուրներ բխեցնել չոր հողերից, աղբյուրներ, որոնք դուրս պիտի ցայտեն Իմ Տնից: Այս անհավատ սերնդին Ես նորից պիտի բերեմ դեպի Ինձ, բայց նախքան այդ կատարվելը՝ շատերը, որոնք հիմա առաջինն են, պիտի լինեն վերջինը, իսկ վերջինները՝ առաջինը: Իմացի՛ր, որ քո Արարիչը պիտի կատարի Իր Գործերը, և այդ Գործերը պիտի վկայեն,

[1] Այսինքն՝ հարձակվի ինձ վրա:
[2] Աստծո ձայնը հանկարծ փոխվեց:
[3] Ես զգացի, որ Աստծո Ձայնը դառնում է տխուր, և զգացի, որ Նա տխուր է:
[4] Ասված խոսեց ինձ հետ իմ լեզվով (հունարենով): Նա ասաց. «Ես շատ տխուր եմ, վաղն առաջին խաչելությունն է, և Իմ Որդին նորից պիտի խաչվի յոթ օր հետո...»՝ Զատկի երկու ամսաթվերի պատճառով:

որ Նա աշխարհ է ուղարկել Իր արարածին, որ Փառաբանի Իրեն: Այդ Գործերի միջոցով մի լույս պիտի փայլի ձեր խավարի մեջ. իրականում այն արդեն սկսել է փայլել: Ուրախացրո՛ւ Ինձ և կառչի՛ր Իմ հագուստի փեշից: Ես նորից հիշեցնում եմ քեզ. մի՛ անհանգստացիր և մի՛ փնտրիր աշխարհից եկող հավանությունը, փնտրի՛ր միայն քո Արարչի հավանությունը:

Համենայն դեպս, սանի՛կս, աշխատի՛ր ջանասիրաբար, որ պատվես Նրան, ով ուղարկեց քեզ: Անկեղծությունը գոհացնում է Հորը, և ա՜հ... այն ամենը, ինչ Հայրն ունի, Իմն է, և ամեն ինչ, որ Ինձ է Պատկանում, քոնն է: Ե՛կ, համբերատա՛ր եղիր: Ես՝ Հիսուս, սիրում և օրհնում եմ քեզ: Վերակենդանացրո՛ւ Իմ Եկեղեցին: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տե՛ր:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 12, 1993

Տերն է միայն իմ Դատավորը [1].
Դու սացիր, Տե՛ր.
Ես կգամ և կփրկեմ
Իմ ոչխարներին խաբվելուց[2]*:*
Ես վստահում եմ Քո Խոսքերին:

Խաղաղություն քեզ: Հենվի՛ր Ինձ վրա: Ես քեզ ասում եմ, աղջի՛կս. ինչ վերաբերում է քեզ, դու պետք է լինես համբերա- տար և մշտապես մտքումդ պահես այս խոսքերը. «Վերջում Մեր Երկու Սրտերը կհաղթեն: Այն, ինչ Ես սկսել և օրհնել եմ, կավարտեմ»:

Ես օրհնել եմ քեզ՝ Իմ փրկության ծրագրին մասնակից դարձնելով: Ո՜հ, որքա՜ն եմ Ես սիրում քո թուլությունը, քանի որ քո անասելի թուլության մեջ Ես Թագավոր եմ: Հենց որ ավարտեմ Իմ Գործերը քեզ հետ, դու վայրկենապես և միաժամանակ պիտի կլանվես (Իմ կողմից): Շատերը, որ ընկել են, պիտի բարձրանան և հայտարարեն, որ ճշմարտապես Ես քո Գերագույն Տերն էի, և դու Իմ Զարչարանքների Ուրախությունն էիր, Իմ Զարչարանքների շատ սիրելի ծառան: Եվ նրանք պիտի գովաբանեն Ինձ:

Այսօր բավարարի՛ր Ինձ, պատասխանի՛ր Իմ պահանջներին և ո՛ւշ դարձրու քո առաքելությանը: Մի՛ վախեցիր, Իմ հա՛րս, ժամանակ առ ժամանակ արի և գլուխդ դի՛ր Իմ Սուրբ Սրտին ու հանգստացի՛ր: Ես քեզ չեմ հանդիմանի, ոչ էլ կմեղադրեմ՝ Իմ պահանջներին ճշտորեն չարձագանքելու համար: Իմ Զորությունը քեզ վեր կբարձրացնի քո անկումներից և դանդաղորեն, մոլեգնող Կրակի պես Ես կկլանեմ քեզ Իմ ջերմ Սիրո բոցերի մեջ: Այդպիսով, դու կկատարես Իմ Կամքը՝

[1] Ա. Կոր. 4:4
[2] Եզեկ. 34:22

կատարելապես արձագանքելով Իմ բոլոր պահանջներին... Մի՞թե ես քո Արարիչը և Ամուսինը չեմ: Մի՞թե ես քեզ չեմ ապահովել Իմ Հարստությունից: Ուրեմն ես ինչո՞ւ պիտի լքեմ քեզ: Դու օրհնյալ ես, որ քեզ հանձնարարվել է այս առաքելությունը:

Քանի որ ես ուղարկեցի Քեզ քո տնից դուրս, որ վերակառուցես Իմ Տունը, դու պիտի ապրես Իմ Լույսի մեջ: Դու օրհնյալ ես, քանի որ Քեզ տվել եմ ընտրությունը, որ հոգ տանես նախ Իմ Տան համար, ապա՝ քո տան, և ես Ինքս պիտի լինեմ քո տան Պահապանը: Ուստի մի՛ վախեցիր, զավա՛կս: Ես օրհնում եմ քեզ, որ Ինձ ես տվել քո սիրտը: Հիմա գնա՛ մարդ- կության մեջ և փոխանցի՛ր այն ամենը, որ ես եմ քեզ տվել: Տո՛ւր նրանց այս Պատգամները. դրանք Իմ անձնական սիրո նամակներն են՝ ուղղված նրանցից յուրաքանչյուրին: Զգո՛ւշ, ինչպես ես եմ ձգտում, փրկել Իմ ժողովրդին անկումից: Տո՛ւր նրանց Իմ Խաղաղությունը, աղջի՛կս, եկեղեցին պիտի վերակենդանանա:

Ես սիրում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 16, 1993

(Ուղղափառների Ավագ Ուրբաթ օրը)

Ես հետևում եմ Քո Քայլերին՝
այն պահից սկսած,
երբ կենդանացրիր ինձ,
և մի փոքր ականջս խոնարհելով՝
ես ստացա Քեզ: Իմ հոգին
հրճվում է Քո Ներկայությամբ:
Հիմա ես Քո
Քնքուշ Ձեռքերում եմ,
իմ Աստծո Ձեռքերի մեջ:

Խաղաղություն քեզ: Ուղղի՛ր ճանապարհը Իմ Վերադարձի համար, հարթեցրո՛ւ Իմ Ուղին, որով ես պիտի քայլեմ, բա՛ց արա մի լայն ճանապարհ Միասնության համար, իմ Ընկե՛ր:

Իմ վերադարձը մոտալուտ է: Լսե՛ք Ինձ, այսօր ձեր մեծա- մասնությունը դատում է մարդկային չափանիշներով, և այդ է պատճառը, որ ձեր հոգին անկարող է չափել Իմ Երկնային Թագավորության Հարստությունները: Մինչև մարդ նորից չծնվի, նա չի կարողանա տեսնել Երկնային Թագավորությունը: Իմ Սուրբ Սրտի Զարչարանքների՛ Վասուլա, թանկագի՛ն հոգի, ես պիտի խրախուսեմ քեզ այն նույն բառերով, որոնք Իմ հոգին չշնչաց Սուրբ Պողոսի ականջին. «Նախանձախնդի՛ր եղեք մարգարեություն անելու»[1]: Ահա թե ինչ պիտի հիշեցնես և ասես Իմ ժողովրդին: Ասա՛ նրանց, որ պետք է ձգտեն մարգարեություն անել

[1] Ա. Կոր. 14:39

և այդ ձևով պատվել Իմ Սուրբ Հոգուն:

Տե՛ր, շատերն են արհամարհում մարգարեությունը: Ես էլ եմ հասկանում դա, քանի որ շատ կեղծ մարգարեներ կան:

Թերահավատնե՛ր, ինչպե՞ս կարող եք չհասկանալ, թե ինչ եմ Ես ձեզ սովորեցնում: Ես ասել եմ, որ վերջին ժամանակներում շատ կեղծ մարգարեներ մեջտեղ պիտի գան, և դուք պետք է զգուշանաք նրանցից: Բայց մի՞թե Ես չեմ ասել, որ դուք կկա՜րողանաք ճանաչել նրանց իրենց պտուղներից: Ինչո՞ւ ձեզանից այդքան քչերն են հետևում Իմ հրահանգներին:

Ես Քրիստոսն եմ, և Ես քեզ՝ ուղարկում եմ հենց այս պատճառով: Ես քեզ ուղարկում եմ ազգերի մոտ՝ հայտարարելու, որ Իմ Խոսքը կենդանի է: Ուստի ամո՛ւր կանգնիր և մի՛ երերա կամ՝ վախեցիր: Ես քո Վահանն եմ: Այո՛, Իմ Վասո՛ւլա, Ես քեզ առանձնաշնորհում եմ տվել ոչ միայն այս հատուկ ձևով լինելու Ինձ հետ, այլ նաև Ինձ համար տառապելու: Չնայած դրան՝ երբեք չկասկածես, որ Ես Ինքս չեմ կարող ավարտել այս Գործը: Ես Ինքնաբավ եմ: Ես Ինքնաբավ եմ, բայց Ես ընտրել եմ քեզ, որպեսզի կատարելագործեմ քեզ:

Ես ասում եմ քեզ՝ քո ուղին դեռ չի ավարտվել: Ես արդեն կարող եմ քեզ վստահեցնել, որ Ես կավարտեմ այն քեզ հետ: Գնա՛ ազգերի մոտ և հայտարարի՛ր, որ Իմ Օրենքը կենդանի է, և որ Ես ուզում եմ գրել այն նրանց սրտի վրա: Ուստի ուրախացի՛ր: Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, քանի որ Իմ Ողորմությունը անզուգական է: Ուրա՛խ եղեք, որ Մեր Երկու Սրտերը, ինչպես Երկու Ջիթենու Ճյուղեր, գտնվում են ձեր մեջ, որպեսզի վերականգնեն ձեր առողջությունը և բուժեն ձեր վերքերը: Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որ Մեր Երկու Սրտերը, Երկու Ճրագների պես, առաջնորդում են ձեր քայլերը դեպի Երկինք, որին դուք պատկանում եք: Դուք ինչի՞ կարող եք նմանեցնել Իմ Ողորմությունը:

Իսկ դու, որին Ես մեծացրի և դաստիարակեցի Իմ Լույսի մեջ, ամուր կառչիր Ինձանից: Ես ամեն մի արարք դիտում եմ Երկնքից և գիտեմ, որ ամենից ազդու վերքերը Ես պիտի ստանամ Իմ լավագույն ընկերների տանը: Ես ստիպված պիտի լինեմ խմել ձեր բաժանման, ձեր անհաշտ սրտի և ձեր Ուրացության Բաժակից... Զարությունն ու նենգությունը սպանում են անմեղներին: Ո՛չ, զավա՛կս, աշխարհից չնորհակալություններ կամ կարեկցանք մի՛ սպասիր: Ես էլ չեմ ստացել այդ երկուսից և ոչ մեկը դեպի Գողգոթա տանող Իմ ճանապարհին:

Ես ասում եմ քո փոքրիկ սրտին. հանուն Իմ Սիրո Ես կավելացնեմ Իմ Կանչերը և չեմ քչացնի դրանք: Ես կփակեմ յուրաքանչյուր զրպարտող բերան, <u>քանի որ Ես Տեր եմ</u>: Ուստի ուրախացի՛ր, քանի որ այդ վերքերի միջոցով, որոնք Իմ ընկերներն են քեզ հասցնում,

<u>Ես շատերին հետ կբերեմ Ինձ մոտ</u>:

Ես թույլ պիտի տամ, որ կույրերը տեսնեն, և կաղերը նորից քայլեն: Զեզանից շատերը պիտի վերադառնան Ինձ մոտ: Ուրեմն դադարի՛ր լաց լինելուց և չորացրո՛ւ աչքերդ... Իմ Վասո՛ւլա, արի՛... Ես կսրբեմ քո

արցունքները...

[1]Շուտով երկիրը կդողա և կցնցվի, և ա՛հ, դեռևս շատ շատերը պիտի լինեն անապատում մոլորված... Արի՛, հենվի՛ր Ինձ վրա և վստահի՛ր Ինձ:

Աղոթի՛ր, որովհետև Ես հրճվում եմ, երբ դու հիշում ես Իմ Ներկայությունը: Ես ջերմորեն և անսահման սիրում եմ քեզ:

Ես միշտ քեզ հետ պիտի լինեմ:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 20, 1993

Վասո՛ւլա, զավա՛կս, այդ Ես եմ՝ Յահվեն... Ես սիրում եմ քեզ, աղջի՛կս: Ես կշարունակեմ քեզ ուղարկել ամենուրեք Իմ Փառքի համար: Քեզ սիրվա՛ծ, պաշտպանվա՛ծ և առաջնորդվա՛ծ զգա Իմ կողմից: Լսի՛ր Ինձ. ժամանակը ոչինչ է և ոչ մի նշանա՜ կություն չունի Ինձ համար: Ուստի պատրա՛ստ եղիր դեմ առ դեմ կանգնելու Իմ առաջ[2]:

Մի մեծ տխրություն կա Իմ Սրտում, քանի որ դավաճանությունն ու հավատի պակասը ավելի ու ավելի են տարածվում Եկեղեցում: Ահա այս խոսքերն եմ Ես լսում նրանցից, ովքեր կիսում են Իմ Որդու Փոխանորդի սեղանը. «Որքա՜ն ճանձրալի է նա»: Սակայն, ինչպես մի անգամ Ես քեզ ասել եմ, նրանք ձեր ժամանակների Կայենները են, և նրանց մասին Ես խոսել եմ Տասը Պատվիրանների վերաբերյալ Իմ մեկնաբանությունների մեջ: Նրանք ձևացնում են, թե խունկը ձեռքներին գնում են Ինձ փնտրելու, սակայն նրանց հոգին չի փնտրում Իմ Հոգուն: Ես ասում եմ քեզ, որ նրանք չեն սրբացնում Իմ Անունը: Ո՛չ, չեն սրբացնում. նրանք չկարողացան գնահատել Իմ մեծ Սերը: Նրանք ամեն օր արհամարհում են Ինձ և բարկացնում են Ինձ իրենց ոչ հոգևոր խոսակցություններով: Նրանք Իմ զայրույթն են շարժում՝ իմ պատգամատարներին ուղղելով վրա իրենց հեգնական դիտողությունները: Ո՜հ, սակայն նրանք կճոճվեն ինչպես ընկնող աստղեր՝ հավիտենական սև խավարին դատապարտված, եթե չիջնեն իրենց գահերից և չապաշխարեն: Դուք պետք է միասին աղոթեք նրանց համար նախքան Իմ Օրը գալը...

Աղջի՛կս, Ես օրհնում եմ քեզ: Կանչի՛ր Ինձ, երբ ցանկանում ես: Ես երբեք չեմ մերժի քեզ...

[1] Հիսուս փոխեց տոնը և կարծես խոսում էր Ինքն Իր հետ:
[2] Ես հասկացա, որ խոսքը մաքրագործման մասին էր:

Ապրիլի 23, 1993

(Մեր Օրհնյալ Մայրը)

Ես օրհնում եմ քեզ, զավա՛կս: Christos anesti!

Alithos anesti!! [1]

Եկեղեցին պիտի վերակենդանանա: Արիացի՛ր: Սատանան կարող է արգելքներ դնել քո ճանապարհին, բայց Ես քո կողքին եմ, որ հեռացնեմ դրանք: Երբ մարդ որոշում է հարել Աստծուն, նա պետք է թողնի ամեն ինչ, որ հետևի Նրան: Այն ամենը, ինչ անում ես, իզուր չէ:

Վասո՛ւլա, մի մկրտություն է տեղի ունենալու, և դա այնքան մեծ մկրտություն է լինելու: Հիսուս պիտի մկրտի երկիրը Կրակով: Մինչ այդ Ես պիտի շարունակեմ հայտնվել: Ուստի հիմա է ապաշխարության ժամանակը, հիմա է հաշտության ժամանակը: Ես ասում եմ ձեզ, սիրելի՛ զավակներ. զոհաբերությունը, որն այսօր Աստված ձեզանից խնդրում է, այն է, որ դուք փոխեք ձերկյանքըևապրեքսրբորեն:

Աստված խնդրում է ամեն մի հոգու ապաշխարել: Մի՛ ասեք, որ չափազանց թշվառ եք, որպեսզի Աստված ների ձեզ, և կամ Ամենաբարձրյալը այլևս կարեկից չի լինի ձեզ: Աստված գալիս է ձեզ բոլորիդ մոտ, նույնիսկ ամենաթշվառների մոտ: Վերադարձե՛ք Աստծուն, և Նա կվերադառնա դեպի ձեզ: Եկե՛ք և բնակվեք Նրա Սրտում, ինչպես որ Նա է Իր բնակությունը հաստատում ձեր սրտերում:

Թող հայտնի լինի, որ առանց անկեղծ աղոթքների դուք չեք կարող տեսնել Աստծո Թագավորությունը: Նրա իշխանությունը երկրի վրա շատ մոտ է: Հիշե՛ք, Աստված ձեզնից ցանկանում է, որ փոխեք ձեր սրտերը: Մի՛ վախեցեք ձեր մեղքերն ընդունելուց: Ապրե՛ք և կատարե՛ք խոստովանության խորհուրդը:

Զավակնե՛րս, Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ:

Ապրիլի 26, 1993

(Մեր Օրհնյալ Մայրն է խոսում):

Սիրելի՛ զավակներս, ձեր սրտերը դեռևս շատ հեռու են Մեզանից [2], որովհետև դուք դեռևս չեք հասկացել ո՛չ Մեր հայտնությունների իմաստը, ո՛չ էլ Մեր խոսքերը Մեր Պատգամներում: Դուք դեռևս չեք ըմբռնել Խաղաղության, Սիրո և Միասնության իմաստը: Եթե դուք հասկացած լինեիք, այսօր ձեր երկրները բոցերի մեջ չէին լինի: Եթե դուք հասկացած լինեիք Մեր Պատգամները, դուք հասկացած կլինեիք

[1] Մեր Օրհնյալ Մայրը ողջունեց ինձ հունարեն, ինչպես Զատկից հետո ուղղափառներն են միմյանց ողջունում: Ուղղափառների մոտ սովորույթ է Զատկից հետո միմյանց հանդիպելիս ողջունել իրար՝ ասելով. «Քրիստոս Հարյավ», մյուսը պատասխանում է. «Ճշմարիտ Հարյավ»:

[2] Մեր Օրհնյալ Մայրը նկատի ունի Հիսուսին և Իրեն՝ երկու Սրտերը:

Հիսուսի այս խոսքերը և կիրականացնելիք դրանք. «Նա, ով ձեր միջից ցանկանում է մեծ լինել, պետք է լինի ձեր ծառան, և նա, ով ձեր միջից ցանկանում է առաջինը լինել, պետք է լինի ձեր ստրուկը» այնպես, ինչպես Հիսուս եկավ ոչ թե ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և Իր կյանքը որպես փրկագին տալու շատերի համար: Իմացե՛ք, որ Երկնքի Թագավորությունը բոլորի համար է, բայց ոչ բոլորն են տեսնում այն, և ոչ բոլորն են այնտեղ մտնում: Ուրեմն չզարմանաք, եթե տեսնեք, որ այն տրվում է ուրիշներին, այլ ոչ թե ձեզ:

Աստված հիմա գալիս է բոլորիդ մոտ, բայց ձեզանից շատերը չեն հավատում: Այդ է պատճառը, որ ձեր մեջ խաղաղություն չկա: Աստված ազատ է ընտրելու վերջին եկողներին և հարստացնելու նրանց Իր Փառքով այնքան, որքան Նա հարստացրեց սկզբում եկողներին: Մի՞թե Նա իրավունք չունի անելու այն, ինչ ցանկանում է: Հիսուսն ասել է. քամին փչում է, որտեղ որ ցանկանում է: Աղոթե՛ք ձեր սրտերում խաղաղության համար: Ապրե՛ք այնպես, ասես դա ձեր վերջին օրն է երկրի վրա:

Ես կհոգամ, որ Իմ հայտնությունները դադարելուց հետո դուք բոլորդ դեռևս միջոցներ ունենաք փորձությունների օրերին վերհիշելու Մեր Պատգամներն ու Ուսուցումները: Իմ հայտնություններն այլևս երկար չեն տևելու, որովհետև Աստծո Ներկայության Վսեմ Փառքը հանկարծակի ձեր մեջ պիտի լինի:

Ահա թե ինչու դուք կանչված եք լինելու մեկ և միևնույն հոտի մեջ՝ Տեր Հիսուս Քրիստոսի հոտի և Նրա Խորհրդի մեջ: Աստծո Փառքը պիտի հայտնվի ձեզ բոլորիդ ավելի շուտ, քան սպասում եք:

Փորձե՛ք հասկանալ, որ Մեր Սերը երկրի վրա գտնվող <u>ամեն մի</u> մարդու համար է, ուստի խստորեն մի՛ խոսեք մեկդ մյուսի հետ, սիրելի՛ զավակներ, քանի որ Աստված դատաստանով կհատուցի նրանց, որոնց դուք դատում եք: Իսկ ինչ վերաբերում է Կրակով մկրտությանը Տերը պիտի դա բոցավառվող Կրակով, որ երկրից բնաջնջի և արմատապես այրի այս աշխարհի ողջ չարիքը, աշխարհ, որն ընկղմված է մոլության և անբարոյականության մեջ:

Շարունակե՛ք հռչակել Աստծո Թագավորությունը աշխարհով մեկ և հայտարարել, որ Մեր Պատգամները նախատեսված են՝ ձեզ ապաշխարության տանելու համար: Ես՝ ձեր Սուրբ Մայրը, օրհնում եմ ձեզ:

Ապրիլի 28, 1993

Խաղաղություն: Սիրելի՛ աղջիկս, իմացի՛ր, թե որքան եմ Ես հրճվում քո աղքատությամբ: Փոքրի՛կս, ընկի՛ր Իմ Բազուկների մեջ և թո՛ւյլ տուր Ինձ կրել քեզ քո ծայրահեղ թուլության մեջ: Ես քո Հովիվն եմ, մի՛ վախեցիր: Հիշի՛ր, որ սա քո Գործը չէ, այլ Իմը: Մի՞թե Ես չեմ ապահովի քեզ, չեմ մատակարարի և հսկի քեզ, քեզ, ում Ես ամեն օր նետում եմ աշխարհի մեջ՝ հանձնելով նրա ողորմությանը: Մեկը մյուսի հետևից ազգերը պիտի լսեն Իմ Ձայնը:

Դու փակված ես Իմ Սրտում: Իմ Սիրտը քո միակ ապահով

բնակարանն է: Իմ Զարչարանքների՛ Վասուլա, վարվի՛ր Ինձ հետ՝ որպես Թագավորի. Ես քո Թագավորն եմ և քո միակ Բուռն Սերը: Վարվի՛ր Ինձ հետ՝ որպես քո ամենահավատարիմ Ուղեկցի: Ես հայտնի եմ որպես Ամենից Հավատարիմ: Թո՛ւյլ տուր Ինձ, թանկագի՛ն հոգի, քեզ վրա փորագրել Իմ Խոսքերը: Դրանք երբեք չեն անհետանա: Հոգի՛ Իմ Զարչարանքների, սիրի՛ր Ինձ, քանի որ Ես այնքան քիչ եմ սիրված...

Տե՛ր, ես սիրում եմ քեզ, և ուրիշները նույնպես սիրում են Քեզ:

Եթե սիրում ես Ինձ, մնա՛ Իմ կողքին և սփոփի՛ր Ինձ... Կարո՞ղ եմ Ես էլ ավելի զոհաբերել քեզ:

Այո՛, Տեր, արա՛, ինչպես Դու ես ցանկանում:

Ասա՛. «Այո՛, Տե՛ր Իմ, հանուն այն Սիրո, որը Դու ունես հոգիների համար»:

Ասա՛. «Այո՛, հանուն այն չարչարանքի, որը Դու զգում ես մեղավորների համար, Տե՛ր Իմ»:

Ասա՛ Ինձ այս խոսքերը: Ինձ ոչնչից մի՛ զրկիր[1], և Ես էլ քեզ չեմ զրկի Իմ Ներկայությունից: Ուրեմն միասին Ես ու դու պիտի աշխատենք, պիտի սիրենք, պիտի աղոթենք: Լսի՛ր Ինձ, քեզ համար ոչինչ մի՛ պահիր, ուրիշ ոչ մի բանով մի՛ զբաղվիր՝ Իմ Ծրագրից բացի: Ամեն ինչ, որ անելու ես, թող արվի հոգիներ փրկելու համար:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ և քո ընկերակիցներին: Փառաբանե՛ք Ինձ և Ինձ հետ բարձրացրե՛ք Իմ Եկեղեցին: Վերակառուցե՛ք Իմ Եկեղեցին: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Մայիսի 6, 1993

Զավա՛կս, Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ:

Իմ Թագավորությունը նրանց համար է, ովքեր սրտով մաքուր են: Այդ նրանք են, որ տեսնում են Իմ Գեղեցկությունը: Զավա՛կս, ովքեր չեն կարողանում ճանաչել Իմ Սուրբ Դեմքը հիմա, երբ Ես խոսում եմ, նրանք են, որոնցից զգուշանում է Իմ Իմաստությունը: Մինչև նրանք չդառնան երեխաների նման, ոչի՛նչ, ոչի՛նչ երբեք չի բացահայտվի նրանց: Ուստի աղոթի՛ր այն հոգիների համար, ովքեր կուրացել են իրենց սեփական իմաստությամբ: Մի՞թե չես լսել, որ Իմաստությունը պիտի բարձրացնի աղքատներին և տեղ տա նրանց մեծերի շարքում:

Ավելի հաճախ աղոթի՛ր հատկապես նրանց համար, ովքեր ասում են, որ «տեսնում են» և դատում են Իմ Սուրբ Հոգուն այս Պատգամներում, քանի որ հենց այդպես էլ նրանք հետապնդեցին Իմ

[1] Ես կարծում եմ Հիսուս նկատի ունի այն, որ ես որոշ ժամանակ Նրան չէի լսում, և իսկապես, ես ավելի քիչ էի զգում Նրա Ներկայությունը:

Սիրելի Որդուն, ինչպես և մարգարեներին՝ Նրանից առաջ: Մինչև մարդ նորից չծնվի, նա չի կարող տեսնել Իմ Թագավորությունը:

Արի՛, Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը, վստահի՛ր Ինձ...

Մայիսի 10, 1993

Ո՛վ Յա՛հվե, ինչո՞ւ Ես Դու նորից
ինձնից այդքան հեռու:
Փարատի՛ր իմ սրտի
այս վհատությունը:
Շնորհի՛ր թեկուզ
մի հպանցիկ հայացք
Քո օգնական ստրուկին:

Յահվե է Իմ Անունը, և այն Սուրբ է[1]: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Վասո՛ւլա, քո Հայրը խոսում է քեզ հետ, որպեսզի դու քո հերթին կրկնես Իմ Խոսքերը բոլոր ազգերին՝ ցույց տալով Իմ Սուր Դեմքը, բացահայտելով այն բոլոր գաղտնիքները, որոնք Ես չշնչում եմ քո ականջին: Ես ցույց եմ տալիս աշխարհին Իմ Ողորմությունն ու Իմ Սերը: Ես գալիս եմ՝ փրկելու ճնշվածներին Ճնշողի ձեռքից և Խաբեբայից:

Թույլ չտաս, որ քո սիրտը քեզ անհանգստություն պատճառի, զավա՛կս: Նորից բարձրացրո՛ւ քո վհատված ձայնը դեպի Ինձ: Դու պիտի աղոթես, և Ես՝ քո Աբբան, պիտի լսեմ քեզ: Բարձրացրո՛ւ քո աչքերը դեպի Ինձ, զավա՛կս, և իմացի՛ր, որ Ես քո Պաշտպանությունն եմ և քո Վահանը: Բարձրացրո՛ւ քո հոգին դեպի Ինձ առանց վախի քեզ շրջապատող խավարի և մռայլության միջից: Ես թույլ չեմ տա, որ քո սիրտը տկարանա:

Թանկագի՛ն զավակս, դու Անհայր չես, զգա՛ Իմ Ներկայությունը: Ես եմ Որ եմը քեզ հետ է: Ուրեմն ուրախությամբ բարձրացրո՛ւ քո հոգին դեպի Ինձ և հրճվի՛ր Իմ Ներկայության մեջ: Ուրախացի՛ր, քանի որ Իմ Սուրբ Հոգին՝ Ճշմարիտ Բարեխոսն ու Պաշտպանը, բարեհաճ և ներողամիտ պիտի լինի դո գործի համդեպ: Ուրեմն ինչի՞ն են նշան բռնում քեզ ճնշողները:

Յա՛հվե, Աստվա՛ծ Իմ, իմ բառերը
թեթևամիտ ու դատարկ էին,
բայց ես հազիվ եմ կարողանում
հետևել Քո Սիրելի Որդու՝
Հիսուսի Քայլերին:
Ես վախենում եմ հետ մնալ
այս գործի մեջ
և կորցնել Նրան տեսողությունից:

[1] Ես զգացի, թե ինչպես Աստծո սերը անձրևի պես թափվեց Ինձ վրա...

Մի՛ վախեցիր, ես ուզում եմ, որ դու հենվես Իմ վիթխարի Զորության վրա: Գնա՛ խաղաղությամբ:

Մայիսի 11, 1993

Ահա այստեղ եմ ես, Տե՛ր,
նորից լալիս եմ Քո Ուսի վրա:
Ես մեր ժամանակների
նոր Հոբն եմ՝ լի ողբով...

Դու չես ճանաչում Հոբին: Եթե կարծում ես, թե անցնում ես այն ամենի միջով, ինչի միջով անցավ Հոբը...

Մայիսի 12, 1993

(Թել Ավիվ - Իսրայել)

Տե՛ր, զգո՛ն դարձրու իմ ականջները,
իմ աչքերը՝ թափանցող,
և իմ սիրտը՝ զգայուն,
ինչպես աշակերտ,
որպեսզի ես կարողանամ
կլանել Քո Հոգին:

Տե՛ս, ես տալիս եմ քեզ ամեն ինչ՝ զգայուն սիրտ, աշակերտի միտք և Ինձ հաճելի լինելու բուռն ցանկություն: Թույլ տուր Ինձ օգտագործել քեզ այս ձևով: Հիմա դու չպետք է շփոթված լինես: Այս ամբողջը Իմ արածն է Իմ Փառքի համար... Ես ուզում եմ, որ դու և մյուսները մի օր կիսեք Ինձ հետ Իմ Փառքը... Ուստի մնա Իմ Սիրո մեջ, Իմ Լույսի զավակ:

Տե՛ր, շնորհակալ եմ Քեզնից, որ հրավիրել ես ինձ Քո հայրենիքը:

Ինձ համար հաճելի էր քեզ տեսնել այն վայրերում, որտեղ ես նախկինում եղել եմ: Կարծում եմ՝ գիտես, թե քեզանից ամենից շատ ինչ եմ ուզում... Այո՛, Վասո՛ւլա, Ես ուզում եմ, որ դու Ինձ հոգիներ բերես, որպեսզի Իմ Շունչը կենդանացնի նրանց: Շոյի՛ր Ինձ քո սիրով, շոյի՛ր Իմ վիշտը, շոյի՛ր Իմ ցավերը, շոյի՛ր Իմ խոցված Սիրտը: Արի՛ Ինձ մոտ և չորացրո՛ւ Արյան Իմ Արցունքները:

Աղջի՞կս: Աղոթի՛ր Իմ Սրտին մոտ և չշնչա՛ Ինձ քո աղոթքները: Ես կավարտեմ Իմ Ծրագրերը քո մեջ մեծ զորությամբ, քանի որ դու Ինձ այո ասացիր: Ես քեզանից հիմա միայն սեր, խոնարհություն և քո սիրտն եմ խնդրում: ic

Մայիսի 18, 1993

(Իսրայել)

(Պատգամներ՝ տրված կանադացի ուխտավորների համար):

Իմ Վասո՛ւլա, Իմ Խաղաղությունը քեզ:

Ես ասում եմ քեզ, որ անչափ սիրված ես Իմ կողմից և բարեհաճության արժանացած հոր կողմից: Ես՝ Նազովրեցի Հիսուս, ազատել եմ քեզ. Ես ազատել եմ ձեզ բոլորիդ: Գովաբանե՛ք Ինձ և աղոթե՛ք նրանց համար, որոնց սիրտը դեռևս հեռու է Իմ Սրտից և տարված է աշխարհով: Ես լրջորեն ասում եմ ձեզ. օրերը հաշվված են, և Նա, ում դուք սպասում եք, հանկարծակի պիտի գա ձեզ վրա: Ուստի պատրա՛ստ եղեք... և յուրաքանչյուր օրն ապրե՛ք այնպես, ասես դա ձեր վերջին օրն է երկրի վրա:

Ես փառավորեցի Իմ Հորը, դուք մի՞թե չեք փառավորի Ինձ: Արդարև, Ես՝ ձեր Փրկիչը, ձեզ բերեցի այստեղ՝ Իմ Ոտնահետքերին հետևելու համար[1]: Ես ասում եմ ձեզ. ով որ ծառայի Ինձ, պետք է հետևի Ինձ մինչև վերջ: Ով որ փնտրի Ինձ, Կյանք պիտի գտնի, ով որ լսի Իմ Ձայնը և Իմ Խոսքերը, պիտի դիմանա փորձություններին առանց գանգատի: Իմ Օրենքին դժվար չէ հետևել, եթե իսկապես սիրում եք Ինձ: Սերը հաղթում է, սերը բացահայտ է, սերը ամեն ինչ կրում է համբերատար կերպով: Ուստի եկե՛ք և Ինձ ոչինչ մի՛ մերժեք: Մի՛ վախեցեք, Իմ Սիրտը Սիրո մի Վիհ է:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ Իմ Սրտի խորքից, Իմ փոքրի՛կ ընկերներ:

(Ավելի ուշ)

Խաղաղություն քեզ: Կրկնի՛ր Ինձ հետ այս բառերը.

Հիսո՛ւս, իմ Լո՛ւյս, Հիսո՛ւս,
իմ Առաջնորդ, ես սիրում եմ Քեզ,
որովհետև Դու ցույց տվեցիր
ինձ Ճանապարհը:
Սո՛ւրբ Հոգի, իմ Սո՛ւրբ Ուղեկից
և իմ Ընկե՛ր,
Դո՛ւ, որ իմ ականջին
շշնջում ես խորհուրդ,
իմաստություն և սփոփանք,
ես սիրում եմ Քեզ,
որովհետև Դու թույլ տվեցիր,
որ իմ աչքերը տեսնեն և լսեն:

[1] Հիսուս նկատի ունի Իր հետքերը Իր հայրենիքում:

Ես պաշտում եմ Քեզ,
որովհետև
Դու հարություն տվեցիր ինձ
և դարձար
Քաղցր Մանանա Երկնքից՝
իմ հանապազօրա Հացը,
Դու սփոփեցիր իմ տանջված
և թշվառ հոգին:
Դու հոգ ես տանում
ինձ համար այս անապատում,
և Դու ուշադիր ես
իմ կարիքների հանդեպ:
Դու փչում ես Քո Պարգևները
մոլեգնող բոցերի մեջ՝
ողջ մարդկության վրա:
Ամենասուրբ Երրորդության
Փառքի համար
տո՛ւր մեզ բոլորիս չնորհը,
որ մենք մեզ նվիրենք
և հնազանդվենք Քո կանոններին,
և թող Քո Օրենքը
դառնա մեր ուրախությունը: Ամեն:

Լավ է: Ես սիրում և օրհնում եմ քեզ: Քո Սիրելին: ic

Մայիսի 19, 1993

(Չնայած Հիսուսն ինձ թելադրում էր իմ Իսրայել գալուց ի վեր, ես չէի կարողանում զգալ Նրա Ներկայությունը: Սա մի իսկական անապատ է):

Lama sabachthani?
(Ինչո՞ւ լքեցիր Ինձ)
Մի՞թե Դու ուղեկցեցիր ինձ մինչև
Քո երկիր Իսրայելը, որ լքես ինձ:
Եթե Դու այն Սուրբն ես,
որ բերեցիր ինձ Քո հայրենիքը,
որ քայլեմ այն տեղերով,
որ Դու ես քայլել,
որ շնչեմ և զգամ այն երկրի օդը,
որը Դու շնչել ես ժամանակին,
և համտեսեմ այն բերքը,
որը Դու Ինքդ ես համտեսել,
նրա համար, որ լքե՞ս ինձ:
Ուրեմն ինչո՞ւ ես Դու այդքան
հեռու ինձնից: Ինչո՞ւ ես լուռ:

ՅԵՇՈՒԱ[1] ՅԵՇՈՒԱ,
lama sabachthani?
Մի՞թե Դու ինձ բերեցիր
մինչև Ձիթենյաց լեռը, որ լքե՞ս ինձ:
Տեր իմ, դա նրա համար է,
որ ես միայնությո՞ւն զգամ,
Գեթսեմանիի
Քո տագնապնե՞րը զգամ:
Դու ուզո՞ւմ ես, որ ես զգամ
այն սարսափելի մերժումները
և դավաճանությունները,
որոնց միջով Դու անցար:
Դու իմ հոգուն ցույց ես տալիս,
թե Քո զգայուն Սիրտն
ինչի՞ միջով անցավ այդ գիշեր:
Ուրեմն ինչո՞ւ ես Դու
թաքնվում ինձնից Քո երկրում:

Դու գիտես, թե որքան են
իմ հոգին ու սիրտը մաշվում
Քո հանդեպ ունեցած սիրուց,
և որքան եմ ես փափագում,
ո՜հ, որքան եմ ես փափագում
անընդհատ Քեզ նայել,
խելագարության աստիճան:
ՅԵՇՈՒԱ, Դու գիտես,
թե իմ հոգին
որքան ծարավի է Քեզ:
Ուրեմն ինչո՞ւ ես
Թիկունքդ շրջել դեպի ինձ:
ՅԵՇՈՒԱ,
ինչո՞ւ ես Դու հաճույք զգում
իմ սրտի ամեն մի թելը կտրելուց:

Դու ինձ Թիրախ դարձրիր
Քո Աղեղնաձգության համար
նետելով նետ նետի հետևից:
Մի՞թե ես պետք է ծածկեմ
ինձ Քո նետերի տարափից:
Երբ ես այսպես կորցրեցի Քեզ,
հիմա ինչպե՞ս կարող եմ
միայնակ մնալ:
Մի՞թե Դու ինձ բերեցիր
այս ամողջ ճանապարհը,
որ լքես ինձ:
ՅԵՇՈՒԱ,
հիմա երբ Դու գնացել ես,

[1] Հիսուս (արամերենով)

ես կորցրել եմ կյանքի ողջ համը...
Բայց ասա՛ ինձ գոնե
Քո հանկարծակի
որոշման պատճառը:
Մի՞թե Դու արդար ես համարում
բերել ինձ Քո հայրենիքը
և արհամարհել ինձ:
Հնարավո՞ր է, որ Դու փոխել ես
Քո որոշումն իմ հանդեպ:

Ո՛վ իմ հավատարիմ ՅԵՇՈՒԱ,
Ես կանչում եմ Քեզ,
բայց Լռությունն է միակ բանը,
որ լսում եմ: Ես կանգնած եմ
Քո հայրենիքի սրտում, բայց Դու
ուշադրություն չես դարձնում
իմ թշվառ հոգուն:

Երբ ես անցա
Երուսաղեմի դարպասներով
և հազիվ էի մտել Քո երկիրը,
հազիվ էի մտել Քո հողը,
իմ գովաբանություններն
արձագանքեցին
յուրաքանչյուր ականջում:
Դու ինձ թույլ տվեցիր
հույսեր օրորել
Քո քաղաքը մտնելիս:
Բայց հազիվ էի ես մտել,
երբ Դու զրկեցիր իմ հոգին
Քո Լույսից:
Երբ մարդ զրկված է
Քո Ներկայությունից,
մի՞թե Քո Սիրտը չի զգում դա:

Քո սեփական նախաձեռնությամբ
Դու արահետ բացեցիր ինձ համար,
որ հասնեմ Քեզ,
և հիմա Դու հաճույք ես զգում՝
ինձ խավարի մեջ մխրճելով:
Գիշերն է իմ ճանապարհի
միակ ուղեկիցը:
Եթե Դու անցնես իմ կողքով,
ես Քեզ չեմ տեսնի...
Եթե Դու դիպչես ինձ,
ես Քեզ չեմ զգա,
ոչ էլ կնկատեմ Քո Ներկայությունը:
Ուրեմն ինչպե՞ս եմ ես քայլելու
հիմա առանց Քո Լույսի:

Ես երկյուղով եմ լցված
այս դատարկության առաջ:
Ինչո՞ւ ես այդպես վարվում
Քո հավատարիմ ընկերոջ հետ:

ՅԵՇՈՒԱ, այսպե՞ս ես Դու վարվում
Քո հյուրերի հետ:
Եսկասեմայամսին
ՄերՀավիտենականՀորը
և այն մյուսին[1] նրան,
ում որպես խորհրդատու,
Դու տվել ես ինձ:
Եթե ես անմեղ եմ,
նրանք ինձ հույս կտան:

(Հենց այդ առավոտ ես պատմեցի այս մասին հայր Օ՛Քերոլին և լաց եղա):

(Հետո՝ ավելի ուշ՝ այդ նույն օրը, ես տեսա իմ ՅԵՇՈՒԱՅԻՆ իմ հոգու աչքերով Իր Գերեզմանի մուտքի մոտ և մինչ ես այնտեղ կմտնեի, Նա բարձրացրեց Իր Ձեռքը, Իր Բութ մատով դիպավ ճակատիս և մի քանի անգամ արագորեն խաչակնքեց՝ օրհնելով ինձ):

(Այդ նույն գիշերը)

Խաղաղություն քեզ, փոքրի՛կս: Արիացի՛ր: Մի՛ վախեցիր: Լսի՛ր Իմ Խոսքերը: Դու հարցաքննում ես Իմ Հավատարմությո՞ւնը, Իմ Նվիրվածությո՞ւնը և Իմ Բարությո՞ւնը: Մի՞թե չես լսել, որ դրանք անսահման են: Հասկացի՛ր, թե Ես Ինքս ինչպես էի տրտմած քո հատուցման այդ պահերին[2]: Խունկ և ամոքիչ բուրմունքներ Ես շատ չեմ ստանում Իմ Սեփական երկրից: Ես օգտագործեցի քեզ, որ մեղմացնեմ Իմ Խանդոտ Սերը, ո՛հ... և հիշեցնեմ քեզ Իմ անցյալի դեպքերի մասին:

Դու Իմ հյուրն ես, այնպես չէ՞: Մի՞թե լավ տանտերը առատաձեռնորեն չի վերաբերվի իր հյուրերի հետ և հոգ տանի, որ նրանք ոչնչի պակաս չունենան: Բայց Ես մտադիր էի ծաղկեցնել քո հոգին... Սակայն հիմա Իմ հերթին Ես քեզ հարց պիտի տամ, միայն մեկ հարց: Դու կասկածո՞ւմ էիր Իմ Ներկայությանը Իմ Գերեզմանի Մուտքի մոտ[3]: Պատասխա՛ն տուր Ինձ...

Այո՛, Տե՛ր, մի քիչ:

Ճշմարիտ եմ ասում քեզ, Ես օրհնեցի քեզ ճակատիդ վրա Իմ Բութ մատով ավելի քան մեկ անգամ[4]... Տեսնո՞ւմ ես, թե որքան եմ Ես քեզ

---

[1] Հայր Միշել Օ՛Քերոլին:
[2] Երեք օր Հիսուս թաքնված էր ինձնից:
[3] Նա սպասում էր, իսկ ես լուռ էի:
[4] Քրիստոսի հատուկ օրհնությունը իմ ճակատի կենտրոնում այնպիսի հսկայական զորություն ունեցավ և ունի, որ այն «հարվածեց» մի տիկնոջ Օմահայում, երբ նա եկավ ինձ մոտ և համբուրեց իմ ճակատը հենց այն տեղում, որտեղ Հիսուս դրել էր Իր Բութ

հանդուրժում: Բայց այն, ինչ ես խնդրում եմ քեզանից, այնքան քիչ է[1]... Սովորի՛ր Ինձնից: Սովորի՛ր Իմ Համբերատարությունից, Իմ Հանդուրժողականությունից, և հասկացի՛ր, թե որքան համբերատար եմ Ես քո հանդեպ:

(Այս պատգամից անմիջապես հետո, որը տրվեց գրեթե կեսգիշերին, Հիսուսն ինձ խնդրեց արթուն մնալ մեկուկես ժամ, որ ընկերակցեմ և երկրպագեմ Իրեն: Ես իմ գրկում պահեցի Սերն ու Հավատարմությունը, որը ներքև էր խոնարհվել երկնքից... Եվ ողջ մարդկության Ամուսինը հրճվում էր սիրված լինելու համար՝ երկարաձգելով Իր այցը: Եվ ես իմ թշվառության մեջ կրկին ու կրկին հավատարիմ և հավիտենական Սիրո հավաստիացումներ ստացա[2]:)

Մայիսի 20, 1993

(Երուսաղեմ)

Իմ Թագավո՛ր:

Ես եմ: Քո Թագավորը Իր Խաղաղությունն է տալիս քեզ:
Սիրի՛ր Ինձ... Ճաշակի՛ր Իմ Արցունքների դառնությունը: Թո՛ւյլ տուր Ինձ, սիրելի՛ս, հանգստանալ քո սրտում: Ո՛Հ, որքա՜ն եմ Ես սիրում այդ վայրը: Սփոփի՛ր Ինձ, հարազա՛տս, սփոփի՛ր Ինձ, աղջի՛կս...

Աստվա՛ծ իմ, ո՞վ կա Քեզ նման:

Լսի՛ր Իմ Սրտին և հասկացի՛ր, թե ինչու եմ Ես Արցունքներ հեղում: Դու այս գիշեր ևս կերկրպագե՞ս Ինձ: Արի՛, հարազա՛տս, քո Հիսուսն այստեղ է՝ քո սենյակում[3]... Ես լաց եմ լինում, որովհետև քո Սուրբը չափազանց վիրավորված է[4]... Մուրացկանի պես Ես կանգնած եմ յուրաքանչյուր դռան մոտ՝ սեր մուրալով, սակայն Ես շատ պատասխաններ չեմ ստանում: Ա՛Հ... այնքա՜ն քչերն են լսում... Արի՛ և երկրպագի՛ր Ինձ, արի՛ և սպեղանի՛ դիր Իմ Վերքերին՝ Ինձ սիրելով... Զգա՛ Իմ Ներկայությունը... Յեշուան քո կողքին է, իսկ դու Իմ զավակն ես, որին Ես վստահել եմ Իմ Շահերը: Մի՛ վախեցիր, Ես այնքան քնքուշ եմ ու բարի: Վերականգնի՛ր Իմ Տունը, ո՛վ Իմ Սիրո մանուկ, Իմ մնացո՛րդ, Իմ սե՛րմ...

մատը՝ օրհնելով ինձ: Նա ընկավ ավանդատան մուտքի մոտ՝ Հոդու կողմից անզգայացած քսան րոպե: Քահանաները ականատես եղան այս դեպքին: Դա հունիսի կեսին էր՝ Հիսուսի օրհնությունից երեք շաբաթ անց:

[1] Քանի որ ես ինձ լքված էի զգում Նրա կողմից, ես չէի կարողանում տանել կանադացի ուխտավորների պահանջները՝ իմ ստորագրությունը տալու նրանց: Անգամ այս փոքրիկ առաջադրանքը ծանր էր դարձել ինձ համար:

[2] Հետո Հիսուս երեք գիշեր անընդհատ եկավ նույն պաշտամունքին, որպեսզի իմ կողմից սիրված զգա:

[3] Այսինքն՝ սրտում:

[4] Հիսուսն ինձ վստահեց Իր ցավը:

Աստվածների Աստվածը
խոսում է ինձ հետ.
ինչպե՞ս կարող եմ ես լուռ մնալ:
Էլ ի՞նչ ցույց չի տա
Նա արդարներին:
Դու հրաշքներ ես գործել
մեռածների համար:
«Ո՞վ կարող է համեմատվել
Նրա հետ երկնքում,
Աստծո զավակներից
ո՞վ կարող է մրցել Նրա հետ»[1]*:*

Եղի՛ր հիմա ճրագի պես և փայլի՛ր՝ փառաբանելով Ինձ, կանգնի՛ր և պաշտպանիր Ինձ: Ա՛հ, Վասիլի՛կի, ես կասեմ քեզ այն ամենը, որ պետք է անես, և դու պիտի անես դրանք մեծ արիությամբ: Ոչմեկը կուլ չի տա քեզ, և նրանք պիտի իմանան, որ Ես եմը քայլում է քեզ հետ: Իմ Խաչը պիտի տանի քեզ դեպի սրբացում. խոսի՛ր առանց վախի: Ամեն ինչ, որ ես քեզ պիտի տամ, պիտի դա Իմաստությունից: Ուստի աշխատասե՛ր եղիր և ծառայի՛ր Ինձ հիմա, Իմ այնքան թանկ փոքրիկս... Բնակվի՛ր Իմ մեջ և մի՛ վախեցիր. ե՛ս, Ես երբեք չեմ լքի քեզ: Քարոզի՛ր այն ձևով, ինչ ձևով ես քեզ քարոզեցի, դաստիարակի՛ր այն ձևով, ինչ ձևով ես քեզ դաստիարակեցի, և պատրաստի՛ր Ճշմարտության աշակերտներ... Եկեղեցին պիտի վերակենդանանա՛:

Խաղաղություն: Աղոթի՛ր և գովաբանի՛ր Ինձ: Մե՞նք, մե՞զ:

Այո՛:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ, որ քո գործը հաստատուն լինի: ic

Մայիսի 25, 1993

Էլի՛, օ՜, Էլի՛, Աստվա՛ծ իմ,
Քո բարությամբ
արի՛ և պաշտպանի՛ր ինձ:
Դու, որ վեր բարձրացրիր
ինձ գերեզմանից, մի՛ թաքցնիր
Քո Սուրբ Դեմքն ինձնից:
Արի՛ ինձ մոտ: Ինչո՞ւ եմ ես Քեզ
ինձնից այսքան հեռու զգում:

Շատերին ես առեղծված եմ թվում,
արտասովոր երևույթ,
բայց Դու Ինքդ ես խնդրել
ինձ լինել Քո Արձագանքը,
այդպես չէ՞:

[1] Սաղմ. 88:7

Ուրեմն ինչո՞ւ է Քո Արձագանքն
անհանգստացնում
նրանց ականջները,
երբ ես հռչակում եմ
Քո հրաշքները բացահայտորեն:
Քո հսկայական Զորությո՞ւնն է,
որ վախեցնում է նրանց:
Քո վիթխարի Ու՞ժն է,
որ դողացնում է նրանց,
թե՞ Քո Ձայնն է,
որ որոտում է Երկնքից
ողջ երկրի վրա՝ ամեն մի ազգի մեջ
և ամեն մի քաղաքում,
որ տանջում է նրանց:

Գուցե այդ Քո
Վեհապանծ թափո՞րն է,
որ հայտնվում է մեծ զորությամբ
և վախի մեջ թողնում նրանց:
Գուցե նրանք
սարսափած են այն պատճառով,
որ ես աղաղակո՞ւմ եմ
երկրի չորս անկյուններում,
որ շուտով Երկինքը հեղեղվելու է
Քո գալուստով,
և որ պետք է շտապ ապաշխարել:

Կամ գուցե Քո կողմից հեղվող
Օրհնությունների
և Ողորմության պատճառո՞վ է,
որ նրանք կասկածներ ունեն:
Ասա՛ ինձ, այդ Հորից եկող
Տառապանքի Կանչե՞րն են,
որ նրանք չեն կարողանում ընկալել:
Միասնության,
Խաղաղության և Հաշտության
Քո կանչերը արձագանքում են
երկնքում և երկրի վրա,
սակայն ո՞վ է լսում,
ո՞վ է կարողանում հասկանալ:

Նրանց մարմինը փտում է
իրենց մաշկի տակ, բայց,
երբ Դու կանչում ես՝ փրկությո՛ւն,
ոչ մեկը չի լսում...

Ա՛հ, Էլի՛,
այնքա՛ն շատերն են սպասում,
որ ես կընկնեմ սխալների մեջ

և կգնամ դեպի անկում,
քանի որ նրանք
երբեք չեն հասկացել,
թե ինչպես կարող է
Քո Ձեռքը բռնել մեղավորի ձեռքը:

Օ՜, Էլի՛,
նրանք այդպես էլ չհասկացան,
թե ինչու Դու և ես
անհանգիստ վազում ենք
ամեն մի փողոցի անկյունով՝
արթնացնելով մեռածներին,
և թե ինչի՞ համար է
այս համագործակցությունը:
Եվ թե ինչու եմ ուղարկված՝
ամեն մի քաղաքի
խաչմերուկներում հայտարարելու,
որ Քո Թագավորությունը մոտ է:

Ուրեմն ինչի՞ համար են
ինձ մեղադրում:
Ինչո՞ւ են ինձնից վախենում
և վանում ինձ: Օ՜, Էլի՛, նրանք
վարվում են ինձ հետ, ինչպես
հասարակության տականքի հետ:
Վիրավորանք վիրավորանքի վրա,
զրպարտանք զրպարտանքի վրա:
Ես ոչ թե անհանգստանում եմ
իմ սեփական անվան
կամ համբավի համար,
այլ նրա համար, որ ինձ
առաջնորդում է Քո Սուրբ Հոգին.
այդ Քո Հոգուն են
նրանք հայհոյում:
Նրանք ոչնչացնում են
Քո Հոգու Գործերը
և ցած են թափում այն քարերը,
որոնք վերակառուցել են
Քո խորանները[1]*:*

Օ՜, Էլի՛, այնքա՜ն Կարեկից,
ինչո՞ւ ես երբեմն
ինձնից այդքան հեռու:
Տե՛ս, տե՛ս, թե ինչպես եմ ես
պայքարում այս անապատում.
արի՛ ու փրկի՛ր ինձ
այս տատասկներից ու փշերից,

[1] Խորաններ նշանակում է հոգիներ:

որոնք շրջապատում են ինձ՝
խեղդելով և պատառոտելով ինձ:
ԲԱՑ ԱՐԱ ճանապարհն ինձ համար:

Մի՞թե ես պետք է ողջ օրը
ողբամ նրանց խլության պատճառով:
Մի՞թե ես մարդ չեմ,
ուստի մի՞թե ես
իրավունք չունեմ թույլ լինելու,
մի՞թե ես իրավունք չունեմ
երբեմն վշտանալու:
Մի՞թե իմ սիրտն
իրավունք չունի թուլանալու:

Օ՜ Էլի՛, դեռ որքա՞ն պետք է
մենք սպասենք մինչև Հաղթանակը:
Դեռ որքա՞ն պետք է
մենք սպասենք:
Դեռ որքա՞ն է այս Խավարը տևելու:

Քո Որդու Վերքերն
անհավատալիորեն խորն են:
Քո Որդու և Մեր Օրհնյալ Մոր
Արցունքները Արյուն են դարձել,
ուրեմն դեռ որքա՞ն, Էլի՛,
Դու պիտի համբերես
այս տեսարանին:
Դեռ որքա՞ն մենք պետք է
սպասենք այս Հաղթանակին:

Դավաճանների մի գաղտնի դավ
ներթափանցել է
Քո Սրբարանի Սրտի մեջ:
Օձերի և իժերի նման
սողալով միջանցքներում՝
նրանք սպասում են,
որ հարվածեն Ճշմարտությանը,
գլխիվայր շրջեն Մշտնջենական
Ճշմարտությունը և վերածեն Ստի՝
կանգնեցնելով իրենց
Ավերածին Պղծությունը
Քո Սրբարանի սրտում,
որպեսզի ոչնչացնեն Քո Որդու
Մշտնջենական Զոհաբերությունը:
Էլի՛, Քո Տան մեջ
խաղաղություն չկա...
Եվ շուտով խավարը
կպատի Քո Տունը
և սգավոր ու լքված այրու պես

Քո Տունը կկրի Իր սև քողը:
Ուրեմն մի՞թե
Դու դեռ չես միջամտելու, Էլի՛:

Արդարության Իմ Ջայնը պիտի լավի հզոր երկրաշարժի նման, և այդ դավաճաններին հարված պիտի հասցվի այն չարիքի համար, որ նրանք հասցրել են Իմ զավակներին, որոնց անմեղ արյունը հեղվում է որպես զոհաբերություն: Ես վրեժխնդիր պիտի լինեմ Իմ Տան համար, բայց աշխարհը դեռևս պետք է հնձի իր ցանած բերքը: Ես չեմ կարող ներել նրանցմեղքերը, եթե աշխարհը չապաշխարի:

Ես այդ օձերի բույնն եմ ուղարկում նրան, ում քնքշորեն սիրում եմ: Ես Իմ Խոսքի հետ միասին ուղարկում եմ քեզ դեպի անօրենության խորքերը: Ես ուղարկում եմ քեզ՝ որպես Իմ Պատգամատարի, որ տարածես Իմ Պատգամը: Իմ շատ սիրելի՛ զավակ, որտեղով էլ որ անցնես, Ես՝ Տերը, քո հետքերի վրա պիտի թողնեմ մոլեգնող մի Կրակ, որպեսզի կլանի քարե սրտերը՝ արմատախիլ անելով անաստվածությունը: Ես պիտի ստիպեմ նրանց ընկնել Իմ Գրկի մեջ՝ իրենց Աստծո Բազուկների մեջ, և ա՜հ, սարսափելի պիտի լինի դա: Մի ակնթարթում Ես նրանց պիտի դարձնեմ նշանակված աշակերտներ և նրանց պիտի ուղարկեմ, որ պաշտպանեն Իմ Խոսքը և ստանձնեն Իմ գործը: Աղջի՛կս, այնպես, ինչպես դու սովորեցիր Ինձնից, Ես կսովորեցնեմ նաև մյուսներին: Հիմա Ես գայլերի մեջ եմ նետում նրան, որով Իմ Հոգին ամենաշատն է հրճվում և քնքշորեն սիրում, որպեսզի բացահայտեմ Իմ Սուրբ Դեմքը: Ապաշխարի՛ր, սերո՛ւնդ, ձեր մեղքերը չորացրել են ձեր Հոգին: Ինչո՞ւ պետք է մեռնեք, սերո՛ւնդ: Ապաշխարե՛ք և պիտի ապրեք: Ապաշխարե՛ք, որովհետև հիմա շատ ժամանակ չի մնացել: Կործանիչը ամբողջապես կբացահայտի իրեն այս գալիք օրերին: Օ՛հ, Վասո՛ւլա: Ես ո՞ւմ կարող եմ ստիպել, որ լսի և զգուշանա: Ո՞ւմ հետ պետք է խոսեմ, և ո՞վ կլսի:

Քանի որ ամեն ինչ ավարտին է մոտենում հիմա, և ավարտը մոտ է, գնա՛ և հայտարարի՛ր Իմ Պատգամը նույնիսկ ամեն մի հրապարակում: Գնա՛ և լայնորեն հրապարարակի՛ր Իմ Գթառատ կանչերը: ...Իմ Տունը չարաշահողների թթխմորը զորեղ է, ուստի զգո՛ւյշ եղիր և աչքերդ բա՛ց պահիր: Հասկացի՛ր, թե ինչու եմ Ես ուղարկում Իմ Որդուն և ձեր Սուրբ Մորը, որ հսկեն աշխարհը ձեր օրերում: Այդ Իմ Օրհնությունն է, որ սահում է ողջ աշխարհի դեմքի վրայով: Ուստի վե՛ր բարձրացրեք ձեր աչքերը դուք բոլորդ և երբ այդպես անեք, պիտի տեսնեք Երկինքը լայն բացված և Իմ Ուխտի Տապանակը իր ողջ փառքով փայլելիս, որը ձեր մեջ Իմ Ներկայության խորհրդանիշն է[1], Իմ Ողորմության և Իմ Փրկության խորհրդանիշը՝ Նրա, ով կարեկցում է ձեզ բոլորիդ:



[1] Վկայակոչում Մատթ. 24:30

Մայիսի 27, 1993

Խաղաղություն քեզ: Ես Ալֆան եմ և Օմեգան:

Մնա՛ Իմ մեջ, որպեսզի հայտարարես Իմ Պատգամն այնքան հստակորեն, որքան որ հարկ է: Թող Իմ Խոսքը դուրս գա, թող յուրաքանչյուր ոք լսի Իմ Կանչը և հասկանա, թե Ես որքան շատ եմ սիրում նրանց: Թող նրանք իմանան, որ Իմ Հինգ Վերքերը լայն բացված են:

Մարդիկ դավաճանելու և Ինձ հարվածելու անսպառ կարողություն ունեն... Սրտիս ցավով ու դառնությամբ Ես պետք է ասեմ ձեզ այն ամենը, ինչ տեսնում եմ Իմ Սեփական Տան մեջ: Այսօր Բռնակալն արդեն ոտնակոխ է անում Իմ Մարմինը և ցանկանում է ամբողջովին ոչնչացնել Իմ Մշտնջենական Զոհաբերությունը: Նրանցից մեկը, որն ապրում է Իմ հարկի տակ, դավաճանում է Ինձ: Նա խաղաղության կոչ է անում, բայց փնտրում է միայն չարը: Նա խունկ է ծխում, սակայն այդ նրա համար է, որ կանչի Սատանային, որպեսզի ավելի շատ զորություն ձեռք բերի:

Ո՜հ, Տե՛ր, դժվարանում եմ հավատալ, որ դա տեղի է ունենում...

Բայց և այնպես, դա տեղի է ունենում: Թվում է՝ դու չես հասկանում... Նա իր հետնորդների հետ միասին մտադիր է նստել Իմ Գահին և ղեկավարել աշխարհը՝ մարգարեի հագուստ~ ներ հագած: Եվ ա՜հ... իմ հովիվներից շատերն են մոլորված նրանց կեղծ ուսմունքներով և սխալներով: Նրանք թողնում են ճիշտ ուղին և թափառում են՝ հետևելու մի ավանդության, որն Ինձնից չի գալիս: Նրանք լքում են այն սուրբ օրենքները, որոնք Ես եմ իրենց տվել:

Ես զգուշացրել եմ ձեզ այդ կեղծ ուսուցիչների և մարգարեների մասին: Ես զգուշացրել եմ ձեզ, որ վերջին օրերին Բաբելոնը պիտի կանգնեցվի Իմ Սրբարանի սրտում՝ Իմ Սուրբ Վայրը վերածելով գողերի որջի, <u>գևերի ապաստարանի</u>: Ա՜հ, աղջի՛կս... մի որջ ամեն մի չար հոգու համար, որ բնակվի ու թագավորի... Նրանք Իմ Սեփական Տան մեջ զբաղված են առևտուր անելով: Այդ առևտրականները իրենց յուրայիններին առաջ են քաշում Իմ Տան մեջ, մինչ ծուղակն են գցում Իմ մարդկանց կյանքը: Նրանք ընկել են Իմ մարգարեների հետևից, նրանք սպանում են Իմ պատգամատարներին և պահում իրենց սեփական կեղծ մարգարեներին, որոնք տարածում են հերետիկոսություն և մոլորություններ: Աշխարհի առաջ նրանք անարգում են Իմ մարգարեներին՝ ստելով աշխարհին, որը սիրում է լսել զրպարտություն և վիրավորանք: Նրանք ոչնչացնում են Իմ Ավանդությունները, որպեսզի ամբարտավանություն և մարդկային ուսմունքներ հաստատեն: Այս ամենը նրանք անում են Իմ Գահի առաջ... Այդ առևտրականները շատերին են խաբում ճշմարտանման փաստարկներով: Նրանք իրենց յուրայիններին նստեցնում են լավագույն տեղերում, որ իշխեն Ստի ու Կեղծիքի գայիսոնով:

~ Ես քեզ նշանակել եմ, որ լինես Իմ Արձագանքը, ուստի գնա՛ և հայտարարիր այն, ինչ լսել ես: Ասա՛ նրանց, որ դուք բոլորդ ապրում եք կանխասացված Մեծ Ուրացության ժամանակներում: Ասա՛ Իմ հովիվներին, որ բացեն իրենց աչքերն ու ականջները Իմ տառապալից

կանչերի հանդեպ, քանի որ շուտով նրանց պիտի ստիպեն, որ օձի թույն ուտեն ու խմեն: Համախմբե՛ք ձեր համայնքները և նախապատրաստե՛ք նրանց աղոթքի և ծոմապահության հսկումների: Սատանան արդեն սկսել է յուրաքանչյուրին փորձության ենթարկել: Նա գալիս է՝ ձեզ բոլորիդ ցրելու և բաժանելու: Նա գալիս է դեպի Իմ Գահը՝ Իմ Տապանակի մեջ, որ վաճառի Իմ Արյունը և հեռացնի Իմ Աշխնջենական Զոհաբերությունը[1]:

Իմ ժողովո՛ւրդ... Իմ ժառանգնե՛ր... Ձե՛զ եմ Ես կանչում, քահանանե՛ր և Իմ Խորանի՛ ծառայողներ, դուք, որ Ինձ վեր եք բարձրացնում ամեն օր, երբեք չլքեք Ինձ, երբեք չվաճառեք Ինձ[2]... Հրեշտակների ողբը արդեն լսվում է, և ողջ երկինքը դողում է այն գալիք բաներից, որ նրանք տեսնում են: Նույնիսկ դևերն են սարսափում և դունատվում...

Նա՝ թշնամին, ով հավակնում է, որ ավելի մեծ է, քան որևէ բան, որ երբևիցե պաշտվել է, պիտի թագադրի իրեն Իմ Սրբարանում: Նա ճանապարհին է՝ ձեռքերում բռնած օղապարանը, և գնում է դեպի այն մեկը, որ նշանակված է Իմ կողմից[3] և զսպում է ըմբոստությունը, որպեսզի այն չբռնկվի: Շրջահայաց և խիզախ է նա: Եվ նրա կյանքը հորդում է որպես զոհաբերություն[4]... Ես օրհնում են նրան, որ ամուր պահում է Իմ Ավանդության անփոփոխ Պատգամը, սակայն Սատանան ուզում է լռեցնել նրան, որպեսզի կարողանա նրանց բերանով, ովքեր վաճառում են Իմ Արյունը, տարածել իր[5] մոլորությունները և ձեզ բոլորիդ տանել դեպի կործանում:

Սա ժամն է Սատանայի, որը պիղծ շարժառիթներով ուզում է կործանել Իմ արարչությունը: Աղաղակի՛ր, աղջի՛կս, քանի որ այդ օրը մոտ է, և այն գալիս է՝ ոչնչացնելու ազգ ազգի հետևից: Իմ Սիրտը կոտրված է... Սերը չվախեցավ մեռնելուց, այդպես էլ դուք, Իմ ընկերնե՛ր և Իմ հովիվնե՛ր, մի՛ վախեցեք, հետևե՛ք Ինձ: Ձեր պարտականությունը Իմ Խոսքը և Իմ Եկեղեցին մինչև մահ պաշտպանելն է: Մի՛ ասեք. «Նախ գնամ և ողջունեմ իմ յուրայիններին»: Ես ասում եմ ձեզ. «Հենց որ ձեռքը հովվի գավազանի վրա լինի, որևէ մեկը, որ հետ նայի, արժանի չէ Ինձ կամ պիտանի չէ Իմ Արքայությանը»: Հետևե՛ք Ինձ Իմ Արյամբ ներկված ոտնահետքերով մինչև Գողգոթա:

Աղջի՛կս, Իմ օրհնյա՛լ, քո Մխիթարիչը գոհ է, որ դու սփոփեցիր Իրեն և թույլ տվեցիր, որ Նա օգտագործի քո ձեռքը: Ա՜հ... Վասիլի՛կի, Արյան այս Արցունքները, որ Ես ամեն օր հեղում եմ, անօրենության և չարության պատճառով են[6]... Դարաշրջա՛ն, օ՜, դարաշրջա՛ն: Ինչո՞ւ ես լքել քո Աստծուն:

(Այստեղ Քրիստոսը շրջվեց դեպի ինձ և ասաց.)

Հրեշտա՛կս՝ Իմ կողմից ձևավորված, Ինձ մի՛ վշտացրու և Իմ Ձեռքը բաց մի՛ թող հիմա: Ոմանք պիտի քարկոծեն քեզ, ոմանք ցեխի մեջ պիտի

[1] Հիսուսն այնպիսի ցավի մեջ էր, որ լաց էր լինում:
[2] Հիսուսի արցունքներն ավելի շատացան:
[3] Պապի՝ Հովհաննես Պողոս II-ի:
[4] Պապը:
[5] սատանայի:
[6] Մի քանի րոպե լռություն տիրեց, հետո նորից, շատ վշտացած Տերը բացականչեց:

գցեն, ոմանք պիտի բարձրացնեն իրենց բռունցքները և պիտի սպառնան քեզ, սակայն մի՛ վախեցիր նրանցից: Դու ասում ես, որ նրանք քո գլխին են թափում վիրավորանքներ իրար հետևից, զրպարտություն զրպարտության հետևից: Ես ասում եմ քեզ. այստեղ երկնքում, նրանք միայն ավելացնում են պարգև պարգևի վրա քեզ համար և օրհնություն օրհնության վրա՝ Իմ կողմից քո ճակատին: Ուստի առանց վախի հռչակի՛ր Իմ Պատգամը, վկայի՛ր, հրեշտակս, և Ես դատավճիռ չեմ կայացնի շատ հոգիների համար քո ստացած վերքերի հաշվին: Ես քեզ արդար վարձ կտամ այն վերքերի համար, որոնք դու ստանում ես Իմ ընկերների Տանը: Ես ընտրել եմ քեզ, որ լինես Իմ Զարչարանքների զոհը, այն զոհասեղանը, որի վրա Ես պիտի դնեմ Միասնությունը: Ուրեմն դրանից ավելի ի՞նչ կարող ես խնդրել: Ես ավելի ի՞նչ կարող էի տալ քեզ, որ տակավին չեմ տվել:

Իմաստություն է տրվել քեզ, և Իմ Հոգին քեզ հետ է, որ կարողանաս դիմանալ աշխարհի խարազանմանը: Եվ ա՜հ... Ես քեզ տվել եմ Ինձ ծարավելու և Ինձ կարոտելու պարգևը՝ մի անգին նվեր: Ուստի քայլի՛ր Ինձ հետ և թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քեզ և ուղարկել ազգից ազգ՝ ասելու նրանց, որ <u>այն Աստվածը,որինն նրանքմոռացելեն,երբեքչիմոռացել իրենց</u>: Հիշեցրո՛ւ նրանց, որ Տիրոջ Սիրտը Ողորմություն է: Այո՛, ասա՛ նրանց, որ Ես քնքուշ և խոնարհ եմ Սրտով:

Հիսուս է Իմ Անունը: ic

Մայիսի 28, 1993

Խաղաղություն քեզ, քարոզի՛ր և հայտարարի՛ր, որ այն Աստվածը, որին իրենք մոռացել են, մոր նման պիտի դա նրանց հանդիպելու: Իմ Վերադարձը մոտալուտ է: Եթե Ես ցույց եմ տալիս Ինձ քո միջոցով, այդ նրա համար է, որ ամեն մեկին կանչեմ դեպի Իմ Սիրտը և փրկեմ նրան իր ուրացությունից:

Այսօր բազմապատկվում է մանկասպանության միջոցների օգտագործումը: Մի՞թե Ես պետք է լուռ մնամ: Սարսափելի տեսարաններ են հաղորդվում երեխաներին հեռուստատեսային ծրագրերով՝ ոչնչացնելով նրանց մաքրությունը: Ո՜հ, մտի՛ր Իմ Վերքերի մեջ և կիսի՛ր Իմ տառապանքը: Արի՛ և մխիթարի՛ր Ինձ: ic

Մայիսի 30, 1993

Քո մեջ եմ ես ապաստան գտնում.
Քո Լույսի տակ ես ապրում եմ
խաղաղությամբ և իմ բոլոր
արթուն ժամերին,
Աստվա՛ծ իմ, ես խորհրդածում եմ
Քո Բարության մասին:
Իսկ հիմա ես միայն
մի բանի եմ սպասում՝

ապրելու Քո կողքին:
Եթե ես երբեմն ողբում եմ
մուրացիկի պես՝
Քո առջև արցունք թափելով,
այդ նրանից է, որ Քո կողքին
մի քաղցած և ծարավ
ուղեկից ունես:

Դու ասացիր.
«Ես պիտի ջրեմ Իմ այգին,
Ես մտադիր եմ
ոռոգել Իմ ծաղկի թմբերը»:
Եվ այդպես էլ արեցիր:
Դու ասացիր.
«Ամեն մի ժողովրդի և ազգի վրա
Իմ Պատգամը պիտի տարածվի
մառախուղի պես՝
ծածկելով երկիրը»:
Եվ այդպես էլ եղավ:

Եվ մի՞թե չեմ ասել, որ Ես քեզ վրա ուսմունք պիտի հեղեմ, ինչպես մարգարեություն՝ բացելով քո բերանը Իմ Հավաքույթների ժամանակ, և ծառայություն մատուցելով յուրաքանչյուր ազգի առաջ:

Եվ Դու այդպես էլ արեցիր:

Ուրեմն մոտեցի՛ր Ինձ առաց վախի: Մի՞թե Ես Իմ Սեփական Ձեռքով չեմ տարածել Իմ Պատգամը բևեկնի ծառի նման: Սոսկ մարմնավո՛ր արարած, ուրեմն ինչո՞ւ կասկածել: Բա՛ց արա շուր՝ թերդ և տո՛ւր Ինձ քո պատասխանը:

Ճշմարի՛տ, Տե՛ր Սրբության, որևէ մեկն իմ փոխարեն արդեն սրբության ճանապարհին կլիներ, եթե նրան ցույց տայիր այն, ինչ Ինձ ցույց տվեցիր՝ Իմաստության Գաղտնիքները:

Իմ կողմից քեզ տրված Շնորհը այն բանի համար է, որ Ես ավարտեմ մարդկությանը վերաբերող Իմ մեծ Ծրագիրը: Իմ Պատգամը պիտի լինի պատվանդանի վրա վառվող Ճրագի նման, որ իր լույսն է սփռելու ձեր դարաշրջանի խավարում, Իմ Լույսի մեջ ցույց է տալու Իմ Ներկայությունն ու Իմ Գեղեցկությունը, ցույց է տալու ձեր Աստծուն, ինչպես Նա կա.

Ուղեկի՛ց և
Խաղաղությա՛ն Իշխան,
Հավիտենակա՛ն Հայր
և Խորհրդատո՛ւ:

Արի՛, շարունակի՛ր ասել Գիտության խոսքեր: Եղի՛ր Իմ Արձագանքը[1]... Ա՛հ, մի բան ևս, մի պարզ հիշեցում: Ես և դու միացած ենք: Որևէ մեկը, որ միացած է Ինձ, գնում է այն ճանապարհով, որով Ես եմ գնացել, դեպի Գողգոթա տանող ճանապարհով:

Նա, ով հետևում է Գերագույն Զոհին, դառնում է Զոհի մի մասը: Դու Իմ մի մասն ես, Իմ Մարմնի մնացորդը... Մատուցի՛ր կյանքդ՝ որպես քավություն, և քայլի՛ր Ինձ հետ Մահվան Հովտում[2], որտեղ Ես պիտի լցնեմ Իմ Հոգին, որտեղ Ես պիտի լցնեմ Իմ Սերը, որպեսզի վերակենդանացնեմ յուրաքանչյուր չորացած ոսկոր: Քո աշխատանքն այդ Հովտում է, Վասո՛ւլա: Ես մտադիր եմ հեղեղել այն Կյանքի Գետով: Ես, որ Հարությունն եմ և Կյանքը, մտադիր եմ ծաղկեցնել այդ Հովտի չորացած ոսկորները: Ես ցույց պիտի տամ Իմ Կարեկցանքն ու Իմ Սերը՝ բարձրացնելով մեռածներին իրենց գերեզմաններից, տանելով նրանց նորից Իմ Տունը: Եվ Ինձ հետ Իմ Տանը նրանց սեղանը լիքը կլինի: Նրանց գավաթը Ես պիտի լցնեմ բերնեբերան, և Իմ Սուրբ Սիրտը պիտի լինի նրանց Սրբազան Ուղեկիցը: Այդ բոլոր չոր ոսկորները, որոնք հիմա ցիրուցան ընկած են Մահվան այդ Հովտում, Ես մի մարմին պիտի դարձնեմ: Այո՛, ինչպես Եզեկիել մարգարեի[3] տեսիլքում, Ես քեզ նույն հարցն եմ տալիս. «Կարո՞ղ են այդ ոսկորներն ապրել»:

Ո՛չ, ո՛չ առանց Քո միջամտության: Չեն կարող, եթե Դու նրանց մեջ կյանք չդնես, Տե՛ր իմ, քանի որ նրանք շատ չոր են և անկենդան:

Ես վերակենդանացնելու եմ նրանց:

<u>Ես եմ Հարությունը</u>:

Ես նրանց վրա ջլեր պիտի դնեմ, այնպես որ ցիրուցան եղած ոսկորները իրար պիտի միանան[4]: Հետո նրանց վրա մարմին կաճի, և Ես պիտի ծածկեմ նրանց մաշկով ու նրանց շունչ տամ, որպեսզի ապրեն: Ես նրանցից[5] մեկ Մարմին պիտի պատրաստեմ... և նրանց նորից ետ պիտի բերեմ կյանքի: Ես պիտի ուղարկեմ Իմ Սուրբ Հոգին, որպեսզի մի շատ զորեղ Շունչ փչի Նրա[6] ռունգերից ներս, որը պիտի վերակենդանացնի Նրան և մեկ անգամ ևս կանգնեցնի Իր ոտքերի վրա, որ Փառաբանի Ինձ: Ես բյուրեղյա մաքրությամբ Ջուր[7] պիտի լցնեմ ձեզ վրա[8] Իմ Գահից, որ մաքրեմ ձեզ բոլոր ապականություններից, և Ես դուրս պիտի թափեմ Իմ Սուրբ Հոգին, որպեսզի Նա ապրի ձեր մեջ: Իմ Սուրբ Հոգին պիտի տրվի ձեզ, որպեսզի դառնա ձեր Սիրտը: Հետո Ես Ինքս պիտի օծեմ այդ Մարմինը, և այն

---

[1] Թվում էր, թե Նա ավարտում էր Իր Պատգամը, երբ կարծես, ինչ-որ մի բան հիշելով, ասաց՝ ա՛հ:
[2] Հիսուս նկատի ունի այնտեղ, որտեղ բոլոր հոգեպես մեռածներն են գտնվում:
[3] Եզեկ. 37:1-10
[4] Ես այնպես հասկացա, որ Տերը խոսում էր մեր բաժանման մասին, եկեղեցու բաժանման՝ համեմատելով մեզ չորացած և ցիրուցան եղած ոսկորների հետ:
[5] Ոսկորներից:
[6] Մարմնի:
[7] Հայտ. 22:1
[8] Աստված խոսում է Մարմնի մասին, որ մենք բոլորս ենք՝ Իր Եկեղեցին:

լույսը, որը ես պիտի տամ ձեր[1] աչքերին, պիտի լինի Իմ Սեփական Աստվածային Լույսը, այն պիտի լինի Իմ ճառագայթող Փառքից[2]: Եվ մարտիկի պես դուք անվախորեն պիտի քայլեք, քանի որ ես պիտի լինեմ ձեր առջևից քայլող Ջահը[3] ցույց տալով ձեզ ճանապարհը: Դուք լամպի լույսի կարիք չեք ունենա, քանի որ ես Ինքս պիտի լինեմ ձեր Լույսը[4]:

Այս բոլոր ազգերը[5], տեսնելով ձեր Գեղեցկությունը, պիտի հետևեն ձեր քայլերին՝ բերելով իրենց գանձերը և հարստությունը[6], մատուցելով դրանք ձեզ իրենց անձի հետ միասին: Եվ ձեր[7] ձեռքում ես պիտի դնեմ մի երկաթե գայիսոն՝ զգեստավորելով ձեզ վեհությամբ և շուքով... Ահա այսպես վերջում Իմ Սուրբ Հոգին պիտի միավորի ձեզանից յուրաքանչյուրին[8], և բոլորը պիտի հավատան, որ Հայրն էր Ինձ ուղարկել[9], բոլորը պիտի ճանաչեն Ինձ՝ որպես Զոհաբերության Գառի[10]:

Ցո՛ւյց տուր Քո Զորությունը հիմա,
Տե՛ր իմ, Դու, որ ամենազորեղն ես:
Արի՛ ու ՄԻԱՎՈՐԻՐ Քո Մարմինը:
Քո Սուրբ Հոգին
զորություն ունի նորոգելու մեզ:
Արի՛, Սո՛ւրբ Հոգի,
և Քո Կրակով հալեցրո՛ւ մեզ,
քանի որ մենք նման ենք
երկաթյա պինդ, անճկելի ձողերի:
Արի՛ և հալեցրո՛ւ մեզ՝
դարձնելով մեկ ամուր ձող:
Հալեցրո՛ւ մեր քարացած սրտերը:

Ա՜հ, Վասո՛ւլա: Ավելացրո՛ւ Միասնության համար քո աղոթքները: Մի՛ դայթակղվիր՝ ասելով, որ ես չեմ լսի քեզ: Քո աղոթքներն Իմ Աչքերում նման են հազարավոր դոհարների, մի քաղցր մեղեդի՝ Իմ Ականջներում: Մի՛ զարմացիր, ես հաստատել եմ Իմ Թագավորությունը քո սրտում, և ես՝ քո Թագավորը, թագավորում եմ քեզ վրա: Ես Իմաստություն եմ շնորհել քեզ, որ քեզ առաջ տանեմ հոգևորապես և ուրիշներին նույնպես: Ես փնտրում էի մեկին, որ ձևավորեմ Իմ Զորությամբ և նետեմ աշխարհ, ինչպես ցանցն են նետում ծովը, որպեսզի Ինձ հոգիներ բերի: Դու դյուրաբեկ ես, բայց ես հրճվում եմ քո դյուրաբեկությամբ:

Հիմա լսի՛ր. Ես պիտի հալեցնեմ ձեզ բոլորիդ[11]: Ես ձեզ բոլորիդ միասին

---

[1] Հիսուս խոսում է Իր Եկեղեցու մասին, Իր Եկեղեցու նորացման, Նոր Երուսաղեմի մասին:
[2] Հայտ. 21:23
[3] Հայտ. 21:23
[4] Հայտ. 21:23
[5] «Բոլոր մյուս ազգերը» նշանակում է, որ վերջում յուրաքանչյուր ոք կճանաչի Քրիստոսին՝ որպես Աստծո Որդու, և այդպիսով Հիսուսի աղոթքը կկատարվի (Հովհ. 17:21):
[6] Հայտ. 21:26
[7] Աստված խոսում էր նորոգված Եկեղեցու մասին:
[8] Վկայակոչում՝ Հայտ. 6:15-17
[9] Հովհ. 17:21, Վկայակոչում՝ Հայտ. 6:16
[10] Հայտ. 6:16 (Աշխարհի դարձը դեպի քրիստոնեություն):
[11] Իմ տեսիլքի երեք երկաթե ձողերը:

պիտի դնեմ մի կաթսայի մեջ, որ հալեցնեմ: Եվ ինչպես կրակն է վառվում կաթսայի տակ, Ես ձեզ բոլորիդ պիտի հալեցնեմ: Իմ Թագավորությունը[1] բաժանված չի մնա: Արի՛, մե՞նք, մե՞զ:

Ընդմիշտ:

Հունիսի 1, 1993

Իմ Տե՛ր և Փրկի՛չ,
Դու դեռ որքա՞ն թույլ պիտի տաս,
որ Սատանան մխալով այրի մեզ:
Ինչո՞ւ ես թույլ տալիս այս հալածանքը:
Փրկի՛ր մեզ, Տե՛ր, հանուն Քո Սիրո:

Խաղաղություն:

Իմ Սուրբ Սրտի՛ ուրախություն, լսի՛ր. մահկանացուների դատողությունները աստվածային չեն: Ես՝ Տերը, ճամփորդեցի երկրով մեկ, որպեսզի զգուշացնեմ աշխարհին, որ Թշնամին վրա է հասնելու մի հսկայական ալիքի պես, որ կուլ տա իրենց, բայց իրականում ոչ ոք չհավատաց, որ Սատանան երբևէ կթափանցի Իմ Սրբարանի դարպասներից: Բայց նա թափանցել է... Նա գնաց ուղիղ դեպի Իմ Սրբարանը Իմ Յուրայինների մեղքերի և սխալների միջով, նրանց, ովքեր մինչև այսօր հակառակվում են այնՈՀովվին[2], որին Ես եմ ձեզ տվել: Ուրեմն, ինչպե՞ս կարող եք ակնկալել, որ Իմ դառները հարգեն այդ քահանաներին, երբ նրանք իրենք են ըմբոստանում Իմ ընտրյալի դեմ: Նրանք ուշադրություն չեն դարձնում Իմ Հովվին ...

Վիշտը համակում է Ինձ, և Իմ Սիրտը խոցոտվում է այն գալիք բաներից, որ տեսնում եմ: Այն, ինչ որ անցյալում եղել է ուրացության մի բեկոր, հիմա դառնալու է համընդհանուր ուրացություն՝ խորապես արմատավորված: Այս ուրացությունն այնքան մեծ է լինելու, որ տարածվելիս կուլ է տալու շատերին...

Տե՛ր իմ, փրկի՛ր մեզ և դադարեցրո՛ւ այդ: Դու Ինքդ ասացիր, որ Դու ավելի հզոր ես, քան Սատանան: Ինչո՞ւ ես սպասում և թույլ տալիս, որ դեպքերը դուրս գան հսկողությունից:

Դավադրությունը, զավա՛կս, դավադրությունն ու դավաճանները քայլում են միասին: Երբ Մահը մագլցում էր Իմ Սրբարանի պատուհաններից ներս և իր ճանապարհն էր հարթում դեպի Իմ Տան սիրտը, Ես ուղարկեցի Իմ Մորը, որ զգուշացնի ձեզ[3]: Ուրեմն մի՛ ասա, որ Ես շատ երկար սպասեցի, աղջի՛կս, այդ (...)[4] նրանք են, որ անխոհեմ եղան: Նրանք չփնտրեցին Իմ Կամքը: Ես զգուշացրել էի նրանց, սակայն այնքան քչերն են ուշադրություն

[1] Եկեղեցին երկրի վրա:
[2] Նորին Սրբություն Հովհաննես Պողոս II Պապին:
[3] Ֆաթիմայի հայտնություններ՞ը:
[4] Աստված ինձ թույլ տվեց, որ չգրեմ դա:

դարձնում Իմ Նախազգուշացումներին: Նույնիսկ այսօր, և ա՛հ... քանի՜ անգամ եմ Ես սգացել նրանց հպարտության համար... (Ես կարող էի ուղղել նրանց Իմ զայրույթով՝ նրանց փոշի դարձնելով, բայց Ես նախընտրում եմ համոզել նրանց քնքշությամբ):

~ Ես ասում եմ քեզ, որ հովիվների մեջ դավաղրություն կա, որոնք ընդդիմանում են իրենց բոլորի առաջնորդին: Եվ Ավերիչը առաջնորդում է նրանց, որ պղծեն Իմ Սուրբ Անունը, իսկ ընբոստության ոգին, որը ծաղկում է նրանց մեջ, մարմնավորվելու է հիմա: Մի՞թե չես կարդացել, մի՞թե չես հասկացել[1]: «Մի ստոր արարած պիտի բարձրանա, և նրա զորքերը պիտի գան և պիտի պղծեն սրբարանի միջնաբերդը: Նրանք պիտի ոչնչացնեն Մշտնջենական Զոհաբերությունը և այնտեղ պիտի տեղադրեն ավերածին պղծությունը... Նա[2] իրեն բոլոր աստվածներից ավելի մեծ պիտի համարի և ամբարտավան հայհոյանքներ պիտի ասի աստվածների Աստծո դեմ, և դա պիտի հաջողվի նրան, մինչև որ անցնի իր բարկությունը, քանի որ պիտի դա բարկության վերջը: Նա մեծ պատիվներ պիտի շնորհի նրանց, ովքեր կընդունեն իրեն՝ տալով նրանց մեծ իշխանություն... Այս ըմբոստ ոգին իր կողմը պիտի գրավի[3] աշխարհի ժողովուրդներին:

Այո՛[4], մեծ նեղությունների ժամանակներ են գալու, ինչպիսիք չեն եղել ազգերի գոյացման օրերից ի վեր: Ես խնդրել էի ձեզ արթուն մնալ և աղոթքի հսկումներ անել, որպեսզի դուք էլ չոչնչանաք: Ուստի պատրա՛ստ և հավատարի՛մ մնացեք: Ուրիշ ի՞նչ կարող էի Ես ասել ձեզ, որ չեմ ասել: Հոչակի՛ր Իմ Պատգամը, Վասո՛ւլա:

Հունիսի 3, 1993

Տե՞ր:

Ես եմ: Ինձ վրա դիր քո բեռը, զավա՛կս...

Իմ ականջները հոգնում են չար մարդկանց ոռնոցներից: Նրանց չար լեզուն անվերջ ստեր է հնարում իմ մասին:

Քեզ խարդախ մեղադրողները մի օր ստիպված կլինեն կանգնել Իմ դեմ... Ես քո կողքին եմ, մի՞թե չես նկատել: Նրանց բոլոր մեղադրանքները կանցնեն հոսող ջրի պես: Բարձրացի՛ր: Բարձրացի՛ր և ձեռքերդ դի՛ր հիվանդների վրա, և Ես կբուժեմ նրանց: Խոսի՛ր, և քո բերանով Իմ

[1] Դան. 11:31
[2] Դան. 11:36
[3] Հայտ. 13:14
[4] Դան. 12:1

Խոսքերի արտաբերումը կտիպի նրանց հոգուն ընկնել Իմ գրկի մեջ[1]: Հենվի՛ր Ինձ վրա: Ես քեզ տվել եմ Իմ Խաղաղությունը, ուրեմն ապրի՛ր այդ Խաղաղության մեջ: Մի՛ վախեցիր... տե՛ս.

<u>Ես եմ Հարությունը</u>,

բայց այս աշխարհի իշխանը Մահն է: Մի՛ մեղադրիր քեզ հետապնդողներին, որպեսզի Ես քեզ էլ չդատեմ Դատաստանի Օրը: Իմ Զարչարանքների՛ հոգի: Ես՝ Տերը, քեզ ցույց եմ տալիս այն քայլերը, որոնցով Ես անցա Իմ Զարչարանքների ժամանակ: Քանի որ Ինձ ես ծառայում, դու պետք է հետևես Ինձ: Ի՞նչ ես ուզում, որ ասեմ. «Հետևի՛ր Ինձ, բայց ոչ Իմ Ոտնահետքերո՞վ»: Դա չի կարող լինել: Նա, ով ծառայում է Ինձ, պիտի հետևի Իմ Արյամբ ներկված Ոտնահետքերին... Իմ Մատի միջոցով է, որ դու հարություն ես տալիս մեռածներին[2]: Նրանք, ովքեր <u>մինչև այժմ</u> չեն տեսնում Իմ հրաշքները, այն մարդիկ են, որոնց կողքով է անցել Իմ Թագավորությունը:

Իմ ընկե՛ր, Իմ փոքրի՛կ ընկեր, տե՛ս, թե որքան Երկնային Մանանայով եմ Ես քեզ կերակրել: Եվ Ես՝ քո Աստվածը, պիտի շարունակեմ մնել քեզ: <u>Ոչ մի մարդ չի հեռացնի Իմ Ձեռքը քո բերանից</u>: Ես պիտի լինեմ քո Ուժը, որպեսզի ավարտին հասցնեմ Իմ Ծրագիրը քո դյուրաբեկության միջոցով: Ես ձեզ բոլորիդ նախապատրաստում եմ Իմ Արքայության համար: Գրի՛ր.

Աշխարհն այսօր մերժում է Մեր Երկու Սրտերը՝ քո Սուրբ Մոր Սիրտը և Իմ Սուրբ Սիրտը: Այս ժամանակները, որ հիմա դուք ապրում եք, Ողորմության ժամանակներ են: Ես արդեն բացատրել եմ քեզ[3], թե ինչ է լինելու, երբ վեցերորդ կնիքը քանդվի: Իսկ հիմա լսի՛ր Ինձ և գրի՛ր.

Հենց որ Մեր Երկու Սրտերն ավարտեն վկայելը[4], Ես պիտի կոտրեմ յոթերորդ կնիքը, և երբ դա պատահի, մի սարսափելի լռություն պիտի լինի[5]... Այս լռության մեջ աշխարհի ժողովուրդները պիտի կարծեն, թե հաղթել են Մեր Երկու Սրտերին և պիտի ուրախանան[6] ու պիտի տոնեն այդ իրադարձությունը, քանի որ հավատալու են, որ ազատվել են Մեր Երկու Սրտերից, որոնք վկայում էին Մեր պատգամատարների միջոցով: Քանի որ այն, ինչի համար նրանք վկայում էին, պատուհաս էր դարձել իրենց ականջների, իրենց շահերի և իրենց չար մտադրությունների համար:

Հետո հանկարծ այդ լռությունը պիտի խզվի, երբ Իմ Օրը դա: Եվ վա՜յ անմաքուրներին, վա՜յ չապաշխարածներին: Նրանց դիակները ցիրուցան պիտի ընկնեն և պիտի կեղտոտեն այս անապատը, այն անապատը, որն իրենք ստեղծեցին: Հետո Իմ հրեշտակը կրակով պիտի լցնի խնկամանը, որը նա պահում էր Իմ Գահի և խորանի առաջ, և պիտի

[1] Երբ Սուրբը Հոգին իջնում և տիրապետում է նրանց, նրանք ցած են ընկնում անէացած: (Հանդիպումների ժամանակ մի քանի անգամ դա պատահեց):
[2] Հոգևոր իմաստով ապաշխարություններ:
[3] Տես՝ փետ. 18, 1993թվի պատգամը
[4] Կարծում եմ, այդ նշանակում է, երբ ժամանակը դա Տիրոջ Օրվա համար (Հայտ. 11:7):
[5] Հայտ. 8:1
[6] Հայտ. 11:10

գցի երկրի վրա[1]: Եվ մինչ բոլորը դիտելիս կլինեն, տեղի կունենա մի ուժեղ երկրաշարժ, և երկրի տարրերը կրակով կբռնվեն և բաժան-բաժան կլինեն[2]: Շատերը կբարձրանան սարերը, որ թաքնվեն քարանձավներում[3] և ժայռերի մեջ: Նրանք պիտի կանչեն Ինձ, բայց Ես չեմ լսի: Նրանք պիտի բարկացնեն Ինձ և հայհոյեն Իմ Սուրբ Անվանը և լեռներին ու ժայռերին ասեն[4]. «Ընկե՛ք մեզ վրա և ծածկե՛ք մեզ Նրանից, որ նստած է Գահին, և Գառան զայրույթից», քանի որիմ Օրը պիտի գա, և ո՞վ կարող է փրկվել այդ օրը: Իսկ նրանք, որոնք ողջ կմնան[5], ծունկի պիտի գան՝ վախով համակված, և միայն պիտի գովաբանեն Ինձ՝ իրենց Աստծուն... Հետո Նոր Երկինքն ու Նոր Երկիրը[6] պիտի գան ձեզ վրա: Աշխարհի թագավորությունը[7] պիտի դառնա Իմ թագավորությունը, և Ես պիտի թագավորեմ յուրաքանչյուր սրտում: Նախկին աշխարհը[8] պիտի անցնի

Հունիսի 5, 1993

Վասո՛ւլա, <u>ամուսնությունը պետք է պատվել</u> և սուրբ պահել: Ես ամուսնացրել եմ[9] քեզ Ինձ հետ և սովորեցրել, որ ապավինես Իմ Շնորհին: Քո հոգուց Ես զոհասեղան և հարսնացու եմ պատրաստել Ինձ համար՝ քո Աստծո համար: Ես քեզ սովորեցրել եմ հնազանդվել և մերժել այն ամենը, ինչ որ Իմը չէ: Ես՝ որպես Ամուսին, քեզ եմ վստահել Իմ Շահերը: Ես քեզ կարգապահություն եմ սովորեցրել, սոսկ մարմնավո՛ր արարած: Ես՝ Հավիտենականը, խնամել ու փայփայել եմ քեզ, քո դարձը եկել է Ինձնից: Ես քեզ վրա ուսուցումներ եմ հեղել, ինչպես մարգարեություն: Իմ Համբերությունը քո հանդեպ նվազում է, Վասո՛ւլա: Դու մեղավոր ես (...)[10] մեջ, որը նույնն է, ինչ (...) Դու պետք է վերջ տաս այդ ամենին: Ես քեզ նորոգել եմ և դարձրել այնպես, ինչպես Ես եմ ուզում, որ լինես, և Ես սիրում եմ քեզ: Ինչո՞ւ ես (...), բայց տե՛ս, չնայած քո անհավատարմությանը՝ Իմ Հավատարմությունը կմնա Հավիտյան: Ես բավական խստորեն եմ ասում այս բաները: Բայց դա նրա համար է, որպեսզի քեզ հիշեցնեմ, որ քեզ հատուկ առաքելություն է տրված: Եվ այսուհետև... ոչ մի զիջում... ոչ մի: Ես <u>չեմ</u> հանդուրժի դրանք: Ուրեմն ապրի՛ր այնպես, ինչպես Ես եմ ուզում, որ ապրես, քանի որ Ես ապրում եմ քո մեջ: Մի՛ չարաշահիր Իմ Համբերությունը:

Ա՛հ, մի բան ևս... Գրի՛ր դա[11]: Այո՛: Ասա՛ Ինձ, ի՞նչ եղավ այն

---

[1] Հայտ. 8:5
[2] Բ Պետ. 3:12
[3] Հայտ. 6:15
[4] Հայտ. 6:16
[5] Հայտ. 11:13
[6] Հայտ. 21:1
[7] Հայտ. 11:15
[8] Հայտ. 21:4
[9] Հոգևոր ամուսնություն Աստծո հետ: Ակնարկում է. «Քանի որ այժմ քո Արարիչը կլինի քո Ամուսինը, Նրա Անունը Յահվե Սաբաոթ է» (Ես. 54:5):
[10] Նրբանկատությունից ելնելով՝ Հիսուս հարգեց իմ ցանկությունը, որ դա չգրվի
[11] Հիսուս նայեց Ինձ, և Ես Նրա աչքերից կարող էի ասել, որ Նա գոհ չէր Ինձնից և բարկացած էր:

ոգևորությունը, որ մի ժամանակ ունեիր: Մի՞թե պետք է ասեմ, որ դու վստահելի չես: Փոխանակ տեղի տալու քո մղումներին, որոնք կարող են քեզ տանել դեպի քո դատապարտումը, բարձրացրո՛ւ աչքերդ դեպի Ինձ և փնտրի՛ր Իմ Շահերը ու Ինձնից Կյա՛նք ստացիր՝ մարդկությանը բացահայտելով Իմ Փառքի հարստությունը: Մի՛ վախեցիր, Ես երբեք հետ չեմ վերցնի այն պարգևները, որոնք տվել եմ քեզ, ոչ էլ կփոխեմ Իմ ընտրությունը, բայց քեզ մի հարց կտամ. ինչո՞ւ աչքերդ չրջեցիր Ինձնից:

Զգիտեմ:

Գիտե՛ս:

Գուցե նրա՞ համար, որ չեմ ուզում Քեզ բարկացած տեսնել:

Մեկ անգամ էլ փորձիր...

Գուցե նրա՞ համար, որ չեմ ուզում տեսնել, որ համաձայն չես ինձ հետ:

Այո՛, այո՛, Վասո՛ւլա, Ի՛նձ հանձնիր քո ողջ սիրտը, խոսի՛ր:

Վերցրո՛ւ իմ սիրտը, Տե՛ր:

Ասա՛ այդ:

Իմ սիրտը ընդհանրապես մարմի՞ն է, թե՞ քար է դարձել:

Քո սիրտը քար կդառնա... միայն այն ժամանակ, երբ դու կտրվես Ինձնից:

Ուրեմն ինձ համար հույս կա...

Ես ուղարկեցի քեզ, որ հնձես մի բերք, որի վրա չէիր տքնել: Պատվի՛ր այդ բերքը,պատվի՛ր մերամուսնությունը:

Իմացի՛ր, թե որքան խիստ կարող եմ Ես լինել ու միաժամանակ՝ որքան բարի: Թող աշխարհն առանց հապաղման օգուտ ստանա այն բերքից, որի համար Ես Ինքս եմ աշխատել: Իսկ դու մի՛ անհանգստացիր, Ես քեզ պատվաստել եմ, և դու Իմ մասն ես կազմում: Ահա թե ինչ ուեմ Ես ուզում որ ամբողջովին առողջ լինես: Արի՛ և պատվի՛ր Ինձ՝ հիշելով Իմ Ներկայությունը: ic

Հունիսի 7, 1993

Ա՜հ, ահա և դու, աշակերտս, Ես սպասում էի քեզ: Խաղա՜ ղուրյո՛ւն, Իմ ընտրյա՛լ աղջիկ:

Հիսո՛ւս, ես բռնել եմ Քո Ձեռքը,

և Քո շշնջոցներն իմ ականջին
հանգստացնում են ինձ.
Դու շարունակ ասում ես ինձ.
«Մի՛ վախեցիր»: «Ես կօգնեմ քեզ»:
Եվ ես օգնություն եմ ստանում:
Դու ներշնչեցիր իմ հոգուն
երգել Քեզ համար:
Դու օգտագործեցիր Քո Մատը,
որ սրտիս վրա փորագրես
բոլոր Նախնիների իմաստությունը:
Քո առակների թաքնված իմաստն
ինձ բացահայտելը
հրճվանք է պատճառում քեզ,
և Քո Սիրտն ուրախանում է՝
ցույց տալով ինձ
Դրա Հարստությունները:
Բայց որպեսզի
բոլորին տամ այն ամենը,
որ Դու ես ինձ տվել,
ինձ պետք են Քո Զորությունը,
Քո Համբերատարությունը,
Քո Իմաստությունը,
Քո Խոնարհությունը,
Քո Սերը, որպեսզի ես երբեք չլքեմ
Քեզ իմ դժվարին
առաքելության ընթացքում:

Ոչ մի առաջադրանք դժվար չի լինի քեզ համար, և ոչ մեկը չի կարողանա ընկճել քեզ, երկրային ոչ մի ղեկավար չի ցնցի քեզ: Նույնիսկ քո մահից հետո քո մարմինը կշարունակի մարգարեանալ: Այն ամբողջ աշխատանքը, որ անում ես, իզուր չպիտի լինի: Ես ասում եմ քեզ. նույնիսկ, եթե Թշնամին մոլեգնի քո դեմ, Ես պիտի կլանեմ նրա գրոհները: Ուրեմն, փոխանցի՛ր Իմ Պատգամը, որ մաքրի այս սերնդի սիրտը:

Հունիսի 8, 1993

Խաղաղությո՛ւն քեզ: Զավա՛կս, Իմ Աչքերը քեզ վրա են: Թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քեզ: Թո՛ւյլ տուր Ինձ ցույց տալ Իմ գոհունակությունը քո հանդեպ: Իմ շնորհը քեզ հետ է: Աղջի՛կս, ասա՛ այս բառերը.

Արարի՛չ, արի՛ ինձ մոտ,
Յա՛հվե, Աստվա՛ծ իմ, փրկի՛ր ինձ,
Երկնքի՛ և երկրի՛ Տեր,
օրհնի՛ր ինձ: Ամեն:

Հունիսի 9, 1993

Իմ Զարչարանքների՛ Վասուլա, հենվի՛ր Ինձ վրա: Ավարտի՛ր քո առաքելությունն Ինձ հետ: Ընդլայնի՛ր Իմ Թագավորությունը և տո՛ւր, տո՛ւր առատորեն Իմ Երկնային Մանանան քաղցածներին ու աղքատներին: Ես ձևավորել եմ քո շրթունքները, որ խոսեն և լինեն Իմ Արձագանքը: Ուրեմն խոսի՛ր, փոքրի՛կս, Ես պիտի խոսեմ քո շուրթերի միջոցով: Ուստի հրճվի՛ր և տո՛ւր Սիրո Իմ Խոսքը: Մի՛ վախեցիր:

ΙΧΘΥΣ

Հունիսի 10, 1993

(ԱՄՆ)

Ծաղի՛կս, թո՛ւյլ տուր Ինձ ասել քեզ. առանց Ինձ քո սեղանը դատարկ է, առանց Ինձ քո ուրախությունը կատարյալ չէ: Իմացի՛ր, որ Ես քո Խաղաղությունն եմ, քո Կյանքը, քո Հույսը: Ես Առաջինն եմ և Վերջինը: Ես քո հոգին կլցնեմ լույսով, որպես զի ընդմիշտ ապրի Ինձ մոտ: Իմ Հոգին ցավում է՝ տենչալով, որ դու հիմա լինես Ինձ մոտ՝ Երկնքում՝ կլանված Իմ Լույսով: Սակայն Ես քեզ պետք է թողնեմ երկրի վրա, որ ավարտես քո առաքելությունը: Հիշի՛ր, Ես միշտ քեզ հետ եմ, որ ուղղություն տամ քո քայլերին: Ես սիրում եմ քեզ: Սերը մոտ է քեզ, և ա՜հ... յուրաքանչյուր անցնող օր ավելի է մոտեցնում այդ օրը: Աճի՛ր Իմ մեջ, և քո հոգին կհագենա Իմ Սիրով: Վասո՛ւլա, թո՛ւյլ տուր Ինձ, որ շարունակեմ քո Դաստիարակը լինել: Դա Ինձ հաճույք է պատճառում... Թո՛ւյլ տուր Ինձ ավարտել Իմ ցանկությունները քո մեջ:

Հատուցի՛ր չարին սիրով: Գնա՛ խաղաղությամբ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 11, 1993

(Օմահա - ԱՄՆ)

Զավա՛կս, զավա՛կս, Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Տո՛ւր Ինձ քո ձեռքն օգտագործելու ազատությունը, տո՛ւր Ինձ քո շուրթերն օգտագործելու ազատությունը, տո՛ւր Ինձ քո միտքն ու սիրտն օգտագործելու ազատությունը: Թո՛ւյլ տուր Ինձ տիրել քեզ: Այլ կերպ դու ինչպե՞ս կարող ես լինել Իմ Արձագանքը, որ փոխանցես Իմ Պատգամները, եթե Իմ Հոգին չտիրի քո հոգուն: Ինչպե՞ս կապրի որթատունկի ճյուղը, եթե այն իր կենսահյութը չստանա որթից: Կտրի՛ր այն խաղողի Որթից և դու կտեսնես, թե որքան արագորեն նա կթառամի:

Իմ Սուրբ Հոգին ավիշի նման հոսում է ձեր ներսում՝ ձեզ կենդանի պահելով: Ահա այսպես, աղջի՛կս, պետք է վստահես Իմ Սուրբ Հոգուն՝

Կյանք Տվողին, հավատարիմ սեր Տվողին, ուրախություն և խաղաղություն Տվողին: Այո՛, Իմ Սուրբ Հոգին այն Կրակն է, որը խոնարհեցնում և հալեցնում է սրտերը՝ Իմ Հրահանգներին հետևելու համար՝ ձեր աչքերը հեռացնելով անմիտ պատկերներից: Իմ Սուրբ Հոգին Իմ Խոսքերի լիառատ պարգևողն է՝ ստիպելով ձեր ողջ մտքին և սրտին փնտրել Իմաստությունը:

Լիասիրտ աղերսե՛ք Իմ Սուրբ Հոգու պարգևների համար, հատկապես այս ժամանակներում: Նա պիտի լինի ձեր Ջահը, որպեսզի ձեզ փրկի Մահից և պահի ձեր ոտքերը սայթաքելուց: Եվ ո՜հ, ի՜նչ չի անի Իմ Սուրբ Հոգին ձեզ համար: Իմ Սուրբ Հոգին կառաջնորդի ձեզ, որ ձեր կյանքը անցկացնեք Իմ Ներկայության մեջ և Իմ Թագավորության գավիթներում: ԻմՍուրբ ՀոգինանհրաժեշտէԻմԵկեղեցուվերակառուցմանհամար: Նա

Իմ Եկեղեցու Անկյունաքարն է:

Բայց ձեր սերունդը մերժում է այն[1]: Ես նորից եմ ասում ձեզ. կառուցողներ կան, բայց նրանք պետք է դաստիարակվեն և ուսուցվեն: Շտապե՛ք և վերակառուցե՛ք Իմ Եկեղեցին՝ օգտագործելով յուրաքանչյուր քար: Եվ չմոռանաք էականը՝ չմերժե՛ք անկյունաքարը: Իսկ հիմա, զավա՛կս, կրկնի՛ր Ինձ հետ.

Տե՛ր, Ես Քոնն եմ,
փրկի՛ր ինձ և փրկի՛ր նաև
Իմ եղբայրներին
Քո Փրկարար Սիրո միջոցով:
Ամեն:

Հունիսի 18, 1993

(Ֆիլիպիններ - Սուրբ Սրտի Տոնը)

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, Ես օրհնում եմ քեզ: Վստահի՛ր Ինձ և ամբողջապես հենվի՛ր Ինձ վրա: Դու քեզ կնվիրաբերե՞ս Ինձ: Նորոգի՛ր հավատարմության քո խոստումները: Դու Ինձ հրճվանք ես պատճառում, երբ քեզ նվիրաբերում ես Իմ Սուրբ Սրտին: Արի՛, մատուցի՛ր Ինձ այս աղոթքը՝ որպես նվեր: Վերջ ի վերջո, Իմ Սուրբ Սրտի Տոնն է: Ես սիրում եմ քեզ, և Ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ: Ես օրհնում եմ քեզ, և հիմա, Ես՝ Տերը, սպասում եմ, որ լսեմ քեզ: Ես ներշնչեցի[2] (...) որպես նվեր քեզ տալ այս մեդալիոնը: Համարի՛ր քեզ Իմը և Իմ հարսը: Փեսան երբեք չի անտեսի Իր հարսին: Ես միշտ պիտի ապահովեմ քեզ և ցույց տամ Իմ Սերը: Ես Իմ Վերքերից քեզ մի կաթիլ Արյուն եմ տվել. քո վերքը նվեր է Ինձնից[3]:

[1] Անկյունաքարը:
[2] Ինչ-որ մեկն ինձ Սուրբ Սրտի մեդալիոն էր տվել:
[3] Մի նկատելի խարան (սպի) իմ ոտքի տակ:

Հունիսի 19, 1993

Տե՛ր, դարեդար Դու հաստատում ես,
որ մեր Փրկիչն ես:
Քո Սիրով և Ողորմությամբ
Դու Ինքդ փրկում ես մեզ:
Դու առատորեն մեզ վրա ես թափել
Քո Սերը՝ մեզնից
ամեն մեկին կանչելով իր անունով:

Ամենաքնքո՛ւշ Հիսուս,
մեկ անգամ ևս
Դու դուրս ես գալիս Երկնքից՝
մեզ հիշեցնելու,
որ ով որ պահի Սիրո Քո Օրենքը,
պիտի ապրի Աստծո մեջ,
և Աստված պիտի ապրի նրա մեջ:
Այդ ինչպե՞ս է, որ այդքան շատերը
ըմբոստանում են
և վշտացնում Քո Սուրբ Հոգուն:
Այդ ինչպե՞ս է, որ այդքան շատերը
պատերազմում են Քո դեմ:
Այդ ինչպե՞ս է, որ կավը,
որին դու ձև տվեցիր,
դարձավ Քո թշնամին:

Ինչո՞ւ ես Դու, Տե՛ր, թույլ տվել
այնքան շատերին հեռանալ
ու շեղվել Քո Ճանապարհից
և կարծրացնել իրենց սրտերը
չվախենալով Քեզանից:
Ինչո՞ւ ես թույլ տվել
ապստամբներին
ոտնակոխ անել Քո Սրբարանը
և պղծություն դառնալ Քո Աչքում:

Վասո՛ւլա, ես քեզ ասել եմ, որ ուղարկել եմ Իմ Նախազգուշացումները տարբեր մարգարեների միջոցով[1], բայց ձեր սերնդի մեջ Իմ մարգարեները լրջորեն չեն ընդունվում: Այսօր, երբ Երկինքն է խոսում, դա նրանց ամենաքիչն է հետաքրքրում: Հազիվ եմ ես մի բառ ասում Իմ պատգամատարի միջոցով, երբ նրանք հարձակվում են նրա վրա և զննում նրան: Բայց Իմ Տունը պիտի վերակառուցվի աղքատների, հաշմանդամների, կույրերի և կաղերի կողմից: Վերջինները պիտի լինեն առաջինը, իսկ առաջինները՝ վերջինը: Ես բացել եմ ձեր միջից ամենից վատթարների աչքերն ու ականջները և կուրացրել ու խլացրել բոլոր նրանց, ովքեր հայտարարում էին, թե կարող են տեսնել ու լսել: Իմ Անվանը մեկ անգամ ևս հարգանք և պաշտամունք պիտի մատուցվի:

[1] Ֆաթի՞ման և մյուսնե՞րը, ինչպես Գարաբանդալը:

Զավա՛կս, երբեք չհոգնես Ինձ հետ ունեցած քո հանդիպումներից: Դու դեռ ոչինչ չես տեսել Իմ Խորհուրդներից, արարա՛ծ, ուրեմն մի՛ սարսափիր, երբ Ես գամ քեզ մոտ՝ այս ձևով այցելելով... Հիմա մտի՛ր Իմ Վերքերի մեջ:

Ես քեզ հետ եմ՝ քո փրկության և ուրիշների փրկության համար:

Հունիսի 20, 1993

Խաղաղություն: Յուրաքանչյուր րոպե, որ մտածում ես Իմ մասին կամ խոսում Իմ մասին, դու փառաբանում ես Ինձ: Ուրեմն թո՛ւյլ տուր քո սրտին խոսել Ինձ հետ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 29, 1993

Տե՞ր:

Ես եմ: Հենվի՛ր Ինձ վրա: Ավելի շա՛տ սիրիր Ինձ:

Սովորեցրո՛ւ ինձ
սիրել Քեզ այնպես,
ինչպես Դու ես ցանկանում,
որ սիրեմ քեզ,
քանի որ Դու իմ Ուսուցիչն ես,
Տե՛ր:

Ուրեմն բացվի՛ր... գրի՛ր.

Թո՛ւյլ տվեք Ինձ տարածել այս խաղաղությունը ձեր մեջ: Թանկագի՛ն զավակներ, թույլ մի՛ տվեք, որ ձեր սրտերն անհանգստացնեն ձեզ: Մի՛ ընկեք փորձության մեջ: Այս է պատճառը, որ Ես ձեզնից խնդրում եմ անդադար աղոթել: Ուշադրություն մի՛ դարձրեք բամբասանքներին, ոչ մեկին մի՛ ողջունեք ձեր ճանապարհին [1]: Քայլե՛ք Ինձ հետ Իմ խաղաղության մեջ: Աղոթե՛ք ձեր քահանաների համար: Ոչ մեկին մի՛ մեղադրեք: Հատուցե՛ք չարին սիրով և նվիրաբերե՛ք ձեզ Իմ Սուրբ Սրտին և Իմ Մոր Անարատ Սրտին:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ ձեզ բոլորիդ: Խնդրե՛ք Իմ Անունով, և դուք կստանա՛ք:

[1] Հիսուս նկատի ունի դատարկ բաների մասին խոսել, զրույց, որը ոչ մի բանի չի հանգեցնում:

ΙΧΘΥΣ

Հունիսի 30, 1993

Տե՛ր, ես պատրաստ եմ սովորելու:

Ուրեմն արի՛ և սովորի՛ր: Իմաստությունը քո Դաստիարակն է: Վասո՛ւլա, աղոթի՛ր ձեր քահանաների համար[1]: Բարձրացրո՛ւ հոգիդ դեպի Ինձ և ապրի՛ր Իմ մեջ, Իմ Սիրո մեջ: Զգա՛ Իմ Սերը, այսօր Հովիվը կանչում է: Այսօր Հովիվը փնտրում է Իր կորած և ցիրուցան եղած ոչխարներին: Շատերն են լսում Նրա Ձայնը, սակայն բոլորը չէ, որ ճանաչում են Նրա Ձայնը[2], ոմանք նույնիսկ դայթակղվում են Նրա Ձայնից: Բոլոր նրանք, ովքեր Իմն են, կվերադառնան Ինձ մոտ: Այն բոլոր ոչխարները, որ Ինձ են պատկանում, պիտի լսեն Իմ Ձայնը և պիտի ուրախանա՛ն Իմ Ոտնաձայները լսելով:

Նրանք, ովքեր չեն ճանաչում Իմ Ձայնը, Իմ ոչխարները չեն: Ես մարդիկ էի վարձել, որ Իմ հոտը պահպանեն մինչև Իմ Վերադարձը: Սակայն հազիվ էի Ես հեռացել, հազիվ էի դուրս եկել, երբ վարձկանները ուղղվեցին դեպի քաղաքները՝ բարձր աթոռներ դրավելու նպատակով: Մի՞թե չես կարդացել[3]. «Փորձանք է գալիս անարժան հովվին, որը լքում է հոտը»: Այս է պատճառը, որ Ես շարունակաբար հիշեցնում եմ ձեզ, որ Իմ Թագավորությունը ձեր բոլորի մեջ է: Ես երբեք չեմ դադարել հիշեցնելու ձեզ այն ճշմարտությունները, որոնք Ես Ինքս եմ ձեզ տվել: Ուրեմն մի՞թե Ես չեմ տեսնելու, որ Իմ ոչխարները արդարություն գտնեն, ոչխարներ, որոնք մեռնում են արոտավայրի պակասից: Սուրբ Գրքերը չեն կարող մերժվել, իսկ Իմ Խոսքը կենդանի է և գործուն: Բայց քո ուրացած սրտում, դու ուրացել ես Իմ Խոսքը քո ներսում, Հովի՛վ:

Ո՞վ է հավատարիմ Քո Տան մեջ, Տե՛ր:

Նրանք, ովքեր չեն հայտարարում, թե տեսնում են[4], հավատարիմ են: Նրանք, ովքեր հենց սկզբից երբեք չբացեցին իրենց աչքերը, ոչ էլ ձևացրին, թե նման են աստվածների՝ ճանաչելով բարին ու չարը[5], հավատարիմ և ճշմարիտ են: Այն հովիվները, որոնք հոգ տարան Իմ ոչխարների համար և մնացին նրանց հետ՝ գավազանը ձեռքներին, և չհագան տպավորիչ զգեստներ[6], ոչ էլ նստեցին Իմ Գահին[7]՝ դայիսոնը ձեռներին, հայտարարելով, թե իրենք Աստված են[8], հավատարիմ են: Նրանք, ովքեր իրենց կյանքը զոհեցին Իմ ոչխարների համար, Իմ ճշմարիտ

[1] Հույն եպիսկոպոսները վիճում էին:
[2] Հովհ. 10:26
[3] Զաք. 11:17
[4] Հովհ. 9:41
[5] Ծննդ. 3:5
[6] Հագուստներ նշանակում է պատիվներ:
[7] Եզեկ. 28:2
[8] Եզեկ. 28:2, Բ Տիմ. 2:4

հովիվներն են, որոնք կարող են հաստատել այն, ինչ տրված է իրենց Սուրբ Հոգու կողմից: Դուք կճանաչեք նրանց իրենց մարմնի վերքերից, վերքեր, որոնք նրանք ստացան իրենց ընկերների Տանը[1]: Բայց չուտով այլևս առևտրականներ չեն լինի, երբ Իմ Օրը գա:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 4, 1993

Աստվա՛ծ իմ, իմ ՄԻԱ՛Կ սեր,
Ես ծարավ եմ Քո Աղբյուրին:
Զնայած դավադրությանը
և կեղծիքին, որ ինձ մեղադրողները
բարդում են իմ դեմ,
ես ապրում եմ Արքայության մեջ,
քանի որ Դու, արդարև,
տվել ես ինձ
Քո Թագավորությունը իմ հոգում:
Եվ Դու, որ իմ թշվառ հոգու
ուրախությունն ես,
հաճույք ես զգում
ինձ վրա թագավորելուց:

Դու ընդլայնել ես
իմ հոգու տարածքը,
որպեսզի ընդլայնես Սերը,
Համբերատարությունը,
Ներողամտությունը:
Դու տեղափոխել ես
իմ վազքի վերջնագիծը
մի մղոն ավելի հեռու:
Այնքան մեծ է
Քո Սերը մեր համդեպ,
այնքան մեծ է
Քո հանդուրժողականությունը,
այնքան հարուստ են
Քո ներողամտությունը
և Քո համբերությունը:
Ո՛չ, Քո Սիրտը չի կարող
որևէ մեկին կորած տեսնել,
քանի որ Քո փրկագործությունը
հասնում է մինչև աշխարհի ծայրերը:

Ես կկիսեմ այս լրացուցիչ մղոնը քեզ հետ, Իմ Ձեռքո՛վ օծված, ձևավորի՛ր քո վարքը Իմ վարքի օրինակով և սովորի՛ր Ինձնից: Դու, որ այնքան

[1] Նույնպես հովիվներ, բայց անհավատարիմ:

թանկ ես Ինձ համար, կրի՛ր Իմ Խաչը այս վերջին մղոնն անցնելիս: Ես ամենազոր եմ, և Իմ Զորությունը պիտի լցվի քեզ վրա այս վերջին մղոնին, և Իմ Լույսը պիտի շարունակի փայլել քո մեջ, որպեսզի դու փառաբանես Ինձ: Երբեք չհոգնես Ինձ հետ քո հանդիպումներից: Դու դեռ ոչինչ չես տեսել Իմ Խորհուրդներից, դրա համար մի՛ վախեցիր, երբ ամեն անգամ Ես գամ քեզ մոտ՝ այս ձևով այցելելով քեզ...

Հուլիսի 14, 1993

(Հռոդոսի խմբի համար)

Սիրելինե՛րս, իմացե՛ք, որ Ես հեզ ու խոնարհ եմ սրտով: Աղոթե՛ք ձեր քահանաների համար[1]: Իմ Կամքն է, որ դուք աշխատեք Իմ Հոգու Լույսով: Փաղաքշե՛ք Ինձ սիրով: Փառաբանե՛ք Ինձ և զգուշացե՛ք ձեր շրթունքներից: Թող խաղաղություն լինի ձեր միջև: Սերը պարգև է: Ես տվել եմ ձեզ Իմ Սիրո պարգևը: Սիրեցե՛ք Ինձ և սիրեցե՛ք մեկդ մյուսին: Եղե՛ք մեկ և մնացե՛ք մեկ:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: Մե՞նք, մե՞զ:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 28, 1993

(Աթենքի հանդիպումից հետո, շատերը վերադարձան Աստծուն: Մարդիկ էին եկել նաև հարևան կղզիներից, որ լսեն: Այս հանդիպումը բարձրացրեց նաև սատանայի ձայնը: Այդ պատճառով լսվեցին նաև մի քանի զրպարտանքներ: Դա չվանեց այն ուրախությունը և խաղաղությունը, որոնք մենք ստացել էինք):

Զավա՛կս, միշտ հիշի՛ր, որ Ես քո կողքին եմ և նույնիսկ ավելի մոտ՝ քո դժվարությունների ժամանակ: Ես քո կողքին եմ քո դժվարությունների պահին, քո ուրախությունների պահին, և ամեն մի դեպքում Ես եմ: Շրջապատված Իմ հրեշտակներով, Ես գալիս եմ այցելելու քեզ: Ես սիրում եմ քեզ:

Զավա՛կս, օրհնյա՛լ եղիր և մի՛ վախեցիր հպարտներից: Թո՛ղ նրանց Ինձ, բայց դու աղոթի՛ր նրանց համար: Նրանք նույնպես Իմ զավակներն են և նույնպես պետք է փրկվեն:

Զմտածես, թե Ես տեղյակ չեմ այն առաքելության պահանջներին, որը Ես եմ քեզ տվել: Բայց քո կողքին Ես եմ, որ սիրտ տամ քեզ... Հիշի՛ր Իմ Ներկայությունը:

[1] Ուղղափառ եպիսկոպոսների համար, որոնք վիճում էին:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 8, 1993

Զավա՛կս, Ես՝ Տերը, օրհնում եմ քեզ: Ես սիրում եմ քեզ, միշտ հիշի՛ր այս: Ասա՛ Ինձ հետ.

Հիսո՛ւս, իմ միա՛կ սեր,
Ես աղոթում եմ նրանց համար,
ում Դու սիրում ես,
որոնք սակայն չգիտեն՝
ինչպես պետք է Քեզ սիրեն:
Թող նրանք
սրփագործվեն և բժշկվեն,
որ իրենք էլ ազատվեն
ամենայն չարից: Ամեն:

Սովորի՛ր այս աղոթքը և ասա՛ այն քո վարդարանի յուրաքանչյուր տասնյակից հետո: IC

Օգոստոսի 10, 1993

Իմ Խաղաղությունն եմ Ես տալիս քեզ:

Շարունակի՛ր եռանդով հետևել Իմ Քայլերին և հավատա՛ Ինձ: Ոչինչ և ոչ մեկը չի կարող կանգնել քո և Իմ միջև: Ոչինչ և ոչ մեկը չի դադարեցնի Իմ Պատգամը շարունակվելուց: Ցանի՛ր ամենուր: Վասո՛ւլա, աղջի՛կս, Իմ զենքը Ես դրել եմ քո մեջ և դա

ԱՂՈԹՔՆ Է:

Աղոթի՛ր և կանչի՛ր Ինձ: Աղոթի՛ր և հեռո՛ւ քշիր սատանային: Աղոթի՛ր և վերականգնի՛ր Իմ երերացող Տունը: Արի՛, Իմ Աչքերը երբեք չեն հեռանում քեզանից: Վստա՛հ եղիր, աղավ- նյա՛կս:

Սեպտեմբերի 3, 1993

(Կոպենհագեն - Դանիա)

Տե՞ր:

Ես եմ: Մի՛ վախեցիր, Ես քո Հոգու Պահապանն եմ: Սերը քեզ հետ է:

Հիշի՛ր, այդ դու չէ, որ ընտրել ես այստեղ լինել: Ես որոշեցի ուղարկել քեզ այս ազգի մոտ, որ փառավորես Ինձ: Ես օգտագործեցի Իմ հատուկ հոգիներին, որ աշխատեն և դուռ բացեն դեպի Շվեդիա, Դանիա և Հոլանդիա: Իմ Հոգին՝ Կյանք տվողը, կանցնի նրանց քաղաքների միջով և կվերակենդանացնի ամեն մեկին[1]:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ: ic

Սեպտեմբերի 5, 1993

Շնորհակալությո՛ւն Քեզ,
Սիրելի՛ Հայր,
որ մեզ տվեցիր Քո Որդուն՝
Կենդանի Խոսքին:

Ես շնորհակալ եմ
Քեզ իմ ողջ սրտով,
ո՛վ սիրառատ և գորովալից
Հայրդ բոլոր Հայրերից:
Քո սերն իմ համեմատ
այնքան մեծ է եղել, այնքան ակներև,
որ ես խոսելու եմ Քո Սիրո մասին,
ուր էլ որ Դու ինձ ուղարկես:

Ուղարկի՛ր ինձ՝
վկայելու Քո հրաշքները
մոռացության երկրում,
մեռածների մեջ,
մեղքի պիղծ խորքերում:

Ուղարկի՛ր ինձ այնտեղ,
որտեղ ամեն լավ բան
փոխակերպվել է չարի:

Ուղարկի՛ր ինձ այնտեղ,
որտեղ թշվառությունը դանդաղորեն
սպանում է Քո զավակներին:

Ուղարկի՛ր ինձ այնտեղ,
որտեղ մերժում են խաչի պատգամը
և ժխտում Քո Որդու
Զոհաբերությունը:

Ուղարկի՛ր ինձ դերեզմանների մեջ,
որ Քո Խոսքով
արթնացնեմ նեխած դիակներին:
Ուղարկի՛ր ինձ, որ հայտարարեմ

[1] Այսինքն՝ յուրաքանչյուրին, ում Սուրբ Հոգին կդիպչի:

Քո Հավատարմությունը
անհավատներին
և կոչ անեմ նրանց ապաշխարելու
և ասեմ նրանց, որ
Աստծո Թագավորությունը մոտ է:

Իմ հավատարի՛մ ծառա, Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ: Երկինքը քո տունն է:

Այո՛, մեծահոգի եղի՛ր մեղավորների հանդեպ: Ես կփառավորվեմ: Թող նրանց քարե սիրտը փշրվի Իմ Խոսքից, և Ես կփոխարինեմ այն՝ տալով նրանց մարմնեղեն սիրտ... Գնա՛ և վկայի՛ր, զավա՛կս, և ամեն ինչ լավ կլինի[1]: Մի՛ լսիր նրան: Ես հարություն եմ տվել քեզ Իմ Փառքի համար: Ես հավիտյան սիրում եմ քեզ: Վասո՛ւլա, մի՛ վհատվիր: Իմ Խոսքը պիտի ներթափանցի սրտերի մեջ և պիտի վերակենդանացնի նրանց: Ես՝ Յահվեն, կշարունակեմ քեզ վրա հեղել Իմ Ուսուցումները:

Արի՛:

Սեպտեմբերի 18, 1993

(Ռուսաստանի ճգնաժամը - Մոսկվա)

Տե՛ր:

Ես եմ: Խաղաղությո՛ւն քեզ:

Հիշի՛ր, Իմ Վասո՛ւլա, այդ Ես եմ, որ առաջնորդում եմ: Դու կարիք չունես վախենալու, որովհետև քո քայլերը առաջնորդվում են Իմ կողմից: Այնուամենայնիվ, զգո՛ւյշ եղիր, որ հանկարծ <u>չմոռանաս</u> նշել, որ նրանք[2] Ռուսաստանը պետք է նվիրաբերեն Մեր Երկու Սրտերին... և Հաղթանակը կգա: Ես պիտի գամ նրանց մոտ, որ Իմ Հոգով ոռոգեմ նրանց չորացած հողը: Սա չի լինի առանց <u>ցնցումների[3] և զոհողությունների</u>: Ես Տերը, ասում եմ քեզ, որ Ես Իմ Փառքը վերցնում եմ ամեն մի ապաշխարող սրտից: Մնացե՛ք Իմ մեջ և թո՛ւյլ տվեք Ինձ ավարտել Իմ ծրագրերը ձեր բոլորի մեջ[4]:

Ես օրհնում եմ ձեզանից ամեն մեկին: iC

Սեպտեմբերի 21, 1993

(Մոսկվա)

---

[1] Ես լսեցի Սատանայի գոռոցը. «Դու անիծված ես»:
[2] Ռուսները:
[3] Չորս օր հետո՝ ամսի 22-ին, ճգնաժամը Մոսկվայում հասել էր իր գագաթնակետին:
[4] Հայր Օ'Քերոլը, Հայր Ռոլֆը և ես:

Տե՛ր, խնդրում եմ, եթե հնարավոր է, թելադրի՛ր ինձ Նվիրաբերման մի աղոթք՝ ուղղված Երկու Սրտերին, քանի որ Դու խնդրեցիր ինձ ասել ռուսներին, որ նվիրաբերեն իրենց երկիրը Ձեր Երկու Սրտերին: Դու այդ կանե՞ս, Տե՛ր, որպեսզի ես ուղարկեմ այդ նրանց:

Զավա՛կս, Ինձ հետ դու չպետք է վարանես[1]: Այո՛, ամբողջ սրտով ես կտամ դա քեզ: Գրի՛ր.

Նախորոշված լինելով Խոսքիդ
մարգարեությունների՝ ո՛վ Տեր,
մենք գիտենք, մենք վստահ ենք,
և հավատում ենք,
որ Քո Սուրբ Սրտի և Մարիամի
Անարատ Սրտի
Հաղթանակը մոտ է:

Ուստի խոնարհաբար գալիս ենք
Նվիրաբերելու Ձեր Երկու
Սուրբ Սրտերին մեր անձերը,
մեր ընտանիքներն ու մեր երկիրը:

Հավատում ենք,
որ մեր երկիրը Ձեզ նվիրաբերելով՝
ազգ ազգի դեմ սուր չի վերցնի,
և պատերազմի պատրաստություն
այլևս չի լինի:

Հավատում ենք, որ մեր երկիրը
Ձեր Երկու Սիրառատ Սրտերին
նվիրաբերելով՝ մարդկային ողջ
հպարտությունն
ու ամբարտավանությունը,
ողջ անաստվածությունն ու սրտի
կարծրությունները կվերանան,
և սերն ու բարիքը
կփոխարինեն ամենայն չարի:

Հավատում ենք,
որ Ձեր Երկու Սուրբ Սրտերը
չեն ընդդիմանա
մեր հառաչանքներին
և մեր կարիքներին,
այլ իրենց Բոցավառ Սիրով
մեզ ընդառաջ կգան՝
բուժելու մեր խոր վերքերը

[1] Ես վարանում էի խնդրել Նրան:

և մեզ խաղաղություն պարգևելու:

Ո՛վ Սուրբ Սիրտ Հիսուսի
և Անարատ Սիրտ Մարիամի,
Ձեր Սրտերից
մի կայծ փչե՛ք մեզ վրա՝
բոցավառելով մեր սրտերը:
Մեր ազգը դարձրեք
Ձեր Սրբության
կատարյալ Բնակավայրը:
Բնակվե՛ք մեր մեջ,
և մենք էլ՝ Ձեր մեջ,
որպեսզի Ձեր Երկու Սրտերի
Սիրո շնորհիվ,
մենք գտնենք Խաղաղություն,
Միասնություն և Դարձ: Ամեն:

Իմ Ձարչարանքների՛ Վասուլա, Ես քեզ հետ եմ՝ Եզակի, Ամենակարող, Հաստատուն, Հավատարիմ և Ճշմարիտ: Ամենը ուղեկցում է քեզ:

Լսի՛ր Ինձ. գայիսոններն ու գահերը երբեք չեն ազդել Ինձ վրա, ահա թե ինչու է Իմաստությունը նախընտրում աղքատներին և անուսներին: Քո ոչնչության միջոցով Իմ Սուրբ Դեմքը պիտի հայտնվի: Նրանց, ում Ես հավերժ կմնա նրանց հիշողության մեջ[1], ում կամովին ցույց եմ տալիս Ինքս Ինձ:

Ես Ինձ ցույց պիտի տամ քո հասարակությանը: Ես չեմ թաքցնելու, որ Ես Եմն է Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ պատգամների Հեղինակը: Սա[2] նույնպես նվեր է Ամենաբարձրյալից... Իսկ դո՛ւ, զավա՛կս, պատվի՛ր Ինձ՝ քո Աստծուն՝ առանց վախի գնալով հավաքներին, որ ցուցադրես Իմ Մեծությունը: Ասա՛ այն մարգարեությունները, որոնք Ես Ինքս եմ տվել քեզ Իմ Հրամանով, և Ես թույլ կտամ, որ դրանք կայծակի նման հասնեն երկրի չորս անկյունները:

Եղի՛ր առատաձեռն, երբ Ինձ ես տալիս քո ժամանակը, և գնա՛ այնտեղ, որտեղ օգնության կարիք կա: Երբեք աչառություն մի՛ արա: Գնա՛ հիմա հավատով և վկա եղի՛ր ընդմիշտ: Ես՝ Տերը, Սուրբը, միշտ պիտի խոսեմ քեզ հետ, նաև այս ձևով[3], այո՛: Արի՛:

Սեպտեմբերի 29, 1993

(Հրեշտակապետների տոնը)

[1] Երբ Հիսուսի դեմքը երևում է իմ դեմքի փոխարեն և Ինքն Իրեն ցույց է տալիս ժողովների կամ հանդիպումների ընթացքում:
[2] Այն փաստը, որ Նա Իրեն ցույց է տալիս երևալով:
[3] Երբ Հիսուս հետո ավելացրեց. «Նաև այս ձևով», դա այն պատճառով էր, որ ես տատանվեցի՝ չհասկանալով՝ արդյոք Նրա հաղորդակցությունը կլինի միայն բանավո՞ր, թե՞ գրավոր նույնպես:

(Սուրբ Միքայելը տվեց ինձ այս պատգամը)

Աստված ողջ երկրի և երկնքի Թագավորն է, ոչ ոք չկա Նրա նման: Նա ձեր փրկությունն է, ձեր զորությունն ու ձեր խաղաղությունը: Ձեր նեղության մեջ Նա կերկարի Իր Ձեռքը, որպեսզի վեր բարձրացնի և փրկի ձեզ:

Աստված Երկնքի և երկրի Տերն է, և ոչ ոք չկա Նրա նման, ոչ մեկը, որի հետ դուք կարողանաք համեմատել Նրան: Ես ասում եմ ձեզ. արթո՛ւն մնացեք, որովհետև ոչ մեկը չգիտի այն օրը, թե ձեր Տերը երբ կգա ձեզ մոտ: Ամենակարողը չպիտի երկարաձգի Իր որոշումը:

Նա պիտի դա ձեզ բոլորիդ մոտ Կրակի Այունով, և Նրա ժողովրդի լույսը կրակ պիտի դառնա, և ձեր Սուրբը կդառնա Բոց՝ այրելով և ոչնչացնելով չարի խորամտությունը[1]: Նրա Լույսը պիտի ներթափանցի և ճեղքի խավարը, և նրանք, ովքեր չէին կարողանում տեսնել, պիտի տեսնեն: Նա պիտի ոչնչացնի այս աշխարհի հպարտներին: Պահպանված մնացորդը պիտի լինեն Նրա Յուրայինները: Նրանք այնքան սակավ պիտի լինեն, որ նույնիսկ երեխան պիտի կարողանա հաշվել նրանց, <u>եթե Ամենակարողը ապաշխարությանկանչ չլսի երկրից</u>: Նրա դատավճիռն արդար է:

Մնա՛ Տիրոջ մեջ, Վասո՛ւլա, և Նա քեզ զորություն կտա: Ես պիտի պահպանեմ քեզ:

Սեպտեմբերի 30, 1993

Տե՛ր, Սո՛ւրբ և Հավատարի՛մ,
Քո ողջամիտ ուսուցումներն
ինձ Լույս տվեցին:
Դու աշխարհի Լույսն ես:

Ամենաբարձրյալի՛ Որդի,
Դու կրթեցիր ինձ
Քո Ընտրյալների շարքում,
ինձ՝ որևէ արժանիք չունեցողիս:
Թող օրհնյալ լինի Քո Անունը:

Ամենասո՛ւրբ,
եղի՛ր իմ կյանքի Ղեկավարը,
որպեսզի ես ձեռք բերեմ
այն կատարելությունը,
որը գոհացնում է Քեզ:

Կառավարի՛ր ինձ,
իշխի՛ր ինձ վրա և կառուցի՛ր
Քո Թագավորությունն իմ մեջ,
որպեսզի իմ հոգին դառնա

[1] Ակնարկում է՝ Մաքրագործմանը:

կատարյալ բնակավայրը
Քո Աստվածության
և Քո Սրբության: Ամեն:

Ա՛հ, կյանքի թագը պիտի տրվի հավատարիմներին: Մնա՛ Իմ մեջ և դու կատարելություն ու կյանք ձեռք կբերես: Հիմա նույնիսկ էլ ավելի փոքրացի՛ր և խուսափի՛ր աջ ու ձախ նայելուց:

Ես պիտի ընկերակցեմ քեզ մինչև քո ճանապարհի վերջը... Վասո՛ւլա, Ես վերակենդանացրել եմ շատերի հոգին այն ժամանակ, երբ քո հոգին փնտրում էր Իմ Հոգուն[1]: Ես բուժել և հրաշքներ եմ կատարել քո տառապանքի հաշվին: Ինձ համար հաճելի էր այս ձևով Հորը մատուցել քո քավության զոհաբերությունները, և քո հատուցմամբ, Ես շահեցի անաստվածներին:

Ա՛հ... Իմ սիրելի՛ ընկեր, Ես քո մեծահոգության կարիքն ունեմ, որ մաքրեմ անմաքուրներին քո ունեցած ամեն ինչի գնով: Զավա՛կս, դու հոգիներ ես ձեռք բերել՝ Ինձ տալով քո սիրած ժամերը[2]: Վասո՛ւլա, Միասնությունը եղբայրների միջև կլինի ոչ միայն խոսքերի միջոցով, այլև Սուրբ Հոգու գործունեության միջոցով: Ես քեզ առաջնորդել եմ, որ միասնություն փնտրես և գործադրես միասնությունը, որը Ես ցանկանում եմ: Ես պահպանել եմ քեզ փորձության մեջ ընկնելուց, որովհետև Ես ուզում եմ, որ դու կենդանի օրինակ լինես այն բանի, թե ինչպիսին պիտի լինի Միասնությունը: Ով էլ որ նայի քեզ, կտեսնի միասնությունը՝ համապատասխան Իմ Սրտի մտադրություններին:

Մի՛ վհատվիր նրանցից, ովքեր չեն գիտակցում և ճանաչում Իմ Ծրագիրը քո մեջ: Այն, ինչ Ես քեզ տվել եմ որպես պարգև, ավելին է քան մարգարիտների և աշխարհի ողջ գանձերի արժեքը՝ միասին վերցրած: Ա՛հ, Իմ Վասո՛ւլա, Ես՝ Աստված, չպիտի հանդիմանեմ քեզ այն միասնության համար, որով դու ապրում ես, բայց Ես պիտի հանդիմանեմ այն մարդուն, ով վիրավորում է քեզ քո առաքելության մեջ: Նրա վիրավորանքները՝ քեզ ուղղված՝ նման են քարի, որոնք նետվում են ուղիղ Իմ Աչքերի մեջ... Ես՝ Ամենաբարձրյալը, մեծացրել ու դաստիարակել եմ քեզ, որ լինես միասնության նմուշ: Դուք[3] Միասնության առաջին պտուղներն եք: Ես ասում եմ քեզ. տարածի՛ր Իմ Պատգամն ամենուրեք, որքան որ հնարավոր է: Հիշի՛ր. Միասնությունը պիտի լինի խոնարհությամբ և սիրով: Իսկ հիմա թող քո սիրտը գանձի պես պահի այն, ինչ ասելու եմ. Միասնության հասնելու համար Ես կարիք ունեմ քավության (զոհերի)...

Ինձնի՞ց, Տե՛ր:

Քեզնից և որևէ մեկից, որ մեծահոգի է ու վեհանձն: Մի՞թե Ես քո առաջին Սերը չեմ:

---

[1] Ակնարկում է Նրա մասնակի լռությունն իմ հանդեպ, երբ մի քանի օր խուսափում էրինձնից: Այդ մասնակի լռությունը և Նրա թաքնվելը տառապանք էին իմ Հոգու համար:
[2] Նրա Ներկայությամբ խորհելու և թելադրանքներ գրելու ժ մերը: Նրա Ընկերակցության ժամերը:
[3] Ես և բոլոր նրանք, ովքեր ապրում են միասնությունն այնպես, ինչպես Ես:

Այո՛, Դու ես, Հիսո՛ւս:

Ես Նա եմ, ով պիտի տանի քեզ դեպի փրկություն, ուստի մի՛ վախեցիր Ինձնից: Ես քեզ կտամ բավարար զորություն, որ դիմանաս փորձություններին, որոնք ուղղված են քեզ, որպեսզի խլեն այն խաղաղությունը, որը Ես եմ տվել քեզ: Իմ Խաղաղությունը կմնա քեզ վրա, հրեշտա՛կս, և ինչպես արևն է բարձրանում ծովի վրա, Իմ Սուրբ Դեմքը երբեմն-երբեմն պիտի երևա քո միջոցով և քեզ վրա[1] մինչ դու հոգում ես Իմ Շահերի համար: Ես Ինձ ցույց կտամ այս ձևով նույնպես, որպեսզի կղզիները, լեռները և յուրաքանչյուր հարթավայր հավատա, որ քեզ ուղարկել է Ամենաբարձրյալը, և որ Ես եմը «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների Հեղինակն է, և որ դու Իմ պատգամատարն ես, և հետևաբար այն, ինչ Ես ասել եմ քեզ, դու այդ ես խոսում:

Նա, ով մերժում է քեզ, մերժում է Իմ խոսքերը: Սատանան քեզ մեղադրողների մտքում դրել է արդեն, որ չարախոսեն քեզ, բայց ամեն ինչ թո՛ղ Իմ Ձեռքերում: Հավատարմորեն ծառայի՛ր Ինձ և ների՛ր քեզ մեղադրողներին, որպեսզի Հայրը և Ես կարողանանք ավարտել Մեր Գործը քո մեջ: Ապրի՛ր սրբորեն և աշխատանքդ կատարի՛ր խաղաղությամբ:

Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ և օրհնում եմ քեզ Երկնքից:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 6, 1993

Վասո՛ւլա, զավա՛կս, Ես՝ Յահվեն, տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Աչքերդ սևեռած պահիր Ինձ վրա, և դու պիտի ապրես: Ասա՛, դու կամենո՞ւմ ես նորոգել քո ծառայության և հավատարմության խոստումներն Իմ հանդեպ:

Ես կամենում եմ կատարել այն,
ինչ պետք է կատարեմ,
Յա՛հվե, Տե՛ր իմ:
Ես կամենում եմ ծառայել
և լինել հավատարիմ
իմ Յահվե Աստծուն և Փրկչին:
Թող Քո Արքայությունը գա,
և Քո Կամքը լինի:

Դու դեռևս կամենո՞ւմ ես գնալ նրանց մոտ, որոնց մոտ Ես քեզ ուղարկում եմ, և լինել Իմ Արձագանքը:

Այո՛, ես կամենում եմ այնքան ժամանակ, քանի դեռ չեմ կորցրել քեզ իմ տեսադաշտից, Աստվա՛ծ իմ:

[1] Շատ անգամ Հիսուսի կամ Մեր Օրհնյալ Մոր դեմքը «ջնջում» են ինձ, և Նրանց Պատկերն է երևում մարդկանց իմ փոխարեն:

Ես միշտ քեզ հետ եմ... Միասին ես ու դու կքայլենք՝ քո ձեռքը ամուր սեղմված Իմ Ձեռքում: Դու դեռևս կամենո՞ւմ ես խաղողի նոր այգիներ տնկել և զարդարել դրանք, որոնք անուշադրության են մատնված:

Ես կամենում եմ, Աբբա՛,
այնքան ժամանակ,
քանի դեռ Դու
Քո Ձեռքով ես տնկում դրանք,
և Քո Ձեռքն իմ ձեռքի վրա է,
որ ղեկավարես դրանք:
Ես կամենում եմ զարդարել խաղողի
Քո այգիները այնքան ժամանակ,
քանի դեռ Քո Աստվածային Լույսի
Ջերմացնող Ճառագայթները
կփայլեն նրանց վրա:

Ես գնում եմ քո առջևից, որ առաջնորդեմ քեզ: Հետևի՛ր Իմ Ոտնահետքերին: Ես ցույց պիտի տամ Իմ Սուրբ Դեմքը, և Ես պիտի փայլեմ ձեզ բոլորիդ վրա: Դու կամենո՞ւմ ես ոռոգել խաղողի Իմ այգիները:

Այո՛, Տե՛ր իմ, այնքան ժամանակ,
որքան ջուրը կգա
Քո Սեփական Ակունքներից:

Ջուրը պիտի բխի[1] Իմ Սեփական Ակունքներից, Իմ Գահից և Գառան Գահից, և խաղողի Իմ այգիները պտուղ պիտի տան, և նրանց տերևները երբեք չեն թառամելու[2]: Ես պիտի հսկեմ խաղողի Իմ նոր այգիները՝ Իմ Աչքերը երբեք չհեռացնելով նրանցից: Նրանք նրբագեղ ոստեր պիտի արձակեն, և նրանց ճյուղերը առատորեն պտուղ պիտի տան, որ լցնեն ամեն մի քաղցած բերան: Ես պիտի մատակարարեմ բոլոր կենդանի արարածներին: Մի՞թե Ես չեմ ասել[3], աղջի՛կս, որ Իմ Խոսքը կընդարձակվի և գետակից կդառնա գետ, իսկ այդ գետը պիտի հորդի և աճի ու վերածվի օվկիանոսի, Սիրո օվկիանոսի: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես են իրականանում նախկին կանխասացումները: Մի՞թե Ես չեմ ասել, որ Իմաստությունը պիտի լինի քո Դաստիարակը, որը կուսուցանի քեզ, և որ Իմ Ուսուցումները կհեղվեն քեզ վրա ինչպես մարգարեություն: Մի՞թե Ես չեմ ասել[4], որ Ես՝ Աստված, պիտի ձևավորեմ և առաջնորդեմ քեզ, որ Իմ Հավաքներում վկայություն տաս Ինձ՝ Ամենաբարձրյալի համար:

Մի՞թե Ես չեմ ասել, Վասո՛ւլա, աղջի՛կս, որ Իմ Խոսքը[5] երկիրը պիտի

---

[1] Մարդիկ (ջուրը) հարություն կառնեն հոգևորապես Սուրբ Հոգու միջոցով (Աստծո Ակունքը):
[2] Խաղողի այգին Աստծո ժողովուրդն է, Ակունքը Սուրբ Հոգին, երբեք չթառամող տերևները՝ աստվածայնությունը և հավիտենական կյանքը:
[3] Դեռևս 1987թ. (մարտ 20, 1987, մայիս 20, 1987, նոյ. 5, 1987):
[4] ետ 1986թվին:
[5] Պատգամները:

ծածկի մառախուղի պես: Մի՞թե ես չեմ ասել, զավա՛կս, որ ես քեզ պիտի տանեմ ծովի ալիքների և ամբողջ երկրի վրայով և ամեն մի ժողովրդի ու ազգի վրայով, որպեսզի հուչակես Սիրո Իմ Օրհներգը[1] և փառավորես Ինձ: Հրճվի՛ր Ինձանով ուրեմն: Արի՛ և գովաբանի՛ր Ինձ, զավա՛կս: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես իրականացան Իմ նախկին կանխասացումները[2]:

Քո Հայրը քո Հրամանատարն է: Ես Երկնքի և երկրի Հրամանատարն եմ: Ես ողջ արարչության Հրամանատարն եմ՝ անսահմանորեն մեծ: Ոչ մեկը և ոչ մի բան չի գերազանցում Ինձ: Ես Ինքնաբավ եմ: Իմ շառավի՛ղ... Իմ հարազա՛տ, ոչ մեկը չի կարող հավասարվել Իմ փառքին: Դու հավատո՞ւմ ես, որ Ես կարող եմ թագավորներ և թագավորություններ տապալել, եթե նրանք արգելք դառնան Իմ Սիրո Օրհներգին[3]: Ես խոստացա քեզ այս ամենը նախքան դրանց կատարվելը: Եվ այսօր Ես ասում եմ քեզ. Ես՝ Աստված, կտամ քեզ Իմ Զորությունը և հիշողություն, որ մտապահես այն բոլոր ուսուցումները, որոնք լսեցիր Իմաստությունից:

Զնայած քեզ վրա կարկուտի պես ուժգին մեղադրանքներ կթափվեն, չվախենա՛ս: Ես է՛լ ավելի պիտի սեղմեմ քեզ Իմ Սրտին և պաշտպանեմ քեզ: Սատանան պատրաստվել է պատերազմելու քո դեմ, և դու դարձել ես նրա գերագույն թիրախը՝ այն հաստատ մտադրությամբ, որ դադարեցնի քեզ մարգարեանալուց: Մի՛ վախեցիր նրա սպառնալիքներից: Ես կօգնեմ քեզ: Ես կօգնեմ քեզ, ուրեմն արիացի՛ր: Դու պիտի գնաս առանց խոչընդոտների, իսկ այն վիրավորանքները, որ նա կհասցնի քեզ՝ օգտագործելով մարդկանց, միայն պիտի ուժեղացնեն քեզ:

Ես անսպասելի հրաշքներ պիտի կատարեմ Իմ Հավաքների ժամանակ՝ Իմ զավակներին հիշեցնելու համար, որ <u>Ես Եմը</u>՝ Հայրը, որին նրանք լքել են, երբեք չի լքել իրենց: Ես պիտի հիշեցնեմ նրանց, որ Իմ Ներկայությունը փրկում է, և որ Իմ Սուրբ Հոգին, ում նրանք մոռացել են, հանգստություն է տալիս նրանց: Ես պիտի հիշեցնեմ Իմ Զավակներին, որ Ես անտարբեր չեմ և Իմ Կարեկցանքը մեծ է նրանց հանդեպ, քանի որ Ես Հայր եմ նրանց համար: Ես այնպես կանեմ, որ նրանց սրտերը երգեն Ինձ համար, և նրանք կհասկանան, որ Իմ Սրբարանից դուրս իրենց սեղանը դատարկ է: Նրանք կհասկանան, որ Իմ Սրբարանից դուրս նրանք հեղձամահ կլինեն վշտից և բեռներից: Իմ Բազուկներից դուրս, նրանք կկանգնեն Ավերածության և Մահվան դեմ հանդիման:

Ձեր սերնդին առավելություն է տրված լսելու Իմ Ձայնը: Ես բացել եմ Իմ Բերանը, որ խոսեմ և սովորեցնեմ անուններին: Ես մտադիր եմ Իմ Խաղաղությունը տալ ձեզ ու փրկել ձեզ: Ես մտադիր եմ ձեզ իմաց տալ, որ Ես Հայր եմ, իսկ դուք՝ Իմ սերմը:

Այսօր թզենու ոստերը փափկել են, և նրա տերևները դուրս են գալիս: Մի՞թե դեռևս չեք ճանաչում ժամանակները: Այդ ինչպե՞ս է, որ ձեզանից այդքան շատերը չեն կարողանում կարդալ և հասկանալ Սուրբ Գրքերը: Այդ ինչպե՞ս է, որ ձեզանից շատերը կորցրել են ընկալելու կարողությունը: Մի՞թե չեմ ասել՝ արթո՛ն մնացեք: Զավակնե՛րս, այսօր ձեզ է առաջարկվում Իմ Թագավորությունը: Մի՛ անցեք նրա կողքով՝ առանց

[1] Պատգամները:
[2] Կանխասացումների մեծամասնությունն ասվել էր 1986թվին:
[3] Պատգամներին:

այն նկատելու: Ոչ էլ թողեք, որ Իմ Թագավորությունը անակնկալ վրա հասնի:

Մի՛ անտեսեք Իմ Սերը: Եկե՛ք, Ես միշտ ձեզ հետ եմ:

Հոկտեմբերի 11, 1993

Իմ Սուրբ Սրտի Վասո՛ւլա, գրի՛ր.

Ես ներկա եմ և քո կողքին եմ: Ես քեզ պիտի ասեմ այն ամենը, ինչ Ես ուզում եմ դու դրես: Թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քո ձեռքը, աղավնյա՛կս: Աղջի՛կս Եգիպտոսից, թող Իմ Պատգամը հեղեղի պես հորդի քեզանից ողողելով երկրներ, քաղաքներ և նրա բնակիչներին: Բղավի՛ր, և ոչ մեկը չի լռեցնի քեզ: Առաջ շարժվիր Իմ Օրհնությամբ, աղջի՛կս: Հեռո՛ւ քշիր թունավոր օձերին և իժերին[1]: Ես թույլ կտամ, որ ազատվես և կյանքդ փրկես նրանց թույնից: Ես պիտի հսկեմ քեզ, ինչպես մայրն է հսկում իր մանկանը: Խոսի՛ր և ոչ մեկից մի՛ վախեցիր:

Ասա՛ նրանց, որ Խաղաղության Իշխանը՝ քերովբեներով շրջապատված Աստվածը, մի կողմ է դրել Իր թագն ու արքայական հանդերձները, որպեսզի շրջի ու հսկի աշխարհը՝ ոտաբոբիկ և քուրձ հագած[2]՝ ցուցադրելու Իր վիշտը: Ինչպես որ Ես քեզ հետ բարյացակամ վարվեցի և Իմ Սուրբ Սրտում քեզ տեղ հատկացրի, նույնպես. պիտի վարվեմ Իմ մնացած զավակների հետ: Հեթանոսներից Ես պիտի բարձրացնեմ ղևտական հավատարիմ քահանաներ և պիտի ավարտեմ նրանց երթը իրենց հետ:

Արիացի՛ր, աղջի՛կս: Երանելի են նրանք, ովքեր սիրում են Ինձ. երկինքը նրանց տունն է: Երանելի են նրանք, ովքեր ուրախանում են Իմ Ոտնաձայնից. նրանք պիտի ուրախանան՝ Իմ մեջ լինելով: Ինչպես Ես նորոգեցի քո կյանքը, աղջի՛կս, նույնպես պիտի նորոգեմ բոլոր նրանց, ովքեր անկեղծորեն կկանչեն Իմ Անունը:

Ո՛վ Աստված,
Դու Ինքդ ես ընտրել ինձ՝
մոռացության մատնված երկրից,
որ լինեմ Քո պատգամատարը:
Իմ անունով Դու ինձ կանչեցիր
Քեզ ծառայելու:
Ահա այստեղ եմ ես, Տե՛ր,
Դաստիարակ և Քնքո՛ւշ Ուսուցիչ,
Սո՛ւրբ Ուղեկից,
Պաշտպա՛ն և Խորհրդատու:
Ո՛հ, Տե՛ր,
Դու չես ծածկել Քո Խորհուրդները,

[1] «օձեր և իժեր» ասելով նկատի ունի, սխալ ուսուցումներ և սխալ մեկնաբանումներ.
[2] Հայտ. 11:3

ոչ էլ Քո Ծրագրերն ինձնից:
Մի կողմ թողնելով
Քո Փառքն ու Քո Թագը՝
Դու դուրս եկար Երկնքից,
որ Սիրով այցելես
իմ թշվառ Հոգուն:

Ո՛չ,
դու չես արհամարհում թշվառներին,
ոչ էլ աղքատներին՝ իրենց
թշվառության և աղքատության մեջ,
այլ կամովին գալիս ես
նրանց օգնության:
Դու ամեն օր առաջնորդում ես ինձ,
որ վկայեմ Քո Փառքի մասին,
և ինչպես Ջահ,
որ լուսավորում է ուղին,
Քո Ներկայությունը
պահում է ինձ ընկնելուց:
Իմ կյանքի ամեն մի օր
Դու հրավիրում ես ինձ
Քո Խնջույքին,
որ առատորեն սնես իմ Հոգին
Երկնային Մանանայով:
Իմ խեղճ սիրտը
Դու պատվաստել ես
Քո Սուրբ Սրտին, որտեղ Դու
վերակենդանացրիր իմ Հոգին,
որ Քեզ համար
Հավատարմություն երգի:
Դու իմ Հոգուն
հրճվանք ես պատճառում,
որ անվախ հռչակեմ
Քո Խոսքը ազգերին:
Քո Աջ Ձեռքով սեղմելով
իմ ձեռքը՝ Դու ցանում ես,
Դու հաստատում ես
Արդարություն և Տոկունություն:

Այո՛, Երկնքի և երկրի Արքան
առաքինություն է ցանում այնտեղ,
որտեղ չարիք կա,
խաղաղություն՝ այնտեղ,
որտեղ պատերազմ կա,
միասնություն՝ այնտեղ,
որտեղ բաժանում կա, սեր՝ այնտեղ,
որտեղ ատելություն կա,
հավատ՝ այնտեղ,
որտեղ անաստվածություն կա,

հույս՝ այնտեղ,
որտեղ հուսահատություն կա:
Սուրբ է Նրա Անունը:

Դու հաստատեցիր
Քո Թագավորությունը[1] երկրի վրա՝
օծելով մեզ և տպով
նոր կյանք մեր հոգու համար:
Մեզ փրկելու համար
Քեզ մերժվեց այն,
ինչ Քո Շուրթերը
աղերսեցին Գեթսեմանիում,
բայց Դու պատասխանեցիր,
երբ Քո Հայրը կանչեց Քեզ:
Եվ հիմա իմ հոգին
պիտի ապրի Քեզ համար միայն,
և ես պիտի ծառայեմ միայն Քեզ:
Ես պիտի հռչակեմ
Քո Անվան Մեծությունը
այնքան ժամանակ, որ կապրեմ:

Դու պիտի հռչակես Ինձ գալիք սերունդների համար, որ ցույց տաս Իմ Արդարությունը նրանց, ովքեր դեռ չեն ծնված: Ո՛չ, Ես չեմ արհամարհում թշվառներին, ոչ էլ մերժում եմ աղքատներին, այլ Ես գալիս եմ նրանց մոտ՝ Իմ Սիրտը Ձեռքիս մեջ, որպեսզի ցույց տամ նրանց, որ Իմ Սերը հարատև է, իսկ Իմ Հավատարմությունը ձգվում է դարեդար:

Ձեր օրերում Ես քուրձ եմ հագել, որ ցույց տամ Իմ վիշտը: Երկնքի սյուները դողում են, և Իմ հրեշտակներին վիշտն է համակում, երբ տեսնում են, թե ինչպես է այս սերունդը հետևում Սատանայի ոտնահետքերին: Այս է պատճառը, որ Ես իջնում եմ Իմ Գահից, որ հանեմ ձեզ բոլորիդ: Ո՛չ, Ես ոչ մեկին չեմ մերժի: Ես պիտի նստեմ թշվառների հետ, և նրանք չպիտի վախենան Ինձնից: Ես ոտաբոբիկ պիտի ընկերանամ նրանց[2] և ասեմ, որ սկզբից ի վեր իրենք երբեք անհայր չեն եղել: Եվ եթե իրենք երբեք չեն հասկացել Երկնային Օրենքները, այդ այն պատճառով էր, որ ոչ մեկը չկար իրենց մոտ, որ ասեր այդ մասին: Եվ ոչ մեկը նրանց չի ասել, որ իրենք Ամենակարողի սերմն են:

Հետո, Ես գառների նման Իմ շուրջը պիտի հավաքեմ նրանց,[3] Իմ Սրտին մոտիկ, և ինչպես մեկը, որ գաղտնիք է բացահայտելու, Ես պիտի մնուցեմ նրանց Իմ Շուրթերից Հայր Մերով: Հետո Ես կասեմ նրանց, որ ՍԵՐԸ իրենց աչքերի առջև է: Կենդանի Հացը հենց Նա է, որ նստած է իրենց մեջ, Նա, որ ապրեց և մեռավ իրենց համար, հիմա խոսում է իրենց հետ: Նա, ում Շունչը լուսավոր դարձրեց Երկինքը, և Ում միջոցով եղավ ամեն ինչ՝ իրենց հետ է, իրենց աչքերի առաջ:
Ես պիտի հրավիրեմ բոլոր անցորդներին. «Ո՞վ է թշվառ և մերժված ձեր

[1] Եկեղեցին:
[2] Ոտաբոբիկ՝ նույնացնում է պարզության հետ:
[3] Թշվառներին

հասարակությունից, թող այս կողմ գա»: Ես ոչ մեկին սոված չպիտի թողնեմ, ոչ մեկին աղքատ, քանի որ Իմ Օրհնությունները դանձեր են, իսկ Իմ Սերը կշտացնող ու բավարարող է: Իմ ուղիները աքանչելի ուղիներ են: Իմ ճամփաները տանում են դեպի Հավիտենական Կյանք:

Ես պիտի սովորեցնեմ թշվառներին ու խեղճերին, որ իրենց Հայրը, որ Երկնքում է, իրենց Պահապանն է՝ փրկարար մի Աստված: Ես պիտի հիշեցնեմ նրանց, որ իրենք նույնպես Նրա զավակներն են համարվում, և որ իրենք կարող են կանչել Նրան «Հա՛յր իմ»: Եվ եթե նրանք հարցնեն. «Ո՞ւր գտնել Հասկացողությունը», Ես կասեմ. «Հասկացողությունը, զավա՛կներս, ամեն տեսակ չարից խուսափելն է»: «Իսկ մեր թշվառությո՞ւնը, Դու ի՞նչ կանես մեր աչքերը բացելու համար», կբացականչեն նրանք: «Թշվառների՞դ: Ես պիտի փրկեմ ձեզ հենց ձեր թշվառության միջոցով և պիտի օգտագործեմ ձեր վիշտը, որպեսզի բացեմ ձեր աչքերը»: Հետո այդ թշվառների սրտերը պիտի փափկեն և Ինձ կխնդրեն, որ հոգ տանեմ իրենց, ինչպես որ դու խնդրեցիր Ինձ, աղջի՛կս:

Ապա նրանցից Ես պիտի ստեղծեմ մի հզոր ժողովուրդ՝ Իմ Անվան վեհությամբ: Եվ երբ ուրացողները նրանց հանդիմանեն ու հարցնեն. «Ինչո՞ւ եք բարձրաձայն ուրախանում: Ինչպե՞ս եք համարձակվում Աստծո Խոսքը հռչակել Նրա Սրբարանում դուք, պիղծ մարդիկ»:

Ես պիտի ասեմ այդ ուրացողներին. «Եթե նրանք լուռ մնան, քարերը նույնիսկ ավելի բարձրաձայն պիտի աղաղակեն, մինչև որ խլացնեն ձեր ականջները: Այսօր, հենց այսօր Ես ձեզանից վերցնում եմ Իմ Թագավորությունը և տալիս եմ այս մնացորդին, քանի որ դուք ինքներդ ներս չեք մտնում, ոչ էլ թողնում եք ուրիշներին, որոնք ցանկանում են ներս մտնել: Այսուհետև, Ես պիտի լինեմ նրանց Խորհրդատուն և Թագավորը նրանց հոգում: Այսուհետև Ես նրանց պիտի ուղարկեմ քաղաքները, որ հռչակեն Իմ Սերը և ուրիշներին փոխանցեն այն Ավանդությունը, որը Ես Ինքս եմ տվել Պետրոսին և Իմ աշակերտներին: Քանի որ այս մնացորդը պատվաստված պիտի լինի Ինձ վրա, նա պիտի մաքրի Իմ քաղաքները և վերջ տա մեղքին»:

Ես՝ Աստված. օրհնում եմ քեզ, որ լսեցիր Ինձ: Սերը սիրում է քեզ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)[1]

Իմ հրամանը քեզ հետևյալն է. սիրի՛ր Ինձ, գրի՛ր Իմ Պատգամները և գնա՛ ազգից ազգ՝ հռչակելով Իմ Խոսքը, եղի՛ր Իմ Արձագանքը: Նրանք, ովքեր ականջ ունեն, թող լսեն: Նրանք, ովքեր չեն ուզում լսել, թող չլսեն:

Ամեն ինչ, որ ձեռնարկես, պիտի առաջնորդվի Իմ կողմից և օրհնվի, ուստի չվախենաս: Ժամանակը կարճ է գործի՛ր առանց հապաղման: Սա նույնպես Իմ հրամանն է: Իմ Որդու Սիրտը կոտրված է, և Ես չեմ կարող այլևս տանել Նրա տխրությունը: Վասո՛ւլա, փոքրի՛կս, Ես՝ Յահվեն, քո

[1] Ավելի ուշ Հավիտենական Հայրը խոսեց:

Սիրող Հայրն ու Աբբան, պիտի օգնեմ քեզ այս մարտում: Քայլի՛ր Ինձ հետ: Այն բառերը, որ դու արտասանում ես, քո բառերը չեն, այլ Իմն են: Ամեն ինչ, որ դու անում ես Իմ Տան համար, փառավորում է Ինձ:

Մնա՛ Իմ մեջ, քանի որ Իմ զավակները տեսնում են Ինձ քո մեջ և քո միջոցով: Ես կտամ քեզ այն օգնությունը, որի կարիքն ունես, և Ես պիտի ամրապնդեմ քեզ, որպեսզի քո մեջ եղած Իմ Զորությամբ դու կոխկրտես Իմ Տան թշնամիներին և դրանով կատարես քո առաքելությունը՝ փառաբանելով Ինձ:

Զավա՛կս, հիմա դարձի՛ր քո պարտականություններին [1] և հիշի՛ր, զավա՛կս և հարազա՛տս, որ Ես՝ Աստված, քո Հայրը, քեզ հետ եմ և քո մեջ: Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ Իմ ողջ Սրտով:

Հոկտեմբերի 22, 1993

Խաղաղություն քեզ:

Հենվի՛ր Ինձ վրա և մի՛ վախեցիր: Եթե բոլոր չարքերին Սատանայի հետ միասին հավաքես, միևնույն է, Ես ավելի զորեղ եմ նրանցից:

Թանկագի՛նս, երբեք չկասկածես Իմ Հավիտենական Սիրուն:
ic:

Նոյեմբերի 11, 1993

Խաղաղություն քեզ: Այդ քո Տերն է խոսում, և Իմ Փառքի համար է, որ Ես Ինքս Ինձ հայտնում եմ քեզ [2] և քո հասարակությանը: Ե՛կ, եկ և Ինձ համար մի ե՛րգ երգիր:

Ես չգիտեմ՝ ինչպես երգեմ, Տե՛ր:

Դու չգիտես, թե ինչպես երգե՞ս: Այդ դեպքում թո՛ւյլ տուր Ինձ քեզ հետ միասին գրել երգի բառերը: Հետո, եթե անգամ դու կարդաս դրանք սրտանց, նրանց հնչերանգը մեղեդի կդառնա Իմ Ականջներում: Գրի՛ր.

Էմանուե՛լ, արի՛, արի՛, Սիրելի՛ս,
արի՛ և կենդանացրո՛ւ իմ հոգին,
արի՛ և կյա՛նք պարգևիր հոգուս:

Ո՛վ Հոր Սիրելի,
ես բացել եմ իմ սրտի դուռը,
մի՞թե շատ երկար

[1] Տնային պարտականություններ:
[2] Շատ անգամ Տերը «ջնջում» է իմ դեմքը և իմ փոխարեն Իրեն է ցույց տալիս մարդկանց:

պետք է սպասեմ,
մինչև Դու մտնես իմ սենյակները:
Սոսկ Քո անցումն Իմ սրտով
իր հետևից կթողնի
Քո անուշահոտության
ամենանուրբ բուրմունքի հետքը,
որովհետև Քո Սերը
կդարմանի իմ խեղճ հոգին:
Սիրո՛ Հոգի, ինձ միայն շնորհի՛ր
Քո Սիրո իմ բաժինը:
Էմանուե՛լ, արի՛, Արի՛,
Կատարյա՛լս,
արի՛ և հափշտակի՛ր հոգիս,
այլապես կարիքը
կիշխի իմ թշվառ սրտին:

Ո՛վ Հոր Սիրելի,
որքա՜ն Գեղեցիկ ես Դու:
Ամենաբարձրյալի՛ Որդի,
ո՞վ կա Քեզ նման:
Արի՛ և քա՛րշ տուր ինձ
Քո Ոնտահետքերով.
մենք միասին
կանցնենք ճանապարհը,
մենք կհետևենք նշանմերին,
որոնք դրվել են Քո Հոր Ձեռքով՝
տանելու դեպի
Բերկրանքների Իր Պարտեզը:
Մենք, սիրելի՛ս, մեկ սրտով
և մեկ մտքով կհետևենք
այն քաղցրաբույր շավիղին,
որ Քո Հայրն է պատրաստել
ինձ համար:
Ինձ խրախուսելու համար
Նա ծածկել է իմ ուղին
շափյուղաներով:
Ինձ վստահեցնելու համար,
Նա ինձ վրա ամբողջությամբ
յուղով գրեց Իր Սուրբ Անունը:

Ո՛վ Հոր Սիրելի, որ ձեռքերիցդ
դեռևս մաքուր զմուռս է կաթում
Քո Հարությունից ի վեր,
արի՛ և զմայլա՛նք պատճառիր
իմ հոգուն
Քո միայն մեկ հայացքով,
որը բավական է իմ հոգին խաղաղ

և հանգիստ պահելու համար,
բավական է, որ աչքերս
հրճվեն Քո Ներկայությամբ:
Իմ պարտեզի՛ Շունչ,
իմ հոգո՛ւ Աղբյուր,
Վսեմ Սիրո՛ Ակունք,
ամբողջովին պաչտելի՛ և Սո՛ւրբ,
Քեզնից է գալիս
ողջ պտղաբերությունը,
հեղի՛ր Քո Հոգին
ողջ մարդկության վրա:
Ցույց տուր Քո Մեծ Սերը
երկնքում և երկրի վրա:

Ո՛վ Հոր Սիրելի,
Դու ամբողջապես Գեղեցիկ ես:
Ինչի՞ հետ համեմատեմ ես Քեզ,
Կյա՛նք իմ: Խնկի ծխի մի քուլայի,
փայլատակող
Լույսի մի ճառագայթի,
մաքուր զմուռսի բուրմունքի:
Քո Ներկայությունը, Տե՛ր,
վեհորեն կանգնած է իմ առջև, և,
ո՛հ, կարծես ես
ինքս թագուհի լինեմ:
Դու բարձրացնում ես ինձ,
որ պարուրես իմ հոգին՝
նրբորեն շշնջալով
Քո Սերն իմ ականջին.

«Աղավնյա՛կս,
ես հիվանդ եմ քո սիրուց,
ես գալիս եմ
ամենավերին երկնքից՝
քեզ այցելելու համար:
Ես մի կողմ եմ դրել Իմ թագը
և իջել եմ Իմ Գահից:
Ես չեմ ուշանա,
ես մի կարճ ժամանակ,
և արգելքը կվերանա:
Ես կնորոգեմ քեզ
և քեզ կվերադարձնեմ
Քո աստվածային էությունը:
Իմ սիրելի՛,
Ես ձրի ջուր կտամ
քեզ Կյանքի Ջրի Ակունքից,
քեզ, որ ծարավ ես Իմ Սիրուն:

Քո Թագավորը
ամենևին հանգիստ չի ունենա,
Իմ Հոգո՛ւ սիրելի,
մինչև որ դու Նրան թույլ չտաս
դրոշմել քո սրտի վրա
Իր Աստվածային Համբույրը,
Համբույր Իր Շուրթերից[1]:
Մի՞թե չես նկատել,
թե ինչպես է արևը խավարում
ամեն անգամ,
երբ կասկածում ես Իմ Սիրուն:

Մոտեցի՛ր Ինձ,
ամենից թանկագի՛ն հոգի,
և Ես կհեղեմ քեզ վրա
անհամար գանձեր
Իմ Սուրբ Սրտից:
Քեզ համար եմ միայն Ես
դրանք պահել,
որ քո հոգին գեղեցիկ դարձնեմ,
ինչպես գարունը,
և այն վերածեմ
փղոսկրյա մի աշտարակի,
մի Դրախտի՝ Ինձ համար միայն:
Մի՞թե չես հասկացել,
թե ինչպես եմ Ես
քեզ պատվաստել Ինձ վրա:
Թող որ լսեմ քո ձայնը նորից...»:

Որքա՜ն Հիասքանչ ես Դու,
ո՛վ Օծյալ,
Աստծո Զոհաբերության՜ Գառ՝
շրջապատված Քո հրեշտակներով
և բոլոր սրբերով:
Ո՛վ Անդիմադրելի,
Հո՛ր Արտացոլում,
Լո՛ւյս՝ երիցս սուրբ,
Մե՛կդ Երեքի մեջ,
Երե՛քդ Մեկ Լույսի մեջ՝
հազարավոր արևներից էլ պայծառ:
Ես ինչպե՞ս արժանի համարվեցի
տեսնելու Որդուն,
իսկ Որդու մեջ՝ Հորը:
«Մի՞թե չես լսել, աղավնյա՛կս,
որ խոնարհները

[1] Երգ Երգոց 1:1

պիտի ուրախանան Ինձնով,
և որ հետին աղքատը
պիտի հրճվի Իմ Ներկայությամբ:

Մի՞թե չես նկատել
Իմ թուլությունը,
որ ունեմ թշվառների համդեպ,
և իմ ուրախությունը,
երբ սովորեցնում եմ
աղքատներին»:

Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ,
այն ո՞վ է, որ բարձրանում է,
ինչպես արշալույս,
փայլատակում մթնշաղի մեջ,
ինչպես առավոտյան աստղը:
Ո՞վ է լուսնից ավելի
այս գեղեցիկը՝
արևով զարդարված և Իր Սրտում
լայն բացված մի Դարպասով:

«Նա Երկնքի Թագուհին է,
Նա Իմ Մայրն է և քո Մայրը,
սքանչելագույնը՝ կանանց մեջ,
գեղեցիկ՝ ինչպես Երկինքը,
ճաճանչափայլ՝ ինչպես Իմ Փառքը,
եզակի՝ Իր Կատարելությամբ,
բերկրանքը՝ Իմ Հոգու:
Նա է այն Կինը, որն Իր Գլխին
տասներկու աստղ ունի
որպես պսակ. Իմ Փառքի Անոթը,
և Արտացոլումը
Իմ Հավիտենական Լույսի:
Նա է, որի Ներկայությունն
Իմ Գավիթներում
ստվերի մեջ է թողնում
բոլոր Համաստեղությունները
միասին վերցրած:
Նա Անոթն է Ճշմարիտ Լույսի՝
Բանի, Որը մարմնացավ
և Որն ապրեց ձեր մեջ:
Նա Շնորհն է Շնորհի մեջ
և սաղմոսերգուների
Ամենաքաղցր Երգը:
Նա Իմ Ուրախության Նյութն է,
Իմ Պատիվը
և Իմ Հպարտությունը,

Նա դեպի Երկինք տանող
Դարպասն է, որ ցույց է տալիս
Իր զավակներին,
թե ինչպես մտնեն
Իմ Թագավորությունը:
Նա Իմ Գլուխգործոցն է, Նա
Մխիթարիչն է քո Մխիթարիչի,
Փրկչակիցը քո Փրկչի,
Իմ Սուրբ Հոգու Հարսը:

Աղջի՛կս,
Ես հանգիստ չեմ ունենա,
մինչև քեզ չվերցնեմ
և նույնպես չտանեմ
Իմ Մոր Տունը,
Նրա Սենյակը, ով հղացավ Ինձ,
որպեսզի քեզ էլ ցույց տամ
Նրա Գեղեցկությունը:
Եվ այն ժամանակ
բոլոր խորհուրդները,
որոնք հանելուկների
մի ջրհոր էին թվում քեզ,
հանկարծակի,
կայծակի հարվածի նման
պիտի հայտնվեն նաև քեզ,
սիրելի՛ս, և դու պիտի հասկանաս,
թե ինչու Արև հագած Կինը
իջնում է հիմա
Իմ Գավիթներից ձեզ բոլորիդ մոտ
այսքան խավար մի պահի:
Թող քո աչքերը, աղավնյա՛կս,
լինեն առաջ սևեռած,
քո հայացքը՝ ուղիղ քո առջև:

Այն Արահետով, որով Ես քայլեցի,
Ես հետ կգամ, Իմ սե՛ր:
Ես պիտի գամ
և խնամեմ Իմ Խաղողի Այգին,
Էմանուելը քեզ հետ պիտի լինի»:

(Վերջ)

...Քեզ դուր եկա՞վ:

Շա՛տ:

Օրհնի՛ր Ինձ ուրեմն, գովաբանի՛ր Ինձ և սիրի՛ր Ինձ...

Թող օրհնյալ լինի
և գովաբանվի Քո Անունը,
Թող Սերը
սովորեցնի մեզ սիրել Իրեն:
Թող մենք սովորենք
փնտրել Քեզ սրտի պարզությամբ:
Թող Քո Սուրբ Հոգին
լցնի ողջ աշխարհը:
Թող Քո ծաղիկներից
ոչ մեկը չթառամի,
այլ թող որ նրանք բոլորը ծաղկեն
մի նուրբ բուրմունքով՝
Քեզ փառաբանելու համար,
ո՛վ Սուրբդ Սրբոց:

Նոյեմբերի 26, 1993

(Մալավի - Բլանթայր - Աֆրիկա)

Տե՛ր իմ,
Ամենակարո՛ղ, Դու ասացիր...
«Եվ Ես, ինչպես գետի մի վտակ,
ինչպես դեպի պարտեզ
հոսող մի առու,
ջրելու եմ Իմ այգին.
Ես մտադիր եմ ոռոգել
Իմ ծաղիկների թմբերը»[1]:

Քո Հոգին հուզվեց
մեր խեղճությունից,
...իսկ Թշվառությունը
կոչ արեց Անսահման Ողորմությանը:
Աղքատությունը
դրդեց Քո Վեհությանը
մի կողմ դնելու Քո Թագը
և խոնարհվելով հանելու նրան,
իսկ նրա չորությունը ստիպեց
Քո Աչքերին շրջվել դեպի նա...
Դու ասացիր.

«... Եվ տե՛ս,
Իմ վտակը դարձել է գետ,
իսկ Իմ գետը վերածվել է ծովի:
Հիմա Ես այնպես կանեմ,
որ ուսմունքը փայլի,
Ես նրա լույսը

[1] Սիրաք 24:30-31

պիտի ուղարկեմ ամենուրեք,
Ես պիտի հեղեմ ուսմունք՝
որպես մարգարեություն,
որպես ժառանգություն
ապագա բոլոր սերունդներին»[1]:

Իսկ Դու, Արարի՛չդ ամեն բանի,
սովորեցրիր ինձ, Դու դարձար
իմ անձնական Դաստիարակը, և Դու,
որ ստեղծեցիր ինձ,
տեղ պատրաստեցիր
իմ հոգու համար:
Դու ասացիր. Արի՛ և ապրի՛ր
Իմ Սուրբ Սրտում՝ քո Օթևանում:

Եվ հիմա ես արմատ եմ դցել
Քո Սրտի կենտրոնում:
Դու տեղադրել ես ինձ
Քո Մարմնում, ո՛վ Տեր,
դարձնելով ինձ Քո մասնիկը
ողջ Հավիտենության համար:
Ուրիշ էլ ի՞նչ կարելի է խնդրել:

Թո՛ւյլ տուր Ինձ, ծաղի՛կս, ուսուցանել քեզ: Եվ ուր էլ Ես գնամ, դու պիտի գնաս այնտեղ, որտեղ էլ Ես քայլեմ, դու էլ պիտի քայլես: Ես և դու միասին՝ միացած, կապված Հավիտենապես: Ես օրհնում եմ քեզ՝ Իմ զավակներին Իմ Սուրբ Դեմքը ցույց տալու համար: Ես պիտի օգնեմ քեզ, զորացնեմ քեզ, և քո միջոցով նրանք պիտի զգան ու տեսնեն Իմ Ներկայությունը: Քո մեջ նրանք պիտի տեսնեն Իմ Դեմքը:

Իմ Խաղաղությունը քեզ: Ես՝ Աստված, սիրում եմ քեզ:

Դեկտեմբերի 6, 1993

Ես, «i Panayia»ն[2] հիմա քեզ հետ եմ:

Աղջի՛կս, թույլ տուր Հիսուսին, որ ձևավորի քեզ այն պատկերի համաձայն, որ Նա ցանկանում է, որ դու լինես: Քո կամքը տալով Իմ Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և ինքդ քեզ ամբողջությամբ Նրան հանձնելով՝ դու իսկապես կգոհացնես Նրան, և Նրա Կամքը կկատարվի քո մեջ: Մի՛ վախեցիր, աշխատի՛ր եռանդով և վերակենդանացրո՛ւ Նրա Եկեղեցին: Թող Նրա արարչությունը հասկանա, որ Խոսքը կենդանի է և անխոնջ գործում է: Ես՝ որպես քո Մայր, միշտ պիտի խրախուսեմ քեզ՝ կրելու այն Խաչը, որը Հիսուսն է քեզ վստահել: Հիմա գրի՛ր, աղջի՛կս.

Այս օրերին առավել, քան երբևէ, Ես պատգամներ եմ տալիս, որպեսզի վերակենդանացնեմ ձեր հավատը և ձեզ հիշեցնեմ երկնային գործերի

[1] Սիրաք 24:31-33
[2] «Սուրբ Տիրամայր» հունարեն:

մասին: Ես անդադար կոչ եմ արել Խաղաղության համար, ինչպես նաև եղբայրների միջև Միասնության և Հաշտության պատգամները տարածելու համար: Ես խորը վշտի մեջ և արցունքներով եկա երկնքից, որպեսզի ձեզ իմաց տամ, թե դուք որքան հեռու եք Աստծուց: Ես եկա բոլորիդ մոտ՝ խնդրելու ձեզ, որ հաշտվեք Աստծո հետ և մեկդ մյուսի հետ և այլևս տարբերություններ չդնեք միմյանց միջև, «քանի որ ամեն ոք, որ կկանչի Տիրոջ Անունը, պիտի փրկվի»[1]: Ես երբեք ոչ մեկին հուսախաբ չեմ արել:

Ես եկա խաղաղության պայմաններով, նույնիսկ ձեզանից ամենանվաստի մոտ, որ հայտնեմ Աստծո խաղաղության մասին, և աղաչեցի այս սերնդին իր աչքերը բարձրացնել ու փնտրել Աստծուն և զոհաբերություններ մատուցել Աստծուն: Ես եկա՝ ձեր օրերում, երբ այնքան շատերն էին հեռացել ու օտարացել Աստվածային կյանքից: Ես եկա ձեզ բոլորիդ հիշեցնելու, որ Աստծո ճշմարիտ առաքյալը նա է, ով կատարում է Աստծո Կամքը.

<u>սիրել նշանակում է</u>
<u>կատարել Աստծո կամքը</u>:

Վասո՛ւլա, Աստված Ինձ ուղարկեց, որ բժշկեմ ձեզանից շատերին, սակայն Իմ կանչերը չհարգվեցին, ոչ էլ բարձր գնահատվեցին: Ամենաբարձրյալն Ինձ ուղարկեց, որ հավաքեմ ձեզ մեծ բազմություններով և սովորեցնեմ ձեզ, որ սերը ողջ Օրենքի էությունն է:

Աղջի՛կս, Իմ Հոգին տխուր է, որովհետև երկնքից եկող օրհնություններն անտեսվում են մինչև օրս: Անկարող ճանաչելու Աստծուց եկող Պատգամի ճշմարտացիությունն ու էությունը՝ մինչև օրս մարդիկ փորձում են առաջ տանել իրենց սեփական դաղափարները: Այսպիսով Խոսքը հմտորեն հեռացվեց, և Իմ Ոտնահետքերը թաքցվեցին մարդկային ձեռքով՝ վախենալով աշխարհի կարծիքից: Եթե միայն նրանք իրենց հույսը Ինձ վրա դնեին և վստահեին Ինձ... Շատ ավելի օգուտ կստանային նրանք դարձի եկողներից, որոնց շարունակում են մերժել... Աշխատի՛ր, փոքրի՛կս, Տիրոջ համար և թո՛ւյլ տուր Նրան փորագրել քեզ վրա Իր ողջ Ծրագիրը: Գալիս են այն օրերը, երբ հետևյալ հարցերը Տիրոջ կողմից կուղղվեն ձեզանից յուրաքանչյուրին:

«Դու քո մերձավորին սիրե՞լ ես, ինչպես ինքդ քեզ: Հնարավո՞ր է, որ դեռևս չես հասկացել Աստծո Կամքը: Դու արե՞լ ես այն ամեն հնարավորը, որպեսզի պահպանես խաղաղությունը: Երբ քո թշնամին սոված էր, դու առաջարկե՞լ ես նրան ճաշակել քո սեղանից: Երբ նա ծարավ էր, դու նրան խմելու բան տվե՞լ ես: Այդ ինչպե՞ս է, որ ինչ որ տալիս ես, տալիս ես առանց սիրո»:

Ես ձեզ խնդրել էի, որ աղոթեք: Ձեզանից շատերն են աղոթում, սակայն առանց սիրո: Ձեզանից շատերն են պահեցողություն անում, սակայն առանց սիրո: Ձեզանից այնքան շատերն են խոսում Իմ պատգամների մասին, բայց շատ քչերն են հետևում դրանց, որովհետև սերը պակասում է ձեր սրտերում: <u>Դուք ցած եք խոնարհվում և հետևում Օրենքի տառերին, սակայն չեք կարողանումհասկանալ Օրենքի էությունը</u>:

[1] Հռոմ. 10:12-13:

Ձեզանից շատերը խոսում են միասնության մասին, բայց առաջինն են, որ դատապարտում են նրանց, ովքեր գործադրում են այն, որովհետև դուք սեր չունեք: Եթե դուք առանց սիրո գործադրեք այն ամենը, ինչ Ես ձեզանից խնդրում եմ, դուք դեռևս խավարի մեջ եք գտնվում: Դուք դեռևս կողմնակից եք պատերազմի, այլ ոչ թե Խաղաղության: Դուք կարծում եք, թե գիտեք ամեն ինչ, սակայն իրականում ոչինչ չգիտեք: Երբ Ես հաշտության կոչ արեցի, քանի որ դուք բոլորդ մեկդ մյուսի մաս եք կազմում, Ինձ չլսեցիք: Մինչ օրս Ես կանչում եմ ձեզ բոլորիդ.

<u>ապրե՛ք Իմ պատգամներով</u>:

Նորոգե՛ք ինքներդ ձեզ Աստծո մեջ, Նրա Սիրո մեջ և սովորե՛ք սիրել մեկդ մյուսին: Եղե՛ք <u>բարի</u> և <u>սուրբ</u>: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ, փոքրի՛կ զավակներ՝ հետևելով խաբուսիկ ցանկություններին: ՍԵՐ նշանակում է ապրել Ճշմարտության մեջ: Մի՞թե չեք կարդացել, որ «Եթե ձեր ողջ ունեցվածքը տաք մեկ առ մեկ և նույնիսկ թույլ տաք, որ ձեր մարմինը այրեն, բայց այդ ամենն անեք առանց սիրո, դա ոչ մի օգուտ չի տա ձեզ»: Մի՞թե չեք հասկացել, որ եթե ձեզանից մեկը վիրավորվի, Քրիստոսի Մարմնի բոլոր անդամները կվիրավորվեն և կտառապեն նրա հետ: Եթե դուք վիրավորում եք ձեր հարևանին, դուք վիրավորում եք Քրիստոսի Մարմինը, այլ ոչ թե ձեր հարևանին: Կարո՞ղ եք ասել.

«Ես եկա Աստծո մոտ
ակնածանքով,
անկեղծությամբ և սիրով»:

«Ե՞րբ», Նա կհարցնի ձեզ. «Ե՞րբ եք եկել Ինձ մոտ ակնածանքով, անկեղծությամբ և սիրով: Իմ Մարմինը դուք խեղել եք, Ինձ դատել եք, վիրավորել, զրպարտել և դավաճանել ստով: Ինձ արհամարհել եք, մերժել և սաստիկ անարգել ձեր շրթունքներով: Ուրեմն ե՞րբ եք եկել Ինձ մոտ ակնածանքով, անկեղծությամբ և սիրով: Ես ձեզ խնդրում եմ տալ որոշակի ապացույցներ Իմ հանդեպ ունեցած ձեր սիրո մասին»:

Զավակնե՛րս, հիմա հասկացե՛ք, թե ինչու է Սատանան օգտվել ձեր թուլությունից և ձեզ մղել պատերազմի: Քրիստոսը ձեզ մոտ եկավ քաղցած, և դուք Նրան ուտելիք չտվեցիք: Նա ծարավ եկավ ձեզ մոտ, իսկ դուք նրան խմելու բան չտվեցիք: Նա եկավ ձեզ մոտ որպես օտարական, բայց դուք չընդունեցիք Նրան, այլ վարվեցիք Նրա հետ, ինչպես որ կամեցաք: Զավակնե՛րս, ձեր սերը սոսկ բառեր չպետք է լինեն ձեր շուրթերի վրա, այլ պիտի բխեն ձեր սրտից: Ձեր սերը պետք է կենդանի և գործուն լինի: Ես ձեզ հետ եմ, որ օգնեմ ձեզ:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ ասելով. թող որ ամեն բան, ինչ անում եք, արվի սրտանց և սիրով:

Դեկտեմբերի 7, 1993

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, խաղաղությո՛ւն քեզ:

Թեև դու չէիր, որ փնտրեցիր Ինձ, ես շնորհ արեցի քեզ և քո թշվառության մեջ եկա քեզ մոտ: Թեև դու հարմար չէիր այս առաքելության համար, ես որոշեցի դաստիարակել քեզ Իմ Զորությամբ, որ դնաս և Իմ Պատգամով նվաճես մի անկրոն և չար աշխարհ: Երբեք չվախենաս, քանի որ ես քեզ հետ եմ: Մնա՛ Ինձ հավատարիմ և թույլ մի՛ տուր, որ քո սիրտն անհանգստանա, երբ ոմանք չեն ընդունում Իմ Պատգամը: Այդ Իմ Պատգամն է և ոչ թե քոնը, այդպես չէ՞: Դու պետք է միայն այն փոխանցես և չանհանգստանաս մնացածի համար: Աղջի՛կս, սկզբից ևեթ Իմ Հայրն ու ես զգուշացրինք քեզ, որ դու շատ ընդդիմության կհանդիպես, քանի որ այն, ինչ փրկում է, արհամարհված է աշխարհի կողմից:

Ես նորից եմ ասում քեզ, որ երբեք չեմ ասել նախկինում, որ դու Իմ ծառան ես և երբեք Ինձանից՝ քո Տիրոջից, ավելի մեծ չես լինի: Ոչ մի պատգամատար ավելի մեծ չէ, քան Նա, ով նրան ուղարկել է: Դու տեսել ես Իմ Վերքերը, դու նույնպես պիտի կրես դրանք, որովհետև դու Ինձ հետ ես: Սակայն մի՛ մտահոգվիր, Սերը քո կողքին է, որ ուրախացնի քեզ: Եվ ինչպես Հայրն Ինձ ուղարկեց, որ վկայեմ Նրա Սիրո մեծությունը և փառավորեմ Իր Անունը, նույնպես էլ Ես եմ ուղարկում քեզ:

Հայրն Ինձ ուղարկեց, որ հայտնի դարձնեմ Նրա Անունը, և ասացի, որ շարունակելու եմ այն հայտնի դարձնել և այդպես էլ անում եմ: Իմ Խոսքը Ճշմարտություն է: Մի՛ զարմացիր, երբ Ես ժամանակ առ ժամանակ իջնում եմ, որ քեզ հիշեցնեմ Հոր մասին: Ուստի հիմա, աղջի՛կս, դու նույնպես, եղի՛ր Իմ վկան: Ես ընտրել եմ մի քանիսին, որ Իմ Զորությունը ցուցադրեմ նրանց մեջ և ցույց տամ աշխարհին Իմ Հարստության խորքերը՝ Իմ Անունը փառավորելու համար: Ձեր օրերում Ես և Իմ Մայրը հայտնվում ենք մի շարք մարդկանց: Ես մակադրել եմ յուղով Իմ Անունը ամբողջապես նրանց վրա, որպեսզի նրանք նույնպես կարողանան կատարել այն աշխատանքը, որը Ես եմ տվել նրանց: Աղոթի՛ր այդ հոգիների համար, որ նրանք նույնպես եռանդով կատարեն իրենց առաքելությունը, որպեսզի փառաբանեն Ինձ:

Վասո՛ւլա, Իմ Սեփականություն, Ես՝ քո Տերը, քո Զորությունն եմ: Ուրեմն արի՛ առանց ուշանալու և վերցրո՛ւ Ինձանից, լցրո՛ւ քո պաշարները: Ես զարդարել եմ քո գլուխը Իմ Փշե Պսակով և ծածկել քո մարմինը Իմ Ստորագրությամբ: Իմ Խոսքը Ես փորագրել եմ Իմ Մատով քո ողջ մարմնի վրա, և դու դարձել ես Իմ կենդանի Գրատախտակը: Ես Իմ Հրամանը տվել եմ քեզ՝ եռանդով ծառայել և սիրել Ինձ՝ քո Տիրոջը: Սիրի՛ր Ինձ, ինչպես Ես եմ քեզ սիրում, եղի՛ր կատարյալ քո սիրո մեջ: Ես հրամայել եմ քեզ ծաղկեցնել Իմ Խաղողի Այգիները: Ես ընտրեցի քեզ թշվառության միջից, որ որդեգրեմ քեզ: Հետո Ես քեզ ողողեցի Ճշմարիտ Գիտությամբ և օծեցի քեզ՝ դարձնելով Իմը:

Չնայած թշնամին, նախանձից դրդված, միավորել է Իր ուժերը՝ քեզ ոչնչացնելու համար, սիրելի՛ս, դու առաջ կգնաս առանց վնասվելու: Եվ ինչպես արևն ու լուսինն են փայլում ամեն ինչի վրա, Իմ Սուրբ Դեմքը պիտի փայլի քեզ վրա[1]՝ որպես օրհնություն՝ հաստատելով, որ Ես եմը

[1] Երբ Քրիստոսը վերացնում է ինձ և ամբողջովին երևում է իմ փոխարեն, ինչպես

ճշմարիտ և միակ Հեղինակն է

«Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ»
պատգամների,

և որ դու՝ Իմ պարգևն ես մարդկությանը: Ահա այս ձևով ես կկնքեմ Իմ Պատգամը... Զափազանց մեծ են Իմ Ողորմությունը ու Իմ Փառքը... Ես պիտի շարունակեմ օգտագործել քեզ՝ որպես իմ զոհասեղանի, որի վրա ես պիտի դնեմ քո մատուցած յուրաքանչյուր զոհաբերությունը: Ամեն ինչ, որ դու մատուցես Ինձ սիրով, պիտի հանգստացնի ու մեղմացնի Իմ Հոր զայրույթը: Հետո, երբ քո ծառայություններն ավարտվեն,

Արարողությունը պիտի վերջանա:

Ուրիշ ոչինչ չի կարելի ավելացվել... Ես իսկապես քեզ հետ պիտի լինեմ շուտով, սիրելի՛ս:

Դեկտեմբերի 13, 1993

(Մարգարեություն Ռուսաստանի մասին)

Աստվա՛ծ, Ամենակարո՛ղ Տեր,
ինձ ավելի ամո՛ւր կապիր Քեզ,
կապի՛ր ինձ
Քո Հավիտենական Սիրով:

Ես եմը քեզ հետ է, և Ես երբեք չեմ լքի քեզ: Դու կապված ես Ինձ... Հիմա Ես կանչեցի քեզ, և դու պատասխանեցիր: Գրի՛ր, Իմ Վասո՛ւլա. քո քույր Ռուսաստանը ամենավերջում կպատվի Ինձ, և մի օր սուրբ պիտի կոչվի, քանի որ Ես պիտի լինեմ նրա Ղեկավարը: Արդարությունն ու սրբությունը կրկին պիտի ապրեն այնտեղ... Այո՞:

Տե՛ր, անառակությունը այժմ թափանցում է նրա մեջ...

Ես կխոնարհեցնեմ նրա աչքերը...

Ես չեմ հասկանում, Տե՛ր, թե ինչ ձևով Դու կխոնարհեցնես նրա աչքերը:

Շատ լավ, ուրեմն Ես քեզ կասեմ. Իմ վեհության[1] պայծառությամբ: Հետո

չատերն են վկայել տարբեր ազգերից:

[1] Ես հասկացա, որ դա լինելու է մաքրագործման միջոցով, քանի որ երբ Աստված ցույց է տալիս Ինքն Իրեն և փայլում որևէ հոգու մեջ, Լույսի հակադրությունը խավարին այնքան մեծ է, որ հոգին պարզ տեսնում է իր անկատարությունները և շատ է տառապում:

Ես պիտի գամ և հանգստանամ նրա սրտում...

Տե՛ր, նա դեռևս ապրում է մեղքի խավարում և տառապանքի մեջ:

Նրանք, ովքեր սխալ ուղղությամբ շարժվեն՝ կընկնեն: Ես պիտի ոչնչացնեմ չքեղ ուժերը Իմ Կրակով, և հպարտները պիտի ցածրանան: Ես մտադիր եմ վերակառուցել Իմ Տունը, և Ես պիտի որդեգրեմ նրա որդիներին ու դուստրերին, որ պատվեն Ինձ: Վասո՛ւլա, մի՛ կանգնիր այդտեղ չփոթված և առանց հասկանալու: Ես ասում եմ քեզ՝ քո քույր Ռուսաստանը պիտի լինի շատ ազգերի ղեկավարը[1] և վերջում պիտի փառաբանի Ինձ: Ուշադի՛ր լսիր և հասկացի՛ր.

<u>Նրահովիվներըպիտիհավաքվեն</u>,

այն ժամանակ, երբ մի ուրիշ տեղում պայմանագրերը պիտի խախտվեն, և մինչ մի այլ տեղում ապստամբություն առաջ պիտի գա՝ Աշտնջենական Զոհաբերությունը ոչնչացնելու համար, <u>Ռուսաստանի հովիվները պիտի հավաքվեն,</u> որ վերականգնեն Իմ Տունը՝ մեծարելով Աշտնջենական Զոհաբերությունը, պաշտելով և պատվելով Ինձ:

Երբ վերջին օրերին ազգ ազգի հետևից կընկնեն և կայլասերվեն՝ Սուրբ Վայրում ավերածության պղծությունը բարձրացնելու համար, <u>Ռուսաստանի հովիվները պիտի հավաքվեն</u>, որ սրբագործեն նրա խորանները:

Եվ մինչ ուրիշները[2] պիտի մեծարեն անկենդան մի կերպարանք՝ մարդկային հմտության մի հնարանք, անշունչ մի պատկեր, <u>Ռուսաստանի հովիվները պիտի հավաքվեն</u>՝ փառաբանելով Ինձ, քանի որ Ես՝ Աստված, պիտի պահպանեմ նրա Սրբությունը:

Եվ այն ժամանակ, երբ մի այլ տեղում խիստ չարությամբ ջանքեր կտարվեն՝ Իմ պատգամատարների օրերը կարճելու համար, քանի որ նրանք այս աշխարհի <u>հույսն</u> են, <u>Ռուսաստանի հովիվները պիտի հավաքվեն</u>, որ պաշտպանեն Իմ Սուրբ Զոհաբերությունը, իսկ Ես Իմ կողմից Իմ Գահը պիտի դնեմ նրա մեջ և պիտի հավաքեմ բոլոր նրանց, ովքեր կրում են Իմ Անունը Իմ Փառքի համար:

Ես պիտի նորոգեմ նրա ջարդված զոհասեղանները, քանի որ շատերը, ովքեր ապրում են Իմ Անվան ներքո, վերջում նրա կողքին պիտի կանգնեն, և նրա հովիվները մեկ ձեռքով և մեկ հոգով պիտի կանգնեցնեն Իմ երերացող Տունը: Այն, ինչ ժամանակին ծռված ու խեղաթյուրված էր, հիմա պիտի ուղղվի, և Ես պիտի զարդարեմ Ռուսաստանն ազդեցիկ հաղուստներով՝ Իմ հանդեպ նրա եռանդի ու նվիրվածության համար: Ես նրա հովիվներին պիտի դնեմ անհամար ազգերի ղեկավար: Ես նրան կնքել եմ նվիրաբերման կնիքով, որ Ինձ մեկ անգամ ևս առաջարկի խունկ և հանգստարար բուրմունք: Այս է պատճառը, որ Ես հրաշքներով պիտի հեղեղեմ նրա հովիվներին:

«Ռուսաստա՜ն, Իմ Հավատարմությունն ու Իմ Բարությունը պիտի

[1] Հոգևորապես:
[2] Հավատուրացները:

սրբագործեն քեզ: Ռուսաստա՛ն, աղջի՛կս, ճանաչի՛ր Ինձ լիովին, և Ես խոստանում եմ քեզ երդումով, որ կբարձրացնեմ քո հետնորդներին աստղերի պես և կտամ նրանց սուրբ զգեստներ: Ճանաչի՛ր Ինձ լիովին, Ռուսաստա՛ն, և Ես կոչնչացնեմ քո բոլոր հակառակորդներին: Եթե դու Ինձ ամբողջովին ճանաչես, Ես նոր հրաշքներ կկատարեմ քո մեջ, որպեսզի արևի տակ ապրող ամեն մի մարդու ապացուցեմ Իմ Ողորմությունն ու Իմ Սրբությունը»:

Ես պատրաստ եմ Իմ Կարեկցանքը ցույց տալու նրան, և Ես չեմ հապաղի, եթե նա մեծ ցանկությամբ ու սիրով ընդունի Ինձ: Ես չեմ ուշանա, որ նրան ցույց տամ, թե ինչպես Ես՝ Ամենակարողը, կարող եմ ոչնչացնել ամբարտավաններին և կոտրել նրանց անօրեն դավազանները: Բայց[1] եթե նա արատավորի այն ազատությունը, որը Ես նոր եմ տվել իրեն, և Ինձ դուրս հանի իր մտքից նույնիսկ մի փոքր ժամանակով, Ես թույլ կտամ, որ թշնամին ներխուժի նրա մեջ... Եթե Ռուսաստանը իր ողջ սրտով չվերադառնա դեպի Ինձ և չճանաչի Ինձ աներկմիտ ու կայուն սրտով՝ որպես իր Փրկչի, Ես մի մեծ և հզոր զորք կուղարկեմ նրա մեջ, իսկ նրանից էլ՝ բոլոր ազգերի մեջ, մի զորք, որպիսին երբեք չի եղել նախկինում, որպիսին երբեք չի լինի նորից մինչև ամենահեռավոր դարերը, և երկինքը կսևանա ու կդողա, և աստղերը կկորցնեն իրենց պայծառությունը...

«Այսօր Ես պատրաստ եմ փոխհատուցելու քեզ, Ռուսաստա՛ն, այն տարիների համար, որ դու տառապեցիր, և Ես դեռ կարող եմ ձեզ բոլորիդ հափշտակել բոցերի միջից, եթե դու Ինձ ամբողջովին ճանաչես: Փնտրի՛ր բարիք, այլ ոչ թե չարիք: Դու արդեն մոռացել ես քո սովն ու ծարավը[2]... Ես հետ եմ քշել կարմիր վիշապին և ոչնչացրել նրա կայսրության չքեղությունը: Ես խոնարհեցրի Հպարտներին: Ես բացեցի բանտի դարպասները և ազատեցի քո գերիներին: Ես տապալեցի կարմիր վիշապի թագավորությունը, որը բույն էր դրել քո արգանդում, որը ստիպում էր երկրին դողալ՝ վերածելով այն ամայի մի տարածության: Իմ Անունը քո մեջ նորից պատվելու համար Ես բացեցի քո Եկեղեցիները մեկը մյուսի հետևից: Այդ օրը Ես կանչեցի քեզ քո անունով.

Ռուսաստա՛ն[3],

որ ուրախանաս ու չնորհակալ լինես և տոնես Իմ Այլակերպման Տոնը[4]: Ես վայրկենապես այլակերպեցի քո պատկերը: Քո ճնշված լինելու տառապանքը՝ քո պատիժն էր՝ աշխարհին հասցրած ոճիրների համար: Իսկ հիմա Ես սպասում եմ, որ ողորմած լինեմ քո հանդեպ, Ռուսաստա՛ն, քանի որ վերջում դու պիտի փառաբանես Ինձ: Ես ասում եմ քեզ. մինչ ուրիշները պիտի քանդեն, դու պիտի կառուցես: Մինչ շատերը պիտի ընկնեն, քո հովիվները պիտի բարձրանան, եթե դու հույսդ Ինձ վրա

[1] Հանկարծ Աստծո Ձայնը ցածրացավ և դարձավ տխուր ու շատ վշտացած: Դա ինձ խորապես տխրեցրեց:
[2] Հոգևորապես:
[3] ԽՍՀՄ-ից՝ Ռուսաստան:
[4] Մի Պատգամում Տերը կանխասաց, որ կփոխակերպի Ռուսաստանը: Կոմունիզմի անկումը տեղի ունեցավ ուղղափառների կողմից նշվող Փոխակերպման տոնի շաբաթվա ընթացքում:

դնես: Եվ մինչ Իմ Յուրայիններից ոմանք, Ինձ հետ սեղան նստելով, ստորաբար պիտի դավաճանեն Ինձ, դո՛ւ, դու պիտի պարզես քո ձեռքը՝ Իմ Անունը, Իմ Պատիվը և Իմ Զոհաբերությունը պաշտպանելու համար: Եվ այդպիսով, քո մեղքերից յուրաքանչյուրի համար դու հատուցած կլինես:

Ապա դու առաջ պիտի գաս հավատարմորեն և պիտի փրկես քո եղբորը, քո եղբորը, որը չարի զոհն էր: Դու հարություն պիտի տաս Եկեղեցուն՝ դարձնես Մեկ, և Արդարությունը պիտի գա՝ ապրելու Նրա մեջ: Արդարությունը խաղաղություն պիտի բերի և հարատև ապահովություն: Դու երջանիկ պիտի լինես՝ գովերգելով Ինձ: Դու հարուստ պիտի լինես այն հավատարմության համար, որ ցույց տվեցիր քո Թագավորի հանդեպ: Նա հարյուրապատիկ պիտի հատուցի քեզ: Իսկ այնտեղ, որտեղ պայմանագրերը խախտվել էին, մարգարեները արհամարհվել և սպանվել, այնտեղ, որտեղ շատ հանցանքներ էին ցանվել, և գոռգոռոցով սպառնալիքներ ասվել՝ հանելով մինչև երկինք, այնտեղ, սիրելի՛ս, այնտեղ քո հովիվների ազնիվ ձայները պիտի կանչեն.

«Փրկությո՛ւնը, Ամենաբարձրյալի քահանաներ և սպասավորներ, փրկությունը պիտի գտնել միայն Սիրո մեջ: Խաղաղությո՛ւնը, Հովիվնե՛ր, որ Հոր Արտացոլումն եք, խաղաղությունը պիտի գտնել միայն Ներողամտության մեջ: Միասնությունը, եղբայրները երիցս սուրբ Լույսի՝ Ով Մեկ է երեքի մեջ և երեքը մեկ Լույսի մեջ, միասնությունը պիտի ձեռք բերվի միայն ներ ամուսնությամբ (այսինքն՝ սիրով և բարեկամությամբ): Թող մեր Ամենակարող Տերը՝ Անդիմադրելին, մեզ արժանի դարձնի Իր Անվանը, թող Նա մեզ չնորհի մեկ լինել Իր Անունով: Հավիտենակա՛ն Հայր, թող որ մենք այնքան կատարելապես միացած լինենք, որ ողջ աշխարհը հասկանա, որ այդ Դու էիր ուղարկել Զոհաբերության Գառը, որ փառաբանի Քեզ և հայտնի դարձնի Քո Անունը»:

Այսպես դու պիտի ոչնչացնես Նրան, ով Բաժանում է, և վերականգնես այն, ինչ քանդված է: Ռուսաստա՛ն, քո դերն է պատվել Ինձ և փառաբանել Ինձ: Տոնախմբությունը դեռ գալու է, բայց քեզանից է կախված, թե ինչ ձևով այդ Օրը կգա.

Այնպե՛ս արա, որ Ես քեզ կրակով
չվերադարձնեմ դեպի Ինձ,
այլ Խաղաղության կապերով»:

Վասո՛ւլա, թո՛ւյլ տուր Ինձ դրել քո ձեռքով: Դու կատարյալ չես, բայց քո անկատարության մեջ Ես կփառավորեմ Իմ Անունը, Իմ Տունը և Իմ Ժառանգությունը: Սերը սիրում է քեզ և քեզ հետ է քո կյանքի ամեն մի պահին: Ուրախացի՛ր: Ես՝ Հիսուս, քեզ հետ եմ:

Դեկտեմբերի 15, 1993

Վասո՛ւլա, նորոգի՛ր Ինձ տված քո խոստումները:

Հիսո՛ւս Քրիստոս,
իմ Տե՛ր և իմ Աստված,
Ես երբեք չեմ հրաժարվի
Քեզանից կամ դավաճանի Քեզ՝
անկախ նրանից,
թե ինչ կանեն ինձ հետ:

Իմ Անվան համար նրանք պիտի հետապնդեն քեզ, ծաղրեն քեզ և արատավորեն քո անունը: Դու պիտի շարունակե՞ս պահել Իմ հանդեպ հավատարմության քո խոստումները:

Նրանք արդեն հետապնդեցին ինձ,
ծաղրեցին ինձ
և արատավորեցին իմ անունը:
Քո Անվան համար
նրանք զրպարտեցին ինձ, սակայն
ես պահեցի իմ խոստումները:
Դու իմ Փրկիչն ես
և իմ Թագավորը,
ահա թե ինչու ես երբեք
չեմ հրաժարվի Քեզանից, Տե՛ր:

Աղավնյա՛կս, դու կմնա՞ս Իմ կողքին մինչև վերջ և մինչև մահ:

Հիսո՛ւս Քրիստոս, Իմ Տե՛ր
և Իմ Փրկի՛չ,
ես պիտի պաշտպանեմ
Քո Անունը մինչև վերջ:
Ես երբեք չեմ թողնի Քեզ:

Երբ մեկին շատ է տրված, նրանից շատ կպահանջվի... Ես քեզ շատ եմ տվել վստահելով: Ես քեզնից նույնիսկ ավելին եմ ակնկալում հիմա, Իմ Զարչարանքների՛ Վասուլա: Բայց Ես քեզ կշնորհեմ Իմ Հավատարիմ Սերը որպես օգնություն, ինչպես նաև Իմ Զորությունը: Ես քեզ հսկելու եմ շատ մոտիկից...[1]

[2]Արա՛, որքան կարող ես, իսկ Ես կանեմ մնացածը... Արի՛ հիմա և հենվի՛ր Ինձ վրա:

ΙΧΘΥΣ

[1] Հիսուս հրամայում է ինձ լուռ մնալ:
[2] ...Հետո կարծես ինձ ուրախացնելու համար Նա փոխեց տոնը և ուրախ ասաց ինձ, որ անեմ, ինչ կարող եմ, իսկ Նա կանի մնացածը:

Դեկտեմբերի 20, 1993

Տե՞ր իմ:

Ես եմ:

Թող նրանց աչքերը,
ովքեր չեն տեսնում Քո նշանները,
այլևս փակված չմնան:
Թող այն ականջները,
որ այլևս չեն լսում,
բացվեն և դառնան զգոն:

Թող այն սիրտը,
որը երբեք չի հասկանում
Քո Իմաստությունը,
բացվի և հասկանա Քո առակները:
Թող նրանց հոգին
աճեցնի այն ամենը,
ինչ Դու Ինքդ տնկեցիր՝
Քեզ փառաբանելու համար:

Ես վերջում կայցելեմ ձեզ բոլորիդ...[1] Իսկ դու, աղջի՛կս, թույլ մի՛ տուր, որ վհատությունը տիրապետի և անհանգստացնի քեզ: Քո վազքը դեռ չի ավարտվել: Ուստի մի՛ դանդաղիր: Ես պիտի օգնեմ քեզ, և դու պիտի լսես Իմ Ձայնը, որպեսզի այն սրտապնդի քո հոգին: Հիմա լսի՛ր և գրի՛ր.

Սկզբում, երբ դու չգիտեիր, թե ինչ է նշանակում Արդարություն և Մաքրություն, սկզբում, նախքան Իմաստությունը կգար՝ քեզ Իմ Խոսքը սովորեցնելու, Ես քեզ մոտ ուղարկեցի Իմ ծառային՝ Դանիելին[2], որ դիպչի սրտիդ և քեզ Ինձ մոտ բերի: Եվ այսպես, Ես եկա բարձրացնելու մարդկանց մեջ ամենացածրերից մեկին: Իմ Շնորհի և Զորության միջոցով էր, որ Ես քեզ Իմը դարձրի: Գերագույն Իշխանությունը ընթրեց քեզ հետ և օգտագործեց քեզ՝ որպես Իր Քնարի, որպեսզի Իր տան անդամներց չատերին հմայի Իր Սիրո Օրհներգով: Ուրախացի՛ր աղջի՛կս, քանի որ Ես մտադիր եմ ավարտել քո կյանքի ճամփորդությունը քեզ հետ:

Սկզբում, նախքան Իմ Կրակը կանցներ քո միջով, Ես ուղարկեցի Իմ ծառա Դանիելին, որ քեզ խնդրի կարդալ Դանիելի գիրքը, քանի որ նրա մեջ համապատասխան ճշմարտություններ կան, ճշմարտություններ և մարգարեություններ, որոնց կնիքը պետք է բացվի, որպեսզի հասկանալի դառնան և ապա հայտարարվեն: Դրանք վերջին ժամանակների նշաններն են: Ուստի Դանիելի գիրքը, որը կնքվել էր, և նրա բառերը պահվել էին գաղտնի, հիմա ամբողջությամբ բացահայտվում է ձեզ բոլորիդ:

Ես ասում էի բոլորիդ, որ ձեր սերունդը ուրացել է հավատը, և որ այդ

[1] Ես հակացա՝ Կրակով: Աստված կայցելի մեզ բոլորիս Կրակով, և յուրաքանչյուր ոք կլսի, կտեսնի և կհասկանա:
[2] Իմ պահապան հրեշտակը:

ուրացությունը պիտի սողոսկի Իմ Սրբարանի սրտից ներս՝ վնասելով քահանաներին, եպիսկոպոսներին և կարդինալներին: Տեսնո՞ւմ ես, աղջի՛կս, Ես խոսում եմ այն ուրացողների մասին, ովքեր դավաճանում են Իմ Եկեղեցուն և հակառակվում Իմ ընտրյալին՝ Իմ Եկեղեցու Փոխանորդին, որը զսպում է նրանց ըմբոստությունը: Սակայն ասվել է, որ Սատանան պիտի գործի ձեր ժամանակներում, որպեսզի ոչնչացնի այն ամենը, ինչ որ լավ է ու բարի, և պիտի հալածի նրանց, որոնց Ես ուղարկում եմ ձեզ մոտ Իմ Գթառատ կանչերով, և որոնք կարող են փրկել ձեզ: Իմ կանչերն ու Իմ նշանները Երկնքից չեն հասկացվել այդ ուրացողների կողմից, այլ մերժվել են: Բայց և այնպես, դրա փոխարեն, նրանք կողջունեն ամեն տեսակ չարիք, որը կարող է առաջնորդել նրանց հոգին ավելի խոր խավարի և ավերածության մեջ: Նրանք կողջունեն Սուտը և կմերժեն Ճշմարտությունը:

Ասված է[1], որ մի որոշ ժամանակ, երկու ժամանակ և կես ժամանակ[2], Իմ ժողովուրդը պիտի գտնվի նրանց հալածանքների և գազանի[3] տիրապետության տակ: Ասված է, որ նրանք այդ գազանի օգնությամբ պիտի մտադրվեն փոխել Ավանդություններն ու Իմ Օրենքը և ծրագրում են հեռացնել Մշտնջենական Զոհաբերությունը, ոտնակոխ անել և ճզմել այն ու նրա տեղում կանգնեցնել ավերածության պղծությունը, անկենդան մի պատկեր... Եվ յուրաքանչյուր սուրբ, որին Ես ուղարկում եմ ձեր սերնդի մեջ, պիտի դրվի նրանց իշխանության տակ:

Այսօր դուք բոլորդ տեսնում եք, թե ինչպես են իրականանում այս մարգարեությունները: Գազանի ազդեցության տակ լինելով՝ այդ ուրացողները[4] պատերազմում են յուրաքանչյուր սրբի դեմ, որին Ես ուղարկում եմ ձեզ մոտ, և ապացուցում, որ այսօր նրանք ավելի ուժեղ են[5]: Իսկ ինչ վերաբերում է նրանց[6], ովքեր առանց որևէ պատճառի մերժում են Իմ՝ այսօրվա կանչերը, նրանք հետևյալ խոստովանությունը պիտի անեն, երբ Իմ Օրը գա.

[7]«Ո՛վ Տեր, մենք կույր ենք եղել և մեղանչել ենք: Մենք իսկապես անարդար ենք եղել Քո Հանդեպ և դավաճանել Քո պատվիրաններին ու Քո Օրենքին: Մենք մերժել ենք լսել Քո ծառաներին՝ մարգարեներին, որոնք խոսում էին Քո Անունից ողջ աշխարհի հետ: Տե՛ր, մենք չլսեցինք Քո Գթառատ Կանչերը և ոչ էլ որևէ խորհրդի հետևեցինք: Աստվա՛ծ իմ, մենք ուշադրություն չդարձրինք Քո բացահայտ նշաններին: Մենք ծաղրում էինք նրանց բոլորին, որովհետև մենք մեղանչեցինք Քո դեմ: Մենք արհամարհեցինք Սուրբ Գրքերը, այլապես կընդունեինք Քո Նշանը երկնքում[8] և Քո Սուրբ Հոգու Պարգևները: Սակայն մենք մի կողմ

[1] Դան. 7:25
[2] Նշանակում է՝ երեք ու կես տարի:
[3] Հայտ. 13:1-18
[4] Հավատուրացները, ըստ Մեր Տիրոջ, այն եկեղեցականներն են, որոնց վրա ազդել են մասոնները: Այդ հավատուրացների մասին նշված է Հայտ. 13:11-ում: Նրանք նշված են որպես երկրորդ գազան, այլ կերպ ասած՝ կեղծ մարգարեն:
[5] Դան. 7:21
[6] Բարի հովիվները, որոնք, սակայն, թերահավատ են ու փակ:
[7] Կարդա Դան. 9:4-19
[8] Մատթ. 24:30, Դան. 7:13-14: Ես հասկացա, որ Նա նկատի ունի Սուրբ Հոգու հայտնությունը, որը հիմա զորությամբ գալիս է՝ հավաքելու Աստծո ժողովրդին: Սուրբ

շրջեցինք մեր աչքերը, որպեսզի չտեսնենք, որ չլինի թե տեսնելով դարձի գանք: Եվ հիմա Սուրբ Գրքերում գրված անեծքն ու նզովքը պիտի թափվեն մեզ վրա, քանի որ մենք իսկապես մեղանչել ենք Քո դեմ: Եվ հիմա, հիմա, երբ Սուրբ Զոհաբերությունը ոչնչացվել է, մենք ո՞ւմ կարող ենք դիմել: Ինչո՞վ կարող ենք մնել մեր հոգիները: Ինչպե՞ս կարող ենք հագեցնել մեր ծարավը: Ինչպե՞ս կարող ենք Կյանք ձեռք բերել հիմա: Այն ամբողջ ավերածության պղծությունը, որը Դու կանխասացիր, սակայն ծածուկ պահեցիր, հիմա իրականացել է: Այնպիսի վիշտ, որ մերն է, չի եղել մեր գոյության առաջին օրից ի վեր[1]»:

[2]Վասո՛ւլա, Իմ Սերը պիտի պահի քեզ: Թո՛ւյլ տուր Ինձ, Իմ թանկագի՛ն հոգի, որ այնքան փխրուն ես, օգտագործել քեզ ամբողջությամբ: Եղի՛ր Իմ լուռ վկան[3]: Արի՛:

Դեկտեմբերի 22, 1993

(Շարունակությունը)

Այո՛, Վասո՛ւլա, գրի՛ր.

Այո՛, նրանք, ովքեր մերժեցին Իմ Կանչերն առանց որևէ պատճառի, պիտի խոստովանեն՝ ասելով. «Մենք մեղանչեցինք, մենք սխալ արեցինք: Տե՛ր, դեռ որքա՞ն ժամանակ պիտի տևի այս սարսափելի անօրենությունը՝ (Քո) սրբարանի և (Քո) բանակի ոտնահարումը: Դեռ որքա՞ն ժամանակ Ճշմարտությունը թաղված պիտի մնա այն ժամանակից ի վեր, երբ նրանք Այն գետին նետեցին[4]: Մի՞թե սա մեր մեղքերի և մեր անտարբերության ոճիրների արդյունքն է»: Եվ Ես պիտի ասեմ ձեզ.

Երբ Մահն էր սողոսկում ձեր պատուհաններից ներս, Իմ վշտալի կանչերն ու Իմ նախազգուշացումները երբեք չլսվեցին: Նրանք ծաղրվեցին կամ արհամարհվեցին: Երբ Ես ձեզ մոտ եկա կաղալով և ողբացող մուրացիկի պես՝ մուրալով ձեր ուշադրությունը, դուք բարկացաք և հեռու քշեցիք Ինձ: Երբ Ես եկա ձեզ մոտ, վշտահար հոր նման, որպեսզի զգուշացնեմ ձեզ, որ ձեր մարմինը բորբոսնել է՝ չնայած որ կանգնած եք, ձեր աչքերը փտում են իրենց բներում, թեև կենդանի եք համարվում, բայց նեխում ու քայքայվում եք[5], դուք սաստիկ զայրացաք և պատերազմեցիք Իմ դեմ ու բոլոր սրբերի դեմ, որոնց Ես ուղարկում էի ձեզ մոտ: Իսկ հիմա սարսափը համակել է ձեզ: «Ինչո՞ւ ես Դու, Տե՛ր իմ, - կասեք դուք, - ինչո՞ւ ես Քո Սուրբ Տեղը հանձնել գազանի իշխանությանը[6]: Մի՞թե մենք այլևս չենք խմելու Քո Գինին: Մի՞թե մենք

Հոգու հեղումը երկնային Նշան է եկեղեցին նորոգելու համար, այլ խոսքով՝ Նոր Երուսաղեմը հաստատելու համար:

[1] Դան. 12:1

[2] Տերը դադարեցրեց Իր թելադրանքը, սակայն չավարտեց Իր պատգամը, քանի որ այն երկար էր: Ես հասկացա, որ Նա շարունակելու է ավելի ուշ:

[3] Գրելով:

[4] Դան. 7:23, Դան. 8:12-13

[5] Վկայակոչում՝ Մատթ. 6:22-23 և Հայտ. 3:1-6, Սարդիկեի եկեղեցին:

[6] Տերն ինձ ասել էր, որ գազանը ներկայացնում է մասոններին:

այլևս չենք ուտելու Քո Հացը: Մի՞թե մենք այլևս խաղողի այգիներ չենք տնկելու: Մի՞թե հիմա մենք ստիպված ենք[1] ենթարկվել Անօրենին[2] և նրանց, ովքեր գազանի տիրապետության տակ են[3]»:

Այդ ժամանակ ես ձեզ պիտի հիշեցնեմ, որ ես ձեզ մոտ էի ուղարկում Իմ ծառաներին՝ մարգարեներին, այնքա՜ն հետևողականորեն և այնքա՜ն հաճախակի, որպեսզի նրանք ասեն. «Ձեզանից յուրաքանչյուրը թող քուրձ հագնի, ապաշխարի, ուղղի իր արարքները, ծոմ պահի չոր հացով և ջրով»: Սակայն դուք չցանկացաք լսել Ինձ... ոչ էլ ցանկացաք ապաշխարել կամ խոնարհվել, քանի որ դուք խավարը դրել էիք լույսի տեղ, իսկ լույսը՝ խավարի: Եվ սակայն ես ասում եմ ձեզ, որ դեռ ավելի մեծ վշտի ու աղետի ժամանակներ են գալու, որոնց նմանը չի եղել ազգերի գոյության պահից ի վեր[4]:

Երբ Իմ Օրը գա, արևը կոչտ քուրձից էլ սև պիտի դառնա: Լուսինը պիտի բոցավառվի, և երկրի հիմքերը պիտի ցնցվեն, և ինչպես փորոտիքն է դուրս թափվում որովայնից, երկիրը դուրս պիտի թափի իր դևերին: Երբ սա կատարվի, մարդիկ մահ պիտի ցանկան, բայց չեն գտնի այն: Հետո երկինքը պիտի ոլորվի փաթեթի նման և անմիջապես պիտի լուծվի բոցերի մեջ, և բոլոր տարրերը պիտի լուծվեն ջերմության մեջ[5]: Այդ օրը գալիս է և ավելի շուտ, քան կարծում եք: Ես պիտի իրականացնեմ այս մարգարեությունները ձեր կենդանության ժամանակ:

Երբ այդ Օրը գա, լավն ու վատը կոչնչանան. վատերը՝ միայն չարություն հանդես բերելու համար, իսկ լավերը՝ Իմ նախազգուշացումները չլսելու համար: Չնայած դուք շատ բաներ եք տեսել, չեք նկատել դրանք: Եվ չնայած ձեր ականջները բաց էին, դուք չլսեցիք Ինձ: Ձեզանից ո՞վ է լսում հիմա:

...Երբ այս ամենը կատարվի, Ես նորից պիտի կանգնեցնեմ Իմ Մշտնջենական Զոհաբերությունը Սուրբ Վայրում, ինչպես հին օրերում էր: Դրանից անմիջապես հետո բոլոր ազգերն ու երկրի բոլոր բնակիչները[6] պիտի երկրպագեն Ինձ և ճանաչեն Ինձ՝ որպես Զոհաբերման Գառի Մշտնջենական Զոհաբերության մեջ: Նզովքը պիտի վերացվի[7], և Իմ Մշտնջենական Զոհաբերությունը նորից իր Սուրբ Տեղում պիտի լինի: Այդ պահից սկսած՝ այլևս գիշեր չպիտի լինի, քանի որ Իմ Ներկայությունը[8] պիտի փայլի ձեզ բոլորիդ վրա[9]:

Հետո <u>ամենամարդ</u> դարձյալ պիտի գա, պիտի խմի Իմ Արյունը և ճաշակի Իմ Մարմինը՝ ճանաչելով Իմ Զոհաբերությունը: Յուրաքանչյուր ոք մեկ ձայնով ու մեկ սրտով պիտի ծառայի Ինձ օր ու գիշեր Իմ Սրբարանում, և Ես Իմ Խոսքը պիտի տարածեմ ամեն մի սրտում... Իսկ նրանք, ովքեր

---

[1] Վկայակոչում՝ Հայտ. 13:16-17
[2] Դա նաև Ապստամբն է, տե՛ս Բ Թես. 2:3-4
[3] Հայտ. 13:1-18 ում նշված գազանը ներկայացնում է մասոնիզմը:
[4] Դան. 12:1
[5] Բ Պետ. 3:12
[6] Վկայակոչում՝ Հայտ. 6:15-17
[7] Հայտ. 22:3, Հավիտենական Զոհաբերության արգելքը:
[8] Հաղորդության մեջ, Սուրբ Զոհաբերության մեջ:
[9] Հայտ. 22:5

կանչեցին Ինձ՝ ապաշխարելով և ընդունելով իրենց մեղքերը[1], նույնպես նորից պիտի կանգնեն Իմ առաջ, որ ծառայեն Ինձ, և երբեք չպիտի զգան ո՛չ քաղց, ո՛չ էլ ծարավ: Եվ այրող քամին երբևէ չպիտի վնասի նրանց[2], քանի որ Իմ Ներկայությունը պիտի սփոփի նրանց: Եվ նրանք այլևս երբեք չեն հարցնի. «Որտե՞ղ է Քո Գինին», կամ «Որտե՞ղ է Քո Հացը: Մենք ումի՞ց պիտի մնվենք», քանի որ այժմ Ձեր Արարիչը պիտի լինի ձեր մեջ: Եվ Ես խոստանում եմ ձեզ, որ պիտի ապրեմ ձեր մեջ[3]: Եվ Ես խոստանում եմ ձեզ, որ այլևս երբեք երկիրը չի ընկնի այդպիսի դժբախտության մեջ:

Ես կրկին ձեզ բոլորիդ վրա Խաղաղություն և Ապահովություն պիտի հեղեմ: Եվ նրանց աչքերը, ովքեր տեսնում են, այլևս փակ չպիտի լինեն, և նրանց ականջները, ովքեր լսում են, զգոն պիտի լինեն: Լսի՛ր Ինձ, աղջի՛կս, ասա՛ Իմ ժողովրդին, որ քո Փրկիչը գալիս է, և հաղթանակի մրցանակը Նրա հետ է: Նրա Անունը Հավատարիմ և Ճշմարիտ է, Տեր տերանց և Թագավոր թագավորաց[4]:

Դեկտեմբերի 23, 1993

Տե՛ր, թզենին կսկսի պտուղ տալ,
իսկ խաղողի որթերը
կսկսեն ծաղկել:

Ո՛չ, Իմ հա՛րս, թզենին արդեն տվել է իր թզերը, իսկ որթերն արդեն ծաղկել են: Աղջի՛կս, մի՞թե չես տեսնում: Մի՞թե չես նկատել Իմ Նշանը երկնքում[5]: Լսի՛ր և գրի՛ր.

Սերո՛ւնդ, Ես ուղարկել եմ և շարունակում եմ ուղարկել քեզ մոտ Իմ հրեշտակներին[6], որ հավաքեն Իմ ընտրյալներին չորս հողմերից, երկնքի մի ծայրից մինչև մյուս ծայրը, որ պատրաստ կանգնեն, որովհետև Փեսան շուտով դուրս պիտի գա երկնքից և ձեզ հետ լինի: Այսօրվա ձեր աշխարհը արագորեն պիտի մաշվի: Ես ձեզ մոտ եմ ուղարկում Իմ հրեշտակներին, որ հավաքեն Իմ ընտրյալներին, Իմ ժողովրդին, որ նորոգեն Իմ Եկեղեցին: Մի՞թե չեք նկատել: Մի՞թե չեք հասկացել: Մի՞թե դեռևս չեք ընկալում Իմ Նշանը:

Այսօր Իմ Սուրբ Հոգին հափշտակում է երկուսից մեկին, փաթաթում նրան Իր բոցավառ Կրակի մեջ և ուղարկում, որ լինի Ամենաբարձրյալի վկան: Իմ Սուրբ Հոգին բարձրացնում է մեկին, մինչ մյուսին թողնում է հետևում՝ փոշու մեջ, մեկը վերցվում է, մեկը թողնվում: Իմ Սուրբ Հոգին, ինչպես քամին, փչում է, ուր կամենում է: Դուք լսում եք նրա ձայնը, բայց չեք կարող ասել, թե որտեղից է այն

[1] Այն հովիվները, ովքեր ապաշխարեցին նախքան Տիրոջ Օրը:
[2] Հայտ. 7:16
[3] Հայտ. 21:3
[4] Հայտ. 17:14, Հայտ. 19:11
[5] Ակնարկում է՝ Մատթ. 24:30
[6] Հրեշտակներ բառը այստեղ նշանակում է պատգամատարներ՝ ընտրյալներ, որոնք Աստծո կողմից ուղարկվում են աշխարհ՝ կրելով Նրա Խոսքը:

գալիս կամ ուր է գնում:

Իմ Սուրբ Հոգին Փեսայի պես հայտնվում է ձեր օրերում, որ սիրաշահի ձեզ, հրապուրի ձեզ և պսակվի ձեզ հետ: Իմ Սուրբ Հոգին, որպես մի թանկարժեք անկյունաքար, դրվում է ձեր սրտում, որ լինի հիմնաքարը ձեր հավատի, ձեր հույսի, ձեր սիրո և ձեր նվիրվածության՝ հանդեպ Ինձ՝ ձեր Աստծո: Իմ Սուրբ Հոգին ձեր օրերում փչում է ձեզ վրա այս ու այն կողմից: Նրա Շունչը նման է մի գետակի, որ հոսում է ամեն ուղղությամբ: Եվ ամենուրեք, որտեղ այս գետակը հոսում է, մրգատու ծառեր են բողբոջում՝ անթառամ տերևներով, որոնք բուժիչ են, և յուրաքանչյուր ոք, ով ուտում է նրանցից, բուժվում է:

Այո՛, Իմ Սուրբ Հոգին մի կենսատու աղբյուր է, Իմ Թագավորության ներքին Ուժը, որը աճեցնում է Իմաստության աչակերտներ: Իմ Սուրբ Հոգին կառուցում է, նորոգում և ոռոգում, սակայն խաբեբան ավերում և ծեծելով մահվան է հասցնում այն ամենը, ինչ սուրբ է: Այդ ինչպե՞ս է, որ չեք կարողանում ընկալել Իմ Սուրբ Հոգու շլացնող Լույսը: Ինչպես յոթ օրվա լույսը միասին վերցրած, այսօր Իմ Սուրբ Հոգին փայլում է երկնքում: Մի՞թե Մարդու Որդու այս Նշանը, որը հայտնվում է երկնքում [1], բավական չէ ձեզ համար: Ինչպես մի հովիվ, որը հավաքում է իր հոտը, Իմ Սուրբ Հոգին հավաքում և փրկում է ցրված հոտը:

Ես բացահայտում եմ այն, ինչ թաքնված և անծանոթ է քեզ, սերո՛ւնդ, և ցույց եմ տալիս այս բաները ճիշտ ժամանակին: Ա՛լ շրջվեք թե ձախ, դուք կտեսնեք Իմ Սուրբ Հոգու շլացուցիչ Նշանը երկնքում, և ձեր ականջները կլսեն. «Ես Նա եմ»[2]:

Ես եմը սրտով ձեզ հետ է: Ես եմն այստեղ է, որ կյանքի կոչի ձեր հույսերը, ձեր զորությունը, ձեր հավատն ու ձեր սերը: Զավա՛կս, «koumi!», բարձրացի՛ր հիմա դու, որ վաղուց մեռել էիր: Բարձրացի՛ր հիմա, զավա՛կս, և դրավի՛ր քո տեղը: Ահա հովվի մահակը. Ես ուղղություն պիտի տամ քո հոգուն, որ նա հրահանգ ստանա: Հիմա գնա՛ և փնտրի՛ր Իմ մոլորված մյուս ոչխարներին: Մի՛ հոգնիր ճանապարհին, զավա՛կս: Իսկ եթե հոգնես, Ես քեզ կտանեմ Իմ Ուսերի վրա: Այսօր Ես Ինքս պիտի ժողովեմ Իմ ոչխարներին...

Ա՜հ, սերո՛ւնդ, ինչպե՞ս կարող ես ավելի նշաններ խնդրել, ավելին, քան Մարդու Որդու նշանն է, որն այսօր Ես տալիս եմ ձեզ: Ո՞վ է, որ իսկապես չի կարողանում տեսնել Իմ մտադրությունները: Ես ասում եմ Ճշմարտությունը, սակայն դուք չեք հավատում, որ այդ Ես եմ, որ խոսում եմ: Այդ ինչպե՞ս է, որ չեք կարողանում հասու լինել Իմ Ձայնին:

Երբևէ ինքներդ ձեզ հարցրե՞լ եք, թե ինչպես են ուղղվել նրանց ճանապարհները, ովքեր ապրում են փոշու մեջ: Ինքներդ ձեզ հարցրե՞լ եք, թե այդ ո՞վ էր, որ բացեց համբերի բերանները և Իմաստության խոսք տվեց տգետներին: Եվ այդ ո՞վ էր, որ սովորեցրեց հոգով աղքատներին ու թշվառներին, ինչպես դուք եք նրանց անվանում: Մի՞թե չեք լսել, որ Իմ Սուրբ Հոգին իրականում Կյանք Տվողն է: Մի՞թե չեք հասկացել, թե

[1] Մատթ. 24:30
[2] Հովհ. 18:6 և 8

ինչպես է Իմ Սուրբ Հոգին խրտնում սրտով հպարտների ներկայությունից և ցույց է տալիս Իր մտերմությունը խոնարհներին:

Իմ Սուրբ Հոգին այսօր տրվում է ձեզ՝ որպես մի Մեծ Նշան երկնքում[1], որպես արտացոլք Իմ Վերադարձի: Քանի դեռ ձեր մտքերը մնում են երկրային, դուք չեք կարող ըմբռնել այն բաները, որոնք երկնքում են: Մի՞թե չեք կարդացել. «Տերը պիտի հայտնվի նրանց վերևում, և Նրա նետը պիտի թռչի, ինչպես փայլակ»[2]: «Ահա գալու է Տերը, ինչպես կրակ, և Նրա կառքը՝ ինչպես մրրիկ, որպեսզի բարկությամբ տա Իր հատուցումը և կրակի բոցով՝ Իր արհամարհանքը»[3]: Իմ Հոր գործերը իրագործվում են:

Լսե՛ք և հասկացե՛ք. Ես ասել եմ, Ես պիտի գամ, որ հավաքեմ բոլոր լեզուներով խոսող ազգերին: Ձեզանից շատերը հարցնում են. «Ե՞րբ է դա պատահելու, և ի՞նչ պիտի լինի Քո գալստյան նշանը»: Ես նախապես զգուշացրել էի ձեզ, որ երբ դուք տեսնեք ավերածության պղծությունը՝ հաստատված Սուրբ Վայրում, որի մասին Դանիել մարգարեն էր ասել, այսինքն՝ երբ տեսնեք, որ Թշնամին[4] տեղ է գրավել այնտեղ, որտեղ նա չպետք է լինի, այսինքն՝ Իմ Սրբարանում՝ Իմ Բնակավայրում[5], երբ տեսնեք, որ այդ Ապստամբը հայտարարում է, որ ինքը շատ ավելի մեծ է, քան այն ամենը, որ մարդիկ «աստված» են անվանում, շատ ավելի մեծ, քան որևէ բան, որ պաշտվում է, երբ տեսնեք, <u>որ նա իրեն գահ է բարձրացնում Իմ Սրբարանում</u> և հայտարարում, որ ինքը Աստված է, իմացե՛ք, որ սա նախանշան է՝ տրված Մարդու Որդու Նշանից առաջ, որը հիմա հայտնվում է երկնքում՝ ձեզ փրկելու համար:

Բարձրացրե՛ք ձեր գլուխները և նայե՛ք երկնքին՝ փնտրելով Իմ երկնային Մանանան: Ուղի՛ղ կանգնեք, բա՛րձր պահեք ձեր գլուխները, քանի որ ձեր ազատագրումը մոտ է: Այդ ինչպե՞ս է, որ Իմ Սուրբ Հոգին չի նշմարվում ձեզանից շատերի մեջ: Ստորգետնյա աշխարհն ու երկիրը դողում են Իմ այցելությունից, ուրեմն մի՛ ասեք այլևս, որ արդարությունը չի գործում, և Ուխտի Տապանակը[6] հեռու է: Ուխտի Տապանակը հենց ձեր վերևում է՝ երկնքում, որպեսզի դուք ականատես լինեք Իմ Փառքին:

Եթե ուտեք Իմ Մանանայից, կվերակենդանանաք. դուք նորից կծնվեք: Ուրեմն մի՛ փնտրեք ուրիշ նշաններ: Մի՞թե չեք լսել, որ այդ Հոգին է, որ կյանք է տալիս: Եթե ձեզանից ոմանք չեն հավատում, այդ նրանից է, որ դուք չեք կերել այդ Մանանան: Այո՛, այդ Իմ Սուրբ Հոգին է, որ ձեզ կարող է տալ Իմ Խորհուրդների անբիծ ու անխառն հասկացողությունը: Այս երկնային կերակուրը աղքատների կերակուրն է,

---

[1] Վկայակոչում՝ Մատթ. 24:30
[2] Զաք. 9:14
[3] Եսայի 66:15
[4] Այսօր շատ հակաքրիստոններ կան, քանի որ նրանք առաջնորդվում են Ըմբոստության ոգով, որը տեղավորվել է նրանց հոգու ամենախոր մասում՝ այնտեղ, որտեղ պետք է Աստված բնակվի:
[5] Բնակավայրը հոգին է:
[6] Եբր. 9:4, Ուխտի Տապանակը պարունակում էր մի կուժ: Կուժի ներսում պահվում էր մանանան, որն ուղարկվել էր երկնքից Մովսեսին՝ հրեաներին կերակրելու համար, երբ անցնում էին անապատով: Հիսուսն ակնարկում է այս մանանան Իր Սուրբ Հոգու մասին խոսելիս, որպես Երկնային Մանանա:

և այն անհնարին է գնել փողով[1]:

Սրբագործե՛ք և մաքրագործե՛ք ինքներդ ձեզ, որ ներս մտնեք այն Պարտեզը, որն Իմ Արքայությունն է: Այսօր Ես տալիս եմ ձեզ Իմ Սուրբ Հոգու այս Նշանը երկնքում: Այն լցնում է ողջ աշխարհը և նորոգում է ամեն ինչ՝ տարածելով Իր զորությունը երկրի մի ծայրից մինչև մյուսը: Եվ չնայած դրան՝ ձեզանից շատերը հաշվի չեն առնում Իմ Ողորմությունը և համարձակվում են ասել. «Ո՞ւր են Աստծո նշանները: Մարդու Որդու ոչ մի նշան չի երևում երկնքում, որպեսզի մեզ ապացուցի, որ Գերագույն Իշխանությունը մեր դարպասների մոտ է»: Եվ դուք դարանակալ սպասում եք Իմ Հոգով օծյալներին, քանի որ նրանք բարկացնում են ձեզ և հակառակվում ձեր մտածելակերպին: Այո՛, նրանց սոսկ տեսքը ճնշում է ձեր հոգին, ա՛հ... և ձեր հասկացողության արմատը փտում է...

Ես ասում եմ ձեզ. Իմ Սուրբ Հոգով օծյալները կարող են ձեզ դյուրաբեկ թվալ, բայց նրանք խոր արմատ են գցել Իմ մեջ: Հազիվ նորածիլ են, սակայն պատվաստված են Ինձ վրա: Ես տանում եմ նրանց տեղից տեղ, որ լուսարձակեն Իմ Խոսքերն ամենուր, ինչպես անբիծ ու փայլուն մի հայելի, և ուր որ նրանք լինեն, այնտեղ <u>Ես Եմ</u>: Եվ նրանք կշարունակեն լուսարձակել Իմ Խոսքերը ձեզ բոլորիդ, որ ձեզ առաջնորդեն Իմ Թագավորություն: Նրանք պիտի շարունակեն ցույց տալ Իմ Զորությունը՝ չնայած այն բանին, որ դուք նրանց հետ դաժան եք վարվում, նրանք խոնարհաբար պիտի կրեն վիրավորանքն ու զրպարտանքը, որպեսզի ձեզ փրկեն: Նրանք իրենց բերանը չպիտի բացեն, որ հակաճառեն ձեզ բոլոր ազգերի աչքի առաջ, այլ պիտի լինեն հրեշտակների պես, որոնց ոտքերը ավետիս են բերում: Նրանք պիտի շարունակեն լուսարձակել Իմ Խոսքերը, ինչպես մի փայլուն ու անապական հայելի՝ Փրկություն հայտարարելով և Խաղաղություն ու Սեր ավետելով: Եվ չնայած նրանք շատերի կողմից պիտի արհամարհվեն ու մերժվեն, արժանապատվությամբ պիտի կրեն իրենց տառապանքները: Վե՛ր բարձրացրեք ձեր աչքերը դեպի երկինք և զանազանե՛ք Իմ Նշանը:

Ես գալիս եմ՝ վերականգնելու Իմ Տունը: Ես գալիս եմ՝ նորոգելու քեզ, սերո՛ւնդ: Ես ցույց եմ տալիս Իմ Սուրբ Դեմքը ձեզ բոլորիդ, որ փրկեմ ձեզ: Օ՜, եկե՛ք դուք, որ դեռևս տատանվում եք: Ես ասում եմ ձեզ. հենց սկզբից էլ Ես անհասկանալի ձևով չեմ խոսել ձեզ հետ, և ամբողջ ժամանակ այս բաները տեղի էին ունենում:

<u>Ես միշտ ներկա եմ եղել</u>:

Իսկ դու, աղջի՛կս, մաքո՛ւր ու անարա՛տ պահիր քեզ, որպեսզի Իմ Լույսը հասնի մինչև աշխարհի ծայրերը: Քարոզի՛ր ճշգրտությամբ այն ամենը, ինչ Իմ Հոգին տալիս է քեզ: Ես պիտի խրախուսեմ քեզ, աղջի՛կս և հարազա՛տս:

Քո Ամուսինը քեզ հետ է:

[1] Հոգով հարուստները չեն կարող ստանալ Աստծո Թագավորությունը: Ակնարկում է երանելիներին՝ «Երանի հոգով աղքատներին, նրանցն է երկնքի թագավորությունը»:

Դեկտեմբերի 28, 1993

«Եվ մենք բաց երեսներով, հայելու պես արտացոլելով Տիրոջ պայծառությունը, կդառնանք ավելի ու ավելի պայծառ, քանի որ կդառնանք այն պատկերի նման, որն արտացոլում ենք: Սա է Տիրոջ գործը, որ Հոգի է»[1]*:*

Խաղաղություն քեզ: Երջանիկ է նա, ով գանձի պես է պահում այս մարգարեական Պատգամը: Դուք Իմ նախասիրած հոտն եք... Վասո՛ւլա, քո հոգին պատրա՞ստ է գրելու:

Պահի՛ր իմ հոգին Քո Հոգու մեջ և թո՛ւյլ տուր ինձ անել իմ լավագույնը, որ գոհացնեմ Քեզ:

Ես պիտի գամ քո բանակատեղը[2], Ես պիտի գամ, որ հանդիպեմ իմ առաջին պտուղներին: Ես պիտի գամ Իմ ժողովրդի մոտ, որը չի փոխանակել Իմ Փառքը այն բանի հետ, որ զորություն չունի[3]: Ես պիտի գամ սրբերի մոտ, որոնք հաստատակամ և հավատարիմ եղան ու պահեցին իրենց հավատը[4]: Զգուշացե՛ք, որ ոչ ոք չխաբի ձեզ, որովհետև շատերը պիտի մերժեն հավատալ, որ երկունքի ցավերը սկսվել են, և դրանք արդեն իրենց վերջին հանգրվանին են հասել: Այս երկունքի ցավերը դեռ ավելանալու են հիմա, քանի որ երկրի վրա Իմ իշխանությունը մոտ է:

Ես լրջությամբ ասում եմ ձեզ. արհավիրքներից և այդ օրերի տառապանքներից հետո ոչ մի մարդ կենդանի չի մնա, եթե Իմ վեհանձն ու զոհաբերվող հոգիները չհատուցեն մեղավորների ու չար մարդկանց փոխարեն: Ո՛չ, ձեզանից շատերը չեն հասկացել, թե նրանց բարեխոսությունը ինչպես է փրկելու է ձեզ:

- Իսկ ձեզ, որ սերում եք Իմ Սեփական Տնից և ասում եք. «Այս մարգարեները սուտ մարգարեություններ են անում Աստծո Անունով: Աստված չի ուղարկել նրանց: Նրանց կանխասացումներն ուղղված են այն մարդկանց, որոնց Նա ամենից շատ է սիրում», Ես ասում եմ. այն մարգարեները, որոնց Ես <u>չեմ</u> ուղարկել, և որոնք մարգարեանում են Իմ Անվամբ, ձեզ կասեն <u>միայն</u> գալիք լավ բաների մասին:

<u>Իմ</u> մարգարեներն ուղարկվում են ձեզ մոտ, որ տագնապահար աղաղակեն. «Ապաշխարե՛ք, քանի որ Աստծո բարկությունը պիտի բոցավառվի, և կրակը պիտի այրի ձեզ»: Սակայն դուք չեք լսում, որովհետև դուք Իմ կանչերը ընկալում եք որպես սպառնալիք: Երբ նրանք աղաղակում են ցավով. «Ապաշխարե՛ք, որովհետև Ավերիչը գտնվում է

[1] Բ Կոր. 3:18
[2] Աստված նկատի ունի, որ Նա ներկա կլինի և կլինի ինձ հետ: (1 Թագ. 4:7), «Աստված ներս է մտել նրանց բանակատեղը»: Մեր հոգին կարող է դառնալ այն բանակատեղը, որտեղ Աստված կարող է ապրել: Մենք կարող ենք դառնալ նաև Նրա Գահը:
[3] Ակնարկում է՝ Հայտ. 13:14 «գազանի արձանը»:
[4] Հայտ. 13:10

ամեն մի քաղաքում, և ձեզանից ոչ մեկը չի փախչելու: Հովիտը հիմա դարձել է մի զանգվածային գերեզման: Ապաշխարե՛ք, այլապես դուք նույնպես այդտեղ կմեռնեք», դուք չեք լսում: Մի՞թե դուք, որ չեք հավատում, չեք կարդացել. «Ով խրատ է սիրում, նա իմաստություն է սիրում, իսկ ով ատում է հանդիմանությունը, նա անմիտ է»[1]: Ուշադրությո՛ւն դարձրեք այս առակին:

Ես ասում եմ ձեզ. ձեր հոգու առաջադիմության պատճառով է, որ դուք կորցրիք խելամտությունը: Ձեր ինքնավստահությունն ու ձեր անսխալ լինելու գիտակցությունը կուրացրին ձեզ և ստիպեցին հեռու փախչել Իմ մարգարեներից, որպեսզի չլսեք նրանց: Ինչո՞ւ եք այդքան ցանկանում նմանվել ձեր նախնիներին՝ նրանց, ովքեր հայտարարում էին. «Եթե մենք մեր հայրերի օրոք լինեինք, մարգարեների սպանությանը մասնակից չէինք լինի»[2]: Ահա թե ինչու, Իմ հերթին, ես ձեզ մոտ եմ ուղարկում մարգարեներին և Իմ ընտրյալներին Իմ Գավիթներից, որպեսզի փրկեմ ձեզ:

Ես ասում եմ ձեզ. Իմ հովիվներից ոմանք ըմբոստանում են Իմդեմ և այս սերնդին վերածել են անապատի ու ստիպել են նրան հրաժարվել հավատից: Բայց դուք շարունակում եք ընդունել Իմ Երկնային Նշանը՝ որպես սպառնալիք: Երբ Ես լցնում եմ երկինքը Մանանայով[3], որ ձեզ վրա հեղվի, ինչպես առավոտյան ցողը՝ գետին ընկնելիս՝ ձեր բերանները Սրբությամբ ու Մաքրությամբ լցնելու համար, դուք սարսռում եք, և ձեր սիրտը չտապում է դատել: Երբ դուք տեսնում եք Ինձ վերևում, մեկը մյուսի հետևից վրան դնելիս հոգիների մեջ՝[4], դուք դողում եք և սկսում եք ավերել ու ամայացնել Իմ բանակատեղերը[5], Իմ կալվածքները... Երբ տեսնում եք Ուխտի Տապանակը՝[6] որպես մի շողացող Նշան երկնքում, շողշողուն այդ Գանձը՝ ցուցադրված ձեր աչքերի առաջ, այդ Հրաշքը, որը պարունակում է Իմ Փառքը, դուք ոչնչացնում ու կողոպտում եք բոլոր նրանց, ովքեր ողջունում են Իմ Փառքը... Երանելի է նա, ով ուտում է Իմ թաքնված Մանանայից, որը ձեր փրկության Կերակուրն է[7]. նա պիտի ընդունվի Իմ Թագավորության մեջ, որ կիսի Իմ Փառքը ...

~ Ես եմ միակ Իմաստությունը, Ես՝ Աստված, քարոզում եմ ձեզ, և այսօր, առավել քան երբևէ, Ես կնքում եմ ձեզ բոլորիդ Իմ Սուրբ Հոգու կնիքով: Բացե՛ք ձեր սրտերը, և ստացե՛ք այս հոգևոր օրհնությունները, որ Ես անդադար ուղարկում եմ ձեզ Երկնքից: Ճանաչե՛ք Իմ Գահը, ինչպես մյուս սրբերը, ճանաչե՛ք Մարդու Որդու այս մեծ և հրաշալի Նշանը, և միացե՛ք սրբերի օրհներգին՝ երգելով.

«Ի՜նչ մեծ և հրաշալի են
Քո բոլոր գործերը,

[1] Առակ. 12:1
[2] Մատթ. 23:30
[3] Աստված խոսում է Իր Սուրբ Հոգու մասին:
[4] Ա Թագ. 4:7
[5] Վրանները հոգիներն են, որոնց Աստված բռնում է և դարձնում Իրենը:
[6] Ուխտի Տապանակը այս հատվածում ներկայացնում է Աստծո Ներկայությունը, ինչպես նաև Աստծո Սուրբ Հոգին:
[7] Սուրբ Հոգին այստեղ ներկայացնում է «կերակուրը»՝ հոգևոր գիտելիքը՝ Իմաստությունը: Եբրայեցիները պահում էին երկնային մանանան մի ամանի մեջ, որը տեղադրված էր Ուխտի Տապանակում (Եբր. 9:4):

Ամենակարող Տե՛ր Աստված:
Արդար և ճշմարիտ են
Քո բոլոր ճանապարհները[1]:
Թագավո՛ր սկզբից ի վեր,
ո՞վ կա Քեզ նման:
Միայն Դու ես Սուրբ:
Եվ հիմա առաջինները
պիտի լինեն վերջինը,
իսկ վերջինները՝ առաջինը:

Դու Քեզ հայտնի ես դարձրել
նրանց, ովքեր Քեզ չէին փնտրում:
Դու Քո Գահն ես ցույց տվել
նրանց, ովքեր
երբեք չէին պատվել Քո Անունը:
Եվ հիմա հենց նրանք են գալիս՝
պաշտելու և երկրպագելու Քեզ:
Նրանք Քո Հոգու Բերանից են
սովորել գովերգել Քեզ:

Այդ նրանք են, ովքեր Քեզ
հավատարիմ պիտի մնան,
որովհետև Դու,
որ Գառն ես և նստած ես Գահին,
պիտի լինես նրանց Հովիվը
և պիտի առաջնորդես նրանց
դեպի կենդանի ջրի ակունքները,
որպեսզի փրկված,
առաջին պտուղները
լինեն Քեզ համար,
մեր Աստծո և Քեզ՝
Գառան համար»[2]:

Իմ Սուրբ Հոգին կհավաքի կաղերին և ի մի կբերի նրանց, որոնք ճանապարհից շեղվել էին: Նրանք պիտի պատվաստվեն Ինձ վրա, որ պատվեն Իմ Սուրբ Անունը մեկ անգամ ևս և վերականգնեն Իմ Թագավորությունը երկրի վրա: Վասո՛ւլա, Իմ շնորհը քեզ վրա է, ուրեմն ինչ կա վախենալու: Ես քեզ հետ եմ...

...Վերականգնի՛ր Իմ Տունը[3]...

Ես ասում եմ քեզ. շուտով դու Ինձ հետ պիտի լինես: Իսկ մինչ այդ հայտնի՛ դարձրու Իմ Հոր Անունը և Իմ Անունը, որպեսզի Իմ զավակները հասկանան, թե իրենք ում են պատկանում և ում հետնորդներն են: Թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քեզ Իմ Ծրագրի համար: Փոքրի՛կս, ես՝

[1] Հայտ. 15:3
[2] Հայտ. 14:4
[3] Տերն ասաց սա որոշ դադարից հետո: Նա ասաց դա շատ տխուր ձայնով, բայց շատ հանդարտ, վեհությամբ և իշխանությամբ:

Հիսուս, օրհնում եմ քեզ: ic

1994

Հունվարի 6, 1994

(Աստվածահայտնություն)

(1993 թ. նոյեմբերի 6-ին Հայր Օ'Քարոլը և ես «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների հատորները և նրա հեղինակած գրքերը տվեցինք Հովհաննես-Պողոս 2-րդ Պապին: Երկու ամիս անց՝ այսօր՝ վաղ առավոտյան, ես մի երազ-տեսիլք տեսա:

<u>Տեսիլքը</u>
Ես շատ հստակ տեսա Պապին իր ճերմակ զգեստով: Նա կանգնած էր իմ դիմաց ու նայում էր ինձ: Այնպես էր թվում, որ մենք լավ գիտեինք իրար: Մի ճաշի սեղան կար մեր միջև: Ես ուսումնասիրում էի նրա ճերմակ զգեստը: Մենք ոչ մի խոսք չփոխանակեցինք իրար հետ: Հետո նա նստեց իմ սեղանի մոտ: Ես շրջվեցի դեպի աջ, որ նրան տամ այն, ինչ որ պատրաստել էի նրա համար: Ես նրան քաղցրավենիք առաջարկեցի: Մինչ նա ուտում էր, ես դիտում էի նրան: Երբ նա հաճույքով վերջացրեց ուտելը, վեր ելավ, որ գնա: Ես շտապեցի նրան ընկերակցել մինչև դուռը:
Ես գնացի նրա աջ կողմով և նրան տվեցի մի ձեռնափայտ (իմ տեսիլքում դա նրան էր պատկանում): Ձեռնափայտը փայտից չէր, այլ մի նյութից, որը շատ բաց գույն ուներ: Նա վերցրեց այն, և երբ սկսեց քայլել, ես նկատեցի, որ նա դժվարանում էր անգամ ձեռնափայտով քայլելիս:
Անմիջապես և առանց վարանելու ես վերցրի նրա աջ թևը և գցեցի իմ վզով: Նա չառարկեց, այլ ընդունեց իմ օգնությունը: Հետո իմ ձախ թևը ես դրեցի նրա մեջքին, որպեսզի բարձրացնեմ նրան, որքան որ հնարավոր է, և դնեմ իմ մեջքին: Հիշում եմ, որ Ես նրա թևը քաշում էի իմ ուսերի վրայով՝ ձգելով աջ ուսից ձախը: Այս ձևով նրա ոտքերը գրեթե բարձրացան հատակից: Երբ ես ձախ ձեռքով գրկեցի նրան, իմ ձեռքում զգացի նրա մեջքի կողերը և զարմացա, թե նա որքան նիհար է, թեև ոչ ոք չի տեսնում դա: Այս ամբողջ ընթացքում Պապը չառարկեց):[1]

Փետրվարի 1, 1994

(Ջոյնվիլ - Բրազիլիա)

Ես սիրում եմ քեզ, և ավելի մեծ պարգև, քան Իմ Սերն է, դու չես կարող ունենալ:
Ծաղի՛կս, ասա Բ... և բոլոր նրանց, ովքեր մասնակցում են «Ճշմարիտ

[1] Այս տեսիլքում ես հասկացա, որ Պապը նաև ներկայացնում է եկեղեցին: Եկեղեցին ուժեղ չէ, քանի որ նրա մեջ ուրացություն կա, բայց <u>Պատգամները օգնում են եկեղեցուն</u>:

Կյանք Աստծո մեջ» պատգամների տարածմանը, որ ամեն անգամ, երբ մի հոգի ետ է բերվում դեպի Ինձ Իմ Պատգամների միջոցով, ուրախության ճիչերը արձագանքում են ամբողջ Երկնքում: Զգուշացիր նրանցից, ովքեր բերան ունեն, սակայն ոչինչ չեն ասում, աչքեր ունեն, բայց ոչինչ չեն տեսնում: Նորից հիշեցրո՛ւ նրանց, որ այդ Ես եմ բերել իրենց մոտ, որպեսզի Իմ Սերը անձնապես փոխանցես նրանցից յուրաքանչյուրին և հիշեցնես, որ Ես՝ Հիսուս, տանում եմ դեպի Կյանք:

Ես օրհնում եմ նրանցից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը նրանց ճակատին՝ որպես Իմ Կնիք:

Փետրվարի 4, 1994

(Կոլումբիա - Ջիպաքուիրա)

(Հիսուս խրախուսանքի խոսքեր է ասում ինձ):

Տե՞ր իմ:

Ես եմ:

Հենվի՛ր Ինձ վրա: Մնա՛ մոտիկ Իմ Սրտին: Իմ Սիրտը քո կյանքի ակունքն է, և թո՛ւյլ տուր Ինձ, Իմ Վասո՛ւլա, հանգըստանալ քո սրտում: Ինձ համար ուրախություն էր քեզ ուսուցանել, և Ես դեռևս ուրախանում եմ քեզ դաստիարակելով: Մենք կապված ենք հավիտյան:

Ծաղի՛կս, սփոփի՛ր Ինձ, սիրի՛ր Ինձ և փաղաքշի՛ր Ինձ քո սրտով: Սիրո՛վ ավետարանիր Սիրո համար: Ես պիտի օգնեմ քեզ: Դրա համար փարվի՛ր Ինձ: ic

Փետրվարի 7, 1994

(Մեքսիկա քաղաք)

(Հիսուս շարունակում է օգտագործել խրախուսական խոսքեր այս երկար և դժվարին առաքելության համար):

Աղջի՛կս, թող քո արիությունը պահպանվի քո մեջ: Ես Նա եմ, ով քեզ արիություն է տալիս: Թող քո ձայնը լավի իշխանությամբ, քանի որ քեզ ուղարկել է հենց Ինքը՝ Իշխանությունը: Եղի՛ր Իմ Արձագանքը: Ամեն ինչ պիտի կատարվի՝ համաձայն Իմ Կամքի: Զնայած դրան՝ մի՛ մոռացիր ուրանալ քո անձը: Ես՝ Աստված, քեզ հետ եմ, որ նորից փառավորեմ Իմ Անունը:

Ես օրհնում եմ քեզ Իմ Սրտի խորքից: Ես՝ Աստված, սիրում եմ քեզ:

Մարտի 4, 1994

Աստվա՛ծ Ամենակալ,
Դու, որ ինձ թիրախ դարձրիր
Քո նետաձգության համար,
ինձ՝ մի արարածի,
որի դեմքին պետք է թքել,
ինչպե՞ս կարող է
Քերդ Մեծությունը
դեռևս խոսել ինձ հետ:

Այն Ձեռքերը, որոնք քեզ ձևավորեցին, երբեք չեն լքի քեզ, ոչ էլ կմերժեն քեզ... Իմ սերն ու մտերմությունը քո հանդեպ աճում են ամեն անգամ, երբ քեզ վրա թքում են[1]: Մի՛ վախեցիր, դու ամոթով չպիտի մնաս Իմ Գավիթներում: Ո՛չ, բերանդ մի՛ բաց, որ պատասխանես, եթե որևէ մեկը քեզ հետ կոպտորեն վարվի: Սակայն վա՜յ նրանց, ովքեր անվանում են չարը բարի, իսկ բարին՝ չար:

Հա՞յր:

Ես եմ:

Ուրեմն, ինձ գործի դիր անխնա, որ աշխատեմ Քեզ համար և շշնջա՛ Քո պատգամն իմ ականջին:

Թո՛ւյլ տուր Ինձ այդ դեպքում կանչել համայն ազգերին՝ օգտագործելով քեզ: Տո՛ւր այն ամենը, ինչ Ես տվել եմ քեզ: Փոխանցի՛ր այն ամենը, ինչ ստանում ես: Սա Իմ Հրամանն է քեզ: Նույնիսկ նրանք, որոնց անհայտ է Իմ Սուրբ Անունը, շտապելով քեզ մոտ կգան Իմ Հավաքներում, և Ես կբուժեմ նրանց անհավատարմությունը: Ձեր Թագավորի Սիրտը հուսախաբ չի անի նրանց: Ես՝ Յահվեն, ձեզ Բժշկողն եմ:

Ես պիտի շարունակեմ ի ցույց դնել Իմ քաղցրությունը Իմ բոլոր զավակների հանդեպ և առաջնորդել նրանց դեպի Ինձ: Շտապի՛ր, զավա՛կս, և ցուցադրի՛ր Իմ Պատկերը նրանց բոլորին՝ ամենափոքրից մինչև ամենամեծը, և նրանք պիտի փրկվեն: Արի՛, մենք մեկ անգամ էլ պիտի իջնենք այն հովիտը, ուր բոլոր չորացած ոսկորներն ընկած են ցիրուցան...

«Դու, որ քննում ես իմ հանցանքները և հետազոտում իմ մեղքերը, շատ լավ գիտես, որ ես անմեղ եմ...»[2]:

Տե՛ս[3], զավա՛կս, ինչո՞ւ ես զարմացած: Ես ասացի, որ քեզ ոչ մի բանից

[1] Աստված նկատի ունի, երբ ինձ հալածում և զրպատում են:
[2] Հոբ 10:6-7
[3] Հիսուսն է խոսում:

չեմ զրկի: Մի՞թե չեմ ասել, որ այն ամենը, ինչ Ես ապրեցի երկրի վրա, դու էլ պիտի ապրես քո հոգու կարողության չափով: Տեսնո՞ւմ ես, թե ինչպիսի պատիվ եմ Ես քեզ տալիս: Ահա լսի՛ր. եթե նա, որը սեղան նստեց Իմ կողքին, դավաճանեց Ինձ, Ինձ, որ քո Տերն եմ, մի՞թե նրանք հիմա քո դեմ ևս թակարդներ չեն լարի, սանի՛կս: Այո՛, նույնիսկ նրանք, ովքեր քեզ հետ հաց են կերել: Ուրախացի՛ր: Քո Ուսուցիչը քեզ հետ է և խնդրում է քեզ աղոթել այդ հոգիների համար, քանի որ նրանք Ինձ համար այնքան թանկ են, որքան դու: Արի՛, եղի՛ր Իմ արտացոլումը... Ես պիտի խրախուսեմ քեզ, աղջի՛կս:
Ես սիրում և օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Մարտի 10, 1994

Ուրախացրո՛ւ Ինձ և գրի՛ր Ինձ համար այս բառերը.

«Հիսո՛ւս, արի՛,
Կենդանի՛ Աստված, արի՛:
Օ՜, Էմմանուե՛լ, ների՛ր ինձ,
իմ թուլությունը վերցրո՛ւ
Քո Զորությամբ,
իմ երաշտը՝ Քո Աղբյուրով,
վերցրո՛ւ իմ հոգին
Քո Ձեռքերի մեջ:
Սիրո Հավերժակա՛ն Ակունք,
կլանի՛ր իմ սրտի
յուրաքանչյուր մասնիկը, որ սիրի,
գովաբանի և հռչակի
Քո վսեմ Անունը:
Թող որ հոգիս ծարավի
իմ Արարչի համար,
որպեսզի այս փոշին,
որին Դու ձևավորեցիր
և դարձրիր Քո զավակը,
դառնա մի կենդանի սիրո բոց,
քանի որ Դու ունես
կյանքի և մահվան զորությունը:
Քո հայացքն ի զորու է
հալելու երկաթը,
Քո Խանդոտ Սերը
ի զորու է այնպես անել,
որ իմ կյանքը
խենթություն համարվի
գիտունների համար:
Ուրեմն նորից ձգիր քո նետը

և կրակի՛ր
Քո սիրելի նշանակետի վրա»:

Այո՛, Ես անգութ չեմ, այլ շատ կարեկից և քնքուշ եմ: Ես իրոք կբարձրացնեմ Իմ աղեղը և կուղղեմ Իմ նետերը Իմ սիրելի թիրախի վրա: Ուրիշ ի՞նչ ձևով կարող էի որևէ ապացույց թողնել, որ Ես անցել եմ քո կողքով: Վերցրո՛ւ Իմ Հզոր Ձեռքը, և Ես կօգնեմ քեզ Փառաբանելու Ինձ: Բայց որպեսզի կարողանամ անել այդ, Ես նորից քո համաձայնության կարիքն ունեմ[1]... Ես քո անձնատվության կարիքն ունեմ, քո կամքի, քո սրտի լիակատար «այո»ի: Հենց որ Ես ստանամ քո համաձայնությունը, այդ ժամանակ Իմ Կամքը կկատարվի քո մեջ... և դու կփառավորես Ինձ:

Խաղաղություն քեզ, զավա՛կս: Ես սիրում եմ քեզ, Իմ Վասո՛ւլա: Դու էլ սիրի՛ր Ինձ այնպես, ինչպես Ես եմ քեզ սիրում, որպեսզի մի օր Ես կարողանամ ասել.

«Քո սերնդից ոչ մեկն
Ինձ այնպես չի սիրել,
ինչպես դու ես սիրել Ինձ...»:

Արի՛, Ես քո Ուսուցիչն եմ, և դու Ինձնից կսովորես Իմ օրենքները: ic

Մարտի 21, 1994

Տե՛ր իմ:

Ես եմ: Ես Քո առջև եմ կանգնած: Իմաստությունը պիտի ուսուցանի քեզ և բոլոր նրանց, ովքեր կարդում են[2]:

Վասո՛ւլա, դու պայքարում ես և ձգտում ես հասկանալ անտեսանելի մի բան[3]: Դու ավելի դյուրաբեկ ես, քան Ես կարծում էի:

Տե՛ր իմ, Ձերդ Մեծությո՛ւն, դա[4] պետք է հասկանալ բացասակա՞ն իմաստով:

Ես ազդված եմ քո ապշեցուցիչ թուլությունից... բայց դու հաճելի ես Ինձ... Ապրողները գոնե գիտեն, որ մեռնելու են, մինչդեռ մեռածները ոչինչ չգիտեն, ընդհանրապես ոչինչ[5]... Եվ պետք է արցունքներ թափել միայն այս մեռածների համար, քանի որ նրանք թողեցին Լույսն իրենց հետևում, որ մտնեն մի անհուն խավարի մեջ...

Վասո՛ւլա, Ես հետևում էի քեզ այս օրերին... Դու հեռու էիր փախչում Ինձնից... Ես ուսումնասիրում էի քեզ, արարա՛ծ:

---

[1] Երդումների նորոգման:
[2] Այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր կարդում են պատգամները:
[3] Այն ձևը, որով Աստված հաղորդակցվում է ինձ հետ:
[4] Այն, ինչ Նա հենց նոր ասաց ինձ:
[5] Երբ Հիսուսն ասաց այս բառերը, Նա կարծես խոսում էր ինքն իր հետ՝ նայելով մի այլ կողմ:

Իմ կողմից մեծամտություն կլինի Քեզ հարցնել, թե արդյոք ես Քեզ հուսախաբ արե՞լ եմ որևէ բանում:

Ես տվել եմ քեզ ընկալելու շնորհը և ուրախ եմ, որ օգտագործում ես այն: Այդ պատճառով ես համբերատարություն եմ ցուցաբերում քո հանդեպ... Արի՛, Իմ Սեփական՝ սերմ, ասա՛ Իմ ժողովրդին, որ դատարկ խոսակցությունն ու ավելորդ շատախոսությունն իրենց աղոթքներում ապարդյուն են Ինձ համար, եթե նրանք իսկապես նկատի չունեն դրանք...

Ես կնախընտրեի, որ նրանք շրջվեին դեպի Ինձ և մի քանի բառ սիրով ասեին իրենց սրտից, քան թե անվերջ թոթովեին օդի մեջ: Ես չեմ ուզում շուրթերով ասված անարժեք պաշտամունք: Քանի՞ անգամ ես պետք է ասեմ նրանց այս բաները: Եվ դեռ որքա՞ն երկար ես պետք է համբերեմ այս սերնդին: Ինչո՞ւ են նրանք շարունակ փորձում Իմ Հոգին: Սանիկ՛ս, մի բա՛ն ասա, աղոթի՛ր, կանչի՛ր Ինձ, բարեխոսի՛ր:

Հո՛ր Սիրելի, մի՞թե այդ Դու չէիր,
որ իջար Քո Գահից,
որ ինձ մոտ գաս և արթնացնես
իմ սերն այս մռայլ հովտում:
Եվ մի՞թե այդ Դու չես,
Թագավո՛ր իմ,
որ այցելում ես ինձ մինչ այսօր:

Ես Նա եմ:

Եվ ի՞նչ արեցիր Դու ծղոտի այս չոր կտորի հետ:

Ես ծղոտի այդ չոր կտորը դարձրի մի պտղատու ծառ, որին Ես հսկում եմ և պահում Իմ բերկրանքների պարտեզում:

Եվ մի՞թե այդ Քո Սերը չէր,
որ հաղթեց Քո
Արդարադատությանը,
Արդարադատություն, որն այնքա՜ն
իրավացիորեն պահված էր
իմ թշվառ հոգու համար:

Ես պարզապես քեզ վրա խունկ փչեցի և քեզ անուշահոտ զմուռսով պարուրեցի՝ հալեցնելով քեզ ծածկող սառույցը: Եվ քանի որ հայտնի է, որ Ես Իմ Ներկայությամբ վախեցնում եմ բոլոր մրցակիցներին, որոնք իրենց թագադրում են Իմ տեղում՝ Իմ Տիրապետության մեջ, Ես ներս մտա քո սենյակը: Հետո Ես բարձրացրի քո դեմքը, որ տեսնես Իմ Փառքը, և ծածկեցի քեզ օրհնությամբ:

Եվ մի՞թե Յահվեն՝ մեր Հայրը,
մեր Տերն ու Աստվածը,
մեր Արարիչը,
չազատեց իմ կյանքը օձից:

Մի՞թե Նրա Մեծությունն
Ինքը ներքև չի իջել
Իր Երկնային Թագավորությունից
և Երկնային Շքեղությունից,
որ վերականգնի իմ հիշողությունը՝
ասելով ինձ,
որ ոչ մի անմաքուր բան
չի կարող հասնել Երկինք:

Այո՛, այդպես է[1]:

Եվ մի՞թե Դու, Սիրելի Սո՛ւրբ Հոգի,
Դո՛ւ, որ պայծառությամբ
գերազանցում ես
բոլոր համաստեղությունները՝
միասին վերցրած, այցելեցիր ինձ,
երբ ես խղճալիորեն
խարխափում էի խավարի մեջ,
այցելեցիր՝ հեղելով
Քո Լույսը իմ խեղճ աչքերում,
որպեսզի տեսնեմ:

Այո՛, այդպես է[2]: Եվ Ես երդվեցի գետեր բխեցնել քեզնից: Ես երդվեցի քո բերանը մի սուր դարձնել Իմ Խոսքի համար, սպառնալիք և վտանգ՝ Մեր[3] թշնամիների համար: Ես երդվեցի դառնալ քո Ընկերը, ինչպես մարգարեների հետ էի, և ամբողջապես նորոգել քեզ: Ես պատվեցի քեզ Իմաստությամբ և քեզ հաղորդակից դարձրի Իմ Գերագույն Գիտության խորհուրդներին:

Ուրեմն հանուն Քո Սուրբ Անվան,
շտա՛պ արի բոլորիս մոտ
և փրկի՛ր մեզ:
Թողբոլորմարդիկ հրճվեն Քեզնով
և տեսնեն այն, ինչ նրանց աչքերը
երբեք չեն տեսել,
իսկ ականջները լսեն այն,
ինչ երբեք չեն լսել:
Դու հայտնի ես
Քո անսահման Ողորմությամբ
և Քո Քնքուշ Սրտով:

Հա՞յր[4]:

Ես եմ: Ուրեմն տո՛ւր հավատարմության քո խոստումն Ինձ, Իմ Որդուն

[1] Հայրը պատասխանեց:
[2] Սուրբ Հոգին պատասխանեց:
[3] Այսինքն՝ Սուրբ Երրորդության:
[4] Հետո ես շրջվեցի դեպի Հայրը:

և Իմ Սուրբ Հոգուն, և եթե այդ անես, ես քեզ ի ցույց կդնեմ Իմ Տան Գավիթներում: Ասա՛ Ինձ. Դու ի՞նչ կտայիր, որպեսզի հոգիներ նվաճեիր Ինձ համար: Դու ի՞նչ կանեիր՝ հոգիներ փրկելու համար: Եվ ի՞նչ կտայիր՝ միավորելու համար Իմ Որդու Մարմինը: Քո արտասանած ամեն մի բառը Հիմա կլսվի, կգնահատվի և ապա կկատարվի Իմ կողմից: Ամո՛ւր կաց և պատասխանի՛ր Ինձ:

Տե՛ր, որպեսզի Քեզ համար
հոգիներ նվաճեմ, ես կթողնեմ տուն,
եղբայրներ, քույրեր, հայր, մայր,
զավակներ և Հայրենիք:
Հանուն Քո Սուրբ Անվան
ես կանեմ դա
և հոգիներ կնվաճեմ Քեզ համար:

Որպեսզի հոգիներ փրկեմ,
էէ՞, Իմ Սո՛ւրբ: Մի՞թե Դու Ինքդ
ինձ չես սովորեցրել
հավիտենական
փառքի ծանրությունը
կրել ուրախությամբ
և ջերմեռանդորեն,
արժանապատվությամբ
և առանց բողոքների:

Մի՞թե Քո Սեփական Որդին
չի սովորեցրել ինձ,
որ հանուն իմ քույրերի
և եղբայրների փրկության
առաջարկեմ նաև իմ ձախ այտը,
երբ հարվածում են աջին:

Մի՞թե Դու, Տիեզերքի՝ Տիրակալ,
չես սովորեցրել ինձ
<u>ուրախությամբ</u> կրել
զրպարտություն ու վիրավորանք
յուրաքանչյուր հոգու
փրկության համար,
որոնց Դու սիրում ես:

Եվ մի՞թե Դու Ինքդ
չես սովորեցրել ինձ,
Հա՛յր, չպաշտպանել իմ շահերը,
ոչ էլ բացել բերանս,
երբ ինձ հալածեն,
տրորեն ու անցնեն իմ վրայով:

Տե՛ր Իմ, Աստվա՛ծ Իմ և Հա՛յր Իմ,
Ես նորից կամավոր տալիս եմ Քեզ

Հավատարմության իմ խոստումները,
Քեզ, Քո Սիրելի Որդուն
և Քո Սուրբ Հոգուն,
Ես քեզ սրտանց եմ տալիս
իմ խոստումները:

Ես կզրկվեմ իմ հանգստի
ու քնի ժամերից,
որպեսզի Քո միջոցով
կարողանամ առաջարկել
իմ եղբայրներին ու քույրերին
իրենց Հանգիստը
Քո Երկնային Գավիթներում,
եթե նրանք դրա կարիքն ունենան:
Ես կառաջարկեմ նրանց այն ամենը,
որ ստացել եմ Քեզնից,
և նրանց ցույց կտամ Քո Սերը,
որ նրանց նույնպես փրկեմ,
եթե նրանք դրա կարիքն ունենան:

Իսկ Քո Որդու Մարմնի համար
Ես կշարունակեմ
կիսել Բաժանման Գավաթը
Քո Սիրելի Որդու՝
Հիսուսի հետ մինչև վերջին կաթիլը,
մարդկանց արարքների կողմից
Նրան առաջարկված
Բաժանման Գավաթը:
Ո՜հ, ի՞նչ չեմ անի ես
Միասնության համար:

Հանուն Քո Տան վերականգման՝
ես հաճույքով կքայլեմ
Քո Որդու արյամբ ներկված
ոտնահետքերով և այն հետքերով,
որ Նրա խաչը գծեց փոշու մեջ:
Ես կտեղադրեմ այն խաչը,
որը Նա Ինքը տվեց ինձ:

Այո՛, աղջի՛կս, թող Իմ Տան հանդեպ նախանձախնդրությունը կլանի քեզ: Արա՛ այն ամենը, որ պետք է արվի, առանց բողոքելու և կտեսնես, որ ապարդյուն չէիր վազում այս մրցավազքում: Դու իզուր չէ, որ անխնա հոգնեցնում ես քեզ:

Ես քեզ հետ եմ և միշտ քեզ հետ պիտի լինեմ: Ես՝ Յահվեն, քեզ բավարար զորություն կտամ, որ պատվես Ինձ և շնորհալիորեն կատարես քո առաքելությունը:

Մարտի 28, 1994

Խաղաղություն քեզ: Ես խոստանում եմ առաջ տանել քեզ հոգևորապես և այդ անելով՝ Ես պիտի շատ հոգիների առաջ տանեմ քո միջոցով: Մնա Իմ կենդանի գրատախտակը, որպեսզի շատ հոգիներ քո հասարակության մեջ, այն հասարակության, որը լիքն է չար մարդկանցով, կարողանան կարդալ Իմ Սրտի գաղտնիքները, քանի որ Ես հայտնի եմ նրանով, որ մեղավորներին սովորեցնում եմ ճանապարհը:

Ես Ինքս եմ ընտրել նրանց[1], ովքեր պետք է մակագրեն իրենց անունները Իմ սիրո գրքում, և Ես ասում եմ քեզ. Ես կվարձատրեմ նրանց ավելի ուշ... Իմացի՛ր, որ ինչքան փոքր են նրանք, այնքան մեծ է նրանց մակագրությունը: Վասո՛ւլա, Ես օրհնում եմ քեզ: Թո՛ւյլ տուր քեզ նորից մի բան էլ ասել: Այս բոլոր գրվածքները, ինչպես դու ես դրանք անվանում, օրհնված են և Իմ գեղեցիկ ձեռագործն են: Ես Իմ Ծրագիրն ունեմ, սիրելի՛ս: IC

Ապրիլի 7, 1994

Ես դեռ չեմ ընկալում
այս առեղծվածը,
քանի որ ինձ համար առեղծված է
մինչ օրս Քո Ծրագրի համար
Քո ընտրությունը, ես գիտեմ,
որ այն ամենը,
որ կատարվեց ինձ հետ
և դեռևս կատարվում է,
գալիս է Քո Հզոր Ձեռքից:
Ո՛վ Ամենակարող,
Դու դուրս ես եկել
Քո Սուրբ Երկնքից
և շարունակել
Քո հզոր հաղթանակները
Քո Աջ Ձեռքով: Ա՜հ, Տե՛ր...

Ես եմ:

Ես քո կողքին եմ, մի՛ վախեցիր, զավա՛կս: Թո՛ւյլ տուր Ինձ շարունակել Իմ Պատգամը և Իմ ծրագրերը իրագործել քո մեջ: Դու որա՞խ ես, որ Ինձ հետ ես այս ձևով:

Շա՛տ:

Սիրելի՛ս, Հոգուս սիրելի, Իմ Խաղաղությունը քեզ: Դժվարությունները, որ դու կրում ես մեջքիդ վրա, տրված են քեզ, որ փոխհատուցես այն բոլոր լավ բաների համար, որ Ես չեմ ստանում այս սերնդից: Ես կարիք ունեմ

[1] Նրանք, ովքեր գրում են նախաբաններ, ներածություններ և այլն «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների համար:

զոհաբերվող հոգիների, որ փոխհատուցումներ անեն, իսկ դու, զավա՛կս, տվել ես քո համաձայնությունն այնքա՜ն մեծահոգաբար...

Ես Քեզ եմ պատկանում: Ահա թե ինչու, սիրուց ելնելով, ես տվել եմ Քեզ իմ համաձայնությունը:

Դու Իմ Ձեռքերում ես և հետևաբար ոչնչից չպետք է վախենաս: Ես ազատորեն պիտի օգտագործեմ քեզ Իմ Սեփական Ծրագրերի համար և ճանապարհ բացեմ քեզ համար: Ես և դու միասին, կապված սիրո կապերով, առաջ պիտի ընթանանք, որպեսզի նվաճենք մի անկրոն ժողովուրդ: Շնորհ է տրվելու Ռումինիայում քո հանդիպման ժամանակ:

Թանկագի՛ն փոքրիկս, միշտ հիշի՛ր մի բան. Ես՝ Հիսուս, քեզ հետ եմ: Ես սիրում եմ քեզ, Յուրայի՛նս, Իմ մնացո՛րդ: Սերը մշտապես քո կողքին է: Ես օրհնում եմ քեզ, արի՛:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 12, 1994

Վասո՛ւլա, գրի՛ր. Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Լսի՛ր Իմ Ձայնը: Դու ցանկանո՞ւմ ես ծառայել քո Տիրոջը:

Այո՛, Տե՛ր, ցանկանում եմ:

Դու կամենո՞ւմ ես առատաձեռն լինել Իմ հանդեպ:

Այո՛, Տե՛ր իմ:

Իմ ընկե՛ր, այո՛, դու Իմ ընկերն ես, և դրա համար Ես քեզ եմ տալու հասկացողության հացը, որ ուտես այն, և Իմ Հոգու ջուրը, որ խմես: Ես թույլ եմ տալու, որ դու իմանաս Իմ մտադրությունները, և անտեսանելին դառնա տեսանելի քեզ համար: Գրի՛ր և ասա՛ ազգերին.

Արարչությո՛ւն, մի՛ մնա ընդմիշտ փակված նույն քնի մեջ: Ես մտադիր եմ ցույց տալ Իմ Մեծ Անվան սրբությունը ողջ երկրի վրա: Այո՛, նույնիսկ հեթանոսներին Ես ցույց պիտի տամ Իմ Անվան սրբությունը[1]:

Արարչությո՛ւն, զանազան հունձքերը չեն, որոնք սնում են քեզ և պահում քեզ քո ոտքերի վրա, այլ Իմ Խոսքը, որը պահպանում է բոլոր նրանց, ովքեր վստահում են Ինձ: Ահա թե ինչու Ես ձեզ բոլորիդ խնդրում եմ Ինձ մոտենալ: Դուք, որ սիրում եք Ինձ և ժառանգում Իմ Թագավորությունը, որն աշխարհի հիմնադրումից ի վեր նախապատրաստված էր ձեզ համար, մի՛ ասեք. «Մեր Տերը չի շտապում»,

[1] Ես հասկացա մի հատուկ, քողարկված ձևով, որ այստեղ Տերը ակնարկում էր Մատթ. 24:30: «Եվ ապա երկնքի վրա մարդու Նշանը պիտի երևա, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն և պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով»:

և սկսեք մեղանչել: Ի՞նչն է ձեզ ստիպում հավատալ, որ կարող եք անանկատելի մնալ ձեր մեղքի մեջ: Եթե Իմ Վերադարձը դանդաղ է, սպասե՛ք, քանի որ Այն անպայման պիտի դա: Տերը պիտի դա մի այնպիսի օր, որին դուք չեք սպասում:

Այսօր Հանուն Իմ Սուրբ Անվան Ես ցուցադրում եմ Մարդու Որդու նշանը Երկնքում, որ բոլորը տեսնեն: Մի՞թե այս Երկնային Դրոշը բավական չէ ձեզ համար[1]: Իմ Սուրբ Հոգին ավելի պայծառ է փայլում, քան բոլոր համաստեղությունները՝ միասին վերցրած, և ուղղում է ձեր միտքը երկնային գործերի վրա՝ լցնելով ձեր հոգին մաքուր լույսով, որ կարողանաք տեսնել Իմ Գիտության խորհուրդները: Իմ Սուրբ Հոգին ուղարկվում է քեզ, որ ամրապնդի քեզ, զավա՛կս, և ուղղի Իմ ժողովրդի ուղիները: Ես այնքան առատորեն եմ թափում Իմ Հոգին ձեզ վրա, որպեսզի ձեզ նորից հիշեցնեմ, որ Իմ Ներկայության մեջ Ես չեմ հիանում ո՛չ մեծերով, ո՛չ էլ հզորներով, այլ խոնարհներով և հեզերով: Սերո՛ւնդ, Ես խորապես ազդված էի քո սովից[2]: Ես դեռևս խորապես ազդված եմ ձեզ բոլորիդ համար...

«Ե՛տ բեր ինձ», - կանչում են Ինձ ձեզանից ոմանք, - «ինձ ե՛տ բեր և ուղղի՛ր»: Բայց հազիվ եմ Ես ձեզ ետ բերում Ինձ մոտ և ուղղում ու լցնում ձեզ բարիքներով, երբ փոթորիկը նորից ձեզ քշում տանում է Իմ Տեսողությունից, քանի որ դուք դեռևս չեք արմատավորվել Իմ մեջ... Ուզում եք արմատավորվե՞լ Իմ մեջ: Ուրեմն սիրե՛ք ձեր թշնամիներին, օրհնե՛ք ձեզ հալածողներին և աղոթե՛ք նրանց համար:

Ձեզանից որևէ մեկը, որ լսում է հիմա Երկնքի Թագավորության խոսքը և չի հասկանում այն, ինչպե՞ս կհետևի Ինձ Իմ Ոտնահետքերով, ինչպե՞ս կարմատավորվի Իմ մեջ: Դարձե՛ք դեպի Ինձ, բռնե՛ք Իմ Ձեռքը և թո՛ւյլ տվեք, որ Իմ Հոգին շնչի ձեր մեջ և վերակենդանացնի ձեզ՝ այս Շունչը, որը զուտ ճառագայթումն է Իմ Փառքի: Եվ քարի փոխարեն Ես ձեզ սիրտ կտամ, և ձեր անգործունյա ու անտարբեր վիճակից Ես հարություն կտամ ձեզ և կենդանի հոգի կներշնչեմ ձեր մեջ: Այնքան չարությամբ օգտագործված ձեր ջանքերի փոխարեն Ես այնպես կանեմ, որ ձեր հոգին ցուցադրի քաղցրություն և քնքշություն մեկդ մյուսի նկատմամբ... Զգուշացե՛ք, այլապես ձեր սրտերը կկոպտանան անտարբերությունից և չարությունից:

Դուք ցանկանում եք հետևե՞լ Ինձ: Ուրեմն եղե՛ք Իմ արձագանքը՝ անդրադառնալով Երկնքից մինչև երկիր: Վատ մի՛ վերաբերվեք մեկդ մյուսին, սիրե՛ք մեկդ մյուսին: Սրա մեջ է ազատությունը, և դուք այն ստանում եք Իմ Հոգուց: Մի՛ եղեք խավարի արտացոլումը և սպասեք, որ խաղաղություն ձեռք բերեք:

Ա՜հ, սերո՛ւնդ... Գալիս է ժամը, երբ թշնամին մաղելու է ձեզ բոլորիդ: Իրականում այդ ժամն արդեն հասել է: Թշնամին ամրություն ամրության հետևից է բարձրացնում Իմ Ավանդությունների շուրջը և ձեր բոլորիդ շուրջը: Երբ նա կշրջապատի և ամեն կողմից կարգելափակի ձեզ, պիտի փորձի ձեզ տառապանքի քուրայում: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ՝

[1] Հիսուս նկատի ունի Իր Սուրբ Հոգին, մի փոխաբերական նշան նախքան տեսանելի նշանի հայտնվելը երկնքում:
[2] Հոգևոր սովամահություն:

մտածելով, որ դեռևս ժամանակ ունեք: Նայե՛ք ձեր շուրջը: Հենց որ մի չար մարդ Իմ Շնորհով հրաժարվում է իր չարությունից և անում այն, ինչ ճիշտ է Իմ Աչքում, Թշնամին հարձակվում է նրա վրա՝ օգտագործելով բոլոր ձևերը, որ հուսահատեցնի նրան, և հետ է քաշում նրան դեպի մահվան Հովիտը... Թշնամին ետ է խլում նրան և նրա համար ավելի խոր գերեզման փորում... Ահա թե ինչու արցունքն Աչքերիս՝ Ես շարունակ կանչում եմ ձեզ, ինչպես մի անգամ ողբացի Երուսաղեմի համար. «Եթե դուք, այսօր, ձեր հերթին, միայն հասկանայիք խաղաղության Պատգամը: Բայց, ավա՜ղ, այն թաքնված է ձեր աչքերից: Եվ այս ամենը այն պատճառով, որ չճանաչեցիք՝ ո՛չ ժամանակները, ո՛չ էլ ձեզ տրված առիթը, երբ Ես ձեր սենյակը եկա՝ ոտաբոբիկ և քուրձ հագած, որ ձեզ տամ այն»: Մինչև օրս դուք չեք հասկացել Իմ Կամքը, սերո՛ւնդ: Շատ քչերն են հասկացել Իմ Կամքը... Սերո՛ւնդ, դուք դեռևս լցված եք չարությամբ:

Ապրե՛ք Իմ Լույսի մեջ և դուք պիտի ապրեք Սիրո մեջ: Մնացե՛ք Իմ Սիրո մեջ և պտուղ պիտի տաք Իմ Սիրո մեջ: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես է Ճշմարտության Հոգին ցոլացնում ԻրԼույսը երկնքում: Սակայն ձեզանից շատերը չեն հասկացել, թե Գրվածքներում ինչ է նշանակում այս խոսքը. «Շինարարների կողմից մերժված քարն էր, որ դարձավ անկյունաքարը»[1]: Մի՞թե չեմ ասել, որ նա, ով կընկնի այդ քարի վրա, կտոր-կտոր պիտի լինի, նա, ում վրա այն կընկնի՝ պիտի ճզմվի[2]:

Մի՛ կորցրեք շնորհի վիճակը, որի մեջ մտել եք մի ժամանակ՝ ինքներդ ձեզ ճշմարտացի ու արդար համարելով: Ոչ մի մարդ բարի չէ, Աստծուց բացի... Մի՛ դատեք մեղավորին՝ ասելով. «Նա ոչինչ չգիտի ո՛չ խաղաղության ճանապարհի և ո՛չ էլ արդարության ճանապարհի մասին»: Թողե՛ք այդ բաները Ինձ: Ես եմ միակ Դատավորը: Խնդրե՛ք Ինձ, որ հոգ տանեմ ձեզ, և Ես դա կանեմ: Ձեր խնդրանքները կհասնեն ամպերին: Խնդրե՛ք, և Ես կփրկեմ ձեզ... Ողորմությունը ձեր դռների մոտ է: Երբե՛ք չկասկածեք Իմ Սիրուն:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ՝ թողնելով Իմ Սիրո Հոգուցը ձեր ճակատին:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 13, 1994

Այո՛, Իմ Վասո՛ւլա, երբ Ես կանչում եմ, Ես դիպչում եմ քո սրտին[3]: Այդ Ես եմ՝ Յահվեն, հենվի՛ր Ինձ վրա և մի՛ վախեցիր: Իմ Սիրտը Սիրո և Քնքշության մի Վիհ է:

Լսի՛ր Ինձ. խոտը չորանում է, բուսականությունն ամբողջապես թոշնելու է: Շուտով ոչ մի բան կանաչ չի մնա այլևս: Եթե մենք

[1] Սաղմ. 117:22
[2] Ղուկ. 20:18
[3] Երբ Աստված կանչում է ինձ, սրտումս մի յուրահատուկ մեծ հրճվանք եմ զգում, մի ցանկություն՝ արագորեն հասնելու Աստծո մոտ, թողնելու ամեն ինչ և պատասխանելու Նրա Կանչին:

չշտապենք, երկիրն ամբողջապես կավերվի: Այնքան քչերն են հիմա կենդանի մնացել[1]... Մի՛ հավատա նրանց, ովքեր մարգարեանում են՝ ասելով. «Հիմա ամեն ինչ լավ է, խաղաղությունն արդեն ծլում է ձեր մեջ»: Ես չեմ ուղարկել այդ մարգարեներին, սակայն նրանք մարգարեանում են ազգերի արյան մեջ, որոնք ուտում են չարության հացը:

Իմ մարգարեի խոսքը, որը դուրս է գալիս Իմ Բերանից, այրում է կրակի պես, և ոչ մի կեղծավորի այն դուր չի գալիս: Իմ արտասանած խոսքը ջարդում է: Ինչպես մուրճ, այն հարվածում է կարծրացած սրտերին՝ փշրելով նրանց: Ո՛չ, Ես ինչպե՞ս կարող եմ ասել, թե խաղաղությունը սկսել է բողբոջել, երբ ձեր հողերը լցված են անօրինությամբ, իսկ դիակները քայքայված են որդերից: Ինչպե՞ս կարող եմ ասել, թե սերը հուզել է ձեր սրտերը, երբ ձեր լեզուները ճեղքված են՝ հայհոյանքներ դուրս տալով Իմ Հոգու դեմ: Ձեր հողերը լցված են անառակությամբ[2], ո՛չ, նրանք չեն պատվում Ինձ՝ որպես իրենց Հայր, այլ անպատվում են Ինձ անդադար... Իսկ գիշերվա (խավարը) ծածկել է ձեզ՝ առանց նկատվելու ձեր կողմից: Այն սողացել է ողջ երկրի վրայով, ինչպես մահ: Ուրեմն ինչպե՞ս կարող եմ ասել. «Դուք փառաբանում եք Իմ Անունը»: Ինչպե՞ս կարող եմ ասել. «Դուք սրբացնում եք Իմ Անունը», երբ ձեր ողջ էությունը (խավար) գիշեր է:

Ես հրեշտակներ եմ ուղարկում մեկը մյուսի հետևից, որպեսզի արձագանքեն Իմ խոսքերը և թափանցեն ձեր խլության միջով: Ա՜հ... բայց ձեզանից շատերը դատում են նրանց մարդկային չափանիշներով, որովհետև ոչինչ չի թափանցում ձեր մեջ ձեր կոպտացած սրտի պատճառով: Արդարև, ժամը հասել է, երբ Մահը հալածում է Կյանքին: Դուք ձեր կառույցներից, որոնք իրականում Իմն են, դուրս եք քշում Իմ հրեշտակներին՝ չարաշահելով նրանց, վերաբերվելով նրանց որպես ինքնակոչերի, և կատաղորեն փորձում եք սպանել նրանց Հոգին իմ Հոգու հետ միասին՝ մտածելով, թե Իմ հանդեպ սուրբ պարտականություն եք կատարում: Բայց դուք իշխանություն չպիտի ունենաք նրանց վրա, քանի որ այն խոսքերը, որ նրանք ասում են, Կյանք են, իսկ Սերն ավելի ուժեղ է, քան Մահը, և Կյանքն ավելի հզոր է, քան Զարը, որովհետև Իմ Հոգին նրանց Սուրբ Ուղեկիցն է, որն ուղեկցում է նրանց: Ուստի ուր էլ որ Իմ հրեշտակները գնան, Իմ Հոգին նրանց հետ է:

Պատգամը, որ Ես սկզբից ի վեր ասում էի, այն էր, որ սիրեք մեկդ մյուսին, հաշտվեք Իմ Սիրով, ապրեք սրբորեն և սրբացնեք Իմ Անունը: Սա է դեռևս Իմ Պատգամը, բայց, ա՜հ, ձեզանից այնքան քչերն են լսել և հետևել դրան...

- Ինչո՞ւ եք դեռ մնում կառչած այս անցավոր աշխարհից: Ես ձեզ սովորեցրել եմ, որ չանհանգստանաք ձեր կյանքի համար: Մի՞թե Ես չեմ հոգա ձեր կարիքները[3]: Ես կզարդարեմ ձեր հոգին, եթե դուք միայն թույլ տաք Ինձ: Այն ժամանակից ի վեր, ինչ այս Պատգամը դուրս եկավ, Ես երբեք չեմ դադարել ձեզ կանչելուց, որ վերադառնաք դեպի Ինձ և փոխեք ձեր կյանքը:

Ես ձեզանից միշտ խնդրել եմ փոխհատուցումներ, ապաշխարանք,

[1] Յահվեն խոսում է փոխաբերությունների: [2] Հայրը նկատի ունի կրոնական անհավատարմությունը: [3] Վկայակոչում՝ Մատթ. 6:25

աղոթքների հսկումներ: Ես ձեզանից խունկ եմ խնդրել, խունկ՝ ձեր սրտից: Ո՛հ, եթե միայն գիտենայիք, թե որքան զորեղ և ինչպիսի սքանչելիք կարող են լինել ձեր աղոթքները, եթե նրանք բխեն ձեր սրտից: Ձեր աղոթքները կարող են ոչնչացնել ամեն մի չար կայսրություն այս աշխարհում: Նրանք կարող են արմատախիլ անել չարը և կոտրել այն տասը եղջյուրները[1], որոնք հիմա կլանում են երկիրը Իմ զավակների հետ միասին: Ձեր աղոթքները կարող են զինաթափել չար ուժերին: Թեև այդ ուժերը հզոր են, ձեր խունկը[2] կարող է մաքրագործել այս աշխարհը: Ես ասում եմ. ինքներդ ձեզ հանգիստ մի՛ տվեք, որ հանկարծ փորձության չենթարկվեք: Եղե՛ք զգոն, ինչպես երբեք:

Ես չեմ լքի ձեզ, Ես ձեզ բոլորիդ հետ եմ: Ես ձեզ հետ եմ, որ ձեզ զորություն տամ, որպեսզի ձեր շունչը չթուլանա: Ես ձեզ հետ եմ, իմ տնկինե՛ր, և սպասում եմ, որ ողորմած լինեմ ձեր հանդեպ և տեղափոխեմ ձեզ Իմ բերկրանքների պարտեզը: Տեսնո՞ւմ եք, Ես Ինքս եմ հոգում ձեր մասին, որպեսզի վստահ լինեմ, որ Թշնամին չի՛ ոչնչացնի ձեզ: Իսկ դու, աղջի՛կս, թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քեզ՝ որպես Իմ զենքի: Ես պիտի օգտագործեմ քեզ, որ հարվածեմ չարի թագավորություններն այս աշխարհում, և նրան, ով ղեկավարում է դրանք: Իմաստությունը պիտի ուսուցանի քեզ: Կատարի՛ր քո ամենօրյա պարտականությունները:

Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ: Քո Հայրը և քո Աբբան քեզ մոտ են:

Ապրիլի 15, 1994

(Ես շատապում էի, որպեսզի նորից, թեկուզ մի քանի վար՝ կյանով, լինեմ Աստծո հետ: Ես վազելով եկա Նրա մոտ):

Ո՛վ Մեծափայլ Մեծություն, ես սիրում եմ Քեզ:

Ա՛հ, Վասո՛ւլա, Ես գոհունակություն եմ զգում ամեն անգամ, երբ Ինձ հիշում են... Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ, զավա՛կս և Յուրայինս: Ես քո Ակունքն եմ... և Յահվե է Իմ Անունը:

Ապրիլի 19, 1994

Սնի՛ր Ինձ Քո խոսքերով,
Տե՛ր, որովհետև ես հիվանդ եմ

[1] Տաս հայհոյանքները Աստծո տաս Պատվիրանների դեմ:
[2] Սրտից բխող աղոթքներ:

Քո հանդեպ ունեցած իմ սիրուց:

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, ես ասացի Իմ Երկնային Արքունիքին. «Ես նրա հոգու ներսում կրակ կվառեմ, կկլանեմ նրան և կդարձնեմ նրան Իմը»: Տեսնո՞ւմ ես, հիմա Ես նվաճել եմ քո սիրտը և քո միջոցով Ես շատ ուրիշ հոգիներ եմ կլանել Իմ կրակով: Ես նվաճել եմ նրանց բոլորին[1]: Ես դաժանություն չեմ բանեցրել, ոչ էլ ուժ եմ բանեցրել որևէ մեկի հանդեպ: Ես ձեր սրտերը գրավել եմ միայն մի հայացքով և մի կայծով՝ Իմ Սրտից:

Ես ասել եմ Իմ Հորը, ձեր Սուրբ Մորը, սրբերին և Իմ Հրեշտակների ողջ կարգերին. «Ես մտադիր եմ Իմ Սիրով ծածկել նրանց սարսափելի մերկությունը, բայց սկզբում Ես պետք է հմայեմ այս սերնդին և մեկ առ մեկ առաջնորդեմ դեպի անապատ, որտեղ Ես պիտի խոսեմ նրանց սրտի հետ: Ես Ինքս պիտի փրկեմ Իմ զավակներին, ապա ողջ մարդկությունը պիտի իմանա, որ Ես՝ Հիսուս, ձեր Փրկիչն եմ:

Մնա՛ Ինձ հավատարիմ և պատվի՛ր Ինձ, զավա՛կս»: Ես զորություն ունեմ ոչնչացնելու Իմ բոլոր թշնամիներին, հասկանո՞ւմ ես: Վասո՛ւլա, Ինձ ազա՛տ թող, որ ասեմ քեզ այն, ինչ ունեմ Իմ Սրտում: Լսի՛ր, Ես լսեցի, որ դու ասացիր հայր Օ՛Քերոլին, որ դու կցանկանայիր մեռնել որպես մարտիրոս և լրջորեն առաջ գնալ սրբության մեջ: Քանի որ, իմ ընկե՛ր, դու հրավիրում ես Ինձ քո սեղանին, Ես Իմ հերթին լիովին կկատարեմ քո ցանկությունը և կպատվեմ քեզ, որ նորից ու նորից խմես Իմ Բաժակից: Քո ցանկությունը կփրկի քեզ և շատ ուրիշների: Մի՛ վախեցիր, Ես կհատուցեմ քեզ հետո: Թշնամու դերիները պիտի հափշտակվեն, երբ ամեն անգամ դու մի կում անես Իմ Բաժակից: Վասո՛ւլա, սիրի՛ր Ինձ, և հանուն Իմ հանդեպ ունեցած քո սիրո՝ Ես պիտի տապալեմ չարի կայսրությունները և դրա հեր մեկտեղ նրան, ով իշխում է նրանց վրա, և նրանք պիտի գլորվեն ժայռերի նման:

Սիրի՛ր Ինձ, և հանուն քո սիրո՝ Ես կոչ կանեմ Եկեղեցիներին, որ միասնականացնեն Ջատկի ամսաթվերը: Սիրի՛ր Ինձ, և հանուն քեզ՝ Ես այս խավարը ավելի շուտ կփոխարինեմ լույսով, քան նախատեսված է: Պտուղը, որ Ես քեզանից ուզում եմ, սերն է: Քո սիրով Ես կարող եմ պատասխանել շատ աղոթքների, հետևաբար... թո՛ւյլ տուր քո հակառակորդներին, որ քեզ ընդունեն որպես ինքնակոչի, թեև դու սերում ես Ինձնից: Թո՛ւյլ տուր նրանց, որ պատառոտեն քեզ, ինչպես կատաղած գայլեր[2]: Դա ի՞նչ նշանակություն ունի: Դու պիտի նորից ու նորից ապացուցես, որ սերում ես Ինձնից այն մեծ զորության ու տոկունության միջոցով, որ Ես պիտի հեղեմ քո մեջ տառապանքի այդ պահերին: Եվ համենայն դեպս, քեզ տրված այս բաժինը պիտի լինի միջոցներից մեկը, առաջնորդելու քեզ այն ճանապարհով, որ դու ցանկանում էիր այս առավոտ, ճանապարհ, որը տանում է դեպի սրբացում:

Իմ Սերը ամեն հասկացողությունից վեր է: Սովորի՛ր Ինձնից և մե՛կ եղիր Ինձ հետ: Արի՛ գնանք:

---

[1] Հիսուսի Ջայնը բարձրացավ՝ ցույց տալով Նրա հուզմունքն ու ուրախությունը:

[2] Հիսուսն այդտեղ կանգ առավ, փոխեց թեման, ժպտաց և ասաց. «Քեզ զո՞ւր է գալիս Ինձ հետ լինել այս ձևով, զավա՛կս»: Ես ասացի. «Այո՛, շա՛տ, Տե՛ր»: «Ես սիրում եմ քեզ խելացնորության աստիճան...»: «Ես էլ, Տե՛ր իմ...»:

Մայիսի 10, 1994

Տե՞ր:

Ես եմ:

Սիրվա՛ծ զգա քեզ Իմ կողմից: Թո՛ւյլ տուր Ինձ, որ քեզ առաջ տանեմ դեպի սրբություն: Աղոթի՛ր և խնդրի՛ր: Երանելի են նրանք, որոնց ուսուցանում է Իմ Սուրբ Հոգին: Ուրախացե՛ք ցնծացե՛ք, քանի որ Երկնքի Թագավորությունը չի տրվում պարզապես որևէ մեկին: Երկնքի Թագավորությունը տրվում է աղքատներին, պարզասրտերին և նրանց, որոնց Իմ Հայրն է ընտրում:

~ Ես աղոթեցի քեզ համար, Վասո՛ւլա, որ Հորից ստանամ Նրա Շնորհները, և Ես ստացա դրանք քեզ համար: Այդ պահից սկսած՝ դու տեսար Արշալույսը: Ա՛հ... Այո՛, Նա ցույց տվեց Իր Դեմքը քեզ և ազատեց քեզ քո գերությունից: Իսկ հիմա Ես պիտի վերցնեմ քո պտուղները, և դրանք մատուցեմ Նրան: Ծաղի՛կս, մնա՛ Իմ մեջ և վստահի՛ր Ինձ: Քո Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, քեզ համար ողորմություն կստանա Հորից: Արի դնանք:

Մայիսի 18, 1994

(Սիմի ~ Սուրբ Միքայելի կղզին, Պանորմիթի Վանքը, Հունաստան)

Տե՞ր:

Ես եմ:

Եկեղեցին պիտի վերակենդանանա: Թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քո ձեռքը:

Իմ Սերը խանդոտ սեր է, որ սահման չունի, հասկանո՞ւմ ես: Ես ցանկանում եմ հաղթական լինել քո մեջ, ուստի մի՛ խախտիր Իմ պատվիրանները: Ես ասել եմ, աղջի՛կս, որ քո հարստությունը Ես եմ, քո կյանքը Ես եմ, քո ուրախությունը Ես եմ: Ես քո խաղաղությունն եմ: Մնա՛ Ինձ հետ մի որոշ ժամանակ: Ես տվել եմ քեզ Ինձ մոտ գալու այս եզակի պարգևը: Ուստի, Իմ Վասո՛ւլա, վե՛րջ տուր Իմ Ձեռքերի մեջ գալարվելուց[1], դու միայն թեթև ծփանք կառաջացնես խաղաղության այս հոսանքում, որի մեջ դու սուզված ես:

Աղջի՛կս, եղի՛ր հավատարիմ քո սիրո մեջ, և Ես ասում եմ քեզ նորից. երբեք չհոգնես գրելուց: Արի՛:

ΙΧΘΥΣ

[1] Երբ ես Նրա մոտ չեմ գնում՝ ամեն օր գրելու և իմ շնորհն օգտագործելու համար, Տերը հանդիմանում է ինձ:

Մայիսի 20, 1994

(Պանորմիթի)

Խաղաղություն քեզ:

Առանց Ինձ դու պիտի ապրես, ինչպես այս աշխարհը, Ինձ հետ դու պիտի ապրես, ինչպես Երկնքում: Առանց Ինձ քո հատկանիշները կդառնան աշխարհի հատկանիշները, սակայն Ինձ հետ քո հատկանիշները կլինեն Իմը: Մնա՛ Իմ մեջ: Արմատավորված Իմ մեջ՝ երբեք չմերժես քո պարգևը: Ինձ առաջի՛նը դասիր և Ի՛նձ նվիրիր քո ժամանակը: Մի՞թե ծաղիկը կմերժի ջուրը իր խնամողից: Այդպես է նաև քեզ հետ: Մի՛ մերժիր Իմ Հոգին, որը Կենդանի Ջուրն է քո մեջ, որ քեզ կենդանի է պահում:

Օրհնյա՛լ զգա, քանի որ Ես օրհնել եմ քեզ: Ես օրհնում եմ ձեզ երկուսիդ[1]: Խնդրե՛ք Սուրբ Միքայելին՝ Իմ Հրեշտակապետին, որ բարեխոսի ձեզ համար, միասնության համար և աշխարհում խաղաղության համար: Արի՛:

ΙΧΘΥΣ

Մայիսի 21, 1994

(Պանորմիթի)

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, գրի՛ր. Խաղաղություն ձեզ, Իմ մեջ դուք պիտի ապրեք: Ուրեմն ուրախացե՛ք Իմ Ներկայությամբ[2]: Թող ձեր հոգին կազդուրվի Իմ Ներկայության մեջ:

Արի՛ և լսի՛ր Իմ Սրտի ցանկությունները: Հանուն ձեր երկուսի հանդեպ ունեցած Իմ սիրո[3] դուք դեռևս կամենո՞ւմ եք հետևել Իմ քայլերին: Դուք կամենո՞ւմ եք զոհաբերել ձեր ժամանակը Իմ Շահերի համար: Դուք պատրա՞ստ եք Իմ Ծրագիրը պսակել[4] հաջողությամբ, որպեսզի ողջ Երկինքը հրճվանքով ողջունի Իմ Հաղթանակը: Դուք կամենո՞ւմ եք եռանդով և բուռն ցանկությամբ արձագանքել Իմ կարիքներին, որ զոհացնեք Ինձ՝ ձեր Փրկչին:

Եթե դուք Ինձ թույլ տաք օգտագործել ձեզ, Ես կզգեստավորեմ ձեր հոգին Իմ Աստվածայնությամբ, Իմ Շքեղությամբ, Իմ Կնիքով... Մեզ միայն մի մղոն է մնացել գնալու, Իմ ընկերնե՛ր, ևս մի մղոն ... Ես խնդրեցի ձեր ժամանակը, և դուք տվեցիք այն Ինձ: Ես խնդրեցի ձեր կյանքը, և դուք այնքան առատաձեռնորեն տվեցիք այն Ինձ[5]: Ես գոտեպնդեցի ձեզ Իմ զորությամբ, որպեսզի դուք շարունակեք առաջ գնալ Իմ Պատգամի հետ, և դուք այդպես էլ արեցիք: Դրա համար Ես պիտի շարունակեմ

[1] Հայր Միքայել Օ՛Քերոլին, որն Ինձ հետ էր այս ուխտագնացության ընթացքում:
[2] Հաղորդության մեջ:
[3] Հայր Օ՛Քերոլը և ես:
[4] Նրա Ծրագրի մի մասը «Ճշմարիտ կյանք Աստծո մեջ» փրկության պատգամներն են, այո՛:
[5] Այս ասելիս Հիսուս շատ հուզված էր, և ես հասկացա Նրա զգացումը Իր Ձայնի հնչերանգից և Գլխի թեթևակի շարժումից:

ստիպել ձեր հակառակորդներին, որ նահանջեն ձեր առաջ:

Ձեզ վնասե՞լ է որևէ մեկը: Ա՛հ, եթե միայն իմանայիք, թե որքան դևեր են փախել հենց միայն Իմ Լույսի տեսքից[1]... Ես տվել եմ ձեզ Իմ Լույսը... Ես խոստանում եմ ձեզ, որ ձեզ չեմ լքի: Հաստատո՛ւն եղեք ձեր աղոթքներում, և թող ձեր շուրթերը կրկնեն այն ամենը, ինչ Ես տվել եմ ձեզ: Նորոգե՛ք ձեր հավատարմության խոստումներն Իմ հանդեպ, և Ես ձեզ բավարար զորություն կտամ, որ հետևեք Ինձ և շարունակեք համախմբել և ամրացնել Իմ Եկեղեցին:

Հիսուս է Իմ Անունը, և Ես օրհնում եմ ձեզ: Ես սիրում եմ ձեզ, սիրեցե՛ք Ինձ:

(Մի քանի վայրկյան հետո խոսեց Հայրը):

Վասո՛ւլա, բարձրացրո՛ւ հոգիդ դեպի Ինձ: Այդ Ես եմ՝ Յահվեն: Քո Թագավորն է խոսում: Օրհնի՛ր Իմ Սուրբ Անունը և դու պիտի ապրես: Աղջի՛կս, շատերն են դեռևս խմբվում Ուրացության շուրջը: Մի՞թե Ես պետք է լուռ մնամ: Այսօր նորից Ես իջնում եմ Իմ փրկարար օգնությամբ և հենց նրանց ըմբոստության միջոցին կանչում. «Փրկությո՛ւն: Փրկությունը գալիս է Ինձնից»:

Երկիրը ուժասպառ է լինում իր ուրացության մեջ՝ հյուծված իր անօրենությամբ, և նրա բնակիչները վճարում են նրա մեղքերի հետևանքները՝ սովեր, երկրաշարժեր և պատերազմներ: Այն ամենը, ինչ գալիս է երկրից, հետ է վերադառնում երկրին... Աղջի՛կս, անցի՛ր Ինձ հետ այս անապատը: Ես Եմը քեզ հետ է: Ուրա՛խ եղիր և խաղաղության մեջ, քանի որ Ես քեզ հետ եմ:

Դու որևէ բան ունե՞ս ասելու (...), Տե՛ր:

Նրա մասի՞ն: Ասա՛ նրան. հավատի միջոցով էր, որ Ես առաջնորդեցի քեզ դեպի Իմ փրկարար ծրագրերը, և հավատով էլ դու պիտի շարունակես: Ես քեզ փորձել եմ և ասում եմ քեզ. Ես գիտեմ քո գործունեությունը, սերը և մանկական հավատը: Այնուհանդերձ, Ես մի բողոք ունեմ. Ես քեզ զորություն և հարատևություն եմ տվել, որ օգնեմ քեզ (...)[2] Եվ այնքան կցանկանայի, որ դու ամբողջապես գործածեիր դա: Ես բացեցի Իմ Բերանը և խոսեցի: Արի՛, եթե սիրում ես լսել, կսովորես:

Ես՝ Յահվեն, տալիս եմ քեզ Իմ Հավիտենական Սիրո Կնիքը: Ես Եմը քեզ հետ է:

[1] Հիսուս կանգ առավ մի քանի վայրկյան, նայեց ինձ չափազանց լուրջ Աչքերով, և բավական վշտացած ասաց հետևյալը.

[2] Աստված նրբանկատ դանվեց, որ ոչինչ չգրեց՝ այդ մարդուն բացահայտելու համար:

Մայիսի 26, 1994

Խաղաղություն քեզ: Ասա՛ Ինձ այս խոսքերը.

Իմ Հիսո՛ւս,
Դու իմ միակ Սերն ես իմ սրտում,
միակ Հույսը՝ իմ կյանքում,
միակ Լույսը՝ իմ հոգում:
Այդ պատճառով
մնա՛ ինձ հետ, Քրիստո՛ս:
Իմ մեղքը ճնշում
և ընկճում է ինձ,
և ես ցավում եմ, որ մեղանչել եմ:
Արի՛ և ազատի՛ր ինձ
իմ բոլոր մեղքերից:
Մի՛ երկարաձգիր Քո լռությունը,
արի՛ և նորոգի՛ր ինձ:
Արթնացրո՛ւ ինձ
Քո Իմաստությամբ,
և թող Քո Սուրբ Հոգին
լինի իմ Ղեկավարը: Ամեն:

Ասա՛ դա Ինձ հիմա վստահությամբ: Ես կանգնած եմ քո առջև՝ Իմ Ձեռքը քեզ վրա: Ես խղճացի քեզ: Ապահո՛վ պահիր Իմ Օրենքները սրտիդ մեջ և մի՛ դողա, երբ տեսնես, որ գալիս եմ քեզ մոտ Իմ աղեղով ու նետերով: Իմ Բազուկը դեռ մի քանի ժայռեր էլ պետք է փշրի քո ներսում: Արի՛ և գրի՛ր քո Փրկչի հետ: Մի՛ վախեցիր: Այդ Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, քո Հարստությունը: ic

Մայիսի 27, 1994

Հենվի՛ր Ինձ վրա, աղջի՛կս: Թույլ մի՛ տուր, որ մեռածները[1] քեզ ետ՝ դեպի իրենց քաշեն: Դու ճաշակե՞լ ես Իմ պտուղից:

Այո՛, ես ճաշակել եմ Քո խոսքերը, և դրանք Կյանք են:

Եվ դու վերակենդանացել ես: Ես Հարությունն եմ: Դու հարություն ես առել[2]:
Իմացի՛ր, թե ինչպես է Իմ Հոգին գործում: Իմ Հոգին խորապես զգացվեց՝ տեսնելով քեզ մեռած ու պառկած մեռածների մեջ: Ուրիշների հետ միասին դու մխրճվել էիր գերեզմանի հատակում, խավարի մեջ, քայքայման

[1] Հոգևորապես մեռածները. այսինքն՝ աշխարհը չպետք է գայթակղեցնի ինձ, և ես պետք է հեռու մնամ փորձությունից:
[2] Տերը խոսում է առաջին հարության մասին, հոգու հարության՝ Սուրբ Հոգու կողմից:

խորքերում[1]: Իմ Մարմնի՛ մանիկ, Իմ Քաղա՛ք, դու ականջներ ունեիր, սակայն ոչինչ չէիր լսում: Դու աչքեր ունեիր, սակայն ոչինչ չէիր տեսնում: Ծանրացած քո մեղքերից՝ դու խեղդվում էիր Հող ու մոխրի մեջ, Հող ու մոխրի միջև[2]: Սակայն ձեզանից ոչ մեկն այդտեղ չէր ծնվել: Եվ Ես, տեսնելով քեզ այդ թշվառության մեջ, վշտով լցվեցի: Իմ Աչքերը մաշվեցին տառապանքից: Ես կանչում էի ձեզ ամբողջ օրը, բայց ձեզանից ոչ մեկը չէր լսում Իմ խնդրանքի ձայնը: Պատվելու համար Իմ Անունը և այն Ձեռքերը, որոնք արարեցին ու ամուր բռնեցին քեզ, և հանուն Իմ Հավատարիմ Սիրո՝ Ես Իմ դեմքը ցույց տվի քեզ և Իմ Լույսը փայլեցրի քեզ վրա: Գերագույն Իշխանությունը կանգնած էր քո դիմաց, և ավելի ողորմածաբար, քան երբևէ, Իմ Սուրբ Հոգին չնչեց քեզ վրա Կյանքի Շունչը, Հարության Շունչը: Հետո Խոսքը՝ Բանը, օծեց քեզ, և Իր Արքայական Գահը Նա հաստատեց քո մեջ: Եվ Իր Թագը Հող ու մոխրի մեջ[3] պատվելու համար Նա վեր բարձրացրեց քեզ Հող ու մոխրի միջից՝ հաղթանակ տանելով քո մեջ, դարձնելով քեզ Իր Զորության ծաղիկը: Տեսնո՞ւմ ես, աղջի՛կս, Իմ Սերը հրաշքներ է գործում մեռածների համար...

Հետո Ես խոսեցի Իմ սրբարանի մեջ[4]: Ես ճեղքեցի ու բաց արեցի այն և փառքով ներս մտա Իմ տիրույթի մեջ: Այդ <u>Ես</u> էի, որ ամրացրի քեզ, քաղա՛ք, որպեսզի Խաբեությունն ու Խորամանկությունը իրենց բանակները չկարողանան հանել քո դեմ, քանի որ դու հարություն ես առել, որ քայլես Թագավորի հետ[5] Նրա հաղթական շքերթում:

Եվ հիմա, երբ Ես հարություն եմ տվել քեզ, դու պետք է ամբողջությամբ հրաժարվես այն ամենից, որ աշխարհն է առաջարկում քեզ: Հիմա, որ Ես հարություն եմ տվել քեզ, մի՛ նայիր ո՛չ ձախ, ո՛չ էլ աջ, այլ միայն վերին բաներին: Թող քո մտքերը լինեն երկնային մտքեր: Ոգեշնչվի՛ր Ինձնից, այլ ոչ թե Հող ու մոխրից: Քո հարությամբ Ես քեզ մերկացրի քո երկրային հանդերձներից և զարդարեցի քո հոգին Իմ ազդեցիկ Զգեստներով:

Այո՛, Ես զգեստավորել եմ քեզ Իմաստությամբ... և անտեսանելի Աստծո Պատկերը հիմա արտացոլվում է քեզ վրա, որ առաջնորդի քեզ դեպի աստվածայնություն: Ես խնդրեցի Հորը, որ զգեստավորի քեզ <u>Ինձնով</u>, որպեսզի Ես քեզ առաջնորդեմ դեպի սրբացում: Դու ազատ ես վերջապես... Եվ այս կերպարով Ես Իմ ժողովրդին կտանեմ դեպի միասնություն:

Մեղմ և համբերատար եղիր մինչև երկրորդ հարությունը: Դու ստացար որդեգրման Հոգին չնորհի միջոցով: Այդ է պատճառը, որ քո չուրթերը կարող են բացականչել՝ Ա՛բբա, մի չնորհ, որը բավական է քեզ երկինք առաջնորդելու:

Շարունակի՛ր եռանդով և վստահությամբ, քանի որ Ես քո Սուրբ

---

[1] Ես հիշեցի, որ ապաշխարելուցս անմիջապես առաջ ես տեսիլքում տեսա մի բորոտի: Բորոտը ես էի:

[2] Հիսուս նկատի ունի հոգևորապես մեռածներին:

[3] «...Հող ու մոխրի մեջ» արտահայտությունը, որն ասվում է Մեր Տիրոջ կողմից, նշանակում է «քո մեջ», քանի որ մենք շինված ենք Հողից:

[4] Դա նշանակում է՝ Աստված խոսեց իմ ներսում:

[5] Ինքը

Ուղեկիցն եմ, և նույնիսկ, եթե քեզ հալածեն, դիմացի՛ր դրան խոնարհաբար: Ես աստիճանաբար պիտի բարձրացնեմ քո հոգին ծածկող քողը, որպեսզի դու հայտնվես Ինձ հետ Իմ Փառքի կատարելության մեջ:
Ես Եմը քեզ հետ է: Գովաբանի՛ր Ամենին և ապրի՛ր Ինձ համար: Սա մի կարճ հիշեցում էր, որ քեզ հիշեցնեմ, թե որտեղ էի Ես քեզ գտել:

Մայիսի 30, 1994

Յահվե՛, իմ Բարի՛ Հայր,
իմ հոգին տենչում է
ապրել Քո Տան մեջ:
Ա՛խ, լսի՛ր իմ խնդրանքը:
Դու, որ ազատեցիր ինձ, որպեսզի
ինձ ամբողջապես գործի դնես՝
Քո Սուրբ Անունը բազմաթիվ
ազգերի մեջ ցուցադրելու
և Քեզ գովաբանություններով
մեծարելու համար,
սա՛ ինձ, իմ Բարի՛ Հայր, սա՛ ինձ,
թե ե՞րբ եմ թաքնվելու
Քո թևերի ստվերում:

Գթա՛ ինձ՝ մեղավորիս,
քանի որ ես միշտ թշվառ եմ,
բայց ես գիտեմ, և հավատում եմ,
որ Քո փրկարար զորությամբ
Դու կարող ես
ինձ վեր բարձրացնել:
Ես խոստանում եմ,
որ միշտ հույսով լի՝
պիտի պատվեմ Քո Անունը
ավելի ու ավելի,
և իմ շուրթերը պիտի խոսեն
Քո հրաշքների մասին:

Ո՛վ Հայր, ինչպես
երկինքն ու երկիրն են
ողջունում Քեզ, ինձ համար արի՛,
Քո գթությամբ
ու ողորմությամբ արի՛,
Քո մեծ քնքշությամբ արի՛,
Արի՛ և մեզ դարձրո՛ւ մեկ, Յա՛հվե:
Յա՛հվե,
ինչո՞ւ ես այդքան երկար սպասում:
Արի՛ հիմա և բուժի՛ր
մեր կոտրված սրտերը:

Աղջի՛կս, Ես սիրում եմ քեզ: Ես ձեզ բոլորիդ կմիավորեմ: Հասկանո՞ւմ ես: Եվ Ես ձեզ մեկտեղ կհավաքեմ հեռուներից և ամեն մի ճանապարհից. հարմար ժամին Ես կկանչեմ: Արի՛ Ինձ մոտ, զավա՛կս[1], և լսի՛ր. սկզբից ևեթ Ես դիտում էի ձեզ: Ես խոսում էի, սակայն աշխարհի կրքերը ավելանում են, և այս սերնդի մեղքը կջախջախվի, երբ Ես դամ ու մաքրեմ ազգերին: Այդ ժամանակ նրանք վեր կբարձրացնեն իրենց գլուխները ու կփնտրեն Իմ Հոգին, որը նրանց կառաջնորդի դեպի ճշմարտության կատարյալ իմացություն:

Ահա թե ինչու, աղջի՛կս, դու պետք է միջնորդես, որ Արևելքն ու Արևմուտքը հանդիպեն իրար և միացնեն իրենց սրտերը՝ դարձնելով դրանք մեկ: Սա պետք է արվի, նախքան թշնամին կճնշի ու կտկարացնի Իմ Օրենքը և կպարարտացնի Իմ Սրբարանը մարդկային ուսմունքներով և օրենքներով:

Սակայն ասվել է, որ ինչպես անցյալում ձեր մեջ եղել են կեղծ մարգարեներ, այնպես էլ հիմա դուք պիտի ունենաք ձեր կեղծ ուսուցիչները, որոնք պիտի սերմանեն իրենց ավերիչ տեսակետները և պիտի չճանաչեն Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի աստվածությունը: Այդ կեղծ ուսուցիչները բանականացնում են այն Բարի Լուրը, որը ձեզ էր տրվել իր ողջ հարստությամբ:

Ես հանդիսավոր ասում եմ ձեզ. զգուշացե՛ք Խաբեբայից: Խաբեբան պիտի բերի մի ուրիշ ուսմունք և պիտի աղավաղի Իմ Խոսքը և Ավանդությունը, որոնք փոխանցվել էին ձեզ: Ուստի Ես ասում եմ ձեզ. մի՛ ընդօրինակեք խաբեբային: Սերո՛ւնդ, ելնելով այն ամենից, որ Ես գրում եմ ձեզ համար՝ օգտագործելով Իմ գործիքի ձեռքը, սիրտը և հոգին, մի՛ վախեցեք այդ խաբեբաներից: Նրանք աստվածներ չեն, և Ես յուրաքանչյուր հավատարիմ սրտի մեջ եմ: Ես պիտի բաց թողնեմ կրակի մի վարարուն անձրև այս երկրի վրա, որ այրեմ նրա ոճիրները, սակայն Ես պիտի փրկեմ Իմ ժողովրդին:

Մայիսի 31, 1994

Տե՞ր իմ:

Ես եմ:

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա: Ուրախացի՛ր և հասկացի՛ր, թե ինչպես չորացած ծառը Ես դարձրի մի մրգատու ծառ՝ կյանք տալով նրան Իմ մի հայացքով: Ուստի ուրախացի՛ր, աղջի՛կս: Ես Եմը քեզ հետ է: Մի՛ վախեցիր, զավա՛կս, լսի՛ր և գրի՛ր:

Յուրաքանչյուր Զատկի ժամանակ, Ես ստիպված եմ խմել ձեր բաժանման բաժակը, քանի որ այդ բաժակը պարտադրվում է Ինձ: Բայց դու նույնպես պիտի խմես դրանից, աղջի՛կս: Դու պիտի կիսես Ինձ հետ

[1] Այստեղ Յահվեի ձայնը հնչում էր ինչպես քնքուշ մի հոյր ձայն:

այն դառնությունը, որը տրված է մարդկանց ձեռքով: Որքան երկար ժամանակ անցնի, որ նրանք միավորեն Զատկի ամսաթվերը, այնքան ավելի դաժան պիտի լինի դատավճիռը այս սերնդի համար:

Իմ Վերադարձը մոտ է, և վա՜յ չապաշխարած սրտին: Վա՜յ անկայուն ու փոփոխական սրտին: Վա՜յ չհաշտված սրտին: «Նրանք պիտի չպրտվեն դժոխք» [1]: Այսօր Իմ Տան յուրաքանչյուր անդամ, որ զայրացնում է Ինձ և որպես սրբություն է պահում ավերածին պղծությունն իր սրտում, նրա անունը պիտի ջնջվի Կյանքի Գրքից՝ հայհոյելու համար: Ձեզանից շատերը, սերո՛ւնդ, լսում են Իմ Խոսքերը, բայց մնում են անգործունյա, թմրած ու անտարբեր ոգով: Ինչո՞ւ եք թույլ տալիս ինքներդ ձեզ, որ անհավատությունն ու կասկածամտությունը հաղթեն ու նվաճեն ձեզ:

Ձեր ուրացությունը կարծրացրել է ձեր սրտերը, և Եսայու մարգարեությունը մինչ օրս կայուն է և կատարվում է. «Դուք լսելով պիտի լսեք, բայց չհասկանաք, տեսնելով պիտի տեսնեք, բայց չճանաչեք, քանզի այս ժողովրդի սիրտը կարծրացել է: Ծանր են լսում իրենց ականջներով, իրենց աչքերն էլ փակել են, որպեսզի չլինի թե երբևէ աչքերով տեսնեն ու ականջներով լսեն, սրտով իմանան ու դարձի գան, և Ես էլ բժշկեմ նրանց [2] »: Ապաշխարե՛ք, քանի որ երկնքի Թագավորությունը մոտ է:

Նայե՛ք ձեր շուրջն ու տեսե՛ք. Իմ Եկեղեցու մի հատվածը կուրացել է իր բանապաշտական մտքի պատճառով, ծույլ ու անբան հոգին նստել է նրանց վրա: Այսօր Ես խոսում եմ Ոչնչության բերանով, որ ցույց տամ ողջ մարդկության հանդեպ Իմ Անսահման Ողորմությունը, սակայն միայն մի բուռ մարդիկ կարող են լսել և տեսնել Ինձ: Մնացածներին թույլ չէր տրված տեսնել կամ լսել Ճշմարտության Սուրբ Հոգուն[3]: Սակայն նրանց նման, ովքեր լսեցին Շնորհի Իմ Սուրբ Հոգուն, սրանք նույնպես սիրված են Իմ կողմից, և այդ է պատճառը, որ մինչ օրս Ես հետ եմ պահում Հորս Ձեռքը նրանց վրա իջնելուց:

Ո՛չ, աղջի՛կս, նրանց թույլ չէր տրված լսել կամ տեսնել Ճշմարտության չքեղ փայլքը, և երբեք էլ թույլ չի տրվի, մինչև նրանց միտքը չնորոգվի Հոգևոր հեղափոխությամբ: Եթե նրանք միայն հետևեն իրենց կյանքի ընթացքին մտավոր ուժով ու կարողությամբ, կմնան խավարի մեջ՝ օտարացած Իմ նշաններից ու հրաշքներից: Եթե նրանք ապավինեն միայն իրենց սեփական հոգու ըմբռնմանը, կշարունակեն հարցաքննել Ճշմարտության Իմ Սուրբ Հոգուն՝ առանց Նրան ճանաչելու, Նրան, որ հիմա խոսում է իրենց հետ: Զտեսնող աչքերով և անուշադիր ականջներով նրանք պիտի շարունակեն հռչակել իրենց օրենքները Իմ Օրենքի փոխարեն: Նրանք պիտի փորձեն փոխել եղանակներն ու բառերը <u>և իրենց անհավատության պատճառով կվերացնեն Իմ Ավանդությունները և կփոխարինեն դրանք մարդկայինմամակումներով</u>, առանց Ճշմարտության, որն Իմ մեջ է:

Նրանք պիտի պարծենան իրենց նվաճմամբ, սակայն այն պիտի

[1] Մատթ. 11:23
[2] Ես. 6:9-10
[3] Ես մտածում էի, թե ինչու է այդպես, և որպեսզի ես սխալ չհասկանամ, Տերը շտապեց ասել հետևյալը:

ողջունվի և գովաբանվի միայն ապականված և այլասերված աշխարհի կողմից և ոչ թե Իմ Յուրայինների կողմից, որոնց վրա Ես կնիք եմ դրել: Այո՛[1], աշխարհի ժողովուրդները պիտի ուրախանան և տոնեն այս իրադարձությունը՝ նվերներ փոխանակելով: Բայց Իմ Յուրայինները վշտի արցունքներ պիտի հեղեն և քուրձ պիտի հագնեն՝ ողբալով, որ այդ անօրենությունը՝ այդ ավերածության պղծությունը ընդմիշտ չտևի:

Մովսեսը գրել է. «Նրանք, ովքեր կպահեն Օրենքը, նրանից կյանք պիտի ստանան»: Իսկ այսօր Ես ասում եմ ձեզ. «Նրանք, ովքեր կպահեն Իմ Ավանդությունները, Նրանցից կյանք պիտի ստանան»: Եվ երբ խոստովանեք, որ Ես՝ Հիսուս, Տեր եմ, հարուցյալ մեռելներից, այդ դեպքում պիտիփրկվեք:

Երբ ձեր ողջ սրտով կասեք Իմ խոսքերը՝ Հաղորդության և Նվիրագործման մասին (հացի և գինու սրբագործման ակտը պատարագի ժամանակ. «Սա է Մարմին Իմ, սա է Արյուն Իմ...»), դուք պիտի փրկվեք: Ահա թե ինչու Իմ Անսահման Սիրով Ես կանչում եմ ձեզ բոլորիդ, որ ձեր ձեռքերը վեր պարզեք միայն երկնային գործերի համար: Խնդրե՛ք, որ Իմ Հոգին առաջնորդի ձեզ, և դուք գայթակղության ենթարկվելու վտանգի մեջ չեք լինի: Թո՛ւյլ տվեք, որ Իմ Հոգին ուղղություն տա ձեզ, և ոչ մի գայթակղություն չի դիպչի ձեր հոգուն...

Այսպես, դուք կարդում եք, ինչպես դա գրված է, որ Իմ Եկեղեցին պիտի տառապի և հալածվի Անօրենի օրենքի տակ. դավաճանությունը պիտ իլինի նրա ներսից: Դուք այժմ պիտի լինեք սրա վկաները, և բոլոր տեսիլքները պիտի իրականանան:

Ինչո՞ւ պետք է այս ամենը լինի, Տե՛ր:

Ավա՛ղ: Ձեր հովիվներից շատերը քնած են, և Իմ գառները ցրված են, և բոլորովին քիչ են նրանք, որ կարող են համախմբել նրանց:

Տե՛ր, դա այն պատճառո՞վ է, որ Քո հովիվներից ոմանք արհամարհում են Քո նախազգուշացումները: Այդ նրանի՞ց է, որ նրանք ամեն ինչ ընդունում են որպես սպառնալիք:

Դա այդպես է, որովհետև Ես բացահայտում եմ նրանց մերկությունը: Իմ Աչքերը չափազանց մաքուր են, որպեսզի հանդչեն մեղքի և անտարբերության վրա, և Ես այլևս չեմ կարող դիմանալ անօրենությանը: Լսի՛ր Ինձ. նրանց անվստահությունն ու կասկածամտությունը Իմ Սուրբ Հոգու պարգևների հանդեպ փակում են Իմ ճանապարհը: Եթե նրանք միայն իմանային, թե Ես՝ Աստված, ինչ եմ առաջարկում իրենց, կլինեին հենց այն մարդիկ, որոնք կխնդրեին ավելի շատ հրաշքներ:

Մի՞թե չես լսել. «Ինչ չափով, որ չափեք, այդ չափով կտրվի ձեզ և դրանից էլ ավելին: Որովհետև, ով որ ունի, նրան պիտի տրվի ավելին, իսկ ով որ չունի նրանից պիտի վերցվի նույնիսկ այն, ինչ որ ունի»[2]:

---

[1] Հայտ. 11:10
[2] Մարկ. 4:24-25

Հարստության հրապուրանքը[1] մտավ այդ մարդկանց մեջ և խեղդեց Իմ խոսքը[2], և դրա համար նրանք ոչ մի պտուղ չեն տալիս: Հետևաբար, Իմ Թագավորությունը պիտի վերցվի նրանցից և պիտի տրվի մի ժողովրդի, որ կարող է պտուղ տալ:
Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ, աղջի՛կս: Իմ խաղաղությունը քեզ, շոյի՛ր Ինձ քո սիրով: ic

Հունիսի 2, 1994

Տե՛ր իմ Աստված,
Դո՛ւ, որ հրճվում ես
Քո պարգևները գաղտնի տալով,
Ես Քեզ շատ եմ խնդրում,
որ բոլոր հոգիներին տաս
ամենամեծ պարգևը, այն պարգևը,
որը փոխակերպում է
մեր աղտոտված պատկերը
Քո Աստվածային
Պատկերի պայծառության:
Դարձրո՛ւ մեզ Քո արտացոլումը,
որպեսզի մենք ներթափանցենք
Քո Աստվածայնության մեջ:
ինչպես Քո Փոխակերպման Օրը,

Ճիշտ այնպես, թող սա դառնա
մեզ համար փոխակերպման
մի երկրորդ նոր տոն,
որպեսզի մենք նույնպես լսենք
այս խոսքերը Հորից.
«Սրանք իմ որդիներն ու
դուստրերն են՝ սիրելիները:
Նրանք Իմ
բարեհաճությունն են վայելում:
Լսե՛ք նրանց»: Ապա թող որ գնանք
Քո Ճշմարտության Հոգով՝
պատմելու Քո հզոր գործերի մասին:
Թող որ դա լինի
ողջ աշխարհի[3] Փոխակերպումը:
Եվ մեր փոխակերպմամբ
մենք կսովորենք սիրել,
և սերը մեզ կառաջնորդի
դեպի հավիտենական կյանք:

[1] Դա նշանակում է՝ հպարտություն, հոգևոր հպարտություն:
[2] Ես հասկացա, որ չնայած նրանք սովորում են Սուրբ Գրքերը, սակայն չեն ներթափանցում խոսքի իմաստի մեջ և հասկանում են այն իրենց մարդկային մտքի լույսի ներքո, այլ ոչ թե՝ Սուրբ Հոգու Աստվածային Լույսի:
[3] Ակնարկում է Հայտ. 21

Լա՛վ ասացիր, աղջի՛կս: Խնդրի՛ր այս չնորհը քո ամենօրյա աղոթքներում, և Ես կտամ այն քեզ: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես են Իմ հաղուստները պատված արյան բծերով: Տեսնո՞ւմ ես, թե ինչ կարմիր են Իմ հաղուստները՝ ներծծված Իմ Արյամբ: Բազմաթիվ անմաքուր բաներ Ինձ հասցնում են այս խղճալի վիճակին... Արդարև, շատ են Իմ հառաչանքները, և Իմ Սիրտը բզկտված է հենց այն ձեռքերով, որոնց Ես եմ ձև տվել... Սակայն այնքա՜ն քչերն են լսում Իմ հառաչանքները, այնքա՜ն քչերն են ուշ դարձնում Արյան Իմ Արցունքներին: Իմ Աչքերը մաշվել են լաց լինելուց:

Ես թույլ եմ տալիս Իմ կերպարները արտասվեն, որպեսզի զղջում և ցավ արթնացնեմ ձեր մեջ: Բայց այն, ինչ լսում եմ, մի կարճ հոգոց է միայն, որի մեջ Ես մի կարճատև հանգիստ եմ գտնում: Սակայն շատ արագ դուք թույլ եք տալիս, որ ձեր սիրտը տարվի աշխարհի հոգսերով: Դուք թույլ եք տալիս, որ ձեր սիրտը դաղարի Ինձ հանգստացնելուց և Սփոփողին սփոփանք լինելուց, Նրան, ով կարող է փոխակերպել ձեզ, ով կարող է հարություն տալ ձեր հոգուն, ով կարող է աստվածացնել ձեր հոգին...

Այսուսները, տեսնելով Իմ Աչքերից թափվող արցունքի հեղեղը, մնում են անտարբեր իրենց անվստահության և կասկածամտության պատճառով: Կորցրած լինելով Իմ հրաշքների զգացումը՝ նրանք չեն կարողանում հասկանալ և կատաղորեն հալածում են Իմ նշանները: Նրանց մեղքերը խեղդել են իրենց սիրտը, և դրանից հետո նրանց սիրտը թրթռում է՝ տարվելով աշխարհիկ բաներով, երբեք չհասկանալով, թե իրենց հոգին որքան է խոտորվում չարից: Ո՞վ կարող է հասկանալ Իմ խոր վիշտը: Ինչո՞ւ են նրանք առիթ տալիս Իմ թշնամուն թաքուն չարախնդալ: Ձեզանից ո՞վ կթեթևացնի Ինձ: Ձեզանից ո՞վ կարող է հանգիստ տալ Ինձ: Օրվա ամեն մի ժամ, գոյություն ունեցող ամեն մի բոպե Ես ձեզ մոտ եմ և կանչում եմ ձեզ. «Ինձ վերադարձեք, վերադարձե՛ք Սիրուն»: Ո՛հ, սակայն ձեզանից շատերն այնքա՜ն անգութ են դարձել...

Դուք տեսնում եք Ինձ՝ Արյան մեջ թաթախված, բայց թույլ եք տալիս, որ ձեր աչքերը հանգիստ մնան: Ո՛հ... դուք մինչև ե՞րբ չեք լսելու ողբացող ձեր Աստծուն...

Իսկ դու, ծաղի՛կ, հիշի՛ր այն սերն ու մտերմությունը, որ Ես ունեմ քո հանդեպ: Ինքդ քեզ հանձնի՛ր Ինձ: Արի՛ և հանգստացրո՛ւ Ինձ քո սիրով: Թող ազգերը վերադտնեն Ինձ քո միջոցով[1]: Ցո՛ւյց տուր Իմ սերը, Իմ վիշտը և Իմ տառապանքը, որոնք Ես ունեմ նրանց հանդեպ:

Կենդանի՛ գրատախտակ, Ես՝ Հիսուս Քրիստոսը, վստահել եմ քեզ Իմ Պատգամը, մի՛ կասկածիր... Ես քեզ մի Գանձ եմ տվել քո ձեռքերում, Ես քեզ Իմ ողջ Սիրտն եմ դրել քո ձեռքերի մեջ, ուրիշ էլ ի՞նչ կարող էի Ես քեզ տալ: Քանի որ, Իմ գթասրտությամբ էր, որ Ես բարձրացրի քեզ, որպեսզի մտնես չնորհի այս վիճակի մեջ, որի մեջ Ես պահում եմ քեզ, սիրով հանդուրժիր քո հակառակորդներին: Մի՞թե չես լսել, որ տառապանքը համբերություն է բերում: Ես քեզ ասում եմ, այն քեզ Ինձ ավելի մոտ է բերում:

Ես Իմ Սուրբ Հոգու միջոցով քո սրտի մեջ եմ լցրել Իմ խոր Գիտելիքը՝

[1] Երբ ես վկայում եմ Նրա մասին

արքայական մի զգեստ, որ հագնես Իմ փառքի համար: Ես քեզ նշանակել եմ Ինձ փառաբանելու համար: Այն ամենը, ինչ Ես տվել եմ քեզ, գոհացնում է Ինձ և Հորը: Ես հրճվում եմ՝ դարձնելով քեզ Իմ աչքերի զմայլանքը, Իմ Սրտի ուրախությունը: Իմ Հոգին ուրախանում է քո պարզությամբ: Ուստի Ինձ ոչինչ մի՛ մերժիր: Սովորեցրո՛ւ անուսներին և թույլ մի՛ տուր, որ չարը խլի այն ժամերը, որոնք Ես եմ ուզում՝ քեզ հետ լինելու համար[1]: Ուսուցումը շատերին կառաջնորդի, որ դառնան Իմ Հոգու զմայլանքը:

Վերջում Մեր Երկու Սրտերը կհաղթեն Թշնամուն, և այն փոխակերպումը, որը դու խնդրեցիր, տեղի կունենա: Ես կնորոգեմ այս երկրի դեմքը:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: ic

Հունիսի 3, 1994

Տե՞ր իմ:

Ես եմ: Փոքրի՛կս, Իմ խաղաղությունը Ես տալիս եմ քեզ:

Աղջի՛կս, շատերն են գալիս քեզ մոտ և հարցնում. «Ամեն ինչ լա՞վ է: Ի՞նչ ունի Հիսուս մեզ ասելու այս օրերին»: Աղջի՛կս Եգիպտոսից, ահա թե ինչ պետք է ասես այդ մարդկանց.

Հիսուսն ասում է ձեզ, սերո՛ւնդ, որ դուք դեռևս չեք ապաքինվել ձեր հիվանդությունից, դուք իսկապես չեք ապաքինվել ձեր ուրացությունից[2], և ձեր աչքերի մեջ մի գերանից ավելի կա:

Սերո՛ւնդ, մինչև օրս Սերը մերժված է, բայց և այնպես Իմ Ողորմությամբ Ես համբերատար կերպով սպասում եմ այն գնահատանքին, որ պարտք ես Ինձ՝ քո Աստծուն: Ես համբերատար սպասում եմ, որ դուք բոլորդ համնեք ձեր մեղքերի գագաթնակետին, նախքան Իմ Արդարադատությունը կիջնի ձեզ վրա: Թո՛ւյլ տվեք այս կերպ բացատրել ձեզ. վերադարձե՛ք դեպի Ինձ և սրտա՛նց զղջացեք: Դո՛ւք, որ անապատ եք դարձել, փոխեք այն մի պարտեզի, մի Եդեմի: Սիրե՛ք, սիրե՛ք մեկդ մյուսին:

Ապրե՛ք Ավետարանը և մի՛ հարցաքննեք մեկդ մյուսին: Նախ նայե՛ք ձեր աչքի մեջ գտնվող գերանին: Աղոթե՛ք առանց դադարի, ապրե՛ք սրբորեն: Թույլ մի՛ տվեք՝ ձեր աչքերը հանգստանան: Հաշտվե՛ք ձեր եղբայրների հետ[3] և դուք կխուսափեք մահից: Մի՛ հալածեք այն ամենը, ինչ սուրբ է: Խոստովանե՛ք անկեղծորեն և ողջ էությամբ[4], մի՛ խաբեք ինքներդ ձեզ[5]:

Արարիչն ասում է ձեզ. արհամարհե՛ք այն ամենը, ինչ պիղծ է: Զննե՛ք երկինքը և եղե՛ք Ամենաբարձրյալի վկաները: Ավելի շա՛տ աղոթեք և խնդրե՛ք ձեր Արարչին, որ լինի ձեր Լույսն ու Առաջնորդը:

---

[1] Թելադրության ժամանակ:
[2] Ընդհանուր Ուրացությունը ողջ աշխարհով մեկ:
[3] Դա նշանակում է բոլորի հետ:
[4] Այսինքն՝ զոհաբերել մարմինը պահեցողությամբ:
[5] Դա նշանակում է, որ բավարար չէ միայն գնալ խոստովանության՝ հանուն խոստովանության: Պետք է իսկապես զգալ մեղքերը և անկեղծ լինել խոստովանվելիս:

Վերադարձե՛ք դեպի Ինձ, որպեսզի Ես լվամ ու մաքրեմ այն մեղքերը, որ դուք գործում եք օր ու գիշեր: Ձեր հիվանդությունն անբուժելի է, չնայած ձեր հանցանքներն ու բազում մեղքերը անողոք ժամտախտի նման նստած են ձեր հոգու վրա: Ես կարող եմ բուժել ձեր հանցանքները, Ես կարող եմ ներել ձեզ և վերականգնել ձեր ողջ մարմինը... Նա, ով սիրում է իր կյանքը, կորցնում է այն: Նա, ով կորցնում է իր կյանքն այս աշխարհում, պահում է այն հավիտենական կյանքի համար:

Ձեզանից շատերն են կարդում Իմ Պատգամները, սակայն չեն կարողանում հասկանալ Պատգամի Սիրտը (էությունը), որովհետև դուք լավ չեք արմատավորված Իմ մեջ: Դուք հետևում եք այս պատգամների տառերին, սակայն չեք կարողանում ներթափանցել Պատգամի խորքը: Ես լրջորեն ասում եմ ձեզ. ազատությունը կարելի է ձեռք բերել՝ Հոգու կողմից վերստին ծնվելով: Միայն այդ ժամանակ, երբ Հոգին բաց կանի ձեր աչքերը, դուք կճանաչեք Իմ Անվան Մեծությունը և Իմ Վսեմ Փառքի խորքերը:

Դուք վստահաբար գիտեք, որ հնձում եք այն, ինչ ցանում եք: Եթե սերմանեք երկպառակության դաշտում, թշնամանք և հակառակություն կհնձեք: Եթե մեղադրանքների դաշտում սերմանեք, ինքնադատապարտման բերք կհնձեք: Եթե զրպարտության դաշտում սերմանեք, ձեր սեփական անկման բերքը կհնձեք: Ցանե՛ք սիրո սերմեր ձեր դաշտում և փոխադարձ սեր կհնձեք: Ցանե՛ք ներողամտության դաշտում և ողորմություն կհնձեք: Ինքներդ ձեզ դատավոր մի՛ նշանակեք. Ես եմ Միակ Դատավորը...

Ինչպես նախկինում, Ես ասում եմ ձեզ. Ես չեմ գալիս, որ աշխարհը դատապարտեմ, Ես այստեղ եմ, որ փրկեմ աշխարհը: Ես հիմա այստեղ եմ, որ նախազգուշացնեմ աշխարհին: Ուստի ձեզ, որ այնքան արագ դատապարտում եք և ինքներդ ձեզ դատավոր եք թագադրում, Ես ասում եմ. դուք արդեն ձեր Դատավորն ունեք:

Ովքեր հարցնում են քեզ, աղջի՛կս, «Ամեն ինչ լա՞վ է», ասա նրանց, որ արթուն մնան ամբողջ ժամանակ՝ աղոթելով, որպեսզի ուժ ձեռք բերեն, որ փրկվեն այն ամենից, ինչ պատահելու է: Բավական է, աղջի՛կս, կանգնի՛ր Իմ կողքին հավատարմորեն և եղի՛ր մշտական աղոթքի մեջ: Զավա՛կս, Ես՝ Հիսուս, պիտի օգնեմ քեզ այս երկար ճամփորդության մեջ, որը պիտի կատարես հանուն Ինձ[1]:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ և հայր Միքայելին: Սերը ձեզ մոտ է: ic

Հունիսի 7, 1994

(Մեր Օրհնյալ Մայրը պատգամ է տալիս Հռոդոսի աղոթախմբին, Հունաստան):

Իմ Խաղաղությունը քեզ:

Ես արդեն ասել եմ. Ես կվերադառնամ նրանց մոտ հինգշաբթի օրը հատուկ ձևով: Ես ուզում եմ ասել նրանց այս խոսքերը. դուք ուզո՞ւմ եք

[1] Մի քանի հանդիպումներ Միացյալ Նահանգներում և Կանադայում, ինչպես նաև հեռուստատեսության հաղորդումները:

կատարյալ լինել գեղեցկության մեջ: Հավաքվե՛ք, ինչպես անում եք, և աղոթե՛ք Ինձ հետ միասին: Ես ասում եմ «Ինձ հետ միասին», որովհետև մինչ դուք աղոթում եք, Ես նույնպես աղոթում եմ ձեզ հետ, զավակնե՛րս: Ո՜հ, ձեր աղոթքները որքա՜ն են սփոփում Ինձ...

Մի՛ վախեցեք մարդկային ընդդիմությունից. դա պետք է լինի, բայց դուք ունեք ձեր միջնորդը: Այդ Ես եմ: Դուք առանց Հովանու չեք: Իմ թիկնոցը ծածկում է Հիսուսի փոքր հոտը: Հավատարի՛մ եղեք Հիսուսին և Ինձ՝ աղոթախո՛սմբ նվիրված Մեր Սրտերին: Զար ու ամբարիշտ մարդիկ ոչ մի իշխանություն չպիտի ունենան ձեզ վրա, փոքրիկնե՛րս: Արթո՛ն և շրջահայա՛ց եղեք աղոթքների մեջ: Մենք օրհնում ենք ձեզ բոլորիդ, Ամենաբարձրյալի՛ դուստրեր և որդիներ:

Հունիսի 10, 1994

(ԱՄՆ – Ֆերֆիլդ մարզ)

Տե՛ր: Ես քո ծառայության տակ եմ:

Ես եմ: Այստեղ եմ Ես, քո Կողքին եմ Ես կանգնած:

Հույսդ Ի՛նձ վրա դիր, և դու ապահով ու կանգուն պիտի մնաս: Ո՜հ, աղջի՛կս, ասա՛ նրանց, ասա՛ նրանց, որ Իմ Սիրտը Սիրո և Ողորմության մի Վիհ է: Հոգին, որին Ես ուղարկում եմ ձեզ մոտ, պիտի հիշեցնի ձեզ Ճշմարտության մասին և այն մասին, որ Ես եմ:

Լսի՛ր և գրի՛ր. խաղաղություն ձեզ: Փոքրի՛կ զավակներս, Ես հրճվում եմ յուրաքանչյուր մաքուր սրտով: Ես ուրախանում եմ, երբ տեսնում եմ, որ ձեր աչքերը միայն երկնային բաներ են փնտրում: Ես փառավորվում եմ, երբ դուք գալիս և ասում եք Ինձ. «Ահա ես... ահա ես»՝ առաջարկելով Ինձ ձեր սիրտը, որպեսզի այն փոխակերպեմ Իմ տիրապետության և ապա թագավորեմ նրա վրա: Իմ մեծությունն է ու Իմ վեհությունը, երբ դուք սուրբ եք պահում Իմ սրբարանը՝ վերածելով այն փառապանծ մի տիրապետության՝ Իմ վսեմության համար: Իմ գերագույն իշխանության դրսևորումն է, երբ դուք ձեր թշվառության և աղքատության մեջ կարող եք բացականչել.

«Օվսա՜ննա, օվսա՜ննա
Թագավորին,
որ փրկեց մեզ Հավիտյան»:

...Սա է Իմ Փառքը... Ձեր զոհողություններով Ես անապատները պարտեզների եմ վերածում... Ձեր սիրով Ես հարություն եմ տալիս մեռածներին[2]: Ծարավի լինելով Ինձ՝ ձեր Աստծուն, դուք սփոփում եք Ինձ և դառնում հանգստացնող բալասան Իմ վիրավոր Սրտի համար... Վե՛ր բարձրացրու աչքերդ, զավա՛կս, և նայի՛ր Նրան, ով խոնարհվում է վերևից,

[1] Մեր հոգին:
[2] Հոգևորապես մեռածներին:

որ քեզ Իր մոտ բարձրացնի: Եկե՛ք, Իմ քաղաքնե՛ր, և միացե՛ք մի ձայնով և մի սրտով այն աղոթքին, որը ես ձեզ սովորեցրել եմ.

(Ես աղոթեցի)

Ես օրհնում եմ ձեզ Իմ Սուրբ Սրտի խորքից: Ես օրհնում եմ ձեզ՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին: Եղե՛ք մեկ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 11, 1994

(Հարավային Հաղլի, Մասաչուսեթս)

Տե՛ր իմ:

Ես եմ: Իմ Խաղաղությունը քեզ:

Լսի՛ր Իմ Ձայնը. աղջի՛կս, Ես քո մեջ պիտի ներարկեմ Իմ Հոգին, և դու պիտի բացես քո բերանն այս երեկո, և Իմ խոսքերը դուրս պիտի հեղվեն, ինչպես մանանա՝ մնելով մի ողջ բազմություն: Ես նրանց բերանները պիտի լցնեմ Իմ հոգևոր մննդով, և երբ լցվեն, նրանք պիտի գովաբանեն Ինձ և փառաբանեն Ինձ: Ասա՛ նրանց, որ Նա, ով նստած է փառապանծ գահի վրա, խաղաղության, հաշտության և սիրո կոչ է անում:

Ուզո՞ւմ եք մեծարել Իմ Անունը: Ուրեմն վե՛ր կացեք և հիմա գնացե՛ք ու հաշտվե՛ք ձեր եղբայրների հետ, ձեր քույրերի հետ: Երբեք այնքան մոտիկ չեք լինի Իմ Սրտին, որքան հաշտության այդ պահին... Ձինաթափե՛ք թշնամուն, պարտության մատնե՛ք նրան, ով բաժանում է հարուցում (սատանային) ձեր կյանքի մնացյալ օրերին... Եկե՛ք. այն, ինչ Ես ձեզանից խնդրում եմ, սեր է, և Ես այլևս չեմ խոժոռվի ձեզ վրա:

Օրհնյա՛լ[1], քո ամեն մի րոպեն, որ տալիս ես Ինձ, գոհունակություն է պատճառում Ինձ, ուստի Ես՝ Հիսուս, կպահպանեմ քեզ խանդավառվելուց ու հպարտանալուց[2]: Մի՛ ուրացիր, որ հիմա դու կնախընտրեիր հանգստանալ, քան թե գրել Իմ թելադրանքը[3]...

Ճիշտ է: Ես շատ հոգնած եմ:

Միայն մեկ բառ. Վասո՛ւլա, Ես ցանկանում եմ ընդմիշտ պահել քեզ Իմ Սրտում, ուստի սիրի՛ր Ինձ...

Դու հիմա բարկացա՞ծ ես, Տե՛ր[4]:

Ո՛չ: Ես գիտեմ, թե որքան լարված ես դու, և գիտեմ քո կարողության

[1] Հիսուս շրջվեց դեպի ինձ, որ խոսի ինձ հետ:
[2] Հանկարծ Հիսուս կանգ առավ և չափազանց անկեղծորեն հարցրեց ինձ այն, ինչ հետևում է:
[3] Ես այնքան հոգնած էի, և Նա գիտեր այդ:
[4] Թեև Նա բարկացած չէր երևում:

սահմանները: Ես քեզանից միայն սեր եմ խնդրում: Պահի՛ր Ինձ քո մտքում, քո սրտում և քո տեսադաշտում, որպեսզի այս աշխատանքը ավարտես Ինձ հետ հաղթության պսակով: Հրճվա՛նք պատճառիր Ինձ և հենվի՛ր Ինձ վրա: Ես քեզ հարություն տվեցի, որ փառաբանես Ինձ: Ես քեզ հարություն տվեցի, որպեսզի մի օր ասեմ.

«Տեսե՛ք, սա նա է, որին Ես ընտրեցի, որպեսզի իր սիրով փառաբանի Ինձ: Սա նա է, ում հետ Ես պսակվել եմ, Իմ հարսն է և Իմ սիրելին, նա, որին տվել եմ Իմ հատկանիշները՝ Սիրո համար վկայություն տալու: Սա նա է, ում Իմ Սուրբ Հոգին օժտեց Իմաստությամբ օծելով նրան Իմ Ստորագրությամբ[1]: Ա՜Հ, որքա՜ն եմ Ես հրճվում նրան հարություն տալու համար, քանի որ հիմա Ես կարող եմ հայտարարել, որ ոչ մեկը նրա սերնդից այնքան չի սիրել Ինձ, որքան նա: Իմ ցանկությունն իրականացավ, Իմ ուսուցումներն իզուր չէին: Ես արեցի այն, ինչ որ արեցի, որպեսզի պատվեմ Իմ Անունը»:

Զավա՛կս, Ես Եմը միշտ քո շուրջն է, քեզ հետ: Դու երբեք միայնակ չես, և Իմ Սիրտը խայտում է ուրախությունից ամեն անգամ, երբ դու արտասանում ես Իմ Անունը, որ փառաբանես Ինձ: Թող հայտնի լինի, որ Սուրբը ամեն բանի վրա իշխանություն ունի, և որ Ես Ողորմության մի վիհ եմ:

Ես սիրում եմ քեզ: Եղի՛ր խաղաղության մեջ: ic

Հունիսի 13, 1994

(Գեյթերսբերգ, Մերիլենդ)

(Երեկոյան շատ ուշ՝ համաժողովից հետո: Ես չափազանց հոգնած էի, բայց գնացի Քրիստոսի մոտ):

Տե՞ր:

Ես եմ: Փոքրի՛կս, Իմ խաղաղությունը քեզ:

Ես ասում եմ քեզ, դու չես պատկերացնում, թե որքան երջանկացրիր Ինձ, որ այս ժամին եկար՝ Ինձ փնտրելու: Ես ասում եմ քեզ. Իմ Սիրտը հրճվում է, Իմ Վասո՛ւլա:

Ես օրհնում եմ քեզ Իմ Սրտի խորքից: Հիմա հանգստացի՛ր, զավա՛կս: Հիսուս է Իմ Անունը, և Ես քեզ մոտ եմ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 14, 1994

(Գրինսվիլ, Հարավային Կարոլինա)

[1] Այսինքն՝ երբ Նա հասարակության մեջ երևում է իմ փոխարեն:

(Հիսուս վստահեցնում է ինձ հանդիպումից առաջ):

Ամբողջովին Ինձ վրա հենվի՛ր: Բարձրացրո՛ւ գլուխդ և Ի՛նձ նայիր: Երբեք չմոռանաս, որ Ես միշտ քեզ հետ եմ: Իմ Ներկայությունը պետք է բավարարի քեզ: Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: ic

Հունիսի 15, 1994

(Հարավային Բենդ - Նոտր Դամ)

Տե՞ր:

Ես եմ:

Փոքրի՛կս, զգա՛ Իմ Ներկայությունը: Ես քո փրկության Ժայռն եմ: Թո՛ւյլ տուր Ինձ ընդարձակել Իմ արքայական ընտանիքը: Կանչի՛ր, և Ես կպատասխանեմ քեզ:

Տե՞ր, Դու ինչո՞ւ ես հիմա այդքան հաճախ հայտնվում իմ փոխարեն:

Ես ասել եմ. Ես քեզ կտամ Իմ Երգը և Իմ հավատարիմ Սերն ապացուցելու համար Ես Իմ Սուրբ Դեմքի հիշողությունները կտամ քո հասարակությանը... քանի որ դա Իմ Սիրո Օրհներգն է՝ ուղղված ձեզ բոլորիդ: Աղջի՛կս, Իմ Քնա՛ր, Ես թույլ եմ տալիս, որ Իմ Լույսը ծածկի քեզ: Քանի որ դու թույլ ես տալիս, որ ջնջեմ քո Դեմքը, դրա համար Իմ հրաշքը տեղի է ունենում: Սա Իմ պարգևն է քեզ: Թանկարժեք է այն, և դու արժանի չէիր դրան, սակայն Հորը հաճելի էր այն քեզ տալ, որովհետև իր մեջ այն կրում է Նրա Կնիքը:

Դու թույլ տվեցիր Մեզ[1], աղջի՛կս, որ Մեր Ձեռքերը դնենք քեզ վրա, և տակավին թույլ ես տալիս, որ Մենք բնակվենք քո մեջ:

Վասո՛ւլա, ոչ մեկի համար Հայրը չի արել սա[2]: Ուրիշ ոչ մեկը չկա, որ ստացել է այս պարգևը, մի պարգև՝ տրված ձեզ բոլորիդ Նրա Սիրո Օրհներգի միջոցով:

Արի՛, Մենք[3] քեզ հետ ենք: Մեր օրհնությունները քեզ վրա են:

[1] Սուրբ Երրորդությունը խոսեց:
[2] Հիսուս խոսեց:
[3] Սուրբ Երրորդությունը խոսեց նորից:

Հունիսի 17, 1994

Արի՛, Տե՛ր, արի՛ և փոխակերպիր
մեր թշվառությունը
Քո Կատարյալ Պատկերով:
Մենք այնքան հեռու ենք նրանից,
ինչ Դու անվանում ես կատարյալ:
Ինչպե՞ս ենք երբևէ միանալու
Քեզ հետ Քո Թագավորության մեջ,
այնպես ինչպես մենք կանք հիմա:
Ես Քեզ շատ եմ կարոտում...

Իմ Խաղաղությունը քեզ:

Ես Խաղողի Որթատունկն եմ, իսկ դու՝ Իմ մի մասը: Թո՛ւյլ տուր Ինձ մնել քեզ Իմ հյութով, և դու կպտղես: Ես քեզ Իմաստություն եմ սովորեցրել, որ պտուղ տաս սրբության մեջ: Աղջի՛կս, մնա՛ Իմ մեջ: Այլևս մի՛ զարմացիր[1]:

Հիշի՛ր, այն ամենը, ինչ Ես պետք է ասեմ, պիտի ասվի: Բոլոր նրանք, ովքեր պետք է լսեն, պիտի լսեն: Ինձ համար հաճելի է Իմ Ծրագրերը քեզ հետ կիսել: Այս Գործը քոնը չէ, այլ Իմը: Ինձ պարզապես անհրաժեշտ են քո կամքը և քո համաձայնությունը՝ Իմ Գործն ավարտելու համար: Դու դեռևս կամենո՞ւմ ես մնալ Իմ ցանկությունների գործիքը:

Այո՛, Տե՛ր, Դու գիտես, որ ես ուզում եմ Քեզ հետ մնալ:

Ես օրհնում եմ քեզ, աղջի՛կս, Ես սիրում եմ քեզ: Իմ Սիրտը հրճվում է՝ լսելով քո համաձայնությունը: Ոչ թե Ես կասկածում էի, այլ Ինձ համար հաճելի է լսել այդ բառերը նրանից, որին Ես հարություն եմ տվել: ic

Հունիսի 18, 1994

(Ստոկտոն, Կալիֆոռնիա - ԱՄՆ)

(Տաճարում հանդիպումից առաջ):

Տե՞ր իմ:

Ես եմ[2]:

Հենվի՛ր Ինձ վրա: Սա Իմ հավաքույթն է: Այդ Ես եմ, որ բացել եմ դռները քեզ համար, որ փառաբանես Իմ Անունը: Ուստի մի՛ անհանգստացիր, թե ինչ պիտի ասես: Իմ Հոգին քեզ վրա պիտի լինի:

Ես պիտի խոսեմ հեղինակությամբ քո բերանով, այո՛: Դու պիտի լինես Իմ Արձագանքը: Եվ Ես դուրս պիտի հեղեմ Իմ գանձերը այս

[1] Գլուխս պտտվում է երբեմն նրանից, թե ինչպես են Նրա Պատգամները այդքան մեծ ուժով տարածվել կարճ ժամանակում, և այն ամենից, ինչ Նա տվել էր Ինձ:
[2] Պատասխանեց Հայրը:

թշվառ սերնդի վրա, որ նրանց հոգին հարստացնեմ Իմ Հոգով: Ես նրանց բերանները պիտի լցնեմ Իմ Երկնային Մանանայով: Ես Ինքս պիտի ծաղկեցնեմ նրանց, և նրանց հոգին աստվածային բերք պիտի տա, քանի որ սերմերը պիտի իջնեն Աստվածությունից:

Մի՞թե Ես նրանց կրկին կյանք չեմ տա, որ հրճվեն Ինձնով: Մի՞թե Ես, որպես մի քնքուշ Հայր, նրանց չեմ շնորհի Իմ փրկարար օգնությունը: Իրենց աղքատության մեջ, Ես Ինքս պիտի հսկեմ նրանց, քանի որ Ես հավատարիմ եմ... Եվ Ես պիտի բարձրացնեմ նրանց իրենց աղքատության մեջ, որ գովաբանեն և սրբացնեն Իմ Անունը: Ես խղճահարությամբ լի Աստված եմ, և Իմ Սիրտը կարող է հուզվել: Ե՛կ և սովորի՛ր.

- Առավոտյան ցանի՛ր սիրո քո սերմը:
- Կեսօրին ցանի՛ր խաղաղության քո սերմը:
- Երեկոյան ցանի՛ր հաշտության քո սերմը:

Հետո գնա՛ և հավաքի՛ր բերքդ և մատուցի՛ր այն Ինձ՝ քո Հորը, որը Երկնքում է, և Ես կասեմ քեզ.

«Քո շնորհալիությամբ,
զավա՛կս, դու վարձքդ
վաստակեցիր երկնքում»:

Վերևից Ես կանչում եմ ձեզ բոլորիդ. «Եկե՛ք, եկե՛ք և հաշտվե՛ք Ինձ հետ՝ ձեր Աստծու հետ, և դուք կստանաք Իմ Օրհնությունները: Վերադարձե՛ք դեպի Ինձ, և դուք պիտի ապրեք հավիտյան»:

Հունիսի 19, 1994

(Հայրերի Օրը, Սան Ֆրանցիսկո)

Յա՛հվե, Արարի՛չ և Հա՛յր բոլորի,
ես սիրում եմ Քեզ:
Իսկապես Քեզ նման Հայր չկա:

Հա՛յր, ես ընդունում եմ,
որ սրտերը կարծր են և, ա՛հ,
այնքա՛ն հեռու Քո Սիրող Սրտից...
Մենք չենք կարող ասել,
թե չենք լսել Քո Սիրո
մեծության մասին, սակայն
մեր ականջները ուշադիր չեն եղել,
և մենք անտեսել ենք Քեզ...
Մենք ըմբոստացել ենք Քո դեմ...

Հա՛յր,

մենք լցված ենք թշվառությամբ,
և մենք առաջնային ենք
մեր չարությամբ և մեղավորությամբ:
Մեր սրտերի շշնջոցները
թունավոր են, և մեր հոգին
գիշերվա պես խավար է:

Ո՛վ Հայր, ես ընդունում եմ,
որ մենք Քո Տունը դարձրել ենք
մողեսի և սարդի բույն:
Այնուհանդերձ, Քո աջ Ձեռքը
Դու չթաքցրիր
ու մեզ լցրիր բարիքներով:

Հա՛յր, մեր վիթխարի հպարտությամբ
մենք դավաճանեցինք Քո Պատկերին:
Մենք կրկնակի ոճիր գործեցինք
անհավատարմությամբ
ու բաժանումով: Մենք թերացել ենք
ջուր տալ ծարավին,
մենք թերացել ենք
հաց տալ քաղցածին:
Մեր հանապազօրյա հացը
չարությունն է, որը ստիպում է
երկնքի այուներին դողալ...
Մենք բոլորս դարձել ենք
թառամած տերևների պես՝
մեր բաժանման պատճառով:
Մի՞թե կարող ենք ասել.
«Մենք կանչել ենք
Քո Անունը մեկ ձայնով»:

Ջնայած դրան, Հա՛յր, Քո Շուրթերը,
որ թաց են գթառատությամբ,
երբեք չեն դադարում
մեզ օրհնություններով կանչելուց:
Քո Աչքերն ուղղված են
Քո արարածին՝ խղճահարությամբ:
Քո Մեծությունը երկիր է այցելում՝
խաղողի այգիներ տնկելով
մեկը մյուսի հետևից:
Որքա՜ն երանելի են նրանք,
որոնց Դու այցելում ես
և հրավիրում քայլել Քեզ հետ
Քո երկնային գավիթներում:

Հա՛յր,
մեր թերությունները ողողել են մեզ,
և մեր սրտերը ծանրացել են մեղքից,

սակայն Քո Ողորմությամբ
Դու ջնջում ես ամեն մի չարիք:
Կա՞ որևէ մեկն այսօր,
որ հիշում է Քեզ:

Կա՞ որևէ մեկը,
որ մտածում է Քո մասին:
Կա՞ որևէ մեկը,
որ հանգստացնում է Քեզ:

Աղջի՞կս: Իմ խաղաղությունը քեզ:

~ Տե՛ս, ես չեմ դատապարտում ոչ մեկին, ծաղի՛կս: Լսի՛ր Ինձ. Իմ զավակներին ե՛տ բեր Ինձ մոտ: Մեղմացրո՛ւ իմ զայրույթը նրանց դեմ: Մատուցի՛ր Ինձ դա՝ որպես նվեր Հայրերի Օրվա առթիվ: Հիշեցրո՛ւ նրանց, աղջի՛կս, ինչպես այսօր արեցիր, որ Ես նրանց առաջին Հայրն եմ, նրանց ընկերն ու լավագույն բարեկամը, Արդարը, որ հսկում է նրանց և սիրում է նրանց: Ես նրանց Սուրբ Ուղեկիցն եմ: Ասա՛ Իմ զավակներին, թե ում հետ պետք է կապվեն մտերմիկ ընկերությամբ և թե ինչպես պետք է վստահեն Ինձ:

~ Լսի՛ր Ինձ. հանուն Ինձ՝ հարատև՛ եղիր քո աղոթքներում: Դու կապված ես հավատարմության խոստումներով, որոնք այնքան մեծահոգությամբ տվեցիր քո Հորը: Ես Յահվեն եմ, և դու կապված ես Ինձ հետ Սիրո կապերով: Ա՛խ, աղջի՛կս, հագեցրո՛ւ քո Հոր ծարավը իր զավակների հանդեպ՝ հավատարմորեն մատուցելով ինքդ քեզ որպես մի զոհ:

Թո՛ւյլ տուր Ինձ օգտագործել քեզ, որ խոսեմ նրանց սրտերում և արթնացնեմ նրանց սերը: Իմ հոգոցները գաղտնիք չեն քեզ համար: Քո Հոր հոգոցները գաղտնիք չեն քեզ համար, զավա՛կս: Մե՛ղմ ու քնքո՛ւշ եղիր Իմ Պատգամը փոխանցելիս: Ես Եմ~ը միշտ քեզ հետ է: Մի՛ վախեցիր. որքան առաջանաս, այնքան ավելի պիտի խոնարհվես: Արիացի՛ր, ես ձեզ բոլորիդ պիտի նորոգեմ վերջում Իմ Սիրով:

Հունիսի 20, 1994

(Հանդիպումից առաջ ~ Տորոնտո, Կանադա)

Տե՞ր:

Ես եմ: Եղի՛ր խաղաղության մեջ: Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ, միշտ հիշի՛ր սա:

Տե՛ր, ուղղությո՛ւն տուր քայլերիս,
ինչպես խոստացել ես ինձ:
Ես պատրաստ եմ գնալու

և ծառայելու Քեզ,
Ձե՛րդ Մեծությունն:
Թող Քո խոսքը լինի իմ բերանում:
Դու իմ սրտի ուրախությունն ես:
Երբ ինձնից հեռու ես,
ես ոչինչ եմ և անդամալուծ:
Ես ողջ սրտով
խնդրում եմ Քեզ հիմա,
որ օգնես ինձ:

Իմ Հոգո՛ւ օրհնյալ, ի՞նչ չեմ անի ես քեզ համար...

Ուրեմն թող այդպես լինի, Իմ փոքրի՛կ ուղեկից, Իմ Հոգին քեզ վրա պիտի լինի, ոչ միայն նրա համար, որ խնդրեցիր, այլև նրա համար, որ Իմ Անունը պիտի փառաբանվի քո բերանով: Իմ Ուսուցումները մի լայն ճանապարհ բաց կանեն, որպեսզի շատերը կարողանան քայլել այդ ուղիով:

Ես քո լավագույն Ընկերն եմ, և Ես միշտ պիտի օգնեմ քեզ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 21, 1994

(Տորոնտո)

Իմ Տե՛ր և իմ Հովի՛վ,
Քո բարությամբ բազմապատկի՛ր
Քո հրաշալի խաղողի այգիները,
թող նրանցում ավելի շատ
աշխատողներ լինեն
հռչակելու համար
Քո Արքայական Իշխանությունը,
և այդ ժամանակ յուրաքանչյուր
ազգ կտեսնի Քո Փառքը:

Խաղաղություն, զավա՛կս:

Երբ այս երկինքը կոլորվի մագաղաթյա գալարի պես[1], և երկիրը կանհետանա, նրանք կտեսնեն Իմ Փառքը: Բոլոր նրանք, ովքեր կմնան, իրենց աչքերը կսևեռեն քո Թագավորի վրա: Ձեր աչքերը կտեսնեն Իմ Գերագույն Իշխանությունը: Ես չեմ դադարի Իմ զավակներին կանչելուց, մինչև չվերականգնեմ Երուսաղեմը:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

[1] Ինչպես իմ տեսիլքում

Տե՛ր:

Ես եմ: Խաղաղություն, զավա՛կս: Յահվեն քեզ հետ է, և Ես օրհնում եմ քեզ:

Ինձ կողպա՛ծ պահիր սրտիդ մեջ: Արի՛, զավա՛կս, քո վազքը չի ավարտվել, և չնայած քո Աբբան երբեմն փորձում է քեզ[1], դու երբեք միայնակ չես: Եղի՛ր համբերատար, և Ես կշարունակեմ սովորեցնել քեզ և Իմ հրահանգները տալ քեզ, քանի որ Ես մտադիր եմ վերակենդանացնել Իմ զավակներին և նրանց դուրս բերել իրենց թմրությունից ու անտարբերությունից: Ես նկատի կունենամ նրանց քայքայված վիճակը և ողորմած պիտի լինեմ նրանց հանդեպ:

Ամենը հենց ձեր դռների մոտ է: Փրկությունը շատ մոտ է: Արի՛ գնանք:

Հունիսի 22, 1994

Աստվա՞ծ իմ:

Ես եմ: Խաղաղություն քեզ:

Իմացի՛ր, որ այն, ինչ Ես տվել եմ քեզ՝ որպես առաջադրանք, քո սովորական ուժերից վեր է, սակայն մի՛ մոռացիր, որ Ես քո Զորությունն եմ: Առանց Ինձ դու երբեք չես կարողանա...

Տե՛ս, Ես տարածել եմ Իմ Պատգամը յուրաքանչյուր ազգի մեջ: Ես երկնքում հրաման տվեցի, և Իմ խոսքը փայլատակեց երկրի վրա: Ասա՛ Ինձ, ո՞ւմ հրամանով դու հարություն առար: Եվ ո՞վ դիմադրեց Իմ հրամանի զորությանը: Ես հարություն տվեցի քեզ, որ լինես Իմ վկան և քո բերանով բուժես կոտրված սրտերը, հարություն տաս մեռածներին և սպառնալիք լինես Իմ թշնամուն: Ես պիտի շարունակեմ Իմ Մատով Քեզ վրա փորագրել Իմ Սիրո Օրհներգը: Արի՛ գնանք:

ΙΧΘΥΣ

Հունիսի 24, 1994

(Համագումար Օտտավայում)

(Նախքան իմ ելույթը՝ ուղղված երիտասարդներին: Պատգամ, որը կարդացվեց նրանց):

Ո՛վ Տեր, իմ Կյա՛նք,

[1] Իր Ներկայությունը զգալի չդարձնելով:

իմ Ուրախությո՛ւն, իմ Ժպի՛տ,
իմ Լիությո՛ւն, իմ Ապառա՛ժ,
իմ Փրկությո՛ւն,
իմ Քա՛ղցր Տառապանք,
թող Քո նետերը թռչեն
Քո Նշանակետի վրա:
Այն ճանապահին,
որը Դու նշանակեցիր ինձ համար,
ես հայտնաբերում եմ
Քո Ներկայությունը՝
Պարգևը Քո նետերի,
իսկ քայլելիս Դու լցնում ես
իմ հոգին կենդանի ջրերով,
հետևաբար ավելին ի՞նչ
կարող եմ խնդրել:

Ցուցադրի՛ր ուրեմն Իմ հրաշքները և Իմ բարությունը այս թշվառ սերնդին: Ես փառաբանվում եմ ամեն անգամ, երբ դու սիրով արտասանում ես Իմ Անունը: Ես սիրում եմ քեզ, աշակե՛րտս, սա՛ նրանց[1], որ Ինձ թույլ տան դառնալ իրենց անձնական Ուսուցիչը, իրենց բարեկեցությունը, իրենց առաջնորդը, իրենց խորհրդատուն և առավելապես՝ իրենց Սուրբ Ուղեկիցը: Իմ Օրենքը Սիրո Օրենք է, Իմ Օրենքը Հույսի Օրենք է, սակայն չարը հակասում է Ճշմարտությանը:

Եթե կամենաս, զավա՛կս, դու կսովորես Իմ Սեփական Շուրթերից: Մի՛ ամաչիր մեղքերդ խոստովանելուց: Իմ սիրով ու բարեհաճությամբ Ես կներեմ քեզ: Ես ցույց կտամ Իմ քաղցրությունը քո թուլության նկատմամբ, որովհետև Իմ Սերը քո հանդեպ Անսահման է:

Ես սում եմ քեզ. շուտով շատ շուտով, Աստված իսկապես պիտի գա՝ ձեր մեջ ապրելու: Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին:

Հունիսի 26, 1994

Տե՛ր իմ:

Ես եմ... Ինչո՞ւ ես հալչում ստվերի պես:

Թվում է, թե ես դարձել եմ
ծաղր ու ծանակի առարկա...
Ես հասկանում եմ,
երբ ինձնից խուսափում են:
Դեռ էլի որքա՞ն չար բաներ

[1] Երիտասարդներին:

պիտի ասեն նրանք իմ մասին:
Նույնիսկ ի պատասխան
իմ ընկերության՝
նրանք պախարակում են ինձ,
թեև ինչ ես արել եմ,
եղել է Քո կամքը:
Ես աղոթում եմ նրանց համար,
զոհողություն եմ անում
նրանց համար:
Մի՞թե Դու չես պաշտպանելու
իմ անմեղությունը:

Մի՛ վախեցիր, քանի որ ես քեզ մոտ եմ: Թո՛ւյլ տուր, որ այդ բաները կատարվեն, քանի որ այդ զոհողությամբ ես հոգիներ եմ ձեռք բերում, որոնք կործանման ճանապարհին են: Ա՜հ, Վասո՛ւլա... Մի օր ես քեզ ցույց պիտի տամ հոգիների այն հսկայական բազմությունը, որը ես փրկեցի այն վերքերի միջոցով, որ քեզ նվաստացնողներն են հասցրել քեզ, և քո հատուցումների միջոցով... Իմ Սերը հոգիների հանդեպ ամեն մի հնարավոր հասկացողությունից վեր է, և ես ասում եմ քեզ. Իմ ծարավը թշվառ հոգիների հանդեպ մեծ է: Ուրեմն ես ինչպե՞ս կարող եմ անտարբեր մնալ, Իմ Վասո՛ւլա, ինչպե՞ս, երբ ազգերի բազմություններն ընկնում են ուրացության և ըմբոստության մեջ: Այսօրվա ըմբոստությունը նույնիսկ ավելի մեծ է, քան այն հայտնի Մեծ Ըմբոստությունը[1], որ եղել է անցյալում: Մի՞թե Հովիվը կլքի իր հոտը: Ես ձեր Հովիվն եմ, և Ես սիրում եմ Իմ փոքրիկ հոտը:

Հիմա ես և դու կշարունակենք աշխատել միասին: Քո աշխատանքն իզուր չէ, և Իմ Սիրտը հրճվում է ամեն անգամ, երբ քո շուրթերն արտասանում են Իմ Անունը: Իմ Սրտի յուրաքանչյուր մանրիկը սիրում է քեզ:

...Արի՛, հենվի՛ր Ինձ վրա և հագեցրո՛ւ Իմ ծարավը՝ Ինձ հոգիներ բերելով, և ես պիտի շարունակեմ ուղարկել քեզ յուրաքանչյուր ազգի մեջ, որ հայտարարես Իմ Սիրո Օրհնությունը: Եվ Իմ ստվերը քեզ վրա, Իմ զմո՛ւռս, պիտի հաստատի Իմ Ներկայության իսկությունը, որովհետև Իմ նշանները պիտի ուղեկցեն քեզ:

Արի՛ գնանք:

Հունիսի 29, 1994

(Օտտավա)

Դու իմ Փրկությունն ես:

[1] Ակնարկում է՝ Սաղմ. 95:

Ես քո Փրկությունն եմ, զավա՛կս, իսկ դու, դու Իմ որդեգիր զավակն ես: Ուրեմն հենվի՛ր Ինձ վրա:

- Քո թուլությամբ դու ժառանգում ես Իմ Զորությունը:
- Քո հնազանդությամբ դու ժառանգում ես Իմ Կամքը:
- Քո լրիվ ոչնչացմամբ դու դառնում ես Իմ Պատկերի ժառանգորդը:
- Քո աղքատությամբ դու ժառանգում ես այն, ինչ գիտուններն են փնտրում, սակայն երբեք չեն կարող ժառանգել այն: Դու ժառանգում ես Իմ Իմաստությունը:

Ոչնչով չփոխարինես քո պարգևներն այս աշխարհում: Պահպանի՛ր դրանք, որպես թանկարժեք մի բան, մինչև Ես գամ՝ քեզ տանելու: Ինչպես փեսան է իր հարսին տանում շեմքից ներս, Ես նույնպես այդ ժամին կբարձրացնեմ քեզ, սիրելի՛ս, որ մտնես Իմ Փառքի մեջ... Ուստի, ինչպես մի թանկագին բան, պահպանիր այն ամենը, ինչ Ես տվել եմ քեզ, և մի՛ լսիր քեզ չարիք պատճառողներին, թանկագի՛նս...

Իմ Սիրո՛ Կալանավոր, բայց և ազատ, ինչպես երբեք, դու ուրա՞խ ես, որ Ինձ հետ ես այս ձևով:

Ես անարժան եմ, ի՞նչ կարող եմ պատասխանել: Դու գիտե՛ս, Տեր, գիտե՛ս, թե որքան երջանիկ եմ ես:

Արի՛ գնանք: Մե՞նք, մե՞զ:

Այո՛: Միշտ, մենք, մեզ:

Հուլիսի 2, 1994

Տե՛ր, իմ կյանքի՛ Ուղեկից և Աստվա՛ծ, այսօր ես որոշ տնա- յին գործեր ունեմ անելու:

Ես գիտեմ, Ես գիտեմ, թե որքան աշխատանք ունես անելու, և թե որքան է պահանջում տնային տնտեսությունը տանտիրուհուց: Ես գոհ եմ և ուրախ, որ դու անում ես այդ աշխատանքը: Ես միշտ քեզ հետ եմ, աղջի՛կս, և Ես ասում եմ քեզ. քո աշխատանքն[1] իզուր չէ:

Իմ փշերը պիտի հեռացվեն մեկը մյուսի հետևից, քանի որ քեզնով Ես առաքյալներ պիտի բարձրացնեմ, որ փառաբանեն Իմ Անունը: Իմ Յուրայիններից շատերը դավաճանում են Ինձ, և հիմա արդեն Իմ Տան մեջ բաժանում կա:

...Ես քեզանից միայն խնդրում եմ, որ օրվա ընթացքում ժամանակ առ ժամանակ լսես Ինձ: Դու Իմ խունկն ես, արի՛ գնանք: ic

Հուլիսի 4, 1994

Իմ Վասո՛ւլա, քո օրերում քո վկայությունը պիտի ամրապնդվի Իմ Հոգու

[1] Տերը նկատի ունի տնային աշխատանքը, ինչպես նաև Իր Աշխատանքը, որը Ես նույնպես անում եմ:

կողմից: Ես հոգ պիտի տանեմ Իմ Պատգամի մասին, որպեսզի Իմ Խոսքերը տեղ գտնեն ձեզանից յուրաքանչյուրի մեջ: Ես լրջորեն ասում եմ քեզ. վկայությո՛ւն տուր Իմ Անվամբ և մի՛ վախեցիր, Ես քեզ հետ եմ: Ես աշակերտներ պիտի աճեցնեմ, ձևավորեմ նրանց, ապա ուղարկեմ նրանց, որ վկայեն Իմ Պատգամի մասին:

Իմ Պատգամը փրկում է: Այդ է պատճառը, որ Սատանան, իմանալով, թե որքան հոգիներ են ազատվելու իրենից, պիտի շարունակի իր պայքարը՝ մոլորված հոգիների համար և պիտի օգտագործի նրանց, որպեսզի նրանք իրենց ստապատիր գրչով աղավաղեն քո կյանքը և քո ապրելակերպը: Սակայն նրանք պիտի հայտնաբերվեն, զավա՛կս: Որքան ավելի շատ նրանք հալածեն քեզ, այնքան ավելի շատ Ես պիտի խրախուսեմ քեզ և Իմ ժողովրդին՝ քո փոխարեն Ինձ ցույց տալով նրանց:

Դու Իմ Արձագանքն ես, Հոր Ամենասիրելի զավակի Արձագանքը: Ինչպես Ես քեզ ասել եմ, Իմ Վասո՛ւլա, սա մի պարգև է Ամենաբարձրյալից, որպեսզի խրախուսի քեզ, և միևնույն ժամանակ Իմ Պատգամի կնիքն է:

Հայրը և Ես կհոգանք քո մասին, զավա՛կս, և Ես ասում եմ այս սերնդին այն, ինչ մի անգամ ասել եմ Իմ աշակերտներին. երանելի են այն աչքերը, որ տեսնում են այն, ինչ տեսնում են[1], քանի որ շատերն են ցանկանում տեսնել այն, ինչ նրանք են տեսնում, սակայն դա նրանց չի հաջողվում... Ուրեմն դուք, որ տեսել եք Ինձ, հասկացե՛ք ձեր առավելությունը և ուրախացեք: Իսկ դո՛ւ, աղջիկս, թո՛ւյլ տուր, որ ամբողջովին ջնջեմ քեզ և երևամ քո փոխարեն, որպեսզի փառավորեմ Իմ Անունը:

Ես Իմ հրեշտակներին պատասխանատու եմ կարգել Իմ Պատգամների համար, որ տարածեն դրանք ամենուրեք, քանի որ Ես մտադիր եմ կառավարել աշխարհը սրբությամբ և մաքրությամբ: Հաստատո՛ւն մնա և հարատևի՛ր քո առաքելության մեջ: Եվ Ես ասում եմ քեզ. Իմ Սիրտը հրճվում է, երբ Ես տեսնում եմ, որ դու հաճույք ես զգում այդ անելիս: Մի՛ ազդվիր քեզ քննադատողներից, հենվի՛ր Ինձ վրա: Ա՜հ, որքա՜ն պիտի ուրախանամ, երբ տեսնեմ Իմ պատգամի հետևությամբ գրվող գրություններ: Օրհնյալ է նա, ով կծառայի Ինձ և կգնահատի այսօրվա Իմ Խոսքերը: Ես պիտի օգնեմ նրան: Ասա՛[2](...), որ Ես հաշվի եմ առնում այն ամենը, ինչ նա անում է:

«Տղա՛ս, ուրիշ շատ պարտականություններ մի՛ վերցրու քեզ վրա[3]: Դրանք կբազմանան, և դու կտուժես ժամանակի պակասից: Շտապի՛ր, որքան որ կարող ես, սակայն դու երբեք տեղ չես հասնի: Եթե հարցնես Ինձ. «Տե՛ր, որո՞նք են Քո կարիքները», Ես կասեմ քեզ. «Իմ Պատգամըփրկում է, իսկ ժամանակը կարճ է: Այն, ինչ դու սկսել ես, Ես օրհնել եմ: Տո՛ւր այս սերնդին հասկացողության Իմ Հացը, որ ուտի, և իմաստության ջուրը, որ խմի: Իմ Պատգամը մնում և հագեցնում է նրա ծարավը: Այս սերունդն արագորեն մահանում է մնդի պակասից: Քո

[1] Նրանք, ովքեր տեսել են Հիսուսին, երբ Նա ցույց է տալիս Իրեն հանդիպումների ժամանակ
[2] Նրբանկատությունից ելնելով՝ Տերն Ինձ թույլ տվեց չգրել անունը:
[3] Պարտականություններ, որոնք հեռացնում են նրան «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ» պատգամներից, (Այո՛):

աշխատանքների[1] պտուղը շատերին պիտի փրկի:

Շտապե՛ք և կլանի՛ր հիմա Իմ Պատգամները: Քաղի՛ր նրանցից Իմ Սուրբ Սրտի հարստությունները և ապա հայտնի՛ դարձրու դրանք: Ես քեզ առողջություն եմ տվել, որ վերականգնես Իմ Եկեղեցու առողջությունը: Վերցրո՛ւ Իմ Պատգամներից այն ողջ լույսը, որն անհրաժեշտ է՝ լուսավորելու համար Իմ քահանայական հոգիների սրտերը և աշխարհիկ մարդկանց սրտերը: Դրանց մեջ Ես քեզ միասնության դանձ եմ տվել: Առա՛ջ տար միասնությունը Իմ Պատգամի լույսի տակ: Մեջբերումնե՛ր արա Իմ Խոսքերից՝ անցկացնելով զուգահեռներ: Ազգերի բազմություններ պիտի լուսավորվեն այս աշխատանքի գեղեցկությունից:

Դու լավ ես արել՝ գրելով Իմ Պապի մասին, սակայն խեցեգործը միևնույն կավից ձև է տվել նաև Իմ Պատրիարք Բարդուղիմեոսին: Քո եղբոր մասին գրելիս[2] գրի՛ր նույնպիսի հպարտությամբ, ինչպես գրել ես Իմ Պապի մասին: Ավարտի՛ր այս աշխատանքը հավասար մոտեցումով: Ես ասում եմ քեզ, օգտագործի՛ր Իմ Պատգամները, քանի որ նրանցից դու կկարողանաս բավարար գիտելիք ձեռք բերել՝ հասկանալու համար Իմ ցանկությունները: Թող այժմվանից սկսած՝ քո միակ ցանկությունը լինի հարուստ բերք տալ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամներից: Ես օրհնում եմ քեզ և վստահեցնում, որ Իմ Մայրը և Ես միացած ենք քեզ: IC

Հուլիսի 10, 1994

Խաղաղություն քեզ: Թող աղոթքները լինեն քո հանապազօրյա հացը: Թող նրանք լցնեն քո բերանը: Ես սիրում եմ լսել դրանք: Ես քո կյանքի Շունչն եմ: Ասա՛.

Երկնքի՛ Տիրակալ,
սրբացրո՛ւ Հոգիս՝
Քո բնակավայրը, որպեսզի Դու,
Թագավո՛ր իմ, փառաբանվես:
Պսակի՛ր Հոգիս սրբությամբ,
որպեսզի Քո Աստվածության մեջ
ես դառնամ Քո Թագավորության
և Քո Փառքի ժառանգորդը:
Ես խոստանում եմ կյանքս զոհել
իմ եղբայրների և քույրերի համար
և մանակից դառնալ
Քո Փրկության Ծրագրին:
Արարի՛չ, ես Քոնն եմ:
Հիսո՛ւս Քրիստոս, ես Քոնն եմ:
Սո՛ւրբ Հոգի, ես Քոնն եմ: Ամեն:

[1] «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ» պատգամների գրքերը:
[2] Պատրիարք Բարդուղիմեոս:

Քո բնակարանը Մեր մեջ է՝ Ամենասուրբ Երրորդության: Եկեղեցին պիտի վերակենդանանա:

Աղջի՛կս, սիրի՛ր Ինձ և դու պիտի ապրես: Ճաշակի՛ր Ինձ և դու պիտի աճես Իմ մեջ: Ըմպի՛ր Ինձ, և դու պիտի վերակենդանանաս: Եթե դու անես այդ բաները, կդառնաս Իմ՝ քո Սրբազան Աստծո պատճենը:

Սանի՛կս, ես սիրում և օրհնում եմ քեզ: Հիսուս է Իմ Անունը: Իմ խաղաղությունը քեզ:

Հուլիսի 17, 1994

(Հունաստան - Սիմի կղզի - Պանորմիթի)

Տե՞ր:

Ես եմ:

Ես կարող եմ մնալ քեզ հետ նույնիսկ քո թշվառության մեջ: Տե՛ս, աղջի՛կս, քեզ հանձնարարվել է այս առաքելությունը, որպեսզի հոչակես Իմ Սիրո Օրհներգը, իսկ Ես՝ որպես մի քնա- րահար, քեզ վրա երգեր պիտի նվագեմ քաղցրորեն իրար հե- տևից, որպեսզի բոլորին հիշեցնեմ Իմ մասին: Ասա՛ Իմ բոլոր զավակներին, ովքեր լսել են Սիրո Իմ Օրհներգը, որ Ես՝ Յահ- վեն, իրենց Արարիչը, իրենց պահապանն եմ:

Եթե Ինձ հավատարիմ մնաք, Ես Ոչնչությունից մի տուն կբարձրացնեմ Իմ Անվամբ: Մի՛ սարսափեք Իմ Ճանապարհնե- րից և մի՛ վախեցեք մոտենալ Ինձ: Ես ձեր երկնավոր Հայրն եմ, ուստի վե՛ր բարձրացրեք ձեր հայացքը և թողե՛ք, որ ձեր Թագավորն ու բոլորի Հայրը ձեր մեջ պատրաստի մի հավերժական սրբարան:

Իմ Աչքերը հոգնել են վրդովմունքից և աշխարհի բռնություններից ու դաժանություններից, քանի որ ոչ մի չարագործ չի կարող դառնալ Իմ Թագավորության ժառանգորդը: Հետևե՛ք Իմ Պատվիրաններին և թեթև մի՛ վերաբերվեք դրանց: Եթե հետևեք դրանց, ապա դրանք ձեզ արդար կպահեն: Եթե դուք նույնիսկ չափազանց թշվառ ու մեղավոր եք, եկե՛ք Ինձ մոտ և ասե՛ք Ինձ.

«Նայի՛ր, Հայ՛ր, տեսնո՞ւմ ես իմ հոգու բոլոր արատները: Ես հաստատուն չեմ Քո Պատվիրաններում, սակայն ես գիտեմ, Հա՛յր, որ դու ամենագութ և ողորմած ես: Քո կանոններից ես կարող եմ Իմաստություն սովորել: Սովորեցրո՛ւ ինձ Քո Կամքը, Յահ՛վե, սովորեցրո՛ւ ինձ Քո դատաստանները: Արի՛ և կապի՛ր ինձ Քեզ հետ, Հա՛յր, և հիշեցրո՛ւ իմ թշվառ հոգուն, որ ես նույնպես Քո Թագավորության ժառանգորդն եմ: Չնայած իմ փորձություններն անհամար են, ես վստահում եմ Քո Փրկարար Օգնությանը»:

Եվ ես կպատասխանեմ քեզ, զավա՛կս. «Օրհնյա՛լ, ա՜հ, Իմ Հոգո՛ւ օրհնյալ, քո արարման հիշողությունից ես լաց եղա: Ես ուրախության արցունքներ թափեցի: Ես դրեցի քեզ քո մոր արգանդում և քեզ տվեցի մի սիրտ, որ ապրես և կիսես Իմ Փառքը: Մի՛ շրջվիր հիմա... Ես լսեցի քո աղոթքը, որն ասացիր մաքուր սրտով: Եվ ես ասում եմ Քեզ. դու շատ թանկ ես Իմ Աչքում, և հանուն քո հանդեպ ունեցած Իմ Սիրո՝ այսօրվանից փնտրիր

սեր, խաղաղություն
և հաշտություն:

Դու միայնակ չես: Ես միշտ քեզ հետ եմ և անդադար օրհնում եմ քեզ»:

(Նույն օրը սուրբ Միքայել հրեշտակապետն ինձ տվեց այս պատգամը):

Դո՛ւստր Ամենաբարձրյալի, թո՛ւյլ տուր Ինձ ասել Աստծո զավակներին, որ նրանք հետամուտ լինեն խաղաղությանը.

«Ձեզանից ո՞վ է հրճվում Կյանքով, թող ուրեմն մոտիկ գա Սրբին և <u>երբեք</u> չհրաժարվի նրանից... Ամո՛ւր կանգնեք ընդմիշտ... Որքա՜ն երանելի են նրանք, որոնց Աստվածը Յահվեն է: Նրանք ժառանգներն են Նրա Թագավորության:

Ես ասում եմ ձեզ, Քրիստոսի՛ ընկերներ, այսօր Քրիստոսը քուրձ է հագել, որ ցույց տա Իր վիշտը... Հանուն Նրա սիրո՝ պահեցողությո՛ւն արեք այս ուրբաթ հաց ու ջրով, որ թեթևացնեք Նրա Սիրտը: Առաջարկե՛ք Քրիստոսին այս զոհաբերությունը:

Իրականում Ես կանչել եմ ձեզ այստեղ, որ պատվեք Ամենաբարձրյալին, և Ես՝ հրեշտակապետս՝ սուրբ Միքայելը, մեծապես ազդված եմ ձեր այցելությունից: Իմ ձեռքերը ամբողջովին ճակամարտով են զբաղված, իսկ Իմ բազուկն անընդհատ վեր է բարձրացված, որպեսզի չարին հեռու պահի... Աղոթե՛ք Ինձ, ինչպես անում եք, և խրախուսե՛ք ուրիշներին, որ իրենք էլ նույնն անեն: Աստծո Թշնամին թուլանում է այս աղոթքով[1]:

Գովաբանե՛ք Աստծուն և ուրիշ ոչ մեկին: Բարձրացրե՛ք ձեր գլուխներն առ Աստված և ուրիշ ոչ մեկին: Սիրե՛ք Աստծուն ձեր ողջ սրտով և հոգով: Մի՛ ընկնեք փորձություններ մեջ: Խորհե՛ք այն ամեն լավի մասին, որ ստանում եք Ամենաբարձրյալից, և օրհնե՛ք Նրան:

Իսկ հիմա նորից եկե՛ք և այցելե՛ք Ինձ[2]: Ես սիրում եմ ձեզ»:

Սուրբ Միքայել՝
Աստծո հրեշտակապետ:

[1] Սբ. Միքայելին ուղղված կարճ աղոթքը (Լեո XIII Պապ):
[2] Կողում գտնվող Սբ. Միքայելի եկեղեցում:

Հուլիսի 19, 1994

(Հռոդոս)

Տե՞ր:

Ես եմ:
Թո՛ւյլ տուր Ինձ քեզ հետ լինել[1]: Ուղղի՛ր սիրտդ և վարվի՛ր՝ Իմ Սրտին համապատասխան: Ես ներկա եմ:

Ես զգում եմ,
որ Քեզանից շատ հետ եմ մնացել
այս վազքում և համարյա
կորցնում եմ Քեզ տեսադաշտից:
Գուցե ես մի խոչընդո՞տ եմ
Քո Աստվածային Ծրագրում:
Արդյոք ես դանդաղաշա՞րժ եմ:
Արդյոք Ես անհավատարի՞մ եմ:
Արդյոք Ես գերադասո՞ւմ եմ
երկրային բաները:

Ա՛հ, դու թույլ ես, այնուհանդերձ, Իմ Ծրագիրը քո մեջ պիտի կատարվի՝ Իմ հանդեպ ունեցած քո ծարավի պատճառով: Մնա՛ փոքր, որպեսզի քո շուրջը գտնվող բոլոր մարդիկ նկատեն Իմ Մեծությունը ...Արա՛ այն ամենը, ինչ կարող ես, իսկ Ես կանեմ մնացածը:

Հավաստիացրո՛ւ ինձ հիմա Աստվածաշնչից, խնդրում եմ:

Շատ լավ, ուրեմն բաց Աստվածաշունչը[2]: Այո՛, մեծ ցանկություն ունեցիր ստանալու Իմ Խոսքը: Դա քո սնունդն է, և այն քեզ կենդանի է պահում:
Վասո՛ւլա, Իմ Սրտից արյուն է հոսում, երբ Ես քեզ տխուր եմ տեսնում... Զգա՛ Իմ ցավը... Ես ուզում եմ, որ դու մնաս Իմ Խաղաղության և Իմ Ուրախության մեջ: Մի՛ վշտացիր և մի՛ անհանգստացիր այն բաների համար, որոնք հարատև չեն: Հանուն Ինձ՝ հիմա գնա՛ սուրբ Գևորգի եկեղեցին և աղոթի՛ր վարդարանը: Ես ուզում եմ, որ դու հույսդ Ինձ վրա դնես, քանի որ Ես լի եմ ուրախությամբ և առատաձեռն եմ այն տալու մեջ: Հավաքի՛ր Ինձնից այն ամենը, որ լավ է ու բարի, և լցրո՛ւ քո հոգին Ինձանից, որ Աղբյուրն է քո երջանկության: Ես ունեմ միակ ճշմարիտ Ուրախությունն ու Կյանքը, որոնք հարատև է և իրական: Վստահի՛ր Իմ գթասրտությանը և դադարի՛ր քեզ մեղավոր զգալուց: Ես արդեն ներել եմ քեզ: Հիշի՛ր, չնայած դու առաջ ես գնացել, դու դեռևս սովորում ես և դեռևս Իմ աշակերտն ես:

Թեև ոչ լավագույնը:

[1] Թելադրությամբ
[2] Ես բացեցի և կարդացի

Ո՛չ: Բայց ես սիրում եմ քեզ: Ես պիտի կոփեմ և ուժ տամ քեզ, աշակե՛րտս: Ուստի կառչի՛ր Ինձ: Ես՝ Հիսուս, կօգնեմ քեզ: ic

Հուլիսի 22, 1994

(Պատմոս կղզում)

Տե՛ր, ազատի՛ր թույլերին և փրկի՛ր այս աշխարհի թշվառներին:

Խաղաղություն քեզ: Իմ Շնորհը քեզ վրա է:

Աղջի՛կս, Իմ Սրտից բխող հոգոցներն անվերջ են: Խոնարհները, թշվառները և անմեղները լսեցին Ինձ, և նրանք մխիթարողներն են Մխիթարողի: Հավատարիմ Սերը ձեր բոլորիդ մեջ է, սակայն ոչ բոլորն են Ինձ տեսնում: Ես Իմ ողջ Սիրտն եմ դնում այս[1] Սիրո Օրհներգի մեջ: Ես Իմ ողջ Սիրտն եմ դնում օրհներգերի մեջ՝ ձեր բոլորիդ հանդեպ ունեցած Իմ Սիրուց ելնելով, լինեք դուք բարի, թե չար: Ես դարձել եմ մի մուրացիկ՝ հանուն ձեզ: Եվ եթե ձեր Աստվածը՝ Ես կաղալով անցնում եմ ձեր կողքով, և դուք չեք ճանաչում Ինձ, այդ նրանից է, որ Ես ծածկված եմ թուք ու արյամբ, որը հասցվել է Ինձ անօրենության և մեղքի մեջ ապրող այս սերնդի կողմից...

Ո՜հ երկի՛ր, որ այդքան ապականված ես, դու դադարել ես գոյություն ունենալուց... Քո Աստվածը եկել է քեզ մոտ, բայց դու չես ճանաչել Նրան: Մի՞թե չեք լսել: Ես Աստվածային եմ, և Իմ Աստվածայնությամբ Ես ուզում եմ փրկել ձեզ, որպեսզի դուք նույնպես միանաք սրբերին: Սակայն չնայած Իմ առաջարկին՝ Իմ զավակներից շատերը չեն ցանկանում ապաշխարել, ոչ էլ պատրաստ են հրաժարվելու իրենց մեղքերից, այն մեղքերից, որոնք շղթայում են նրանց ամեն բանի հետ, բացի Ինձանից: Իմ Հոգին լիքն է հոգոցներով, այո՛, ասա՛, աղջի՛կս, որ Իմ քուրձը ներծծված է Իմ Արյամբ:

Լսե՛ք Ինձ. այսօր, ինչպես որ երեկ էր, բոլոր անցորդները թքում են Սուրբ Սրբոցի վրա և մտրակահարում: Իմ Սուրբ Խաչը՝ ձեր փրկության Գործիքը, ամեն օր ոտնակոխ է արվում մարդու կողմից... Ա՜հ... Ես տառապում եմ վշտալիորեն... Այսօր Ես բացել եմ Իմ երկնային շտեմարանները, որպեսզի առատորեն սնեմ ձեզ: Ես ճանապարհ եմ բացում, որ ձեզ բոլորիդ երկինք առաջնորդեմ:

Ես ասել եմ. «Չնայած այս սերունդն այդքան կամովին ինքն իրեն դցել է սատանայի ոտքերի տակ, Ես՝ Սուրբը, երբեք չեմ կարող մոռանալ նրա արարման հիշողությունը, և այն, թե ինչպես այդ պահի հիշողությունից Իմ Հայրը ուրախության արցունքներ հեղեց: Ահա թե ինչու Ես մի կողմ չեմ կանգնի ու դիտի, թե ինչպես է Իմ Հոր այս ժառանգը Իմ Թշնամու կերպարանքը ստանում: Թշնամին կարող է գրավչություն ունենալ, բայց այն մահացու է: Մինչդեռ այն, ինչ Ես եմ առաջարկում, պիտի բերի ձեզ ձեր աստվածայնությանը և հետ՝ ձեր Հոր Բազուկների մեջ:

Սերո՛ւնդ, քո քնի մեջ Իմ Թշնամին առևանգեց և հմայեց քեզ:

[11] Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ

Շրջապատված նրա ստերով՝ դու հմայվեցիր, և քո հիշողությունը, ընկնելով մոռացության մեջ, խորասուզվեց խավարում[1]: Սակայն Ես՝ ձեր Աստվածը, ասում եմ ձեզ.

Տղանե՛ր և աղջիկնե՛ր, դուք Ամենաբարձրյալի զավակներն եք: Դուք սերում եք Գերագույն Իշխանությունից և Վեհությունից: Ո՛Հ, եկե՛ք, դուք Մեզ[2] եք պատկանում, դուք Երկնքին եք պատկանում... Դուք Արքայական Սերնդից եք, ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ եք լսում Գազանին: Դուք օրհնված եք Մեր Պատկերով և ոչ թե Գազանի: Դուք բոլորդ ստեղծված եք՝ քայլելու Հզոր Աստծո տան դավիթներում, դրա համար թո՛ւյլ տվեք Ինձ զգեստավորել ձեզ Իմ Վեհությամբ ու Պայծառությամբ: Բացե՛ք ձեր սրտերը, և Ես պիտի փրկեմ ձեզ:

Թո՛ւյլ տվեք Ինձ մտնել Իմ բնակարանը[3], որպեսզի զարդարեմ այն: Եվ դա անելուց հետո Ես ձեզ դուրս պիտի նետեմ, ինչպես ցանցն են նետում, այս անապատի և մահվան հովտի մեջ, որպեսզի աղաղակեք Իմ Անունով. «Սերը Վերադարձի Ճանապարհին է: Տիրոջ Օրը մոտ է, ավելի մոտ, քան դուք կարծում եք»: Ապաշխարե՛ք: Ապաշխարե՛ք և ուրա՛խ եղեք: Վեցերորդ հրեշտակի փողը շուտով պիտի լսվի՝ Աստծո նախազգուշացումներն իրականացնելու համար: Շտապե՛ք և ապաշխարեք, որ ստանաք Գառան Կնիքը ձեր ճակատներին: Ահա թե ինչ կասեք դուք: Դուք պիտի լինեք Իմ Գահը, իսկ Ես՝ ձեր գովերգների նյութը, և Իմ Թշնամու հայացքի տակ Ես ձեզ պիտի տամ մի խիզախ սիրտ, որ հաղթեք նրան և նրա հետևորդներին վերջին ժամանակների այս ճակատամարտում:

Առայժմ այսքանը, աղջի՛կս: Ես օրհնում եմ քեզ և ամեն մեկին, որ քեզ հետ է: Իմ Անունը

Ամեն է:

Հուլիսի 23, 1994

(Պատմոս)

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա, Ես օրհնում եմ քեզ:

Վարվի՛ր Ինձ հետ, ինչպես քո ընկերոջ հետ կվարվեիր: Երբեք չլքես քո առաքելությունը, որը ներառում է գրելը: Ինձ ժամանա՛կ տուր գրելու համար, Ինձ ժամանա՛կ տուր, որ Իմ զոհասեղանի վրա[4] հեղեմ Իմ օրհնությունները, Իմ զմուռսը և Իմ օծման յուղը: Ինձ ժամանա՛կ տուր, որ ծածկեմ քեզ Իմ բույրով՝ խնկով:

Իմ Հոր զայրույթը մեղմելու համար արտասանի՛ր Նրա Անունը՝ պատվելով և գովերգելով Նրան Հավաքներում: Ես կկանչեմ[5], և դու պետք է հասկանաս Իմ կանչը: Ընդունի՛ր Իմ Խաղաղությունը հիմա և պահի՛ր

[1] Հանկարծ Տերը բարձրացրեց Ձայնը՝ ասելով այն, ինչ հետևում
[2] Ամենասուրբ Երրորդությունը:
[3] Մեր սիրտը:
[4] Մենք կարող ենք լինել Աստծո զոհասեղանը:
[5] Պատգամ տալու համար:

Ինձ քո մտքում[1] ու քո սրտում[2]... Ընկերնե՞ր ենք: Լսի՛ր Ինձ: Միշտ հիշի՛ր սա. Մեսիային նույնպես հալածեցին և նրա հետ վարվեցին որպես ինքնակոչի, ինչպես և Նրա աշակերտների հետ: Զավա՛կս, Դու Ինձնից ես և քանի որ գալիս ես Մեսիայից, դու նույնպես պիտի տառապես, ինչպես Նա տառապեց: Ես քեզ նախկինում զգուշացրել եմ այդ մասին. սա պարզապես մի հիշեցում է:

Հուլիսի 29, 1994

Տե՛ր իմ, երգի՛ր
Քո նոր երգը[3] ազգերին,
երգի՛ր Քո նոր օրհներգը[4]
յուրաքանչյուր ցեղի:
Քո երգը բուժում է, Քո օրհներգը
մեծ հրաշքներ է գործում:

Խաղաղություն քեզ, զավա՛կս: Ես կշարունակեմ հորինել, և ինչպես անձրևը թարմ խոտ է աճեցնում բլրալանջերին, այդպես էլ Ես հոգևոր սնունդ պիտի պատրաստեմ քաղցածների և աղքատների համար:

Իսկ դու եղի՛ր Իմ քնարը, որպեսզի հավատացյալների ողջ համայնքը միանա Ինձ Իմ երգով: Ուրեմն ուրախացրո՛ւ Քո Արարչին: Օրհնյա՛լ զավակս, քո թուլությունը որքա՜ն է գրավում Ինձ... Բռնի՛ր Ձեռքս և քայլի՛ր Ինձ հետ: Ես կօգնեմ քեզ առաջ գնալու և կատարելու առաքելությունդ՝ քեզ տալով գործելու եռանդուն մի ձև[5] և ավելի մեծ քաջալերանք: Ես պիտի տամ քեզ այս չնորհները, որպեսզի դու անվախ կերպով սովորեցնես այն, ինչ Ես եմ քեզ տվել: Եվ քո միջոցով յուրաքանչյուր ազգի մեջ պիտի տարածվի Իմ մասին Գիտության բուրմունքը:

Ես Սկիզբն եմ և Վախճանը, և ամեն ինչ չափվում է Ինձնով:

ΙΧΘΥΣ

---

[1] Նշանակում է աղոթք առանց դադարի:

[2] Այդտեղ Հիսուս կանգ առավ, հետո, ինձ նայելով, հարցրեց. «Ընկերնե՞ր»: Նա ուզում էր ասել. «Մեր պայմանավորվածությունը դեռևս ուժի մե՞ջ է»:

[3] Երգը և օրհներգը «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ» պատգամներն են:

[4] «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ»:

[5] Այդ ժամանակվանից սկսած՝ ես ստացա հատուկ չնորհներ Տիրոջից և իմ հանդիպումների ընթացքում զգում էի Նրա Ձորեղ Ձեռքը: Նույնիսկ հայր Օ'Քերոլը նկատեց դա. այդ այնքան ակնհայտ էր:

Օգոստոսի 7, 1994

(Հռոդոս)

Տե՛ր, գաղջությունն[1] անտանելի է այստեղ: Դու նկատեցի՞ր իմ խենթության հետևանքը[2]... Տեսնո՞ւմ ես այն սպառնալիքները, որ ես ստանում եմ հանրային ռադիոյով[3]: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես են ստեղծում այդ բոլոր ստերը: Եթե ես ապրեի միջին դարերում, ինձ կսպանեին քարկոծելով կամ էլ կայրեին՝ սյունին կապելով:

Ես Քո առաջ եմ կանգնած ամբողջ ժամանակ: Վերջում ես պիտի հաղթեմ, ուստի մի՛ վախեցիր... Ես խնամել եմ քեզ, Ես քեզ դաստիարակել եմ, որ փառաբանես Իմ Անունը: Խաղաղարար մարդը կհասկանա Խաղաղության Իմ Պատգամը:

Իմ Պատգամներում կան հատվածներ, որոնք քողարկված են և դժվար հասկանալի, սակայն դրանք այն մարդկանց համար են, որոնց մասին Եսայի մարգարեն խոսել է. «Դուք նորից ու նորից պիտի լսեք, սակայն չեք հասկանա, նորից ու նորից պիտի տեսնեք, սակայն չեք ընկալի...»: Այդ մարդիկ դատարկ են[4]: Նրանք աղճատում են նաև Սուրբ Գրքերը: Հիշեցրո՛ւ բոլորին[5], որ նրանք չեն կարող ծառայել երկու տիրոջ՝ աշխարհի տիրոջը և Ինձ, Ինձ, որ Երկնքի տերն եմ: Հիշեցրո՛ւ նրանց, որ նրանք պետք է գործադրեն այն, ինչ Ես եմ սովորեցրել իրենց: Ձեր սեփական հաճույքը մի՛ նախընտրեք Աստծուց:

Ես Սուրբ եմ, և Ես ուզում եմ, որ դուք սրբորեն ապրեք: Դուք պետք է միշտ կայուն մնաք և ոչ թե երբեմն-երբեմն... Ձարը գաղտագողի պտտվում է ձեր շուրջը և երդվելէխաբել ձեզբոլորիդ:

Աղոթե՛ք ձեր քահանաների համար[6], որոնք այնքան թույլ են: Նրանք նայում են առանց տեսնելու և ունկնդրում առանց լսելու: Այդ վիճակում նրանք խեղաթյուրված են մտքով, հետևաբար՝ զրկված այս Պատգամից: Ուրեմն մի՛ զարմացեք, որ նրանք չեն վստահում ձեզանից շատերին և վիճաբանում են Իմ Խոսքերի շուրջ: Նրանք Ինձ համար նույնքան սիրելի են, որքան դուք, և Ես սիրում են նրանց այնքան, որքան ձեզ բոլորիդ: Հարգե՛ք նրանց և աղոթե՛ք նրանց համար:

Ես պիտի եզրափակեմ՝ ասելով ձեզ. պահե՛ք Իմ Սուրբ Կանոնները և հեռո՛ւ մնացեք այն բաներից, որոնք աշխարհն է ձեզ առաջարկում: Ոչ մի հնարավորություն մի՛ տվեք Թշնամուն: Մի՛ մնվեք այն բաներով, որոնք սուրբ չեն: Սա Իմ երկրորդ նախազգուշացումն է: Առաջինն ասվել է նրա բերանով, ով գրում է Սիրո Իմ Օրհներգը...

Եղե՛ք արդար և տիրապետե՛ք ինքներդ ձեզ, որպեսզի մնաք Իմ չնորհի մեջ: Սրանք են Ինձ հետևելու Իմ պայմանները: Մի՛ ստիպեք Ինձ, որ մի օր

---

[1] Հոգևոր գաղջությունը:
[2] Սիրել Աստծուն խելահեղորեն և հայտարարել այդ մասին՝ վկայություն տալով տեղական հեռուստատեսությամբ:
[3] Այն երկու ուղղափառ քահանաներից, որոնք խոսեցին իմ դեմ:
[4] Այսինքն՝ նրանց հոգին նման է անապատի:
[5] Հռոդոսի և Աթենքի աղոթքի խմբերին:
[6] Հատկապես նրանց համար, ովքեր գտնվում են Հռոդոս կղզում:

ձեզ ասեմ. «Դուք արդարամիտ չէիք»: Հիմա ձեզ լավ հայտնի են Իմ պայմանները: Եթե դուք Ինձ ենթակա եք, հետևե՛ք Ինձ: Երբեք մի՛ քանդեք այն գործը, որ Ես արելեմուրիչներիհետ[1]: Ապաշխարե՛ք և փնտրե՛ք ճշմարտասիրություն:

Ճշմարիտ եմ ասում ձեզ. նրանք, ովքեր վարվում են հեթանոսների պես, պիտի ստանան իրենց բաժինը, որովհետև նրանք ոչ միայն վարվում են հեթանոսների նման, այլև հավանություն են տալիս և ողջունում են ուրիշներին, որոնք միանում են իրենց:

Եթե Ես, որ սիրում եմ ձեզ, չհանդիմանեմ ձեզ, ապա ո՞վ պիտի անի այդ: Ես տվեցի ձեզ այս բոլոր հրահանգները նրա համար է, որ թարմացնեմ ձեր հիշողությունը և հիշեցնեմ ձեզ, որ Ես Եմը Սուրբ է: ic

(Ես. 63:3. «Իմ ժողովրդի մարդկանցից ոչ մեկն ինձ հետ չէր»: Քանի որ Հունաստանի աղոթքի խմբերը չունեն հոգևոր առաջնորդ (քահանա), որովհետև ոչ մեկը չի ուզում նրանց հովվություն անել, Հիսուս Քրիստոսն Ինքն է գալիս՝ նրանց հովվություն անելու: Բոլոր քահանաները լարվել էին երկու աղոթախմբերի դեմ՝ դրանց անդամներին անվանելով հերետիկոսներ):

Օգոստոսի 8, 1994

Տե՛ս, Աստվա՛ծ իմ,
Դու ինձ ընտրեցիր
Քո սիրով ու բարեհաճությամբ,
որ դառնամ
Քո կենդանի գրատախտակը,
Քո արձագանքն ու Քո քնարը:
Քանի որ ես գիտեմ, իմ Է՛լի,
որ Քո մտքերն իմ մտքերից վեր են
և Քո ճամփաներն
իմ ճամփաներից վեր են,
ինչպես երկինքն է բարձր երկրից,
արի՛ և քննի՛ր ինձ ամբողջությամբ:
Արի՛ և ստուգի՛ր իմ սիրտը,
փորձի՛ր ինձ Քո Կրակով
և ազատորեն նետի՛ր
Քո նետերն ինձ վրա: Այնպե՛ս արա,
որ ես աղետի ճանապարհին չլինեմ:
Առաջնորդի՛ր քայլերս
այն ճանապարհով,
որ տանում է դեպի
Քո Հավիտենական Տիրույթը,
քանի որ ես փափագում եմ
քայլել մի օր
Քո Երկնային Գավիթներում:

[1] Մի դայթակղեք նոր դարձի եկածներին, որ կրկին մեղքի մեջ չընկնեն:

Որքա՜ն եմ ես սիրում քո հոգին... Իմ հաճույքն է ու Իմ ցանկությունը, որ շարունակեմ օգտագործել քեզ՝ որպես Իմ գրատախտակի, Իմ արձագանքի և Իմ Քնարի: Որքան էլ թույլ լինի քո ձայնը, ես կանեմ մնացյալը: Ես խոստանում եմ քեզ, որ Իմ Փառքը ցույց պիտի տամ բոլոր ազգերին քո միջոցով: Մի կո՛ղմ կանգնիր և թո՛ւյլ տուր Ինձ միջամտել:

Ես ասում եմ քեզ. շատերը պիտի ճանաչեն Ինձ այս Պատգամներում՝ որպես Ամենաբարձրյալի... Եվ ես այնպես կանեմ, որ հեթանոսներն անգամ ցանկան Ինձ[1]: Իմ Հոգին, ինչպես մի մեղմ զեփյուռ, կդիպչի նրանց: Ես պիտի գնամ այն երկրները, որոնք երբեք Սուրբ չեն պահել Իմ Անունը: Ես պիտի խոսեմ մարդկանց հետ, ովքեր երբեք չեն կանչել Ինձ կամ խնդրել Իմ
Անունով:

Տե՛ր, բա՛ց արա իմ շրթունքները,
և իմ բերանը պիտի կրկնի
միայն այն բառերը,
որոնք Դու ես ինձ տվել:

Այո՛: Ես հնարավորություն կտամ, որ ողջ աշխարհը լսի Ինձ: Եղի՛ր հնազանդ, և Ես Իմ Կամքը կկատարեմ քո մեջ: Միևնույն ժամանակ Ես կշարունակեմ գաղտնաբար քեզ տալ[2] Իմ Իմաստության ուսուցումները՝ ակնածանքի և երկյուղի մեջ թողնելով փիլիսոփաների միտքը: Ես հպարտներին կվերադարձնեմ այն, ինչի նրանք արժանի են... Այո՛, ես պիտի ապշեցնեմ գիտուններին, և նրանց բոլորին դնեմ այնպիսի խառնաշփոթության մեջ, որ նրանք չտարբերեն իրենց ձախ ձեռքը աջից: Այսօր այդպիսիները հրճվում են իրենց կեղծիքով և իրենց բաբելոնյան աշտարակով: Այդ գիտունները գնել են այս աշխարհը և տեր են կանգնում ամեն ինչին[3]...

Տե՛ր, կարո՞ղ եմ համարձակվել հիշեցնել Քեզ, որ նրանք նույնպես Քո զավակներն են:

Ես դեռևս նրանցից չեմ լսել. «Ուրիշ աստված չկա, Քեզանից բացի, Հա՛յր»:

(Այս պատասխանը ավելի տխրեցրեց իմ հոգին...)

Տե՛ր, Սուրբ Գրքերն ասում են. «Ես Յահվեն եմ, և մեկ ուրիշը չկա: Ես հաստատում եմ լույսը, և Ես ստեղծում եմ խավարը, Ես անում եմ խաղաղությունը և հաստատում եմ չարը, Ես Յահվեն եմ, որ անում եմ այս ամենը»[4]:

---

[1] Նշանակում է հետևել Աստծո ամենամեծ Պատվիրանին:
[2] Աստված նկատի ունի այն, որ երբ Նա գալիս է Ինձ պատգամ տալու, ինձ մոտ ոչ ոք չլինի: Ամեն ինչ արվում է լռության մեջ:
[3] Լսելով Աստծո հիասթափված և դառը տոնը՝ ես զգացի, որ Նա կարող է բարկանալ, և համարձակվեցի ընդհատել Նրան:
[4] Ես. 45:6-7

Տե՛ր,
Դու Տերն ես երկնքի և ամեն ինչի:
Դու Սուրբն ես, և վստահաբար
Դու կարող ես փայլել խավարի վրա,
որ լույս տաս, և Դու հայտնի ես
Քո Անսահման Ողորմությամբ:
Չէ՞ որ ես ինքս զգացել եմ
Քո անսահման Քնքշությունը:
Անկասկած Դու կարող ես
աղետից բարօրություն ստեղծել:

...Իմ նպատակը պիտի իրականանա: Ես անելու եմ այն ամենը, ինչ որ ցանկանում եմ[1]...

Ավելին ի՞նչ կարող էի ես ասել Քեզ կամ անել՝ Քեզ համոզելու համար, Սիրելի՛ս:

Չնայած դու հոգնում ես շատ ճամփորդելուց, ես քեզ կշնորհեմ քո խնդրանքի մի մասը, եթե շարունակես ճամփորդել Ինձ համար՝ վկայելով այն ողջ Գիտելիքը, որը ես տվել եմ քեզ:

Ես կճամփորդեմ Քեզ համար, Տե՛ր: Ես անարժան եմ, բայց ինչպե՞ս ասեմ դա: Ինչպե՞ս կարող եմ Քեզանից մյուս մասն էլ ստանալ:

...Դու չափազանց դյուրաբեկ ես դրա համար...

Ոչ այն դեպքում, երբ Դու իմ մեջ ես և ներկա: Ոչ այն դեպքում, երբ սուրբ Միքայելն իմ կողքին է, և մեր Օրհնյալ Մայրը ծածկում է իմ գլուխն Իր թիկնոցով:

Ուրեմն դու իսկապես վստահում ես Ինձ[2]... Իմ Որդո՛ւ մնացորդ, քո հագուստը պիտի թաթախվի քո արյան մեջ... Սա կփրկի և դարձի կբերի շատերին: Ես շուտով դուրս կհեղեմ Իմ Հոգին նրանց վրա, ինչպես չի պատահել երբևէ նախկինում, և նրանց ստախոս լեզուն Ես կդարձնեմ մի շիտակ լեզու, որը պիտի հայտարարի.

«Ես պատկանում եմ
Ամենաբարձրյալին
և ամենքի Հորը»:

Մեկ ուրիշն[3] իրեն պիտի անվանի Իմ Որդու Անվամբ՝ «Քրիստոնյա», և նրա ճակատին պիտի գրվի Իմ Որդու Նոր Անունը: Ո՛հ, Վասո՛ւլա, գործի՛ դիր մանգաղը և հնձի՛ր: Շտապի՛ր և Իմ Գործի հմայքով գրավված՝ հնձիր: Հնձի՛ր եռանդով Ինձ հետ <u>և երբե՛ք մի տարվիր</u>

[1] Ես. 46:10
[2] Ես զարմանք նկատեցի Յահվեից՝ իմ Տիրոջից
[3] Դա խոսելու մի ձև է և չի նշանակում միայն մի մարդ:

աշխարհով:

Իմ Ձայնը քաղցր է, Իմ Պատկերը՝ կատարյալ: Արի՛, արի՛ քո Հոր Բազուկների մեջ: Հող ու մոխիր, բայց և Իմը՝ հոգով և սրտով:

Արի՛, Պարասկևի[1], Ես կպահպանեմ քո տեսողությունը:

Օգոստոսի 10, 1994

Իմ խաղաղությունը ես տալիս եմ քեզ:

Ես Տերն եմ և հոժարակամ մատակարարում եմ քեզ երկնային կերակուր: Գրի՛ր, աղավնյա՛կս, գրի՛ր այս բառերը Սուրբ Գրքերից:

«Եթե մնաք Իմ մեջ,
և Իմ խոսքերը մնան ձեր մեջ,
ինչ որ ուզենաք,
խնդրեցե՛ք Աստծուց,
և ձեզ կտրվի»[2]:

Լսի՛ր և գրի՛ր. Ողորմությամբ ես խղճացի ձեզ, և այդ է պատճառը, որ ես այստեղ եմ՝ ուսուցանելու համար անուններին և Իմ Օրենքը տալու անօրենների: Ես պիտի շարունակեմ մնել այս սերնդին Իմ Երկնային Հոր ժառանգությամբ: Հացը, որ բուժում է ձեզ, գալիս է վերևից: Ուսուցման Հացը իջնում է երկնքից՝ Իմ Հոր պաշարներից: Ոչ ոք չպետք է ասի. «Ես ոչինչ չունեմ ուտելու»: Ահա Ես առաջարկում եմ այն ձեզ, որպեսզի չդայթակղվեք ուտել, ինչ որ պիղծ է ու մահացու, այն, որ գալիս է աշխարհի արմատից: Իմ Հոգին ձեզ տալիս է Կյանք և խաղաղություն: Ես ձեզ եմ գրում այս մի քանի բառերը Իմ ծաղիկի միջոցով:

Տե՛ր, հույն ուղղափառ կրոնավորներից ոմանք չեն հավատում, որ Դու ես խոսում, որովհետև Դու օգտագործում ես «ծաղիկ» բառը ինձ կանչելու համար:

Գիտեմ, բայց մի՞թե նրանք չեն կարդացել. «... նրանց սերնդի ծաղիկը ոչնչացավ...»[3]

Այդպիսիների համար Ես ասում եմ. «Բացե՛ք ձեր սրտերը, և դուք Լույս կստանաք և կհավատաք»: Հիմա նրանք նման են մի խղճալի բազմության, որը թափառում է ստվերների ու մթության մեջ: Իմ

[1] Պարասկևի իմ երկրորդ անունն է: Պարասկևի հունարեն նշանակում է ուրբաթ: Այս անունը, որը Հունաստանում տարածված է, ավելացվել է մորս կողմից ի՝ պատիվ սուրբ Պարասկևիի, որը աչքերը բուժող սուրբն է: Երբ ես ծնվել եմ, իմ կոպերը իրար կպած են եղել: Մայրս վստահ չի եղել, թե արդյոք ես աչքեր ունեի, թե ոչ: Նա աղոթել է սուրբ Պարասկևիին՝ խոստանալով ինձ անվանել նրա անվամբ: Երեք օրից հետո աչքերս բացվել են:

[2] Հովհ. 15:7

[3] Իմաստ. 18:12

Ողորմությամբ ես անտեսեցի նրանց սխալներից շատերը, որ ժամանակ տամ նրանց ապաշխարելու:

Արի՛, ընկե՛րս, ես չեմ մոռացել, թե դու ինչ առաջարկեցիր Ինձ այդ օրը: Օրերը մոտենում են այն պահին, երբ ես կարող եմ օգտագործել քո առաջարկը[1]: Մինչ այդ ես պիտի պատրաստեմ քեզ: Իմ երևումները կշարունակվեն քեզ վրա, որպեսզի խրախուսեմ քեզ: Ա՜խ, զավա՛կս, ի՞նչ չեմ անի ես քեզ համար:

~ Իր Սիրո Քնքշությամբ Իմ Հայրը ծածկեց քո ճանապարհը չափյուղաներով: Նա Թագավոր է, բայց այնպիսի մայրական սիրով, Դատավոր, բայց այնքան քնքուշ և սիրող, Ալֆան և Օմեգան, բայց և այնքան խոնարհ: Արի՛, ես և դու, մե՞նք, մե՞զ:

Այո՛:

Խոսի՛ր Իմ Անունից, սա գոհացնում և պատվում է Ինձ:

Տե՛ր, ես սիրում եմ Քեզ, և Քո Ներկայության յուրաքանչյուր րոպեն ինձ հրճվանք է պատճառում:

Ինձ նույնպես, ես ուրախանում եմ քեզ հետ այս ձևով խոսելիս:

Դա միշտ այդպես է, Տե՛ր իմ, երբ և ուր էլ որ լինեմ: Այս պարգևը միշտ ինձ հետ է, այնպես չէ՞:

Այո՛: Սա այն է, ինչ ես և Հայրը տվեցինք քեզ: Ա՜հ, Վասո՛ւլա, մի օր դու կհայտնվես Իմ Հոր Գավիթներում Ինձ հետ միասին: Սակայն ես դեռ չեմ քաղի Իմ ծաղիկը, մինչև Իմ Ծրագիրը չավարտվի քեզ համար: Մինչ այդ շարունակի՛ր ըմպել Իմ Արյունը և ճաշակել Իմ Մարմինը:

Սուրբը քեզ հետ է:

Օգոստոսի 18, 1994

(Մեր Օրհնյալ Մայրը)

Աղջի՛կս, Իմ Սիրտը հրճվում է, երբ դու միանում ես սրբերի աղոթքներին... Սիրելի՛ զավակս, դու մարտնչում ես[2] նույն ճակատամարտում, ինչ որ բոլոր սրբերը, որոնք գտնվում են երկնքում: Ես նույնպես ներկա եմ, ուստի թող քո հնազանդությունը Աստծո հանդեպ անսահման լինի:

Տե՛ս, ընդունի՛ր այն ամենը, ինչ Աստված տալիս է քեզ: Նա Իր Ձեռքով, Իր վեհանձն նպատակի համար, քեզ տալիս է հնարավորություն, ազատություն ու զորություն՝ գործելու Եկեղեցու վերականգնման համար: Եթե մնաս մաքուր ու անբիծ՝ հայելու պես, դու կարտացոլես Աստծո Պատկերը, և Նրա Գործերը կշարունակեն փայլել քեզ վրա, որպեսզի

[1] Կարդա՝ օգոստ. 8, 1994թվի պատգամը:
[2] Հոգևոր կռիվը աղոթքի, սիրո, Աստծուն հնազանդվելու միջոցով:

յուրաքանչյուր ազգ կարդա Կյանքի Խոսքը՝ սրտաբաց ողջունելով Քրիստոսին:

Տակավին շատ դարմանումներ պետք է արվեն, սակայն վստահի՛ր Աստծուն, քանի որ Նա Ինքն է քո Սուրբ Ուղեկիցը: Քանի որ դու հարուցվել ես (հարություն ես առել), որ լինես Քրիստոսի՝ Իմ Որդու հետ, դու պետք է ապրես մի ճշմարիտ կյանք Աստծո մեջ: Թող քո յուրաքանչյուր մտածում լինի երկնային գործերի մասին: Սովորեցրո՛ւ մյուսներին մտածել Աստծո մասին, խոսել Աստծո մասին և ցանկալ[1] Աստծուն: Այդ ժամանակ նրանք կհասկանան, որ Աստված Կյանք է, Ուրախություն և Երկնային Խաղաղություն: Տե՛ս, կգան օրերը, երբ այս հատուկ չնորհը, որն Աստված առաջարկում է աշխարհին, վերջ կգտնի:

Վասո՛ւլա, սովորի՛ր և ասա՛ Սուրբ Գրքերից այս խոսքերը նրանց, ովքեր ասում են. «Մեզ ոչ մի եկեղեցական օրենքով չի պարտադրվում լսել որևէ մարգարեություն...»[2]: Ասա՛ նրանց. Սուրբ Գրքերը երբեք չեն ստում, նրանք ասում են. «Վստա՛հ եղեք, որ դուք երբեք չեք հրաժարվի լսելուց, երբ Նա խոսում է: Եթե երկրի վրա ապրող մարդիկ հրաժարվեցին լսել իրենց տրված նախազգուշացումը և չկարողացան ազատվել իրենց պատժից, ապա մենք ինչպե՞ս պիտի խուսափենք դրանից, եթե մերժենք լսել այն ձայնը, որը մեզ նախազգուշացնում է Երկնքից: Այն ժամանակ Նրա Ձայնը ցնցեց երկիրը, բայց հիմա Նա մեզ տալիս է այս խոստումը. Ես պիտի ցնցեմ երկիրը մեկ անգամ ևս, և ոչ միայն երկիրը, այլև երկինքը նույնպես»[3]:

Այս անաստված սերնդի համար երկնքից վերապահված պատիժը մոտ է: Ես պիտի շարունակեմ կանգնած մնալ ձեր բոլորի կողքին և խրախուսել ձեզ, որ աղոթեք, պահեցողություն անեք և ապրեք ճշմարիտ կյանք Աստծո մեջ: Եթե դուք Ինձ թույլ տաք, Ես պիտի շարունակեմ ձեզ ավելի մոտեցնել Աստծուն:

Ես՝ «i Panayia»[4], օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին և ասում եմ ձեզ. Իմ փոքրիկնե՛ր, Իմ թիկնոցը ես դրել եմ ձեզ վրա, որ ծածկեմ ձեզ չարից, որն առյուծի պես անվերջ թափառում է ձեր շուրջը:

Օգոստոսի 19, 1994

Իմ սիրտը պատրաստ է, Տե՛ր,
ծառայելու և լինելու
Քո հրամանի տակ:
Տան Գավիթներում
Քո Վսեմության, Դու ինձ
թույլ տվեցիր մասնակից դառնալ
Քո ուսուցումներին:
Զնայած մեր ծնկները

[1] Այսինքն՝ հետևել և ապրել Աստծո ամենամեծ Պատվիրանը:
[2] Մեր Օրհնյալ Մայրը նկատի ունի մեր ժամանակներում տրված մարգարեությունները:
[3] Եբր. 12:25-26
[4] Օրհնյալ Մայր (հունարեն): Բառացի թարգմանությունը՝ Ամենասուրբը:

Թույլ են սննդի պակասից[1],
Դու, Աստվա՛ծ իմ,
Քո անսահման Ողորմությամբ
խղճացիր մեզ:
Դու եկար մեզ օգնության.
«Ես պահել եմ քեզ համար,
սերո՛ւնդ, գանձեր և հարստություն:
Ես գալիս եմ սովի ժամանակ»:
Ահա թե ինչ ես փորձում Դու ասել
մեզ այս ամբողջ ժամանակ:
Ես չնորհակալություն եմ
հայտնում Քեզ, իմ ողջ սրտով
չնորհակալ եմ Քեզնից:

Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը:

Իմ Սրտում շատ գանձեր կան, և Ես հիմա քեզ ցույց տվեցի այդ անսպառ հարստությունը: Ես սիրում եմ քեզ, երբեք չկասկածես Իմ Սիրուն: Ես մի անգամ ասել եմ, որ այս Գանձը պիտի վերապահվի ձեր ժամանակների համար, այս ժամանակների համար, երբ մարդկությունը իր ամենացածր և չափազանց ողբալի վիճակում է գտնվում: Գազանին թույլ պիտի տրվի գայթակղեցնել ձեզ բոլորիդ: Ահա թե ինչու Ես ձեզ խնդրում եմ ավելի շատ աղոթել, պահեցողություն անել և հետևել Իմ օրենքներին:

Բացե՛ք ձեր սիրտն Իմ առջև և ուրացե՛ք ձեր անձերը: Իսկ դու, աղջի՛կս, մնա՛ Իմ մեջ: Ընդունի՛ր քեզ մեղադրողներին, և Ես պիտի բարձրացնեմ քո հոգին դեպի Ինձ: Երբեք մի՛ դատիր, երբե՛ք մի ողբա նյութական առարկաների վրա, որոնք տևական չեն, եղի՛ր բարի և սուրբ: Ես քեզ պիտի սովորեցնեմ կատարյալ լինել, եթե դու Ինձ թույլ տաս, Իմ Վասո՛ւլա: Շարունակի՛ր հաղորդել և վկայել Իմ Սրտի գանձերը նրանց, ում մոտ որ ուղարկում եմ քեզ, և մի՛ վախեցիր քեզ մեղադրողներից: Թո՛ղ նրանց Ինձ, զավա՛կս: Տեսնո՞ւմ ես, դու որքան պետք է կատարելագործվես: Այն ձևով, որ ապրում ես, կկարողանաս գրավել նաև ուրիշներին, որ ճանաչեն Ինձ:

(Հետո Նա խոսեց Հռոդոսի աղոթախմբի համար):

Ես ուզում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը միշտ հիշի, որ Ես նրանց հարություն եմ տվել չնորհով: Նրանցից ոչ մեկն արժանի չէր Իմ ոչ մի Շնորհին: Ահա թե ինչու եմ Ես ուզում, որ նրանք կարդան Սուրբ Գրքերից մաքսավորի և փարիսեցու մասին առակը, որպեսզի նրանց եռանդն ու խանդավառությունը չփոխվեն մոլեռանդության: Իմացե՛ք, որ ոչ մեկը բարի չէ, Աստծուց բացի:

Ձեզանից ոչ մեկը դեռևս կատարյալ չէ: Դուք դեռևս շատ բան ունեք սովորելու: Դուք պետք է սովորեք Հոր Համբերատարությունը, սերն ու խոնարհությունը, որ Ես ցույց եմ տալիս ձեզ բոլորիդ, Իմ Սուրբ Հոգու բացարձակ սրբությունն ու քնքշությունը:

Առայժմ այսքանը, աղջի՛կս: Օրհնի՛ր Ինձ և սիրի՛ր Ինձ: Ես՝ Հիսուս,

[1] Հոգևորապես թերսնված:

օրհնում եմ քեզ, Իմ աշակե՛րտ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 23, 1994

Տե՞ր իմ:

Ես եմ: Փոքրի՛կս, Իմ խաղաղությունը քեզ:

Ես եկել եմ քեզ մոտ, որ քո սրտում սփոփանք գտնեմ: Ես մի վերք ունեմ Իմ Սրտում, որն անտանելի է... Այսօր Գազանի հետևորդները պղծում են Ինձ Իմ Սիրո Խորհրդի մեջ: Սիրուն դավաճանում են, թքում վրան և ոտնակոխ անում: Հիմա Ես նրանց չար ձեռքերում եմ: Գիտե՞ս, թե դա ինչ է նշանակում: Իմ Մշտնջենական Զոհաբերությունը նրանց ձեռքերում է: Նրանք քարկոծում են Ինձ և իրենց մեջ երդվում վերացնել Ինձ Իմ Սուրբ Տապանակից:

Տե՛ս, մոտ է այն օրը, երբ նրանք պաշտոնապես կհայտարարեն, որ Ինձ պետք է վերացնել Իմ Տապանակի միջից և Իմ տեղում կանգնեցնել մի դատարկ ծնծղա... Եվ Դանիելի մարգարեությունը կիրականանա:

Աղջի՛կս, երբեք չթուլանաս քո հավատի և հավատարմության մեջ, երբեք չքնես, երբեք չկասկածես: Հանգստացրո՛ւ Ինձ, սիրելի՛ս, հանգստացրո՛ւ Ինձ... ic

Սերո՛ւնդ: Դու չես կարող ոչ ասել,
երբեք չես կարող
ասել քո Ազատարարին.
«Ես միայնակ ընկած եմ
իմ հողի վրա, և ոչ մեկը չկա,
որ ինձ վեր բարձրացնի»,
երբ Նրա Օրը գա:
Երբ Կրակով դու հարված կստանաս,
սերո՛ւնդ, այրվելով ու վառվելով,
և քո պարտեզները կթոշնեն,
ինչպես նաև քո խաղողի այգիները,
մի՛ ասա քո Ազատարարին.
«Խմելու և ուտելու բան բեր»,
քանի որ հենց հիմա է,
որ դու պետք է ապաշխարես
և դադարես հրահրելուց,
ինչ որ չար է:
Իսկ ինչ վերաբերում է
այն անաստվածներին,
ովքեր պղծում են Մեր Տիրոջ
Մշտնջենական Զոհաբերությունը
և Մահը դարձրել են իրենց ընկերը,
Կրակը կատաղի կդառնա
նրանց վրա ավելի, քան երբևէ,

մինչև որ Տերը նրանցից չլսի
ապաշխարության կանչը:

Հոկտեմբերի 3, 1994

Իմ Զարչարանքների՛ Վասուլա, ապրի՛ր Ինձ համար: Սա հիմա իսկապես պետք է լինի քո կյանքի նպատակը: Ես քո թշնամիներին, որոնք նաև Իմ թշնամիներն են, պիտի մոխրացնեմ գետնի վրա: Օ՜, հող[1], որ սակայն հոգի ունես, ինչո՞ւ ես Ինձ այդքան շատ վշտացնում: Գուցե այլևս չե՞ս ցանկանում քո ժառանգությունը: Ա՜հ... Վասո՛ւլա, որքա՜ն եմ Ես վշտանում այս սերնդի համար: Ես երկարում եմ Իմ Ձեռքը նրանց իրենց անապատի ու ամայության մեջ, Ես գալիս եմ դեպի նրանց չորացած հոգիները, որ կենդանացնեմ, սակայն, թվում է, նրանք երբեք չեն տեսնում Իմ փրկարար Ձեռքը...

Արի՛, քնքո՛ւշ աղջիկ, մարգարեացի՛ր Իմ Անվամբ և ասա՛ Իմ նոր ուխտի Իմ ժողովրդին, որ գալիս են այն օրերը, երբ Մեր Երկու Սրտերը նորից պիտի խոցվեն: Իմ թշնամիները պիտի գրոհեն Իմ Սրբարանի, Իմ Խորանի և Իմ Տապանակի վրա, որպեսզի կանգնեցնեն իրենց ավերածության պղծությունը: Մեծ վշտի ու տառապանքների ժամանակներ են լինելու, որոնց նմանը չի եղել ազգերի գոյության օրից ի վեր: Բռնությամբ և դավաճանությամբ նրանք պիտի ներխուժեն Իմ Տունը:

Ապստամբությունն արդեն սկսել է գործել, սակայն գաղտնի կերպով, և նա, ով հետ է պահում այն, նախ պետք է հեռացվի, նախքան Ապստամբը բացահայտորեն կպղծի Իմ Սրբարանը:

Օ՜, ձեզանից որքա՜ն շատերը կընկնեն նրա կեղծ գովաբանություններից: Սակայն Իմ յուրայինները տեղի չեն տա: Դրա փոխարեն նրանք իրենց կյանքը կտան Իմ գործի համար: Արցունքն Աչքերիս՝ Ես ասում եմ. «Իմ ժողովո՛ւրդ, դու կրակով պիտի փորձության ենթարկվես այդ զավթիչի կողմից...»: Նրա պաշարման աշխատանքներն արդեն տարածվում են աշխարհում[2]: Առյուծը դուրս է եկել իր որջից...

Լսե՛ք այս անգամ և հասկացեք. զավթիչը գիտնական է, այն գիտնականներից, որոնք հետևում են Գազանին և ժխտում Իմ Աստվածությունը, Իմ Հարությունը և Իմ Ավանդությունները: Նրանց մասին Սուրբ Գրքերն ասում են. «Հպարտությունից ուռած՝ դուք ասացիք՝ Ես աստված եմ: Ես նստած եմ Աստծո Գահին՝ շրջապատված ծովերով: Չնայած դու մարդ ես և ոչ թե աստված, դու ինքդ քեզ համարում ես Աստծուն հավասար...»[3]:

Այսօր, աղջի՛կս, Ես գտա մի հաստատուն և ամբողջական սիրտ, մի սիրտ, որտեղ Ես կարող եմ գրել այս գաղտնիքները, որոնք կնքված էին կնիքով, քանի որ դրանք հիմա իսկապես կատարվելու են: Ուստի թո՛ւյլ տուր, որ Իմ Ձեռքը փորագրի այս բառերը քո սրտի վրա, աղջի՛կս:

---

[1] Հիսուս տառապանքով կանչեց աշխարհին:
[2] Մշտական քարոզչություն զանազան թերթերում, թե Պապը չափազանց վատառողջ է (ժամանակից շուտ կենդանի թաղելով նրան): Սա մի նենգ միջոց է և նախապատրաստություն՝ թշնամու ներխուժմանը ճանապարհ բացելու համար:
[3] Եզեկ. 28:1-2

Երբ նա, ով ջախջախում է սուրբ մարդկանց զորությունը, կնստի Իմ Գահին Իմ Ավանդությունների այդ առևտրականների հետ միասին, նրա ներկայությունը պիտի բարձրացվի որպես մի Աստված Իմ Սրբարանի կենտրոնում: Ես նախազգուշացրել էի ձեզ, և դեռևս նախազգուշացնում եմ, սակայն ձեզանից շատերը լսում են առանց հասկանալու... Այսօր դուք կառուցում եք, սակայն Ես ասում եմ ձեզ, դուք չեք կարողանա ավարտել ձեր աշխատանքը... Բացե՛ք ձեր աչքերը դուք բոլորդ և նայե՛ք Իմ Տան մեջ նյութվող դավին... Դավը և դավաճանները գնում են համատեղ: Ինձ հետ սեղան նստող մեկը ըմբոստանում է Իմ և Իմ Թագավորության բոլոր զորությունների դեմ:

Ես սա ասում եմ ձեզ հիմա, որպեսզի, երբ ժամանակը գա, դուք ամբողջապես հասկանաք Իմ խոսքերը և հավատաք, որ ամբողջ ժամանակ Ես էի, Աստվածս, այս կանչերի Հեղինակը:

Ես հիմա կասեմ ձեզ մի բան, որը գաղտնի է պահվել ձեզանից: Ես ձեզ նոր բաներ կհայտնեմ, որոնք ծածուկ և անծանոթ են ձեզ համար: Ձեզանից շատերը կկորցնեն հավատը և պիտի պատվեն այդ առևտրականին, որովհետև նա պիտի դիմի շողոքորթության: Եվ նա մի օտար աստծո ժողովրդի հետ՝ ձեր օրերի գիտնականների հետ միասին, ովքեր մերժում են Իմ Աստվա ծությունը, Իմ Հարությունը և Իմ Ավանդությունները, ոտնակոխ պիտի անի Իմ Զոհաբերությունը: Քանի որ մարդու սիրտը թույլ է, շատերը պիտի ընդունեն նրան, որովհետև նա պիտի պատվի նրանց մեծ պատիվներով, երբ նրանց սիրտը ընդունի իրեն:

Իմ Եկեղեցին ստիպված պիտի լինի ենթարկվել այն բոլոր տառապանքներին ու դավաճանություններին, որոնց Ես ինքս ենթարկվեցի, բայց Սուրբ Գրքերը մեկ անգամ ևս պետք է կատարվեն, երբ ասում են. «Ես պիտի հարվածեմ հովվին, իսկ ոչխարները պիտի ցրվեն»[1]: Այնուամենայնիվ, ենթարկվե՛ք այս հովվին, ինչ էլ որ պատահի, հավատարիմ մնացե՛ք նրան և ուրիշ ոչ մեկին: Ձեր հովվին պիտի հարվածեն...

Եվ Իմ ժողովրդի ողբը պիտի խոցի երկինքը: Երբ Իմ քաղաքից ոչինչ չի մնա, քարերից բացի, երկիրը պիտի ճեղքվի, մասնատվի ու տարուբերվի:

Մինչ այս ամենը տեղի կունենա ձեր աչքերի առաջ, մի կայծ կբռնկվի արևելքից: Մի հավատարիմ ձեռք պիտի երկարի արևելքից, որ պաշտպանի Իմ Անունը, Իմ Պատիվը և Իմ Զոհաբերությունը: Այն ժամանակ, երբ Գազանի բերանից հայհոյանքներ դուրս կթափվեն, մի սիրտ պիտի մատուցվի արևելքից՝ փրկելու համար այս Եղբորը, որը պիտի լինի Զարի որսը: Եվ մինչ բանակցություններն ու պայմանագրերը կխախտվեն, մարգարեները կվտարվեն ու կսպանվեն, մի վսեմ ձայն պիտի լսվի արևելքից. «Ո՛վ Անդիմադրելիդ, մեզ արժանի՛ դարձրու Քո Անվանը: Շնորհի՛ր մեզ մեկ լինել Քո Անվամբ...»:

- Սատանան գնում է դեպի Իմ Գահը: Կանչե՛ք ձեր համայնքներին և ասե՛ք նրանց, որ Ես՝ Հիսուս, կդարմանեմ ձեր վերքերը, երբ ժամանակը գա:

Մեր Երկու Սրտերը պիտի լինեն ձեր միակ ապաստանը ձեր դժբախտության օրերին: Դուք, որ այնքան սիրված եք Իմ կողմից, լսե՛ք և

[1] Զաք. 13:7

հասկացե՛ք. Ես ուզում եմ, որ դուք խիզախ լինեք: Մի՛ վախեցեք այս մեծ տառապանքի օրերին: Շարունակե՛ք պաշտպանել Իմ Խոսքը, Իմ Ավանդությունները և մի՛ ընդունեք պաճուճավոր հավելումներ և մարդկային ուսմունքներ, որոնք Իմ Թշնամին իր դրչով պիտի ավելացնի և ստորագրի: Նրա ստորագրությունը լինելու է արյամբ՝ վերցված մանուկներից, որոնք օգտագործվում են սպանության իրենց նախաձեռնությունների համար, նախաձեռնություններ, որոնք առաջ պիտի տանեն նրան[1]...

Եվ մինչ, Իմ ընկերնե՛ր, դուք բոլորդ սպասելիս կլինեք Արշալույսին, մինչ բանակցություններն ու պայմանագրերը կխախտվեն, և Ապստամբությունը կհասնի իր գագաթնակետին, բարձրացրե՛ք ձեր աչքերը և նայե՛ք Արևելք, սպասե՛ք Արշալույսին: Սպասե՛ք Լույսին, որը բարձրանալու է արևելքից: Սպասե՛ք Իմ Ծրագրի ավարտին: Մինչ ծարավ մարդը՝ կոկորդը չորացած, ջուր պիտի փնտրի, Ես Իմ ողջ Շուքով և Գերագույն Իշխանությամբ պիտի իջնեմ ձեզ վրա, ինչպես մի Գետ՝ Իմ Նոր Անվամբ:

ΙΧΘΥΣ

Հոկտեմբերի 5, 1994

Իմ Վասո՛ւլա, հետևի՛ր Իմ օրենքներին: Իմ օրենքները նրա համար են, որ Իմ դանձերը երևան հանեն ողջ մարդկությանը, և թույլ տան Իմ Հոգուն լինել ձեր միակ Առաջնորդը: Զկորցնե՛ս արիությունդ, Իմ Սերը պիտի պահի քեզ: Լսի՛ր և գրիր.

Իմ լուրջ ցանկությունն է, որ արևմուտքն ու արևելքը հանդիպեն: Ես կարիք ունեմ, որ Իմ Եկեղեցու այդ երկու այուները[2] հանդիպեն և համախմբեն Իմ Եկեղեցին: Իմ Եկեղեցին չի կարող հաստատուն կանգնել միայն մեկ այունով: Ես հանձնարարել եմ նրանց պահպանել Իմ Եկեղեցին: Սակայն հազիվ էի Ես վերադարձել Հոր մոտ, որ ձեր բաժանումը տեղի ունեցավ, և Իմ Մարմինը պատառոտվեց այն արարածների ձեռքով, որոնց Իմ Հայրն էր արարել: Այդ ժամանակից սկսած՝ Ես ցնցված եմ սարսափելի տեսարաններից:

Այսօր ամեն մի նրբանկատություն, որ իմ արարածները ցուցաբերում են Իմ երերացող Տունը վերականգնելու համար, խորապես հուզում է Ինձ: Ողջ երկինքն ուրախանում է, երբ որևէ քայլ է արվում հանուն միասնության: Ամեն մի աղոթք, որն արվում է Իմ Մարմնի վերականգնման համար, Իմ Հոր զայրույթը նվազեցնում է: Որևէ հավաքույթում, որն արվում է Իմ Անունով միասնության համար, Իմ օրհնությունները հեղվում են նրանց վրա, ովքեր մասնակցում են դրան:

---

[1] «Նրա ստորագրությունը կլինի արյամբ»: Քանի որ շատ ազգեր օրինականացրել են արհեստական վիժումի մասին օրենքը, Սատանայի համար ավելի հեշտ է ուժ ձեռք բերել: Արհեստական վիժումը սպանության թաքնված ձև է, պաշտամունք է Սատանային, քանի որ այն մարդկային զոհաբերություն է: Թշնամուն հզորացնելու և առաջ տանելու համար Սատա- նան պահանջել է մարդկային զոհաբերության այս թաքնված ձևը:

[2] Արևմուտքը և արևելքը:

Իմ Աչքերը հսկում են նրանց, ովքեր սիրում են Ինձ, և ովքեր, չնայած իրենց թերություններին, կատարում են Իմ բուռն ցանկությունները: Ուրեմն համախմբվե՛ք և միասի՛ն սեղան պատրաստեք՝ Ինձ պատվելու համար: Դուք գիտեք Իմ Բաժակի և Իմ Հացի համը: Դուք երկուսդ էլ ճաշակել եք Իմ Կերակուրը: Թեև երրորդ լեզուն դեռևս ամբողջապես չի ճանաչում Ինձ, բայց դուք, դուք պահպանել եք Իմ Ավանդությունը, դուք անբեր ու հաստատուն եք եղել[1]: Մի՞թե չեք լսել. «Եղբայրներն ու դաշնակիցները փրկում են նեղության ժամանակ, բայց այս երկուսից առավել՝ ողորմածությունը»[2]:

Արագացրե՛ք Իմ Փառքի օրը: Արևելքից Ես շուտով դուրս կբերեմ մի ողորմած սիրտ, որն իր հավատարմությամբ խաղաղության ուխտ կկնքի արևմուտքի հետ: Իմ Գերագույն Իշխանությունը կիսվել էր երկու մասի, իսկ դրանից հետո վերածվեց փշուրների... Որքա՜ն փառավոր էիք դուք ձեր ավելի վաղ օրերին:

Եկե՛ք և վերակառուցե՛ք Իմ Տունը՝ դարձնելով այն Մեկ՝ միավորելով Զատկի ամսաթվերը... Երկու քույրեր կան, որոնցով Իմ Հոգին հրճվում է և սիրում նրանց, թեև նրանք շրջապատված են իրենց բազմաթիվ եղբայրներով, որոնք չեն լսում նրանց՝ հակառակ այն բանի, որ նրանց Հոգին[3] երբեք այնքան մոտ չի եղել մահվան, բայց և այնպես, նրանք չեն ուզում լսել: Ուստի Ես Ինքս այդ երկուսին պիտի միացնեմ, որ պատվեն Իմ Անունը և արտասանեն Իմ Անունը մի զոհասեղանի շուրջ, և դրանից անմիջապես հետո եղբայրները բոլորը միասին կավարտեն արարողությունը:

Ես տհաճությամբ եմ նայել Իմ Տան մեջ այդ արարքներին և ասում եմ ձեզ. մի դավաճան պիտի կաշկանդի Իմ Օրենքն ու Իմ Ավանդությունը և պիտի նվաճի ու իրեն ենթարկի այն այունը, որը պատվում էր Ինձ արևմուտքում: Պիտի տեղի ունենա մի մարդահամար՝ առանց Ինձ հետ խորհրդակցելու: Նրանց սրտերը տրամադրված են հեռացնելու այս այունը, նախքան Ես կմիացնեմ Արևելքի Եկեղեցու այունը և կամրապնդեմ Իմ երեքացող Տունը: Նրանք որոշել են ժառանգել այն, ինչ իրենց չի պատկանում: Նրանք ինչպե՞ս կարող են մոռանալ, որ Ես քննում եմ յուրաքանչյուր սիրտ՝ իմանալու համար, թե ինչ է նա մտածում: Իմ Հոգին ցանկանում է միավորել ձեզ, որպեսզի Իմ ժողովուրդը, որն այսօր քայլում է խավարում, տեսնի Իմ Լույսը, և մահվան հովտում պառկածները հարություն առնեն:

Հոկտեմբերի 6, 1994

Արդյոք ես որևէ մի լավ բան անո՞ւմ եմ: Ես ջերմեռա՞նդ եմ Քո հանդեպ, Տե՛ր իմ:

(Ես շոյեցի Նրա մազերը Պատանքի նկարի վրա, համբուրեցի Նրա մազերը և մտածում էի՝ արդյոք այս բաները վիրավորե՞ց Նրան):

---

[1] Հաստատուն՝ Ավանդության մեջ:
[2] Սիրաք 40:24
[3] Եղբայրների Հոգին:

Արդյոք ես վիրավորո՞ւմ եմ Քեզ:

Ո՛չ: Ինձ դուր է գալիս դա[1], Վասո՛ւլա... Ա՜հ, Վասո՛ւլա, որքա՞ն ժամանակ է պետք, որ դու հասկանաս Ինձ[2]: Իմ Սերն Անսահման է... Լսի՛ր, զավա՛կս, ամեն ինչ, որ դու անում ես Իմ Շահերի համար, Իմ Փառքի համար է: Արա՛, ինչ կարող ես, իսկ Ես կանեմ մնացյալը: Երբեք չվախենաս: Ես գիտեմ, թե դու որքան կարող ես տալ, ուստի ինչ էլ որ պակասի, Ես կտամ և կլրացնեմ մնացածը: Ես և դու, մենք, մեզ, հիշո՞ւմ ես: Ուրեմն եղի՛ր խաղաղության մեջ:

Սերը քեզ հետ է: ic

Հոկտեմբերի 9, 1994

Տե՛ր, ես վստահում եմ Քեզ:
Դու իմ Խորհրդատուն ես.
ի՜նչ մեծ պարգև:
Ի՜նչ մեծ պարգև է
կարողանալ ծառայել Թագավորին:
Բա՛ց արա սիրտս,
որ լսեմ Քո գիտելիքը,
որպեսզի հայտնի դարձնեմ
Քո ուսուցումները բոլորին:

Վասո՛ւլա, խաղաղություն քեզ: Մի՞թե Ես քեզ հետ հարյուր նոթատետրից ավելի չեմ գրել[3] բոլորիդ համար, որ ձեզ սովորեցնեմ Իմ առողջ գիտելիքները: Դու ծառայելու ես Ինձ Իմ Տան մեջ: Ես քեզ հուսախաբ չեմ անի: Ես քեզ մոտ կուղարկեմ Իմ Բարեխոսին, և Նա կհիշեցնի քեզ այն ամենը, ինչ Ես ուսուցանել եմ քեզ[4]: Ես պիտի շարունակեմ օգտագործել քեզ՝ մինչև վերջ, որպես Իմ խոսափողի: Փառաբանի՛ր քո Սրբին: Թող քո բերանը լինի թրի պես և ճեղքելով բաց անի մարդկության սրտերը... Այս ժամանակներում Ես կարիք ունեմ հետևորդների, իսկ նրանք այնքան քիչ են:

Սրբապղծություններն ավելանում են, աղջի՛կս, և Իմ ժողովուրդը ավելի ու ավելի քիչ է կարևորություն տալիս Իմ Սուրբ Հաղորդությանը: Աղոթի՛ր Հորը, որ Նա Իր չնորհները թափի այս սերնդի վրա: Չնայած շատերն են իրենց թիկունքը շրջել դեպի Ինձ, Իմ Ձայնը կարող է նրանց ետ բերել Ինձ մոտ, ուստի շարունակիր լինել Իմ Արձագանքը... Իմ գառները կարիք ունեն լսելու Հովվի կանչը, որպեսզի դեպի հոտ վերադառնան:

~ Ես տալիս եմ քեզ Իմ հրամանը. հետ մի՛ պահիր Իմ կանչերը, քանի որ Իմ Շահերը քո շահերից առաջ են: Թո՛ւյլ տուր Ինձ ոռոգել այս

[1] Նա տեսավ իմ տատանումը:
[2] Հիսուսն ասաց սա մեծ հումորով:
[3] Սա 74-րդ նոթատետրն է՝ առանց հաշվելու մյուս 74 նոթատետրերը, որոնք իմ անձնական պատգամներն են, և շուրջ հինգ այլ նոթատետրեր, որոնք իմ հրեշտակի պատգամներն են:
[4] Նա ասում էր այս ամենը իմ հանդիպումից անմիջապես առաջ:

անապատը, նախքան Իմ Օրը գալը: Թո՛ւյլ տուր Ինձ սրբագործել Իմ որդիներին ու դուստրերին: Ես բացել եմ երկնքի պահեստները Իմ Երկնային Մանանան ձեզ վրա առատորեն հեղելու համար: Ես երդվել եմ ոչ մեկին չթողնել աղքատ կամ քաղցած, քանի որ Իմ Օրհնությունները հարստություն են, Իմ Սերը՝ բավարարող, իսկ Իմ Հոգու Շունչը՝ բժշկող:

Բա՛ց պահիր Իմ դարպասները՝ ցույց տալով Ինձ հնազանդություն և հավատարմություն, և շատերը, որ ընկել են, պիտի բարձրանան ու պիտի գնան Իմ Հոգու հետ՝ հռչակելով Իմ Ողորմությունը: Ե՛կ ու վերցրո՛ւ Իմ Սրտից: Այստեղ[1] է գտնվում Իմ ողջ Հարստությունը: Քո թուլությունն անասելի է, բայց ի՞նչ ուրախություն, քանի որ Ես Թագավոր եմ քո թուլության մեջ: Իմ Հոգին հիմա պիտի առաջնորդի քո քայլերը: Իմացի՛ր, թե ինչպես եմ Ես գործում:

~ Օրհնյալ լինես դու, որ կրում ես Իմ Խոսքը: ic

Հոկտեմբերի 13, 1994

Ահա այստեղ եմ ես,
Տե՛ր, պատրաստ Քեզ ծառայելու,
որքան որ կարող եմ,
պատվելով և սիրելով:

Խաղաղություն քեզ, հո՛գի: Իմ Վասո՛ւլա, Ես միշտ քեզ հնարավորություններ պիտի տամ, որ հաղորդես Իմ Պատգամները՝ անկախ նրանից, թե որքան են քեզ[2]... կամ ավելի ճիշտ մեզ հալածողները փորձում կանգնեցնել քեզ: Նրանք երբեք չեն հասնելու իրենց նպատակին... Ես Երկնքի և Երկրի Տիրակալն եմ...

Իմ Հոգո՛ւ օրհնյալ, թո՛ւյլ տուր Ինձ հիմա նորից օգտագործել քո ձեռքը: Ես պիտի շարունակեմ խոսել ազգերի հետ քո բերանով, և քեզ խրախուսելու համար Ես ժամանակ առ ժամանակ ցույց պիտի տամ նրանց Իմ Սուրբ Դեմքը: Եվ քեզ վրա նույնպես Ես ցույց պիտի տամ քո հասարակությանը քո փառավոր մարմինը: Այս պարգևները տրվում են քեզ Իմ Հոր կողմից, որը սիրում է քեզ՝ Ինձ սիրելու համար: Ես քո հասարակությանը ցույց պիտի տամ քո փառավոր մարմնի պայծառությունը[3], այն մարմնի, որը անեղծ է... Թո՛ւյլ տուր Ինձ սրբագործել քեզ, որպեսզի քեզ ցույց տամ Իմ Ճանապարհը դեպի Իմ Թագավորությունը[4]:

Ես պիտի շարունակեմ բժշկել ձեր հիվանդներին, և Իմ Անունը պիտի գովաբանվի: Լսի՛ր Ինձ. Իմ Անունը փառավորելու համար՝ Ես հաճախ պիտի հայտնվեմ քո փոխարեն՝ որպես հիշեցում Իմ Հրաշքների և Իմ իրական Ներկայության: Ես պի~ տի երևամ քեզ վրա, որպեսզի բոլորին

[1] Հիսուսն ասաց սա՝ ցույց տալով Իր Սիրտը:
[2] Տերը տատանվեց այստեղ, հետո ասաց այն, ինչ հետևում է:
[3] Շատ մարդիկ են ակնատես եղել սրան տարբեր երկրներում: Նրանք տեսել են իմ դեմքը շատ պայծառ՝ ճենապակու պես, կարծես ներսից եկող լույսով, երտասարդ աղջկա նման:
[4] Մաքրագործման և փորձությունների միջոցով:

ցույց տամ, որ Ես քո մեջ եմ, իսկ դու՝ Իմ մեջ, որպեսզի նրանք հավատան, որ քո խոսքերի միջով Ես եմ: Այն Սերը, որով Հայրը սիրում է Ինձ, քո մեջ կա, զավա՛կս, ահա թե ինչու Ես քո մեջ եմ: Դու արժանացել ես Իմ Հոր բարեհաճությանը Երկնքում: Այժմ Նա քեզ շնորհել է այս պարգևը՝ այս անսպառ գանձը, որն ավելին արժե, քան աշխարհի բոլոր գանձերը՝ միասին վերցրած:

Ես նորից քեզ մոտ եմ գալիս, որպեսզի դու լսես Աստծո Խոսքը: Ես Աստված եմ: Փառաբանի՛ր Իմ Անունը և հայտարարի՛ր այս աշխարհին, որ Ես հաղթեցի, հայտարարի՛ր Իմ Հրաշքների մասին: Ես ուզում եմ, որ Իմ Հրաշքները հայտնի դառնան ու տարածվեն: Երկինքն ու Երկիրը պետք է տեսնեն Իմ Փառքը: Այլևս մի՛ կասկածեք, այլ հավատացե՛ք հիմա... Ես քեզ համար մի կարևոր դուռ կբացեմ[1]:

Լսի՛ր Ինձ հիմա և գրի՛ր Իմ Անունից. Ես ասում եմ ձեզ, փրկություն է գալու լքվածներին և նրանց, ովքեր երբեք չեն փնտրել Ինձ: Աղքատներն ու թշվառները, լքյալներն ու սովյալները[2] ջրի կարիք ունեն, բայց ջուր չկա: Նրանց լեզուն չորացել է ծարավից: Ահա թե ինչու Ես նրանց ջուր պիտի տամ Իմ Սեփական Ձեռքով: Մի՞թե չեք նկատել, թե ինչպես եմ Ես հավաքում թշվառներին, մեռնողներին:

Ես պիտի կանչեմ մեղավորներին և բոլոր նրանց, որոնց ձեր քահանաները[3] դատապարտում են ամեն օր ծանր խոսքերով: Ես նրանց տխրությունը ուրախության պիտի վերածեմ, և երբ նրանք հարցնեն. «Իսկ մե՞նք: Կարո՞ղ ենք մենք նույնպես ժառանգել Քո Թագավորությունը, կարո՞ղ ենք իսկապես փրկվել», Ես նրանց կպատասխանեմ. «Ձեր աղերսանքը լսվեց Իմ կողմից: Ես ձեզ նույնպես կփրկեմ հենց ձեր թշվառության միջոցով, Ես պիտի փրկեմ ձեզ: Ես եկել եմ հիվանդների, աղքատների համար: Մի՞թե սրանից առաջ չես լսել սա, զավա՛կս»: Ես չեմ լսի նրանց, ովքեր կանչում են Ինձ՝ Տե՛ր, Տե՛ր, և չեն կատարում Իմ Կամքը: Ես չեմ լսի նրանց, ովքեր ամեն օր խոսում են ձեր հիմքերի մասին, սակայն իրենք ոչ մի հիմք չունեն: Վա՛յ ձեզ՝ հարուստներիդ: Դուք հիմա ստանում եք ձեր պատիվները, բայց ձեր թաղման օրը դուք կզրկվեք Իմ Թագավորությունից, իսկ ձեր անունը՝ Կյանքի Գրքից... Իսկ դու, աղջի՛կս, թույլ չտաս, որ հոգիդ ճախրի ուրիշ տեղ՝ Իմ Սրտից բացի:

Մի՛ վախեցիր Իմ Գթառատ Կանչը հռչակելուց: Պատվի՛ր Իմ Հոգին: Ես պիտի աճեմ քո մեջ այնքան ժամանակ, քանի դեռ դու պատրաստ ես փոքրանալու՝ ոչնչացնելով ինքդ քեզ: Իմ կատարած Գործերը քեզ վրա կփառաբանեն Իմ Անունը, մե՞նք, մե՞ղ: ic;

---

[1] Նա չասաց ինձ՝ որ դուռը: Բայց ավելի ուշ ես հասկացա: Մի քանի օր անց հայր Օ՛Քերոլը, չնայած բոլոր խոչընդոտներին, կարողացավ անձնական հանդիպում ունենալ Կոստանդնուպոլսի պատրիարք Բարդուղիմեոսի հետ:

[2] Հիսուս խոսում է փոխաբերություններով: Նա նկատի ունի դարձի չեկածներին, մոլորված ոչխարներին և հոգևորապես անուսներին:

[3] Ոմանք, ովքեր նոր են դարձի եկել Հունաստանում, «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ» պատգամների միջոցով և կյանքում առաջին անգամ գնում են սրտանց խոստովանության և բուռն ցանկություն ունեն վերադառնալու դեպի Եկեղեցի՝ ծարավ լինելով Աստծուն, կոպիտ բառերով արհամարհանքի են արժանանում խոստովանահոր կողմից, երբ վերջինս իմանում է Պատգամների մասին և երբեմն սպառնում է նրանց վտարել

Հոկտեմբերի 14, 1994

(Սուրբ Միքայելն է խոսում)

Քրիստոսի Զարչարանքների՛ Վասուլա, Ես՝ Սուրբ Միքայել հրեշտակապետը, ողջունում և օրհնում եմ քեզ.

– Հիշո՞ւմ ես, թե ինչպես Աստված կանչեց քեզ, որպեսզի ապրես Ճշմարիտ Կյանք Նրա մեջ: Քո հոգևոր հարության սոսկ հիշողությունը մինչև օրս հուզում է Ինձ արտասվելու աստիճան... Մի ժամանակ դու պատերազմի մեջ էիր Աստծո հետ, քանի որ քեզ չահագրգռում էր միայն այն, ինչ հոգևոր չէր: Սակայն հիմա, փա՛ռք Աստծուն՝ Արդարին, Ամենաբարձրյալին, Նա ծածկել է քեզ Իր Սուրբ Հոգով և Իր Հզոր Ձեռքով բարձրացրել է քեզ, որ դառնաս Նրա Սուրբ Հոգու վկան, քանի որ Նրա Հոգին բնակվում է քո մեջ: Եվ հենց սկզբից[1] Նրա Հոգին, բնակվելով քո մեջ, փառաբանում է Նրան՝ լսելով քո կանչը. «Հա՛յր, Ա՛բբա»: Հիմա արդեն շուտով Նա ցած կիջնի, որ տապալի անօրինությունը, որն իրեն հաստատել է մարդկանց սրտերում:

Տե՛ս, երեք տարուց ավելի Մշտնջենական Զոհաբերությունը[2] ոտնակոխ պիտի արվի: Աստծուն ուղղված այս անհավատալի անարգանքի պատճառով ձեր բնակիչների մեկ երրորդը պիտի մեռնի անօրինությունից: Տերը երդվել է դա Իր Սրբությամբ: Հիմա պատրաստվի՛ր հանդիպել Աստծուն[3]... Ես այս բոլորն ասացի քեզ առանց հաճույքի, քանի որ չարին մեծ պատիվներ են տրվում այսօր ձեր սերնդի մեջ: Սկզբից ի վեր նա մարդասպան էր և ստախոս, իսկ հիմա նրան պաշտում են՝ որպես Հոյր: Պատիվները նրան են տրվում Աստծո փոխարեն: Ձեր օրերում մարդիկ խոնարհվում են նրա գործերի առաջ, և այդ ձևով ձեր սերունդը պատիժ է հարուցում իր դեմ: Ձեր երկրները վխտում են անմաքուր հոգիների լեգեոններով, որոնք թափառում են ամենուր:

Սատանան այսօր փորձում է նույնիսկ Աստծո ընտրյալներին: Ահա թե ինչու դժբախտություն է գալիս այս սերնդի վրա, որն իր աշտարակները կառուցում է անմեղ արյան վրա[4] և իր հայրենիքն է հիմնում ոճիրի վրա: Այս զոհաբերությունը[5] միայն գոհացնում է Սատանային... Վստահի՛ր Ամենաբարձրյալին, զսպա՛կս, և խրախուսի՛ր մարդկանց, որ խնդրեն Իմ միջամտությունը: Ես՝ Սուրբ Միքայելը՝ Աստծո հրեշտակապետը, երբեք չեմ հոգնի Ճշմարտությունը պաշտպանելուց: Հաստատո՛ւն կանգնիր[6], եթե թշնամու հարվածներն անգամ քեզ վնասվածքներ պատճառեն: Ես քեզ հետ եմ: Վայելի՛ր Ամենաբարձրյալի

---

[1] Իմ ապաշխարության սկիզբը:

[2] Հիսուսի իրական ներկայությունը Սուրբ Հաղորդության մեջ:

[3] Երբ Սբ. Միքայելը տեսավ իմ տխրությունը, նրան թույլ տրվեց Աստծո կողմից ավելի երկար մնալ ինձ հետ, քանի որ ես տխուր մտածում էի Նրա պատգամի բովանդակության մասին:

[4] Արհեստական վիժումի օրենքի օրինականացումը շատ ազգերի մոտ:

[5] Արհեստական վիժումը հաճելի է սատանային, որովհետև սատանան մարդկային զոհաբերությունների կարիք ունի՝ հզորանալու համար: Եվ հետևաբար այն կատարվում է ամեն օր, և շատերն անգամ չեն գիտակցում, որ այն դառնում է կամավոր պաշտամունք՝ տրված սատանային: Սատանան ծարավ է արյան, և հիմա նա ստանում է այն ամենուրեք:

[6] Սբ. Միքայելը փորձում էր ինձ ասել, որ ես «ընդօրինակեմ» իրեն, այսինքն՝ երբեք չհոգնեմ գրելուց կամ չվհատվեմ՝ չնայած այն հարվածներին, որոնք ստանում եմ:

բարեհաճությունը:

(Տերն է խոսում):

Եղի՛ր խաղաղության մեջ: Մո՛տ եկ Ինձ և զգա՛ Իմ Խաղաղությունը: Ես երբեք չեմ լքի քեզ: Ես պիտի օգնեմ քեզ, որպեսզի Իմ Սիրտը հաղթանակի քո մեջ: Թույլ մի՛ տուր որ Սատանան մոլորեցնի քեզ կասկածներով: Ես պիտի ավելացնեմ Իմ Նշանները քեզ վրա՝ Իմ Անունը պատվելու համար: Ես պիտի անեմ այդ:

Հոկտեմբերի 18, 1994

Իմ փոքրի՛կ զավակս, Ես Յահվեն եմ՝ քո Հավիտենական Հայրը: Ես քեզ շատ հեռու եմ տարել՝ այս խենթացնող բազմությունից այն կողմ[1], որ ներկա լինես Իմ Գավիթներում: Հաստատակամ եղիր քո աշխատանքում և Ի՛նձ բեր բոլոր քեզ ճնշողներին: Ասա՛.

«Հա՛յր, Քո Արդարամտությամբ
ազատի՛ր ինձ ստախոս լեզուներից,
շուտ արի, Աստվա՛ծ,
Քո մեծ Սիրով:
Պատասխանի՛ր ինձ, իմ Յա՛հվե»:

Եվ հիմա Ես ասում եմ քեզ. զավա՛կս, զավա՛կս, եթե նույնիսկ տասնյակ հազարավորներ Իմ Թշնամու կողմից ուղարկվեն քո դեմ, չվախենաս: Ես քո կողքին եմ, որ պաշտպանեմ քեզ: Իմ Ներկայությունը քո Վահանն է: Ո՞վ կա Ինձ նման: Ու՞մ հետ կարող ես համեմատել Ինձ: Ու՞մ հետ կարող ես չափել Ինձ: Իմ Ներկայությունը Շքեղություն և Վսեմություն է: Թող ոչ մի մարդ չճնշի քեզ: Այդ դու ես, զավա՛կս, որ պիտի

[1] Ինձ ճնշողները:

վերականգնես Իմ սրբարաններն[1] Ինձ համար: Ես քեզ չեմ նշանակել՝ համբավ ձեռք բերելու համար, այլ Իմ Անունն օրհնելու: Ես քեզ հարություն չեմ տվել քո փառքի համար, այլ Իմ Փառքի: Ես տվել եմ քեզ առաքյալի լեզու, որպեսզի օրեցօր հռչակես Իմ Փրկության Ծրագիրը...

Գործի՛ անցիր, Իմ սե՛րմ, և Ես պիտի լինեմ քեզ հետ: Ես արդեն քեզ տվել եմ մի բոց, որը ոչ ոք չի կարողանա հանգցնել: Ես պիտի ավելացնեմ Իմ հրաշքները քեզ վրա: Ես Իմ Սեփական գանձարանում շատ ավելին ունեմ: Ես Իմ հրաշքները պիտի տամ՝ համապատասխան այն չափի, որ դու կտանաս քեզ ճնշողներից: Իմ Որդին պիտի երևա քո փոխարեն՝ ցույց տալով Իրեն քո հասարակությանը: Կարո՞ղ է որևէ մեկն ասել, որ Ես զրկում եմ ձեզ նշաններից: Կարո՞ղ է որևէ մեկն ասել, որ Ես Իմ փրկարար և բժշկարար գործերի Հեղինակը չեմ: Կարո՞ղ է որևէ մեկը բողոքել, որ Ես Իմ Աչ Ձեռքը թաքցնում եմ: Ինձանից բացի՝ ուրիշ ո՞վ պիտի տար Արքայական խնջույք այս անապատում[2]: Ո՞վ կարող է ճեղքել ժայռերն անապատում՝ հագեցնելով ձեր ծարավը անսահման ջրով[3], եթե ոչ Ես: Բա՛ց արա աչքերդ, սերո՛ւնդ, և կենտրոնացի՛ր Իմ հրաշքների վրա: Իսկ դու, աղջի՛կս, քանի որ Ես քեզ ազատ եմ արձակել, առաջնորդի՛ր Իմ ժողովրդին դեպի Իմ Տունը:

Միավորի՛ր Իմ ժողովրդին Իմ Տան մեջ, ուր նրանք նույնպես կտանան իրենց ազատությունը: Միավորի՛ր Իմ ժողովրդին և մեկ սի՛րտ դարձրու: Հետևի՛ր այս պատվիրանին:

Թող քո շրթունքները վկայեն Իմ Ողորմության մասին: Կենդանացրո՛ւ այս հանգչող բոցը[4] և շարունակի՛ր կառուցել Իմ խորաններն[5] ու Իմ Տունը: Ոչ մեկը չի պաշարի Իմ վրանը[6]: Դևերի մի բարկացած լեգեոն կա, որ թաքնվում է ուրիշ վրանների[7] հետևում, որ գնա և արմատախիլ անի այն հույսերը, որոնք Ես եմ քեզ տվել, և սարսափով լցնի քեզ: Բայց հիվանդությունը պիտի ուտի նրանց մարմինը, և որդը պիտի լինի նրանց ծածկոցը... Իմ Խաղաղությունը քեզ, երբեք չդադարես չապաշխարածների համար աղոթելուց[8]: Իմ Սիրտը ցավում է, զավա՛կս, քանի որ Ես տեսնում եմ մինչև երկրի ծայրերը, և այն, ինչ Ես տեսնում եմ, չի համապատասխանում Իմ Սրտի ցանկություններին... Ձեր Հայրը ղեկավարում է ամեն ինչ, բայց ոչ ձեր ազատությունը... Իսկ մարդը խեղաթյուրել է իր ազատությունը...

Սիրելի՛ս, աղոթի՛ր, որպեսզի նրանք, ովքեր մեռնում են, ժամանակ

---

[1] «Սրբարաններ» այստեղ նշանակում է հոգիներ:

[2] «Արքայական խնջույք» նշանակում է նշաններ, հրաշքներ Աստծուց և Իր Սուրբ Հոգու գործերը, որոնք այնքան առատորեն հեղվում են մեզ վրա:

[3] «Ճեղքել ժայռերը» նշանակում է Աստծո զորությունը, որը կարող է ուղարկել Իր Սուրբ Հոգուն, ինչպես մի գետ անապատում, որ մենք ենք ստեղծել:

[4] Դա նշանակում է այս մեռնող սերունդը:

[5] «Խորաններ» նշանակում է հոգիներ:

[6] Սա նշանակում է, որ ոչ մեկը չի նվաճի իմ հոգին (Աստծո վրանը), որովհետև դա Աստծո բնակավայրն է և Նրա սեփականությունը:

[7] «Վրան» բառը նորից նշանակում է հոգի: Աստված ի նկատի ունի, որ դևերն օգտագործում են մարդկանց՝ իրենց գործը կատարելու համար:

[8] Այդ պահին ես զգացի, որ Աստված շատ տխուր էր և հոգնած էր երևում: Հետո, ինչպես մի հայր, որը կիսում է իր ցավը, և իր վիշտը վստահում է զավակին, Աստված բացատրեց ինձ Իր տխրության պատճառը՝ ասելով հետևյալը:

ունենան ուղղվելու և վերականգնվելու: Սիրո յուրաքանչյուր կաթիլ օգտագործվում է նրանց փրկության համար: Շատերը, որոնք ավերակների տակ են, դեռևս չնչում են[1], ուստի աղոթի՛ր նրանց համար, որ Ես վերակենդանացնեմ նրանց հոգին: Հիշի՛ր, դու ազատված ես, որպեսզի ազատես ավերակների տակ գտնվողներին:

Արի՛, Ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ: Ես օրհնում եմ քեզ:

Հոկտեմբերի 20, 1994

Տե՞ր:

Ես եմ: Տե՛ս, Վասո՛ւլա, քեզ բարձրացնելու Իմ նպատակը դեռ նույնն է: Իմ Հայրը և Ես այցելեցինք քեզ, դաստիարակեցինք քեզ: Այո՛, Ես քեզ դաստիարակեցի: Կարո՞ղ ես այսօր ասել, որ քո գիտելիքը գալիս է մարդկանցից կամ աստվածաբանություն սովորելուց:

Փա՛ռք լինի Աստծուն, այն ամենը, ինչ ես սովորել եմ, գալիս է Քեզանից:

Իմ Հայրն ու Ես պիտի չարունակենք վրդովել և ամոթանք պատճառել ձեր փիլիսոփաներին և ձեր հասարակության մեծամիտներին Մեր Գործերի և այն թույլ գործիքների միջոցով, որոնց Մենք ընտրում ենք: Ես հրճվում եմ՝ քեզ սովորեցնելով: Այո՛, Ես դեռ հրճվում եմ՝ քեզ տալով Իմ ազնիվ ու վսեմ Գիտելիքը: Ա՜հ, Վասո՛ւլա[2], եթե միայն գիտենայիր, թե որքան հաճելի է Իմ Հոր համար քեզ Իմաստություն տալը... Այնպես որ անտեղյա՛կ մի եղիր այս բոլոր օրհնություններն: Մի՛ ասա. «Ո՞ւր է իմ Հիսուս»: Սիրելի՛ս, Ես ողջ ժամանակ քեզ հետ եմ: Իմ հայացքը անընդհատ քեզ վրա է:

Թո՛ւյլ տուր Ինձ հոգևորապես և մեծապես առաջ տանել քեզ: Թո՛ւյլ տուր Ինձ երբեմն-երբեմն փախչել աշխարհի չարությունից և հանգստանալ քո սրտում: Քո լռության մեջ Ես հանգստանում եմ: Քո հավատարմության մեջ Ես թագավոր եմ, որովհետև այն, ինչ Ես ստանում եմ, պատիվ և գովաբանություն է: Եվ քո սիրով Ես փառաբանվում եմ:

Տե՛ր, Դու ուսուցանեցիր ինձ՝
տալով զորություն:
Դու խոսեցիր ինձ հետ, և
Քո բառերը վեր բարձրացրին ինձ:
Իմ կերակուրը Դու ես:
Ինչո՞ւ ես տալիս
Լույսի այս պարգևը ինչ-որ մեկին,
որն այնքան թշվառ է:

[1] Ես հակացա նաև՝ հազիվ են չնչում:
[2] Հիսուս հոգոց հանեց:

Որովհետև ես ապշել էի քո թշվառությունից: Եթե ես գտնեի քեզանից ավելի թույլ մեկին, կընտրեի նրան: Քո թշվառությունը ստիպում է, որ Իմ Ողորմությունը սուզի քեզ իր մեջ, քո թշվառությունը ստիպում է Ինձ օրորել Գլուխս... Քեզանից ավելի թույլ և թշվառ մեկին ես չեմ կարողանում գտնել... Ոչ մեկը չկա: Այլապես ինչպե՞ս պիտի աշխատեի, եթե մեկը մյուսի հետևից ես մրցակիցներ դիմագրավեի քո մեջ: Ես ոչ մի մրցակից չեմ գտնում... Եվ եթե նույնիսկ ինչ-որ մրցակիցներ հայտնվեին, նրանց գալուն պես, ես նրանց հեռու կքշեի Իմ Շնչով: Ուրեմն թո՛ւյլ տուր Ինձ պահել քո աջ ձեռքը Իմ Ձեռքում... Դու քեզ երջանի՞կ ես զգում, Իմ Վասո՛ւլա:

Այո՛, շա՛տ:

Ես սիրում եմ քեզ, որ թույլ ես տալիս Ինձ ծաղկեցնել քեզ և քո միջոցով՝ ուրիշներին: Երբեք չվախենաս, սիրելի՛ս: Այսպիսով, այն ամենը, ինչ ես ասում եմ քեզ հիմա, սա է. սիրի՛ր Ինձ, գրի՛ր և շարունակի՛ր փառաբանել Ինձ վկայություն տալով: Ես «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ» պատգամների Հեղինակն եմ և պիտի ապացուցեմ դա՝ երևալով քո փոխարեն: Դա Իմ Հոր պարգևն է քեզ և ուրիշներին:

Հոկտեմբերի 24, 1994

Իմ Սուրբ Սրտի՛ Վասուլա[1], կարծում ես՝ զոհացուցիչ կլինե՞ր, եթե ասեի՝ Ամենակարողի՛ Վասուլա[2]: Դու նվիրված ես Իմ Անվանը: Ես Մեկ եմ[3] և Նույնը, բայց մարդիկ Ինձ բաժանել են մասերի:

Նա, ով ցանում է բաժանում, հնձում է ավերածության բերքը: Նա, ով ցանում է նախապաշարում, հնձում է հիմարության բերքը: Մի՞թե չես լսել, որ հիմարը ծալում է թևերը և ուտում իր սեփական մարմինը: Նրանց ծածկող ողջ մարմինը անհետացել է, իրենց շունչը՝ նույնպես, և ոչինչ չի մնացել նրանցից, բացի չոր ոսկորներից: Իմ Անունները Սուրբ են[4], բայց մարդիկ վերևից են նայել Ինձ և դուրս են վտարել Ինձ Իմ Սեփական Տնից, Իմ Սեփական Քաղաքից, իսկ հիմա՝ Իմ Սեփական Սրբարանից[5]: Նրանք նեղում են Ինձ և ծանրորեն ճնշում են գործադրում Ինձ վրա: Հպարտությամբ փքված՝ նրանք զոհ են, որ ապրում են անապատում: Սակայն այս գալիք օրերին ես մտադիր եմ ցուցադրել Իմ Մեծ Անվան Սրբությունը, որը ձեր բաժանման պատճառով պղծվել է:

Ես ասում եմ քեզ, աղջի՛կս, դու տեսնո՞ւմ ես, թե ինչպես է քո

[1] Ես մտածում էի, որ Ինձ այսպես անվանելու պատճառով, ուղղափառները կչարունակեն դուրս գալ իմ դեմ, որովհետև այդ արտահայտության գործածությունը բնորոշ է հռոմեական կաթոլիկներին:

[2] Հույն ուղղափառ արտահայտություն

[3] Նա Նույն Քրիստոսն է:

[4] Քրիստոսի տարբեր անունները, ինչպես օրինակ՝ Ամենակարող, Սուրբ Սիրտ, Հիսուս, Ալֆա և Օմեգա, Էմանուել և այլն:

[5] Քրիստոսին ոչ միայն «դուրս են նետել» Իր Սեփական Տնից տերմինաբանական հարցերի պատճառով, այլև ոմանք արևմուտքում սկսել են ոչնչացնել Մշտնջենական Զոհաբերությունը:

ժողովուրդն անխռով ու հանգիստ ապրում սարսափելի թմրության ու անտարբերության մեջ, երբ հարցը վերաբերում է միասնության համար աշխատելուն[1]: Ես այլևս դա թույլ չեմ տալու: Ես Իմ Ձեռքը պիտի երկարեմ նույնիսկ քո ազգի ամենահեռավոր մասերը և դուրս շպրտեմ այդ առևտրականներին[2], որոնք խանգարում են Իմ ժողովրդին միավորվել: Ես դաստիարակել եմ քեզ, որ լինես միասնության նշանը, Իմ Ողորմության նշանը, Իմ Զորության նշանը, բայց նրանց ցուցամոլ հպարտության կիրքը կուրացրել է իրենց:

Այսօր Ես կարող եմ ասել.. «Թող նրանց ոսկորներն այրվեն», և վրեժխնդիր լինել: Ես կարող եմ այրիացնել քո ազգին, սակայն Իմ Ողորմությամբ և հանուն Իմ Սիրո՝ Ես արևելքից պիտի բարձրացնեմ դեթ մեկին, որը կասի իր եղբորը[3]. «Արի՛ և քայլիր իմ հողի վրա, արի՛ և ճաշակի՛ր իմ սեղանից, արի՛ և ըմպի՛ր ինձ հետ: Իմ տիկերը լիքն են նոր գինիով: Արի՛ միասին արածեցնենք մեր գառներին և մեր արոտները դարձնենք Եդեմ: Մեր Աստվա՛ծ, տեսնո՞ւմ ես, թե մեր ձեռքերը ինչի են վերածել Քո Սրբարանը»:

Արևմուտքի Իմ Տունը թալանվում է: Ես նրանց խնդրել էի համախմբվել Պետրոսի ներքո[4], սակայն նրանք չհասկացան և անում են հակառակը: Շատերն այդ Տնից ասում են. «Ինչո՞ւ պետք է առաջնորդ ունենանք[5], հատկապես այս առաջնորդը»: Ես նախազգուշացրել էի ձեզ, որ կարդինալները դուրս պիտի գան կարդինալների դեմ, եպիսկոպոսները՝ եպիսկոպոսների, և քահանաները՝ քահանաների դեմ: Ես ընտրեցի Պետրոսին, որ կերակրի և հսկի Իմ գառներին, սակայն ըմբոստության ոգին, որը ծաղկում է հիմա, հասել է ըմբոստության իր գագաթնակետին: Սա այն մեծ Դժբախտությունն է, որի մասին Ես ձեզ զգուշացնում էի[6]:

Արևմուտքի Իմ Տունը թալանվում է, բայց արևելքից քամի պիտի բարձրանա և Իմ Շնչի հետ միասին պիտի մերկացնի թալանողին: Քո ազգի անդամներից շատերն առարկում են Իմ Միասնության Կանչին և վարժեցրել են իրենց քայլերը, որ քայլեն իրենց սեփական ճանապարհով: Նրանք իրենք իրենց հարուստ են անվանում, բայց այդ դեպքում ո՞ւր է նրանց հարստությունը...

«Այդ ինչպե՞ս է, որ դարձել եք խաղողի այլասերված մի որթատունկ: Կարո՞ղ եք ասել, որ չեք մեղանչել: Կա՞ մի տեղ, որ չեք մեղանչել: Դու, Իմ Սրբերի՛ ընկեր, Իմ Մո՛ր զավակ, ինչո՞ւ, ինչո՞ւ ես դարձել այդքան հա- մառ: Ի՞նչ արժեք ունեն Ինձ ուղղված ձեր անվերջ հանդիսու- թյունները, երբ դուք դավաճանում եք Ինձ շուրթերով: Այո՛, դուք պահել եք Իմ Ավանդությունը, և այդ պատճառով սուրը չի իջնի ձեզ վրա, սակայն դուք մի կողմ եք դրել Իմ Երկու Ամենամեծ Պատվիրանները և չեք հետևում դրանց: Ինչո՞ւ եք առանձնացնում

[1] Հույն ուղղափառները «բաց թողեցին» տիեզերաժողովներից շատերը:
[2] Այս ենթատեքստում «առևտրականները» նրանք են, ովքեր փնտրում են իրենց շահերը և ոչ թե Քրիստոսի:
[3] Արևմուտքի եղբորը:
[4] Հուլիս 3, 1988թվի պատգամը
[5] Մեջբերում մայիս 16, 1988թվի պատգամից:
[6] Մեջբերում մայիս 16, 1988թվի պատգամից:

Ավանդությունը Պատվիրանից[1]: Եթե նույնիսկ ծածկվեք զմուռսով և խնկով, միևնույն է, Ես կտեսնեմ ձեր մեղքի բիծը»: Բացե՛ք ձեր բերանը հիմա և թո՛ւյլ տվեք, որ Ես մնեմ ձեզ, որպեսզի կյանք կլանեք: Մի՛ ասեք. «Մենք կգնանք մեր սեփական ճանապարհով»: Վերադարձե՛ք Ինձ մոտ և ընդունե՛ք ձեր մեղքը:

Իսկ դու, աղջի՛կս, բարձրաձա՛յն հայտարարիր Իմ Պատգամը և մարգարեացի՛ր: Ասա՛. Ես ամեն Ինչ գիտեմ Արևմտյան ափում գտնվող Իմ Տան մասին, որը Կյանքի Գետի մոտ է, և Ես գիտեմ նաև, թե ով է Ինձ հավատարիմ մնացել այդ Տան մեջ: Աղջի՛կս, ի՞նչ ես տեսնում այդ Տնից դուրս:

Ես տեսնում եմ մի առյուծ, որը թափառում է այդ Տնից դուրս և ցանկանում է ներս մտնել Քո Տունը կողքի պատուհաններից մեկով:

Այո՛, առյուծը թողել է իր որջը: Աղջի՛կս, մի ավերիչ ոգի է թափառում: Հրեշտակներն իրար ետևից գալիս են՝ ձեզ բոլորիդ զգուշացնելու և ասելու, որ Արևմտյան ափին գտնվող Իմ Քաղաքը հարձակման պիտի ենթարկվի ավերողի կողմից մեծ բռնությամբ՝ Իմ Օրենքին, Իմ Ավանդությանը և Իմ Աստվածությանը դիմադրելու և հակադրվելու համար: Ողջ երկիրը պիտի լինի մի սարսափելի վիճակում:

Ձեր սրբերին, Իմ պատգամատարներին ու Իմ մարգարեներին պիտի խանգարեն շարունակելու իրենց աշխատանքը... Եվ ձեզ վրա պիտի տարածվի մի թանձր խավար, մինչ Թշնամին, որը մի գիտնական է, պիտի վերացնի Իմ Մշտնջենական Զոհաբերությունը՝ մտածելով, որ իր գործերն անկատ կմնան իր գաղտնի մեղքերի հետ միասին: Իմ Ձեռքը հանկարծակի պիտի իջնի նրա վրա՝ ամբողջովին ոչնչացնելով նրան: Այդ Գիշերվա մասին կանխասացվել է Սուրբ Գրքերում: Սակայն նա ուրիշների հետ միասին ուրախությամբ երդվել է Գազանի բերանով՝ պատվելով միայն Գազանին այն բանի համար, որ նա իրեն է տվել իր զորությունը: Վա՜յ նրանց, ովքեր երկրպագում են Գազանին: Նրանք պիտի լան ու ողբան:

Աղջի՛կս, հիմա ի՞նչ ես տեսնում ափի մյուս կողմում, Արևելքի Իմ Տո՞ւնը:

Ես ոչ մի Քաղաք չեմ տեսնում, իսկ հողը ավազոտ է և հարթ, ինչպես անապատում. Բայց տեսնում եմ նաև անապատում բարձրացող մի կանաչ ոստ:

Լսի՛ր և գրի՛ր. Փառքը պիտի ճառագի Արևելյան ափից: Դրա համար Ես ասում եմ Արևմուտքի Տանը. Աչքերդ դարձրու դեպի արևելք: Դառնորեն մի՛ ողբա քո Տան Ուրացության և ավերածության վրա: Խուճապահար մի՛ եղիր, քանի որ վաղը դու պիտի ուտես և խմես Արևելյան ափից Իմ ոստի հետ: Իմ Հոգին պիտի միավորի ձեզ: Մի՞թե դու չես լսել, որ Արևելքն ու Արևմուտքը պիտի լինեն մեկ

[1] Դա նշանակում է. «Ուշադրությո՛ւն դարձրու այդ երկու Պատվիրաններին այնքան, որքան ուշադրություն ես դարձնում Ավանդությանը»:

թագավորություն: Մի՞թե չես լսել,որԵսպիտինշանակեմմեկամսաթիվ[1]:

Ես երկարելու եմ Իմ Ձեռքը և դավազանի վրա փորագրելու եմ այս բառերը. «Արևմտյան ափ՝ Պետրոսի Տուն, և բոլոր նրանք, ովքեր հավատարիմ են նրան»: Հետո մեկ այլ դավազանի վրա Ես պիտի փորագրեմ. «Արևելյան ափ՝ Պողոսի Տուն, և բոլոր նրանք, ովքեր հավատարիմ են նրան»: Իսկ երբ Երկու Տների անդամներն ասեն. «Տե՛ր, ասա՛ մեզ, թե ի՞նչ նկատի ունես հիմա», Ես կասեմ նրանց. «Ես պիտի վերցնեմ այն դավազանը, որի վրա փորագրեցի Պողոսի և նրա բոլոր հավատարիմների անունները և պիտի դնեմ Պետրոսի և նրա հավատարիմների դավազանի հետ՝ որպես մեկ դավազան: Ես երկուսից մեկ դավազան պիտի պատրաստեմ, և Ես նրանց պիտի բռնեմ որպես մեկ: Ես դրանք իրար պիտի կապեմ Իմ Նոր Անվամբ: Սա պիտի լինի կամուրջ Արևմուտքի և Արևելքի միջև: Իմ Սուրբ Անունը պիտի կապի կամուրջը, որպեսզի դուք փոխանակեք ձեր ունեցվածքը այս կամրջի վրայով: Նրանք այլևս միայնակ չեն աշխատի, այլ միասին, իսկ Ես պիտի իշխեմ նրանց բոլորի վրա:

- Այն, ինչ Ես ծրագրել եմ, պիտի կատարվի, և եթե մարդիկ ասեն քեզ, աղջի՛կս, որ այս նշաններն Ինձանից չեն, ասա՛ նրանց. «Մի՛ վախեցեք, մի՞թե չեք լսել, որ Նա Սրբարանն է, ինչպես նաև Գայթակղության Քարը՝ այն ժայռը, որը կարող է ցած բերել երկու Տները, բայց և նորից վեր բարձրացնել նրանց, որպես մեկ Տուն»: Ահա թե ինչ կասես նրանց, աղջի՛կս:

Ես՝ Աստված, քեզ հետ եմ: Ես Իմ Հոգով շատ ավելի սրտեր պիտի ողողեմ:

Արի գնանք, Ես սիրում եմ քեզ: Իմ Խաղաղությունը քեզ:

(Սա իմ տեսիլքն է)



[1] Ես հասկացա, որ Քրիստոսը վկայակոչում է միասնությանն ուղղված Իր բոլոր Պատգամները՝ մեզ բոլորիս կոչ անելով միավորել Զատկի ամսաթիվը: Թվում է, թե հենց միայն սա «կբավարարե» Նրան և կգոհացնի միասնության հանդեպ Նրա ծարավը: Քրիստոսը խոստացել է մեզ, որ եթե միասնականացնենք Զատկի ամսաթվերը, Նա կանի մնացյալը:

(Այս սրբապատկերը ներկայացնում է ձախ կողմում Ս. Պետրոսին և աջ կողմում՝ Ս. Պողոսին: Ինչպես երկու այուներ, նրանք միասին պահում են Եկեղեցին: Նրա ներսում Կերակուրն է՝ Սուրբ Հաղորդությունը (իմ տեսիլքի մեջ՝ Կյանքի Գետը): Նրանցից վերև Քրիստոսն է՝ Քահանայապետը և Եկեղեցու Գլուխը):

Հոկտեմբերի 25, 1994

Որքան մոտենաս Աստծուն,
այնքան ավելի Նա կմոտենա քեզ:

Ծաղի՛կս, Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: Աղոթի՛ր, խոսի՛ր Ինձ հետ և սիրի՛ր Ինձ: Եղի՛ր Ինձ հետ այս ձևով: Ինձ խանդավառություն է պատճառում այս աշխատանքը քեզ հետ կատարելը: Թող որ այն քեզ նույնպես խանդավառի:

Քո զրույցը ինքնին քաղցրություն է,
և Դու ամբողջովին պաշտելի ես[1]:

Թո՛ւյլ տուր Ինձ, Ընձյո՛ւղ Որթատունկի, չնորհաշատ լինել քո հանդեպ և առաջարկել քեզ Իմ Սիրտը, որպեսզի ժառանգես Իմ փառքը և հարստությունը: Մոտեցի՛ր Ինձ դու, որ փափագում ես Ինձ, և Ես պիտի կերակրեմ քեզ՝ մատուցելով քեզ Իմ Սիրտը՝ Հաղորդության ձևի մեջ թաքնված, որպեսզի փոխակերպեմ քեզ մի կենդանի տապանակի: Ժառանգի՛ր Ինձ... Բարի՛ եղիր հիմա և գրի՛ր Իմ նախորդ պատգամները:
Ես՝ Հիսուս, սիրում և օրհնում եմ քեզ: IC

(Ավելի ուշ ես մոտեցա մեր Հավիտենական Հորը):

Իմ Տե՛ր, իմ Արարի՛չ, ես սիրում եմ Քեզ:

Սիրի՛ր Ինձ և քեզ սիրվա՛ծ զգա նաև Իմ կողմից: Մնա՛ Ինձ մոտ, և թող

[1] Երգ Երգոց 5:16

քո սիրտը պահպանի այն ամենը, ինչ ես տվել եմ քեզ[1]: Ինձ հետ դու կսովորես: Թո՛ւյլ տուր Ինձ շարունակել Իմ Ծրագիրը՝ ավելի շատ ժամանակ տրամադրելով Ինձ:

Ես խանդարո՞ւմ եմ Քո Ծրագրին:

(Նա Իր հայացքն իջեցրեց ինձ վրա՝ ուղիղ նայելով ինձ):

Մի՞թե այսքան փոքր մեկը կարող է խանգարել Ամենակարողին:

Մանրեն կարող է ավելի մեծ տհաճություն պատճառել մեկին, քան ինքը մանրեն է:

Վասո՛ւլա, դու չհասկացար «փոքր» բառի իմաստը, ոչ էլ ընկալեցիր Իմ Մտքի իմաստը[2]: Դու հաճույք ես պատճառում Ինձ... Արի՛, մի՛ եղիր այդքան համառ, հրճվի՛ր Ինձնով և արիացի՛ր:

Յա՞հվե:

Ես եմ: Ես քո Հայրն եմ:

Ըմբռնի՛ր Իմ Բառերի իմաստը: Մի՞թե չես լսել, թե Ես ինչպես եմ տապալում բարձր ծառերը և թույլ տալիս փոքրերին աճել: Արի՛, դու դեռ շատ բան ունես սովորելու...

Ես օրհնում եմ քեզ և այն առաքելությունը, որը հանձնարարել եմ քեզ:

(Ավելի ուշ)

Տե՛ր, որովհետև Դու տվել ես ինձ մեկ կամ երկու մատնաչափ Կյանք և հրամայել ես ինձ կրկնել այն, ինչ Դու տվել ես ինձ. այդ պահից սկսած՝ իմ կյանքը սպառնալիքի տակ է: Որքա՜ն մարդիկ են զրպարտանքներ ուղղել իմ դեմ:

Առանց պատճառի նրանք գրոհում են ինձ վրա՝ մեղադրելով ինձ, որ անում եմ այն, ինչ ինձ հրամայված է անել: Ինչի՞ համար են իմ դեմ ուղղված այդ դավերը:

Խաղաղություն քեզ: Ես չեմ լքի քեզ: Մի՛ վախեցիր: Դու հասկացա՞ր քո կարդացած սաղմոսի իմաստը[3]: Ես ուղղություն տվեցի քո ձեռքին, որ բացես ու կարդաս Սուրբ Գրքերի այդ մասը:

Բայց ինչո՞ւ են այդ մարդիկ հարձակվում՝ առանց ուսումնասիրելու իմ

[1] Չնայած իմ հիշողությունը շատ թույլ է և էությամբ մոռացկոտ եմ, այդպես չի լինում, երբ Աստված սովորեցնում է ինձ: Բավական է, որ Նա միայն մեկ անգամ ցույց տա որևէ բան, և ես երբեք չեմ կարողանում մոռանալ այն

[2] Ես զգացի, որ Տերը զվարճանում էր իմ պատասխանով:

[3] Սաղմ. 37:11-22

պարագան, առանց Քո պատգամները կարդալու կամ թեկուզ հանդիպելու ինձ՝ այդ մասին խոսելու համար:

Որովհետև այդ մարդիկ մոտենում են Ինձ[1]՝ չարությամբ հարբած: Յուրաքանչյուր տեսիլք, Իմ կողմից ասված յուրաքանչյուր բառ պիտի չարունակվի կնքված մնալ, որպեսզի Իմ գերբնական երևույթները նրանց անմտություն թվան: Մի՞թե չեմ ասել, որ միայն խոնարհները կուրախանան Իմ պատգամատարների ոտնաձայներից: Այս է պատճառը, որ նրանք չեն լսում կամ հասկանում, երբ Ես խոսում եմ: Նրանք նայում են միմյանց առանց հասկանալու, քանի որ նրանց մեջ Ես դրել եմ դանդաղկոտ և անբան հոգի... Ուստի նրանց դեպքում Եսայու այս մարգարեությունը մեկ անգամ ևս կատարվում է.

«Տեսանողներին նրանք ասում են. «Տեսիլքներ մի՛ տեսեք», մարգարեներին՝ «Մի՛ մարգարեացեք մեզ ճշմարտությունը»:[2] Իսկ հիմա Ես հարցնում եմ քեզ հետևյալը. Դու դեռևս ցանկանո՞ւմ ես լինել Իմ Արձագանքը: Դու դեռևս կամենո՞ւմ ես կրել Իմ Նոր Երգը[3] քո բերանում, և դու դեռևս կամենո՞ւմ ես կրել Միասնության Խաչը Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ:

ԱՅՈ՛, Տե՛ր:

Հոգի՛, ընկի՛ր Իմ Բազուկների մեջ[4]:

(Հանկարծ Հիսուսի Ձայնը լսվեց):

Աղջի՛կս, քո վեհանձն սիրտը կհագեցնի Իմ ծարավը:

(Ապա Սուրբ Հոգին նույնպես զգացված խոսեց):

Օրհնյա՛լ: Ես կավարտեմ քո մեջ Իմ Գործը և կշարունակեմ աղբյուրներ բխեցնել, որ դուրս հորդեն խորխորատներում: Ես ամեն մի հոգու պիտի ապահովեմ հավերժական ջրով:

(Սուրբը Երրորդության խոսելուց անմիջապես հետո արագ գրկախառնություններ կատարվեցին: Հայրը գրկեց Ինձ, հետո՝ Որդին, իսկ հետո՝ Սուրբը Հոգին: Իմ հոգին երբեք չէր զգացել այդպիսի լիակատար համագործակցություն իմ երկնային Ընտանիքի հետ, որքան այդ գրկախառնությունների ժամանակ: Ես զգացի, որ պատկանում եմ նրանց և ուրիշ ոչ մեկին):

---

[1] Երբ Սավուղը հետապնդում էր քրիստոնյաներին, և Հիսուս մոտեցավ նրան, Հիսուս չհարցրեց նրան. «Ինչո՞ւ ես հետապնդում քրիստոնյաներին»: Նա հարցրեց. «Ինչո՞ւ ես դու հետապնդում Ինձ»: Հետո ասաց. «Ես Հիսուսն եմ, և դու հետապնդում ես Ինձ»: Երբ Ինձ վրա հարձակվում են, նրանք հարձակվում են Աստծո վրա, քանի որ այս գործն իմը չէ:

[2] Ես. 30:10

[3] Հայտ. 14:3

[4] Հոր Ձայնը ուրախ էր հնչում:

(Հիմա նորից Հայրը խոսեց):

Աղջի՛կս, եթե կամենում ես ենթարկվել Իմ Կամքին, ես Իմ Իշխանությունը պիտի բանեցնեմ այդ (չար) մարդկանց վրա մյուսների հնազանդության[1] միջոցով և վերջ պիտի տամ Ուրացությանը: Իմ Անվան Սրբությունը պահպանելու համար ես պիտի բռնեմ նրանցից յուրաքանչյուրի թևքից և հարցնեմ. «Դու Հոր զավա՞կն ես»: Եվ երբ մեր աչքերը հանդիպեն, նա կկանչի Ինձ. «Հա՛յր իմ, մի՞թե ես դեռևս արժանի եմ Քեզ: Ես մեղանչել եմ, ես դարձել եմ բորոտ, Որթատունկի մի այլասերված չիվ: Քո հանդեպ իմ անհավատարմության պատճառով ես վաղուց եմ մեռել և քայքայվել»:

(Որդին խոսեց):

Բայց ես Հարությունն եմ: Միայն ես եմ Իմաստությունը: Դու նույնպես Իմ Եկեղեցու մի մասն ես, և ես կարող եմ օգտագործել քեզ: Ես կարող եմ բուժել քեզ և քեզ նույնպես նշանակել որպես վկա: Ես զորություն ունեմ քեզ մի լույս դարձնելու ազգերի համար, որպեսզի Իմ Փրկության Ծրագիրը հասնի մինչև երկրի ծայրերը[2]: Այսօր ես կուղարկեմ Իմ Սուրբ Հոգուն, որ Կյանք շնչի քո մեջ և վերականգնի քեզ:

(Սուրբ Հոգին է շարունակում այժմ):

Ես Ինձ չեմ պարտադրելու քեզ: Բա՛ց արա դուռդ[3], և ես Իմ Լույսը պիտի հեղեմ քո ներսում: Ես կարող եմ աճեցնել քեզ և խոսելու կարողություն տալ քեզ, որ փառաբանես Մեր Խորհուրդը:

Քո լռության մեջ դու կլսես Իմ Ձայնը, որը կուսուցանի քեզ Ճանապարհի մասին: Ես կարող եմ հեթանոսից քեզ վերածել հավատացյալի, ապա տալ Իմաստության Գիտությունը: Եվ եթե դու մնաս Մեզ հավատարիմ, ես պիտի ներդնեմ քո մեջ Մեր Փառքի Գանձերը և ազատեմ քեզ քո թշվառությունից, որպեսզի դու նույնպես քո հերթին օգնության հասնես քո մերձավորին: Ես քեզ ցույց կտամ Իմ Գեղեցկությունը և Իմ Սրբությունը, և դու պիտի ապշես հիացմունքից Իմ Ներկայության մեջ:

Ես Կյանքի Ծառն եմ. ով էլ որ Ինձ տնկել է իր մեջ, հավիտենական կյանք ունի: Ես կարող եմ հոգիդ վերածել Եդեմի, Դրախտի: Իմ Աստվածային Լույսով ես կարող եմ փոխակերպել քո հոգին արևի՝ ավելի պայծառ, քան բոլոր համաստեղությունները՝ միասին վերցրած, քանի որ Ես մի անհասանելի արև եմ: Դու կունենաս անփուտ և անեղծ մարմին, եթե թույլ տաս Ինձ մնալ քո մեջ: Եվ ինչպես մի զեփյուռ քո մեջ, ես պիտի թարմացնեմ քո հոգին ու դարձնեմ այն Քրիստոսի կատարյալ արտացոլումը: Եվ չնայած դու դեռևս պիտի լինես մարդկանց մեջ, քո միտքը պիտի լինի երկնքում, և չնայած քո մարմինը պիտի շարժվի

[1] Այսինքն՝ մեր հնազանդության միջոցով
[2] Ես. 49:6
[3] Այսինքն՝ սրտի դուռը:

մարդկանց մեջ, քո հոգին և միտքը, ինչպես հրեշտակինը, պիտի քայլեն Մեր Թագավորության Գավիթներում: Եթե դու բացես քո սրտի դուռն Ինձ համար, Ես կբոցավառեմ քո սիրտը և կազատեմ այն քո կրքերի ապականումից: Ես հաճախակի պիտի բոցավառեմ քո սիրտը, որ այրեմ բոլոր կրքերդ, որքան էլ նրանք փոքր լինեն, կրքերդ, որոնք քեզ դերի են պահում այս աշխարհում:

Ես Որդու Հայտնությունն եմ, և Որդին Հոր Հայտնությունն է[1] և Հոր պատկերը: Որևէ մեկը, որ չնորհ ունի տեսնելու Որդուն, տեսնում է Հորը[2], և որևէ մեկը, ով հասկանում է Իմ Սրբությունը, հասկանում է Որդուն և Հորը: Արի՛ և ժառանգի՛ր Ճանապարհը: Մենք պիտի պահենք քո միտքը, հոգին և սիրտը Մեր մեջ, որ ապրեն Մեր մեջ, և պիտի ծաղկեցնենք քեզ՝ քանդելով այն բոլոր սահմանները, որոնք քեզ դերի են պահում այս աշխարհում:

Արի՛: Արի՛ և ժառանգի՛ր Մեր Վեհությունը: Մենք կտանենք քեզ, ինչպես փեսան է տանում շեմքից ներս իր Հարսին իր ամուսնական սենյակը: Մենք քեզ նույնպես կտանենք Մեր Թագավորությունը, և Ես պիտի հեղեմ և հագեցնեմ քեզ Իմ անասելի օրհնություններով[3]: Քեզ կենդանի պահելու համար Ես քո հոգուն պիտի սովորեցնեմ, որ Հորը կանչի. «Ա՛բբա»: Ես պիտի սովորեցնեմ քեզ ապրել Մեր մեջ, շարժվել Մեր մեջ և շնչել Մեր մեջ: Ես պիտի սովորեցնեմ քեզ, որ Մենք Կյանք ենք, և Մեր մեջ դու միշտ կապրես:

Օրհնյալ է նա,
ով բուռն սիրով ցանկանում է Քեզ,
քանի որ նա պիտի տիրանա Քեզ
և պիտի լինի երիցս օրհնյալ:
Իմ կյանքի՛ Հրաշք,
Ես ի՞նչ եմ արել, որ տիրանամ Քեզ:
Անմա՛հ Շքեղություն,
որ անհնար է նկարագրել բառերով,
ի՞նչ եմ արել ես,
որ Դու ինձ միացնում ես Քեզ հետ:

(Քրիստոսը խոսեց):

Ես ուզում էի, որ դու դառնաս Իմ ուղեկիցը Սիրո մեջ: Արի՛ գնանք:

Նոյեմբերի 9, 1994

Իմ Վասո՛ւլա, Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Լսի՛ր և գրի՛ր.

[1] Ինձ տեսնել» նշանակում է տեսնել Հորը»(Հովհ. 14:9):
[2] «Չե՞ք հավատում, որ Ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ Իմ մեջ»(Հովհ. 14:10):
[3] Պարգևներ:

Ինչպես գիտես, նա, ով դիպչում է քեզ անարդար կերպով, դիպչում է Իմ Աչքի լույսին: Բայց ամո՛ւր եղիր, զավա՛կս, և աղոթի՛ր, որ հավատը վերականգնվի քո երկրում, քանի որ հավատը ամենքին չի տրվում: Ես Իմ Պատգամի Հեղինակն եմ, և Ես կհոգամ, որ այն արագորեն տարածվի: Սա Իմ Գործն է, և այն ամենը, ինչ քանդվել է մարդու ձեռքով, նորից պիտի վերականգնվի Իմ Ձեռքով:

Իսկ ինչ վերաբերում է քո երկրում քեզ ճնշողներին, որպես թշնամիներ մի՛ համարիր նրանց, այլ մարդիկ, որոնք նույնպես ընտանիքի մի մաս են կազմում և հետևապես սիրելի են Մեզ համար[1] ու կարիք ունեն աղոթքների: Թող քո սերը ավելանա, այլ ոչ թե պակասի, որպեսզի, երբ Ես գամ քեզ կանչելու, քո մեջ գտնեմ այն նույն սերը, որը Ես Ինքս ունեմ քո հանդեպ: Իմ ցանկությունն է քեզ պիտանի ու հարմար գտնել Իմ Թագավորության համար: Ընդունի՛ր քո խաչը և թո՛ղ, որ Հայրը հատուցի նրանց, ովքեր վիրավորում են քեզ:

(Սուրբ Երրորդությունը խոսեց):

Դու,որ այնքան սիրելի ես մեզ, ընդօրինակի՛ր Մեզ:

(Հետո խոսեց միայն Սուրբ Հոգին):

Ես կշարունակեմ ուղղություն տալ քեզ և Իմ Հրահանգները տալ, որ դու հարմար ու վայելուչ լինես Մեր Թագավորության համար: Քեզ ուղղված Իմ Հրահանգներում Ես կսովորեցնեմ ձեռք դնել քո եղբայրների և քույրերի վրա, որպեսզի նրանց հոգին ընկնի Իմ գիրկը: Մեռածները[2] պիտի հառնեն: Ես վեր պիտի բարձրացնեմ նրանց, սակայն ոչ բոլորին: Այդ Ես եմ, որ ձեզ կյանք և շունչ եմ տալիս: Մի՞թե չէք լսել, որ դուք Իմ մեջ եք ապրում, շարժվում և գոյություն պահպանում:

Ես կշարունակեմ հոգևորապես դաստիարակել քեզ Իմ Սիրով, Իմ Անսահման չափով, որպեսզի քո շարժառիթները դառնան Մեր շարժառիթների արտացոլումը, և քո բերանով Ես պիտի շարունակեմ խոսել և հարուցել մեռածներից շատերին:

Այդ Հայրն է, որ քեզ ուղարկում է ճամփորդելու, թեև Ես քեզ հետ եմ ամբողջ ժամանակ: Հոգի՛, Ես կշարունակեմ կերտել քեզ Մեր Պատկերի համաձայն, որպեսզի, երբ քո անցողիկ բնությունն անցնի, մեկ անգամ էլ քեզ հարություն տամ[3], որ քայլես Մեր Գավիթներում:

Վստահի՛ր Ինձ, Վասո՛ւլա, և թո՛ւյլ տուր Ինձ քո մեջ թրթռալ ազատորեն: Թո՛ւյլ տուր Ինձ շնչել քո մեջ, որպեսզի Ես կարողանամ շարունակել ուսուցանել քեզ Իմաստությամբ և խորհրդով: Ամեն ինչ, որ Ես անում եմ, մանկի՛կս, ձևական չէ, այլ Իմ Անսահման Սրբությունից և Փառքից է: Իմ Գիտելիքը մարմնավորում է Ճշմարտությունը: Արի՛ և տիրապետի՛ր Ճշմարտությանը և այն ամենին, որ Ես ունեմ: Դա ձրի տրվում է ողջ մարդկությանը:

---

[1] Սուրբ Երրորդությանը:
[2] Հոգևոր մահը:
[3] Առաջին հարությունը հոգու հարություն է՝ դարձը: Այս հարությունը մեռելների հարություն է:

Հետամուտ եղեք Իմ բարությանը, Իմ համբերությանը, Իմ հանդուրժողությանը, որպեսզի ձեր թուլության մեջ այս պարգևները ձեր միտքն ու սիրտը տանեն դեպի ավելի խոր ապաշխարության: Այո՛, ապրե՛ք սրբորեն, ինչպես Ես եմ Սուրբ... Եղե՛ք սուրբ ձեր ամեն մի արարքում և թույլ մի՛ տվեք Ինձ փախչել Իմ բնակարանից[1] սրբության պակասի հետևանքով:

Թող ձեր հավատարմությունը Մեր հանդեպ աճի և լինի այնպես, ինչպես Մեր հավատարմությունն է[2], որ պահպանի ձեզ թմրության և անտարբերության ոգու և աշխարհի չարիքների մեջ ընկնելուց: Թող ձեր ուրախությունը լինի Մեր մեջ:

Աղջի՛կս, աղոթի՛ր, որ մարգարեությունները արագորեն կատարվեն, և որ Ես՝ Աստծո բացարձակ կատարելությունը, ձեր Հոգու արտահայտությունը, ձեր աչքերի լույսը, իջնեմ ձեր մեջ, որպեսզի աշխարհին ցույց տամ, թե որքան սխալ էր ինքը, որպեսզի եկեղեցիներին ցույց տամ նրանց բաժանման անօրինությունը, և այն, որ նրանք սիրալիր և կարեկցաբար չեն տրամադրված մեկը մյուսի հանդեպ՝ չնայած որ նրանք ամեն օր հայտարարում են, որ մեկ Տեր կա, մեկ հավատ, մեկ մկրտություն և մեկ Աստված, որը բոլորի Հայրն է, բոլորի վրա, բոլորի միջով և բոլորի մեջ: Մենք չենք կարող ասել. «Դու արել ես ամեն ինչ պահպանելու համար այն միասնությունը, որը Ես առաջարկեցի քեզ սկզբում, երբ դու դեռևս մի մանուկ էիր[3] և գտնվում էիր Իմ Բազուկների մեջ»:

Այսօր դու ասում ես. «Ես այլևս մանուկ չեմ, և ես կարող եմ ինքնուրույն քայլել»: Եվ այդ պահից սկսած՝ դու դուրս եկար Իմ գրկից և սովորեցիր քայլել քո սեփական ճանապարհով... Ո՛վ Հոր զավա՛կ, Որդո՛ւ պտուղ, Իմ Քաղա՛ք և Իմ Հարս[4], քո բուրմունքը լքեց քեզ... Արդյոք կենդանի մնացածներ կլինե՞ն քո մեջ, երբ Ես ողջ ուժով իջնեմ ներքև:

Ես կանգնած եմ ձեր դռների մոտ և թակում եմ: Եթե ձեզանից որևէ մեկը լսի Ինձ կանչելիս և բացի դուռը, Ես ոչ միայն ներս կմտնեմ՝ նրա կերակուրն իր հետ կողք կողքի կիսելու, այլև նրա մարմնի վրա պիտի դրոշմեմ Իմ նոր Անունը: Հետո դուք պիտի կանչեք Իմ Անունը, և Ես պիտի լսեմ ձեզ և մեկ անգամ ևս ասեմ. «Սրանք Իմ ժողովուրդն են, մի սուրբ քահանայություն, և Ես պիտի ապրեմ սրանց բոլորի մեջ»:

Մի՞թե չես լսել. «Մարմինը խոտ է, և նրա գեղեցկությունը վայրի ծաղկի նման է: Խոտը թառամում է, ծաղիկները՝ թոշնում, բայց Տիրոջ խոսքը մնում է ընդմիշտ»[5]: Ուրեմն ինչո՞ւ ես ինքդ քեզ «Աստված» կոչում և ինքդ քեզ թագադրում Սրբարանում: Արի՛, ապաշխարի՛ր և թո՛ւյլ տուր Ինձ ետ տանել քեզ դեպի քո աստվածայնությունը: Եթե թույլ տաս Ինձ լինել քո Ջահը և Լույսը, ոչ մի աշխարհիկ օրենք չի դիպչի քեզ: Արի՛ և ժառանգի՛ր Մեր Թագավորությունը չիտակ հոգով: Խնդրեցե՛ք Իմ պարգևները, և Ես կտամ դրանք ձեզ: Ինչպե՞ս կարող եք ասել ձեր հոգուն. «Հոգի՛, հիմա դու բավական լավ բաներ ունես, ընդունի՛ր ամեն ինչ,

[1] Հոգին բնակվում է մեր մեջ:
[2] Երրորդության Անդամների միջև:
[3] Նախնական եկեղեցին:
[4] Սուրբ Հոգին խոսում է եկեղեցու հետ:
[5] Ես. 40:6-8

ինչպես որ կա: Լա՛վ ժամանակ անցկացրու և լողա՛ քո հարստության մեջ, պարզ է, որ ժառանգությունը քոնն է»:

Վա՜յ ձեզ, որ շնություն եք անում: Վա՜յ ձեզ, ձեր զրպարտող մեղադրանքների համար, որ արվել են ձեր կողմից, որ շարժվում եք կրոնի արտաքին տեսքով, բայց մերժում եք Եկեղեցու ներքին ուժը: Դուք իրականում չարի անդամներ եք, որ երբեք չեն հասկանում, որ դուք անապատ և երաշտ եք, մի քայլող թշվառություն, խղճալիորեն աղքատ ու նաև մերկ: Ինչպե՞ս կարող էիք մտածել, թե ես կարող էի ապրել ձեր մեջ[1] և առաջարկել ձեզ Իմ պարգևները, ձեզ, որ պարտական եք մեղքին: Մի՞թե չեք լսել, որ ես որքան եմ խուսափում խաբեությունից:

~ Ա՛հ, Վասո՛ւլա, որքա՜ն քչերը գիտեն Ինձ: Այդ ես եմ, որ պահում եմ ամեն բան միասին, որ ամեն տեղ եմ և գիտեմ ամեն ինչ մինչև Աստծո խորքերը: Թող քո սերն աճի Իմ մեջ և քո ուրախությունը կատարյալ լինի Իմ մեջ, որպեսզի քո հոգին գովերգի Ինձ: Թող քո սիրտը խաղաղության մեջ լինի Ինձ հետ և քո հոգին՝ ներող: Համբերությա՛մբ տար քեզ վստահված խաչը, քանի որ ամեն ինչ, որ անում ես, իզուր չի անցնում:

Հատուցի՛ր չարությանը բարությամբ: Հատուցի՛ր չարին մեծահոգությամբ ու սիրով: Հոգատա՛ր եղիր աղքատների և թշվառների հանդեպ, որպեսզի ես փառավորվեմ: Եղի՛ր հավատարիմ և վստահի՛ր միայն Ինձ՝ քո Աստծուն:

Դու միայնակ չես: Ես՝ Սուրբ Հոգին, քո կյանքն եմ և Նա, ով առաջնորդում է քեզ դեպի Մեր Թագավորությունը:

Աղոթի՛ր առանց դադարի և եղի՛ր սուրբ Իմ Ներկայությամբ:

Նոյեմբերի 11, 1994

Տե՞ր:

Ես եմ...

Տե՛ր, երբ ստախոսները հետապնդում են ինձ, Դու պետք է օգնես ինձ[2]:

Ասա՛ Ինձ որևէ մեկի անունը, որ կարող է դեմ կանգնել Ինձ:

Ոչ մեկը չկա Քեզ նման:

Ուրեմն վստահի՛ր Ինձ... Ես հեռու կվանեմ քեզ ճնշողներին, և Ինքս կպաշտպանեմ քո շահերը: Ես քեզ հետ եմ, ուրեմն էլ ո՞ւմ կարիքն ունես:

[1] Եկեղեցու անդամների
[2] Սաղմ. 118:86

Սուրբ ես Դու և Հզոր:
Քո Ներկայությունը
Շուք և Վեհություն է:
Ես ոչ մեկի կարիքը չունեմ՝
իմ Արարչից բացի:

Ես երդվել եմ երբեք չլքել քեզ: Որթատունկի՛ Ճյուղ, ինչքա՞ն կարող եմ ապացուցել քեզ, որ այս ամբողջն Իմ Գործն է: Հո՛ղ, տո՛ւր Հիմա քո բերքը: Խոսի՛ր, փոխանցի՛ր՝ առանց վերապահության, ինչ սովորել ես Ինձանից: Մինչ դու խոսում ես, Ես փառավորվում եմ, իսկ դու սրբագործվում ես: Դու իսկապես Իմ Ձեռքերում ես:

Ես պիտի շարունակեմ օգնել քեզ և թարմ պահել հիշողությունդ: Ուստի արի՛ այժմ «մենք» հանգստանանք: Ես՝ քո մեջ, և դու՝ Իմ մեջ: ic

Նոյեմբերի 25, 1994

(Ֆրանսիա)

Տե՛ր իմ:

Ես եմ:

Հենվի՛ր Ինձ վրա... Խաղաղությո՛ւն, զավա՛կս: Լսի՛ր և հասկացիր. հենվի՛ր Իմ Հսկայական Զորության և Անսահման Ողորմության վրա: Քարոզի՛ր այն ձևով, ինչպես Ես եմ քարոզել քեզ: Հետևի՛ր Օրենքի էությանը[1]: Ես կհիշեցնեմ քեզ ամեն ինչ, որ պետք է ասվի:

(Ապա Քրիստոսը տվեց այս պատգամը Ֆրանսիայի համար):

Այս օրերին Ես քուրձ եմ հագել՝ Իմ վիշտը ցուցադրելու համար: Մի՞թե չեք նկատել, թե ինչպես եմ իմ քայլերն ուղղել դեպի անապատ՝ փնտրելու Իմ ամենամեծ դստերը[2]: Այսօր եթե Ես գնացել եմ անապատ՝ քեզ փնտրելու, այդ նրա համար է, որպեսզի փորձեմ քո անվան իսկությունը, քանի որ դու առաջինն էիր ընտրվել, որ Իմ սերը տարածեիր:

Ես երբեք չեմ մոռանա, որ դու Իմ հպարտությունն ու Իմ պարծանքն էիր, և թե որքան հնազանդ էիր դու: Ուրեմն ի՞նչ եղան այն բացառիկ եռանդն ու նվիրվածությունը, որ ունեիր այն ժամանակ: Մի ժամանակ Ես գրավիչ էի քո սրտի համար: Ինչպե՞ս կարող էիր մոռանալ այն բոլոր շնորհները, որ դեռ երեկ ստացար Ինձանից: Իմ Եկեղեցո՛ւ Դուստր, Դու ժառանգորդ ես Իմ Թագավորության: Ես եկել եմ քեզ մոտ, որ վերականգնեմ քո նվիրումը Իմ Սուրբ Սրտին՝ խոստում տալով[3]: Ընծա՛ Իմ Հորից, դու, որ մի ժամանակ Իմ Շահերի պահապան էիր, մի՛ ստիպիր

[1] Այսինքն՝ Սիրուն: «Սիրով ավետարանի՛ր Սիրո համար»:
[2] Ֆրանսիային տրված տիտղոս:
[3] Ֆրանսիան պետք է հավատարմություն խոստանա Սուրբ Սրտին:

Ինձ, որ ասեմ. «Իմ Սեփականությունը տրվել է ուրիշի [1], և վերակացուներն են լցվել այնտեղ՝ փոխանակ թույլ տալու Իմ Հոգուն մնալ Իր տեղում: Իմ նստավայրը հիմա կառավարվում է մարդու կողմից»: Վերադարձի՛ր Ինձ մոտ և նորից ուղղի՛ր սիրտդ: Ապաշխարի՛ր և ճանաչի՛ր քո մեղքը Իմ Հոր Ներկայությամբ, և Ես կարձագանքեմ ապաշխարության քո կանչին:

Դեկտեմբերի 1, 1994

Տե՛ր, իմ Ապաստա՛ն,
իմ Սփոփա՛նք, իմ Ժպի՛տ,
իմ Աղբյո՛ւր, իմ Տիեզե՛րք,
Ես սիրում եմ Քեզ:

Խաղաղությո՛ւն քեզ: Զգա՛ Իմ կարիքը: Ես քո կյանքի Ակունքն եմ, Ես քո ուրախության ակունքն եմ: Զգա՛ Իմ կարիքը, ինչպես օդի կարիքն ես զգում, որը շնչում ես: Ուզո՞ւմ ես այսօր նստել ու աշխատել Ինձ հետ[2]:

Այո՛, այո՛: Աստված Ինքն է
իմ ուրախությունն ու կյանքը,
այն Աստվածը, որ սիրում է ինձ:
Արի՛ և օգնի՛ր մեզ
ճգնաժամի այս ժամին.
մարդու կողմից
այդպիսի օգնություն չկա:

Աղջի՛կս՝ հարուցված և ձևավորված Իմ կողմից, այնքան քչերն են, որ լսում են: Մեղքը դեռևս կենդանի է նրանց սրտերում, հպարտությունը ղեկավարում է նրանց: Քո սերունդը գնում է դեպի արյունահեղություն: Ես այլևս թաքնված չպիտի մնամ: Իմ Արդարությունը պիտի գործի հիմա: Ես երբեք չեմ դադարել Իմ պատգամատարներին ձեզ մոտ ուղարկելուց, որ նախազգուշացնեն ձեզ, սակայն մինչ օրս դուք մերժել եք, չեք ընդունել և բարկացել եք Իմ պատգամատարների վրա: Իմ քահանայական հոգիներից շատերը, որոնք նստում են բարձր տեղերում, երդվել են ճգմել նրանց:

Ես ձեռնարկել եմ բոլոր միջոցները՝ հասնելու համար այս անհավատ սերնդին, որ փրկեմ նրան և չշնջամ նրա սրտում առողջ միտք ու դատողություն, բայց Իմ Հոգին հալածվում է նրա հոգու կողմից: Գարշելի են նրանք, որոնց հավատարմությունը չար ու վնասակար է: Ես նորից ու նորից տվել եմ նրանց Իմ Սիրո նշանները, բայց նրանք Իմ Սերը գցել են իրենց ոտքերի տակ: Ահա թե ինչու Ես ներքև պիտի իջնեմ՝ որ կոտրեմ

[1] Վաճառվել է:
[2] Հիսուս նկատի ուներ, թելադրության համար:

չարերի զորությունը, և այդ Ես եմ, որ պիտի հալածեմ չարակամներին, մինչև որ ոչ մեկը չմնա:

Ես Իմ Աչքերը շրջում եմ աշխարհից, որ այլևս չնայեմ նրանց չարությանը և նրանց, ովքեր ասում են. «Մեր լեզվի մեջ է մեր ուժը, մեր շուրթերը առավելություն ունեն: Ո՞վ կարող է տիրել մեզ»[1]:

Հիմա չարությունը, եսասիրությունը և անօրինությունը աչքի են ընկնում մարդկության տղաների ու աղջիկների մեջ... Իմ սրբերի հավաքույթները երկնքում սգում են այն պատկերի համար, որ նրանք ընդունել են... Նրանք գազանի պատկերով փոխարինել են Մեր Պատկերը[2], որը Մենք էինք տվել նրանց, և որը բնորոշում էր նրանց՝ որպես Ամենաբարձրյալի տղաների և աղջիկների... Այսօր, որքան ավելի շատ եմ Ես կանչում նրանց Իմ պատգամատարների միջոցով, այնքան նրանք ավելի են հեռանում Ինձանից:

(Պատգամ Հռոմի համար)

Մի ժամանակ դու Իմ Եդեմն էիր, Հռո՛մ, բերկրանքների Իմ պարտեզը: Նույնիսկ Իմ հրեշտակներն զարմացած էին մնացել քո կատարյալ գեղեցկությամբ, և դու կառավարում էիր Իմ Տունը սրբությամբ և արդարությամբ: Անկեղծությունն ու սերը Իմ Տան հոգին էր: Դու, արդարև, Իմ Հավիտենական Լույսի արտացոլումն էիր, որ թողեցիր մի հարատև հիշողություն Իմ սրբերին ու հրեշտակներին: Այն ժամանակ քո հարստությունն ու գանձերը երկնային էին:

Այսօր, Հռո՛մ, քո հոգին դարձել է Գազանի արտացոլումը, և դու ընդունել ես պահակի պաշտոն Իմ տարածքում, որ արգելես Իմ Սուրբ Հոգու և մարգարեների մուտքը, ովքեր մարգարեանում են Իմ Անունով՝ կանչելով քեզ ապաշխարության, որ հրաժարվես քո չար ուղիներից: Քեզ փրկելու համար Ես Ինքս եմ գալիս քո դռան մոտ հիմա, որ դիմեմ քեզ: Մի՞թե չես կարդացել. «Աստծո զավակը լսում է Աստծո խոսքերը»[3]: Բայց մինչև այժմ Իմ ասած ոչ մի խոսքը չի ներթափանցել քո մեջ: Քեզ համար Իմ Խոսքերը մեռած են և ոչնչություն են: Իմ շնորհը մերժվել է, և Իմ փրկության ծրագիրը՝ կասկածի ենթարկվել: Դու չափից դուրս ըմբոստ և ամբարտավան ես, երբ հարցը վերաբերում է ճշմարտությանը: Այդ է պատճառը, որ հավակնում ես, թե գիտություն ունես և ճանաչողություն՝ Իմ Երկնային Գործերի մասին, որպեսզի արատավորես Իմ պատգամատարներին, որոնք քո խավարն են բացահայտում աշխարհին...

Իսկ դու, աղջի՛կս, երբեք չպաշտպանես ինքդ քեզ: Շատ վկաներ կան, որ կարող են օգնել քեզ, բայց նրանցից ամենամեծը Իմ Սուրբ Հոգին է: Հույսդ դիր Ի՛նձ վրա, որ զորություն ունեմ փրկելու քեզ: Եթե նրանք շարունակեն վատ վերաբերվել քեզ, անարդար կերպով, եղի՛ր շատ խոնարհ, քանի որ պատիժը, որ Ես պահել եմ նրանց համար, կրակն է լինելու: Դու պետք է ակնկալես մերժումներ և խոչընդոտներ, քանի որ մեղքը տիրապետել է նրանց... Շարունակի՛ր հռչակել Իմ Անվան մեծությունը

[1] Սաղմ. 11:4
[2] Ամենասուրբ Երրորդության Պատկերը:
[3] Հովհ. 8:47

ամեն մի ազգի, որ Ես եմ քեզ ուղարկում, ուստի «lo tedhol!»[1]: Այո՛, չվախենա՛ս:

[2]Ես պիտի շարունակեմ դուրս հեղել Իմ Սուրբ Հոգին ձեզ բոլորիդ վրա և ցուցադրել Իմ Սիրո մեծությունը: Մի՞թե չեք կարդացել. «Երբ խաղողի ողկույզների մեջ լավ խաղող կա, մարդիկ ասում են. «Մի՛ ոչնչացրու դա, նրա մեջ օրհնություն կա»[3]: Ես պիտի անեմ նույն բանը Հանուն նրանց, ովքեր ծառայում են Ինձ ճշմարտությամբ և հնազանդվում են նրան[4], ով հետ է պահում Ըմբոստությունն Իմ Տան մեջ:

Ես հրաժարվում եմ ոչնչացնել ամենքին: Բայց վա՜յ արյունոտ ձեռքերին: Իսկ քեզ մոտ, որ պահակի պաշտոն ես վերցրել՝ արգելելով Իմ Սուրբ Հոգուն մտնել Իր տարածքը, Ես կուղարկեմ ազգերից ամենաբարբարոսին, որ շրջապատի քեզ: Ես քո անապատի մեջ կատաղության կրակ կգցեմ մի ամպի հետ, որը կծածկի քո քաղաքները: Այդպիսով՝ քո խավար ժամանակաշրջանը կավարտվի...

Տե՛ր իմ, ի՞նչ կլինի դրա արդյունքը:

Արդյո՞ւնքը: Արդյունքը կլինի

Իմ Խոստումը՝

Նոր Երկինքն ու Նոր Երկիրը... Հռո՛մ, ո՞վ է երբևէ ցույց տվել այսպիսի վճռականություն, ինչպիսին Իմն է, քեզ փրկելու համար: Իմ փառքը ծագում է քեզ վրա, չնայած գիշերը դեռևս ծածկում է քեզ: Քո վերևում Իմ վեհությունն է հայտնվում: Այդ ինչպե՞ս է, որ չես կարողանում ճանաչել ժամանակները, ոչ էլ նշանները:

Ես դեռևս չեմ լսել Իմ Տնից նրանց ապաշխարության կանչը: Նույնիսկ հիմա նրանք չեն լսում, այլ թակարդներ են լարում Իմ պատգամատարների համար: Եթե նրանք լսեին և ապաշխարեին, կկարողանային շատերին հետ բերել իրենց չար ուղիներից և չար արարքներից, որոնք նրանց հասցրին ուրացության: Նրանք երբեք դադար չեն առնում, որ նկատի առնեն, որ Ես գիտեմ իրենց ողջ չարության մասին: Եվ հետևաբար, մինչև նրանք չգան խոստովանելու իրենց մեղքը և փնտրելու Իմ Սուրբ Հոգին, Ես չեմ մեղմանա...

Արի՛, աղջի՛կս, արի՛ գնանք:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 7, 1994

Յա՛հվե, դեռ որքա՞ն պիտի տևի

---

[1] «Lo tedhal» նշանակում է «Զվախենա՛ս» արամերեն:
[2] Հռոմի պատգամի շարունակությունը:
[3] Ես. 65:8
[4] Պապին:

այս աքսորը: Բայց Ես գիտեմ,
որ Յահվեն քնքուշ է,
և ինչպիսի քնքշությամբ,
որ հայրն է վարվում իր զավակին,
այդպես էլ Յահվեն է
վարվում ինձ հետ:
Ինձ դո՛ւրս հանիր
այն գրպարտանքների միջից,
որ նրանք տարածել են իմ մասին,
քանի որ Դու ես
իմ միջնորդ Դատավորը:

Հենվի՛ր Ինձ վրա, Ես՝ Յահվեն, կսփոփեմ քեզ...

Իմ սածի՛լ, Ես ձևավորել եմ քեզ Իմ Գավիթներում, որ դառնաս Իմ Արձագանքը և Իմ զորեղ պատգամատարը, մի սուր՝ Իմ Թշնամու դեմ[1]: Մի՛ վախեցիր: Մի՞թե այդ Ես չէի՝ Յահվեն՝ քո Աբբան, որ փրկեցի քեզ: Մի՛ վախեցիր, դու Իմն ես և հայտնի է, որ Ես պաշտպանում եմ Իմ Յուրայիններին... Եթե քեզ ճնշողները հավաքներ կազմակերպեն քո դեմ, Ես քեզ հետ կլինեմ: Եթե նրանք կեղծեն Իմ Պատգամները՝ գրպարտելով քեզ, Հանուն Իմ Անվան՝ Ես ավելի ու ավելի ցույց կտամ քո հասարակությանը Իմ Որդու Սուրբ Դեմքը քո դեմքի փոխարեն[2], ինչպես որ կանխասացվել է:

Քեզ ճնշողները չեն խեղդի քեզ: Ես միշտ վեր պիտի բարձրացնեմ քեզ, որ ուրախացնես Իմ Սիրտը: Եթե նրանք հավաքվեն բոլորը միասին, որպես մի մեծ ուժ՝ քեզ ճզմելու համար, դու չես ճզմվի, որովհետև դու թանկ ես Իմ Աչքին: Իմաստության Ոգին և խորաթափանցությունը խոստացվել են քեզ, որ արթնացնեն քո սիրտը և ուրիշների սրտերը[3]: Մի՞թե դու հաշվի չես առել Իմ հաղթանակները:

Իմ էության խորքերից Ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ: Թող քեզ ճնշողներն առաջ դան և բացատրեն Ինձ քո գիտելիքը Իմ Գիտության մասին...

Լսի՛ր, աղջի՛կս, <u>Հանուն քեզ</u>՝ Ես պիտի բերեմ արևելքի քո եղբորը, որ պատվի Իմ Անունը: Արիացի՛ր հիմա: Հույսի մի ընձյուղ պիտի ծագի Արևելքի Իմ Տնից: Մինչ Իմ Արևմտյան Տան մեջ մարդիկ կկռվեն միմյանց հետ, մինչ մարդկային հպարտությունը կաճի պայթելու աստիճան, և մինչ ձեր երկրները կշարունակեն լցվել ըմբոստության ոգով՝ քայքայվելով գանգրենայի նման, հիշի՛ր, թե Ես՝ Աստված, ինչ ասացի քեզ այդ պատահելուց շատ առաջ.

<u>Իմ փառքի թագը</u>
<u>Ինձ պիտի տրվի արևելքից:</u>

---

[1] Սատանան և նրա նմանները:

[2] Գերբնական երևույթ, որ տեղի է ունենում, երբ էլ որ Աստված դա ցանկանում է: Դա տեղի է ունենում նույնիսկ տեսաժապավենների մեջ:

[3] Ճիշտ է, շատ ու շատ ապաշխարություններ ու հրաշքներ տեղի ունեցան: Եվ չնայած մեղադրանքներին և ուժեղ հետապնդումներին՝ Պատգամը բավականին տարածվել է աշխարհով մեկ և հայտնի է դարձել: Թարգմանվել է 41-ից ավելի լեզուներով կամավորների կողմից:

Սրա համար է, որ Ես քո համագործակցության կարիքն ունեմ, աղջի՛կս, քո զոհողության՝ Իմ Տան համար: Քո չարչարանքները շատ են լինելու, զավա՛կս, բայց կրիր դրանք արժանապատվությամբ, որ պատվես Իմ Անունը, և դրանց միջոցով վերջում Ես կհաղթանակեմ: Ես Իմ զավակին պիտի բարձրացնեմ Արևելյան Տնից, որ առաջ չարժի միասնությունը և վերջում բոլոր ազգերը պիտի համախմբվեն Մեկ Անվան տակ...

- Հենց սկզբից[1] Իմ Որդին հարցրեց քեզ, աղջի՛կս, թե երկու տներից ո՞րն է ավելի կարևոր՝ ք՞ո տունը, թե՞ Մեր Տունը: Քո պատասխանը պատվեց Ինձ, և այդ ժամանակ Ես շրջվեցի դեպի Իմ հրեշտակները և ասացի նրանց. «Դիակից[2] եկող <u>այս</u> պատասխանի համար Ես կարագացնեմ նրա ապաքինումը, և նրա բուժումով շատերը կբուժվեն... Ես նրան կվստահեմ Իմ Տան Շահերը, և նա կդառնա Իմ ուրախության թեման, Իմ հաճույքը և Իմ երգը: Ես նրան կուղարկեմ Իմ Անվամբ՝ Իմ Խաղաղության և Սիրո Պատգամները հռչակելու երկրի բոլորի ազգերին, սրբերին, ինչպես նաև մեղավորներին. «Լսե՛ք, ինչ որ ասվում է Երկնքից, ապաշխարե՛ք և ներեցե՛ք: Եթե վերադառնաք Աստծուն, գովաբանեք Նրա Անունը և աղոթեք առանց դադարի, ձեզ ներում <u>պիտի</u> լինի»: <u>Սա</u> պիտի լինի նրա թեման»:

Ա՛հ, այո՛, Իմ Վասո՛ւլա, Ես գիտեի քեզ նախքան քո ծնվելը, և Ես գիտեի, որ ուղարկելու եմ քեզ Զարիքի և Տանջանքի մեջ[3]: Ահա թե ինչու Ես և դու դաշինք կնքեցինք սկզբից՝ քո առաքելության համար քեզ պատրաստելով[4]:

(Ավելի ուշ Յահվեն կանչեց ինձ, որ շարունակեմ այս պատգամը և ավելացնեմ այս մասը):

...Քանի որ դու նրանց մեջ ես, որոնց Ես ուղարկում եմ այս մեծ պատերազմի համար, որը դու տեսար սկզբում՝ քեզ Իմ կողմից տրված տեսիլքում, Իմ Մեծ Օրվա Ճակատամարտը[5] երեք անմաքուր հոգիների դեմ, որոնք կապկում են Իմ Սուրբ Երրորդությունը՝ իրենց եռանկյունու ձև տալով [6] իրենց: Այս երեք կեղտոտ հոգիները, որոնցից ամեն մեկը մի անկյուն է զբաղեցնում, այլ կերպ կոչվում են վիշապ, առաջին և երկրորդ գազանն էր: Մեծ վիշապը՝ առաջին օձը, որը հայտնի է նաև որպես դև կամ սատանա, արդեն շատ կարճ ժամանակ պիտի շարունակի աշխարհին մոլորեցնել: Եվ այն ուժն ու իշխանությունը, որը նա տալու է գազանին, երկրորդ գազանի հետ միասին, այլ կերպ ասած կեղծ մարգարեն վայր պիտի գցվեն, և Ես պիտի հաղթանակեմ:

Ահա թե ինչու Ես խնդրեցի քեզ ծոմ պահել, հենց որ ծնվեցիր[7]... Ես

---

[1] 1986 թվականին
[2] Հոգևորապես մեռած:
[3] Հայտ. 6:7, 11:6, 13:12, 16:2, 16:11
[4] Իմ աչքերը երեք օր և երեք գիշեր փակված էին մնացել և չէին բացվում:
[5] Հայտ. 16:14
[6] Գազանի նշանը, որը տեսնում ենք (այս դելտան) շենքերի վրա և շենքերի վրայի տառերի մեջ, ինչպես նաև այլ տեղերում:
[7] Երբ Ես ծնվեցի, աչքերս չէին բացվում երեք օր ու երեք գիշեր:

ստիպեցի քո հոգուն երդվել Իմ Խորանի առաջ, որ մնա խավարում երեք օր ու երեք գիշեր:

Ուրեմն հիմա ասա՛ այս սերնդին, թե Ես որքան եմ զզվում իր իմաստությունից: Չնայած նրանք նմանվել են ավելի վայրի կենդանիների, քան սրբերի, որոնք Իմ նմանությունն ունեն, Ես դեռ այրվում եմ նրանց հանդեպ ունեցած Իմ սիրուց: Ես քո Աստվածն եմ, իսկ դու, սերո՛ւնդ, թեպետ այնքան չահագրգռված ես պղծելու Իմ Անունը, դու Իմ զավակն ես: Գալիս են այն օրերը, երբ մեկը մյուսին ասելու է, «Որքա՜ն եմ նախանձում այս մեռածներին, որքա՜ն կուզենայի լինել նրանցից մե՜կը... Ինչո՞ւ էի ես նրանց մեջ, ովքեր բոցով այրված խարանի պես էին»: Այսօր Ես խոսում եմ Իմ Սրբարանի սրտում. «Այն խոսքը, որ Ես ասում եմ քեզ, քեզ դատապարտելու համար չէ, այլ քո հոգին վերականգնելու և քեզ փրկելու համար»:

Իսկ քեզ, աղջի՛կս, ում Ես ընտրել եմ, Ես կօգնեմ քեզ: Սա մի խոստում է Սրբից: Ես քեզ հետ կդնեմ մի հրեշտակի, որ երբ դու վազես, չթուլանաս, երբ քայլես, երբեք չհոգնես, քանի որ նա կտանի քեզ իր թևերի վրա, իսկ Ես Իմ կողմից կնորոգեմ քո ուժը:

Արիացի՛ր, աղջի՛կս, Ես օրհնում եմ քեզ:

(Ավելի ուշ)

Հիսո՛ւս Քրիստոս, ի՞նչ կարող եմ ես անել Քեզ համար:

Սիրի՛ր Ինձ... Թող քո սիրտը լինի Իմ բուրմունքը, բուրմունք, որը կմիավորի ու մեկ կդարձնի Իմ Տունը, բուրմունք, որը կարող է Իմ շիվը բերել Արևելքից, որ կանչի. «Ամենը ցանկանում է, որ Իր խոստումը կատարվի: Հարուցյալ Քրիստոսը հենց մեր դռների մոտ է վշտոտ Աչքերով... քանի որ մենք կրկնապատկել ենք Նրա տառապանքը, Նրա խաչը և Նրա խաչելությունը:

Սուրբը իմ դռների մոտ է, եղբա՛յր[1]: Ինչպես Իր Հայտնության ժամանակ Նա ասաց Իր աշակերտներին, այնպես էլ ասում է ինձ. «Խաղաղությո՛ւն քեզ: Ինչպես որ Հայրն ուղարկեց Ինձ, Ես ուղարկում եմ քեզ[2], գնա՛ հիմա և հանդիպի՛ր քո եղբորը և միավորի՛ր Զատկի ամսաթվերը, հետո Ես կտամ ձեզ սիրո պարգևը և կվերականգնեմ ձեր տեսողությունը: Ես չեմ ուզում, որ կործանվեք ձեր սեփական հիմարությամբ: Արդարև կրկնակի է Իմ վիշտը: Կրկնակի է Իմ տնքոցը: Գնա՛ հիմա և թեթևացրո՛ւ Իմ ցավը, եղբա՛յր, գնա՛ և փառաբանի՛ր Ինձ՝ միասնական դարձնելով Զատկի ամսաթվերը»:

Վասո՛ւլա, վերջում Մեր Երկու Սրտերը պիտի հաղթեն:

ΙΧΘΥΣ

[1] Հռոմի կաթոլիկներ:
[2] Հովհ. 20 : 21

Դեկտեմբերի 16, 1994

Իմ խաղաղությունը քեզ:

Երբեք բաց չթողնես Իմ հանդերձը, կառչի՛ր Իմ փեշից... Իմ Հոգին զորություն կտա քեզ, հաստատակամություն, խիզախություն և բոց՝ ուրիշ սրտեր բոցավառելու համար: Ես ասում եմ քեզ. Ես հուսախաբ չեմ թողնում ո՛չ մեկին, ով փառաբանում է Ինձ, ոչ մեկը, որ ջրում է չորացած հողը, չի անտեսվում Իմ կողմից: Իմ Սիրտը այնքան զգայուն է ու մաքուր և չի կարող չհուզվել: Իմ գթասրտությունը հետևում է քեզ մոր նման: Հոր նման Ես հետևում եմ քո վարքագծի յուրաքանչյուր կողմին:

Ես սիրում եմ քեզ, չկասկածես Իմ Սիրուն: Դու Իմ աշակերտն ես, իսկ Ես՝ քո Ուսուցիչը: Ես քեզ չեմ սովորեցնում՝ լոկ քեզ ուսուցանելու համար, այլ Իմ Ուսուցումները նախատեսված են ձեզ բոլորիդ համար... Իմաստությունը քո Սուրբ Ուղեկիցն է: Եկեղեցին պիտի վերակենդանանա:

Զթողնես գրելը, Իմ Ձեռքը պիտի ղեկավարի քո ձեռքը, և շատերը պիտի լսեն Իմ ձայնը, քանի որ սա՛ է Իմ Կամքը և այն պիտի կատարվի: Իսկ դու, աղջի՛կս, սիրի՛ր Ինձ, ցանկացի՛ր Ինձ և գրի՛ր: Եղի՛ր Իմ Արձագանքը: Արա՛, ինչ կարող ես, իսկ Ես կանեմ մնացածը:

Դեկտեմբերի 18, 1994

Տե՛ր, Դու խորասուզել ես ինձ
Գիշերվա խորքերում,
նրա ամենամութ, ամենախոր մասում
Դու մխրճել ես ինձ:
Ինչո՞ւ ես թաքցնում
Քո Դեմքն ինձանից:
Ինչպե՞ս կարող եմ ես լսել
Քո աքանչելի Ձայնը խավարում:
Ես պարզում եմ ձեռքերս՝
որոնելով Քո Ձեռքը,
Քո հագուստի քղանցքը,
բայց ոչինչ չեմ գտնում,
որից կարողանամ կառչել:

Իմ Սերը քո հանդեպ սահմաններ չունի: Եթե անցնում ես գիշերվա սարսափների միջով, մի՛ վախեցիր... Իմ Վասո՛ւլա, Ես քեզ հետ եմ: Ես քեզ հետ եմ: Ես Իմ սփոփանքն եմ գտնում քո վշտի ու դառնության մեջ: Դու Իմ մխիթարությունն ես, Իմ գլխի հենարանը և Իմ Այգին: Թող քո սիրտը նվաղի Իմ կարոտից:

Մի՛ նախանձիր չրջապատիդ և թույլ մի՛ տուր, որ սիրտդ անհեթեթություններ խոսի: Դու հավատով գալիս ես Ինձ մոտ, դրանից ավելի մեծ ի՞նչ հրաշալիք կա բոլոր հրաշալիքների մեջ: Ես ասում եմ քեզ,

որ դու քո վարձատրությունը կստանաս վերջում: Ես նշանակել եմ քեզ՝ որպես Իմ Արձագանքի, որ մի քանի անգամ կրկնես Իմ ասած բառերը: Դու իսկապես անո՞ւմ ես, ինչ կարող ես՝ Ինձ գոհացնելու և Ինձ ծառայելու համար:

Եթե անում եմ, դա Քո Շնորհի Հոգու միջոցով է:

Տե՛ս, այսօր Ես կարգել եմ քեզ բազմաթիվ ազգերի վրա, որ լինես Իմ Արձագանքը և վերակենդանացնես Իմ Եկեղեցին, որ միավորես և ծաղկեցնես Իմ Եկեղեցին: Իմ թագավորությունը երկրի վրա՝ մոտ է, և Իմ հոտը փրկելու համար Ես զոհաբերության, մեծահոգության և սիրո կարիք ունեմ... Դու ինքդ տես՝ որքան աննշան են եղել քո ջանքերը՝ այսքան հոգիներ շահելու համար: Ես վստահեցնում եմ քեզ, որ քո հոգին դնելով Գիշերվա սարսափների մեջ՝ Ես ձեռք եմ բերում բազում հոգիների: Այո՛, քո համաձայնության շնորհիվ Ես հիմա կարող եմ անգամ ավելի շատ վայելել Իմ այգին:

Իմ հա՛րս, Ես Թագավոր եմ քո մեջ... Իմ մեծացրած և Իմ Աստվածային Ձեռքերով ձևավորա՛ծ զավակ, Ես ասում եմ քեզ. Իմ Եկեղեցին ուրախ ձայներով պիտի աղաղակի մի օր, որովհետև, Իմ հավիտենական սիրով, Ես վերջ պիտի տամ այս Ուրացությանը, ավելի շուտ, քան նախատեսված է:

Սակայն վատթարագույնը դեռ չի պատահել...

Վատթարագույնը գալու է, ոչ մի բան չի կարող միանգամից կատարվել: Իմ Հայրը Իր Հզոր Ձեռքը ցույց կտա խեղճերին, բայց ուրացողներին և Ապստամբին կրակի մի մրրիկ կայրի արևելքից՝ իրենց արած բոլոր նողկալի գործերի պատճառով... Հանցագործը կմեռնի իր մեղքի պատճառով: Եթե նա դարձի գա նախքան Իմ Օրը, վերականգնի այն, ինչ որ ավերում էր, և ընդունի իր մեղքը, Ես կներեմ նրան, և նա կապրի ու չի մեռնի: Սա է Իմ Օրենքը՝ երիցս Սուրբ:

(Ավելի ուշ)

(Պատգամ Արգենտինայի համար)

Գրի՛ր. Արգենտի՛նա, Արգենտի՛նա, դու Իմն ես: Բա՛ց արա քո սիրտը և ոչ թե միտքը: Աչքերդ բարձրացրո՛ւ դեպի երկինք, և դու կտեսնես Իմ փառքը, Իմ հոյակապությունը և Իմ գերագույն իշխանությունը: Բայց քանի դեռ աչքերդ սևեռել ես աշխարհի վրա, դու չես տեսնի Իմ առատաձեռնության ու Իմ ողորմության մեծությունը, որը թափվում է քեզ վրա՝ քեզ փրկելու համար... Ես չեմ հոգնի քո հանդեպ բարեհաճ լինելուց,

քանի որ Ես հաշվի եմ առել քո բարեպաշտ գործը[1], որն արեցիր այնքան, որքան ի վիճակի էիր:

Ես գալիս եմ ասելու քեզ, որ Աստված, որին դու մոռացել ես, երբեք չի մոռացել քեզ: Թեև դու Ինձ գիտեիր միայն արտաքինից, դու օրհնյալ ես: Այսօր Ես հրավիրում եմ քեզ Իմ սեղանի մոտ: Արի՛ հանդիպենք սիրտ Սրտի, և դու կօգտվես այն Գանձերից, որ Իմ Սուրբ Սիրտն է առաջարկում քեզ: Առանց դրանց[2] դու չես կարող ապրել:

Դեկտեմբերի 24, 1994

Տե՛ր, Ուսուցի՛չ և Փրկի՛չ:

Ես եմ:

Ես սիրտ Սրտի քարոզել եմ քեզ: Քեզ նվաճելու համար Ես արել եմ այդ բաները: Ես ուզում էի, որ Իմ աշակերտը սովորեր Ինձանից, որ Ինձ համար հոգիներ նվաճեր: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ հավիտենական սիրով... Սանի՛կս, Ես ուզում եմ, որ հավատարիմ լինես Ինձ: Ընծան, որ կարող ես Ինձ առաջարկել կեսգիշերային պատարագի ժամանակ, քո հավատարմությունն է, որը բխում է քո սրտից: Եվ եթե դու դա անես, Իմ Հայրը և Ես, Մեր Սրբությունը ցույց կտանք քո մեջ, որ զորացնենք քեզ Աղետի[3] այս ճակատամարտի ժամանակ: Եթե Գազանին հետևողներից ոմանք թշնամաբար վերաբերվեն քեզ, եղի՛ր ինչպես մի պարսատիկ, և փշրի՛ր նրանց, ինչպես այն տեսիլքում[4], որ Ես քեզ տվել էի...

Հիմա, փոքրի՛կս, մե՛կ եղիր Ինձ հետ: Արի՛ շարունակենք միասին կիսվել: Ես Տեր եմ, ուստի մի՛ վախեցիր: Իմ Անունն է Հիսուս Քրիստոս՝ Աստծո Որդի և Փրկիչ:

ΙΧΘΥΣ

---

[1] Այն մեծահոգությունը և հավատարմությունը, որոնք Արգենտինան ցույց տվեց Սան Նիկոլասի հայտնություններին:

[2] Հիսուս խոսում էր Հաղորդության խորհրդի մասին:

[3] Հայտ. 15:12, 6:7, 11:6, 13:12, 16:2, 16:11

[4] Տեսիլքում Ես տեսա, որ Գազանի հետնորդները բռնել էին Ինձ: Նրանք հանեցին Իմ մատանին, որի վրա Քրիստոսի խաչելությունն էր, և անհետացան մի որոշ ժամանակ: Հետո հետ եկան ու Ինձ տվեցին այն: Երբ Ես վերցրի մատանին, Ես հասկացա, որ նրանք պղծել էին այն: Հետո նրանք ուղեկցեցին Ինձ դեպի դուռը, բայց մինչ անցնում էի իրենց սրահով, այնտեղ՝ պատի վրա, Ես տեսա Գազանի Խորհրդանշանը (ճիշտ այնպես, ինչպես մեզ մոտ խաչելությունն է): Այդ պահին Ես մի արագ որոշում կայացրի: Երբ տեսա մոտերքում պարսատիկի նման ինչ-որ բան, վերցրի այն և ողջ ուժով հարվածեցի նրանց Խորհրդանշանի հենց աչքին (կենտրոնում)՝ ոչնչացնելով այն և նրա ներսում գտնվող ողջ չար ուժը: Այդ որոշումն ընդունելիս Ես գիտեի, որ դա կարող էր կյանքիս գնով լինել, բայց մտածում էի, որ դա արժեր, քանի որ Ես կոչնչացնեի նաև նրանց զորությունը: Հենց որ փշրեցի այն, գազանի՝ Ինձ դեպի դուռն ուղեկցող հետնորդները ցնցվեցին վախից և դողացին: Եվ Ես հասկացա, որ ոչնչացնելով նրանց Խորհրդանշանը՝ նրանց նույնպես ոչնչացրի, որոնք այլևս Ինձ վրա զորություն չունեին:

Դեկտեմբերի 26, 1994

Դու վստահել ես ինձ
այս Պատգամը:
Հանձնարարել ես ինձ հոգ տանել
Քո Շահերի համար,
բայց ինձ ճնշողները
միավորում են ուժերը
Քո Պատգամի դեմ, որ ճզմեն այն:
Հիմա ի՞նչ կարող եմ ես անել
իմ մերկ ու անզեն ձեռքերով:

Գիտեմ: Սիրի՛ր Ինձ և մի փոքր հանգստացի՛ր:
Զավա՛կս, Ես պիտի հաղթանակեմ վերջում: Ուստի հիմա մտահոգվի՛ր Իմ Սրտի զարկերի մասին: Սրտիս յուրաքանչյուր զարկ մի կանչ է՝ ուղղված մի հոգու, որ վերադառնա Սիրուն: Իմ Սրտի բոլոր զարկերը չեն, որ լսվում են և, ո՜Հ[1], այնքա՜ն շատ հոգիներ են գնում հավիտենական կրակների մեջ... Ես քեզանից միայն անդադար աղոթք եմ ուզում: Զգո՛ն եղիր և օգտագործի՛ր զանազանելու այն կարողությունը, որ Ես եմ քեզ տվել: Մի՞թե Ես քեզ բավարար ապացույցներ չեմ տվել Իմ Սիրո մասին:

Տե՛ր, տո՛ւր ինձ, խնդրում եմ, Քո Սիրո մի տեսանելի նշան:

Իմ Զարչարանքների՛ ծաղիկ, թող այդպես լինի: Հանուն քո սիրո՝ Ես քեզ պիտի տամ Իմ Սիրո մի նշան, ոչ թե նրա համար, որ Ես քեզ դա չեմ տվել, այլ Ես կավելացնեմ քո հաստատակամությունը՝ դնելով այս նշանը քեզ վրա:

Ես սիրում եմ քեզ մահու չափ:

Ա՜Հ... ինչպիսի՜ բալասան են այս բառերն Ինձ համար, և Իմ Թագավորության խորհուրդների մեջ՝ ինչպիսի՜ փրկություն հոգու համար: Արի՛ գնանք, զավա՛կս:

Դեկտեմբերի 27, 1994

Աղջի՛կս, դու դյուրաբեկ ես, բայց կարո՞ղ է մեկն ասել, որ դու չես վկայել Իմ Անվամբ: Եթե մնաս թույլ և դյուրաբեկ, Ես կշարունակեմ պահել քեզ Իմ Զորության հովանու տակ:
Լսի՛ր Ինձ և ուրախացի՛ր. Նա, ով մնում է քեզ և քո բերանը լցնում երկնային Մանանայով, ասում է քեզ. Իմ Վերադարձը մոտալուտ է, Իմ Վասո՛ւլա, այո՛, հրճվի՛ր և գո՛Հ եղիր: Ես այն ճանապարհին եմ, որով Ես հեռացա: Իմ Վերադարձը նույնիսկ ավելի մոտ է, քան այն ժամանակ, երբ

[1] Սա մի հոգոց էր:

դու դարձի եկար[1]:

Սուրբ Հոգու զորությամբ ես հարուցեցի քեզ, զավա՛կս, որ կատարյալ միության մեջ լինես ինձ հետ և վկայություն տաս ամբոխներին Իմ Անվամբ՝ ինքդ քեզ տալով նրանց՝ քո կարողության առավելագույն չափով: Քո հավատարմությունը զոհացնում է Ինձ: Ահա թե ինչու ես պիտի շարունակեմ կազմել Իմ Ծրագիրը քո մեջ, մինչև այն ավարտվի... Եվ աղքատները կլսեն այնպիսի մի բան, որ երբեք նախկինում չի ասվել, և կտեսնեն Իմ Սուրբ Դեմքը քեզ վրա, և նրանք, ովքեր երբեք չեն ճանաչել Ինձ, կմոտենան Ինձ, և նրանք, որոնց աչքերը ծածկված են եղել քողով, կտեսնեն Իմ ողջ փառքը... Ում էլ որ դիպչի Իմ Սուրբ Հոգին, որն այսօր փչում է ամենուր, նա կժառանգի Իմ Արքայությունը, և Հայրը Երկնքում պիտի ողջունի նրան հրեշտակների բազմությունների հետ միասին:

Ես օրհնում եմ քեզ հիմա: ic

[1] Դա 1985թ-ին էր (արդեն 9 տարի առաջ):

1995

Հունվարի 3, 1995

Սերը քո կողքին է: Դու թույլ ես, բայց քո թուլության մեջ ես փառաբանվում եմ:

ΙΧΘΥΣ

Հունվարի 7, 1995

(Ուղղափառների Աստվածահայտնության տոնը)

Աստվա՛ծ իմ,
Յա՛հվե, Հավիտենական Հայր,
Դո՛ւ, որ այդքան համբերությամբ
սպասում ես մեր դարձի գալուն,
արի՛, արի՛ և մեզ բոլորիս սնիր
Երկնային Կերակրով,
որ բավարարես մեր կարիքները:
Դու հայտնի ես
Քո Ձեռքի Առատաձեռնությամբ,
Ճշմարի՛տ Աստված,
արի՛ և փրկիր մեզ:
Զար մարդու սիրտը
դարձրու բարի սիրտ,
որպեսզի նա նույնպես հաստատի
Քո մեծությունը:

Յա՛հվե, իմ գթասիրտ Հայր,
աշխարհը դեռևս չի ճանաչում
Քեզ ամբողջովին, այնպես,
ինչպես Դու իրականում կաս:
Միայն Քո Սուրբ Հոգու
զորության ցուցադրությամբ
մարդկությունը պիտի հասկանա
Քո Անվան մեծությունը
և գովաբանի Քո փառքի փայլքը:

Յա՛հվե,
որ Հայր ես մեզանից ամեն մեկի,
թող մարդկությունն իմանա

ողորմության Քո գթառատ գործերի,
բարության և
առատաձեռնության մասին:
Հիշեցրո՛ւ նրանց, Հա՛յր,
որ Քո Թագավորության
վեհաքանչ փառքը
նրանց էլ է պատկանում,
եթե նրանք ուղիղ սիրտ ունենան:

Ես փոխանցել եմ
յուրաքանչյուր ազգի Քո Խոսքերը,
որ Դու ուղարկել ես ինձ
և հետևել եմ Քո հրամանին:
Ես, իմ կարողությունների չափով,
նրանց նորից հայտնի եմ դարձրել
Քո Սիրող Պատկերը այնպես,
ինչպես Դու հայտնեցիր ինձ Այն,
որպեսզի նրանք նույնպես
ուրախանան և հասկանան,
որ իրենք Քո զավակն են և սերմը:
Ես հետևեցի Քո հրահանգներին
և հիշեցրի նրանց,
որ իրենք նույնպես
արքայական ծագում ունեն:

Սուրբ Հա՛յր,
քանի որ Դու շարունակաբար
ուղարկում ես ինձ հռչակելու համար
Քո Սիրո Օրհներգը՝
խոսելով և Քեզ արձագանքելով,
որպեսզի կիսեմ Քո Սիրո Երգը
իմ եղբայրների և քույրերի հետ,
ես աղոթում եմ նրանց համար,
ովքեր դեռևս անտեղյակ են
և ապրում են մոռացության
և խավարի աշխարհում,
որ Քո Սուրբ Հոգին
փայլի նրանց հոգում,
ինչպես բյուրավոր արևներ
մեկ արևի մեջ:
Այո՛, թող Քո Սուրբ Հոգին,
որն ավելի պայծառ է,
քան բոլոր համաստեղությունները
միասին վերցրած,
ամեն մի հոգու վերածի
բարության մի պատկերի,
անբիծ հայելու նման,
նախքան նրանք կանհետանան,
ինչպես երբեք

գոյություն չեն ունեցել:
Հենց որ վերականգնվեն,
նրանք նույնպես կգնան եռանդով՝
կատարյալ արժանիքներով
հռչակելու տեսանելի պատկերը Քո
Վեհության և Քո Գերիշխանության,
քանի որ նրանք կճանաչեն այն,
ինչն ամենից աստվածայինն է:

Հա՛յր, Կյանքի Աղբյուր,
Հավիտենական Կյանքի Ակո՛ւնք,
Ամուսի՛ն, Քո մոտիկությունն ինձ,
արթնացրեց թշվառ սրտիս
յուրաքանչյուր թելը՝
ինձ կարող դարձնելով
ներթափանցելու Քո խորհուրդների
և Քո անհատնում գանձերի մեջ:
Ես իմ թշվառության մեջ,
ինչպե՞ս կարող էի համարվել
Քո ժառանգորդներից մեկը:
Դեռ հազիվ ծնված ես մեղանչեցի
և դադարեցի պատվել Քեզ,
ես մեղանչեցի և դադարեցի
գոյություն ունենալուց:
Կավը, որին Դու ձև էիր տվել,
դարձել էր Քո թշնամին:
Քո խորանը դարձել էր
մողեսի և սարդի բույն,
չարակամության և չարի նշան,
բացահայտորեն հեռանալով
Աստվածային Ճշմարտությունից:
Ո՛վ տկար Հոգի,
որ այդքան քիչ ժամանակ ունես
ապրելու երկրի վրա,
ի՞նչ էիր դարձել:
Արդարության լույսը պատրաստ էր
հարվածելու հոգուս:
Սակայն Դո՛ւ,
Քո ազատելու և փրկելու
ցանկությամբ շատ ավելի ուժեղ էիր,
քան Մահն ինքը, քան Խավարի
և Ապականության ուժերը:
Եվ Դու հոսեցիր ինձ վրա գետի պես,
Հա՛յր, բուժելով այն,
ինչ համարվում էր
մահացու կերպով վիրավորված՝
բարձրացնելով այն,
ինչ համարվում էր մեռած և փտած:

Եվ Քո ուսուցումը, Տե՛ր,
Քո այցելությունների հետ միասին,
արդեն գերազանցում է
իմ մարդկային մտքի սահմանները:

Հա՛յր իմ,
Դու կարեկից և գթառատ ես,
համբերատար և ներող,
ուստի մի՛ թեքիր Աչքերդ մեզանից,
այլ մեզ բոլորիս առաջնորդիր ետ
դեպի Քեզ ուղիղ ճանապարհով:

Իմ ընտրյալ աղջի՛կ, ես Իմ Խաղաղությունն եմ տալիս քեզ... Ես կպատասխանեմ քո աղոթքին, բայց երբ Իմ Սերը մերժվում է, ես ի՞նչ անեմ: Ես փորձում եմ ամեն ձևով ձեզ փրկել կրակի բոցերից, և Ես գնում եմ բոլոր ուղղություններով՝ միջոցներ փնտրելով, թե ինչ ձևով կարող եմ փրկել ձեզ բոլորիդ:

Քո Սուրբ Հոգին Կյանքի Շունչն է:
Նա բարձրացնում է մեզ,
կենդանացնում, և մեծահոգաբար
օգնում մեզ թափանցելու
Քո խորհուրդների մեջ:

Քո Սուրբ Հոգին
դարձնում է մեզ կենդանի
և սրբազան Տապանակներ, մի Գահ՝
Քո Որդու վսեմության համար,
Քո Պատկերի արտացոլումը,
ինչպես և ժառանգորդներ
Քո Թագավորության համար:

Հա՛յր, թույլ տուր հիմա,
որ երկինքը բացվի <u>այս տաքի</u>,
որպեսզի Քո Սուրբ Հոգին
ինչպես երբեք հեղվի մեզ վրա:
Այն ժամանակ մենք <u>բոլորս</u>
կսովորենք սիրել երկնային գործերը
և Քո Ներկայությամբ
մենք կուրախանանք:
Մեռած ոսկորները կծաղկեն
և մեկ անգամ նորից կգովաբանեն
Քեզ՝ պաշտելով Քեզ:

Ա՛Հ[1], զավա՛կս, ես ուրախ եմ լսելու քո բուռն ցանկությունը՝ նկատի ունենալով քո թշվառությունը: Ես կպահեմ Իմ Խոստումը: Ես պիտի հեղեմ Իմ Հոգին ողջ մարդկության վրա ինչպես չի եղել նախկինում

[1] Սա մի հոգոց էր:

պատմության մեջ, որ տարածեմ Իր զորությունը երկրի մի ծայրից մինչև մյուսը՝ տնօրինելով Իմ Սրբարանի նորոգումը և կենդանացումը[1]...

Բայց և այնպես, Իմ Վասո՛ւլա, ոչ բոլորն են արժանի Իմ Թագավորությանը: Իմ Համբերատարությունը մեծ է, բայց Իմ Արդարությունը նույնքան մեծ է: Նախքան այդ, Ես պետք է արձակեմ հրեղեն մի շունչ, որ վերականգնեմ Արդարությունը: Ես պետք է ոչնչացնեմ Գազանին և նրա հետնորդներին, Իմ Վասուլա, Իմ Գահից արձակելով անհամար որոտներ և կայծակների փայլատակումներ, որ ճզմեմ անաստվածներին ու այս աշխարհի կայսրությունը: Իմ Արդարությունը պիտի հետապնդի այն ամենը, ինչ որ Ինձանից չի գալիս:

Իմ դատաստանը մեղմ է: Եթե այդպիսին չլինեի, ձեզանից ոչ մեկն այսօր կենդանի մնացած չէր լինի: Ես կարող էի միանգամից ոչնչացնել ձեզ: Սակայն տեսնո՞ւմ ես, թե որքան համբերատար եմ և ողորմած: Ուրեմն ո՞վ կհամարձակվի ասել. «Դու ի՞նչ արեցիր մեզ հետ», երբ Ես Իմ դատավճիռը կայացնեմ այս երկրի վրա: Այս բոլոր տարիներին Ես ձեզ ուղղել եմ կամաց-կամաց և ձեզ բոլորիդ ապաշխարելու հնարավորություն տվել: Բայց, սկզբից ի վեր, ձեզանից շատերը ավելի մեծ պատիվներ էին տալիս մեռած բաներին, քան թե Իմ հավիտենական փառքին: Ոսկին և արծաթը[2] հմայել էին ձեզ, և դուք սեր տածեցիք դրանց հանդեպ՝ գերազանցելով այն պատիվները, որ Ինձ պետք է տրվեին...

Այնուամենայնիվ, Ես պիտի պահպանեմ բոլոր նրանց, ովքեր կապաշխարեն, և Ես պիտի պահեմ նոր սերնդի սերմը գալիք դարերի համար: Զարիք սիրողները և այլասերված մարդկությունը չի մնա անպատիժ... Բոլորը կկանչվեն Իմ Գահի առաջ, որ հաշիվ տան, թե ինչպես են անցկացրել իրենց կյանքը:

Աղջի՛կս, պատգամներն ստանալու այս կարճ ընդհատումը[3] նրա համար էր, որ դու փոխհատուցես մեղավորների համար: Դիմացիր ցավին[4] առանց բողոքելու: Ինձ փոխհատուցման գործեր են պետք, Ինձ վեհանձն հոգիներ են պետք: Տեսնո՞ւմ ես, թե որքան ողորմած էր Իմ Որդին քո հանդեպ: Նախապես Նա այդ հայտնել էր քեզ[5]. ուստի մի՛ կասկածիր Նրա ողորմածությանը: Արի՛, թույլ տուր Ինձ, որ օգտագործեմ քեզ Իմ քանդված խորանները վերականգնելու համար: Ես պիտի բազմապատկեմ Իմ շնորհները այնքան ժամանակ քանի դեռ դու հոգ կտանես Իմ Շահերին և Իմ Տանը: Աստված-քեզ-հետ-է, ուստի մի՛ վախեցիր, Ես քեզ հետ եմ: Ես կապված եմ նրանց, ովքեր սիրում են Ինձ: Արի՛, Ես օրհնում եմ քեզ:

[1] Ես հասկացա այդ որպես Աստծո ժողովուրդը:
[2] Աստված նկատի ունի փողը:
[3] Աստված թույլ չտվեց ինձ թելադրություն ստանալու, որն ինչ-որ ձևով հաղորդակցության իմ միջոցն էր:
[4] Իմ աջ կողմի վերքի ցավին:
[5] Դեկտ. 26, 94 թվին Հիսուսն ասաց, որ Իր Զարչարանքի մի նշան կտա իմ վրա:

Հունվարի 12, 1995

Տե՛ր, թող Քո Ձայնը
այս տարի լսվի ինչպես երբեք:
Որքա՞ն պետք է
Քո ժողովուրդը օգնություն կանչի:

Ավանդությունը,
որ Դու փոխանցել էիր մեզ,
կորցնում է իր ազդեցությունը:
Ճշմարտությանը
հայհոյում են ամեն օր,
և անհավատ մարդը ավելի
բարձր է դասվում հավատացյալից:
Դու իհարկե տեսնում ես
այս ամբողջ սարսափը:
Որքա՞ն ժամանակ, Յա՛հվե, մենք
դեպի երկինք ենք աղաղակելու
«Ճնշո՛ւմ», և Դու չես իջնելու:
Մեր վնասվածքը լուրջ է,
և Դու մեր բալասանն ես:
Ուրեմն թույլ չե՞ս տա,
որ Քո Ձայնը լսվի
այս տարի ամենազորեղ կերպով:

Անհավատներն արդեն
բռնագրավում են Քո Որդու
Զոհաբերությունը:
Մի՞թե Դու էլի չես գալու
որ վերջ տաս նրանց չարությանը:
Մենք դանդաղորեն զրկվում ենք
մեր Փրկությունից, իսկ Դո՛ւ,
Տե՛ր իմ, մի՞թե Դու լուռ ես մնալու:

Մեզ հրամայում են
չմարգարեանալ Քո Անվամբ
և բռնությամբ
դուրս են հանում Քո Տնից:
Մեզ վտարում են
և հարձակվում մեզ վրա,
երբ վկայում ենք Քո Սերը,
որ լուռ մնանք:
Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես,
թե ինչպիսի մեծ
խառնաշփոթության են վերածել
նրանք Քո Սուրբ Սրբարանը:
Տեսնո՞ւմ ես, թե ինչպես են
Քո Հոգուն հայհոյում ամեն օր:

Երբ Հովնանն
իր վհատության մեջ կանչեց Քեզ,
Դու պատասխանեցիր նրան:
Երբ կետ ձկան որովայնից
նա կանչեց Քեզ,
Դու պատասխանեցիր նրան,
և նա լսեց Քո Ձայնը:
Այսօր, Աստվա՛ծ իմ,
մի՞թե մեր ողբը դեռ չի լսվել:
Մի՞թե այն չի հասել
Քո Ականջներին:
Երբ ձուկը կուլ տվեց Հովնանին,
նա մնաց խավարի մեջ
երեք օր ու երեք գիշեր:
Իսկ մե՞նք, Տե՛ր:
Մի՞թե մենք պետք է
ընդմիշտ մնանք այս խավարի մեջ:

Դու հայտնի ես
որպես արդարություն տվող
հոգով աղքատին, և բարի մարդու
իրավունքը պաշտպանող,
ուրեմն Քո Աչքերն ուղղիր մեր
թշվառության վրա և փրկիր մեզ:

Իմ խաղաղությունը ես տալիս եմ քեզ:

Զավա՛կս, լսի՛ր Ինձ և գրիր. ես կարագացնեմ Իմ Ծրագիրը հանուն այս մնացորդի: Ուստի արթուն մնացեք, որովհետև չգիտեք, թե երբ կհայտնվեմ բոցով... Իսկ Իմ Սուրբ Հոգին պիտի հեղվի շատերի վրա: Երբ ոմանք կհուսալքվեն, վստահեցրու նրանց, վստահեցրու նրանց, որ իրենց Հայրը, որ Երկնքում է, պիտի արագացնի Իր Ծրագիրը:

Շուտով, և դա քո շուտովն է[1], ես պիտի խոսեմ, և Իմ Ձայնը բոց պիտի լինի՝ ոչնչացնելով նրանց, ովքեր ոչնչացնում են երկիրը[2]: Ձգոն եղիր և համբերատար: Արդեն շատ ժամանակ չի մնացել մինչ Իմ Խոսքերի կատարվելը:

Ես պիտի դատեմ արդարությամբ:

[1] Իմ «շուտով»-ը մարդկային շուտովն է: Աստծո «շուտով»-ը կարող է հեշտությամբ անցնել 1000 տարին:
[2] Հայտ. 11:18

Հունվարի 13, 1995

Տե՛ր, Քո կարծիքով ես ինչ որ պետք է չե՞մ ասում: Ես խոսե՞լ եմ Քո հրաշքների մասին, ինչպես Դու էիր ցանկանում: Հիսո՞ւս:

Ես եմ: Մնացո՛րդ, ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը:

Երբեք մի՛ վշտացիր, երբ դուռը փակվում է երեսիդ: Ես քեզ հետ եմ, ուստի մի՛ անհանգստացիր, զավա՛կս: Դու երբեք չես կարող Ինձ համար վկայություն տալ առանց հալածվելու: Ամեն ինչ, որ անում ես, եթե նույնիսկ դա փոքր և աննշան թվա, իզուր չի անցնում: Հետքը, որ դու թողնում ես հետևում, պիտի դրոշմվի ու նկատելի լինի, և դրանից հետո դա կլինի Իմ Աշխատանքը: Ուստի, փոքրի՛կս, արիացի՛ր, ես միշտ քեզ հետ եմ... Ահա թե ինչպես է Իմ Հայրը շնորհ արել քեզ:

Ի՞նչ ենք անելու այսօր:

Աղոթի՛ր, գրի՛ր և պաշտի՛ր Ինձ, այնուամենայնիվ, երբեք չանտեսելով քո տնային պարտականությունները, որոնք նույնպես իրենց հմայքն ունեն Ինձ համար: Այս է, որ Ես ուզում եմ քեզանից: Ես քեզ զորություն կտամ, որ կարողանաս պատվել Ինձ՝ կատարելով այս ամենը: Ուստի հիմա արի գրենք:

Հունվարի 19, 1995

Խաղաղությո՛ւն քեզ: Մի՛ վախեցիր, քո կողքին Ես եմ:

Աստծո Խոսքը այս տարի նորից պիտի տրվի քեզ: Քո սերունդը թերագնահատում է Իմ Խոսքը[1]: Ձեզանից ոմանք նույնիսկ բռնադրավում ու թաքցնում են Իմ Խոսքը: Ուրիշները չափազանց մեծ ցանկություն ունեն դատապարտելու ինչ որ Ես եմ ասում, և չեն հասկանում այն: Իրենց չարության մեջ նրանք չարամիտ են և առաջամարտիկներ, երբ հարցը վերաբերվում է ավերածությանը:

Ես լրջորեն ասում եմ ձեզ. այսօր Շնորհն առաջարկվում է յուրաքանչյուրին, բայց, ինչպես սերմնացանի Իմ առակում, նրանք այն սերմերն են, որոնք ընկնում են ճանապարհի եզրին: Այո՛, նրանք լսում են Իմ Խոսքը, բայց չարը գալիս և տանում է այն, ինչ իրենք լսել են, որ չլինի թե հանկարծ հավատան ու դարձի գան: Հետո, դառնալով սատանայի գայթակղությունների զոհը, ի վերջո հայտնվում են կործանման ճանապարհին:

Իմ Շնորհը քեզ վրա է, սերո՛ւնդ, բայց արդեն ոչ երկար ժամանակով: Փոխանակ ուժեղացնելու սիրո այն բոցը, որը Ես առաջարկում եմ ձեզ

[1] Դա հնչեց որպես մի սուր և դառը բողոք: Այնպես, կարծես մեր Տերն ասաց. «Ի՞նչ կասես սրա մասին»:

բոլորիդ ձրիաբար այս պատգամների միջոցով, և փոխանակ թույլ տալու, որ Իմ սերը տարածվի և բոցավառի յուրաքանչյուր սիրտ, Իմ քահանայական հոգիներից շատերը հակառակն են անում: Ողորմությունը այսօրվա ձեր հույսն է, բայց դուք բավարարվում եք լցնելով ձեր հոգին «գիտությամբ», որը բոլորովին էլ գիտություն չէ՝ մերժելով Իմ Ողորմությունը, որը Ես այսօր շնորհում եմ ձեզ:

Ես տալիս եմ ձեզ նշաններ և հրաշքներ: Իմ Սուրբ Հոգու զորությամբ, Ես տալիս եմ ձեզ այս հրաշքները: Ես բարձրացնում եմ թույլերին, որ վկայեն Իմ Փառքը և հիշեցնեն ձեզ, որ Ես Երիցս Սուրբ եմ: Բայց ձեր սրտում խաղաղություն չկա, որովհետև դուք մերժում եք Իմ Սուրբ Հոգուն՝ Խաղաղության Կրողին: Գիշերն արդեն հասել է ձեզ վրա, իսկ դուք շատ հեռու եք դարձի գալուց, սերո՛ւնդ:

Շուտով, և դա <u>ձեր</u> շուտովն է, երբ դուք կծածկվեք ձեր սեփական արյամբ: Ես, որպես Դատավոր, այդ ժամանակ կհիշեցնեմ ձեզ այն արյան մասին, որը կրում էիք ձեր ձեռքերի վրա՝ <u>շատերին</u> արգելելով, որ ստանան Իմ շնորհները՝ Իմ Խոսքի այս Հիշեցման միջոցով: Դուք նման եք Հռոմեացիներին՝ ամեն օր Ինձ թաղադրելով փշե պսակով: Ուրեմն, դուք էլ ե՞ք Պիղատոսի նման ասելու. «Ես անմեղ եմ այս արյան համար», և ձեր ձեռքերը լվալու եք բուրավետ ջրով: Դուք մերժում եք ընդունել մահվան հակաթույնը, դուք մերժում եք ընդունել Իմ Խոսքը՝ տրված Իմ Սուրբ Հոգու կողմից ձեր օրերում, և թեթևամտորեն եք վերաբերվում դրան:

Ո՛վ անհավատ մարդիկ: Դուք լսում և լսում եք առանց հասկանալու, դուք տեսնում և տեսնում եք, բայց չեք կարողանում ընկալել Իմ Փառապանծ և Անսահման Ողորմությունը, որը Ես հեղում եմ ձեզ վրա: Անշնորհակալ սերունդ, դուք Իմ Սուրբ Հոգու մասին Իմ վկայությունը դարձրիք առասպել: Դուք Իմ Խորհուրդները դարձրեցիք առասպել և ձեր հովվական դավազանը հիմա դարձել է ստի մահակ: Ուրեմն, ո՞ւմ հետ համեմատեմ ձեզ ձեր բացարձակ մերկության մեջ: Կայենի՞, Փարավոնի՞, փարիսեցիների՞, թե՞ Հուդայի: Եվ դուք չփոթվա՞ծ եք, երբ Ես Իմ Սուրն[1] եմ ճոճում ձեր աչքերի առջև, անհավատարիմ սերունդ: Ձգիտեի՞ք, որ սուր կրելը իր կարևորությունն ունի: Մի՞թե չեք լսել, որ Ես նաև Արդարության ռազմիկն եմ[2], այլ ոչ թե միայն Խաղաղության: Մի՞թե չեք կարդացել, որ Ես Հավատարիմն եմ և Ճշմարիտը, Ամենը, Արդարադատ Դատավորը, որը հայտնի է Աստծո Խոսք[3] Անունով: Բայց ասվել է, որ Գազանի եպիսկոպոսության[4] ձեր դարաշրջանը՝ իր սուրը կբարձրացնի Իմ և Իմ Սրբերի դեմ[5]:

Իմ Թագավորությունը երկրի վրա հենց ձեր դռների մոտ է, բայց դուք չեք ցանկանում այդ, ինչպես չեք ցանկանում լսել Իմ Խոսքը... Ձեր չար

---

[1] այսինքն՝ Խոսքը

[2] Հայտ. 19:11 «Ապա տեսա երկինքը բացված, և ահա մի սպիտակ ձի. ով հեծել էր նրա վրա, կոչվում է Հավատարիմ և Ճշմարիտ. նա արդարությամբ է դատում և պատերազմում»:

[3] Հայտ. 19:13 «Նրա անունն էր՝ Բանն Աստծո»:

[4] Ես հասկացա, որ եպիսկոպոսական ասելով, նա նկատի ուներ երկրորդ Գազանին, այլ անունով՝ Կեղծ Մարգարեին:

[5] Վկայակոչում՝ Հայտ. 19:19

սիրտը ուշադրություն չի դարձնում Իմ նախազգուշացումներին, որովհետև դուք հրաժարվել եք ձեր խոնարհ հովվի գավազանից և նախընտրել ստի մահակը: Եվ երբ լսում եք Իմ Բերանից եկող խոսքը, չեք նախազգուշացնում ձեր սրտին, ո՛չ էլ մտածում եք ուրիշներին նախազգուշացնելու մասին: Ո՛չ, դուք տեսնում եք եկող Սուրը[1], բայց ուշադրություն չեք դարձնում... Դուք առարկում եք և խրախուսում ուրիշներին, որ նույնն անեն. «Այդ ամբողջ անմտությանը ուշադրություն մի՛ դարձրեք, դա հիստերիա է: Մի՛ լսեք այդ խելագարված մարդկանց: Մի՛ լսեք «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները, որ չարի հնարամտությունն է»: Դուք կասեք այդ, որպեսզի թուլացնեք Իմ Ձայնը, և կշտապեք «չար և սուտ» անվանել այն, ինչ աստվածային է և սուրբ:

Արյունահեղությունը, սերունդ, պիտի հետապնդի ձեզ: Յուրաքանչյուր խորխորատ, յուրաքանչյուր բլուր, յուրաքանչյուր ծով, յուրաքանչյուր լեռ պիտի ցած ընկնի Իմ Սրից: Արյունահեղությունը պիտի հետապնդի ձեզ ձեր մեղքերի պատճառով, և դուք պիտի մեռնեք: Բայց, այնուամենայնիվ, եթե նույնիսկ այսօր հրաժարվեք ձեր մեղքից և սրտանց զղջաք և խոստանաք ապրել բարեգործության, միասնության և խաղաղության մեջ, դուք պիտի ապրեք, և Ես այլևս չեմ հիշի ձեր մեղքերը: Դարձի՛ր Ինձ մոտ, սերունդ, ինչո՞ւ եք այդքան ցանկանում մեռնել ձեր մեղքերի մեջ: Վերադարձեք Ինձ մոտ, հրաժարվեք ձեր մեղքերից, և դուք պիտի ապրեք:

Մի՞թե չեք կարդացել[2]. «Ես Ամենն եմ՝ Հավատարիմ և Ճշմարիտ Վկան[3], Աստծո արարչության Գերագույն Աղբյուրը, Արդարության ճշմարիտ զինվորը»[4]: Ինչպե՞ս կարող եք դո՛ւք, որ ամեն օր քարոզում եք Իմ խոսքը, չճանաչել ժամանակները, ո՛չ էլ նշանները: Դո՛ւք, որ համառորեն հայտարարում եք, որ Ես չեմ այս Պատգամի Հեղինակը, Ես ասում եմ ձեզ. դուք դատում եք մարդկային չափանիշներով, և հպարտանում եք ձեր փառքով... Ուրեմն զգուշացե՛ք և ձեր լեզուն ետ պահեք դատելուց: Ես եմ միակ Դատավորը: Եվ դուք, արդարև, Իմ Ձեռքերում եք... Ես, Իմ Հոգով, ամրացրել եմ այն, ինչ դյուրաբեկ է, որպեսզի նրա միջոցով[5] Իմ Անունը փառաբանվի և ողջունվի յուրաքանչյուր ազգի մեջ, որպեսզի տկար մարդը գտնի իր զորությունը:

Ես հրամայել եմ քեզ լինել Իմ Խոսքի Արձագանքը, մագաղաթյա մի գալար՝ կարդացվելու համար, որպեսզի, երբ նրանք լսեն և ճաշակեն[6], ուրախությամբ քաջալերվեն խոստովանելու ու ապաշխարելու համար:

Ես ասել եմ Իմ սրբերի հավաքում[7]. «Ես ո՛չ մեկին չեմ զրկի Իմ Լույսից: Ո՛չ մեկը չպետք է մնա բանտարկված խավարի մեջ: Իմ Հայրը մորմոքել է անժամանակ վշտից և այն պատիժը, որը Նա պահել է այս անհավատարիմ և հավատուրաց սերնդի համար, այժմ հենց նրանց դռների

---

[1] Սուրը նաև Աստծո Խոսքն է:
[2] Հայտ. 3:14
[3] Հայտ. 19:11
[4] Հայտ. 19:11
[5] Ես հասկացա, որ Քրիստոսը խոսում էր իմ մասին:
[6] Ճաշակեն Աստծո Խոսքը:
[7] Երկնքում, Հիսուս հավաքել էր Իր սրբերին, որ նրանց հայտարարի Իր որոշումը:

մոտ է: Այն քաոսի մեջ, ուր նրանք ապրում են, Ես ուղարկելու եմ այն Անոթը[1], որն Ինձ կրեց մարմնապես Իր մեջ, որպեսզի այս անգամ նորից կրի Իմ Խոսքը, որպեսզի Ես գամ նրանց մոտ, ինչպես մի կաթիլ առավոտյան ցող՝ իրենց անապատում:

Ես պիտի ուղարկեմ Իմ Մորը, որ նրանց կամաց-կամաց սովորեցնի Իմ Ուղիները և ուղղի նրանց, ովքեր վիրավորում են Ինձ: Ես Ինքս նույնպես կիջնեմ այդ անապատի մեջ, որ կենդանացնեմ մեռածներին: Ուսուցումն ու Իմաստությունը ձրի կտրվի նրանց: Մենք կգանք Մեր Սիրտը Մեր Ձեռքում և կառաջարկենք այն նրանց: Եվ ինչպես Երկու Ճրագներ կողք կողքի կանգնած՝ մենք կփայլենք նրանց վրա:

Ես չեմ դանդաղի Իմ Ծրագիրն իրականացնելիս, և նրանց բոլորին կտրվի Ողորմության մի ժամանակաշրջան: Ահա թե ինչու Ես աշակերտներ պիտի բարձրացնեմ այս վերջին ժամանակներում՝ կառուցելու համար այն, ինչ հիմա ավերակների մեջ է: Ես պիտի ուղարկեմ նրանց, որ վկայեն Իմ Անվամբ: Ես պիտի ուղարկեմ նրանց այնտեղ, ուր տատասկները պտուղ են տալիս, որը երբեք չի հասունանում, և ուր Ճշմարիտ Գիտության ուղին անտեսված է:

Իմ սիրելիները[2] ուղարկվելու են այս երկրի խորքերը, ուր մեղքը ոլորված է, ինչպես օձն իր բնում, որպեսզի ոչնչացնեն և արմատախիլ անեն չարը: Ես ուղարկելու եմ նրանց, որ արմատախիլ անեն Գազանի մեծ Ծրագիրը: Ես նրանց զորություն պիտի շնորհեմ այս հատուկ առաքելության համար, և նրանց գործունեությունը հաջողությամբ կպսակվի: Իմ Սուրբ Հոգով նրանք պիտի դիմադրեն սարսափազդու դևերին: Արիությամբ ու հարատևությամբ, նրանք ուշադրություն չեն դարձնելու այն քարկոծումներին, որ ստանալու են: Իմ Սուրբ Հոգին պիտի լինի նրանց առաջնորդն ու ուղեկիցը՝ խոհեմաբար առաջնորդելով նրանց իրենց ձեռնարկումներում:

Ես պիտի գործադրեմ Իմ խոստումն առանց հապաղման և պիտի ուղարկեմ Իմ Սուրբ Հոգին Երկնքից՝ նրանց հետ աշխատելու և նրանց սովորեցնելու այն ամենը, որը Ես արդեն տվել եմ նրանց: Ես պիտի բացեմ նրանց բերանը և լցնեմ այն Իմ Խոսքով, և նրանց լեզուն պիտի լինի ինչպես սուր: Այդ օրերին Ես ուշադրությամբ պիտի հսկեմ ու պաշտպանեմ Իմ սիրելիներին իրենց թշնամիներից[3]՝ ճնշողներից: Ես պիտի փրկեմ նրանց իրենց համար լարված թակարդներից և իրենց ուղղված մահացու ծանր քարից: Ո՛չ, Իմ Ամենազորեղ Ձեռքի համար անհնարին ոչինչ չկա նրանց փրկելու համար: Ես մեղմաբար պիտի վարվեմ այս սերնդի հետ՝ չնայած իրենց չարությանը:

– Ահա թե ինչ եմ Ես ասել Իմ Հավաքների մեջ Երկնքում: Այսօր, չնայած Ես խոսում և մարգարեանում եմ քո բերանով, հոգով հարուստները ոչ միայն ճնշում են Ինձ, այլև հայհոյում Իմ Սուրբ Հոգու Գործերը: Ես ասում եմ ձեզ, կգա այն Օրը, երբ դուք ի վերջո պիտի ընդունեք Իմ Խոսքի ճշմարտությունը:

Աղջի՛կս, թեև շատերն են միացյալ ուժերով դուրս գալիս քո դեմ, Ես քեզ հետ եմ և քո Մայրը՝ նույնպես: Զհոգնե՛ս, մնա՛ Իմ մեջ, որպեսզի

[1] Մեր Օրհնյալ Մայրը:
[2] Նրանք, ովքեր ընտրված և ուղարկված են վկայելու և մարգարեանալու համար:
[3] Հավատուրացները, Գազանի հետևորդները:

այն Գործը, որը Ես տվել եմ քեզ, փայլի ձեր բոլորի վրա, և ամեն ինչի վրա:
Աղոթի՛ր միասնության համար, հաշտության և Իմ Եկեղեցու վերակենդանացման համար: Եղեք մեկ Իմ Անվամբ:

Հունվարի 28, 1995

Տե՞ր:

Ես եմ:

Հենվի՛ր Ինձ վրա և վստահիր Ինձ: Այս օրերին, Ես միայն խնդրում եմ քեզանից տալ և փոխանցել այն Սերը, ուսուցումները և ամեն ինչ, որ Ես տվել եմ քեզ: Տո՛ւր, խոսի՛ր: Սա է Իմ Հրամանը: Ասա՛ նրանց. երանելի է նա, ով ականջներ ունի լսելու և աչքեր՝ տեսնելու, որովհետև նրանցն է Երկնքի Թագավորությունը: Ասա՛ նրանց, որ Աստված, որին իրենք մոռացել են, երբեք չի մոռացել իրենց:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, օրհնում եմ նրանցից յուրաքանչյուրին: Նրանք, ովքեր ընդունել են քեզ Իմ Անունով, արդեն օրհնված են Իմ կողմից: ic

Փետրվարի 1, 1995

(Խորվաթիա - Զագրեբ)

Գրի՛ր. Խաղաղություն ձեզ: Ամբողջ օրը Ես ձեզ հետ եմ եղել, և Ես Իմ Ձեռքերն եմ պարզել դեպի ձեզ. «Իմ ժողովուրդ, Իմ ժառանգություն, Իմ սերմ, դարձե՛ք Ինձ, հաշտվե՛ք Ինձ հետ... Հաշտվեք Ինձ հետ[1]... Ես սիրել եմ ձեզ ողջ հավիտենությունից ի վեր: Վերադարձե՛ք Ինձ մոտ և Ես կվերադառնամ ձեզ մոտ: Ցանե՛ք սիրո հունձը, որպեսզի սեր ստանաք: Ցանե՛ք խաղաղության հունձը, և դուք կժառանգեք Իմ Խաղաղությունը: Ցանե՛ք, Իմ Հոգու օրհնյալնե՛ր, հաշտության հունձը, և դուք կստանաք Իմ Փառքը...

Լաց մի՛ եղեք նյութական բաների համար[2]: Բարձրացրեք ձեր աչքերը երկինք և թող ձեր սիրտը փնտրի Իմ Երկնային Օրենքները, որպեսզի դրանց միջոցով Իմ Երկնային Թագավորությունը գա ձեր սրտերում, և Իմ Կամքը կատարվի ձեր սրտերում, ինչպես Երկնքում գտնվող բոլոր սրբերի սրտերում է: Մինչ օրս Ես կանչում եմ, ինչպես մի անգամ կանչեցի Երուսաղեմում. «Եթե միայն իմանայիք Խաղաղության այն Պատգամը, որը Ես տալիս եմ ձեզ մինչև օրս, դուք չէիք բաց թողնի այն»: Բայց այս բաները թաքցված են ուսյալներից, իմաստուններից և

[1] Այս խոսքերը հնչեցին ինչպես մի աղերս: Հիսուսի ձայնը հնչում էր մուրացիկի պես:
[2] Հիսուսի Ձայնը բարձրացավ, երբ Նա դա ասաց: Նա ասաց այդ որպես հրաման, բայց միևնույն ժամանակ նաև որպես հիշեցում, որ այս աշխարհում ոչ մի բան կարևոր չէ, այլ մարդ պետք է փնտրի երկնային բաներ:

հայտնվում են սոսկ երեխաներին: Երկնքի Թագավորությունը հայտնվում է սրտով պարզերին և խոնարհներին:

Ուղղե՛ք ձեր սրտերը և վերջում դուք կստանաք ձեր պարգևը: Եվ եթե ասեք. «Մենք ի՞նչ կարող ենք տալ Քեզ հիմա», ես կասեմ ձեզ. «Տվե՛ք Ինձ ձեր սիրտը, և ես կլրացնեմ ձեր հավատի պակասը: Բացե՛ք ձեր սիրտը, և ես կդարձնեմ այն մի երկինք Ինձ համար՝ ձեր Աստծո համար, որտեղ ես կարող եմ փառավորվել»:

Եկե՛ք և ճաշակեք այն պտուղից, որը ես առաջարկում եմ ձեզ այսօր, քանի դեռ ժամանակ կա: Եկե՛ք Ինձ մոտ: Ձեր Տերն արդեն վերադարձի ճանապարհին է: Ահա թե ինչու ես ասում եմ. խաղաղություն կնքեք Ինձ հետ և եղեք մեկ Իմ Անվամբ:

Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ Իմ Անունով՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը ձեր ճակատին:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 8, 1995

Ով կա, որ կարեկցի մեզ
և վշտանա մեզ համար, եթե ոչ Դու:

Մենք դեռևս հույս ունենք
խաղաղության,
այն խաղաղության, որ
Քո Սիրելի Որդին է կտակել մեզ...
Մենք մեղանչել ենք Քո դեմ և
երկնքի բոլոր զորությունների դեմ:
Մենք դադարել ենք
գոյություն ունենալուց, որովհետև
մենք մերժել ենք Քո Սուրբ Անունը,
որ մեր ինքնությունն է՝
Կյանքի Աղբյուրը:

Եվ հիմա այս Մեծ Ապստամբությունը,
այս Ուրացությունն ուտում է
քո Տունը քաղցկեղի նման:

Օ՜, իմ Յա՜հվե,
միլիոնավոր արևներից էլ պայծառ,
ինչպե՞ս կարող է մարդը չնկատել
Քո պայծառությունը,
որն անցնում է իր կողքով:
Ինչպե՞ս կարելի է ասել.
«Ո՛չ մի ապացույց չկա,
որ Յահվեն է անցնում:
Ո՛չ մի նշան չի երևում,
երբ Նա անցնում է»:

Աստվա՛ծ, Դու նման ես նետի՝
արձակված նշանակետի վրա,
չնայած նրանք աչքեր ունեն,
բայց չեն կարող տեսնել,
որ նետն անցել է իրենց կողքով
և հասել է թիրախին:

Ո՛վ մեր Աստված,
Դու մեր Հույսն ես,
արի՛ հիմա, այս տարի,
առանց ուշացման, որ վերականգնես
Քո ջարդված խորանները
և վերակառուցես
Քո քաղաքներն ու Քո Տունը:

Ա՛հ, Վասիլիկի, դաղարեցրո՛ւ հոգոցներդ, ես լսեցի քեզ: Իմ Ձեռքն ավելի հզոր է, քան Իմ թշնամու ձեռքը: Դուք չուտով սփոփանք կստանաք, և ես կուղղեմ Իմ ժողովրդին և կամրացնեմ ձեր քահանաներին: Ես կվերականգնեմ Իմ խորաններն ու կվերակառուցեմ Իմ քաղաքները:

Սակայն սկզբում ես պետք է կարգի բերեմ անօրենններին, ովքեր առաջամարտիկներ են, երբ հարցը վերաբերում է չարագործությանը: Նրանք կուլ են տալիս ուրացությունն այնպես, կարծես Կյանքի Հացն են ուտում: Նույնիսկ այսօր, եթե նրանք ապաշխարեն, ես ողորմածաբար ցույց կտամ նրանց Իմ բարեհաճությունը և Իմ ներողամտությունը իրենց հանդեպ, բայց ես ոչինչ չեմ լսում նրանցից... Ինչպե՞ս կարող եմ ես հրաժարվել Իմ բուռն բարկությունից և հետ կանգնել Իմ Արդարությունից, երբ այս սերունդը շարունակում է մեծ պատիվներ տալ չարին:

Ես հայտնի եմ որպես բարի, ներող և սիրառատ, բայց այդ ուրացողներից ո՞վ է այսօր Ինձ կանչում, կոչելով Ինձ. «Հա՛յր իմ»: Դրա համար, կրակի մի փոթորիկ չուտով պիտի սրբի ու տանի այս անօրինությունը և մեղքը: Ձեզանից <u>ոչ մեկը</u> չգիտի այդ օրը, և եթե որևէ մեկն ասի, որ ինքը գիտի, նա Ինձնից չի գալիս...

Ես պիտի այցելեմ ձեզ այնպիսի մի ժամանակ, երբ Ինձ չեք սպասում, առանց նախանշված մի ժամի: Հանկարծակի, անսպասելիորեն ձեզ կայցելի կլանող կրակի մի մրրիկ: Այն, ինչի սպասում եք, պիտի գա: Ես պիտի խոսեմ, և Երբ Ես խոսեմ, Իմ Ձայնը պիտի հալեցնի երկրի տարրերը՝ նրա անօրինությունների և մեղքերի հետ միասին: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ մի հավիտենական սիրով, և Իմ սերը ձեր բոլորի հանդեպ հնարավոր չէ բառերով ասել, բայց մի՞թե Իմ Անունը պետք է ընդմիշտ պղծվի:

Այն, ինչ Ես պատրաստվում եմ անել, վշտացնում է Ինձ և համակում թախիծով, քանի որ Ես հաճույք չեմ ստանում ձեզ վշտացնելուց: Իմ դժգոհության մեջ Ես ստիպված կլինեմ կրակով ձեզ ուղղել:

Ողբա՛, աղջիկս, չապաշխարածի համար: Ես պիտի կատարեմ Իմ մտադրությունը, և Իմ Ծրագիրը գործադրեմ մինչև վերջ: Իսկ նրանց, ովքեր չփակեցին իրենց ականջը Իմ Ձայնի հանդեպ և պաշտպանեցին Իմ խոսքը, Ես ասում եմ. մի՛ վշտացեք, Իմ Աչքերը տեսնում են ամեն ինչ, և Ես պիտի դատեմ ձեզանից յուրաքանչյուրին իր արածի համեմատ: Քանի

որ ես նախապես հայտնում եմ իրադարձությունները, ես պիտի հայտնեմ ձեզ ինչ որ Իմ Աջ Ձեռքը պիտի անի Իմ Օրից անմիջապես հետո: Իմ Աջ Ձեռքը պիտի դնի երկրի և երկնքի նոր հիմքերը, և մեկ անգամ էլ ես պիտի զարդարեմ այդ մնացորդին Իմ Պայծառությամբ և Աստվածայնությամբ: Ուստի, աղջի՛կս, հույս կա ձեր հետնորդների համար: Ես ձեր Հույսն եմ:

Ես շատերին դեպի Կյանք պիտի վերադարձնեմ, և Իմ Որդու Նոր Անունը պիտի դնեմ ձեզ վրա: Իսկ դո՛ւ, աղջիկս, միջնորդի՛ր Իմ Տան համար, հոգ տար Իմ Շահերին, և ես հոգ կտանեմ քո համար: Իմ Հոգին տրվել է քեզ, որ կիրարկես Իմ Օրենքները, սիրես արդարությունն և Իմ աղջիկներին ու տղաներին բերես հեռուներից: Ես ուսուցանել եմ քեզ և տվել եմ քեզ աչակերտի լեզու, որ լինես Իմ Արձագանքը, և Իմ Թագավորությունը դնես նրանց սրտերում: Պարասկևի[1], քո աչքերին ես տվել եմ Իմ Լույսը: Քո հոգու մեջ ես արտաշնչեցի հարության բույրը, ես արտաշնչեցի զմուռսի բույրը, և Իմ Որդու տապանակի մեջ[2], ես խնկով օծեցի այն[3]...

~ Իսկ հիմա լսի՛ր քո Հորը[4]. Իմ Հոգին լցված է վշտով, բայց միևնույն ժամանակ՝ կարեկցանքով: Ես խոսեցի, բայց շատ քչերն են լսում: Ես թակում եմ[5], բայց թվում է, ոչ մեկը չի լսում: Ես ի՞նչ անեմ, երբ ոչ մեկը չի լսում: Աղջի՛կս, Ես Հույս տվեցի ձեզ բոլորիդ: Սակայն, երբ Ես խոսում եմ այսօր, Իմ Խոսքը, որն այն Հույսն է, որին դուք բոլորդ սպասում էիք, հենց որ տրվում է, անմիջապես թաքցվում է: Հույսի այն սերմը, որ Ես ցանում եմ, վերցվում և թաքցվում է... Ես խոսում եմ և սպասում պատասխանի, բայց Իմ Խոսքին ուշադրություն չեն դարձնում:

Չնայած դրան, Ես եմ անհավատ սրտերի <u>Հույսը</u>, բայց միևնույն ժամանակ այն <u>Սուրը</u>, որ կտրում ու կիսում է սրտերը: Որքան շատերն են քաղցում Իմ Խոսքին[6]... Բայց ինչո՞ւ են մարդիկ թաքցնում այն դանձերը, որ Ես հեղում եմ նրանց վրա: Եթե Իմ Հոգին լցված է վշտով, այդ նրանից է, որ Արդարության Իմ Բաժակը հիմա դուրս է թափվում եզրերից՝ հոսելով Իմ Ձեռքերի վրայով, որոնք պատրաստ են հարվածելու և խարազանելու այս անհավատ սերնդին, ինչպես երբեք չի պատահել նախկինում: Հետո, քանի որ Ես Հայր եմ, Ես կարեկցանքով և դթությամբ պիտի բուժեմ այդ վերքերը, այդ նույն հարվածող Ձեռքերով... Սա է այն մեծ Հույսը, որը դուք խնդրում եք Ինձնից:

Ես պիտի դամ, որ բոլորին Տուն բերեմ և բուժեմ նրանց վերքերը: Քանի որ Ես Հայր եմ, Ես պիտի հոգամ Իմ վիրավոր զավակների համար,

---

[1] Աստված ասաց իմ երկրորդ անունը, որն ինձ տրվեց, երբ իմ մայրը խոստացավ մեր սուրբ Պարասկևիին՝ աչքերը բուժող սրբին, ինձ կոչել իր անունով:

[2] «Իմ Որդու տապանակը» ասելով, նկատի ունի մեզ, քանի որ, երբ մենք Հաղորդություն ենք ստանում, Հիսուս Ինքը գահ է բարձրանում մեր մեջ: Մենք բոլորս նախասահմանված ենք լինելու Քրիստոսի կենդանի տապանակները:

[3] Խունկը հեռու է քշում սատանային: Աստված պետք է ինձ խնկով օծեր, որ ինձ մաքրագործեր կատարյալ վիճակում Իր Որդուն ստանալու համար:

[4] Հանկարծ Աստված խոսեց շատ մտերիմ ձևով և հայրական ձայնով, ինչպես մի հայր, որը վշտացած է, և ցանկանում է իր վշտի մասին հայտնել իր զավակին:

[5] «Թակելն» այստեղ երկակի իմաստ ունի. նաև «տապալել»:

[6] Հանկարծ Աստված տվեց այդ հարցը, կարծես միայնակ Ինքն Իրեն խոսելիս լիներ, բացահայտելով Իր մտքերը:

Ես պիտի հոգամ նրանց կարիքները, հետո նրանք կիմանան, որ սկզբից ի վեր նրանք Իմն են եղել, և որ

Ես Եմ որ Եմ-ը՝ Հայրը է և Տեր:

Ես այնպես կանեմ, որ նրանց շրթունքները հայտարարեն. «Օրհնյալ է մեր Տերը», և մեկ անգամ ևս նրանք պիտի հռչակեն Երկնքի Թագավորությունը: Նրանք պիտի հռչակեն այն, ինչպես նախկինում երբևէ չեն արել, որովհետև Ես նրանց պիտի տամ նոր սիրտ... Ուրեմն մի՛ զարմացիր, երբ այս վերջին օրերին մարդիկ ամբարտավան են և դավաճանում են միմյանց: Մի՛ սարսափիր բարձրացող կեղծ մարգարեների բազմությունից և սխալների քարոզումից ու այն աղավաղումից, որ այդ կեղծ ուսուցիչներն են անում Սուրբ Գրքերի նկատմամբ...

Ո՛չ, մի՛ վախեցիր, զավակս, մարդկանցից, ովքեր հիմա քմծիծաղ են տալիս, երբ դու դեռևս ասում ես. «Ես հավատում եմ Իմ Հորը, որ Երկնքում է: Ես հավատում եմ մեկ Աստծո՝ ամենի Հորը: Ես հավատում եմ Հաղորդության մեջ Նրա Սիրելի Որդու փառավոր կենդանի Ներկայությանը: Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին, որ հղիացավ Սուրբ Հոգուց, ծնվեց Կույս Մարիամից»:

Ո՛չ, աղջի՛կս, նրանք չեն հավատում ո՛չ Իմ Որդու Հարությանը, ո՛չ էլ Նրա Աստվածությանը... Ես ասում եմ քեզ. եղի՛ր խաղաղ ու հանդիստ կատաղի միջավայրում, և փորձությունների պահին մնա Իմ Խաղաղության մեջ: Տարածի՛ր Իմ Խաղաղությունը: Երբեք թույլ չտաս, որ սիրտդ անհանգստանա մարդկանց դաժանությունից... Ես քեզ հետ եմ, չնայած դու չես տեսնում Ինձ, զավա՛կս, Ես քեզ հետ եմ: Իմ Որդին արդեն այն ճանապարհին է, որով Նա հեռացել էր, որպեսզի լինի ձեր մեջ: Ուստի արիացի՛ր, արիացի՛ր, և մի՛ վախենա: Հույսդ դիր Ինձ վրա, և ուրիշ ոչ մեկի:

Ես Յահվեն եմ՝ քո Հայրը, և Ես խոստանում եմ քեզ տուն բերել: Ուստի գնա՛ և ցույց տուր Իմ Զորությունն ու Իմ Ողորմությունը:
Ես քեզ հետ եմ. գնա՛, գնա և ասա բոլորին.

«Օգնությունը գալիս է Աստծուց,
Հույսը գալիս է Աստծուց:
Դարձե՛ք Նրան, և Նա կփրկի ձեզ»:

Ես օրհնում եմ քեզ, Վասիլիկի, միշտ պատվի՛ր Իմ Անունը:

Փետրվարի 17, 1995

(Բանգլադեշ)

(Դհակայում, իմ հանդիպումից անմիջապես առաջ):

Տե՞ր:

Խրախուսիր ինձ,
և Քո խոսքերը մշտապես պահիր
իմ աչքերի առջև:
Հիշեցրո՛ւ ինձ Քո Ուսուցումները:
Ո՛վ Տեր, թող Քո խոսքերը լինեն,
որպես ճրագ իմ ոտքերի առջև,
որպեսզի չսայթաքեմ:

Խաղաղությո՛ւն քեզ: Ես երբեք չեմ լքել քեզ և երբեք էլ չեմ լքի[1]: Վասո՛ւլա, շըշշշ, լսի՛ր Ինձ[2].... Հենվի՛ր Ինձ վրա, ինչպես հենվել ես նախկինում, և Ես կառաջնորդեմ քեզ և քո միջոցով՝ ուրիշներին: Մե՞նք, մե՞ղ: ІС

(Աստված ինձ ետ բերեց Բանգլադեշ, որտեղ Նա առաջին անգամ խոսեց ինձ հետ: Նա ինձ ետ բերեց իմ ապաշխարության վայրը, որտեղ «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ»-ը սկսվեց):

Իմ Վասո՛ւլա, Ես օրհնում եմ քեզ: Արի՛, Իմ Հոգին քեզ հետ է և քեզ հետ պիտի լինի, որպեսզի դու, որպես Իմ Արձագանք, կարողանաս Իմ Երկնային Մանանան տալ ամեն մեկին:

Իմ գալուստն այստեղ նորից քեզ հետ, նրա համար էր, որպեսզի Ես օրհնեմ քո միջոցով քո գոյության էության վայրը: Սրանով Ես նկատի ունեմ քո գոյությունն առնելը և կենդանանալը[3]: Ես՝ Հիսուս, եկա քեզ մոտ քո աղքատության մեջ, քո թշվառության մեջ, որ բարձրացնեմ քեզ դեպի Իմ Սիրտը և դարձնեմ քեզ Իմ Աստվածային Ողորմության կենդանի նշանը: Թույլ տուր Ինձ հիմա խոսել քո միջոցով, և Իմ շնորհները տալ այս հանդիպումների ժամանակ: Հնձի՛ր Ինձ հետ այս հարուստ բերքը, որը դու չես պատրաստել:

Աղոթի՛ր առանց դադարի և պատվի՛ր Ինձ: Սու՛րբ պահիր Իմ Անունը: Ես՝ Հիսուս, քեզ հետ եմ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 18, 1995

(Դհակա)

Տե՛ր,
Դու կրթեցիր ինձ հենց այդպես:
Երջանկությունը պահված է

[1] Ես բան էի ուզում ասել:
[2] Սա ասվեց շատ փափուկ և նուրբ ձևով:
[3] Իմ ապաշխարությունից առաջ ես դադարել էի գոյություն ունենալուց, իսկ երբ Աստված դարձի բերեց ինձ, ես սկսեցի ապրել:

թշվառների և աղքատների համար:
Ահա թե ինչպես ես
կարողացա տեսնել այն,
ինչ աչքը չի կարող տեսնել,
մինչև որ դա մեզ չտրվի վերևից:

Խաղաղությո՛ւն քեզ: Ես չէի կարող տեսնել Իմ Սրտի ծաղկին թոշնելիս[1]: Ես չէի կարող տեսնել քեզ ընդմիշտ կուրացած: Իմ Սիրտը քո բնակարանն է և քո փրկությունը: Ինչպե՞ս կարող էի տեսնել ամպը, որը ստվեր էր գցել Իմ վրանի վրա և լուռ մնալ: Իմ շնչի մի հարվածը բավական էր հեռու քշելու համար այն, ինչ մթագնել էր Իմ վրանը[2]...

Իսկ հիմա, մի հարց. «Դու դեռևս ցանկանո՞ւմ ես շարունակել այն ամենը, ինչ ես եմ քեզ տվել և սիրով ավետարանել Սիրո համար»[3]:

Այո՛, Տե՛ր:

Ասա՛. «Այո՛, Տե՛ր, բայց իմ ներքին կրակով և բուռն եռանդով՝ Քո Տան ու Քո Փառքի համար»[4]:

Ուրեմն նորոգիր քո հավատարմության խոստումները Ինձ ուղղված[5], որից հետո ես կնորոգեմ Իմ շնորհները քեզ վրա... Ես կշարունակեմ դուրս հեղել Իմ շնորհներն ու Իմ ուսուցումները քեզ վրա: Գոհացրո՛ւ Ինձ և բավարարիր Իմ ծարավը: Հասկացի՛ր, թե ես ինչ եմ տվել քեզ[6]: Ինձ համար հաճելի է տալ...

Հիշեցրու քո խորհրդատուին[7], թե որքան է գոհացնում Ինձ զոհաբերությունը: Առատաձեռնությունն ու մեծահոգությունը նույնպես հաճելի են Իմ Աչքերին: Ես ցանկանում եմ ձեզ երկուսիդ էլ հիշեցնել, թե որքան կարևոր է համաքայլ ընթանալ Ինձ հետ[8], հաշվի առնելով Իմ Պատգամի հրատապությունը: Դուք կանգնած եք մեծ իրադարձությունների արշալույսին: Արտա՛նց աշխատեք: Եղեք դիմասիրտ մեկդ մյուսի հանդեպ: Ձեր աշխատանքում գաղջությունը հաճելի չէ Ինձ:

Ո՜հ, ուրիշ ի՞նչ կարող էի տալ ձեզ, որ չեմ տվել: Ես տվել եմ ձեզ այս Անհատնում Գանձը, որը թաքցված էր մարդկության աչքերից և հայտնվել էր միայն Գերտրուդին[9], այս Գանձը, որն ամբողջովին զմայլեց նրա սիրտը, և նրա աչքերը գրավվեցին այդ հրաշքով[10]: Այս Անհատնում Գանձը պահված էր ձեր ժամանակների համար՝ վերջին ժամանակների

---

[1] 1985 թվի նոյեմբերին, երբ ամեն ինչ սկսվեց («Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ»), Դանիել Հրեշտակը, նախքան իրեն ներկայացնելը, բռնեց ձեռքս և մի սիրտ նկարեց ու նրա կենտրոնում մի ծաղիկ:
[2] Այս ամենն ասվեց փոխաբերություններով: Հիսուս նկատի ունի հետևյալը. ամպը՝ հոգու խավարն է՝ մթությունը, վրանը՝ իմ հոգին, Նրա Շունչը՝ Սուրբ Հոգին:
[3] Իմ խոստումները պետք է նորոգվեին «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների ծագման վայրում:
[4] Ես ասացի դա:
[5] Ես նորոգեցի:
[6] Հիսուս կտրուկ կանգ առավ և ասաց այն, ինչ հետևում է:
[7] Հայր Օ'Քերոլին
[8] Հիսուսի «քայլը» բավական արագ է...
[9] Դա հայտնվեց նրան սուրբ Հովհաննես Ավետարանչի կողմից:
[10] Տե՛ս գրությունը պատգամի վերջում:

համար: Իմ Սուրբ Սիրտը պահել էր այս գանձերը ձեզ սերնդի համար: Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչու սատանան, Իմ Վասո՛ւլա, դիտում է քեզ որպես իր գլխավոր մտահոգությունը և ավերածության գլխավոր նշանակետը:

Հիմա հասկանում եմ, Տե՛ր:

Ես երբեք չեմ լքի քեզ: Աշխատի՛ր Ինձ հետ[1] և դովաբանիր Ինձ: Ես քո Կյանքն եմ... Աղոթի՛ր, որ չարը չհամարձակվի չափազանց մոտենալ ձեր միությանը[2]... Աղոթե՛ք ձեր աշխատանքի ավարտման համար: Աղոթե՛ք և խնդրեք Հորը, որ ձեզ կատարյալ դարձնի: Ես՝ Հիսուս, օրհնում եմ ձեզ երկուսիդ էլ, և հիշե՛ք. վստահե՛ք մեկդ մյուսին, օրհնեք մեկդ մյուսին, օրինակ եղեք, ցույց տալով, թե ինչպիսին պիտի լինի միասնությունը: Եղե՛ք մեկ:

ΙΧΘΥΣ

(Նշում. Սուրբ Գերտրուդը հաճախ կոչվում է Մեծ, քանի որ նա կաթոլիկ եկեղեցու ամենամեծ միստիկներից էր: Չնայած նա ապրել է սուրբ Մարգարեթ Մարիից մոտ չորս դար առաջ, նա մեծ նվիրում ուներ Հիսուսի Սրտին: Նրա գիրքը՝ «Աստվածային Բարության ավետողը», մի կենդանի պոեմ է Սրբազան Սիրո մասին, մի սեր, որը մշտապես կապված է Սուրբ Սրտի հետ:

Նրա տեսիլքներից ամենանշանավորներից մեկը Քրիստոսի Սրտի վերաբերյալ է: Այդ տեսիքը տեղի ունեցավ սուրբ Հովհաննես Ավետարանիչի տոնի օրը: Գրքում նա խոսում է իր մասին երրորդ դեմքով:

Մի հատված սուրբ Գերտրուդից.

«Մինչ Սբ. Գերտրուդը ամբողջովին կլանված էր աղոթքով, մի բան, որ նրա սովորությունն էր, աշակերտը (Հովհաննեսը), որին Հիսուս շատ էր սիրում, և այդ պատճառով էլ սիրելի էր բոլորին, հայտնվեց նրան: Հետո Սբ. Գերտրուդը ասաց աշակերտին. «Իսկ ի՞նչ շնորհ կարող եմ ստանալ, ես թշվառս, քո տոնի օրը»: Նա պատասխանեց. «Արի՛ ինձ հետ, դու իմ Տիրոջ ընտրյալն ես, արի հանգստանանք Նրա կրծքին, որտեղ թաքնված են օրհնությունների բոլոր գանձերը»:

- Ապա աշակերտը տարավ նրան Տիրոջ մոտ, և նրանք երկուսն էլ տեղավորվեցին Տիրոջ Սրտի վրա: Ահա այստեղ նա հայտնագործեց այդ Անհատնում Գանձը, որ Տերը պահում էր Իր Սրտում: Երբ նա հարցրեց Ավետարանիչից, թե ինչու այդ Գանձը չէր տրվել նախկինում, կամ թե ինչու Ավետարանիչը չէր խոսել այդ Գանձի մասին, սուրբ Հովհաննեսն ասաց.

«Իմ առաքելությունն այն էր, որ մի պարզ խոսք հանձնեի Եկեղեցուն, իր գոյության առաջին դարում, Հայր Աստծո անստեղծ Խոսքի մասին, որը ողջ մարդկությանը խորհրդածության բավարար նյութ պիտի տար մինչև աշխարհի վերջը, բայց և այնպես, առանց որևէ մեկի կողմից այն ամբողջապես հասկացվելու»:

[1] Հիսուս ժպտաց:
[2] Հայր Օ'Քերոլի և իմ:

Սակայն Հիսուսի Սուրբ Սրտի բաբախումների մասին խոսելը պահված է ներկա ժամանակների համար, որպեսզի, լսելով այս բաները, արդեն ծերացած և Աստծո սիրո հանդեպ սառած աշխարհը բոցավառվի և նորից տաքանա»:

(Սուրբ Գերտրուդ՝ (1257-1302), Legatus Divinae Pietatis, գիրք IV, գլուխ IV).

Փետրվարի 21, 1995

(Դհակա)

Խաղաղություն քո սրտում: Իմ Սուրբ Սրտի Վասուլա, Իմ Տառապանքի Ծաղի՛կ, Իմ Հոր զավակ, Ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես:

Տե՛ր,
որտեղի՞ց գտնեմ բավարար խոսքեր
Քեզ փառաբանելու համար:
Դու պատվել ես իմ թշվառությանը
Քո վիթխարի ու ապշեցուցիչ
պատկառանք ներշնչող
Ներկայությամբ:
Դրանից հետո, ոչ մի առաջադրանք
դժվար չէր ինձ համար.
Քո Ներկայությամբ
ամեն ինչ դարձավ հեշտ և հրճվանք:
Դու սովորեցրիր ինձ,
որ Քո աջ ձեռքում
Դու պահում ես Հաղթանակը,
և որ Կյանքը կլանել է Մահվանը:
Ո՛վ Փրկիչ, որ այնքան անհամբեր ես
փրկելու և ամրապնդելու,
Քո գթասրտությունը
այցելեց ինձ գիշերով,
իմ սրտի խավարի մեջ,
որ Տոնական երգ երգի՝
հարուցելով մի դիակ: Դու դրեցիր
Քո ողջ Սիրտը Քո Երգի մեջ՝
մեր բոլորի հանդեպ
Քո սիրուց մղված:
Եվ ինձանից Դու պատրաստեցիր
մի Քնար Քո Խորանի դիմաց...
Թո՛ղ մեղեդի հնչի
մեր Թագավորի համար, թող հնչի՛:
Թո՛ղ մեղեդի հոսի
ու ծավալվի մինչև երկրի ծայրերը
և թրթռա յուրաքանչյուր ձորում,
յուրաքանչյուր սարում և հովտում:

Միշտ գովաբանի՛ր Իմ Անունը, ինչպես հիմա, որպեսզի քո միակ Սերը հրճվի:

Վասո՛ւլա, զորացրո՛ւ Իմ Եկեղեցին, և Ես կզորացնեմ քո Հավատն ու հոգին: Այն քիչը, որ տալիս ես Ինձ՝ գոհացնում է Ինձ, երբ շատ ես տալիս Ինձ՝ ուրախացնում է Ինձ: Իմ Հայրը երբեք չի լքում քեզ, Նա միշտ գալիս է քեզ փրկելու[1]: Ես միշտ քեզ հետ եմ...

Մի՛ մոռացիր, որ ես փոշի եմ,
և որ քամու մի հարվածից
ես կանհետանամ:
Քո Կրծքից հոսող Ջրերը սահում են
սարերի վրայով
և լցվում հովիտները[2]:
Դու ջուր ես տալիս
բոլոր նրանց, ովքեր ծարավ են,
և Դու ուղարկում ես ինձ
բլուրներից այն կողմ
բոլոր ազգերի մոտ՝ կանչելու.

«Միայն Աստծուց են գալիս
հաղթանակը և զորությունը»:
Այլևս մի՛ կծկվեք ծարավից,
արթնացրե՛ք ձեր հիշողությունը
և սթափվե՛ք, դուք բոլորդ,
որ ընկած եք փոշու մեջ,
քանի որ Ցողն անհասանելի չէ ձեզ:
Դուք մոռացել եք, թե
ով է ստեղծել ձեզ, բայց եթե խմեք,
ձեր հիշողությունը կվերականգնվի[3]:

«Ո՛հ, եկե՛ք ջրի մոտ,
դուք բոլո՛րդ, որ ծարավ եք,
նույնիսկ եթե փող չունեք, եկե՛ք...»[4]

Եվ Ես կասեմ. լսե՛ք, և ձեր հոգին կապրի....

Իսկ հիմա, իմ Փրկիչ,
Դո՛ւ, որ առաջինն ես համարվում
իմ կյանքում,
ների՛ր իմ թշվառությունն

---

[1] Ես ինքս էլ էի դա նկատել: Հայր Աստված առաջինն է շտապում ինձ սփոփելու: Մի օր, շատ ծանր հալածանքի մեջ, ես ծնկի եկա, օգնություն խնդրելով Հիսուսից: Ես գրեցի իմ բողոքը (օգտագործելով իմ շնորհը), և Հիսուսի փոխարեն Հայր Աստվածը շտապեց ինձ մոտ և սփոփեց ինձ խոստանալով, որ հաջորդ օրը «դա կկարգավորվի»: Նրա խոսքն իրականացավ, ինչպես ասել էր: Ես գիտեմ, որ Հայրը թուլություն ունի իմ հանդեպ, նույնն էլ ես՝ Նրա հանդեպ:

[2] Սուրբ Հոգու հեղումը:

[3] Հիսուսն Իր Սուրբ Հոգով օգնեց ինձ գրելու այն, ինչ ես գրեցի:

[4] Ես. 55:1

ու իմ թուլությունները:

Սիրելի՛ս, ամեն դեպքում ես սիրում եմ քեզ:

Ցրի՛ր մշուշն իմ շուրջը,
Անհատնում Գանձ, Երիցս Սուրբ,
իմ Գիշերվա Լուսատու,
իմ Հոգու Անոթ,
բոցավառ Կրակի Սյուն,
մի՛ թող որ մնամ
բանտարկված խավարում:
Ամպրոպի Որոտ[1]*,*
կենդանացրո՛ւ Հոգիս
և շնորհիր ինձ Ուսուցում
և իմ սխալների Ուղղում:

Իմ ընկերակցությունը և Իմ ընկերությունը կուսուցանեն քեզ պարզությամբ: Բռնի՛ր Իմ Ձեռքը, և մենք միասին կշարունակենք այն ճանապարհը, որը Ես եմ նախապատրաստել քեզ համար, որպեսզի հասցնեմ քեզ կատարելության:

Փետրվարի 23, 1995

(Դհակա)

(Ես նայում էի Քրիստոսի նկարին):

Գեղեցկության Հեղինակ,
ինչպե՞ս կարող է մարդ
չհրապուրվել Քեզանով:
Որքան էլ մենք թշվառ ենք
և ընդունակ միայն ավերածության,
մեր հանդեպ Քո Սերը
երբեք չի թուլանում:
Մենք մեղանչում ենք,
սակայն դարձյալ Քոնն ենք:
Ներում շնորհելու
Քո բոցավառ ցանկությամբ,
Դու ուսուցանում ես մեզ,
թեև մենք աղտոտված ենք մեղքով,
որ շարունակելու ես
հետապնդել մեզ,
ինչպես Սիրեկանն է
հետապնդում իր նշանածին,

[1] Աստծո Ձայնը նման է ամպրոպի որոտի. (Հովհ. 12:28-29): «Մի ձայն եկավ երկնքից. «Ես փառավորեցի, և դարձյալ պիտի փառավորեմ»: Մոտերքում կանգնածները, ովքեր լսեցին դա, ասացին, որ դա ամպի որոտ էր»:

մեզ ամբողջապես նվաճելու համար:

Այո՛, ի՛նչ չեմ անի ես ձեր բոլորի համար, որ ամբողջապես նվաճեմ ձեր սիրտը: Այնքան քիչ բան է պետք ձեր Փրկչին, որ Իրեն երջանիկ զգա: Նույնիսկ Ինձ ուղղված[1] սոսկ մի հայացքն ուրախացնում է Ինձ:

Ես կարող եմ ձեզ ընդմիշտ դարձնել Իմը, և Իմ Գերագույն Իշխանությունը ձեր վրա կփոխակերպի ձեր հոգին աղամանդի՝ բյուրեղյա մաքրությամբ, շողշողուն և առանց արատների:

Ես ամենայն լրջությամբ ասում եմ ձեզ. մինչև չմեռնեք ձեր սեփական «եսի» համար, հավիտենական կյանք չեք ստանա: Ես Կյանքի Լույսն եմ: Իսկ դո՛ւ, աղջի՛կս, հիշի՛ր. քո եղբայրներն ու քույրերը դեռևս հեռու են Իմ Աստվածային Սրտից, որը կարող է նրանց դարձնել աստվածային: Նրանք կործանման ճանապարհին են, և Ավերածությունը քայքայում է նրանց, և նրանք չեն էլ հասկանում այդ: Արարչությո՛ւն, դու պետք է միայն կամենաս, և Ես կկլջնեմ քեզ վրա ինչպես մի Գետ՝ այդ մշտահոս Ակունքը, որը բխում է Իմ Կրծքից: ic

Փետրվարի 25, 1995

(Ինդոնեզիա - Ջակարտա)

Տե՛ր իմ, Քո Խոսքն այրում է մեր սիրտը կրակի պես: Ուրեմն այդ ինչպե՞ս է, որ երբ Դու խոսում ես, նրանց[2] սիրտը չի այրվում:

Աղոթի՛ր նրանց համար, որ Ես նրանց տամ մի սիրտ, որ ճանաչի Ինձ: Իմ Հոգու օրհնյալ, ընդունի՛ր այս տանջալի աքսորը երկրի վրա[3]: Մի օր Ես քեզ ցույց կտամ դրա արդյունքը: Այսօր Ես բերել եմ քեզ այստեղ՝ Ինդոնեզիա, այնպես, ինչպես Ես ժողովեցի բոլորիդ մի հավաքում:

Ասա՛ նրանց. մի՛ կարծեք, թե Աստված անմերձենալի է: Աստված մոտ է ձեզ և սիրում է ձեզ... Պատվե՛ք Նրա Անունը: Վերադարձե՛ք Ինձ մոտ, փոխե՛ք ձեր կյանքը և ապրեք սրբորեն, քանի որ Սուրբ է Իմ Անունը: Թույլ տվեք Ինձ վերստին զգեստավորել ձեզ, որի համար հարկավոր է, որ դուք ամբողջապես հանձնվեք Ինձ: Ձեր միակ Ապաստանն Իմ Սիրտն է: Լսե՛ք և հասկացե՛ք. Ես ասել եմ, որ մարդու մարմինը նման է խոտի, իսկ նրա գեղեցկությունը դաշտային վայրի ծաղիկների: Բայց խոտը թառամում է, իսկ ծաղիկները՝ թոշնում, մինչդեռ Իմ Խոսքը մնում է ընդմիշտ... Իսկ ձեր հոգին պիտի շարունակի ապրել: Թող ձեր հոգին խաղաղության մեջ լինի Ինձ հետ այն օրը, երբ Ես կգամ այն տանելու, որպեսզի ժառանգեք Իմ Փառքը:

Մի՛ խաբեք ինքներդ ձեզ հիմա և մի ասեք. «Հոգի՛, հիմա դու շատ բաներ ունես, վերցրո՛ւ դրանք, ինչպես որ կան: Լավ ժամանակ անցկացրու և լողա քո հարստության մեջ: Պարզ է որ ժառանգությունը

[1] Այդ այն պահին էր, երբ ես սիրով նայեցի Նրա Նկարին:
[2] Այս պատգամները հալածողների սրտերը:
[3] Տեսնել Տիրոջը և ցանկանալ լինել Նրա հետ:

քոնն է»: Հասկացի՛ր, զավակս[1], թե ինչ անապատ ես դու դարձրել քո հոգին: Հասկացի՛ր, զավակս, թե որքան ցավալի է Ինձ համար տեսնել քո չորությունը: Ես միշտ սիրել եմ քեզ հարատև Սիրով: Մեղմացրո՛ւ Իմ ցավը, վերացրո՛ւ Իմ ցավը և վերադարձիր Ինձ մոտ՝ քո Հոր մոտ, որ քո Արարիչն եմ, քո Փրկիչը և քո Կյանքը: Աղոթի՛ր սրտանց, և Ես կլսեմ քեզ: Ներում կտրվի քեզ, եթե դու խնդրես այդ:

Ինդոնե՛զիա, ուղղիր քայլերդ Իմ Քայլերի հետքերով, քանի որ Իմ Օրը մոտ է, և երբ Ես գամ, պիտի գամ Կրակով: Ուստի թույլ տուր Ինձ, որ Ես քեզ հարմար գտնեմ Իմ Թագավորության համար... Խնդրի՛ր Իմ օրհնությունները, և Ես կտամ դրանք քեզ: Ո՞ր հայրն է մերժում իր զավակի բարօրությունը: Ուրեմն, որքան ավելին կտամ Ես, որ Սիրո Ակունքն եմ, որևէ մեկին, ով խնդրում է: Ես մոտ եմ ձեզ, աղջիկնե՛ր և տղանե՛ր, և Ես օրհնում եմ ձեզ՝ տալով ձեզ Իմ Խաղաղությունը: Եկե՛ք և ընդունե՛ք ձեր մեղքերը Իմ դիմաց կանգնած, և Ես կպատասխանեմ ապաշխարության ձեր կանչին:

Վասո՛ւլա, Ես Յահվեն եմ՝ քո սիրելի Հայրը և բոլորի Հայրը: Գովաբանի՛ր Ինձ և հետևի՛ր Ինձ առանց հապաղելու: Վեր կաց հիմա և աղոթիր Հայր Մերն այնպես, ինչպես Ես պատվեցի քեզ, սովորեցնելով այն: Ես քեզ սիրում եմ քնքշորեն:

Փետրվարի 26, 1995

(Ինդոնեզիա)

Իմ շուրթերով, Ամենակարող Տեր,
ես կրկնեցի Քո Բառերը, որ
լսեցի Քո իսկ Բերանից՝
ուղղված շատ ազգերի,
որպեսզի նրանք նույնպես վայելեն
Քո Ներկայությունը
և ուրախանան Քո Օրենքով:
Թող որ ես չմոռանամ
կամ անտեսեմ Քո Խոսքը,
և թույլ մի՛ տուր ինձ
շեղվել Քո Պատվիրաններից:
Կենդանացրո՛ւ հոգիս
Քո Խոսքով, Տե՛ր իմ:

Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը:

Զավա՛կս, դու զուրկ չես Հորից: Ես Եմ որ Եմ-ը՝ քո Հայրն է: Դու անտուն չես: Իմ Թագավորությունը, Իմ Հոյակապությունը և Ճշմարտությունը քո տունն են: Դու զրկված չես կերակրից, քանի որ Ես

[1] Տերն ասում է յուրաքանչյուրին:

Իմ Սեփական Ձեռքով լցնում եմ քո բերանն Իմ Բերանից՝ Իմ Խոսքով: Գայլիսոններն ու Գահերը երբեք չեն կարող ավելին համարվել, քան Իմ Խոսքը: Դու ինչի՞ հետ կարող ես համեմատել Իմ Գանձերը:

Իմ Վասո՛ւլա, մի ժամանակ դու շատ էիր քաղցած Իմ Խոսքի համար, և Իմ Սիրտը, որ ամենագթառատն է բոլոր հայրերի մեջ, սգում էր և լցված էր վշտով ու խղճահարությամբ: Դեռ որքա՜ն շատերը կան քեզ նման, ինչպիսին դու էիր մի ժամանակ[1], և դեռ որքա՜ն շատերին պետք է Ես հարուցեմ, և հետո՝ սնեմ... Բայց ասված է, որ այս վերջին օրերին Իմ արարչությունը պիտի ընկնի այնպիսի ուրացության և սառած սրտերի մեջ, որ շատերը, թեև չեն մերժի Ինձ, բայց պիտի ազդվեն դրանից:

Ասված է, որ ձեր օրերում սատանան պիտի ավելի զորանա, բայց Իմ Ողորմությունն Անսահման է և Իմ Կարեկցանքը՝ նույնպես: Եթե սատանայի բերանից անեծք է դուրս գալիս, Իմ Բերանից եկող օրհնությունը անզոր է դարձնում նրա անեծքը: Իմ օրհնությունը՝ Իմ Բերանից ելնող Խոսքն է, որ լույս է սփռում ձեր խավարի մեջ, և նրանց վրա, ովքեր ապրում են մահվան ստվերներում: Իմ բարեհաճությունը ձեզ վրա է, և հետևաբար ամեն ինչ, որ Ես անում եմ այս օրերին, ձեր սերնդի փրկության համար է:

Իսկ դո՛ւ, աղջի՛կս, ներկայացրու Ինձ քո հանդիպումների ժամանակ, ինչպես միշտ արել ես: Զարդարի՛ր Իմ Տունը, և Ես կզարդարեմ քոնը[2]: Կենդանացրո՛ւ Իմ Տունը, ինչպես Ես կենդանացրի քոնը[3]: Շոյի՛ր Ինձ՝ քո Հորը, քո սիրով: Արի աշխատենք:

Փետրվարի 27, 1995

(Ինդոնեզիա)

Ինձ համար դեռ առեղծված է Քո ընտրությունը, Տե՛ր իմ, և այն ամենը, ինչ կատարվում է ինձ հետ:

Մի՛ զարմացիր[4]: Ես երկնքի և երկրի Տերն եմ: Ես ասում եմ քեզ. Ոչնչությունից Ես կարող եմ պատրաստել մի Խորան, որի վրա կարող են դրվել Իմ բոլոր Գանձերը... Ասա՛ Ինձ, ո՞ւմ միջոցով դու ստացար ավետարանելու ողջ Գիտությունը, զորությունը և եռանդը:

Քո Սուրբ Հոգու միջոցով, Տե՛ր իմ:

Այո՛, Իմ Սուրբ Հոգու զորությամբ: Տեղ բաց հիմա Իմ Սուրբ Հոգու համար, որ քո մեջ սերմեր ցանի Երկնքից: Թույլ տուր Իմ Սուրբ Հոգուն մշակել քո հողը, և քո մեջ պատրաստել մի երկրային Եդեմ: Թույլ տուր, սիրելի՛ս, Իմ Սուրբ Հոգուն այրել քո մեջ եղած բոլոր չոր բույսերը և փոխարինել դրանք Երկնային ծիլերով ու մատղաշ խաղողի այգիներով:

[1] Հոգևորապես մեռած:
[2] Ասված նկատի ունի իմ հոգին:
[3] Հոգևորապես կենդանացրեց Ինձ:
[4] Սա հնչեց ինչպես հրաման:

Թույլ տուր Իմ Սուրբ Հոգուն քո հոգին դարձնել մեկ այլ Դրախտ, ուր Մենք[1] զգանք, որ շրջապատված ենք խոնարհությամբ, խաղաղությամբ, սիրով և ուրախությամբ[2]: Այո՛, թույլ տուր, որ Իմ Սուրբ Հոգին արմատ գցի քո հոգու կենտրոնում և դարձնի այն մի Դրախտ: Ուստի հիմա տեղ պատրաստիր Իմ Սուրբ Հոգու համար, որ բնակվի քո մեջ և շարունակի ուսուցանել քեզ՝ ապրելու մի Ճշմարիտ Կյանք Մեր մեջ[3]: Ասա՛ հիմա այս խոսքերը.

Տե՛ր,
տուր մեզ Քո Թագավորությունը,
որպեսզի մենք
ստանանք անեղծություն,
և աստվածայնություն՝
հավիտենական կյանք
ունենալու համար: Ամեն:

Իմացի՛ր, որ քո մեջ միայն Իմ Սուրբ Հոգու ցանած սերմերը կարող են առատ պտուղներ տալ: Առանց այդ աստվածային սերմերի քո հոգին կմնա մի անապատ, անմշակ և չոր հող: Ուստի, աղջի՛կս, թող Իմ Սուրբ Հոգու գործողությունը քեզ համար առեղծված չթվա...

Արի՛, Իմ Աշակերտ, ավետարանի՛ր Իմ Հավաքներում: ic

Մարտի 2, 1995

(Փուլի)

Տե՞ր իմ:

Ես եմ: Խաղաղություն քեզ:

Մինչև այժմ Ես համբերատար եմ եղել վարչական գործերի հետ կապված քո ուշացումների համար[4]... Ես ցանկանում եմ ազատել քեզ այդ բաներից, որոնք խլում են Իմ ժամանակը: Ես ասում եմ քեզ. Ես Նա եմ, ով ներդրավեց քեզ գրելու Իմ Պատգամները: Դու չես կարող համաքայլ ընթանալ Իմ ժամանակի հետ, եթե շարունակես այնպես, ինչպես հիմա ես անում: Ես քեզ տվել եմ որոշակի կանոններ, և դու դարձյալ դրանց չես հետևել: Իմ Շնորհով ես դու ստանում Իմ Պատգամները, և Իմ Կամքն է, որ դու գնաս և հայտարարես դրանք, ինչպես անում ես Հանրության մեջ, որպեսզի կարողանաս սովորեցնել ուրիշներին:

[1] Սուրբ Երրորդությունը
[2] Դրախտի սերմերն ու ծիլերը:
[3] Սուրբ Երրորդության
[4] Քրիստոսը Հանդիմանում էր ինձ, որ Իր կողմից թելադրվող պատգամները «մի կողմ» էին դրվել, և ես օգտագործում էի Նրա թելադրության ժամանակը վարչական գործերի համար: Օրինակի համար, երբ ես պատրաստում էի իմ ճամփորդության ծրագրերը և անընդհատ պատասխանում էի այն մարդկանց, ովքեր հեռաձայնում էին ինձ:

- Ես նոր սիրտ պիտի դնեմ քո մեջ և նրան կայծ պիտի տամ և Իմ Շնորհով դու պիտի ենթարկվես Իմ կանոններին: Աղոթի՛ր և Ինձ հետ եղիր Իմ Կանչերի ժամանակ: Ես հանդուրժել եմ քեզ մինչև հիմա: Այսուհետև, Իմ նպատակն առաջնային է: Այսուհետև դու պիտի պատասխանես Իմ Կանչերին և ոչ թե ուրիշների: Իմ Պատգամներն առաջնահերթ են: Սրանից հետո դու համապատասխան ձևով պիտի անցկացնես քո ժամանակն Ինձ հետ[1] և ոչ թե այն մեծ պահանջների հետ, որ շատերը պարտադրում են քեզ, ո՛չ էլ ժամանակդ պիտի վատնես հեռախոսով քննարկումների վրա: Ասա՛ նրանց, ովքեր կուզենան լսել Իմ Պատգամների «վերջին նորությունների» մասին, որ ներգրավվեն աղոթքով և զինվեն այն ամենով, ինչ Ես արդեն տվել եմ իրենց:

Վասո՛ւլա, հիշեցրու յուրաքանչյուրին, ով աշխատում է «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների համար, որ Ես ընտրել եմ նրանց: Այդուհանդերձ, եթե որևէ մեկը չի արդարացնում Իմ սպասելիքները, Ես ազատ եմ փոխարինելու նրան: Ես ցանկանում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը վերաքննի իր խիղճը, և աղոթի, որ իր միտքը բացվի: Փորձեք հայտնաբերել, թե ինչ է պակասում ձեզ, և ինչ եմ Ես ուզում ձեզանից:

Սատանան հետևում է ձեզ բոլորիդ, և երդվել է կանգնեցնել Իմ Ծրագիրը՝ խոչընդոտելով այն և ուժեղ ընդդիմություն առաջ բերելով: Նրա սպառնալիքները երկինք են հասնում ամեն օր: Առանց հապաղման, աշխատեք համառորեն և հոժարակամ: Հանուն Ինձ, աշխատեք Իմ Հոգու հետ, այլ ոչ թե՝ ձեր: Եթե որևէ մեկն աշխատի իր սեփական շահերի համար և առանց սիրո, ուրախության և ինքնանվիրումի, Ես նորից կմիջամտեմ...

Իսկ դո՛ւ, աղջիկս, այսուհետև զգույշ եղիր և զգոն: Իմաստությունը կշարունակի ուսուցանել քեզ, ուստի բավական է[2]: Վստահի՛ր Ինձ ամբողջովին, և շարունակիր աշխատել մարգարեության շնորհով, որ Ես եմ տվել քեզ: Ես քեզ հետ եմ: ic

Մարտի 3, 1995

Տե՞ր իմ:

Ես եմ: Խաղաղությո՛ւն քեզ, զավա՛կս:

Լսի՛ր Ինձ. քո ոչնչության մեջ Ես կարող եմ հրաշքներ գործել: Ուրեմն հարմարվի՛ր Իմ կանոններին և երբեք մի՛ մոռացիր, թե ինչպես եմ Ես աշխատում: Պահի՛ր Ինձ քո սրտում և դու կտանաս Իմ Խաղաղությունը:

---

[1] Երբ Տերը թելադրում է ինձ, ես երջանիկ և խաղաղ եմ զգում: Բայց վարչական գործերը և այլն, ինձ լարված էին պահում, և ես կորցրել էի խաղաղությունս, որովհետև մարդիկ ինձ «նեղում էին՝» շտապեցնելով ինձ անել այն, ինչ իրենք էին ուզում ինձանից: Եվ արդյունքը եղավ այն, որ ես աշխատում էի ուրիշների համար, այլ ոչ թե Հիսուսի:

[2] Սա շատ խիստ ասվեց: Դա հնչեց այնպես, ինչպես ասում են BASTA! իտալերենով: Ես հասկացա, որ Հիսուս չէր ուզում որ ես «թղթային աշխատանք» անեի, նույնիսկ, եթե դա «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների համար էր, ո՛չ էլ ուշանայի հեռախոսազանգերի պատճառով:

Երբե՛ք չմոռանաս, թե Ես քեզ երեկ ինչ ասացի: Ինձ առաջինը դասիր, և Ինձ ժամանակ հատկացրու, որ շարունակես գրել Իմ Պատգամները: Հաճույք պատճառիր Ինձ և փորագրիր Իմ Անունը քո սրտի վրա: Ես քո Փեսան եմ, և Իմ Անունը պետք է պատվել:

Թող բոլոր քո շուրջը գտնվողները, ովքեր նույնպես աշխատում են Իմ Սիրո Օրհներգի համար, քեզ հետ վարվեն այնպես, կարծես դու այլևս իրենց մեջ չես[1]: Քո աշխատանքի պտուղը պետք է բազմապատկվի նրանց ձեռքերում[2]: Ես՝ Հիսուս, քեզ հետ եմ: Իմ Վասո՛ւլա, Ինձ դասիր ամեն ինչից առաջ և ամենից վեր աշխարհում, որպեսզի քո աքսորը քեզ այնքան ծանր չթվա, ինչպես հիմա: Շտապի՛ր, զավակս, և հասկացի՛ր, թե որքան թանկ և որքան սիրելի ես դու Ինձ համար: Ես քո Ընկերն եմ, և Ես հետևում եմ քեզ սիրով ու կարեկցությամբ: Ես քեզ երբեք հուսախաբ չեմ անի: Քնքշորեն վարվիր Ինձ հետ՝ եռանդով և սրտանց պատասխանելով Իմ Կանչերին: Ես սիրում եմ քեզ, Վասու՛լա, և Ես, Ես երբեք չեմ լքի քեզ: Ես կամրապնդեմ քեզ Իմ Հոգով, Իմ Քաղա՛ք:

Արի՛ հիմա և խաչակնքիր[3]... Լավ է, գնացինք:

ΙΧΘΥΣ

Մարտի 6, 1995

(Հանկարծ խաչը շատ ծանրացավ ինձ վրա):

Սկզբում, Տե՛ր իմ, Դու գրկեցիր ինձ
և հսկում էիր իմ ամեն մի շունչը
մայրական քնքշությամբ:
Հիշի՛ր, ինչպես
փափուկ կավն է ձև ստանում,

Դու ձևավորեցիր ինձ,
մի այնպիսի հոգածությամբ,
որ ես երբեք չզգացի,
որ վայր եմ ընկնում, որպեսզի
կարողանամ նորից սկսել իմ կյանքը:
Այնքան քնքուշ էր Քո հպումը:

Հետո Դու պարուրեցիր ինձ
Քո Սուրբ Հոգով,
որ Կյանք Տվողն է, և որից հետո
իմ օրերը շտապով անցնում են՝
իրենց թռիչքի մեջ
միայն հրճվանք տեսնելով:

[1] Դա նշանակում է, որ սկսեն նախաձեռնություն վերցնել:
[2] Ես հասկացա՝ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» գրվածքները և այն հանդիպումները, որոնք ես անց էի կացնում՝ վկայություն տալով:
[3] Ես խաչակնքեցի:

Ինչո՞ւ են այսօր անզգա մարդիկ,
որոնք անկարող են ուշադիր նայել
իրենց խավարի միջից,
ոտնակոխ անում ինձ:
Նրանք, ովքեր ապրում են
անթափանց քողի տակ
և ստիպված են խարխափելով գնալ
իրենց ճանապարհը,
ե՞րբ պետք է քայլեն:

Դու խոստացար ինձ, որ նրանց
մեծությունը կվերածվի ոչնչի,
իսկ նրանց իմաստությունը՝ փոշու:
Դու հայտնի ես նրանով,
որ Դու փրկում ես նրանց,
որոնց աչքերը խոնարհված են,
ինչպես և անմեղներին:

Դու հայտնի ես նրանով,
որ նկատում ես ամեն ինչ,
որ ասվում է և արվում:
Մի՞թե ես պետք է մշտապես ճզմվեմ
Քարակույտերի տակ[1]*:*

Դեռ որքա՞ն պետք է ինձ հարվածեն:
Իմ օրորվելը դեռ չի՞ մղում Քեզ
գործի անցնելու,
Դեռ ավելի խղճալի՞ եմ դառնալու,
քան արդեն կամ:

Եվ հիմա Դու հրճվում ես,
որ ես այնտեղ եմ, ուր
լույսն ինքը նման է խոր գիշերվա:

Լսի՛ր դառնուկս. եթե հիմա քեզ ասեմ, որ քո վրայից պիտի բեռնաթափեմ[2] Իմ խաչի ծանրությունը, որը դու այնքան վեհանձնորեն խնդրեցիր կիսել Ինձ հետ, բոլորովին անմտություն կլիներ Իմ կողմից: Այն փորձությունները, որ դու կրում ես Ինձ համար ավելի շատ չեն, քան որևէ մեկ ուրիշինը... Մի՛ հուսահատվիր, աղջիկս, և մի՛ համարձակվիր ասել. «Մի՞թե Նա, ով քննում ու գնահատում է սիրտը, չի հասկանում»: Մարդիկ չեն կարող քննել ու հետազոտել Իմ Իմաստությունը:

[1] Քարակույտերը՝ հոգևորապես մեռածները:
[2] Բեռնաթափելն այստեղ ունի կրկնակի իմաստ. ա) թեթևացնել, բ) բեռ նշանակում է նաև «պատգամ», եբրայերեն՝ «մասսա»: Կրկնակի իմաստն այստեղ հետևյալն է. «Հիմա քեզ ասեմ, որ ես կդադարեմ քեզ պատգամներ տալուց» և այլն: Սա է «բեռնաթափել» բառի նշանակությունը: Կարդա՝ Երեմ. 23:33-40

Տե՛ս, քո վազքը չի ավարտվել: Ի վերջո, մի՞թե չես լսել, թե ինչպիսի հուսահատությամբ են Հադեսի[1] դերիները թակում քո դուռը[2]: Մի՞թե ես չեմ սովորեցրել քեզ, որ քո սիրտը հասկանա քո առաքելությունը: Վասո՛ւլա, մի՞թե չես լսել նրանց տնքոցները, որոնք տանջվում են գիշերվա մեջ: Այդ հոգիները նետվում էին քո դռանը օգնության համար[3]: Դու թույլ ես և տատանվում ես հիմա... Մի՛ հիասթափեցրու Ինձ...

Սովի ժամանակ Ես եկա քեզ մոտ, որ սնեմ քեզ, և դարձյալ Ես կփրկեմ քեզ մահվան ժամին: Ուստի ուրախացրո՛ւ Ինձ և թույլ տուր Ինձ օգտագործել քեզ Իմ Շահերի համար: Սիրի՛ր Ինձ և թող քո սերն Իմ հանդեպ աճի, որպեսզի մակաբույծները երբեք չծածկեն քո մարմինը: Ավելացրո՛ւ աղոթքներդ և առաջարկիր դրանք Իմ նպատակների համար: Ես երբեք չեմ թաքցնի Իմ Դեմքը քեզնից, երբե՛ք[4]:

Իմ Սիրո Պտուղ, Իմ Փչե Պսակի Ծաղիկ, Իմ Եկեղեցու Բողբոջ, մի՛ վախեցիր Իմ Մեխերից: Իմ Խորհրդի Աշակերտ մի՞թե չգիտես, որ ստորացումն ու զրպարտանքը սրբագործում են քեզ: Մի՞թե մոռացել ես, որ Ես քեզ համարել եմ Իմ Եկեղեցու աղջիկներից մեկը: Ի՞նչն է ավելի ցանկալի, քան հարազատ լինել Իմ Արյանը: Ես Ինքս եմ ընտրել քեզ, որ լինես Իմ խոսափողը շատ ազգերի վրա և սովորեցրել եմ քեզ Սուրբ Գրքերը՝[5] քո բերանի մեջ կաթեցնելով Իմ Գիտությունը, ինչպես մեղր, որ կաթում է խորսխից: Իմ Գիտությունը քաղցր է, բայց նաև թթու է[6]: Քաղցր, որովհետև Ես հայտարարում եմ Իմ փառապանծ հաղթանակը իմ ժողովրդի հետ, և թթու՝ Իմ Եկեղեցու այս ցավալի ուրացության պատճառով, որը նախորդում է Իմ հաղթանակին...

Ա՛հ[7], սերո՛ւնդ, խավարի ժամը քեզ վրա է, հիմա երբ դու նստել ես մահվան նավը, այն կառաջնորդի քեզ դեպի մահ: Վտանգի ազդանշանը տրվել է քեզ արդեն մոտ տասը տարուց ի վեր[8]: Այն արձագանքում էր քո ականջում մոտ տասը տարի, բայց դու փախչում էիր Իմ Ձայնից, որը որոտում էր այս ամբողջ ժամանակ... Օտարներն ավելի ուշադիր և զգայուն են եղել Իմ Ձայնի հանդեպ, քան դուք, դո՛ւք[9], որ ամեն օր կանչում եք Իմ Անունը և ամեն օր բարձրացնում եք Ինձ: Եթե դուք միայն կարողանայիք լսել, եթե դուք, որ մեռնում եք, միայն տեսնեիք Իմ փրկարար օգնությունը: Բայց ստվերի մի քող է կախված ձեր աչքերի վրա... Ա՛հ[10], եթե միայն իմանայիք, որ դուք բոլորովին մեռած եք, և որ ձեր մնացած մասը դարձել է գերեզմանափոր՝ ձեր սեփական

---

[1] քավարանի

[2] Մի քանի անգամ առավոտյան 4:00-4:30-ի միջև իմ ննջասենյակի դուռը քիչ էր մնում տապալվեր հոգիների թակոցներից:

[3] Օգնություն տրվում է նրանց աղոթքների միջոցով:

[4] Հիսուսն ասաց այս բառերը բավական հանդիսավորությամբ:

[5] Սուրբ Աստվածաշունչը

[6] Վկայակոչում՝ Հայտ. 10:8-11

[7] Սա մի խորը վշտալի հոգոց էր մեր Տիրոջ կողմից:

[8] Այս պատգամը կտոնի իր 10-րդ տարեդարձը 1995 թվի նոյեմբերին:

[9] Ես հավատացա, որ նրանք քահանայական հոգիներն են... Շատերն են մերժում հավատալ մարգարեական չնորհներին, որոնք կարող են օգնել Եկեղեցուն, և փաստորեն դառնում են Սուրբ Հոգու հալածողները, որը տալիս է այդպիսի չնորհներ:

[10] Եվս մեկ խորը հոգոց:

գերեզմանների համար... Վկայություն տալ Իմ Սուրբ Հոգու դեմ և փորձել ծածկել Իմ Գործերը, որոնք Իմ Փառքի համար են, ձեզ կտանեն դեպի հավիտենական կրակները:

Ես ասում եմ քեզ, աղջի՛կս, Իմ վիշտը սահման չունի: Ուստի թույլ տուր Ինձ, աղջի՛կս, կիսել Իմ Խաչը քեզ հետ, և թույլ տուր Ինձ շարունակել մշակել քեզ մինչև վերջ: Շրջի՛ր աչքերդ դեպի Ինձ և քո տեսողությունից Ինձ երբեք դուրս մի՛ թողնիր: Ես խոստանում եմ քեզ, որ կավարտեմ քո առաքելությունը քեզ հետ միասին: Խուսափիր վարչական գործերի հետ կապված որևէ միտումից, քանի որ դա էր վտանգավոր այս ուշացման ճշմարիտ պատճառը: Հայտնի դարձրու Իմ Պատգամը բոլորին և ցույց տուր նրանց, որ Ես մի Աստված եմ, որը փրկում է:

ΙΧΘΥΣ

Մարտի 18, 1995

(Փարիզ)

(Այս Պատգամների աշխատանքը, որ ուշացվել էր վեց ամսով իր լրումին հասցվեց երկու շաբաթվա ընթացքում: Ես գրեցի երկու շաբաթ, առանց դադարի, օրական 7-9 ժամ: Ես թողեցի բոլոր վարչական գործերը, որոնք կլանում էին Հիսուսի ժամանակը, և ենթարկվեցի Նրան՝ զբաղվելով միմիայն գրելով: Հեռախոսները նույնպես լռեցին: Նամակները չբացվեցին և ուղարկվեցին ընկերակցություն՝ ընթացք ստանալու համար: Հանդիպումների ծրագրերն այլևս ես չէի անում, այլ Ֆրանսիայի «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» ընկերակցությունը):

Վասո՛ւլա, քո ջանքերը գոհացնում են Ինձ: Դու միայնակ չես: Հետո, Ես հրճվում եմ, երբ ուղղումները թեթևամտորեն չեն ընդունվում կամ անուշադրության մատնվում: Թույլ տուր Ինձ լինել քո առաջնորդը և հոգևոր ղեկավարը: Ես հաստատել եմ Իմ Փրկության Ծրագիրը քո մեջ, որպեսզի քո միջոցով Իմ Պատգամներն ավարտվեն Իմ Կամքով: Թույլ տուր Ինձ քեզ օգտագործել ևս մի փոքր ժամանակ: Հաստատուն մնա քո պարտականության մեջ և հաճույքով կատարիր այն: Իմ ընկերակցությունը քեզ ամենաքաղցրից էլ քաղցր է: Եթե փչեր ու մացառներ են հանդիպում, չվախենաս, դրանք կլինեն ամեն դեպքում: Ես քեզ կբարձրացնեմ, որ անցնես դրանց վրայով: Նրանք չեն վնասի քեզ:

- Ընդարձակի՛ր Իմ Խաղողի Այգին, աղջիկս, և Ես կտարածեմ Իմ Խաղողի Այգու բոլոր պտուղները, և նրա սահմանը վերջ չի ունենա: Իմ Ծրագիրը ձեզ բոլորիդ փրկելն է, բայց Ես մեծահոգության ու առատաձեռնության կարիք ունեմ այս սերնդի մեղքի փոխհատուցման համար: Մեծ է Իմ վիշտը, երբ տեսնում եմ նրանց, որ գնում են դեպի կրակը պատրաստված Իմ Թշնամու կողմից:

[1]Ես եմ Կյանքի Աղբյուրը, և Իմ Կրծքից Կենդանի Ջրեր են դուրս հոսում: Եկե՛ք, եկե՛ք և խմեք: Ես ձեզանից վճար չեմ ուզում: Եթե որևէ մեկը ծարավ է, թող գա Ինձ մոտ: Ես եմ Կյանքը, և ձեր առջև ու ձեր բոլորի մեջ եմ Ես կանգնած...

- Աղջի՛կս, հրեշտակների մի բազմություն կլինի քո կողքին, որ ուղեկցի քեզ[2] քո առաքելության մեջ: Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ և ասում եմ քեզ. «lo tedhal»[3]:

ΙΧΘΥΣ

Մարտի 21, 1995

Թող օրհնյալ լինի Քո Անունը,
Ով երիցս օրհնել է ինձ՝ թույլ տալով
տեսնել Իր թաքուն ծրագիրը,
որը Իր Սուրբ Սրտի մեջ էր
սկզբից ի վերև որը
բացահայտվել էր Նրա ընտրյալին,
որին Նա այնքան սիրեց[4]: Հիմա՝
ես նույնպես լինելով Նրա մեջ,
լսել եմ Նրա պատգամը,
այդ Անհատնում Գանձը,
որը Սուրբ Գերտրուդը
տեսել էր մի ակնթարթ:

Շուտով կգա մի ժամանակ, երբ
«այլևս կարիք չի լինի,
որ հարևանը սովորեցնի հարևանին,
կամ եղբայրն ասի եղբորը.
«Սովորիր ճանաչել Տիրոջը»: Ո՛չ,
նրանք բոլորը պիտի ճանաչեն Քեզ,
ամենափոքրից ամենամեծը,
որովհետև Դու պիտի ներես
նրանց անօրինությունները և երբեք
չես հիշելու նրանց մեղքերը»:[5]

Ես պիտի փորձեմ քայլել
այն ուղիով,
որ Դու ես բացել ինձ համար՝
առանց շեղվելու,
և պահպանել այն Գանձը,
որը Դու տվել ես մեզ բոլորիս:

---

[1] Հանկարծ Հիսուս բացականչեց մի բարձր Ձայնով:
[2] Փարիզում "Palais des Congres"-ում իմ հանդիպման ժամանակ:
[3] «Մի՛ վախեցիր», արամերեն՝ Հիսուսի լեզվով:
[4] Սուրբ Հովհաննես Ավետարանիչը:
[5] Եբր. 8:11-12

ես գոհ եմ քո աշխատանքից[1]: Վերցրո՛ւ Իմ Սրտից այս Անհատնում Գանձը, որը ես ծածուկ էի պահել ձեր ժամանակների համար, երբ մարդկանց սիրտը կդառնա սառը, անշնորհակալ, պարծենկոտությամբ լի և անկրոն: Ես մտադիր եմ վերստին բոցավառել այդ մարող բոցը և փոխել նրանց միտքը, որպեսզի, երբ բուժվեն, նրանք ճանաչեն Ինձ որպես Գերագույն Քահանայապետի, Քրիստոսի, և Թագավորների Թագավորի:

Ուրեմն մոտ եկ Ինձ և ուրախացիր այն բարիքների համար, որ տեսնում ես: Վերցրու և հագեցրու քեզ բարօրության այս Անսպառ Ակունքից: Մի՛ վհատվիր, երբ մարդիկ միայն դիտողի դերում կլինեն, առանց հասկանալու, որ Շնորհն ու Ողորմությունը իրենց մեջ է: Աղոթի՛ր նրանց համար: Սառույցը չի դիմանում կրակին: Ես պիտի հալեցնեմ այդ սառույցը Իմ Սուրբ Հոգով: Ուստի հենվիր Ինձ վրա և ասա՛.

«Աստված մեզ հետ պիտի լինի շուտով»:

ΙΧΘΥΣ Քո Սիրելին:

Մարտի 30, 1995

(Տոկիո - Ճապոնիա)

Տե՞ր իմ, նայիր ցած Երկնքից՝
Քո Սուրբ և
Փառապանծ բնակատեղից:
Ահա ես այստեղ եմ,
Քո զավակների մեջ,
սակայն նրանցից շատ-շատերը
չեն ճանաչում Քեզ,
որպես ամենակարեկից Հոր:

Հա՛յր, հայտնի դարձրու Քո Անունը,
թող Քո Հոգին
առաջնորդի Քո զավակներին,
քանի որ Դու մեր Հայրն ես:

Բա՛ց հիմա երկինքը և արի մեզ մոտ:
Քո Ներկայությամբ ողջ ժողովուրդը
պիտի հուզվի և հրաժարվի
մեղքի իշխանությունից,
որ տիրում է նրանց:
Քո Ներկայությամբ այս ժողովուրդը
նույնպես պիտի նշանվի
Քեզ հետ և կոչվի «Նշանվածը»:

[1] Ես հասցրի լրացնել բաց թողնված ժամերը:

Այո՛, ես կնշանեմ այս ազգը Ինձ հետ: Գթությամբ և սիրով: Ես պիտի նշանեմ նրանց, և վերջում նրանք հրճվանքով ու միաբերան պիտի հռչակեն Իմ Անունը.

«Հա՛յր մեր»:

Հետո ամբողջ երկիրը պիտի պսակվի Ինձ հետ... «Եվ ինչպես փեսան է հրճվում իր հարսով, այդպես էլ Ես պիտի հրճվեմ նրանցով»[1]:

(Ավելի ուշ Հիսուս խոսեց):

Աղոթի՛ր Ճապոնիայի Իմ զավակների համար: Գրի՛ր հետևյալը և ասա նրանց.

Ձեր օրերում, խավարի այս օրերում, Ես ցույց եմ տալիս ձեզ բոլորիդ Իմ Սուրբ Դեմքը: Ես չեմ եկել ձեզ հիշեցնելու Իմ Ներկայության մասին, որպեսզի դատապարտեմ ձեզ: Ես եկել եմ, որպեսզի ձեզ բոլորիդ կանչեմ դեպի Իմ Սուրբ Սիրտը: Ես տեսողություն եմ տալու կույրերին և խլելու եմ տեսողությունը նրանցից, ովքեր ասում են, թե տեսնում են: Ես պիտի ընտրեմ թուլությունը, որպեսզի ցույց տամ Իմ Զորությունն ու աղքատությունը, որպեսզի ցույց տամ Իմ Հարստությունն ու Իմ Փառքը: Բա՛ց արեք ձեր սրտերը և խոսեք Ինձ հետ: Իմ Անունն է՝ Հիսուս, և Հիսուս նշանակում է «Փրկիչ»:

Շուտով, շատ շուտով Ես պիտի գամ բյուրավոր հրեշտակներով: Այո՛, Իմ Վերադարձը մոտալուտ է: Նայեք ձեր շուրջը, մի՞թե չեք նկատել Իմ Նշանները: Մի՛ վախեցեք Ինձնից, Ես միակ Ճշմարտությունն եմ և ձեր Ճանապարհն եմ դեպի Երկինք: Եկե՛ք Ինձ մոտ այնպես, ինչպես կաք: Մի՛ սպասեք, որ դառնաք սրբեր: Մի՛ ասա, Իմ սիրելի Ճապո՛նիա. «Ես չեմ կարող խոսել: Եվ եթե Ես խոսեմ, Նա չի լսի ինձ»: Ես հիմա կանգնած եմ քո դռան չեմին, Իմ Սիրտը Ափիս մեջ, որ առաջարկեմ Այն քեզ:

Ես Սուրբ Սիրտն եմ, և Ես պատրաստել եմ մի նոր Սիրո Օրհներգ ձեր բոլորի համար: Ողորմությունն իջնում է հիմա, որ կանչի բոլոր նրանց, ովքեր երբեք չեն փնտրել Ինձ, ոչ էլ երբևէ ճանաչել են Ինձ, որ իրենք էլ միանան Իմ սրբերի հավաքույթին: Սուրբ Գրքերն ասում են. «Աստծո կողմից աչառություն չկա, այլ՝ բոլոր ազգերի մեջ ով երկնչում է Նրանից և արդարություն է գործում, ընդունելի է Նրան»[2]:

Դուք չգիտե՞ք, որ Ես հեզ ու խոնարհ մի Աստված եմ, ներողամիտ և գթասիրտ: Ձեր անարժանությունը գրավում է Ինձ, քանի որ Ես Ամեն Ինչ եմ, և Ես կարող եմ հոգ տանել ձեզ: Ինձ հասնելու ձեր անկարողությունը մեծ ցանկություն է առաջացնում Իմ մեջ խոնարհվելու Երկնքից, որպեսզի վեր բարձրացնեմ ձեզ Ինձ մոտ: Ուրեմն թույլ տվեք Ինձ, որ մտնեմ ձեր սիրտը, և Ես պիտի զարդարեմ ձեզ Իմ

[1] Ես. 62:5
[2] Գործք 10:34-35

փառքով: Փնտրե՛ք Ինձ, և դուք պիտի գտնեք Ինձ, թակե՛ք, և Ես պիտի բացեմ ձեզ համար:

Նույնիսկ, եթե դուք ասեք. «Ո՞վ եմ ես, որ մտնեմ Քո Սիրտը»: Ես կասեմ ձեզ. «Դու Իմ զավակն ես, Իմ Յուրայինն ու Իմ Սերմը: Դու պատկանում ես Ինձ և ուրիշ ոչ մեկին: Դու սերում ես Ինձանից և ուրիշ ոչ մեկից: Ահա թե ինչու եմ Ես ուզում, որ դու Իմ Սրտում լինես»: Ո՛չ, դուցե դու չես փնտրել Ինձ, բայց Ես գտել եմ քեզ: Ճապո՛նիա, զավա՛կս, սա Իմ Պատգամն է քեզ:

Ես օրհնում եմ քեզ՝ թողնելով Իմ Սիրո Հոգոցը քո ճակատին:

ΙΧΘΥΣ

Մարտի 31, 1995

(Օիտա - Ճապոնիա)

Երբ ես բանտարկված էի
մթության մեջ և մնում էի
կալանավոր մեղքի գնդանում,
որտեղ զարհուրելի տեսիլքները
հետապնդում էին իմ հոգուն,
և մինչ ես կարծում էի,
որ կմնամ այնտեղ՝
մոռացված և հեռացված
Քո Հավիտենական Լույսից,
Դու, պայծառորեն շողացող
հազարավոր արևների նման,
ներքև իջար Քո Փառքից՝
լուսավորելով
իմ սարսափելի գիշերը: Հանկարծ
ինչ-որ մեկը կանգնեց այնտեղ,
և իմ սիրտը խայտաց հույսով:
Մի Շունչ սահեց դեմքիս վրայով՝
բացելով աչքերս,
և Անտեսանելի Աստված
դարձավ Տեսանելի:
Եվ մինչ ես դեմառդեմ կանգնած էի
Սրբության, Վեհության
և Գերագույն Իշխանության հետ,
ես սկսեցի գոյություն ունենալ:
Ամենակարողի շունչը
բարձրացրեց ինձ,
իսկ իմ անօրինությունը
դադարեց լինելուց:

Հող ու մոխիր, հիմա Ես քեզ տվել եմ մսեղեն սիրտ և քո մեջ ներշնչել մի կենդանի հոգի: Զնայած քո միտքն ընկղմվել էր խորը մոռացության մեջ,

Իմ Ողորմությունը եկավ քեզ օգնության և փրկեց քեզ՝ բժշկելով քեզ: Ես ասացի. «Ես կդառնամ նրա Ամուսինը, նրա Դաստիարակը և նրա Պաշտպանը ու նա պիտի լինի Իմ հարսը, Իմ աշակերտը և Իմ զավակը, և Ես պիտի առաջնորդեմ նրան մի հոյակապ ճանապարհով: Նրա ոտքերը պիտի անցնեն չափյուղանների վրայով: Ես պիտի լինեմ նրա լուսատուը մռայլ հովիտներով անցնելիս, և նրա ցուպն ու գավազանը, երբ նրան հալածեն և հետապնդեն: Չնայած նա պիտի անցնի անապատներով և հովիտներով, նա երբեք չի ծարավի, ո՛չ էլ պիտի քաղցի: Ես պիտի լինեմ նրա Բաժակը, իսկ Իմ Մարմինը՝ նրա կերակուրը: Ես պիտի լինեմ նրա գովաբանությունների թեման և նրա Երգը՝ Իմ հավաքներում»:

Իսկ հիմա, զավա՛կս, որին Ես ընտրել եմ, արիացի՛ր, քո վազքը չի ավարտվել, բայց Ես կավարտեմ այն քեզ հետ, Իմ Ձեռքը քո ձեռքի վրա[1]: Եղիր Խաղաղության մեջ և թույլ տուր Ինձ ամեն օր քեզ ուսուցանել: Ես ուսուցանում էի Իմ աշակերտներին և ձևավորում նրանց, և ինչպես Ես սնեցի նրանց Իմ Խոսքով, այդպես էլ Նա, ով բարձրացրեց քեզ՝ պիտի սնի քեզ: Իմ Սուրբ Հոգով Ես պիտի ուսուցանեմ քեզ խուսափել ամեն չարից: Դու դեռ ուզո՞ւմ ես սովորել Ինձնից:

Այո՛, Տե՛ր:

Լավ: Ուրեմն՝ պիտի սովորես: Հայրը և Ես կշարունակենք քեզ վրա հեղել Ուսուցումներ, ինչպես մարգարեություն... Ինձ համար հաճելի է սովորեցնել, հատկապես այնպիսի հոգիների, ինչպիսին դու ես, որոնք պետք է ապավինեն միայն Ինձ և լինեն բարեհաճ և մանուկների պես մեծ ցանկություն ունենան գոհացնելու իրենց Ուսուցչին: Ես հրճվում եմ այդպիսի հոգիներով:

Վերջապես, Ես ուզում եմ ավելացնել մեկ բան ևս Իմ Պատգամների վերաբերյալ. Ես որոշել եմ արագացնել Իմ Վերադարձը: Ես շատ երկար չեմ սպասի ձեզ մոտ վերադառնալու համար: Չնայած շատերը մերժում են հավատալ սրան, նրանք կհավատան, երբ դա տեղի կունենա, բայց այն ժամանակ նրանց սիրտը պատրաստ չի լինի Ինձ ընդունելու: Իմ Վերադարձը մոտալուտ է և ահա թե ինչու, աղջի՛կս, Ես անհանգիստ էի, որ դու շտապես և ավարտես այն աշխատանքը, որն Իմ Հայրն ու Ես տվեցինք քեզ Իմ Սուրբ Հոգու միջոցով: Իմ Գա՛նձ, թույլ տուր Ինձ շարունակել Իմ թելադրանքը առանց քո կողմից որևէ հապաղման:

Իմ սերն ու կապվածությունը ուժեղ է հանդեպ քեզ, և Ես կօգնեմ քեզ որ ուղղես քո սիրտը և գոհացնես Ինձ: Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես, թե Ես քեզ ինչպես ազատեցի վարչական գործերից: Հիմա դու միայն Ինձ համար պիտի գործես: Ես կկանչեմ, և դու տեղում պիտի լինես: Իմ Պատգամների մնացած մասը արագորեն հիմա պիտի տրվի քեզ նախքան Հակաքրիստոսի հայտնվելու օրը...

Մենք ինչպե՞ս ենք շարունակելու, երբ նա հայտնվի:

[1] Կրկնակի իմաստ՝ օգնում է ինձ գրել և քայլել:

Երեք օրից և երեք գիշերից մի փոքր ավելի ժամանակ[1] դու չպիտի կարողանաս շարունակել այնպես, ինչպես ցանկանում ես: Բայց այդ լռությունը պիտի ընդհատվի Իմ Սեփական Ձեռքով, երբ բացեմ վեցերորդ կնիքը[2]: Ուրախացի՛ր, քանի որ Ես շուտով ձեզ հետ պիտի լինեմ: Իմ Ձայնը պիտի լսվի, և Իմ թշնամիները պիտի դողան ու ծեծեն իրենց կուրծքը:

Ես այսօր տանջվում եմ քեզ հետ այնպես, ինչպես տառապեցի Գեթսեմանիում:

Արի՛, Վասո՛ւլա, Ես օրհնում եմ քեզ Ինձ պատվելու և գովաբանելու համար[3] և այն բանի համար, որ դու տալիս ես քո ժամանակը, որպեսզի գրեմ քո ձեռքով:

(Նշումներ, ընթերցողին հասկանալի դարձնելու համար:

«Երեք օրվա ընթացքում» (Հայտ. 11:11) «Երեք և կես օրից հետո Աստված կյանք շնչեց նրանց մեջ և նրանք ոտքի կանգնեցին...»: Սա վերաբերում է երկու վկաներին, երկու մարգարեներին՝ Եղիային և Մովսեսին: Երկու Սրտերը՝ Մարիամի Անարատ Սիրտը և Հիսուսի Սուրբ Սիրտը, այսօր մարգարեանում են մեզ Եղիայի և Մովսեսի ծառայության զուգահեռ: Եղիան ներկայացնում է մարգարեությունը և Տիրոջ գալստյան նախապատրաստումը, ինչպես Հովհաննես Մկրտիչը, որը եկավ նույն հոգով, ինչ Եղիան: Մովսեսը ներկայացնում է Օրենքը: Երեք և կես օր՝ ողջ երկնային մարգարեությունը լռության պիտի մատնվի, որը պիտի լինի Հակաքրիստոսի տիրապետության ժամանակը:

«Մի ժամանակ և երկու ժամանակ ու կես ժամանակ: Եվ այս ամենը պիտի կատարվի, երբ նա, ով ճգմում է սուրբը մարդկանց իշխանությունը, հանի իր վախճանին» (Դան.12:7):

«Անդունդից ելնող գազանը պիտի պատերազմի նրանց դեմ և պիտի հաղթի նրանց և պիտի սպանի նրանց» (Հայտ. 11:7):

«Ամեն ժողովրդի, ցեղի, լեզվի և ազգի մարդիկ պիտի նայեն նրանց դիակներին <u>երեք ու կես օր</u>, չթողնելով որ նրանց թաղեն, և մարդիկ ուրախ պիտի լինեն դրանից, և պիտի տոնեն այդ իրադարձությունը մեկը մյուսին նվերներ տալով, որովհետև այդ երկու մարգարեները չարչարեցին երկրի բնակիչներին» (Հայտ. 11:9-10):

«Սակայն այդ լռությունը պիտի ընդհատվի Իմ Սեփական Ձեռքով, երբ բացեմ վեցերորդ կնիքը»: Սա պիտի լինի Հակաքրիստոսի իշխանության այդ երեք ու կես տարիների վերջը:

«Երեք ու կես օր հետո Աստված կյանք շնչեց նրանց մեջ, և նրանք ոտքի կանգնեցին, և բոլորը, ովքեր տեսան այդ կատարվածը, սարսափեցին: Հետո նրանք լսեցին մի բարձր ձայն երկնքից, որն ասաց նրանց. «Վե՛ր ելեք, եկե՛ք այստեղ»: Եվ մինչ նրանց թշնամիները դիտում էին, նրանք ամպերի մեջ բարձրացան երկինք: Նույն պահին մի ուժեղ երկրաշարժ եղավ, և քաղաքի մեկ տասներորդ մասը կործանվեց: Յոթ հազար հոգի (դա մի մեծ թիվ է բոլոր դասերից) սպանվեցին երկրաշարժի ժամանակ, իսկ կենդանի մնացածները, վախով համակված, միայն գովաբանում էին երկնքի Աստծուն» (Հայտ. 11:11-13):

---

[1] Խորհրդանշական թիվ երեք ու կես տարվա համար:
[2] Տես պատգամի վերջում տրված «Նշումները»:
[3] Հիսուս նկատի ունի իմ հանդիպումների ժամանակ:

«Իմ տեսիլքում, երբ Նա կոտրեց վեցերորդ կնիքը, ուժեղ երկրաշարժ եղավ, և արևը սևացավ ինչպես այծի մազից հյուսված կարպետը: Լուսինը ամբողջովին արյան պես կարմիր դարձավ...» (Հայտ. 6:12):

«Իմ Ձայնը պիտի լսվի և Իմ թշնամիները պիտի դողան և ծեծեն իրենց կուրծքը»:

«Նրանք ասացին լեռներին ու ժայռերին. «Ընկե՛ք մեզ վրա և ծածկեք մեզ Նրանից, որ գահի վրա է, և Գառան զայրույթից» (Հայտ. 6:16):

Ապրիլի 3, 1995

Իմ Սիրտը քո Բնակավայրն է, երբեք չմոռանաս սա: Զավա՛կս, Ես, որ Գերագույն Քահանայապետն եմ, ասում եմ քեզ. սիրի՛ր Իմ քահանաներին և աղոթի՛ր նրանց համար: Այժմ լսի՛ր և գրիր հետևյալը.

Ես պիտի ուսուցանեմ քո սերնդին, որպեսզի, երբ նրանք կարդան Իմ Գիրքը[1] հասկանան այն: Խորա՛ն, թույլ տուր Ինձ քեզ վրա դնել Իմ Գիտությունը, Իմ Սուրբ Սրտի այս Անհատնում Գանձը, որպեսզի մարդիկ բոլոր ժողովուրդներից, ցեղերից, լեզուներից և ազգերից մոտենան և օգտվեն նրանից: Եվ երբ նրանք այդ անեն, Ես պիտի վերակենդանացնեմ նրանց և պայծառացնեմ նրանց աչքերը, քանի որ Իմ Խոսքը վերականգնում է:

Եթե որևէ մեկը սիրում է Իմ Խոսքը, թող առաջ գա: Եթե մեկը սիրում է Ինձ, նա կպահի Իմ Խոսքը, և Իմ Հայրը կսիրի նրան, և Մենք կգանք նրա մոտ և կապրենք նրա հետ: Իմ Սուրբ Հոգու կարիքը զգացեք այնքան, որքան օդի կարիքն ունեք շնչելու համար: Խնդրե՛ք Իմ Սուրբ Հոգուն, որը Կյանք Տվողն է, որ գա ձեզ մոտ, և նոր հրաշքներ կատարի ձեր հոգում... Խնդրե՛ք Իմ Սուրբ Հոգուն, որ բացահայտի ձեզ համար Իմ առակների և Իմ ասացվածքների թաքնված իմաստը և ձեր ժամանակների մարգարեությունները:

Քաղաքը[2] չի կարող կառուցվել առանց հիմքի[3], քանի որ նրա ներսում Սուրբ Հոգին չի բնակվի: Եկե՛ք և սովորեք. Նոր Երկինքն ու Նոր Երկիրը պիտի լինեն, երբ Ես Իմ Գահը դնեմ ձեր ներսում, քանի որ Ես ձրի ջուր պիտի տամ բոլորին Կյանքի ակունքից, ովքեր ծարավ են[4]:

Ուրեմն թույլ տվեք, որ Իմ Սուրբ Հոգին ձեզ բերի Իմ Թագավորության մեջ և Հավիտենական Կյանքի մեջ: Թող չարն այլևս իշխանություն չունենա ձեզ վրա, որպեսզի չմեռնեք: Եթե հարկ լիներ, Ես նորից կյանքս կտայի որևէ ժամանակ և առանց վարանման՝ ձեզ փրկելու համար: Թույլ տվեք, որ Իմ Սուրբ Հոգին մշակի ձեր հողը և ձեր մեջ պատրաստի մի երկրային Եդեմ: Թույլ տվեք, որ Իմ Սուրբ Հոգին պատրաստի մի Նոր Երկիր, որ ծաղկեցնի ձեր մեջ ձեր հողը, որպեսզի ձեր առաջին երկիրը, որը սատանայի սեփականությունն էր, անհետանա: Հետո մեկ անգամ ևս Իմ Փառքը պիտի փայլի ձեր մեջ, և Իմ Սուրբ Հոգու կողմից ձեր ներսում ցանված բոլոր աստվածային սերմերը պիտի ծլեն ու

[1] Աստվածաշունչը
[2] Խորհրդանշական բառ՝ «ինքներս»:
[3] Նշանակում է հանձնվել Աստծուն, որպեսզի Աստված դառնա մեր հիմքը:
[4] Հայտ. 21:6

աճեն Իմ աստվածային Լույսի մեջ: Թույլ տվեք, որ Իմ Սուրբ Հոգին ձեզ մոտ գա մոլեգնող կրակի պես և մաքրագործի ձեզ՝ այրելով ձեր ներսում մնացած բոլոր չոր բույսերը[1] և փոխարինի դրանք երկնային տնկիներով ու հրաշալի խաղողի այգիներով[2]: Եվ, այդ օրվանից սկսած, ես Ինքս պիտի լինեմ նրանց պահապանը...

Թող ձեր հին աշխարհը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ավերածություն և կործանում, հիմա կանչի Ինձ, և Ես պիտի խղճամ ձեզ՝ ձեր անարգության համար... Ձեր մնացած մի քանի ծառերը հիմա չորացած են և կոտրված՝ պատրաստ միայն կրակի համար օգտագործվելու: Ուստի թույլ տվեք, որ Իմ Սուրբ Հոգին ձեր հոգին դարձնի ևս մի Դրախտ, մի Նոր Երկիր, որտեղ Մենք[3] Մեր Տունը կհաստատենք ձեր մեջ: Որովհետև, տեսնո՞ւմ եք, ձմեռն անցավ, և ծաղիկներ են հայտնվում ձեր հողի վրա: Տեսնո՞ւմ եք, խաղողի այգին տալիս է իր առաջին ծաղիկները, որոնք իրենց բույրն են արձակում: Այս մեր Դրախտն է, Մեր Երկինքը:

Մենք կգանք Մեր Պարտեզը, որ հավաքենք նրա ամբողջ բերքը: Մենք կգանք Մեր Պարտեզը և կհանգստանանք ձեր առաքինությունների մեջ, որոնք պիտի լինեն ինչպես շատրվաններ, կենդանի ջրի ջրհորներ, ամեն տեսակ խնկի ծառերի փարթամ հովիտներ, արոտավայրեր և խաղողի այգիներ, զմուռսի սարեր: Որովհետև, խոնարհությունը հաճույք է պատճառում Մեզ, և սերը ուրախացնում է Մեզ: Խաղաղությունը պատվում է Մեզ, իսկ ուրախությունը հրճվանք պատճառում: Արդարև, բոլոր պտուղները այն արժանիքներն են, որոնք հաճելի են Մեր Աչքերին: Ուրեմն թույլ տվեք, որ Իմ Սուրբ Հոգին կրթի ձեզ և ցույց տա ձեզ, որ առողջ ու ողջամիտ ուսուցումը Կյանք է:

Տեղ բացեք Իմ Սուրբ Հոգու համար, որ արմատ գցի ձեր հոգու կենտրոնում և հաստատվի այնտեղ, որտեղ հազարավոր մացառներ ու փշեր կան: Իմ Սուրբ Հոգին պիտի լինի Կյանքի Ծառը ձեր մեջ, և Իմ Թագավորությունը, որը դուք պիտի ստանաք Իմ ողորմությամբ, պիտի առաջնորդի ձեզ՝ ձեռք բերելու անեղծություն և աստվածայնություն, որպեսզի հավիտենական կյանք ունենաք:

Վասո՛ւլա, համեմատիր քեզ՝ հիմա և քո հին եսը, տեսնո՞ւմ ես: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես Իմ Սուրբ Հոգին քո հին երկիրը դարձրեց մի Նոր Երկիր, և թե ինչպես միայն Նրա սերմերը կարող են առատորեն բարի պտուղ տալ: Եվ որ առանց Նրա Ներկայության քո հոգին կմնար անմշակ, մի չոր ու կոշտացած հող:

Իսկ Նոր Երկի՞նքը, Տե՛ր:

Նոր Երկի՞նքը: Այն նույնպես կլինի քո ներսում, երբ Իմ Սուրբ Հոգին կառավարի քեզ սրբությամբ: Իմ Սուրբ Հոգին, ուղեկիցը Իմ Գահի, պիտի փայլի քո խավարի մեջ, ինչպես մի հոյակապ արև երկնքում, որովհետև Խոսքը պիտի տրվի քեզ մտքեր արտահայտելու և խոսելու համար այնպես, ինչպես Ե՛ս պիտի ցանկանայի, որ մտածեիր ու խոսեիր: Ամեն ինչ, որ պիտի արտահայտվի, պիտի լինի Իմ Պատկերին և մտքերին

[1] Չոր բույսերը նշանակում է վատ սովորություններ, մեղքեր:
[2] Այս երկնային տնկիները արժանիքներն են:
[3] Ամենասուրբ Երրորդությունը

համապատասխան: Ամեն ինչ, որ դու պիտի անես, պիտի լինի Մեր նմանությամբ, որովհետև քո Հոր Հոգին խոսելիս պիտի լինի քո մեջ: Եվ քո Նոր Տիեզերքը պիտի քայլի Իմ Սուրբ Հոգու հետ՝ նվաճելու համար մնացած աստղերը[1] Իմ Փառքի համար, և նրանց, ովքեր չեն պահել Իմ Օրենքը և ամբողջովին քշվել են խավարի մեջ, ինչպես անցնող ստվերներ, երբեք չիմանալով այն հույսի և սրբության մասին, որը ես վերապահում էի ձեր ժամանակների համար:

Նոր Երկինքը, Խորա՛ն, պիտի լինի, երբ Իմ Սուրբ Հոգին հեղվի ձեր բոլորի վրա վերևից, երկնքի բարձունքից: Այո՛, ես պիտի ուղարկեմ Իմ Հոգին ձեր մեջ, որ դրախտ պատրաստի ձեր հոգուց, որպեսզի այդ Նոր Դրախտում ես երիցս փառավորվեմ: Եվ ինչպես որ պիտի ուղղվեն նրանց ուղիները, ովքեր ստացան Իմ Սուրբ Հոգին, այդպես էլ նրանց խավարը և վհատությունը պիտի լուսավորվեն և վերականգնվեն՝ դառնալով չողացող աստղեր՝ լուսավորելով իրենց խավարը հավիտյանս հավիտենից: Շուտով այս երկիրն ու երկինքը պիտի անհետանան, որովհետև Իմ Գահի պայծառ փառքը պիտի փայլի ձեր բոլորի մեջ:

Ես՝ Հիսուս, ասում եմ ձեզ: Ես՝ Քահանայապետս, երկնքի բարձունքից կանչում եմ ձեզ, որ դաք և միանաք Ինձ՝ մոտենալով Շնորհի Իմ Գահին: Այն հասանելի է ձեզ: Եկե՛ք Ինձ մոտ և դուք կժառանգեք Իմ Թագավորությունը Երկնքում:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 12, 1995

Տե՞ր իմ:

Ես եմ: Խաղաղությո՛ւն քեզ: Դու կգրե՞ս այսօր Մեզ[2] հետ:

Միայն այն դեպքում, եթե Դու ցանկանում ես, Տե՛ր:

Մենք ցանկանում ենք... եթե մնաս Մեզ հետ, փոքրի՛կ, դու լավ առաջ կգնաս: Ուրեմն, դու, դո՛ւ, որ պատկանում ես Ամենասուրբ Երրորդությանը, կծառայե՞ս Մեզ:

Ես կծառայեմ Ձեզ մեծ ուրախությամբ:

Հայտնի դարձրու Մեզ, թե Մենք ինչպես եկանք քեզ մոտ, հետո թույլ տուր Մեզ երգել Մեր Նոր Երգը[3] քո բերանով: Նրանք, ովքեր դեռևս չեն ապականվել աշխարհի ուժերի կողմից, պիտի մոտենան Մեզ Մեր Անանց Լույսի մեջ: Այսօր Մենք ուղարկում ենք քեզ, ինչպես մի հրավառ բոց,

[1] Խորհրդանշում է՝ մարդկանց:
[2] Հիսուս խոսում է Հայր Աստծո և Սուրբ Հոգու ներկայությամբ:
[3] Պատգամները

որ յուրաքանչյուր սրտում վերակենդանացնի այն առկայծող կայծը, որը գրեթե հանգած է:

- Մեր Ներկայությունն այս Կանչի միջոցով ձեզ ներում կշնորհի: Մեր Ներկայությունը ձեր մեջ՝ բարություն և քնքշություն է, սակայն շուտով Իմ Ձայնը ձեր մեջ պիտի լավի ամպրոպի որոտի նման:

- Իմ Ձայնը պիտի լինի Արդարության ձայն: Ես պիտի գամ, որ մաքրագործեմ երկիրը: Իմ մաքրագործումը պիտի լինի մի փոքր Դատաստանի նման, և այն պիտի լինի արդարությամբ:

(Պատգամ Հիսուսից ուղղված ԱՄՆ-ին):

Ասա՛ նրանց հետևյալը. չնայած այն բանին, որ Ես անձնապես, Իմ Կանչի միջոցով, շատերին ապահով հետ տարա դեպի հավատքը, երկիրը շարունակում է տառապել ըմբոստությունից՝ թոշնելով իր չորության պատճառով: Եթե Իմ Աչքերն այս օրերին երբեք չեն դադարում արյան արցունքներ հեղելուց, այդ նրանից է, որ ձեզանից շատերը, որոնց աչքերը տեսել են Իմ Փառքը, Իմ Ողորմությունը և Իմ զորեղ միջամտությունը այս վերջին տարիներին, այսօր դեռևս դայթակղվում են հետ նայելով այն բանին, ինչ Ես երդվել եմ ոչնչացնել:

Որտե՞ղ եք դուք, դո՛ւք, որ հաշվում էիք բոպեները, որ Ինձ հետ լինեիք: Ո՞ւր է ձեր եռանդը, որ մի ժամանակ ունեիք Իմ Անունը պաշտպանելու և այն սուրը պահելու համար: Դուք, որ հեռու էիք Իմ Սրտից և եկաք Ինձ մոտ ասելով. «Ես հիվանդ եմ», և Ես բժշկեցի ձեզ. դուք նորից ձեր ականջը շրջել եք ետ՝ դեպի անտարբերություն:

Ես կանչում եմ Իմ վշտի մեջ, բայց ձեզանից այնքան շատերն են արհամարհանքով մերժում Իմ բոլոր նախազգուշացումները: «Փոխանցե՛ք Իմ Պատգամները բոլոր քաղաքներին, որպեսզի նրանք փոխեն իրենց կյանքը», ասում եմ Ես, բայց Իմ կանչից անմիջապես հետո Իմ Ձայնը խեղդվում է այն խոր խավարում, որը բնակվում է Իմ քաղաքներում... Մի՞թե Ես այդքան քիչ արժեք ունեմ ձեր աչքում: Ես, որ չնչեցի ձեր մեջ կենդանի հոգի, մի՞թե Ես ձեզ համար ավելին չարժեմ: Ձեզանից այնքան շատերն են կարդում ու կարդում Իմ Պատգամները, սակայն առանց ապրելու դրանք, որովհետև դո՛ւք, զավակներս, կարդում եք առանց հասկանալու[1]:

Մի պահ, ձեր սիրտը բոցավառվելով, գովաբանություններ է ուղղում Ինձ, բայց հաջորդ պահին ձեր միջի բոցը հանգչում է:

- Ես վարվել եմ ձեզ հետ այնպես քնքշորեն, ինչպես հայրն է վարվում է իր զավակների հետ, և ցույց եմ տվել ձեր սրտին այս Անհատնում Գանձը, որը թաքնված է եղել սերունդներից և պահված ձեր Ժամանակների համար, այս Ժամանակների, երբ Գիտությունն ու Հավատը արհամարհվելու են աշխարհի սառնության պատճառով: Իմ Գանձը պահված էր վերջին ժամանակների համար, որում հիմա դուք ապրում եք, երբ մարդիկ պիտի նախընտրեն իրենց սեփական հաճույքը Աստծուց՝ անձնատուր լինելով ամեն մի չարիքի, քան թե՝ բարիքի:

[1] Այս պատգամներում տրված շատ <u>կաքևոր</u> մարգարեություններ կատարվել են, բայց ոչ մեկը չի նկատել:

Ես հեղում եմ ձեզ վրա Իմ Անհատնում Գանձը Իմ Սուրբ Սրտից, ջրվեժների հոսքի պես՝ սարերի վրայով և հովիտների մեջ, որ ձեզ զորացնեմ ձեր սիրո մեջ և պատրաստեմ Իմ Թագավորության համար: Ես նման եմ մի աղբյուրի, որ հորդում է կիրճերում, հոսում ներքև սարերի արանքով՝ հրապուրելով նրանց, ովքեր ծարավ են: Ես վերջին տարիներին ձեզ առաջարկել եմ այն ամենը, ինչ երկինքն ունի առաջարկելու: Ուրեմն ասացե՛ք Ինձ, Ես ավելին ի՞նչ կարող էի անել ձեզ փրկելու համար, որ չեմ արել:

Զավակնե՛րս, Ես սկզբից տվել եմ ձեզ Իմ Օրենքը, որ ձեզ կենդանի պահեմ: Իմ Օրենքը մինչ օրս չի պահվում, որովհետև դուք չեք ապրում Աստծո սիրո մեջ: Քանի դեռ դուք սեր չունեք ձեր Հոր հանդեպ, որ երկնքում է, դուք չեք կարող սիրել ձեր մերձավորին և չեք կարող ասել, որ ենթարկվում եք Պատվիրաններին: Քանի դեռ այն, ինչ սկզբից ուսուցանվել էր ձեզ, կենդանի չէ ձեր մեջ, դուք դեռևս արմատավորված չեք Իմ մեջ: Ինչպե՞ս կարող եք ասել. «Ես ապրում եմ Հիսուսի մեջ և իմ Հոր մեջ»: Մի՞թե չեք լսել, որ երկու ամենամեծ Պատվիրաններից է կախված ողջ Օրենքը: Ես լրջորեն հարցնում եմ ձեզ. «Ի՞նչ օգուտ մարդու համար տիրել ամբողջ աշխարհին և կորցնել սիրո պարգևը»: Սիրո պարգևը կորցնել նշանակում է կորցնել Աստծո իմացությունը, քանի որ, եթե մեկը սեր չունի Հոր հանդեպ, նա խախտում է բոլոր Պատվիրանները:

Ես ասում եմ ձեզ, եթե ձեր սերը ավելի չխորանա, քան այն, ինչ կա հիմա, և չաճի, դուք երբեք չեք կարողանա մտնել Իմ Թագավորության մեջ: Սովորե՛ք փառաբանել Հորը և սիրել Նրան, որպեսզի Հայրը և Ես ընակվենք ձեզ հետ: Սովորե՛ք ցանկալ և տենչալ Հորը, որպեսզի ձեր կյանքը դառնա մի հարատև աղոթք: Եթե ասում եք, որ Աստծուց եք, ուրեմն սիրեք մեկդ մյուսին ճիշտ այնքան, որքան Ես եմ ձեզ սիրում, որպեսզի ապրեք Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ:

Մի՞թե ձեր միտքը չի ընկալել Իմ Փառքը այս ամբողջ տարիների ընթացքում, որ Ես սովորեցնում եմ ձեզ: Ես շուտով կվերադառնամ ձեզ մոտ, ուստի մի՛ համարձակվեք ասել. «Ես դեռևս ժամանակ ունեմ առաջ գնալու համար»: Եկե՛ք հիմա և ապաշխարեք: Ապաշխարության պտուղը Սերն է: Ուստի եկե՛ք հիմա և սովորեք ձեր սիրո մեջ առատաձեռն լինել ձեր երկնային Հոր հանդեպ: Սովորեք սիրել ո՛չ միայն ձեր մերձավորին, այլև նրանց, որոնց համարում եք ձեր թշնամիները: Եթե դուք գթառատ եք նրանց հանդեպ, այդպես էլ ձեր Հայրը, որ երկնքում է, գթասրտություն ցույց կտա ձեզ: Իմ Տան մեջ միայն սեր կա:

Ես կանչեցի ձեզ ձեր անվամբ, որ հույս տամ ձեզ: Ես բացել եմ Իմ Սուրբ Սիրտը և առաջարկել ձեզ Իմ ողջ Հարստությունն ու Գանձերը, որ Ես թաքցրել էի դարերի ընթացքում: Ես իջել եմ Իմ Գահից ձեր մեջ լինելու համար՝ Իմ Սիրտը Ձեռքումս, որ առաջարկեմ ձեզ բոլորիդ այս ողջ Գանձը, որ գտնվում է Նրանում: Հետո, երբ Ես բացեցի Իմ Բերանը և խոսեցի, դուք ապշեցիք Իմ Կատարյալ Գեղեցկության վրա: Ձեր սերն արթնացնելու և ձեզ բարձրացնելու համար Ես շնչեցի ձեզ վրա անուշահոտության Իմ նուրբ բույրը: Ձեր ապաշխարության սկզբում դուք ազատորեն բացեցիք ձեր սիրտը Ինձ համար և խնդրեցիք Ինձ ղեկավարել ձեզ Իմ Հովվի գավազանով, և Ես այդպես էլ արեցի: Այն

հոտից, որ ես արածեցրի, շատ քչերը մնացին փարախի մեջ: Ձեր դիմադրությունը չարին՝ երկար չտևեց: Ձեր ոտքերը աստիճանաբար հեռացան Իմ Սրտից, և դուք արագացրիք ձեր քայլերը դեպի չարություն և խաբեություն...

Դժվարահաճ եք դարձել դուք, և մացառներն ու փշերը խեղդեցին այն փոքր սերը, որն աճում էր և որն Իմ ուրախությունն էր ու Իմ պատիվը: Ինչպե՞ս կարող եք ասել, որ ձեր աչքերը հետևում են Իմ Պատվիրաններին, երբ անխնա կերպով փորձում եք ձեր մերձավորին: Իմ Հայրը և Ես եկանք երկնքից մինչև երկիր՝ հիշեցնելու ձեզանից յուրաքանչյուրին բացել ձեր սրտերը, որպեսզի ընդունեք Մեզ՝ նախքան Իմ տեսանելի անցումն այս երկրի վրայով: Աղոթե՛ք, որ այդ ժամը ձեզ անտեղյակ չգտնի՝ քարե սրտով: Աղոթե՛ք, որ այդ ժամը ձեր հոգին չգտնի դատարկ:

Եկե՛ք ձեր Թագավորի մոտ սրտաբաց, և դուք նույնպես կկիսեք Նրա Արքայական Սեղանը, որը՝ սեր է:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 28, 1995

Վասուլա, թող որ Ես երգեմ քեզ համար, Իմ ընկե՛ր, այն օրհներգը, որը Ես ունեմ Իմ Սրտում: Գրի՛ր.

Ո՛վ Իմ ժողովո՛ւրդ, Իմ ընկերնե՛ր, Իմ հարազատնե՛ր, ձեր Տերը պիտի գա ու հանգստանա ձեր սրտում: Դուք պիտի նորոգվեք Իմ Ներկայությամբ, քանի որ Ես որոշել եմ շրջապատել ձեզ բոլորիդ փրկության երգերով: Ես որոշել եմ համախմբել երկրի բոլոր ժողովուրդներին և ուսուցանել նրանց: Իմ Նոր Երգը գրված է, որպեսզի պատվի Իմ Անունը:

Մի՞թե չեք լսել, որ Իմ մտադրությունը մարդկության Փրկությունն է: Իմ ծրագիրը ընդմիշտ մնում է ուժի մեջ, իսկ Իմ Սրտի մտադրությունները՝ դարեդար:

Լսի՛ր, Արևելքի Տուն: Խուլ մի՛ մնա Իմ կանչերին: Դու սպասում էիր, որ Իմ Գերագույն Իշխանությունը, Արևելքի սիրելի Տուն, ցած իջնի երկնքի բարձունքներից քեզ փրկելու համար: Եվ հիմա Ես ասում եմ քեզ. ամեն առավոտ դու պիտի աճես քո դահի վրա, քանի որ, տե՛ս, քո երկրից հույսի մի Ընձյուղ դուրս պիտի գա, արդարության և կատարյալ խաղաղության մի Ընձյուղ, և այդ Տան բնակիչները խաղաղություն պիտի տարածեն ամենուր... Իմ Արևելյան Տան աղջիկ, հայտարարի՛ր սա ուրախության կանչերով, գնա՛ և հռչակիր Իմ Խոսքերը: Ասա՛.

«Տերը գալիս է
Իր սուրբ բնակավայրից,
որ սփոփի Իր ժողովրդին
և համախմբի Իր Եկեղեցին»:

Այսօր Իմ Աչքերն ուղղված են բարի նախանշան ունեցող մի մարդու, որին պիտի տրվի թագը: Այդ Նա է, որ դուրս է գալիս արևելյան Ափից, որ պիտի փառաբանի Ինձ... Եվ Իմ հրեշտակները պիտի իջնեն արքայական շքանշաններն իրենց ձեռքերում և պիտի զգեստավորեն նրան դահի համար, որպես ղեկավարի:

Ա՛հ, Վասուլա, պարիր և կանչիր ուրախությամբ, քանի որ այդ օրը շատ մոտ է: Ես արդեն գործի եմ անցել այստեղ, որպեսզի խնջույքի[1] այդ օրը հասցնեմ ձեզ, որպեսզի անցյալի բոլոր դժբախտությունները փոխարինվեն ուրախությամբ:

Ավանդության Տուն, մի՞թե չես լսել: Մի՞թե դեռ չես հասկացել, որ քո Տնից Ես երիցս պիտի փառավորվեմ: Մի՞թե չես լսել, որ Ես երկնային օրհնություններ եմ պարգևել քո Ընձյուղին: Այնպես, ինչպես մի ժամանակ դու անեծք էիր շատ ազգերի մեջ, այդպես էլ Ես մտադիր եմ բարձրացնել քեզ, որ դառնաս մի բուժիչ բալասան Արևմուտքի Իմ Տան համար և օրհնություն՝ ազգերի համար: Արևելքի Տո՛ւն, մի հաղթական Ընձյուղ է աճում, որ բարձրացնի Իմ Տունը՝ դարձնելով այն մեկ:

Իմ շուրթերը դողում են հուզմունքից, և Իմ Սիրտը երգում է օծյալի համար... Եվ անդունդը ոռնում է մոլեգնորեն նրա ոտնաձայներից, որովհետև Իմ Տունը լինելու է մեկ: Արևմտյան Տունը և Արևելյան Տունը պիտի լինեն մեկ: Արևմտյան Տունը և Արևելյան Տունը պիտի ապրեն որպես մեկ մարմին, որովհետև Իմ Անունը պիտի լինի նրանց կապը՝ պարուրելով նրանց կատարյալ խաղաղությամբ, արդարությամբ և սիրով: Իմ Նոր Անունը արքայական շքանշան պիտի լինի այս երկու Տների միջև... Սա տեղի պիտի ունենա շուտով և ձեր ժամանակներում: Ուրեմն մի՛ ասեք. «Տերը <u>նորից չի շտապում»:</u>

Ես ասել եմ ձեզ, որ Ձեր Հանդեպ ունեցած Իմ Սիրուց ելնելով, Ես որոշել եմ արագացնել Իմ Ծրագիրը: Ես մտադիր եմ, Իմ Բանակի հետ միասին, ոտնակոխ անել Իմ Թշնամուն[2] ու երկու Գազաններին[3] ավելի շուտ, քան նախատեսված է:

Եկե՛ք և իմացե՛ք. ավերածության առաջնորդներն իրականում երեք չար ոգիներն են[4], կազմելով եռանկյունի, յուրաքանչյուրը մի անկյունում, որոնք տանում են ամբողջ աշխարհը դեպի իրենց պիղծ աշխարհը՝ արբած սրբերի և բոլոր նրանց արյունով, ովքեր վկայում են Իմ Աստվածության մասին: Ձե՞ք տեսնում, որ ավերումի իրենց գործն ավարտելու և այն հաջողությամբ պսակելու համար նրանք պետք է հեռացնեն Պետրոսի Աթոռը և նրան, ով նստած է դրա վրա: Նրանց նպատակն Իմ Եկեղեցին ավերելն է... Բայց մի՛ վախեցեք, Ես խոստացել եմ, որ «Դժոխքի դարպասները Այն չպիտի հաղթահարեն»[5]:

Այո՛, սա այն է, ինչ տեղի է ունենում հիմա: <u>Ավերմունքի առաջնորդները, որոնք փայլում են իրենց գիտական աստիճաններով, պիղծ են,</u> և նրանց գարշահոտությունը հիմա ծածկել է ամբողջ աշխարհը: Այդ նրանք են, որոնց մասին Սուրբ Գրքերն ասում են. Նրանք կարող են

[1] Հիսուս նկատի ունի Միասնությունը:
[2] Սատանան
[3] Հայտ. 13:1-18
[4] Հայտ. 16:13-14
[5] Մատթ. 16:18

հրաշքներ կատարել՝[1] իրենց կարողությամբ հրապուրելով աշխարհի տասը աշտարակներին, և նրանցից՝ աշխարհի բոլոր ազգերին: Բոլորն ընկնում են նրանց կախարդանքի տակ... Երբ նրանց բանակը ամբողջական դառնա, նրանք պիտի բարձրացնեն իրենց նշանը[2], և, երեք պիղծ ոգիների ուժերի հետ միասին, նրանք պիտի համախմբվեն, որ պատերազմեն Իմ Մշտնջենական Զոհաբերության դեմ: Սա Սուրբ Գրքերն անվանում են

«Ամենակարող Աստծու
Մեծ Օրվա պատերազմը...»[3]:

Փաստորեն, մեծ անօրինության և մեծ դառնության այդ ժամն արդեն հասել է ձեզ վրա, բայց Ես պիտի հաղթեմ նրանց, քանի որ Ես տերերի Տերն եմ և թագավորների Թագավորը: Եվ երկինքը՝ բոլոր սրբերի, առաքյալների և մարգարեների հետ միասին, պիտի տոնի նրանց անկումը[4]:

Ես պիտի հայտնվեմ սպիտակ ձիու վրա, որպես արդարության ռազմիկ[5], և Իմ բոլոր սրբերի, առաքյալների և մարգարեների համար դատաստան պիտի տեսնեմ[6] վիշապի[7], գազանի, կեղծ մարգարեի, այլ կերպ ասած երկրորդ գազանի, և երեք պիղծ ոգիների դեմ[8], ու Իմ սրով Ես պիտի հարվածեմ նրանցից յուրաքանչյուրին[9]: Եվ աշտարակները, որ նրանք կառուցել են, պիտի տապալվեն, այսինքն՝ պիտի տապալվեն Գիտնականների անվան տակ գտնվող երկու Գազանների բոլոր հետևորդները: Կտրված փշերի նման նրանք հիմա ներթափանցել են Իմ Մարմնի մեջ, սակայն Ես արմատախիլ պիտի անեմ նրանցից յուրաքանչյուրին և պիտի այրեմ նրանց կրակի մեջ[10], իսկ Իմ Շունչը կրակի պես պիտի ոչնչացնի մնացածին...

Քանի որ ոչինչ չի կարող թաքնված լինել Իմ Աչքերից, Ես ասում եմ ձեզ, որ յուրաքանչյուր ազգի վրա Գազանը և նրա նմանները մի ղեկավար են դրել իրենց յուրայիններից մեկին, որոնք հաստատել են իրենց իշխանությունը նույնիսկ խոտի յուրաքանչյուր շյուղի վրա: - Ես ձեզ հետ եմ, որ սովորեցնեմ ձեզ, ինչպես հասկանալ: Գրի՛ր: Արդեն երկրորդ Գազանը՝ առաջինի ծառան, ցույց է տալիս իր վիթխարի ուժը՝ երկնքից անվերջ աստղեր[11] քաշելով և թզերի նման նրանց գետին գցելով: Լսե՛ք և հասկացե՛ք. Նրա[12] իշխանությունը պիտի հասնի ուղիղ «մինչև երկնքի զորքերը և գետին նետի բանակներ ու աստղեր, և նրանց ոտնակոխ պիտի անի: Նա նույնիսկ մարտահրավեր պիտի նետի այդ

[1] Բ Թես. 2:9
[2] Ես միևնույն ժամանակ լսեցի նաև «դրոշ» բառը:
[3] Հայտ. 16:14
[4] Հայտ. 18:20
[5] Հայտ. 19:11
[6] Հայտ. 18:20
[7] Սատանան
[8] Չար ոգիների (Հայտ. 16:13):
[9] Կարդա Հայտ. 19:11-21
[10] Հայտ. 19:20
[11] Առաքինի հոգիներ:
[12] Գազանի իշխանությունը:

բանակի Իշխանին և ոչնչացնի Մշտնջենական Զոհաբերությունը և պիտի տապալի Նրա սրբարանի հիմքը»[1]:

Սրանք նրանք են, որ մի ժամանակ կային, և այլևս չկան: Սրանք նրանք են, որ դադարել են լինելուց: Երկնքի բանակներն ու աստղերը ժամանակին Իմ Յուրայիններն էին, բայց որոշեցին անջատվել Ինձանից և դառնալ գազանի գործակիցներ: «Նրանք բոլորը միակամ են իրենց զորություններն ու իրենց ուժերը գազանի տրամադրության տակ դնելու»[2]: Նրանք վաճառում են Ինձ ամեն օր և պղծում են Ինձ Իմ Մշտնջենական Զոհաբերության մեջ, Իմ Աստվածային Սիրո Օրհնյալ Հաղորդության մեջ: Տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի մեծ անկարգություն է տիրելու:

Ուստի թող հիմա քո ձայնը տարածվի ամբողջ աշխարհով մեկ, իսկ Իմ Պատգամը՝ մինչև աշխարհի ծայրերը: Ընդունի՛ր Իմ Խաղաղությունը, որ խաղաղությամբ աշխատես: Գովաբանի՛ր Ինձ՝ քո հոգուն նոր կյանք տալու համար...

Թող փառավորվի Աստված:
Ես շնորհակալ եմ Քեզ,
իմ ողջ սրտով
ես շնորհակալություն եմ
հայտնում Քեզ:
Ես վերակենդանացել եմ, և Դու
տվել ես ինձ մարմնավոր մի սիրտ:
Իմ մարմինը ծաղկեց մեկ անգամ ևս:

Ինձ ընտրելով՝
Դու բարձրացրիր ինձ,
որ վայելեմ Քո բարեհաճությունը,
թույլ տալով ինձ ապրել
իմ կյանքի բոլոր օրերը
Քո Տան մեջ:

Օրհնյա՛լ լինի Աստված,
որ թույլ է տալիս ինձ
ամեն մի ժամ վայելել
Իր քաղցրությունը,
Իր քնքշությունը և Իր շնորհները:
Աստծո Խոսքը Կյանք է:
Սովորեցրո՛ւ, որ լեզուս հոչակի Քո
բարությունը և գովաբանի
Քո Սուրբ Անունը,
հավիտյանս հավիտենից: Ամեն:

Արի՛, Ես օրհնում եմ քեզ: Ես պիտի շարունակեմ սնել քեզ, և Ես պիտի խնամեմ քեզ:

[1] Դան. 8:10-11
[2] Հայտ. 17:13

Մայիսի 1, 1995

Տե՛ր իմ, թող Քո Սուրբ Անունը
պահվի ընդմիշտ փառապանծ:
Իմ սիրտը Քո Ներկայությամբ
թրթռում է ուրախությունից,
և ես հրճվում եմ լինելով
Քո բարեհաճության մեջ:
Եվ ամեն ինչ, որ Դու
կարգադրում ես ինձ անել,
ես փորձում եմ ճշտորեն կատարել:

Քո Ներկայությամբ ես ճաշակում եմ
Քո Սրտի քաղցրությունը և Քո
ուսուցումները, որոնք Կյանք են,
Ուրախություն, խաղաղություն,
Սեր և Սրբություն:
Նրանք մի Երգ են
մեր հոգու համար,
որ բացահայտում են
թաքնված խորհուրդները
Քո Թագավորության:

Բայց երբ ես երգում եմ
Քո Սիրո Երգը
իմ ողջ սրտով ու ձայնով և
օրհնում Քո երիցս սուրբ Անունը,
նրանք գալիս են ինձ վրա՝ ճզմելով,
անվանելով ինձ «չարագործ»:
Նրանք նստում են
դատավորի աթոռին
կեղծիքի գավազանով,
միշտ փորձելով
հնարել նոր մեղադրանքներ:
Ե՞րբ են նրանք
հրաժարվելու իրենց մեղքից:

Հենվի՛ր Ինձ վրա, ես քեզ հետ եմ: Թող այդ բաները չանհանգստացնեն քո սիրտը: Ես հսկում ու տնօրինում եմ Իմ Եկեղեցուն, ուստի երբե՛ք չվհատվես: Վասո՛ւլա, ծաղիկս, հիշի՛ր. ո՛չ մեկը չկար, որ սովորեցներ քեզ, Ինձանից բացի: Ես եկա, որ ուսուցանեմ քեզ և քո միջոցով՝ ուրիշներին: Ես քո Ուսուցիչն եմ, և Ես սիրում եմ քեզ: Սովորի՛ր հենց իրենից՝ Քաղցրությունից, սովորի՛ր, աշակերտս, առանց սեփական շահերի, և փոխանցիր առանց վերապահության:

Տե՛ս, զավա՛կս, Ես հայտնի եմ նրանով, որ չեմ վախենում մարդկային մեծությունից: Եթե սրանք դառնան դատավորներ և չհետևեն սրբորեն սուրբ բաներին, իրենց պիտի դատապարտեն որպես պիղծ և անսուրբ: Մի՞թե մոռացել ես, որ Ինձ հետ վարվեցին որպես հայհոյողի և Ինձ դատապարտեցին դրա համար: Ուրեմն, ինչո՞ւ ես զարմանում, որ

դատվում ես որպես ինչ-որ մեկը, որը ապականված և վիրավորական լեզու է օգտագործում: Նրանք դատեցին Ինձ մարդկային չափանիշներով, ինչպես այսօր դատում են քեզ: Զավակս, չվախենա՛ս, lo tedhal: Դատաստանի Օրը նրանք դողալով պիտի գան Իմ Գահի առջև, որ հաշիվ տան իրենց մեղքերի համար, եթե չապաշխարեն մինչ իրենց օրը գալը: Նրանց անգութ դատավճիռը քո հանդեպ, նույնպես անգութ պիտի լինի իրենց հանդեպ: Նրանց մեղադրանքները պիտի մեղադրեն հենց իրենց:

Ես ասում եմ քեզ, Վասո՛ւլա, մի օր իմ դավիթներում և Իմ Դատաստանի Օրը, բոլոր նրանք, ովքեր մեղադրել ու ծաղրել են քեզ, խղճի խայթ պիտի զգան Իմ Անսպառ Գանձերը մերժած լինելու համար, որից նրանց հոգին կարող էր ստանալ Իմաստությունն և շահել Իմ բարեկամությունը, այն բարեկամությունը, որը կառաջնորդեր նրանց դեպի Իմ Գերագույն Իշխանությունը, Հոյակապության գեղեցկությունը և դեպի իրենց Աստծո մտերմությանը: Քեզ մեղադրողները կնայեն քեզ և կասեն, ինչպես Սուրբ Գրքերն են ասում. «Սա նա՛ է, ում վրա մենք ժամանակին ծիծաղում էինք, մեր ծաղրի թիրախը, որովհետև մենք հիմարներ էինք: Նրա կյանքը մենք համարում էինք խելագարություն...» Իսկ դո՛ւ, զավա՛կս, դեմառդեմ կհանդիպես քեզ ճնշողներից ամեն մեկին, և նրանք կհասկանան, թե որքան են դառնացրել Իմ Գավաթը...

Մնա՛ Ինձ հետ Իմ տառապանքի մեջ, ես քո ընկերակցության կարիքն ունեմ: Աղոթի՛ր և ասա՛ Ինձ այս բառերը.

«Տե՛ր իմ,
թող իմ բերանից ելնող
խոսքերը գտնեն
բարեհաճություն և սփոփանք
Քո Սուրբ Սրտի համար:

Ազատարա՛ր աշխարհի,
ինչո՞ւ են նրանք
նորից ու նորից ծրագրեր
մշակում Քո դեմ:

Մխիթարիչ Քո ընտանիքի,
ինչո՞ւ են նրանք շարունակում
ծանրաբեռնել Քեզ
վշտով ու կսկիծով:

Ընկե՛ր մարդկության,
ինչո՞ւ են Քո Յուրայինները
մերժում Քո վիրավոր Սիրտը
և անախորժության
դրոշներ կանգնեցնում մեղքի մեջ
իրենց ողջ կյանքի ընթացքում:

Երկինքը բացահայտորեն
հռչակում է Քո Փառքը,

և Քո Ձայնը լսվում է մինչև
աշխարհի ծայրերը՝ կանչելով.
«Վերադարձե՛ք Ինձ մոտ,
և Ես կտամ ձեզ
մի նոր կյանք ձեր հոգու համար»:

Բայց այն ինչ դու ստանում ես
արհամարհանք է, Ազատարա՛ր իմ:
Եվ ա՜հ, որքա՜ն
շատերն են ծաղրում Քո Կանչը,
Մխիթարի՛չ իմ:

Մարդկության Ընկե՛ր,
Կատարյալ Գեղեցկությո՛ւն,
Լո՛ւյս՝ Երիցս Սուրբ,
Քո Սերը նորից դավաճանվում է,
մերժվում և
փորձության ենթարկվում:
Քո թշնամիները
բազմապատկվում են, և նրանց
բռնությունն ավելանում է:

Զոհաբերությա՛ն Գառ, մեղադրված
Քեզ մեղադրողների կողմից,
մշտապես գրոհի ենթարկված
Քեզ վրա գրոհողների կողմից,
Դու ե՞րբ կհայտնվես Քո ձիու վրա
որպես Արդարության Ռազմիկ»:

Իմ Ցուրային, երբե՛ք չհեռանաս Իմ Սրտից: Իմ թշնամիները հետապնդում են քեզ, սակայն իրականում հետապնդում են Ինձ[1]: Հրեշտա՛կս, դավա՛կս, Հայրը ուղարկում է քեզ, որ ճամփորդես մեզ համար և վկայես: Ահա՛ թե ինչու Իմ պիտակը քեզ վրա է: Արիացի՛ր, Ես քո կողքին եմ: Կանչի՛ր Ինձ, երբ հոգնած ես, և Ես կբարձրացնեմ քեզ: Լցրո՛ւ Իմ հավաքները և մի՛ վախեցիր: Ես Նա՛ եմ, ով պիտի միջամտի քո հանդեպ կատարվող բռնությունների ժամանակ: Ուստի եղիր համբերատար:

Մայիսի 10, 1995

Աստվա՛ծ իմ, Տե՛ր իմ,

[1] Վկայակոչում՝ Գործք 9:4-5

արա այնպես,
որ յուրաքանչյուր լեզու երկրի վրա
խոսի «խաղաղության»,
«հաշտության», «սիրո», «հավատի»
և «միասնության» մասին:

Ուղարկի՛ր
Քո Սուրբ Հոգուն ժամանակին,
ցույց տուր ամեն մեկին,
որ Դու մեր Օգնությունն ես
և Մխիթարությունը:
Արի՛ և կենդանացրու
այն քիչը, որ մնացել է,
այլապես մեռածներն ինչպե՞ս կլսեն
Քո հրաշքների մասին խավարում:
Ինչպե՞ս նրանք կտեսնեն
Քո արդարությունը,
եթե նրանց հոգին դեռևս ընկած է
մոռացության երկրում:

Քո սերն իմ հանդեպ այնքան մեծ է,
Քո գութը՝ անհատակ,
և առանց որևէ արժանիքի,
Դու տվեցիր ինձ Իմաստություն,
մի անգին ընծա...
և Դու ինձ տվեցիր խոսք,
որ հռչակեմ Քո Սերը[1]:

Աղջի՛կս, բայց սիրտդ Ինձ համար և ասա Ինձ ամեն ինչ...

Իմ հոգին անհանգիստ է...

Ես լսում եմ...

Իմ հակառակորդներն այժմ ավելի են հակառակվում, քան երբևէ... Մի դաժան կլան է ինձ կրկնակոխ հետապնդում:

Լսի՛ր և հասկացիր. Ես հատկացրել եմ քեզ մարգարեի աթոռ: Հետևաբար քո կյանքի մնացած մասը դու մարգարեություն պիտի անես և կապված պիտի լինես Իմ Գործերին, բայց նաև այն ամենին, որ նրանք[2] կրել են: Մի՛ կանգնիր այդտեղ այնպես, կարծես հանկարծակի այրիացել ես... Գտիր քո հանգստությունն Իմ Սիրո մեջ, քանի որ Ես քեզ հետ եմ: Իմ Խաղաղությունը քեզ... Դու կգրե՞ս:

Եթե ուզում ես, Տե՛ր:

[1] Ես չէի ասում հիմնականը:
[2] մարգարեները

Ես ուզում եմ... Լսի՛ր և գրիր:

Վասո՛ւլա, կարծում եմ դու հիմա արդեն նկատել ես, թե ինչպես են սատանայի ամրություններն ավելի հզորանում: Ահա թե ինչու Ես որոշեցի արագացնել Իմ Օրը: Թող մարդկությունն իմանա.

<u>Ես պիտի արագացնեմ</u>
<u>Իմ Վերադարձի Օրը</u>:

Ես մի անգամ, ոչ շատ վաղուց, քեզ ասացի, որ արագացնես Իմ Գործը, որովհետև դուք գտնվում էիք մեծ իրադարձությունների արշալույսին: Հետո, ավելի ուշ, Ես եկա քեզ մոտ ասելու, որ դուք դեմ հանդիման եք կանգնած գալիք մեծ փորձությունների առջև: Բայց հիմա Ես ասում եմ ձեզ. Ինձ խունկ առաջարկե՛ք և աղոթեք ամեն օր, որպեսզի Ես շնորհեմ ձեզ օգնության շնորհը: Աղջի՛կս, վիշտը մոտալուտ է, վիշտն արդեն Իմ սրբարանը տանող ճանապարհին է:

Դա անօրինության այն խավարն է, որի մասին Ես կանխասացի քեզ: Երեք ու կես տարիներն արդեն ձեզ վրա են: Այս ժամն արդեն ձեզ վրա է սկսած այս գարնանից: Ձեր սերունդը մուտք է գործել վշտերի և փորձությունների սկզբնական շրջանը, անօրինության այս սարսափելի ժամանակները, պղծության ու ամայացման ժամանակները, ստվերների և Գազանի ժամը, սատանայի կողմից երիցս նզովված ժամանակները: Այն ժամը, որի համար նա երդվեց նեղել ու հոգնեցնել Իմ սրբերին և Իմ հրեշտակներին[1]: Եկել են այն ժամանակները, երբ չարը պիտի ուղարկի իր յուրայիններից մեկին, որ փոխի Իմ Օրենքը և եղանակները: Այդ ժամանակ ձեզ այնպես պիտի թվա, որ Գերագույն Իշխանությունը և Հոյակապությունն այլևս ձեր շուրջը չեն: Իմ սրբերին այնպես պիտի թվա, կարծես թե Իմ Ատյանն այնտեղ չէ, որ բաց անի գրքերը[2]: Ձեզ այնպես պիտի թվա, կարծես թե լքել եմ ձեզ բոլորիդ: Ձեզ բոլորիդ այնպես պիտի թվա, կարծես թե երկու Գազաններն ավելի զորեղ են, բայց դա պիտի լինի միայն շատ կարճ ժամանակով, մինչև Իմ Վերադարձը: Ես պիտի գամ գողի նման...

Ես հանկարծակի պիտի գամ ձեզ վրա, որ կոտրեմ ստի ու կեղծիքի գավազանը, և երկիրը պիտի դողա: Իմ մի հայացքով միայն Ես պիտի սասանեմ ըմբոստությունը յուրաքանչյուր ազգի մեջ, և Իմ Բոցերում Ես պիտի լուծեմ այն, որը ժանտախտի պես ձեզ վրա իջեցրեց այս Ուրացությունը: Ես դուրս պիտի քշեմ ուրացողներին և նրանց գահերը, ովքեր փոխեցին եղանակները, Իմ Ավանդությունը, և ովքեր անցկացրին իրենց կյանքը հակադրվելով և ընդդիմանալով Իմ Աբելներին[3], ինչպես և նրան[4], ով հովվություն է անում իրենց: Ես պիտի քայլեմ երկրի վրայով և պիտի շրջեմ ամեն մի քար, քանի որ Ես երդվել եմ Իմ Բոցերով ոչնչացնել այն ամենը, որն Ինձանից չի գալիս, և որը պղծել է Իմ Պատկերը:

[1] պատգամատարներին
[2] Աստծո Արդարությունը:
[3] Հավատարիմ քահանաները:
[4] Հովհաննես Պողոս II:

- Տարիներ շարունակ ես ուղարկում եմ ձեզ նոր առաքյալներ, որ լինեն ձեր մեջ՝ հիշեցնելու համար ձեզ Իմ Օրենքը և լսելու Իմ նախազգուշացումները [1], որոնք արդեն շատ տարիներ է, ինչ մարգարեանում էին, բայց շատ քչերը լսեցին... Ես ուղարկել եմ նրանց, որ հիշեցնեն ձեզ կիրառելու Իմ Օրենքը և բարություն ու կարեկցանք ցուցաբերելու մեկդ մյուսի հանդեպ: Ես ուղարկել եմ նրանց, որ լինեն Իմ Արձագանքը՝ հիշեցնելով ձեզ, սերո՛ւնդ, որ չարին բարությամբ հատուցեք և սիրեք մեկդ մյուսին, բայց մինչ օրս ձեր սրտերը փակ են և ավելի կարծր, քան երբևէ... Դուք չեք կիրառում Իմ Օրենքը, ոչ էլ լսում եք Իմ խնդրանքները: Ձեր սրտերը շարունակում են չարագործություն ծրագրել մեկդ մյուսի հանդեպ և ավելի շուտ անդրդվելի կմնան, քան թե կլսեն Իմ Կանչերը, որոնք Ես հայտնի դարձրի Իմ Հոգով՝ ձեր օրերի Իմ նոր առաքյալների միջոցով...

Քանի որ դուք, սերո՛ւնդ, արեցիք այդ ամենը, որոնցից Ես խորշում եմ, և չեք ցուցաբերում սեր ու խաղաղություն, այլ դրա փոխարեն՝ ըմբոստություն, դուք կստանաք ձեր արածի համաձայն... Ինչ որ ցանել եք, այն էլ կհնձեք...

Տե՛ր իմ, հույսի խոսք չկա՞ հավատացյալների՝ Աբելների համար, ինչպես Դու ես նրանց անվանում:

Իմ Աբելներին Ես ասում եմ. Ես հայտնի կդարձնեմ Իմ Արդարությունը: Մի՛ վախեցեք: Ես գիտեմ ձեզ անունով, և դուք գիտեք Ինձ: Միշտ ցանկացեք, որ խաղաղ լինեք բոլոր մարդկանց հետ: Հետևե՛ք, որ բոլորը ենթարկվեն իրենց առաջնորդին, որպեսզի նրանց մեջ ըմբոստությունը արմատ չգցի: Շարունակեք լինել Իմ շնորհի մեջ, և մի՛ խստացրեք ձեր սրտերը: Ես ձեր Հույսն եմ, արմատացած եղեք Իմ մեջ: Ես կհոգամ ձեզ այն ժամանակ, երբ անօրենությունը հասնի իր գագաթնակետին:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, հավիտենապես: Եղե՛ք մեկ Իմ Անվամբ:

ΙΧΘΥΣ

Մայիսի 12, 1995

Սուրբ Գրքերն ասում են.
«Եթե սեփականությունը
ցանկապատ չունի, այն կթալանվի»[2]:
Տե՛ր, թող Քո Բազուկները
լինեն իմ ցանկապատը,
պաշտպանի՛ր ինձ, ի՛նձ,
որ Քո սեփականությունն եմ:
Թույլ մի՛ տուր, որ թալանողը մտնի
քո սեփականության մեջ
և ավերի այն,

[1] Հիսուս Հոգոց հանեց:
[2] Սիրաք 36:25

այլապես ես կայրվեմ բոցերի մեջ:

Ես՝ Հիսուս, միշտ պիտի լինեմ քո պաշտպանությունը[1]: Մի՛ կորցնիր այն խաղաղությունը, որը Ես տվել եմ քեզ... Քո կերակուրը Իմ Կամքը կատարելն է: Շնորհով Ես բարձրացրեցի քեզ, որ լինես Իմ պատգամատարը, և շնորհի միջոցով դու պիտի ավարտես քո աշխատանքն Ինձ հետ: Մի՛ զարմացիր, թե ինչ ձևով Ես տարածեցի Իմ Պատգամը: Բա՛ց ականջդ, աղջի՛կս, և լսիր Իմ Ոտնաձայները, Ես քեզանից հեռու չեմ[2]: Աշխատի՛ր Իմ Եկեղեցու համար: Ես՝ Հիսուս Քրիստոսը, քեզ համար ջուր եմ պատրաստել, որ խմես և հանգստանաս: Ես գիտեմ, սիրելի՛ս, որ դժվար է անցնել այս դաժան ու անողոք անապատը, սակայն Ես քեզ հետ եմ...

(Հավիտենական Հայրն է խոսում հիմա):

Ես՝ քո Հավիտենական Հայրը, օրհնում եմ քեզ: Յուրաքանչյուր բառ, որ դու ասում ես Իմ մասին, փառաբանում է Ինձ: Յուրաքանչյուր սիրտ որ նվաճվում է, երբ դու խոսում ես, սրբագործում է քեզ... Քեզ վրա նետված յուրաքանչյուր անարդար մեղադրանք մաքրագործում է քո հոգին՝ այն ավելի մոտեցնելով Ինձ: Եթե բոլորը, նույնիսկ քո ամենամտերիմ ընկերները լքեն քեզ, Ես երբեք չեմ լքի քեզ: Դու Իմ ուրախությունն ես: Քեզ առաջնորդելը նույնպես ուրախություն է Ինձ համար: Ես վստահել եմ քեզ Իմ Գործը, ուրեմն ճրագի պես վառ և պայծառ պահիր այն:

Քո դարաշրջանը խավար է, զավա՛կս, բայց օգտագործելով այն, ինչ Ես քարոզել եմ քեզ և սովորեցրել, շատերը պիտի տեսնեն <u>Ճանապարհը</u> և պիտի հասկանան, որ Ես նրանց Կյանքի Ակունքն եմ: Շատերը պիտի հրապուրվեն և պիտի ուրախանան այն լույսով, որ Ես տալիս եմ նրանց, և այդ լույսի մեջ, որը Ես գցում եմ նրանց վրա, նրանք կիմանան միակ <u>Ճշմարտությունը</u>, այսինքն,

որ Ես միակ ճշմարիտ Աստվածն եմ, և Հիսուս Քրիստոսը՝ Իմ միակ Որդին՝ Տերերի Տերը՝ Մեսիան: Իմ ուսուցումները նրանց ավելի խոր գիտելիք կտան Իմ խոսքի մասին: Ես ասացի քեզ այս ամենը, որպեսզի դու խաղաղություն և սփոփանք գտնես Իմ մեջ: Հիշի՛ր նաև, աղջիկս, որ վտանգի պահերին Ես պիտի բարձրացնեմ քեզ: Ես վստահեցնում եմ քեզ, որ դու կհասնես ճանապարհի ավարտին, որ Ես նշել եմ քեզ համար: Չնայած դու պիտի շարունակես լինել հակադրության մի նշան, դու կավարտես քո առաքելությունն Ինձ հետ, և դու կփառաբանես Ինձ...

(Տիրամայրն է խոսում):

'pethi mou'[3], Ամենակարողի ծրագրերն այնքան խորն են Իր Պատգամում, որ շատերը պիտի բուժվեն:

Իմ Որդին քեզ հետ է: Ես նույնպես քեզ հետ եմ: Ես եկել եմ վստահեցնելու քեզ Իմ օգնության մասին... Քո բոլոր պարգևներին

[1] Հիսուսն օգտագործեց «պաշտպանություն» բառը «պաշտպանի» փոխարեն:
[2] Հիսուս նկատի ունի «Իր Վերադարձը»:
[3] հունարեն՝ «Զավա՛կս»:

ավելացրու նաև ժպտացող մի դեմք [1]... Շարունակի՛ր գոհություն պատճառել Աստծուն՝ մարգարեանալով և յուրաքանչյուր ազգի ցույց տալով, թե Նա իսկապես ինչ է հայտնել քեզ, որպեսզի բոլոր նրանք, ովքեր որ կլսեն քեզ՝ ճանաչեն Նրան որպես Փրկիչ և որպես Սեր...

Շարունակի՛ր յուրաքանչյուր հոգու ձգել Աստծո հետ մտերմության: Հրապուրի՛ր Իմ զավակներին դեպի Աստծո Սրբազան Սերը: Իսկ դո՛ւ, աղջի՛կս, աճիր Նրա Հոգու մեջ և երբեք քեզ ընկճված չզգաս: Տարածի՛ր Նրա Պատգամը, ինչպես որ հիմա անում ես և վստահ եղիր: Աստված քեզ հետ է...

(Սուրբ Միքայելն է խոսում հիմա):

Վասո՛ւլա, մի՞թե չես կարդացել. «Ինչպես երիտասարդ մի մարդ, որ ամուսնանում է մի կույսի հետ, այնպես էլ Նա, որ ձևավորեց քեզ, պիտի ամուսնանա քեզ հետ... Եվ ինչպես փեսան է հրճվում իր հարսով, այնպես էլ քո Աստվածը հրճվում է քո մեջ»: Այս իմացիր, Վասո՛ւլա, որ ամեն անգամ, երբ մի հոգի արթնանում է և գտնում Աստծուն, ամբողջ երկինքն ուրախանում է և տոնում: Ինչպես մարդիկ ուրախանում են և տոնում, երբ հրավիրվում են հարսանիքի, այդպես է լինում նաև, երբ երկինքն է տոնում... Ես ուզում եմ ասել քեզ, որ շատ անգամ դու ավելացրել ես մեր ուրախությունը երկնքում, երբ քո ոչնչության մեջ փառաբանում ես Ամենակարողին՝ արթնացնելով հոգիներ, որ սիրեն Աստծուն... Ուստի մի՛ վախեցիր:

Իսկ հիմա նորից գրի՛ր այն, ինչ գրված է եղել քարետախտակի վրա և գրքում, շատ ժամանակներ առաջ, բայց մնացել է հավիտյան մի վկայություն, գալիք ժամանակներին ծառայելու համար. «Սա մի ըմբոստ ժողովուրդ է. նրանք ծնում են որդիներ, որդիներ, որոնք չպիտի լսեն Յահվեի հրամանները: Տեսանողներին նրանք ասում են. «Տեսիլքներ մի՛ տեսեք», մարգարեներին՝ «Մի՛ մարգարեացեք մեզ ճշմարտության մասին: Մեզ հաճոյախոսություններ ասեք, խաբուսիկ տեսիլքներ տեսեք, հեռու քաշվեք ճանապարհից, հեռացե՛ք շավղից, դուրս հանեք Սրբին մեր տեսողությունից» [2]: Շուտով, շատ շուտով Սուրբը պիտի դա որպես կլանող կրակի մի բոց և զարմացնի մեծամիտներին, սակայն խոնարհները պիտի ուրախանան, որ իրենց հույսը դրել են Նրա վրա:

Փրկությունը գալիս է վերևից, Գերագույն Իշխանությունը ցած է խոնարհվում երկնքից, որ ողորմի ձեզ: Դրա համար էլ, նա, ով լսում է Նրա Կանչերը և պատրաստում ինքն իրեն ապաշխարելով, նման կլինի այն խելացի մարդուն, որը կառուցել է իր տունը ժայռի վրա: Տերն է Ժայռը: Ես ձեր տան [3] պահապանն եմ, իսկ Տերը՝ ձեր տան Հիմքը...

Իսկ հիմա, Ամենաբարձրյալի աղջիկ, մի խորհուրդ քեզ. մնա՛ արմատացած Աստծո մեջ, Նրա Սիրո մեջ, և ոչ մի հարձակում չի

[1] Այս բառերն ինձ ասելիս, Տիրամայրը ժպտում էր, և մի փոքր հումորի երանգ ուներ իմ տրտմած դեմքի պատճառով: Մինչ Նա ասում էր սա ինձ, անմիջապես իմ դեմքը ո՛չ միայն պայծառացավ, այլև ես սկսեցի ծիծաղել ուրախությունից:

[2] Ես. 30:9-11

[3] «Տուն» բառը կարող է հակացվել որպես «հոգի»: «Այդ ժամանակ պիտի ելնի Միքայելը՝ մեծ իշխանը, որ քո ժողովրդի որդիների գլխավորն է...» (Դան. 12:1):

կարողանա ցնցել քեզ: Մնա՛ միացած Ամենասուրբ Երրորդությանը, և դու կցնցես քեզ մեղադրողներին՝ դայթակղությունների հանդեպ ունեցած քո ամուր դիմադրությամբ: Մնա՛ Ամենասուրբ Երրորդության մեջ, և դու քո մեջ զորություն կունենաս այս մարտի համար, որ դիմանաս մինչև վերջ, երբեք տեղի չտալով: Դու բավարար չնորհ կստանաս Աստծո փառավոր զորությունից, որպեսզի ավարտես քո առաքելությունը: Ամեն ինչ պիտի արվի կատարյալ ներդաշնակության մեջ, և դու պիտի սովորես կրել քո փորձությունները ապշեցուցիչ ուրախությամբ:

Փա՛ռք Նրան, ով հեղում է ձեզ վրա Իր Շնորհները, որ պահի ձեզ Իր Լույսի մեջ, Իր Ողորմությունը, որ պահպանի Իր Արդարությունը, Իր Զորությունը, որպեսզի դուք ապրեք համաձայն Իր Պատվիրանների: Յահվեն արդար է և բարի, խղճահարությամբ լի Իր զավակների հանդեպ, հավատարիմ և ճշմարիտ բոլոր ժամանակների համար: Առանց խնայելու, Նա տալիս է Իր ընծաները և կիսում Իր Գանձերը՝ Իր Սրտից ներս բերելով ամեն մի հոգու:

Մի՛ վախեցիր, Յահվեն-քեզ-հետ-է:
Սուրբ Միքայել՝
Յահվե Աստծո հրեշտակապետ:

Մայիսի 29, 1995

(Սուրբ Երկիր - Գալիլիա)

(Ուշ երեկոյան Գալիլիայում):

Ես ասացի.
«Ես կգնամ իմ Տիրոջ երկիրը
և կփնտրեմ Նրա Դեմքը»:
Իմ սիրտն ասաց Քո մասին.
«Փնտրի՛ր Նրա Դեմքը և հրճվիր
Նրա ժպիտի քաղցրությունից,
պատասխանի՛ր Նրա Կանչին,
պատասխանի՛ր Իր Երկիրը
գնալու Նրա Կանչին»:

Տե՛ր իմ, Թագավոր,
իմ սրտի Ուրախություն:
Իմ հոգու Աղբյուր,
իմ սիրտը խայտում է
Քո Ներկայությամբ,
և իմ հոգին հրճվում
Քո առատ Սիրուց:
Իմ միակ Սեր, արի՛ և ցույց տուր
Քո հրաշագեղ բարությունը
այս տառապած ազգին:
Քո Ներկայությունը

նրանց Հույս կբերի:
Հայտնի է, որ Քո Աչքերը
ուղղված են այն ամենին,
ինչ արդար է,
իսկ Քո դատաստանը ճշմարիտ է:

Իմ սրտի Ուրախություն,
Դու այստե՞ղ ես,
թե՞ թաքնվում ես ինձանից:
Դու լսո՞ւմ ես
իմ այս թույլ ու տկար խնդրանքը:

Իմ Վասո՛ւլա, գիտե՞ս, որ Իմ Աչքերը երբեք չեն դադարել քեզ հետևելուց քո ծնված պահից ի վեր: Ես[1], (այո՛), <u>ամբողջ</u> ժամանակ քեզ հետ եմ <u>և</u> (այո՛) ներկա եմ[2]... Արի՛, մի փոքր աղոթք անենք միայն[3]: Ասա՛.

Օրհնյա՛լ լինի Քո Անունը,
Դո՛ւ, որ լսում ես իմ աղոթքը,
օրհնյա՛լ ես Դո՛ւ, Տե՛ր իմ,
որ հանեցիր իմ հոգին վիրապից,
Դու նայեցիր ինձ վրա
բարձունքներից
և խոնարհեցրիր իմ հոգին
(իմ մոր արգանդից՝
ծոմապահությամբ)[4]:
Օրհնյա՛լ լինի
Քո Ողորմածությունը,
որ ինձ դեպի Սիրտդ է ձգում՝
փրկություն և
ազատություն շնորհելու:
Աստվա՛ծ, Դու իմ փրկությունն ես,
իմ հարստությունը,
իմ տեսողությունը և իմ կյանքը:
Դո՛ւ, որ ամեն օր
հիացնում ես իմ հոգին
և Քո ներկայությամբ
խնդություն պարգևում իմ սրտին,
թույլ տուր ինձ օգտվել
Քո Ներկայությունից՝

[1] Նա խնդրեց ինձ ընդգծել բառը երեք անգամ՝ այն չեշտելու համար: Հիսուսն իսկապես չեշտում էր Իր բառերը:
[2] Կարճատև լռություն:
[3] Այնպես, ինչպես Հիսուսն ասաց. «Արի՛, մի փոքր աղոթք անենք միայն», դա Նրան բնորոշ արտահայտության ձևերից մեկն էր, երբ Նա մի կարճ լռությունից հետո փոխում է իր տոնը և վերաբերմունքը, մնացածն արագորեն ասելով, կարծես մենք պետք է շտապենք և գնայինք, հայրական կեցվածք ընդունելով, վարվելով ինձ հետ որպես մի թույլ երեխայի:
[4] Այս նախադասությունը միայն ինձ համար է:

խաղաղություն, արդարություն,
սեր և ներողամտության հոգի:
Թող իմ սրտի յուրաքանչյուր թելը
սիրով հռչակի Քո Փառքը:
Լսի՛ր իմ աղոթքը հիմա, որ
անցնող մի հյուր եմ Քո երկրում,
և պատասխան տուր ինձ: Ամեն:

...Այսքանը: Թող Իմ մյուս հյուրերը[1], որոնց ես օրհնում եմ, նույնպես կարդան այս աղոթքը: Ես միայն սե՛ր-սե՛ր-սե՛ր եմ խնդրում:
Հիսուս է Իմ Անունը ic:

(Ինձ կանչեցին վկայություն տալու համար Ռամալլայում, Բիր Զեիթում, Բեթղեհեմում և Ջիֆնայում):

Մայիսի 30, 1995

(Հետ դեպի Բեթղեհեմ):

Վասու՛լա, Ես քեզ հետ եմ, և Ես միայն սեր եմ խնդրում:
Ասա՛ նրանց, և թող նրանք բոլորը հասկանան, որ սերը դեպի երկինք տանող ճանապարհն է, սերը նվաճում է սրտեր և ընդարձակում է Իմ Թագավորությունը: Սերը այս Ուրացությանը վերջ տալու բանալին է: Սերը տրվում է ձեզ ձրի, խնդրե՛ք սիրո պարգևը, և Ես կտամ այն ձեզ: Իմ Սիրո Թեման[2] տրվում է բոլոր ազգերին, և նրանք, ովքեր ուզում են լսել այն, կլսեն:
Աղոթե՛ք, աղոթե՛ք, աղոթե՛ք, բայց դա արեք սիրով: Բացե՛ք ձեր սրտերը, և Ես կբուժեմ դրանք: Զարին սիրով հատուցեք, բարիք փնտրեք, և Բարությունը վերևից կպատասխանի ձեզ և ձեզ կդարձնի Մեր նմանությամբ: Ես ամեն ինչ գիտեմ, և Ես դիտում եմ ամեն ինչ, և այն, ինչ Ես տեսնում եմ այս սերնդի մեջ, համապատասխան չէ Մեր նմանությանը: Վիրավորանքը, բռնությունը, ագահությունը, սնափառությունը, չարությունը, որը գերազանցում է դևերի չարությանը, ըմբոստությունն Իմ դեմ և այն ամենի դեմ, ինչ սուրբ է, և բոլոր չարիքները, որ կարող են տանել ձեր հոգին դեպի կործանում, ահա սրանք են այն բաները, ինչ գործադրում է այս սերնդի մեծամասնությունը: Ամեն տեսակի անօրենություն մեղք է... Բարձրացրե՛ք ձեր աչքերը և անձկագին Ինձ փնտրեք, և զոհ մի՛ դարձեք աշխարհիկ գեղեցկությանը, քանի որ այդ տեսակի գեղեցկության պաշտամունքը այսքան շատ չարիքի պատճառն է:

[1] Ինձ ուղեկցում էին 20 ուխտավորներ՝ մեծ մասը հույն ուղղափառներ, որոնք Հռոդոս կղզուց էին, իսկ մի քանիսը՝ Աթենքից: Մի քանիսը Ֆրանսիայից էին, Շվեցարիայից, Հոլանդիայից և Պուերտո Ռիկոյից: Մնացածը, բացառությամբ Հայր Օ. Քերոլի, Հռոմի կաթոլիկներ էին՝ Բեթղեհեմից: (Այս պատգամը կարդացվեց նավակի վրա, Գալիլիայի ծովի վրա):
[2] այս պատգամը

Որպեսզի փառքով պսակեք հիմա ձեր չարությունը, դուք նկարագարդեցիք ձեր ծրագիրը գազանի նմանությամբ և նրա հետ միասին[1], սերո՛ւնդ, դուք կգործեք ձեր ոճիրը,

ոչնչացնելու Իմ
Հավիտենական Զոհաբերությունը
և նրա տեղում կանգնեցնելու
ավերածության պղծությունը:

Մի՞թե չեք լսել. «Երբ արդար մարդը հրաժարվում է իր արդարությունից, որ մեղք գործի, և մեռնում է դրա պատճառով, նա մահանում է այն չարիքի պատճառով, որ նա ինքն է գործել: Բայց երբ մեղավորը հրաժարվում է մեղքից, որ դառնա օրենքին հնազանդ և ազնիվ, նա արժանի է ապրելու: Նա ընտրել է հրաժարվել իր բոլոր նախկին մեղքերից և նա անշուշտ կապրի, նա չի մեռնի»[2]:

Իմ Աչքերը հեղում են Արյան արցունքներ, և Իմ Կոպերը հալվում են լաց լինելուց: Օ՜, ինչ տառապանք ես դու պատճառում Ինձ, սերո՛ւնդ, որովհետև Մահը մագլցել է քո տնից ներս, և դու չես գիտակցում դա: Որքա՜ն քչերն են ապաշխարում... Սակայն ձեզանից շատերը, սերո՛ւնդ, չեն ասում այն, ինչ պետք է ասեն: Դուք չեք ապաշխարում ձեր չարագործությունից՝ ասելով. «Ի՞նչ եմ արել Ես իմ կյանքի, իմ հոգու և իմ սրտի հետ»: Եթե դուք ամենաչնչին մի նշան ցույց տաք, որ զղջում եք ձեր մեղքերի համար, Ես կներեմ և կմոռանամ: Երանելի են նրանք, ովքեր մտորում են Իմ խոսքերի և Իմ կոչի վրա և մտածում խելամտորեն, նրանք պիտի փրկվեն:

Ես օրհնում եմ ձեզ, Իմ ողջ Սրտով Ես օրհնում եմ ձեզ: ic

Հունիսի 15, 1995

Քո խոսքը, Թագավո՛ր իմ,
բուժիչ բալասան է: Երբ իմ կյանքն
ավելի ցածր էր, քան կավը,
Քո խոսքը ասվեց իմ ականջին,
և անտեսանելին
արագորեն դարձավ տեսանելի,
և ինչպես ինձ անծանոթ մի աշխարհ,
ինչպես կույրի համար
անիմանալի մի լույս՝
հանկարծ ամեն ինչ սկսեց փայլել
պայծառ լույսով:
Ինչպես պայծառորեն
կայծկլտացող աստղեր, որ
լուսավորում են երկինքը գիշերով,
Քո խոսքը տվեց ինձ տեսողություն՝

[1] գազանի հետ
[2] Եզեկ. 18:26-28

Քո Խորհրդի մեջ մտնելու համար:
Ես օրհնում եմ Քեզ, Տե՛ր իմ,
քանի որ Քո Սերը հիմա
տեսանելի է իմ աչքերին՝
մղելով իմ հոգուն, հավատարմորեն
ապրելու քո հանդեպ,
հավիտյանս հավիտենից:

Այո՛, մտիր Իմ Սրտի խորհրդի մեջ և ստացիր Իմ Խաղաղությունը:

Ծաղի՛կս, երբեք չփոխարինես քո գրելու ժամանակը ուրիշ բաներով: Ամբողջ օրը քոնն է, և Ես գոհ կլինեմ, եթե դու Ինձ մոտ գաս խոկալու: Հիշի՛ր. Սերը միշտ համբերատար է, ուստի դու նույնպես համբերատար եղիր: Ինձանից առաջ մի՛ վազիր, ինչպես արեցիր այս վերջին օրերին... Սե՛րը, ճշմարիտ սերը, կդիմանա փորձություններին, արգելքներին և շատ բաների: Թող Ես առաջինը լինեմ քեզ համար և բոլորից վեր: Սիրով ավետարանիր Սիրո համար և փառաբանիր Ինձ: Վրդովվի՛ր, զավակս, այն ամենից, ինչ տանում է դեպի չարը և ընկղմվիր այն ամենի մեջ, որ բարի և սուրբ է, և որը կտանի քեզ դեպի հավիտենական կյանք: Ես Սուրբ եմ և Բարի[1]:

~ Ես այրվում եմ մի ցանկությամբ...

Ի՞նչ ցանկություն, Տե՛ր իմ:

Տեսնելու Իմ Եկեղեցին միացած և մեկ... Աղոթի՛ր միասնության համար, և մի՛ լսիր նրանց, ովքեր չեն ցանկանում միասնություն: Պառակտիչը պահում է նրանց բաժանված և հարձակողական ոգով: Որևէ մեկը, որ միասնության համար չի աշխատում անկեղծորեն և ողջ սրտով, լրջորեն վշտացնում է Իմ Սուրբ Հոգուն: Ես խնդրում եմ նրանց, ովքեր հավաքվում են առաջնորդելու Իմ Եկեղեցին դեպի միասնություն, իրենց մտքում դրոշմեն այս բառերը.

<u>Խոնարհություն և սեր:</u>

Խոնարհությունն ու սերը միասնության բանալիներն են: Ոչ պերճախոսությունը և ոչ էլ երկարատև զրույցները չեն առաջնորդի նրանց դեպի միասնություն: Եվ ոչ էլ մեկը մյուսի հանդեպ նրանց գովաբանությունների փոխանակումը, որ պիտի առաջնորդի Իմ Եկեղեցին դառնալու մեկ միասնական եկեղեցի: Այս ամենը հոգնեցնում է Ինձ... Ամայացումն ու ավերումը ներթափանցել են Իմ Սրբարանը, ուրեմն ի՞նչ գովաբանություններ կարող են նրանք փոխանակել մեկը մյուսի հետ: Ո՞ւր է նրանց պատիվը:

<u>Խոնարհվե՛ք</u>, որպեսզի տեսնեք Իմ Կամքը: <u>Ցածրացրե՛ք</u> ձեր ձայնը, որպեսզի լսեք Փրկությանը, որը խոսում է ձեզ հետ փառքի բարձունքներից: Ձեր դարձի <u>մեջ է</u>, որ ձեր սիրտը պիտի լսի Ինձ և առաջնորդի Իմ Եկեղեցին՝ դարձնելով մեկ, միավորելով Իմ Մարմինը:

[1] Հանկարծ Տերը կանգ առավ, և ձայնի մեկ այլ հնչերանգով, ինչպես մեկը, որն ուզում է իր գաղտնիքն ասել, ասաց այն, ինչ հետևում է:

Ճշմարտության պայծառության մեջ է, որ դուք նորից պիտի բուրեք, և այնպես անեք, որ ամեն մեկը ճանաչի իրեն որպես մեկ ու միևնույն մարմնի մի մասը: Կիսվելով իրար հետ, դուք յուրաքանչյուրին կառաջնորդեք իրար մոտ: Դրա համար դուք պետք է փոխվեք ձեր սրտի խորքում և ծաղկեք՝ դարձի գալով:

Եթե անեք այս բաները և լվանաք ու մաքրեք ձեր սիրտը ձեր մեղքից, Ես, Իմ Հերթին, կբազմապատկեմ Իմ բալասանները և ամբողջապես կբուժեմ ձեզ: Ես պիտի օգնեմ ձեր հոգևոր աճին, որն իմ արարչության մնացորդին պիտի բերի բնակվելու ձեր երդիկի տակ:

Եթե դուք, դո՛ւք, որ դադարել եք գոյություն ունենալուց, թույլ տաք որ Իմ Սուրբ Հոգին՝ Կյանք Տվողը, գրավի ձեզ, Ես ձեր սիրտը կհասցնեմ սիրո մի այնպիսի հոգևոր հեղաշրջման, որպիսին ձեր դարաշրջանը երբևէ չի տեսել...

Ա՜հ... Աղջի՛կս, աղոթի՛ր, որ Արևելքի և Արևմուտքի տները միանան իրար, ինչպես աղոթքի մեջ միացած երկու ձեռքեր, մի զույգ ձեռքեր՝ միանման ու գեղեցիկ, որ միացած իրար՝ ուղղված են դեպի երկինք աղոթքի ժամանակ: Թող այդ երկու Ձեռքերը, որոնք պատկանում են միևնույն մարմնին, աշխատեն միասին և կիսեն իրենց կարողությունն ու միջոցները միմյանց հետ... Թող այդ երկու Ձեռքերը վեր բարձրացնեն Ինձ միասին: Ա՜հ... ե՞րբ են Ինձ վեր բարձրացնելու Իմ Մարմնի այդ երկու Ձեռքերը Խորանի վրա՝ բռնելով Ինձ միասին[1]:

Օ՜, եկե՛ք, Ես չեմ ցանկանում երկարատև խոսակցություններ: Նա՛, ով ցանկանում է լինել առաջինը և ամենալավը ձեր մեջ, պետք է լինի բոլորի ծառան: Ես այստեղ եմ: Նայի՛ր ինքդ քեզ: Իմ Սրտում անհամար դանձեր կան: Ուրեմն մի՛ ասա. «Ո՞ւր, ո՞ւր կարող եմ գտնել իմ պատասխանները»: Հանդերձավորիր քեզ Իմ Սրտի այս դանձով, և դու կմիավորես նրանց, ովքեր ճանապարհից շեղվել են, և Ես կթագավորեմ նրանց բոլորի վրա, և դուք կնվիրաբերեք Իմ Սուրբ Սրտի Իմ դանձը ողջ երկրին:

- Իսկ դո՛ւ, աղջիկս, տալով Ինձ քո ժամանակը, զոհացնում ես Ինձ, և դրանով պատվում ես Ինձ: Սիրելով Ինձ, դու ուրախացնում ես Ինձ և փառավորում ես Ինձ: Փափագելով Ինձ, դու հրապուրում ես Ինձ: Այն չափով, որ դու տալիս ես Ինձ քո սրտից, նույն չափով քեզ կվերադարձվի Իմ Գահից: Իմ շնորհը քեզ վրա է, և Իմ Ձեռքը քո ձեռքի վրա... Հանգստացի՛ր Իմ մեջ: Ես սիրում եմ քեզ, և Հայրը սիրում է քեզ՝ Ինձ սիրելու համար:

Ես սիրում եմ Քեզ, Սե՛ր...

Ես շատ շատերին պիտի բուժեմ այս պատգամների միջոցով: Արա՛ քո բաժինը, Իմ Վասուլա, և Ես կավարտեմ քո աշխատանքն Իմ Աստվածության մեջ: Արի՛, Ես քեզ հետ պիտի լինեմ, մինչ դու կկատարես քո մյուս փոքր պարտականությունները[2]:

Ես Հիսուս, սիրում եմ քեզ, ընդունիր Իմ օրհնությունները:

---

[1] Քրիստոսը նկատի ունի Պատարագի ժամանակ, Իր Մարմնի Նվիրաբերման ընթացքում:
[2] Տնային աշխատանքը...

Հունիսի 16, 1995

Հոգուս մեղքի մեջ
Դու այցելեցիր ինձ սիրով:
Դու չեկար մահակով,
որ նախատես ինձ,
ո՛չ էլ Քո Վեհությունը
դժկամությամբ եկավ ինձ մոտ:
Դրա փոխարեն
Դու այցելեցիր իմ հոգուն
օրհնանքներով,
որ բուժես նրա խավարը:

Սիրահա՛ր Քո արարչության,
օգնի՛ր մեզ բոլորիս
և սովորեցրու մեզ
ինչ որ հաճելի է Քեզ համար,
որպեսզի այն, ինչ որ անենք
ընդունելի լինի Քո Աչքերում:

Ինչպես գիտես, Տե՛ր,
մեղքը դարձել է
չարագործների պատգամախոսը,
մենք մեղանչում ենք այնքան,
որքան շնչում ենք:
Ինչո՞ւ է այս սաստիկ
ժխորն ու իրարանցումը
Քո արարածների միջև:
Ինչո՞ւ է այս անմաքրությունը:
Ինչո՞ւ է այս ըմբոստությունը:

Ես մեծարանքով խոնարհվում եմ
Քո առջև՝ հարցնելու Քեզ.
Դեռ որքա՞ն պիտի
Քո որդիներն ու դուստրերը
չփոթության մատնվեն
Չարի կողմից:
Քո փրկարար արդարությամբ,
Տե՛ր իմ, օգնի՛ր մեզ, և ասա՛ մեզ,
թե ամենից շատ ինչ է անհրաժեշտ,
որ փոխվենք:

Խաղաղությո՛ւն քեզ: Ես ուրախանում եմ, երբ լսում եմ քեզ: Ես միայն սեր, սեր, սեր եմ ուզում: Սերը ամեն ինչ կարող է անել: Ուրեմն սիրիր Ինձ և շարունակիր աճել Իմ Սիրո մեջ: Հետո ոչ մի մութ տեղ չի մնա քո

մեջ: Սերը կշնչի ու կմաքրի քո բծերն ու արատները: Սերը բուժում է, այն ուղղում է: Սերը բարի պտուղ է տալիս, պտուղ, որը հարատևում է... Մի՞թե չես լսել, զավա՛կս, որ նա՛, ով սիրում է, Իմ Յուրայիններից մեկն է և ճանաչում է Ինձ: Մի՞թե չես լսել, որ Դատաստանի Օրը դուք պիտի դատվեք համաձայն ձեր սիրո չափի: Դու հարցրեցիր Ինձ և ասացիր. «Ինչո՞ւ է այս սաստիկ ժխորն ու իրարանցումը քո արարածների միջև: Ինչո՞ւ է այս անմաքրությունը: Ինչո՞ւ է այս ըմբոստությունը»: Սիրելի՛ զավակս, սա Իմ դալստյան նախերգանքն է: Դո՛ւք, որ սիրում եք Ինձ, պիտի տառապեք մի փոքր ժամանակ ևս: Դո՛ւք, որ ցած եք խոնարհվում Իմ զորության առջև, փոխհատուցում պիտի ստանաք: Դո՛ւք, որ չեք մոռացել ձեր Արարչին, պիտի տեսնեք Ինձ Իմ Փառքի մեջ... Իմ Վերադարձն այնքան հաստատ է, որքան արշալույսը:

Դու հարցնում ես, աղջի՛կս. «Ասա՛ մեզ, թե ամենից շատ ինչ է անհրաժեշտ, որ փոխվենք»: Ես կարիք ունեմ հավատարիմ սիրո, քանի որ հավատարիմ սերն է, որ գոհացնում է Ինձ:

Քո հարազատների Միխթարիչ,
Ընկեր մարդկության,
Լույս Երիցս Սուրբ,
Հոր Սիրելին,
գիշերվա Լուսատու,
Խունկի և Զմուռսի Լեռ,
Հոր Ուրախություն,
Հիացմունքը Քո Մոր,
ձգիր մեզ բոլորիս Քո Սիրո մեջ,
հափշտակի՛ր մեր սիրտը
Քո մի հայացքով,
կանչի՛ր մեզ Քո Թագավորությունը,
քանի որ Դու ուրախանում ես՝
հավատարիմ սեր ցույց տալով,
դարձի բեր մեզ Քո Սիրո Բոցի մեջ:
Թող գիշերվա այս սարսափը,
որ մեր առջևում է, վերջանա,
և մենք բոլորս պիտի խորհենք
Քո փրկարար արդարության մասին:

Ես ցանկանում էի սա նորից լսել քեզանից: Ծաղի՛կս, Ես պիտի շարունակեմ օգտագործել քեզ: Իմ շատ սիրելի, հիմա արի և հաճույքով հանգստացիր Իմ Սրտում: Ես՝ Հիսուս, որ բարձրացրեցի քեզ, սիրում եմ քեզ և օրհնում եմ քեզ:

Հունիսի 19, 1995

Խաղաղությո՛ւն քեզ... Սիրով կապիր Իմ Վերքերը Իմ Սուրբ Հոգով: Միշտ փնտրի՛ր Իմ Սուրբ Հոգուն: Արի՛ և սովորիր.

Ձեր Հոգին որևէ չարակամությունից և գայթակղություններից պաշտպանելու համար, խնդրեք Իմ Սուրբ Հոգուն՝ Կյանք Տվողին, որ ուղղություն տա ձեզ սրբության մեջ և օգնի ձեզ աճելու շնորհի և իմաստության մեջ, որպեսզի դուք նույնպես չտարվեք այն սխալներով, որոնք ավելի ու ավելի են տարածվում Իմ Եկեղեցում:

Խնդրեք Գիտության Իմ Սուրբ Հոգուն, որ չընկնեք այն աղավաղումների մեջ, որոնք արվում են Իմ Խոսքի վերաբերյալ, այլ ճանաչեք Մեզ[1] որպես Երիցս Սուրբ, և, ճանաչելով Մեզ, ճանաչեք ինքներդ ձեզ Մեր Արտացոլման մեջ, Մեր Պատկերի մեջ: Ես ասում եմ. «Դուք նույնպես», որովհետև նրանցից շատերը, որոնց Ես հարուցել եմ, կա՛մ թուլացել են, կա՛մ էլ ընկել... Նրանք լքեցին Իմ սուրբ օրենքները, որոնք Ես վստահել էի իրենց: Նրանք հուսախաբ արին Ինձ, որովհետև տեղի տվեցին իրենց մղումներին... Նրանք Ինձ առաջինը չդասեցին[2], նրանք իրենց շահերը առաջինը դասեցին, այլ ոչ թե՝ Իմը:

Խնդրեք Իմաստության Իմ Սուրբ Հոգուն, որ դուք փնտրեք Իմ Երկնային Խաղողի այգին, որպեսզի ձեր Հոգին տենչա նրա պտուղներին: Եկե՛ք և խնդրեք, որ Իմաստության Իմ Սուրբ Հոգին այցելի ձեզ ձեր խեղճության մեջ: Ձեր խեղճությունից Նա չի փախչի: Նա ընկեր կդառնա ձեզ, կփայփայի ու կհրապուրի ձեզ, և Իր մաքուր ճառագայթման մեջ այնպես կանի, որ ձեր Հոգին միայն երկնային գործերի շուրջ կպտտվի՝ խնդրելով Մեզանից[3] այն, ինչ սուրբ է և անանց:

Իմաստության Իմ Սուրբ Հոգին ցույց կտա ձեզ Մեր[4] Թագավորությունը, բարեպաշտության մի Թագավորություն՝ պահված նրանց համար, ովքեր արդար են և սուրբ: Ուրեմն մի՛ եղեք նրանց պես, ովքեր ամեն օր կոտրում են Իմ Սիրտը, և անդադար վշտացնում Իմ Հոգին, քանի որ մշտապես ըմբոստ են, մի Կայեն՝ առանց խղճի: Ուղղե՛ք ձեր սրտերը, և Իմաստության Իմ Հոգին պիտի լինի ձեր առաջնորդը և ղեկավարը, որ առաջնորդի ձեզ Մեր Թագավորության մեջ, որը նախապատրաստված է եղել ձեզ համար աշխարհի հիմնադրումից ի վեր:

Խնդրեք և Հասկացողության Իմ Սուրբ Հոգին կիջնի ձեր ոչնչության մեջ, որպես մի պայծառ արև՝ բուժիչ ճառագայթներով ձեր աչքերի մեջ, և ամեն ինչ, որ մութ էր թվում և ձեզ անհասանելի՝ պիտի քողազերծվի: Եվ ձեր ոչնչության մեջ, Իմ Հասկացողության Հոգին պիտի առաջնորդի ձեզ Աստվածային Ճշմարտության խորհրդի մեջ:

Թույլ մի՛ տվեք, որ Իմ Հոգին ձեզ դտնի չարին հակված կամ չկամեցող: Թող որ Նա լուսավորի ձեր միտքը, և, ի հակադրություն ձեր ոչնչության, Հասկացողության Իմ Սուրբ Հոգին պիտի լինի այն Ամենը, ինչի պակաս որ դուք ունեք: Որպես ուղեկից և Ընկեր, Նա ոչ մի գաղտնիք չի թաքցնի ձեզանից, այլ ձեզ կտա ուսուցումներ, որոնք ոչ մի

[1] Ամենասուրբ Երրորդությանը
[2] Ես հակացա նաև. որ նրանք սերը չդասեցին որպես առաջինը:
[3] Սուրբ Երրորդությանը
[4] Սուրբ Երրորդությանը

միտք չի հասկացել, մարդկության մտքի սահմաններից այն կողմ անցնող բաներ, որոնք գնում են անթափանցելիի և անանցի ոլորտի մեջ՝ հասնելով Աստծո խորքերը:

Ուստի մի՛ եղեք ձեր ժամանակների գիտնականների և փիլիսոփաների պես, ովքեր արդարացնում են իրենց փիլիսոփայությունը իրենց սեփական բանապաշտական ոգու օրինակով: Միսն ու արյունը չեն կարող բացահայտել այն, ինչ գալիս է Հոգուց: Ես կարող եմ ձեզ առաջարկել Իմ Թագավորությունը, և Իմ Հոգին կարող է առաջնորդել ձեր քայլերը դեպի Իմ Թագավորությունը: Ուրեմն եկե՛ք և ժառանգե՛ք այն, ինչը հարատև է՝ թույլ տալով Հասկացողության Իմ Հոգուն լուսավորել ձեր միտքը և ձեր մարմինը Իր Աստվածային Լույսով՝ թույլ տալով Նրան աշխուժացնել ձեր հոգին այն մտերմությամբ, որը Մենք [1] ենք ցանկանում, որ դուք ունենաք Մեր մեջ:

Իմ ուստրեր և դուստրեր, եկե՛ք Մեզ մոտ ձեր լռության մեջ, որ ստանաք այն պարգևները, որոնք Մենք կարող ենք առաջարկել ձեզ: Երիցս սուրբ է Մեր Անունը: Մի՛ հետևեք մարդու մտքի վրա հիմնված փիլիսոփայությանը, քանի որ իժը բուն կդնի ձեր ներսում: Դրա փոխարեն եկեք Մեզ մոտ և ստացեք Հոգու Պարգևները, որոնք կարող են այլակերպել ձեր հոգին՝ դարձնելով Մեր Երկինքը: Խնդրե՛ք Մեզ սրտանց և պիտի ստանաք: Ճանաչե՛ք Մեզ Մեր Սուրբ Երրորդության մեջ, և դուք պիտի կոչվեք «Մեր զավակը, Մեր Յուրայինը», քանի որ Մենք ձեր հոգին պիտի դարձնենք Մեր Սրբության մի կենդանի դիմանկարը, Անտեսանելիի մի տեսանելի պատկերը, գրավչություն՝ հանդեպ բոլոր սուրբ գործերի, որոնք հայտարարված են եղել ձեզ՝ Ժամանակների սկզբից ի վեր ձեր փրկության համար:

Լսե՛ք և հասկացեք. ուզում եք հարազա՞տ դառնալ <u>Խորհրդատվության Սուրբ Հոգուն</u> և վստահ լինել, որ կժառանգեք երկինքը: <u>Ճանաչե՛ք Մեզ Մեր Սուրբ Երրորդության մեջ</u>, և դուք վեր պիտի բարձրացվեք Մեր հրեշտակների կողմից, որ հայտնաբերեք Նրան-ով-է: Խնդրե՛ք խորհրդատվություն, և ձեզ խորհուրդ կտրվի, որ բարիք գործեք ձեր կյանքի բոլոր օրերին:

Թագավորությունը պատրաստված է ձեզ համար, նրանց համար, ովքեր բարիք են անում: Սովորեք չարին բարությամբ հատուցել: Դուք գիտեք Պատվիրանները և գիտեք նաև, որ երկու ամենամեծ պատվիրաններից են կախված ողջ Օրենքն ու մարգարեները: Պետք չէ, որ հարուստ լինեք Իմ Թագավորության մեջ մուտք գործելու համար, ո՛չ էլ՝ գիտուն: Իմ Թագավորությունը տրվում է հոգով աղքատներին և նրանց, ովքեր կանչում են. «Աստվա՛ծ, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս»: Իմ Թագավորությունը տրվում է սոսկ մանուկներին և խոնարհներին, ովքեր գիտեն, թե ինչպես կանչեն. «Ա՛բբա»:

Փնտրե՛ք Ինձ՝ ձեր Տիրոջը, Ես Սեր եմ: Փնտրե՛ք Սեր, դո՛ւք բոլորդ, երկրի խոնարհները, որ հնազանդվում եք Իմ Պատվիրաններին: Խնդրեք Խորհրդատվության Իմ Հոգուն, որ ձեզ մղի բաղձալու արդարություն, խոնարհություն, հավատարմություն և բարություն, որպեսզի ձեր քայլերը ձեզ չառաջնորդեն սխալ գործելու:

[1] Հոգնակի ձևը ներկայացնում է Սուրբ Երրորդությունը:

Իմ Խորհրդատվության Հոգին անսխալ կերպով ձեզ ճանաչելի կդարձնի Իր Օրենքը և խորհուրդ կտա ձեզ՝ ասելով. «Մի՛ հավասարեցրեք ոչ մեկին Աստծուն: Ծառայե՛ք Արդարության գործին: Բարձրացրե՛ք ճնշվածներին: Ո՛չ մեկին վնաս մի՛ պատճառեք, այլ սիրեք և օգնեք մեկդ մյուսին: Մի՛ վշտացրեք կամ անհանգստացրեք այրի կնոջը կամ կոպտեք որբին: Բարիք գործեք և մի՛ եղեք այն ստոր և չար մարդկանց պես, ովքեր կործանում են իրենց հոգիները՝ կործանելով անօգնականներին: Երբե՛ք մի ըմբոստացեք ձեր Աստծո դեմ, այլ խոնարհեք ձեր գլուխը և ծալեք ձեր ծունկը՝ Նրա Սուրբ Ներկայությամբ: Երբե՛ք մի փոխարինեք Նրա Մշտնջենական Զոհաբերությունը, նույնիսկ աշխարհի բոլոր թագավորությունների ու նրանց չքեղության հետ»:

Զգո՛ն եղեք այս խորհուրդների հանդեպ, և բուրումնավետ կդառնաք, և ձեր ուրախությունը նման կլինի մի գետի, որը բաժանվում է բազմաթիվ վտակների՝ հայտարարելով և խորհուրդ տալով նաև ուրիշներին, որ փնտրեն Երկնքի Թագավորությունը և Մեր Սուրբ Երրորդության փառքը, որը կարող է զարդարել ձեր հոգին Մեր Շքեղությամբ հավիտյանս հավիտենից:

– Մի՞թե ես զորություն չունեմ փրկելու: Մեկ խոսքով ես օրհնում եմ և փրկում: Ուրեմն անօգնական մի՛ եղեք: Ես կարող եմ ձեզ տալ Զորության Իմ Հոգին: Այն ոչ միայն Իմ հրեշտակներին է տրվում, այլ նաև ձեզ: Բա՛ց արեք ձեր սիրտը և լսեք: Խնդրե՛ք և պիտի տրվի ձեզ: Ես կարող եմ այնպես անել, որ դուք քարոզեք Իմ խոսքը և երիցս օրհնյալ Իմ Ավանդությունը, ձեր կարողության գերագույն չափով՝ Զորության Իմ Հոգու զորությամբ: Երանելի է նա, ով կստանա Իմ Պարգևը[1], և այս Պարգևի միջոցով զորություն կստանա ապրելու հնազանդ՝ հավատի մեջ, ճշմարտացիության, ուրախության և խաղաղության մեջ: Ուրեմն անօգնական և վախով մի՛ եղեք: Ես ասում եմ ձեզ, մի՛ վախեցեք մարդկանց թունավոր ակնարկներից, ո՛չ էլ վախեցեք նրանց վիրավորանքներից, քանի որ ցեցը պիտի ուտի նրանց ինչպես հագուստ, որովհետև սկզբից ի վեր նրանք հաղորդակից են եղել չարին: Ես պիտի լինեմ ձեր Զորությունը, և դուք այլևս միայնակ չեք քայլի: Ես և դուք, դուք և Ես միասին պիտի կրենք ձեզ տրված խաչերը, որոնք տրվել են ձեզ սրբագործելու համար:

Իմ Զորության Հոգին կարող է պարուրել ձեզ Իմ Ուժով, Ճշմարտության մասին եռանդով և արիությամբ վկայություն տալու՝ Ալֆայի և Օմեգայի համար: Զորության Իմ Սուրբ Հոգին կարող է օգնել ձեզ՝ հաղթահարելու ձեր ճանապարհին հանդիպող բոլոր խոչընդոտները, որոնք արգելում են ձեզ Ինձ հասնել: Իմ Հոգու զորությամբ դուք պիտի դառնաք ռազմիկի նման՝ լցված արիությամբ և ուժով: Ամրապնդված Նրա զորությամբ, դուք կամրապնդեք Իմ Սրբարանը թշնամու հանդեպ և մեղքի հանդեպ: Արևի պես դուք պիտի փայլեք Մեր Ներկայությամբ՝ երիցս Սուրբ: Կրակի պես ձեր բառերը պիտի բոցավառվեն՝ ինչպես ջահ: Սրի պես, որը կտրում է և խոցում, ձեր մարգարեությունները պիտի հարվածեն, քարշ տալով աշխարհի թագավորությունները դեպի ավերում:

[1] Զորության Սուրբ Հոգին:

Իմ Հոգու զորությամբ դուք կհասնեք անհասանելիին և կստանաք այն, ինչ հնարավոր չէ ձեռք բերել: Ձեր ամեն մի հաջողությունը ցույց կտա Մեր հոյակապությունը Մեր Երրորդության Փառքի մեջ: Ուրեմն մի՛ ասեք. «Որտեղի՞ց, որտեղի՞ց կստանանք բավարար զորություն և տոկունություն Աստծուն փառաբանելու համար»: Իմ հրաշալիքները գտնվում են Հոգու մեջ, Անտեսանելի, սակայն տեսանելի Իր զորեղ գործերի միջոցով, Անհասանելի դիպչելու համար, սակայն ամենուրեք ձեր շուրջը և ձեր ներսում:

Ո՞վ կարող է փորձել հասկանալ, թե ինչպես է շարժվում Իմ Հոգին: Խնդրե՛ք Տոկունության Իմ Սուրբ Հոգուն, որ շնորհի ձեզ Իր ճառագող Զորությունը Իմ Շահերի համար, և Ես, Ե՛ս անմնացորդ ձեզ պիտի փոխանցեմ բավարար զորություն, որ միանաք ձեր ժամանակներում մղվող ճակատամարտին, Միքայել հրեշտակապետի հետ միասին, և պատերազմեք չարի ու հայհոյության դեմ, Իմ Խոսքի աղավաղման և ըմբոստության դեմ, և այն ամենի դեմ, ինչ որ սուրբ է:

Բարի եղեք և խնդրեք Ինձ շնորհել ձեզ Զորության Հոգին, որ կարողանաք երկարել ձեր ձեռքը այն դավաթին, որը Ես պիտի առաջարկեմ ձեզ: Սրանք այն բաներն են, որ դուք պետք է խնդրեք Իմ Սրբերի և Մեր Սուրբ Երրորդության առաջ: Այն ժամանակ, դուք նույնպես, տոկունություն կցուցաբերեք Մեծ Օրվա[1] ճակատամարտում լինելու Ճշմարտության պաշտպանը և համոզելու բոլոր մարդկանց, որ ճանաչեն Մեզ որպես Երիցս Սուրբ, բայց Մեկ՝ միացած իրենց էությամբ (բնությամբ): Եվ Մենք կհրավիրենք նրանցից յուրաքանչյուրին, որ մուտք գործեն Մեր Սուրբ Երրորդության Ճշմարիտ Գիտության խորհրդի մեջ՝ զգեստավորելով նրանց շնորհով և գեղեցկությամբ, հանդիսավոր հագուստներով, Մեր ամենաշքեղ հանդերձներով՝

- Աստվածայնությամբ, որը բխում է Մեզանից՝ առաջնորդելով նրանց դեպի Հավիտենական Կյանք:

- Լույսով՝ Երիցս Սուրբ, որը կփայլի իրենց հոգում և մարմնում, որ ապրեն Մեր մեջ հավիտյանս հավիտենից:

- Ճշմարտությամբ և Սիրով, որ ճանաչեն Ճշմարիտ Աստծուն Երիցս Սուրբ:

- Հավատով, հաղթանակ տանելով ողջ աշխարհի վրա՝ բերքը հավիտենական կյանքի:

Եկե՛ք, եկե՛ք, դո՛ւք, որ ասում եք. «Ես չեմ կարող փրկություն ստանալ, քանի որ բարեպաշտություն չեմ ստացել մտնելու Աստծո Թագավորության մեջ»: Սրտանց խնդրեք Բարեպաշտության Պարգևը, և դուք կստանաք այն: Ասացե՛ք.

«Սուրբ Հոգի՛, Կյանք Տվո՛ղ,

[1] Հայտ. 16:14

Սուրբ Հոգի՛, Երիցս Սու՛րբ,
շնորհի՛ր ինձ,
որ ես նույնպես աճեմ սիրո մեջ,
որ ճանաչեմ Աստծուն և
ստանամ Նրա Թագավորությունը:

Շնորհի՛ր ինձ
Բարեպաշտության Հոգի,
որ իմ հոգին աճի
Սրբերի սկզբունքներով,
և որ իմ մտքերը դառնան
Քո Մտքերը,
իմ գործերը՝ Քո Գործերը, որոնք
բոլորը մաքուր են և աստվածային:

Բարեպաշտության Սուրբ Հոգի,
Աստծո Ընկեր, սովորեցրո՛ւ ինձ
հասնել կատարելության
և հսկել իմ ամեն մի մասի վրա,
որն այնքան չար է,
որպեսզի ձեռք բերեմ
Հավիտենական Կյանք:

Բարեպաշտության Հոգի,
այնքան գեղեցիկ հանդերձավորված,
արի՛ ինձ մոտ և զգեստավորիր
իմ հոգին մաքրությամբ,
որպեսզի ես նույնպես
հաճելի լինեմ Աստծո Աչքերին:

Զգեստավորի՛ր հոգիս
կենդանի Հոգով, որ ծառայեմ
Սուրբ Երրորդությանը
պատվով և շնորհով:

Թող իմ մեջ մեռնեն
իմ սկզբունքները ,
թող իմ մեջ մեռնեն
իմ բուռն հակումները,
իմ գաղջությունը,
իմ թմրությունը
և իմ փառասիրությունը:
Արի՛ և կենդանացրու ինձ
Քո Մաքրության մեջ:
Կենաց Ծառի պտուղ տվող,
Հավիտենական Ուրախություն,
տո՛ւր ինձ նաև Քո Հոգին,

որ հարազատ լինեմ
Սուրբ Երրորդությանը
և ժառանգորդ[1]
Քո Թագավորությանը:
Թող իմ լեզուն ճաշակի այն,
ինչը ամենամաքուրն է
Աստծո Լույսի մեջ Երիցս Սուրբ,
և կլանի Նրան, ով ասաց.
«Ես Կյանքի Հացն եմ»:

Կյանքի Սուրբ Հոգի, Երիցս Սուրբ,
շնորհիր հոգուս
կատարելության հասնել
Բարեպաշտության Հոգու
Գիտության մեջ,
որպեսզի սովորեմ
երկյուղածությամբ դիտել
ինչ որ իսկական Մարմին է
և իսկական Կերակուր,
ինչ որ իսկական Արյուն է
և իսկական Ըմպելիք,
որպեսզի կարողանամ ապրել
Հոր, Որդու և Սուրբ Հոգու մեջ՝
Երրորդության, բայց Մեկ՝
միացած իրենց էությամբ:

Արա՛ այնպես, որ հոգիս գործի
Քո մտադրությունների համար,
որոնք սուրբ են և փրկարար,
և ամենից հաճելի Քո Աչքերին:
Մուտք գործելով իմ հոգու մեջ,
Բարեպաշտության Քո Հոգին
ինձ կդարձնի նվիրված
ու ջերմեռանդ մի ծառա:

Հոգուս Լուսա՛ստղ,
փոխանցի՛ր ինձ
բարեպաշտությունը քո Սրբերի,
որ սուրբ պահեմ Քո Օրենքները, և
ողորմածաբար ցույց տուր
Ինքդ Քեզ իմ թշվառ հոգուն՝
հիշեցնելու համար ինձ,
որ անեղծությունը ինձ մոտ կլբերի
Երրորդության Աստծուն՝
Ամենազորեղ և Ամենասուրբ,

[1] Կարող է լինել նաև ժառանգորդուհի:

ուստի ո՛չ մի անմաքրություն
չի կարողանա
մուտք գործել իմ մեջ: Ամեն»: ic

Բարեպաշտության Հոգին կառաջնորդի ձեզ, որ դառնաք՝

- բերկրանքը Հոր Բերկրանքի,

- զմուռսի բուրմունք՝ Իմ Ներկայությամբ,

- մի շուշան՝ Իմ պարտեզում,

- պարծանքի առարկա՝[1] Իմ Հրեշտակների համար,

- ուրախության մի տոնախմբություն՝ մշտապես Իմ Սրտում, և Իմ պատճենը:

Դու միայն պետք է կամենաս, և Ես կբարձրացնեմ քո խղճալի հոգին: Ես միջոցների պակաս չունեմ ցույց տալու համար Իմ Զորությունը կամ Իմ Գերիշխանությունը:

Ե՛կ և խնդրիր Ինձ սրտի պարզությամբ: Մի՛ մնա քո մեղքին պարտական, ներում խնդրիր, և Ես կներեմ քեզ: Խնդրի՛ր, որ ստանաս Երկյուղածության Հոգին, որ կրթի ու սովորեցնի քեզ Սուրբ պահել Իմ Անունը:

Թող Իմ Հոգին հանդերձավորի քեզ պատվով և հարգանքով, որը մի պարգև է և հազվագյուտ մի գանձ, անձնվեր հավատարմության մի նշան: Սովորի՛ր գլուխդ խոնարհել, որպեսզի Ես երևամ, սովորի՛ր ցածրացնել ձայնդ, որ լսես Իմ Ձայնը և իմանաս Իմ մտադրությունները, Իմ խղճերն ու Իմ Կամքը: Սովորի՛ր քո ձայնը բարձրացնել միայն Իմ Փառապանծ Ներկայությունը գովերգելու համար: Սովորի՛ր գլուխդ բարձրացնել միայն Ինձ փնտրելու համար և այն, ինչ որ երկնային է... Շատ ազդեցիկ մարդիկ են ցած դրվել, քանի որ նրանք ո՛չ պատվել են Ինձ, ո՛չ էլ որևէ մեծարանք ցույց տվել Իմ հանդեպ:

Ուզո՞ւմ ես իմանալ, թե «Աստծո Երկյուղը» ինչ է նշանակում: Աստծո Երկյուղը Իմաստության սկիզբն է, Աստծո Երկյուղը Իմաստության թագն է: Այդ նա է, որ շնորհալիորեն ընդունում է Ինձ մեծարանքով, հավատարմությամբ և պատվով ճանաչելով Մեզ որպես Երիցս Սուրբ: Երկյուղել Ինձանից՝ նշանակում է խոնարհվել Մեր Ներկայությամբ՝ խնդրելով Ինձ ներել քեզ, որպեսզի Ես քեզ դարձնեմ մի մշտական խորան, որի վրա Ես պիտի դնեմ Իմ ողջ Գիտությունը, Իմ Հրահանգները և Իմ Օրենքը:

Քո Սուրբ Երկյուղի վրա Ես կդնեմ Իմ վստահությունը, Իմ գանձերը՝ իմաստուն ասացվածքներով բացահայտելով Իմ խորհուրդներն ու Իմ գաղտնիքները: Ես քեզ ցույց պիտի տամ Իմ Սրտի խորհուրդները, քո Սուրբ Երկյուղի մեջ գտնվող այդ թաքնված գանձերը, և այդ ժամանակ

[1] Փառաբանված լինելու իմաստով:

դու կիմանաս, որ Ես Աստված եմ, որի մեջ դու կարող ես ստանալ Հավիտենական Կյանք, Հավիտենական Ուրախություն և Խաղաղություն: Դու կիմանաս Երկյուղածության Իմ Հոգուց, որ հնազանդությունը հրապուրում է Ինձ: Որքան էլ որ դա խիստ թվա, բայց դա հնարավորություն է Ինձ համար, որ մտնեմ քո սրտի մեջ և կատարեմ Իմ Կամքը:

Ես կընդունեմ քո հնազանդությունը քո Սուրբ երկյուղի հետ միասին, ինչպես ընդունում են չքեղ արքայական մի թագ, և Մենք՝ Երրորդության Աստվածը, Մեր կողմից, կզգեստավորենք քեզ Մեր անպարտելի Սրբությամբ, որպեսզի քո մեջ մնացած անօրինության որևէ հետք առավոտյան մեգի պես փարատվի ու անհետանա: Ծնված և նորոգված Իմ Հոգով, դո՛ւ, որ դադարել էիր լինել Ինձ վիշտ պատճառելով, նորից պիտի ապրես: Մեռածներից շատերը կնայեն քեզ առանց հասկանալու, որ դու, որ մի ժամանակ մեռած էիր, հիմա կենդանի ես, և վարվում ես այնպես, ինչպես Մենք կուզենայինք որ վարվես՝ խելամտությամբ և Սուրբ երկյուղով:

Իմացի՛ր, որ Ամենի Տերը շնորհ և ողորմություն է տալիս նրանց, ովքեր երկյուղում են Իրենից և երկյուղում են Նրա Անունից: Ես պատիվ կտանամ, եթե դու գովաբանես Երիցս Սուրբ Իմ Անունը ուր էլ որ գնաս: Եվ քո սրտից Իմ Անունով մատուցված այդ խունկը[1] նման է մի մաքուր ընծայի Ինձ համար: Ժամանակն է, որ փնտրես Երկյուղածության Իմ Հոգու այս պարգևը,

- որը զենք է ըմբոստության դեմ կռվելու համար,
- մի տարր՝ ձեզ անկումից պաշտպանելու համար և գավազանն է Իմ Թագավորության:
- Խոնարհվի՛ր դեպի Ինձ, և Ես կբարձրացնեմ քեզ սիրով: Ցածրացրո՛ւ քեզ, որպեսզի Իմ ողորմությամբ Իմ Բազուկները բարձրացնեն քեզ: Ինչպես մեկը բարձրացնում է մանկան իր այտի մոտ, այնպես էլ Ես քեզ վեր կբարձրացնեմ, կփայփայեմ քեզ, և կսիրեմ քեզ, և Ես երբեք չեմ բաժանվի քեզանից:

Այս օրերին և ձեր ժամանակներում Ես բախվում եմ այն մարդկանց մեղքերի հետ, ովքեր հարվածում են Ինձ, և այն մարդկանց չարության հետ, ովքեր խաբեությամբ են զբաղվում: «Մի՛ կատարեք այս պղծությունը, որի մասին Դանիել մարգարեն է խոսել», ասում եմ Ես, բայց ձեր քայլերը համառորեն հետևում են Խաբեությանը: Ձեր դարաշրջանը մարտահրավեր է նետում Իմ Զորությանը:

Շատ լավ, ուրեմն, քանի որ ձեր մտադրությունը, սերո՛ւնդ, Իմ Հավիտենական Զոհաբերությունը ոտնակոխ անելն է և Այն ոչնչացնելը, Ես ասում եմ ձեզ. Ես կանեմ ձեզ հետ այն, ինչ արեցի Սոդոմի և Գոմորի հետ, բայց հարյուր անգամ ավելին, որ հավասարվի ձեր մեղքերին: Տեսնո՞ւմ եք այն տասը Աշտարակները, որոնք կառուցել եք ձեզ համար որպես ժողովարան: Դե՛հ, դուք երբեք չեք ապրի նրանց մեջ, ձեր կայսրությունը կխորտակվի ձեզ հետ միասին: Իսկ այն թանկարժեք քարե՞րը, որ կուտակել եք: Դուք երբեք չեք տիրի դրանց, քանի որ Ես անցնելու եմ ձեր միջով՝ հիշեցնելու ձեզ, որ սկզբից ի վեր Իմ Անունը՝

[1] Դա նշանակում է աղոթքները:

Երիցս Սուրբ, պետք է պատվեիք և Սուրբ պահեիք, և որ դուք պարտավոր եք երկյուղել Ինձանից:

- Եկե՛ք, դուք, որ դեռևս մոլորված եք այս անապատում, անվճռական և թույլ: Եկե՛ք և խնդրեք Իմ Սուրբ Հոգու այս յոթ պարգևները, և Ես՝ երկնքի ու երկրի հեղինակը, Խոսքն ու Աստվածը, պիտի ողողեմ ձեզ Իմ պարգևներով: Ես պիտի առաջարկեմ ձեզ Իմ յոթ պարգևները ձեզ փրկելու համար: Որպեսզի բարգավաճեք և դառնաք խաղողի սքանչելի մի այգի՝ Ես պիտի սովորեցնեմ ձեզ չափավորություն և շրջահայեցողություն, արդարադատություն և տոկունություն:

Եկե՛ք Ինձ մոտ, որ Երիցս Սուրբ եմ: Եկե՛ք, և Իմ Շնչի զորությամբ Ես ձեզ պիտի դարձնեմ անապական մի հայելի, որպեսզի արտացոլեմ ձեզ վրա և ձեր մեջ Մեր Աստվածայնությունը, և դուք պիտի ապրեք Մեր մեջ Երիցս Սուրբ, Հավիտյանս հավիտենից:

Հոգի՛[1], որ հիմա ենթարկվում ես աշխարհի անարդարությանը, ստացի՛ր Մեր Խաղաղությունն ու Սերը: Ես Եմ քեզ հետ: Դու դեռևս կամենո՞ւմ ես աշխատել խաղաղության, միասնության և սիրո համար:

Ես կամենում եմ աշխատել խաղաղության, միասնության և սիրո համար, այո՛:

Պահի՛ր ուրեմն Իմ օրենքները... Եղիր համբերատար և հիշի՛ր, հիշիր, թե Ես ինչ կրեցի: Բավարարվիր այն ամենով, ինչ Ես արդեն տվել եմ քեզ և ավելին մի՛ փնտրիր: Շարունակիր բարեխիղճ լինել քո աշխատանքի մեջ:

Իմ Պատգամի սկզբում Ես ասացի. «Փաթաթի՛ր Իմ Վերքերը քո սիրով»: Ես վիրավորված եմ անճանաչելիորեն: Բարձրացրո՛ւ աչքերդ դեպի երկինք ու կտեսնես Իմ հրեշտակներին լաց լինելիս... Ա՜հ, սերո՛ւնդ, դու բորբոքում ես Իմ Հոր ցասումը, դու բորբոքում ես Նրա ցասումը, որը պիտի բռնկվի և վերածվի բոցերի: Եվ երբ դա լինի, Նա պիտի դա ձեզ մոտ ինչպես կլանող կրակի մի բոց և պիտի այրի ու մոխրացնի ձեզ՝ ձեր անօրինության և ձեր ըմբոստության հետ միասին, այն ամեն չարիքի հետ, որն այսօր <u>քողարկված է</u> որպես բարիք:

Վա՜յ ձեզ, որ ծպտված եք որպես արդարության[2] ծառաներ՝ ծառայելով Իմ Եկեղեցում, բայց ոչ այլ ինչ եք, քան խարդախ ու կեղծ ծառաներ, որ ծառայում եք Գազանի կանոններին, Ես ասում եմ ձեզ. եթե չապաշխարեք, դուք ձեզ վրա կբերեք Իմ Հոր ցասումը և վերջիվերջո կայրվեք բոցերի մեջ: Դուք դժգոհ եք նրանից, ով նստած է Պետրոսի Աթոռին և ով հիշեցնում է ձեզ մշտապես սուրբը պահել Իմ օրենքները, քանի որ դրանք սուրբ են: Դուք դժգոհ եք եկեղեցու Ավանդության և ամեն օր Հաղորդության կյանքով ապրելու նրա կանչերից: Դուք <u>տագնապում եք</u>, երբ հարցը վերաբերում է Արևելյան Եկեղեցին Արևմտյան Եկեղեցուն մոտեցնելու և միացնելու խնդրին:

[1] Աստված հանկարծ շրջվեց դեպի ինձ և դիմեց ինձ:

[2] Այսօրվա Կայենները ուրացողներն են, ովքեր սխալներ են տարածում, նրանք, ովքեր ցանկանում են ոչնչացնել Մշտնջենական Զոհաբերությունը, նրանք, ովքեր հակադրվում են Պապին, որը ցանկանում է պահպանել Եկեղեցու Ավանդությունն այնպես, ինչպես Նախնական Եկեղեցում էր, և նրանք, ովքեր պայքարում են միասնության դեմ:

Անհավատ և այլասերված սերունդ: Դեռ որքա՞ն պետք է ես հանդուրժեմ ձեր ըմբոստությունը: Բայց ես ասում եմ ձեզ. այն, ինչից վախենում եք, պիտի իրականանա: Այն, ինչից սարսափում եք, պիտի կատարվի: Իմ Եկեղեցին պիտի միավորվի վերջում և լինի Մեկ, և Իմ աղոթքը՝ ուղղված Հորը, պիտի կատարվի: Հիմա դուք դեռևս համառո՞ւմ եք ձեր չար ծրագրերի մեջ: Մի օր, Գազանի ծառանե՛ր, Կեղծ Մարգարեի հետ մեկտեղ, այլ կերպ ասած, երկրորդ Գազանի հետ միասին, դուք պիտի կրեք ձեր մեղքերի ծանրությունը, և դրանք պիտի լինեն Մահու չափ ծանր:

Այսօր դեռևս, գաղտնաբար, դուք[1] ձգտում եք Պետրոսի Աթոռին՝ օգտագործելով ձեր մարդկանց, որոնց դուք դրել եք բարձր դիրքերում, որ կեղծեն Ճշմարտությունը ազատամտությամբ և այլ շատ բաներով: Դուք թալանում եք Իմ Սրբազան Օրենքը և ոչնչացնում այն, որպեսզի ոչնչացնեք Իմ Ավանդությունը: Ահա թե ինչու Իմ Հայրը պիտի վերցնի ձեզանից այն ամենը, ինչ որ դուք ունեք՝ այրելով ձեր տասը Աշտարակները, մերկ թողնելով նրանց հիմքերը: Ձեր բոլոր թանկարժեք քարերը փշուր-փշուր պիտի լինեն, և կրակը պիտի կլանի ձեզ: Եթե ես չլսեմ ապաշխարության ձեր կանչը, ես կիրագործեմ այս բոլոր բաները շատ կարճ ժամանակից: Եկեղեցին պիտի վերակենդանանա:

- Ծաղի՛կ, ես քեզ հետ եմ, քո առջև եմ կանգնած և օրհնում եմ քեզ: Ամեն մի ջանք, ամեն մի քայլ դեպի առաջ, որ արվում է միասնության համար, երբեք օրհնվում է Հոր, Իմ և Սուրբ Հոգու կողմից: Թող սա հայտնի լինի: Ասա՛ բոլորին, որ աշխատեն և աղոթեն միասնության համար: Եվ եթե որևէ մեկը դա քեզ մոտ և հարցնի, թե ինչը ամենից շատ գոհություն կպատճառի Ինձ, ասա նրանց.

«Աստծո Թագավորության խնջույքը մոտ է: Ուստի, պատրաստ եղեք ուղղել ձեր աղոթքներն Աստծուն՝ մոլորված հոգիների փրկության համար: Հավաքվե՛ք միասին և աղոթե՛ք, որ եկեղեցին մեկ լինի: Աղոթե՛ք համոզմունքով և Աստված կլսի ձեզ: Չկա մեկը, որ աղոթել է, զոհաբերություն և ծոմապահություն է արել հանուն Աստծո Թագավորության, բայց չի լսվել, կամ՝ հարյուրապատիկը չի հատուցվել իր ներկա կյանքում և գալիք աշխարհում, կամ՝ չի ժառանգել Հավիտենական Կյանք»:

Տո՛ւր նրանց այդ խոսքը և խնդրիր նրանց, որ հիշեն Իմ Խոսքերը Սուրբ Գրքերից.[2] «Բերանը սրտի լիությունից է, որ խոսում է: Բարի մարդը իր սրտի բարի գանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար գանձերից հանում է չար բաներ: Բայց ասում եմ ձեզ, թե մարդիկ իրենց ասած ամեն դատարկ բանի համար հաշիվ պիտի տան, որովհետև, քո խոսքերով պիտի արդարանաս, և քո խոսքերով պիտի դատապարտվես»:

- Ցույց տուր Իմ Սրբությունը և ձգտիր ծառայելու Ինձ, ինչպես այժմ: Ես սիրում եմ քեզ, ես՝ քո Տերը, բայց նաև քո Ընկերը և քո սրտի Սիրելին: Ստացի՛ր Իմ Խաղաղությունը և օրհնությունները:

[1] Գազանը և նրան հետևողները:
[2] Մատթ. 12:34-37

Առայժմ այսքանը, ես եմ-ը քեզ հետ է, արի՛, մե՞նք, մե՞զ: Հիսուս է Իմ Անունը, սուրբ պահիր այն:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 4, 1995

(Կուրիտիբա, Բրազիլիա)

Աղջի՛կս, խաղաղություն քեզ. հիշի՛ր, իրականում ես միայն սիրո կարիք ունեմ:

Ասա նրանց[1], որ սովորեն սիրել Ինձ, որ սովորեն պաշտել Ինձ: Մի՞թե չգիտեք, որ վերջում ամեն մեկը պիտի դատվի իր սիրո չափով: Եթե դուք ճաշակել եք Իմ Բարությունը, դուք նույնպես բարությամբ կվերաբերվեք ուրիշների հանդեպ: Բացե՛ք ձեր սիրտը և հրավիրեք Ինձ, որպեսզի ճանաչեք Ինձ: Սերը ձեր կողքին է:

Հուլիսի 7, 1995

(Ջոյնվիլ, Բրազիլիա)

Իմ Վասուլա, ես՝ Հիսուս, տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը, այն խաղաղությունը, որը ոչ մեկը չի կարող խլել քեզանից:

Զգուշացի՛ր այն հակամարտություններից, որոնք ծագում են ձեր միջև, որպեսզի խանգարեն այն ներդաշնակությանը, որ ես տվել եմ ձեզ և խաղաղության այն հոսքը, որն Իմ Գործն է տալիս ձեզ: Լսի՛ր հիմա և ընդունիր այս որպես Իմ խորհուրդը: Աշխատի՛ր, ինչպես միշտ աշխատել ես Ինձ հետ: Իմ Գործն արվում է խաղաղությամբ, ներդաշնակությամբ և ուրախությամբ: Ես հրճվում եմ, երբ քո սիրտը բարեհաճ է՝ ձգտելով Ինձ գոհացնել: Քայլի՛ր Ինձ հետ, և թույլ տուր, որ Իմ Սիրտը խոսի քեզ հետ: Երբ ես խոսում եմ, գրիր Իմ խոսքերը, ինչպես որ արել ես, և մինչ դու գրում ես, ես օրհնում եմ քեզ և այն ամենը, ինչ գրում ես: Սիրի՛ր Ինձ, և ես կգովերգվեմ քո սիրով և կմեծարվեմ:

Սիրի՛ր Ինձ և սփոփիր Ինձ:

Սիրի՛ր Ինձ, և դու երբեք չես կորչի:

Սիրի՛ր Ինձ, և ես կմիավորեմ Իմ Եկեղեցին քո սիրով:

Սիրի՛ր Ինձ, և հանուն քո սիրո, Իմ Հոր զայրույթը կարող է նվազել:

Սիրի՛ր Ինձ և միացիր սրբերի աղոթքներին:

[1] Իմ համաժողովում և վկայության ժամանակ:

- Այն, ինչ ես խնդրում եմ ձեր բոլորից, միայն սեր է: Ինձ հարկավոր է միայն ձեր սիրտը: Ես կարիք ունեմ ձեր սրտերի, որ միանություն կառուցեմ ձեր սրտերում: Վասո՛ւլա, ես կարիք ունեմ զոհողությունների, որ Երկու Քույրերին[1] իրար մոտ բերեմ:

- Ծաղի՛կս, ես ասում եմ քեզ, որ Իմ պատիվն ու գովքը ես ստացա Բրազիլիայում քո առաքելության ժամանակ: ic

Հուլիսի 9, 1995

(Սան Կարլո - Բրազիլիա)

Յահվե է Իմ Անունը: Աղջի՛կս, լսիր Իմ Ձայնը: Ես քո Պահապանն եմ, որ հիճվում եմ քեզանով: Թույլ տուր Մեզ[2] լցնել քեզ Մեր Գիտությամբ, որպեսզի Մենք ուսուցանենք ձեզ բոլորիդ: Թույլ տուր Ինձ ցույց տալ Իմ Դիմանկարը այս սերնդին՝ օգտագործելով քո ձեռքը: Ես ուզում եմ, որ իմ զավակներն ավելի շատ ճանաչեն Ինձ: Փառաբանի՛ր քո Հորը, որը Երկնքում է:

Ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ:

Հուլիսի 31, 1995

Ես եմ-ը քեզ հետ է, ուստի թույլ տուր Ինձ հիմա օգտագործել քեզ տված Իմ պարգևը, որը պատվելու է Իմ Անունը, քանի որ, զավա՛կս, այս պարգևի միջոցով Ես շատերին հետ բերեցի Ինձ մոտ: Ուրեմն խաղաղությո՛ւն քեզ: Այո՛, դու կատանաս քո խնդրանքի Իմ պատասխանը Ճապոնիայի վերաբերյալ[3]. ձեզ բոլորիդ տրված Իմ շնորհներով, դուք բոլորդ միասին կկսել եք բժշկության զորությունը՝ Իմ տված Պատգամների միջոցով:

Այդ Ես եմ, որ հաստատում եմ Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ ընկերակցությունները: Ես աղոթում եմ Հորը Իմ կողմից տրված այս Պատգամներին ձեր մասնակցության համար: Դուք բոլորդ տեղ ունեք Իմ Սրտում, քանի որ դուք բոլորդ կիսում եք և պաշտպանում Իմ Գործը:

Սատանան իր նախանձությամբ ցանկանում է մաղել ձեզ բոլորիդ ինչպես ցորեն, որ ձախողվեք: Ուրեմն հաստատուն մնացեք, որպես զենք ունենալով աղոթքը: Եղեք կարեկից և մեծահոգի մեկդ մյուսի հանդեպ: Համբերատար եղեք մեկդ մյուսի հանդեպ, ինչպես Ես եմ համբերատար ձեր հանդեպ: Հանդուրժող եղեք մեկդ մյուսի հանդեպ, ինչպես Իմ Հայրն է հանդուրժող այս սերնդի համդեպ: Ներեք մեկդ մյուսին նույնքան պատրաստակամությամբ, ինչպես Ես եմ ներում, երբ ներում են խնդրում Ինձանից:

[1] Տերը խոսում է Հռոմի կաթոլիկ եկեղեցու և Ուղղափառ եկեղեցու մասին, որպես Երկու Քույրերի:
[2] Սուրբ Երրորդությունը
[3] Ճապոնիայի «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» ընկերության:

Ես նախազգուշացրել եմ ձեզ, որ Ինձ համար աշխատելիս, անտարակուսելի է, որ դժվարությունների կհանդիպեք, մի բան, որ ձեզանից յուրաքանչյուրը հայտնաբերել է: Բայց մի՛ հուսահատ վեք, ես ձեզ հետ եմ այնքան ժամանակ, քանի դեռ դուք հավատարիմ եք մնում Ինձ: Ուստի վստահե՛ք Ինձ, Ես կշարունակեմ ձեզ տալ զորություն, արիություն և հույս:

Այժմ լսեք Ինձ և հասկացեք. Իմ Սուրբ Հոգին որոշակիորեն անվանել էր այս Գործը «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ», բայց ձեզանից ոմանք լսեցին խաբեբա հոգիների և տեղի տվեցին նրանց... Հոգ տարեք այն ողջ Աստվածային Գործին, որ վստահվել է ձեզ և հեռացեք վեճերից, որոնք կտանեն ձեզ դեպի բաժանում: Մի՞թե չեք տեսնում: Մի՞թե չեք նկատում, թե ինչպես է Չարը գործում: Դուք պետք է ավելի ուշադրությամբ մտածեք քան նախկինում, այն բանի մասին, թե ինչ է առաջարկել Հոգին, որպեսզի չհեռանաք Իմ Շնորհից: Այս նկատի ունենալով, արեք ձեր լավագույնը՝ աշխատելու ներդաշնակությամբ և խաղաղությամբ, մեղմությամբ և հասկացողությամբ:

Իմ սիրելի ընկերներ, հիշե՛ք. մի՛ խորտակեք Սուրբ Հոգու Գործը՝ ինքներդ ձեզ թույլ տալով վնասակար խոսակցություն առաջ բերել: Ես ասում եմ ձեզ. հրճվե՛ք Հոգու մեջ և փնտրեք Նրա Ուղիները, որոնցով Նա պիտի պահի ձեզ հավատարիմ, միասնական և երջանիկ Իր Սիրո արտացոլման մեջ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 1, 1995

Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ,
Ցույց տուր ինձ
Քո Աստվածային Դեմքի Լույսը:
Արարի՛չ փառքի մեջ,
ինձ ուղղված Քո նետերը
ինձ չեն ստիպում
հեռու փախչել Քեզանից:
Ընդհակառակը, ես այստեղ եմ՝
դողալով անհամբերությունից,
որ լսեմ Քեզ:
Արի և հագեցրու իմ քաղցը:

Աղջի՛կս, ամեն ինչ, որ Ես ունեմ, քոնն է: Ես սիրում եմ քեզ: Երբեք չկասկածես Իմ Սիրուն: Սիրի՛ր Ինձ և դու պիտի ապրես: Ապրի՛ր սրբորեն և ավելի շատ աղոթիր:

Չարը երբեք չի հոգնում քեզ վրա հարձակվելուց և քեզ դայթակղելուց: Ուստի զգոն եղիր և երբեք մի՛ հոգնիր գրելուց: Երբեք մի՛ թող աղոթքներդ: Երբեք մի՛ դադարիր Ինձ հետ լինելուց[1]: Ես միշտ քեզ հետ

[1] Աղոթքի մեջ մենք Տիրոջ հետ ենք:

եմ, և ես երբեք չեմ թողնի քեզ: Բայց, աղջի՛կս, ես խնդրում եմ նաև հետևյալը քեզանից: Այս օրերին[1], երբ դու և քո ընտանիքը միասին եք, ես քեզանից շատ բան չեմ խնդրում, ո՛չ էլ կանչում եմ քեզ երկար պատգամներ ստանալու: Ես միայն խնդրում եմ քո ընկերակցությունը, քո սերը, քո ուշադրությունը ժամանակ առ ժամանակ, և Ինձ ուղղված մի բառ՝ ցույց տալու, որ դու չես մոռացել Ինձ:

Տեսնո՞ւմ ես, Վասուլա, մի՛ անհանգստացիր քեզ ճնշողների համար: Մի՛ անհանգստացիր այն բաների համար, որոնք պատկանում են աշխարհին: Այդ ամենը կմաշվի, բայց Իմ Սերը քո հանդեպ կմնա ընդմիշտ և ողջ հավիտենության համար: Գառնո՛ւկս, աշխարհն ատեց Ինձ, ինչպես հիմա քեզ է ատում, բայց դա միայն աշխարհն է, և այս աշխարհը պիտի ջնջվի:

Արի՛, մնա Ինձ և Իմ Մորը մոտիկ, որ սիրում է քեզ: Ստացի՛ր Մեր Խաղաղությունը: Մե՞նք, մե՞զ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 16, 1995

Տե՛ր, իմ Յա՛հվե, երբե՛ք թույլ չտաս,
որ աշխարհը ինձ ետ քաշի
իր ընդերքի մեջ: Երբե՛ք թույլ չտաս,
որ նա դառնա իմ տերը,
ո՛չ էլ իմ տիրույթը:
Շնորհի՛ր ինձ, Հա՛յր իմ, այն,
ինչ այնքան խնամքով
կրում ես Քո Սրտում, հետևաբար
թող Քո ցանկությունները
դառնան իմ մարմինն ու ոսկորները,
իմ էությունը, իմ սնունդը
և իմ կյանքը: Ես սիրում եմ Քեզ
խելացնորության աստիճան,
իմ Զորությո՛ւն,
Իմ Սո՛ւրբ՝ Երիցս Սուրբ,
Աստվածության և Կյանքի
Հարատև Ակունքի իմ Ըմպելիք,
իմ Բարությունն և իմ Քնքշությունն,
արի՛, արի ինձ մոտ,
և ես խոստանում եմ Քեզ,
Երկնավոր Հա՛յր, երգել
Քո Սիրո Օրհներգը բոլոր ազգերին՝
պատվելու համար
Քո Հայրական Սերը:
Արդյոք իմ Բարեգութ Տերը
կպատասխանի՞ Իր Սուրբ երկնքից:
Նա կպատասխանի՞ մեղավորիս,

[1] Իմ ընտանիքն ու ես միասին էինք անցկացնում արձակուրդը:

այս անարժան կավին:

Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ: Ես պիտի թարմացնեմ քո հոգին: Հիմա Իմ Անունը փորագրված է քո սրտի վրա: Լսի՛ր.

Ես գալիս եմ դիմավորելու քեզ օրհնություններով: Աղջի՛կս, դու կյանք խնդրեցիր, իմ հրաշալի զավակ, ե՛ս եմ Կյանքը, և Ես այստեղ եմ հիմա՝ քեզ հետ: Ես երբեք չեմ լքի քեզ: Ա՛հ Վասո՛ւլա, թույլ տուր վստահեցնեմ քեզ: Մարդկային ուժը երբեք չպիտի դերակշռի Փրկության Իմ Ծրագրում:

Ես եմ Հեղինակը այս գրքի: Չնայած քո թշնամիները խուսափում են լույսից, որ չլինի թե բացահայտվեն, բայց սպասում են քեզ խավարում, որ հարձակվեն քեզ վրա: Մի՛ վախեցիր, Իմ Աչքերը հսկում են քեզ: Ո՛չ մի երկրավոր արարած չի հարվածելու Իմ զավակին: Այո՛, դու պիտի զրպարտվես և նախատվես, բայց մի՞թե չես տեսել Իմ բարի Գործերի արդյունքը: Ես ասում եմ սա, որ խրախուսեմ քեզ: Չնայած Գազանը և նրան հետևողները կշարունակեն հետապնդել քեզ, ինչպես որսորդներն են հետապնդում որսին, մի՛ վախեցիր, նրանք չեն հասնի իրենց նպատակին: Ինչպես մի անգամ Ես ասացի. Նրանք կփորձեն քեզ ջնջել ամբողջապես երկրի երեսից: Նրանք կկրկնապատկեն իրենց ուժերը, բայց նրանցից ոչ մեկը չի կարողանա դիպչել Իմ տիրույթին և Իմ սեփականությանը: Դու Իմ Տիրույթն ես և Իմ Սեփականությունը: Ես շրջապատել եմ քեզ շատ հրեշտակներով, որոնք հսկում են քեզ, և Ես ինքս եմ քո Պահապանը:

Իսկ դու, քո կողմից կառուցիր և տնկիր Իմ ծառայության մեջ, և Ես կհարվածեմ և կշպրտեմ քեզ վրա հարձակվողներին, ովքեր իրականում Ինձ վրա հարձակվողներն են: Իսկ ինչ վերաբերվում է քեզ հալածողներին, աղոթի՛ր նրանց համար: Ցույց տուր բարություն և գթասրտություն, հատուցի՛ր չարին սիրով:

Իմ Ներկայությունն ամենուր քո շուրջն է, ուր էլ որ դու լինես:

Սեպտեմբերի 6, 1995

Մոլորված ոչխարի պես
ես գնացի իմ ճանապարհով:
Անբերրի հողից
ես փորձեցի սնել իմ հոգին,
և չորացած ժայռից ես հույս ունեի
ստանալու իմ ըմպելիքը:

Ա՛հ, կարիքից ու պակասությունից
առաջացած իմ վնասվածքները
ոչնչացնում էին ինձ,
իսկ իմ մեղքերն
անբուժելի էին թվում:

Սոսկ իմ տեսքը ամոթալի էր
Քո հրեշտակների համար,
մի պղծություն՝ Քո Աչքերում,
ո՛վ Ամենասուրբ Երրորդություն,
մաքրամաքուր Աստված:
Քո հրեշտակներն ու սրբերը
կանգնած էին սարսափած և ապշած
իմ բացարձակ ըմբոստությունից:

Օր օրի հետևից ես թափառում էի
կարիքի մեջ: Ես քայլում էի
գիշերվա ստվերների մեջ
ծարավից պապակված,
անցկացնում գիշերն անհայր,
դրա փոխարեն հավաքելով
մացառներ և փշեր:
Սովամահ լինելով,
ես չէի կարողանում հասկանալ,
թե ինչո՞ւ էր այս դժբախտությունն
ինձ վրա ընկել: Ինչո՞ւ էր
իմ աչքերի լույսը լքել ինձ:

Օ՜ դու, որ չարին էիր հակված,
դու համակրա՞նք էիր սպասում:
Իմ անկումը ողջունվեց
բուռն ծափահարությամբ
չարքերի բազմության կողմից,
քանի որ նրանք կարողացել էին
պոկել ինձ Իմ Հովվի Հոտից
և խլել ինձանից իմ Տեսողությունը,
իմ Ուրախությունը,
իմ Սերը և իմ Կյանքը...
Եվ երբ իմ ներսում կյանքն արդեն
ընդմիշտ հանգչելու վրա էր,
Դո՛ւ, Հայր, Դու եկար ահռելի
Զորությամբ և Փառքով:
Եվ անսահման խղճահարությամբ,
Դո՛ւ, Հայր, պատռեցիր երկինքը,
որ հասնես ինձ
Քո սուրբ բնակավայրից:
Դու ներքև իջար սարսափազդու
հոյակապությամբ զգեստավորված:
Եվ ահա, Դու կանգնած էիր վեհորեն
մի չփոթված Թշվառի առջև:
Նա՛, ով լցնում և ընդգրկում է
ամեն ինչ, հիմա
ընկերակցում էր Թշվառությանը:
Կարծես գինուց արբած՝
իմ հոգին օրորվեց

Երիցս Սուրբ այս Մաքուր
Ճառագայթման Ներկայությունից...

Ես կակազեցի,
ասելու ինչ-որ մի բան,
բայց ոչ մի ձայն էլ չլսվեց:
Ես չէի կարողանում խոսել:
Այդ ժամանակ, այն մատները,
որ ձև էին տվել ինձ,
հանկարծ հասան և դիպան
իմ շուրթերին՝ բացելով դրանք,
որ շնչեմ Իր Շունչը:
Եվ երբ ես ներշնչեցի
ընտիր զմուռսի մի բույր,
մի ճիչ դուրս թռավ իմ բերանից,
ինչպես նորածին մանկան,
և ես վայրկենապես վերանորոգվեցի:

«Այժմվանից քո Արարիչը
կլինի քո Ամուսինը,
Իմ Անունը՝ Ամենակալ Աստված է»,[1]
ասաց Նա:

«Ես խղճացի քեզ...
Մի՞թե չգիտես, զավա՛կս,
որ Ես շռայլ եմ ներելու մեջ:
Զհեռանաս ու չվախենաս:
Մնա՛ Ինձ հետ, և Ես
կբարձրացնեմ քեզ և տուն կտանեմ,
որ ամբողջապես բուժեմ քեզ:
Իմ մեծ Սերը կոչ արեց
Իմ Ողորմությանը, և Իմ Սիրտը
հուզվեց քո թշվառությունից:
Արի՛, և եթե ցանկանում ես,
Ես քեզ կդարձնեմ
վկան Իմ մեծ Սիրո,
որ Ես ունեմ ձեր բոլորի հանդեպ»:

Ահա՛ թե ինչ ասացին
Քո Սուրբ Շուրթերը,
առավոտյան ցողի պես
Քո ամեն մի խոսքը ընկնելով
իմ պապակած հոգու վրա:
Եվ մինչ դեռևս խոսում էիր,
իմ հոգին՝ սաստիկ
զղջումով համակված,
չգիմացավ ու գտավ իրեն

[1] Ես. 54:5

իր Հոր Բազուկների մեջ,
իր Հոր Շնորհի մեջ:

Այդ ժամանակ ես դարձա դեպի Տերը
և խնդրեցի Նրան,
որ տիրանամ Իրեն:
Իմ ողջ հոգով ես ասացի.
«Ես ցանկանում եմ տիրանալ Քեզ,
իմ Աստվա՛ծ և իմ Արարի՛չ, այնքան,
որքան Դու ես ինձ տիրապետում»:
Հետո Դու ժապավեններով
կապեցիր ինձ,
որոնք միացրեցին ինձ Քեզ հետ,
ժապավեններ, որ հավիտյան կմնան:

Եվ ես ասացի. ես պիտի շնորհեմ քեզ Իմ Սրտի և Հոգու բա ռեհաճությունը, քանի որ ես Աստվածային եմ և Երիցս Սուրբ: Ես քո Հայրն եմ, և դու Ինձ ես պատկանում: Իսկ ես, աղջի՛կս, պատկանում եմ քեզ: Մի՞թե չգիտեիր, որ ես Շնորհ և Ողորմություն եմ:

Արի՛, մի՛ հարցրու. «Ինչո՞ւ ինձ հետ պատահեց այս բոլորը»: Քո մեծ խեղճությունը ներքև քաշեց Ինձ երկնքից: Քո անմխիթար հոգին ստիպեց, որ Իմ Սիրտը բացականչի Իմ հրեշտակներին և սրբերին. «Դեռ որքա՞ն պետք է ես տեսնեմ նրան այսպես շարունակելիս», իսկ քեզ ասում եմ.

«Պարասկևի՛, բարձրացրո՛ւ աչքերդ հիմա և նայիր Ինձ: Ես խոստանում եմ քեզ, որ Հույսը միայն քեզ չի տրվի, այլ բոլորին, բոլոր նրանց, ովքեր ծարավ են: Որևէ մեկը այսպիսի բան լսած կա՞: Իսկ ինչ վերաբերում է քեզ, Պարասկևի՛, ես կվերցնեմ քեզ Ինձ մոտ ծառայության, և քեզ մի Ծառ կդարձնեմ: Քո արմատները կաճեն Իմ Պարտեզում, որպեսզի քո սաղարթները մնան կանաչ, որպեսզի քո պտղի վրա գրված լինի Իմ Անունը: Եվ ես Ինքս կլինեմ քո Պահապանը, և կջրեմ քեզ Կենդանի Ջրի Իմ Ակունքից... Եվ ինչպես Ուղեկից և Ընկեր, ես կտամ քեզ Իմաստություն, որ կդաստիարակի և կուսուցանի քեզ, որ հետագայում, կատարելության մեջ, <u>այս Հույսը</u> փոխանցես ողջ մարդկությանը:

Դու պիտի դաստիարակվես Իմ կողմից ու ձևավորվես Իմ Գավիթներում: Ահա թե ինչու դու ընդդիմություններ պիտի հանդիպես քո ճամփորդության ընթացքում: Աշխարհը պիտի թքի քեզ վրա, բայց ո՛չ ավելի, քան նրանք թքեցին Իմ Որդու վրա: Դավաճաններ պիտի լինեն քո ճանապարհին, բայց նրանցից ո՛չ մեկը Հուդայից ավելին չի լինի: Մերժումներ և ժխտումներ նույնպես պիտի հետևեն, սակայն նրանցից ո՛չ մեկն ավելի խիստ չի լինի, քան այն մերժումներն ու ժխտումները, որ Իմ Որդին ստացավ: Դու անգթորեն սխալ կհասկացվես շատերի կողմից, բայց ուրախացի՛ր, մի՛ վշտանա, մի՛ դիմադրի և ոչ էլ երես դարձրու: Թույլ տուր, որ քեզ ճնշեն, ինչպես ճնշեցին Իմ Սեփական Որդուն՝ ձեր Փրկչին՝ վրդովելով Նրա բոլոր աշակերտներին:

Ես հրամայում եմ քեզ չազդվել մարդկանց վիրավորանքներից և չարձագանքել, ինչպես Իմ Որդին չպատասխանեց և լուռ մնաց: Եվ այդ տառապանքների մեջ ես խաղաղություն պիտի հաստատեմ: Քո

տանջանքների մեջ, ես պիտի սփոփեմ սփոփանքի կարիք ունեցողներին: Ես այնպես պիտի անեմ, որ քեզ ճնշողները ճնշեն քեզ, և մինչ դու ընկած կլինես տանջահար, մարդկանց կողմից ոտնակոխ արված, ես լույս պիտի բերեմ Եկեղեցու մեջ՝ նորոգելով Նրան Իմ Սուրբ Հոգով՝ Երիցս Սուրբ, արթնացնելով Նրան, որ հանձնվի Ինձ և դառնա Մեկ:

Որքան էլ թույլ լինի քո սիրտը, զգա՛, զգա Իմ Ուրախությունն այս հաղթանակի համար: Փրկությունը ձեր դռների մոտ է... Աղջի՛կս, հանձնվիր քո Հոր Ձեռքերին: Նուրբ և քնքուշ զավակ, բարձրացրո՛ւ Միասնության լուծը քո ուսերի վրա և տար այն: Երբ կհոգնես քո ճանապարհին, ես կլինեմ քո միակ Հանգստությունը, քո միակ Ուղեկիցը, դավաճանությունների ժամանակ՝ քո միակ Ընկերը: Ես կլինեմ Գիտության քո միակ Աղբյուրը՝ ուսուցանելով քեզ Մեր խորհուրդների խորքերը, որպեսզի այս սերունդը և հաջորդները պակասություն չունենան: Ես պիտի շարունակեմ անձրևի պես տեղալ քեզ վրա Իմ օրհնություններն ու Իմ Մանանան, որ սնեմ քեզ:

«Արի՛, մի մնա երկյուղածությամբ կանգնած: Արի՛, քո մոտիկությունը հրապուրում է Ինձ, և քո հոգին ծարավում է Ինձ: Արի՛, Իմ Որդու Տապանակ, ես սիրում եմ քեզ: Սիրի՛ր Ինձ և ձգտիր եռանդուն ծառայել Ինձ: Արի՛, հող ու մոխիր, որը սակայն սիրտ ու հոգի ունի, փառաբանի՛ր Ինձ: Արի՛, Պարասկևի՛, ի հակադրություն քո խավարին, ես՝ որ Օրենքի Անանց Լույսն եմ, պիտի լինեմ լույսի քո միակ սյունը քո ճամփորդության մեջ, որ առաջնորդեմ քեզ և մյուսներին դեպի Իմ Օրենքը»:

Իսկ դո՛ւք[1], եթե նույնիսկ դեռևս կուրացած եք՝ այս անապատում խարխափելով ձեր ճանապարհը՝ կարիքներով, քաղցած և արևից այրված ու ցամաքած, եթե նույնիսկ զգում եք, որ դաժան աղետը նվաճել է ձեզ, վերադարձե՛ք Ինձ մոտ, ինչպես որ կաք: Քանի որ Ես դիմադրում եմ Իմ Սուրբ Բարկությանը՝ հիշեցնելով Ինքս Ինձ, որ Ես, Ես ձեզ հայրություն եմ արել... Եվ Ես միշտ զորավիդ պիտի կանգնեմ ձեզ, ուր էլ որ գնաք: Մոտեցե՛ք Կենդանի Աստծուն, և Ես ցույց կտամ Իմ քաղցրությունը ձեր հանդեպ, սովորեցնելով ձեզ, որ բարեպաշտությունն ուժեղ է ամեն ինչից: Բարեպաշտությունը հեռու կպահի ձեզ մեղքից:

Եկե՛ք և արմատ դցեք Իմ մեջ, որպեսզի Ես ձեզ նույնպես դարձնեմ մի Ծառ պտղավետ ճյուղերով, և Իմ մակագրությունը փորագրեմ ձեր պտուղներից յուրաքանչյուրի վրա, որպեսզի նրանք, ովքեր ուտեն, ավելի շատ քաղցեն: Եվ դրանից հետո դուք ականջ կդնեք լսելու Ճշմարտությանը՝ Երիցս Սուրբ, և տալով ձեր սիրտը Ճշմարտությանը՝ դուք կապրեք:

[1] Ասված այս պատգամը տվեց Սկանդինավյան երկրների համար, որոնց ես այցելեցի՝ Օսլո, Գետեբորգ, Ստոկհոլմ և Կոպենհագեն քաղաքներում:

Սեպտեմբերի 27, 1995

Իմ հայացքը սևեռում եմ
Գիշերվա տեսիլքների մեջ:
Այնպես արագորեն, ինչպես Դու,
Սու՛րբդ, եկար ինձ մոտ,
նույն արագությամբ
Դու նետեցիր քո քողը իմ աչքերին,
քանի որ սա է,
որ գոհացնում է Քեզ, Հոր Սիրելի՛,
որպեսզի ես ամբողջապես
կախված լինեմ Քեզանից
և լինեմ ինչպես խաղալիք
Քո Հզոր Ձեռքում:
Եվ այդ պահից սկսած, ես դարձել եմ
աքսորական հանուն Քեզ:

Քեզ գոհացնում է գծել
իմ ճանապարհը,
որպեսզի Դու և ես քայլենք միասին,
ես՝ բռնած Քո հագուստի փեշը,
Քեզ կորցնելու վախից, իսկ Դո՛ւ,
ինչպես Թագավոր Իր զորքերի մեջ,
Դո՛ւ առաջնորդում ես ինձ այնտեղ,
ուր որ ուզում ես:

Եվ մեր ճանապարհին
նախանձ մարդիկ
ոտքի են կանգնում
խանգարելու համար
մեր հիանալի ճամփորդությունը:
Նրանք իրենց ձեռքերն են դնում
ինձ վրա, որ պատառոտեն ինձ,
բայց Դու՝ տիրական ոճով
բարձրացնում ես իմ հոգին
և տանում այն վեր,
որ քեզ հետ սլանամ քամու վրա,
ապա Դու և ես տոնում ենք
Քո Զորությունը:
Եվ Քո ժպիտներով, Քո մանկական
ուրախության և հրճվանքի մեջ,
մենք դառնում ենք
մեր ընկերության գործակիցներ
և աշխատակիցներ:

Դու խափանում ես
մեզ հալածողների ծրագրերը,
մինչ Քո Բերանը երգում է
ինձ համար փրկության երգեր:

Դու բացում ես Քո Սրտի դուռը,
որպեսզի ես ներս մտնեմ
և թաքնվեմ Նրա խորքերում:

Իմ հոգին հրճվում է Տիրոջով:
Նա զորություն ունի
ճուլելու յուրաքանչյուր սիրտ
իր հավատարիմ Սիրով:
Երբ իմ հոգին ընկճված է,
Դու չես սպասում,
այլ ցույց ես տալիս Քո Սերը,
Քո բուռն ցանկությամբ
սիրտ տալու ինձ՝ գրկելով ինձ:

Քո հայացքը, հրճվանքը Հոր,
ամեն տեսակ կարողություն ունի
փոխակերպելու ցանկացած հոգու,
որ այն ողբերգական երգից դառնա
ներշնչված մի օրհներգ:

Այո՛, Տե՛ր, ամեն ձևով Դու կարող ես
դարձնել Քո ժողովրդին
մի օրհներգ փոխելով նրանց ռիթմը,
պահպանելու համար
Քո Ձայնի տոնը, որովհետև
Դու երբեք չես արհամարհում
ոչ մեկի, այլ պաշտպանում ես մեզ
միշտ և ամենուր:

Իմ Ուրախություն, պաշտի՛ր Ինձ: Դու շփվում ես Ինձ, Իմ Հոգու և Իմ Հոր հետ: Քո խորհրդատուի հետ միասին հասցրու Ողորմության այս աշխատանքը, որը Մենք ենք տալիս քեզ, ողջ աշխարհին:

Ես չեմ ցանկանում ընկնել հոգևոր քայքայման մեջ և քարշ տալ իմ առաքելությունը: Ես Գիշերվա մեջ եմ (կասկածանքի ու վհատության մեջ):

Մի՛ մտահոգվիր այն ամենի համար, ինչ[1] քո միջոցներից և քո ուժերից վեր է, քանի որ Ես կլրացնեմ ինչ պակասում է: Տուր Մեզ այնքան, որքան կարող ես, մի՞թե չես նկատել[2]: Թեև դու ոչինչ ես, Ինձ տեսնում էին քեզ վրա[3]: Քո վշտի մեջ, Ես հաջողության հասա: Քո մեծ փորձությունների մեջ, Ես Իմ Գանձերը հեղեղեցի շատ սրտերում: Մի՞թե Ես կանեի այդ բաները[4] քեզ, եթե Ես քեզ չսիրեի: Եվ Ես մտադիր եմ

[1] Հասկացողության կարողությունից վեր:
[2] Հոլանդիայում և ամբողջ Սկանդինավիայում իմ հանդիպումների ժամանակ:
[3] Հիսուս հայտնվում էր իմ փոխարեն, բայց ասում էին, որ Նա ծեծված դեմքով էր երևում:
[4] Հիսուս նկատի ունի այն փորձությունները, որոնք Նա թույլ է տալիս, որ ես դիմագրավեմ:

պահել Իմ քողը քո աչքերի վրա, որպեսզի դու խանդավառված լինելով հնարավորություն չունենաս Ինձ վշտացնելու: Այս ձևերով եմ Ես վարվում Իմ նախասիրած հոգիների հանդեպ, որպեսզի նրանց դարձնեմ հնազանդ, խոնարհ ու աննշան: Ես Թագավոր եմ, և Ես կառավարում եմ նրանց վրա, որպեսզի նրանք հասնեն կատարյալ առաքինության՝ Մեր Սուրբ Երրորդության Փառքի համար: Եվ ինչպես Ես մի անգամ ասացի Իմ աշակերտներին, Ես ձեզ նույնպես ասում եմ.[1] «Հիմա, երբ դուք սա գիտեք, դուք երջանիկ կլինեք, եթե վարվեք համապատասխան ձևով»[2]:

Ձեր Հիսուս, որ սիրում է ձեզ: IC

Սեպտեմբերի 29, 1995

(Սուրբ Միքայելի տոնը):

Ընդունիր Իմ Խաղաղությունը: Այդ Ես եմ՝ Հիսուս:

Իմ հրեշտակապետ սուրբ Միքայելն ուզում է բարեկիրթ լինել քո հանդեպ, քանի որ դու հիշեցիր, որ Նրա Տոնն է: Նա կբավարարի քո բարի տրամադրվածությունը: IC

(Սուրբ Միքայելն է խոսում):

Մեր Տիրոջ բարեկամ, Ես՝ Սուրբ Միքայելը, ողջունում եմ քեզ Մեր Ամենաբարձրյալ Տիրոջ Անունով: Գիտե՞ս, թե ինչն է հետ պահում Ամենակարող Աստծո զայրույթը:

Ո՛չ, չգիտեմ...

Ուրեմն Ես կասեմ քեզ: Փոքրիկ հոգիները: Այո՛, փոքրիկ հոգիները, ովքեր հարատև աղոթքի, ծոմապահության և ապաշխարանքի մեջ են... Այսպիսիների միջոցով շատերը պիտի փրկվեն: Ա՜հ, Վասուլա, երբեք չդադարես Վարդարանն աղոթելուց: Երբե՛ք չդադարես խնդրել Ինձանից Իմ միջամտությունը: Պատիվ և փառք թող տրվի Աստծուն Իր անսպառ համբերության համար[3]: Արի՛, վստահ եղիր և մի՛ ընկիր դայթակղության մեջ: Տեսնո՞ւմ ես, չարժի...

Լսիր և շարունակիր լսել քո Հորը, որ Երկնքում է: Աստված անհասանելի չէ: Նա հասանելի է ամեն մեկին: Ուրեմն կանչի՛ր Քո Աբբային, և Նա կլսի քեզ: Ամենասուրբ Երրորդությունը ցանկանում է, որ բոլորը հասնեն և մտնեն ամենավերին երկինք: Երանելի են նրանք, ովքեր մեռնում են Տիրոջով, նրանցն է երկնքի Թագավորությունը: Վախեցե՛ք Աստծուց և միշտ գովաբանեք Նրան: Պաշտեք ձեր Արարչին և միշտ սիրեք Նրան:

---

[1] Հովհ. 13:17

[2] Հնազանդության և աննկատելի դառնալու միջոցով, ինչպես Իր նախընտրած հոգիները՝ կատարյալ հնազանդությամբ:

[3] Այդ պահին հանկարծ, ես կասկած ունեցա, որը գրեթե անմիջապես անցավ, և ես նորից լցվեցի մեծ ուրախությամբ, երբ Նա ասաց. «Տեսնո՞ւմ ես: Չարժի»:

Ես՝ սուրբ Միքայել հրեշտակապետը, օրհնում եմ ձեզ Ամենասուրբ Երրորդության ներկայությամբ, և Նրանց Սուրբ Հրեշտակների ներկայությամբ:

~ Սուրբ Միքայել ~

Եվ մինչ աշխատում ես, կարող ես շարունակել աղոթել[1]:

Հոկտեմբերի 2, 1995

(Մեր պահապան հրեշտակների տոնը):

Ալելուիա՛,
Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքից,
օրհնեցե՛ք նրան բարձրունքներից:
Օրհնեցե՛ք նրան,
նրա բոլոր հրեշտակներ,
օրհնեցե՛ք նրան,
նրա բոլոր զորություններ:[2]

Թո՛ղ նրանք բոլորը
գովերգեն Յահվեի անունը,
ում հրամանով նրանք ստեղծվեցին:[3]

Ես՝ Հիսուս, տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը: Արի՛ և աղոթիր Ինձ հետ: Ասա՛.

Գերիշխա՛ն սկզբից ի վեր,
լսի՛ր Իմ աղոթքը:
Իմ հոգին, իմ սիրտը
ծարավում են Քեզ:
Իմ հայացքը
փափագում է տեսնել Քեզ,
և ես ուրիշ ոչ մեկին չեմ նայում,
քանի որ ո՛չ մի աստված չկա,
որ համեմատեմ Քեզ հետ,
ոչինչ չկա Քեզանից ավելի մեծ,
քանի որ Դու Ինքդ միայն
զարմանալիորեն մեծ ես:
Դրա համար, հավաքիր ազգերին,
որ շնորհակալություն հայտնեն
և գովաբանեն Քո Սուրբ Անունը

[1] Ես պետք է ընթրիք պատրաստեի, այդ պատճառով սուրբ Միքայելն ասաց, որ աղոթեմ աշխատելու ընթացքում:
[2] Սաղմ. 148:1-2
[3] Սաղմ. 148:5

մեկ Տապանակի շուրջ:
Թող նրանք միասին մատուցեն
Քո Զոհաբերությունը
Մեր Հորը, որ երկնքում է՝
մեկ ձայնով և միևնույն Հոգով:
Մեր Հոգու Պահապա՛ն,
զարմանալիորեն զորեղ,
անպարտելի,
թող Քո ողջ արարչությունը
ծառայի Քեզ
Ամենասուրբ Երրորդության մեջ:
Շնորհի՛ր մեզ այդ օրհնանքը:
Ամեն:

Արի՛ հիմա, Իմ Հոգու զորությամբ, ես ուղարկում եմ քեզ մոտ Դանիելին՝ քո պահապան հրեշտակին: ic

(Իմ հրեշտակն է խոսում).

Ես՝ Դանը, օրհնում եմ քեզ: Միասնության Նշան [1], մնա՛ Տիրոջը հավատարիմ: Աճի՛ր Նրա մեջ, և ուրիշ ո՛չ մեկի: Միայն Յահվեն է բարի: Աղոթի՛ր, որ ուժեղանաս ու ամրանաս, որպեսզի Աստծով զորություն ստանաս Իր Տունը վերակենդանացնելու և քո առաքելությունն ավարտելու համար:

Ես միշտ պիտի պաշտպանեմ քեզ և ընդ միշտ պիտի ուղեկցեմ քեզ: Քո Դանիել:

Դանիել քեզ պաշտպանող քո պահապան հրեշտակ:

Դանիել

[1]Երբ լսեցի «Նշան» բառը, միևնույն ժամանակ լսեցի նաև «Խորհրդանիշ» բառը:

Հոկտեմբերի 6, 1995

Տե՛ր իմ,
Իմ աչքերին արտոնություն տրվեց
զննել ու խորհրդածել
Քո փառապանծ Մեծության վրա:
Ի՜նչ շնորհ ես Դու տվել ինձ:
Ինձ, որ ամենահետինն եմ,
ստանալու այսպիսի մի պարգև,
որ կարողանամ
տիրանալ Քո Մեծությանը, և խորհել
Քո մասին Քո Խորհրդի մեջ:

- Աղբյո՛ւր Իմաստության,
Դու վարվում ես ինձ հետ
բարձրագույն մոտեցումով,
լի բարությամբ և անսահման
քնքշությամբ, որ ճանաչեմ
իմ Աստծուն Երկնքում Սուրբ,
որ ճանաչեմ Նրան որպես Հայր,
որպես Սիրելի և Աբբա:

- Աղբյո՛ւր Հասկացողության,
որ անապատներն
այգիներ է դարձնում,
փշերն ու տատասկները՝
մրգի ծառեր,
անհավատալիորեն սքանչելի,
բաբախող, Քո փառահեղ տեսքը
թողնում է իմ սիրտը հմայված:

- Աղբյո՛ւր Խորհրդի,
իմ Գավա՛թ, իմ Ըմպելի՛ք,
Թագավո՛ր, սկզբից ի վեր,
Դու շարունակ ի ցույց ես դնում
Քո Վսեմ խորհուրդը բարությամբ՝
Քո աշակերտի հանդեպ:
Ահա թե ինչու է
իմ սիրտը մաշվում սիրուց:

Փա՛ռք է Նրա Սուրբ Անունը:
Ինչպե՞ս կարելի է
Քեզ բավարար գովերգել:

- Աղբյո՛ւր Զորության,
փառահեղորեն մեծաշուք,
Դու տեսե՞լ ես,
թե ինչպիսին ենք մենք:
Խեղճացած, կարիքավոր,

Թույլ և մի ողբալի պատկեր,
սակայն մենք պատկանում ենք Քեզ,
մենք սերում ենք Քեզանից:
Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես,
թե ինչպես են մեր ծնկները դողում
և թուլացել են Սննդի պակասից:
Տեսնո՞ւմ ես,
թե մեզանից որքան շատերն են
դարձել ծաղրի առարկա:

Ուրեմն արի՛, Շնորհի Հոգի,
ես խնդրում եմ Ձերդ Վսեմությանը,
որ մեկ անգամ ևս
Քո Շունչը զետեղես մեր մեջ,
որպեսզի նոր կյանք սկսվի:
Հրամանի մի Բառ Քո կողմից,
և համայն աշխարհը
կարող է նորոգվել:

- Ո՛վ Գիտության Աղբյուր, արի՛
և ղեկավարիր ինձ, որ թափանցեմ
Աստծո Խորհրդի մեջ:
Իմ աչքերը ոչինչ չեն տեսել,
իմ ականջները ոչինչ չեն լսել, և
իմ հպումը դեռևս պիտի մնա անհայտի մեջ, եթե Դու
ցույց չտաս ինձ Քո Դեմքը,
և թույլ տաս ինձ լսել Քո Ձայնը:
Մի՞թե չես նկատել,
թե ինչպես եմ ես
փափագում Քո Գավիթներին:

- Աղբյո՛ւր Բարեպաշտության,
ինչո՞ւ է այդքան
դժվար ընկալել Քեզ:
Այդ նրանի՞ց է, որ իմ ձեռքերն
այնքան աղտոտ են:
Ինչո՞ւ ես փախչում ինձանից:
Մի՞թե ես անկատար եմ մնալու:
Դու միշտ հավատարիմ ես
Քո խոստումներին,
և հայտնի ես նրանով,
որ Դու ազատություն ես տալիս
բանտարկյալներին:
Ուստի ես կանչում եմ Քեզ,
շնորհի՛ր ինձ Քո Սրբերի կեցվածքը,
որպեսզի ես տոնեմ մի օր
զորության Քո գործերը:
Ազատագրի՛ր ինձ,
որովհետև հայտնի է, որ

Քո պաշտպանության տակ
բարեպաշտներն ապահով են:

- Աղբյո՛ւր Երկյուղածության,
Քո ճշմարիտ
աշակերտների խորհրդանիշ,
Քո Թագավորության մարգարիտ,
Եկեղեցու սրտի տրոփյուն և
Նրա Խորհուրդների մեծարանք,
ինչպե՞ս կարող ենք մենք
հասնել Քեզ
և տիրանալ Քեզ հավիտենապես:
Դու ամեն ինչ ես (ամեն բանի մեջ)...
Վարդի կոկոն Իմ սրտի,
շնորհի՛ր ինձ այդ պարգևը, որ ես
համարվեմ Քո դուստրերից մեկը:
Քեզանից վախենալը
ողջ իմաստության արմատն է
և հավիտենական Կյանքի մուտքը:

Ո՛վ Փառահեղ Գահ,
բարձր դրված սկզբից ի վեր,
արմատախիլ արա ինձ ամեն չարից
և ցույց տուր ինձ Նրան,
որ նստած է Քեզ վրա:

Ես[1] պիտի հեղեմ Իմ Լույսը Երիցս Սուրբ քեզ վրա և բոլոր նրանց վրա, ովքեր ցանկանում են Ինձ: Ձեզ փրկելու և ձեր Հոր Տուն բերելու համար ես պիտի լցնեմ ձեր հոգին Իմ Շնչով: Դու դեռևս թույլ ես արմատավորված, սակայն համարիր Ինձ որպես քո ամենաթանկագին Ընկերը, որը կպահպանի քեզ արմատախիլ արվելուց: Երբ քայլես, հրաշալի զավակ, ես պիտի լինեմ քո միակ Առաջնորդը: Երբ պառկես՝ քո հավատարիմ Պահակը, երբ արթնանաս՝ քո ուրախ Ընկերակիցը:

[2]Խաղաղությո՛ւն քեզ: Մի՞թե չես կարդացել. «Մի՛ մերժիր բարիք անել որևե մեկին, որ խնդրում է, եթե քո կարողությունների սահմանում է այդ անել»[3]: Ուստի ես ասացի. «Վասիլի՛կի, որին Իմ Հոգին կապեց Ինձ հետ ամուսնական կապերով, և որին ես դաստիարակեցի, դու պիտի վայելես Իմ բարեհաճությունը, դու պիտի վայելես Իմ Ներկայությունը»: Ահա թե ինչու ես դուրս եկա քեզ հանդիպելու, և ես ասում եմ քեզ, աղջի՛կս, ես գոհ եմ ինչպես մի երեխա, որին կրծքից կտրել են: Իմ երջանկությունն ամբողջական է: Մնա՛ Ինձ հավատարիմ, հիշի՛ր, ես քո Ամուսինն եմ, ուրեմն փորձիր նմանվել քո Ամուսնուն, անգամ ստրուկի վիճակ ստանալով...

[1] Սուրբ Հոգին է խոսում:
[2] Հիմա Հիսուսն է խոսում:
[3] Առակ. 3:27

Աղջի՛կս, գիշեր ու ցերեկ հայհոյվում է Իմ Անունը, և Իմ Հարազատ տղաներն ու աղջիկներն Ինձ վիրավորում են, Ինձ հալածում են: Կիսի՛ր Իմ տառապանքները. Ես նվաստացել եմ խնդրելով ձեր սերը: Ես նվաստացել եմ խնդրելով ձեր մեծահոգությունը: Կիսի՛ր Ինձ հետ Իմ տառապանքները: Այս գիշեր Իմ զոհաբերված հոգիներից շատերը պիտի թեթևացնեն Ինձ...

Տե՛ր, թվում է, թե արդեն ամեն ինչ հսկողությունից դուրս է եկել:

Ինձ համար մի՛ ողբա, այլ այս սերնդի... Ես սիրում եմ ձեզ խելացնորության աստիճան, և որևէ ժամանակ Ես նորից հետ կգնայի Գողգոթա, եթե դրանով հնարավոր լիներ փրկել ձեզ այս Ուրացությունից: Ես մեծահոգության և ջերմության կարիք ունեմ, սիրո ապացույցի...

Ես ասում եմ քեզ, աղջի՛կս, Ես չեմ ափսոսում, որ եկել եմ քեզ մոտ: Այո՛, Ես տեսա, թե ինչպես է այս սերունդը թուլացել և կարիքի մեջ ընկել: Եվ Իմ Սուրբ Սիրտն Ինձ ցավ է պատճառում մարդկային հասկացողությունից էլ այն կողմ: Ահա թե ինչու, Իմ Վասո՛ւլա, Ես ցանկանում եմ, որ դու բոցավառես այն ամենը, ինչ Ես եմ տվել քեզ, Իմ Սրտի այդ բոլոր Գանձերը. դրանք պետք է տարածվեն:

Քեզ վստահվել է խնամել այս Անհատնում Գանձը, որը Ես պահել էի ձեր ժամանակների համար: Տարածի՛ր Այն Իմ Սուրբ Հոգու օգնությամբ: Նա՛, ով փրկեց քեզ, կփրկի նաև ուրիշներին:

Քո Գավաթն ու քո Ըմպելիքը Ողորմություն ցույց կտա ձեզանից շատերին, քանի որ Ես մտադիր եմ հավաքել ձեզ բոլորիդ, ինչպես գառներին, և բոլորիդ ցույց տալ ձեր հանգստի վայրը: Իսկ քո խնդրանքների համար Ես վերևից կուղարկեմ ձեզ մոտ Իմ Սուրբ Հոգուն, որպեսզի ձեր խավարի մեջ լույս փայլի: Եկեք, դո՛ւք, որ տենչում եք Ինձ, և սնվեք Իմ Խոսքով: Իմ Խոսքը հարստություն է, և դրանից հետո ձեր հոգին կզգեստավորի իրեն Իմ Հոյակապությամբ: Սերը ձեզ հետ է այժմ և հավիտյան...

Տե՛ր, զարդարի՛ր Քո արարչությանը Քո շքեղությամբ:

Ես նրանց սրտում Խաղաղություն պիտի դնեմ ու Փրկություն իրենց հոգում, եթե նրանցից լսեմ զղջումի մի ճիչ... Ապաշխարե՛ք, և դուք պիտի ստանաք ներման պտուղը, ներե՛ք, և պիտի ստանաք սիրո և խաղաղության պտուղը: Եկե՛ք և ապաշխարեք... Իմ Հոր զայրույթը բոցավառել է մի Կրակ, որը հիմնովին պիտի այրի աշխարհը:

Տեսնո՞ւմ ես, աղջի՛կս, այս սերունդը ծրագրել է պղծություն անել, որի մասին Իմ մարգարեն՝ Դանիելն է խոսել: Դա սարսափելի մի բան պիտի լինի: Ինչպե՞ս կարող է Իմ Հայրը չբորբոքվել: Իմ Հայրը չի հանդուրժի Իր Որդուն տեսնելով ոտնակոխ արված, գետնին նետված, ո՛չ էլ Սուրբ Միքայելը: Սուրբ Միքայելն ու Նրա զորքերը պիտի պաշտպանեն: Գազանն այսօր մարտահրավեր է նետում Երկնքին, նույնիսկ՝ Իմ Զորությանը:

Ահա թե ինչու Իմ Հայրը Կրակով պիտի այրի այս սերնդի ոճիրները, և այդ Կրակը պիտի դա մի այնպիսի ժամանակ, երբ նրանք ոչինչ չեն կասկածի: Իմ Բերանի խոսքով և Իմ Հոր հրամանով, ներկա երկինքն ու երկիրը դատապարտված են կրակով այրվելու: Ձեզ շատ անգամ է զգուշացվել այս մասին, սակայն հայտարարելու փոխարեն դուք դատապարտել եք այն... ենթարկվելով ձեր թուլությանը[1]... Ես ասում եմ ձեզ, ինչպես Գրվածքներն (Սուրբ Գրքերն) են ասում. «Երանելի են նրանք, որոնց անօրենությունները ներվել են, որոնց մեղքերը ջնջվել են: Երանելի է նա, ում Տերը անմեղ կհամարի, երբ Իմ Օրը դա»:[2]

Աղոթի՛ր, աղջիկս, քո սերնդի համար, հաստատակամ եղիր, և Ես ձեզ Հույս պիտի բերեմ: Ես օրհնում եմ քեզ: IC

Հոկտեմբերի 13, 1995

Հիսո՞ւս:

Ես եմ, թույլ տուր Ինձ օգտագործել քո բերանը: Ես պիտի հիշեցնեմ նրանց Իմ Սիրո մասին:

Թանկագինս, ասա՛ քո խորհրդատուին. քանի որ Ես Իմ Կյանքը տվեցի կամավոր կերպով, Իմ աշակերտները ցնցվեցին: Ես Այն տվեցի Իմ ազատ Կամքով, բայց նրանք չկարողացան հասկանալ, որ Ես զորություն ունեի նորից Իմ Կյանքը հետ վերցնելու: Ես թույլ տվեցի, որ Ինձ ճնշեն հանուն Իմ ոչխարների... Ես սա քեզ ասացի, որ քո հասկացողությունը ամբողջական լինի[3]:

Ինչպես գիտես, Ես որդեգրեցի Վասուլային, որպեսզի նրա մեջ Ես փառաբանվեմ: Եվ ինչպես որ Ես նրանից առաջ աշխարհ ուղարկեցի ուրիշներին, հիմա Ես ուղարկում եմ նրան անօրենությամբ լցված այս աշխարհը: Նրա ճամփորդությունը հեշտ չի լինելու[4], քանի որ Հայրն այդպես ցանկացավ Իր մեծագույն փառքի համար: Հսկի՛ր նրան նույն աչքերով, որ Ես եմ հսկում: Թող ձեր միությունը հանի այն կատարելությանը, որը Ես եմ ցանկանում ձեզանից: Թույլ մի՛ տվեք, որ այն քայքայվի: Սիրեցե՛ք միմյանց ինչպես Ես եմ ձեզ սիրում: Ես խնդրում եմ քեզ, ոչ մի ձևի կոպտություն մի՛ օգտագործիր, Իմ ընկեր, քանի որ դա վշտացնում է Իմ Սուրբ Հոգուն: Ես հեզահամբույր եմ, և Իմ ուսուցումը նույնը է և հեզահամբույր: Դուք պիտի շարունակեք այս ճամփորդությունը միասին այն ազգերի միջով, որ Ես ընտրում եմ:

~ Ես ձեզ հետ եմ: Հաստատուն եղիր քո սիրո և սրբության մեջ: Թող Իմ զավակները վայելեն այն լույսը, որ Ես տալիս եմ նրանց այս Պատգամների միջոցով: Շարունակի՛ր, իմ ընկեր, պատվել Մեզ Մեր Երրորդության Սրբության մեջ և պատվել քո Մոր Անարատ Սիրտը: Ողջ ճշմարտությամբ Ես ասում եմ քեզ. ամբողջապես գործի դիր Մեր Երրորդության Սրբության Պատգամները և ավարտիր աշխատանքդ:

---

[1] Հիսուսն ասաց սա այնպես, կարծես Ինքն Իր հետ խոսելիս լիներ:
[2] Հռոմ. 4:7-8, Սաղմ. 31:1-2
[3] Սա այն մասին էր, թե ինչպես պետք է հասկանալ «ճնշել» բառը նախորդ պատգամում:
[4] Ես (միևնույն ժամանակ) լսեցի նաև. «հեշտ չէ»:

Հենվի՛ր Ինձ վրա և խնդրիր, որ Իմ Հոգին օգնի քեզ ավարտել այն, ինչ սկսել ես[1]:

Ես օրհնում եմ քեզ: Ես քեզ հետ եմ: ic

Հոկտեմբերի 17, 1995

Իմ Տե՛ր և իմ Հովիվ,
առաջնորդի՛ր մեզ,
ուղղի՛ր մեր ճամփաները:
Մենք Քո փարախի ոչխարներն ենք,
և ես վստահ եմ, որ Քո
Հավատարիմ Սիրո պատճառով,
Դու ետ դեպի փարախ կբերես
մոլորված ոչխարներին
մեկը մյուսի ետևից:

Այդ Դու էիր՝ Իմ Հովիվ,
որ Ինձ հանեցիր
այս պիղծ աշխարհի ընդերքից:
Թող օրհնյա՛լ լինի Քո Անունը
Երիցս Սուրբ:
Թարմությո՛ւն իմ հոգու,
Կատարյալ Գեղեցկություն,
մեղրից էլ քաղցր բառերով,
բաց արա Քո Բերանը և արտասանիր
Քո Օրենքի Հրաշալիքները,
որպեսզի շատերն ազատ արձակվեն:

Թող Քո Հավատարիմ Սերը հասնի
Քո ողջ արարչությանը:
Եղի՛ր ողորմած, առատաձեռն
և գթառատ մեր հանդեպ,
որպեսզի մեր աչքերը
բացվեն, և մեր հայացքը սևեռվի
Քո Երրորդության Սրբության վրա:
Ամեն:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ:

Բռնի՛ր Իմ Ձորեղ Ձեռքը, Ես կառաջնորդեմ քեզ: Քեզ առաջնորդելը, և քո կյանքի ճամփորդության մեջ քո Սուրբ Ուղեկիցը լինելը, Ինձ համար մշտական ուրախություն է: Տեսնո՞ւմ ես: Ես տվել եմ ձեզ սրտի ազատություն: Իմ Հոգու միջոցով դուք կստանաք ձեր ազատությունը: Նրա մաքրագործող Կրակի միջոցով դուք կմաքրվեք: Ուր որ Իմ Հոգին է, այնտեղ ազատություն է, որովհետև նորոգում կա, այլակերպում՝ Նրա Ներկայությամբ: Ձեր նոր ծնունդը մահկանացու սերմից չէ, այլ Իմ Հոգուց: Իմ-Սրտի-Ուրախություն, թույլ տուր Ինձ օգտագործել քեզ

[1] Գրքերը

որպես Իմ ուռկանը, որպեսզի շատ սրտեր բերեմ ապրելու այս ազատության մեջ:

Սիրի՛ր Ինձ և սփոփիր Ինձ: Ես քեզ հետ եմ: Փառաբանի՛ր Ինձ և օրհնիր Իմ Սուրբ Անունը Երիցս Սուրբ:

Հոկտեմբերի 25, 1995

(Հավատի Դավանության Միաբանության Ազդարարությունից հետո)

Խաղաղությո՛ւն քեզ: Ես քեզ հետ եմ: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես իրականացան Իմ կանխատեսումները:

Իմ-Սրտի-ծաղիկ, Իմ-Աչքերի բոց: Քո առաքելությունը կավարտվի միայն այն ժամանակ, երբ Ես թույլ կտամ նրանց խաչել քեզ: Հիմա դու ճամփորդում ես մի անհարթ ճանապարհով, բայց Ես քեզ հետ եմ: Արիացիր և մի՛ կորցրու այն խաղաղությունը, որը Ես եմ տվել քեզ: Ես ասել եմ քեզ, որ Հայրը նշել է քեզ համար մի ճանապարհ, որը նման է Իմ ճանապարհին: Այն, ինչին Ես զիջել ու դիմացել եմ, դու էլ կզիջես ու կդիմանաս, բայց ամեն ինչ կլինի քո ուժերի համապատասխան չափով:

Այսօր, ինչպես տեսնում ես, քեզ ծախել է Իմ Յուրայիններից մեկը: Թանկագի՛նս, քո սեփական ժողովուրդը դավաճանեց անմեղ արյանը... Դու Հռոմեացիներին հանձնվեցիր քո յուրայիններից մեկի կողմից[1], որպեսզի նրանք դատապարտեն քեզ, իսկ հետո... խաչը հանեն:

Վասո՛ւլա, դու նույնպես լռությունն պահպանիր, ինչպես Ես[2]: Դու բավական վկաներ ունես, որոնք կարող են պաշտպանել քեզ: Հավատարիմները կմնան հավատարիմ: Քո հագուստը, աղջի՛կս, պիտի թաթախվի քո արյամբ, և սա նույնպես պիտի լինի այն բանի վկայությունը, որ դու սերում ես Ինձանից: Դու ծնվել ես սրա համար և քո համաձայնությունը ուրախացնում է Ինձ, որովհետև քո տառապանքների միջոցով, Ես շատերին պիտի փրկեմ: Քո տանջանքների միջոցով Ես լույս պիտի բերեմ Իմ Եկեղեցու մեջ՝ ծնունդ տալով նորոգման Իմ Հոգով Երիցս Սուրբ:

Այն ժամանակ, երբ քեզ ճնշողները ուրախանալիս կլինեն, Իմ յոթերորդ հրեշտակը պիտի դատարկի իր թասը օդում, կրակով բոցավառելով ողջ մթնոլորտը[3]... Վասիլի՛կի, նայիր Ինձ Աչքերիս մեջ[4]... Դու պիտի խոստանաս Ինձ, եթե սիրում ես Ինձ, ներել նրանց բոլորին: Շատերին դա անտրամաբանական կթվա, բայց դու Իմ հետևորդն ես, այնպես չէ՞:

Այո՛, Տեր:

---

[1] Քրիստոսը հասկացրեց ինձ, թե ում կողմից է դա լինելու:
[2] Ես չպետք է պաշտպանեմ ինքս ինձ:
[3] Ակիտայի պատգամի հիշեցում Ճապոնիայում:
[4] Ես նայեցի և հալվեցի:

Ընդօրինակիր, ուրեմն, քո Տիրոջը, քանի որ վերջում ես պիտի հաղթեմ... Մինչև հիմա նրանք չեն կարողանում հասկանալ, որ այս Պատգամը գալիս է Ինձանից[1]...

Շնորհակալ եմ Քեզանից, Տե՛ր իմ,
այն ամենի համար,
որ Դու անում ես հանուն ինձ,
ես Քեզ նույնիսկ
ավելի շատ եմ սիրում:

Աղավնյա՛կս, քո Փրկիչը սիրում է քեզ և օրհնում է քեզ: ic

Նոյեմբերի 8, 1995

Տե՛ր, Թագավոր ի սկզբանէ,
և Տեր ամեն բանի, ես մարմինն եմ
Քո Մարմնի, ոսկորը Քո Ոսկորի,
Դու իմ մեջ ես, իսկ ես՝ Քո մեջ:
Ինչպիսի՜ ուրախություն,
ինչպիսի՜ հրճվանք, իմանալ,
որ ես տիրապետում եմ Քեզ,
և որ Դու տիրապետում ես ինձ:
Ես պատկանում եմ Քեզ, իսկ Դու,
Թագավո՛ր իմ, պատկանում ես ինձ:

Դու ճշմարիտ Որթն ես,
իսկ ես Քո ճյուղերից մեկը,
ես Քո մնացորդն եմ,
ի՜նչ ուրախություն է՝
մեկ լինել Քեզ հետ:
Եվ ես մտադիր եմ մնալ Քո մեջ,
որպեսզի Դու մնաս իմ մեջ: Ո՜հ,
ինչպիսի՜ պարգև Քո Հոգու կողմից:
Ալելուի՛ա:
Ցույց տուր Քո Ծրագրերը, ո՛վ Տեր,
և ես կվերցնեմ ամեն ինչ,
որ Դու առաջարկում ես ինձ:
Հիմա ես համարձակ եմ խոսում,
բայց Դու ինձանից
տառապա՞նք ես ուզում:
Ես կընդունեմ ամեն ինչ,
որ Դու տալիս ես ինձ: Ամեն ինչ
դառնում է այնքան գեղեցիկ,
երբ դա գալիս է Քեզանից:

Արի՛, արի և իշխիր իմ մեջ,

[1] Հիսուսն ասես խոսում էր Ինքն իր հետ, ցածր ձայնով:

Դու իմ երջանկության աղբյուրն ես:
Դու հրավիրում ես ինձ
կիսե՞լ Քո Բաժակը:
Մի Բաժակ, որտեղից Քո
Աստվածային Շուրթե՞րն են խմել:
Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ,
ես դողում եմ
հուզմունքից և հրճվանքից:
Ո՛վ Սեր, Դու հրապուրել ես ինձ:

Իմ Սիրտը ուռչում է հուզմունքից, որ դու այս ձևով հրավիրում ես Ինձ քո սեղանին... Վստահի՛ր Ինձ: Ես Երկնքից եմ, և ո՛չ մի արարած չի կարողանա հաղթահարել Ինձ քո մեջ: Ես կենդանի եմ քո մեջ: Աշխարհի թագավորություններում ապրող ո՛չ մեկը, և ո՛չ էլ նա[1], որ թագավորում է նրանց վրա, չի կարող շուռ տալ Իմ իշխանությունը քո մեջ:

Ես Աստված եմ Երիցս Սուրբ, ուստի մի՛ վախեցիր: Հի՞ զ ես, թե Ես քեզ մի անգամ ինչ ասացի: Ես ասացի քեզ, որ Ես Հայտնի եմ, որ թագավորներ և թագավորություններ եմ տապալում, եթե նրանք խոչընդոտ են դառնում Իմ ճանապարհին: Հիմա Ես քեզանից միայն հավատարմություն եմ խնդրում: Մնա՛ Ինձ հավատարիմ: Մի՛ նայիր ո՛չ ձախ, ո՛չ էլ աջ: Ես կօգնեմ քեզ: Ուրախացի՛ր, ընկերս, քանի որ Ես պատվել եմ քեզ՝ հրավիրելով քեզ կիսել Իմ Բաժակը, ձեր բաժանման և ձեր սրտերի կեղծավորության Բաժակը...

Այժմ, դու և Ես մոտենում ենք «Ճշարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների տասներորդ տարեդարձին: Արիացի՛ր, աղջիկս, և մի՛ վիրավորվիր, երբ աշխարհը[2] զրկում է քեզ պատիվներից: Միշտ կարգապահ եղիր Իմ Եկեղեցու Հանդեպ, և դու պիտի վայելես Իմ բարեհաճությունը: Միշտ պատրաստ եղիր արձագանքել Իմ կանչերին, ասելով. «Այստեղ եմ ես, Տե՛ր», և քո Արարիչը պիտի փայլի քեզ վրա:

Իմ Հոր Ընտրյալ, մի՛ ընկնիր փորձության մեջ: Իմացի՛ր, թե ուր պետք է գիտություն գտնել, ուր հաստատակամություն, ուր իմաստություն և կյանք: Քո լռության մեջ դու կգտնես այս բոլոր բաները և ավելին՝ Իմ Սուրբ Հոգու մեջ: Սիրի՛ր Իմ Հոգու մեջ շարժվել, ինչպես ձուկը՝ ջրում: Այս ջրից դուրս՝ դու կմեռնես և կչորանաս: Ուստի մնա՛ Իմ Հոգու մեջ, չնչի՛ր Իմ Հոգու մեջ և պիտի ապրես:

Երջանի՛կ եղիր: Ես խնամեցի և աճեցրեցի քեզ, որ Ինձ մոտ բերես հոգիների մի ամբոխ: Նրանցից շատերը դեռևս չեն ցանկանում վերադառնալ Ինձ մոտ... Որքա՜ն եմ Ես խղճում նրանց: Ես տագնապի մեջ եմ և տառապում եմ տեսնելով նրանց, որ ամբողջովին անտեղյակ են այն վտանգների հանդեպ, որոնք շրջապատում են նրանց:

Ա՜հ... Վասո՛ւլա, միացի՛ր Ինձ Իմ տառապանքների մեջ, միացի՛ր Ինձ Իմ տագնապների մեջ, սփոփի՛ր Ինձ և հանգստացրու Ինձ...

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, էլ ավելի ի՞նչ կարող եմ ես անել:

---

[1] սատանան

[2] Մի քանի թերթեր հալածում էին ինձ:

Սիրի՛ր Ինձ, դա հանգստացնում է Ինձ: Քո առջևում օձերը ցանկանում են հարվածել քեզ և սպասում են քեզ: Սակայն, չնայած նրանք թափանցիկ են, այնպես որ հնարավոր չէ նրանց անմիջապես նկատել, ես քեզ աչքեր կտամ, որ տեսնես նրանց: Մի՛ վախեցիր, քանի որ ես քեզ հետ եմ: Նրանցից ո՛չ մեկը չի կարողանա հարվածել քեզ: Վերջում մի օձը կուլ կտա մյուսին[1]: Այո՛, ինչպես այն տեսիլքում, որ ես տվեցի քեզ:

Արի՛, ես սիրում և օրհնում եմ քեզ:

Նոյեմբերի 10, 1995

Փառ՛ք Աստծուն
երկնքի բարձունքներում,
փա՛ռք Նրան,
ով բարձրացրեց իմ հոգին
այս երկրի ընդերքից:
Փա՛ռք Երիցս Սուրբ Լույսին,
որի զորությամբ եղավ ամեն ինչ:
Փա՛ռք Աստծուն, անպարտելի,
անզուգական Իր Իշխանությամբ:
Փա՛ռք Անմահին, որում մենք
անմահություն ենք գտնում:
Թող Քո Շունչը, Ամենասուրբդ,
որը Քո Փառքի
զուլալ ճառագայթումն է,
կենդանացնի մեզ՝
վերանորոգելով մեզ
մեկ փառավոր Մարմնի մեջ: Ամեն:

Խաղաղությո՛ւն:

Զավա՛կս, լսի՛ր. Նրանք, ովքեր այսօր քեզ հետ անգթորեն են վարվում, մի օր պիտի կանգնեն Իմ դեմ և հաշիվ պիտի տան... Այն ժամանակ նրանք չեն համարձակվի ասել. «Մենք ի՞նչ սխալ բան ենք արել», որովհետև ես նրանց ցույց կտամ այն խոր ու ազդեցիկ վերքերը, որ նրանց ամբարտավանությունը հասցրեց Իմ Մարմնին, և ես պիտի դատեմ նրանց այն խարազանման չափով, որ ես ամեն օր ստանում եմ նրանցից... Նրանք պիտի ստանան տասն անգամ ավելի:

Զավա՛կս, նման Իմ Պատկերի, դու իսկապես ամենից չարչարված պատգամատարն ես երկրի վրա, սակայն՝ նաև ամենից առանձնաշնորհյալը: Ես քեզ որպես առանձնաշնորհում տվել եմ Իմ Փչե Պսակը, Իմ Մեխերը և Իմ Խաչը: Ես բարձրացրեցի քեզ, որ լինես մերժման Իմ հզոր Նշանը, Իմ Սիրո մերժման... Ա՜հ, ձեզանից որքան շատերն են կողպված մնացել միևնույն քնի մեջ...

– Լսի՛ր, Վասո՛ւլա, ես քեզ մի փոքր դաղտնիք պիտի ասեմ: Քեզ տրված այս տառապանքների օրերին, ես շատ հոգիների եմ գրավել դեպի Իմ

[1] Ինչպես իմ 1989 թվի հունվ. 29-ի տեսիլքում:

Սիրտը, ինչպես նաև ազատագրել եմ շատ հոգիներ քավարանից, որոնք կապված էին շատ տարիներ: Տեսնո՞ւմ ես: Ոչինչ իզուր չի անցնում: Ա՛հ, հիմա Իմ Սիրտն ասես այրվում է, քանի որ քո տառապանքների միջոցով ես կարող եմ մեծ բաներ կատարել:

Իմ զավակները (ուրիշների մեղքերի քավության համար) հատուցում չեն անում այնպես, ինչպես Ես կուզենայի: Հետևաբար Իմ Աչքերն ընկան քեզ վրա, գիտենալով, որ դու չես մերժի քո Փրկչի աղերսները և քեզ թույլ կտաս ճզմվել նրանց կողմից, ովքեր արդարության և խաղաղության կոչ են անում, բայց կատարում են ճիշտ հակառակը:

Թող հիմա ամբողջ աշխարհն ուրախանա և հավատա, որ իրենք հաղթել են «դաժան պատուհասին», թող հավատան, թե լռեցրել են քեզ: Այո՛, մի բազմություն առաջ պիտի գա, որ քեզ ցած տապալի, ինչպես մի բազմություն ելավ, որ ինձ ցած տապալի և խաչը հանի: Շատ կեղծ վկաներ պիտի հայտնվեն վերջին պահին՝ կեղծ վկայություն տալով քո մասին, ինչպես շատերը ոտքի ելան, որ կեղծ վկայություն տան ձեր Փրկչի մասին: Իրականում, նրանք դաժանորեն իրենց մեղադրանքները պիտի բռնադատեն անմեղ արյան վրա, հասկանո՞ւմ ես:

Այն, ինչ նրանք արեցին Ինձ հետ, նույնը պիտի անեն քեզ հետ, բայց այն չափով, որ քո հոգին կարող է տանել: Ծաղրանքը պիտի շարունակվի ամենուրեք՝ ազդարարելով, որ դու կեղծ մարգարե ես, ինչպես Իմ պահակները ծաղրեցին Ինձ՝ ծեծելով Ինձ, հետո աչքերս փակելով, հերթով հարվածում էին Ինձ և հարցնում. «Մարգարեացի՛ր, ո՞վ հարվածեց քեզ»: Աշխարհի աչքում դու պարտվող պիտի երևաս, ինչպես Ես՝ քո Տերը երևացի Իմ Խաչի վրա: Այս բոլոր բաները պիտի հանդիպեն քո ճանապարհին, որպեսզի Հոր Խոսքերը կատարվեն:

- Ես Հարությունն եմ, և Ես վեր պիտի հանեմ այն ամենը, ինչ գրել եմ քո ձեռքով, որպեսզի բոլորը հավատան, որ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները չեն գրվել մարդու կողմից, այլ՝ Շնորհի Իմ Հոգու: Դու խավար և վհատություն չպիտի զգաս, քանի որ Ես թաքցրել եմ քեզ Իմ Սուրբ Սրտում: Իմ փոքրիկ Հոգի, թող Իմ Վեհասքանչ Ձայնը լսվի և մի՛ վախեցիր քո շուրջը եղած աղմուկից: Իմ Հոր Շրթունքներից բարկություն է ժայթքում չապաշխարած մեղավորների հանդեպ, և Նրա զայրույթը ցույց պիտի տրվի կլանող բոցավառ կրակով: Նա այդ հայտարարեց վերջերս, քո Մոր միջոցով Ակիտայի[1] պատգամատարին[2]: Վերջում երկիրը բացելու է իր ականջներն ու սիրտը, որպեսզի փրկությունը դուրս հորդի, և Ես պիտի հաղթանակեմ ձեր և Իմ Մոր Անարատ Սրտի հետ միասին:

- Իմ տառապանքների անոթ, Ես քեզ բավարար զորություն պիտի տամ, որ արժանապատվությամբ կատարես քո առաքելությունը, որը պիտի փառաբանի Ինձ: Իմ Սերը Քո հանդեպ հովանի է քեզ, ուրեմն մի՛ վախեցիր, «Io tedhal»...

Ես՝ Հիսուս Քրիստոսը, քեզ հետ եմ այժմ և միշտ:

ΙΧΘΥΣ

[1] Ճապոնիայում
[2] Քույր Ագնեսին:

Նոյեմբերի 15, 1995

*Սուրբ Գրքերն ասում են. «Քանզի
Ականջն է քննում խոսքերը,
ինչպես քիմքը կարող է տարբերել
մի ուտելիքը մյուսից».*[1]

*Այդ ինչպե՞ս է, որ նրանք
չեն հայտնաբերել Քո Խոսքը,
այդ ինչպե՞ս է, որ
Քո Կերակուրը չգնահատվեց,
կամ համեղ չէր նրանց համար:
Այդ ինչպե՞ս է, որ Սուրբ Գրքերը
մերժվում են իմ դեպքում:
Երբ հրեաները մեղադրեցին Քեզ,
Հիսո՛ւս, և չհավատացին,
որ Աստված է Քեզ ուղարկել,
և որ Դու Աստծո Որդին ես
և Ինքդ՝ Աստված,
Դու ասացիր նրանց.
«Ես շատ բարի գործեր եմ արել,
որպեսզի տեսնեք, Իմ Հոր գործերը:
Դրանցից ո՞ր մեկի համար եք
քարկոծում Ինձ... Եթե Ես
չեմ կատարում Իմ Հոր գործը,
կարիք չկա Ինձ հավատալու:
Բայց, եթե Ես անում եմ դա,
ուրեմն, եթե անգամ դուք
մերժում եք հավատալ Ինձ,
գոնե հավատացեք
Իմ արած գործին»: Ուստի,
ինչո՞ւ, Տե՛ր, նրանք չեն նայում
Քո Անունով արված գործերին:
Մի՞թե դրանք չեն վկայում Ինձ:*

Խաղաղությո՛ւն քեզ: Սերը քեզ հետ է: Դու կարո՞ղ ես ամբողջովին ենթարկվել Ինձ: Ես ցանկանում եմ, որ այս փոձությունը պատճառ չլինի քեզ համար, որ կորցնես Իմ Խաղաղությունը:

Ես այս Պատգամի Հեղինակն եմ, ուստի չհրաժարվես: Ես պիտի փրկեմ քեզ: Մի՞թե Ինձ թույլ չի տրված փորձել քեզ և բոլոր մյուսներին: Մի՞թե Ինձ թույլ չի տրված զորացնել քեզ փորձությունների միջոցով: (Վասո՛ւլա, Ես մի հրեշտակ կուղարկեմ, որ սփոփի քեզ...) Դու կանչում ես Ինձ. «Տե՛ր, ես ծանր վիրավորված եմ», բայց, Վասո՛ւլա, Ես նույնպես վիրավորված եմ... Դու կանչում ես. «Տե՛ր, Ինձ հետ դաժանորեն են վարվում», իսկ Ես ասում եմ քեզ՝ Ինձ հետ նույնպես:

– Իմ ընտրյալին հարվածել են Իմ Տան ներսից, և դա նրա համար էր, որ այն, ինչ Հայրն ասաց քեզ՝ կատարվեր... Իսկ հիմա Ես ասում եմ քեզ, եթե

[1] Հոբ 34:3

որևէ քահանայական հոգի բացահայտորեն արտահայտվի ի նպաստ Ինձ[1] աշխարհի առջև, ես նույնպես, երբ ժամանակը գա, կարտահայտվեմ ի նպաստ իրեն Իմ Հոր ներկայությամբ:

~ Իսկ քեզ, ես ասում եմ. Մի՛ պաշտպանիր ինքդ քեզ: Թող նրանք, ովքեր լսել են քեզ, հիմա վկայություն տան և բացահայտորեն հռչակեն ճշմարտությունը: Բայց սատանան կլռեցնի նրանցից մի քանիսին՝ նրանց ուղարկելով համր ոգի: Նրանք կթաքցնեն այն ճրագը, որ ես տվել եմ իրենց և կթաքնվեն խավարում, որպեսզի չտեսնվեն՝ այդ խավարն անվանելով «զգուշություն»: ic

Նոյեմբերի 21, 1995

Մի՞թե ես իզուր եմ աշխատել:
Մի՞թե ես անտեղի եմ հոգնել:
Բայց ամբողջ ժամանակ
Իմ ընթացքը Քեզ հետ էր:
Իմ շնորհը՝ տրված է Քո կողմից,
Աստվա՛ծ իմ, ահա թե ինչու
Դու իմ Զորությունն էիր:

Իմ Վասո՛ւլա, ինչո՞ւ ես ասում. «Իմ Զորությունն էիր»: Ինչո՞ւ ես անցյալով խոսում: Դու դեռևս Իմ ծառայության տակ ես, և դու մշտապես զորություն ես ստանում Իմ կողմից: Ես դեռևս քո Զորությունն եմ և միշտ էլ կլինեմ... Ո՛չ, դու իզուր չես աշխատել, ո՛չ էլ անտեղի ես հոգնել: Քո անձնատվությունը հրաշքներ է կատարել Իմ Հոգով: Մի՞թե երկիրը մի օրում է ծնվում: Նմանապես հնարավոր չէ, որ միասնությունը ծնվի մեկ օրվա մեջ, քանի որ Իմ ընտրյալներից շատերը գնում են իրենց սեփական ճանապարհով: Մի Ձայն ուղարկվեց ազգերին՝ խոսելու և սփոփելու համար Իմ զավակներին, նրանց ետ՝ դեպի Ինձ վերադարձնելու համար: Ես ապահովեցի սերմեր, որ ցանվեն հաշտության դաշտում, և ես քեզ ապահովեցի Իմ հոգևոր հացով, որպեսզի Իմ Խոսքը կշտացնի նրանց, ովքեր կարիքի մեջ էին:

~ Քո վազքը, Վասո՛ւլա, չի ավարտվել, որովհետև ես ստեղծեցի քեզ, որ լինես Իմ զենքը Ավերիչի դեմ, որը կուրացնում է Իմ մարդկանցից շատերին: Դու ոչնչից վախենալու կարիք չունես, քանի որ ես քեզ հետ եմ...

Այո՛, Ավերիչը գերել է նրանց միտքը՝ աշխարհի վրա ունեցած իր զորությամբ, և նրա անունը գրված է Սուրբ Գրքերում, որպես երեք անմաքուր ոգիներ, որոնք կազմում են եռանկյունի: Այդ երեք անմաքուր ոգիները, գալիս են վիշապի, գազանի և կեղծ մարգարեի երախներից[2]: Դե՛հ, նրանք արթնացել են քո ձայնից, քանի որ դու Իմ Արձագանքն ես, և դրա համար երդվել են, Իմ Բաժակը շուռ տալով, լռեցնել քեզ: Նրանք որոշել են հարձակվել քեզ վրա և քո դեմ:

[1] Հիսուս խոսում է Իր Պատգամի մասին:
[2] Հայտ. 16:13

Իմ փոքրիկ հրեշտա՛կ, քո դյուրաբեկությամբ ես զինաթափ պիտի անեմ հզորներին: Քո ոչնչությամբ ես պիտի բացահայտեմ Իմ Զորությունը և պիտի տապալեմ նրանց թագավորությունները: Արիացի՛ր աղջիկս, և Ես պիտի վերականգնեմ ճշմարտությունը: Ես օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 28, 1995

(«Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների 10-րդ տարեդարձը)

Խաղաղությո՛ւն քեզ: Իմ Վասուլա, ա՛հ, ասա՛ Ինձ, ասա՛ Ինձ, դու երջանի՞կ ես, որ Ինձ հետ ես այս ձևով այս ամբողջ տարիների ընթացքում: Սոսկ մարմնավոր արարած, բայց սրտով, դու երջանի՞կ ես:

Իմ-Ուրախության-Թա՛գ,
ինչպե՞ս կարող էի երջանիկ չլինել:
Քո Շունչն ինձ տարել
հասցրել է ամպերին,
որ առաջանամ քամու թևերով,
որ դառնամ քամիների մի մասը[1]:
Ուրեմն, ինչպե՞ս կարող եմ ես
երջանիկ չլինել:

Եվ դու դարձել ես Իմ մի մասը[2], իսկ Ես՝ քո մի մասը, և դու բնակություն ես հաստատել Իմ մեջ, ինչպես Ես եմ բնակություն հաստատել քո մեջ՝ փոխակերպելով քո հոգին մի Եդեմի, որպեսզի Ես փառավորվեմ: Առա՛ջ տար քայլդ և առաջ գնա քամու թևերի վրա, քանի որ դու մի հատուկ տեղ ունես Իմ Սուրբ Սրտի մեջ:

Իմ-Սրտի-Խնջույք,
իմ-աչքերի-Անուշահոտ-Յուղ,
Լույս Երիցս Սուրբ,
իմ հոգին հրճվում է, որովհետև
Դու փրկեցիր «Անբնակին»,
օրհնյա՛լ լինի Քո Անունը
Երիցս Սուրբ:

Եթե Ես իսկապես «քո-սրտի-Խնջույքն» եմ: Ամեն տարի տոնիր այսօրվա օրը, երբ քեզ և ուրիշ շատերին բերել եմ Իմ Սրտի մեջ, և հայտնագործիր այն անհաշիվ գանձերը, որ Ես պահել եմ ձեր ժամանակների համար: Մտքումդ պահիր այս մեծ օրը: Եղի՛ր Իմ կողքին, ինչպես եղել ես արդեն անցած տասը տարիների ընթացքում: ԵՐԲԵՔ չհեռանաս Իմ կողքից, քայլի՛ր Ինձ հետ, ինչպես արել ես այս աբողջ տարիների ընթացքում:

[1] «Դու օգտագործում ես քամիները՝ որպես պատգամատարներ» (Սաղմ. 103:4):
[2] Վկայակոչում՝ Հովհ. 15

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես ես կրթեցի քեզ: Տեսնո՞ւմ ես, թե ի՛նչ եմ կատարել ես: Տեսնո՞ւմ ես Իմ Իմաստությունը: Քեզ որդեգրելով՝ ես որդեգրեցի ուրիշ շատ շատերին: Իմ ճանապարհն ուղիղ է, ձեզ մոտենալու Իմ ուղիները՝ հմայիչ... Քո Թագավորը կատարյալ է և զեղեցիկ:

«Կենդանացրո՛ւ Իմ Եկեղեցին, զարդարի՛ր Իմ Եկեղեցին, միավորի՛ր Իմ Եկեղեցին», սա էր Իմ Հրամանը քեզ: Եվ ես քեզանից միայն խնդրեցի համաձայնվել անելու Իմ Կամքը, որ կարողանամ աշխատել քեզ հետ Իմ փառքի համար: Եվ այդպես դու շահեցիր Իմ ընկերությունը:

Հիմա Իմ Եկեղեցին օգտվում է Ինձ վերադարձած բազմաթիվ հոգիներից... Եվ հիմա Ինձ ուղղված նրանց գովաբանությունները միանում են երկնքում Իմ հրեշտակների գովաբանություններին: Եվ քո բերանով ես խոսեցի, հայտնելով այն, ինչ Իմ Սիրտն ամենից շատ է ցանկանում Միասնության համար: Դու իզուր չես աշխատել: Ես խնդրեցի քեզ փոխանցել Իմ Խոսքերը և Զատկի ամսաթվի միասնականացման Իմ ցանկությունը՝, և դու այդպես էլ արեցիր: Տեսնո՞ւմ ես, Ինձ ճանաչելը, զավա՛կս, անշուշտ քո հոգու կատարյալ արժանիքն է ու լույսը: Աղջի՛կս Եգիպտոսից, Ես միշտ հսկում եմ քեզ. լուսաբացը, որը Ես երազում էի որ լիներ քո հոգում, քեզ տրվեց Իմ Հոգու կողմից Երիցս Սուրբ, որպեսզի իրագործվի Իմ ողջ նպատակը:

Իմ բառերը. «Լցված, դուք շատ կլինեք», առեղծված էին քեզ համար: Հետո Ես հասկացրեցի քեզ, թե դրանք ինչ են նշանակում. «Երբ դու լցվես Երիցս Սուրբ և կյանք տվող Իմ Սուրբ Հոգով, դու, Իմ Հոգու զորությամբ, դարձի և ապաշխարության պիտի բերես շատերին»:

Ես մշակեցի քո հողը Իմ Սեփական Ձեռքով և փշրեցի ժայռերը, որ հարթեցնեմ Իմ ճանապարհը քո ներսում: Հետո Ես ցանեցի Իմ Սեփական երկնային սերմերը քո մեջ: Իմ Անունը պատվելու համար Ես երդվեցի ցած տապալել ամեն մի զավթիչի, որը կկանգներ Իմ նոր այգին տանող Իմ ճանապարհին: Գիշեր և ցերեկ Ես հիանում էի՝ հսկելով քեզ: Այսօր կարող եմ ասել, Վասո՛ւլա, Ես իզուր չեմ աշխատել քո մեջ: Իմ Հոգին ազատ արձակեց քեզ, որպեսզի դու լինես պատշաճ մի վայր, որ Ես բնակվեմ քո մեջ: Թող Իմ ուստերն ու դուստրերը մոտենան Ինձ, և Ես նրանց նույնպես ազատ կարձակեմ, որ իրենք էլ միանան Իմ հավաքին: ic

Դեկտեմբերի 1, 1995

Ես օրհնում եմ Քո Սուրբ Անունը՝
մինչ կանգնած եմ ակնածանքով
Քո Փառքի առաջ:

Վերևում, Հոգին հրավիրում է ինձ,
ասելով, որ Քեզանից երկյուղելը[1],
Աստվա՛ծ իմ, մի գանձ է, տրված
հենց Իրենից՝ Իմաստությունից:

[1] «Յահվեի վախը Նրա Շունչն է» (Ես. 11:2-3):

[1]Եվ այդ ժամանակ ձեր մեջ սկսվում է Իմ Թագավորությունը, որին հետևում է Հասկացողության Իմ Հոգին: Որպեսզի ձեզ վստահեցնեմ ձեր Հոր Աստվածությանը Երիցս Սուրբ, Իմ Հոգին ձեր հիմքերը կհաստատի Ճշմարտության մեջ՝ ձեր հոգուն բացահայտելով այն, ինչ ձեր գիտուններն ու փիլիսոփաները հիմար կամ անմիտ են կոչում:

Նա կլուսավորի ձեր մտքի աչքերը՝ տալով ձեզ անսահմանորեն հարուստ, ընկալման ոգի, որ ներթափանցեք Մեր Աստվածայնության ամբողջական խորհրդի մեջ: Այդ ժամանակ դուք կտեսնեք բաներ, որոնք ոչ մի աչք չի տեսել և ոչ մի ականջ չի լսել, բաներ, որոնք անցնում են մարդու մտքի սահմաններից այն կողմ, որովհետև ձեր միտքը կնքված կլինի Իմ Սուրբ Հոգու կնիքով: Եվ այն ամեն բաները, որոնք անթափանցելի և անհասանելի էին թվում ձեր հոգուն, հասկանալի կդառնան Մեր Աստվածային Լույսի ներքո: Եվ Ես, Հասկացողության Իմ Հոգու հետ միասին, ձեր միտքը կնմանեցնեմ Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի մտքին: Հետո, ամբողջապես լինելով Ճշմարտության մեջ, ձեր հոգին կհասնի հենց Իր՝ Քրիստոսի կատարելությանը, բացահայտելով ձեզ, որ Եկեղեցին, որը Նրա Մարմինն է երկրի վրա, լցնում է ողջ արարչությունը:

Օ՜, ի՜նչ Խորհուրդ չէի տա Ես ձեզ: Ձեր նպատակը պետք է լինի Ճշմարտության մեջ մնալը: Դրա համար ձեր հոգին պետք է նվիրված լինի Սուրբ Երրորդությանը: Խորհրդատվության Իմ Հոգին կօգնի ձեզ ապրելու սուրբ կյանքով, որովհետև ձեր միակ ուրախությունը կլինի հետևել Իմ Օրենքին. օրհնյալ և Երիցս Սուրբ է այն: Նա խորհուրդ կտա ձեր հոգուն դառնալ անմեղ մի մանուկ, որ վազի Ինձ մոտ, սիրտ-սրտի զրույց ունենալու Ինձ հետ, ոչ մի անվստահություն ցույց չտալով Ինձ, և Ես ձեզ նույնպես կհամարեմ որպես Իմ զավակներից մեկը, որն արտացոլում է Իմ Պատկերը: Այդ ժամանակ ձեր աչքերի լույսը կլինի Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի Լույսը, և ձեզ տեղ կհատկացվի սրբերի շարքում:

Գտե՛ք Ինձ սրտի պարզությամբ, և ամրապնդե՛ք ձեր հոգին սրբության, արդարության և սիրո մեջ: Ծարավի եղե՛ք Ինձ՝ ձեր Աստծուն, և Ինձ հասնելու խանգարող խոչնդոտները կկորտակվեն ձեր սիրուց: Հետո ձեր տեսադաշտում պիտի հայտնվի Նա, ում տենչում էր ձեր հոգին, որն ավելի սիրելի էր ձեզ, քան աշխարհի բոլոր հարստությունը և ձեր սեփական կյանքը, Օրհնյալը և բոլորի Տիրակալը, Միակը, Երրորդությունը, սակայն բնությամբ Մեկ, Անդիմադրելին և Փառապանծը, Անհամեմատելին, որ ողջունի ձեզ Իր Թագավորության մեջ:

Խնդրե՛ք Խորհրդատվության Իմ Հոգուն, որպեսզի չչեղվեք Ճշմարտությունից: Վճռական եղեք Զորության Իմ Հոգուց ստանալու զորություն, որ կարողանաք դիմադրել ձեզ հանդիպող փորձություններին, որպեսզի արիությամբ և հաստատակամությամբ հաղթահարեք որևէ խոչընդոտ, որը կարող է զրկել ձեզ Իմ Անանց Լույսից: Խնդրե՛ք Զորության Իմ Հոգուն ձեզ տալ ռազմիկի սիրտ, որ պատերազմեք հավատի և արդարության բարի պատերազմը և միանաք

[1] Հավիտենական Հայրն է խոսում:

զորությամբ և քաջասրտությամբ գերակշռող Իմ հրեշտակապետեր Միքայելի և Ռաֆայելի՝ Արդարության Ռազմիկների այս հոգևոր պատերազմին, որոնք Իմ Սուրբ Հոգու Լույսի ներքո դիտում են մարդկային վարքագծի յուրաքանչյուր կողմը:

Բա՛ց արեք ձեր բերանը և խնդրեք: Նա, ով ապրում է հավերժ և ստեղծել է ողջ տիեզերքը, ասում է ձեզ. Բա՛ց արեք ձեր բերանը, խնդրե՛ք, և Ես կլսեմ ձեզ: Այցելության օրը մոտ է: Խոնարհվե՛ք և խնդրեք Զորության Իմ Հոգուն, որ ձեզ տա այն ուժն ու զորությունը, որպեսզի արժանապատվությամբ և եռանդով կրեք ձեր խաչը, որպեսզի ձեր ցավերի և ձեր մեծահոգության միջոցով դառնաք Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի հաղթանակի մասնակիցներ:

Վստա՛հ եղեք, և եկե՛ք ու խնդրեք Մեր Երրորդության Սրբությունից Գիտության Հոգին, այն Գիտության, թե ինչպես տիրանաք Ինձ՝ ձեր Աստծուն, այն Գիտության, որով պիտի մոտենաք Ինձ՝ Իմ հրեշտակների ոտնահետքերով: Եթե ձեր երկրները կրակի են մատնվում, դա այն պատճառով է, որ դուք այնքան քիչ գիտեք, թե ով Եմ Ես: Այո՛, չարությունն այրում է կրակի պես:

Եկե՛ք, դու՛ք, որ աննպատակ թափառում եք և տեղ չեք հասնում և այնքան մերկ ու խղճալի տեսք ունեք, եկե՛ք Ինձ մոտ և պարզ խոսքերով խնդրեք Գիտության Հոգուն, և Ես կուղարկեմ Նրան ձեզ մոտ, և երբ Նա գա, Նա ցույց կտա ձեզ, թե դուք ինչպես, հազիվ ծնված, դադարել եք լինելուց... Եվ չնայած թվում է, թե դուք կաք, բայց դուք վաղուց եք մեռած, և ձեր մահվան գարշահոտությունը հասել է Իմ ռունդերին:

Իմ Հոգին կսովորեցնի ձեզ ճանաչել ինքներդ ձեզ և լսել Իմ Կանչերը: Եվ երբ դուք դա անեք, մի լույս պիտի փայլի ձեր ներսում՝ բացահայտելով Ինձ՝ ձեր Երրորդություն Աստծուն, Իմ ողջ Փառքով, մարդասեր, Անզուգական, Արդար և Սուրբ:

Այդ ինչպե՞ս է, որ այնքան քչերն են խնդրում Բարեպաշտության Իմ Հոգին: Ձեր սրտի հպարտությո՞ւնն է, որ ետ է պահում ձեզ: Երբևէ փորձե՞լ եք հասկանալ, թե ինչպես եք շարժվում, և թե ինչպես է ամեն մի ստեղծված բան շարժվում Իմ Հոգու մեջ Երիցս Սուրբ: Եթե փնտրեք Բարեպաշտության Իմ Հոգուն, դուք ազատ կլինեք ծառայելու Ինձ մի նոր հոգևոր ձևով, հրաժարելով թմրության ձեր հոգուց, որ վրան է դրել ձեր մեջ՝ ստեղծելով մի անդունդ ձեր և Իմ միջև:

Ինչպե՞ս է, որ այդքան դանդաղ եք Բարեպաշտության Հոգին խնդրելու մեջ, որ սովորեցնի ձեզ բոլոր սուրբ բաների գիտությունը, և որ բարեպաշտությունն ավելի զորեղ է հնազանդության մեջ, խոնարհության մեջ, և ինքնահրաժարման մեջ: Խնդրե՛ք, խնդրե՛ք, և Ես արագորեն կուղարկեմ Իմ Հոգին վերևից, որ դա և հանգչի ձեզ վրա, որպեսզի դրանից հետո դուք դառնաք Իմ Աչքերի ուրախությունը և Իմ Որդու Աչքերի բոցը, լուսաստղը ձեր շրջապատի, որն այնքան խավար է, և ձեր պայծառությամբ դառնաք ձեր այնքան ապականված հասարակության գրավչության առարկան՝ գրավելով նրանց դեպի Ինձ:

Ձեր պայծառությամբ դուք պիտի ճառագեք Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի Պատկերը: Եվ Ես պիտի լցնեմ ձեր ձեռքերը անհաշիվ դանձերով, որ հրճվանք պատճառեք Իմ Հոգուն՝ Ինձ՝ Ձեր Երրորդության Աստծուն ծառայելիս, որը սակայն Մեկ է իր բնությամբ:

Այդ պահից սկսած դուք կսարսափեք Ինձ դժգոհություն պատճառելուց, քանի որ ձեր մեջ ես պիտի դնեմ երկյուղի Իմ Հոգին: Ամեն անգամ, երբ գաք Ինձ մոտ, դուք պիտի գաք և ծնկի իջնեք Իմ Վեհության առջև երկյուղածությամբ, քանի որ ձեր հոգին ճաշակած կլինի Իմ Իմաստության պտուղները: Ինձանից երկյուղելը Իմաստության թագն է: Ինձանից երկյուղելը կյանքի ծառի արմատն է: Եկե՛ք և շնչեք Իմ Հոգու մեջ, եկե՛ք և շարժվեք Իմ Հոգու մեջ: Եվ ես պիտի ցույց տամ ձեզ Իմ խորքերը, ձեր սրտի ամենախոր ծալքերում, որպեսզի դուք նույնպես տիրանաք Ինձ:

Հոգին վերևից հրավիրում է ձեզ բոլորիդ ներթափանցել Իմ Սուրբ Հոգու յոթ Պարգևների խորհուրդի մեջ: Եկե՛ք և օրհնվեք: Եկե՛ք և թույլ տվեք, որ լույս լինի ձեր հոգու մեջ: Անտեսանելի բաները հավիտենական են: Եկե՛ք և ստացեք Հոգուց այն, ինչը անտեսանելի է, որպեսզի ապրեք Մեզ հետ և մեկ լինեք Մեր մեջ:

Դեկտեմբերի 10, 1995

Խաղաղությո՛ւն քեզ: Քո նպատակը պետք է լինի մնալ Ճշմարտության մեջ, և բոլոր ժողովրդին բերել դեպի Ճշմարտություն և Իմ Թագավորություն: Ես Ճշմարտությունն եմ, և Իմ Թագավորությունը երկրի վրա Իմ Եկեղեցին է, և Իմ Եկեղեցին Իմ Մարմինն է, որը լցնում է ողջ արարչությունը [1] : Եվ Իմ Եկեղեցու Կյանքը Իմ Սուրբ Հաղորդությունն է՝ դեպի հավիտենական կյանք տանող Ճանապարհը: Ե՛ս եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը:

Ես Սեր եմ: Սիրեցե՛ք Ինձ և դուք պիտի ապրեք: Սիրո միջոցով ձեր հոգին կսկսի փնտրել երկնայինը: Աշխարհը չի կարող տալ ձեզ որևէ բան, որ պատկանում է Ինձ: Կառչե՛ք Ինձ և պիտի մնաք արմատացած Իմ մեջ, և այսպիսով դուք կշահեք հավիտենական կյանք, որը Ես խոստացել էի ձեզ: Ես կանչեցի քեզ, Իմ Վասո՛ւլա, և Ես վերցրեցի քեզ, որ Իմ Կանչի միջոցով շատ մեղավորների ապաշխարության բերես:

Շատ վկաների ներկայությամբ, Ես խոսեցի քո միջոցով՝ երևալով քո փոխարեն: Ոմանք տեսան Ինձ և հավատացին: Երանելի են նրանք, ովքեր չեն տեսել, բայց հավատում են:

Ես արդարև վստահել եմ քեզ այս Պատգամը, քանի որ գիտեի, որ դու լավ հոգ կտանես Իմ Շահերի համար: Ես ասացի. Ես վստահել եմ քեզ այս Պատգամը: Այս Պատգամը ոչ մի նոր բան չի ավելացնում Սուրբ Գրքերին: Ամեն ինչ, որ Ես ասել եմ այս Պատգամում, գրված է Սուրբ Գրքերի մեջ, բայց դուք դեռևս ամբողջապես չեք հասկացել, թե ինչ է գրված:

Դուք լսել եք, թե Ես ինչ եմ ասել. Ես պիտի ուղարկեմ ձեզ մոտ Սուրբ Հոգուն՝ Պարակլեթոսին, որ ընդմիշտ ձեզ հետ լինի և նրանց մեջ, ովքեր

[1] Եփես. 1:23

սիրում են Ինձ, որ ձեզ սովորեցնի ամեն ինչ: Իմ Հոգին պիտի լինի ձեր Խորհրդատուն և ձեր Դաստիարակը: Առանց Նրա նույնիսկ Իմ Աշակերտները երբեք ամբողջապես չհասկացան Ինձ, ո՛չ էլ Իմ ուսուցումները: Բայց այն օրը, երբ Ես վերադարձա Հոր մոտ, Ես նրանց ուղարկեցի Սուրբ Հոգուն, որպեսզի Նա հիշեցնի նրանց այն ամենն, ինչ Ես ասել էի իրենց, երբ դեռ իրենց հետ էի: Ես ամբողջապես պատրաստ եմ հիմա ձեզ մոտ գալու, բայց դուք դեռևս չեք հասկացել, թե ինչպես և ինչ ձևով: Մինչդեռ Ես փոխաբերություններով չեմ խոսել:

Ես լրջությամբ եմ ասում ձեզ. Ես պիտի ուղարկեմ ձեզ Իմ Սուրբ Հոգուն իր ողջ զորությամբ <u>ողջ</u> մարդկության վրա, և որպես կանխանշան, Ես հրաշքներ ցույց պիտի տամ երկնքում, ինչպես նախկինում երբեք չի պատահել: <u>Պիտի լինի երկրորդ Հոգեգալուստ</u>, որպեսզի Իմ Թագավորությունը երկրի վրա[1] վերականգնվի: Ձեզանից շատերն են հարցնում. «Ե՞րբ, ե՞րբ կկատարվի այդ ամենը»: Ո՛չ մեկը չգիտի ժամանակներն ու ամսաթվերը, որ Հայրն է որոշել Իր իշխանությամբ: Անցյալում ձեր նախնիները սպանում էին բոլոր նրանց, ովքեր կանխահայտնում էին Իմ Գալուստը: Իսկ հիմա, ձեր սերնդի մեջ, դուք անում եք նույն բանը: Դեռ որքա՞ն ժամանակ դուք պետք է ընդդիմանաք Շնորհի Իմ Սուրբ Հոգուն:

Ապաշխարե՛ք ձեր այս չարության համար և աղոթեք, որպեսզի ձեր ասածներից ոչ մեկը չդատապարտի ձեզ: Այլևս մի՛ կասկածեք, չուտով դուք պիտի ստանաք Իմ Սուրբ Հոգու հեղումը, որպեսզի ձեր ուժը հետ տրվի ձեզ: Եվ դու՛, քո՛ւյր Իմ, ստացիր Նրա քնքշությունը, ով ձևավորեց քեզ: Այնտեղ, ուր դու ձախողվում էիր, Ես հաջողության էի հասնում: Այնտեղ, ուր դու պակասություն ունեիր, Իմ Սուրբ Հոգին լրացնում էր: Իմ կարեկցությունը քո հանդեպ շատ մեծ է: <u>Շարունակիր</u> գործի դնել Ինձանից սովորած դասերը: Իմացի՛ր, որ Ես հաղթականորեն պիտի ավարտեմ Իմ Գործը:

Վասու՛լա, դու Ինձ հետ մի մղոն ավելի հեռու կգնա՞ս:

Իհա՛րկե, եթե դեռ ոտքի վրա լինեմ Քեզ հետ քայլելու համար:

Նրանց դաժան վերաբերմունքը քո հանդեպ չի վնասի քեզ: Իմ Պատգամը հայտնվել է Իմ սրբերին և նրանց, ովքեր մանկան սիրտ ունեն: Իմաստությունը խուսափում է գիտուններից և իմաստուններից, բայց բոլոր նրանք, ովքեր իրենց սուրն են բարձրացրել քո դեմ՝ կկործանվեն սրով: Իմ Խոսքերը տեղ չեն գտել նրանց մոտ, ո՛չ, որովհետև սերը պակասում է...

Նրանք իրենց օրենքի գիտակներ են կոչում... Ո՞ր օրենքի: Ի՞մ, թե՞ իրենց: Եթե նրանք պահած լինեին <u>Իմ</u> Օրենքը, նրանք կհասկանային Իմ լեզուն[2]: Բայց նրանք չեն ըմբռնում այն, ինչ Ես ասել եմ:

Ա՜հ, Վասո՛ւլա, բարությամբ հատուցիր չարին: Ների՛ր և Ինձ նման լռություն պահպանիր քեզ վրա նետված որևէ մեղադրանքի հանդեպ:

[1] Հիսուս նկատի ունի Եկեղեցին:
[2] Հիսուս նկատի ունի Սուրբ Գրքերում:

Մարդը վերցնում է իր սեփական պահեստից: Ուստի պատվի՛ր Ինձ, քանի որ դու սերում ես Ինձանից:

Գնա՛ ուր ես ուղարկում եմ քեզ, գնա՛, որպես վկա և հռչակի՛ր բացահայտորեն այն ամենն, ինչ Հայրն ու Ես սովորեցրել ենք քեզ: Սատանայի ժամը եկել է, բայց շուտով Սուրբ Միքայելը պիտի հայտնվի, և վա՜յ չապաշխարած մեղավորին: Հիմա չարը դուրս է ժայթքում իր կատաղությունը ձեզ վրա, և ձեր փրկության համար Իմ յուրաքանչյուր միջամտության վրա ուղղում իր անօրինության պարսատիկը: Բայց Իմ Սուրբ Հոգին պիտի դա ձեզ փրկության և Իմ Պատգամը պիտի դառնա մի շարունակական օրհներգ նրանց ականջների համար, ովքեր ուզում են լսել:

Աղոթի՛ր, Իմ Վասո՛ւլա, քանի որ քո աղոթքները ուրախացնում են Ինձ: Ես օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 13, 1995

Մեծ կատաղությամբ նրանք
փորձում են շրջափակել ինձ:
Նրանք ցանկանում են կասեցնել
իմ աղոթքներն ուղղված Քեզ:
Նրանք աղավաղել են Քո խոսքերը,
և հիմա մտադիր են
փակել իմ ճանապարհը:

Իմ Վասուլա, խաղաղությո՛ւն քեզ: Մի՞թե Ես սկզբից ի վեր չեմ կանխագուշակել դա, որպեսզի դու իմանաս: Մի՛ փորձիր ինքդ քեզ պաշտպան կանգնել: Քո վկաները պիտի պաշտպանեն քեզ: Նրանց պաշարման աշխատանքները ոչինչ են: Վստահի՛ր Ինձ: Շուտով դու պետք է մեկնես... Իսկ այն պատերը, որ նրանք կառուցում են քեզ շրջափակելու համար, Իմ Հոգին ցած կտապալի դրանք: Եվ Ես ցույց կտամ Իմ Փառքը քո միջոցով, եթե դու Ինձ հավատարիմ մնաս: Հիմա նրանք կասեն. «Ա՛Հ... հիմա մենք նրան կուլ տվեցինք»: Այն, ինչ նրանք չգիտեն և չեն նկատում, Իմ Իմաստությունն է:

Ինչ վերաբերում է քեզ, զավա՛կս, մշտական կարգապահության մեջ եղիր Իմ Եկեղեցու հանդեպ, և դու պիտի վայելես Իմ բարեհաճությունը: Այս օրերին Ես քո միջոցով բացահայտել եմ Զարի ծրագրերը Իմ Եկեղեցուն: Ուստի սատանան, որն այս աշխարհի իշխանն է, բարկությամբ վառված, արդեն սկսել է ճնշել Իմ բոլոր Գործերը: Նա մարդասպան էր սկզբից ի վեր, և նրա նշանակետը հատկապես Իմ քահանայական հոգիներն են: Նա թափառում է, որ գողանա և դատապարտության մատնի Իմ Յուրայիններին... Ես զորություն ունեմ փոխելու քո վիճակը, Վասո՛ւլա, բայց ինչպես գիտես, ծառան իր տիրոջից ավելի մեծ չէ: Ես քո Տերն եմ, և քանի որ իշխանությունները հալածեցին քո Տիրոջը, Ես թույլ եմ տալիս նրանց, որ քեզ նույնպես հալածեն:

Բայց «lo tedhal»[1]: Ես քեզ հետ եմ: Ես լինելու եմ քո ըմպելիքը, քո կերակուրը, քո հանգիստը, քո խաղաղությունը և քո ուրախությունը: Հասկանո՞ւմ ես: Աղոթի՛ր և պաշտի՛ր Ինձ: Աղոթի՛ր և հետևիր Ինձ: ic

Դեկտեմբերի 16, 1995

(Մի ճգնավորի հետ, Բեթղեհեմ)

Փրկի՛չ իմ, մենք մեր ողջ սրտով
հետևում ենք Քեզ,
վախենում ենք Քեզանից
և նորից փնտրում Քո Դեմքը:
Մի՛ հիասթափեցրու մեզ:[2]

Ընդունի՛ր Իմ խաղաղությունը: Գոհացրո՛ւ Ինձ և ասա այս բառերը.

Հիսո՛ւս, իմ միակ սեր,
Հիսո՛ւս, իմ ներշնչում,
իմ հոգու ընկերակի՛ց:

Հիսո՛ւս, միայն Դո՛ւ ես իմ բաժակը,
իմ ըմպելիքը, իմ օրհնությունը:
Թաքցրո՛ւ ինձ Քո Սրտի խորքում,
մինչև մահը հասցնի ինձ երկինք:
Հոգուս Պահապա՛ն,
եղի՛ր ինձ հետ,
ուր էլ որ գնամ:
Ամեն:

Թող սա լինի քո թեման: Ես օրհնեցի քեզ և կրկին օրհնում եմ քեզ: Սերը քեզ հետ է: Մե՞նք, մե՞զ: ic

[1] Արամերեն՝ «Մի՛ վախեցիր»:
[2] Դան. 3:42

1996

Հունվարի 3, 1996

Յա՛հվե, Քո Գործերը
օրհնություններ են,
հարստություն և ճրագ:
Ների՛ր մեզ[1],
որ ամբողջ սրտով չենք ընդունում,
որ Քեզանից են Դրանք:

Աղջի՛կս, Ես՝ քո Հայրը, տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Քո ամենավաղ օրերի սկզբից ի վեր Ես նստեցրի քեզ Իմ Գավթում, որ ուսուցանեմ քեզ արդարություն, սեր և թե ով եմ Ես:

Որպեսզի դու չորդեգրես աշխարհի ուղիները, Ես իջա քեզ վրա՝ նվաճելու քո սիրտը: Ես ուզում էի, որ դու դառնաս Իմ ընկերը և սովորեցնեի քեզ, որ Ինձանից վախենալը Իմաստության սկիզբն է: Չնայած դու արժանի չէիր տեսնելու Իմ Փառքը, Ես եկա քեզ մոտ քո լռության մեջ, քո «այո»-ն ստանալու համար: Հետո Ես հրամայեցի խավարին, որ չպարուրի քեզ, և որ գիշերը փոխակերպվի լույսի:

Արևելյան Տան անդա՛մ, այդ Տան դո՛ւստր, կեղծ վկաներ են դուրս եկել քո դեմ, բայց հույսդ դիր Ինձ՝ քո Հոր վրա: Պահի՛ր Իմ հրահանգները և խաղաղ եղիր ու մի հոգնիր: Համբերի՛ր և հռչակիր Իմ Փառքը և Իմ Հայրական Կանչը: Իմ Տան Գավիթներում դու պիտի մնաս՝ առաջանալու և Իմ ժողովրդին առաջ տանելու համար: Ես չեմ լքի քեզ, ուստի դու էլ Ինձ չլքես:

Ես ասում եմ քեզ. Երբ ճնշումը վերջ գտնի և դժոխքի տիրակալը շղթայվի, և նրանք, ովքեր ոտնակոխ են անում Իմ Որդու Զոհաբերությունը հեռանան, այն Տան միջից, ուր դու ես գտնվում, լավ նախանշանով մի մարդ պիտի կանգնի՝ ջահի պես բոցավառ, որ վերականգնի Իմ Սրբարանը և Իմ Անունը Երիցս Սուրբ... և Ապստամբի թագավորությունը պիտի ընկնի:

Ես պիտի շարունակեմ լինել քո Երգը, Իմ Վասո՛ւլա, և քո Ջահը: Ես պիտի լինեմ քո կողքին և ապահով կերպով պիտի առաջնորդեմ քեզ քո կյանքի բոլոր օրերին: Դու պիտի լինես Իմ համագործակիցը և Իմ ընկերը, Իմ արձագանքը և Իմ ձենքը: Եվ քո բերանը պիտի լինի սրի պես բոլոր նրանց հանդեպ, ովքեր ավերածություն են տարածում Իմ Սրբարանում:

[1] Եթե ես ասում եմ «մեզ», այդ այն պատճառով է, որ ես պատկանում եմ այն նույն ընտանիքին, որն Աստված ստեղծել է, և ես ներողություն եմ հայցում իմ ընտանիքի անունից, ովքեր դեռևս չեն հավատում, որ այս պատգամները գալիս են Աստծուց:

Ես՝ Յահվեն, հայտնի եմ նրանով, որ պաշտպանում եմ պարզամիտներին, և Իմ Սիրտը հալվում է սրտով մաքուրների համար: Նա, ով գալիս է Ինձ մոտ ինչպես մի փոքր մանուկ, պիտի ճանաչի և նրան թույլ պիտի տրվի հանդիպել Իմաստության հետ, որը պիտի առաջնորդի նրան դեպի Իմ Թագավորությունը: Իմ Աչքերին հաճելի են փոքրիկ սրտերը, քանի որ այդ սրտերում Իմ Գիտությունը առատորեն է լցվում: Վա՜յ նրանց, ովքեր չեն ողջունում Ինձ սրտի պարզությամբ, այլ իրենց ցույց են տալիս որպես ամենամեծերը Իմ Գավիթներում և «չարիքը բարիք են անվանում, իսկ բարիքը՝ չարիք, ովքեր դնում են խավարը լույսի, իսկ լույսը՝ խավարի տեղ, ովքեր դնում են դառնությունը քաղցրի, իսկ քաղցրը՝ դառնության տեղ»:[1] Իմ Հոգին տեսնելով նրանց եսասիրական նպատակները, պիտի բաժանի նրանց Ինձանից, որ Երիցս Սուրբ եմ:

Ուզո՞ւմ եք վայելել Երկինքը: Ուզո՞ւմ եք հրճվել Իմ Ներ կայությամբ: Ուրեմն եկեք Ինձ մոտ ինչպես մի մանուկ: Ուզո՞ւմ եք հանդիպել Ինձ և տեսնել Ինձ: Ուրեմն, եկե՛ք Ինձ մոտ անմեղ սրտով: Եկե՛ք Ինձ մոտ մաքուր սրտով, և ձեր աչքերը ծածկող թեփուկները կընկնեն, որպեսզի տեսնեք Իմ Փառքը և Նրան, ով եղել է, է, և գալու է: Մի՛ ընկնեք ձեր հպարտության ծուղակի մեջ, քանի որ Ես թույլ պիտի տամ, որ այդ փոքրիկները ձեզ վայր գցեն:

Ես՝ Աստված, քեզ հետ եմ, աղջի՛կս: Երիցս օրհնյալ լինես Մեր Երրորդության Սրբության մեջ:

Հունվարի 9, 1996

Իմ Տունը Յահվեի Գավիթներում է,
և իմ հոգին հրճվում է
Նրա Վեհության
Երիցս Սուրբ պայծառությունից:
Քո մեջ է իմ հոգին շարժվում,
գործում և շարունակում վստահել:
Քո մեջ է, Հավիտենական Հա՛յր,
իմ հոգին բաղձում ու նվաղում է,
ցանկանում ու փնտրում է
Ճշմարտությունը:

Մի՛ զրկիր ինձ, ո՛վ Երկնային Հայր,
Քո Հոգու Յոթը Պարգևներից,
այլ ուղարկիր դրանք ինձ,
որ լույս տան իմ ճանապարհին,
և լուսավորեն իմ հոգին՝
ողողելով ինձ Քո Աստվածային
Երրորդության Սրբությամբ:

[1] Ես. 5:20

Իմ[1] խաղաղությունը ես տալիս եմ քեզ: Եթե հողը մերժում է պտուղ տալ և երկիրը դարձել է անապատ, այդ նրա ուրացության պատճառով է... Իմ Սուրբ Հոգուն հազիվ են հիշում, հռչակում կամ վստահում, ահա թե ինչու երկիրը հասել է անկման, իսկ ձեր հոգին, ինչպես մի մեռնող աստղ, կորցրել է իր պայծառությունը և խավարել: Վասո՛ւլա, Երրորդության Աստծո Օրենքն ունենալով ձեր սրտերում, դուք բոլորդ կարող եք ասել. «Իմ Աստվածը կլսի ինձ»: Եվ ես Իմ Սրտի խորքից ձեզ կշնորհեմ Իմ Հոգու յոթ պարգևները, եթե խնդրեք Ինձ: Հիմա, Իմ Վասուլա, ասա՛ Ինձ, դու կարծում ես, որ Իմ Թագավորության մասին քո գիտությունը դու ի՞նքդ ձեռք բերեցիր:

Ո՛չ: Ո՛չ, Աստված իմ: Ես ոչինչ չգիտեի Քո Թագավորության մասին սկզբից ի վեր:

Կարծում ես քո մարգարեությունները քեզնի՞ց դուրս եկան, զավա՛կս:

Ո՛չ, որովհետև Սուրբ Գրքերն ասում են. «Ո՛չ մի մարգարեություն դուրս չի գալիս ոչ մեկից»:

Օրհնյա՛լ ես դու, որ թույլ տվեցիր Իմ Սուրբ Հոգուն հանգչել քեզ վրա և գործել քո մեջ: Ահա թե ինչ եմ Ես ուզում հայտնել հիմա, որպեսզի այս երկրի վրա գտնվող յուրաքանչյուր ոք գա դեպի Ինձ և ապրի Իմ կատարյալ ամբողջության մեջ, և որ յուրաքանչյուր կենդանի արարած կարողանա տիրանալ Ինձ, քանի որ Ես նույնպես ցանկանում եմ տիրանալ նրանց: Ազատությունը գտնվում է Իմ Հոգու մեջ՝ Երիցս Սուրբ: Սփոփանքը և հանգիստը գտնվում է Իմ Հոգու մեջ: Ձեր մեղսալի կրքերը կարող են լվացվել Իմ Հոգու կողմից Երիցս Սուրբ, և Նա կարող է ազատություն տալ ձեզ, որ ծառայեք Ինձ նոր և հաճելի ձևով՝ դեպի սրբություն գրավելով ազգերի մեծ զանգվածներ, որովհետև դուք պիտի նորոգվեք Իմ Սուրբ Հոգով:

Աքանչելի զավակս, գրի՛ր. Իմ Փառքը ձեզ բոլորիդ հետ <u>կիսելու</u> վճռականությամբ, Ես ձեր օրերում ավելի քան երբևէ առատորեն հեղում եմ Իմ Սուրբ Հոգին, որ նորոգեմ ձեզ, որպեսզի դուք ձեր ազատությունը ստանաք Իմ Հոգու մեջ: Մարդիկ փնտրում են իրենց իսկ կործանումը, սակայն Իմ Սերը հավատարիմ է և Իմ Կարեկցանքը մեծ է: Ես ցած նայեցի Իմ արարչության վրա և ասացի. Ես թույլ պիտի տամ, որ քամին Իմ Շունչը[2] տանի նրանց մոտ ավելի շուտ, քան Ես ծրագրել էի: Ես ո՛չ հաշիվը պիտի պահեմ, ո՛չ էլ տվյալները: Քանի որ Իմ Ուղիները ձեր ուղիներից վեր են: Քամիները Իմ Շունչը կտանեն Իմ արարչության վրա, որպեսզի նրանք ասեն. «Աստված չի մոռացել մեզ, սա Նրա ցողն է, սրանք Նրա անձրևի կաթիլներն են»: Եվ դրանց հետ միասին Ես պիտի հեղեմ ձեզ վրա Ուսուցումներ, ինչպես մարգարեություն: Նույնիսկ ձեզանից ամենահետինի վրա, արարչությո՛ւն, Ես պիտի հեղեմ Իմ Պարգևները, որպեսզի դուք տեսնեք ձեր մերկությունը և հասկանաք, թե

[1] Արարիչն է խոսում:
[2] Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին արդեն դուրս է հեղվում, օրինակի համար՝ խարիզմատիկ շարժումներում:

ձեր ամբողջ կյանքի ընթացքում դուք ինչպես եք վշտացրել Ինձ: Հետո դուք, մանուկի պես լաց կլինեք և կշրջվեք դեպի Ինձ՝ ձեր Հայրը: Այդ պահից սկսած դուք հետամուտ պիտի լինեք միայն երկնային գործերին, որոնք հարատև են:

Ուրիշ ոչ մի տեղ ազատություն մի փնտրեք՝ բացի Իմ Հոգու մեջ: Եվ ինչպես առաջին պտուղների ժամանակ[1], Ես պիտի լցնեմ ձեզ բազմաթիվ պարգևներով Իմ Սուրբ Հոգու կողմից: Ձեզանից շատերը պիտի երգեն տարբեր լեզուներով: Ուրիշները պիտի տիրապետեն պերճախոսությանը: Իմ պարգևներն անհամար են, և դրանք պիտի տրվեն առատորեն:

Եկե՛ք, եկե՛ք և շահեք Իմ Սուրբ Հոգու ընկերակցությունը, որ գործակիցներ դառնաք Նրա հետ, քանի որ Նա ողորմածաբար ձեզ հաղորդակից կդարձնի Մեր խորհուրդներին՝ բացելով ձեր միտքը և ձեր աչքերը, որ հասկանաք և ընկալեք Անըմբռնելին, որը սակայն ողորմածաբար առաջարկվում է ձեզ ձրիաբար: Ո՜հ, եկե՛ք, մի՛ կանգնեք այդպես, անտարբեր ու անշարժ, եկե՛ք և ժառանգեք այն, ինչ ձերն էր սկզբից ի վեր: Եկե՛ք և ժառանգեք Անհասանելի Լույսը, որը սակայն ամբողջապես ձեր շուրջն է և որը կարող է լինել ձեր ներսում: Եկե՛ք և տիրապետե՛ք Անհասանելիին, որը սակայն հասանելի է ամեն մի մարդու: Եկե՛ք, և մի՛ կանգնեք հեռվում, սարսափահար: Եկե՛ք և ժառանգեք Իմ Թագավորության խորհուրդը:

Այսօր Ես առաջարկում եմ ձեզ Ուրախություն, Խաղաղություն, որը ձեր Ժառանգությունն է: Ես առաջարկում եմ ձեզ մի Անգնահատելի Գանձ՝ ավելի գեղեցիկ, քան որևէ մարդ կարող է երևակայել, որ կարող է ստանալ: Եթե Ես անխոնջ կերպով հետապնդում ու հետևում եմ ձեզ, այդ ձեր հանդեպ ունեցած Իմ սիրո մեծությունից է: Իմ կողմից ձեզ տրված չնորհներից այս Մեկը Իմ Թագն է[2]:

Ինձ ավելի մոտեցեք, և Ես Անմահություն պիտի շնչեմ ձեր մեջ, վերակենդանացնելով ձեր հոգին, որ շարժվի, ձգտի և շնչի Իմ Փառքի մեջ, որպեսզի դուք այլևս ինքներդ ձեզ չպատկանեք, այլ Նրան, ով շարժում է ձեզ՝ միացած Մեր Մեկ Միասնության մեջ:

Մի՛ ասա. «Ես կհամարձակվե՞մ, ես՝ մեղավորս, դիմել Անհասանելի Լույսին, որը հասանելի է միայն սրբերին»: Եթե <u>իսկապես</u> դու հավատում ես, որ մեղավոր մեկն ես, ինչպես ինքդ ես ասում, և անարժան ես Իմ Պարգևներին, անհնարինը կդառնա հնարավոր[3]: Ես անմիջապես կբոցավառեմ քեզ, որ կլանեմ քեզ և արմատապես այրեմ այն ամենն, ինչ Ես չեմ:

Հետո Ես կփոխարինեմ այն ամենը, որ խանգարում էր Ինձ անցնել քո միջով, Նրանով, ով քո կարծիքով Անհասանելի էր: Նա կլինի քո աչքերի լույսը, քո էության շարժառիթը, քո սրտի շարժումը, քո խոսքի արտահայտությունը, քո ծիծաղն ու ուրախությունը, քո հոգու արքայական զարդարանքը, քո հոգու պահակը: Նա կլինի քո եղբայրը, քո քույրը և քո հավատարիմ ընկերը: Նա կլինի քո տոնախմբությունը, քո

[1] Ես միևնույն ժամանակ լսեցի «Առաքյալներ» բառը:
[2] Աստված խոսում է Իր Սուրբ Հոգու մասին:
[3] Աստված նկատի ունի, որ եթե մենք ընդունենք, որ մեղավորներ ենք, դրանով մենք արդեն ճանաչում ենք մեր անարժանությունը: Խոնարհության հոգով մենք կարող ենք ստանալ Նրա Հոգու Պարգևները:

խնջույքը, թաքնված դանձը, մարգարիտը, Օրհներգի քո օրհներգը, Ամենի քո ամենը: Խոստացված երկիրը և այն բոլոր արժանիքների հիմքը, որի վրա Նա կփորագրի Իր Սուրբ Անունը:

Ուրեմն արի՛ և ստացիր քո ազատության Կնիքը՝ ընդունելով, որ մեղավոր ես և մեղքի ենթակա, որպեսզի Ես՝ Իմ հերթին, քեզ վրա առատորեն թափեմ Իմ Անսպառ Հարստությունը ու Երկնքի Թագավորությունը: Իմ Սուրբ Հոգին կարող է հագեցնել քո ծարավը:

Ես ուզում եմ ձեզ բոլորիդ մի անմեղ ցեղ, մի սուրբ ժողովուրդ դարձնել Մեր Պատկերի նմանությամբ: Ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ եք դուք Ինձանից այդքան քիչ խնդրում... Եվ այդքան քիչ հավատով: Ինչո՞ւ եք թերագնահատում Իմ առատաձեռնությունը: Ձեր հավատի պակասը մահացու թույն է ձեր հոգու համար՝ քաշելով ձեզ մարդկային ուսմունքների ու կանոնների մեջ, որոնցից Ես խորշում եմ: Դուք սովորել եք, որ Եկեղեցին Իմ Որդու Մարմինն է, և որ Նա Եկեղեցու Գլուխն է[1], ահա թե ինչու, դուք, որ Նրա մարմնի մասն եք կազմում, պետք է ձգտեք Իմ Սուրբ Հոգու պարգևներին և թափանցեք Քրիստոսի խորհուրդի մեջ, խորհուրդ, որը աստվածային կդարձնի ձեզ:

Իմ Հոգու զորությամբ դուք պիտի տեսնեք ձեր ժառանգության մի փառապանծ տեսիլք, ուր բոլոր սուրբ մարդիկ հանդչում են. դուք պիտի տեսնեք ձեր հանգստյան վայրը: Մի՞թե դուք պատշաճ եք Իմ Թագավորության համար: Ո՞ւմ վրա եք հույս դնում: Ուղղեք ձեր միտքը, ձեր աչքերը և ձեր սիրտը Ինձ վրա և եկեք տիրացեք Իմ Թագավորությանը, եկե՛ք և տիրացեք Ինձ՝ ձեր Աստծուն: Ուրիշ ո՛չ մեկին մի ապավինեք Ինձանից բացի:

- Ձեր ներքին զորությունը Իմ Սուրբ Հոգին է ձեր մեջ, որի մեջ դուք չնչում եք և շարժվում՝ երբեք չդադարելով լինելուց: Ձեր ներքին հմայքը, հոյակապությունը, պերճախոսությունը և գեղեցկությունը Իմ Սուրբ Հոգին է ձեր մեջ: Ձեր հոգու ներքին լույսը Իմ Հոգին է Երիցս Սուրբ, որը ձեր հոգին անանց է դարձնում, շնորհով լի, Իմ երկինքը, Իմ հանգիստը և մի կատարյալ բնակավայր Ինձ՝ ձեր Աստծո համար, եռանձն, սակայն Մեկ՝ բնությամբ միացած:

Ձեր ներքին Բարեխոսը, որը վեր է բարձրացնում ձեր հոգին ամպերի մեջ և հասցնում ձեզ հաղորդակցման Իմ Սրբերի ու Հրեշտակների հետ՝ Իմ Սուրբ Հոգին է: Նա կուսուցանի ձեզ լինել հաստատուն, երբ ձեզ կհալածեն և կզրպարտեն հանուն Ինձ: Ջանացեք ձեր հոգին կատարյալ դարձնել, լցնելով այն Իմ Հոգով, և դուք պիտի ապրեք:

- Արի՛, աղջի՛կս, մե՞նք, մե՞զ: Աստված-քեզ-հետ-է:

Հունվարի 27, 1996

Յա՛հվե, Հա՛յր,
Դու խոսեցիր ինձ հետ որպես Աբբա,
որպես Ընկեր, ես օրհնում եմ
Քո Անունը՝ Երիցս Սուրբ:

[1] Կող. 1:18

Քո քնքշությունը՝ գրկելով ինձ,
ցույց տվեց ինձ Կյանքի Ուղին
և այդ պահից սկսած
Դու կառուցեցիր Քո Ապարանքը
և Քո Տիրույթը իմ հոգու ներսում:

Այո՛, Դու վարվեցիր ինձ հետ
այնպես քնքշորեն,
ինչպես հայրն է վարվում
իր զավակների հետ:
Ինչպես նուրբ ճենապակու հետ են
զգուշությամբ վարվում, այդպես
Դու վերաբերվեցիր ինձ հետ:

Դու բարձրացար
Քո Երկնային Գահից,
Դու բարձրացար և դուրս եկար՝
մոտենալով ինձ նրբորեն
Քո Թագավորական տեսքով,
և մինչ Դու դրեցիր
Քո Մատն իմ շուրթերին,
Դու ինձ աչքով արեցիր՝
առաջ բերելով իմ սրտում
ուրախության մի աղբյուր:

Յա՛հվեն՝ իմ Թագավորը,
իջավ իմ սենյակը:
Հագնված ակնածալից շքեղությամբ,
վեհությամբ և փառքով,
իմ Արքաքիչը և Թագավորը,
խոսեց ինձ հետ պարզությամբ՝
թողնելով ինձ սաստիկ շփոթված
անխոս և երկյուղած՝
Իր Հայրական
վերաբերմունքի պատճառով:

Տեսնո՞ւմ ես, Յա՛հվե,
Դու իմ սրտի ուրախությունն
ու զմայլանքն ես,
հիացմունքը իմ օրվա
յուրաքանչյուր ժամի,
Սփոփանքը, իմ սրտի Բարությունը:

Քո Սերը, Յա՛հվե,
նման է մի Աղբյուրի,
որ թափվում է սարերի վրայով
դեպի հովիտները՝
կյանք տալով նույնիսկ քարերին:

Ո՛վ Սուրբդ, վերցրո՛ւ ինձ,
վերցրու ինձ և թաքցրու
ամպի Քո Սյան մեջ,
հեռու այս երկրի խորքերից:
Քո ամպի մեջ թաքցրո՛ւ
ինձ անկարգությունից,
և ինչպես Դավիթը մի անգամ ասաց,
ես նույնպես ասում եմ.
«Եթե Տերն ինձ չաջակցեր,
մի փոքր ևս
և հոգիս կբնակվեր դժոխքում»:[1]

Ո՛վ Սուրբդ,
մեծ են Քո նվաճումները
իմ ամենօրյա կյանքում,
ուրեմն արի՛, օ՜ արի՛, Հա՛յր:
Մի՞թե չես տեսնում, թե ինչպես է
հոգիս տենչում Քեզ: Արի՛,
և մեկ անգամ էլ թող ինձ հմայված:

Դու Իմ Հարստության պտուղն ես... Աքանչելի զավա՛կ: Ի՞նչ է Ինձ համար քո սենյակը գալ երկնքից: Ի՞նչ է Ինձ համար իջնել Իմ Գահից և այցելել քեզ: Հասկանո՞ւմ ես: Եվ ի՞նչ է Ինձ համար, զավա՛կս, բուրումնավետ դարձնել քեզ Իմ անուշահոտությամբ: Այդ բոլորը Ինձ համար ոչինչ է: Դու լսեցիր Իմ թակոցը և բացեցիր քո դուռն Ինձ համար: Քեզ հետ զրուցելը հրճվանք է պատճառում Ինձ: Քեզ այցելելը, ամեն անգամ քեզ կնքելով Իմ Անվամբ, փառավորում է Ինձ: Քեզ Իմ անուշահոտությամբ օծելը Իմ Թագավորությունն է հաստատում քո մեջ:

Ա՜հ, Վասո՛ւլա, Իմ ընկերակցությունը հմայում է քո հոգին, որովհետև այն բոլոր բառերը, որ Ես չչնչում եմ քո ականջին, կյանք են: Ընդունի՛ր Իմ ընկերակցությունը և միշտ ուրախ եղիր Իմ Ներկայության մեջ՝ հրճվելով, որ գտնվում ես քո Արարչի և բոլորի Հոր հետ: Իմաստությունը երեխաների համար է, ուրեմն արի Ինձ մոտ ինչպես մի երեխա, նույնիսկ կատակելով ու մանկանալով՝[2] Իմ Ներկայության մեջ: Դու վախենում ես, որ Իմ Խոսքերը կգայթակղեցնե՞ն:

Վստահ եմ, որ որոշ մարդկանց համար այդպես կլինի:

Յուրաքանչյուր մարդ դատում է ելնելով այն բանից, թե ի՞նչ է ամբարված իր սրտում: Իմ բոլոր Խոսքերը, որ Ես ասում եմ, ուղիղ են և ուղիղ լսելի կդառնան նրան, ով հասկանում է: Դրանք աքանչելի են պարզ և մաքուր սիրտ ունեցողների համար, սակայն շնագայլերի համար՝ խայտառակություն և վիրավորանք: Երբեք չարին հենակետ մի տվեք ձեր բանապաշտական հոգով: Մի՛ աճեք պատրանքներով, այլ թողեք ձեր

[1] Սաղմ. 93:17
[2] Երբ Աստված Աչքով է անում ինձ, Նա «կատակում» է:

հիմքն աճի Իմ Հոգու մեջ: Կառուցեք ձեր շենքը Իմ Սուրբ Հոգու մեջ, որի մեջ դուք պիտի նորոգվեք:

Եկե՛ք և սովորեք. որքան էլ անտեսանելի Ես թվամ, Ես ձեր շուրջն եմ ամենուր, և այն բաների մեջ, որ պատրաստել եմ: Նա՛, ով ապրում է Ինձ համար, կապրի Ինձ հետ: Նա՛, ով սիրում է իր մերձավորին, արդեն հաղթել է աշխարհին և քայլում է Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի ոտնահետքերով և գտնվում է դեպի Իմ Թագավորությունը տանող ճանապարհին: Այո՛, նա, ով ապրում է սիրով, ապրում է <u>Ճշմարիտ Կյանք Իմ մեջ</u>:

Ես ձեր Հայրն եմ ձեր երկրային հորից առաջ: Ես հայրություն եմ արել ձեզ ձեր մարմնավոր հորից առաջ: Կապեք ձեզ Ինձ հետ, որպեսզի չկորցնեք Ինձ ձեր տեսադաշտից և չանպատվեք ինքներդ ձեզ: Հնազանդվեք Իմ սկզբունքներին, բայց սրտով, այլ ոչ թե քարացած ժայռի նման: Որոշեք ուղիղ գործել ձեր մնացած կյանքում, բայց ուրախությամբ: Որոշեք վերջ դնել ձեր շուրջը գտնվող Շնորհի Իմ Սուրբ Հոգուն շնչահեղձ անելուց, որպեսզի դուք նույնպես կարողանաք շնչել Նրա մեջ:

Ո՛վ մարդ, ծնված կին արարածից, պատվի՛ր Արևով զարդարված Կնոջը: Տկա՛ր մարդ, քո հանգիստը գտիր Նրա գրկում և այն նույն բազուկների մեջ, որոնք կրեցին Իմ Որդուն անապատի միջով մինչև Եգիպտոս: Պատվի՛ր այն Մորը, որը պատվեց Ինձ Իր շնորհալիությամբ: Բայց մի՞թե Ես մեծապես չեմ պատվել ու բարեհաճ գտնվել Նրա հանդեպ: Ես մեծ գործեր եմ արել արևը հագած Կնոջ համար, որպեսզի այն օրվանից սկսած, երբ Իմ Հոգին ծածկեց Նրան, բոլոր սերունդները Նրան Օրհնյալ անվանեն: Ամոթ և անարգանք է վիճակված նրանց, ովքեր դադարել են պատվել Նրան: Ես հաճույք չեմ ստանում քմծիծաղներով ուղեկցվող ձեր դիտողություններից այն Կնոջ հանդեպ, որն այնքան բարձր պատվի է արժանացել Իմ կողմից, և յուրաքանչյուրին կհատուցեմ իր հասանելիք բաժինը:

Խոնարհեցրե՛ք ձեր հոգին, նույնիսկ ավելի խոնարհեցրեք հիմա և խուսափեք դեմքներդ ծամածռելուց, երբ հարկ է Նրա միջնորդությունը խնդրել: Ո՞վ է ասում ձեզ, որ Ես չպիտի լսեմ Նրան: Մի՞թե ձեր Մայրը չմիջնորդեց Կանայում: Այդ նշաններն արվեցին, որպեսզի ձեր հոգին հասկանա այն, ինչ որ մերժում է այսօր[1]: Այդ նշանը նախասահմանված էր բոլոր գալիք դարերի համար: Կինը, որ զարդարված է արևով, որ զարդարված է Իմ Սուրբ Հոգով՝ Երիցս Սուրբ, և որ լցնում է աշխարհը, համարվում է Աստծո Մայրը:

Արի՛, աղջի՛կս, արա՛ քո լավագույնը, իսկ Ես կանեմ մնացածը: Յահվեն Իր փառքով օրհնում է քեզ: Թող քո պտուղները շատանան[2]:

Իմ Որդու Աչքերի բո՛ց, հիշի՛ր, դու մենակ չես, Ես քեզ հետ եմ:

[1] Աստված ասում է միայն նրանց, ովքեր մերժում են մեր Օրհնյալ Մորը, և նրանց, ովքեր բավարար չափով չեն պատվում Նրան:
[2] Սա ասվեց հրամանի պես:

Հունվարի 30, 1996

Ամուսինս[1],
թույլ մի տուր որ վերադառնամ
դատարկաձեռն Քեզ մոտ:
Թող որ ես հետ գամ Քեզ մոտ
խունկի անոթներով
և պտուղների անոթներով.
մի ողջ բանակ, որ պատրաստ են
զորհաբերել իրենց
Քո Կամքի համար:

Իմ զոհ, ապրի՛ր Ինձ համար, վերցրո՛ւ քո յուղն Ինձանից: Լսի՛ր, եթե որևէ մեկը հարձակվի քեզ վրա հանուն Ինձ, ուրախության կանչերով աղաղակիր, որպես պատիվ համարիր այդ: Տկար, ո՜հ, տկար հոգի՛, ե՞րբ պիտի սովորես: Ե՞րբ: Ինչո՞ւ Ես չեմ կարող կերակրել քեզ այս հանապազօրյա հացով, որը Ես համտես արեցի խանդավառությամբ, որ փրկեմ ձեզ և փառաբանեմ Իմ Հորը: Դու պետք է ավելին խնդրես, դու պետք է խնդրես, որ դա քեզ վրա տեղա անձրևի նման: Դու ասում ես. «Ամուսի՛նս, ինձ թույլ մի՛ տուր Քեզ մոտ վերադառնալ դատարկաձեռն», և Ես ասում եմ քեզ. Իմ Հարս, որքան ճիշտ ես դու, ուստի ընդունիր Քո Ամուսնու խորհուրդը՝ խնդրիր ավելի շատ տառապանքներ, բեր Ինձ այն խունկը, որ խոստացել ես Ինձ: Սթափվի՛ր և ուշքի արի:

Եթե դու Ինձ թույլ տաս, Ես կարող եմ քեզ ողողել ու ընկճել փորձություններով, արգելքներով, և ամեն ինչով: Մի՞թե չես կարողանում հասկանալ, թե որքան մեծ բարեհաճության ես արժանացած: Այլևս մի մտմտա: Մնա՛ Իմ Աչքերի պայծառ բոցը, և մի՛ փորձիր հանգցնել այն... Արդարև, Ես ցուցադրել եմ քեզ աշխարհին որպես մի դրոշ՝ Իմ պատվանշանը քեզ վրա: Սակայն աշխարհը մերժում է տեսնել, որ այդ զինանշանն Իմն է: Ուստի նրանք քարեր են վերցնում, որ նետեն Իմ դրոշի վրա... Ուրիշներն էլ հալածում են քեզ կատաղած որսորդների պես:

Քո երջանկությունը գտիր այն բռնության մեջ, որը նրանք բանեցնում են քեզ վրա: Ես թույլ չեմ տա, որ նրանք ավելի բռնության ենթարկեն քեզ, քան անհրաժեշտ է: Ամենակարողը, որն ամեն ինչ տեսնում է, կնկատի քո յուրաքանչյուր քայլը: Եվ եթե նրանք ավելի անիրավ դտնվեն քո հանդեպ, քան քո բաժինն է, Իմ Հայրը և Ես կազատենք քեզ՝ բերելով քեզ դեպի քո ժառանգությունը:

Մի՛ կարծիր, թե Ես Ինքս չեմ խոցվում, երբ նրանք խոցում են քեզ: Այն, ինչ նրանք անում են քեզ, Ինձ են անում: Ես ցավից հառաչում եմ քո ներսում: Նրանք քո մեջ բռնանում են Ինձ վրա: Ինձ համար ջանք չի պահանջվում հեռացնել բռնակալին... Բայց Ես ասում եմ քեզ հիմա, թող այդպես լինի մի որոշ ժամանակ, վստահի՛ր Ինձ: Ես սրբագործում եմ Իմ բնակավայրը զոհաբերությամբ...

[1] Ես. 54:5 «...Քո Արարիչը կլինի քո ամուսինը...»:

Իսկ հիմա մնա Ինձ հնազանդ՝ պահելով հավատարմության քո երդումները... Նրանք մերժեցին բերկրանքի Իմ պարգևը... Նրանք անմեղ արյուն թափեցին, և նրանց ձեռքերը ծածկված են այդ արյամբ: ic

Հունվարի 31, 1996

Իմ Սիրելին իջավ ներքև իմ սենյակ,
որ սեղմի ինձ Իր Սուրբ Սրտին
և տանի ինձ Իր հետ՝
սահելով քամիների վրա:
Ես իմ Սիրեցյալինն եմ
և իմ Սիրեցյալը իմն է ընդմիշտ:

Այսօր իմ Սիրեցյալի Աչքերը
շատ թախծոտ են,
և Նրա Գլուխը հենված է իմ ուսին:
«Կենդանի Ջրի Ակո՛ւնք,
ո՞վ է այդքան վշտացրել քեզ»:

Իմ յուրայինները, հենց Իմ յուրայինները... Ես այնքան հոգնած եմ, Իմ վիշտն անչափելի խորն է... Ես չեմ կարող ծածկել իմ վիշտը քեզանից, Վասո՛ւլա... Այլևս ոչինչ չի կարող ծածուկ մնալ մեր երկուսի միջև, քանի որ Ես քեզ այնքան մոտիկ եմ պահել Ինձ:

Լսի՛ր, թե ինչ ունի ասելու քո Սիրելին հիմա. Նա, ով արարեց քեզ՝ քո Արարիչն ու քո Աստվածային Հայրը, որոշել է բարձրացնել քո Հոգին Իր մոտ...

Ես սա գաղտնի չեմ պահում, այո՛: Իմ Հայրը ոտքի կանգնեց, և Նրա կանչը արձագանքում է երկնքում յուրաքանչյուրի ականջում: Նա ոտքի կանգնեց, Նա, որ խնամեց քեզ հայրաբար, և առաջնորդեց՝ տալով քեզ մարդկությանը որպես Իր ընծան, որ հետ տանի քեզ Իր մոտ: Լինելով Աստված՝ Նա տեսնում է քո անմեղությունը: Լինելով Աստված՝ Նա չի տեսնում այնպես, ինչպես մարդկությունն է տեսնում, և Ես ասում եմ քեզ. Նա բարձրացել է[1], քանի որ այն բռնությունը, որ նրանք բանեցնում են քեզ վրա, չափից անցել է... Իմ հարցը քեզ սա է. «Դու ուզո՞ւմ ես, որ քո Հայրը, որը երկնքում է, հափշտակի քեզ բռնակալի ձեռքերից և ստի շուրթերից»:

Տե՛ր, Մի՞թե ես
պայման չկապեցի Քեզ հետ:
Ես պայման կապեցի իմ աչքերով,
որ չտեսնեմ իմ կյանքի
առաջին երեք օրերին:
Ես պայման էի կապել
իմ Արարչի և իմ Սիրելիի հետ՝
մնալ խավարում և թույլ չտալ,

[1] «Բարձրացել է» նշանակում է «կանգնել է»:

որ իմ աչքերը տեսնեն
արևն իր փառքի մեջ,
և լուսնի ցոլքը ինձ վրա ընկնելիս,
որպեսզի ես կատարեմ
իմ առաքելությունը մինչև վերջ
և փառաբանեմ քեզ:

Իմ Վասու՛լա, ես կրկին հարցնում եմ քեզ. «Ուզո՞ւմ ես երկարաձգել քո տառապանքը, զավա՛կս, երկրի վրա, թե՞ ուզում ես առավոտյան արթնանալ Իմ Լույսի մեջ, Մեր գրկի մեջ՝ շրջապատված հազարավոր հրեշտակների ձայներով, ուր ապահովությունը, փառքը և Քաղցրությունն Ինքը կշրջապատի քեզ»:

Ա՛հ, Աստվա՛ծ իմ,
հոգիս ծարավի է Քեզ,
հոգիս տենչում է Քեզ:
Ես կարող էի պարզապես ասել հիմա.
«Արի՛, արի՛ և փրկիր ինձ,
որ ընդմիշտ
վայելեմ Քո մոտիկությունը:
Հոգիս հալվում է իմ ներսում
Քո հանդեպ ունեցած սիրուց:
Իմ հոգին կարող է ընկնել
Քո Ձեռքերի մեջ հիմա որևէ պահի
և եթե ես ցանկանամ, կարող եմ գնալ
իմ Աստծո Տունը՝
ուրախության և գովաբանության
կանչերի և ցնծացող
բազմության մեջ,
ես կարող եմ լինել
ինձ Ուրախություն պատճառող
Աստծո հետ:
Բայց ես ցանկանում եմ լինել
արհամարհանքի մի առարկա
մեռածների մեջ և նրանց
կործանարար բռնության մեջ:
Անհայր չեմ ես, Դու ինձ հետ ես:
Սուրբ Գրքերն ասում են.
«Եթե մարդն անմեղ է,
Դո՛ւ, Փրկի՛չ իմ,
ազատություն կտաս նրան»:
Հիմա դու ինձ տվել ես
ընտրելու ազատություն:
Ո՛վ Սո՛ւրբդ,
ես ոչինչ չեմ ուզում ինձ համար,
և հետո, այդ Դու ես,
որ ինձ կյանք ես պարգևել՝
ուրախություն՝
կապելով ինձ Քեզ հետ:

Եվ այդ Դու ես,
որ հետևում ես իմ յուրաքանչյուր
շնչին քնքուշ հոգածությամբ:
Ուստի, այն երգը,
որը Դու ուզում ես երգել,
կարող է շարունակվել երգվել
շատ ազգերի ազատության համար,
և Դու կարող ես շարունակել նվագել
Քո քնարի վրա, Աստվա՛ծ իմ,
որովհետև վերջում
Գազանը կկծկվի Քո առջև:
Օգտագործիր ինձ
որպես արհամարհանքի առարկա
և տակավին թող ինձ այնտեղ,
ուր մշուշն ու
անկարգությունն են տիրում,
և ուր լույսն ինքը նման է
գիշերվա թանձր խավարի:

Բայց նրանք տհաճություն են պատճառում քեզ:

Քո մեծագույն Փառքի համար: Թող այդպես լինի: Թող նրանք տհաճություն պատճառեն ինձ:

Աղջի՛կս, թող լինի ուրեմն այնպես, ինչպես դու ես ցանկանում: Ես օրհնում եմ քեզ Մեր Երրորդության Սրբությամբ: Բայց ասա՛ Ինձ. Ի՞նչ անեմ, երբ Իմ Հայրը նորից ոտքի կանգնի:

Հիշեցրու Նրան մեր պայմանի մասին, Տե՛ր:

Դրանից Իմ Սիրտը հալչում է... Իմ մնացո՛րդ, Ես շատերին կփրկեմ հենց քո թշվառությամբ, քո մեծահոգությամբ, բայց հիշի՛ր, քո ամեն մի շարժումը, որը պատվում է Ինձ, գալիս է Ինձանից... Ուստի խուսափիր ինքդ քեզ մեծարելու որևէ միտումից... Մի որոշ ժամանակ ևս համբերատար եղիր: Մի՞թե երբևէ Ես տեսել եմ մի թշվառ արարած, որը սիրո կարիք ունի և չեմ տվել նրան Իմ Սիրտը: Տեսնո՞ւմ ես, Ես քո Ընկերն եմ:

Ո՛չ մեկը չի կարող ասել. «Տերն Իր հրամաններն է պարտադրում մեզ...», և քեզ, աղջի՛կս, Ես ասում եմ. «Ուրախ եմ, որ չես խախտել Իմ Հոր հետ ունեցած քո պայմանը: Ես կօգտագործեմ քո անձնվիրությունը, որ օրհնեմ երկրի վրա յուրաքանչյուր մարդու և դուրս հեղեմ Իմ Ողորմությունը նախքան աղետի օրը: Ես դուրս պիտի հեղեմ բարության և աղոթքի հոգի: Ես ասում եմ քեզ, Ես՝ Տերը, քեզ պիտի դարձնեմ մի Ամրոց, Ես քեզ պիտի ուժեղացնեմ իմ զորությամբ:

Ա՜հ... Իմ Սիրտը հրճվում է քեզնով: Թող մեր աչքերը հանդիպեն և ցնծան այդ ուրախության մեջ: Ես շատերին հետ կբերեմ Ինձ մոտ, նրանք, ովքեր մոլորվել են, ի վերջո կվերադառնան Ինձ մոտ... Արի՛, հենվի՛ր Աստծո վրա՝ քո Ուրախության: Երբեք չվհատվես, հիշի՛ր, Ես

նույնպես, երբ Ինձ դատապարտեցին և տվեցին Իմ Խաչը, որ տանեմ, ես ընկա այն նույն հողի վրա, որը պահում է ձեզ բոլորիդ, բայց ես վեր բարձրացվեցի, որ ավարտեմ Իմ Գործը: Սովորի՛ր, ուրեմն, քո Փրկչից: Վերջում դու կշահես... Ամենակարողի շունչը քեզ նորից վեր կբարձրացնի: Քո ծանր տառապանքներից ես կյանք կքաղեմ[1] առատորեն:

Իմացիր այս՝ քո Հայրը կպատասխանի քեզ Իր Սուրբ Տեղից: Քո կողքին ես եմ...

Հա՛յր իմ...

ես եմ[2]:

Այսօր ես պիտի տամ քեզ ազգերին, և ես պիտի լինեմ քեզ շրջապատող Վահանը... Այսօր դու Ինձ փառքով պսակեցիր: Բռնությունն ու անարդարությունը շրջապատում են անմեղ արյանը, և Իմ Սիրտը պատրաստ էր վեր բարձրացնել քեզ Բռնությունից: Ինչպե՞ս կարող էի ես լուռ մնալ, երբ տեսնում էի քեզ ճնշողներին թաքնված դարանակալել են քեզ և քո խորհրդատուին: Ինչպե՞ս կարող էի ես լուռ մնալ, երբ միայն լսում եմ. «Ինչպե՞ս ցած գցենք նրանց»: Բայց ահա այն սփոփանքը, որ ես առաջարկում եմ ձեզ[3]. աշխատեք <u>բարիք գործել, պահպանել[4] արդարություն, ես ձեզ հետ եմ</u>... Մնացե՛ք հավատարիմ, ժամանակներն այնքան չար են: Ես չեմ ուզում մի օր ասել. «Տեսե՛ք, այդտեղ Իմ աղջիկն է, նա բոլորովին միայնակ պառկած է իր հողի վրա, ոչ մեկը չկա, որ բարձրացնի նրան»:

Ես լցրեցի քո[5] ուսերն Իմ Զորությամբ, և վառեցի քո ներսում մի բոց, որ <u>պահպանես արդարությունը</u>... Ամեն ինչ, որ անում ես, արա գթության ոգով[6], նույնիսկ, եթե քո վկայությունը չի ընդունվում, մնա խաղաղության մեջ: Մի՛ նայիր ո՛չ աջ, ո՛չ էլ ձախ: Շատերը կբարձրանան՝ հայտարարելով, թե ուղարկված են Իմ կողմից[7]: Նորից <u>չխաբնվե՛ս</u> նրանցից... Մի՛ վախեցիր, ամոթանքի չես արժանանա: Իսկ քե՛զ, աղջի՛կս, ես կսփոփեմ քեզ և բոլոր նրանց, ովքեր վստահում են Ինձ:

Ժամանակները չար են, բայց, հիշե՛ք, ձեր Արարիչը քնքշորեն խոնարհվում է ձեզ բոլորիդ վրա: Աշխատեք խաղաղությամբ Իմ Անունով: Զարդարե՛ք Իմ Անունը ձեր սիրով, և շարունակեք տնկել խաղողի այգիներ անբերրի հողերում: Ես ձեր Հայրն եմ, թողեք որ ես լինեմ ձեր մխիթարությունը՝ հիշելով, որ Իմ Սերը ձեր հանդեպ երբեք չի լքի ձեզ:

~ Իսկ <u>դու</u>[8], որ ասում ես. «Ես բողոքում եմ այսպիսի անարդարության դեմ, պատասխան չկա, եթե ես բողոքեմ դրա դեմ, երբեք հատուցում չի տրվի: Նրանք գողացել են իմ պատիվը...»: Ես ասում եմ քեզ. եթե նրանք

---

[1] ապաշխարություններ
[2] Հավիտենական Հայրն է խոսում:
[3] Մեզ բոլորիս:
[4] Դա հնչեց ինչպես. «Շարունակիր»:
[5] Հայր Օ'Քերոլի
[6] Ես միաժամանակ լսեցի նաև «հաստատունություն»:
[7] Կեղծ մարգարերներ:
[8] Հայր Օ'Քերոլը

ժխտեցին քեզ, այն, ինչ քո գրիչը խնդրում էր, եղիր խաղաղության մեջ... Դրանից ավելի ի՞նչ պատիվ կարող էին նրանք տալ քեզ: Վերջում, Իմ ընկե՛ր, մի՞թե Ես հոգ չեմ տանի, որ Արդարություն տրվի: Ես Տեր եմ, և Իմ օրհնությունը քոնն է: Ես գիտեմ, որ դու քաջասիրտ ես կռվի մեջ[1], բայց Ի՛նձ թող այդ պատիվը: Շարունակիր սերմանել Իմ Տան մեջ... Ես կհոգամ, որ առույգ մնաս, որպեսզի պտուղ տաս հակառակ քո առաջացող տարիքին:

Աղջի՛կս, քո համաձայնությունը՝ Իմ հանդեպ ունեցած քո սիրուց ելնելով, հուզեց Ինձ արտասվելու աստիճան... Երջանիկ եք դո՛ւք, որ հոգով աղքատ եք: Ձերն է Իմ Թագավորությունը: Ես Թագավոր եմ ձեր ներսում, ձեր մեջ... Այդ թուլության միջոցով Ես պիտի կոտրեմ չարի զորությունը[2]: Ես օրհնում եմ քեզ, զավա՛կս:

Փետրվարի 12, 1996

Հռոդոս:

Տե՛ր իմ:

Ես եմ:

Իմ Վասո՛ւլա, սովորիր սրբերից: Ես բարդ Աստված չեմ, ոչ էլ հեռու եմ: Ես չեմ թաքցնում Իմ Դեմքը, ոչ էլ որևէ մեկին պահում եմ խավարում: Սոսկ Իմ Ներկայությունը Լույս է: Ձեզանից շատերն ասում են[3]. «Տե՛ր, մի նոր բան բեր մեզ համար...»: Սա Հակաքրիստոսի հոգին է, և այդ հոգին ամբողջապես տարածված է աշխարհում:

Ես ձեզ ո՛չ մի նոր բան չեմ բերի: Ես մեռա, Ես հարություն առա, Ես Առաջինն եմ և Վերջինը: Նա, ով հավատում է Ինձ, հավիտենական կյանք կունենա: Ես ընդմիշտ կենդանի եմ և փառքի մեջ, և Ես պահում եմ մահվան և Հադեսի բանալիները: Դեռ բաներ կան, որոնք կատարվելու են, բայց ամեն ինչ գրված է եղել մինչև ժամանակների Վերջը: Ես պիտի գամ, որ վերականգնեմ ձեր տեսողությունը Իմ Հոգու միջոցով, որպեսզի կատարվի այն, ինչ Ես ասել եմ... որ վերջում Ես պիտի հաղթեմ:

Այսօր դեռևս Իմ երկիրը բաժանվում է, պատառոտվում և Իմ Տան մեջ և Իմ տնեցիների մեջ առևտուր են անում: Մարգարեներին, որոնց Ես եմ ուղարկում նրանց մոտ, նրանք ասում են. «Մի՛ մարգարեացեք»: Այդ ժամանակը, որի մասին Ես նախապես ասել եմ ձեզ, եկել է, երբ կարդինալը դուրս կգա կարդինալի դեմ, եպիսկոպոսը՝ եպիսկոպոսի, քահանան՝ քահանայի: Բաժանողի զորությունը ծխի պես ներթափանցել է Իմ Տան

[1] Ես զգացի Աստծո հումորը, և իմ սիրտը թրթռաց ուրախությունից:

[2] «Իմ Զորությունը տկարության մեջ է ամբողջապես երևում» (Բ Կոր. 12:9):

[3] Այս պատգամը տրվեց Դուբլինի ռադիոի համար հարցազրույց ունենալու հեռախոսազանգից 5 րոպե առաջ: Զրուցավարը ավարտեց խոսքը՝ հարցնելով. «Հիսուս մեզ որևէ նոր բան ասո՞ւմ է»:

մեջ՝ շրջապատելու Իմ երկիրը: Նրա ավերիչ գործն ուժեղ է և նրա սիրելի թիրախներն Ինձ նվիրաբերված հոգիներն են: Նա մոլորեցնում է նրանց մտքերը, որ հետևեն իրենց սրտի կրքերին: Ապստամբը, որտեղով էլ որ անցնում է, հետևից թողնում է իր անեծքը... Նա երդվել է, որ ձեզ մեկդ մյուսի դեմ հանի: Նա երդվել է իր կատաղության մեջ ձեզ բոլորիդ մաղել, հատկապես Ինձ նվիրաբերվածներին, և կողոպտել նրանց: Նա երդվել է օգտագործել ձեզ բոլորիդ որպես իր խաղալիքը: Ես ասում եմ ձեզ. որևէ մեկը, որի սիրտը արդար չէ, չի դիմանա ու կկործանվի, բայց արդարները կապրեն չնորհիվ իրենց հավատարմության:

Ուժեղ եղիր, Վասո՛ւլա, Ես՝ Հիսուս օրհնում եմ քեզ և քո ընկերներին: Մի՛ դատիր, մե՞նք, մե՞զ: Ես սիրում եմ քեզ: Խաղաղություն: ic

Փետրվարի 20, 1996

Խնդրում եմ Տե՛ր,
նայի՛ր Քո այս ճյուղին:
Այցելիր նրան և ստուգիր:
Այն ցնցվել է:
Որթատունկը զգացե՞լ է,
թե ինչպես են նրան տանջել:

Այո՛, քանի որ ճյուղը պատկանում է Ինձ՝ ճշմարիտ Որթատունկին: Իմ ճյուղ, մի՛ անհանգստացիր քանի դեռ ճշմարիտ Որ թատունկի մաս ես կազմում, և պտուղ ես տալիս: Իմ Սերը բուժում է: Ի՛նձ վստահիր, և ուրիշ ոչ մեկին: Ավելի շատ աղոթիր և Ինձանից ավելի շատ խնդրիր: Ինչո՞ւ ես քաշվում Ինձանից: Արի Ինձ մոտ, զավա՛կս, և դու կստանաս: Ես սիրում եմ քեզ... Թույլ տուր Իմ Մատը դնել քո շուրթերին, որպեսզի դրանցից արձագանքեն Իմ Բառերը: Ընդունիր ամեն ինչ, որ գալիս է Ինձանից: Հանգստացիր Իմ մեջ, և թույլ տուր Ինձ հանգստանալ քո մեջ:

Ես Տեր եմ, Ես Ալֆան եմ և Օմեգան, ուստի խորացրու հավատդ Իմ հանդեպ: Թանկագին զավակ, սիրեցե՛ք մեկդ մյուսին և երբեք հուսախաբ մի՛ արեք Ինձ: Իմ Սերը ձեր սրտում է, որ սփոփի ձեզ: Արի: ic

Մարտի 18, 1996

Խաղաղությո՛ւն քեզ: Իմ Հրամանը քեզ հետևյալն է[1] . Գնա այնտեղ, ուր Ես ուղարկում եմ քեզ, որպեսզի պտուղ տաս, որը հարատև կլինի: Ամենը քեզ հետ է: Շրջիր, առաջարկելով այն ամենն, ինչ սովորել ես Ինձանից: Իմ Սուրբ Հոգու զորությամբ դու պիտի քայլես, պիտի խոսես, մարդկանց սրտերը պիտի հուզես, չարքեր դուրս պիտի հանես, արմատախիլ պիտի անես չարիքը և բարությունն պիտի ցանես: Իսկ Ես պիտի ուրախանամ Իմ ընտրության վրա: Դու էլ ուրախացիր քո Աստծով: Նույնիսկ քո մահից հետո քո մարմինը դեռ պիտի շարունակի մարգարեանալ: Հասկանո՞ւմ ես,

[1] Աստված շատ հզոր և հրամայող Ձայն ուներ:

Իմ Հոգին պիտի արտահայտի Ինքն Իրեն քո մարմնի միջոցով: Ես, և միայն Ես քարոզեցի քեզ՝ «Փրկու թյուն»: Իմ Զորությունը ամենից լավ է երևում տկարության մեջ: Ես գտել եմ Տկարությունը, և Ես դարձել եմ քո իսկական Ընկերը: Հիմա դու ուզո՞ւմ ես հաճելի լինել Ինձ:

Այո՛, Աստվա՛ծ և Հայր իմ:

Հավատարմորեն աշխատիր Իմ Անունով Երիցս Սուրբ և կատարիր Իմ Հրամանը նրա[1] հետ միասին, որին Ես միացրել եմ քեզ և բուժել, և թող նա ավելի մեծահոգաբար հանդուրժի տկարի թերությունների, ում Ես հարուցել և օրհնել եմ: Հաստատուն կանգնեք Ողորմության այս Գործի համար: Դիմադրե՛ք չարին և կառչե՛ք Ինձանից: Գնացեք և մի՛ վախեցեք ճշմարտությունը հռչակելուց: Իմ Սուրբ Հոգին պիտի հեռացնի բոլոր սահմանափակումները, որոնք տանում են դեպի ճշմարտություն:

Իմ Անունն է՝ Խաղաղություն և Սեր:

Մարտի 19, 1996

Իմ-Սուրբ-Սրտի-Վասո՛ւլա, Օձը, այդ Օձն է, որ մահ է բերում, որը սողում է ձեր բոլորի շուրջը: Նա գայթակղեցնում է, նա սպասում է, նա սպասում է ձեր անկմանը: Ապա մահը վրա է հասնում: Ա՜հ... Իմ Սուրբ Սիրտը ցավի մեջ է...

Տե՛ր, ես այստեղ եմ, ի՞նչ կարող եմ անել, որ թեթևացնեմ Քո ցավը:

Միանգամայն հետևիր Իմ Հրամանին[2]: Մահը չպետք է դա: Դու կարո՞ղ ես տեսնել այն, ինչ Ես եմ տեսնում ամեն օր: Ո՛չ... Ո՛չ, դու չես կարող տեսնել այն, ինչ Ես եմ տեսնում... Ես կորցնում եմ հազարավոր կյանքեր[3], Ես կորցնում եմ այնքան շատերին... Ամե՛ն օր: Դու տեսե՞լ ես այն, ինչ Ես եմ տեսել այնտեղ՝ անապատում: Այնտեղ հազարավոր մարդիկ կան, որ քաղցած են ու ծարավ են սփոփանքի, հույսի և սիրո: Հազարավոր մարդիկ կան, որ մերկ են և Իմ խոսքերի կարիքն ունեն: Իմ կարեկցանքը տարածվում է ապրող ու շնչող ամեն ինչի վրա: Բայց, տե՛ս, Գայթակղիչը ցանկանում է քեզ սնանկացնել, որպեսզի դու ոչինչ չունենաս առաջարկելու: Արի՛, երկարիր ձեռքդ կարիքավորներին: Մի՛ թող սովյալներին այնտեղ սպասելիս: Մի՛ խուսափիր հիվանդներին այցելելուց:

– Վասո՛ւլա, Ես որոշեցի քեզ վերցնել որպես Իմ հարսը, որպեսզի դու հետևես Ինձ: Ես քեզ դարձրել եմ Իմ հարսը և Իմ Ճրագն[4] եմ դրել քո

[1] Հայր Օ'Քերոլի
[2] մարտի 18, 96-ի պատգամը
[3] Հիսուս ուժեղ լաց էր լինում և տառապանքի մեջ էր:
[4] Հիսուս նկատի ունի Սուրբ Հոգին:

ներսում, որպեսզի Իմ Սուրբ Հոգու Լույսով և Նրա Զորությամբ դու սկսես մտածել ոչ այնպես, ինչպես մահկանացուներն են մտածում, այլ ինչպես Իմ հրեշտակներն են մտածում երկնքում: Հետո Ես կոփեցի քեզ Զորության Իմ Հոգով, որ դիմակայես թշնամու ծանր հարվածներին և հաստատուն մնաս:

Ես տվել եմ քեզ Խորհրդատվության Իմ Հոգին, որ քեզ ցույց տա, թե ինչն է ամենից շատ հրճվանք պատճառում Ինձ: Ես բացել եմ երկնքի դարպասները և ցույց տվել քեզ Իմ սրբերին [1], որոնք անցան աղքատության ճանապարհով, բայց սնեցին և ծածկեցին մերկերին, որոնք անցան խոնարհության և հնազանդության ճանապարհով՝ տեղ թողնելով Իմ Հոգու համար, որ գործի իրենց մեջ և իրենց հավատարմության շնորհիվ հրաշքներ կատարի: Նրանք անցան նվաստացման, թքի և տառապանքների միջով, սակայն ավելի շատ ուրախացան այդ պատվի համար և ավելին խնդրեցին՝ այդ բոլորն Ինձ մատուցելով: Արարա՛ծ, դու դեռևս երկար ճանապարհ ունես անցնելու, բայց մրցանակը նույնպես քոնը կլինի, եթե դու ջերմորեն ընդունես այն, ինչ Ես եմ քեզ առաջարկում: Իմ հարս, չվախենա՛ս, եթե ուր էլ գնաս, ինչ էլ որ անես, դու Ինձ պահես քո մտքում:

Տե՛ս, մի Ձեռքում Ես ունեմ սերմ, որ երբ ցանվի՝ կաճի՝ բավականություն տալով քեզ այն ամենի համար, որ դու պիտի կարողանաս ձեռք բերել հանուն Ինձ՝ երբեք չհոգնելով: Եվ այն պիտի զարդարի քո վիզը, որովհետև պատիվներ պիտի կրես քո վզի շուրջը, ինչպես գեղեցկության մի զարդարանք: Եվ քո գլուխը պիտի ծածկվի անուշահոտությամբ՝ ցողի մնան կաթելով քո մազերից:

Հիմա նայիր Իմ մյուս Ձեռքին... տեսնո՞ւմ ես այս սերմը: Երբ սա ցանվի, այն քեզ կտա տառապանքի հացը. այն կլինի նաև քո օգուտի համար[2]: Վերքեր ու վերքեր պիտի լինեն նորից ու նորից: Եվ Ես պիտի արթնացնեմ քո ամենամոտիկ ընկերներին, որ դառնան քո ամենամեծ հալածողները: Դու պիտի շնչահեղձ լինես և հառաչես: Ես պիտի պատվեմ քեզ Իմ Փչե Պսակով, Իմ Մեխերով և Իմ Խաչով: Ես, ընկե՛ր Իմ, ամեն օր քեզ պիտի առաջարկեմ խմել Իմ Բաժակից, մինչև որ Իմ Բաժակի դառնությունը քեզ ոչ մի վայրկյան չթողնի շունչ քաշելու: Հիմա արի՛ և ընտրիր սերմերից մեկը: Եթե ընտրես առաջինը, դու հետո պիտի տանջվես: Ընտրի՛ր:

Ես ուզում եմ Քո Կամքը, Դու Աստված ես, և Դո՛ւ ընտրիր ինձ համար:

Շատ լավ ուրեմն, Իմ հարս: Ես կընտրեմ երկրորդ սերմը: Դու պիտի հալածվես, բայց երբեք քո ամենամտերիմ ընկերների կողմից: Ես դա թույլ չեմ տա: Ա՛հ, որքա՜ն եմ Ես ուրախանում, քանի որ դու վարվեցիր այնպես, ինչպես Ես կուզենայի որ վարվես՝ թողնելով ամեն ինչ Իմ Ձեռքերում և մնալով Ոչինչ: Դու վերջապես հասկանո՞ւմ ես, որ Ես Ինքնաբավ եմ: Ես մտադրություն չունեմ թաքցնելու Իմ Անհատնում Գանձերը կարիքի այս ժամանակներում, բայց Ես դուրս կնետեմ դրանք

[1] սեպտ. 27, 87-ի տեսիլքը
[2] Օգուտ՝ սրբագործում:

քո ոչնչության միջոցով: Քիչ ժամանակ է մնացել այժմ, մի՛ ուշացնիր, քանի որ ես տանջվում եմ քո հասկացողությունից էլ այն կողմ:

Շտապի՛ր, քանի որ մահն անխուսափելի է այնտեղ՝ անապատում: Ուրախացի՛ր Ուրախության մեջ: Ես օրհնում եմ քեզ: ic

Մարտի 20, 1996

(Այս պատգամը տրվել է 1996 թվի մարտի 20-26-ին: Ավետումը 1996 թվի մարտի 25-ին էր):

Ես Քո ծառան եմ և
ես այստեղ եմ, որ ծառայեմ Քեզ.
Վեհությո՛ւն:
Առանց Քեզ ես ոչինչ եմ,
իմ հոգու Զուլալ բավականությո՛ւն,
ես լսում եմ:

Սիրելի՛ս, արի և սովորիր. ո՞վ ամենաշատն ուրախացրեց Ինձ: Ես կասեմ քեզ, թե ո՛վ ամենաշատն ուրախացրեց Ինձ՝ Նոր Եվան: Այո՛, Կինը՝ արևով զարդարված, կանգնած լուսնի վրա, տասներկու աստղերն Իր Գլխին որպես թագ[1]: Քանի որ Ես, որ ստեղծեցի երկինքը և նրա մեջ գտնվող ամեն ինչ, և երկիրն ու այն ամենը ինչ կա նրա վրա, և ծովն ու այն ամենը ինչ կա նրա մեջ[2], դրել եմ Նրան այս ամենից վեր[3]:

Երկնքի Թագուհին միշտ Ամենաբարձրյալի Գահի ներկայության մեջ է գտնվում: Որքան բարձր է երկինքը երկրից, նույնքան մեծ է Նրա Անունը, նրա Անունը՝ լույսով զգեստավորված: Թող ողջ աշխարհը ծնկի գա Նրա առջև, որ կրում է այս Սուրբ Անունը՝

Աստվածամայր:

Իր Անարատ արգանդում Նա փառաբանեց Ինձ՝ ստանալով Ինձ՝ անբիծ և անարատ Գառնուկին, դառնալով մի սրբարան Սրբարանի համար: Եկե՛ք և երգեք մի նոր երգ ի պատիվ Նրա: Թող բոլոր նրանք, ովքեր ապրում են երկրի վրա, պատվեն Նրա Անարատ Սիրտը՝ Խորանը, որի մեջ Ես հղացա և նաև[4] դարձա Աստված-Մարդ: Ո՛չ մեկն Ինձ այնքան չփառավորեց, որքան Կինը՝ արևով զարդարված:

Այո՛: Նա այնքան սքանչելիորեն գեղեցիկ է Իր կատարյալ Սիրո մեջ, որ կղզիները, սարերը, բլուրները, հովիտներն ու աղբյուրները բոլորը ցած են խոնարհվում, երբ Նա անցնում է իրենց մոտով: Եվ այսօր, ինչպես երեկ, երբ Ամենագեղեցիկ Սերն անցնում է երկրի վրայով, Իմ Հրեշտակների ուղեկցությամբ, որոնց աչքերը երբեք չեն դադարում հիանալուց Հիասքանչով, բոլոր Կույսերից Ամենասրբով, հմայվելով Իմ

[1] Հայտ. 12:1
[2] Հայտ. 10:6
[3] Սրա նշանն այն է, որ Նա կանգնած է լուսնի վրա:
[4] Հիսուսն ավելացրեց *նաև* բառը, որովհետև Նա նաև Աստված է:

Հոր Գլուխգործոցի Գեղեցկությամբ, երբ Նա անցնում է երկրի վրայով, Նա սիրալիր կերպով միջամտում է և պատասխանում ձեր խնդրանքներին:

Թույլ տվեք ասել ձեզ. Իմ Սուրբ Սիրտը ձեր երկինքն է: Արարչությո՛ւն, Իմ Սուրբ Սիրտը, որը ձեզանից այնքան շատերն են ժխտում և մերժում, ձեր Երկինքն է, ձեր Դրախտը, ձեր Թագավորությունը, ձեր Ժառանգությունը, ձեր Հանգստի-Վայրը ողջ Հավիտենության համար: Ուրեմն մոտեցե՛ք այս Սրտին, որն այնքան սիրում է ձեզ, և Ես դուրս կհեղեմ Իմ Սրտից ձեր սրտի մեջ անհաշիվ օրհնություններ, որ ձեր հոգին դարձնեմ դարնան պես գեղեցիկ, որ ձեր հոգին դարձնեմ մի փղոսկրե աշտարակ, մի երկինք՝ միայն Ինձ համար: Ինչպե՞ս կարող է որևէ մեկը կասկածել Իմ Սիրուն: Ա՜հ, սիրելինե՛րս, ամեն անգամ, երբ կասկածում եք Իմ Սիրուն, արևը խավարում է Իմ վշտից...

Այսօր, իմ Մեծ Սիրով, Ես ուզում եմ ցույց տալ Իմ Մոր Սիրտը[1]:

[2]«Օ՜, Իմ Հոր Գլուխգործոց: Օ՜, Յահվեի Վեհ Գլուխգործոց: Ամուսի՛նը Իմ Սուրբ Հոգու: Իմ Պայծառ Տապանակը: Քո Սիրտը, Սիրեցյալի Սիրելի՛[3], Մեկ է Մեր սրտերի հետ: Քո Սիրտն Իմ փակ պարտեզն է, կնքված մի աղբյուր: Քո Սիրտը մի Աղբյուր է, որ պարտեզները բերրի է դարձնում: Քո Սիրտը, ո՛վ Պաշտելիդ, Իմ Գահն է, որի վրա Ես պատվի արժանացա: Սիրտը Սրտի, ում Ես թագադրեցի Մեր ներկայությամբ և Իմ ողջ երկնային արքունիքի ներկայությամբ[4], ինչպե՞ս կարող է Իմ արարածներից որևէ մեկը մերժել Քո Սիրտը[5]: Դո՛ւ, զորության Տապան, ամբողջովին առաքինություններով զգեստավորված, Իմ Նոր Ե՛րգ[6], Իմ Քնա՛ր, Իմ Միջնաբե՛րդ, ում մեջ երկնքի և երկրի Արարիչը զմայլվում է քո հոյակապությամբ, Դո՛ւ, որ կանգնում ես Մեր Ներկայության մեջ, նույնիսկ ավելի մոտ ես կանգնած նրանց, ովքեր կանչում են Քեզ: Բայց և այնպես, ինչպե՞ս կարող է մարդն այդքան ցած ընկել և ընտրել խաբուսիկ մի ճանապարհ, որ մերժի Քո Սիրտը»:

Մի՞թե չեք լսել, արարչությո՛ւն, որ Ես Նրա Սրտի Սիրտն եմ: Նրա Հոգու Հոգին: Մի՞թե չեք լսել, որ Մեր Երկու Սրտերը միացած են և Մեկ են: Հաշվի առեք և գնա հատե՛ք Իմ Փրկարար Սիրտը, գնահատե՛ք Նրա Համափրկարար Սիրտը, գնահատե՛ք բերկրանքը Իմ Սրտի, որը ծագում է արշալույսի պես, որ պայծառացնի խավարի մեջ կորած երկիրը, գնահատե՛ք Թագուհու Սիրտը, որ իր շքեղությամբ փայլում է մարդ կության վրա ավելի պայծառորեն, քան բոլոր համաստեղությունները միասին վերցրած, ավելի փառահեղ, քան արևը, Իմ Փառքի պես լուսաշող Իր եզակի կատարելության պատճառով: Բարձր գնահատեք ձեր Աստծո Տապանակը: Գնահատե՛ք և մեծապես հարգեք ինչպես Ես եմ հարգում Իմ Գահը:

---

[1] Ես զգացի, թե ինչպես է Հիսուսի Սիրտը հալվում սիրուց, երբ ասաց «Մայր» բառը:
[2] Բարձր կանչելով Հիսուս խոսում էր Տիրամոր հետ:
[3] Ես հասկացա, որ «Սիրեցյալ» բառը վերաբերում է Սիրեցյալ Երրորդությանը:
[4] Հանկարծ Քրիստոսը ցածրացրեց Իր Ձայնը, որը տխուր հնչեց:
[5] Հիսուս միևնույն ժամանակ տխուր և զարմացած էր:
[6] Ես հասկացա, որ դա նշանակում էր Նոր Եվան:

Մի՛ հարցրեք. «Ինչպե՞ս կարող է լինել, որ Ամենաբարձրյալը այդքան բարձր դահ է հատկացրել Նրան Իր Երկնային Գավիթներում»: Տեսե՛ք, ես ոչ միայն նշանակել եմ Նրան որպես Իմ Հրեշտակների և Իմ արարածների Թագուհի, այլև նշանակել եմ Նրան լինելու Իմ Գահը: Երկնքի և երկրի Թագուհին թագավորների Թագավորի Գահն է, քանի որ Ես՝ ամենի Տերը, առաջին տեղն եմ դրել նրան Իմ Սուրբ Սրտում:

Ծնված՝ լինելու Շքեղության Իմ Թագը, ծնված՝ լինելու Ճշմարիտ Լույսի Անոթը, որը մարմին առավ Դավթի ճյուղից, ծնված՝ լինելու Իմ պատիվը և Իմ պարծանքը, Հոգին Ինձ հետ և Հոր հետ ասաց,

«Մարիա՛մ, շնորհներով լի, Մենք քեզ հետ ենք: Մենք Քեզանից ոչ մի գաղտնիք չենք թաքցնելու. Մեր Շունչը լինելու է Քո շունչը՝ կուսական ճառագումը Մեր Փառքի: Մարիա՛մ, Մեր Բարության կերպար, Մենք Մեր Խաղաղությունն ենք տալիս Քո Սրտին, այդ կատարյալ Սրտում Ես՝ Որդիս, պիտի հաղթանակեմ: Մեր Սիրտը լինելու է Քո Սիրտը՝ որպես աստվածային սիրո բոցավառ մի հնոց, Մեր Կյանքը լինելու է Քո Կյանքը, Մեր Հոգին լինելու է Քո Հոգին,[1] մի վսեմ դանձ, մի Դրախտ Մեզ համար: Այո՛, քանի որ նա, ով միացած է Մեզ, հոգով մեկ է դառնում Մեզ հետ»:

Սա Նա՛ է, ում Մենք այնքան բարձր պատվի արժանացրինք, Նա՛, ում այնքան շատերն են մերժում, որը սակայն ձեր աչքերի անուշահոտ յուղն է, ձեր վերքերի բալասանը, Հորն ուղղված գթության աղերսանքը՝ ձեր աղաչանքների համար, բարեխոսն ու պաշտպանը ձեր հոգու համար:

Տկա՛ր մարդ... Իմ Սուրբ Հոգու Ամուսինը Տաճարի Տաճարն է, թույլերին և թշվառներին խոստացված երկիրը, Իմ հավիտենական Լույսի արտացոլումը: Ձեր Ստեղծողի ստեղծողը ձեր վշտերի մխիթարությունն է... Ի՞նչ ունի մարդն ասելու: Ի՞նչ կարող է մարդն ասել իր վրանում: Ինչպե՞ս կարող է նա որևէ երկնային բան հայտնագործել իր անցավոր մարմնի մեջ, երբ նրա հոգին ծանրաբեռնված է մեղքով: Ի՞նչ է արել Իմ Հոր Ամենակարող Ձեռքը: Դու ղեկավարում ես քո միտքը, մա՛րդ արարած, առանց լույսի, առանց դատողության:

Այսօր, ո՛վ մարդ, բա՛ց արա քո սիրտը, և այդ ժամանակ բոլոր խորհուրդները, որոնք քեզ անհասկանալի էին թվում, պիտի բացահայտվեն Իմ Աստվածային Լույսով Երիցս Սուրբ, և դու պիտի հասկանաս, թե ով է արևով զարդարված Կինը: Ապա, քո ողջ էությունը պիտի բարձրանա և քո սիրտը պիտի հրճվի և զմայլվի, երբ քո աչքերը քողազերծվեն՝ տեսնելու օրհնյալ սրտերի Օրհնյալ Սիրտը, սրբերից Ամենասուրբը, Անզուգական Սիրտը, որն այրվում է մի անսահման սիրով, մի վառվող և այնքան պայծառ կրակով:

Այդ ժամանակ, ընկե՛ր Իմ, դու կհասկանաս, թե ինչ է Առաքինությունը, և թե ինչպես այս Առաքինի Կուսական Սրտում, Ես՝ Աստված, դարձա Աստված-Մարդ, դու կտեսնես քո Փրկչի Մորը, մարգարեների Մորը, առաքյալների Մորը, շնորհների Մորը, Հաղթության

[1] Հոգին այստեղ պետք է հասկանալ որպես կյանք, ինչպես Ավետարանիչ Ղուկասն է գրում (Ղուկ. 9:24):

Մորը, անսահման շնորհների Մորը, Անդերազանցելի Փրկության Մորը, Ճշմարիտ Որթի Խաղողի Այգին, Ճանապարհը, որը տանում է դեպի այն Ուղին, որը բոլորին առաջնորդում է Ինձ մոտ, դեպի երկինք տանող լայն բացված Դարպասը, որպեսզի բոլորը ներս մտնեն և հավիտենական կյանք ունենան:

~ Մի՞թե չեք նկատել, թե ինչպես է Իմ Սիրտը միշտ հալվում և նախապատվում Նրա Սիրտը: Ինչպե՞ս կարելի է այս Սրտին, որն Իր մեջ է կրել ձեր Թագավորին, մերժել որևէ բան, որ Նա խնդրում է Ինձանից: Բոլոր հավատացյալներն օրհնում են Նրա Սիրտը, քանի որ Նրա Սիրտն օրհնելով, դուք օրհնելիս կլինեք Ինձ:

Դուք Թագուհի և պաշտելի կհռչակեք Նրան, հենց որ ճանաչեք Նրան: Ուրեմն վե՛ր բարձրացրեք ձեր աչքերը, արարչությո՛ւն, որ տեսնեք Նրա Սիրտը, և Ես խոստանում եմ ձեզ, որ դուք ավելի ու ավելի կպայծառանաք: Ձեր սիրտը վեր պիտի բարձրացվի Նրա Սրտի հնոցի մեջ, և հրճվանքից տրոփելով ու հրճվանքով լցված, դուք ներս կմտնեք Նրա Սրտի մեջ, ինչպես ներս են մտնում սիրո մի օվկիանոս, քանի որ Նրա Սրտի հարստությունը այնքան ծավալուն է, որքան Ծովը, որը հոսում է դեպի ձեզ, և դուք՝ դեպի այդ Ծովը: Երկնքի և երկրի բոլոր հարստությունները գտնվում են Նրա Սրտում, և դրանք բոլորը կարող են ձեզ համար լինել:

Ձնայած գիշերվա խավարը դեռևս ծածկում է ձեր միտքն ու սիրտը, արթնացե՛ք: Արթնացե՛ք և վեր բարձրացրե՛ք ձեր աչքերը Նրա Սրտի այս շողշողուն տեսքի վրա, որն այնքան շատ մարգարեներ ցանկացան տեսնել իրենց ժամանակին, սակայն չտեսան Այդ: Արթնացե՛ք և երգե՛ք մի նոր օրհներգ Ամենասուրբ Երրորդության Օրհներգին, երգե՛ք և ասե՛ք, «Եղբայրնե՛ր, քույրե՛ր, եկե՛ք և ծածկվե՛ք Շնորհի Թիկնոցով, Շնորհի մեջ: Եկե՛ք և ծածկվե՛ք Թագուհու Լույսով: Եկե՛ք, և թող Նրա ստվերը ծածկի մեզ, ինչպես Սուրբ Հոգին ծածկեց Նրան Իր ստվերով»: Մի՞թե չեք լսել, թե ազգերը ինչպես պիտի գան դեպի Նրա Լույսը, և որ թագավորները պիտի գան դեպի Նրա արշալույսի պես բարձրացող փայլքը, երբ վերջում Նրա Սիրտը հաղթի Իմ Սրտի հետ միասին: Դա առեղծված է սրտով հարուստների համար, սակայն աղքատների և խոնարհների համար՝ <u>այնքան սպասված</u> մի Օրհնություն...

Օ՛, եկե՛ք, նախքան մեղքի հեղեղները կհասնեն ձեզ վրա: Եկե՛ք այս Տապանի[1] մեջ, որը կարող է փրկել ձեզ: Մի՛ եղեք Նոյի օրերում ձեր նախնիների պես, ովքեր չլսեցին: Եկե՛ք Տապանի մեջ և պիտի փրկվեք մեղքի փոթորկալից ջրերից և մեղքի հեղեղների մեջ կործանվելուց: Եկե՛ք և դարձեք Միջնորդուհու խոստացված զավակը, որպես արդյունք այն նվիրման որ պիտի ունենայիք Նրա հանդեպ:

Նրա հանդեպ ունեցած ձեր նվիրմամբ դուք ինքներդ ձեզ կնվիրաբերեք Ինձ: Նրա Սիրտը պատվող ամեն մի նվիրաբերում պիտի ընդլայնվի և բարձրանա դեպի Ինձ, քանի որ Մեր միությունն այնքան կատարյալ է: Նրա Սրտի հանդեպ ունեցած ձեր նվիրմամբ, Իմ բոլոր որոշումներն ավելի լավ պիտի հասկացվեն Նրա Լույսի տակ, որովհետև ձեր քայլերը պիտի առաջնորդվեն Նրա Սրտի կողմից, քանի որ ձեր

[1] Մեր Օրհնյալ Մոր Սրտի մեջ:

ձեռքից պիտի բռնի հենց Ինքը՝ Շնորհների Գահը: Որքա՜ն օրհնյալ կլինեք դուք, որ կրկնեք ձեր նվիրաբերումը Նրա Սրտին:

Եկե՛ք Նրա մոտ, որն այնքան Օրհնյալ է, որ ցույց է տալիս Իր Մայրական Սերը Իր զավակների հանդեպ՝ ցույց տալով նրանց երկնքի ճանապարհը: Եկե՛ք ձեր Փրկչի Համա-Փրկչուհու մոտ, որի Սիրտը Սիրուց այրվելով, նույնպես առաջարկվեց խոցվելու հանուն ձեզ: Եկե՛ք և պատվեք այս Սիրտը՝ ճրագի պես վառ, որը փայլում է ներսից և դրսից Իմ Սրտի մոտ:

Եթե ասեք. «Մենք կարիք չունենք Նրա Սրտին», իմացե՛ք, որ իրականում ասում եք. «Մեզ պետք չէ Տիրոջ Սիրտը»: Իմացի՛ր, տկար մարդ, որ Իմ Սուրբ Սիրտը և քո Մոր Անարատ Սիրտն այնպես են միացած, որ իրենց կատարյալ միության մեջ այս Երկու Աստվածային Սրտերը դառնում են Մեկ: Ես լրջորեն ասում եմ ձեզ. Եթե ճանաչեք Նրա Սիրտը, դուք ճանաչելիս կլինեք ո՛չ միայն Իմ Սիրտը, այլև՝ Հոր: Մի՞թե չեմ ասել, որ Ես Հոր մեջ եմ և Հայրը Իմ մեջ: Եթե Ես Հոր մեջ եմ և Հայրը՝ Իմ մեջ, Իմ Սիրտը նույնպես Հոր մեջ է, և Նրա Սիրտը՝ Իմ Սրտի մեջ: Ասել, որ մենք անբաժանելի և Մեկ չենք, նշանակում է մերժել Իմ Խոսքը: Մի՛ եղեք ձեր հոգու ստրուկը և մի՛ հաղթվեք այս աշխարհի փաստարկներից:

Ասացե՛ք Ինձ, ո՞ր արարածի սիրտն է նման Մարիամի Սրտին: Մարիամի Սրտի նմանը չկա: Կատարյալ՝ սկզբից ի վեր, Անարատ՝ ծննդյան պահից[1] և Շնորհով լի, իր շնորհով գերազանցելով Իմ Հրեշտակների շնորհները: Ահա թե ինչու են Իմ Հրեշտակները խմբերով հարցնում միմյանց.

«Ո՞վ է սա, Իր քողի ետևում»:

«Ինչո՞ւ են լեռների կատարները ցած խոնարհվում՝ ողջունելով Նրան, մինչ Նա անցնում է նրանց մոտով»:

«Ո՞վ է սա՝ առանց Իր Սրտում որևէ արատի և այսքան հաճելի Աստծուն»:

«Տեսե՞լ եք, թե ինչպես է Աստծո ողջ արարչությունը ցածրացնում իր հայացքը, մինչ Նա անցնում է»:

«Ո՞վ է Նա, որ նման է մի աղբյուրի, որը բերրի է դարձնում այգիներն Իր շնորհներով, կենդանի ջրի այս ջրհորը»:

«Ո՞վ է Նա, աստվածային սիրո այնքան մաքուր մի Սրտով, որ ձգտում է Աստծուն գիշեր և ցերեկ, ցերեկ և գիշեկ, և կատարյալ միության մեջ է Ամենաբարձրյալի հետ»:

«Ո՞վ է այս Կույսը, որն այնքան խոնարհ է Իր արժանիքների և շնորհների հսկայական հարստությամբ, որ Գերագույն Աստծո Աչքերը երբեք չեն թողնում Նրան»:

Իմ Հրեշտակներից շատերը լուռ մնացին՝ հիացած Նրանով, նրանք բառեր չէին գտնում...

Այս Սրտի մեջ, շնորհի այդ Վիհի մեջ է, որ Ես ցույց տվեցի Իմ զորությունը: Երկնքի և երկրի Հեղինակը, շնորհի Հեղինակը, գտավ Իր երկինքը երկնքում, Իր շնորհը՝ շնորհի մեջ, որ գա ստրուկի վիճակով: Ես եկա Ապշեցուցիչ Խոնարհության[2] մոտ՝ ծառայելու համար, այլ ո՛չ թե

[1] Նա հղացավ Անարատ:
[2] Մեր Օրհնյալ Մայրը:

ծառայություն ընդունելու: Ես՝ համայն մարդկության Փրկիչը, խոստացված Մեսիան, եկա Իմ Սուրբ Սրտի կատարյալ պատկերի մոտ՝ կիսելու վշտերը, ուրախությունները, տառապանքները, մարտիրոսությունը, հրաշքները, դավաճանությունները, չարչարանքը, խարազանումը, խոցումը և խաչելությունը: Միասին Մեր Սրտերը քավեցին:

Երկրի վրա Իմ Սուրբ Մոր անցկացրած բոլոր պահերը՝ սիրո, բարեգործության, խոնարհության և մաքրության կատարյալ օրհներգ էին: Մի գանձ՝ իմ գանձերից: Ես եկա այս Սուրբ Սրտի մեջ՝ որը Իմ Սուրբ Սրտի պատկերն է և նմանությունը, որ դառնամ Աստված-Մարդ՝ հետևելու Նրա քայլերին[1], որպեսզի ավելի ուշ՝ Նա հետևի Իմ քայլերին[2]: Ես ասել եմ, որ Նա և Ես կկսեցինք ամեն ինչ ուղիղ մինչև Խաչը:

Մեր միությունը ներքնապես այնքան կատարյալ էր, որ Մենք խոսքերի կարիք չունեինք, քանի որ մեր Սրտերն էին խոսում: Իմ բառերն ու Իմ մտքերը կարիք չունեին Նրան փոխանցվելու Իմ բացակայության ժամանակ: Իմ Սուրբ Հոգու զերագույն զորությամբ, Նրան ամեն ինչ հայտնի էր: Իր Կուսական Սրտում ամեն ինչ հայտնի էր Իրեն, քանի որ Նա տիրապետում էր Աստծուն, և Աստված տիրապետում էր Նրան: Այս ձևով Նրա ամենօրյա սնունդը Հավիտենական Հոր Կամքն էր:

Ո՜հ, արարչությո՛ւն: Իմ Հոգին ամբողջապես վհատության մեջ է, երբ ձեզանից այնքան շատերը մերժում են Նրա Սիրտը: Եվ Իմ Հրեշտակները դողում են այն օրվա համար, երբ Ես այդ մարդկանց մեղավոր կհայտարարեմ: Բայց նրանց համար, ովքեր պատվեցին Նրան և սիրեցին Նրան, Նրա Սրտի Դարպասը բաց կլինի ձեզ համար, որ մտնեք երկինք: Եվ ես կասեմ ձեզ, ով սիրում և պատվում է Նրան. «Եկե՛ք, ձեր սերը Նրա հանդեպ այնքան մեծ էր երկրի վրա, որ այսօր կարող եք գալ ձեր սենյակը և խոնարհվել Իմ Սուրբ Տաճարի[3] առջև»:

Արարչությո՛ւն, այս Մեծ Նշանը[4] երկնքում, Կինը՝ արևով զարդարված, որ պահում է դևերին վախից քարացած, այս Մեծ Նշանը, որ լուսավորում է երկինքը՝ սարսափի մատնելով Խավարին[5], ոչ այլ ոք է, քան Իմ Մայրը: Ի հակադրություն խավարի, Ես բարձրացրեցի այս Սրբազնագույն Կույսին, որ ձեզ բոլորիդ համար լինի վառվող կրակի մի սյուն՝ գիշերով ձեր քայլերն առաջնորդելու, իսկ ցերեկով մի Արև՝ լուսավորելու համար ձեր ահավոր խավարը:

~ Այն օրը, երբ Ես Սուրբ Հոգով հղացա Նրա Կուսական Արգանդում, բոլոր դևերը վախից քարացան, մինչդեռ երկնքում, միևնույն ժամանակ երկնային զորքերի մի մեծ խումբ փառաբանում էին Աստծուն և երգում. «Փառք Աստծուն ամենաբարձր երկնքում, և խաղաղություն մարդկանց, ովքեր վայելում են Նրա բարեհաճությունը»: Այսպիսով, Ես իջա երկնքից՝ երկինք, Իմ գահից՝ Իմ գահը...

Այո՛, այնտեղ, ուր յուրաքանչյուր առաքինություն ծաղկում էր, զմայլելով Իմ Սուրբ Սիրտը Նրա կատարյալ Սիրո բուրմունքով: Իմ

[1] Երբ Հիսուս երեխա էր՝ հետևելով Իր Մորը:
[2] Ես հավատացա, որ Մարիամը հետևել էր Հիսուսին Իր Առաքելության մեջ:
[3] Մեր Օրհնյալ Մայրը՝ Աստծո Տաճարը:
[4] Հայտ. 12:1
[5] սատանային

Կատարյալի Սիրտը անզուգական է և ամբողջապես սիրելի... Նրա Սիրտը, Իր Անարատ Հղացումից ի վեր մի անդաղար աղոթք էր, մի բուրավետ խունկ, Աստծո հանդեպ մի հարատև պաշտամունք: Սա Իմ Խաղողի Այգին է[1], որին Իմ Հոր զորեղ Ձեռքը մշակեց, որպեսզի Ճշմարիտ Որթը արմատ գցի այդ հողում:

Եկե՛ք դեպի ձեր Օրհնյալ Մոր Սիրտը, որն այնքան պայծառ է ինչպես օրը, եկե՛ք և ստացե՛ք Նրա շնորհները, որոնք այնքան անհաչիվ են և ճառագայթում են Նրա Ձեռքերից: Իմ Սիրտը, որը լիքն է շնորհով և ճշմարտությամբ, մարմնացավ շնորհով և ճշմարտությամբ լի Կուսական Արգանդում: Եվ հիմա, Մեր Երկու Սրտերը, միացած Մեկի մեջ, պիտի հաղթեն Դաժան ժանտախտին, ո՛չ ֆիզիկական ուժով, ո՛չ էլ զենքերի ուժով, այլ սիրո և զոհաբերության միջոցով:

Մարտի 26 1996

Իմ Խաղաղությունը ես տալիս եմ քեզ: Այդ խաղաղության մեջ ստացիր Իմ Պատգամը:

Նա միայն պետք է կարդա Իմ պատգամը, հետո թող որոշի[2]: Աղջի՛կս, ողջ արարչությունն է ենթարկվում Ինձ...

Այո՛, արարչությունը ենթարկվում է Քեզ, բայց Քո արարածները՝ նրանցից ո՛չ բոլորն են ենթարկվում Քեզ:

Ո՛չ... Նրանցից ոչ բոլորն են ենթարկվում Ինձ: Նրանցից շատերը գայթակղվում են և ցանկանում են ավելի շուտ մարդկանց հավանությանը արժանանալ, քան թե Իմ... Շատերն Ինձանից՝ իրենց Աստծուց առաջ ավելի մեծ ցանկություն ունեն մարդկանց բարեհաճություն պատճառել: Իսկ ոմանց համար սեփական շահն է, որ ստիպում է նրանց չենթարկվել Ինձ: Մյուսները դեռևս չեն որոշել մի կողմ թողնել իրենց կրքերը, իրենք իրենց բավականություն պատճառելը: Նրանք մեղանչում են այնքան, որքան շնչում են: Ես խոսել եմ ուրիշներին դատելու մասին, թե ինչպես իրենց լեզուն պատճառ պիտի դառնա իրենց դատապարտմանը: Բայց սրան Ես կարող եմ մի բան ևս ավելացնել. Այն բերանները, որոնք կրակ են թափում, հարձակվելով մարդկանց վրա, նրանց կտոր-կտոր անելով, նրանք նույնպես պիտի տառապեն, քանի որ նրանք վշտացնում են Իմ Սուրբ Հոգին: Իմ Սուրբ Հոգու ուղիներն այնքա՜ն տարբեր են: Որևէ մեկը, որ ղեկավարվում է Իմ Սուրբ Հոգու կողմից, նրան շնորհ է տրված հետևելու Իմ Օրենքներին և Իմ Ուղիներին, որոնք մեղմ են, բարի և այնքան կատարյալ:

Ես Սիրո Ակունքն եմ, և Հիսուս է Իմ Անունը: Բայց Ձարը՝ չարիքի ակունքն է, և ողջ չարության... Աղջի՛կս, երբե՛ք չկորցնես արիությունդ: Թող քո կյանքը դառնա գեղեցկության մի զարդ, ծաղիկների մի պսակ, ծավալվող խունկի մի ծուխ, որպեսզի անտեսանելի Աստծո Պատկերը

[1] Մեր Մայրը՝ Տիրամայրը

[2] Ես հարցրեցի Հիսուսին, թե ինչ տեղի կունենա, եթե «մեկը» չենթարկվի կամ չլսի Իր խնդրանքները:

դառնա քեզ տեսանելի ողջ հավիտենության համար: Մնա՛ Ինձ հավատարիմ: Ես քո կողքին եմ:

Երբե՛ք չվախենաս: Գովաբանի՛ր Ինձ աղջի՛կս: Խաղաղություն...

ΙΧΘΥΣ

Իմ Տե՛ր, իմ Կյա՛նք, իմ Ընտանի՛ք,
ես Քո մի մասն եմ
և իմ հոգին հրճվում է Քո մեջ:
Ես օրհնում եմ Քո Անունը
հավիտյանս հավիտենից:
Տոնի՛ր, արարչությո՛ւն,
Աստծո զորության գործերը
և գովաբանի՛ր Նրան,
ով բարձրացնում է խոնարհներին:
Ինչպե՞ս կարող է
որևէ մահկանացու կասկածել
Քո հրաշալի միջամտություններին:

Իմ Վասո՛ւլա, թող քո կյանքը լինի մի անդադար աղոթք՝ ուղղված Ինձ...

Թող ոչ ոք քեզ չխաբի, ասելով, թե Աստված ոչ մի միջոց չունի Իր ժողովրդին մոտենալու... Թույլ մի՛ տուր, որ այդ մարդիկ անհանգստացնեն քո հոգին: Իմ խունկ, աղոթի՛ր այդ մարդկանց համար, որպեսզի նրանք նույնպես գան և խմեն Իմ Աղբյուրից և կենդանանան: Եթե նրանք անբարյացակամ են և դժկամ են լսելու ու հասկանալու, այդ նրանից է, որ նրանք լքել են Ինձ և Իմ Օրենքները:

Ա՜Հ... [1]Վասո՛ւլա, ծաղի՛կս, այս սերունդը դարձել է անջրդի մի հող: Աղոթի՛ր աշխարհի դարձի համար: ic

Ապրիլի 3, 1996

Իմ Վասո՛ւլա, Իմ փոքրիկ աշակերտ այս վերջին ժամանակների, Ես հիմա կթելադրեմ քեզ մի երկնային զրույց Իմ Մոր Սրտի մասին...

Ինչպես արդեն նախապես ասել եմ քեզ, Իմ Մոր և Իմ Սրտերը այնքան միավորված են, որ Նրանք Մեկ Սիրտ են դառնում: Կույսերի Կույսը, Ամենասուրբը, որ հիմա հավիտյանս Երկնքում է՝ Իմ Մայրը, շարունակվում է Երկնքում հռչակվել որպես Իմ Մայր[2]:

Երբ Ես՝ Աստված, ցած իջա, որ հղացվեմ Սուրբ Հոգու կողմից և ծնվեմ Կույս Մարիամից, Ես եկա Իմ դրախտը: Ես մի դրախտից իջա մեկ այլ դրախտ, Ես թողեցի մի գահ, որ նստեմ մեկ ուրիշ գահի վրա: Ինչպես սուրբ աշտանակի վրա փայլող մի լապտեր, Ես գտա Նրա սիրտը, որ փայլում էր ներսից և դրսից:

[1] Հոգոց:
[2] «Աստծո Մայրը» անվանումը «Թեոթոկոս» է:

Ես ընդունելություն գտա այս Դրախտում, որպեսզի փառավորվեմ: Այն, ինչ կորած[1] ու աղարտված էր Եվայի կողմից, ձեռք բերվեց ու սրբագործվեց Սուրբ Մարիամի կողմից[2] Իր կատարյալ խոնարհության ու հեզության շնորհիվ: Եվ այս Կնոջ միջոցով, Իմ Թագավորությունը երկրի վրա մեկ անգամ ևս պիտի գա: Իմ Թագավորությունը երկրի վրա պիտի հաստատվի ամեն մի սրտում: Մեկ անգամ ևս ձեզ վրա պիտի հեղվի Իմ Հոգին, այնպես շռայլորեն, որ ներկայիս այս չորությունը պիտի փոխվի մի պտղաբեր հողի:

Ասված էր, որ վերջին ժամանակներում Մեր Երկուսի Սրտերը առաքյալներ պիտի վեր հանեն, և նրանք պիտի կոչվեն վերջին ժամանակների առաքյալներ: Սրանք պիտի ուսուցանվեն Երկնքի Թագուհու և Իմ կողմից, որ գնան ամեն մի ազգի մոտ՝ առանց վախի հռչակելու Աստծո խոսքը: Անգամ, եթե նրանք ամբողջովին ողողվեն արյունով, թշնամու դաժան հարձակումներից, նրանք չպիտի կործանվեն: Նրանց լեզուն պիտի խոցի Իմ Եկեղեցու թշնամիներին, ինչպես երկսայր մի սուր, մերկացնելով նրանց հերետիկոսությունը:

Նրանք երբեք չեն երերա և ոչ էլ կվախենան, որովհետև Ես նրանց քաջության ոգի կտամ: Կորստաբեր մտրակը նրանց չի դիպչի: Նրանք ոչ մի քար առանց շրջելու չեն թողնի: Նրանք պիտի հետապնդեն մեղավորներին, մեծախոսներին, հզորներին ու հպարտներին, կեղծավորներին, Իմ Եկեղեցու դավաճաններին: Նրանք պիտի հետապնդեն նրանց՝ մի ձեռքում ունենալով Իմ խաչը, մյուսում՝ Վարդարանը, իսկ <u>Մենք պիտի կանգնենք նրանց կողքին</u>: Նրանք փշուր-փշուր պիտի անեն հերետիկոսներին, և նրանց փոխարեն հավատարմություն ու ճշմարտություն պիտի ստեղծեն: Նրանք պիտի լինեն թույնի դեմ հակաթույն, որովհետև նրանք կբողբոջեն, ինչպես կոկոններ, Մարիամի Արքայական Սրտից[3]:

Այս վերջին ժամանակների առաքյալները պիտի կանչեն Աստծուն՝ իրենց Հորը, և Աստված, նրանց Հայրը, պիտի կանչի նրանց Հոգուն: Նրանք պիտի կանչեն Մարիամին՝ իրենց Օրհնյալ Մորը, իսկ նրանց Օրհնյալ Մայրը պիտի կանչի նրանց, որ դառնան Ամենաբարձրյալի վկաները: Եվ Սուրբ Հոգին նրանց ջերմեռանդության ոգի կտա, որ պատրաստ լինեն Աստծո համար, պատրաստ լինեն այս Ճակատամարտի համար: Այդ օրը չարի ուժերի ամբարտավան թագը պիտի տրորվի արևով զարդարված կնոջ ոտքերի տակ և Նրա բոլոր զավակների կողմից:

Երկրորդ Եվան, որին Ես բավականաչափ զորություն եմ տվել, որ տապալի սատանային և իր կայսրությունը, պիտի ջախջախի սատանայի գլուխն Իր կրունկով: Այս թշնամությունը ոչ միայն Երկնքի Թագուհու և սատանայի միջև է հաստատված, բայց այն հաստատված է նաև Նրա զավակների միջև, որոնց կայսրությունը Նրա Սրտի մեջ է, ինչպես և Դևի զավակների միջև, որոնք իրենց թագավորություններն են ստեղծել Դևի մեջ ու նրա միջոցով, որոնք ձեր օրերում ձեր ամենամեծ

[1] Եվան կորցրեց դրախտի մուտքը Իր և իր բոլոր զավակների համար:
[2] Մարիամը շահեց Դրախտի մուտքը Իր և իր բոլոր զավակների համար՝ Հիսուսի փրկագնի և զոհաբերության միջոցով:
[3] Հիսուս նկատի ունի, որ Մարիամը կդաստիարակի նրանց:

հալածողներն են: Նրանցից շատերը Գազանին պաշտողներն են, ձեր ժամանակների գիտուններն ու փիլիսոփաները...

Ես, Իմ Երրորդության Սրբության մեջ, ընտրել էի այս խոնարհ Կույսին, որ Իր կատարյալ շնորհներով ու արժանիքներով դառնար այն Կինը, որը կարող էր Իր արժանիքներով ու շնորհներով մարտահրավեր նետել Լյուցիֆերի (Լուսաբերի) ամբողջ թագավորությանը, որը մշտապես կատաղության մեջ է ընկնում ու վախից դողում է Նրա Անունը լսելիս:

Ես ասում եմ ձեզ. Որքան երկինքը բարձր է երկրից, նույնքան էլ Նրա Անվան մեծությունը, զորությունն ու շքեղությունն է: Թող բոլորը, ովքեր ապրում են երկրի վրա, մեծարանքով խոնարհվեն Թագուհու Սրտի առաջ: Նա երբեք չի դադարել պաշտպանել Իր զավակներին Չարի ծուղակներից, որը ձեր ժամանակներում բացահայտորեն հանդես է եկել[1], որ ճակատամարտի դուրս գա Իմ Սուրբ Սրտի դեմ և Իմ սրբերի ամբողջ բանակի դեմ: Սակայն շուտով Չարի կայսրությունը պիտի քանդվի և նրա գերիշխանությունը արմատախիլ պիտի արվի Մարիամի հզոր Ձեռքով[2]:

Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ չկա մեկը երկրի վրա կամ երկնքում, կամ՝ հրեշտակային զորություններում, որին, Իմ Իշխանությունից ու Իմ Զորությունից հետո, այսքան մեծ իշխանություն ու զորություն տրված լինի բոլորի վրա, ինչպես ձեր Օրհնյալ Մորը, քանզի Ես Ալֆան եմ և Օմեգան, Առաջինն ու Վերջինը, Նա, Ով կա, եղել է և պիտի գա:

Ես Ինքնաբավ եմ, ինչպես գիտեք, սակայն Մարիամի Կուսական Սրտի միջոցով էր, որ Իմ Փրկագործության ծրագիրը սկսվեց և դարձյալ այս Սուրբ Սրտի միջոցով է, որ Ես պիտի ավարտեմ Իմ Փրկության ծրագիրը: Ուստի, պատվե՛ք Նրա Սիրտը, դուք, որ կատաղության մեջ եք ընկնում Նրա Անունը լսելիս, և հասկացե՛ք, որ <u>Նա Իմ Սուրբ Սրտի Ուրախությունն է, Իմ երկնային արքունիքի Ուրախությունը</u>:

Նրա մտքերը, սկսած Իր Հղացման օրվանից, միշտ համաձայնության մեջ էին Իմ մտքերի հետ: Նրա Սիրտը, որ միանգամայն հնազանդ էր Իմ Հոր Կամքին, մի անընդհատ աղոթք էր, սիրո մի անընդմեջ գովերգ, պաշտամունք ուղղված Ինձ, ձեր Երրորդության Աստծուն, որը սակայն Մեկ է իր էությամբ (ընու թյամբ): Այսօր՝ այս վերջին ժամանակներում, երբ պայքարը մոլեգնում է Մեր Երկու Սրտերի դեմ[3], և Մեր երեխաների դեմ, ովքեր վկայում են Ճշմարտությունը, Ես ասում եմ ձեզ. վազե՛ք Ձեր Օրհնյալ Մոր մոտ, որը, իր ճտերին թևերի տակ թաքցնող հավի նման, ձեզ նույնպես կթաքցնի Իր Թիկնոցի տակ:

Ա՜հ... սակայն ձեզանից շատերն են արդեն մեռել, նույնիսկ ավելի շուտ, քան կհասցնեին ծնվել, այն բոլոր արգելքների պատճառով, որոնք ուղղված էին Նրա Կուսական Սրտի նվիրաբերմանը, նվիրաբերում, որ դուք ունեիք մի ժամանակ: Այս ամենը ձեր մարդկային ուսմունքների ու բանապաշտական կանոնների պատճառով: Դուք կարգավորել եք ձեր սիրտն ու ձեր կյանքը այս աշխարհիկ կյանքի համաձայն: Օ՜, մեղքի ստրուկներ: Ստրուկներ փողի: Սատանայի՜ ստրուկներ, մեռած ու քայքայված համարեք ձեզ:

---

[1] Չարը
[2] Ցաթիմայի պատգամը. «Վերջում Իմ Սիրտը կհաղթանակի»:
[3] Հղում՝ Հայտ. 11 «Երկու վկաները»:

Դե ուրեմն, ձեր տարփանքի վերջը համարյա եկել է: Զե՞ք լսել, որ Արևածագի Շքեղությունը[1] թագավորելու ու փայլելու է յուրաքանչյուր սրտում, որ նվիրաբերվել է Մեր Երկու Աստվածային Սրտերին, որոնցից նրանք աստվածացում ձեռք կբերեն: Այն աստվածացումը, որ մարդկային ցեղը կորցրեց իր անկման ժամանակ... քանի որ մեղքը մուտք գործեց աշխարհ մեկ մարդու միջոցով, իսկ մեղքի միջոցով՝ նաև մահը: Բայց և այնպես, Իմ Փրկության ծրագիրը պետք է իրագործվեր Մարիամի Համափրկչական Սրտով, երկրորդ Եվայի, որ կատարյալ դարձավ Աստծո Պատկերով, որպեսզի Ես, Նոր Ադամը, գտնեի Իմ Դրախտը Նրա Անարատ Սրտում:

Միթե Ես կլսե՞մ ձեզանից, սերո՛ւնդ.

«Տե՛ր, իմ սիրտը պատրաստ է սովորել սիրել և պատվել այն Տապանակը, որ կրում էր Քո Սուրբ Սիրտը. ճիշտ է, որ հենց արգանդից ես մոլորված էի, ես սխալների մեջ եմ եղել իմ ծննդյան պահից ի վեր: Ինչպես Եսավը, ես փախչում էի իմ Մորից, որպեսզի հետապնդեմ իմ շահերը և հասնեմ դրանց ուրիշներին թալանելու միջոցով: Ես վստահել եմ իմ սեփական ուժին: Ես ատել եմ եղբորս, որը ի հակադրություն իմ սրտի, խոկում էր, թե ինչպես գոհացնի մեր Մոր Սիրտը և մնա Նրան մոտիկ՝ շռայլորեն ստանալով Նրա Շնորհները: Ես նման չեմ եղել Հակոբին ու նրա սերունդներին:

Տե՛ր, իմ սիրտը պատրաստ է սովորել սիրել ու պատվել Ամենասուրբ Սրբարանի Սրբարանը, որպեսզի ոչ մի խաբեություն չմտնի այլևս իմ այնքան չարակամ հոգու մեջ, որը Կայենի նման նեղեց և հոգնեցրեց եղբորը, հետո ի վերջո սպանեց նրան: Ես կդադարեմ հալածել նրանց, ովքեր պատկանում են Նրա Անարատ Սրտին, բայց դրա փոխարեն կշրջվեմ դեպի կույսերի Կույսը և կդառնամ մեկ ուրիշ փոքրիկ Հակոբ, որպեսզի, Նա, Իր Ողորմածությամբ, Իր Կուսական ու Անարատ Սրտով լիառատ շնորհներ հեղի ինձ վրա, որպեսզի իմ հոգին, մի անգամ որ պատկանի Նրան, վայելի Նրա հարստությունը, դարձնելով իմ հոգին գեղեցկության մի զարդ՝ Գեղեցկության Զարդի մեջ:

Թող իմ սիրտը, Տե՛ր, ցանկանա և բաղձա իր հայացքը սևեռել Քո Սրբարանին[2], որ տեսնի Քո Զորությունն ու Իշխանությունը, իր հայացքը սևեռել Սրբարանի Գանձարանին և մեծապես վայելի: Այլևս թույլ մի՛ տուր, Տե՛ր, որ իմ հոգին իջնի ներքև դեպի երկիր, ինչպես Կայենինը կամ Եսավինը, այլ բարձրացրու իմ հոգին դեպի Նրա Ամենասուրբ Սիրտը, որպեսզի նաև ժառանգորդ դառնամ, ստանալով երկնային օրհնություններ, ինչպես Հակոբը»[3]:

- Ե՛կ, թող ձեր մտքերը հիմա երկնային բաների մասին լինեն, որպեսզի կարողանաք հասկանալ այն, ինչ Իմաստությունը թաքցնում է ձեզնից: Դրա համար դուք կարիք ունեք ինքնանվաստացման ու ապաշխարության: Այն խորհուրդը, որ պահված է եղել սերունդներից,

[1] Հիսուս նկատի ունի Իր Թագավորությունը, որը գալու է:
[2] Մարիամի Սիրտը:
[3] Այս ամբողջը նման էր խոստովանության, որ մեզ տրվում էր Հիսուսի կողմից, որպեսզի մենք ասենք այն:

այժմ բացահայտվում է ձեզ համար: Ձեր փրկության հույսը ձեր ձեռքերում է: Մի՞թե չեք նկատել, որ այս վերջին ժամանակներում, խաղաղության Թագուհին անցնում է երկրի վրայով, Իմ հրեշտակների ուղեկցությամբ: Մի՞թե չեք նկատել, ինչպես է Նրա Անարատ Սիրտը ավետում Իմ Խոսքը ձեզ բոլորիդ և նախապատրաստում Իմ Թագավորությունը: Մի՞թե չեք նկատել, ինչպես է ձեր Օրհնյալ Մոր Սիրտը սովորեցնում Իր զավակներին և Սիրտ սրտի ձևավորում նրանց, որպեսզի ամեն ոք պատրաստ լինի Իմ Թագավորության համար: Մի՞թե չեք նկատել, թե ինչպես է Նա Իր Գանձարանից կատարելագործում ձեզ Իր Սրտում՝ Ինձ համար:

Ես Երկնքի և երկրի Թագուհուն տվել եմ Իմաստության բոլոր գանձերը ու դրել Իր Սրտում, և այս գանձարանից Նա շռայլորեն տալիս է Իր շնորհները, որպեսզի ձեզ դուրս բերի խավարի իշխանությունից և մեծ սրբեր և առաքյալներ դարձնի, ինչպես նաև մեծ մարտիկներ, որ Նրան միանաք ձեր ժամանակների այս մեծ ճակատամարտում:

Իր Մայրական Սիրով, Երկնքի Թագուհին ուղիներ է փնտրում, որ ձեռք բերեք ձեր ազատությունը, որպեսզի դուք երկնքին արժանանաք: Նա սովորեցնում է ձեզ և հիշեցնում, որ դուք նույնպես Իր զավակներն եք, որ շնորհով պատկանում եք երկնքում Սրբերի արքայական ընտանիքին, և որ Նա ձեզ համար նույնպես Սրբերի շարքում դահ է պահել:

- Չկա մի բան, որ Ես չկարողանամ անել հանուն Իմ-ՍրտիՈւրախության[1], քանի որ հենց սկզբից Նրա մեջ չկար որևէ բան, որ իրերին նայեր այլ կերպ, քան տեսնում էինք Իմ Հայրը, Ես և Սուրբ Հոգին: Մեր[2] Կամքը կատարյալ համերաշխության մեջ էր Նրա Կամքի հետ: Նրա ցանկությունները Մեր ցանկություններն էին, քանի որ Ես Սիրտն եմ Նրա Սրտի, Հոգին՝ Նրա Հոգու, Ոգին՝ Նրա Ոգու: Մի՞թե չեք լսել, որ Մենք Սրտով, Հոգով և Ոգով Մեկ ենք:

- Իմ վիճակը երկրի վրա, որպես Աստված-Մարդ, աստվածային էր, բայց և այնպես, Ես խոնարհ էի, ապրում էի Իմ Մոր և Իմ Որդեգիր Հոր իշխանության ներքո: Ես դատարկեցի Ինքս Ինձ, որ ընդունեմ ստրուկի վիճակը, ընդունելով մահը, իսկ դո՛ւք, սերո՛ւնդ, դեռևս չեք հասկացել, որ Խաղողի Ճշմարիտ Որթատունկը Իր արմատները գցել է Իմ Հոր Խաղողի այգում[3], և Սուրբ Հոգու Ամուսինը, Աստծո Քաղաքը,[4] Խոստացված Երկիրը՝ նաև Ձեր Մայրն է, ում դուք պարտավոր եք պատվել: Ա՜հ, սերո՛ւնդ, ինչպե՞ս կարող էր ձեր սիրտը նման խաբուսիկ ուղի ընտրել, որ զերծ մնար Նրա միջնորդությունից:

Մի՞թե չեք կարդացել. «Տեր Աստված նրան պիտի տա Իր Հոր Դավթի գահը»[5] Երկնքի ու երկրի Թագուհին նաև Իմ Գահն է: Նա ձեր Թագավորի Գահն է, որ մարմին առավ Դավթի տոհմից... Ձեր Տեր Աստվածը. «պիտի թագավորի Հակոբի Տան վրա հավիտյանս հավիտենից

[1] Մարիամի, մեր Օրհնյալ Մոր համար:
[2] Սուրբ Երրորդությունը
[3] Մեր Օրհնյալ Մայրը:
[4] Մեր Օրհնյալ Մայրը
[5] Ղուկ. 1:32

և Նրա Թագավորությունը վերջ չի ունենա»[1]: Այսօրվա Հակոբները Նրա զավակներն են, վերջին ժամանակների առաքյալները և այն մեծ Սրբերը, որոնք Իմ Մոր Սրտի միջոցով բարձրացվել և ձևավորվել են, որպեսզի մեկ սիրտ լինեն Մեզ հետ հավիտյանս հավիտենից, քանի որ Իմ Թագավորությունը նրանց սրտում վերջ չի ունենալու:

Եղեք մեկ:

Ապրիլի 9, 1996

(Մեր Օրհնյալ Մայրը)

Իմ Վասո՛ւլա, ուշադիր լսիր Ինձ հիմա.

Տերն Իր Գթասրտությամբ, տվել է քեզ այս Գանձը[2] ուղղակի Իր Սուրբ Սրտից: Նա ցույց է տվել Իր Բազկի զորությունը՝ բերելով այս բարի լուրը մինչև երկրի ծայրերը: Եթե դուք բոլորդ միայն իմանայի՛ք, թե Տերն ինչ է առաջարկում ձեզ ձեր ժամանակներում: Բայց Տիրոջ Հոգին կգա միայն նրանց մոտ, ովքեր սրտով պարզ են ու մաքուր, և պիտի լցնի նրանց Իր պարգևներով: Մինչ օրս Նրա Փառքը փայլում է խոնարհների վրա, և Նա պիտի շարունակի դատարկ ճանապարհել հարուստներին...

Այս Պատգամի միջոցով Նա կանչում է ձեզ խաղաղ մի կյանքի: Աստված կանչում է ձեզ բոլորիդ, քանի որ Նա Հայր է: Նա կանչում է ձեզ, որ փոխեք ձեր կյանքը և ապրեք սրբորեն: Ես՝ ձեր Մայրը, օրհնում եմ բոլոր նրանց, ովքեր վերադարձան Աստծո մոտ, և Ես գովաբանում եմ Նրան, ում Ողորմությունը հասնում է դարեդար: Մինչդեռ նրանց համար, ովքեր շարունակում են համառորեն հենվել իրենց փիլիսոփայության վրա՝ վարելով անբարո կյանք, աղոթեք և պահեցողություն արեք: Իմ Սիրտը, որպես Մայր, պատառոտված է նրանց մերժումից և նրանց կուրությունից... Ա՜հ, ինչպիսի՜ ցավ, ինչպիսի՜ փչեր Իմ Սրտում, զավա՛կս: Իսկ դո՛ւ, շարունակիր վկայություն տալ հանուն Հոր, Իմ Որդու և Սուրբ Հոգու:

Շարունակիր հայտնի դարձնել Նրանց Անունը և գնա ուր էլ որ Հայրը, Իմ Որդին և Սուրբ Հոգին քեզ կասեն, որ գնաս: Նրանք քեզ հուսախաբ չեն անի, ուստի վստահի՛ր Նրանց: Աղջի՛կս, Ես միշտ այնտեղ եմ, ուր Հիսուսն է: Մենք քեզ հետ ենք: Ուստի մի՛ վախեցիր: Սերը կհաղթի վերջում... Մի՛ վախեցիր սրտով հպարտներից, քանի որ, չնայած նրանք պարծենում են իրենց զորությամբ, նրանք ոչինչ են Տիրոջ Աչքում: Միթե չե՞ս լսել. «Ամենքի Տերը չի վախենում ու վախից կծկվում որևէ մեկի առջև, նա երկյուղած չի կանգնում մեծության առջև...»[3] «Խիստ դատաստան է վերապահված բարձրաստիճան մարդկանց և հզորների

[1] Ղուկ. 1:33
[2] «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամը:
[3] Իմաստ. 6:8

համար, բայց Խոնարհները կարեկցաբար ներում կստանան»[1], և Նա կշարունակի ջախջախել սրտով հպարտներին...

Այս օրերին Հիսուս բացահայտել է քեզ Իմ Սիրտը: Իմացի՛ր, աղջի՛կս, որ Ես փորագրել եմ քո անունը Իմ Սրտում: Ես արել եմ նույնը բոլոր նրանց համար, ովքեր սիրում են Իմ Որդուն և սիրում են Ինձ:

Պատվե՛ք Ինձ զոհաբերությունների, պատվե՛ք Իմ Սիրտը մանկան անմեղությամբ, պատվե՛ք ձեր Մոր Սիրտը՝ չարին մերժելով: Բարի՛ք գործեք և աղերսեք ձեր Հորից, որ երկնքում է, Իր Հոգու պարգևները:

Աճե՛ք Իմ Անարատ Սրտում, և Ես կբժշկեմ ձեր հոգու բոլոր վերքերը[2], որպեսզի դուք կարողանաք դառնալ Հիսուսի՝ ձեր Փրկչի Ուրախությունը, և այս խավար սերնդի արշալույսը:

Աճի՛ր քո Մոր Սրտում, որպեսզի քո ողջ էությունը փայլատակի թանկարժեք քարերի պես այն Լույսով[3], որով Ես պարուրված եմ, որպեսզի այդ ժամանակ ազգերի հորդաներ դան քեզ մոտ՝ գրավված քո գեղեցկությամբ[4], և երբ նրանք կհարցնեն. «Ո՞վ ձև տվեց քեզ, որ փայլես հազարավոր թանկարժեք քարերի պես», վկայի՛ր և ասա. «Ես ձևավորվեցի Ամենամաքուր Սրտի ներսում՝ ձևավորվելով այն նույն Սրտում, ուր մեր Փրկիչը ծաղկեց և մարմին ու արյուն առավ, որպեսզի ես նույնպես դառնամ Տիրամոր զավակը: Այս կերպ ես կկարողանամ Ամենակարողի պարգևներին արժանի մտքեր արտահայտել»:

Ե՛կ և աճիր Իմ Սրտում ու դարձիր սիրտը Իմ Սրտի: Վերցրո՛ւ Իմ Սրտից այն բոլոր Հարստությունը, որ Ինձ տրվել է Իմաստության կողմից, որպեսզի դու նույնպես կարողանաս սովորել սիրել Հորը, Իմ Որդուն և Սուրբ Հոգուն: Այս կերպ դու կլինես Աստվածամոր զավակը: Ե՛կ, եկ և վերցրու Իմ Սրտից այն առաքինությունները, որոնք տրվել են Ինձ[5]: Դրանք նաև քեզ համար են, զավա՛կս: Ա՛հ, Ես ուզում եմ, որ դու գեղեցիկ լինես Իմ Որդու համար և հաճելի՝ Հորը: Ես ուզում եմ, որ դու կատարյալ լինես Էմանուելի Սրտի համար: Ես կհեղեմ Իմ Անարատ Սրտից քո սրտի մեջ, զավա՛կս, Իմ բոլոր շնորհները, որպեսզի քո սիրտը նույնպես դառնա մի խորան Ամենաբարձրյալի համար, մի խնկաման՝ լցված վառվող խնկով, որ դու նույնպես քայլես Շնորհի և Հավատարմության հետ:

Աստծո խորհուրդը կարող է բացահայտվել միայն սրտով մաքուրներին: Եվ եթե Մեր Երկու Սրտերը հետապնդում են մեղավորներին առանց հոգնելու, այդ այն սիրո մեծության պատճառով է, որ մենք ունենք ձեր բոլորի հանդեպ: Ա՛հ, բայց շատերը թվում է չեն հասկանում, կամ անտարբեր են և ծաղրում են Մեր Կանչերը: Երբ Ողորմության այս ժամանակն ավարտվի, մեռածները չեն կենդանանա[6]:

---

[1] Իմաստ. 6:6

[2] Սա պետք է հասկանալ որպես «մեղքերը»:

[3] Տիրամայրն ի նկատի ունի Սուրբ Հոգին:

[4] Տիրամոր Սրտում մեր հոգին կարող է զարդարվել, բայց մենք արժանիքներ չունենք:

[5] Արարված առանց մեղքի սկզբից ի վեր:

[6] Դա նշանակում է, որ չափազանց ուշ կլինի փոխվելու համար, երբ Ողորմության այս ժամանակն ավարտվի:

Մեր Երկու Աստվածային Սրտերը վիրավոր են և ցավագին կանչում են ձեզ բոլորիդ հատուցել, աղոթել, պահեցողություն անել և ճշմարտապես սիրել Իմ Որդուն Օրհնյալ Խորհուրդի (Սուրբ Հաղորդության) մեջ:

Ես քեզ հրավիրում եմ մուտք գործել Իմ Սրտի մեջ, և Ես պիտի թաքցնեմ քեզ, Ես պիտի պահպանեմ և պիտի պաշտպանեմ քեզ շրջապատող ամեն չարիքից ու գայթակղություններից: Ես պիտի պաշտպանեմ և վեր բարձրացնեմ քեզ, զավա՛կս, մեղքի փոթորկալի ջրերից և թաքցնեմ քեզ Իմ Մայրական Սրտում: Իմ սերն ու Իմ խանդաղատանքը քո հանդեպ այնքան մեծ է, որ հրեշտակներն իրենք կցանկանային լինել քո տեղում: Հիսուսի Սուրբ Սիրտը նախընտրյալներ չունի, ո՛չ էլ Իմը: Աստված արդար է և բարի:

Այսօր, աղջի՛կս, և հաջորդող օրերին, դու երկրորդ անգամ պիտի լինես Հիսուսի Զարչարանքի Սուրբ շաբաթվա մեջ[1]: Դու գիտակցում ես, թե ինչ են զգում Մեր Երկու Սրտերը ձեր բաժանման պատճառով... Մեր Երկու Սրտերին հասցված խոցերը անհաշիվ են: Եթե Տիրոջ հոտը բաժանված է և ցրված, և հողը վերածվել է անապատի, եթե Աստծո բոլոր Սուրբ Օրենքների դեմ ըմբոստությունը հասել է իր գագաթնակետին, եթե այսօր կարդինալը դուրս է գալիս կարդինալի դեմ, եպիսկոպոսը՝ եպիսկոպոսի, իսկ քահանան դուրս է գալիս քահանայի դեմ, այդ նրանից է, որ ձեր սերունդը մերժեց լսել Իմ Խոսքերը: Ես ուղարկվեցի Ամենաբարձրյալի կողմից ձեզ զգուշացնելու և ձեզ քնքշորեն ուղղելու համար[2], սակայն մինչ օրս ձեր սերունդը մերժում է Մեզ տեղ տալ իր սրտում և լրջորեն չի ընդունում Մեր Խոսքերը: Դուք կհնձեք այն, ինչի արժանի եք:

Իմ Մայրական Սիրտը վշտանում է ձեզ այս ասելուց, և Իմ Աչքերը արյան Արցունքներ են հեղում այն տեսարանից, որ Ես տեսնում եմ Իմ առջև, երբ Հոր Ձեռքը կիջնի ձեզ վրա մի որոտացող բացականչությամբ. «Բավակա՛ն է, բավակա՛ն է արդեն», և կրակի մրրիկով Նա դատաստան կտեսնի...

Մեր Երկու Խոցված Սրտերը դեռ լրջորեն զգուշացնում են ձեզ, և Մենք պիտի շարունակենք զգուշացնել ձեզ, որ փոխեք ձեր սրտերը և շրջվեք դեպի Աստված: Միայն Աստծո մեջ մարդ կարող է ապրել, քանի որ Նա ձեր հանապազօրյա հացն է, ձեր ըմպելիքը և ձեր շունչը... Թող Մեր Երկու Սրտերի բոլոր բնակիչներն իմանան, որ այժմ արդեն շատ շուտով Մեր Սրտերը, որ Միացած են իրար և Մեկ են, պիտի հաղթեն և շատ բաներ, որ մենք կանխասացել ենք, պիտի կատարվեն:

Հիսուսի Սուրբ Սիրտը և Իմ Անարատ Սիրտը օրհնում են ձեզ բոլորիդ: Եղեք մեկ:

Ապրիլի 15, 1996

Անգամն ասաց իր սրտում,
թէ՝ «Աստված չկա»:

[1] Հռոմեական կաթոլիկների Զատիկը ապրիլի 4-ից 8-ն էր, ուղղափառներինը՝ ապրիլի 11-ից 15-ը:
[2] Ֆաթիմայո՞ւմ, Ակիտայո՞ւմ:

Ապականվեցին ու պղծվեցին
իրենց անօրենության մեջ,
Եվ չկա մեկը, որ բարություն գործի:

Աստված երկնքից
նայեց բոլոր մարդկանց որդիներին՝
տեսնելու, թե կա՞ մի իմաստուն,
որ Աստծուն է փնտրում:[1]

Ես՝ Յահվեն, տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը:

Ես ներքև եմ նայում երկնքից, և Ես կողոպուտ եմ տեսնում Իմ Տան մեջ, բայց Ես կցրեմ ուրացողներին, ուստի արիությունդ թող չպակասի... Երբեք մի՛ մոռացիր, թե ով քեզ վեր բարձրացրեց: Այդ Ես եմ, որ քեզ օրորոցիցդ հանեցի և ինչպես մի քնքուշ մայր, որ կրում է իր զավակին իր կրծքին, իմ գրկում պահեցի և խնամեցի քեզ, որպեսզի դու դաստիարակվես միայն Իմ Գավիթներում... Իմ Կամքը քո հանապազօրյա հացն էր, և նույն ձևով Ես պիտի շարունակեմ քեզ սնել: Դու վախենում ես առանց պատճառի, մի՞թե Ես պետք է ասեմ, որ դու այլևս Ինձ չես վստահում: Թույլ տուր Ինձ հիշեցնել քեզ, որ առանց Ինձ դու անընդունակ և անկարող ես որևէ բան անելու:

Ես ընդունում եմ, որ թեև Ես Հայր եմ քեզ համար, Ես նաև քո Նետաձիգն եմ, և դու Իմ սիրելի թիրախներից մեկն ես, որպեսզի քո հոգին մատչելի պահեմ Ինձ համար և բարյացակամ: Ես ցանկանում եմ, որ դու բարեպաշտ լինես: Ահա թե ինչու Ես պիտի շարունակեմ Իմ նետերը ուղղել քեզ վրա...

Լսի՛ր Ինձ, չնայած շատերն են պայքարում քո դեմ, մի՛ վախեցիր, նրանք չեն հաղթի քեզ, որովհետև Ես քեզ հետ եմ: Վասո՛ւլա, թեև փոթորիկը Իմ թշնամու կողմից, սպառնալիքներով լի փչում է քեզ վրա[2], մի՛ վախեցիր, Ես քեզ հետ եմ: Ձեր օրերում, մարգարեները, ովքեր կեղծ են մարգարեանում՝ փողհարելով ամեն տեսակի ստեր, անցնում գնում են առանց խոչընդոտի: Մինչդեռ Իմ Սեփական մարգարեները, ովքեր խոսում են Իմ Բերանից, ովքեր բացահայտորեն հռչակում են Ճշմարտությունը, Իմ Օրենքը, և ասում են թե ինչպես է ձեր սերունդը ուրացել հավատը, և միանգամայն գտնվում է կործանման ճանապարհին, մինչև որ Ես նրանցից չլսեմ ապաշխարության մի կանչ, <u>նրանք կխեղվեն</u> ու կհալածվեն ...

Ես լուռ եմ մնացել և այսքան ժամանակ փակել Իմ Աչքերը: Ես շատ անգամ հետ եմ քաշել Իմ Ձեռքը՝ ձեզ վրա իջնելուց, սերո՛ւնդ, և շատ անգամ եմ Ես հետ կանգնել Իմ որոշումներից՝ ձեզ կրակով հատուցելու համար: Բայց ինչպե՞ս կարող էի Ես լուռ մնալ այդ Պղծության տեսքից, որի մասին Իմ մարգարե Դանիելն էր խոսել: Լսի՛ր Ինձ: Ձեր օրերում շատ քահանաներ են սպառազինվում պատերազմի համար, որ գնան Եկեղեցու Երեցի[3] դեմ: Հենց նրանք, ովքեր սովորեցնում են ինչ որ ցանկանում են, և աշխարհը սիրում է դա: Նրանք լեցուն են փոխզիջումներով:

[1] Սաղմ. 52:1-2
[2] Աստված ի նկատի ունի սատանային:
[3] Հովհաննես Պողոս Երկրորդ Պապը:

Աշխարհին գոհացնելու համար նրանք պատրաստ են վաճառել Իմ Որդու Արյունը: Ինչպե՞ս կարող եմ Ես տեսնել այն, ինչ տեսնում եմ և լուռ մնալ: Երբ նրանք լսում են Իմ Ձայնը Իմ մարգարեների միջոցով, նրանց ձեռքերը դժվարությամբ են շարժվում, և նրանք չեն ընդունում դա որպես ահազանգ, կամ որպես մի երկնային նշան: Մինչդեռ այն քահանաները, ովքեր խելամիտ են և Հակոբի նման են, հանձնվելով իրենց Մոր իշխանությանը, Ես նրանց հավետ Ինձ հետ պիտի նշանադրեմ: Ես պիտի նշանադրեմ նրանց Ինձ հետ, և նրանք պիտի կոչվեն Ամենաբարձրյալի որդիներ:

Սատանայի ժամը հասել է: Այն օրվանից ինչ Ես քեզ հարուցեցի, աղջի՛կս, նա երդվել է լռեցնել քեզ: Նա իր ողջ կատաղությունը ուղղում է քո դեմ, բայց Ես ասում եմ քեզ, եթե դու մնաս համեստ և զերծ փառասիրությունից, և եթե պահես քո հավատարմության երդումը Ինձ, Իմ Որդուն, Իմ Սուրբ Հոգուն և քո Մշտնջենական Օգնության Մորը, նա կուչ կգա ու կհեռանա քեզանից: Շարունակիր լինել այն ամենն, ինչ նա չէ: Իմ Խոսքերը պիտի շարունակեն քո բերանում լինել ինչպես կրակ բոլոր նրանց[1] համար, ովքեր իրենց ուրացությամբ բարձրացնում են Իմ Որդու Մարմինն ու Արյունը ո՛չ միայն առանց երկյուղի, այլև առանց հավատի: Նրանք դավաճանությամբ են բարձրացնում Նրան:

Դեռ որքա՞ն կա մինչև Քո Որդու վերադարձը[2]:

Դու իրավունք չունես հարցնել Ինձ, Վասո՛ւլա, իսկ մյուս կողմից՝ դու դեռևս սովորում ես, և Ես սիրում եմ քեզ: Բայց մի բան կա, որ Ես ցանկանում եմ կիսել քեզ հետ, և Ես քեզ չեմ զրկի այդ գիտությունից. Շուտով Իմ Ձայնը պիտի լսվի ամպրոպի որոտի պես: Ինձ կլսեն՝ ասելիս. «Բավակա՛ն է: Բավական է այլևս»: Երկիրը պիտի պատռվի, և նրանք, ովքեր ըմբոստանում էին Իմ դեմ, պիտի տեսնեն Իմ Ձեռքը իրենց վրա իջնելիս: Բայց Իմ Որդու անոթները Ես պիտի պաշտպանեմ: <u>Ես պիտի դամ կրակի մրրիկով: Ոմանց համար դա կգա որպես օրհնություն, բայց նրանց համար, ովքեր երբեք չեն երկյուղել Ինձանից, այդ Օրը նրանք կսովորեն վախենալ Ինձանից</u>...

Մինչ օրս նրանք չեն սովորել մեծարել Իմ Անունը և պաշտել Ինձ: Նրանք երբեք իրենց չեն հարցնում՝ արդյոք ճիշտ ճանապարհի վրա՞ են, ոչ էլ դիմում են Իմ Հոգուն խորհրդի համար: Նրանք դարձել են առևտրականների նման, որոնք մտնում են Իմ Սրբարանը և դուրս են գալիս Իմ Սրբարանից՝ գնելով և վաճառելով Իմ Որդու Անունով...

Օ՜ չարին հակված, պղծված ու ապականված երկիր: Ինչո՞ւ եք դուք[3], որ ինքներդ ձեզ նվիրաբերել եք Իմ Որդուն ծառայելուն, շրջվել Նրա դեմ՝ վաճառելով Նրա Մարմինն ու Արյունը: Վերադարձե՛ք Իմ Որդու ծառայությանը, և Ես ձեզ հրաշք կդարձնեմ հոգիների համար, հենց այն նույն հոգիների, որոնց դուք քաշում տանում եք դեպի կործանում: Եկե՛ք և ապաշխարեք, և Ես կվերակենդանացնեմ ձեր հոգին և կպայծառացնեմ ձեր աչքերը, որպեսզի տեսնեք Իմ Հոգու Փառքը, Նրան,

[1] Աստված ի նկատի ունի քահանաներին:
[2] Ես հարցրեցի հուսահատությունից դրդված՝ առանց մտածելու:
[3] Նվիրաբերված հոգիները, որոնք ուրացել են հավատը:

ով պիտի պահի ձեզ այնտեղ, ուր դուք պետք է լինեիք ձեր ծառայության սկզբից ի վեր: Եկե՛ք, մոտեցե՛ք Ինձ հիմա, որպեսզի ես փչեմ ձեր վրանի մեջ, և դուք կյանք կներշնչեք:

Աղջի՛կս, ասա՛ Իմ ժողովրդին, ասա՛ Իմ այդ մնացորդին, որ ամեն փորձ պետք է արվի Իմ զայրույթը մեղմացնելու համար: Խրախուսի՛ր Իմ ժողովրդին, ասա՛ նրանց, որ եթե իրենք սրտանց աղոթեն աշխարհի դարձի գալու համար, Ես՝ Յահվեն, նրանց Հավիտենական Հայրը, պիտի պարգևատրեմ նրանց հավիտյան: «Քանի որ ողորմությունը և զայրույթը նույնպես Ինձ են պատկանում, որ զորեղ եմ ներելիս ինչպես և զայրանալիս: Իմ Ողորմությունը մեծ է, բայց Իմ խստությունը նույնքան մեծ է[1]:

Ես այսօր նայում եմ երկրին և կցանկանայի, որ երբեք նայած չլինեի... Իմ Աչքերը տեսնում են այն, ինչ Ես երբեք չեմ ցանկացել տեսնել, և Իմ Ականջները լսում են այն, ինչ Ես սարսափել եմ երբևէ լսել: Իմ Սիրտը, որպես Հայր, թուլանում է վշտից: Ես ձևավորեցի մարդուն Իմ Պատկերի նմանությամբ, սակայն նրանք ստորացրել են իրենց, և այսօր նրանցից շատերն են ընդունել Գազանի նմանությունը: Նրանց սիրտն այնքան լիքն է տարփանքով, անօրինությամբ, ամբարտավանությամբ և այլասերվածությամբ: Նրանց բերանը սովորել է բացականչել ամեն կարգի վիրավորական խոսքեր: Նրանք հայհոյում են ողջ երկնքի դեմ՝ պատերազմելու Իմ դեմ և Իմ Որդու դեմ... ա՜հ... Նրանք անում են այն ամենն, ինչ ատելի է Իմ Սրտին: Շատ հաճախ է Իմ Ձեռքը երկարում դեպի Իմ Բաժակը, որի եզրերից թափվում է Իմ Արդարությունը...

(Ավելի ուշ)

Ասա՛ Ինձ, աղջիկս, Ես կանչում եմ երկնքից, Ես չեմ կանչում ձեզ վախեցնելու համար, այլ ձեզ խորհուրդ տալու: Ես սիրում եմ ձեզ... Գրի՛ր:

(Պատգամի շարունակությունը)

Սատանան այսօր երկարել է իր ձեռքն ամբողջապես, որ հասնի քահանայական հոգիներին: Թմրածության և թյուրըմբռնման մի հոգի է նշմարվում նրանց վրա, որոնց նա դիպել է[2]: Նրանք բարձրացնում են Իմ Որդու Մարմինը առանց հավատի, առանց իրական փառաբանության, և ամբողջ օրը նրանք աղավաղում են Իմ Խոսքերն ու Եկեղեցու Ավանդությունը: Ինչպե՞ս կարող եմ Ես լուռ մնալ, երբ Ես տեսնում եմ, թե ինչպես են այդ քահանաները դարձել սատանայի որսը: Ինչպե՞ս կարող եմ Ես չնախազգուշացնել ձեզ բոլորիդ նրանց շարժումների մասին: Մի՞թե այդպիսինները պետք է անպատիժ մնան այսպիսի մեղքի համար:

Օգնի՛ր մեզ ճգնաժամի այս պահին...

[1] Սիրաք 16:12-13
[2] դայթակղել է

Ես Իմ կողմից, բացել եմ երկինքը ձեզ օգնելու համար: Ես դուրս եմ հեղում Իմ Հոգին նրանց վրա, ովքեր կանչում են Իմ Սուրբ Հոգուն գալ և խորհուրդ տալ իրենց, բայց մինչ Ես բաց եմ անում երկնքի դռները և անձրևում Իմ պարգևները մարդկության վրա, ինչպես և օգտագործում եմ քամիները որպես պատգամատարներ, երկիրը մերժում է Իմ պարգևները և Իմ պատգամատարներին՝ պղծելով թե՛ Իմ պարգևները և թե՛ Իմ պատգամատարներին:

Ես նշաններ և հրաշքներ եմ ցուցադրում, բայց երկիրը նորից չի կարողանում գնահատել Իմ մեծ Սիրո պտուղները... Ցասումն է Ինձ համակում, երբ Ես տեսնում եմ Իմ Որդու Օրհնյալ Խորհուրդը *(Սուրբ Հաղորդությունը)* ոտնակոխ արված, երբ Ես գիտեմ, որ դեռևս, մինչ այս օրը, չնայած ձեր չարությանը, սրո՛ւնդ, Իմ Որդին իսկույն Իր Կյանքը նորից կտար ձեզ համար, եթե դա անհրաժեշտ լիներ:

Նա[1] բացում է Իր Բերանը ցավից հազիվ շնչելով, և Նրա Աչքերը երբեք չեն դադարում արցունքներ հոսելուց՝ հիասթափված Իր Յուրայիններից, որ թույլ են տալիս չարին հաղթել իրենց: Որքա՜ն հեռու են նրանք Ճշմարտությունից... և սակայն... չնայած նրանց ողջ անօրինությանը, Իմ Որդին սիրով է հոգ տանում նրանց, քանի որ չափ ու սահման չկա Նրա Սիրուն: Աղջի՛կս, պե՞տք է Ես հանդուրժեմ այդ պղծությանը[2]: Այսօր նրանց մարմինները դատապարտված են մահվան, մինչև որ Ես չլսեմ իրենց սրտից եկող ապաշխարության մի կանչ:

Արի՛, աղջի՛կս, հաստատակամ եղիր քո պարտականության մեջ և բարիք արա, և եղիր Իմ Արձագանքը: Ես՝ Յահվեն, օրհնում եմ քեզ:

Մայիս 1996

Իսպանիա

Տե՞ր իմ:

Ե՛ս եմ:

Հենվի՛ր Ինձ վրա, Իմ Սուրբ Սրտում գտիր Իմ խաղաղությունը, որը Ես տալիս եմ քեզ: Հիշի՛ր, Ես քեզ հետ եմ: Աղջի՛կս, ոչ մի քար առանց շրջելու չթողնես, որպեսզի Հայրը և Ես մի օր չասենք. «Դու չես արել քո լավագույնը»: Բարեհաճ եղիր գլխավորապես բոլոր նրանց հանդեպ, որոնց սիրտը Ինձանից այնքան հեռու է, որքան երկիրը երկնքից: Բռնի՛ր Իմ Ձորեղ Ձեռքը և մի՛ վախեցիր: Բոլոր նրանք, ովքեր ուզում են լսել, կլսեն:

Արի՛: ic

[1] Հիսուս Քրիստոսը

[2] Որի մասին Դանիել մարգարեն է խոսել:

Աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր: Դժվար չէ աղոթել: Վասո՛ւլա, ասա՛. «Քրիստոս Հարյավ»:

Ես պետք է դա ասեմ այնպես, ինչպես սովորությունն է պահանջում[1]*...*

Այո՛, ասա՛ դա հիմա...

(Ես ասացի այդ):

Ես Հարություն առա: Ուրախացրո՛ւ Ինձ և գովաբանի՛ր Ինձ: Ծաղի՛կ, Իմ հարազատ դուստրը Իմ Եկեղեցու, քո Քրիստոսն իսկապես Հարություն է առել: Արի՛: Ես օրհնում եմ քեզ և բոլոր նրանց, ում Ես ընտրել եմ, որ ուղեկցեն քեզ: Նրանք իրենց վարձատրությունը պիտի ստանան վերջում: Իմ Հայրն ու Ես օրհնում ենք այդ սրտերին և ասում նրանց. տարածե՛ք Մեր Պատգամները, նրանք փրկում են...

Մայիսի 23, 1996

(Եգիպտոս, Ալեքսանդրիա)

Տե՞ր իմ:

Ե՛ս եմ:

Ա՜հ, Ես շատ գոհ եմ քեզանից, որ հասկացար Ինձ:

Զավա՛կս, իմացիր, թե որքան երջանիկ եմ Ես, երբ դուք բոլորդ մեկ ձայնով աղոթում եք Ինձ՝ տալով Ինձ ձեր ժամանակը: Իմացի՛ր, թե որքան երջանիկ եմ Ես, երբ դու և Ես կիսում ենք ամեն ինչ: Ես միայն սեր եմ խնդրում: Թանկագին հոգիներ, պահե՛ք Ինձ միշտ ձեր մտքում, և Ես կփառավորվեմ այդ ձևով: Հիշե՛ք, փոքրիկ գործերը հաճույք են պատճառում Ինձ և դառնում են մեծ Իմ Աչքում: Ուստի սիրված զգացեք Իմ կողմից: Ես և դուք, դուք և Ես՝ միացած սիրով:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ ձեզ՝ Ինձ տրված պաշտամունքի մեկ ժամի համար: Ընդունե՛ք Իմ Խաղաղությունը: IC

Հունիսի 13, 1996

Երանելի են նրանք,
ովքեր հետևում են Քո ուղիներին,
օրհնյալ են նրանք,

[1] Զատկից հետո քառասուն օր ուղղափառները ավանդություն ունեն իրար ողջունել «Քրիստոս յարեաւ» ասելով, որի պատասխանը լինում է. «Նա իսկապես յարեաւ»: Հիսուսն ուզում էր, որ ես հետևեմ այդ սովորությունին:

ովքեր լսում են Քո Սրտի զարկերը,
քանի որ դրանք կյանք են տալիս...

Խաղաղությո՛ւն քեզ: Փոքրի՛կս, դու Իմ Սրտում ես, ուստի խոսի՛ր առանց վախենալու: Լսի՛ր Իմ Հոգուն և գրի՛ր.

Երանելի են այն ազգերը, որոնք սովորում են ուրախությամբ ողջունել Իմ Սուրբ Սիրտը: Նրանք պիտի ապրեն Իմ բարեհաճության լույսի ներքո:

Երանելի են այն ազգերը, որոնք նվիրաբերվում են Իմ Սուրբ Սրտին: Օ՜, ի՜նչ չեմ անի Ես այդ դեպքում նրանց համար: Ես կպահեմ Իմ խոստումը, և նրանք կտեսնեն Իմ Գահը մի օր: Ես երդվել եմ Իմ Սրբությամբ՝ նրանց ապահով պահել Իմ Սրտում, և այդպես էլ կանեմ... Ես երբեք չեմ թերանում Իմ հավատարմության մեջ, իսկ դո՛ւ, եղիր Իմ ուրախությունը Իմ հավաքներում և մի՛ վախեցիր:

Միայն մի կարճ ժամանակ է մնացել հիմա, և ոչ մեկը չի կարող խուսափել Իմ Ժամից: Հիշի՛ր, Ես քո Ապաստանն եմ: Բնակվի՛ր Իմ Սուրբ Սրտի մեջ: Մի բաժանվիր <u>երբե՛ք</u> Ինձանից: Ես սիրում եմ, երբ դու հոգոց ես հանում ծարավելով Ինձ՝ քո Աստծուն:

Ես օրհնում են քեզ: Աղոթի՛ր չապաշխարածների համար: Ես նրանց սիրում եմ նույնքան, որքան քեզ: Իմ Սերը ձեր հանդեպ անհատակ է: Հիշի՛ր, Ես եմ-ը քեզ հետ է՝ հավիտյան:

Նորոգի՛ր ինքդ քեզ Իմ Հոգում: Ես Եմ-ը քո Մխիթարիչն է և քո Ըմպելիքը: Նա քո Հացն է: Ի՞նչ օգուտ մարդու համար ձեռք բերել ողջ աշխարհը և նրա մեջ գտնվող բոլոր գանձերը, բայց կորցնել իր կյանքը: Ճաշակի՛ր Ինձ և արի՛ ու ըմպի՛ր Ինձ, ավելի մեծ գանձ Ես չեմ կարող առաջարկել քեզ, քան այս է: Ես ասում եմ քեզ ողջ ճշմարտությամբ. դու քո մեջ կյանք չես ունենա, եթե չճաշակես Ինձ և չըմպես Ինձ: Ես Կյանքի Հացն եմ:

Իմ Հոգին քեզ վրա է, օրհնյա՛լ եղիր Իմ Սրբության մեջ: ic

Հուլիսի 3, 1996

Դու Նա՞ ես, որ փայլատակում ես
Քո Լույսը մեր սրտերում:

Ե՛ս եմ:

Այդ Դո՞ւ ես, Շադդա՛յ,
ում մենք համարում էինք
այնքան հեռու
մեր հասանելիության սահմանից,
որ հիմա Ինքդ Քեզ
ցույց ես տալիս մեզ,
Դու՛, որ զգեստավորված ես
ահավոր շքեղությամբ:

Ահա, Ե՛ս եմ:

Իմ կյանքի Թեման և Երգը,
Դու իսկապե՞ս
ինչ-որ բան ես անում,
որը գերազանցում է
մեր իմացությունն
ու մեր հասկացողությունը:

Ե՛ս եմ: Ես կատարում եմ Իմ Խոստումը:

Իմ աչքերի անուշահոտ յուղ,
ես ճի՞շտ եմ տեսնում:
Դու, Քո հավատարիմ Սիրով,
ուղարկում ես վերևից
Քո Սուրբ Հոգի՞ն:

Ե՛ս եմ:

Այո՛: Դեռ որքա՞ն ավելի կարող էի Ես խոսել: Վասո՛ւլա, տեսնո՞ւմ ես: Ես գալիս եմ ներքև, որ ձեզ հետ լինեմ: Սիրելինե՛րս, Հայրն ասաց. Նա ո՛չ գրանցումները կպահի, ո՛չ էլ հաշիվը Իր գրքերում[1], այլ Նա կուղարկի ձեզ Իր Սուրբ Սրտի զեղումը
ավելի շուտ, քան ծրագրել է:

Դե՛, Զարը մարտահրավեր է նետում Իմ Զորությանը, և նրա սպառնալիքները թափվում են Իմ Եկեղեցու դեմ: Ուրեմն Ես ինչո՞ւ պետք է հապաղեմ կամ այլևս լռություն պահեմ: Հիմա Ես Ինքս մարտահրավեր պիտի նետեմ նրան Իմ Սուրբ Հոգու Զորությամբ և ձեզանից յուրաքանչյուրին պիտի քաշեմ տանեմ Իմ Սուրբ Սրտի մեջ: Ես պիտի տանեմ ձեզ բոլորիդ, ովքեր ցանկանում են մտերիմ միության մեջ լինել Ինձ հետ, որպեսզի ձեզանից շատերին չնորհվի ձեր Փրկության խորհուրդը, որն Իմ Խաչն է: Ես կպարուրեմ ձեր հոգին և այդպես կպահեմ ձեզ Ինձ հետ կատարյալ միության մեջ:

Եվ չնորհով Ես ձեզանից ավելի մեծ զոհաբերություններ պիտի ձեռք բերեմ, ավելի մեծ հատուցումներ: Ես պիտի տանեմ, հասցնեմ ձեզ ավելի մեծ ու ավելի խոր ներքին կյանքի և աղոթքի ավելի բարձր ձևերի մեջ... Եվ ինչպես որ Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու, Ես ձեզ նույնպես պիտի սովորեցնեմ նույնը անել:

Իսկ դո՛ւ, փոքրիկս, կրի՛ր Միասնության Իմ Խաչը Ինձ հետ միասին, և թույլ տուր, որ Իմ Հոգին առաջնորդի քեզ: Նա կլինի Նշան քեզ համար և քո երաշխիքը[2], որ դու գալիս ես Ինձանից: Իմ բարեհաճությունը քեզ վրա է:

~ Ես դեռևս շատ չնորհներ ունեմ պահած ձեզ համար, սերո՛ւնդ, չնորհներ, որոնք պիտի առաջնորդեն ձեզ դեպի սրբություն և դեպի Իմ Թագավորությունը: Ուստի Ես ասում եմ ձեզ, ձե՛զ, որ պատրաստ եք դատելու, մի՛ սկսեք դատել ըստ արտաքինի, հապճեպորեն: Թող ձեր դատողությունը լինի հանգամանորեն մտածված և լինի բարուն և ճշմարտին համապատասխան:

[1] Նշանակում է ամսաթվերը:
[2] Ես լսեցի նաև. «Երաշխավորը»:

- Այսօր ես աղաղակում եմ, ինչպես մի ժամանակ արեցի Երուսաղեմում. եթե որևէ մեկը ծարավ է, թող նա Ինձ մոտ գա: Թո՛ղ նա գա Ինձ մոտ: Եկե՛ք և խմեք, դո՛ւք, որ հավատում եք Ինձ: Քանի որ Իմ Սուրբ Սրտից կենդանի ջրի շատրվաններ են բխում: Եկե՛ք և թարմացրեք ձեզ, եկե՛ք և վերակենդանացեք: Հետո ձեր աչքերի լույսը կդառնա Իմ Հոգու լույսը:

- Ձեզանից շատերն են Իմ Թագավորությունը դարձրել սոսկ բառերի Թագավորություն: Ես ասում եմ ձեզ. Իմ Թագավորությունը Զորություն է[1]: Ես կայցելեմ որևէ Հոգու, ով ծարավ է Ինձ՝ այս կամ այն ձևով, և մեծ զորությամբ Ես կվերականգնեմ Իմ Թագավորությունը:

Շնորհակալություն Քեզ,
որ դուրս ես հեղում
Քո Հարստությունը,
Քո Պարգևներն
ու Քո Շնորհները մեզ վրա, ո՛վ Տեր:

Քո Հոգու Զորությամբ
Դու կոչնչացնես
իմաստունների իմաստությունը
և ոչնչի կվերածես
գիտունների ողջ գիտությունը:
Դու կցրես փիլիսոփաներին
և նրանց ցած կտապալես:

Ո՛վ Սուրբդ, արի, ցուցադրի՛ր
Քո Զորության Զորությունը[2],
ցուցադրի՛ր
Քո Սուրբ Հոգու Զորությունը,
ցուցադրի՛ր
Քո Բարության Զորությունը,
ցուցադրի՛ր
Քո Հավատարմության Զորությունը,
Քո Մտերմությունը,
Քո Ուրախությունը և Քո Սերը:

Մենք խմորված պետք է դառնանք[3]:
Ուրեմն շնորհի՛ր մեզ այդ շնորհը:
Ո՛վ Տեր, շնորհի՛ր մեզ այս շնորհը,
որ հաղթենք չարին,
և ազատվենք չարի ողջ հին
թթխմորից ու չարությունից,
որ դեռևս մնում է մեր մեջ,
փոխարինելով այն՝
թարմ թթխմորի զանգվածով:

---

[1] Վկայակոչում՝ Ա Կոր. 4:20
[2] Նշանակում է. «Ցուցադրիր Քո Թագավորության Զորությունը»:
[3] Վկայակոչում՝ Ղուկ. 13:20 «Թթխմորի առակը»:

Լսի՛ր. Իմ Հոգին Իր Մեծ Իշխանությունը պիտի հաստատի շատ ազգերի վրա և դատաստան պիտի տեսնի շատ ժողովուրդների մեջ[1]: Սա պիտի կատարվի, որպեսզի իրագործվեն այն խոսքերը, երբ Ես խնդրեցի քեզ մարգարեանալ:

Բարությունը քեզ հետ է: Երբե՛ք չկասկածես... Միշտ Ինձ փնտրիր: Դա Ինձ գոհացնում է: Թող քո ձեռքը մնա Իմ ձեռքի մեջ, և դու չես մոլորվի...

Ես օրհնում եմ քեզ:

Հուլիսի 4, 1996

Խաղաղությո՛ւն քեզ:

Ես ասացի. Ես պիտի դամ բոցավառ կրակով: Հաստատո՛ւն մնա և աղոթիր վստահությամբ:

Լսի՛ր զավակս, Ես գիտեմ, որ դու զրկվել ես գրելու հնարավորությունից, բայց դա արվեց, որ վճարվեր նրանց պարտքերը, ովքեր անարդար վարվեցին Ինձ հետ: Իմ սիրելի եղբայրներից մեկը մերժում է Ինձ բացահայտորեն և շատ հաճախ... Նա վշտացնում է Իմ Սուրբ Հոգին իր խստությամբ: Ես մի երեխա դրեցի նրա կողքին: Մեծ վստահությամբ Ես բերեցի Իմ զավակին նրա մոտ: Ա՜հ... Ինչպե՞ս կարող է նա չտեսնել Ինձ Իմ զավակի մեջ, որին Ես հարություն տվեցի մեռյալներից: Դեռ որքա՞ն երկար պետք է Ես համբերեմ նրան: Ինչո՞ւ է նա կործանում ինքն իրեն: Իմ հագուստները ծածկված են արյան շիթերով, Իմ Մարմինը պոկոտվել է խարազանումից, և Ես պառկած եմ նրա կողքին չարչարված և տառապանքի մեջ... Իսկ դո՛ւ, Իմ Վասո՛ւլա, կրի՛ր այս Խաչն Ինձ համար, որպեսզի պակասություն չունենաս: Ավելի լավ առաջարկ դու չէիր կարող ստանալ... Իմ Հայրը քո աչքերը վեր կհառի, որ տեսնեն ավելի մեծ բաներ, որոնք լինելու են:

Ես՝ Հիսուս, պատվեցի քեզ Իմ Խաչով, աղջի՛կս, Իմ Խաղաղությունը քեզ:

Ես օրհնում եմ քեզ: Իմաստությունը քո կողքին է: Ես եմ:

Հուլիսի 8, 1996

Տե՞ր:

Ե՛ս եմ:

Երբեք նորից դայթակղությունների մեջ մի՛ ընկիր... Իմ Պատգամները դարձրու քո կյանքի ուրախությունը: Հայտնի՛ դարձրու դրանք: Ես քո կողքին եմ, և Իմաստությունը պիտի ապահովի քեզ խելամիտ

[1] Ես. 2:4

ուսուցմամբ... Իմ Սրտի պտուղ, Իմ Գթասրտության պտուղ, Ես՝ Տերը, կօգնեմ քեզ: Այնուամենայնիվ, քո խորհրդատուն[1]... Երբեք մի՛ մոռացիր, որ Ես քո մեջ եմ, իսկ դու՝ Իմ մեջ: Կիսի՛ր քո դժվարությունները. քո վազքը չի ավարտվել: Ես ձեզ երկուսիդ տվել եմ մի ազնիվ ու վեհ աշխատանք: Քեզ, ծաղի՛կս, Ես տվել եմ այս Պատգամը, ապա նաև հոգևոր պարգևներ: Ես ապահովել եմ քեզ շնորհներով և բարեհաճություններով, և ինչպես Ես հրաշքներ արեցի առաջին պտուղներին[2], և ցույց տվեցի Իմ Փառքը նրանց մեջ, այդպես պիտի լինի նաև քեզ հետ: Ես ցույց պիտի տամ Իմ Փառքը և Իմ Սուրբ Հոգու զորությունը, երբ դու թույլ տաս Ինձ կլանել քեզ Իմ մեջ: Իսկ քո խորհրդատուին, որին Ես դաստիարակեցի Իմ փառքի համար և Իմ նպատակների ու շարժառիթների համար, Ես քեզ տվել եմ նրան, որ խորհրդատվություն ստանաս: Ես քեզ տվել եմ նրան, որ նա խրախուսի քեզ, սփոփի քեզ և խնամի ու հոգ տանի քեզ:

Շուտով դու պիտի տեսնես Ինձ դեմ առ դեմ նրա հետ միասին, ում Ես դրել եմ քո կողքին: Հիմա թող քո մտահոգությունը լինի ապրել միայն Իմ նպատակների ու շարժառիթների համար՝ Ինձ մոտ բերելով որքան հնարավոր է շատ հոգիների: Վերականգնի՛ր Իմ քանդված խորանները:

Շնորհը քեզ վրա է: Արի՛:

ΙΧΘΥΣ

Հուլիսի 12, 1996

(Այն բանից հետո, երբ խոսակցություններ լսեցինք, որ ոմանք հավակնում են, թե «Հիսուսն» ասել է իրենց, որ իրենք պիտի լինեն շարունակությունը կամ «ժառանգորդները» այս գործի՝ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների):

Իմ Վասո՛ւլա, ցանկացած ոք, որ հավակնում է, թե «կժառանգի» այս Պատգամը, մոլորված և խաբված է սատանայի կողմից: Ուրեմն բա՛ց արա աչքերդ և նայիր: Ո՛չ ոք, քեզանից հետո չի ստանա «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների «շարունակությունը»: Այս Գործի Պատգամները կավարտվեն քեզ հետ, երբ Ես վեր բարձրացնեմ քեզ Ինձ մոտ: Հետևաբար, որևէ մեկը, որ կհավակնի, թե այս գործի «ժառանգորդն» է, դրա վրա որևէ բան ավելացնելով, իմացի՛ր, որ նա Ինձանից չի գալիս: Ես օրհնել եմ այս գործը, որը կապահովի Եկեղեցուն բարի պտուղներով:

Հիսուս Քրիստոս է Իմ Անունը: Կենդանի Աստվածը, որը Կյանք է տալիս, հիմա խոսում է քեզ հետ: Օրհնյա՛լ լինես:

[1] Նրբանկատությունից այդ բառը բաց թողնվեց:
[2] Առաքյալներին

Հուլիսի 13, 1996

Արի՛ Տե՛ր, ներքնամասը
Քո բնակարանի:

Արի՛ իմ սեղանի մոտ, Տե՛ր,
որպեսզի Դու օրհնես այն,
ինչ մենք կկիսենք, կողք-կողքի:
Արի՛, Տե՛ր, և պաշտպանիր ինձ
հետևից և առջևից,
Քո Սուրբ Սրտի մեջ
պատիր ու պաշտպանիր ինձ:

Թող Քո Լույսը հետո ծածկի ինձ,
և պատի իմ շուրջը,
որ այլևս ոչ մի խավար
չլինի իմ ներսում կամ իմ շուրջը:

Արի՛, Հավատարիմ Այցելո՛ւ,
և այցելիր ինձ հիմա:
Տեսնո՞ւմ եք,
Աստված հիմա պիտի այցելի ինձ...

Ես եմ-ը քեզ հետ է: Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը:

Քո Այցելուն հարցնում է քեզ. Դու գիտե՞ս որևէ մեկին, որ գերազանցում է Իմ Գեղեցկությունը և Իմ Կատարելությունը: Ո՛չ, ոչ մեկը չկա... Ո՛չ էլ որևէ մեկը կա, որ գերազանցում է Իմ Իմաստության (տված) խորհուրդը և հասկացողությունը: Քեզ մոտ Կատարյալ Այցելուն է՝ կանգնած քո դռան շեմին: Դու, իսկապես, հիմա քո սեղանին ես հրավիրել Ալֆային և Օմեգային, Ճշմարիտ Աստծուն, որը ո՛չ միայն պիտի գա քո տան ներքին սենյակը քո կողքին կերակուր կիսելու, այլև պիտի վառի քո ճրագը: Հիմա արի՛, հենվի՛ր Ինձ վրա և հագեցրու հոգիների հանդեպ ունեցած Իմ Ծարավը: Հակառակ այն բանի, թե դու ինչ ես մտածում, քո աղերսներն իզուր չեն:

Ա՜հ... Իմ Վասո՛ւլա, Ես նաև քո Հովիվն եմ, ուրեմն դի՛ր գլուխդ Իմ Սուրբ Սրտի վրա և ստացիր Իմ Սրտի բերկրանքները, որպեսզի կամենաս ավելի շատ, քան երբևէ նախկինում, քավել քո եղբայրների և քույրերի համար... Մի՛ վախեցիր, Իմ Հոր զավա՛կ, Ես կղեկավարեմ քեզ, ինչպես միշտ արել եմ:

Արի՛, մե՞նք, մե՞զ: Ես՝ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին և Փրկիչը, պիտի սրբագործեմ Իմ մնացորդին Իմ Սուրբ Հոգով:

Հուլիսի 15, 1996

Աստվա՛ծ իմ, շնորհի՛ր,

որ խոսեմ այնպես, ինչպես
Իմաստությունն է ցանկանում,
որ մենք խոսենք:

Հա՛յր իմ, շնորհի՛ր ինձ
Իմաստության առաջնորդությունը,
որ ես ողորմածաբար,
առանց վերապահության
իմ եղբայրներին
և իմ քույրերին փոխանցեմ
Քո Թագավորության
հարստությունը:

[1]Աղջի՛կս, այդ քո Հայրն է խոսում: Յահվե է Իմ Անունը:
~ Քանի որ քո սիրտը տենչում է ասել Իմաստության և հասկացողության խոսքեր՝ Իմ Սրբությունը և Իմ Թագավորության Հարստությունը ցույց տալու համար, Ես կպարգևեմ քեզ այդ շնորհը, որպեսզի ազգերի բազմությունները լսեն Իմ Ձայնը և ճանաչեն Ինձ ու հասկանան, որ Ես Հայր եմ: Այո՛, թող նրանք իմանան, որ Ես իրենց Հայրն եմ, և որ դուք բոլորդ Իմ Սիրո գործն եք:

Իմ Յահվեն Մեծ է և պետք
է գովաբանվի գերագույն ձևով, այո՛:
Թող իմ շուրթերն
իմաստություն ունենան
ասելու խոսքեր
միայն Նրա Փառքի համար:
Թող իմ սիրտը փնտրի
միայն առողջ դատողություն,
և իմ միտքը կլանի
Նրա քաղցր Զրույցը,
որպեսզի Քո Սերը,Հա՛յր,
որն այնքան բարձր է,
որքան Երկինքը,
հայտնի դառնա չիմացողին,
որ նրանք նույնպես ուրախանան
և քայլեն Քո Ներկայությամբ
հավիտյանս հավիտենից:

Իմացե՛ք, որ ձեզանից ով էլ որ շրջվի դեպի Ինձ՝ Ինձ գոհացնելու միակ ցանկությամբ, Իմ ողջ Սրտով, այո՛, Իմ ողջ Սրտով Ես նրան կպարգևեմ Իմ Շնորհները...

Ես նրանց ցույց կտամ Իմ Բարության Պատկերը, որպեսզի նրանք ավարտեն իրենց ճամփորդությունն Ինձ հետ: Զե՞ք նկատել, թե ինչպես եմ Ես ուղարկում Իմ Սուրբ Հոգին՝ Իմաստության Կրողը, Սուրբ

[1] Հայրն է խոսում

Երկնքից: Այն, ինչը ձեզ բոլորիդ Անմատչելի և Անհասանելի[1] էր թվում, կիջնի ձեզ վրա Իմ Բարի Կամքով:

«Փրկի՛ր մեզ», խնդրում են ձեզանից ոմանք,

«Արի՛ և զորացրու մեզ, Հա՛յր», լսում եմ Ես, որպես աղաղակ Իմ արարչությունից:

«Շտապ մեզ ուղարկիր Քո Սուրբ Հոգին Վերևից», կանչում են ուրիշները ծարված, կամ՝

«Վե՛ր կաց, փրկի՛ր մեզ»:

Այդ կանչերին Ես ասացի. «Ես կարճակեմ խնկի նման մի Բուրմունք[2] Իմ արարչության վրա: Ես կտարածեմ Իմ Բուրմունքը, <u>ինչպես երբեք չի պատահել նախկինում պատմության մեջ</u>»: Ձե՞ք կարդացել[3]. «Ես, ինչպես գետից ելնող մի վտակ, ինչպես պարտեզում հոսող մի առու, Ես ջրելու եմ Իմ այգին, Ես ոռոգելու եմ Իմ ծաղիկների թմբերը: Եվ տե՛ս, Իմ վտակը վերածվել է գետի, իսկ Իմ գետը վերածվել է ծովի: Հիմա Ես այնպես պիտի անեմ, որ ուսուցումը փայլի, և Ես նրա լույսը պիտի ուղարկեմ ամենուրեք: Ես դուրս պիտի հեղեմ ուսուցումը մարգարեության պես, որպես ժառանգություն բոլոր գալիք սերունդներին»: Եվ Իմ ժողովուրդը կասի. «Տեսե՛ք, տեսե՛ք, թե ինչպես է Մեր Հայրը առաջ շարժվում ամպերի նման: Տեսե՛ք, թե ինչպես է Նա դուրս հեղում Իր Սուրբ Հոգին Օրհնության հետ միասին»[4]:

Ես ցանկանում եմ բուժել ձեր անհավատարմությունը, Ես ցանկանում եմ բուժել ձեր ուրացությունը և ձեզ բոլորիդ տալ մի մաքուր սիրտ, որ ամոթով չխուսափեք Ինձանից: Ձեզանից շատերը պիտի մնան զարհուրած, ապշած և խիստ զարմացած, ոմանք կասկածների տեղիք պիտի տան իրենց սրտում, ոմանք Իմ Հոգու Զորեղ Ներկայությունից իրենց դեմքերը պիտի դարձնեն ժայռից էլ կարծր: Սակայն, Ես միայն կատարում եմ Իմ Որդու Խոստումը...

Եվ երբ մարդիկ հարցնեն քեզ. «Ովքե՞ր են սրանք, որ ամպի պես, աղավնիների պես թռչում են դեպի իրենց բույնը»[5], պատասխանի՛ր և ասա. «Սրանք ուստերն ու դուստերն են, որ իրենց ազատությունը գտան Հոգու մեջ: Սրանք նրանք են, որոնք կանչեցին իրենց Հորը. «Հա՛յր իմ», և որոնք զարդարելու են Նրա Սրբարանը մեկ անգամ ևս: Հիմա նրանք պիտի սնվեն Նրա Սուրբ Հոգու Հարստությամբ: Նրանք այն ժողովուրդն են, որոնց Հայրն օրհնել է: Այո՛, Սուրբ Հոգին՝ Կյանք Տվողը, պիտի լինի նրանց չքեղությունն ու փայլքը, և նրանք պիտի շարունակեն կերակրվել Նրա Սուրբ Հոգու Հարստությամբ...»: Այս է, որ դու ասելու ես Իմ ժողովրդին...

Արի՛:

[1] Աստված խոսում է Սուրբ Հոգու մասին:
[2] Աստված նկատի ունի Իր Սուրբ Հոգին:
[3] Սիրաք 24:41-46
[4] Կարդա՝ Թվեր 6:22-27: Ստանալով նաև հատուկ պարգևներ և խորհրդավոր շնորհներ՝ Նրա Հոգու մեջ հանդչելիս:
[5] Ես. 60:8

Հուլիսի 17, 1996

(Աղոթք՝ Սուրբ Հոգուն)

Ո՛վ Լույս, Ո՛վ Անհասանելի Լույս
Երիցս Սուրբ,

արի՛, իջի՛ր հիմա
և արի ոչ միայն նրանց վրա,
ովքեր կանչում են Քեզ,
որովհետև լսել են Քո մասին,
այլև արի նրանց վրա,
ովքեր երբեք չեն ճանաչել Քեզ:

Արի՛. ո՛վ մեր մարմնի Ճրագ:
Արի՛ և ուղղիր բոլոր նրանց,
ովքեր երբեք չեն հասկացել Քեզ:

Արի՛ բոլոր նրանց մոտ,
ովքեր վախենում են Քեզանից,
Արի՛ և քողազերծիր
Քո թաքնված գանձերը,
այս գանձերը, որ պահված են
<u>մեր</u> ժամանակների համար:

<u>Աբի՛</u>: Արի՛ և ցույց տուր
Հոր և Որդու Սուրբ Դեմքերը:
Արի՛ և ցույց տուր Քեզ
Սո՛ւրբ Հոգի: Արի՛, Ընկե՛ր իմ,
քանի որ Դու մեր սրտի
շլացուցիչ Լույսն ես,
Արի՛ վերևից և ծածկիր մեզ
Քո զորությամբ և պայծառությամբ:

Արի՛ և բնակվիր մեր ներսում
և Քո Բնակավայրը դարձրու
աղոթքի մի վայր, քանի որ
Դու Հարատև Աղոթքն ես:
Տեսնո՞ւմ ես, թե որքան
մերկ ենք մենք հիմա առանց Քեզ:
Արի՛ և փայլեցրու Քո Լույսն
այս խավարի մեջ:
Դու Խոստումն ես,
Դու մեր Սերն ես,
Դու մեր Լույսն ես:
Այո՛, Դու <u>Խոստումն ես</u>:

Դու Նա՛ ես, ում մասին
Սուրբ Գրքերն ասում են.

«Այլևս երբեք գիշեր չի լինի և
նրանք ճրագի լույսի
կամ արևի լույսի
կարիք չեն ունենա,
որովհետև Տեր Աստված
պիտի լուսավորի նրանց»[1]*:*

Դու մեր ժառանգության
Գրականն ես,
Սո՛ւրբ լինի Քո Անունը
և Օրհնյալ: Դու անգին
և անգնահատելի մարգարիտն ես:
Դու մեր հոգու
պայծառությունն ես:
Դու խնջույքն ես
և մեր տոնախմբությունը:
Դու մեր կյանքի
Անդիմադրելի Ուղեկիցն ես:
Դու հոգով աղքատների Գահն ես:
Դու թագավորությունների
Թագավորությունն ես,
կայսրությունների՝ Կայսրությունը:
Ո՛վ մեր հոգու Այցելու,
<u>Աբի՛</u> և ազատիր մեզ: Ամեն:

Զավա՛կս[2], աղոթքը քո զենքն է, իսկ Ես, Ես կարող եմ քեզ դուրս հանել խավարի իշխանությունից, որ քեզ դնեմ այնտեղ, ուր դու մի ժամանակ մտածում էիր Իմ մասին որպես Անմատչելի Լույսի և Անհասանելի Գանձի: Իմ Փառապանծ Զորության մեջ, զավա՛կս, դու կարող ես ստանալ քո ուժը, քո հեզությունը և քո համբերությունը: Դու կարող ես ձեռք բերել հաստատակամություն և Իմ մեջ ու Իմ միջոցով <u>դու</u> կարող ես կանչել. «Ամե՛ն»: Եվ Ես՝ <u>Ամենը</u>, Հավատարիմը, Ճշմարիտ Վկան, Աստծո արարչության Գերագույն Աղբյուրը, կլսեմ քեզ: Ինչպես ամպրոպի որոտ, Ես պիտի իջնեմ քեզ վրա, որ քեզ ազատություն տամ և միավորեմ քեզ Մեր բնության միասնության հետ՝ լցնելով քեզ Մեր Երրորդության Սրբության բացարձակ ամբողջությամբ:

Կրակի մկրտություն է գալիս ձեզ վրա, արարչությո՛ւն, մի <u>այնքան ցանկալի</u> մկրտություն, որ ամեն ինչ նորից նոր դարձնի: Աղջիկս, հռչակի՛ր Աստծո Թագավորությունը, և թող ոչ մեկը չխանգարի քեզ[3]... Խնդրի՛ր, որ Կենդանի Ջրի Ակունքը Աղբյուրի նման թափվի ձեզ վրա՝ ձեզ թարմացնելու համար:

Հույսերի Հո՛ւյս, ես իսկապես
կարո՞ղ եմ խնդրել Քեզ,

[1] Հայտ. 22:5
[2] Սուրբ Հոգին է խոսում:
[3] Կարծում եմ սա ասվեց այսպես. «Ոչ ոք չի կարող կասեցնել Թագավորության հռչակումը»:

որ արձակես նրանց շղթաները,
ովքեր դեռևս շղթայված են:

Խնդրի՛ք: Չե՞ս լսել, որ ազատությունը պիտի գտնել Իմ մեջ[1]: Ես ասում եմ քեզ. Ես պիտի գամ նրանց վրա, ովքեր երբեք չեն փնտրել Ինձ, սակայն նրանց սրտերը մնացել են ինչպես երեխաներինը: Ես պիտի ցույց տամ Իմ փառահեղ զորությունը նրանց, ովքեր նույնիսկ երբեք չեն դիմել Ինձ: Ես կգնամ այնտեղ, ուր արդելված չեմ:

~ Տեսակավորելու ժամանակը եկել է: Թագավորության փառավոր հարստությունը բացահայտելու ժամանակը եկել է: Շնորհի ժամանակը ձեզ վրա է: Ահա՛ թե ինչու Ես նորից ասում եմ ձեզ. Դո՛ւք, որ Քրիստոսի Մարմնի մասն եք կազմում, եկե՛ք և ձգտեք ստանալ Իմ պարգևները, որպեսզի կարողանաք ամբողջապես ներթափանցել Քրիստոսի Խորհուրդի մեջ: Եվ մի՛ եղեք այն ուրացողների պես, ովքեր դադարել են փնտրելուց այն, ինչ ճշմարիտ է:

~ Իսկ դո՛ւ, որ ասում ես նրանց, ովքեր կանչում են Ինձ[2]. «Այս աղոթքն ինձ չի վերաբերում», Ես հարցնում եմ քեզ. «Հնարավո՞ր է, որ դու չլսեցիր Ինձ: Կարո՞ղ է պատահել, որ դու չտեսար Ինձ: Հնարավո՞ր է, որ չհասկացար Ինձ: Մի՞թե հիմա պետք է ասեմ, որ դու ընդդիմանում ես Ինձ: Դու պնդում ես, որ գիտես Ինձ, բայց այն, ինչ դու ասում և անում ես, այլ բան չէ, եթե ոչ Իմ շնորհների ժխտումը:

~ [3]Խաղաղությո՛ւն քեզ: Փառաբանի՛ր Մեր Անունը Երիցս Սուրբ և մտերմաբար գովաբանիր Մեզ, դո՛ւ, որ այս մեծ Ուրացությունից զերծ մնացիր:

(Հետո Սուրբ Հոգին բացեց իմ բերանը և լցրեց այն Աստծո գովաբանություններով):

Ես գովք և
շնորհակալություն եմ հայտնում
ակնածանք ներշնչող Տիրոջը՝
այնքան զարմանալիորեն մեծ:

Տեսե՛ք, Նա՛, որ արձակում է
Իր Ճառագայթները՝
շլացնելով իմ աչքերը,
ոչ այլ ոք է, քան իմ Հայրը:

Ո՛վ Երկնքի Շողշողուն Զա՛րդ,
Քո Անվան մեծությունն
ազատագրեց ինձ, և իմ ականջը
մի փոքր վեր բարձրացնելով՝
ես ստացա Քո Խոսքը Քո Բերանից:

Եվ հիմա ես երգում եմ

---

[1] Սուրբ Հոգու
[2] Սուրբ Հոգուն կանչում են, երբ ձեռք են դնում մարդկանց վրա:
[3] Հետո Աստծո Սուրբ Հոգին նորից դիմեց ինձ:

ուրախությունից Աստծուն՝ իմ Հորը:
Ես ցնծությամբ գոչում եմ Օծյալին՝
Հիսուս Քրիստոսին, իմ Փրկչին:

Ինձ Խոստացված (Սուրբ Հոգի),[1]
Օ՜ Բերկրանք բերկրանքների,
ես սիրում եմ Քեզ՝
ինձ Քո ընկերը դարձնելու համար:
Եվ հիմա ես կանչում եմ
իմ ողջ սրտով.
«Ամեն, իմ եռանդը այրում է ինձ,
որ հայտարարեմ և հռչակեմ
Քո Հավատարիմ Սերը:

Ես կկատարեմ Քո Կամքը,
և ես կբերեմ շատերին,
որքան որ հնարավոր է,
միանալու Ձեր
բնության Միասնության հետ,
որպեսզի, նրանք նույնպես լցվեն
Ձեր Եռանձն Սրբության
բացարձակ լրությամբ»: Ամեն:

Թող քո ուղիները հաստատուն մնան Մեր Կամքը կատարելիս: Ձեր օրերում ես այն քարն եմ, որը շինարարները մերժում են, մինչդեռ ես եկեղեցու անկյունաքարն եմ: Ազատությունը և սերը Իմ մեջ է գտնվում, և չնայած դրան ես մերժված եմ ձեր սերնդի կողմից, քանի որ նրանք չեն հասկացել Ինձ... Նրանք հազիվ են խորհրդակցում Ինձ հետ... Տե՛ս, ես պարարտ հողի նման եմ: Եթե դուք ցանեք ձեր սերմերն Իմ մեջ, ձեր բերքը կլինի Հավիտենական Կյանքը, իսկ Դրախտը կլինի ձեր տունը:

Եկե՛ք Ինձ մոտ առանց հապաղման, և Ես ձեզ հարուստ կդարձնեմ՝ ձեր աղքատության միջոցով, ուժեղ՝ ձեր թուլության միջոցով, նախանձախնդիր և հավատարիմ՝ ձեր թշվառության միջոցով: Մի կենդանի Խորան՝ Մեր Երրորդության Սրբության համար՝ ձեր ոչնչության միջոցով: Եկեք Ինձ մոտ վախով և դողալով, և Ես ձեզ կդարձնեմ ձեր ժամանակների մի անվախ ռազմիկ, որ միանաք սուրբ Միքայելին և նրա բանակին [2] և կռվեք ձեր ժամանակների մեծ ճակատամարտում:

– Ես մի անդադար աղոթք եմ ձեր ներսում, և ուր դուք պակասություն եք ունենում, Ես լցնում եմ՝ միշտ հասանելի աղքատներին և պարզամիտներին: Եկե՛ք և գրավեք Ինձ... Եկե՛ք և տիրապետեք Ինձ, և Ես կձուլեմ ձեզ Իմ Սրբության նմանությամբ [3] առաջարկելով ձեզ Իմ Անգնահատելի պարգևները, դարձնելով ձեզ Մեր[4] մի մասը և մեկ Մեր մեջ, որ գնաք և վերակառուցեք Մեր Սրբարանի ավերակները:

---

[1] Վկայակոչում՝ Եփես. 1:13
[2] Ես միևնույն ժամանակ լսեցի. «Հրեշտակներին»:
[3] Ես միևնույն ժամանակ լսեցի նաև «Աստվածության»:
[4] Սուրբ Երրորդության

- Դո՛ւք, որ եկել եք անապատից, եկե՛ք և մտեք Իմ խորունկ ջրերը, և Իմ ալիքները պիտի ողողեն ու թարմացնեն ձեզ: Մի՛ վախեցեք Ինձանից: Մի՞թե չես լսել Իմ ընկեր, որ Ես չոր հողը պիտի վերածեմ ծովի: Քանի որ երկնքից Ես դուրս պիտի հեղեմ ձեզ վրա Իմ պարգևները և Իմ շնորհները: Ճիշտ ինչպես երկինքն է անձրև տեղում Մեր Եռանձն Սրբության Ներկայությամբ, այդպես էլ Ես դուրս պիտի հեղեմ Իմ Ներկայությունը ողջ մարդկության վրա:

- Խոկացեք սրա վրա: Մե՞նք, մե՞զ:

Այո՛, հավիտյան:

Օգոստոսի 2, 1996

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր:
Ես նորից շնորհակալություն
պիտի հայտնեմ Քո Անվանը,
քանի որ Դու իմ Աստվածն ես,
իմ Ընկերը և իմ Ամենը:
Ես շնորհակալություն եմ
հայտնում Քեզ
Քո բոլոր խորհուրդների համար,
ես շնորհակալություն եմ
հայտնում Քեզ
Քո հրաշալի Գործերի համար,
ես շնորհակալություն եմ
հայտնում Քեզ
Քո Փրկության Ծրագրի համար:

Եկեք բոլորս տոնենք
մեր Թագավորի գործերը:

Արի՛, Իմ Վասո՛ւլա, Ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը... Այո՛, քանի որ Ես կանչել եմ ձեզ մի կյանքի, որը լցված է խաղաղությամբ: Ես արարել եմ մարդուն, որ արտացոլի Իմ Փառքը, քանի որ Ես նրան ստեղծել եմ Իմ նմանությամբ: Ես արարել եմ մարդուն, որ արտասանի իմաստության և գիտության խոսքեր: Ես արարել եմ նրան, որ ստանա Իմ Սուրբ Հոգու պարգևները: Մի՞թե չեք կարդացել. «Ամեն մի պարգև ձեր օգուտի համար է, որպեսզի շատերի գոհությամբ առատացած շնորհը ավելանա ի փառս Աստծո»[1]:

Օ՜ արարչություն, որին Ես սիրում եմ խելացնորության աստիճան: Չնայած դուք մոտ եք մահվան, Ես այստեղ եմ, որ ձեզ օր օրի նորոգեմ: Ուրեմն, հիմա արմատացեք Իմ մեջ և լցվեք շնորհակալությամբ: Ձգտեք այն բաներին, որոնք երկնքից են, ուր Ես եմ, և ուր որ դուք պատկանում եք: Թող ձեր հիմքերն արմատ գցեն սիրո, հավատի և հույսի մեջ: Պահե՛ք Իմ Օրենքը և այն առողջ ուսուցումները, որ Ես տալիս եմ ձեզ: Դուք

[1] Բ Կոր. 4:15

ապրում եք գայլերի մեջ, Իմ գառնե՛ր, բայց Իմ Սուրբ Հոգին ձեզ հետ է, որ հոգ տանի ձեզ: Մի՛ վախեցեք, ես նույնպես ձեզ հետ եմ: Հաստատո՛ւն եղեք և մի՛ վախեցեք: Հոր Աչքերը ձեզ վրա են... Եվ Մենք, Մեր Երրորդության Սրբության մեջ, պիտի հովվենք ձեզ մինչև վերջ... Եղե՛ք մեկ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 4, 1996

Եկե՛ք, ճանապարհ բացենք
Ամպերի հեծյալի համար,
թող մեր աղոթքները լինեն
Նրա սանդուխքը:
Ցած իջի՛ր հիմա, Տե՛ր իմ, և
եղիր մեզ հետ: Մարանաթա [1]:

Ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը: Լսի՛ր Ինձ. Իմ Սուրբ Հոգին, Երիցս Սուրբ՝ Կյանք տվողը և հոգով աղքատների Գահը, այսօր կանչում է.

«Եկե՛ք, եկե՛ք, դուք բոլորդ, որ ցանկանում եք Ինձ և ծարավ եք արդարության: Դուք չեք կարող լինել Իմ զավակը, մինչև չկերակրվեք Իմ հարստությունից: Ա՛հ, ձեզանից որքան շատերն են կապված կրքի և խավարի շղթաներով: Զնայած դրան, Իմ Սուրբ Հոգին կարող է լցնել այնտեղ, ուր դուք պակասություն ունեք, որպեսզի Իմ Խոսքը, իր ողջ փառքով և գերագույն իշխանությամբ, կարողանա բնակվել ձեր մեջ...

Ո՛վ որ սխալ է գործել, եկե՛ք, եկե՛ք և խոնարհեցրե՛ք դուք ձեզ և ապաշխարեք, որ Իմ Աչքերը հրճվեն ձեզանով: Ո՛վ որ սուրբ չի ապրում, եկե՛ք, եկե՛ք Ինձ մոտ և ապաշխարեք: Ես ձեզ նոր սիրտ կտամ: Ո՛վ որ դեռևս կապված է աշխարհին, կանչե՛ք Ինձ, և խնդրեք Ինձ արձակել ձեր շղթաները: Ինչո՞ւ եք ձեզ կապված պահում այդ խառնաշփոթ աշխարհիկ հակումներին, որոնք հարձակվում են ձեր հոգու վրա: Ձեր զարդարանքը պետք է լինի ներքին մաքրությունը, ձեր զարդարանքը պետք է լինի ճշմարտացիությունը, որպեսզի Իմ Սուրբ Հոգին չխուսափի ձեզանից...

Վա՜յ նրանց, ովքեր կորցրել են տոկալու ուժը [2] Ձե՞ք լսել. «Նրանք, ովքեր վախենում են Տիրոջից, անում են իրենց լավագույնը, որ գոհացնեն Նրան» [3]: Եթե չեք իմացել սա, եկե՛ք, խոնարհեցրեք ձեզ և հետևեք Ինձ, և թող ձեր սերը աճի Իմ մեջ, որպեսզի ձեր սիրտը երբեք նորից չչրջվի:

Ա՛հ... Վասուլա, զավակս, ասա՛ Ինձ.

«Հիսո՛ւս Քրիստոս,
Դու իմ Կյանքն ես,

[1] Թող մեր Տերը գա
[2] Սիրաք 2:16
[3] Սիրաք 2:18

Դու իմ Ժայռն ես,
Դու իմ Փրկությունն ես,
Դու իմ Նետաձիգն ես»:

Եվ ես կպատասխանեմ քեզ.

Զավա՛կս, դու Իմն ես,
դու Իմ սերմն ես,
դու Իմ ուրախությունն ես,
դու Իմ թիրախն ես,
որի վրա ես նետում եմ
օրհնություն օրհնության հետևից՝
սոսկ մի նպատակով,
որ փրկեմ քեզ...

Արի՛, հիշի՛ր, ես <u>միշտ</u> քեզ հետ եմ: Ես՝ Հիսուս Քրիստոսը, օրհնում եմ ձեզ բոլորիդ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 12, 1996

Ինչո՞ւ է որոշ մարդկանց անհնարին թվում, որոնք տեսնում են Քո Սուրբ Հոգու Զորությունը Իրեն ցուցադրելիս, եթե անգամ իրենք հանդչում են Սուրբ Հոգու մեջ (դա պատահում է, երբ Վասուլան աղոթում է մարդկանց վրա, և նրանք Սուրբ Հոգով լցված, վայր են ընկնում): Ես ոչինչ ավելին չեմ ասում ողջույնի խոսքերից բացի, աղերսելով և խնդրելով, որ նրանք բուժվեն և Քո պարգևները ստանան:

(Հետո ես բացեցի Աստվածաշունչը և կարդացի Թվեր 6:22-27)

«Յահվեն խոսեց Մովսեսի հետ և ասաց նրան. Խոսի՛ր Ահարոնի և նրա որդիների հետ և ասա՛. Ահա՛ թե ինչպես պետք է օրհնեք Իսրայելացիներին. Դուք կասեք.

«Թող Յահվեն
օրհնի ձեզ և պահի ձեզ,
թող Յահվեն թույլ տա,
որ Իր Դեմքը փայլի ձեզ վրա
և լինի ողորմած ձեր հանդեպ,
թող Յահվեն ցույց տա Իր Դեմքը
և խաղաղություն բերի ձեզ»:

Ահա թե ինչպես պետք է նրանք կանչեն Իմ Անունը, իսրայելացիների վրա, և Ես կօրհնեմ նրանց[1]: Ես կփչեմ Իմ օրհնությունը որևէ մեկի վրա, որ կանչում է Ինձ, և Ես կփայլեմ նրանց վրա՝ բերելով նրանց խաղաղություն, և Ես գթասիրտ կլինեմ նրանց հանդեպ: Այդպես պիտի լինի... Որևէ մեկը, որ ցանկանում է խմել, թող գա Ինձ մոտ, և Ես կօրհնեմ նրան:

Օգոստոսի 19, 1996

(Սուրբ Միքայել հրեշտակապետը)

Հոր և Ամենաբարձրյալի զավա՛կ: Ամուսնու ամուսի՛ն: Սուրբ Հոգու պարտե՛զ, Ամենասուրբ Երրորդության պտո՛ւղ, դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում «Աստծո վախ»: Դա նշանակում է ատելություն այն ամենի հանդեպ, որ չար է և հակառակ է Աստծուն: Աստված բարի է, խոնարհ, քնքուշ, գթառատ: Նա սեր է և Ճշմարտությունը:

Ուրեմն թող քո հոգին վախենա Աստծուց և թույլ տա, որ Աստված կատարյալ դարձնի քեզ: Աստծո վախը Իմաստության սկիզբն է, և Իմաստությունը տրվում է սոսկ մանուկներին, քանի որ այդպիսիներին է պատկանում երկնքի թագավորությունը: Հետևաբար, մինչև չփոխեք ձեր սրտերը[2] և չազատվեք չարամտությունից, դուք <u>երբեք</u> չեք մտնի Աստծո թագավորության մեջ:

Ա՛հ... Ձե՞ք լսել, թե ինչպես Մեր Արարիչը՝ Երիցս Սուրբ, որ հաղթական է բոլորի վրա, ուրախության արցունքներ թափեց, երբ արարում էր ձեզ: Այո՛, այս նույն Աստվածն է՝ Ամենաբարձրյալը, մեծ և կենդանի Աստվածը, որին դուք պարտական եք ձեր կյանքը, որը արարեց ձեզ, և որի դեմ է այսօր շրջվել աշխարհը:

Ինչպե՞ս կարող է որևէ մեկը հավատալ, որ կարող է խուսափել Աստծո Արդարությունից: Ամեն ինչ ընդմիշտ Աստծո Հայացքի տակ է, և այն, ինչ Նա տեսնում է որպես հանցանքներ և վիրավորանքներ Իր Սրբության հանդեպ, գերազանցում է ծովերի ավազներին... Դեռ որքա՞ն պետք է Նա տեսնի Իր Պատկերը պղծվելիս: Կարո՞ղ է մարդ դիմանալ և գոյություն պահպանել ոչնչով, և որքա՞ն ժամանակ: Հավատարիմ Սերը մերժել՝ նշանակում է մերժել Կյանքը: Սակայն Աստված, որին նրանք մոռացել են, երբեք չի մոռացել իրենց:

Հիմա ես կարող եմ գթություն խնդրել ձեզ բոլորիդ համար, հատկապես ձեր միջից նրանց համար, որոնց սրտերն ամենակարծրն են: Թույլերն ու կարիքավորները պետք է ազատվեն և փրկվեն չարի ճանկերից, որ դավեր է նյութում Աստծո ժողովրդի անկման համար: Ուստի եկե՛ք, վերականգնեք ձեր աղոթքներն ուղղված Ինձ, և Ես պիտի <u>միջամտեմ</u>:

[1] Աստված ցանկացավ, որ Ես գրեի սա այս ձևով:
[2] Սբ. Միքայելն այժմ խոսում է բոլորի հետ:

Եկե՛ք: Աստծո զավակներին փրկելու միակ մտադրությամբ, եկե՛ք և աղոթեք: Մինչ Ես տալիս եմ ձեզ այս նախազգուշացումը, որոշ մարդիկ ցանկություն չեն ունենա լսելու: Խնդրեք Իմ միջամտությունը, և Ես պիտի պահեմ ձեզ և պաշտպանեմ ձեզ չարից ու նրա տիրապետությունից:

~ Ինչպես երկինքն է գովաբանում Աստծո հրաշքները, դուք նույնպես գովաբանեք Ամենաբարձրյալին՝ ձեր Արարչին, առանց դադարի, քանի որ երկնքում ո՞վ կարող է համեմատվել Ամենաբարձրյալի հետ: Աստծո որդիներից ո՞վ կարող է մրցել Նրա հետ: Նրա Գահը, ինչպես արևն իմ առջև, կանչում է. «Արդարությո՛ւն»: Մի անգամ, որ Սուրբը խոսի, Նրա Խոսքը պիտի կատարվի, և Արդարությունը պիտի իրագործվի կրակով:

Բայց նրանք, որոնց սիրտը հաճելի էր Աստծուն, ովքեր կանչում էին Նրան. «Դու իմ Հա՛յրն ես, Իմ Աստվածը՝ իմ փրկության ժայռը», նրանք դրա համար պիտի դառնան Աստծո առաջնեկները և չպիտի վախենան այն Օրը, երբ Նա կգա կրակով:

Շուտով Յահվեն մտադիր է անցնել ձեր միջով: Թող Ես լսեմ ձեր ջերմեռանդ աղոթքները, հետո հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ է նշանակում Տիրոջ Օրը ինձ համար», և ո՛վ էլ որ չարի հետ դավադրություն անի, աշխատելիս կլինի իր սեփական կործանման համար: Ահա թե ինչու Ես ասում եմ ձեզ. եկե՛ք և ցանեք <u>խաղաղության</u> և <u>հաշտության</u> սերմեր, որպեսզի ձեր պտուղը հաճելի լինի Ամենակարողին և երկինքը պիտի լինի ձեր փոխհատուցումը:

Սուրբ Միքայել՝ Աստծո հրեշտակապետ:

Սեպտեմբերի 2, 1996

Աղջի՛կս, <u>Ես Եմ-ը</u> քեզ հետ է, արի՛ և աղոթիր, ասա՛.

Ա՛հ, Տե՛ր իմ, որքա՜ն պատկառելի
ու ահեղ ես Դու,
Դու ցրում ես Քո թշնամիներին
ինչպես ծուխը,
Սուրբ թող լինի Քո Անունը
Երկնքում Սուրբ:
Քո արդարամտությունը
փառավորում է Քեզ
մեր ամբարշտության մեջ,
Քո հավատարմությունը
փառավորում է Քեզ
Մեր անհավատարմության մեջ:

Թող բոլոր սրտերը փնտրեն Քեզ,
Տե՛ր իմ, և կանչեն Քո Անունը:
Թող նա՛,
ով երբեք չի փնտրել Քեզ՝
գտնի Քեզ, որպեսզի նա նույնպես,

Քո Ներկայությամբ ասի.

«Միայն Աստծո մեջ են փրկարար
արդարությունը և զորությունը:
Միայն Աստծո մեջ է իմ կյանքը,
իմ ուրախությունն ու
իմ խաղաղությունը: Ո՞ւմ հետ
կարող եք համեմատել Նրան,
ո՞ւմ հետ կարող եք
հավասարեցնել Նրան:
Ես ծաղկել եմ Նրա Փրկության մեջ
և այժմ ուրախանում եմ
Նրա Մեծ Սիրո մեջ:
Փա՛ռք Ամենաբարձրյալին:
Փա՛ռք իմ Աստծուն Երիցս Սուրբ»:

Տե՛ր, ուրիշ ոչ մեկը չկա
Քեզանից բացի,
և ես պիտի հռչակեմ
Քո Փրկարար Արդարությունը
մինչև վերջ: Ամեն:

Արի՛, քո Արարիչն ասում է քեզ. Ես քեզ հետ եմ: Օրհնյա՛լ լինես:

Սեպտեմբերի 4, 1996

(Ես ոգեշնչվեցի աղոթել սուրբ Պողոսին, որովհետև օրեր շարունակ նա իմ մտքում էր, և իմ ուշադրությունը կենտրոնացել էր իր վրա: Կարծես նա համոզում էր ինձ: Ես նրան ինձ այնքան մոտ էի զգում, ինչպես այն ժամանակ, երբ պատրաստվում եմ ստանալ մեր Տիրոջից Իր խոսքերը: Հետո, երբ ես աղոթեցի նրան, ստացա սուրբ Պողոսի խորհդատու խոսքերը).

Խաղաղությո՛ւն, իմ քույր Տիրոջով: Հսկի՛ր քո խմբին[1] և երբեք մի՛ դադարիր խրախուսել նրանց... Թող ձեր սրտերը սուրբ լինեն, թող ձեր սրտերը հռչակեն հարություն առած Քրիստոսին: Քրիստոսը միշտ թող լինի ձեր Թեման:

Աստված կանչել է ձեզ բոլորիդ, որ կիսեք Իր Փառքը: Նա սիրում է խոնարհներին և անմեղներին: Ամենից առաջ եղեք մաքուր, որ կարողանաք կանգնել Աստծո դեմ բարի խղճով: Շնորհի Հոգին ձեզ վրա է, և ձեզանից յուրաքանչյուրը ստացել է մի հատուկ շնորհ: Այս հատուկ

[1] Հռոդոսի (Հունաստան) աղոթքի խմբին:

շնորհները տրվել են ձեզ Եկեղեցու օգտի համար՝ հռչակելու Հարությունն առած Քրիստոսին, մի բան, որ ձեր օրերում համարվում է ոչ ճշմարիտ: Դուք պետք է քանդեք ստի այդ պատնեշը, որ կառուցվում է: Ինչպես վարպետ մասոններն[1] են տուն կառուցում, Եկեղեցու այս թշնամիները ճարպիկ են ու խորամանկ ավերածության իրենց աշխատանքում:

Այսօր Աստված մղում է թուլլերին և թշվառներին կռվելու այն բանի դեմ, ինչը տպավորիչ և հրապուրիչ է Ուրացության այս հոգնած ու մաշվող աշխարհի աչքում: Նրա Սուրբ Հոգու Ներկայությունը հարություն կտա[2] բազմաթիվ դիակների: Անբարոյականությունը ձեր օրերում այս չար աշխարհի թագն է: Բայց դո՛ւք, իմ ընկերնե՛ր, որ ստացաք Հայտնությունը մի շող շողուն լույսով, հաստատուն մնացեք՝ հռչակելու համար Աստծո Փառքը: Հռչակե՛ք Կենդանի Քրիստոսին և մի՛ վախեցեք հալածանքներից, ընդհակառակը, ուրախացե՛ք: Ի՞նչ ավելի մեծ շնորհ կարող էր Տերն առաջարկել ձեզ:

Մի՛ դոտեմարտեք, երբ տեգը վրա է հասնում: Չե՞ք հասկացել նրա արժեքը: Դրա փոխարեն վայելեք Աստծո Ներկայությունը, վայելեք Նրա Հոգու Ներկայությունը և մեծապես ցանկացեք գովաբանել Նրան, քանի որ Նրա մեջ է, որ դուք բոլորդ ապրում եք, Նրա մեջ է, որ շարժվում եք, շնչում, Նրա մեջ է, որ հանգստանում[3] եք և հավիտենապես պիտի հանգչեք մի օր... Իսկ դո՛ւ, քույր իմ Տիրոջով, ավելի շատ ժամանակ տրամադրիր Տիրոջը, թող քո միակ հոգսը լինի՝ Նրա Եկեղեցին:

- Ես՝ սուրբ Պողոսը, մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաքյալը, ասում եմ քեզ. արիացի՛ր և ամուր կանգնիր: Մնա՛ Աստծո շնորհի մեջ և վայելիր Նրա Ներկայությունը:

Ես օրհնում եմ ձեզ՝ Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Եղե՛ք մեկ...

Սեպտեմբերի 20, 1996

Է՛լի, ես սիրում եմ Քեզ:
Դատավո՛ր կենդանիների
և մեռածների,
ես տալիս եմ Քեզ իմ սիրտը:

Հավիտենական Հա՛յր
և Խաղաղության Իշխա՛ն[4],
ղեկավարի՛ր ինձ:

Որթատունկի-Ճյուղ, խաղաղությո՛ւն քեզ: Ես չեմ զրկի քեզ Իմ Ձայնից, Ես երբեք չեմ զրկում երեխաներին, ինչ էլ որ նրանք խնդրում են Ինձանից, անկախ նրանից, թե որքան անխոհեմ են, նրանք միշտ կարող են դատիարակվել, և Ես միշտ կարող եմ նրանց նորից խելքի բերել: Այո՛, նրանք կարող են թշվառ լինել, բայց նրանց Հավատարիմ Թագավորը

[1] Երկակի իմաստ
[2] Հարություն տալ, դարձի բերել:
[3] Վկայակոչում՝ Գործք 17:28
[4] Ես. 9:6

պիտի շարունակի փայլել նրանց վրա՝ տալով նրանց խաղաղություն, որ կատարելություն ձեռք բերեն:

Իմ Սրտի Հոգի՛[1], որ ծնված ես այս առաքելության համար, բա՛ց արա սիրտդ Հիմա և լսիր թե ինչ եմ Ես ասելու. Ես կանչեցի քեզ, որ աշխատես Ինձ համար, և միևնույն ժամանակ ուրախացնեմ քո սիրտը: Քո վազքը դեռ չի ավարտվել... Մինչ դու վազում ես, Ես նույնպես վազում եմ: Քո կողքին Ես եմ: Հանուն Ինձ, դու, կհամբերե՞ս մի փոքր ավելի երկար:

Տե՛ր, ես բռնել եմ Քո հագուստի եզրից և բաց չեմ թողնի:

Զարդարի՛ր Իմ Սրբարանը[2]: Ամայացումն ու ավերմունքը ներթափանցել են Իմ Սրբարանի մեջ: Վերակենդանացրո՛ւ Իմ Սրբարանը: Եվ մխիթարիր նրանց, ովքեր ողբում են, նրանք Իմ ժողովուրդն են: Ասա՛ նրանց, Ես պիտի գործեմ արագորեն, երբ ճիշտ ժամանակը գա, քանի որ Իմ Հոգին դուրս պիտի հեղվի նույնիսկ ձեզանից ամենանվաստների վրա և ձեզանից ամենափոքրերը պիտի դառնան հզոր:

Դու պետք է խրախուսես և զորացնես քո եղբայրներին և քույրերին: Ասա՛ նրանց, որ Գթառատ Ողորմությունը հիմա այցելում է ձեզ բոլորիդ՝ ձեզ զորություն տալու ծանր փորձությունների ժամանակներում, որ գալու են: Ես գթությամբ պիտի հոգամ ձեր կարիքները: Բազմապատկե՛ք ձեր աղոթքները, քանի որ այս օրերին ապստամբությունն աճում է: Ապստամբությունը գալիս է սատանայից, որն առաջին Ապստամբն էր: Օրհնյալ է նա՛, ով հավատում է, որ Իմ կողմից արված Խոստումը պիտի կատարվի:

Ես ասում եմ ձեզ ամենայն լրջությամբ, ապստամբության ժամը եկել է, նրա ժամը, որը հավակնում է թե շատ ավելի մեծ է, քան այն ամենը, ինչ մարդիկ կոչում են «աստված», և Նա այստեղ է, ձեր մեջ: Նրա ցանկությունն է իրեն թագադրել Իմ Սրբարանում, որ ֆշշացնի իր ուսմունքը... պղծելով Հաղորդության Իմ Հաստատումը (Առե՛ք կերե՛ք, այս է Մարմինն Իմ, և առե՛ք խմեք, այս է Արյունն Իմ): Նա և իր նմանները ցանկանում են վերացնել Իմ Մշտնջենական Զոհաբերությունը, նա ցանկանում է խախտել Իմ Ուխտը և Իմ Օրենքը: Եվ երբ դա արվի, նա շատերին պիտի շողոքորթի՝ նրանց մեծ պատիվներ շնորհելով: Ահա թե ինչու շատերը պիտի ընդունեն նրան և նրա ուսմունքը:

Բայց Իմ Յուրայինները՝ Իմ Հակոբները, ովքեր ճանաչում են Ինձ, նրանք հաստատուն պիտի կանգնեն Իմ կողքին և պիտի դիմադրեն նրան: Նույնիսկ այսօր նա դրդում է ուրիշներին, որ կատաղի գործեր անեն Իմ սուրբերի[3] դեմ, որովհետև նա որոշել է ոչնչացնել որևէ մեկին, որ սուրբ է: Հիմա նա թաքնված է, բայց ոտքի կկանգնի նշված ժամանակին՝ իր չար գործն անելու համար... Արդեն շատ տարիներ է, որ սատանան կապել է նրան... Իսկ դո՛ւք, դուք չպետք է կորցնեք ձեր հույսը: Ահա թե ինչու Ես ասացի. «Օրհնյալ է նա՛, ով հավատում է, որ Իմ կողմից արված Խոստումը պիտի կատարվի...»

---

[1] Սա պետք է ընդունել պարզապես որպես մտերմության մի արտահայտություն:
[2] Այս հրամանը հնչեց ամպրոպի որոտի պես: Տերը փոխեց Իր Ձայնի երանգը:
[3] Որ մնա թաքնված:

Իմ Մայրը և Ես դաստիարակում ենք աշակերտներ, որոնք դառնում են Մեր անձնական և մտերիմ ընկերները, որպեսզի նրանք լույսերի նման կանգնեն լապտերի աշտանակի վրա և փայլեն փորձությունների այդ օրերին: Նրանք պիտի լինեն Իմ Եկեղեցու հաստատուն սյուները, քանի որ նրանց պահելու է Իմ Սուրբ Հոգին, որը պիտի լինի նրանց ներքին զորությունը:

Ա՛հ... Սերո՛ւնդ, քո ուրացությունները շատ են եղել տարիների ընթացքում, բայց ավելի մեծ ուրացություն, քան այս մեկն է, Իմ Եկեղեցին երբեք չի տեսել նախկինում...

Ասա՛ Իմ ժողովրդին, որ չվախենան, այլ իրենց հույսը դնեն Ինձ վրա, քանի որ Հայրն ու Ես գիտենք նրանց կարիքները: Ասա՛ նրանց, ովքեր չեն պատրաստել իրենց սրտերն Ինձ համար, որ պատրաստեն այն հիմա Իմ Թագավորության համար: Մի՛ ասեք. «Մեր Տերը չի շտապում գալ»: Ես ձեր դռների մոտ եմ... Բայց դուք պատրա՞ստ եք ստանալու Ինձ: Վասո՛ւլա, շատ աշխատանք կա անելու, բայց հիշի՛ր, դու այս աշխատանքն անելու ես Ինձ հետ, և դու ստանալու ես Իմ Զորությունը... Ուստի գնա՛ և դիմիր Իմ ժողովրդին, եղի՛ր Իմ հնչեղ արձագանքը...

Ես՝ Հիսուս Քրիստոսը, օրհնում եմ քեզ, մե՞նք, մե՞զ:

Այո՛, Տե՛ր, բայց թույլ տուր Քեզ մի փոքր հարց տալ, Տե՛ր - Դու գահընկեց կանե՞ս Ապստամբին:

Այո՛, Ես գահընկեց կանեմ Ապստամբին: Այս հաղթանակը պիտի գա կրակով, և ինչպես եմ ցանկանում, որ այն արդեն բոցավառվելիս լիներ: Բայց Իմ Եկեղեցին դեռ պետք է ընդունի մի մկրտություն, և որքա՜ն մեծ է Իմ վիշտը, մինչև այն ավարտվի[1]: Այս մկրտությունը գալու է երկնքից. ամպերն այն ցած կանձրևեն: Միթե չե՞ս կարդացել, աշակերտ Իմ. «Թող երկիրը բացվի, որպեսզի փրկությունը բխի, թող երկիրը փրկություն բխեցնի, որը Ես՝ Յահվեն, պիտի ստեղծեմ...»[2] Ես քաոս չեմ ստեղծել, իսկ քաոսը հիմա իր արմատներն ամուր գցել է Ուրացության այս աշխարհում...

Արի՛, Ես քեզ հետ եմ:

Սեպտեմբերի 23, 1996

Տե՛ր, շնորհակալ եմ, որ ինձ՝
այսքան անարժանիս,
ցույց ես տալիս Քո Փառքը:

Դու խոսեցիր, Տե՛ր,
բայց աշխարհը չի լսում:

[1] Վկայակոչում Հիսուսի տառապանքը. Ղուկ. 12:49-50:
[2] Ես. 45:8

Զնայած դու ցուցադրում ես
Քո Փառքն ամենուր,
աշխարհը մերժում է
տեսնել և հավատալ:

Դեռ որքա՞ն պետք է
մենք պայքարենք:
Մենք զրկված չենք Քո Նշաններից,
բայց աշխարհը որոշել է
կործանել իր հոգին:

Ես իրոք բացել եմ Իմ Բերանը և խոսել, ինքներդ նայե՛ք... Բայց այսօր աշխարհը չի մտածում իր Արարչի մասին, իր սրտում տեղ չունի իր Արարչի համար... Բայց աշխարհի հավատարմության պակասը չի վերացնի Իմ Հավատարմությունը: Իմ Հոգու Զորությամբ, Ես վերստին պիտի ձևավորեմ չձևավորվածներին: Դե՛, ամեն ինչ, որ արվում է Իմ Հոգով Երիցս Սուրբ, պիտի արվի այնպես, որ փառավորի Մեզ: Ես կշարունակեմ հեղել Իմ շնորհները ձեզ վրա՝ չփոթեցնելու համար ձեր ժամանակների իմաստուններին և գիտուններին:

Ոչ մի մարդ չկարողացավ ամբողջապես գնահատել և հասկանալ Իմ Սուրբ Հոգուն: Իմ Հոգին աշխատում է տարբեր ձևերով, միշտ լավ նպատակի համար: Ուստի մեծ ցանկություն ունեցեք օրհնել Իմ Սուրբ Հոգու Անունով: Թող ձեր խիղճը ամբողջապես միացած լինի Իմ Սուրբ Հոգու հետ, որպեսզի ինչ որ անեք, արտահայտվի Իմ Սուրբ Հոգու կողմից: Թողե՛ք, որ ձեր հոգին նվաճվի Իմ Հոգու կողմից: Դրա համար դուք պետք է մեռնեք ինքներդ ձեզ համար: Որքան ավելի խոնարհ դառնաք, այնքան հեշտորեն Իմ Հոգին ճանապարհ կգտնի ձեր ներսում: Մե՞նք, մե՞ղ: ic

Սեպտեմբերի 27, 1996

Ես չէի կանչի Քո Անունը,
ոչ էլ ինքս ինձ
կդրդեի կառչել Քեզանից,
որ տիրանայի Քեզ, Աստվա՛ծ իմ,
եթե չլիներ Քո Ներկայությունը,
որը փրկեց ինձ:

Այո՛, ո՞վ պիտի խղճար
իմ ողորմելի վիճակին,
եթե ոչ Դու Ինքդ:
Թագավո՛ր և Պահապա՛ն իմ հոգու,
իմ սրտի Կնի՛ք, Փրկության Բո՛ց,
մեր հոգու նեցուկ,
Ռաբո՛ունի[1], Երիցս Սուրբ:

[1] Նշանակում է «Վարդապետ» եբրայերենով. Հովհ. 20:16:

Ես աղերսում եմ Քեզ և աղոթում, որ
Դու շարունակես փայլել ինձ վրա,
որ ես Քո Բերանից սովորեմ
և փոխանցեմ Քո Խոսքը
առանց վերապահության
և առանց շահախնդրության:

Ես քեզ թույլ կտամ, որ դու խոսես Իմ Անունով: Դու պի տի խոսես այնպես, ինչպես Ես պիտի ցանկանայի որ խոսես... Արա՛ այն ամենն ինչ կարող ես, և Ես կանեմ մնացածը: Քո ժամանակն Ինձ տալով, Ես՝ Իմ հերթին, պիտի առաջարկեմ քեզ Իմ Զարդերը՝ քո Փրկության զարդերը: Ես պիտի առաջարկեմ քեզ Իմ Խաչը, Իմ Մեխերը և Իմ Փշե Պսակը: Ես հույս ունեմ քեզ զվարթ տեսնել... Որպեսզի Իմ Զորությունը հարատև լինի քեզ վրա, մնա թույլ և անզոր: Ինձ զոհացնում է, երբ քեզ հալածողները ազդեցիկ վերքեր են հասցնում քեզ իրենց հալածանքներով և վիրավորանքներով:

Թող քո ընկերներից ոմանք նույնիսկ ամաչեն քո ներկայությունից, երբ իրենց հետ ես, քո ստացած ազդարարության պատճառով, կոչելով այն «չրջահայեցողություն»... Այս անարդարությունը զոհացնում է Ինձ, քանի որ այն սրբացնում է քո հոգին: Արի՛, Ես քո Ընկերն եմ, խանդոտ Ընկերը... Ուրեմն հանուն Ինձ, ընդունի՛ր դժվարությունները, ընդունի՛ր նաև խարազանը: Մնա՛ տկար, որպեսզի Ես, Ես Իմ Զորությունն օգտագործեմ քեզ վրա և քո միջոցով...

<u>Երբեք</u> մի՛ բարձրացրու գլուխդ և մի՛ եղիր կոպիտ ու հանդուգն: Գլուխդ ցած պահիր, որպեսզի աշխարհը շարունակի տեսնել Իմ Գլուխը: Ես, Իմ կողմից, ջերմեռանդորեն կհղկեմ քո հոգին որպեսզի դու եռանդով վկայություն տաս Իմ Անունով և վկայես Ինձ որպես Հարուցյալ Քրիստոս:

Ես չէի սխալվել ցածրացնելով քեզ, քանի որ այդպես անելով, Ես քեզ վեր բարձրացրեցի Ինձ մոտ: Կարիք չկա զարմանալ Իմ Կարեկցանքի համար, Իմ անսահման Կարեկցանքի համար: Ես քո Փրկիչն եմ, որը սիրուց ելնելով մեռավ քեզ համար: Ահա թե ինչու Ես շարունակ որևէ առիթ եմ փնտրում, որ քո հասարակությունը ծաղրի քեզ... Բայց միայն նայի՛ր, նայի՛ր այդ բոլոր վիրավորանքներին, այդ բոլոր վերքերին, որ հասցվել են քեզ և Իմ Սրտին: Հիմա Իմ Սիրտը նույնիսկ ավելի լայն է բացվել քեզ համար, որ սողոսկես Նրա խորքերը... <u>Իմ ձևով տառապել նշանակում է քեզ ավելի մոտ բերել դեպի Ինձ</u>, ավելի մոտ Իմ հատկանիշներին, ավելի մոտ Իմ շահերին: Տառապանքները, որոնք Ինձ հիացմունք են պատճառում, քեզ տալիս են նվիրվածություն, հավատարմություն և եռանդ՝ Ինձ համար աշխատելու: Ես, ինչպես դու ասացիր, քո Ռաբունին եմ, Երիցս Սուրբ, իսկ դո՛ւ, դո՛ւ, որ Իմ աշակերտն ես, Ես ասում եմ քեզ. փորձիր գտնել, թե Ես ինչ եմ ուզում քեզանից:

Ես Կենդանի Աստվածն եմ, և Ես ներել եմ քեզ, և Ես դարձել եմ քո մտերիմ Ընկերը: Ես առաջնորդեցի քեզ Իմ Թագավորության մեջ, որ դադարես պաշտել կեղծ աստվածների: Ես քեզ վստահել եմ մի գործ, որը քո միջոցներից վեր է, որպեսզի Իմ Սուրբ Հոգու Զորությամբ դու դաստիարակվես: Եվ դու աճեցիր Իմ Հոգու մեջ: Դու ձևավորվեցիր Նրա

մեջ, որ շարժվես Նրա մեջ և զորանաս: Տեսնո՞ւմ ես, թե ինչ շնորհներ եմ ես տվել քեզ: Եթե դու համարձակ ես քո ելույթներում, այդ համարձակությունը գալիս է Իմ Հոգուց:

Ի պատասխան, Վասիլի՛կի, այս բոլոր շնորհների, որ Ես տվել եմ քեզ, Ես ցանկանում եմ, մի նորոգված հնազանդություն Իմ Կամքին: Դրանից Դու միայն ազատություն ձեռք կբերես...

Ես նորոգում եմ
իմ խոստումները տրված քեզ,
Տե՛ր իմ, և ես ենթարկվում եմ
Քո Սուրբ Կամքին, Աստվա՛ծ իմ:

«Ալելուի՛ա,

Թող երկինքը օրհնի Յահվեին:
Օրհնեցե՛ք Նրան,
երկնային բարձունքներ,
Օրհնեցե՛ք Նրան
բոլոր հրեշտակները Նրա,
Օրհնեցե՛ք Նրան
բոլոր զորությունները Նրա:

Օրհնեցե՛ք Նրան, արեգակ և լուսին,
Օրհնեցե՛ք Նրան, փայլուն աստղեր,
Օրհնեցեք Նրան,
երկնքի բարձրունքներ:

Թող նրանք բոլորն
օրհնեն Յահվեի Անունը,
որի հրամանով իրենք ստեղծվեցին:

Թող երկիրը օրհնի Յահվեին,
երկրի բոլոր թագավորներն
ու ազգերը, իշխանները,
աշխարհի բոլոր կառավարիչները,
երիտասարդները և աղջիկները»[1]*:*

Ամե՛նքդ, եկե՛ք
և օրհնեցեք մեր Տիրոջը
և կատարեք Նրա Սուրբ Կամքը:

Ենթարկվելով Իմ Կամքին, Ես պիտի ուղարկեմ քեզ ողջ աշխարհով մեկ՝ տարածելու Իմ Պատգամները... Խոսի՛ր և եղիր Իմ Արձագանքը և մի՛ ասա ոչինչ ավելի, քան այն, ինչ սովորել ես: Ես և դու, <u>մենք</u>: Արի միասին շարունակենք սիրտ սրտի զրույց ունենալ:

Սիրի՛ր Ինձ: ic

[1] Վերցված՝ Սաղմ. 148-ից:

Հոկտեմբերի 22, 1996

Տե՛ր իմ, Հոգուս Պահա՛կ,
սրտիս Պահապա՛ն,
Հոգուս Փրկությո՛ւն,
արի՛ և մինչև արմատներն այրիր
այն ամենն իմ մեջ, ինչ Դու չես:
Անցի՛ր իմ միջով,
որ վերակենդանացնես այն,
ինչ մեռած է:

Բարության, Արդարության
և Մաքրության Կառավարիչ,
խոսի՛ր ինձ հետ՝ Քո աղջկա հետ:

Իմ Եկեղեցու աղջի՛կ, եթե մնաս Իմ Եկեղեցուն հնազանդ, դու Ինձ հուսախաբ չես անի... Հաճախ խոստովանիր մեղքերդ՝ ընդունելով, որ մեղավոր ես, որպեսզի Օձը՝ ստերի հայրը, չկարողանա խաբել քեզ... Քո զղջմով դու միշտ համապատասխան պտուղ կտաս՝ սիրո պտուղը, ուրեմն արի՛ և աճիր Իմ սիրո մեջ... Արի՛ հիմա և գրիր Իմ Պատգամը.

Ես լրջությամբ ասում եմ ձեզ, նա՛, ով կամավորապես ինքն իրեն կնետի Գազանի ոտքերի տակ՝ պաշտելով նրան և ընդունելով աշխարհի նրա թագավորությունները, պիտի գցվի դժոխքի կրակների մեջ: Ես ուզում եմ, որ աղոթես այդ հոգիների համար, աղջի՛կս, քանի որ նրանք այնքան թանկ են, որքան դու ես թանկ Ինձ համար: Հասկացիր աղջի՛կս, չնայած նրանք քո թշնամիներն են, դու պետք է աղոթես նրանց համար, որ փրկվեն: Նրանք չեն հասկանում, որ երբ աշխարհը դարձնում են իրենց ընկերը՝ դա նշանակում է, որ Ինձ՝ իրենց Աստծուն, դարձնում են իրենց թշնամին: Ահա թե ինչու Իմ Օրենքը, Իմ կանոնները և Իմ Ավանդությունը նրանց չեն վերաբերվում...

Երբ Հոգին Ինձ տարավ անապատ՝ սատանայի կողմից փորձվելու, և սատանան մի շատ բարձր լեռան վրայից Ինձ ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունները՝ առաջարկելով դրանք բոլորը Ինձ, եթե Ես պաշտեի իրեն, Ես պատասխանեցի. «Հեռացի՛ր սատանա, որովհետև Սուրբ Գրքերն ասում են. «Դու պետք է պաշտես քո Տեր Աստծուն և միայն Նրան ծառայես»:

Այսօր, ի մեծ վիշտ Ինձ, մի հսկայական բնակչություն յուրաքանչյուր երկրից

Տեր իմ,

ներգրավվում է երկրպագելու Գազանին, և նա դարձել է նրանց համար իրենց ղեկավարն ու իրենց աստվածը, քանի որ նրանք ընդունել են նրա թագավորություններն ու դրանց ճոխությունը: Նրանք դարձել են երկրի առևտրականները: Այո՛, նրանք ձգտում են ճաշակել աշխարհի պտուղները: Խաբված սատանայի կողմից՝ նրանք տարածում են մոլորություններ: Համակված իրենց մեղքերով նրանք տարածում են ազատականություն (լիբերալիզմ) և նմանատիպ բաներ՝ հաշվի չառնելով

Ճշմարտությունը և Իմ Եկեղեցու Ավանդությունը: Սուտը հաշվի չի առնում Ճշմարտությունը...

Ուստի Ես ուզում եմ, որ աղոթես նրանց համար, աղջի՛կս, քանի որ Ես նրանց նույնպես սիրում եմ: Աղոթի՛ր, որովհետև նրանք չար ուժերի ազդեցության տակ են: Ստորերկրյա այդ խավար ուժերը մոլորեցնում են նրանց և միջամտում նրանց քահանայական ծառայությանը... Դժոխքի այդ չար ուժերը Իմ նվիրաբերված հոգիների հետևից են ընկել, որ նրանց հրապուրեն հավատալու ինչ որ սխալ է: Դու լավ տեղյակ ես Իմ Վերքերի խորքերին, և Ես քեզ թույլ եմ տվել իմանալու, թե որքան շատ եմ տառապում՝ քո աչքերից արյան արցունքներ ծորացնելով [1]: Ինչպե՞ս կարող եմ չտառապել, երբ տեսնում եմ հենց Իմ Յուրայիններին, որոնց Ես ջերմորեն սիրում եմ, սաստիկ խաբված և այդ մահաբեր թույնն ընդունելիս... Ահա թե ինչու Ես համառորեն ասում եմ քեզ. աղոթի՛ր նրանց համար և համարիր նրանց որպես քո եղբայրները, որոնք կարիք ունեն ուղղման:

Այսօր այս մահացու թույնը ազդում է Իմ նվիրաբերված հոգիների վրա: Սա այն ծուխն է, որ ներթափանցել է Իմ Սրբարանից ներս: Նրանք խախտում են Իմ Եկեղեցու Օրենքը, և նրանց մեղքը պիտի դատապարտի իրենց, եթե չապաշխարեն: Հիմա նրանք Իմ Մարմնի փտախտն են, որ լսում են Իմ Խոսքը, բայց չեն ենթարկվում դրան: Ոչ ոք չի կարող պատկերացնել, որ նրանք անկրոն են, երբ տեսնում եք նրանց, բայց նրանք միշտ կճանաչվեն իրենց պտուղով, որն է՝ անհնազանդությունը.

- անհնազանդությունը Իմ Եկեղեցու այս [2] Օրենքին,
- անհնազանդությունը Իմ Եկեղեցու Երեցին,
- անհնազանդությունը Իմ Եկեղեցու Ավանդությանը,
- անհնազանդությունը Իմ ողջ Օրենքին:

Նրանք կատաղի հալածողներն են Իմ պատգամատարների, որոնք բացահայտում են հալածողներին և նրանց ծրագրերը ողջ աշխարհին: Նրանք ազատականության հովանավորներն են, հալածիչներն Իմ Աբելների [3], որոնք հակառակվում են ազատականության հովանավորներին և առաքինությամբ ուսուցանում Իմ գառներին՝ պաշտպանելով Իմ Օրենքը:

Սրանց [4] մասին Սուրբ Գրքերն ասում են. «Սրանք նրանք են, որոնք պահեցին իրենց կուսությունը [5] և չպղծվեցին կանանց հետ: Նրանք հետևում են Գառանը՝ ուր էլ Նա գնա: Նրանք փրկվեցին մարդկանց միջից, որ լինեն առաջին պտուղները Աստծո և Գառան համար: Նրանք երբեք թույլ չտվեցին, որ իրենց շուրթերը սուտ խոսեն, և ոչ մի մեղք չկա նրանց մեջ» [6]: «Նրանք այն գիտուններն են, որ ուսուցանում են Իմ գառներին ճշմարտացիություն և փայլում են այնպես պայծառորեն,

[1] Երևույթ, որը միայն մի քանի հոգի տեսան ինձ վրա, մինչ ես աղոթում էի հոկտ. 19, 1996թվի Դուբլինի կոնֆերանսում:
[2] նույնը
[3] Նվիրաբերված հոգիները, ովքեր զոհացնում են Տիրոջը:
[4] Աբելների
[5] Կուսություն, նշանակում է հավատարմություն:
[6] Հայտ. 14:4-5

ինչպես երկնակամարը և նույնքան պայծառ են, որքան աստղերը՝ ողջ հավիտենության համար»[1]:

Նրանք, ովքեր անհնազանդության պտուղ են տալիս, Իմ Աչքերում մի կենդանի պղծություն են և դատապարտություն, այն ձևով, որով չեն հնազանդվում Իմ Եկեղեցու կողմից տրված Օրենքին... Վա՜յ այդ Օրվա համար, վա՜յ Իմ Օրվա համար, որը մոտենում է: Այդ օրը պիտի լինի մի մեծ վշտի օր: Անօրենի համար դա սարսափելի պիտի լինի, քանի որ նրանք փորձեցին Ինձ՝ իրենց Տիրոջը: Բայց Ես ասում եմ ձեզ, Գազանի կողմնակիցները պիտի ընկնեն իրենց հպարտության և ուժի հետ միասին, և նրանց ունեցած ամեն ինչը պիտի փշրվի ու փոշու վերածվի:

Ինչո՞ւ նրանք չլսեցին Ինձ, երբ Ես ասացի այս առակը ժողովրդին՝ չար մշակների[2] առակը: Դպիրներն ու քահանայապետերը, որ լսում էին Ինձ, անմիջապես գրգռվեցին և, եթե ժողովրդից չվախենային, ձեռք կբարձրացնեին Ինձ վրա: Այսօր էլ դեռևս Ես ունեմ վարձկաններ, որոնք Իմ Խաղողի Այգում են[3], որոնք գործում են չար մշակների պես նրանց հանդեպ, որոնց Ես ուղարկում եմ իրենց մոտ: Նրանք ո՛չ միայն վատ են վարվում նրանց հետ, այլև պատրաստ են վաճառելու նաև Իմ Արյունը[4]: Օ՜, ինչպիսի՜ վիշտ, աղջի՛կս, ինչպիսի՜ տառապանք է տեսնել նրանց ձևացնելիս որպես Իմ Օրենքին նվիրված մարդիկ, բայց Ես, որ կարդում եմ նրանց սրտերը, գիտեմ նրանց սրտի բովանդակությունը...

Նրանք նայե՞լ են, թե ով է կանգնած դրսում իրենց դռան մոտ՝ դուռը ծեծելիս: Բայց և այնպես, ո՞ւմ են նրանք թույլ տվել իրենց հետ սեղան նստել և կխսել իրենց կերակուրը: Նրանք թույլ են տվել այդ չար ուժերին ընթրել իրենց հետ և կողք-կողքի սեղան նստել իրենց հետ: Մի՞թե նրանք չեն կարդացել. «Շինարարների կողմից մերժված քարն էր, որ դարձավ անկյունաքարը»: Սրանով Ես կրկին ասում եմ ձեզ[5], որ այն օրը, երբ դուք կընկնեք այդ քարի վրա՝ կտոր-կտոր կլինեք: Ում վրա էլ որ այն ընկնի՝ կճզմվի:

Իսկ դո՛ւ, Իմ Եկեղեցու աղջիկ, նույնիսկ եթե նրանց միջոցով չար ուժերն ու ողջ դժոխքն աշխատում են քո դեմ, այդ այն պատճառով է, որ նրանք հասկացել են, որ դու վտանգավոր ես իրենց համար, և որ Հովհաննու Հայտնության Գազանին[6] վերաբերող Իմ Պատգամներն ուղղված են նրանց: Այո՛, դու դարձել ես սպառնալիք այդ բոլոր չար ուժերի համար, և սատանան նույնիսկ այնքան հեռուն պիտի գնա, որ բնությունը անգամ պիտի լարի քո դեմ: Այս ուժեղ թշնամին քո կրոնականների մոտ է[7], բայց մի՛ վախեցիր, քո մեջ բնակվող Իմ Սուրբ Հոգին ավելի մեծ է և առավել զորեղ, քան ողջ դժոխքը միասին վերցրած: Ուստի, գնա՛ և կերակրիր բոլոր ազգերին Իմ Խոսքերով:

Թույլ տուր Ինձ հիշեցնել քեզ, թանկագի՛ն հոգի, որ Ես դաստիարակել եմ քեզ, որպեսզի ոչնչացնես անօրինությունը և հունից դուրս գցես ու

---

[1] Դան. 12:3
[2] Ղուկ. 20:9-19
[3] Եկեղեցին
[4] Հիսուս նկատի ունի՝ ոչնչացնել Իր Հավիտենական Զոհաբերությունը:
[5] Գազանի հետևորդներին:
[6] Հայտ. 13:
[7] Այսինքն՝ վազում է իմ հետևից:

խափանես յուրաքանչյուր չար ոգու, որ կհանդիպես քո ճանապարհին, կամ այն քաղաքներում, ուր գնում ես վկայություն տալու: Ուրեմն մի՛ զարմացիր, երբ դժոխքի այդ զորությունները միավորում են իրենց ուժերը, որպեսզի փորձեն խանգարել քեզ գործադրելու քո մարգարեական ծառայությունը: Այս հարձակումները պետք է դան քո ճանապարհին՝ հենց որ նրանք հասկանան, որ դու պատրաստվում ես անհանգստացնել իրենց և արմատախիլ անել նրանցից շատերին: Դու իսկապես դևի համար դարձել ես սպառնալիք և հիմնական մտահոգություն, որովհետև դու ոչ միայն կրում ես Իմ Խոսքը, որը սուրբ է և սրբագործում է քեզ, այլև՝ Իմ Սուրբ Հոգու զորությունը, որն ապրում է քո մեջ, սարսափեցնում է նրանց, որովհետև Իմ Սուրբ Հոգին տալիս է աշխարհին այն լիակատար համոզումը, որ դու Ինձանից՝ Քրիստոսից ես սերում...

Ես դաստիարակել եմ քեզ նաև, որ օգնես կառուցել Իմ Սրբարանի ավերակները և սերմանել այս անապատում: Ուրեմն մի՛ վախեցիր, «lo tedhal»[1], Ես արդեն խոստացել եմ քեզ, որ մենք կավարտենք քո առաքելությունը ձեռք-ձեռքի տված՝ հաջողությամբ և հաղթանակով:

Ես քեզ ուժեղ եմ ձևավորել, որ կարողանաս դիմագրավել այդ հզոր թշնամուն: Ես տվել եմ քեզ Զորության Հոգին, որ հռչակես Իմ Խոսքը և Իմ Ավանդությունը երիցս օրհնյալ, առավելագույն կարողությամբ, և այն զորությունը, որը գթառատորեն իջնում է Իմ Հոգուց, քեզ ասելիք կտա: Իմ Հոգին կլինի քո զորությունը, որպեսզի դու արիությամբ կրես խաչերը մինչև վերջ: Ուրեմն, թող որ Իմ Խոսքը հարվածի քո միջոցով և խոցի աշխարհի բոլոր թագավորությունները՝ ցած քաշելով նրանց բոլորին դեպի ավերում:

Այո՛, Ես պիտի շարունակեմ օգտագործել քեզ այդ չար ուժերի դեմ Իմ Զորության Հոգու միջոցով և նույնիսկ, այս ճակատամարտում, երբ ժամանակ առ ժամանակ դու նրանց կատաղի դրոհներից արյամբ կողողվես, Իմ Մայրը և Ես կպաշտպանենք քեզ: Ավերիչ խարազանը չի հասնի քեզ: Ես՝ Քրիստոսը, պիտի քայլեմ քո առջևից, որ Իմ Գավազանով ցույց տամ քեզ Իմ Եկեղեցու դավաճաններին, որոնք քո աղոթքների կարիքն ունեն:

Ես պիտի խրախուսեմ քեզ, որ հետապնդես մեղավորներին՝ ուժեղներին և հպարտներին, կեղծավորներին, ըմբոստներին և մեծախոսներին: Մի ձեռքում Իմ Խաչը, իսկ մյուսում՝ Վարդարանը, դու փշրելու ես հերետիկոսությունները և դրանց տեղում հիմնելու ես Ճշմարտություն և Հավատարմություն: Ես պիտի շարունակեմ քեզ ուղարկել ամենուր, որպեսզի դու պսակես Ինձ քո պտուղով:

- Ո՛վ Գազանի[2] ստրուկներ, մի՞թե չեք կարողանում տեսնել, թե ինչպես է նա[3] դանդաղորեն և խորամանկորեն ձեզ տանում դեպի ձեր կործանումը[4]: Բայց որքան էլ որ դուք դավ նյութեք վնասելու Իմ Եկեղեցուն, և ինչպես էլ հյուսեք ձեր ծրագիրը, դուք չեք կարող և չպիտի հաղթեք. Ես պիտի հաղթեմ վերջում: Ես արդեն ազգերի առաջ

[1] Նրա հարազատ լեզվով՝ արամերենով. «Մի՛ վախեցիր»:
[2] Հետո Հիսուս շրջվեց, որ կանչի Գազանի հետևորդների ետևից:
[3] Գազանը
[4] Ես զգացի Հիսուսի ցավը, և թե ինչպես էր Նա, չնայած նրանց մեղքին, քնքշորեն սիրում նրանց:

դիմակազերծ եմ արել ձեր ծրագրի մի մասը, և այն օրը, երբ Ապստամբը կհայտնվի, «այն օրը, երբ դու[1] հայտնվես, ես ազգերի առաջ դիմակազերծ կանեմ քո ավերածության ողջ ծրագիրը: Ես ողջ աշխարհին ցույց կտամ քո սրտի մտադրությունները...»:

Գնա հիմա և հիշեցրու Իմ զավակներին, որ Ես նրանց Ժայռն եմ, և Ես երբեք հուսախաբ չեմ անի նրանց: Ես նախապես լրջորեն զգուշացրել եմ նրանց, և Ես համառորեն պիտի շարունակեմ նախազգուշացնել:

Միշտ հավատարիմ մնացեք Ինձ և Եկեղեցու Ավանդությանը: Մնացեք հավատարիմ Իմ Հաղորդության Հաստատությանը՝ ճանաչելով Ինձ Իմ Մարմնի մեջ: Մնացեք հավատարիմ այս Պապի ուսուցումներին, որոնք առողջ են, քանի որ դրանք հիմնված են Ճշմարտության վրա: Ես եմ Ճշմարտությունը: Իմ փոքրիկ զավակներ, մի՛ շեղվեք Ճշմարտությունից, մնացե՛ք Ճշմարտության մեջ: Մնալով Ճշմարտության մեջ՝ դուք կմնաք Իմ մեջ:

Քո Աչքերը, Տե՛ր Իմ, ուղղված են դեպի աշխարհի մեղավոր թագավորությունները, որ ջնջես դրանցից յուրաքանչյուրը երկրի երեսից, բայց ներում կլինի՞ նրանց, ովքեր դայթակղված էին:

Եթե նրանք ապաշխարեն՝ ճանաչելով իրենց մեղքը, և երդվեն հավատարմության երդումով Իմ Գահի առաջ, Ես կհիշեմ երդումը, որ նրանք արեցին Ինձ հետ, երբ ձեռնադրվում էին, և Ես ներում կշնորհեմ նրանց Իմ ողջ Սրտով: Արի՛, մի՛ մոռացիր աղոթել այդ հոգիների համար...

Արի՛, քո հալածանքների մեջ, Իմ Հայրը, որ երկնքում է, օրհնում է քեզ, որ հաստատուն մնաս: Քո դժվարությունների մեջ, Ես քո կողքին եմ, որ նեցուկ լինեմ քեզ: Վտանգի պահերին[2] Իմ Սուրբ Հոգին քո Ուղեկիցն է և քո Պաշտպանը: Ուստի հուչակի՛ր Իմ Պատգամը հավատով և արիությամբ: Ես գթառատ Աստված եմ, որ սիրում է քեզ. և հիշի՛ր, որ մխիթարությունը պետք է գտնել Իմ մեջ: ic

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 1, 1996

Փրկի՛չ իմ,
ես շնորհակալություն եմ հայտնում
Քո Սուրբ Անվանը, Քո Սիրո
և Քո հրաշալիքների համար:

Բայց գիտե՞ս, երբեմն
իմ արիությունը պակասում է,
և իմ թշվառության մեջ՝
թշվառություն,
իմ սեփական մեղքի պատճառով

[1] Հիսուս խոսում է Ապստամբի հետ:
[2] Ես դա հասկացա որպես «դայթակղությունների պահեր»:

ես զգում եմ, թե ինչպես են
իրադարձությունները բարձրանում
հողմի պես, ու մտրակելով
գալիս են ինձ վրա,
ինչպես խոյացող ալիքներ,
և ես կանչում եմ. «Ո՜հ, ի՞նչ անեմ»:
Եվ մինչև ալիքները
նորից չեն հանդարտվում,
իմ հոգին չի կարողանում
խաղաղություն վայելել...

Մի՛ վախեցիր, ջանա գոհացնել Ինձ: Ինձ ետ մի՛ պահիր, որ քեզ հետ լինեմ նաև այս կերպ, սոսկ դու և Ես...

Եղիր Իմ ուխտավորը՝ Իմ Սրտի ուխտավորը, և մնա Իմ Սրտում ընդմիշտ: Ես երաշխավորում եմ, որ քո հոգին պիտի վայելի Իմ Սուրբ Սրտի սքանչելիքները: Իմ Շուրթերը պիտի շարունակեն սնել քեզ, և Իմ Սիրտը պիտի շարունակի սիրել քեզ և սփոփել քեզ: Յուրաքանչյուր քայլ, որ պիտի անես, պիտի արվի Ինձ հետ՝ քո Փրկչի հետ:

Հիմա դու երջանի՞կ ես, որ Ինձ հետ ես այս ձևով, Իմ Սրտի աղջի՛կ:

Տե՛ր, մինչ օրս, քեզ հետ երկխոսության այս բոլոր տարիներից հետո, ես դեռևս ապշած եմ և չեմ կարողանում հասկանալ Քո ընտրությունը: Ես այստեղ էի, մի անփառունակ դիակ, և ահա, ո՞վ է գալիս ինձ այցի Անպարտելին, Ամենաբարձրյալը: Եվ հիմա Դու հարցնում ես ինձ, թե արդյոք ես երջանի՞կ եմ, որ Քեզ հետ եմ:

Այո՛, աղջի՛կս, հարցրեցի[1]...

Ես երբեք արժանի չեմ եղել այս ամենին, և ես չեմ կարող արտահայտել որևէ միտք, որ արժանի է Քո Պարգևին, քանի որ Դու Ինքդ ես այդ Պարգևը:

Դու իմ ուրախությունն ես,
իմ խաղաղությունը, իմ խունկը,
իմ ժպիտը, իմ ծիծաղը,
Դու իմ հրճվանքն ես, իմ կյանքը,
իմ շունչը, իմ աչքերի լույսը,
Դու իմ հայրն ես, իմ մայրը,
իմ զավակը, իմ ընկերը,
Դու իմ Տերն ու Աստվածն ես,
Դու իմ հոգու պայծառությունն ես,
և ոչ մեկը չկա,
որ համեմատեմ Քեզ հետ,
ուստի, այո՛,
ես երջանկությունից մեռնում եմ,
երբ Քեզ հետ եմ:

[1] Այստեղ ես ապշեցի Քրիստոսի պարզության վրա, և թե ինչպես Նա այդ ասաց՝ երեխայի նման:

Այո՛, սիրի՛ր Ինձ և դերադասիր Ինձ ամեն ինչից և ամեն մեկից: Իմ ընկերակցությամբ բոլոր բարիքները կգան դեպի քեզ: Իմ ընկեր և Իմ քույր[1] արդյո՞ք շատ կլինի, եթե ես քեզ մի հարց էլ տամ:

Ո՛չ, Տե՛ր իմ:

Վասո՛ւլա, Իմ Օրենքը քո ուրախությո՞ւնն է:

Ո՛հ, այո՛, Քո Օրենքը
Դու Ինքդ ես, Քո ողջ էությունը,
և այն ամենն ինչ Դու ես:
Քո Օրենքը, Փրկի՛չ իմ,
Կյանք է Ինձ համար:

Ես լսեցի Իմ Հոգին քո բերանով խոսելիս, այդ պատճառով էլ դու Իմ ուրախությունն ես: Թող ժողովուրդն իմանա, թե ես ինչպես եմ Հոգիներ բարձրացնում Ինձ մոտ Իմ Սիրով...

Հիմա լսիր Ինձ, Վասո՛ւլա, և անկեղծորեն պատասխանիր Իմ այս վերջին հարցին. վերջում ես պիտի հաղթեմ, բայց, միևնույն ժամանակ, ես պետք է տառապեմ և համբերեմ սատանայի բոլոր հաղթանակներին: Ես դրանք անվանում եմ հաղթանակներ, երբ նա ամեն անգամ կարողանում է դատապարտության մատնել մի հոգու: Իմ հարցը քեզ սա է. «Դու հաճոյք կպատճառե՞ս Ինձ՝ քո Աստծուն, և կլինե՞ս ինչպես մի շուշան»:

Սոսկ մի շուշանը ի՞նչ կարող է անել Քեզ համար[2]:

Շուշանը չի անհանգստանում վաղվա համար: Յուրաքանչյուր օր ունի բավարար մտահոգություններ: Կարո՞ղ ես դու, որքան էլ մտահոգվես, ինքնուրույն որևէ բան փոխել: Հետևիր Իմ ծրագրերին, որ ես պատրաստել եմ քեզ համար և վստահիր Ինձ ամբողջապես: Ուրեմն, դու ուզո՞ւմ ես լինել շուշանի պես:

Եթե դա է, որ գոհացնում է Քեզ, այո՛:

Մոռացիր ինքդ քեզ Իմ Բազուկների մեջ: Մեռիր ինքդ քեզ համար և հրաժարվիր ինքդ քեզանից, որ կարողանաս բարձրացնել Իմ Խաչը Ինձ հետ միասին: Կապիր քեզ Իմ Խաչին և միասին, ես և դու, կկիսենք Այն հոգիների փրկության համար: Իմ Խաչի շնորհիվ ես հաղթեցի և այս անգամ նորից կհաղթեմ սատանայի ծրագրերին: Եղիր մեկ Ինձ հետ և թույլ տուր, որ ես քեզ կրեմ:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: ic

[1] Կարծում եմ Քրիստոսը անհրաժեշտ համարեց ինձ «քույր» անվանել, քանի որ ես Նրան չասացի որ Նա նաև իմ Եղբայրն է:
[2] Ես զարմացա Նրա հարցից:

Նոյեմբերի 8, 1996

(Նյու Յորք[1], երեկոյան ժամը 5:00-ին)

Տե՞ր իմ:

Ես եմ:

Ես քեզ հետ եմ ամեն մի րոպե քո կյանքում: Իմ Ձեռքը քեզ հետ է, ուրեմն ցնծա՛, ուրախացի՛ր և օրհնյալ եղիր: Նախքան սկսելը[2], ասա՛ Իմ զավակներին, որ Ես օրհնում եմ նրանցից յուրաքանչյուրին, և որ Իմ խաղաղությունն եմ Ես տալիս նրանց: Ասա՛ նրանց նաև, որ Հայրը և Ես հրճվում ենք նրանցով ամեն անգամ, երբ նրանք սիրով կանչում են Մեր Անունը: Ուստի հիմա հայտարարիր աշխարհին այն ամենը, ինչ սովորել ես Մեզանից:

Աստված-քեզ-հետ-է:

Նոյեմբերի 9, 1996

(Ֆլորիդա - Տեմպա)

Տե՞ր:

Ես եմ: Ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ: Երբե՛ք:

Իմ սերը նրանց հանդեպ մարդկային հասկացողությունից վեր է, և այսօր Ես իջնում եմ վերևից, որ մի յուրահատուկ ձևով նրանց հետ լինեմ:

Եկեք և աճեք Իմ Սիրո մեջ, որպեսզի ձեր միությունն Ինձ հետ կատարելագործվի: Երբ առաջին պտուղները սուրբ են դառնում, նույնպես և ողջ խումբն է դառնում սուրբ[3]: Դուք Իմ առաջին պտուղներն եք, և Ես ուզում եմ, որ դուք սուրբ լինեք... Ուրեմն եկե՛ք, հաճախ խոստովանեք ձեր մեղքերը, որ չարին ոտնատեղ չտրվի...

Ես օրհնում եմ ձեզանից յուրաքանչյուրին: Եղե՛ք մեկ: ic

Նոյեմբերի 10, 1996

(Հարավային Կարոլինա - Չարլստոն)

Խաղաղությո՛ւն քեզ:

Ճգնաժամի պահերին Ես միջամտել եմ: Ես հայտնի եմ Իմ Ողորմությամբ: Այսօր Ես առաջարկում եմ ձեզ նորից Իմ Սուրբ Սիրտը,

---

[1] Սա իմ ճամփորդության առաջին ժողովն էր, որից հետո ես այցելեցի Տեմպա, Ֆլորիդա, Չարլստոն, Ատլանտա, Վաշինգտոն, Ինդիանապոլիս, Մինեապոլիս, Սենտ Լուիս:

[2] Հիսուսն ակնարկում էր, որ ես սկսեի կոնֆերանսում վկայություն տալ:

[3] Դա նշանակում է, որ իրենց ապաշխարությամբ նրանք կկարողանան ուրիշներին էլ տանել ապաշխարության:

և ես ասում եմ ձեզ. Ձեզանից ով էլ որ դեպի Ինձ շրջվի՝ Ինձ գոհացնելու միակ ցանկությամբ, Իմ ողջ Սրտով, այո՛, Իմ ողջ Սրտով ես կշնորհեմ նրան Իմ շնորհները... Ես նրան կբացահայտեմ Իմ Սրտի Գանձերը, որ նա ավարտի իր ճամփորդությունն Ինձ հետ...

Սերը քեզ հետ է: ic

Նոյեմբերի 17, 1996

(Սենտ Լուիս)

Տե՛ր իմ, Դո՛ւ, որ Իմաստություն ես,
Դո՛ւ, որ Կյանք ես և Լույս մեր մեջ,
ես գովաբանում եմ
Քո Անունը Երիցս Սուրբ:
Թող համակ Բարությունը
հրապուրի իմ հոգին,
որ ես ապրեմ Քո արտացոլման մեջ:

Ո՛վ Ամենազո,
իմ սրտի Ուրախություն
և Խաղաղություն,
Քո Ներկայությունն
անդորրի մեջ է թողնում ինձ,
և Քո Արդարությունը
բոց է վառում իմ ներսում,
ինձ ցույց տալու համար,
որ ես զավակն եմ
իմ հոգու Բարության:

Փա՛ռք մեր Տիրոջը
Երիցս Սուրբ, Ալելուիա՛:

Իմ սիրելի, Իմ Սուրբ Սիրտը դողում է հուզմունքից: Ինչպե՞ս էի ես փափագում լսել Իմ զավակին՝ մի օր Ինձ այս բառերն ասելիս: Ողջ հավիտենությունից ի վեր քո բառերը գրված էին Իմ Սուրբ Սրտի մեջ, և ես համբերությամբ սպասում էի, ո՞հ, այնքա՜ն համբերատար կերպով, որ դու ասես դրանք: Վայելի՛ր հիմա Իմ Ներկայությունը և ըմպի՛ր Ինձանից, ճաշակի՛ր Ինձանից...

Ես իզուր չեմ աշխատել քո մեջ, որ բարձրացնեմ քեզ: Վայելի՛ր այս Անհատնում հարստությունը հիմա, որ Ես պահել էի ձեր ժամանակների համար, և ցույց տուր դրանք աշխարհին, այս աշխարհին, որը դարձել է սառը և մեռած է սիրո համար: Ցույց տուր Իմ Անհատնում Գանձը յուրաքանչյուր ազգի և ասա՛ նրանց, որ ավելի մեծ նվեր, քան Իմ Սուրբ Սիրտն է, նրանք չէին կարող ստանալ:

Իսկ դու, Իմ մնացո՛րդ, օրհնիր Իմ զավակներին Իմ կողմից, նրանց, ովքեր ընկերակցեցին քեզ, քանի որ նրանք Ինձ նվիրեցին իրենց ժամանակը[1]:
Այո՛, Իմ Սիրտը հուզված է արտասվելու չափ: Ես սիրում եմ ձեզ: Ես սիրում եմ ձեզ Իմ ողջ Սրտով... ic

Նոյեմբերի 27, 1996

(«Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների 11-րդ տարեդարձի նախօրեին):

Խաղաղությո՛ւն քեզ: Դու լավ ասացիր Իմ ժողովրդին, որ ամենայն բարիք գալիս է Ինձանից: Միայն Աստված է բարի, և Ես տալիս եմ Իմ բարությունը յուրաքանչյուր արարածի: Ես լցնում եմ նրանց պաշարները, որ պակասություն չունենան: Հարուստ են Իմ խորքերը, և հարուստ է Իմ առատաձեռնությունը:

Վասո՛ւլա, Իմ ուրախ պատգամատար Ինձ վրա պատվաստված, ստացի՛ր Իմ Սուրբ Հոգին և մի՛ վախեցիր: Ես ասում եմ քեզ, մի՛ վախեցիր աշխարհից, այս աշխարհից, որը հեթանոս է դարձել իրենց ուրացության պատճառով, բայց քանի որ Ես Տեր եմ թե՛ մեռածների և թե՛ ապրողների, Իմ նպատակն է հարություն տալ մեռածներին: Իմ նպատակն է նորոգել Իմ Եկեղեցին, և Ես դնում եմ այս պարտականությունը քեզ վրա, մի պարտականություն, որը վեր է քո միջոցներից և քո կարողություններից, բայց մի՛ մոռացիր, թե ով է քեզ հետ: Ես քեզ հետ եմ, և Ես Զորությունն և Ուժ եմ: Ոչ մեկը չի կարող ասել, որ այն ամենը, ինչ ձեռք է բերվել մինչև օրս, քեզանից է եկել: Երբ մեկը ոչնչություն է, ոչ մի բան չես ակնկալի նրանից: Ես ընտրել եմ մի անտեղյակ մանուկ, որ բոլոր գործերը կատարվեն Իմ կողմից:

Ուրեմն գնա՛ Իմ Անվամբ, առաջ գնա և հռչակիր Իմ Պատգամները, որոնք բուժիչ բալասան են մարդկության համար: Մի՛ հուսալքվիր, երբ ժամանակ առ ժամանակ հոսանքը հակառակվի քեզ, կառչի՛ր Ինձանից: Կանգնիր հաստատուն, երբ փորձություններ գան քո ճանապարհին: Ուրացության դեմ պայքարում, դու դեռևս ստիպված չես եղել միայնակ պայքարել, հիշի՛ր, Ես քեզ հետ եմ... Եվ Ես ճանաչում եմ նրանց, ովքեր Իմ Յուրայիններն են:

Իմ Սիրտը շարունակ վշտանում է տեսնելով Իմ Տան մեջ նրանց, որոնց մեջ անկեղծություն չկա և չեն աշխատում Իմ Հոգով՝ Ջատկի ամսաթվերը միավորելու համար: Ես խնդրում եմ, որ աղոթես նրանց համար, որ Իմ Հայրը նրանց մտքերը փոխի, որպեսզի, երբ նրանց աչքերը բացվեն Իմ Սուրբ Հոգու կողմից, նրանք ապաշխարեն և ճանաչեն իրենց սխալը, որը խանգարում էր նրանց տեսնելու Ճշմարտությունը:

Աղոթի՛ր նրանց համար, որ նրանց մեջ եղած հպարտության հոգին, որը նրանց հեռու է պահում Ճշմարտությունից, հեռանա նրանցից, և նրանք խելքի գան: Աղոթի՛ր նրանց համար, որ Ես կարողանամ ասել. «Նրանց

[1] Հիսուս նորից դողաց հուզմունքից:

ցույց տված սիրով, բոլոր մարդիկ հիմա կիմանան, որ նրանք ճշմարտապես Իմ աշակերտներն են»: Բայց այսօր սատանան և նրա դևերը դեռևս պահում են իրենց շղթայված՝ նրանց սիրո պակասի պատճառով, քանի որ սերը հավատքի բնորոշիչ գիծն է: Ինչպե՞ս կարող են նրանք ասել մեկը մյուսին. «Ես քարոզել եմ Բարի Լուրը աշխարհով մեկ: Ես աշխատել եմ Եկեղեցին մեկ դարձնել, և հիմա պիտի գա արդարության պսակը, որը Տերը՝ իմ Աստվածը, պահել էր ինձ համար ողջ հավիտենությունից ի վեր...», երբ մինչ օրս նրանք թերանում են իրենց պարտականություններում:

Բոլոր քահանաները իրենց կյանքով պետք է նմանվեն Ինձ: Ես չեմ խոսում նրանց մասին, ովքեր նմանվում են Ինձ և նման են Իմ Աբելին, որը հաճելի էր Մեզ՝ իր զոհաբերությունների և իր անկեղծության պատճառով, այլ նրանց, ովքեր նման են Կայենին և Եսավին, Հուդային և դպիրներին ու փարիսեցիներին: Դրանց մասին եմ Ես խոսում, որովհետև նրանց վարքը հակառակ է Իմ Սուրբ Օրենքներին: Պե՞տք է, որ Ես, հանուն նրանց, շարունակեմ խմել ձեր բաժանման գավաթից, այս գավաթից, որը նրանք են Ինձ պարտադրել:

Մինչև այժմ Ես ճնշում չեմ գործադրել[1] ձեզ վրա[2]: Ես խնդրել եմ ձեզ միավորել Ջատկի ամսաթվերը, բայց դուք չեք լսում Իմ Հոգուն: Դուք շահագործել եք Իմ Հոր համբերությունը: Այս անգամ նորից Ես խնդրում եմ ձեզ միավորել Ջատկի ամսաթվերը, որ Իմ Հոգին փայլի ձեզ վրա չնորհով, և Իմ Տունը դարձնի մեկ: Այսօր Ես խոսում եմ ձեզ հետ, բայց դուք չեք գնահատում Իմ խոսքերն այս Պատգամներում: Երբ մի օր գնահատեք, չափազանց ուշ կլինի... Ա՛հ, եթե միայն միասնության համար աշխատող այդ մարդկանցից մեկը, եթե միայն նրանցից մեկը, տեղի չտա իր կրքերին, իր երկյուղներին և առաջ գնա՝ միավորելով Ջատկի ամսաթվերը, Ես՝ Աստված, պիտի բարձրացնեմ նրան:

- Բայց այն, ինչ Ես տեսնում եմ Արևելքի Տնից՝ գրգռվածություն է, համառություն և վախ, որոնք եղբայրներ են, սակայն՝ ախոյաններ: Արևելքի Տուն, դու լավ պահել ես Ավանդությունն այնպես, ինչպես Ես Այն փոխանցեցի ձեզ, և ինչպես Իմ նախնական եկեղեցին էր Այն գործադրում: Այնուհանդերձ, դուք թույլ չեք տալիս որ Իմ Սուրբ Հոգին բավարար չափով սնուցանի ձեզ, ձեր փրկության և նրանց փրկության համար, ովքեր մեծապես կարիք ունեն փրկության... Դուք նեղում եք Իմ առաջին պտուղներին[3] և Իմ պատգամատարներին՝ մերժելով նրանց Շնորհի Իմ Սուրբ Հոգու հետ միասին, որը նրանց առաջնորդեց քայլելու Իր ուղիով: Եվ դուք շարունակում եք վտարել նրանց Իմ Սրբարաններից, ինչպես Ինձ էին վտարում Իմ ժամանակի քահանայապետերը...

Միևնույն ժամանակ Իմ հոտը ցրվում է, և հոգիների կորուստն ավելանում է օրեցօր: Ուստի Ես ասում եմ ձեզ, եկե՛ք, ձգտեք Իմ Հոգու պարգևները ստանալու, և մի՛ թողեք Իմ Տունը ամուլ ու անբերրի: Իմ Տունը օգուտ կստանա Իմ Հոգու պարգևներից, եթե բացեք ձեր սրտի դուռը...

---

[1] Պատժի միջոցով

[2] Քրիստոսը խոսում է նրանց հետ:

[3] «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների չնորհիվ ապաշխարածներին:

Իսկ դո՛ւ, Արևմուտքի Տուն, դու հասկացել ես Իմ Հոգու Լույսի միջոցով, որ մարմինը երկու թոքերի կարիք ունի ազատորեն շնչելու համար, և որ Իմ Մարմինն անկատար է մեկ թոքով: Աղոթե՛ք, որ Իմ կենարար Հոգին ձեզ միավորի: Բայց որքա՜ն ես պիտի տառապեմ նախքան այդ[1]:

Աշխարհը ոտնահարում է և ժխտում Իմ Պատվիրանները, իսկ սատանան ցանկանում է ոչնչացնել այն, ինչը ես հիմնադրեցի: Նա ցանկանում է ոչնչացնել այն, ինչը ես՝ Գառը, թողեցի ձեզ՝ Իմ Եկեղեցին: Նա Եկեղեցուն դնում է չփոթության, անկարգության մեջ, և Իմ Մարմինը կտոր-կտոր է արվում ըմբոստության ոգու կողմից: Իմ Մարմնում բնակություն է հաստատել մի բանապաշտական և բնապաշտական ոգի, որը չի ճանաչում Ինձ Սուրբ Հաղորդության մեջ: Նրանցից շատ քչերն են մտահոգված Իմ Շահերով, և այնքան շատերն են ոտնահարում Իմ Օրենքները, կարծես դրանք Աստծո կողմից չեն տրված: Մի հակամարտ ոգի է ճախրում Իմ Եկեղեցու վրա, որը, սակայն երկար չի տևելու...

Ուստի ես խնդրում եմ ձեզ, Արևմուտքի Տուն, առաջ գնալ և դիմակազերծ անել Չարին՝ միավորելով Ջատկի ամսաթվերը, ինչպես նախնական Եկեղեցում էր:

Նա՛, ով ձեր միջից ցանկանում է դառնալ մեծ, պետք է լինի ձեր ծառան, և նա՛, ով ցանկանում է լինել առաջինը ձեր մեջ, պետք է լինի բոլորի ստրուկը: Իմ նախնական Եկեղեցին նման էր մանուկի, անմեղ և սիրով լի, որովհետև նրան Իմ Սուրբ Հոգին էր պահում Իր Բազուկների մեջ: Հետո ես լսեցի. «Ես այլևս մանուկ չեմ և հիմա ես կարող եմ ինքնուրույն քայլել»: Եվ այդ պահից սկսած, նա դուրս եկավ Իմ Սուրբ Հոգու գրկից և սովորեց քայլել իր ցանկացած ձևով...

Ո՛վ Հոր զավակ, Իմ պտո՛ւղ, Իմ Սուրբ Հոգու քաղաք և հարս, քո բուրմունքը լքեց քեզ... Ուրեմն ետ արի Ինձ մոտ ինչպես մի մանուկ, և Իմ շնորհը պիտի լինի քեզ վրա, և Իմ Սուրբ Հոգին Երիցս Սուրբ, պիտի լինի քո առաջնորդն ու քո ճրագը:

Սրա համար ես կարիք ունեմ Հոգու ծայրահեղ աղքատության և հորդահոս առատաձեռնության: Ա՜Հ... Իսկ մանուկները աղքատ են Հոգով ու նաև առատաձեռն, որովհետև Իմաստությունն ապրում է նրանց մեջ և առաջնորդում է նրանց:

(Ավելի ուշ)

Քո Խոսքով, Աստվա՜ծ իմ,
Դու բարձրացրեցիր ինձ,
որ երգես ինձ համար և իմ բոլոր
եղբայրների և քույրերի համար
Սիրո այս նոր երգը:

Իմ ոսկորները հալումաշ էին եղել,
և իմ սիրտը ցամաքել էր
և դարձել մի չորացած հող:

[1] Ես միևնույն ժամանակ հասկացա. «Ինչպե՜ս պիտի տառապենք մենք նախքան այդ»: «Մենք» նշանակում էր Հովհաննես Պողոս II Պապը Հիսուսի հետ միասին:

Կործանումը աննկատելի
մոտենում էր ինձ,
իսկ ես ամենևին անտեղյակ էի:
Ես դատարկ էի,
սոված և կարիքի մեջ,
ես լի էի ամեն ինչով
Բարությունից բացի:

Սիրո Հրաշալի՛ք,
Դու եկար իմ գիշերվա մեջ,
Դու եկար նրա մոտ,
ով դադարել էր լինելուց,
որ լցնես ինձ Քո Բերանի Շնչով
և ետ բերես ինձ գոյության:

Եվ հիմա ես կարող եմ ասել.
ես դատիարակվեցի
իմ Հոր Գավիթներում,
և իմ մարմինը ծաղկեց նորից,
և իմ սիրտը շնչում
և փափագում է ամբողջ օրը
Իմ Աստծուն Երիցս Սուրբ:

Աստվա՛ծ, Փրկի՛չ իմ, Դու գիտես, որ
ես արժանի չեմ քայլելու
Քո Սուրբ Գավիթներում,
բայց ես սիրում եմ Քո Տունը,
ես սիրում եմ այն Տունը,
ուր Դու ապրում ես:
Ես արժանի չեմ քայլելու
Քո Գահի շուրջը և կուշտ նայելու
քո կերպարանքին:[1]

Տե՛ր, թող որ Քո արարչությունը
խրախճանք անի Քո հարստությամբ:
Տո՛ւր նրանց Գետեր, որ խմեն,
տո՛ւր նրանց առատ Մանանա,
որ ուտեն: Քեզ մոտ, Տե՛ր իմ,
Կյանքի Շատրվանն է,
Քեզ մոտ, Տե՛ր իմ, Կյանքի Ծառն է,
ուստի արի՛, արի՛ մեր խավարի մեջ,
արի Քո Լույսով,
որ մենք տեսնենք Քո Լույսը:

Տե՛ր, Աստված իմ,
լսի՛ր ինձ և իմ կողմից եղիր,
արի՛ և նորոգիր Քո արարչությունը,

[1] Պատկերին կամ Դեմքին

որ այլևս ոչինչ չկարողանա
մեզ նորից ցնցել:

Փա՛ռք լինի Աստծուն,
Փառքի Աստծուն,
իմ կյանքը ես տալիս եմ Քեզ: Ամեն:

Խաղաղությո՛ւն քեզ: Քո խնդրանքները հասան Ինձ[1]...
Կարո՞ղ է փոչին որևէ բան անել ինքնուրույն[2]: Տեսնո՞ւմ ես:

Այնուամենայնիվ, Դու լսեցիր իմ խնդրանքները: Դու պետք է լսած լինես և զգացած լինես իմ սիրտը, որը փափագում է Քեզ:

Իմ ուրախությունն և Իմ զավակ, ուժեղ եղիր բոլոր չար ուժերի դեմ, մնա՛ Իմ բարեհաճության մեջ և փնտրիր Իմ Շահերը: Եղի՛ր Իմ Արձագանքը... Ցուցադրի՛ր Իմ Սրբությունը աշխարհին, ցուցադրի՛ր Իմ Սուրբ Սրտի Հարստությունը ամեն մի ազգի[3]:
Մի՞թե չես նկատել, որ Ես տվել եմ Իմ հրամանները երկնքին, որ բացեն դրախտի դռները և անձրևեն Գետեր, Մանանայի հետ միասին: Ես ցանկանում եմ սնել ձեզ բոլորիդ Իմ Խոսքով:
Վասո՛ւլա, նրանք, ովքեր պարզ ու անմեղ են սրտով գտնում են Ինձ և տիրապետում Ինձ, բայց այնտեղ, անապատում, հազարավորներ կան, որոնք մերկ են ու քաղցած, և չնայած նրանք տեսնում են իրենց հարուստ հանդերձներով ծածկված, իրականում նրանք մերկ են, քաղցած, և խղճալի տեսք ունեն: Թեև նրանք սովամահ են լինում Իմ Խոսքի պակասից, նրանք հավատացած են, թե խրախճանքի մեջ են:
Ժամանակ չկա հապաղելու, զավա՛կս: Այս է պատճառը, որ Ես ուղարկում եմ քեզ Իմ Անունով, նրանց ասելու որ Տերը նրանց համար խրախճանք է պատրաստել...

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 28, 1996

(«Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների 11-րդ տարեդարձը):

Օրհնյա՛լ լինի իմ Ժայռը,
օրհնյա՛լ լինի իմ Փրկիչը,
օրհնյա՛լ լինի Նրա Սուրբ Սիրտը,
այս Սիրտը,
որ ցուցադրում է Իր Սերը
ողջ մարդկության հանդեպ:

[1] Լռություն տիրեց, և ես մի պահ մտածում էի. արդյո՞ք Նա գնացել է:
[2] Նա պարզապես ուզում էր ապացուցել ինձ, որ Սուրբ Հոգու Զորությամբ է, որ ես կարողանում եմ լսել Իրեն:
[3] Սրանով Քրիստոսը նկատի ունի բոլորին և ոչ միայն կաթոլիկներին:

Այս Սիրտը, որն ավելի ցանկալի է,
քան ամենամաքուր ոսկին,
քանի որ գանձերը[1],
որ Այն պարունակում է,
մեղրից էլ քաղցր են:

Օրհնյա՛լ լինի
Նրա Սուրբ Սիրտը, այս Սիրտը,
որն ինձ վեր բարձրացրեց,
և ձև տվեց ինձ:
Ո՛վ Տեր, արի և ցույց տուր
մարդկությանը Քո հրաշալիքները,
արի՛ և ցույց տուր
Քո սքանչելի բարությունը:

Ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ: Իմ Սուրբ Սիրտը քեզ առաջարկվեց, որ Այն դառնա քո հոգու խնդությունը, քո սրտի հրճվանքը և քո կյանքի ուրախությունը:

Իմ ցանկությունն էր վերակենդանացնել քեզ և լսել քեզ... Փայփայի՛ր Ինձ քո սիրով: Քո ծարավն Իմ հանդեպ մի հանգստացնող բալասան է Իմ վիրավոր Սրտի համար... Արի՛, թույլ տուր Ինձ դուրս հեղել քո միջոցով բարության և աղոթքի հոգի, որ Իմ գթությամբ աշխարհին հիշեցնեմ Իմ հրաշալիքների և Իմ Ողորմության զորության մասին:

Իմ Սիրտը սիրով բոցավառված է ողջ մարդկության հանդեպ, և որքան նրանք առաջ գնան կարդալով Ինձ, այնքան ավելի սրբագործող շնորհներ ես կհեղեմ նրանց վրա, որ ավելի խորը տանեմ Իմ Սրտի բոցերի մեջ: Ես անսահմանորեն հարուստ եմ շնորհով, և Ես ցանկանում եմ նրանց բերել այս[2] Սրտի մեջ, Սիրտ, որը հրճվում է լինելով մարդկանց որդիների և դուստրերի հետ:

Իմ Սուրբ Սրտում գանձ ու պատիվ կա, հարատև հարստություն ու հավատարմություն: Իմ Գանձերը կմղեն ձեզ քայլելու առաքինության ուղիով: Երանելի են այն աչքերը, որոնք տեսնում են այն, ինչ տեսնում են Իմ Սրտում և ստանում են այդ: Նա կյանք կստանա և կշահի Իմ Հոր բարեհաճությունը, և Մենք կլինենք նրա կողքին՝ հրճվանք պատճառելով նրան օր օրի հետևից, հեղելով օրհնություն օրհնության հետևից, նրա և նրա ողջ ընտանիքի վրա: Իմ Սուրբ Սիրտը նման է մի հանգստացնող բուրմունքի: Նա նման է ձեր խավարի մեջ փայլող արևի: Իմ Սուրբ Սիրտը մեղրից էլ քաղցր է, և Ես ողջունում եմ բոլոր բերանները, որ ճաշակեն Իմ քաղցրությունը: Իմ Սուրբ Սիրտը նման է ընտիր վարդերի թմբի: Իմ Սուրբ Սիրտը լցված է ողորմածությամբ: Այո՛, Այն նման է կյանքի աղբյուրի:

Դարձրե՛ք ձեր աչքերը դեպի Իմ Սուրբ Սիրտը, և Նրա պայծառությունը կլցնի ձեր խավար գիշերը և այն կվերածի օրվա լիակատար լույսի: Բռնե՛ք Իմ Սուրբ Սիրտը և գրկեք Այն, և Նրա մոտիկությունը ձեզ՝ սրբագործող շնորհների պսակ կդնի ձեր գլխին, որը

[1] «Գանձերը» նշանակում է «Աստծո խոսքը»:
[2] Նա մատնացույց արեց Իր Սիրտը:

ձեր ոտքերը կառաջնորդի դեպի հավատարմության ուղին, որ անգամ պատրաստ կլինեք ձեր արյունը հեղել ի պատիվ Ինձ: Իմ Սուրբ Սրտի Անպարտելի սրբությունը կարող է լինել ձեր վահանը, երբ չարը փառաբանվում է չարի կողմից:

Իմ Սուրբ Սիրտը նման է մի ծառի՝ պտղով լցված, հարուստ սաղարթով, որի մեջ կարող եք ապաստանել Նրա ճյուղերի ներքո: Իմ Սրտից ելնող կրակը այն ուժն է, որ լույս է տալիս ձեր հոգում: Նույնիսկ ամենապայծառ աստղերը երբեք չեն կարող լուսավորել ձեր հոգու ահավոր գիշերն այնպես, ինչպես Իմ Սրտից եկող կրակը: Արդարև, Իմ Սուրբ Սրտի կրակը հազար անգամ ավելի պայծառ է, քան արևը: Այն հազար անգամ ավելի է, քան տիեզերքի բոլոր համաստեղությունները միասին վերցրած:

Ինձ մոտ են աստվածային սերը, աստվածային գթությունը, աստվածային պտուղը, աստվածային լույսը, աստվածային քաղցրությունը, աստվածային աղբյուրները, աստվածային հարստությունը՝ հարստացնելով նրանց, ովքեր մոտենում են Ինձ՝ լցնելով իրենց գանձարաններն Իմ մաքրությամբ: Մտահոգ՝ փրկելու Իմ ժողովրդին մահից, Ես ասացի. «Ես պիտի գամ նրանց մոտ Իմ Սիրտը Ձեռքիս մեջ, և պիտի բացեմ Սիրտս ինչպես մի ջրամբար և ողողեմ նրանց Իմ աստվածային Գանձերով: Ես պիտի գամ նրանց վրա մի հսկայական օվկիանոսի նման, որ զորացնեմ նրանց:

Ինչի՞ հետ կարող եք համեմատել Իմ Սիրտը, այս Սիրտը, որը դրեց Իմ Սրբարանի Հիմքերը. ամռան կնդրուկի՞ (խունկի), քնարի մեղեդո՞ւ, բյուրեղյա մաքրությամբ աղամանդե զարդի՞: Ոչինչ չի կարող համեմատվել Իմ Սուրբ Սրտի անպարտելի սրբության հետ, քանի որ Իմ Սրտում սրբագործող շնորհներ կան, որովհետև Այն եզակի է Իր շքեղության մեջ, բազմաբնույթ՝ Իր շնորհների և արժանիքների մեջ, գթառատ, հեզ և կարեկից, նույնիսկ ձեզանից ամենից հետինի հանդեպ:

Իմ Սիրտը գործունյա է, որովհետև Ես Բանն եմ, և Աստծո Խոսքը կենդանի և գործունյա է: Իմ Սիրտն անխոցելի է Իր Փառքի մեջ: Այն առատաձեռն է և ողորմությամբ լի, երբ դուք օգնության կարիք ունեք: Քանի որ Իմ Սիրտը շնորհի գահն է, վստա՛հ եղեք Իմ բարյացակամությանը: Ես կարեկցում եմ ձեր տգիտությանը: Մի՛ վհատվեք, իմացե՛ք, որ մշտական տեղ ունեք Իմ Սուրբ Սրտի մեջ:

Ես Աստծո Խոսքն եմ, և Իմ Բերանից ելնում է մի հատող սուր: Ես այստեղ եմ, և Իմ Սիրտը հանձն պիտի առնի ամեն ինչ, որ ճիշտ չէ և դրանք պիտի ուղղի Իմ սրով: Իմ Սուրբ Սիրտը բարդ չէ. Ես բարդ Աստված չեմ, որովհետև Ես նման եմ ճրագի, որը փայլում է ներսից ու դրսից, և ամբողջապես պարզ է ու թափանցիկ: Հետևաբար, դուք երբեք չեք մոլորվի, և Ես ամբողջ ժամանակ պիտի վստահեցնեմ ձեզ, որ սրբությունը պիտի պարգևատրվի վերջում:

Իմ Սուրբ Սիրտն այնչափ պարզ ու մաքուր է, Այն աշխարհի Լույսն է: Աստվածային և անհաղթահարելի է Իմ Սուրբ Սիրտը, քանի որ Նա պահում է ձեր փրկության ողջ հարստությունը: Նա, ով բարեհաճորեն ընդունում է այս Սիրտը՝ մեծարանքով, հավատարմությամբ և պատվով, կճանաչի Մեզ որպես Երիցս Սուրբ: Եվ Իմ աստվածայնությամբ, Ես կառաջնորդեմ նրան դեպի հավիտենական կյանք:

Իմ Սուրբ Սիրտը տրոփում է սիրով մարդկության հանդեպ, որովհետև Այն սիրում է մարդուն: Եթե դու Ինձ մոտենաս մանուկի պես, Ես կդնեմ Իմ Սուրբ Սիրտը քո ափի մեջ, և երբ դու տեսնես Իմ Գանձերը, որ իմաստուն առածներով բացահայտում են Իմ խորհուրդներն ու Իմ գաղտնիքները, քո սուրբ վախը կտիրի քեզ Իմ հանդեպ, որովհետև կհասկանաս, որ Ես Աստված եմ, եռանձն, բայց Բնությամբ Մեկ՝ ավելի սիրելի ու թանկարժեք քեզ համար, քան աշխարհի ողջ հարստությունը, և նույնիսկ քո սեփական կյանքը:

Ա՜հ, Վասո՛ւլա... Ողորմությունը գտնվում է Ինձ մոտ, սակայն Իմ զավակներից որքան շատերն են լքում և արհամարհում այս գթառատ Սիրտը: Չնայած դուք աքսորական եք երկրի վրա, արարչությո՛ւն, բա՛ց արեք ձեր աչքերը, որպեսզի զննեք ու մտահայեք Իմ Սուրբ Սիրտը, բա՛ց արեք ձեր աչքերը և ձեր սիրտը՝ Իմ Սրտում փորագրված հրաշալիքների հանդեպ: Ես չպիտի թաքցնեմ Իմ անգնահատելի Գանձերը ձեզանից: Չնայած դուք աքսորական եք, Ես պիտի բացեմ Իմ Սրտի դուռը, և երբ ձեր աչքերը ձեր խեղճության մեջ դիտեն Իմ Սրտի վեհությունը, ձեր հոգուն կպատի մի անընդմեջ ձգտում Իմ որոշումների հանդեպ, և Իմ վճիռները կդառնան ձեր ուրախությունը և ձեր խորհրդատուները:

Հետո դուք կամովին կխնդրեք Ինձ դառնալ Զոհի զոհը, Խաչյալի խաչելությունը, և կհայտարարեք Իմ վճիռներն աշխարհին, առանց վախենալու շնորհազրկումից ու նվաստացումից՝ հիշելով, թե Ով գտավ ձեզ՝ աքսորյալին, աքսորի մեջ: Հետո դուք Ինձ կասեք՝ ցույց տալով Ինձ Իմ Սուրբ Սիրտը. «Տե՛ր, այստեղ ես կմնամ ընդմիշտ, սա է այն տունը, որը ես ընտրել եմ»:

Հավատարմությունը Իմ Խոսքի էությունն է, և Ես հայտնի եմ որպես հավատարիմ և ճշմարիտ: Իմ Սրտում խաբեություն չկա: Իմ Սուրբ Սիրտը ձեր դրախտն է՝ լցված արդար վճիռներով: Երանելի է նա, ով հայտնագործում է Իմ Սուրբ Սրտի կայունությունն ու հաստատուն լինելը, որը մարգարիտների արժեքից էլ թանկ է: Ինչի էլ որ ցանկաք, այն չի կարող հավասարվել Դրան: Իմ ուստրե՛ր, Իմ դուստրե՛ր, ոչինչ չկա հավասարազոր Իմ Սուրբ Սրտին, քանի որ Ես Ալֆան եմ և Օմեգան: Եվ Իմ Սուրբ Սրտի ուղիները սքանչելի ուղիներ են, որոնք տանում են Մեր[1] կողմից այնքան ցանկալի մտերմության:

Ինչի՞ հետ կարող եք համեմատել Իմ Սուրբ Սիրտը. աղբյուրի՞, որը պտղաբեր է դարձնում այգիները: Այո՛, հետևաբար, եթե որևէ մեկը ծարավ է, թող նա գա Ինձ մոտ: Թող նա գա և խմի: Իմ Սիրտը կենդանի ջրի ջրհոր է: Եկե՛ք և սուզվեք այս հոսանքների[2] մեջ, որ դուրս են հորդում Իմ Սուրբ Սրտից: Իմ Սուրբ Սիրտը ձեր երաշխավորն է և Կյանքի Ծառը նրանց համար, ովքեր կտիրապետեն Նրան: Թույլ մի՛ տվեք, որ ձեր ոտքերը ձեզ ցած տանեն դեպի մահ: Իմացեք, որ Իմ գթառատ Սուրբ Սիրտը փառավոր է և վեհասքանչ, վստահելի է, հավատարիմ և ճշմարիտ: Այն զգեստավորված է անսասան կայունությամբ՝ անցնելով երկնքից էլ այն կողմ: Վասո՛ւլա, Այն

[1] Երրորդության
[2] Հիսուս խոսում էր Իր Հոգու մասին:

բարձրացնում է աղքատներին փոշու[1] միջից և իրենց թշվառությունից, որ նրանց տեղ տա Իր խորքերում, Անսահման Ողորմության խորքերում: Թող Իմ Սուրբ Սիրտը լինի այն Արմատը, որը պահում է ձեզ, իսկ դո՛ւք, դուք պատվաստվել եք Ինձ վրա, որ կիսեք Իմ հարուստ կենսահյութը, որը ձեզ կյանք է տալիս, հավիտենական կյանք: Ուրեմն մնացեք Ինձ պատվաստված, որ լինեք Իմ մի մասը, և ձեր կյանքը կխնայվի:

Վասո՛ւլա, Ես եկել եմ նորից, որ վերակենդանացնեմ Իմ Սուրբ Սրտի պաշտամունքը: Երանելի են բոլոր նրանք, ովքեր հետևում են այդ պաշտամունքին: Աշխարհը մեռած է սիրո համար, որովհետև այն հեռացրել է իրեն Մեզանից[2], և լքելով Իմաստության Աղբյուրը, այն մեռել է իր չորության մեջ: Ահա թե ինչու եմ Ես եկել ձեզ մոտ, Իմ Սիրտը Ջեռքումս, որպեսզի զգաք Իմ Սրտի տրոփյունը: Մի՛ զարմացեք, չե՞ք կարդացել, որ Յահվեի Տնից մի Աղբյուր պիտի ցայտի[3] և ջրվեժի պես այդ Կենդանի Ջուրը[4] դուրս պիտի հորդի Իմ Սրտից...

Այո՛, որպեսզի դուք բոլորդ ազատություն ձեռք բերեք, այն ազատությունը, որը միայն գտնվում է Իմ Հոգու մեջ: Ես եկա քեզ մոտ ոչ թե քո արժանիքների պատճառով, քանի որ դու ոչ մի արժանիք չունեիր: Ես քեզ ընտրեցի ոչ միայն քո թշվառության և քո ոչնչության պատճառով, ինչպես դու ես ասում մարդկանց, այլև քո անկարևորության պատճառով, և քո լիակատար անտեղյակության պատճառով այն բոլոր հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում էին Իմ Սուրբ Սրտին, այո՛[5], ու նաև Իմ Եկեղեցուն: Թաթախված մեղքի և ոչ թե առաքինության մեջ, որը քո հասարակության պատկերն էր, հեռու Իմ Սեփական հատկանիշներից, դու զարհուրելի էիր նույնիսկ Իմ Հրեշտակների աչքերում: Սակայն Ես եկա քեզ մոտ, թույլ, փոքրիկ արարած, որ աշխարհին ցույց տամ Իմ Սուրբ Սրտի Զորությունը և Իմ Անսահման Գթասրտությունը: Ես եկա քո տգիտության մեջ և հանձնարարեցի քեզ մի առաջադրանք, որը չափազանց վեր էր քո կարողություններից, և Ես հայտնի դարձրեցի քեզ Իմ Սուրբ Սիրտը և պիտի շարունակեմ հայտնի դարձնել այն այս սառն աշխարհում, որը թաթախված է իր արյան մեջ՝ իր հանցանքների հետևանքով:

Ես պիտի թույլ տամ, որ Իմ Սուրբ Սրտից եկող այս Աղբյուրը[6] ներխուժի ու ողողի այս պաղ աշխարհը՝ կյանք տալով նրան, որտեղով էլ որ Այն անցնի, և Իմ Խոստումը պիտի կատարվի, որովհետև Իմ Սուրբ Հոգին՝ Կյանք տվողը, պիտի կառավարի այս չար հասարակությունը և պիտի դարձնի նրան շիտակ ու արդար մի ժողովուրդ: Եվ այն ժամանակ սրբությունը և արդարությունը պիտի լինեն նրանց ուղեկիցը:

Վասո՛ւլա, անցյալում Ես թույլ տվեցի Իմ սիրելի աշակերտ Հովհաննեսին, մի ակնարկ նետել Իմ Սրտի Գանձերի վրա, որն առաջնորդեց նրան այդ օրվա սարսափների մեջ, մինչև Իմ Խաչը: Հետո,

---

[1] Հիսուս սա ինձ էր ակնարկում, թե ինչպես Նա բարձրացրեց ինձ և տեղ տվեց Իր Սրտում:
[2] Երրորդությունից
[3] Հովել 3:19
[4] Սուրբ Հոգին
[5] Ես մտածեցի նաև Եկեղեցու մասին:
[6] Հիսուս խոսում է Իր Սուրբ Հոգու մասին:

ավելի ուշ, նա հրավիրեց Գերթրուդին մեծարելու Իմ Սուրբ Սիրտը՝ ցույց տալով նրան Իմ Սրտում թաքնված Գանձերի արժեքը: Գերթրուդի աչքերից ուրախության արցունքների հեղեղներ իջան, երբ նա տեսավ այդ աստվածային Գանձերը: Ես շատ էի ցանկանում բացահայտել ձեզ ձեր օրերում և ձեր դարում Հարստությունը մի խորհրդի, որն անվերջ դարեր թաքուն էր պահված: Ուրեմն պատվի՛ր Իմ Սուրբ Սիրտը և եղիր անմեղ, եղիր երկրի աղն ու լույսը, որպեսզի փայլես աշխարհում մի պայծառ աստղի նման, որովհետև դու պիտի տաս նրան[1] Կյանքի Խոսքը:

Ընկի՛ր ծնկներիդ վրա հիմա և գովաբանիր Ինձ: Տեսնո՞ւմ ես, թե որքան հզոր են Իմ հրաշքները: Տեսնո՞ւմ ես, թե որքան մեծ են Իմ հրաշալիքները: Թող Իմ Լուծը թեթև լինի քեզ վրա և չծանրաբեռնի քեզ, և դու հոգնածության որևէ նշույլ չես ունենա... Շարունակիր գնալ այն ուղիով, որը ես եմ նշել քեզ համար և ասա Իմ ժողովրդին, որ ոչ մեկը չի կարող կենդանի մնալ միայն իր բանականությամբ, և Ես երբեք չեմ բացահայտում Ինձ նրանց, ովքեր հայտարարում են, որ գիտելիք ունեն միայն երկրային բաների մասին, քանի որ դա իրական գիտությունը չէ, որը գալիս է Աստծուց: <u>Իրական գիտությունը Մեզ ճանաչելն է, Մեր Երրորդության Սրբության մեջ</u>, և Մեզ հետ սերտ միության մեջ ապրելը: Ես չունեմ նախասիրած անձեր, ուստի թող որ Իմ Սրտի պաշտամունքը հայտնի լինի բոլոր մարդկանց[2]:

Մեկ եղի՛ր Մեր մեջ: Մենք սիրում ենք քեզ, սիրելի զավակ: Ստացի՛ր Մեր օրհնությունները:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ)

Այո՛, սա[3] տրվեց քեզ Իմ փրկարար Պատգամի տասնմեկերորդ տարեդարձի օրը: Ես պիտի շարունակեմ լցնել քո բերանը և սնել քեզ Իմ Խոսքով: Դու կշարունակես ստանալ առատ սրբագործող շնորհներ Իմ Սրտից, որ ավարտես քո առաքելությունը: Եվ ինչպես Ես ասացի Իմ Սուրբ Սրտի մյուս առաքյալներին, այդպես էլ քեզ եմ ասում. սիրի՛ր այս Սիրտը, որն այնքան էլ սիրված չէ, վերակենդանացրո՛ւ Իմ Սուրբ Սրտի Պաշտամունքը, և ասա՛ նրանց[4], որ, ով որ գործադրի այդ պաշտամունքը, նրանք կստանան սրբագործող շնորհներ, ոչ միայն իրենց, այլև իրենց ողջ ընտանիքի անդամների համար:

Իսկ դո՛ւ, Իմ սիրելին, մեկ եղիր Ինձ հետ: ic

Դեկտեմբերի 4, 1996

(Լաս Վեգաս)

---

[1] աշխարհին
[2] Հիսուս նկատի ունի ոչ միայն կաթոլիկներին, այլև մյուսներին:
[3] Վերևում գրված Պատգամը:
[4] ժողովրդին

Տե՛ր իմ, ես սիրում եմ Քեզ:

Ա՜հ, Վասո՛ւլա, ես հրավիրում եմ քեզ հանգստանալ Իմ Սուրբ Սրտում:

Արի՛, Իմ Հոր զավա՛կ, արի՛, ես քո Ժայռն եմ, քո Բաժինը: Մեկ և Միակը, որ քեզ բարձրացրեց Իմաստությամբ Իմ Փառքի համար: Այդ ես եմ, որ առաջնորդեցի քեզ քնքշությամբ և խորհուրդ տվեցի Իմ Սրտով...

Ա՜հ, Վասո՛ւլա[1], աշխարհում, անհաշիվ հոգիներ կան, որ մեռնում են, և Իմ Սիրտը ցավ է պատճառում Ինձ, և ես խելագարված եմ այդ մեռնող հոգիների տեսքից[2]... Վասո՛ւլա, դու կամենո՞ւմ ես Ինձ ավելի շատ զոհողություններ մատուցել այդ հոգիներին տուն բերելու համար: Այո՛, Իմ Սուրբ Սրտի մեջ:

Այո՛, Տե՛ր...

Ուրեմն Ի՛նձ վստահիր: Մի՛ հոգնիր աշխատել Ինձ համար և Ինձ հետ: Ջնջի՛ր ինքդ քեզ, որպեսզի Իմ Հոգին առաջնորդի քեզ այնտեղ, որտեղ ես եմ ուզում, որ գնաս: Գովաբանությամբ հռչակիր Իմ Անունը այն բոլոր ազգերին, որոնց մոտ ես ուղարկում եմ քեզ Իմ Սուրբ Հոգու Զորությամբ: Բաց չթողնես Իմ Ձեռքը: Թույլ տուր Ինձ պահել քո ձեռքն Իմ Ձեռքում:

Արի՛, քո Հավատարիմ Աստվածը քեզ հետ է Իր Հավատարիմ Սիրով: Ես օրհնում եմ քեզ, թանկագին հոգի: Հիմա գնա՛ և միացիր նրանց աղոթքներին, և հիշեցրու նրանց, որ Աստված, որին իրենք փափագում են, միշտ իրենց հետ է, օրհնելով նրան ցից յուրաքանչյուրին: Ընդմիշտ ապրիր Իմ Սուրբ Սրտում, և աղոթիր հոգիների դարձի համար ու եղիր հաստատուն քո հավատարմության մեջ, ինչպես ես եմ հավատարիմ: ic

Դեկտեմբերի 9, 1996

(ԱՄՆ)

Եղի՛ր խաղաղության մեջ:

Ասա՛ քո խորհրդատուին. «Ես լցված եմ ուրախությամբ, որ քո մտքերը Իմ Սուրբ Սրտի մասին, վերջապես ծաղկում են քո բերանում[3]: Ես գիտեմ, որ դու Իմ Սիրտը միշտ Դրախտ ես համարել, բայց դու շատ հնարավորություններ չես ունեցել, որ ցուցադրես Իմ Սիրտն այնպես, <u>ինչպես այժմ</u>[4]: Եկեղեցին անտեսել է Իմ Սուրբ Սրտի պաշտամունքը: Ժամանակին դու լավ արեցիր, որ կիսեցիր Ինձ հետ Իմ ցավերն ու Իմ

[1] Հիսուս հոգոց հանեց:
[2] Հիսուս մի պահ դադար տվեց, նախքան Իր հարցը տալը:
[3] Հայր Օ'Քերոլը խոսեց Սուրբ Սրտի Գանձերի մասին, որոնք պահված են մեր ժամանակների համար:
[4] Հիսուս տալիս է այդ հնարավորությունները, երբ մենք մեկնում ենք համագումարների, ուր մարդիկ լսում են:

վիշտը[1]: Ես գնահատում եմ քո մեջ բարձրացող հետաքրքրությունը՝ փառաբանելու Իմ Սիրտը:

Ես ինքնաբավ եմ, ինչպես գիտես, բայց Ես ընտրեցի քեզ և Իմ Վասուլային՝ աշխարհին տալու այն ամենը, ինչ դուք կարող եք, որ գրավեք նրանց ստանալու այս Սիրտը, որը սիրում է նրանց: Ձեր[2] զոհաբերությունները հաճելի են Ինձ, և Ես պիտի հոգամ, որ լրացնեմ ձեր բոլոր կարիքները Իմ Սրտի Գանձերից:

Ես, ինչպես նկատել ես, տվել եմ քեզ Իմ երեք հրեշտակներին[3], որ ուղեկցեն քեզ: Այո՛... ներառյալ Իմ երեք Հրեշտակապետերին: Ուրեմն մի՛ վախեցիր, ողջ երկինքը քեզ հետ է: Շատ բարեպաշտ մարդիկ կան, որոնք կօգնեն քեզ: Եղի՛ր անվախ, Ես քեզ հետ եմ: 1C

Դեկտեմբերի 12, 1996

(ԱՄՆ)

Տե՛ր, թող կառչեմ Քեզանից,
որպեսզի Դու գաս Ինձ փրկության:

Ես սիրում եմ Քեզ
և շնորհակալություն եմ հայտնում՝
գովաբանելով Քեզ,
որ Ինձ թույլ ես տվել
ճանաչել Քո Անունը,
որպեսզի ես նույնպես
պաշտպանված լինեմ:

Քո մեծ սիրով,
Դու պատասխանում ես
Ինձ ամեն անգամ,
երբ ես կանչում եմ Քո Անունը:

Աստվա՛ծ, Քեզանից պետք է
մեծապես վախենալ
Քո Զորության պատճառով:

Ցույց տուր Ինձ Քո բարությունը,
երբ ես նեղության մեջ եմ:
Թող Քո ժպիտը լինի Ինձ վրա՝
ցույց տալու ազգերին,
որ Դու Ինձ հետ ես:

Խաղաղությո՛ւն քեզ: Իմ Անունից խոսիր և մի՛ վախեցիր: Ի՛նձ վստահիր:

---

[1] Մադլենի մատուռում հայր Օ'Քերոլը փորձառություն ունեցավ:
[2] Հայր Օ'Քերոլի և իմ:
[3] Այսինքն՝ Բոբը, Փեթը և Թոմը:

Իմ վսեմությունը ծածկում է երկինքը, և եթե նույնիսկ ձեր երկիրը հիմա ընկած է սարսափի մեջ իր անօրինության պատճառով, Իմ վեհությունն ու Իմ պայծառությունը պիտի ծածկեն ձեր երկիրը[1], և ամեն չարիք պիտի բացահայտվի, քանի որ հիմա չարը թաքնված է երկրի խավարում: Մի՛ վախեցիր, զվարթ եղիր և ուրախացիր, քանի որ Իմ հաղթանակը ընդդեմ չար ուժերի մոտ է:

Ուստի գնա՛, աղջիկս, և մի՛ խուսափիր խոսելուց, երբ այն բարիք է բերում: Հոգիներ վաստակիր Ինձ համար, եղիր Իմ ուռկանը: Թող որ Ես քեզ նորից դուրս նետեմ: Արա այն ամենն, ինչ կարող ես, իսկ Ես կանեմ մնացածը: Երդվիր մնալ Ինձ հավատարիմ և ծառայել Ինձ բարեպաշտության և զորության ոգով: Ես քեզ երբեք հուսախաբ չեմ անի և քեզ ոչինչ չեմ մերժի, որը դարձի կբերի մեղավորներին և կփոխի նրանց սրտերը:

Հետևաբար, քո առաջ դու կգտնես Իմ պաշտպանությունը: Զրպարտություններն ու հալածանքները, որոնք դու այնքան վեհանձնորեն կրում ես հանուն Ինձ, փառավորում են Ինձ: Թե մարդիկ ինչպիսի չարակամությամբ և տհաճությամբ են վարվում քեզ հետ, որը դու տանում ես լռությամբ հանուն Ինձ՝ քո Փրկչի, հուզում է Ինձ արտասվելու աստիճան: Ամեն ոք վերջում մաշվում է, ճիշտ այնպես, ինչպես հագուստն է մաշվում, բայց ձեր հոգիները ապրում են ընդմիշտ: Քո նվաճումներն Իմ Անվամբ չեն մաշվի, և քո հոգին պիտի վարձատրվի վերջում:

Մի՛ կորցնիր Իմ Խաղաղությունը և մնա ուժեղ՝ միշտ յուրացնելով Իմաստության ուսուցումները: Թող քո սիրտը հիմա զվարթ լինի և լեցուն այն ուրախությամբ, որը Ես ունեմ Իմ Սրտում՝ լցված բոլոր նրանց կողմից, ովքեր ցանկանում են Ինձ՝ քո Աստծուն:

Դեկտեմբերի 20, 1996

(ԱՄՆ-ում կատարած բազմաթիվ համագումարներից կամ աղոթաժողովներից հետո՝ տուն վերադառնալիս):

Ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը, զավա՛կս:

Հաստատակամ եղիր արդարության և առաքինության մեջ: Նայիր Իմ հաղթանակներին, հաշվիր դրանք[2]: Երկիրը ժանգոտվում է, բայց Իմ անցումը մաքրում է ժանգը: Ահա թե ինչու եմ Ես քո մեջ նախանձախնդրություն դրել Իմ Տան հանդեպ, որ Ես և դու միասին աշխատենք՝ ոչնչացնելու համար այն ժանգը, որը կեղև է կապել Իմ ժողովրդի սրտի վրա: Ես մտադիր եմ, Իմ անցումով հեռացնել այդ կեղևը,

[1] Տիրոջ Հաղթանակը:
[2] Քսաներեք աղոթաժողովներ, որտեղ Ես խոսեցի քսանութ օր, ամբողջ Նահանգներով մեկ, շատ մարդկանց ներկայությամբ՝ ներառյալ քահանաների:

և նրանց սրտերը թողնել Իմ Փառքով փայլելիս, և մինչ Իմ Խոսքը կհաղորդվի նրանց, Իմ Լույսը նրանց լույս կբերի:

Ա՜հ, Վասո՛ւլա, Ես ուզղել եմ քո քայլերը դեպի Իմ Ճանապարհը, ինչպես խոստացել էի քեզ, այնպես որ մի՛ վախեցիր, Ես քեզ հետ եմ, և ոչ մի չար ուժ չի կարող իշխանություն ձեռք բերել քեզ վրա: Եթե Ես որոշել եմ քեզ ուղարկել այդ մեծ ու ընդարձակ ազգի մեջ[1], հրատապ կերպով հիշեցնելու Իմ ժողովրդին իրենց իսկական հիմքի մասին, և որ Փառքը իջնում է միայն վերևից, այդ այն պատճառով է, որ ժամանակը մոտ է, սուրբ տառապանքի ժամանակը հենց ձեր դռների մոտ է հիմա... Այդ չար ուժերի օդակը հիմա ոչ միայն սեղմվում է Իմ Եկեղեցու Երեցի շուրջը, այլև՝ Իմ ողջ Եկեղեցու: Ո՛չ, դուք[2] իզուր չեք աշխատել, քանի որ Ես ցույց եմ տվել Իմ Փառքը շատ սրտերում, և Ես հիշեցրել եմ Իմ ժողովրդին այն զորության մասին, որին Ես տիրապետում եմ՝ տալով նրանց բազմաթիվ շնորհներ: Հետևաբար, զավա՛կս, Ես հաղթական եմ:

Իմ գործը, քո միջոցով, կատարված է, և Ես լցնում եմ այն Իմ շքեղությամբ և Իմ վեհությամբ: Սա Ես անում եմ, որ հիշեցնեմ Իմ ժողովրդին Իմ Զորության, Իմ Ողորմության, Իմ Բարության և Իմ Սիրո մասին: Այս գալիք օրերին, Իմ Սուրբ Սրտից ավելի շատ գանձեր և հարստություն պիտի բացահայտվի ձեզ...

Իսկ դո՛ւ, աղջիկս, թող արքայական արժանապատվությունը քեզ հետ լինի հալածանքների ժամերին, որպեսզի փառավորես Ինձ: Ամեն ինչ, որ դու կրում ես հանուն Ինձ, հուզում է Ինձ: Կրի՛ր հանուն Ինձ, սիրելիս, և սփոփի՛ր Ինձ այդ ձևով... Ամբողջությամբ, մարմնով և հոգով, ինքդ քեզ նվիրիր Իմ Եկեղեցու ծառայությանը և քո եղբայրներին ու քույրերին ծառայելուն: Մատուցի՛ր այդ զոհաբերությունները նրանց օգտի համար: Հանուն Ինձ դիմացիր այդ կարճատև ցավերին ու փորձություններին, հիշելով, որ հենց այդ նույն երկնքի տակ որ ապրում ես, դիշերվա ժամերին, Ես՝ Հիսուս Քրիստոսը, չափազանց տառապում եմ տեսնելով անմեղ մանուկների հանցագործ սպանդը, մարդկային զոհաբերությունները, որոնք իրագործվում են հայհոյանքով Իմ Անվան դեմ[3], և ներկա պապական իշխանության անկման համար:

Ես քեզ ասում եմ, ինչ էլ որ անես որպես զոհաբերություն, Իմ Բազուկը քեզ կպաշտպանի, որպեսզի դու շարունակես ամենուրեք տարածել Իմ Պատգամները: Այն ժամանակ, երբ հայհոյողների ձեռքերը անարգաբար ձգված են Իմ Սուրբ Զոհաբերության դեմ, Իմ Տան և Իմ Խոսքի դեմ, Ես՝ Իմ կողմից, հեղում եմ Իմ օրհնությունները նրա վրա, ով հաստատակամ շարունակում է մնալ սրբության մեջ և տեղի չի տալիս անպատվությամբ:

Ես պիտի հրապուրեմ շատ սրտերի, որ դառնան սուրբ անոթների նման կրելով Իմ Խոսքը: Այո՜[4]:

Տե՛ր, Դու ինձ ցույց ես տալիս, թե
ինչպես է Քո Զորությունը գործում,

---

[1] ԱՄՆ:
[2] Հայր Օ'Քերոլը և Ես:
[3] Ես հակացա նաև «Եկեղեցու»:
[4] Նա գիտեր, որ ես ուզում էի բան ասել:

և Դու գաղտնի չես պահում
Քո Ծրագրերը:
Բայց այնպիսի թույլ մեկին
ինչպիսին ես եմ՝ մեղքից ծնված,
ինչպե՞ս կարող եմ ես հասկանալ
ինձ հալածողների
սնապարծությունները:

Խավարի ժամն այստեղ է:
Որտե՞ղ և ինչպե՞ս
ես պետք է «դիմանամ»:

Սա նաև Իմ սեփական ողբն է: Ես ողբում եմ նրանց սրտի կարծրացման վրա... Ստվերի քող է կախված նրանց կոպերից, աղջի՛կս: Նրանց սրտերում տեղ չկա խաղաղության համար, և նրանց հաղթանշանը կոչվում է սիրո-պակաս... Բայց քո Թագավորը քո կողմն է:

Այնուամենայնիվ, հետևում <u>ուրիշ ուժեր</u> կան, նրանք, որոնց[1] Ես հիշատակեցի: Այդ ուժերը Ինձանից չեն գալիս: Հասկանո՞ւմ ես, Վասո՛ւլա, Ես, այս Պատգամների միջոցով, ցուցադրում եմ <u>նրանց մարդասպան ծրագրերը</u> Իմ Եկեղեցու նկատմամբ, Ես ցուցադրում եմ նրանց խաբեբա ծրագրերը աշխարհի առաջ: Ահա թե ինչու նրանցից շատերն ուզում են թաքցնել այս Պատգամներում քեզ տրված Իմ Խոսքերը:

Բայց ես մի խեղճ թշվառ արարած եմ և պաշտպանվելու ընդունակ չեմ: Իմ հանդեպ խտրություն են դնում և ինձ հետ անարդար են վարվում:

Օրհնյալ լինես քո կյանքի բոլոր օրերին հենց միայն դրա համար:

Զնայած երկու տեսակի հետապնդողներն[2] էլ կողոպտում են քո պատիվը և քո անկեղծությունը, դու դարձել ես Իմ Օրհներգը: Եթե նրանք[3] չեն ճանաչում այն զորեղ գործերը, որ Ես անում եմ քո ոչնչության միջոցով, աղոթիր նրանց համար, որ Ես քողը բարձրացնեմ նրանց աչքերից...

Ես պիտի ավարտեմ քո ճամփորդությունը քեզ հետ միասին, և պիտի շարունակեմ լինել քո ցուպը, քո ճրագը և քո ըմպելիքը: Մի՛ վախեցիր, երբ քեզ վրա հարձակվում են, դու մեծ զորություն պիտի ունենաս, եթե վախենաս Ինձանից ու պատվես Ինձ, և եթե անես այն, ինչ հաճելի է Ինձ:

Ես Ինքս պիտի նախապատրաստեմ այն ամենը, ինչի կարիք ունես այս ճամփորդության համար: Եվ Մենք՝ Երկու Սրտերը[4], պիտի քայլենք քեզ հետ միասին, մեր ճանապարհին զայրացնելով չար ուժերի ամբոխներին, նրանց մոտով անցնելիս՝ դառնալով սպառնալիք նրանց համար: Մենք պիտի փոթորկենք նրանց չարքերի քաղաքը, և այդ չար ուժերը ստիպված

[1] Հիսուս հստակ տարբերություն է դնում սովորական հալածողի, որի սիրտը կարծրացել է, և «մյուս ուժերի» միջև, որոնք սկիզբ են առնում Խավարից՝ այլ խոսքերով՝ «չար ուժերից»:
[2] Սովորականները՝ քարե սրտով, և խավարի ուժերը:
[3] Կարծրացած սիրտ ունեցողները:
[4] Սուրբ Սիրտը և Մարիամի Անարատ Սիրտը:

պիտի լինեն դեմ կանգնել Ինձ՝ քո Աստծուն, Իմ ողջ Աստվածայնության մեջ[1]: Այսօր նրանք կատաղում են վայրի գազանների պես, որովհետև գիտեն, որ Մեր Հաղթանակը[2] շուտով գալու է: Ինձ վստահիր և եղիր ինչպես բարձրաձայն կարդացվող մի գիրք:

Ես ավելին ունեմ ասելու, բայց այսօրվա համար սա բավական է քեզ: Ես սիրում եմ քեզ, թանկագին հոգի, և Ես օրհնում եմ քեզ: ic

Դեկտեմբերի 24, 1996

(Ես երկար ճամփորդության պետք է գնայի, բայց հայր Օ'Քերոլը որոշեց չճամփորդել ինձ հետ: Ես մտածում էի, արդյո՞ք պետք է մենակ գնայի...)

Տե՞ր:

Ես եմ:

Դու միայնակ չպետք է գնաս[3]: Ես մի եղբայր կուղարկեմ քեզ այս ճամփորդության համար: Նա կլինի քո ուղեկիցը այդ ժողովներում: Ես գիտեմ, թե նա որքան է ցանկանում օգնել այս դժվարին ժամանակներում: Ահա թե ինչու եմ Ես ուղարկում նրան քեզ մոտ:

Թույլ չտաս, որ սրտիդ անհանգստություն պատճառեն քեզ հալածողները, ո՛չ էլ նրանք[4], ովքեր հետևում են խաբուսիկ հանձնարարությունների: Նրանք բավարարում են իրենց սեփական կարիքները, ոչ թե Իմը... Նրանք քշվում են իրենց ճանապարհին հանդիպող ամեն մի քամուց: Սրանք նրանք են, ովքեր խորացնում են Իմ Վերքերը: Ուստի, սիրելի՛ս, Ես ուղարկում եմ այս եղբորը քեզ մոտ հատկապես այս ճամփորդության համար:

Թող որ այն, ինչ դուք կանեք Իմ Սուրբ Սրտի համար, շատերին ետ բերի Մեզ մոտ՝ կիսելու համար Մեր Հավիտենական Փառքը:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: ic

Դեկտեմբերի 29, 1996

Տե՞ր իմ:

Ես եմ: Ես կանգնած եմ քո առջև: Մի՛ վախեցիր, զավակս[5]: Ձե՞ս լսել, որ Աստծուն հնազանդվելը գալիս է մարդկանց հնազանդվելուց առաջ: Ի՞նչ արեցիր, զավա՛կս[1]:

---

[1] Քանի որ դա հենց այն է, ինչի վրա հարձակվում են այդ չար ուժերը, այսինքն, Քրիստոսի Աստվածայնությունի վրա: Նրանք ցանկանում են ժխտել Քրիստոսի Աստվածայնությունը և Նրա Փառապանծ Հարությունը:

[2] Երկու Սրտերի Հաղթանակը:

[3] Սա հնչեց Հրամանի պես:

[4] Նա ինձ հասկացրեց, թե ում մասին էր խոսում:

[5] Նրա Ներկայությունը ոչ միայն փառապանծ և վեհաշուք էր, այլ ուներ նաև Իր Աստվածայնության ողջ շքեղությունը, որից ես գլխապտույտ զգացի:

(Երբ ես լսեցի այս վերջին նախադասությունը, ես զգացի Աստծո զարմանքը, բայց և միևնույն ժամանակ զգացի, որ Նա «ցնցված էր», և Նրա հանդիմանությունը նման էր մոր հանդիմանությանը, որը զարմացնում է իր զավակին, ինչ-որ սխալ բան անելիս: Ոչ մի խստություն չկար. կար հիասթափություն և տխրություն: - Մինչ Նա ասում էր այս մի քանի խոսքերը, Նա ինձ հասկացրեց, որ դրանք նախկինում էլ է ասել: Եվ մինչ Նա կավարտեր նախադասությունը, Նա լուսավորեց իմ միտքը և ինձ հասկացրեց, թե որտեղ և ում է Նա ասել այդ խոսքերը: Պատգամն ավարտվելուց հետո, ես բացեցի Ծննդոց 4:10 և կարդացի բառ առ բառ, երբ Նա զարմացրեց Կայենին, որը միայնակ քայլում էր բաց դաշտում, եղբորը՝ Աբելին, սպանելուց հետո: - Հենց դրանով ես հասկացա, թե որքան ծանր էր իմ մեղքը...)

<u>Դու պատկանում ես Ինձ</u> և, չնայած դու մի ոչնչություն ես, Իմ Սերը միշտ պիտի պահի քեզ, թեև դու թշվառ ես, Իմ Ողորմությունը միշտ քեզ կբերի դեպի քո ժառանգությունը: Այո՛, այն կբերի քեզ Իմ Սուրբ Սրտի մեջ: Դու <u>ոչ մի</u> արժեք չունես Իմ Փառքի առջև և Իմ Սրբերի առջև[2], բայց երբ դու Իմ Գրկում ես, դու թաքնված ես Իմ մեջ, դու Նրա մեջ ես, ով արդարացնում է մեղավորներին[3]: Եվ այդ ժամանակ, քո հոգին, տկար փոքրիկ արարած, համարվում է արդարացված Իմ պատճառով:

Սա քո անկումներից մեկն էր, բայց որքան էլ ծանր էր քո մեղքը[4], հիմա շնորհը կլինի նույնիսկ ավելի մեծ, քանի որ դու հասկացար[5], թե ինչ ես արել, և եկել ես Ինձ մոտ՝ Իմ ներողամտությունը խնդրելու: Հիմա դու նորից կենդանի ես, ոչ թե քո սեփական զորությամբ, այլ Իմ Զորությամբ:

Միշտ Ինձ մոտ արի նախքան որևէ որոշում կայացնելդ և խորհուրդ հարցրու Ինձանից: Ես միշտ քեզ լավ խորհուրդ կտամ, և Ես միշտ կբավարարեմ քո կարիքները: Հետևի՛ր Իմ պատվիրանին, որ տվել եմ քեզ, և մի՛ վշտացրու Ինձ: Հիշեցրո՛ւ բոլորին, թե Իմ Հոգու գեղեցկությունը ինչ է բերում մարդկությանը: Այն[6] բերում է նրանց խաղաղություն, սեր, հեզություն, բարություն, համբերատարություն, ճշմարտացիություն, մեծահոգություն, ինքնատիրապետում և գթասրտություն, որոնք պիտի առաջնորդեն նրանց դեպի հավիտենական կյանք:

Երբե՛ք չհոգնես, զավակս, Ինձ համար աշխատելուց, և չնայած քո խաչերը շատ են, մի՛ բողոքիր: Եթե դու ձեր ժամանակների Իմ ամենատառապած պատգամատարն ես, այդ նրանից է, որ դու գալիս ես

---

[1] Չնայած նախորդ պատգամում Աստված ինձ համար պարզեց, որ ես մենակ չպետք է կատարեի այդ շատ երկար ուղևորությունը, ես հետևեցի հայր Օ'Քերոլի ասածին, որ կարող էի ճամփորդել ինքնուրույն, և մի ընկերոջ խորհրդին, որ տոմսերն ավելի էժան կլինեն, եթե ես հանդիպեմ (...) Ինդոնեզիայում, փոխանակ (...) ճամփորդեր Շվեյցարիայից ինձ հետ: Այդ պատճառով ես համաձայնվեցի...

[2] Ես ուրախ էի լսելու այս բառերը, որ բոլորը կարդան դրանք, հատկապես նրանք, ովքեր երբեք չեն դադարում ինձ բարձր պատվանդանի վրա դնելուց՝ ասելով. «Վասուլա, Վա սո՛ւլա», փոխանակ ասելու. «Աստվա՛ծ, Աստվա՛ծ, փառք լինի Աստծուն»:

[3] Ներում է մեզ:

[4] Ձենթարկվելու մեղքը:

[5] Մինչ գրում էի սա, Նա խնդրեց ինձ ավելացնել. «Ոչ թե ինքնուրույն, այլ Իմ Շնորհի միջոցով...»:

[6] Հոգու գեղեցկությունը

Ինձանից, և Խոսքը, որը տրված է քեզ, ճշմարիտ է: Իմ Խոսքը վկայություն է տալիս, որ այս սերնդի ուղիները չար են և կապված են դժոխքին, բայց Ես պիտի մնամ քեզ հետ, և Իմ Սուրբ Հոգին պիտի լինի քո Պահապանն ու քո Ճրագը, քո Ուրախությունն ու քո Զորությունը: Նա քեզ ուրախ պիտի պահի, քանի որ դու թաքնված ես Մեր մեջ, որ Երիցս Սուրբ ենք:

Արի Ինձ մոտ լիակատար վստահությամբ և հիշի՛ր. Քո փորձությունները Իմ Փառքն են... ic

«Գթասիրտ, ողորմած է Տերը,
համբերատար ու ողորմաշատ:
Տերն իսպառ չի բարկանում
և հավիտյան ոխ չի պահում:
Մեր մեղքերի համեմատ
չվարվեց մեզ հետ,
ոչ էլ մեր անօրենության համեմատ
հատուցեց մեզ»:[1]

[1] Սաղմ. 102:8-10

1997

Հունվարի 7, 1997

Տե՞ր:

Ես եմ:

Ես քեզ տվել եմ Ինձ կանչելու և Իմ ընկերակցության մեջ լինելու այս շնորհը: Ուստի հիմա ես տալիս եմ քեզ Իմ Խաղաղությունը: Այս պահերը հրճվանք են պատճառում Ինձ: Շրջահայաց եղիր և հենվիր Ինձ վրա:

- Աստ՛ Ինձ, փոքրիկ, դու ուրա՞խ ես, որ Ինձ հետ ես գտնվում, ինչպես հիմա:

Ինչպե՞ս կարող եմ ուրախ չլինել:
Յահվեն իմ կողքին է
և Նա բարի է իմ հանդեպ:
Դու իմ կողքին ես,
ուստի ես ոչնչից չեմ վախենում:

Սուրբ Հոգին իմ կողքին է,
ինչպես մի պայծառ արև,
և իմ առաջնորդն է
ու ապահովությունը:

Ես փառաբանում եմ Քեզ,
Աստվա՛ծ իմ,
ես շնորհակալություն եմ հայտնում
Քեզ այն ամեն բարիքի համար,
որ Դու անում ես ինձ:

Երանելի ես դու, որ ստացար այս պարգևը Հորից. այն ազատ արձակեց քեզ և քո ողջ ընտանիքը: Այն շատ մարդկանց ազատեց... Թույլ տուր Ինձ հիմա հանգստանալ քո մեջ, իսկ դու արի՛, սիրելիս, և հանգստացիր Իմ մեջ: Թող ոչինչ չվնասի քեզ, թող ոչինչ չհեռացնի քեզանից քո խաղաղությունն ու քո ուրախությունը: Եթե Ես ասում եմ «քո», այդ նրանից է, որ Ես առաջարկել եմ քեզ Իմ Խաղաղությունը որպես ընծա, ինչպես և Իմ Ուրախությունը: Պահի՛ր դրանք, գուրգուրի՛ր դրանք և պաշտպանիր դրանք:

Արի՛, Ես և դու պիտի շարունակենք վերականգնել Իմ Տունը: Եղի՛ր շրջահայաց: Ես պիտի հսկեմ քեզ: Մե՞նք, մե՞զ: Ես երբեք հեռու չեմ քեզանից: Աստված-քեզ-հետ-է, և Ես օրհնում եմ քեզ:

Հունվարի 13, 1997

(Մանիլա)

Երբե՛ք չկասկածես Իմ հավատարմությանը: Խաղաղությո՛ւն քեզ: Ես երբեք հեռու չեմ քեզանից:

Քո Արարիչը քո Ճրագն է, ուստի մի՛ վախեցիր այս խավարում: Արարված Իմ Սիրո մեջ այս Սիրո Պատգամի համար, Ես օրհնում եմ քեզ: Վասո՛ւլա, Ես՝ Հիսուս, գոհ եմ քո աշխատանքից... Թույլ տուր, որ Իմ Ձեռքը բացահայտի էլ ավելի մեծ բաներ, որի համար Ես խնդրում եմ քեզ մնալ Ինձ հավատարիմ: Թույլ տուր, որ Իմ Ձայնը լսվի, որպեսզի Ես սրբագործեմ Իմ ժողովրդին Ուսուցանելով նրանց:

Վասո՛ւլա, ընտրյա՛լս, Ես ապացուցել եմ Իմ Սերը քո հանդեպ, ցույց տալով քեզ Իմ Սուրբ Սրտի քաղցրությունն ու գթառատությունը: Հիմա Ես քեզանից միայն փոխադարձ սեր եմ խնդրում. սեր՝ Սիրո դիմաց, սիրտ՝ Սրտի դիմաց:

Ես օրհնում եմ քեզ Իմ գթառատությամբ: Գնա՛ խաղաղությամբ և կրիր Իմ Խոսքը: ic

Հունվարի 26, 1997

Տե՛ր, ես սիրում եմ
Քո Սուրբ Սիրտը,
որը հեղեղում է ինձ Իր Սիրով:
Այո՛, հոսող ջրի նման է
իմ Թագավորի Սիրտը: Իսկ հիմա
իմ Թագավորն ասում է ինձ.

«Ինչո՞ւ ես դու Ինձ
սպասեցրել այսքան երկար:
Ծաղիկներն արդեն
երևում են երկրի վրա:
Աղջի՛կս, որին այնքա՛ն
կարոտով եմ սպասել, արի՛ Ինձ մոտ:
Արի՛, որ զգաս
Իմ Սրտի քաղցրությունը»:

Ես քո աստվածային Ամուսինն եմ, որ քո ականջը բաց ա րեց լսելու Իմ քաղցր զրույցը, և քո մեջ բոցի պես ցանկություն բորբոքեց: Ես ներս մտա քո կյանքի մեջ, որ ցույց տամ քեզ իմ գեղեցկությունը, որպեսզի քո հոգին տեղի տա Իմ հմայքներին: Ես եկա նախապատրաստելու քո սիրտը՝ արթնացնելով քո սերը, որպեսզի դու խմես Իմ Սրտի Ակունքից, որը գինուց էլ քաղցր է: Դրանից հետո դու կփնտրես Իմ հոյակապ կատարելությունը և ինքդ քեզ կամավոր Ինձ կառաջարկես: Հետո Ես, Ես

Իմ կողմից, կտոնեմ Իմ Զորությունը ու Իմ Փառքը քեզ հաղթած լինելու համար[1]:

Ա՜հ, Թագավորի-աղջի՛կ[2], Ես կանչեցի քեզ Իմ հրեշտակների առաջ, որպեսզի դու և քո սերունդը ճաշակեք Իմ Սերը: Իսկ այժմ, թանկագի՛նս, որ մշտապես դողում ես խաբվելու վախից, քո Տերը՝ Հայրը և քո կյանքի Աստվածը, ասում է քեզ. մի՛ վախեցիր, քանի որ աղոթքի, սիրո և խոնարհության վրա հիմնված սիրտը խույս չի տա փորձության ճգնաժամային պահին, այլ հեռու կքշի դևերին:

Չե՞ս նկատել, թե ինչպես եմ Ես քեզ վրա փչել խունկի պես անուշահոտ բուրմունք, որ գրավեմ քո ուշադրությունը: Եվ հիմա, որ դու Ինձ հետ ես, թույլ տուր հարցնել քեզ. դու գիտե՞ս, թե Իմ Սուրբ Սիրտը ինչ է ցանկանում[3]: Ցանկանում է, որ դու դաս ինձ մոտ ինչպես շուշան, որ Ես հրճվեմ քո սրտով, երբ ամբողջապես կլանեմ այն Իմ Սեփական Սուրբ Սրտի մեջ, սեր՝ Սիրո դիմաց, սիրտ՝ Սրտի դիմաց: Արի՛ այնպես, ինչպես օվկիանոսն է կուլ տալիս ջրի մի կաթիլը, այդպես էլ Ես եմ ցանկանում, որ դու անէանաս ու կորչես Իմ մեջ:

Ես սիրում եմ քեզ խելացնորության աստիճան, և Ես կցանկանայի տանել քեզ Իմ Սրտի Հարսանեկան սենյակը, միմիայն Ինձ համար, միայն Ես և դու, որպեսզի միասին մենք կարողանանք կիսել առանձնությունը, կամ, միգուցե դու ուխտագնացությո՞ւն ես ուզում: Դու[4] ա՞յդ ես ուզում[5]: Մենք կգնանք Իմ Սրտի պարտեզները, և մեր ընկերությունը կլինի այնպիսին, որ նույնիսկ Իմ հրեշտակները կուզենային լինել քո տեղը:

Ա՜հ, եթե միայն իմանայիր, սիրելիս, այն սերը, որ Ես ունեմ քո հանդեպ... Ինչ էլ որ ընտրես, ուխտագնացություն թե առանձնություն, դու ստիպված չես լինի քայլել: Ես կտանեմ քեզ Իմ գրկում և հանգիստ կտամ քո ոտքերին, որոնք երկար ժամեր կանգնած մնացին Ինձ համար[6] քո առաքելության ընթացքում ծառայելով Ինձ: Մի՞թե ցողը չի մեղմացնում շոգը: Այդ նույն ձևով Ես կհանգստացնեմ քո ոտքերը:

Վասո՛ւլա, դու հասկացե՞լ ես, թե ինչու եմ Ես եկել քեզ մոտ որպես Սուրբ Սիրտ: Ես եկել եմ այս ձևով, որպեսզի հենց այս Սրտից[7] դու Ողորմություն ստանաս... Այո՛, ոչ միայն դու, այլև դուք բոլորդ: Արի՛ հիմա: Ինչո՞ւ ես դողում: Մի՞թե Ես քեզ չեմ պսակել Ինձ՝ մատանիով: Մի՞թե Ես քեզ թույլ չեմ տվել մի ակնարկ նետել Իմ Սրտի բերկրանքների վրա: Մի՞թե Ես քեզ ցույց չեմ տվել Իմ Սրտի բարությունը: Ուրեմն ինչո՞ւ է այս վարանումը:

Տե՛ր, ես պարզապես մի փոքր անգամ չեմ հասկանում, թե որոնք են քո ցանկությունները: Այն, ինչ Դու ինձ առաջարկում ես և ցանկանում

---

[1] Դա նշանակում է, որ Նա իմ մեջ հաղթահարեց չարին:
[2] Վասիլիկի նշանակում է նաև «Թագավորի աղջիկ»:
[3] Ես չկարողացա դուշակել:
[4] Սա նշանակում է վերջինը:
[5] Ես հոգոց հանեցի, չիմանալով, թե իմ Տերը ինչ է ցանկանում և ինչ նկատի ունի:
[6] Այս վերջին բառերը Հիսուսն ասաց մի հուզական երանգով: Նա թեթևակիորեն ցնցեց Իր աստվածային Գլուխը:
[7] Հիսուսն Իր ցուցամատով ցույց էր տալիս Իր Սիրտը:

կատարել ինձ հետ, այդ ուխտագնացությունը կամ առանձնացումը, ես չեմ հասկանում:

Սիրելի՛ս, ում ես հարուցեցի և կանչեցի Ինձ համար և Իմ Փառքի համար, արի՛ հիմա և զվարճացիր Իմ մեջ: Ես պիտի լինեմ քո ուրախությունը և քո ժպիտը, ես պիտի լինեմ քո խնջույքը: Ես թույլ կտամ, որ դու օգտվես Իմ Սրտի Գանձերից:

Նայի՛ր Ինձ, նայիր Իմ Սրտին... Տե՛ս, մի՞թե ես չեմ բացել Իմ Սրտի դարպասը քեզ համար: Իմ Արքայական Սիրտը առաջարկվեց քեզ: Արի՛ և գտիր քո ուրախությունն Իմ մեջ:

Եթե աշխարհը երդվել է վնասել քեզ, ես՝ Իմ հերթին, երդվել եմ պաշտպանել քեզ նրանց թույնը կլանելուց, և նշանակել եմ քեզ Իմ Փառքի համար: Եթե աշխարհը դավաճանում է, այդ քեզ ապացուցելու համար էր, որ միայն ես եմ միշտ հավատարիմ Իմ Սիրո և Իմ ընկերության մեջ: Ուստի, դո՛ւ, ում ես սնեցի, ասում եմ քեզ. մի՛ վհատվիր նրանից, ինչ պատահեց քեզ հետ: Ես թույլ տվեցի, որ այդ բեռը ընկճի քեզ Իմ մեծագույն փառքի համար:

Ես, Իմ թանկագին սեր, պատրաստ եմ հիմա ամեն ինչ անել քո հոգևոր աճման համար և քո հոգու սրբագործման համար: Քո ընկերակցությունն Ինձ հետ կատարյալ կլինի, և ես ավելի ազատ կզգամ քեզ բերելու Իմ Բազուկների մեջ: Ես ավելի ազատ կլինեմ քեզ հետ հեռու փախչելու և մեր միությունը ամրապնդելու համար:

Ես մի անգամ քեզ ասել եմ, որ նույնիսկ քո ամենամոտ ընկերները քեզ չպիտի հասկանան, և քեզ խոր վերքեր պիտի պատճառեն, և այդպես անելով, դու պիտի դառնաս նրանց մտքի զոհը, բայց նրանք նույնպես պիտի դառնան իրենց սեփական մեղքի զոհերը: Ես միգուցե կպարգևատրեմ նրանց հետագայում այն ամեն լավ բաների համար, որ նրանք արել են, և ես չեմ մոռանա նրանց զոհաբերությունները, բայց ես նրանց խիստ հանդիմանելու եմ Իմ ընտրյալի հանդեպ իրենց խստության համար, նրանց կարեկցության և ազնվության պակասի համար...

Աղավնյա՛կս, դու երբեք չես գտնի կատարյալ սիրտ այս աշխարհում. ո՛չ, այն գոյություն չունի: Ես միակ Սիրտն եմ քո Մոր Սրտի հետ միասին, որ կատարյալ և եզակի ենք Մեր Սիրո և Հավատարմության մեջ:

Արի՛ Ինձ մոտ, որ ես քեզ տամ Իմ Սիրո պարգևը: Ես ուրիշ այնքան շատ պարգևներ եմ պահել քեզ համար, սիրելիս: Արի քո Ամուսնու մոտ և թույլ տուր Ինձ միավորել քեզ Իմ Մարմնի մեջ, որտեղ դու կարող ես խաղաղ առանձնության մեջ լինել Ինձ հետ: Ես կբռնեմ քո ձեռքից և կտանեմ քեզ Իմ Սրտի սենյակը, որտեղ մենք կգրկախառնվենք մեր սիրո մեջ: Իմ Սիրով ես կվերականգնեմ և կսփոփեմ քո հոգին՝ Իմ բերանի համբույրներով[1]: Ես կվերականգնեմ քեզ՝ ուժեղացնելով քո սերը: Եվ դու, այդ սիրո մեջ, թեև այն կատարյալ չէ, կսփոփես քո Մխիթարիչին՝ դառնալով բալասան Իմ Վերքերի համար:

Եվ մինչ ես՝ քո Թագավորը, կհանգստանամ քո բազուկների մեջ՝ վայելելով քո սիրո յուրաքանչյուր կաթիլը, ես ժամանակ առ ժամանակ քեզ ցույց կտամ, քո՛ւյր Իմ, Իմ Արքայական Սիրտը, այս Սիրտը, որ քեզ

[1] Երգ Երգոց 1:1

աճեցրեց Մեր[1] Գավիթներում, այս Սիրտը, որ Ամենն է: Այս Սիրտը, որը շռայլորեն մատուցում է Իրեն ողջ մարդկությանը: Այս Սիրտը, որ հորինել է երաժշտական մեղեդիներ և երգեր Իր սիրելիների համար: Այո՛, Նա՛, ով երգում է հիմա քեզ համար, մարդկության Սիրահարն է, ողջ երկրի մարդկության Ամուսինը[2]:

Թեև ձեզանից ոմանք, մինչև այսօր չեն հիշում իրենց Աստծուն, Ես՝ Իմ Հավատարմությամբ և Իմ Սիրո մեծությամբ, գալիս եմ ձեզ մոտ, որ առաջարկեմ ձեզ Իմ Սիրտը: Սրանից մեծ առաջարկ ոչ մեկը չի կարող անել:

Ուրեմն թող ձեր աչքերը հիանան Իմ Սրտի գեղեցկությամբ: Դա մեծ Զոհաբերության Սիրտն է: Դա Նոր Ուխտի Սիրտն է: Դա Ճշմարիտ Որթատունկի Սիրտն է: Դա այն Սիրտն է, որն ամենամոտն է Հոր Սրտին: Դա այն Սիրտն է, որը փայլում է խավարում, և որին խավարը երբեք չկարողացավ հաղթել: Դա Սիրտն է մարմնացյալ Բանի և որն ապրեց ձեր մեջ: Դա այն Սիրտն է, որն ապրում է ձեր սրտում, որպեսզի դուք բոլորդ դառնաք Իմ Սրտի սիրտը և Մեր Սրտի սիրտը: Դա նահատակների և մարգարեների Սիրտն է, որոնք ամբողջ սրտով կատարեցին Հոր Կամքը և փառավորեցին Նրան իրենց հաստատակամությամբ, իրենց հնազանդությամբ և իրենց կատարյալ հպատակությամբ: Դա կատարյալ Միասնության Սիրտն է, որը տարբերություն չի դնում ձեր միջև, քանի որ դուք բոլորդ պատկանում եք այդ Սրտին: Դա այն Սիրտն է, որն աղոթեց Հորը, որ դուք բոլորդ մեկ լինեք Մեր մեջ...

Ինչի՞ է նման Տիրոջ Սիրտը: Տիրոջ Սիրտը նման է Սիրո և Ողորմության անսահման օվկիանոսի: Այն նման է անհամեմատելի և անգնահատելի գանձի: Ով որ ձեռք բերի այն, երբեք բաց չի թողնի, գիտենալով, որ նրա մեջ է հավիտենական կյանքը:

Իմ Սիրտը նման է Սիրո մի բոցավառ հնոցի, պատրաստ կլանելու ձեր սիրտն իր Սիրո մեջ: Իմ Սիրտը Լույս է, ավելի պայծառ, քան բոլոր համաստեղությունները միասին վերցրած: Ժամանակը սահում է արշալույսի և աղջամուղջի միջև և ամեն ինչ արագորեն անցնում է, բայց Իմ Սերը հաստատուն է և հավիտյան:

Եկե՛ք դուք բոլորդ, որ ծարավ եք, բայց նույնիսկ չգիտեք այդ մասին: Եկե՛ք և ճանաչեք ձեր Աստծո այս Սիրտը, որպեսզի կարողանաք հասկանալ Ինձ և ճանաչել Ինձ որպես Երիցս Սուրբ: Եկե՛ք և տիրապետեք այս Սրտին, որպեսզի ձեր սիրտը ուղղեք Իմ Թագավորության վրա և այն ամենի վրա, որ արդար է: Եկե՛ք և ձեր սիրտը դրեք Իմ Սրտի մեջ, որ մի օր Ես կարողանամ ճշմարտապես ասել ձեզ.

«Արի՛ զավակս, արի՛ և կիսիր Իմ Գահը Ինձ հետ: Ես միշտ ճանաչել եմ քեզ, Իմ յուրայի՛ն, Իմ մնացո՛րդ: Ոսկո՛ր Իմ Ոսկրի, մարմի՛ն Իմ Մարմնի, ե՛կ, Իմ մասնիկ: Արի՛ և ժառանգիր այն, ինչ քոնն է եղել աշխարհի հիմնադրումից ի վեր: Շո՛ւնչ Իմ Շնչի, դու պատկանում ես Նրան, ով տանում է քեզ սերտորեն միանալու Մեր Մեկ բնության հետ:

Ա՛Հ Իմ Սրտի պտուղ, ահա թե ինչ ցույց պիտի տամ քեզ այն ժամանակ, երբ Ես, ինչպես մի բավարարված երեխա, հանգստանալիս կլինեմ քո

[1] Սուրբ Երրորդության
[2] Վկայակոչում՝ Ես. 54:5

գրկում: Խոստացի՛ր Ինձ, Իմ Վասուլա, սիրելիս, թույլ տալ քո Փեսային անխռով հանգստանալ քո սրտում[1]:

Սովորի՛ր քո Սիրեցյալից. Ես Սրտով հեզ և խոնարհ եմ, և Իմ մեջ քո հոգին միշտ իր հանգիստը կգտնի: Թող Ես էլ նույնը գտնեմ քո մեջ, թող որ Ես գտնեմ հեզություն և խոնարհություն:

«Ես չեմ ուզում
անհանգստացնել իմ Սիրուն,
Ո՛չ էլ արթնացնել նրան,
մինչև նա չցանկանա արթնանալ»:[2]

Ուրեմն սովորեցրու ինձ
լինել այնպիսին, ինչպիսին
Դու կցանկանայիր որ լինեմ,
որպեսզի ես հաճելի լինեմ Քեզ:

Իմ քաղցրությունը, որ դու զգում ես քո սրտում, պիտի լինի Իմ Ներկայության հիշեցումը սրտումդ: Բայց հիշիր նաև, որ քեզ հարկավոր է միայն ասել. «Ես սայթաքում եմ», և Իմ Սերը անմիջապես կօգնի քեզ՝ շռայլելով հազարավոր սփոփանքներ, սիրելիս:

Ես օրհնում եմ քեզ՝ տալով քեզ Իմ Սիրո Համբույրը: Ես՝ Հիսուս Քրիստոսը, միշտ քեզ հետ եմ: Մե՞նք, մե՞ զ: 1C

Հունվարի 28, 1997

Ո՛վ Տեր, տո՛ւր ինձ Քո Ուժը՝
հռչակելու Քո Խոսքը եռանդով:
Շատերն են անհամբեր սպասում՝
լսելու Քո Սիրո Խոսքը
լռության մեջ և ծարավով:

Թող Քո Խոսքերը մեկ առ մեկ
ընկնեն նրանց վրա,
որ թարմացնեն նրանց:
Տե՛ս, թե ինչպիսին են
նրանք Քո հավաքներում՝
բերանները բաց,
կարծես ուզում են որսալ
տարվա վերջին անձրևները:
Հանուն Քո մեծ Սիրո,
թող Քո անձրևն ընկնի
այն հողերի վրա,
ուր ոչ ոք չի ապրում, և
անբերրի հողը դարձնի պարտեզներ:

---

[1] Ես հասկացա, որ եթե իմ սրտում խաղաղություն չլինի, ես կխախտեմ այն անդորրը, որն Իմ Փրկիչը կցանկանար գտնել:
[2] Երգ Երգոց 2:7

Ըմպելիք տուր
ամայի անապատներին՝
աճեցնելով խոտ այնտեղ,
ուր ամեն ինչ չորացել էր:

Արի՛, Քո Տերունական շուքով,
և խելահեղության հասցրու
սրտով հպարտներին:
Արի՛ և ցած քաշիր
Քո Արքայական Գավազանով,
ամբարտավաններին իրենց գահերից
և բարձրացրու հեզերին ու խոնարհներին:
Հետո դուրս նետիր ինձ
փոթորկի մեջ,
քանի որ իմ վստահությունը
Քո հանդեպ կատարյալ է,
և ապահովության
իմ հույսը նույնպես:
Ես չեմ վախենում վնասվելուց,
իմ կողքին
Քո Տերունական Ներկայությունն է՝
երգելով բալլադներ ինձ համար
Քո Հաղթանակների մասին:

Եվ մինչ Դու ծիծաղում ես,
Քո ծիծաղը հնչում է
վազող գետակների նման:
Դու բարձրացնում ես ինձ
Քո թևերի վրա,
որ սլանամ երկնքում
և լինեմ մենակ Քեզ հետ,
որպեսզի Դու շշնջաս ինձ
Իմաստության գաղտնիքները:

Իմ Պահապան և իմ Բերկրանք,
Դու ավելի շատ
ուրախություն ես տալիս իմ սրտին,
քան ուրիշները երբևէ ունեցել են,
քան աշխարհի բոլոր գանձերն ու
թագավորությունները ունենալիս:

Իմ Սրտի Ուրախություն,
ցո՛ւյց տուր մեզ բոլորիս
Քո Սուրբ Դեմքի լույսը:

Աղջի՛կս, Ես տալիս եմ քեզ Իմ օրհնություններն ու Իմ խաղաղությունը:

Ես հրաշալի բաներ պիտի անեմ, քանի որ Ես ջուր դուրս պիտի բերեմ Իմ Սրտի աղբյուրներից: Եվ ձեր այրվող դեմքերը պիտի թարմանան: Ես պիտի լինեմ ձեզ զովացնող ստվերը այս փոթորկալից շոգի դեմ, որի մեջ

եք դուք: Ես պիտի գամ, աղջի՛կս, Իմ Տերունական շուքով և Իմ փառավորությամբ, որ տապալեմ սրտով հպարտներին: Եվ քանի որ Ես դրել եմ Իմ գահը քո մեջ, աղջի՛կս, դու չպիտի տրորվես ու խեղվես այս փոթորկի մեջ: Քո Սիրելին տանելու է քեզ Իր Թևերի վրա, որ սլանաս երկնքում՝ քեզ վրա անձրևի նման Իմաստության խոսքեր հեղելով Իմ Սրտից[1]:

Իսկ հիմա Քո Պահապանը և քո բերկրանքը խնդրում է քեզ հենվել Իր Սրտի վրա... Ա՛հ սիրելի՛ս, ի՞նչն է քեզ ստիպում հեռու փախչել Իմ հրավերից: Չէ՞ որ Ես քո Արարիչն եմ, և Ես իրավունք ունեմ հրավիրել[2] քեզ հանգստանալու Իմ մեջ քո աշխատանքից հետո: Քո բերանը անդադար Ճշմարտությունը հայտարարեց Իմ բոլոր Հավաքներում, և քո շուրթերից գովաբանության և հարգանքի խոսքեր ելան Ինձ՝ քո Աստծո համար: Քո աչքերը երբեք չհեռացան Իմ Ներկայությունից, այլ հետևեցին Իմ ուղիներին: Օրհնյա՛լ լինես, որ քո Արարչին դարձրիր այդպես երջանիկ:

Հետո, Իմ Անունը լսելիս, քո ականջը բացվեց, և Իմ Բերանից դուրս եկող յուրաքանչյուր բառ լսվեց որպես մի մեղեդի քո մեջ, ինչպես հազարավոր տաղասացներ, որոնք երգում էին իրենց օրհներգերը: Այդպես Իմ Խոսքը լսվեց քո սրտում, երբ դու բաց արեցիր քո ականջը՝ ստանալու Իմ ամենաքաղցր սաղմոսները: Քո ականջը փոքր ինչ Ինձ տրամադրելով, դու ստացար Իմաստության ասացվածքները, որպեսզի Ես՝ Տերը, հիշվեմ Իմ Ողորմությամբ ձեր բոլորի կողմից: Ո՛չ մեկը չի կարող ասել. «Նա թողել է մեզ թշնամու ժանիքների մեջ...»:

Ա՛հ... Հետո Ես խնդրեցի քեզ վեհանձն լինել և առաջարկել Ինձ քո սիրտը, ի նշան քո սիրո: Շտապելով լինել վեհանձն, սիրելի՛ս, դու քո սիրտը տվեցիր Ինձ՝ արագորեն դնելով այն Իմ Աստվածային Ջեռքերի մեջ, որպեսզի Ես, Իմ հերթին, լցնեի այն սիրով, կայունությամբ և հաստատակամությամբ: Այդ ժամանակից սկսած, Ես երդվեցի պահել քո սիրտը միայն Ինձ համար և պահպանել այն Աչքիս լույսի պես:

Եվ մինչ Իմ Աչքերը սևեռված էին այդ փխրուն սրտին, Ես ասացի. «Այս փխրունության միջից Իմ Խոսքը պիտի լսվի՝ ասվելով բոլոր ազգերին. Աստված մոտ է ձեզ, Նա կազատի բոլոր նրանց, ովքեր կկանչեն Իրեն: Եվ բոլոր նրանց, ովքեր ծարավ են, Նա ջուր կտա: Նա կկոչեցնի աղքատներին և տկարներին, և Նա շատերի կյանքը կփրկի նախքան Նրա մեծ Օրը գալը»:

Քո վեհանձն նվիրաբերության պատճառով, Ես խոստացա քո սրտից պատրաստել մի ցնծալից զոհաբերություն: «Ես՝ նրա Արարիչը և Ամուսինը[3], պիտի երգեմ այդ սրտին Իմ մոտիկության մասին, որպեսզի

---

[1] Ես տեսա մեր Տիրոջը և Թագավորին, մինչ մենք սլանում էինք երկնքում, նստած կողք-կողքի՝ ինձ հետ: Նա թեքվեց դեպի ինձ և ծածկեց գլուխս սպիտակ ժանյակե մի չափազանց գեղեցիկ քողով, որն իր սպիտակությամբ շողշողում էր, ասես նրա վրա աղամանդներ կային: Նա քողով ծածկեց ինձ այնպես, որ միայն դեմքս էր երևում: Ես հասկացա, որ քողը խորհրդանշում էր Նրա Իմաստության Խոսքերը, որոնք Նա հեղում էր ինձ վրա՝ ծածկելով ինձ ամբողջությամբ:

[2] Հիսուս նկատի ուներ Իր առաջարկությունը՝ Իր Մարմնում առանձնանալու կամ ուխտագնացություն կատարելու մասին (Հունվ. 26, 97թվի պատգամը): Իրականում ես չէի պատասխանել այդ հրավերին:

[3] Վկայակոչում՝ Ես. 54:5

այն փնտրի միայն Իմ Սուրբ Դեմքը, և ձգելով նրան Իմ Սուրբ Սրտի մեջ, քո սիրտը պիտի մերժի այն ամենն, ինչ ես չեմ, բայց պիտի ծարավի ու ցանկանա այն ամենը, ինչ »:

Այդ ժամանակ քո սիրտը մեծ ցանկություն պիտի ունենա սպասարկելու Ինձ՝ քո Աստծուն, միայն Իմ Արքայական Սրտի վրա կենտրոնացնելով քո բոլոր հակումներն ու հաճույքները, որ ունեցել ես այլուր: Այո՛, քո բոլոր հակումները, քո տկարությունները, քո հաճույքները, քո վշտերը, քո ուրախությունները, քո տառապանքները, քո հաճելի ժամանցները, քո արցունքները, ամեն ինչ, այո՛, ամեն ինչ պիտի մատուցվի Իմ Սրտին, ինչպես մեկը մատուցում է սիրեցյալին վարդերի մի փունջ: Ահա թե ինչ եմ Ես տենչում ձեզանից յուրաքանչյուրից, Իմ Սրտի խորքից:

Ապա Քո սիրտը ուղղելով Իմ Սրտի մեջ, Ես գիտեի, որ այդ մոտիկության մեջ Ես պիտի գտնեմ Իմ հանգիստը և Իմ բերկրանքը: Քո հոգուն ուրախություն պատճառելու համար, Ես քեզանից Իմ ոչ մի գաղտնիքը չեմ թաքցնի: Իմ Ձեռքերը, որոնց մեջ դու դրեցիր քո սիրտը, զգայուն և կարեկից են, սիրելիս, ուստի մի՛ վախեցիր[1]... Երկարի՛ր ձեռքերդ դեպի Սրբարանը[2]...

Ես տվել եմ քեզ մի զույգ ձեռքեր, որոնք Ես համբուրեցի և օծեցի օրհնությամբ, որպեսզի նրանք դուրս քաշեն Իմ Սիրտը բոլորող փշերը: Ես օրհնել եմ այդ ձեռքերը, որ չհոգնեն գրելուց և մնան կապված Իմ Ձեռքերին ողջ հավիտենության համար: Ես օծել եմ դրանք, որ արարողության[3] վերջում այդ ձեռքերը փառքի պսակ դնեն Իմ Գլխի վրա: Ձե՞ս կարդացել. «Հմուտ ձեռքերի գործը կարժանանա գովասանքի»[4]: Ի՞նչ կարող եմ Ես փոխարենը քեզ տալ, ընտրյա՛լս, այն բոլոր մղոնների համար, որ քայլեցիր Ինձ համար, և այն բոլոր ժամերի համար, որ դու կանգնած մնացիր հանուն Ինձ Իմ հավաքներում:

Իմ քաղցի դեմ
Դու ինձ տվեցիր հաց[5] Երկնքից,
իմ ծարավի դեմ Դու ինձ տվեցիր
Քո Կրծքից դուրս ցայտած
կենդանի ջուր:

Դու գթասիրտ ու սիրալիր ես
եղել իմ հանդեպ,
լեցուն բարությամբ,
և Դու երբեք չես լքել ինձ:

Ես աճեցի Քո Գավիթներում,
որտեղ Դու սեր տածեցիր

---

[1] Հետո, նայելով իմ ձեռքերին, և դրանք վերցնելով Իր Ձեռքերի մեջ, Նա ասաց այն, ինչ հետևում է:
[2] Սրբարան ասելով, ես գիտեի, որ Նա նկատի ունի Իրեն: Նա բռնեց իմ երկու ձեռքերը և մինչ պահում էր դրանք, ասաց այն, ինչ հետևում է:
[3] «Արարողություն» բառն օգտագործելով Հիսուս նկատի ունի «առաքելությունը»:
[4] Սիրաք 9:24
[5] Նշանակում է «հոգևոր մանանա»:

և հրապուրեցիր իմ հոգին,
և այն ամենն, ինչ ես ստացել եմ,
եկել է Քեզանից:
Դու ինձ հետ խոսեցիր սիրտ սրտի և
թույլ տվեցիր, որ ես
տիրանամ Քեզ և, ինչպես մի ճրագ,
որ փայլում է իմ գլխի վերևում,
Դու լուսավորեցիր իմ ճանապարհը,
որ ցույց տաս ինձ, թե որ
ճանապարհով ես պետք է գնամ:

Օրհնյա՛լ լինես Դու,
իմ Տեր և իմ Աստված,
հավիտյանս հավիտենից:
Դու ապահովել ես ինձ:
Այդ դեպքում ինչո՞ւ պետք է
ես պատիվ ունենամ ստանալու
որևէ մի բան ի պատասխան
Քո սեփական գործերի:

Ճշմարիտ է, ես քեզ ապահովել եմ ամեն ինչով, բայց քո աշխատանքների պտուղները հուզեցին Իմ Սիրտը: Դու ծառայել ես Ինձ կամավոր կերպով, և այդ թանկագին զոհաբերություններից Ես կարող եմ միայն հուզվել: Ուստի թույլ տուր Ինձ քեզ առաջարկել առանձնացում և ուխտադնացություն Իմ Մարմնի մեջ...

Քո Սուրբ Սիրտն ա՞յդ է ցանկանում:

Այո՛, այո՛... Արի՛, դու կհանգստանաս Իմ Մարմնում: Մոռացիր ինքդ քեզ Իմ մեջ, որպեսզի քո պաշարները վերցնես Ոտքերիցս սկսած մինչև վեր: Միայն Ես և դու: Մոտեցի՛ր Ինձ, դո՛ւ, որ տենչում ես Ինձ ու ամբողջապես լցրու քո պաշարներն Ինձանից: Ես կառաջարկեմ քեզ այս առանձնացումը և այս ուխտադնացությունը Իմ Մարմնի պարտեզներում: Ես կուղեկցեմ քեզ ամենուր և մինչև Իմ Սուրբ Սրտի հարսանեկան սենյակը, ուր Ես միշտ առաջնորդում եմ Իմ ընտրյալներին, որ նրանց վրա արտաշնչեմ Իմ հմայքները, ինչպես ընտիր զմուռսի բուրմունք: Երբ նրանք դնում են իրենց գլուխն Իմ Սուրբ Սրտի վրա, Ես թարմացնում եմ նրանց Իմ Կրծքից ելնող կենդանի ջրով: Եվ ինչպես մի համաձայնություն եղբայրների և քույրերի միջև, ինչպես ամուսին և կին, որ երջանիկ ապրում են միասին, մենք կվայելենք մեկս մյուսի ներկայությունը[1]:

Արի՛, սիրելիս, Իմ Ոտքերից ուժ ստացիր, որպեսզի քո սեփական ոտքերի համար ոչ մի բեռ ծանր չլինի կրել: Երբ քայլես Իմ ոտնահետքերով, որոնք պիտի լինեն քո ուղեցույցը՝ հետևելու Իմ

[1] Ես սկսեցի հասկանալ, որ Հիսուսն ուզում էր, որ ես ամբողջապես մենակ լինեի Իր հետ որոշ ժամանակ, և այդ էր պատճառը, որ Նա թույլ չտվեց ինձ նախապես ծրագրել ժողովներ մի քանի շաբաթվա համար: Հիսուս ցանկանում է, որ ժամանակ առ ժամանակ յուրաքանչյուր ոք առանձնանա Իր մեջ:

Սկզբունքներին, քո ընթացքը չպիտի խոչընդոտվի: Երբ դու քո ուխտադնացությունն ես կատարում Իմ Ոտքերով, դու քայլելիս քո ոտքերը երբեք չպիտի դնես ամբարիշտ մարդկանց ճանապարհին, ոչ էլ պիտի քայլես այն ճանապարհով, որով ամբարիշտն է գնում: Այլ Իմ Ոտքերը պիտի առաջնորդեն քեզ, որ դու խուսափես և մեջդ չրջես ամեն մի չարիքի հանդեպ ու անցնես դրա կողքով:
Կատարիր քո ուխտադնացությունը Իմ Ոտքերով, ուր նրանք կտանեն քեզ քայլելու հարթ ուղիով, որտեղ բոլոր ճանապարհները հաստատուն են շինված: Դու ո՛չ աջ պիտի շրջվես, ո՛չ էլ ձախ, այլ ոտքերդ մաքուր պիտի պահես չարից և չես մոլորվի Ճշմարտության ճանապարհից:
Եվ այդ ուխտադնացության մեջ, Իմ սիրելին կկանչի Իմ հրեշտակներին և Իմ սրբերին.

«Որքա՜ն ճիշտ է սիրել Նրան»:

Հետո Ես քեզ նորից ետ պիտի բերեմ Իմ հարսանեկան սենյակը, որ ցույց տամ քեզ, թե ինչպես եմ Ես խնամք տանում Իմ յուրայիններին և համտեսել կտամ քեզ Իմ քաղցր Սերը... Ինչո՞ւ է այդ ստվերը քո աչքերին, սե՛ր Իմ:

Ի՞նչ կասեն իմ յուրային ուղղափառներն այս ամենի համար[1]: Ահա Դու անուշաբույր յուղ ես լցնում ինձ վրա Քո Սուրբ Սրտի պատերի հետևից և առջևից՝ Քո բուրմունքը տալով ինձ, մինչ դու գրկել ես ինձ Քո աջ Բազկով: Նրանք սովոր չեն այսպիսի զրույցի:

Նրանք կսովորեն դրան, հենց որ իրենց հոգին երկինք գնա... Դու ուզո՞ւմ ես, որ Իմ Պատգամները արագորեն տարածվեն:

Այո՛ Տեր, ես կուզենայի որ ոչ մեկին չխանգարեն լսել Քո Պատգամը: Ես ուզում եմ այն, ինչ Դու ես ուզում: Ես ուզում եմ, որ ամեն ոք ականջ դնի Քո մեղեդիներին, որ բոլորն էլ կարողանան ասել. «Ես որդու և դուստրի պես եմ Ամենաբարձրյալի համար, ում սերն իմ հանդեպ գերազանցում է իմ մոր սիրուն»:[2]

Ուրեմն արի՛ և եղիր ինչպես մի խելամիտ աղջիկ, և հանգստացիր ու լցրու քո հոգին Իմ Սուրբ Սրտի Ակունքներից: Սրանից առաջ դու չե՞ս լսել, թե Ես ինչպես եմ հոգ տանում Իմ յուրայիններին: Ես ցանկանում եմ դաստիարակել քեզ հոգևորապես Իմ Մարմնի մեջ և ուժեղ դարձնել քեզ, որ անկեղծորեն սիրես և սովորես ինքդ քեզ տիրապետել: Ես նման եմ մի մոր, որը սնում և խնամում է իր զավակներին: Դու հենց հիմա կարիք ունես սնուցման, աղավնյա՛կս, որ ուժ ձեռք բերես և աճես Իմ Սիրո մեջ...
Ես քեզ պատասխանատու դարձրեցի, որ հանձնես Իմ Սիրո Օրհներգը բոլոր ազգերին և դու դեռևս երկար ճանապարհ ունես գնալու: Բայց նախքան դու նորից դուրս կգնաս, քո՛ւյր Իմ, դու մի որոշ ժամանակ

[1] Այստեղ ես գլուխս բռնեցի երկու ձեռքով:
[2] Սիրաք 4:11

պետք է մնաս քո ավագ եղբոր հետ՝ դաստիարակելու քո միտքը Իր մտքով[1]:

Ես հրավիրում եմ քեզ հիմա Իմ Սրտի հարսանեկան սենյակը, նույնիսկ եթե դու հուզված ես և անհանգստացած, սիրելիս: Իմ Սրտի մեջ դու կգտնես քո խաղաղությունը, որովհետև Ես պիտի հիշեցնեմ քեզ, որ ոչ մի բան երբևէ չի կարող կանգնել քո և Իմ Սիրո միջև: Ես ցույց կտամ քեզ Իմ գեղեցկությունը, որպեսզի քո հոգին տեղի տա Իմ հմայքներին: Հետո, Ինձ տիրանալու ջերմ ցանկությամբ, դու ինքդ քեզ Ինձ կառաջարկես, բայց այդ ժամանակ Ես, Ես արդեն կնքած կլինեմ քո ճակատը Իմ ամուսնական համբույրով:

Ցույց տուր Ինձ քո ձեռքերը... Հիմա նայիր Իմ Ձեռքերին... Արի՛ և քո ուխտագնացությունը կատարիր Իմ Ձեռքերի մեջ: Իմ Ձեռքերը շատ բարի գործեր են արել, որոնք գրված չեն Գրքում[2]: Ոչ մի թագավոր երբևէ հայտնի չի եղել նրանով, որ ծառայել է իր ենթականերին, ինչպես Ես, որ թագավորների Թագավորն եմ: «Իմ բնությունն աստվածային էր, սակայն Ես չկառչեցի Աստծո հետ ունեցած իմ հավասարությունից, այլ դատարկեցի Ինքս Ինձ, որ ստանձնեմ ծառայի վիճակ»:[3] Ես այս ձևով պիտի ճանաչեմ Իմ յուրայիններին, երբ նրանք կդատարկեն իրենց և կհետևեն Իմ աստվածային Կամքին:

Տո՛ւր Ինձ քո ձեռքերը, Իմ Վասուլա, որպեսզի Ես դրոշմեմ նրանց վրա Իմ Ուսուցումներն ու Գործը ձեր փրկության համար: Ես օծել եմ դրանք, որպեսզի դրանք էլ իրենց հերթին օծեն հիվանդներին և հոգնածներին: Ես օրհնել եմ դրանք, որպեսզի Ինձ շռայլորեն առաջարկեն բարի գործեր, և Ես համբուրել եմ դրանք նորից ու նորից, որ ուժ տամ դրանց, որ շարունակեն հոգիներ կորզել Չարից և բերել Ինձ մոտ: Իմ Սեփական Ձեռքերը ձև են տվել և ձևավորել քո ձեռքերը, որ դրանք Ինձ խունկ և զոհաբերություն մատուցեն: Իմ Ձեռքերի այս ուխտագնացությամբ, Դու կիմանաս, թե ինչպես եմ Ես ծառայել հավատարմորեն և կատարել գործեր, որ ոչ մեկը երբևէ չի արել:

Իմ սիրելին հետո կհանգստանա նորից Իմ Աղբյուրների մոտ[4]: Այդտեղ, մինչ քո գլուխը հենված կլինի Իմ Արքայական Սրտին, քո աջ ձեռքը Իմ ձեռքում պահած, Ես պիտի պսակեմ քեզ Իմ Սիրով և Քնքշությամբ՝ լցնելով քո հոգին սփոփանքներով, արծվի նման նորոգելով քեզ: Ես պիտի թարմացնեմ քեզ, որ քո տարիները չնվազեն ու չանհետանան ստվերի նման: Եվ մինչ Իմ հայացքն անվերջ սևեռված կլինի քեզ վրա՝ հրճվանքով սիրելով նրան, ով սիրում է Ինձ, հիշելով այն բոլոր պահերը, երբ դու միշտ խաղում էիր Իմ Ներկայությամբ, և ուրիշ պահեր, երբ հուզված հոգու կողմից, դու կանչում էիր Մեզ. «Ա՛բբա», Ես

---

[1] Ես գիտեի, որ Հիսուս ցանկանում էր, որ ես հիմա հանգստանայի Իր Մարմնում առանձնության մեջ, որ վերականգնեմ ուժերս ֆիզիկապես և հոգևորապես:

[2] Հիսուս նկատի ուներ Աստվածաշունչը: Ինչպես Նրա Սիրելի աշակերտն է ասել. «Ուրիշ շատ բաներ էլ կան, որ Հիսուսն արեց: Եթե բոլորը գրվեին, աշխարհն ինքը, կարծում եմ, չէր կարողանա տեղավորել այն բոլոր գրքերը, որոնք պետք է գրվեին» (Հով. 21:25):

[3] Փիլիպ. 2:6-7

[4] Հիսուս նկատի ունի, որ նորից առաքելության մեկնելուց հետո, վերադարձի ճանապարհին, ես նորից կհենվեմ Իր Սրտին, որ հանգստանամ և ուժերս վերականգնեմ:

պիտի վստահ լինեմ, որ դու շարունակելու ես Ինձ տալ քո ողջ ուշադրությունը և սերը:

Սիրված լինելու ցանկությամբ, ես քեզ գերի պիտի պահեմ Իմ Սրտում: Եվ ինչպես աշտարակի վրա նշանակված մի պահակ, ես ուշադիր պիտի լինեմ, որ ներխուժողներ չլինեն: Ես պիտի պահպանեմ քեզ, սե՛ր Իմ, Իմ Աչքի լույսի պես... Իսկ դու, հրճվանքով, նկատելով Իմ բուռն ցանկությունը, որ ուզում եմ պահել քեզ Ինձ համար, պիտի վազես թաքնվելու Իմ թևերի ստվերում, ինչպես ճտերն են վազում թաքնվելու իրենց մոր թևերի տակ: Դու պահ պիտի մտնես Իմ ջերմության մեջ, և ես պիտի պահեմ քեզ Իմ Սրտի ջերմության մեջ:

Հետո, մեկ անգամ ևս, ես և դու նորից դուրս կգնանք: Ես կտանեմ քեզ Իմ Բերանի պարտեզը: Այնտեղ դու կկատարես քո ուխտագնացությունը, և այդ ուխտագնացության մեջ դու կիմանաս, թե ես վշտից որքան եմ խենթանում, երբ ձեր բերանները, որ ստանում են Ինձ[1], վարակում են ձեր ոգին ու ձեր հոգին՝ մեկդ մյուսին ուղղված թունավոր խոսքերով: Սովորի՛ր Իմ Բերանից Ճշմարտությունը և միայն Ճշմարտությունը վկայիր ամենուր: Ուստի թող ձեր բերանը պատվի Ինձ՝ գովաբանելով Ինձ օր ու գիշեր: Թող քո բերանը երգի Ինձ համար, ժպտա Ինձ, թող այն հնչի Իմ Ականջներում միլիոնավոր մեղեդիների նման, ինչպես սաղմոսերգուի ամենաքաղցր սաղմոսը: Թող քո բերանը լինի ինչպես երկայր սուր, որ ցած տապալի Իմ Եկեղեցու հերետիկոսներին և դավաճաններին: Իսկ բոլոր նրանց մեջ, ովքեր ծարավի են Ինձ, թող քո բերանը լինի Իմ արձագանքը, և լինի քաղցր գինու նման, սովորեցնելով ամեն մեկին, թե ինչպես շահեն Իմ ընկերությունը:

Իմ Բերանից դու պիտի սովորես Ուսուցումներ, աղավնյա՛կս, խոսելու այնպես, ինչպես Ես կուզենայի, որ դու խոսես և արտահայտես մտքեր, Իմ մտքի համաձայն: Ապա, դու այդ գիտելիքները պիտի փոխանցես ուրիշներին առանց վերապահության: Հետո նորից, ինչպես մի աղավնի, որ մտնում է իր բնի մեջ հանգստանալու համար, Ես պիտի կանչեմ քեզ, որ հանգչես Իմ Սրտի հարսանեկան սենյակում՝ մինչ Իմ որոնող հայացքը փնտրելիս կլինի քո աչքերը:

Տե՛ր իմ, Դու խնամում ես ինձ,
ինչպես ուրիշ ոչ մեկը:
Դու իմ Անգնահատելի Գանձն ես,
և ոչ ոք և ուրիշ ոչ մի բան
ողջ աշխարհում չի տալիս ինձ
այնքան ուրախություն, որքան Դու:
Մի հայացք Քո կողմից, և իմ հոգին
այրվում է կրակի պես,
իսկ իմ սիրտը՝ հալչում ինչպես մոմ:
Մի հայացք Քո կողմից, և իմ հոգին
գմայլվում է Քո Սիրո խորությամբ:
Քո հայացքը, ո՛վ Սուրբդ, նման է
արքայական հարսանյաց երգի:
Այն նման է մի փունջ

[1] Հիսուս նկատի ունի Սուրբ Հաղորդության մեջ:

շուշանների բուրմունքին,
որ հասնում է ինձ զեփյուռի հետ:
Քո հայացքը Միլինաբերդի նման է,
որի շուրջն ամբողջությամբ
փղոսկրե աշտարակներ են...

Թագավորի-աղջիկ[1], տեսնո՞ւմ ես, թե ինչպես է քո Արքան սպասում, որ ուրախանա քո մեջ: Քո Աստվածն օծել է քեզ Իր Շուրթերով: Իմ Շուրթերը խոնավ են չնորհով, և Իմ Շուրթերը փրկության երգեր պիտի երգեն քեզ համար, որպեսզի մենք կրկնենք դրանք միասին Թագավորի արքայական որդիների և արքայական աղջիկների[2] համար, որ նրանք սովորեն Մեզ[3] տալ պատշաճ գովաբանություն, ինչպես նաև մեծարանք:

Հետո... առաքինությունների օրերը[4] պիտի ծաղկեն, լցնելով երկինքը և երկիրը Մեր Փառքով[5]: Քո՛ւյր Իմ, թույլ տուր հիմա քո ավագ Եղբորը, որ տանի քեզ կատարելու քո ուխտագնացությունը Իր Աչքերի մեջ, որպեսզի քո հոգին մտահայեցությամբ զննի կատարյալ լույսը, մարմնի գլխավոր ճրագը: Ես ասել եմ, որ ձեր մարմնի ճրագը աչքն է, և եթե ձեր աչքը առողջ է, ձեր ողջ մարմինը լցված կլինի լույսով, բայց եթե ձեր աչքը հիվանդ է, ձեր մարմինն ամբողջովին խավար կլինի: Զգուշացե՛ք ուրեմն, որ լույսը ձեր ներսում խավար չլինի, որ չլինի, թե դուք չարության սովորեք և նույնիսկ չիմանաք այդ մասին: Փոթորկի քամին անտեսանելի է, և երբ չարը գործում է, այն գործում է խավարում, որ աննկատ մնա...

Իմ Աչքերը շատ այդպիսի բաներ են տեսել: Դրա համար աղոթի՛ր և ասա.

«Ո՛վ Տեր, Համայն սրբության,
Հավիտյան պահպանիր
Քո սրբարանները[6]
ամեն տեսակ պղծությունից՝
մաքրագործելով նրանց
ներքին եսը մեռած գործերից
Քո Զոհաբերության Արյան մեջ:
Ամեն»:

Թույլ չտաս, որ քո հայացքը հանգչի որևէ սխալ վարքագծի վրա, այլ բարձրացրու դրանք դեպի երկինք, և Ես ցույց կտամ քեզ Իմ Երրորդության Սրբության լույսը, որ դու մտահայեցողությամբ ընկալես

[1] Քրիստոսն ինձ անվանեց իմ անվան համանմանությամբ, որովհետև Վասիլիկի նշանակում է նաև «Թագավորի աղջիկ»:
[2] Աստծո ողջ արարչությունը: Նա այստեղ մատնանշում է, որ մենք արքայական ծագում ունենք, արքայական սերմից ենք, քանի որ մեր Արարիչը Թագավոր է:
[3] Սուրբ Երրորդությանը
[4] Նոր երկինքը և նոր երկիրը, երբ Աստծո ողջ արարչությունը կնորոգվի դալիք Երկրորդ Հոգեգալստի ժամանակ:
[5] Հիսուսն ասաց այս բառերը վեհությամբ՝ հույսով լցնելով ինձ:
[6] Ա Կոր. 3:17 «Աստծո սրբարանը սուրբ է: Եվ դուք եք այդ սրբարանը»:

քո կյանքի յուրաքանչյուր բոպեն, Մեր Դեմքը, որը շրջված պիտի լինի դեպի քեզ:

Մուտք գործիր Իմ Աչքերի մեջ[1], որպեսզի տեսնես իրերն այնպես, ինչպես տեսնում դրանք: Մի՛ կարծիր, թե Ես կթաքցնեմ քեզանից այն սարսափելի տեսարանները, որոնք Արյան Արցունքներ են բերում Իմ Աչքերից: Քանի որ Ես հասցրի քեզ ապրելու ճշմարիտ կյանք Իմ մեջ, Ես քեզ ցույց կտամ այդ պղծությունները, որպեսզի դու ավելի շատ աղոթես: Իմ Մարմնում ապրում է աստվածության ամբողջությունը, և սակայն, Իմ Յուրայիններից շատերը հալածում են Ինձ Իմ աստվածության պատճառով: Օգտագործիր Իմ Սեփական Աչքերը[2] կարդալու համար Իմ Խոսքը, որ քո մեջ հաստատես այն կատարելությունը, որը գալիս է Իմ հանդեպ ունեցած հավատից: Խոսի՛ր հիմա Իմ Սրտի հետ, ընտրյալս...

Ես ի՞նչ կարող եմ ասել:
Ինչի՞ մասին ես կարող եմ խոսել
Քո Սրտի հետ: Այդ Դո՛ւ ես,
որ գնահատել ես ինձ որպես անգին,
այդ Դո՛ւ ես բուժել իմ աչքերը[3]:
Կատարյա՛լս, այդ Դո՛ւ էիր,
որ ասացիր ինձ
Քո հավատարմության մասին:
Դու Ինքդ էիր, որ բերեցիր ինձ
Քո Արքայական Գավիթները,
որ ազատորեն քայլեմ նրանց մեջ:

Ո՞ր քանի՞ էի Ես ցանկանում քեզ դասել Իմ յուրայինների հետ և տալ քեզ Իմ Մարմինը[4] ... Ես այնքան էի ցանկանում բուժել քո անհավատարմությունը և քեզ համարել Իմ հարսերից մեկը... Իմ բուռն ցանկությունն էր Ինձ հայտնի դարձնել քեզ ամենամտերմիկ ձևով և ցույց տալ քեզ Ճշմարիտ Աստծուն, կենդանի Աստծուն, հավիտենական Թագավորին:

«Թող[5] այս աշխարհը չլռեցնի Իմ շուշանին, թող նրանց դավադրությունները չվնասեն նրան կամ դիպչեն նրա հոգուն, այլ թող Իմ սաղմոսները շարունակեն լինել նրա համար և բոլոր նրանց համար, ովքեր լսում են դրանք, ինչպես հարսանեկան մի երգ, որպեսզի նրանք ճանաչեն Երրորդության Ճշմարիտ Աստծուն, որ Բոլորի Հայրն է»:

Հիմա, շուշանս, Ես քեզ մնայուն պատճառ կտամ, որ դու ասես.

«Իմ Տերը մեծ է»:

---

[1] Հիսուս խոսում է փոխաբերություններով:
[2] Հիսուս խոսում է խորհրդանշանակորեն:
[3] խորհրդանշանակորեն
[4] Հիսուս նկատի ունի Սուրբ Հաղորդությունը:
[5] Հիսուս, հաստատուն, բայց ցածր Ձայնով, որը հնչում էր ինչպես հրաման, արտաբերեց հաջորդող բառերը: Նա կարծես խոսում էր Ինքն Իր հետ: Ինչպես ասում են. «Մտածել բարձրաձայն»:

Դու հիմա կարող ես գալ Իմ Սրտի հարսանեկան սենյակը[1]:

Զե՞ս կարդացել. «Թող ուրախանան բոլոր նրանք, որ հույս են դնում քեզ վրա, հավիտյան թող ցնծան»:[2] Եվ՝ «Իմ ուրախությունը Աստծուն մոտ լինելու մեջ է»:[3] Ուրեմն արի Ինձ մոտ, Ամուսնիդ հրավիրում է քեզ, քե՛զ, որ խնամում ես Իմ Սեփական Խաղողի Այգին, արի՛ և բարգավաճիր Իմ Ներկայության մեջ, և դու պիտի գովաբանես Իմ Սերը ամենից վեր: Եվ դարձյալ, Իմ Սուրբ Սրտի հոյակապ տեսքից, քո սիրտը տեղի կտա Իմ հմայքներին, ինչպես մի անդրադարձ, հիշելով Իմ երևումը[4] քո մանուկ հասակում, երբ Ես գործադրեցի Իմ բոլոր հմայքները, որ քեզ մոտեցնեմ Ինձ: Եվ մինչ Ես քեզ ձգում էի դեպի Ինձ, Իմ միջնաբե՛րդ, Ես ասացի. «Ես պիտի թարմացնեմ Իմ միջնաբերդը Իմ Սրտի գետից, և Ես պիտի սրբագործեմ այդ միջնաբերդը, որ պահեմ Իմ բնակավայրը անկումից»: Եվ քո Թագավորն արտաշնչեց քեզ վրա Իր Շունչը, ինչպես մի քնքուշ բուրմունք, հետո առանց հապաղման, Ես դրոշմեցի Իմ Սուրբ Դեմքը քո դեմքի վրա, Դեմք դեմքի, կնքված ողջ հավիտենականության համար:

Դադար տուր մի պահ և մտածիր այս բառերի մասին... Թող Իմ բառերը քեզ հաճույք պատճառեն...

Դու իմ Տերն ես հիմա,
ուստի ես խոնարհվում եմ Քո առջև:
Սովորեցրու ինձ,
թե ինչն է հաճելի Քեզ,
որպեսզի ամեն ինչ, որ պիտի անեմ,
ընդունելի լինի Քեզ համար:
Իմ դատողությունները
վստահելի չեն, և այս միջնաբերդը,
որ Դու ես կոչում, կավից է շինված,
և այն ճնշում է միտքը:
Դու ասում ես, Թագավո՛ր իմ,
որ դրոշմել ես
Քո Պատկերը իմ պատկերի վրա:

Այո՛[5]: Եվ մինչ Ես անում էի դա, Ես մի համբույր դրոշմեցի այն շուրթերի վրա, որոնք պիտի դառնային Իմ Արձագանքը և հռչակեին Ճշմարտությունը, որ սովորեցնեի նրանց օրհներգել Իմ Անունը և ասել.

«Երգե՛ք Խաղաղության
Իշխանի համար,

[1] Ամեն անգամ, երբ մեր Բարեգութ Տերը հրավիրում է ինձ հարսանեկան սենյակ, դա առանձնության Նրա հրավերքն է, որովհետև Նա ինձ հասկացրել էր, որ ցանկանում էր, որ ես հաճախ մենակ լինեմ Իր հետ և միայն Իր համար:
[2] Սաղմ. 5:12
[3] Սաղմ. 72:28
[4] Տեսիլքը, որը ես տեսա, երբ երեխա էի. Հիսուս ժպտում էր ինձ: Ես տեսնում էի Նրան մինչև Նրա գոտկատեղը: Ամեն անգամ, երբ Նա ասում էր. «Արի՛ Ինձ մոտ», մի անտեսանե լի ուժ ինձ Նրա մոտ էր մղում: Հետո ես այնքան մոտիկ էի Նրան, որ մեր դեմքերը համդիպեցին, և ես այնպես զգացի, կարծես իմ դեմքը կլանվեց Նրա Դեմքով:
[5] Ինչպես արդեն ասել եմ, Քրիստոսի տեսիլքի մեջ, ես մղվեցի դեպի Նրան, մինչև որ իմ դեմքը դիպավ Նրա Դեմքին, և կարծես իմ դեմքն անցավ Նրա Դեմքի միջով:

Երգե՛ք Անմահի համար,
Ամենազոր Աստծո համար:
Բացե՛ք ձեր սրտերը
և թույլ տվեք, որ դրանք
կլանվեն Նրա
խանդոտ Սիրո կողմից:
Երգե՛ք Տիրոջ և Թագավորի համար
և ցնծացե՛ք Նրա գալստով»:

Արի՛, թող քո աչքերը հիմա, սիրելի՛ս, զվարճանան Իմ Սրտի Անհատակ Գանձերով, հետո Ամենազորեղը կտանի քեզ, որ դու քո ուխտագնացությունը կատարես Իմ Ականջներում... Դու պիտի սովորես, ինչպես լսել և հասկանալ խորամիտ առակները, սե՛ր Իմ: Եթե ականջ դնես, դու կսովորես Իմաստությունից և ծարավ կլինես Ինձանից եկող որևէ խոսակցության: Դու կիմանաս Իմ Ականջների պարտեզում, թե ինչպես են Իմ Ականջները բացվում որևէ մեկի հանդեպ, ով Ինձ անկեղծորեն է կանչում և գալիս է Ինձ մոտ[1] սրտի մաքրությամբ՝ ապաշխարելով ինչպես մի բարձարաձայն ողբի գիրք, չեշտելով իրենց թշվառությունը, իրենց անարժանիությունը, և թե ինչպես են իրենք հուսախաբ արել Ինձ: Այդ ձայնից Իմ Սիրտը վեր է թռչում իր տեղից: Ապաշխարության այդ ձայնը կառաջնորդի նրանց դեպի Իմ Գավիթները:

Որպեսզի քո ականջները լսեն Իմ Ձայնը, դու պետք է ցածրացնես քո ձայնը: Ե՛կ և իմացիր, թե ինչպես եմ Ես արձագանքում և ազատ արձակում թշվառներին ու աղքատներին, ովքեր կանչում են Ինձ: Խնդրի՛ր Ինձ, և Իմ Ականջները կլսեն քո խնդրանքը, և Ես կգամ և կփրկեմ քեզ: Ես կլսեմ քո կանչը: Իմ Ականջները զգայուն են: Իսկ դո՛ւ, որպես արարած, անտարբեր ու խուլ մի՛ մնա կարիքավորի կանչերի հանդեպ, այլ բաց արա ականջներդ նրանց խնդրանքին: Մի՛ խոժոռվիր նրանց վրա, այլ առաջարկիր նրանց քո ձեռքը: Դու չգիտես, թե ինչպես եմ Ես սարսռում, երբ խնդրանք է արվում, իսկ Իմ արարածները չեն լսում կամ պատասխանում խնդրողին: Իմ Սուրբ Սիրտը ցավում է Իմ Կրծքում:

Իմ Ականջների պարտեզներում դու կիմանաս, թե ինչպես է քո Աստվածը ցած նայում Իր Գահից մարդկանց դուստրերի և որդիների վրա՝ թեքվելով դեպի նրանց, Իր Ականջը մոտեցրած նրանց շուրթերին: Եվ դո՛ւ, որ տեսել ես հազարավոր հրեշտակների բազմություններ՝ շրջապատած Իմ Փառապանծ Գահը[2], ասա՛ նրանց.

«Եկե՛ք և լսեք. Սուրբն Ինձ հրահանգեց, որ ձեզ ասեմ, թե նա ինչ է արել Ինձ համար: Երբ ես իմ զղջման[3] ճիչն արձակեցի Նրան, և իմ լեզուն գովերգում էր Նրան, եթե ես դեռևս իմ սրտում մեղավոր լինեի իմ ապաշխարությունից հետո, Տերը երբեք չէր լսի Ինձ: Բայց Աստված ոչ միայն լսեց Ինձ, Նա լսեց իմ խնդրանքը և պատասխանեց իմ աղոթքին:

[1] Այստեղ ես հասկացա, որ Հիսուս ներառում է խոստովանահայրերին, այլ ոչ թե միայն Իրեն:
[2] Ես նաև հասկացա՝ Նրա Սուրբ Սիրտը:
[3] Ապաշխարության

Օրհնյա՛լ լինի Աստված, Երրորդության Իր Սրբության մեջ, որ ո՛չ մերժեց իմ աղոթքը, ո՛չ էլ զրկեց ինձ Իր Սիրուց»:

Այս է, որ դու ասելու ես նրանց[1]: Հիմա արի և ներս մտիր քո մշտական Տունը՝ Իմ Սրտի Հարսանեկան սենյակը, որտեղ քո Թագավորը սպասում է ուրախանալու քեզնով, իսկ դու՝ Նրանով:

Արի՛, Իմ հրեշտակ և Իմ հարս, Ես փափագում եմ զգեստավորել քեզ Իմ Անունով, հենց Իմ Ներկայությամբ: Քո զգեստը պիտի լինեմ Ես, քանի որ Ես ամեն ինչ եմ: Իմ Մարմնի մեջ ապրում է Աստվածության ամբողջությունը, այդ պատճառով Իմ մեջ դու պիտի գտնես քո լրումն ու կատարելությունը: Ես պիտի թաքցնեմ քեզ Իմ մեջ, և այդ ձևով, երբ ժամանակը գա, Ես կներկայացնեմ քեզ Հորը:

Ես քո քաղցր բուրմունքն եմ, Վասո՛ւլա, և Ես ցանկանում եմ որ դու լինես պայծառ աստղի նման, որ փայլում է այս սերնդի խավարում՝ օծելով նրան[2] Իմ բուրմունքով: Դու պիտի շարունակես փայլել, քանի որ դու պիտի առաջարկես աշխարհին այն, ինչ եկել է Իմ Բերանից, դու պիտի առաջարկես բոլորին Կյանքի խոսքը: Եվ շատերը պիտի տեսնեն Ինձ քո մեջ[3], քանի որ Ես զգեստավորել եմ քեզ Իմ Անունով, որպեսզի դու ճշմարտապես դառնաս Իմ ուղեկիցը:

Քո Ճշմարիտ Աստվածը՝ քո Տեր Հիսուս Քրիստոսը, ողջունում է հիմա քեզ ողջ Սրտով Իր Սուրբ Սրտի մեջ՝ քո Տան մեջ... Ես ցույց տվեցի Իմ Տիրապետությունը քեզ, քո՛ւյրս, յուրայի՛նս... Իմ շնորհը քեզ հետ է... ic

[4]և Իմ բարեհաճությունը կապում է քեզ Մեզ հետ...

[5]և Իմ մեջ Մենք շնորհ արեցինք քեզ տեսնելու այն, ինչ մարդն անկարող է ինքնուրույն տեսնել: Մենք տալիս ենք քեզ Մեր Խաղաղությունը...

(Վերևի պատգամը տրվեց ինձ բազմաթիվ ընդմիջում ներով: Այն կազմեց 50 էջ):

Փետրվարի 18, 1997

Իմ Սաղմո՛ս
և իմ Օրհնե՛րգ, իմ Ամե՛ն,
իմ Եղբա՛յր, իմ Քո՛ւյր և իմ Ընկե՛ր,
իմ Հա՛յր և Մա՛յր,
իմ Քաղցր Բուրմունք և իմ Խունկ,

[1] Սուրբը խնդրեց ինձ նայել Սաղմ. 65:16-20:
[2] սերնդին
[3] Քրիստոսի Սուրբ Դեմքի հայտնվելը իմ դեմքի փոխարեն:
[4] Հանկարծ Աստված խոսեց՝ Հավիտենական Հայրը:
[5] Հետո խոսեց Սուրբ Հոգին:

իմ Արևի Փայլ
և իմ Լույս, իմ Պայծառ Բո՛ց,
որը երբեք չի դադարում փայլելուց,
Խնջույքների իմ շարք,
իմ Ապահովությո՛ւն
և իմ զորության Ապառաժ,
իմ Վերե՛լք և իմ Հարստությո՛ւն,
Հավիտենության իմ Դարպաս,

ի՞նչն է ստիպում Քեզ
վեր թռչել ուրախությունից՝
Քո կողքով անցնող
փոշու այս հատիկի տեսքից:

Նրա բացարձակ ոչնչությունը ստիպում է Իմ Սրտին վեր թռչել այնպիսի հաճույքով և ուրախությամբ, որ ես գրավում եմ Ինձ շրջապատող հրեշտակների ուշադրությունը:

Դու և միայն Դու ես իմ Բաժակը...

Այսպիսի թույլ մեկին, ինչ ասես, որ ես չեմ տա.... Ինչ ասես որ ես չեմ անի... Թող օրհնյալ լինի աշխարհում քո վազքն Ինձ հետ, քանի որ այն շատ հոգիներ պիտի փրկի:

Թող նույնիսկ սարերն ու բլուրները ցած խոնարհվեն՝ լսելով խաղաղության Իմ Օրհներգը տրված Իմ ժողովրդին: Հիշեցրո՛ւ նրանց, որ ես պիտի պաշտպանեմ ամենաաղքատին[1]: Ասա՛ նրանց, որ ձեր օրերում առաքինությունը պիտի սկսի ծաղկել, և մի համընդհանուր խաղաղություն շուտով պիտի ծածկի Իմ արարչությանը, քանի որ Իմ տիրապետությունը պիտի տարածվի ծովից ծով: Իսկ Գազանը վախից պիտի կծկվի Իմ Ներկայությունից, և քո թշնամիները, որոնք Իմ թշնամիներն են, պիտի սողան փոշու մեջ: Ամենը Իր ճանապարհին է, որ մաքրագործի կլանող բոցով ամեն մի ցեղ, որովհետև ես ատում եմ հավատուրացների գործերը: Երկինքը գործում է հիմա, ուստի կրիր Ինձ, ինչպես մի չքեղ զգեստ, որ հայտարարես մեր ճամփորդության ընթացքում Ամենի խոսքերը: Հետևի՛ր Ինձ Իմ ոտնահետքերով, որոնք ներծծված են Իմ Արյամբ:

Ես սիրում եմ քեզ, զավա՛կս: Շրջվի՛ր և նայիր Ինձ, հետո ասա, որ դու նույնպես սիրում ես Ինձ: Սերը վերջ չունի Ինձ մոտ, Իմ Սերը հարատև է և ապահով: Փորձի՛ր ուրեմն նմանվել Ինձ: Լցրո՛ւ քեզ Իմ Սիրով:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

[1] Հոգով աղքատներին

Ապրիլի 3, 1997

Տե՛ր Խաղաղության,
հսկի՛ր իմ հոգուն
և եղիր իմ պաշտպանությունը
այն գայլերից,
որոնք հալածում են ինձ,
քանի որ հռչակում եմ
Քո բոլոր հրաշքները
և հայտարարում իմ սերը
Քո Տան հանդեպ:
Արձակիր ոտքերս
նրանց թակարդներից
և որոգայթներից, շրջվիր դեպի ինձ:
Տեսնո՞ւմ ես, թե որքան
բազմապատկվում են գայլերը:
Տեսնո՞ւմ ես նրանց բռնությունը:
Բարաձրաձայն աղաղակներով
նրանք դատապարտում են ինձ,
բզկտելով ինձ Քո Աչքերի առաջ:
Նրանք հնարումեն
կեղծ մեղադրանքներ.
նրանց բերանը լայն բացված է,
ինձ մեղադրելու համար:

Մի՛ անհանգստացիր նրանց համար, ես քեզ հետ եմ: Իմ Խաղաղությունը և Սերը ես տալիս եմ քեզ:

Զավա՛կս, Իմ Սրտի զավակ, բարձրացրո՛ւ քո հոգին Իմ Հոգու մեջ և մի՛ ընկնիր: Միթե չե՞ս նկատել Իմ հաղթանակները[1]: Իմ Փառքը փայլում է այս Պատգամների ներսից և դրսից: Մնա Ինձ նվիրված, աղոթելով և աննկատելի, որպեսզի Ինձ տեսնեն, ուր էլ որ գնաս[2]: Այս ձևով մենք կկարողանանք առաջ գնալ, դու՝ մի ձեռքում Իմ խաչը, իսկ մյուսում՝ Իմ Խոսքը, որը կլինի քո ճրագը, մինչ ես՝ քո Թագավորը, պիտի քայլեմ վեհորեն և հաղթական քո կողքով՝ փառավորապես կուտակելով Իմ հաղթանակները քո հավատարմությամբ, մինչ Իմ փառապանծ Գայիսոնը Ձեռքումս պիտի շարունակի ուղղություն տալ քո քայլերին, ուր որ նրանք պետք է գնան, և ուր որ ես ցանկանում եմ, որ դու գնաս Իմ Անունով:

Մենք հիմա նույնիսկ ավելի շատ ցած պիտի իջնենք, հանդիպելու համար նրանց, ովքեր մեղքի զազրելի խորքերում են, որ ուսուցանենք նրանց ներողամտություն, բարություն, գթասրտություն, սեր, հավատ, հույս, և ես ցած պիտի թեքվեմ Իմ Փառքի բարձունքներից դեպի մեռնողները[3], որոնց սակայն ես այնքա՜ն եմ սիրում... որ բուժեմ նրանց, սփոփեմ նրանց և ասեմ նրանց, թե իրենք որքան թանկ են Ինձ համար:

---

[1] Հավաքներն ավելի լիքն էին, քան երբևէ եղել է իմ աղոթաժողովներում:
[2] Սա խորհրդանշական է, բայց նաև բառացի իմաստով է, երբ Քրիստոսը հայտնվում է իմ դեմքի վրա, ամբողջապես ջնջելով Ինձ:
[3] հոգևորապես

Ամեն ինչ կանհետանա մի օր և կմաշվի հագուստի պես, բայց Իմ Սերը նրանց Հանդեպ պիտի մնա անփոփոխ...

Հենվի՛ր հիմա, թանկագի՛նս, Իմ Սուրբ Սրտի վրա, որպեսզի քո լսած յուրաքանչյուր սրտի զարկ օծի քո հոգին թարմ յուղի պես, նորոգելով քեզ և թարմացնելով քեզ: Եվ մինչ դու կհենվես Իմ Արքայական Սրտին, դու կխմես Նրա հոսող շիթից կենդանի ջուր, որը քո ներսում աղբյուրի կվերածվի՝ հորդելով դեպի հավիտենական կյանք: Աննկուն եղիր սրտով, քանի որ Ես քո Փրկությունն եմ:

Ես օրհնում եմ քեզ Իմ Երրորդության Սրբությամբ, երեք անգամ:

Ապրիլի 4, 1997

Իմ-Սրտի-ծաղի՛կ, լսի՛ր Իմ Խոսքերը: Ես հարցնում եմ քեզ. Դու հավատո՞ւմ ես, ինչ որ գրված է Սուրբ Գրքերում:

Տե՛ր, իհարկե հավատում եմ:

Դու հավատո՞ւմ ես, որ Աստված կարող է խոսել մարդու հետ:

Դու ծաղկեցրիր ինձ, խոսելով ինձ հետ, ուրեմն ինչպե՞ս կարող եմ չհավատալ, որ Դու խոսել ես ինձ հետ:

Այսօր Իմ Յուրայիններից շատերը հենց Իմ Տան մեջ իրենց սուրն են բարձրացնում Իմ դեմ... Հպարտությամբ փքված, նրանք ասում են. «Մենք աստվածներ ենք»: Նրանք հավակնում են, որ շատ ավելի մեծ են, քան այն ամենը, ինչ մարդիկ «աստված» են կոչում, շատ ավելի մեծ, քան այն ամենը, ինչ երկրպագվում է, այն աստիճանի, որ նրանք թագադրում են իրենց Իմ Սրբարանում և հավակնում, թե իրենք Աստված են: Իմ կողմից հայտարարված յուրաքանչյուր Խոսք մերժվում է հենց դրանց կողմից, բայց մեծ կրակը հիմա պատրաստ է կլանելու նրանց... Նրանք պնդում են, թե իրենք ըմբռնել են Իմ Անձի խորհուրդը:

Մի Միջնորդ[1] կա, որ հիշեցնի մարդուն, թե ինչումն է կայանում իր պարտականությունը, որպեսզի խղճա նրան: Նա աղոթում է մարդու փոխարեն, որ մարդը վերականգնվի և ազատվի դժոխքից: Այս ամենը ես անում եմ, նորից ու նորից մարդու համար փրկելով նրա հոգին հավիտենական կրակներից և թույլ տալով, որ կյանքի լույսը պայծառ փայլի նրա վրա...

Իրենց ծրագրերը թաքցնելու համար, այդ մարդիկ, ովքեր ամեն օր բարձրացնում են Ինձ, խավարի մեջ ծրագրում են տապալել Պետրոսի Աթոռը և լռեցնել Իմ Եկեղեցու Երեցին և բոլոր նրանց, որոնց Ես բացահայտել եմ նրանց ծրագրերը և ցուցադրել նրանց ուրացությունը:

[1] Կարծում եմ Հիսուս խոսում էր Իր Սուրբ Հոգու մասին:

Նրանք խավարի մեջ ծրագրում են լռեցնել Ինձ, ասելով. «Ո՞վ կարող է մեզ տեսնել: Ո՞վ կարող է ճանաչել մեզ»: Բայց խոնարհները ուրախանում են, երբ լսում և ճանաչում են Իմ Ձայնը: Ամենից աղքատները հրճվում են Իմ Ներկայությամբ:

~ Նրանց[1] զոհաբերությունները Ինձ համար հիմա ծաղրանք են: Նրանք դարձել են իսկական Ամոթի Առարկան Իմ Գավիթներում: Իմ Տան մեջ գտնվող այս հանցագործները մտորում են լռեցնել Իմ Ձայնը: Նրանք պիտի փորձեն պարտադրել ձեզ բոլորիդ մի կարգ, որ դատապարտեն Իմաստության հոյակապ գործերը, քանի որ Իմաստության այս[2] Գործը վեր է բարձրացված, ինչպես լուսավոր մի դրոշ, և ցուցադրում է նրանց[3] չարությունը, այն դարձել է նրանց գլխավոր թիրախը: Իմ ամենագեղեցիկ ժառանգությունը դարձել է մի կնոջ նման, որը դավաճանում է իր սիրեցյալին...

Իսկ քե՛զ, որ բաց արեցի ականջդ, որ լսես Ինձ և դառնաս Իմ աչակերտը, Ես ասում եմ. մի՛ վախեցիր, <u>փափագիր Ինձ</u>, ինչպես երբեք, որ այն դառնա քո քաղցր արբեցումը, քանի որ այն ավելի քաղցր կլինի, քան գինին: <u>Հետամո՛ւտ եղիր Ինձ</u>, որ վերջում գտնես Աստծո Գիտությունը և Նրա Իմաստությունը: Ամբողջ սրտով <u>ցանկացի՛ր Ինձ</u>, ճիշտ ինչպես որբն է ցանկանում իր ծնողներին, ցանկացիր Ինձ քո ողջ սրտով: Ուրիշ ոչ մի բանով <u>մի՛ զմայլվիր</u> ո՛չ երկրի վրա, ո՛չ էլ երկնքում բացի Մեր Երրորդության Ներկայությունից: Թող քո ուրախությունը լինի այն բանում, որ մոտիկ լինես Մեզ (Սուրբ Երրորդությանը), որը պատկել է քեզ Մեր Սրբության հետ Մեր Փառքի համար, բայց նաև քո սրբագործման համար:

Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ,
հիմա է գործելու ժամանակը,
քանի որ Քո Օրենքը
խախտվում է,
և չարը ուժեղանում է Քո Տան մեջ:
Ես գտնում եմ,
որ պղծությունը տարածվում է
ճիշտ ինչպես գետերն են ճահճանում
իրենց հուներում,
այն ճահճացնում է մեզ:
Եռանձն Աստված և Երաշխավո՛ր
մեր բարեկեցության,
արի՛ մեզ փրկելու:

Ես կկատարեմ Իմ Խոստումը, և ձեր վիշտն ու տառապանքը վերջ կունենան: Ուստի ասա՛ Իմ տղաներին և աղջիկներին, որ Իմ Ձայնը շուտով պիտի որոտա վերևից, և լեռների հիմքերը պիտի դողան: Հիմա Իմ Եկեղեցու այդ վաճառականները մոտենում են նրան, ում Ես դրեցի Պետրոսի Աթոռին, և սպասում են միայն նրան տապալված տեսնել:

[1] Հիմա Աստված խոսում է հավատուրացների մասին:
[2] Նկատի ունի «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները:
[3] Այստեղ Հիսուս կարծես խոսում էր Ինքն Իր հետ:

Նրանք նման են մի առյուծի, որ պատրաստ է հոշոտել, ինչպես իր թաքստոցում դարանած մի երիտասարդ առյուծ:

Ես դիտում եմ հենց նրանց, ովքեր ցանկանում են լռեցնել Իմ Ձայնը[1]: Նրանց յուրաքանչյուր շարժումը, և նրանց շարժում ների տեսքը զզվանք է պատճառում Ինձ: Ես դիտում եմ Իմ հավատարիմ ծառային[2], մինչ նրա շուրթերը չչնչում են անհամար օրհնություններ իրեն հալածողների համար: Ես լսում եմ նրա ձայնը, մինչ նրան հարվածում են թիկունքից:

(Նշում. Հանկարծ Տերը թույլ տվեց, որ ես լսեմ Պապի աղոթքների տարբերակներ)[3] :

«Քո Սիրով, Փրկի՛չ իմ, լսիր իմ խնդրանքը: Իմ դաժան հալածողները մոտենում են ինձ, որքա՜ն հեռու են նրանք Քո Օրենքից: Ահա ես, վեր եմ կացել արշալույսից առաջ, որ կանչեմ Քեզ օգնության՝ Salve Regina (Ողջույն Թագուհի՛), արի՛ մեզ օգնության, miserere (գթա՛)... Արի՛ մեզ օգնության, ո՛վ Աստվա՛ծ: Հոգիների Պահապա՛ն, արի՛ մեզ օգնության:

Madre de Dios (Աստվածամա՛յր), Սուրբ Հոգու Հարս, թող իմ կանչը հասնի Քո Ներկայությանը և հուզի Քո Մայրական Սիրտը: Ո՛վ Մաքրուհի, որում բնակվում են Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, Աստծո Երկնային Գա՛հ, ուշ դարձրու իմ դիմումին և բեր մեզ համընդհանուր խաղաղություն... Խղճա՛ մեզ... Խղճա՛ քո զավակներին... Ես բացում եմ բերանս՝ հույսով հևալով, մինչ Դու բացում ես Քո Թիկնոցի ծալքերը՝ տարածելով այն տառապյալների, թշվառների, աղքատների և լքվածների վրա: Մեզ պաշտպանելու համար Դու տալիս ես մեզ Լույսի և Հույսի շիթեր, և իմ կսկիծը նվազում է: Ինչպես մի փոքրիկ մանուկ իր մոր կողքին, ես նորից հանգստանում եմ, ինչպես մի փոքրիկ մանուկ իր մոր կողքին, ես ապաստան եմ գտնում և հույսս դնում Քեզ վրա՝ Ամենասուրբ Երրորդության Երկնային Գահ:

Միջնորդ բոլոր շնորհների, փրկի՛ր մեզ մեղքի փոթորկահույզ հեղեղներից, բազմապատկիր Քո շնորհները, և ծնողների սրտերը դարձրու դեպի իրենց զավակները, իսկ զավակների սրտերը՝ դեպի իրենց ծնողները: Ո՛վ Մայր Աստվածային Սիրո, ես խնդրում եմ Քո Արքայական Սրտին, միշտ լիքը գթասրտությամբ ու բարությամբ, որ հիշեցնես Հորն իմ մասին: Ես նկատի չունեմ ոչ մի երախտիք ինձ համար, քանի որ այդ Դո՛ւ էիր, իմ Երաշխավոր, որ Քո ողորմությամբ փրկեցիր իմ կյանքն այն օրը[4], որպեսզի ես հովվություն անեմ ինձ վստահված ոչխարներին: Մարիամի Առաքինի Կուսական Սիրտ, խղճա՛ Քո զավակներին և բա՛ց Քո Սրտի Դարպասը աքսորյալների համար՝ սփռելով Քո Լույսը մեզ բոլորիս վրա:

Մա՛յր աշակերտների, Մա՛յր Հաղթության, Մա՛յր անզուգական Փրկության, Մա՛յր մարգարեների և շնորհների, Մա՛յր Ճշմարիտ Որթի,

---

[1] Նրանք, որոնք ցանկանում են ընդմիշտ արգելել ներքին ձայնով լսելու շնորհը, անվանելով դրանք սովորական խոկումներ:

[2] այսինքն՝ Պապին

[3] Սա ցույց է տալիս Սուրբ Հոր ջերմեռանդ հայեցողական աղոթքի ձևը: Բառերը պարտադիր չէ, որ բառացի Պապի բառերը լինեն:

[4] Պապին սպանելու փորձը:

թող իմ աղերսանքները հասնեն Քո Մայրական Սրտին: Քո Սիրով լսի՛ր իմ կանչը...

Աստվա՛ծ իմ, հոգիների Պահապան, ես հույսս դնում եմ Քեզ վրա... Ո՛վ Աստված, որքա՜ն եմ ես սիրում Քո Օրենքը:

Ամեն»:

Ուրեմն հիմա խզիր Քո լռությունը,
Տե՛ր, դարձրու Քո Ականջը
դեպի նրա աղոթքները և
լսիր, թե նա ինչ է ասում:
Ուղարկիր մեզ վերևից
այդ Կենդանի Ջուրը,
որ լվա, մաքրագործելով մեզ:

Արշալույսը կգա այս անվերջանալի գիշերից հետո, Վասո՛ւլա, ընկե՛րս, և Մեր Երրորդության Սրբության Փառքը կփայլի:

(Մեր Սուրբ Մայրն է խոսում):

Եվ ես՝ քո Սուրբ Մայրը, ողջունում եմ քեզ, Վասո՛ւլա: Այո՛, Մեր Սրտերը[1] պիտի բարձրանան ինչպես արշալույսը, որ պայծառացնեն երկիրը իր ներկա մռայլության մեջ: Մեր Սրտերն Իրենց հաղթանակով պիտի փայլեն մարդկության վրա ավելի շքեղությամբ, քան բոլոր համաստեղությունները միասին վերցրած, ավելի շողշողուն, քան հազարավոր արևներ, և մարդիկ, ովքեր տարիներ շարունակ քայլել են խավարի մեջ, պիտի տեսնեն մի մեծ լույս երկնքից: Նրանք, ովքեր ապրում են ստվերի երկրում, նրանց վրա լույս պիտի փայլի:

Ձեզանից շատերը, փոքրիկ զավակներս, սպասում են արտաքին նշանների և արտաքին հրաշքների և նախանշանների: Ձեզանից շատերը իրենց հայացքը դարձնում են դեպի վեր՝ զննելով երկինքը, բայց Իմ Որդին՝ Հիսուս, զգուշացրել է ձեզ չփնտրել արտաքին նշաններ, այլ փնտրել այն, ինչ իրական և աստվածային է ձեր ներսում:

Ձեզանից շատերը կարդում և վերընթերցում են այս մարգարեական Հայտնությունը աչքերով, բայց երբեք չեք հասկանում, որովհետև, երբ կարդում եք, դուք կարդում եք սոսկ այն հետաքրքրությամբ, որ գտնեք արտակարգ նշաններ կամ ցուցումներ՝ հրաշքների և նախանշանների մասին՝ փոխանակ կանչելու Սուրբ Հոգուն, որ ձեզ պարգևի զանազանելու և ընկալելու հոգին, որ ավելի շուտ ներթափանցեք Քրիստոսի Խորհրդի մեջ և Նրա Հարության Խորհրդի մեջ, և հնարավորություն տաք ձեր հոգուն հոգևորապես առաջանալու, որպեսզի հասնի խոստացված երկրին...

Եթե որևէ մեկը շարունակում է իր սիրտն ու միտքը տրամադրել այդ ձևով, Իմ խեղճ զավակներ, այն օրը, երբ Դեմ-դիմաց կլինեք ձեր Արարչի հետ, դուք դատարկաձեռն կանգնած կլինեք Նրա Գահի առաջ, որովհետև ձեր հոգին դեռևս ամայություն կլինի, չորացած մի հող, մի անապատ:

[1] Հիսուսի և Մարիամի Սրտերը

Բայց, եթե ճիշտ սրտով ներթափանցեք այն Խորհուրդների մեջ, որոնք Մենք ձեզ բացահայտում ենք հիմա այս Պատգամներում, դուք կսկսեք հասկանալ, որ ամեն մի գործ, որ Աստված անում է, լի է Փառքով և Վեհությամբ:

Երբ Նա Իր Վեհությամբ զարդարում է մի հոգու և դարձի է բերում այդ հոգուն մտնելու Իր Թագավորության և Դրախտի մեջ, այդ դեպքում դուք պիտի հիշատակեք այս հրաշալիքը, որովհետև դուք պիտի տեսնեք Նրա Փառքը: Երբ Աստված Երկնային Կերակրով ապահովում է քաղցածներին ու նրանց, ովքեր վախենում են Իրենից, որպեսզի նրանք նույնպես կարողանան ժառանգել ու դառնալ Իր Թագավորության ժառանգները և զգեստավորված լինեն հավատարմությամբ և արդարությամբ, դուք նույնպես պիտի հիշատակեք այս հրաշքը, որովհետև պիտի ճանաչեք Նրա Օրհնությունը, և այդ Օրհնությունը պիտի կրեք ձեր վզին, ինչպես ծաղկեպսակ են կրում:

Երբ Նրա Իմաստության Գործերը, որոնք Անսահման ծովի նման են՝ փայլելով ինչպես հազարավոր արևներ, պայծառորեն կլուսավորեն ձեր հոգին, որպեսզի ձեր շուրթերի վրա պտուղն ավելանա, և ձեր շուրթերով ասված յուրաքանչյուր բառ նման լինի կլանող կրակի՝ մաքրագործելով այս երկիրը, այդ օրը և գիշերը դուք երբեք չեք դադարի Ամենին օրհներգեր երգելուց՝ Իր լիառատ բարության, համբերատարության և հանդուրժողության համար, որը Նա ունեցավ բոլորիդ հանդեպ ձեր ամայության այս տարիներին: Ձեր հոգին պիտի հիշատակի այս հրաշքները, գերբնական երևույթները և նշանները ձեր կյանքի յուրաքանչյուր օրը: Ահա թե ինչու, զավակնե՛րս, ձեր դարձի միջոցով դուք կհայտնաբերեք Աստծո իսկական Փառքը, որն ապրում և փայլում է ձեր ներսում: Վերցրե՛ք քողը ձեր աչքերից, որ տեսնեք, որ ձեր Արարիչն ապրում է նաև ձեր ներսում, և պարուրում է ձեզ Իր Սիրով: Ձեր Արարիչը նաև ձեր Ամուսինն է[1], քանի որ նա Գլուխն[2] է ամեն արարածի...

Աղոթե՛ք, զավակներս, նրանց համար, որոնց սրտերը հեռու են Աստծուց: Նրանցից շատերն ասում են. «Այսօր ուտենք և խմենք, վաղը մեռնելու ենք[3], եկե՛ք, զվարճանանք, քանի դեռ կենդանի ենք: Մեր կյանքը անցնելու է ամպի քուլաների պես: Այո՛, մեր օրերն այստեղ հաշված են և կանցնեն ինչպես ստվեր, ուրեմն եկեք զվարճանանք», և նրանք շարունակում են անպատվել իրենց և Աստծո Պատկերը՝ ավելի ու ավելի խորը խրվելով մեղքի մեջ, անտեղյակ, որ իրենք ավելի մեռած են, քան կենդանի... Ա՜հ, նրանցից որքան շատերն են մոլորվել իրենց սեփական ենթադրություններից և մոլորությունների մեջ համառող իրենց կարծիքները խեղաթյուրել են նրանց մտքերը...

Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, մարդկության Փրկիչը, բոլորին փրկելու Զորություն ունի, քանի որ Հայրը՝ ձեր Արարիչը, իշխանություն է տվել Նրան ողջ մարդկության վրա: Այսօր Նա կատարում է նշաններ ու հրաշքներ, որոնք երբևէ չի կատարել պատմության մեջ:

Աստված Երկնքից խոնարհվում է մինչև ձեզ, զավակնե՛րս: Ձեր Թագավորը՝ Հիսուս, Իր Թագը դրել է մի կողմ և իջել Իր Փա ռահեղ

[1] Ես. 54:5
[2] Ա Կոր. 11:3
[3] Ես. 22:13

Գահից, որ հասնի ձեզ: Այդ Թագավորը, որը նստած էր Իր Արքայական Գահի վրա, զգեստավորված ահավոր շքեղությամբ, փայլելով Իր Փառքով, ոսկուց և թանկարժեք քարերից առավել, բարձրացրեց Իր Դեմքը ողորմածությամբ լի և, Վեհությամբ բոցավառված, նայեց Իրեն շրջապատող հրեշտակների բազմությանը: Նա նայեց Իր Սրբերին և ողջ Երկնային Արքունիքին, և Նրա Սիրտը Սիրով բռնկված, ասաց.

«Ես որոշել եմ բացել Երկնքի Իմ պահեստները[1] և այս անխոհեմ սերնդի վրա հեղել Իմ թաքցված Մանանան[2], մի Գանձ, որը պահված է եղել այս ժամանակների համար, երբ աշխարհը կդառնա սառը և իր սրտի սառնությամբ հեռու Աստծո Սիրուց՝[3]: Թող հայտնի լինի հիմա, որ անաստվածները պիտի կերակրվեն այդ պահուստներից: Իհարկե, Ես Ինքս կգնամ նրանց մոտ սփոփիչ խոսքերով և կմխիթարեմ թշվառներին: Ես ցույց կտամ Իմ մեծ Սերը թշվառության հանդեպ և կբուժեմ նրանց վերքերը[4]:

Ես Ինքս պիտի խոսեմ նրանց հետ և ասեմ նրանց, որ Ես նրանց Եղբայրն եմ և Աստվածային Ընկերը, որ կարող է ետ բերել նրանց աստվածայնությունը: Իրենց ստրկության դառնության մեջ, նրանք, մեկը մյուսի հետևից, պիտի հարցնեն իրենց. «Այդ ինչպե՞ս եղավ, որ ես համարվեցի Ամենաբարձրյալի զավակներից մեկը, ես, որ մակաբույծներից մակաբույծն եմ, մի մակաբույծ մակաբույծների մեջ: Ինչպե՞ս կարող է այս Ամենափառավոր Աստվածը երկու անգամ նայել ինձ վրա, և ինձ համար տեղ հատկացնել Իր Սրբերի մեջ: Ինչպե՞ս կարող է այս Փառավոր Արևը բարձրանալ և փայլել նաև մեզ վրա»: Ո՛չ, մակաբույծ, ո՛չ: Դու չես մեռնի: Քո Թագավորը չի թողնի, որ դու մեռնես: Ես պիտի փրկեմ քեզ Իմ Ձեռքով, փոքրի՛կ մակաբույծ, և Ես պիտի դամ քեզ օգնության, որպեսզի մի օր դու նույնպես կարողանաս հայտնվել Իմ Գավիթներում: Ես քո նողկալիությունը պիտի փոխեմ մի տոնախմբության, քանի որ քո Թագավորը մոտ է քեզ հիմա[5], իսկ տոնախմբությունից Ես պիտի ձևափոխեմ քեզ մի դրախտի, մի փառավոր երկնքի, որ պեսզի Ես՝ Իմ Հոյակապության մեջ գովաբանվեմ և փառավորվեմ: Եվ այդ դրախտի մեջ դու պիտի կանչես Ինձ և պիտի փնտրես Իմ Ուղիները այդ պահից սկսած, որպեսզի ապրես: Իմ Ամենակարող Շունչը քեզ վրա պիտի փչի Իմ Բուրմունքը: Ոչ մեկը չգիտի երկնքում գտնվող բոլոր հրաշալիքները, և թե ինչպես կարող եմ Ես Իմ Կամքը հայտնի դարձնել երկրի վրա, ինչպես որ Երկնքում է: Քեզ վեր բարձրացնելու համար, մակաբո՛ւյծ, անկախ նրանից կարևոր ես թե սովորական, հարուստ թե աղքատ, Ես պիտի բացեմ

[1] Միևնույն ժամանակ ես լսեցի «պաշարներ» բառը:
[2] Մինչ ասվում էին այս բառերը՝ «թաքցված մանանա», ես հասկացա նաև «Սուրբ Սրտի թաքնված գանձերը, որոնց վրա սուրբ Գերթրուդ Մեծին թույլ էր տրվել մի հայացք գցել և ասվել էր, որ այդ գանձերը պահվում են այն ժամանակների համար, երբ մարդիկ կդառնան սառը Աստծո Սիրո հանդեպ: Այդ ժամանակ է, որ Հիսուս կբացահայտի Իր Գանձը: Այդ ժամանակները հիմա են:
[3] Այն, ինչ ես հասկացա, հաստատվեց:
[4] Մեղքի հետևանքով մեր հոգու վրա եղած վերքերը:
[5] Սա հիշեցրեց ինձ այն առաջին բառերը, որոնք իմ հրեշտակ Դանիելն ասաց Աստծո մասին: 1985 թվին, նա ասաց. «Աստված մոտ է քեզ և սիրում է քեզ»: Սա նշանակում էր, որ դա լինելու էր իմ ապաշխարության սկիզբը, որը գալու էր Նրա չնորհի միջոցով:

Իմ Շուրթերը, և Իմ Բերանից ես քեզ վրա պիտի հեղեմ, մակաբո՛ւյծ, Իմ անուշահոտ յուղը[1], օծելով ձեզանից յուրաքանչյուրին:

Այո՛, ես պիտի գամ և ազատեմ նրանց, որ սիրտ առնեն: Ես ցույց պիտի տամ նրանց Իմ հրաշալի Գործերը՝ հիշեցնելով նրանց իրենց ժառանգության մասին՝ առաջարկելով նրանց Իմ Թագավորությունը... Իմ Անսահման Գթասրտությամբ, ես ցած պիտի խոնարհվեմ Երկնքից և Իմ ոսկե Գայիսոնով պիտի բարձրացնեմ այդ հազիվ ծնվածներին, որ հետևեն Ինձ Իմ Հետքերով: Շատերը չպիտի հասկանան Իմ ընտրությունը, որ շնորհն ու ողորմությունը կարող են տրվել նաև նրանց, ովքեր մի ժամանակ դադարել էին լինելուց: Ես պիտի իջնեմ մինչև նրանց մոտ, և պիտի գնամ մինչև ամենահեռավոր երկրները և պիտի խառնվեմ նրանց մեջ: Եվ նրանք գինուց առավել պիտի գովաբանեն Իմ Սերը, ասելով Ինձ. «Որքա՜ն ճիշտ է սիրել Քեզ, Գերիշխա՜ն Տիեզերքի»:

[2] Հետո, լի ողորմությամբ, Նա բարձրացրեց Իր աջ Ձեռքը և օրհնեց երկիրը:
Իսկ դո՛ւ, աղջիկս, կատարիր այն, ինչ Աստված պատվիրեց քեզ անել: Տեսնո՞ւմ ես, թե որքան ավելի պայծառ են քո աչքերը հիմա, երբ կերար այս մի բերան մեղրը[3]: Լցրո՛ւ բերանդ յուղով[4] և գնա՛ Իմ օրհնություններով. ես քեզ հետ եմ:

Ապրիլի 12, 1997

Իմ խաղաղությունը ես տալիս եմ քեզ, Վասուլա, արի՛ և լսիր քո Սուրբ Մորը: Ամենակարողի Խոսքը արդարև ուղղված է քեզ: Արի հիմա, դո՛ւ, որին Աստված վստահեց Իր Պատգամը: Արի՛ և գրիր այս.

"Christos Annesti!" *Alithos Annesti!*[5]

Այո՛, Քրիստոսը հարություն է առել, և սա է, որ Աստված ուզում է, որ դու ասես բոլորին: Հայտարարի՛ր այս մեռնող աշխարհին, որ Իմ Որդին իսկապես հարություն է առել: Քարոզիր հարուցյալ Քրիստոսին, հրեշտա՛կս, որովհետև շատերը քո սերնդից չեն ընդունում այս ճշմարտությունը իրենց բանապաշտության պատճառով: Ձե՞ս կարդացել.

---

[1] Երգ Երգոց 1:2 «Քո Անունը անուշաբույր յուղի պես է, որ դուրս է հեղվում, և դրա համար են կույսերը սիրում Քեզ»: Հիսուս նկատի ունի, որ Իր անուշաբույր յուղը մեղավորների վրա հեղելու միջոցով մեղավորները կբուժվեն: Այլ խոսքով, յուղը ներկայացնում է Նրա Անունը, և երբ Նրա Անունը հասնում է մեղավորներին, այն մղում է նրանց, որ սիրեն Աստծուն:
[2] Հետո Տիրամայրը շարունակեց:
[3] Տիրամայրը նկատի ուներ Երկնային Մանանան, որն այստեղ ներկայացնում է Աստծո Խոսքը:
[4] Այստեղ Յուղը ներկայացնում է Աստծո Անունը «Քո Անունը յուղ է, որ դուրս է հեղվում» Երգ Երգոց 1:2:
[5] Քրիստոսը հարություն առավ (հունարենով): Պատասխանը. «Ճշմարիտ, Նա հարություն առավ» («Քրիստոս Հարյավ» *«Ճշմարիտ Հարյավ»*): Սա ողջույն է, որը սովորաբար օգտագործվում է 40 օր, Զատկի Հարության Օրից հետո:

«Այդ նույն մարդիկ պարծենում են իրենց երկրային հաջողություններով, կարծելով, թե ունեն այն ամենը ինչ ուզում են, և որ իրենք փառքի մեջ են երկրային թագավորությունների տիրապետելով»: Նրանք լցված են իրենց սեփական կարևորությամբ՝ փոխանակ լցվելու եռանձն Աստծո լրիվ ամբողջությամբ:

Ահա թե ինչու երկիրը խառնաշփոթ վիճակի մեջ է, և այդքան շատ անմեղ արյուն է հեղվում: Բայց սրանք նույնպես ժամանակների նշաններն են: Սատանան և նրա խավարի տիրապետությունը դուրս են ժայթքում երկրի վրա իրենց փսխունքը՝ բերելով դժբախտություններ և բաժանումներ ընտանիքների մեջ: Նրանք աշխարհով մեկ վեր են հանում կեղծ մարգարեներ, որոնք նույնպես նշաններ և հրաշքներ են կատարում, բայց դա այն բանի համար է, որպեսզի ընտրյալները նույնպես հարեն իրենց դավաճանությանը: Այդ կեղծ մարգարեները անձրևի պես թափվում են ձեզ վրա՝ բերելով այնքան շատ չարիք և այնքան շատ խառնաշփոթություն, Իմ խեղճ զավակնե՛ր... Բառերը և կեղծ երդումները լցնում են նրանց բերանները, և նրանց մարգարեությունները նման են թունավոր մոլախոտերի, որ ծաղկում են Հիմա Տիրոջ դաշտի ակոսներում: Նրանց արմատները տարածվում են՝ նոր թունավոր մոլախոտեր ծլեցնելու համար:

Վտանգի ազդանշանները արձագանքում են ձեր ականջներում, զավակնե՛րս, բայց դուք կարծեք չեք հասկանում կամ տարբերում այդ ազդանշանները: Նրանք փնտրում են այն քամին, որը կտանի իրենց ձայներն ավելի բարձր, քան Սողոմոն Թագավորինը, Եղիա մարգարեինը կամ Մովսեսինը, իրենց հայտարարելով ահռելիորեն ավելի մեծ [1], թագադրելով իրենք իրենց և հարցնելով. «Մի՞թե հրաշալի չէ՞ այսքան շատ զորություն ունենալը»: Զգուշացե՛ք, որ չխաբվեք, և թող Աստված օժտի ձեր սրտերը զատորոշման կարողությամբ, որպեսզի Նրա Փառքը, տրված ձեր աչքերի առաջ, տանի ձեզ դեպի Ճշմարտություն:

Ապրիլի 24, 1997

(Երուսաղեմ)

(Մինչ Երուսաղեմում աղոթում էինք «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» աղոթամբում, Քրիստոսը կանչեց ինձ ստանալու հետևյալ պատգամը):

Իմ սիրելի հոգիներ, դուք Իմ ընծան եք: Ձեր ներկայությունն այստեղ Ինձ համար մի նվեր է: Ձեր աղոթքները փաղաքշանք են Ինձ համար, օրհնյա՛լ լինեք...

Իսկ դո՛ւ [2], քո արցունքները մի հանգստավետ բալասան են Իմ Վերքերին, քո՛ւյր Իմ:

[1] Մեր Օրհնյալ Մայրը մեզ զգուշացնում է նրանցից, ովքեր իրենց Սողոմոնից ավելի մեծ են հռչակում, կամ՝ նրանցից, ովքեր շրջում են, ասելով, թե իրենք Եղիան են, կամ Մովսեսը, կամ՝ Ենովքը: Կան նաև հոգիներ, որոնք ամբողջապես պատրանքների մեջ են՝ քարշ տալով շատերին, որ կարդան իրենց պատրանքները և հետևեն դրանց:

[2] Հիսուս դա ասում էր մի միանձնուհու, որը ներկա էր:

Ես ձեզ հետ եմ, Իմ ընկերներ, մնացե՛ք Ինձ հետ: ic

Մայիսի 6, 1997

Տե՛ր իմ, իմ Բաժակ, իմ Խնջույք,
ես ոչ մի բանի
պակասություն չունեմ
Քո Ներկայությամբ,
Օրհնյալ լինի Քո Անունը
Երիցս Սուրբ:

Ներքևում,
փոշու մեջ էի ես պառկած,
մինչև Քո Խոսքը եկավ իմ ականջին
և կենդանացրեց ինձ: Հետո
Քո մեծ Սիրով և Կարեկցանքով
Դու համբուրեցիր աչքերս,
որ բացես դրանք:
Ես սկսեցի տեսնել:

Ես տեսա աստղերի կիզակետերից
այն կողմ, և տեսա իմ սրտում
Քո Մեծությունը:

Ես տեսա Անտեսանելի Աստծուն,
և Նա, որ Անհասանելի էր
իմ հպումին, հանկարծ ամբողջապես
իմ շուրջն էր և իմ ներսում:
Անթափանցելին վայրկենապես
դարձավ թափանցելի,
Իր Բերանից մի պարզ խոսք ասելով:
Բարեխոսը Իմ ներսում
բարձրացրեց հոգիս ամպի մեջ,
և Իր հետ միասին և Իր միջոցով
բերեց իմ հոգին Քեզ հետ
ամբողջական հաղորդության,
որ թափանցի
Քո Վեհության ամենախորքերը:

Իմ Վասո՛ւլա, Ես դրեցի Իմ Սերը հենց քո աչքերի առջև[1]: Զե՞ս նկատել, թե ինչպես եմ Ես քեզ շրջապատել փրկության երգերով: Կուզենայի՞ր, որ քեզ համար մի երգ էլ երգեմ Իմ երգերից:

Օ՜, այո՛, ես կուզենայի որ երգես ինձ համար մի անվերջանալիերգ:

[1] Երբ Հիսուս բացատրվում էր ինձ հետ, նա մի շարժում արեց Իր Ձեռքերով: Նրա երկու Ձեռքերն էլ վեր էին բարձրացված, կարծես տանում էին ինչ-որ մեկին, հետո ամբողջապես ցած իջեցրեց Ձեռքերը, կարծես ինչ-որ մեկին քնքշորեն ցած դրեց:

Ես կերգեմ այս երգը[1], որը երգվելու է ողջ հավիտենության համար և ձեր բոլորի համար: Իսկ դո՛ւ, սիրելիս, դու կլինես Իմ քնարը և Իմ տավիղը՝ ձայնակցելով Իմ Ձայնին: Արի՛, արի և ասա քո հոգուն.

«Հիսուսն իմ փրկությունն է»:[2]

Ես քո փրկությունն եմ: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես եմ Ես գալիս խնկի և զմուռսի Իմ նուրբ բուրմունքով մինչև քո սենյակը: Իմ փխրուն էակ, այլևս մի՛ քայլիր ինչպես թափառաշրջիկ, այլ թույլ տուր Ինձ, որ ձգեմ ու քաշեմ քեզ Իմ մեջ: Վայելի՛ր Իմ Ներկայությունը, վայելի՛ր Իմ Սրտի մեծ հարստությունը, դո՛ւ, որին Ես ամուսնական դաշինքով Ինձ միացրեցի:

Ես դարձել եմ քո արքայական խորհրդատուն: Երբեմն-երբեմն քեզ սրտապնդելու համար, Ես Ինձ ցույց պիտի տամ[3]: Մի՛ հարցրու. «Ո՞վ է սա, որ նման է լույսի մի սյան»[4]: Նախքան լուսաբացի քամու բարձրանալը, նախքան ստվերների անհետանալը, մոտեցիր քո Սիրելիին և ապաստան գտիր Նրա գրկում: Այն ժամանակ քո հոգին կհրճվի Նրա գրկում: Ոչ մեկը չի խանգարի քո հանգիստը: Ոչ ոք չի կարող Իմ Սրտում դիպչել քո հանգստին, որովհետև Ես ապահով կհսկեմ քեզ, սիրելի՛ս: Ոչ ոք չի համարձակվի անհանգստացնել քեզ, ոչ ոք չի հանդգնի մոտենալ քեզ, երբ հեռվից տեսնեն խանդոտ սիրո բռնկումը Իմ Աչքերում, հոգատարությամբ պահպանելով քեզ:

Հիմա Ես թույլ կտամ, որ Իմ խանդոտ սերը խոսի, ինչպես Դավիթն է ասել իր սաղմոսում.

«Դու օծում ես
իմ գլուխը յուղով»:

Ես ասում եմ քեզ, Իմ Սիրտը Ձեռքիս մեջ. Ես քեզ կպատվեմ, Իմ Հարս, քո գլուխը նորից յուղով օծելով, նրա համար, որ հանուն Ինձ անցել ես դժվարությունների և հալածանքների միջով: Թող այս յուղը, սիրելիս, ծածկի քո գլուխը և բժշկի քո բոլոր անկատարությունները: Եվ ինչպես մի շուշան տատասկափշերի մեջ, թող քո ներկայությունը լինի այնպես պայծառ ու գեղեցիկ, որ շատ սրտեր գրավի դեպի Իմ Սրտի հարսանեկան սենյակը, որպեսզի նրանք նույնպես հրճվեն Իմ մեջ՝ վկայելով Իմ ողջ երանությունը գալիք օրերին: Հետո ցնծության երգերով նրանք պիտի օրհնեն Իմ Սուրբ Անունը: Իսկ Ես, Իմ կողմից, պիտի արթնացնեմ նրանց սերը, որ Ինձ տենչան: Ես պիտի բորբոքեմ նրանց ծարավը, որ փնտրեն միայն Իմ Սիրտը:

---

[1] Հիսուսի Սիրո պատգամները երգեր են: Աստծո Խոսքն այնքան գեղեցիկ է, որ այն դառնում է օրհներգ հոգու համար:

[2] Հիսուսի երգի վերնագիրը

[3] Երբ Քրիստոսը հայտնվում է իմ դեմքին, ամբողջապես ջնջելով իմ դեմքը: Շատերն են վկայություն տվել այս անսովոր երևույթի մասին:

[4] Մի գիշեր, երբ իմ սենյակում մութ էր, ես իմ մոտ տեսա շլացուցիչ պայծառությամբ երկու սյուներ, ինչպես հայելին է փայլում արևի տակ, բայց չի վնասում աչքերին: Ես վախեցա: Հետո լսեցի հետևյալը. «Մի՛ վախեցիր», և այն անհետացավ:

Ինչպես մի թագավոր, որ նստում է իր արքայական գահին, իր բոլոր հանդիսավոր զգեստներով, փայլելով ոսկուց և թանկարժեք քարերից, գավազանը բռնած իր աջ ձեռքում, ես Իմ գլխավոր և անձնական մտահոգությունը պիտի համարեմ պահպանել Իմ Գահը քո սրտում, որպեսզի քո սիրտը շարունակի զարդարված լինել քո Թագավորի և Տիրոջ հարստությամբ, Ինձ՝ Իմ եռանձն փառքի մեջ ճանաչելու այս հարստությամբ, Ինձանից երկյուղելու հարստությամբ և ամեն տեսակ մեղքից խուսափելու հարստությամբ, և վերջապես, Իմ Աստվածային Կամքը կատարելու հարստությամբ, և այն, ինչ որ հաճելի է Ինձ՝ քո Աստծուն...

Իմ ճամփորդության ուղեկից, հանգստացիր հիմա Իմ գրկում և թույլ տուր քեզ կրել Իմ Բազուկների մեջ: Թույլ տուր քեզ փաղաքշել և համբուրել: Ոչ ոք չի համարձակվի խանգարել քո հանգիստը, երբ նրանք հանդիպեն Իմ Աչքերին: Եվ եթե որևէ մեկը[1] այնքան անխոհեմ գտնվի, որ մարտահրավեր նետի Ինձ, Իմ Շունչը հեռու կքշի նրան փոշի դարձնելով[2]:

Արի՛, թող քո հոգին կլանի Իմաստության գաղտնիքները, թող քո հոգին պարծենա այն միակ ճշմարիտ Գիտությամբ, որը Ես Ինքս եմ տվել քեզ: Թող քո հոգին հրճվի, որ Ես՝ միակ Որդին, որ ամենից մոտն եմ Հոր Սրտին, քո սրտին այնքան մոտիկ եմ, որքան հնարավոր է: Թող քո հոգին կլանի Իմ Քաղցրությունը:

Ես՝ Հիսուս, քո փրկությունն եմ և քո Սուրբ Ուղեկիցը, Նա, ով երգում է քեզ համար՝ թաքնված քեզ հետ և քո ներսում: Ես Նա եմ[3]: Իմ Վասուլա, նկատի ունեցիր այն մեծ թվով պարգևները, որոնք Ես տվել եմ քեզ, որ նշանակեմ ոչ միայն որպես Իմ պատգամատարը, այլև որպես Իմ ամենաթանկագին հարսը: Դո՛ւ, որ մշակված ես Իմ Խոսքով, կրթված Իմ Իմաստությամբ, օժտված Իմ Հոգով և սիրված Իմ Արքայական Սրտի կողմից, ուրախացի՛ր: Ուրախացի՛ր և գոհ եղիր, որ Ես՝ Հիսուս, քո Փրկությունն եմ: Ուրեմն բարձրացրո՛ւ աչքերդ, սիրելիս, բարձրացրու աչքերդ և նայիր Նրան, ով Իր Կյանքը տվեց քեզ համար:

Մի՛ լսիր նրանց, ովքեր հիմար բաներ են խոսում և լցված են դավաճանությամբ: Նրանք երբեք չեն հանդիպել Ինձ, և նրանք նույնիսկ չեն ճանաչում Ինձ, բայց Իմ փառքը ծագեց քեզ վրա և քո միջոցով շատ ուրիշ սրտերի մեջ: Այս է Իմ Սուրբ Սրտի վաղուց կանխասացված հարստությունը, մի հարստություն, որ շատ ազգերի ետ է բերելու Ինձ մոտ և Իմ Գավիթներից ներս: Ուրեմն, բարձրացրո՛ւ աչքերդ և նայիր քո Փառահեղ Թագավորին, քո ամենագթառատ Սիրեցյալին: Այս չքեղության տեսքից դու պիտի պայծառանաս, քանի որ Իմ Սրտի հարստությունը պիտի շարունակի հոսել դեպի քեզ, ինչպես մի ծով, որ կարողություն տա քեզ շնորհալիորեն շարունակելու Իմ Գործը:

Ես օծել եմ քեզ, որ գնաս և հայտարարես, որ Ես նորոգում եմ Իմ արարչությունը, սիրելիս, և որ Իմ Վերադարձը մոտալուտ է: Բայց այս պահին, Ես և դու, նորից պիտի գնանք ազգերի մոտ, հատկապես այնտեղ, ուր ավելի շատ ամայություն կա, քան կյանք: Թույլ տուր Ինձ նորոգել

[1] Ես հասկացա՝ չար ներխուժողները:
[2] Նրա Ձայնում հումորի երանգ կար, երբ Նա ասաց այդ բառերը:
[3] Հովհ. 18:6-8

քո զորությունը Իմ Սրտում՝ լցնելով քո սիրտը Իմ Խաղաղությամբ: Մենք նորից միասին պիտի հայտնվենք, երբ ժամանակը դա: Իմ հաղթանակները՝ հոգիներ նվաճելը, պիտի ողջունվեն Իմ յուրաքանչյուր քայլում, իսկ դու, կապված Ինձ հետ, պիտի վազես և չհոգնես, պիտի խոսես և չծարավես, դու պիտի կանգնես և երբեք չհոգնես: Դու պիտի առաջանաս Ինձ հետ, քո ոտքերը հազիվ գետնին դիպչելով, մինչ Ես պիտի բարձրացնեմ քո ձեռքը՝ օրհնելու Իմ ժողովրդին Իմ Անվամբ Երիցս Սուրբ:

Ես հիմա բռնել եմ քո աջ ձեռքը, ընտրյա՛լս, որ զգեստավորեմ քեզ Իմ ամենաշքեղ զգեստներով: Ես զգեստավորելու եմ քեզ Ինձանով: Երբ դու զգեստավորված ես Ինձանով, այդ զգեստները մեծ զորություն ու տոկունություն կտան քեզ տառապանքի ժամանակներում: Նրանք պիտի սփոփեն քեզ դժվարությունների և անձկության ժամանակ: Եվ նրանց հետ միասին, Ես կուղարկեմ քեզ մոտ Իմ Մորը, որ միշտ քո կողքին լինի: Իր Գթասրտությամբ, Նա պիտի առաջնորդի քեզ, որ Աստծո երկյուղով հասնես սրբության կատարելության:

Հիմա ուրախացրու Ինձ և ընդմիշտ կապիր Իմ Խոսքերը քո սրտին, որպեսզի ինչ էլ անելու լինես, անես արժանապատվությամբ և պատվով, քանի որ դու նշանակվել ես Թագավորների Թագավորի կողմից: Եվ եթե որևէ մեկը հարցնի քեզ. «Ո՞վ է այս երգի հեղինակը», պատասխանիր նրանց ասելով. Այդ Նա՛ է, ով ապրում է Փառքի բարձունքներում, այդ Նա՛ է, հենց Ինքը, որ Իր եռանձն Սրբությամբ կյանք փչեց քո մեջ: Այդ Նա՛ է, որ ասաց սամարացի կնոջը. «Ջուրը, որ Ես պիտի տամ, աղբյուր կդառնա նրա մեջ՝ հոսելով դեպի հավիտենական կյանք»: Այդ Նա՛ է, որ կասի չորացած ոսկորների զանգվածներին. «Չորացած ոսկորներ, լսե՛ք Բանի խոսքը, լցրե՛ք ձեզ Իմ Շնչով և կենդանացեք»: Ասա՛ նրանց քույրս և սիրելիս. «Այս երգի Հեղինակը և Երգահանը Նա է, ում մեջ դուք պիտի ապրեք ողջ հավիտենության համար, եթե հետևեք Նրան»:

Իմ Շնչի շո՛ւնչ, Իմ Աչքերի բո՛ց, մի՛ հոգնիր գրելուց, այլ ականջդ սեղմած պահիր Իմ Կրծքին: Նույնիսկ Իմ պատվին արված հանդիսավոր տոնակատարությունները չեն կարող բավական մոտենալ և գերազանցնել այն թանկարժեք պահերին, երբ Ես քեզ հետ եմ, և երբ դու, ինչպես մի գիրք, բաց ես Ինձ համար, որպեսզի Ես քո մեջ գրեմ Իմ Սիրո Օրհները: Այս Սիրո Օրհներգում, ուր Նա, որ Անծանոթն է անծանոթների համար[1], պիտի բացահայտվի նրանց Իր ամբողջ Փառքով, քանի որ Ես՝ Տերը, չեմ մերժում մարդկությանը, և Իմ շնորհները դեռ անցած չեն: Ահա թե ինչ կասեն անծանոթները մեծ ուրախությամբ.

«Հիսուսն Իմ Փրկությունն է»:

Աստված քո Ընկերն է, Իմ Վասուլա, Նա, ով գիտի ամեն ինչ, քո Ընկերն է: Նա, ում դու հրավիրեցիր քո սեղանի մոտ, քո Նվիրված և Հավատարիմ Ընկերն է: Թող ազգերն իմանան այս, որ նրանք հասկանան, թե ով է Նա, որ հիմա կանգնած է իրենց դռան առջև՝ թակելով դուռը: Եթե նրանք

[1] Մարդ «անծանոթ» է Աստծուն, երբ չի կատարում Աստծո Սուրբ Կամքը, քանի որ նրանք չեն հանդիպել Աստծուն (Մատթ. 7:21-23):

լսեն Ինձ և բացեն իրենց դուռն Ինձ համար, Ես ներս կմտնեմ և կկիսեմ նրանց կերակուրը, իրենց հետ կողք-կողքի: Հետո Ես, Իմ հերթին, երբ ժամանակը գա, Ես ցույց կտամ Իմ երախտագիտությունը նրանց հանդեպ՝ հրավիրելով նրանց կիսել Իմ Գահը երկնքում:

Տե՛ր,
Դու Մեծ ես, Դու Փառահեղ ես,
հրաշալիորեն Զորեղ, անհաղթելի:
Թող Քո ողջ արարչությունը
ծառայի Քեզ արդարությամբ:

Իմ Հայրը և Ես բնակվում ենք քեզ հետ[1], այն սիրո մեծության պատճառով, որ ունես Իմ հանդեպ...

Ա՜հ, Վասո՛ւլա, Ես դեռևս շատ բաներ ունեմ ասելու քեզ, բայց հիմա դու պետք է ավարտես նաև քո մյուս պարտականությունները: Ես քեզ հետ եմ, և Ես ուրախ կլինեմ, երբ դու կատարես քո մյուս գործերը քո ընտանիքի համար: Քո ծննդյան պահից սկսած, սիրելիս, և քո մանկության ընթացքում, Իմ Աչքերը երբեք չդադարեցին հրճվանքով դիտել նրան, ում Իմ Սուրբ Սիրտն ընտրել էր, որ նրանից մի օր պատրաստի մի Ծառ: Դո՛ւստրը Որդու[2], Ես սիրում եմ քեզ:

Հավիտենական կյանքը՝ Ինձ, միակ Ճշմարիտ Աստծուն ճանաչելն է: Արի՛:

Մայիսի 21, 1997

Տե՛ր, Սուրբ Գրքերն ասում են. «Աղքատները կստանան այնքան, որքան ցանկանում են ուտել».[3] Այսօր Դու լցնում ես մեր քաղցած բերանները Քո Խոսքով, ուրեմն ինչո՞ւ համար է այդ շփոթությունն ու շարժումները Քո Տան մեջ:

Որովհետև քո ձեռքը դիմակազերծ է անում բոլոր թշնամիներին, որոնք ներթափանցել են Իմ Եկեղեցու մեջ:

Բայց նրանք վեր են բարձրացնում իրենց գլուխը և ծաղրում Քո Խոսքերը:

[1] Ես հասկացա, որ դա նման էր այն բանին, եթե Ինձ ասեին. «Մենք պսակեցինք քեզ Մեզ հետ»:
[2] Վասիլիկի անունը նշանակում է նաև Թագավորի աղջիկ: Երբ Հիսուսն օգտագործեց այդ արտահայտությունը, Ես հասկացա, քանի որ Նա Թագավոր է, դրա համար Նա տվեց Իմ անունը խորհրդանշական ձևով:
[3] Սաղմ. 21:27

Մի՛ անհանգստացիր ամբարիշտների համար: Կգա այն օրը, երբ նրանք պիտի վտարվեն Իմ Գավիթներից[1]: Բայց դո՛ւ, դու սուր չպիտի քաշես...

Դու մի տեսիլք տվեցիր ինձ անցյալ օրը, և Դու այնքան երջանիկ էիր թվում, այնքան Ուրախությամբ լի:

Ես նայում էի Իմ սիրելիին...

Ա՜հ, ի՞նչ կարող եմ ես ասել:

Իմ Անունը...

Հիսուս Քրիստոս՝ Աստծո Սիրելի Որդի և Փրկիչ:

Վստահ եղիր, այնքան որքան վստահ էիր այդ օրը: Վստահի՛ր Ինձ, երբ Ես ասացի քեզ, որ անկախ նրանից թե ինչ կպատահի, Ես կմնամ քեզ հետ այս ձևով մինչև վերջ: Թող Իմ Սիրտը միշտ այս բավականությունը գտնի քո մեջ[2]... քո անմեղության մեջ իհարկե: Քեզ համար հաճելի՞ է այս ուղևորությունն անել Ինձ հետ:

Թագավո՛ր իմ... կարո՞ղ է Թագավորը,
Իր Վսեմությամբ ու Փառքով
հագնված, շքեղության ու լույսի
թիկնոցի մեջ փաթաթված
հաճույք զգալ,
ինչպես Դու ես զգում,
մի որդի ընկերակցությունից:

Դու գերեցիր քո Թագավորին քո թշվառությամբ: Իսկ դո՛ւ, դու գերվեցիր ու հմայվեցիր այն Ամենով, որ Ես Եմ, և ինչ <u>դու</u> չես:

Դու եկար մեկի մոտ,
որ համբավ չուներ,
Դու կշտացրիր քաղցածին
բարիքներով,
ես պիտի գովաբանեմ քեզ
իմ ողջ կյանքում:

Իմ սիրելին կկատարի Իմ ցանկությունը Ինձ հետ, իսկ Ես, Ես քեզ ամուր պիտի պահեմ Իմ Սրտին մոտիկ: Զե՞ս կարդացել. «Եթե մարդն անմեղ է, Ես նրան ազատություն կբերեմ...»[3]:

[4]Ո՛չ, հիմա ոչինչ մի ասա, պարզապես սիրիր Ինձ... Սեր՝ Սիրո դիմաց, սիրտ՝ Սրտի դիմաց:

---

[1] Ես վստահ չեմ, թե դրանք երկնքի Գավիթներն են, կամ, եթե Աստված այստեղ նկատի ունի Եկեղեցին:
[2] Ես չհասկացա, հետո Նա ավելացրեց մնացածը:
[3] Հոբ 22:30
[4] Ես պատրաստվում էի մի բան ասել:

Թող սերը բարձրացնի քո հոգին Ինձ մոտ:

ΙΧΘΥΣ

Հունիսի 5, 1997

(Հունաստան - Հռոդոս)

(Այս պատգամը տրվեց «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» Միության անդամներին, որ հավաքված էին: Այնտեղ կային 140 մարդ 23 ազգություններից:)

Տե՛ր իմ, Քո խոսքը Ճրագ է
իմ ոտքերին,
Քո Ներկայությունը իմ սրտի
Ուրախությունն
ու խաղաղությունն է:

Մարդկության Փրկիչ,
ես ի՞նչ կարող եմ անել,
որ հաճելի լինեմ Քո Աչքերին:
Ի՞նչ հատուցում կարող եմ անել
Յահվեին՝ իմ Հորը, իմ հանդեպ
Իր առատաձեռնության դիմաց:

Խաղաղությո՛ւն քեզ[1]... Արձագանքիր Իմ Ձայնին մինչև երկրի ծայրերը: Թող յուրաքանչյուրը ոք լսի և իմանա, որ Ես գթության և ողորմության Աստված եմ:

Իմ ժողովուրդ, Իմ յուրայիններ, Ինձ փնտրեք ձեր ողջ սրտով, և ձեր աչքերը աշխարհից հեռացրեք ու վեր բարձրացրեք դեպի Ինձ՝ ձեր հայացքը հառելով ձեր Արարչի վրա:

Ես, ձեր Արարիչը, որ սիրում եմ ձեզ քնքշորեն, ասում եմ ձեզ. ազատությունը գտնվում է Իմ Հոգու մեջ Երիցս Սուրբ: Իմ Սիրո Երգը ձեզ՝ Իմ պարգևն է, որ ավելի շատ հասկացողություն տամ և ձեզ բերեմ դեպի Ինձ, որպեսզի դուք ճանաչեք Ինձ, որպես ձեր Հայրը: Իմ Սրտի օրհնյալներ, մնացեք Ինձ հավատարիմ, և դուք պիտի ապրեք: Ո՞վ է ցանկանում Ինձ. թող նա գա Ինձ մոտ, և Ես պիտի լինեմ նրա բերկրանքը, քանի որ նա նույնպես պիտի լինի Իմ բերկրանքը, Իմ պարտեզը և Իմ դրախտը:

Օրհնյալ լինեք դուք բոլորդ, որ եկել եք Իմ Անվամբ այս հավաքին, և եղեք մեկ Մեր Միասնության մեջ:

Α Ω

[1] Հայրն է խոսում:

(Ինչ-որ մեկը տեսաժապավենի վրա նկարեց, մինչ ես կարդում էի պատգամը հավաքվածներին: Հետո նրանցից մեկը ցանկացավ մեկ անգամ էլ դիտել տեսաժապավենը՝ լուսանկարչական տեսախցիկով: Նա տեսավ, որ Պանտոկրատորի (հունարեն՝ Ամենակարող) սրբապատկերը, որը ինձ մոտ սեղանի վրա էր, միաժամանակ շարժում էր Իր շրթունքները մինչ ես կարդում էի պատգամը: Նրա շրթունքները միաժամանակ շարժվում էին իմ շուրթերի հետ):

Հունիսի 23, 1997

(Ճապոնիա)

Իմ Վասո՛ւլա, եղիր խաղաղության մեջ: Արի աղոթենք հորը.

Հա՛յր, Քո հավատարիմ սիրով
շրջվիր դեպի Ճապոնիան,
Քո անսահման գթությամբ
արագացրու քո ողորմությունը:
Լսիր աղքատներին
և թշվառներին:
Քո փրկարար զորությամբ
բարձրացրու Ճապոնիան,
որ փառաբանի Քեզ:

Ո՜վ Ամենագթառատ Հայր,
սովորեցրու նրանց
մանկությունից Քո Օրենքները,
որպեսզի նրանք հայտարարեն
Քո հրաշքները, և երգեն Քեզ
մի անդադար Օրհներգ:

Թող այս ազգը դառնա
մի օրհներգ՝ Օրհներգին, խունկի
մի անդիմադրելի բուրմունք:
Ես աղոթում եմ Քեզ ո՛վ Տեր,
և աղերսում Քեզ, որ Քո Խոսքով
Դու գաս այս ազգի մոտ: Ամեն:

Այո՛, Ամենքի Տերը միշտ էլ սիրել է նրան[1]... Խոսի՛ր, Իմ Վասո՛ւլա, երբ ես խոսում եմ: Եղիր Իմ Շուրթերը և փառաբանիր Ինձ:

[1] Աստված նկատի ունի Ճապոնիան:

(Տերն ինձ պահեց Ճապոնիայում հինգ շաբաթ: Շատ փոքր հանդիպումներ եղան: Նույնիսկ աթեիստները և բուդդիստները եկան լսելու Աստծո խոսքերը: Հիմա կազմավորվում են երեք աղոթախմբեր՝ հետևելու հոգեկանությանը՝ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ», Սուրբ Երրորդության հոգեկանությանը):

Օգոստոսի 13, 1997

Տե՛ր իմ, Դու տեղացիր ինձ վրա
օրհնությունների հեղեղ,
և դրանց միջոցով
իմ հոգին գտավ իր Տունը՝
Յահվեի Գավիթները... այնտեղ,
ուր Դու ապահովում ես մեզ
Քո Բարությամբ, և ուր հազարավոր
ու բյուրավոր
հրեշտակներ են ապրում:
Աստվա՛ծ իմ,
Քո Անունը նման է Օրհներգի,
որ երբ լսում եմ Այն,
իմ հոգին հրճվում և երգում է
Նրա հետ համաչափ:

Իմ տգիտության մեջ,
Տե՛ր, ինձ երբեք մի՛ զրկիր
Քո Լույսից... Ամեն:

[1]Իմ սե՛ր, Ես միշտ քեզ հետ եմ... Հրապուրված քո խեղճությամբ, Իմ Սիրտը երբեք չի կարող հուսախաբ անել քեզ... Դու դարձել ես Մեր Աստվածային Սիրո զավակը:

Հարկավոր էր մեկը, որ քեզ սովորեցներ ոչ միայն Իմ Օրենքի և Իմ Շնորհի տարրական սկզբունքները, այլև Աստծո Պատգամը [2] իր ամբողջությամբ: Այն, ինչ Ես արել եմ Իմ Եկեղեցու համար, Ես արել եմ այդ, որ ձեզ բոլորիդ միասին կապեմ սիրով, որպեսզի դուք, ձեր հասկացողությամբ, ճանաչեք Մեզ Մեր Երրորդության Սրբության մեջ: Մի ուսուցում, որ տրված է Իմաստության կողմից սոսկ մանուկներին, բայց ծածուկ է պահված խելացիներից և գիտուններից:

Պահի՛ր քո միտքը փակված Իմ Մտքի մեջ և բարգավաճիր ներսից, սեր Իմ: ic

Սեպտեմբերի 9, 1997

(Հռոդոս - Հունաստան)

[1] Հիսուսն է պատասխանում:
[2] Սուրբ Գրքերն ու Աստծո Աստվածային Կամքը:

Իմ հույսը Քո մեջ է միայն,
իմ կյանքը
Քո Ձեռքերի մեջ է միայն,
Խնդրում եմ, ցած թեքվիր դեպի ինձ,
արի՛ և ղեկավարիր հոգիս, Տե՛ր:

Ես եմ:

Ծաղի՛կ, հագեցրու ծարավդ Իմ Ներկայությամբ: Իմ ողջ Սրտով, այ՛ո, Իմ ողջ Սրտով եմ Ես քեզ ասում. Սիրի՛ր Նրան, ով ամենից շատ է քեզ սիրում և երբեք քեզ հուսախաբ չի անի: Պատվի՛ր Իմ Սերը և պատվիր Ինձ: Աճի՛ր Իմ Սիրո մեջ և Մեր Միասնության մեջ:

Վասո՛ւլա, Ես ավելի ուշ կկանչեմ քեզ, որ գրի առնես Իմ Հոգոցները, այն Հոգոցները, որոնք օրվա ամեն մի բոպե դուրս են գալիս Իմ Սրտի խորքերից: Որևէ մեկը, որ վիրավորում է Ինձ, վիրավորում է իր սեփական Հոգուն: Ես չեմ ցանկանում կորցնել ձեզանից որևէ մեկին: Ահա թե ինչու Իմ Հոգին հոգոց է հանում ցավից՝ վշտանալով մարդկային հասկացողությունից էլ այն կողմ: Ինձ հետ են լիությունը և հարատև հարստությունը, և Ես այնքան եմ փափագում կիսել դրանք ձեզ հետ: Ո՜հ, բայց ձեզանից որքան շատերն են փակված մնացել միևնույն քնի մեջ՝ անտարբերության քնի մեջ:

Խնդրեք Ինձ ներել ձեր անցյալի չարակամությունը և ձեր վատ արարքները, և Ես կտամ ձեզ լույսի մի սյուն, որ լուսավորի ձեր սարսափելի գիշերը: Իսկ դո՛ւ, Իմ Վասուլա, համբերիր Ինձ հետ և թույլ մի՛ տուր, որ թշնամին խաբի քեզ ընկնելու հոգնության մեջ, այլ շարունակիր լինել ինչպես Իմ Ձայնի արձագանքը, անդրադառնալով կիրճերից լեռների մեջ:

Իմ Հացը[1] ճաշակելուց հետո, քո հոգին միշտ պիտի փափագի Նրան: Իմ թանկագին հոգի, ամեն ինչ արա, որ բարիք գործես քո առաքելության մեջ: Ո՛չ զոհաբերությունը, ո՛չ էլ գիշերային հսկումները, ո՛չ մարմնական աշխատանքները, ո՛չ էլ որևէ գովասանքի արժանի գործ՝ արված ի պատիվ Ինձ, Ինձ հրճվանք չի պատճառում այնպես, ինչպես այն հոգին, որ գալիս է իր սիրտը ձեռքի մեջ և մատուցում այն Ինձ՝ հայտարարելով Իմ հանդեպ իր սերը, եթե նույնիսկ այն հնչում է ինչպես մի թոթովանք...

Նա՛, ով գտնում է Ինձ, կյանք է գտնում: Երանելի է նա, ով հայտնագործում է Ինձ և սկսում է ճանաչել Ինձ: Հիմա Ես տվել եմ քեզ Կյանքի Հացը, որ այն Օրը, երբ կանգնես Իմ Գահի առաջ, դու դաս ձեռքերդ լիքը բարի գործերով և մատուցես Մեզ[2] քո ընծան:

Հայտնի դարձրու Մեզ աշխարհին և հիշեցրու նրանց, որ Աստծո Խոսքը կենդանի է և գործող: Հռչակիր Հարուցյալ Քրիստոսին, որ գերագույնն է ամեն ձևով և ամենից վեր, և որ Նա գալիս է ձեր օրերում հիշեցնելու ձեզ Հույսի և Խոստման[3] մասին: Հռչակի՛ր Հարուցյալ Քրիստոսին, որ ներկա է բոլոր ժամանակներում և ձեր միջև, ինչպես նաև ձեր ներսում: Հարուցյալ Քրիստոսին, որ հարուստ է շնորհով և առավել գնահատված, քան գայիսոններն ու գահերը, և որ Նրա Աստվածայնության մեջ

[1] Միևնույն ժամանակ, երբ ես լսեցի «Իմ Հացը», ես լսեցի նաև «Ինձ» բառը:
[2] Սուրբ Երրորդությանը
[3] Եկեղեցու նորոգումը Սուրբ Հոգու կողմից:

գտնվում է մի Զորություն, որ եզակի է իր մաքրությամբ և անարատ, ամենակարող ու սիրառատ մարդու հանդեպ: Ուսուցանի՛ր նրանց այն խորհուրդները, որոնք գտնվում են Իմ մեջ, և թե ինչպես եմ Ես դրանք բացահայտում հոգով աղքատներին և նրանց, ովքեր մոտենում են Ինձ սրտի մաքրությամբ: Ամեն ինչ, որ Ես բացահայտելու եմ, պիտի բացահայտվի Իմ Սուրբ Հոգու կողմից, և այն ժամանակ նրանք կճանաչեն Մեզ որպես Երիցս Սուրբ՝ Սուրբ Հոգու մեջ:

Թանկագին հոգի, մշակիր Իմ բոլոր ասածները և հետևիր Ինձ: Ես՝ Հիսուս Քրիստոսը, սիրում եմ քեզ և օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Սեպտեմբերի 25, 1997

Ես կանչում եմ Քեզ,
իմ Յա՛հվե, իմ Հա՛յր,
քանի որ գիտեմ, որ երբ կանչեմ,
Քո Վսեմությունը
կգա շքեղությամբ
երկնքից մինչև երկիր,
իջնելով փառքով իմ բնակարանը:
Տեսնել Քեզ, Աստվա՛ծ իմ,
այդ Քո Աստվածային
և անսահման Լույսի
անհասանելի փառքի մեջ,
անհասկանալի շքեղություն է:
Դու՝ Աստվածությունը,
Քեզ հայտնելով ինձ և ցանկանալով
միացած լինել ինձ հետ,
փափագում ես ճանաչելի լինել:
Միայն Դո՛ւ,
և Դո՛ւ միայն կարող ես ինձ հասնել,
քանի որ ճեղքը,
այդ գոյաբանական անդունդը
Քո և իմ միջև,
այլևս այդտեղ չի լինի:
Տե՛ր, Դու լցնում ես ամեն ինչ
առանց պարփակվելու
ո՛չ նրանց սահմաններով,
ո՛չ էլ նրանց էությամբ:

(...Մինչ ես դեռևս կանչում էի Յահվեի Անունը, հանկարծ մի հրաշք կերպարանք, շատ նման Մարդու Որդուն Իր փառահեղ Այլակերպության մեջ, հայտնվեց ինձ: Նա որ Ձև չուներ, ձև ստացավ: Ինչպիսի՞ միտք կարող է ըմբռնել կամ հասկանալ Նրան, ով ընդգրկում է բոլոր արարածներին:

Չնայած տեսիլքը ամբողջական չէր [1], Նա ճանաչել տվեց Իրեն, և ես գիտակցում եմ դա: Անտեսանելի Աստված թույլ տվեց, որ Իրեն տեսնեն, խոսեն Իր հետ և լսեն, ինչպես ընկերն ընկերոջ հետ: Անտեսանելի, սակայն դեմ առ դեմ):

Յահվեն,
Տերերի Տերը, հայտնվեց ինձ՝
հագնված կատարյալ շքեղությամբ:
Նրա երկնային թիկնոցը
կայծկլտում էր,
սակայն առանց գույնի, փայլելով,
ասես ծածկված լիներ
ադամանդներով
և այլ թանկարժեք քարերով:

Եվ մինչդեռ ես նայում էի շվարած
և խորհրդավորությամբ համակված
շնորհի այս հմայիչ տեսիլքին
և աննման գեղեցկությանը,
երբ Յահվեն նրբորեն
հայտնվեց ամպերի հետևից,
այդ անելով
այնպիսի շնորհագեղ շարժումով, որ
ես զգացի, թե իմ սիրտը ծաղկում է:

Նրա Վսեմությունը
հիշեցրեց ինձ մի փեսացուի,
որը դուրս է գալիս տաղավարից:
Նրա Ներկայությունը
ճառագում էր մի նրբագեղություն,
որը, եթե նույնիսկ
փորձեի այն նկարագրել
իմ ողջ կյանքում, երբեք
չպիտի կարողանայի գլուխ բերել:

Նրա Ներկայությունը
միևնույն ժամանակ
ճառագայթում էր սեր և այնքան
քաղցրություն ու քնքշություն,
որ հոգիս սահեց ու ընկավ գետնին:
Նրա գեղեցիկ Գլուխը
թեթևակիորեն թեքված էր դեպի աջ,
ինչպես Սուրբ Սրտի արձաններինը:
Դու գեղեցիկ ես Աստվա՛ծ իմ,
չնայած ես հազիվ եմ կարողանում
դիտել քողի միջից:
Ես տեսնում եմ Քո մազերը

[1] Կարծես տեսնում էի մոխրագույն քողի միջով:

մուգ գալարներով՝ հասնելով
Քո ուսերին, և Քո գեղեցիկ Դեմքը,
փղոսկրյա գալկությունը
հմայում է աչքը:
Յահվեի կեցվածքը
թեև նման էր երկչոտ
ու ամաչկոտ մեկին,
բայց ինձ սխալ մի հասկացեք,
դա երկչոտություն չէր,
այլ նրբագեղության
և վեհության մի ձև:

Ո՜հ Յա՜հվե,
Դու որ անցնում ես մեծությունից
և կատարելությունից այն կողմ,
Դու, որ Աստվածություն ես,
անըմբռնելի կերպով
մի ձև ընդունեցիր,
որ Քեզ ցույց տաս անարժան մեկին:
Իրոք, ինչպե՞ս կարող է
լեզուն բառերով արտահայտել
«այնպիսի բաներ,
որոնք ոչ մի աչք չի տեսել
և ոչ մի ականջ չի լսել, բաներ,
որոնք մարդու մտքի
սահմաններից այն կողմ են»:

Ո՜հ արի՛ և շնչիր իմ պարտեզի վրա[1]
և տարածիր
Քո քաղցրությունն իմ սրտում:
Բայց ո՞վ եմ ես, որ կարողանամ
գննել Քո կերպարանքը:
Միթե հնարավո՞ր է,
որ դու այդպիսի փառքի
և շքեղության մեջ լինելով,
գրավվես մեր թշվառությամբ:
Դու շլացրեցիր ինձ,
և ես ապշած եմ
Քո Տիրական Գեղեցկությամբ:
Ինչի՞ նման կլինի
ամբողջ օրը Քեզ դիտել
երկնքում մեր բաց աչքերով:

Ինչպե՞ս և որտեղ
ես գտնեմ բավարար բառեր՝
նկարագրելու Քո Շնորհն
ու Քո Գեղեցկությունը:

[1] Դա նշանակում է. «Ուղարկիր Քո Սուրբ Հոգին ինձ մոտ»:

Բառեր չեմ գտնում, հատկապես
այն թեթև շարժման համար,
որ արեցիր ամպերի հետևից
դուրս գալու համար:
Պե՞տք է, որ ես հնարեմ
գովերքի նոր բառեր՝
գովաբանելու համար
Քո անասելի Գեղեցկությունը:
Գովերքի մարդկային բառերը
ոչինչ են,և երբեք
բավարար չեն լինի
երբևէ արտահայտելու այն,
ինչ ես ուզում եմ արտահայտել:
Քո Զուլալ Գեղեցկությամբ
Դու ինձ գերում ես:
Քո Հմայքով Դու ինձ թողնում ես
ապշած ու զմայլված,
և գարնան նման
Դու ծաղկեցնում ես իմ սիրտը:

Քո մի հայացքով
իմ հոգին իրեն պսակված է
զգում իմ Արարչի հետ,
իմ Արարչի, որն ազատեց ինձ Իր
մի հայացքով և ազատ թողեց
ինձ ամբողջովին, որ հայտարարեմ
Իր պսակադրության երգը:

Դու պահպանում ես ինձ,
և մինչ ես գնում եմ,
Դու շախյուղաներ ես սփրում
իմ ճանապարհին և
Քո Աչքի Բիբի նման
Դու պահպանում ես իմ հոգին:
Ես գնում եմ կրակի միջով
և դուրս եմ գալիս դրանից
առանց վնասվելու:
Եվ երբ վիրավորանքի
հեղեղներ են թափվում ինձ վրա,
տիղմի պես, չարի կողմից,
Քո աջ Ձեռքը պահում է ինձ՝
մեղրից էլ քաղցր և գինուց ավելի
արբեցնող խոսքերով,
մինչ Դու ծածկում ես իմ գլուխը
Քո օրհնություններով՝
զարդարելով ինձ ինչպես թագուհու:

Եվ երբ ինձ ճնշողներն
ուրախությամբ թշնամանք

և զրպարտություն են շնչում
իմ շուրջն ամբողջապես,
Քո Վսեմությունը,
ինչպես կայծակի լուսարձակում,
ինձ մոտ մի քերովբե է ուղարկում,
որը բարձրացնում է հոգիս,
որ բարձրանա նրա վրա
և ճախրի քամու թևերի վրա:
Ապա, Քո Խաղաղության
և Քո ժպիտների մեջ,
ես վերևից նայում եմ նրանց,
ովքեր անվերջ կանչում են իմ մահը,
բայց երբեք չեն կարողանա
հասնել ինձ, թեև նրանք դողում են
իրենց կատաղության
և զայրույթի մեջ: Ո՛չ, ոչ մի թշնամի
երբևէ չի կարողանա
խորամտությամբ գերազանցել
իմ Աստծուն: Զէ՞ որ Նա Ինքը
պիտի ճգմի ինձ ճնշողներին:

Իսկ հիմա ես երկարում եմ
ձեռքերս դեպի Քեզ:
Թող յուրաքանչյուր ոք իմանա, որ
Ողորմությունն ու Բարությունը
մեր Աստվածն է՝ Երիցս Սուրբ:

Ես ձեր մեջ եմ: Իմացի՛ր, Իմ փոքրիկ Վասուլա, որ աղքատներն ավելի շատ պիտի ստանան Իմաստությունից, քան հարուստները, որոնք հպարտանում և ուրախանում են իրենց փառքի մեջ, որը բոլորովին էլ փառք չէ: Ես օծել եմ քեզ Իմ յուղով[1], որպեսզի այդ մկրտության յուղով Ես կարողանամ հաղթանակներ ստանալ քեզանից Իմ փառքի համար, ինչպես նաև քո սրբագործման համար:

Քո քաղցրությամբ թույլ տուր ինձ ողորմություն ստանալ Քեզանից:

Ես՝ Փառքի Թագավորը, ինչպես նաև քո Փեսան, պիտի բավարարեմ աղքատներին, և դուք ողորմություն կստանաք, ինչպես և նույն քաղցրությունը, որը Ես տվել եմ Իմ Որդուն:

Արի՛ և լսիր Գերագույն Իշխանությանը, որ շշնջում է քո ականջին: Արի՛ և գրիր Իմ Խոսքերը և գանձի պես պահպանիր դրանք: Ես քո Հոգու Պահապանն եմ, և Իմ Շուրթերից դու ոչ թե շողոքորթություն կլսես, այլ արդարություն: Արի՛ և հենիր գլուխդ Իմ Սրտին, որպեսզի այդ մոտիկության մեջ կարողանաս ստանալ այն հայտնությունը, որը գալիս է Սիրո հնոցից[2], և երբ դու լսես Ինձ, Ընտրությո՛ւն-Իմ-Որդու, քո Հոգին

[1] Յուղն այստեղ խորհրդանշանակորեն օգտագործվում է «Անուն» բառի փոխարեն:
[2] Աստված նկատի ունի Իր Սիրտը:

չպիտի դիմադրի հետևելու արդարության և բարության ճամփան: Հետո դու քո ուրախությունը կգտնես այդ ճանապարհի վերջում:

Զե՞ս լսել, սքանչելի զավակ, որ Ես՝ Յահվեն, ձեր Արարիչը, պսակված եմ Իմ արարչության հետ և յուրաքանչյուրի Ամուսինն եմ[1]: Օր ու գիշեր դուք սայթաքում եք, արաչությո՛ւն, հետապնդելով ստվերների, և նույնիսկ մեկ անգամ չեք փորձել թափանցել այս խորհրդի մեջ: Եթե ձեզանից այդքան շատերը ոչնչանում են, այդ նրանից է որ դուք հսկայական բազմություններով մերժել եք Իմ Գիտությունը: Դուք մոռացել եք Իմ ուսուցումները:

Ես նայեցի Իմ սերմերին և հարցրեցի Ինքս Ինձ. «Ես ի՞նչ անեմ նրանց հետ: Նրանք լավ ամրացել են իրենց խաբեության մեջ: Ինչպե՞ս Ես հասկացնեմ այս բազմությանը, որոնք չեն կարողանում տարբերել իրենց աջ ձեռքը ձախից, որ Ես նրանց Փեսան եմ, և Ես նրանցից միայն սեր եմ ուզում, ո՛չ թե զոհաբերություն, Իմ Սրտի ճանաչում, ո՛չ թե ողջակիզումներ, և ո՛չ էլ հանդիսավոր տոնախմբություններ»:

Ո՛վ Իմ արքայական ընտանիք, դուք փոխանակել եք ձեր փառքը ամոթի հետ: Զե՞ք լսել, որ Ես կարող եմ ցածրացնել երկինքը ձեզ մոտ գալու համար: Մի՞թե Ես բավարար չափով չեմ բարձրացրել Իմ Ձայնը ձեր ականջին լսելի դառնալու համար, արարչությո՛ւն: Դուք դեռ որքա՞ն եք հետապնդելու քամուն: Դեռ որքա՞ն պետք է Ես տեսնեմ ձեզ ստվերներ հետապնդելիս: Եկե՛ք Ինձ մոտ: Իմ Սիրտը նման է մի Ճրագի ձեր ոտքերի համար, և Իմ Շուրթերից, շնորհով խոնավացած և աստվածայնության ցողը նրանց վրա, հոսում են շնորհի գետեր և Ողորմության անսահման կանչեր:

Օր ու գիշեր, Իմ սիրելիներ, դուք սայթաքում եք ստվերների երկայնքով: Եկե՛ք Ինձ մոտ, և Ես կդիպչեմ ձեր սրտին, որպեսզի ձեր այլասերվածությունը վերանա: Հետո, ձեր հանդեպ ունեցած Իմ անսահման սիրով, Ես կընկնեմ ինչպես ցող ձեզ վրա, և Իմ Աստվածայնությունը կծածկի ձեր թշվառությունը, պարփակելով այն, որ ապրի մշտապես Իմ պայծառության մեջ՝ պատրաստելով ձեզանից լույսի մի անոթ և մեկ հոգի՝ Իմ հոգու հետ:

Ա՜հ, Վասո՛ւլա[2], դո՛ւ, որին Ես օրհնեցի օծելով Իմ Անվամբ, խանդը բոցավառում է Իմ Սիրտն ամեն անգամ, երբ քո սիրտը գործում է ինչպես անմիտ մի կին և հեռու է փախչում Իմ Սրտից, հետամուտ լինելով քմահաճույքների, և ոչ թե Իմ Աստվածային զորությանը: Ես ասում եմ քեզ, Իմ սիրելի, պահի՛ր քո Փեսայի սկզբունքները և կապիր դրանք քո սրտին: Դրանք կջերմացնեն քո սիրտը և կօգնեն քեզ, որ չշեղվես քո Փեսայի Ներկայությունից, որը միայն սպասում է ողորմած լինել քո հանդեպ՝ Այնքան-սիրված-Իմ-կողմից: Եվ եթե Ես խնդրել եմ քեզ բացահայտել Իմ հարսանեկան երգը[3], գրի առնելով այն, այդ իմ խանդոտ սիրո պատճառով է, որ Ես ունեմ յուրաքանչյուր հոգու հանդեպ, և որովհետև Ես ցանկանում էի, որ Իմ սիրելիները բավարար սնունդ ունենան, երբ անցնում են այս անապատի միջով... Ես քեզ վստահել եմ

[1] Ես. 54:5
[2] Հանկարծ Նրա Աստվածային Հայացքը շրջվեց և նայեց Ինձ:
[3] «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ»

մի տաղանդ (չափի միավոր), որ դու ձեռք բերես Մեզ[1] համար համարժեք քանակությունը: Դու լավ գործ արեցիր, որովհետև դու Մեզ ցույց տվեցիր քո հավատարմությունը՝ Մեզ գոհացնելու քո եռանդով:

Ուստի հիմա եկ, մեկուսացիր Մեր մեջ: Մեկուսացիր Իմ Սրտում, և ճաշակիր Իմ Սրտի մտերմիկ բերկրանքները, ինչպես նախորդ դեպքերում: Թող Իմ Սիրո էությունը դետի պես հոսի քո սրտում, որպեսզի քո բոլոր մանր անհավատարմությունները, որոնք Իմ Հոնքերը վեր բարձրացրին, լվացվեն:

Տե՛ս, հիմա ես Իմ բառերը դրոշմում եմ քեզ վրա բազմաթիվ մեղավորների փրկության համար: Ես եկա քեզ մոտ հեզությամբ, Իմ հարս, Իմ Որդու խորհրդավոր Մարմնի նորոգման համար:

Տե՛ս, հիմա ես, քո Արարիչը, կանչում եմ քեզ, քանի որ ես պսակել եմ քեզ Ինձ հետ, որպեսզի Մեր միությամբ ես հաճույք ունենամ քեզ հավատարմությամբ և եռանդով զարդարելու: Այո՛, այս փխրուն կավի վրա, ես ամբողջապես դրոշմել եմ Իմ Անունը, սկսած այն օրվանից, երբ քո հոգին կանչեց Ինձ. «Ա՛բբա» և, այդ պահից սկսած, ես ուղղել եմ քո ճանապարհը երկրի վրա և սովորեցրել քեզ, թե ինչպես հրճվել Իմ մեջ՝ միշտ խայտալով Իմ Ներկայությամբ:

Իմացի՛ր, Իմ Վասուլա, թե ինչպես էի ես ցանկանում, որ դու սիրես Ինձ քո ողջ սրտով, և թե ինչպես էի ես փափագում քո ողջ կյանքը դարձնել մի մշտական տենչանք ու ծարավ Իմ՝ քո Աստծո հանդեպ: Ես ուզում էի քեզ ցույց տալ Իմ Թագավորությունը և Իմ հարսանեկան սենյակը, ուր, առանձնության մեջ, մենք կարող ենք հրճվել մեկս մյուսով: Ես՝ քո Փեսան, վառված սիրով, մտերմաբար կզրուցեմ քեզ հետ՝ սովորեցնելով քեզ սուրբ գործերի գիտությունը: Իսկ դո՛ւ, ամուր կպչելով Իմ Սրտին, կձգտես շնորհ ստանալ Ամենակարողի շնչից, որպեսզի չդադարես լինելուց:

Ո՛չ, ընտրյալս, մեր սերտ ու մտերմիկ միությունը մեկօրյա այցելուի հիշողության նման չէ: Ես անհանգստություն չեմ պատճառի քո սրտին, հեռացնելով քեզանից Իմ սերտ միությունը: Ես պիտի հոգամ քո դյուրաբեկության մասին, Իմ Վասուլա: Տե՛ս, սիրելիս, թե ինչպես էի ես ցանկանում գրավել քեզ դեպի Ինձ, ինչպես սիրեցյալն է իր սիրելիին տանում առանձնության մեջ:

Ես, որ մարդկության Սիրահարն եմ, Իմ արարչության Ամուսինը, հիմա ցանկանում եմ քեզ տանել Ինձ մոտ... Մեկուսացիր Իմ մեջ[2]... Դե՛, դու պետք է որ երբեմն լսած լինես, թե ինչպես է փեսան ցանկանում առանձին լինել իր հարսնացուի հետ հարսանիքից հետո: Ես առաջարկում եմ քեզ այս շնորհը, որպես նախերգանք մեր տոնախմբության[3]: Այո՛, այն օրը, երբ դու պատասխանեցիր Իմ Աստվածային Կամքին... Եվ բացելով քո սիրտը Իմ Կանչի հանդեպ, ես հարստացրեցի այն Իմ Սրտից, որպեսզի ավելի ուշ դու ամենուր ցանես այդ գանձերը: Այդ գանձերը սերմեր են[4],

[1] Սուրբ Երրորդության
[2] Նա այդ ասաց որպես հրավեր, բայց մեծ հանդիսավորությամբ:
[3] Երբ ես գրում էի այս բառերը, 1997թվի նոյեմբ. 21-ն էր: 1997թ-ի նոյեմբ. 28-ին «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների 12-րդ տարեդարձն էր:
[4] Երբ Աստված արտասանեց «սերմեր» բառը, ես իմ առջև տեսա չափյուղաներ:

որոնք դու ստանում ես Ինձանից, որոնք դու պետք է ցանես այն երկրներում, ուր Ես ուղարկելու եմ քեզ:

Այն օրը, երբ դու ենթարկվեցիր Իմ Աստվածային Կամքին, թույլ տալով Ինձ ղեկավարել քո կյանքը, Ես սիրալիր կանգնեցի քո առջև՝ հրավիրելով քեզ այս խոսքերով. «Հոգու համար անհնարին է սիրել Ինձ այնպես, ինչպես ուզում, որ նա Ինձ սիրի, եթե նա իրեն հեռու պահի Ինձանից: Մոտեցի՛ր Ինձ և ճաշակիր Իմ հաճույքները: Ես ցանկանում եմ, որ դու մտերիմ լինես Ինձ հետ: Եթե հեռու մնաս Իմ գրկից, դու չես կարող ճանաչել Ինձ»[1]: Ես, մեր սերտ միությամբ և Իմ Սիրո օծմամբ, զարդարել եմ քեզ Գիտությամբ. Գիտություն, թե ինչպես գտնել Ինձ և ճանաչել Ինձ:

Քանի որ Ես հազարավորների միջից ընտրեցի քեզ, դու այլևս չպետք է կասկածես: Եղիր խոնարհ, որ Ես շարունակեմ քեզ բարձրացնել Ինձ մոտ... Ես լվացել եմ քո ձեռքերը և քո բերանը, որպեսզի, մաքրված քո ձեռքերով, նրանք գրեն Իմ խոսքերը և պահեն Իմ գրքերը, և քո բերանով Ես անուշահոտությամբ օծեմ յուրաքանչյուր ազգի: Իմ շնորհի միջոցով, Ես զարդարում եմ[2] քո հոգին Իմ զորության զգեստով, բայց ամենից առավել, Ե՛ս, Իմ Վասուլա, զարդարեցի քեզ Իմաստության Իմ հոյակապ Գործերով, որպեսզի Իմ սիրելիի շուրթերից, օծված Իմ Գերիշխանության կողմից, Մենք[3] լսենք գովաբանություն և մեծարանք Մեր Երրորդության Սրբության հանդեպ[4]:

Շարունակի՛ր հռչակել Հարուցյալ Քրիստոսին և լցրու ողջ աշխարհը պտուղով: Ասա՛ նրանց, որ Քրիստոսը, Իր Աստվածային Սիրով, ցած է խոնարհվում Երկնքից, որ Իր Ներկայությամբ կենդանացնի Իմ[5] Ձեռքերի գործը: Այս խրախուսիչ լուրերով ազգերի բազմություններ պիտի գան ճանաչելու Մեզ սերտ միասնության մեջ: Ասա՛ նրանց, աղջիկս, թե ինչպես ենք Մենք հրճվում, երբ Մեզ հետ վերաբերվում եք որպես ձեր Սուրբ Ընկերակցի ձեր առօրյա կյանքում...

Խոսիր որպես Իմ պատվիրակը և հիշեցրու Իմ ժողովրդին, որ Ես՝ Յահվեն, կենդանի եմ և գործունյա, հետո գնա այն[6] քահանայական հոգիների մոտ, ովքեր այլևս Ինձ չեն փնտրում, և հարցրու նրանց. «Ինչո՞ւ երբեք չեք հարցնում. Ո՞ւր է Աստված»: Իմ Օրը Ես Իմ դատաստանը կհայտարարեմ այդ հովիվների դեմ, ովքեր Իմ մասին չգիտեն, և ովքեր երբեք չեն ճաշակել ներքնապես Իմ քաղցրությունը: Այսօր այդ հովիվները փոխանակել են Ինձ մի բանի հետ, որն արժեք չունի, ո՛չ էլ որևէ զորություն իր մեջ: Հիշել Իմ Ներկայությունը. ահա թե նրանք ինչի պետք է հետևեն: Նրանք Ինձ չեն հետևում... Ինչպե՞ս կարող եմ Ես ասել. «Նրանք Իմ Որդու խունկն են», երբ նրանց միակ բույրը մահվան հոտն է:

---

[1] Սա է Աստծուն ճանաչելու ողջ գաղտնիքը՝ մտերմիկ միությունը:
[2] Նա օգտագործեց ներկա ժամանակը, քանի որ այն շարունակվում է:
[3] Սուրբ Երրորդությունը
[4] Աստված հիշեցնում է ինձ իմ առաքելությունը:
[5] մեզ
[6] «Այն» նշանակում է, որ ակնհայտ է, որ ոչ «բոլորի»:

Արարչությո՛ւն, ես ձեզ տվեցի, անասելի շնորհի տասներկու տարիներ[1], և ես չէի ուզում արագորեն գործել Իմ զայրույթի մեջ: Ձեզ հանգստացնելու համար, շնորհի այս տարիներին, ես խոսեցի, ես իրար միացրի սրտեր, որոնք կոտրված էին, և Խաղաղություն հաստատեցի այդ սրտերում: Իմ Սեփական Սիրտը Կենդանի Ջրի մի Աղբյուր է, որ շնորհի այս տարիներին ընկղմվում է այս չոր հողի մեջ, աճ տալով այնտեղ, ուր միայն տականք կարելի էր գտնել:

~ Ես միշտ ցանկացել եմ ձեզ դասել որպես Իմ Յուրայինները: Այս օրերին ես ասում եմ ձեզ. ես, որ Իմ արարչության Փեսան եմ, կանչում եմ ձեզանից յուրաքանչյուրին, նրան, ով պսակված է Ինձ հետ: Ինչի՞ համար են այդ խոժոռումներն ու սպառնալիքները Իմ Բերանի քաղցրության վերաբերյալ[2]: Դժբախտ փոքրիկ արարած, որ հեռու ես Ինձ ճանաչելուց, արի՛: Ես հրավիրում եմ քեզ ընկնել քո Փեսայի գիրկը, և ես ցույց կտամ քեզ, թե ինչպես, ես՝ Յահվեն, կարող եմ զարդարել քո հոգին, շռայլորեն առաջարկելով քեզ Իմ Աստվածային Սիրո զեղումները, որպեսզի դու, քո հերթին, վերադարձնես Ինձ Սիրո այդ հեղեղը:

Հետո, սպասիր և կտեսնես. այն օրը, երբ Ես տանեմ քեզ Իմ Սրտի հարսանեկան սենյակը, դու կծաղկես ինչպես մի վարդ, որն աճում է գետակի ափին, հայտարարելու համար Իմ Անվան մեծությունը՝ անվանելով Ինձ. «Հա՛յր իմ»: Իմ Սրտի հարսանեկան սենյակում քո սիրտը վեր կթռչի գովաբանություններով և, ինչպես փեսան է ուրախանում իր հարսով, այդպես էլ Ես կուրախանամ քո մեջ, իսկ դու՝ Իմ մեջ: Իմ հզոր Ձեռքը պիտի պահի քեզ, և դու երբեք չես ուզենա նորից բաժանվել Ինձանից: Անշուշտ, քո հոգին, հարստացած Իմ քաղցրությամբ և Իմ Հոգու լիակատարությամբ, պիտի բացականչի բոլոր ազգերին. «Գեղեցկությունը և փառքը գտնվում է մեր Արարչի մեջ, մեր Հույսի և մեր Տիրոջ մեջ»:

Իմ~ընտրյալ~աղջիկ, լսի՛ր և գրիր. Ես ցանկանում եմ, որ վկայես Իմ Սրբության և Իմ Աստվածային Քաղցրության մասին: Եղիր ինչպես մի բարձրաձայն գիրք, մի գիրք՝ գրված Եռանձն Աստծո կողմից: Բայց հիմա Ես ուզում եմ քեզ միայն Ինձ համար: Ես ուզում եմ լինել Իմ ընտրյալի հետ և ամպերի վրա սլանալ քեզ հետ՝ բարձրացնելով քեզ նրանց դժվարություններից, ովքեր ամեն օր քո մահն են հռչակում: Ես ցանկանում եմ հիմա քեզ վեր բարձրացնել իրարանցումից և խռովությունից, մրցակցությունից, նախանձից և սիրո պակասից: Հետո, քո մտահայեցության մեջ, մինչ քո գլուխը կհանգչի Իմ Կրծքին, Ես պիտի ավելացնեմ քո սրտում Իմ Աստվածային ուսուցումները:

Դու պիտի սովորես բարիք գործել քո կյանքի բոլորի օրերին, և այդպես դու պիտի աճես Իմ Սրտում, արձակելով մի քաղցր բույր, ինչպես շուշանները: Եվ երբ Ես քեզ ուղարկեմ ամենուրեք տարբեր ազգերի մոտ, դու պիտի տարածես քո բուրմունքը նրանց վրա, և այն պիտի ընդունվի ինչպես օրհնություն, որովհետև դու պիտի աճես Իմ Սրտում:

[1] Այն ժամանակից սկսած, երբ Աստված սկսեց Իր գործը՝ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ»:
[2] Աստված կանխատեսում է որոշ հոգիների բացասական հակազդեցությունը:

Տե՛ս, ես հաղցնում եմ քեզ Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի Դեմքը[1]: որպեսզի նրանք հասկանան, որ դու Իմ Գործն ես, շնորհված իրենց Իմ Շնորհի միջոցով, որ արձագանքես Ինձ: Ուրեմն շարունակիր լինել Իմ Արձագանքը, թող Իմ խոսքերը հոսեն ինչպես գինի քո շուրթերից՝ արբեցնելով իմ որդիների և դուստրերի սրտերը:

Տե՛ր, ես զարմացած եմ, և դեռ
մնում եմ զարմացած
Քո Գեղեցկությամբ:
Իմ հոգու գիշերվա մեջ
Դու հայտնվեցիր
հրաշք կերպարանքով, ինչպես
Մարդու Որդին
Իր Այլակերպության մեջ:
Ո՜վ Եռանձն Փեսա,
լի շնորհով և գերիշխանությամբ,
ավելի գեղեցիկ, քան բոլոր
հրեշտակները միասին վերցրած,
այս ամենը ի՞նչ է նշանակում:
Ի՞նչպիսի ոգեշնչմամբ Քո Սիրտը
դրդեց Քեզ նայել ինձ վրա:
Բայց ես պիտի համարձակվեմ
ասել այն, ինչ ուզում էի ասել.
Քո Սիրտ ի՞նչ քմահաճույքով
Քո Սիրտը դրդեց Քեզ նայել
իմ թշվառության վրա:

Ես, որ ամենից անարժանն եմ,
ահա Դու հիշեցնում ես ինձ
մեր ամուսնական կապերի մասին,
հիմա նույնիսկ ավելի խորը
տանելով ինձ Քո Սրտի մեջ,
որ վայելեմ նրա ներսում
գտնվող բերկրանքները,
որպեսզի կարողանամ ստանալ
Քո Աստվածայնության հոսքը,
որ ինձ կենդանի պահի:

Աղջի՛կս, եթե ես դուրս եմ հեղել և շարունակում եմ հեղել Իմ շնորհը քեզ վրա, այդ այն պատճառով է, որ ես ցանկանում եմ, որ քո հոգին լինի ավելի գեղեցիկ և ավելի պայծառ յուրաքանչյուր անցնող օր, մինչև այն հասնի Իմ կողմից ցանկացված կատարելության: Այդ ժամանակ ես կարող եմ ասել. «Այս սիրտը Ինձ վերադարձրել է այն ամենը, ինչ ես պահանջել եմ, և ես մեծ հաղթանակներ եմ ստացել դրանից: Ես միևնույն ժամանակ մեծ հաճույք եմ ստացել դրանից, և Իմ շնորհի միջոցով, ես պիտի շարունակեմ բազմապատկել այս սրտի վրա Իմ շնորհները և Իմ պարգևները, որպեսզի այն շարունակի երգել Իմ Սիրո Օրհներգը ամեն մի

[1] Երբ շատերը տեսնում են Հիսուսի հայտնվելը իմ դեմքի փոխարեն:

ազգի»: Ես պիտի շարունակեմ քո սրտի մեջ լցնել Իմ ուրախություններն ու սփոփանքները, ինչպես ջուր են լցնում կուժից բաժակի մեջ, այդպես էլ Ես պիտի լցնեմ քո սիրտն Իմ Սիրով[1]:

Մի տարի անցավ իմ մտքով, և ես նորից մտածում էի նրանց մասին ովքեր, Տե՛ր իմ, զրպարտում են Քո Պատգամը մոլեգնությամբ, հատկապես Քո սիրո լեզուն:

Աղոթի՛ր այդպիսիների համար և օրհնիր քեզ հալածողներին, որպեսզի կարողանաս Ողորմություն ստանալ Դատաստանի օրը: Միսն ու արյունը միշտ չարիք կմտորեն, և հաճույք կզգան չարիք գործելուց: Այդ նույն հոգիները չեն խոսում Իմ քաղցրության, ո՛չ էլ Իմ Աստվածայնության մասին, որովհետև նրանց մտքերը չգիտեն, թե ինչպես անջատեն Իմ Աստվածային քաղցրությունը իրենց սեփական մարմնի և արյան ցանկություններից: Ո՛չ, նրանք չեն տեսնում, որ տարբերություն կա: Աղավնյա՛կս, երբ Ես խոսում եմ Իմ Շուրթերով, որոնք խոնավ են շնորհով, սրբությամբ և քաղցրությամբ, նրանք չեն հասկանում Իմ ասածները և չեն կարողանում ընկալել Իմ մաքրությունը Իմ Հոյակապության մեջ: Նրանց սրտերն այնքան կարծր են, որ նրանց համար անհնարին է դառնում ընկալել Իմ Սրտի պայծառությունն ու Աստվածայնությունը: Այս է պատճառը, որ այդ սրտերը ծածկված են Իմ Լույսից, և իրենց անցավոր մարմնի ու մտքի մեջ նրանք մեղադրում են Ինձ, որ Իմ խոսքերը ծայրահեղ են և զգացական: Սրանք նրանք են, որոնց մասին Ես ասում եմ. «Նրանք օտար են Ինձ, և նրանք չեն ճանաչում Ինձ...»:

Ա՜հ, Իմ քնքուշ ու նուրբ հոգի, դու ճաշակել ես Իմ քաղցրությունը Իմ Աստվածայնության մեջ, և Ես քո հոգուն զգացնել եմ տվել Իմ Հոյակապության համը, և հիմա նայիր քեզ, նայի՛ր, թե որքան մեծ է քո ծարավն Իմ հանդեպ: Ես, Իմ հարս, ինչպես նոր ամուսնացած Փեսա, քեզ ցույց եմ տվել, թե ինչպես մտերիմ ու հանգիստ լինես Ինձ հետ, քանի որ Իմ ընկերակցության մեջ ոչ մի բան խավար չէ: Եվ որքան շատերն են սովորել քեզանից, և Ես մեծ հաղթանակներ եմ ստացել այն շնորհից, որ Ես տվել եմ քեզ: Երբ քո սիրտը կապված է Իմ Սրտի հետ, խավար չկա, այլ ուրախություն և հրճվանք՝ քո կյանքի բոլոր օրերին:

Յա՜հվե,
Դու, որ դուրս եկար Երկնքից,
ինչպես փեսան է դուրս գալիս
իր տաղավարից,
Դու ցույց ես տվել ինձ Քո Դեմքը,
որ վայելեմ Քո քաղցրությունը[2]:

Թող ամբարիշտների բամբասանքը
լսի և իմանա

[1] Կուժի և լցվող բաժակի պատկերը այն առաջին նկարներից էր, որ իմ հրեշտակ Դանիելը նկարեց ինձ համար, դեռևս 1985 թվին:
[2] Սաղմ. 26:4

Դավթի սաղմոսներից, որ
իրենց թշնամությունը Քո
Լեզվի քաղցրության դեմ անհիմն է:

Թող նրանք
Քո սաղմոսները կարդալով իմանան,
որ Դու Քո սաղմոսների
Սաղմոսն ես, և որ Քո Խոսքերը,
մարդկության Սիրահա՛ր,
մեղրից էլ քաղցր են,
նույնիսկ այն մեղրից,
որ կաթում է խորիսխից[1]:

Դրա համար,
սոսկ տեսիլքի հիշողությունից,
որ Դու ինձ տվեցիր
Քո անսահման ողորմածությամբ,
իմ հոգին հալչում է և
մեկ անգամ ևս գետին տապալվում:

Ի՞նչ ավելացնեմ ես սրան:
Ի՞նչ կարելի է ավելացնել
այդպիսի մի վեհ տեսիլքին:
Բայց Քո վեհանձնությունը
բարեհաճեց ցույց տալ Իրեն
ինձ նման անարժան մեկին:
Սա Քո մեծ սիրո մի ճրի պարգև էր:

Դու կարիք չունեիր
թույլտվություն վերցնել
որևէ մեկից: Դու ցանկանում էիր
ցույց տալ Ինքդ Քեզ,
Քո երանելիությունը,
Քո հմայքը, Քո պայծառությունը,
Քո կատարյալ գեղեցկությունը
և Քո քաղցրությունը:
Մեծ է Քո Մեծությունը, և ես երբեք
չեմ մոռանա այդ քաղցր տեսիլքը,
որ դրոշմվել է իմ հիշողության մեջ:

Ես հրճվում են այն հոգիներով, որոնք թույլ են տալիս, որ Ես իրենց վեր բարձրացնեմ... Ա՛հ, Վաո՛ւլա, Ես ցանկանում եմ յուրաքանչյուր հոգու մոտ բերել Իմ Սրտին և պատվաստել նրան Ինձ, այն նույն ձևով, որ Ես բերեցի քեզ, որ մոտիկ լինես Իմ Սրտին:

Ահա թե ինչու, զավա՛կս, Ես, մեծ գթասրտությամբ, գծագրում եմ մի ուղի, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա հետևել դրան: Արդարության մի ուղի, որ առաջնորդում է դեպի Ինձ: Այդ պատճառով,

[1] Սաղմ. 18:11

ես, ինչպես մի երտասարդ սիրահար փեսա, սիրահարված եմ Իմ արարչությանը՝ Իմ Ձեռքերի Գործին: Եվ ես ցույց կտամ յուրաքանչյուր արարածի Իմ Սրտի բոցը, լինի դա ընկեր, թե թշնամի:

Այսօր ձեզանից շատերը քննում են Իմ Սերը և Իմ քաղցրությունը, ձևավորելով Ինձ ձեր մարմնի կրքերին համապատասխան: Ես ասում եմ ձեզ. նրանք, ովքեր ճանաչում են Ինձ, սուրբ գործերը դիտում են սրբորեն: Այդպիսիների հանդեպ դատավճիռը մի օր այն կլինի, որ սուրբ կճանաչվեն: Բայց նրանք, ովքեր չեն ճանաչում Ինձ և չեն դիտում սուրբ գործերը սրբորեն, նրանք պիտի դատապարտվեն, ինչի որ արժանի են:

Իմ Սիրտը բաբախում է սիրո կանչերով՝ սիրելու, և Ես դարձյալ ասում եմ. լինեք ընկեր, թե թշնամի, դուք բոլորդ հրավիրված եք մասնակցելու Իմ Սրտի բերկրանքներին, և երբ այդ անեք, դուք կհասկանաք, թե ինչպես եք նվաստացրել Ինձ ձեր ողջ կյանքում, ինչպես եք նվաստացրել Իմ Հոյակապությունը ձեր սաստիկ թույլ էությամբ ու ձեր երկրային հակումներով՝ հավատալով, որ ձեր արտաքին հաճույքներն ու ուրախությունները, որոնք ցանկալի են ձեր մարմնին, կարևոր են և հրաշալի: Ձեր մարմնի այդ հաճույքներն ու ուրախությունները երբեք չեն կարող չափվել Իմ Աստվածայնության և քաղցրության հետ: Ձեր հաճույքներն Իմ հաճույքների հետ համեմատած նման են տիեզերքի մեջ ավազի մի հատիկի, եթե համեմատենք այն երանության հետ, որ կարող եք ստանալ Իմ քաղցրությունից, որը պիտի տանի ձեզ դեպի հավիտենական ուրախություն:

Իսկ դո՛ւ, Վասուլա, դո՛ւ, որ մտել ես Մեր Երրորդության Սրբության բերկրանքների մեջ և հասկացել Մեր քնքուշ զգացումները և Մեր անսահման Սերը, Մենք հրճվում ենք, որ կամավոր կերպով ընդունեցիր Մեր Գործը քեզ վրա վերցնել, այդպիսով դառնալով մի կենդանի խորան, ավելացնելով Մեր ուրախությունը: Մենք դարձի բերեցինք քեզ և առաջնորդեցինք քեզ Ամուսնական մտահայեցության մեջ լինելու՝ Մեր Միասնության սերտ միության մեջ: Հետո Մենք քեզ դուրս հանեցինք Մեր գրկից և ուղարկեցինք դեպի անապատ, որ պաշտպանես Ճշմարտությունը:

Բայց հիմա, քո դժվարին աշխատանքից հետո, Մենք ցանկանում ենք, որ հանգչես Մեր Սրտի վրա և ազատ ժամանակ ունենաս Մեր Երրորդության Սրբությունը մտահայելու: Այս կենտրոնացած հանգստի ժամանակ դու պիտի կերակրվես Մեր Աստվածայնությամբ:

Այսօր նորից Ես առաջարկում եմ քեզ Իմ Սիրտը, և ինչպես մի փեսա, որ դուրս է գալիս իր տաղավարից, միանալու համար իր հարսին, Ես դուրս եկա, որ միացնեմ Իմ Սիրտը քոնի հետ, և Իմ հաճույքը գտնեմ քո մեջ, և մեր փաղաքշանքներով փոխանակեմ մեր փոխադարձ սերը: Թող լինի ինչպես երկնքում է՝

Սեր՝ սիրո դիմաց,
Սիրտ՝ սրտի դիմաց:

Այո՛, դու չմերժեցիր ճանաչել Ինձ որպես Հայր Իմ Եռանձն Սրբության մեջ: Եվ ինչպես ջրով լի մի անոթ, քո սիրտը, Ինձ ճանաչելուց հետո,

լցվեց Իմ Կենդանի Ջրով, որ կատարելագործեր այն արժանիքները, որոնք Ես պիտի առաջարկեի նրան: Իմ Գործերն անպտուղ կլինեին, եթե Ես չկատարելագործեի քեզ քո սիրո մեջ: Ի՞նչ օգուտ կունենային քո գործերն Ինձ համար, և դա ի՞նչ պատիվ կլիներ Ինձ համար, եթե դրանք առաջարկվեին Ինձ առանց նախապես քո սիրտն ամբողջապես Ինձ տալու՝ ազատ ու կամավոր կերպով: Արդարև, ե՛կ և սովորիր այս բառերի իմաստը. «Ես սեր եմ ուզում, ոչ թե զոհաբերություն: Ես ուզում եմ, որ ճանաչեք Ինձ, և ոչ թե ողջակիզումներ անեք»: Ես խստասիրտ չեմ լինելու որևէ մեկի հանդեպ, քանի դեռ պատրաստակամություն եմ գտնում նրանց մեջ: Միթե չե՞ս լսել. «Մարդն ընդունելի է նրանով, ինչ որ կարող է տալ»: Ուստի, դո՛ւ, որ կարդում ես Ինձ և նույնպես Իմ Գործն ես, արի Ինձ մոտ ինչպես կաս, և Ես, Իմ կատարյալ Սիրով, պիտի կատարելագործեմ քեզ:

Ես պիտի հափշտակեմ քո սիրտը, որ նրանից ստանամ ամենահազվագյուտ և ամենանուրբ բուրմունքները: Հետո, ինչպես մեկը ձեռքերը վեր պարզած պահում է խնկով լի ոսկյա թասը, Իմ Սրբությունը օծելու համար, Ես վեր պիտի բարձրացնեմ քո սիրտը՝ բարձր պահելով այն, թույլ տալով, որ այդ ամենահազվագյուտ բույրերը հողմի նման պտտվեն երկրի վրա, ամենուրեք Իմ շուրջը տարածելով քո քաղցր բուրմունքը, հրճվանք պատճառելով Ինձ և բոլոր սրբերին ու հրեշտակներին երկնքում:

Իմ ուրախությունը պիտի լինի այնպես, որ այն պիտի ընդունվի որպես հարսանեկան պար[1], մինչ Իմ հրեշտակները պիտի ծիծաղեն, և նրանց շուրթերը պիտի երգեն: Իսկ Ես, ուրախությունից ցնծալով քո ոչնչության մեջ, պիտի վերածեմ քո սիրտը մի գոհարի, և Ձեռքերս դեռևս պարզած՝ բարձրացնելով քո սիրտը, Ես պիտի օծեմ քեզ, և պիտի օրհնեմ քեզ, Իմ գոհար:

Եվ ինչպես մի ժամանակ Ես քեզ քնքշորեն դրեցի քո մոր արգանդում, որ սնվես և աճես, Ես քեզ պիտի դնեմ Իմ Սրտում, որ սնեմ քո հոգին Իմ Աստվածայնությամբ՝ թույլ տալով քեզ աճել Իմ Սրբությամբ:

Սա պիտի լինի քո հանդեպ Իմ Սիրո ապացույցը: Եվ դու պիտի ճանաչես Յահվեին՝ քո Փեսային Երիցս Սուրբ, ինչպես երբեք չես ճանաչել: Ապա քո հոգին այնպես ամուր պիտի կպչի Իմ Սրտին և Իմ մեջ, որ դու երբեք չես մոռանա Ինձ, որովհետև քո հոգին կամավոր գերի դարձած կլինի Իմ հմայքներին:

Եվ Ես, որ գործում եմ միայն սիրուց դրդված, պիտի սևեռեմ քո փոքրիկ սիրտը արդարության, պատրաստակամության և սիրո վրա և պիտի բոցավառեմ այն աստվածային կրակով: Ես քեզ ճաշակել կտամ Իմ քաղցրությունը, թույլ տալով որ դու կիսես Մեր Երանությունը Իմ Որդու Հիսուսի հետ, Նրա հետ, որն ամենամոտիկն է Իմ Սրտին, հրավիրելով քեզ ներս մտնել Մեր Եռանձն Աստվածության Ճշմարիտ և Եզակի Գիտության մեջ: Մեր մասին այդ Գիտությունը կուսուցանի քեզ, որ Մենք կարող ենք քեզ վերադարձնել քո աստվածայնությունը՝ աստվածացնելով քո հոգին, որ մտնի Հավիտենական Կյանքի մեջ, և որ

[1] Ես մի տեսիլքում տեսել էի Յահվեին՝ մեր Տիրոջը, Իր պարզած ձեռքերում բռնած այդ «թասը»՝ պտտվելով, օրորվելով, ինչպես պարելիս:

Մեր Աստվածային Լույսը կարող է նաև փայլել քո Հոգու և մարմնի մեջ, որ ապրես Մեր Լույսի մեջ և Մեր մեջ:

Հետո, սիրելի՛ս, Ես պիտի հարստացնեմ քո Հոգին գթասրտությամբ, և մինչ Ես քեզ կթաքցնեմ Իմ Սրտում, Ես պիտի վերցնեմ քո մեղքերը, որպեսզի շարժվես Հոգու մեջ և շնչես Իմ Սրտի ներշնչումները, մինչ Ես կդրոշմեմ քեզ նվիրաբերության կնիքով՝ օծելով քեզ Իմ Սուրբ Անվամբ: Հետո դու ինքդ այլևս քեզ չես պատկանի, այլ Նրան, ով կտանի ու կմիացնի քեզ Մեր Մեկ միասնության հետ:

Ես՝ Ամենաբարձրյալը, Փեսան Իմ արարչության, ցույց պիտի տամ քեզ սիրո և գթության այնպիսի մի ամբողջություն, որ քո Հոգին ճաշակի այն, ինչ ճաշակելու է երկնքում, երբ դու դեռևս երկրի վրա կլինես: Իմ քաղցրությունը պիտի լինի այնպիսին, որ դու կկարծես հարբած ես գինուց, որովհետև դու ճաշակելիս կլինես Ամենակարողի Սերը, այն Սերը, որը նման պիտի լինի օրհնության մի դրախտի, և որը պիտի զարդարի քո Հոգին փառքից առավել:

- Զգա՛ Իմ Սիրո մեծությունը, Վասո՛ւլա: Ես ընտրեցի քեզ բոլոր կենդանի արարածների միջից և քեզանից մի շուշան պատրաստեցի՝ թույլ տալով քեզ, որ լսես Իմ Ձայնը: Ես վստահեցի քեզ այս Գործը, որ լուսավորես այս խավար և հավատը կորցրած աշխարհը: Ես քեզ ուղարկեցի, որ Իմ Գործի բուրմունքը տարածես Իմ արարչության անապատում, և փայլեցնես նրանց վրա Իմ հրամաններն ու Իմ Օրենքը, և աշխարհը, մի օր, կտեսնի քո մեջ Իմ գերագույն զորությունը և կասի. «Հիրավի, Աստված թաքնված է քո մեջ»: Բայց նրանք ասելու են դա քո հանգուցյալ հոգուն: Այո[1], դու արդարև Ամենաբարձրյալի ճշմարիտ վկան ես, որովհետև Ես քո բերանը դարձրել եմ մի կտրող սուր:

Աստվա՛ծ իմ, երբեմն զգում եմ, որ շրջապատված եմ ինձ ճնշողներով, նույնիսկ գիշերվա ընթացքում ես տեսնում եմ նրանց ժանիքները, ովքեր ցանկանում են ոչնչացնել ինձ, ստեր հնարելով, որ տեսնեն ինձ դատապարտված, Ո՜հ, օգնիր ինձ հպարտների դեմ: Դեռ որքա՞ն ես Դու նրանց աչքերը փակ պահելու:

Մինչև քո Ծառայությունն Ինձ ավարտվի, և Արարողությունը հասնի իր ավարտին:

- Իմ Աչքերը միշտ ուղղված են եղել խոնարհ, զղջացող հոգու տեր մարդուն, և Ես, որ հայտնի եմ որպես ծնունդ տվող, Ես պիտի բերեմ Իմ արարչությունը դեպի վերածնունդ՝ օրհնված Իմ Սուրբ Հոգու կողմից այնպես, ինչպես երբևէ տեսնված չի եղել պատմության մեջ: Իմ Բոցը, Իմ Սրտի ներսում, պիտի լինի ձեր մաքրագործումը, արարչությո՛ւն, և դա պիտի իրագործի Իմ դատաստանը[2]: Սա պիտի արվի, որպեսզի հեռացվի ձեր քողը, և որպեսզի դուք տեսնեք Ինձ հանդերձավորված փառապանծ գեղեցկությամբ և սրբությամբ: Ես պիտի իրագործեմ Իմ սիրո[3] գործը, որպեսզի գրավեմ ձեզ:

---

[1] Այս «այո»-ն հնչեց որոտի նման, կայծակի պես, որովհետև դա ասվեց մեծ զորությամբ և իշխանությամբ:

[2] Փոքր դատաստան

[3] Փոքր դատաստան

Հետո դուք, ձեր հերթին, կշրջվեք դեպի Ինձ: Դուք նույնպես պիտի դառնաք Իմ Սիրո վկան: Եվ երբ մարդիկ, զարմացած ձեր սրտի փոփոխությունից, կհարցնեն ձեզ ձեր խոնարհ վարքի պատճառը, դուք կպատասխանեք. «Ես սովորել եմ իմ Հորից: Ես լսել եմ իմ Ամուսնուն և հետևաբար դարձել եմ Լույսի որդի: Իմ Աստվածն իմ Լույսն է, և հավիտենական կյանքն այն է, որ մենք ճանաչենք Նրան որպես ողջ արարչության միակ Ճշմարիտ Աստվածը և Գերագույն Իշխանությունը: Այդ դեպքում, Իմ ընկերներ, դուք նույնպես ընդմիշտ կպատկանեք Ամուսնուն (Աստծուն) հավիտյանս հավիտենից»:

Ա՜հ, սերունդ, չե՞ք լսել, թե Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսը ինչ է ասել ձեզ. «Կգա ժամը, իրականում արդեն եկել է, երբ մեռելները[1] պիտի լսեն Աստծո Որդու Ձայնը, և բոլոր նրանք, ովքեր լսեն այն, պիտի ապրեն: Քանի որ Հայրը, որը կյանքի աղբյուրն է, դարձրել է Որդուն կյանքի աղբյուրը»[2]: Ուրեմն, ինչո՞ւ եք վախենում այս չար ժամանակներում ձեզ վրա հեղվող Մեր Սրտի, Մեր Հարստության առատությունից: Ինչո՞ւ եք ապշած այսօրվա Իմ հրաշագործություններից: Մի՞թե Մենք Կյանքի Աղբյուրը չենք:

Սարերը երերում են մահվան հոտից, որ բարձրանում է Իմ արարչությունից, և ջրերը փոթորկում և ալեկոծվում են տագնապահար, երբ լսում են Իմ տառապանքը, երբ Ես տեսնում եմ Իմ Սեփական սերմը մեռնում է այս աշխարհի հետ միասին, որը քայքայվում է մեղքի և չարության մեջ: Ուրեմն, Մենք պետք է կապե՞նք Մեր Բերանը: Մենք Կյանքի Աղբյուրն ենք, և այդ Աղբյուրից Մեր Սիրտը արթնացնում է ձեր սրտերը՝ Մեր Գեղեցիկ ու Վսեմ Թեմայով: Մենք պիտի ուղղենք Մեր Սիրո Օրհներգը այս մեռնող սերնդին, և ո՛վ որ լսի այն, օրհնյալ է: Ո՛վ որ լսի այն, կաճի ու կդառնա ուժեղ, ինչպես ծառը, որովհետև նրա արմատը պիտի աճի Իմ Պատվիրանների և Իմ հրահանգների մեջ:

- Ոչ շատ վաղուց Ես տնկեցի մի տունկ[3], այսօր այն աճեց դարձավ մի ծառ, և նրա ծայրը հասավ երկնքին, երբեմն-երբեմն վայելելով երկնքի բուրմունքներն ու անուշահոտ զեփյուռը: Հիմա այն հայտնի է ամեն ազգի մեջ, քանի որ այն երևում է երկրի ծայրերից՝ բոլոր ուղղություններով: Նրա կանաչ սաղարթը բուժիչ է, որպես բուժող բալասան հիվանդների համար, բայց միևնույն ժամանակ մի հանգստավետ բուրմունք՝ աղքատների և թշվառների համար: Ես համբույրներ եմ փչում նրա վրա, որ ավելացնեմ նրա պտուղը և կատարելագործեմ նրան: Իր գեղեցկությամբ նրա առատ պտուղը դրոշմված է Իմ Սուրբ Հոգու կնիքով: Յուրաքանչյուր ազգ, անկախ նրանից թե ինչ ցեղի են պատկանում և որտեղից են գալիս, կարող են հասնել դրան և կշտանալ նրանից: Նրա բերքը բավարարում է բոլորին: Այս ծառը ստվեր և հանգստություն կարող է տալ նույնիսկ անարժաններին:

Ես նրա Պահապանն եմ: Շատ անգամ Ես տեսել եմ մարդկանց, որ սողալով գաղտնագողի մոտենում են գիշերով, իրենց ձեռքում կրակ բռնած, որ վառեն Իմ ծառը և ոչնչացնեն այն: Բայց քանի որ Ես

[1] Հոգևոր մեռածները
[2] Հովհ. 5:25-26
[3] Ես հասկացա, որ Յահվեն խոսում է իմ և այս Պատգամի մասին:

կանխատեսել եմ այդ ամենը, այն պաշտպանելու համար, Ես հավաքել եմ բանակներ Իմ հրեշտակներից, այդ պատահելուց շատ ավելի առաջ, որ այն ողողեն երկնքի ցողով:

Ես քշել եմ Իմ թշնամիներին, ինչպես որ դու տեսար: Ուրեմն, մի՛ ասա, սիրելիս. «Իսկ արծիվը չի՞ քանդի իմ արմատը և խլի իմ պտուղը, որպեսզի բոլոր նոր տերևները միանգամից թոշնեն, երբ որ բողբոջեն»: Ո՛չ[1], ո՛չ, ծառ Իմ, Ես ասում եմ քեզ, դու պիտի շարունակես աճել և պիտի շարունակես պտուղ տալ Իմ Սուրբ Հոգու Կնիքով և բուրմունքով: Ես պիտի բազմապատկեմ քո սաղարթը և քո պտուղը, որ այն բավարարի բոլորին և եկող յուրաքանչյուր սերնդի...

Տե՛ր,
իմ սիրտն ապրում է Քեզ համար,
և իմ հոգին գովերգներ է
երգում ամբողջ օրը Քեզ համար:
Այդ Դու ես,
որ պահել ես իմ հոգին թաքնված
Քո Սրտում, և Դու ես,
որ պաշտպանում ես ինձ:

Ջնայած մի գոյաբանական
անդունդ կա Քո և իմ միջև,
ես Քո ներսում եմ,
Քո Վսեմության մեջ,
իսկ Դու, առանց կորցնելու
Քո գերազանցությունը,
Դու իմ ներսում ես:

Վասո՛ւլա, շատ ծառեր կկտրվեն և մի քանիսը Ես ամբողջապես արմատախիլ կանեմ և կայրեմ նրանց արմատը: Այդ Օրը երկրի հիմքերը պիտի ցնցվեն Իմ Ձայնից, և Իմ Տունը պիտի լցվի Իմ աղաղակով. «Բավակա՛ն է, արդեն բավակա՛ն է»:

Աստվա՛ծ, ողորմիր մեզ և օրհնիր,
Ցույց տուր երեսդ և գթա մեզ,
որպեսզի երկրի վրա
ճանաչեն ճանապարհը քո, և
բոլոր ազգերի մեջ փրկությունը քո:[2]

Իմ Սրտի ծաղիկ, այդպիսի բառերը քո Փեսայի հրճվանքն են: Հիմա արի՛ և լսիր Իմ Սրտի բաբախյունը:

[1] Նրա «ո՛չ» ասելու ձևը արցունքոտեց իմ աչքերը:
[2] Սաղմ. 66:2-3

(Այս պատգամը, չնայած այն թվագրված է 25.09.97, ավարտվեց 25.10.97-ին: Այն տրվեց ինձ ժամանակ առ ժամանակ, երբ Հիսուս կանչում էր ինձ):

Հոկտեմբերի 26, 1997

Տե՛ր, Հայր և Տերը իմ կյանքի,
թույլ մի տուր, որ
գայթակղությունը
ինձ տիրապետի և կասկած ներշնչի:
Իմ սրտում մի ցանկություն կա,
որ բոցավառվելով ինչպես մի հնոց,
չի կարող հանգել
մինչև այն չհագենա:
Դա դեպի Քեզ հոգիներ
բերելու ցանկությունն է,
բայց գայթակղությունը
բռնում է ինձ, որ կասկածեմ որ
Դու իսկապես բացել ես իմ բերանը
և մեծացրել ինձ Քո Գավիթներում:

Ես քո Զորությունն եմ: Անմիտ փոքրիկ երեխա, մի՞թե չես հասկացել: Ես Նա եմ, ով լցնում է քեզ Իմ Գիտությամբ: Ես Սուրբն եմ, որ լցնում եմ քո սիրտը ուրախությամբ: Այդ Ես եմ՝ քո Հայրը: Ուշադրություն մի՛ դարձրու քո տարակուսանքին: Աղոթի՛ր Ինձ սրտանց: Վստահի՛ր Ինձ և թույլ տուր քեզ ընկղմվել Իմ Ողորմության Օվկիանոսի մեջ: Բավարարիր հոգիների հանդեպ Իմ ծարավը:

Բարությունն ու Ողորմությունը լույս են քո ոտքերին: Ես ի ցույց եմ դրել Իմ Սերը քո հանդեպ, որ դու հասկանաս Ինձ: Եղիր ինչպես մի բարձրաձայն գիրք և խոսիր. ասա՛ այն, ինչ Ես ասացի քեզ: Կոտրի՛ր մահացու լռությունը և մեջ բեր Իմ Խոսքերը: Ինձ հայտնի դարձրու նրանց, ովքեր երբեք Ինձ չեն փնտրել, որ մտածեն այն մասին, որ Ես Եմ որ Եմ-ը՝ իրենց Փեսան է: Սա մի խորհուրդ է, որը անհասանելի է ոչ միայն ուրացողների համար, այլև բոլոր նրանց, ովքեր, չնայած քարոզում են Իմ Խոսքը, բայց երբեք չեն հանդիպել Ինձ և չեն ճանաչում Ինձ:

Ես՝ քո Տերը, Հայրը, Փեսան և քո կյանքի Տերը, օրհնում եմ քեզ Մեր Երրորդության Սրբությամբ: Հասկանո՞ւմ ես: Իմ Անունով էլ օրհնիր Իմ ժողովրդին:

Նոյեմբերի 2, 1997

(Կիրակի)

(Երբ ես հույն ուղղափառ եկեղեցում էի, մասնակցելով պատարագին, հանկարծ ինձ մի վախ համակեց և մտածեցի, որ հնարավոր է, որ ես արժանի չեմ ստանալու մեր Բարեգութ Տիրոջը Սուրբ Հաղորդության մեջ, և եթե այդպես է, Աստծո բարկությունը գրգռելով, ինձ վրա կբերեմ Իր Դատաստանը:

Մինչ այդ մտքերը պտտվում էին մտքումս, ես հանկարծ ուրախություն և հրճվանք զգացի իմ սրտում, որոնք դուրս եկան սրտից և տարածվեցին ինչպես մի տաք հանգստավետ հեղուկ ոսկորներումս: Մինչ ես զգում էի այս սփոփանքը, հոգիս փոխակերպվում էր, որ դուրս գա այդ վախի և մռայլության միջից դեպի հրճվանք և լույս: Այդ ուրախության մեջ հոգիս փառաբանեց Տիրոջը, և ես լռությամբ երգեցի Նրա համար: Ես վերակենդանացա:

Հետո հանկարծ ես տեսա, թե Մեր Տերն ինչպես բացեց Իր Բերանը, որ ինձ ինչ-որ բան ասի: Ես նկատեցի, թե որքան ուրախ էր Նա, և հրճվանքով Նա ասաց ինձ...)

Արի՛ Ինձ մոտ...

(...Այս ասելուց Նա բաց արեց Իր կապտականաչավուն թիկնոցը: Նրա այդ շարժումը ձգեց ինձ այնպես, ինչպես երկաթն է ձգվում և քաշվում դեպի մագնիսը: Այդ նույն կերպով հոգիս անդիմադրելիորեն ձգվեց դեպի Նրա Սիրտը: Եվ ես զգացի, որ գլուխս հենել եմ Նրա Կրծքին: Հետո, շատ քնքշորեն, մարդկության Սիրահարն ասաց ինձ...)

Ա՜հ, որքան ծայրահեղ թշվառ ու խղճուկ դու կարող ես լինել:

(...Ես մտածում էի. «Կարո՞ղ է որևէ մեկը կրծքին սեղմել կրակը՝ առանց կուրծքը բոցավառելու»: Ահա ես՝ գրկած Սուրբ Սիրտը, ինչպե՞ս կարող է իմ սեփական սիրտը չբռնկվել սիրո կրակից:

Մինչ ես հենել էի գլուխս Նրա Աստվածային Սրտին և դեռ ևս հենված էի Նրա Կրծքին, ես զգացի թե ինչպես է Նրա Կուրծքը հալչում, իսկ գլուխս՝ կլանվում Նրա Մարմնի մեջ: Իմ գլուխը անցավ Նրա միջով և Նրա Սուրբ Սրտի միջով, և ես զգացի, որ գլուխս պարփակվեց Նրա Սրտում՝ այս ձևով հանգչելով Որդու վրա, որն ամենամոտն է Հոր Սրտին...)

Այս Սիրտը քո հանգստավայրն է: Իմ-Լույսի-անութ, այս Սիրտը այն Եզակի, Գլխավոր և Վերջնական վայրն է, որի մեջ ձեր չարչարված հոգիները պիտի գտնեն հարատև և գորովալից խաղաղություն ու քաղցրություն:

(...Երբ իմ Սիրելին ինձ ասում էր այս քաղցր խոսքերը, Նա Իր թևերի մեջ առավ ինձ, սեղմելով դրանք, ապա ավելի ուժեղ սեղմելով ինձ Իր Կրծքին, այնպես, ինչպես ցանկանում են պաշտպանել մեկին ցրտից, Նա ամբողջապես թաքցրեց ինձ Իր Թիկնոցի մեջ: Ինձ գրկել էր այնպես, ինչպես գրկում են մեկին, որին վախենում են կորցնել: Երբ այս փորձառությունն էի ունենում եկեղեցում, մտածելով, թե արդյո՞ք պետք է գրեմ այդ մասին, թե ոչ, և Նա ասաց...)

Գրի՛ր դա ի օգուտ հոգիների, և ես նույնպես կմիանամ քեզ, երբ դու գրելիս կլինես, որպեսզի Իմ մասը գրի առնեմ:

(...Այդ ընթացքում Տիրոջ Սիրտն ամբողջապես կլանել էր իմ գլուխը: Դա նման էր Դրախտ տանող մի դարպասի և, այդ հրճվալից պահերի ընթացքում, մինչ հոգիս վայելում էր երկնային այդ հանգստի անասելի քաղցրությունն ու քնքշությունը, գլուխս շարունակ ծածկվում էր փաղաքշանքներով...)

Ես ողողել եմ քո հոգին Իմ շնորհներով: Հիմա ես խնդրում եմ քեզ մնալ Իմ Սրտում այս ձևով: Մնա՛ Ինձ հետ, սիրելի՛ս:

(...Հետո, մինչ հոգիս ասես հարբած էր գինով, Տերն Իր Սրտում ինձ ճաշակել տվեց Իր քաղցրությունը, հիշեցնելով ինձ մեր Սուրբ Հաղորդության[1] քաղցր համը, միևնույն ժամանակ գլուխս ծածկելով մի քաղցր բուրմունքով, որը դարձյալ նման էր Սուրբ Հաղորդությանը:
Ապա, երբ ես տակավին այդ անդորրության մեջ էի, ես նկատեցի, թե ինչպես էր շուրջբոլորս լցվում վառված խնկի քաղցր ծխով: Այդ հանդիսավոր միջավայրում ես շարունակում էի լսել իմ Տիրոջը և իմ Սիրելիին այս խոսքերը կրկնելիս...)

Մնա՛ այստեղ, մնա՛ Իմ մեջ, հետո առաջ արի և ստացիր Ինձ: Ուրախացրո՛ւ Ինձ և մնա այստեղ:

(...Ես հոգոց հանեցի և մտածեցի, թե ի՞նչն է ստիպում Մեր Տիրոջն այդքան հրճվել ինձ նման մի արարածով՝ զրոների զրոյով: Նա՝ Կատարյալ Էությունը, Նա, որ Ինքնաբավ է, ինչպե՞ս կարելի էր նույնիսկ պատկերացնել, որ Նա ինձ վրա կնայի մի երկրորդ անգամ...)

Քո կատարյալ թշվառությունը հուզում է Իմ Սիրտը և Իմ ողջ Էությունը այն աստիճան, որ ամեն անգամ, երբ ես նայում եմ քեզ վրա Իմ Աչքերը լցվում են Ողորմության արցունքներով:

(...Ես պատրաստվում էի ինչ-որ բան ասել:)

Ո՛չ, մի՛ խոսիր: Կլանի՛ր Իմ Խաղաղությունը և գոհացրու քո սիրտը այս լռության մեջ: Վայելի՛ր շնորհի այս պահերը և կլանիր այն քաղցրությունը, որ քո Տերն առաջարկում է քեզ: Թարմացրո՛ւ սիրտդ, սիրելիս, և մնա Իմ գրկում և թույլ տուր քեզ սիրված լինել: Թույլ մի՛ տուր, որ միտքդ թափառի աշխարհում, քանի որ աշխարհից դու ոչինչ չես ստանալու: Արի Ինձ մոտ և համտեսիր Իմ քաղցր սերը, որ Ես ունեմ և միշտ ունեցել եմ քո հանդեպ[2], - կամ, ուրիշ կերպ ասած, մի աննկարագրելի թուլություն քո հանդեպ:

---

[1] Ուղղափառների Սուրբ Հաղորդությունը

[2] Մինչ մեր Տերը և Իմ Աստվածային Ուսուցիչն ասում էր այս խոսքերը, թվում էր, թե մեղը է կաթում Նրա Բերանից: Եվ ես հասկացա, որ Նա մի հատուկ թուլություն ուներ իմ հան դեպ՝ իմ կյանքի սկզբից ի վեր:

Թանկագին գոհար Իմ Ջեռքում, Իմ Սիրո խանդը քո հանդեպ այնքան մեծ է, որ սիրո այդ բոցավառ պահերին Իմ Աստվածային Աչքերը միայն սևեռվում են քեզ վրա: Լավ մտածիր այս մասին, մինչև Ես գամ քեզ տանելու:

Ես ոչ մի ուրիշ հաճույք չեմ գտնում որևէ այլ տեղ, քան այն պահերին, երբ Ես քեզ հետ եմ, և դու մի բացված գրքի նման ես Ինձ համար, որ քո մեջ գրեմ Սիրո Իմ Նոր Օրհներգը: Միշտ մատչելի եղիր Ինձ համար և բարյացակամ, և այս կերպ դու կփրկես ինչպես քեզ, այնպես էլ նրանց, ովքեր լսում են քեզ: Ես ձևավորեցի քեզ, որ դառնաս Իմ աշակերտը:

Տե՛ր,
երբ ես մտածում եմ այդ մասին,
Դու դատիարակեցիր ինձ
ամենազարմանալի կերպով:
Դու դատիարակեցիր ինձ
լռության մեջ
Քո Սուրբ Հոգու միջոցով,
և իմ մեջ շնչեցիր այդ աստվածային
հայտնությունները
Քո Սուրբ Սրտից:
Դա այդպես չէր, երբ Դու բանավոր
դատիարակում էիր
Քո աշակերտներին:

Այո՛, Ես ցանկանում էի, որ դու ողջ սրտով շրջվես դեպի Ինձ, որպեսզի Ես քո սիրտը գրավեի դեպի Իմ Սերը և Իմ Զորու Թյունը: Ես ցանկանում էի նախապատրաստել քո հոգուն կրելու Իմ Աստվածային Պատգամը: Ա՜հ, Վասո՛ւլա, այն ամենն, ինչ Ես ասում եմ քեզ հիմա, դու նորից պիտի լսես, երբ Ես բացահայտորեն կհայտնվեմ քեզ նշանակված ժամին: Հիմա Իմ Հոգին հրճվում է նայելով Իմ պարտեզին[1] և Ինձ համար հաճելի է շնչել քո մեջ: Յուրաքանչյուր քայլ, որ դու թույլ ես տալիս Ինձ անել Իմ պարտեզում, պիտի արվի քնքշությամբ և այն սփոփիչ պիտի լինի քեզ համար:

Երբ Քո Աստվածային Հայացքը
շրջվեց ցած երկրի վրա,
որ գրավի իմ սիրտը,
այդ ինչպե՞ս եղավ, որ
լոկ նայելով ինձ վրա՝ Դու չփախար,
այլ դրա փոխարեն
իմ անարժանիությունն այդքան
ուրախություն պատճառեց Քեզ,
գրավելով Քեզ դեպի ինձ:

[1] իմ հոգին

Հայտնի է, որ ես կանչում եմ Իմ արարչության ամենանվաստներին: Հետո ես նայեցի քեզ և սիրեցի քեզ[1]...

Ես ասացի քեզ սկզբում, որ եթե դու Ինձ թույլ տաս ձևավորել քեզ, ես կառաջնորդեմ քեզ սիրո թելերով, Իմ շնորհի միջոցով, դրոշմելով քո հոգու վրա Իմ Աստվածային Պատկերը, և այդ Աստվածային Կնիքով, որը Սուրբ Երրորդության դրոշմն է, դու կներգրավվես Մեր Աստվածայնության ամբողջության մեջ, դրանով կատարելագործելով քո սերտ միությունը Մեզ հետ Մեր Աստվածային Սիրո մեջ:

Թանկագի՛նս, ես դեռևս մտադիր եմ շարունակել չչնջալ քո ականջին Իմ գաղտնի հայտնությունները, և մինչ ես առատորեն քեզ վրա կհեղեմ Իմ պարգևներն ու շնորհները համաձայն Իմ ցանկության, ես պիտի շարունակեմ հիշեցնել քեզ, որ ճգելով քո սիրտը անբաժանելիորեն Իմ Սրտի մեջ, դա այն բանի համար էր, որպեսզի Իմ այդ ազնվագույթ վարմունքով մեր միությունը կատարյալ լիներ, և որ քո հոգին Իմ շնորհի միջոցով դառնար մեկ Ինձ հետ[2]:

Ես քեզ մի աղոթք էի տվել[3], որտեղ դու նվիրաբերում ես քո մարմինն ու հոգին Իմ Սուրբ Սրտին, որ քո մտքերը լինեն Իմ մտքերը, քո գործերը՝ Իմ գործերը, կամավորապես տալով Ինձ քո կամքը, որպեսզի Իմ Կամքը կատարվի քո մեջ:

Ես հիշեցնում եմ քեզ, որ գլուխդ դնելով Իմ Սրտին, ներքին հրճվանքի այդ պահերին, ես պիտի լինեմ քո սրտի շարժումը, քո խոսքի պերճախոսությունն ու հմայքը, ես պիտի լինեմ քո աչքերի լույսը, որ բարի խորհուրդ տաս նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Քո ամեն մի շարժումը, ամեն մի վարմունքը պիտի գա Ինձանից: Դու պիտի լսես Իմ բոլոր հառաչանքները, հասկանալով[4] նրանց իմաստը, որպեսզի գործես Իմ Աստվածային Կամքի համեմատ: Շնորհի միջոցով դու պիտի ներշնչես Իմ քաղցրությունը, ինչպես ներշնչեցիր, երբ քո գլուխը հանգչում էր Իմ Սրտի վրա՝ ճաշակելով Նրա քաղցր համն ու հոտը[5]:

Հիշո՞ւմ ես, թե ինչպես Իմ Հայրը սովորեցրեց քեզ[6]: Նա ասաց, որ եթե դու թույլ տաս Իրեն ամրացնել Իր հետ միության կապերը, քո հոգին այդ դեպքում այնքան միացած կլինի Նրան, և քո շունչը այնքան կլանված Իմ Շնչի մեջ, որ ամեն ինչ, որ դու պիտի անես, պիտի լինի Իմ Մտքին համապատասխան: Քո գործերը արմատավորված պիտի լինեն Մեր Բարության ու Ողորմության մեջ, և քո արարքները՝ Մեր Հոգու մեջ: Հետո Իմ Հայրը քեզ մի օրինակ տվեց, թե ինչպես են քո մարմնի անդամները գործում. «Դու չես ասում քո ձեռքին, թե ինչ անի, բայց այն աշխատում է քո կամքով»: Սա պիտի լինի այն ձևը, որով Մենք պիտի առաջնորդենք քեզ:

---

[1] Նրա Բերանի խոսքերը մեղրի պես էին: Այդ Նա է, իմ Ընկերը, ում քաղցր զրույցը կապեց ինձ Իր Սրտում:
[2] Ա Կոր. 6:17
[3] Հունվ. 26, 92 թվի նվիրաբերումը:
[4] Ես միևնույն ժամանակ լսեցի «վերծանել» բառը:
[5] Իմ տեսիլքը՝ եկեղեցում:
[6] 1987թվի մարտի 16-ի պատգամը:

Տե՛ր, ներիր իմ վստահության պակասը Քո հանդեպ և այն բոլոր լիառատ շնորհների հանդեպ, որոնք Դու ձրիաբար տվել ես ինձ, իմ բացարձակ անարժանության մեջ: Ես թաքցնում էի Քո շնորհները: Ես մեղանչել եմ՝ վախենալով, թե ուրիշներն ինչ կմտածեն:

Աշխարհը միշտ էլ կփորձի խաբել քեզ և վիրավորել նրան, ով այնքան թանկ է Ինձ համար: Եվ երբ դու լսում ես աշխարհին, որը հեռու է տանում քո միտքը մտահայեցողությունից, դա արդեն վիրավորում է Իմ Սիրտը[1]: Շնորհի միջոցով Ես քեզ դրել եմ Իմ Սուրբ Սրտի մեջ, որ լինես միայն Իմը, և շնորհի միջոցով Ես մտադիր եմ պահել քեզ այդ հանգստի մեջ: Երբ այս սառը աշխարհը հարձակվում է քեզ վրա իր դայթակղություններով և փորձում այլանդակել քո հոգին, որ նմանվես իրենց, վազիր Ինձ մոտ և ապաստան գտիր Իմ Սրտում: Վստահություն ունեցիր Իմ հանդեպ և Ինձ վստահիր քո բոլոր խնդիրները: Ես միայն սպասում եմ, որ ողորմած լինեմ քո հանդեպ, ընտրյա՛լս:

Աշխարհը միշտ էլ պիտի փորձի քեզ ետ քաշել իր ընդերքի մեջ, մի խավար հովիտ, ուր միայն ամայություն է: Բայց Ես ընտրել եմ քեզ հազարավորների միջից, ուրեմն ինչո՞ւ ես տխրեցնում Ինձ քո վստահության պակասով: Իմ միությունը քեզ հետ Իմ Աստվածայնության Լույսի մեջ այնքան կատարյալ է, որ դու այլևս չպետք է կորցնես վստահությունդ, այլ դնես գլուխդ Իմ Սրտին և այլևս չկասկածես մեր օրհնյալ միությանը: Արի՛ և ասա Ինձ հիմա.

«Իմ Հիսո՛ւս,
Աստվածային Ողորմություն,
ես վստահության պակաս
ունեի Քո հանդեպ,
և այդպիսով
ես վշտացրեցի Քո Սիրտը:
Հիմա ես խնդրում եմ Քեզ
իմ մերկության
և ողջ խոնարհության մեջ
ներում ստանալ, որպեսզի Դու
Քո անսահման Ողորմությամբ
և Բարեգթությամբ
վերականգնես իմ այլանդակված
ու վիրավոր հոգին, որն
այլանդակված է ու վիրավորված
իմ հանդեպ աշխարհի
վարմունքից և խոսքերից»[2]:

---

[1] Ես հասկացա, որ թաքցնելով մեր Տիրոջ շնորհները, և լիովին չընդունելով դրանք՝ իմ անարժան լինելու պատրվակի տակ, Հիսուս վշտանում և տխրում է:

[2] (Ես ասացի այդ): Ես հասկացա, թե ինչպես էր չարը անդադար փորձում ազդել Ինձ վրա աշխարհի բերանով, որ Աստծո Աստվածային այս Գործը պակաս կարևոր էր, քան նրա իրական արժեքն էր, դրանով թերագնահատելով նրա արժեքը և միշտ փորձելով նվազեցնել նրա կարևորությունը: Ես գտնվում էի մշտական մարտի մեջ՝ փորձելով հեռու վանել այդ կեղծ մեղադրանքները և երբեք դրանց տեղիք չտալ:

ես ուրախությամբ ընդունեցի քո աղոթքը:

Քո պակասությունների մեջ, ես պիտի լրացնեմ այն, ինչ պակասում է քեզ, որպեսզի փառավորվի Իմ Անունը Երիցս Սուրբ: Այժմվանից սկսած այլևս թույլ չտաս, որ երբևէ ընկնեմ վշտի և կսկիծի մեջ, որն Իմ բոլոր հրեշտակներին ու սրբերին թողնում է անսահման վշտի մեջ, քանի որ չեն կարողանում հանգստացնել Իմ ցավը: Եթե երբևէ աշխարհը համառի կասկածի տակ դնել Իմ ընտրությունը, թող նրանց մեղքերն ընկնեն իրենց սեփական գլուխներին: Ես արդարությամբ պիտի միջամտեմ: Եթե նրանք վարվեն Իմ ընտրյալի հետ ինչպես իրենք են կամենում, որին Իմ Սուրբ Սիրտը վերաբերվում է մի հատուկ սիրով, ես սաստիկ կհանդիմանեմ նրանց[1]: Բայց, եթե դու հատուցումներ անես նրանց համար, այդ դեպքում ես Իմ անսահման Ողորմությամբ կտիպեմ նրանց տեսնել իրենց մեղքը:

Ես Իմ Սիրով, ինչպես ասացի քեզ սկզբում, կապել եմ քեզ Ինձ հետ այնպիսի մի ձևով, որ քեզ համար դժվար կլինի թուլացնել այդ կապերը[2]: Ես արեցի դա, Ինձ տված քո համաձայնությունից հետո՝ զուտ սիրուց դրդված: Իմ խանդոտ սերը երբեք թույլ չի տա, որ մենք երբևէ բաժանված լինենք, և մեր միությունը՝ քանդված:

Ուրախությամբ արբեցած մի պահի, Ես տվել եմ քեզ ևս մի շնորհ՝ ամուսնական միություն, դրանով նույնիսկ ավելի խորը տանելով քեզ քաղցր մտահայեցողության անդորրի մեջ Իմ Աստվածային Սրտում: Քո և Սուրբ Երրորդության միջև եղած այդ հրաշալի միության մեջ, դու պիտի դառնաս Մեր Քնարը, և Մենք պիտի օգտագործենք քեզ ուրախությամբ՝ մեծ հաղթանակներ ձեռք բերելով քեզանից: Ապա, դու քո հերթին ուրախ պիտի լինես կիսելու Մեզ հետ Մեր Գավիթները: Մեր Աստվածային Շնորհի մեջ դու պիտի դառնաս Մեր օրհներգը[3]: Իմ Սրտի շուշան, Անսահման Գթություն ցույց տրվեց քեզ, որպեսզի ուրիշները սովորեն քեզանից և ստանան նույն քանակությամբ, որ դու ես ստացել: Իմ Սրտի շուշան, Մեր մոտիկությունը քեզ՝ քո երանությունն է:

Քո մեջ արմատավորված Իմ Աստվածային Կամքը ամենամեծ պարգևն է, որ Ես կարող էի առաջարկել քոնի դիմաց: Քո մեջ, Իմ Աստվածային Կամքով, Ես կարող էի լրացնել քո բոլոր թերությունները և քո պակասությունները: Բառերը, որ դու արտասանես, կլինեն Իմը, որովհետև Ես կլինեմ քո զգեստը, և դու կունենաս Իմ Միտքը: Չնայած քեզ հաճախ մեղադրում են քո խստության համար, իրականում քո խստությունը քոնը չէ, այլ Իմը: Նրանք, ովքեր հանդիմանում են քեզ դրա համար, ամբողջովին չեն հրաժարվել իրենց մեղքից... Նրանք շարունակում են մոռանալ, որ հոգին, երբ մի անգամ միանում է Աստծուն, դառնում է Նրա հետ մի հոգի և մի միտք: Ես տվել եմ քեզ քո առաքելության համար այս բոլոր պարգևները՝ քո հանդեպ Իմ ունեցած Սիրուց ելնելով, ինչպես նաև Իմ Տան վերականգնման համար:

Ա՜հ, Վասո՛ւլա, ոմանք կհարցնեն. «Ինչո՞ւ է Տերը այդքան շատ շեշտում Իր միությունը, Իր պարգևներն ու շնորհները»: Եթե Ես հիշեցնում եմ ձեզ այս բոլոր բաների մասին, այդ այն պատճառով է, որ

[1] Հետո Նա նայեց ինձ:
[2] մարտի 16, 87թվի պատգամը:
[3] Քանի որ իմ կյանքը կդառնա մի անդադար աղոթք:

աշխարհը պիտի շարունակի փորձել Իմ ընտրյալին ստիպել, որ նա կասկածի իրեն տրված Իմ շնորհների մասին: Ես, Իմ Վասուլա, նախազգուշացրել էի քեզ քո առաքելության վաղ օրերին, որ սիրո քո գործերը սխալ պիտի հասկացվեն, և քեզ, ինչպես մի որս, պիտի հետապնդեն, և դու ձախորդությունների պիտի հանդիպես: Բայց նաև այն, թե ինչպես Իմ հայրական պաշտպանությունը միշտ պիտի ծածկի քեզ, և Ես պիտի դամ քեզ օգնության, որ սփոփեմ քեզ և քեզ վեր բարձրացնեմ չարի ժանիքներից: Ես քեզ ասել էի, որ Իմ արքայական Պատգամների վրա շատ հաճախ պիտի թքեն, մերժեն ու ծաղրեն, բայց նաև այն, թե ինչպես Ես միշտ պիտի կանգնեմ քո կողքին, որ խրախուսեմ քեզ: Դու դեռևս ապրում ես երկրի վրա, բայց Ես ամբողջապես ապրում եմ քո ներսում: Ուրեմն մի՛ վախեցիր: Քանի դեռ դու երկրի վրա ես, աշխարհն իր խավարով պիտի շարունակի փորձել վնասել և խոցել քեզ:

Ես նկատի չունեմ, որ դու պետք է բաժանվես քո ընկերներից, բայց հիշի՛ր, մի՛ վստահիր ինքդ քեզ մարդկանց[1]: Ոմանք կցանկանան ստիպել քո ձեռքին անելու այն, ինչ հակառակ է քո ցանկություններին, որը նաև հակառակ կլինի Իմ Սեփական ցանկություններին:

Ուրիշները պիտի ակնարկեն, որ քեզ տրված Իմ պատվարժան պարգևները, ինչպես նաև Իմ շնորհները աստվածային չեն և Ինձանից չեն գալիս: Այդպիսիների համար Ես ասելու բան ունեմ. «Եթե դուք ասում եք, որ դրանք աստվածային ծագում չունեն, այդ դեպքում, համաձայն ձեր զրպարտության, դրանք կարող են լինել միայն ստերի հորից, կամ՝ ենթագիտակցությունից: Երբևէ չե՞ք մտածել, որ դատելով Իմ Գործը որպես չարիք, դուք մեղանչում եք Սուրբ Հոգու դեմ, և այդպիսի մեղքը չի ներվում: Եթե ասում եք, որ այս ողջ աստվածային Գործը գալիս է ենթագիտակցությունից, այդ դեպքում բացատրեք Ինձ, թե ինչպես է որ այս գրվածքների հմտությունը և գիտելիքները գալիս է մեկից, որը ոչ մի տեղեկություն չունի Իմաստության Գործերից և չի սովորել նույնիսկ տարրական կրոնագիտություն»:

Մինչ այժմ[2] Ես նրանց տվել եմ բավարար ապացույց, և Ես ավելի ապացույց չպիտի տամ, քան այն, ինչ արդեն տվել եմ: Հետո պիտի լինեն այնպիսիները, ովքեր, չնայած պիտի հարցնեն քո խորհուրդը, բայց պիտի անտեսեն այն, քանի որ նրանց հոգին դեռևս հետամուտ է իրենց սեփական ցանկություններին և պիտի ենթարկվի իրենց մարդկային կամքին, այլ ոչ թե՝ Իմ Կամքին:

Ես քեզ ասել էի, որ քանի դեռ քո գլուխը կհանգչի Իմ Սրտի վրա, հանգստի այդ պահերին, դու պիտի կարդաս Իմ Սրտի բաբախումները, ապա դու, քո հերթին, պիտի կարողանաս բարի խորհուրդ տալ նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Բայց նորից, աշխարհը դեռևս հաղթահարած չլինելով իր չար մտքերը, պիտի թերագնահատի քեզ վրա հեղված Իմ դանձերը՝ պատճառաբանելով, որ դու դեռևս վավերացված չես[3]...

---

[1] Հովհ. 2:24

[2] Մեր Տերը չըշվեց և նայեց ինձ:

[3] Որ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» գործը դեռևս հաստատված չէ Եկեղեցու կողմից:

Հաղթահարի՛ր հիմա քո վստահության պակասը այն ընծաներով և շնորհներով, որոնք ես այնքան առատաձեռնորեն տվեցի քեզ, և ողջ սրտով կրկնիր այն աղոթքը, որը ես տվել եմ քեզ...

(Ես կրկնեցի):

Այլևս մի՛ անհանգստացիր, ես պիտի շարունակեմ հոգալ քո զանազան կարիքները:

Ես աղոթեցի, Տե՛ր, բայց ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ նորից քեզ հուսախաբ չեմ անի:

Ես այստեղ եմ, որ հիշեցնեմ քեզ: Ես միշտ պիտի գամ և քեզ ետ պիտի բերեմ ամեն մի վտանգավոր ճանապարհից, որով դու կփորձես գնալ: Ես պիտի շարունակեմ ցույց տալ քեզ Իմ ամենանուրբ խնամքը, որ ես ունեմ Իմ ընտրյալների հանդեպ: Արի՛, այսօր ես ցանկանում եմ, որ դու երջանիկ զգաս, որովհետև ես կարող եմ ողջ ճշմարտությամբ ասել. Դու Իմ Խոսքը դարձրել ես քո տունը, և դու դարձել ես Իմ աշակերտը և իսկապես Իմը:

Աստվա՛ծ իմ,
Դու հմայել ես իմ անարժան հոգին,
որ հետևի քեզ,
և Դու շնորհել ես ինձ
արժեքավոր գանձեր,
որոնց արժանի չեմ,
և անսահման սիրով
Դու վեր ես բարձրացրել իմ հոգին:

Ես բարձրացրել եմ քո հոգին նաև ի օգուտ Իմ Եկեղեցու:

Վասիլի՛կի, ես տվել եմ քեզ ծայրահեղ լուրջ և կարևոր Պատգամներ: Ես, այս բոլոր տարիների ընթացքում, քո մեջ շնչել եմ Աստվածային հայտնություններ, որոնք բոլորը գալիս են Իմ Սուրբ Սրտից: Իմ Հոգին եղել և մնում է քո Առաջնորդը և քո Լույսը: Ես իսկապես քեզ վրա հեղել եմ աստվածային շնորհներ, որ նաև մարդիկ կարողանան օգուտ ստանալ դրանցից:

Իմ բոլոր Գործերը բարի են, և դրանք ջերմորեն են ընդունվում սրտով մաքուր և խոնարհների կողմից, բայց գովաբանությունը անվայել է մեղավորի բերանում Իմ Գործերի հանդեպ: Ես, ինչպես ասացի, ձեզ բոլորիդ բավարար ապացույց եմ տվել այս Աստվածային Գանձի միջոցով, որ գալիս է Իմ Սուրբ Սրտի գանձարանից, որպեսզի դուք չկասկածեք:

Վասո՛ւլա, Իմ Սիրո արտաքին նշանները քեզ տալուց բացի, ես տվել եմ քեզ Գիտություն և Ուսուցում՝ մշտապես հարստացնելով քեզ և մյուսներին այս գրվածքների միջոցով: Դու, աղավնյակս, տեղյա՞կ ես այս բոլոր Աստվածային ներ շնչում ների մասին, որ շնչում է քո մեջ Իմ Սուրբ Հոգին:

(Ես հոգոց հանեցի և այնքան ազդվեցի Նրա Ջայնքի քնքշությունից, որ բառեր չեմ գտնում նկարագրելու համար):

Այսօր ես այստեղ եմ քեզ հետ, որ օգնեմ քեզ հաղթահարելու քո բոլոր թուլությունները: Ես այլևս չէի կարող տեսնել, թե ինչպես ես դու քո համեստությամբ թաքցնում Իմ Աստվածային պարգևները, որոնք Ես եմ քեզ տվել:

Քո ծայրահեղ Բարությամբ Դու
բարեհաճեցիր մեզ տալու
բավարար Մանանա,
որով մեր հոգին հրճվում է այսօր:

Այն (Մանանան) աննյութական է,
բայց երբ հոգին կլանում է դա,
նա ավելի է քաղցում դրան:
Եվ ահա ես, դեռևս անկատար,
միայն ցանկանում եմ
փոխհատուցումներ անել
նրա համար, որ վշտացրի
Քո Աստվածային Սիրտը:

Թող իմ թերություններն
ու անփութությունները,
որոնք քեզ ցավ պատճառեցին,
փոխվեն ջերմեռանդության,
վստահության և զմուռսի մի փնջի:

Թանկագի՛նս, ես անտարբեր չեմ սիրո այն բոլոր ծանր աշխատանքների հանդեպ, որ դու հանձն առար Իմ Անունով, ո՛չ էլ այն դժվարությունների հանդեպ, որ համբերությամբ կրեցիր հանուն Ինձ, աղավնյա՛կս: Ես անտարբեր չեմ նաև քո ներկա խնդրանքների հանդեպ և ուրախ եմ, որ վստահում ես Իմ Շնորհին:

Ինձ երջանկություն է պատճառում Քեզ համար տառապելը:

Մի՛ հոգնիր Ինձ հետ ճանապարհին:

Տո՛ւր ինձ, Տե՛ր իմ,
պատեհություններ, որ բացեմ
իմ բերանն առանց վախի
և առանց կասկածի
Քեզ փառաբանելու համար:

Ահա թե ինչու դու պետք է վստահես Ինձ և լցնես քո հոգու պաշարները Իմ Հոգուց, որ կարողանաս շարունակել երգել և գովերգել Իմ Սիրո Օրհներգը ազգերին: Ահա թե ինչու Ես հրավիրեցի քեզ ուխտագնացություն կատարել և առանձնանալ Իմ Մարմնի մեջ, Իմ

հավատարիմ օգնական: Ուրախացի՛ր Իմ շնորհի մեջ և հրճվի՛ր Իմ ընկերակցությունից՝ Իմ Հոր կողմից քեզ տրված շնորհի այս մտերմիկ լույսի մեջ, և ընդունի՛ր, ինչպես արել ես, ճաշակելով, քաղցր համն ու հոտը Իմ Սրտի:

(Երբ իմ Տերն ասում էր այս բառերը, ես դեռևս զգում էի իմ գլուխը պարփակված Նրա Սրտում, նորից ըմբոշխնելով և ներշնչելով մի բուրմունք, որ նման էր Սուրբ Հաղորդությանը:

Հանկարծ, այնպես թվաց, կարծես Հիսուս շրջեց Իր Սուրբ Դեմքը և նայեց ընթերցողին (նրան, ով կարդում է այս տողերը): Նրա Դեմքը լուրջ ու հանդիսավոր էր: Նրա թափանցող Աչքերը հառված էին ընթերցողին: Հետո, մինչ Նա գրկել էր ինձ Իր Բազուկներով, Իր Թիկնոցով ամբողջովին ծածկելով ինձ, թողնելով այն տպավորությունը, որ կարծես ինչ-որ մեկը պաշտպանում էր զոհին հետագա հարձակումներից, Նա ասաց.)

Թող ընթերցողի սիրտը, որ կարդացել է այս էջերը, բացվի: Թող նրա աչքերը և ականջները բացվեն: Մինչ այժմ դու ամբողջապես չես ըմբռնել Իմ Երկնային Գանձը, ո՛չ էլ ամբողջապես գնահատել ես քեզ տրված Իմ պարգևը[1]: Դու դեռևս չես ներթափանցել նրա մեջ ինչ անգին է, և ինչ եմ Ես առաջարկում քեզ քո կյանքի բոլոր օրերին՝

մտերմիկ միության մեջ Ինձ ճանաչելու և ներքնապես ճաշակելու վիթխարի շնորհը Իմ Սրտի հարսանեկան սենյակում, Իմ քաղցրությունն ու Իմ Աստվածային համբույրները: Երանելի են նրանք, ովքեր լսում են Ինձ և ստանում այս շնորհը: Վա՜յ նրանց, ովքեր իրենց թշվառ վիճակի մեջ և իրենց աղտոտված մտքով մերժում են այս շնորհը: Նրանք մի օր պիտի ողբան իրենց թշվառության մեջ:

Լավ է Ինձ համար բարի գործեր անել և հետևել որոշ պաշտամունքների, ինչպես նաև սիրո գործերի, գոհաբանական աղոթքների և փոխհատուցումների: Բայց Ես մեծապես կհիասթափվեմ, եթե դուք մեռնեք նախքան Ինձ ճանաչելը[2]: Ես մեծապես կվշտանայի, եթե դուք մեռնեիք հիմա նախքան Ինձ հասկանալը:[3] Ձեզանից շատերը զբաղված են իրենց ամենօրյա գործերով, որոնք հաճելի են Ինձ, եթե արվում են սիրով և Իմ Մտքին համապատասխան են, բայց այս ամենը անկատար կլինեն, եթե դուք չբացվեք շնորհ ստանալու համար և չընդունեք Ինձ Իմ մտերմության մեջ: Ուրեմն եկեք և ընդունեք Իմ մտերիմ ընկերակցությունը, և Ես, Իմ բարի ցանկությամբ, ձեզ կտանեմ Մեր Սրտի[4] խորհուրդների և թաքնված գաղտնիքների մեջ: Դուք և Մենք հավիտյան կդառնանք անբաժանելիորեն միացած Մեր Սիրով:

(Հետո Հիսուս շրջվեց դեպի ինձ և Իր Աչքերի լուրջ արտահայտությամբ ասաց).

---

[1] «Իմ Հրեշտակ Դանիելը» գրքի հունվ. 10, 87-ի էջ 23-28, հունվ. 25, 87-ի էջ 41, հունվ. 31, 87-և էջ 69 պատգամը: Հայրն է խոսում. «Ես պիտի ուղարկեմ քեզ ողջ մարդկության մոտ: Ես քեզ նրանց պիտի տամ որպես Իմ ընծան, դրանով նրանց հնարավորություն տալով, որ Ինձ ավելի լավ հասկանան, քանի որ սա Իմ Կամքն է»:

[2] Մատթ. 7:21-23

[3] Երեմ. 9:24

[4] Սուրբ Երրորդության

Հիմա ես, ինչպես նախկինում, խոսեցի քեզ հետ Իմ Սրտից, որ հիշեցնեմ քեզ, զավա՛կս, Իմ Անսահման Սիրո մասին, և հատկապես, որ հեռացնեմ այն սերմը, որ աշխարհն էր խցկել քո մեջ: Ես այլևս չէի կարող տեսնել Իմ որդեգրին, Իմ ուրախ պատգամատարին, կտոր-կտոր եղած այն վախից և կասկածներից, որ աշխարհը փորձում էր դնել նրա մտքի մեջ[1]: Քո վախը, Վասո՛ւլա, թե ես սառցի կտոր եմ դցել քո սրտի մեջ, Իմ Աստվածային շնորհի փոխարեն, նսեմացնում է Ինձ և հիմնված չէ Ճշմարտության վրա... Դժվարությունները չկարողացան ստիպել քեզ կորցնել այն խաղաղությունը, որ ես դրել էի քո սրտում, և դա լավ է: Բայց հանուն Ինձ, աղավնյա՛կս, այլևս երբեք չկասկածես Իմ շնորհներին և անսահման Սիրուն, որ ես միշտ ունեմ քո հանդեպ:

Մի՛ կորցնիր վստահությունդ Իմ հանդեպ: Մի՞թե չես տեսնում, թե ես որքան աստվածայնորեն սիրով տարված եմ քեզանով խելացնորության աստիճան: Ուստի ես աղաչում եմ քեզ վստահել Ինձ: Քանի դեռ դու երկրի վրա ես, մնա՛ Իմ մեջ, որ կատարելագործես Ինձ հետ ունեցած քո միությունը և որքան կարող ես հաճախ ստացիր Ինձ Սուրբ Հաղորդության մեջ՝ մեծացնելով քո սերն Իմ հանդեպ և քեզ հանձնելով Ինձ: Մնա՛ ընդմիշտ այս Հանգստյան Վայրում՝[2] թույլ տալով Ինձ պահել քեզ այս Սիրո Քուրայում, որպեսզի քեզ ճաշակել տամ Իմ Սիրո քաղցրությունը:[3]

ΙΧΘΥΣ

Դեկտեմբերի 17, 1997

Ամեն մարմին պետք է դա Քեզ մոտ
իր բոլոր մեղքերով:
Չնայած մեր թերությունները
հաղթահարում են մեզ,
Դու ջնջում ես դրանք:
Երանելի է այն մարդը,
ում Դու ընտրում ես,
ում Դու հրավիրում ես
ապրելու Քո Գավիթներում:
Կշտացրու մեզ Քո տան բարիքներով
Քո Սուրբ Տաճարի:[4]

Իմ Վասո՛ւլա, թույլ տուր Ինձ օգտագործել քո ականջը, որ լսես Ինձ: Թույլ տուր Ինձ օգտագործել քո ձեռքը, որ գրես Իմ ասածները: Ապա թույլ տուր Ինձ օգտագործել քո միտքը, որ լցնեմ այն Իմ Գիտությամբ,

[1] Այնպիսի դիտողություններ, ինչպիսին են. «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները մի բան է, իսկ պատգամատարը՝ բոլորովին այլ բան: Այսինքն, այս երկուսը չեն համապատասխանում իրար: Հիսուս դեմ է այս գաղափարին:
[2] Սուրբ Սրտում
[3] Սաղմ. 89:17
[4] Սաղմ. 64:4-6

և լցնեմ քո ողջ էությունը Իմաստությունից եկող ուսուցումներով: Ընդունի՛ր Իմ բոլոր առաջարկները, Իմ սիրելի ընկեր, և դու առաջ պիտի գնաս այն արագությամբ, որը Ես եմ նախատեսել:

Իմ Վասո՛ւլա, Ես ուզում եմ այս սերնդի համար և գալիք սերունդների համար, թողնել Իմ Ողորմության մի հարատև հիշողություն: Իմ Սրտի գանձարանից եկող այս բոլոր հարստություններից ոչ մեկը չի վերագրվի քեզ, քանի որ դու ոչինչ չգիտեիր սկզբում, այն ժամանակ, երբ կանչվեցիր մարդկության Սիրահարի կողմից, քանի որ քո ողջ մարմինը այդ ժամանակ գտնվում էր խավարի մեջ: Բայց, քանի որ Ես Տերն եմ սրբերի, Ես նույն չափով էլ Տերն եմ թշվառների: Ես նայեցի քեզ վրա և սիրեցի քեզ... Ես հայտնի եմ Իմ Ողորմությամբ և Իմ Սրտի գթառատությամբ: Ես հայտնի եմ մանուկների հանդեպ Իմ ունեցած թուլությամբ:

Ուրախացի՛ր ուրեմն, աղջիկս, որ քո Թագավորը ցած կռացավ Իր Գահից, որ երեք անգամ քո հոգուն չնորհի հարության Իր համբույրները: Արբած Իմ համբույրների քաղցրությունից, քո հոգին հիմա գովաբանություններ է երգում Ինձ՝ փառաբանելով քո Սիրեցյալին: Այն ժամանակ Ես գիտեի, որ միայն մի հայացք գցելով քեզ վրա, Ես վայրկենապես կփափկեցնեմ քո կամքի կարծրությունը և կփշրեմ քո սիրտը պատող կեղևը: Եվ Ես այդպես էլ արեցի... Ո՜հ, Ես ի՞նչ չէի անի մի այսպիսի փխրուն հոգու համար, որ բերեմ նրան լրիվ հոգևոր միանության Իմ Աստվածայնության հետ և նրան դարձնեմ մեկ հոգի Ինձ հետ:

Ես խնդրեցի քեզ, սիրելի՛ս, որ կառուցես մի սուրբ տաճար քո ներսում, մի խորան այն քաղաքում, ուր Մենք [1] պիտի խփեինք Մեր վրանը, պատճենը այն սուրբ տապանակի, որ Մենք պատրաստել էինք սկզբից ի վեր, և դու այդպես էլ արեցիր, հավատարիմ, փոքրիկ ընկե՛ր: Ահա թե ինչու Իմաստությունը կարողացավ օգնել քեզ և քո միջոցով՝ հազարավոր այլ հոգիների: Իմաստությունը կրթեց քեզ և շատ ուրիշների այս Աստվածային Գործի միջոցով՝ առաջնորդելով բոլորին դեպի մի սքանչելի ճանապարհ: Այս Գործը Իմ հորդառատ Սիրո ապացույցն է:

Ո՛վ օրհնյալ և չնորհներով
հորդառատ Սիրտ Հիսուսի,
Աստվածային Բարություն:
Դո՛ւ, որ Քո մի հայացքով
տապալում ես թագավորներ
և թագավորություններ՝
արբեցնելով մեծ և փոքր քաղաքներ,
արբեցնելով սրտերը
խենթության աստիճան,
պահելով նրանց սիրո գերիներ,
ընդմիշտ հմայված
Քո Աստվածայնությամբ:

Քո Աչքերը, Տե՛ր իմ,

[1] Սուրբ Երրորդությունը

Եդեմի Պարտեզ են,
Սքանչելիորեն գեղեցիկ:
Քո Սիրտը նման է շնորհի մի
անսահման տիեզերքի՝ Շնորհի մեջ:
Քո ողջ էությունը,
ինչպես մի փղոսկրե աշտարակ,
որի պատերը ծածկված են
փայլփլուն թանկարժեք քարերով:

Հավիտենական Լո՛ւյս,
Քո երկու Բնությունները
մեր սրտի շարժումն են:
Ո՛հ Աստվա՛ծ, ես գիտեմ,
որ չեմ կարող կազմել
մի հասկանալի բառ, որը
բավարար մոտիկ լիներ նկարագրելու
այսպիսի Գերիշխանությունն ու
Ճոխությունը,
ինչպիսին իմ Տիրոջն են:

Ա՛հ Վասո՛ւլա, Իմ սփոփանք: Ես մտադիր էի տանել քեզ, որ դու կիսես Իմ Թագավորությունը: Այս Սերը, որ Ես ունեմ, այս ծարավը, որ Ես ունեմ հոգիների հանդեպ, այրվում է Իմ Սրտում: Սերն է, որ առաջնորդեց Ինձ դեպի Խաչը, հաշվի չառնելով դրա ամոթալիությունը: Իմ Սերն է, որ հիմա Ինձ բերում է ձեզ մոտ, սերո՛ւնդ, կանչելով ձեր միջից ամենաթերի արարածներից մեկին, նրան, որ գիտելիք չուներ ո՛չ միայն Սուրբ Գրքերի մասին, այլև Իմ Կամքի մասին, և որը մի անպատվություն էր այն ժամանակ Իմ սրբերի և հրեշտակների աչքում: Կանչել մի այդպիսի թշվառ հոգու իր մահվան միջից և բարձրացնել նրան Իմ Աստվածային Սրտի մոտ, դաստիարակել նրան Իմ թագավորական արքունիքում, մի նշան է, որը դուք չպետք է արհամարհեք: Դա մի նշան է մնացած բոլորիդ համար, որ աճեք ձեր վստահության մեջ և իմանաք, որ Ես կանչում եմ յուրաքանչյուր հոգու, որ հրաժարվի այսօրվա իր չար վարքից և ողջ սրտով շրջվի դեպի Ինձ, որպեսզի ինքը նույնպես կիսի Իմ Փառքը:

Արի՛, սիրելի՛ս, Ես՝ Հիսուս, սիրում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

1998

Հունվարի 22, 1998

(Հնդկաստան)

Ծաղի՛կս, թող այս հողը ցնծա ու խայտա, թող այս ողջ ազգը, որի մոտ ես ուղարկել եմ քեզ, հիանա Իմ գործերով և լցվի Իմ ողորմածությամբ: Իմ օրհնություններն այս ժողովրդի վրա են...

Իմ հրեշտակների և սրբերի ներկայությամբ, հիմա ես ասում եմ նրանց. ես՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Որդին և Փրկիչը, ձեր օգնությունն ու վահանն եմ, դարձե՛ք դեպի Ինձ և պահեք Իմ բոլոր Պատվիրանները: Սովորեք լինել արդար և ուրացեք ձեր անձերը, Իմ վերադարձը շատ մոտ է: Մի՛ ասեք. «Ես ապաստան չունեմ»: Ես ձեր ապաստանն եմ, և Իմ Սիրտը ձեր Հանգստավայրն է:

Քանի որ դու, Հնդկաստա՛ն, այդքան թանկ ես Իմ աչքին, ես քեզ մոտ նույնպես ուղարկեցի Իմ սերմերը[1], որպեսզի դու ցանես դրանք քո հողում: Բերքը հարուստ ու առատ կլինի, եթե դու սրտանց ցանկանաս մշակել հողը: Եվ քո հողը կարձագանքի սերմնահատիկին: Հետո յուրաքանչյուր ոք կիմանա Իմ Սիրո մասին, և կպատասխանի Իմ Կանչին: Հետ մի՛ քաշվիր, այլ եկ Ինձ մոտ աղոթքներով: Ես կարիք ունեմ քո սրտից եկող ջերմեռանդ աղոթքների՝ աշխարհի դարձի համար: Այս ձևով ես գոհ կլինեմ քեզանից:

Այսօր դուք լսեցիք Իմ Ձայնը[2], և ես ասում եմ ձեզ. մի՛ տատանվեք, ո՛չ էլ կոշտացրեք ձեր սրտերը, քանի որ սա Իմ Շնորհն է, որ հիմա տրվում է ձեզ:

Եղեք մեկ Իմ Անվամբ:

ΙΧΘΥΣ

(Ավելի ուշ, առավոտյան 3.45-ին Հիսուս կանչեց ինձ):

Ասա՛ նրանց, որ ես միայն սիրո, հաշտության և ներողամիտ հոգու կարիք ունեմ: Այո՛, ես ցանկանում եմ, որ նրանք ապացուցեն իրենց սերն Իմ հանդեպ:

ic; Ես քեզ հետ եմ...

[1] Հիսուս նկատի ունի «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները:
[2] «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամների միջոցով:

Հունվարի 26, 1998

(Հնդկաստան)

Ես եմ: Գրի՛ր, Իմ Վասուլա, Իմ Խոսքերն այս ազգի համար.

Ես տալիս եմ ձեզ Իմ Խաղաղությունը... Թող Իմ Խաղաղությունը, որ Ես կտակում եմ ձեզ, մնա ձեզ հետ և պարուրի ձեզ: Մի՛ վախեցեք և մի՛ ասեք. «Ի՞նչ պետք է անեմ, Տե՛ր»: Հնդկաստա՛ն, ա՜խ, Հնդկաստան, առաջարկիր Ինձ քո սիրտը և քո Փրկչին ճշմարտապես սրտանց աղոթիր: Քո աղոթքները կսրբագործեն քո հոգին և ուրիշների հոգիները: Աղոթիր անդադար և ստիպիր Զարին փախչել... Եղիր Ինձ միացած և եղիր Իմ մեջ արմատավորված: Այդ դեպքում ոչ ոք, և ոչ մի բան այս աշխարհում չի կանգնի քո և Իմ միջև: Իմ մեծ Վերադարձն անխուսափելի է:

Ես եկել հասել եմ մինչև քեզ՝ Իմ Սիրտը Ձեռքումս: Վերցրո՛ւ Այն, Հնդկաստան, և դիր Իմ Սիրտը քո սրտում: Ես եկել եմ Իմ Պատգամով: Ես կանչում եմ քո ժողովրդին, որ շրջեն իրենց սրտերը դեպի Աստված և ապրեն սրբորեն: Ես Աստված եմ և Տեր: Տարածիր Իմ Սիրո Օրհներգը և խաղողի այգիներ տնկիր ամեն տեղ, ուր գնում ես: Մշակիր քո հողը և մի՛ տատանվիր: Մի՛ վախեցիր փոթորիկներից, որ կբարձրանան երբեմն-երբեմն:

Ես ձեզ հետ եմ... Իմ Սուրբ Սիրտը ձեր ապաստանն է: Ուրեմն եկեք և ձեզ ու ձեր ընտանիքները նվիրաբերեք Ինձ և ձեր Մոր Անարատ Սրտին: Ես՝ Հիսուս, մտադիր եմ մնալ ձեր երկրում և սրբագործել այն: Դրա համար Ես ձեզ բոլորիդ խնդրում եմ նվիրաբերել ձեր երկիրը Մեր Երկու Սրտերին: Եղեք Ինձ հավատարիմ և եղեք մեկ Իմ Անվամբ:

Ես օրհնում եմ ձեզ, ա՜խ, փոքրիկ զավակներ:

ΙΧΘΥΣ

Փետրվարի 25, 1998

Յա՜հվե, դարձրո՛ւ իմ սերը
այնպես միահյուսված
Քոնի մեջ, որ ասես.
«Բարի գալուստ Իմ Տունը»:

Ես համոզված եմ,
որ սերը միահյուսված է նաև
Քո Աստվածային Կամքի հետ,
և միայն Քո Խոսքերը
հասկանալը բավարար չէ,
եթե մենք չենք գործում
համաձայն Քո Խոսքի, Տե՛ր իմ:

Իմ Վասո՛ւլա, մահվան ստվերը կախված է ձեր սերնդի վրա: Մի ստվեր, որ կարող է գցել նրան ամենախոր անդունդի մեջ, հիմա ծածկել է նրա մեծ

մասը: Վա՜յ նրանց, ովքեր այնքան հարմարավետ կերպով տեղավորված են իրենց տեղում, ապահով զգալով հիմա: Սրանք նրանք են, ովքեր իրենց Աստծո տեղ են դնում և ասում. «Յահվեն զորություն չունի մեզ վրա»: Վստահությամբ նստած իրենց գահի վրա, նրանք հայտարարում են, որ ոչ մեկը չի կարող հավասարվել իրենց: Կարիք կա՞ ավելին ասելու: Սեր չկա նրանց մեջ...

Ես պիտի խոսեմ, իսկ դու պիտի գրես: Աղոթի՛ր, որ Իմ ասածները պարզորեն հնչեն յուրաքանչյուրի ականջներում: Ես վստահել եմ քեզ Իմ Գործերից ազնվագույնը ձեր ժամանակներում: Այս Աստվածային Գործը դրվել է քո ձեռքերի մեջ: Այո՛, Ինձ շատ հաճելի էր տալ Այն քեզ և Այն դնել մեծագույն քնքշությամբ սոսկ մի երեխայի ձեռքերում, որն ամբողջապես Ինձանից պետք է կախված լիներ:

~ Հենց[1] հիմա Ես չեմ ցանկանում, որ միայն մի անցողիկ այցելություն անեմ քեզ Իմ Գահից, բայց տուր Ինձ քո ժամանակը, և Ես կընդունեմ քո մատուցումը, ինչպես ընդունում են գարդենիաների ծաղկեպսակը...

Ա՛խ, Տե՛ր իմ,
Քո երկնային Ներկայությունը
ուղեկցվում է
ամենանուրբ բուրմունքներով:
Ուրեմն ցույց տուր ինձ, Տե՛ր իմ,
Քո Գեղեցիկ Դեմքը և ծածկիր ինձ
Քո պայծառ Լույսով:

Թույլ տուր ինձ լսել Քո Ձայնը,
ինչպես մի մեղեդի,
որն այնքան քաղցր է,
ավելի քաղցր, քան հազարավոր
մեղրախորիսխներ միասին վերցրած:

Արի՛ ուրեմն և ներշնչիր Իմ Բերանից դուրս եկող զմուռսը[2]: Ի՞նչ դրոշ եմ Ես բարձրացրել քեզ վրա:

Դրոշը, որ ես տեսնում եմ բարձրացված ինձ վրա՝ Սեր է:

Այո՛, սեր: Սերը ամեն ինչից վեր է: Սիրել՝ նշանակում է կատարել Իմ Կամքը: Դա ձեր մուտքի բանալին է դեպի Իմ Երկնային Թագավորություն:

Եթե հավակնում եք, որ ապրում եք Իմ մեջ և սեր չունեք, ուրեմն չեք կարող ասել, որ ապրում եք Իմ մեջ: <u>Ճշմարիտ Կյանք Իմ մեջ</u> նշանակում է ապրել այնպիսի կյանքով, ինչպիսին Քրիստոսն է ապրել: Դուք լսել եք, որ ոչ ամեն մարդ, որ կանչում է Իմ Անունը, պիտի մտնի Իմ

[1] Այստեղ Նա մի փոքր վարանեց: Ես մտածեցի, որ Աստված կդադարի պատգամը տալուց և թույլ կտա ինձ դնալ, բայց հետո Նա ասաց այն, ինչ հետևում է:
[2] Աստված դադար տվեց, հետո փոխեց Իր Ձայնի հնչերանգը:

Թագավորությունը, այլ միայն նրանք, ովքեր սնվելով սիրուց [1], կատարում են Իմ Կամքը, երբ դեռևս երկրի վրա են գտնվում:

Ասա՛ Ինձ, ի՞նչ օգուտ կա մրգատու ծառից, որը երբեք պտուղ չի տալիս: Կամ, ի՞նչ օգուտ քնարից, որն առանց լարերի է: Այլ խոսքով, ի՞նչ օգուտ Ինձ ուղղված ձեր գովաբանություններից, եթե ասվում են առանց սիրո: Ի՞նչ օգուտ ունեն ձեր զոհաբերությունները, եթե դրանք տրվում են առանց սիրո: Ձեր նպատակը ուրեմն պետք է լինի սերը, քանի որ սիրո հիման վրա է, որ վերջում դուք պետք է դատվեք, այլ ոչ թե ձեր պերճախոսության կամ գիտելիքների, կամ էլ ձեր որևէ մի զոհաբերության համար, կամ այն պարգևների համար, որոնք Ես Իմ բարյացակամությամբ առաջարկել եմ ձեզ: Դուք պիտի դատվեք ձեր սիրո չափով: Այս շնորհները, որ Ես առաջարկեցի ձեզ, նրա համար էին, որ դուք կառուցեք Եկեղեցին: Թող ձեր հիմքը և ձեր գործերի ու շնորհների կառույցը հիմնված լինի սիրո վրա, որպեսզի դուք չթուլանաք ու չդադարեք բարիք գործելուց: Այո՛, քանի որ բարի մարդը շահում է Իմ բարեհաճությունը:

Իմ Քաղաքը[2] պիտի կառուցվի Իմ Սուրբ Հոգու Օրհնության վրա... և փոթորիկը պիտի ավարտվի... Հետո, յուրաքանչյուր արարած երկրի վրա պիտի ապրի ճշմարիտ կյանք Իմ մեջ, և նրանց սերը պիտի լինի այնքան ներհյուսված Իմ Կամքին, որ նրանց հոգին պիտի դառնա Իմաստության գահը: Այո՛, այդպիսիների համար է, որ Սուրբ Գրքերն ասում են. «Արդարի հոգին Իմաստության գահն է», որովհետև այն սրտում, որ սիրում է Ինձ, դանձի պակաս չկա: Երբ Իմ Հոգին խոսեց քո բերանով, աղավնյակս, և ասաց. «Նրա Խոսքերը հասկանալը բավական չէ, եթե մենք չգործադրենք դրանք», դա նրա համար էր, որ դուք հասկանաք, որ Ինձ սիրելով հանդերձ, եթէ դուք չկատարեք Իմ Աստվածային Կամքը, դուք կունենաք ձեր Մեծ Անկումը:

Քանի դեռ կառչում եք այս անցողիկ աշխարհին, դուք երբեք չեք հասկանա, որ Իմ Սուրբ Հոգու մեջ է, որ ձեր մարմինը գրավվելու է, որպեսզի ձեր մտքերը դառնան վսեմ ու ազնիվ մտքեր: Հետո, մտքի այդ աստվածային ազնվության մեջ, և աստվածային շնորհի այդ վիճակում՝ ձեր մեջ կլանած լինելով Աստվածայնության զորությունը, Իմ Գործը ձեր մեջ կիրագործվի, և Իմ Կամքը կկատարվի:

Եվ ինչպես մի անգամ ձեզ բոլորիդ ասել եմ, Ես դա նորից եմ ասում. կգա մի ժամանակ, և այդ ժամը մոտ է, որ չնայած դուք դեռևս պիտի լինեք մարդկանց մեջ, ձեր միտքը պիտի լինի երկնքում՝ փառաբանելով Մեր Երրորդության Սրբությունը: Եվ չնայած ձեր մարմինը շարժվելիս կլինի մարդկանց մեջ, ձեր հոգին և միտքը գերված Իմ Կամքով, լցված Իմ վսեմ Լույսով, կլինի ինչպես հրեշտակներինը, և դուք ձեզ կգտնեք Եդեմի մեջ քայլելիս, Դրախտում՝ Իմ հրեշտակների և սրբերի մեջ, որովհետև ձեր միությունն Ինձ հետ կատարյալ կլինի...

Ա՛խ, և Մենք կհրճվենք՝ Մեզ տեսնելով ձեր մեջ: Դուք պիտի ունենաք անտեսանելի Աստծո պատկերը: Մենք պիտի տեսնենք երկինքը[3] ձեր մեջ:

---

[1] Այստեղ *սերը* նշանակում է նաև Աստծո Խոսքը և այդ Խոսքին ենթարկվելը:

[2] Ես գիտեի, որ Յահվեն այստեղ «քաղաք» բառն ասելով նկատի ուներ «Իր Թագավորությունը երկրի վրա»:

[3] Հոգևոր երկինք

Դուք, որ տիրապետելու եք Մեզ, պիտի կարողանաք ապրել այնպիսի կյանքով, որ Մենք սպասում էինք ձեզանից, մի կյանք, որը կատարյալ իմաստության և հոգևոր հասկացողության միջոցով, հասնելու է Իմ Աստվածային Կամքի լիակատար իմացության: Կյանքը, Իմ թանկագին զավակներ, որ դուք ապրելու եք, դուք, որ ստեղծվել եք Մեր Արքայական Գավիթների համար, ամեն կերպով պիտի լինի Իմ Մտքին համապատասխան: Ես պիտի սրբագործեմ ձեզ, և դուք զորություն պիտի ստանաք, որ ամբողջապես նվիրյալ դառնաք: Երբ այս ամենը [1] հայտարարվեց Ճշմարտության Պատգամում [2], ձեզանից շատ քչերը հասկացան Իմ Խոսքը:

Այսօր աշխարհը լսում է, բայց ոչինչ չի հասկանում, տեսնում է, բայց ստեղծում է պատկերներ, որ ոչ մի արդյունքի չեն հանգեցնում: Իսկ նրանք, ովքեր թվում է, թե մոտ են Իմ Սրտին, և ովքեր պահում են Իմ Թագավորության բանալիները, նույնիսկ նրանք չեն հասկացել: Չնայած դրան, նրանք ջերմորեն ցանկանում են Ինձ մատուցել նվիրաբերություններ, գոհաբանական մաղթանքներ, խստորեն վարվելով իրենց մարմինների հետ, հավասարվելով նրանց, որոնց Ես պսակեցի փառքի պսակով [3]: Եվ սակայն, երբ Իմ Աստվածային Շունչը [4] մի բուրմունք է փչում, մի քաղցր բույր ձեզ վրա, ձեզ նորոգելու համար, այո՛, երբ Իմ Սուրբ Հոգին իջնում է երկնքի բարձրունքներից բոցավառելով երկիրը, որպես մկրտության մի համբույր, նրանք ամեն ինչ անում են, որ հանգցնեն Իմ Սուրբ Հոգու Կրակը: Այսօր, երբ Իմ Ձայնը լսելի է, Այն վախեցնում է նրանց խելագարության աստիճան, և նրանք անմիջապես անում են ամեն ինչ, որ լռեցնեն Այն:

Ես, որ Հեղինակ եմ անգնահատելի հրաշալիքների, շուտով բացելու եմ երկինքը և հայտնի եմ դարձնելու ձեզ Իմ նպատակի խորհուրդը՝ Իմ Սուրբ Հոգու զեղումը, Որը Սուրբ Գրքերում գրված Խոստումն է, և Որը ներգործելու էր իմ արարչության վրա, ինչպես երբեք նախկինում պատմության մեջ՝ բարձրացնելով նրանց բոլորին մինչև երկինք, ամեն ինչ, որ երկրի վրա է, մոտեցնելով երկնքին, այնքան, որքան դա հնարավոր է անել: Ես, Վասո՛ւլա, որ ղեկավարում եմ ամեն ինչ և որոշում Իմ սեփական Կամքով, երբեք չեմ խախտել ոչ մի խոստում, բայց Ես հայտնի եմ նրանով, որ տապալում եմ ամեն մի պատնեշ, որ բաժանում է: Ահա թե ինչու դուք պետք է ձեր հույսը դնեք Ինձ վրա, որովհետև, ինչպես Ես ասացի, Ես Իմ Սուրբ Հոգու Զորությամբ և Շնորհով փչուր-փչուր պիտի անեմ ձեր բաժանման պատնեշները և միավորեմ ձեզ, Իմ Պատվի համար, մի Մարմնի մեջ: Հետո, ձեր սերունդը, խելքի գալով, կկանչի Մեզ.

«Պաշտելի Երրորդություն,
գերված պահիր մեր աչքերը
այն Միակ Սրտի վրա,
և տուր մեր հոգուն այն,

[1] Այն բաները, որոնք Աստված ասում է մեզ հիմա:
[2] Աստվածաշունչը
[3] Սրբերին
[4] Սուրբ Հոգին

ինչի պակասություն որ նա ունի:

Օծի՛ր մեզ, ո՛վ Սուրբ
և Աստվածային Երրորդություն,
հեղելով Քո յուղը մեզ վրա,
որպեսզի Քեզ հետ
անբաժանելիորեն միացած մնանք
Քո Կամքի մեջ,
և նախապատրաստիր մեզ
երկրի վրա Քո փառավոր
Թագավորության
իշխանության համար, որտեղ
Քո Կամքը դառնում է
մեր Հանապազօրյա
կյանքի էությունը
և խորհրդանշանը
մեր ճակատի վրա, իսկ Սերը՝
դրոշ մեր գլխի վերևում»:

Ա՜խ, Իմ շուշա՛ն, քո Արարիչը սա ասում է քեզ, որպեսզի գնաս և ասես Իմ Յուրայիններին.

«Յահվեն,
Իմ Տերը և ամենողորմ Հայրը,
պիտի զարդարի մեզ
Իր Արքայական Զգեստներով,
և երկիրը պիտի զարդարվի
այն թաքուն գանձերով,
որոնք Նա այնքան
բարեգթությամբ պահել էր
մեր ժամանակների համար»:

Ես պիտի զարդարեմ այս երկիրը Գարունով, Իմ Գարունով: Ի՞նչ է Յահվեի Գարունը: Իմ Գարունը, սիրելիներս, կլինի, երբ իմ ողջ արարչությունը կփայլի մի պայծառ լույսով: Մաքրագործման մկրտությամբ դուք պիտի վերափոխվեք և նմանվեք ձեր սկզբնական պատկերին: Այս Մաքրագործման մեջ յուրաքանչյուր ոք պիտի տենչա սիրո ավելի սերտ կապերով միանալ Ինձ հետ, և ձեր սրտերը եռանդով պիտի փնտրեն Ճշմարտությունը, Ճանապարհը և Կյանքը: Եվ Ճշմարտության մեջ, ուր արբեցուցիչ համեր կճաշակեք, ձեր Հոգին օժտված Իմ Շնորհի Հոգով, պիտի դառնա կատարյալ: Ձեր խավար պատկերը այլևս չի լինելու, քանի որ Ես՝ ձեր Փեսան և ամենից բարեսեր Հայրը, պիտի փայլեմ ձեզ վրա[1]:

Սերը վերադարձի ճանապարհին է, որ վերականգնի Իր Թագավորությունը: Սա պիտի լինի Իմ Թագավորության

[1] Հայտ. 22:5

տիրապետությունը երկրի վրա, և Իմ Կամքը պիտի կատարվի երկրի վրա, ինչպես երկնքում է:

Ուրեմն հիմա է ապաշխարության ժամանակը: Սա մի չար դարաշրջան է, բայց ձեր կյանքերը պետք է հատուցեն դրա համար: Հրաժարվեք ձեր կամքից և արժանացեք Իմ բարեհաճությանը՝ ճանաչելով, թե ինչ է Իմ Կամքը: Ա՛խ, Վասուլա, Իմ Կանչի օրհնյալ, տարածի՛ր Իմ Խոսքերը Ողորմության և Հույսի գետերով: Եղիր ինչպես մի շուշան Պահքի այս շրջանում, մոռանալով ինքդ քեզ, և թույլ տուր, որ քո Պահապանը հոգ տանի քեզ համար: Ամբողջապես ջնջի՛ր ինքդ քեզ, դառնալով հեղուկի նման, որպեսզի կարողանաս հոսել Իմ մեջ՝ քո Աստծո մեջ, դառնալով Ինձ հետ մեկ հոգի...

Ես՝ Աստված, պիտի հանդիպեմ քեզ օրվա ցանկացած ժամի, երբ դու ուզում ես: Կանչիր Ինձ ցանկացած ժամանակ, սիրելիս: Ուստի վեր բարձրացրու քո միտքը Իմ հանդեպ երախտապարտ գովաբանությամբ, և հռչակիր Իմ Անունը երիցս Սուրբ, որ քեզ տվել եմ այս թանկարժեք պարգևը՝ մի բաց դարպաս դեպի Ինձ:

[1]Պարտե՛զը Իմ Քաղաքի,
պետությո՛ւնը Պետության,
Կյա՛նք ստացիր Ինձնից
ուրախությամբ:

Ա՛խ, և կլանվիր Իմ Աստվածայնության մեջ: Թույլ մի՛ տուր որևէ ստվեր անցնի քո հոգով: Քո Տերը ողորմածաբար խոնարհվում է հիմա դեպի քեզ, որ զգեստավորի Իր Սիրո զարդարանքներով: Ես պիտի աճեմ ու ավելանամ քո մեջ, ուստի տեղի մի տուր քո թուլությանը՝ տխրեցնելով Ինձ, կասկածելով Իմ Բարությանը: Ողջ սրտով ողջունիր աստվածային շնորհի այն թանկարժեք ցողը, որ պահում է քո հոգին Իմ Հոյակապ Լույսի մեջ: Քեզ Գարունն Ինքն է հրավիրում:

Տե՛ր իմ, շատ մեծ թագավորներ
իրենց ողջ թագավորությունը կտան,
որ ստանան մի կաթիլ
այն շնորհներից,
որոնք Դու այնքան սիրալիր կերպով
առաջարկեցիր Ինձ,
Քո անսահման
և աստվածային Սիրով:

Ես Ինձ թույլ կտամ
շարունակել և ասել.
«Այո՛, այո՛,
Քո Սիրով բռնկված մի պահի,

[1] Հանկարծ Յահվեն, իմ սքանչելի Աստվածը, խոսեց փոխաբերություններով: Իմ մտքի վրա հեղված լույսի միջոցով Նա Ինձ հասկացրեց, որ «Իմ Քաղաքի պարտեզ» նշանակում էր «Իմ Սրբարանի Վասուլա», նույնը նաև՝ «պետությունը Պետության» փոխաբերությունը:

Դու առատորեն ինձ
առաջարկեցիր շնորհներ
առանց չափի բաշխելով դրանք,
և այն էլ ինչի՞ վրա,
սոսկ մի թշվառության...»

Բայց դու Իմ ընտրյալն ես: Նույնիսկ այն ժամանակ[1] ես տեսա քո մարդկային փխրունության մեջ, մի նշույլ, թե ինչ կար մեղքի կեղևի տակ: Մռայլության այդ շերտերի տակ Ես տեսա մի մանկան սեր, և Իմ Սիրտը այդ տեսնելով հուզվեց արտասվելու աստիճան: Հենց միայն սա գերեց Իմ Գթասրտությունը: Մեղքի ենթակա, բայց և այնպես, ժամանակ առ ժամանակ սիրո մի բարակ շիթ դուրս էր հոսում քեզանից: Այդ ժամանակ Ես ասացի. «Ես պիտի սկսեմ ոչնչացնել այն ամենն, ինչ Ես չեմ, և պիտի վերակենդանացնեմ՝ բոցավառելով այն քիչը, որ մնացել է Ինձանից»: Եվ Իմ փրկարար շնորհի հեղումով, Ես գործեցի Իմ Կամքի համաձայն:

Արի՛ հիմա, եղիր ինչպես բոցավառ մի ջահ ձեր դարաշրջանի այս խավարում: Հաճախ մոտեցիր Ինձ, որպեսզի համտեսես Իմ քաղցրությունը, բերկրանք զգալով այս մտերմության մեջ, բայց միևնույն ժամանակ մեծարիր Ինձ:

(Այս պատգամը տրվեց ինձ մի քանի ընդհատումներով: Հետո, ավելի ուշ ամսաթվով պատգամը շարունակվեց մինչև մարտ ամիսը, քանի որ չէր ավարտվել: Սա այդպես արվեց, որովհետև ես շատ ճամբորդություններ պետք է կատարէի իմ առաքելությունների համար):

Մարտ 1998

(Նախորդ պատգամի շարունակությունը):

Իմ Վասո՛ւլա, Ես, Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ միասին, Մեր երկնային Փառքի Գահից երկրի վրա ենք իջնում Անձամբ, այս ձևով այցելելով քեզ, որ քեզ վրա դրոշմենք Մեր Սիրո Թեման:

Մենք քեզ վրա դրեցինք Մեր Աստվածային Խոսքը շատ ազգերի մեջ տարածելու պարտականությունը, և դու այդպես էլ արեցիր, ինչ որ քեզ խնդրել էինք անել: Դու, թանկագինս, թողեցիր տուն և ընտանիք, հարմարավետություն և երկիր, հանուն Մեր Անվան, ուստի թույլ տուր Ինձ հիշեցնել քեզ այդ բոլորից հրաժարվելու պարգևը: Միայն սրա համար քեզ պիտի հատուցվի դրա հարյուրապատիկը, և դու պիտի ժառանգես Իմ Թագավորությունը, որը հավիտենական կյանքն է: Աղջի՛կս, որին Ես վստահեցի այս հսկայական գանձը, մի՛ լսիր Իմ Անվամբ

[1] Աստված նկատի ունի՝ նույնիսկ իմ դարձի գալուց առաջ, այսինքն նախքան ինձ ուղղված Իր աստվածային Կանչը:

տարվող հակամարտ քննարկումները: Եղիր ինչպես օդում ճախրող մի աղավնի՝ վեր ամեն աղմուկից ու վեճերից: Ուրեմն ուշադրությունդ մի՛ շեղիր և մի՛ անհանգստացիր արտաքին բաներով: Հայացքդ դարձրու դեպի Ինձ, հիշելով, որ Ես քոնն եմ, իսկ դու՝ Իմը:

Մի՛ նեղացիր, երբ նվազ փառավոր շնորհներ ես ստանում[1], քան առաջին երեք տարիների ընթացքում, որովհետև ամեն ինչ, որ տրվում է քեզ, Իմ փառավորման համար է: Քո խոնարհությունը պահպանելու համար Ես կատարեցի Իմաստության այս գործը, թերևս անհասկանալի քեզ համար, բայց Իմ գործը քեզ միանգամից տվեց Ինձ մոտ գալու և Ինձ համար ազատորեն աշխատելու հնարավորությունը: Իմ գործը քեզ դրեց այնպիսի վիճակի մեջ, որ դու Ինձ մոտ էիր գալու քո սեփական ազատ կամքով՝ բարձրացնելով քո մտքերը դեպի Ինձ, տալով Ինձ այն, ինչ կարող էիր: Եվ մինչ Ես դիտելիս կլինեի, թե ինչպես է Իմ Սեփական սերմը իր կյանքը տալիս, որպես նվիրաբերություն շատերի համար՝ չհենվելով ոչ մեկի վրա, բացի իր Փրկչից, որը բարձրացրեց նրա հոգին մահվան հովտից և տարավ այն սերտորեն միացնելու Իր Սրտին, Ես պիտի ուրախանայի Իմ սերմով[2]...

Հիմա ասա՛ Ինձ, կարո՞ղ է մարդ խաբել Աստծուն:

Ո՛չ, երբե՛ք, ամբողջ ժամանակ սպիտակ հագնելը[3] ոչ մեկին էլ ավելի սուրբ կամ արժանավոր կամ ճշմարիտ չի դարձնում:

Եվ սակայն շատերն են խաբում Իմ զավակների սրտերը, նրանք խաբում են Ինձ իրենց կեղծիքով[4]: Ես ասում եմ քեզ, երբ Իմ Օրը գա, նրանք դուրս կմնան Իմ Թագավորությունից: Այդ հիմունքներով դատավճիռ պիտի կայացվի: Ես քեզ տվել եմ զանազանելու շնորհը, թե ինչն է գալիս Ճշմարիտ Լույսից և ինչն է գալիս խավարից, բայց Ես քեզ թույլ եմ տվել, որ տեսնես, թե որքան շատերն են գնացել դեպի խավարը, քան թե Լույսը: Սա Ես քեզ ասացի, որ երբ տեսակավորման ժամանակը գա, դու հիշես ամեն ինչ, որ Ես ասել եմ քեզ[5]...

Հիշեցրո՛ւ Ինձ քո ընկերներին: Քո ընկերներն Իմ ընկերներն են, աղավնյակս: Ասա՛ նրանց, թե ինչ է իրենց ամենողորմ Հայրն ասում: Ասա նրանց, որ եթե նրանք մնան Իմ մեջ, Իմ Սիրո մեջ, նրանց ուրախությունը կլինի կատարյալ, և ինչի որ նրանք կձգտեն Հանուն Ինձ

---

[1] Սրանք ուղղակի պատասխաններ էին իմ սեփական հարցերին և նրանց հարցերին, ովքեր իմ միջոցով հարցեր էին տալիս մեր Տիրոջը: Ու նաև այն հանգամանքը, որ Ես չէի ստանում մշտական բուրմունքներ և Իր Ներկայության տեսիլքներ:

[2] Կարճ լռություն տիրեց:

[3] Կեղծ մարգարեները, որոնք այսօր շատ են, շատ ու շատ ավելի, քան Աստծո կողմից ընտրվածները: Բայց Աստված թույլ է տալիս, որ դա տեղի ունենա մարդկանց փորձելու համար:

[4] Նրանցից մեկը, հատկապես, որ անխնա փորձում է Աստծուն իր կեղծ պատգամներով, ծրագրեր մշակելով խավարում, մոլորեցնելով շատերին, որ հավատան իրեն: Նրան կարելի է ճանաչել իր պատգամով, որը հայտարարում է, թե «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները դադարել են 1997 թվի օգոստոսին: Սուտ, որը նրան գցելու է իր սեփական ծուղակի մեջ...

[5] Կարճատև լռություն տիրեց, հետո Աստված խոսեց նրանց մասին, ովքեր մասնակցելու էին ՃԿԱՄ-ի Սուրբ Երկիր կատարվելիք միջազգային ուխտագնացությանը: Նրանք ՃԿԱՄ-ի կազմակերպիչներն ու տարածողներն են, Աստծո Պատգամի ամուր սյուները:

իրենց աշխատանքում, որը սակայն չեն կարողանա ավարտել կամ հաջողության հասնել իրենց մարդկային թուլության պատճառով, Ես, որպես Հայր, տեսնելով նրանց մտքի ազնվությունը, հաշվի կառնեմ Ինձ դոհացնելու նրանց բարի մտադրությունները: Ուստի Ես, Իմ հերթին, կմատակարարեմ այն, ինչ որ կպակասի նրանց մեջ, որպեսզի շատերը հավատան Իմ Գործին և Սիրո Աստվածային Թեմային: Նրանք կհավատան ոչ թե իրենք իրենցով, այլ այն կատարյալ Գործի վկայության պատճառով, որը պիտի կատարվի Իմ Աստվածայնությամբ:

~ [1]Իսկ դո՛ւ, աղավնյա՛կս, տես Փեսային, որ Իր Կանչով բարձրացրեց քեզ և ղեկավարեց քեզ Իր Հոգով[2]: Մի սաղմոս երգիր Ինձ համար, ասելով.

Կենդանի Ջրի Շատրվան,
պահպանի՛ր հոգիս
դժվարությունների ժամանակ,
պահի՛ր հոգիս ամուր
կպած Քո Սրտին,
որտեղ Յահվեի Աղբյուրները
թարմացնում և ուրախացնում են
ամեն մի սիրտ, որ գալիս է
հանգստանալու Սիրո
այս ամենախոր Կենտրոնում:

Օ՜, տես Նրան, ով հագցրեց Ինձ
Իր Կայսերական Զգեստները[3],
որպեսզի առանց խնայելու
ազդ ազդի հետևից
բերի հավաքվելու
ողջ Օրհնյալ Երրորդության շուրջ՝
մի մարմնի մեջ:

Տե՛ս Նրա
անսահման Ողորմությունը,
Որ հրճվում է
նույնիսկ իմ խղճուկ սրտում,
ասես չկան ուրիշ արարածներ
ինձանից բացի:

Օրհնյալ լինի Յահվեն հավիտյան:
Ամեն:

---

[1] Աստծո հայացքը դարձավ դեպի ինձ: Նրա նայվածքը ընկերական էր և միևնույն ժամանակ հայրական:

[2] Մինչ Բարեգութ Աստված ասում էր այս բառերը, հոգիս բարձրացվեց դեպի բարձունքները, որ մի փոքր ակնթարթով տեսնի Նրա Փառքը, տալով ինձ երանական տեսիլքի մի փոքր պատկերացում:

[3] Այսինքն՝ Իրեն, Քրիստոսին:

Այո՛, ես քեզ Կյանք եմ տվել Իմ Աստվածայնությամբ, ոչնչացնելով քո պակասությունները: Իսկ հիմա, միացած և անբաժանելիորեն միավորված հենց Իր՝ Աստվածայնության հետ, ես երիցս օրհնում եմ քեզ Իմ Անվամբ: Թող քո հաջողությունները բարգավաճում բերեն ողջ մարդկությանը: Արա դրանք, Սուրբ պահելով Իմ Անունը և բոլորի հետ ապրիր խաղաղության մեջ:

Ապրիլի 9, 1998

(Տիրամայրն է խոսում).

Իմ Վասուլա, Իմ Ներկայությունը Խաղաղություն և Ուրախություն է, այո՛, քանի որ ես քո Մայրն եմ՝ նախքան քո մայրը երկրի վրա:

Ես կիսում եմ, ինչպես մայրն է կիսում իր զավակների հետ, ձեր ուրախությունները, ձեր տառապանքները և այն ամենը, որ դուք համբերությամբ տանում եք: Ինձ համար մեծ ուրախություն է տեսնել, որ Իմ զավակներն ապրում են ճշմարտության կյանքով, ինչպես նրանց պատվիրվել էր սկզբից Հավիտենական Հոր կողմից:

Այսօր, Իմ Վասո՛ւլա, շատ խաբեբաներ կան, բայց ասվել է, որ, ինչպես անցյալում խաբեբաներ[1] են եղել, այդպես էլ դուք կունենաք ձեր կեղծ մարգարեները: Սկզբում նրանք կփորձեն ձեզ կաշառել՝ իրենց կողմը գրավելու համար[2], բայց հետո շատ արագորեն կշրջվեն ձեր դեմ, հենց որ հասկանան, որ իրենց չարությունը Հոգու կողմից քողազերծվել է ձեզ համար՝ Ճշմարտության Լույսի տակ: Ա՛խ, զավա՛կս, ես պարուրել եմ ձեզ Իմ Անարատ Սրտում: Այսպես եմ ես պաշտպանում Իմ զավակներին:

Ձեր բոլորի հանդեպ ունեցած Իմ հավատարիմ սիրով, ես, որպես Մայր, միշտ պիտի լինեմ ձեր Գթառատ Հովանավորն ու Պաշտպանը: Միթե չե՞ք լսել, որ ես դառնում եմ առյուծի նման, որը պաշտպանում է իր կորյուններին, երբ պիղծ ձեռքերը ձգվում են, որ դիպչեն ձեզ: Ոչ ոք չի կարող խլել ձեզ Ինձանից: Դո՛ւ, Իմ Վասուլա, նվիրաբերված ես Ինձ, և դու ստորագրել ես քո նվիրաբերումն Ինձ քո սեփական արյամբ[3], և դրանով Աստված հաստատեց քեզ, զորացրեց և օգնեց քեզ, քանի որ Նրա Ողորմածությունն ու Զորությունը հարատև են:

Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, միշտ մոտիկ է քեզ, և քո ձեռքը սեղմել է Իր Ձեռքում, որպեսզի դու երբեք չբաժանվես Նրանից: Իմ Սիրելի Որդին քաղցրորեն հուզվում է, երբ դու և մյուսները, ովքեր բարեհաճ կերպով ընդունել են Իր Գթառատ Կանչը՝ Իր ազնիվ ու հոյակապ թեմայի միջոցով, զոհաբերում եք ամեն ինչ, որ ունեք, հոգիների փրկության համար:

---

[1] Տիրամայրը նկատի ունի կեղծ մարգարեներին:
[2] Անձնապես ձեզ ուղղված չողոքորթող պատգամների հոսքով:
[3] Ես ծակել էի մատս և սեփական արյամբ ստորագրել մեր Օրհնյալ Մոր Սրտակը դառնալու նվիրաբերումը:

Իսկ Աստված՝ Հայրը, որ հայրերից ամենաբարին է, որ քեզ հազարավորների միջից շնորհ արեց, տալով քեզ այս անգնահատելի պարգևը, ուսուցանելով քեզ Իմաստությամբ, լցնելով քո և մյուսների մտքերն ամեն ինչով, որ ճշմարիտ է, ամեն ինչով, որ ազնիվ է, ամեն ինչով, որ բարի և մաքուր է: Իր անդիմադրելի սիրով, որ Նա ունի իր ողջ արարածների հանդեպ, Արարիչն օրհնել է քեզ երեք անգամ Իր Գահից: Իր արքայական դավիթներում Նա քեզ խնամեց ու մեծացրեց[1] Իր Բերանի նեկտարով, և Իր Փառահեղ Գահից Աստված հասավ քեզ, որ մխիթարի քեզ և քո միջոցով՝ ուրիշ միլիոնավոր մարդկանց, ովքեր հուսահատված, մխիթարանքի կարիք ունեին: Ա՜խ, ի՞նչ չի անի Նա ձեզ համար՝ Իր աստվածային Բարությամբ: Սա մի բան է, որ ձեր ժամանակների փիլիսոփաները երբեք չեն ընկալի, որովհետև այն չի համապատասխանում իրեց մտածելակերպին:

Ուրախ եղիր չափազանց, աղջի՛կս, քանի որ դու շատ ավելի շնորհներ ես ստացել, քան երբևէ կկարողանայիր արժանի լինել: Փառաբանիր նաև Աստծո Սուրբ Հոգուն, ով փափկորեն և քնքշորեն վերևից իջավ քեզ վրա, որ ընկեր լինի քեզ, օծի և ցույց տա քեզ Ճանապարհը: Ուստի փառաբանիր Նախակարապետին, ով հեղեղեց քեզ Իր Սիրով և զգացնել տվեց քեզ Իր մտերմիկ քաղցրությունը՝ բարձրացնելով քեզ Իր Թևերի վրա, որ Իր հետ ճախրես երկնքում: Ուստի մի՛ վախեցիր... Որքան ժամանակ, որ դու պատվաստված ես Իմ Անարատ Սրտին, մի՛ վախեցիր...

Աղոթի՛ր, Իմ Վասուլա, նրանց համար, ովքեր սխալ են մեկնաբանում Մեր Աստվածային Պատգամները: Ներողամիտ եղիր նրանց հանդեպ, քանի որ նրանք չգիտեն, թե ինչ են անում... Խղճա նրանց ամայությանը և թույլ մի՛ տուր, որ լեզուդ դատապարտի նրանց, թող որ Միակ Դատավորը դատի նրանց: Դու սա կանե՞ս Ինձ համար:

Ես կփորձեմ, ես կփորձեմ հիշել:

Փորձի՛ր... եղիր մշտապես բարի, Իմ Վասո՛ւլա, և եղիր համբերատար: Թույլ մի՛ տուր, որ այդ տեսակի դայթակղությունները վրա հասնեն քեզ և աղավաղեն հոգիդ: Թող Նա, ով Ամենաբարձրյալն է, հրճվի քեզանով: Դրա փոխարեն՝ հատուցիր նրանց համար, և ամեն անգամ, երբ դու հատուցես, Բարեգութ Աստված կօծի քեզ Իր Աստվածային Սիրո յուղով քո արարքի համար, և Նրա Դեմքը կփայլի քեզ վրա, և Նա Իր

[1] Հանկարծ, մինչ լսում էի այս խոսքերը, ես հասկացա մի վաղուց տեսած տեսիլք, երբ ես հոգով բարձրացվեցի մեր Հոր Տունը, ուր շատ սենյակներ կային, և մեզ համար Հյուրասիրություն էր պատրաստված: Տեսիլքի մեջ ինձ տարան մի սենյակ, որը պատշգամբ ուներ: Տեսիլքի մեջ աչքի էր ընկնում իմ շուրջը տիրող մեծ խաղաղությունը: Այդ սենյակից դուրս գալուց հետո ես երեխայի թոթովանք լսեցի կողքի սենյակից, քանի որ դուռը բաց էր: Ես կարիք չունեի սենյակից ներս մտնել տեսնելու համար, բայց հոգուս աչքերով տեսա, թե ով կար այդ մյուս սենյակում: Ես տեսա մի տիկնոջ նստած փայտե նստարանի վրա, որ նայում էր հատակին՝ իր ոտքերի մոտ նստած թոթովող երեխային: Տեսիլքի ժամանակ ես չհասկացա, թե ովքեր էին այդ երկուսը, քանի որ Աստված չհայտնեց ինձ նրանց ինքնությունը: Բայց հիմա, մեր Օրհնյալ Մոր խոսքերից, այս առեղծվածը բացահայտվեց ինձ համար: Տիկինը մեր Օրհնյալ Մայրն էր, իսկ երեխան ես էի: Ես ինքս ինձ էի նայում: Ես իմ Հոր գավիթներում էի, Նա, ով իսկապես ինձ խնամեց ու մեծացրեց նեկտարով, իսկ իմ Մայրը հսկում էր ինձ, մինչ այդ սարսափելի լռության մեջ լսվում էր միայն երեխայի թոթովանքը (Նոյեմբ. 22, 1986-ի տեսիլքը):

Օրհնությունները կթափի մարդկության վրա: Վարվիր այնպես, ինչպես Աստված ցանկանում է, որ վարվես:

Ազատիր Ինձ այն ցավերից, որոնց Իմ Սիրտը չի դիմանում ամեն օր նրանց պատճառով, ովքեր մերժում են Իմ Որդու իսկական Ներկայությունը Սուրբ Հաղորդության մեջ: Հիսուս սիրով հրավիրում է ձեզ ճաշակել Իր Մարմինը: Իմացե՛ք, որ Նա փափագում է ձեզ Իր Ողջ Սրտով, և ձեր կողմից որևէ մեծահոգի վարմունք՝ Նրա Սիրտը հալեցնում, վերածում է Ողորմության և Բարության Գետերի, որոնք հոսում են շատ կարծրացած սրտերի վրա...

[1]Ո՜վ Արքայական Կույս,
անբաժանելիորեն
միացած Հիսուսի Սրտին,
ես Քեզ եմ տալիս
աշխարհի բոլոր մեղավորներին,
ովքեր վիրավորում են Քո Որդուն
Սուրբ Հաղորդության մեջ:
Թող Նրա հարվածողներին
Աստված ների՝ Քո Անմեղության,
Քո Սրբության
և Քո Քաղցր Սրտի համար,
որը դարձել է Աստծո
Ամենասուրբ Տապանակը: Ամեն:

Ամեն:

Վստահի՛ր Աստծուն, Իմ Վասուլա, որովհետև Նա ունի մեղավորներին մոտենալու, և նրանց ճանապարհն ուղղելու Զորությունն ու Իմաստությունը... Պատրաստ եղիր Տիրոջ համար, որ գովաբանություն ու փառք տաս Նրան: Նա կբացահայտի[2] քեզ Իր մտադրությունները:

Մնա Աստծո Խաղաղության մեջ: Ես օրհնում եմ քեզ:

Ապրիլի 19, 1998

Տե՞ր:

Ես եմ: Խաղաղություն քեզ:

Թող ձեզ հայտնի լինի, որ այն բերանները, որոնք բղավելով զրպարտում են քեզ, զրպարտում են քեզ տրված Իմ պարգևներին: Նրանց այդ մեղքը ծանրորեն կմնա իրենց վրա, եթե առաջ չգան և չապաշխարեն:

Ես պիտի կրկնեմ այն, ինչ արդեն ասել եմ քեզ: Ես ընդմիշտ միացրել եմ քո սիրտն Իմ Սրտին, և Իմ խոստումները հաստատուն են: Ես այնպես եմ միացրել քո սիրտն Իմ Սրտին այն ապահով պահելու համար, որ

[1] Հոգիս, հանկարծ լցված Հոգով, բացականչեց:
[2] Ուսուցումների նյութերը, որոնք ես պետք է նախապատրաստեի ՃԿԱՄ միջազգային ժողովի համար:

հնարավոր չէ այն արմատախիլ անել: Դո՛ւ, աղավնյակս, լավ արմատավորված ես Նրա մեջ, ով տալիս է կյանք և ազատություն: Իմ թանկագին զավակ, հանգստացրո՛ւ սիրտդ և ուշադրությունմի՛ դարձրու քեզ ուղղված սաստիկ զրպարտություններին: Նրանք չգիտեն, որ իրենք զրպարտում են Ինձ, այլ ոչ թե քեզ՝ տալով ազդու վերքեր Իմ Մարմնին: Նրանք, ովքեր համառում են կատաղորեն զրպարտել Իմ Գործը իրենց թերությունններով, վերջում կստանան իրենց բաժինը...

Իմ Անսահման Սիրով Ես պիտի աճեմ ու ավելանամ քո մեջ, և մինչ Գլուխս կհանգստանա քո սրտի վրա, Ես պիտի շարունակեմ մրմնջալ քո ականջին Իմ Սերը, և փրկության ու ազատագրման Իմ խոսքերը:

Հիշի՛ր, աշակերտս, երբեք չվհատվես: Նայիր շուրջբոլորդ: Ես պտուղներ եմ վաստակել Իմ Աստվածային Գործից: Ուրեմն բարձրացրու դեմքդ դեպի Ինձ և ժպտա, ժպտա՛ և երջանկացրու Ինձ:

Ես հիմա հասկացել եմ, որ մեր սերտ միության մեջ, մեր Բարեգութ Տերն ամեն ինչ զգում է: Նույնիսկ եթե մենք դժբախտ ենք զգում, Նա տխրում է, որովհետև մենք տխուր ենք:

Հիմա թույլ տուր ինձ հանգստանալ իմ դրախտում[1], մինչ դու կմտածես Իմ խոսքերի մասին:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 21, 1998

Թող Տիրոջ քաղցրությունը լինի մեզ վրա[2]

Ա՛խ, մտիր քո Տիրոջ ուրախության մեջ: Այո՞: Ասա՛ այդ:

(Ես բողոք ունեի):

Ինչո՞ւ ես Դու զրկում ինձ Քո ընկերակցությունից:

Արի՛, ասա ինչ որ ուզում ես ասել...

Եվ Դու այդ անում ես, կարծես հաճույք ես ստանում դրանից, առաջ բերելով ամեն տեսակի իրադարձություններ, որոնք խոչընդոտում են ինձ՝ օգտագործելու այն պարգևը, որ Դու ես տվել ինձ, և այդպիսով լինել Քո բերկրալի Ներկայության մեջ, որը Լույս է:

Ես տվել եմ քեզ մի ծաղկեպսակ, որը երբեք չի թառամելու, և մկրտել եմ քեզ Կրակով: Ես տվել եմ քեզ հոգևոր կերակուր և ըմպելիք: Այդ ինչպե՞ս է, որ երբեմն դու թերանում ես հասկանալ Ինձ: Հիմա ես քեզ սուր պատասխան կտայի, բայց հաշվի առնելով անցած օրը Ինձ ասված քո

[1] Տերը նկատի ունի. «Թույլ տուր Ինձ հանգստանալ քո սրտում»:
[2] Սաղմ. 89:17

խոսքերը[1], որոնք գալիս էին քո սրտի խորքերից, իմացի՛ր, որ ես տրամադիր չեմ նվաստացնել քեզ: Ես դեռևս բուրում եմ քո սիրո խոսքերի բույրով: Ես ընդունեցի քո խոսքերը, որպես զմուռսի մի քաղցր բույր, և Իմ մազերը ծածկված են քո բուրումնավետ խոսքերի կաթիլներով, իսկ Իմ գլուխն ամբողջապես բուրում է: Դու կապել ես[2] Ինձ քո խոսքերով... Բայց Ես ասում եմ քեզ, զրկանքի այդ քայլը նրա համար է, որ Ես հասունացնեմ քո պտուղները: Այո՛, Ես քո Արևի Լույսն եմ, բայց ծառը նաև անձրևի կարիք ունի, որ կարողանա աճել և բազմապատկել իր սաղարթներն ու պտուղները: Երբ քո հոգին որոշ ժամանակ չի զգում իմ ճառագայթները, իմացի՛ր, որ այդ պահին Ես նորից քեզ թարմացնում եմ:

Իսկ այժմ ասա՛ Ինձ. Ինչպե՞ս է հոգիդ զգում հենց հիմա:

Հենց հիմա ես զգում եմ հմայված՝ Աստվածային Շնորհով...

Ուրեմն դադարիր հոգիդ տանջելուց և Ինձ հանդիմանելուց: Դրա փոխարեն շնորհակալ եղիր այն բոլոր շնորհների համար, որոնք Ես հեղել եմ քո հոգում: Ես քեզ նախապատրաստում եմ մի աստվածային այցելության Սուրբ Հոգու կողմից, Ով վստահելու է քեզ Իր Պատգամը[3] և Իր Հրաշալի Թեմայով մի հարատև հիշողություն պիտի թողնի այս սերնդին և բոլոր գալիք սերունդներին:

Իմ քնքուշ ամուսին, եղիր Հիսուսինը, ինչպես Հիսուսն է քոնը: Ես քեզ համար եմ, ինչպես դու՝ Ինձ համար[4]: Մենք մեկս մյուսի համար ենք, և այնքան կատարյալ միության մեջ և միահյուսված, որ մի քանի հոգիներ տեսել են Ինձ քո մեջ, իսկ քեզ՝ Իմ մեջ[5]: Թույլ տուր Ինձ ուրախանալ և Ինքս Ինձ տեսնել քո մեջ: Ես անչափ հաճույք եմ

---

[1] Մինչ ես զեկույցներ էի նախապատրաստում, որոնք պետք է կարդայի «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» հիմնադրության պատասխանատու անձանց ներկայությամբ, Աստծո Հոգին համակեց ինձ, և ես դրեցի. «Այսօր Հայր Աստվածը հրավիրում է մեզ Իր Սրտի հարսանեկան սենյակը: Սա այն վերջնական նպատակակետն է, որին յուրաքանչյուր ոք պետք է հասնի իր հոգևոր կյանքում: Աստված մեզ բոլորիս հրավիրում է մերձվել Իր Կրծքում և կորչել Նրա մեջ: (Սրանք են այն խոսքերը, որոնք հուզել էին մեր Տիրոջը). «Ես, անձնապես, կցանկանայի հեղուկ դառնալ Աստծո մեջ, կամ, երբեմն նույնիսկ ամբողջապես լուծվել Աստծո մեջ, որ այլևս չլինեի»:

[2] Այս բառը պետք է հասկանալ լավ իմաստով:

[3] Տես՝ ապրիլի 22,98թվի պատգամը:

[4] Այստեղ Հիսուս նկատի ունի պատկանելության իմաստով:

[5] Դա տեղի ունեցավ Մադրիդում: Շատերը տարբեր ազգերից տեսել էին Տիրոջ Դեմքը իմ դեմքի փոխարեն, բայց երկրորդ անգամ Հիսուս թույլ տվեց, որ Իր Դեմքը նմանվի իմ դեմքին: Մադրիդում մի մարդ նայել էր Հիսուսի Դեմքի մեծ պատատին և հարցրել ժողովը կազմակերպողներին, թե ինչու են նրանք տեղադրել մի չիկահեր կնոջ պատատ: Առաջին անգամ դա պատահեց Հունաստանում, Հռոդոսում: «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» աղոթախմբի անդամները գնացել էին մի հիվանդանոց բարեգործության՝ քարոզելու և հիվանդներին սփոփելու համար, հիվանդանոցի քահանայի մշտական ուղեկցությամբ: Մի օր նրանք որոշում են բաժանել Հիսուսի դիմանկարը՝ տպված փոքրիկ բացիկի վրա: Դա Հիսուսի մի հայտնի նկարն էր, որը գտնվում է Պաթմոս կղզու վանքում, հայտնի նրանով, որ արցունքներ է հեղել: Քահանան նրանց մոտ էր գնացել բավական բարկացած և հավաքել էր բաժանված բոլոր նկարները: Նա զայրացած հարցրել է. «Ինչո՞ւ եք դուք բաժանում Վասուլայի նկարը»: Աղջիկները, զարմացած հարցնում են նրան, թե ո՞ր նկարը, և քահանան ցույց է տալիս նրանց Հիսուսի դիմանկարը: Նրանք ասում են քահանային, որ դա Հիսուսն է, և ցույց են տալիս Նրա մորուքը: Քահանան լուռ է մնում:

ստանում այն պահերից, երբ դիտում եմ Ինքս Ինձ: Ես իսկապես զգեստավորել եմ քեզ Ինձանով, որ տիրապետեմ քեզ, և տվել եմ քեզ Իմ Շնորհը, որ տիրապետես Ինձ Շնորհով: Անվանիր այն, եթե կամենում ես՝ Աստծո խելահեղությունը, խելահեղության աստիճան հմայված Իր արարչությամբ[1]:

Հասկանո՞ւմ ես: Ուրեմն, հանգստացրու սիրտդ և հասկացիր զրկանքի այդ պահերը:

Գիտեմ, որ եթե Ինքդ Քեզ ցույց չտայիր ինձ սկզբում (1985), ես դեռ այնտեղ կլինեի՝ գերեզմանոցում, փտածների մեջ: Եթե Քո Շնորհը չլիներ, ես արդեն փտած կլինեի: Հոգիս տենչում էր Քեզ, երբ Դու երկարաձգում էիր Քո անձրևներն ինձ վրա...

Բայց հիմա, աղավնյա՛կս, մի՞թե ես չեմ ազատել քեզ քո ցավերից: Լսի՛ր Ինձ, Վասիլիկի. իմացի՛ր, որ մինչ դու գտնվում էիր զրկված վիճակում, ես հանգստանում էի քո սրտում...

Օրհնյալ եղիր և քո հանգիսը գտիր Իմ Սրտում:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 22, 1998

(Այս աստվածային պատգամը, որի մասին Հիսուս կանխասացել էր 1998 թվի ապրիլի 21-ին, տրվել է ինձ Սուրբ Երրորդության երրորդ Աստվածային Անձի՝ Սուրբ Հոգու կողմից: Նրա Աստվածայնության շնորհով, ժամանակ առ ժամանակ, ես կանչվում էի, որ գրեմ այն: Պատգամն ավարտվեց 1998 թվի հուլիսի 29-ին):

(Սուրբ Հոգին է խոսում).

Խաղաղություն քեզ:

Թեման, որը հիմա Ես պատրաստվում եմ քեզ հայտնել եկեղեցու փառքի և օգուտի համար, այն եկեղեցու, որ Քրիստոսը դնեց Իր Սեփական Արյամբ, լինելու է Իմ մասին ամենից վսեմ թեմաներից մեկը:

Անհրաժեշտ է, որ այս գանձերը Ես ցույց տամ քո եղբայրներին ու քույրերին, որպեսզի նրանք նույնպես սնվեն այդ անհատնում գանձերից, որոնք առատորեն հոսում են ցած՝ եկեղեցուն օգուտ տալու համար: Շրջիր մտքերդ և ուշադրությունդ հիմա ամբողջապես դարձրու դեպի Ինձ[2]:

Այս վսեմ թեմայի համար, որը Ես աստվածայնորեն կհայտնեմ քեզ, դու պետք է Ինձ թույլ տաս ներթափանցել քո մտքի մեջ և քեզ տալ հասկացողության մի վսեմ լույս: Իմ բարեսրտությամբ, Ես ցած

[1] Այս պահին Տերը հիշեցրեց ինձ մեկ այլ խոսքի մասին, որը հաճախ է նշվում Սուրբ Գրքերում. «Աստծո նախանձախնդիր սերը»:
[2] Սա ասվեց ինձ համար:

կխոնարհվեմ, որ խոսեմ ոչ միայն քեզ հետ, այլ Աքանչելին Ինքը կտրամադրի Իր Գիտությունը ողջ մարդկությանը:

Ահա Փեսան խոնարհվում է քեզ վրա, որ ձեզ բոլորիդ հաղորդի Կյանքի խոսքեր, որոնք ձեզ պիտի զարդարեն արքայական ծիրանիով: Եթե բացեք ձեր սիրտը, շնորհի միջոցով դուք Ինձանից կստանաք սրբագործող շնորհներ, որոնք պիտի զորացնեն ու աշխուժացնեն ձեր հոգին և պիտի առաջնորդեն ձեզ դեպի կատարելություն:

Նրանք, ովքեր կկարդան Կյանքի այս խոսքերը, բայց անբարյացակամ են, և ճշմարտությունից հեռու, ամեն ինչ կտեսնեն որպես անհեթեթություն, քանի որ սովոր լինելով քայլել Ամլության հետ, նրանք չեն ազդվի:

Բայց նրանց համար, ովքեր Դրախտն են փնտրում սրտի պարզությամբ և ովքեր Ինձ չեն փորձում, նրանց վրա Ես պիտի հեղեմ Իմ Լույսն ու Ճառագայթները, և Ես պիտի լուսավորեմ նրանց:

Ես մուտք պիտի գործեմ նրանց մեջ և պիտի մաքրագործեմ նրանց: Եվ երբ նրանք դողալով կգան իրենց անմաքրության և մեղքերի հատուցմանը՝ հառաչանքով, որն ավելի նման կլինի նորածնի ճիչին, նրանք մի նոր կյանքով պիտի ծնվեն Իմ մեջ՝ անձնատուր լինելով Խանդոտ Սիրուն:

Երանության մեջ նրանց նվաճելուց հետո, Ես նրանց ներսում պիտի հոսեմ կենարար Գետի նման: Իմ կենարար անցումը նրանց միջով աննկատելի չի լինելու: Ես նման չեմ լինի մի նավի, որն անցնում է լեռնացող ալիքների միջով և հետք չի թողնում, որ ցույց տա, թե որտեղով է անցել, կամ մի թռչունի, որը թռչում է օդի միջով՝ չթողնելով ոչ մի ապացույց, որ նա անցել է, կամ՝ ոչ մի նշան իր անցած ճանապարհի մասին:

Ես պիտի գամ նրանց մոտ և պսակվեմ նրանց հետ և զգեստավորեմ նրանց Քրիստոսով: Ես նրանց հոգին պիտի փոխակերպեմ Եդեմի, որովհետև նրանք իրենց ներսում պիտի կրեն Աստծուն, որպես իրենց Լապտերը: Սա կլինի Իմ անհաղթելի Սրբությամբ նրանց տրված նշանը:

Ես պիտի մնամ նրանց մեջ՝ հոգ տանելով նրանց մասին: Եվ Ես Ինքս պիտի լինեմ Նա, ով պիտի զարդարի նրանց հարսանեկան զգեստներով՝ պսակելով նրանց Իմ Աստվածությամբ, մի արքայական շքեղության թագով, Երրորդության Ձեռքից տրված գեղեցկության թագով: Ոչ մեկն արժանի չէ այդպիսի շնորհների, բայց Իմ անասելի Սիրով, Ես ասացի. «Գիշերը հիմա պետք է տեղի տա լույսին, չարիքը՝ առաքինության»: Ես կաշխատեմ նրանց հոգու մեջ, որպեսզի ժուժկալությունը, խոհեմությունը, արդարությունը և զորությունն ու տոկունությունը լինեն նրանց հարստությունը:

Ա՛խ, Վասուլա, Ես պիտի մշակեմ ձեր սերնդին և պիտի հասկացնեմ նրանց, որ անմահությունը գտնվում է Մեզ՝ Սուրբ Երրորդությանը հարազատ լինելով: Ի՞նչն է ավելի հարուստ, քան Գթության այս Գործը, որը Ես՝ Աստված, պիտի կատարեմ նրանց մեջ: Հետո, այդ հոգիների մեջ Կյանք ներշնչելով, Ես իմ փառքի գահից պիտի ուղարկեմ Իմաստությունը, որ դառնա նրանց Նախանշանը:

- Այնուհետև, ամեն ինչ, որ մոխրի էր վերածվել այս երկրի ամլության պատճառով, այս ամբողջ տարիների ընթացքում, Ես, Իմ աստվածային

բարերարությամբ կվերակենդանացնեմ և կծաղկեցնեմ յուրաքանչյուրին, ով կկամենա: Լույսի Իմ տաք ճառագայթներից արգասավորված, ես ասում եմ ձեզ, սերո՛ւնդ, դուք կդառնաք աստվածային և սրբացած՝ Մեր Երրորդության Աստվածության մեջ:

Այսօր, Իմ Վասո՛ւլա, ամեն մարդ տեսնում է այնքան, որքան կարող է, բայց ձեր բոլորի միջով Իմ անցումից հետո, դուք սահմանափակ չեք լինի և չեք տեսնի այնպես, ինչպես հիմա եք տեսնում, այլ ամենա անմեկնելի և ամենա աստվածային ձևով: Դուք կտեսնեք Իմ Լույսով, որը ներթափանցելու է նույնիսկ Աստծո ծածուկ խորհուրդների մեջ, քանի որ դուք կտեսնեք իրերն Իմ պայծառության մեջ[1]: Ձեր ողջ մարմինը կփայլի պայծառ Լույսով: Ես կլինեմ ձեր մարմնի Ճրագը[2], որը կլցնի այն Մեր Թագավորության շքեղությամբ ու հոյակապությամբ, որոնք են՝ սերը, ուրախությունը, խաղաղությունը, համբերատարությունը, ազնվությունը, բարությունը, հավատարմությունը, հեզությունն ու ժուժկալությունը:

Սկզբից Մենք պատրաստեցինք ձեզ Մեր Սեփական Բնության պատկերով: Մենք ասացինք. «Ստեղծենք մարդկություն Մեր Սեփական Պատկերով, այո՛, Մեր նմանությամբ»: Բայց սատանայի նախանձն էր, որ ձեզ՝ բոլորիդ, հասցրեց մահվան:

Հիմա երկիրը տնքում է ցավից, պատժելով ինքն իրեն, հառաչելով և լացելով, հոգնած՝ այլևս գոյություն չունենալուց, լացակումած և չնչահեղձ՝ օդի պակասի պատճառով[3], բորբոսնելով ներքնապես և քայքայվելով իր ընդերքում: Այո՛, դուք դադարել եք լինելուց...

Արի՛, Իմ Վասուլա, այսքանը բավական է այժմ: Եղիր մեկ Ինձ հետ:

(Այստեղ Սուրբ Հոգին դադարեցրեց Իր աստվածային թելադրությունը և ինձ հասկացրեց, որ կշարունակի Իր Պատգամը ավելի ուշ: Տե՛ս, 1998թ-ի Հունիսի 7-ի պատգամը):

Ապրիլի 24, 1998

«Երբ մարդու իրավունքներն
անտեսվում են՝
հակառակ Ամենաբարձրյալի,
երբ մարդ զրկված է
արդարությունից,
միթե Տերը չի՞ տեսնում այդ»:[4]

Վասո՛ւլա. քեզ ուղղված հակառակությունները ուրախացնում են Ինձ[5]:

---

[1] Սուրբ Հոգին կանխասում է մեզ «Հոգու դարաշրջանը»:
[2] Մատթ. 6:22-23
[3] Ես սա այնպես հասկացա, որ Սուրբ Հոգին մեզ վրայ պակաս է փչում, որովհետև երկիրն արգելում է, որ Սուրբ Հոգին ազատորեն գործի մեր մեջ: Կարող ենք ճշմարտապես ասել, որ Սուրբ Հոգին աներևակայելիորեն խեղդվում է այս սերնդի կողմից:
[4] Ողբ 3:35-36
[5] Հիսուս չափազանց զվարթ էր: Նա իսկապես լի էր ուրախությամբ: Ինչ-որ տեղ Նա զարմացրեց ինձ:

Իսկ ես, հենց երեկ, սուրբ Գևորգի տոնի օրը, խնդրում էի նրան, որ միջնորդի ինձ համար և հեռացնի իմ հակառակորդներին:

Ա՛խ, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ[1]: Ինչո՞ւ պետք է ես թույլ տամ, որ քո սեփական հիմարության պատճառով դու կորցնես հավատարմության պսակը, որը ես նախապատրաստել եմ քեզ համար և այն ամենը, որ ես երկնքում պահել եմ քեզ համար: Սա այնպիսի սեր է, որը ես ցույց եմ տալիս Իմ բոլոր ընտրյալներին: Ուրեմն կդադարեցնե՞ս քո անհիմն մտքերը...

Արի՛, հիմար փոքրիկ երեխա, մնա Ինձ միացած, որ Գլուխն[2] եմ, և դու կստանաս անրհրաժեշտ զորությունը՝ ամեն ինչ ուրախությամբ կրելու համար: Ես քեզ երբեք չեմ անտեսի: Քո խաչերը սիրով կրիր, հատկապես այն ամենից վսեմը, որը ես դրել եմ քեզ վրա, և որը ամենից ատելին է Սատանայի համար՝ Միասնության խաչը, և մի՛ վախեցիր հակառակությունից: Ի վերջո, այն Իմ փառքի համար է:

Ո՛հ, Տե՛ր, Դու գիտես, որ ես աղոթել եմ սուրբ Գևորգին, ուրեմն հիմա ո՞նց է լինելու նրան ուղղված իմ խնդրանքը:

Սուրբ Գևորգը, որը մեռավ որպես մարտիրոս, կպաշտպանի քեզ ամեն չարիքից: Նա քո կողքին է և հսկում է քեզ: Նա կաղոթի, որ քո մտքերը կենտրոնանան երկնային գործերի վրա:

Ուստի, Իմ ուրախություն, խելքի արի և ետ մի՛ վանիր Իմ Մեխերն ու Փշե Պսակը, որն Իմ Սերը ստիպեց Ինձ՝ տալ քեզ: Վա՛րդ՝ Վարդի[3], ես թագադրել եմ քեզ Իմ Գոհարներով[4]: Ես շատ բաների հանդեպ զիջող եմ, բայց այս Գոհարներից ազատվե՞լ, երբե՛ք:

Արի՛: Արի՛ Ինձ մոտ և զգա քաղցրությունը, որ դուրս է հոսում Իմ Բերանից: Այս քաղցրությունը նորից կվստահեցնի քեզ, որ ողջ Հավիտենությունից դու Իմն ես եղել, իսկ Ես՝ քոնը... Ես հիմա գնում եմ, թանկագինս, բայց միայն մի փոքր ժամանակով, որ թույլ տամ քեզ շարունակելու քո բարի գործը[5]:

ΙΧΘΥΣ

Մայիսի 29, 1998

Իմ հոգու անողոք ցավի մեջ
ես պետք է խոսեմ,
ողբամ իմ հոգու դառնության մեջ:
Արի՛, խնդրում եմ քեզ, նայի՛ր ինձ:
Դու ուզում ես
ձերբազատվե՞լ ինձանից:

---

[1] Այդ «ոչերն» ավելցին արագորեն,ասես մեկ բառ:
[2] Եկեղեցու Գլուխը
[3] Ես սրա իմաստը հասկացա, որպես սիրտ՝ Սրտի:
[4] Տերը նկատի ունի՝ Իր Փրկարար Գործիքները:
[5] Այսինքն՝ իմ տնային աշխատանքը:

Իմ արմատները խրված են Քո մեջ,
սակայն իմ լռության մեջ
ես ասում եմ.
«Տեր Աստված իսկապես
բարկացել է ինձ վրա: Նա հաստատ
ինձանից կձերբազատվի մի օր»:

Ես լույս եմ փնտրում,
որ հասկանամ,
բայց միայն խավար է:
Գուցե ես անտարբե՞ր եմ եղել
Քո Բարության հանդեպ:
Գուցե ես հիասթափեցրե՞լ եմ
Քեզ ինչ-որ ձևով, կամ
անփո՞ւյթ եմ գտնվել Քո հանդեպ:
Թե՞արևի տեսքն է իր փառքի մեջ,
կամ էլ լուսնի փայլը՝
երկնքով քայլելիս,
գողացել իմ սիրտը Քեզանից,
որ ձեռքս նրանց համբույր ուղարկի:

Իմ քնքուշ ամուսին, թույլ տուր Ինձ հեղել քեզ վրա Իմ քաղցր բուրմունքը, և հիշիր մի բան. Ես՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Խոսքը, միշտ պիտի լրացնեմ քո բոլոր կարիքները[1]:

Անհամար են քո թերությունները, սակայն Ես կանխատեսել եմ այդ ամենը, նույնիսկ նախքան Իմ Պատգամը քեզ հայտնելը: Բայց Ես քո հանդեպ ունեցած Իմ անհատնում սիրով, քեզ Իմ մեջ տվել եմ մի տեղ, ուր այդ հատուկ տեղում, Ես կկարողանայի քո հոգին հասցնել այն կատարելությանը, որը Ես պահանջում եմ Իմ սրբերից: Ա՛խ, Վասո՛ւլա, հորդառատ գթառատությունը Ե՛ս եմ, անհատնում սերը Ե՛ս եմ, և սակայն, դու <u>դեռևս</u> այնքան քիչ գիտես Ինձ, աղավնյա՛կս: Ինչի՞ համար են Իմ մասին այդ մռայլ մտքերը: Ամեն ինչ, որ Ես ունեմ քոնն է և ընդմիշտ[2]: Ուրեմն ուրախ եղիր և խնայիր Ինձ ըմպելուց այս ավելորդ Բաժակից: Կյանքի Խոսքը քեզ տրվել է ձրիաբար, որպեսզի դու, քո հերթին, այն ձրի տաս ուրիշներին: Ես Իմ Գործում մի գործելաձև ունեմ, ինչպես տեսնում ես, և Ես ցանկանում եմ, որ դու շարունակես անել այն ամենն, ինչ սովորել ես Ինձանից, և ինչ քեզ ուսուցանվել է, որ անես Իմ Անունով:

Ոչ մեկից մի՛ վախեցիր, երբ հավաքվում եք միասին Իմ Անվամբ՝ քրիստոնյա դարձնելու այս ոչ քրիստոնյա սերնդին: Ամեն ինչ, որ դու անում ես, Իմ պատվի և Իմ փառքի համար է: Ես կառուցում եմ: Այդ Ես եմ, որ կառուցում եմ, և վա՜յ նրանց, ովքեր երկարում են իրենց ձեռքը, ավերելու համար այն, ինչ կառուցվում է Իմ կողմից: Հիմա նվիրվիր Իմ

[1] Հիսուս նկատի ուներ իմ անփութությունները ու անկումները:
[2] Տերն ասում էր այս բառերը չափազանց դանդաղ, <u>տխուր</u> Ձայնով, որ դեռևս սխալ էր հասկացվում այն արարածի կողմից, ում Նա, իր աստվածային բարյացակամությամբ, այնքան շատ էր տվել:

գործերին և հիշի՛ր, որ Իմ և քո միջև ոչ մի սահման չկա: Ես միշտ քեզ հետ եմ, սիրելի՛ս:

Ես օրհնում եմ քեզ: ic

Հունիսի 7, 1998

(Կիրակի, Հոգեգալուստ)[1]*:*

(Սուրբ Հոգին շարունակում է 1998 թվի, ապրիլի 22-ի իր Աստվածային Պատգամը):

Ա՜խ, Իմ Վասո՛ւլա... Ես ընտրել եմ քեզ և չեմ մերժել քեզ, չնայած դու նույնպես դադարել էիր լինելուց: Ես նույն ձևով էլ ցույց եմ տալու Իմ անասելի սերը և Իմ աստվածային զորությունը յուրաքանչյուրին, ով կցանկանա[2]: Ես ձեզ չեմ մերժի, բայց տեսնո՞ւմ եք, թե ձեր Հանդեպ Իմ ունեցած սերը Ինձ որքան է ստիպում ներողամիտ լինել: Այս օրերին Ես Հոր և Որդու հետ միասին իջնում եմ որպես երեք Վկա: Հայր Աստված Հոգի է[3], այն բանով, որ Նա ուղարկում է Ինձ՝ Ճշմարտության[4] Հոգուն, որ ընդմիշտ ձեզ հետ լինեմ և առաջնորդեմ ձեզ դեպի կատարյալ Ճշմարտությունը:

Աստծո Խոսքը՝ Լույսը և Փրկիչը, ով գոյություն ուներ սկզբից ի վեր, ով ամենամոտն է Հոր Սրտին, վկայել և Հորը հայտնի է դարձրել ձեզ: Նա ձեզ գնել է և ձեզ համար վճարել է Իր Սեփական Արյամբ: Զե՞ք կարդացել, որ Աստծո Խոսքը կենդանի է ու գործող, և վկայում է երկրի վրա, ինչպես Ես և Հայրն ենք վկայում: Սուրբը, որ գնեց Իր եկեղեցին Իր սեփական Արյամբ[5], վկայում է Իր Արյամբ, և Ես՝ Ճշմարտության Սուրբ Հոգին, ով առաջնորդում է ձեզ դեպի կատարյալ Ճշմարտությունը[6], վկայում եմ Ջրով[7]:

---

[1] Ուղղափառ օրացույցով

[2] Հիմա Սուրբ Հոգին խոսում է ամբողջ աշխարհի հետ:

[3] Հովհ. 4:24: Սբ. Պողոսը նույնպես Ա Կոր. 15:45-ում խոսում է Քրիստոսի մասին, որպես «կյանք տվող Հոգի»: «Հոգու» նկարագրությունը, աստվածաշնչյան իմաստով, այնքան չի բնորոշում Աստծո էությունը, որքան նկարագրում է Նրա կյանք տվող գործունեությունը: Աստված Հոգի է, որովհետև Նա տալիս է Հոգին:

[4] Հովհ. 14:17

[5] Ջոհաբերության միջոցով մենք ստացանք Հավիտենական կյանք:

[6] Հովհ. 16:12-13-ում Հիսուսն ասում է Իր աշակերտներին. «Ես դեռևս շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց դրանք հիմա ձեզ համար չափազանց շատ կլինեն: Բայց երբ Ճշմարտության Հոգին գա, Նա կառաջնորդի ձեզ դեպի կատարյալ Ճշմարտությունը...»: Սխալ է ասել, որ Հայտնությունը վերջ է գտել և դրան վերաբերվել, որպես նախադասությունների մի հավաքածու: Աստված գործուն է ու կենդանի, և պիտի շարունակի Իրեն ցույց տալ Սուրբ Հոգու միջոցով, երբեք չդադարելով այդ անելուց: Երբ լատիներենում ասում են. «completere», դա նշանակում է, որ Քրիստոսը Աստծո ամբողջական, կատարյալ հայտնությունն է և ոչ թե, որ Նա պիտի դադարի Իրեն մարդկությանը բացահայտելուց: Աստվածաշունչը Հիսուս Քրիստոսի մասին պատմողական վկայությունն է: Այն Աստծո վերջին խոսքը չէ:

[7] Մկրտությամբ

Հետևաբար, Մենք երեք Վկաներ ենք, և Մենք երեքս էլ համախոհ ենք, քանի որ Մենք Մեկ Աստված ենք՝[1] մեկ Կամքով, մեկ Զորությամբ և մեկ Իշխանությամբ: Ինչպիսի՞ պատկեր եք դուք հնարել Իմ մասին, արարչություն, և դուք դեռևս չե՞ք ճանաչում Ինձ... Զնայած դրան, Ես երբեք չեմ դադարել վկայելուց: Ես երբեք թաքնված չեմ եղել[2]...

«Ո՛վ Գեղեցկության
Աննկարագրելի Լույս,
Քո Աստվածային Աչքերը
քնքուշ և ժպտուն էին:
Դու ժպտացիր ինձ, և ես զգացի,
որ ես էլ Քեզ եմ ժպտում:
Քո Դեմքը, ո՛վ Սուրբդ,
հրեշտակային հմայք ուներ:
Սեր և Մաքրություն ճառագայթող
Քո Սուրբ Դեմքը
այնքան մոտ էր իմ դեմքին:

Ես նույնիսկ խորը խոկման մեջ չէի,
երբ Դու զարմացրիր՝ երևալով ինձ:

Թեև Նրա Դեմքը
ամբողջապես պաշտելի էր,
Նրա Աչքերն էին,
որ գրավեցին իմ ուշադրությունը,
թողնելով ինձ ակնածանքի
և հիացմունքի մեջ:

«Քո հայացքի Սերը, որ նայում էր
ինձ անասելի քնքշությամբ,
նման էր երկու առկայծող աստղերի:
Նրանք նման էին
փիրուզի թափանցիկ ծովի,
լի անդորրությամբ:
Ի՞նչ կարող եմ ես՝ խեղճ որդս, ասել:

Քո Աստվածային Աչքերը,
Տե՛ր իմ, նման են Պատարագի,
Սիրո օվկիանոսի, Դրախտի,
և կլանող կրակ են նրա համար,
ում, անարժանաբար,
թույլատրվել էր տեսնել դրանք...»:

---

[1] Մեկ բնությամբ միացած

[2] Այդ պահին ես տեսա մի Դեմք՝ ողողված լույսով, ամենագեղեցիկ հրեշտակից էլ գեղեցիկ: Նա, որ ձև չուներ, ձև ստացավ: Սուրբ Հոգու այս տեսիլքի մեջ, Ով Իր անսահման սիրուց ելնելով ցանկանում էր ցույց տալ Իրեն, մի նվեր, որին ես՝ անարժանս արժանի չէի, հոգիս թողեց հրճվանքի մեջ: Ամեն անգամ, երբ այդ տեսիլքը վերհիշում եմ, սիրտս նորից հրճվում է: Այն չի կարող ջնջվել իմ հիշողությունից: Նրա Սուրբ Դեմքի այդ տեսիլքն ընդմիշտ կմնա ինձ հետ:

Որքան օրհնյալ ես դու, դո՛ւ, որի ականջները ես բացեցի, թող քո ուղիները չիտակ մնան Մեր Իմաստության մեջ, որպեսզի դու կատարես Մեր Աստվածային Կամքը:

Վստահի՛ր Ինձ, սիրելիս, քանի որ Ես, որքան հնարավոր է, շատերին պիտի բերեմ միանալու Մեր Միասնության մեջ, և Ես պիտի լցնեմ նրանց Լույսով, որպեսզի նրանք լցվեն Մեր Երրորդության Աստվածության բացարձակ լրությամբ:

~ Եկեք և սովորե՛ք: Դժվարությունների մեջ Ես միշտ ձեզ հետ եմ: Ես ձեր Մխիթարիչն եմ, և ուր որ հուսահատություն կա, Ես մխիթարում և բժշկում եմ: Ես Կյանք Պարգևողն եմ, և Իմ մկրտության համբույրով, որ Ես փչում եմ ձեզ վրա, Ես նորոգում եմ ձեզ: Ես նորոգում եմ ձեզ, որպեսզի ձեր բնական հակումները, որոնք այնքան հակառակ են Աստծուն, և մարդկային ու աշխարհիկ են, և որոնք տանում են ձեզ դեպի մահ, կարողանան փոխակերպվել և աստվածանալ Իմ Աստվածայնության ու Իմ Վեհության մեջ և դառնալ այնպես, ինչպես հրեշտակներինն ու սրբերինն են:

Ես փորձում եմ ձեզ բոլորիդ բերել դեպի Հոր և Որդու և Ինձ հետ աստվածային Սիրո մի որդիական միության, որպեսզի դուք շարժվեք Մեր մեջ, իսկ Մենք շարժվենք ձեր մեջ:

Ես կարող եմ փոխակերպել ձեր բանտարկված մտքերը և ազատ արձակել դրանք, որպեսզի ձեր մտքերն ու ասածները լինեն միայն հոգևոր բաների մասին: Ուստի մի՛ ասեք. «Ես դատապարտված եմ սատանայի մահվան մկրտության համբույրով»: Ո՛չ, ո՛չ, եթե հիմա Ինձ մոտ գաք: Ես սատանայի մահաբեր համբույրի հակաթույնն եմ: Ես հենց Մահվան հակաթույնն եմ... Ճշմարիտ է, որ առանց Ինձ ձեր մարմինը մեռած է, բայց Ինձ հետ ձեր մարմինը կենդանի է, և Իմ մեջ, և Իմ միջոցով է, որ դուք պիտի համարվեք որպես Աստծո զավակ: Ահա թե ինչու դուք պետք է թույլ տաք Ինձ թագավորել ձեր սրտերում և դարձնել ձեզ Ամենաբարձրյալի որդիներ և դուստրեր:

Սուրբ Գրքերն ասում են[1]. «Երանի նրանց, որ սրտով մաքուր են, նրանք պիտի տեսնեն Աստծուն»: Որպեսզի տեսնեք Աստծուն և ճանաչեք Նրան որպես ձեր Հայրը, դուք պետք է ծնվեք Ինձանից՝ Սուրբ Հոգուց, շնորհի միջոցով. ուրիշ ի՞նչ կերպ կտեսնեք Աստծուն: Երեխան, մինչև ծնվելը, երբևէ տեսած կա՞ իր հորը: Մինչև չծնվի, նա չի տեսնի իր հորը: Այդպես է նաև ձեր հոգևոր ծնունդը Ինձանից: Մարմինը մարմին է և մարմինն է տեսնում: Բայց նա, ով ծնվում է Հոգուց, նրան հնարավորություն է տրվում տեսնելու Աստծուն, հասկանալու Նրան, ճանաչելու Նրան և թափանցելու Նրա խորքերը:

Ուստի եկեք և առաջ մղեք ձեր քայլերը, դնացեք առաջ, և Ես կտանեմ ձեզ Իմ Թևերի վրա՝ երկնքում ճախրելու, և ձեզ բերելու Մեր որդեգրման վայրը, այնտեղ, ուր Իմ բոլոր սրբերն են՝ օծված Մեղանով՝ երիցս Սուրբ: Դե, մի՞թե չգիտեիք, որ ձեզ էլ տեղ է հատկացված նրանց մեջ:

Վստահ եղեք և եկեք Ինձ մոտ: Ես ըմբոստից կվերափոխեմ ձեզ մի արդար եւ ուղղամիտ արարածի, առաջնորդելով ձեր հոգին դեպի սրբացում, որից հետո մեղքն այլևս ուժ չի ունենա ձեզ վրա: Մեղքը

[1] Մատթ. 5:8

նման է մի չար տիրոջ ձեր մեջ, և դուք չպետք է ոչ մի առիթով, ոչ մի դեպքում այդ տիրոջը հնարավորություն տաք ձեր վրա իշխելու: Բայց ես, որ ամեն Բարիքի աղբյուրն եմ, կարող եմ հաղթել ձեր չար տիրոջը, որը մեղքն է, որովհետև Իմ Օրենքը Բարության և Կյանքի Օրենք է, որը հաղթում է ձեր բոլոր չար հակումներին:

Եկե՛ք և դտեք Ինձ սրտի պարզությամբ և ամուր հաստատեք ձեր սիրտն Ինձ վրա: Մի՛ եկեք Ինձ մոտ անվստահությամբ, ո՛չ էլ աշխարհիկ խոսքերի ճարտարությամբ: Մի՛ մոտեցեք Ինձ մեծամտությամբ, չարությամբ կամ խաբեությամբ: Ո՛չ ոք, ով գալիս է այդ ձևով, երբեք չի հասկանում Ինձ կամ տեսնում Ինձ, բայց այն հոգիները, ովքեր քայլում են զղջման և անմեղության լույսի մեջ, չպիտի զրկվեն Իմ Ներկայությունից: Ես Իմ Փառքից թռչելու եմ նրանց մոտ, մի պայծառ լույսով, Իմ հետևից բյուրավոր հրեշտակներ, որ բժշկեմ նրանց նորոգելով նրանց, դարձնելով մեկ հոգի Իմ Հոգու հետ, որ ժառանգեն Իմ Թագավորությունը: Միսն ու արյունը չեն կարող ժառանգել Իմ Թագավորությունը, քանի որ ինչ որ ապականացու է և անցավոր, չի կարող ժառանգել այն, ինչը հավիտենական է:

Հետո, որպեսզի ձեզ հասկացնեմ, թե ով է Միակը, Երրորդության Աստվածը, որը սակայն Մեկ է՝ Իր բնությամբ միացած, Ես պիտի բժշկեմ ձեզ, հոսելով ձեր մեջ ինչպես գետ, թարմացնելով ձեր չորությունն ու անբերրիությունը: Արդարև, ոչ մեկն արժանի չէ տեսնելու Աստծուն: Եթե ձեր մեջ նույնիսկ կատարյալ մեկը լիներ, և չունենար Ինձանից եկող Իմաստությունն ու Լույսը, նա դեռևս ոչնչություն կհամարվեր:

Աստծո խորքերը հարստություններ կան, որոնք այս աշխարհից չեն, և ունենալ դրանք առանց Ինձ՝ անհնարին է: Ներթափանցել Աստծո շարժառիթների մեջ, կամ հասկանալ Նրա կերպերն առանց Ինձ՝ անհնարին է: Բայց, եթե դուք թույլ տաք Ինձ, որ ճանաչելի դառնամ ձեր գիտակցության մեջ՝ ներթափանցելով ձեր իմացականության մեջ, Ես կձևավորեմ ձեզ Իմ նմանությամբ, որ իսկապես հաճելի լինեք Մեզ: Ձեր հանձնվելը Ինձ՝ միակ միջոցն է, որ Ես կարողանամ վերափոխել ձեր միտքը, որպեսզի ունենաք Քրիստոսի միտքը, հայտնաբերեք Մեր Կամքը և իմանաք, թե ինչն է լավ և ինչ ենք Մենք ցանկանում, և որն է լավագույնը: Ուստի թույլ մի՛ տվեք, որ ձեր մարմինը[1] ընդդիմանա...

Թեև Ես աչքի համար անհասանելի եմ թվում և անմատչելի, լրիվ անտեսանելի, Ես թույլ եմ տալիս, որ Ինձ տեսնեն ամենայն պարզությամբ: Ես ասում եմ Իմաստության խոսքեր և, ինչպես մի ընկեր, որ վստահում է իրեն մի ընկերոջ, Ես վստահում եմ Իմ գաղտնիքները ձեզ, ձեզանից չթաքցնելով դրանցից ոչ մեկը: Ես դեմքով դեպի ձեզ եմ դառնում, և Ես՝ ձև չունեցողը, ձև եմ ստանում ձեր հոգում[2]:

Ա՛խ, Վասո՛ւլա, Ես ամբողջովին հավերժական լույսի արտացոլումն եմ, և ինչպես մի անբիծ հայելի, Իմ Շքեղությունը փառավորվում է ողջ արարչության մեջ: Ահա Ես հիմա այստեղ եմ՝ քեզ ճանաչելի դառնալով նաև այս ձևով[3], սակայն առանց կորցնելու Իմ վերանցական բնությունը:

---

[1] Այստեղ դա նշանակում է մարդկային հոգին:
[2] Այդ պահին նորից նույն տեսիլքը երևաց ինձ՝ Սուրբ Հոգու Դեմքի տեսիլքը՝ ողողված անասելի լույսով:
[3] երևալով և Իր Դեմքն ինձ ցույց տալով

Ես լցնում եմ քեզ Իմ Գիտությամբ, չնայած այն բանին, որ վերանցական լույսի այս հոսքը, որը Ես հեղում եմ քեզ վրա, անցնում է քո հասկացողությունից էլ այն կողմ[1]: Այնուամենայնիվ, Ես առաջարկում եմ Մեր Թագավորության այս բոլոր գանձերը, որպեսզի զարդարեմ ոչ միայն քո հոգին, այլև բոլոր մյուս հոգիներին:

Նրանց համար, ովքեր սիրում են Ինձ, արդարև Ես ավելի պայծառ եմ, քան արեգակը՝ գերազանցելով բոլոր համաստեղությունները միասին վերցրած: Եվ քանի որ Ես վերանցական եմ, կարող եմ ամեն ինչ լցնել Իմ պայծառությամբ, առանց սահմանափակվելու նրանց սահմաններում: Այս ձևով եմ Ես տարածում Իմ Լույսը ձեր հոգու մեջ, կարգավորելով ձեր ներսում, որ ամեն ինչ բարի լինի, որպեսզի դուք էլ, ձեր հերթին, արտացոլեք Իմ Բարությունը և աճեք առաքինության մեջ:

Հունիսի 21, 1998

(շարունակություն)

Ա՛խ, հենց հիմա
իմ Ուրախությունը մեծ է,
Դու լցրեցիր հոգիս ոչ միայն
Քո վերանցական Լույսով,
այլև ուրախությամբ:

Այո՛, սիրելիս, Իմ հարստությունը նաև Ուրախություն է:

Դու իմ Մխիթարիչն ես
անձկության ժամանակ,
վշտի ժամանակ:
Դու սփոփում ես հոգիս,
ո՛վ Կատարյալդ: Օգնի՛ր իմ հոգուն
Քո Գթառատությամբ:

Ո՛վ Փառավոր Գահ,
Աստվա՛ծ իմ, բարձր դրված
ողջ Հավիտենությունից,
արի և արմատախիլ արա
ամեն չարիք Քո սրբարանի միջից,
Կարեկցանք ցույց տուր ինձ,
ցույց տուր ինձ Քո Սուրբ Դեմքը...

Իմ կարեկցանքը քեզ հետ է, Իմ տկար զավակ: Ես հայտնել եմ քեզ և մյուսներին Քրիստոսի միտքը, ինչպես Քրիստոսը բացահայտեց ձեզ Հոր միտքը: Մի՛ կասկածիր Իմ զորությանը, մի՛ կասկածիր Իմ շնորհին, որը Ես շնորհեցի քեզ, որ կարողանաս լսել Ինձ, հասկանալ Ինձ և, այս անգամ՝ նայել Ինձ: Ես դատարկել եմ քեզ շնորհի միջոցով և լցրել եմ քեզ

[1] Այլ խոսքով, իմ կարողությունից այն կողմ:

Ինձանով: Ուրեմն երջանիկ եղիր: Ես ցանկանում եմ, որ դու միշտ երջանիկ լինես, քանի որ երկինքը քո հայրենիքն է:

Ես, Վասո՛ւլա, այս բոլոր տարիների ընթացքում, բավարարել եմ քեզ Իմ Ձայնի մեղեդիով, նախ քո սրտի և մտքի մեջ, ապա Ես հիմա քեզ պարգևեցի մեկ այլ շնորհ, որին դու արժանի չես՝ նայել Ինձ քեզ տրված այս շնորհի միջոցով: Ես քո Օգնականն եմ, բայց Հայրը և Քրիստոսը նույնպես: Հիմա դու մտահայեցողությամբ տեսար Նրան, ով ընդգրկում է իր մեջ բոլոր էակներին:

Դու չպետք է զարմանաս, երբ այսօր աշխարհը մեռած է Իմ Կանչի հանդեպ, իսկ երբ նա լսում է, չի հասկանում: Քանի դեռ նրանք ղեկավարվում են չարի կողմից՝ կառչած այս անցավոր աշխարհից, Ես նրանց համար կմնամ անճանաչելի:

Ես Քրիստոնեական Միասնության ներքին Ակունքն եմ, և այդ Իմ մեջ է, որ դուք պետք է դնեք ձեր հույսը և ձեր միությունը: Ես Հույսի, Հավատի և Սիրո Աղբյուրն եմ: Անսահմանորեն հարուստ, Ես փառավորվում եմ Իմ փառքի մեջ: Ես հարուցյալ Որդու կենդանությունն տվող Հոգին եմ և ձեր մահկանացու մարմինների կենդանացնող շունչը: Հետևաբար, դու, որ ապրում ես Մեզ համար, դու կենսունակ կդառնաս Իմ Աստվածային Զորությամբ, որ փառքի արժանանաս: Ես ոչ միայն հարություն կտամ քեզ, այլև հնարավորություն կտամ ազատ մուտք գործելու Մեր փառքի մեջ՝ դառնալով Մեր որդեգիր զավակը և Մեր Թագավորության ժառանգորդը:

Ես ասել եմ քեզ, որ Ես Հույսի Աղբյուրն եմ, որովհետև, եթե դու ընդունես Ինձ որպես քեզ Օգնական, դու ընդունած կլինես Հույսը, և Ես, որ գիտեմ ինչպես արտահայտել քո խնդրանքը, Ես կարտահայտեմ այն Իմաստության խոսքերով և Մեր Մտքին համապատասխան, մի այնպիսի ձևով, որը հաճելի կլինի Մեզ: Ես քո Հույսն եմ, քանի որ Ես բնակվում եմ քո մեջ: Ուստի դոհ եղիր, հուսալով, որ պիտի փրկվես և պիտի հարուցվես Իմ կողմից:

Վայելիր այն ազատությունը, որը Ես տալիս եմ քեզ և տիրապետիր Ինձ, ինչպես Ես տիրապետելու եմ քեզ: Այդ ժամանակ, մի՛այն այդ ժամանակ, Իմ Թագավորությունը կսկսվի քո մեջ... Այն կսկսվի, երբ քո հոգին դառնա այնպես գեղեցիկ, ինչպես մի հարս՝ հարսանեկան զգեստ հագած իր ամուսնու համար: Այդ ժամանակ դու արցունքն աչքերիդ կհասկանաս, որ ամուրի մնալու համար չէիր ստեղծված, այլ որ դու խոստացված էիր Ինձ, իսկ Ես՝ Սուրբ Հոգին՝ քեզ խոստացվածը՝ ողջ արարչության Փեսան, սրբացնելու էի քո հոգին Իմ գրկում՝ արքայական առատաձեռնությամբ:

Մոռացե՞լ ես, սիրելիս, թե ինչպես մեր պսակադրությունից քիչ առաջ, քո հոգին գիշերով փափագում էր Ինձ, և քո էությունը նույնպես փնտրում էր Ինձ: Տեսնո՞ւմ ես հիմա, թե որքան քաղցր է Իմ Սերը: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է Մեր Երրորդության Սրբությունը և Գթառատությունը տարածվում քաղցր բույրի պես ողջ տիեզերքով մեկ՝ անուշահոտ դարձնելով այն: Բոլոր հոգիները, որոնց Ես միանում եմ, դառնում են հարսեր, քանի որ Մեր մտերմությամբ, Մենք բերում ենք նրանց Մեր մեջ, որ դառնանք նրանց Փեսան, նրանց կյանքի ամեն մի օրում: Եվ նրանք, հրապուրված Մեզանով, կամովին իրենց մխրճում են

Մեր մեջ, վայելելու Մեր Աստվածային Սիրո լիությունը այնքան կատարյալ կերպով՝ որ դառնում են մեկ Մեզ հետ...

Հիմա, Իմ թանկագին հոգի, հանգստացիր Իմ մեջ և մնա Իմ հաղթանակը[1]: Հոր և Որդու հետ միասին, Ես ասում եմ քեզ. սիրի՛ր Միակ Երրորդության Աստծուն քո ողջ սրտով, քո ողջ հոգով և քո ողջ մտքով:

Մենք օրհնում ենք քեզ՝ քո ժամանակը Մեզ նվիրելու և Մեզ ծառայելու համար:

Հունիսի 22, 1998

(շարունակություն)

Արի՛ աղջիկս... Ես քո զորության ներքին Աղբյուրն եմ քո մեջ, որի ամենաքաղցր մեղեդիները՝ երգված քեզ համար, արձագանքում են յուրաքանչյուր ազգի մեջ:

Մի՞թե Ես չեմ գրել քեզ համար, աղավնյա՛կս, սիրո, խորհրդի և գիտության հազարավոր էջեր, որ կարողանաս բացատրել Ճշմարտությունը այս աղքատացած ու քայքայված սերնդին: Մի՞թե ես քեզ չեմ լցրել, հարսս, խելամիտ խոսքերով, որ պատասխանես նրանց, ովքեր կհարցաքննեն քեզ: Ինձանից է, որ դու շնչում ես՝ ողողված Իմ Լույսի մեջ: Իմ մեջ է, որ դու շարժվում ես և կաս[2] երբեք չդադարելով լինելուց, քանի որ Իմ Վսեմությունն անցնում է երկրի և երկնքի սահմաններից այն կողմ, և այն ամենից, ինչ պարունակվում է նրանց մեջ:

Հետո, շնորհով լի Իմ Բերանից, հոսում են հարստություն և պատիվ, հարստացնելով բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ: Հարստացնելով նրանց, որ ճանաչեն Մեզ որպես Եռանձն, սակայն Մեկ՝ իրենց բնությամբ: Ուսուցանելով նրանց գթառատությամբ երկնային ճշմարտությունների մասին, վեր բարձրացնելով նրանց հոգին, որ խորհեն միայն երկնային ճշմարտությունների շուրջ:

Այդ Ես էի, որ ստեղծեցի քո ներքին մասերը և քեզ ձևավորեցի քո մոր արգանդում: Եվ մինչ Ես ուրախությունից արբած, ամեն օր դիտում էի, թե ինչպես էին քո ոսկորները ձև ստանում, կազմավորվում գաղտնաբար, Ես արդեն տոնում էի մեր նշանդրեքը: Ես ասում եմ քեզ, եթե Ես գտնեի, որ քո հոգին ցանկանում է և ծարավի է Ինձ ճանաչելու, Ես, որ քո ծննդյան պահից այնքան փափագում էի տիրապետել քեզ և պսակվել քեզ հետ, Ես կթռչեի քեզ մոտ քո առաջին հրավերով, և քո ճակատը կկնքեի Իմ բոցավառ մկրտության համբույրով՝ մեր պսակադրության տոնակատարության մի երկնային նշանով: Ապա, սիրելիս, Ես կզարդարեի քեզ ամենաբուրավետ ծաղիկների պսակով, որի թերթերից յուրաքանչյուրը ներկայացնում է մի առաքինություն:

Ես այն Դարպասն եմ, որտեղից առաքինիները ներս են մտնում: Եվ ինչպես Իմ խոսքը երաշխավորել է, Ես պիտի վերակենդանացնեմ

[1] Որովհետև Սուրբ Հոգին նվաճել էր ինձ:
[2] Այսինքն՝ գոյություն ունենալ:

ավետարանի հանդեպ քո սերը, որ քո ցանկությունը հավասար դարձնեմ առաջին առաքյալների ցանկությանը, որպեսզի տարածես խաղաղության ավետարանը: Եվ ուր որ գնաս, քո ետևից դու կթողնես Իմ բույրը, բուրումնավետ դարձնելով ազգ ազգի ետևից, քանի որ Ես միշտ պիտի լինեմ քեզ հետ:

Ես քեզ արտոնություն կտամ, որ աճես սիրո մեջ ոչ միայն հանդեպ Մեզ, այլև քո եղբայրների և քույրերի հանդեպ, որպեսզի Մեզ համար երգես հետևյալ սաղմոսը[1]. «Որքա՜ն լավ, որքա՜ն սքանչելի է բոլորի համար միասին ապրել ինչպես եղբայրներ...»:

Ես պիտի դառնամ քո անձնական Օգնականն ու Ուղեկիցը, և նաև քո ընտանիքը, քո եղբայրը, քո քույրը: Ես պիտի դառնամ քեզ կրողը[2]: Ես պիտի դառնամ քո ամենը Ամենին[3] և քո օրհներգը Նրան, ով հիմա օրհներգ է երգում քեզ համար... Ես պիտի բացահայտեմ քեզ, հարսս, այն, ինչ միսը և արյունը երբեք չեն կարող բացահայտել քեզ: Ես պիտի բացահայտեմ քեզ քո սրտի ամենախոր ծալքերը և Աստծո խորքերն ու միտքը նույնպես:

Ես ողորմածաբար ցույց պիտի տամ Իմ շնորհը՝ աճելով ու ավելանալով քո մեջ, մինչ Ես փոքրացնելիս կլինեմ քեզ: Արշալույսը պիտի արթնանա քո մեջ, մինչդեռ Գիշերը պիտի մեռնի քո մեջ:

Ես քո հոգու Լույսն եմ, և գեղեցիկ, ինչպես Քրիստոսի Երկրորդ Գալուստը քո մեջ, Ես պիտի փայլեմ և պիտի հանդիսավոր նշեմ Իմ բոլոր հրեշտակների և սրբերի հետ աստվածային Սիրո Մեր միությունը: Մենք պիտի տոնենք մեր պսակադրությունը...

Իմ մեջ դու ազատություն պիտի վայելես: Առանց Ինձ քո հոգին կմնա գերի և կընկնի չարի ծուղակների մեջ, որը կբանտարկի քեզ: Ուստի ոչ մեկին մի՛ նայիր, Իմ սեր, բայց միայն քո Աստծուն երիցս Սուրբ: Ուրիշ ոչ մեկով մի՛ ուրախացիր երկրի վրա, այլ Նրանով, ով Իր Ակունքներից սնում է քեզ Կյանքով: Ուրիշ ոչ մեկի համար սիրուց մի՛ հալվիր երկրի վրա, բացի թագավորների Թագավորից, որ Առաջինն է ու Վերջինը, և Նրա Տնից:

Իսկ դո՛ւ, Վասիլի՛կի, որի վրա Ես հանգչեցի[4], և որն այնքան քնքշորեն գրկեց Ինձ, և մեծ սիրով սեղմեց այտին, որպես սիրո նշան, բացականչելով. «Ես գտա Նրան, ում իմ սիրտը սիրում է», և դու գրկեցիր Ինձ և ամուր սեղմեցիր քո այտին, և չէիր թողնում, որ գնամ, բայց Ես նույնպես գտել էի Իմ քաղցրաբույր համեմունքների թումբը:

«Ես քեզ տալու եմ Իմ Սիրո պարգևը», ասացի Ես: Հետո, ինչպես մաքուր զմուռսի կաթիլներ, Իմ բառերն ընկան քո ականջի մեջ, բացելով այն, որ կարողանաս լսել Իմ ցանկությունները. «Ես քո Կյանքն եմ: Թույլ տուր Ինձ այժմվանից սկսած քեզ ղեկավարել շնորհով: Թող քո շուրթերը լինեն ինչպես շուշաններ[5], ծորալով մաքուր զմուռս: Մի՛ թող

[1] Սաղմ. 133:1
[2] Ջանազան Պարգևների Կրողն ու Բաշխողը:
[3] Նշանակում է. «Քո ամենը Հավատարիմին և Ճշմարիտին»՝ անուն տրված Աստծուն:
[4] Հուսվ. 29, 89թվի տեսիլքը: Սուրբ Հոգին եկավ որպես Աղավնի այդ տեսիլքի մեջ: Նա թռավ շատ մարդկանց վրայով, ովքեր երկարում էին իրենց ձեռքերը, բայց որոշեց թռչել դեպի Ինձ և իջավ իմ վեր պարզած ձեռքերի վրա: Հետո ես սեղմեցի Նրան այտիս:
[5] Դա նշանակում է, որ քո ասածները լինեն ողջամիտ ու մաքուր:

պայքարը, ես կլինեմ քեզ հետ: Կրի՛ր Քրիստոսի խաչը և սիրով փարվիր Նրան, և ես կլինեմ քեզ հետ: Հավատդ դիր Աստծո մեջ, և փառաբանիր Հոր Անունը: Խրախուսի՛ր քո սերնդին, որ ճանաչեն Հորը: Ասա՛ նրանց, որ Նա մի քնքուշ Հայր է և մխիթարության Աստված: Տարածի՛ր Նրա մասին Գիտությունը, և ես պիտի լինեմ քեզ հետ: Ասա՛ այս սերնդին, որ Ամենի Անունը լցնում է ողջ տիեզերքը քաղցր ու վեհ անուշահոտությամբ, ամենանուրբ բույրով: Եղիր ինչպես եղնիկ և արագորեն անցիր խոր կիրճերի վրայով՝ կտրելով հովիտները՝ կրելով Մեր Խոսքը: Եվ ես պիտի լինեմ քեզ հետ: Եղիր ինչպես շուշան՝ քո մտադրությունների մաքրությամբ, մաքուր զմուռս ծորալով եկեղեցու վրա, որը Քրիստոսը գնեց Իր Սեփական Արյամբ: Թող որ մի օր Մենք ասենք. որքան անուշահոտ է քո բուրմունքը, ավելի բուրումնալից, քան մյուս բոլոր համեմունքները, և ես պիտի լինեմ քեզ հետ և պիտի շարունակեմ շնչել քեզ վրա, Իմ պարտեզ, որ տարածես քո քաղցր բուրմունքը շուրջբոլորդ: Արմատավորվի՛ր Իմ մեջ և զորացիր քո հավատի մեջ Իմ Ուժի զորությամբ, որպեսզի ընկալես լայնությունն ու երկարությունը, բարձրությունն ու խորությունը, մինչև որ հասնես այնտեղ, որ ճանաչես Որդու Սերը, որը ամեն գիտությունից այն կողմ է, և լցվես Աստծո կատարյալ ամբողջությամբ»: Ահա թե ինչ ասացի ես քեզ...

Իսկ հիմա, Իմ հարս, պսակված և զգեստավորված Քրիստոսով, զարդարված Իմ անասելի Լույսով և ազուցված Ինձ արքայական թանկարժեք քարի նման, <u>արքացի՛ր</u>, ես քեզ հետ եմ՝ քո ճշմարիտ Ուղեկիցը: Նուրբ ու դյուրաբեկ հարս Ամենաբարձրյալի և ամենքի Հոր, որ ամենքի Փեսան է, պահի՛ր քո մտքերը Նրա Գերիշխանության և Նրա Վեհության վրա և ուղղակի կերակրվիր Նրա Բերանից՝ դնելով քո բերանը Նրա Բերանի վրա, որ ստանաս Նրա Խոսքի պերճությունը: Նրա Խոսքի հոսքը ավելի քաղցր է, քան նեկտարը:

Հպվի՛ր քո Փեսայի Կրծքին և դու աշխարհի մեջ պիտի փայլես պայծառ աստղի նման, որովհետև դու աշխարհին պիտի տաս Կյանքի Խոսքը: Քո վազքը, սիրելիս, չի ավարտվել, բայց ես քեզ հետ եմ: Չնայած դեռ պիտի լինեն վառվող նետեր՝ ուղղված քեզ վրա, որովհետև դու Աստծո Խոսքը ստացել ես Ինձանից: Համարձակ եղիր, քանի որ ես քո Զրահն եմ: Շարունակիր սփռել քո քաղցր բուրմունքը՝ տարածելով այն ամեն մի ազգի մեջ, առանց մոռանալու, որ ես քո քաղցր Սիրեցյալն եմ՝ Տեր Աստվածը, և որ Դու, որին ես ստեղծեցի այս նպատակի համար, Իմ հարսն ես, որը այժմ պատկանում է Իմ Արքայական Ընտանիքին:

Ես Որդու Հայտնությունն[1] եմ, իսկ Որդին Հոր Հայտնությունն է: Եվ Մեր կատարյալ իմաստությամբ, Մենք հեղել ենք այս սերնդի վրա և հաջորդ սերունդների համար զանազան շնորհներ, ինչպես երբեք չի պատահել պատմության մեջ: Նրանց փրկության համար Ես բարձրացրել եմ մարգարեներ, որ օգնեն նրանց հասկանալու և հասնելու Մեր Աստվածային Կամքի լիակատար իմացության: Ես քեզ ամբողջապես տվել եմ նրանց, որ հորդորեմ այս Օրհներգի[2] միջոցով և օգնեմ նրանց, որ

[1] Կարող է հասկացվել նաև որպես «Պատկեր»:
[2] Աստված նկատի ունի «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» Իր Պատգամը:

հասկանան և ճանաչեն Մեզ և մտնեն փրկության ուղին, ուր թաքնված են լիության բոլոր շնորհները:

Հիմա բոլոր սրբերն ու հրեշտակները մի քաղցրալուր ձայնով հայտարարում են.

«Մենք շնորհակալություն ենք
հայտնում Քեզ,
Ո՜վ Ամենասուրբ
և Պաշտելի Երրորդություն,
Հավիտենական Իմաստություն,
որ անասելի առատաձեռնությամբ
մատակարարում ես
ամբողջ աշխարհին՝
Հույսի և Սիրո Քո Օրհներգը,
որը գրված է, որպեսզի
շատերին առաջնորդի
դեպի Հավիտենական Փրկություն:
Բացառիկ շնորհով
Դու հարթել ես մի ճանապարհ՝
օծված Քո բույրի
քաղցր բուրմունքով
և շափյուղաներով սփռված,
որ ամեն ոք հետևի
և իր բաղձալի հանգիստը
գտնի Հավիտենության մեջ:
Եվ Քո աստվածային բարությամբ,
դու գտել ես այս միջոցը՝
բժշկելու այս սերնդին:

Ո՜վ Աղբյուր տիեզերքի,
Ամենասիրելի Երրորդություն,
միանգամայն պաշտելի Փեսա,
Դու մեկ անգամ ևս
այցելեցիր երկիր,
որ սիրտ սրտի խոսես
Քո զավակների հետ,
նրանց վրա հեղելով
շնորհների մի հեղեղ՝ օծյալ և
պայծառ Գիտելիքով Քո մասին:
Դո՛ւ, Լուսաշող Աստվածություն,
նախատեսել էիր այս Խնջույքը[1]
Քո արարչությունից շատ առաջ:
Այն օրը, երբ շնորհ անելով
քո սիրեցյալին,
Դու կանչես Քո արարչությանը՝

[1] Այս հայտնության պարգևը՝ «Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ» պատգամները:

ամենացածրից
մինչև ամենաբարձրը,
Քո Աստվածության հետ
պսակվելու համար,
ուր խնջույքի այդ օրերին
Դու կկիսես նրանց հետ
մի ավելի սերտ միություն,
ամրացնելով արքայական
գոհարի պես Քո մեջ,
և ուր Դու կխոսես նրանց հետ՝
նրանց սրտի խորքում:

Քո Սրտի բարեգթությամբ
Դու կանխատեսել էիր,
որ այս աստվածային միությունը
կլինի միայն քաղցրություն,
որովհետև Դու ժամանակդ
կանցկացնես նրանց հետ,
կիսելով նրանց կյանքը,
երբ նրանք դեռևս երկրի վրա են,
ինչպես կիսում ես
Քո շքեղությունը՝
Քո հրեշտակների հետ:

Թող փառաբանություն
և գոհաբանություն տրվի
պաշտելի Երրորդությանը
Իր ծաղկեթմբերը[1]
ոռոգելու համար, և Իր լույսը
ամենուրեք ուղարկելու համար:

Մենք շնորհակալություն ենք
հայտնում Քեզ, Աստվա՛ծ,
երբ պատմում ենք
Քո հրաշքների մասին:
Մարդկային թուլության
անդունդը հասնելու համար
Դու թողեցիր Քո Գահը
և մի կողմ դրեցիր
Քո Արքայական Թագը[2],
որ զարդարես Քո արարչությանը
Քո աստվածային Սիրո հեղեղով:
Հետո, նրանց հանդեպ
Քո Սիրուց արբած,

[1] Դա նշանակում է՝ մեր հոգիները:
[2] Արտահայտություն, որ նշանակում է. Աստված ներքև իջավ, որպեսզի հասնի Իր տկար ժողովրդի մակարդակին:

Դու տվեցիր նրանց
Քո Սուրբ Հոգին,
որը պիտի բերեր նրանց
Քո հարսանեկան սենյակը[1]
և Քո ամուսնական մահճին[2],
կամավորապես միանալով Քեզ:

Ո՜վ Սուրբ Երրորդություն,
սրբերի և հրեշտակների Գանձ,
հենց որ Քո արարչությունը
խանդավառվի
Աստվածային Սիրով,
նրանք պիտի աղաղակեն Քեզ.
«Տե՛ր ողորմյա, Տե՛ր ողորմյա»:
Մինչ Դու պիտի
չչնչաս նրանց ականջին.
«Քանի որ դուք ընդունեցիք
անանցանելիությունը,
դուք գտաք հոգևոր
վերակենդանացում Իմ գրկում»:

Կյանք Տվող և անգնահատելի
պարգևներ Բաշխող,
Դու, Քո բարեգթությամբ
կանչեցիր աղքատներին,
ինչպես նաև հարուստներին,
որ հավաքվեն Քո Արքայական
սեղանի շուրջը, առաջարկելով
մի արքայական խնջույք:

Փառք Ամենաբարձրյալին,
անասելի
ուրախությունների Ակունքին:
Շատրվան, որ այգիները
դարձնում է պտղաբեր[3],
Կենդանի Ջրի Ջրհոր,
հավատարիմ Սիրո Գետեր,
որոնք հոսում են Քո Սրտից,
մարդկության Սիրահար,
Քո արարչության Փեսա,
մենք պաշտում ենք Քեզ
և գովաբանում Քո Սուրբ Անունը
Երիցս Սուրբ: Ամեն:

[1] մտերմություն
[2] Աստվածային միություն Աստծո Սիրո մեջ:
[3] Պտղատու այգիներ նշանակում է՝ հոգիներ, որոնք հոգևոր առաջընթաց են ապրում:

Այո՛, Վասուլա, ողջ երկինքը ուրախանում է, քանի որ գթառատ ներողամտությամբ Մենք խղճացինք այս սերնդին: Քրիստոսն ասել է. «Եթե մեկը սիրում է Ինձ, նա կպահի Իմ խոսքը, և Իմ Հայրը կսիրի նրան: Եվ Մենք կգանք նրա մոտ և կբնակվենք նրա հետ»[1], և Մենք այդպես էլ կանենք...

Ո՜վ երանելի սերմ[2]: Եթե դու ցանվես Իմ մեջ, քո բերքը կլինի Դրախտը: Եթե աճես Իմ մեջ, դու կծաղկես, և քո գարնան ծաղիկները, քանի որ նրանք՝ կծաղկեն հենց գարնանը, բուրումնավետ կդարձնեն երկիրը, և երկիրը՝ կենդանացած քո բուրավետ բույրից, կարտաբերի իր առաջին բառը. «Հա՛յր», և այն կփրկվի:

Դու նվաճեցիր
իմ այս ըմբոստ սիրտը:
Քո շռայլ ջերմությամբ և Քո Սիրով
Դու սեղմեցիր իմ
կեղտոտ ձեռքերը Քոնի մեջ,
ինձ մոտ բերելով
դեպի Քեզ և Քո մեջ,
շնչելով մի նոր կյանք իմ հոգում:
Եվ մկրտության համբույրով
Դու վերջ տվեցիր
իմ ըմբոստությանը:

Ո՜վ իմ հոգու
աննկարագրելի ուրախություն,
Դու այցելեցիր ինձ,
չհամարձակվելով սկզբում ինձ
ցույց տալ Քո Սիրո մեծությունը,
որ չլինի թե իմ սիրտն
այնքան փոքր լինի,
որ չկարողանա պարունակել այն:

Դու զսպում էիր Քեզ
Քո Սիրո հուրն ինձ
ամբողջապես բացահայտելուց,
որ չլինի թե հեռու փախչեմ
իմ մարդկային
թուլությունից մղված:
Բայց հետո, Քո հորդառատ սիրով,
Դու պսակվեցիր ինձ հետ...

Դու պսակվեցիր ինձ հետ,
չնայած իմ ահռելի
թշվառությանն ու մեղքին,
ամբողջովին միացնելով ինձ
Քո Եռանձն Սրբության հետ:

---

[1] Հովհ. 14:23
[2] Մենք Աստծո սերմն ենք:

Այս ձրի պարգևը,
տրված Քո Սեփական Կամքով,
տրված մի անարժան որդի,
ինչպիսին ես եմ,
շփոթեցնում է ինձ մինչև օրս...

Ո՜վ Արևի Լույս իմ հոգու, Դո՛ւ,
որ այնքան քնքշորեն սնեցիր ինձ
կաթնաշոռով և մեղրով[1].
ահա Դու այստեղ ես հիմա,
մեկ անգամ ևս այցելում ես երկիր:
Բայց երկիրը նորից
չի վստահում Քեզ
և մերժում է ողջունել Քեզ:
Իմ Սիրելին իջավ Իր պարտեզը[2],
համեմունքների թմբերի մոտ[3],
որ այգիներում արածեցնի Իր հոտը[4]
և շուշաններ[5] հավաքի:

Իմ Սիրելին եկավ
կանչելու Իր Սեփական Հոտին և
շուշաններ հավաքելու դաշտերում,
որոնք ուրիշ ոչ մի հոգս չունեն
ՍԻՐԵԼՈՒՑ բացի:
Նա եկավ, որ շուշաններ հավաքի
Իր ցանկությամբ:

Աստվածային Իմաստությունն
այցելեց երկիր, որ հիշեցնի
Իր Յուրայիններին, որ միայն
մեկ աստվածաբանություն կա,
որն է՝ տեսնել ու մտահայել Քեզ՝
Քո Եռանձն Փառքի մեջ:

Ուստի թույլ տուր ինձ
լինել Քո վարդը՝ առանց փշերի,
ամենաքնքուշ Փեսա, իսկ Դու՝
իմ Կենդանի Ջուրը:
Այդտեղ, Իմ ցողունը դրված
այդ Կենդանի Ջրի մեջ, չի մեռնի,
այլ կյանք կտանա
և հավիտյան կապրի, քանի որ
ես մխրճված կլինեմ հենց Իր՝

---

[1] «Կաթնաշոռի և մեղրի» խորհրդանշական նկարագրությունը այս ենթատեքստում հետևյալն է՝ մաքրություն, հեզություն և գթություն:
[2] Երկիր
[3] Հոգիների մոտ
[4] մեզ հոգևորապես սնելու
[5] Եվ մեզ շուշանների պես մաքուր դարձնի:

Հավիտենական Աստծո մեջ:

Քեզ շնորհ արվեց Իմ բույրի[1] բուրմունքով, և Ես թույլ տվեցի քեզ մտահայեցողությամբ տեսնել Իմ Սուրբ Դեմքը, որը փայլեց քեզ վրա[2]: Ո՛չ, Իմ Սուրբ Դեմքի այդ հիշողությունը երբեք չի խամրի քո հիշողությունից: Ես վեհությամբ և շքեղությամբ գերազանցում եմ երկրի և երկնքի սահմանները, և Իմ Անունը Վսեմ է, ինչպես ոչ մի այլ անուն, որ բարձրացնում է հոգով աղքատներին Ինձ միանալու համար: Ես շարժվում եմ նրանց մեջ, իսկ նրանք շարժվում են Իմ մեջ: Ես, Իմ լիառատ Սիրուց ելնելով, ինչպես ներշնչեցի քեզ անվանել այն, առաջարկեցի քեզ առատորեն ձրի պարգևներ, քանի որ Ես միայն հետաքրքրվում եմ նրանցով, ովքեր երկյուղում են Ինձանից[3], և նրանցով, ովքեր վստահում են Իմ Սիրուն:

Ո՛չ, Ես չեմ եկել ձեզ պատժելու, այլ եկա ձեզ մոտ, որ պսակվեմ ձեզ հետ, և ինչպես մի փեսա, որ շռայլորեն ընծաներ է տալիս իր հարսին, Ես զարդարեցի քեզ Իմ աստվածային պարգևներով: Ոչ թե խոսքերի պերճախոսությունից եմ Ես հուզվում կամ ազդվում, այլ զղջացող հոգուց: Մի՞թե սուրբ Գրքերը չեն սովորեցնում ձեզ սիրել առաքինությունը: Եթե դուք փնտրեք Ինձ սրտի պարզությամբ, չփորձելով Ինձ, Ես այդ դեպքում, Իմ Բարյացակամությամբ պիտի իջնեմ երկնքից, որպես մի կայծակ ձեր մարմնի մեջ, և պիտի լինեմ ձեր ճրագը:

Ձեզ սովորեցրել են, որ ձեր մարմնի ճրագը ձեր աչքն է, և դա այդպես է, որովհետև հիվանդ աչքը տեսողություն չունի, այլ միայն խավար է, մինչդեռ առողջ աչքը լուսավորում է տեսադաշտը: Ես այդ ճրագն եմ, և որևէ մեկը, որ ունի Ինձ իր ներսում, պիտի փնտրի ճշմարիտ առաքինություններ, և ոչ թե՝ թերություններ: Ես ձեր մարմնի իսկական ճրագն եմ, որը ձեր ողջ մարմինը լցնում է Մեր Թագավորության գանձերով և շքեղությամբ: Այդ գանձերը և շքեղությունը առաքինություններն են: Այնտեղ, ուր Լույս կա, առաքինություն կա: Այնտեղ, ուր խավար կա, չարիք կա: Մի՛ սխալվեք, և մի՛ կառչեք այս մեռնող ու անհետացող աշխարհից, այլ եղեք Ինձ հավատարիմ և կապրեք Ինձ հետ սիրո մեջ: Սիրեցե՛ք առաքինությունը:

Սկզբում, Վասո՛ւլա, քեզ խնդրեցի, որ սուրբ ապրես և սուրբ լինես: Ես նաև խորհուրդ տվեցի քեզ, որ, եթե խոր արմատներ դցես Իմ մեջ, դու չես օրորվի քամուց, ոչ էլ քո ճյուղերից մեկը կկոտրվի որևէ փոթորկից: Այդ ժամանակ քո պտուղը առատ կլինի, բավարար՝ սնելու համար բազմությունների և սերունդների: Եթե դու հավատարիմ մնաս Մեզ, Ես ասացի, որ քեզ հատուկ շնորհներ կշնորհեմ, և այդպես էլ արեցի: Ես ամրացրի քեզ Իմ մեջ, ինչպես մի արքայական գոհար և սիրաշահեցի քեզ: Ես թարմացրեցի ու սնեցի քեզ, որ աճես առաքինության մեջ: Ես քեզ տվեցի այնպիսի առաքինություններ, ինչպիսիք են սերը և համբերությունը, իմաստությունը, գիտությունը, զորությունն ու հաստատակամությունը: Քրիստոսը տվեց քեզ Իր համբերությունը և

[1] Նրա Սուրբ Ներկայությամբ
[2] Նրա Աստվածային Դեմքի պատկերը անմիջապես հայտնվեց հիշողության մեջ: Այն մնում է իմ էության մեջ միայն Սուրբ Հոգու աստվածային զորության պատճառով:
[3] Սաղմ. 147:11

միևնույն ժամանակ՝ հույսի շնորհը: Զորացնելու համար քո հույսը, որ մի օր սրբությունը կվարձատրվի, ես քեզ սովորեցրի դիմանալ քեզ վրա դրվող բոլոր փորձություններին՝ սուրբ համբերությամբ:

Քո մարդկային փխրունության ու թուլության մեջ, դու աշխատեցիր գոհացնել Մեզ: Ուստի Մենք խոնարհվեցինք քեզ վրա և սիրեցինք քեզ: Իմաստությունը տրված է սոսկ երեխաներին, ուստի Մենք, Մեր Եռանձն Սրբությամբ, սրտի պարզություն գտանք քո մեջ և հրահանգեցինք քեզ, որ դու պետք է Իմաստություն <u>ձեռք բերես,</u> բայց Մենք պիտի օգնենք քեզ: Մենք ասացինք, որ Մենք պիտի օգնենք քեզ նմանվելու Մեզ և լինելու Մեր կենդանի խորանը, որի վրա Մենք պիտի դնենք Մեր գիտությունը, որպեսզի դու հասկանաս և ճանաչես Մեզ:

Դու ցանկացար գոհացնել Մեզ, և Մենք գտանք Մեր հանգիստը քո մեջ: Ես Հոգին եմ, որ սովորեցնում է և ժուժկալություն է տալիս: Հոգի՛, թող քո կայծերը նույնիսկ ավելի հանգչեն: Քո մոտիկությունը Մեզ՝ գանձ է քո հոգու համար: Այո՛, քո մոտիկությունը Մեր արքայական Առատաձեռնությանը՝ քեզ հաստատակամ է դարձնում ոչ միայն քո առաքելության համար, այլև հասնելու համար մի անպարտելի սրբության: Ես ասացի քեզ, սիրելիս, որ սիրես առաքինությունը, և Ես համեմատեցի քեզ մի ծառի հետ, որն ունի շատ ճյուղեր՝ խիտ սաղարթով, որովհետև դու արմատավորված էիր Իմ մեջ՝ Սիրո Ակունքի մեջ, և այդ Ակունքից դու ոռոգվեցիր, որպեսզի առատ և զանազան պտուղներ տաս՝ առաքինության պտուղներ: Ես ասում եմ զանազան առաքինություններ, որովհետև ով որ արմատավորված է Սիրո մեջ, որը բոլոր առաքինությունների գլխավորն է, ծնունդ կտա բոլոր մյուս առաքինություններին:

Մի՞թե Սուրբ Գրքերը չեն ասում. «Սերը համբերող է, քաղցրաբարո է: Սերը չի նախանձում, չի գոռոզանում, չի հպարտանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չարություն չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա, ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես լույս է տածում, ամեն բանի համբերում»:

Ես քեզ տվել եմ Զորության ու Տոկունության առաքինությունը, որ լինի գլխավորը քո բոլոր մյուս առաքինությունների մեջ, քանի որ Ես նախապատրաստում էի հոգիդ ձեր ժամանակների այս մարտի համար, ուր բարին խեղաթյուրվում է և դառնում չարիք: Սկզբում Քրիստոսը, ինչպես նաև Հայրը, Իմ միջոցով սովորեցրին քեզ,, որ Մենք ուղարկելու էինք քեզ, սիրելիս, մեղքի նողկալի խորքերը, ուր անօրինությունն ու չարիքը, որպես մի թագ են կրում նրանք, ովքեր վերստին խաչում են Քրիստոսին: Մենք ցույց տվեցինք քեզ, տեսիլքների միջոցով՝ մտքիդ մեջ ներարկելով դրանք, որ Մենք պիտի ուղարկենք քեզ իժերի բույնը, ուստի, Մեր հանդեպ ունեցած քո վստահության, ինչպես նաև տոկունության առաքինության միջոցով, դու կդիմանաս և հաստատակամ կլինես:

Այդ առաքինության միջոցով դու տոկացիր բոլոր անարդարություններին և քեզ վրա նետված թունավոր նետերին: Դու համբերությամբ մեծ փորձություններ կրեցիր հանուն Մեր Անվան: Եվ շատերը, ովքեր հակառակվեցին քեզ, չկարողացան կոտրել քեզ: Չնայած

արտաքինից դու թույլ և փխրուն ես թվում, ես քեզ ներքուստ դարձրի ուժեղ, ապացույց, որ Ես միանգամայն քո ներսում եմ, և որ քո առաքինությունն իսկապես արմատավորված է Ճշմարտության մեջ: Ինչպես ասացի, եթե դու արմատավորված ես Իմ մեջ, որ Աստվածային Սիրո Ակունքն եմ, դու կստանաս սիրո առաքինությունը, հետո, փոքրիկ ճյուղերի նման, Սերը ծնունդ կտա այլ առաքինությունների: Բազմաթիվ առաքինություններ կան, որոնք տրված են յուրաքանչյուրին, ովքեր չնորհի միջոցով հարուցվել են, որ Ինձ սիրեն: Եվ ամեն ինչ, որ բաշխվում է, բաշխվում է Իմ կողմից:

Սկզբում մենք մի անգամ ասացինք քեզ, որ դու հանգիստ չես ունենա, և որ երբեմն քո վիշտն անտանելի կլինի, երբ տեսնես որոշ հոգիների խլությունն ու համառությունը, բայց հանուն Մեզ քո տառապանքով, դու ապացուցել ես քո համբերատարությունը, որը, ինչպես ես ասացի քեզ, կապված է Ակունքի հետ, որը սեր է: Իմ Բնակարանի[1] տարածքն ավելացնելու համար, Ես հեռացրի այն ամենն, ինչ խանգարում էր Ինձ, և Իմ Լույսը բարձրացավ խավարի մեջ, իսկ ստվերները դարձան ինչպես կեսօր: Ես զորություն տվեցի քո ոսկորներին, և Ես ծաղկեցրի քեզ Իմ Ներկայությամբ:

Ուժեղ եղիր և ապացուցիր, որ արժանի ես լինելու Իմ հարսը՝ պսակված Ճշմարտության հետ: Հաստատակամ և ուժեղ եղիր զորության Իմ Հոգով, որ շարունակես վկայել Ճշմարտության համար ջերմեռանդությամբ և արիությամբ: Այս առաքինությամբ, որը Ես Իմ Շնորհի միջոցով տալիս եմ նահատակներին, դու կարող ես հաղթահարել բոլոր քեզ չարախոսողներին և բոլոր նրանց, ովքեր երբեք չեն դադարում Իմ հրեշտակի[2] մահը ուրախությամբ ողջունելուց: Ինչպես արև դու պիտի շարունակես փայլել Մեր Երրորդության Ներկայության մեջ և ամեն ազգի մեջ, որ Մենք ուղարկում ենք քեզ: Դու ջանում ես գոհացնել Մեզ՝ դիմանալով երկարատև ուղևորությունների դժվարություններին, որ կենդանացնես եկեղեցին և պաշտպանես այն:

Որևէ մեկը, որ հավատարմորեն պաշտպանում է Եկեղեցին և վկայում է Մեզ համար՝ նման է կենդանի ջահի, որովհետև նրանց բառերը փայլատակում են աշխարհի խավարում: Ես տալիս եմ նրանց ռազմիկի սիրտ, որ պատերազմեն հավատի և արդարության բարի պատերազմը, և, ձեր ժամանակների այս հոգևոր ճակատամարտում, միանան Իմ հրեշտակապետեր Միքայելին և Ռաֆայելին, ովքեր գերակշռում են իրենց զորությամբ, և Արդարության քաջարի Ռազմիկներին, որ Իմ Լույսի միջոցով հսկում են մարդկային վարքագծի յուրաքանչյուր կողմը... Դու ջանացիր գոհացնել Մեզ, ջերմեռանդ սիրով և հավատարմությամբ, ուստի Մենք թաքցրինք քեզ Մեր Ձեռքի ստվերում, վերցնելով քեզ Մեր խնամքի տակ:

Ամեն մեկի միջնորդը Ե՛ս եմ: Ձեր բարեկեցության Երաշխավորը Ե՛ս եմ: Քրիստոնյաների Միության վսեմ Ակունքը Ե՛ս եմ: Հոր և Որդու գերագույն Միությունը Ե՛ս եմ: Հոգով աղքատների Օծումը Ե՛ս եմ: Ձեր

[1] Իմ Հոգու

[2] Ես գիտեի, որ Սուրբ Հոգին նկատի ուներ ինձ:

ներսում Անդադար Աղոթքը ե՛ս եմ: Ձեր բոլորի Փեսան և Հավիտենական Ընկերակիցը ե՛ս եմ:

Իմ սիրելի հարս, դու հիմա իմացար Իմ Բերանից, և չնորհի միջոցով, մի անասելի ձևով, թե ինչն է շահագրգռում Մեզ: Ես սովորեցնում եմ քեզ, որ Աստծո գիտությունը Իմ միջոցով, Երրորդության գիտությունն է՝ հերքելու հերետիկոսությունները և դրանց նմանները: Ա՜խ, Վասո՛ւլա, Նրան, որին դու թույլ տվեցիր արմատ գցելու քո էության ամենախորքում, Ճշմարտությունն է, որ փոխակերպում է հոգիները մի հրաշալի Դրախտի, ուր զանազան ծառեր կան, որոնք ներկայացնում են ամեն տեսակ առաքինություններ: Սրանք այն դրախտներն են, որոնց մեջ Մենք բնակվում ենք մշտապես:

Եվ հիմա ես երգեցի ձեզ համար, ինչպես փեսան կերգեր իր հարսի համար, սիրո մի օրհներգ: Աստվածային սիրո մի օրհներգ, հիշեցնելու համար ձեզ բոլորիդ, որ դուք Մեր Թագավորության ժառանգներն եք: Սա օրհներգվեց ձեզ հենց Իր՝ Օրհներգի[1] կողմից թույլ տալու ձեզ բոլորիդ, դեռևս երկրի վրա, ճաշակելու Իմ գերագույն քաղցրությունը՝ հավիտենապես միացած ձեզ:

Ուստի Փեսան ողջունում է ձեզ՝ ասելով. «Եկե՛ք հիմա, զղջումի հոգով և հագեցեք Ինձնով: Թող բոլոր նրանք, ովքեր ծարավ են, գան: Ես ունեմ Կյանքի Ջուրը, և տալիս եմ այն ձրիաբար»: Ես, մարդկության Սիրահարը՝ Տեր Աստված, խնդրում եմ քեզ, Երրորդության դուստր, վերցրու մյուս երկու Օրհներգերը, օրհներգված քեզ Հոր և Որդու կողմից, այս մեկի հետ միասին, և անվանիր Մեր Ստեղծագործությունը.

Փեսայի Օրհներգը:

Մեր Աստվածային Օրհներգում շատ ասացվածներ կան Մեր Եռանձն քաղցրության մասին, սիրային ուսուցումներով, որպեսզի շատ ծառեր ծաղկեն և աճեն: Իսկ ինչ վերաբերում է անպտուղ ծառերին, ես պիտի դամ հրեշտակների զորքի հետ և արմատախիլ անեմ նրանց ճմռանը, և այդպիսով նրանք կրկնակի կմեռնեն:

Բոլորդ փորագրեք ձեր սրտի վրա այս հիմնական ճշմարտությունը. «Տեր Աստված գիտի նրանց, ովքեր Իր Յուրայիններն են և դրա համար թույլ է տալիս նրանց Իրեն մոտենալ»: Սրանք նախասահմանված են հասնելու կատարելության՝ Մեզ հետ աստվածային սերտ միության մեջ: Նրանք կանչվել են, որ փոխակերպվեն Մեր մեջ և մեկ լինեն Մեզ հետ: Նրանց հին էությունն այլևս չի լինի, այլ մի անասելի կերպով, որ Ես միշտ տալիս եմ Իմ սրբերին, Ես աստվածացնում եմ նրանց Մեր միության մեջ: Իմ միջոցով Ես աստվածացնում եմ բոլոր նրանց, որոնց Ես միացած եմ, և նրանք այլևս չեն խոսում իրենց սեփական մտքով, այլ այն ձևով, որով Ես կխոսեի: Նրանք այլևս չեն տեսնում իրենց աչքերով, այլ այն ձևով, որով Ես կտեսնեի ամեն ինչ: Նրանց արարքները կլինեն Իմ արարքները:

[1] Աստծո բառերն օրհներգի նման են, և Աստված լսվում է որպես մի օրհներգ:

Մի ոսկյա մատանի տրվեց քեզ[1], ազնվագույն ոսկուց մի զարդ՝ քո հոգևոր պսակի օրը, որպես Իմ Խաչը կիսելու խորհրդանիշ: Ուստի, Ես հրավիրում եմ քեզ մեկ անգամ ևս համբերությամբ տանել քո փորձությունները:

Նվիրի՛ր Մեզ քո ժամանակը, իսկ հիմա, սիրելի աղջիկս, արի՛ և հանգստացիր Մեր մեջ:

Եկեք փորձենք հասկանալ
անտեսանելի Աստծուն՝ սրտի
պարզությամբ և մաքրությամբ:

Եկեք փորձենք հասկանալ
Նրա հորդառատ Սերը՝
աստվածային միության
և մտերմության մեջ,
որ Նրա Վսեմությունը
բարեհաճել է առաջարկել մեզ՝
ամբողջովին ինքներս մեզ
Նրան հանձնելով:

Դո՛ւ, Քո մեծ ներողամտությամբ,
ողջ մարդկության Սիրահար,
օրհներգ երգեցիր մեզ համար,
որ ուրախացնես մեզ:

Դո՛ւ, ինչպես մի փեսա,
որն իր հարսի համար
խնջույք է պատրաստում,
Դու մեզ բոլորիս համար
պատրաստել ես
մի արքայական խնջույք,
որպեսզի մենք բոլորս կարողանանք
զվարճանալ Քո Տան առատությամբ:
Դու մեզ ըմպելիք ես տալիս
Քո հաճույքի գետից:

Այո՛, քանի որ Քեզ հետ, Տեր իմ,
Կյանքի շատրվանն է, Քո Լույսով
մենք տեսնում ենք Լույսը:

Ինչպես եղնիկն է փափագում
ջրի վտակներին,
այդպես էլ հոգիս է
փափագում Քեզ, Աստված իմ:
Հոգիս ծարավ է Աստծուն,
Կյանքի Աստծուն, Հույսի Աստծուն,

[1] 1987 թվի մարտի 23-ի տեսիլքում Քրիստոսն առաջարկեց ինձ մի ամուսնական մատանի:

Սփոփանքի Աստծուն:
Ե՞րբ ես նորից պիտի տեսնեմ
Աստծո Դեմքը:

Իմ սիրտն ասել էր Քեզ համար.
«Փնտրի՛ր Նրա Սուրբ Դեմքը»,
և ինչպես թագավորն է
հարգանքի տուրք մատուցում
իր թագուհուն, այդ նույն ձևով էլ,
Քո կատարյալ բարությամբ,
Դու հարգանքի տուրք մատուցեցիր
իմ ամենաանարժան հոգուն՝
ցույց տալով Քո գեղեցկությունը,
ցույց տալով ինձ Քո Սուրբ Դեմքը:

Փրկարար Ամրոց իմ հոգու,
հովվի՛ր ինձ: Եվ թող հոգիս վայելի
Քո քաղցրությունը:
Դու զորություն ես տվել
իմ թույլ ձեռքերին՝
ուսուցանելով ինձ,
դիմելով ինձ ամենից հաճելի ձևով,
փայլեցնելով Քո Լույսը
խավարի և մութ ստվերի վրա:

Քո Վսեմությունն
իջավ ներքև՝ խավարի մեջ,
Աչքերումդ՝ վիշտ, ազատելու համար
խավար-աշխարհի-ստրուկին
և հասնելու իմ գերեզմանին:

Ես մեռել էի
Իմաստության պակասից:
Ո՞վ էի ես, Սիրելի՛ս,
որ ինձ այդքան արժեք տվիր:
Քեզ համար ճի՞շտ էր, Թագավոր իմ,
Աչքերդ հառել ինձ վրա
և Քո խոսքով զարդարել հոգիս
արքայական հանդերձներով,
առանց վտանգելու էժանացնել
Քո Գործերը, հանուն ինձ:
Այո՛, ես մեռել էի,
երբ դուրս էի գալիս արգանդից:
Մեռելածին երեխայի պես
ես եկա աշխարհ,
վրաս՝ մի ամպ կախված:

Ես մտածում էի,
թե գոյություն ունեմ,

բայց երբեք չեմ եղել,
մինչև որ Դու եկար
ու կյանք փչեցիր իմ մեջ:

Երբ ես բացեցի աչքերս և հեռվից
տեսա Քո Ներկայությունը,
սիրտս ծաղկեց ծաղկի պես,
և ամեն ինչ, որ փտած քայքայվող
փայտի պես էր իմ ներսում,
վերածվեց մի պարտեզի:

Հետո այտերս ողողվեցին
ուրախ ծիծաղով,
երբ տեսա իմ Փրկչին՝
կանգնած ինձ այնքան մոտ:
Իսկ շուրթերիցս ուրախության ճիչ
դուրս թռավ այն պահին,
երբ շնչեցի Կյանքի շունչը:

Քո Գործերը,
Էմանուել, մեծ են, ամեն
հասկացողությունից այն կողմ:
Քո Հրաշքները, Էմանուել,
անցնում են ամեն մի հաշվարկ:
Իսկ հիմա ես ամբողջապես
ազատություն պիտի տամ
իմ ուրախությանը,
ես թույլ պիտի տամ
իմ զմայլված հոգուն խոսելու:

Այսօր, այն գերեզմանը,
ուր ես պառկած էի,
կարիք չունեմ անվանել,
«իմ փեսա», իսկ ճիճվին՝
«իմ ընկեր, եղբայր և քույր»:

Այսօր ես Կյանքն եմ անվանում.
«իմ Փեսա, ընկեր, եղբայր և քույր»:
Քո մեջ ես հավաքում եմ
իմ զմուռսը,
Քեզանից ես սնվում եմ մեղրով:
Եվ գինին ու կաթն է այն ըմպելիքը,
որ Դու տալիս ես ինձ:

Եվ ուստի, ես աղոթում եմ ծնկաչոք
և խնդրում Քեզ հավաքել
Քո բոլոր Ծաղիկներին[1],

[1] հոգիներին

որպեսզի նրանք իմանան, որ
Քո ընկերակցությունը, ո՛վ Սուրբդ,
պայծառություն է հոգու համար,
անհամար հարստություն:
Քո Ընկերակցությունը,
իմ հոգու Զմուռս,
զուտ բավարարություն է:

Հիմա ես նման եմ մի երեխայի,
երջանիկ և բարեհաճ:
Ով որ համարձակվի
չար խոսքեր ասել Քո զավակի դեմ,
Քո հզոր Բազուկը այնտեղ կլինի,
որ պաշտպանի նրան:

Զարը երբեք չի կարող
հաղթանակել սիրուն,
իսկ որտեղ սեր կա, Դու այնտեղ ես...
Ես երբեք լքված չեմ լինի...

Կարծում ես Ես չե՞մ հուզվել[1] Իմ ողջ Սրտով, սիրելիս: Մի՛ լսիր այն ամեն աղմուկը, որ նրանք բարձրացնում եմ քո շուրջը: Քո Փրկչի Սրտում ես դու փակված: Այնտեղ է որ դու պիտի կազդուրվես ու վերանորոգվես: Մնա՛ Իմ մեջ, Իմ քույր, Իմ հարազատ: Բաց արա ձեռքդ[2]...

Ճանաչելով քո անարժանությունը, դու առաջարկեցիր Ինձ ծաղիկների մի փունջ և քո անձնատվությունը: Դու ընդունել ես, որ Ես, որ Ճանապարհն եմ, Ճշմարտությունը և Կյանքը, եկա քո գերեզմանը և հարություն տվեցի քեզ: Եվ այն բոլոր շնորհներն ու պարգևները, որ Ես տվել եմ քեզ, տրվել են մի անարժան հոգու:

Հետևիր լավին ու բարուն, և դու պատվով կհասնես Իմ Գահի առջև: Տարբերիր լավը վատից:

Եկեղեցին պիտի վերակենդանանա, սիրելիս:

Ես օրհնում եմ քեզ: Ես քեզ հետ եմ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 12, 1998

(Երեք աղոթքներն աղոթելուց հետո)

[1] Հիսուս խոսեց:

[2] Հիսուս խոնարհեց Իր գեղեցիկ Գլուխը, և շնորհալիորեն համբուրեց իմ աջ ձեռքի ներսի կողմը: Հետո դրեց այն Իր այտին, ցուցադրելով Իր քնքշությունն ու սերը: Ապա ցած իջեցնելով այն, Նա խաչակնքեց ձեռքիս մեջ՝ ափիս վրա:

Ա՛խ, զավակս[1], Հոր, Որդու և Սուրբ Հոգու զավակ, ես՝ Հիսուսն եմ քո առջև կանգնած[2], Իմ ուրախությունն ու Իմ պարտեզ, որի մեջ ես կառուցել եմ Իմ երկինքը[3]:

Որովհետև մոտեցել է այդ օրը, երբ բոլոր նրանք, ովքեր ըմբոստանում են Իմ Աստվածության դեմ, ոչնչացվելու են[4] և մերկացվելու մինչև վերջին մանրամասները: Ես քեզ ուղարկում եմ մի երկիր[5], ուր դու ճյուղերդ պիտի տարածես ծովից այն կողմ: Ես քեզ ուղարկում եմ մի ազգի մոտ[6], որ դիմադրում է ձեր ժամանակներում տրված Իմ բոլոր Աստվածային Կանչերին, և ովքեր իրենց հոգու մթության մեջ, հիմարության մի պահի, ասացին. «Մենք պետք է մի բան անենք այդ կնոջ բերանը փակելու համար»: Ես կուղարկեմ քեզ այնտեղ, սիրելիս, ուր Իմ Սիրտը շարունակում է ողբալ, ինչպես սրինգ նրանց համար... Ես կուղարկեմ քեզ նրանց մոտ, որպեսզի ձիթենին մեկ անգամ էլ ձիթապտուղ տա, իսկ որթը՝ իր պտուղը[7]:

Ո՞վ Աչտարակի պահապան[8], դեռ որքա՞ն ես ազահաբար ուտելու քո զոհին: Բայց քո բոլոր ատելությամբ լի սպառնալիքներն իզուր են լինելու[9]... Իսկ դու, որ խունկ ես վառում Գազանի համար, ինչպե՞ս կարող ես գալ Ինձ մոտ՝ մտնելով Իմ Սրբարանը և ներկայանալ Իմ Գահի առջև, ասելով. «Ես ապահով և զորեղ եմ, որ տապալեմ որևէ թագավորություն: Ես ապահով եմ շարունակելու կատարել այս բոլոր պղծությունները: Ոչ մեկն ինձ չի տեսել»:

Ես տեսել եմ: Ես տեսել եմ քեզ, և Ես պիտի բացահայտեմ քեզ ազգերին... Տե՛ս, թե ինչպես ես դու կեղծում Իմ Օրենքն ու Հաղորդության Իմ Հաստատումը, քո ցեղի ստախոս գրչով: Դու դեռևս կարո՞ղ ես ասել. «Քրիստոսը չի տեսնում»: Այդ ինչպե՞ս է, որ ասում ես. «Ես տեսնում եմ», բայց չես տեսնում կամ ճանաչում քո Փրկչին և քո Ժառանգությունը: Անգամ խլուրդն ավելի լավ է տեսնում, քան դու, և ճանաչում է իր անցքը:

Արի՛ և ապաշխարիր, թե՞ դու անկարող ես ապաշխարելու: Թող ապաշխարելուց արտասուք հոսի քո աչքերից: Արի՛ և ապաշխարիր քո ողջ սրտով, և Ես մեղմորեն կուղղեմ քեզ և կներեմ քեզ ամեն ինչի համար, որ արել ես:

Դադարի՛ր Իմ Սուրբ Հոգուն վշտացնելուց: Ես ատում եմ հպարտությունն ու ամբարտավանությունը, բայց եթե ապաշխարես, մի՛ վախեցիր: Հասկանո՞ւմ ես, Քո Փրկիչն Իր Ձեռքն է երկարում քեզ: Սուրբը, որ տվել է քեզ քո քահանայությունը և զարդարել քեզ արքայական հանդերձներով, ծածկելով քեզ իշխանության

---

[1] Հիսուս շատ ուրախ էր երևում:
[2] Միևնույն ժամանակ ես լսեցի «Եմ» բառը:
[3] Միևնույն ժամանակ ես լսեցի «Թագավորություն» բառը:
[4] Ես հասկացա նաև, որ ավելի շուտ «դաղափարն» էր ոչնչացվելու, քան հենց իրենք՝ ըմբոստացողները:
[5] Իտալիա
[6] Հռոմ՝ «Հավերժական քաղաք»
[7] Այստեղ դադար եղավ, ասես Քրիստոսը մտածում էր, հետո Նրա Ձայնը բարձրացավ, նման մի Դատավորի...
[8] Հիսուս խոսում էր հատուկ մեկի հետ:
[9] Հետո՝ մեկ ուրիշի հետ:

խորհրդանիշներով, որ արածեցնես Իր հոտը, հիմա քեզ ասում է, ինչպես հայրն է ասում իր որդուն. «Գազանի տարածքից, որդի՛ս, դու ոչինչ չես ժառանգի, բայց Ինձանից՝ քո Տիրոջից, դու կունենաս հավիտենական կյանք: Ես քո բաժինն եմ և քո ժառանգությունը»:

Արդյոք ես կլսե՞մ քեզանից այս օրհնյալ խոսքերը. «Ես ուրախանում ու հրճվում եմ Իմ Տիրոջով: Հոգիս հրճվում է իմ Աստծով երիցս Սուրբ, քանի որ Նա հագցրել է ինձ փրկության հանդերձներ. Իր Աստվածայնությամբ է Նա հագցրել ինձ: Եվ ինչպես մի փեսա, որ զարդարում է իր հարսին, Նա պսակել է ինձ մի ծաղկեպսակով, որը երբեք չի թառամում: Ինչպես թանկարժեք զարդերով զարդարված մի հարս, Նա ինձ ծածկեց Իր գոհարներով: Հիմա թող իմ Աստվածը, Իր Երրորդության Փառքի մեջ հրճվի ինձնով: Թող Գարունը[1] ծաղկի իմ սրտում և իմ ոսկորների մեջ: Ա՜խ, որքան է հոգիս ուրախանում Նրա Աստվածայնությամբ, որը պիտի լինի իմ սրբացման խորհրդանիշը:

Դո՛ւ, որ ամեն տարի զարդարում ես երկիրը, և կենդանացնում նրա չորությունը, վերածելով այն ամեն երանգի ծաղիկների թմբի, արի և զարդարիր սիրտս և վերածիր այն մի գարնան, որպեսզի բոլոր հրեշտակներն ուրախանան և ասեն. «Տեսե՛ք, նա ունի Յահվեի Գարունն իր մեջ: Հիմա ողջ արաչության Փեսան կարող է ոտք դնել Իր պարտեզը, Իր Դրախտը: Հիմա տերերի Տերը կարող է ուրախանալ նրանով, և հիացած նայել Իր Սեփական արտացոլմանը: Գեղեցկությունն ու փառքը պատկանում են Ամենաբարձրյալին: Փառքի Հանդե՛րձ[2], մի՛ հապաղիր Արքայական Ծիրանի հագցնել քո զավակին»:

Բարեհաճիր լսել ինձ ողորմածաբար, և ազատիր ինձ իմ այնքան խղճալի մարմնից, որն իմ կայսրությունն էր, և բանտարկյալ էր պահում ինձ այս երկրի վրա, և նրան վերաբերող ամեն ինչից: Ահա ես առաջ եմ գալիս Քո Գահի առջև, առաջարկելու Քեզ իմ սիրտը[3], միակ բանը, որ ունեմ՝ ի նշան իմ սիրո: Ա՜խ, պաշտելի Փեսա, փոխի՛ր սիրտս մի մաքուր սրտի և աստվածացրու ինձ Քո Սուրբ Հոգու՝ paraclete-ի՝ Աստվածայինի, աստվածային զորությամբ: Թող Նա հիմա փայլի իմ ներսում ինչպես մի parousia (Քրիստոսի Երկրորդ Գալուստը), և իմ հոգին պիտի ապրի, և նաև փառաբանի Քո Երրորդության Աստվածությունը»: Հետո Ես՝ Հիսուս Քրիստոսը, պիտի պատասխանեմ քեզ և ասեմ. «Ես պիտի վարձատրեմ քո խոնարհությունը, թույլ տալով, որ դատապարտումն ու պարսավումը ինքն իրեն սպառի: Նա այլևս չի լինի քո մութ ուղեկիցը, քանի որ դու հիմա փոխարինել ես չարը սիրով, փոխանակել՝ խավարը լույսի հետ: Եվ չնայած դու պիտի շարունակես ապրել քո մարմնի մեջ, քո հոգին քայլելիս կլինի երկնքում, իսկ քո սիրտը, որը դու տվել ես Ինձ՝ պիտի պսակվի: Այո՛, զավակս, քանի որ, ինչպես փեսան է հրճվում իր հարսով, այդպես էլ քո Աստվածը և քո Ամենը պիտի հրճվի քեզնով: Այժմվանից սկսած, անսահման Բարությունը պիտի լինի քո ազգակիցը»:

---

[1] Այստեղ այն նշանակում է՝ «Աստված»:

[2] Հրեշտակները բացականչում են Աստծուն. «Հանդերձ Փառքի», որովհետև, երբ որևէ մեկը սրբության վիճակի մեջ է, կարելի է ասել, որ նա հանդերձավորված է Քրիստոսով:

[3] նաև ազատ կամքը

...Իսկ դո՛ւ, Իմ Վասուլա, ես ասում եմ քեզ. հարմար ժամանակին ես քեզ պիտի ուղարկեմ նրանց մոտ, և դու քեզ ցույց պիտի տաս: Հիմա ես արձակում եմ քեզ, Իմ ուրախություն, որպեսզի հոգ տանես նաև մյուս պարտականություններիդ[1]:

Կուզենայի լինել Մարիամի պես,
այլ ոչ թե Մարթայի:
Ես երջանիկ եմ, երբ նստում եմ
Քեզ հետ, ո՜վ Պաշտելի,
վայելելով և ուրախանալով
քո Ներկայությամբ:

Մի՛ բողոքիր, Վասուլա, ուրախացիր Իմ մեջ: Լսի՛ր, արդյոք քեզ կսփոփի՞, եթե ես քեզ ասեմ, թե ինչպես քո հանդեպ Իմ ունեցած այս անասելի Սիրով, ես ամրացրել եմ քեզ, ինչպես մի զմրուխտ Իմ արքայական թագի վրա: Քեզ կսփոփի՞, Հարազատս, եթե քեզ ասեմ, որ դու բուրումնավետ ծաղիկների Իմ ծաղկեպսակն ես, որը երբեք չի թառամում, քանի որ զարդարում է Իմ Գլուխը, և որ դու քաղցր երաժշտության համերգի ես նման Իմ Ականջներում: Քեզ կսփոփի՞, եթե ասեմ, որ դու դարձել ես Իմ հոգևոր գահը, և որ Իմ այցելությունները քեզ՝ նման են նուրբ օծանելիքի բույրերի՝ տրված Ինձ:

Տերը կարիք ունի վեհանձն սրտի: Շատ պահեր են եղել, երբ Իմ Աչքերը շրջվել են միայն քեզ վրա և միայն քեզ համար: Ա՜խ, Վասուլա:

Ա՜խ, իմ Ամենաբարձրյալ Տե՛ր,
իմ աչքերը սևեռված են Քեզ վրա,
իմ ողջ սիրտն ու միտքը նույնպես...
Դու իսկապես գերել ես իմ սիրտը
Քո Աստվածային Սիրով
և Քո արքայական
առատաձեռնությամբ:

Իսկ դու Իմը:

Դու իմ միակ ուրախությունն ես:

Իսկ դու, Իմ Վասո՛ւլա, դու Իմ միակ ուրախությունն ես, երբ քո աչքերը ջերմորեն, եռանդով և սիրով փնտրում են Ինձ... Ինձ քո սրտում ունենալը Կյանք է:

Դու ես Կյանքը...

[1] տնային աշխատանքները...

Իմ Աշխատանք[1], թաքնվի՛ր Իմ մեջ և ուրախացիր Իմ մեջ, ուստի մտիր քո Փրկչի բերկրանքների մեջ: Ես՝ Տերը, Իմ Սիրտն ավելի ցույց պիտի տամ քեզ:

Արի՛, Ես օրհնում եմ քեզ:

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 29, 1998

Ողորմած Տե՛ր, ե՛կ ինձ մոտ:
Մահվան կապանքներն
ամբողջապես օղակել էին ինձ,
բայց Դու դուրս եկար երկնքից
Քո Փառապանծ ձևով ու Շքեղորեն,
և Քո արքայական
առատաձեռնությամբ
ազատ արձակեցիր ինձ:

Ես ձեռքեր ունեի,
բայց նրանք անկարող էին զգալ,
ոտքեր, որոնք չէին քայլում,
սիրտ, որ չէր բաբախում,
և ոչ մի հնչյուն դուրս չէր եկել
կոկորդիցս, որ գովաբանի Քեզ:
Զնայած դրան,
Քո հավատարիմ Սիրով,
մարդկության Սիրահար,
Քո Արարչության Փեսա,
Դու խոնարհվեցիր բարձունքներից
դեպի ինձ՝ անարժանիս,
որ կենդանացնես ինձ
և փոխակերպես ինձ
մի երգի՝ Քեզ և Քո Տան համար:

Տե՛ս, թե ինչ արեցիր մեղավորի հետ,
առանց կրկին մտածելու,
ըր վտանգում ես
էժանացնել Քո Գործերը:
Դու հանդերձավորվեցիր իմ մեջ[2],
որպեսզի ցուցադրես ինձ
Քո Գավիթներում:
Եվ մեծ ուրախությամբ
Դու սովորեցրիր ինձ
Քո պատվիրանները:

[1] Մենք բոլորս Նրա արարչության Գործն ենք, բայց դա այստեղ նշանակում է նաև այն փոխակերպումը, որը Տերը կատարեց ինձ հետ՝ իմ դարձը:
[2] Դա նշանակում է՝ «ես զգեստավորված եմ Քրիստոսով»:

Դու սովորեցրիր ինձ,
որ Արդարությունը
պետք է օգտագործեմ,
որպես ճիպոտ, քո կողքին կռվելիս:

Քո Բարությամբ, Դու օգնեցիր,
որ ներթափանցեմ
Քո շարժառիթների մեջ, որ
կարողանամ հասկանալ Քո կերպերը:
Դու պատվաստել ես ինձ Քո Սրտին,
որպես ամուսնական մի ժեստ,
որպեսզի Դու և ես
հաճույք ստանանք
Քո Աստվածային Սիրո մեջ:

Դու սովորեցրիր ինձ
մտնել Քո Ուրախության մեջ,
և սիրել Քեզ, որպեսզի,
երբ ես խոսեմ Քո մասին,
ես խոսեմ Քո ահավոր
Զորության մասին,
պատմելով Քո Մեծության
և Քո առատաձեռնության մասին:

Ա՜խ, Վասո՛ւլա, երգիր Ինձ համար և եղիր նաև Իմ քնարը:

Իմ Սիրո մեջ, ես քեզ կյանք եմ տվել, Իմ խնամքի տակ հետևելով քո յուրաքանչյուր շնչին: Իմ Խոսքը Կյանք է: Կարո՞ղ է որևէ մեկն ասել.

«Աստված չի գործել»:

Շնորհի լույսի մեջ եմ Ես ծածկել քեզ, որ լինես Իմը և անդադար մտորես Իմ Սրտի մասին:

Ի տարբերություն ուրիշների, ովքեր ստանում են Իմ Խոսքը որպես պարգև, և որոնց Ես այցելում եմ, երբ որ Ե՛ս եմ ցանկանում, Ես տվել եմ քեզ մի եզակի պարգև, այն է՝ Ինձ կանչել յուրաքանչյուր պահի, երբ դու կցանկանաս:

Հասկանո՞ւմ ես: Ես տվել եմ քեզ այս հատուկ առանձնաշնորհումը համապատասխան այն առաջադրանքին, որը քեզ եմ վստահել, և համապատասխան քեզ վրա դրված Իմ բեռի:

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես եմ Ես ամեն ինչ չափել, երբ ծրագրել եմ սա: Ոչ թե, որ դու ինքդ կարողություն ունեիր Իմ Տունը վերակենդանացնելու և միավորելու այս ամենավսեմ առաջադրանքի համար: Քո բոլոր որակավորումները գալիս են Իմ առատաձեռնությունից, դրանք գալիս ես Ինձանից: Ես դարձրել եմ քեզ այն անոթը, որը կրում է այս վիթխարի դանձը, փխրուն, բայց մաքուր: Այդ անհաղթահարելի Զորությունը քեզանից չի գալիս, այլ Ինձանից՝ քո Աստծուց: Ես բնակվում եմ քո մեջ, այդ է պատճառը, որ դու չես տկարանում:

Մի՞թե ես իրավունք չունեմ օգտագործելու քեզ, որ ծառայես որպես Իմ Ողորմության հիշեցում մնացած բոլորի համար:

Դու ինձ հրավիրեցիր Քո Խնջույքին...

Ես քեզ հրավիրեցի Իմ Խնջույքին, իսկ քո միջոցով՝ շատ ուրիշների...

Ես կապված եմ այն խոստումներով,
որ արել եմ Քեզ,
և ես ցանկանում եմ վճարել Քեզ
շնորհակալության իմ պարտքերը,
և հավատարմորեն աշխատել
Քո Տան համար:
Որովհետև Դու ոչ միայն
մահից փրկեցիր իմ կյանքը,
այլև Քո Սիրո մոլուցքի մեջ,
թույլ տվեցիր ինձ ազատորեն քայլել
Քո Ներկայության մեջ,
ցանկացած ժամանակ
և օրվա ցանկացած ժամի՝
ողողելով ինձ Քո Լույսով:

Դու կապել ես ինձ Սիրո
և Ընկերության կապերով,
սեղմելով ինձ Քո Սուրբ Սրտին,
որպեսզի ոչ մի մահկանացու
այլևս չկարողանա խանգարել
այդ աստվածային միությանը:
Քո հորդառատ Սիրով
Դու հզորացրիր ինձ
աշտարակի պես՝ նրանց հանդեպ,
ովքեր գրոհում են ինձ վրա:
Օրը ցերեկով սարսափն է համակում
նրանց Քո Սուրբ Հոգու ձայնից,
իմ Ընկերակից
և իմ Ուրախություն...

Իմ սյուն, որ պահում է Միասնության Իմ Խաչը, ճառագայթի՛ր Իմ Փառքի Գիտության լույսը, ճառագայթի՛ր այս խավարի մեջ Իմ առատաձեռնության լույսը և մի՛ վախեցիր: Ես օծված յուղ եմ լցրել քո բերանի մեջ, որ դու խոսես Ինձ համար: Եղի՛ր Իմ երդչուհին՝ սրտապնդվիր: Երգի՛ր այս սերնդի համար՝ ճանապարհորդելով աշխարհի շուրջը՝ վստահելով Իմ շնորհին:

Թող բոլոր նրանք, ովքեր շնորհի միջոցով կանչվել են կարդալու Սիրո այս Օրհներգը և առաջնորդվել՝ համտեսելու այս թաքնված Մանանան, ծաղկեն՝ դեռևս իրենց աքսորի մեջ:

Ես շնորհում եմ սրբագործող շնորհներ բոլոր նրանց, ովքեր կանչվել են կարդալու Իմ Սիրո Օրհներգը զղջացող սրտով: Թող նրանց սրտերը

մտահայեցողությամբ տեսնեն Իմ Շքեղության փառքը և Իմ հայրական Սերը, և Իմ մեջ տեսնեն ոչ միայն Ամենակարող Աստծուն, այլև Բարության Աստծուն, սիրառատ և մտերիմ Ընկերոջը: Թող նրանց ականջները լսեն Իմ Սրտի հոգոցներն ու հառաչանքները և վստահ լինեն Իմ Գթասրտության վրա:

Ես մի պահակ[1] եմ դրել քո կողքին, մի դիտորդ՝ քո սրտի դարպասի վրա, դիտելու, որ ոչ մի ներխուժող չչեղի քեզ քո առաքելությունից:

Երբ խոսում ես, Իմ սե՛ր, միշտ խոսիր ըստ էության. Այո՛, կրկնիր բոլոր Իմ ասածները, բայց քիչ բառերով: Գոհարները, որոնք Ես տվել եմ քեզ, դիր յուրաքանչյուր սրտի մեջ: Թող բոլորն իմանան, որ Իմ Զրույցները ինքնին քաղցրություն են:

Ես քեզ հետ եմ: ic

Հոկտեմբերի 1, 1998

Բա՛ց արա ականջս, ո՛վ Տեր,
արթնացրո՛ւ ինձ իմ քնից,
երկարիր Քո Հզոր Ձեռքը երկնքից
և վեր բարձրացրու ինձ:

Ա՜խ, Վասո՛ւլա, ողջ երկինքն ուրախանում է, երբ սոսկ մի արարածից մի ձայն է լսվում Մեր Երկնային Գավիթներում...

Մետաղի խարամից Ես քեզ վերածեցի արծաթի, իսկ արծաթից՝ ամենաընտիր գոհարի: Զավա՛կս, թող քո աչքերը դեպի առաջ սևեռված լինեն: Եղիր ինչպես մի նրբագեղ ծաղկեշղթա Իմ Գլխի համար, և լցրու Իմ Սիրտը ուրախությամբ՝ հանուն Ինձ լռությամբ տոկալով դժվարություններին:

Մարդիկ հաճախ կհարձակվեն քեզ վրա, բայց երբեք չպիտի հաղթեն քեզ: Քո գործերը հանուն Ինձ, երբեք իզուր չեն անցնի, այլ պիտի տան ուսուցման ասպարեզներ՝ ծաղկեցնելով սերունդներին:

Թող իմ լեզուն ասի
Քո Սիրո Օրհներգը,
թող իմ շուրթերը հռչակեն
Քո Արդարամտությունը
և Սիրո Քո մեծ գործերը:

Իմ շնորհը քեզ վրա է և Իմ օրհնությունները՝ նույնպես:

Ա՜խ, զավա՛կս, ատելությանմբ լի խոսքեր են պատվում Իմ շուրջբոլորը, չնայած Ես թշնամության համար առիթ չեմ տալիս[2]: Ի պատասխան Իմ հավատարմության, նրանք դատապարտում են Ինձ:

Բայց ո՞վ դիմացավ Քո Բազկի զորությանը:

[1] Ես հասկացա՝ մի հատուկ հրեշտակ:
[2] Ես հասկացա, որ Հիսուսն ի նկատի ուներ, որ Իր բառերն իմ մեջ կարող են թշնամանք առաջացնել կարծրացած սրտերի հանդեպ:

Ո՛չ մեկը... Ո՛չ մեկը չդիմացավ Իմ Բազկի զորությանը: Մի՞թե ես Իմ զորությունը ցույց չտվեցի, երբ մարդիկ վիրավորեցին Ինձ: Ես հայտնի եմ նրանով, որ չփոթեցնում եմ ամբարտավաններին Իմ բացարձակ զորությամբ: Աղոթի՛ր նրա համար[1], ով կրակ փչեց իր հոգու վրա...

Թող որ այս ազգը[2], որին ես այնքան սիրեցի, բարգավաճի արդարության մեջ: Մնա՛ Իմ Սիրո մեջ և պահիր Իմ Պատվիրանները: Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը: Լսի՛ր, Իսրայել, Նա, ով ցիրուցան արեց ձեզ, հավաքում է ձեզ, և ես պիտի հսկեմ քեզ, Իսրայել[3], ինչպես Իմ Աչքի լույսը:

Ինձ այնքան սիրելի որդի, Իսրայե՛լ, դու իսկապես ընդունել ես Ինձ Իմ Սուրբ Հոգու զորությամբ, ծաղկի՛ր Իմ Աստվածության և Իմ Սիրո մեջ: Սիրի՛ր Ինձ այնպես, ինչպես ես եմ քեզ սիրում: Ես ասում եմ քեզ. ամբողջ ժողովրդին ես պիտի բերեմ Ինձ մոտ, քանի որ Իմ մեջ են Հավիտենական Կյանքը և Փառքը: Եղիր մեկ Իմ Անվամբ և հետևիր Ինձ Իմ Արյամբ ներկված ոտնահետքերով: ic:

Վասո՛ւլա, ես՝ Հիսուս, քեզ հետ եմ: Քո Արարիչն ու Փրկիչը, որ ձևավորեց քեզ, քեզ հետ է և քո կողքին: Թույլ տուր Ինձ փորագրել քեզ վրա Իմ Սիրո Օրհներգի մնացած մասը: Հանգստացիր Իմ մեջ, Իմ շատ սիրելի և ես պիտի հանգստանամ քո մեջ:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: ic:

Հոկտեմբերի 15, 1998

Տե՛ր, բառեր տուր իմ ականջին
և այնպես արա,
որ սիրես ճանաչի դրանք: Այո՛,
որովհետև Քո Խոսքը, Գթառատ Տեր,
իմ հրճվանքն է, իմ ուրախությունը,
իմաստունների գիտությունն է:
Քո Խոսքը միշտ պատրաստ պահիր
իմ շուրթերի վրա: Իմ բերանը
ոչ մի այլ բանով մի՛ լցրու
այս Երկնային Մանանայից բացի:

Ա՜խ, Վասո՛ւլա, մի՞թե ես չեմ գրել քեզ համար ուսուցման և գիտելիքի հարյուրավոր էջեր, որ կարողանաս բացատրել Ճշմարտությունը և խելամիտ բառերով պատասխանել նրանց, ովքեր հարցաքննում են քեզ:

---

[1] Հռոդոսում (Հունաստան), ուղղափառ երեցը, երբ իմացավ, որ մի երիտասարդ հրեա «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ» պատգամները կարդալուց հետո խնդրել էր մկրտվել և միանալ հույն ուղղափառ եկեղեցուն, մերժեց նրան տալ այդ թույլտվությունը: Մենք ուղարկեցինք մեր իրավաբան ընկերներից մեկին, խնդրելու երեցին, բայց երեցի սիրտն ավելի կարծրացավ, և նա ասաց. «Ես մկրտության թույլտվություն չեմ տա, նույնիսկ եթե դրա պատճառով դժոխք գնամ»: Այս պատճառով Հիսուս խնդրում է մեզ աղոթել երեցի Հոգու համար, որը նա կորցրեց իր հիմարությամբ:

[2] Իսրայելը, բայց նաև այն բոլոր հրեաները, ովքեր հայտնաբերում են Ճշմարտությունը և մկրտվում: Իսկ նրանք շատ են:

[3] Նոր մկրտվածներին, ովքեր ընդունել են քրիստոնեությունը:

ես արդարությամբ եմ անում այն ամենը, ինչ նախաձեռնում է Իմ Ձեռքը: Կենտրոնացիր Հիմա Ինձ վրա՝ Իմ փառքի համար, և թույլ մի՛ տուր, որ միտքդ թելադրի քեզ: Թող ոչինչ չկանգնի քո և Իմ միջև[1]: Մի՞թե ես Իմ աստվածային առատաձեռնությամբ չեմ զարդարել քո հոգին, որտեղ ես ապրում եմ: Մի՞թե չես տեսել Իմ շնորհների պտուղները:

Սիրելի՛ս, թող որ գանձը, որը ես քեզ եմ վստահել, փրկություն լինի շատ հոգիների համար: Իմ Աստվածային իշխանությամբ, ես կանչեցի քեզ և հանձնարարություն տվեցի՝ չնայած քո ձախողումներին, որ վերականգնես Իմ Տունը և Իմ պատիվը:

Եթե այն[2] ճշմարիտ չլիներ, արդյո՞ք քո հոգին, ինչպես նաև մյուսներինը, պիտի ցանկանային Ինձ գովերգելու և պիտի տենչային երկարատև մտահայեցության մեջ մտորելու Իմ Աստվածայնության մասին՝ բարեհաճորեն խոսելով Իմ Մշտական Ներկայության մասին:

Մի՞թե ես քեզ չեմ զգեստավորել Ինձնով, նույնիսկ տեսանելի ձևով[3]: Եվ ո՞վ, ասա՛ Ինձ, հաշտեցրեց քեզ Հոր հետ, ցույց տալով քեզ, և քո միջոցով Հոր Հոյակապությունն ու ճշմարիտ պատկերը: Եվ ո՞վ ուսուցանեց քեզ, որ Մենք[4] մեր արարչության Փեսան ենք:

Իմ Ողորմության նշանները, որոնք ես ցույց եմ տվել քեզ, շատ են: Վստահ եղիր, սիրելի՛ս, որ ես իսկապես կանչել եմ քեզ Իմ արքայական խնջույքին:

Երբ Փեսան տանում է Իր հարսին առանձնության մեջ, որ մտերմիկ զրուցի և սեղմի նրան Իր Սրտին, թեքվելով դեպի նա խնջույքից հետո, արդյոք հարսը պիտի առարկի՞... Դու կառարկեի՞ր: Ուրեմն եղիր գործունյա, երբ ես ուզում եմ, որ դու լինես գործունյա և մարդկանց մեջ: Բայց հիմա ժամանակդ Ինձ հետ անցկացրու, սուրբ մտահայեցողության մեջ՝ հանգստանալով Իմ մեջ, հանձնելով քեզ Իմ կամքի հաճությանը: Մի՛ մտածիր, թե դու ավելի պակաս պտղաբեր կլինես: Ե՛կ, մտիր քո Փրկչի Աստվածային ուրախության մեջ:

(Մեր Տիրոջ սիրառատ խոսքերը վստահություն ներշնչեցին ինձ):

Հիշի՛ր, սիրելիս, որ ճշմարիտ և մաքուր աստվածաբանությունը Իմ՝ ձեր Աստծո և մարդկության Սիրահարի մասին խորհրդածությունն է:

Օրհնյալ լինես:

ΙΧΘΥΣ

[1] Մի մութ մտածմունք պղտորեց միտքս. «Իսկ եթե ես սխալվո՞ւմ եմ»: Ես ցանկանում էի վստահ լինել:
[2] այս հայտնությունը
[3] Տերն ի նկատի ունի, երբ մարդիկ տեսել են Իրեն իմ փոխարեն, և իմ դեմքն անհետացել է:
[4] Երրորդությունը

Հոկտեմբերի 19, 1998

Տե՛ր, օգնիր ինձ ամեն ինչում,
օգնի՛ր ինձ հատուցել Քո ժողովրդի,
Քո Եկեղեցու համար, որ մատուցեմ
զոհողություն և աղոթքներ,
որն ինչպես խունկ
կբարձրանա երկնքում,
և կլինի ինչպես մի
ամոքիչ բուրմունք Հոր համար,
սուրբ յուղ՝ Որդու համար,
և նվիրաբերում՝ Սուրբ Հոգուն:

Ո՜վ Սուրբ Երրորդություն,
ձեռագործ իմ հոգու,
սրտիս հրաշալի զարդարանք,
մտքիս խորհրդանիշ,
իմ ձայնի զողանջ,
իմ գոյության պահապան,
սրանից ավելին ի՞նչ կարող եմ ասել,
և տակավին
չկարողանալ արտահայտվել:

Մենք՝ միայն Մենք[1] շրջապատել ենք Մեր տարածքը, Մեր մեկ Էությամբ և մեկ Զորությամբ և մեկ Գիտությամբ Մենք միայն մեկ Աստված ենք: Այո՛, մեկ Կամքով և մեկ Իշխանությամբ, Մենք շրջապատեցինք Մեր սեփականությունը[2], որ նրան տանք առաքյալի լեզու՝ օծելով Մեր Աստվածային Գործը[3]:

Մեր Զորությամբ Մենք Մեզ լցրեցինք քո մեջ, ինչպես կենդանարար մի հեղուկ: Ինչպես գարնանը փայլող արև, Մենք փայլեցինք քեզ վրա, ամրացնելով Մեր քաղաքն ու սրբավայրը[4] նախքան քեզ ճնշողները վատ վերաբերմունք ցույց կտային քեզ:

Մեր Գիտությամբ Մենք հայտնվեցինք քեզ, Ինքներս հաղորդակցվելով քեզ հետ, ուսուցանելով քեզ, և քո միջոցով՝ ուրիշներին, այն գիտությամբ, որ իմաստուններն են ստացել:

Խնջույք Մեր Ողորմության[5], Մեր Երրորդության Սրբության ուրախություն, արմատավորված եղիր Մեր Կամքի մեջ, և եղիր ինչպես անուշաբույր խնկի մի շիվ ամռանը, որ շարունակես ի հայտ բերել ճշմարտությունը և ավելի լավ բացատրություն տաս քեզ տրված Հայտնությանը:

Մենք պիտի հեղեղենք քեզ Մեր Լույսով, որ դու ավելի լավ հասկանաս Մեր Խոսքը, դրոշմելով Մեր Աստվածային Պատկերը քեզ տրված

---

[1] Իրենց Ազատ Կամքով Սուրբ և աստվածային Երրորդությունն ինձ դարձրեց իր Սեփականը և եկավ բնակվելու իմ մեջ, քանի որ դա Իրենց որոշումն էր, և ոչ այլ մեկինը:
[2] Այսինքն՝ Ինձ:
[3] Այսինքն՝ Իմ արարումը:
[4] Մենք Աստծո Քաղաքն ենք ու Սրբարանը, և Նա բնակվում է մեր մեջ:
[5] Աստված կանչեց ինձ՝ խնջույք:

յուրաքանչյուր բառի մեջ: Մեր Վսեմությունը պիտի մատակարարի քեզ այն ամենն, ինչ դեռ պակասում է քեզ: «Ապա, ինչպես պտղով ծանրաբեռնված մի ձիթենի, ինչպես մի հղկված ոսկե անոթ՝ ամեն տեսակի թանկարժեք քարերով պատված»[1], դու արժանապատվությամբ պիտի հատուցես ցավալի ուրացության այս ժամին, և ինչպես երգիչներն են երգում գովաբանության օրհներգեր, քո դողդոջ ձայնը պիտի աղերսի Մեզ՝ Մեր բառերով, Մեր հասկացողությամբ և Մեր Կամքին համապատասխան: Մեր արքայական առատաձեռնությամբ, Մենք Մեր գրկում օժտել ենք քո սիրտն Իմաստությամբ, որպեսզի Այն փոխանցվի այս սերնդին, և նրանք օգուտ ստանան Դրանից:

Ուստի, փոքրի՛կս, շարունակիր քայլել քեզ համար չափյուղաներով փռված ճանապարհով, և եղիր Մեր Երրորդության Աստվածության բանբերը և առաքյալը: Սերմեր ցանիր յուրաքանչյուր երկրում, որպեսզի Մեր Թագավորությունը տարածվի ծովից ծով: Լեռներն ու բլուրները ցած պիտի խոնարհվեն Մեր փրկարար արդարության հանդեպ: Եվ Մեր Զորությամբ, Մենք գոյության պիտի կոչենք այն բաները, որոնք գոյություն չունեն[2], և դարձնենք այն բաների նման, որոնք գոյություն ունեն:

[3]Ես եմ Կյանքը և Հարությունը, որ մեռածներին կյանքի է բերում: Մնա Ինձ հավատարիմ և ծաղկիր: Երբեք մի՛ զայրացիր: Եղիր վարդի նման, որն աճում է ջրի հոսանքի եզրին: Օրհնյալ եղիր, և քո Փրկչի համար արձակիր խնկի պես քաղցր բույր՝ սփռելով քո բուրմունքը, Իմ բուրմունքի հետ միասին Իմ Տան մեջ՝ արբեցնելով Իմ տան անդամներին՝ դարձի բերելով և մեկ սիրտ դարձնելով նրանց:

Ես պիտի պաշտպանեմ քեզ կատաղի և նախանձ մարդկանցից: Ասա՛. «Տիրոջ բոլոր Գործերը բարի են, և Նա կմատակարարի ամեն մի կարիք իր ժամանակին»: [4]Այո՛, գովաբանիր Իմ Գործերը և եղիր Իմ Դրախտը այդ ձևով, Պարասկևի «μου»[5]:

Ո՛վ Տե՛ր, թող, որ ես մտքումս
պահեմ Քո Ուսուցումները,
և թույլ մի՛ տուր,
որ մոռացությունը ինձ վհատեցնի:

Հաստատի՛ր իմ ոտքերը,
Փառավորյալ Տեր,
արթուն պահիր ինձ
և Քո ծառայության մեջ...

Զավա՛կս, Իմաստությունը լույս սփռեց քո հոգում, ինչպես մի քաղցր բոց, անդադար բացահայտելով քեզ Մեր գաղտնիքները, բայց նաև Մեզ,

[1] Սիրաք 50:10-9
[2] Այս սերնդին բերել հոգևոր Հարության:
[3] Հետո Հիսուս մենակ խոսեց:
[4] Սիրաք 39:33
[5] «μου»՝ «իմ» Պարասկևի հունարենով:

այնպիսի ձևով, որ այն կենդանացնի այս սերնդին, կազդուրելով նրան, որպեսզի այն դառնա Մեզ նման շքեղ ու պայծառ և արժանի լինի Դրախտ մտնելու:

Մեր Սեփական ազատ Կամքով, Մենք, Մեր Երրորդության Փառքի մեջ, անչափ հաճելի էր Մեզ, քեզ հետ մտերիմ բարեկամներ լինել և առատորեն հեղել ուրախությունների և սփոփանքների հեղեղներ քեզ վրա: Մենք քեզ համար բացահայտեցինք մի բան, որը մոռացվել էր Իմ Եկեղեցու կողմից. այս հորդացող քաղցրությունը: Այո՛, Ամենակարող Աստծո աստվածային քաղցրությունը, որը բյուրավոր հրեշտակների է գրավում Իմ Գահի շուրջը, անհամար հոգիների, որ պաշտեն Ինձ և հրճվեն այս երկնային խնջույքում: Մեր անասելի քաղցրությամբ Մենք ընդգրկում ենք ողջ Երկինքը:

Իմ Եկեղեցին մոռացել է, այո՛, և անտեսել է Ինձ, Իմ Սեփական Ամուսինը... Նա մնում է մերկ և ոչ մի հետաքրքրություն ցույց չի տալիս Իմ Աստվածային քաղցրության հանդեպ: «Այդ ինչպե՞ս է, Իմ Հարս, որ թիկունքդ շրջում ես դեպի Ինձ, երբ Ես բացում եմ Իմ Սիրտը քեզ, որ խոսեմ քեզ հետ: Իմ Սիրտը լցված է անասելի քաղցրությամբ, ա՜խ, բայց դու չես հասկացել, թե ինչն է Իմ արարչությանը ձգում դեպի Ինձ...»:

Իմ մտերիմ ընկերակից, հայացքդ հեռացրու քո շրջապատից և աչքերդ, միտքդ և հոգիդ սևեռիր սուրբ ներհայեցությամբ Իմ Սրտի վրա և թույլ տուր Ինձ շարունակել մեր քաղցր ու մտերմիկ զրույցը քեզ հետ:

Մի կյանք, որ վեհանձնորեն նվիրվում է Ինձ, քո սեփական կամքով, հրապուրում է Ինձ՝ քո Աստվածային Ընկերակցին: Մի կյանք, որ կրում է վիրավորանքներ և զրպարտություններ հանուն Իմ Անվան, հուզում է Ինձ արտասվելու աստիճան: Իմ-Սրտի-ուրախություն, դու դեռևս ամբողջապես չես հասկացել, թե ինչպես եմ Ես, քո հանդեպ ունեցած Իմ բոցավառ սիրով, Ինձ անբաժանելիորեն միացրել քեզ հետ, որ դու դառնաս մեկ հոգի Ինձ հետ: Ուրեմն մնա՛ Իմ Խաղաղության մեջ: Իմ հավատարիմ Սերը երբեք չի թողնի քեզ:

Ա՜խ, իմ Թագավո՛ր, սիրտս
հուզված է Քո ազնիվ թեմայից,
արբեցած, երբ Դու դիմեցիր ինձ:
Շնորհալիությունն[1]
ինձ վրա է ինչպես ցող,
պաշտպանելով ինձ Իր հզոր գրկում,
Աստված Ինքն է իմ պատվարը,
Աստվա՛ծ, որ սիրում է
ինձ հավատարմորեն:

Հասկանո՞ւմ ես, սե՛ր Իմ, Իմ մեջ միահյուսված ամեն մի կառույց վերածվում է սրբության և մաքրության Իմ Աստվածության մեջ: Ուստի, դո՛ւ, Իմ Վասուլա, Իմ մեջ կառուցվում ես ու դառնում մի սուրբ անոթ, ուր Ես եմ պարունակվում՝ մի մաքուր և սուրբ բնակատեղի Մեր Սուրբ Երրորդության համար, Հոգու միջոցով, որի մեջ Մենք կարող ենք Մեզ

[1] Աստված:

մտահայել: Ուստի ցնծա՛ և ուրախ եղիր քո Փեսայի առջև, ով այնքան առատաձեռն է քո հանդեպ: Մնա անբիծ և անարատ, և ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ:

Հիմա, Իմ-Սրտի-ուրախություն, դու կարող ես վերադառնալ քո մյուս պարտականություններին: Ստացիր քո Փրկչից Աստվածային Սիրո Նրա Համբույրը քո ճակատին:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, օրհնում եմ քեզ: ic:

Հոկտեմբերի 20, 1998

Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ,
Դու արդարև Ամենագեղեցիկն ես,
և ընկղմված քո Գեղեցկության մեջ՝
Դու Աստվածային ես և Մաքուր:
Ինչպե՞ս կարող եմ ես և մյուսները
չսիրահարվել Քո Քաղցրությանը:
Շնորհալիությունը ցող է
Քո Շրթունքների վրա,
և Քո վեհությամբ ու շքեղությամբ
Դու օրհնել ես մեզ,
հրապուրել ես մեզ,
բարեհաճ ես գտնվել մեր հանդեպ և
ծածկել մեզ անհամար պարգևներով,
որ նմանվենք ոչ միայն
Քո հրեշտակներին,
այլ նմանվենք Քեզ:

Քո Խոսքը նման է մի դիպակի,
որը Դու հագցրել ես ինձ,
զարդարելով իմ հոգին
Քո վսեմության համար:
Եվ այս ամենը Դու արել ես
մեծագույն ուրախությամբ,
և առանց մտածելու,
որ Դու թերևս էժանացնում ես
Քո արքայական Գայիսոնը:
Աստված օծել է ինձ...

Իսկապես ես օծել եմ քեզ, և մեծ ուրախությամբ...

Արի՛ հիմա և հենվիր Ինձ վրա: Ինձանից ավելի հավատարիմ մեկին դու չես գտնի: Ինձանից ավելի զորեղ և ուժեղ մեկին դու չես գտնի: Ես Քրիստոնեության Ժայռն եմ ու Հիմքը: Ես Նա եմ որ Է, Էր և գալու է:

Մենք գործընկերներ ենք դարձել: Ես և դու, դու և Ես, միահյուսված ու մեկ դարձած: Ոչ մի մարդկային զորություն չէր կարողանա բարձրացնել քո հոգին, եթե այն վերևից տրված չլիներ:

Ամենայն ճշմարտությամբ եմ ես ասում քեզ. քո Փեսան պիտի շարունակի ողողել քեզ երկնքի ցողով[1], որպեսզի դու էլ քո հերթին ողողես անբերրի հողը ուսուցման հեղեղներով: Հետո թզենին կտա իր թզերը, իսկ խաղողի որթը՝ իր ողկույզները: Ձեթի բերքը կառատանա, քանի որ ժամանակը եկել է, որ Իմ Աստվածային Արդարությունը գլխիվայր շրջի չար մարդկանց, ովքեր գետնատարած խոնարհվում են Գազանի առջև:

Շուտով փոթորիկը պիտի ավարտվի...

- Ծառայի՛ր Իմ Տանը և խոսիր Իմ Անունով, որպեսզի ես, Իմ գերազանց Սիրով, շարունակեմ հեղել Իմ օրհնություններն այս սերնդի վրա:

- Ծառայի՛ր Իմ Տանը և այնպես արա, որ Իմ Երիցս Սուրբ Անունը որպես երաժշտություն հնչի հավատուրաց ականջներին, և նրանք կբժշկվեն:

- Ծառայի՛ր Իմ Տանը, ընտրյա՛լս, և առանց մնացորդի մատուցիր Իմ մաքուր Մանանան, և լցրու քաղցած բերաններն Իմ Խոսքով:

- Ծառայի՛ր Իմ Տանն այնպես, որ Այն վերականգնի Իր ուժն ու կորովը, հիշեցնելով Նրան, որ Իմ Ներկայությունը լուսավորում է ամեն տեղ, ուր որ խավար է:

Ա՜խ, Վասուլա, ասա՛ նրանց, թե ինչպես եմ ես սպասում, որ նրանք Ինձ հրավիրեն, և հենց որ ես տեսնեմ նրանց շուրթերը բացված, պատրաստ արտասանելու հրավերի առաջին բառերը, ես կիջնեմ նրանց մոտ և վեր կբարձրացնեմ նրանց այդ մութ ջրերից, որ Ինձ հետ սավառնեն քամու թևերի վրա: Ես չեմ թաքցնի Ինձ, ո՛չ էլ Իմ Ուրախությունը, այլ կխոսեմ նրանց հետ բանաստեղծությամբ, մեկը մյուսի հետևից բացահայտելով գաղտնիքները:

Զոր հողի վրա ես ջուր պիտի լցնեմ[2], և գետեր՝[3] անբերրի հողի վրա: Ես դուրս պիտի հեղեմ Իմ Հոգին, ինչպես նաև Իմ Օրհնությունները, և յուրաքանչյուր ոք պիտի աճի: Երկնքի ցողով հագեցած իրենց հոգում, նրանք պիտի պտղեն Ինձ:

Քո քնքուշ ու գթառատ Փեսան նորից հաստատում է քեզ այս բաները՝ այն ամենն, ինչ ես, Իմ երիցս սրբությամբ վաղուց բացահայտել եմ ձեզ: Ուրիշ ժայր չկա Ինձնից՝ ձեր Աստծուց բացի:

Տեսնո՞ւմ ես այն հրաշալի գործերը, որոնք ես անում եմ Իմ Տան համար: Ես նշանակեցի քեզ որպես վկա Իմ Տան մեջ, և ես հաստատեցի Իմ Գործն ամենուր, որտեղ ես ցանկացա, որ Այն լինի:

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես եմ ես սիրում Իմ Տունը: Զորությամբ գոտևորված՝ ես եմ: Ուրեմն բարձրացրու ձայնդ Իմ Տան մեջ և հարցրու Իմ հովիվներին. «Արդյոք որևէ մեկը ցանկանո՞ւմ է աշխատել եռանդով և սիրով՝ վերակառուցելու համար այս երերացող Տունը: Արդյոք որևէ մեկը կա՞, որ կամենում է պաշտպանել այս Տունը: Արդյոք որևէ մեկը կա՞, որ հասկանում է հիմա, թե ես ինչ եմ ասում: Արդյոք Տիրոջ Տանը որևէ մեկը կա՞, որ ցանկանում է տարածել Աստծո Թագավորությունը»[4]:

---

[1] Ես հասկացա նաև՝ Հիսուս Քրիստոսի շնորհագեղ Ներկայությամբ:
[2] Օրհնություններ
[3] Սուրբ Հոգին
[4] Հիսուսի Ձայնը արձագանքում էր այնպես, ինչպես խոսում են դատարկ վայրում:

Եթե մեկը կամենում է, ապա ես կփայլեմ նրա վրա Իմ շքեղությամբ՝ զգեստավորելով նրան Ինձնով: Ես Ինձ հայտնի կդարձնեմ նրան, և նա կտեսնի Ինձ կանգնած իր առջև: Նա կտեսնի Հավիտենական և Անմահ Թագավորին, և նա բոլոր մարդկանց Ինձ մոտ կբերի, որովհետև Ես հարստացրած կլինեմ նրա Հոգին Իմ անփոփոխելի Աստվածայնությամբ և զարդարած կլինեմ նրան բոլոր երևակայելի զարդերով, և իր արքայական հեղինակությամբ նա կբժշկի այս սերնդին: Խուլերը կլսեն և կույրերը պիտի տեսնեն և բոլորը միասին, մեկ ձայնով կկանչեն. «Մենք պատկանում ենք Սուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն»:

Իսկ դո՛ւ, Վասուլա, մի՛ հոգնիր գրելուց: Առատ պտուղ առաջ բեր: Իմ բոլոր հրեշտակները ուրախանում են տեսնելով այդ պտուղները: Ես քո կողքին եմ, ուստի մի՛ վախեցիր:

Ես սիրում եմ քեզ: ic;

Նոյեմբերի 5, 1998

(ԱՄՆ-ում իմ մասին բավականին հակասական լուրեր տարածվեցին, նախքան իմ այնտեղ գնալը: Թվում էր, ինչպես մի անգամ Տերն ասաց ինձ, որ Սուրբ Հոգու մոտենալուց բոլոր դևերը կատաղում են, և սատանան գործի է դնում չար ուժերի իր ողջ զորությունը՝ քաոս ստեղծելու նպատակով: Ինչպիսի՜ բնորոշ ձև՝ Սատանային կռվելու Մեր Փրկչի փրկարար պատգամի դեմ: Եվ քանի անգամ է նա գործի դրել այդ, նախքան իմ ժամանելը նրանց մոտ, ովքեր Աստծո նվիրյալ զավակներն են: Թող այն հոգիները, ովքեր Սատանային թույլ են տալիս շշնջալ իրենց ականջներում և լսում են նրան, ներում գտնեն և պահպանվեն վնասվելուց... Այնուամենայնիվ, քանի որ այս ողջ ա ղմուկը բխում էր Դժոխքի խորքերից, Աստծո Ամենակարող Ձեռքը կարող էր հեռու քշել այն, և վերջում Տերը հաղթեց: Հազարավոր մարդիկ եկան, հավաքվելով, որ լսեն մեր Տիրոջ պատգամը, իսկ Սատանայի զոհերը, ովքեր սուտ վկայություն էին տվել հիմնված սուտ լուրերի վրա, որպեսզի խանգարեն ինձ ներկա լինելուց, մնացին անզոր):

Օրհնյալ է նա, ով հոգ է տանում արդարության համար և գործում է արդարությամբ...

Զավա՛կս, իմացիր, որ ամեն լեզու, որ քեզ զրպարտում է, Դատաստանի ժամանակ պիտի հերքվի, եթե նրանք չապաշխարեն: Աղոթքի և քավության խունկի կարիք ունեն նրանք:

Իմ Սուրբ Հոգու ձայնից բոլոր դևերը տանջվում, և ամեն կերպ սաստկացնում են իրենց զորությունը, դիմելով ծայրահեղությունների՝ անողոք զայրույթով և ստերով հարձակվելով Իմ պատգամատարների վրա, քանի որ այդ Տիրապետությունները, Իշխանությունները և Զորությունները մեծ ուժ ունեն երկրի վրա: Բայց մի՛ վախեցիր, նրանք հնազանդվում են Իմ հրամաններին: Նրանք ընկրկում են Իմ առաջ և դողում են Իմ Խաչի առջև:

Ես Յուղով եմ օծել քեզ, Իմ ուրախ պատգամատար, որ լինես Սիրո, Միասնության և Հաշտության Իմ Արձագանքը: Ես նորից ու նորից

ասում եմ, որ Ես քեզ վկա եմ դարձրել իմ ժողովրդին, հասկանո՞ւմ ես: Բոլորը հավաքվում են և գալիս լսելու Իմ Սիրո Օրհներգը, և երբ նրանք լսում են, նրանք պայծառանում են, որովհետև Ես, ինչպես արև, փայլեցնում եմ նրանց վրա Իմ Պայծառությունը և Իմ Փառքը:

Այսօր Ես ասում եմ քեզ. Քո Փրկիչն Իր հաղթանակն ավելի կմոտեցնի: Իմ Վերադարձը չի ուշանալու: Ես փրկություն պիտի բերեմ նրանց, ովքեր սիրում են Ինձ:

Սկզբից ի վեր Ես կանխասացի ապագան և կանխագուշակեցի իրադարձությունները, որոնք տեղի են ունենալու, բայց շատ մարդկանց մազերն արդեն սպիտակել են, մինչդեռ նրանք չեն հասկացել Իմ ասածները և երբեք էլ չեն հասկանա: Դրա համար էլ Ես ձեզ հասկացողություն պիտի շնորհեմ: Մի անգամ Ես ձեզ նախազգուշացրել էի[1], սերո՛ւնդ, որ այս Մեծ Ուրացության պատճառով, ըմբոստացողները[2], ովքեր իրենք իրենց անվանում են գիտնականներ, գաղտնի գրոհով ճանապարհ բացեցին դեպի Իմ Սրբարանը, որպեսզի ազատորեն կողոպտեն ու թալանեն, մտադրվելով ոտնակոխ անել, ինչպես ցեխն են կոխոտում փողոցում, Իմ Աստվածայնությունն ու Իմ Մշտնջենական Զոհաբերությունը՝ հաստատելով ստոր ու անազնիվ օրենքների օրենսդիրներ:

Ես ասել եմ, որ Իմ Ձեռքը դեռևս բարձրացած է՝ հարվածելու համար, և որ Իմ Արդարությունը պիտի փչի ձեզ վրա, առաջացնելով անհամար պալարներ ձեզ վրա՝ այրելով ձեր սերնդին, և նրա շուրջ ամեն կենդանի բան: Շատերն այդ ժամանակ պիտի ցանկանան շնչել, բայց պիտի ներշնչեն միայն այրող քամի, որը պիտի վառի նրանց ներքնապես՝ թողնելով նրանց որպես մի կենդանի ջահ:

Միթե չգիտեի՞ք, այլասերված սերունդ, որ խավարի այս օրերին, որում դուք ապրում եք, դուք ներշնչում եք <u>այրող ուրացություն</u>: Մի ուրացություն, որն այրում է ձեզ ներսից ու դրսից, առաջացնելով անհամար պալարներ ձեր էության խորքերում: Ոմանք կհարցնեն. «Ինչո՞ւ Աստված այդպես վարվեց մեզ հետ»: Միթե՞ չեք կարդացել՝ «Աստծո զայրույթը հայտնվում է ձեր ժամանակներում երկնքից՝ ուղղված մարդկանց անհավատության և անբարոյականության դեմ, ովքեր իրենց չարությամբ ճշմարտությունը պահում են բանտարկված»[3]: Բայց չկա մեկը, ով հասկացավ Իմ ասածները...

Ես խնդրել եմ մեծ և ճշմարիտ քավության արարքներ, որպեսզի այս Ուրացության հետևանքները չկրեք, բայց Ես շատ քիչ թվով քավության արարքներ եմ ստացել, որովհետև Իմ ասածները քննության են ենթարկվել Իմ հանդեպ հավատի պակասի պատճառով: Նրանք չվստահեցին Ինձ, և ամբողջապես չհավատացին Իմ Զորությանը, որ տարածեին Իմ ասածները և զգուշացնեին այս սերնդին:

Սերո՛ւնդ, ձեր սեփական վարքագիծը և գործերը բերեցին այս Ուրացությունը ձեզ, և այն խոցում է ձեր սիրտը: Բայց միևնույն ժամանակ, երբ Ես ասում եմ ձեզ այս ամենը, Իմ Աչքերը լիքն են Արյան

[1] Հուլիսի 3, 1988թ.
[2] Այլ խոսքով. ըմբոստացողները ներկայացնում են Պողոս VI Պապի կողմից կանխասացված «Սատանայի ծուխը»:
[3] Հռոմ. 1:18

Արցունքներով, և Իմ Սիրտը շարունակում է ողբալ ինչպես սրինդը, ձեր բոլորի համար...

Սերո՛ւնդ, այսօր դուք կանչում եք. «Աստվա՛ծ իմ, ես տառապում եմ իմ ընտանիքի և ինձ համար: Ես ցավից գալարվում եմ այս այրող քամուց»: Բայց մինչ այսօր Իմ ասածներն արհամարվում են և լրջորեն չեն ընդունվում: Դուք շնչահեղձ եք լինում թարմ օդի պակասից, մինչ այրվում եք ներքնապես և, չնայած դրան, երբ Շնորհի Իմ Սուրբ Հոգին զորությամբ իջնում է ձեզ վրա, որպեսզի ձեզ ազատ արձակի և փառքով գալիս է ձեզ մոտ, որպեսզի դուք ներշնչեք Կյանքի Շունչը, Աստծո Շունչը, որը Սուրբ Հոգին է, ձեր ընբոստ և անհնազանդ սրտերը շարունակում են մերժել Ինձ:

Իմ Վերադարձը մոտ է, բայց սրա իմաստն էլ ամբողջապես չի ընկալվել ձեր կողմից: Եվ, ուստի, Իմ Վասո՛ւլա, այդ ձեր բոլորի հանդեպ ունեցած Իմ Սերն է, որ ստիպում է Ինձ արագացնել Իմ Վերադարձը:

Ամենակարող Զորությունը, Իմաստությունն ու Բարությունը պիտի հաղթեն չուտով: Եկեղեցին պիտի վերակենդանանա իր Եռանձն Փառքով: Օրհնյալ է նա, ով թույլ է տալիս Ինձ բնակվել իր հոգում:

Օրհնյալ է նա, ով հենվում է Իմ Կրծքին և թույլ է տալիս Ինձ գրկել իրեն: Նրա հոգին պիտի ճանաչվի[1] Իմ Գավիթներում՝ իր վրա անուշահոտության Իմ բուրմունքով:

Օրհնյալ է նա, ով ընդունում է Իմ Խոսքը և պահում է այն: Նա սուրբ պիտի ճանաչվի:

Ասա՛ այս սերնդին և հատկապես նրանց, ովքեր չեն ճանաչում Ինձ, որ ես, Իմ Աստվածային Սիրով, որ տվել է քեզ խորհրդավոր շնորհներ՝ Եկեղեցին բարձրացնելու, այն զարդարելու և Նրան Կենդանի Ջրի Աղբյուրներ տալու համար, այս հայտնության հեղինակն եմ, և պահում եմ Իմ Զորության ավելի մեծ շնորհները, քանի որ դրանք պիտի տրվեն քեզ ավելի ուշ և ճիշտ պահին:

Դու ինձ ձրի տվել ես
Քո Սեփական Բարիքներից:
Տե՛ր, Կյանքի Սիրահար,
Քո Ողորմության պարգևը փրկել է
ինձ և շատ ուրիշների:
Թող փառավորվի Աստված,
Թող գովաբանվի
Նրա Սուրբ Անունը:

Հանգստացի՛ր հիմա, սիրելիս, քո Հանգստյան Վայրում[2]: Քաղցրալուր Սրտի զարկերը, որ դու լսում ես, Իմ Սիրո Հոգոցներն են ձեզանից յուրաքանչյուրի համար:

Արի՛, մե՞նք, մե՞զ:

ΙΧΘΥΣ

[1] պիտի ընդունվի
[2] Նրա Սուրբ Սրտում

Նոյեմբերի 11, 1998

Ամենագթառատ Տե՛ր իմ,
ես աղերսում եմ Քեզ,
որ դաս և մշակես իմ կամքը,
որ այն դառնա Քո Կամքը,
խլելով այն ինձանից
և վերափոխելով այն,
որ չլինի ուրիշ ոչինչ
Քո Աստվածային Կամքից բացի:
Արի՛ և սպանիր իմ մեջ այն ամենը,
որ վիրավորում է Քեզ, որպեսզի
Քո այդ գթառատ վարմունքով,
Դատաստանի օրը Դու ինձ անբասիր
և Քո աչքին հաճելի գտնես:

Հիսո՛ւս, քանի որ Դու մեռար
իմ հանդեպ Քո հորդառատ
սիրո պատճառով, որպեսզի
ինձ կյանք և երջանկություն տաս,
և ինձ կարող դարձնես կիսելու
Քո Թագավորությունն
ու Քո փառքը,
համարիր ինձ որպես Քոնը
հավիտենականության համար:

Իմ քահանա՛[1], շարունակիր դնել սիրո ծաղկեպսակներ Իմ Գլխի վրա: Փոխարինիր Իմ Փշե Պսակը, որն այս սերունդն ուրախությամբ ու բռնությամբ խցկում է Իմ Գլխին և շարունակում է բռնի ուժով Ինձ քարշ տալ դեպի նոր Գեթսեմանիներ: Ես, Իմ անհուն սիրով, բայց նաև Իմ տառապանքներով՝ նման Գեթսեմանիի տառապանքներին, գրել եմ այս բոլոր էջերը ձեր բոլորի համար, որպեսզի դուք հավատաք Իմ Սուրբ Հոգու զորությանը, ով վկայում է: Մեծարի՛ր Ինձ քո սրտում, Պարասկևի, տալով Ինձ քո ժամանակը, նորից գրելու համար հոգոցներով և ցավերով լի Իմ խոսքերը: Երբեք մի՛ դադարիր աղոթել, և քո միտքը կենտրոնացած պահիր միայն Իմ անփոփոխելի Աստվածայնության վրա[2]:

Ա՜խ, զավակս... Շարունակի՛ր լինել համբերատար, և քո համբերատարությունից դրդված, ես պիտի շարունակեմ հոսել չոր հողերի մեջ, Իմ Աստվածային Սիրով ողողելով դրանք երկնային ցողով, աճ տալով այնտեղ, ուր դեռևս աղբ ու տականք կա: Թույլ մի՛ տուր, որ սիրտդ անհանգստանա, վստահի՛ր Ինձ՝ քո Արարչին, քանի որ Ես կարող եմ մեծ գործեր կատարել: Ես անսահման հարուստ եմ շնորհով և առաքինությամբ, ուստի, Ես հրավիրում եմ քեզ, Իմ հարս, կիսելու քո Փեսայի հետ մեր պսակադրության փառապանծ Գործիքը, այսինքն Իմ Խաչի հոյակապությունը...

[1] Ա Պետ. 2:9
[2] Հետո Հիսուս մի երկար հոգոց հանեց:

(Ես հասկացա, որ Խաչը կիսելու այս հրավերը, հրավեր էր ոչ միայն կիսելու Այն, այլև սմբողջապես ներթափանցելու Տիրոջ Տառապանքի խորհրդի մեջ, քանի որ այս հրավերն արդեն արվել էր ինձ իմ կանչի ամենասկզբում: Մեր Տերը, մեր Ամուսինը, մարդկության Սիրահարը մեկ անգամ ևս դուրս էր գալիս Իր Գահից, որպեսզի ինձ ավելի ամբողջական գիտելիք տա Խաչի արժեքի (նշանակության) մասին):

Արի կամովին, ինչպես անում ես ամեն անգամ, երբ Ես կանչում եմ քեզ Իմ գիրկը[1]... Ինձ գրկել՝ նշանակում է գրկել Իմ Խաչը... Իսկ հիմա թույլ տուր Ինձ շնչել քո մեջ Իմ Աստվածային Խոսքերը:

Ես ասել եմ քեզ, որ երբ գրկում ես Ինձ, դու գրկում ես Իմ Խաչը, և այդ գրկախառնման մեջ դու ողողվում ես Իմ Լույսով: Ճանապարհը, և Ես նորից կասեմ, որ միակ ճանապարհը Աստվածային Սիրով Ինձ հետ միանալու համար այն է, երբ դու կամովին ու սիրով գրկում ես Իմ Խաչը, որը դու գիտես ունի իր տառապանքները, բայց նաև իր ուրախությունները, և որը պիտի առաջնորդի քեզ այնտեղ, ուր քո հոգին պիտի բարձրացվի դեպի Գողգոթա:

Իմ քաղցր գրկախառնման մեջ դու կգտնես ուրախություն, բայց ամենամեծ ուրախությունն այն է, երբ հայտնաբերես, որ դու դարձել ես Իմ Զարչարանքի պատճենը և Իմ՝ Գերագույն Զոհի մի մասը, սիրո մեկ այլ զոհաբերություն, մեկ այլ կենդանի խաչելություն, մեկ այլ ստրուկ՝ վաճառվելու համար ողջ աշխարհին: Բայց լինելով Իմ գրկում, քո հոգին Ինձնից պիտի վերցնի զորություն և բոլոր առաքինությունները, որ նմանվի Ինձ:

Հմայված Իմ Հոգով, քո սիրտը պիտի երգի գովաբանության օրհներգեր, որոնք կհասնեն բարձունքները, Ամենի ականջներին, և այսպես քո Եռանձն Աստվածը կփառավորվի...

Ձեր օրերում ո՞վ է ամբողջապես հասկանում Իմ Խաչի չքեղությունն ու հիասքանչությունը: Շատ քչերն են հասկանում: Ահա թե ինչու Ես գալիս եմ քո միջոցով, որ խանդավառությամբ ու կրքով ուսուցանեմ աշխարհին: Հոգիների հանդեպ Իմ ունեցած ծարավով և Իմ տառապանքով՝ տեսնելով, թե նրանք ինչպես են ընկնում հավիտենական կրակների մեջ, Ես կանչում եմ յուրաքանչյուրին, այս աշխարհում, դարձի գալու համար և նախապատրաստելու ձեզ երկրի վրա Իմ Թագավորության փառավոր իշխանության համար, որի մեջ Իմ Աստվածային Կամքը դառնում է ձեր ամենօրյա կյանքի էությունը և խորհրդանիշը ձեր ճակատի վրա:

Ես կանչում եմ ձեր հոգիների գիշերվա մեջ, նորից ու նորից ներս նայելով ձեր սրտերի պատուհանի միջով, հուսալով լսել այս բառերը ձեզնից. «Արի՛, Սիրելի Փրկի՛չ, արի և բաց արա աչքերն իմ Գիշերվա և շրջիր հոգիս դեպի Քո Բարությունը և հեռու պահիր այն չարից: Արի՛ և բա՛ց Առաքինության դարպասներն ինձ համար, որպեսզի ես ներս մտնեմ և երկյուղածությամբ գետնատարած ընկնեմ Քո Երրորդության Փառքի առջև: Հոգուս սիրելի՛ն, մեկ անգամ ևս կյանք տուր ինձ, Քո Փառավոր Խոսքով»: Իսկ Ես կպատասխանեմ ձեզ. «Ես երբեք չեմ լքի ձեզ, Հանուն

[1] Մի թեթև դադար եղավ, հետո Նրա ձայնը փոխվեց, և շատ տխուր Նա ասաց. «Ինձ գրկել՝ նշանակում է գրկել Իմ Խաչը...»:

Իմ Անվան, Ես, որ վսեմությամբ գերազանցում եմ երկինքն ու երկիրը, ձեզ Կյանք կշնորհեմ»:

Բավարարիր Ինձ հիմա, Վասո՛ւլա, հենվելով Ինձ վրա: Հանգստացրու Ինձ քո սրտում պատրաստակամորեն, նվիրաբերելով քո ժամանակը Ինձ: Սիրի՛ր Զսիրվածին և հետևիր Իմ ուսուցումներին:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ, ասելով. Իմ արքայությունը քո մեջ է: Վաղը Ես կշարունակեմ Իմ Պատգամը: ic:

(Հաջորդ օրը Քրիստոսը վերադարձավ և կանչեց ինձ թելադրության համար, և դրա համար, սիրտս ուրախությամբ լի ողջունեց Նրան այս բառերով.)

Քո լիառատ սիրով,
Տե՛ր Ողորմության,
Քո աստվածային գթառատությամբ,
արի՛ ինձ մոտ:
Քո խարանված ստրուկը
Քո ծառայության տակ է:

Քեզ պատիվ է արվել՝ խարանված լինել, նշելով, որ դու պատկանում ես Ինձ, որ դու Իմ սեփականությունն ես... Այս դրոշմներն ազնիվ են և անգին, և Ես դրանք ցույց եմ տալիս նրանց, որոնց Ես ցանկանում եմ ցույց տալ, չնայած դրանք չեն երևում արտաքին աչքով, դրանք երևում են շնորհի միջոցով, հոգու աչքերով[1]:

Ես, Ինքս, աշխարհ եկա՝ ծառայելու, այլ ոչ թե ծառայություն ընդունելու: Չնայած Իմ վիճակն Աստվածային էր, Ես դատարկեցի Ինքս Ինձ, որ ստանձնեմ ստրուկի վիճակ: Քանի որ Իմ Հայրը ձեզ բոլորիդ տվեց Ինձ՝ որպես ընծա ձեր փրկության համար, որը նաև Իմ լիակատար Կամքով էր[2], Ես, Իմ հերթին, ձեր օրերում Իմ նպատակի համար կանչում եմ Իմ Ընտրյալներին, և բարձրացնում եմ նրանց Իմ Փրկության Ծրագրի համար, դարձնելով նրանց Իմ կրկնօրինակները:

Ընտրված լինելով դեռևս իրենց արարումից շատ առաջ, այն մտադրությամբ, որ դառնան Իմ ճշմարիտ պատկերը և Իմ Սիրո Ծրագրի համագործակիցները, Ես պատվում եմ նրանց, որ խարանվեն այն նույն խարաններով, որոնցով Ես Ինքս եմ խարանվել, որպեսզի նրանց ամբողջապես Իմը դարձնեմ և ցույց տամ աշխարհին, որ նրանք ճշմարտապես Իմն են և որ նրանք Իմ սերմն են... Ուստի, երբ նրանց հալածում են, թքում նրանց վրա և սպառնում, երբ նրանց սխալ են հասկանում, զրպարտում են ու հարձակվում, իմացի՛ր, որ նրանք գալիս են Ինձնից, և որ նրանք ոսկորն են Իմ ոսկրի, մարմինն Իմ Մարմնի:

Խարանված այս բոլոր վսեմ խարաններով, որոնք Ես ստացա ձեր փրկագնման համար, այդ ազնիվ հոգիները նույնպես, հանուն ձեզ,

[1] Ինչպես Տերն է ասում՝ միայն շնորհի միջոցով է հոգուն կարողություն տրվում զգալու և ընկալելու «հոգու աչքերով» այնպիսի բաներ, որոնք արտաքին բաներ չեն և տեսանելի չեն սովորական աչքով: Նույնիսկ Նրա Զարչարանքի խարանները, որոնք դրոշմվում են հոգու վրա (ներքին խարաններ), կարող են տրվել մի հոգու, որը կզգա դրանք, այդպիսով դառնալով Գերագույն Զոհի կրկնօրինակը:

[2] Հիսուսի Կամքը նույնն էր, ինչ Իր Հոր Կամքը:

անբարեպաշտ սերունդ, կոխոտվում են, կոտորվում ամեն օր, և դատվում են նույնիսկ Իմ Եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Ճիշտ այնպես, ինչպես ոչխարներին են տանում սպանդանոց, նրանց նույնպես տանում են այն մարդկանց կեղծ մեղադրանքներով, ովքեր մինչ օրս աջակցում են բոլոր ժամանակների Իմ սրբերի և Իմ մարգարեների արյունահեղությանը, և մեծ հնարամտությամբ նրանք շրջանցում են Իմ բառերը[1], որպեսզի արդարացնեն իրենց անհավատությունը:

Նրանց[2] պահվածքը Ինձ հաճելի չէ, որովհետև նրանք դառնում են ողջ մարդկային ցեղի թշնամիները, քանի որ խանգարում են Իմ Ընտրյալներին, որ Իմ Կամքը հայտնեն Իմ Ժողովրդին և վերակառուցեն Իմ Տունը: Այդպիսով, այդ կեղեքիչները միշտ հասնում են իրենց անօրինության դերագույն չափին:

Ինչպես ես արդեն ասել եմ, Իմ Վասո՛ւլա, ես տալիս եմ քեզ բոլոր ազգերին որպես Իմ ընծան, նրանց սեփական օգուտի համար, որ արձագանքես Իմ խոսքերը և ծառայես Եկեղեցուն: Ողջ հավիտենությունից ի վեր, ես մտադրվել էի, որ դու դառնաս Իմ ճշմարիտ պատկերը, կիսելով Իմ տառապանքները, որպեսզի մի օր դու կիսես Իմ Փառքը: Իմ Խաչի Լույսի տակ ձևավորիր քեզ Իմ Մտքով: Լույսի համար աշխատելը նույնն է, ինչ աշխատել Իմ Խաչի փառաբանման համար:

Ես, սիրելի՛ս, տվել եմ քեզ հաստատակամության ոգի, որ համատեղ քայլես Ինձ հետ: Գիշերը համարյա ավարտվել է, և շուտով ցերեկ կլինի, ուստի արիացի՛ր, աղջիկս, արիացի՛ր... Իմ Խաչի հետ քո միությամբ, դու արել ես այդ ամենը Իմ Անվամբ, այսինքն, դու վկայել ես Իմ Անվամբ Իմ Պատգամները՝ քո կարողության առավելագույն չափով: Սա արվել է, որ կատարվի գրվածը. «Նրանք, ովքեր երբեք չեն լսել կամ տեսել Ինձ, պիտի լսեն Ինձ և տեսնեն Ինձ, և նրանք, ովքեր երբեք չեն հասկացել Ինձ, պիտի հասկանան Ինձ՝ Իմ Սուրբ Հոգու շնորհով»:

Հետևաբար, շարունակիր գրկել ու ողջունել Իմ Խաչը, տարածվելով ավելի հեռու, քան ծովերն են՝ մի ձեռքումդ Իմ Սիրո Օրհներգը, իսկ մյուսում՝ Իմ Խաչը: Եղիր Իմ ուրախ պատգամատարը, երբեք չթողնելով Իմ Խաչը: Շարունակի՛ր հայտարարել Իմ Կամքը, և այն ամենն, ինչ լսել և սովորել ես Ինձնից, և եղիր Իմ ուրախությունն ու արքայությունը:

Հիշի՛ր, ես քեզ առաջարկել եմ Ինձ հետ կիսել Իմ Միասնության Խաչը, և դու պետք է մնաս պատվաստված քո Աստվածային Փեսային, Նրա Կրծքի մեջտեղում, և Իմ Խաչի վրա: Թող քո աչքերը Իմ Խաչի միջոցով տեսնեն և հասկանան այն բաները, որոնք անտեսանելի են, բայց հավիտենական, և ոչ թե այն բաները, որոնք տեսանելի են և մաշվելու են մի օր: Ուրեմն, փնտրիր Իմ Խաչի միջոցով այն բաները, որ Այն կարող է քեզ առաջարկել ավելի ուշ՝ երկնքում:

Այն ողջ Հարստությունը, որ կարելի է գտնել Իմ Սրտում, հնարավոր է տեսնել քո Փրկարար Գործիքի և քո փրկության Աչքի՝ Իմ Խաչի միջոցով: Ապացույցը, որ որևէ մեկը միացած է Ինձ և մեկ է Ինձ հետ՝ ձևավորված Իմ մեջ և միահյուսված Ինձ հետ, այն է, երբ նրա սիրտը նույնպես

[1] Հիսուս նկատի ունի, որ այդ մարդիկ չեն օգտագործում Իր տված խորհրդի բառերը. «Դուք կճանաչեք նրանց իրենց պտուղներից»:
[2] Ա. Թես. 2:15-16.

պատվաստված է Իմ Խաչին՝ իր բոլոր առնչություններով: Որևէ մեկը, որ համոզված է, թե ինքը պատկանում է Ինձ, պետք է հասկանա, որ ինքը պատկանում է նաև Իմ Խաչին:

Ձե՞ս կարդացել[1]. «Տառապել Աստծո ճանապարհով, նշանակում է դառնալ ավելի լավը[2], որի համար չեն ափսոսում: Սակայն տառապել այնպես, ինչպես աշխարհն է ճանաչում տառապանքը՝ մահ է պատճառում: Տե՛ս, թե Աստծո ճանապարհով տառապելը ինչ տվեց քեզ ինչպիսի խորաթափանցություն, ինչպիսի բացատրություններ, ինչպիսի վրդովմունք, ինչպիսի տագնապ և ինչպիսի տենչանք»: Եվ Ես կավելացնեի սրան, ինչպիսի ուրախություն, ինչպիսի ուժեղ հաստատակամություն և տոկունություն:

Ուրեմն, շնորհի միջոցով քեզ վիշտ ու տառապանք պատճառելով[3], որպեսզի ապաշխարես, քո հոգու աչքերը բացվեցին, որովհետև դու ջանասիրությամբ ենթարկվեցիր Իմ Ձայնին: Իմ Վասուլա, տե՛ս, թե ինչպես եմ Ես առաջնորդել քեզ դեպի ապաշխարություն, տե՛ս, թե ինչպես եմ Ես առաջնորդել քեզ դեպի Իմ Խաչը: Տե՛ս այն ուրախությունը, որը Ես ստացա, երբ դու կամավոր կերպով ինքդ քեզ հանձնեցիր Ինձ, հետո՝ Իմ Խաչին:

Իմ ուրախությունը հորդում է, և Ես լի եմ սփոփանքով: Իմ դառներին հավաքելը հեշտ առաջադրանք չէ, առավել ևս՝ նրանց միավորելը, աղջի՛կս: Բայց այդ հարցերում Ինձ քո համաձայնությունը, վստահությունը, սերը և հավատը տալով, Ես կարող եմ առաջանալ քո մեջ, տարածելով Իմ Պատգամն այնպես, ինչպես որ Ես եմ ցանկանում որ այն տարածվի, և, Իմ Վասուլա, քո փորձությունների միջոցով Ես հաղթանակում եմ:

Եղիր խաղաղության մեջ և շարունակիր ապրել Իմ Խաչի Լույսի մեջ՝ ճշմարիտ կյանք Իմ՝

Հիսուս Քրիստոսի մեջ:

ΙΧΘΥΣ

Նոյեմբերի 28, 1998

(Այսօր լրանում է այս օծյալ պատգամների 13 տարին: Ամբողջ օրը ես խոկման մեջ էի, թե ինչպես ինձ տրվեց այս շնորհը, որին ես արժանի չէի: Ես ասում էի. «Ոչ մեկն իր թշվառ վիճակում այնքան շնորհ չի գտել Աստծո Աչքում, որքան ես: Աստված մեծ ողորմություն ցույց տվեց իմ հոգու հանդեպ: Թագավորների Թագավորն ինձ բերեց Իր Արքայական Տունը: Նա կանչեց ինձ իմ անունով, և հրավիրեց ինձ Իր մեծ խնջույքին, վարվեց ինձ հետ արքայական շռայլությամբ: Հետո, կարծես այս ամենը բավական չէր մեղմացնելու ինձ բավարարելու Նրա բուռն ցանկությունը՝ իմ հանդեպ Իր մեծ և հորդառատ սիրուց ելնելով, Թագավորների Թագավորն ինձ

[1] Բ Կոր. 7:10-11
[2] Այո, որովհետև այն տանում է դեպի ապաշխարություն և ապա՝ Խաչն ընդունելուն:
[3] 1985 թվին

արտոնություն տվեց, որ Իր Արքայական Ներկայությունը ցանկացած ժամանակ հասանելի լինի ինձ, որ ազատորեն ներս մտնեմ ու դուրս գամ Իր Արքայական Գավիթներից: Իմ թշվառությունը և, թվում է, իմ ոչնչությունը գրավել էր Նրա բարեհաճությունը: Ինձ փրկելու Իր վճռակամությամբ, Նա բացահայտեց ինձ երկինքն ու երկիրը և երկնքի տակ գոյություն ունեցող բոլոր հրաշալիքները: Եվ ուստի, Իր Սուրբ Անունը գովաբանելու համար, մեր Տերն ու Աստվածն ինձ սովորեցրեց, թե ինչպես ներբողեմ Իր Անունը»):

Ո՜վ Տե՛ր,
չնայած Մահը նայում էր իմ դեմքին,
Քո մեծ Զորությունը փրկեց ինձ:
Դու հանձնեցիր
Քո Արքայական Գայիսոնը
նրան, որ գոյություն չուներ[1]:
Թող յուրաքանչյուր ոք
ընդմիշտ հիշատակի Քո Անվան
Զորությունը և Գայիսոնը:
Դու իմ թշվառ հոգուն
ուրախությամբ ցուցադրեցիր
Քո Հարստությունը
և Քո Թագավորության
անվերջանալի շքեղությունը:
Դու երբեք ինձ հետ
այնպես չվարվեցիր,
ինչի արժանի էին իմ մեղքերը,
բայց Դու հրամայեցիր
իմ հրեշտակին, ասելով.
«Վերցրո՛ւ նրան, ողջ ու անվնաս
բեր նրան Մեզ[2] մոտ և մեր Տուն...»:
Եվ նա այդպես էլ արեց...

(Դրանից հետո իմ հրեշտակը գրավեց ուշադրությունս: Ես խնդրեցի նրան, ինչպես նախկինում, ինձ համար մի բան նկարել...)

[1] Փոխաբերական իմաստ ունի: Այսինքն ես գոյություն չունեի մինչև որ Տերը հարություն տվեց ինձ իմ Հոգևոր մահից:
[2] Երրորդությունը

Ամենաբարձրյալի աղջիկ, խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն: Մտիր մեր Տիրոջ Ուրախության մեջ: Հնազանդ եղիր միայն Նրան: Ես, քո պահապան հրեշտակը, տալիս եմ քեզ այս վարդը Իմ սրտից: Հակացիր և սովորիր ճանաչել մեր Տիրոջը: Մտիր Սուրբ Սրտի մեջ: Աստված կանչել է քեզ, և հիմա դու խաղաղություն ես հաստատել Աստծո հետ:

Ես՝ Դանիելը, Աստծո ծառան, քեզ տարա Ամենաբարձրյալի մոտ: Երկինքն ուրախանում է այսօր: Արի՛, վստահությամբ մոտեցիր Շնորհի Գահին:

Ես՝ Դանիելը, օրհնում եմ քեզ Ամենասուրբ Երրորդությամբ:

Դանիել-Աստծո-ծառան:

(Հայրը խոնարհվեց երկնքից և մոտեցավ ինձ...)

Իմ Վասո՛ւլա, ոչ մի բան Ինձ ավելի հաճույք չի պատճառում, որքան այն, որ դու քեզ հավաքում ես Իմ Ներկայությամբ: Փառաբանի՛ր Իմ Խոսքը: Ես՝ Աստված, ներքև եմ նայում երկնքից քո սենյակի մեջ, ծաղի՛կս: Դու տեսել ես Իմ Փառքը, դու զգացել ես Իմ քաղցրությունը և ստացել Իմ բարեհաճությունը: Նախքան լեռների գոյանալը, նախքան երկրի վրա որևէ բան բուսնելը, Ես ընտրել էի քեզ, սիրելի՛ս, երգելու մի քաղցրալուր մեղեդի՝ Իմ երիցս Սուրբ Անունը պատվելու, և Իմ Խոսքով մեռածներին կյանք տալու համար: Ե՛ս, զավակս, քո ծննդյան պահից սկսած Իմ Հրեշտակին պատասխանատու եմ կարգել, որ նա հսկի քեզ և բերի քեզ Ինձ մոտ: Հասկանո՞ւմ ես: Կարո՞ղ է որևէ մեկն ասել. «Աստված ցույց չի տվել Իր Աստվածային Զորությունը: Աստված Իր Սիրով ու Հավատարմությամբ հոգատար չի եղել Իր արարչության հանդեպ»:

Ա՜խ, Վասո՛ւլա, արդեն տասներեք բուրավետ տարիներ են անցել, օծված Պատգամների տասներեք տարիներ, որոնք քեզ վստահվել են, որպեսզի դու ազգերին հայտնես Իմ Կամքը: Ես խոսեցի, և դու հավատացիր... Ես տվեցի քեզ այս հսկայական գանձը, և լցրեցի քո սերունդը Իմ բուրմունքի բույրով, և յուրաքանչյուր հոգի, որ բացեց իր սրտի պատուհանը Ինձ համար, օծվեց ներսից և դրսից, և Իմ քաղցրությունը ներթափանցեց նույնիսկ նրանց ոսկրածուծի մեջ, բուրմունքով լցնելով նրանց հոգին, միտքը և ոգին... Դու չգիտեի՞ր, որ երբ Ես խոստանում եմ, Ես կատարում եմ Իմ խոստումը:

Զավա՛կս, հենվիր հիմա այն նույն Սրտին, որին Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսն ամենամոտն է, և հիշի՛ր. Ես պիտի մշակեմ այս սերնդին և նրանց պիտի հասկացնեմ, որ անմահությունը գտնվում է Եռանձն Աստծուն ազգակից լինելով: Իմ նպատակն է յուրաքանչյուր հոգու բերել սիրո մի աստվածային և մտերմիկ միության մեջ, աստվածացնելով նրանց Մեր մեկ Բնության *(Էության)* և Մեր մեկ Կամքի մեջ...

Օ՜ փառք մեր Եռանձն Աստծուն,
երկնքի և երկրի Աստծուն,
որի զորությամբ
ողջ արարչությունը ծնկի պիտի գա:
Փա՜ռք Նրան սերնդե-սերունդ
Իր Եկեղեցում:

Եկեք բոլորս հռչակե՛նք,
որ մի Տեր կա, մի հավատ,
մի մկրտություն
և մի Աստված՝ Հայր բոլորի վրա,
բոլորի հետ և մեր բոլորի մեջ:
Եվ որ կա մեկ ճշմարիտ
աստվածաբանություն, որն է
Աստծո մասին ներհայեցողությունը՝
Իր Երրորդության Փառքի
և Իր Աստվածային Խորհուրդի մեջ:

Օրհնյալ լինես: Ողջ երկնքի առջև ես՝ քո Հավիտենական Հայրը, օրհնում եմ քեզ, օծելով քո ճակատը Իմ Աստվածային Սիրով:

Նոյեմբերի 30, 1998

Տե՛ր, թույլ տուր ինձ
գտնել խոստացված ուրախությունը
ճանապարհի վերջում,
որը Դու ես գծել ինձ համար:
Դրա համար, Արդարադատ Հայր,
սովորեցրու ինձ
զգեստավորված լինել
արդարությամբ և արիությամբ:
Ո՛վ Տե՛ր, Քո Տունը շարունակ
ըմբոստության հարվածների տակ է,
և դեռևս ոչ մի նշան չկա
Զատկի ամսաթվերը
միավորելու համար:
Չկա իսկապես տեսանելի նշան,
դեռևս չկա...
Դու դարձրեցիր
իմ կյանքը մի լացող սրինգ
ինձ մկրտելու պահից ի վեր,
մխրճելով ինձ քո Սրտի
Տառապանքի Լճի մեջ: Այո՛,
ես գիտեմ, որ կանչվել եմ հենց Իր՝
Աստվածային Զորության կողմից,
և որ ես կենդանի
Պաշտպանի գրկում եմ,
և որ Նա պիտի հաղթի
այս երկրի ամբողջ փոշուն:
Բայց արթնանալուց հետո,
ես դեռևս իմ մարմնի մեջ եմ:

Ո՛վ Մեկնիչ իմ մտքերի,
թույլ մի՛ տուր, որ Քո քնարը,
ինչպես Դու ես ինձ անվանում,
սգո երգ երգի, քանի որ ես
մեղք կգործեմ: Թույլ մի՛ տուր,
որ Քո սերը փորձի ինձ
այնքան, որքան հիմա է փորձում:

Աղջի՛կս, դադարիր շաղակրատելուց, հենց հիմա ես քնքշությամբ կանգնած եմ քո առջև, հիշեցնելով քեզ, որ անհնար է լինել Իմ ընկերակցության մեջ՝ առանց Ինձ հետ կիսելու Իմ Զարչարանքը, և առանց քո հատկանիշները Իմը դառնալու: Ա՛խ, և մեր սերտ միության ու մեր գրկախառնության մեջ ես տվել եմ քեզ Իմ Սիրո օծումը, որ դառնաս մեկ այլ կենդանի խաչելություն, մեկ ուրիշ ստրուկ՝ աշխարհին վաճառվելու համար: Եթե ես քեզ ընկղմեցի նրա մեջ, ինչը դու ճշմարտապես անվանեցիր Տառապանքի Լիճ Իմ Սրտում, տե՛ս, թե այդ մկրտությունն ինչ բերեց քեզ, ինչպիսի բույր, ինչպիսի արքայական հանդերձանք: Ես վարվեցի քեզ հետ այնպես, ինչպես վարվում եմ Իմ ընտրյալների հետ:

[1]Տե՛ս, ես հանդերձավորել եմ քեզ Իմ Որդի՝ Հիսուս Քրիստոսով:

Եվ ես[2], ես, որ այն Դարպասն եմ, որի միջով առաքինի մարդիկ մտնում են երկինք, լրջությամբ ասում եմ քեզ. Մնա ինչպես շուշան, թորված լինելով մաքուր զմուռսով՝ այդ Տառապանքի Լճում, որն իրականում ներկայացնում է Քրիստոսի Արցունքները, որպեսզի Մենք ասենք Մեր սիրելիին. «Որքան բուրավետ է քո բույրը, ավելի բուրավետ, քան բոլոր մյուս բուրմունքները: Զարդարված Մեր անասելի Լույսով, շարունակիր տարածել քո քաղցր բուրմունքը, որպեսզի դու գտնես խոստացված ուրախությունը այն ճանապարհի վերջում, որը Մենք պատրաստել ենք Մեր հարսի համար: Այնտեղ դու կգտնես քո հիանալի հանդիստը Հավիտենության մեջ»:

Իմ Վասո՛ւլա, այս տառապանքը, որ ես ունեմ Իմ Սրտում, ինչպես քեզ[3] նախկինում ասել եմ, այն պատճառով է, որ այս սերունդն Ինձ բռնությամբ քարշ է տալիս դեպի նոր Գեթսեմանիներ: Էլ ավելի ի՞նչ կարող էի ես անել, որ չեմ արել: Թեև Իմ վիճակն Աստվածային էր, ես դատարկեցի Ինքս Ինձ, ստանձնելու համար ստրուկի վիճակ: Ես ծառայեցի: Սակայն մինչ օրս նրանք[4] չեն գոհանում:

Իմ Տունը ավերածության մեջ է, և ես, մտահոգված Իմ ժողովրդին ավերածությունից փրկելու համար, Իմ Արքայական Գայիսոնով բարձրացրել եմ մարգարեների, որ ընդունեն ստրուկի կարգավիճակ և

[1] Հանկարծ Հայրը խոսեց:
[2] Հետո Սուրբ Հոգին խոսեց:
[3] Նոյեմբեր 11, 1998թվին
[4] այս սերունդը

կամովին ծառայեն Իմ Տանը և ամրապնդեն Այն, այն Տունը, որը Ես գնեցի Իմ Սեփական Արյամբ:

Իմ հովիվներից ոմանք կհարցնեն. «Բայց մենք ի՞նչ պետք է անենք, որ մեր կյանքը ընդունելի դառնա Քեզ»: Ես ձեզ կոչ եմ արել, որ ձեր սրտից բխող աղոթքներ անեք և ապաշխարեք, որպեսզի հաշտվեք Ինձ հետ՝ ձեր Աստծո հետ. Թողեք ձեր նախկին ապրելակերպը և հետևեք Ինձ, որպեսզի ձեր կյանքն ընդունելի դառնա Ինձ, և այդպիսով Մեր Երրորդության Սրբության մասին ձեր Գիտությունն ավելանա ձեր մեջ: Ապա, թույլ տվեք Մեզ առաջնորդել ձեզ՝ մտորելու Ամուսնական մտահայեցությամբ, Աստվածային մտերմության մեջ, Մեր գրկում:

Դուք ցանկանում եք մտնել Մեր Աստվածային Երրորդության ուրախության մե՞ջ: Ուրեմն կանչեք Սուրբ Հոգուն՝ Կյանք Տվողին, աստվածային շնորհներ Տվողին, ձեր սրտի լուսավորությանը, որ կարող է լցնել ամեն ինչ՝ առանց սահմանափակվելու նրանց սահմաններում, որ ծավալի Իր Զորությունը ձեր հոգում՝ կարգադրելով, որ ձեր ներսում գտնվող ամեն բան նորոգվի: Իր առատաձեռն Սիրո և Շնորհի միջոցով, Նա ձեզ ցույց կտա Իր Սեփական Փառավոր Զորությունը այն այլակերպության միջոցով, որը Նա կարող է կատարել ձեր ներսում, տալով ձեզ անհրաժեշտ ուժը և շնորհը, որ այլևս նորից չըմբոստանաք:

Ձեզանից շատերը[1], որ նստած են իրենց բարձր ատյաններում, դեռևս հարցնում են. «Ինչո՞ւ պետք է Աստված միջամտի, երբ արդեն այսքան տարիներ մեր եկեղեցին հարստացվել է Սուրբ Հոգու և մեր բազմաթիվ սրբերի կողմից»:

«Որպեսզի վերջ գտնի ձեր ըմբոստությունը և ձեր ուրացությունը», սա է Իմ պատասխանը: Մեր գթառատ ներողամտությամբ, Մենք խղճացինք ձեզ: Գարունն Ինքը բուրավետ պիտի դարձնի այս երկիրը, Իմ բուրմունքը տարածելով և կենդանացնելով այս հավատուրաց սերնդին...

Իսկ ինչ վերաբերում է Զատկի ամսաթվերը միավորելու մասին, Իմ Վասո՛ւլա, Ես դեռևս նրանց դռների մոտ սպասում եմ, մուրացկանի նման, սպասում եմ ողորմության: Ես դեռևս սպասում եմ, որ նրանք միավորեն այդ ամսաթվերը... Նրանք շարունակում են խոսել միասնության և եղբայրության մասին: Միայն սրտի դարձը կբերի նրանց խոնարհությամբ դեպի միասնության ճանապարհը:

Ես ասում եմ ձեզ. Ես հայտնի եմ դարձրել Իմ առաքյալ Պողոսին, իր սրտում մի հայտնությամբ, միասնության կարևորությունը, և թե ինչպես պահպանել Հոգու միասնությունը խաղաղությամբ, որը իրար է կապում ձեզ բոլորիդ: Ես հասկացրեցի նրան նաև Իմ պարգևների կարգը: Ես հայտնեցի նրան, որ Ես ձեզանից յուրաքանչյուրին տվեցի Իմ շնորհը՝ բաժանելով այն տարբեր ձևերով: Ես նրան հայտնի դարձրեցի, որ Ես գնացի բարձունքները, գերիներ վերցրեցի և պարգևներ տվեցի մարդկությանը: Եվ ոմանց Իմ պարգևն այն էր, որ նրանք պիտի լինեին առաքյալներ, ոմանք՝ մարգարեներ, ոմանք՝ քարոզիչներ, ոմանք՝ հովիվներ և ուսուցիչներ, որպեսզի բոլորը միասին մեկ սրտով և մեկ ձայնով կառուցեն Իմ Մարմինը՝ Եկեղեցին:

[1] «Շատերը» չի նշանակում «բոլորը»:

Ես Իմ Խոսքով բարձրացրել եմ մարգարեներ, և Իմ մարգարեները նրանք չեն, ովքեր իրենց աստվածաբաններ են կոչում, այլ նրանք, որոնց Ես բարձրացնում եմ Իմ Սրտին, ամուր զետեղելով նրանց Նրա մեջ, որպեսզի հասնեն Մեր Աստվածային Կամքի ամբողջական իմացության և կարողանան հայտնել Մեր Կամքը Մեր ժողովրդին: Ես անձնապես պատիվ եմ անում նրանց՝ Իմ ուղղակի միջամտությամբ, որ պատրաստեմ նրանց և ամբողջովին տամ բոլորիդ՝ ձեզ համոզելու համար: Իմ Խոսքի միջոցով Ես հայտնի եմ դարձնում նրանց Իմ Կամքը:

Իմ մարգարեները նրանք են, ովքեր շնորհի միջոցով սնվում են ուղղակիորեն Իմ Բերանից, և Իմ Խոսքն ուղղակիորեն նրանց բերանի մեջ դնելու միջոցով: Նրանք գալիս են ձեր բոլորի մոտ, դեռևս երկնային ցող կաթեցնելով, և նրանց բառերն իջնում են ձեզ վրա ինչպես թարմացնող մի անձրև:

Իմ մարգարեների խոսքերը, որոնք գալիս են Իմ ուղղակի միջամտությամբ, նման են սրի, որ ուրացողներին տանեն դեպի ապաշխարություն, պատիվ և փառք տալով Ինձ: Նրանց բառերը բոցավառվում են ինչպես մի ջահ ձեր հոգու խավարում: Նրանցից շատերի ոսկորները նորից ծաղկում են գերեզմաններից[1]:

Եթե որևէ մեկը հարցնի. «Ինչո՞ւ է Տերը շեշտում Իր մարգարեների տեղը», ասա՛ նրանց հետևյալը. «Տերն ասում է. «Մի՛ շրջանցեք Իմ բառերը, ձեր բանապաշտությունն արդարացնելու համար: Հրաժարվե՛ք ձեր մեղքից և եղեք երջանիկ: Թող ձեր հոգիները հրճվեն մեր Տիրոջ ողորմությամբ[2]: Մի՛ հալածեք Իմ մարգարեներին, քանի որ նրանք Իմ հրեշտակներն են, որ Իմ Խոսքով մխիթարում են ձեր բոլորին: Նրանց պաշտոնը ձեզ նախազգուշացնելն է և ձեզ բոլորիդ դեպի ապաշխարություն առաջնորդելը»:

Ուստի հիմա է ապաշխարության ժամանակը: Հրաժարվեք ձեր մեղքից և արժանացեք Իմ բարեհաճությանը:

Ա՜խ, Վասո՛ւլա, Ես մի սերմ բերեցի Եգիպտոսից, որ ցանեմ այնտեղ, ուր Իմ թշնամին վերցրել տարել է երկրի սննդի պաշարը: Քնքշությամբ և հոգածությամբ Ես տեղ բացեցի դրա համար, Ես օծեցի և ցանեցի այն: Իմ ժողովրդին ավերածությունից փրկելու ցանկությամբ, Ես պարարտացրի նրա հողը: Սերմը արմատ տվեց և դարձավ մի ծառ: Նրա ճյուղերը ձգվեցին մինչև ծովը, իսկ նրա պտուղը՝ առատ և հյութալի էր:

---

[1] Ես հասկացա, որ մարգարեները երբեք չեն դադարի մեզ մոտ ուղարկվելուց: Այն փաստը, որ Եղիա մարգարեն երբեք չի մեռել, այլ վերցվել է, խորհրդանշում է, որ մարգարեությունը երբեք չի մեռնի:

[2] Աստծո միջամտությունը հալածելը և դատապարտելը մահացու մեղք է, որովհետև դատապարտում են Նրա Ողորմությունը: Այն, ինչ գրված է այստեղ ներքևում, վերցված է Սիենայի սուրբ Կատերինայից: Հայրը թելադրում է նրան. «Մարդիկ շարունակաբար վրդովվում են Իմ Գործերից, որոնք բոլորն արդար են, և բոլորն էլ կատարված են ճշմարտությամբ, սիրո և ողորմության միջոցով: Այս սխալ դատողությամբ և նախանձի ու հպարտության թույնով, Իմ Որդու Գործերը չարախոսվել և անարդարացիորեն դատապարտվել են, և Նրա թշնամիները ստելով ասել են. «Այս մարդը գործում է Բեհեղզեբուղի զորությամբ»: Եվ այսպես, չար մարդիկ, եսասիրությամբ, անմաքրությամբ, հպարտությամբ և ագահությամբ ու նախանձով, կամակոր ու անխոհեմ շտապողականությամբ, ընդմիշտ դայրացած են Իմ և Իմ սպասավորների վրա...»:

Թեև ծառը հաճախ էր ամպրոպի, փոթորիկների և կատաղի մրրիկների գրոհ դառնում, բայց այն չէր սասանվում:

Երեք տարվա և մի քանի օրվա ընթացքում Իմ թշնամին դողաց և սարսռաց: Ձայրույթով բոցավառված, ծանր սպառնալիքներով, նա մի բանակ հանեց, որ մաղի ծառի պտուղները ավերածության մաղով, որ սանձի ու զսպի նրանց: Բայց Ես հավաքեցի ամեն մեկին և թաքցրեցի Իմ Սրտում: Ջնայած մարդիկ հաճախ են հարձակվել Իմ ծառի վրա, բայց երբեք չեն հաղթել նրան, քանի որ Իմ Երրորդության Օրհնությունը նրա վրա էր: Ա՛խ... և որքան հաճախ են հողագործներ աշխատել նրա ետևում՝ ակոսներ բանալով, որ կոտրեն այն, բայց Իմ աջ Ձեռքը ջարդեց նրանց լուծը, նրանց բոլորին չփոթության մատնելով:

Որքան օրհնյալ են այն ազգերը, որոնք ապաստան կգտնեն նրա ճյուղերի տակ և կուտեն նրա պտուղը, որը Ես կնքել եմ Իմ Սուրբ Հոգով: ~ Կյանքի Խոսքը քեզ տրվեց ձրիաբար, որպեսզի դու, քո հերթին, Իմ Վասո՛ւլա, ձրիաբար տաս այն մեռնողներին: Վա՜յ նրանց, ովքեր երկարում են իրենց ձեռքը կրակով՝ ոչնչացնելու համար այն, ինչ որ ցանվել է Իմ կողմից:

Ես պիտի շարունակեմ Իմ քաղցրությամբ պատել քեզ, ողորմածաբար տարածվելով քո մեջ, ինչպես մի քաղցր նյութ, որպեսզի ողջ աշխարհը ճաշակի Իմ քաղցրությունը: Թող քեզ մեղադրողները անցնեն գնան մարող ստվերի նման:

Ես՝ մարդկության Սիրահարը, քո Տերը և քո Աստվածը, խնդրում եմ համբուրել քեզ Իմ Բերանի համբույրներով[1], բուրավետ դարձնելով քեզ, որ մնաս զմայլելի Իմ Աչքում:

Լա՛վ եղիր:

ΙΧΘΥΣ

[1] Երգ Երգոց 1:2

1999

Հունվարի 1, 1999

(Այս վերջին ամիսների ընթացքում Տերն ինձ ցույց տվեց, որ ես պետք է առանձնանամ և նույնիսկ ավելի հաճախ լինեմ սուրբ մտահայեցության մեջ: Սա նաև Նրա հետ Իմ ունեցած միության արդյունքն է: Ավելի վեհ ի՞նչ կարող է լինել, քան Սրբի գրկում լինելը: Ուրիշ ի՞նչ կարող է ավելի հաճելի լինել Աստծուն, քան այն, որ թույլ տանք Իր Վսեմությանը տիրանալ մեզ, և սովորենք, թե ինչպես տիրանանք Իրեն: Այս խաղաղության հանգստությունը աճ կբերի աստվածային միության մեջ, զորություն կտա շարունակելու այն, ինչ Հայրը ծրագրել էր ինձ համար, ինչպես նաև նախանձախնդրություն և ծարավ հոգիների փրկության համար:

Ես նկատել էի նաև, որ Աստված հիմա Իր Հայացքը ուղղել էր ավելի շատ այն ծառայությունների վրա, որոնք ես մատուցել էի Նրան, հակառակ իմ դյուրաբեկությանը, և որ Նրա սիրով լի ուսուցումները կենտրոնացած էին այն բանի վրա, թե ես դեռ ինչ ունեի անելու: Այլ կերպ ասած, պատգամները դառնում էին ավելի անձնական, չնայած երբեմն-երբեմն Աստված դիմում էր Իր ողջ Եկեղեցուն:

Ուզում եմ նաև ավելացնել, որ մարդկանց կողմից գովաբանվելու սարսափն իմ հոգում այնքան էր ուժեղացել, որ շատ անգամ գլուխս կորցնում էի, կամ սատիկ հուզվում: Նույնիսկ, երբ նկատում էի, որ մարդիկ ավելի շատ ինձ վրա են կենտրոնանում, քան մեր Աստվածային Տիրոջ Խոսքերի վրա, միայն սա ինձ ավելի էր ստիպում ետ քաշվել, ավելի մոտենալով Աստծո Սիրուն՝ Նրա գրկի մեջ: Երբեմն ինձ տրված այդ հատուկ ուշադրությունը զզվելի էր իմ աչքում... Հիմա Աստված ինձ ավելի պարզ դարձրեց, որ որևէ շեղում աշխարհի և մարդկանց կողմից կարող էր վնասակար ազդեցություն ունենալ ինձ վրա, որն ինձ կհեռացներ Սիրո Գրկից՝ այն Տեղից, որտեղ ես ցանկանում էի մնալ:

Ես ստացել եմ շնորհների օվկիանոսներ, պարգևների օվկիանոսներ, բայց արդյո՞ք ես բավարար չափով գովաբանել եմ իմ Աստծուն: Արդյոք ես անփո՞ւյթ եմ եղել Նրա պարգևների հանդեպ):

Իմ Վասո՛ւլա, ամուր կանգնիր այն ամենի վրա, ինչ որ Ես փոխանցում եմ քո բանականությանը և հենվիր Իմ Սրտի վրա: Ես քո Ժայռն եմ: Այո՛[1]... Ես ցանկանում եմ, որ դու Իմը լինես: Այս տարվա ընթացքում Ես ցանկանում եմ, որ Իմ սիրելին իրեն հանձնի մտահայեցության քաղցը հանգստին, հետ քաշվելով աշխարհի աղմուկից ու իրարանցումից՝ մտնելով Իմ երկնային Գրկախառնության մեջ: Դու Ինձ դժգոհություն կպատճառեիր, եթե հակառակվեիր Իմ Կամքին: Ես ուզում եմ, որ դու հանգիստ լինես Իմ փառքի համար, բայց նաև՝ Իմ Եկեղեցու օգուտի համար: Հաճախ արի Ինձ մոտ, որ գրես Իմ ասածները: Ես քեզ կարող եմ

[1] Այդ «այոն» իմ զգացմունքների հաստատումն էր:

օգտագործել, որպեսզի Իմ Եկեղեցին վերանորոգի Իրեն՝ աճելով շնորհի մեջ: Ես սկզբում քեզ ցույց եմ տվել Իմ հոգնածությունը և խնդրել քեզ, թե արդյոք կկամենայի՞ր հանգիստ տալ Ինձ: Հիմա Ես կարող եմ ասել[1].

«Իմ սիրելին Իմ դրախտն է,
Իմ Տան քաղցր բուրմունքը,
որ վայելում է Իմ բարեհաճությունը:
Նա Իմ հրեշտակների երգն է:
Ո՜հ, Ես ի՜նչ չեմ անի նրա համար»:

Ո՜վ Աստվա՛ծ, անհուն և գերազանց,
ինչպե՞ս կարող էիր Դու
սկզբից ի վեր
նայել Քո այս խիստ անարժան
և ըմբոստ արարածի վրա:

Ես՝ Հիսուս, կարող եմ որևէ մեկին իրազեկ դարձնել Իմ Զորությանը և Իմ Անսահման Ողորմությանը... Անջատի՛ր քեզ այս[2] Կրակից, որ բխում է Իմ Սրտից, և դու կհանդչես: Ես կարող եմ քեզ պահել բոցավառ ու խանդավառ՝ կենդանացած Իմ Տան և Իմ Տան անդամների հանդեպ քո ունեցած ջերմ սիրով: Ես կարող եմ կյանքի բերել որևէ մարդու և առաջնորդել նրան սիրո լարերով դեպի կատարելություն...

Տե՛ր Աստված, ես միշտ վախեցել եմ
ինձ ուղղված մարդկանց
գովեստներից և միշտ մտածել եմ,
թե այդ ամենը
որքան է ազդում Քեզ վրա:
Այս ամբողջ ժամանակ
ես փորձել եմ ետ պահել ինձ
այս երկրային կրքից,
որովհետև սկզբից ի վեր
Դու ինձ հասկացրեցիր
իմ ծայրահեղ թշվառությունը,
և որ ես ամենից նվաստն եմ:

Քո Բառերը մուրճի պես էին՝
հարվածելով իմ հոգուն,
փորագրելով դրանք իմ սրտի վրա:
Ժամանակ առ ժամանակ
Դու հիշեցնում էիր ինձ
իմ ոչնչությունը, որ եթե նույնիսկ
ես համարձակվեմ դունչս
գեթ մի պահ վեր բարձրացնել,
ես կկորցնեմ Քո Սիրտը և բոլոր
աստվածային շնորհները նույնպես:

[1] Մեր Տերը ինձ քնքշորեն ասաց այդ բառերը:
[2] Հիսուս չեշտեց այս բառը՝ մատնանշելով Իր Սուրբ Սիրտը:

Քո լիառատ սիրով
Դու մոտ պահեցիր ինձ Քո Սրտին,
և այդ կերպ ինձ պաշտպանելով,
Դու Քեզ հասկացնել տվեցիր ինձ,
որ մի ոչնչություն մնալով,
Դու մեծ հաճույք կստանաս
այդ դիմադրկումից, որովհետև
Դո՛ւ պիտի անես ԱՄԵՆ ԻՆՁ
և պիտի լինես ԱՄԵՆ ԻՆՁ:

Իմ վաղ մանկությունից ի վեր,
դևը երևում էր ինձ
մի գռմռացող սև շան պես՝
պատրաստ ինձ բզկտելու,
բայց Քո ամենազոր քայլերը
պաշտպանեցին ինձ:

Քո մշտական Ներկայությունը
պահպանում էր ինձ,
առաջնորդելով ինձ Քո Սրտի
աստվածային միության մեջ,
անքակտելիորեն միացած մնալով
Աստվածության հետ:
Այսպիսի մի աննկարագրելի ձևով
առաջնորդվելը մինչ օրս
ինձ թվում է ինչպես մի երազ...

Հոգիների Ամուսի՛ն,
ես սիրում եմ Քեզ:

Նայի՛ր այս Սրտին, որն ընտրեց քեզ, դա այն նույն Սիրտն է, որ խոցվեց... Դու ճաշակել ես դա, զգացել ես, լսել ես: Իմ յուրայի՛ն և Իմ զավա՛կ, դեռևս, մեր գործն ավարտված չէ, որովհետև Իմ Արյունը, ինչպես մի գետ շարունակում է դուրս հոսել Իմ Սրտից:

Դու ես իմ միակ Բարօրությունը: Ի՞նչ կարող եմ անել Քեզ համար:

Լսի՛ր և գրի՛ր. Իմ պաշտոնյաներից շատերը ամայացրել են Իմ Խաղողի Այգին, և Իմ ոչխարները ցրված են: Նրանցից շատերն ավերակ են դարձրել, ամայացրել Իմ Տունը... Եվ նրանք գիտեն այդ: Նրանց մեջ խաղաղություն չկա, և իրենք գիտեն այդ: Ես հիասթափված եմ նրանցից, և այդ է պատճառը, որ նրանք չեն ուզում լսել Ինձ: Կարո՞ղ են նրանց խոստումներն ազատել նրանց իրենց մեղքից:

Ո՛չ, Տե՛ր իմ, կարծում եմ, որ չեն կարող, քանի որ մեղքը՝ մեղք է:

Նրանք պետք է հետևեն Իմ ուղիներին և ապաշխարեն: Այդ դեպքում զմուռսի բույրի պես նրանց բուրմունքը վեր կբարձրանա և անուշաբույր

կդարձնի Իմ Տունը: Այդ ժամանակ Ես կմշակեմ Իմ որդիներին [1] և ուրախությամբ կսպասեմ նրանց հրաշալի բերքին: [2]Ես քեզ եմ վստահում Իմ Պաշտոնյաներին... Քո Արարիչը կլսի քո աղոթքները: Միշնորդի՛ր նրանց համար: Աղոթի՛ր և խնդրիր Հորը, որի համբերությունը երկար է, որ ների նրանց: Մի՛ հապաղիր... Մի՞թե չգիտես, որ նույնիսկ քո մանկական թոթովանքները լսվում են Հոր կողմից, և ողորմածաբար Նա արձագանքում է դրանց: Նա քեզ այնքան շատ շնորներ է տվել: Քո այդքան թույլ լինելու առավելությունը և հենց քո թշվառությունը ստիպում են Նրան ցած խոնարհվել Իր Գահից:

Տե՛ր, ես առաջարկում եմ Քեզ
իմ կամքը և այն ամենն,
ինչ ավելի շատ
փառք կբերի Քո Անվանը:
Դու իմ Արքայական Խնջույքն ես:

Աղքատներին ուտելիք բերելը և նրանց տալը՝ Մեր ուրախությունն է: Մնա սերտ միության մեջ Իմ Սրտին և լսիր Նրա տրոփյունը... ic:

Հունվարի 20, 1999

(Տերն ինձ մի տեսիլք տվեց. ես տեսա 8-10 տարեկան մի քանի մանկահասակ տղաների, որոնք խաղում էին չափազանց վտանգավոր և հիմար ձևով: Նրանք քայլում էին խուրձի եզրով, որը շրջապատված էր մոտ յոթ հարկանի մի բարձրահարկ շենքով:

Տղաներից մի քանիսը թաքնվում էին ջրի խողովակաշարի ետևում, ասես պահմտոցի էին խաղում: Այս բոլոր խաղերը խաղում էին շենքից դուրս: Նրանց ներքևում դատարկ տարածություն էր: Տղաներից մեկը նույնիսկ ցատկեց իր պատուհանից, այնպես, որ հազիվ հասավ հարևան շենքի պատուհանին: Ես փակեցի աչքերս, չդիմանալով այն մտքին, որ կարող էի տեսնել, որ նրանցից մեկը սխալ քայլ կանի, կսայթաքի ու վայր կընկնի: Նկատի ունենալով բարձրությունը, անկումը կլիներ մահաբեր: Ես վախեցա նրանց համար և չկարողացա հասկանալ, թե ինչու էին նրանք այդ աստիճան վտանգի ենթարկում իրենց կյանքը՝ այդպես վտանգավոր կերպով խաղալով: Հետո ես հասկացա, թե նրանք ինչու չէին վախենում: Դա այն պատճառով էր, որ նրանք չէին տեսնում, հասկանում և ըմբռնում վտանգը):

Վասո՛ւլա, Ես տալիս եմ քեզ Իմ խաղաղությունը միասնության այս շաբաթվա մեջ: Ես՝ Աստված, կանչել եմ քեզ խաղաղ մի կյանքի: Ուրեմն ի՞նչ տեսար, աղջի՛կս: Ի՞նչ նկատեցիր: Դու նախկինում լսե՞լ ես Իմ այս խոսքերը. «Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր սպանում են մարմինը, բայց չեն կարող սպանել հոգին: Ավելի շուտ վախեցեք նրանից, ով կարող է ոչնչացնել թե՛ մարմինը, և թե՛ հոգին դժոխքում»: Թույլ տուր Ինձ

[1] պաշտոնյաներ կամ հովիվներ
[2] Հանկարծ Տերը շրջվեց դեպի ինձ, և երբ Նա ասաց. «Ես քեզ եմ վստահում իմ պաշտոնյաներին...», ես այնպես զգացի, կարծես Նա Իր վրայից վերցրեց ողջ Եկեղեցին, որը կրում էր, և դրեց այն ինձ վրա:

բացահայտել քեզ այս տեսիլքը: Տղաները, որոնց դու տեսար, նրանցից մի քանիսն են, ովքեր մոտ են քեզ, և որոնք մի ժամանակ մղվել են Հոգու կողմից հետևելու Իմ Պատգամներին, և առաջարկել են նաև իրենց օգնությունը: Այսօր Սատանան մաղում է նրանց և առաջնորդում, որ վտանգավոր խաղեր խաղան, առանց հասկանալու: Եթե նրանք ընկնեն, նրանց Հոգին մահացու կերպով կվիրավորվի: Բայց եթե նրանք լսեն Իմ Հոգուն, նրանք վերջ կտան իրենց սխալներին և կապրեն:

Ուրե՞մն: Ո՞րն է այն գերագույն օրենքը, որ Ես տվել եմ ձեզ Սուրբ Գրքերում: Մի՞թե սա չէր. «Սիրիր քո մերձավորին քո անձի պես»: Մինչ օրս, բոլոր նրանք[1], որոնց դու տեսար Իմ կողմից քեզ տրված տեսիլքում, կարծում են, թե իրենք արդար են, բայց եթե նրանք արդար են, թող այդ ցույց տան բարյացակամությամբ՝ խոնարհության և ողորմության իրենց արարքներով, և միմյանց հանդեպ իրենց ունեցած սիրով: Նրանցից ոմանք չեն հարգում նրանց, ովքեր աղքատ են, և նրան, ում Ես ընտրել եմ Իմ Խոսքերը[2] կրելու և Իմ Շահերի մասին հոգ տանելու: Եվ, այո՛, ինչպես տեսիլքում, եթե դու նրանց զգուշացնեիր, նրանք չէին լսի... Եվ այդ միջոցին Ես նույնպես դողում եմ վախից, ինչպես դու քո տեսիլքում, որովհետև նրանց անկումը մահացու կարող է լինել:

Իմ զավակները, որոնց Հոգին կանչեց և հուշեց, հիմա տեղի են տալիս գայթակղություններին, բայց եթե նրանք թույլ տան, որ Իմ Սուրբ Հոգին լինի իրենց առաջնորդը, նրանք վտանգի մեջ չեն լինի: Դրա համար նրանք պետք է Ինձ մոտ գան և ապաշխարեն: Նրանք չպետք է չարաշահեն Իմ բարությունն ու Իմ համբերությունը, այլ պետք է ընդունեն դրանք, որ առաջնորդեն նրանց դեպի ապաշխարություն, և այդպիսով նրանք ներում կստանան և չեն կորցնի Իմ Սիրտը:

Ես խոստանում եմ, որ եթե որևէ մեկը որոշի բարիք գործել՝ պատիվ տալով Ինձ, և հաշտվի Իմ և իր մերձավորի հետ, նա խաղաղություն կստանա և կհասկանա, որ իրենց թուլության և իրենց քնի մեջ նրանք մոլորվել էին: Ես այլևս ոչ մեկից անախորժություն չեմ ուզում: Ոչ էլ պետք է որևէ մեկը խաբի ինքն իրեն՝ մտածելով, թե ինքը արդար է: Ես կրկնում եմ Իմ նախազգուշացումը. մոլորության մեջ մի՛ ընկեք, մտածելով, թե արդար եք: Եթե որևէ մեկն աշխատում է կամ որոշում է աշխատել Ինձ համար, նա պետք է հետևի Ինձ Իմ Ոտնահետքերով՝ սրտանց, պատվով և ուրախությամբ տանելով Իմ Խաչը: Երբ սա արվում է բարի կամեցողությամբ, նրանք ինչպես հարկն է կվարձատրվեն այն ողջ աշխատանքի համար, որը լավ է կատարվել Իմ Անվամբ:

Ոչ մեկը մյուսի տերը չէ[3]: Ես եմ միակ Տերը: Ես դրդում եմ նրանց, որ ապաշխարեն և դառնան դեպի Ինձ և ապացուցեն Ինձ իրենց բարի կամքը:

Խորհրդակցիր Ինձ հետ որևէ ժամանակ, Վասո՛ւլա, և Ես կպատասխանեմ քեզ: Ես օրհնում եմ քեզ, փարվիր Հույսին[4]:

Արիացի՛ր, աղջիկս: ic:

---

[1] Տերը հասկացրեց ինձ, թե ովքեր են նրանք՝ իրենց անուններով:
[2] Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ
[3] Այլ խոսքով, Հիսուս նկատի ունի, որ, Աստծո համար աշխատող խմբում, ոչ մեկը չպետք է դառնա դիկտատոր՝ հրամայելով իր շուրջը գտնվողներին և «զտելով» ամեն ինչ:
[4] Դա նշանակում է. «Փարվիր Ինձ»:

(Այս պատգամը տրվեց ՃԿԱՄ երկու ընկերակցություններին: Ես անձնապես չգիտեի, որ նրանց մեջ անհամաձայնություններ և վեճեր կային: Ես գիտեի, տեսիլքից հետո, թե որ ընկերակցությունների մասին էր խոսքը, և Տերն ինձ հասկացրեց, թե ովքեր էին նրանք:

Հատկապես մեկը կար, որ «կառավարում» էր բոլորին: Սա Հիսուսին դուր չէր գալիս, ոչ էլ Նրան դուր էին գալիս մյուսները: Նրանք մահացու անկման վտանգին ենթարկեցին իրենց, և այդ էր պատճառը, որ Աստված միջամտեց Իր անսահման Սիրուց մղված):

(Ավելի ուշ)

Իմ Վասուլա. սա՛ Ինձ, արդյոք աշխարհում կամ քո շրջապատում կա՞ որևէ բան, որը կարող է տալ քո հոգուն ավելի սքանչելի և սիրավառ բերկրանքներ, քան Ինձ հետ լինելը, մենակ Ինձ հետ: Ի՞նչ է տալիս քեզ Իմ Ներկայությունը:

(Մինչ ես բառեր էի փնտրում, որ արտահայտվեմ, զգացի, որ Սուրբ Հոգին եկավ ինձ վրա...)

- Երանական տեսիլքի կանխաճաշակում:

- Քո Փառքի մասին մտահայեցություն:

- Մի ներքին ուրախություն, որը տրվում է արժանավոր սրբերին: Ես ոչ մի արժանիք չունեմ:

- Գիտակցական ընկալում, որ Քո վերանցական լույսով, Դո՛ւ, Աստվածությունդ, որ լցնում է ամեն բան առանց սահմանափակվելու, կարող ես բնակվել իմ մեջ...

- Քո Ներկայության մեջ ես գտնում եմ հրճվանք, լույս, կարոտի հոգոցներ, տենչալով նույնիսկ ավելի խորը թափանցել ներհայեցողության մեջ, որպեսզի տեսնեմ այն, ինչ ո՛չ մի աչք չի տեսել, և լսեմ՝ ինչ ոչ մի ականջ չի լսել...

Աղջի՛կս, կառչիր Ինձանից, և միասին, Իմ Բազուկը քո բազկին, ինչպես հայրը կամ ազգականներից մեկն է հարսին տանում դեպի խորան, որ նա հանդիպի իր Փեսային, ես քեզ պիտի տանեմ Իմ Թագավորությունը, որ թագավորես Ինձ հետ [1]: Շրջապատված զմայլված հրեշտակների բազմությամբ, մի անսահման ուրախությամբ, քեզ պիտի տանեմ հավիտենական փառքի մեջ: Եվ մեկ անգամ ևս ողջ երկինքը պիտի բացականչի ուրախությամբ և պիտի երգի.

«Աստված գործում է: Կանչի՛ր բարձրաձայն, դո՛ւ, երկիր, որ ներքևում ես: Ուրախությամբ բացականչե՛ք, դո՛ւք, լեռներ: Արքայական շռայլությամբ է թագավորների Թագավորը գտել Իր հաճույքը Իր ընտրյալի մեջ: Իսկ հիմա եկեք գովաբանենք Տիրոջը, որ արարեց նրան: Բարձրացրե՛ք Տիրոջը ձեր գովքերում»:

Այո՛, ես թույլ եմ տվել քեզ լսելու Իմ Ձայնը: Ես թույլ եմ տվել քեզ տեսնելու Ինձ դեմ առ դեմ: Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ եմ ես շնորհ արել քեզ:

[1] Բ Տիմ. 2:12

Որպեսզի փրկես մեր սերնդին Քո պատգամի միջոցո՞վ:

Որպեսզի ցույց տամ Իմ Անսահման Ողորմությունը ձեր բոլորին, և նրանով, ինչ ես վստահել եմ քեզ, որ անես, ես պիտի բանաստեղծություն ղողանջեմ քո բերանով յուրաքանչյուր քայլափոխիդ, և պիտի փրկեմ այս սերնդին...

Իմ Սրտի խունկ և հանգստացնող բուրմունք, դու մենակ չես, ես՝ քո Տերը և Փրկիչը, քեզ հետ եմ: Իմ Եկեղեցու զարդարանք, վեր բարձրացրու աչքերդ դեպի Ինձ[1] և օրհնյալ եղիր:

Իմ Սիրելին
Իր ողջ Սիրտը դրել է երգի մեջ՝
Իր արարչության հանդեպ
ունեցած սիրուց ելնելով:

Նա տեղադրել է քնարներ,
որ արձագանք տան աշխարհով մեկ՝
Ապրելու համար
Ճշմարիտ Կյանք Իր մեջ:
Հեղեղների պես Աստվածային
Ողորմություն հորդելով,
Նա լցնում է ամեն կարիք:

Քո Անունը, ո՜վ Սո՛ւրբդ,
Մաքրամաքուր, հասել է նույնիսկ
ամենահեռավոր ժողովուրդներին,
Այո՛, Դու բոցավառել ես
համակ ազգեր
Քո աստվածային քաղցրությամբ,
կանխելով մարդկանց մեղանչելուց,
լռեցնելով նրանց քրթմնջոցը,
ովքեր դեմ են կանգնում Քեզ:

Ես երբևիցե զրկե՞լ եմ որևէ հոգու Իմ Սիրուց և Ողորմությունից:

Երբե՛ք...

Երբ ես ապրում եմ մի քաղաքում, կարո՞ղ է այդ քաղաքն[2] ընկնել: Ձե՞ս կարդացել. «Մի Գետ կա[3], որի հոսանքները վերակենդանացնում են Աստծո քաղաքը, և այն սրբագործում է Ամենաբարձրյալի բնակարանը»: Ես Աստված եմ:

Ո՜վ մեր հոգու Աղբյուր,
ի՞նչ ձևով կարող եմ արտահայտել,

[1] Երբ ես վեր նայեցի տեսա Նրան, ում իմ սիրտը սիրում է՝ ժպտալիս, մեկ անգամ ևս ցույց տալով ինձ Իր փոսիկները...
[2] Աստված նկատի ունի «հոգին»:
[3] Սուրբ Հոգին

թե ինչպես Դու հասար մեզ
մեր թշվառության մեջ:
Ահա՛, Դու առաջարկում ես մեզ
Քո Սերն ու Ողորմությունը:
Ինչպես ոսկե սյուներ
արծաթե հիմքի վրա՝
Դու հաստատում ես մեր ոտքերը:

Դու փոխակերպում ես մեր դեմքերը
Քո Աչքերի մի հայացքով,
դարձնելով նրանց Ճրագի պես, որ
փայլում է սուրբ Պատվանդանի վրա:

Այո՛, անշուշտ, միայն Կյանքի Գետը,
որի հոսանքները
թարմացնում են Աստծո քաղաքը,
սրբագործում է այն Նրա համար:

Սուրբ Գրքերն ասում են,
իրականում դրանք
Քո Սեփական Բառերն են,
մարդկության Սիրահար,
որ եթե որևէ մեկը սիրում է Քեզ,
նա կպահի Քո Խոսքը,
և որ Քո Հայրը կսիրի նրան,
և Դուք երկուսդ էլ կգաք նրա մոտ
և կբնակվեք նրա հետ[1]*:*

Ես անասելի հրճվանքների Ակունք եմ, և Իմ Անսահման Ողորմությամբ Ես ցանկանում եմ փոխակերպել ձեր հոգին մի Եդեմի՝ համապատասխան Մեր Երրորդության Սրբությանը: Ես ցանկանում եմ առաջնորդել յուրաքանչյուր հոգու ետ դեպի Ինձ, որպեսզի նրանք հասնեն իրենց Հանգստի Վայրը: Ուստի, Իմ Վասուլա, վճռական եղիր, որ հանուն Ինձ պահպանես Իմ ուսուցումները: Տեսնո՞ւմ ես, հողը տվել է իր բերքը, լեռներն ու հովիտները ցած են խոնարհվում[2], երբ Ես անցնում եմ: Այս հայտնության միջոցով Իմ Ձայնը լսվում է: Երբեք ուշադրություն չդարձնես սրտով հպարտներին: Հիշի՛ր, սիրելիս, որ Ես զորություն ունեմ տապալելու թագավորներին և թագավորություններին, եթե դրանք խոչընդոտ դառնան Ինձ համար:

«Հպարտության դագաթնե՛ր, մի՞թե դուք իրավունք ունեք վերևից նայելու այն լեռանը[3], ուր Աստված ընտրել է բնակվելու համար, ուր Յահվեն ընդմիշտ բնակվելու է»[4]:

---

[1] Հովհ. 14:23

[2] Խորհրդանշական իմաստ ունի. նշանակում է, որ մեծ իշխանություն ունեցող, ինչպես նաև աննշան մարդիկ համեստորեն խոնարհվեն՝ ընդունելով Աստծո միջամտությունը:

[3] Աստված նկատի ունի, որ ոչ ոք իրավունք չունի քննադատելու նրան, ում Ինքը ընտրում է, և ում մեջ որ Նա ուզում է հաստատել Իր բնակությունը:

[4] Սաղմ. 67:16-17

Իմ Սուրբ Հոգին քո ականջին չշնչացել է մեղրից էլ քաղցր խոսքեր, նույնիսկ այն մեղրից, որը կաթում է մեղրախորսխից՝ քեզ և ուրիշներին բարձրացնելով մեռածներից: Տեսնո՞ւմ ես, փրկությունը գալիս է Ինձնից:

Սիրելի՛ս, օրինակ եղիր մյուսների համար և սիրիր Իմ Հոգին, քանի որ Նա մի օր քեզ կտա քո աշխատանքի վարձը և... Մի՛ վախեցիր նրանցից, ովքեր հավատացած են, թե իրենք զորություն ունեն իրենց ենթարկել ամեն ինչ, որովհետև Ես քեզ հետ եմ և քո կողքին:

Իմ Վասուլա, նորից Ես քեզ խնդրում եմ, որ լինես ինչպես մի շուշան Իմ Պարտեզում[1], որ անուշաբույր դարձնես Ինձ: Բուրումնավետ դարձրու Ինձ, ընտրյա՛լս, Ես հառաչում եմ քո սիրո համար, քո անձնատվության և քո կրքերից հրաժարման համար:

Օ՜, դո՛ւ, որին միայն Ես վստահեցի Իմ Սրտից[2] եկող այս գանձը, մնա՛ հիմա Իմ գրկում՝ բուրումնավետ դարձնելով Ինձ քո ոչնչության մեջ, և Ես Իմ հերթին բուրավետ կդարձնեմ քեզ, որ լինես Իմ դրախտը:

Ամո՛ւր կաչիր Ինձնից և այն ամենից, ինչ Ես քեզ տվել եմ ձրիաբար: Երբեք մի՛ հոգնիր գրելուց:

Ես քեզ հետ եմ: ic:

Փետրվարի 2, 1999

Տե՛ր, թույլ տուր ինձ կարդալ Քեզ համար, թե ինչ է գրել սուրբ Հովհաննես Ոսկեբերանը: Իրականում, դրանք Քո խոսքերն են, Քո խոսքերն՝ ուղղված մեզ, նրա միջոցով.

Ահա թե Դու ինչ ես ասել.

«Ես՝ քո հայրը, ամուսինդ,
Ես՝ քո տունը, Ես՝ դայակդ,
Ես՝ արմատդ, Ես՝ քո հիմքը:
Ինչ որ ցանկանաս, կլինեմ Ես:
Դու ոչնչի պակասություն
չես ունենա:

Ես քեզ համար պիտի ջանամ:
Քանզի ծառայելու Ես եկա
և ոչ թե ծառայություն ընդունելու:
Ես բարեկամ և հյուրընկալ
կլինեմ քեզ,
ղեկավար՝ քեզ և՝ եղբայր,
քույր՝ քեզ և՝ մայր:
Ես ամեն բան կլինեմ:
Միայն թե մտերիմ եղիր Ինձ հետ:
Քո սիրո համար կլինեմ աղքատ,
թափառական՝ քո սիրո համար,
Խաչի վրա՝ քո սիրո համար,

[1] Տերը նկատի ունի Իր Սիրտը:
[2] Ես լսեցի, որ Տերն ասաց այս բառերը բարձրաձայն և տառապանքով: Դրանք հնչեցին ինչպես մի հոգոց:

Գերեզմանում՝ քո սիրո համար:
Վերևում ես Հորը հայցում եմ
քե՛զ համար, երկրի վրա Հոր առաջ
բարեխոս դարձա քե՛զ համար:
Դու Ինձ համար ամե՛ն բան ես՝
եղբայր, ժառանգակից,
բարեկամ և ընկեր:
Էլ ավելին ի՞նչ ես ուզում»:

Ես շատ անգամ եմ զիջել Իմ Արքայական Գայիսոնը ձեզ բոլորիդ հասնելու համար, և բազմիցս եկել եմ ձեզ մոտ՝ ձեր գլուխները բուրումնավետ դարձնելու համար: Արքայական շռայլությամբ Ես հրապուրել եմ ձեզ՝ դիմելով ձեզ քնարերգությամբ: Կրոնն ու առաքինությունն են եղել Իմ քաղցր զրույցը ձեզ հետ, ձեր կյանքի բոլոր օրերին:

Այս բոլոր տարիների ընթացքում[1] Ես Իմ Գլուխը դրել եմ քեզ վրա: Ես հրճվել եմ քեզանով: Իմ Սիրտն ասաց քո մասին. «Դարձրու նրան մի կենդանի խորան Քո Խորհրդավոր Մարմնի համար[2]: Թող նա սովորի վանել այն ամենն, ինչ Քեզնից չի գալիս, պահիր նրան թաքնված Մեր մեջ, որպեսզի նա դառնա մի ցնծալից զոհողություն՝ պատրաստ վաճառվելու աշխարհին և գոհությամբ ծառայելու»: Ես Իմ կարեկցանքով և Իմ անսահման Սիրով Իմաստություն եմ տվել քեզ, որ քեզ ուսուցանեմ, որպեսզի քո միջոցով ավարտեմ Իմ Եկեղեցու վերաբերյալ Իմ ծրագրերը:

Տեսնո՞ւմ ես, սիրելի՛ս, թե ինչպիսի մեծ վճռականությամբ եմ Ես իջել քո դյուրաբեկության վրա, որ քեզ և քո միջոցով ուրիշներին դարձնեմ Իմ Եկեղեցու ամուր սյուները: Եվ Ես Իմ ողջ Սրտով օրհնում եմ քեզ և բոլոր նրանց, ովքեր դարձան աստվածային կրակի սյուներ՝ Իմ խոսքերը այս հրատապ Պատգամներում փոխանցելու համար, և ովքեր կամավոր կերպով, սիրով օգտագործեցին այն ամենը, ինչ կարող էին, անխնա սիրով և եռանդով, տարածելու համար Ճշմարտությունը և քրիստոնեա դարձնելու քրիստոնեությունից հեռացած այս բնակչությանը: Ես քեզ հետ եմ, և Ես խոստանում եմ քեզ, որ քեզ և մյուսներին փոխհատուցեմ հարյուրապատիկը:

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես եմ Ես աճեցնում խաղաղության դեսպաններ, տեսնո՞ւմ ես, թե ինչպես եմ Ես շտապում՝ փրկելու Իմ Տունը: Հասկանում ես, Իմ Վասո՛ւլա, Իմ Աչքերը չափազանց մաքուր են՝ կանգ առնելու ըմբոստության վրա: Իմ Գործի հոյակապությունը (քանի որ սա Իմ Գործն է), բոլոր հոգիներին Իմ Սուրբ Սրտի մեջ բերելն է: Եթե Ես չշտապեմ՝ Իմ Գայիսոնով աշակերտներ աճեցնելու, թզենին չի ծաղկի: Ոչ էլ խաղողի որթի վրա պտուղ կմնա, իսկ Իմ ոչխարները կշարունակեն ցրվել, մինչև որ ոչ մեկը չի մնա փարախում: Բարեգթությունն ու Ողորմությունը չեն կարող դիմանալ, տեսնելով թե որքան շատ հոգիներ են գնում դեպի հավիտենական կրակները:

[1] Այն օրվանից, ինչ ես բացեցի իմ սրտի դուռը Տիրոջ համար:
[2] Եկեղեցին

Առանց դադարի և առանց հոգնելու, Իմ Սիրտը Ձեռքիս մեջ, ես պիտի շարունակեմ նայել յուրաքանչյուր սրտի պատուհանին, որ արթնացնեմ այն և բերեմ նրան Իմ Աստվածայնության Բոցավառ Սիրո մեջ:

Հետո, ես անզուգական և սրբագործված շնորհների հեղումով, նրա խորանի վրա պիտի դնեմ անհրաժեշտ բոլոր առաքինությունները, որ նրան հասցնեմ Հոր, Իմ և Սուրբ Հոգու հետ կատարյալ միության մեջ, ընկղմելով նրան երկնքի հավիտենական ուրախությունների և Մեր բերկրանքների մեջ:

Հիմա ես ասում եմ քեզ, այնտեղ, ուր դու ես[1], ամեն ինչ անցնում է ստվերի պես, բայց Իմ խոսքերը երբեք չեն անցնի ու դնա[2]:

«Ես պիտի ավելացնեմ քո եռանդն ու նվիրվածությունը Իմ Տան հանդեպ, իսկ կրակը, որը ես պիտի դնեմ քո ներսում, զինաթափ պիտի անի մեծերին: Թող քո ներսում գտվող այդ Աղբյուրը երբեք չցամաքի: Շարունակի՛ր ջերմեռանդորեն և անհագ կերպով աշխատել պաշտպանելու համար Ճշմարտությունը և Իմ Եկեղեցին, որը ես գնեցի Իմ Սեփական Արյամբ: Թող քեզ հետապնդողների խարազանը երբեք չընկճի քեզ, ոչ էլ հոգնեցնի քեզ, այլ թող քո հանդեպ կատարված այդ անազնիվ վարմունքը քեզ ավելի ուժեղ դարձնի՝ Իմ Բերանից ներշնչելով այն շնորհները, որոնք պետք են քեզ՝ հոգիդ հանդարտ և խաղաղության մեջ պահելու համար»:

Ա՜խ, սերո՛ւնդ, ավելի մեծ օգուտ, քան այս Գիրքն է[3], ձեր այսքան թշվառ ժամանակների համար, դուք երբեք չեք ստանա: Ավելի մեծ նվեր Իմ Եկեղեցու նորոգման համար, Նա չէր կարող ստանալ, բայց մեկ անգամ ևս, Իմ Եկեղեցին Ինձ հուսախաբ է անում, քանի որ Նա չի հասկացել Իմ մտադրությունները...

Արի՛, Վասո՛ւլա, Օծյալը քեզ ապաստան կտա Իր Սուրբ Սրտում: Սիրի՛ր Ինձ հավասարապես, ինչպես Ես եմ քեզ սիրում: Արի՛, յուրայինս, և անուշահոտությամբ բուրիր Իմ Սիրտը: Ես խոստանում եմ քեզ, որ մի օր Ես քեզ ցույց կտամ քո աշխատանքների քաղցր պտուղները, և դու կուրախանաս...

Հիմա արի Ինձ մոտ և ասա քո աղոթքները: Ես միշտ հուզվում եմ քո աղոթքներից: Արի՛ և արբեցրու Ինձ քո աղոթքներով:

Հիմա ես խոսքեր չեմ գտնում, Տե՛ր:
Որովհետև չգիտեմ,
թե Դու միշտ ի՞նչ ես գտնում
իմ այս անարժան և
անպետք սրտում, որ հեղես նրա մեջ
աստվածային խոսքեր,
որոնք ավելի քաղցր են,
քան մեղրախորսխից կաթող մեղրը:

[1] Դա նշանակում է երկրի վրա:
[2] Այստեղ Տերն սկսեց հետևյալ բառերն ասել այնպես, ինչպես մեկը երդվում է հանդիսավորությամբ, բայց միևնույն ժամանակ հնչում է որպես հրաման:
[3] Հիսուս նկատի ունի «Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ» հատորները:

Ես գնահատում եմ անմեղ հոգին գայիսոններից ու գահերից ավելի, անկախ նրանից, թե նա որքան թշվառ կարող է լինել: Մի՞թե անցյալ օրը չասացիր, որ դու քեզ մոր նման ես զգում Իմ հանդեպ: Մայր, որն ամեն ինչ կանի՝ պաշտպանելու համար իր զավակին աշխարհի մշտական վիրավորանքներից, ծաղրից ու նախատինքից: Իմ հանդեպ ունեցած քո սերը հուզեց Ինձ, անցնելով քո թշվառությունից այն կողմ...

Իմ Երկնային Պատարագ,
այդ Դու ես՝ Աստվածությունդ,
որ գերազանցում է բոլոր
արարածներին, որ հագցրեց ինձ
արքայական զգեստներ,
որ կարողանամ ներս ու դուրս անել
Քո Գավիթների մեջ:

Դու օծեցիր ինձ,
որ զրուցեմ Քեզ հետ դեմառդեմ,
հուզելով հոգիս
Քո հոյակապ թեմայով:
Դու սնեցիր ինձ Բարությամբ և
Քաղցրությամբ և առաջարկեցիր ինձ
մի արքայական խրախճանք,
որպեսզի ամեն ինչ
բաժանվի բոլոր ազգերին
առատաձեռնությամբ
և արքայական շռայլությամբ:

Մի՞թե այդ Դու չէիր, որ Քո
աստվածային առատաձեռնությամբ
հեղեցիր իմ մեջ
Աստվածային Սիրո հոսքը՝
հարություն տալով ինձ:

Բարեշնորհ Աստվա՛ծ,
Շնորհի քաղցր Հոգի,
Մարդկության գերագույն Սիրահար,
ով գիտեր և ով գիտի
իմ բոլոր թերությունները,
պակասություններն ու
նողկալիությունը:
Այդ ինչպե՞ս է, որ, այս բոլոր
«մահացու որդերին» հակառակ,
Դու դեռևս ողորմած ես իմ հանդեպ
և մոտենում ես ինձ:
Ճաճանչափա՛յլ Հայտնություն,
ես գովաբանում
և պատվում եմ Քեզ,
և խնդրում եմ, որ միշտ խղճաս
իմ թշվառությանն ու

անարժանությանը,
Kyrie eleisson (Տեր ողորմյա):

Ա՜խ, Վասո՛ւլա, երբ դու գիտակցում ես քո թուլությունը և քո թշվառությունը, ինամալով, որ միայն Ինձնից Կյանք կարող ես ստանալ, ես ուրախանում եմ: Երբ ընդունում ես, որ մեղավոր ես և միայն լիովին Ինձ հանձնվելով կարող ես Ինձնից շնորհներ ստանալ, այդ ժամանակ ես կարողանում եմ առաջ գնալ քո մեջ, և Իմ Կամքը կարող է կատարվել քո մեջ:

Փոխակերպված Իմ Սուրբ Հոգու Շնչի շնորհով, ես արդարև առաջ կտանեմ Իմ մտադրությունները քո մեջ:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ, եղի՛ր մեկ: ic:

Փետրվարի 5, 1999

Ես ի՞նչ կարող եմ տալ ի պատասխան
Ամենակարողի Բարությանը,
որը Նա ցույց տվեց իմ հանդեպ:
Նա հրաշքներ է կատարել իմ մեջ:

Ես կառուցեցի Իմ Գահը քո մեջ, որ այն քո մեջ կանգուն մնա բոլոր ժամանակներից էլ այն կողմ... Ես քո Թագավորն եմ, որ օծեց քեզ, որպեսզի դու մտնես Իմ Թագավորությունը: Ես քո Հոգու ապահովության Թագավորն եմ:

Սիրտս հալչում է մոմի պես
և հեղուկ դառնում
Քո Աստվածային
Ներկայության մեջ:
Ես ուրախանում եմ
Քո Շքեղության և Վեհության մեջ:
Դու ցույց ես տվել
Քո Զորությունը՝ թույլ տալով,
որ Քո Սուրբ Ներկայությունը
գետի պես հոսի իմ հոգու
անապատի մեջ: Ալելուի՛ա:
Եվ ամեն ինչ, որ աղտոտված էր
իմ հոգու չորության մեջ,
մաքրվեց Քո Սիրո մեծությամբ:

Այո՛, սիրելիս, ես հայտնի եմ Իմ Ողորմությամբ և Իմ գթառատ Սրտով: Զ՞ես լսել, թե ես ինչպես կարող եմ անապատները վերածել գետերի, իսկ չորացած հողերը՝ ջրի աղբյուրների: Փառաբանիր Ինձ ժողովների ժամանակ և հասկացրու այս սերնդին, որ Արքայական Արժանապատվությունն Իմն է: Նրանք ի՞նչ կարող են Ինձ տալ Իմ Գերիշխանության դիմաց:

Իմ Արքայական Սիրտը բարձրացնում է հոգով աղքատներին: Ես բարձրացնում եմ կարիքավորներին և թշվառներին, որ նրանց տամ արքայական զգեստներ՝ թույլ տալով քայլել Իմ Գավիթներում: Ես օրհնում եմ նրանց՝ ամբողջովին դրոշմելով Իմ Սուրբ Անունը նրանց վրա, բաց անելով առաքինության դարպասները նրանց համար, որպեսզի նրանց վարքը գոհացնի Իմ Արքայական Արժանապատվությունը: Իմ կողմից ուսուցանված, նրանք կսովորեն ապրել անբիծ կյանքով:

Ես պիտի հռչակեմ
բոլոր հավաքույթներում
Քո Անվան մեծությունը,
առանց վախի ես պիտի աղաղակեմ,
որ Ողորմությունը մեզ հետ է,
երկնքից ցած խոնարհվելով՝
մեզ հասնելու համար:

Իսկ նրանց, ովքեր
հալածում են ինձ,
Դու սիրով միջամտիր:
Փրկի՛ր ինձ մարդկանց ճնշումից:
Պաշտպանի՛ր ինձ, ինչպես
Դու խոստացել ես և թող կեղտոտ
ու ստախոս լեզուն խափանվի:

Դու որևիցե թերություններ նկատե՞լ ես: Շարունակի՛ր, ասա՛...

Ես սխալվո՞ւմ եմ, եթե ասեմ. Քո Տան «ներքին պատերին», այնտեղ, ես շատ քաջալերանք չեմ գտնում...

Ոչ ոք չի կարողանա քեզ կասեցնել, ոչ էլ նույնիսկ Իմ Տան «ներքին պատերը», ինչպես դու այն անվանեցիր, քանի դեռ Ես քեզ հետ եմ և քո կողքին:

«Ներքին պատերը» կփակվեին քեզ վրա, բայց որմնադիրները, ովքեր աշխատեցին կառուցել այդ պատերը, իզուր են աշխատել: Սոսկ Իմ Տան հանդեպ քո ունեցած նախանձախնդրությունը, որը կլանում է քեզ, ցած պիտի գլորի նրանց...

Ես քեզ չհարցրեցի, արդյոք աջակցություն գտնո՞ւմ ես, թե ոչ Իմ Տան «ներքին պատերից»: Ես հարցրեցի քեզ, արդյոք նկատե՞լ ես որևէ թերություններ...

Ո՛չ, ո՛չ ընդհանրապես:
Քո Պատգամը ծավալվում է,
և ես տեսնում եմ
Քո Փառքն ու Քո Զորությունը:
Մեծ են քո նվաճումները,
Աստվա՛ծ իմ:
Դու թույլ ես տվել քո զավակներին
տեսնել Քո Փառքը:

Դու ղեկավարում ես ամեն ինչ...
և Դու տարածում ես
«Ճշմարիտ Կյանք Աստծո Մեջ»
Քո Սուրբ Պատգամը...

Ուրեմն մի՛ վախեցիր: Ով էլ որ քեզ ցած խոնարհեցնի, ես նորից վեր կբարձրացնեմ: Ես քեզ աճեցրել եմ, որ լինես Իմ աշակերտը: Այդ Ես եմ՝ քո Փեսան, ուրեմն արի՛, մտիր Քո Տիրոջ ուրախության մեջ:

Ուշադիր լսիր և գրիր. մինչև օրս Իմ Գթառատ Կանչերը շատ ուշադրության չեն արժանացել[1], ո՛չ էլ Իմ նախազգուշացումներն են նկատի առնվել: Սանի՛կս, Իմ Վերադարձը մոտալուտ է: Ես քեզ դուրս եմ ուղարկել, որ հռչակես Իմ Խոսքերն այս աշխարհում և խոսես Իմ Սուրբ Անվամբ, բայց շատերը դեռ չեն լսում:

Սատանայի ժամը մոտենում է իր ավարտին, քանի որ Իմ հաղթանակը մոտ է: Ահա թե ինչու այդքան շատերին նա գերի է պահում, կապված ուրացությամբ, կապված ստով ու կեղծիքով:

Սերո՛ւնդ, սերո՛ւնդ, քո ուրացությունները բազմաթիվ են եղել, բայց սրանից ավելի մեծը Ես չեմ տեսել: Իսկ այսօր այս չար սերունդը մերժում է լսել Իմ Գթառատ կանչերը և շարունակում է հետևել իր սեփական քարացած սրտի թելադրանքներին: Թոթվելով իրենց ուսերը, նրանք ասում են, աղջիկս. «Մենք նախընտրում ենք անել այնպես, ինչպես մեզ դուր է գալիս...», և հետևում են չարին... Քանի որ նրանք լքել են Կենդանի Ջրի Աղբյուրը, նրանք կմեռնեն իրենց ուրացության մեջ:

Իմ Հայրն առավել քան վիրավորված է: Դեռ որքա՞ն ժամանակ երկիրը պիտի բաժանված լինի և մասնատված: Դեռ որքա՞ն ժամանակ Իմ Եկեղեցին պիտի բաժանված լինի և ըմբոստության մեջ[2]: Իմ Հոր Հոգին անընդհատ հայհոյանքի և ծաղրի է ենթարկվում Իմ սպասավորներից շատերի կողմից: Մի՞թե այս սերունդը երկնքից աղաղակ չի լսել տակավին: Մի՞թե դեռևս չեք լսել սրբերի ողբը ամենավերին երկնքից:

Ա՜խ, Վասուլա, այդ հոգիներին[3] տեսնելով իրենց պղծության մեջ հրճվելիս, ինչպե՞ս կարող է երկինքը վրեժխնդրություն չպահանջել: Եվ Ես կավելացնեմ արցունքն Աչքերիս, որ Իմ Եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաներից շատերն ավելի շատ վստահում են այն ամենին, ինչի մասին մարդիկ բարձր համարում ունեն, սակայն մոռանում են, որ այդ բաները նողկալի են Իմ Աչքին:

Ես լրջությամբ հարցնում եմ ձեզ. մի՞թե Ես չեմ լցնում երկինքն ու երկիրը: Այդ դեպքում մի՞թե Ես դուրս չեմ հեղի Իմ Սուրբ Հոգին ողջ մարդկության վրա և չեմ կատարի Իմ Խոստումը:

Ուստի, Ես ասում եմ բոլոր նրանց, ովքեր հետևում են իրենց կարծրացած սրտերի թելադրանքներին. «Քանի որ դուք չեք տեսնում, թե ինչպես է երկիրը լցվում Իմ Հոգու փառքի պայծառությամբ և շարունակում եք չար անվանել այն, ինչ որ բարի է և սուրբ, ձեր անվստահությամբ, դուք ձեր դլխին կբերեք ձեր սեփական մեղքերը»:

---

[1] Ոչ այնքան, որքան ակնկալվում էր:
[2] Ես միևնույն ժամանակ լսեցի՝ չհաշտված և խաղաղության մեջ չգտնվող:
[3] Հոգիները՝ սերունդը, որը ուրացել է հավատը:

Օրհնյալ լինեն նրանք, ովքեր հավատում են, թող նրանք մտնեն Իմ Ուրախության մեջ:

Ես չեմ ուզում, որ ոչ մեկն ընկնի մոլորության մեջ և հավատա, թե Իմ Հոր բարկությունը նվազել է: Նրա Ողորմությունը մեծ է, բայց Նրա խստությունը նույնքան մեծ է: Եվ, ա՜խ, սերունդ, ինչպե՞ս կարող եք խուսափել դատապարտումից: Այն, ինչ ցանել եք այս տարիների ընթացքում, դուք պիտի հնձեք...

Ուստի, Վասո՛ւլա, քո վազքը չի ավարտվել, գովաբանի՛ր Իմ Անունը Իմ հավաքույթներում[1]: Ես քեզ տվել եմ հոգևոր մի պարգև, որ կարողանաս շրջել հայրերի սրտերը դեպի իրենց զավակները, իսկ զավակների սրտերը՝ դեպի իրենց հայրերը: Շատերն օգուտ կստանան քո պարգևից և քո աշխատանքից: Նրանք, ովքեր կլսեն, իրենց սրտերում կստանան սրբագործող շնորհներ, և այդ շնորհների միջոցով իրենց մեղքերի ժանգի մեծ մասը կբուժվի, քանի որ նրանք այն մարդիկ են լինելու, ովքեր ողջունելու են Շնորհի Իմ Սուրբ Հոգուն:

Սրանք այն ժամանակներն են, որոնց մեջ Սուրբ Գրքերը[2] խոսում են Իմ Օրվա մասին և լափող կրակի մասին, երբ երկինքը պիտի բռնկվի բոցերով, և վա՜յ չապաշխարած սրտին: Դեռ որքա՞ն ավելի կարող եմ Ես ձեզ զգուշացնել, սերո՛ւնդ: Իմ աստվածային այցելությունը շատ մոտ է, և Մաքրագործման Կրակը մոտենում է, որի մեջ ձեր հոգիները պիտի հալվեն մեղրամոմի պես՝ նրա տաքությունից:

Ես ձեզ առաջարկել եմ, սերո՛ւնդ, և Ես դեռևս առաջարկում եմ ձեզ Իմ մտերմիկ և աստվածային ընկերության ներողամտությունը, բայց դուք չեք ընդունում այն, և ձեզանից շատերը չեն հասկանում, թե Փեսան ինչ է առաջարկում ձեզ:

Աղջի՛կս, հիշիր, որ Ես պարուրել եմ քեզ Իմ հատուկ խնամքով: Մի՞թե չես լսել նրանց վկայությունները[3], որոնց Ես շնորհ արեցի, որ տեսնեն Իմ Դեմքը քեզ վրա՝ ոգեշնչելով նրանց Իմ երևալով: Ուրեմն մի՛ թերագնահատիր Իմ աստվածային Ջորությունը:

Ես պիտի շարունակեմ Ինձ ցույց տալ քեզ վրա՝ զարդարելով քեզ Իմ Դեմքով, քանի որ դա գոհացնում է Իմ Հորը:

Աչքերդ սևեռած պահիր քո դյուրաբեկության վրա, քո թշվառության, քո անկատարությունների և քո բազմաթիվ վախերի ու կասկածների վրա: Հետո բարյացակամորեն միշտ Ինձ ազատություն տուր, որ քեզանից պահանջեմ քո ժամանակը և քո կամեցողությունը՝ քրիստոնեա դարձնելու ձեր այս քրիստոնեությունից երես շրջած հասարակությանը, ինչպես նաև սիրով բարեխոսելու Իմ Եկեղեցու Միասնության համար:

Թող քո միակ հետաքրքրությունը լինի միայն Իմ Շահերը: Խնդրի՛ր մեղավորների դարձի համար: Ինձ մատուցվող այդ աղոթքները նման են

[1] Տերը նկատի ունի՝աղոթաժողովներում:
[2] Բ Պետ. 3:1-18
[3] Տարբեր ազգություններից շատերը վկայել են, որ Քրիստոսի Սուրբ Դեմքը երևացել է իմ դեմքի փոխարեն:

խնկի բուրավետ մի բուրմունքի: Քո այդ[1] հոգոցն անուշահոտությամբ պարուրեց Իմ Սիրտը, և Ես հաճույքով ընդունեցի այն...

Սիրի՛ր Ինձ և հատուցումներ արա նրանց փոխարեն, ովքեր Ինձ ամեն օր վերստին խաչում են... Ուրախացիր Իմ Ներկայությամբ, Ես քեզ հետ եմ:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: ic

Մարտի 3, 1999

Տե՞ր:

Ես եմ: ...naha lishbu firü nabish khaleh shbekh nirü malekh bissä; mbarakh abshan khedir lah coghar[2].

Ես քո Փրկիչն եմ, քո Ամեն Ինչը, քո Երկինքը: Օրհնյալ է նա, ով ստանում է Ինձ: Իմ Խաղաղությունը քեզ: Ես Հիսուս, օրհնում եմ քեզ:

Հրաշալի է տեսնել քեզ ամբողջապես Իմ Զորությունից կախված: Ինձ համար տհաճ կլիներ տեսնել, որ դա քեզ համար դառնում է սովորական, և դու կախված չես շնորհից: Տեսնո՞ւմ ես, թե Իմ Աստվածային Ներկայությունը որքան պարզ ու հստակ է, երբ Ես քեզ հետ հաղորդակցության մեջ եմ:

Վասո՛ւլա, լսիր և գրիր. «Ձեր փրկությունը դարձի և անդորրության մեջ է»: Սա էր Իմ Թեմաներից մեկը, որով Ես դիմում էի ձեզ բոլորիդ այս անցյալ տարիների ընթացքում: Բայց ի պատասխան Փեսայի[3] առաջարկին, Նա դեռևս ստանում է թշնամանք և արհամարհանք:

Նա կանչում է և ասում. «Իմ Վերադարձը մոտալուտ է, նախապատրաստվեք շնորհով ընդունելու Ինձ, քանի դեռ Շնորհը հենց ձեր դռների մոտ է»: Բայց ձեր թմբիրի մեջ, սերո՛ւնդ, ձեր խավարը շարունակում է ավելանալ ձեր ներսում՝ դառնալով նույնիսկ ավելի ամբարտավան: Իմ Լույսն այնքան պայծառ է փայլում, սակայն ձեր խավարի մեջ, սերո՛ւնդ, ոչ ոք չի տեսնում այն: Ահա Ես գալիս եմ լուսավորելու համար ձեր սարսափելի գիշերը, բայց մինչ օրս Իմ Սուրբ Հոգին պատվի չի արժանացել:

Սերո՛ւնդ, դուք ձեզ լցնում եք այն ամենով, ինչ սուրբ չէ և զզվելի է Իմ Աչքում: Դուք լսում եք Իմ կողմից ուղարկված պատվիրակների մասին և ցույց եք տալիս ձեր երախտագիտությունը՝ վեր բարձրացնելով ձեր ձեռքերը, Ինձ գովաբանելով այն բանի համար, որ նրանց ուղարկում եմ որպես «Ամենաբարձրյալի դեսպաններ», որ լինեն ձեր մեջ: Բայց փոխանակ Իմ Խոսքերի մասին մտածելու, զգայացունց բաների հանդեպ ձեր հակվածությունը ազդում է ձեր տոկունության ու համբերատարության վրա: Այս մարդիկ նման են նրանց, որոնց մասին

[1] Հանկարծ ես հոգոց հանեցի, քանի որ գիտեի որ իմ առաքելությունը Ինձ է տրված Ամենաբարձրյալի կողմից՝ խնդրել, հատուցումներ անել և շրջել աշխարում՝ քարոզելով, առանց հանգստի, որպեսզի կյանքս դառնա մի հարատև աղոթք և զոհաբերություն:

[2] Այս ամենն ասվեց ինձ անծանոթ մի լեզվով:

[3] Այս հատվածում Հիսուսն Իրեն անվանում է «Փեսա»:

Սուրբ Գրքերն ասում են. «Նրանք նման են մի քնած մարդու՝ քնի մեջ ընկղմված, որին դու փորձում ես արթնացնել՝ նրան բացատրելով ինչ-որ բան, իսկ երբ խոսքը վերջացնում ես, նա ասում է. «Այդ ինչի՞ մասին էիք խոսում»: Նրա սիրտը, կոտրված կուժի պես, չի պահի Իմ տված գիտելիքներից որևէ մեկը: Հետո, ինչպես մի հիմար, նա կմոլորվի»:

Ահա թե ինչու Սատանան բարձրացրել է այնքան շատ կեղծ մարգարեներ, որոնք կապկում են[1] Իմ Ուսուցումները և Իմ Աստվածային Գործերը: Ձեզանից շատերը կարդում են այն, ինչը Ինձանից չի գալիս, այլ ունի մարդկային ծագում և մի կեղծ ստեղծագործություն է՝ չարի կողմից: Բայց Ես բոլոր դաղտնի գործերը, լավ թե վատ, դատաստանի պիտի կանչեմ: Սկզբից ևեթ Ես կանչեցի. «Եկե՛ք դուք բոլորդ, որ թափառում եք այս անապատում, և հայտնագործեք Ինձ՝ ձեր Եռանձն Աստծուն»:

Տեսե՛ք, Ես ոչ մի դուռ չեմ փակում, բայց Իմ Կանչերին ուշադրություն չեն դարձնում, ո՛չ էլ պատվում են դրանց: Իմ հաճախակի այցելությունները ձեզ, Իմ ընտրյալի հետ միասին, Իմ Փրկարար Սիրո Օրհներգը բերելով մինչև ձեր ոտքը՝ ձեզ նորոգելու և Իմ խարխլվող Տունը վերականգնելու համար, մնացել են անմշակ:

Ձեզանից ոմանց Ես ասացի. «Ես ձեզ հիմա կզրկեմ Իմ այցելություններից, քանի որ դուք անտարբեր եք թվում Իմ պահանջի հանդեպ՝ բազմապատկելու նրա աշխատանքի պտուղները ձեր ձեռքերի մեջ՝ ավետարանելով»: Եվ Ես այդպես էլ արեցի: Բացի այդ, այս հեռացումն ու ժուժկալությունն անհրաժեշտ է ձեր աճի համար: Հիմա է ժամը, կամ՝ երբեք, որ վերցնես մանգաղը և եռանդով հնձես: Հնձի՛ր այն բերքը, որը դու ինքդ չես պատրաստել և ստացիր Իմ օրհնությունները:

Վասո՛ւլա, Իմ որդեգիր զավակ, իմացի՛ր, որ Մենք[2] մշտապես քո կողքին ենք, փոխակերպելով քեզ Մեր սիրո միության միջոցով: Ես ընկղմել եմ քեզ Իմ զուլալ ու թափանցիկ ակունքների մեջ[3], որոնք հոսում են Իմ Բերանից՝ քեզ Իմաստություն սովորեցնելու համար, թույլ տալով քեզ ներթափանցել Մեր մեջ՝ Մեր Եռանձն Աստվածության ավելի խոր հասկացության համար: Ուրեմն, ո՞վ կարող էր տալ քեզ այդպիսի անդորրություն, հոգու այդպիսի ազատություն, ո՞վ կարող էր ծածկել քեզ շափյուղաներով[4], և հիմա ո՞վ է հանգիստ տալիս քեզ Իր Բազուկներում՝ հեռացնելով քեզ արարածներից:

Սկզբից ի վեր, արքայական առատաձեռնությամբ, որը դեռևս կաթում է Իմ զուլալ աղբյուրներից, Ես ուղարկել եմ քեզ, որ լինես թշվառների և աղքատների մեջ: Դու բողբոջեցիր Իմ ակունքներում, և ինչպես Մովսեսը, որին Ես պարուրեցի ամպով, Ես պարուրել եմ քեզ Իմ Բազուկներում մի սուրբ մտահայեցողության մեջ, որի ընթացքում քո հոգին և միտքը վեր են բարձրացվում Աստվածայինի մեջ[5]:

Իմ բարյացակամությամբ և Իմ Սիրո անասելի ներողամտությամբ, Ես երբեմն թույլ եմ տվել քեզ լոկ մի ակնարկով տեսնելու Երանական

[1] Ես հասկացա, որ ոմանք կրկնօրինակում են նույնիսկ այս Պատգամները:
[2] Սուրբ Երրորդությունը
[3] Աստծո Խոսքը
[4] Այստեղ շափյուղաները ներկայացնում են առաքինություններ:
[5] Աստծո մեջ

Տեսիլքը: Քեզ երջանիկ պահելու համար, ես երբեմն հայտնվել եմ քեզ վրա մի թափացիկ քողի նման, երբեմն էլ ամբողջապես պարուրել եմ քեզ, որպեսզի ցույց տամ, որ դու գալիս ես Իմ զուլալ ակունքներից:

Քեզ խրախուսելու համար Ես քեզ նշաններ եմ տվել քո ժողովների ժամանակ և հրաշքներ, որ ընկերակցեն քեզ և Իմ կողմից քեզ տրված առաքելությանը: Այս սերունդն ականատես է եղել ապշեցուցիչ հրաշքների:

Ա՛խ[1], եթե միայն ոմանք ավելի շատ գնահատեին այն գանձերը, որոնք Մենք հեղում ենք նրանց վրա...

Ես[2] քո հոգու կենդանարար նյութն եմ, և Նա, ով քեզ մտցրեց Մեր Աստվածայնության հետ որդիական սիրո մեջ, որ վարես սուրբ կյանք և դառնաս Հոր կողմից որդեգրված մեկ այլ զավակը: Ես քո հոգու Գերիշխան Տերն եմ, բայց նաև՝ քո Ընկերը, տալով քեզ ազատ խոսքի հնարավորություն, թույլ տալով քեզ արտահայտել քո կարծիքը, քո մտքերը և քո ազատ կամքը, որը Ես վերադարձրեցի քեզ:

Ուրեմն տեսնո՞ւմ ես, Իմ Վասուլա, թե ինչի է նման դուստր լինել՝ շնորհով, ինչպես Խոսքն է Որդի բնությամբ:

Դու կանչվել ես այս Աստվածային Փրկագործության Ծրագրին մասնակցելու, բայց նաև Երրորդության կյանքի մեջ մտնելու համար: Արի՛ և շնչիր Իմ մեջ, և լցրու քո հոգին Մեր Աստվածային Սիրով, այս Աստվածային Սիրով, որը քեզ բերում է մեզ հետ կատարյալ միության:

[3] Լսի՛ր, ընտրյալս, Ես գիտեմ, թե որքան ջանասեր ես, երբ հարցը վերաբերում է Իմ Շահերին ու Իմ Փառքին: Ես գիտեմ նաև, թե որքան շատ զոհողություններ ես մատուցում աշխարհին, որ դարձի գա, և թե որքան նվիրված ես, և որքան ես ցանկանում սփոփել Ինձ, երբ տեսնում ես Ինձ Ձեռքս պարզած՝ աղերսելով, խնդրելով, որ Իմ Տունը միավորվի հաշտությամբ և խաղաղություն հաստատելով: Եվ գիտեմ նաև, թե ինչպես ես դու զգում, երբ տեսնում ես Ինձ արտասվելից, Իմ ստացած մերժման համար:

Բայց հիմա, Իմ հերթին, Ես ցանկանում եմ մեկ անգամ ևս վստահեցնել քեզ այն շնորհների մասին, որոնք Ես պարգևել եմ քեզ և քո հանդեպ Իմ ունեցած մտերմության մասին: Այո՛, Ես գիտեմ նաև, թե ինչպես կարող են Իմ բացակայությունները[4] քեզ ցավի մեջ թողնել, չնայած դրանք երկար չեն տևում, այլ ժամանակավոր են:

Ա՛խ, Օծյա՛լս, իմ միտքը դեռևս
չի կարողանում ընկալել
Քո բացակայություններն
առանց տառապանքի:

[1] Սա հառաչանք էր Աստծո կողմից:
[2] Հանկարծ Սուրբ Հոգին արտաբերեց այս Խոսքերը:
[3] Հիսուս շարունակեց:
[4] Կանչ չստանալու իմաստով:

Ա՛խ, բայց ես երդում եմ տվել, որը ես երբեք չեմ խախտի, որն է՝ քո առաքելությունը միասին ավարտել և քեզ երբեք չլքել:

Հաղթանակը մոտ է, քանի որ Իմ Սիրո Զորությունը շատ ավելի մեծ է, քան չարի և ողջ դժոխքի զորությունը միասին վերցրած: Ուստի ուրախացիր և թույլ տուր Ինձ քեզ պահել Իմ ծառայության մեջ. ականջներդ բաց պահիր Սուրբ Իմաստության Ձայնի հանդեպ: Իմ ջերմ ցանկությունն է ուսուցանել քեզ, որից հետո Ես կարող եմ ավարտել քեզ վրա սկսած Իմ Աստվածային Գործը:

Մեկուսացած ու փակված Իմ մեջ՝ Իմ Սրտի մեջ, Ես ուզում եմ, որ դու լինես մշտական մտահայեցողության վիճակում, որի մեջ քո Հոգին անդորրության մեջ է լինում՝ և արբած Իմ քաղցրությամբ: Շարունակիր տենչալ Իմ հայտնությունները և ուսուցումները Իմ Սրտից, որպեսզի փոխանցես դրանք այս սերնդին և գալիք բոլոր սերունդներին: Սուրբ Հոգին պիտի շարունակի շնորհ անել քեզ՝ քո մտքի մեջ հեղվող Իր Վսեմ Լույսով, և այդ Լույսի միջոցով դու պիտի զարդարես Իմ Եկեղեցին: Մնա փոքր, իսկապես փոքր, թույլ տալով, որ Նրա Գործի Զորությունը նույնիսկ ավելի ազդեցիկ լինի: Հավատամքը ասա սիրով և առաջ գնա Մեր Լույսի մեջ և երբեք մի՛ կասկածիր Մեր Հարստության, Մեր Ողորմության ու Մեր Գթառատության մասին, որ ցույց է տրվում քեզ:

Իմ Հայրը բացեց քո սիրտը Իր սոսկ մի Հայացքով: Ինչպես Լույսի մի սուր ճառագայթ, որը ճեղքում է, Նա բացեց քո սիրտը և լցրեց այն Մեր Պայծառ և Աստվածային Լույսով, բացահայտելով Մեր Պատկերը քո ներսում, վերածելով քո սիրտը մի Աղբյուրի, նորոգելով քեզ առաքինությունների հոսքով, նորոգելով Մեր Սրբարանը և Մեր Տիրապետությունը, որպեսզի դու լինես հենց այն սուրհանդակը, որը թույլ պիտի տա Մեզ փորագրել Մեր Սիրո Օրհներգը քեզ վրա՝ հարստացված անսահման խորհրդավոր գիտությամբ ու հասկացողությամբ:

Արի՛, Իմ Աստվածային Ծրագիրը պիտի կատարվի քո մեջ Գթությամբ և ոչ թե վշտով: Ստացի՛ր Իմ օրհնությունները և մի՛ վախեցիր: Ես նշանակել եմ քեզ Միասնության այս առաքելության համար, և քեզ նշանակելով՝ Ես պատվել եմ քեզ՝ կապելու քեզ Իմ Խաչին, որպեսզի կլանես Նրա բոլոր փուլերը: Ողջունի՛ր Այն սիրով և հիշիր Նրա հաղթանակը:

Ես՝ Հիսուս, որ քեզ մոտ եմ, օրհնում եմ քեզ: Ic:

Աստծո Հոգին խոսում է իմ միջոցով,
Նրա Խոսքն իմ լեզվի վրա է,
Նա զետեղել է ինձ Իր Սրտում,
ինչպես թանկարժեք քարը՝
թագի վրա: Նա կռացավ Իր Գահից,
որ իմ ճանապարհին
վարդերի փունջ զետեղի:
Դու զիջեցիր Քո Գայիսոնը
գոյություն չունեցող մի արարածի,
հոգ չտանելով այն մասին,
որ Քո այդ գթասիրտ արարքը
կարժեզրկի Քո Գայիսոնը:

Քո Կրծքում ես ստացել եմ
Իմաստունների ուսուցումները,
մի կեղտոտ փալասից
Դու ինձ դարձրեցիր Քո բանբերը,

Օրհնյալ է Քո Անունը: Ամեն:

Մարտի 9, 1999

Աստծո Հոգին հայտնեց ինձ, թե
ինչպես են դառնում Աստծո զավակ:
Այդ կերպ ազատվելով, մենք այժմ
կարողանում ենք վայելել այն նույն
ազատությունն ու փառքը, ինչպես
Աստծո մնացած մյուս զավակները:
Սիրո Հոգին բացել է
իմ աչքերի առաջ
Եռանձն Աստծո Փառքը,
Իրենց բոլոր
Շքեղությամբ ու Գանձերով:
Եվ հիմա ես կարող եմ ասել
հանդարտ հոգով.

«Հոգին գերեց իմ հոգին և
դարձրեց ինձ Իր սեփականությունը,
և միևնույն ժամանակ տվեց ինձ
իմ իրական ազատությունը:
Իր Շնորհով Նա առաջարկեց ինձ
մի Արքայական
Տոնակատարություն,
Նա Ինքն Իրեն առաջարկեց ինձ:

Ապա, ինչպես մի Գետ,
Նա հոսեց իմ մեջ,
նորոգելով ինձ անդադար,
նորոգելով իմ միությունը
Եռանձն Աստծո հետ:

Մատակարա՛ր ամեն պարգևների,
Դու տվեցիր ինձ
Քո ընկերական Բոցը՝ Անձնապես
հաղորդակցվելով ինձ հետ,
բերելով ինձ Հոր մոտ և Որդու մոտ,
հոգիս նույնպես միացնելով Նրանց:
Աստվածային Բո՛ց իմ Սրտի, Դո՛ւ,
որ վերափոխեցիր Քո բնակարանը
Քո ճաշակի համեմատ,
որ բավարերես Ինքդ Քեզ

և բավարարես ինձ, հիմա ես
ուրախությունից բացականչում եմ:

Այժմ ես կարող եմ լսել մի Ձայն
և այլևս չեմ կարող ասել.
«Ես չեմ ճանաչում»:
Մի Շունչ եմ զգում,
որ սահում է դեմքիս վրայով
և ես չեմ կարող ժխտել, որ Մեկը
կանգնած է իմ առջև՝ ժպտալով,
փայլելով: Ինչպե՞ս կարող եմ ասել.
«Ես Աստվածային
ներկայության մեջ չեմ»:

Հիմա ես բացել եմ իմ բերանը,
բայց լեզուս այս բառերը
ձևակերպեց Հոգու միջոցով:
Եվ եթե սիրտս արտաբերի
իմաստության խոսքեր,
դա նորից կլինի
Շնորհի Հոգու միջոցով:

Իմ Վասո՛ւլա[1], Ես ցանկանում եմ սիրո հավասարություն...
Սիրի՛ր Ինձ և ոգեշնչվիր Ինձանից այն ամեն աստվածային ոգեշնչումներով, որոնք պատկանում են Ամենաբարձրյալի որդիներին ու դուստրերին: Ես կարգի եմ բերել Մեր բնակարանը[2], Ես ամեն ինչ արել եմ ճիշտ ձևով, որովհետև Ես կարգ ու կանոնի Աստված եմ: Ես այցելում եմ քեզ, ինչպես այցելեցի առաքյալներին, որ վերականգնեմ Մեր սրբարանը[3] Մեր ցանկության համաձայն, հետո Ես քո ներսում դրեցի Իմ Գահը: Ես ցույց տվեցի Իմ պարգևներն ու Իմ գանձերը քեզ, և սոսկ Իմ Ներկայությամբ Ես զարդարեցի քեզ: Ինձ գոհացնում է քեզ տիրապետելը, և քո մեջ Իմ Իմաստությունը հեղելը, որպեսզի հոգիդ փայլի շքեղությամբ: Ես սուզել եմ քեզ Մեր զուլալ ակունքների մեջ, որ վերակենդանացնեմ քեզ:

- Եվ ես հիմա կարող եմ ասել.
«Ես հանգիստ գտա և վայելում եմ
Քո Գանձերը»: Նույնիսկ
երբ հեռանամ այս աշխարհից,
ես կթողնեմ այս Գանձերը
ապագա սերունդներին, որ գալու են:

Ինձ համար աննշան մի բան է քեզ Իմ Հարստությամբ ծածկելը: Չե՞ս լսել, որ Աստված երբեք չի դադարում Ինքն Իրեն տալ բոլորիդ:

---

[1] Սուրբ Հոգին է խոսում:
[2] Իմ Հոգին
[3] Իմ Հոգին

Ինչպես որ Ես անդադար Ինձ տալիս եմ ձեզանից յուրաքանչյուրին, այդպես էլ պիտի լինի քեզ հետ, երբ Ես նախապատրաստեմ քեզ հանդիպելու քո Փեսային: Դու ինքդ քեզ պիտի տաս մարդկության Սիրահարին, դառնալով մեկ հոգի Աստվածայինի հետ: Ինչպես Աստծո ճշմարիտ որդի և դուստր, դու չնորհի այդ բարձրացված վիճակում պիտի դառնաս Եռանձն Աստծո կատարյալ պատկերը, և քո բոլոր ձեռնարկումները պիտի արվեն առանց որևէ թերությունների, քանի որ դրանք պիտի լինեն աստվածային, և Մեր Մտքին ու Մեր Կամքին համապատասխան:

Նույնիսկ, Իմ Վասուլա, քո շարժումները պիտի փոխվեն և դառնան ինչպես Մերը: Յուրաքանչյուր ժեստ, յուրաքանչյուր քայլ, որ պիտի անես քո կյանքում, պիտի արվի Մեր Սիրով, և դրանք պիտի շարունակվեն ընդլայնվել չնորհի միջոցով: Որպես դուստր, Ամենաբարձրյալի ճշմարիտ դուստր, քո հոգին պիտի ընկղմվի Մեր Աստվածայնության մեջ:

Այդ Ես եմ, քաղցր աղջի՛կս, որ բերեցի քեզ այս որդիական սիրո մեջ և այս Աստվածային միության մեջ, ընդլայնելով քո սիրտը, որ ավելի շատ ստանաս Մեզ, որպեսզի Մենք ավելի շատ ստանանք քեզ, որ Ինքներս Մեզ ավելի շատ տանք քեզ, որպեսզի դու ինքդ քեզ ավելի շատ տաս Մեզ: Այս փոխանակումների մեջ դու Մեզ պիտի տաս այն ամենը, որն արդեն Մեզ է պատկանում: Սա Իմ հաղթանակն է քո մեջ, հաղթանակը քեզ բերելու Մեզ հետ Աստվածային Սիրո մի կատարյալ միության մեջ, այն բանից հետո, երբ Ինձ տվեցիր քո ազատ կամքը:

Տեսնո՞ւմ ես, թե որքան լավ է հանձնվելը: Այլապես, Ես ինչպե՞ս կարող էի իրականացնել Իմ գործերը:

Գերիշխան Տեր եմ Ես հիմա քո հոգում, բայց, ինչպես մի անգամ ասել եմ քեզ նախկինում, Ես ոչ միայն Գերիշխան Տեր եմ, այլև քո Ընկերն ու Սիրելին: Ես ստեղծել և ձևավորել եմ քեզ, որ դառնաս Աստծո մի զավակ, որ լինելով Մեր զավակը, ինչպես որևէ զավակ, իրավունք կունենա նաև կիսելու և արտահայտելու իր կարծիքը և անգամ կառավարելու Իր Հոր հետ:

Քո մեջ Իմ Շնչի հանդարտությամբ, դու պիտի տեսնես իրերը Մեր Լույսի ներքո և այն ձևով, ինչպես Մենք ենք տեսնում դրանք: Ուստի Ես ասում եմ յուրաքանչյուրին.

Հարուստ եղեք աղքատությամբ, և Ես բարեհաճ Աչքով կնայեմ ձեզ: Թույլ տվեք, որ Ես ձեզ նույնպես անվանեմ Ամենաբարձրյալի դուստր կամ որդի, և դուք կկառավարեք մեզ հետ: Թույլ տվեք Ինձ ձեզ ոտքի կանգնեցնել, որ կարողանաք շարժվել Իմ մեջ: Թույլ տվեք Ինձ Իմ Գահը դնել ձեր ներսում, որպեսզի դուք նույնպես կարողանաք ասել մյուսներին. «Ես հանգիստ եմ գտել...»: Միթե ցանկություն չունե՞ք տեսնելու ձեր Հորը: Չե՞ք փափագում տեսնել Աստծուն: Եթե ցանկանում եք, ուրեմն Ես պետք է ձեզ ծնեմ, այո՛, դուք պետք է նորից ծնվեք Ինձնից, որպեսզի տեսնեք ձեր Հորը: Ոչ մի երեխա երբեք չի տեսել իր հորը մինչև ծնվելը:

Երանելի է այն մարդը, ով խորհրդածում է այն Ազատության մասին, որը Ես կարող եմ տալ: Այդ Ազատությունը կտանի ձեզ, ինչպես Փեսան է տանում Իր Հարսին, ձեր միությունը կատարելագործելու Մեզ հետ: Ձեր

հոգու վրա դրոշմված սիրո փոխակերպությունը կլինի այնպիսին, որ դրանից հետո ոչինչ չի կարողանա անջատել ձեզ Մեզնից:

Մեր Տերը լցնում է մեզ
Գիտությամբ և Հասկացողությամբ,
բացահայտելով մեզ բարին և չարը:

Դրանից ավելի
ի՞նչ կարելի է խնդրել:
Ամենաբարձրյալը
Իր Դպրոցն է հիմնել մեր սրտերում:

Ինչպես Լույս այն փայլում է
ներսից և դրսից:
Նա խոնարհվում է Իր Գահից,
որ մեզ ցույց տա
Իր գործերի մեծությունը:

Եվ ինչպես Նա
Գիտություն առաջադրեց մեր առաջ,
Նա դնում է Իր Գահը մեր ներսում՝
վսեմորեն զարդարելով
մեր հոգին Իր Ներկայությամբ:
Սուրբ է Նրա Անունը:

Ի՞նչ է մարդը,
որ գնահատի Աստծուն:
Բայց և այնպես,
շատերն են անում դա:

Ինչպե՞ս կարող է հնարավոր լինել
որևէ մարդու համար
հասկանալ Նրա Մեծությունն
ու Նրա Հրաշքները: Եվ սակայն,
ոմանք կարծում են, թե կարող են:

Նրանց խիստ շտապելը,
որ ցույց տան թե գիտեն,
ցույց է տալիս նրանց
մտքի ծանծաղությունը:

Ահա թե ինչու է Սուրբ Հոգին
թաքցնում Իր Գանձերը նրանցից և
պահում դրանք խոնարհների համար:

Այո՛, Տե՛ր, ամեն ձևով
Դու հայտնի ես դարձրել այդ
դարերի ընթացքում, որ Դու
բարձրացնում ես խոնարհներին,

իսկ սրտով հպարտներին՝
ջախջախում:
Դու երբեք չես արհամարհել
հոգով աղքատներին,այլ կանգնել ես
նրանց մոտ միշտ և ամենուր:

Ապրիլի 25, 1999

Դու, Աստվա՛ծ իմ,
հայտնի ես նրանով,
որ Դու միշտ կանգնում ես
առաքինի մարդկանց կողմը:

Ուստի խնդրում եմ,
լույս տուր իմ աչքերին,
թույլ տուր որ սիրտս հրճվի Քո մեջ,
մարդկության Սիրահար:

Տե՛ր, Դու,
Քո ողջ Գերիշխանությամբ,
ցած իջեցրիր երկինքը մինչև
իմ սենյակը, և Դու ցած իջար:

Դու թողեցիր Քո Գահը:

Աստված Իր քաղաքի ներսում է հիմա, և այն չի ընկնի, քանի դեռ Նա ապրում է նրա մեջ[1]...

Իմ սիրտը և հոգին սնվել են Թագավորից:

(Ես պատասխանեցի հրեշտակներին):

Այո՛[2], Թագավորը չնորհ է արել քեզ՝ ազդված քո թշվառությունից: Նա զիջեց Իր Արքայական Գայիսոնը, որ Իր պոեմով դիմի քեզ և օրհնի քեզ: Արի՛, խոկա Աստծո հրաշալիքների մասին...

Ա՛հ... սիրտս հալվում է
Նրա Ներկայությամբ:
Ինչպե՞ս կարող եմ ես մոռանալ
Աստծո Գթառատությունը:
Ինչպե՞ս կարող եմ մոռանալ
Նրա հրաշալի բարությունը:

[1] Հանկարծ հրեշտակներ հայտնվեցին և մեծ ուրախությամբ, ինչպես մի երաժշտություն, ասացին հետևյալ խոսքերը:
[2] Նորից հրեշտակները պատասխանեցին:

Ես[1] քո կողքին եմ: Իմ հայացքն Իմ ընտրյալի վրա է: Ես օրհնել եմ քեզ, քանի որ դու նրանցից մեկն ես, որ բողբոջել է Իմ Սրտից՝ դեռևս զմուռս կաթելով: Ես փորագրել եմ քեզ ամբողջությամբ այս բառերով. «Քո Տեր Աստվածը ցանկանում է Սիրո հավասարություն քո կողմից»:

Այո՛, Ես միայն կարող եմ հագցնել քեզ Իմ շքեղությամբ և քեզ տալ անհրաժեշտ ու կենսական Լույսը: Միայն Ես՝ Իմ Աստվածայնությամբ, կարող եմ դրոշմել քո հոգու վրա Սրբության Իմ Պատկերը: Այդ Ես եմ՝ քո Աստվածը, որ կարող է կատարյալ դարձնել քեզ և վեր բարձրացնել, որ ճամփորդես Ինձ հետ Իմ ընկերակցությամբ: Արի՛ Ինձ մոտ և պահիր քո հայացքը Իմ Սուրբ Դեմքի վրա, որպեսզի ամբողջովին հասկանաս, որ դու Ինձ հետ միասին ժառանգորդ ես՝ միացած Ինձ և Իմ մեջ... Ինձ ավելի շատ ստացիր, Թագավորի-աղջիկ[2], թույլ տալով Ինձ, որ ավելի շատ ստանամ քեզ:

Իմ ցանկությունն է Ինձ ավելի շատ տալ քեզ, որպեսզի դու կարողանաս քեզ ավելի շատ տալ Ինձ: Այս ձևով Ես կստանամ այն ամենը, ինչն արդեն Ինձ է պատկանում: Իմ Աստվածային Սիրո միջոցով, որը կլցվի քո մեջ, դու պիտի աստվածանաս՝ վերափոխելով քո հոգին, որպեսզի Իմ Հայրը ճանաչի քեզ Դատաստանի Օրը Ինձ հետ:

Ձեր այս չափազանց թշվառ ժամանակներում, սերո՛ւնդ, ուր մեղքը դարձել է ձեր տերը և լցվում է ձեր մեջ ինչպես թույն, Ես՝ Սիրո և Ողորմության Տերը, առատորեն թափում եմ ձեզ վրա հակաթույնը, ձեզ բուժելու համար, որը Իմ Սուրբ Հոգին է: Ես առատորեն ձեզ վրա եմ թափում Իմ Ողորմությունը, օծյալ Պատգամներով՝ Իմ Սրտի Գանձերից: Ես Շնորհների Աստվածային Ակունքն եմ:

Նա, ով ճամփորդում է խավարում, կավարտի իր ճամփորդությունը խավարում: Նա, ով ընտրում է ճամփորդել լույսի մեջ, կավարտի իր ճամփորդությունը լույսի մեջ: Ես եմ աշխարհի Լույսը: Ով որ հետևի Լույսին, չի քայլի խավարում, այլ կճառագի կյանքի լույսը: Ես եմ Կյանքը...

Սերո՛ւնդ, ինչո՞ւ, ինչո՞ւ ես չարչարում հոգիդ Սատանայի այդ խավար տարածքներում, ենթարկելով քո կամքը նրա չար ծրագրերին: Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը, և Իմ միջոցով է, որ դուք կարող եք մտնել երկինք: Եթե ասեք, թե թույլ եք, եկեք Ինձ մոտ և Ինձնից զորություն վերցրեք, որպեսզի մի օր դուք նույնպես կարողանաք երգել.

«Իմ Եռանձն Աստված փայլեց իմ սրտում: Կենդանի Աստված ինձ՝ անարժանիս, տվել է հոգևոր հարություն, և ինչպես Մովսեսը պարուրվեց ամպի մեջ, ես պարուրված եմ Սուրբ Իմաստությունից եկող խորհրդավոր ուսուցումներով: Եվ ինչպես արևն է հեղեղում արարչությանն իր լույսով, Իմ Տերն ու Իմ Աստվածը ողողել է իմ հոգին Իր Ուսուցումներով և հեղել իմ մեջ Աստվածային Սիրո հեղեղներ: Նա տվել է ինձ ուսուցում և գիտություն, դարձյալ Սուրբ Իմաստության միջոցով, որ հասկանամ Նրա Փառքը և ընկալեմ, որ Նա Իր ողջ արարչության Աստվածային Փեսան է: Նրա լիառատ Սերը տարավ իմ հոգին Իր Սրտի

[1] Տեր Աստված խոսեց Հիմա:
[2] Դա հունարենով նշանակում է *Վասիլիկի*:

հարսանեկան սենյակը, որտեղ մի աստվածային միություն տեղի ունեցավ: Հետո իմ Սիրելի վարդը վեր կացավ, բոցավառված վեհ Սիրով, որ ինձ ցույց տա Իր Գանձերը: Եվ այդ հարսանեկան սենյակում, ուր իմ Սիրելին պահում է Իր բոլոր Գանձերը, ես հայտնաբերեցի.

- Աստծուն ճանաչելու և հասկանալու գանձը,
- մտերմության գանձը,
- ուրախության և մխիթարանքի գանձը,
- առաքինությունների ճանապարհի գանձը,
- Սուրբ Հոգու գանձը,
- Սուրբ Իմաստության գանձը՝ մի անսպառ գանձ մարդկանց համար,
- Աստծո հետ քաղցր զրույցի գանձը:

Այո՛, արդարև, մարդկության Սիրահարը հարստացրեց ինձ Իր Սիրով, և լցրեց իմ սիրտը Իր անհատնում գանձերով»:

Սերը ստիպում է Ինձ զիջել Իմ Արքայական Գայիսոնը՝ խղճալով այս սերնդի ամայացմանը: Սերը ստիպում է Ինձ անսահման Ողորմություն սփռել ձեր չորության վրա, սերո՛ւնդ, առաջնորդելով Ինձ, որ խոնարհվեմ մինչև ձեզ և ծածկեմ ձեզ Իմ թանկագին Արյամբ՝ թաքցնելու ձեր անկատարությունը:

Հիմա, Իմ Վասուլա, ես ուզում եմ, որ դու խոսես Իմ Մոր հետ...

Հիշի՛ր, զավակս քո Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի խոցված կողը, ոտքերն ու ձեռքերը, որ հավիտենապես նստած է Հայր Աստծո աջ կողմում և թագավորում է Փառքի մեջ: Հիսուսն ու ես մշտապես բարեխոսում ենք հոգիների փրկության համար: Իմ Անարատ Սիրտը նույնպես աղերսում է Հորը՝ Իր Ողորմությունը ստանալու այս սերնդի համար: Ահա ես նորից վշտանում եմ Իմ զավակներից [1] շատերի հանդեպ կատարվող անարդարության համար, որն է՛լ ավելի է լցնում Աստծո Արդարության Բաժակը: Ես կարիք ունեմ հատուցումների և աղոթքների՝ այդ չարիքը դարմանելու համար: Կանչի՛ր Հորը և ասա՛. «Հա՛յր, ներիր նրանց, քանի որ չգիտեն, թե ինչ են անում»:

Հետո արի և փակվիր Իմ Արքայական Սրտում: Այնտեղ դու կգտնես քո խաղաղությունը, բայց միևնույն ժամանակ դու կճաշակես ու կզգաս տագնապն ու ցավը Իմ էության խորքերում, քանի որ ես վշտանում եմ այն ամենից, ինչ տեսնում եմ: Ես տեսնում եմ անվերջ չարության այս հոսքը, առանց մի վայրկյան դադարի, որը գալիս է Սատանայից:

Այս ամենին վերջ տալու համար, ես ձեր բոլորի կողմից կարիք ունեմ փոխհատուցման գործերի և մշտական աղոթքների... Առանց ապաշխարության չարը կավելանա: Աստված այս օրերին Ինձ ուղարկում է ձեր բոլորի մոտ, որ փոխանցեմ Իր Շնորհը ձեր սրտի նորոգման համար: Իմ մայրական Սերը ձեզ համար նույնպես շնորհ է:

Լավ եղեք:

Շնորհի՛ր, ո՛վ Երկնային Մա՛յր,
Աստծո Շնորհը մեզ բոլորիս,
որ այնքան անարժան ենք,

[1] Մեր Օրհնյալ Մայրը խոսում էր Կոսովոյի ճգնաժամի մասին:

որ կարողանանք Աստծուց
անկեղծորեն ներում խնդրել
մեր մեղքերի և
ուրիշների մեղքերի համար:

Շնորհի՛ր մեզ Աստծո մտերմիկ
ընկերակցության անգնահատելի
գանձը և վսեմագույն
գանձը աստվածայնության,
որը մոտիկությունն է Աստծուն:
Աստված մեզ բոլորիս առաջարկում է
Իր Սիրտը: Ամեն:

Ես օրհնում եմ քեզ: Եվ ներիր[1] բոլոր նրանց, ովքեր քարեր են նետում քեզ վրա: Ես ուզում եմ, որ դու գեղեցիկ[2] լինես և միշտ փնտրես Աստծո ուղիները:

Հունիսի 21, 1999

[3]Աղջի՛կս, Իմ ասածներից որոշ բաներ պարզաբանելու և քո հոգին դեպի Իմաստության և Իմ մասին իմացության խորքերը առաջ տանելու համար, Ես երբեմն կրկնում եմ Ինքս Ինձ, բայց սա հոգիդ խրատելու մի ձև է, քնքշությամբ առաջ տանելով այն դեպի սրբություն:

Ես հեղում եմ քո մեջ մեծ քանակությամբ Իմ Շնորհերից Եկեղեցու օգտի համար, քանի որ դու Ինձ՝ քո Աստծուն տվել ես հարկ եղած տարածությունը (քո մեջ): Ոչ մի բան, որ Ես գրել եմ, իզուր չի լինելու: Իրականում Եկեղեցին կլրացնի իր կարիքները: Ես քեզ բարձրացրել եմ արքայական առատաձեռնությամբ: Ո՛չ, Ես քեզ չեմ բարձրացրել, որովհետև քեզ արժանի եմ գտել, այլ Ես կանչել եմ քեզ Իմ Շնորհով տրված ձրի պարգևով, և դա Իմ Արդարությամբ է, որ Ես տալիս եմ այս Շնորհները: Ոչ ոք բավականաչափ անմեղ չէ և արժանի չէ Ինձնից այսպիսի արքայական առատաձեռնություն ստանալու համար:

Երբեք մի՛ հոգնիր սովորելուց այն բոլոր տեսքերի էջերը, որոնք Ես եմ լրացրել, քանի որ դրանք հորդում են գիտությամբ և Իմ Սրտի քաղցրությամբ, բացահայտելով Իմ Գեղեցկությունը՝ ուժեղացնելով այն քո հոգու մեջ... Ես փայլեցի քո մեջ, Ես փայլեցի որպես մի պայծառ լույս քո մեջ՝ քեզ արթնացնելու համար, որպեսզի դու քո ետևում թողնես[4] աշխարհի բոլոր դատարկ ու անկարևոր բաները: Ես քո մեջ հրաշքներ կատարեցի, որ Ինձ համար բանաստեղծություն երգես: Իմ Թագավորությունը քո ներսում տարածելու համար Ես Ինքս Ինձ հեղեցի քո մեջ, վեր բարձրացնելով քո հոգին դեպի հոգևոր ցնծություն, որպեսզի Ես Իմ ընտրյալից լսեմ Իմ Սեփական Սիրո Օրհներգը: Եվ

[1] Ինձ խնդրվում էր ներել ինձ հալածողներին:
[2] Ես հակացա, որ գեղեցիկ ասելով, Նա նկատի ուներ հոգևոր գեղեցկությունը:
[3] Հայրն է խոսում:
[4] Ես հակացա նաև՝ «Դատարկիր ինքդ քեզ»:

այսպես, քո ստացած ամեն ինչը, որ Աստվածային արժեք ունի, վերադառնում է Ինձ՝ Հրաշքների Հեղինակին:

Ա՛խ, Վասո՛ւլա, երբ Ես Շնորհով հոգիներ եմ բարձրացնում այդ խորհրդավոր ձևով, և նրանք տեսնում են այն, ինչ աչքը երբեք չի տեսել և լսում են այն, ինչ ականջը երբեք չի լսել, և սովորում են բաներ, որոնք մարդու մտքի սահմանից դուրս են, Ես փառաբանվում եմ Իմ Փառքի մեջ: Եվ մինչ Ես առաջ եմ շարժվում քո ոչնչության մեջ՝ հրճվելով Իմ յուրաքանչյուր քայլից, Ես մոտենում եմ Իմ նպատակին՝ հասցնելու քո հոգին Իմ պահանջին, որն է՝ հավասարվել Իմ Սիրուն:

Ոչ մեկը երկրի վրա չի կարող հասնել Իմ Սիրո այդ բարձունքին: Դու պիտի ասես. «Այդ դեպքում, ինչո՞ւ է իմ Աստվածը, որն անցնում է մեծության և կատարելության սահմաններից այն կողմ, ինձնից պահանջում մի բան, որը ես չեմ կարող կատարել»: Ես միայն պահանջում եմ այն, ինչ արդեն Ինձ է պատկանում[1]:

Ես ուղարկել եմ քեզ Իմ Սուրբ Հոգին, որ բնակվի քո մեջ և Մեր Սերը հայտնի դարձնի քեզ՝ վերափոխելով քո հոգին, որ ցանկանա Մեզ, որպեսզի կարողանաս հրճվանքով հայտարարել. «Ես տիրապետում եմ Աստծուն, իսկ Նա տիրապետում է ինձ»: Իմ Վասուլա, մարդ պետք է ստանա այս անգնահատելի շնորհը, որ ասի այդ բառերը, բառեր, որոնք այնքան քաղցրորեն են ասվում՝ մղված Սիրո Հոգուց, որին դու թույլ տվեցիր բնակվել քո մեջ:

Զե՞ս լսել, որ Աստծո Խոսքը կենդանի է և ազդու. այն կտրում է ինչպես որևէ երկսայր սուր, բայց ավելի ճշգրիտ: Այն կտրում անցնում է մինչև ոգու և հոգու բաժանման սահմանը[2]: Ուստի, աղջի՛կս, սիրիր Ինձ այնքան, որքան Ես եմ քեզ սիրում և այնքան կատարյալ, որքան կարող ես, այն սիրով, որն Իմ Սուրբ Հոգին այնքան ողորմածաբար ներարկել է քո մեջ: Դու միայն Ինձ ետ կտաս այն, ինչն արդեն Ինձ է պատկանում:

Սկզբում[3] Ես խնդրեցի քեզ, որ սիրես Ինձ, և դու պատասխանեցիր. «Ես սիրում եմ Քեզ...», և Ես ժպտալով ասացի. «Ավելի շատ սիրիր Ինձ...»: Հիմա Իմ Սուրբ Հոգին առաջ տարավ քեզ, որ ճանաչես Ինձ և սիրես Ինձ՝ քեզ Ինձ մոտ բերելով, ինչպես հարսին են բերում իր փեսայի մոտ, և կատարում մի հարատև միություն: Այդ նույն կերպով, բայց անասելի ձևով, Սուրբ Հոգին բերեց քեզ դեպի սիրո հավիտենական միության մեջ Մեզ հետ և Մեր մեջ՝ Սուրբ Երրորդության մեջ:

Դու ես Մեծ Աստվածությունը,
Ամենակարողը, երկյուղածություն
ներշնչող Աստվածը:
Դու անըմբռնելի Շքեղությունն ես,
որ գերազանցում ես
Քո բոլոր հրեշտակների
շքեղությանը միասին վերցրած:

---

[1] Այլ կերպ ասած, մեր կամքը Աստծուն տալուց հետո, Նա լցնում է մեզ Սիրո Սուրբ Հոգով, որ սիրենք: Այդ սերը, անկախ նրանից, թե ինչ աստիճանի է, պատկանում է Աստծուն, քանի որ Նա է տվել այն:

[2] Եբր. 4:12

[3] Առաջին հաղորդակցությունները, դեռևս 1985թ.:

Դու, որ լցնում ես ամեն բան՝
առանց սահմանափակվելու
ո՛չ նրանց սահմաններով,
ո՛չ էլ նրանց էությամբ:

Մինչ գրում եմ, ձեռքս դողում է
Քո Աստվածային Մեծության առջև:
Ինչպե՞ս կարող եմ մինչ օրս, Տե՛ր,
դեռևս մտածել իմ փոքրիկ մտքով,
որ հրաշքների Հրաշագործ
Հրաշքն Ինքն է մտերմորեն
հաղորդակցվում ինձ հետ ամեն օր,
և զրուցում է ինձ հետ
այսպիսի հրաշալի ձևով:
Ինչպե՞ս ես Դու ուզում, որ ես,
իմ թշվառության մեջ,
ամբողջապես հասկանամ, Ո՛վ Տե՛ր,
որ Դու, Անտեսանելի Աստված, Նա՛,
ով պարփակում է բոլոր էակներին,
խոսում է ինձ հետ այդպիսի
քաղցրությամբ և քնքշությամբ:
Ի՞նչ միտք կարող է
ընկալել այս հրաշքը:

Դու օրհնել ես ինձ Քո Անվամբ
օծելով, որ փրկես ինձ և ուրիշներին
Քո Սիրո Օրհներգի միջոցով:

Դու օրհնել ես ինձ
երիցս Հարության Համբույրով
և դարձրել ես ինձ Քո Փրկարար
Ծրագրի մոտիկ գործընկերը:
Կարո՞ղ է մեկը գալ ինձ մոտ և ասել.
«Ես կարող եմ չափել
Աստծո մեծությունը և Նրա
աննկարագրելի վեհությունը»:
Ոչ ոք չի կարող ասել դա,
որովհետև իմ Տերն ու իմ Աստվածը,
թաքնված ու անհայտ Գանձերի
մի անհատակ Ջրհոր է:

Արդարև Ես եմ... Մենք [1] կանչեցինք քեզ, որ հանգստանաս Մեր Բազուկների մեջ, ինչպես երեխան իր մոր բազուկներում: Դու որպես զավակ կանչվեցիր շնորհի միջոցով, որ կիսես Մեր Փրկարար Ծրագիրը: Դուք բոլորդ կանչվում եք, որ հաղորդակից դառնաք մեր աստվածությանը և մտնեք Եռանձն կյանքի մեջ, որ կառավարեք Մեզ

[1] Սուրբ Երրորդությունը

հետ: Իրոք, ես ձեր հոգու Գերիշխանն եմ, ո՜հ, բայց նաև այնպիսի մի մտերիմ Ընկեր, որ կարող է տանել ձեզ դեպի աստվածացում:

Չնայած քո սարսափելի թշվառությանը, այս պահին, մինչ ես քեզ հետ եմ այս ձևով, և մինչ դու Ինձ հետ ես այս ձևով՝ պարուրված սուրբ մտահայեցությամբ, նույնիսկ Իմ Պատվին տրվող ամենահանդիսավոր տոնակատարություններն Ինձ համար այնքան բերկրալի ու հաճելի չեն, որքան քո մտահայեցության այս պահերը: Երբ Իմ Աստվածային Ներկայությունը քեզ հետ է, ես հրճվում եմ նրա ներկայությամբ, ում ես պատրաստել եմ, որ դառնա ոսկորը Իմ Ոսկրի, մարմինը Իմ Մարմնի: Ես, Իմ Սեփական Ձեռքով, բարձրացրի մի սրբարան, հետևապես մի՞թե ես չեմ հրճվի Իմ Սեփական բարի Գործով:

Մարդկության
Ամենաբարի Սիրահար,
Դու մեկ անգամ ևս իմ ականջներին
հնչում ես ինչպես երաժշտություն:

Աստվա՛ծ
Անսպառ Հավատարմության,
Դու, որ հուզվում ես
ինձ նման արարածներից, ովքեր
ամբողջապես պատված են ժանգով,
Դու չես վարանում
բաձրաձայն կանչել երկնքում,
նախքան որևէ մեկը մի բան կանի.

«Նա արդարացվա՛ծ է»:

Ուրեմն մի՞թե հնարավոր է
Քո Ներկայությամբ չհպվել սիրուց
և դուրս չգնալ վազելով
երկու ձեռքերը վեր պարզած,
աղաղակելով
ամեն մի խաչմերուկում.

«Իմ Արարիչն իմ Պատարագն է»:

Դու ցուցադրել ես
Քո Ողորմությունը
ամենավաղ ժամանակներից:
Դու իմ Արարիչն ես, Աքանչելիորեն
Գեղեցիկ և Բարեգութ:

Քո Ողորմությունը, Տե՛ր իմ,
այնքան մեծ է,
որ նույնիսկ եկեղեցու
ամենակրթված վերնախավը
անմիտ կթվա,
եթե փորձի բացատրել այն:

Արի՛, սիրելի՛ս, մտիր քո Տիրոջ ուրախության մեջ:

Դու լսել ես քո փրկության Պատգամները (տրված քեզ), պարգևելով քեզ միևնույն ժամանակ Իմ Շնորհի բազմազան պարգևները: Սուրբ Հոգու Զորությամբ օգտագործիր այն ամենն, ինչ Ես տվել եմ քեզ և մի՛ հուսալքվիր, քանի որ Ես քեզ հետ եմ:

Ես հիշեցնում եմ քեզ, փոքրի՛կ հատիկ, որ դու մղում ես այն նույն մարտը, որն Իմ բոլոր Մարգարեներն են մղել: Հողմերը կարող են փչել քեզ վրա, հեղեղները կարող են բարձրանալ՝ քեզ խորտակելու համար, բայց դրանցից ոչ մի բան չպիտի հաղթի քեզ, քանի որ Ես քեզ հետ եմ, և լավ խնամք եմ տանում, որ դիմադրես քո փխրունությանը:

Հենվի՛ր Ինձ վրա: Եվ մի՛ հուսահատվիր Եկեղեցու վիճակից: Եկեղեցին պիտի վերակենդանանա:

Ես քո առջևում եմ:

Հունիսի 30, 1999

Այս օրերին Ես ուրախությամբ սովորեցնում եմ ձեզ, թե ինչպես Իմ բոլոր որդիներն ու դուստրերը կարող են հաղորդակից դառնալ Իմ աստվածությանը, եթե նրանք Ինձ թույլ տան իրենց մեջ հոսեցնել Իմ Աստվածային Սերը: Ես ցանկանում եմ ընդլայնել Իմ Թագավորությունը նրանց մեջ և տիրապետել նրանց, քանի որ Ես ցանկանում եմ, որ նրանք տիրապետեն Ինձ:

Եթե նրանք չհակառակվեն Իմ Սուրբ Հոգուն, Նա կտիրապետի նրանց և կվերածի նրանց մի ծաղկող պարտեզի: Նա կլցնի նրանց առաքինություններով և հրաշքներ կկատարի նրանց ներսում, որպեսզի ստեղծի նրանց մեջ Քրիստոսի ամբողջ լիությունը: Եթե նրանք թույլ տան, որ Ես Ինձ լցնեմ իրենց մեջ, Ես նրանց կդարձնեմ Իմ որդեգիր որդիներն ու դուստրերը:

Ես Իմ Շնորհը բացահայտում եմ ձեզ, իսկ փրկությունը տրվել է ձեզ Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Որպեսզի ձեզ ազատագրի, Նա Ինքն Իրեն զոհաբերեց ձեզ համար: Որպեսզի դուք կիսեք Աստվածային Կյանքը, Նա հաստատեց Սուրբ Հաղորդությունը, որ սրբագործի ձեզ և հաղորդակից դարձնի Իր Մարմնին ու Արյանը: Դուք սոսկ հացի կամ գինու մասնակից չեք դառնում, այլ մասնակից եք դառնում հենց Իրեն՝ Աստծուն: Եթե միայն մտածեիք այս խորհրդի մասին, և այն ամբողջապես հասկանայիք:

Անհասանելի Աստված Հասանելի է ձեզ, Անտեսանելի Աստված՝ Տեսանելի է ձեզ և պատրաստ է աստվածացնելու ձեզ: Նա, որի մեծությունը գերազանցում է բոլոր հրեշտակների զորություններին ու բոլոր արարածներին և ամեն ինչ որ ստեղծված է, ձեզ է տրամադրված, արարչությո՛ւն: Աստված Ինքն է Իրեն առաջարկում ձեզ, որ ձեզ վերադարձնի ձեր աստվածայնությունը՝ աստվածացնելով ձեր հոգին, որպեսզի մտնեք Հավիտենական Կյանք:

Եթե դուք թույլ տաք Ինձ լցվել ձեր մեջ, ես ձեզ կհասկացնեմ այն բոլոր բաները, որոնք անտեսանելի են ձեզ, որպեսզի ձեր հոգին բերեմ ամբողջական ապաշխարության: Այդ ապաշխարությունը կվերափոխի ձեր չափազանց թշվառ, արատավոր վիճակը՝ մարմնի ու հոգու մի մաքուր, արժանապատիվ փոխակերպության՝ պատրաստ ստանալու Նրան, ում դուք համարում եք Անհասանելի և Անմատչելի:

Նա, ով փառավորվում է Իմ աջ Կողմում, Նա, ում դու, աղջի՛կս, անվանում ես «իմ Պատարագ», Ինքն Իրեն տալիս է քեզ, որ ճաշակես Իր Մարմինը և ըմպես Իր Արյունը, որպեսզի դու դառնաս մարմինը Իր Մարմնի, ոսկորը՝ Իր Ոսկրի:

Ես ցանկացած պահի և յորաքանչյուրի համար, ով ցանկանում է, կկատարեմ Իմ Սիրո գործը, եթե նրանք կանչեն Ինձ.

«Արի՛ և դարձրու ինձ
Քո սեփականությունը
և Քո որդեգիր զավակը»:

Եվ նախքան որևէ մեկը մի բան կանի Երկնքում, Իմ Կանչը կլսվի բոլորի կողմից.

«արդարացվա՛ծ է»:

Այդ ժամանակ դու նույնպես, զավա՛կս, կաճես Իմ աղբյուրներից և հաղորդակից կլինես Իմ աստվածությանը:

Ես չեմ լինի նավի նման, որը կտրում-անցնում է բարձրացած ալիքների միջով և ոչ մի հետք չի թողնում ցույց տալու համար, թե որտեղով անցավ: Ո՛չ, Ես թույլ կտամ յուրաքանչյուրին լսել քեզ և իմանալ, որ Եռանձն Աստված հիմա ապրում է քո մեջ և թաքնված է քո մեջ: Մեր կենսարար անցումը քո միջով աննկատ չի մնա, քանի որ դու պիտի փառաբանես Ինձ, ասելով.

«Ես իմ Հորից սովորել եմ, թե ինչպես տիրապետել Աստծուն: Աստված իմ Հայրն է, այդ Նա է, որ ինձ հայրություն արեց և Իրեն հայտնի դարձրեց ինձ, առանց կորցնելու Իր գերազանցությունը: Նա, որի Մեծությունը փառավորվում է Իր ողջ արարչության մեջ, լցրել է ինձ Իր Գիտությամբ: Եռանձն Աստված, որ պարփակում է բոլոր արարածներին, լցնելով ամեն ինչ Իր Պայծառությամբ, առանց Ինքը պարփակվելու նրանց սահմաններով, Ինքն Իրեն առաջարկեց ինձ, բարեկարգելով իմ մեջ ամեն ինչ, որ լավ լինի, և հիմա հոգիս գոհ և բավարարված է՝ Աստծով լցված լինելու համար, չնայած իմ թշվառությանը»:

Այո՛, ուրախ եղիր: Ուրախ եղեք դուք բոլորդ, որ լսում եք Իմ Ձայնի մեղեդին և հագեցեք Ինձնով:

Ա՛խ, Տե՛ր իմ,
Քո Մկրտության Համբույրը
վերջ տվեց իմ ըմբոստությանը:

Իմ Տերը ցուցադրում է

Իր Մեծությունը, ինչպես
Նա այդ արել է վաղ ժամանակներից:

Նրա Գանձարանները բաց են,
և Նրա Գանձերը
դուրս են թռչում Երկնքից,
ինչպես թռչուններ՝ ցույց տալով
Նրա Հրաշքները Երկնքում:

Երկնքով մեկ
այդ Գանձերը կազմում են
մի փառապանծ տեսարան:

Մենք պետք է միայն
խնդրենք դրանք, և մեր Հայրն
Իր Սեփական Ձեռքով
պիտի բերի դրանք երկնքից
և պիտի դնի մեր սրտերի մեջ,
որպեսզի այդ պահից սկսած
մենք կարողանանք արտահայտել
Իր Պարգևներին արժանի մտքեր:

Եվ ես Գիտություն պիտի ներարկեմ ձեր մեջ, որ ճանաչեք Ինձ որպես Երիցս Սուրբ:

Հուլիսի 30, 1999

[1]Վերցրու Իմ խաղաղությունը և եղիր համբերատար, արի՛ և ասա.

«Ամենողորմ Հայր,
ես դանդաղ եմ հասկանում
Քո Աստվածային Կամքը»:

Ասա՛ այդ[2]:

Ահա թե ինչ եմ Ես ցանկանում քեզանից. Եղիր հանդարտ, Իմ հարս, և չափից դուրս մի ծանրաբեռնիր քեզ աշխատանքով: Մի վարդ է աճել քո մեջ՝ թարմ և փթթող, և մինչ դու նստած ես լուռ խոկման մեջ, խորհրդածելով Մեր մասին, ինքդ քեզ միացնելով Մեզ, քո վարդի բուրմունքը պատում է Մեզ՝ պարուրելով մի նուրբ բույրով, մինչ Մենք հսկում ենք քեզ՝ տարածելով Մեր ճառագայթները քո մեջ, պահելով

[1] Յահվեն՝ Հայրն է խոսում:
[2] Ես ասացի այդ:

վարդը թարմ և ծաղկած: Եթե դու դադարես Մեր մասին խորհել, քո վարդի գեղեցկությունը կխամրի...

Ուստի քո Աստվածային Փեսան ասում է քեզ. Մի՛ փոխարինիր Իմ մասին քո մտահայեցությունը այլ բաներով, որոնք քեզ հեռացնում են Իմ գրկից: Թույլ մի՛ տուր նրանց, ովքեր վիճում ու առարկում են այն ամենին, որ դու ասում ես, սիրելիս, որպեսզի քեզ թելադրեն իրենց քմահաճույքները, քանի որ Ես, Իմ հրեշտակների կարգերից, քեզ մոտ եմ ուղարկել ազնվագույն հրեշտակներից մեկին, որ քեզ Ինձ մոտ առաջնորդի: Այս երկնային իշխանը քեզ հեռացրել է աշխարհից, որպեսզի իր հետ միասին մտնես Իմ երկնային Գավիթները:

Մարդկային սիրտը չափազանց փոքր է հասկանալու համար այն ամենն, ինչ Ես անում եմ քեզ հետ, հատկապես ձեր այդքան չար ժամանակներում, ուր բազմաթիվ դիտուն մարդիկ իմաստուն են ձևանում:

Ես, ինչպես քեզ ասացի, ուղարկել եմ քեզ մոտ երկնային մի իշխանի, քո առաքելության մեջ քեզ ընկերակցելու համար, որին հետևում են այլ հրեշտակային զորություններ, ինչպես որ Ես սովորաբար անում եմ Իմ ընտրյալների համար: Իմ երկնային Գավիթները մտնելուց հետո, Ես քեզ հրապուրեցի քնարերգությամբ և բարեպաշտությամբ, որ քեզ դարձնեմ Իմ քնարը: Ես քեզ ճաշակել տվեցի, թե Իմ Հայացքը ինչպիսի բերկրանքներ կարող է տալ քեզ՝ ուղարկելով Այն, որպես մի ոսկե շող քո աչքերի մեջ, լցնելով դրանք Իմ Լույսով:

Քեզ Իմաստություն ուսուցանելու Իմ մեծ նախանձախնդրությամբ, Ես անտեսեցի քո դյուրաբեկությունը: Ճիշտ այնպես, ինչպես որևէ աշակերտ դպրոցը սկսում է այբուբեն սովորելուց, Ես սովորեցրեցի քեզ Իմ այբուբենը, որն է՝ քո ողջ միտքը տալ Իմ Խոսքին:

Ես թույլ տվեցի քո աչքերին տեսնելու Իմ փառահեղ Վսեմությունը: Ես վստահել եմ քեզ մի բան, որն ամեն դիտությունից այն կողմ է:

Զգոն եղիր, որովհետև քո թշնամին կցանկանա քեզ տեսնել, որ դու դադարել ես Ինձ նվիրված լինելուց և կուզենա կառավարել քեզ՝ աշխատանքով ծանրաբեռնելով, ինչպես մի նավ, որ երբ ծանրաբեռնված է՝ կսուզվի: Դու, որ Իմ նավն ես, կրելով Իմ Աստվածային Գանձը, մի՛ ծանրաբեռնիր քեզ այնքան, որ խորտակվես: Ես ուզում եմ քեզ երջանիկ տեսնել և ավելի շատ Իմ մասին խորհրդածության մեջ: Քո վկայությունը չի ավարտվել: Հիմա Ես քեզ թույլ կտամ մեկ անգամ ևս սուզվել Իմ Աստվածային Աղբյուրների մեջ՝ քո հոգուն հանգիստ շնորհելով[1]:

Ա՜խ, ինչպե՞ս կարող եմ մոռանալ այն պահը, երբ մոտեցա քեզ... ամենայն զգուշությամբ, որպեսզի չխրտնեցնեմ քեզ, Ես կանգնեցի քո կողքին: Եվ մեծ նրբությամբ, Ես քեզ հայտնեցի Իմ Սերը, որը մինչ այդ միանգամայն անհայտ էր քեզ: Դու նախկինում երբեք չես իմացել Իմ Անսահման Ողորմության, ոչ էլ Իմ Սիրո խորության մասին:

Ուրեմն ուրախացիր, աղջի՛կս, և դատարկիր հոգսերդ Ինձ վրա, և թող որ սա դաս լինի նաև մյուսների համար, ովքեր կրում են ավելին, քան կարող են: Ես չեմ ցանկանում, որ դու հոգնեցնես քեզ, որպեսզի ավելի

[1] Ես հավատացած եմ նաև, որ Աստված ցանկանում է իմ առանձնությունն Իր հետ, քանի որ Նրա խոսքը բավականին անձնական բնույթ ունի:

արդյունավետ ու օգտակար լինես Իմ Աշխատանքի համար: Ես ասել եմ, որ չպետք է ուշացնես Իմ Գործը, և որ հետևելու ես միայն Իմ քայլերին:

Այս բոլոր պատգամները գալիս են վերևից և ներշնչված են Իմ կողմից: Դրանք կարող են օգտավետ կերպով օգտագործվել ուսուցանելու և սխալը հերքելու համար: Դրանք կարող են օգտագործվել Եկեղեցին դեպի Միասնություն առաջնորդելու և մարդկանց կյանքին ուղղություն տալու, և սովորեցնելու նրանց, որ սուրբ լինեն: Այդ պատգամները տրված են ձեզ ավելի լավ բացատրելու համար[1] ձեզ տրված Հայտնությունը[2]: Դրանք ձեզ տրված զարմանալի շնորհի մի անսպառ աղբյուր են, որ նորոգեն ձեզ:

Ես Կյանք Տվողն եմ, ամեն բան Նորոգողը: Ես Աղբյուրն եմ երկնային Մանանայի: Այո՛, արդարև, Ես մոտեցա քեզ այնպես, ինչպես դու կայիր, որ քեզ հետ մի զարմանալի և հրաշալի միություն կազմեմ: Դու անարժան էիր, և հեռու «սիրո հավասարության» Իմ պահանջից, բայց հրաշալի էիր քո ոչնչության և Իմ Ձայնի հանդեպ քո պատրաստակամության մեջ:

Թույլ տուր Ինձ կիսվել քեզ հետ: Այն օրվանից, երբ դու ուրացար քո անձը, որպես նշան Իմ մտերիմ ընկերության, Ես պսակեցի քեզ Ինձ հետ, որպեսզի դու Ինձ մոտիկ լինես՝ քո ականջին շշնջալու համար ողջամիտ խորհուրդներ, որպեսզի դու քո հերթին կարողանաս խորհուրդ տալ ուրիշներին: Ես շռայլ եղա քո հանդեպ Իմ բարեգթությամբ և Իմ հայրական սիրով: Աստվածային Քաղցրության մի գեղումով, Ես խնդրեցի քեզ ճամփորդել Ինձ հետ և Ինձ համար՝ հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք: Եվ ինչպես քեզ նախկինում ասել եմ, քո պաշտպանության համար Ես տվել եմ քեզ հրեշտակների և հրեշտակապետերի մի բազմություն, ամենաբարձր դասերի իշխաններ, որ ուղեկցեն քեզ քո առաքելության մեջ, նրանց հրամաններ տալով, որ մնան այն շրջաններում, որտեղ ցանվել էին Իմ սերմերը և պաշտպանել այն, ինչ ցանվել էր:

Ես բարձրացրեցի քեզ Իմ արքայական Գավիթները՝ հեղելով քեզ վրա պարգևներ, ոչ առանց պատճառի: Այժմ Ես օգուտ եմ քաղում քո աշխատանքից, և Ես ստանում եմ քո աշխատանքի հիանալի պտուղները: Իմ ընտրյալներին շնորհներ տալը տարբեր պատճառներով է. դրանք Իմ ժողովրդի օգտի համար են, Իմ Եկեղեցու օգտի, բայց, միևնույն ժամանակ, այն հավիտենական ուրախության համար, որ այդ ընտրյալ հոգիները պիտի ստանան Ինձնից երկնքում:

Իսկ նրանք, ովքեր առարկում ու հերքում են Իմ յուրաքանչյուր խոսքը, և մերժում են բացել իրենց սիրտը ու տեսնել այն մեծ օգուտը, որ ստացել է Իմ Եկեղեցին՝ մերժելով տեսնել Իմ Օրհնությունն ու Իմ Սերը, նրանք որպես անարժան պիտի դատվեն, քանի որ նրանք թերագնահատել և մինչ օրս թերագնահատում են Իմ Զորությունն ու Իմ Ողորմությունը:

Ես, Վասո՛ւլա, զգուշացրել եմ քեզ երբեք չհոգնել բարիք գործելուց և սովորել լինել համբերատար, որովհետև վերջում, հարմար ժամանակին, դու պիտի հնձես այն, ինչ ցանել ես:

---

[1] Ես միևնույն ժամանակ լսեցի «հասկանալու»:

[2] Աստվածաշունչը

- Թող քո աշխատանքը լինի գովասանքի արժանի և ոչինչ իզուր չի անցնի:
- Թող Իմ սփոփանքները քեզ արիություն և լույս տան քո հոգում:
- Թող Իմ հայրական սերը լինի քո մշտական ուրախությունը քո մեջ, և մի մեղմ ու մտերիմ զեփյուռ քո հոգում:
- Թող Իմ Աստվածային փաղաքշանքները լինեն քո բուժիչ բալասանը, երբ հոգիդ վիրավորված է կամ հոգնած, ուժ տալով քեզ, ջնջելով քո մեջ ամեն տեսակի դառնություն, որ կարող է առաջ գալ քո մեջ:
- Թող քո կատարած յուրաքանչյուր հոգևոր վարժություն փառաբանվի Իմ մեջ, որպեսզի դու կարողանաս ստանալ Ինձնից անսահման շնորհներ:
- Թող որ Ես միշտ լինեմ քո միակ սերը և բոլորից բարձր:
- Թող քո բերանը պարունակի Յուղը[1], որ քեզ տրվել է, որպեսզի դու քաղցրությամբ հռչակես Իմ Մեծությունը:
- Թող որ մի օր դու հայտնվես Իմ առջև կատարյալ և պատվարժան Իմ Գավիթներում...

Սիրելի՛ս, երբ Իմ Անունը՝ Յա՛հվե, ասվում է քո կողմից, Ինձ հրճվանք է պատճառում այն աստիճան, որ այն ստիպում է Ինձ դեպի քեզ թեքվել մեծ սիրով, և Իմ ուրախությունը անհնարին է զսպել: Երկնքի ողջ Արքունիքը՝ ոգևորված Իմ Ուրախությամբ, ամբողջ սրտով ու մեկ ձայնով, գովաբանում է Իմ արքեցած Սերը, որ Ես ունեմ քո հանդեպ, և Իմ հայրական սերն ու մտերմությունը: Նրանք գովաբանում են Ինձ՝ Իմ արարչության հանդեպ ունեցած Անսահման Ողորմության համար: Իսկ հիմա թույլ տուր Ինձ լսել քեզանից երեք անգամ. “Kyrie eleisson”... (Տեր ողորմյա)

Kyrie eleisson,
Kyrie eleisson,
Kyrie eleisson...

Ես տալիս եմ քեզ Իմ Ողորմությունը և Իմ Օրհնությունները նույնպես: Հիշի՛ր, թույլ մի՛ տուր քեզ չափից դուրս աշխատել: Ես, Աստված, պիտի շարունակեմ պահել քեզ Իմ Իշխանության և Իմ Շնորհի մեջ:

Յահվե է Իմ Անունը:

Հոկտեմբերի 6, 1999

Ես բարձրացնում եմ
Հոգիս դեպի Տերը,
որ թափանցեմ իմ Հոր խորքերը,
և զգամ Նրա Քաղցրությունը:

Իմ սիրտը, թեև շատ փոքր է

[1] «Յուղ» այստեղ նշանակում է «Անուն». Աստծո Անունը:

ամբողջությամբ հասկանալու Նրան,
ով ընդգրկում է
բոլոր արարածներին,
և նույնիսկ ավելի փոքր,
երբ փորձում է հասկանալ,
թե ինչպես Նա, ով բոլոր դարերից
և ամեն ինչից այն կողմ է
Նա, ով կնքված է և անհասանելի,
դառնում է ինձ համար բացված,
հասանելի և թափանցելի:
Իր Կատարյալ Սիրով
Նա ինձ թույլ է տալիս
ճաշակել Իր Քաղցրությունը՝
ճառագելով իմ հոգում
Իր Այցելությամբ:

Արքայական Հրա՛շք Հրաշքների
ես սիրում եմ Քեզ,
խնդրում եմ խոսիր ինձ հետ...

Ա՜խ, Վասո՛ւլա, ես անտեսանելի եմ էությամբ, սակայն ես Ինքս Ինձ ճանաչելի եմ դարձնում նրանց, որոնց ես ընտրում եմ, որ Ինձ ճանաչելի դարձնեմ: Դու երբևէ բռնե՞լ ես Իմ Ձեռքը:

Այո՛...

Դու ինչպե՞ս բռնեցիր քո Աստծուն:

Մի տեսիքում, որը Դու հաճեցիր
տալ ինձ, ես բռնեցի Քո Ձեռքը:
Դա Քո ձախ Ձեռքն էր
ավելի ճիշտն ասած լինելու համար:
Ես զգացի Քո Մատները,
և Քո ամբողջ Ձեռքը,
որն, ինչպես մենք ենք կոչում,
ազնվականի Ձեռք էր՝
գեղեցիկ և երկար մատներով:

Հետո, ես Քեզ բռնեցի
նաև մի այլ ձևով, Իմ Սիրելի,
ես ընկալեցի Քո Ներկայությունը,
ես բռնեցի Քեզ,
որ տիրապետեմ Քեզ:
Ես գրավել եմ Քո Ողորմությունը
հենց իմ թշվառությամբ,
իսկ Դո՛ւ, Մարդկության Սիրահար,
Ողորմություն՝
հակացողության սահմաններից
այն կողմ, մոտեցար ինձ

և Ինքդ Քեզ առաջարկեցիր ինձ:

Այո՛, քանի որ դու տեսար Ինձ ոչ թե քո ֆիզիկական աչքերով, այլ քո սրտի աչքերով, և դու բռնեցիր Ինձ անտեսանելի ձևով...

Հոգին, որ քո Ուսուցիչն է և քո Ճրագը, քեզ վեր է բարձրացնում դեպի Իմ Երկնային Գավիթները՝ մտահայելու և տեսնելու այն, ինչ ոչ մի աչք չի տեսել, և լսելու այն, ինչ ոչ մի ականջ չի լսել: Ես քո ընտանիքն եմ: Ուստի վստահիր Իմ Զորությանը:

Ես քեզ դարձրել եմ ժառանգակից Մեզ հետ, աստվածության հաղորդակից՝ Սուրբ Հոգու մեջ: Սա ուղղված է նաև յուրաքանչյուրին, ով ուրացել է իր անձը և ինքն իրեն միացրել է Մեզ, սիրո այս աստվածային միության մեջ՝ ժառանգակից դառնալով Սուրբ Հոգու միջոցով:

Ես, ինչպես շատ անգամ նախկինում ասել եմ, Իմ անսահման սիրուց ելնելով, քեզ անվանել եմ Պարասկևի[1], և Իմ արդար լրատարը՝ միայն շնորհի միջոցով: Եվ ինչպես քո նախնիների ժամանակներում, Ես քեզ տվել եմ մի հոգևոր պարգև՝ մարգարեության պարգևը: Ես պատվիրել եմ քեզ խոսել Իմ Անունից, և առանց վախի ու պարզությամբ, հռչակել այն ամենը, ինչ Ես ուսուցանում եմ քեզ: Ես վառել եմ քո հոգին, որ առաջ գնա և եռանդով վկայի՝ բոցավառելով այլ սրտեր, որ ճանաչեն Ինձ: Սուրբ Հոգին եղել է քո բալասանը և մարգարեության աղբյուրը այս պատգամներում, բայց նաև՝ բոլոր ժամանակներում: Այդ Նա է, որ հաղորդակից է դարձնում ձեզ Մեր աստվածությանը:

Ինձ ավելի լավ ծառայություն չի տրված, քան դեպի Ինձ հոգիներ ետ բերելու ծառայությունը: Մի՛ կորցնիր վստահությունդ, որովհետև հենց միայն այս ծառայությունը <u>աստվածային նշան է,</u> որ դու միայնակ անկարող ես այն կատարել, եթե դա չլիներ Սուրբ Հոգու միջոցով: Ահա ճիշտ այսպես է բացահայտվում Սուրբ Հոգու շնորհը: Միայն Նա՛ է քեզ տալիս Ինձ մոտ հոգիներ բերելու հնարավորությունները:

Իմ շատ սիրելի, Ես հաճախակի եմ եկել քեզ մոտ, ոչ միայն դրությամբ, այլև իբրև Զորություն և Սուրբ Հոգի՝ Մեր ողջ Աստվածայնությամբ ցույց տալով Ինքներս Մեզ, որ միշտ ներկա ենք, և որ Մեկ Աստվածություն ենք՝ համաբնութենակից Մեր Աստվածային միության մեջ: Երբ Սիրոսում քո շուրջն ամբողջությամբ մեծ ընդդիմության հանդիպեցիր, մի՞թե Ես լքեցի քեզ[2]: Սա դարձրեց քեզ Իմ Զորության հրաշալի օրինակը մնացած Կիկլադոսցիների համար: Ո՞ր արարածը կարող է պարտադրել իրեն Իմ Սրբությանն ու Իմ Զորությանը:

Ես Ինքս տառապել եմ Իմ Սեփական հայրենակիցներից[3], ուրեմն ինչո՞ւ ես զարմանում, երբ դու, որ գալիս ես Ինձնից, տառապում ես նույն

---

[1] *Պարասկևի* հունական անուն է, որ նշանակում է. «Պատրաստեք Տիրոջ ճանապարհը»: Այն նշանակում է ուրբաթ:

[2] Սիրոսը Հունաստանի կղզիներից է, որը պատկանում է կիկլադներին: Ինձ հրավիրեցին այնտեղ, և մեր Տերը մեզ համար մի լայն դուռ էր բացել այն հեռուստաալիքի միջոցով, որի հաղորդումները հեռարձակվում էին մյուս տաներկու կղզիներում: Բայց արքեպիսկոպոսին հրահանգ էր տրվել մի թերթիկ տարածել, որն ինձ հակառակ էր: Սակայն, չնայած դրան, ծրագիրը հեռարձակվեց իմ մասնակցությամբ, և այն ժողովրդին այնքան էր դուր եկել, որ մի քանի անգամ ցույց տվեցին: Մարդիկ գնեցին նաև գրքերը:

[3] Իմ փաստաթղթերում գրանցված է, որ իմ ընտանիքը՝ հայրական կողմից, սերում է Սիրոսից:

վերաբերմունքից: Դիմացի՛ր համբերությամբ, ինչպես ես դիմացա համբերությամբ:

Սիրելի՛ս, մարմին Իմ Մարմնի, ոսկոր Իմ Ոսկրի, չե՞ս տեսնում այն բոլոր մխիթարանքները, որոնք Ես տալիս եմ քեզ: Իմ այցելությունը մեկ օրվա այց չէ: Իմ այցը քեզ հավիտենական է[1]: Եթե մոռացել ես, նորից նայիր քո ճանապարհին, որն Իմ Հայրը պատրաստել է քեզ համար: Նա դրել է շափյուղա շափյուղայի վրա, որպեսզի քո ոտքերը քայլեն միայն առաքինությունների վրայով: Ամուր կանգնիր և մի՛ երերա: Ո՛չ մի մարդ չի կարող քանդել Իմ ամրոցը[2]: Ես ապրում եմ այդ ամրոցում, և ո՛չ մի մարդ չի կարող կործանել Իմ բնակավայրը: Ես քեզ խոսք եմ տալիս... Ես առաջ պիտի գնամ, իսկ դու պիտի հետևես Ինձ: Ուր որ Հոգին է, այնտեղ կա ազատություն և զորություն:

Այսօր աշխարհն աչքեր չունի երկնային բաների համար: Ահա թե ինչու այնքան շատ անվստահություն կա ազգերի միջև և ոչ ազատություն: Աշխարհը հավատում է այն բաներին, ինչ տեսնում է, սակայն այդ բաները տևում են միայն որոշակի ժամանակ: Գնա՛, Իմ Վասուլա, և պատմիր այս փտած աշխարհին այս ամեն բաների մասին, որոնք անտեսանելի են, բայց՝ հավիտենական: Ճառագայթի՛ր Իմ Փառքը. լույսը պետք է դրվի տանիքների կտուրներին. այդպիսի շլացուցիչ լույս գալիս է միայն Ինձնից: Իմ Խոսքերը՝ տրված քեզ, մի ճրագ են խավարի միջով ճանապարհը լուսավորելու համար: Փայլի՛ր այս խավարում, դո՛ւ, որ կրում ես Իմ Խոսքը:

Իմ պայծառությունը երբեք չի խամրում: Ճիշտ է ասել, որ Աստված Կրակ է, կամ, երբ ասում ես դա Սուրբ Հոգու Կրակն է, քանի որ կարելի է այն համեմատել իրական կրակի հետ, որը բոցավառում է ամեն ինչ և անցնում ամեն մի անցքի միջով: Ինչի էլ որ այն դիպչում է, բոցավառում է: Աստծո Կրակը Սիրո Կրակ է, և քեզ, Իմ Վասուլա, չի խնայվել այն: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է այն կլանում քեզ: Դե, ո՞ր արարածը, եթե կլանված չլինի Սիրով, կգրի Մեզ ուղղված աղոթքներ հոգևոր բանաստեղծություններով:

Սուրբ Հոգին, Իր կրակոտ մկրտության համբույրով քեզ դրոշմելուց հետո, բոցավառելով, ներթափանցեց քո բանականության մեջ, բյուրեղացնելով հոգիդ Իր Աստվածային Կրակով, ինչպես ժայռն է վերածվում ադամանդի, որը ծայրահեղ ջերմության հետևանքով բյուրեղացված վիճակում գտնվող մաքուր ու անխառն ածուխն է: Այս նույն ձևով էլ Սուրբ Հոգու Կրակը մաքրագործում է հոգիներ, որ դառնան բյուրեղյա մաքրության և ադամանդի պես մաքուր: Սուրբ Հոգու այս գործողությունը չի լինում առանց տառապանքի: Այդ սիրավառ բոցերով բռնկված մարդը տառապում է, քանի որ նա այրվում է կրակով, բայց նաև սիրով: Երբ Կրակը պատում է քեզ ամբողջովին, դես ու դեն նետելով, կերպարանափոխելով քեզ՝ ժայռից ադամանդի, Սուրբ Հոգին Իր սիրավառ գործողությամբ նախապատրաստում է քեզ տեսնելու

[1] Ես խղճում էի ինքս ինձ, քանի որ Հիսուսն ինձ այնքան էլ հաճախ չէր այցելում, և ահա իմ Պատարագը փորձում էր սփոփել ինձ մի այնպիսի քնքուշ Ձայնով, որ այն հնչում էր ինչպես մի անվերջանալի Երանություն:

[2] Այս նախադասությունն արտասանվեց ինչպես հրաման և մեծ իշխանությամբ: «Ամրոցը» ես էի:

Աստծուն: Զե՞ս կարդացել. «Երանելի են սրտով մաքուրները, նրանք պիտի տեսնեն Աստծուն»: Հենց որ տեսնես Աստծուն, ինչպես Սուրբ Գրքերն են ասում, հոգիդ կկանչի.

«Իմ Ուրախություն,
որքան ճիշտ է Քեզ սիրելը»:

Եվ անմիջապես դու պիտի դրավես Մեզ, որ տիրապետես Մեզ... Եվ ես ցած պիտի իջնեմ ամպերից, որ քեզ վեր բարձրացնեմ և տանեմ քեզ Իմ Թևերի վրա ճախրելու երկնքում: Եվ ինչպես զբոսաշրջիկների առաջնորդ, ես քեզ պիտի պատմեմ պատմությունը այն բաների, որոնք անտեսանելի են աչքին և անհասանելի՝ դիպչելու համար: Ես քեզ ցույց պիտի տամ Իմ Փառավոր Գահը, որտեղից ես թագավորում եմ, բայց դու նույնպես, Իմ կողքին, կարող ես թագավորել Մեզ հետ: ic:

2000

Փետրվարի 12, 2000

Քո Պալատից, Յահվե՛,
իմ Թագավոր, բայց նաև Հայր,
Դու ջրեցիր ինձ, մինչ
և որ իմ ցամաքած հողը
ունեցավ այն ամենն,
ինչ Քո Երկինքն է առաջարկում:

Դու օգտագործում ես
քամիները որպես պատգամատարներ,
իսկ հրավառ բոցերը՝
որպես ծառաներ,
որ ամեն մի ցեղի
հռչակեն Քո Փառքը
և Քո Անվան մեծությունը:

Այո՛, և ես
կշարունակեմ պատմել
Քո հրաշալիքները մեկ առ մեկ
բանաստեղծության միջոցով,
քանի որ ես ինձ հանձնել եմ Քեզ...

[1]Խաղաղությո՛ւն, զավակս: Ամեն ինչ, որ Ես տվել եմ քեզ, գալիս է Սուրբ Իմաստությունից: Այս ձևով եմ Ես միշտ աշխատել Իմ մարգարեների հետ: Ես խոսել եմ, և նրանք հավատացել են: Մշտապես ողողված Իմ Լույսով, նրանք գործում են Իմ Կամքի համաձայն: Իմանալով նրանց մարդկային թուլությունը, Իմ Աչքերը, ինչպես մայրն է հսկում իր մանկանը, հսկում են Իմ ընտրյալներին, որ նրանց հեռու պահեն մեղքից և աշխարհիկ հակումներից: Հետո, Իմ մեծ բարյացակամությամբ, ինչպես նաև ուրախությամբ, Ես նրանց շնորհում եմ հատուկ շնորհներ, որ նախապատրաստեմ նրանց իրենց առաջադրանքի համար, մի առաջադրանք, որը սովորաբար նրանց մարդկային կարողությունների սահմանից այն կողմ է: Ես շնորհում եմ նրանց Իմ պաշտպանությունը՝ պատսպարելով նրանց Իմ Թևերի տակ[2], իսկ քեզ, որին Ես հարուցել եմ մի նպատակի համար, և որի վրա Ես փորագրել եմ Իմ Սուրբ Անունը, Ես կմատակարարեմ բոլոր անհրաժեշտ բաները, որ ստիպեմ առյուծներին ու

[1] Յահվեն է խոսում:
[2] Միայն մի արտահայտություն:

վիշապներին ոռնալ վախից, քանի որ նրանք կիմանան, որ Ես Եմը քեզ հետ է:

Իմ ամենազորեղ Ձեռքը պաշտպանության միջոցների պակաս չունի: Ուստի հիմա քեզ վրա փորագրված Իմ Սուրբ Անունը պաշտպանելու համար, Ես շրջափակել եմ քեզ Իմ Բազուկներով, ինչպես մեկը ցանկապատով կշրջափակի իր սեփականությունը ներխուժողներից, այդպես էլ Ես շրջափակել եմ քեզ: Ի՞նչ մրցակից կհամարձակվի գալ հիմա և հակադրվել Ինձ, ու մարտահրավեր նետել Իմ ընտրությանը: Հրաշքն Ինքը բարեհաճեց իջնել ցած, որ կենդանացնի այս մեռնող սերնդին՝ մի անասելի ձևով՝ ցույց տալով Իմ Գերիշխան զորությունը, բայց նաև ողորմությունը՝ քո մեջ Իմ Աստվածային Գործի միջոցով: Ես կաթիլ առ կաթիլ, ինչպես ծորացող զմուռս, լցրել եմ քո ականջի մեջ Իմ Իմաստությունը՝ բացելու համար քո լսողությունը:

Ա՛խ[1], ինչպիսի բերկրանքներ Ես ստացա՝ հրաշքների այս հրաշքը կատարելիս: Ինչպիսի աստվածային հաճույք Ես ստացա Իմ Ողորմության բարյացակամ արարքից, կանխատեսելով, որ վերականգնումը մոտ էր: Ինչպիսի ուրախություն և գոհություն էր լցվում Իմ Սիրտը, մինչ Ես ազատագրում էի քեզ քո թշվառությունից և չարի կապանքներից, դրա փոխարեն քեզ մոտեցնելով Ինձ, որ դառնաս մի զավակ, որ միշտ զվարճանում է Ինձ հետ: Հետո, որպեսզի քո աչքերը սևեռես Իմ արքայական արժանապատվությանը և ընդմիշտ հիշատակես մեր ամուսնությունը, Ես քաղցր համբույրներ դրոշմեցի այդ շուրթերի վրա, որոնք պիտի փառաբանեին Իմ Անունը՝ ուշադրությունդ կենտրոնացնելով Իմ գերագույն քաղցրության վրա, և որպեսզի Ես լսեմ քեզ ասելիս. «Տեր Աստված պսակվել է ինձ հետ, զարդարելով հոգիս Իրենով: Ո՛հ, որքան հաճելի է մեր Տիրոջը, երբ հոգին զիջող է և կամեցող, քանի որ Աստծո անթափանց Իմաստությունը մուտք կգործի նրա[2] մեջ և նրան ամբողջությամբ կտանի Իր մեջ»:

Սուրբ Գրքերն ասում են. «Երանելի է այն մարդը, ում Դու ընտրում ես, ում Դու հրավիրում ես ապրել Քո գավիթներում»[3]: Այո՛, երանելի է նա, քանի որ Ես լցնում եմ Իմ ընտրյալին Իմ Տան բարիքներով, իսկ այդ բարիքները Իմ Բերանից եկող սուրբ ուսուցումներն են: Հետո Ես զարդարում եմ Իմ մարգարեին երկնային հարստություններով ու շքեղությամբ, որոնք առաքինություններն են:

Իմ տաճարը Ես սուրբ և մաքուր եմ ուզում, Իմ խորանը Ես անբիծ եմ ուզում, և հազարավոր անգին քարերի պես փայլելիս: Ես նրա լեզուն դարձնում եմ երկայր սրի նման, որ գնա և խոսի հպարտության և ամբարտավանության դեմ, բոլոր մեծամիտ խոսողների դեմ, մարդկային ողջ հպարտության դեմ, այն ամենի դեմ, որոնց մասին մարդիկ մեծ համարում ունեն, անարդարության դեմ և այն ամենի դեմ, ինչը հակասում է Իմ Սիրո Օրենքին:

Ես հրճվում եմ Իմ բնակարանով[4], քանի որ Իմ Հոգին հանգչում է նրա վրա, ով պետք է կրի Իմ Խոսքը: Պսակված Ճշմարտության հետ, Իմ

[1] Աստված ուրախ էր թվում, երբ ասաց. «Ա՛խ»:
[2] Հոգին
[3] Սաղմ. 65:4
[4] «Բնակարանն» օգտագործվում է «մարդարե» բառի փոխարեն:

մարգարեն ուղարկվում է որպես Իմ արքայական դեսպանը այս երկրի ամեն մի զազրելի անկյունը, որ ձեզ համար հնչեցնի արդարություն, բարություն, սրբություն, առաքինություն և ձեզ բոլորիդ հիշեցնի Իմ Ուղիները, հիշեցնի յուրաքանչյուր մարդու ամեն մի դասից, որ.

- Հոգով աղքատների Օծումը ես եմ,
- ձեր բարեկեցության Երաշխավորը ես եմ,
- Լուսավոր Աստվածությունը և Վսեմ Սիրո Աղբյուրը ես եմ,
- Գերիշխանն ու Փեսան ողջ արարչության ես եմ,
- Մարմնի և հոգու Վերականգնողն ու Ճրագը ես եմ,
- Ճշմարտության համար հալածվողների Մխիթարիչը ես եմ,
- Հիվանդների ու մեռնողների Բալասանն ու Օծման Յուղը ես եմ, և որ ես ձեր Տերն ու Աստվածն եմ, բայց նաև ձեր Ընկերը, ձեր Ուղեկիցն ու ձեր Հայրը:

Ես, սերո՛ւնդ, անդադար Ինքս Ինձ տալիս եմ ձեզ, որ կատարյալ դարձնեմ ձեր պատկերը, որը դուք այնքան այլանդակել ու արատավորել եք ձեր չար արարքներով, ձեր մեղքերով ու ձեր համառ դիմադրությամբ՝ ճանաչելու Ինձ որպես ձեր Հայրը: Եվ եթե ես Ինքս Ինձ անդադար տալիս եմ ձեզ, դա նրա համար է, որ ձեզ վեր բարձրացնեմ շնորհի միջոցով, և որպեսզի շնորհի միջոցով ձեր տեսողությունը վերականգնվի՝ տեսնելու համար անտեսանելի բաները, որոնք երբեք չեն մաշվում: Ահա թե ինչու եմ ես մարգարեներ վեր հանում Իմ Բարի Կամքով՝ միայն Իմ Բերանից եկող մեկ խոսքով, որ միացնեմ նրանց Իմ Սրտին:

Ես, Լուսափայլ Աստվածությունը, ձեր արարումից դեռևս շատ առաջ, կանխատեսել էի այս Մեծ Ուրացությունը: Ուրեմն մի՞թե ես իրավունք չունեմ մարգարեներ վեր հանելու: Ամբողջ երկինքն ուրախանում է, քանի որ, Մեր ողորմած ներողամտությամբ, Մենք խղճացինք ձեր անտարբերությանը: Ես վեր եմ հանել մարգարեների, որ ուղղակիորեն և բոլոր ժամանակներում ստանան Իմ երկնային կանչերը՝ առատ շնորհների հետ միասին: Ես կիսում եմ նրանց հետ, նրանց սրտին մոտ լինելով, Իմ բոլոր Աստվածային Գործերը: Ես Իմ Սրտից ներշնչանքներ եմ ուղղել և ուղղում նրանց սրտերում, որպեսզի նրանք հավատարմորեն վկայեն: Եվ եթե ես նրանց միջոցով վրդովվում եմ շատ մեծամիտ մարդկանց, այդ այն պատճառով է, որ նրանց[1] ուղիներն Իմ ուղիները չեն:

Այս սերնդին փրկելու Իմ բուռն ցանկությամբ, ես բարձրացրել եմ մարգարեներ և նրանց պսակել Ինձ հետ: Ես սովորեցրել եմ նրանց, թե ինչպես անցկացնեն իրենց ժամանակն Ինձ հետ, և ինչպես կիսեն իրենց կյանքն Ինձ հետ, քանի դեռ երկրի վրա են, համաձայն այն շնորհի, որը ես տվել եմ նրանց:

Այս օրերին ես ներքև եմ իջնում Իմ Որդու և Իմ Սուրբ Հոգու հետ միասին, որպես երեք Վկաներ: Ես Հոգի եմ[2] նրանով, որ ուղարկում եմ Ճշմարտության Իմ Սուրբ Հոգին[3], որ ընդմիշտ ձեզ հետ լինի և

[1] մեծամիտները
[2] (Հովհ. 4:24 նաև Սուրբ Պողոսը Ա Կոր. 15:45) Քրիստոսի մասին խոսում է որպես «կյանք տվող Հոգի»: «Հոգու» նկարագրությունն աստվածաշնչյան իմաստով այնքան չի բնորոշում Աստծո բնությունը, որքան նկարագրում է Նրա կյանք տվող գործունեությունը: Աստված Հոգի է նրանով, որ տալիս է Հոգին:
[3] Հովհ. 14:17

առաջնորդի ձեզ դեպի կատարյալ Ճշմարտությունը: Մտածե՛ք Իմ Ողորմության մասին և պաշտեք Ինձ:

Խոսքը[1] Ինձ հետ էր, և Նա գոյություն ուներ սկզբից ի վեր: Նա, ով ամենամոտն է Իմ Սրտին, վկայել է և Ինձ հայտնի է դարձրել ձեզ: Իմ Խոսքը վկայում է երկրի վրա, ինչպես Ես և Սուրբ Հոգին ենք վկայում: Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, որ գնեց Իր Եկեղեցին Իր Սեփական Արյամբ, վկայում է Իր Արյամբ[2], իսկ Սուրբ Հոգին, որ առաջնորդում է ձեզ դեպի կատարյալ Ճշմարտություն[3], վկայում է Ջրով[4]: Միասին Մենք երեք Վկաներ ենք, և Մենք բոլոր երեքս էլ համախոհ ենք, քանի որ Մենք միայն Մեկ Աստված ենք[5], մեկ Կամքով, մեկ Զորությամբ և մեկ Տիրապետությամբ: Եվ դուք կարող եք վերագրել Զորությունը, Սուրբ Իմաստությունը և Անսահման Բարությունը Մեզ երեքիս հավասարապես:

Սերը ստիպում է Ինձ, սերո՛ւնդ, ոմանց շնորհել մարգարեության հոգին, որպեսզի նրանք կատարեն այն, ինչ Ես նրանց պատվիրում եմ անել: Նրանք սնվում են առատ մեղրով[6] և յուղով[7] որ հռչակեն Իմ Անվան մեծությունը: Նրանց Ճշմարտության մեջ հաստատված և խելամիտ խորհրդածության մեջ պահելու համար, Ես շատ անգամներ հանդիմանել, ուղղել և ուսուցանել եմ նրանց, որպեսզի նրանք դառնան օծում նրանց համար, որոնց Ես ետ եմ բերում Իմ Տունը: Ես ուսուցանել եմ նրանց Սուրբ Իմաստությամբ, իսկ Իմաստությունն ամբողջապես հաստատվում է Օրենքի կատարմամբ:

Ես սովորեցրել եմ Իմ մարգարեներին դիտել Ինձ Իմ Սրբության մեջ, թույլատրելով և հասանելի դարձնելով նրանց Իմ Ազնվականությունն ու Վեհությունը, որ ուրախանան Իմ անմիջական Ներկայության մեջ և զգան Իմ քաղցրությունը: Հետևաբար, միակ աստվածաբանությունը, և Ես խստորեն կավելացնեի, միակ <u>ճշմարիտ</u> աստվածաբանությունը Իմ՝ ձեր Աստծո մասին մտահայեցողությունն է և Երանական Տեսիլքի նախաճաշակը: Սա է ճշմարիտ և սուրբ աստվածաբանությունը: Գիտուն աստվածաբանը նա չէ, որ փոփոխում է իր թղթերը համաձայն իր աստվածաբանության, որ նրան դարձնում է մարգարե՝ մարգարեանալու համար, այլ նրանք, որոնց Ես Ինքս եմ օծել Իմ Սիրո օծումով, ամրացնելով նրանց Իմ Սրտի խորքում, որ հասնեն Իմ Սրտում գտնվող ներքին Աստվածային և արտասովոր ներշնչումներին, որոնք կրակի նման հայտարարվելու են Իմ ժողովրդին:

---

[1] Հիսուս Քրիստոսը

[2] Նրա Զոհաբերությամբ մենք ստացանք Հավիտենական Կյանք:

[3] Հովհ. 16:12-13: Հիսուսն ասում է. «Ես դեռևս շատ բաներ ունեմ ասելու ձեզ, բայց հիմա դրանք ձեզ համար չափազանց շատ կլինի: Բայց երբ Ճշմարտության Հոգին գա, Նա կտանի ձեզ դեպի կատարյալ Ճշմարտությունը...»: Սխալ է ասել, որ Հայտնությունը վերջ է դտել և դրան վերաբերվել որպես մի կողմ դրված գրությունների: Աստված գործուն է և կենդանի, և պիտի շարունակի Ինքն Իրեն ցույց տալ Սուրբ Հոգու միջոցով, երբեք չդադարելով այդ անել: Երբ լատիներենում ասում են. «ամբողջական» (complere), դա նշանակում է, որ Քրիստոսը Աստծո լրիվ, ամբողջական հայտնությունն է, այլ ոչ թե Նա պիտի դադարի Ինքն Իրեն մարդկությանը բացահայտելուց: Աստվածաշունչը Հիսուս Քրիստոսի մասին պատմողական վկայությունն է: Այն Աստծո վերջին խոսքը Չէ:

[4] Մկրտությամբ

[5] Էության միասնությամբ

[6] *Մեղրը* ներկայացնում է Երկնային Մանանան՝ Աստծո Խոսքը:

[7] *Յուղը* ներկայացնում է Աստծո Անունը: (Երգ Երգոց 1:3)

Ա՜խ, Վասո՛ւլա, որքան եմ Ես երկրից լսել զվարճալից ծիծաղ ու մեծամտություն՝ որն ուղեկցվում է կատարյալ զայրույթով ու նաև խլությամբ, երբ դու ուղղում ես նրանց Իմ Անունով: Այո՛, մեղավորները հաշվի չեն առնում հանդիմանությունը՝ գտնելով ամեն տեսակ պատճառաբանություններ, որ անեն այն, ինչ իրենք ենք ցանկանում:

Ես Ինքս Ինձ մի աննկարագրելի ձևով ցուցադրում եմ Իմ մարգարեներին, այո՛, մինչ նրանք դեռևս այստեղ են՝ երկրի վրա, և նրանք իրազեկ են այդ շնորհին: Ես զգեստավորում եմ նրանց Ինձնով: Ես զգեստավորում եմ նրանց մերկությունը՝ Ինձնով զարդարելով նրանց, և նրանք գիտեն այդ: Նրանք գիտակից են Իմ Աստվածային Ներկայությանը ներհայեցողության ընթացքում:

Ես օծել եմ քեզ, որ վերցնես Իմ Սրտից բոլոր աստվածային ներշնչումները ամեն մի կարիքի համար, որպեսզի դրանք տրվեն Իմ ժողովրդին որպես օծում և որպես թարմացնող առավոտյան ցող՝ ցամաքած հողի վրա: Ես քեզ շնորհի միջոցով սովորեցրել եմ նաև, թե ինչպես մեկնաբանել Իմ ցանկությունները: Այս ամբողջ Աստվածային Հայտնության ընթացքում, ինչպես նաև նախկին Հայտնություններում, Ես ասել եմ, որ Ինքս եմ ուսուցանում Իմ ընտրյալներին, և դառնում նրանց Հոգևոր ղեկավարը, որ սովորեցնեմ նրանց, թե ինչ ճանապարհով գնան: Ես, Իմ կողմից, հռչակում եմ Իմ բարերարությունը, որ փրկություն եմ բերում նրանց, որոնց Ես սիրում եմ, իսկ նրանք, իրենց հերթին, ուրախությամբ երգում են Դավթի սաղմոսները Իմ թևերի հովանու տակ:

Դու պսակում ես նրանց,
ում սիրում ես
Քո առատաձեռնությամբ,
բազում շնորհներ են ծածկում
նրանց գլուխները:
Քո գավաթը հորդում է,
մինչ Դու կիսում ես այն,
Դու անմահացնում ես նրանց
Քո Անվամբ,
Դու զարդարում ես նրանց հոգին
առաքինությունների դիպակներով,
որպեսզի Քո Արքայական Սիրտը
սիրահարվի նրանց գեղեցկությանը:

Այո՛, ասա՛ այս թմրած սերնդին, որ Աստված այստեղ է: Իմ Գործերը վեհ են, և նրանք, ովքեր ճանաչել են Իմ Ձայնը այս պատգամներում, օրհնյալ են: Նրանք, ովքեր հրճվում են դրանցով, ճիշտ են անում, երբ իրենց աչքերը պահում են դրանց վրա, որովհետև Իմ Գթառատ Ձեռքից դուրս եկող յուրաքանչյուր Գործ լի է փառքով և մեծությամբ: Ես հիշեցնում եմ Իմ ժողովրդին, որ մարգարեությունը կենդանի է, քանի որ այն գալիս է Իմ Զորությունից, որին Ես տիրապետում եմ, ուրեմն ինչո՞ւ համար է այդ մեծամտությունը ազգերի կողմից: Չե՞ք լսել, որ Ես Ինքս անձնապես պատիվ եմ անում նրանց Իմ ուղղակի միջամտությամբ:

Այո՛, արդարև: Եվ Ես նրանց մոտ եմ պահում Իմ Սրտին, ինչպես մայրն է գորովանքով պահում իր զավակին իր սրտի վրա: Այս ձևով էլ, Ես Իմ Սրտին մոտ եմ պահում Իմ մարգարեներին, և վա՜յ, վա՜յ նրան, ով կհամարձակվի երկարել իր ձեռքը և կփորձի դիպչել նրանց առանց Իմ Լիազորության:

Ուրախ եղիր, Վասիլի՛կի, նրա համար, որ Ես քեզ թույլ եմ տալիս ներս ու դուրս անել, ինչպես նաև ազատորեն շրջել Իմ Երկնային Գավիթներում: Թող քո հոգին հրճվի Իմ Ողորմությամբ: Եկեղեցին տառապում ու հյուծվում է իր մեծ ուրացության մեջ, մի ուրացություն, որը կանխասացվել է, բայց գաղտնի է պահվել: Ուրեմն, մի՞թե Ես նույնպես պետք է լուռ մնայի:

Ես լուռ չպիտի մնամ, ինչպես սատանան է ցանկանում, ո՛չ, այլ պիտի շարունակեմ վեր հանել մարգարեներ, որ հայտարարեն և դատապարտեն, որպեսզի ճրագի նման փայլեն այնտեղ, ուր խավար է: Ես ուսուցանում եմ նրանց վեհանձն լինել և Ինձ բավականություն պատճառել՝ Իմ Կանչին շռայլորեն պատասխանելով, այն ժամանակ, երբ նրանք խորհրդածության և մտահայեցողության մեջ են գտնվում Իմ սիրառատ Բազուկների մեջ: Ես լցնում եմ նրանց բերանը պաշտամունքով, իսկ նրանց հոգին՝ ուրախությամբ: Ինչպես արյունն է շարունակաբար առանց լսվելու հոսում երակների մեջ, այդպես էլ հանդարտ կերպով Իմ Սուրբ Հոգին Իմաստությամբ սովորեցնում է քեզ, Վասո՛ւլա, քո և ուրիշների փրկության համար, և եթե Ես հորդորում եմ քեզ երբեմն-երբեմն, այդ քո հոգևոր աճի և քո առաջընթացի համար է:

Ողջ հավիտենությունից ի վեր, Ես կանխատեսել էի նաև այս ուրացությունը Եկեղեցու մեջ, բայց Ես կանխատեսել էի նաև Իմ Փրկարար Ծրագիրը քո մեջ, ուր Ես ցած պիտի իջնեի Իմ Գահից, և քեզ պիտի ուղղեի աստվածային բանաստեղծությամբ Իմ Սիրո Թեման, և հայտնեի քեզ ու քո միջոցով ուրիշներին, Իմ գթառատ միջամտությունը՝ Իմ Անսահման Ողորմության միջոցով:

Դու կարիք ունեիր, սերո՛ւնդ, և Ես եկա, որ բավարարեմ ձեզ, բայց դուք ուրախ չեք, որովհետև մինչ այսօր Ես խոսում եմ, իսկ դուք վրդովվում եք Իմ ուսուցումներից: Ես եկա, որ բուժեմ ձեր ուրացությունը, և խոնարհ սրտերը լսեցին Ինձ: Ես եկա, որ հարուցեմ ձեր մեռածներին, որպեսզի նրանք ճանաչեն Ինձ որպես իրենց Հայրը՝ Իմ Սուրբ Հոգու միջոցով, և այդ միայն Նրա միջոցով է, որ կարելի է Աստվածային Գիտություն ձեռք բերել և ի հայտ բերել նրանց, որոնց Մենք ընտրել ենք, քանի որ նրանք, որպես իրենց Խորհրդատու և Ուսուցիչ ունեն հենց Իրեն՝ Սուրբ Հոգուն: Որովհետև Նրա միջոցով, և ոչ թե մարդկային գիտության միջոցով է նրանց[1] տրված շնորհը իրենց մտքում, հասկանալու Եռանձն Աստծուն և խոսելու Նրա հետ: Մարդկային հմտության ոչ մի հնարամիտ պատճառաբանություն չի կարող նրանց ասել, որ իրենք Ինձ չեն հանդիպել: Դա նման կլինի, եթե նրանց ասեն. «Դուք մերկ եք», երբ իրենք գիտեն, որ հագնված են: Ես Ինքս եմ զարդարել նրանց Ինձնով: Բայց սատանան հաղթել է Իմ Եկեղեցու բարձրագույն պաշտոնյաներին, և ձեզ պատասխանատու է

[1] Մարգարեները

համարել դավանաբանական սխալների համար, մինչդեռ Սուրբ Հոգու միջոցով ձեզ ուղղված Իմ կրկնվող ներշնչումները պետք է նրանց համար պարզ դարձնեին և նրանք հասկանային, որ դա մի ուժեղ փորձություն էր չարի կողմից:

Սատանան, նախանձելով այն բոլոր պարգևներին, որոնք Ես հեղում եմ այս մեռնող սերնդի վրա՝ նրան փրկելու համար, նախանձելով քեզ, ում Ես ընտրել եմ, որի վրայից դեռևս երկնային ցող է կաթում Իմ Գավիթներից, որտեղ դու դաստիարակվել ես, որ ուղարկվես որպես Իմ թանկարժեք ընծան բոլոր ազգերին, կատաղած, նա երդվել է նախանձելով ոչնչացնել քեզ՝ իր թույնը քեզ վրա թափելով, որ դու նողկալի, այլանդակ, վտանգավոր և տգեղ երևաս: Բայց քո Օրհնյալ Մայրը հասավ քեզ օգնության և ծածկեց քեզ Իր Թիկնոցով:

Շնորհի միջոցով Ես քեզ բարձրացրել եմ, որ Ինձ կանչես, երբ որ կամենաս, մի եզակի արքայական պարգև, որը Ես հազվադեպ եմ տալիս Իմ ընտրյալներին: [1] Բայց Սատանան, նորից նախանձելով, շատերին բերեց, որ ծաղրեն քեզ, նրանց իր կողմը տանելով: Զնայած այն բարի պտուղներին, որ Ես հավաքել էի նրանց տալու համար, նույնիսկ այդ դեպքում, նրանք չարունակեցին Ինձ մարտահրավեր նետել, ըմբոստությամբ անտեսելով Իմ պտուղներն ու Իմ խորհուրդը[2], և մնում են այնքան այլասերված ու անհավատարիմ, ինչպես իրենց նախնիների որդիները, բարկացնելով Ինձ իրենց բարձր դիրքերով:

Կան նաև այնպիսիները, ովքեր հավատացին, որ Ես խոսել եմ, բայց Սատանան անգամ նրանց թմրածության ոգի տվեց, մարդկային մի հարմարվողականություն Իմ Հրաշքների հանդեպ, որը ժամանակի ընթացքում ստիպում է նրանց կորցնել հետաքրքրությունը Իմ Հրաշքների նկատմամբ, Հրաշքներ, որոնք կյանքի աղբյուր են, և որոնք կարող են առաջնորդել նրանց դեպի Հավիտենական Կյանք:

Պետք է որ լսած լինես սերմնացանի առակը: «Երբ մարդ լսում է թագավորության խոսքը առանց հասկանալու, չարը գալիս և տանում է այն, ինչ որ ցանվել էր նրա սրտում»: Այդպիսի մարդիկ մնում են անտարբեր, անզգա, անհասկացող:

Կան նաև ոմանք, ովքեր մի ողջ տոնախմբություն բարձրացրին Իմ պատգամատարի միջոցով Իմ Ձայնի արձագանքը լսելիս, մեծ ուրախությամբ ողջունելով Իմ մարգարեին, գրոհելով ուրիշ քաղաքներ, որ հայտարարեն, թե (Աստծո) թագավորության խոսքը նորից ուղղվում է նրանց, ձրիաբար և հզոր կերպով: Բայց այդ ոգևորությունն արագորեն անհետացավ, որովհետև նրանց սրտում Իմ խոսքը հանդիպեց միայն ժայռի կտորտանքների, և դրանց մեջ արմատ չգցեց: Նրանք չեն դիմանում Իմ խոսքի համար առաջին իսկ հալածանքին, կամ՝ իրենց հետ պատահած մի փոքր փորձության պատճառով: Ո՛չ, նրանք այնպիսիները չեն, որ հաստատուն կկանգնեն, երբ մարդիկ նախատեն իրենց, և իրենց դեմ խոսեն ամեն տեսակի չար բաներ և զրպարտանքներ Իմ Անվան

[1] Տերը, սկզբից ևեթ ասել էր, որ ես կարող էի կանչել Իրեն, երբ էլ որ ցանկանայի, և Նա միշտ կպատասխաներ ինձ: Եվ Նա, այդ ժամանակվանից սկսած, միշտ պատասխանում է, երբ ես կանչում եմ Նրան:

[2] Նրանք կճանաչվեն իրենց պտուղներից:

համար, քանի որ նրանք երբեք ամուր հիմք չեն ունեցել: Նրանք առաջինը կընկնեն:

Գերագույն Իշխանությունը չհասկացվեց և մերժվեց..., իսկ խաղաղության իմ դեսպանները[1] դառնորեն արտասվում են նրանց ցամաքած սրտերի վրա: Սատանան որքան որ կարող էր, տարածել է իր կատաղությունը, որ ոչնչացնի մարդկությանը տված Իմ պարգևը[2], ուղարկելով մշակներ, որ աշխատեն քո թիկունքից, Իմ Վասուլա, փոսեր փորելով, որ կոտրեն քեզ: Բայց Իմ աջ Ձեռքը փշուր-փշուր արեց նրանց լուծը:

Բայց լսիր այս, Վասո՛ւլա, Ես քո ողջ ընտանիքը դուրս եմ բերել Երգիպտոսի օրհնյալ երկրից, ուր մինչ օրս Իմ Որդու, Նրա Մոր և Արդար Հովսեփի բուրմունքը դեռևս բարձրանում է այդ երկրից մինչև երկինք: Արդեն այնտեղ Ես ողջունել էի քեզ և երդվել. «Այս ծաղկի միջոցով Ես ձեզ միասին պիտի հավաքեմ տարբեր ազգերից և տարբեր հավատներից, և պիտի հայտնեմ ձեզ բոլորիդ Իմ Հայրական Սերը և Ողորմությունը: Նրա (Վասուլայի) փխրուն էությամբ, Ես պիտի բարձրացնեմ ազգեր, նորոգելով նրանց հոգևոր հեղափոխությամբ: Ես մտադիր եմ, այս ծաղկի միջոցով, ցուցադրել Իմ Սրբությունը, որ բոլոր ազգերը տեսնեն: Իսկ նրանց համար, ովքեր հրամայում են Իմ մարգարեներին չմարգարեանալ, Ես կտամ մի հրաշագործ մարգարեական Կանչ և Հրաման Իմ Գահից, Իմ Ընտրությամբ, օծելով նրան (Վասուլային), որպեսզի նա չկարողանա դիմադրել Իմ Մարգարեական Կանչին»:

Եգիպտո՛ս, Ես մարգարե բարձրացրեցի քո հողից: Դու հաց տվեցիր Իմ Որդուն, ուրեմն ինչո՞ւ չպետք է Ես մարգարե վեր հանեմ քեզնից: Այս մարգարեից դուրս պիտի գա Իմ Խոսքը մինչև չարերի կոտոշները բացահայտվեն և ցուցադրվեն:

Երբ Ես խոսում եմ, ո՞վ կարող է չմարգարեանալ[3]: Մի՞թե երկու ընկեր միասին ճանապարհ կգնան, եթե նրանք չեն ծրագրել այդ անել[4]: Ես ոչինչ չեմ անում առանց Իմ Ծրագրերը Իմ մարգարեներին հայտնելու[5], և Ես այդպես էլ արեցի քեզ հետ, Վասուլա, հայտնեցի ոչ միայն Իմ Ծրագրերը, այլև Իմ Սուրբ Դեմքը: Եվ այն ամենը, ինչ Ես կանխասացել եմ, իրականացել է իր ճիշտ ժամանակին: Կյանքի Խոսքը քեզ ձրիաբար տրվեց՝ քեզ որդեգրելու և քեզ Մեր աստվածության հաղորդակից դարձնելու համար: Բայց Սատանան նորից պիտի մտնի Իմ ժողովրդի մտքերի մեջ, իմանալով նրանց տգիտությունը, որ նրանց դայթակղեցնի քեզ վրա քարեր նետելու, Իմ արտահայտման համար:

Ա՜խ, եթե միայն աշխարհը խաղաղություն հաստատեր Իմ Եռանձն Սրբության հետ, նրանք կհասկանային Իմ ասածները:

Ես խոստանում եմ քեզ, և սա քո Երկնավոր Հայրն է խոսում քեզ հետ՝ Աստվածային Սիրով այրվելով, Նա՛, ում մասին դու մի անգամ ասացիր. «Իմ Երկնավոր Հայրը, Ես գիտեմ թուլություն ունի իմ հանդեպ, բայց Ես նույնպես թուլություն ունեմ Նրա հանդեպ», ասում է քեզ. «Ես պիտի

[1] մարգարեները
[2] Աստված նկատի ունի ինձ:
[3] Ամոս 3:8
[4] Ամոս 3:3
[5] Ամոս 3:7

շարունակեմ ծածկել քեզ Իմ Քաղցրությամբ, բարեհաճորեն ծավալվելով քո ներսում, Ինքս Ինձ ավելի շատ քեզ տալով, և լցնելով քո հոգին ինչպես մի քաղցր նյութ, որպեսզի դու, քո հերթին, ինքդ քեզ ավելի շատ տաս Ինձ՝ այս ձևով մեկ հոգի դառնալով Ինձ հետ, մեկ հոգի Աստվածայինի հետ: Ապա Ես մեկ անգամ ևս քեզ պիտի ուղարկեմ ազգերի մոտ, որպես Իմ զարդարված պարգևը՝ բարությամբ ուսուցանելու նրանց, բերելով նրանց Մեզ մոտ՝ որդիական սիրո մեջ լինելու Մեզ հետ, ընդարձակելով նրանց սիրտը, որ ավելի շատ ստանան Մեզ, և այն ամենն, ինչ Աստվածային է: Հետո, այդ հանդարտության ու խաղաղության մեջ, որը Ես պիտի բերեմ նրանց հոգուն, նրանք հանկարծ պիտի տեսնեն ամեն ինչ Մեր Լույսի տակ, հաղթահարելով Սատանայի գայթակղությունները: Այդ պահից սկսած, նրանք նույնպես պիտի կոչվեն «աստվածության մանակիցներ», և նրանք պիտի կառավարեն Մեզ հետ»:

Հիմա Ես շնորհել եմ քեզ, և քո միջոցով ուրիշներին, հասկանալու ձեր դիրքը: Ես վերականգնում եմ ազգեր, նրանց տառապանքների և զոհողությունների միջոցով, որոնց Ես ընտրել եմ, չնայած հաճախ նրանք գալիս են Ինձ մոտ ողբալով, թե իրենք զգում են, որ իզուր են չարաչար աշխատել և տանջել են իրենց հանուն ոչնչի: Նրանք արել են այն ամենն, ինչ պատվիրված է եղել իրենց, փառաբանելով Ինձ, քանի որ նրանք մշտապես եղել են Իմ պահպանության տակ իրենց մտահայեցողության ընթացքում:

Այս ճշմարիտ աստվածաբանությունը, որ բարձրացնում է հոգիներին՝ վեր խոյացնելով նրանց երրորդ Երկինք, տալով նրանց Երանական Տեսիլքի նախաճաշակը, որի ընթացքում, գերբնական ձևով Ես խոսում եմ նրանց հետ, պատվելով նրանց՝ տեսնելու իրենց ժառանգությունը նաև բոլոր սրբերի ժառանգությունը: Եվ մինչ նրանք հանգստանում են Իմ Բազուկների մեջ, Ես օրհնում եմ նրանց, զորացնելով Իմ Կրակը նրանց ներսում, որ գնան եռանդով՝ առանց վախի հռչակելու Իմ Խոսքը:

Օրհնյալ է Աստված
և Նրա Սուրբ Անունը, քանի որ Նա
առատաձեռնորեն բացահայտում է
Իր մտադրությունները քամիներին,
որոնք Նրա պատգամատարներն են:
Փաթաթված լուսեղեն
պատմուճանի մեջ,
Նրա Վսեմությունը բացահայտում է
նրանց Իր կարողությունը:

Իմ թշվառության մեջ
ես կանչում եմ իմ երիցս
Սուրբ Աստծուն,
և ինչպես ինչ-որ տեղից եկող
քամու մի պոռթկում,
Նա զարդարում է ինձ ծաղիկներով՝
ինձ վրա իջնելիս:
Իսկ ես, ինչպես մի բացված ծաղիկ,

կլանում եմ Նրա
Աստվածային Լույսը:

Աստված երգեց ինձ համար
և ձեզ բոլորիդ համար,
սիրելի եղբայրներ և քույրեր: Նա,
ով գահակալում է քերովբեների վրա,
մեզ հայտնել է Իր Ողորմությունը:
Ոչ ոք չի կարող ասել.
«Ես չեմ տեսել
մեր Աստծո փրկարար զորությունը
իմ տան մեջ»: Քանի որ
Նրա Ներկայության մեջ են
շքեղությունն ու մեծությունը:
Քանի որ Նա գալիս է,
Նա գալիս է ձեր բոլորի մոտ
ոչ թե ձեզ դատելու համար, դեռ ոչ,
այլ ձեզ աստվածացնելու համար:

Դու ուրա՞խ ես, Վասո՛ւլա:

Այո՛, առավել քան ուրախ:
Դու հաստատեցիր ինձ Քո Տան մեջ,
և ես ծաղկեցի Քո Գավիթներում,
որպեսզի հռչակեմ Քո Մեծությունը:
Ուրեմն ինչպե՞ս կարող եմ ես
երջանիկ չլինել Քո Բազուկներում:
Ոչ ոք չի խլի ինձնից
իմ երջանկությունը,
ո՛չ մի հալածանք, ո՛չ մի նախատինք,
ո՛չ մի զրպարտանք,
ո՛չ մի վիրավորանք, և ո՛չ էլ
ողջ դժոխքը՝ նետված ինձ վրա՝
ինձ կտոր-կտոր անելու համար,
չեն կարող խլել ինձնից
այն երջանկությունը,
որը Դու ինձ տվեցիր
և շարունակում ես տալ:
Ուրեմն թող երկիրն իմանա,
թե ով է Աստված,
և գովաբանի Նրա Անունը:

Ա՛խ, օրհնյալ լինի
Քո Անունը հավիտյան:

Իսկ ես քեզ կասեմ հետևյալը. ես երդվել եմ քեզ Իմ Ողորմության և Իմ Հավատարմության վրա: Ուստի ես պիտի շարունակեմ պահել քեզ Իմ աջ Ձեռքում, Իմ Ներկայությամբ տալով քեզ մի անսահման ուրախություն և Երանական Տեսիլքի կանխաճաշակումը: Եվ ես պիտի շարունակեմ լինել

քո Խորհրդատուն և քո ուրախությունը, զավա՛կս: Կիրճերը կարող են ծալվել քեզ վրա, և սև ամպերը ծածկեն քեզ, և հողի զանգվածը կարող է ծածկի քեզ, բայց Ես վստահեցնում եմ, որ դու առանց վնասվելու պիտի անցնես դրանց միջով, իսկ Իմ Լույսը քեզ վրա պիտի ճառագի նույնիսկ ավելի մեծ հզորությամբ:

Հանգստացի՛ր Իմ Յուղով: Ես որոշել եմ փրկել այս սերնդին՝ Իմ Ողորմությունը ցույց տալով: Ուրեմն ուրախ եղեք դուք բոլորդ, ովքեր լսում եք Իմ Ձայնի մեղեդին, և հագեցեք Ինձնով՝ ձեր Աստծով:

Մարտի 8, 2000

Հոգուս Թիկնապա՛հ,
Քո Ներկանությամբ
Դու ցողեցիր հոգիս զմուռսով,
և ծածկեցիր գլուխս
Քո քաղցրաբույր
անուշահոտությամբ:
Իսկ հիմա ես նորից Քեզ հետ եմ,
Քո մոտիկությունը
հարստություն է հոգուս,
մտքիս և սրտիս համար:
Մոտիկ լինել Քո
արքայական Առատաձեռնությանը,
ինձ ուժեղ և եռանդուն է դարձնում,
եռանդուն՝ հասնելու
անպարտելի սրբության...

Ես սիրում եմ քեզ: Նույնիսկ նման թշվառության մեջ Ես կարող եմ ստանալ Իմ ուրախությունը, և Իմ Խոսքը կարող է բնակվել քո մեջ Իմ գերազանցության միջոցով: Ես միայն քեզ և այս սերնդի համար չեմ ասում, այլ Ես գրի եմ առնում այս ամենը նաև հաջորդ սերնդի համար, որպեսզի այն ցեղը, որը պետք է ծնվի, կարողանա գովաբանել Ինձ՝ ձեր Աստծուն: Տե՛ս, թե ինչպես եմ Ես հիմա ցած խոնարհվում Իմ Սրբարանի բարձունքներից...

Ա՜խ, Վասո՛ւլա, Երկինքը երբեք այսքան մոտ չի խոնարհվել երկրին, ինչպես հիմա: Անցյալում Ես կարողանում էի երկրից լսել մեկ կամ երկու հառաչանք, բայց հիմա, Ես գրեթե ոչինչ չեմ լսում: Ահա թե ինչու Ես խղճում եմ քեզ, սերո՛ւնդ:

Ինչ որ Ես լսում եմ դիակներից պարծենկոտ տոնով, հետևյալն է. «Տեսե՛ք, ես կարող եմ ապրել անապատում հավալուսնի պես: Ես կարող եմ ապրել ավերակների մեջ ճչացող բվի նման: Ես կարող եմ ապրել առանց Աստծո, քանի որ ես կարող եմ ամեն ինչ ավելի լավ անել, քան Աստված...»:

Հետո Ես Աչքերս շրջում եմ հակառակ ուղղությամբ և նայում Իմ Սեփական Տան անդամներին, և տեսնում մեծամիտ հայացքներ, հպարտ սրտեր, անվստահություն, չարախոսություն, կարդինալ՝ կարդինալի դեմ, եպիսկոպոս՝ եպիսկոպոսի դեմ...

Տե՛ր, Դու ինձ ասում ես,
որ Քո Ձեռքը հիմա շատ կա՞րճ է
փրկելու համար: Գուցե Դու
հիմա չունե՞ս փրկելու Զորություն:
Դու հայտնի ես Քո
համբերատարությամբ, բայց ոչ՝
միջամտելու և փրկելու դեպքում:
Ուրեմն ինչո՞ւ ես սպասում:
Ինչո՞ւ Դու չես միջամտում հիմա:

Դու համարձակվում ես մարտահրավեր նետել Իմ Իմաստությա՞նը: Դու գրգռում ես Իմ Ամենակարողությո՞ւնը:

Ա՛խ, Տե՛ր, Քո Տան անդամներին
հանգստացնելու համար,
ես կարող եմ տալ և արդեն տվել եմ
իմ կյանքը դրա համար:
Բայց Քո Տան հանդեպ ունեցած
իմ նախանձախնդրությունը
կլանել է ինձ,
և երբ հարցը վերաբերում է
Քո Տունը բարձրացնելուն,
որպեսզի այն չխորտակվի, ապա
ես տվել եմ իմ հոգին ու մարմինը,
անկախ հետևանքներից:
Ինձնից արյան քրտինք է հոսել,
իսկ երբեմն էլ արյուն եմ թքել
ինձ վրա իջած խարազանից,
և Դու գիտես դա:

Ես դատապարտվել եմ
Քո Յուրայիններից,
այն բանից հետո,
երբ նրանք ինձ հետապնդեցին
ինչպես մի որսի:
Բայց ինձնից ոչ մի բողոք չլսվեց:
Առանց պատճառի նրանք ինձ հետ
վարվեցին ինչպես մի ուրացողի,
բայց ես դիմացա իմ դեմ ելած
բոլոր փորձություններին,
որովհետև Քո հզոր Ձեռքը
նեցուկ եղավ իմ դյուրաբեկությանը:

Իմ օրերը պտտվում են
ինչպես փոշին,
որ նորից փոշի դառնան,
և ես չեմ տեսնում
Քո Սուրբ Տառապանքի վերջը:
Ուրեմն դեռ որքա՞ն պիտի

շարունակեմ ասել.
«Դեռ երկա՞ր պիտի ապրեմ
այն մարդկանց մեջ,
ովքեր ատում են խաղաղությունը»,

դեռ երկա՞ր պիտի տեսնեմ,
թե ինչպես է երկինքը սգում
իր տան անդամների
և իր սուրբ Քաղաքի համար:

Մի՞թե ես պետք է անտարբեր մնամ,
մինչ Դու վերստին խաչվում ես
անտեղի կերպով:

Դու գիտես ինձ, Տե՛ր իմ,
Դո՛ւ, որ ինձ դարձրիր
ինչպես մի սոսի Եգիպտոսից, որ
ես կգնամ, եթե նույնիսկ պետք լինի՝
կսողամ, ամեն մի երկրում,
ինչպես Դու հրամայում ես,
և ամենուր կսերմանեմ
ինձ տրված Քո Խոսքը, նույնիսկ
լեռների գագաթները կհասնեմ,
և ցած կիջնեմ կիրճերը:
Դու գիտես ինձ, Տե՛ր,
ես չեմ ուզում վիճել
Քո Իմաստության հետ, ո՛չ էլ
Քո Ամենակարողության: Երբե՛ք:

Բայց երկնքի սյուները դողում են,
սարսափած այն ամենից,
ինչ տեսնում են Քո Տան մեջ:

Հրեշտակները դողում են
այն հսկայական խարազանից,
որ սպասվում է մեզ գալիք օրերին:
Ուրեմն ինչպե՞ս կարող եմ
ինձ հանգիստ զգալ քառսի մեջ:

Վասո՛ւլա, մի քանի րոպեից ես քեզ մի բան պիտի ասեմ, մի այնպիսի բան, որ չգիտես, բայց հիմա թույլ թուր Ինձ ասելու քեզ հետևյալը.

Ես մի բան եմ անելու[1] քո օրերում, որ չէիր հավատա, եթե քեզ այդ մասին ասեին... Իսկ դու, ահա թէ ինչ պետք է իմանաս: Ես, հենց այս

[1] Պատգամը ստանալու օրվանից երկու շաբաթից էլ պակաս, դա 2000թ. մարտի 8-ին էր, երբ ուխտագնացության մեջ էինք և ՃԿԱՄ ընտանիքը հավաքվել էր Սուրբ Քաղաքում, Երուսաղեմի հույն ուղղափառ պատրիարքից թույլտվություն ստացանք կատարելու երկու ուղղափառ պատարագ՝ նախապես սրբագործված հաղորդության նշխարներով, Երուսաղեմի Սբ. Հարության տաճարում և Թաբոր լեռան վրա, և հրավիրելու բոլորին՝ Սուրբ Հաղորդություն ստանալու: Մենք 450 հոգի էինք՝ 12 եկեղեցական

Տան անդամների մեջ, որի մասին քեզ ասում էի, պահել եմ մի փոքրիկ մնացորդ Ինձ համար, շնորհով ընտրված, այլ ոչ թե իրենց լավ գործերի համար: Նրանք Իմ Ձայնի չշնչացող արձագանքն են: Արդյոք Ես կլսե՞մ այդ չչուկով ասված կանչերը:

(Ես նայեցի կողքի՝ Հիսուսին, և ասացի.)

Մի՞թե ես դեթ մի պահ ժլատ եմ եղել Քո հանդեպ:

Ես ծնունդ եմ տվել քեզ, Ես բացել եմ քո մտքի աչքերը, որ հասկանաս Ինձ, տեսնես Ինձ և տեսնես բոլոր անտեսանելի բաները: Ես բացել եմ քո ականջը զմուռսի կաթիլներով, որ լսես աչակերտի պես, և Ես քեզ խոսք եմ տվել: Ես դրել եմ քո ոտքերն այն ճանապարհի վրա, որով ցանկանում էի որ գնաս՝ հրեշտակապետերի ամենաբարձր դասից մի իշխանի ուղեկցությամբ: Ես առաջարկեցի քեզ ըմպելիք Իմ Բաժակից, ուրեմն, մի՞թե Իմ Ձեռքը քեզ հետ կոպտորեն կվարվի: Դու առաջարկեցիր Ինձ քո կյանքը, որպես քավություն՝ ըմբոստության և Իմ Եկեղեցու բաժանման համար: Ինձ հուզեց Իմ Տան անդամների հանդեպ քո նախանձախնդրությունը և քո մտահոգությունը: Ես գոհ եմ, որ դրա փոխարեն չլսեցի, որ դու ասես.

«Թո՛ղ այդ վայրը, քանի որ Քո Աչքերը չափազանց մաքուր են տեսնելու այն, ինչ տեսնում ես, թո՛ղ նրանց իրենց ճակատագրին և այնտեղ գտնվող ոչ մի անմաքուր բանի մի՛ դիպչիր...»:

Ես պարզապես զարմանքի մեջ էի քո արիությունից, բայց Ես քեզանից կրակ էի դուրս բերել: Ես բաց արեցի քո բերանը...

Սիրելի՛ս, մի անգամ Ես քեզ ասացի, որ որևե նրբանկատություն Իմ արարածների կողմից Իմ օրորվող Տան վերականգնմանն ուղղված, խորապես հուզում է Ինձ: Ե՛ս, Իմ Վասուլա, քեզ նշանակել եմ ոչ միայն որպես Իմ արդար մունետիկը, այլև որպես Իմ ժամապահը Արևմուտքի Տան վրա:

Երբ դու լսում ես Իմ Բերանից քեզ տրված մի խոսք, դո՛ւ, որ կապված ես Ինձ հետ քո հավատարմության երդումներով, պարտադրված ես փոխանցելու նրանց նախազգուշացման Իմ խոսքը, որոնց մոտ Ես քեզ ուղարկում եմ: Եթե դու մերժես նրանց փոխանցել Իմ խոսքը, Ես քեզ պատասխանատու կհամարեմ: Այնուամենայնիվ, եթե դու փոխանցես նրանց Իմ խոսքը, և նրանք չապաշխարեն, նրանք պիտի մեռնեն իրենց մեղքի համար, բայց դու ինքդ չպիտի վնասվես, և դու պատասխանատու չպիտի լինես, ոչ էլ պիտի մեռնես:

Ես քեզ որպես միջնորդ եմ նշանակել ոչ միայն Արևելքի Տան համար, այլև՝ Արևմուտքի Տան: Երբ լսես, որ Իմ զայրույթը բորբոքված է նրանց

դավանություններից, և որևէ սահմանափակումներ կամ արգելքներ չեղան Սուրբ Հաղորդություն ստանալու համար: Մտածում եմ, որ գուցե պատմության մեջ առաջին անգամ, Մեծ Բաժանումից հետո, հույն ուղղափառները հրավիրեցին ԲՈԼՈՐԻՆ ստանալու Քրիստոսի Սուրբ Արյունն ու Մարմինը: Այո՛, իսկապես, Հիսո՛ւս, ես չէի հավատա, եթե ինձ այդ մասին նախապես ասեին: Փա՛ռք լինի Աստծուն:

կարծրության պատճառով, որը պահում է նրանց մասնատված, և հետևաբար մեղքի մեջ, դու պետք է միջամտես նրանց համար, ինչպես որ արեցիր: Այդ ժամանակ Իմ Արքայական Իշխանությունը մեղմությամբ պիտի վարվի Իմ Տան անդամների նկատմամբ: Իսկ ինչ վերաբերում է հպարտներին, ովքեր չեն ապաշխարի, Ես նրանց արմատախիլ պիտի անեմ, և նրանց տեղում Ես պիտի հաստատեմ խոնարհներին: Ես հայտնի եմ նրանով, որ տապալում եմ հպարտներին: Հպարտությունը Ինձնից չի ծնվել, այլ սատանայից...

Ուստի, հարուստ եղիր աղքատության մեջ, և ջրիր այս ցամաքած հողը քեզ տրված Իմ մարգարեություններով: Նա, ով ջրում է, նրան Թագավորն Ինքը պիտի ջրի: Ապա Թագավորն Ինքը պիտի գնահատի քեզ և պիտի դիմի քեզ քնարերգության և օրհներգի միջոցով: Նա պիտի լցնի քո բերանը մեղրով, և դու պիտի խոսես Նրա համար ազգերին:

Ես գթասիրտ կլինեմ քո հանդեպ, ավելի ընկերանալով քեզ: Ուրախ եղիր, աղջի՛կս: Քո Թագավորը շնորհ է արել քեզ և հագցրել դիպակ՝ անուշահոտությամբ օծելով քեզ Իր Ներկայության մեջ, մինչ զմուռսը մեղմ սահում է Նրա հագուստից: Նա թույլատրել է քեզ լինելու Իր պալատում և հնարավորություն տվել քեզ մտնելու Իր հարսանեկան սենյակը: Աղջի՛կս, Ես ասում եմ քեզ. Իմ Տան անդամների մեջ Ես պիտի առաջ գնամ քեզ հետ: Ես ու դու միասին, մեր շքախմբում ունենալով ամեն տեսակի բարձրաստիճան իշխաններ, երկնքից, մենք պիտի մտնենք Իմ Սրբարանից ներս, մինչ Իմ Ներկայությունը իջնելու է նրանց վրա, ինչպես արշալույս: Ուստի ձեռքերիդ մեջ մի՛ շոշափիր մանգաղդ, այլ այն ամուր բռնիր, սեղմիր ու հնձի՛ր, Վասիլիկի, հնձի՛ր: Հնձի՛ր այնտեղ, ուր Իմ հրեշտակները մատնացույց կանեն քեզ հնձել, և դու կհնձես առաքինության պարգևը:

Տո՛ւր քո Թագավորին այնքան, որքան Նա է քեզ տվել...

Ես քամու մի պոռթկում եմ միայն,
ինչպե՞ս կարող եմ Քեզ տալ
այնքան, որքան Դու ես ինձ տվել:
Դու ինձ Կյանք ես տվել:

Ես երբե՛ք, երբե՛ք,
երբևէ չեմ կարող տալ
Քեզ նույնիսկ մի նշույլ նրանից,
ինչ Դու, Քո գթառատ
ներողամտությամբ, տվել ես ինձ:

Գիտեմ... բայց տուր Ինձ այնքան, որքան որ քո միջոցներն են ներում: Դատարկիր ինքդ քեզ այն ամենից, որ գալիս է Ինձնից ու լավ է, և մատուցիր այն Ինձ:

(Այդ ժամանակ ես հասկացա, որ մեր Տերը խնդրում էր ինձ, որ ոչ միայն Իրեն մատուցեմ իմ ծառայությունները, այլև մատչելի լինեմ՝ հանելով ուրիշներին և հնարավորից էլ ավելին անեմ, որ ծառայեմ մարդկությանը և օգնեմ նրանց, որքան որ կարող եմ: Ծառայեմ «մերձավորիս», առաքինի լինեմ և ոչինչ չպահեմ ինձ համար:)

Այո՛, տո՛ւր, տո՛ւր նրանց, ովքեր սպասում են քեզնից և վկայիր Իմ Բարի Գործերի մասին, և Ես կլինեմ քեզ հետ: Եվ ինչպես Իմ Հայրն ասաց քեզ սրանից առաջ, Ես քեզ ասում եմ նույնը. «Ջորերը կընկնեն քեզ վրա, և սև ամպերը կծածկեն քեզ, և հողի զանգվածը կծածկի քեզ, բայց Ես վստահեցնում եմ, որ Ես կլինեմ քեզ հետ, և դու կանցնես դրանց միջով առանց վնասվելու»: Հիշի՛ր, քո և Իմ միջև ոչ մի սահման չկա: Ես միշտ քեզ հետ եմ, սիրելիս: ic:

Ապրիլի 24, 2000

Գթա՛, Տեր,
այս անհավատարիմ սերնդին,
որին ես էլ եմ մաս կազմում:

Արթնացի՛ր, զավակս, և վստահիր Ինձ: Մի՞թե Ես քեզ ցույց չեմ տվել Իմ փառքը և թե ինչ է վերապահված Իմ սիրելի ժողովրդին այն ժամանակ, երբ դեռ Սուրբ Քաղաքում էիք:

Լսի՛ր, հայտնի է, որ մարդ պիտի շարունակ փչի վառարանը, որ տաքություն լինի, և հայտնի է, որ արևը դրանից երեք անգամ ավելի ուժգին է այրում լեռները, բայց երբ Իմ Հոգին, որը զուտ կրակ է, իջնում է վերևից, Նա անմիջապես կլանում և բոցավառում է այն ամենն, ինչի որ դիպչում է, որովհետև ո՞վ է դիմացել Նրա բոցերին: Եվ Նա բոցավառում է բոլորին, ովքեր սիրում են Իրեն, դարձնելով նրանց կենդանի ջահեր, որպեսզի նրանց խոսքերը փայլատակեն ձեր խավար սերնդի գիշերվա մեջ: Եվ ինչպես ջահը խավարի մեջ, նրանք պիտի լուսարձակեն Իմ Խոսքերը:

«Արարչությո՛ւն», պիտի կանչեն նրանք, «փորձեք նորից գտնել ձեր Ամուսնուն[1]»: Նրանք պիտի բոցավառեն Իմ Խոսքերը, որոնք պիտի տապալեն հերետիկոսությունները և ամեն ինչ, որ այլասերված է: Իմ Անունով նրանք[2] պիտի կռվեն երկճեղքված զենքերի դեմ[3]: Ես մտադիր եմ մշակել այս հասարակությանը և հասկացնել նրանց, որ անմահությունը գտնվում է Մեր Երրորդության Սրբությանը հարազատ լինելու մեջ: Մեր Արքայական Շռայլությունը պիտի շարունակի հաստատակամ պահել այդ ընտրյալ հոգիներին:

Ես հիմա պետք է քեզ հետ կիսեմ Իմ ուրախությունը: Ա՜խ, Վասո՛ւլա, Ես դիտում էի նրան, և այն, ինչ տեսա, գոհացրեց Ինձ: Ես սրբագործել եմ նրան արքայական շռայլությամբ, և Ես օծել եմ նրան, որ ղեկավարի պաշտամունքը, և սովորեցնի Իմ Տանը Իմ հրամանները և լուսավորի այն երկիրը, որտեղ նա ապրում է Իմ Օրենքով, որը հիմնված է Սիրո վրա: Չնայած պիտի լինեն այնպիսիք, որոնք ուժեր պիտի համախմբեն նրա

[1] Այսինքն Աստծուն. «Քանի որ հիմա քո Արարիչը կլինի քո Ամուսինը...»: (Ես. 54:5)
[2] Տերը խոսում է վերջին ժամանակների առաքյալների մասին:
[3] Ես հասկացա, որ սատանան և նրա դևերն են «երկճեղքված զենքերը»:

դեմ, բայց նրան ոչ մի վնաս չի հասնի: Պիտի լինեն նախանձ մարդիկ, ովքեր պիտի հալածեն նրան, բայց ես պիտի լինեմ նրա կողքին[1]:

Ես նորոգեցի ձեզ բոլորիդ[2], այնպես չէ՞: Ես շնորհեցի ձեզ հատուկ շնորհներ, այնպես չէ՞: Ա՛խ, Վասո՛ւլա, Իմ Սուրբ Դեմքը երբեք չպիտի ջնջվի քո սրտից, որովհետև ես այն փորագրել եմ քո մեջ: Ես գերազանցում եմ երկիրն ու երկինքը վեհությամբ և չքեղությամբ, ուստի մի՛ վհատվիր, քանի որ ես Գերագույն և Անհատակ Իմաստությունն եմ: Վստահի՛ր Իմ Իմաստությանը և հիշիր. ես քո մոտ դրել եմ մեկից ավելի երկնային իշխաններ[3], և, Իմ Վասո՛ւլա, քո թուլության միջոցով ես առաջ կբերեմ միասնություն: Եվ դու, որ կարդում ես Ինձ, ես ասում եմ քեզ, շիտակ մնա Սուրբ Իմաստության մեջ և արդար, և այն ժամանակ դու կկատարես Իմ Կամքը: Դու միայն պետք է ասես. «այո՛», և ես անմիջապես քեզ պիտի միավորեմ Մեր Միասնության հետ և պիտի լցնեմ քեզ Իմ Վերանցական Լույսով, որպեսզի դու լցվես Մեր Եռանձն Աստվածության բացարձակ լիությամբ, որ հասկանաս նաև, որ միասնությունը վսեմ կլինի այն ժամանակ, երբ դու նույնպես կխոնարհես գլուխդ համեստությամբ, սիրով և անձնուրացությամբ: Խոնարհ մարդու աղոթքները ճեղքում են ամպերը, ասում են Սուրբ Գրքերը[4], բայց այն ճեղքում է նաև չարի զնդանները և խորտակում նրա ծրագրերը: Խոնարհ մարդու աղոթքները կրկնակի ազդեցություն ունեն հօգուտ Ինձ:

Եթե մարդիկ, Իմ Վասո՛ւլա, քեզ նորից հարցնեն. «Ի՞նչ է ասում մեր Տերն Իր նոր պատգամներում», ասա՛ նրանց.

«Տերը՝ իմ Աստվածը, ոչ մի նոր բան չի ասում: Ուստի շարունակեք մնալ հաստատուն և անսասան ձեր հավատի մեջ: Իսկ նրանց, ովքեր դեռևս քնած են, մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսն, ասում է. «Արթնացե՛ք ձեր թմրությունից, ինչպես որ հարկն է, և թողեք մեղքը»: Աստված ձեզ էլ է կանչել, և մինչ օրս դուք չեք լսել Նրան: Դուք մերժում եք Նրա Եռանձն Սրբությունը, և դուք մերժում եք Նրան, ով տալիս է ձեզ Իր Սուրբ Հոգին: Եթե դուք պատկանում եք Լույսին, ուրեմն պատկանում եք ցերեկվան, իսկ ցերեկը պետք է արթուն մնաք: Բայց եթե հարցնում եք. «Ի՞նչ է մեր Տերն ասում Իր վերջին պատգամում», դա այն պատճառով է, որ դուք դեռևս արմատ չեք դցել Նրա մեջ, ով ստեղծել է ձեզ, և դուք դեռևս չեք հասկացել Նրան: Դուք հասկացողություն չունեք Նրա՝ ձեր Աստծո մասին: Ա՛խ, եթե միայն իմանայիք, թե ինչպիսի թովչանքներ կան Նրա Սիրո մեջ և ինչպիսի զմայլելի դանձեր՝ Նրա Սուրբ Սրտում: Նա, ձեր ծնված պահից սկսած, կանչել է ձեզ: Դեռ որքա՞ն պետք է մոլորված թափառեք: Չգիտե՞ք, որ Նրա Աչքերի ներքո դուք կգտնեք ճշմարիտ խաղաղություն: Ուրեմն դուք, որ ապրում եք անապատում, մի՛ հուսահատվեք: Մարդկության Սիրահարը՝ մեր Տեր

[1] Հիսուս խոսում էր մի հույն ուղղափառ քահանայի մասին, որը հրճվանք էր պատճառել Իրեն: Այնուամենայնիվ, Հիսուսն արդեն հայտնել էր, որ նրա առաքելությունը առանց հալածանքների չէր անցնելու, բայց Հիսուս լինելու էր նրա կողքին:
[2] Երբ դեռևս Սուրբ Քաղաքում էինք: Մենք 450 ուխտավոր էինք՝ ՃԿԱՄ ընտանիքը, եկեղեցական 12 դավանություններից:
[3] Քրիստոսը նկատի ունի հրեշտակներին...
[4] Սիրաք 35:17

Աստվածն ու ամենը, մոտ է ձեզ հիմա, որ ձեզ բերի ու տանի Իր Տունը՝ Իր անձնական սենյակը[1], որտեղ Նա կդրոշմի ձեր սիրտը Իր Աստվածային Համբույրներով: Հետո, ով էլ որ տեսնի ձեզ, կկոչի ձեզ. «Սուրբ Սրբոցի նշանածը», Ում տրված է ամբողջ իշխանությունը»:

Ինչ վերաբերվում է ձեր ընկերներին, նրանք իրենց հարց կտան, երբ տեսնեն ձեզ, որ դուրս եք գալիս անապատից. «Ո՞վ է սա, որ բարձրանում է անապատից՝ հենված մաքուր խնկի սյան վրա, որի բուրմունքը տարածվում է մեզ վրա և զեփյուռի մեջ»: Այդ ժամանակ, բոցավառված մաքուր սիրով, դուք կպատասխանեք. «ինչպես կինամոն և թիկի, ես, Սուրբ Հոգու մեջ, բուրմունք տվեցի. ինչպես ընտիր զմուռս, Նրա մեջ և Նրա միջոցով, ես բույր արձակեցի: Ես կերպարանափոխվեցի Իմ Արարչի Աստվածային Սիրո մեջ»:

«Բայց ո՞վ է Նա, որի վրա դու հենվեցիր»: «Նա՞: Նա Ալֆան է և Օմեգան, մարդկության Սիրահարը, որ յուրաքանչյուր հոգու բերում է Իր մոտ, որ հետևի Իրեն: Մի՞թե չեք տեսնում: Ժամանակին, երբ դուք Ինձ գիտեիք, Ես մեր նախնիների նման էի անապատում, և նրանց պես Ես հետևում էի Դատարկությանը՝ ինքս էլ դառնալով դատարկ: Հիմա Գարունն Ինքը եկավ ինձ այցի և ծաղկեցրեց ինձ: Նա օծեց ինձ բուրմունքով և զարդարեց հոգիս դարդենիաների ծաղկեպսակներով: Նա օրհնեց հոգիս Իր Անվամբ երիցս սուրբ, և հիմա ես նույնպես կարող եմ ասել. «Ես հասկանում եմ Աստծուն, որի Սերը նման է կրակի մի կայծի: Ես հիմա Աստծո զավակ եմ: Ես իմ աստվածացման ճանապարհին եմ, քանի որ ընդունել եմ մեր Հորը և Նրա հետ հաշտվել եմ... Ա՛խ, որքան եմ ես հրճվում, քանի որ հիմա ես սահմաններ չունեմ իմ Արարչի հետ: Ո՛չ, ո՛չ մի հատ, այլևս սահմաններ չկան»:

Հետևաբար, նույնիսկ ամենածայրահեղ թշվառը Աստվածային Այցելություն պիտի ստանա, քանի որ Իմ Վերադարձը ավելի քան մոտ է: Ես պիտի այցելեմ նրանց, ովքեր նույնիսկ ծանոթ չեն Իմ Աստվածային Գործերին: Իրենց ոչնչության մեջ նրանք ոչինչ ձեռք չեն բերել և չգիտեն Ինձ, ոչ էլ երբևէ իմացել են, որ Ես Եմ որ Եմ-ը իրենց Տերն է և Աստվածը... Ձեր օրերում, երբ ձեր սերունդն ամեն օր ներշնչում է չարն ու չարությունը, Իմ մեծ Սերը ստիպում է Ինձ ցած խոնարհվել Իմ Գահից և բացել Երկնքի շնորհների պաշարները, որ դրանք հեղեմ այս սերնդի վրա, չնայած նրանք արժանի չեն այդ շնորհներին, և փրկեմ նրանց: Դուք կարող եք կոչել այն, անսահման շնորհների ժամանակաշրջան: Ես Նա եմ, ով այնքան առատաձեռնորեն ձեզ է ուղարկում Սուրբ Հոգին, և Ես դա չեմ անում ձեր արժանիքների պատճառով, այլ Ես սա անում եմ Իմ Սիրո անասելի ներողամտության պատճառով:

Ձեր խառնաշփոթության մեջ, Ես պիտի շարունակեմ հեղեղել ձեզ, սերունդ, շնորհներով որոնց դուք արժանի չեք՝ ընկղմելով ձեզ, որպեսզի բարձրացնեմ ձեր բոլորին այնպիսի ազնվականության, որ երբ դա ձեզ Հորը ներկայացնելու պահը, ձեր հոգին երևա շողացող ոսկու պես, քանի որ Ես ձեզ զգեստավորած պիտի լինեմ Ինձնով:

[1] Ես հասկացա, որ անձնական սենյակը Տիրոջ Սիրտն էր:

Լսի՛ր Դանիելին, քո պահապան հրեշտակին, թե նա ինչ ունի ասելու որպես վկա.

«Քո երկրային վիճակով դու չպիտի ընդունվես Աստծո Գահի առաջ, ոչ ոք չի ընդունվել այդ վիճակում: Բայց դու կընդունվես Աստծո կողմից, որ մուտք գործես երկինք միայն այն դեպքում, երբ Քրիստոսը կլինի քո զգեստը: Միայն այդ ժամանակ Աստված պիտի ճանաչի քեզ...»:

Այո, ահա թե ինչու ես կշարունակեմ անդադար Ինքս Ինձ քեզ ավելի ու ավելի շատ տալ՝ քեզ այցելելիս ցույց տալով Իմ զարությունն ու շնորհը, այդպիսով, զարդարելով հոգիդ վեհությամբ ու ճոխությամբ: Միևնույն ժամանակ պիտի զարդարեմ քեզ այնպես, ինչպես հարսնացուն է զարդարվում իր պսակադրության համար՝ աստվածային շնորհով և առաքինությամբ, մինչ Շուրթերս բանաստեղծությամբ կօրհներ դեն իմ Ուսմունքը քեզ, պարուրելով քեզ Իմ Իմաստությամբ ու Գիտելիքով, պատվելով Մեզ Մեր Եռանձն Սրբության մեջ:

Թագավորն Իր ողորմությամբ պիտի հագեցնի քո հոգին, որ քեզ վեր բարձրացնի քո մարմնի բանտից, և դու մտնես Իմ Վսեմ Լույսի մեջ, մի Լույս, որը տաս հազար անգամ ավելի պայծառ է, քան արևը: Ուրեմն մոտեցե՛ք Ինձ, դո՛ւք, որ ցանկանում եք աստվածանալ, և մտեք Մեր Եռանձն Սրբության ուրախության մեջ, որ մեր Աստվածային Միության մեջ հաղորդակից դառնաք մեր աստվածությանը:

Իսկ դո՛ւ, որ ստիպում ես Իմ Սրտին ավելի շատ ցանկալ քեզ քո անասելի թշվառության մեջ, Իմ Վասուլա, ես ասում եմ քեզ. եղիր մեկ Ինձ հետ, թույլ տուր Իմ պահապան Ձեռքը առաջնորդի քեզ: Թույլ տուր Ինձ միշտ լինել քո միակ Ուրախությունը, քո հոգու Արևի Լույսը, քո կյանքի ճառագող Ճանապարհը, քո որոշումների Լուսավորությունը: Իմ Աչքերը քեզ վրա են, կարող ես ասել՝ սևեռված քեզ վրա:

Հիշի՛ր սիրելիս, երբ ծարավ ես, արի՛ Ինձ մոտ, փոքրի՛կս, քո Փեսայի մոտ, ես միշտ էլ ջուր կունենամ քեզ տալու համար: Մի՛ լսիր չչուկներին, ոչ էլ նենգ մարդկանց լեզուներին: Սուրբ Հոգին դրոշմել է քեզ Իր Սուրբ Կնիքով և բարեկամաբար է վերաբերվել քեզ հետ, նշելով քեզ որպես Մերը: Արի՛ և մի որոշ ժամանակ հանգստացիր Մեր մեջ: Եվ եթե որևէ անցորդ հարցնի քեզ. «Որտե՞ղ է քո հանգստի վայրը», պատասխանիր և ասա. «Իմ հանգիստը Հիսուս Քրիստոսի Սրտում է, Նրա, ով ամենից մոտ է Հոր Սրտին»:

ΙΧΘΥΣ

Ապրիլի 28, 2000

(Ուղղափառների Ավագ Ուրբաթը -)

Իմ Տե՛ր, իմ Հարությո՛ւն,
իմ Երանությո՛ւն,
ես ոչնչի կարիք չունեմ

Քո Սուրբ Ներկայությամբ:
Տե՛ր, Դու բացում ես բերանդ,
որ խոսես ինձ հետ, և
Լույսը ողողում է ինձ Քո Բերանից:
Իմ Պատարագ, իմ Օրհներգ,
Իմաստության Լույսը, ահա,
կանգնած է իմ առջև:
Այսօր նորից այն օրն է, երբ
անմեղ Արյուն հեղվեց հանուն ինձ,
և մինչ Սատանան
թքում է իր թույնը
Քո Սուրբ Անվան վրա,
ես գալիս եմ Քեզ մոտ,
որ սփոփեմ Քեզ և պաշտեմ Քեզ:

Ա՜խ, Աստծո Գա՛ռ,
Դու չտապալեցիր Քեզ
խարազանողներին,
ո՛չ էլ հրամայեցիր նրանց
մի կողմ դնել խարազանը,
Դու չբացեցիր Քո Բերանը,
որ ասերսես. «Ես ուժասպառ եմ եղել
ձեր հացրած հարվածներից»,
այլ լուռ մնացիր
Քեզ չարչարողների հանդեպ:
Որովհետև Քո Սիրտը մխալով
այրվում էր Զարչարանքով:
Դու լուռ մնացիր, Դու լուռ մնացիր,
որ չխորացնես Քո
հրեշտակների ցավը,
որոնք արդեն տառապում էին:

Իմ ընկերներն ու Իմ ուղեկիցները հեռու փախան Իմ Վերքերից, նույնիսկ Իմ ամենասիրելիները հեռու մնացին... Նրանք լքեցին Ինձ... Նույնիսկ քայլերս հաստատ պահելու և Ինձ վայր ընկնելուց պահելու համար, երբ Ես տանում էի Իմ Խաչը, նրանք այնտեղ չէին: Իմ Սիրտը ուժգին տրոփում էր, և Իմ ուժը լքում էր Ինձ: Աչքերիս լույսը խամրում էր, մինչ կոպիտ ու կատաղի մարդիկ հարձակվում էին Ինձ վրա, մեծադղորդ խոսելով՝ շուրթերին սրեր: Իմ Սիրտը ճմլվում էր Իմ ներսում: Ես կարող էի խնդրել հրեշտակներին, որ Ինձ թևեր տային աղավնու նման, որ թռչեի և հանգիստ ձեռք բերեի, և ապաստան գտնեի վիրավորանքի փոթորկից, բայց Ես պատասխանել էի, երբ Իմ Հայրը կանչեց Ինձ:

Քո Հայրը լսեց Քո աղաչանքը և
փրկագնեց Քեզ ու տվեց Քեզ
Իր Խաղաղությունը,
Քո դեմ ուղղված թշնամանքից:

Սուտ վկաները տեղ էին գրավել,
մինչդեռ Դու արտասվում էիր, երբ
նրանք հիվանդ էին և մահամերձ:
Ինչպես մեկը, որ ողբում է իր մորը,
Դու սգում էիր նրանց համար:
Ամոթն ու անարգանքը
Քեզ չէին մտահոգում,
երբ կանգնած էիր Քո Խաչի առաջ:
Բայց քեզ չարչարողների դիմաց
Դու մի անգամ ևս կանչեցիր Հորը.
"Eli, Eli, Lama sabachthani?"
Բայց Հոր ուշադրությունը
դարձավ մեզ վրա,
և Նա տեսավ ողջ մարդկային ցեղը,
և խղճաց մեզ... Եվ մեկ անգամ ևս
Քո Հայրը մերժեց այն, ինչ
Քո շուրթերն էին խնդրում Իրեն,
ինչպես որ մերժեց
Քո աղերսանքը Գեթսեմանիում:

Յահվեն ցած թեքված Իր Սրբարանի բարձունքներից նայում էր ներքև՝ երկրին: Նա լսում էր գերվածների հոգոցը, և որպեսզի ազատ արձակի նրանց, ովքեր դատապարտված էին մեռնելու,

Նա զոհաբերեց Իր Միածին Որդուն...

Այո՛, արդարև, Իմ Հայրը տվեց Ինձ ձեզ բոլորիդ, որպես ընծա, ձեր փրկության համար, որը նաև Իմ լիակատար Կամքով էր:

Սակայն, ո՛վ Սուրբ,
Դո՛ւ, որ մեկ ես Հոր մեջ,
և Հայրը մեկ է Քո մեջ,
Դու, հանուն ինձ,
նախընտրեցիր դառնալ Խաչի վրա,
Քեզ շրջապատողների քամահրանքը
և Քո ժողովրդի ծաղրանքը:
I AKRA TAPINOSI [1]

«Թող Յահվեն փրկի Նրան», ասացին նրանք, «եթե Յահվեն Նրա ընկերն է, թող ազատի Նրան»: Բայց Ես ոչինչ չլսեցի, ասես խուլ լինեի, ասես՝ համր, ո՛չ մի բառ չասացի: Ես նման էի նրան, ով կտրուկ պատասխան չի տալիս, որովհետև չի լսում: Ուժերս լքում էին Ինձ, լույսը հեռացել էր Իմ Աչքերից:

Ա՛խ, Տե՛ր,
երբ մենք սայթաքում ենք,
Քո Զորեղ Ձեռքը

[1] ծայրահեղ խոնարհություն (հունարեն):

պատրաստ է մեզ փրկելու,
բայց երբ Դու, Խաչելության
ճանապարհին սայթաքեցիր,
ամբոխն ուրախ հավաքվեց,
հավաքվեց Քո շուրջը:
Անծանոթ մարդիկ,
որոնց երբեք չէիր ճանաչել,
Քեզ անդադար պատառոտում էին:
Երբ Դու առաջին անգամ ընկար,
նրանք շրջապատեցին Քեզ՝
ատամները կրճտացնելով Քեզ վրա,
մտածելով, որ Դու արդեն
ավանդել ես Քո Հոգին,
և չես հասնի Խաչելության:

Երկիրը երերաց և դողաց: Լեռների հիմքերը դողացին:

«Ես չեմ խախտի Իմ Ուխտը:
Ես ետ չեմ վերցնի
Իմ տված Խոսքը: Ես երդվել եմ
Իմ Սրբությամբ, մեկընդմիշտ...
Իմ ազգատոհմը
ընդմիշտ պիտի հարատևի»:

Հետո Օծյալը Իր Հոգին ավանդեց...

Մի Գետ կա[1],
որի հոսանքները սրբագործում են
Ամենաբարձրյալի բնակավայրը[2]:

Եվ երբ Աստված մի քաղաքի մեջ է[3], այն չի կարող ընկնել: Այսօր, այս ճգնաժամի օրերին, երբ սատանան հավաքել է իր ողջ չար տիրապետությունը՝ ուղղելով այն ձեր դեմ, դուրս թափելով իր արհամարհանքը ազնիվ ծնունդների վրա, Ես, Իմ հերթին, կանչում եմ Իմ ընտրյալներին, քանի որ Իմ նպատակն էր շարունակել Իմ Եկեղեցու ընդարձակումը և նրա առաջխաղացումը, որպեսզի նրա ներսում Իմ զավակներից շատերին փառավորեմ, Ես ճիշտ համարեցի անցնել տառապանքների միջով և դառնալ նախօրինակը նրանց համար, ովքեր կհետևեն Ինձ ապագայում և կդառնան ոսկորը Իմ Ոսկրի, մարմինը Իմ Մարմնի, և կշարունակեն հատուցել իրենց եղբայրների և քույրերի համար:

Ես երբեք չեմ դադարել մարգարեներ նշանակելուց, նրանց դնելով Ճշմարտության ճանապարհի վրա՝ Իմ Փրկության Ծրագրի համար: Ես նրանց կմղեմ, որ կատարեն իրենց ազնիվ երդումները, որոնք բարձրացել

[1] Գետը Սուրբ Հոգին է:
[2] Աստված ապրում է մեր մեջ: Մենք Աստծո բնակավայրն ենք:
[3] քաղաք՝ մենք Աստծո քաղաքն ենք:

էին նրանց շուրթերին մեր Աստվածային հմայիչ հանդիպման ժամանակ: Երբ նրանք թույլ տվեցին, Իմ հանդեպ ունեցած մեծ սիրով և իրենց ազնիվ համոզումով պարտավորություն վերցնել Իմ Փրկության Ծրագրին, Ես առաջ եկա և Իմ Արքայական Գայիսոնով խարանեցի նրանց այն նույն նշաններով, որոնցով Ես Ինքս եմ խարանված, որ Ինձ նմանվեն, և նրանց Ինձ նման դարձնեմ:

Բոլոր նրանք, ովքեր ճշմարտապես ընդունել են Ինձ, չեն ամաչում Ինձ համար: Ոչ էլ ամաչում են այն երկնային նշանների համար, որոնք ցույց են տալիս, որ իրենք այլևս աշխարհին չեն պատկանում: Այսօր նրանց կճանաչեք Իմ Տան հանդեպ նրանց ունեցած նախանձախնդրությամբ, Իմ Տան, որը զգեստավորում է նրանց, մի նախանձախնդրություն, որը լափում է նրանց: Դուք կճանաչեք նրանց, երբ տեսնեք, թե ինչպես են համբերությամբ կրում վիրավորանքները, զրպարտությունը, անարգանքը և հալածանքը Հանուն Ինձ: Այո՛, Հանուն Ինձ նրանք թույլ կտան, որ իրենց քարշ տան ճահճի մեջ և մշտապես սպառնան: Նրանք չեն խուսափի նեղությունից ու դժվարությունից, այլ խաղաղությամբ կդիմանան բոլոր փորձություններին, և նրանց սրտերը չեն կոտրվի, այլ կսրբագործվեն: Ոչ էլ նրանք կխախտեն Իմ խաչը կիսելու իրենց հավատարմության երդումը:

Ուրեմն, եթե այնպես պատահի, որ տեսնեք նրանց վերքերը և հարցնեք նրանց. «Ո՞վ է ձեզ պատճառել այդ վերքերը», ապա նրանք բոլորն էլ կասեն.

«Ես առաջարկել եմ իմ մեջքը, որ հատուցեմ ձեզ համար: Այս վերքերը, որ տեսնում եք, ես դաժանորեն ստացել եմ իմ Տիրոջ ընկերների տանը... Քանի որ ես նրանց ասել եմ ճշմարտությունը, նրանք ինձ թշնամի են դարձրել և վարվել ինձ հետ, ինչպես թշնամու հետ: Նրանք ուզում են խուսափել մեր Փրկչի Խաչի համար հալածվելուց՝ չպահելով Սիրո Օրենքը: Բայց դա նշանակություն չունի, և Ես ուշադրություն չեմ դարձնում իմ վերքերին, որովհետև ինձ համար կարևորը Խաչի՝ մեր փրկության Գործիքի մասին իմանալն է: Մեր Փրկչի Խաչը, որի միջոցով աշխարհը խաչված է ինձ համար հիմա, իսկ ես՝ խաչված եմ աշխարհի համար[1]: Աստծուն հնազանդվելը դալիս է մարդկանց հնազանդվելուց առաջ, ասում են Սուրբ Գրքերը[2]: Ուստի ես հնազանդվել եմ, և հետևում եմ ինձ տրված երկնային ուսուցումներին»:

«Դու ի՞նչ ասացիր, երբ նրանք հարձակվեցին քեզ վրա հաղթողների պես, հենց նրանք, ովքեր վերքեր հասցրեցին քեզ և ովքեր ասում են, թե քո Տիրոջ ընկերներն են»:

«Ես երբեք ինքս ինձ հարց չեմ տվել, թե ինչու է դա պատահել ինձ հետ, որովհետև ես երդում եմ տվել մեր Աստծուն և Փրկչին, ստորագրելով այն իմ սեփական արյամբ, դառնալու մեր Փրկչի ստրուկը»:

«Իսկ ի՞նչ է ասում քո Աստվածային Տերը այս ամենի համար»:

[1] Գաղ. 6:14
[2] Գործք 5:29

«Նա, ով ընդգրկում է բոլոր էակներին, առանց պարփակվելու նրանց սահմաններում, սգում է Իր Տան անդամների համար: Նրա հովիվներից շատերը ամայացրել են Նրա Տունը: Իրենց ըմբոստության մեջ նրանք ոտնահարել են Նրա Օրենքները և ամայության վերածել Նրա փառավոր արոտավայրերը: Նրանց ամբողջ խաղողի այգին նույնպես ավերված է: Իսկ հոտը, գտնելով միայն անբերրի հողեր, և արածելու համար ոչինչ, փչացավ: Նրանք մեռան[1], և նրանց հետ միասին մեռան նաև նրանք... Այս բաները տեղի են ունենում, և նրանցից ոչ մեկը սրտին մոտ չի ընդունում դրանք: Նրանք եռանդով հետևել են իրենց մարդկային օրենքներին և չարդարացրին Նրա սպասելիքները»:

«Դու որտեղի՞ց գիտես այդքան շատ բաների մասին, և ինչպե՞ս ես դրանք տեսնում»:

«Միայն Խաչի Լույսի միջոցով է, որ կարելի է ընկալել այն բաները, որոնք անտեսանելի են աչքի համար: Մեր Ազատագրման և մեր Փրկության Գործիքի Աչքի միջոցով է, որ մեկը տեսնում է նրա ամբողջ առնչություններն ու հետևանքները: Իսկ թե ինչպես են իմանում այս բաների մասին, ապա դա հնարավոր կլինի միայն Քրիստոսի հետ աստվածային միությամբ: Նրա հետ մեկ լինելու միջոցով, մարդ կարող է իմանալ Նրա Բերանից այս բաների մասին, և եթե մեկը ընդունի դրոշմվել որպես «Քրիստոսի Ստրուկը»: Այո՛, ընդունելով աստվածային ստրկությունը: Այդ դեպքում մարդու սիրտը ոչ միայն պատվաստվում է Հիսուսի Աստվածային Սրտին, այլև պատվաստվում է Նրա Խաչին՝ կրելով այն ամենը, որ Այն առաջարկում է: Դրանք կարող են լինել վշտեր, բայց նաև՝ ուրախություններ: Ես համոզված եմ, որ պատկանում եմ Քրիստոսին և Սուրբ Խաչին, քանի որ Նա է այդպես ասել... Մեր Աստվածային Տերը, բայց նաև Փեսան, հաստատում է մեզ Իր Սրտում, և երբ մենք արմատ ենք գցում և ծաղկում Նրա Սրտի ներսում, առատ և բարի պտուղ ենք տալիս: Մենք դարձել ենք Նրա Թագավորության ժառանգներ և հաղորդակից Իր աստվածությանը, նրա որդեգիր զավակները:

«Աստված չի զրկում ինձ Գիտությունից, այլ խոսում է ինձ հետ պարզ բառերով, դեմ առ դեմ, և Նրա Ձայնը երաժշտություն է իմ ականջների համար: Փառահեղ զորությամբ ուղղելով ինձ Իր մտքերը, Նա լուսավորում է իմ միտքը, որ հասկանամ առակների թաքնված իմաստը, և Իր ժպիտների ու հրճվանքի մեջ Նա բացում է Սուրբ Գրքերում խորհրդավոր ասացվածների կնիքը, որոնք թաքնված էին պահվում մեր աչքերից:

«Այո՛, Նա անում է ամեն ինչ իր ճիշտ ժամանակին: Իմ Տերն ու իմ Աստվածը կնքել է ինձ աստվածային համբույրներով: Նա կնքել է իմ հոգին Իր Եռանձն Սրբության կնիքով, որպեսզի ինձ ավելի մոտեցնի Իրենց Աստվածային լիությանը»:

Ա՛խ, Վասո՛ւլա, տեսնո՞ւմ ես, թե ինչպես Իմ Հայրն ուսուցանեց քեզ: Ուրեմն ուրախացիր և գոհ եղիր:

[1] Հոգևորապես

Դու թողեցիր
Քո Արքայական Գահը և Քո Փառքը,
որ գաս մեզ մոտ, Տե՛ր,
ընդունելով ստրուկի վիճակ՝
մեզ ծառայելու համար:
Դեռ ոչ մի թագավոր
չի ծառայել իր ենթականերին,
բայց Դո՛ւ, Հավիտենական Թագավոր,
թագավորների Թագավոր, եկար և
ծառայեցիր Քո ենթականերին...

«Դու հայտնվեցիր մարմնով,
արդարացար Հոգով,
երևացիր հրեշտակներին,
քարոզվեցիր հեթանոսների մեջ,
հավատալի եղար աշխարհում
և երկինք վերացար փառքով»[1]*...*

Դու եկար, որ զարդարես
Քո արարչությանը
մի վիթխարի Սիրով, որ
գայթակղեցրեց բազմությունների,
երբ ընդունեցիր Խաչը,
թողնելով բազում բաց բերաններ,
ինչպես բաց գերեզմաններ:
Արքած մեր հանդեպ Քո Սիրուց,
Դու ընդունեցիր մեռնել և ոռոգել
Քո ծաղկաթմբերը[2] *Քո Արյամբ,*
որպեսզի բացես Երկինքը
և ազատես մեզ մեղքի կապանքից:

Հոր-Ուրախություն,
Հավատարիմ Սիրո գետեր
հոսեցին Քո Սրտից,
և Քո Սիրո խենթությամբ,
մարդկության Սիրահա՛ր,
Դու ընդունեցիր Խաչի ամոթանքը,
և նրա բոլոր տառապանքները:

Ո՛վ Գարուն տիեզերքի,
տիեզերքը բուրող,
ամենասիրելի Փեսա,
Դու մեկ անգամ ևս
այցելում ես երկիր, բուրմունքով
օծելով ազգ-ազգի ետևից,

[1] Ա. Տիմ. 3:16
[2] Հոգիները

բայց մինչև ե՞րբ նրանք, ովքեր
թափառում են այս երկրի վրա,
չեն նկատելու Քո Բույրը:

Ես Դարպասն եմ, որի միջով առաքինիները ներս են մտնում: Մինչև նրանք չապաշխարեն և հատուցումներ չանեն, նրանց ռունգերը չեն բացվի ներշնչելու համար Իմ քաղցր բուրմունքն ու չեն կենդանանա: Ինչ վերաբերում է քեզ, Ես ցանկանում եմ, որ դու նման լինես մի շուշանի՝ թորելով մաքրություն, թորելով զմուռս Իմ Եկեղեցու վրա, որ բուրմունքով օծես այն Տունը, որը Ես գնեցի Իմ Սեփական Արյամբ՝ Իմ Խաչի վրա Իմ Զոհաբերության միջոցով: Մոտ մնա Ինձ, որ տարածես բուրմունքդ քո շուրջբոլորը: Կրի՛ր Իմ Խաչը քնքշությամբ և միշտ մնա հմայված Դրանով:

Իմ Խաղաղությունը քեզ: ic:

Հունիսի 6, 2000

Սուրբ Գրքերն ասում են,
որ չվախենանք
շնորհի գահին մոտենալուց,
ողորմություն ստանալու
և շնորհ գտնելու համար,
երբ օգնության կարիք ունենք[1]*:*

Հիմա Երկնքից Դու ցույց ես տալիս,
ես կասեի՝ ցուցադրում ես
Քո ողորմությունը մեր հանդեպ,
փոխակերպելու մեր իրական վիճակն
ավելի լավ վիճակի,
որը պիտի առաջնորդի մեզ
դեպի փրկության ճանապարհը:

Շնորհի գահը որոշեց,
շնորհի գահը՝ անհանգստացած
կուտակված մեղքերից,
դուրս եկավ և հրաման արձակեց.

«Մենք ասել ենք.
«Երանելի են սրտով մաքուրները,
քանի որ նրանք կտեսնեն
Աստծուն»: Այսօր այս սերունդը,
որը ձևացնում է,
թե չի հասկանում Մեզ,
այլևս երբեք չի տեսնի Մեզ,
և իր այդ վիճակում երբեք
չի հասնի իր հանգստյան վայրին:

[1] Եբր. 4:16

Իրենց մեղավոր վիճակում, Մենք
ինչպե՞ս երբևէ Մեր բնակարանը
պիտի հաստատենք նրանց մեջ,
իսկ նրանք՝ Մեր մեջ:
Օ՜, ավերված սերո՛ւնդ,

«Միայն Մեզնից
պիտի գա փրկությունը:
Մեր Անսահման Ողորմությունը
ստիպում է Մեզ հեղել
այս սերնդի վրա առավել շնորհներ,
շնորհներ, որոնց նա արժանի չէ:
Մեր Ողորմությունը պիտի փրկի
Մեր զավակներից շատերին,
ովքեր անդադար
դիմադրում են Մեր Սիրուն:

«Շնորհի գահից նրանք
ողորմություն պիտի ստանան,
որ հասնեն այն կատարելությանը,
որն անհրաժեշտ է
Երկինք մտնելու համար:

Մեր ողորմությամբ
Մենք պիտի հարուցենք հոգիների,
բայց վա՜յ այն սրտերին,
որոնք այնքան չար են,
որ կցանկանան նվաստացնել,
կամ չհավատալ,
կամ զրպարտել Մեր ողորմությունը:
Նրանք Արդարությամբ
պիտի պատժվեն՝
Մեր ողորմությանը
հայհոյելու համար»:
Այդ ինչպե՞ս է, որ մի անվերջանալի
և անարգ մարտ է մղվում
Քո Ողորմության դեմ Քո Տան
բազմաթիվ անդամների կողմից:
Այդ ինչպե՞ս է,
որ իմանալով Սուրբ Գրքերը,
նրանք իրազեկ չեն
Քո Հոգու ներքին ոգեշնչումներին:

Այդ ինչպե՞ս է, որ նրանք
չեն կարողանում
ճանաչել Երրորդությանը, ովքեր
վկայություն են տալիս երկնքում[1]:

[1] Հայրը, Որդին և Սուրբ Հոգին

Դո՛ւ, Աստվա՛ծ իմ,
Քո Գերագույն Սիրով
և Ողորմությամբ,
որոշեցիր ընտրել մի անկարող
և թույլ արարածի,
նշանակելով նրան, որ գործի
համաձայն Քո հրամանների՝
հրամայելով նրան մարգարեանալ,
որը նշանակում է
փոխանցել Քո Խոսքը:

Դու նրան սովորեցրիր աղոթքներ,
խնդրանքներ և
զոհողություն մատուցել,
որ լսելի դառնա Քեզ: Դու նրան
սովորեցրիր առաջարկել իր կամքը:

Ես, Տե՛ր իմ, ամեն ջանք թափեցի,
որ ներկայանամ Քո առջև
որպես մի փորձված աշխատող,
որ ամաչելու կարիք չունի, այլ
պահում է ճշմարտության պատգամը
ուղիղ ճանապարհի վրա:

Ես կանչվեցի Քո կողմից,
և ես պատասխանեցի:
Ես կանչվեցի Քո կողմից,
և ես ընդունեցի Քեզ:
Ես կանչվեցի Քո կողմից,
և զղջացի իմ մեղքերի համար:
Ես կանչվեցի Քո կողմից,
և նրանք մեղադրեցին ինձ:

Նրանք մեղադրեցին ինձ
և շարունակում են մեղադրել,
որովհետև ես պատասխանեցի Քեզ:

Դու օծել ես ինձ,
որ վկայություն տամ,
բայց նրանք բարձրացնում են
իրենց ձայնը, որ խեղդեն Քո Ձայնը:

Աղջի՛կս, դու հավատարիմ աշխատանք ես կատարել Իմ Հոգու միջոցով, օգնելով Իմ Եկեղեցուն: Դու եղել ես և մնում ես ծառայության մեջ Իմ ժողովրդի համար: Դու պատասխանեցիր Իմ Կանչին:

Տե՛ս, Վասուլա, Իմ Ողորմությունը տրվում է բոլորին, ովքեր դիմում են Փեսային: Այսօր Իմ Արդարությունը թույլատրում է, որ Իմ

Ողորմությունը մոտենա մեռածներին[1], որոնց գարշահոտությունը հասել է Իմ ռունգերին, որ հարություն տամ նրանց: Սա արվում է Աստվածային Ողորմությամբ: Բայց Ողորմության փրկարար Արդարությունը այս է ասում բոլորին.

Թույլ մի՛ տվեք ձեր սրտին հարկադրել ձեզ և ասել. «Հնարավո՞ր է, որ Աստված այդքան խոսի այդ կնոջ հետ»: Դա Իմ Ողորմության Կանչը նվաստացնելու համար է: Այլ խոսքով, այն Ինձ նվաստացնելու համար է: Այդ մարդկանց վարքագիծը ձևավորված է այս ժամանակավոր աշխարհի մտածելակերպի հիման վրա: Չե՞ք կարդացել. «Ո՞վ է երբևէ իմացել Տիրոջ միտքը: Ո՞վ է երբևէ եղել Նրա խորհրդատուն: Ո՞վ է երբևէ որևէ բան տվել Նրան, որ Նրա ընծաները մեզ տրվեն, որպես վերադարձված մի պարտք»: Մի՞թե չեք հասկացել, թե որքան հարուստ և անհատակ են Իմ Իմաստությունն ու Իմ Գիտությունը: Ինչպե՞ս կարող է սոսկ մի արարած համարձակվել բարձրացնելու իր ձայնը և հայտարարել, որ նա հասել է Իմ որոշումների և Իմ Ուղիների արմատին, առանց ինքն իրեն դատապարտելու: Ուստի, աղջի՛կս, ինչ որ կա, գալիս է Ինձնից և առաջանում է Իմ կողմից և գոյություն ունի Ինձ համար:

Այո՛, Վասուլա, Ես կանչեցի քեզ, և դու պատասխանեցիր Ինձ, որ խոսես Ինձ համար: Ես կանչեցի քեզ, որ ցուցադրես, ինչպես ինքդ ասացիր, Իմ Ողորմությունը, որպեսզի այս Աստվածային Կանչի միջոցով շատ մեղավորներ խղճի խայթ զգան և դրդվեն Ինձ հետ հաշտվել ու ապաշխարել: Հետո, երբ նրանք տեսնեն, թե Ես ինչպես եմ վարվում քեզ հետ, և որքան շնորհներ եմ Ես հեղում քեզ վրա, մյուսները նույնպես կգրավվեն Իմ Գթությամբ և կորոշեն փոխել իրենց կյանքը և կսկսեն ապրել ճշմարիտ կյանք Իմ մեջ, իմանալով, որ եթե որոշեն դեպի Ինձ դառնալ, իրենք էլ կգզան Իմ քաղցրությունը: Նրանց նվիրումը կավելանա, իսկ նրանք, ովքեր ապրել են առանց որևէ նվիրման, նույնպես կսովորեն աղոթել առանց դադարի...

Այսօր քո Արարիչն ասում է քեզ, որ քո լռության մեջ Ես հանդչում եմ: Դեպի Ինձ՝ քո Տիրոջն ու Աստծուն ուղղված քո սիրառատ հոգոցների մեջ, Ես ստանում եմ բուրումնավետ փառքի ծաղկեպսակներ: Իմ Տան հանդեպ քո նախանձախնդրության մեջ, Ես ստանում եմ գովաբանություն, և Իմ Մարմինը հանգստանում է Ինձ չարչարողներից քո սիրո բալասանով: Ինչպես մի ոսկե վտակ, որը գեղեցիկ ու հաճելի է աչքին, Ես ցանկանում եմ վերափոխել քեզ Իմ Աչքերի համար, սիրելի՛ս: Ես քո Արարիչն եմ և քո Փրկությունը:

Ո՛չ, Ես մուտք եմ գործել քո մեջ, առանց որևէ արժանիք գտնելու քեզնից, բայց Ես, երբ տեսա քեզ, Ես սիրեցի քեզ: Ես որոշեցի չզրկել քեզ Իմ շնորհներից, ո՛չ էլ Իմ Խաչից: Քեզ Իմ Սրտի կենտրոնը տանելու համար Ես պետք է նվաստացնեի ու փոքրացնեի քեզ, բայց Ես ո՛չ ճիպոտ բարձրացրի, ոչ էլ ձայնս: Ես բերեցի քեզ Ինձ մոտ Իմ գթառատ ներողամտությամբ:

Հազիվ էիր դու վերածնվել, երբ Իմ Հոգին քեզ կանչել տվեց. «Ա՛բբա»: Ուրախությամբ լի, Իմ Հոգին, Իմ և Հոր հետ միասին, երիցս օրհնեց քեզ,

[1] հոգևորապես մեռածներին

և անմիջապես դրանից հետո, հավաքեց Երկնքի Արքունիքն ու ասաց նրանց.

«Մենք մեծ պատիվ ձեռք կբերենք Թուլությունից: Հաղթանակը Մերը պիտի լինի վերջում, բայց[1], երբ լուրը հասնի նրանց, ովքեր վնասում են Եկեղեցուն, նրանք չարությամբ առաջ կընթանան Մեր զավակի դեմ: Կարծրասիրտ մարդկանց հորդաներ վայրագաբար պիտի ցուցադրեն իրենց չար սրտերը, սակայն նա պիտի փարվի Մեզ և մի ակնհայտ նշան պիտի լինի նրանց բոլորի համար, որ Եռանձն Աստված իր հետ է: Եվ թեև մի ժամանակ նրանց կթվա, թե նա պարտվեց, կարճ ժամանակում նրանք պիտի հասկանան, որ իրենց ողջ բանսարկությունը զրոյի հավասարեցվեց:

«Մեր Փրկության Ծրագրի համար, Մենք կօժտենք նրա հոգին արիությամբ, և, երբ նա խոսի Մեզ համար, նա պիտի խոսի իշխանությամբ, որովհետև պիտի հետևի Մեր Արքայական Հրամանին:

«Սկզբում պաշտոնյաները ուշադրություն չեն դարձնի նրա և Մեր ասածների վրա: Նրանք կարհամարհեն Մեր Արքայական հրամանագրերը, մինչ Մեր Իշխանությունը, նրա միջոցով, պիտի տարածվի յուրաքանչյուր ազգի վրա: Եվ մինչ Մեր Տունը կսկսի վերանորոգվել և վերածնվել Սուրբ Հոգու միջոցով, գազանի կառավարիչը, նա, որ համարձակվում է դատապարտել Մեզ, նա, որ ազնիվ սրտերի հետ վարվում է ինչպես հանցագործների, մեծ ուժով կհարձակվի Մեր զավակի և Մեր Ազնիվ ու Վսեմ Թեմայի դեմ: Բայց իրականում Նրա նշանառությունը պիտի լինի Մեզ վրա, գիտակցելով, որ Սիրո Մեր Թեման վտանգի տակ է դնում իրեն[2] և իր հետևորդներին, քանի որ Մենք պիտի բացահայտենք նրանց, և Եկեղեցու դեմ ուղղված նրանց հեռակա ծրագիրը, հայտնելով բոլոր ազգերին, որ նրանք պիտի ստիպեն և շղթայեն ազգերին, որպեսզի նրանք սնվեն մի օր բնապաշտությամբ, հաջորդ օրը՝ բանապաշտությամբ՝ ուժով պարտադրելով ազգերին իրենց օրենքը, ցանկանալով խեղդել Իմ Ձայնը:

«Եվ ինչպես Սուրբ Գրքերն են ասում, այնպես էլ կարվի: Սուրբ Գրքերն ասում են[3]. «Նրանք ցիրուցան պիտի անեն քո բարեպաշտների մարմինները և պիտի հեղեն նրանց արյունը Երուսաղեմի շուրջը, և չի լինելու մեկը, որ դերեզման փորի նրանց համար», որովհետև[4] «գազանը, որը դուրս է գալիս Անդունդից», ինչպես նորից Սուրբ Գրքերն են ասում, «պատերազմելու է նրանց դեմ և հաղթելու է նրանց և սպանելու է նրանց[5]: Նրանց դիակները ընկնած են լինելու Մեծ Քաղաքի

[1] Հենց որ արտասանվեց այդ «բայց»-ը, թվաց, թե բոլոր հրեշտակներն ու սրբերը հասկացան նախքան մնացածը լսելը, որովհետև, այն ձևը, որով դա արտասանվեց, նրանք գիտեին, որ տխուր լուր էր հետևելու: Անմիջապես նրանց դեմքերի արտայայտությունը դարձավ լուրջ և հանդիսավոր:

[2] Նա և նրա հետևորդները մեր ժամանակի այն չար, մութ ուժերն են, ովքեր տիրում են աշխարհին և մարտնչում Քրիստոսի Աստվածայնության և Հայր Աստծո դեմ: Նրանք մարտնչում են նաև խաչի դեմ:

[3] Ա Մակաբ. 7:17

[4] չար ուժերը

[5] Սպանել պատգամատարներին, ովքեր ուղարկված են Քրիստոսի և Կույս Մարիամի կողմից, խորհրդանշական ձևով՝ մերժելով այն փաստը, որ Մարիամն ու Հիսուս խոսում են որպես երկու վկաներ:

կենտրոնական փողոցում, որը հայտնի է Սոդոմ և Եգիպտոս խորհրդանշական անուններով, որի մեջ նրանց Տերը խաչվել էր»:[1]

«Քրիստոսի մի հայտնի բազմամարդ քաղաք, որը ծանոթ է որպես հավիտենական քաղաք անունով, երբեք չի դադարի Մեր Կանչերը մերժելուց, ինչպես Սոդոմի մերժումները, թեև նրանք պիտի պնդեն լսելու և ընդունելու իրենց պատրաստակամության մասին, և Մեր Հոգու հանդեպ իրենց անկեղծության մասին: Բայց նրանք պիտի անեն հակառակը, նրանք պիտի խաչեն Իմ տված բոլոր Խոսքերը՝ մեխելով դրանք փայտին: Սրա համար շատ քահանաներ արցունքներն աչքերին պիտի կանգնեն խորանի առաջ և հեկեկալով պիտի ասեն.

«Տե՛ր, թույլ մի՛ տուր, որ ավերածությունը գա Քո Տան վրա: Դու տեսել ես նրանց[2] վրեժխնդրությունը, ովքեր երդվել են դեմ գնալ Քո բոլոր Սուրբ Կանոններին և դրա փոխարեն իմաստուն ձևանալ, ինչպես իրենք են ասում, մարդկության բարօրության համար: Հենց այդ շնագայլերն են, որ ծաղրում են Քո Աստվածությունը և թունավոր նետեր են արձակում մեր հավատի վրա: Քո ժողովրդին ամրացնելու և Քո քահանաներին ամրապնդելու և նախազգուշացնելու համար, Դու իջար Քո փառահեղ զորությամբ մեր մեջ՝ նշանակելով քամիներին որպես պատգամատարների, իսկ կրակի բոցերին՝ որպես Քո ծառաների, որ փառք բերեն Քեզ: Դու ընտրեցիր նրանց, որ կրեն Քո Սուրբ Անունը և ցուցադրեն Այն, որ պատիվ բերեն Քեզ՝ Քո Տան անդամներին ամրացնելով և կրկին հավաքելով Քո հոտը, և օգնեն Քո Տանը, որ մեկ անգամ ևս կոչվի՝ աղոթքի Մեկ Տուն: Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ Քո Գթառատ Սիրո համար և այն բանի համար, որ միջոց գտար մեզ բոլորիս արթնացնելու անտարբերությունից և անզգայությունից:

«Բայց հիմա, տե՛ս, երբ դիակները կեղտոտում են Քո քաղաքը[3], և մինչ գազանն իր հետևորդների հետ միասին ոտնակոխ են անում նրանց, ուրախանալով և տոնելով նրանց մահը, տե՛ս, թե ինչպես են նրանք հրճվում ամեն անգամ, երբ Քո պաշտոնյաների կողմից բացասական կարծիք է արտահայտվում Քո ընտրյալների դեմ: Դեռ որքա՞ն պիտի Քրիստոսի Արյունը, որ անմեղ լինելով մատուցեց Ինքն Իրեն Աստծուն՝ Հավիտենական Հոգու միջոցով, մաքրագործի մեր խղճմտանքը մեռած գործերից, որպեսզի մենք կարողանանք պաշտել Կենդանի Աստծուն: Դեռ որքա՞ն ժամանակ է հարկավոր, որ Քո պաշտոնյաները հասկանան, որ Քո այնքան գթառատ միջամտությունները մերժելով, նրանք, առանց այդ իմանալու, դառնում են գազանի կառավարչի և նրա հետևորդների գործակիցները:

«Ամենագթառա՜տ Տեր, Դու մեզ բոլորիս նախազգուշացնելու միջոց ես գտել նրա հանդեպ, ով դրոշ ծածանելով պնդում է, թե ինքն Աստված է: Բայց հիմա տես, թե ինչպես են նրանք գրոհում Քո դեմ, փակելու նրանց բերանները, ովքեր գովաբանում են Քեզ: Մեր Տեր և Երկնային Թագավոր, արի՛ մեզ օգնության: Ցույց տուր Քեզ զորությամբ մեծ վհատության այս ժամանակներում»:

---

[1] Հայտ. 11:7-9

[2] չար ուժերը

[3] ուրացությունից

«Հետո մի սարսափելի ճնշում պիտի գործադրվի որպես վճիռ, չնայած սկզբում ոչ մի բառ գրավոր ձևով չի լինելու: Սրբերը և Մեր ընտրյալ հոգիները մշտապես ոտքի տակ պիտի կոխկրտվեն և տրորվեն, քանի որ Մեր պատգամատարների միջոցով Մենք բացահայտում ենք չար ուժերի նենգ ծրագրերը՝ զգուշացնելու համար Մեր ժողովրդին: Մենք զգուշացնելիս կլինենք նրանց Մեր Գթառատ Կանչի սկզբից ի վեր, որ այդ չար ուժերը, ովքեր Մեզ մարտահրավեր են նետում, պիտի ծրագրեն փոխել եղանակները և Օրենքը:

«Հետո կգա մի ժամանակ, երբ Մեր Տան անդամները ոչինչ չեն ունենա ասելու Սատանայի այդ տերությունների և մութ ուժերի դեմ, և չեն հասկանա անգամ այն ժամանակ, երբ նրանք ականատես կլինեն Խաչի դեմ բարձրացված սրին: Չար ուժերի կառավարիչը պիտի բռնագրավի Այն *(Խաչը)* հասարակական վայրերից, և, գազանի ու նրա բոլոր հետևորդների հետ միասին, նրանք պիտի հետապնդեն Մեր ժողովրդին քրիստոնեությունից հեռացնելու իրենց ծրագիրը, բայց և այնպէս, Մեր պաշտոնյաները պիտի մնան կույր և պիտի շարունակեն ուշադրություն չդարձնել Մեր Գթառատ միջամտություններին, առանց հասկանալու, որ համագործակիցներ են դառնում նրանց, ովքեր պատերազմ են մղում Խաչի դեմ:

«Հետո, երբ նրանք կհասկանան, որ իրենք մեղանչել են, և որ իրենց հարատև վիճարկումը, թե ինչպես լավագույն ձևով հարմարեցնեն ու լռեցնեն Մեր մարգարեներին օգնում էր թշնամուն, նրանք կխոստովանեն. «Տե՛ր, մենք մեղանչեցինք և սխալվեցինք, որովհետև դավաճանեցինք Քո ուսմունքը: Մենք չլսեցինք Քո պատգամատարներին և լրջորեն չվերաբերվեցինք նրանց հետ: Նրանք խոսեցին Քո Անունից բոլոր երկրների ժողովուրդներին: Փրկարար Արդարությունը Քոնն է: Բայց մենք չլսեցինք...»: Ահա թե ինչ կլսենք Մենք:

Տեսնում եք, անկախ այն բանից, թե որքան կհետազոտեն և կապացուցեն Մեր զավակի ճշմարիտ լինելը, որ կրում է անհրաժեշտ բոլոր նշանները և վերևից եկող օրհնությունները, դավադիրները մեծամտությամբ առաջ կտանեն իրենց չար ծրագրերը:

«Յուրաքանչյուր ազգի վրա նրանք կունենան մի կառավարիչ և հաճույք պիտի զգան իրենց չար գործերը կատարելիս: Բայց նրա (պատգամատարի) կողքին Մենք մի իշխան պիտի դնենք Մեր Երկնային Արքունիքից, ամենավերին դասերից մեկին, որ լինի նրա պահապանը և օգնի նրան հայտնաբերելու սուտ խոսքերն ու այլասերված սրտերը: Նրանց ընկերները, ըմբոստներն ու մեղավորները միասին պիտի կանչվեն և պիտի բացահայտվեն, և Մեր ոսկե վտակը պիտի լցվի նրանց շրջանակների մեջ: Եվ Մենք, նրանց կենտրոնում, պիտի կանչենք նրանցից յուրաքանչյուրին իրենց անվամբ:

«Ահա ձեր Տերը՝ ձեր Ճշմարիտ Փեսան, գալիս է զորությամբ: Ինչու, մի՞թե չեք լսել, որ Իմ Բազուկը Ինձ է ենթարկում ամեն ինչ, որ արարված է: Հիմա Ես պե՞տք է ձեզ զրկեմ Իմ գրկից այն պատճառով, որ ջարդեցիք Իմ Մարմինը: Կամ պե՞տք է Ես ձեզ զրկեմ հիմա Իմ Գթառատ Սիրուց կամ Իմ Բարեգթությունից և չարթնացնեմ ձեզ ձեր թմբիրից: Ո՛Հ, ո՛չ: Իմ Սերը ստիպում է Ինձ փրկել նաև ձեզ, և Ես չեմ զրկի ձեզ Իմ

գրկից, ո՛չ էլ ես ձեզ կզրկեմ Իմ քաղցրությունից, քանի որ, եթե զրկեմ, դուք կմեռնեք»:

«Մեր հավիտենական և սուրբ Իմաստությունը, որը մեղրից էլ քաղցր է, կհրապուրի նրանց սրտերը, որպեսզի նրանց սրտերը ողողվեն Իմաստության քաղցրությամբ և հայտարարեն.

«Մեկ Աստված կա, մեկ հավատ,
և մեկ Եկեղեցի»:

Սա կինի Մեր Ականջների համար ինչպես մի բարեհնչուն օրհներգ: Սա կլինի Մեր Հաղթանակը»:

Ահա թե ինչ ասացինք Մենք, երբ Մենք հավաքեցինք Երկնքի Արքայական Արքունիքը:

Հաճույքով կենտրոնացրեք ձեր մտքերն Ինձ վրա և Իմ Աստվածային միջամտությունների վրա: Իսկ դո՛ւք, որ ասում եք. «Մենք կարիք չունենք հրաշքներ տեսնելու», ես կասեմ ձեզ. «Դրեք ձեր ձեռքը ձեր բերանի վրա, և Իմ Գթառատ միջամտությունը որպես հարձակում մի համարեք: Թույլ տվեք Իմ ժողովրդին ընդունել փրկվելու շնորհը այն հրաշքների միջոցով, որոնք ես անում եմ ձեր խավար դարաշրջանում: Ուրեմն արեք այն, ինչ ճիշտ է, այսինքն՝ խոնարհաբար քայլել Ինձ հետ՝ ձեր Աստծո հետ»:

Իմ Վասուլա, իմացի՛ր, որ ամեն ինչ Իմ Գայիսոնի տակ է: Արի՛ և մտորիր Իմ Փրկարար Արդարության մասին:

Այդ ինչպե՞ս է, որ նրանք չհավատացին կամ չհասկացան Քո Լեզուն[1]*:*

Նրանք չեն հասկացել Փեսայի լեզուն, որովհետև ես խոսեցի Իմ Հոգու լեզվով, այլ ոչ թե մարդկային փիլիսոփայությունից սովորած արտահայտություններով:

Ուստի, սիրելիս, ունեցիր Իմ միտքը և գովաբանիր Ինձ ուրախությամբ, և մի՛ լսիր նրանց, ովքեր չեն արձագանքել Իմ Սիրո Օրհներգին: Հավատա՛ Սուրբ Գրքերին, որոնք ասում են. «Որքան գեղեցիկ են բարի լուր բերողների ոտքերը...»[2]: Գրվածքները երբեք չեն ստում: Եղիր Ինձ պատվաստված...

ΙΧΘΥΣ

Օգոստոսի 5, 2000

Ես՝ Հիսուս Քրիստոսը, օրհնում եմ քեզ:

Տե՛ր, Դու, որ դուրս քաշեցիր

[1] Հռոմ. 10:16
[2] Հռոմ. 10:15

ինձ ճահճի տիղմից,
կարեկցանք ցույց տալով,
և ցած խոնարհվեցիր
Քո Արքայական Գահից դեպի ինձ,
մի նոր երգ դիր իմ բերանում:
Ես պիտի հռչակեմ և երգեմ
Քո Խոսքը բոլոր ցեղերին
ու ազգերին:

Դու ուզում ես, որ Ես քաղցրացնե՞մ Իմ Խնջույքը: Այն Խնջույքը, որ Ես տալիս եմ քեզ այս ամբողջ տարիների ընթացքում: Պե՞տք է, որ Ես, սիրելիս, Իմ Քաղցրությունից ավելին շնորհեմ, որ զորացնեմ քո սերը և թեթևացնեմ ու բժշկեմ քեզ: Բժշկությունն ինքը, գալիս է Իմաստությունից...

Ա՛խ, այո՛, Տե՛ր,
խղճա այս անշնորհակալ սերնդին:
Թող որ նրանք ճանաչեն Քեզ
իրենց կյանքում:
Թող որ նրանք[1], ովքեր
լսել և կարդացել են Քո պատգամը,
ազատվեն իրենց թմրության ոգուց,
քանի որ նրանք կարդում են
առանց հասկանալու:
Դու ապացուցել ես, որ Ողորմած
և Համբերատար ես նրանց հանդեպ:
Թող որ նրանք ճանաչեն Քեզ
որպես Աստվածություն,
որ կապում է նրանց Իր Սիրով:

Մի՞թե շատ է խնդրել Սրբին,
ով Իր Սիրով բուրումնալից է
դարձնում ողջ տիեզերքը,
որ ուղարկի նոր հրաշքներ,
որոնք պարունակում են
Քո Քաղցրությունը:

Զարթեցրո՛ւ նրանց նոր հրաշքներով,
որոնք մեղրի պես քաղցր են:
Թող որ երկճյուղված լեզուն,
որ շարունակում է ինձ հալածել,
իսկ իմ միջոցով՝ Քեզ, բժշկվի:

Գթա՛ նրանց, ովքեր կանչում են
Քո Անունը գիշեր-ցերեկ,
բայց ապրում են առանց սիրո...

[1] Ոմանք

Ես բավարարեցի քեզ և ուրիշներին Իմ Աստվածային Պատգամի միջոցով՝ ամենամեծ և ամենաազնիվ Իմ Խնջույքներից մեկով: Ես մի մեծ ու զարմանալի հրաշք էի նախապատրաստել ձեր չար ժամանակների համար, և Ես շնորհել եմ ձեզ բոլորիդ, որ դաք և ճաշակեք այն: Իմ Խնջույքը ճաշակել՝ նշանակում է ճաշակել Ինձ՝ ձեր Աստծուն և ձեր Արարչին, որպեսզի հասկանաք Ինձ:

Ա՛խ, Տե՛ր Իմ, Քո Խոսքերը
խորհրդավոր են և թաքնված,
և շատերը, ովքեր կարդում են
Քեզ Սուրբ Գրքերում
և այս պատգամներում,
չեն ներթափանցում
դրանց Գիտության մեջ, քանի որ
դրանք Աստծո Գիտությունն են:
Դրանք լուսավորում են
մեր հոգին և միտքը,
և լույս են տալիս մեր ներսում:
Բայց ես գիտեմ, որ կան այնպիսիք,
ովքեր կարդում են
առանց ներթափանցելու
Քո Խոսքերի իմաստության մեջ,
և Քո Խոսքերը ասես փակ են
ու կնքված նրանց համար:
Մինչդեռ, Քո Բառերը
Ճշմարիտ ներհայեցություն են,
Իմաստություն և Ճշմարտություն...

Ով որ լսում է Ինձ, այլ ոչ թե իր ձայնին, կներթափանցի Իմ Իմաստության մեջ, և Իմ Խոսքերը կփայլատակեն նրանց հոգում ինչպես հայելի, որը նայում է արևին: Ով որ Իմ Խոսքերը կարդալուց հետո դառնա նվաստ ու խոնարհ և պատվի Ինձ մեծահոգությամբ և սիրով, նրա աչքերը ծածկող թեփուկները կընկնեն, և նա կտեսնի Ինձ Իմ անհասանելի փառքի մեջ: Այո՛, քանի որ նրա աչքերը կտեսնեն ամենայն պարզությամբ այն, ինչն անտեսանելի էր իր համար և անհասանելի ու պահված միայն սրբերի համար:

Գուցե Իմ լեզուն անհասկանալի է հնչում քեզ համար, սերո՛ւնդ, բայց մի՞թե Ես մի անգամ չեմ ասել, որ այն օրը, երբ քո աչքերը ծածկող թեփուկները ընկնեն, այդ օրը դու կիմանաս, որ Ես Հոր մեջ եմ, և դու Իմ մեջ, և Ես՝ քո մեջ: Մի՞թե չեմ ասել, որ նա, ով պահում է Իմ պատվիրանները, նա՛ է որ սիրում է Ինձ: Եվ որևե մեկը, որ Ինձ սիրում է, պիտի սիրվի Իմ Հոր կողմից, և Ես պիտի սիրեմ նրան և Ինքս Ինձ ցույց պիտի տամ նրան: Այո՛, և դուք կտեսնեք Ինձ Իմ փառքի մեջ:

Իմ լիությունը առատորեն դուրս է հեղվում բոլորիդ վրա, և Իմ շնորհի միջոցով դուք դառնում եք Իմ Հոր որդիները և դուստրերը, ժառանգորդները և ժառանգորդուհիները, ինչպես Ես եմ: Դուք դառնում

եք Ինձ հետ, ինչպես Սուրբ Գրքերն են ասում[1], «մի արքայական քահանայություն, մի նվիրաբերված ազգ, որ գովաբանություններ երգի Աստծուն, որ կանչեց ձեզ խավարի միջից Իր Լույսի մեջ»:

Ես, տիեզերքի Փեսան, Իմ ողջ Վեհությամբ պիտի գամ նրա մոտ, ով լիովին կխոնարհվի, և Իմ Սիրո Հոգին պիտի պարուրի նրան, որ ներգրավի նրան Ամենասուրբ Երրորդության Գրկում: Հետո, այդպիսի հոգին, ուժգին լույս ստանալով, կստանա բոլոր ծածուկ խորհուրդներն ու Երկնքի հարստությունները և կսկսի դեռևս այստեղ՝ երկրի վրա, ապրել այնպես, ինչպես ապրելիս կլիներ երկնքում, քանի որ նա մուտք գործած կլինի Երանական Տեսիլքի մեջ: Այլ խոսքով, այդ հոգին պիտի կանխաճաշակի, թե ինչի է նման Երանական Տեսիլքը, և պիտի ավարտի այդ Տեսիլքը այն պահին, երբ մուտք կգործի երկինք...

Լսե՞լ ես դու ասացվածքը[2]. «Ամեն մարմին նման է խոտի, իսկ նրա գեղեցկությունը նման է խոտածաղկի: Խոտը չորանում է, ծաղիկը՝ թառամում, բայց մեր Տիրոջ խոսքը մնում է հավիտյան»: Ահա թե ինչու է ձեր կյանքը սերվում Իմ խոսքից՝ վերակենդանացնելով ձեզ: Մարմինը մարմին է, իսկ մարմինը դյուրաբեկ է, բայց Իմ խոսքը հավիտենական է և Կյանք է:

Որպեսզի ձեր հոգին կենդանի պահեմ, ես Ինքս Ինձ անվերջ, ավելի ու ավելի պիտի տամ ձեզ, Ինքս Ինձ զորությամբ և շնորհով ցուցադրելով, մինչ բաց կանեմ ձեզ Իմ Սիրտը և ցույց կտամ բաներ, որոնք ոչ մի աչք չի տեսել և ոչ մի ականջ չի լսել, բաներ, որոնք մարդու իմացությունից այն կողմ են, քանի որ այն, ինչ ճանաչելի է մարդուն, դա այն Գիտությունը չէ, որը ձեռք է բերվում Իմ Սուրբ Իմաստության միջոցով և որը դուրս է հոսում Իմ Աստվածայնությունից:

Հիմա, երբ դու ճաշակեցիր քո Տիրոջ բարությունը, Վասո՛ւլա, ի՞նչ ունես ասելու:

Քո բարությունը, Տե՛ր իմ, արդարացրեց ինձ: Առանց ոչ մի արժանիքի Դու արդարացրեցիր ինձ:

Ես այդպես արեցի, որ դու հավատ և հույս ունենաս Իմ հանդեպ՝ քո Աստծո հանդեպ: Իսկ ուրիշ ի՞նչ արեցի ես քեզ համար:

Դու խնդրեցիր ինձ, որ Քեզ առաջարկեմ իմ կամքը: Հետո...

[3]Հետո Ես լցրեցի Իմ Սերը քո մեջ, որ քեզնից սեր ստանամ: Սրա համար է, որ Ես խոսում եմ և կրկնում Ինքս Ինձ ձեր բոլորին:

Դուք կարող եք ձեռք բերել ողջ Աստվածությունը ձեր ներսում, սիրելիներ, Որը կուսուցանի ձեզ սրբազան խորհուրդներ, վսեմ և Սուրբ Գիտություն, որը գալիս է Իմաստությունից: Եվ ինչպես մի ծառ, Գիտությունը կլինի ձեր ներսում աճող ծառը՝ որպես արմատ ունենալով Իմաստությունը: Եվ այդ ծառից առաքինությունները կբողբոջեն:

---

[1] Ա. Պետ. 2:9
[2] Ես. 40:6-8
[3] Տղերը շարունակեց նախադասությունը, որ ես սկսել էի:

Աղջի՛կս, դու ասում ես, որ շատերը, ովքեր կարդում են Իմ Խոսքերը, չեն թափանցում դրանց իմաստի մեջ, որովհետև դրանք համարում են խորհրդավոր և կնքված: Այժմ Ես բացատրեցի, թե ինչ պետք է անեք, որ հասկանաք Իմ Խոսքերը: Եվ ձեր փոքրանալու և ցածրանալու միջոցով, Ես կլինեմ ձեր Հոգու Ամեն Ինչը՝ ձեր կյանքը, ձեր բարեկեցությունը, ձեր ներշնչումը, ձեր բարյացակամությունը, ձեր հույսը, ձեր սերը, ձեր հավատը, ձեր ուրախությունն ու ձեր Փեսան, որի վրա կարող եք հենվել, և ձեր հարությունը:

Հետո Իմ սիրելին կընտրվի, որպես Իմ մյուս գործակիցներից մեկը, որը պիտի կառավարի Ինձ հետ: Հետո, կարող ես ասել. «Ես ապրում եմ ճշմարիտ կյանք Աստծո մեջ, որովհետև ես ամբողջովին մասնակից եմ Ամենասուրբ Երրորդության կյանքին»: Այո՛, արդարև: Եվ թեև Ես ամեն բան լցնում եմ առանց պարփակվելու նրանց սահմաններում, Ես կարող եմ այնուամենայնիվ բնակվել սահմանափակ հոգու մեջ, և դառնալ մարդկանց ճանաչելի՝ առանց կորցնելու Իմ վերանցական էությունը:

Նայի՛ր ինքդ քեզ, Իմ Վասուլա, և ասա՛ Ինձ. Ո՞րն է մարդու վերափոխման նշանը:

Կարծում եմ, որ շատ նշաններ կան:

Ճիշտ ես, երբ ասում ես, որ շատ նշաններ կան, բայց ո՞րն է ամենավեհ նշանը:

Սուրբ Պողոսի ասածից հետևում է, որ դա պետք է լինի աստվածային սերը մարդ էակի մեջ, որը ներմուծվում է այդ էակի մեջ Քո Սիրո մշտական հոսքի միջոցով, այդպիսով փոխակերպելով տվյալ հոգուն, որ առաջընթաց ունենա դեպի հոգևոր խորքերը, առաջնորդելով նրան, որպեսզի աճի իր սիրո մեջ և աստվածանա, հաղորդակից դառնա Քո աստվածությանը: Քո Սերը աստվածացնում է, և Սերը փոխակերպում է մեր չար պատկերը Քո Աստվածային Պատկերի...

Այո՛, Սուրբ Գրքերն ասում են, «Հառիր հայացքդ Յահվեին, և քո դեմքը կպայծառանա», որը նշանակում է. «Դուք կվերափոխվեք, կդառնաք Յահվեի նման»: Երբ մարդ ինքն իրեն[1] հանձնում է Աստծուն, տեղի է ունենում փոխակերպության այս ամենից տեսանելի նշանը: Դրանից հետո հետևում են այլ նշաններ՝ ուրախության, խաղաղության, սիրո աճման նշանները, և այդպես, սիրո միջոցով հոգին կարող է ձեռք բերել Սուրբ Երրորդության մասին Գիտությունը: Փոխակերպվող հոգին նման կլինի ներսից ու դրսից աստվածային սիրով և Աստծուն ճանաչելու ու հասկանալու Գիտությամբ փայլող մի ճրագի:

Ուրախ և ազատված աշխարհից ու նրա խավարից, այդ հոգին կթռչի դեպի Ինձ և կմնա Իմ Գրկում[2]: Բոցավառված սիրով, արբած Իմ Քաղցրությամբ, այդ հոգին ջերմեռանդորեն կձգտի ավելի խորը ներթափանցել Ամենասուրբ Երրորդության մեջ: Իսկ Ես՝ ամենից քնքուշ Փեսան, կշարունակեմ ավելի մոտեցնել այդ հոգուն Իմ Սրտի Սիրո

[1] կամքը
[2] Արտահայտություն, որ ցույց է տալիս մտերմությունը:

Բոցերին և պիտի մխրճեմ նրան Մեր մեջ, որ հանգստանա Մեր մեջ և կարողանա ղեկավարել Մեզ հետ:

Ուրեմն, ինչպե՞ս կարող է որևէ հոգի մերժել այն, ինչ Ես եմ առաջարկում: Ես մի անգամ ասել եմ, որ Դատաստանի Օրը յուրաքանչյուրը պիտի դատվի այն սիրո չափով, որը նրանք ունեցել են երկրի վրա եղած ժամանակ: Ի՞նչ ունես ասելու:

Ես կասեի.

«Ինչքան լավ բաներ ունես
Դու պահված նրանց համար,
ովքեր երկյուղում են Քեզնից,
և շնորհում ես նրանց, ովքեր
Քեզ դարձրել են իրենց ապաստանը,
որ ողջ մարդկությունը տեսնի...»:[1]

Իսկ Ես կասեմ նրանց, ովքեր դեռևս կապված են աշխարհին, որ եթե դուք ընտրեք Ինձ, անկեղծորեն, և մտադրվեք հաշտվել Ինձ հետ, երբ կանչեք Ինձ և դաք ու աղոթեք Ինձ, Ես պիտի լսեմ ձեզ: Երբ փնտրեք Ինձ, դուք պիտի գտնեք Ինձ: Ես իսկապես թույլ պիտի տամ, որ դուք գտնեք Ինձ, և Ես պիտի խոսեմ ձեզ հետ, իսկ դուք՝ Ինձ հետ, քանի որ Ես սիրել եմ ձեզ հավիտենական Սիրով, և դրա համար, Ես դեռ պահպանում եմ ձեր հանդեպ ունեցած Իմ հավատարիմ Սերը:

Ուրեմն, եկե՛ք, եկե՛ք և պատռեք այն քողը, որը բաժանում է ձեզ Ինձնից: Եկե՛ք և հայեք Սուրբ Սրբոցին, որ ձեզ տալու է հավիտենական կյանք:

Սեպտեմբերի 28, 2000

Քո Տաճարից, Տե՛ր իմ,
լսիր իմ ձայնը և թույլ տուր,
որ Ես լսեմ Քո Ձայնը:
Թող որ այս սերունդը
բացի իրենց ականջը,
որ լսի Քո Խոսքերը,
որոնք մեղրից էլ քաղցր են,
նույնիսկ մեղրախորսխից
կաթող մեղրից:
Դավիթն ասել է. «Քո ծառաները
ձևավորվում են Քո Խոսքերից...»:[2]

[1] Սաղմ. 30:20
[2] Սաղմ. 18:11-12

Եվ դա այդպես է, քանի որ, տե՛ս, ի՞նչ տեսաք դուք բոլորդ, ի՞նչ լսեցիք, ընտիր հասարակության մեջ քայլող մի՞ անձ, մի փիլիսոփա՞, կամ աստվածաբանական ակադեմիայի մի բարձրաստիճան անդա՞մ: Միթէ տեսել եք արքայական ծիրանի հագած, հարուստ և աշխարհի գիտության տիրապետող մեկի՞ն: Ո՛չ: Ուրեմն դուք, որ գնացիք լսելու, ի՞նչ լսեցիք: Մարդկանց կողմից տրված մի հեղինակությա՞ն: Ո՛հ, ո՛չ, քանի որ նրանք, ովքեր նստում են աթոռներին և կառավարում ձեզ, օծված չեն մարգարեության յուղով: Ուրեմն ի՞նչ լսեցիք այս տարիների ընթացքում:

Մի սրտի՞: Այո՛, ահա թե ինչ տեսնելու և լսելու եկաք: Իմ Խոսքերից ձևավորված մի սրտի, որ չի ենթարկվում և արհամարհում է չար ուժերին և Չարի տիրապետությանը, բայց բարձրացնում է Իմ Անունը գովաբանությամբ և փառքով, սփոփելով հուսալքվածներին ու վշտացածներին, սնելով քաղցածներին Իմ Խոսքերով: Դուք եկաք լսելու մի ներողամիտ ու զիջող սրտի՝ ձևավորված Իմ կողմից և Իմ Խոսքերով: Այո՛, Իմ ծառաները ձևավորվում են Իմ Խոսքերից, և մինչ օրս, Ես նստած եմ Իմ Գահի վրա՝ հրամայելով այդ քաղաքին, հրավիրելով բոլոր անցորդներին.

«Ո՞վ է որոշել կարգավորել իր կյանքը Իմ մեջ: Ո՞վ է որոշել ուղղվել և գալ ու բնակվել Իմ մեջ: Վա՜յ թույլ սրտերին, վա՜յ անտարբեր սրտերին, վա՜յ հպարտ և համառ սրտերին, նրանց մեղքի ծանրությունը նրանց կքաշի ցած՝ դեպի դժոխք: Այսօր նորից Ես գալիս եմ ձեզ մոտ, սեր ո՛ւնդ, որ ձևավորեմ ձեզ Իմ փրկարար Բառերով և օծեմ ձեզ, որ բարիք գործեք: Մի՛ մնացեք ինչպես մի չորացած ծառ, եկե՛ք Ինձ մոտ, և Ես կծաղկեցնեմ ձեզ, և ձեր պտուղը բարի կլինի: Եկե՛ք Ինձ մոտ, և երբ Ես դիպչեմ ձեր շուրթերին, ձեր շուրթերից բարություն պիտի կաթի, և դուք պիտի փրկվեք մահից»:

Յահվեն առաջնորդում է
մեր քայլերը,
այլապես, ինչպե՞ս կարող ես
ինքնուրույն տեսնել,
թե ուր ես գնում:
Յահվեի Գահը կարող է բարձրացվել
միայն բարության վրա,
Սուրբ Գրքերն են ասում այդ:

Եվ դա այդպես է... Ուրեմն մի՛ ասեք. «Ո՞ւմ իշխանությամբ է նա[1] եկել խոսելու մեզ հետ»: Ես եմ նրա Իշխանությունը, և այդ Իշխանությունը եկել է ասելու ծաղրողներին[2]. «Ես կարտաքսեմ ձեզ ձեր աթոռներից, բայց վեր կբարձրացնեմ խոնարհներին, որ նրանց դուրս ուղարկեմ և ավետարանեմ մի ապաքրիստոնեացված ժողովրդի»: Ես խորը չունչ

[1] Աստված ակնհայտորեն ինձ նկատի ունի...

[2] Աստված ինձ հասկացրեց, որ Նա նկատի ունի այն հովիվներին, ովքեր վարվում են ինչպես «Կայենը» և չեն արածեցնում իրենց վստահված ոչխարներին: Այդ նրանք են, ովքեր ոչխարի մորթի հագած գայլերի պես են: Նրանցից ոմանք ունեն բարձր պաշտոններ և հետապնդում են «Աբելներին» բարի և հավատարիմ հովիվներին և Նրա բոլոր Բարի Գործերին:

քաշեցի, հոգոց հանելով, երբ անցնում էի այդ ծաղրողների մոտով: Նրանց հոգում ամբողջապես եղինջ էր աճել: Երբ Ես նայում էի Խաղողի Այգուն[1], որն Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսն էր թողել նրանց[2], Ես մեկ այլ խորը հոգոց հանեցի. «Որտե՞ղ է ընտիր գինու, հարուստ և հյութառատ ուտելիքի, ընտիր զտված գինիների խրախճանքը: Մի՞թե սա այն վայրն է, ուր հազարավոր որթատունկեր կային»:

Ա՛խ, սերունդ, որքան եմ Ես խղճում քեզ: Աղքատությունը հասել է ձեզ վրա, իսկ կարիքը՝ ինչպես մի մուրացիկ[3]: «Մեղր կերեք[4], քանի որ այն լավ է: Մեղրը, որ կաթում է խորսխից, համեղ է քիմքի համար և կփրկի ձեզ», ասում եմ Ես: Բայց իրոք ոչ ոք չի լսում, միայն մի մնացորդ է ցանկանում լսել:

Մի Տուն կառուցվեց Իմաստության կողմից, գնված Թանկագին Արյամբ: Հանկարծ Սատանայի վրեժը բարձրացավ, որ ոչնչացնի Այն և նա ասաց. «Ո՞ւմ ուղարկեմ, որ կատարի ավերածության այս գործը: Դե՛, ես կուղարկեմ Գազանին ու նրա հետևորդներին, որ տապալեն ու բաժանեն, պղծեն ու ոչնչացնեն այն, ինչը ամենից Սուրբ է...»:

Երբ դժբախտությունը եկավ, Ես եկա փրկելու, բայց ոչ մեկը, Եկեղեցու ծառայողներից, իսկապես չլսեց: «Դա մի անձնական հայտնություն է միայն, կարիք չկա ականջ դնել դրան», ասում են նրանք:

Իմ Ձայնը թաքցնելը մահացու մեղք է: Ինձ նորից ու նորից մաղելը և Ինձ քննելը նողկալի մեղք է Իմ Աչքին: Արդյոք մի օր ձեր թերահավատությունը պիտի ասի՞. «Բայց տեսե՛ք, մենք չգիտեինք, մենք չգիտեինք, որ վիրավորել ենք Քո Ողորմությունը»: Իսկապես դուք վիրավորել եք Իմ Ողորմությունը: Դուք ոչ միայն վիրավորել եք Իմ Ողորմությունը, այլև թույլ եք տվել չար ուժերին առաջ շարժվել և թալանել այն Տունը, որն Իմ Որդին գնեց Իր Թանկագին Արյամբ, ձեր կասկածամտության պատճառով: Եվ ինչպիսի՜, ինչպիսի՜ հմտությամբ էիք դուք շրջանցում Իմ Խոսքերը, որպեսզի արդարացնեք ձեր թերահավատությունը:

Մի՞թե չեք հասկանում, որ դուք զբաղեցրել եք Իմ Աթոռը: Դուք հասկանո՞ւմ եք, որ դառնում եք ողջ մարդկային ցեղի թշնամին: Քանի որ խոչընդոտելով և Իմ մարգարեների միջոցով տրվող Իմ Խոսքերի արժեքը նվազեցնելով, դուք արգելում եք նրանց հայտարարելու Իմ Կամքը Իմ ժողովրդին, և հավաքելու ու միավորելու Իմ Որդու Տունը:

Ձե՞ք լսել. «Այնտեղ, ուր տեսողություն չկա, մարդիկ շեղվում են ճանապարհից Երանելի են նրանք, ովքեր պահում են Օրենքը[5]:

Ես աղոթում եմ նրա համար, ով կանչեց Քեզ. «Ես հուսահատվել եմ այն բոլոր չանքերից, որ թափեցի արևի տակ...»:

---

[1] Եկեղեցու խորհրդանշական անունը
[2] Պահապանները, որը նշանակում է՝ քահանաները:
[3] Առակ. 24:34
[4] Խորհրդանշական՝ Աստծո Խոսքը:
[5] Առակ. 29:18 «Տեսողությունը» հավանաբար մարգարեական պարգև է: «Պատվիրանը» մարգարեի ուսուցումն է, կամ Օրենքը...

Իսկ Ես ասում եմ նրան. «Դու իզուր չես աշխատել: Ես հաճույք չեմ ստանում այս բաժանումից, որ մի ծանր մեղք է, բայց միասնությունը քո հնարավորությունից այն կողմ չէ»: Շատ աղճատված խոսքեր դուրս պիտի գան շատ սրտերից, բայց մի՞թե միևնույն ժամանակ Ես չեմ կանչում ձեզ: Եթե հուսալքվես, շրջվիր դեպի Ինձ...

«Իմ ծառաները ձևավորվում են Իմ Խոսքերից», ասաց Իմ Հոգին Դավթին: Իսկ դուք նրանց պիտի ճանաչեք իրենց խոսքերից, և թե ինչ են նրանք ասում: Այս սերունդը տառապում է: Ուրեմն մի՞թե Ես չպետք է միջամտեմ այսպիսի ուրացության ժամանակ: Ավերիչը ամայացնում է Մեր Խաղողի Այգիները, ավերելով ու թալանելով Սուրբ Գրքերը, և դուք գիտեք այդ: Մի՞թե Ես չպետք է միջամտեմ: Նայի՛ր, Իմ Աբելները ողբում են անապատում: Իմ խաղաղության դեսպանները դառնորեն ողբում են ձեր սրտի կարծրության վրա, ինչպես Իմ Որդին դառնորեն ողբաց Երուսաղեմի սրտի կարծրության վրա, որ հալածում էր յուրաքանչյուր մարգարեի...

Մինչև ե՞րբ, Տե՛ր:

Մինչև սովորեն կանչել.

«Օրհնյալ է նա,
ով գալիս է Տիրոջ անունով»[1]:

Իսկ ինչ վերաբերում է քեզ, Վասուլա, Ես ասում եմ. Ես հրճվում եմ քեզնով, երբ դու հետևում ես և չես մոռանում Իմ Խոսքերը, որոնք ձևավորեցին քեզ, իսկ քո միջոցով՝ ուրիշներին: Աչքերդ բաց պահիր, որ տեսնես ու մտահայես Իմ անգնահատելի գանձերը և Իմ Խոսքերի հրաշալիքները: Ես ասել եմ, Իմ Վասուլա, որ Իմ Փառքի լույսի մասին խորհելը ամեն աստվածաբանությունից վեր է: Ինչու, մի՞թե աշխարհում ավելի մեծ բան կա, քան ներթափանցել ձեր Աստծո մեջ և ուրախանալ Նրա Ներկայության մեջ: Աշխարհում ավելի մեծ ի՞նչ կա, քան տեսնել Ինձ՝ Աստվածությանը: Նա, ով զգեստավորված է Վեհությամբ և Զորությամբ, խոսում է ձեզ հետ: Ես անցնում եմ սահմանները և թագավորում Փառքի բարձունքներում, ուստի այդտեղ է, որ ձեր աչքերը պետք է վեր բարձրանան մշտապես, և դուք կփրկվեք:

Ահա թե դու ինչ պետք է շարունակես սովորեցնել այս սերնդին: Գնա՛ և ասա Իմ գործերի մասին, որպեսզի այս սերունդը բացի իր սիրտը Ինձ համար, և որպեսզի Ես, Իմ հերթին, բացեմ նրա վրա առաքինության դարպասները: Կանչիր Եկեղեցին հսկող հովիվներին և հարցրու նրանց. «Արդյոք ձեզնից որևէ մեկը ճաշակե՞լ է մեր Տիրոջ քաղցրությունն ու բարությունը: Արդյոք կա՞ որևէ մեկը, որ գերազանցում է Աստծո իմացության մեջ»:

Եթե ասեք «այո՛» առաջին հարցին, և «ո՛չ» Իմ երկրորդ հարցին, ապա ուրեմն ինչո՞ւ եք դուք հալածում Ինձ: Ես աղաչեցի ձեզ, իսկ դուք դատապարտեցիք: Ես այցելեցի ձեզ, փայլեցնելով Իմ

[1] Մատթ. 23:39.

բարյացակամությունը ձեզ վրա, բայց ամբարտավանությունն ու թշնամանքը եղան ձեր ընծաները Ինձ: Ես բախեցի ձեր դուռը, բայց դուք չբացեցիք Ինձ համար և ստուգեցիք, որ ձեր պատուհանները նույնպես ձողերով ամրացված լինեն: Դուք տեղ չտվեցիք ձեր Տիրոջը: Արդյոք ես պե՞տք է հիմա գովաբանեմ ձեր ճառերը և ձեր խոսքերի հեղեղը ուղղված Ինձ Իմ Հավաքույթներում: Քանի որ այդ բոլոր խոսքերը անբովանդակ են իրենց դատարկությամբ: Ի՞նչ նպատակի եք դուք ծառայում: Խոնարհեցրեք ինքներդ ձեզ, նախքան ձեր հիվանդանալը: Թույլ տվեք, որ Իմ խոսքերը լինեն ձեր դաստիարակը, ձեր խորհրդատուն և ձեր ուրախությունը: Եվ դուք կապրեք...

Հոկտեմբերի 16, 2000

Տերը բարի է,
քանի որ Նա սովորցրեց ինձ:
Նա հայտնի է նրանով,
որ սովորեցնում է և ուսուցանում
աղքատներին և թշվառներին:

Իմ Հայրը, քո Հայրը,
զգեստավորված է
Զորությամբ և Վսեմությամբ:
Եկեք մեկ ձայնով
գովաբանենք Նրան և կատարենք
այն խոստումները, որոնք ես և դուք
տվեցինք Ամենաբարձրյալին:

Եկեք հղենք
մեր պոեմը Թագավորին:
Բայց որքան եմ ես վախենում լսել.
«Դու ներկա եղե՞լ ես
Իմ Խորհրդին»:

Մի՛ վախեցիր, Ես քեզ դուրս հանեցի գետնի տակից, Ես քեզ հանեցի քո թաղված տեղից և ասացի.

«Դու խաղաղություն կունենաս,
դավա՛կս»:

Երգիպտոսի երկրից Ես հանեցի մարգարեներ և սրբեր: Օրհնյալ լինի Եգիպտոսի հողը, թող նրա սաղարթները մնան կանաչ և Նեղոս գետի մոտ աճող ծառերը բարգավաճեն ու շարունակեն պտուղ տալ, որ կերակրեն նրա ժողովրդին: Մի փառավոր դահ է դրվել ամեն մի տեղ, որտեղով Կույս Մարիամը՝ Իմ Մայրը, Արդար Հովսեփը ու Ես անցել ենք:

«Եգիպտո՛ս, Մենք քայլեցինք քո հողի վրա, և մինչ անցնում էինք, խունկը բարձրացավ երկինք: Ձե՞ս կարդացել Սուրբ Գրքերը.

«Դեսպաններ
պիտի դան Եգիպտոսից»[1]:

Դե, մի՞թե չգիտեիր, որ Ես քեզ նույնպես օծել եմ[2]: Որքան բարձր է երկինքը երկրից, նույնքան մեծ է քո Հանդեպ ունեցած Իմ Սերը: Թող քո հողը շարունակի սնունդ տալ և քեզ զվարթ պահի»:

Դու հարցրեցիր, Վասո՛ւլա, թե արդյոք Ես ամբողջապես քո մե՞ջ եմ, Ես՝ Վերանցական Աստվածս: Ես, սիրելիս, Իմ նշաններն ու հրաշքները ցուցադրել եմ նրա մեջ, ում Ես շնորհ եմ արել, և օծել եմ քեզ Իմ լիառատ Սիրով: Արբած քո թուլությամբ Ես պահեցի քեզ Իմ Ձեռքերում, մինչ Յուղը, որը կաթում էր ինչպես զտված զմուռս, ամբողջապես թափվեց քեզ վրա՝ ծածկելով քո գլուխը օծված զմուռսի կաթիլներով, ստանալով չափյուղաների տեսք, որպեսզի ներկայացնեմ քեզ Հորը, որ, երբ Նա տեսնի Իր Որդու բոլոր նշանները քեզ վրա, օրհնի քեզ[3] և խոսի քեզ հետ: Իմ ծայրահեղ վեհանձնությամբ, Ես քեզ վրա շնչեցի Իմ բույրը, որպեսզի դու տարածես նրա քաղցր բուրմունքը շուրջբոլորդ: Հետո, քո թշնամիները, ովքեր Լյուցիֆերի *(Արուսյակի)* և Սատանայի կողմից ղեկավարվող խավարի ուժերն են, և ովքեր հակադրվում են Իմ Աստվածայնությանը, կիմանան, որ դու մի Վկա ունես Երկնքում և մի Պաշտպան Բարձունքներում, որը քեզ կպաշտպանի, մինչև դու ավարտես քո առաքելությունը:

Մի՞թե այս ամենը քեզ չափից դուրս է թվում: Ինչու, ոչ ոք չկա Ինձ հավասար: Ես սոսկ գրքի մի գալար չեմ: Իմ Վասուլա, Ես սոսկ տպված մի նյութ չեմ: Դու որքան վստահության պակաս ունես, կարծես դու փչեր ես ստացել քո ձեռքերի մեջ և ոչ թե օրհնություններ[4]:

Թող քո թշնամիներն իրենց չարության մեջ իրենց սպառնալիքները արձակեն քեզ վրա, Ինձ վրա, Իմ Աստվածայնության վրա: Թող անեն: Դրանցից ոչ մեկին թույլ չի տրվի հաղթել քեզ, ո՛չ մեկին: Եվ սա ասում է քո Աստվածը՝ Ամենաբարձրյալը: Թող թերահավատները, բանապաշտ մտածողները՝ քո ժամանակի փարիսեցիները, ովքեր մինչ օրս երբեք չփորձեցին տեսնել Ինձ Իմ Վերանցական Լույսի և Իմ Փառքի մեջ, վերցնեն իրենց գիտելիքներն ու խորաթափանցությունը Իմ Բերանից, քանի որ Ես շարունակում եմ նորոգել Իմ Արարչությանը... Բայց սա մոռացվել է, և Ես մեռած եմ նրանց սրտերում:

---

[1] Սաղմ. 67:31

[2] Տերն ինձ հասկացրեց, որ Եգիպտոսը նույնպես, ինչպես Սուրբ Երկիրը, պետք է Սուրբ համարվի: Տերն ինձ հասկացրեց, որ Եգիպտոսը պաշտպանել էր Սուրբ Ընտանիքին, երբ Նրանք փախել էին այնտեղ: Եգիպտոսը կերակրել և ըմպելիք էր տվել Նրանց, բայց մանավանդ պաշտպանել էր Նրանց, իսկ Աստված երբեք չի մոռանում բարի արարքը:

[3] Դա ինձ հիշեցրեց Հակոբի օրհնությունը (Ծննդոց 27):

[4] Այդ օրը հանկարծ ես համակվեցի ծանր կասկածներով իմ ծայրահեղ թուլության մեջ: Տերն ինձ հետ խոսում էր համբերատարությամբ, ինչպես կխոսեին ընկճված երեխայի հետ:

Ես ասում եմ ձեզ[1]. «Ձեռք մի՛ տվեք Իմ օծյալներին, մի՛ վնասեք Իմ մարգարեներին»[2]: Իսկ քե՛զ, Վասուլա, որ վախենում ես, որ երբ կանգնես Իմ դիմաց, քեզ հարցնեմ. «Արդյոք դու նե՞րկա ես եղել Իմ Խորհրդին», լսի՛ր. մի՞թե Խորաթափանցությունը չլուսավորեց քո աչքերը: Մի՞թե Իմաստությունը չչչնչաց Իր դիտությունը քո մտքի մեջ այս ամբողջ օծյալ տարիների ընթացքում: Քո ոչնչության և թշվառության համար Ես՝ Իմ արարչության Փեսան, խոնարհվեցի մինչև քեզ. անդրադետ[3] զավակ էիր դու Իմ Խոսքի հանդեպ: Ձկրթված ու անխոհեմ էիր դու աստվածային խոսքերի հանդեպ, բայց այնուամենայնիվ, այդ ամբողջ տիղմի տակ զննելով քեզ, Ես տեսնում էի մի ազնիվ կայծ Իմ Սուրբ Անվան համար:

Իսկ հիմա Ես հիշեցնում եմ քեզ. Ո՞վ կրթեց ու դաստիարակեց քեզ: Մի՞թե Իմաստությունը չէր: Մի՞թե Նա չէր քո դաստիարակը: Եվ Ո՞վ առաջնորդեց քեզ, որ քայլես միայն շափյուղաների[4] վրայով: Մի՞թե Իմաստությունը չէր: Եվ Ո՞վ պարուրեց քեզ, որ ճախրես երկնքում: Մի՞թե Իմաստությունը չէր: Մի՞թե Ես քեզ չեմ կանխասացել, թե Իմ Պատգամների միջոցով Ես ինչպես պետք է հիմնեի Իմ Թագավորությունը յուրաքանչյուր սրտում: Եվ որ Իմ Սուրբ Հոգու միջոցով Ես պիտի ուսուցանեմ այդ սրտերին, որ դարձնեմ նրանց ձեր ժամանակների առաքյալները:

Իմ Սուրբ Սրտի զավակ, ում Ես ներհյուսեցի Իմ մեջ, «ella[5], mi me fovasse, alla min amfivoliss... se thialexa yia to ergho mou... affisse tis amfivolies sou, ella...»[6]:

Գրի՛ր. Ինչպես Ես ասել եմ, Ես պիտի հաստատեմ Իմ Թագավորությունը յուրաքանչյուր սրտում, որը կբացվի Իմ Խոսքի հանդեպ: Մի՛ վախեցիր այն վիրավորանքներից, որոնք մահկանացու մարդիկ օգտագործում են քեզ վրա հարձակվելու համար: Մի՛ վախեցիր կեղեքիչի կատաղությունից: Ես դրոշմել եմ Իմ Խոսքերը քո սրտի վրա և թույլ եմ տվել, որ քո շրթունքների վրա հոսեն զմուռսի կաթիլներ, որպեսզի նրանք բացվեն շնորհով խաղաղություն ազդարարելու և բերելու միասնություն Իմ որդիների ու դուստրերի սրտերում: Թող հպարտները ապշեն քո հաստատակամության վրա, որը Իմ Հոգու կողմից տրված է նրանց, ովքեր հալածվում են հանուն Ինձ, և թող որ նրանք խուսափեն քեզ հանդիպելուց, ինչպես որ անում են[7]: Երբ Իմ Օրը դա, Ես՝ Իմ հերթին, կխուսափեմ նրանցից: Մինչ նրանք կոպտորեն են վարվում քեզ հետ՝ դարան մտած քո շուրջը, կրիր այդ կոպտությունը խոնարհաբար և արժանապատվությամբ, քանի որ այդ մեծամիտ մարդկանց միջոցով դու պիտի ստանաս քո պարգևը երկնքում... Քո

[1] Տերը դիմում է թերահավատներին:
[2] Սաղմ. 104:15
[3] Տերն անգլերեն «անդրադետ» բառի փոխարեն օգտագործեց Ֆրանսերեն բառը, քանի որ Իրեն այդպես էր հաճելի:
[4] Այստեղ *շափյուղաները* նշանակում են *արժանիքներ*:
[5] Հունարենով
[6] Թարգմանությունը՝ «Արի՛, մի՛ վախեցիր Ինձնից, բայց մի՛ կասկածիր... Ես ընտրել եմ քեզ Իմ Գործի համար... Թո՛ղ քո կասկածները, արի՛...»:
[7] Որոշ եպիսկոպոսներ, երբ նրանց խնդրում էին հանդիպել Ինձ, ուղղակի մոլեգնում էին հենց որ լսում էին իմ անունը:

տառապանքներով դու հոգիներ ես բարձրացնում իրենց քնից, կամ՝ նրանց, ովքեր հրապուրվել են աշխարհով:

Ես ցույց կտամ քեզ Իմ Սրտի հնոցը: Ես պիտի շարունակեմ ուսուցանել քեզ Իմաստության գիտությամբ և պիտի օրհնեմ քո քայլերը այն ժամանակ, երբ դու կքայլես Ինձ հետ: Մինչ դու քայլում ես միասնության ճանապարհով, Իմ հարս, ամուր կառչիր քո Փեսայից, և Ես կհաղթեմ վերջում:

(Աստված մոտ է քեզ և սիրում է քեզ: Ես եմ:)

(Այս հատվածը «տեքստից դուրս է»: Հայր Գերհարդ Վենսելի խնդրանքով ես բացեցի նոթատետրի այս էջը, որովհետև նա նկարահանում էր որոշակի հեռավորությունից: Նա ցանկանում էր այնպես ներկայացնել, ասես ես թելադրանքի տակ էի, երբ հանկարծ Տերը եկավ և ասաց, բռնելով իմ ձեռքը. «Աստված մոտ է քեզ և սիրում է քեզ: Ես եմ»: *Վերևի պատգամը դեռևս չէր ավարտվել, այլ պետք է շարունակվեր):*

Ես Գերագույն Քահանայապետն եմ Իմ ամբողջ Տան վրա, այն Տան, որը մարդիկ անխղճորեն բաժանեցին իրենց սիրո պակասի պատճառով: Ուրեմն, մի՞թե Ես պետք է շարունակեմ տեսնել Իմ Տունը բաժանված, և այսպիսի ըմբոստության մեջ, ու չմիջամտեմ: Ի՞նչ են նրանք[1] դավանում: Ո՞ւմ անունով են նրանք դավանում իրենց հավատը: Ես խոնարհում եմ Իմ Աչքերը, որ չտեսնեմ նրանց, թե ինչպես են նրանք Ինձ բարձրացնում իրենց ձեռքերում առանց հավատի, առանց սրբության: Սակայն, հանուն նրանց, ովքեր հավատարիմ են Ինձ, Ես իջնում եմ նրանց ձեռքերի մեջ: Իմ Սուրբ Հաղորդությանը ավելի ու ավելի քիչ կարևորություն է տրվում:

Ես՝ Վսեմ Թագավորը, Մեծությունը՝ բոլոր մեծություններից վեր, Գերիշխանը՝ բոլոր գերիշխաններից վեր, կանչում եմ ձեզ չնորհի միջոցով ճաշակելու այս անգամ կենդանի Մանանան, Երկնքի Հացը, Սուրբ Հաղորդության ձևով: Եվ հետևաբար Ես ասում եմ այն եկեղեցիներին, որոնց կրոնավորները չեն ընդունել Իմ Խորհուրդը.

«Ուշքի եկեք և փնտրեք Ինձ լրջորեն, հաղթահարեք նաև Իմ Մոր հանդեպ ձեր ունեցած վրդովմունքը: Թող յուրաքանչյուր ցեղ իմանա, որ Իմ Մարմինն ու Արյունը գալիս են Իմ Մորից: Այո՛, Իմ Մարմինը գալիս է Ամենասուրբ Կույսից, մաքուր արյունից: Օրհնյա՛լ լինի Նրա Անունը:

«Երկրի վրա բոլոր խոնարհներին փրկելու համար, ովքեր ընդունում են Ինձ, և նրանց մշտնջենական կյանք տալու համար, Ես դարձա Հաց, որ Ինքս Ինձ ձեզ տամ: Եվ այս Հաղորդության միջոցով Ես սրբացնում եմ բոլորին, ովքեր ստանում են Ինձ, սրբագործելով նրանց, որ դառնան մարմինը Իմ Մարմնի, ոսկորն Իմ Ոսկրի: Ինձ ճաշակելով, Ես, որ Աստվածային եմ, դուք և Ես դառնում ենք մեկ մարմին՝ հոգևորապես միացած: Մենք դառնում ենք հարազատներ, քանի որ Ես կարող եմ ձեզ դարձնել աստվածներ՝ մանանակից դարձնելով Իմ Աստվածությանը: Իմ Աստվածայնության միջոցով Ես աստվածացնում եմ մարդկանց»:

[1] Նրանք, ովքեր դեռևս չեն հասկացել, որ իրենք պետք է խոնարհվեն հեզությամբ ու սիրով, որպեսզի միավորվեն:

Մի՞թե չեք լսել. «Դուք նույնպես աստվածներ եք, Ամենաբարձրյալի որդիներ, դուք բոլորդ»[1]: Հիմա Ես դատվում եմ մարդկանց կողմից: Այն Զգեստը[2], որը կարող է ծածկել ձեզ՝ զարդարելով ձեզ վսեմորեն, կերպարանափոխելով ձեզ, աստվածացնելով ձեզ, մերժվում է այն եկեղեցիների կողմից, որոնք չեն կարողանում հասկանալ Իմ Խորհուրդը:

Այսօր նորից Ես կանչում եմ Երկնքից. «Եղբայրնե՛ր, ինչո՞ւ եք դուք քանդում Իմ Աստվածությունը: Եթե պնդում եք, որ դուք նրանք եք, ովքեր գիտեն, թե ինչն է ճիշտ, ուրեմն ինչո՞ւ է ձեր հոգին կողոպտում Իմ Եկեղեցին: Ես ձեզ հրավիրում եմ թագավորել Ինձ հետ, Ես ձեզ հրավիրում եմ կառավարել Ինձ հետ, Ես ձեզ հրավիրում եմ Պատարագ մատուցել և մասնակցել Աստվածային Խորհրդին այն ձևով, որը Ես ճշմարտապես հաստատել եմ»:

Իսկ եթե նրանք չլսե՞ն:

Ամբարտավաններն անվերջ կծաղրեն Ինձ, բայց դա այն պատճառով է, որ նրանք չեղվել են Իմ Լույսից: Ես ներկա եմ Իմ Հաղորդության մեջ, բայց մինչև նրանք չտեսնեն Իմ Աստվածությունը հոգևոր աչքերով, նրանք պիտի շարունակեն լինել կիսաքուն մարդու պես, որը երբեք ոչինչ չի հասկանում այն ամենից, ինչ ասում են իրեն: «Ինչ ասացի՞ր: Դու ինձ հե՞տ էիր խոսում: Չը՞», կհարցնի նա:

Այդ եկեղեցիները վեհապանծ ու փառավոր են հռչակում Ինձ: Նրանք հաստատում են Իմ հզորությունը, հռչակելով Իմ սարսափելի զորությունը, Ինձ ուղղելով իրենց գովերգերը, ճանաչելով Իմ Ամենակարողությունը և Իմ հզոր հրաշքները, բայց Ես դառնում եմ գայթակղության մի քար, երբ հարցը վերաբերում է Իմ Աստվածության մեծությունը չափելուն և Հաղորդության մեջ Իմ Ներկայությանը: Այսօր սա գայթակղության քարն է, որը մերժվում է կառուցողների կողմից, և նրանք չեն հասկանում, որ դա անկյունաքարն է:

Իսկ դո՛ւ, աղջիկս, շարունակիր հռչակել Ինձ որպես քո միակ Սերը, և ասա՛ քո եղբայրներին ու քույրերին այս խոսքերը. «Տերը բարի է, քանի որ Նա ուսուցանել է ինձ: Նա հայտնի է նրանով, որ սովորեցնում և ուսուցանում է աղքատներին ու թշվառներին...»:

Քնքուշ աղջիկ, Ես քեզ հետ մի բան պիտի կիսեմ: Շուտով Ես թույլ պիտի տամ, որ վիշապն ուտի իր սեփական պոչը, Ես շուտով հրամաններ պիտի արձակեմ երկնքից: Ես մտադիր եմ վերականգնել Իմ Տունը: Ես պիտի վերականգնեմ Իմ Հաղորդությունը այն տներում[3], որոնք զրկված են Իմ Ներկայությունից, և նրանք պիտի դառնան սուրբ: Դու[4] կողոպտված ես եղել Իմ Գերիշխանությունից, հիմնահատակ ավերվել Վիշապի կողմից, սակայն Ես ասում եմ քեզ, Ես ասում եմ ձեզ բոլորիդ. Իմ Հոգին դուրս պիտի հեղվի երկրի վրա, որ ողողի նրան երկնքի ցողով, և երկրի խոտը ավելի կանաչ պիտի լինի, և ծառերը պիտի ծաղկեն ու

[1] Սաղմ. 81:6
[2] Քրիստոսի խորհրդանշական անունը
[3] Տերը նկատի ունի եկեղեցիները:
[4] Տերը նկատի ունի եկեղեցին:

նրանց սաղարթը գեղեցիկ պիտի լինի, իսկ նրանց պտուղը՝ առատ, այո՛, առատ, սպասիր և կտեսնես:

[1]«Ո՞վ է քեզ ասում, որ դու ընդմիշտ մնալու ես: Դու բավական երկար ճախրեցիր արծվի նման, դնելով քո բույնը և խայթոցը աստղերի մեջ[2]: Հիմա արի և կռվիր Իմ դեմ: Դու Աբելի դեմ չես կանգնելու: Ես ցած պիտի չպրտեմ քո դաշույնը: Դու թալանել ես Իմ Տունը, և դու գողացել ես Նրա միջից Այն, ինչ Ամենաթանկագինն է: Դու գողացել ես որքան որ սիրտդ ցանկացել է: Դու ներս ես մտել Իմ ժողովրդի դարպասից և կուրացրել ես նրանց: Բայց հիմա քո ժամանակն ավարտվել է, չնայած դու դեռևս հավատում ես, որ կարող ես երկարացնել քո խավարի թագավորությունը՝ մոլորեցնելու Իմ ժողովրդին: Այլևս այդպես չի լինի: Արդարությունը պատրաստ է հոսելու ջրի նման, իսկ Իմ Հոգին՝ անսպառ գետի նման...»:

Մոտ է ժամանակը, երբ մարդիկ բացականչելու են. «Ա՜խ, ժամանակներն այնքան լավ են հիմա...» Արի՛, Ես քեզ հանդիստ կտամ, որ նոր ուժ հավաքես: Գործադրի՛ր Իմ պատգամները և հետևիր այն ճանապարհին, որը Ես եմ նախագծել քեզ համար... ic:

Հոկտեմբերի 31, 2000

Բոլոր նրանց, ովքեր սիրում են Քո Սիրտը, առիթ տուր նրանց որ միշտ ասեն.

«Տիրոջ Սիրտը վերջում կհաղթի:
Տիրոջ Սիրտը նման է
մի աստվածային Պատարագի,
որ խաղաղություն է բերում
Իր ժողովրդին:
Տիրոջ Սիրտն անսասան է՝
թագավորելով բարձունքներում
վերանցական:
Եկե՛ք, եկե՛ք դուք բոլորդ,
որ դեռևս տատանվում եք
արդարություն գործելու համար,
եկե՛ք մեր Տիրոջ մոտ,
և դուք կծաղկեք Նրա Սրտում:
Մտածեք այս մասին և իմացեք, որ
ձեր ապաստանը Նրա Սրտում է...»:

Խաղաղություն քեզ, ծաղի՛կս:

Ասա՛ Ինձ, կա՞ երկրի վրա ավելի մեծ ուրախություն կամ փառք, քան Իմ Սիրտը հասկանալը: Ի՞նչ կարողություն ունի մարդ, եթե Ես նրա մտքի մեջ չհեղեմ հասկացողության Իմ աստվածային լույսը: Սուրբը, որ խոսում է քեզ հետ և որ գերազանցում է ամեն ինչ, բավարարում է քո

[1] Հանկարծ Տերը շրջվեց դեպի հարը (վիշապը) և ասաց այս բառերը:
[2] Միևնույն ժամանակ ես լսեցի «հավատարիմ» բառը:

ծարավը Իր Ջայնի մեղեդիով, որ փոխանցես Իմ աստվածային Խոսքերը բոլոր ազգերին: Ի՞նչ են Իմ Խոսքերը: Իմ Խոսքերը խորհրդավոր ներհայեցողություն են, որ լուսավորեն ձեր միտքը Սուրբ Հոգու միջոցով, ներթափանցելով Աստծո վեհ իմացության մեջ:

Շուտով Ես պիտի այցելեմ երկիր: Գերիշխանը, Նա, որին ձեզանից շատերը մոռացել են, ասում է ձեզ, սերունդ. Ես տեղ պիտի գրավեմ երկրի վրա: Ձեզանից շատերն են հարցնում. «Ինչպե՞ս է Նա գալու»: Դրան Ես կպատասխանեմ.

«Մի՞թե չգիտեք, որ ժամանակների սկզբից ի վեր, երբ մարդը դրվեց երկրի վրա, չարի հաղթանակը միշտ էլ կարճ է եղել: Չարի հաղթանակը գրեթե ավարտին է հասնում հիմա, որովհետև այն կուլ պիտի գնա Իմ Հաղթանակին: Ճիշտ ինչպես Ահարոնի գավազանը, որը Ես վերածեցի օձի, և որը կուլ տվեց փարավոնի օձերին, այդ նույն ձևով էլ Իմ Հաղթանակը պիտի հարվածի, և կուլ տա չար մարդկանց հաղթանակը: Այնպես, որ այդ Հաղթության մեջ դուք բոլորդ պիտի փառաբանեք Իմ Սուրբ Անունը:

«Հետո Ես կլինեմ Իմ ժողովրդի մեջ... Եվ դուք պիտի ճամփորդեք Ինձ հետ՝ ձեր Աստծո հետ. դուք պիտի քայլեք Ինձ հետ: Դուք պիտի քայլեք Նրա հետ, որին մի ժամանակ անհասանելի էիք կարծում... Դուք պիտի խոսեք[1] Նրա հետ, որին մի ժամանակ դուրս էիք հանել ձեր մտքից: Դուք պիտի զրուցեք Իմ Աստվածայնության հետ, քանի որ Ես՝ Աստվածությունը, ներկա պիտի լինեմ ձեր սրտում, ինչպես մի բարի խորհրդատու, հայտնելով ձեզ Կյանքի ճանապարհը: Ես ձեր հոգուն պիտի տամ ժուժկալություն, խոհեմություն և արդարություն, տոկունություն և այն ամենը, ինչով զգեստավորվելու կարիք ունի հոգին՝ Իմ հրեշտակների մեջ և Ինձ հետ քայլելու համար: Հետո Իմ Թագավորությունը երկրի վրա պիտի վերականգնվի[2]:

«Այո՛, հնարավոր է, որ դուք այս կյանքում նույնպես տեսնեք Աստծուն: Հնարավոր է ներհայեցողությամբ տեսնել Ինձ դեռևս երկրի վրա: Այո՛, դուք կարող եք ներթափանցել Իմ՝ ձեր Աստծո, ձեր ամեն ինչի խորքերը, և տիրապետել Ինձ դեռևս երկրի վրա:

«Սա պիտի լինի ձեր նոր կյանքի[3] սկիզբը, քանի որ դուք Ինձ չեք ճանաչի միայն լուրերի միջոցով կամ խոսքերով ու գրքերով, այլ ճշմարտությամբ և Սուրբ Հոգու կողմից ձեզ տրված զղջման շնորհի միջոցով: Ինձ տեսնելը ինքնին կյանք է, քանի որ այն տալիս է ձեզ անմահություն... Այս կերպ Ես պիտի այցելեմ երկիր, զավակներս:

«Հիմա հասկացա՞ք Իմ Խորհուրդը»: ІС:

Դեկտեմբերի 31, 2000

Քրիստոսը Թագավոր է:
Թող արոտավայրերը

---

[1] Միևնույն ժամանակ ես լսեցի «զրուցել» բառը:
[2] «Հայր մեր» աղոթքի այս տողը՝ «Թող Քո Արքայությունը գա, Քո Կամքը լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է» բացատրում է Քրիստոսի ասած նախադասությունը «Հետո Իմ Թագավորությունը երկրի վրա կվերականգնվի...»:
[3] Ես լսեցի նաև «ճամփորդություն» բառը:

կանաչեն և ցնծան,
թող անտառի բոլոր ծառերը
բացականչեն ուրախությամբ,
քանի որ Աստծո Խոսքը
մեկ անգամ ևս ուղղվում է մեզ:
Նա բացում է Իր Բերանը,
և երբ Նա անում է այդ,
մի Լույսի հեղեղ է հոսում մեզ վրա,
ամբողջովին շողերի պես
զարդարելով մեզ:
Նրա Լույսն այնպես է,
որ Իր ողջ Սուրբ Դեմքը ծածկված է,
կարծես Նա Իր վրա գցել է
մի արծաթե քող:

Հետո մի բառ[1] է արտասանվում
արքայական շնորհով և վեհությամբ,
բայց միևնույն ժամանակ,
մի մելամաղձոտ հոգոցով:
Բոլոր արարածները, եթե
բացեին իրենց հոգևոր ականջները,
և լսեին մեր Թագավորի հոգոցը,
կխոնարհեին իրենց ծնկերը,
բացի այն դեպքում, եթե նրանք
իրենց վատնեին չարին հետևելով...

Աստծո տաճարներ[2], ես գննում եմ ձեր պատերը, և ես գոհ չեմ, քանի որ դուք հակված եք թեթևորեն ընդունելու Իմ Խոսքերը...

Ես ուղարկեցի Իմ Հրեշտակին, որ ստուգի Իմ տաճարները և քայլի նրանց շուրջը: Ես ուղարկեցի նրան, որ ստուգի Իմ պալատները, և այն, ինչ նա տեսավ, սարսափելի էր... Ձեր պատերը կորցրել են իրենց պայծառությունը, և փղոսկրյա պալատներից, որն արժանավոր բնակավայր էր ձեր Թագավորի համար, ձեր պատերը հիմա դարձել են ավերակ, քանի որ դուք դադարել եք կանչել Իմ Սուրբ Հոգուն, որի զուլալ վտակները թարմացնում են ձեզ, սրբագործելով Իմ բնակավայրը:

Ձեր պատերի ներսում, Իմ մտադրությունն էր գանձերով[3] լցնել ձեզ և հրաշքներ կատարել նրանց ներսում, որպեսզի հաստատեի նրանց մեջ Իմ Էության ամբողջական լիությունը: Իմ բարի մտադրությունն էր ամբողջ սրտով հեղել Ինքս Ինձ ձեր մեջ և աստվածացնել ձեզ: Դուք հասկանո՞ւմ եք Իմ մտադրությունները: Ես, ոչ միայն Իմ Եկեղեցու, այլև Իմ ողջ արարչության Աստվածությունը, փափագում եմ Ինքս Ինձ ձեզ տալ: Իմ կենարար մուտքը ձեր մեջ աննկատելի չի լինելու: Մի Կենսատու Աղբյուր կբխի շատրվանի պես ձեր այնքան խղճալի պատերի ներսում, և

[1] Արտասանված բառն է՝ «**Ես եմ**»: Տերը թույլ չտվեց, որ ես այն գրեմ իմ ձևով, այլ բռնեց ձեռքս:
[2] Այստեղ Տերը դիմում է Իր ժողովրդին, Նա խոսում է փոխաբերական իմաստով:
[3] Ես գիտեի, որ այս բառը նշանակում էր «առաքինություններ»:

մինչ դուք կվերակենդանանաք, դուք կբացականչեք երգելով և ուրախությամբ.

«Ողորմած և սիրառատ Աստված, որի Մեծությունը փառավորվում է Իր ողջ արարչության մեջ, լցրել է ինձ հարության լույսով: Օրհնյալ լինի Նրա Սուրբ Անունը: Իմ Եռանձն Աստված փայլեց իմ մեջ:

Իր ողջ արարչության Փեսան ողորմածաբար ներս մտավ իմ մեջ, որ պարուրի ինձ խորհրդավոր ուսուցումներով, որոնք դուրս են գալիս ուղղակի Նրա Բերանից, ողողելով հոգիս Իմաստության Լույսով և Նրա Ուսուցումներով: Նա եկավ վեհաշուք Փառքով, որ հիշեցնի Իր ժողովրդին փրկության զորությունը իրենց մեղքերի թողության միջոցով: Եվ սա Նա անում է Իր Սրտի Անսահման Ողորմության շնորհիվ»:

Ո՜հ, այո՛, Իմ բոլոր ճանապարհները շնորհ և ճշմարտություն են... Եվ Իմ Բերանից Ճշմարտությունն է հռչակվում: Ոչինչ խեղաթյուրված չէ Իմ խոսքերում, ոչինչ սուտ չէ, այլ վեհությամբ և զորությամբ են նրանք հանդերձավորված, ինչպես նաև ազնվությամբ: Արթնացե՛ք, տաճարներ[1]: Ինչո՞ւ եք քնած: Ձեր Աստվածը վսեմությամբ և պայծառությամբ ձեր առջև է հրավիրելով ձեզ: Ես թագավորում եմ գերագույն հեղինակությամբ և ձեր առջևում եմ, որպեսզի առաջարկեմ ձեզ Իմ անհամար Գանձերը: Օգուտը ձերը կլինի:

Տեսե՛ք, Արշալույսը[2] պիտի գար, բայց Ինձ այնպես է թվում, որ դուք հաշվի չառաք Իմ առաջարկը: Ես չլսեցի նաև գովաբանություններ Իմ գթառատ արարքի համար: Դուք չեք հասունացել, սերո՛ւնդ, իսկ եթե հավատում եք, թե հասունացել եք, դուք չեք հասունացել Իմ Գավիթներում, դուք դաստիարակվել եք այլ հիմքերի վրա: Իմ Ձեռքերին անհաշիվ հարստություն կա, որոնք Ես փոխանցում եմ առանց վերապահման, սակայն, դրանք ստանալուց հետո, ձեզանից շատերը փոխում են դրանք, մյուսները փոխանակում մի կեղծ ընդնօրինակման հետ[3], չեղվելով ճշմարտությունից:

Իմ Ազնիվ ու Վսեմ Թեմայի սկզբում[4], Իմ Հայրը մեծ տհաճությամբ նայում էր երկրին, որը խառնաչփոթ վիճակում էր, և ասաց. «Դժվարահաճ[5] ես դու դարձել, սերո՛ւնդ...»: Այսօր Ես ասում եմ. «Դուք չեք հասունացել Իմ մեջ, հազիվ աճած, ձեր ճյուղերը ճայթում ու կոտրվում են: Ձեր պտուղն անօգուտ է, խակ և թթու, ոչ մի բանի պիտանի չէ: Դավաճանությունը հրապուրել է ձեր հիմարությանը...»: Արշալույսը[6] ձեզ հետ էր, բայց դուք թեթևամտորեն ընդունեցիք այն, ինչ սուրբ է: Զարի հմայքը ստվերի տակ է գցում լավ ու բարի բաները, իսկ ցանկության հողմապտույտը փչացնում է պարզ սիրտը:

---

[1] «Հոգիներ»՝ փոխաբերական իմաստով:
[2] Արշալույսը՝ նշանակում է *Ողորմություն*:
[3] Տերը բացատրում է, թե ինչպես ոմանք, ովքեր դարձի էին եկել Իր Պատգամի շնորհիվ, չեղվել էին իրենց հոգևոր տհասության պատճառով՝ հետևելով ուրիշ կեղծ պատգամների, դրանք ընդունելով որպես իրական պատգամներ:
[4] այս Պատգամները
[5] *Դժվարահաճ*՝ նշանակում է ոչ հեշտությամբ գոհացող, և արագ՝ թերություններ գտնելու մեջ:
[6] Նշանակում է Ողորմություն:

Երբևէ ձեր գլուխը մտե՞լ է, չա՛ր սերունդ, որ շնորհն ու ողորմությունը սպասում են Տիրոջ ընտրյալներին: Երբևէ հասկացե՞լ եք, որ Ես կանչել եմ ձեզ: Արդյոք Իմ օծյալ խոսքերն անցե՞լ են վաղանցուկ լուրերի պես: Արդյոք Իմ Ներկայությունն անցել է ինչպես մի ստվե՞ր: Թվում է, թե գողացված ջրերը հաճելի են ձեզ, իսկ գաղտնի կերած հացը ավելի համով է ձեր բերաններում, հիմա՛ր սերունդ: Ահա թե ինչու են ձեր բերանները հեշտությամբ տրվում չարին:

Հիմա, Ես մեկ անգամ ևս արտահայտում եմ Իմ Սիրտը[1]: Ո՛հ, սերո՛ւնդ, եթե միայն հասկանայիք ձեր ժամանակների շնորհը, Իմ Ողորմության շնորհը, մի շնորհ, որը մարդու հասկացության սահմանից այն կողմ է: Եվ չնայած Ես գիտեմ ձեր չար դիտավորությունների մասին, և այն արհամարհանքի մասին, որը Ես ստանալու եմ ձեզանից շատերից, որոնց Ես սիրում եմ, Ես անսահման Սիրով կատարում եմ Իմ մտադրությունները, և ինչպես մի մուրացիկ, զրկված սիրուց, դուք[2] դատապարտում եք Ինձ, վարվելով Ինձ հետ ինչպես մի հանցագործի: Դուք, որ հաղթողներ եք դավաճանության մեջ, դուք վստահում եք ձեր երկրային գանձերին և ոչ թե Իմ Աստվածային Գանձին, որը կարող է փրկություն բերել ձեզ:

Ո՛հ, Տեր, լավ մարդ մնացե՞լ է արդյոք: Թեկուզ մեկը:

Ոչ ոք լավը չէ, բացի Աստծուց: Բայց միայն Աստված կարող է աստվածացնել ձեզ, բերելով ձեզ առաքինությունների ուղին, աստվածացնելով ձեզ, որ լինեք ոսկորը Նրա Ոսկրի, մարմինը Նրա Մարմնի, և ճանաչվեք որպես Նրա Սեփական սերմը...

Իմ Հոգին վշտանում է, քանի որ Ես չեմ ցանկանում որևէ մեկին արգելել Իմ Հավիտենական Ներկայությունից[3]: Իմ մեծ բարեգթությամբ, Ես պատրաստ եմ սրբել-մաքրել ձեր հանցանքները, եթե խոնարհվեք, Աստծո տաճարներ, և ապաշխարեք, չնայած Ես չպիտի ներեմ հայհոյողի խոսքերը[4]: Ապաշխարե՛ք, այլապես Իմ Սուրբ Հոգին երբեք չի մնա մի մարմնի մեջ, որը պարտական է մեղքին: Մի՛ վշտացրեք Իմ Սուրբ Հոգուն՝ մեղադրելով այն, ինչը գալիս է Աստծուց՝ կոչելով բարին՝ չար: Դա մահացու կլինի ձեր հոգու համար[5]:

Իմ Հոգին կոտրված է այն ամենից, ինչ Ես տեսնում եմ վերևից: Անիրավը չի կարող թաքնվել Իմ Աչքերից, ոչ էլ նա, ով օր ու գիշեր «վրեժ» է գոռում իր եղբորը խոր գիշերին: Ա՜խ, Վասուլա, թող Իմ Խոսքերը արձագանքեն քեզնից: Ասա՛ բոլորին, բարի թե չար.

---

[1] Այստեղ Տերն ինձ հիշեցրեց այն օրվա մասին, երբ Նա մտավ Երուսաղեմ և ողբաց այդ քաղաքի վրա, ասելով. «Գոնե դու այս օրերին գիտենայիր խաղաղության պատգամը: Բայց, ավա՜ղ, այն թաքնված է քո աչքերից»: (Ղուկ. 19:42-43.)

[2] Նրանք, ովքեր հալածում են Նրա Պատգամը և ծաղրում այն...

[3] Դրախտում չլինելով, այն հոգիները, ովքեր դեռևս քավարանում են, չեն տեսնում Աստծուն, մինչև չեն ավարտում իրենց մաքրագործումը: Դժոխքում գտնվողները երբեք չեն տեսնում Աստծուն, և չնայած նրանք ատում են Նրան, նրանք տառապում են նաև դրա համար:

[4] Հայհոյանքը Սուրբ Հոգու դեմ. (Մատթ. 12:22-32)

[5] Հայհոյանքը (Մատթ. 12:22-32)

«Ես Իմ Ձայնը լսելի եմ դարձնում երկնքից: Ես բարձրաձայն բղավում եմ, որպեսզի բոլորը լսեն, բարի թե չար: Այո՛, արդարև, Իմ Ձայնը հասել է աշխարհի ծայրերը: Բարին և չարը նույն ձևով պետք է ապաշխարեն: Բարին, նրա համար, որ ճշտորեն չի կատարում Իմ Կամքը և չի աղոթում ճիշտ ձևով[1]: Նրանցից շատերը մոտենում են Ինձ միայն բառերով: Ջարը՝ մահացու մեղքեր գործելու համար, իրենց սրտի կարծրության, և Իմ ու Իմ Օրենքի հանդեպ իրենց անտարբերության պատճառով»:

Քանի որ Իմ տաճարները հիմա գտնվում են շնորհազրկված վիճակում, Ես, Իմ անսահման Ողորմությունից ելնելով, պիտի շարունակեմ հեղել Իմ Հոգին այս ստոր սերնդի վրա, որ կենդանացնեմ նրան: Հետո այս չորությունը պիտի հրճվի և պտղաբեր պիտի դառնա: Եվ այն ժամանակ, երբ սերը միահյուսվի արդարության հետ, անցյալի աշխարհը պիտի անցնի ու գնա...

Թեև Ես կանխատեսել էի, որ ձեզանից շատերը, չարությամբ արբած, պիտի ժխտեն Իմ հրաշքները, վերջում Ես պիտի հաղթեմ այս չար սերնդին: Եթե նրանք հարցնեն քեզ. «Բայց Քրիստոսն արդեն հաղթել է: Նա նվաճել է աշխարհը, քանի որ Ինքն է այդ ասել: Ուրեմն, ինչպե՞ս է որ Նա ավելի պիտի հաղթի: Ի՞նչ հաղթանակի մասին է Նա խոսում»: Ասա՛ նրանց հետևյալը, աղջիկս. «ամեն ինչ իմանալով ձեր արարումից առաջ, և իմանալով, որ այս հարցը կբարձրացվի ձեզնից շատերի կողմից, Ես մեկ անգամ ևս ասում եմ այն խոսքերը, որոնք ասացի Հորը: Գրի՛ր.

«Հա՛յր, թող որ նրանք
մեկ լինեն Մեր մեջ,
ինչպես դու Իմ մեջ ես,
և Ես՝ Քո մեջ, որ աշխարհը հավատա,
որ Դու ես Ինձ ուղարկել...»[2]:

«Ես նրանց հայտնի եմ դարձրել
Քո Անունը և պիտի շարունակեմ
հայտնի դարձնել, որպեսզի
այն սերը, որով Դու սիրեցիր Ինձ,
լինի նրանց մեջ,
և որ Ես լինեմ նրանց մեջ...»[3]:

Երբ Ես բոլոր մարդկանց բերեմ Ինձ մոտ, Իմ Սրտի մեջ, Ես նորից պիտի փառաբանվեմ: Ես նոր Ադամն եմ, և Ես Ուսուցման լույսն եմ և Սուրբ Իմաստությունը: Երբ բոլոր մարդիկ, այսինքն՝ աշխարհը, կհասկանա և կհավատա, որ Հայրն ուղարկեց Ինձ, Ես նորից կհաղթեմ, քանի որ նրանք մեկ ձայնով պիտի ասեն.

«Սա Քրիստոսն է»՝ Մեկը Սուրբ Երրորդությունից, անապական Լույսը, որ զգեստավորում է հոգիները և Իր ողջ արարչությունն Իր Աստվածային Լույսով: Ո՛վ Տեր և Աստված, Քո Ձեռքերով Դու

[1] Երբ հոգին խոնարհ չէ, աղոթքով ասված խնդրանքը չի լսվի: Որքան հոգին խոնարհ է, այնքան ավելի հեշտ է նա գրավում Աստծո ուշադրությունը:
[2] Հովհ. 17:21
[3] Հովհ. 17:26

ստեղծեցիր ամեն ինչ վեհությամբ ու շքեղությամբ: Ուրախությամբ և ծիծաղի կարկաչներով Դու զարդարեցիր ամեն ինչ, ամեն բան լցնելով շնորհներով, բայց սատանան իր նախանձի մեջ զրկեց մեզ այդ շնորհներից, նույնիսկ՝ կյանքից: Նա զրկեց մեզ Քո Լույսից մինչև Դու եկար, Փրկի՛չ և Ազատարա՛ր, որ ազատես մեզ: Տե՛ր տերերի, օծումը մեր հոգու, Լույս երկնքի սուրբ, Դու ասվածացրիր Քո աստվածային Մարմինը դեռևս երկրի վրա Քո Հարությամբ, դարձնելով Այն հոգևոր և անեղծ: Դու նվաճեցիր երկրի բոլոր նյութական բաները: Դու հաղթեցիր Մահվան: Դու ստեղծեցիր մի Հայտնություն [1] ողջ հավիտենության համար: Մարդկության Սիրահար, Դու կենդանի Աստվածն ես, որ տվեց մեզ Իր Հարսին [2], որ պաշտպանում է Ճշմարտությունը և այն պահպանում ապահով: Ա՜խ, Լո՛ւյս երկնքի սուրբ, Դու տեսանելի դարձար մարմնով, որ ցույց տաս մեզ Հորը: Հորը, որ Քո մեջ է, և Դու Նրա մեջ ես»:

«Ուստի, մի՛ հարցրու, սերունդ, թե ինչպիսին կլինի հաղթանակը: Հաղթանակը կլինի, երբ վերջում ողջ արարչությունը Ինձ հետ կլինի սիրո մի փոխակերպող միության մեջ և մեկ կլինի Ինձ հետ, կանչելով մեկ ձայնով.

«Հիսուս Քրիստոսն է:
Հիսուս Տեր է»:

Ես Թագավորն եմ, ինչպես ասացիր, աղջիկս: Ես Թագավոր եմ, ինչպես Սուրբ Հոգին չշնջաց քո ականջին, որ հռչակես դա...

Ուստի, մինչ դու դեռևս աքսորի մեջ ես, ինքդ քեզ ավելի զոհաբերիր և մնա միացած քո Աստվածային Եղբորը: Լռությամբ տար քեզ տրված բոլոր տառապանքները: Դու միայնակ չես կրում դրանք, Ես քեզ հետ եմ, աղավնյակս: Կրի՛ր դրանք հանուն Ինձ: Դու շատ մեղավորների համար ես հատուցում քո փորձությունների միջոցով: Ուրախացի՛ր, քանի որ Ես տվել եմ քեզ շնորհների առատություն, որ Ինձ հետ լինես այս ձևով: Հասկանո՞ւմ ես: Թող սա բավարար լինի փոխարինելու համար քո բոլոր վշտերը և տառապանքները: Թող հիմա քո Թագավորը հրճվի քեզնով:

Արի՛: ic:

[1] Աստվածաշունչը
[2] Եկեղեցին

2001

Հունվարի 20, 2001

(Միասնության շաբաթ)

Տե՛ր, ինչո՞ւ ես Դու կուրացրել այդքան շատերին Քո Գործերի հանդեպ: Արդյոք դա այն պատճառո՞վ է, որ նրանք համառորեն մերժում են ապաշխարել և հաշտվել: Սովորեցրու ինձ և ասա Քո Կամքը...

Ա՜խ, զավակս, ...Իմ Կամքն է, որ դու աշխատես սիրով Իմ Հոգու լույսի մեջ: Իմ Հոգին այսօր առավել քան երբեւէ կանչում է, որ հաշտություն լինի Իմ հովիվների միջև: Փրկվելու համար յուրաքանչյուր ոք պետք է ապաշխարի և հաշտվի: Թող ամեն մի հովիվ քննի իր ուղին. «Մտածի՛ր այն սիրո մասին, որն Իմ Հայրը, Ես և Սուրբ Հոգին շռայլում ենք ձեզ վրա ձեր կյանքի յուրաքանչյուր րոպեին, հովիվ...»:

Ա՜խ, աղջիկս, չկարծես, թե Ես տեղյակ չեմ այն առաքելության պահանջներին, որը քեզ եմ վստահել: Իմ Տունը միավորելը հեշտ առաջադրանք չէ, առավել ևս այն վերակենդանացնելը: Բայց սրտապնդվի՛ր, որովհետև դու միայնակ չես: Ես քեզ հետ եմ: Մի՛ հուսահատվիր նրանց պատճառով, ովքեր չեն տեսնում Իմ Ծրագիրը քո մեջ: Ես վերցրել եմ նրանց տեսողությունը, ովքեր հայտարարում են. «մենք տեսնում ենք», և տեսողություն եմ տվել նրանց, ովքեր չէին կարողանում տեսնել: Միասնության օրինակ եղիր ողջ աշխարհի համար, և քո զոհողությունների միջոցով, հաշտություն հարուցիր եղբայրների միջև:

Սատանան որոշել է պատերազմ մղել Իմ եկեղեցու դեմ: Նա բռնությամբ հարձակվում է այն բանի վրա, ինչը Ես դնել եմ Իմ Սեփական Արյամբ: Նա իմ եկեղեցին պահում է բաժանված, հայհոյելով ամեն մի հավատարիմ սրտի, որը դավանում է Ճշմարտությունն ու Իմ Օրենքը:

Ձեզանից շատերը, ովքեր պատկանում են Եկեղեցուն, այսօր կողոպտում են այն: Դուք կողոպտում եք՝ մերժելով ճանաչել Իմ Մարմինը Հաղորդության Նշխարի մեջ և մասնակցել Իմ Աստվածային Խորհրդին այն ձևով, որը Ես ճշմարտապես հաստատել եմ: Դուք կողոպտում եք Իմ Տունը, որովհետև չեք ըմբռնում Իմ Աստվածության մեծությունը և Սուրբ Հաղորդության մեջ Իմ Ներկայությունը: Դուք թալանում եք Իմ Տունը շատ ուրիշ ձևերով: Սուրբ Գրքերը երբեք չեն ստում և չեն կարող մերժվել, բայց դուք մերժում եք դրա որոշ մասերը, այդ ձևով նաև կողոպտելով այն: Իմ Եկեղեցուն, Ես տվել եմ առաքյալներ, որ հարստացնեմ այն: Ես բարձրացրել և տվել եմ մարգարեներ, ուսուցիչներ, իսկ դրանցից հետո՝ հրաշքներ, բժշկության

պարգև և ուրիշ այլ պարգևներ: Բայց դուք թալանում եք Իմ Տունը, դուք կողոպտում եք այն այսօր:

Իմ Աչքերը չափազանց մաքուր են, որ նայեն այս ըմբոստությանը: Ուրեմն մի՛ զարմացեք, երբ Ես կանչում եմ: Մի՛ զարմացեք, երբ Ես, Իմ Անսահման Բարեգթությամբ և Ողորմությամբ, իջնում հասնում եմ մինչև ձեզ, արարչությո՛ւն, որ նայեմ ձեր սրտերի պատուհանին: Մի՛ զարմացեք, որ չնայած ձեր սարսափելի թշվառությանը, Ես առաջարկում եմ ձեզ մի ճոխ խնջույք, որին դուք արժանի չեք, և, որ արքայական առատությամբ ու վսեմությամբ, Ես գալիս եմ ձեզ հանդերձավորելու Ինձնով, որպեսզի, երբ Իմ Հրեշտակներն առաջնորդեն ձեզ դեպի երկնքի հավիտենական ուրախությունը և Մեր դավիթները, դուք ճանաչվեք որպես մարմինն Իմ Մարմնի, ոսկորն Իմ Ոսկրի: Եվ այն ժամանակ դատավճիռը պիտի հայտարարվի.

«Ըստ Այն կյանքի, որն այս հոգին վարել է երկրի վրա, նա արժանի է հարսի երկնային օժիտին *(պարգևին)*, քանի որ նա հավատարիմ մնաց Հարսին[1]: Այս հոգին, չնայած այն բոլոր փորձություններին, որ Ես ուղարկում էի նրան, օրորելով նրան ինչպես նավը փոթորկի ժամանակ, նա պահեց իր հավատարմությունը հանդեպ Ինձ և մնաց Ինձ կառչած, ինչպես ոստրեն է կառչում ժայռին: Այսպես կառչած մնալով Հարսին[2] և Ինձ՝ Փեսային[3], նա մասնակից դարձավ Իմ Աստվածայնությանը: Նրա միությունն Իմ Հոգու հետ բյուրեղացրեց նրան, փոխակերպելով նրան, որ լինի աստվածանման[4]: Եվ ինչպես արևը, նրա ճառագայթները լուսավորեցին իրեն, որովհետև նա տիրապետում էր Ինձ իր ներսում: Իմ աստվածացված որդիների և դուստրերի փառքն այստեղ՝ երկնքում, այժմ նաև նրանն է: Սա է այն օժիտը, որը նա պիտի ստանա հենց Իրենից՝ Փեսայից: Նա՛ է Օժիտը... Արի՛, արի և կիսիր երկնքի և հենց Իր՝ Աստծո ուրախությունը հավիտյանս հավիտենից»:

Ո՜հ, եթե իմանայիք, սերունդ, թե Ես քանի անգամ եմ զիջել Իմ Արքայական Գայիսոնը... Որքա՜ն եմ Ես փափագում ասել յուրաքանչյուր հոգու. «Սիրելի՛ս, արի՛, ոտքդ դիր քո մնայուն Տան ճանապարհին՝ քո հոգու միակ ճշմարիտ բնակարանի և միակ Հանգստի Վայրին: Արի՛ և ներս մտիր Իմ Սրտի հարսանեկան սենյակը: Ես հրավիրում եմ քեզ հետևել առաքինությունների ճանապարհին, որը առաջնորդում է դեպի Ինձ: Ինչպես մի քնքուշ Փեսա, Ես պիտի զարդարեմ քո հոգին Իմ Գանձերով, բայց ամենից առավել՝ Ես պիտի զարդարեմ քո հոգին Իմ Աստվածայնությամբ: Ես պիտի զարդարեմ քեզ ինչպես մի թագուհու[5], փառահեղորեն՝ Իմ Անունով և հենց Իմ Ներկայությամբ: Ես պիտի դարձնեմ քո հոգին մի կենդանի խորան, Ինձ՝ քո Աստծուն օրհներգող մի մշտական օրհներգ: Ես՝ մեծ Թագավորը, Նա, ով բնության սահմաններից այն կողմ է, պիտի խառնվեմ քո հոգու հետ, որպեսզի դու և Ես դառնանք մեկ:

---

[1] Եկեղեցին՝ նաև Քրիստոսի Հարսը
[2] Եկեղեցին
[3] Հիսուս Քրիստոսը
[4] Հաղորդակից Իր աստվածության
[5] Երբ Քրիստոսը խոսում է հոգիների մասին, Նա հոգուն դիմում է իգական սեռով: Քրիստոսի գործածած «թագուհի» բառը նույն կերպ է բացատրվում:

«Դու ինքնուրույն ոչինչ չես կարող անել: Ահա թե ինչու Իմ Ներկայությունը, որը մաքուր Լույս է, անհրաժեշտ է՝ շնորհի միջոցով քո ողջ մարմինը լուսավորելու համար: Եվ ինչպես Ես Ինքս Ինձ հայտնում եմ Իմ հրեշտակներին, Ես Ինքս Ինձ կհայտնեմ քեզ այդ լույսի միջոցով, և միայն այդ ժամանակ, դու կկարողանաս ասել.

«Ես կարող եմ տեսնել...»:

Հետո, Ես Ինձ ճանաչել կտամ քեզ: Ես պիտի խոսեմ քեզ հետ, իսկ դու՝ Ինձ հետ: Բնությամբ Եռանձն Աստված ցած կխոնարհվի՝ խոսելու համար նրա հետ, ում Ես վերստին արարեցի, և ով շնորհի միջոցով աստված դարձավ՝ ծնված Ինձնից: Իմ Թագավորության որդեգիր ժառանգ: Դո՛ւ, որ այնքան թույլ ես և այլասերման ենթակա, եթե դու ճշմարտապես զղջաս ու ապաշխարես՝ նայելով քո այդքան ողորմելի հոգուն, Ես կարող եմ քեզ դարձնել նման Իմ Կատարյալ Պատկերին»:

Իմ գործը և Իմ ծրագիրը, որը ձեր այնքան չար ժամանակների շքեղությունն է, բոլոր հոգիներին դեպի Իմ Սուրբ Սրտի մեջ բերելն է: Այն ժամանակ Իմ ողջ Փառքը այս Սրտում պիտի հայտնվի նրանց, և ողջ մարդկությունը միասին պիտի տեսնի Այն: Այո՛, արդարև, Իմ նպատակն է ձեզ բոլորիդ բերել Իմ Փառքի հետքերով: Այդ պահից սկսած, Ես պիտի լինեմ ձեր բաժինը, ձեր ուրախությունը, ձեր Փեսան՝ զգեստավորված Իմ Փառքով: Եվ ինչպես մի փեսա, որ ուրախանում է իր հարսով, մեր ամուսնության ժամանակ, Ես պիտի չշնչամ քո ականջին.

«Իսկ հիմա արի և օրհնիր քո Տիրոջը, որ ամեն բաների Տերն է, Նա՛, որ մեծ գործեր է կատարում ամենուր է: Մոտ արի Ինձ, քանի որ Ես քո պաշտպանն եմ և քո հենարանն ու նեցուկը: Իմ սիրելի հարս, որը համաձայնվեց լսել Ինձ, ուրախացի՛ր Իմ՝ քո Տիրոջ մեջ: Թող որ Ես մնամ քո սրտում, ինչպես անուշաբույր խնկի խառնուրդ, և թող Իմ Խոսքերը լինեն մեղրի պես[1] քաղցր քո բերանում, երբ դու ճաչակես դրանք: Թող նրանք ինչպես երաժշտություն հնչեն քո ականջներում, սիրելիս»:

Հետո Ես պիտի ցույց տամ քեզ այն դանձերը, որոնք Ես պահել էի ձեր սերնդի համար: Ես պիտի առաջարկեմ ձեզ Իմ Ողորմության դանձը, սովորեցնելով ձեզ, որ Իմ Ողորմությամբ են ասվում Իմ Բերանից դուրս եկող Բառերը: Իմ Բառերով Ես բարձրացնում եմ հոգևորապես մեռածներին, Ես վերափոխում եմ ուրացողներին, Ես բժշկում եմ հիվանդներին և ազատում դերիներին. Իմ Բերանը սուր թրի նման է:

Ես Իմ Ողորմությամբ ձևավորում եմ մարգարեներ Իմ Խոսքով, ովքեր պատուհաս պիտի դառնան խավարի մեջ ապրողներին, բայց պիտի սփոփեն Իմ ժողովրդին: Իմ Ողորմությամբ Ես բացում եմ կույրերի աչքերը, իսկ փոշու մեջ ընկածներին Ես վեր եմ բարձրացնում, որ տեսնեն Լույսը: Եվ բոլոր նրանց, ովքեր վստահում էին իրենց սեփական ուժին, Ես Իմ Փառքն ու Վսեմությունն եմ բացահայտում Իմ Ողորմության միջոցով, որպեսզի նրանց սրտերը շրջվեն դեպի Ինձ՝ իրենց Աստծուն:

[1] Փոխաբերական իմաստով կարելի է «ճաչակել» Աստծո Խոսքերը:

Շնորհի այս օրերին, Իմ Ողորմությունը այն ամենամեծ դանձերից մեկն է, որն Իմ Սիրտը պահել էր ձեր ժամանակների համար: Ոչ թե Ես երբևէ դադարեցրել եմ հեղել ձեզ վրա Իմ Ողորմությունը, այլ ձեր ժամանակներում, որոնք այնքան չար են, Ես ավելի շատ կարեկցանք եմ ցուցաբերում նրանց հանդեպ, ովքեր կռացած են փոշու մեջ, իսկ նրանց մարմինները, առավել քան երբևէ, ջախջախված են մեղքով: Ձեր սրտի անապատում Ես տնկցի երկնային սերմեր, որպեսզի բոլորը տեսնեն և իմանան Իմ Ողորմության մեծությունը:

Հետո, մի՞թե Ես նաև չեմ ասել, որ վերջին օրերին Իմ Հոգին դուրս պիտի հեղվի ողջ մարդկության վրա, անկախ նրանից, թե որքան թշվառ կլինեք: Այսպիսին է Իմ շնորհի հարստությունը... Այսօր Ես վեր եմ բարձրացնում ձեզ շնորհի միջոցով: Իմ Ողորմությամբ, Ես ձեզ վրա եմ լցնում Իմ շնորհները, որպեսզի հասկացնեմ ձեզ, թե ով է Նա, որ բերում է ազատություն, և ով է Կյանք Տվողը, որպեսզի դուք կարողանաք տեսնել, թե ինչպիսի հարուստ ու ճոխ փառքեր են սպասվում ձեզ:

Ձեր դարաշրջանն ունի ավելի շատ մեռած, քան կենդանի մարդիկ՝ իրենց մեղքերի, իրենց անհավատության և Իմ հանդեպ իրենց անտարբերության հետևանքով: Աշխարհի ստեղծումից ի վեր, Ես երբեք չեմ դադարել ցույց տալ Իմ հարատև զորությունն ու աստվածությունը: Ես բացահայտվում եմ այն ամենի մեջ, որ գոյություն առավ չգոյությունից: Բայց մյուս կողմից, նույնիսկ ձեր հողեղեն մարմնում, Ես կարող եմ ապրել ձեր մեջ, Ես կարող եմ այդ հողեղեն նյութը կյանքի կոչել: Շնորհի միջոցով է, որ դուք բարձրացվել եք: Ուրեմն, մի՞թե Ես պետք է տեսնեմ Իմ արարածներին ընդմիշտ ըմբոստություն գործելիս՝ դեպի մահ գնալիս: Մի՞թե Ես Ողորմությամբ չեմ գործի:

Ես ունեմ մեծ կարողություն, հարատև հարստություն, հարստացնելով նրանց, ովքեր մոտենում են Ինձ զղջումնալից սրտով: Մեր ամուսնությամբ, Ես ձեզ պիտի տամ Ինձ տիրապետելու իմացության դանձը՝ Սուրբ Երրորդության Գիտության և Նրան Հասկանալու դանձը: Չե՞ք լսել, որ միայն Սուրբ Իմաստությամբ է տուն կառուցվում, և հասկացողության միջոցով է այն ուժեղ դառնում: Գիտությամբ, նրա պահեստները լցվում են ամեն տեսակի հարստություններով, աստվածային արժեք ունեցող հազվագյուտ դանձերով, մի բան, որն այնքան ցանկալի է բոլոր ժամանակների իմաստուններին:

Այլ խոսքով, Ինձ ճանաչելու միջոցով, ձեր հոգին և միտքը լցվում են Իմ վերանցական լույսով և Իմ Փառքով: Ձեր հոգին լցվում է Իմ Աստվածայնությամբ, Ինձնով: Այդ, և միայն այդ ժամանակ ձեր սիրտը կդիմի կարգապահության, իսկ ձեր ականջները՝ ուսուցման, ձեռք բերելով Ճշմարտությունը՝ քնքշորեն փայփայելով այն: Սիրելինե՛րս, ձեր բնությունն անգամ պիտի վերափոխվի Իմ Աստվածայնության: Ձեր բոլոր մտադրությունները պիտի մղվեն Իմ Սուրբ Հոգու կողմից, որն առանց հոգնելու հեռացնում էր տականքը ձեր միջից՝ օժտելու համար ձեր հոգին Իմ Հոգով, և Իմ Հոգու միջոցով՝ Վեհապանծ Հարստությամբ, որն Իմ Գերիշխանությունն է:

Դուք պիտի հարցնեք. «Իսկ ի՞նչ է նշանակում հասկանալ Աստծուն»: Ինձ հասկանալը Իմաստության առաջին սկզբունքն է: Դա նշանակում է

Ինձ ճանաչել որպես ձեր Աստվածը և Ինձնից երկյուղել, իսկ Ինձնից երկյուղելը՝ ամեն չարիքից խուսափելն է:

Դա նաև նշանակում է տեսնել Ինձ ձեր հոգևոր աչքերով դեռևս երկրի վրա: Ձեզանից յուրաքանչյուրի համար էական է, որ ճաշակեք Ինձ երկրի վրա գտնված ժամանակ: Յուրաքանչյուր հոգու համար կարևոր է փնտրել այդ տեսիլքը [1], և եթե ձեր հոգին չի կարողացել հասնել Իմ բարձունքներին [2], պայքարեք և համառորեն բարձրացրեք ձեր հոգին մտահայեցողության միջոցով: Ուրիշ ի՞նչ կերպ դուք պիտի ճանաչեք ձեր Աստծուն: Եթե չեք տեսել Ինձ, դուք ինչպե՞ս կլինեք Իմ որդիներից ու դուստրերից մեկը՝ զգեստավորված Իմ երիցս Սուրբ Լույսով:

Ես անհասանելի չեմ, ոչ էլ անիմանալի, քանի որ Ես խառնվում եմ ձեր հոգու հետ: Ես միացնում եմ Ինքս Ինձ ձեզ հետ, և մենք դառնում ենք մեկ: Իսկ երբ միանում ենք, ձեր ժառանգության մասին ձեզ հիշեցնելու համար, Ես Ինքս Ինձ ճանաչելի եմ դարձնում ձեզ: Վեհությամբ և շքեղությամբ Ես առաջնորդում եմ ձեր հոգին դեպի Իմ խորքերը, որ բացահայտեմ Ինձ արքայական առատությամբ: Դուք կարդացել եք, որ Աստծո խորքերը կարող են միայն ճանաչվել Հոգու միջոցով, հասկանալու համար հոգևոր գործերը: Սուրբ Գրքերն ասում են.

«Ոչ հոգևոր մարդը Աստծու Հոգուց եկած ճշմարտությունները չի ընդունում: Նա այդ բոլորը հիմարություն է համարում, և չի կարող հասկանալ, քանզի հոգևոր կերպով են քննվում դրանք:

Իսկ հոգևոր մարդը քննում է ամեն ինչ, և ինքը ոչ ոքից չի քննվում: Ինչպես Սուրբ Գրքերն են ասում. Իսկ, արդ, ո՞վ իմացավ Տիրոջ մտածումը, որ խորհուրդ տա նրան»[3]:

Ինձ ճանաչելու և հասկանալու դանձը արքայություն է երկրի վրա ամբողջ ժամանակ: Դա նշանակում է երկրի վրա կառավարել բարությամբ, արդարությամբ և սրբությամբ: Շնորհով ստանալով այս դանձը Սուրբ Հոգու միջոցով, դուք կճանաչեք Իմ Կամքը ձեր մեջ: Մենք մի անգամ ասացինք [4]. «Եթե որևէ մեկը ցանկանում է պարծենալ, թող պարծենա նրանով. որ հասնակում և ճանաչում է Ինձ...» Այս դանձը մարգարիտների արժեքից էլ թանկ է: Ա՛Հ. հետո գալիս է մտերմության դանձը, մտերմություն Ինձ հետ՝ ձեր Աստծո հետ: Կրակի բռնկումները, որոնք դուրս են գալիս ձեր սրտից, բոցավառ սիրուց ելնելով, պիտի լինեն Ինձ հետ ձեր մտերմության առաջին նշանները: Իմ հանդեպ ծարավի երկարատև շրջանները, երբ անդադար փնտրում եք Ինձ, պիտի լինի ձեր մոտեցման արշալույսը այդ մտերմիկ միությանը, որը Ես այնքան տենչում եմ ամեն մի հոգուց, որպեսզի նրանք կարողանան գալ և ճաշակել Իմ Քաղցրությունը: Եվ ձեր ողջ հոգով դուք պիտի մտնեք երկնքի ուրախության մեջ, և պիտի երգեք երկնքի Իմ հրեշտակների մեղեդիները՝ ի պատիվ Իմ Ողորմության, որը Ես ցուցաբերեցի ձեր հանդեպ:

Հետո, ինչպես մի անգամ Դավիթը բացագանչեց Ինձ, բոցավառված իր սիրով, դուք նույնպես պիտի կանչեք Ինձ նրա սեփական բառերով.

---

[1] Աստծուն տեսնելը
[2] Տերը նկատի ունի «Իրեն»:
[3] Ա Կոր. 2:14-16
[4] Երեմ. 9:23

«Աստվա՛ծ, Դու իմ Աստվածն ես, ես մաշվում եմ Քեզ համար: Իմ սիրտը ծարավ է Քեզ, իմ մարմինը տենչում է Քեզ... Ես իմ ներսում զգում եմ ինչպես մի անապատ, հոգնած և անջուր՝ առանց Քեզ, ես տենչում եմ նայել Քեզ: Իմ անկողնում Ես մտածում եմ Քո մասին, Ես մտորում եմ Քո մասին ողջ գիշեր: Իմ հոգին ամուր փարվում է Քեզ[1]... Զնայած ես դեռատի եմ[2], Դու տվել ես ինձ ավելի շատ հասկացողություն, քան տարեցներին[3], որովհետև ես պահում եմ Քո աստվածային հրահանգները: Ո՜հ, որքան հրաշալի է բարեկամանալ Քեզ հետ, իմ քա՛ղցր Աստված: Քո Ներկայությունը, որն այնքան մտերմորեն միահյուսված է իմ հոգուն, ուրախացնում է ինձ և այն մեղրից էլ քաղցր է: Քո բուրմունքը բուրումնավետ է դարձնում ողջ տիեզերքը և արբեցնում իմ հոգին՝ զորացնելով իմ ողջ էությունը»:

Երբ կարթնանաք, դուք կհայտնաբերեք, որ Ես ձեր Սիրելին եմ, ձեր Երկինքը, ձեր Դրախտը, և որ Իմ մեջ դուք կարող եք ապրել: Իմ լույսի մեջ դուք կհայտնաբերեք, որ Ես ձեր սրտի մեջ դրել եմ Իմ Գործերի մեծությունը, և դուք կփառաբանեք Իմ Սուրբ Անունը: Դուք կհայտնաբերեք, որ Իմ Հայացքը ձեզ վրա մագնիսի նման է, իսկ Ես պիտի հրճվեմ ձեզ վրա նայելուց, քանի որ Ես նայելիս կլինեմ Իմ Սեփական արտացոլմանը. Ես պիտի նայեմ Ինձ վրա ձեր մեջ... Ուրեմն չզարմանաք, երբ Ես գամ ձեզ մոտ, որ ասեմ ձեզ.

«Ես հիմա Կառավարիչ եմ ձեր մեջ, և Ես ոչ մի այլ ցանկություն չունեմ բացի Ինքս Ինձ ձեր մեջ տեսնելուց: Իմ Ներկայությունը, ինչպես մի բոց, ձեր մեջ բորբոքում է ցանկություն և ծարավ Իմ հանդեպ: Տենչանքի ու կարոտի ամեն մի հոգոց Ես կներշնչեմ ինչպես վարդերի անուշաբույր մի փունջ, ամոքելով Ինձ այն վիրավորանքներից, որոնք արվում են Մեր[4] հանդեպ մարդկանց կողմից»:

Ես Կատարյալ եմ, և Ես կամենում եմ, որ դուք նույնպես կատարյալ լինեք: Զե՞ք կարդացել. «Ինչպես Առաջնորդն է, այնպես էլ կլինեն իր քաղաքի բնակիչները...»[5]:

Հետո Ես, Իմ հերթին, պիտի ցույց տամ ձեզ երկնային զորքերին, մինչ բարեպաշտություն և արդարություն կերգեմ ձեզ համար բանաստեղծությամբ: Ես կժողովեմ երկնքի ողջ սրբերին, Ես կժողովեմ երկնքի ողջ արքունիքը, որ նրանց հայտնեմ Իմ վեհությունը և Իմ Գերիշխանությունը ձեր մեջ, և թե ինչպես Ես ձեզանից պատրաստեցի մի արքայական պսակ Իմ Գլխի համար՝ ձեր ժամանակների մի արքայական հրաշք: Ձեր բոլոր զարդերը կլինեն աստվածային, քանի որ դրանք տրված կլինեն Իմ կողմից: Ձեր նախկին ստրկությունը կդառնա ազատություն Իմ մեջ:

Այսօր, Ես ցած եմ նայում երկնքից՝ հաշվելու համար մաքուր սրտերը.

- Ի՞նչ ասեմ: Մի՞թե Իմ Զոհաբերությունն իզուր էր: Իմ Հոգին կոտրված է... Ես զոհաբերեցի Ինձ ձեզ համար, որպեսզի ձեզ ազատեմ

[1] Հատվածներ Սաղմ. 62-ից:
[2] Սուրբ Հոգու կողմից վերստին ծնելու իմաստով:
[3] գիտուններին
[4] Սուրբ Երրորդությունը
[5] Սիրաք 10:2

ամեն չարությունից և մաքրագործեմ մի ժողովրդի, որպեսզի այն լինի Իմ Սեփականը և չունենա ուրիշ ցանկություն բարիք գործելուց բացի:

Ես արեցի ամեն ինչ, որպեսզի դուք կարողանաք արդարանալ շնորհի միջոցով և դառնալ Իմ Թագավորության ժառանգները: Ես եռանդագին սովորեցնում եմ ձեզ բոլորիդ, և մեծ կարեկցությամբ, Իմ Օրենքը, նորոգելով ձեզ Շնորհի Սուրբ Հոգու միջոցով, նույնիսկ Ինքս Ինձ անընդհատ կրկնելով: Ես հիմա սովորեցնում եմ, տալով ձեզ ուսուցումներ Սուրբ Իմաստության կերպերով: Դա նոր ուսմունք չէ, այլ Հարսի[1] ուսմունքը, որին դուք կարող եք վստահել:

Դուք բոլորդ պատկանում եք Իմ Տանը: Քանի որ Ես գնել եմ Իմ Տունը Իմ Սեփական Արյամբ, և Ես հեղել եմ Իմ Արյան յուրաքանչյուր կաթիլը բոլորի համար... Դո՛ւք եք Իմ Տունը[2]...

Դու սկզբում[3] հարցրեցիր, աղջիկս, որ Ես հայտնեմ Իմ Կամքը: Ես կրկնում եմ ձեզ բոլորիդ, որ Իմ Կամքն է, որ դուք աշխատեք սիրով Իմ Հոգու Լույսի մեջ, որպեսզի բոլորդ մեկ լինեք: ic:

(Վերևի պատգամը մեկ օրում չտրվեց: Այն սկսվեց հունվարի 20-ին և շարունակվեց մի քանի շաբաթ և հաջորդ ամիսների ընթացքում, իմ լարված ճանապարհորդությունների պատճառով):

2001թիվ, ամսաթիվն անհայտ է

Տե՛ր, Սուրբ Գրքերն ասում են, իրականում այդ Դու ես ասել. «Ես դեռևս շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց դրանք չափազանց շատ կլինեն ձեզ համար հիմա: Բայց երբ Ճշմարտության Հոգին գա, Նա կառաջնորդի ձեզ դեպի կատարյալ Ճշմարտությունը»:

Հայտնի է նաև, որ սխալ է ասել, որ Հայտնությունը վերջ է գտել, և այն դիտել որպես նախադասությունների մի հավաքածո: Դու կենդանի ես և գործուն, և Դու կշարունակես ցույց տալ Ինքդ Քեզ Սուրբ Հոգու միջոցով, երբեք չդադարելով այդպես անելուց: Քրիստո՛ս, Դու Հոր ամբողջական և կատարյալ հայտնությունն ես, ահա թե ինչու է «կատարյալ (complere)» եզրույթը տրվել: Բայց դա չի նշանակում, որ Դու տվել ես մեզ Քո Վերջին Խոսքը:

Խաղաղությո՛ւն, զավակս, Ճշմարտության Սուրբ Հոգին երբեք չի դադարի վկայելուց:

Նորից Ես կասեմ. «Երանելի են սրտով մաքուրները, նրանք պիտի տեսնեն Աստծուն»: Ես տեսողություն եմ տալիս նրանց, ովքեր չեն տեսնում, բայց Ես արգելում եմ գիտուններին և խելացիներին ներս մտնել գիտության դռնով: Այս դռնով ներս մտնողը լույս է ստանում, և Իմ ամբողջ սաածների[4] հասկացողությունը, և, միևնույն ժամանակ, Իմ Ներկայության ճանաչումը... Բայց նա, ով հպարտանում է իր փառքով,

[1] Եկեղեցին
[2] Եբր. 3:6
[3] այս պատգամի
[4] Սուրբ Գրքերի

դուրս է մնում այս դռնից[1], նա մնում է խավարի մեջ: Մարմինը մարմին է, և կտեսնի մարմինը: Բայց ով ծնվում է Հոգուց, նրան տեսողություն կտրվի և նա կտեսնի Աստծուն:

Իմ Հոգու ծաղկեշղթա, թույլ տուր Ինձ առավել հոսել քո մեջ: Բարձրացրո՛ւ աչքերդ դեպի Ինձ և հանձնիր ինքդ քեզ ու քո ունեցած ամեն ինչը Իմ Կամքին: Ավելացրո՛ւ ջերմեռանդությունդ: Մի՛ լսիր նրանց, ովքեր հալածում են քեզ և մի կողմ մի՛ դիր այն շնորհը, որը ես տվել եմ քեզ, ասելով. «Դա արժեք չունի»: Աստվածայնությունը քո առջև է, սերո՛ւնդ, Աղբյուրը խոնարհվում է, որ հանի ձեզ ձեր խավարի մեջ: Այլևս մի՛ հեծեծիր և մի՛ ողբա, ես հրավիրում եմ ձեզ ապաստան գտնել Իմ մեջ, սերո՛ւնդ:

Ուրեմն եկե՛ք: Ես հայտնության մի լույս եմ տալիս ձեզ ձեր խավարում՝ վերակենդանացնելու համար ոչ միայն ձեր հույսը, այլև ձեր հավատը և ձեր սերը: Ես մտադիր եմ փրկել, և ոչ ոք չի կարող կանգնեցնել Ինձ: Ձեր ժամանակները Ողորմության ժամանակներ են, ահա թե ինչու ես ուղարկում եմ Իմ Խոսքը երկիր, հայտնության մի լույս, որ տեսողություն տա կույրերին: Մի՞թե չեք լսել, որ Աստված գթություն և կարեկցանք է, համբերատար, լի հավատարիմ սիրով, և ես ընդունում եմ բոլոր արարածներին:

Ես հաղորդում եմ ձեր հոգուն, սերո՛ւնդ, մեծ բաներ, բայց ամենամեծը Ինքս Ինձ ցույց տալն է: Իմ աստվածային և հաճախակի այցելությունները ձեզ մի պարգև են ձեր Թագավորից, ցույց տալով Նրա հավատարիմ սերը: Փառաբանի՛ր քո Աստծուն, երկի՛ր, որ փրկում է քեզ: Երկինքները հռչակում են Իմ փառքը, այո՛, ողջ երկնակամարը հռչակում է Իմ Գործերը: Գովաբանի՛ր Ինձ այն հրաշալի գիտության համար, որը ես տալիս եմ քեզ քո այնքան թշվառ ժամանակներում, ուր հավատը Եռանձն Աստծո հանդեպ դրեթե գոյություն չունի, և ուր սերն Աստծո և մերձավորի հանդեպ սառել է:

Սակայն, հակառակ ամեն ինչի, Իմ Սուրբ Հոգին երբեք չի դադարում ձեզ վրա հեղել Իր Սերը: Եվ Մենք երբեք չենք զլացել Ինքներս Մեզ ձեզ տալուց: Ես բացահայտորեն հայտնի եմ դարձնում բոլորին Իմ պարգևները և Իմ գանձերը ուրախությամբ: Դողացող շուրթերով և հուզմունքով, ես հայտնի եմ դարձնում Իմ Երանությունը ձեզ, թույլ տալով ձեզ մի ակնարկ նետել Իմ Սրտի խորքերը, ցույց տալով, թե ինչպիսի փառապանծ գանձեր են պահված ձեր այնքան չար ու ըմբոստ ժամանակների համար:

Խորհրդածե՛ք Իմ հարստության մասին, խորհրդածե՛ք Իմ Փառքի լույսի մասին, որովհետև սա վեր է ամեն աստվածաբանությունից: Այժմ, որպեսզի լուսաբանեմ Իմ Սուրբ Սրտի գանձերի վերաբերյալ որոշ ասացվածներ, և, որպեսզի առաջ տանեմ քո հոգին դեպի Իմաստության խորքերը, և դեպի Իմ մասին գիտությունը, ես պիտի խնդրեմ քեզ, աղջիկս, որ բացես քո մտքի աչքերը՝ կլանելու համար այն ողջ լույսը, որը ես պիտի լցնեմ քո մեջ, որպեսզի ես կարողանամ քեզ փոխանցել Իմ գիտությունը:

[1] ինչպես փարիսեցիները

Ոմանց այնպես կթվա, թե ես կրկնում եմ Ինքս Ինձ, բայց Իմ մանկավարժությունը կատարյալ է և ամենից խրատականը ձեր Հոգու համար: Ես ձեզ կշնորհեմ հասկանալու Իմ դանձերի ուժն ու կարողությունը: Հիշե՛ք, որ ամենաազնիվ դանձերից մեկը և ամենից անգնահատելին ձեր Աստծո մասին Գիտությունն է, որպես երիցս սուրբ, քանի որ այս դանձի հետ դուք ստանում եք Աստծո մտերիմ ընկերությունը, և հենց Իրեն՝ Աստծուն:

Այլ դանձերի թվում, ես ունեմ նաև Առաքինությունների Ճանապարհի դանձը: Առաքինությունների այս Ճանապարհը պատրաստվել է Իմ Հոր կողմից: Դա մի Ճանապարհ է ծածկված չափյուղաներով, մի հիանալի մուտք դեպի Երկինք: Որպեսզի կարողանաք մուտք գործել Երկինք և Իմ Արքայական Գավիթները, որտեղ դուք կարող եք ներս ու դուրս անել Իմ հրեշտակների և սրբերի մեջ, քանի որ դուք կհամարվեք որպես նրանցից մեկը, ձեր սիրտը պետք է անբասիր գտնվի Իմ Աստվածային Կամքի հանդեպ: Այս Ճանապարհը պատրաստված է և հասանելի է բոլորի համար, և ձեզանից է կախված մուտք գործել այդ Ճանապարհը, որը տանում է դեպի Կյանք: Եթե Դուք Ինձ ընտրեք և մտնեք Առաքինությունների Ճանապարհը, անմիջապես այն պիտի լուսավորի ձեր դեմքը, և այդ Ճանապարհի վերջում Ես պիտի սպասեմ ձեզ, որ պսակեմ ձեզ վարդի փնջերով, որոնք երբեք չեն թառամում, մինչ դուք կգովերգեք Իմ Սուրբ Անունը երիցս սուրբ:

Եկե՛ք, և մի՛ ասեք, որ չգիտեք Աստծո ծածուկ բաները: Մի՛ ասեք, որ հույս չունեք սրբության ձեր վարձատրության համար, քանի որ Ես ստեղծել եմ ձեզ, որ լինեք անմահ և սուրբ: Ես ստեղծել եմ ձեզ, որ ղեկավարեք Ինձ հետ նույնիսկ այն ժամանակ, երբ դուք դեռևս երկրի վրա եք գտնվում: Ես կարող եմ աստվածացնել ձեր պատկերը, եթե դուք ստանաք Առաքինությունների Ճանապարհի դանձը: Օրհնյա՛լ է նա, ով ստանում է այս դանձը և օգտագործում այն:

Այդ չափյուղաների վրայով քայլելիս, դուք հույս կստանաք ձեր սրտում, որովհետև ձեր չարչարանքը կլինի օգտավետ, ձեր նվաճումները՝ շահավետ ձեր սրբագործման համար և Իմ Փառքի ու Իմ Գահի համար: Դուք այլևս չեք շեղվի Ճշմարտության ճանապարհից, քանի որ դուք կունենաք Ինձ, որպես ձեր Սուրբ Ուղեկիցը: Ես կլինեմ ձեր Հոգևոր Ղեկավարը, Իմ Արքայական Գայիսոնով ուղղություն տալով ձեր քայլերին: Գերագույն իշխանությունը կլինի ձեզ հետ, և Ամենաբարձրյալի զորությունը կլինի ձեզ վրա, որ լույս սփռի ձեր ոտքերին:

Եթե ընտրեք հետևելու Առաքինությունների Ճանապարհը, դա նշանակում է, որ դուք ընտրել եք Ինձ, որ լինեմ ձեր Թագավորը, որպեսզի Ես թագավորեմ ձեզ վրա: Այսպիսով Սուրբ Հոգին Իմաստություն կշնորհի ձեզ, քանի որ դուք ընտրեցիք քայլել բարի մարդկանց ճանապարհով, համառորեն հետևելով արդարների Ուղին:

Տեսե՛ք Իմ Սուրբ Սրտի անհամար Գանձերը: Մինչ այժմ Ես ուսուցանում էի ձեզ Աստծո Գիտության Գանձի մասին և Նրան հասկանալու մասին: Ապա՝ Ողորմության Գանձի մասին, հետո՝ մտերմության Գանձի մասին, և թե ինչպես տիրապետել Աստծուն, իսկ հետո՝ Առաքինությունների Ճանապարհի Գանձի մասին: Հիմա Ես ձեզ

հասկացողություն կտամ Հույսի Գանձի մասին, որը գալիս է Սուրբ Հոգուց:

Հույսն առաջ է բերում ուրախություն և սփոփանք ձեր սրտում, և չնայած կարելի է սրտի մեջ կրել բոլոր երևակայելի դժվարությունները, նա, ով կրում է Սուրբ Հոգին[1] հաղթահարում է բոլոր դժվարությունները, որովհետև Սուրբ Հոգին երգելու է նրա համար մխիթարության և սիրո օրհներգեր, այսպիսով օգնելով նրան հաղթահարելու դժվարությունները և վեր բարձրացնելու նրա հոգին, ուժ տալով նրան, որ քայլի արժանապատվությամբ: Հույսը, հետևաբար, մի պարգև է Սուրբ Հոգու կողմից:

Կարո՞ղ է մարդ իր հույսը դնել աշխարհի հարստության վրա, որ գերում է բազմաթիվ սրտեր և ձեզ չի բերում Աստծո հետ շփման, և տակավին երջանիկ զգալ, երբ նա գիտի, որ դրանք հարատև չեն և չեն տա հավիտենական կյանք և ոչ էլ փառք: Ո՛չ, ո՛չ մեկը չի կարող երջանիկ լինել, երբ իր հոգին գերի է միայն աշխարհի հարստության: Արդյունքը կլինի օշինդրի նման դառը: Բայց երանելի է այն մարդը, ով շրջվում է դեպի Ինձ: Ես կարող եմ նրան դարձնել հարուստ՝ իր աղքատության միջոցով: Ես կարող եմ հարստացնել նրան այն բոլոր Հարստությամբ, որ պարունակում է Իմ Սիրտը:

Իմ Սրտում են գտնվում բոլոր ճանապարհները, որոնք տանում են դեպի երջանկություն: Երբ դուք հայտնագործեք Հույսի Գանձը, դուք կլսեք ձեզ ծիծաղելիս ջրի կարկաչյունի նման: Ձեր ծիծաղի ձայնից ողջ երկինքը պիտի հրճվի, քանի որ ձեր աչքերը նայելու են Թագավորի վրա՝ Իր երկնային գեղեցկության մեջ, և այլևս չեն նայի աշխարհի ապականված հարստությանը: Այո՛, դուք կդիտեք ձեր արծաթն ու ոսկին, որը մի ժամանակ դարձրել էիք պաշտամունքի առարկա, որպես անմաքուր բաներ: Հետո Օձը, որը ձեզ գերի էր պահում, այլևս երբեք բուն չի դնի ձեր մեջ, որովհետև Սուրբ Հոգին, որը ձեր Հույսն է, բայց նաև՝ Պահապանը, պիտի բնակվի ձեր մեջ, իսկ դուք՝ Նրա մեջ: Դուք ուրախությունից կբղավեք և հավիտենական ուրախությունը կդրոշմվի ձեր դեմքի վրա: Ուրախությունն ու բերկրանքը կուղեկցեն ձեզ, իսկ վիշտն ու ողբը վերջ կգտնեն: Այո՛, Հույսի Գանձը հանգստացնում և սփոփում է ձեր հոգին:

Սուրբ Գրքերն ասում են, որ երբ աղոթում եք, հասկացողություն է տրվում ձեզ: Եթե մինչ օրս դուք չեք հասկանում Ինձ, այդ այն պատճառով է, որ չեք աղոթում: Ահա Ես, Ես չեմ պահում արծաթ կամ ոսկի, ոչ էլ թանկարժեք քարեր Իմ Ձեռքերում՝ ձեզ առաջարկելու համար, բայց դրա փոխարեն Ես բռնել եմ մի անգին բան՝ Իմ Սիրտը, Իր մեջ գտնվող անհատնում գանձերով:

Արդյոք կլսե՞մ ինչպես մի նորածնից, առաջին լացը: Դուք կկամենա՞ք ծնվել Ինձնից: Հիմա դուք հասկան ո՞ւմ եք Իմ լեզուն: Նկատե՞լ եք, սիրելիներս, թե ինչպես եմ Ես ուղարկել Իմ հրեշտակներին, որ կանգնեն ձեր դարպասների մոտ և հսկեն ձեզ այս խավար ժամերին, որ անցնում են: Դուք ավելի շատ պետք է հույս դնեք Իմ փրկարար օգնության վրա:

[1] Հոգին, որն իր ներսում «կրում է» Սուրբ Հոգին:

Հոգին, որը ձեր Հույսն է, կզորացնի ձեզ՝ կնքելով ձեր ճակատը Իմ Անվամբ:

Հույս ստանալով ձեր սրտում, դուք վստահ կլինեք, որովհետև այնտեղ, ուր Հոգին է, ազատություն է: Լույսն ու խավարը ոչինչ չունեն ընդհանուր, ոչ էլ՝ Հույսն ու հուսահատությունը: Սուրբ Հոգին Սատանայի դաշնակից չէ, և դուք, որ ստացել եք Հույսի երաշխիքը, ընդհանուր ոչինչ չունեք Հուսահատության հետ, որն իրականում Սատանան է:

Ստանալով Հույսի Գանձը, ձեր դեմքը կպայծառանա և կստանա Իմ Վեհության և շքեղության պայծառությունը: Այո՛, դուք բոլորդ կաճեք պայծառությամբ, քանի որ կսկսեք նմանվել Իմ փառավոր Պատկերին: Սա կարող է միայն Իմ Սրտից ձեռք բերվել... Ուրեմն ողջ սրտով աղերսեք Հույսի Հոգուն, որը կճառագի ձեր հոգում և կտանի ձեզ դեպի երկնքի բերկրանքները՝ հրճվելու Նրանով...

Մի Ձայն կանչում է Փառքի բարձունքներից՝ հայտարարելով այն Գանձերի մասին, որոնք պահված էին ձեր ժամանակների համար: Մի՛ ասեք. «Ես նայեցի և չտեսա դրանք»: Ես առաջ եմ շարժվում, ինչպես ամպերը ձեր վերևում, սակայն շատերն ասում են, որ չեք տեսնում Ինձ, սերո՛ւնդ: Դուք ետ ու առաջ եք թափառում աշխարհի հարստությունների միջով, բայց երբ հարցը վերաբերում է հոգևոր գանձերը տեսնելուն, որոնք կարող են հեղվել ձեզ վրա, որ վեհությամբ Ինձնով զգեստավորեն ձեզ, դուք ուշադրություն չեք դարձնում:

Եթե ձեզ շնորհ տրվեր տեսնելու ինքներդ ձեզ այնպես, ինչպես Ես եմ ձեզ տեսնում Իմ Աստվածային Աչքերով, դուք կողբայիք, ծեծելով ձեր կուրծքը, և կհեռանայիք անապատ: Ձեր խղճալի տեսքը տակնուվրա կաներ ձեզ: Բայց եթե դուք տեսնեիք ձեզ հանդերձավորված Ինձնով, Ես ասում եմ, դուք անդադար կհռչակեիք Իմ մեծությունը: Ձե՞ք կարդացել, որ. «Ես կդնեմ ձեր քարերը կարմիր նռնաքարերի վրա, և ձեր հիմքերը՝ չափյուղաների վրա, և սուտակները ձեզ համար ատամնավոր պարիսպներ՝ կդարձնեմ, ձեր դարպասները՝ բյուրեղապակի, և ձեր ողջ պատերը՝ թանկարժեք քարեր»[1]:

Մի՞թե չեք հասկացել, որ ընդունելով Իմ Սիրտը, դուք կնորոգվեք զարմանալի կերպով, և ավերակ վիճակից՝ կվերակառուցվեք: Մի՞թե չեք հասկացել Իմ սուրբ Իմաստությունը, երբ այն ասաց, որ. «Ձեր որդիները պիտի ուսուցանվեն Յահվեի կողմից, և ձեր որդիների բարգավաճումը մեծ պիտի լինի, որովհետև դուք հիմնված պիտի լինեք արդարության ու մաքրության վրա: Ես հիմա բացահայտում եմ այդ Գանձերը, թեև ոչ բոլորը, ձեր վերափոխության և աստվածացման համար: Լսե՛ք և ձեր հոգին պիտի բարգավաճի և ապրի... Ես ունեմ անհատակ Գանձեր Իմ Սրտում, և Ես տալիս եմ դրանք ձեզ բոլորիդ առանց փողի: Հետո, ինչպես երկիրն է բերք տալիս և աճում, որ սերմ ապահովի սերմնացանի համար և հաց՝ ուտելու համար, այդպես էլ Խոսքը, որը դուրս է գալիս Իմ Բերանից, չի վերադառնում դատարկ, առանց Իմ Կամքը կատարելու և հաջողությամբ ավարտելու այն, ինչի համար ուղարկվել էր»[2]:

---

[1] Այս մեջբերումն ամբողջությամբ վերաբերում է հոգուն:
[2] Ես. 55:10-11

Իմ Խոսքը տրվում է ձեզ, որ ուժ տա ձեր ձեռքին, որ բռնեք Իմ պարեգոտի եզրից և բաց չթողնեք: Թող ձեր ոտքերը այժմվանից սկսած հետամուտ լինեն Առաքինությունների Ճանապարհին, և ձեր ականջը մի փոքր ավելի խոնարհեցնելով, դուք պիտի հասկանաք Սուրբ Իմաստությունը և Նրա ասածները: Ե՛կ, դո՛ւ, որ դեռևս աննպատակ մոլորված ես այս անապատում, արի՛ Ինձ մոտ, զավա՛կս, քանի որ դու Իմ զավակն ես, և ստացիր Իմ Խաղաղությունը, և քո հոգին ու սիրտը պիտի ծաղկեն:

Իմ գովաբանության Նյութ,
Թագավո՛ր,
վսեմ և Գերիշխան ողջ տիեզերքում,
բայց նաև Երկնքում, ասա՛ Ինձ.

Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան:
Բայց Դու մեզ մեկ անգամ ևս
հիշեցնում ես, որ Քո հրեշտակներից
մի փոքր ցած դրեցիր նրան[1],
կանչելով մեզ շարունակ,
ստանալու համար
փառքի և շքեղության թագը
և կիսելու Քո Թագավորությունը:

Հանուն Իմ Սուրբ Անվան, ես ցուցադրում, բայց նաև արձակում եմ երկնքից մեծաշուք փառքով Իմ Զորությունն ու Իմ Ողորմությունը, որպեսզի փրկեմ ձեզ բոլորիդ...

Ես օրհնում եմ քեզ... ic:

(Պատգամը տևեց մի քանի շաբաթ մինչև ավարտվեց):

Մայիսի 2, 2001

Աղջի՛կս, Ինձ միշտ քո սրտում պահիր և թույլ տուր, որ Ես միշտ լինեմ ինչպես փառաբանության մի երգ քո սրտում:

Տեսնո՞ւմ ես, թե Իմ Աչքերը ինչպես են ուղղված քեզ վրա: Ես պիտի շարունակեմ ուսուցանել Իմ Գիտությունը քեզ Իմ Արքայական Գավիթներում, միշտ սովորեցնելով, թե ինչ ուղիով գնաս: Քանի որ Ես քո Խորհրդատուն եմ և Ուսուցիչը, ժպտա՛, թող քո դեմքը ժպտա, որովհետև շնորհը պարուրում է քեզ: Իմ Պալատում և Իմ Թագավորության Արքայական Գավիթներում Իմ փառքը որոտում է, և բոլորը լսում են բացականչություններ՝ «Փա՜ռք»:

Ես, որ Ամենակարող եմ, Թագավոր և Գերիշխան, քեզ պատիվ եմ արել քայլելու շափյուղաների [2] վրայով՝ կարմիր, շիկացած ածուխների փոխարեն: Ես առաջնորդեցի քեզ, և քո միջոցով շատ ուրիշների,

[1] Սաղմ. 8:5
[2] Շափյուղաները ներկայացնում են առաքինությունները:

միասնության և հաշտության ճանապարհով, բայց Իմ կողմից, Ողորմության այս սոսկ մի գործի համար, կեղծ վկաներ բարձրացան Իմ դեմ[1], և ֆշշացրին իրենց բռնությունը Իմ տված Խոսքերի և նրանց ողջ բովանդակության դեմ, որը վերակենդանացնում է հոգիներին: Բայց մի՛ անհանգստացիր, Ես հայտնի եմ նրանով, որ շուռ եմ տալիս աթոռներ, վեճեր ու փաստարկներ և իշխանություններ:

Այսօր, ձեր օրերում, Ես ողջ աշխարհին հայտնում եմ այն, ինչ ասել եմ ձեր հովիվներից[2] ոմանց կուրության մասին: Այդ հովիվները իրենց ձեռքերը դեպի Ինձ են բարձրացնում Սրբարանում՝ փառաբանելով Իմ Զոհաբերությունը, բայց չեն կարողանում զսպել զայրույթի և հպարտության իրենց հոգին՝ իրենց աչքերից սարսափելի կայծեր փայլատակելով: Արդար և ուղղամիտ են նրանք իրենց հռչակում, բայց իրականում նրանք քայլող դիակներ են: Նրանք մեծամտորեն հռչակում են իրենց արդարամտությունը, իրենց հավատարմությունն Իմ հանդեպ, բայց չեն սարսափում հակասել Իմ ողջ Ավետարանին՝ Իմ բոլոր սրբերի ու հրեշտակների աչքի առաջ այստեղ, Երկնքում: Իմ պատվիրանները մարմնավորում են հավատարմությունը, և նրանց շրթունքները պետք է Սուրբ Իմաստություն արտահայտեին, բայց Ես նրանցից միայն պարծենկոտություն եմ լսում, դրանով ավելացնելով Իմ Արցունքները սրբապատկերների վրա: Երբ հովիվն այդքան ցած է ընկնում, նա պետք է ետ դառնա՝ նորից սովորելու Իմ կերպերը, և Իմ պատվիրաններն ու Իմ Սիրո Օրենքը մեկնաբանելու տարրական սկզբունքները:

Մի՞թե չեմ ասել. «Պետք է սիրես քո Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ կարողությամբ, և որ պետք է սիրես քո մերձավորին, ինչպես ինքդ քեզ»: Նրանք չե՞ն սովորել, որ Դատաստանի Օրը իրենք դատվելու են համաձայն այն սիրո չափով, որ ունեցել են երկրի վրա: Ինչպե՞ս կարող են նրանք հավատալ, որ ապրում են Իմ մեջ և արմատացած են Իմ մեջ, երբ չարի կամքին են հանձնված: Լեզվի կոպտությունը, սրտի խստությունը տարրեր են, որոնք հակասում են Իմ Սրտին: Նրանք չեն սևեռում իրենց ուշադրությունը սրբության, հավատի, սիրո և խաղաղության վրա, ինչպես Սուրբ Գրքերն են ձեզ սովորեցնում: Մի՞թե նրանք չեն կարդացել. «Տիրոջ ծառան չպետք է մտնի վեճերի մեջ, այլ պետք է բարի լինի բոլորի հանդեպ»:

Ես մի անգամ ասացի[3], որ նրանց եկեղեցին փլվում է փտած փայտի նման, և Ես նրանցից լսում եմ միայն. «Երա՞շտ է»: Նրանք զրպարտող մեղադրանքներ են նետում իրենց հավատարիմ եղբորը[4], մահացու մեղք գործելով: Այսպիսով, նրանց սեփական շուրթերից որդեր են դուրս սողոսկում իրենց քայքայվող մարմիններից, որովհետև նրանք իրենց սրտում հաստատել են ցուցամոլության և ինքնահավանության մի մենաշնորհ: Դեռ որքա՞ն պետք է Ես համբերեմ նրանց վիրավորանքներին: Ես դուրս եմ եկել Իմ սրբապատկերներից, որ նախազգուշացնեմ նրանց, բայց նրանք իրենց օգտին չշրջեցին Իմ տված

[1] Ես հակացա, որ «Ինձ»-ը ասվեց նաև ինձ համար: Քրիստոսը միացրել էր ինձ Իր հետ, արտահայտելով Ինքն Իրեն այդ ձևով:
[2] Որոշ հույն ուղղափառ կուսակրոններ և քահանաներ:
[3] 1992թ. փետրվարի 18-ի պատգամը
[4] Հովհաննես Պողոս II Պապը

նշանը և դարձան նույնիսկ ավելի թշնամական Իմ հանդեպ: Ես խոսում էի նրանց հետ, իսկ նրանք չէին լսում: Ես հեկեկում էի, ինչպես սրինգ նրանց առջև, բայց նրանք ձևացնում էին, թե չեն տեսնում Իմ Արյան Արտասուքները: Ես բողոքում էի այն բռնության դեմ, որը նրանք կրում են իրենց սրտերում իրենց եղբոր դեմ [1], բայց նրանք չէին պատասխանում: Ես նվաստանում էի, աղերսելով նրանց, խնդրելով նրանց ինչպես մուրացիկ, մինչ տառապանքն Իմ Սրտում դառնում էր անտանելի, բայց նրանք խուսափում էին Ինձնից: Ես կանչում էի նրանց ետևից ողբալով, որ խուսափեն մահվան ճանապարհով քայլելուց, բայց նրանք ուշադրություն չդարձրեցին: Երբ Ես, ինչպես Դատավոր տիրական ձևով իջնեմ նրանց վրա, և մեղադրեմ նրանց իրենց հանցանքների համար, քանի որ դրանք իսկապես հանցանքներ են, Ես, անսահման զորությամբ, նրանց ցույց պիտի տամ, թե ինչպես էին նրանք խեղանդամ դարձնում Իմ Խորհրդավոր Մարմինը: Ո՞ւր կգնան նրանք այդ ժամանակ: Ո՞ւր կգնան Ինձնից խուսափելու համար: Ո՞ւր կփախչեն Իմ Ներկայությունից: Լեռան գագա՞թը: Ճանապարհի վրա՞: Խաչմերուկներո՞ւմ: Սրբարանո՞ւմ, թե՞ իրենց դարպասի մոտ: Ես այնտեղ կլինեմ...

Դուք հաստատապես արհամարհում եք Իմ ասածները Սուրբ Գրքերում, քանի որ, եթե ճշմարտապես հետևեիք դրանց, կկարդայիք, թե ինչ է գրված. «Մի՛ արհամարհիր մարդուն իր ծերության ժամանակ...» [2], այլ երկարիր ձեռքդ դեպի նա: Եթե դուք, որ ձեզ կոչում եք սուրբ և արդար, <u>ոչ</u> եք պահում որևէ մեկի դեմ, կարո՞ղ եք դուք Ինձնից կարեկցանք պահանջել: Դո՛ւք, որ զայրույթ եք տածում ձեր մեծ եղբոր [3] դեմ, մի՞թե Ես պետք է ներեմ ձեր մեղքերը: Ի՞նչիս են պետք ձեր ամենօրյա Տեր Ողորմյանները: Ինչի՞ս են պետք ձեր բազմաթիվ զոհաբերություններն ու ձեր խունկը: Դրանք չեն կարող ձեռք բերել Իմ ներողամտությունը ձեր մեղքերի հանդեպ:

Լսի՛ր Ինձ: Ես արտասվել եմ քո բոլոր թերացումների համար, բայց Իմ Սիրտը Սիրո և Ողորմության մի վիհ է, եղբայր: Ես Նա եմ, ով վերակենդանացնում է քո հոգին և պայծառացնում քո աչքերը: Ես բժշկություն եմ տալիս, կյանք և օրհնություններ: Եթե Ես ասեի քեզ հաճելի ու շողոքորթող խոսքեր, այդ Ես չէի լինի: Ես ասացի քո թերությունները, որպեսզի դու վերադառնաս դեպի Ինձ զղջացող սրտով, և Ես կբժշկեմ քեզ: Քո ամոթալի մերկությունը հիմա երևում է երկնքում Իմ սրբերին և Իմ հրեշտակներին: Դու ցուցադրում ես քեզ, եղբայր, ոչ միայն բոլոր ազգերին, այլև ողջ երկնքին: Այնուամենայնիվ, չնայած քո սարսափելի մերկությանը, Ես պիտի օգնեմ քեզ և նորից քեզ պիտի զգեստավորեմ Ինձնով, եթե խոնարհվես՝ ապաշխարելով և սրտիդ մոտ ընդունելով այն ամենը, ինչ Ես ասացի քեզ:

Ծալի՛ր քո ծունկը, Հունասատա՛ն, և խնդրիր Իմ Անվամբ, որ ներում ստանաս: Բարձրացի՛ր և հարություն առ քո մահից, թույլ տալով Իմ Մորը, որ առաջնորդի քո քայլերը, ինչպես մի երեխայի՝ շափյուղաների [4]

[1] Հովհաննես Պողոս II Պապը
[2] Սիրաք 8:6
[3] Հովհաննես Պողոս II Պապը
[4] Շափյուղաները ներկայացնում է «առաքինություններ» բառը:

ճանապարհի վրա և դեպի սրբություն: Կանչիր Նրան և թույլ տուր քո Սուրբ Մորը, որ վերականգնի քեզ քո մեռած գործերից, որպեսզի քո ծառայություններն Ինձ՝ դառնան վեհ ու իշխանական, երբ դրանք արվեն մաքուր սրտով: Թույլ տուր քո Օրհնյալ Մորը վերականգնել քո սրբությունը և օգնել քեզ, որ մեկ անգամ ևս աճես դեպի փրկություն:

Կանչի՛ր սրբերին, որպեսզի նրանք քեզ ցույց տան Լույսի Տան ճանապարհը, և քո խոսքերն այլևս դատարկամիտ չեն լինի, այլ կդառնան խաղաղության մեղեդի, մինչ դու հետ կվերցնես այն ամենն, ինչ ասում էիր ընդդեմ Ինձ[1], ապաշխարելով հողի և մոխրի մեջ: Ո՜հ, ե՞րբ կտեսնեմ ես, որ Արևելքի Տունը սուրբ համբույրով ողջունի Արևմուտքի Տանը: ic:

Աղջի՛կս, նայիր այն խորը վերքերին, որ նրանց բերանները հասցրել են Իմ Մարմնին: Օրհնյա՛լդ, մի՛ դադարիր Ինձ փնտրել: Ես քո վերևն եմ և քո կողքին: Ե՛կ, մտիր քո Տիրոջ ուրախության և խաղաղության մեջ: Նայի՛ր քո առջև և ոչ թե ետ, և մնա Ինձ պատվաստված: ic:

(Այս պատգամը ստացվեց Պապի՝ Հունաստան կատարած այցելության ընթացքում, և շատերն էին այնտեղ բողոքում նրա այնտեղ գնալու համար: Պատգամը հանձնվեց շատ արքեպիսկոպոսների, ինչպես նաև դրվեց եպիսկոպոս Քրիստոդուլոսի սեղանին՝ Հովհաննես Պողոս II Պապի մեկնումից երկու օր առաջ:)

Մայիսի 5, 2001

Աղջի՛կս.

Բարձրացրո՛ւ հոգիդ դեպի Ինձ, և քո մտահայեցության մեջ լսիր Իմ հոգոցները, որոնք վերածվում են խոսքերի...

Խաղաղությո՛ւն քեզ: Այսօր ես կանչում եմ բոլորին, որ քննեն իրենց: Ես կանչում եմ յուրաքանչյուր հոգու, որ քննության ենթարկի իրեն: Իմ ուղիները սքանչելի ուղիներ են, որոնք տանում են դեպի կատարելություն: Դուք կոչված եք կատարյալ լինելու: Ես տվել եմ և դեռ շարունակում եմ ձեզ տալ հեշտ ու մատչելի մի ձև՝ Ինձ հասկանալու, և հասկանալով Ինձ, ինչպես հրեշտակներն են Ինձ հասկանում, դուք կարող եք ձեռք բերել Իմ Խաղաղությունը:

Ես ձեզ բոլորիդ տվել եմ սիրո և ողորմության այս վսեմ ու ազնիվ թեման, որպեսզի առաջնորդեմ ձեզ դեպի այդ Խաղաղությունը, որը շատ ավելի մեծ է, քան դուք կարող եք ըմբռնել, և որը զարդարում է ձեր հոգին ինչպես մի հարս, որը հագել է իր պսակադրության ճերմակ հանդերձները: Իմ սիրո թեման ձեզ բոլորիդ հնարավորություններ է տալիս ղեկավարել Ինձ հետ՝ դեռևս այստեղ երկրի վրա: Ուզո՞ւմ եք լինել Աստծո կատարյալ զավակը: Այլ կերպ ասած, ուզո՞ւմ եք կոչվել «հաղորդակից աստվածությանը»: Ուրեմն մտեք առաքինությունների ճանապարհը: Աշխատեք ձեր փրկության համար և ետ մի՛ նայեք: Ես պատրաստ եմ աստվածացնել ձեզ և գրել ձեր անունը կյանքի գրքում:

[1] «Ինձ» բառը նկատի ունի նաև Հովհաննես Պողոս II Պապին: Սա հաստատում է Կտակարանում Քրիստոսի խոսքերը, երբ Նա ասում է մեզ. «Ինչ էլ որ անեք Իմ եղբայրներից ամենափոքրին, դա Ինձ կանեք»:

Թող ձեր վկայությունը ցույց տա, որ իր մեջ ճշմարտություն կա: Թող ձեր վկայությունը ցույց տա Իմ Զորությունը, թող հայտնի դառնա բոլորին, որ Ես՝ Քրիստոսը, խորապես արմատացած եմ ձեր մեջ, և որ դուք խորապես արմատացած եք Իմ մեջ: Այս միության մեջ, որ աստվածային սերը մեզ իրար միահյուսեց, դուք կհետևեք կյանքի օրենքին: Իսկ Ես, Սրտիս մեծագույն հաճույքով, տեսնելով, թե սիրո այս աստվածային միությունը ինչ բերեց Իմ սիրով ներշնչված հոգուն, կսովորեցնեմ նրան քայլել Ինձ հետ, լցնելով նրա միտքն այն ամենով, ինչ պատկանում է Իմ Թագավորությանը, ամեն ինչով, որ բարձրագույն է, ամեն ինչով, որ հրապուրում է Իմ Հոգին՝ ուրախության արցունքներ բերելով Իմ Աչքերում, ամեն ինչով, որ մաքուր է և ազնիվ, ամեն ինչով, որն ապացուցում է, որ այդ հոգին իսկապես Իմ մասնիկն է, ապացուցելով աշխարհին, որ նրան տրված բոլոր Գիտությունը Ինձնից է գալիս:

Հիմա դուք իմացաք, որ Իմ Մարմնի մեջ ապրում է Աստվածության ամբողջությունը, և ահա թե ինչու դուք նույնպես կարող եք գտնել ձեր սեփական լրումը: Եթե ասում եք, որ իսկապես սիրում եք Ինձ, ուրեմն դեռ ինչո՞ւ եք պահում այս հեռավորությունն Ինձնից: Ինչո՞ւ եք դեռևս ետ նայում: Դուք գիտեք, որ պետք է նմանվեք Ինձ: Նորից եմ ասում. մի՛ զարմացեք, երբ Ես խնդրում եմ, որ քննեք ինքներդ ձեզ:

Եթե ասում եք. «Ես փորձում եմ ճիշտը անել, ես փորձում եմ չփչանալ: Ես փորձում եմ լինել Սուրբ Երրորդության բերկրանքը և շնչել Նրա մեջ, որովհետև իմ շուրջբոլորը մահ է, և մեծ ջանքեր են պահանջվում մահվան սերմերով չպարուրվելու համար: Ես շրջվում եմ դեպի ձախ և զգում մահվան շունչը: Ես շրջվում եմ դեպի աջ և տեսնում՝ խավար: Սակայն ես փորձում եմ չքայլել խորը ստվերում: Եթե իմ խեղճ ոտքերը հեռացել են առաքինությունների ճանապարհից, կամ, եթե իմ սիրտը աղտոտվել է ապերախտությունից ու մեղքից, կամ, եթե իմ միտքը մոլորվել է անօրեն ոլորտներում և նենգ ու դավաճան մտքերում, արի՛ ինձ օգնության և փրկիր իմ նենգ բնությունը, քանի որ ես անզգա չեմ Քո բարության հանդեպ, Տե՛ր: Ես միայն թույլ եմ և թշվառ»: Քանի որ Ես հոր պես խնամել եմ ձեզ՝ ձեր ծննդյան պահից սկսած, Ես իրավունք ունեմ փորձելու ձեր սիրո իսկությունը, հետևաբար, կպատասխանեմ ձեզ. Ես փորձում եմ ձեր արդարամտությունը: Ես ուզում եմ, որ դուք լինեք, ինչպես մի իշխան կամ իշխանուհի, երբ գաք Ինձ հանդիպելու այս կյանքից հեռանալու ժամանակ: Ես ուզում եմ, որ դուք լինեք արքայական ծիրանիների մեջ, զվարթ՝ ձեր Տիրոջ ուրախությամբ: Ես ուզում եմ, որ դուք լցված լինեք աստվածային լույսով՝ փայլելով ներսից և դրսից: Ես ուզում եմ, որ դուք լինեք հավատարիմ Իմ Հավատարմությամբ, անթերի՝ Իմ Կատարյալ Պատկերով, մաքուր՝ Նրանով, ով Մաքուր է:

Լսե՛ք, արդյոք արևի շողերն իրենց փառքի մեջ, կամ լուսնի փայլը, երբևէ ստվեր գցե՞լ են ձեր հանդեպ ունեցած Իմ Սիրո վրա: Հանուն Իմ Անվան և հանուն այն Սիրո, որը Ես ունեմ ձեր հանդեպ, Ես Ինքս Ինձ ցույց տվեցի բոլորիդ: Ես եկա ձեր սենյակը, այցելելու ձեզ Իմ Աստվածային Ներկայությամբ: Երբեմն Ես եկել եմ որպես զմուռսի բուրմունք, ուրիշ անգամ պտտվեցի ինչպես խնկի քուլա՝ բուրավետ դարձնելով ձեզ և ձեր սենյակը: Մի՞թե նաև չեմ հայտնվել ձեր սրտում,

որպես լույսի մի ճառագայթ: Իմ փառավոր Ներկայությունն ամենուր է: Ես լցնում եմ երկիրն Իմ Սիրով, և քանի՞ անգամ Ես թողել եմ Իմ Գահը, խոնարհվելով ձեզ վրա, գաղտնի համբույրներ փչելով ձեզ վրա: Եկե՛ք, դուք բոլորդ, որ տենչում եք սովորել, եկե՛ք և սովորեք, թե ինչպես ողջունեք Ինձ ոչ միայն բառերով, այլևս սիրո բարի գործերով: Թող ձեր լեզուն խոսի Իմ մասին, Իմ Աստվածայնության մասին, Նրա մասին, ով Առաջինն է և Վերջինը, Նրա մասին, ով հայրություն է արել ձեզ, Նրա մասին, ով զարդարել է ձեզ և դարձրել ձեզ մայր տաճար: Ինձ մի՛ զրկեք այս ուրախությունից:

Ես ողորմածաբար թույլ եմ տվել ձեզ աճել Իմ Տան մեջ: Ուրեմն ուրախություն և գոհություն ներշնչեք Իմ մեջ, ասելով «Հայր մեր»-ը այն ձևով, որն Իմ Հայրը սովորեցրեց Իմ աղջկան: Մի՛ եղեք Եզեկիայի տեսիլքի ցրված ոսկորների պես, այլ լցված եղեք Իմ Սուրբ Հոգու փառքով, որը Ես չնորհեցի Իմ աշակերտներին, և ավելի շատ օգտագործեք այն, քանի որ կթառամեք սխալ օգտագործելով, երբեք չդադարելով Իմ Անունը կանչելուց՝ վերակենդանացնելու համար ձեր հավատարմությունը, և ձեր մեջ կաթեցնելու Իմ կենարար էությունը:

Երբևէ լսե՞լ եք տաղանդների[1] առակը: Չե՞ք նկատել, թե ինչպես է Իմ Տունը[2] կանչում ձեզ բոլորիդ՝ Նրա Տունը հարստացնելու: Չե՞ք նկատել, որ սա հաշվետվության և ձեր հավատարմությունն ապացուցելու մի ժամանակ է:

Ես ձեզ բոլորիդ նվիրում եմ սրբագործող չնորհներ՝ այս օծյալ տարիների ընթացքում: Աղքատները ստացել են, ինչպես նաև հարուստները: Ես ոչ մեկին չեմ զրկել: Բայց Տան Տերը հիմա խնդրում է ձեզ առաջ գալ՝ ապացուցելու Իր հանդեպ ձեր հավատարմությունը, որպեսզի ձեզ ասի. «Ապրե՛ս, բարի և հավատարիմ հոգի, դու ցույց տվեցիր, որ կարող ես հավատարիմ լինել փոքր բաներում, ուրեմն ես քեզ կվստահեմ ավելի մեծ բաներ: Արի՛ և միացիր քո Տիրոջ ուրախությանը»:

Մի՛ հիասթափեցրեք ձեր Տիրոջն ու ստիպեք Նրան ասել. «Դու ի՞նչ ես արել Ինձ համար: Ես որևէ բարի գործ չեմ տեսել քեզնից»: Դուք կարող եք առաքինի դառնալ նաև, եթե ճշմարտորեն ապաշխարեք և բացեք ձեր սիրտը Իմ հանդեպ, որպեսզի Ես ձեր մեջ բուժիչ բալասան լցնեմ: Մի՛ կտրվեք Ինձնից, թույլ տվեք Ինձ լցնել ձեր միտքն Իմ Ներկայությամբ, և Իմ Ժառանգությունը պիտի լինի ձերը: Ողողե՛ք Ինձ ուրախությամբ և աճեք հասակով և զորությամբ, ինչպես փղոսկրե մի աշտարակ:

Ուստի մի՛ զարմացեք, երբ Ես ասացի. «Ես պիտի իջնեմ Հովտում, որ տեսնեմ՝ թե արդյոք Իմ խաղողի որթերը բողբոջո՞ւմ են, և նրանց կոկոնները՝ բացվո՞ւմ են»: Ինչո՞ւ են ձեզանից ոմանք սարսափում Իմ հարցումներից: Գուցե դուք, Իմ արքայական Տուն, հետապնդում եք քամո՞ւն[3]: Եթե այդպես է, քամի կդառնաք դուք: Ես հավատարիմ եմ Իմ մեծ Ողորմությանը, և ձեր այրող ուրացությունից ձեզ ազատելու համար, զավակս[4], Ես ուղարկել և դեռ անդադար ուղարկում եմ Սուրբ Հոգուն, որ աստվածացնում է ձեզ, միացնելով ձեզ Ինձ հետ:

---

[1] Մատթ. 25:14-30

[2] Միևնույն ժամանակ ես լսեցի նաև. «Չե՞ք նկատել, թե ինչպես է Տան Տերը...»:

[3] Ես այնպես հասկացա, որ «քամին» նշանակում էր «սնափառություն»:

[4] Հիսուս դիմում է բոլորին:

Նայիր հիմա և իմացի՛ր.

- Երանելի են նրանք, որոնց սրտերը բաց էին մաքրագործվելու համար և նախապատրաստված՝ ստանալու Սուրբ Հոգին վերափոխվելու համար: Նրանք պիտի աստվածանան և կոչվեն Ամենաբարձրյալի որդիներ և դուստրեր, նրանք պիտի կոչվեն աստվածներ՝ հաղորդակից դառնալով աստվածությանը:

- Երանելի են նրանք, ովքեր բուրումնավետ են դարձել շնորհի միջոցով, և նրանց բուրմունքը, ինչպես խնկի մի քաղցրաբույր խառնուրդ, բուրումնավետ են դարձնում Իմ Սրբապատկերներն իրենց ներկայությամբ, նրանք պիտի ժառանգեն Իմ Թագավորությունը:

- Երանելի են նրանք, ովքեր ստացել են Իմ Սուրբ Հոգին և դարձել Իմ Թագավորության ժառանգակիցներ, լուսավորելով ուրիշներին Իմ խոսքերով և Իմ Գիտությամբ՝ և հնարավորություն տալով աշխարհի մնացած մասին հասկանալու Եկեղեցու հիմունքներն ու կանոնները: - Նրանք պիտի կոչվեն Իմ Թագավորության համագործակիցներ, քանի որ նրանք պիտի կառավարեն Ինձ հետ:

- Երանելի են նրանք, որոնց հավատը բացահայտվում է բարեգործության և Ամենաբարձրյալին մատուցվող ծառայությունների միջոցով, որոնց ձայնը հնչում է ինչպես մեղեդի՝ պատվելով Իմ Տունը: Նրանք պիտի ստանան Իմ լիությունը և պիտի ծածկվեն Սուրբ Հոգու շնորհով: Նույնիսկ իրենց մահից հետո նրանց մարմինը պիտի մարգարեանա[1]:

- Երանելի են նրանք, ովքեր թույլ տվեցին Իմ Սուրբ Հոգուն ղեկավարել իրենց և ժողովել իրենց Իմ Փարախում: Նրանք պիտի դառնան մեկ Մարմին և ընդմիշտ միացած պիտի լինեն Մեզ՝ Սուրբ Երրորդությանը:

- Երանելի են նրանք, ովքեր պղծությունների մեջ մխրճված լինելուց հետո, թույլ տվեցին Սուրբ Հոգուն առաջնորդել իրենց՝ դեպի ապաշխարություն, արմատախիլ անելով իրենց միջից ամեն չարը՝ թույլ տալով Նրան, որ Ինքն Իրեն լցնի նրանց մեջ և աղբյուրի պես հորդի նրանց սրտում՝ կենդանացնելով ինչ որ մեռած է այնտեղ[2]: Ինչպես վարդերը գարնան օրերին, նրանք պիտի փթթեն ու ծաղկեն, քանի որ նրանք պիտի լինեն նոր և սուրբ՝ թագավորելու կոչված քահանայության մի մասը: Այո՛, նրանք պիտի կոչվեն Աստծո ժողովուրդ, որոնք Ինձ գովաբանություններ պիտի երգեն այն բանի համար, որ առաջնորդել եմ իրենց Իմ հրաշալի Լույսի մեջ:

- Երանելի են նրանք, ովքեր հանուն Ինձ կամավոր զոհաբերել են իրենց և իրենց ժամանակը՝ ներդրավվելու ձեր ժամանակների մարտի մեջ, կռվելու չար ուժերի դեմ, դրանցվելով որպես զինվորներ: Սուրբ Հոգու

[1] Նշանակում է, որ նրանց գործերը ընդմիշտ կհիշվեն:
[2] Միևնույն ժամանակ ես լսեցի «նյութ» բառը:

շնորհը պիտի պահի նրանց և պիտի գոտեպնդի զորությամբ, ձևավորելով նրանց, որ դասվեն գերակշիռ Հրեշտակապետեր Միքայելի և Ռաֆայելի շարքին:

- Երանելի են նրանք, ովքեր ուղղում են իրենց թերությունները, ովքեր հրաժարվեցին իրենց կրքերից հանուն Ինձ, և այն ամենից, ինչը նրանց գերի էր պահում այս աշխարհին, և Սուրբ Հոգու շնորհի միջոցով դարձան Իմ Աստվածային Ծրագրի գործակիցները, զարդարելով Իմ Տունը: Նրանց Հոգին և նրանց ողջ էությունը պիտի դառնա ինչպես փառավոր մի Տաճար:

- Երանելի են նրանք, ովքեր սովորեցին ծարավի լինել Ինձ և փափագեցին փարվել Ինձ ու տիրապետել Ինձ: Նրանք հայտնագործել են հրաշքների Հրաշքը, որն է՝ ճանաչել Ինձ և հասկանալ Ինձ՝ Իմ քաղցրության մեջ:

Նա, ով ապրում է Իմ մեջ և սնվում է Ինձնից, բարձրացվել է Իմ կողմից և փառավոր կատարելությամբ զգեստավորվել Ինձնով, պիտի կարողանա ասել. «Ես միացած եմ Աստծո հետ, քանի որ ես հիմա ապրում եմ, դեռևս երկրի վրա և արարածների մեջ, Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ... Ես նման եմ մի ամրացված քաղաքի, որովհետև իմ պատերը վերակառուցվել են հենց Իր՝ Սուրբ Հոգու կողմից: Սուրբ Հոգին իմ պատերի ներսում ունենալով, ես նախասահմանված եմ հավիտենական փառքի: Սուրբ Հոգին պատել է իմ հոգին մի երկնային գեղեցկությամբ, որպեսզի կարողանամ մտնել Քո Փառքի մեջ, ո՛վ Քրիստոս, և ապրել հավիտյան: Իմ քայլը չի լինի իմը՝ այլ Նրանը: Ես պիտի քայլեմ Աստծո հետ, որովհետև մարմնավոր հաճույքներից ես հեռացել եմ, և հիմա իմ հոգին ապրում է երանության մեջ և անապական է՝ վայել Սուրբ Երրորդությանը և Նրա Սուրբ Ներկայությանը»:

Մայիսի 21, 2001

Տե՛ր,
մեր անօրինությունները մեծ են,
բայց ների՛ր մեզ, օգնիր մեզ,
որ մեր մարմինը
մեկ անգամ ևս ծաղկի:
Դուրս քաշիր յուրաքանչյուրին
այն ցանցից, որը
թշնամին է տարածել նրանց վրա,
քանի որ միայն Դու ես
մեր Ապաստանը, մեր Ժայռը,
մեր Ամրոցը և մեր Կյանքը:

Ժանտախտը,
որ որս է փնտրում աշխարհում
և գործում միայն գիշերով,

մահվան ստվերում,
բայց ավերում է տարածում
իր խարազանով օրը ցերեկով,
հիմա նշմարվում է
Քո Փարախի վրա:
Դու կանգնելո՞ւ ես,
որ փրկես Քո ժողովրդին
չար մարդկանց ճահճից:

Սուրբ Գրքերն ասում են.
«Յահվեն սիրում է նրանց,
ովքեր հրաժարվում են չարից,
Նա հսկում է
բարեպաշտ մարդկանց հոգիները,
փրկելով նրանց
չար մարդկանց ճանկերից»:

Ուրեմն թող Քո Զորեղ Բազուկը
գա մեզ օգնության:
Թող թշնամին դողա
Քո Մեծության առջև:
Թույլ մի՛ տուր, որ թշնամին ասի.
«Որքան անվստահելի է
ձեր Աստվածը...»:

Թշնամին մարտահրավեր է նետում
Քեզ, փորձելով Քեզ,
Աստվա՛ծ իմ, որ տեսնի,
թե Դու ինչ կանես:
Ուրեմն, իմ Յահվե,
որ վերակենդանացրեցիր ինձ
Քո Ողորմությամբ,
ցույց տուր Քո Մեծությունը,
և այն, որ իսկապես
Դու մեր Ապահովությունն ես,
մեր Ժայռը և մեր կողքին ես:
Ցույց տուր Քո Փառքը
և Զորությունը,
հիշի՛ր Քո առաքիչներին,
Քո ժողովրդին
և բոլոր նրանց, ովքեր ծառայեցին
Քեզ կրքով ու եռանդով:

Ուրեմն ե՞րբ ես Դու որոտալու
Քո վճիռները երկնքից:
Ե՞րբ ես ոտքի կանգնելու և
հարվածելու երկիրը Քո Գայիսոնով,
լռություն հայտարարելու համար:

Քո հանդիմանական մի հայացքից
երկրի բոլոր տարրերը
կրակով կբռնկվեն:

Քո մի շարժումից
երկիրը կամայանա:

Քո մի զայրալից խոսքից
աստղերը գլորվելով
ցած կընկնեն երկնքից՝
թափվելով մեզ վրա:

Տե՛ր, ես Քո ձեռքի գործն եմ,
և Դու մի կայծ ես դրել իմ ներսում,
որ ինձ կենդանի պահես: Եթե
ես հիմա այրվում եմ «պաթոսով»[1],
որ առաքինիները,
Քո ժողովուրդն ու արդարները
արդարություն գտնեն Քո մեջ,
այդ Քո Բոցից է:

Շնորհիր ինձ, որ տեսնեմ
Քո սրբերի հանդեպ
արված արդարությունը,
ցույց տուր Քո Զորությունը,
հրամայելով, որ
ամեն ինչ դառնա բարի:

Թող Քո Հաղթանակը գա:

Ես մի անգամ ասացի քեզ, Վասուլա, որ Իմ ժողովուրդը՝ Հոտը, թափառում է այս ու այն կողմ: Այդ պատճառով ես նշանակեցի շնորհի մի ժամանակաշրջան: Շնորհի այս ժամանակաշրջանում ես մտադիր եմ ցուցադրել Իմ Անվան Սրբությունը, որպեսզի, ով էլ որ ինքն իրեն պղծած լինի, վերադարձի հնարավորություն ունենա:

Ես գալիս եմ շնորհի այս ժամանակաշրջանում, որ խրախուսեմ ձեր բոլորին ապրելու սրբորեն և հետևելու Իմ Պատվիրաններին: Իմ Անունը հասավ շատ երկրներ և հեռավոր կղզիներ: Ես շրջեցի աշխարհով մեկ, ինչպես կանխասացել էի քեզ, Իմ Կանչով, որպեսզի յուրաքանչյուր ականջ լսի Ինձ և հնարավորություն ունենա հայտնաբերելու Ինձ: Անթափանց սրտի համար Ես տվեցի հատուկ շնորհներ, որ բացեմ այն Իմ աստվածային Լույսի ճառագայթների միջոցով, և ինչպես Լույսի մի ճառագայթ, ես փայլեցի նույնիսկ այդ սրտերում:

Ի՞նչ ասեմ ես այսօր: Մի՞թե ես չկարողացա կերակրել Հոտը: Մի՞թե ես Աչքերս շրջեցի ձեր հիվանդներից և միայնակ մարդկանցից: Մի՞թե ես չեմ հարթեցրել ձեր ուղին ձեզ համար, որպեսզի երբ քայլեք, չսայթաքեք:

[1] Հունարեն՝ կիրք:

Մի՞թե ես ձեզ բոլորիդ ցույց չեմ տվել Իմ Ողորմության խորքերը: Երբ ես տեսա ձեզանից շատերին մահվան հովիտ իջնելիս, և Կյանքի ճանապարհից հեռու լինելուց, մի՞թե ես չմիջամտեցի: Բայց, ա՜խ, ձեզանից որքան շատերն են դեռևս ըմբոստանում Իմ դեմ...

Ինչպես ես ասել եմ նախկինում լավին ու վատին: Մի՞թե ես քեզ չեմ ասել, աղջիկս, որ գնաս և ասես բոլորին, լավ թե վատ մարդկանց այս խոսքերը.

«Ես Իմ Ձայնը լսելի եմ դարձնում վերևից: Ես կանչում եմ բարձրաձայն, որպեսզի բոլորը լսեն, լավ թե վատ: Արդարև, Իմ Ձայնը հասել է աշխարհի ծայրերը: Լավը, ինչպես և վատը, պետք է ապաշխարեն: Լավը նրա համար, որ ճշտորեն չի կատարում Իմ Կամքը և չի աղոթում ճիշտ ձևով: Նրանցից շատերը մոտենում են Ինձ միայն խոսքերով: Վատը՝ անդադար մահացու մեղքեր գործելու համար, իրենց սրտի կարծրության և Իմ հանդեպ իրենց ունեցած անտարբերության պատճառով»:

Բայց ես կասեմ ձեզ, թե ինչ կպատահի, և ես ինչ նկատի ունեմ: Սուրբ Գրքերը սովորեցնում են ձեզ բոլորիդ, որ երբ ձեռքը դրվում է դութանի վրա, ոչ մեկը չպետք է ետ նայի, քանի որ դուք հարմար չեք լինի Աստծո Թագավորության համար:

Երբ դուք մեղքի գերի էիք, դուք ոչ մի պարտավորություն չէիք զգում արդարության հանդեպ, իսկ ի՞նչ ստացաք դուք դրանից: Ոչի՛նչ, բացի այնպիսի փորձառություններից, որոնք ստիպում են ձեզ հիմա չլինել, քանի որ այդ տեսակի վարքագծի վերջը մահ է: Բայց հիմա ձեզ մեկ անգամ ևս ցույց տրվեց ճանապարհը, և ազատ արձակվեցիք այն ճահճից, որը ձեր մեղքն ու մեղավորությունն է: Դուք դարձաք Աստծո ստրուկներ, բայց դուք սրբագործման վարձատրություն եք ստանում, որը վերջում կհասցնի ձեզ ձեր երկնային տունը: Իսկ մեղքի վարձը մահն է, բայց Իմ կողմից ձեզ տրված պարգևը հավիտենական կյանք է Իմ Որդու Հիսուս Քրիստոսի միջոցով:

Մեղքի մեջ բանտարկված կյանքից ես քեզ դարձրեցի ազատ մարդ, Վասի՛լիկի, ազատ՝ քայլելու առաքինությունների ճանապարհով, որը ես նախագծել եմ ձեր բոլորի համար: Շնորհի միջոցով ես քեզ թույլ տվեցի տեսնել երկնային գործեր, որոնց մասին դու ոչինչ չգիտեիր: Շնորհի այս ժամանակաշրջանում ես քեզ ցույց տվեցի Իմ ողջ Շքեղությունը, բայց, ձեզանից շատերի վրա նույնպես բոլոր այդ շնորհները հեղելուց հետո, շատերը դեռևս հեռու են Ինձնից:

Երբ ես հայտնի դարձրեցի Իմ Պատգամները այս սերնդին, այն բարձրաձայն ազդարարեց. «Եկե՛ք և լսեք Աստծո Խոսքը»: Մարդիկ վազում էին բազմություններով: Նրանք խմբվում էին Իմ պատվիրակի շուրջբոլորը՝ լսելու Իմ Խոսքերը: Նրանք լսեցին, բայց երբեք ամբողջությամբ չհասկացան Իմ Խոսքերը, և այդ նույն մարդիկ դեռևս լսում են, նրանք կարդում են, բայց Խոսքը չի ներթափանցում նրանց սիրտը, և նրանք դեռևս կարդում են, բայց նրանց սրտերը հեռու են Ինձնից: Նրանք չեն գործադրում Իմ Խոսքերը: Ավելի շուտ նրանք նշաններ են փնտրում երկնքում, որովհետև նրանց սրտերը դեռևս չեն դարձել դեպի Ինձ: Այո՛, նրանք լսում են Իմ Խոսքերն անտարբերությամբ, և այդ է պատճառը, որ նրանք չեն գործադրում

դրանք: Աստծո Թագավորությունը ձեր մեջ է, բայց դուք չեք տեսնում այն, քանի որ չեք ապաշխարել, ոչ էլ տվել եք Ինձ kenosis[1]:

Եթե այս հրաշքը, որովհետև դա մի հրաշք է, երբ Ես խոսում եմ, ձեզ ոչինչ չարեց, և դուք չեք տեսնում դա, ուրեմն, ինչպե՞ս է, որ դուք, որ այդքան շատ եք ստացել, ակնկալում եք դատարկաձեռն մտնել Երկինք: Աստված շատ մոտ է ձեզ, և սակայն այդ ինչպե՞ս է, որ դուք չեք տեսնում Նրան: Չե՞ք լսել հրեշտակների հրավերը Իմ խնջույքին: Չե՞ք տեսել Իմ Ջեռքի առատ պարգևները: Երբ Ես աղաղակում եմ, աշխարհը քայքայվում է և շատ թագավորություններ երերում են:

Դու հարցրեցիր Ինձ, աղջի՛կս, թե երբ Ես Իմ վճիռները պիտի որոտամ Երկնքից: Ես ճշմարտորեն ասում եմ քեզ. երբ Ողորմության և Շնորհի այս ժամանակն ավարտվի... Հետո դու խնդրեցիր Ինձ, որ թույլ տամ Իմ Հզոր Ջեռքը դա ձեզ փրկելու թշնամուց: Այսքան ժամանակ Ես քեզ հետ եմ եղել, և դու դեռևս չե՞ս տեսել Իմ Հզոր Ջեռքը: Ես ասում եմ քեզ ամենայն լրջությամբ, ով որ շտապի ապաշխարությամբ և ջանք թափելով վերադառնալ դեպի Ինձ, Ես, Իմ հերթին, պիտի մկրտեմ նրան Սուրբ Հոգով, որ դառնա անբիծ, և այնպես, ինչպես Ես եմ ցանկանում որ նա լինի:

Դու ասում ես, որ թշնամին մարտահրավեր է նետում Ինձ: Այո՛, նա միշտ Ինձ մարտահրավեր է նետել, բայց մի՞թե Ես քեզ չեմ սովորեցրել մերժել նրան[2]: Մի՞թե Ես միշտ չեմ կանգնել, որ փրկեմ Հոտը չարի ճահճից: Սատանան ոչ մի զորություն չունի մարդու վրա, եթե նա լավ արմատացած է Իմ մեջ:

Իսկ նրանք, որոնց սրտերը դեռևս ճահճի մեջ են, այն օրը, երբ նրանք կկանչեն Ինձ, նրանք կտեսնեն Ինձ որպես իրենց Դատավորը: Բայց շնորհի այս ժամանակներում Ես գալիս եմ Ողորմությամբ և դիմում եմ ձեզ բանաստեղծությամբ: Իմ ասած խոսքերը բարեպաշտություն են և առաքինություն: Ուրախության յուղով եմ Ես օծում բոլոր նրանց, ովքեր մոտենում են Ինձ՝ կնքելով նրանց ճակատները: Սա է Իմ մոտեցումը ձեր բոլորի հանդեպ այս ժամանակներում: Իմ մոտեցումը փրկություն է, Փրկարար Օգնություն, Ողորմություն: Եթե միայն հասկանայիք, թե ինչ եմ Ես առաջարկում, դուք չէիք կանգնի այդտեղ, դուք կբացեիք ձեր սրտի դուռը և կողջունեիք Ինձ: Ես ձեզ բոլորիդ վրա տեղում եմ հրաշքներ, որ հանդերձավորեմ ձեր հոգին և այն հարմար լինի Իմ Թագավորության համար:

Իսկ դո՛ւ, աղջիկս, որ բնակվում ես Իմ պարտեզում, մնա խաղաղ, որ կարողանաս լսել Իմ Ձայնը: Ես օրհնում եմ քեզ և նրանց, որոնց Ես տվել եմ քեզ, որ օգնեն քեզ կրելու Միասնության Խաչը, որն Իմ Որդին վստահեց քեզ: Ուշադրություն մի՛ դարձրու նրանց, ովքեր հսկում և քննում են այն լավը, որ առաջ է բերում Իմ Գործը, բայց չեն հավատում: Նրանց հպարտության ալիքները պիտի փշրվեն մի օր: Դու պիտի տեսնես Իմ Զորությունը, երբ Իմ Գործը կբազմապատկվի և կներգործի աշխարհի վրա, որն ընկղմված է մեղքի մեջ:

[1] Հունարեն բառ, որ նշանակում է «տարածություն»:
[2] Ես հասկացա, որ չարը մարտահերավեր է նետում Աստծուն մեր միջոցով:

Արի՛, խոկա Իմ Ներկայության մեջ: Ես քեզ հետ եմ:

Օգոստոսի 3, 2001

Խաղաղություն քեզ:
Սիրելիս, այս խոսքերն ասա Ինձ Իմ Տոնակատարությանը.

«Տա՛ր ինձ, Սիրելիս,
Քո Ոտնահետքերով,
որոնք արձակում են
զմուռսի քաղցր բուրմունք:

Տա՛ր ինձ ձեռքս բռնած
Քո Սենյակը[1], Թագավոր իմ,
ուր առանձնության մեջ
ես կլսեմ Քո արքայական Ձայնը:

Պայծառացրո՛ւ իմ դեմքը,
ո՛վ մարդկության Սիրահար,
Քո ժպիտով:
Թող քնքուշ սիրո Քո հայացքը,
ամեն ինչ գերազանցող
մի նայվածք,
ամեն զգացումից այն կողմ,
լինի ինձ վրա:

Եթե ես եբևէ լքել եմ Քեզ, կամ
նույնիսկ մի ակնթարթ զարմացրել
իմ թուլության պատճառով,
ես աղերսում եմ
Քո Ամենասուրբ Սրտին
կարեկցանք ցուցաբերել
իմ Հանդեպ:

Դու իշխանություն ունես
կյանքի և մահվան վրա,
և հիմա ես գալիս եմ Քեզ մոտ,
որ իմ ապաստանը գտնեմ
Քո Սուրբ Սրտում,
ուր մարդ գտնում է Կյանք
և հարատև հանգիստ»:

[1] Սուրբ Սիրտը

Տե՛ս, սա այն Սիրտն է, որն արյուն թափեց քեզ համար և ողջ մարդկության համար: Սա մխիթարանքի և ողորմության Սիրտն է: Սա այն Սիրտն է, որը չնորհ արեց քեզ: Ով էլ որ պաշտի այս Սիրտը, պիտի ծածկվի Իմաստության քողով, դեղեցկացնելով ձեր հոգին, որ այդպես զարդարված նմանվի Ինձ:

– Կարո՞ղ ես ասել Ինձ, աղջի՛կս, թե որտեղ ես դու ծնվել:

Ես ծնվել եմ Քո Սուրբ Սրտում[1]*:*

Այո՛, դու ծնվել ես Իմ Սուրբ Սրտում: Բոլորը, ովքեր պատկանում են Ինձ, ծնվել են Իմ Սրտում:

Զե՞ս կարդացել. «Նա կկանչի Ինձ. «Դու իմ Հայրն ես, իմ Աստվածը, իմ փրկության ժայռը»: Ուստի Ես նրան կդարձնեմ Իմ առաջնեկը, երկրային թագավորներից ամենաբարձրը», քանի որ նրա ազնվականությունը գալու է թագավորների Թագավորից, և որովհետև նա պիտի ապրի բարձունքներում նրանց մեջ, որոնց Ես աստվածացրի Իմ Աստվածայնությամբ: Երկրային թագավորները պատկանում են երկրային տարրերին, բայց նրանք, ովքեր ծնվել են Ինձնից, պիտի ունենան ավելի բարձր տիրապետություն երկնքում: Սովորական մարդիկ սոսկ մի չունչ են քամու, իսկ կարևոր մարդիկ՝ ընդամենը խաբկանք: Եթե երկուսն էլ միասին դրվեն կշեռքի վրա, նրանք օդից էլ թեթև կլինեն[2]: Ուստի, ասացե՛ք ձեր հոգուն, սիրելիներս.

«Հանգչիր միայն Աստծո մեջ,
քանի որ Նա քո հույսի
միակ աղբյուրն է»:

Թող ձեր սիրտը հրճվի և ձեր հոգին նորոգվի, քանի որ այս ժամանակներում Ես հեղում եմ Իմ չնորհները մարդկության վրա, ինչպես երբեք նախկինում չի պատահել պատմության մեջ: ic:

Օգոստոսի 14, 2001

Իմ Յահվեն ներքև է նայում
Իր Գահից մեզ վրա,
մեզանից յուրաքանչյուրի վրա,
ուսումնասիրելով մեզ:
Մեր միջից ո՞վ է պատրաստ
առաջարկել մեր Հորը
առաքինությունների մի պսակ:

Ո՞վ է քո բնակչության միջից,
իմ Յահվե,
մագլցում Քո սուրբ լեռը:

[1] Տիրոջ Հոգին տվեց ինձ այս բառերը...
[2] Սաղմ. 62:9

Քանի՞սն են խոսում
ճշմարտությունը
իրենց սրտի խորքից:
Ո՞վ է անարատ:

Ես օգնություն ստացա,
և դեռևս ստանում եմ, քանի որ
իմ հոգին իր թշվառության մեջ
մշտապես կանչում է
Քեզ օգնության:

Եթե Դու, նույնիսկ մի փոքրիկ պահ
ինձնից շրջես Քո Սուրբ Դեմքը,
իմ կյանքը կկծկվի
և կիջնի Մահվան ստվերի մեջ:

Դու իմ Լույսն ես, իմ Խրախճանքը,
Աստվածությունը,
որն ինձ կենդանի է պահում:

Ես կմնամ կենդանի,
քանի դեռ Դու շարունակում
ես շնչել իմ մեջ:

Դու Քո անասելի գթառատությամբ
այնքան շատ շնորհներ ես
թափել ինձ վրա:
Դու շնորհել ես ինձ,
որ կանչեմ Քեզ որևէ ժամանակ
և զրուցեմ Քեզ հետ,
մի պարգև, որ ուրիշների համար
դժվար է հավատալ:

Օ՜, Տե՛ր, օգնի՛ր ինձ ընդունելու
նրանց բոլոր մեղադրանքները:

Խաղաղություն քեզ: Փոքրիկ ծաղիկ, Իմ յուրայինը:

Ինչո՞ւ չպետք է Ես ազատ զգամ խոսելու քեզ հետ: Կամ, արդյոք Ես պե՞տք է մարդկանցից խորհուրդ հարցնեմ հիմա(...)[1] Դեռ ավելին... Քեզ ազատ զգա կանչելու Ինձ, երբ ցանկանաս: Ես՝ Յահվեն, տվել եմ քեզ այս պարգևը: Ես ազատ եմ տալու ում որ կամենամ և որքան որ կամենամ: Ուրախացրո՛ւ Ինձ, ազջի՛կս, Ինձ միշտ քո մտքում պահելով:

[2]Ես եմ դրել նրան քո ճանապարհի վրա:

Ամեն մի քայլ, որ դուք կանեք Իմ Անվամբ, Ես օրհնում եմ: Ձեր բերանից արտաբերված ամեն մի հնչյուն, որ Ինձ է վերաբերվում, Ես օրնում եմ: Տե՛ս, ավելի շատ վստահություն ունեցիր: Ես դրել եմ Իմ

[1] Այստեղ ես մի բան ասացի Յահվեին՝ իմ Աստծուն:
[2] Այդ պահին ես տեսա ինձ ծանոթ մի քահանայի պատկերը:

խոսքերը քո բերանում, ուրեմն ուրախ եղիր: Շարունակիր բարիք գործել: Բարիքը գալիս է Ինձնից:

Արի՛, մենք պիտի շարունակենք Իմ Գործը այս մակարդակի վրա[1]: Թույլ տուր Ինձ որոշ ժամանակ ևս զբաղեցնել քեզ: Յուրաքանչյուր բառը գալիս է Ինձնից: Ես ընտրել եմ քեզ որպես Իմ բնակավայրը, ուրեմն մի՛ վշտացրու սիրտդ նրանց պատճառով, ովքեր մեղադրում են քեզ: Ես՝ քո Արարիչը, քեզ հետ եմ, ուրեմն ուրախ զգա: Երբեք մի՛ մոռացիր այդ... Դու չափազանց փոքր ես դա հասկանալու համար... Երբեք չկասկածես: Արի՛:

Օգոստոսի 20, 2001

Վասո՛ւլա, իմացիր, որ Ես՝ Յահվեն, սիրում եմ քեզ: Երբեք մի՛ կասկածիր Իմ Ներկայությանը: Ես Եմը քեզ հետ է և հրճվում է քեզնով:

Առաջ գնա, դու կստանաս Ինձնից: Թող ոչ մեկն այս անապատում, որտեղ Ես դրել եմ քեզ, չհամոզի, որ Ես ամեն օր քեզ հետ չեմ: Պաշտի՛ր Ինձ և փառաբանի՛ր Իմ Անունը: Օրհնյալ է նա, ով փայփայում է Իմ աննկարագրելի գեղեցկությունը և ծարավի է Ինձ: Նա պիտի դառնա Իմ կատարյալ պարտեզը: Եվ Ես պիտի բնակվեմ նրա մեջ:

Աղջի՛կս, դիմադրիր չարի հարձակումներին՝ անտեսելով նրա հարձակումները քեզ վրա: Իմ Անունը ամբողջապես դրոշմված է քեզ վրա, և հենց միայն սա կատաղեցնում է նրան: Այո՛, նա օգտագործում է մարդկանց և հաճույք է ստանում, երբ քահանայական հոգիներն են չարախոսում քեզ: Բայց չարը մահ կբերի ամբարիշտներին:

Մինչ չարը պտտվում է փրփրալով՝ կատաղած չան պես, դո՛ւ, Իմ Վասուլա, պետք է անես հակառակը՝ բարիք գործես, խաղաղություն փնտրես, սիրո հետամուտ լինես, արդարություն և առաքինություն սերմանես այնտեղ, ուր անառակություն կա: Եղի՛ր Իմ բուրավետ բույրը: Մի՛ մոռացիր, թե ումից ես դու սերում: Հետևելով Իմ Ուսուցումներին, դու կապացուցես, որ Իմ կողմից ես ընտրված՝ լինելու Իմ երկինքը, ծածկված ամենապայծառ համաստեղություններով: Ճանապարհ ընկիր դեպի Ինձ բերելու այլ երկինքներ, որոնցում ես կարողանամ հաստատել Իմ Թագավորությունը:

Ո՜հ, Վասո՛ւլա, ճգնաժամի պահը հիմա նշմարվում է երկրի վրա: Ինչ այս երկիրը ցանել է, հիմա հնձելու է: Սատանան դուրս պիտի թափի իր փսխունքը ձեզ վրա, սերո՛ւնդ: Նրա ողջ արհամարհանքը, որը նա միշտ ունեցել է ձեր հանդեպ, դուրս պիտի թափվի: Անօրինությունները, խաբեությունները, անարդարությունները և գարշելի մեղքեր ամբողջովին ծածկել են ձեր ձեռքերը: Ծայրահեղ հպարտությունը, եսասիրությունը, համառությունը, անաստվածությունը, ամեն տեսակի

[1] ուսուցումների մակարդակ

անվերջ մեղքերը, որոնք իրենց գագաթնակետին են հասել, ես պիտի ցրեմ, ինչպես ծուխն է ցրվում և այլևս չի երևում: Սպասիր և կտեսնես:

Ցահվե է Իմ Անունը:

Նոյեմբերի 13, 2001

Վասո՛ւլա, արդեն տասնվեց տարի է, ինչ ես կանչել եմ քեզ, և այս տարիների ընթացքում թույլ եմ տվել, որ քո աչքերը տեսնեն շատ բաներ և ականջները լսեն առավել ևս ազդեցիկ բաներ: Իմ պատգամների միջոցով ես լցրեցի քեզ և ուրիշներին աստվածային լույսով, որ կարողանաք հասկանալ Ինձ:

Ես Լույսն եմ և վեր ամեն մի լույսից: Ես, Իմ շքեղությամբ, գերազանցում եմ բոլոր լույսերին, բոլոր լուսավորություններին: Ես կարող եմ լույս տալ ամեն մեկին Ինքս Ինձ բացահայտելով նրան: Ձեր միտքը, հետևաբար, պետք է միացած լինի Իմ մտքին, և ես կողողեմ այն Իմ աստվածային լույսով, որպեսզի տեսնեք այնպիսի բաներ, որոնք ոչ մի աչք չի տեսել, և հասկանաք ամեն բան Իմ Մտքով, Իմ աստվածային Լույսի միջոցով...

Ես լցրեցի քեզ Իմ մասին Գիտությամբ ու Հասկացողությամբ: Այո՛, զավակս, ես քեզ դարձրեցի մի խորան, որի վրա ես դրեցի Իմ մարգարեության ծառայությունը, շնորհելով քեզ ամեն տեսակի հնարավորություններ օրհներգելու Իմ խոսքերը, որպեսզի նրանց ձայնը լսվի յուրաքանչյուր սրբարանում[1]: Իմ հրճվանքի մեջ ես լցրեցի քեզ խորհրդավոր ասացվածներով, որ բարձրացնեմ Իմ Անունը և հասցնեմ հեռավոր երկրների ու ժողովուրդների մոտ:

Ես լույս զետեղեցի քո սրտի ներսում, որ քեզ ցույց տամ Իմ գործերի հոյակապությունը: Քո ականջները լսեցին և դեռևս լսում են Իմ Ձայնի փառքն ու գեղեցկությունը, և քո հոգևոր աչքերը տեսան Ինձ դեմ առ դեմ: Ես ծաղկեցնում եմ[2] այս հողը, խրախուսելու համար նրանց, ովքեր կորցնում էին իրենց հույսը Իմ լռության պատճառով, որպեսզի հույս ստանան և վերակենդանանան:

Ես, ինչպես ասացի, ծաղկեցնում եմ այս հողը, բայց շատերն ուրախանալու փոխարեն մնացին անտարբեր, և նրանց անտարբերությունը կատաղությամբ ոտնակոխ արեց այն ամենը, ինչ ծաղկում էր, երդվելով Իմ Անունով, թե ինչպես պիտի ոչնչացնեն ամեն ինչ, որ ծաղկում է: Այս էր նրանց հանապազօրյա մտահոգությունը:

Ես Աստված եմ, և ես մեծ կարողություն ունեմ ներելու, ինչպես և դուրս թափելու Իմ բարկությունը: Ես հնարավորություն տվեցի յուրաքաչյուր մարդու հասնելու Ինձ: Ես նույնքան հնարավորություն տվեցի յուրաքանչյուր ազգի, որ կարդա Իմ Սիրո Օրհներգը: Շատերը արհամարհեցին Իմ ասածները:

Ես լրջությամբ հարցնում եմ յուրաքանչյուրին. դուք ի՞նչ արեցիք Սուրբ Գրքերի հետ: Սուրբ Գրքերը մի հայելի են, որ արտացոլում են

[1] Ես հասկացա, որ Աստված նկատի ուներ «հոգիներին»:
[2] ուղարկելով օրհնություններ

Ինձ: Այդ ինչպե՞ս է, որ, եթե ասում եք գիտեք Սուրբ Գրքերը, բայց չեք ճանաչում Իմ խոսքը: Այդ ինչպե՞ս է, որ այդքան հեշտությամբ հակասում եք ճշմարտությանը: Ես ձեզ ասում եմ, եթե դուք հիմա չեք ճանաչում Ինձ Իմ ասածների մեջ, դա պարզապես նրանից, է, որ դուք չգիտեք, ոչ էլ հասկանում եք Սուրբ Գրքերը, որոնք Սուրբ Հոգու բանալին են:

Եթե ձեզանից ոմանք ասում են. «Մենք կարիք չունենք այս մարգարեական հայտնության: Մենք պարտավոր չենք լսել այն, կամ կարդալ այն, որովհետև Սուրբ Գրքերը բավարար են մեզ, և մենք կարող ենք սովորել ամբողջ գիտությունը նրանցից», ձեր անվստահության մեջ Ես հարցնում եմ ձեզ. «Գիտե՞ք, թե ինչու չեք հավատում, և գիտե՞ք, թե ինչու եք դուք այդքան անտարբեր և վճռական փակել ձեր սիրտը: Գիտե՞ք, թե ինչու ոչինչ չեք փնտրում դրանից այն կողմ: Այդ նրանից է, որ դուք չունեք Սուրբ Հոգին, որը կարող էր ձեզ բարձրացնել խավարից Իր Լույսի մեջ՝ լուսավորելով ձեր հոգին, որ տեսնեք Որդուն Հոր հետ միասին՝ Իրենք Իրենց ձեզ ցույց տալիս: Սուրբ Հոգին կշնչեր ձեր մեջ մի հարության շունչ զորացնելով ձեզ, ձեզ կյանք տալով Իմ մեջ: Կարո՞ղ է հոգին, որ մեռած է, հասկանա Սուրբ Գրքերը և գործադրի դրանք, եթե նա կենդանի չէ:

Եթե դուք հասկացած լինեիք Սուրբ Գրքերը, որոնք հայելու նման են, արտացոլելով Իմ Պատկերը, դուք չէիք ասի. «Սուրբ Գրքերը բավական են ինձ համար»: Ո՛չ, ընկերս, Սուրբ Գրքերը բավական չեն, եթե դու չես տիրապետում Սուրբ Հոգուն: Սուրբ Հոգու Լույսի միջոցով է, որ Հայտնությունը կարելի է հասկանալ, և այն ամենն, ինչ նախկինում թվում էին անթափանցելի առեղծվածներ Սուրբ Գրքերում և կնքված էին, կդառնան ճանաչելի և պարզ, որովհետև գիտության բանալին կտրվի ձեզ Հոգու կողմից:

Բայց, Ես ճշմարիտ եմ ասում ձեզ. Որևէ մեկը, որ կամովին ընդունել է Ինձ, նույնիսկ հիմա, երբ Ես խոսում եմ, օրհնյալ է, որովհետև Իմ միջոցով նա ստանում է գիտություն և Իմաստություն մի այնպիսի զարմանալի ձևով, որ ասես նա կարդացել է բոլոր Սուրբ Գրքերը: Նա ինքը նման կլինի մի բարձրաձայն գրքի՝ կրելով իր ներսում այն աստվածային ներշնչումները, որ մարդ ստանում է շնորհի միջոցով: Հետո, աղջի՛կս, երբ նա կարդա Սուրբ Գրքերը, կտեսնի ու կհասկանա ոչ միայն բառերը, այլ, ինչպես դու ես զգացել, Վասո՛ւլա, նա կտեսնի ու կհասկանա դրանց բովանդակության խորը հոգևոր իմաստը՝ իր հոգու աչքերով:

Ուստի, մի՛ հակառակվեք Իմ պատվիրակներին, որոնք նման են բարձրաձայն գրքի, և մարգարեության ծառայությամբ են զբաղվում: Նրանք գալիս են Ինձնից: Նրանք չեն հայտնում ավելին, քան Սուրբ Գրքերն են պարունակում, բայց առաջնորդում են ձեր կյանքը մի նոր ձևով ապրելու ճշմարտապես Իմ մեջ, բարելավելով ձեր կյանքը, տալով ձեզ հույս և մխիթարություն: Ես կարող եմ ամեն մի թշվառ էակի վերածել մի Տաճարի:

Մի՛ դատեք, և Ես պիտի դամ ձեզ մոտ, որ Իմ ասածները իրականություն դարձնեմ: Սուրբ Գրքերն Իմ՝ ձեր Աստծո Պատկերն են, մի՛ թերագնահատեք դրանք, բայց մի՛ ասեք, որ գիտեք դրանք, երբ հեռու

եք Ինձ ճանաչելուց: Հետևեք Իմ Պատվիրաններին և կատարեք դրանց ասածները, որպեսզի կարողանաք տեսնել Ինձ: Իմ Խոսքը կատարելը կառաջնորդի ձեր Հոգուն ճանաչելու Ինձ: Այդ դեպքում, և միայն այդ դեպքում, դուք հաղորդակից կդառնաք աստվածությանը՝ և ոչ թե օրենքով:

Չե՞ք հասկացել սրա իմաստը. «Հոժարակամ լսիր Աստծուց եկող որևէ խոսք»: Դուք լսո՞ւմ եք: Յուրաքանչյուր արարածի գործերն իր առջևում են: Աղետները, դժբախտությունը, սովը, տառապանքները, պատերազմները, արյունն ու մահը այժմ փոխարինել են Իմ ծաղիկներին[1] ձեր սեփական ձեռքով և ձեր մեղքերի միջոցով:

Արդեն շատ տարիներ են հիմա, որ Ես օրհնում եմ այս չոր հողը, թափվելով ձեզ վրա ինչպես մի գետ, թրջելով այն, ինչպես մի հեղեղ Իմ օրհնություններով: Ես ցուցադրեցի հրաշքներ երկնքում, և Ես շարունակում եմ ձեզ մոտ ուղարկել Իմ հրեշտակներին ոտաբոբիկ, որ բոցավառեն Իմ Խոսքով ձեր սրտերը: Սերո՛ւնդ, Ես ուղարկեցի նրանց ձեզ զգուշացնելու, որ մինչև չապաշխարեք, չաղոթեք և հատուցումներ չանեք ձեր մեղքերի համար՝ ուղղելով ձեր կյանքերը, և մինչև չգնահատեք Իմ Սուրբ Հաղորդությունը և սրբորեն չապրեք՝ միացած Ինձ հետ, Ինձ դնելով ինչպես Կնիք ձեր սրտերում, դուք ձեր սեփական մեղքով ձեզ վրա կբերեք աշխարհի ողջ չարիքը: Ամեն ինչ, որ գալիս է հողից, վերադառնում է հողին: Ողջ աշխարհը լցված է այդպիսի չարիքով:

Ես խնդրեցի ձեզ վերադառնալ դեպի Ինձ, բայց Իմ սերմը[2] մեռած լինելով չլսեց Ինձ, և անդադար շարունակեց վիրավորել Ինձ: Դե՛, տեսեք, երկինքը վերևում դողում է Իմ Այցելությունից[3]: Լեռներն ու երկրի հիմքն այսօր դողում են ձեր անօրինություններից: Բայց ո՞վ անհանգստացավ, երբ Ես ձեզ տասը տարի առաջ նախազգուշացրեցի այն պատժի մասին, որը գալու էր, եթե չապաշխարեք: Ո՞վ փորձեց հասկանալ, թե ինչպես եմ Ես շարժվում: Եվ հիմա, ասացե՛ք Ինձ, ո՞վ պիտի ասի, թե արդարություն է արվել: Ձեզնից որևէ մեկը սպասո՞ւմ էր, որ Աշտարակները կընկնեն ձեր սեփական մեղքերի և չարիքի հետևանքով: Եվ սակայն, ա՜խ, Ես նախազգուշացնում էի ձեզ, բայց ձեր ժրաջան առևտուրը լցրել է ձեր սերնդին բռնությամբ, և փոխանակ հենվելու Հոր կրծքին՝ հանգչելով Նրա վրա, դուք մեռաք հենց այն պահին, երբ նախընտրեցիք հենվել ոսկու և արծաթի վրա: Եվ սակայն ձեր սեղանը մինչ օրս մնում է դատարկ:

Ես ձեր Խնջույքն եմ, ձեր Հարստությունը, և եթե Ես՝ Աստված, չեմ դարձել ամեն ինչ ձեզ համար, ապա ինչպե՞ս եք ակնկալում ձեռք բերել ձեր վարձատրությունը երկնքում: Անկախ նրանից, թե ինչ եք դուք, և ով եք դուք, Ես ցանկանում եմ ձեր բարեկեցությունը: Ահա թե ինչու Ես հայտնում եմ Իմ ասածները պարզ մարդկանց, ովքեր մարգարեական պաշտոնի միջոցով, որ Ես հաստատել եմ նրանց մեջ, գալիս հանում են ձեր ոտքերի մոտ, որ այս վսեմ դանձը դնեն ձեր ոտքերի առջև: Դեռ ավելին, Ես նորոգել եմ նրանց Սուրբ Հոգով, որպեսզի այն, ինչ որ

[1] Փոխաբերական բառ՝ օրհնությունների համար:
[2] Այսինքն՝ մենք
[3] Այլ կերպ ասած, Աստծո հայտնությունը այս պատգամների միջոցով շատ զորեղ է և բացահայտ:

նրանք ասելու լինեն, անկախ նրանից՝ սովորեցնում են ձեզ, թե ուղղում ձեր սխալները, նրանք այդ անեն ամենայն իշխանությամբ:

Ես խնդրել եմ այդ սիրելի հոգիներին հրաժարվել այն ամենից, որ խանգարում է նրանց գալ Ինձ մոտ, և ունենալ միայն մեկ ձգտում, որն է Իմ Եկեղեցու բարեկեցությունը, և պատրաստ լինել կռվելու այն բոլոր չարիքի դեմ, որ փորձում են հասցնել Իմ Խորհրդավոր Մարմնին: Այո՛, իհարկե, նրանք կհալածվեն իրենց արած գործի պատճառով, և նրանց գոյությունը կդիտվի որպես սպառնալիք մեռածների կողմից: Բայց Ես օծել եմ նրանց: Եվ եթե ոմանց աչքում նրանք երևում են անկարևոր և անիմաստ, Իմ Աչքում Ես գնահատում եմ նրանց ավելի, քան բոլոր թանկարժեք քարերը, բոլոր արքայական իշխանությունների և կայսերական գանձերի հետ միասին վերցրած: Նրանք Իմ Աչքում սիրելի են և ազնիվ, քանի որ այդ Ես եմ, որ կրթել ու աճեցրել եմ նրանց: Օծված Իմ Գավիթների յուղով, նրանք մեծ բազմություններ պիտի գրավեն, որ համալրեն Իմ Խորհրդավոր Մարմինը՝ Եկեղեցին, որն ավերակ է դարձել հովիվների անփութության պատճառով:

Տե՛ր, Դու հասկանում ես, սա պատճառներից մեկն է, որ ինձ հետապնդում են: Դա այն պատճառով է, որ Դու մեղադրում ես նվիրապետությանը:

Գիտեմ: Բայց քեզ տրվել է խոսքը, և Ես ձևավորել եմ քեզ, որ ուղարկեմ այս հավատուրաց աշխարհը՝ խոսելու Իմ Անունով:

Հովիվները բաժանված են, հակադրվելով մեկը մյուսին: Նրանք ապրում են հոգևոր քայքայման մեջ, և եթե ոմանք դեռևս հոժարակամ և նվիրվածությամբ են կրում Իմ Խաչը Իմ Տան համար, նրանք նույնպես հալածվում են այդ հանցագործների կողմից: Կարո՞ղ են նրանք[1] ասել, որ իրենք բծախնդրորեն հնազանդվել են Ինձ: Եթե նրանք ասեն «այո՛», ուրեմն բացատրեք Ինձ ձեր բաժանումը: Բաժանումը մեղք է: Դուք վստահաբար գիտեք սրա իմաստը. «Յուրաքանչյուր թագավորություն, որ բաժանված է ինքն իր մեջ, ավերվում է, և ինքն իր մեջ բաժանված ոչ մի քաղաք կամ տուն կանգուն չի մնա»[2]: Հավատի բնորոշ նշանը նրանց մեջ բացակայում է. այնտեղ այլևս սեր չկա...

Նույնիսկ, եթե այս բաժանումն ուղղակիորեն նրանցից չի գալիս, այլ նրանց նախնիներից, նրանք բորբոքում են այս կրակը, որը գալիս է ստորգետնից՝[3] այն կենդանի պահելով: Ուստի հիմա Ես խնդրում եմ Իմ հովիվներին ապաշխարել՝ ճշմարիտ զղջումով, թույլ տալու համար, որ այս հսկայական ուժի միջոցով փոխակերպություն տեղի ունենա: Ճշմարիտ զղջումն այն դարպասն է, որն առաջնորդում է հոգիներին խավարից դեպի լույս:

Տե՛ր իմ, իմ սիրտը չի ունեցել բարձրամիտ փառասիրություններ, սակայն ներիր իմ հանդգնությանը՝ Քեզ այս հարցը տալու համար.

«Եթե Քո հովիվներից ոմանք կարդան մինչև այստեղ, և հասնեն այն բառերին, որոնք Դու հենց նոր ասացիր, նրանցից ապաշխարություն

[1] օրենքը խախտողները
[2] Մատթ. 12:25
[3] ժոխքից

խնդրելու վերաբերյալ, ապա նրանք չե՞ն լինի այն անձիք, որոնց մասին Դու ասացիր, որ լի են եռանդով Քո Տան հանդեպ և հավատարմորեն կրում են Քո Խաչը, Աբելները, ինչպես Դու անվանում ես նրանց, որոնք ընթերցողներն են և կամենում են լսել այն, ինչ Դու ասում ես, որովհետև նրանք չեն փչացրել իրենց պարզությունը:
Արդյոք ես սխա՞լ կլինեմ, եթե ասեմ, որ Քո պատգամների ընթերցողները նրանք են, ովքեր անկեղծ են ու նաև հավատարիմ Քո Տանը:
«Ինչպե՞ս Քո խոսքերը պիտի հասնեն նրանց, որոնց Դու ցանկանում ես, որ լսեն, ովքեր Քո Գործերը չար են անվանում: Դու կանչում ես, բայց շատ քչերն են լսում: Նրանցից ո՞վ կլսի: Այն հովիվնե՞րը, ովքեր արդեն ապրում են միասնությունն իրենց սրտերում:

Մի՛ անհանգստացիր այն հարցերի մասին, որոնք քո մտքի և ընկալման սահմաններից այն կողմ են: Ես ունեմ միջոցներ Իմ ասածները ուղղելու նրանց, ովքեր փրկության կարիք ունեն... Քանի որ հայտնի է, որ Ողորմությունը Իմ մեջ է գտնվում[1]:

Իսկ նրանց համար, որոնց դու անվանում ես անկեղծ և հավատարիմ հանդեպ Իմ Տանը, Ես քեզ կասեմ հետևյալը. միայն Իմ Պատգամների կարդացողները և հետևողները չեն, որոնք անկեղծ և հավատարիմ են Իմ Տան հանդեպ, այլ Ես պահել եմ Ինձ համար ճշմարիտ նվիրյալներ՝ ընտրված շնորհով, ովքեր մնացել են հավատարիմ և ովքեր կամենում են կրել միասնության Իմ Խաչն իրենց ուսերին, և իրենց գործերի միջոցով բուրումնավետ դարձնել ոչ միայն Իմ Մարմինը, այլև ողջ աշխարհը:

Այլ խոսքով, միայն նրանք չեն, որ անկեղծ են ու հավատարիմ, ովքեր շնորհի միջոցով կանչվեցին և պատասխանեցին՝ լսելու համար Իմ խոսքերը քեզ տրված այս Պատգամում:

Իսկ դո՛ւ, աղջիկս, տեսե՞լ ես, թե Ես ինչ եմ կատարել վերջերս:

Այո՛, Տեր, տեսել եմ:

(Դա իմ և Տիրոջ միջև էր):

Ուրեմն փառաբանիր Իմ Սուրբ Անունը, և դու պիտի տեսնես սրանից ավելի մեծ գործեր, սպասիր և կտեսնես... Եղիր համբերատար և թույլ

[1] Հենց այդ պահին, թեև դա այնքան էլ ակնհայտ չէր այդ պարզ արտահայտության մեջ, Տեր Հիսուս հայտնեց ինձ, որ Նա տառապում է Իր բոլոր հովիվների հանդեպ ունեցած մի աստվածային սիրով, և այդ է պատճառը, որ Նա հանդիմանում է նրանց այն ասիճան, որ Նա դողում էր զգայունությունից և սիրո հուզմունքից: Եվ կարծես ես լսում էի մեր Տիրոջը ողբալիս, ինչպես մի երեխա, որի հետ անարդար էին վարվել, ասելով. «Իմ Մարմինը ծեծված է, Իմ ընկերները խոցեցին Ինձ անճանաչելիության ասիճան: Նրանք վերցրին Իմ թիկնոցը, նրանք, ովքեր հսկում են Իմ Տունը, դաղարեցին Ինձ հետ զրուցել, և սակայն Իմ մեղը ծորացող շուրթերից է, որ նրանք կարող են ստանալ վերակենդանության բալասանը: Ես դողում եմ մինչև իմ էության խորքը նրանց կորցնելու մտքից: Նրանք խեղել են Իմ մարմնի անդամները, նրանք վերքեր են հասցրել Ինձ, իսկ երբ փորձվում են, վիրավորում են Ինձ: Իսկ եթե նրանց մեջ կան իմաստուն կամ սուրբ մարդիկ, ովքեր ցույց են տալիս իրենց բարի կյանքը՝ պսակված խոնարհությամբ և Իմ հանդեպ աստվածային սիրով, ապա նրանք վազում են նրանց մոտ կատաղած գայլերի պես, որ կտոր-կտոր անեն նրանց: Ճիշտ ինչպես Կայենը, որ պատկանում էր Չարին և կտրեց իր եղբոր կոկորդը: Այդ նույն ձևով են վարվում նրանց հետ...»:

տուր Ինձ շարունակել մեր ճանապարհը միասին: Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես, թե ուր եմ Ես քեզ առաջնորդել: Մի՛ վախեցիր, Իմ Ներկայությամբ դու խաղաղության մեջ կլինես... ic:

Դեկտեմբերի 10, 2001

Ո՛վ Տեր, բարձրացրո՛ւ Ինձ,
երբ ամենից շատ եմ վախենում
խաբված լինել:
Ցույց տուր Ինձ, որ Ես քայլում եմ
Քո Ներկայության մեջ,
Քո պայծառ Լույսի մեջ:
Թող որ լսեմ Քո հրեշտակների
թևերի թրթռումը
և սրբերի քնարը:
Ո՛չ, Ես շահագրգռված չեմ
այս աշխարհի մեծ գործերով,
հրաշալիքներով կամ
խորհրդանիշներով,
այդ ամենն Ինձ հետաքրքիր չէ:
Ինձ համար բավական է
քեզ ծառայելը, Տեր իմ:
Ծառայել Քո Տան մեջ
և թույլտվություն ունենալ
զբոսնելու Քո Գավիթներում ու
ընբոշխնել Քո զգեստների բույրը,
որոնք առաջարկվում են
յուրաքանչյուր հոգու:
Դիտել Քո Ձեռքերն ու Մատները,
որոնցից մաքուր զմուռս է կաթում,
երբ Դու պատրաստվում ես
օծել որևէ հոգու,
և տեսնել այն ուրախությունը,
երբ Դու անում ես այդ:
Քո բարությունը
մեր հանդեպ անսահման է,
և շնորհով Դու մեզ
վեր ես բարձրացնում՝
տեսնելու Քո Փառքը:

Իմ Վասուլա, վստահի՛ր Ինձ: Ես ավելին եմ, քան քո հոգու պահակը: Կրի՛ր Իմ Հաղորդությունը[1] քո սրտի մեջ և քո հերթին բուրումնավետ դարձրու Ինձ:

Ես այս մեծ գործի հեղինակն եմ: Քաղցրացրո՛ւ Իմ Սիրտը, քանի որ Ես լցված եմ վշտով և հիասթափությամբ: Քարոզի՛ր և խոսի՛ր և ասա այն խոսքերը, որոնք Ես եմ տվել քեզ: Զարդարի՛ր Իմ եկեղեցին և լցրու Իմ

[1] Այստեղ Քրիստոսը նկատի ունի Իրեն:

զավակների սրտերն ու միտքը այն ամենով, ինչ ես եմ: Մտքիցդ հանիր խաբված լինելու քո վախը, դու խաբված չես: Ես քո Հայրն եմ[1], և ես հոգ եմ տանում քեզ համար: Գուցե, աղջի՛կս, դու ավելի հաճա՞խ պետք է դաս ինձ մոտ և գրես: Դա քեզ կգոհացնի՞(...) Ո՛հ, ոչ, ես քեզ համար ժամանակ կգտնեմ:

Իսկ Դո՞ւ: Դու ցանկանո՞ւմ ես դա, Տե՛ր իմ: Ես սիրով կընդունեմ Քո պատասխանը:

Աղջի՛կս, ես դեռ Իմ առջև բազմաթիվ դատարկ էջեր ունեմ, որոնք կարիք ունեն լրացվելու՝ օծելով դրանք Իմ ազնիվ ու վսեմ թեմայով:

Իմ գործը նման է ձեռագործի: Ես նախագծել եմ բոլոր մանրամասնությունները կտավի վրա: Այդ պատճառով Ես պետք է գտնեի մի մաքուր կտավ, որի վրա Ես Իմ Սեփական Ձեռքով պիտի նկարեի վարդերի նախշազարդ նմուշը, որ մտքումս կար: Ոսկե թելով Ես ասեղնագործեցի քեզ, կենդանացնելով վարդերը, որ տարածեն իրենց քաղցր բուրմունքը շուրջբոլորը, բուրումնավետ դարձնելով ողջ տիեզերքը:

Դու նաև մի բարձրաձայն գիրք ես: Այնտեղ նույնպես, մի քանի դատարկ էջեր են մնացել, որ լրացվեն: Դու Իմ Ձեռքերի գործն ես, և Ես պետք է ավարտեմ Իմ Գործը: Լսե՞լ ես. «Նախանձախնդրությունը Իմ Տան Հանդեպ մաշեց Ինձ»[2]:

Այո՛, Տեր իմ, Ես կարդացել եմ դա Քո Խոսքում...

Ես Իմ Տան և Իմ տան անդամների Պահապանն եմ: Ես տառապում եմ, երբ տեսնում եմ Իմ Տունը ճեղքված: Կարդացե՞լ ես. «Ծուլության պատճառով շենքի գերանները կընկնեն ցած, և ձեռքերի պարապությունից տունը կկաթի»[3]: Իմ Տունը անուշադրության է մատնված: Յուրաքանչյուր տան համար որևէ մեկը վճարում է: Ես գնել եմ Իմ Տունը Իմ Սեփական Արյամբ: Ինչո՞ւ ոչ ոք չլսեց Իմ աղերսանքները, երբ Ես աղոթում էի Հորը, որ դուք մեկ լինեք: Այսօր, եթե դուք արձագանքեիք Իմ Կանչին՝ հնազանդություն ցուցաբերելով, դուք մեկ Բաժակ կկիսեիք՝ մեկ խորանի շուրջ:

Ա՛խ, Տեր, բայց քանի՞սն են
իսկապես հավատում,
որ Դու խոսում ես ինձ հետ,
ասելով մեզ, որ Քո
ամենամեծ ցանկությունը
միասնությունն է
և մեկ Բաժակ կիսելը՝ բոլորս

[1] (Ես. 9:5) Հիսուս սիրում է Իրեն «Հայր» կոչել, քանի որ դա գոհացնում է Իրեն ուրիշ անդամներ այդ ասելիս: Սրա համար ինձ անարդարացիորեն մեղադրում էին, որ ես չփոթում եմ Երրորդությունը...
[2] Սաղմ. 119:139
[3] Ժող. 10:18

մեկ Խորանի շուրջ հավաքված:

Նրանք պետք է բացեն իրենց սիրտը, և կհավատան...

Օ՜հ, Քրիստո՛ս, դեռ որքա՞ն պետք է
Քո Թանկագին Մարմինը խոցվի,
ճեղքվի տեգով և մասնատվի,
մինչև հասկանանք, որ մենք
միգուցե բաժանել ենք Քո Մարմինը,
հանդես գալով որպես
«բաժանողի» գործիքներ:
Մենք դա արել ենք առանց
կամենալու և անգիտակցաբար:
Օգնի՛ր մեզ գտնել և պահպանել
այն սուրբ մնացորդը,
որ Քո Եկեղեցին է կոչվում:
Օգնի՛ր մեզ այն նորից
իրար միացնելու:

Եթե եկեղեցիները կարողանան անցնել բացասական խոչընդոտներից այն կողմ, որոնք խանգարում են նրանց միավորվել, խոչընդոտներ, որոնք ըստ Սուրբ Գրքերի դեմ են հավատի միասնության, սիրո և պաշտամունքի իրագործմանը նրանց միջև, ապա Ես հավատարիմ կմնամ Իմ խոստմանը՝ խաղաղության մի ժամանակաշրջան թույլ տալով ողջ աշխարհում: Այդ խաղաղությունը ամեն մի էակի պիտի բերի Իմ Խորհրդավոր Մարմնի մեջ, իրականացնելով Իմ Խոսքերը՝ տրված ձեզ բոլորիդ Հայր Աստծուն ուղղված աղոթքի մեջ, երբ Ես խնդրեցի.

«Թող նրանք մեկ լինեն Մեր մեջ, ինչպես Դու Իմ մեջ ես, և Ես Քո մեջ, որպեսզի աշխարհը հավատա, որ այդ Դու էիր, որ ուղարկեցիր Ինձ»[1]: Իմ Աստվածային Շուրթերով ասված այս աղաչանքը, դեռևս յուրաքանչյուր վայրկյան, արձագանքում է երկնքից: Իմ արտասանած խոսքերը նշանակում էին, որ ողջ արարչությունը պետք է հոգևոր միասնության տրամադրված լինի, և ոչ թե պայմանագրով ստորագրված միասնության: Իմ Խոսքերը կատարելու համար եկեղեցիները առաջին հերթին պետք է ձգտեն խոնարհության և սիրո, շնորհներ, որոնք կարող են ձեռք բերվել Սուրբ Հոգու և խոր ապաշխարության միջոցով:

Մի՛ զարմացեք Իմ ձեռնարկումների համար: Նա, ով կանչվում է շնորհի միջոցով, դառնում է մեկ՝ Սուրբ Երրորդության հետ և այլևս մենակ չէ, որովհետև Մենք ապրում ենք նրա մեջ: Մենք բնակվում ենք նրա մեջ: Այս կերպ, Նրան Մեր բնակավայրը դարձնելով, Մենք տիրապետում ենք նրան, և նա տիրապետում է Մեզ: Ահա թե ինչպես Մենք կանչեցինք քեզ, աղջի՛կս, Մեր փառքի և Մեր պատվի համար, որ ծառայես Մեզ, ոչ թե մեկ կամ երկու ժամ, այլ որպեսզի դու լինես Մեզ հետ ամբողջ օրն առանց ընդմիջման, և մշտապես փնտրես Իմ Եկեղեցու բարեկեցությունը: Թող որ քո աշխատանքը խաղաղություն բերի, և

[1] Հովհ. 17:21

Եկեղեցին օգուտ ստանա Իմ բոլոր ասածներից, և այդ անելով նորից լցվի Իմ օրհնություններով:

Թող որ դու առաջընթաց ապրես Իմ աստվածային սիրո մեջ, աղջիկս, և որ Իմ համբույրը քեզ՝ նորոգի քո մարմինն ու հոգին: Մի՛ չփոթվիր, կամ անհանգստացիր նորից, երբ քեզ ճնշողները հետապնդեն քեզ: Եղիր ինչպես շուշան, ազատ հոգսերից: Թող Իմ հայրական համբույրը մխիթարի քո սիրտը և հանգստացնի քո դժվարությունները և բոլոր չփոթված մտքերը, որոնք Ինձնից չեն գալիս:

Գոհությամբ ստացիր Իմ բոլոր սփոփիչ խոսքերը և հասկացիր, թե որքան մոտ եմ Ես քեզ...

ΙΧΘΥΣ

2002

Հունվարի 7, 2002

Իմ խաղաղությունը ես տալիս եմ քեզ, ծաղի՛կս: Դու որևէ բան ուզո՞ւմ ես Ինձ ասել:

Այո՛, Հիսուս, ես ուզում եմ Քեզ մի բան ասել: Դու ինձ որպես Քո մարզի՞կն ես ընդունում[1]: Խնդրում եմ, մի՛ անտեսիր իմ հարցը:

Ես չեմ անտեսի քո հարցը: Ես կարող եմ եզրակացնել քո արտահայտությունից, որ դու վերջապես հասկացել ես, որ Ես իսկապես քեզ ներգրավել եմ պայքարի մեջ: Այո՛, դու Իմ մարզիկն ես: Ես քո Մարզիչն եմ, և Ես մարզել եմ քեզ, որ լինես այդպիսին, այնպես չէ՞:

Ուրեմն, թույլ տուր որ լինեմ Քո Տան հանդեպ բուռն եռանդով մի մարզիկ:

Թող որ քո բերանով Իմ Խոսքերը արձագանքեն հիմա և գալիք սերունդների համար: Իմ Խոսքերը կկասեցնեն հանդուգն մարդկանց, գիտուններին և բոլոր նրանց սրբապիղծ արտահայտությունները, ովքեր մինչ օրս չեն հայտնագործել Ինձ, այլ հենվում են իրենց սեփական զորության վրա: Պարզապես որովհետև նրանք ունեն հռետորի կարողություն, դա չի նշանակում, որ այն կբարձրացնի նրանց Սուրբ Հոգու թաքնված խորհուրդների մեջ:

Ա՜խ, Վասուլա, աղջի՛կս, հասկանո՞ւմ ես, թեթև բեռ չէ Միասնության խաչը կրելը: Ես պետք է ձևավորեի մեկին, դարձնեի մարզիկ, որը կվազեր Ինձ հետ՝ իրեն զրկելով այն բոլոր հրապուրիչ բաներից, որոնք կուշացնեին այդ մրցավազքը: Ես ձևավորեցի քեզ, որ լինես մարզիկ՝ հնարավորություն տալով քեզ, որ նվիրաբերես քո սիրտն ու միտքը Ինձ հետ համընթաց քայլելու, և ոչ թե ոտքերդ դանդաղորեն առաջ շարժելու:

Ես մի անգամ հարցրեցի. «Ո՞վ կարող է դիմանալ ցավին, զրպարտությանը, խոչընդոտների, նախատինքների և հալածանքների: Ո՞վ կարող է առանց հոգնելու մատակարարել Իմ ժողովրդին, Իմ Եկեղեցուն՝ այն ամբողջ Գիտությունը, որը նա կստանա Սուրբ Իմաստությունից, և միևնույն ժամանակ կլինի բոլորի համար հասանելի: Ո՞վ կհնազանդվի Իմ Կամքին և Պատվիրաններին և կզանազանի կեղծիքը ճշմարտությունից և ճիշտը՝ սխալից: Ո՞վ կարտահայտվի այնպես, ինչպես Ես կարտահայտվեի և լռությամբ կհամաձայնվի Իմ բազմաթիվ հրամաններին: Ո՞վ արքայական և մեղեդային ձևով կքարոզի Իմ Խոսքերը՝ բոցավառելով Իմ ժողովրդի սրտերը: Եվ ո՞վ

[1] Այս բառը ես ասացի ներշնչման միջոցով:

համբերատարությամբ կտանի բոլոր փորձություններն ու բոլոր խարազանները, երբ վկայում է Իմ և Իմ արարածների միջև խորհրդավոր միության մասին: Այս ամենը կրելու և կատարելու համար Ես պետք է գտնեի մի ծայրահեղ աղքատացած հոգի, թույլ և դյուրաբեկ: Այս տեսակ աղքատության մեջ Ես լայնություն և տարածություն եմ գտնում, բարձրություն և խորություն, որ այդ ընդարձակ տարածության մեջ լցնեմ Իմ վիթխարի Հարստությունը: Նրա թուլության մեջ Ես կլինեմ նրա անսպառ Զորությունը և նրա Արքայական Իշխանությունը: Նրա թուլության մեջ Ես կլինեմ նրա անասելի Առատաձեռնությունը»:

Ուստի Իմ մեծ ներողամտությամբ, Ես բարեհաճեցի ընտրել քեզ, ուսուցանել և ձևավորել, դարձնել քեզ մի մարգիկ: Հիմա Ես բավականություն եմ զգում տեսնելով քեզ, թե ինչպես ես ցանկանում գոհացնել Ինձ՝ կամենալով գնալ մարտի դաշտ: Միշտ եկ և փնտրիր Ինձ ինքնակամ կերպով ցանկացած ժամանակ: Ես քո Եղբայրն եմ, քո ազգակիցը: Ես, որ Հոր փառքի պայծառ լույսն եմ, և Նրա աստվածային բնության կատարյալ պատճենը, օրհնում եմ քեզ:

Տե՛ր, Քո այցելությունները հարություն տվեցին ինձ, և Ես փառաբանում եմ Քո անսահման Ողորմությունը: Սակայն, Տե՛ր, Ես մեկ այլ հարց ունեմ.

Եթե Դու ասում ես, որ իմ բերանից Քո Խոսքերը պիտի հնչեն և ազդեն շատերի վրա, այդ ինչպե՞ս է, որ Քո Խոսքերը երբեմն, նույնիսկ ջերմեռանությամբ ասված, այնքան քիչ ազդեցություն ունեն: Նույնիսկ, երբ դա գալիս է հենց Իրենից՝ Աստվածությունից՝ լցնելով իմ սիրտը աստվածային Սիրով, չեն ազդում բոլորի վրա: Այո՛, և նույնիսկ կան հոգիներ, ովքեր թվում է, չեն ներթափանցում Քո Խոսքի մեջ, այլ մնում են անտարբեր: Արդյոք քո մարգիկը դատարկ պտույտնե՞ր է կատարում:

Իմ շուրթերը ցանկանում են հռչակել Քո արդարությունը, Քո հրաշալիքները, և Ես հույս ունեի նրանցից ստանալ մի կարեկից պատասխան, որպեսզի այն սփոփի Քեզ, Քեզ դուրս բերելով Գեթսեմանիից և թույլ տալով, որ թարմ օդ շնչես, Գեթսեմանիի դառը և տառապալից օդի փոխարեն:

Ես երբեմն զգում եմ, որ Քո մարգիկը չի արդարացնում իրեն, և շատ մարզական աշխատանք իզուր է անցնում: Ես աշխատում եմ և սպառվում, որ հնազանդվեմ Եկեղեցին վերակենդանացնելու, զարդարելու և միավորելու Քո Հրամանին՝ վերակառուցելով եկեղեցու կառույցը Սուրբ Հոգու զորությամբ: Ես փորձում եմ հավատարմորեն հետևել ինձ տրված Քո Հրամանին, բայց թվում է, թե շատ քրտինք թափելուց և շատ մաքառելուց հետո, վերաձևավորելով կառույցի պատի մի մասը, արի ու տես, թե ովքեր են վազելով գալիս՝ նրանք, ովքեր ճնշում ու արգելում են իմ գործը: Նրանք հայտնվում են գիշերով, որ մի հարվածով ոչնչացնեն նոր կառուցված պատը: Իրենց վրա կրելով բոլոր խորհրդանշանները՝ ցույց տալու համար իրենց իշանությունը, նրանք սողում են օձերի պես և անում իրենց գործը: Ամբողջ քրտինքն ու արյունը, որ թափվեց այս տարիների ընթացքում, մի՞թե իզուր են եղել:

Եթե դևերը չեն ընտրում մարդկանց, որպեսզի նրանց միջոցով իրականացնեն իրենց չար պատուհասները, ապա ո՞վ է, որ թելադրում է այդ մարդկանց այդ եղկելի ոճիրները և այդ սատանայական կատաղի գործողությունները:

Ասա՛ ինձ, Տե՛ր և Գերիշխան, ես կատարե՞լ եմ Քո պահանջները: Արդյոք ես արժանավոր թեկուզ մեկ տեսանելի կառույց կանգնեցրե՞լ եմ Քեզ համար: Գուցե իմ աչքերը թափառում են դատարկ բաների վրա՞: Արդյոք միասնության համար բացվե՞լ է մի լույս կամ մեկ երկու մատնաչափ առաջ է գնացել: Իմ ստացած բոլոր շնորհներով հանդերձ, ես ընդհանրապես մի բան արե՞լ եմ՝ Քեզ պատվելու համար: Թե՞ պատվում եմ առանց որևէ արդյունք ձեռք բերելու: Դու մի մարգարեական պարգև շնորհեցիր իմ հոգուն, ի՞նչ եմ ես տվել ի պատասխան, Տե՛ր իմ, այն ամենի դիմաց, որով Դու զարդարեցիր ինձ Քո լիառատ Սիրով:

Ինչո՞ւմն եմ ես անփույթ գտնվել:

Դո՛ւ, որ բարձրացնում ես թագավորներ գահերի վրա, հայտնի ես նրանով, որ եթե նրանք հպարտանան իրենց անվերջ իշխանությամբ, Դու շղթայում ես նրանց՝ կապելով նրանց վշտի ու տառապանքի կապանքներով:

Ես վկա եմ, և ես կարող եմ վկայել, որ տեսել եմ և գիտեմ մեծ մարդկանց, ովքեր ընկել են, երբ չեն լսել Քեզ: Քո աստվածային արդարությունն իջել է նրանց վրա, ինչպես կայծակի հարված՝ ոչնչացնելով նրանց իրենց հպարտության հետ միասին: Սակայն, Քո Ողորմությունը չի պակասել՝ նրանց մի քանի անգամ ցույց տալու իրենց արած ամեն ինչը և հպարտության այն բոլոր մեղքերը, որ նրանք կատարում էին:

Նախկինում ես պետք է տառապեի, որպեսզի սովորեի Քեզնից չհեռանալ: Ավելի ուշ, ես դեռևս տառապում էի, տեսնելով, թե ինչպես են ամբարտավանները վիրավորում Քեզ: Այս օրերին, ես դեռ տառապում եմ տեսնելով, թե որքան անտարբերություն է ցույց տրվում Քո Գթառատ Կանչի հանդեպ: Տառապանքը դարձել է իմ հանապազօրյա հացը...

Ես տվել եմ քեզ մարգարեության Աղբյուրը[1], և Նրա ուսուցումների միջոցով և բարի խորհրդով, դու տվեցիր Ինձ քո սիրտը և քո կամքը: Այս երկուսը բավական են Ինձ համար: Ինչ վերաբերում է քո ձախողումներին ու պակասություններին, Ես լցնում էի այնտեղ, ուր դու պակասություն էիր ունենում, և քո հանդեպ ունեցած Իմ անհուն սիրով, այն Ինձ ստիպում էր, որ Ինքս հոգ տանեմ այնտեղ, որտեղ դու Ինձ ձախողում էիր: Իմ հայրական Գթասրտությամբ, Ես նայում էի քո բոլոր անփութությունների, ինչպես հայրը կնայեր իր հարազատ փոքրիկ երեխայի անփութություններին՝ կարեկցանքով և միշտ պատրաստ օգնության հասնելու քնքշությամբ՝ չշնչալով սիրո քնքուշ խոսքեր, որպեսզի քեզ չվախեցնեմ ու չվանեմ, մեկ անգամ ևս ցույց տալով, թե որքան եմ հոգում քեզ համար և քո առաջընթացի համար:

Ինչ վերաբերում է այն տառապանքներին, որոնք դու կրում ես հանուն Իմ Եկեղեցու և Հանուն Ինձ, քո՛ւյր Իմ, Իմ տաճար, մի՛ հուսահատվիր: Իմ մի հայացքով Ես վերակառուցում եմ այն, ինչ ընկել է: Ես մի անգամ քեզ ցույց եմ տվել Իմ Բաժակը, և Ես կանչում էի քեզ հետևելու Ինձ, որպեսզի ծածկեմ քեզ Իմ Թիկնոցով, գոտեպնդեմ Իմ հայտնությամբ և վստահեմ քեզ Իմ Խոսքը:

Ո՛հ, Հոր հրճվանք, որ պատրաստվում էր դուրս նետվելու դեպի դաշտերը, ծովերն ու լեռները՝ ստեղծված այս նպատակի համար, որ կոխկռտես ու ճնշես հպարտներին և մեծամիտներին ու նրանց խնջույքի

[1] այսինքն՝ Սուրբ Հոգին

ձայնը՝ լռեցնելով նրանց: Երբ Ես քեզ ցույց տվեցի Իմ Բաժակը, դու բարձրացար և ասացիր. «Հիսո՛ւս, թույլ տուր ինձ խմել Դրանից՝ առաջարկելով ամեն ինչ, որը սփոփանք կարող է բերել Քեզ»: Իսկ Ես՝ հուզված և ուրախացած քո առաջարկով, թեքվեցի քեզ վրա և դրկեցի քեզ: Ես Իմ Բազուկների մեջ դրկել էի մի փոքրիկ նարգիս՝[1] հենց նոր ծնված և դուրս եկած իր վատառողջ վիճակից, սակայն ամբողջապես՝ մի սիրտ: Քո դյուրաբեկությունը Ինձ արցունքներ է պատճառել ավելի քան մեկ անգամ, և ավելի շատ, քան որևէ մեկը ամբողջ աշխարհում: Ահա և դու, դեռ հազիվ էիր ծնվել, սակայն արդեն հրաժարվում էիր քո կամքից և առաջարկում Ինձ քո հոգին և մարմինը, առանց սահմանափակման: Ամենից առավել, դու խիզախորեն երկարում էիր քո փոքրիկ ձեռքերը դեպի Իմ Բաժակը, շտապելով Խորանի մոտ, որ բարձրացնես Այն քո շուրթերին և խմես Դրանից:

Երբ Ես տեսա քեզ վճռականորեն դեպի Խորանը վազելիս, մի բարձր ձայն լսվեց երկնքից, երգելով. «Ալելուի՛ա, փա՛ռք մեր Տիրոջը, ով նվաճեց նրան»: Դրանից հետո Ես վեր բարձրացրի Բաժակը քո շուրթերին՝ պատվիրելով քեզ միայն համտեսել Նրանից, այլ ոչ թե դատարկել Նրա պարունակությունը: Ես ասացի. «Բեր Իմ ժողովրդին Ինձ մոտ և դիր նրանց միասին մեկ Խորանի շուրջը: Քարոզի՛ր հավատի հնազանդությունը բոլոր ազգերին ի պատիվ Իմ Անվան: Ցույց տուր նրանց, թե ինչպիսի անմտություն է բաժանված մնալը: Ես միշտ կլինեմ քո կողքին»:

Ես շնորհակալություն եմ հայտնում
Քեզ, Տեր իմ, Քո Սիրո և
Հավատարմության համար:

Ես սեր եմ ներշնչում: Իմ Տան Գավիթներում դու ընդմիշտ կարող ես մնալ: Այնտեղ Ես թագավորում եմ Վսեմությամբ, և տիրական ձևով Ես բարեկամաբար օգնում եմ Իմ այցելուներին, միշտ նրանց խորհուրդ տալով, թե որ ուղղությամբ գնան: Այս ձևով Ես առաջնորդում եմ նրանց այնտեղ, ուր Ես ընտրում եմ...

Եղիր ուժեղ, և քաջասիրտ, Իմ մարգիկ:

Հունվարի 18, 2002

Տե՞ր իմ:

Ես եմ: Խաղաղություն քեզ:

[1] Ես մտածում էի, թե Հիսուսն ինչու բոլոր ծաղիկների միջից ընտրեց նարգիս կոչել Ինձ: Գուցե նրա համար, որ այս ծաղիկը բացվում է Պահքի շրջանում, երբ Քրիստոսն Իր Զարչարանքների մեջ է:

Ես ցույց եմ տվել քեզ Իմ Ամենակարողությունը շատ ձևերով: Այս բոլոր տարիներին Ես չեմ զրկել քեզ Իմ Լույսից, ոչ էլ Իմ Ողորմությունից: Ես քեզնից, քույրս, միայն սեր եմ ուզում: Սեր՝ սիրո դիմաց, սիրտ՝ սրտի դիմաց: Սա Իմ նշանաբանն է քեզ համար:

- Շարունակի՛ր առաջ ընթանալ միասնության ճանապարհով, և թող որ Իմ համբույրը՝ նորից թարմացնի քեզ: Թույլ տուր Ինձ հիշեցնել քեզ, որ լինես Իմ դաշտում ինչպես մի շուշան՝ ազատ անհանգստությունից ու հոգսերից:

- Շարունակի՛ր առաջ ընթանալ միասնության ճանապարհով, որը կիսում ես Ինձ հետ, և թող որ այն հիմա ավելի ևս լայնանա Իմ փառքի համար:

- Թող Իմ հայրական համբույրը սփոփի քո սիրտը, և լցնի քո հոգին նախանձախնդրությամբ Իմ Տան հանդեպ:

- Թող քո ամեն մի անդամը քաղցրորեն հանգստանա Իմ Սրտում, որ ստանա զորություն, հաստատակամություն և բարեկեցության ներքին հրճվանքները:

- Թող քո աշխատանքները պտղաբեր լինեն, և Իմ Անունով կատարած քո գործերը օծվեն Կյանքի Աղբյուրի յուղով:

- Թող որ դու օգտակար լինես վշտահար սրտերին և հավասարապես բարի ու քնքուշ ընկճվածներին ու հուսահատներին:

- Թող որ Ես մնամ քեզ համար առավել սիրելի, քան այս աշխարհում գոյություն ունեցող որևէ մեկը կամ որևէ բան, որպեսզի այս ինքնահրաժարման միջոցով Ես անտեսեմ մարդկանց չարությունը, որպեսզի նրանք կարողանան ապաշխարել[1]:

- Թող քեզ ճնշողները, ովքեր կառավարում են սնափառությամբ և հպարտությամբ, անգթորեն մեղադրելով քեզ՝ առողջ դատողության իրենց պակասի պատճառով, զրպարտելով քեզ տված Իմ պարգևները, թող որ նրանց մեղքերն ընկնեն իրենց սեփական գլուխների վրա:

- Թույլ տուր Ինձ աճել ու ավելանալ քո մեջ, որպեսզի, երբ քո ընկերները նայեն քեզ, նրանք Ինձ տեսնեն քո փոխարեն, որ դա լինի իրական պատճառը, որ նրանք սիրեն քեզ:

- Ես կշարունակեմ Ինքս Ինձ ավելի շատ տալ քեզ, քանի դեռ դու թույլ ես տալիս, որ Իմ Աստվածային Կամքը մնա քո մեջ, ապավինելով Նրան, և քո կամքը հանձնելով Ինձ:

[1] Ինքնահրաժարման միջոցով Աստծո Ողորմությունն իջնում է մարդկանց վրա, տանելով նրանց դեպի ապաշխարություն:

- Օրհնյալ լինես, որ հեռացար այն ամենից, ինչը քեզ կապում էր այս աշխարհին, և նախընտրեցիր Աստվածային Քաղցրությունը:

- Թող քո հոգին հիմա նույնիսկ առավել եռանդով մղվի Իմ Տան փառքի համար՝ սիրո կապերով Այն բերելով դեպի հոգևոր միասնության: Այդ ժամանակ Իմ Աստվածային Պատկերն ամբողջապես պիտի դրոշմվի Նրա վրա, մեկ անգամ ևս հեղելով Իմ Լույսը Նրա մեջ:

- Թող որ դու լինես միասնության կատարյալ սրբապատկերը, բարի ու սիրալիր կերպով դրավելով բոլորին՝ ապրելու ճշմարիտ կյանք Իմ մեջ: Վսեմ սիրո այս արարքով, Իմ Գլխին պիտի դրվի միասնության վեհապանծ թագը:

- Թող մարդկանց կողմից քեզ վրա եկող ամեն բռնություն և ատելություն փոխարինվեն Մեր[1] կողմից եկող օրհնություններով: Այդ անպիտանները ստիպած պիտի լինեն պատասխան տալ Ինձ Դատաստանի օրը:

- Թող քո սրտի ամեն մի թելը ապրի Ինձ համար՝ խանդավառություն տալով քեզ Ինձ համար աշխատելու, և ինչպես ստրուկը վարձատրություն չի պահանջում, դու նույնպես երբեք վարձատրություն չես պահանջելու, այլ սիրտ ու հոգի պիտի տաս Երկնքի Արքայության համար:

Լսիր Ինձ, Ես ստեղծել եմ քեզ և դրել երկրի վրա միայն այս վսեմ գործի համար: Իմ Ոսկրի ոսկոր, Իմ Մարմնի մարմին, մնա միացած և հոգով մեկ Ինձ հետ և մտորիր այն բոլոր հանդերձների մասին, որոնցով Ես հանդերձավորեցի քեզ, որպեսզի քեզ ազատություն չնորհեմ ներս ու դուրս քայլելու Իմ Գավիթներում: Իսկապես, սա մի սքանչելի խորհուրդ է՝ դերազանցելով մարդկային ողջ գիտությանը և հասկացողությանը Իմ արարչության մեծ մասի համար: Բայց Ես՝ երկնային Տերը, Իմ Աչքերը սևեռված եմ պահում քեզ վրա, և Իմ Ձեռքը՝ քոնի վրա, որպեսզի քեզ հետ միասին ասեղնագործեմ ոսկյա վարդեր, կյանք տալով նրանց, որ տարածեն իրենց քաղցր բուրմունքը՝ անուշահոտությամբ լցնելով ոչ միայն Եկեղեցին, այլև ողջ տիեզերքը:

Առանց Իմ կողմից քեզ տրված այս աստվածային չնորհի համագործակցության, դու կմնայիր մուրացիկ: Բայց հիմա, աստվածային չնորհի միջոցով, Ես քեզ ամբողջապես փակել եմ Իմ Սրտում, այդպիսով քեզ ազնվացնելով՝ քեզ Մեզ հետ միացնելուց հետո: Լցված և լուսավորված Մեր վսեմ Լույսով, Մենք բարձրացրեցինք Մեր Գայիսոնը և նշեցինք քեզ վրա Մեր Անունը, որ ծառայես Մեր Տանը և Մեր Սիրո պոեմը ուղղես ողջ աշխարհին:

- Թող քո լեզուն միշտ պատրաստ լինի՝ զբաղված դպիրի գրչի նման, և երբեք չհոգնի վկայություն տալուց, նույնիսկ բոցերի մեջ:

Ես՝ Հիսուս, օրհնում եմ քեզ: IC:

[1] Սուրբ Երրորդությունը

Փետրվարի 7, 2002

Իմ միլնաբերդ, Ես կանչեցի քեզ, որպեսզի ազդարարեմ Իմ Վերադարձը: Ես կանչեցի քեզ, որ բացահայտեմ Իմ անսահման Ողորմությունը Իմ բոլոր զավակների հանդեպ, ովքեր դեռևս նստած են թմրության մեջ և անտարբերության իրենց աշխարհում: Իմ հարատև կանչերը՝ ապաշխարության համար, չլսվեցին: Աշխարհը հիմա նույնիսկ ավելի խորն է ընկղմվում մեղքի ճահճի և մահվան ստվերի մեջ: Իմ սերմը մեռած է ոռոգման պակասից: Իմ հովիվներից շատերը Իմ սպասելիքները չարդարացրին, իրենց հետ միլիոնավոր հոգիներ տանելով դեպի Անդունդ և կործանում: Կարո՞ղ է որևէ մեկն ասել. «Մեզ չեն նախազգուշացրել: Մենք ոչ մի երկնային նշան չենք տեսել»: Եվ նրանք շարունակում են ապրել իրենք իրենց համար...

Այս սերունդը մեռած է Իմ Խոսքի հանդեպ և նախընտրում է ապրել Սատանայի համար, որ տալիս է նրանց ամեն ինչ, որը հակադրվում է Իմ Սիրո Օրենքին: Ազատություն են նրանք անվանում դա, բայց իրականում նրանք Չարի գերիներն են: Հիմա յուրաքանչյուր մարդ զինված է պատերազմի համար: Խավարը տիրապետում է աշխարհին: Նրանց սրտերը, որ պիղծ են ու անարդ, և ուր բնակվում են ամեն տեսակի չար ոգիներ, մղված են միայն դեպի Խավարի Իշխանը:

Ես ձեր բոլորին տվել եմ ժամանակ և առիթներ, որ ձերբազատվեք չարությունից ու անաստվածությունից և խորհեք Իմ Բարեգթության մասին Ողորմության այս ժամանակներում: Ես, անդադար, արքայական հրամանով ցուցադրել եմ երկնքում ձեզ համար զարմանալի հրաշքներ, որ վերակենդանացնեմ ձեր հավատը, բայց ձեզանից շատերը, հատկապես Միացյալ Նահանգներում, որոնք խրախուսվեցին քայլել առաքինությունների ճանապարհով, որն առաջնորդում է դեպի Ինձ և դեպի Հավիտենական Կյանք, շրջվել են Իմ դեմ և Իմ բանբերների դեմ, որոնք Իմ Խոսքի կրողներն են: Եվ արհամարհանքով մերժել են Ինձ: Ամենուրեք նրանք բացել են իրենց ատամները հավասարապես, որ ոչնչացնեն այս Գործը:

Իմ Վեհապանծ Իշխանությունը հենց ձեր դռների առջև է, բայց դուք պատրա՞ստ եք Ինձ ստանալու: Առատաձեռնությամբ և արքայական շռայլությամբ, Ես հոգևոր կերակրի խնջույք եմ պատրաստել՝ վերակենդանացնելու համար ձեր հոգին: Երբ Ես այդտեղ էի, սպասելով, որ կերակրեմ ձեզ Իմ Սեփական Ձեռքով, որպեսզի փրկեմ ձեզ մահից, դուք մերժեցիք առաջ գալ: Հետևաբար, նկատի առնելով ճշմարիտ ապաշխարության հանդեպ ձեր դժկամությունը, և թե ինչպես փոխարենը դուք թշնամանք ցույց տվեցիք Իմ նախազգուշացումներին, նախկին ողբի տեսարանները, որոնք տեղի ունեցան[1], ոչինչ են համեմատած այն վշտալի առավոտների հետ, որոնք ձեր առջևում են [2]: Վշտալի արշալույսներ, որոնք պիտի դան ձեր սեփական ձեռքով:

Ձեր ազգը կառավարում է կատարյալ հակադրության մեջ Իմ Սիրո ողջ Օրենքի հանդեպ, որը տարբեր է ձեր օրենքների տարօրինակ

[1] 2001թ. սեպտեմբերի 11-ին: Այս դեպքի մասին հայտարարվել է 10 տարի առաջ՝ 1991թ. սեպտեմբերի 11-ին, նախազգուշացնելով մեզ, որ ապաշխարենք...
[2] Հայտ. 11:18: «Եկել է ժամանակը ոչնչացնելու նրանց, ովքեր ոչնչացնում են երկիրը»:

համակարգից, օրենքներ, որոնք գործում են ամենից նողկալի ոճիրները՝ վտանգի ենթարկելով ոչ միայն երկիրը, այլև ողջ տիեզերքի կայունությունը:

Ես շատ անգամներ եմ երկարել Իմ Գայիսոնը, նույնիսկ դեպի գոյություն չունեցող էակները[1]: Այսօր, վշտով, Ես վերևից տեսնում եմ, թե ինչպես են ձեր ծրագրերը շրջվում ձեր դեմ: Աշխարհն արդեն ճաշակում է իր սեփական ընթացքի տված պտուղները՝ գրգռելով բնությանը բողոքի ցնցումներով, ձեզ վրա բերելով բնական աղետներ, խեղդվելով ձեր սեփական բանսարկությունների: Արդեն տարիներ է, որ նշան եմ անում ձեզ, բայց շատ քչերն են ուշադրություն դարձնում: Այս մաքրագործումը, որը հիմա մտրակի պես է ձեզ վրա, սերո՛նդ, շատերին կբերի դեպի Ինձ, և նրանք, ովքեր արհամարհանքով մերժում էին Իմ նախազգուշացումները, կվերադառնան դեպի Ինձ՝ իրենց վշտի ու վհատության մեջ: Ապա, երբ այս ամենը տեղի կունենա, երբ ամեն էակ, որ գոյություն չուներ, կգա գոյության, Ես երկիրը կրակի կմատնեմ և կազատեմ խարազանից: Երբ Աստված խոսում է, Նրա Ձայնը դողացնում է երկիրը:

Իմ Թագավորությունը շուտով պիտի լինի ձեզ հետ, որովհետև Իմ աստվածային այցելությունը մոտ է, և բոլոր նրանք, ովքեր բացահայտորեն կանչվել են վկայելու համար այս երկրի յուրաքանչյուր բնակչին, այլևս չեն ճնշվի[2], քանի որ մարդիկ պիտի լինեն, ինչպես մի ծարավ հող, տենչալով Իմ խոսքերի ցողին: Եվ նրանք պիտի վկայեն Գերագույն Եռանձն Աստծո գործերը, որոնց նախկինում չեն հանդիպել, ոչ էլ տեսել՝ իրենց հոգու աչքերով:

Խնդրեք երկնքից, որ մաքրագործման այս ժամանակը այնքան ծանր չլինի ձեզ վրա, որքան Սոդոմի և Գոմորի համար էր:

Իմ Եկեղեցին պիտի վերանորոգվի:

Կառչի՛ր Ինձնից, Վասուլա, որովհետև Ես Իմ ետևում կապել եմ քեզ ճնշողներից շատերին: Բարձրացրո՛ւ Իմ խաչը գլխիցդ վեր և փառաբանիր Ինձ, հաստատելով Իմ զորությունը: ic:

Մարտի 27, 2002

Ես սովորել եմ Քեզնից, Տե՛ր,
որ մեր միտքը երբեք
չի կարող բարձրանալ
երկինք իր սեփական ջանքերով,
այլ այն ամբողջությամբ
կախված է Սուրբ Հոգուց,
և միայն շնորհի միջոցով է,
որ մեր միտքը կարող է
վեր բարձրացվել՝
թույլ տալով մեզ տեսնել բաներ,

[1] Հոգևորապես մեռածները
[2] Հայտ. 11:11: «Երեք ու կես օրից հետո, Աստված նրանց մեջ կյանք շնչեց, և նրանք կանգնեցին»:

որոնք ոչ մի աչք չի տեսել,
այդպիսով ներթափանցելով
մեր Եռանձն Աստծո
խորհուրդների մեջ...

Հետո, Քո Բարությամբ
և անսահման Ողորմությամբ,
Դու թույլ ես տալիս բոլորին,
ով ցանկանում է հետևել Քեզ
առաքինությունների ուղիով,
կողք-կողքի քայլել
Քո Մեծության հետ,
մինչ Քո Բերանից ատվածային
Գիտությունն է բխում
Իմաստության Շատրվանից:

Ո՞վ է երբևէ երկինք բարձրացել
ինքնուրույն: Եթե որևէ մեկը կա,
թող առաջ գա
և ասի ինձ այդ մասին...

Օրհնյալ է նա,
ով խոնարհեցնում է ինքն իրեն,
Նա պիտի բարձրացվի
դեպի բարձունքները,
որ տեսնի Աստծուն...

Խաղաղությո՛ւն քեզ, զավակս, լսի՛ր Ինձ: Այն ամենն, ինչ ասացիր, ճշմարիտ է: Ոչ ոք ինքնուրույն չի կարող վեր բարձրանալ, մինչև Ես նրան վեր չբարձրացնեմ շնորհի միջոցով: Իսկ հիմա լսիր. Ես քեզ վեր բարձրացրե՞լ եմ, թե ոչ, որ ազատորեն ներս ու դուրս քայլես Իմ երկնային Գավիթներում:

Այո՛, բարձրացրել ես, Տեր...

Հետո, մի՞թե Ես քեզ չեմ դարձրել Իմ քնարը, որ երաժշտություն նվագես ազգերին և նրանց արթնացնես մեղեդիով ու երգով,

Այո՛, Քրիստոս...

...որ փրկություն բերեմ նրանց, որոնց Ես սիրում եմ: Արդյոք Ես նրանց հետ քնարերգությամբ չեմ խոսե՞լ նրանց փրկելու համար, քանի որ Ես գիտեմ, որ մարդը խոտից ավելի երկար չի հարատևում, վայրի ծաղիկներից ավելի երկար չի տևում, և որ քամու առաջին պոռթկումից նա ամբողջապես քշվում է, և ա՜հ, Ես չեմ ցանկանում կորցնել նրան...

Մի՞թե ես քեզ սիրով ու քնքշությամբ չեմ պսակել, լցնելով քո բերանը մեղրով[1] և քեզ վրա ամբողջապես օծված յուղ հեղելով:

Այո՛, Աստված իմ...

Ուրեմն ասա՛ Ինձ, սիրելիս, ինչո՞ւ ստվեր կա աչքերիդ մեջ[2]: Ոչ մի չար գայիսոն չի կառավարել այս ժառանգությունը[3]... Ես միշտ Իմ սիրելի ընկերներին թողել եմ, որ ճամփորդեն անհարթ ու խորդուբորդ ճանապարհներով, իսկ երբեմն, որպեսզի նրանք օգուտ ստանան Իմ ընկերակցությունից ու Իմ կարեկցանքից, ես թույլ եմ տալիս նրանց մնալ զրկված և միայնակ, առանց որևէ մեկի, որ ուղեկցի նրանց...

Իմ սիրելի ընկերները վայելում են Իմ բարեհաճությունը: Նրանք Իմ արարչության գլուխգործոցներն են, քանի որ նրանց գույնն այնքան փայլուն է, որքան շափյուղաներինը, իրենց փայլքով զարդարելով Իմ Եկեղեցին, ինչպես նաև տիեզերքը: Իմ սիրելի ընկերներն այնքան թանկագին են Ինձ համար, որ, ա՜հ[4]... Այնքան մեծ է Իմ բարեհաճությունը նրանց հանդեպ, ես չեմ կարող զրկել նրանց չարչարանքներից, ոչ էլ նրանց վրա նետված քարերից:

Գուցե մտածես, որ ես անզգա եմ, խիտ ամպերով պատված, այնքան խիտ, որ խնդրանքներն ու աղոթքները չեն հասնի Ինձ, բայց Իմ կողմից ամբողջապես հիմարություն կլիներ, եթե ես հեշտացնեի նրանց ուղին: Միթե չե՞ս սովորել Իմ ուսուցումներից: Ուրեմն գնա՛ և քո սրտին ասա այն, ինչ սովորել ես, ասա՛. «Իմ բաժինը Քրիստոսն է, բայց նույնպես և Իր խաչը՝ հավասար չափով»:

Ես չեմ նվաստացնում քեզ, ընդհակառակը, ես վեր եմ հանում քո հոգին, որ բարձրանա երկնքի բարձունքները՝ տեսնելու համար բաներ, որ ոչ մի աչք չի տեսել: Ես նա եմ, ով մղեց քեզ, որ քայլես Իմ Լույսի մեջ: Կարիք չկա մասնագետ կամ փիլիսոփա լինել, հասկանալու համար այս ամենը: Իմ սիրելի ընկեր և բուրավետ ծառ, ես քեզ բավականաչափ մեծ բաժին եմ տվել մի հազվագյուտ հաճույքից: Այն անհրաժեշտ էր քո առաջընթացի համար... Հիմա լսիր Ինձ և գրիր այս բառերը.

Հաստատե՛ք Մեր Մարիամի տները ամենուրեք, որտեղ որ կարող եք: Վեր բարձրացրեք ճնշվածներին և օգնեք որբերին: Պաշտպանեք Ինձ, փրկեք Ինձ տականքից, ապաստան տվեք Ինձ և ուտելիք, վերցրե՛ք Իմ բեռն ու հոգնածությունը, օգնե՛ք Ինձ և խրախուսե՛ք Ինձ, բայց ամենից շատ՝ սիրեցե՛ք Ինձ: Այն ամենը, որ դուք անում եք Իմ եղբայրներից ամենափոքրին ու նվաստին, դուք անում եք Ինձ...

Ես օրհնում եմ Իմ կյանքի հետևորդներին ու ջատագովներին: Թող նրանք մնան առաքինի և ամենայն սիրով լի:

Ես ձեզ հետ եմ... 1C:

---

[1] Տերն ինձ ասաց, որ «մեղրը» ներկայացնում է «Գիտությունը»...

[2] Վերջին մի քանի օրերին ես ընկճված էի զգում, ես զգում էի Խաչի ծանրությունը: Ես զգում էի, որ ես պատառ-պատառ էի լինում ինձ շրջապատողների կողմից...

[3] Այլ խոսքով, ոչ մեկին թույլ չէր տրվում վնաս հասցնել ինձ (ժառանգությանը), քանի որ ես պատկանում եմ Տիրոջը... Ուրեմն ինչո՞ւ բողոքել:

[4] Տերն առաջ թեքվեց՝ Իր աջ ձեռքը լայն բացված, դնելով Իր Սուրբ Սրտի վրա:

Հունիսի 1, 2002

Այդ Դու էիր, Սիրելի Հայր, ով ստեղծեց իմ ներքին անձը՝ սիրտն ու միտքը...

Եվ ես ասացի. Ես կօրհնեմ նրա սիրտն ու միտքը հարստությամբ, որ գալիս է Ինձնից: Ապա Ես կլինեմ ինչպես ճրագ Իմ օծյալի համար՝ ապահովելով նրա սիրտն ու միտքը Մեր պայծառ Ներկայությամբ: «Այստեղ, Իմ Որդին և Ես պիտի մնանք ընդմիշտ, քանի որ սա այն տունն է, ուր մենք ընտրել ենք բնակվելու համար»:

Ո՜հ, եկե՛ք, դուք, որ ծառայում եք Ինձ՝ ծառայելով Իմ Տանը, մոտեցե՛ք Ինձ և ուրախացրեք Ինձ: Եկե՛ք և սովորեք. Գրված է, որ եթե մեղանչեք, դուք դեռևս Իմն եք, քանի որ ընդունում եք Իմ զորությունը, բայց, իմանալով, որ Ես իսկապես ձեզ ճանաչում եմ որպես Իմը, դուք չեք մեղանչի: Ուստի, Ինձ ճանաչելը իսկապես կատարյալ առաքինություն է: Իմ զորությունն իմանալը՝ անմահության արմատն է: Ես ցանկանում եմ, որ այս ասացվածը դառնա բոլորի խորհրդածության նյութը:

Ես, Իմ Վասուլա, եղել եմ քո Խորհրդատուն, ինչպես նաև ընկերը այս բոլոր տարիներին, և նույնիսկ դիշերվա ընթացքում Ես ուսուցանում էի քո սրտին ու մտքին՝ Իմ Ներկայությամբ քո հոգուն տալով անսահման ուրախություն: Ես սովորեցրի քեզ անսահման սիրով, որ աչքերդ մշտապես բարձրացնես Իմ լուսավոր Ներկայության վրա և ուրիշ ոչ մեկի վրա: Ես եղել և միշտ մնում եմ քո միակ Հոգևոր Ղեկավարն ու Խորհրդատուն, հրահանգներ տալով քո հոգուն Իմաստությունից: Ես քեզ դեպի արևելք կամ արևմուտք չեմ ուղարկել, ոչ էլ դեպի հյուսիս կամ հարավ՝ հոգևոր առաջնորդություն փնտրելու համար, քանի որ ավելի լավ առաջնորդություն, քան Ես Ինքս եմ, կարո՞ղ է լինել: Ես միակն էի, որ կարող էր զննել քո հոգու ստվերոտ խավարի միջով՝ ճշմարիտ դատավճիռ հայտնելու քո ներքին անձի մասին և ուշադրություն դրավելու քո հիվանդության վրա: Ուրեմն, մի՞թե Ես չօգնեցի քեզ հրաժարվելու Իմ հանդեպ ունեցած քո ըմբոստությունից: Մի՞թե Ես քեզ համար ճանապարհ չգծեցի, որ Իմ Անունը, որպես պատվանշան վերցնես քեզ համար և հետևես Իմ Ոտնահետքերին, որպեսզի չշեղվես քայլելիս:

Այո՛, Տեր: Ես փորձել եմ պահել
Քո Շուրթերից ելնող
ամեն մի պատվիրան:
Գրված է, որ
մի Գետ կա, որի հոսանքները
զվարճացնում են Աստծո քաղաքը,
և այն սրբացնում է
Ամենաբարձրյալի օթևանը:
Աստված այդ քաղաքի մեջ է,
այն երբեք չի սասանվի,
Աստված օգնում է նրան
վաղորդայնից վաղորդայն:
Հեթանոսները խռովվեցին,
ու թագավորություններ
հնազանդ եղան...

Բարձրյալը ձայն տվեց,
և երկիրը երերաց[1]*:*

Քո Սուրբ Հոգին այդ Գետն է,
որ մշտապես սրբացնում է հոգուն,
մեր ներքին մարդուն,
որը պատկանում է Քեզ,
Աստված իմ...

Ես բացում եմ ականջս
և լուռ մնում առ ժամանակ,
որպեսզի Մեծ Թագավորը գա
զորությամբ և բարեհաճությամբ տա
Իր աստվածային ուսուցումները,
ուսուցումներ, որոնք
խռովություն չեն առաջացնում
Քո Օրենքում:
Ուրեմն թող երկիրը հրճվի,
թող երկրի մարդիկ ցնծան
և բացականչեն ուրախությամբ, երբ
Թագավորն անցնում է մեր մոտով,
որ դատի երկիրը արդարությամբ
և ազգերին՝ Իր ճշմարտությամբ:

Ողջունենք մեր
ապահովության ժայռը
և հավաքվենք
Նրա Ներկայության մեջ,
գոհություն հայտնելով:

Ես քեզ անմիջական մուտք գործելու հնարավորություն եմ տվել դեպի Իմ Սիրտը, որ ծաղկես, ծաղի՛կ, և շարունակես Ինձ գոհություն հայտնել: Շարունակիր Ինձ շնորհակալություն հայտնել, իսկ Ես կընդունեմ դրանք, որպես քո զոհողությունը, և դրանք կպատվեն Ինձ...

Իմացի՛ր, սիրելիս, որ Իմ Անունը հռչակելը Ինձ գովաբանություն և փառք է տալիս: Ես սիրում եմ քեզ, Վասո՛ւլա: Մեռածները չեն կարող գովաբանել Ինձ: Նրանք լուռ են մնում: Աշխարհը երբեք չի կարող օրհնել Իմ Եռանձն Սրբությունը: Այն լուռ է մնում: Մահվան ստվերներ են կախված այս ու այնտեղ: Ես Ներկա եմ, և Իմ Զորությունը բժշկում է և փրկում, բայց նայիր այսօր աշխարհին, շատ քչերն արձագանքեցին շնորհին և չգտան իրենց ապաստանն Իմ՝ Յահվեի մեջ: Շատ քչերն են երկյուղում Ինձնից, Վասո՛ւլա: Մահը անկյունում է, բայց նույնիսկ այդ դեպքում, աշխարհը չի կանչում Իմ Սուրբ Անունը: Այս սերունդը մերժում է քայլել Ինձ հետ:

Մեռածների երկիրն եմ Ես ուղարկել քեզ, ուր ավերածությունն ու հուսահատությունն են թագավորում շատ սրտերում: Չնայած չարի

[1] Սաղմ. 45:4-6

օղակը հիմա ակնհայտ է, բայց աշխարհը դեռևս իր անտարբերության մեջ շարունակում է ատել Իմ պատվիրանները: Իմ Օրենքը մշտապես խախտվում է:

Ես արթուն պառկած էի ողջ գիշեր,
Որ խորհեմ այս ամենի մասին,
Եվ ես չեմ կարողանում
տեսնել դրա վերջը:

Եթե Դու ինձ այդքան մոտ չլինեիր,
Յահվե, հսկելով ինձ,
ծածկելով ինձ, շրջապատելով ինձ,
ես կմեռնեի վշտից:

Ես աչքերս բարձրացնում եմ
դեպի Քեզ վշտով ու հառաչանքով,
գիտենալով, որ
իմ տունը երկնքում է,
սակայն ես դեռ երկրի վրա եմ:

Ես հաճախ հարցնում եմ ինքս ինձ.
«Ի՞նչ եմ անում ես այստեղ,
այս երկրի վրա,
որին ես չեմ պատկանում,
ոչ էլ որևէ մեկին: Ես զգում եմ,
որ Դու ինձ փոխ ես տվել...
ինձ փոխ ես տվել...»:
Ես Նրա կողքին էի,
երբ Նա պարզեց Իր օրենքները ինձ,
ինձ մոռացության ու մահվան
երկրից դուրս բերելուց հետո
որ ինձ կյանքի կոչի: Ճահճի միջից
Նա վեր բարձրացրեց հոգիս,
որ ցույց տա Իր Սուրբ Դեմքը:

Հետո, Դու ինձ ուղարկեցիր
Քո Անվամբ,
նույնիսկ կրկին անգամ չմտածելով,
որ կէժանացնես Քո Գայիսոնը
և Քո Վեհությունը:

Դու պսակում ես
Քո Գործերը Քո առատությամբ,
և լիությունն է հոսում,
որտեղով էլ անցնես:
Դու լցնում ես մեզ հարստությամբ,
Դու մաքրում ես մեզ
ինչպես արծաթ:
Քրիստոսը վսեմությամբ է քայլում

այս անապատով,
և Նա ցնցում է երկիրը,
որ հայտարարի
Իր մոտալուտ վերադարձը:

Բայց մարդիկ չհասկացան:
Ոմանք ասում են.
«Քրիստոսը գալիս է մարմնով»:
Մյուսները վիճում են անհիմն,
«Աստված կգա և կճզմի
Իր թշնամիների գլուխները»,
բայց նրանք
չեն հասկացել սաղմոսները...

Ինչպես կեսգիշերային երազի
ուրվականներ
արմանում են նրանք:
Սկզբում ես նույնպես պարզապես
չէի կարողանում հասկանալ,
չնայած ես մշտապես
Քո Ներկայության մեջ էի:
Նույնիսկ, երբ Դու բռնում էիր
իմ աջ ձեռքը գրելու համար:

Գրված է. «Աստված տալիս է
Իր բանբերներին լուրերը...»:
Եվ Նա այդպես էլ անում է...

Երբ Աստծո Ոտնաձայները
մոտենում են և լսելի են,
առաքինիներն ուրախանում են,
ցնծալով ու երգելով
ուրախությունից: Նրանք ասում են.
«Ճանապարհ կառուցեք
Ամպերի Հեծյալի համար,
ուրախացեք Քրիստոսով,
հրճվեք նրա գալստով»:

Նոյի ժամանակ
երկինքը հեղեղվեց Քո գալստով...
Աստծո գալստով...
բայց չտեսան Քեզ միս ու ոսկորով...

Իսկ հիմա,
երկիրը կրակով կբոցավառվի
Քո Որդու վերադարձով:
Աստծո գալստով...
Քրիստոսը կիջնի բարձունքներից:

Ինչպես ատվածային
բյուրավոր կառքեր Դո՛ւ, Տե՛ր,
գնացիր Սինայից Քո սրբարանը:
Դավիթն ասաց. «Աստվա՛ծ,
Դու բարձրացար բարձունքներ
և գերեվարեցիր գերիներ,
Դու պատիվ ես արել մարդկանց,
այո՛, տարել ես ըմբոստներին
Քո բնակարանը, Յահվե...»[1]
Բայց նրան
չտեսան Քեզ միս ու ոսկորով...
թեև Դու այնտեղ էիր:

Երբ Դու մոտենում ես
առաքինիներին,
և նրանք ուրախանում են,
նրանք չեն տեսնում Քեզ
միս ու ոսկորով...
Բայց դու այնտեղ ես:

Երբ այն ժամանակ Դու կարգեցիր
Քեզ Քո ժողովրդի գխավորը,
և քայլեցիր անապատի միջով,
Դու չեկար միս ու ոսկորով...
Բայց Դու այնտեղ էիր...

Այդպես պիտի լինի,
երբ Քրիստոսը մեր օրերում
հռչակում է, որ
Իր Վերադարձը մոտալուտ է...
Երկինքն ու երկիրը
կրակով պիտի բռնկվեն,
և Նա պիտի շրջի հայրերի սրտերը
դեպի իրենց զավակները,
իսկ զավակների սրտերը՝
դեպի իրենց հայրերը...
սակայն, ոչ մեկը չի տեսնի քեզ
Միս ու Ոսկորով...
Սերը պիտի վերադառնա
որպես սեր... որովհետև
մենք բոլորս պիտի լինենք
Ճշմարիտ Աստծո մեջ՝
Կլանող Կրակ, Եռանձն և Սուրբ...

[2]Հիմա դու տվեցիր մի հոգևոր վկայություն: Սա կլինի Իմ մոտալուտ վերադարձի ճանապարհը... Իմ վերադարձը կնորոգի ձեզ և ձեզնից

[1] Սաղմ. 67:19
[2] Հիմա Քրիստոսն է խոսում:

շատերին կազատի ձեր հանցանքներից: Երբ նորոգումը տեղի ունենա, շատերը կզգեստավորվեն Ինձնով, և բոլոր սրբերն ու հրեշտակները չնորհակալություն կհայտնեն Իմ Սուրբ Հոգու պարգևի համար:

Ի՞նչ է Տիրոջ Օրը: Նրանք, ովքեր ըմբոստացել և համառորեն շարունակում են ըմբոստանալ Իմ դեմ, պիտի ճաշակեն այդ Օրը և դրա բոլոր հետևանքները: Այն պիտի դա այդ մեղսագործների վրա այնքան հանկարծակի, որքան կայծակի հարվածը, և, ինչպես մի սարսափելի կրակ, նրանք կվերածվեն մարդկային ջահերի: Այո՛, երկիրը, ինչպես դու ասացիր, կրակով պիտի բռնկվի, և նրանց գիտակցությունը և մտածողությունը ցույց կտրվի իրենց, ինչպես մի հայտնություն: Իմ աստվածային կրակը անկոտրում սիրտը պիտի դարձնի մեղմ ու զիջող Իմ Օրը: Երկիրը տառապանքի մեջ, ամբողջապես կհասկանա գիտակցությամբ և հոգով իր ճախողումները և իր պակասությունը, Իր այլասերվածությունն ու իր անօրինությունը, էլ չասած՝ Իմ Հարության և Իմ Ամենակարողության իր անարգ մերժումը ձեր ամենօրյա կյանքում:

Երկինքը պիտի բացվի Իմ Օրը, և նրանք, ովքեր մերժում էին Ինձ՝ հռչակելով իրենց որպես աստվածներ, պիտի դատվեն խստորեն:

Կարո՞ղ է որևէ մեկն ասել, որ Ես ձեզ չեմ ուսուցանել այս ամբողջ տարիների ընթացքում: Մի՞թե Ես չեմ հաստատել Իմ հզորությունը այս բոլոր տարիներին հրաշքների միջոցով: Երբևէ չափե՞լ եք Իմ Եռանձն Սրբության շքեղությունը և Իմ Անվան աննկարագրելի վսեմությունը: Երբևէ հաստատե՞լ եք Իմ մեծությունը կամ հռչակե՞լ եք Իմ սարսափազդու ճոխությունն ու զորությունը: Ես ասում եմ ձեզ. վա՜յ նրան, ով իրեն առանց Իմ Լույսի կգտնի Իմ Օրը... Այդպիսիներին Ես պիտի մաքրեմ Իմ Կրակով:

Իսկ նրանք, ովքեր պահել են Իմ պատվիրանները և Իմ Օրենքը՝ հիմնված սիրո վրա, և ովքեր երկրի աղն են, նրանք չեն փորձվի կրակով, քանի որ Ես նրանց Աստվածն եմ, և նրանք ընդունել են Ինձ որպես իրենց կյանքի տերը: Նրանք արդեն փորձվել են, և հիմա Իմ մի մասն են կազմում և մշտապես գտնվում են Իմ Աստվածային Լույսի մեջ՝ Աստվածության հետ միացած: Եվ ինչպես դու ասացիր, աղջի՛կս, Նոյի ժամանակներում երկինքը հեղեղվեց Իմ գալուստով, իսկ հիմա երկիրը պիտի փորձվի և պիտի բռցավառվի կրակով:

Իմ Օրը մոտալուտ է, և վա՜յ դիակներին Իմ Վերադարձի[1] այդ օրը: Ավա՜ղ նույնպես նրանց համար, ովքեր կենտրոնացրել են իրենց կյանքը նյութական բարիքների վրա, երբ Իմ Օրը գա: Իմ երևույթը կլինի ինչպես կրակ: Իմ Ոտնաձայները արդեն լսվում են, և Իմ Ոտնահետքերը շատերն են տեսնում: Երբ Ես Ինքս Ինձ հայտնում եմ նրանց, ովքեր չեն ընդունում Ինձ, երբ չնորհի այս ժամանակներում Ես Ինձ ներկայացրի որպես Ողորմություն և որպես Ճրագ, այդ ժամանակ Ես ցույց կտամ Ինձ, որպես մի կլանող Կրակ:

Դե՛, միթե որևէ մեկը հավատում է, որ Ես կանցնեմ առանց նկատվելո՞ւ: Եվ մի՞թե դուք դեռևս կարծում եք, որ Տերը կանցնի ձեր կողքով առանց որևէ հանդիմանության: Ուստի լավ է ապաշխարել ամեն

[1] Այս «Վերադարձը» իսկական (Parousia) Քրիստոսի երկրորդ Գալուստը չէ: Այլ Տիրոջ Օրը պետք է հասկանալ որպես փոքր դատաստան՝ նախքան Դատաստանի Օրը: Դա մի տեսակ Մաքրագործում է՝ Նորոգման համար: Այն արդեն սկսվել է, բայց փոքր փուլերով:

օր: Եվ դու, որ կրում ես Իմ սերմը, երգի՛ր, մինչ հնձում ես, աղջիկս, ետ մի՛ նայիր: Ինչպես ես քեզ ուսուցանել եմ, աստվածաբանությունը Իմ՝ ձեր Աստծո մասին խորհրդածելն է, սա ձեր հոգևոր հիմքն է: Հետո այս հիմքի վրա կառուցվում են տարբեր մակարդակներ: Մակարդակներից մեկը պարունակում է Աստծո Գիտությունը: Աստծո այդ գիտությունը ձեռք է բերվում Իմաստության միջոցով, այլ ոչ թե՝ գրքերից: Առանց Սուրբ Հոգու Լույսի հնարավոր չէ ճանաչել Աստծուն, և Նա կմնա թաքնված: Այո՛, դա իմացականության արդյունքը չէ, այլ աստվածային ներշնչում, որը շնորհի միջոցով տրվում է այն հոգուն, ով փոխակերպվել է սիրելու համար: Մեկ այլ մակարդակում դուք գտնում եք հոգու աղքատությունը: Այս հոգին խոսքի կրողն է, որովհետև իր աղքատության մեջ հոգին տիրապետում է Ինձ և Իմ Թագավորությունը նրանն է: Այդպիսի հոգու ոչնչության մեջ միայն <u>ես</u> գոյություն ունեմ:[1] Միայն <u>ես</u> եմ նրա Տերը և ամեն ինչը...

Հետո, այդ նույն հոգևոր հիմքի վրա, կան այլ մակարդակներ: Կա մի մակարդակ, ուր տեղի է ունենում Աստվածային միություն արարածի և Արարչի միջև: Գերված Աստվածության Կատարյալ և Աստվածային Գեղեցկությամբ, հոգին կամավորաբար ընկնում է Աստծո բոցավառ գիրկը: Արարչի այդ Աստվածային նվաճմամբ, քանի որ դա նվաճում և հաղթանակ է, ես ամբողջապես ներխուժում եմ այդ հոգու մեջ և ուրախությամբ թեթևակի բաց եմ անում քողը, որպեսզի չվախեցնեմ այդ հոգուն, և Իմ Սուրբ Դեմքը ցույց եմ տալիս նրան: Հոգին, տեսնելով Իմ Սուրբ Դեմքը, թեև աղոտ լույսի մեջ, նա հասկանում է արթնանալով, որ ինքը հեռու չի կանգնած հավիտենական և երանական տեսիլքի սահմաններից: Շփոթված և դողալով, որ տեսել է Իմ Փառքը, և գիտակցելով այն պայծառ լույսը, որը հանկարծակի շրջապատում է իրեն, նա կամավոր կերպով միանում է և միահյուսվում Ինձ հետ՝ դառնալով մեկ Ինձ հետ՝ իր Աստծո և Արարչի հետ...

Հոգու ամբողջական հանձնումով, ես, որ Լույսի Տվողն եմ, Կյանքի Տվողը, Սիրո Տվողը և ամենայն Պարգևների Տվողը, բերում եմ նրան այս բոլոր Աստվածային հարստությունների մեջ, դիմելով նրա հոգուն քնարերգությամբ և բարեպաշտությամբ: Ա՜խ, Վասուլա, այդ ժամանակ ի՞նչ չեմ անի Ես այդ հոգու համար: Իմաստությունը կլինի նրա ամենօրյա ուղեկիցը, նրա ուրախության թագը:

Գրված է. Այն հոգին, որ վախենում է Տիրոջից, այդ հոգին «կընդունվի մի կույս հարսի նման»[2], մարմնով ու հոգով Ինձ՝ իր Արարչին հանձնվելուց հետո, և դառնալով արդեն Իմ մի մասը: Այդ ժամանակ Ես, որպես Ամուսին, որ հրճվում է իր հարսով, կապահովեմ, որ նա ոչ մի բանի պակասություն չունենա: Հաջորդ մակարդակում, Ես պիտի սկսեմ ապահովել նրա չափազանց աղքատացած հոգուն, և միաժամանակ, նրան վսեմորեն նախապատրաստելուց հետո, նրան երդվել կտամ անվերապահորեն հետևելու Ամուսնուն՝ ընկերակցելով Ինձ, ուր էլ որ Ես գնամ:

[1] բնակվում եմ
[2] Սիրաք 15:2

Հետո, ինչպես մի Ամուսին, որ սիրում է իր հարսին, Ես կարտահայտեմ Իմ Աստվածային Սերը՝ զարդարելով Իմ հարսին ամենից նուրբ և ընտիր զարդերով, որոնք հնարավոր չէ գտնել երկրի վրա, այլ գալիս է երկնքի պահեստներից: Ես, Իմ սերտ միության մեջ, կզարդարեմ նրան Ինձնով, զորացնելով նրա հոգին, մի փոխադարձ հավատարմություն և հասկացողություն ստեղծելով մեր միջև: Հանկարծ ողջ աշխարհը կխամրի նրա աչքերի առջև: Նա գտնում է իր ազատությունը... Նա գտնում է իր Աստծուն... Եվ դեպի ազատության իր սլացքով նա կհայտարարի.

«Աշխարհը հիմա մի աքսոր է, Ես նրա մեջ չեմ, բայց ոչ էլ մոտ եմ նրան: Իմ հոգին, մարդկության Սիրահար, համակվել է մի անվերջ ցանկությամբ՝ Քո որոշումների հանդեպ: Հիմա, իմ հոգու Սիրելի, ես պատրաստ եմ և որոշել եմ անվերապահորեն հետևել Քեզ»:

Եվ Ես կպատասխանեմ. «Քայլի՛ր Ինձ հետ, և Ես կուսուցանեմ քեզ արդարության Իմ օրենքներով: Ե՛ս, և միայն Ես պիտի լինեմ քո Ուսուցիչը: Ես կշշնջամ քո ականջին բոլոր անտեսանելի և անհասանելի բաների պատմությունը, որը սակայն տեսանելի և հասանելի կդառնա քո Տիրոջ Աստվածային ուսուցումների միջոցով: Կյանքի Խոսքը քեզ կառաջարկվի ձրիաբար...»:

Արդարությամբ ուսուցանելուց հետո, Ես պիտի բարձրացնեմ ձեր հոգին հաջորդ մակարդակը: Այն մակարդակը, որ դուք կանչվեցիք նախքան ձեր ծնվելը, այն մակարդակը, որում Սուրբ Հոգին վեր է բարձրացնում ձեզ Իր շնորհով, որ լինեք Իմ Փրկագործման Ծրագրի մի մասը, և ձեզ դարձնում է մի առաքյալ: Այդ մակարդակում Ես ձեզ ցույց կտամ Իմ Զարչարանքի ուղին: Քանի որ դուք պիտի ծառայեք Ինձ, դուք պիտի ծառայեք Ինձ կրքով ու եռանդով: Ես կուղարկեմ ձեզ շրջագայելու և հսկելու աշխարհը և հռչակելու Ճշմարտությունը: Ես պիտի խնդրեմ ձեզ քրիստոնեա դարձնել այս ապաքրիստոնեացված սերնդին, և ոչնչացնել Բաբելոնի աշտարակը, ապաշխարության բերելով այնտեղ գտնվող բոլոր ուրացողներին, ովքեր երկրպագում էին Բաաղին: Այս ամենը դուք պիտի անեք՝ մի ձեռքում Իմ Խաչը, իսկ մյուսում՝ վարդարանը բռնած...

Իսկ դո՛ւ, աղջիկս, քանի որ դու կրում ես Իմ սերմը, շարունակիր ցանել եռանդով: Մի՞թե Ես չգիտեմ այն ամենն, ինչ դու ասում ես: Թույլ տուր Ինձ քեզ վստահել ու ասել հետևյալը. ինչպես ջրի հեղեղներ Իմ Արցունքները վարարում են Իմ Աչքերում, երբ տեսնում եմ քեզ պայքարելիս չորացած և ցիրուցան ոսկորների մեջ: Ինչպես որևէ հայր, որ կտառապեր տեսնելով իր զավակի այդ մռայլ պատկերը, Ես նույնպես, որպես քո Հայրը, տառապում եմ: Այդ պատկերն Ինձ ցավ է պատճառում, երբ Ես դիտում եմ Իմ զավակին, որին Ես մեծացրել եմ Իմ Արքայական Գավիթներում, նեղությունների և հալածանքի է ենթարկվում մեռածների կողմից մահվան հովտում: Քո ժառանգությունը ապրողների երկրում է, բայց Ես արարել և ուսուցանել եմ քեզ սուրբ Իմաստությամբ, որ մարդկությանը նորից սովորեցնեմ զորության Իմ գործերը, և Իմ Գերիշխանության հիասքանչ փառքը՝ հիշեցնելու նրանց, որ Ես գործում եմ միայն Սիրուց և Ողորմությունից ելնելով: Այս առումով, որևէ խարազան, որ իջնում է այս սերնդի վրա, Ողորմության հանդիմանություններ են:

Տե՛ր, գրված է, որ Դու պետք է միայն Կամենաս, և Քո զորությունը պատրաստ է...

Գրված է նաև, որ մեղանչելուց հետո ես ապաշխարություն կշնորհեմ: Ես, Իմ մեծ բարերարությամբ, ապաշխարության բուժիչ բալասանը դրել եմ նորոգված սրտում, որն Ինձ մեծ ջերմեռանդություն և ճշմարտասիրություն ցույց կտա ապաշխարելիս: Արդարև, բոլորն Ինձ հետ գտնում են մտերմության դանձը, հենց որ այդ խոնարհ արարքը կատարվում է: Մտերմության դանձի միջոցով նրանք հայտնաբերում են Իմ ընկերությունը: Որքան մեծ է ապաշխարողի անկեղծությունը, նույնքան մեծ է Իմ ընկերությունը: Ճշմարտասիրությամբ արտաբերված յուրաքանչյուր բառ ավելի է մոտեցնում Իմ ընկերությունը, քանի որ Իմ ընկերությունը համապատասխան կլինի իր ապաշխարությանը:

Գրված է, «Ես Նրան դիմեցի իմ բերանով, և լեզվովս մեծարեցի Նրան: Եթե սրտումս մեղք տեսնեի, Տերն ինձ չէր ունկնդրի: Բայց Աստված ոչ միայն լսեց ինձ, այլ ուշ դարձրեց իմ խնդրանքի ձայնին...»[1]:

Նա, ով փրկություն է ցանկանում, կզգա ապաշխարելու կարիքը, և Ես կլսեմ նրա ապաշխարությունը: Մեղքի վարձը մահն է: Մեղքը թույնի նման է ձեր ներսում, և որքան երկար է այն մնում ձեր մեջ, այնքան ավելի հիվանդ եք դառնում՝ ձեզ ավելի մահվան մոտեցնելով: Դուք որքան չեք մաքրում այն ձեր համակարգից, այնքան ավելի մահվան վտանգին եք ենթարկվում: Դուք կարող եք ազատվել և բուժվել մեղքի թույնից, եթե դուք ձեզ խոնարհեցնեք և հասկանաք, որ ձեր մեղքերի մաքրման միակ բուժումը ապաշխարության միջոցով է:

Ասա Ինձ. ձեզնից ո՞վ վտանգի տակ կդներ իր կյանքը, իմանալով, որ ինքը թույն է կուլ տվել, և կմնար անտարբեր ու ոչինչ չէր անի դրա համար: Այդ մահացու թույնից ապաքինվելու համար, դուք պետք է խոնարհեք ձեր գլուխը և ընդունեք, որ դուք մեղավոր եք, առաջարկելով Ինձ ձեր ապաշխարությունը: Եվ այն ժամանակ թույնի ողջ դառնությունը կմաքրվի՝ ներառյալ ինքը՝ օձը, որին դուք սնում էիք ձեր ընդերքում, ձեր ողջ կյանքի ընթացքում[2], և ազատված լինելով՝ Ես կփոխարինեմ այդ չարիքներն Իմ քաղցրությամբ... Այո՛, հենց որ այդ չարիքները դուրս գան, դուք կապաքինվեք, և հենց ապաքինվեք, այլևս օտար չեք լինի Իմ Օրենքի համար: Կամավոր կերպով դուք կշրջեք ձեր մեջքը աշխարհին, որովհետև ձեր առջև դուք կտեսնեք Իմ Փառքը և Իմ Ճոխությունը: Իմ լուսաշող Ներկայության տեսքը կփայլի ձեր ներսից և դրսից:

Գրված է. «Դուք մեռած էիք ձեր մեղքերի ու հանցանքների մեջ, որոնցում մի ժամանակ ընթանում էիք ըստ այս աշխարհի սովորության՝ հնազանդվելով օդում տիրող կառավարչին[3] այն ոգուն, որն այժմ գործում է ապստամբող մարդկանց մեջ...»[4]: Բայց այժմ, ձեր

---

[1] Սաղմ. 65:17-19

[2] «Թույնի» և «օձի» այդ ամբողջ պատկերը մարդու ներսում և զտումն ապաշխարության միջոցով, ինձ հիշեցնում է չարից բռնվածների մասին, ովքեր ազատվելիս փսխում են մեխեր, երբեմն՝ ապակու կտորներ, պողպատե լարեր և այլ բաներ:

[3] Սատանան

[4] Եփես. 2:1-2

ապաշխարությունից հետո և ձեզ ցույց տրված չնորհի միջոցով, ես ձեզ կյանքի բերեցի Իմ մեջ...

Այդ ժամանակ, Իմ ժպիտների մեջ ես կբացահայտեմ քեզ կյանքի ճանապարհը: Դու այլևս քայլելիս չես լինի տաք ածուխների վրայով, այլ՝ չափյուղաների: Աննկարագրելի և անհասանելի Աստված, ինչպես դու մի ժամանակ կարծում էիր, քո սրտում անսահման ուրախություն կպատճառի քեզ, երբ արտահայտի Իր Ուրախությունը քեզ: «Ժամանակին դու նման էիր մի դաշտի, ուր ոչինչ չէր աճում փուշ ու տատասկից բացի՝ գրեթե անբնակ և անիծված էր: Բայց հիմա, Ինձ հետ, դու կլինես ինչպես Իմ ընտրած դաշտը՝ ջրված Սուրբ Հոգու աղբյուրներով, և դու կտաս այն բերքը, որը ընդունելի է Ինձ համար»[1]:

Ինչպես ես նախկինում ասել եմ, Ինձ ճանաչելը՝ կատարյալ առաքինություն է: Այսօր աշխարհը տեղ չունի Ինձ համար, և Իմ տեղը գրավված է թափթփուկների կողմից: Ապստամբներն ու մեղավորները թափառում են ամենուր, և նրանց գործերն ու խոսքերը վիրավորում են Իմ Երրորդության Սրբությունը: Իրենց մեծամտությամբ, նրանք հավատում են, որ Իմ տեղը պետք է գրավված լինի մասամբ ինքնագիտակցությամբ, և մասամբ էլ միայն չարիք գործելու ցանկությամբ, իրենց ամբարտավանության մեջ մերժելով ճանաչել Իմ փառավոր Ներկայությունը: Դրա փոխարեն աշխարհը քայլում է իր ճանապարհով և փառաբանում ինքն իրեն, գովաբանելով և պատվելով իր նվաճումները, իրեն Աստծո տեղ դնելով... Նրանք հավատում են, թե իրենք ամեն ինչ գիտեն, սակայն իրականում ոչինչ չգիտեն: Քանի դեռ նրանք չեն ճանաչում Ինձ այն ամեն բարիքներից, որոնք իրենց շուրջն են գտնվում, և քանի դեռ չեն հայտնագործել Ինձ, նրանք կմնան անշարժ՝ դիակների պես...

Ձեր օրերում մարդիկ փնտրում են կեղծ աստվածներ[2], հետևում են ամեն տեսակի հեթանոսական համակարգերի[3], որպեսզի իրենց կարծիքով զորություն և գիտելիք ձեռք բերեն: Հետո, աշխարհն այնքան հմայված է բյուրեղների գեղեցկությամբ, տերևների գեղեցկությամբ, տարրեր, որոնք նրանք դնում են Իմ Ամենակարողությունից վեր, քանի որ նրանք դրանցից բուժիչ ուժեր են խնդրում, Իմ Սուրբ Հոգու գթառատ և բուժիչ ուժի փոխարեն: Եթե նրանք տպավորված են դրանց ձևով[4], ապա թող դրանից եզրակացնեն, թե որքան ավելի հզոր է Նա, ով ձևավորել է բյուրեղները, տերևները և այլն, այդ ամենի Հեղինակը:

Նույնիսկ, եթե այդպիսիք[5] իրականում փնտրում են Իմ Ներկայությունը, և իրենց եռանդով դարձել են Խաբեբայի որսը և մոլորվել, նույնիսկ այդ դեպքում, նրանք առանց մեղքի չեն, և մեղավոր են իրենց սահմանափակության համար: Եթե նրանք կարող են հետազոտել այդ ուժերը, դրանց բովանդակությունը, աշխարհն ու տիեզերքը, ապա ինչպե՞ս է, որ նրանք դանդաղում են գտնելու այդ ամենի Հեղինակին ու Տիրոջը:

---

[1] Եբր. 6:7-8
[2] կրոնները
[3] ինչպես բիոէներգետիկ վարժությունները...
[4] բյուրեղները
[5] մարդիկ

Բայց Սատանան խաբում է աշխարհին մեկ անգամ ևս այն նույն ստով, որով նա խաբեց Եվային... որ նրանք նույնպես կարող են լինել Աստված[1] և ինքնաբավ են և կարիք չունեն Ինձ...

(Հետո Հայրը շրջվեց դեպի ինձ և ասաց).

Ես կնորոգեմ քո բերանը, Վասո՛ւլա, որ գրի առնես Իմ բոլոր ասածները և պատմես Իմ բոլոր հրաշալիքները: Հասկացիր, թե ինչպես եմ Ես՝ Յահվեն, կռացել ցած ու հասել քեզ, որ զգեստավորեմ քեզ և նաև բոլոր նրանց, ովքեր ականջ են դնում Ինձ, վեհությամբ ու պայծառությամբ: Ես ցանկացա վերակենդանացնել այս սերնդի հավատը, բժշկելով ձեր այնքան ողբալի վիճակը, գթությամբ և կարեկցանքով:

Թող քո ձեռքերը նույնպես նորոգվեն, որ օրհնես Իմ Անունով: Թող քո աջ ձեռքը, որը Ես օրհնել եմ, լինի Իմ Տան երգեհոնը, այն երաժշտական գործիքը, որի միջոցով շատերը կլսեն Իմ Բառերի հնչյունը: Մեղեդի նվագիր Իմ Անունով և ուրախությամբ երգիր Իմ թևերի հովանու տակ:

Ա՜խ, Վասուլա, հետո թող քո ականջները նորոգվեն, որ լսես Իմաստությանը՝ իր առակներն ասելիս, սրբագործելով քեզ լսելիս, արտաբերելով Եռանձն Աստծո խորաթափանցությունը և գիտությունը: Իմ միջնաբե՛րդ, Իմ Սրտի Թանկագին, մնա հավատարիմ Ինձ, և Իմ շնորհը կշարունակի լինել քեզ վրա: Հիշի՛ր քո ծագումը...

Իմ Վսեմության պայծառությունը քեզ վրա է: Արիացի՛ր: Մի՛ վախեցիր:

(Այս պատգամն ավարտվեց 2002թ. օգոստոսի 7-ին):

Օգոստոսի 7, 2002

[2]Ես քեզ աքսորել եմ ոչ միայն Եգիպտոսի երկրից, որտեղ դու առաջին անգամ տեսար լույսը, այլև ողջ աշխարհից: Ես աքսորել եմ քեզ, որպեսզի քո արմատները լինեն միայն Իմ մեջ: Ես ուսուցանել եմ քեզ Իմ Երկնային Գավիթներում Սուրբ Իմաստությամբ, այլ ոչ թե նրանց նման, ովքեր իրենց ուսուցումը հիմնավորում ու պաշտպանում են Սուրբ Գրքերից և Ավանդությունից արված մեջբերումներով, թոթովելով Իմ աստվածային Խոսքերը իրենց շուրթերով միայն...

Ես անկարագրելի ձևով բացահայտել և բացահայտում եմ քեզ Իմ անհուն Ողորմությունն ու Իմ լիառատ Սերը, որոնք արհամարհվել են և չեն ուսուցանվել ու արտահայտվել Իմ հավաքույթներում այնպես, ինչպես Ես եմ ցանկանում: Հանուն Իմ Սուրբ Անվան, Ես ետ պահեցի Իմ

[1] Բ Թես. 2:4, Եզեկ. 28:2
[2] Հայրն է խոսում:

Ձեռքը այս չար սերնդի վրա իջնելուց: Հանուն Իմ պատվի, ես շարունակում եմ սանձել Իմ զայրույթը...

Ա՜խ, Վասուլա, ես դուրս եմ հեղում Իմ Սուրբ Հոգու զորությունը, ինչպես այն երբեք չի պատահել նախկինում պատմության մեջ: Ես գիտություն եմ մատուցում քեզ այնպիսի մի ձևով, որ հասնեմ նույնիսկ անուսներին: Գրված է, որ Ողորմությունն ու զայրույթը նույն ձևով պատկանում են Տիրոջը, և Իմ դատաստանի համաձայն Ես ազատություն եմ տալիս Իմ Ողորմությանը:

Իմ Սուրբ Հոգին անդադար կրկնում է ասացվածքներ ձեզ բոլորիդ, մեղրից էլ քաղցր, նույնիսկ մեղրախորսխից կաթող մեղրից քաղցր: Ես անուշաբույր յուղ եմ տարածում ողջ տիեզերքում՝ օծելով Իմ ողջ արարչությանը: Ես թույլ եմ տալիս բոլորին, ով ցանկանում է ճանաչել Ինձ, որ մոտենան Ինձ և ներշնչեն Իմ Բերանից այն շնորհները, որոնք անհրաժեշտ են նրանց հոգին հանդարտ, և նրանց սիրտը Ինձ և Իմ Օրենքին պատվաստված պահելու համար...

Ո՞վ կարող է տալ որևէ հոգու այդպիսի հանդարտություն և ազատություն Իմ Սուրբ Հոգուց բացի: Ո՞վ կարող է բարձրացնել ձեր հոգին դեպի Աստվածայինը՝ Իմ Սիրո բարերարությունից ու անասելի ներողամտությունից բացի:

Ես սովորեցնում եմ ձեր բոլորին և հիշեցնում ձեզ այն, ինչ Ես միշտ ասել եմ. Ես ոչ միայն ձեր հոգու Գերագույն Տերն եմ, այլ նաև ձեր ընկերը, հնարավորություն տալով ձեզ մուտք գործելու Իմ Գավիթներում, որ ներս ու դուրս անեք, արտահայտելով ձեզ և տալով Ինձ ձեր կարծիքը, նույնիսկ կառավարելու Ինձ հետ: Շնորհով Ես բարձրացրել եմ ձեզ, որ լինեք զավակ՝ շնորհով, քանի որ Խոսքը Որդին է բնությամբ...

Կարո՞ղ ես դո՛ւ, որ կարդում ես Ինձ, ասել. «Ես սովորել եմ ինչպես տիրապետել Աստծուն, Նրան, ով հայրություն արեց ինձ և Ինքն Իրեն հայտնի դարձրեց ինձ, առանց երբևէ կորցնելու Իր վերանցությունը: Նա, ով պարփակում է բոլոր էակներին՝ լցնելով ամեն ինչ Իր Լուսավոր Լույսով, առանց սահմանափակվելու նրանց սահմաններում, տիրապետում է նաև ինձ, և հրամայել է, որ ամեն ինչ իմ ներսում լինի Իր Աստվածային Կամքի համաձայն»: Ամեն ինչ, այո՛, ամեն ինչ, որ գալիս է Ինձնից պտտվում է Աստվածային Սիրո շուրջը:

Ինչպես Ես ասել եմ նախկինում, այս խոսքերն ասելու համար մարդ պետք է ստանա մի անգնահատելի շնորհ: Եթե դուք չեք կարողանում ասել այս խոսքերը, ամեն ինչ թողեք ձեր ետևում և հիմա եկեք Ինձ մոտ ու ապաշխարեք: Հետո թույլ տվեք, որ Իմ Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա և տիրի ձեզ Իր Լույսով՝ վերածելով ձեր հոգին մի Տաճարի...

Ո՜հ, այդ ժամանակ, Նա ինչպիսի ուրախությամբ կապահովի ձեզ: Նա կհաստատի ձեր մեջ այն հիմքը, որի մասին Ես ձեզ ուսուցանում էի՝ ճշմարիտ աստվածաբանությունը, որն է Իմ՝ ձեր Աստծո մասին մտահայեցությունը: Հափշտակված այս մտահայեցությամբ, ձեր հոգին կճախրի բարձունքներում՝ դիտելով ու զգալով Ինձ՝ ձեր Աստծուն խորությամբ: Իմ Թագավորությունն այդ ժամանակ կսկսվի ձեր մեջ: Ապա, քայլ առ քայլ, մինչ Սուրբ Հոգին կփչի ձեզ վրա այլակերպության Իր Շունչը, բացահայտելով ձեր հոգուն Աստվածային իրողություններ,

հենց Իր՝ Իմաստության միջոցով, Նա կբացահայտի ձեզ այն ամենը, ինչ ձեր փիլիսոփաներն ու գիտունները մինչ օրս կոչում են հիմար և անմիտ: Դուք կհասկանաք և կզգաք Սուրբ Հոգու Լույսով Իմ Սիրո վսեմությունը, այն Աստվածային հարստացումները, որոնք Ես կարող եմ ապահովել ձեր հոգու համար, և այն ամենը, ինչից դուք կարող եք օգուտ ստանալ: Ես կսրբագործեմ ձեզ, մինչ Մենք կապրենք ձեր մեջ, իսկ դուք՝ Մեր մեջ: Ինչպես Սուրբ Գրքերն են ասում. «Ինձ միացած մնացեք և Ես միացած կմնամ ձեզ»: Դուք կդառնաք Ճշմարիտ Որթի[1] մի մասը:

Այո՛, Ես կպարգևեմ ձեզ Ինձ ձեր հոգում կրելու շնորհը: Ես՝ ձեր Աստվածը, հմայված եմ ձեզնով: Հմայված այն աստիճան, որ չնայած ձեր թուլություններին, Ես կարող եմ բնակվել ձեր ներսում: Որքան ավելի շատ դուք խորհեք Իմ Երրորդության Սրբության մասին, այնքան ավելի կհասկանաք Ինձ: Որքան ավելի շատ ճանաչեք Ինձ, այնքան ավելի շատ Ես կարտացոլեմ Իմ Պատկերը ձեր մեջ:

Հետո, Երկնքից, Իմ հրեշտաների և իշխանների ամենաբարձր դասերից մի բարձրաձայն, մեղեդային ձայն պիտի լսվի: Միասին մեկ ձայնով նրանք գովաբանություններ պիտի օրհներգեն Օրհներգին[2]. «Աստծո խորհուրդը մեկ անգամ ևս հայտնվում է, բացահայտելով Նրա Հավերժական Լույսը երիցս Սուրբ, դրոշմելով Իր Պատկերը այն սիրելի հոգու վրա, որին Նա ընտրել է, որ պարգևի Իր Էության շնորհը: Ո՜հ, ինչպիսի օգուտներ են սպասվում այս հոգուն: Գովաբանություն և Փառք մեր Տիրոջը և Աստծուն»:

Ամեն... Տեսնո՞ւմ եք,
թե Աստված ինչ է առաջարկում մեզ:
Ուրեմն լսեք Նրա Ուսուցումները
և մի արհամարհեք դրանք...

Ամենից աղքատները պիտի հրճվեն Իմ ասածներով, իսկ խոնարհները՝ վեր պիտի բարձրացվեն: Ձեր փրկությունը դարձի և անդորրության մեջ է: Վերադարձե՛ք ետ դեպի Ինձ: Ես միայն սպասում եմ, որ գթառատ ու ողորմած լինեմ ձեր հանդեպ...

(Ավելի ուշ Հիսուսն է խոսում):

Վասո՛ւլա, Սուրբ Գրքերն ասում են. «Խաղաղարարները, երբ աշխատում են խաղաղության համար, ցանում են սերմեր, որոնք սրբության ու արդարության պտուղ են տալիս»[3]:

Ես ուսուցանում եմ քեզ իշխանությամբ և վսեմությամբ, որ բարձրացնեմ քեզ, որպեսզի կարողանաս արտահայտել Իմ խոսքերն այնպես, ինչպես Ես եմ ցանկանում: Իմ խոսքերը խաղաղություն, սեր և հույս են բերում մարդու սրտում: Ես հաշտության եմ բերում ապաշխարության միջոցով:

[1] Հիսուս Քրիստոսի
[2] Աստծուն
[3] Հակ. 3:18

Նա, ով ավեր է գործում մարդու սրտում, Ինձնից չի գալիս: Սրանով ես ի նկատի ունեմ, որ նրանք, ովքեր հայտարարում են, թե մարգարեություններ ունեն, ովքեր մարգարեանում են միայն դժբախտություն և աղետներ, դրանք Ինձնից չեն գալիս: Բայց նա, ով մարգարեանում է Իմ նախազգուշացումները, խաղաղություն և ապաշխարություն, և նրա խոսքը իրականանում է, պետք է ճանաչվի որպես մեկը, որն իսկապես Իմ կողմից է ուղարկված: Այո՛, արդարև, նա, ով մարգարեանում է՝ խրատանք, մխիթարություն, և բարելավում է հասարակությունը, իմացե՛ք, որ նա հիրավի Իմ կողմից է ուղարկված:

Ես ձեզ նախազգուշացնում եմ, որ չընդունեք որևէ մեկին սոսկ նրա խոսքերով, կամ չհավատաք որևէ մեկին, ով հայտարարում է, թե իր խոսքերը գալիս են Ինձնից, նույնիսկ, եթե նա հրաշագործություններ և հրաշալիքներ կատարի, ինչպես ասենք՝ կենդանացնի մեռածին: Այլ ավանչ դրեք նրանց, ովքեր չեն հարուցում քննարկումներ, որոնք հակասում են հավատի խորհուրդներին, քանի որ Սուրբ Հոգու շնորհը՝ տրված Իմ ընտրյալներին, ուրախությամբ կհամակի նրանց, ովքեր կլսեն նրանց: Նրանց խոսքերը վեր կբարձրացնեն նրանց հոգին, մոտեցնելով նրանց Իմ հրեշտակներին և սրբերին: Նրանց խոսքերը, որոնք իրականում Իմ Խոսքերն են, կվերածեն ձեզ Տաճարների: Իմ Խոսքերը ոչ միայն հեղինակություն և իշխանություն ունեն, այլև նրանք այրում են՝ բոցավառելով ձեր հոգին և լուսավորելով ձեր ոգին միևնույն ժամանակ:

Եվ այս բոլորից ավելի, աստվածային իրողությունները, որոնք հայտնված են ձեզ Իմ ընտրյալ հոգիների միջոցով, կարտահայտվեն Սուրբ Գրքերի և Ավանդության հիման վրա, և ուրիշ ոչինչ: Ինչպե՞ս պիտի իմանաք, որ Ես եմ խոսում: Դուք կիմանաք այն առողջ Գիտության միջոցով, որը ստացել եք: Եվ դո՛ւ, որ ամբողջապես մեռած էիր և քայքայվում էիր մահվան հովտում, արթնանալով կհասկանաս, թե ով վեր բարձրացրեց քեզ շնորհի միջոցով: Աշխարհը, որտեղ դու հիմա ապրում ես, զավա՛կս, չար է, մեղմ ասած՝ օր-օրի ավելի խրվելով մեղքի մեջ: Ուրեմն մի՞թե Ես չպետք է մտահոգվեմ:

Երբ ձեր օրերում Ես խոսում եմ, իսկ հովիվները չեն լսում և չեն հավատում, որ Ես միջամտում եմ, նրանք, ինչպես Սուրբ Գրքերն են ասում. «մեր պահապանները կույր են, նրանք ոչինչ չեն նկատում... Նրանք բոլորը գնում են իրենց ճանապարհով, յուրաքանչյուրն իր անձնական հետաքրքրության ետևից...»: Իմ եկեղեցին միշտ կաճի Սուրբ Հոգու միջոցով և երբեք չի նվազի: Նա միշտ կնորոգվի, չնայած այն բոլոր թունավոր նետերին, որոնք կուղղվեն Նրա վրա: Այդ նույն թունավոր նետերն օգտագործվում են նաև ուղղվելու համար նրանց վրա, որոնց Ես ուղարկում եմ ձեզ մոտ:

Ողջ աշխարհը նեխում ու քայքայվում է իր չարիքի և ուրացության մեջ, խախտելով ոչ միայն Իմ Օրենքը, այլև ամեն Սուրբ բան: Ուրեմն ինչո՞ւ են զարմանում, երբ Սուրբ Հոգու շնորհն ավելանում է: Ավա՜ղ: Ինչպիսի դատապարտություն պիտի տրվի նրանց, որոնց չար սրտերը անհանգստացրին Իմ ընտրյալ հոգիներին: Նրանք չեն ժառանգի Իմ Թագավորությունը, մինչև Ես նրանց շրթունքներից զզվումի ու ապաշխարության մի բառ չլսեմ...

Վասո՛ւլա, Ինձ հետ միասին դու պիտի աշխատես լռության մեջ[1], լուսավորելու խավար հովիտները: Ամեն ինչ, որ Սուրբ Հոգին կտա քեզ գրելու, պիտի լինի այս և մյուս սերունդների ուսուցման համար, և ով էլ որ հակառակվի քեզ այն առաքելության մեջ, որը Ես եմ քեզ տվել, կհակառակվի Իմ Հոգու աշխատանքին: Հայտարարիր այն ամենը, ինչ Ես ասում եմ, որ առաջնորդում է բոլորին, ովքեր լսում են Իմ Խոսքը, դառնալու մի նոր էակ, և ուշադրություն մի դարձրու[2] նրանց, ովքեր ասում են. «Եթե դու ուղարկված ես Աստծո կողմից, և եթե այդ խոսքերը, որ դու ասում ես, գալիս են Աստծուց, ապացուցիր քո խոնարհությունը՝ թաքցնելով ինքդ քեզ և այդ ամեն ասվածները: Վերջ տուր աշխարհով մեկ ինքդ քեզ և այդ ասված խոսքերը ցուցադրելուց»:

Այդ մարդկանց պատասխանիր հետևյալը. «Ես նման չեմ լինելու այն չար ծառային, որը թաքցրեց իր տաղանդը և հետո դատապարտվեց ոչինչ չանելու համար: Ընդհակառակը, ես պիտի բազմապատկեմ իմ տաղանդը և փառք տամ Նրան, Ով այն ինձ վստահեց: Ես կփոխանցեմ ոչ միայն այս սերնդին այս սքանչելի հրաշքը[3], այլև հրեշտակները պիտի տանեն Աստծո խոսքերը և պիտի շարունակեն տարածել դրանք, ինչպես սերմերի մի անձրև՝ թափված վերևից բոլոր գալիք սերունդներին, որ նորոգեն Աստծո արարչությունը և զարդարեն Եկեղեցին: Որ քաղցրացնեն Նրա զավակների բերանները և բացեն նրանց բերանները՝ գովաբանելու Նրան: Որ բացեն նրանց աչքերը և հնարավորություն տան նրանց քննելու իրենց սրտերը: Ես ամբողջապես կնքված եմ մեր Տիրոջ Աստվածային Անունով, և ես չեմ վախենում: Ես Նրա բարձրաձայն գիրքն եմ՝ հայտարարելով այն նույն Ճշմարտությունները, որոնք մեր Տերը փոխանցել է մեզ: Ուստի, ոչ մի բան նոր չէ: Ես ոչ մի նոր բան չունեմ, որ իմ սեփականն է, եղբայրնե՛ր, այլ ամեն ինչ, որ ասվել է ինձ, գալիս է Աստվածային Գիտությունից, և Սուրբ Երրորդության Բերանից»: Ահա թե դու ինչ պետք է ասես նրանց Իմ Անունով:

Իմ մասին խորը մտածիր, սիրելիս, և հանգստացիր Իմ Սրտի վրա...

Սեպտեմբերի 8, 2002

Գրի՛ր. Սուրբ Գրքերն ասում են.

«Եթե մարդ զայրույթով է լցված
մյուսի դեմ, ապա կարո՞ղ է նա
Տիրոջից կարեկցանք պահանջել:
Եթե նա խղճահարություն
ցույց չի տալիս
իր նման մարդու հանդեպ,

[1] Նկատի ունի գրավոր ձևով:
[2] Այլ խոսքերով՝ մի՛ վշտացիր:
[3] ՃԿԱՄ պատգամները

*ապա կարո՞ղ է արդյոք նա աղերսել
իր սեփական մեղքերի համար»:*[1]

Հիշի՛ր Սիրո Իմ Օրենքը և մնա ջերմեռանդ Դրա հանդեպ: Մոռացիր ամեն մի ոխակալություն ու անզուսպ մտքեր և շրջվիր դեպի Ինձ... Վասո՛ւլա, այս սերնդից այնքան շատերն են այս մեղքի մեջ, զայրույթի և ատելության մեղքի՝ ստրուկներ ձեր կրքերի հանդեպ և չեմպիոններ, երբ հասնում է չարիք գործելուն...[2]

Ոչ մեկը արդար չէ, բայց և այնպես, Ես՝ Հիսուս Քրիստոսը, ցույց տվեցի Իմ բարությունը և Իմ հորդառատ Սերը մարդկությանը, և Ես մտահոգված չէի, ոչ էլ փնտրում էի որևէ բարություն կամ արդարություն, որոնք դուք ինքներդ կարող էիք արած լինել: Իմ կարեկցանքը այնքան մեծ էր, որ այն ստիպեց Իմ Ողորմությանը գթառատ լինել ձեր հանդեպ՝ ձեզ փրկելու համար, վերածննդի մաքրագործող ջրի միջոցով և Սուրբ Հոգով ձեզ նորոգելով:

Ես մի գանձ[3] եմ դրել ձեր առջև, սերո՛ւնդ, բայց ձեր հոգին շարունակ թերանում է տեսնել այն: Դուք շատ անգամ անցնում եք դրա կողքով և ոչինչ չեք տեսնում: Եվ, ա՜խ, քանի անգամ եմ Ես Իմ Ձեռքը երկարել դեպի ձեզ, որ ձեզ Ինձ մոտ տանեմ, որ հայտնագործեք Ինձ: Մի՞թե Ես թաքցնում եմ Իմ Գանձը ձեզնից: Ես հենց այդ Գանձն եմ: Մի՞թե ոչ ոք երբևէ չի ասել ձեզ, որ Ես ձեր Երկնային Փեսան եմ: Ես Կենսատու աղբյուրի լուսափայլ մաքրող ջրերն եմ, որի ջրերը մաքրագործում են, նորոգում և ձեր մեջ Կյանք ներշնչում:

Ես եմ Հարությունը: Ուրեմն այլևս մի տատանվեք, այլ բացեք ձեր աչքերը և վազեք դեպի Ինձ: Դադարեք առաջ ընկնելուց: Արդյոք որևէ մեկը ձեզ ուսուցանե՞լ է, որ սիրո գերագույն արտահայտությունը Իմ խաչը ընդունելն է: Իմ Խաչը, որը ձեր փրկարար Գործիքն է, այլ խոսքով այն Ծառն է, որը կյանք է տալիս: Ձեր փրկարար Գործիքի միջոցով, ձեր ոտքերն անցնում են մահվան հովտից դեպի Երանական Տեսիլքը:

Ես եմ Հարությունը, և Իմ միջոցով Ես ձեզ բոլորիդ դարձրել եմ Հարության որդիներն ու դուստրերը: Եթե մնաք մեղքի մեջ և ոչ ներողամիտ ձեր մերձավորի հանդեպ, անզիջող ձեր սրտում՝ լի ատելությամբ, դուք Աստվածությունը չեք տեսնի: Սուրբ Հոգին Իրեն ցույց չի տա ձեզ, եթե պարտական եք մեղքին, քանի որ դուք գիտակցաբար մերժելիս կլինեք զղջման արարքը, որը սիրո մի արարք է...

Եթե մնաք այս մեղքի մեջ, դա նույնն է, եթե ասեք Ինձ. «Տե՛ր, ես նախընտրում եմ մնալ իմ գերեզմանի մեջ: Ես ընտրում եմ մեռած մնալ և ապրել մեռածների մեջ»: Ձեր մարմինն արդեն նեխում է, դուք քայքայվում եք, և դուք դեռ մերժ ո՞ւմ եք Կյանքը: Ժխտել ձեր մեղքը նման է այն բանին, որ ժխտեք Կյանքը: Դրա փոխարեն եկեք Ինձ մոտ և սրբերի մոտ, և նրանց մոտ երկրի վրա, ովքեր մոտենում են կատարելությանը, ովքեր խաղաղության մեջ են, երբ խորհրդածում են Իմ մասին, որոնց Ես հագեցնում եմ անասելի հարստությունով և երկնային խորհուրդներով:

---

[1] Սիրաք 28:3-4
[2] Տերը խոսում է նրանց մասին, ովքեր ծանր մեղքի մեջ են...
[3] Նշանակում է հարուստ ուսուցումներ:

*Համաքնութենական
Սուրբ Երրորդություն, մեղանչումը
և Աստծուն մերժելը մեր օրերում
ոչնչացրել են
Քրիստոսի Եկեղեցու մի մասը:
Ինչպե՞ս կարող է
Քրիստոսի Մարմինը
ճանաչելի լինել մեր մեջ,
մեր այսքան խղճալի վիճակի մեջ:*

*Անշունչ նյութի պես
մենք ցրված ենք, Տե՛ր,
կտոր-կտոր եղած մեր եսի
և հպարտության ոգու կողմից:
Որտե՞ղ է մեր մեջ հավատի
այն բնորոշ նշանը, որը սերն է:
Ընդդիմության միտումները
միշտ տեղում են,
նույնիսկ անցյալի թշնամանքը
դեռ խիստ կենդանի է[1],
աններող հոգին է ապրում
շատերի մեջ:*

Ա՛խ, ամենաօրհնյալ ներողամտություն, ողորմություն, օրհնյալ են նրանք, ովքեր ողջունել են քեզ: Դուք այլևս չեք արատավորվի, այլ ձեր Փրկչից կստանաք Համբույրը ձեր ճակատին: Օրհնյալ է նա, ով հրաժարվում է իր մեղքից. նա կտեսնի Ինձ՝ Գանձին, և մուտք կգործի սրբության ճանապարհը: Օրհնյալ է նա, ով մեծ ցանկությամբ և խանդավառությամբ գրկում է Իմ Խաչը: Նա կմտնի Երանական Տեսիլքի մեջ, և նրա հոգին կճանաչի աննկարագրելի ուրախություններ:

Այսօր, սերո՛ւնդ, Ես ողողում եմ ձեզ հրաշքներով և Իմ Ձայնի հնչումով: Ձեր մեղքի պարտքից և մեղքի ճահճից դուրս քաշելու համար Ես երգեցի ձեզ Երկնային երգը[2]: Ես ցույց տվեցի ձեզ Իմ Սրտի Հարսանեկան Սենյակի գաղտնիքները: Ամենայն չարիքից ձեզ ազատելու համար, Ես շարունակաբար ձեր ներկայության մեջ եմ գտնվում: Եվ եթե ձեր աչքերը չեն տեսնում ձեր Փեսային, այդ այն պատճառով է, որ դրանք ծածկված են մեղքի կեղևով...

Ինչպես Ես ասել եմ ձեզ, ձեր ետևում թողեք ձեր բոլոր կատաղի մտքերը և ոտնատեղ մի տվեք Սատանային, որ կառչի որևէ մեկի դեմ ուղղված ձեր ոխակալությունից, քանի որ Հայրը, որ Երկնքում է, խստորեն կվարվի ձեզ հետ: Մի՛ եղեք չար ծառայի պես[3], որ անխղճորեն բանտ գցեց իր ծառային իր ունեցած պարտքի համար:

---

[1] Այստեղ հիշեցի մի քանի միջադեպեր, թե ինչպես որոշ ուղղափառ հոգևորականներ դեռևս ատելություն ունեն կաթոլիկ եղբայրների նկատմամբ պառակտումից հետո, մեղմ ասած...

[2] Տերը նկատի ունի Իր Պատգամները:

[3] Մատթ. 18:23-35

Մի՛ մնացեք անկենդան, այլ մտածեք Իմ աննկարագրելի Ողորմության մասին, որ Ես ունեմ ձեր հանդեպ, սերո՛ւնդ: Ուրեմն գործադրեք այն ամենը, ինչ Ես ասել եմ, և ստացեք Շնորհի Սուրբ Հոգին:
Եղեք մեկ:

Սեպտեմբերի 13, 2002

Ճանաչել Աստծուն և հասկանալ Նրան <u>միայն</u> Սուրբ Գրքերի հիման վրա, բավական չէ: Պետք է ներթափանցել Աստծո մեջ, որ կարողանանք հասկանալ և ճանաչել Աստծուն: Սա մենք անվանում ենք «ճաշակել Աստծուն»:

Այո՛, Ես պետք է ձևավորվեմ ձեր սրտի ամենախորքում այնքան, որքան դուք պետք է վերափոխվեք Իմ խորքերում:

Զավակս, Ես Յահվեն եմ, և Ես ուրախանում եմ, որ այցելում եմ քեզ քո աղքատության մեջ: Մենք քեզ ազատություն ենք տվել, դուրս քաշելով քեզ խավարի հովտից, որ ապրես Մեր պայծառ Լույսի մեջ:

Հիմա հասկացիր, որ դու ծառայում ես քո Թագավորին: Դու հասկանո՞ւմ ես, որ Ես զգեստավորել եմ քեզ Իմ փառքով, տոգորելով քեզ Իմ պայծառությամբ, որպեսզի դու ազատ մուտք գործես Իմ Արքայական Գավիթների մեջ: Եղիր վստահ, երբ զրուցում ես Ինձ հետ և ուրախությամբ ընդունիր Իմ շնորհը:

Երանելի են նրանք, ովքեր ունեն մանկան սիրտ և չեն կասկածում այս Պատգամներից ոչ մեկին, որոնք գալիս են Իմաստությունից, ոչ էլ երբևէ կկասկածեն: Նրանք պատրաստ են եղել շնորհի համար և ստացել են Իմ Լույսն իրենց մեջ: Նա, ով բացահայտում է Ինքն Իրեն մարդկությանը այսպիսի աննկարագրելի ձևով, ոչ այլ ոք է, քան ձեր Արարիչը, որն Իր Խոսքերի միջոցով շատերին է ետ բերել դեպի ճշմարիտ կյանք Ինձ հետ:

Ես Նա եմ, ով հորդորեց ձեզ վեր բարձրացնել ձեր աչքերը դեպի երկինք և այլևս չմեղանչել: Ես շարունակաբար ձեզ ամբողջական գիտություն եմ տալիս Իմ մասին, որպեսզի ճանաչելով Ինձ՝ դուք ժառանգեք նաև Իմ Թագավորությունը: Ես երբեք կոպիտ չեմ խոսել ձեզ հետ, այլ վարվել եմ ձեզ հետ մեղմորեն և ներողամտորեն, ներողամտություն, որն այս աշխարհից չէ: Իմ Խոսքերը համատեղելի են Սուրբ Գրքերի ուսուցումների հետ:

Երանելի են նրանք, ովքեր ընդունել են այս իրողությունը առանց Ինձ փորձելու և չեն վարվել Իմ պատվիրակի հետ անխոհեմությամբ, նրանք պիտի ստանան մարգարեի պարգև: Դուք վստահաբար լսել եք, որ Իմ պատվիրակները խոսում են Իմ Անունով, և նրանք, ովքեր չեն հավատում նրանց, վարվելով նրանց հետ որպես ինքնակոչների, կամ նույնիսկ մեղադրում նրանց առաքելությունը, մեղանչում են Իմ դեմ, որ խոսում է նրանց միջոցով:

Ինչպես Ես չեշտել եմ նախկինում, Ես ոչինչ չեմ ասել, որը հակադրվում է Սուրբ Գրքերին, բայց բոլոր Իմ Խոսքերը, որոնք Ես

արտաբերեցի, համատեղելի են այն բանի հետ, ինչ արդեն ես տվել եմ ձեզ, սակայն, թվում է, թե շատերն ամբողջովին չեն ներթափանցել Իմ Խոսքի[1] գիտությունն մեջ: Եթե այդպես լիներ, նրանք կճանաչեին այսօրվա Իմ Օրհներգերը: Իմ Օրհներգերի մեջ նրանք կտեսնեին Իմ Պատկերը, որոնք չեն տարբերվում Իմ Խոսքից, որը տրվել է ձեզ: Արդարև, ոչ ոք չի կարող ներթափանցել այս խորհուրդի մեջ և հասկանալ այն՝ ձեր Աստծո խորհուրդի մեջ, որը խոսում է և կենդանի է և գտնվում է ձեր մեջ ձեր օրերում՝ միայն Սուրբ Գրքերը կարդացած լինելով: Իմ Խոսքի խորությունն մեջ թափանցելու համար ձեզ դրանից ավելին է հարկավոր:

Հոգևոր գիտելիքը ձեռք է բերվում Սուրբ Հոգու միջոցով, որը լուսավորում է Սուրբ Գրքերը ձեզ համար: Երբևէ լսած կա՞ք մեկի մասին, որ կարդում է գիշերը, երբ լույսերը մարած են: Միայն լույսերը վառված նա կկարողանա տեսնել բառերը և կարդալ: Առանց լույսի ոչինչ չեք տեսնի, առանց Սուրբ Հոգու, որ մտքի սահմաններից այն կողմ է, և որ ավելին է, քան լույսի բոլոր համաստեղությունները միասին վերցրած, Իմ Խոսքի մեջ Իմաստության ասածներն ու արտահայտությունները կմնան թաքնված ձեզնից: Միայն Սուրբ Հոգին է տալիս այն անհրաժեշտ լույսը ձեր մտքին, որ հասկանաք երկնային խոսքերը: Այլապես Իմ Խոսքը կմնա կնքված և փակ: Այս է պատճառը, թե ինչու այնքան շատերը չեն ճանաչում Ինձ Սիրո այս Օրհներգի մեջ:

Սուրբ Գրքերը, ինչպես ես ասացի, արտացոլում են Իմ Աստվածային Պատկերը, և եթե այսօր դուք չեք տեսնում Ինձ ձեզ ուղղված Իմ Օրհներգերի մեջ, որոնք տրվում են ձեզ Գթաստրության կողմից, այդ այն պատճառով է, որ դուք դեռևս չեք զգացել Իմ քնքշությունը, ոչ էլ ճաշակել եք Իմ քաղցրությունը: Ձեր այսպես կոչված գիտելիքը խանգարում է ձեզ Ինձ տեսնել: Երանելի է նա, ով բացել է իր սիրտը Ինձ համար, սրտի պարզությամբ ընդունելով Ինձ: Նա չի տեսնի Իմ Օրհներգերը որպես սոսկ բառեր, այլ որպես զորություն, որպես Սուրբ Հոգի, և որպես կատարյալ համոզմունք: Եվ ես կավելացնեմ, որ Իմ Օրհներգերը՝ երգված ձեզ, մի կենդանի զորություն են ձեր մեջ, ովքեր հավատում են դրանց:

Ես ցանկանում եմ, որ դուք բոլորդ, արարչությո՛ւն, տեսնեք Ինձ: Ահա թե ինչու Ես անդադար բացահայտում եմ Իմ Սերը ձեր հանդեպ, ձեր գոյության առաջին օրվանից սկսած: Արդյոք կլսե՞մ Ես մի օր ձեզանից. «Թող փառաբանվի Աստված, Իր անսահման Ողորմությունը մեզ ցույց տալու և մեզ թույլ տալու համար, որ ճաշակենք Իր Բարությունը: Առանց Նրա կողմից Իր Սուրբ Դեմքը մեր սրտերի մեջ բացահայտելու, մենք կլինեինք նրանցից, ովքեր հավատացած են, որ կարող են հայտնաբերել Քեզ աշխարհիկ իմաստության և միայն իրենց ուսումնասիրությունների միջոցով: Քո գանձը, Տե՛ր, թաքնված է գիտուններից, նրանց խորագիտակ գիտելիքներից, ովքեր պնդում են Քո խորհուրդների և հոգևոր հարցերի իմացությունը, երբ իրականում նրանք չեն ճանաչում Քեզ»:

Ես ուսուցանում եմ ձեզ, որ ձեր մտքերը պահեք միայն երկնային բաների վրա, որ ծաղկեք, ցույց տալով ձեզ ձեր նոր էությունը: Ես

[1] Սուրբ Գիրքերի

ուրախությամբ քարոզում եմ ողջ աշխարհին՝ առանց որևէ մեկի հանդեպ խտրականության: Իմ նպատակը, որպես Հայր, Իմ արարչությանը զարդարելը և նրան նորոգելն է, վերածելով ձեր կյանքը մի հարատև աղոթքի: Ուրեմն ինչո՞ւ է այս ամբողջ աղմուկը Իմ Անվան շուրջը: Ինչո՞ւ եք դուք ձեզ թույլ տալիս կորցնել ձեր պարզությունը և թելադրվել աշխարհի կողմից: Ձեր աստվածային իրականությունը պետք է լինի Եռանձն Աստվածը, և ձեր կյանքը պետք է պտտվի երկնային ներշնչումների շուրջը և լավ թաքնված լինի Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ:

Կարո՞ղ է որևէ մեկն ինքնուրույն հայտնագործել Իմ անհատակ Գանձերը: Մինչև նրան չտրվի հասկացողության նեքին լույսը, նա կմնա խավարի մեջ: Ես կրկնում եմ. երանելի են նրանք, ովքեր հավատում են Իմ Գթառատ Կանչին, նրանք պիտի շահեն Իմ ընկերակցությունը և Իմ մտերմությունը:

Ո՞վ է Քրիստոնեական գիտության Աղբյուրը, մարգարեության Աղբյուրը: Դա Սուրբ Հոգին է, որ ուսուցանում է և օգտագործում է բոլոր միջոցները, որ փոխակերպի ու նորոգի Իմ արարչությունը: Եվ նրանք, ովքեր քնել են և մերժում են մարգարեությունը ձեր ժամանակներում, հարցրու նրանց, արդյոք նրանք հասկացե՞լ են Սուրբ Գրքերը և նրանց ասածները:

Ես օծել եմ մարգարեների, որ հռչակեն Իմ Խոսքերը մինչև ժամանակների վերջը: Ես օժտել եմ նրանց Եղիայի հոգով: Եվ հետո, մի՞թե չեք կարդացել, որ «մարգարեներ պիտի հաջորդեն նրան»[1]:

Որևէ մեկը, որ բացել է իր սիրտն Ինձ համար, կամավորապես թույլ տալով Ինձ, որ նվաճեմ իրեն, հնձել է կյանքի բերքը: Սուրբ Գրքերն այդ դեպքում դառնում են նրա համար մի չկնքված և աստվածային Օրհներգ, մի կենդանի Խոսք, Աստծո մի տեսիլք, մի աստվածային զգեստ ձեր հոգու համար: Այսպիսով, նրա լուսավորությունը, որը գալիս է Իմ Ներկայությունից, հաստատում է Իմ Թագավորությունը նրա սրտում: Որևէ խորհուրդ, որը ծածկված էր թվում, կբացահայտվի, և Սուրբ Գրքերը կդառնան որպես մի բարձրաձայն և լսելի օրհներգ ձեր ականջներին: Այդ Ես եմ՝ ձեր Փեսան[2], որ դուրս է գալիս Իր Արքայական Պալատներից, որ դարձնեմ ձեր սրտերը դեպի Ինձ Իմ սիրավառ նպատակի համար:

Իմացած եղեք, որ ձեր սերունդը մշտապես վիրավորում է Ինձ և ուսուցանվում է չարի կողմից՝ ենթարկվելու այն ամենին, ինչը հակասում է Իմ Սիրո Օրենքին և գալիս է Աստվածային Ճշմարտությունից: Ձափազանց չար այս սերունդը մաղվում է ամեն մի քամուց և քայլում ամեն մի կողմնակի ճանապարհով, որը պատրաստված է Սատանայի կողմից: Հիմա, Իմ Որդին և Ես լայն հնարավորություններ ենք տվել ձեզ, որ վերադառնաք դեպի Մեզ ապաշխարության միջոցով, քանի որ մենք կարեկից ենք և գթառատ: Բայց ա՜խ... ձեզանից շատերը մոլորվել են իրենց սեփական ենթադրություններով...

[1] Սիրաք 48:8
[2] Ես. 54:5

Գրված է[1]. «Համառ սիրտը ի վերջո վատ վերջ կունենա, և ով էլ որ սիրում է վտանգը, կկործանվի նրա մեջ»: Աշխարհն այսօր մատուցում է ձեզ մեծ ավերածություն, ուստի ձեզ համար ավելի լավ է հենվել Ինձ վրա, ով ձեր Վահանն է, և ասել. «Ընկնենք Տիրոջ Ձեռքերի մեջ, ոչ թե մարդկանց ձեռքերի մեջ: Որովհետև, ինչպես Նրա Վսեմությունն է, այնպես էլ Նրա Ողորմությունն է»[2]:

Ա՜խ, չար հակվածություն, չնայած այս բոլոր Օրհներգերին և նախազգուշացումներին, երկրի մարդիկ չեն ապաշխարում, ոչ էլ հրաժարվում են իրենց մեղքերից: Շատ քչերն են հետևում Իմ Սիրո Օրենքին և անում այն, ինչ գոհացնում է Ինձ: Ես անդադար խոնարհվում եմ Իմ Երկնային Գավիթներից դեպի ձեզ, սերո՛ւնդ, որ ձեզ դուրս քաշեմ ձեր տիղմի միջից: Ես ձեզ մոտ եմ ուղարկում Իմ պատվիրակներին, որոնք բուրում են խառնված խնկերի անուշահոտությամբ՝ պատրաստված Հրեշտակների կողմից, որ իրենց թևերի վրա տանեն Իմ աստվածային Օրհներգերը: Նրանք, ովքեր ճաշակեցին Իմ Խոսքերը, դնացին ճիշտ ուղղությամբ: Որքան սքանչելի էին նրանք Իմ Խոսքերը ճաշակելուց հետո, որոնք մեղրի պես քաղցր էին նրանց բերաններին:

Ես պատրաստել և ցուցադրել եմ այս բոլոր տարիների ընթացքում հոգևոր կերակրի մի հրաշալի խնջույք: Բարեպաշտությունն ու առաքինությունն էին Իմ Սիրո Թեման՝ ուղղված ձեզ: Հանուն Ճշմարտության Ես վեր բարձրացրի ձեզ, սերո՛ւնդ, Իմ Գայիսոնով: Արդյոք ձեր սիրտը ինչ-որ չափով շարժվե՞լ է: Քաղցր է այս ազնվական Օրհներգի մեղեդին, բայց մի՞թե դուք չլսեցիք այն: Մի՞թե դուք չլսեցիք Ինձ՝ Իմ Սիրո Թեմայով, ձեզ անհատապես դիմելիս ուրախության յուղով: Մի՞թե չհասկացաք, թե ինչպես էի Ես օծում ձեզ այս ամբողջ տարիների ընթացքում: Դադար տվեք մի պահ ու մտածեք դրա մասին և հասկացեք, որ Ես Աստված եմ՝ Վսեմությամբ և Շքեղությամբ:

Վա՜յ անտարբեր սրտին, որ հավատ չունի, քանի որ այդպիսիք պաշտպանություն չեն ունենա Իմ Օրը: Եվ վա՜յ ձեզ, որ կորցրել եք առաքինությունների և արդարության մեջ հարատևելու կամքը, ի՞նչ կանեք դուք Տիրոջ այցի ժամանակ: Ի՞նչ կասեք Տիրոջ Օրը: Կկարողանա՞ք դիմանալ Կրակի դաժան փորձությանը:

Հիմա դուք մարմնով և հոգով շղթայված եք այս աշխարհին: Սատանան իր կատաղության մեջ բաց չի թողնում ձեզ, այլ ձեզ դերի է պահում իր զնդաններում՝ զրկելու համար ձեզ, ձեզ, որ ընկել եք ապաշխարելու շնորհից: Ծածկված նրա քողով, դուք դարձել եք նրա խաղալիքը: Ձեր ապաշխարությունը կփշրի ձեր շղթաները և հեռու կնետի չար ոգիների բազմությունները, որոնք բուն են դրել ձեր մեջ, մինչ մի քանիսը կախված են ձեր այդքան խղճալի հոգու վրա:

Ձեր թշվառության մեջ դուք կամքի և ուժի պակաս ունեք հաղթելու համար ձեր թշնամուն և դեն նետելու մարմնի կապանքները, որոնք կապում են ձեզ այս աշխարհին: Այսօր, Ողորմության այս

[1] Սիրաք 3:26
[2] Սիրաք 2:18

ժամանակներում, ես առաջարկում եմ ձեզ շնորհը, որպես մի պարգև, և որպես մի պարգևատրող ուղի, որն առաջնորդում է դեպի Ինձ:

~ Ես առաջարկում եմ տանել ձեզ Իմ ուսերի վրա ձեր ապաքինման ընթացքում:

~ Ես առաջարկում եմ ձեզ խաղաղություն և հանգիստ, քանի որ դուք չեք աշխատի, ոչ էլ կհոգնեք Ինձ հետ:

~ Ես առաջարկում եմ ձեզ Իմ հրեշտակներին, ովքեր մեծ քնքշությամբ կկապեն ձեր վերքերը, վերքեր, որոնք հասցվել են ձեր հոգուն այս աշխարհի կրքերից: Նրանք կօգնեն ձեզ ձեր վերականգնմանը, ետ բերելով ձեզ դեպի կյանք, վերածնելով Իմ մեջ ձեր անկարող դարձած հոգին մի նոր կյանքով:

~ Ես ձեզ տեղ եմ առաջարկում Իմ Սրտում, ուր դուք կծաղկեք Իմաստությունից եկող խորը ուսուցումներով: Ես կողողեմ ձեզ անգնահատելի պարգևներով, ինչպես մի փեսա, որ առատաձեռն է իր սիրտը գրված հարսի հանդեպ: Եվ Ես կարտահայտեմ Իմ Սերը քո հանդեպ, Իմ հարս, քեզ Իմ Բազուկների մեջ առնելով, երգելով քեզ համար Իմ արարչագործության Օրհներգերը, և թե ինչպես դու գոյացար: Ես կհայտնեմ քեզ այն գաղտնիքները, որոնք կային նախքան երկրի գոյությունը, նախքան բնության ծնունդը, և մինչ Ես կգուրգուրեմ քո հոգին, դու կհայտարարես Իմաստությանը. «Քո՛ւյր իմ»: Այո՛, Ես պիտի ազատեմ քեզ, ինչպես մի թռչուն՝ ծուղակից, պիտի ազատ արձակեմ քեզ, ինչպես մի վիթ՝ թակարդից, եթե դու կամենաս շրջվել դեպի Ինձ՝ ընդունելով Ինձ քո ապաշխարությամբ:

~ Ես առաջարկում եմ ձեզ բալլադներ Իմ կողմից, և Իմ Ներկայության մեջ լինելու առանձնացված շնորհը, միայն դու և Ես:

~ Ես առաջարկում եմ ձեր հոգուն միշտ զվարճանալ Ինձ հետ, իսկ Ես՝ որպես Հայր, որ հրճվանքով դիտում է իր որդու զարգացումն ու նրա աճը, կհսկեմ արծվի նման, ձեր մեջ ձևավորվող Իմ Թագավորությանը:

~ Ես առաջարկում եմ ձեզ այն, ինչը դուք կոչում եք անմատչելի և անհասանելի, և որը Ես միայն կարող եմ տալ, մի բան, որը գտնվում է հեռու, մարդկային հասանելիության սահմաններից այն կողմ, մի ճանապարհ, որը սրտով հպարտները ոտք չեն դրել, մի ճանապարհ, որով ոչ մի փիլիսոփա երբևէ չի քայլել: Ո՛չ ոսկին, ո՛չ բյուրեղը երբեք չեն կարող հավասարվել այն արժեքին, ինչ որ Ես եմ առաջարկում: Այն չի կարող գնվել ո՛չ անխառն ոսկու դումարով, ո՛չ էլ հնարավոր է դրա դիմաց վճարել արծաթի որևէ քանակով, ո՛չ էլ գնահատվել ամենամաքուր ոսկու չափանիշով, կամ թանկարժեք սուտակով, կամ շափյուղայով, քանի որ Սուրբ Իմաստությունը հնարավոր չէ գնահատել, միայն Ես եմ տիրապետում Նրան, և Ես Այն տալիս եմ նրան, ում ցանկանում եմ:

Մարդկության աչքով անտեսանելի, սակայն փառահեղ Իր պայծառության մեջ, ես կառաջարկեմ ձեզ Սուրբ Իմաստությունը, եթե դուք վախենաք մեղքից և փախչեք չարից, ապաշխարելով և մտածելով այն մասին, ինչ որ կեղծ էր: Եվ եթե հարցնեք. «Ասա՛ ինձ, Հա՛յր, ասա՛ ինձ, որտեղի՞ց է գալիս Սուրբ Իմաստությունը: Որտե՞ղ է գտնվում հասկացողությունը, քանի որ այն ամեն մի կենդանի արարածի գիտության սահմաններից դուրս է, թաքնված ողջ արարչությունից»: Ես կպատասխանեմ քեզ, զավակս. «Իմաստությո՞ւնը: Դա Տիրոջ վախն է: Հասկացողությո՞ւնը՝ չարից խուսափելը»: Բոլոր մարդկանց, որոնց ես առաջարկում եմ Իմաստություն, նրանք վերջ են տալիս խավարին, քանի որ Իմաստությունը հրճվում է երևան հանելով գաղտնիքներ, որոնք թաքնված էին, մինչ նրանք մտահայելիս կլինեն անտեսանելի գեղեցկությունները, որոնք հիմա տեսանելի են Իմաստության փառավոր Լույսի տակ:

Հետևաբար, ուրախություն գտեք Իմ մեջ, քանի որ Իմ սկզբունքներն ազնիվ ու մաքուր են, և Ես կառավարում եմ խոնարհությամբ ու հեզությամբ: Շնորհով եմ Ես պարուրում նրանց, ովքեր ապաշխարում են: Ես խորշում եմ ամեն չարությունից և այլասերվածությունից, բայց Իմ Հոգին ազատում է բոլորին, ովքեր ընդունում են իրենց մեղքը՝ վերջ տալով նենգ չար ոգիներին:

Ես երկրային ղեկավար չեմ: Ես Արդարության Ղեկավար եմ, ազնիվ վճիռներով և մաքրաբարո կանոններով՝ լեցուն ճոխությամբ ու վսեմությամբ, սակայն հեզ ու խոնարհ Սրտով: Ձեր սիրտն ուրախացնելու և նրան հրճվանք պատճառելու համար Ես առաջարկում եմ վերականգնել ձեր տեսողությունը, որպեսզի բավարարեք ձեր աչքերը, և տեսնեք Ինձ՝ ձեր Աստծուն, մինչ երկյուղած դուք կբացականչեք Ինձ. «Թող գովաբանվի Եռանձն Աստված, երիցս Սուրբ: Փա՛ռք Նրան, ով բարձրացրել է իմ հոգին՝ մեծամեծ բաներ անելով ինձ համար: Սուրբ է Նրա Անունը: Ես գովաբանում եմ Իմ Աստծուն, ով վերականգնեց իմ անխոհեմ հոգին շնորհով, թույլ տալով, որ իմ աչքերը տեսնեն Քո Դեմքը: Եվ ինչպես Հոբը, ես կասեմ երգելով. «Ես մեղանչեցի և թողեցի ճշմարտության ճանապարհը, բայց Աստված չպատժեց ինձ իմ մեղքին արժանի ձևով: Նա խնայեց իմ հոգին փոսի մեջ ընկնելուց և թույլ է տալիս, որ կյանքս շարունակվի Լույսի մեջ»: Տեսնո՞ւմ եք, եղբայրնե՛ր, տեսնո՞ւմ եք այս ամենը, որ Աստված անում է դարերով մարդկության համար, փոսից փրկելով հոգիներ և թույլ տալով, որ կյանքի Լույսը փայլի մեզ վրա»:

Ես կշնորհեմ ձեզ տեսնելու ձեր Աստծուն, որ խոսում է ձեզ հետ այսօր: Մի տեսիլք, որը դուք երբեք չեք մոռանա: Համակված զղջումով[1], այս ուրախ մտահայեցողության մեջ, ձեր հոգին բոցավառված կկանչի Ինձ.

«Գիտե՞ս, Տեր իմ, ներքնապես ես փշրված եմ հիմա, բայց միևնույն ժամանակ, Տե՛ր, ես այրվում եմ: Ես նայեցի Քեզ, և ես բոցավառվեցի Աստվածային Սիրով, որը կլանում է ինձ կամաց-կամաց: Պայծա՛ռ Արև,

[1] Ամբողջապես Երանական Տեսիլքի մեջ և Երկնքում լինել չկարողանալու ցավը:

Դու Քեզ մոտիկ քաշեցիր Ինձ՝ զզվելի մեղավորիս, առանց երկու անգամ իսկ մտածելու, որ ես կէժանացնեմ Քո Գավազանը: Դու թույլ տվեցիր իմ մեղավոր աչքերին տեսնել Քո Մեծությունը, Քո Գեղեցկությունը, որը գերազանցում է քո ամենագեղեցիկ հրեշտակներին, և այդ Հրաշքը տեսնելով, Դու վերք հասցրեցիր ինձ անասելիորեն: Անկարող հագեցնելու ծարավս, ես ողբում եմ, և իմ երկճյուղված կացությունը ինձ թվառ է դարձնում: Քո փառավոր Ներկայությունն ազդեց ինձ վրա, որ նույնիսկ ավելին տենչամ իմանալու, թե ինչպես սիրեմ Քեզ և ընդմիշտ միահյուսվեմ Քեզ հետ: Իմ ցավն ավելացել է, և ես խնդրում եմ Քո հրեշտակներին, որ թեթևացնեն ինձ, բայց հետո մտածում եմ, որ պետք չէ թեթևացնել: Թող այս կրակը շարունակի վիրավորել ինձ, թող իմ ծարավը Քո հանդեպ, ո՜վ մարդկության Սիրահար, բոցավառի իմ ողջ էությունը, թող Քո աստվածային այցելությունն ավելացնի իմ ծարավը Քո հանդեպ, որ Քեզ է՛լ ավելի ցանկամ:

«Քո Գերագույն Իշխանությունը չունի իր հավասարը, ո՛չ: Դու նայեցիր ինձ և մեր աչքերը հանդիպեցին: Քո Աչքերը՝ ավելի պայծառ, քան երկու թանկարժեք քարեր, մագնիսացրին իմ աչքերը: Հետո Քո Աչքերից հայտնվեցին լույսի երկու շողեր և պայծառացրին իմ հոգին՝ լուսավորելով այն, ասես հազարավոր համաստեղություններ լցվեցին իմ մեջ, և իմ հոգում գտնվող ամեն խավար ու մռայլ ստվեր անհետացավ: Շփոթված՝ Շնորհիդ Լույսը հանկարծակի ստանալուց, Քո փառքն անտանելի էր մսի և արյան դիմաց: Դու հետո ինձ աչքով արեցիր, և ես ուշաթափվեցի: Ասես հատակը ճոճվեց ոտքերիս տակ: Իմ հանդեպ Քո Սիրո արտահայտությունները ստիպում են իմ սրտին նվաղել, քանի որ դրանք, Տեր իմ, չափազանց շատ են իմ խեղճ հոգու համար, որ կրի: Կարո՞ղ է որևէ մեկը չափել Քո Մեծության հոյակապությունը և Քո անարտահայտելի շքեղությունը: Ո՞վ է տեսել Յահվեին և չի նվաղել բուռն զգացմունքից: Ես անզոր եմ այսպիսի սքանչելի Գեղեցկության առջև...»:

Ուրեմն, ասա՛ Ինձ, արարա՛ծ, ում ես սիրում եմ և հրճվում, ինչի՞ է նման, երբ դու Ինձ հայտնաբերում ես քո մեջ: Ինչի՞ է նման, երբ դու ընկնում ես Ամենակարող Աստծո Ձեռքերի մեջ: Ինչի՞ է այն նման: Ասա՛ Ինձ, Իմ Սրտի սիրելի, ինչի՞ է նման լսել քո Արարչին, որ Օրհներգեր և Բալլադներ է երգում քեզ և միայն քեզ համար, երբ դու Իմ մասին մտահայեցողության մեջ ես գտնվում: Ինչի՞ է նման իմանալ, որ Նա, ով երգում է քեզ համար և ով ապրում է անհասանելի Լույսի մեջ՝ պահելով ամեն ինչ Իր Ձեռքում, պարփակվում է քո սրտում, և սակայն առանց պարփակվելու: Ինչի՞ է նման Իմ մաքրագործող ջրերի մեջ լվացվելը՝ քեզ Իմ մեջ միաբճելով:

Ուրախ եղիր, ուրեմն, և ապրիր բարեպաշտ կյանքով: Իմ շքեղությունը չունի իրեն հավասարը: Ինձ հետ զրուցելը քեզ վրա կթողնի անմոռանալի հիշողություններ: Իմ մասին մտահայեցողությունը բավարարում է քո ծարավը, բայց երբեք չի հագեցնում այն, ավելի շուտ դա ավելացնում է այն: Միայն Երանական Տեսիլքում քո հոգին կարող կլինի հագենալ և բավարարվել Իմ Ներկայության լրությամբ: Առանց Իմ Գթառատ օգնության, արարա՛ծ, քո հոգին կթառամեր նույնիսկ նախքան ծնվելը: Առանց Իմ օգնության քո կյանքը կլիներ ամայություն, անշարժ,

ամբողջապես անջատված Ինձնից՝ Աստվածությունից: Ա՛խ, եթե քո հոգին միայն իմանար, թե ինչպիսի վտանգների միջով է անցնում ամեն օր:

[1]Բա՛ց արա քո կարողությունները, Վասո՛ւլա, և կլանիր Ինձ[2]:

Ո՛վ Օրհնյալ Տեր, Դու Նա ես,
ով անդադար շլացնում է իմ հոգին:
Հոսելով իմ մեջ
ինչպես մի լուսարձակող Գետ,
Դու պայծառացնում ես իմ հոգին,
դնելով իմ սրտում Լույսը,
որի մեջ ես ապրում եմ:

Ես դեռևս ապշած եմ
Քո ընտրությունից, և նրա համար,
որ Դու Քեզ միացրեցիր իմ հոգուն,
որ Դու միացրեցիր
Քո Հոգին իմ սրտի կենտրոնում:

Դու կենդանացրիր
Սուրբ Գրքերն Ինձ համար,
և Քո ասածները նրանց մեջ
լսելի դարձան իմ ականջներին
և հասկանալի՝ իմ սրտին ու մտքին.
Աստվածային Կյանքի խոսքերը:

Դու իրականություն դարձրեցիր
անհասանելի իրականությունները.
Երկնքի Թագավորությունը...
Դու շոշափելի դարձրեցիր
Քո Խոսքը՝ հասկացնելով,
որ իսկապես Եռանձն Աստվածը
Մեկ Աստված է միայն:
Եվ որ բոլոր Երեքն էլ
մեկ Բնություն են, մեկ Զորություն,
և մեկ Գիտություն...

Դու քողազերծ արիր
թաքնված ծրագրերը,
թաքնված Քո Սիրո վիհում,
ուսուցանելով մեզ,
որ մեր մարմինները
նույնպես կարող են լինել պայծառ,
ինչպես Քո Աստվածային Լույսը:
Համաբնութենակից՝ Քո Որդու հետ:

---

[1] Հանկարծ Աստված կանգ առավ և շրջվեց դեպի Ինձ ու խոսեց Ինձ հետ:

[2] Ես այսպես հասկացա՝ «ուշադրություն դարձրու Ինձ ամբողջապես», թեև ես ուշադրություն էի դարձնում Նրան:

Դու ամբողջովին
գիտակից ես դարձնում
իմ հոգին Քո Ներկայությանը,
և այդ պահից ի վեր,
Քո Ընկերությունը ներքնապես
վերք հասցրեց իմ սրտին,
Քո հայացքն ուղղված ինձ՝
փշրեց ինձ:

Զգայություն և Բանականություն,
ինչի՞ համար եք ինձ պետք:
Քո Կրակը, Աստված, կլանել է ինձ,
իմ եսը մոխիր դարձնելով:

Ես անցողիկ եմ,
շրջապատված անցողիկ բաներով,
բայց Դու խախտում ես
բնության օրենքները,
և նոր հրաշքներ են հայտնվում
ամեն օր Քո Ձեռքով:

Եվ ով էլ որ մոտենում է Քեզ,
Դու վառում ես՝ դարձնելով բոց,
Բայց մի խոստմամբ.
որ նա մոխրի չի վերածվի...

Երանելի է նա, ով կկարողանա
հասկանալ Քեզ և ողջունել Քեզ,
առաքինությունն ու
աստվածային Սերը
կլինեն նրա ամենօրյա հացը:

Ո՜վ Բարի և Սիրող Հայր,
Որ հրավիրում է
մեզանից յուրաքանչյուրին
անբաժան կերպով բնակվելու
Սուրբ Երրորդության հետ և լինելու
հաղորդակից մեր Աստվածության,
հնարավոր դարձնելով
մեզ համար հասնելու
Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի
Աստվածային բարձրության:

Իմ հոգու Պատարագ,
իմ սրտի Տաճար,
Տիեզերքի Անուշաբույր Խունկ,
Անողոք Նետաձիգ,
Աստվածային Օրհներգ,
գերազանց Սիրո Անդունդ,

Լուսափայլ Թագ,
մեր Հոգու Հոգևոր Բուրմունք,
Լույս Երիցս Սուրբ,

ես այլևս ի վիճակի չեմ ասելու որևէ
հասկանալի բառ...
կամ գովաբանություն...

Ա՜խ, Վասո՛ւլա, ես մտադիր եմ երգել քեզ համար քո կյանքի բոլոր օրերին: Հայտնաբերի՛ր Ինձ քո ներսում: Հայտնաբերի՛ր Իմ Թագավորությունը քո սրտի կենտրոնում: Հայտնաբերի՛ր Իմ Ճոխությունը քո ներսում: Ուրեմն ասա՛ Ինձ, ասա՛ Ինձ, ո՞րն է ձեր դարաշջանի ամենամեծ հրաշքը: Ասա՛ Ինձ, ասա՛ Ինձ:

Մեր օրերի ամենամեծ Հրաշքն այն է,
որ Դու իջել ես Երկնքից՝
երևալով մեղավորներին
այս կամ այն ձևով:

Մեծ Հրաշքն այն է, որ Սուրբը,
ով անցնում է հասկացողության
և բանականության
սահմաններից այն կողմ,
այցելում է մեզ և խոսում մեզ հետ:
Նա մեր մեջ է և մեզ հետ:
Նա խոսում է տարբեր ձևերով:

Նա բուժում է հիվանդներին:
Նա բարձրացնում է մեռածներին:
Նա հեղում է մեզ վրա
Իր Ուսուցումները:
Նա այցելում է աղքատներին:
Նա ազատում է գերիներին,
և Նա սփոփում է կոտրված սրտերը:

Սա է մեր ժամանակների
մեծ Հրաշքը...

Լավ ասացիր:

Օ՜, Դատաստանի Օր: Երբ Իմ Որդին կփայլի երկնքում:
Օրհնյալ է նա, ով հավատում է Իմ Խոսքին, և որ այդ Օրը սոսկ խորհրդանշական արտահայտություն չէ իր ականջների համար: Օրհնյալ է նա, ով չի հալածում այն, ինչը գալիս է Հոգուց և չի ծաղրում այն: Երբ Իմ Հոգին հայտարարում է «Կրա՛կ», որը շուտով իջնելու է մեղավորների վրա:

Դեռ որքա՞ն հրաշքներ պետք է ես անեմ, որ բավարարեմ ձեզ և լսեմ ձեզնից. «Ներողություն եմ խնդրում մեղանչելու համար»: Թող ես լսեմ այս խոսքերը.

«Հոգիս ծարավի է Աստծուն,
բայց լեզուս ինձ տարավ
դեպի մեղքը:
Բայց հիմա իմ սիրտը
բոցավառվել է
և այրվում է իմ ներսում,
քանի որ Դու այցելեցիր ինձ:

«Դո՛ւ, որ բոլոր
մարդկանցից և հրեշտակներից
ամենագեղեցիկն ես,
գեղեցկության կատարելություն
և ապշեցուցիչ՝ շնորհի մեջ,
հագած անգույն շափյուղաներ,
Թող Քո բոցերը
սրբագործեն բոլորին,
ովքեր մոտենում են Քեզ:
Մաքրի՛ր իմ մեղքը և թույլ տուր,
որ Քո Սուրբ Դեմքը
փայլի ինձ վրա,
մաքրագործի ինձ մեղքից,
և բաց արա իմ ականջը,
որ լսեմ ու հասկանամ մեզ համար
երգված Քո Օրհներգերը: Ամեն»:

Դրան ես կպատասխանեմ. «Ես երբեք հուսախաբ չեմ անի քեզ, զավա՛կս: Արի՛ Ինձ մոտ և հանգստացիր Իմ մեջ: Միթե դու չե՞ս հասկացել, որ ես Կրակ եմ: Մի Կրակ, որ բոցավառում է ամեն ինչ, որ գրավում եմ: Ում էլ որ ես գրավում եմ, օրորվում է աստվածային Սիրո բոցերի մեջ:

«Մի՞թե ես չեմ հայտարարել Սուրբ Գրքերում Իմ Կրակի մասին: Մի՞թե ես այն չեմ հայտարարել մի քանի անգամ այս Օրհներգի մեջ[1]: Զնայած ձեր հոգին իր մեղավորության մեջ կկծկվի վախից և անտանելի ցավից, երբ Ինձ ճանաչի, միևնույն ժամանակ, ես կարձակեմ Իմ Բուրմունքը, և ձեր հոգին Իմ Ներկայությամբ, թեև սարսափած իրեն մերկ տեսնելով և քայքայված մեղքից ու անօրինությունից՝ Իմ Սիրո Օրենքին հետևած չլինելու համար, կհրճվի, որ ես՝ իր Արարիչն ու Աստվածը, այցելում եմ իրեն:

«Երբ այդ օրը գա ձեզ վրա, այդ օրը, որը ես կոչում եմ Տիրոջ Օր, ձեր աչքերը ծածկող թեփուկները կընկնեն, և դուք կտեսնեք ձեր իսկական անձը: Իմ Կրակը կոչնչացնի ձեզ ձեր սարսափի մեջ: Բայց շնչահեղձ մի՛ եղեք վախից, ուրախացե՛ք, որովհետև այլ կերպ դուք ինչպես կտեսնեք

[1] 1991թ. սեպտեմբերի 15-ի պատգամը:

ինքներդ ձեզ Իմ կողքին: Մնացած բոլոր չար հակումները այլևս չեն գործի: Այս մաքրագործումը նրա համար է, որպեսզի ձեր Հոգին աննպատակ կերպով չթափառի այս ու այնտեղ, այլ դեպի Ինձ գա, որ ձեր միակ աստվածային Փեսան եմ»:

Ես չեմ կարծում, թե ձեզանից շատերը հասկացել են, թե ինչ է նշանակում Տիրոջ Օրը: Երբ թռչնի ձայնը լռում է, և երգի նոտաները դադարում են, իմացեք, որ Ես այդ լռության մեջ կոչ եմ անելու ձեր բոլոր թաքնված բարի թե չար արարքները, դատաստանի համար: Տիրոջ Օրը կարող է համեմատվել փոքր դատարանի հետ. մի Մաքրագործում Իմ Կրակի միջոցով, որը պիտի առաջնորդի ձեր Հոգին Իմ Փառքի մեջ և Ինձ հետ կատարյալ միության մեջ:

Երբ Հոգին սարսափելիորեն ապականված է մեղքով՝ նողկալի Ինձ համար և Իմ հրեշտակների համար, Սրբերի և սուրբ մարդկանց համար, Իմ այցելությունը տառապալից ցավեր կպատճառի նրան, և նա փախչել չի կարող Իմ Օրից: Ուրիշ ի՞նչ ձևով եմ Ես ձեր Հոգին դարձնելու անապական և ազատ մեղքից: Ուրիշ ի՞նչ ձևով եմ Ես այդ Հոգիներին բերելու ապաշխարության: Միայն այն ժամանակ, երբ Ես մերկացնեմ նրանց Իմ Կրակով, և նրանք տեսնեն, թե իրենք ինչպիսի վիճակում են, միայն այդ դեպքում նրանք կհասկանան, թե ինչպես էին իրենք եղել Սատանայի տիրապետությունը:

Նրանց, որոնց մեջ Իմ Աստվածային Կրակը պիտի բոցավառվի, մաքրագործելով իրենց, այդ աննյութական Կրակով Ես կկլանեմ նրանց, արթնացնելով և նրանց վերջապես հասկացնելով, թե ինչպես են իրենք փոխակերպվում. վերափոխվում ցավով, բայց նաև ուրախությամբ, Իմ փոխակերպող Կրակի Սիրո միջոցով:

Նա, ով մարմնով և հոգով արդեն տիրապետում է Ինձ, և Ես տիրապետում եմ նրան, Տիրոջ Օրը չի գա նրա վրա, ոչ էլ նա կզգա այն: Ինչո՞ւ: Որովհետև Սուրբ Հոգին արդեն զգացնել է տվել Իր անցումը նրանց մեջ: Նրանց վրա Տիրոջ Օրն արդեն եկել է: Դուք կարող եք այդ Օրը անվանել նաև Իմ Այցելության Օր: Այդ Օրվանից հետո ապաշխարությունը և հնազանդությունը Իմ Սիրո Օրենքի հանդեպ կլինի նրանց թեման, որոնց Ես կվերածնեմ Իմ Կրակի միջոցով: Ես կփափկեցնեմ այն հոգիները, որոնք հիմա ժայռի պես են, և կջերմացնեմ այն սրտերը, որոնք սառույցի պես են, և անմիջապես Իմ Ներկայությունը կզգացվի նրանց հարության մեջ[1]:

Սեպտեմբերի 30, 2002

Տե՛ր իմ, Աստվա՛ծ իմ,
որքան հրաշալի է
ճամփորդել Քո կողքին, ցանելով

[1] Այս երկար պատգամը օրեր տևեց մինչև ավարտվեց:

Քո երկնային սերմերը քամու մեջ:

Ի հակադրություն
ինձ շրջապատող խավարին,
Դու բոցավառ Կրակի Սյուն ես,
Լույսի Ճառագայթ:

Քո Սուրբ Դեմքը, Քրիստոս,
Լուսաշող Ադամանդի պես է,
և երբ Դու նայում ես իմ դեմքին,
Քո պայծառությունը
լուսավորում է իմ հոգին,
որպեսզի չընկղմվի խավարի մեջ:

Ավելի պայծառ,
քան հազարավոր արևներ
միասին վերցրած,
Դու հիմա կանգնած ես
պայծառությամբ
իմ թշվառ հոգու առջև: Ա՛խ,
եթե միայն մարդկությունն իմանար,
թե ինչի նման է լինել
այսպիսի աննկարագրելի
գեղեցկության առջև:

Դու, իմ Հզոր Աստված,
Մշտնջենական Լույս,
Քո Ներկայությունը
ճրի է տրվում աշխարհին,
բայց ինչպե՞ս է, որ
նրանք չեն կարողանում
ճանաչել Քեզ, ոչ էլ տեսնել Քեզ:

Իմ Շնորհագեղ Աստված,
ավելի գեղեցիկ, քան բոլոր
հրեշտակային ուժերը միասին,
որ անցնում ես հասկացողության
և բանականության ամեն սահման:
Քո անսահման Ողորմությունը
և Քո անըմբռնելի Առատությունն
ու Քո Վեհանձնությունը ինձ
երկյուղի ու ակնածանքի
մեջ են թողնում...

Քո գրավչությունը
մագնիսացում է իմ հոգին,
անդամալուծում է այն
և հասցնում անտանելի տխրության,
Քո գրավչությունը

ցավեցնում է ինձ...

Բազմաթիվ առիթներով
ես փորձեցի բռնել Քեզ,
Բայց ապարդյուն էին իմ ջանքերը:
Դա նման էր նրան,
որ փորձես բռնել կրակը:
մատներս անցնում էին Քո միջով...

Ինչպես անապական հայելի,
Հավիտենական Լույսն արտացոլող,
Քո մեծափառությունը
փառավորվում է
Քո ողջ արարչության մեջ...
Եվ սակայն, այդ ինչպե՞ս է,
որ Քո արարչությունը
չի տեսնում այդ պայծառ Լույսը:

Թեև Քեզ բռնելու իմ փորձերը,
նույնիսկ՝ Քո թիկնոցի եզրը,
անօգուտ էին,
Քո Կարեկցությամբ
և խրախուսանքով,
որ չդադարեմ հետապնդելուց,
այլ շարունակեմ իմ փորձերը
բռնելու Քեզ,
Դու ծածկեցիր իմ ճամբան
շափյուղաներով:
Վստահեցնելու համար ինձ
իմ փորձերի մեջ,
Դու Քո Մատով գրեցիր
Քո Անունը ամբողջապես
յուղով ինձ վրա:

Խնկի բումունքի Սյուն,
որ բուրավետ ես դարձնում
աշխարհն անցնելիս,
ինչպե՞ս ես արժանի համարվեցի
այդպիսի շնորհի,
որ ձեռք բերեմ Իմաստությանը,
որպես Ուսուցիչ:

Երբ իմ անարժան սրտից
ես արտաբերեցի իմ կանչը քեզ,
բարձունքներից
Քո Գերիշխանությունը
կռացավ ինձ վրա,
հայտնելով Ինքդ Քեզ,
մինչ Քո Շրթունքներից

Քո Աստվածային
Անունը տրվեց ինձ,
Սուրբ Յուղով օծելով իմ հոգին:

Իմ հոգու Օծում, Քո լիառատ Սիրով,
Քո Աստվածային Խենթությամբ
Դու զարդարեցիր իմ հոգին
վսեմաշուք զգեստներով,
ծածկելով իմ մերկությունը
Քո Աստվածային Ստորագրությամբ,
դարձնելով ինձ ընդմիշտ Քոնը:

Ո՜վ Փրկիչ, մարդկության հանդեպ
ունեցած Քո եռանդուն Սիրով,
խոնավացրու իմ շրթունքները
հիմա շնորհով, որ դիմեմ Քեզ միշտ
հարգանքով և գովաբանությամբ...

Ա՜խ, սիրելիս: Ես կանչել եմ քեզ, որ միայն Ինձ փափագես: Ես կանչել եմ քեզ, որ հրապուրվես Ինձնով այնքան, որքան դու ես հրապուրում Ինձ: Ես խոցել եմ քո հոգին Իմ գեղեցկությամբ, որ քեզ կյանքի կոչեմ Իմ մեջ: Իմ Ներկայությունը, որը ցնցում է քեզ մինչ օրս, և որը հասցրեց քո հոգին սոսկ Իմ Լույսի արտացոլման, կենդանացնում է քեզ: Իմ լիառատ Սերը, որը Ես ունեմ քո հանդեպ, արբեցրեց քո հոգին, որ ծարավես Ինձ: Ես ազատագրել եմ քեզ, որ ստանաս մարմնի և հոգու հանդարտություն: Դու կարող ես հանդարտություն և անվրդովություն ձեռք բերել միայն Իմ միջոցով: Այդ անվրդովության մեջ Ես կարող եմ ցանել քո ներսում Իմ երկնային սերմերը:

Տեսնո՞ւմ ես: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես եմ Ես քեզ դարձրել մի վկա մարդկանց համար՝ հավաքելու բոլոր ազգերին, որպեսզի նրանք, ովքեր անտեղյակ են Իմ Ներկայությանը, շտապեն Ինձ մոտ և փառաբանեն Ինձ: Ես ասացի, որ Ես Իմ Խոսքերը կրակ կդարձնեմ քո բերանում՝ գրավելու համար նրանց, ովքեր երբեք չեն ճանաչել Ինձ, որ ծառայեն Ինձ անվրդովությամբ և սիրեն Իմ Անունը: Չե՞մ ասել, որ Ես կնորոգեմ Իմ ջարդված խորանները:

Իմ սեփական տան անդամների մեջ, որոնք հիմա ցրված են, Ես առաջ կընթանամ այնտեղ: Ես կառանձնացնեմ մեծամիտ և հպարտ սրտերը մաքուր սիրտ ունեցողներից: Ճիշտ ինչպես առանձնացնում են այծերին ոչխարներից: Ձեզ ասվել է, որ հետևեք Իմ Օրենքին և Իմ պատվիրաններին, և ձեզ խնդրվել է, որ ապաշխարեք ողջ սրտով: Մաքրագործումն արդեն սկսվել է, և ձեզանից ոմանց Ես արդեն այցելել եմ: Մոռացե՞լ եք ձեր բառերը խուճապի մեջ, երբ բացականչեցիք տանջվելով. «Ես բռնվել եմ Քո Կրակով, Տե՛ր», վերջապես ընդունելով ձեր մեղքը ապաշխարության հառաչանքներով:

Իսկ նրանք, ովքեր դեռևս չեն ստացել Իմ այցելությունը, բազմաթիվ տանջանքներ են սպասվում նրանց: Տիրոջ Օրը նույնպես կգա նրանց վրա, և ի՜նչ օր կլինի այն: Ես պիտի շտապեմ ցույց տալու Իմ Ողորմությունը, պայմանով, որ դուք ապաշխարեք... Ես ցույց կտամ Իմ

Ողորմությունը և կհավաքեմ ձեր բոլորին երկնքի տակ գտնվող ամեն տեղից: Բայց նախքան այդ, ես՝ այս Սիրո Օրհներգի Հեղինակը, ասում եմ ձեզ, մինչև աշխարհն իր անօրինության մեջ չդառնա դեպի Ինձ ապաշխարելով, չարը սիրո վերածելով, այն, ինչ կարող է պատահել ձեր բոլորի հետ, կուրվագծի պատմության մեջ կատարված բոլոր մաքրագործումները:

Տե՛ր, ես չգիտեմ, ինչ ասեմ:

Չկա ջերմեռանդ ապաշխարություն, իրական զղջում... Ազգերը իրարանցման մեջ են, և նրանց նվաճումները հավասար են իրենց անաստվածության չափին... Ամբողջ երկիրը կտառապի, մինչև որ ես չլսեմ ապաշխարության մի ճշմարիտ կանչ: Ա՜խ, իսկ նրանք, ովքեր կանգնում են հարթակների վրա՝ հայտարարելով խաղաղություն, թե ինչպե՞ս, և ի՞նչ ձևով պետք է հաստատեն խաղաղություն իրենց միջև, երբ հենց իրենք են խախտում Իմ պատվիրանները և պատերազմի մեջ են Ինձ հետ, ինչպե՞ս են նրանք ակնկալում իրենց դատողությամբ խաղաղություն բերել:

Սակայն մի՛ հուսահատվեք, վերջում, փրկությունը պիտի գա Սուրբ Երրորդությունից, Նրանից, որին դուք շարունակում եք մերժել, անաստվա՛ծ սերունդ: Վերջում, դուք կապրեք խաղաղության մեջ: Աստված, ով թաղադրված է վերևում, անտառի կվերածի ձեզ, և Իմ Հոգին կհոսի շարունակաբար, ինչպես մի լուսաշող հոսանք չոր հողերի մեջ: Ես կլցնեմ ամեն ինչ Իմ սեփական Լույսով, և այդ Լույսի մեջ ես կհեռացնեմ որոմը ցորենից: Ինչպես ես ասել եմ ձեզ, ես կառանձնացնեմ այծերին ոչխարներից:

Նրանք, ովքեր իրենց կգտնեն Իմ Աստվածային Լույսից դուրս, ես կլինեմ նրանց համար անհասանելի և անտեսանելի, և միայն խավարը կլինի նրանց բնակավայրը: Բայց նրանք, ովքեր կգտնեն իրենց Իմ Աստվածային Լույսի ներսում, օրհնյալ կլինեն, և իրենք կլինեն լույս Իմ Լույսի ներսում: Ես կպարուրեմ նրանց՝ տալով նրանց Իմ սեփական պայծառությունը: Որքան ավելի մաքուր լինի հոգին, այնքան ավելի պայծառ այն կլինի: Երանելի է այն մարդը, ում հանցանքը ներված է, ում մեղքը ջնջված է: Երանելի է նա, ում ես չեմ գտնի հանցանքի մեջ, ում հոգին անընդունակ է խաբեության:

Ասա՛ քո սերնդին, որ Աստված այստեղ է, ձեր բոլորի հետ... ic:

2003

Հունվարի 6, 2003

(Աստվածհայտնություն)

Թող ես գովաբանեմ իմ Աստծուն
Իր Բարեգթության
և հրաշալի արարքների համար
ի հատուցում այն ամենի,
որ Նա արել է մեզ համար,
և այն մեծ ու Գթառատ
Ողորմության համար,
որ Նա ցույց է տվել մեզ:

Նա, ով գերազանցում է
բոլոր բարձրությունները,
Նա, ով հագնված է
Արքայական Զորությամբ,
զգեստավորված
կայծկլտուն շափյուղաներով,
երբեք չի լքել մեզ՝ Իր ժողովրդին,
որովհետև մենք ոսկորն ենք
Իր Ոսկրի, մարմինը Իր Մարմնի
և Իր Կենսատու Հոգու շունչը:

Եվ ինչպես Սուրբ Գրքերն են ասում
Նրա Գեղեցկության մասին.
«Նրա Գլուխը ոսկուց է,
ամենամաքուր ոսկուց,
Նրա գանգուրները
արմավենու ճյուղեր են
սևաթույր թռչնի նման»,
Նրա Աչքերը նման են
փիրուզագույն
թափանցիկ ավազանի, և երբ
Նրա հայացքն ընկնում է քեզ վրա,
այդ մեկ եզակի հայացքից
հոգիդ նվաղում է,
մինչ այն հմայում է քո սիրտը,
ցնցելով այն, վիրավորելով այն:

Ամենից հազվագյուտ բույրերը
Նրանն են,

և երբ Նա անցնում է քո կողքով,
զեփյուռը, որ փչում է
քո Տիրոջ բուրմունքը քեզ վրա,
գերազանցում է ամեն մի փառքի:
Դա ինքնին մի երկխոսություն է...

Երբ Նա բացում է Իր Բերանը
և Բառը դուրս է գալիս,
լույսի ճառագայթի մի հեղեղ է
սփռվում միևնույն ժամանակ,
ավելի փայլուն, քան որևէ արև,
պայծառացնելով ողջ տիեզերքը,
կյանք տալով ամեն ինչի:
Ինչպես Փեսան, որ կրում է
իր պսակադրության ծաղկեպսակը[1]*,*
Նա քայլում է տիրական ձևով,
և իմ հոգին հրճվում է սոսկ
Նրան դիտելուց
իմ կողքով անցնելիս... մինչ ես
հալվում եմ Նրա Լույսի մեջ...

Քո Գովերգը, ծաղի՛կ, հմայեց Ինձ: Եվ Ես գոհ եմ Ինձնից, որ Իմ Ձեռքերի գործը Ինձ գովաբանություն և փառք է տալիս:

Վասո՛ւլա, դու երբեք չէիր կարողանա փառաբանել Ինձ, եթե Ես քեզ միացած չլինեի: Ո՛չ էլ կկարողանայիր կատարել այս գործը, որն անցնում է քո կարողության սահմաններից, եթե Ես միացած չլինեի քեզ: Այո՛, ի՞նչ կարողություն ունի մարդը, եթե այն տրված չէ վերևից:

Ուստի հիմա, աղջի՛կս, գնա և հայտարարիր ազգերին այն ամենն, ինչ Ես արել եմ քեզ համար, և այն ամենն, ինչ դու տեսել ես, և թե ինչպես Ես վարվեցի քո մեղավորության հետ սկզբում, և թե ինչպես Ես պսակեցի քեզ Ինձ հետ մի անասելի ձևով:

Երբեմն-երբեմն Ես այցելում եմ երկիր, որ ջրեմ նրա ամայությունը և ստեղծեմ գետեր, որոնք հորդում են լուսաշող ջրով՝ հացահատիկ[2] ապահովելու համար: Հետո նրանք, ովքեր կամենում են հավաքել[3] հունձը, կճաշակեն այն և օգուտ կունենան դրանից, գովաբանելով Ինձ: Նրանք, ովքեր մերժում են հավաքել հունձը, համարելով որ հացահատիկ չկա, նրանք կմեռնեն...

Իմ Ներկայությունը Կյանք է և Լույս: Իմ Ներկայությունը Հույս է և Փրկություն: Տե՛ս, Ես նման եմ բարձրացող արևի, որ հեղում է իր լույսը խավարից հետո՝ լույս տալու համար նրանց, ովքեր ապրում են շնագայլի պես խավարում, և նրանց, ովքեր ապրում են խորը ստվերի երկրում, մի երկիր, որն իրենք են վերածել խավարի՝ թաքցնելու համար իրենց չար գործերը:

---

[1] Ուղղափառ ամուսնությունների ժամանակ սովորույթ է, որ հարսը և փեսան կրեն ծաղկեպսակ՝ կապված միմյանց ժապավենով:
[2] Հոգևոր հացահատիկ, այսինքն՝ հոգևոր մանանա:
[3] Ես միևնույն ժամանակ լսեցի «հավաքել» բառը:

Ես մշտապես ներկա եմ ձեր «կրքերի ու ոգևորության օրերում»[1], այն աշխարհիկ տենչանքների և փառասիրությունների համար, որոնց ետևից եք վազում, և որոնք չեն առաջնորդում ձեզ Ինձ մոտ: Բայց ահա և Ես: Ահա ձեր Աստվածը՝ ձեր սրտի դռան չեմին: Ահա Ես՝ փայլելով ավելի պայծառ, քան հազարավոր համաստեղություններ միասին վերցրած, ինչպես դու հաճախ ասում ես, աղջիկս, որ լույս տամ քո ոտքերին և առաջնորդեմ նրանց խաղաղության ճանապարհով:

Տեսնո՞ւմ ես, Իմ ուղիները մարդկային ուղիները չեն: Իմ Ներկայությունը Լույս է, և Իմ Լույսը անհանգստացնում է խավարին: Խավարը հիմա պատերազմի մեջ է Լույսի հետ և ցանկանում է, որ Լույսը հանգի և այլևս չլուսավորի ձեզ: Բայց Ես հարատև պայծառ Արևի նման եմ, որ երբեք մայր չի մտնում, որ զգեստավորեմ ձեզ Իմ շքեղությամբ:

Ինչպես Ես նախկինում ասել եմ, գնա՛, դո՛ւ, որ սնվեցիր Իմ թագավորական Հարստությամբ, շարունակիր հայտարարել Իմ Թագավորությունը ազգերին, և որ Ես ձեր Փրկիչն եմ, ում մեջ ողջ փառքն է բնակվում: Որ Ես եմ ձեր Ազատարարը, և ուրիշ ոչ մեկը: Գնա՛ և հռչակիր մոխիրներին և նրանց վերածիր ոսկու, որ նրանք իրենց ազատությունը պիտի գտնեն Իմ մեջ, որ Լույսն եմ: Գնա՛ և ասա նրանց, թե ինչպես դու ինքդ բռնված և փակված էիր վանդակում, մի աղավնու նման, բայց Ես, Իմ գթառատ Ողորմությամբ, ինչպես եկա և կոտրեցի վանդակը[2] և քեզ տվեցի քո ազատությունը: Ես ազատեցի քեզ չարից և օծեցի՝ տալով քեզ Իմ Համբույրի օծումը քո ճակատին, կնքելով քեզ որպես Իմը... Գնա՛ սփոփիր ու մխիթարիր Իմ ժողովրդին Իմ Անունով, զարդարի՛ր Իմ պարտեզները, տալով նրանց փրկության մասին ճշմարիտ Գիտությունը: Զարդարի՛ր Իմ սրբարանների[3] սիրտը:

Քո կյանքի յուրաքանչյուր օր, սերունդ, Իմ շնորհը հայտնվում է, և ինչպես Ես փայլում եմ ողջ մարդկային ցեղի վրա, որ հաշտեցնեմ նրան Ինձ հետ և իր մերձավորի հետ, այդպես էլ նրանք կփայլեն իրենց միջև, եթե միայն լսեն Ինձ: Ես ձեր Ազատարարն եմ, Իմ Վասուլա, և Ես ծաղկեցրել եմ քեզ, ինչպես նաև ուրիշներին, այս Գովերգերի միջոցով, ճիշտ ինչպես վարդերը, որոնք աճում են գետակի ափին, և ինչպես Սուրբ Գրքերն են ասում. «արձակի՛ր քաղցր բուրմունք ինչպես խունկ, ծաղկի՛ր ինչպես շուշանը, տարածի՛ր քո բուրմունքն ամենուրեք, երգի՛ր գովաբանության երգ, օրհնելով Ինձ Իմ բոլոր աստվածային գործի համար, և հռչակիր Իմ Անվան մեծությունը»[4]:

Ահա սա պետք է լինի քո առաջադրանքը: Մի՛ վախեցիր այս բոլոր բաներն անել Իմ Անունով, քանի որ Ես միացած եմ քեզ հետ: Սերը քեզ հետ է և քո կողքին՝ քո կյանքի բոլոր պահերին:

Մեկ եղեք:

ΙΧΘΥΣ Ես եմ:

---

[1] Տերն օգտագործեց հունարեն բառ՝ «պաթոս», որ նշանակում է «կիրք»՝ «հանդարտության» (կրքերից զերծ լինելու) հականիշը: «Պաթոյ» հոգնակի ձևն է՝ «կրքեր»:
[2] Սկզբում տրված պատգամներից մեկում:
[3] Տերը նկատի ունի «հոգիների»:
[4] Սիրաք 39:14-15

Հունվարի 10, 2003

Սուրբ Հոգու Շնորհը
տրվում է մեզ ամեն օր:
Այո՛, մի երկար ճամփորդություն կա
մեր առջևում, որ
հասնենք մեր նպատակին
և միավորվենք Հրեշտակների հետ:

Բայց մի՞թե մենք ամեն օր
չենք հագենում
Աստվածային Սիրով:
Կարո՞ղ է որևէ մեկն ասել,
որ մենք չենք կանչված դառնալու
աստվածության մասնակիցներ:

Կարո՞ղ է որևէ մեկը ժխտել,
որ չի լսել, թե մեր Փեսան
հրավիրում է մեզ մտնել
Իր Սրտի հարսանեկան սենյակը:
Մի՞թե դուք չեք հրավիրվել
այս հարսանիքին և չեք
հագեցել խորհրդավոր գավաթից:

Կարո՞ղ եք իսկապես ասել Աստծուն,
որ չեք ստացել
անասելի օրհնություններ,
օրհնություններ, որոնք անցնում են
փառքի բոլոր սահմանները:
Կարո՞ղ եք ասել Փեսային.
«Ես չեմ հրավիրվել Քեզ հետ
այս խորհրդավոր միությանը»:

Նա ետ բերեց աքսորյալներին,
ուրեմն ինչո՞ւ պետք է
մոռանար ձեզ:
Եկե՛ք և ստացեք Նրան, որ ասեք.
«Տեսե՛ք, ես Աստծո
ծառայության մեջ եմ...»:

Ես ուզում եմ երգել քեզ համար. Պարասկևի, և ասել քեզ, որ քո անմեղությունը հրճվանք է պատճառում Ինձ...

Իսկ ինչ վերաբերում է քո ծառայության ժամանակին, այն դեռևս չի ավարտվել: Դեռ շատ բան կա փոխհատուցելու համար, և շատ բան կա՝ աշխատելու: Բավականին աշխատանք կա՝ Իմ Խորհրդավոր Մարմնի վերքերը դարմանելու համար: Դեռ շատ բան ունես անելու քո առաջ, և Իմ Կրակով բոցավառելու՝ խաղաղության, սիրո և հաշտության սերմերը ցանելու համար: Դեռևս շատ բան կա չարված... Ուստի մի՛ հոգնիր: Հառիր հայացքդ Ինձ վրա և փայլիր ու շողա, երբ Ես ներկա եմ:

Ուրախ եղիր, որովհետև եկեղեցին պիտի վերակենդանանա: Սա Իմ հանդիսավոր խոստումն է: Հիմա թերևս ամպերը ծածկում են Նրան, բայց Իմ հզոր Ձեռքը Նրա վրա է՝ մշտապես օրհնելով Նրան: Այս Օրհներգերի ողջ նպատակը Իմ Եկեղեցին վերակենդանացնելն է, և Իմ ժողովրդին Նրա մեջ բերելը: Ես Նա եմ, ով հաճախ ասել է. «Թող Իմ Հոգին բնակվի նրա մեջ»: Ես խոստանում եմ քեզ, Պարասկևի, որ նույնիսկ հեռավոր աքսորյալներին հեռու երկրներից, Ես պիտի բերեմ՝ լցնելու համար Իմ Եկեղեցին: Նույնիսկ նրանց, ովքեր ոչ մի ինքնություն չունեն, թաքնված անկյուններում, Ես պիտի գտնեմ նրանց և պիտի բերեմ նրանց բոլորին այնտեղ, ուր Սուրբ Հոգին է բնակվում, քանի որ նրանք նույնպես Իմ զավակներն են: Ոչ մեկը ետևում չի մնա: Այս հրաշալիքները քաջով ոսկի և արծաթ են, քանի որ դրանք Իմ ներկայության նշաններն են ձեր մեջ:

Բայց նայիր այսօրվա աշխարհին:

Ես դրել եմ քո բերանում Օրհներգեր, որոնք գալիս են ամենավերին երկնքից, և երգել եմ քեզ համար Իմ ողջ Օրհներգը: Ես ձեր բոլորին ապացուցում եմ, որ Ես ձեր Փրկիչն եմ: Ես կոչ եմ արել ապաշխարության համար, հատուցման գործերի, աղոթքների համար: Մի՞թե Ես ձեր բոլորին չեմ ուսուցանել առաքինի կյանք վարել: Մի՞թե Ես ձեր բոլորին չեմ ցուցադրել Իմ Ողորմությունն ու Իմ անհուն Բարեգթությունը այս ամբողջ տարիների ընթացքում: Գրված է.

«Մտածեք Աստծո զարմանահրաշ բաների մասին, այն ապշեցուցիչ բաների մասին, որոնք Նա արել է աշխարհում: Ողջ աշխարհով մեկ Նա վերջ է դնում պատերազմներին...»[1]: Տեսնո՞ւմ ես, Ինձ պետք չեն ձեր գործերը, եղբայրներ, Ես կարիք ունեմ ձեր սիրո, և դուք նույնպես, Իմ քույրեր, Ես ձեր սիրո կարիքն ունեմ, որպես հատուցում: Ես բերել եմ ձեզ խաղաղության պատգամ, և Ես ցույց եմ տվել Իմ Բարությունը նույնիսկ նրանց, ովքեր դրան արժանի չէին, բայց աշխարհը խուլ է: Հողը, Վասո՛ւլա, այս հողը, որն աշխարհը մշակել է, շուտով կտա իր անպատկառ բերքը... ic:

Հունվարի 17, 2003

Մեր սրտերի
Հավիտենական Ուրախություն,
Ճշմարտության Բացահայտիչ,
Հավատարմության Էություն,
Աննկարագրելի Խոնարհություն,
մարդկության Ազգական, մեր սրտի
Աստվածային Լուսավորություն,
մեր հոգու Քաղցրություն,
մեր Էության
Անասելի Ուրախություն,

[1] Սաղմ. 45:8-11

Աստվածային Էություն՝
մեր էության համար,
մեր աչքերի Լուսավորություն,
թույլ տուր մեր թշվառ հոգուն
սնունդ ստանալ Քո բոլոր
Աստվածային Ասացվածներից,
զորացնելու մեզ
զղջման և խոնարհության մեջ:

Այո՛, աշակե՛րտ, խնդրիր զղջման շնորհը: Զղջման արարքի միջոցով հոգին առաջնորդվում է դեպի ճշմարիտ ապաշխարության: Ոսկո՛ր Իմ Ոսկրի, մարմին Իմ Մարմնի, թույլ տուր Ինձ ավելացնել Իմ իրավունքները քո մեջ՝ նվազեցնելու համար ամեն ինչ, որ կարող է խանգարել Իմ իրավունքներին: Այլ խոսքով, թույլ տուր Ինձ աճել քո մեջ՝ լցնելու համար այնտեղ, ուր պակասություն ունես: Ես ցանկանում եմ, որ դու արժանի լինես Իմ Թագավորությանը:

Ես քեզ գնահատանքի եմ արժանացրել: Աճի՛ր, աշակերտ, քո համբերության և հանդուրժողության մեջ, քանի որ Ես պիտի ամբողջացնեմ այս երկու առաքինությունների մեջ այն ամենը, ինչ քեզ ուսուցանվել է Ինձ հետ քո դպրության ընթացքում հավատի միջոցով: Ես ուղարկում եմ քեզ Սուրբ Հոգին, որ ուսուցանի Իմ Խոսքը և Իմաստության սուրբ ասացվածները: Ես հայտնի եմ դարձրել Իմ Պատգամը, և տարածել եմ այն հեշտությամբ, որովհետև Ես քո կողմից դիմադրության չեմ հանդիպել, չնայած քո առջևում չարի միջամտություններն էին և մոլորեցնող ոգիները հարձակվում էին քեզ վրա, քանի որ իրենց դիմադրությամբ նրանք երբեք չհասկացան Ճշմարտության Սերը, որը կարող էր բացել նրանց աչքերը, բայց նույնիսկ այդ ժամանակ, դու փառաբանեցիր Ինձ:

Այո՛, նույնիսկ այսօր այդ մարդկանց սնափառությունը քողի նման է իրենց մտքերի վրա: Նրանց քողը պիտի մնա, մինչև նրանք չդառնան դեպի Ինձ և չապաշխարեն: Նրանց անմիտ և աճող ծածկամտությունը, և մոլորվելու կամ խաբվելու վախը, բթացրել է իրենց մտքերը: Նրանք ակնատես են Իմ Օրհներգերից ելնող պայծառ լույսի հեղեղին, սակայն նույնիսկ այդ դեպքում, զգուշանում են սխալ բաներից, մինչդեռ այն, ինչից նրանք պետք է զգուշանային, այն տարրերն են, որոնք իսկապես վտանգի են ենթարկում Իմ Եկեղեցին և նրա համայնքը: Իրենց անիմացությամբ, նրանք չեն կարողանում ընկալել Ճշմարտությունը, որը կարող էր ճառագայթել Աստծո Իմաստության Լույսը և ներթափանցել բոլոր արարածների մեջ: Ողջ աշխարհը լցված է մեղքերով ու սխալներով, և մարդիկ զարմանո՞ւմ են Իմ Ներկայության համար: Նրանք ոտնակոխ են անում Իմ Մարմինը, մի՞թե Ես չպետք է պատասխան տամ: Ես չուտով պիտի իջնեմ Արդարության արևի նման նրանց վրա:

Իսկ դու, աշակե՛րտ, որ Իմ մի մասնիկն ես, Ես պիտի օգտագործեմ այն բոլոր միջոցները, որոնք զետեղել եմ քո մեջ, որ համախմբեմ Իմ

եկեղեցին, բայց նաև, որպեսզի պատվարժան մարդկանց [1] բերեմ հաշտության ուղին: ic:

Փետրվարի 3, 2003

Վասո՛ւլա, հռչակիր Իմ բոլոր հրաշքները յուրաքանչյուր ազգի: Անմեղությունն ու աղնվությունը Ինձ դրկաբաց կընդունեն և կօգտվեն Իմ հրաշքներից: Ես պետք է վերակրթեմ Իմ ժողովրդին, որպեսզի սովորեն տուրք տալ ու գնահատել Հորը, Ինձ և Սուրբ Հոգուն, տուրք տալ Մեր Փառքին և Զորությանը, Մեր Ողորմությանը և Բարեգթությանը, Մեր հրաշքներին և Մեր նշաններին: Ահա թե ինչու Ես պետք է վերակրթեմ նրանց, որպեսզի գիտենան, թե ինչպես փնտրեն Իմ Սուրբ Դեմքը և ճանաչեն այն: Երբ ձեր հիմքերն ավերվում են, մի՞թե Ես չպետք է միջամտեմ: Զե՞ք կարդացել, որ Ես երբեք չեմ դադարել գործելուց [2]: Բայց հավատալ, որ Ես դադարել եմ հարստացնել Իմ արարչությանը առատ պարգևներով, ինչպես հին ժամանակներում դա հերետիկոսություններից ամենավնասակարն է: Իմ ամեն մի կատարած գործը լի է փառքով և վեհությամբ: Իմ Գործերը վեհ են, և նրանք, ովքեր հրճվում են դրանցով, ճիշտ են անում՝ սևեռելով իրենց աչքերը դրանց վրա: Իմ բանբեր, չտապի՛ր քո Թագավորի հրամանով գրել այս Օրհներգը, անվանելով այն՝

«Սուրբ Երրորդության
Օրհներգերը»

Հետո Հայտնի դարձրու այն ամեն մի քաղաքում, ամեն մի նահանգում և պատվիր Մեզ: Հայրը կխոսի քեզ հետ հիմա...

(Այդ Հիսուս Քրիստոսն էր)

(Հայրը)

Արարչությո՛ւն, մի՛ արտասվիր, մի՛ սգա, այլ հրճվիր և ուրախ եղիր: Այլևս սգո երգեր մի՛ բարձրացրեք, երբ ձեր Արարիչը երգում է ձեզ համար: Այլ բացեք ձեր սիրտը դրա փոխարեն, որպեսզի Իմ Փառքը և Իմ Լույսը զարդարեն ձեզ վսեմորեն: Ո՛չ էլ փակեք ձեր ականջները ձեր Թագավորի հանդեպ, որ բերում է ձեզ այս գանձը երկնքից: Նա, որին դուք համարեցիք որպես անհասանելի, անտեսանելի, կամ՝ որպես թաքնված էություն, սպասարկում է ձեզ հիմա: Հրճվեք Ողորմության այս ժամանակներում և ուրախ եղեք: Օ՛, ցեղ այնքան սիրված: Ինչո՞ւ եք թույլ տվել, որ ամայությունն ու ավերումը պաշարեն և նվաճեն ձեզ այդ աստիճան: Ասացե՛ք Ինձ, ի՞նչ օգուտ եմ Ես ստացել ձեր ձեռքից: Երբ Իմ ժողովուրդը տնքում ու հեծեծում է ճնշման ծանրության տակ, կամ

[1] Հիսուս նկատի ունի ոչ քրիստոնյաներին, բայց բարի հոգով մարդկանց՝ միջկրոնական երկխոսություններում նրանց ներգրավելու մասին:
[2] Հովհ. 5:17

աղաղակում իրենց թշնամիների բռնակալության տակ, ոչ մեկը չի մտածում հարցնել. «Ո՞ւր է Աստված, որ ղողանջում է ուրախության Օրհներգեր»: Ոչ մեկը չի ընդունում, որ աղտոտել է իր ձեռքերն անաստվածությամբ: Դուք դատապարտում եք ձեր սեփական կյանքը, արարչություն: Իմ Օրհներգը հիմա առաջնորդելու է ձեզ դեպի ապաշխարություն և ճանաչելու Ինձ: Չնայած դուք մարմին ու ոսկոր եք և երկրային նյութ, ես պարգևել եմ ձեզ Իմ Հոգին և ստեղծել ձեզ Իմ Պատկերով:

Ձեզանից շատերն են այսօր հարցնում անհավատությամբ. «Ինչպե՞ս կարող է այդ թաքնված էությունը՝ վեր ամեն էությունից, բացարձակապես անըմբռնելի, որն Աստված է, բացահայտի Իրեն այս չափազանց խորհրդավոր ձևով, մեր արդի ժամանակներում, և արտահայտի Իրեն այդպիսի ուղղակի արտայայտություններով՝ մեզանից մեկի միջոցով, որը նույնպես հող ու մոխիր է»: Քանի որ դուք չեք կարող բարձրանալ դեպի Ինձ, ես, Իմ վերանցական լույսով և գիտությամբ, կամեցա ուղղել Իմ Օրհներգերը այս սերնդին, որը հուսահատ կարիք ունի փրկարար օգնության, այս ձևով Ինքս Ինձ ձեզ հայտնելով...

Այնպես որ, ես ազատ եմ երգելու ձեզ համար և հիշեցնելու ձեզ ձեր իսկական հիմքերի մասին: Ես երգում եմ ձեզ համար, որ ուժ տամ և սփոփեմ ձեզ, որ միացնեմ կոտրված սրտերը և հրաշալիքներ գործեմ ձեր սրտում: Իմ Օրհներգը մեղրի պես քաղցր կլինի բոլոր բերանների համար, և ինչպես երաժշտություն՝ գինու խնջույքում: Լինելով ամեն ինչի Արարիչը և բոլոր գոյություն ունեցողների պատճառը, ես ամենուր եմ, և ոչ ոք չի կարող ասել Իմ մասին. «Աստված չի արտահայտում Ինքն Իրեն այս ձևով»: Ինչպե՞ս կարող եք ասել այս խոսքերը, երբ դուք մթության մեջ եք: Դրա փոխարեն, այժմ վեր ցատկեք ուրախությունից և դուրս նայեք ձեր խավարի միջից, որովհետև ո՞վ կա Ինձ նման: Հայրը՝ Ես եմ: Քո Հոգու Պատարագի Օրհներգը՝ Ես եմ: Լուսավոր Աստվածությունը՝ Ես եմ:

Սուրբ Գրքերն ասում են. «Երանելի են սրտով մաքուրները, նրանք պիտի տեսնեն Աստծուն»: Այսօր, Վասո՛ւլա, յուրաքանչյուր ոք տեսնում է այնքան հեռու, որքան կարող է տեսնել: Բայց Ես ասում եմ ձեր բոլորին, դուք նույնպես կարող եք համարվել Իմ սրբերը, որոնք արժանի են տեսնելու Ինձ, եթե թույլ տաք Իմ Սուրբ Հոգուն անցնել ձեր միջով, որ փչրի ու խորտակի ձեր բոլոր անմաքրությունները, և հենց որ մաքրվեք, դուք կկարողանաք տեսնել Ինձ:

Ա՛խ, սերունդ, սկզբից ի վեր Մենք ստեղծեցինք ձեզ Մեր Սեփական Բնության պատկերով, ասելով. «Ստեղծենք մարդկությունը Մեր Սեփական Պատկերով, Մեր նմանությամբ»: Բայց, ինչպես գիտեք, սատանան, իր նախանձությամբ և Իմ ու ձեր հանդեպ ունեցած ատելությամբ, ձեր բոլորին դեմ հանդիման բերեց Մահվան: Ձմեռն անցավ թեև, և Գարունն Ինքը եկավ երկիր և փրկեց ձեզ, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հագցնի Իր Փառավոր ու Աստվածային Գեղեցկությամբ: Ուրեմն ի՞նչ ունեք վախենալու:

~ Հիմա եկե՛ք, դուք բոլորդ, ով ցանկանում է Ինձ և խմբվեք Իմ շուրջը: Եկեք և լսեք Երկնքի չտեմարաններից եկող այս Օրհներգը...

Օրհնյալ է նա, ով ողջունում է Ինձ: Ես կամրապնդեմ Նրան Մեր միությամբ... Այսօր Ես դուրս եմ գալիս ամենավերին երկնքից, որ կանչեմ ձեզ, և դուք մեկ դառնաք Ինձ հետ: Ես Ինքս Ինձ տալիս եմ ձեզ, որ հայտնաբերեք Իմ մեծությունն ու Իմ Աստվածայնությունը: Դա խորհրդավոր միությունն է Արարչի և Նրա արարածի միջև: Փեսան, որը նաև ձեր Թագավորն է, հրավիրում է ձեզ պսակվել Իր հետ: Ճիշտ ինչպես փեսան է դուրս գալիս իր ոսկյա տաղավարից, փայլելով արևի նման շնորհագեղությամբ, շողալով իր լույսի մեջ, Ես դուրս եմ գալիս երկնքից՝ հրավիրելու ձեզ Իմ Սրտի Ոսկե Սենյակը, որն Իմ Կուրծքն է ու Սերը:

Դուք, որ երբեք չհասկացաք Իմ Աստվածային Սիրո խորքերը, ոչ էլ այն, որ Իմ Սիրտը ձեր առագաստի անկողինն է, եկե՛ք և սովորեք Իմ լեզուն... Ես հրավիրում եմ ձեր քնքուշ հոգուն վայելելու Իմ քաղցրությունը: Իմ ցանկությունն է, և Ես կավելացնեի, Իմ ծարավն է փրկել ձեզ և բարձրացնել ձեզ, որ ելնեք երկինք, ուր դուք պատկանում եք:

Եկե՛ք Ինձ մոտ, յուրայիններս, Իմ Կրծքի Ոսկյա Սենյակը, և Ես կշնորհեմ ձեր հոգուն տեսնելու Իմ Սուրբ Դեմքը: Սիրելինե՛ր, Ինձ լսել՝ նշանակում է վերածնվել: Ինձ տեսնել՝ նշանակում է գոյություն ունենալ: Ի՞նչ ավելի լավ առաջարկ կարող է լինել, քան երբ մեկը ձեզ առաջարկում է հավիտենական երանություն կյանքում, որ անցկացնելու եք Ինձ հետ՝ և ողջ հավիտենության համար: Իմ Ողորմության Վիհում Ես կարող եմ լվալ ձեզ ամեն մի արատից և մաքրագործել ձեզ ձեր բոլոր մեղքերից, որպեսզի ստանաք Իմ ժառանգությունը. ..

Որպեսզի վայելուչ զարդարված և բուրումնավետ լինեք և արժանի՝ ներս մտնելու Աստվածային Հարսանեկան Սենյակը և ամուսնանալու Նրա հետ, Ես պետք է փոխակերպեմ ձեզ, որ լինեք առավոտյան աստղի նման, լիալուսնի նման, ծիածանի նման, որը փայլում է շողշողուն ամպերի դիմաց: Երբ Իմ Սուրբ Հոգին հագցնի ձեզ շքեղ Հագուստը, դուք կնմանվեք զմուռսի մի փնջի, դարնան վարդերի: Երբ դուք զգեստավորված կլինեք Քրիստոսով՝ ձեր հարսանեկան զգեստով, դուք հագնված կլինեք փառավոր կատարելությամբ, պատրաստ գնալու դեպի սուրբ խորանը՝[1] հանդիպելու ձեր Փեսային, ուր Աստվածային Շնորհը կառաջնորդի ձեզ, որ լինեք... Այդ ժամանակ Ես կշնորհեմ ձեզ, յուրայիններս, տեսնել Իմ Աստվածային Դեմքը: Թեև դուք դեռևս կլինեք երկրի վրա, դուք կլինեք Իմ մեջ, և Ինձ տեսած լինելով, ձեր սիրտը կբարձրանա երկինք, Աստվածային Լույսի մեջ, Աստվածային Սիրո և Բարեպաշտության թևերի վրա, հասկանալով, որ Նա, որ կանգնած է ձեր առջև՝ Իր աննկարագրելի փառավոր Գեղեցկությամբ, ոչ այլ ոք է, քան ձեր Արարիչն ու Փեսան: Եվ դուք, զարմանքով և հիացմունքով, կկանչեք Ինձ.

«Ինչպիսի՜ Գերիշխանություն, ինչպիսի՜ ակնածալի Մեծություն է սա, որ իմ սիրտն ապրում է: Խորհուրդ ողջ արարչության, ո՜վ երկնքի Հեծյալ, Զարմանալի Կերպարանք, ամբողջապես գեղեցիկ, նույնիսկ լուսինն է աղոտանում Քո Փառքի մեջ, Տե՛ր իմ: Իսկ աստղերը թվում են անմաքուր

[1] Կարելի է նաև հասկանալ որպես հարսանեկան սենյակ:

քո պայծառ ու հոյակապ հասակի առջև: Նմանը չունեցող և անզուգական, ծածկված շափյուղաներով, Քո Փառքը անհամեմատելի է: Քաղցր է Քո Ձայնի մեղեդին: Քո Լեզվի տակ՝ մեղր ու կաթ է: Քո Աչքերի խորքում՝ լույսի երկու շլացուցիչ ճառագայթ: Բայց ինչպե՞ս է, որ ես արժանացել եմ մտնելու Քո Արքայական Սենյակը, ո՛վ Գերագույն Իշխանություն: Ինչպե՞ս է, որ ես այդպիսի առանձնաշնորհման եմ արժանացել, այդպես օրհնյալ լինելու՝ շուտով միանալու և մեկ լինելու Ամենակարող Աստծո հետ: Իմ հոգին հիմա հագեցած է հրճվանքով: Ահա և Դու, քո ոսկյա ամպահովանու վրա, որը ծածկում է Քո Արքայական Գահը, հրավիրում ես ինձ՝ անարժանիս, կանչելով ինձ Քեզ մոտ Քո տիրական ձևով, իսկ ես՝ դողալով և թույլ, ամբողջապես պարտված և վիրավորված ինձ վրա ուղղված Քո Աստվածային Հայացքից, կորցնում եմ աշխարհի մասին իմ ողջ հիշողությունը, այս զարմանահրաշ տեսարանի առջև, որը Դու, Քո լիառատ Սիրով տալիս ես ինձ: Քո ողորմությամբ Դու ինձ համար պատրաստել ես մի բոցավառ ուղի, առաջնորդելով իմ քայլերը դեպի Քեզ: Իմ Սիրեցյալին միանալու ամենաբուռն ցանկությամբ հիմա, Ես, ինչպես մի աղավնի, սիրավառ կթռչեմ Քո Գիրկը և կհալվեմ, անհետանալով Քո պայծառ Լույսի մեջ՝ ինքս լույս դառնալով»:

Հետո քո Թագավորը՝ Սիրով տոգորված, կթեքվի դեպի Իր հարսը և քնքշորեն կբռնի նրա գլուխը՝ դնելով այն Իր Կրծքին, մեղեդային Ձայնով ասելով քեզ հետևյալ խոսքերը. «Հիմա Ես քեզ ամուր բռնել եմ»: Մինչ Իմ Բերանից դուրս կհոսի պայծառ լույսի մի շող և կծածկի քեզ...

«Ես տալիս եմ Ինքս Ինձ քեզ, որ տիրապետես Ինձ և հայտնաբերես Ինձ քո սրտում, յուրայի՛նս: Հայտնագործիր Ինձ Իմ վերանցական Լույսի մեջ, և դու կփայլես քո բոլոր անդամներով, ինչպես Մովսեսի դեմքը փայլեց, երբ տեսավ Ինձ դեմառդեմ: Առաջ արի և Ես կփայլեմ քո ամեն մի անդամի վրա»:

Ա՛խ, օրհնյալ է նա, ով ողջունում է Ինձ, քանի որ նա կլինի ինչպես կրակ և խունկ խնկամանի մեջ, ինչպես ծեծված ոսկուց մի անոթ՝ պատված ամեն տեսակի թանկարժեք քարերով, Իմ Վսեմության պայծառության մեջ: Սա հենց այն պահն է, որը Ես նախապատրաստել եմ ձեր բոլորի համար, ձեր արարման սկզբից ի վեր՝

Հարսանեկան Սենյակը,
ուր Ես առաջնորդում եմ
յուրաքանչյուր հոգու,
որ մասնակից դառնա
Իմ Խորհրդավոր Ամուսնությանը...

Այս փառավոր հայտնությունը երկնքից բացահայտվում է քեզ, որպեսզի սրբագործի քեզ և քեզանից մի սուրբ պատրաստի, երբ տեսնես քո Եռանձն Աստծո հոյակապությունը: Թող քո հոգին հրճվի Տիրոջ Ողորմությամբ:

Իսկ հիմա Ես ասում եմ Իմ հարսին. «Սիրելիս, մի՛ վախեցիր, դու չես մեռնի, թեև քեզ ուղղված Իմ Հայացքի ճառագայթները վիրավորեցին և

թուլացրին քեզ, որովհետև, ե]ս, որ Կյանքն եմ, հիմա քեզ ամուր բռնել եմ և թույլ չեմ տա, որ գնաս: Հասկանո՞ւմ ես: Ջմեռն անցավ, անձրևները դադարել են, ծաղիկներ են հայտնվում երկրի վրա, պսակադրության արարողությունների շրջանը եկել է: Զգիտեի՞ր, որ դու արքայական ծագում ունես, և որ քո Թագավորը սպասում է քեզ:

«Հմայված Իմ հարսով, Ես նայում եմ Իմ Ձեռքերով պատրաստած ընծային: Ես նայում եմ Ինքս Ինձ քո մեջ, և այն, ինչ Ես տեսնում եմ, ուրախություն է պատճառում Ինձ: Ես մեկ անգամ ևս նայում եմ նրան, ինչը հիմա Իմ Սեփականությունն է, Իմ Խաղողի Այգին, Իմ Պարտեզը: Ես նայում եմ Իմ սեփական սերմին, Իմ Ոսկրի ոսկրին, Իմ Մարմնի մարմնին, և չնայած Ես նայում եմ այն վերքին, որն Իմ մեծ Սերը հասցրեց քեզ, որը բարձրացրեց քեզ դեպի ամենավերին երկինքը, Ես հրճվում եմ այդ ծաղիկով[1] այդ մշտական նշանով, որն Իմ Սերը թողեց քեզ վրա... Այդ վերքը խոստացված երկրի նշանն է, մարգարտի հայտնագործումը, դա Իմ լիառատ Սիրո նշանն է, քո հարության նշանը, դատարկ գերեզմանի նշանը:

«Այն, ինչ աչքերդ հիմա ականատես են լինում քո առջև՝ Առաքինությունն է Իր Գահի վրա: Սիրելի և բուրավետ յուղ Իմ Սրտի, Իմ սիրառատ ընկերությունը կքաղցրացնի և կսփոփի քո հոգին: Պսակված վերջապես: Արի՛ հիմա Իմ Գիրկը և դիտիր Իմ Լույսը, Իմ Սիրտը, Իմ Հարստությունը, Իմ Ողորմությունը՝ հարստացնելով և պայծառացնելով քո հոգին, դառնալով ավելի մեծ, քան բոլոր թագավորներն ու իրենց թագավորությունները: Այժմվանից սկսած քո միակ ձգտումը պետք է լինի խնդրել ու բարեխոսել ուրիշների համար Իմ Ներկայությամբ, աղերսելով նրանց մեղքերի թողության համար: Միացած լինելով Ինձ հետ, դու կլցվես հասկացողության ոգով և այս սերնդի վրա կցողես իմաստության խոսքեր:

«Հետո, դեռևս հանգչելով Իմ Գրկում, արշալույսին, դու ողջ սրտով կդիմես Նրան, ով արարեց քեզ: Դու գոհություն կմատուցես Նրան, ով քեզ բուրումնավետ դարձրեց զմուռսով: Ինձ մոտ և Իմ Գրկում դու կդառնաս ուղղամիտ՝ քո նպատակների և ուսման մեջ: Դու կմտածես Իմ բոլոր թաքնված խորհուրդների և կրքերից ձերբազատվելու հրեշտակային Առաքինության մասին: Հետո, ժամանակ առ ժամանակ, Ես քեզ դուրս կուղարկեմ դեպի աշխարհ, որ ցույց տաս քո ստացած ուսուցումները: Այժմ, ձևավորված լինելով Իմ Սրտում, դու ձեռք կբերես մի նոր միտք: Իմ Կամքը հայտնի կլինի քեզ, և դու կիմանաս, թե որն է բարին, քանի որ Ես պիտի լինեմ քո առաջնորդը: Ես և դու կլինենք գործընկերներ: Ուրեմն եղիր Իմ գործակիցը, որ միասին գնանք ստորգետնյա տարածքներ, նրանց մոտ, ովքեր իջնում են դեպի մահվան փոսը, և ազատենք նրանց, որպեսզի նրանք, իրենց հերթին, ճանաչեն Ինձ՝ իրենց Աստծուն, հասկանո՞ւմ ես:

«Ես պիտի սովորեցնեմ Իմ աղավնուն ճախրել երկնքում՝ բուրումնավետ դարձնելով ազգերին, և բուժիչ յուղ ու զմուռս կաթելով Իմ Գրկից, քո շուրթերը պիտի երգեն քո քաղաքացիներին՝ անկախ գույնից ու ցեղից, Աստվածային Օրհներգերը: Քո շուրթերը՝ խոնավացած

[1] Այս տեքստում ծաղիկը ունի վերքի իմաստ:

շնորհով, կերգեն արդարության և բարեպաշտության մեղեդիով, և համաձայն Սիրո և Փրկության Աստվածային Օրենքի, պատելով քաղաքացիներին բուժիչ յուղով և զմուռսով: Դու կմատակարարես նրանց երկնքի պաշարներից»:

Արարչությո՛ւն, Ես արարել եմ ձեզ, որ լցնեմ ձեր սիրտն Իմ քաղցրությամբ և Իմ Աստվածային Սիրով: Ես օծել եմ ձեր սիրտը՝ շնչելով ձեր մեջ, և այնպես եմ ստեղծել այն, որ այն կարողանա պարունակել և պահպանել Իմ վսեմ Սերն ու Իմ Քաղցրությունը, քանի որ Իմ Սերն ավելի լավ է, քան կյանքն ինքը: Ես երբեք որևէ սիրտ չեմ զրկում Իմ պարգևած ուրախությունից, քանի որ Ինձ ձեր սրտում պարունակելով, առանց ձեր կողմից որևէ դիմադրության՝ հոգևոր մխիթարությունն այնպես է ամրապնդվում ձեր մեջ, որ ձեր սիրտը նույնիսկ ավելին կօգտվի Իմ քաղցրությունից, Իմ Սիրուց և Իմ Աստվածայնությունից, առաջնորդելով ձեզ սիրո թելերով դեպի որդիական ուղին, որ կառավարեք Ինձ հետ՝ ձեր Թագավորի հետ: Ինձ հետ կառավարելը ձեզ կզգեստավորի Իմ Փառքի գեղեցկությամբ, իսկ հրեշտակներն ու երկնային Արքունիքը ձեր շուրջը կփաթաթեն Իմ արդարության ու մաքրության Թիկնոցը՝ վեր բարձրացնելով ձեզ, ինչպես խնկով լցված մի բուրվառ, որ բուրավետ դարձնեն երկիրը:

Բայց, եթե Ես գտնեմ մի գաղջ սիրտ, ինչպիսի Սեր և քաղցրություն էլ որ այն պարունակած լինի իր ծննդյան պահին, այդ սիրտը երբեք չի կարողանա օգուտ քաղել Իմ Ներկայությունից: Այն կլինի ճաքած ջրարկղի պես, որի միջից շարունակ դուրս է հոսում իր պարունակությունը, երբեք չպահելով այն, և որքան էլ լցնեն այն, այն միշտ կչորանա և դատարկ կմնա... Այդպիսի սիրտը վերջնականապես զրկվում է այն ուրախությունից, որը հայտնի է Իմ սրբերին, հավատի պակասության պատճառով և նախընտրություն տալով երկրային բավականությունների և չքեղության, քան թե Իմ հոգևոր հարստությանը: Այդ սրտերը Իմ Ներկայությամբ լցվելուց հետո աստիճանաբար կորցնում են Ինձ, ճիշտ ինչպես հեղուկը, որը դուրս է ծորում ջրարկղի ճաքերի միջով: Իսկ Սատանան, դիմադրություն չտեսնելով, այդժամ պարուրում է նրանց իր խավարով:

Ուստի, դուք, որ դեռևս երբեք չեք փորձել Իմ քաղցրությունը, այլ հավիտենապես գտնվում եք դառնահամ լեղու մեջ, բարձրացեք հիմա և առաջ եկեք, քանի որ միայն մեկ փառք կա, մեկ բերկրանք, ուրախության մեկ աննկարագրելի պահ, որը կարող է դառնալ հավիտենական, հոգու մեկ հիացմունք, այն է՝ տեսնել Ինձ և ճաշակել Ինձ՝ ձեր Աստծուն:

Այո՛, Վասուլա, քո հոգին նվաղեց նախորդ օրը, երբ Ես շնորհագեղությամբ երևացի քեզ, և մինչ դու հայում էիր Ինձ, թվում էր, թե գետինը օրորվում է ոտքերիդ տակ, երբ Իմ Հայացքն ընկավ քեզ վրա, դու հմայվեցիր: Իմ տեսքը քեզ նոր միտք տվեց և նոր կյանք: Իմ քաղցր զրույցը քեզ հետ՝ պսակեց քեզ: Իմ բուրմունքը քեզ վրա՝ օծեց քեզ, որ միանաս հրեշտակների և սրբերի թափորին Իմ Ներկայության շուրջը, և երգես նրանց հետ գոհության մի օրհներգ՝ հռչակելով Իմ բոլոր հրաշքներն ու հրաշալիքները, սիրելով Իմ երկնային Գավիթները՝ այն վայրը, որտեղ Իմ Փառքն է բնակվում:

Նա, ով մի անգամ ասաց. «Թող լույս լինի քո մեջ», Իմ ընկեր, Նա, ով լցնում է ամեն ինչ՝ առանց սահմանափակված լինելու նրանց սահմաններում, հրավիրում է քեզ հերքել այն ամենը, ինչ որ չար է: Այսօր քո Թագավորը, քո Արարիչն ու Քո Փեսան առաջարկում է քեզ մի մեծ խնջույք: Շռայլությամբ և առատաձեռնությամբ, Ես արքայական հրամանով իշխանություն եմ տվել Իմ բոլոր հրեշտակներին, որ գնան հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք, և հավաքեն ձեր բոլորին, հայտարարելով, որ Եռանձն Աստված մի աննկարագրելի ձևով մտադիր է փոխակերպել Իր արարչությունը: Այդ հրեշտակներն Իմ Թագավորության Շեմքի Պահապաններն են:

Սրանք կլինեն այն օրերը, երբ ձեր հոգին պետք է պատրաստվի և զարդարվի Փեսայի համար: Ես ցուցադրում եմ Իմ Հարստությունը և Իմ Թագավորության հոյակապությունը և Իմ Վսեմության Փառքը, որոնք ձեզ են պատկանում, որ վայելեք դրանք: Ես իջնում եմ երկիր, ինչպես Ես ասացի, որպես մի Փեսա՝ խավարի ու տրտմության, վշտի ու դժբախտության, ճնշման ու մեծ անհանգստությունների այս օրերին, ուր դևերն ազատ են արձակվել, որ գնան բոլոր ուղղություններով և խաբեն ոչ միայն թշվառներին ու սրտով անմաքուրներին, այլև ընտրյալներին՝ նույնպես: Ո՜վ օրհնյալ նորոգում: Ո՜վ օրհնյալ վերափոխություն, այսօր՝ դերիներ, բայց վաղը ազատ...

Ես ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք նույնպես կմիանաք թափորին խորանի շուրջը, Իմ Հրեշտակների և Սրբերի հետ միասին, եթե ընդունեք Իմ Կամքը, թույլ տալով այս ձևով առաջնորդվել դեպի Թագավորի Արքայական Սենյակը՝ հրեշտակների ու սրբերի շքախմբի հետ միասին: Հետո Իմ Թագավորության Շեմքի այդ Պահապանները մեկ ձայնով կբացականչեն. «Դարպա՛ս, բարձրացրո՛ւ կամարդ, բարձրացի՛ր փառավոր դուռ, ներս թող հարսին: Փառքի Աստվածը, ազգերի Կառավարողը, որ թագավորում է ընդմիշտ, նրա Սիրելին, սպասում է Իր հարսին»:

Թագավորի Շեմքն անցնելուց հետո, դուք կգտնեք ձեզ կանգնած Փառքի Թագավորի՝ ձեր կյանքի Ամրոցի, ամենից գեղեցիկի ներկայության մեջ: Հավատարմությունն ու Ազնվականությունը Նրա շքանշաններն են: Ձեր Փեսան՝ Իր Արքայական Գահի վրա նստած, Իր Ձեռքում մի ոսկե Գայիսոն փայլելիս, ոսկով և շափյուղաներով ծածկված Փառքի իր ողջ հանդերձանքը հագած, մի ահեղ տեսարան, կբարձրացնի Իր Դեմքը ձեր ոտնաձայնից և վեհությամբ բոցավառված կասի.

«Արի՛ Ինձ մոտ և ստացիր Ինձ, ինչպես Ես պիտի ստանամ քեզ: Ես պիտի գեղեցկացնեմ քեզ Իմ Գրկում՝ վեհությամբ ու շքեղությամբ: Ինձ մոտիկից ճանաչելը և քո Աստծո պատիվը կզգեստավորեն քեզ, զարդարելով քո հոգին և կատարելության հասցնելով այն: Հիմա դու պետք է մասնակցես մեր հոգևոր ամուսնությանը, այն Աստվածային Միությանը, որով դու ձեռք կբերես անասելի օրհնություններ, որոնք գերազանցում են որևէ օրհնության»:

Եթե դուք ընդունեք Իմ Կամքը, սա տեղի կունենա: Սերո՛ւնդ, Ես դնում եմ Իմ Սերը ձեր աչքերի առջև, և թեև Իմ Սերը մարդկային հասկացողության սահմաններից դուրս է, եկե՛ք, դադար տվեք մի պահ և

մտածեք ու իմացեք, որ Ես Աստված եմ, բայց նաև՝ Հայր: Ես չեմ խոսում խիստ ձևակերպումներով: Ես այդ ձևով չեմ պատրաստում սրբեր և մարտիրոսներ: Իմ քաղցր զրույցը ձեզ հետ առաքինություն և բարեպաշտություն է: Ես Իմ Օրհներգերը ուղղում եմ առանց սուր կրելու Իմ կողքին: Իմ Աստվածային Խորհուրդները սիրելի են և բացահայտվում են ձեզ ուրախության յուղով: Չնայած Ես տեսել եմ ձեր թշվառությունը, և Ինձ հայտնի է ձեր սրտի խեղճությունը, Ես չեմ շրջել Իմ Դեմքը ձեզանից, այլ ավելի շուտ, սիրով եմ Ես հիշում ձեզ: Բարեգթությունն ու բարությունն այն ուղիներն են, որոնք Ես ընտրել եմ ձեզ համար, քանի որ Իմ ուղիները Սեր են և Ճշմարտություն: Հանուն Իմ Սուրբ Անվան, Ես վերակենդանացրի քո հոգին, աղջի՛կս, և ներեցի քո մեղքը: Ես դրել եմ քո կողքին Առաքինությունն ու Արդարությունը, որ լինեն քո ուրախ Ընտրյալները: Ինձ հաճույք պատճառելու համար, սիրելիս, և Ինձ հետ՝ Իմ Ներկայության մեջ ապրողների երկրում քայլելու համար, Ես առաջարկեցի քեզ ձեռք բերել Իմաստություն և կամովին զգեստավորեցի քո մարմինը Իմ վերանցական Լույսով:

Գրված է. Երանելի է այն մարդը, որին Դու ընտրում ես, ում Դու հրավիրում ես ապրել Քո Գավիթներում»[1]: Արդարև, քանի որ նա, ով հրավիրված է, այլևս մենակ չէ: Նրանք, ովքեր մենակ էին, այժմ Իմ մեջ են և օրհնյալ են: Նրանք հրաժարվել են աշխարհից, իրենց ընկերներից և ազգականներից, անջատելով ու հեռացնելով իրենց Իմ Փառքի համար: (Այդ Ինձ ավելի Փառք է տալիս, և Ես ավելի պատիվ եմ ստանում, երբ հրաժարվողները նրանք են, ովքեր ապրում են աշխարհում, ուր շրջապատված են բազմաթիվ փորձություններով, բայց իրենց սեփական ազատ կամքով նրանք շրջում են իրենց թիկունքը այդ ամեն չարության դեմ և կամովին Ինձ են առաջարկում իրենց կամքը)[2]:

~ Ես պահպանում եմ
Իմ Աստվածային Լույսի մեջ
բոլոր նրանց, ովքեր Իմ մեջ են:

Եկե՛ք և լսեք Իմ Օրհներգերը, դուք բոլորդ, ովքեր վախենում եք Ինձնից: Երբևէ լսե՞լ եք, որ Ես մոռացել եմ Ողորմություն ցույց տալ, կամ, որ Իմ բարկությունը հաղթել է Իմ Բարեգթությանը: Ամեն ինչ, որ Ես անում եմ, արվում է հավատարմությամբ և արդարությամբ:

Քո թշնամիների աչքերի առաջ Ես պարուրեցի քեզ Իմ Գրկում, Վասուլա: Ամո՛թ քեզ վրա հարձակվողներին, ամո՛թ նրանց, որոնց սիրտը լցված է նենգ կատաղությամբ՝ նախանձելով քեզ, որովհետև Իմ Աչքերը քեզ վրա էին՝ լույս տալով քո մեջ: Քեզ Իմ Ոտնահետքերով տանելը կատաղեցրել է նրանց: Իմ սիրառատ Օրհներգերի շշնջոցը քո ականջին պատճառ էր նրանց համար, որ հարձակվեն քեզ վրա: Բայց Ես քեզ դարձրել եմ ինչպես մի եղնիկ՝ սարերի վրայով ազատ ցատկելով: Ես դարձրել եմ քո սիրտը ինչպես մի շուշան՝ զերծ հոգսերից: Ես շնորհել եմ Իմ օրհնությունները քեզ, բարձրացնելով քեզ փոշու միջից,

[1] Սաղմ. 65:4

[2] Փակագծերի միջի մասը ասվեց ինձ այնպես, ինչպես ցանկանում են ինչ-որ բան վստահել ընկերոջը, ճիշտ ինչպես ասում են. «Ի դեպ...»:

առաջարկելով քեզ մի մշտական տեղ Իմ Սրտի Ոսկյա Սենյակում: Իսկ նրանք մի օր ստիպված կլինեն խմել թույնով լցված իրենց դառը բաժակից:

Ուստի հիմա թող Իմ Խոսքերը սփոփեն քեզ, թող դրանք լինեն բալասանի նման քեզ վրա: Այժմ ականջդ խոնարհեցրու և ստացիր Իմ երգը: Արքայական Արժանապատվությունը սևեռել էր Իր Աչքերը քեզ վրա նախքան քո ծնվելը[1], որ ցույց տա քեզ և քո միջոցով Իմ Փառքը և Իմ Թագավորության ճանապարհը, որը մի հրաշագեղ ուղի է: Եվ այդ ժամանակից սկսած Ես դարձա քո աստղալույսը քո հոգու գիշերին և արևի փայլը՝ օրվա ընթացքում... Իմ ամենազոր Ձեռքը միջոցների պակասություն չուներ քեզ Իմ պարգևները բաշխելու համար, սակայն քո ժողովուրդը[2] հաշվի չառավ Իմ պարգևները և չափեց ու դատեց Ինձ:

Ես կառավարում եմ մեծ ներողամտությամբ՝ լուսավորելու, սովորեցնելու համար, և մեծ առատությամբ բուրավետ յուղ եմ հեղում նրանց գլխին, որոնց Ես ընտրում եմ, որի պատճառով նրանք մարգարեական պատգամներ կարտաբերեն, խորհուրդներ, որոնք թաքնված են գիտուններից և իմաստուններից: Նրանք, ովքեր ցանկանում են ոչնչացնել և նահատակել Իմ սիրած և նախընտրած հոգուն, որին Ես լցրել եմ խորհրդավոր ասացվածներով, աղնիվ երգերով և արքայական օրհներգերով, Ես ասում եմ ձեզ, չարիք ծրագրողներիդ. ձեր սեփական չարությունը պիտի պատժի ձեզ: Եվ Ես կհիշեցնեմ այդ ճնշողներին իրենց անարգ մեղքերը Դատաստանի Օրը:

Ես քո հոգու Ղեկավարն եմ, և ոչ ոք երբևէ չի կարողանա քեզ ցնցել: Մեր քաղցր զրույցը քեզ հետ պիտի շարունակվի՝ մեծ շատրվաններ ցայտեցնելով քո սրտի միջից, և միասին, սիրելիս, մենք պիտի տարածենք Իմ նուրբ բուրմունքը աշխարհով մեկ, բուրումնավետ դարձնելով ազգ ազգի ետևից: Հետո կարելի է ասել. «Ժամեն անցավ, անձրևները դադարեցին, ծաղիկներ հայտնվեցին երկրի վրա»: Հասկանո՞ւմ ես, սա է պատճառը, թե ինչու եմ Ես ներփակել քեզ Իմ Սրտում, ուր կարող ես սփոփիչ դգվանք ստանալ Ինձնից, բայց սպասիր և տես, թե որքան ավելի կսփոփվես երկնքում Իմ Թագավորության մեջ՝ քո հանդեպ կատարված յուրաքանչյուր հարձակման համար: Ամեն ինչ չափվում է... Իմ Սրտի Արքայական Սենյակում Իմ նարդոսը կշարունակի արձակել իր բուրմունքը քո սրտի վրա, և այն դառն օդը, որը դու շնչեցիր քեզ մեղադրողներից, արագ կգոլորշիանա՝ տալով քեզ հանդարտություն և մտքի խաղաղություն: Այսպես սփոփված բուրավետ հոտերով, դու այլևս երբեք չես լքի Իմ Արքայական Սիրտը... Առավել քան երբևէ, դու կկապնվես Ինձ՝ ճշմարիտ Աստծուն:

~ Ասա՛ Ինձ հիմա, որտե՞ղ ես դու կեսօրին հանգստանալու:

Ես հանգստանալու եմ
Քո Արքայական
Սրտի Ոսկյա Սենյակում:

[1] Երեմ. 1:5
[2] Ուղղափառ հոգևորական դասից ոմն մեկը:

Ասա՛ Ինձ, թող որ իմանամ, սիրելի՛ս, որտե՞ղ ես դու հանգստանալու երեկոյան:

Ես հանգստանալու եմ
Քո Արքայական
Սրտի Ոսկյա Սենյակում...

Իսկ որտե՞ղ ես հանգստանալու քո կյանքի մնացած մասը:

Ես հանգստանալու եմ
Քո Արքայական
Սրտի Ոսկյա Սենյակում,

Տե՛ր, Հա՛յր, Փեսա՛
և մարդկության Սիրահար,
իմ արմատները ես կդնեմ
Քո Սրտում: Ես կհետևեմ
Քո Արքայական Սրտի հետքերին,
որտեղ մարդ մոռանում է
ինքն իրեն՝ Քո մասին մտահայելիս...

Տե՛ր, Քո Սերը Պատարագ է
մարդկության համար:
Գերիշխան Ղեկավար,
Քո Ողորմությամբ
Դու ցանկացար ծածկել ինձ
Քո պայծառ Լույսի մեջ,
ցրելով ոչ միայն խավարը,
այլև՝ չարիքը:

Աստվա՛ծ Ամենակարող,
Դո՛ւ, որ պահում ես տիեզերքը
Քո Ձեռքի ափում,
ես ոչ միայն զարմացած եմ,
այլև ամբողջապես պարտված,
երբ Դու հարմարվում ես,
առանց որևէ կերպ
համապատասխան լինելու,
ինձ և ինձ նմաններին:
Ինձ դուրս շպրտելու փոխարեն,
Քո Գթառատությամբ,
Դու ծածկում ես հոգիս
հարսանեկան պարգևներով, որոնք
հոսում են Երկնքի պաշարներից:

Հետո, Քո լիառատ Սիրո մեջ,
Դու Քեզ ինձ ես միացնում
մի հոգևոր
Աստվածային ամուսնությամբ, և ես

զգում եմ Քո համբույրների համը,
որոնք գերազանցում են
զմուռսի և մաքուր խնկի
և ամեն մի բուրավետ բուրմունք:
Եվ այսպես, հոգիս
Քո գրկում լինելով,
ասում է բոլորին.

«Դուք նույնպես կարող եք ստանալ
միևնույն շնորհներն
ու պարգևները,
որոնց դուք արժանի չեք,
եթե որոշեք ապրել
ձեր կյանքը Աստծո մեջ:
Ու նստած Նրա Գրկում,
փարված Նրա Արքայական Սրտին,
փարված Նրա
բուրումնավետ Հանդերձներին,
հրճվելով Նրա
Գրկախառնության մեջ,
խորը խոկմամբ և խորասուզված
մտահայեցողության մեջ
Նրա աննկարագրելի
Գեղեցկության մեջ...
Ձեր հոգին կհագենա
Նրա Օրհնությամբ, որը
գերազանցում է որևէ բերկրանք,
որևէ քաղցրություն, որևէ փառք»:
Իր շնորհով, ինձ թույլ տրվեց
ջանասիրությամբ սովորել
Աստվածային Այբուբենը...

Քանի որ սա է Իմ քաղցր Ուսմունքը, Իմ Երկխոսությունը: Այն Ուսմունքն ու Երկխոսությունը, որը պետք է ուսուցանվի ողջ մարդկությանը: Ես ցանկանում եմ ձեզ բոլորիդ հիշեցնել Իմ Լեզուն և վերակրթել ձեզ: Այսպիսի Օրհներգեր պետք է սովորի մարդկային սիրտը, քանի որ Իմաստությունը և Ճշմարտության սրբազան իմաստը Իմ Արքայական Սրտում են գտնվում:

(Այս երկար պատգամը գրվեց մի քանի օրվա ընթացքում):

(Հիսուս Քրիստոսը շարունակեց...)

Այո՛, Վասուլա, քո հեզահամբույր Տերն ու Փրկիչը ազատեց քեզ: Մեր[1] Ուսմունքը չի տարբերվում, և միասնաբար Մենք ասում ենք. Հայատնագործե՛ք Ինձ՝ ձեր Աստծուն, հայտնագործե՛ք Մեզ սրտի մաքրությամբ: Ես մեծ բաներ ունեմ ասելու Իմ արարչությանը, որոնք կդեղեցկացնեն նրան:

Ո՛չ, ոչ շատերն են հասկանում անբաժանելի Սուրբ Երրորդությունը, սակայն Մենք մեկ Էություն ենք, մեկ Զորություն և մեկ Գիտություն, միայն մեկ Աստված... Եվ Մենք ազատ ենք հաղորդակցվելու որևէ հոգու հետ, որևէ ժամանակ: Հայրը և Ես և Սուրբ Հոգին, երեքս էլ իջնում ենք որպես երեք վկաներ, նորից ասելու Մեր Խոսքը և նորից կրթելու ձեզ, որ ապրեք ճշմարիտ կյանք Մեր մեջ:

Ինչպես Հայրը բացատրեց քեզ, ձեր սիրտը ստեղծվել է Մեր Վսեմ Սիրուց, որ վերադարձնի այդ Սերը Մեզ: Ձեր սիրտը սկզբից ի վեր լցված է միայն Մեր Ներկայությամբ: Այն ստեղծված է մի այնպիսի անասելի ձևով, որ պետք է կարողանա պահպանել Մեր Ներկայության ողջ Վսեմ Սերն ու Քաղցրությունը: Բայց եթե փշերն ու մացառները ծակում են այն, ապա, ինչպես ծակված ջրարկղ, նա կկորցնի իր պարունակությունը: Փշերը աշխարհի հոգսերն են և հարստության գայթակղությունը, որոնք կարող են ծակել սիրտը, և ցամաքեցնել այն կյանք տվող Աղբյուրից:

Տե՛ր, Դու ինձ համար եղել ես
Քո հայտնության Դարպասը,
և այդ կերպ Դու ամուր
թաքցրել ես ինձ Քո մեջ:

Քո մեծ Սիրո պատճառով Դու
մարմնացար և բնակվեցիր մեր մեջ:

Ասա՛ ինձ, Տեր, ինչպե՞ս կարող է
մեկը պահել քեզ ու չկորցնել:
Ինչպե՞ս կարող է մեկը
պահպանել Քեզ
ընդմիշտ իր սրտում՝
առանց կորցնելու Քեզ
այս փոթորկահույզ աշխարհում՝
լեցուն թույներով և
գայթակղություններով:
Քանի որ թվում է, թե
նա ով Քեզ չի փայփայում
սկզբից սկսած, ինչպես հարկն է,
ո՛չ էլ կանչում է Քո Սուրբ Անունը,
ինչպես պետք է որ անենք,
ո՛չ էլ վախենում է Քեզնից,
ո՛չ էլ հավասարապես սիրում է Քեզ,
ինչպես Դու ես մեզ սիրում,
վտանգը մեծ է:

[1] Սուրբ Երրորդության

Մեզանից շատերը տանուլ կտան
առաջին իսկ օրվանից...

Այո՛, Տեր,
մի՞թե դա չէ ճշմարտությունը:
Ուրեմն ասա՛ Ինձ, Տեր, ո՞րն է
գաղտնիքը, որպեսզի չծակծկվենք,
և կա՞ արդյոք որևէ դարման,
եթե արդեն վնասվել ենք:

Մարդկանց համար այդ անհնար է: Աստծո համար ամեն ինչ հնարավոր է[1]:

Բայց և այնպես, բոլորին էլ տրվում է ազատ կամքի պարգևը: Ինձնից վախեցող մարդը կկամենա ուղղվել և չի կորցնի Ինձ: Նրանք, ովքեր փնտրում են Ինձ, կանվեն Իմ կողմից և կմնան բավարարված: Սերը Աստծո Հոգին է, որի միջոցով դուք ստանում եք Իմ Լույսը, լուսավորելով ձեր սիրտը: Ով էլ որ ճշմարտապես ու անկեղծությամբ պայքարում է մասնակցելու Իմ Շնորհին, կարող է անտարբեր մնալ այս աշխարհի հանդեպ, և չի կորցնի վսեմ էությունը իր սրտում: Բայց, եթե մեկը կանգնի և զրուցի Գայթակղության հետ, անսալով երկրային հարստություններին, նա կմնա աշխարհի մեջ և կկոխոտվի մեղքի փոշուց:

Ես ասել եմ, որ Իմ Հայրը և Ես և Սուրբ Հոգին պիտի գանք և բնակվենք այն հոգու հետ, ով սիրում է Ինձ և պահում Իմ Պատվիրանները: Իմ Ներկայությունն ամբողջապես այդ սրտերի մեջ է, և այն Լույսի միջոցով, որը Մենք հեղում ենք նրանց մեջ, այդ հոգիները հասնում են Իմ մասին Աստվածային Գիտությանը: Այդ մեծ Գիտությունը՝ լցված սիրով, առաջնորդում է նրանց ոտքերը դեպի Հարսանեկան Սենյակ, ուր Ես՝ նրանց Փեսան, սպասում եմ նրանց, որ վայելեն անխռով խաղաղություն...

Ամեն մի հոգի կարող է հասնել Իմ Սիրո բարձունքներին: Ամեն մի հոգի կանչված է Ինձ հետ Աստվածային միության մեջ լինելու: Ինչո՞ւ եմ Ես զրուցում ձեզ հետ ձեր ժամանակներում: Ինչո՞ւ եմ Ես Իմ Աստվածային Օրհներգերով բուրավետ դարձնում այս սերնդին: Ինչո՞ւ եմ Ես դիմում ձեզ քնարերգության և բարեպաշտության միջոցով: Ինչո՞ւ եմ Ես ներքև իջել խավար տարածքներում, որ լինեմ ձեր մեջ: Ինչո՞ւ եմ Ես հեղում Իմ անհասանելի Լույսի պայծառությունը ձեր բոլորի վրա: Ինչո՞ւ եմ Ես այցելում դերեզմանոցները և բացում դերեզմանները՝ փնտրելով մեռածներին: Ինչո՞ւ եմ Ես կանչում ձեզ Աստվածային միության և հոգևոր ամուսնության:

Ես կասեմ ձեզ, թե ինչու: Նույնիսկ եթե դուք «վնասված» եք, ինչպես դու ասացիր, Վասո՛ւլա, դեռ վերանորոգման հույս կա: Ահա թե ինչի համար է այս ամենը: Ես գալիս եմ փրկելու մեղավորին: Եվ ինչպես Ես նախկինում ասել եմ՝ մարդու համար դա անհնարին է: Աստծո համար՝ ամեն ինչ հնարավոր է[2]: Այլ խոսքով, Ես անսահման հարուստ եմ Շնորհով, և Շնորհի միջոցով է, որ դուք կարող եք փրկվել: Ես չեմ

[1] Հիսուս մեջբերում արեց Սուրբ Գրքերից, Մատթ. 19:26
[2] Մատթ. 19:26

ցանկանում մեղավորի մահը: Ես եմ Հարությունը, և Ես ցանկանում եմ, որ դուք բոլորդ ապրեք Իմ Լույսի մեջ: Այդ պատճառով Ես իջնում եմ երկիր այս Օրհներգերի միջոցով, և ուրիշ միջոցներով նույնպես, որ հարություն տամ ձեզ, ձե՛զ, որ թույլ տվեցիք ինքներդ ձեզ ընկնել Շնորհից դերեզմանի մեջ և հիմա պառկած քայքայվում եք միլիոններով՝ մեղքի հետևանքով...

Իմ անսահման կարեկցանքով, Ես ասացի Երկնքի Գավիթներում. «Ես չեմ ցանկանում անվերջ և ընդմիշտ նայել մեղավորի մահվանը վշտանալով, այլ ավելի շուտ, ցանկանում եմ, որ նա վերադառնա դեպի Ինձ և ապրի»: Վերևից Ես տեսա մի զանգվածային գերեզմանոց, և քայքայվող մարմինների հոտը տարածվում էր ողջ տիեզերքով մեկ... Աշխարհը քայքայվելով, ծածկված է մթությամբ, կուլ գնալով խավարին: Ուրեմն մի՞թե Ես պետք է շարունակ տեսնեմ Իմ որդիներին և ժառանգներին ստրկացած և մեռնելիս: Դեռ որքա՞ն պետք է Ես տեսնեմ Իմ ընտանիքի անդամներին ցրված և բաժանված: Արդարև, ժամանակն է առանձնացնելու որոմը ցորենից: Այդ ժամանակ Ես երդվեցի և ասացի.

«Իմ Սուրբ Հոգու զորության միջոցով Ես նրանց Շնորհ կտամ՝ նրանց թաքնված անձը զորացնելու համար, որևէ մեկին, որ կարձագանքի Իմ շնորհի Կանչին, որպեսզի նրանք ապրեն Իմ մեջ, և Ես ապրեմ նրանց մեջ Հավատի միջոցով: Հետո, հաստատված սիրո մեջ և կառուցված սիրո վրա, նրանք վեր կբարձրացվեն, որ ստանան Իմ Էության ամբողջական լիությունը»:

Այսպիսով, Ես պատասխանեցի քո ակնարկությանը, Վասուլա: Իմ անսահման Ողորմությամբ, Ես ասացի. «Ես լույս կհեղեմ այս ոչ բանական արարչության վրա՝ լուսավորելու նրանց մտքերը և նորոգելու նրանց հոգևոր հեղաշրջման միջոցով: Ես Ինքս պիտի առաջնորդեմ նրանց դեպի անձի ու մտքի այդ նորոգմանը, առաջնորդելով յուրաքանչյուրին ճշմարտության առաքինությամբ և սրբությամբ: Իմ ցանկությունը՝ փրկելու յուրաքանչյուրին, այրվում է Իմ Սրտում: Ես չեմ շրջի Իմ Դեմքը, այլ կսովորեցնեմ յուրաքանչյուրին և կվերակրթեմ նրանց:

«Այո՛, արդարև, երկնքի և երկրի Տերը կբոցավառի այս երկիրն Իր Սիրով: Ես կգնամ և կայցելեմ Իմ անառակ որդիներին և նրանց ետ կկանչեմ դեպի Ինձ՝ հիշեցնելով նրանց Բարության այս օվկիանոսի մասին, հիշեցնելով նրանց, որ իրենց հույսը դնեն Ինձ վրա: Մեծ բարեգթությամբ Ես կսովորեցնեմ նրանց բարիք գործել և երբեք տեղիք չտալ չարին: Ապա քաղցրությամբ, Ես կվերակրթեմ նրանց, կրկին ասելով Իմ խոսքն իրենց բառապաշարով,[1] որ ավելի վստահորեն հասնեմ նրանց:

«Այլ խոսքով, Աստվածային Իմաստությունը կհարմարվի նրանց կարիքներին, որպեսզի Ինձ հասկանալի դարձնեմ նրանց այդքան աղքատացած հոգիներում, տալով նրանց փրկության Գիտությունը՝ իրենց մեղքերի ներման միջոցով: Եվ ինչպես ծագող Արև՝ Ես կպայծառացնեմ նրանց սրտերը: Ես կցանեմ նրանց Իմ Սրտում, ուր նրանք կծաղկեն և կհայտարարեն ուրախությամբ.

[1] Ես միաժամանակ լսեցի նաև «տերմիններով»:

«Որքա՜ն մեծ են
Քո նշանները, Տե՛ր,
որքա՜ն բազմաթիվ և զորեղ՝
Քո հրաշքները:
Դո՛ւ, Ամենակարող և
հրաշագործ Աստված,
որ փայլեցրեց Իր Դեմքն ինձ վրա
և շնորհ արեց ինձ,
զարդարելով իմ
ողջ հոգին Քեզնով,
թող Քո Անունը
գովաբանվի և պաշտվի»:

Եվ ես՝ ուրախությամբ կարձագանքեմ. «Այսուհետև, սիրելիս, ես կընակվեմ քո մեջ, իսկ դու կընակվես Իմ մեջ՝ քո Աստծո մեջ»:

«Հետո հրեշտակները կերգեն մեկ ձայնով. «Աստծո Տիրույթն[1] անչափ ընդարձակ է: Այդ Նա է մեր Աստվածը: Ուրիշ ոչ ոք չի կարող համեմատվել Նրա հետ: Նա առաջնորդում է Իր ժառանգներին դեպի Իր Տիրույթը աստվածների պես: Թագավորական իշխանների նման, փառքով ետ բերելով նրանց, Նա մեծ տոնախմբությամբ առաջնորդում է նրանց դեպի Իր Թագավորությունը: Դո՛ւ, ո՜վ Մեծանուն, անմրցելի ես: Թող ողջ երկիրը պատկառի և երկյուղի Նրանից, քանի որ Նա մեր Աստվածն է ու Թագավորը»:

«Այո՛, այս հոյակապ Օրհներգերը պիտի երգվեն այս սերնդին և նրան հաջորդող սերունդներին: Իմ Սիրտը, Դրանք երգելիս հուզվում է, քանի որ ես սիրով հիվանդ եմ ձեր հանդեպ...»:

[2]Իմ-Սրտի-զմուռս, գրիր Իմ Խոսքերը մինչ նայում ես Ինձ... Ես ասում եմ ձեզ, ճիշտ ինչպես Իմ Հայրն ասաց. Երբ ես խոսում եմ, ես չեմ օգտագործում խիստ ձևակերպումներ, դա Մեր խոսելու ձևը չէ, ոչ էլ Մենք սրբեր և մարտիրոսներ ենք պատրաստում այդ ձևով, այլ առաքինությունն ու բարեպաշտությունն են Մեր քաղցր զրույցը ձեզ հետ: Ես ուղղում եմ Իմ Օրհներգերն առանց սրի Իմ կողքին, այլ մեղրով՝ Լեզվիս տակ: Իմ զարմանահրաշ տեսքը ձեր խավար սերնդի մեջ նման է Արևի, որը երբեք մայր չի մտնում: Իմ Լույսն հավերժորեն դիտվում է Իմ Երկնային Գավթից ակնածանքով, բայց միևնույն ժամանակ նաև՝ ոգևորությամբ:

- Երանելի են նրանք, ովքեր մաքրագործում են իրենց և թույլ են տալիս իրենց կուչ գալ Իմ գրկում. նրանք իրենք լույս պիտի դառնան:

- Երանելի են նրանք, ովքեր Իմ Լույսի միջոցով Իմաստություն են ձեռք բերում. նրանք կստանան Գիտության շնորհը:

[1] Դա պետք է հասկացվի որպես «Սիրտ»:
[2] Այստեղ Տերը դադար տվեց, հետո կանչեց ինձ:

- Երանելի են նրանք, ովքեր դառնում են Բոցի բոցը և մտնում են անհասանելի Կրակի մեջ՝ դառնալով մեկ Նրա հետ, սակայն առանց սպառվելու: Ինչպիսի՜ այրող ցանկություններ կբոցավառեն այդ հոգիներին՝ ցանկանալով բոցավառել ողջ երկիրը Իմ Ուսուցումներով և Իմ Սիրո Օրենքով:

- Երանելի են նրանք, ովքեր հակառակ իրենց այդքան աղքատացած հոգու, ականջներ ունեն հիմա լսելու Ինձ, քանի որ նրանք նույնպես երկնային լույս պիտի ստանան իրենց մտքում՝ հետևելու Իմ կանոններին: Այո՛, երանելի են նրանք, ովքեր լսում են Իմ Խոսքը և գործադրում այն. անասելի Լույսը կպարուրի նրանց ամբողջապես, փոխակերպելով նրանց՝ դարձնելով հաղորդակից աստվածությանը: Ուրիշ ի՞նչ կերպ պիտի մտնեք Երկնքի Թագավորության մեջ: Դուք պետք է ինչպես հարկն է զգեստավորված լինեք և ճանաչվեք Հոր կողմից:

Երկնքի Արքայությունը կարելի է համեմատել այն արքայական խնջույքի հետ, որը մի թագավոր տվեց իր որդու հարսանիքի առիթով, ինչպես Իմ կողմից ձեզ տրված առակում[1]: Ես նույնն եմ, ով խոսում էր այն ժամանակ, որ խոսում է հիմա: Հարսանիքը պատրաստ էր, բայց նրանք, որոնք սրտանց հրավիրված էին, հետաքրքրված չէին գնալու: Փաստորեն նրանցից շատերը ծաղրեցին թագավորի հրավերը: Սա մի սովորական գայթակղություն է նրանց մոտ, ովքեր հավատացած են, թե աշխատում են Իմ Շահերի համար և կանչված են, բայց ժամանակ չունեն պատասխանելու Իմ Կանչին: Իրականում նրանց միտքը հեռու է Ինձնից: Նրանք կլանված են իրենց չնչին ու դատարկ բաներով, կամ իրենց անձնական գործերով: Սառնարյուն ու դանդաղկոտ շարժվելու, կամ կորցնելու իրենց հարմարավետությունը, նրանք բերում են ամեն տեսակի պատճառաբանություններ: Բոլոր դեպքերում մնում են թշվառները և հոգով աղքատները, և նրանք, ովքեր երբեք չեն ճանաչել Ինձ, կամ՝ լսել Իմ մասին: Այդպիսիներից է, որ Ես գովաբանություն և հարգանք պիտի ստանամ, քանի որ նրանք այն ընտրյալներն են, ովքեր չմերժեցին Իմ Կանչը, ինչպես առաջին հյուրերը, կամ այն մարդը, որ չկամությամբ ներս մտավ՝ առանց մտահոգվելու հագնվել, ինչպես որ հարկն է: Թագավորը հրամայեց Իր ծառաներին գնալ քաղաքի խաչմերուկները և հրավիրել բոլորին՝ չար թե բարի... Սրանք այն մարդիկ էին, որոնք Իմը չէին[2], և որոնց մասին Ես հիմա կասեմ. «Դուք Իմ ժողովուրդն եք, փոխանակ ասելու, որ «Դուք Իմ ժողովուրդը չեք, այլ ամեն կարգի հասարակությունից մերժվածները»: Ես նրանց կանվանեմ կենդանի Աստծո որդիներ և դուստրեր, Իմ Թագավորության ժառանգներ...

Տեսե՛ք, ձեր Թագավորը հիմա գալիս է ձեզ մոտ ձեր խավար օրերում Իր հրեշտակների թափորով՝ ձեզ հրավիրելու Իր հարսանյաց խնջույքին: Շատերն են կանչվում, բայց քչերն են ընտրվում... Ով որ առանց հարսանեկան զգեստի է, որ նեղություն չի քաշել հագնելու այն,

[1] Մատթ. 22:1-14
[2] Դրանք առաջինը հրավիրված հյուրերը չէին:

խանդավառության և հարգանքի պակասի պատճառով, չպիտի մտնի Երկնքի Թագավորությունը[1]:

Ես ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև Ինձ չհազնեք որպես ձեր Հարսանեկան զգեստ, Հայրը չի ճանաչի Ինձ ձեր մեջ[2]... «Ես շատերին տուն պիտի բերեմ օտար երկրներից: Ոչ մի պատ չպիտի կառուցվի նրանց ճանապարհը փակելու համար, քանի որ Իմ հրեշտակները՝ Իմ Շեմքի պահապանները, ճանապարհ պիտի բացեն նրանց համար՝ շաղ տալով շափյուղաներ[3], որ նրանց առաջնորդեն դեպի Ինձ...»:

Եվ դո՛ւք, դուք, որ աղաղակում եք Ինձ. «Գերեզմանափորները հավաքվում են ինձ համար, Տե՛ր, փրկիր ինձ: Ես ուզում եմ հրաժարվել մեղքից և Քեզ հետ լինել հիմա հարսանեկան խնջույքում», մի՛ հուսահատվեք, դուք նույնպես կփրկվեք, քանի որ կամենում եք փրկվել: Եվ Իմ հրեշտակները կհալածեն ու կհեռացնեն գերեզմանափորներին: Հետո Իմ հրեշտակները վեր կբարձրացնեն ձեզ վսեմությամբ՝ մի շլացուցիչ սպիտակ սավանով, և բռնելով այն չորս ծայրերից, կճախրեն երկնքում՝ տանելով ձեզ դեպի բարձունքներ, որպեսզի բուժեն ձեր վերքերը[4] երկնային բալասանով, զմուռսի յուղով, համեմունքներով ու բուժիչ օծանելիքներով[5]: Սա կարվի ձեզ մաքրելու և մաքրագործելու համար նախքան ձեզ Ինձ մոտ բերելը: Մաքրման և սրբման այդ ժամանակաշրջանը նախապատրաստական սովորույթ է հարսնացուի համար: Յուրաքանչյուր հարսնացու պետք է որոշակի ժամանակաշրջանում մաքրագործվի՝ մաքրվելու համար, նախքան Իմ հրեշտակները կբերեն ձեզ Իմ Հարսանեկան Սենյակը հանդիպելու ձեր Փեսայի հետ:

Իմ հրեշտակները կուղեկցեն ձեզ մինչև Շեմքը, և մինչ դուք կանգնած կլինեք Հարսանեկան Սենյակից դուրս, անցյալի մի թույլ հիշողություն կվերադառնա դեպի ձեզ՝ մի ժամանակ, երբ անցյալում դուք ապականված էիք և արհամարհական էիք Իմ հանդեպ, երբ անտարբեր էիք Իմ Կանչերի հանդեպ, սակայն՝ բոցավառված այս աշխարհի կրքերով: Այժմ, այս պահին, մի նոր կյանք է սպասում ձեզ: Հագնված ողջ ճոխությամբ, շողշողուն ձեր գեղեցկության մեջ, մաքրված և բուրումնավետ, դուք պատրաստ եք ոտք դնելու Հարսանեկան Սենյակ և հանդիպելու ձեր Թագավորին: Ուրախությամբ համակված և դողալով, դանդաղորեն դուք մոտենում եք Հարսանեկան անկողնուն: Ձեր հայացքը հանկարծ ընկնում է Իմ Աստվածության վրա: Եվ երբ տեսնեք Իմ Սուրբ Դեմքը, թեև դեռևս քողով ծածկված, ձեր հոգին կդառնայ լույս:

«Ո՜վ ամենաբաղձալի Թագավոր,
որքան օրհնյալ եմ ես՝

---

[1] Տերը ինձ հասկացրեց նաև, որ նա, ով ներս էր մտել առանց համապատասխան ձևով հագնվելու, նա է, ով չարախոսում է Հաղորդության Նշխարի մասին և փորձում է ազդել ուրիշների վրա, որ միանան իրեն...

[2] Այդ պահին Հիսուս խոսում էր այնպես, ասես մենակ լիներ, ուստի ես դա համարեցի որպես պատգամախոսություն:

[3] Ներկայացնում է առաքինությունները:

[4] Ներկայացնում է հանցանքներն ու մեղքը:

[5] Մաքրագործում՝ փոխաբերական իմաստով:

Քո Մեծությունից
շնորհ ստանալու
և կանչված լինելու
Գերագույն Իշխանության հետ
պսակվելու համար»,

Քո ձայնը կօրհներգի Ինձ:

«Արդարև երանելի են նրանք,
որոնց Դու կանչում ես
և պսակում Քեզ հետ,
որոնք գտնում են Երկինքը
Քո բոցավառ գրկում:
Երանելի են նրանք,
ովքեր շոյում են Քո Սուրբ Դեմքը
և հրճվում Քո Սրտի մոտ»:

Այս խոսքերով Թագավորը, Նա, ով գերազանցում է բոլոր հրեշտակների գեղեցկությանը, Իր անմահ շքեղությամբ, հանկարծ տեսնում է Ինքն Իրեն քո մեջ. մի սարսափազդու տեսարան: Բոցավառված Աստվածային Սիրով, Նա մոտենում է Իր ապագա հարսնացուին, հրավիրելով նրան Իր գիրկը և ասում.

«Ես առաջարկում եմ քեզ, սիրելիս,
որպես երաշխիք
մեր խորհրդավոր միության,
Սուրբ Հոգու Օծումը»:

Հետո թեքվելով դեպի քեզ, մոտեցնելով քեզ Իր Սրտին, Նա կդնի Այս[1] Աստվածային Արքայական Պսակը քո գլխին՝ Իր Բերանի անասելի համբույրով...

Եվ Նա ծածկեց ինձ
անմահության պայծառությամբ...

Հիմա դու կդառնաս Իմ մի մասը և մեկ Ինձ հետ՝ զարդարելով քո յուրաքանչյուր անդամը Աստվածայնությամբ և Լույսով, անեղծությամբ ու սրբությամբ, որպեսզի վայել լինես Ինձ՝ քո Աստծուն և Թագավորին:

Հանկարծ անցյալի աշխարհը կարծես մեղմորեն կանհետանա, կհեռանա քեզնից իր ամբողջ բովանդակությամբ, ընդմիշտ: Եվ մի րոպեում հանդարտությունը՝ *(անվրդովությունը)* այդ հրեշտակային առաքինությունը, կծաղկի քո սրտում, ինչպես նաև մի հոգևոր զգայականություն, թե ինչի նման կլինի մոտ լինել Երանական Տեսիլքին, դա անմիջապես տեղի կունենա: Այդ պահից սկսած հրեշտակային առաքինություններն իրենց բազմազանությամբ կլինեն քո թագը, քանի

[1] Օծումը

որ դրանք են, ինչ ես պիտի առաջարկեմ քեզ որպես ընծա՝ կատարելության հասնելու համար: Բացարձակ Աստված այնուհետև կմիահյուսվի քեզ հետ Հարսանեկան Սենյակի նուրբ բուրմունքների մեջ, և կլինի մեկ քեզ հետ, ամբողջությամբ պարուրելով քեզ Իր Լույսով, մինչև դու ինքդ դառնաս լույս:

Պատված Իմ Սուրբ Հոգով, ձեր բերանը կլինի Իմ Բերանը, ձեր անդամները՝ Իմ Անդամները, ձեր աչքերը՝ Իմ Աչքերը, ձեր խոսքերը կլինեն Իմ Խոսքերը: Ձեր գործերն ու մտքերը բոլորը կլինեն աստվածային: Այսուհետև, ձեր ողջ լուսավոր էությունը և Հոգին կկենդանացվեն Իմ կողմից: Սա կլինի ձեր նոր կյանքի սկիզբը Իմ մեջ... Ես կտիրապետեմ ձեզ, իսկ դուք՝ ձեր հերթին, կտիրապետեք Ինձ: Ձեր Փեսայի հանդեպ ցանկությունը երբեք չի բավարարվի, չնայած դուք հագեցած կլինեք Աստվածային Սիրով, սակայն ձեր ծարավը կշարունակի աճել... Ես կլինեմ, սիրելի՛ս, քո խորհրդավոր Բաժակը, քո աստվածային Պատարագը, քո բոցը քո սրտում, քո պայծառ օժիտը, քո փառահեղ Արևը, Քո Սուրբ Հաղորդությունը, քո անմահական կերակուրը: Ես կլինեմ քո Սաղմոսի քո բանաստեղծությունը, արևի ոսկե փայլը քո աչքերում, քո պսակադրության իրական ու շոշափելի զգեստը, քո հենարանն ու քո հանգիստը: Ես կլինեմ քո մտերմիկ քաղցր գրկախառնությունը և քո հոգու անուշաբույր բուրմունքը:

Հիմա, երբ դու Ինձ մոտ ես, դու կարող ես ետ տանել քողը Իմ Դեմքից, որ դիտես Իմ Աստվածությունը: Որքան ավելի շատ տեսնես Ինձ, այնքան ավելի կաճի քո սերը: Քո սիրտը՝ պայթելու աստիճան կցանկանա Ինձ սիրել նույնիսկ ավելի: Քո սերն Իմ հանդեպ կդառնա կիրք: Կիրք, որը ես առաջարկում էի քեզ քո ուսուցման օրերին և մեր նշանադրության ժամանակ[1]: Սուրբ Հոգու կողմից ներարկված առաքինությունները, նվաճելով քո սիրտը, որ ապրես միայն Ինձ համար, կշարունակեն ավելացնել քո սերը, մինչև այն քո մեջ առաջացնի մի անբուժելի վերք... մեր կատարյալ և անքակտելի հոգևոր ամուսնության խորհրդանիշը, մեր միության խորհրդանիշը, քո երանության խորհրդանիշը, մեր կատարյալ Աստվածային միության խորհրդանիշը, խորհրդանիշը՝ որ դու ճաշակել ես Կյանքը:

Ո՜հ սարսափելի խորհուրդ,
Փրկության Խորհուրդ,
Բոցավառ Նետ իմ սրտի:

Տեսնել Աստվածայինը,
նշանակում է ավելի շատ ցանկանալ
և առավել քան երբևէ
ծարավի լինել Աստվածությանը:
Ինչպես ցող երկնքից,
շողացնելով իր մանրիկ կաթիլները
շաղ տված ադամանդների պես,
մեր հոգին փայլփլում է
Քո Պայծառ Լույսի մեջ,

[1] 1987թվի մայիսի 23-ի պատգամը, երբ դեռ Հիսուս սովորեցնում էր Ինձ:

Պայծառ Լույսի՝
որն անտեսանելի է աչքի համար,
անշոշափելի և անհասկանալի,
բայց շատ ճշմարիտ Իր էությամբ,
որ Քեզ է միավորում արարածներին՝
կիսելու և հաղորդակից դարձնելու
Քո Աստվածայնությանը:
Ես փառք և պատիվ եմ տալիս Քեզ:

Այն ժամանակից ի վեր,
երբ Դու մարմնացար,
աստվածացման դարպասները
լայն բացվեցին մեզ համար:

Ես ապրում եմ ուրախության մեջ,
չնայած իմ վերքին: Այո՛,
Քո Սուրբ Դեմքից քողը վերցնելուց
և Քեզ նայելուց հետո
Քո Գեղեցկությունը դարձավ
իմ վերքն ու իմ երկընտրանքը:

Քո Խորհուրդների զորությունը
անզուգական է,
և բառերը դառնում են անզոր,
երբ փորձում ես նկարագրել Դրանք:
Բառերն ու մտորումները
դառնում են մոխիր, որ
քշվում են ամենաթեթև զեփյուռից...

Ի՞նչ է նշանակում
ճաշակած լինել Կյանքը:
Ապրել Աստծո մեջ և Աստծո հետ
նշանակում է
ճաշակած լինել Կյանքը:

Ինչպիսի աստվածային գոհարներ ես
Դու հեղում Քո հարսի վրա, Տե՛ր իմ,
և հրճվում ես դրանք տալուց:
Եվ որքան ես Դու ցանկանում,
որ բոլորն իմանան
Քո նոր նվաճման մասին:

Դու մի անգամ ասացիր,
Աստվա՛ծ իմ.
«Մի՛ վախեցեք նրանցից,
ովքեր սպանում են մարմինը,
բայց չեն կարող սպանել հոգին:
Ավելի շուտ վախեցեք նրանից,
ով կարող է ոչնչացնել

մարմինն ու հոգին դժոխքում»:
Այո՛, ինչո՞ւ վախենալ,
եթե դառնում ենք
Քո սեփականությունը
և Քո տիրապետությունը:
Եթե այս աստվածային
հոգևոր ամուսնությամբ
Դու տիրապետում ես հոգուն, և
հոգին տիրապետում է Քեզ, Տե՛ր իմ,
այլևս ո՞վ կհամարձակվի մոտ գալ՝
խզելու այդ միությունը:
Նույնիսկ ողջ դժոխքը միասին
վերցրած՝ չի կարող:

Իմ ուրախությունը հիմա
Աստծուն մոտ լինելու մեջ է,
և ես ուրիշ ոչ մեկին
չեմ նայում երկնքում,
այլ Նրան, ում մեջ ես ապրում եմ,
և ով բնակվում է իմ մեջ...

Ինձ միացած յուրաքանչյուր ոք կշրջապատվի զանազան առաքինություններով: Ես կցանկապատեմ Իմ հրաշալի այգին դրանցով, և Ես կկնքեմ այն հրեշտակային առաքինությամբ՝ հանդարտությամբ, որպեսզի կատարելության հասնի: Սուրբը, որ գերազանցում է երկնքի ու երկրի սահմանները, կարող է օգնել ձեզ՝ ձեռք բերելու այդպիսի ազատություն Իր Շնորհի միջոցով՝ ազատ մարմնական զգացումներից ու գայթակղություններից, մեռցնելով դրանց, ոչնչացնելով այդ չար հակումները՝ դրանք փոխարինելով բուրավետ լույսով: Հենց որ Ինձ միանաք, Ես կտամ ձեզ մարմնի ճշմարիտ ազատություն, և կբյուրեղացնեմ ձեր հոգին մի այնպիսի անասելի ձևով, որ դուք կերևաք ինչպես մի ադամանդ: Ես, որ Բացարձակն եմ, ձեր մեջ ցանկություն կներարկեմ, որ պաշտեք Ինձ, ցանկություն մշտապես Կյանքի մեջ լինելու, բուրավետ լույսով զգեստավորված լինելու, ցանկություն, որ Ես շարունակեմ փչել ձեզ վրա Իմ բուրմունքը՝ Իմ Բոցը ձեր մեջ կենդանի պահելու համար: Հիմա, սիրելիս, երբ դու Ինձ մոտ ես, շրջապատված Իմ պայծառությամբ, ծածկելով քեզ Իմ Փառքով, Ես պատվաստել եմ քեզ Ինձ վրա:

Տե՛ր, Դու, որ Սեր ես,
երբեք չդադարեցիր զարմացնել ինձ
Քո կատարած ընտրությամբ.
վստահելու այսպիսի ճոխություն
և հոյակապ Օրհներգեր նրան,
ով հաճախ շփոթում է
իր ձախ ձեռքը աջից:

Ինչպե՞ս կարող էիր Դու տալ ինձ

այսպիսի Թեմաներ:
Բայց ինչպե՞ս կարող եմ ուրանալ,
որ Քո լիառատ Սիրով
Դու սովորեցրիր և ինձ
գիտելիք տվեցիր ինձ անիմանալի
բոլոր Թեմաների մասին:

Դու պատվաստել ես ինձ Քեզ վրա,
կերպավորվելու մի
անհամապատասխան արարածի մեջ[1],
այդ արարածին կատարելագործելու
հավաստիացումով:
Դիակը կյանք պիտի առնի:
Հետո, այդ արարածը
չի կարող չարհամարհել աշխարհիկ
բոլոր հարստությունները,
քանի որ նա[2] հայտնագործած կլինի
անասելի Թագավորությունը
և Նրան, ով
զգեստավորված է Փառքով:

Նա հայտնաբերել է
հրաշքների Հրաշքը,
ուստի թող Քո Խոսքերն ընկնեն
ինձ վրա ինչպես ցող:
Միահյուսված Քեզ հետ՝
ես փթթում եմ ծաղկի պես, և
իմ ներսում եղած ամեն չորություն
վերածվում է մի պարտեզի:

Բուրիր հիմա քո Փեսայի համար, և Ես կհարստացնեմ քո հոգին ողորմածությամբ: Թող քո սերն ավելանա օրեցօր: Թող բոլորն իմանան այս հիմնական ճշմարտությունը.

«Տեր Աստված գիտի նրանց,
ովքեր Իր Յուրայիններն են, և
հետևաբար թույլ է տալիս նրանց,
որ մոտենան Իրեն»:

Սրանք նրանք են, որոնց շնորհ է արվել հասնելու աստվածացման՝ կիսելով Իմ առագաստի անկողինը՝ Ինձ հետ աստվածային միությամբ: Սրանք նրանք են, ովքեր սահմանված են լույս դառնալու՝ որովհետև իրենց կյանքը Ինձ տվեցին և թույլ տվեցին, որ Ես ամբողջապես յուրացնեմ իրենց Իմ մեջ: Այս Մեծ Փեսան, որի Սերը քո վերքի պատճառն է, և քո հոգու հափշտակության պատճառը, խնդրում է քեզ քաղցրությամբ կրել Սիրո այդ վերքը, քանի որ դա կավելացնի քո

[1] Ես
[2] Հոգին

եռանդը՝ հիմա նույնիսկ էլ ավելի՝ զգուշացնելու քո սրտին գայթակղություններին մեջ ընկնելուց:

Խորան, քո կարծիքները հրապուրում են Ինձ, քո բուռն համարձակությունը՝ բռնելու և ամուր պահելու Ինձ, թույլ չտալով որ գնամ, որպեսզի չունչ փչեմ Իմ այգու վրա և շուրջը տարածեմ Իմ քաղցր բուրմունքը, Ինձ պատճառ է տալիս ընդարձակելու քո վերքը: Դա այն պատճառո՞վ է, որ դու մեղր ու կաթ ես հայտնաբերել Իմ Լեզվի տակ: Թե՞ Իմ Հաղուստի բույրն է պատճառը: Կամ, գուցե դա Իմ Արքայական իշխանությունն ու զորությո՞ւնն է, որը միացնում է արարածին Արարչի հետ: Գուցե դա Իմ պայծառ մաքուր Լո՞ւյսն է, որ քեզ բերում է դեպի Ինձ՝ տենչալով բռնել Ինձ և տիրապետել Ինձ:

Քո Ամբողջությունը,
իմ բուռն սիրո ուժն է:
Ուրիշ ոչ մի հարմար ձևով
հնարավոր չէ նկարագրել, թե ինչու:

Դու անտեսանելի Աստված ես,
չնայած դրան, ես կարող եմ
գրավել Քեզ և տիրապետել Քեզ
առանց վտանգվելու
կրակով այրվելուց, քանի որ
Դու նաև Աստվածային Կրակ ես:

Հիմա, երբ ես բռնել եմ Քեզ
և ամուր պահում եմ Քեզ,
վստահաբար չեմ թույլ տա,
որ Դու գնաս: Ես թույլ չեմ տա,
որ Դու բաժանվես ինձնից,
ոչ էլ թույլ կտամ, որ Դու լքես ինձ,
որ միայնակ մնամ այս կյանքում,
Ո՛հ, ո՛չ, երբե՛ք...

Թեև գիտեմ, որ Դու
կարող ես հեռացնել և թուլացնել
Քո Լույսը, ես պիտի
շարունակեմ զրուցել Քեզ հետ:

Ես պիտի զրուցեմ Քեզ հետ
աստղերի և լուսնի
աղոտ լույսի ներքո:
Բայց քանի որ գիշերը կարճ է, իսկ
արշալույսն ամեն դեպքում գալու է,
ես նորից պիտի զրուցեմ
Արևի ճառագայթների
և պայծառության ներքո:

Քո միջից ես հավաքում եմ
Իմ զմուռսը, Քեզնից եմ ես սնվում,

մեղրով ու կաթով, որպես ըմպելիք:

Մեծ ցանկություն ունեցիր, սիրելիս, տիրապետելու Ինձ: Իմ պարգևները փառավոր են յուրաքանչյուրի համար, որոնց հետ ես պսակված եմ: Ես բարեհաճում եմ Իմ Սիրտը միացնել որևէ մեկին, ով որ ճշմարտապես ցանկանում է այդ, և սիրալիր կերպով հրավիրում եմ նրանց Ինձ հետ աստվածային միության: Իմ Ներկայությունն անցնում է ամեն հասկացողության սահմաններից այն կողմ, նույնիսկ երբ դու ասում ես, Իմ Վասուլա, որ Ես անտեսանելի եմ, բայց Ես միանգամայն բնակվում եմ քո ներսում: Ես պիտի շարունակեմ հրապուրել քո սիրտը, որպեսզի շարունակեմ ստանալ ամենից ընտիր բուրմունքները Իմ սիրելիից, և ինչպես Հայրը մի անգամ ասաց քեզ, Ես ասում եմ. «Ինչպես մեկը, որ ձեռքը դեպի վեր է պարզել՝ բռնելով խնկով լի մի խնկաման, Ես պիտի բարձրացնեմ քո սիրտը, դեպի վեր պահելով այն, թողնելով, որ այդ ամենից հազվագյուտ օծանելիքները դուրս գան՝ բուրավետ դարձնելու համար Ինձ և անուշահոտ դարձնելու երկիրը: Քո քաղցր բույրը կլինի ամբողջապես Իմ շուրջը, հրճվանք պատճառելով Ինձ, ողջ երկնքի հետ միասին: Իմ ուրախությունն այնքան մեծ է լինելու, որ այն պիտի ընդունվի որպես հարսանեկան պար...»:

Եվ դու, որ մինչև հիմա կարդում ես այս Օրհներգը, նույնպես ցանկացիր փնտրել Ինձ և քողազերծել Իմ Սուրբ Դեմքը Ամուսնական Սենյակում: Քողազերծի՛ր Իմ Սուրբ Դեմքը, և սովորիր տեսնել Իմ Գեղեցկությունը և Իմ գրավչությունը: Հետո, ասես հմայված, դու նույնպես կգրկես Ինձ՝ մինչ կանհետանաս Իմ Լույսի մեջ: Ես պիտի փայլեմ քո բոլոր անդամներում, և ով էլ որ տեսնի քեզ, չի կարողանա տարբերել քո լույսը Իմ Լույսից... Փնտրի՛ր Ինձ խոր գիտակցությամբ, ծարավի՛ր Սիրուն, հետապնդի՛ր Ինձ, հասի՛ր Ինձ... Հանուն քեզ Ես դանդաղեցնում եմ Իմ քայլը՝ թույլ տալով քեզ, որ գտնես Ինձ: Մի՞թե դու Կյանք չես ցանկանում: Իմ Ներկայությունը քո մեջ Կյանք է, ուստի մտիր Կյանքի մեջ: Ես այն Դարպասն եմ, որ տանում է դեպի Հավիտենական Կյանք:

Ես քո Խորհրդավոր Բաժակն եմ, որ երբ խմես Դրանից, կյանք տվող աղբյուր կհորդի քո ներսում: Ինձ հետ անցկացված կյանքը իսկապես մի կյանք է՝ անցկացված Աստվածայինի մասին ներհայեցության մեջ, ստանալով անասելի օրհնություններ, որոնք դուրս են մտքի և հասկացողության սահմաններից: Այդ ժամանակ, այս երկրի ուրախությունները պարզապես կկորցնեն իրենց արժեքը, քանի որ Փեսան դրա փոխարեն կհագեցնի քեզ Կյանքի ջրով՝ վեր բարձրացնելով քեզ դեպի երրորդ երկինքը: Դրախտը, Ինձ՝ ձեր Աստծո հետ միահյուսվելն է մեր հոգևոր ամուսնության մեջ, մեկ դառնալով Աստվածության հետ: Ընկղմված Իմ մեջ, դու կունենաս միայն մեկ ցանկություն, և դա կլինի՝ ինքդ քեզ անդադար Իմ Կամքին հանձնելը, մինչ Ես Ինքս Ինձ անդադար կտամ Իմ սիրելիին: Սրանք Իմ Քաղցր Օրհներգերն են, որոնք Ես հիմա երգեցի ձեր բոլորի համար, Իմ քաղցր Ուսմունքը, Իմ Երկխոսությունը, որը պետք է լսի յուրաքանչյուր հոգի:

ΙΧΘΥΣ

(Սուրբ Հոգին է խոսում)

Խաղաղություն քեզ: Տե՛ս, Փեսան թեքվում է դեպի քեզ՝ երգելու Իր Օրհներգը նաև քեզ համար և Կյանքի խոսքեր ասելու: Ես Ճշմարտության Հոգին եմ, որ բխում է Հորից և ուղարկված է Որդու՝ Հիսուս Քրիստոսի կողմից: Մենք մեկ Էություն ենք և մեկ Զորություն և մեկ Գիտություն, և քանի որ Մենք մեկ Աստված ենք միայն, մենք խոսում ենք և գիտություն տալիս միևնույն ձևով և միևնույն արտահայտություններով: Այս մեծ գիտությունը փոխանցվում է քեզ՝ լցված սիրով:

Ի՞նչ է Հավիտենական Կյանքը: Հավիտենական Կյանքը Մեզ ճանաչելն է Մեր Երրորդության Փառքի մեջ: Ուստի, եթե տատանվում ես, չիմանալով, թե ես ինչ նկատի ունեմ, ես առաջարկում եմ քեզ Իմ Ձեռքը, և երբ դու բռնես այն, ես քեզ Կյանք կառաջարկեմ Մեր մեջ Շնորհի միջոցով: Ստացիր Իմ թանկագին օգնությունը, քանի որ դա կնախապատրաստի քեզ պսակվելու Ինձ հետ և ընդմիշտ լինելու Իմ Աստվածային Ներկայության մեջ: Այդ ժամանակ ես կլինեմ աննկարագրելի Երկրորդ Գալուստը (Parousia) քո սրտում, որովհետև ես քո մեջ գտնվող ներքին զորությունն եմ:

Ես ասացի, որ ես քեզ Կյանք կտամ Շնորհի միջոցով: Ի՞նչ է Շնորհը: Այն նման է մի շողացող լույսի, որ ցույց է տալիս քեզ, ինչպես մասնակից լինել Աստվածային Կյանքին: Մեր Երրորդության Սրբությունն ու Ողորմությունը բուրումնավետ է դարձնում ողջ տիեզերքը: Իմ ամենաքաղցր Օրհներգը պիտի երգվի քեզ, որպեսզի բարձրացնի քո հոգին ու զարդարի այն հարսանեկան հագուստով: Սա է Մեր ազնիվ ու բարի նպատակը. որ ինքդ քեզ և քո կամքը տաս Մեզ, և որ Մենք տանք Ինքներս քեզ, հնարավորություն տալով, որ ճանաչես Մեզ և սիրես Մեզ այնպես, ինչպես Մենք սիրում ենք Ինքներս Մեզ: Այդ դեպքում, և միայն այդ դեպքում, քո հոգին կպտտվի երկնային իրականությունների և հրեշտակային առաքինությունների շուրջ...

Ես իջնում եմ այս մեծաշուք ձևով, Վասուլա, այն ձևով, որ դու տեսար Ինձ, գերիշխանությամբ և լի շնորհով[1], արքայական շքեղությամբ և աննկարագրելի գեղեցկությամբ՝ քեզ Ինձ միացնելու համար:

Ես տեսա մեկին՝
մարդու Որդու նման.
մի ահեղ կերպարանք՝
այնքան կատարյալ շնորհով,
որ միայն Աստված
կարող է ունենալ այդ շնորհը:

Նրա կատարելապես
գեղեցիկ շարժումը՝
Պալատի աստիճաններից իջնելիս,
ինձ ակնածանքի մեջ թողեցին:
Ես գիտեի, որ դա կարող էր միայն

[1] Հանկարծ մի թեթևակի տեսիլք տրվեց ինձ շնորհի միջոցով:

Պալատ լինել՝ իր գեղեցկության
և շլացուցիչ տեսքի պատճառով:

Այս փառավոր աստվածային էակը
թվում է հագել էր
մի ծանր հագուստ,
որը ձգվում էր մինչև Նրա Ոտքերը:
Ինչպես նախկինում մի անգամ
ես տեսա Հորը,
այս աստվածային էակի հագուստը,
որին ես գիտեի, որ Սուրբ Հոգին էր,
հագել էր Հոր
գրեթե նույն հագուստը,
որովհետև այն փայլում էր այնպես,
ասես ծածկված լիներ
թանկարժեք քարերով: Սակայն
Հոր հագուստի գույնը անորոշ էր,
իսկ այս մեկը ադամանդների պես էր,
որոնց վրա լույս են գցել:
Նրա չափազանց երկար հագուստի
մի մասն իջնում էր մասամբ
ներքևի աստիճանի վրա՝
ձախ կողմից,
քանի որ ձախ Ոտքն արդեն
ներքևի աստիճանի վրա էր:

Անհնար է նկարագրել Աստծուն,
միշտ էլ բառերը չեն բավարարի...
Աստծուն հետազոտել
ինքնին խենթություն է:
Զառանցանք կլինի
արտահայտվել Նրա մասին, ով
Ամեն բանի գերագույն Աղբուրն է:
Մարդ ինչպե՞ս կարող է
պատկերացում տալ
այսպիսի աննկարագրելի
շքեղությամբ մի տեսիլքի մասին,
Առանց շնորհի և հենց Իր՝
Աստծո կողմից տրված
լրիվ հայտնության,
Ինչ որ անտեսանելի է աչքի համար,
միշտ էլ կմնա
անտեսանելի և թաքցված:

Բայց այսօր, մեր օրերում,
Աստծուն այնքան հաճելի է մեզ տալ
բոլոր վստահեցումները
Սուրբ Հոգու հզոր
ներկայության մասին,

ինչպես անցյալում Նա տվեց
իր աշակերտներին և առաքյալներին:

Շնորհի Սուրբ Հոգին մեզ ցույց կտա
առաքինությունների ուղին,
որն առաջնորդում է հոգիներին
Փեսայի հետ
Խորհրդավոր միության:

Ես, սիրելիս, սրբության Հոգին եմ, որ տալիս եմ ձեզանից յուրաքանչյուրին տարբեր պարգևներ, որոնք երկնային գոհարներ են, այն դանձերը, որոնք ձրիաբար բաշխվում են սրբագործելու համար Իմ տաճարները: Ամեն ինչ, որ բաշխվում է, բաշխվում է շնորհով՝ Իմ միջոցով: Ես չեմ իջել[1] ձեզանից որևէ մեկին պատժելու համար, այլ Ես գալիս եմ այս հոյակապ Օրհներգի միջոցով պսակվելու ձեզ հետ, և ինչպես փեսան է թանկարժեք զարդեր շռայլում իր հարսին, Ես առաջարկում եմ զարդարել ձեզ Իմ Աստվածային պարգևներով մեր պսակադրության արարողության համար:

Ես չեմ հուզվում նրանց պերճախոսությունից, կամ ազդվում դրանց արտահայտություններից, բայց Ես հրճվում եմ զղջացող սրտում: Ուստի դուք, որ փնտրում եք Ինձ, եկեք և սովորեք: Եթե չփորձեք Ինձ[2], այլ գաք Ինձ մոտ սրտի պարզությամբ, այդ դեպքում Ես, ինչպես մի գետ, կհոսեմ ձեր մեջ: Ես կսովորեցնեմ ձեզ, թե ինչպես մտերմություն մշակեք Մեզ հետ: Քաղցրությամբ և քնքշությամբ Ես կուսուցանեմ ձեզ՝ կրթելով ձեզ, որ քայլեք Մեզ հետ և խոնարհ լինեք Իմ լույսերի և շարժումների հանդեպ: Եվ ինչպես դու տեսար Ինձ, Վասուլա, տեսիլքում, Իմ Գերիշխանությունը աննկարագրելի է, և Իմ Շքեղությունն անցնում է մարդկային հասկացողության սահմաններից այն կողմ:

Ա՜խ, Վասուլա, թույլ մի տուր նորից լսեմ քեզանից. «ի՞նչ նպատակի եմ ես ծառայում...»[3]: Ես, Իմ Շնչով կենդանացրել եմ քո անկենդան անդամները: Շարունակիր բարի գործեր կատարել ամեն ձևով և մի՛ վախեցիր: Մենք խնդրեցինք քեզ, որ քո կյանքը նվիրես ուրիշներին, և դու այդպես էլ արեցիր: Ուրախությամբ Մենք ուսուցանել և կրթել ենք քեզ, որպեսզի դու Մեզ ընդունես որպես քո կյանքի սկզբունքը, և այդ ժամանակից ի վեր Մենք ցույց ենք տվել քեզ, որ դու այլևս ինքդ քեզ չես պատկանում, այլ Նրան, ով զգեստավորել է քեզ Իր Լույսով, շարժելով քեզ Իմ մեջ, ներշնչելով Իմ մեջ:

Երբ էլ որ կանչել ես Ինձ. «Ես սայթաքում եմ», մի՞թե Ես չեմ օգնել քեզ, մի՞թե Ես չեմ սփոփել քեզ: Ես ասել եմ, որ երբ դու հաստատվես Յահվեի Տան մեջ, դու կծաղկես Նրա Գավիթներում, և ազատ ներս ու դուրս կանես Մեր Գավիթներում, և չնայած քո մարմինը կշարժվի մարդկանց մեջ՝ քո սիրտն ու միտքը հափշտակված կլինեն երկնքի

[1] Ինչպես ես տեսել էի տեսիլքում:
[2] Իմաստ. 1:2
[3] Երբեմն, և դուցե հաճախ, ես մտածում եմ, որ Տիրոջ համար իմ կատարած աշխատանքը չի բավարարում Տիրոջ պահանջները:

լուսավոր լույսով: Եթե որևէ մեկը [1], Վասո՛ւլա, զարմանք ու թերահավատություն ցույց տա քո հանդեպ և կկոցի աչքերն ու հարցնի քեզ. «Ի՞նչ նկատի ունես, երբ ասում ես, թե մենք նույնպես կարող ենք տիրապետել Աստծուն: Դա հնարավոր չէ անել, ոչ էլ ասել», Ես ասում եմ քեզ. մինչև մարդ չզգա Աստվածային Ներկայությունն իր սրտում, Իմ ներկայության պայծառությունը և Լուսավոր Լույսն իր ներսում, նա երբեք չի իմանա, ոչ էլ կհասկանա այն, ինչ կնքված և թաքնված է, քանի որ Իմ միջոցով է, որ այդ խորհուրդները բացահայտվում են: Իմաստության դուռը կբացվի միայն զղջացող ու ապաշխարող սրտի համար, և նրանց համար, ովքեր չնայած իրենց աղքատացած հոգուն, կկատարեն Պատվիրանները: Ահա այդ հոգիների մեջ է, որ Ես Ինքս Ինձ կհայտնեմ:

Տե՛ր իմ, այնքան շնորհալի,
եզակի՝ Քո գեղեցկությամբ,
բազմաբնույթ և նուրբ,
անչափ գործուն նրանց մեջ,
ովքեր տիրապետում, կամ
կանչում են Քեզ,

սրաթափանց և անապական,
ավելի փառահեղ, քան արևը,
գերազանցելով բոլոր
համաստեղությունները
միասին վերցրած,

անհամեմատելի
որևէ լույսի հետ,
Դու տարածում ես Քո բուրմունքը
ողջ տիրեղերքի շուրջը:

Քո ջերմության և Սիրո մեջ,
հրաշքներն ու նշանները
Քո բազմաթիվ
թանկարժեք պարգևներից մեկն է,
տրված՝ ամրապնդելու համար
Քո տաճարները,
զարդարելով Քո հարսերին,
որպեսզի այս սերունդը,
որը քեզ ավելի սիրելի է,
քան գոյություն ունեցող որևէ բան,
իրենց մեջ ստանան Թագավորությունը,
որը հենց Ինքը Քրիստոսն է:

Ով էլ որ նայի Քեզ,

[1] Մի քահանա ցնցվել էր, երբ մեզնից լսեց, թե Աստված մեզ ասել է, որ ոչ միայն Ինքը կարող է տիրապետել մեզ, այլև Նա ցանկանում է, որ մենք նույնպես տիրապետենք Նրան:

ո՛վ Սուրբ Փեսա,
վստահաբար կհմայվի և կգրավվի
Քո անզուգական
գեղեցկությամբ և շնորհով:

Ճանաչել և մտերմորեն հանդիպել
Գեղեցկության Հեղինակին,
Ամենի Հեղինակին,
արդեն նշանակում է լինել Նրա մեջ:

Ես խնդրում եմ Քեզ՝
մեր հանդեպ ունեցած
Քո մեծ Սիրով,
որ մոտենաս բոլոր նրանց,
ովքեր դեռևս չեն հանդիպել Քեզ,
որպեսզի նրանք օտար չլինեն
Քո Աստվածայնությունից:
Շնորհ արա հայտնվել
մեզնից յուրաքանչյուրի մեջ,
որպեսզի,
երբ Քո Լույսի մեջ լինենք,
մենք պարուրվենք
և մեկ լինենք Քո Լույսի մեջ...

Իմ մտադրությունը այս հոյակապ Օրհներգի միջոցով, Իմ պայծառ Լույսի մեջ բոլորին բերելն է, և Քրիստոսի լիությունը ստանալը: Դու սովորել ես, որ ազատությունը Իմ մեջ է գտնվում: Ազատություն՝ մարմնից, որպեսզի աստվածացվեք և կոչվեք Ամենաբարձրյալի ուստրեր և դուստրեր: Ազատություն Իմ մեջ, ով պիտի բարձրացնի ձեզ երկնքի ուրախությունների ու հրճվանքի մեջ՝ ստանալու այն երանությունը, որը ձեզ համար է, ձեր ստեղծումից ի վեր և բոլոր ժամանակներում:

Իմ Օրհներգը ձեզ, սերունդ, երգվելու է ձեզ համար, որպեսզի դուք խմեք այն և արբեցնեք ձեր հոգին, որովհետև Իմ Խոսքերը կլինեն գինուց էլ քաղցր: Եվ դուք, ձեր հերթին, արբած կգովաբանեք Իմ Սերը գինուց առավել, հայտարարելով Իմ հրեշտակներին.

«Որքա՜ն ճիշտ է Նրան սիրելը: Նրա տեսքը անզուգական է, Նրա զրույցը ինքնին քաղցրություն է: Նրա Շուրթերը խոնավ են շնորհով: Վսեմությամբ ու շքեղությամբ է Նա արտասանում Իր Խոսքը՝ կենդանացնելով իմ սիրտն Իր վսեմ թեմայով: Բոլոր աստվածային էակներից[1] Նա է ամենացանկալին, ամենից գեղեցիկը: Եվ հիմա, ինչպես մի գետ, որ շտապում է ոռոգելու հողը, որին ետ էր պահում մի պատ[2], Ես ցանկանում եմ, որ Նա հոսի իմ մեջ և ոռոգի իմ ծարավը: Ես ինձ դեռևս համարում եմ հոգևորապես մեռած, և այդ մահվամբ ես ինձ հետ գերեզման եմ տարել ամեն մի առաքինություն, որն անարժեք էր իմ

[1] հրեշտակային զորքերից
[2] ամբարտակ

ներսում, քանի որ Քո Լույսն իմ ներսում չէր: Ո՛վ մեր հոգու Ճրագ, արի՛: Ետ բեր ինձ դեպի Կյանք, և ես կգովաբանեմ Քեզ գիշեր ու ցերեկ»:

Եվ ես կպատասխանեմ քո աղերսին և կհիշեցնեմ քեզ, որ միսն ու արյունը չեն կարող ժառանգել Մեր Թագավորությունը, քանի որ այն, ինչ անցավոր է, չի կարող ժառանգել այն, ինչը հարատև է: Մի՛ անհանգստացիր, ես կբուժեմ քո մեղքը, քանի որ դու ցանկանում ես դա, և ես կհոսեմ քո մեջ, ինչպես մի գետ՝ թարմացնելով քո չորությունը և ամլությունը: Քո անձնատվությունն Ինձ, քո ապաշխարության հետ միասին, միակ ճանապարհն է, որով ես կարող եմ փոխակերպել քո միտքը, որ ունենաս Քրիստոսի միտքը և հայտնաբերես Մեր Կամքը: Թափանցել Աստծո շարժառիթների մեջ, կամ հասկանալ Նրա գործելակերպը, երբ Աստված քո մեջ չէ, անհնարին է: Բայց ես կարող եմ բացել գիտության դուռը քո մեջ՝ Իմ գերազանց Լույսի միջոցով, քանի որ ես՝ Ով ձև չունի, ձև կստանամ քո հոգու մեջ: Ինչպես մի պայծառ Արև, ես կգցեմ Իմ Լույսը քո մեջ և կկենդանացնեմ ինչ որ մեռած է, լցնելով քեզ առաքինություններով:

Ես ամբողջապես Հավիտենական Լույսի արտացոլումն եմ, և Իմ Մեծությունը փառավորվում է ողջ արարչության մեջ: Եվ քանի որ ես վերանցական եմ, ես կարող եմ լցնել ամեն ինչ Իմ պայծառությամբ՝ առանց սահմանափակվելու նրանց սահմաններում: Ես զորություն ունեմ տալու ձեզ ճշմարիտ հարություն և ձեզ միավորելու Մեր մեջ, որ ապրեք ճշմարիտ կյանք Մեր Երրորդության Սրբության մեջ: Ուստի, ես ուրախ եմ և հրճվում եմ, որ երգում եմ ձեզ համար Ճշմարտության այս Օրհներգը, որպես Իմ պսակադրության երգ...

Իմ մեջ են ծնվել սրբերն ու մարտիրոսները: Բոլոր հոգիները, որոնց ես միանում եմ, դառնում են նույնպես հարսեր, քանի որ, յուրաքանչյուր օր իրենց կյանքում նրանց հետ ունեցած Իմ մտերմիկ հարաբերությամբ, ես դառնում եմ նրանց Փեսան: Եվ այդպես կլինի քեզ հետ, եթե դու հմայվես Մեզնով: Կամովին դու կնետվես Իմ մեջ և հաճույքով կվայելես Իմ Աստվածային Սիրո լիությունը:

Քո ծննդյան պահից սկսած, ես ցանկանում էի տիրապետել քեզ, և մինչ ես դիտում էի, թե ինչպես էիր դու աճում, ես արդեն գաղտնի տոնում էի մեր նշանդրեքը: Քո ապաշխարության առաջին իսկ նշանից ես կթռչեի քեզ մոտ, և նախքան դու կավարտեիր քո ապաշխարությունը, ես կբացականչեի՝ խփելով Իմ Արքայական Գայիսոնը.

«Արդարացվա՛ծ է»,

և կդրոշմեի քո ճակատը Իմ այրող մկրտության համբույրով՝ բուրումնավետ դարձնելով ողջ տիեզերքը: Սա կլիներ մեր պսակադրության արարողության նախանշանը, և ես կառաջարկեի քեզ ամենաբուրավետ ծաղիկներից պատրաստված մի թագ՝ որպես Իմ Սիրո մի ընծա քեզ, որի թերթիկներից յուրաքանչյուրը ներկայացնում է մի առաքինություն: Միայն այդ ժամանակ դու կկարողանայիր ասել. «Ես տեսնում եմ...», և իսկապես նկատի կունենայիր դա:

Ձե՞ս կարդացել, որ ամեն բան, որ կատարյալ է, ամեն բան, որ լավ է բաշխելու համար իջնում է Լույսերի Հորից, և ես այդ բոլոր երկնային պարգևների բաշխողն եմ: Այսօր ես ցած եմ իջնում Հոր և Որդու հետ միասին, որպես երեք Վկաներ: Հայր Աստված Հոգի է[1] նրանով, որ Նա ուղարկում է Ինձ՝ Ճշմարտության Հոգուն, որ ընդմիշտ ձեզ հետ լինեմ, և առաջնորդեմ ձեզ դեպի կատարյալ Ճշմարտությունը: Աստծո Խոսքը՝ Լույսը և Փրկիչը, և ով գոյություն է ունեցել սկզբից ի վեր, ով ամենամոտիկն է Հոր Սրտին, վկայեց և Հորը հայտնի դարձրեց ձեզ: Արդարև, դուք գնվեցիք և ձեզ համար վճարվեց Նրա Սեփական Արյամբ: Աստծո Խոսքը Կենդանի է և գործուն և վկայում է երկրի վրա, ինչպես ես և Հայրն ենք վկայում: Սուրբը, ով գնեց Իր Եկեղեցին Իր Սեփական Արյամբ, վկայում է Իր Արյամբ, և ես՝ Ճշմարտության Սուրբ Հոգին, վկայում եմ Ձրով[2]: Հետևաբար, Մենք երեք Վկաներ ենք, և Մենք երեքս էլ համախոհ ենք, քանի որ Մենք Մեկ Աստված ենք, մեկ Կամքով, մեկ Զորությամբ և մեկ Իշխանությամբ:

Եվ հիմա, եթե հարցնես, թե որն է Մեր Օրհներգերի նպատակը և Մեր շարժառիթը, Իմ պատասխանը հետևյալն է. Մենք իջնում ենք երկնքից ու հասնում մինչև քո սենյակը, առաջարկելու քեզ Մեր Սիրո պարգևը: Ինչպես մաքուր զմուռսի կաթիլներ, Մենք կաթեցնում ենք Մեր Բառերը քեզ վրա, որ օծենք քեզ և օրհնենք քեզ: Մեր կարեկցանքից է, որ Մենք ցանկանում ենք վերակրթել ձեզ և փրկել ձեզ և նորոգել ձեզ Իմ մեջ: Մենք ցանկանում ենք վերակրթել ձեզ, որպեսզի արդարանաք շնորհով և հաղորդակից դառնաք մեր աստվածությանը՝ ժառանգելու համար Հավիտենական Կյանքը:

Ես Ինքս Ինձ գթառատորեն տալիս եմ ձեզ, և որքան ավելի ազատ դուք ինքներդ ձեզ Ինձ տաք, այնքան ավելի շատ կստանաք Ինձ: Այդ ժամանակ ես կտեղադրեմ ձեզ Իմ մեջ, ինչպես մի արքայական գոհար՝ քողազերծ անելով Իմ խորհուրդներից շատերը, քանի որ ես կլինեմ ձեր Փեսան: Ինձ տիրապետելու ձեր ցանկությամբ, դուք ամուր կփարվեք ձեր Փեսայի Կրծքին, և կփայլեք Նրա Լույսի մեջ, և Իմ միջոցով կկարողանաք ասել. «Ես ճանաչում եմ Աստծուն և հասկանում Նրան...»:

Ես բոլորին թույլ եմ տալիս, որ Ինձ մոտենան և գրավեն Ինձ: Ձեզանից յուրաքանչյուրի համար ես նախապատրաստել եմ մի բուրավետ ուղի, այն ուղին, որը տանում է ձեզ դեպի Հարսանեկան Սենյակ: Մի՛ զարմացեք Իմ փառավոր Հայտնությունից, այլ ուրախացեք և թույլ տվեք Ինձ դրոշմել Իմ Սիրո օծումը ձեզ վրա և սրբացնել ձեզ՝ ձեզանից սրբեր պատրաստելով: Ես այստեղ եմ, որպեսզի բորբոքեմ Հոր, Որդու և Իմ հանդեպ ձեր սերը, և ինչպես Հայրը և Որդին ասացին, ես նույնպես ասում եմ. Իմ Խոսքերն ավելի քաղցր են, քան նեկտարը, և երբ ես խոսում եմ, ես չեմ օգտագործում կոշտ ձևակերպումներ: Ես այդ ձևով չեմ բարձրացնում սրբեր, մարտիրոսներ, կամ վկաներ: Որպեսզի նրանք լինեն հաստատակամ և զորեղ, ես տալիս եմ նրանց Իմ զորության և բարեպաշտության հոգին, ճիշտ ինչպես Միքայել և Ռաֆայել

[1] Հովհ. 4:24 և Ա Կոր. 15:45 «Հոգու» նկարագրությունը աստվածաշնչյան իմաստով Աստծո էությունը չի սահմանում այնքան, որքան նկարագրում Նրա կյանք տվող գործունեությունը: Աստված Հոգի է նրանով, որ Նա տալիս է Հոգին:

[2] Մկրտությամբ

հրեշտակապետերը, որոնք գերակայում են զորությամբ և Արդարության քաջասիրտ Ռազմիկներ են՝ Իմ Լույսի ներքո զննելով մարդկային վարքագծի բոլոր կողմերը…

Երկրի վրա ծաղիկներ ծաղկեցնելու և բանտարկյալներին ազատ արձակելու համար, Իմ զրույցն ավելի քաղցր է, քան մեղրախորիսխը, ավելի քաղցր՝ քան գինին: Առաքինությունն ու բարեպաշտությունը միշտ մաս են կազմել ձեզ հետ ունեցած Իմ երկխոսության մեջ: Ես Միակն եմ, որ ձեզ կարող է տալ թաքնված գանձերը, գաղտնի պաշարները, ուստի Ինձ ժառանգելն ավելի քաղցր է, քան մեղրախորիսխը: Ուրախության յուղով եմ Ես մոտենում ձեզ՝ օրհներգելու ձեզ մեղեդային Օրհներգեր, զարդարելով ողջ տիեզերքն Իմ ձայնով: Ես ձեզ մոտ չեմ գալիս թուրն Իմ կողքին, այլ՝ հավիտենական Սիրով, որովհետև դուք չափազանց թանկ եք Իմ Աչքում:

Ահա Ես այստեղ եմ, միավորելու համար ձեր հոգին Մեր Սիրո մեջ: Մի՞թե Ես պետք է ձեր հոգին ընդմիշտ թողնեմ, ինչպես մի անապատ: Թե՞, Ես այստեղ եմ, որ լինեմ ձեր Ճրագը և օծեմ ձեզ: Ես դեմ եմ ամեն հպարտության և ամբարտավանության, դեմ եմ այն ամենին, ինչը մեծամտություն և անարգություն է, դեմ եմ բոլոր մեծախոսներին, բոլոր ուրացողներին: Եթե դուք սրանցից մեկն եք, ձեր հոգին ինչպե՞ս պիտի իմանա Աստծո խորհուրդների մասին: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես եմ Ես հիմա ձեզ պարգևում Շնորհի Հոգին՝ ցանելու ձեր մեջ Իմ երկնային սերմերը, որպեսզի ձեր մեջ Դրախտ բողբոջի, ցանելով ձեր մեջ տարատեսակ սերմեր[1], որոնք կծլեն ու կդառնան տարբեր խնկի ծառեր և զանազան բույսեր:

Ես կլինեմ գետակի պես, որը հոսում է պարտեզում, որովհետև Ես մտադիր եմ ոռոգել ձեր մեջ ցանված Իմ երկնային սերմերը, և զարդարել Իմ ծաղկեթմբերը և համեմունքի թմբերը: Հետո Ես կարող եմ ուրախությամբ ասել. «Թզենին ձևավորում է իր առաջին թզերը և ծաղկող որթերը արձակում են իրենց բուրմունքը: Խնկի ծառերը տալիս են զմուռսի և հալվեի բուրմունքը: Ուրեմն արի՛, Իմ սեր, Իմ սիրելի, արի՛: Ցույց տուր Ինձ քո դեմքը, թույլ տուր Ինձ լսել քո ձայնը՝ Ինձ համար երգելիս: Թող որ տեսնեմ քո թագը ծաղկելիս», իսկ Ես՝ Իմ հերթին, թույլ կտամ քեզ քողազերծել Իմ Սուրբ Դեմքը մեր ամուսնական անկողնում: Նա, ում դու ջերմորեն փնտրում էիր, հիմա կերպավորվում է քո ներսում:

Օրհնյալ են նրանք, ովքեր եռանդով փնտրում են Ինձ և գտնում են Ինձ՝ ընկնելով Իմ Գիրկը: Նրանք պիտի փոխակերպվեն, և Ես պիտի լցնեմ նրանց անասելի ուրախությամբ: Օրհնյալ են նրանք, ովքեր կկարողանան տիրանալ Ինձ: Ես կնվաճեմ նրանց ամբողջապես Իմ Պայծառ Լույսով՝ հարստացնելով նրանց Աստվածային գանձերով: Այդ ժամանակ դուք նույնպես կցանկանաք ամուսնական միություն Մեր Աստվածության հետ, Մեզ հետ:

Աստծուն ճանաչելը բոցավառում է հոգին, որը ուրիշ ոչինչ չի ցանկանում Աստծո հետ լինելուց և Նրա համար երգելուց բացի, դառնալով գովաբանության թեմա, Սաղմոսների մի բանաստեղծություն,

[1] Ներկայացնում է առաքինությունները:

մի պսակ, մի խորան՝ Խորանի համար, փղոսկրե մի աշտարակ, շուշանների մի դաշտ՝ զարմացնելով նույնիսկ հրեշտակներին: Հետո, սիրելիս, քո ոստերը կկազմեն պտղատու մի այգի և կծաղկեն: Դու կլինես Իմ Բազուկների մեջ ներփակված պարտեզի նման, մի փակված շատրվան Իմ Գրկում, և Ես այդ ժամանակ կարող եմ ասել. Հիմա Ես կարող եմ գնալ Իմ պարտեզը, որը շնորհի մի լայն ճանապարհ է, որին Ես ամբողջապես տիրապետում եմ, և նախքան արշալույսի քամին կբարձրանա, նախքան որևէ մեկը կշարժվի, նախքան ստվերները կնահանջեն, Ես կգնամ զմուռսի լեռը, խնկի ծառերի բլուրները, համեմունքների Իմ թփերի մոտ և անզուգական կերպով կհրճվեմ:

Հարսանիքի այդ օրը, երկնքի պայծառության մեջ, Ես Իմ սիրելիին կպարուրեմ, հրեշտակային առաքինություններով, ինչպես նաև Իմ փառքով: Եվ Իմ սիրելին կգովաբանի Ինձ՝ երգելով.

«Մի ժամանակ ես մեռած էի, բայց հիմա Դու ինձ կյանք ես տվել, և ես կյանքի եմ եկել: Դու ոչ միայն չոր ոսկորները միացրեցիր իրար՝ կապելով հոդերը, այլև Դու շնչեցիր այս անկենդան մարմնի մեջ Քո հարության Շունչը՝ կենդանացնելով ինձ: Եվ իմ անկյանք անդամների մեջ՝ Դու դրեցիր արդարության Արևը՝ կիսելով Քո անասելի Լույսը, դառնալով ինձ լույս: Երբ սկզբում[1] ես բացեցի սրտիս դուռը իմ Սիրելիի համար, Նա շրջվեց ու գնաց: Իմ հոգին նվաղեց Նրա փախուստից[2]: Ես չկարողացա հասկանալ, մինչև չկանչեցի Նրա ետևից, որ վերադառնա և մաքրի ինձ իմ բոլոր անմաքրություններից և շնչի իմ մեջ Իր Բույրը: Ես խնդրեցի իմ Սիրելիին գալ Իր տիրույթը և այգին՝ կենդանացնելու համար այն ամենն, ինչ թառամել էր, և վերածի այն մի Դրախտի: Ուստի Իմ Սիրելին ետ եկավ Իր փախուստից և վերականգնեց այն, ինչ մեռած էր: Նա շնչեց իմ այգու վրա, որ շուրջբոլորը տարածի նրա քաղցր բույրը: Եվ հիմա ես կարող եմ համարձակվել ասելու Նրան.

«Թող իմ Սիրելի
գա Իր պարտեզը,
Թող Նա ճաշակի
նրա հազվագյուտ պտուղները[3],
Քանի որ դրանք միանգամայն
հրեշտակային են:
Թող Նա հիմա գա և հավաքի
Իր զմուռսն ու Իր բալասանը,
այդ ամենը Նրանն է:
Ես հիմա Նրա փակ այգին եմ,
ու միայն Իր
Վսեմությանն եմ պատկանում...»:

Իսկ Ես՝ Իմ կողմից, սիրելիս, պիտի ստեղծեմ ներքին բարեպաշտություն քո ներսում: Ես պիտի շրջափակեմ Իմ այգին և պիտի պարուրեմ այն Իմ

[1] ճշմարիտ զղջումից առաջ
[2] Սուրբ Հոգին չի գալիս նրա վրա, ով մեղք է գործում: (Իմաստ. 1:4)
[3] հրեշտակային առաքինությունները

Բազուկներով, ես պիտի գրկեմ այն այդ ձևով: Ապա, Հարս Իմ, քեզ կուսուցանվի Աստվածային Գիտություն, Սուրբ Իմաստության կողմից, որ կարողանաս մի օր ծառայել Ինձ և ծառայել ուրիշներին:

Իսկ հիմա, Հարս Իմ, ես Ինքս Ինձ ամբողջությամբ քեզ պիտի տամ և պիտի հագեցնեմ քո հոգին Աստվածային գթությամբ: Չնայած երբեմն դու Իմ Լույսի պայծառությունը անտանելի կհամարես, ասես բոցերի մեջ լինես, քո միտքն ու ողջ էությունը պիտի բոցավառվի և մեկ լինի Իմ Բոցի հետ: Այդ պահից սկսած, դու կլինես Իմ տիրապետությունը, և ես կլինեմ քո տիրապետությունը: Ես քեզ ամուր կբռնեմ և չեմ թողնի որ գնաս, իսկ դու էլ քո հերթին, ամուր կբռնես Ինձ և չես թողնի որ գնամ: Սիրտ՝ Սրտի, սեր՝ Սիրո դիմաց: Սա հաղթանակ է Ինձ համար՝ Իմ Սիրո երկար գրոհներից հետո. մեռած քո կրքերի հանդեպ, բայց կենդանի Իմ մեջ: Կատարյալ դարձած Իմ մեջ, որը քեզ թույլ է տալիս հիմա կառավարել Ինձ հետ:

Հետո ես կնստեմ քեզ հետ և կնախագծեմ քեզ համար քո առաքելական աշխատանքը, որը դու անելու ես Ինձ համար: Ի վերջո, սա է մեր հոգևոր Ամուսնության նպատակը: Ես և դու պիտի դառնանք համագործակիցներ՝ կողմնորոշելու համար Եկեղեցուն[1] դեպի կատարյալ Սերը: Ապրի՛ր և հրճվի՛ր Իմ մեջ, անդադար երգելով քո սիրո թեմաներն Ինձ համար, իսկ ես անդադար կօրհներգեմ Իմ Սիրո Օրհներգերը քեզ...

Ո՛վ Սուրբ Հոգի, Գանձ սրբերի,
առաքյալների և մարտիրոսների,
Այն պահին, երբ Քո արարչությունը
կհրճվի Աստվածային Սիրով,
Նրանք կբացականչեն Քեզ.
«Kyrie eleisson, Kyrie eleisson»,
(Տեր ողորմյա, Տեր ողորմյա)
Իսկ Դու Քո հերթին կասես նրանց.
«Քանի որ դուք գրկաբաց
ընդունեցիք Ինձ,
Իմ Լույսի ճառագայթը
հիմա փայլում է
ձեր սրտի կենտրոնում»:

Հիմա ես կարող եմ հստակ ասել.
«Ես այլևս կարիք չունեմ
վախենալու գերեզմանափորից:
Ես կարիք չունեմ
«իմ փեսա» կոչելու
այն գերեզմանը, ուր պառկած էի,
իսկ որդերին՝ «իմ քույր և եղբայր»:
Այսօր ես գովաբանում եմ
իմ Տիրոջը և կոչում՝
«Կյանք, իմ Փեսա,

[1] Ես միևնույն ժամանակ հասկացա, որ դա նաև Աստծո ժողովուրդն է, որ պետք է կողմնորոշվի դեպի Քրիստոսի Սերը:

իմ Եղբայր և իմ Քույր»:
Եվ հիմա, երբ ես գտել եմ Նրան,
ում իմ սիրտը սիրում է,
ես Նրան ամուր կբռնեմ,
և երբեք չեմ թողնի որ գնա:
Հիմա, երբ ես նվաճել եմ իմ Սերը,
հիմա, երբ ես
տիրապետում եմ Նրան,
ես կքաշեմ Նրա քողը
Իր Սուրբ Դեմքից»:

Ո՜վ երկյուղալի խորհուրդ:
Քո Մեծությունը օծել է ինձ
ուրախության յուղով,
Լռեցնելով իմ թշնամիներին:

Ո՜հ, որքան գեղեցիկ ես Դու,
Դու ամենագեղեցիկն ես
բոլոր հրեշտակներից:

Դու Ամեն Ինչ ես...
Քո հանդեպ ցանկությունը
շամփրում է,
Քո հանդեպ սերն ու ծարավը
խոցում է
և երբեք չի բավարարվում[1]:

Դու վերք հացրիր ինձ
Հարսանեկան Սենյակում,
այն պահին, երբ խնդրեցիր ինձ
բարձրացնել Քո քողը...
Բայց դա ի՞նչ նշանակություն ունի
ինձ համար, Տեր,
ես տիրապետում եմ Քեզ՝
Ամենակարող Աստծուն,
և Քեզ խորը արմատավորել եմ
իմ սրտի կենտրոնում...

(Հիսուս նորից խոսեց)

Ա՜խ, Իմ Վասուլա, լուսինը կկորցներ իր պայծառությունը, իսկ աստղերը կկորցնեին իրենց փայլը, եթե դու մերժեիր Իմ հրավերը[2]: Իմ հարս, Իմ զմուռս և հալվե, հիմա հենվի՛ր Իմ Սրտին, դիր գլուխդ Ինձ վրա[3]: Այդ ես էի, որ մի անգամ քեզ խնդրեցի Ինձ տալ քո աջ ձեռքը, և դու այդպես էլ արեցիր: Ես օգտագործեցի այն և դեռևս պիտի օգտագործեմ՝ մի

[1] Սիրաք 24:21
[2] Կանչը...
[3] Տիրական ձևով Նա կանչեց ինձ:

անկարագրելի ձևով գրելու համար Մեր Սիրո Թեման: Բաց արա ձեռքդ[1]: Ես երբե՛ք չեմ լքի քեզ... երբե՛ք... Օրհնյալ լինես: Եկեղեցին պիտի վերակենդանանա:

ΙΧΘΥΣ

(Այս Օրհներգերն ավարտվեցին 2003 թվի ապրիլի 30-ին):

[1] Ինչպես մի անգամ նախկինում, Հիսուսի գեղեցիկ Գլուխը առաջ թեքվեց, և համբուրեց իմ աջ ձեռքի ափը: Ապա սեղմեց այն Իր Այտին, և քնքշորեն ցած իջեցրեց: